LIBRARY OF THE
Massachusetts
Bible Society
Boston University
School of Theology Library
Catalog No. A 200.3/B 1895
Family INDO-EUROPEAN
Sub-Family ANATOLIAN
Branch
Group
Language ANCIENT ARMENIAN
Dialect
Locality
Contents BIBLE
Version
Translator
Published by K. Baghdadlian
Place Constantinople
Date 1895
Accession No. 8
Accession Date July 19 1929
Price $2.61

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՄԱՏԵԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ԸՍՏ ՃՇԳՐԻՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽՆԵԱՑ ՄԵՐՈՑ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ ԵԲՐԱՅԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԱՑ

معارف عمومیه نظارت جلیله‌سنك ۱۱ ربیع‌الاول ۳۱۳ و ۲۰ اغستوس ۳۱۱
تاریخلی و ۳٤٤ نومرولی رخصتنامه‌سیله طبع و نشر اولنمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

—

1895

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ցրնծալել մեր արդ ի լոյս զԱստուածաշունչ Մատեանս Հին եւ Նոր Կտակարանաց համեմատեալ զՀինն ընդ Եբրայական բնագրին, եւ զՆորն ընդ Յունականին, արժան համարիմ ասել ինչ ինչ համառօտիւ ի գիտութիւն ընթերցանելոցս, նախ՝ զպատճառացն վասն որոց եկաք յայս կարեւոր գործ, եւ երկրորդ՝ գիւանգամանաց աշխատութեան մերոյ:

Զպատճառացն՝ շատ իցէ ասել կարճառօտիւ եթէ յառաջ քան զամս ինչ, բարեաց յիւտակաց արժանին Ներսէս Պատրիարք ոչ սակաւ ջան յանձն առնոյր հաւանեցուցանել զԸնկերութիւն Գրոց Սրբոց՝ տալ ի լոյս ընծայել եւ տարածել դիւրագին զաստուածեղէն Մատեանն, զբարգմանեալն ի Հայ լեզու յերանելի հարցն մերոց ի Սահակայ եւ ի Մեսրոպայ:

Ցես բազում բանից որ եղեն երկուսեան, ոչ յաջողեալ գործն՝ մնայր առ ժամանակ մի: Արդարեւ չէր ինչ անյօժար Ընկերութիւնն կատարել զինդիրն, այլ արգել այն էր, զի վին ի կանոնաց Ընկերութեանն էր ի լոյս ընծայել բարգմանութիւնս ի բնագիր լեզուաց Գրոյն: Եւ Հայերէն բարգմանութիւն Հին Կտակարանին, բնպէս անհամեմատ գեղեցիկ եւ ընտիր, որպէս յայտ է չեղեւ յԵբրայական բնագրէն, այլ ի Յոյն բարգմանութենէ: Առ ի բառնալոյ զայս դժուարութիւն, խորհուրդ արարեալ ճշմարտորաց ոմանց ի մերոյոց, գտին այսպիսի ինչ ինարս· համեմատել զՀայերէն բարգմանութիւնն ընդ Եբրայականին՝ զայլակերպութիւնսն ճշմարտել ի լուսանցս ի ներքոյ իւրաքանչիւր իջի, պահեալ զՀայերէնն որպիսի էն:

Զեղեւ անհամոյ Ընկերութեանն այս պայման, որով մարթ էր ազգին ե՛ւ ստանալ դիւրագին գրարգմանութիւն իւրոց նախնեաց անեղծ եւ անարատ, ե՛ւ լինել հմուտ հանգամանաց Եբրայական բնագրին ի ծանօթութեանց անտի որ ի լուսանցս: Ի հաճել Ընկերութեանն ընդ այս, կարգեցաւ ի Հայոց ուրոյն ժողով ի կատարել զայս գործ:

Իսկ զհանգամանացն՝ բաւական իցէ ասել զորս զկնի:

Վասն Հայերէն օրինակին, զորոյ զհետ գնացաք, ասեմք եթէ լաւագոյն համարեցաք չերթալ զհետ վիոյ միայնոյ օրինակի, այլ որ ինչ մեծաւորագոյնն էր բնագրին զայն ընտրեցաք ի Հայերէն օրինակս անդ որ ցարդ ի լոյս ընծայեալ են:

Վասն ծանօթութեանց գիտել պարտ է զի ոչ եղեւ մեզ կամ գնել զամենայն որ այլակերպ էր ի բնագրացն անտի, այլ որ ինչ կարեւոր թուեցաւ մեզ: Թուի մեզ եթէ ճշմարտասէր ընթերցողն օժանդակեալ յորոց եդանն ի լուսանցս՝ մարթասցի ըսջ հասու լինել մտաց աստուածատուր Մատենին, եւ ոչ կամիցի խոսիւ գտել զմեզ վասն առաւելութեան կամ նուազութեան, որպէս եւ վասն հանգամանաց ծանօթութեանցն, գնատ ածեալ նախ՝ զի չէր ինչ դիւրին մուծանել իբրեւ երկոտասան հազարս ծանօթութեանց ի համեմատութենէ հնագոյն լեզուաց. երկրորդ ան-

գամ՝ զի աշխատութիւնս մեր է առաջին յազգի իւրում առ մեզ, առաջս ունելոյ մեր ի ձեռին սմին նման գործ:

Գիտել պարտ է զի ի Հին Կտակարանի ոչ ուր զՀայն գտանէ այլակերպ յԵբրայականէն, ասացեալ ի լուսանցս, Եբր., այսինքն՝ Եբրայեցերէն, այսպէս. եթէ գտանի ի Հայումս ինչ որ չգոյր յԵբրայական բնագրին, ասացեալ, Ոչ Եբր., այսինքն՝ յԵբրայականին, պակաս. եւ եթէ ի Հայումս պակասէր ինչ որ գոյր յԵբրայականին, ասացեալ, Եբրայեցւոյն յաւելու, եւ եդեալ զանելին: Ուր բանն յԵբրայականին յերկուս միտս հարկանէր, զերկոսոցն եդեալ ընդ բանիւս՝ Կամ: Ուր կարեւոր թուեցաւ մեզ դնել զնշանակութիւն անուանն անձին կամ տեղւոյ եւ կամ այլոյ իրիք, եդեալ զնշանակութիւնն ընդ բանիւս՝ Այսինքն: Միայն զանուանս անձանց եւ տեղեաց որ այլազգ ինչին յԵբրայականին, թողեալ որպիսի եւն ի Հայերէնին:

Գիտել արժան է եւս, զի երբեմն յեւ միանգամ կամ երկիցս դնելոյ ծանօթութիւն զբանից ինչ որ ասէպ կրկնին, զի մի՛ ծանրասցի գործն, բաւական համարեցաք ասել, Այսպէս և այլուր. կամ, Այսպէս և ի Ներսէսէ. զոր օրինակ՝ յեւ նուագս ինչ յուշ առնելոյ եթէ Տէր Տէրն ի մերում բարգմանութեան, յԵբրայականին է՝ Տէր Եհովայ, եւ անուանն Այլոգէի ի մերում, յԵբրայականին է՝ Փղշտացի, յայլ եւս նուագս թողեալ որպէս էին: Ակն ունիմ՝ եթէ շատ իցէ հանճարեղ ընթերցողին այսչափ ինչ ակնարկութիւն առ ի միտ առնուլ իմին ինչ եւ հանդիպեսցի սոցին նման բանից:

Իսկ ի համեմատութեան Նորոյ Կտակարանի աշխատութիւն մեր չեղեւ այնպէս դժուարին, զի բարգմանութիւն նախնեաց մերոց էր ի բուն իսկ բնագրէ Նորոյ Կտակարանի: Ուստի փոյթ մեր եղեւ միայն համեմատել զայն ընդ ընտիր ընտիրս ի Յոյն ձեռագրաց որ ցարդ ծանօթ են, եւ նշանակել զայլակերպութիւնսն, որ ի հարկէ չկարէին լինել այնչափ բազում որչափ եղեն ի համեմատութեան Հնոյն:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՄԱՏԹԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

	ԳԼՈՒԽՔ	ԵՐԵՍ
ԾՆՈՒՆԴՔ	50	1
ԵԼՔ	40	59
ՂԵՒՏԱԿԱՆ	27	107
ԹԻՒՔ	36	141
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՕՐԻՆԱՑ	34	188
ՑԵՍՈՒ ՆԱԻԵԱՑ	24	227
ԴԱՏԱՒՈՐՔ	21	259
ՀՈՌԻԹ	4	286
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ Ա.	31	292
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ Բ.	24	330
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ Գ.	22	362
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ Դ.	25	401
ՄՆԱՑՈՐԴԱՑ Ա.	29	435
ՄՆԱՑՈՐԴԱՑ Բ.	36	468
ԵԶՐ	10	507
ՆԷԵՄԻ	13	521
ԵՍԹԵՐ	10	539
ՅՈՎԲ	42	554
ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՑ	150	587
ԱՌԱԿՔ ՍՈՂՈՄՈՆԻ	31	656
ՀՈՂՈՎՕՂ	12	688
ԵՐԿ ԵՐԿՈՑ	8	697
ԵՍԱՅԻ	66	704
ԵՐԵՄԻԱ	52	771
ՈՂՔՔ ԵՐԵՄԵԱՑ	5	834
ԵԶԵԿԻԷԼ	48	843
ԴԱՆԻԷԼ	12	950
ՈՎՍԷ	14	931
ՅՈՎԷԼ	3	941
ԱՄՈՎՍ	9	944
ԱԲԴԻՈՒ	1	951
ՅՈՎՆԱՆ	4	953
ՄԻՔԻԷ	7	956
ՆԱՀՈՒՄ	3	962
ԱՄԲԱԿՈՒՄ	3	965
ՍՈՓՈՆԻԱ	3	968
ԱՆԴԷՈՍ	2	971
ՋԱՔԱՐԻԱ	14	973
ՄԱՂԱՔԻԱ	4	983

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ	28	1
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ	16	35
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ	24	58
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ	21	95
ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ	28	122

ԹՈՒՂԹՔ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ

ԱՒ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՒ	16	157
ԱՒ ԿՈՐՆԹԱՑԻՍ Ա.	16	172
ԱՒ ԿՈՐՆԹԱՑԻՍ Բ.	13	186
ԱՒ ԴԱՂԱՏԱՑԻՍ	6	196
ԱՒ ԵՓԵՍԱՑԻՍ	6	201
ԱՒ ՓԻԼԻՊԷՑԻՍ	4	206
ԱՒ ԿՈՂՈՍԱՑԻՍ	4	216
ԱՒ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ Ա.	5	214
ԱՒ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ Բ.	3	217
ԱՒ ՏԻՄՈԹԷՈՍ Ա.	6	219
ԱՒ ՏԻՄՈԹԷՈՍ Բ.	4	223
ԱՒ ՏԻՏՈՍ	3	226
ԱՒ ՓԻԼԻՄՈՎՆ	1	228
ԱՒ ԵԲՐԱՑԵՑԻՍ	13	229

ԹՈՒՂԹ

ՅԱԿՈԲԱՑ ԱՌԱՔԵԼՈՑ	5	240
ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ Ա.	5	244
ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ Բ.	3	249
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑ Ա.	5	252
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑ Բ.	1	256
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑ Գ.	1	257
ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՑ	1	258
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ	22	260

ԳԼՈՒԽՔ ՄՆՆԴՈՑՆ (*)

	Գլ.	Համ.
Աստուածախօսութիւն վեցօրեայ արարչագործելոյն Աստուծոյ զաշխարհս, և դնելոյ ի դրախտին զմարդն։	Ա.	1
Վասն խաբելոյ օձին զկինն, եւ յանցանաց մարդոյն, եւ պատուհասս կրելոցն։	Գ.	1
Մնուեղդն Կայենի, եւ վասն սպանանելոյ զեղբայրն պատուհաս նորին. եւ ազգահամարք տան նոցա մինչեւ ցեւեթն ազգս։	Դ.	1
Մննդաբանութիւն հանդերձ ժամանակագրութեամբ տանն Սեթայ մինչեւ ցՆոյ. յորում և վասն հակայիցն։	Դ.	25
Հրաման առնու Նոյ կազմել զտապանն, որով ապրի ի ջրհեղեղէն ինքն և տունն իւր։	Զ.	9
Պատարագէ Նոյ Աստուծոյ, եւ ընդունի օրհնս և ուխտս յԱստուծոյ։	Ը.	20
Աւիծանի Քանան վասն կատակելոյն գնոյ։	Թ.	20
Մնուեղք երից որդւոցն Նոյի՝ եւ թուառնուսն և երկուց ազգաց, յորում և՝ թէ ո՛ առաջին թագաւորեաց։	Ժ.	1
Շինուած աշտարակին, եւ բաժանել լեզուացն, և սփռել ազգսն ընդ ամենայն երկիր։	ԺԱ.	1
Ազգահամարք ժամանակագրութեամբ որդւոցն Սեմայ մինչեւ ցԱբրահամ։	ԺԱ.	10
Ելն Աբրահամ ի Քաղդեացւոց, եւ գայ ի Միջագետս և բնակել ի Խառան, և գնայն անտի հանդերձ Ղովտաւ զհետ խոստմանն Աստուծոյ ի Քանան, և վասն սովոյն իջանել յԵգիպտոս։	ԺԱ.	31
Պատմէ Աստուած զՓարաւոն վասն Սառայի, և դառնայ Աբրահամ անդրէն ի Քանան։	ԺԲ.	17
Վասն կռուոյ հովուացն մեկնի Ղովտ յԱբրահամէ, և եկեալ բնակէ ի Սոդոմ։	ԺԳ.	5
Երկրորդութիւն խոստմանն Աստուծոյ առ Աբրահամ տալ նմա զերկիրն, և բնակելն նորա ի Մամբրէ։	ԺԳ.	14
Գերի Ղովտ ընդ Սոդոմացիս ի Քոդողողոմորեանց, որոց զհետ մեռեալ Աբրահամ յաղթէ և դարձուցանէ զաւարն գերեաւն։	ԺԴ.	1
Մեծ քան զԱբրահամ գոլով Մելքիսեդեկ՝ օրհնէ զԱբրահամ, և առնու հաս զտասանորդսն։	ԺԴ.	18
Զարեկնի խոստումն Աստուծոյ առ Աբրահամ. և պատարագաւքն գուշակէ նմա զվիշտս որդւոցն յԵգիպտոս, և սահմանէ ժամանակ ելիցն։	ԺԵ.	1
Թէ ծնաւ Աբրահամ զԻսմայել յԱգարայ աղախնոյ յուխտսն և վեց ամի տիոցն իւրոց։	ԺԶ.	1
Մեծարի Աբրահամ յԱստուծոյ յորջորջմամբ անուանն, և հրամանաւ Աստուծոյ թլփատի ինքն և իւրքն ամենայն։	ԺԷ.	1
Երեք նմա Աստուած երկու հրեշտակօք ի կերպարանս արանց, և ընկալեալ զհիւրոյթն՝ հաստատէ զաւետիս ծննդեանն Իսահակայ ի նմին տարւոջ։	ԺՖ.	1
Կործանի Սոդոմ, և Ղովտ զերծեալ ի լեառնն՝ ծնանի ի դստերացն զՄովաբ և զԱմն։	ԺՀ.	20
Յափշտակէ Աբիմելէք Փղշատցի զՍառա, և ի սպառնալեացն Աստուծոյ զարհուրեալ՝ հանդերձ թոշակօք եւս տայ ի բաց։	Ի.	1
Կատարի ուրախութիւն Աստուծոյ, զի ծնաւ Սառա զԻսահակ ինննամեայն գոլով, եւ Աբրահամ հարիւրամեայն։	ԻԱ.	1
Խրատուն Սառայի ի բաց արձակել Աբրահամ զաղախինն որդուովն ի փառան։	ԻԱ.	9
Երդնու Աբրահամ Աբիմելէքայ ի Ջրհորն երդմամբ, եւ հաստատէ եւթն ոչխարօքն իւր գոլ զջրհորն, ուր և կարդայ զԱստուած Աստուած յաւիտենական։	ԻԱ.	22
Փորձի Աբրահամ, եւ ընծայէ գտեալ պատարագաւն՝ ընդունի զխոստումն զաւակին իւրոյ Քրիստոսի, յորմէ օրհնին ամենայն ազգք երկրի։	ԻԲ.	1
Սերունդք Նաքովրայ եղբօր Աբրահամու, յորոց և Ռեբեկա։	ԻՐ.	20
Մեռանի Սառա ի Քեբրոն, և գնէ Աբրահամ զագարակն Եփրոնի, յորում է այրն կրկին, ուր եւ թաղէ ինմա զՍառա։	ԻԳ.	1
Առաքէ Աբրահամ զծառայն ի Խառան, և առնու զդուստրն Բաթուէլի զՌեբեկա՝ կին որդւոյ իւրում Իսահակայ։	ԻԳ.	2
Աբրահամ ծնանի և այլ եւս որդիս ի Քետուրայ. և ինքն ի բարւոք ծերութեան մեռանի, և թաղի յայրն անդ կրկնում։	Իե.	1
Սերունդք Իսմայելի որդւոյ Ագարու, և մահ նորին։	Իե.	12
Վաթնամեայն գոլով Իսահակ՝ ծնաւ զՅակոբ և զԵսաւ. և զի վաճառեաց Եսաւ ընդ կերակրոյ զանդրանկութիւնն իւր Յակոբայ ընդ երդմամբ։	Իե.	19
Խաստումն և զգուշութիւն յԱստուծոյ առեալ Իսահակ բնակի ի ժԷ Գերարացւոց. և Աբիմելէք զգուշացուցանէ զիւրսն վասն Ռեբեկայ, ուր և հարիւրաւոր գտեալ զգա-		

(*) Բովանդակութիւնք գլխոց յամենայն էջս պահեսին յԵբրայեցւոյն։

	Գլ.	Համ.
բին Իսահակ՝ Հալածէի յազգէն,	ԻԶ.	1
Պեղէ զհեցեալ Ջրհորսն և զնորսն. ընդ որոյ զրկեալ ի Փղշտացւոցն, և ապա անգօրեալ՝ երդնուն միմեանց Իսահակ և Աբիմելէք,	ԻԶ.	18
Խրատու մօրն առնու Յակոբ զօրհնութիւնն ի հօրէն, որոյ անարժան գտեալ եսաւայ՝ սխալով ապառնայր սպանանել զՅակոբ,	ԻԶ.	34
Պատուէր առեալ Յակոբ ի հօրէն գնալ ի Պատան, և հասեալ ի Բեթէլ՝ հանդիպի տեսլեանն Աստուծոյ. և օծեալ զարձանն՝ ուխտէ զատասնորդն տալ Աստուծոյ,	ԻԷ.	46
Հասեալ ի Միջագետս ի դաշտին, և պատահեալ Ռաքելայ՝ բանայ գլըրհորն, և արբուցեալ գխաշինան մտանէ ի տուն Լաբանու,	ԻԹ.	1
Զորիքատասան տարի ծառայեալ՝ առնու զդստերսն Լաբանու երկու նաժըշտաքն, ի խորհուրդ երկուց ժողովրդոցն Քրիստոսի,	ԻԹ.	15
Մնալ ի կանանցն որդիս մեծատան, մեծանալ և ընչիւք, եւ հրամանաւ Աստուծոյ դառնալ գնալ առ հայրն Իսահակ գաղտ ի Լաբանայ,	ԻԹ.	31
Գողանալ Ռաքէլ զկուռսն. եւ պնդի Լաբան զհետ Յակոբայ և խափանեալ յԱստուծոյ ննդեալ Յակոբայ, աչքխաղաղութեան տալով դառնալ անդրէն յհետ,	ԼԱ.	17
Ընդ առաջ լինին Յակոբայ հրեշտակք Աստուծոյ, այլ կասկածեալ նորա յեսաւայ՝ առաքէ նմա պատարագս, և քաջալերեալ յերկիւղէն ժուժկալելոյն ընդ Աստուծոյ և Իսրայէլ կոչմամբն, պատահեալ ապա Եսաւայ յուղարկէ սիրով,	ԼԲ.	1
Հասեալ Իսրայէլ ի Սիկիմ՝ ստացու զագարակն Եմմորայ հարեւր ոչխարաց,	ԼԳ.	18
Ի պատճառս դստերն Յակոբայ Թլփատին Սիկիմացիք. և զնախատանացաղջկանն զվրէժ ի սուր և յայտր վարեցեալք առժին,	ԼԴ.	1
Ուստի խրախուսեալ Իսրայէլ յԱստուած՝ որ ահ արկ ի վերայ բնակչաց երկրին, կորուսանէ զնոտի աստուածան,	ԼԵ.	1
Մխիթարէ Աստուած զԻսրայէլ վասն Դէնովրայ, և տայ նմա վստահութիւն մեծութեան. ուստի իւղեալ կրկնակի զարձանն՝ Տուն Աստուծոյ կոչէ զտեղին,	ԼԵ.	8
Մերձ յԵփրաթա հասեալ՝ դժուարածին եղեալ Ռաքելի մեռանել, և անդէն թաղեցաւ,	ԼԵ.	16
Ելանէ Ռուբէն յանկողինն հօրն, ընդորում խիթայրիՅակոբ մինչ ի մահ, Աստ թուէ զերկոտասան որդիսն Յակոբայ, և թէ ուրեա՞ւ Իսահակ ի Մամբրէ՝ այն ինքն է Քեբրոն,	ԼԵ.	21
Ծնունդք Եսաւայ՝ թագաւորք և իշխանք ի նմանէ, որք կորուսին զՔուռեցիսն քսան և ազգ, և ինքեանք բնակեցին ի Սէիր,	ԼԶ.	1
Թէ վասն երազոցն նախանձ կրեալ յեղբարցն Յովսէփ՝ վաճառի յԵգիպտոս,	Լէ.	1
Զարք գոլով որդիքն Յուդայ մեռանն ի Տեառնէ, իսկ Թամարայ յղացեալ ի Յուդայէ ծնանի երկուս,	ԼԸ.	1
Թէ ի վաւաշ տիկնոջէն զրպարտեալ Յովսէփ և մտեալ ի բանտ, մեկնէ զերազս ծառայիցն Փարաւոնի,	ԼԹ.	1
Մեկնէ ապա և զՓարաւոնի զերազսն, և իչխանացեալ ժողովէ ցորեան վասն սովոյն, և ծնանի որդիս,	Խ.	24
Եկին եղբարքն Յովսէփայ զցորենով. և ի կրկին դարձին ծանօթս տուեալ նոցա, յղեաց զՅօրէն և զբոլոր տանէն վասն կարեաց սովոյն,	ԽԲ.	1
Իջեալ Յակոբ յԵգիպտոս եւ թաղմանասուն և հինգ ոգւով, և օրհնեալ զՓարաւոն, ծերատոհմի ամենայն որդովքն ի Յովսեփայ,	ԽԶ.	2
Թէ ստացաւ Յովսէփ զերկիրն Հանդերձ բնակչօքն Փարաւոնի՝ բայ իբրմացն,	ԽՀ.	14
Մերձ ի վախճան եղեալ Յակոբայ՝ օրհնէ զորդիսն Յովսեփոս, մեծարեալ գկրտսերն ի խորհուրդ նորոյս, և զՍիկիմ Յովսեփոս սեպհականեալ,	ԽԷ.	21
Օրհնէ ի ժամ մահուն զորդիսն իւր մարգարէութեամբ. եւ թնդրէ ի Յովսեփայ թաղել զինքն ի գերեզմանին Աբրահամեանց ի Քեբրոն. զոր եւ արար նմա,	ԽԹ.	1
Մխիթարէ Յովսէփ զկասկած եղբարցն. եւ ինքն զերիս ծնունդս եփրեմի տեսանէ, մարգարէանայ վասն ելից. եւս եւ վասն ապագոյ իւրոց պատուիրեալ՝ վախճանի ի փառս Աստուծոյ,	Ծ.	15

ԾՆՈՒՆԴՔ

ԳԼՈՒԽ Ա

1 Ի սկզբանէ արար Աստուած զեր-
2 կինս եւ զերկիր։ Եւ երկիր էր [1]աներ-
եւոյթ եւ անպատրաստ", եւ խաւար ի
վերայ անդնդոց. եւ Հոգի Աստուծոյ
3 չրջէր ի վերայ ջուրց։ Եւ ասաց Աստուած,
4 Եղիցի լոյս. եւ եղեւ լոյս։ Եւ եահ
Աստուած զլոյսն զի բարի է. եւ մեկնեաց
Աստուած ի մէջ լուսոյն եւ ի մէջ խա-
5 ւարին։ Եւ կոչեաց Աստուած զլոյսն Տիւ,
եւ զիւաւարն կոչեաց Գիշեր. եւ եղեւ
երեկոյ եւ եղեւ վաղորդայն, օր մի։
6 Եւ ասաց Աստուած, Եղիցի [2]հաստա-
տութիւն ի մէջ ջրոյդ, եւ եղիցի մեկ-
նել ի մէջ ջուրցդ եւ ջուրց. [3]Եւ եղեւ
7 այնպէս։" Եւ արար Աստուած [4]զհաստա-
տութիւնն, եւ անջրպետեաց Աստուած
ի մէջ ջրոյն որ ի ներքոյ [5]հաստատու-
թեանն, եւ ի մէջ ջրոյն որ ի վերոյ [5]հաս-
8 տատութեանն[6]։ Եւ կոչեաց Աստուած
[4]զհաստատութիւնն երկինս. եւ եղեւ ե-
րեկոյ եւ եղեւ վաղորդայն, օր երկրորդ։
9 Եւ ասաց Աստուած, Ժողովեսցին
ջուրքդ որ ի ներքոյ երկնից ի ժողով
մի, եւ երեւեսցի ցամաքն. եւ եղեւ
այնպէս։ [3]Եւ ժողովեցան ջուրքն որ ի
ներքոյ երկնից՝ ի ժողովս իւրեանց, եւ
10 երեւեցաւ ցամաքն։" Եւ կոչեաց Աս-
տուած զցամաքն երկիր, եւ զժողովս
ջուրցն կոչեաց Ծով. եւ եահ Աստուած
11 զի բարի է։ Եւ ասաց Աստուած, Բղխեսց-
ցէ երկիր զբանջար խոտոյ, [7]սերմանել
սերմն ըստ ազգի եւ ըստ նմանութեան.
եւ" ծառ պտղաբեր՝ առնել պտուղ ըստ
ազգի իւրում, որոյ սերմն իւր ի նմին
[3]ըստ ազգի ի նմանութիւն" ի վերայ
12 երկրի. եւ եղեւ այնպէս։ Եւ հան երե-
կիր բանջար խոտոյ, [8]սերմանել սերմն
որ է ի վերայ ամենայն երկրի". եւ տեսաւ

[1]Եբր.-յեղեղն, անմայր և թափուր [2]Եբր.-տարածու-
թիւն [3]Եբր.-եղև [4]Եբր. զտարածու-
թիւնն [5]Եբր.՝ տարածութեան [6]Եբր.-յեղեղ-
լոյ, եւ եղեւ այնպէս [7]Եբր. խոտ՝ որ առնէ սերմն,
[8]Եբր. խոտ՝ որ առնէ սերմն ըստ ազգի իւրում

պատարեր՝ առնել պտուղ որոյ սերմն իւր
ի նմին ըստ ազգի [3]ի վերայ երկրի". Եւ
13 եահ Աստուած զի բարի է։ Եւ եղեւ
երեկոյ եւ եղեւ վաղորդայն, օր երրորդ։
14 Եւ ասաց Աստուած, Եղիցին լու-
սաւորք [9]ի հաստատութեան երկնից,
[3]ի լուսաւորութիւն ի վերայ երկրի, եւ"
մեկնել ի մէջ տուընջեան եւ ի մէջ գի-
շերոյ. եւ եղիցին ի նշանս եւ ի ժամա-
15 նակս եւ յաւուրս եւ ի տարիս. Եւ ե-
ղիցին ի լուսաւորութիւն [9]ի հաստատու-
թեան երկնից ծագել յերկիր. եւ եղեւ
16 այնպէս։ Եւ արար Աստուած զերկուս
լուսաւորսն զմեծամեծս. զլուսաւորն
մեծ յիշխանութիւն տուընջեան, եւ զլու-
սաւորն փոքր յիշխանութիւն գիշերոյ,
17 եւ զաստեղս։ Եւ եդ զնոսա Աստուած
[9]ի հաստատութեան երկնից լուսաւո-
18 նել յերկիր, Եւ իշխել տուընջեան եւ
գիշերոյ, եւ մեկնել ի մէջ լուսոյն եւ
ի մէջ խաւարին. եւ եահ Աստուած
19 զի բարի է։ Եւ եղեւ երեկոյ եւ եղեւ
վաղորդայն, օր չորրորդ։
20 Եւ ասաց Աստուած, Հանցեն ջուրք
զեռունս շնչոց կենդանեաց, եւ թռչունս
թեւաւորս ի վերայ երկրի ըստ [10]հաստա-
տութեան երկնից. [3]Եւ եղեւ այնպէս։"
21 Եւ արար Աստուած [11]կէտս մեծամեծս,
եւ զամենայն շունչ զեռնոց կենդանեաց՝
զոր հանին ջուրք ըստ ազգի իւրեանց,
եւ զամենայն թռչունս թեւաւորս ըստ
ազգի՝. եւ եահ Աստուած զի բարի են։
22 Եւ օրհնեաց զնոսա Աստուած եւ ասէ,
Աճեցէք եւ բազմացարուք, եւ լցէք
զջուրսդ որ ի ծովս. եւ թռչունքդ բազ-
23 մասցին ի վերայ երկրի։ Եւ եղեւ երեկոյ
եւ եղեւ վաղորդայն, օր հինգերորդ։
24 Եւ ասաց Աստուած, Հանցէ երկիր
շունչ կենդանի ըստ ազգի, չորքոտանի
եւ սողունս եւ գազանս երկրի ըստ ազ-
25 գի. եւ եղեւ այնպէս։ Եւ արար Աստ-
ուած զգազանս երկրի ըստ ազգի, եւ

[9]Եբր. ի տարածութեան [10]երեսաց տարած-
ութեան [11]Եբր. զկէտսն

զանասունս ըստ ազգի, եւ զամենայն սողունս երկրի ըստ ազգի իւրեանց. եւ
տես Աստուած զի բարի են։
26 Եւ ասաց Աստուած, Արասցուք մարդ
ըստ պատկերի մերում եւ ըստ նմա-
նութեան, եւ իշխեսցեն ձկանց ծովու
եւ թռչնոց երկնից եւ անասնոյ եւ ամե-
նայն երկրի եւ ամենայն սողնոց որ սո-
27 ղին ի վերայ երկրի։ Եւ արար Աստուած
զմարդն ի պատկեր իւր. ըստ պատկե-
րի Աստուծոյ արար զնա, արու եւ էգ
28 արար զնոսա։ Եւ օրհնեաց զնոսա Աս-
տուած եւ [1]ասէ, Աճեցէք եւ բազմացա-
րուք եւ լցէք զերկիր, եւ տիրեցէք գմա,
եւ իշխեցէք ձկանց ծովու եւ թռչնոց
երկնից եւ ամենայն [2]անասնոյ եւ ամե-
նայն երկրի եւ ամենայն սողնոց՝ որ սո-
ղին ի վերայ երկրի։
29 Եւ ասաց Աստուած, Ահաւադիկ ետու
ձեզ զամենայն խոտ [3]սերմանելի՝ սերմա-
նել՝ սերմն, որ է ի վերայ ամենայն երկ-
րի, եւ զամենայն փայտ որ ունիցի յին-
քեան սերուզ սերման սերմանելոյ՝ ձեզ
30 լիցի ի կերակուր։ Եւ ամենայն գազա-
նաց երկրի, եւ ամենայն թռչնոց եր-
կնից, եւ ամենայն սողնոց որ սողին ի
վերայ երկրի՝ որ ունիցի չունչ կենդանի,
ամենայն խոտ դալար ի կերակուր. եւ
31 եղեւ այնպէս։ Եւ տես Աստուած զա-
մենայն զոր արար, եւ ահա բարի են
յոյժ. եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վազոր-
դայն, օր վեցերորդ։

Գլ. Բ

1 Եւ կատարեցան երկինք եւ երկիր եւ
2 ամենայն զարդ նոցա։ Եւ կատարեաց
Աստուած յաւուրն [4]վեցերորդի զգործս
իւր զոր արար, եւ հանգեաւ յաւուրն
եւ[թ]ներորդի յամենայն գործոց իւրոց զոր
3 արար։ Եւ օրհնեաց Աստուած զօրն եւ[թ]-
ներորդ եւ սրբեաց զնա, զի ի նմա հան-
գեաւ յամենայն գործոց իւրոց զոր սկսաւ
առնել Աստուած։
4 Այս [5]է ելեր արարածոց՝ երկնի եւ [6]երկ-
րի յաւուր յորում արար Աստուած զեր-
5 կինս եւ զերկիր, եւ զամենայն բանջար
վայրի՝ մինչչեւ լեալ էր ի վերայ երկ-
րի, եւ զամենայն խոտ վայրի մինչչեւ
բուսանել էր, զի չեւ եւս էր տեղացեալ
Տէրն Աստուածն ի վերայ երկրի. եւ
6 մարդ չէր որ գործէր զերկիր։ Բայց
[7]աղբիւր ելանէր յերկրէ եւ ոռոգանէր
7 զամենայն երեսս երկրի։ Եւ առեալ Տէր
Աստուած զմարդն հող յերկրէ. եւ փչեաց
[8]յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղեւ
մարդն յոգի կենդանի։
8 Եւ անկանոց [9]Աստուած դրախտն՝
յԵդեմ ընդ արեւելս, եւ եդ անդ զմարդն
9 զոր ստեղծ։ Եւ բուսոյց եւս Տէր Աս-
տուած յերկրէ զամենայն ծառ գեղեցիկ
ի տեսանել եւ քաղցր ի կերակուր, եւ
զծառն կենաց ի մէջ դրախտին, եւ
զծառն գիտելոյ զդիտութիւն բարւոյ եւ
10 չարի։ Եւ գետ ելանէր յԵդեմայ ոռոգա-
նել զդրախտն. եւ անտի բաժանի ի չորս
11 առաջս։ Անուն միումն Փիսոն. նա է
որ պատէ զամենայն երկիրն Եւիլատայ,
12 անդ ուր ոսկին է, եւ ոսկի երկրին այ-
նորիկ ազնիւ. եւ անդ է սուտակն եւ
13 ակն դահանակ։ Եւ անուն գետոյն երկ-
րորդի Գեհոնն. նա պատէ զամենայն եր-
14 կիրն [10]Եթովպացւոց։ Եւ գետն երրորդ՝
Տիկրիս, նա է որ երթայ [11]յանդիման Ա-
սորեստանի։ Եւ գետն չորրորդ Եփրատ
15 ա՛ն։ Եւ առ Տէր Աստուած զմարդն զոր
արար, եւ եդ զնա ի դրախտին [12]փափ-
16 կութեան գործել զնա եւ պահել։ Եւ
պատուիրեաց Տէր Աստուած Ադամայ եւ
ասէ, Ճաշինայն ծառոց որ է ի դրախ-
17 տի՝ ուտելով կերիցես. Բայց ի ծա-
ռոյն գիտութեան բարւոյ եւ չարի՝ մի
[13]ուտիցէք, զի յորում աւուր [13]ուտիցէք
ի նմանէ՝ մահու [14]մեռանիցիք։
18 Եւ ասաց Տէր Աստուած, Ոչ է բար-
ւոք մարդոյդ միայն լինել, [15]արասցուք
19 զնա օգնական ըստ նմա։ Եւ ստեղծ եւս
Տէր Աստուած[16] զամենայն գազանս վայ-
րի եւ զամենայն թռչունս երկնից. եւ
եաց զնոսա առ Ադամ տեսանել զինչ
կոչեսցէ զնոսա. եւ ամենայն չնչոյ
կենդանւոյ զինչ եւ անուանեաց Ադամ,
20 այն անուն է նորա։ Եւ կոչեաց Ադամ
անուանս ամենայն անասնոց, եւ ամենայն
թռչնոց երկնից, եւ ամենայն գազանաց
վայրի. բայց Ադամայ ոչ գտաւ օգնա-

---

[1]ԵՔԸ. ասէ ցնոսա Աստուած [2]ԵՔԸ. կենդանեաց [3]ԵՔԸ. որպ է [4]ԵՔԸ. եւ[թ]ներորդի [5]ԵՔԸ. են ծնունդք [6]ԵՔԸ. երկրի, յորժամ արարան նոքա, [7]ԵՔԸ. շոգի [8]ԵՔԸ. յանգունս [9]ԵՔԸ. Տէր Աստուած դրախտ [10]ԵՔԸ. Քուշայ [11]կամ, յարեւելս [12]ԵՔԸ. Եդեմայ [13]ԵՔԸ. ուտիցես ի նմանէ [14]ԵՔԸ. մեռանիցիս [15]ԵՔԸ. արարից [16]ԵՔԸ. յերէն յաւելու, ի հողոյ

21 կան նման նմա ։ Եւ արկ Տէր Աստուած թմրութիւն ի վերայ Ադամայ , եւ
22 նընջեաց . եւ առ մի ի կողից նորա եւ լից ընդ տեղի մարմին . Եւ չինեաց Տէր
23 Աստուած զկողն զոր առ յԱդամայ ի կին , եւ եած զնա առ Ադամ ։ Եւ ասէ Ադամ , Այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց եւ մարմին ի մարմնոյ իմմէ . սա կոչեսցի [1]կին , զի [2]յառնէ [3]իւրմէ առ
24 նէ ։ Վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր իւր , եւ երթիցէ զնեա կինոջ իւրոյ , եւ եղիցին երկուքեան մարմին մի ։ Եւ էին երկոքեան մերկ , Ադամ եւ կին իւր , եւ ոչ ամաչէին ։

Գլ . Գ

1 Եւ օձն էր [4]խոհեմագոյն քան զամենայն գազանս [5]որ ի վերայ երկրի՞ զոր արար Տէր Աստուած . եւ ասէ օձն կնկինն , [6]Զի՞ է զի ասաց՞ Աստուած մի՛ ցամենայն ծառոյ որ իցեն ի ներքս ի դրախտի այդր՝ մի՛
2 ուտիցէք ։ Եւ ասէ կինն օձին , ի պտղոյ
3 ծառոց դրախտիդ կերիցուք . Բայց ի պտղոյ ծառոյն՝ որ է ի մէջ դրախտին , ասաց Աստուած , Մի՛ ուտիցէք ի նմանէ , եւ մի՛ հպչիք , զի մի՛ մեռանիցիք ։ Եւ ասէ օձն կնկինն , Ոչ երի՛ մահու
5 մեռանիցիք . Զի գիտէր Աստուած մի՛ յորում աւուր ուտիցէք ի նմանէ , բացցին աչք ձեր , եւ լինիցիք իբրեւ զաստուածս՝ ճանաչել զբարի եւ զչար ։
6 Եւ տես կինն զի լաւ էր ծառն ի կերակուր եւ հաճոյ աչաց հայելոյ , եւ [7]գեղեցիկ ի տեսանել՞ . եւ առ ի պտղոյ նորա , եկեր . եւ ետ առն իւրում ընդ
7 իւր , եւ [8]կերան ։ Եւ բացան աչք երկոցունց , եւ գիտացին զի մերկ էին . եւ կարեցին տերեւս թզենւոյ , եւ արարին
8 իւրեանց սափրանոցիկս ։ Եւ լուան զձայն զգնացոյ Տեառն Աստուծոյ ի դրախտի անդ ընդ երեկս , եւ թաքեան Ադամ եւ կինն իւր յերեսաց Տեառն Աստուծոյ ի
9 մէջ ծառոց դրախտին ։ Եւ կոչեաց Տէր Աստուած զԱդամ , եւ ասէ ցնա , Ո՞ր
10 ես ։ Եւ ասէ , Լուայ զձայն քո ի դրախտի աստ եւ երկեայ , քանզի մերկ էի ,
11 եւ թաքեայ ։ Եւ ասէ ցնա , Ո՞ պատմեաց քեզ թէ մերկ ես . լայց մի՛ ի ծառոյն յորմէ պատուիրեցի քեզ անտի
[3]եւ մի՛ չուտել , կերար արդեւք ի նմա-
12 նէ ։ Եւ ասէ Ադամ , Կինն զոր ետուր ընդ իս՝ սա ետ ինձ ի ծառոյ անտի եւ
13 կերայ ։ Եւ ասէ Տէր Աստուած ցկինն , Զի՞նչ գործեցեր զայդ . եւ ասէ կինն , Օձն խաբեաց զիս , եւ կերայ ։ Եւ ասէ Տէր Աստուած ցօձն , Փոխանակ զի արարեր զդա զայն , անիծեալ լիցիր դու յամենայն անասունս եւ յամենայն գազանս երկրի . ի վերայ [3]յանջանց եւ՞ դու վայրի քո զնասցես , եւ հող կերիցես
15 զամենայն աւուրս կենաց քոց ։ Եւ ես պից թշնամութիւն ի մէջ քո եւ ի մէջ կնոջդ , եւ ի մէջ զաւակի քո եւ ի մէջ զաւակի դորա . նա [9]ապատեսցէ քեզ գլուխ , եւ դու ապատեսցես նորա դար-
16 չապարի՞ ։ Եւ ցկինն ասէ , Բազմացուցանելով բազմացուցից զտրտմութիւնս քո եւ [10]զհնձութիւնս քո . տրտմութեամբ ծնցես որդիս , եւ առ այր քո [11]դարձ քո ,
17 եւ նա տիրեսցէ քեզ ։ Եւ ցԱդամ ասէ , Փոխանակ զի լուար ձայնի կնոջդ քո , եւ կերար ի ծառոյ անտի յորմէ պատուիրեցի քեզ անտի [3]միայն չուտել , [3]եւ կերար ի նմանէ ;՞ անիծեալ լիցի երկիր
18 [12]ի գործս քո . տրտմութեամբ կերիցես զնա զամենայն աւուրս կենաց քոց .
19 Փուչ եւ տատասկ բուսուցանէ քեզ , եւ կերիցես զբանջար վայրի ։ Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո , մինչեւ դարձցիս յերկիր ուստի առար . զի հող էր եւ ի հող դարձցիս ։
20 Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ իւրոյ կեանս . զի նա է մայր ամենայն կենդանեաց ։ Եւ արար Տէր Աստուած Ա-
21 դամայ եւ կնոջ նորա հանդերձս մաշկեայս , եւ զգեցոյց զնոսա ։ Եւ ասէ Տէր Աստուած , Ահա Ադամ եղեւ իբրեւ զմի ի մէնջ՝ գիտել զբարի եւ զչար . եւ արդ զուցէ ձգիցէ զձեռն եւ առնուցու ի ծառոյն կենաց , ուտիցէ եւ կեցցէ յաւիտեան ։
23 Եւ հան զնա Տէր Աստուած ի դրախտէ անտի [13]փոփոխել զհողն յորմէ առաւ ։ Եւ հան զԱդամ , եւ բնակեցոյց յանդիման դրախտին [14]փակութեանն . եւ հրամայեաց քերովբէից եւ բոցեղէն սրոյ՞ չուրջանակաւ պահել զճանապարհն ծառոյն կենաց ։

---

[1]ԵԲԲ. Իշչա [2]ԵԲԲ. Իշ [3]ՅԵԲԲ. պ-ի-ե [4]ԼԲԲ. Խորագէտ [5]ԼԲԲ. վայրի [6]ԵԲԲ. Արդարեւ ասաց [7]Կահ, ցանկալի յաճախել իմաստուն [8]ԵԲԲ. կերաւ

[9]ԵԲԲ. խորտակեսցէ զգլուխ քո , եւ դու խորտակեսցես զգարշապար նորա [10]Կահ , զերկունս [11]ԼԲԲ. ցանկութիւն [12]ԼԲԲ. վասն [13]ԼԲԲ. Ներեմայ [14]ԼԲԲ. Եդեմայ զքերովբէս և զբոցեղէն սուրն

Գլ. Դ

1 Եմուտ Ադամ առ Եւայ կին իւր, եւ յղացաւ եւ ծնաւ զԿային. եւ ասէ,Ստացայ մարդ [1]Աստուծով։ 2 Եւ յաւել ծնանել զեղբայր նորա զՀաբէլ. եւ եղեւ Հաբէլ հովիւ խաչանց, եւ Կային գործ 3 ծէր զերկիր։ Եւ եղեւ յետ աւուրց հասեր Կային ի պտղոյ երկրի պատարագ 4 [2]Աստուծոյ. Այծ եւ Հաբէլ յանդրանկաց խաչանց իւրոց եւ ի պարարտաց նոցա. եւ հայեցաւ [3]Աստուած ի Հաբէլ եւ ի 5 պատարագս նորա, Եւ ի Կային եւ ի զոհս նորա ոչ նայեցաւ. եւ տրտմեցաւ Կային յոյժ, եւ խոնարհեցան անկան եր6 եսք նորա։ Եւ ասէ Տէր [4]Աստուած ցԿայէն, Ընդէ՞ր [5]տրտմեցար, եւ ընդէ՞ր խո7 նարհեցան անկան երեսք քո. Ո՞չ ապա քէն եթէ [6]ուղիղ մատուցանես, եւ ուղիղ ոչ լուծանես՝ մեղար. լռեա իւր, առ քեզ լիցի դարձ՝ նորա, եւ դու տիրեսցես նմա։

8 Եւ [7]ասէ Կային ցՀաբէլ եղբայր իւր, Եկ երթիցուք ի դաշտ՝. եւ եղեւ իբրեւ էզտան ի դաշտ անդր, յարեաւ Կային ի վերայ Հաբելի եղբօր իւրոյ եւ սպան 9 զնա։ Եւ ասէ Տէր [4]Աստուած ցԿային, Ո՞ր է Հաբէլ եղբայր քո։ Եւ նա ասէ, Չգիտեմ. միթէ պահապան իմում եղբօրն 10 իմոյ։ Եւ ասէ Աստուած, Զի՞նչ գործեցեր գայգ. գոչումն արեան եղբօր քո 11 բազմաբէ առ իս յերկրէ. Եւ արդ անիծեալ լիցէր դու ի վերայ երկրի, որ երաց զբերան իւր ընդունել զարիւն եղբօր քո 12 ի ձեռաց քոց. Զի գործեսցես զերկիր, եւ ոչ յաւելցէ տալ քեզ զզօրութիւն իւր. երերեալ եւ տատանեալ եղիցես 13 ի վերայ երկրի։ Եւ ասէ Կային ցՏէր [4]Աստուած, Մեծ է պատիժ իմ քան [8]զթո14 ղուլդ դիս". [9]Եթէ հանեա" զիս այսօր յերեսաց երկրէ, եւ յերեսաց քոց թաքեայց. եւ լինիցիմ երերեալ եւ տատանեալ յերկրի, եւ եղիցի ամենայն որ 15 գտանիցէ զիս՝ սպանցէ զիս։ Եւ ասէ ցնա Տէր [4]Աստուած, Ոչ այդպէս. ամենայն որ սպանանէ զԿային, եւթն վրէժ լուծցէ. եւ եդ Տէր [4]Աստուած նշան ի Կային՝ չսպանանել զնա ամենայնի որ գտանիցէ զնա։

16 Եւ ել Կային յերեսաց [10]Աստուծոյ, եւ բնակեցաւ յերկրին Նայիլ յանդիման Եւ17 դեմայ։ Եմուտ Կային առ կին իւր, եւ յղացաւ եւ ծնաւ զԵնովք. եւ չինէր քաղաք, եւ գինէր անուն քաղաքին յանուն 18 որդւոյ իւրոյ Ենովքայ։ Եւ եղեւ որպէս Ենովքայ Գայերիդադ, եւ Գայերիդադ ծնաւ զՄայիէլ, եւ Մայիէլ ծնաւ զՄաթուսաղա, եւ Մաթուսաղա ծնաւ զԼա19 մէք։ Եւ առ իւր Ղամէք երկուս կանայս. անուն միումն Ադդա, եւ անուն 20 երկրորդին Սէլլա. Եւ ծնաւ Ադդա զՅովբէլ. Նա է հայր այնոցիկ որ բնակեալ 21 են ի վրանս խաչնարածաց. Եւ անուն եղբօր նորա Յուբալ. Նա է հայր որ եւ 22 ցոյց զերգս եւ զքնարս։ Եւ Սէլլա ծնաւ զԹուբալքէն, եւ էր ճարտարապետ զարդին՝ պղնձոյ եւ երկաթոյ. եւ քոյր Թուբալ23 քայ Նոյեմա։ Եւ ասէ Ղամէք ցկանայս իւր ցիադդա եւ ցՍէլլա, Լուարուք ձայնի իմում, կանայք Ղամէքայ, եւ ունկն դիք բանիւ իմոց. զի այր սպանի ի վէրս ինձ, եւ երիտասարդ՝ ի հարուածս 24 ինձ. Զի թէ եւթն անգամ վրէժք խնդրիցին ի Կայենէ, ապա եւ ի Ղամէքայ եւթանասնեւկին եւթն։

25 Եմուտ Ադամ առ Եւայ կին իւր, եւ յղացաւ եւ ծնաւ որդի, եւ անուանեաց զանուն նորա Սէթ. ասէ, Զի յարոյց ինձ Աստուած զաւակ այլ՝ փոխանակ 26 Հաբելի զոր սպանն Կային։ Եւ Սէթայ եղեւ որդի, եւ անուանեաց զանուն նորա Ենովս. [11]նա յուսացաւ կոչել զանուն Տեառն Աստուծոյ"։

Գլ. Ե

1 Ա՛յս է գիր [12]արարածոց մարդկան", յաւուր յորում արար Աստուած զԱդամ, ըստ պատկերի Աստուծոյ ստեղծ զնա. 2 Արու եւ էգ արար զնոսա, եւ օրհնեաց զնոսա, եւ անուանեաց զանուն նոցա [13]ադամ, յաւուր յորում արար զնոսա։

3 Եկեաց Ադամ ամս [14]երկերիւր եւ երեսուն, եւ ծնաւ ըստ կերպարանաց իւրոց եւ ըստ պատկերի իւրում, եւ

---

[1] ՆԲՓ. Տերամբ [2] ՆԲՓ. Տեառն [3] ՆԲՓ. Տէր [4] ՅՃԲՓ. գԼՈՒԹ [5] ՆԲՓ. բարկացար [6] ՆԲՓ. բարեաւ գործես, եղիցի ընդունելի, և եթէ բարեաւ ոչ գործիցես, մեղք (կամ, պատարագ մեղաց) կանառ դուրս. և առ քեզ լիցի ցանկութիւն [7] ՆԲՓ. խօսեցաւ Կային առ Հաբէլ եղբայր իւր [8] ՆԲՓ. զկար իմ կամ, զներել թողութեան [9] ՆԲՓ. Ահա հաներ

[10] ՆԲՓ. Տեառն [11] ՆԲՓ. յայնժամ սկիզբն եղեւ կոչելոյ յանուն Տեառն [12] ՆԲՓ. ծննդոց Ադամայ [13] Ա. ՅԷՆՔ, մարդ [14] ՆԲՓ. Հարեւր

4 անուանեաց զանուն նորա Սէթ ։ Եւ ե-
ղեն աւուրք Ադամայ յետ ծնանելոյ նո-
ր զՍէթ ամս [1]եւթն հարիւր , եւ ծնաւ
5 ուսս եւ դստեր ։ Եւ եղեն ամենայն
աւուրք Ադամայ զորս եկեաց՝ ամս հինգ
հարիւր եւ երեսուն , եւ մեռաւ ։
6 Եւ եկեաց Սէթ ամս [2]երկերիւր եւ հինգ ,
7 եւ ծնաւ զԵնովս . Եւ եկեաց Սէթ յետ
ծնանելոյ նորա զԵնովս ամս [1]եւթն հարիւր
եւ եւթն , եւ ծնաւ ուսս եւ դստեր .
8 Եւ եղեն ամենայն աւուրք Սեթայ ամք
հինգ հարիւր եւ երկուասան , եւ մեռաւ ։
9 Եւ եկեաց Ենովս ամս [3]հարիւր եւ՝
10 ինսուն , եւ ծնաւ զԿայնան . Եւ եկեաց
Ենովս յետ ծնանելոյ նորա զկայնան
ամս [1]եւթն հարիւր եւ հնգետասան , եւ
11 ծնաւ ուսս եւ դստեր . Եւ եղեն ա-
մենայն աւուրք Ենովսայ ամք հինգ հա-
րիւր եւ հինգ , եւ մեռաւ ։
12 Եւ եկեաց Կայնան ամս [3]հարիւր եւ՝
եւթանասուն , եւ ծնաւ զՄաղաղայէլ .
13 Եւ եկեաց Կայնան յետ ծնանելոյ նորա
զՄաղաղայէլ ամս [1]եւթն հարիւր եւ քա-
ռասուն , եւ ծնաւ ուսս եւ դստեր .
14 Եւ եղեն ամենայն աւուրք Կայնանայ
ամք հինգ հարիւր եւ տասն , եւ մեռաւ ։
15 Եւ եկեաց Մաղաղայէլ ամս [3]հարիւր
եւ՝ վեթասուն եւ հինգ , եւ ծնաւ զՅարէդ .
16 Եւ եկեաց Մաղաղայէլ յետ ծնանելոյ նորա
զՅարէդ ամս [1]եւթն հարիւր եւ երեսուն ,
17 եւ ծնաւ ուսս եւ դստեր . Եւ եղեն
ամենայն աւուրք Մաղաղայելի ամք ութ
հարիւր եւ ինսուն եւ հինգ , եւ մեռաւ ։
18 Եւ եկեաց Յարէդ ամս հարիւր եւ
վեթասուն եւ երկու , եւ ծնաւ զԵնովք ։
19 Եւ եկեաց Յարէդ յետ ծնանելոյ նորա
զԵնովք՝ ամս ութ հարիւր , եւ ծնաւ
20 ուսս եւ դստեր ։ Եւ եղեն ամենայն
աւուրք Յարեդի ամք հինգ հարիւր վեթա-
սուն եւ երկու , եւ մեռաւ ։
21 Եւ եկեաց Ենովք ամս [3]հարիւր վեթա-
սուն եւ հինգ , եւ ծնաւ զՄաթուսաղ
22 զա ։ Եւ [4]հաճոյ եղեւ Ենովք՝ Աստուա-
ծոյ յետ ծնանելոյ նորա զՄաթուսաղա՝
ամս [5]երկերիւր . եւ ծնաւ ուսս եւ
23 դստեր ։ Եւ եղեն ամենայն աւուրք Ե-
նովքայ ամք երեք հարիւր եւ վեթասուն
24 եւ հինգ ։ Եւ [4]հաճոյ եղեւ Ենովք՝ Ա-
աուածոյ . եւ ոչ ուրեք գտանէր , զի վա-
խեաց զնա Աստուած ։
25 Եւ եկեաց Մաթուսաղա ամս հարիւր
ութսուն եւ եւթն , եւ ծնաւ զԼամէք ։
26 Եւ եկեաց Մաթուսաղա յետ ծնանելոյ
նորա զԼամէք ամս եւթն հարիւր ութ-
սուն եւ երկու , եւ ծնաւ ուսս եւ
27 դստեր ։ Եւ եղեն ամենայն աւուրք
Մաթուսաղայի զորս եկեաց՝ ամք հինգ
հարիւր վեթասուն եւ հինգ , եւ մեռաւ ։
28 Եւ եկեաց Լամէք ամս հարիւր ութ-
29 սուն եւ [6]ութ , եւ ծնաւ որդի . Եւ ա-
նուանեաց զանուն նորա [7]Նոյ . ասէ ,
Սա հանգուսցէ զմեզ ի գործոց մերոց
եւ ի տրտմութենէ ձեռաց մերոց , [8]եւ
30 յերկրէ զոր անէծ Տէր Աստուած ։ Եւ
եկեաց Լամէք յետ ծնանելոյ նորա զՆոյ՝
ամս հինգ հարիւր եւ [9]վեթասուն եւ հինգ ,
31 եւ ծնաւ ուսս եւ դստեր ։ Եւ ե-
ղեն ամենայն աւուրք Լամէքայ ամք
եւթն հարիւր [9]յիսուն եւ երեք՝ , եւ մե-
32 ռաւ ։ Եւ էր Նոյ ամաց հինգ հարիւրից ,
եւ ծնաւ Նոյ [3]երիս որդիս ,՝ զՍէմ ,
զՔամ , եւ զՅարէթ ։

Գլ. Զ.

1 Եւ եղեւ իբրեւ սկսան մարդիկն բազ-
մանալ ի վերայ երկրի , եւ դստերք
2 ծնան նոցա , Տեսեալ որդւոցն Աստուծոյ
զդստերս մարդկան զի գեղեցիկ էին ,
առին իւրեւանց կանայս յամենեցունց զոր
3 ընտրեցին ։ Եւ ասէ Տէր [3]Աստուած , Մի
մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայսմիկ
յաւիտեան , վասն լինելոյ զոգւոց մարմնոյ .
եւ եղիցին աւուրք զոգւոց ամք հարիւր
4 քսան ։ Եւ սակաւք էին ի վերայ երկրի
յաւուրսն յայնոսիկ . եւ յետ այնորիկ
իբրեւ մտանէին որդիքն Աստուծոյ առ
դստերսն մարդկան , եւ ծնանն [10]իւրեանց
որդիս , նոքա էին սակաւքն որ յաւիտե-
5 նից անուանիք ։ Եւ իբրեւ եահս
Տէր [3]Աստուած եմիջ բազմութեան չարիք
մարդկան ի վերայ երկրի , եւ ամենայն
ոք խորհէր ի սրտի իւրում լինիմոլ ի
6 չարիս զամենայն աւուրս , Եւ ապաշաւ
[11]Աստուած զի արար զմարդն ի վերայ երկ-
րի , եւ մտախոհ եղեւ ի սրտի իւրում ,
7 Եւ ասէ Տէր [3]Աստուած , Ջնջեցից [12]զա-
մենայն մարմին՝ զոր արարի յերեսաց

---

[1] Ձեռ. ութ [2] Ձեռ. հարիւր [3] Յիշ. դ-ի-ւ-ր
[4] Ձեռ. գնաց ենովք ընդ [5] Ձեռ. երիւր հարիւր
[6] Ձեռ. երկու [7] Այլազն. Հանգիստ [8] Ձեռ. լինասցեն
[9] Ձեռ. եւ թանասուն և եւթն [10] Ձեռ. նոցա
[11] Ձեռ. Տէր [12] Ձեռ. զմարդն

երկրէ , ի մարգոյ մինչեւ յանասուն , եւ
ի սղոյոյ մինչեւ ի թռչունս երկնից, զի
8 [1]բարկացայ զի արարի զնոսա : Բայց Նոյ
եգիտ շնորհս առաջի Տեառն [2]Աստուծոյ։
9 Եւ սյս են ծնունդք Նոյի. Նոյ այր արդար կատարեալ էր յազգի անդ իւրում.
10 եւ [3]հաճոյ եղեւ Նոյ" Աստուծոյ : Եւ
ծնաւ Նոյ երիս որդիս , զՍէմ, զՔամ,
11 զՅաբեթ։ Եւ ապականեցաւ երկիր առաջի
Աստուծոյ , եւ լցաւ երկիր անիրաւութեամբ։
12 Թեամբ : Եւ եահս [2]Տէր Աստուած զերկիր , եւ էր ապականեալ . զի ապականեցոյց ամենայն մարմին զճանապարհ իւր
13 ի վերայ երկրի : Եւ ասէ [2]Տէր Աստուած
ցՆոյ , [4]Ժամանակ ամենայն մարդոյ"
հասեալ է առաջի իմ , զի լցաւ երկիր
անիրաւութեամբք ի նոցանէ . Եւ սյս
եմ ապականեցից զնոսա եւ զերկիր ։
14 Արդ արա դու քեզ տապան ի [5]չորեքկուսի փայտից . խորչս խորչս զործեսցես զտապանն , եւ նստցիս ծեփեսցես
15 զնա ներքոյ եւ արտաքոյ։ Եւ այսպէս արասցես զտապանն. յերիք հարեւր կանգնոյ զերկայնութիւն տապանին , եւ ի յիսուն կանգնոյ զլայնութիւնն , եւ յերե-
16 սուն կանգնոյ զբարձրութիւնն ։ [6]Քազեւլով զործեսցես զտապանն", եւ ի մի
կանգուն կատարեսցես զնա ի վերուստ,
եւ զդուռն տապանին ի կողմանէ տապասցես . ներքնատունս եւ միջնատունս
17 եւ վերնատունս զործեսցես ի նմա ։ Եւ
սյս ես ածից զջրհեղեղ ջրոյ ի վերայ
երկրի , ապականել զամենայն մարմին
յորում է շունչ կենդանի ի ներքոյ երկնից . եւ ինչ որ իցէ ի վերայ երկրի՝
18 սատակեսցի ։ Եւ եղիցի զուարթ իմ ընդ
քեզ , եւ մտցես ի տապանն դու եւ որդիք քո եւ կին քո եւ կանայք որդւոց
19 քոց ընդ քեզ ։ Եւ յամենայն անասնոյ եւ
յամենայն պտղանոյ եւ յամենայն մարմնոյ՝ երկու երկու յամենայնէ մուծցես ի
տապանն բուծանել ընդ քեզ . արու եւ
20 էգ լինիցին ։ Յամենայն հաւուց թռչնոյ
ըստ ազգի , եւ յամենայն անասնոյ ըստ
ազգի , եւ յամենայն սղոյոյ երկրի ըստ
ազգի իւրմանց . երկու երկու յամենայնէ մտանիցեն սա քեզ [7]կենդանիս ընդ
21 քեզ՝ արու եւ էգ"։ Եւ դու առնուցես

[1] Ելք. սպրծացայ [2] Ելք. պ-ի-ս [3] Ելք զնաց Նոյ ընդ [4] Ելք. Վախճան ամենայն մարմնոյ
[5] Ելք. գոփեր, ոչ ինչ մայրէ [6] Ելք. Լուսամուտս գործեսցես տապանին [7] Ելք. զի կեցցեն

քեզ յամենայն կերակրոց [8]զոր ուտիցէք",
եւ ժողովեսցես դու առ քեզ . եւ եղիցի
22 քեզ եւ նոցա կերակուր ։ Եւ արար Նոյ
զամենայն զոր միանգամ պատուիրեաց
նմա [2]Տէր Աստուած , նոյնպէս եւ արար։

Գլ. է

1 Եւ ասէ Տէր [2]Աստուած ցՆոյ , Մուտ
դու եւ ամենայն տուն քո ի տապանդ.
զի զքեզ տեսի արդար առաջի իմ յազ-
2 գիդ յայդմիկ ։ Եւ յամենայն անասնոյ
սրբոյ մոյծ ընդ քեզ եւթն եւթն արու
եւ էգ , եւ յամենայն անասնոյ որ ոչ են
3 սուրբ՝ երկուս երկուս արու եւ էգ. Եւ
ի թռչնոյ երկնից [3]սրբոց՝ եւթն եւթն
արու եւ էգ , [2]Եւ ի թռչնոց որ ոչ սուրբ
են՝ երկու երկու արու եւ էգ," բուծանել զաւակ ի վերայ ամենայն երկրի ։
4 Եւ այլ եւս եւթն օր , եւ ածից ես անձրեւ ի վերայ երկրի զքառասուն տիւ եւ
զքառասուն գիշեր , եւ ջնջեցից զամենայն հաստակ զոր արարի յերեսաց երկ-
5 րէ ։ Եւ արար Նոյ զամենայն զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր [2]Աս-
6 տուած ։ Նոյ էր ամաց վեց հարիւրոց ,
եւ ջրհեղեղ ջուրցն եղեւ ի վերայ երկրի։
7 Եւ եմուտ Նոյ եւ որդիք իւր եւ կին
նորա եւ կանայք որդւոց նորա ընդ նմա
8 ի տապանն վասն ջուրցն հեղեղի ։ [2]Եւ
ի թռչնոյ սրբոյ , եւ ի թռչնոց որ ոչ
սուրբ էին , եւ" յանասնոյ սրբոյ , եւ
յանասնոյ որ ոչ սուրբ են, [9]Եւ յամենայն սողնոյ որ սողի ի վերայ երկրի ,
9 երկու երկու մտին առ Նոյ ի տապան
անդր՝ արու եւ էգ , որպէս պատուե-
10 բեաց [10]նմա Տէր" Աստուած ։ Եւ եղեւ
յետ եւթն աւուր , եւ ջուր ջրհեղեղին
11 եղեւ ի վերայ երկրի , Յամին վեցհարիւրերորդի կենացն Նոյի , յերկրորդում
ամսեանն [11]ի քսան եւ չեւթն" ամսոյն .
[12]Եւ պատառեցան ամենայն աղբերք
անդնդոց բաղմաց , եւ ահաւանք երկնից
12 բացան . Եւ եղեւ անձրեւ ի վերայ երկրի զքառասուն տիւ եւ զքառասուն գի-
13 շեր ։ Յաւուր յայնմիկ եմուտ Նոյ , Սէմ,
Քամ , Յաբեթ , որդիք Նոյի , եւ կին Նոյ, եւ երիք կանայք որդւոց նորա ընդ
14 նմա ի տապան անդր . Նոքա եւ ամենայն գազանք ըստ ազգի , եւ ամենայն
անասուն ըստ ազգի իւրմանց , եւ ամե-

[8] Ելք. որ ուտին [9] Ելք. և ի թռչնոց և. [10] Ելք. Նոյի
[11] Ելք. յեւթն և տասն [12] Ելք. յաւուր յայնմիկ

նայն սողուն չարժուն ի վերայ երկրի
ըստ ազգի իւրեանց, եւ ամենայն հաւ
15 թուչուն ըստ ազգի իւրում, Մարն առ
Նոյ ի տապան անդր երկու երկու յամե-
նայն մարմնոյ յորում է չունչ կենդանի։
16 Եւ որ մտանէին՝ արու եւ էգ յամե-
նայն մարմնոյ մտանէին, որպէս պա-
տուիրեաց Աստուած Նոյի. եւ փակեաց
Տէր [1]Աստուած զդուռնն տապանին զա-
17 պանն։ Եւ եղեւ ջրհեղեղ գքառասուն
աւր [1]եւ գքառասուն գիշեր՝ ի վերայ երկ-
րի. եւ բազմացաւ ջուրն եւ վերացոյց
18 զտապանն եւ բարձրացաւ յերկրէ։ Եւ
զօրանայր ջուրն եւ բազմանայր յոյժ ի
վերայ երկրի, եւ չրջէր տապանն ի վե-
19 րոյ ջրոց։ Եւ սաստկանայր ջուրն յոյժ
յոյժ ի վերայ երկրի, եւ ծածկէր զամե-
նայն լերինս բարձունս որ էին ի տակ-
20 քոյ երկնից։ Հնգետասան կանգուն բարձ-
րացաւ ջուրն ի վեր, եւ ծածկեաց զամե-
21 նայն լերինս։ Եւ մեռաւ ամենայն մար-
մին չարժուն ի վերայ երկրի, թռչնոց
եւ անասնոց եւ գազանաց. եւ ամենայն
սողուն զեռուն ի վերայ երկրի, եւ ա-
22 մենայն մարդ։ Ամենայն որ ունէր չունչ
կենդանի յռնգունս իւր, եւ ամենայն
որ ինչ էր ի վերայ ցամաքի՝ մեռաւ։
23 Եւ ընկեաց զամենայն հասակ որ էր ի
վերայ երեսաց երկրի, ի մարդոյ մինչեւ
յանասունն եւ ի սողնոց մինչեւ ի թռչունս
երկնից, եւ ընկեցան յերկրէ. եւ մնաց
միայն Նոյ եւ որ ընդ նմա էին ի տապանի
24 անդ։ Եւ բարձրացաւ ջուրն ի վերայ երկրի
աւուրս հարիւր եւ յիսուն։

Գ Լ. Ը

1 Եւ յիշեաց Աստուած զՆոյ եւ զամե-
նայն գազանս եւ զամենայն անասունս
[1]եւ զամենայն թռչունս՝ որ էին ընդ
նմա ի տապանի անդ. եւ ած Աստուած
հողմ ի վերայ երկրի, եւ դադարեաց
2 ջուրն։ Եւ խցան աղբիւրք անդնդոց
եւ ահանք երկնից, եւ արգելաւ անձ-
3 րեւ յերկնից։ Եւ դիմէանէր տակաւ, եր-
թայր ջուրն եւ [2]նուազէր ջուրն յետ հարիւր եւ յիսուն
4 աւուր։ [2]Եւ նստաւ տապանն յեւթներ-
որդում ամսեանն [3]ի քսան եւ եւթն՝
5 ամսոյն ի լերինս Արարատայ։ Եւ ջուրն
երթայր եւ նուազէր մինչեւ ի տասներ-
որդ ամիսն. իսկ յամսեանն [3]մեռաս-
անեւորդի, որ օր առաջին էր ամսոյն՝
երեւեցան գլուխք լերանց։
6 Եւ եղեւ յետ քառասուն աւուր եւ
բաց Նոյ զպատուհան տապանին զոր ա-
7 րար. Եւ արձակեաց զագաւն, եւ կր
եւ անդրէն ոչ գարձաւ մինչեւ ցցամա-
8 քել ջրոյն յերկրէ։ Եւ արձակեաց զա-
ղաւնին [4]զնոտա՝ տեսանել եթէ ցա-
9 ծուցեալ իցէ ջուրն յերեսաց երկրի. Եւ
չգտեալ ազաւնին հանգիստ ոտից իւ-
րոց՝ գարձաւ անդրէն առ նա ի տապան
անդր. զի ջուր դեռ ունէր զամենայն
երեսս երկրի. եւ ձգեալ զձեռն եւ ըն-
կալաւ զնա, եւ առ զնա անդրէն առ իւր
10 ի տապան անդր։ Եւ դադարեաց եւս ա-
ւուրս եւթն, եւ գարձաւ արձակեաց
11 զաղաւնին ի տապանէ անտի. Եւ գարձաւ
առ նա ազաւնին ընդ երեկս, եւ ունէր
տերեւ ձիթենւոյ չկղ ի բերան իւրում.
եւ գիտաց Նոյ, թէ ցածուցեալ են ջուրքն
12 յերկրէ։ Եւ դադարեաց աւուրս եւթն
եւս, եւ գարձեալ արձակեաց զաղաւնին,
եւ ոչ եւս յաւել զառնալ առ նա։
13 Եւ եղեւ ի վերջ հարիւրորդի եւ ի մի-
ում ամի, [4]կենդանոյ Նոյի՝ յամսեանն ա-
ռաջնում որ օր մի էր ամսոյն, նուա-
զեաց ջուրն յերեսաց երկրէ. եւ երաց Նոյ
զձեղուն տապանին զոր արար, եւ եհաս
զի նուազեալ էր ջուրն յերեսաց երկրէ։
14 Իսկ յամսեանն երկրորդի, որ օր քսան
եւ եւթն էր ամսոյն՝ ցամաքեցաւ երկիր։
15 Եւ խօսեցաւ [1]Տէր Աստուած ընդ Նո-
16 յի եւ ասէ, Ել ի տապանէ այսր դու
եւ կինն քո եւ որդիք քո եւ կանայք
17 որդւոց քոց ընդ քեզ, Եւ ամենայն գա-
զանք որ են ընդ քեզ, եւ ամենայն մար-
մին ի թռչնոց մինչեւ ցանասունս. եւ
զամենայն սողուն զեռուն երկրի հան
ընդ քեզ, եւ զեռասցեն ի վերայ երկ-
րի. եւ [5]աճեսջիք եւ բազմացարուք՝ ի
18 վերայ երկրի։ Եւ ել Նոյ եւ կինն նորա
եւ որդիք նորա եւ կանայք որդւոց նո-
19 րա ընդ նմա. Եւ ամենայն գազանք եւ
ամենայն սողուն չարժուն եւ ամենայն
թռչուն երկրէ ըստ ազգի իւրեանց եւ
ելին ի տապանէ անտի։
20 Եւ չինեաց Նոյ [6]սեղան [7]Աստուծոյ,
եւ առ յամենայն անասնոց սրբոց եւ յա-

[1]3ԵՔ. զամենայն [2]2ԵՔ. յեւթն և տասն
[3]1ԵՔ. տասներորդի [4]1ԵՔ. յիւրմէ [5]1ԵՔ. ա-
ճեսցեն և բազմասցին [6]1ԵՔ զՏէրանոց, այ-
սինքն ի բազում տեղիս [7]1ԵՔ. Տեառն

մինայն Թագաւոր արդար, եւ նման ոզջա-
21 կէզ ի վերայ անգանին. Եւ հաստատե-
ցաւ Տէր [1]Աստուած ի հաւ անուչիչ։
Եւ ասէ Տէր [1]Աստուած՝ ածեալ զմասս,
Ոչ եւս յաւելից անվճանել զերկիր վասն
գործոց մարդկան, զի միայն մարդոյ
հաստատեալ են ի խնամս չարի ի մանկ-
22 տիւնէ իւրմէ. արդ ոչ եւս յաւելից
հարկանել զամենայն մարմին կենդանի
արարչ արարի. Այսու հետեւ զամենայն
աւուրս երկրի՝ սերմն եւ հունձք, ցուրտ
եւ տօթ, ամառն եւ [2]գարուն, [3]գարն
եւ ձմեռն՝ մի՛ դադարեսցին։

ԳԼ. Թ

1 Եւ օրհնեաց Աստուած զՆոյ եւ զորդիս նորա, եւ ասէ ցնոսա, Աճեցէք եւ
բազմացարուք եւ լցէք զերկիր [1]եւ ակ-
2 նեցէք զմա՛. Եւ ահ եւ երկիւղ ձեր եւ
վեղն ի վերայ ամենայն գազանաց երկ-
րի, եւ ի վերայ ամենայն թռչնոց երկ-
նից, եւ ի վերայ ամենայն սողոց երկ-
րի, եւ ի վերայ ամենայն ձկանց ծո-
վու, զորս ընդ ձեռամբ ձերով եանաւ։
3 Եւ ամենայն գազան որ է կենդանի՝ ձեզ
լիցի ի կերակուր. իբրեւ զբանջար խոտոց
4 տաւ ձեզ զամենայն։ Բայց զմիս ա-
րեամբ չնչոյ մի՛ ուտիցէք. Քանզի եւ
զձեր արիւն չնչոյ խնդրեցից. ի ձեռաց
ամենայն գազանաց խնդրեցից զնա եւ
ի ձեռաց մարդոյ. ի ձեռաց առն զչունչ
6 եղբօր իւրոյ խնդրեցից։ Որ հեղու զա-
րիւն մարդոյ, փոխանակ արեան նորա
հեղցի արիւն նորա. զի ի պատկեր Աս-
7 տուծոյ [4]արարի եւ՝ զմարդն. Այլ զուք
աճեցէք եւ բազմացարուք եւ լցէք զեր-
կիր, եւ բազմացարուք ի վերայ գորա։
8 Եւ խօսեցաւ [1]Տէր Աստուած ընդ Նո-
ա եւ ընդ որդիս նորա որ ընդ նմա էին
9 եւ ասէ, Եւ ահաւասիկ ես հաստատեմ
զուխտ իմ ընդ ձեզ, եւ ընդ զաւակի
10 ձերում յետ ձեր. Եւ ընդ ամենայն չնչոյ
կենդանւոյ որ ընդ ձեզ են, ի թռչնոց
եւ յանասնոց եւ յամենայն գազանաց
երկրի որ ընդ ձեզ, եւ յամենեցունց որ
ելին ի տապանէ անտի, եւ յամենայն
11 անասնոց երկրի։ Եւ հաստատեցից զուխտ
իմ ընդ ձեզ. եւ ոչ եւս մեռանիցէ ա-
մենայն մարմին ի ջրհեղեղէ, եւ ոչ եւս
եղիցի ջրհեղեղ ջնջել զամենայն երկիր։
12 Եւ ասէ [1]Տէր Աստուած [1]ցնոսա, Այս է նշան ուխտին զոր ես տայ
ընդ իս եւ ընդ ձեզ, եւ ի մէջ ամենայն
չնչոյ կենդանւոյ որ է ընդ ձեզ, յաւիտ-
13 եանից. Զաղեղն իմ եդից յամպս,
եւ եղիցի ի նշանակ յաւիտենական ու-
խտին ընդ իս եւ ընդ ամենայն երկիր։
14 Եւ եղիցի ի դնել իմում զամպս ի վե-
րայ երկրի, երեւեսցի աղեղն իմ յամպս.
15 Եւ յիշեցից զուխտ իմ որ ընդ իս եւ ընդ
ձեզ, եւ ի մէջ ամենայն չնչոյ կենդան-
ւոյ յամենայն մարմնի. եւ ոչ եւս ե-
ղիցի ջրհեղեղ ի սատակել զամենայն
16 մարմին։ Եւ եղիցի աղեղն իմ յամպս,
եւ տեսից՝ յիշել զուխտն յաւիտենական
ի մէջ իմ եւ ի մէջ ամենայն չնչոյ կեն-
դանւոյ յամենայն մարմնի որ է ի վերայ
17 երկրի։ Եւ ասէ Աստուած ցՆոյ, Այս է
նշան ուխտին զոր [5]ուխտեցի ես ընդ իս
եւ [1]ընդ ձեզ, եւ՝ ի մէջ ամենայն մարմ-
նոյ որ է ի վերայ երկրի։
18 Եւ էին որդիք Նոյի որ ելին ի տա-
պանէ անտի, Սէմ, Քամ, Յաւէթ. Քամ
19 էր հայր Քանանաց։ Երիք սոքա էին որ-
դիք Նոյի, եւ ի սոցանէ սփռեցան ընդ
ամենայն երկիր։
20 Եւ սկսաւ Նոյ, այր հողագործ, [1]ներ-
21 կիր գործել։ եւ անկեաց այգի, Եւ արբ
ի գինւոյն եւ արբեցաւ, եւ մերկացաւ
22 [6]ի տան իւրում։ Եւ եահս Քամ, հայր
Քանանաց, զմերկութիւն հօր իւրոյ եւ
եկ պատմեաց երկուց եղբարց իւրոց ար-
23 տաքոյ։ Եւ առեալ Սեմայ եւ Յաւէթի
հանդերձ, եդին ի վերայ թիկանց երկու-
ցունց, եւ գնացին յետս յետս եւ ծած-
կեցին զմերկութիւն հօրն իւրեանց. եւ
դիմեալ իւրեանց յետս ընդդէմ ունէին,
եւ զմերկութիւն հօրն իւրեանց ոչ տես-
24 սին։ Եւ սթափեցաւ Նոյ ի գինւոյ ան-
տի իւրմէ, եւ գիտաց զինչ արար ընդ
25 նա որդին իւր կրտսեր, եւ ասէ, Անի-
ծեալ Քանան, [7]մանուկ, եւ եղիցի ծա-
26 ռայ՝ եղբարց իւրոց։ Եւ ասէ, Օրհնեալ
Տէր [1]Աստուած, Աստուած Սեմայ, եւ
27 եղիցի Քանան ծառայ [8]նորա. Ընդար-
ձակեսցէ Աստուած Յաւէթի, եւ բնա-
կեսցէ [9]ի տան Սեմայ, եւ եղիցի Քա-
նան ծառայ [10]նոցա։

---

[1]ՆԵԲ. գ-ԻՀ-Ե [2]ՆԵԲ. ձմեռն [3]ՆԵԲ. ախ և գիշեր [4]ՆԵԲ. արար

[5]ՆԵԲ. հաստատեցի [6]ՆԵԲ. ի խորանի [7]ՆԵԲ. եղիցի ծառայ ծառայից [8]ԿՈՖ. նոցա [9]ՆԵԲ. ի խոբանս [10]ԿՈՖ. նորա

28 Եւ հկաայ Նոյ յետ ջրհեղեղին ամս
29 երիք հարիւր եւ յետոյն : Եւ եղեն ա-
մենայն աւուրք Նոյի ամք հինն հարիւր
եւ յետոյն , եւ մեռաւ :

Գլ. Ժ

1 Եւ սա են ծնունդք որդւոցն Նոյի .
Սէմ , Քամ , Յաբեթ . եւ ծնան նոցա
որդիք յետ ջրհեղեղին :
2 Որդիք Յաբեթի՝ Գամեր եւ Մագովգ
եւ Մադա եւ Յաւան եւ [1]Ելիսա եւ Թո-
3 բէլ եւ Մոսոք եւ Թիրաս : Եւ որդիք
Գամերայ՝ Ասքանազ եւ Րիփաթ եւ Թով-
4 գոմա : Եւ որդիք Յաւանայ՝ Ելիսա եւ
5 Թարսիս , Կիտացիք եւ [2]Ռոդացիք : Եւ
ի սոցանէ մեկնեցան կղզիք ազգաց յերկ-
րի իւրեանց , իւրաքանչիւր՝ ըստ լեզուս
յազգս իւրեանց եւ ի տոհմս իւրեանց :
6 Եւ որդիք Քամայ՝ Քուշ եւ Մեսրաիմ,
7 Փուտ եւ Քանան : Եւ որդիք Քուշայ՝
Սաբա եւ Եւիլա եւ Սաբաթա եւ Ռեգ-
մա եւ Սաբակաթա . եւ որդիք Ռեգմայ՝
8 Սաբա եւ Յուդադան : Եւ Քուշ ծնաւ
զՆեբրովէ . նա սկսաւ լինել սկայ ի վի-
9 բայ երկրի : Եւ նա էր սկայ որսորդ ա-
ռաջի Տեառն [1]Աստուծոյ . վասն այնորիկ
ասեն , Իբրեւ զՆեբրովէ սկայ առաջի
10 Տեառն [1]Աստուծոյ : Եւ եղեւ սկիզբն
թագաւորութեան նորա Բաբելովն եւ
Որէք եւ Աքադ եւ Քալանէ յերկրին Սե-
11 նաար : Յերկրէն յայնմանէ ել Ասուր եւ
շինեաց զՆինուէ եւ զՌոսաւէմ քաղաք
12 եւ զՔաղան, Եւ [3]զԴասեման ի մէջ Նի-
նուէի եւ ի մէջ Քաղանայ , այն է քա-
13 ղաք մեծ : Եւ Մեսրաիմ ծնաւ զԼուդիմ-
ացիս եւ զԱնեմիմացիս եւ զԼաղիմի-
14 մացիս եւ զՀեպթաղիմացիս Եւ զՊատ-
րոսանիմացիս , եւ զՔասղանիմացիս
(ուստի ելին Փղշատացիք) , եւ զԿափ-
15 թորիմացիս : Եւ Քանան ծնաւ զՍիդոն
16 զանդրանիկ իւր , եւ զԽետացին Եւ զՅե-
բուսացին եւ զԱմովրհացին եւ զԳեր-
17 գեսացին Եւ զԽեւացին եւ զԱրուակաս-
18 ցին եւ զԱմմինացին Եւ զԱրապխոնացին եւ
զԱմաթացին եւ զԱմմոթացին . եւ յետ
այնորիկ սփռեցան ազգք Քանանացւոց :
19 Եւ եղեն սահմանք Քանանացւոց՝ ի Սի-
դոնէ մինչեւ ի գալ ի Գերարա եւ ի Գա-
զա , մինչեւ ի գալ ի Սոդոմ եւ ի Գո-
մոր , եւ յԱդամա եւ ի Սեբոյիմ մինչեւ
20 ի Լասա : Սոքա են որդիք Քամայ յազգս
իւրեանց , ըստ լեզուս իւրեանց , յաշ-
խարհս իւրեանց եւ ի տոհմս իւրեանց :
21 Եւ Սեմայ ծնան որդիք եւ նոցա , հօրն
ամենայն որդւոցն Եբերայ , եղբօրն Յա-
22 բեթի երկրորդ : Որդիք Սեմայ՝ Ելամ եւ
Ասուր , Արփաքսադ եւ Լուդ եւ Սրամ.
23 Եւ որդիք Արամայ՝ Հուս եւ Եմուղ եւ
24 Գաթեր եւ Մասոք . Եւ Արփաքսադ ծնաւ
25 զՍաղա , եւ Սաղա ծնաւ զԵբեր : Եւ Ե-
բերայ ծնան երկու որդիք . անուն միոյն
[4]Փաղէկ , զի յաւուրս նորա բաժանե-
ցաւ երկիր . եւ անուն եղբօր նորա Յեկ-
26 տան : Եւ Յեկտան ծնաւ զԵլմոդադ եւ
27 զՍաղէք եւ զԱսարմոթ եւ զՅարաք Եւ
28 զՅոդորամ եւ զՈւզէլ եւ զԴիկլա Եւ
29 զԳեբաղ եւ զԱբիմէլ եւ զՍաբէի Եւ
զՈփիր եւ զԵւիլա եւ զՅովբաբ. ամե-
30 նեքեան սոքա որդիք Յեկտանայ : Եւ
եղեւ բնակութիւն նոցա ի Մասեայ
մինչեւ գալ ի Սովփերա լեառնն արեւել-
31 եայց : Սոքա են որդիք Սեմայ յազգս
իւրեանց , ըստ լեզուս իւրեանց , յաշ-
խարհս իւրեանց եւ ի տոհմս իւրեանց :
32 Սոքա են ազգք որդւոց Նոյի ըստ ծնունդս
իւրեանց , ըստ տոհմս իւրեանց . եւ
ի սոցանէ սփռեցան [5]կղզիք ազգաց՝
ի վերայ երկրի յետ ջրհեղեղին :

Գլ. ԺԱ

1 Եւ էր ամենայն երկիր լեզու մի , եւ
2 բարբառ մի ամենեցուն : Եւ եղեւ ի խա-
ղալն նոցա յարեւելից՝ գտին դաշտ մի
յերկրին Սենաար , եւ բնակեցան անդ :
3 Եւ ասեն այր ընկերի իւր , Եկայք արկ-
ցուք ապիւս , եւ թրծեսցուք զայն
հրով : Եւ եղեւ նոցա ապիւսն ի տեղի
4 քարի , եւ կուպր ի տեղի շաղախոյ : Եւ
ասեն , Եկայք շինեսցուք մեզ քաղաք
եւ աշտարակ , որոյ լինիցի գլուխն մին-
չեւ յերկինս . եւ արասցուք մեզ անուն
[6]յառաջ քան զսփռիլ՝ ի վերայ երեսաց
5 ամենայն երկրի : Եւ էջ Տէր տեսանել
զքաղաքն եւ զաշտարակն զոր շինէին
6 որդիք մարդկան . Եւ ասէ Տէր , Ահա
ազգ մի եւ լեզու մի ամենեցուն , եւ
գայդ սկսան գործել . եւ արդ ոչինչ պա-
կասէ ի նոցանէ , զամենայն զոր ինչ յո-

[1]Ցնբ. պակաս [2]Կամ, Դոդացիք [3]Նբ զԼեսեն

[4]Այլն, բաժանումն [5]Նբ. ազգք [6]Նբ. գոնե փոքր ինչ

7 Ժարեացին գործել. Եկայք իջցուք եւ խառնակեացուք անդ զլեզուս նոցա, զի մի լսիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ։ Եւ սփռեաց զնոսա Տէր 8 [1]Աստուած անտի ընդ երեսս ամենայն երկրի, եւ դադարեցին ի չինելոյ զքաղաքն 9 զաքն [1]եւ զաչտարակն։ Վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա [2]Խառնակուածք։ Զի անդ խառնակեաց Տէր [1]Աստուած զլեզուս ամենայն երկրի, եւ անտի ցրուեաց զնոսա Տէր [1]Աստուած ընդ երեսս ամենայն երկրի։

10 Եւ այս են ծնունդք Սեմայ. Սէմ որդի հարիւրամեան էր յորժամ ծնաւ զԱրփաքսադ յերկրորդում ամի յետ ջրհեղեղի 11 գնաց։ Եւ եկեաց Սեմ յետ ծնանելոյ նորա զԱրփաքսադ՝ ամս հինգ հարիւր, եւ ծնաւ 12 ուստեր եւ դստեր, [1]եւ մեռաւ։ Եւ Արփաքսադ եկեաց ամս [1]հարիւր երեսուն 13 եւ հինգ, եւ ծնաւ զԱազա։ Եւ եկեաց Արփաքսադ յետ ծնանելոյ նորա զԱազա՝ ամս [3]երեք հարիւր եւ երեսուն", եւ ծնաւ ուստեր եւ դստեր, [1]եւ մեռաւ։"

14 Եւ եկեաց Սազա ամս [1]հարիւր եւ" երեսուն, եւ ծնաւ զԵբեր։ 15 Եւ եկեաց Սազա յետ ծնանելոյ նորա զԵբեր՝ ամս [3]երեք հարիւր եւ երեսուն", եւ ծնաւ ուստեր 16 եւ դստեր, [1]եւ մեռաւ։" Եւ եկեաց Եբեր ամս [1]հարիւր երեսուն եւ չորս, եւ 17 ծնաւ զՓաղէկ։ Եւ եկեաց Եբեր յետ ծնանելոյ նորա զՓաղէկ ամս [5]երկերիւր եւ եւթանասուն", եւ ծնաւ ուստեր եւ 18 դստեր, [1]եւ մեռաւ։" Եւ եկեաց Փաղէկ ամս [6]հարիւր եւ երեսուն եւ չորս", 19 եւ ծնաւ զՌագաւ։ Եւ եկեաց Փաղէկ յետ ծնանելոյ նորա զՌագաւ՝ ամս երկերիւր եւ լինի, եւ ծնաւ ուստեր եւ 20 դստեր, [1]եւ մեռաւ։" Եւ եկեաց Ռագաւ ամս [1]հարիւր երեսուն եւ երկու, 21 եւ ծնաւ զՍերուգ։ Եւ եկեաց Ռագաւ յետ ծնանելոյ նորա զՍերուգ՝ ամս երկերիւր եւ եւթն, եւ ծնաւ ուստեր եւ 22 դստեր, [1]եւ մեռաւ։" Եւ եկեաց Սերուգ ամս [1]հարիւր եւ" երեսուն, եւ 23 ծնաւ զՆաքովր։ Եւ եկեաց Սերուգ յետ ծնանելոյ նորա զՆաքովր՝ ամս երկերիւր, եւ ծնաւ ուստեր եւ դստեր, [1]եւ մե-
24 ռաւ։" Եւ եկեաց Նաքովր ամս [7]երեսուն 25 եւ հինգ, եւ ծնաւ զԹարա։ Եւ եկեաց Նաքովր յետ ծնանելոյ նորա զԹարա՝ ամս հարիւր [8]քսան եւ երկու", եւ
26 ծնաւ ուստեր եւ դստեր, [1]եւ մեռաւ։"Եւ եկեաց Թարա ամս եւթանասուն", եւ ծնաւ զԱբրամ եւ զՆաքովր եւ զԱռան։
27 Այս են ծնունդք Թարայի. Թարա ծնաւ զԱբրամ եւ զՆաքովր եւ զԱռան.
28 եւ Առան ծնաւ զԼովտ։ Եւ մեռաւ Առան առաջի Թարայի հօր իւրոյ, յերկրին յորում ծնաւ, [9]յաչխարհին Քաղդեացւոց։ 29 Գնացին։ Եւ առին Աբրամ եւ Նաքովր իւրեանց կանայս. անուն կնոջն Աբրամայ՝ Սարա, եւ անուն կնոջն Նաքովրայ՝ Մեղքայ, դստեր Առանայ, հօր Մեղքայ,
30 եւ հօր Ցիսքայ։ Եւ էր Սարա ամուլ եւ
31 ոչ ծնանէր։ Եւ առ Թարա զԱբրամ զորդի իւր, [1]եւ զՆաքովր զորդի իւր," եւ զԼովտ՝ զորդի Առանայ որպէս իւրոյ, եւ զՍարա զնոս իւր, զկին Աբրամայ որպէս իւրոյ, եւ եհան զնոսա [10]յաչխարհէն Քաղդեացւոց՝ երթալ յերկիրն Քանաանացւոց. եւ եկին մինչեւ ցԽառան, եւ
32 բնակեցին անդ։ Եւ եղեն ամենայն աւուրք Թարայի ի Խառան՝ ամք երկերիւր եւ հինգ, եւ մեռաւ Թարա ի Խառան։

Գլ. ԺԲ

1 Եւ ասէ [11]Աստուած ցԱբրամ, ել դու յերկրէ քումմէ եւ յազգէ քումմէ եւ ի տանէ հօր քո՝ յերկիր զոր ցուցից քեզ.
2 Եւ արարից զքեզ յազգ մեծ, եւ օրհնեցից զքեզ, եւ մեծացուցից զանուն քո.
3 եւ եղիցես օրհնեալ։ Եւ օրհնեցից զօրհնիչս քո, եւ զանիծիչս քո անիծից. եւ օրհնեսցին ի քեզ ամենայն ազգք
4 երկրի։ Եւ գնաց Աբրամ որպէս խօսեցաւ ընդ նմա Աստուած. երթայր ընդ նմա եւ Ղովտ. եւ Աբրամ էր ամաց եւթանասուն եւ հնգից յորժամ ել ի Խառանէ։
5 Եւ առ Աբրամ զՍարա զկին իւր, եւ զՂովտ զեղբօրորդի իւր, եւ զամենայն զինչս իւրեանց զոր ստացան, եւ զամենայն ոգիս զոր ստացան ի Խառան, եւ ելին գնալ յերկիրն Քանաանացւոց. եւ

---

[1] ՅԵբբ. պակաս [2] ՅԵբբ. Բաբել [3] ՅԵբբ. չորեք – հարիւր եւ երես [4] Յայն յաւելու. Եւ եկեաց Կայնան ամս հարիւր եւ երեսուն, եւ ծնաւ զԱազա. եւ եկեաց Կայնան յետ ծնանելոյ նորա զԱազա՝ ամս երեք հարիւր եւ երեսուն, եւ ծնաւ ուստեր եւ դստեր, եւ մեռաւ։ [5] ՅԵբբ. չորեքհարիւր և երեսուն [6] ՅԵբբ. երեսուն

[7] ՅԵբբ. քսան [8] ՅԵբբ. իննեւտասան [9] ՅԵբբ. յՈւր [10] ՅԵբբ. յՈւրէ [11] ՅԵբբ. Տէր

6 ակին յերկիրն Քանանու ։ Եւ չըմնացաւ Աբրամ յերկրին՝ ընդ երկանդթիւն նորա մինչեւ ի տեղին ի Սիւքեմ, ի կազնին [1]բարձր. բայց Քանանացիք էին
7 կնակ էին յայնժամ յերկրին ։ Եւ երեւեցաւ Տէր Աբրամու, եւ ասէ ցնա, Զաւակի քումմ տայ զերկիրս զայս։ Եւ չինեաց անդ Աբրամ սեղան Տեառն որ ե-
8 րեւեցաւ նմա ։ Եւ մեկնեցաւ անտի ի լեառնն ընդ արեւելս [2]ի Բեթէլ. եւ եհար անդ զվարան [3]իւր ի Բեթէլ, յանդիման Ծովեան եւ Այգէի ընդ արեւելս՝, եւ չինեաց անդ սեղան Տեառն, եւ կո-
9 չեաց յանուն Տեառն ։ Եւ չուեաց Աբրամ, [4]գնաց բնակեցաւ յանապատ՝։
10 Եւ եղեւ սով յերկրին, եւ էջ Աբրամ յեգիպտոս բնակել անդ պանդրիտութեամբ, զի զօրացաւ սով յերկրին ։
11 Եւ եղեւ իբրեւ մերձեցաւ Աբրամ մտանել յեգիպտոս, եւ ասէ ցՍարա կնկին իւր, Գիտեմ զի կին գեղեցիկ ես դու ։
12 Արդ եղիցի եթէ տեսանիցին եգիպտացիքն, եւ ասիցեն թէ կին նորա է սա ։ եւ սպանանիցեն զիս, եւ զքեզ ապրեցուսցեն. Ասասցես թէ քոյր նորա եմ. զի բարի լիցի ինձ վասն քո, եւ
14 կեցցէ անձն իմ յաւգտս քո ։ Եւ եղեւ իբրեւ եմուտ Աբրամ յեգիպտոս, եւ տեսին եգիպտացւոցն զկինն զի գեղե-
15 ցիկ էր յոյժ. Տեսին զնա եւ իշխանքն Փարաւոնի, եւ գովեցին զնա առաջի Փարաւոնի, եւ առին զնա ի տուն Փա-
16 րաւոնի ։ Եւ Աբրամու բարիս առնէին վասն նորա. եւ եղեն նորա խաչինք, անդեայք եւ էշք, ծառայք եւ աղախ-
17 նայք, ջորիք եւ ուղտք ։ Եւ պատժեաց Աստուած զՓարաւոն պատուհաս մեծամեծս [5]եւ չարս՝ եւ զտուն նորա վասն
18 Սարայի կնոջն Աբրամու ։ Կոչեաց Փարաւոն զԱբրամ, եւ ասէ ցնա, Զի՞նչ գործեցեր զայդ ընդ իս, զի ոչ պատ-
19 մեցեր եթէ կին քո է. Ընդէ՞ր ասացեր թէ քոյր իմ է, եւ [6]առի զդա ինձ կնութեան. եւ արդ ահաւադիկ կին քո
20 առաջի քո, առ եւ գնա ի բաց ։ Եւ պատուէր եհան արանց վասն Աբրամու յաջողակել զնա եւ զկին նորա եւ զամենայն որ ինչ էր նորա, [7]եւ զԼովտ ընդ նմա ։

Գլ. ԺԳ

1 Եւ ել Աբրամ յեգիպտոսէ՝ ինքն եւ կին իւր եւ ամենայն որ ինչ էր նորա, 2 եւ Լովտ ընդ նմա [7]յանապատին։ Եւ Աբրամ էր մեծաւտն յոյժ անասնով եւ ար-
3 ծաթով եւ ոսկւով. Եւ գնաց անդրէն [8]ուսոյն ևկն յանապատին՝ մինչեւ ցԲեթէլ, մինչեւ ցտեղին ուր էր խորան նորա
4 զառաջինն, Ընդ Բեթէլ եւ ընդ [9]Անգէէ ի տեղի սեպհականն, զոր սկսար անդ զառաջինն. եւ կոչեաց անդ Աբրամ զանուն Տեառն [5]Աստուծոյ ։
5 Եւ Լովտայ որ երթեւեկն էր ընդ Աբրամով՝ էր սրջան եւ ոչխար եւ անա-
6 սուն. Եւ ոչ բաւէր նոցա երկիրն բնակելոյ ի միասին. զի էին նոցա ստացուածք բազումք, եւ ոչ կարէին բնա-
7 կել ի միասին ։ Եւ եղեւ մարտ ի մէջ հովուաց խաչանցն Աբրամու, եւ ի մէջ հովուաց խաչանցն Լովտայ. եւ Քանանացիքն եւ Փերեզացիքն յայնժամ բնա-
8 կեալ էին յերկրին։ Ասէ Աբրամ ցԼովտ, Մի լիցի կռիւ ընդ իս եւ ընդ քեզ, եւ ընդ հովիւս իմ եւ ընդ հովիւս քո. զի
9 արք եղբարք եմք մեք ։ Ո՞չ աւասիկ երկիրդ առաջի քո է, մեկնեսցես յինէն. եթէ գու յահեակ՝ ես յոյ, եթէ
10 գու յո՛ ես յահեակ ։ Ամբարձ Լովտ զաչս իւր եւ եաես զամենայն [10]կողմանս Յորդանանու, զի ամենայն յուռթի էր, մինչչեւ կործանեալ էր Աստուծոյ զՍոդոմ եւ զԳոմոր, իբրեւ զդրախտն Աստուծոյ էր եւ իբրեւ զերկիրն եգիպտացւոց՝
11 մինչեւ ի գալ ի Սիգովր ։ Եւ ընտրեաց իւր Լովտ զամենայն [10]կողմանն Յորդանանու. եւ չուեաց Լովտ յարեւելից, եւ մեկնեցան իւրաքանչիւր յեղբօրէ իւրմէ ։
12 Եւ Աբրամ պանդխտեաց յերկրին Քանանացւոց. եւ Լովտ նստաւ [11]ի քաղաքի միւսում կողմանցն, եւ բնակեցաւ՝ ի Սո-
13 դոմ ։ Եւ մարդիկն Սոդոմացւոց չարք եւ մեղաւորք էին առաջի [12]Աստուծոյ յոյժ ։
14 Եւ ասէ [13]Աստուած ցԱբրամ յետ մեկնելոյն Լովտայ ի նմանէ, Հայեաց աչօք քովք եւ տես ի տեղւոջէ յորում նստիս յարեւմուտս զսա եւ ի հարաւոյ եւ
15 հարաւոյ, յարեւելից եւ ի ծովս. Զի

---

[1]ՆԷԲՐ. Մամբրէի [2]ՆԷԲՐ. Բեթէլայ [3]ՆԷԲՐ. իւրանէր զբեթէլ ընդ արեւմուտս, և զՔադայի՝ ընդ արեւելս [4]ՆԷԲՐ. երթայր և չուէր ի հարաւ կոյս [5]ՑՆԷԲՐ. գովութ [6]ՆԷԲՐ. առնուի [7]ՆԷԲՐ. ի հարաւակողմն Քանանա- [8]ՆԷԲՐ. ըստ իջեւանաց իւրոց ի հարաւակողմն Քանանա- [9]ՆԷԲՐ. Գայի [10]ՆԷԲՐ. դաշտն [11]ՆԷԲՐ. ի քաղաքս գաշտին, և հար զվրան իւր մինչեւ [12]ՆԷԲՐ. Տեառն [13]ՆԷԲՐ. Տէր

զամենայն երկիրդ զոր դա՛ւ աւետանեմ քեզ՝ տայ զգա եւ զաւակի քում մինչեւ
16 յաւիտեան։ Եւ արարիչ զվաւակ քո իբրեւ զաւազ երկրի. եթէ կարիցէ ոք
17 թուել զաւազ երկրի, ապա եւ քո զա՛ւակ ընդ թիւ մայէ։ Եւ այդ արի չէրչեաց ընդ երկիրդ յերկայնութիւն գործս
18 գա՛ս։ Եւ չա՛ւ արարեալ Աբրամ՝ եկն բնակեցա՛ւ առ կաղնւովն Մամբրէի, որ է ի Քեբրո՛ն. եւ չինեաց անդ սեղան Տեառն [1]Աստուծոյ։

ԴԼ. ԺԴ

1 Եւ եղեւ ի թագաւորութիւնն Ամարփաղայ արքայի Սենաարայ, Արիովք արքայ Սելլասարայ եւ Քոդողագոմոր արքայ Ելամայ, եւ Թաւգաղ արքայ ազ-
2 գայ, եռաւն պատերազմ ընդ Բալակայ արքայի Սոդոմայեցւոց, եւ ընդ Բարսայ արքայի Գոմորացւոց, եւ ընդ Սենայ արքայի Ադամաացւոց, եւ ընդ Սեմեբրայ արքայի Սեբոյիմացւոց, եւ ընդ Թագաւորին Բալակայ, այն ինքն է Սեգովր։ Սիննեքեան սոքա գումարեցան
4 ի ձորն [2]ագի, որ է ծով աղաիւ՝։ Չերկաւասան ամ ի ծառայութեան կայեալ էին Քոդողագոմորայ, եւ յերկրորդում
5 ներսրգում ամին ապստամբեցին։ Եւ յամին չորեքտասաներորդի եկն Քոդողագոմոր եւ Թագաւորքն որ ընդ նմա, եւ
կատարեցին զպատերազմ ընդ Ռափայիմ Կառնայիմ էին, եւ զաղգս հզօրս որ ընդ նո՛ա, եւ զԱմմայեցին ի Շաւէ քաղաքին
6 Նոցա, եւ զԽուռացիան որ ի լերինն Սէիրայ, մինչեւ [3]ցլանիկին ձորոյն՝ որ է
7 յանապատն անդ։ Եւ դարձան եկին յաղբիւրն գատաստանի, այն ինքն է Կադէս, եւ կատարեցին զամենայն [4]իշխանս Ամաղեկայ, եւ զԱմովրհացին զբնակեալն յԱ-
8 սասոնթամար։ Եւ ել արքայ Սոդոմայեցւոց եւ արքայ Գոմորացւոց եւ արքայ Ադամաացւոց եւ արքայ Սեբոյիմացւոց եւ արքայ Բալակայ որ է Սեգովր, եւ ճա-
կատեցան ընդ նոսա ի պատերազմ ի ձորն
9 [5]ագիի, ընդ Քոդողագոմորայ արքային Ելամայ, եւ ընդ Թագաւորայ արքային ազգայ, եւ Ամարփաղայ արքային Սենաարայ, եւ Արիովքայ արքային Սելլասարայ, չորք թագաւորք՝ ընդ հնգից։ Եւ
10 ի ձորն [5]ագիից չրհարք, չրհարք նաւթի. եւ փախեաւ արքայ Սոդոմայեցւոց եւ արքայ Գոմորացւոց, եւ ընկան անդր. եւ մնացեալքն փախան ի լեռնակազմին։
11 Եւ առին զամենայն առա՛ւ Սոդոմայեցւոց եւ Գոմորացւոց եւ զամենայն հնարքառս
12 նոցա եւ գնացին։ Առին եւ զՂովա զեզբօրորդին Աբրամու եւ գինչս նորա, եւ երթային. [6]քանզի բնակեալ էր ի Սոդոմ։
13 Եւ եկաց մին ի փրթելոց անտի, եւ պատմեաց Աբրամու [7]յանկոյս կացելոյ՝։ Եւ նա էր բնակեալ առ կաղնեաւն Մամբրէի Ամովրհացւոյն, եղբօր Եաքողայ եւ եղբօր Ասնանայ, որ էին դաշնաւորք
14 Աբրամու։ Եւ լուաւ Աբրամ թէ գերի վարեցաւ եղբօրորդին իւր Ղովա, համարեցաւ զչինուածին առն իւրում եւ
15 ռեւ եւ ութեւտասան[8]։ Եւ պնդեցաւ զկնի նոցա դիշերի, ինքն եւ ծառայք իւր, եւ եհար զնոսա մինչեւ յԲորազ, որ է
16 ի ձախմէ Դամասկոսի։ Եւ դարձոյց զամենայն առա՛ւն [1]Սոդոմայեցւոց, եւ զՂովա զեզբօրորդին իւր եւ զամենայն առա՛ւսն նորա դարձոյց, եւ զկանայս եւ
17 զժողովուրդն։ Եւ ել արքայ Սոդոմայեցւոց ընդ առաջ նորա՝ յետ դառնալոյ նորա ի կատարածէ Քոդողագոմորայ, եւ Թագաւորացն որ ընդ նմա էին ի ձորն
Շաւէ, այն ինքն է դաշտ Թագաւորաց։
18 Եւ Մելքիսեդեկ արքայ Սաղեմայ հնա՛ն հաց եւ գինի. քանզի քահանայ էր Աստուծոյ Բարձրելոյ.
19 եւ օրհնեաց զԱբրամ եւ ասէ, Օրհնեալ է Աբրամ յԱստուծոյ Բարձրելոյ որ արար զերկինս եւ
20 զերկիր։ Օրհնեալ Աստուած Բարձրեալ որ մատնեաց ի ձեռս քո զթշնամիս քո։ Եւ ետ նմա տասանորդս յամենայնէ։
21 Եւ ասէ արքայ Սոդոմայեցւոց ցԱբրամ, Տո՛ւր ցիս զմարդիկդ, եւ զաւարտ քեզ
22 առ։ Եւ ասէ Աբրամ ցարքայն Սոդոմայեցւոց, Ձգեմ զձեռն իմ առ Աստուած Բարձրեալ որ արար զերկինս եւ զեր-
23 կիր, եթէ ի չազամաթէ մինչ մինչեւ ի խարտս մի կօշկաց առից ես յամենայնէ որ քոյ իցէ. զի մի՛ ասիցես թէ ես
24 մեծացուցի զԱբրամ։ Բայց արչաւ ինչ կերան մանկտիք, եւ մասն արանցդ որ եկին ընդ իս՝ Աեհան, Եսքոլ եւ Մամբրէ, նոքա առցեն զբաժին իւրեանց։

---

[1] 3ԱԲԲ. պ-է-ռ [2]ԵԲԲ. Սիդդիմ որ է ծով ազի
[3]ԵԲԲ. ցեղփառան [4]ՆԲԲ. երկիրն [5]ԵԲԲ. Սիդդիմ
[6]ԵԲԲ. եւ նա [7]ԵԲԲ. Եբրայեցւոյն [8]ԵԲԲ-ՅԵՔԷ յոթ-ԼԸ-, և հետամուտ եղեւ նոցա մինչեւ ի Դան

ԳԼ. ԻԹ

1 Յետ բանից այսոցիկ եղեւ բան Տեառն առ Աբրամ ի տեսլեան, եւ ասէ, Մի՛ երկնչիր, Աբրամ, ես [1]վերակացու եղէց քեզ, եւ վարձք քո բազում եղիցին յոյժ։
2 Եւ ասէ Աբրամ, Տէր, Տէր, զինչ տաց ինձ, զի ես կորնչիմ անպտղի, եւ [2]որդի Մասեկայ ընդածնի իմոյ, այն՝
3 է Եղիազար Դամասկացի։ Եւ ասէ Աբրամ, Ահաւասիկ ինձ ոչ ետուր զաւակ, ընդածինն իմ ժառանգեսցէ զիս։
4 Եւ վաղվաղակի ձայն [3]Աստուծոյ եղեւ առ նա եւ ասէ, Ոչ ժառանգեսցէ զքեզ դա, այլ որ ելանիցէ ի քէն՝ նա ժառանգեսցէ
5 զքեզ։ Եւ եհան զնա արտաքս եւ ասէ ցնա, Հայեաց ընդ երկինս, եւ թուեա զաստեղս, եթէ կարասցես թուել զնոսա. եւ ասէ ցնա, Այնպէս եղիցի զաւակ
6 քո։ Եւ հաւատաց [4]Աբրամ Աստուծոյ՝, եւ համարեցաւ նմա յարդարութիւն։
7 Եւ ասէ ցնա, Ես եմ Տէր [5]Աստուած քո՝, որ հանի զքեզ [6]յաշխարհէն Քաղդեացւոց, տալ քեզ երկիրդայդ ի ժառանգութիւն։ Եւ ասէ Աբրամ, Տէր, Տէր, ընդ զիարդ գիտասցեմ թէ ժառանգիցեմ
9 զայն։ Եւ ասէ ցնա, Առ զիս ինձ երինջ երեւիտան եւ քոչ երեւիտան եւ խոյ եր-
10 եւիտան, եւ աստրակ եւ աղաւնի։ Եւ առ զամենայն զայն, եւ յօշեաց զնոսա ընդ մէջ, եւ եդ զնոսա դէմ ընդ դէմ
11 միմեանց. եւ զթռչունսն ոչ յօշեաց։ Եւ իջանէին թռչունք ի վերայ յօշելոց անառամարեմն նոցա. եւ [7]նստէր առ նոս-
12 քօք՝ Աբրամ։ Եւ մօտ ընդ մուտս արեւուն թմրութիւն անկանէր ի վերայ Աբրամու. եւ անա ահ խաւարին[8] հասու-
13 նէր ի վերայ նորա։ Եւ [9]ասացաւ առ Աբրամ, Գիտելով գիտասջիր, զի պանդուխտ եղիցի զաւակ քո յերկիր որ ոչ իւր իցէ. եւ ծառայեցուցանեն զնոսա եւ չարչարեսցեն, [5]եւ տառապեցուցանեն՝
14 զնոսա ամս չորեքհարիւր. Բայց զազգն որում ծառայեսցեն՝ պատեսցայց ես. եւ յետ այնորիկ ելցեն այսր բազում ունա-
15 ցութեամբ։ Եւ դու երթիցես առ հարս քո խաղաղութեամբ՝ [10]անեալ ի բարեր-
16 ձութեան։ Եւ ի չորրորդում ազգի դարձցին այսրէն. քանզի չէ եւս լցեալ
17 է մեզք Ամովրհացւոցն մինչեւ ցայժմ։ Եւ իբրեւ արեւն ի մուտս լինէր, բոցք հատանէին, եւ անա հնոց ծխեալ. եւ ճառագայթք հրոյ անցանէին ընդ մէջ անպատոցն
18 յօշելոյ։ Յաւուր յայնմիկ եդ Տէր ուխտ ընդ Աբրամու, եւ ասէ, Զաւակի քում տացու զերկիրդայդ, ի գետոյն Եգիպտա-
19 ցւոց մինչեւ ի գետն մեծ Եփրատ, Զկինեղէս եւ զկինեզպայիս եւ զկեդմոնացիս
20 Եւ զքետացիս եւ զՓերեզպայիս եւ զՐափայիս
21 զԱմովրհացիս եւ զԱմովրհացիս եւ զՔանանացիս եւ զԳերգեսացիս եւ զՅեբուսացիս։

ԳԼ. ԻԶ

1 Եւ Սարա, կին Աբրամու, ոչ ծնանէր նմա. եւ էր նորա աղջիկ մի Եգիպտացի
2 որոյ անուն էր Ագար։ Եւ ասէ Սարա ցԱբրամ [5]երկրին Քանանացւոց՝, Որովհետեւ արգել զիս Տէր ի ծնանելոյ, արդ մուտ առ աղջիկդ իմ, զի արարից ինձ որդի ի դմանէ։ Եւ ունկնդիր եղեւ Աբ-
3 րամ ձայնի Սարայի։ Եւ առ Սարա, կին Աբրամու, զԱգար Եգիպտացի զաղախին իւր, յետ ամաց ամի բնակելոյ Աբրամու յերկրին Քանանացւոց, եւ ետ զնա Աբ-
4 րամու առն իւրում կնութեան։ Եւ եմուտ առ Ագար, եւ յղացաւ. իբրեւ ետես թէ յղի է, արհամարհեցաւ տիկինն
5 իւր յաչս նորա։ Եւ ասէ Սարա ցԱբրամ, Բուռն է ինձ ի քէն. ես ետու զաղախինն իմ ի գիրկս քո, եւ արդ իբրեւ ետես թէ յղացաւ, արհամարհեցայ ես յաչս նորա. դատ արասցէ [11]Աստուած ընդ իս եւ ընդ
6 քեզ։ Եւ ասէ Աբրամ ցՍարա, Անաւանիկ աղախին քո ի ձեռս քո, արա նմա զինչ հաճոյ է առաջի աչաց քոց։ Եւ չար-
7 չարեաց զնա Սարա, եւ փախեաւ յերեսաց նորա։ Եգիտ զնա հրեշտակ Տեառն յաղբեր չուրց յանապատի անդ, յաղ-
8 բերն որ ի ճանապարհին Սուրայ է. Եւ ասէ [5]ցնա հրեշտակ Տեառն՝, Ագար, աղախին Սարայի, ուստի՞ գաս կամ յո՞ երթիս։ Եւ ասէ, Յերեսաց Սարայի տիկ-
9 նոջ իմոյ փախուցեալ եմ ես։ Ասէ ցնա հրեշտակն Տեառն, Դարձիր առ տիկին քո եւ հնազանդ լեր ընդ ձեռամբն նորա։
10 Եւ ասէ ցնա հրեշտակն Տեառն, Բազմացուցանելով բազմացուցից զզաւակ
11 քո, եւ անթիւ լիցի ի բազմութենէ։ Եւ ասէ ցնա հրեշտակն Տեառն, Ահաւադիկ

---

[1] ԵԲԲ. վասն [2] ԵԲԲ. ժառանգ առն իմոյ [3] ԵԲԲ. Տեառն [4] ԵԲԲ. ի Տէր [5] ԵԲԲ. պակաս [6] ԵԲԲ. ՅՈւրէ [7] ԵԲԲ. վասն զնոսա [8] ԵԲԲայեցէք յոհէ՛, ԺԸ՛ [9] ԵԲԲ. ասաց [10] ԵԲԲ. Թաղեալ

[11] ԼԻԲԲ. Տէր

դու յղի իսկ ես. եւ ծնցես որդի, եւ կոչեսցես զանունն Նորա [1]Իսմայէլ . վասն լուա-
12 Տէր տառապանաց քոց : Եւ նա եղիցի այր վայրագ . ձեռք նորա յամենեսեան , եւ ձեռք ամենեցուն ի նա . եւ յանդիման ամենայն եղբարց իւրոց բնակեսցէ :
13 Եւ կարդաց Ագար զանուն Տեառն որ խօսեցաւ ընդ նմա , եւ ասէ , Դու ես Աստուած որ հայեցար յիս : Քանզի ասաց եթէ յանդիման իսկ տեսի զայն որ
14 երեւեցաւն ինձ : Վասն այնորիկ կոչեցաց ջրհորն՝ Ջրհոր այնորիկ զոր յանդիմանին տեսի . եւ ահա է այն ընդ կադէս եւ
15 ընդ Բարադ : Եւ ծնաւ Ագար՝ Աբրամու որդի , եւ կոչեաց զանուն որդւոյն իւրոյ
16 զոր ծնաւ նմա Ագար՝ Իսմայէլ : Եւ Աբրամ էր ամաց ութսունն եւ վեցից յորժամ ծնաւ նմա Ագար զԻսմայէլ :

ԳԼ . ԺԷ

1 Եւ եղեւ Աբրամ ամաց հինգսունն եւ ինեանց . եւ երեւեցաւ Տէր [2]Աստուած Աբրամու եւ ասէ ցնա , Ես եմ Աստուած [3]քո. հաճոյ լեր՝ առաջի իմ , եւ լեր անարատ :
2 Եւ եղիցի զուխտ իմ ընդ իս եւ ընդ քեզ ,
3 եւ բազմացուցից զքեզ յոյժ յոյժ : Եւ անկաւ Աբրամ ի վերայ երեսաց իւրոց . եւ
4 խօսեցաւ ընդ նմա Աստուած եւ ասէ , Եւ իմ ահաւասիկ ուխտ ընդ քեզ . եւ եղիցես
5 հայր բազմութեան ազգաց . Եւ ոչ կոչեսցի այսուհետեւ անուն քո Աբրամ , այլ եղիցի անուն քո Աբրահամ . զի հայր ազ-
6 գաց բազմաց եդի զքեզ : Եւ աճեցուցից զքեզ յոյժ , եւ եղից զքեզ յազգս . եւ թա-
7 գաւորք ի քէն ելցեն : Եւ հաստատեցից զուխտ իմ ընդ իս եւ ընդ քեզ , եւ ի մէջ զաւակի քոյ եւ քո յազգս իւրեանց ուխտ յաւիտենական , լինել քեզ Աստուած եւ
8 զաւակի քում յետ քո : Եւ տացի քեզ եւ զաւակի [4]քում զերկիրս զայս , յորում բնակես պանդխտութեամբ , զամենայն երկիրդ Քանանացւոց ի ժառանգութիւն յաւիտենական . եւ եղէց նոցա Աստուած :
9 [5]Բայց դու՞ զուխտ իմ պահեսցես , եւ
10 զաւակ քո յետ քո յազգս իւրեանց : Եւ այս է ուխտ իմ զոր պահեսցես ընդ իս եւ ընդ քեզ , եւ ի մէջ զաւակի քո յետ
11 քո յազգս իւրեանց . Թլփատեսցի ձեր ամենայն արու , եւ թլփատեսջիք զմարմին անթլփատութեան ձերոյ . եւ եղիցի նշանակ ուխտին ընդ իս եւ ընդ ձեզ :
12 Եւ մանուկ ութօրեայ թլփատեսցի ձեր , ամենայն արու յազգս ձեր , ընդգնդին եւ արծաթեղենն , եւ յամենայն օտարածնէ
13 որ ոչ իցէ ի զաւակէ քումմէ : Թլփատելով թլփատեսցի ընդգնդին տան քո եւ արծաթեղենն քո . եւ եղիցի ուխտ իմ ի վերայ մարմնոյ ձերոյ յուխտ յաւիտենական :
14 Արուն անթլփատ որ ոչ թլփատեսցէ զմարմին անթլփատութեան իւրոյ յաւուր ութերորդի՝ սատակեսցի անձնն այն յազգէ իւրմէ . զի զուխտ իմ
15 Եւ ասէ Աստուած ցԱբրահամ , Եւ Սարայի կնոջ քո ոչ կոչեսցի անուն Նորա Սարա , այլ [6]Սառա եղիցի անուն Նորա :
16 Եւ օրհնեցից զնա , եւ տացի քեզ ի նմանէ որդի . եւ օրհնեցից զնա , եւ եղիցի յազգս , եւ թագաւորք ազգաց ի նմանէ եղիցին :
17 Անկաւ Աբրահամ ի վերայ երեսաց իւրոց եւ ծիծաղեցաւ . եւ խօսեցաւ ի սրտի իւրում եւ ասէ , Թէ Հարիւրամնի՝ որդի՞ լինիցի ,
18 եւ Սառա՝ հինգսունամեայ ծնանիցի՞ : Եւ ասէ Աբրահամ ցԱստուած , Իսմայէլս այս կեց-
19 ցէ առաջի քո : Եւ ասէ Աստուած [7]ցԱբրահամ , Այո , ահա Սառա կին քո ծնցի քեզ [7]որդի . եւ հաստատեցից զուխտ իմ ընդ նմա յուխտ յաւիտենական , եւ ընդ զա-
20 ւակի նորա յետ Նորա : Եւ վասն Իսմայէլի ահա լուայ քեզ . եւ օրհնեցից զնա , եւ աճեցուցից զնա եւ բազմացուցից զնա յոյժ . եւ երկոտասան ազգ ծնցի , եւ տացի զնա
21 յազգ մեծ : Բայց զուխտ իմ հաստատեցից ընդ Իսահակայ՝ զոր ծնցի քեզ Սառա ի ժամանակի յայսմիկ ի միւսում տարւոջ :
22 Եւ վախճանեաց զխօսելն ընդ նմա , եւ
23 վերացաւ Աստուած յԱբրահամէ : Եւ առ Աբրահամ զԻսմայէլ զորդի իւր եւ զամենայն ընդգնդին իւր եւ զամենայն զարծաթեղինս իւր եւ զամենայն արու արանց որ էին ի տան Աբրահամու , եւ թլփատեաց զմարմին անթլփատութեան նոցա ի ժամանակի աւուրն այնորիկ , որպէս
24 խօսեցաւ ընդ նմա Աստուած : Եւ Աբրահամ էր ամաց հինգսունն եւ ինեանց ի ժամանակի յորում թլփատեաց զմարմին անթլփատութեան իւրոյ : Եւ Իսմայէլ որդի
25 նորա երեքտասաներամեայ էր , յորժամ

---

[1] Այլ՝ լուիցէ Աստուած [2] Յեբր. պարոյ
[3] Յեբր. Ամենակալ. գնա [4] Յեբր. քում յետ քո
[5] Յեբր. Եւ ասէ Աստուած ցԱբրահամ՝ Եւ դու
[6] Այլ՝ կին իշխան [7] Յեբր. որդի, և կոչեսցես զանուն նորա Իսահակ

թլփատեաց զմարմին անթլփատութեան
26 իւրոյ : Ի ժամանակի աւուրն այնորիկ
թլփատեցաւ Աբրահամ եւ Իսմայէլ որդի
27 նորա : Եւ ամենայն արք տան նորա ,
ընդծնկիք եւ արծախ ոսկւոյ որ էին յազ-
գաց օտարաց , թլփատեաց զնոսա" :

ԳԼ . ԺՍ

1 Եւ երեւեցաւ նմա [2]Աստուած առ կաղ-
նեաւն Մամբրէի , մինչդեռ նստէր առ
2 դուրս խորանի իւրոյ ի միջօրէին Ամբար-
ձեալ զաչս իւր եւ հայեաց , եւ անդ արք
երեք կային ի վերոյ քան զինա . եւ երկրե-
ցաւ , ընթացաւ ընդ առաջ նոցա ի
դրանէ խորանին իւրոյ , եւ երկիր եղաց
3 ի վերայ երկրի , եւ ասէ , Տէր , եթէ գտի
չնորհս առաջի քո , մի զանց առներ ի
4 ծառայէ քումմէ . Այլ առցի սակաւ մի
ջուր , եւ լուասցին զոտս ձեր , եւ զո-
5 վասջիք ընդ ծառովս . Եւ առից հաց եւ
կերիջիք , եւ ապա երթիջիք զճանապարհ
ձեր . վասնզի զի գարձարուք առ ծա-
ռայ ձեր : Եւ ասեն , Այդպէս արա , որպէս
6 ասացեր դ : Եւ պնդեցաւ Աբրահամ ի խոս-
րանն առ Սառա , եւ ասէ ցնա , Փութա
երիս գրիւս երես սակր նաչհոյ , եւ ա-
րա նկանս : Եւ յանդնայ ընթացաւ Աբ-
րահամ , եւ առ որմ մի մատաղ եւ բարի
եւ նա ցպատանին , եւ փութացոյց վազ-
8 վազակի հատուցանել : Եւ առ կորի եւ
կաթն եւ զորթն զոր հատոյց , եւ եդ ա-
ռաջի նոցա եւ կերան . եւ նա կայր ա-
9 ռաջի նոցա ընդ ծառովն : Եւ ասեն ցնա ,
Ո՞ր է Սառա կինն քո : Նա պատասխանի
նա եւ ասէ , Ահաւանիկ ի խորանի անդ է :
10 Եւ ասէ , Դարձեալ նկուց առ քեզ [3]ի ժա-
մանակի յայտնիկ ի սոյն աւուրս" , եւ ու-
նիցի որդի Սառա կին քո . եւ Սառա ունկն
դնէր առ դրան խորանին , զանդի յետոյ
11 նորա կայր : Եւ Աբրահամ եւ Սառա ծե-
րացեալք էին եւ անցեալք զաւուրբք , եւ
պակասեալ էր ի Սառայէ լինել ի կանանց
12 օրինի : Ծիծաղեցաւ Սառա ընդ միտս
եւ ասէ , [4]Որ ինչ ցայժմ ոչ եղեւ ինձ՝
ամրդ լինիցի" . եւ տէր իմ ծերացեալ է :
13 Եւ ասէ Տէր ցԱբրահամ , Զի՛ է զի ծիծա-
ղեցաւ Սառա ընդ միտս իւր եւ ասէ , Թէ
Արդարեւ ծնանիցի՛մ , զի անա ես պա-
14 ռաւեալ եմ : Միթէ տկարանայցէ՞ առ ի
[5]Աստուծոյ բան . ի ժամանակի յայտնիկ
դարձայց առ քեզ [3]ի սոյն աւուրս" , եւ
15 կիցի Սառայի որդի : Ժխտեաց Սառա
եւ ասէ , Թէ ոչ ծիծաղեցայ . քանզի
երկեաւ : Եւ ասէ , Ոչ այդպէս , այլ ծի-
ծաղեցար :
16 Եւ յարուցեալ անտի արանցն հայե-
ցան ընդ երեսս Սոդոմացւոց [6]եւ Գոմո-
բացւոց" . եւ Աբրահամ երթայր ընդ նո-
17 ա յուղարկել զնոսա : Եւ ասէ Տէր , Միթէ
թաքո՞ւսա ինչ իցէ յԱբրահամէ [6]ծառայէ
18 իմմէ" զոր ինչ գործելոց եմ . Այլ Աբրա-
համ լինելով լինիցի յազգ մեծ եւ ի բա-
զում , եւ օրհնեսցին ինձ ամենայն ազգք
19 երկրի : Քանզի գիտէի եթէ պատուիրեսցէ
որդւոց իւրոց եւ տան իւրոյ յետ իւր՝
պահել զճանապարհս Տեառն եւ առնել
զարդարութիւն եւ զիրաւունս . եւ ածցէ
Տէր [6]Աստուած ի վերայ Աբրահամու զա-
20 մենայն զոր խոսեցաւ ընդ նմա : Եւ ասէ
Տէր , Ազազակ Սոդոմացւոց եւ Գոմորա-
ցւոց յաճախեաց , եւ մեղք նոցա մեծացան
21 յոյժ : Եւ արդ իջէալ տեսից եթէ ըստ ա-
զազակին նոցա որ գայն հասանէ՝ վճարի-
22 ցին , ապա թէ ոչ՝ զի գիտասցից : Եւ դարձ-
եալ անտի արանցն եկին ի Սոդոմ . " եւ
Աբրահամ կայր առաջի Տեառն :
23 Եւ մատուցեալ Աբրահամ ասէր , Միթէ
կորուսանիցե՞ս զարդարն ընդ ամպարշ-
տին , [6]եւ լինիցի՞ այդպարն իբրեւ զամ-
24 պարիշտն :" Եթէ իցեն յիսուն արդար ի
"քաղաքի , կորուսանիցե՞ս զնոսա , եւ՝ ո՛չ
նեղիցես ամենայն անզգեացն վասն յիսուն
25 արդարոյն եթէ իցեն ի նմա . Քաւ լիցի
քեզ առնել զայն բան . սպանանել զար-
դարն ընդ ամպարշտի , եւ լինիցի ար-
դարն իբրեւ զամպարիշտն . քաւ լիցի
քեզ որ դատիս զամենայն երկիր , մի ա-
26 րասցես զայն գատաստան : Եւ ասէ Տէր ,
Եթէ գտցի ի Սոդոմ յիսուն արդար ի քա-
ղաքի անդ , թողացուցից ամենայն տեղ-
27 եացն վասն նոցա : Պատասխանի եւ Աբ-
րահամ եւ ասէ , Այժմ սկսայ իսօսել ընդ
28 Տեառն , բայց ես հող եմ եւ մոխիր . եթէ
պակասիցեն քան զյիսուն արդար հնգից
չափ , կորուսանիցե՞ս վասն հնգից զա-
մենայն քաղաքն : Եւ ասէ , Ոչ կորուսից ,
29 եթէ գտցի անդ քառասուն եւ հինգ : Եւ
յաւել եւս խոսել ընդ նմա եւ ասէ , Իսկ
եթէ գտցի անդ քառասուն : Եւ ասէ , Ոչ
30 կորուսից վասն քառասնիցն : Եւ ասէ ,

[1] Եբր. թլփատեցան ընդ նմա [2] Եբր. Տէր
[3] Եբր. ըստ ժամանակի կենաց [4] Եբր. Եւ արդ զի ծերացայ, եղիցի ինձ փափկութի՞ւն
[5] Եբր. Տեառնէ [6] Եբր. դ-ւ-ե

[1]Միթէ իցէ՞ ինչ, Տէր," եթէ խօսիցիմ. Իսկ եթէ գայլ անդ երեսուն՝ եւ ասէ, Ոչ կորուսից, եթէ գայլ անդ երեսուն՝
31 եւ ասէ, Որովհետեւ կալայ խօսել ընդ Տեառն. եթէ գայլ անդ քսան՝ եւ ասէ,
32 Ոչ կորուսից վասն քսանիցն՝ եւ ասէ, [1]Միթէ իցէ՞ ինչ, Տէր", եթէ խօսեցայց եւս մնաց անգամ. եթէ գտանիցի անդ տասն՝
եւ ասէ, Ոչ կորուսից վասն տասանցն՝
33 եւ գնաց Տէր իբրեւ լռեաց ի խօսելոյ անտի ընդ Աբրահամու, եւ Աբրահամ դարձաւ ի տեղի իւր՝

ԳԼ. ԺԹ

1 Եւ եկին երկու հրեշտակքն ի Սոդոմ ընդ երեկս. եւ Ղովտ նստէր առ դրան Սոդոմայեցւոյն՝ Իբրեւ տեսաւ Ղովտ, յարեաւ ընդ առաջ նոցա, եւ երկիր եպազ ի վի-
2 րայ երեսաց իւրոց յերկիր, եւ ասէ, Ա-հաւասիկ ես, տեարք, եկայք ի տուն ծառայի ձերոյ, հանգերուք, եւ լուացիջ զոտս ձեր. եւ կանխեսջ ընդ առաւօտս երթիջիք զճանապարհս ձեր՝ եւ ասեն, Ոչ,
3 այլ ի քաղաքամիջի ասա ագցուք՝ Եւ բռնադատեաց զնոսա յոյժ, եւ խոտորե-ցան առ նա եւ մտին ի տուն նորա. եւ արար նոցա ընթրիս, եւ բաղարջ եփեաց նոցա եւ կերան՝
4 Մինչչեւ ի քուն մտանել էր նոցա, եւ արք քաղաքին Սոդոմայեցւոց պատեցին զտունն յերիտասարդաց մինչեւ ցծերս,
5 ամենայն ժողովուրդն ի միասին. Եւ կո-չէին առ Ղովտ եւ ասէին ցնա, Ո՞ւր են արքն որ մտին առ քեզ գիշերի, հե զնոսա առ մեզ զի գիտասցուք զնո-
6 սա՝ Եւ ել առ նոսա Ղովտ առ դրան՝ եւ զդուռն ձգեաց զկնի իւր,
7 Եւ ասէ ցնոսա, Քաւ լիցի ձեզ, եղբարք,
8 մի գործէք զայդ չարիս՝ Են իմ երկու դստերք որ ոչ գիտեն, հանից զնո-սա առ ձեզ, եւ արարէք ընդ նոսա որպէս հաճոյ իցէ ձեզ. բայց միայն արանցդ այդոցիկ մի՛ ինչ մեզ առնիցէք, որով-հետեւ մտին ընդ յարկաւ գերանաց ի-
9 մոյ՝ Եւ ասեն, Ի բաց կաց. մտեր բնակել պանդխտութեամբ, միթէ եւ դատաստանն եւս դատել. այժմ եւ զքեզ եւս չարչարես-ցուք առաւել քան զնոսա՝ Եւ բռնադա-տէին զայրն, զՂովտ, յոյժ, եւ մերձ էին
10 զդուռնն խորտակել՝ Եւ ձգեալ արանցն զձեռս իւրեանց կորզեցին զՂովտ ի տուն անդր, եւ զդուռս տանն
11 փակեցին. Եւ զարսն որ առ դուռս տանն կային հարին կուրութեամբ ի փոքուէ մինչեւ ցմեծն, եւ լքան խնդրել զդուռնն՝
12 Եւ ասեն արքն ցՂովտ, Է՞ ոք քո տան փեսայ կամ որդիք կամ դստերք, կամ այլ ոք քո իցէ՞ ի քաղաքի տուր. հան զնոսա
13 ի տեղւոջէ յայսմանէ՝ Զի կորուսանելոց եմք մեք զքաղաքս զայս. զի բարձրա-եաւ աղաղակ սուգ առաջի Տեառն. եւ
14 առաքեաց զմեզ Տէր սատակել զսա՝ Ել Ղովտ եւ խօսեցաւ ընդ փեսայս իւր որ առնլոց էին զդստերս նորա, եւ ասէ, Ա-րիք եւ ելէք ի տեղւոջէ տուի յայսմա-նէ, զի սատակէ Տէր զքաղաքս՝ Եւ թուէր ծաղր առնել յաչս փեսային իւրոց՝
15 Եւ իբրեւ եղեւ առաւօտ, փութացու-ցանէին հրեշտակքն զՂովտ եւ ասէին, Արի առ զկինն քո եւ զերկուս դստերս քո զոր ունիս, եւ ել ասէ, զի մի եւ դու կորնչիցիս ընդ անօրէնութիւնս քաղա-
16 քիդ՝ Եւ [2]նոքա խոտորեցան". եւ կալան հրեշտակքն զձեռանէ նորա եւ զձեռանէ կնոջ նորա եւ զձեռանէ երկուց դստե-րաց նորա, զի խնայեաց Տէր ի նա, եւ հանին զնա եւ եկին արտաքոյ քաղաքին՝
17 Եւ եղեւ իբրեւ հանին զնոսա արտաքս, ասեն, Ապրեցո զանձն քո, մի [3]գառնայ-ցես յետս, եւ մի կայցես յամենայն [4]կող-մանս աչխարհիդ". զերծիր ի լեառն, գու-
18 չէ ընդ նոսա ըմբռնիցիս՝ Եւ ասէ Ղովտ
19 ցնոսա, Աղաչեմ, Տէր. Որովհետեւ եգիտ ծառայ քո ողորմութիւն առաջի քո, եւ մեծ արարեր զարդարութիւն քո զոր առ-նես ինձ ապրել անձին իմոյ. եւ արդ ես ոչ կարեմ զերծանել ի լեառն, գուցէ հա-սանիցեն ինձ չարիքն եւ մեռանիցիմ՝
20 Ահա քաղաքս այս մերձ է անկանել ինա, որ է փոքրիկ, անդ ապրեցայց. (եւ չէ՞ փոքր,) եւ կեցցէ անձն իմ [5]վասն քո"՝
21 Եւ ասէ ցնա, Ահաւասիկ ապարի մեծա-րանս երեսաց քոց եւ ի բանիդ յայդմիկ՝ չկործանել զքաղաքն վասն որոյ խօսե-
22 ցար՝ Եւ արդ փութա գերծանել ի նա, զի ոչ կարեմ առնել իրս մինչեւ անց-կանիցիս անդր. վասն այնորիկ կոչեաց
23 զանուն քաղաքին այնորիկ [6]Սեգովր՝ Ա-րեգական ծագեաց յերկիր, եւ Ղովտ եմուտ
24 ի Սեգովր՝ Եւ Տէր տեղաց ի Սոդոմ եւ

[1]Եբր. Աղէ՛, մի բարկասցի Տէր իմ,

[2]Եբր. նա դանդաղէր [3]Եբր. Հայեսցիս [4]Եբր. դաշտիդ [5]Յեբր. պոռոբ [6]Այնինչ, փոքր

ի Գամոր ծծուամբ եւ հաւր ի Տեառնէ յերկ-
25 նից, Եւ կործանեաց զքաղաքսն զայնո-
սիկ եւ զամենայն [1]կազմանսն եւ զամե-
նայն բնակիչս քաղաքացն եւ [2]զամենայն
26 բոյս՝՝ երկրին։ Եւ [3]զարձաւ կինն Ղովտայ
յետս, եւ եղեւ արձան աղի ։
27 Եւ կանխեաց Աբրահամ ընդ առաւօտն
28 ի տեղին ուր կայր առաջի Տեառն, Եւ
հայեցաւ յերեսս Սոդոմացւոց եւ Գոմո-
րացւոց, եւ յամենայն երեսս երկրի [4]դա-
շտին. եւ ետես եւ անա ելանէր բոց
երկրէն իբրեւ մրրիկ հնոցի ։
29 Եւ եղեւ ի սատակել [5]Տեառն զամե-
նայն քաղաքսն չուրջ զընակութեամբն՝՝
յիշեաց Աստուած զԱբրահամ, եւ հնան
արձակեաց զՂովտ ի միջոց կործանմանն,
ի կործանել Տեառն զքաղաքսն յորս
բնակեալ էր ի նոսա Ղովտ ։
30 Եւ ել Ղովտ ի Սիգովրայ, եւ նստէր
ի լերինն, եւ երկոքեան դստերք նորա ընդ
նմա. քանզի երկեաւ բնակել ի Սիգովր.
եւ բնակեաց յայրի անդ ինքն եւ երկոքեան
31 դստերք նորա ընդ նմա ։ Եւ ասէ երէցն
ցկրտսերն, Հայր մեր ծերացեալ է, եւ չիք
ոք յերկրի որ մտանիցէ առ մեզ, որպէս
32 օրէն է ամենայն երկրի. Եկ եւ արբուս-
ցուք հօր մերում գինի, եւ ննջեսցուք
ընդ նմա, եւ յարուսցուք ի հօրէ մերմէ
33 զաւակ ։ Եւ արբուցին հօրն իւրեանց գի-
նի ի գիշերին յայնմիկ. եւ եմուտ երէցն
ննջեաց ընդ հօրն իւրում [6]գիշերն զայն՝՝.
եւ ոչ գիտէր ի ննջելն նորա եւ ի յառնել ։
34 Եւ եղեւ ի վաղիւ անդր եւ ասէ երէցն
ցկրտսերն, Անա ննջեցի ես երէկ ընդ
հօր իմում. արբուսցուք նմա գինի եւ
ի գիշերիս յայսմիկ, եւ մուտ ննջեա ընդ
նմա, եւ յարուսցուք զաւակ ի հօրէ մեր-
35 մէ ։ Եւ արբուցին եւ յայնմ գիշերի գինի
հօրն իւրեանց, եւ եմուտ կրտսերն եւ
ննջեաց ընդ հօրն իւրում. եւ ոչ գիտէր
36 ի ննջելն նորա եւ ի յառնել ։ Եւ յղացան
երկոքեան դստերքն Ղովտայ ի հօրէն իւր-
37 եանց ։ Եւ ծնաւ երէցն որդի, եւ կոչ-
եաց զանուն նորա Մովաբ. [6]ասէ, Ի հօրէ
իմմէ ։՝՝ Նա է հայր Մովաբացւոց մինչեւ
38 ցայսօր ժամանակի ։ Ծնաւ եւ կրտսերն
որդի, եւ կոչեաց զանուն նորա [7]Ամման.
[6]ասէ, Որդի ազգի իմոյ ։՝՝ Նա է հայր
Ամմնացւոց մինչեւ ցայսօր ժամանակի,

ԳԼ. Ի

1 Եւ չուեաց անտի Աբրահամ յերկիրն հա-
րաւոյ, եւ բնակեցաւ ընդ Կադէս եւ ընդ
2 Սուր. եւ պանդխտեցաւ ի Գերարա ։ Եւ
ասաց Աբրահամ վասն Սառայի կնոջն ի-
րոյ թէ Քոյր իմ է. եւ առաքեաց Աբիմե-
լէք արքայ Գերարացւոց, եւ առ զՍառա։
3 Եւ եկն Աստուած առ Աբիմելէք ի տես-
լեան գիշերոյ, եւ ասէ, Անա մեռանիս
վասն կնոջդ զոր առեր, զի կին ամուս-
4 կին է ։ Բայց Աբիմելէք ոչ մերձեցաւ ի
նա, եւ ասէ, Տէր, զազգ մի [6]դանդէա
5 եւ՝՝ զարդար կորուսանիցե՞ս ։ Ո՞չ ասա-
քէն նա ասաց ցիս, Քոյր իմ է, եւ սա
ասաց ցիս, Եղբայր իմ է. եւ ես սրբու-
թեամբ սրտի եւ արդարութեամբ ձեռաց
6 արարի զայս ։ Եւ ասէ ցնա Աստուած ի
տեսլեանն, Ես գիտացի զի սրբութեամբ
սրտի արարեր զոդս զայդ, եւ խնայեցի
ես ի քեզ՝ չմեղանչել քեզ յիս. վասն
այնորիկ ոչ ետու թոյլ քեզ մերձենալ ի
7 դա ։ Բայց արձակեա զկինդ յայր իւր.
զի այր մարգարէ է, եւ արասցէ ազօթս
վասն քո եւ կեցցես. ապա թէ ոչ առա-
ցես, գիտեա զի [8]մեռանիս դու եւ ամե-
նայն որ քոյ քո է ։
8 Եւ կանխեաց Աբիմելէք ընդ առաւօտն
եւ կոչեաց զամենայն զծառայս իւր, եւ
խօսեցաւ զամենայն բանս զայսոսիկ յա-
կանջս նոցա. եւ զահի հարան [6]ամենայն
9 մարդիկն յոյժ ։ Եւ կոչեաց Աբիմելէք
զԱբրահամ, եւ ասէ ցնա, Զինչ գոր-
ծեցեր դու զայդ ընդ մեզ. զի՛նչ մեղաք
ինչ քեզ, զի ածեր ի վերայ իմ եւ ի վե-
րայ թագաւորութեան իմոյ մեղս մեծա-
մեծս. գործ զոր ոչ ոք գործէ՝ գործեցեր
10 ընդ իս ։ Եւ ասէ Աբիմելէք ցԱբրահամ,
11 Զինչ տեսեալ արարեր զբանդ զայդ։ Եւ
ասէ Աբրահամ, Զի ասացի թէ գուցէ ոչ
գուցէ աստուածապաշտութիւն ի տեղւոջս
յայսմիկ, եւ զիս սպանանիցեն վասն
12 կնոջդ իմոյ ։ Բայց արդարեւ քոյր իմ է
ի հօրէ եւ ոչ ի մօրէ, եւ եղեւ ինձ կին։
13 Եւ եղեւ յորժամ եհան զիս Աստուած ի
տանէ հօր իմոյ, եւ ես ասացի ցդա, Զայս
[9]արդարութիւն արասցես ընդ իս. յամե-
նայն տեղիս ուր եւ երթիցուք, ասասջ
14 ցիր զինէն թէ եղբայր իմ է ։ Եւ առ Ա-
բիմելէք [6]հազար սատեր, եւ՝՝ արկաւ եւ

[1] ՆԲԳ. գաշան [2] ՆԲԳ. զբոյս [3] ՆԲԳ. Հայեցաւ
[4] ՆԲԳ. գաշտին գաշտին, [5] ՆԲԳ. Աստուծոյ զքաղաքս
[6] 3ՆԲԳ. պէսպէս [7] ԵՔԳ. Բենամի
[8] ՆԲԳ. մահու մեռանիցիս [9] Կամ, ընորհս

ոչխար, ծառայս եւ ազախնայս, եւ նա
Աբրահամու, եւ նա ցնա զԱառա զկին
15 իւր։ Եւ ասէ Աբիմելէք [1]ցԱբրահամ,
Ահաւասիկ երկիրդ իմ առաջի քո, ուր
16 հաճոյ իցէ քեզ՝ բնակեաց։ Եւ ցԱառա
ասէ, Ահա հազար սաեր եղբօր
քումմ, այն եղիցի քեզ [2]ի պատիւ երեսաց
քոց եւ ամենայն կանանց որ ընդ քեզ
17 են, եւ զամենայն արդար խօսիցիս"։ Եւ
եկաց յաղօթս Աբրահամ առ Աստուած.
եւ [3]բժշկեաց զԱբիմելէք եւ զկին նորա
18 եւ զազախնայս նորա, եւ ծնանէին. Զի
փակելով փակեալ Տէր արտաքուստ զա-
մենայն արգանդ ի տան Աբիմելէքայ վասն
Սառայի կնոջ Աբրահամու։

Գլ. ԻԱ

1 Եւ Տէր յայց էր Սառայի որպէս եւ ա-
ռաց, եւ արար Տէր Սառայի որպէս եւ
2 խօսեցաւ։ Եւ յղացաւ եւ ծնաւ Սառա
Աբրահամու որդի ի ծերութեան[4], ըստ
ժամանակին որպէս եւ խօսեցաւ ընդ նմա
3 Աստուած։ Եւ կոչեաց Աբրահամ զանուն
որդւոյ իւրոյ զոր ծնաւ նմա Սառա՝ [5]Ի-
4 սահակ։ Եւ թլփատեաց Աբրահամ զԻսա-
հակ զորդի իւր յաւուր ութերորդի, որ-
պէս եւ պատուիրեաց նմա [1]Տէր Աստ-
5 ուած։ Եւ Աբրահամ հարիւրամեան էր
յորժամ եղեւ նմա Իսահակ որդի իւր։
6 Եւ ասէ Սառա, [6]Ծաղր արար ինձ Աս-
տուած. զի որ եւ լսիցէ՝ ուրախ լինիցի ընդ
7 իս։ Եւ ասէ, Ո՞վ պատմեսցէ Աբրահա-
մու եթէ սնուցանէ մանուկ՝ Սառա. զի
8 ծնայ որդի ի ծերութիան [7]իմում։ Եւ աճ-
եաց մանուկն, եւ հասուցաւ ի սանձէ.
եւ արար Աբրահամ ուրախութիւն մեծ
յաւուր յորում հասուցաւ ի սանձէ Իսա-
հակ որդի իւր։
9 Եւ տեսեալ Սառայի զորդին Ագարայ
Եգիպտացւոյ որ եղեւ Աբրահամու, զի
[8]խաղայր ընդ Իսահակայ որդւոյ իւրում՝
10 Ասէ ցԱբրահամ, Ի բաց հան զազախինդ
եւ զորդի դորա, զի մի՛ ժառանգեսցէ որ-
դի ազախնայդ ընդ որդւոյ իմում Իսահա-
11 կայ։ Եւ խոտա թուեցաւ բանն առաջի
12 Աբրահամու վասն որդւոյ նորա։ Եւ ասէ
Աստուած ցԱբրահամ, Մի՛ լինի խոտա
թուեցի առաջի քո վասն մանկանն եւ
վասն ազախնոյն. զամենայն զոր ինչ ա-
սիցէ քեզ Սառա՝ լսեր ձայնի նորա. զի
13 Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ։ Բայց
զորդի ազախնոյդ արարից յազգ [1]մեծ, զի
14 սերմն քո է։ Յարուցաւ Աբրահամ ընդ ա-
ռաւօտն, եւ առ հաց եւ տիկ ջրոյ եւ ետ
ցԱգար, եւ եդ յուս [9]նորա զմանուկն",
եւ արձակեաց զնա. եւ երթեալ մոլոր-
եալ չրջէր յանապատի անդ առ Ջրհորովն
15 երդման։ Եւ նուազեաց ջուր ի տիկէ ան-
սի. եւ ընկէց զմանուկն ի ներքոյ միոյ
16 [10]եղեւրին ծառոյ". Եւ երթեալ նստաւ յան-
դիման նորա ի բացեայ իրրեւ վտաա-
նաւ. զի ասէր թէ Ոչ տեսից զման որ-
զոյն իմոյ. եւ նստեր յանդիման նորա.
17 Ձայն բարձեալ [1]մանկանն լայր։ Եւ լուաւ
Աստուած ձայնի մանկանն [1]ի տեղւոյնէն
ուր էր", եւ կոչեաց [11]Աստուած զԱգար
յերկրէից եւ ասէ ցնա, Զինչ է այդ, Ագար.
մի՛ երկնչիր, զի լուաւ Աստուած ձայնի
18 որդւոյ քո ի տեղւոյնէ այսր ուր է։ Արի առ
զմանուկն քո, եւ զօրացո զնա ձեռամբ.
19 զի յազգ մեծ արարից զնա։ Եւ եբաց
Աստուած զաչս նորա, եւ հասեալ ջրհոր
ջրոյ [1]կենդանւոյ. եւ չոգաւ եվից զաւին
20 ջրով եւ արբոյց մանկանն։ Եւ էր Աս-
տուած ընդ մանկանն, եւ աճեաց [12]եւ
21 եղեւ ազեղնաւոր։ Եւ բնակէր յանապա-
տին Փառանայ, եւ առ նմա մայր նորա
կին յերկրէն Եգիպտացւոյ։
22 Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ խօսե-
ցաւ Աբիմելէք եւ [1]Ոքզոլ սպարապետ զօրաց նո-
րա եւ" Փիքոզ սպարապետ զօրաց նո-
րա, եւ ասեն ցԱբրահամ, Աստուած ընդ
23 քեզ է յամենայնի զինչ եւ գործես։ Արդ
երդուիր ինձ յԱստուած չմեղանչել ինձ,
եւ մի՛ զաւակի իմում եւ [13]անուան իմոյ.
այլ ըստ արդարութեանն զոր արարի
ընդ քեզ՝ այսպէս ընդ իս, եւ երկրիս
24 յորում բնակեալ ես ի նմա։ Եւ ասէ Աբ-
րահամ, Ես երդնում։ Եւ յանդիմանեաց
25 Աբրահամ զԱբիմելէք վասն ջրհորոյն ջրոյ
26 զոր հանին ծառայքն Աբիմելէքայ։ Եւ
ասէ ցնա Աբիմելէք, Ոչ գիտայի ո՛ արար
զայն իրս, եւ դու ոչ պատմեցեր ինձ,

---

[1] 3ԵԲՐ. պակաս [2] ԵԲՐ. ի ծածկոյթ աչաց, ամե-
նեցուն որ ընդ քեզ են, և ընդ ամենեսին. և նա
յանդիմանեցաւ [3] ԵԲՐ. բժշկեաց Աստուած
[4] ԵԲՐԱՅԵՑԻՆ յաւելու, նորա [5] Ա. յունդն, ծաղր
կամ ուրախութիւն [6] Կամ, Ուրախ [7] ԵԲՐ. Նո-
րա [8] ԵԲՐ. ծաղր առնէր

[9] ԵԲՐ. Նորա, և գմանուկն [10] ԵԲՐ. ի մացառաց
[11] Հրեշտակ Աստուծոյ [12] ԵԲՐ. և բնակէր յա-
նապատին, և [13] ԵԲՐ. թոռին

27 եւ իմ ոչ էր լուեալ՝ բայց այսօր ։ Եւ առ
Աբրահամ արջառս եւ ոչխարս , եւ եա
Աբիմելեքայ . եւ եղեն երկոքեան ուխտ
28 ընդ միմեանս։ Եւ կացոյց Աբրահամ եւթն
29 որոջ ոչխարաց միայն ։ Եւ ասէ Աբիմե-
լէք ցԱբրահամ, Զինչ են այս եւթն որոջք
30 ոչխարաց զոր կացուցեր միայն ։ Եւ ա-
սէ , Զայդ եւթն որոջս առցես ինձէն ,
զի եղիցի ինձ ի վկայութիւն , թէ ես
31 փորեցի զջրհորդ զայդ ։ Վասն այնորիկ
անուանեաց զանուն տեղւոյն այնորիկ
[1]Ջրհոր երդման". զի անդ երդուան եր-
32 կոքին միմեանց ։ Եւ անդ եղեն ուխտ առ
Ջրհորին երդման ։ Յարեաւ Աբիմելէք
եւ [2]Ոքոզաթ առաջարապետ նորա եւ"
Փիքող սպարապետ զօրաց նորա , եւ
դարձան անդրէն յերկիրն Փղշտացւոց ։
33 Եւ անկեաց Աբրահամ առնկ առ Ջրհո-
րովն երդման , եւ կարդաց անդ զանուն
34 Տեառն , Աստուած յաւիտենական ։ Եւ
պանդխտեաց Աբրահամ յերկրին Փղշտա-
ցւոց աւուրս բազումս ։

ԳԼ . ԻԲ

1 Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ փորձեաց
Աստուած զԱբրահամ եւ ասէ ցնա , Աբ-
րահամ , [2]Աբրահամ . եւ նա ասէ , Աւա-
2 միկ եմ ։ Եւ ասէ ցնա , Առ զորդի քո [3]սիրելի զոր սիրեցեր՝ զԻսահակ , եւ
գնա դու [4]յերկիրն բարձր", եւ հանցես
զդա անդ յողջակէզ ի վերայ միոց լերանց
3 յորոց ասացից քեզ ։ Եւ յարուցաւ Աբրահամ
ընդ առաւօտն , համիտեաց զէշ իւր, եւ
առ ընդ իւր երկուս ծառայս, եւ զԻսահակ
զորդի իւր . եւ պատառեաց փայտ յող-
ջակէզ , եւ յարուցաւ գնաց . եւ եկն ի տե-
4 զին զոր ասաց նմա Աստուած ։ Եւ յա-
ւուրն երրորդի համբարձ Աբրահամ զաչս
5 իւր եւ ետես զտեղին ի հեռաստանէ ։ Եւ
ասէ Աբրահամ ցպառանիս իւր , Նստա-
րուք դուք այդր հանդերձ իշովդ, եւ ես եւ
պատանեակդ երթիցուք մինչեւ ցանդր,
եւ երկիր պաղտուք եւ դարձցուք առ
6 ձեզ ։ Եւ առ Աբրահամ զփայտ ողջակի-
զին , եւ եդ ի վերայ Իսահակայ որդ-
ւոյ իւրոյ . եւ առ ի ձեռն զհուրն եւ
զսուրն. եւ գնացին երկոքեան ի միասին։
7 Եւ ասէ Իսահակ ցԱբրահամ հայր իւր ,
Հայր . եւ նա ասէ , Զի՞ է , որդեակ . եւ
նա ասէ , Ահա հուր եւ ահա փայտ , ուր
8 է ոչխար յողջակէզ ։ Եւ նա ասէ , Աստ-
ուած անտցէ իւր ոչխար յողջակէզ , որդ-
9 եակ ։ Գնացին երկոքեան ի միասին։ Եւ
եկին ի տեղին զոր ասաց նմա Աստուած.
անդ չինեաց սեղան Աբրահամ, եւ եդ
ի վերայ զփայտն . եւ կապեաց զԻսա-
հակ զորդի իւր , եւ եդ զնա ի սեղանին
10 ի վերայ փայտին ։ Եւ ձգեաց Աբրահամ
զձեռն առնուլ զսուրն եւ զնեալ զորդին
11 իւր ։ Եւ կոչեաց զնա հրեշտակ Տեառն
յերկնից եւ ասէ , Աբրահամ , Աբրահամ.
12 եւ նա ասէ ցնա , Սեասկ եմ ։ Եւ ա-
սէ , Մի մերձեր ձեռն քո ի պատան-
եակդ , եւ մի՛ ինչ առներ դմա . զի այժմ
գիտացի թէ երկիւղած ես դու ցԱստուա-
ծոյ , եւ ոչ խնայեցեր յորդիդ քո [5]սիրե-
13 լի վասն իմ ։ Համբարձ Աբրահամ զաչս
իւր եւ ետես , եւ անա խոյ մի [6]կախ-
եալ կայր զծառոյն սարեկայ զեղջերաց".
եւ գնաց Աբրահամ առ գխոյն , եւ եհան
զնա յողջակէզ փոխանակ Իսահակայ որ-
14 դւոյ իւրոյ ։ Եւ կոչեաց Աբրահամ զա-
նուն տեղւոյն այնորիկ Տէր [7]ետես . զի
ասիցեն ցայսօր , ի լերինն յայնմիկ Տէր
15 [8]երեւեցաւ ։ Եւ կոչեաց հրեշտակ Տեառն
զԱբրահամ երկրորդ անգամ յերկնից եւ
16 ասէ , Ցանձն իմ երդուայ , ասէ Տէր ,
փոխանակ զի արարեր դու զբանդ զայդ,
եւ ոչ խնայեցեր յորդիդ քո [9]սիրելի վասն
17 իմ , Այո , օրհնելով օրհնեցից զքեզ , եւ
բազմացուցանելով բազմացուցից զզա-
ւակ քո իբրեւ զաստեղս երկնից բազ-
մութեամբ , եւ իբրեւ զաւազ առ ափն
ծովու . եւ ժառանգեսցէ զաւակ քո զքա-
18 ղաքս հակառակորդաց իւրոց . Եւ օրհ-
նեսցին ի զաւակի քում ամենայն ազգք
երկրի, փոխանակ զի լուար ձայնի իմում
19 Դարձաւ Աբրահամ առ պատանիսն իւր ,
եւ յարուցեալ գնացին ի միասին ի Ջրհորն
երդման . եւ բնակեցաւ Աբրահամ առ
Ջրհորովն երդման ։
20 Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ պատ-
մեցաւ Աբրահամու , թէ ահա ծնաւ Մելք-
քա եւ նա որդիս Նաքովրայ եղբօր քում .
21 [9]Ոմվք զանդրանիկն նորա , եւ զԲաւ
զեղբայր նորա եւ զԿամուէլ հայր [10]Ասո-
22 ւոց, եւ զՔեսադ եւ զԱզաւ եւ զՓադղաս

[1] ԵԲԲ. Բերսաբէէ [2] ՅԵԲԲ. պ-ւ-ե [3] ՆԵԲԲ. զվիա-
մոր [4] ՆԵԲ. յերկիրն Մորիա

[5] ՆԵԲ. միամօր [6] ՆԵԲ. կալեալ կայր ի մացառս
յեղջերաց իւրոց [7] ՆԵԲ. տեսցի [8] ՆԵԲ. երե-
ւեսցի [9] ՆԵԲ. Զհուս [10] ՆԵԲ. Ասամայ

23 եւ զՅեսաւաւ եւ զԲաթուէլ ։ Եւ Բաթուէլ ծնաւ զՌեբեկա . ութ սոքա որդիք
զոր ծնաւ Մելքա Նաքովրայ եղբօրն
24 Աբրահամու ։ Եւ հարճն նորին որոյ էր
անուն Ռեէմա , ծնաւ եւ նա զՏաբեկ եւ
զԳահամ եւ զՏաբաս եւ զՄովքա ։

ԳԼ. ԻԹ

1 Եւ եղեն կեանք Սառայի հարեւր եւ քսան
2 եւ եւթն ամ ։ Եւ մեռաւ Սառա ի քա-
ղաքի Արբոկայ ի ձորն, այն ինքն է Քեբ-
րոն յերկրին Քանանացւոց . եւ եկն Աբ-
րահամ կոծել զՍառա եւ սուգ առնուլ ։
3 Եւ յարեաւ Աբրահամ ի մեռելոյ անտի
իւրմէ , եւ խօսեցաւ ընդ որդիսն Քեթայ
4 եւ ասէ , Պանդուխտ եւ նժդեհ եմ ես ի
միջի ձերում . արդ տուք ինձ տացուած
գերեզմանի ընդ ձեզ եւ թաղեցից զմեռ-
5 եալս իմ ։ Պատասխանի եառն որդիքն
6 Քեթայ Աբրահամու եւ ասեն , Ունկն դիր
մեզ , Տէր . թաղաւոր յԱստուծոյ ես ի
միջի մերում . յընտիր չիրմայ մերոյ
թաղեա զմեռեալդ քո . զի ոչ ոք ի մէնջ
7 արգելու ի քէն զչիրմայ ։ Յարեաւ Աբ-
րահամ եւ երկիր եղաղ Ժողովրդեան
8 երկրին , որդւոցն Քեթայ . Եւ խօսեցաւ
ընդ նոսա Աբրահամ եւ ասէ , Եթէ յո-
ժարիցէք ի մոյ ձերում թաղել զմեռ-
եալդ իմ յերեսաց իմոց , ունկն դիք ինձ ,
եւ խօսեցարուք վասն իմ ընդ Եփրոնի
9 որդւոյ Սահառայ , Եւ տացէ ինձ [5]զայրն
կրկին՝ , որ է ի վիճակի ագարակին իւ-
րոյ , արծաթով՝ որչափ եւ արժան իցէ .
տացէ զնա ինձ ի միջի ձերում ի տուա-
10 ցուած [6]բնակաց ։ Եւ Եփրոն նստէր ի մէջ
որդւոցն Քեթայ ։ Պատասխանի եառ Եփ-
րոն Քեթացի Աբրահամու եւ ասէ լու ի
լու որդւոցն Քեթայ եւ ամենեցուն որ
մտանէին ընդ դուռն քաղաքին նորա .
11 Եւ ասէ , Ցիս զարձ , Տէր , եւ ունկն դիր
ինձ . զագարակն եառ քեզ , եւ զայրն
որ ի նմա՝ տացի քեզ . առաջի ամենայն
քաղաքակցաց իմոց եառ քեզ . թաղեա
12 զմեռեալն քո ։ Եւ երկիր եղաղ Աբրա-
13 համ առաջի Ժողովրդեան երկրին . Եւ
խօսեցաւ ընդ Եփրոնի յականջս Ժողո-
վրդեան երկրին եւ ասէ , Որովհետեւ
անսացեր ինձ , ունկն դիր ինձ . տացի քեզ
արծաթ ընդ ագարակին , առ յինէն եւ
14 թաղեցից անդ զմեռեալս ։ Պատասխանի
եառ Եփրոն Աբրահամու եւ ասէ ցնա,
15 [7]Ոչ աէր իմ . լուայ թէ՞ վեհիմն չորեք-
հարեւր սատերի արծաթոյ է . ընդ իս եւ
ընդ քեզ զինչ է այն . յայդ զու թաղ-
16 եա զմեռեալն քո ։ Եւ իրրեւ լուաւ Աբ-
րահամ Եփրոնի , կշռեաց զարծաթն Եփ-
րոնի , զոր խօսեցաւ յականջս որդւոցն
Քեթայ , չորեքհարեւր սատեր արծաթոյ
17 ընտրոյ վաճառականաց ։ Եւ հաստատե-
ցաւ ագարակն Եփրոնի , որ է [8]առ կրկնով
այրեւն՝ յանդիման Մամբրէի , ագարակն
եւ այրն որ է ի նմա , եւ ամենայն ծա-
ռատունկ որ էր յագարակի անդ չուրջ
18 յամենայն սահմանս նորա , Ի տացուածս
Աբրահամու առաջի որդւոցն Քեթայ , որ
մտանէին ընդ դուռն քաղաքին նորա ։
19 Եւ յետ այնորիկ թաղեաց Աբրահամ զՍա-
ռա զկին իւր [9]ի կրկնում այրի ագարա-
կին , որ է՝ յանդիման Մամբրէի , այն է
20 Քեբրոն՝ յերկրին Քանանացւոց ։ Եւ հաս-
տատեցաւ ագարակն եւ այրն որ է ի նմա՝
Աբրահամու , ի տացուածս չիրմայ յորդ-
ւոցն Քեթայ ։

ԳԼ. ԻԹ

1 Եւ Աբրահամ էր ծերացեալ եւ անցեալ
զաւուրսն . եւ Տէր օրհնեաց զԱբրահամ
2 ամենայնիւ ։ Եւ ասէ Աբրահամ ցծա-
ռայն իւր ցերէց տան իւրոյ , ցիշխան
ամենայն ընչից նորա , Դիր զձեռն քո
3 ընդ ազդրս իմոյզ , եւ երդմնեցուսից
զքեզ ի Տէր , յԱստուած երկնից եւ յԱս-
տուած երկրի , զի մի առցես կին որդ-
ւոյ իմոյ Բաահակայ ի դստերաց Քա-
4 նանացւոց յորոց միջի ես բնակեալ . Այլ
յերկիրն [10]իմ ուստի եղեալ եմ երթիցես
եւ ի տուն իմ՝ , եւ առցես զոմ անտի
5 կին որդւոյ իմոյ Բաահակայ ։ Ասէ ցնա
ծառայն , Գուցէ կինն ոչ կամիցի գալ
ընդ իս յերկիրս յայս , զարձուցանելով
զարձուցից զորդի քո յերկիրն ուստի ե-
6 լեր ։ Եւ ասէ Աբրահամ , Զգոյշ լեր , մի
7 զարձուցանիցես զորդի իմ անդր ։ Տէր
Աստուած երկնից [2]եւ Աստուած երկրի՝ ,
որ առ զիս ի տանէ հօր իմոյ եւ յերկրէն
ուստի ծնեալ էի , որ խօսեցաւն ընդ իս

---

[1] ԵՔԲ. ամ՝ ամք կենաց Սառայի [2] ՅԵՔԲ. պ-ի-ոբ
[3] ԵՔԲ-ՅԵՔԲ-, յերեսաց իմոց [4] ԵՔԲ. իշխան
[5] ԵՔԲ. զայրն Մաքփեղայ [6] ԵՔԲ. չիրմի

[7] ԵՔԲ. Տէր իմ՝ ունկն դիր ինձ. [8] ԵՔԲ. ի Մաք-
փեղա [9] ԵՔԲ. յայրին որ յագարակին Մաքփե-
ղայ [10] ԵՔԲ. իմ և առ ազգականս իմ երթիցես

եւ երդուաւ ինձ եւ ասէ , Զաւակի քումմ
սաց տկրկիրդ դայդ, նա առաքեսցէ զհրեշ-
տակ իւր առաջի քո , եւ առցես անտի
8 կին որդւոյ իմում Իսահակայ : Ապա թէ
ոչ կամիցի կինն գալ ընդ քեզ [1]յերկիրս
յայս", քաւեալ լիցիր դու յերդմանէդ
յայդմանէ . բայց միայն զորդեակդ իմ մի
9 դարձուցանիցես անդր : Եւ եդ ծառայն
Աբրահամու զձեռն իւր ընդ երանօք
տեառն իւրոյ , եւ երդուաւ նմա վասն
բանիս այսորիկ :
10 Եւ առ ծառայն տասն ուղտս յուղտուց
տեառն իւրոյ եւ գնաց , եւ յամենայն
բարութենից տեառն իւրոյ ընդ իւր . եւ
յարեաւ գնաց ի Մեսոպոտամիա ի քաղաքն
11 Նաքովրայ : Եւ նստոյց զուղտսն արտա-
քոյ քաղաքին առ ջրհորդ ջրոյն ընդ ե-
12 րեկս, յորժամ ջրուհին ելանէր : Եւ ասէ,
Տէր , Աստուած տեառն իմոյ Աբրահա-
մու , յաջողեա առաջի իմ այսօր , եւ ա-
րա ողորմութիւն ընդ տեառն իմում Աբ-
13 րահամու : Ահաւասիկ ես կամ ի վիրայ
աղբեր ջրոյս , եւ դստերք բնակչաց քա-
14 ղաքիս ելանեն հանել ջուր : Եւ եղիցի
կոյս մի որում ես ասացից , Թէ խոնար-
հեցո զսափորդ քո զի արբից , եւ ասաս-
ցէ ցիս , Արբ , եւ ուղտուցդ քոյ եւս
արբուցից մինչեւ դադարեսցեն յրմսկե-
լոյ , զայն պատրաստեցեր ծառային քումմ
Իսահակայ , եւ այնու գիտասցից թէ ա-
րարեր ողորմութիւն տեառն իմում [1]Աբ-
րահամու :
15 Եւ եղեւ մինչչեւ կատարեալ էր նորա
զխօսեն [1]ի մտի իւրում", եւ ահա Ռե-
բեկա ելն էր , որ ծնեալն էր Բեթուէլի
որդւոյ Մեղքայ կնոջ Նաքովրայ եղբօր
Աբրահամու, եւ ունէր սափոր յուս իւր :
16 Եւ էր կոյսն գեղեցիկ երեսօք յոյժ , կոյս՝
զոր այր ոչ գիտէր . էջ յաղբեւրն եւ ե-
17 լից զսափորն իւր եւ էլ : Ընթացաւ ծա-
ռայն ընդ առաջ նորա եւ ասէ , Սրբո ինձ
18 սակաւ մի ջուր ի սափորոյ այսի : Եւ
նա ասէ , Արբ , տէր . եւ փութացաւ ի-
ջոյց զսափորն ի վերայ բազկաց իւրոց,
19 եւ արբոյց նմա, Մինչեւ դադարեաց յրմ-
պելոյ , եւ ասէ , Եւ ուղտուցդ քոյ հա-
նիցի ջուր՝ մինչեւ աւարնեքեան արբցին :
20 Եւ փութացաւ թափեաց զսափորն յա-
ւազանն , եւ ընթացաւ դարձեալ ի ջրա-
հորն հանել , եւ հնան ջուր աւրնայն
21 ուղտուցն նորա : Եւ այրն միա դնէր
նմա , եւ լուռ կայր ի միտ առնուլ , եթէ
աջողեաց Տէր զճանապարհն նորա , եւ
22 թէ ոչ : Եւ եղեւ իբրեւ դադարեցին ա-
ւնտնայն ուղտքն արմկելոյ , եւ առ այրն
[2]դինդս ոսկիս՝ մի մի քան դահեկանի ձու-
լոյ", եւ երկուս ապարանջանս ի ձեռս
նորա ի տասն [3]դահեկանէ ձոյլ նոցա":
23 Եւ հարց զնա եւ ասէ , Ո՞յր դուստր
ես դու, պատմեա ինձ . Թէ իցէ՞ ի տան
24 [4]քումմ" մեզ տեղի իջեւանեայ : Եւ ասէ
ցնա , Դուստր Բեթուէլի եմ ես որդւոյ
25 Մեղքայ զոր ծնաւ Նաքովրայ : Եւ ասէ
ցնա , Եւ յարդ եւ խոտ չատ է մեր , եւ
26 տեղի իջեւանեայ : [5]Խնդայ այրն եւ եր-
27 կիր կապագ [6]Աստուծոյ , Եւ ասէ , Օրհնեալ
Տէր Աստուած տեառն իմոյ Աբրահամու,
որ ոչ վրիպեցոյց զարդարութիւն իւր եւ
զճշմարտութիւն ի տեառնէ իմմէ , եւ ինձ
յաջողեաց Տէր ի տան եղբօր տեառն ի-
28 մոյ : Եւ ընթացաւ աղջիկն պատմեաց
ի տան մօր իւրոյ ըստ բանիցն այնոցիկ:
29 Եւ Ռեբեկայ էր եղբայր որում անուն
էր Լաբան . եւ ընթացաւ Լաբան առ
30 այրն արտաքս յաղբեւրն . Իբրեւ եահս
զգինդսն եւ զապարանջանսն ի ձեռսն
քոնս իւրոյ , եւ զի լուաւ զբանս յՌեբե-
կայ քենէ իւրմէ որ ասէր , Թէ Այսպէս
ինչ խօսեցաւ ընդ իս այրն. եւ եկն առ
այրն , մինչ կայր ի վերայ ուղտուց իւրոյ
31 առ աղբերն . Եւ ասէ ցնա , Եկ մտաս
ի տուն , օրհնեալ Տեառն , դի՞ կաս ար-
տաքոյ . զի ես պատրաստեցի տուն եւ
32 տեղի ուղտուցդ : Եմուտ այրն ի տուն
անդր , եւ իջոյց ուղտուցն . եւ ետուն
յարդ եւ խոտ ուղտուցն , եւ ջուր լուա-
նալոյ ոտից նորա եւ ոտից նոցա որ ընդ
33 նմանն էին : Եւ եդին հաց առաջի նորա՝
ուտել . եւ նա ասէ , Ոչ կերայց մինչեւ
խօսեցայց զբանս իմ . եւ [7]ասեն Ասա-
34 սեայ : Եւ ասէ, Ծառայ Աբրահամու եմ
35 ես . Եւ Տէր օրհնեաց զտէր իմ յոյժ , եւ
բարձրացաւ . եւ ետ նմա արջառ եւ ոչ-
խար եւ արծաթ եւ ոսկի , ծառայս եւ
36 աղախնայս , ուղտս եւ էշս : Եւ ծնաւ
Սառա կին տեառն իմոյ որդի մի տեառն
իմում յետ ծերութեան իւրոյ , եւ նմա
37 ետ զամենայն ինչ որ էր նորա : Եւ
երդմնեցոյց զիս տէր իմ եւ ասէ , Ոչ

[1] ՅԵբբ. գ-ների

[2] ԵբբԴ. դինդ ոսկի կիսոյ սկեղ ոսկւոյ [3] ԵբբԴ. սկեղ [4] ԵբբԴ. Տօր քո [5] ԵբբԴ. Անկաւ [6] ԵբբԴ. Տեառն [7] ԵբբԴ. ասէ

առցես կին որդւոյ իմոմէ [1]Իսահակայ ի գաւառէ ասի Քանանացւոց, յորոյ միջի ես պանդխտանալս եմ յերկրի սոցա.
38 Ա.յլ ի տուն հօր իմոյ երթիցես եւ ի տոհմ իմ, եւ առցես անտի կին որդւոյ իմոմէ։
39 Եւ ես ասացի ցտէրն իմ, Գուցէ ոչ գայ-
40 ցէ կինն ընդ իս։ Եւ ասէ ցիս, Տէր [2]Աս-տուած իմ որում հաճոյ եղէ՝ առաջի նո-յա, նա առաքեսցէ զհրեշտակ իւր ընդ քեզ, եւ յաջողեսցէ զճանապարհ քո, եւ առցես կին որդւոյ իմոմէ յազգէ իմմէ եւ
41 ի տանէ հօր իմոյ։ Եւ յայնժամ քաւեալ լիցիս [3]ի նզովից ասի իմոյ՝, յորժամ երթիցես ի տոհմն իմ եւ ոչ տացեն, քաւեալ լիցիս յերդմանէ ասի իմմէ։
42 Եւ իբրեւ եկի այսօր յաղբեւրն, ասեմ, Տէր, Աստուած տեառն իմոյ Աբրահամու, եթէ յաջողեցեր ինձ զճանապարհս իմ
43 զոր ես այժմիկ եկեալ եմ, Ահաւասիկ ես հասեալ կամ ի վերայ աղբեր ջրոյս, [1]եւ դաւերք մարդկան քաղաքիս ելանեն հանել ջուր.՝ եւ եղիցի կոյս զոր ես ա-սացից՝ Թէ Արբո ինձ սակաւ մի ջուր
44 ի սափորոյդ քումմէ, Եւ ասասցէ ցիս Թէ՝ Արբ եւ ուղտացդ եւս քոց հանից ջուր, այն է կին զոր պատրաստեաց Տէր [4]Ծա-ռայի Իսահակայ. եւ այնու գի-տացից Թէ արարեր ողորմութիւն ընդ
45 տեառն իմում Աբրահամու։ Եւ եղեւ մինչչեւ իմ կատարեալ էր զխօսս ի մտի իմում, անդէն վազվազակի ելանէր Ռե-բեկա, եւ ունէր սափոր յուս իւր. էջ յաղբեւրն եւ եհան ջուր. եւ ասեմ ցնա,
46 Արբո ինձ։ Եւ վտիտացեալ իջոյց զսա-փորն յինքենէ եւ ասէ, Արբ դու, եւ ուղտացդ եւս քոց արբուցից. եւ արբի,
47 եւ ուղտացն իմոյ արբոյց։ Եւ հարցի ցնա եւ ասեմ, Ո՞յր զուստր ես դու, [1]պատմեա ինձ.՝՝ եւ նա ասէ, Դուստր Բա-թուելի եմ ես, որդւոյ Նաքովրայ զոր ծնաւ նմա Մեղքա. եւ եդի [5]զինգս յա-կանջս՝ նորա, եւ ապարանջանս ի ձեռս
48 նորա։ Եւ [6]խնդացի, եւ երկիր պագի Տեառն, եւ օրհնեցի զՏէր Աստուած տեառն իմոյ Աբրահամու, որ յաջողեաց ինձ ի ճանապարհի աստ ճշմարտութեան, առնուլ զդուստր եղբօր տեառն իմոյ որդ-
49 ւոյ նորա։ Արդ եթէ առնէք դուք չնորհս

[1] ԵՔԲ. պ-ո-ւ-ե [2] ԵՔԲ. որոյ գնացի [3] ԵՔԲ. յերդ-մանէ աստի իմմէ [4] ԵՔԲ. որդւոյ տեառն իմոյ [5] ԵՔԲ. օղ ի քիթ [6] ԵՔԲ. անկայ

եւ արդարութիւն առ տէրն իմ, պատմե-ցէք ինձ. ապա թէ ոչ, դուցէք ինձ զի
50 դարձայց յա՛ջ կամ յահեակ։ Պատասխա-նի եառուն Լաբան եւ Բաթուէլ եւ ա-սեն, Ի Տեառնէ ել իրդ այդ. եւ մեք ոչ կարեմք [7]հակառակ քնչ չար ասել բար-
51 ւոյ՝։ Ահաւասիկ Ռեբեկա առաջի քո, առ եւ գնա. եւ եղիցի կին որդւոյ տեառն
52 քո՝ որպէս եւ լսեցեալ Տէր։ Եւ եղեւ իբրեւ լուաւ ծառայն Աբրահամու զբանս
53 նոցա, երկիր եպագ Տեառն։ Եւ եհան ծառայն սնօթս ոսկւոյ եւ սնօթս ար-ծաթոյ եւ հանդերձս, եւ եա Ռեբեկայ. եւ եա ընծայս [8]եղբարց նորա եւ մօրն
54 կերան եւ արբին նա եւ արքն որ ընդ նմա էին, եւ ննջեցին. եւ յարուցեալ ի վաղորդւոյն անդր ասէ, Արձակեցէք զիս
55 [1]զի երթայց՝՝ առ տէր իմ։ Եւ ասեն [9]եղ-բարքն նորա եւ մայրն, Կացցէ կոյսն առ մեզ իբրեւ աւուրս տասն, եւ ապա եր-
56 թիցէ։ Եւ նա ասէ ցնոսա, Մի խափա-նէք զիս, զի Տէր աջողեաց զճանա-պարհս իմ. արձակեցէք զիս զի երթայց
57 առ տէրն իմ։ Եւ ասեն [1]եղբարք նորա՝՝, Կոչեսցուք զաղջիկն եւ հարցցուք ի բե-
58 րանոյ նորա։ Կոչեցին զՌեբեկա եւ ա-սեն ցնա, Երթա՞ս ընդ առնս ընդ այս-
59 միկ. Եւ նա ասէ, Երթա՛մ։ Եւ յուղար-կեցին զՌեբեկա զքոյրն իւրեանց եւ [10]զինչս նորա, եւ զծառայն Աբրահամու
60 եւ որ ընդ նմայն էին։ Եւ օրհնեցին զՌեբեկա եւ ասեն ցնա, Քոյր մեր ես. լիցես ի հազարս եւ ի բիւրս, եւ ժա-ռանգեսցէ զաւակ քո զքաղաքս թշնա-
61 մեաց [11]քոց։ Յարուցեալ Ռեբեկա եւ նաժիշտք իւր՝ ելին յուղտան եւ գնացին ընդ առնն. եւ առեալ ծառային զՌեբե-կա՝ գնաց։
62 Եւ Իսահակ [12]յանապատի անդ առ Ջրհորոյ տեսլեանն՝՝ բնակէր յերկրին
63 ի կողմն հարաւոյ։ Եւ ել Իսահակ [13]զբօ-սանել ի դաշտին ընդ երեկս. ամբարձ զաչս իւր եւ եահս զի գային ուղտք
64 [1]տան։ Ամբարձեալ զաչս իւր եւ Ռե-բեկա եահս զԻսահակ, էջ վազվազակի
65 յուղտուէ անտի. Եւ ասէ ցծառայն, Ո՞վ է այրն որ գայ ի դաշտին ընդ առաջ մեր. եւ ասէ ծառայն, Նա է տէրն իմ.

[7] ԵՔԲ. ասել՝ քեզ՝ չար ինչ կամ բարի [8] ԵՔԲ. եղբօր [9] ԵՔԲ. եղբայր [10] ԵՔԲ. զդայեակ (Ծ-ո-Կ՝Լ.Ը.8) [11] ԵՔԲ. իւրոց [12] ԵՔԲ. դաբձեալ գայր ի Ջրհորոյն Լահայրոյի. զի [13] Կամ, խոկալ

և նորա առնալ զձորձս արկաւ զիւրեւ։
66 Եւ պատմեաց ծառայն Բահանակայ զա-
67 մենայն զիսօսան դոր արար ։ Եւ [1]ետուա
Բահանակ ի տուն Սառայի մօր իւրոյ , եւ
առ զՌեբեկա եւ եղեւ նորա կին . եւ
սիրեաց զնա , եւ մխիթարեցաւ Բահանակ
վասն [2]Սառայի մօր իւրոյ ։

ԳԼ. ԻԸ

1 Եւ յաւել Աբրահամ առնուլ կին որում-
2 անուն էր Քետուրա ։ Եւ ծնաւ նմա
զԶեմրան եւ զՅոկսան եւ զՄադան եւ
զՄադիան եւ զՅեսբոկ եւ զՍաւվէէ ։
3 Եւ Յոկսան ծնաւ զՍաբա [2]եւ զԴեդան" .
եւ զԴադան . եւ եղեն որդիք Դադա-
նայ՝ [2]Ռագուէլ եւ Նարդեէլ եւ" Ասսե-
4 րիմ եւ Լատուսիմ եւ Լաւոմիմ ։ Եւ
որդիք Մադիամու՝ Գեփար եւ Ասիր եւ
Ենոք եւ Աբիդա եւ Եղդաղա . ամենե-
քեան սոքա էին որդիք Քետուրայ ։
5 Եւ ետ Աբրահամ զամենայն ինչս իւր
6 Բահանակայ [2]որդւոյ իւրում" . Եւ որդւոց
հարճիցն իւրոց որ էին Աբրահամու՝ ետ
Աբրահամ պարգեւս , եւ արձակեաց
զնոսա յԲահանակայ որդւոյ իւրոյ , մինչ-
դեռ ինքն կենդանի էր , ընդ արեւելս՝
յերկիրն արեւելից ։
7 Եւ այս են ամք աւուրց կենացն Աբ-
րահամու զորս եկեաց , հարիւր եւթա-
8 նասուն եւ հինգ ամ ։ Եւ պակասեալ Աբ-
րահամու մեռաւ ի բարւոք ծերութեան,
ալեւորեալ եւ լի աւուրբք . եւ յաւելաւ
9 առ ժողովուրդ իւր ։ Եւ թաղեցին զնա
Բահանակ եւ Իսմայէլ որդիք նորա՝ յայրն
անդ [3]ի կրկնում յափարակին Եփրոնի
որդւոյ Սաննասայ Քեթացւոյ , որ է յան-
10 դիման Մամբրէի . Ագարակն եւ այրն զոր
առացաւ Աբրահամ յորդւոցն Քեթայ .
անդ թաղեցին զԱբրահամ եւ զՍառա
11 կին նորա ։
Եւ եղեւ յետ մահուանն Աբրահամու
օրհնեաց Աստուած զԲահանակ զորդի նո-
րա . եւ բնակեցաւ Բահանակ առ Ջրհորի
տեսլեանն ։
12 Եւ այս են ծնունդք Իսմայելի որդւոյ
Ագարացւոյ , զոր ծնաւ Ագար Եգիպտա-
13 ցի Սարահամու , ազախինն Սառայի։ Եւ
այս են անուանք որդւոցն Իսմայելի ըստ
անուանց ազգացն նորա . անդրանիկ Իս-
մայելի Նաբեովթ եւ Կեդար եւ Աբդեէլ
14 եւ Մարսամ , Եւ Մասմա եւ Իդումա եւ
15 Մասէ , Եւ Քադդադ եւ Թեմա եւ Յետուր
16 եւ Նափէս եւ Կեդմա ։ Սոքա են որդիք
Իսմայելի , եւ այս անուանք են նոցա
ի հանդրոմանս իւրեանց եւ ի խոյրանս իւ-
րեանց , երկոտասան իշխանք նոցա ըստ
17 ազգաց իւրեանց ։ Եւ այս են ամք կե-
նաց Իսմայելի , հարիւր երեսուն եւ եօթն
ամ . եւ պակասեալ մեռաւ , եւ յաւելաւ
18 յազգ իւր ։ Եւ բնակեցաւ յԵւիլատ մին-
չեւ գԱսուր որ է յանդիման Եգիպտոսի ,
մինչեւ ի գալ յԱսորեստանեայս . յանդի-
ման ամենայն եղբարց իւրոց բնակեցաւ ։
19 Եւ այս են ծնունդք Բահանակայ որդւոյ
Աբրահամու . Աբրահամ ծնաւ զԲահանակ
20 Եւ էր Բահանակ ամաց քառասնից յորժամ
առ զՌեբեկա զդուստր Բաթուելի Ասո-
ւեայ, որ էր ի Միջագետաց Ասորւոց, զքոյր
21 Լաբանու Ասորւոյ իւր ի կնութեան ։ Եւ
աղաչէր Բահանակ զՏէր վասն Ռեբեկայ
կնոջ իւրոյ զի ամուլ էր . Եւ լուաւ նմա
[4]Աստուած , եւ յղացաւ Ռեբեկա կին նո-
22 րա ։ Եւ խաղային մանկունքն ի նմա .
եւ ասէ , Եթէ այսպէս լինիցի ինձ , ընդ-
էր իցէ ինձ այս . եւ գնաց հարցանել
23 ի Տեառնէ ։ Եւ ասէ ցնա Տէր , Երկու
ազգ են յարգանդի քումմ , եւ երկու ժո-
ղովուրդք յորովայնէ քումմէ զատցին .
եւ ժողովուրդ ժողովրդեամբ ելցեն առ-
նիցէ , եւ երէցն կրասեցւոյն ծառայեսցէ ։
24 Եւ լրացան նորա աւուրքն ծնանելոյ ,
եւ էին երկու որդիք յորովայնի նորա ։
25 Եւ ելն երկու որդին անդրանիկն չառագոյն
ամենեսեան՝ իբրեւ զմօրթ մաւ , եւ ան-
ուանեցաւ զանուն նորա [5]Եսաւ . եւ ապա
ել եղբայր նորա , եւ ձեռն նորա ունէր
զգարչապարէ Եսաւայ . եւ կոչեցաւ զա-
26 նուն նորա [6]Յակոբ ։ Եւ Բահանակ էր ա-
մաց վաթսնից , յորժամ ծնաւ զնոսա
27 Ռեբեկա ։ Եւ աճեցին մանկունքն . եւ
էր Եսաւ այր հմուտ որսոյ՝ վայրագ , եւ
Յակոբ՝ այր [7]առանց պաճուճանաց՝ բնա-
28 տուն ։ Եւ սիրեաց Բահանակ զԵսաւ ,
զի որս նորա կերակուր էր նմա . եւ
Ռեբեկա սիրէր զՅակոբ ։
29 Եւ էր եփեալ Յակոբայ բան . եւ եկն
30 Եսաւ ի գաշտէ նքին եւ . Եւ ասէ Եսաւ

[1] Եբբ. եմոյծ զնա [2] Եբբ. պակաս [3] Եբբ. Մաքփեղայ

[4] Եբբ. Տէր [5] Այլեւս, Թաւ ունի զգարշապարէ , և , խոտոր դարտ, կամ, լաւ [6] Այլեւս, որ [7] Եբբ. Հանդարտ, կամ լաւ

ցՅակոբ , Տուր ինձ ճաշակել ի չիկա-
թանէդ յայգմանէ , զի նքբեալ եմ . վասն
այնորիկ կոչեցաւ անուն նորա [1]Եդոմ ։
31 Եւ ասէ Յակոբ ցնաւա , Վաճառեա ինձ
32 այսօր [2]զանդրանկութիւնն քո ։ Եւ ասէ
Եսաւ , Ահաւասիկ ես երթամ ի վախճա-
նել , եւ առ իմ[2] իցէն ինձ այն [3]անդ-
33 րանկութիւնդ ։ Եւ ասէ ցնա Յակոբ, եր-
դուր ինձ այսօր . եւ երդուաւ նմա , եւ
վաճառեալ Եսաւ [2]զանդրանկութիւնն իւր
34 Յակոբայ ։ Եւ Յակոբ եաւ Եսաւայ հայ
եւ թան ոսպնեայ . կերաւ եւ արբ , եւ
յարեաւ գնայ . եւ անարգեալ Եսաւ
[4]զանդրանկութիւնն ։

Գլ . ԻԶ

26 1 Եւ եղեւ սով յերկրին , թող զառա-
ջին սովն որ եղեւ ի ժամանակս Աբրա-
համու . եւ չոգաւ Իսահակ առ Աբիմե-
2 լէք արքայ Փղշտացւոց ի Գերարա ։ Եւ
երեւեցաւ նմա Տէր եւ ասէ , Մի իջանիր
յԵգիպտոս , այլ բնակեա գու յերկրիդ
3 յորում ասացից քեզ . Պանդխտեայ յերկ-
րիս յայսմիկ , եւ եղէց ընդ քեզ եւ օրհ-
նեցից զքեզ . զի քեզ եւ զաւակի քումն
տացց զամենայն զերկիրս զայս , եւ հաս-
տատեցից զերդումն իմ զոր երդուայ
4 Աբրահամու հօր քումն ։ Եւ բազմացու-
ցից զզաւակ քո իբրեւ զաստեղս երկ-
նից , եւ տացց զաւակի քումն զամենայն
զերկիրս զայս , եւ օրհնեսցին ի զաւակի
5 քումն ամենայն ազգք երկրի . Փոխանակ
զի լուաւ Աբրահամ հայր քո ձայնի ի-
մում , եւ պահեաց զՊահմանս իմ եւ
զպատուիրանս իմ եւ զիրաւունս իմ եւ
զօրէնս իմ ։
6 Եւ բնակեցաւ Իսահակ ի մէջ Գերա-
7 րացւոց ։ Եւ հարցին արք տեղւոյն զՌե-
բեկայ կնոջէ նորա . եւ ասէ , Քոյր իմ
է . քանզի երկեաւ ասել թէ կին իմ է ,
թէ գուցէ սպանանիցեն զնա արք տեղ-
ւոյն վասն Ռեբեկայ , զի գեղեցիկ էր
8 երեսօք ։ Եւ եղեւ անդ բազում ժամա-
նակս . եւ կալեալ Աբիմելէք արքայ
Փղշտացւոց ընդ պատուհան , եւ հայեա
զԻսահակ զի խաղայր ընդ Ռեբեկայ կնոջ
9 իւրում ։ կոչեցաւ Աբիմելէք զԻսահակ եւ
ասէ ցնա , Ուրուն կին քո էր , եւ ընդ-
Էր ասացեր թէ Քոյր իմ է . ասէ ցնա
Իսահակ , Քանզի ասացի թէ Գուցէ մե-
10 ռանիցիմ վասն նորա ։ Ասէ ցնա Աբիմե-
լէք , Ընդէր արարեր զայդ ընդ մեզ .
սակաւիկ մնաց եւս եւ մահաբեր էր ուրուն
յայդմէ իմմէ առ կին քո , եւ ածէիր ի վե-
11 րայ մեր [5]անգիտութիւն ։ Եւ պատուի-
րեաց Աբիմելէք ամենայն ժողովրդեան
իւրում եւ ասէ , Ամենայն որ հարկա-
նիցի ընդ այդմ ընդ այդ կամ ընդ կին
դորա , մահու պարտական լիցի ։
12 Եւ սերմանեաց Իսահակ յերկրին յայնմիկ , եւ եգիտ ի տարւոջն յայն-
միկ հարիւրաւոր [6]զգարիւն . եւ օրհնեաց
13 զնա Տէր ։ Եւ բարձրացաւ այրն , եւ եր-
թայր յառաջագէմ եւ մեծանայր , մինչեւ
14 եղեւ մեծ յոյժ ։ Եւ եղեւ նորա անա-
սունս ոչխարի եւ արջառոյ , եւ [7]արմաւիք
բազումք . եւ նախանձեցան ընդ նմա
15 Փղշտացիքն ։ Եւ զամենայն ջրհորս զոր
փորեցին ծառայք [8]նորա ի ժամանակս
Աբրահամու հօր նորա՝ լցին Փղշտացիքն
16 եւ լցին զնոսա հողով ։ Եւ ասէ Աբիմե-
լէք ցԻսահակ , Երթ զնա ի մէնջ , զի
17 կարի զօրագոյն քան զմեզ եղեր ։ Եւ
զնաց անտի Իսահակ , եւ բնակեցաւ ի
ձորն Գերարացւոց , եւ անդ բնակեաց ։
18 Եւ դարձեալ Իսահակ փորեաց զջրը-
հորսն ջրոյ , զոր փորեցին ծառայքն
Աբրահամու հօր նորա , եւ խցին զայն
Փղշտացիքն յետ մահուանն Աբրահամու
հօր նորա , եւ եդ նոցա անուանս ըստ
անուանցն զոր անուանեաց նոցա Աբ-
19 րահամ հայր իւր ։ Եւ փորեցին ծա-
ռայքն Իսահակայ ի ձորն Գերարացւոց ,
20 եւ գտին անդ ջրհոր ջրոյ կենդանւոյ ։ Եւ
մարտնչէին հովիւքն Գերարացւոց ընդ
հովիւսն Իսահակայ , եւ ասէին թէ իւր-
եանց իցէ ջրհորն . եւ կոչեաց զանուն
ջրհորոյն Զրկումն . քանզի զրկէին զնա ։
21 [9]Զուեաց անտի եւ փորեաց՝ մեւս եւս
ջրհոր ջրոյ . հակառակէին եւ վասն այ-
նորիկ եւս . եւ կոչեաց զանուն նորա
22 Թշնամութիւն ։ Զուեաց անտի եւ փո-
րեաց այլ ջրհոր , եւ ոչ մարտնչէին վասն
այնր . եւ կոչեաց զանուն նորա Անդոր-
րութիւն , ասէ , Զի այժմ ընդարձակեալ
մեզ Տէր , եւ աճեսցուք զմեզ յերկրի ։
23 Եւ անտի ի Ջրհորն երդման ։ (24) Եւ ե-
րեւեցաւ նմա Տէր ի գիշերին յայնմիկ

[1] Այսէսւ , չէկ [2] ԵԲբ. զանդրանկութիւն. [3] ԵԲբ. անդրանկութիւն [4] ԵԲբ. զանդրանկութիւնն
[5] ԵԲբ. յանցանս [6] ՅԵԲբ. պէռաճ [7] ԵԲբ. ծառայք [8] ԵԲբ. Հօր նորա [9] ԵԲբ. Եւ փո-
րեցին

եւ ասէ, Ես եմ Աստուած [1]հօր քո. մի՛ երկնչիր, դի ընդ քեզ եմ, եւ օրհնեցից զքեզ եւ բազմացուցից զազգատոհմ քո վասն
25 Աբրահամու հօր քո։ Եւ չինեաց անդ սեղան, եւ կարդաց զանուն Տեառն, եւ եհար անդ վարան իւր. փորեցին ծառայքն Իսահակայ անդ ջրհոր։
26 Եւ Աբիմելէք չոգաւ առ նա ի Գերարայ, եւ Ոքոզաթ [2]առաջադիտ նորա
27 եւ Փիքոզ սպարապետ զօրաց նորա։ Եւ ասէ ցնոսա Իսահակ, Ձի՞ եկիք առ իս, դի զուք ատեցէք զիս եւ հալածեցէք
28 ի ձէնջ։ Եւ ասեն, Տեսանելով տեսաք զի էր Տէր ընդ քեզ, եւ ասեմք, Եղիցի դաշն ընդ միմեանս, ընդ մեզ եւ ընդ
29 քեզ, եւ դիցուք ընդ քեզ ուխտ՝ Զառնել ինչ մեզ չար, որպէս եւ մեք ոչինչ մեզաք քեզ, եւ զոր օրինակ արարաք քեզ բարի եւ արձակեցաք զքեզ խաղաղութեամբ. եւ արդ զուտ օրհնեալ
30 ի Տեառնէ ես։ Եւ արար նոցա խրախուսս
31 մեծս, կերան եւ արբին։ Եւ յարուցեալ ի վաղիւ անդր երդուան այր ընկերի իւրում. եւ արձակեաց զնոսա Իսահակ,
32 եւ գնացին ի նմանէ ողջութեամբ։ Եւ եղեւ յաւուր յայնմիկ եկին ծառայքն Իսահակայ եւ պատմեցին նմա վասն ջրհորին զոր փորեցին, եւ ասեն Գտաք ջուր։
33 Եւ կոչեաց զնա Երդումն. վասն այնորիկ է անուն քաղաքին այնմիկ Ջրհոր երդման՝ մինչեւ ցայսօր ժամանակի։
34 Եւ էր Եսաւ ամաց քառասնից, եւ առ իւր կին զՅուդիթ դուստր Բէէրայ Քետացւոյ, եւ զՄասեմաթ դուստր Ելովմայ Հեւացւոյ։ Եւ դառնացուցանէին
35 զԻսահակ եւ զՌեբեկա։

ԳԼ. ԻԷ

4 Եւ եղեւ իբրեւ ծերացաւ Իսահակ, եւ վասնզի այլք նորա ի տեսանելոյ, կոչեաց զԵսաւ զորդի իւր զերկչէ եւ ասէ ցնա, Որդեակ իմ. Եւ նա ասէ ցնա,
2 Ահաւասիկ եմ։ Եւ նա ասէ ցնա, Ահաւասիկ ես ծերացեալ եմ, եւ ոչ գիտեմ
3 զօր վախճանի իմոյ. Արդ առ զուտ զգործի քո՝ զգենդն եւ զկապարճս, եւ ել
4 ի դաշտ եւ որսա ինձ որս. Եւ արա ինձ խորտիկս որպէս եւ ես սիրեմ, եւ բեր մատո ինձ զի կերայց, եւ օրհնեցից
զքեզ առաջի Տեառն մինչեւ մեռանել
5 իցեմ։ Եւ արդ, որդեակ իմ, լուր ինձ, ըստ որում պատուիրեմ քեզ. Գնա գուտ
6 ի խաչն, եւ առ ինձ անտի երկուս ուլս փափուկս եւ ընտիրս, եւ արարից զնոսա խորտիկս հօր քումդ որպէս եւ սիրէ։
7 Եւ մատուսցես հօր քումդ եւ կերիցէ. զի օրհնեսցէ զքեզ [4]հայր քո՝ մինչեւ մեռանել իցէ։ Եւ ասէ Յակոբ ցՌեբեկա
8 մայր իւր, Եղբայր իմ Եսաւ՝ այր մաւ
9 է, եւ ես լերկ. Գուցէ չօշափիցէ զիս հայր իմ, եւ լինիցիմ առաջի նորա իբրեւ արհամարհոտ, եւ ածիցեմ ի վերայ
10 իմ անէծս եւ ոչ օրհնութիւն։ Եւ ասէ ցնա մայրն իւր, Ցիմ վերայ անէծքն այն, որդեակ. բայց միայն լուր ձայնի իմում
11 եւ երթ ած ինձ։ Գնաց եւ առ ած մօր իւրում. եւ [5]արար խորտիկս, որպէս եւ
15 սիրէր հայր նորա։ Եւ առեալ Ռեբեկայ զպատմուճանն զաղնիս որզոյ իւրոյ եւրիցուք՝ որ կայր առ նմա ի տան, զգեցոյց Յակորայ որզոյ իւրում կրտսերոյ։
16 Եւ զուլունսն ոզոյց ի բազուկս նորա, եւ ի վերայ մերկոյ պարանոցն նորա։
17 Եւ ետ զխորտիկն եւ զհացն զոր արար ի ձեռս Յակոբայ որզոյ իւրոյ։
18 Եւ տարաւ հօր իւրում եւ ասէ, Հայր իմ. եւ նա ասէ, Ահաւասիկ եմ. եւ ասէ,
19 Ո՞վ ես գուտ, որդեակ։ Եւ ասէ Յակոբ ցհայրն, Ես եմ Եսաւ անդրանիկն քո. արարի որպէս եւ խոսեցար ընդ իս. արի նիստ եւ կեր յորսոյ իմմէ, զի օրհնեսցէ
20 զիս անձն քո։ Եւ ասէ Իսահակ յորդին իւր, Ձի՞ է դի վազվազակի գտեր, որդեակ. Եւ նա ասէ, որպէս պատրաս-
21 տեաց Տէր [6]Աստուած առաջի իմ։ Եւ ասէ Իսահակ ցՅակոբ, Մօտ ակ եւ չօշափիցից զքեզ, որդեակ, եթէ գո՛ն ի-
22 դես որդի իմ Եսաւ, թէ ոչ։ Մատեաւ Յակոբ առ Իսահակ հայր իւր, եւ չօշա-

[1] Եբր. Աբրահամու հօր [2] Եբր. բարեկամ [3] Եբր. եւ բերել [4] Յոյն. պակաս մայր նորա [5] Եբր. արար [6] Եբր. Աստուած քո

փեսայ զնա եւ ասէ , Յանդ՝ ձայն Յա-
23 կոբայ , եւ ձեռքդ՝ ձեռք Եսաւայ ։ Եւ ոչ
ծանեաւ զնա . զի էին ձեռք նորա իբ-
րեւ զձեռն Եսաւայ եղբօր իւրոյ Թաւ .
24 եւ օրհնեաց զնա , Եւ ասէ , Դո՞ւ ես որ-
25 դի իմ Եսաւ . եւ նա ասէ , Ես եմ ։ Եւ
ասէ , Մատո ինձ եւ կերայց յորոյ քուա-
մէ , որդեակ , զի օրհնեսցէ զքեզ անձն
իմ . առ մատոյց նմա եւ կերաւ . եւ ե-
26 բեր նմա գինի , եւ արբ ։ Եւ ասէ ցնա
Իսահակ հայր իւր , Մօտ ելի եւ համբու-
27 րեա զիս , որդեակ ։ Եւ մատեաւ համ-
բուրեաց զնա . եւ առ զհոտ հանդերձից
նորա , եւ օրհնեաց զնա եւ ասէ , Ահա
հոտ որդւոյ իմոյ իբրեւ զհոտ անդոյ լիոյ
28 զոր օրհնեաց Տէր ։ Եւ տացէ քեզ Աս-
տուած ի ցօղոյ երկնից եւ ի պարարուա-
թենէ երկրի , եւ բազմութիւն ցորենոյ
29 եւ գինւոյ . Եւ ծառայեսցեն քեզ ազգք ,
եւ երկիր պագցեն քեզ իշխանք . եւ ե-
ղիցես տէր եղբօր քումմ , եւ երկիր պագ-
ցեն քեզ որդիք [1]Հօր քո . որ անիծանի-
ցէ զքեզ՝ անիծեալ լիցի , եւ որ օրհնես-
ցէ զքեզ՝ օրհնեալ ։
30 Եւ եղեւ յետ դադարելոյն Իսահակայ
յօրհնելոյ անտի զՅակոբ զորդի իւր , իբ-
րեւ եւ Յակոբ յերեսաց Իսահակայ հօր
իւրոյ , եւ եկն Եսաւ եղբայրն նորա յոր-
31 սոյ ։ Արար եւ նա խորտիկս , եւ մատոյց
հօր իւրումն , եւ ասէ ցհայր իւր , Յարի-
ցէ հայր իմ եւ կերիցէ յորոյ որդւոյ իւ-
32 րոյ , զի օրհնեսցէ զիս անձն քո ։ Եւ ա-
սէ ցնա Իսահակ հայր իւր , Ո՞վ ես դու .
Եւ նա ասէ , Ես եմ որդին քո անդրա-
33 նիկ Եսաւ ։ Եւ [2]զարմացաւ Իսահակ զար-
մացումն՝ մեծ յոյժ , եւ ասէ , Իսկ այն
ո՞վ էր որ որսացաւ հինձ որս , եւ երեր
մատոյց , եւ կերայ յամենայնէ մինչչեւ
քո եկեալ էր , եւ օրհնեցի զնա , եւ և-
34 զիցի օրհնեալ ։ Եւ եղեւ իբրեւ լուաւ Ե-
սաւ զբանն [3]Իսահակայ հօր իւրոյ , ա-
զաղակեաց ի ձայն մեծ դառնացեալ յոյժ ,
եւ ասէ ցհայրն իւր , Օրհնեա արդ եւ
35 զիս , հայր ։ Եւ ասէ նա , Եկն եղբայր քո
նենգութեամբ եւ առ զօրհնութիւնս քո ։
36 Եւ նա ասէ , Յիրաւի կոչեցաւ անուն
նորա Յակոբ , զի այս երկիցս խարեաց
զիս . առ զանդրանկութիւնն իմ , եւ արդ
առ զօրհնութիւնս իմ ։ Եւ ասէ Եսաւ
ցհայրն իւր , Եւ ոչ մի՞ ինչ օրհնութիւն
37 թողեր ինձ , հայր ։ Պատասխանի ետ Ի-
սահակ եւ ասէ ցԵսաւ , Որովհետեւ տէր
ապարի զնա քեզ , եւ զամենայն եղբարս
նորա արարի նմա ծառայս , ցորենով եւ
գինւով հաստատեցի զնա , քեզ զի՞նչ ա-
38 րարից , որդեակ ։ Ասէ Եսաւ ցհայրն իւր ,
Միթէ մի՞ օրհնութիւն իցէ քո , հայր .
օրհնեա եւ զիս , հայր . եւ [3]իբրեւ սարձա-
ցաւ Իսահակ ,՚՚ ամբարձ զձայն իւր Ե-
39 սաւ եւ լացաւ ։ Պատասխանի ետ Իսահակ
հայր նորա եւ ասէ ցնա , Ահա ի պա-
րարութենէ երկրի եղիցի բնակութիւն
40 քո , եւ ի ցօղոյ երկնից ի վերուստ . Եւ
սրով քով կեցցես . եւ եղբօր քումմ ծա-
ռայեսցես . եւ եղիցի յորժամ քակես-
ցես , եւ լուծցես ղուծ նորա ի պարա-
նոյգ քումմէ ։
41 Եւ պահէր Եսաւ ոխս Յակոբայ վասն
օրհնութեանն զոր օրհնեաց զնա հայր
իւր . եւ ասէր Եսաւ ի մտի իւրում ,
Մերձենայցեն աւուրք կարեաց հօր իմոյ ,
42 զի սպանից զՅակոբ զեղբայր իմ ։ Ազդ
եղեւ Ռեբեկայ բանքն Եսաւայ որդւոյ
իւրոյ երիցու . եւ յղեաց կոչեաց զորդի
իւր զկրտսեր զՅակոբ եւ ասէ ցնա , Ա-
հա Եսաւ եղբայր քո սպառնայ սպանա-
43 նել զքեզ ։ Արդ լսեր , որդեակ , ձայնի
իմոյ , եւ արի գնա [3]ի Մի՛ջագետս՚՚ առ
44 Լաբան եղբայր իմ ի Խառան . Եւ բնա-
կեացես ընդ նմա աւուրս [4]բազումս , մին-
չեւ անցցէ սրտմտութիւն բարկութեան
45 եղբօր [5]քո ի քէն , Եւ՚՚ մոռասցի զոր ինչ
արարեր նմա . եւ ապա առաքեցից կո-
չեցից զքեզ անտի . զուարճ անզաւակիս-
ցիմ յերկոցունց ի միոջէ ի միում աւուր ։
46 Եւ ասէ Ռեբեկա ցԻսահակ , Յանձ-
րացեալ է անձն իմ ի դստերաց որդւոց
Քետայ . եթէ առնուցու Յակոբ կին
ի դստերաց անտի Քետայ , ի դստերաց
երկրիս այսորիկ , եւ ընդէ՞ր իցէ ինձ կեալ ։

ԳԼ . ԻՀ

1 Կոչեաց առ ինքն Իսահակ զՅակոբ ,
օրհնեաց զնա եւ պատուիրեաց նմա եւ
ասէ , Մի առնուցուս կին ի դստերաց
2 աստի Քանանացւոց ։ Այլ արի գնա ի Մի-
ջագետս Ասորւոց , ի տուն Բաթուէլի հօր
մօր քո , եւ առ անտի քեզ կին ի դստե-
3 րաց Լաբանու եղբօր մօր քո ։ Եւ Աս-

[1] Եբր. մոր [2] Եբր. երկեաւ Իսահակ երկիւղ
[3] Եբր. պատ [4] Եբր. ինչ [5] Եբր. քո . (45) Մինչեւ անցցէ սրտմտութիւն եղբօր քո ի քէն , և

տուած [1]իմ օրհնեսցէ զքեզ, եւ աճեցուսցէ զքեզ եւ բազմացուսցէ զքեզ,
4 եւ եղիցես ի ժողովս ազգաց. Եւ տացէ քեզ զօրհնութիւնն Աբրահամու [2]հօր իմոյ", քեզ եւ զաւակի քումդ յետ քո, ժառանգել քեզ զերկիր պանդխտութեան
5 քո՝ զոր ետ Աստուած Աբրահամու: Եւ արձակեաց Իսահակ զՅակոբ, եւ գնաց ի Միջագետս Ասորւոց առ Լաբան որդի Բաթուելի Ասորւոյ, եղբայր Ռեբեկայ,
մօր Յակոբայ եւ Եսաւայ:
6 Եւ իբրեւ հասս Եսաւ եթէ օրհնեաց Իսահակ զՅակոբ, եւ [3]գնաց ի Միջագետս Ասորւոց առնուլ իւր անտի կին,
եւ յօրհնելն զնա պատուիրեաց եւ ասէ, Մի՛ առնուցուս կին ի դստերաց սատի
7 Քանանացւոց, Եւ ունկնդիր եղեւ Յակոբ հօր եւ մօր իւրում, եւ գնաց ի
8 Միջագետս Ասորւոց. Եւ տեսս Եսաւ եթէ չար թուին դստերք Քանանացւոցն
9 առաջի Իսահակայ հօր իւրոյ, Գնաց Եսաւ առ Իսմայէլ, եւ առ զՄահաղէթ դուստր Իսմայելի որդւոյ Աբրահամու, քոյր Նաբէոթայ, ի վերայ այլոց կանանց իւրոց իւր կնութեան:
10 Եւ ել Յակոբ ի Ջրհորոյ անտի երթ-
11 մանն, եւ գնաց ի Խառան. Եւ հասս ի տեղի մի եւ ննջեաց անդ, քանզի արեւն ի մուտս էր. եւ առ ի քարանց տեղւոյն եւ եդ ընդ գլխոյս իւր, եւ ննջեաց ի
12 տեղւոյն յայնմ: Եւ տեսիլ. Եւ ահա սանդուղք հաստատեալ յերկրի, որոյ գլուխ իւր հասանէր յերկինս, եւ հրեշտակք Աստուծոյ ելանէին եւ իջանէին
13 ընդ նա: Եւ Տէր հաստատեալ կայր ի նմա, եւ ասէ, Ես եմ Տէր, Աստուած Աբրահամու հօր քո, եւ Աստուած Իսահակայ. [4]մի՛ երկնչիր, զի՞ զերկիրդ յորում դուզ ննջեցեր, քեզ տայ զնա եւ
14 զաւակի քումդ: Եւ եղիցի զաւակ քո իբրեւ զաւազ երկրի, եւ ընդարձակեսցի [4]ի ծովակողմն եւ ընդ արեւելս եւ ընդ հիւսիսի եւ ընդ հարաւ. եւ օրհնեսցին ի քեզ ամենայն ազգք երկրի եւ ի զա-
15 ւակի քումդ: Եւ ես աւասիկ ընդ քեզ եմ պահել զքեզ յամենայն ճանապարհս քո յոր եւ գնասցես. եւ զարձուսցիմ զքեզ յերկիրս յայս. զի ոչ թողից զքեզ մինչեւ արարից զամենայն [5]զոր խօսե-
16 ցայ ընդ քեզ: Եւ զարթեաւ Յակոբ ի քնոյ անտի իւրմէ եւ ասէ, Տէր է ի
17 տեղւոջս յայսմիկ, եւ ես ոչ գիտէի. Զահի հարաւ եւ ասէ, Սքանչ [6]ելի է տեղիս այս. եւ ոչ է սա եթէ ոչ տունն Աստուծոյ, եւ սա է դուռն երկնից:
18 Եւ յարուցեալ Յակոբ ընդ առաւօտն եւ առ զքարն զոր եդ ընդ գլխոյ իւր, եւ կանգնեաց զնա արձան, եւ արկ եւզ ի գլուխ
19 նորա. Եւ կոչեաց Յակոբ զանուն տեղւոյն այնորիկ [5]Տունն Աստուծոյ". եւ յառաջ անուն էր քաղաքին այնորիկ Լուզա:
20 Եւ ուխտեաց Յակոբ ուխտ եւ ասէ, Եթէ եղիցի [2]Տէր Աստուած ընդ իս, եւ
21 պահեսցուցէ զիս ի ճանապարհիս յայսմիկ զոր ես երթամ, եւ տացէ ինձ հաց
22 ուտելոյ եւ հանդերձ զգենուլոյ, Եւ դարձուսցէ զիս ողջութեամբ ի տունս հօր իմոյ, եւ եղիցի ինձ Տէր յԱստուած. Եւ վէմս զոր կանգնեցի արձան՝ եղիցի [2]ինձ Տունն Աստուծոյ. եւ յամենայնէ զոր տաս ինձ՝ տաց քեզ տասանորդս:

Գլ. Իթ

1 Եւ զոտս իւր ամբարձեալ Յակոբայ գնալ յերկիրն արեւելից, [2]առ Լաբան որդի Բաթուելի Ասորւոյ, եղբայր Ռեբեկայ, մօր Յակոբայ եւ Եսաւայ" Եւ հա-
2 յեցաւ եւ ահա ջրհոր մի ի դաշտի անդ. եւ էին անդ երեք հօտք խաչանց մակաղիւք ի նմա, եւ ի ջրհորոյն յայնմանէ արբուցանէին զհաւկինսն. եւ վէմ մի մեծ կայր ի վերայ բերանոյ ջրհորոյն.
3 Եւ անդր ժողովէին ամենայն հօտք, եւ տապալէին զվէմն ի բերանոյ ջրհորոյն, եւ ապա էին ջուր խաչանցն, եւ կալուսցանէին զվէմն ի բերան ջրհորոյն անդ-
4 րէն ի տեղի իւր: Եւ ասէ ցնոսա Յակոբ, Եղբարք, ուստի՞ էք դուք. եւ նո-
5 քա ասեն, Ի Խառանէ եմք: Ասէ ցնոսա, Գիտէ՞ք զոք զԼաբան զորդի Նաքովրայ.
6 եւ նոքա ասեն, Գիտեմք: Ասէ ցնոսա, Ո՞ղջ իցէ. եւ նոքա ասեն, Ողջ է. եւ ահա Ռաքէլ դուստր նորա [6]գայր ընդ խաշինան:
7 Եւ ասէ Յակոբ, Դեռ աւուր չասա կայ, չէ ևս է ժամ խաչանցդ ժողովելոյ. արբուցէք խաչանցդ, եւ երթայք
8 արածեցէք: Եւ նոքա ասեն, Չէ հնար մեզ մինչ ոչ ժողովիցին ամենայն հովիք,

---

[1] Եբր. Ամենակալ [2] ՅԵբր. պետ [3] Եբր. առաքեաց զնա [4] Կամ, ընդ արեւմուտս

[5] Եբր. Բեթէլ [6] Եբր. գայ

և տապալիցեն զվէմդ ի բերանոյ ջրհորոյդ , և արբուցանիցեմք խաչանցս ։
9 Մինչդեռ նա ընդ նոսա խօսէր , ահա Ռաքէլ գուսար Լաբանու գայր ընդ խաչինս հօր իւրոյ , քանզի նա արածէր
10 զխաչինս հօր իւրոյ ։ Եւ եղեւ իբրեւ եհաս Յակոբ զՌաքէլ գուսար Լաբանայ եղբօր մօր իւրոյ , եւ զխաչինս Լաբանայ եղբօր մօր իւրոյ , եւ մատուցեալ Յակոբ տապալեցոյց զվէմն ի բերանոյ ջրհորոյն , եւ արբոյց խաչանցն Լաբանու եղբօր մօր իւրոյ ։ Եւ համբուրեաց Յակոբ զՌաքէլ , եւ ձայն եբարձ եւ ե-
12 լաց ։ Եւ պատմեաց Յակոբ Ռաքելայ եթէ եղբայր հօր նորա է , եւ որդի Ռեբեկայ . եւ ընթացաւ պատմեաց հօր իւ-
13 րում [1]ըստ բանիցս այսոցիկ"։ Եւ եղեւ իբրեւ լուաւ Լաբան զանուն Յակոբայ որդւոյ քոյր իւրոյ , ընթացաւ ընդ առաջ նորա , վազիկս արկ եւ համբուրեաց զնա , եւ տարաւ զնա ի տուն իւր . եւ պատմեաց Լաբանու զամենայն գլանս զայ-
14 սոսիկ ։ Եւ ասէ ցնա Լաբան , Յոսկերացս իմոց եւ ի մարմնոցս իմոց ես դու ։ Եւ էր ընդ նմա ամսօրեայ մի ժամանակ ։
15 Եւ ասէ Լաբան ցՅակոբ , Զի եղբայր իմ ես դու , [2]ոչ ծառայեսցես ինձ ձրի՞. յայտ արա ինձ զինչ իցեն վարձք քո ։
16 Եւ Լաբանայ էին երկու դստերք . ա-
17 նունն երիցուն Լիա , եւ անուն կրտսե-
րոյն Ռաքէլ ։ Եւ աչք Լիայ զլկապոնք , բայց Ռաքէլ բարի էր տեսլեամբ եւ զե-
18 զեցիկ կերպօք ։ Եւ սիրեաց Յակոբ զՌաքէլ . եւ ասէ , Ծառայեցից քեզ եւթն ամ վասն Ռաքելայ դստեր քո կրտսե-
19 րոյ ։ Եւ ասէ ցնա Լաբան , Լաւ իցէ՝ քեզ տալ զնա քան տալ զնա առն օտարի .
20 բնակեա գու ընդ իս ։ Եւ ծառայեաց Յակոբ վասն Ռաքելայ ամս եւթն . եւ էին յաչս նորա իբրեւ աւուրք սակաւք , քանզի սիրէր զնա ։
21 Եւ ասէ Յակոբ ցԼաբան , Տուր ինձ զկին իմ , լցեալ են աւուրք , ի մտից
22 առ նա ։ Եւ ժողովեաց Լաբան զամենայն արս տեղւոյն , եւ արար հարսա-
23 նիս ։ Եւ եղեւ երեկոյ , առեալ Լաբանու զԼիա դուստր իւր տայաւ առ Յակոբ ,
24 եւ եմուտ առ նա Յակոբ ։ Եւ եա Լաբան զԶելփա զաղախին իւր Նաժիչս
25 դստեր իւրում Լիայ ։ Եւ իբրեւ այդ ե-
զեւ , եւ ահա Լիա էր . եւ ասէ Յակոբ ցԼաբան , Ջի՞նչ գործեցեր զայս . ո՞չ վասն Ռաքելի ծառայեցի քեզ . ընդէ՞ր խաբե-
26 ցեր զիս ։ Ասէ Լաբան , Չէն օրէնք յաչխարհի մերում տալ նախ զկրտսերն քան
27 զերէց ։ Արդ կատարեա [3]եւթն եւս ամ ընդ նորա՞", եւ տաց քեզ եւ զնա փոխանակ վաստակոցն զոր վաստակեացես
28 ինձ զեւթն ամ եւս այլ ։ Արար այնպէս Յակոբ , եւ կատարեաց [4]եւթն եւս ամ ընդ նորա՞". եւ եա նմա Լաբան զՌա-
29 քէլ դուստր իւր կնութեան ։ Եւ ետ Լաբան Ռաքելի զսեր իւրում զԲալա զաղախին իւր նաժիչս ։
30 Եւ եմուտ առ Ռաքէլ , եւ սիրեաց զՌաքէլ քան զԼիա . եւ ծառայեաց նմա այլ եւս եւթն ամ ։
31 Իբրեւ եհաս Տէր եթէ ատելի է Լիա , եբաց զարգանդ նորա . բայց Ռաքէլ ա-
32 մուլ էր։ Եւ յղացաւ Լիա , եւ ծնաւ որդի [1]Յակոբայ , եւ կոչեաց զանունն նորա [5]Ռուբէն . ասէ , Զի եհաս Տէր զտառապանս
33 իմ , արդ սիրեսցէ զիս այր իմ։ Յղացաւ դարձեալ [1]Լիա եւ ծնաւ երկրորդ որդի [1]Յակոբայ , եւ ասէ , Զի լուաւ Տէր եթէ ատեցեալ եմ, եւ յաւել ինձ զսա. եւ կո-
34 չեաց զանուն նորա [6]Շմաւոն ։ Եւ յղացաւ եւ ծնաւ որդի , եւ ասէ , Արդ առ իս եղիցի այր իմ , զի ծնայ նմա երիս որդիս . վասն այսորիկ կոչեաց զանուն
35 նորա [7]Ղեւի ։ Եւ յղացաւ դարձեալ , ծնաւ որդի , եւ ասէ , Զայս միւսանգամ գոհացայց զՏեառնէ. եւ կոչեաց զանուն նորա [8]Յուդա . եւ եկաց ի ծննդոց ։

Գլ . Լ

1 Իբրեւ եհաս Ռաքէլ եթէ ոչ ծնաւ որդի Յակոբայ , նախանձեցաւ Ռաքէլ ընդ քեռն իւրում , եւ ասէ ցՅակոբ , Տուր ինձ որդիս , ապա թէ ոչ՝ մեռա-
2 նիմ։ Բարկացաւ Յակոբ Ռաքելայ եւ ասէ ցնա , Միթէ փոխանակ Աստուծոյ իցեմ ես , որ արդել զպտուղ որովայնի
3 քո ։ Եւ ասէ Ռաքէլ ցՅակոբ , Աւանիկ ազախին իմ Բալա . մուտ առ նա , եւ ծնցի ի վերայ ծնկաց իմոց , եւ այսրիկ
4 եւ ես որդիս ի նմանէ ։ Եւ եա նմա զԲալա զաղախին իւր կնութեան , եւ

[1] 33եբբ. պօյօե [2] 15եբբ. միթէ ծառայեսցես ինձ ձրի՞ [3] 27եբբ. զեւթներորդն սորա [4] 28եբբ. զեւթներորդն նորա [5] Ա.յօէնէն, տես որդի [6] Ա.յօէնէն, լսել [7] Ա.յօէնէն, յարուցին [8] Ա.յօէնէն, գոհութիւն

5 մուտ առ նա Յակոբ ։ Եւ յղացաւ Բալլա
[1]նաժիշտ Ռաքելայ՝, եւ ծնաւ որդի Յա-
6 կոբայ ։ Եւ ասէ Ռաքէլ , Իրաւ այսր ինձ
Աստուած , եւ լուաւ ձայնի իմում, եւ ետ
ինձ որդի . վասն այնորիկ կոչեաց զա-
7 նուն նորա [2]Դան ։ Եւ յղացաւ դարձեալ
Բալլա նաժիշտն Ռաքելայ , եւ ծնաւ որ-
8 դի երկրորդ Յակոբայ ։ Եւ ասէ Ռաքէլ ,
Օգնեաց ինձ Աստուած , զի զուսպեցայ
ընդ քոյր իմում եւ յաղթեցի . եւ կոչ-
եաց զանուն նորա [3]Նեփթաղիմ ։
9 Իբրեւ ետես Լիա եթէ եկաց ի ծնելն-
դենէ , առ զՋելփա զնաժիշտ իւր եւ ետ
10 Յակոբայ կնութեան ։ Յղացաւ Զելփա
նաժիշտն Լիայ , եւ ծնաւ որդի Յակո-
11 բայ ։ Եւ ասէ Լիա , Առ իս բախտ իմ .
եւ անուանեաց զանուն նորա [4]Գադ ։
12 Յղացաւ Զելփա նաժիշտն Լիայ , եւ
13 ծնաւ եւս որդի երկրորդ՝ Յակոբայ ։ Եւ
ասէ Լիա , Երանելի եմ ես , զի երա-
նելացեն զիս կանայք . եւ կոչեաց զանուն
նորա [5]Ասեր , [1]Մեծութիւն ։
14 Գնաց Ռուբէն յաւուրս հնձոյ ցորե-
նոյ , եւ եգիտ խնձոր մանրագորոյց յան-
դի , եւ երեր զայն առ Լիա մայր իւր .
ասէ Ռաքէլ ցԼիա քոյր իւր , Տուր ինձ
15 ի մանրագորոյց որդւոյ քո ։ Եւ ասէ
Լիա , Ո՞չ իցէ քեզ չատ զի առեր զայրն
իմ , մինչ եւ զմանրագո՞րս որդւոյ իմոյ
առնուցուս . եւ ասէ Ռաքէլ , [6]Ոչ այդ-
պէս է՝ ննջեսցէ ընդ քեզ զայս գիշեր
16 փոխանակ մանրագորոյց որդւոյ քո ։ Եւ
իբրեւ եհաս Յակոբ յանդէ ընդ երեկս,
ել Լիա ընդ առաջ նորա եւ ասէ , Առ
իս մտցես այսօր . քանզի ի վարձու կա-
լայ զքեզ փոխանակ մանրագորոյ որդ-
ւոյ իմոյ . եւ ննջեաց ընդ նմա զայն գի-
17 շեր ։ Եւ լուաւ Աստուած Լիայ . յղացաւ
18 եւ ծնաւ Յակոբայ որդի հինգերորդ։ Եւ
ասէ Լիա , Ետ ինձ Աստուած զվարձս
իմ, փոխանակ զի եառու զուզախինն իմ
առն իմում . եւ կոչեաց զանուն նորա
19 [7]Իսաքար , [1]որ է վարձ ։՝ Եւ յղացաւ
միւսանգամ Լիա , եւ ծնաւ որդի վեցե-
20 րորդ՝ Յակոբայ ։ Եւ ասէ Լիա , Պար-
գեւեաց ինձ Աստուած պարգեւս բարի .
այսմ հետէ [8]սիրեսցէ զիս՝ այր իմ , զի
ծնայ նմա որդիս վեց . եւ կոչեաց զա-
21 նուն նորա [9]Զաբուղոն ։ Եւ յետ այնո-
րիկ ծնաւ դուստր , եւ կոչեաց զանուն
նորա [10]Դինա ։
22 Եւ յիշեաց Աստուած զՌաքէլ . եւ
լուաւ նմա Աստուած , եւ երաց պար-
23 գանդ նորա . Եւ յղացաւ ծնաւ որդի [1]Յա-
կոբայ . եւ ասէ [1]Ռաքէլ , Եհան յինէն
24 Աստուած զնախատինս իմ ։ Եւ կոչեաց
զանուն նորա [11]Յովսէփ . ասէ , Յաւել-
ցէ ինձ [12]Աստուած որդի մեւս եւս ։
25 Եւ եղեւ իբրեւ ծնաւ Ռաքէլ զՅով-
սէփ , ասէ Յակոբ ցԼաբան , Արձակեա
զիս զի երթայց ի տեղի իմ եւ յերկիր
26 իմ . Եւ տուր զկանայս եւ զմանկունս
իմ , վասն որոց ծառայեցի քեզ , զի
գնացից . զի դու ինքնին իսկ գիտես
զծառայութիւնն զոր ծառայեցի քեզ ։
27 Ասէ ցնա Լաբան , Եթէ գտի չնորհս ա-
ռաջի քո, հմայեցի զի օրհնեաց զիս [13]Ա-
28 տուած յոտին քումմ ։ Եւ ասէ Լաբան ,
Յայտ արա զվարձս քո ցինէն , եւ տաց։
29 Ասէ ցնա Յակոբ , Դու գիտես որչափ ինչ
ծառայեցի քեզ, եւ որչափ խաչն էր քո առ
30 իս . Սակաւիկ ինչ էր յառաջ քան զիս
եւ աճեալ ի բազմութիւն , եւ օրհնեաց
զքեզ Տէր [1]Աստուած յոտին իմում. եւ արդ
31 ես ե՞րբ առնիցեմ ինձ տունս։ Եւ ասէ ցնա
Լաբան , Զի՞նչ տայց քեզ ։ Եւ ասէ ցնա
Յակոբ , Մի ինչ տար ինձ , բայց զայս
եւեթ բանս արասցես ինձ . դարձեալ ա-
32 րածեցից զխաչինս քո եւ պահեցից. [13]Եւ
անցցեն այսօր ամենայն խաչինքդ առաջի
քո, եւ զատո ի միմեանց զամենայն ոչխար
ղխայտախարիւ եւ ղգորշ , եւ զամենայն
արօսական գնամակ յօդեաց. եւ ամենայն
խայտախարիւն յօդեաց եւ պիտակն յայ-
33 ծեաց եղիցին վարձք՝ ։ Եւ երեւեսցի ար-
դարութիւն իմ ի վաղիւ օր թէ գոն իմ
վարձք առաջի քո . ամենայն որ ոչ իցէ
[14]խայտ եւ պիտակ յայծեաց , եւ գորշ-
խայտ յօդեաց՝ , ի գողոնս համարիսցի
34 լիցի ինձ ։ Եւ ասէ ցնա Լաբան , Եղիցի
35 ըստ բանի քումմ ։ Եւ զատոյց յաւուր

[1] Եբէր. պոյոե [2] Այլինդն, դատաւոր [3] Այլինդն, գուպարած իմ [4] Այլինդն, բախտ [5] Այլինդն, երանելի [6] Եբէր. Ապա [7] Այլինդն վարձ [8] Եբէր. բնակեսցէ ընդ իս [9] Այլինդն, բնակութիւն [10] Այլինդն, դատաստան [11] Այլինդն, յաւելցէ [12] Եբէր, Տէր [13] Եբէր. Անցից այսօր ընդ ամենայն խաչինս քո, և զատուցից անտի զամենայն ոչխար պիտակ և խայտախարիւ , և յօդեաց՝ զամենայն ոչխար սեաւ , և զխայտախարիւն և զպիտակ՝ յայծեաց , և սորա եղիցին վարձք իմ [14] Եբէր. պիտակ և խայտախարիւ յայծեաց առ իս , և որ ոչ իցէ սեաւ յօդեաց

յայնմիկ զքաղս [1]կապոյտս եւ զպիսակս, եւ զամենայն այծս կապոյտս եւ զպիսակս, եւ զամենայն սպիտակս ի նոցանէ եւ զամենայն համակս՝ յոգեաց, եւ ի
36 ձեռս որդւոցն իւրոց. Եւ մեկնեցոյց ճանապարհ երից աւուրց ընդ մէջ նոցա եւ ընդ մէջ Յակոբայ. եւ Յակոբ արածէր զխաչինան Լաբանու զմնացեալս։
37 Եւ առ Յակոբ գաւազան՝ չեր գալար եւ ընդուզի եւ սօսոյ, եւ կեղեւեաց զնոսա Յակոբ, եւ եղեւ սպիտակ. եւ եբերէր ի գաւազանսն սպիտակին զոր
38 քերծոյր՝նկարէն։ Եւ զնէր զգաւազանսն զոր քերծոյր՝ յաւազանս ջրարբից ջրոյն. զի իրրեւ գային խաչինքն ըմպել ջուր, հանդէպ գաւազանացն զկծիցին, յոր-
39 ժամ գային ըմպել ջուր։ Եւ զկծէին խաչինքն ի գաւազանսն, եւ ծնանէին խաչինքն գորշախայտս եւ պիսակս եւ
40 խայտախարիւս։ Եւ զորոլն ուրոյն զառանէր Յակոբ, եւ [2]կացուցանէր յանդիման մաքացին, եւ զխոյ կապոյտ եւ զամենայն գորշախայտն յօգեայ՝՝. Եւ զատանէր իւր հօտս առանձինն, եւ ոչ խառնէր զնոսա ի խաչինս Լաբանու։
41 Եւ լինէր յորժամ զկծէին խաչինքն [3]ի խառնան եւ յղենային՝՝, զնէր Յակոբ զգաւազանսն յանդիման խաչանցն յաւազանսն, առ ի զկծելոյ նոցա լատ գա-
42 ւազանացն։ Եւ յորժամ [4]ծնանէին խաչինքն՝ ոչ զնէր. եւ լինէր [5]անննչանն Լաբանու, եւ [6]նչանաւորն Յակոբայ։
43 Եւ մեծացաւ այրն յոյժ յոյժ, եւ եղեւ նորա ոչխար եւ արջառ յոյժ, ծառայք եւ աղախնայք, ուղտք եւ էշք։

ԳԼ. ԼԱ

1 Եւ լուաւ [7]Յակոբ զլսանս որդւոցն Լաբանու զի ասէին եթէ, Առ Յակոբ զամենայն զինչս հօր մերոյ, եւ ի հօր մերոյ ընչից արար իւր զայն ամենայն
2 փառս։ Եւ եւս Յակոբ զերեսս Լաբանու, եւ ահա ոչ էին ընդ նմա որպէս
3 յերէկն եւ յեռանդ։ Եւ ասէ Տէր [7]Աստուած Յակոբ, Դարձիր յերկիր հօր քո եւ յազգ քո, եւ եղէց ընդ քեզ։
4 Եւ յղեաց Յակոբ եւ կոչեաց զՌաքէլ եւ զԼիա ի դաշտ անդր ուր խաչինքն
5 էին, եւ ասէ ցնոսա, Տեսանեմ ես զերեսս հօր ձերոյ, զի ոչ են ընդ իս որպէս յերէկն եւ յեռանդ. եւ Աստուած
6 հօր իմոյ էր ընդ իս։ Եւ դուք ինքնին գիտէք զի յամենայն զօրութենէ իմմէ
7 ծառայեցի հօր ձերում. Եւ հայր ձեր ընդհարաւ ընդ իս, եւ վոխեաց զվարձս իմ [8]զտասն բծացդ՝՝, եւ ոչ ետ նմա Աս-
8 տուած առնել ինձ չար։ Եթէ [9]ասիցէ, Նկարէնքդ՝՝ եղիցին քո վարձք, ամենայն խաչինքս [10]նկարէնս ծնանին՝՝. եւ եթէ
9 [11]ասիցէ թէ Սպիտակիդ՝՝ եղիցին քո վարձք, ամենայն խաչինքս [12]սպիտակս ծնանին՝՝։ Եւ եհան Աստուած [13]զամենայն
10 խաչինս՝՝ հօր ձերոյ եւ ետ ինձ։ Եւ լինէր յորժամ զկծէին խաչինքն, տեսանէի աչօք իմովք յերազի, եւ ահա քաղք եւ խոյք [14]ելանէին ի վերայ մաքեաց եւ այծից, պիսակք եւ խայտախարիւք եւ գոր-
11 չախայտք։ Եւ ասէ ցիս հրեշտակ Աստուծոյ ի տեսլեան, Յակոբ. եւ ես ա-
12 սեմ, Ջի՞ է։ Եւ ասէ, Հայեաց աչօք քովք, եւ տես զքաղսն եւ զխոյս որ ելանեն ի մաքիսն եւ յայծս. զիարդ պիսակք եւ գորշախայտք եւ խայտախարիւք են. քանզի տեսի որչափ ինչ առ-
13 նէր ընդ քեզ Լաբան։ Ես եմ [15]Աստուած որ երեւեցայ քեզ ի տեղւոջն Աստուածոյ՝՝, ուր օծեր ինձ զարձանն, եւ եզիր [16]ուխտս. եւ արդ արի եկ յերկրէս յայսմանէ, եւ երթ յերկիր ծննդեան քո, եւ եղէց ընդ քեզ։
14 Պատասխանի Ռաքէլ եւ Լիա եւ ասեն ցնա, Միթէ դո՞յ եւս մեր այսուհետեւ բաժին եւ ժառանգութիւն ի
15 տան հօր մերոյ. Ո՞չ ապաքէն իրրեւ զօտարոտիս համարեալ եմք նմա. զի վաճառեաց զմեզ եւ եկեր ուտելով զար-
16 ծաթ մեր. Ամենայն մեծութիւնն [7]եւ փառք՝՝ զոր եհան Աստուած ի հօրէ մերմէ, [17]մեզ եղիցի՝՝ եւ որդւոց մերոց. արդ զոր ինչ ասաց քեզ Աստուած՝ արա։

---

[1] ԵԲԲ. գորշախայտս և խայտախարիւս, և զամենայն այծս պիսակս և խայտախարիւս, զամենայն յորուսի իցէ սպիտակ, և զամենայն սեաւ [2] ԵԲԲ. գարձուցանէր զերեսս խաչանցն առ գորշախայտսն և առ ամենայն սեաւս որ էին ի խաչինան Լաբանու [3] ԵԲԲ. ուժգնք [4] ԵԲԲ. տկարանային [5] ԵԲԲ. տկարն [6] ԵԲԲ. ուժգնն [7] ՅՆԵԲԲ. պակաս

[8] ԵԲԲ. տասնիցս [9] ԵԲԲ. ասէր այսպէս, Պիսակդ [10] պիսակս ծնանէին [11] ԵԲԲ. ասէր Թէ Գորշախայտդ [12] ԵԲԲ. գորշախայտս ծնանէին [13] ԵԲԲ. զխաչինս [14] ԵԲԲ. որ ելանէին [15] ԵԲԲ. Աստուած Բեթէլայ [16] ԵԲԲ. ուխտ ընդ իս անդ [17] ԵԲԲ. մեր է

17 Յարեաւ Յակոբ, առ զկանայս իւր եւ զմանկունս իւր, եւ եհան զնոսա յուղտս.
18 եւ խաղացոյց զամենայն ինչս իւր եւ զամենայն ստացուածս իւր զոր արար ի Միջագետս Ասորւոց, երթալ առ Ի-սահակ հայր իւր յերկիրն Քանանացւոց։
19 Եւ Լաբան երթեալ էր ի կտուրս խա-չանոյ իւրոյ. եւ զողացաւ Ռաքէլ զկուռս
20 հօր իւրոյ։ Եւ զողացաւ Յակոբ զսիրտ Լաբանու [1]անկոյս իւրոյ՝ չպատմել նմա
21 թէ փախչէ։ Եւ փախչ ինքն եւ ամենայն որ ինչ իւր էր, եւ յարուցեալ անց ընդ Գետ եւ դիմեաց ի լեառն Գաղաատայ։
22 Ազգ եղեւ Լաբանու [2]Ասորւոյ յաւուրն
23 երրորդի, եթէ փախչ Յակոբ։ Եւ առեալ զեղբարս իւր ընդ իւր, սկզբնաւ զհետ նորա ճանապարհ զեւթն աւուր, եւ ե-
24 հաս նմա ի լերինն Գաղաատայ։ Եւ եկն Աստուած առ Լաբան Ասորի ի տեսլեան զիշերոյ եւ ասէ ցնա, Զգոյշ լեր անձին քումդ, գուցէ խօսիցիս ընդ Յակոբայ
25 [3]անզգամութեամբ։ Եւ հնաս Լաբան Յակոբայ. եւ Յակոբ եհար զխորան իւր ի լերինն. եւ Լաբան կացոյց զեղբարս իւր ի լերինն Գաղաատայ։
26 Եւ ասէ Լաբան ցՅակոբ, Ընդէ՞ր ա-րարեր զայդ, ընդէ՞ր զողացար զիս եւ վարեցեր
27 զդստերս իմ իբրեւ զգերեալս սրոյ. [4]Նե-ղիէ՞ ազգ արարեալ էր ինձ," առաքէլ զքեզ ուրախութեամբ եւ արուեստակա-
28 նօք թմբկաց եւ քնարաց։ Եւ [5]չէ՛ր արկուք արժանի" համբուրել զորդիսակս իմ եւ զդստերս իմ. եւ արդ անմտութեամբ ա-
29 րարեր։ Եւ այժմ ձեռնհաս էի առնել քեզ չար, բայց Աստուած հօր քո երէկ ա-ասց ցիս, ասէ, Զգոյշ լեր գուցէ խօսիս ընդ Յակոբայ [3]անզգամութեամբ։
30 Եւ արդ գնացեալ երթիս, զի ցանկա-նալով ցանկացեալ ես երթալ ի տուն հօր քո. եւ ընդէ՞ր գողացար զաստուածսն
31 իմ։ Պատասխանի եւ Յակոբ եւ ասէ ցԼաբան, Քանզի երկեայ. ասացի [6]մի գուցէ հանիցես զդստերս քո ինձմէ. [2]եւ
32 զամենայն ինչ զիմ։ Եւ ասէ Յակոբ," Առ որում դուցես զաստուածսն քո, [6]մի կեցցէ առաջի" եղբարցս մերոց. եւ այլ

ծանիր ինչ ի քոյ ընչից առ իս, եւ առ-ցես։ Եւ ոչ [2]ծանեաւ առնմա եւ ոչ ինչ. եւ ոչ" գիտէր Յակոբ թէ Ռաքէլայ
33 [2]գնով իւրով" զողացեալ էր զնոսա։ Եւ մտեալ Լաբան յուղէր [7]ի տան Յակոբայ, եւ [7]ի տան Լիայ, եւ [7]ի տան երկոցունց հարճիցն, եւ ոչ գտանէր. եւ ելեալ [8]ի տանէ անտի Լիայ՝ եմուտ [9]ի տուն Ռա-
34 քելի։ Իսկ Ռաքէլ առեալ զկուռսն եդ ընդ ուղտս պատատաս, եւ նստաւ ի վերայ նոցա. եւ յուզեաց Լաբան զամե-
35 նայն տագաւառն եւ ոչ եգիտ։ Եւ նա ասէ ցհայր իւր, Մի՛ ինչ ծանր թուեսցի քեզ, տէր, ոչ կարեմ յոտն յառնել առաջի քո, զանգի ի կանանց օրէնս եմ։ Եւ յուզեաց [2]Լաբան զամենայն զտունն" եւ ոչ եգիտ զկուռսն։
36 Բարկացաւ Յակոբ եւ կռուէր ընդ Լա-բանու. պատասխանի եւ Յակոբ եւ ա-սէ ցԼաբան, Զի՞նչ վնաս է իմ, կամ զի՞նչ յանցանք են իմ, զի սկզբնաւ
37 զհետ իմ։ Եւ յուզեցեր զամենայն զինչս իմ, զի՞նչ զտեր յամենայն ընչից [10]քոց ի տան իմում՞", զիր առաջի եղբարցս իմոց եւ եղբարց քոց, եւ յանպիտանես-
38 ցեն ի մէջ մեր երկոցունց։ Այս քսան ամ է զի էի ընդ քեզ. ոչխարք քո եւ այծիք ոչ [11]սատկեցան, եւ զիսոյս մա-
39 քսաց քոց ոչ կերայ. Զազանաբեկն ոչ բերի առ քեզ, այլ ես յանձնէ տուժէի. [12]զդողունի տուընչեան եւ զդողունի զի-
40 շերոյ։ Զկերակ այրեալ լինէի ի տօթոյ, եւ զցայդ ի ցրտոյ. հատեալ էր քուն
41 յաչաց իմոց։ Այս քսան ամ է ի տան քումում էի. չչորեքտասան ամ փոխանակ դստերաց քոց վաստակեցի, եւ զվեց ամ ի խաչինս քո, եւ [13]խաբեցեր զիս ի վարձս
42 տասն բծացս"։ Եթէ ոչ Աստուած հայր իմոյ, Աստուած Աբրահամու եւ Երկեւղն Իսահակայ էր ընդ իս, այժմ թերեւս ու-նայն իսկ արձակէիր զիս. զայլ զաստա-սիանս իմ եւ զվաստակս ձեռաց իմոց հաւս Աստուած, եւ յանդիմանեաց զքեզ երէկ։
43 Պատասխանի եւ Լաբան եւ ասէ ցՅա-կոբ, Դստերքդ՝ դստերք իմ են, եւ ուս-տերքդ՝ ուստերք իմ են, եւ խաչինքդ՝ խաչինք իմ են. եւ ամենայն ինչ զոր

[1] ԵԲԲ. Ասորւոյ [2] ՅԵԲԲ. գլուխ [3] ԵԲԲ. բա-րի կամ չար [4] ԵԲԲ. Ընդէ՞ր թաքուցեր զփա-խուստ քո, և գողացար զիս. և ոչ ազդ ա-րարեր ինձ, և [5] ԵԲԲ. ոչ թողեր ինձ [6] ԵԲԲ. մի՛ կեցցէ. որոնեա առաջի

[7] ԵԲԲ. ի խորանի [8] ԵԲԲ. ի խորանէ [9] ԵԲԲ. ի խորան [10] ԵԲԲ. տան քո [11] ԵԲԲ. վիժեցին [12] ԵԲԲ. ի ձեռանէ իմմէ պահանջէիր զգողունի [13] ԵԲԲ. փոխեցեր զվարձս իմ տասնիցս

դու տեսանես՝ [1]իմ է եւ դատերացդ իմոց. եւ արդ զինչ արարից զդուա այսօր, կամ որդւոց զդուա զոր ես ծնայ՝:
44 Բայց արդ ակ ուխտ դիցուք ես եւ դու, եւ եղիցի ի վկայութիւն ընդ իս եւ ընդ քեզ:
[2]Եւ ասէ ցնա, Ահա ոչ ոք է ի մէջ մերում, բայց Աստուած վկայ ընդ իս
45 եւ ընդ քեզ:՝ Եւ առեալ Յակոբայ վէմ՝
46 կանգնեաց արձան: Եւ ասէ ցեղբարսն իւր, Կուտեցէք քարինս. եւ կուտեցին քարինս եւ արարին բլուր, եւ կերան եւ
47 արբին անդ ի վերայ բլրոյն: Եւ կոչեաց զնա Լաբան [3]Կարկառ վկայութեան՝. եւ
48 Յակոբ կոչեաց զնա [4]Կարկառ վկայ՝: Եւ ասէ ցնա Լաբան, Բլուրս այս վկայ է ընդ իս եւ ընդ քեզ այսօր: [2]Եւ կոչեաց զնա Լաբան Բլուր վկայութեան, եւ Յակոբ կոչեաց զնա Բլուր վկայ. եւ ասէ Լաբան ցՅակոբ, Ահա բլուրս այս եւ արձանս այս՝ զոր կանգնեցի ընդ իս եւ ընդ քեզ, վկայ է բլուրս այս, վկայ է արձանս այս.՝ վասն այնորիկ կոչեցաւ ա-
49 նուն բլրոյն [4]Վկայութիւն, եւ [5]Տեսիլն զորմէ՝ ասաց՝ Թէ տեսցէ [6]Աստուած ընդ իս եւ ընդ քեզ, զի մնկնիմք ընկերք յընե-
50 կերէ: Եթէ վշտացուսցես զդստերս իմ, եթէ առցես կանայս առ դատերօք իմովք, զգոյշ լեր՝ զի ոչ ոք է ընդ մեզ որ տես-
սանէ. Աստուած լեսի վկայ ընդ իս եւ
51 ընդ քեզ: Եւ ասէ Լաբան ցՅակոբ, Ա-
հա կարկառս այս եւ ահա արձանս զոր
52 հաստատեցաք ընդ իս եւ ընդ քեզ. Ե-
զիցի վկայ կարկառս, եւ վկայ արձանս, զի ոչ ես անցից ընդ կարկառս, եւ մի՛
53 դու անցանիցես ընդ բլուրս եւ ընդ արձանս ընդ այս՝ չարութեամբ: Աստուած Աբրահամու եւ Աստուած Նաքորայ եդ-
զիցի դատաւոր ի մէջ մերում, Աս-
տուած հարցն նոցա: Եւ երդուաւ Յակոբ
54 յերկիւղ հօր իւրոյ Իսահակայ: Եւ եզին Յակոբ զնկիս ի լերինն, եւ կոչեաց զեղբարս իւր ուտել հաց. կերան եւ ար-
55 բին, եւ ագան ի լերին անդ: Եւ յա-
րուցեալ Լաբան ի վաղիւ անդր համբուրեաց զորդիս իւր եւ զդստերս իւր եւ օրհնեաց զնոսա, եւ գնաց՝ դարձ ա-
րարեալ Լաբանայ ի տեղի իւր:

[1] ԵՔԸ. իմ է, և դստերաց իմոց զի՞նչ արարից դուստ այսօր, կամ որդւոց նոցա զորս ծնան
[2] ՅԵՔԸ. պակաս [3] ԲԿԳ. Եկար-սահատութիա
[4] ԵՔԸ. Գաղատագ [5] ԵՔԸ. Մատեան (դիտանոց), զի
[6] ԵՔԸ. Տէր

ԳԼ. ԼԲ

1 Եւ Յակոբ զնաց զճանապարհն իւր: [2]Եւ հայեցեալ Եսաւ զդանակ Աստուծոյ բա-
2 նակեալ.՝ եւ ընդ առաջ եղեն նմա հրեշ-
տակք Աստուծոյ: Եւ ասէ Յակոբ իրրեւ եսաւ զնոսա, Այս բանակ Աստուծոյ է: Եւ կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ
[7]Բանակս:
3 Եւ առաքեաց Յակոբ հրեշտակս յա-
ռաջ քան զինքն առ Եսաւ եղբայր իւր յերկիրն ի Սէիր, յաչխարհն Եդովմայ.
4 Պատուէր ետ նոցա եւ ասէ, Այսպէս ա-
սասջիք տեառն իմում Եսաւայ, Թէ Այս-
պէս ասէ ծառայ քո Յակոբ, Ընդ Լա-
բանայ կեցի եւ յամեցի մինչեւ ցայժմ.
5 Եւ եղեն իմ արջառ եւ ոչխար եւ էշք, ծառայք եւ ազախնայք. եւ առաքեցի պատմել տեառն իմում Եսաւայ զի գոցէ
6 ծառայ քո չնորհս առացի քո: Եւ դար-
ձեալ հրեշտակացն առ Յակոբ՝ ասեն, Զոպաք առ Եսաւ եղբայր քո, եւ դայ ընդ առաջ քո, եւ չորեք հարիւր այր ընդ նմա:
7 Զահի հարաւ Յակոբ, եւ տարակու-
սեալ էր. եւ զառայդ զժողովուրդն որ ընդ նմա էր, եւ զարջառ եւ զոչխար եւ
8 զուզաս յերկուս բանակս. Եւ ասէ Յա-
կոբ, Եթէ եկեսցէ Եսաւ յառաջին բա-
նակն եւ հարցէ զնա, ապրեսցի երկրորդ
9 բանակն: Եւ ասէ Յակոբ, Աստուած հօր իմոյ Աբրահամու եւ Աստուած հօր իմոյ Իսահակայ, Տէր, որ ասացեր ցիս Թէ
10 երթ յերկիր ծննդեան քո եւ բարի ա-
րարից քեզ. Չեմ բաւական ամենայն արդարութեանն եւ ճշմարտութեանն զոր արարեր ընդ ծառայի քումի. զի ցուպ
ի ձեռն անցի ընդ այս Յորդանան, եւ
11 արդ աւասիկ եղէ յերկուս բանակս: Եւ ապրեսցո զիս ի ձեռաց եղբօր իմոյ Եսաւայ. զի զահի հարեալ եմ ես ի նմանէ, գուցէ եկեալ հարկանիցէ զիս, մայր առ
12 մանկան: Եւ դու ասացեր Թէ [8]Բարի արա-
րից քեզ՝, եւ եղիցի զղաւակ քո իրրեւ զաւազ ծովու որ ոչ Թուելի ի բազմութենէ:
13 Եւ նիջեաց անդ զայն գիշեր. եւ առ
յորոց ածէրն ձեռամբ իւրով պատարագս, եւ առաքեաց Եսաւայ եղբօր իւրոմ,
14 Այծս երկերիւր, քաջս քսան, մաքիս
15 երկերիւր, խոյս քսան, Ուղտս [9]ծնեալս

[7] ԵՔԸ. Մանպիմ [8] ԵՔԸ. Առնելով արարից քեզ բարի
[9] ԵՔԸ. ասնտուս

կոզամբք հանդերձ՝ երեսուն, կովս քա-
ռասուն եւ ցուլս տասն, էշս քսան եւ
16 մարուկս տասն։ Եւ ետ ի ձեռս ծառա-
յից իւրոց հօտս հօտս առանձինն. եւ ա-
սէ ցծառայսն իւր, երթայք դուք յառաջ
քան զիս, եւ բացազդիս ի միմեանց տա-
17 նիցիք հօտս ի հօտից։ Պատուիրեաց ա-
ռաջնոյն եւ ասէ, եթէ պատահիցէ քեզ
եսաւ եղբայր իմ, եւ հարցանիցէ քէ Ո՞ր
ես եւ յո՞ երթաս եւ ո՞ր է այդ որ ա-
18 ռաջի քո երթայ, Ասացես, քէ Ծառայի
քո Յակորայ պատարագք են, զոր ա-
ռաքեաց տեառն իւրում Եսաւայ. եւ
19 ինքն զկնի մեր գայ։ Պատուիրեաց [1]ա-
ռաջնումն եւ երկրորդին եւ երրորդին,
եւ ամենեցուն որ երթային յառաջ զնետ
խաչանցն՝ ասէր, Ըստ բանիս այսմիկ
խօսեսջիք ընդ Եսաւայ, յորժամ գտա-
20 նիցէք զնա. Եւ ասասջիք, Ահա ծառայ
քո Յակոբ գայ զնետ մեր. քանզի ասաց
թէ Յաժուցիցէ զերեսս նորա պատարա-
գօքդ որ երթան առաջի, եւ ապա տես-
սից զերեսս նորա, թերեւս արասցէ մե-
21 ծարանս երեսաց իմոց։ Եւ երթային յա-
ռաջագոյն ընծայքն քան զնա. եւ ինքն
ննջեաց զայն գիշեր անդէն ի բանակին։
22 Եւ յարուցեալ ինքն գիշերի՝ առ զերկուս
կանայսն եւ զերկուս աղախնայսն եւ
զմեռաւսան որդիս իւր, եւ անց ընդ հունն
23 Յաբոկայ։ Եւ առ անցոյց զնոսա ընդ
ձորն, եւ զամենայն ինչ որ իւր էր։
24 Եւ մնաց Յակոբ միայն. եւ մաւտեաւ
25 այր մի ընդ նմա մինչեւ ցառաւօտ. Եւ
իբրեւ եսես թէ ոչ յաղթէ նմա, բուռն
եհար զամոլայլէ զրսեի նորա, եւ ըն-
դարմացոյց զամոլայլ զրսեին Յակորայ
26 ի կռուիցն իւրում ընդ նմա։ Եւ ասէ
ցնա, Արձակեա զիս, քանզի այգ եղեւ.
եւ նա ասէ, Ոչ արձակեցից զքեզ, ե-
27 թէ ոչ օրհնեսցես զիս։ Եւ նա ասէ ցսա,
Զի՞նչ անուն է քո. եւ սա ասէ ցնա,
28 Յակոբ։ Եւ ասէ ցսա, Յայսմ հետէ ոչ
կոչեսցեն զանուն քո Յակոբ, այլ [2]Իս-
րայէլ եղիցի անուն քո. զի ժուժկալե-
ցեր ընդ Աստուծոյ եւ ընդ մարդկան,
29 [3]զօրաւոր լիցիր՝։ Եհարց Յակոբ եւ ասէ,
Պատմեա ինձ զանուն քո։ Եւ ասէ, Զի՞
հարցանես զանուանէ իմմէ. Եւ օրհնեաց
30 զնա անդ։ Եւ կոչեաց Յակոբ զանուն
տեղւոյն այնորիկ [4]Տեսիլ Աստուծոյ՝. զի

[1]13ԵԲԸ. պիսոե [2]Այլեւս, որ մարդանի ընդ Աս-
տուծոյ [3]ԵԲԸ. և զօրաւոր եղեր [4]ԵԲԸ. Փանուէլ

տեսի զԱստուած դէմ յանդիման, եւ
ապրեցաւ անձն իմ։
31 Եւ ծագեաց նմա արեւ իբրեւ [5]անց
Տեսիլն Աստուծոյ. եւ նա կազայր եր-
32 թայր ի զրսեէ անտի։ Վասն այնորիկ
ոչ ուտեն որդիքն Իսրայելի զամոլայլին
զոր ընդարմացոյց, որ է ի վերայ ասե-
ամին զրսեին, մինչեւ ցայսօր. զի բուռն
եհար զասեամին զրսեին Յակորայ, եւ
ընդարմացոյց զամոլայլն նորա։

ԳԼ. ԼԳ

1 Զայս իւր ի վեր երարձ Յակոբ եւ ե-
աւս, եւ ահա Եսաւ [1]եղբայր իւր՝ գայր,
եւ ընդ նմա արք չորեք հարեւր. եւ
բաչխեաց Յակոբ զմանկունսն ի Լիա եւ
2 յԻաքէլ, եւ յերկուս աղախնայսն։ Եւ
արար զերկուս աղախնայսն եւ զորդիս
նոցա առաջի, եւ զԼիա եւ զորդիս նո-
ա զինքն, եւ զԻաքէլ եւ զՅովսէփ հուսկ
3 յետոյ։ Եւ ինքն անց յառաջ քան զնո-
սա, եւ երկիր եպագ եւթն անգամ ի
վերայ երկրի՝ մինչեւ մերձենալ առ եղ-
4 բայրն իւր։ Եւ ընդառաւ Եսաւ ընդ ա-
ռաջ նորա. զիրկս արկ նմա [1]եւ համ-
բուրեաց՝, եւ անկաւ ի վերայ պարա-
նոցի նորա եւ համբուրեաց զնա. եւ լա-
5 յին երկոքեան։ Եւ հայեցեալ ի վեր ե-
տես զկանայսն եւ զմանկունս, եւ ա-
սէ, Դոքա զի՞նչ են քո. եւ նա ասէ,
Մանկունք իմ են, որովք ողորմեցաւ
6 Աստուած ծառայի քում։ Եւ մատեան
աղախնայքն եւ որդիք նոցա, եւ երկիր
7 պագին նմա։ Եւ մատեաւ Լիա եւ որ-
դիք իւր եւ երկիր պագին նմա. յետոյ
մատեաւ Յովսէփ եւ Ռաքէլ եւ երկիր
8 պագին նմա։ Եւ ասէ, Զի՞նչ էր այն
ամենայն չուս որ ինձ զիպեցաւ. եւ նա
ասէ, Զի գտցէ չնորհս ծառայ քո ա-
9 ռաջի քո։ Եւ ասէ Եսաւ, Կայ եւ իմ
10 չատ, եղբայր, քեզ լիցի քոյդ։ Եւ ասէ
Յակոբ, Մի այդպէս, եթէ գտի չնորհս
առաջի քո, ընկալ զընծայսն ի ձեռաց
իմոց. քանզի այնպէս տեսի զերեսս քո՝
որպէս ոք տեսանիցէ զերեսս Աստուծոյ,
11 եւ զուարթացաւս ընդ իս։ Եւ առ զօրհ-
նութիւնդ իմ զոր մատուցի քեզ. զի
ողորմեցաւ ինձ Աստուած, եւ է իմ ա-
մենայն ինչ. եւ բանադատեաց զնա, եւ
12 առ։ Եւ ասէ, Չուեսցուք գնասցուք եւ
13 [6]երթիցուք զուզդրդն՝։ Եւ ասէ ցնա,

[5]ԵԲԸ. անց ընդ [6]ԵԲԸ. երթայց առաջի քո

Տէր իմ ինքնին պիտէ , զի մանկունքս մատաղ են , եւ ոչխարի եւ արջառոյ ծընունդ արձակեալ է. եւ եթէ մի օր ասիպեմ զդոսա , մեռանին ամենայն խաչինք ։ Ա.յլ յառաջեսցէ տէր իմ քան զծառայ իւր , եւ ես [1]ըստ կարի եւ ըստ պարապոյ ճանապարհիդ" առաջի իմ , եւ ըստ կազդուրել մանկանց [2]լմոց խաղաղ ցից , մինչեւ եկից առ տէր իմ ի Սէիր։ Եւ ասէ Եսաւ , Իսկ Թողից առ քեզ ի ժողովրդինէ ասոլ որ ընդ իս են . եւ նա ասէ , Ընդէ՞ր իցէ ինձ այդ , չատ է զի գտի չնորհս առաջի քո, տէր։ Եւ դարձաւ յաւուր յայնմիկ Եսաւ ընդ ճանապարհ իւր ի Սէիր ։

Եւ Յակոբ չուեաց ի [3]Սոբաթս եւ աբար իւր անդ տունս , եւ խաչանդ իւրոց արար [3]դաղարս. վասն այնորիկ կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ [3]Սոբաթս

Եւ եկն Յակոբ ի Սաղէմ քաղաք Սիկկիմայեաց , որ է յերկրին Քանանացւոց, իրրեւ եկն ի Միջագետաց Ասորւոց , եւ բնակեցաւ յանդիման քաղաքին ։ Եւ առայաւ զվիճակ անդին ուր եհար վիրան իւր՝ յեմովրայ հօրէ Սիւքեմայ հարեւր [4]ոչխարի ։ Եւ չինեաց անդ սեղան, եւ [5]կարդաց զԱսաուած Իսրայէլի"։

ԳԼ . Լ Գ

Եւ ել Դինա դուստր Լիայ՝ զոր ծնաւ Յակոբայ , ի գնալ դստերայ սչխարհին, Եւ ետես զնա Սիւքեմ որդի Եմովրայ [6]Քոռեցի , որ իշխանն էր երկրին , եւ առ զնա , եւ ննջեաց ընդ նմա , եւ տառապեցոյց զնա ։ Եւ ուշ եգեալ Դինայի դստերն Յակոբայ՝ սիրեաց զկոյսն , եւ խօսեցաւ ըստ մտաց կուսին ։ Եւ խօսեցաւ Սիւքեմ ընդ Եմովրայ հօր իւրոյ եւ ասէ , Առ դու ինձ զաղջիկս զայս կնութեան ։ Եւ լուաւ Յակոբ եթէ պղծեաց որդի Եմովրայ զԴինա զդուստր նորա . եւ որդիք նորա էին ի խաչինս ի դաչտի . լուռ եղեւ Յակոբ մինչեւ եկն նոքա ։ Եւ ել Եմովր հայր Սիւքեմայ առ Յակոբ խօսել ընդ նմա ։ Եկն եւ որդիքն Յակոբայ ի դաչտէ . իրրեւ լուան , տարջացան արքն , եւ սրտմտեցին զիւն էր նոցա յոյժ . զի խայտառակութիւն արար Իսրայէլի , մանաւանդ առ դուստրն Յակոբայ , եւ ոչ այնպէս վճարիցի ։ Եւ խօսեցաւ ընդ նոսա Եմովր եւ ասէ , Սիւքեմ որդի իմ սիրեաց զդուստր ձեր . արդ տուք զնա նմա կնութեան , եւ արարէք ընդ մեզ խնամութիւն . զդուստրս ձեր տուք մեզ , եւ զդստերս մեր առէք որդւոց ձերոց . եւ բնակեցէք ի միջի մերում , եւ երկիրդ ահա ընդարձակ է առաջի ձեր , եւ բնակեցէք եւ չահեցարուք ի դմա , եւ առացարուք առացուածս ի դմա ։ Եւ ասէ Սիւքեմ ցհայր նորա եւ ցեղբարս նորա , Թոյլ չնորհս առաջի ձեր, եւ զոր ինչ ասիցէք՝ տացուք. Յաճախեցէք յոյժ զվարձանս եւ զօժիտս , եւ տայ՝ որչափ եւ տիցէք . եւ տուք ինձ զաղջիկն զայն կնութեան ։ Պատասխանի եւտուն որդիքն Յակոբայ Սիւքեմայ եւ Եմովրայ հօր նորա նենգութեամբ, եւ [7]ասեն ցնոսա", (վասն զի պղծեցին զԴինա զքոյր նոցա,) Եւ ասեն [8]Շնաւտն եւ Ղեւի եղբարքն Դինայ՝ որդիքն Լիայ", Ոչ կարեմք առնել զայդ բան, տալ զքոյրն մեր առն անթլփատի, քանզի նախատինք են մեզ. Բայց այսու [9]համանեսցուք ձեզ, եւ բնակեսցուք ի միջի ձերում", եթէ լինիցիք իրրեւ զմեզ եւ զուք՝ ի թլփատել զամենայն արու , եւ տացուք զդստերս մեր ձեզ , եւ ի դստերաց ձերոց առցուք մեզ կանայս , եւ բնակեսցուք առ ձեզ , եւ եղիցուք իրրեւ ազգ մի ։ Ասպա թէ ոչ լսիցէք մեզ՝ թլփատել , առնումք զդուստրս մեր ի բաց գնացուք։ Եւ հաճոյ թուեցան բանքն առաջի Եմովրայ, եւ առաջի Սիւքեմայ որդւոյ Եմովրայ ։ Եւ ոչ յամեաց պատանին առնել զբանն, զի յոյժ հարեալ էր ի դստերն Յակոբայ. Եւ նա էր պատուականագոյն քան զամենեսեան որ ի տան հօր նորա էին ։

Եւ եկին Եմովր եւ Սիւքեմ որդի նորա ի դուռն քաղաքին իւրեանց, եւ խօսեցան ընդ արս քաղաքին իւրեանց եւ ասեն, Որքարն այն խաղաղութեամբ են ընդ մեզ . արդ բնակեսցեն յերկրիս եւ չահեսցին ի սմա . զի երկիրս ընդարձակ է առաջի նոցա. զդստերս նոցա առցուք մեզ կանայս , եւ զդստերս մեր

---

[1] Եբբ. մեղմով ըստ գնացից խաչանցդ [2] Յ Եբբ. պ-ւոսւթ [3] Եբբ. Սոկքովթ , այ-ինչ , փաթախք [4] Կամ , արծաթոյ [5] Եբբ. կոչեաց զնա Աստւած , Աստւած Իսրայէլի [6] Եբբ. Խեւացի

[7] Եբբ. խաբեան [8] Եբբ. ցնոսա [9] Եբբ. Հաւանեսցուք ձեզ [10] Եբբ. զդուստր

22 տացուք նոցա։ Բայց միայն այսու [1]նմա-
նանայն մեզ որեարն՝ ընակել ընդ մեզ
լինել ազգ մի, ի թլփատել մեզ զամե-
նայն արու, որպէս նոքայն թլփատեալ
23 են։ Եւ [2]մեր նոցա եւ անասունն նոցա
եւ չորքոտանի նոցա ո՞չ ապաքէն մեր
լինիցի. բայց այնու եւևիմ [3]նմանեսցուք
նոցա, եւ բնակեսցեն ի մէջ մեր։
24 Եւ լուան եմոռայ եւ Սիւքեմայ որդ-
ւոյ Նորա ամենեքին որ ելանէին ընդ
դուռն քաղաքին [3]իւրմանց. եւ թլփա-
տեցին զմարմին անթլփատութեան իւ-
րեանց ամենայն արու, ամենեքին որ ե-
լանէին ընդ դուռն քաղաքի նորա։
25 Եւ եղեւ յաւուրն երրորդի մինչդեռ
էին նոքա ի ցաւն, առին երկու որդիքն
Յակոբայ, Շմաւոն եւ Ղեւի եղբարք
Դինայ՝ իւրաքանչիւր զսուր իւր, եւ
մտին ի քաղաքն [4]կաղմութեամբ, եւ կո-
26 տորեցին զամենայն արու. Եւ զԵմովր
եւ զՍիւքեմ զորդի նորա սպանին ի սուր
սուսերի. եւ առին զԴինա ի տանէ Սիւ-
27 քեմայ եւ ելին։ Եւ որդիքն Յակոբայ
մտին ի վերայ վիրաւորացն, եւ առին
աւար զքաղաքն, յորում պղծեցին զԴինա
28 զդուստր նոցա. Զարխա եւ զոչխար եւ
զէչս նոցա [5]որ էին՝ ի քաղաքին, եւ որ
29 ինչ ի բացի էր՝ առին. Եւ զամենայն
[6]մարդազերծ նոցա, եւ զամենայն՝ զկա
եւ զկարասի նոցա, [7]եւ զկանայս նոցա
գերեցին, եւ յափչտակեցին որ ինչ էր
30 [6]ի քաղաքին եւ որ ինչ՝ ի տունս։ Եւ ա-
սէ Յակոբ ցՇմաւոն եւ ցՂեւի, [8]Աւելի
արարէք դիս, երեւել անդստամ ամենայն՝
բնակչաց երկրիս ի մէջ Քանանացւոց
եւ Փերեզացւոց. եւ ես սակաւաւոր եմ
թուով, արդ եթէ ժողովիցին ի վերայ իմ
եւ հարկանիցեն զիս, սատակեալ սա-
31 տակիցիմ եւ ես եւ տուն իմ։ Եւ ասեն,
[9]Իսկ զիա՞րդ զի իբրեւ զբազ քաւչեցին
զքոյին մեր։՝՝

Գլ. Լե

1 Եւ ասէ Աստուած ցՅակոբ, Արի ել
[6]ի տեղին ի Բեթէլ, եւ անդ բնակեսցես,
եւ արասցես անդ սեղան Աստուծոյ որ
երեւեցաւն քեզ ի փախչելն քո յերեսաց
2 Եսաւայ եղբօր քո։ Եւ ասէ Յակոբ
ցընտանիս իւր եւ ցամենեսին որ ընդ
նմա էին, Ի բաց առէք զաստուածսդ
օտարոտիս որ ընդ ձեզ են ի միջոյ ձերմէ,
եւ սրբեցարուք, եւ վոխեցէք զպատ-
3 մուճանս ձեր. Եւ յարուցեալ ելցուք ի
Բեթէլ, եւ արասցուք անդ սեղան Ա-
աստուծոյ, որ լուաւ ինձ յաւուր նեղու-
թեան, որ էր ընդ իս եւ ապրեցոյց զիս
4 ի ճանապարհին՝ զոր գնայի։ Եւ եաուն
ցՅակոբ զաստուածսն օտարոտիս որ էին
ի ձեռս նոցա, եւ զդինդս որ յականջս
իւրեանց. եւ ծածկեաց զնոսա Յա-
կոբ ի ներքոյ բեւեկոնն [10]ի Սիկիմ, եւ
կորոյս զնոսա մինչեւ ցայսօր ժամա-
5 նակի։ Եւ չուեցաց Իսրայէլ ի Սիկիմայ՝՝.
եւ եղեւ ահ Աստուծոյ ի վերայ քաղա-
քացն որ չուրջ զնովաւ, եւ ոչ ելին
6 զհետ որդւոցն [11]Իսրայելի։ Եւ եկն Յա-
կոբ ի Լուզ, որ է յերկրին Քանանացւոց,
այն ինքն է Բեթէլ, ինքն եւ ամենայն
7 ժողովուրդն որ ընդ նմա. Եւ չինեաց
անդ սեղան, եւ կոչեաց զանուն տեղ-
ւոյն [12]Բեթէլ. զի անդ երեւեցաւ նմա Ա-
աստուած ի փախչել նորա յերեսաց Եսաւայ
եղբօր իւրոյ։
8 Եւ մեռաւ Դեբովրա դայեակն Ռեբե-
կայ, եւ թաղեցաւ ի ներքոյ Բեթէլայ
ընդ կաղնեաւն. եւ կոչեաց զանուն նո-
րա Կաղնի սդոյ։
9 Եւ երեւեցաւ Աստուած Յակոբայ՝
[6]մինչդեռ անդ էր ի Լուզ,՝՝ յորժամ եկն
ի Միջագետաց Ասորւոց, եւ օրհնեաց
10 զնա Աստուած։ Եւ ասէ ցնա Աստուած,
Անունդ քո Յակոբ՝ ոչ եւս կոչեսցի Յակոբ,
այլ Իսրայէլ եղիցի անուն քո. եւ կոչ-
11 եաց զանուն նորա Իսրայէլ։ Եւ ասէ
ցնա Աստուած, Ես եմ Աստուած [13]քո
բազմասկայ՝՝. աճեսջիր եւ բազմասջիր.
ազգք եւ ժողովք ազգաց եղիցին ի քէն,
12 եւ թագաւորք յերանաց քոց ելցեն։ Եւ
զերկիրդ զոր եաուս Աբրահամու եւ Իսա-
հակայ՝ քեզ տայ զդա, քեզ եղիցի, եւ
զաւակի քումն յետ քո տայ զերկիրդ զայդ։
13 Եւ վերացաւ ի նմանէ Աստուած ի տեղ-
14 ւոյնէն ուր խօսեցաւ ընդ նմա։ Եւ կանգ-
նեաց Յակոբ արձան ի տեղւոյնն ուր

---

[1] ՆԵԲԲ. Հաւանեսցին [2] ՆԵԲԲ. Հաւանեսցուք [3] ՆԵԲԲ. Նորա [4] ՆԵԲԲ. Համարձակութեամբ [5] ՆԵԲԲ. եւ որ ինչ էր [6] ՅԱԻԵԲԲ. գ-ի-ե [7] ՆԵԲԲ. և զամենայն մանկունս նոցա և [8] ՆԵԲԲ. Տագնապեցուցէք զիս լինել գարշելի [9] ՆԵԲԲ. Մինչեւ իբրեւ ընդ բազի՞ պարտ էր գնալ ընդ քեռ մեր՝՝։

[10] ՆԵԲԲ. ի Սիւքեմ (5) Եւ չուեցին [11] ՆԵԲԲ. Յակոբայ [12] ՆԵԲԲ. Աստուած Բեթէլայ [13] ՆԵԲԲ. Ամենակալ

խօսեցաւ ընդ նմա, արձան քարեղէն, եւ նուիրեաց ի նմա նուէրս, եւ արկ ի
15 վերայ նորա եւղ։ Եւ կոչեաց զանունն տեղւոյն ուր խօսեցաւ ընդ նմա Աստուած՝ Բեթէլ։
16 Եւ [1]չուեաց ի Բեթէլայ. եւ եղեւ երբեմն մնալեցաւ ի Քարբաթա երկիր, մնանել՝ յեփրաթա, ծնաւ Ռաքէլ, եւ
17 զժուարածին եղեւ ի ծննդեանն։ Եւ եղեւ ի վչտանալն նորա ի ծնունդեանն, եւ ասէ ցնա ծնուցիչն, Քաջալերեաց, զի եւ
18 այդ եւս քո ուստր է։ Եւ եղեւ ընդ հանել ոգւոյն, քանզի մեռաւ, կոչեաց զանուն նորա Որդի վչտաց իմոց. եւ
19 հայրն կոչեաց զնա [2]Բենիամին։ Մեռաւ Ռաքէլ եւ թաղեցաւ ի ճանապարհին Եփ-
20 բաթայ, այն իսկ է Բեթղեհեմ։ Եւ կանգնեաց Յակոբ արձան ի վերայ շիրմին նորա, այն է արձան շիրմի Ռաքելայ մինչեւ յայսօր ժամանակի։
21 Եւ չուեաց Իսրայէլ եւ հեար վրանն
22 իւր յայնկոյս աշտարակին Դադերայ։ Եւ եղեւ իբրեւ բնակեաց Իսրայէլ յերկրին յայնմիկ, գնաց Ռուբէն եւ ննջեաց ընդ Բալլայ հարճն հօր իւրոյ. լուաւ Իսրայէլ
[3]եւ չար թուեցաւ առաջի նորա"։

Եւ էին որդիք Յակոբայ երկոտասանք.
23 Որդիք Լիայ, անդրանիկ Յակոբայ՝ Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա, Իսաքար,
24 Զաբուղոն. եւ որդիք Ռաքելի՝ Յովսէփ
25 եւ Բենիամին. եւ որդիք Բալլայ նաժշչին Ռաքելայ՝ Դան եւ Նեփթաղիմ։
26 Եւ որդիք Զելփայ նաժշչին Լիայ՝ Գադ եւ Ասեր։ Սոյա են որդիք Յակոբայ, որ եղեն նմա ի Մեսոպոտամիա աւրուց։
27 Եւ եկն Յակոբ առ Իսահակ հայր իւր ի Մամբրէ՝ [4]ի քաղաք դաչինն", այն է Քեբրոն, [3]յերկրին Քանանացւոց," ուր պանդխտացան Աբրահամ եւ Իսահակ։
28 Եւ եղեն ամենայն աւուրք Իսահակայ ղոր եկեաց՝ ամք հարիւր եւ ութսուն։
29 Եւ պակասեալ Իսահակայ մնաւ, եւ յաւելաւ յաղգ իւր, ծերացեալ եւ լի աւուրբք. եւ թաղեցին զնա Եսաւ եւ Յակոբ որդիք իւր։

ԳԼ. ԼԶ

1 Եւ սա են ծնունդք Եսաւայ, նա է Ե-

2 դոմ։ Եւ առ իւր Եսաւ կանայս ի դստերաց Քանանացւոց, զԱդդա զդուստր Եղնայ Քեւացւոյ, եւ զՈղիբամա դուստր Անայի՝ որդւոյ Սեբեղովնի Խեւացւոյ,
3 Եւ զԲասեմաթ զդուստր Իսմայելի՝ զքոյր
4 Նաբաէոթայ։ Եւ ծնաւ Ադդա Եսաւայ զեղիփազ, եւ Բասեմաթ ծնաւ զՌա-
5 գուէլ, Եւ Ողիբամա ծնաւ զՅէուս եւ զեղդոմ եւ զԿորխ. սոքա են որդիք Եսաւայ, որ եղեն նմա յերկրին Քանանացւոց։
6 Եւ առ Եսաւ զկանայս իւր եւ զդուստերս եւ զդստերս իւր եւ զամենայն մարդիկ տան իւրոյ, եւ զամենայն ինչս եւ զանասունս, եւ զամենայն ինչ զոր ստացաւ [3]եւ զոր արար" յերկրին Քանանացւոց, եւ գնաց յերկրէն Քանանացւոց յերեսաց Յակոբայ եղբօր իւրոյ։
7 Զի էին բազում ինչք նոցա ի միասին բնակելոյ. եւ ոչ կարէր երկիրն պանդխտութեան հանդուրժել նոցա ի բազ-
8 մութենէ ընչից իւրեանց։ Եւ բնակեցաւ Եսաւ ի լերինն Սէիր. Եսաւ՝ որ նա ինքն է Եդոմ։
9 Եւ սա են ծնունդք Եսաւայ՝ հօրն Եդոմայեցւոց, ի լերինն Սէիր։ Եւ սա
10 են անուանք որդւոցն Եսաւայ. Եղիփազ որդի Ադդայի կնոջ Եսաւայ, եւ Ռագուէլ որդի Բասեմաթայ կնոջ Եսաւայ։
11 Եւ եղեն որդիք Եղիփազայ՝ Թեման, Ոմմար, Սովբար, Գոթոմ եւ Կենէզ։
12 Եւ Թամնա էր հարճ Եղիփազու որդւոյ Եսաւայ, եւ ծնաւ Եղիփազու զԱմաղէկ. սոքա են որդիք Ադդայի կնոջ Եսաւայ։
13 Եւ սա են որդիք Ռագուէլի՝ Նաքովթ, Զարեհ, Սամմա եւ Մեզա. սոքա են որ-
14 դիք Բասեմաթայ կնոջ Եսաւայ։ Եւ սա են որդիք Ողիբամայ դստեր Անայի որդւոյ Սեբեղովնի կնոջ Եսաւայ, եւ ծնաւ Եսաւայ զՅէուս եւ զեղդոմ եւ զԿորխ։
15 Սոքա են իշխանք՝ որդիք Եսաւայ. որդիք Եղիփազու անդրանկանն Եսաւայ, իշխան Թեման, իշխան Ոմմար, իշխան
16 Սովփար, իշխան Կենէզ, Իշխան Կորխ, իշխան Գոթոմ, իշխան Ամաղէկ. սոքա են իշխանք Եղիփազու յերկրին Եդով-
17 մայեցւոց. սոքա են որդիք Ադդայի։ Եւ սա են որդիք Ռագուէլի որդւոյ Եսաւայ. իշխան Նաքովթ, իշխան Զարեհ, իշխան Սամմա, իշխան Մոզէ. սա են իշխանք Ռագուէլի յերկրին Եդովմայ. սոքա են որ-
18 դիք Բասեմաթայ կնոջ Եսաւայ։ Եւ սա

[1] Եբր. չուեցին ի Բեթէլայ, և էր տակաւին ճանապարհ ի մտանել [2] Այլեւս, որդի աջոյ [3] Յեբր. պակաս [4] Եբր. ի քաղաքին Արբոկայ (տես Գլ. ԻԹ. 2)

են որդիք Ողիբամայ կնոջ Եսաւայ. իշխան Յէուս, իշխան Յեղղոմ, իշխան Կորխ. այս են իշխանք Ողիբամայ դստեր
19 Անայի կնոջ Եսաւայ։ Այս են որդիք Եսաւայ, եւ այս են իշխանք նոցա, [1]եւ
20 այս են որդիք՝ Եղովմայ։ Եւ այս են որդիք Սէիրայ Քոռացւոյ որ բնակեալ էր յերկրին. Ղոտանն, Սեբաղ, Սեբեղովն, Անա,
21 Դեսոն եւ Ասեր եւ Ռիսոն. սոքա են իշխանք Քոռեցւոցն, որպէս Սէիրայ յերկրին Եղովմայ։ Եւ եղեն որդիք Ղոտանայ՝
22 Քոռի եւ Եմման, եւ քոյր Ղոտանայ՝
23 Թամնա։ Եւ սոքա են որդիք Սոբաղայ. Գաղամ եւ Մանաքաթ եւ Գեբաղ եւ
24 Սովփար եւ Ովնան։ Եւ այս են որդիք Սեբեղովնի. Այլէ եւ Ովնան. այս Ովնան է որ եգիտ [2]զաղբևրն յանապատի՝ մինչ արածէր զէշն Սեբեղովնի հօր
25 իւրոյ։ Եւ այս են որդիք Անայի. Դեսոն
26 եւ Ողիբամա դստեր Անայի. Եւ այս են որդիք Դեսոնայ. Ամադան եւ Եսբան
27 եւ Յեթրան եւ Քառան։ Եւ այս են որդիք Ասերայ. Բալէան եւ Զուկան եւ
28 [3]Ովնիկան եւ՝ Ուկամ։ Եւ այս են որ-
29 դիք [4]Ռիսոնի. Ովս եւ Առան։ Եւ այս են իշխանք Քոռեայ. իշխան Ղոտան, իշխան Սովբաղ, իշխան Սեբեղոն, իշխան
30 Անա, իշխան Դեսոն, իշխան Ասեր, իշխան [5]Ռիսոն. այս են իշխանք Քոռեայ ի պետութիւնս իւրեանց յերկրին Եղովմայ։
31 Եւ այս թագաւորք են որ թագաւորեցին յերկրին Եղովմայեցւոց, մինչչեւ թագաւորեալ էր թագաւոր յիսրայէլի։
32 Եւ թագաւորեալ էր Բաղա որդի Սեպփովրայ. եւ անուն քաղաքին Նո-
33 բա Դինհաբա։ Եւ մեռաւ Բաղա, եւ թագաւորեաց ընդ նորա Յովբաբ որդի Զա-
34 բրհի ի Բոսորայ։ Եւ մեռաւ Յովբաբ, եւ թագաւորեաց ընդ նորա Ասոմ յերկ-
35 րէ Թեմանացւոց։ Եւ մեռաւ Ասոմ, եւ թագաւորեաց ընդ նորա Ադադ որդի Բադադայ, որ կոտորեաց զՄադիամ ի դաշտին Մովաբացւոց. եւ անուն քա-
36 ղաքի նորա Գեթթէմ։ Եւ մեռաւ Ադադ, եւ թագաւորեաց ընդ նորա Սամադա ի
37 Մասեկկայ։ Եւ մեռաւ Սամադա, եւ թագաւորեաց ընդ նորա Սաւուղ յՈրոթովայ՝
38 որ առ Գետեղերն։ Եւ մեռաւ Սաւուղ, եւ թագաւորեաց ընդ նորա Բաղանանն
39 որդի Աքոբորայ։ Եւ մեռաւ Բաղանանն որդի Աքոբորայ, եւ թագաւորեաց ընդ նորա Ադադ [3]որդի Բարադայ՝. եւ անուն քաղաքի նորա Փոգով, եւ անուն կնոջ նորա Մեհետաբէել դստեր Մատ-
40 րեթայ, որդւոյ Մադովբայ։ Այս են անունք [3]որդւոցն Եսաւայ եւ՝ իշխանացն Եսաւայ յազգս իւրեանց, ըստ տեղիս իւրեանց՝ [3]յայրարտս իւրեանց, եւ ի տոհմս իւրեանց՝ ըստ անուանց նոցա. իշխան Թամանա, իշխան Ղոտան, իշ-
41 խան Յեթաթ, Իշխան Ողիբամասա, իշ-
42 խան Հելայ, իշխան Փենովն, Իշխան կենէզ, իշխան Թեման, իշխան Մազար,
43 Իշխան Մագդիէլ, իշխան Զաբոյին։ Սոքա են իշխանք Եղովմայեցւոց ըստ բնակութեան յերկրի տասյուսածոց իւրեանց. եւ այս է Եսաւ հայր Եղովմայ։

ԳԼ. ԼԷ

4 Եւ բնակէր Յակոբ յերկրին ուր պանդխտեաւսա հայր նորա, յերկրին Քանանա-
2 ցւոց։ Եւ սա են ծնունդք Յակոբայ. Յովսէփ եւ[6]թնեւտասնամեայ էր մինչ արածէր ոչխարսն հանդերձ եղբարբքն իւրովն. եւ էր կրտսեր ընդ որդիսն Բալլայ եւ ընդ որդիսն Զելփայ կանանց հօր իւրոյ. եւ [6]բերէին
3 հայրն իւրեանց։ Բայց՝ Իսրայէլ սիրէր զՅովսէփ առաւել քան զամենայն որդիսն իւր, քանզի որդի ծերութեան էր նորա. եւ արար նմա պատմուճան ծաղկեայ։
4 Իրրեւ տեսին եղբարքն նորա թէ սիրէ զնա հայրն քան զամենայն որդիս իւր,ատեցին զնա, եւ ոչ կարէին խօսել ընդ նմա խաղաղութեամբ։
5 Եւս երազ Յովսէփ եւ պատմեաց եղբարցն իւրոց. եւ յաւելին եւս առնել
6 զնա։ Եւ ասէ ցնոսա, Լուարուք զե-
7 րազն զոր տեսի. Թուէր եմէ որպ կապէաք ի գաւսի միւսոյ, եւ կանգնեցաւ որպն իմ եւկաց ուղղորդ. եւ դարձան որպքն ձեր եւ պագին երկիր իմոյ
8 որպոյն։ Եւ ասեն ցնա եղբարքն իւր, Միթէ թագաւորելով թագաւորեսցես ի վերայ մեր, կամ տիրելով տիրեսցես մեզ. եւ յաւելին եւս առնել զնա վասն երազոյն նորա եւ վասն բանիցն նորա։

[1] ՆԲԳ. այսինքն [2] ՆԲԳ. զջերմուկն [3] ՅՆԲԳ. պոխոռ [4] ՆԲԳ. Դեսանայ [5] ՆԲԳ. Դեսան
[6] ՆԲԳ. բերէր Յովսէփ Համբաւ չար զնոցանէ առ Հայր նոցա։ (3) Եւ

9 Եւ եաեա մեւս եւս երազ, եւ պատմեաց
[1]հօր իւրում եւ" եղբարց իւրոց, եւ ա-
սէ, Ահա տեսանէի մեւս եւս այլ երազ,
որպէս թէ արեգակունդ եւ լուսին եւ մի-
տասան աստեղք երկիր պաղանէին ինձ։
10 [2]Յաստեաց նմա հայրն իւր եւ ասէ,
Զինչ է երազն զոր տեսեր. արդ գալով
գայցեմք ես եւ մայր քո եւ եղբարք
11 քո եւ երկիր պագանիցեմք քեզ։ Եւ նա-
խանձեցան ընդ նմա եղբարքն իւր.
բայց հայրն պահէր զբանն։
12 Եւ գնացին եղբարքն նորա արածել
13 զհաւկինս հօրն իւրեանց ի Սիւքեմ։ Եւ
ասէ Իսրայէլ ցՅովսէփ, Ո՞չ աւանիկ եղ-
բարք քո արածեն զհաւկինան ի Սիւքեմ. եկ
առաքեցից զքեզ առ նոսա։ Եւ ասէ ցնա,
14 Ահաւասիկ կս։ Ասէ ցնա Իսրայէլ, Երթ
տես եթէ ողջ իցեն եղբարքն քո եւ
խաչինք, եւ բեր ինձ զբոյց. եւ ա-
ռաքեաց զնա ի ծորձորոյն Քեբրոնի.
15 եկն ի Սիւքեմ։ Եւ եղիտ զնա այր մի՝
մոլորեալ ի դաշտին. եհարց զնա այրն
16 եւ ասէ, Զինչ խնդրես։ Եւ նա ասէ,
Զեղբարսն իմ խնդրեմ. պատմեա ինձ
17 ո՛ւր արածիցեն։ Եւ ասէ ցնա այրն,
Բարձին աստի. եւ լուայ զի ասէին,
Երթիցուք ի Դովթայիմ։ Եւ գնաց Յով-
սէփ զհետ եղբարց իւրոց, եւ եգիտ
18 զնոսա ի Դովթայիմ։ Տեսին զնա [1]եղ-
բարքն յառաջագոյն" ի հեռաստանէ՝ մինչ-
չեւ մօտ եկեալ էր առ նոսա, խորհուրդ
19 վատ ի մէջ առին սպանանել զնա։ Եւ
ասեն իւրաքանչիւր ցեղբայր իւր, Ահա
20 երազատեան գայ. եկայք սպանցուք
զնա, եւ ընկեսցուք ի մի ի գրոց աստի,
եւ ասասցուք եթէ գազան չար եկեր զնա,
եւ տեսցուք զինչ լինիցին երազքն նորա։
21 Իբրեւ լուաւ Ռուբէն, կորզեաց զնա
ի ձեռաց նոցա եւ ասէ, Մի հարցուք
22 զդա յոգի։ Եւ ասէ ցնոսա Ռուբէն, Մի
հեղդուք արիւն, այլ արկէք զդա ի գրոյ
մի յանապատի աստ, եւ ձեռն մի ար-
կանէք ի նա. զի թաւալեցէ զնա ի ձե-
ռաց նոցա, եւ հասուցանիցէ զնա առ
հայր իւր։
23 Եւ եղեւ իբրեւ եկն Յովսէփ առ եղ-
բարսն իւր, մերկացին զպատմուճանն
24 նորա ծաղկեայ ի նմանէ. Եւ առին ըն-
կեցին զնա ի գուբն. եւ գուբն ունայն
25 էր, եւ չուր ոչ գոյր ի նմա։ Եւ նստան
ուտել հաց. զաչս ի վեր բարձեալ տես-
ին, եւ ահա ճանապարհորդք Իսմայել-
ացիք գային ի Գաղաադէ, եւ ուղտք
նոցա լի էին խնկովք, առաչխամբ եւ
ռեհանիւ, եւ երթային իջուցանել յԵ-
26 գիպտոս։ Եւ ասէ Յուդա ցեղբարսն
իւր, Զի՞նչ օգուտ է եթէ սպանանիք
ցեմբ զեղբայրն մեր, եւ թաքուցանիւք
27 ցեմբ զարիւնն նորա. եկայք վաճառեսց-
ցուք զնա Իսմայելացւոցն, եւ ձեռք մեր
մի՛ չաղախեսցին ի նմա, զի եղբայր
եւ մարմին մեր է. եւ լուան նմա եղ-
28 բարքն իւր։ Եւ անցանէին այրք Մա-
դիանացիք, վաճառականք, եւ ձգեցին
հանին զՅովսէփ ի գրոյ անտի, եւ վա-
ճառեցին զՅովսէփ Իսմայելացւոցն քսան
[3]դահեկանի. եւ իջուցին զՅովսէփ յԵ-
29 գիպտոս։ Դարձաւ Ռուբէն ի գուբն, եւ
ոչ եգիտ զՅովսէփ ի գրի անդ. պա-
30 տառեաց զհանդերձս իւր։ Դարձաւ առ
եղբարսն իւր եւ ասէ, Պատանեակն չէ
անդ. եւ ես արդ յո՞ երթայց։
31 Եւ առեալ զպատմուճանն Յովսեփայ՝
զենին ուլ այծեաց, եւ թաթաւեցին
32 զպատմուճանն յարիւնն։ Եւ առաքեցին
զպատմուճանն ծաղկեայ տանել առ հայրն
իւրեանց, եւ ասեն, Զայդ գտաք. ծա-
նիր եթէ որդւոյ քո՞ իցէ պատմուճանդ
33 եւ եթէ ոչ։ Եւ ծանեաւ զնա եւ ասէ,
Պատմուճանս որդւոյ իմոյ է. գազան
չար եկեր զնա, գազան յափշտակեաց
34 զՅովսէփ։ Եւ պատառեաց զհանդերձս
իւր, եւ քուրձ ղգեցաւ ի վերայ մէջոյ
իւրոյ. եւ սուգ ունէր ի վերայ որդւոյն
35 իւրոյ աւուրս բազումս։ Եւ ժողովեցան
ամենայն ուստերք նորա եւ ամենայն
դստերք նորա, եւ եկին մխիթարել զնա,
եւ ոչ կամէր միխիթարել. ասէ, Զի իջից
ես սովին սգով առ որդի իմ ի դժոխս։
36 Եւ լայր զնա հայրն իւր։ Իսկ Մադիա-
նացիքն վաճառեցին զՅովսէփ յեգիպ-
տոս Պետափրեայ ներքինւոյ զահճապե-
տի Փարաւոնի։

ԳԼ. ԼՔ

1 Եւ եղեւ ի ժամանակի յայնմիկ էջ
Յուդա յեղբարց իւրոց, եւ չոգաւ առ
ոմն Ոդողոմացի որում անուն էր Իրաս

[1]Յերբ. պաւոռ [2]Երբ. Իբրեւ պատմեաց զայս հօր իւրում եւ եղբարց իւրոց, սաստեաց

[3]Երբ. արծաթոյ

2 Եւ ետես անդ Յուդա զդուստր առն Քանանացւոյ, որում անուն էր Շաւա, եւ առ զնա իբր կին, եւ եմուտ առ նա։
3 Եւ յղացեալ եւ ծնեալ որդի, եւ կոչեաց
4 զանուն նորա Էր։ Եւ յղացեալ դարձեալ եւ ծնեալ որդի, եւ կոչեաց զանուն նո-
5 րա Աւնան։ Եւ յաւելեալ դարձեալ ծնեալ որդի, եւ կոչեաց զանուն նորա Սելովմ. եւ նա էր ի Քասբի յորժամ ծնեալ [1]զնոսա։
6 Եւ առ Յուդա կին Էրայ անդրանկի
7 իւրում, որում անուն էր Թամար։ Եւ եղեւ Էր անդրանիկն Յուդայ՝ չար առաջի Տեառն, եւ սպան զնա [2]Աստուած։
8 Եւ ասէ Յուդա ցԱւնան, Մուտ առ կին եղբօր քո, եւ ամուսնացիս ընդ նմա, եւ յարուսցես զաւակ եղբօր քում։
9 Իրրեւ գիտաց Աւնան թէ ոչ լինի նմա զաւակն, լինէր յորժամ մտանէր առ կին եղբօր իւրոյ, հեղոյր [3]զսերմն յեր-
10 կիր, չտալ զաւակ եղբօր իւրում։ Եւ չար թուեցաւ առաջի [4]Աստուծոյ գործն
11 զոր արար, եւ սպան եւ զնա եւս։ Եւ ասէ Յուդա ցԹամար նու իւր, Նիստ այրի ի տան հօր քո՝ մինչեւ եղիցի մեծ Սելովմ որդի իմ. զի ասէր թէ գուցէ եւ նա եւս մեռանիցի որպէս եւ եղբարքն նորա։ Գնաց Թամար եւ նստաւ ի տան հօր իւրոյ։
12 Բազմացան աւուրքն, եւ մեռաւ դուստրն Շաւայ, կին Յուդա. միխիթարեցաւ Յուդա եւ գնաց ի կտուրս խա-
չանց իւրոց, ինքն եւ Իրաս [5]հովիւ իւր
13 Ողղոմացի ի Թամնա։ Աղդ եղեւ Թամարայ [6]նուոյ նորա՝ եւ ասեն, Ահա սկեսրայր քո ելանէ ի Թամնա՝ կտրել
14 զհաչվինս իւր։ Եւ եհան զհանդերձս այրութեան իւրոյ յինքենէ, արկաւ տեռ եւ զարդարեցաւ, եւ նստաւ առ դրան Ենանու յանցս Թամնայ. զի ետես եթէ մեծ եղեւ Սելովմ, եւ նա ոչ տայր զնա
15 Նմա կին։ Իրրեւ ետես զնա Յուդա, համարեցաւ թէ բոզ իցէ, քանզի ծածկեալ էր զերեսս իւր [3]եւ ոչ ծանեաւ
16 զնա՝։ Խոտորեցաւ առ նա ի ճանապարհէ անտի եւ ասէ, Թոյլ տուր ինձ մտանել առ քեզ. զի ոչ ծանեաւ թէ նուն նորա իցէ։ Եւ նա ասէ, Զի՞նչ տացես
17 ինձ եթէ մտանիցես առ իս։ Եւ ասէ, Ես տաց ածել քեզ ուլ այծեաց ի խաչանց խոց. եւ նա ասէ թէ Տա՛ զրա-
18 ւական մինչեւ տացես ածել։ Եւ նա ասէ, Զինչ կրաւական տաց քեզ. Եւ ասէ, Զմատանիդ եւ [6]զգլխոյդ եւ զպաւազանդ որ ի ձեռին [7]քումբ. եւ եմուտ
19 առ նա, եւ յղացեալ ի նմանէ։ Եւ յարեաւ գնաց, եւ եհան ի բաց զձորձն իւր յինքենէ, եւ զգեցաւ զհանդերձն
20 այրութեան իւրոյ։ Եւ առաքեաց Յուդա ուլ այծեաց ի ձեռն [8]հովուին իւրոյ Ողղոմացւոյ առնուլ զգրաւականն ի կնո-
21 ջէ տան. եւ ոչ եդիտ գնա։ Եհարց զարս տեղւոյն եւ ասէ ցնոսա, Ո՞ւր է բոզն որ էր յենան ի վերայ ճանապարհիս. եւ ասեն, Չէր աստ ուրեք բոզ։
22 Եւ դարձաւ առ Յուդա եւ ասէ, Ոչ գտի, եւ արք տեղւոյն ասեն թէ Չկայ
23 աստ բոզ։ Ասէ Յուդա, Նմա լիցի այն, այլ զի մի ծաղր կացցուք. ես եառու
24 տանել զուլդ, եւ դու ոչ գտեր։ Եւ եղեւ յետ երից ամսոց ազդ եղեւ Յուդայի եւ ասեն, Պոռնկեցաւ նու քո Թամար, եւ ահա յղի է ի պոռնկութենէ. եւ ասէ Յուդա, Հանէք զնա ար-
25 տաքս, եւ այրեսցի։ Եւ մինչդեռ տանէին զնա, առաքեաց առ սկեսրայրն իւր եւ ասէ, Յառնէ այր այգ գրաւականք են՝ յղի եմ ես. եւ ասէ, Ծանիր ո՞ւր իցէ մատանիդ եւ [9]գինդ եւ գաւա-
26 զանդ։ Ծանեաւ Յուդա եւ ասէ, Արդարացեալ է նա քան զիս. զի ոչ ետու զնա որդւոյ իմում Սելովմայ. եւ ոչ եւս յաւել գիտել զնա։
27 Եւ եղեւ իրրեւ ծնանէր, եւ էին եր-
28 կու որդիք յորովայնի նորա։ Եւ եղեւ ի ժամանակի ծնդեանն նորա, մին յառաջագոյն եհան զձեռն իւր. եւ առ ծնուցիչն՝ կապեաց կարմիր ի ձեռն նո-
29 րա, եւ ասէ, Նախ սա [10]եկեսցէ։ Իբրեւ ամփոփեաց զձեռն անդրէն, եկն եւ վաղվագակի եղբայր նորա. եւ նա ասէ, Զի՞ է զի [11]իրամատեցար վասն քո ցանդ՝, եւ կոչեաց զանուն նորա [12]Փա-
30 րէս։ Եւ յետոյ եկն եւ եղբայր նորա, յորոյ ձեռին կապեալ էր զկարմիրն, եւ կոչեաց զանուն նորա Զարա։

Գլ. ԼԹ

1 Եւ զՅովսէփ իջուցին յեգիպտոս, եւ

[1] Եբր. զնա [2] Եբր. Տէր [3] Եբր. գ-ի-ւ [4] Եբր. Տեառն [5] Եբր. բարեկամ
[6] Եբր. զմատանէդ [7] Եբր. քումբ. և եառնում [8] Եբր. բարեկամին [9] Եբր. մատանէդ [10] Եբր. եկ [11] Եբր. իրամատեցեր. եղիցի իրամատդ ի վերայ քո [12] Այլն՝ իրամատ

գնեաց զնա Պետափրէս ներքինի Փա-
րաւոնի, գահճապետ, այր Եգիպտացի,
ի ձեռաց Իսմայելացւոցն որք իջուցին
2 զնա անդր։ Եւ էր Տէր ընդ Յովսեփայ,
եւ էր այր աջողակ, եւ եղեւ ի տան
3 տեառն իւրոյ [1]Եգիպտոս։ Իբրեւ՝ գիտաց
տէրն նորա թէ Տէր ընդ նմա է, եւ
զամենայն զինչ եւ առնէր՝ Տէր յաջողէր
4 ի ձեռս նորա։ Եւ եգիտ Յովսէփ չնորհս
առաջի տեառն իւրոյ, զի հաճոյ էր նմա.
եւ կացոյց զնա ի վերայ տան իւրոյ, եւ
զամենայն զինչ որ իւր էր՝ ետ ի ձեռս Յով-
5 սեփայ։ Եւ եղեւ յետ կացուցանելոյ
զնա ի վերայ տան իւրոյ եւ ի վերայ
ամենայն իրիք որ զինչ էր նորա, եւ
օրհնեաց Տէր զտուն Եգիպտացւոյն վասն
Յովսեփայ. եւ եղեւ օրհնութիւն Տեառն
ի վերայ ամենայն ընչից նորա ի տան եւ
6 յանդի։ Եւ եթող զամենայն որ զինչ իւր
էր՝ ի ձեռս Յովսեփայ. եւ ոչ գիտէր
զամենայն որ զինչ կայր ի տան իւրում,
բայց միայն զհացն զոր ուտէր։ Եւ էր
Յովսէփ աղնիւ երեսօք եւ գեղեցիկ
տեսլեամբ յոյժ։
7 Եւ եղեւ յետ բանիցս այսցոցիկ եւ արկ
կին տեառն իւրոյ զաչս իւր ի վերայ
Յովսեփայ, եւ ասէ ցնա, Քունեա ընդ
8 իս։ Եւ նա ոչ կամեցաւ, եւ ասէ ցկին
տեառն իւրոյ, Զի եթէ աէր իմ ոչ ճա-
նաչէ զինչ ի տան իւրում [2]վասն իմ". եւ
9 զամենայն զինչ ետ ի ձեռս իմ. Եւ չիք
զինչ ի տան սոյն որ մնծ է քան զիս.
եւ չիք զինչ զատեալ գինէն բայց ի քէն՝
զի կին նորա ես. եւ զիա՞րդ առնիցեմ
զբանդ զայդ զչար եւ զմնծ, եւ մե-
10 զանչիսիմ առաջի Աստուծոյ։ Եւ եղեւ
իբրեւ խօսէր ընդ Յովսեփայ օր բաս
օրէ, եւ ոչ անսայր քունել ընդ նմա,
11 եւ ոչ հնազ լինել։ Եւ եղեւ օր զինչ այն-
պիսի, մտեալ Յովսէփ ի տունն գործել
գգործ զինչ իւր. եւ ոչ ոք էր անդ յտն-
12 տանց անտի ի ներքս։ Բռնեաց նմա
զհանդերձ նորա եւ ասէ, Ննջեա ընդ իս։
Եւ նորա թողեալ զհանդերձ իւր ի ձեռս
նորա, եւ փախեաւ եւ ել արտաքս։
13 Եւ եղեւ իբրեւ տեսանէ եթէ եթող զհանդերձ
իւր ի ձեռս նորա եւ փախեաւ ել ար-
14 տաքս, կոչեաց զընտանիս տանն եւ ասէ,
Տեսէք զի ած մեզ Եբրայեցի խաղ
առնել զմեզ. եմուտ առ իս եւ ասէ,
Ննջեա ընդ իս. եւ ես աղաղակեցի ի
15 ձայն բարձր. եւ իբրեւ լուաւ թէ մե-
ծաբարբառ աղաղակեցի, եթող զհանդերձ
իւր առ իս եւ փախեաւ ել արտաքս։
16 Եւ եգ զհանդերձն առ իւր՝ մինչեւ եկն
17 տէրն ի տունն իւր։ Եւ խօսեցաւ ընդ
նմա ըստ բանիցս այսոցիկ, եւ ասէ,
Եմուտ առ իս ծառայն Եբրայեցի զոր
ածեր մեզ՝ խաղ առնել զիս. [3]Եւ ասէ
18 ցիս՝ Քունեա ընդ իս։" Իսկ իբրեւ լուաւ
թէ բարձրացուցի զբարբառ իմ եւ ա-
ղաղակեցի, եթող զհանդերձ իւր ինձ եւ
փախեաւ ել արտաքս։
19 Եւ եղեւ իբրեւ լուաւ տէրն նորա
զբանս կնոջն իւրոյ զոր խօսեցաւ ընդ
նմա եւ ասէ, Թէ Այսպէս արար ընդ
իս ծառայն քո, բարկացաւ սրտմտու-
20 թեամբ։ Եւ առ տէրն Յովսեփայ, արկ
զնա ի բանտ, ի տեղի ուր կալանաւորքն
արքունի կապեալ [4]կային ի բանտին։
21 Եւ էր Տէր ընդ Յովսեփայ, եւ արկ
զնովաւ ողորմութիւն, եւ ետ նմա չնորհս
22 առաջի բանտապետին։ Եւ ետ բանտա-
պետն [3]զբանտն ի ձեռս Յովսեփայ, [3]եւ
զամենայն կալանաւորսն որ էին ի բան-
տի անդ. եւ զամենայն որ զինչ գործէին
23 անդ, նա էր որ գործէր։ Եւ ոչ զինչ գի-
տէր բանտապետն զբանտին վասն նորա,
զի ամենայն ի ձեռս Յովսեփայ էր. քան-
զի Տէր էր ընդ նմա, եւ զոր զինչ գոր-
ծէր նա՝ Տէր յաջողէր ի ձեռս նորա։

Գլ. Ի

1 Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ, յան-
ցեալ տակաւին արքային Եգիպտա-
ցւոյ, եւ մատակարար տեառն նոցա
2 արքային Եգիպտացւոյ։ Եւ բարկացաւ
Փարաւոն ի վերայ երկուցունց ներքին-
ացն իւրոց, ի վերայ տակառապետին
3 եւ ի վերայ մատակարարին. Եւ եգ
զնոսա ի բանտ առ գահճապետին, յան-
դի բանտի ի տեղւոջ ուր Յովսէփն կայր։
4 Եւ յանձն արար գնոսա գահճապետն
Յովսեփայ, եւ կայր նոցա ի սպասու.
եւ էին աւուրս ինչ ի բանտի անդ։
5 Եւ տեսին երկոքեան, զիւրաքանչ-
իւր երազ ի միում գիշերի, [5]տեսիլ եւ
բազում տակառապետին եւ մատակարա-
րին" որ էին արքային Եգիպտացւոց,

[1]Եբր. Եգիպտացւոյ։ (3) Եւ [2]Եբր. ընդ իս
[3]Յիբր. պահ [4]Եբր. կային. և ՚ի նոց անդ
[5]Եբր. իւրաքանչիւր ըստ մեկնութեան երազոյ
իւրոյ, տակառապետն և մատակարարն

6 մինչ էին իրանտի անդ ։ Եմուտ առնոսա Յովսէփ ընդ առաւօտն, եւ նոյնս զնոսա,
7 եւ էին խռովեալք ։ Եհարց զնոսիկ զփարաւոնի որ էին ընդ նմա ի բանտի անդ առ տեառն նորա եւ ասէ, Ընդէ՞ր տրտում
8 են երեսք ձեր այսօր ։ Եւ նոքա առնն զնա, Երազ տեսաք, եւ ոչ ոք է որ մեկնիցէ զնա. եւ ասէ ցնոսա Յովսէփ, Ո՞չ ապաքէն ի ձեռս Աստուծոյ իցէ մեկնութիւն նոցա. պատմեցէք ինձ ։
9 Եւ պատմեաց տակառապետն զերազն իւր Յովսեփայ եւ ասէ, Թուէր ինձ ի տեսլեան իմում որպ՛ մի առաջի իմ.
10 Եւ յորմն երեք [1]ուռք կանաչք յոյժ. եւ ունէր երիս ողկոյզս հասեալ, ողկոյզ
11 խաղողոյ՛. Եւ բաժակն փարաւոնի ի ձեռին իմում. առնուի զխաղողն եւ ճմլէի ի բաժակն փարաւոնի, եւ տայի զբաժակն ի ձեռս փարաւոնի ։ Եւ ասէ ցնա
12 Յովսէփ, Այս է մեկնութիւն նորա. երեք
13 ուռքն՝ երեք աւուրք են. Այլ եւս երեք աւուրք, [2]եւ յիշեսցէ փարաւոն զիշխանութիւնն քո, եւ անդրէն ի նմին տակառապետութեան քում կացուսցէ զքեզ՛՝. եւ տացես զբաժակն փարաւոնի ի ձեռս նորա, ըստ առաջնոյ [3]իշխանութեանն քո՛՝ որպէս եւ էիր տակառապե՛տ ։
14 Այլ զիս յիշեսջիր յորժամ բարի լինիցի քեզ, եւ արասցես ինձ ողորմութիւն. եւ յիշեսցես զիս առաջի փարաւոնի, եւ հանցես զիս ի բանտէ աստի յայս-
15 մանէ. Զի գողանալով գողացան զիս յերկրէն Եբրայեցւոց. եւ աստ ինչ ոչ արարի, եւ արկին զիս ի տուն գերոյս այսորիկ ։
16 Իբրեւ եւս մատակարարն եթէ [5]ուզիզ մեկնեաց, ասէ ցՅովսէփ, Ես ես տեսանէի յերազի, եւ թուէր ինձ թէ երիս խանա [6]նաչնոյ ունէի ի գլուխ իմ.
17 Եւ ի վերնում խանին յամենայնէ գործ ուտէր սրբեայ փարաւոնի՝ գործ մատակարարայ. եւ թռչունք ուտէին զնա ի խանէ անտի որ էր ի վերայ գլխոյ իմոյ ։
18 Պատասխանի եւս Յովսէփ եւ ասէ ցնա, Այս է մեկնութիւն նորա. երեք խանքն՝
19 երեք աւուրք են. Ցեւս երիս աւուրց բարձցէ փարաւոն զգլուխ քո ի քէն, եւ

կախեացէ զքեզ զփայտէ. եւ կերիցեն թռչունք երկնից զմարմինս քո ի քէն ։
20 Եւ եղեւ յաւուրն երրորդի, օր ծննդոց էր փարաւոնի, եւ առնէր ուրախութիւն ամենայն ծառայից իւրոց. եւ [7]յիշեաց զիշխանութիւն՝ տակառապետին եւ [8]զիշխանութիւն մատակարարին ի մէջ ծա-
21 ռայից իւրոց ։ Եւ կացոյց զտակառապետն անդէն [9]յիշխանութեան իւրում, եւետ զբաժակն ի ձեռն փարաւոնի ։
22 Եւ զմատակարարն կախեաց զփայտէ, որպէս մեկնեացն Յովսէփ ։
23 Եւ ոչ յիշեաց տակառապետն զՅովսէփ, այլ մոռացաւ զնա ։

Գլ. Խև

1 Եւ եղեւ յետ երկուց ամաց աւուրց եւս փարաւոն երազ. Թուէր թէ կայցէ
2 առ եղեր գետոյ ։ Եւ ահա որպէս թէ ի գետոյ անտի ելանէին եւթն երինջք գեղեցիկ տեսանելով եւ ընտիրք մարմնով,
3 եւ արածէին ի խաղի անդ ։ Եւ ահա այլ եւս եւթն երինջք ելանէին յետ նոցա ի գետոյ անտի, զաղիրք տեսլեամբ եւ վատք մարմնովք, եւ արածէին առ այլ
4 երինջսն առ եզերբ գետոյն. Եւ ուտէին եւթն երինջքն զաղիրք տեսլեամբ եւ վատք մարմնովք զեւթն երինջսն գեղեցիկս տեսլեամբ եւ զընտիրս ։ Զարթ-
5 նաւ փարաւոն։ Եւ անդրէն ի քուն եւմուտ, եւ եւս երազ երկրորդ. եւ ահա եւթն հասկ ելանէին ի միում փայտի ընտիրք
6 եւ գեղեցիկք ։ Եւ ահա եւթն այլ հասկք ոսկինք եւ խորշակահարք ելանէին յետ
7 նոցա. Եւ կլանէին եւթն հասկքն ոսկինք [10]եւ խորշակահարք՝ զեւթն հասկն գընտիրս եւ զառատս ։ Զարթնաւ փարաւոն, եւ
8 էր երազ ։ Եւ եղեւ առաւօտ, եւ խռովեցաւ անձն նորա, եւ առաքեաց կոչեաց զամենայն երազահանսն եգիպտոսի եւ զամենայն իմաստունս նորա. եւ պատմեաց փարաւոն զերազն իւր, եւ ոչ ոք էր որ մեկնէր զերազն փարաւոնի։
9 Եւ խօսեցաւ տակառապետն առաջի փարաւոնի եւ ասէ, Զյանցանս իմ [11]յիշե-
10 ցուցանեմ այսօր ։ Բարկացաւ փարաւոն ծառայից իւրոց, եւ եդ զմեզ ի բանտի ի տան զահավասիին, զիս եւ զմատակա-

[1] Ել. ուռք. և ընդ բողբոջեն ել ի վեր ծագիկ նորա · հասուցին ողկոյզք նորա խաղող [2] Եբ բարձրացուսցէ Փարաւոն զգլուխ քո, և դարձուսցէ զքեզ ի բարձ քո [3] Ել. օրինակին [4] Ել. յօ-եբ-լա՛ նորա [5] Ել. բարեւոք [6] Եբ գերմակ հացի [7] Ել. բարձրացոյց զգլուխ [8] Ել. զգլուխ [9] Եբ. ի մատռուակութեան [10] Ել. պոյոխ [11] Ել. յիշեմ

11 բարն. Եւ տեսաք երկոքին երազ ի
միում դիշերի, ես եւ նա, իւրաքանչիւր
12 [1]ըստ երազոյ իւրում՝ տեսանէաք։ Եւ
էր անդ ընդ մեզ պատանի մի մանուկ
Եբրայեցի, ծառայ դահճապետին, եւ
պատմեցաք նմա, եւ մեկնեաց մեզ զե-
րազսն մեր, առն ըստ իւրաքանչիւր
13 երազոյ մեկնեաց։ Եւ եղեւ որպէս մեկ-
նեացն մեզ՝ նոյնպէս եւ պատահեաց.
[2]զինձ զայ հասանել յիշխանութիւն, եւ
նմա կախել զփայտէ՝։
14 Առաքեաց Փարաւոն եւ կոչեաց զՅով-
սէփ. եւ հանին զնա ի բանտէ անտի,
եւ [3]փոքրեցին զհերս նորա, եւ փոխեցին
զպատմուճան նորա՝, եւ եկն առ Յով
15 Փարաւոն։ Եւ ասէ Փարաւոն ցՅովսէփ,
Երազ տեսի, եւ չիք ոք որ մեկնէ զնա.
բայց ես լուայ զքէն, ասեն, եթէ լսես
16 զերազս, մեկնես։ Պատասխանի ետ Յով-
սէփ եւ՝ ասէ ցՓարաւոն, [4]Առանց Աստու-
ծոյ ոչ լինիցի պատասխանի փրկութեան՝
Փարաւոնի։
17 Խօսեցաւ Փարաւոն ընդ Յովսեփայ եւ
ասէ, Թուէր ի տեսլեան իմում, եթէ
18 կայի առ եղեր գետոյ. Եւ որպէս թէ
ի գետոյ անտի ելանէին եւթն երինջք
ընտիրք մարմնովք եւ գեղեցիկք տեսա-
19 նելով, եւ արածէին ի խաղի անդ։ Եւ
ահա այլ եւս եւթն երինջք ելանէին զկնի
նոցա [5]ի գետոյ անտի՝, ժանգք եւ զազիրք
տեսանելով յոյժ եւ վոխաք մարմնովք,
որպիսի ոչ տեսի յամենայն երկրիս Եգիպ-
20 տացւոց զազրագոյնս քան զնոսա։ Եւ
ուտէին եւթն երինջքն վոխաք եւ զազիրք
զեւթն երինջն գառաջինն՝ [6]զգեղեցիկսն
21 եւ՝ զընտիրս. Եւ մտանէին յորովայնս
նոցա եւ [7]ոչ երեւէին՝. եւ երեսք նոցա
զազիրք լերեւ զառաջինն։ [8]Զարթեայ
22 եւ զարձեալ ննջեցի՝։ Եւ տեսանէի
միւսանգամ յերազի, որպէս թէ եւթն
հասկք ելանէին ի միում վնջի լիք եւ
23 գեղեցիկք. Եւ այլ եւս եւթն հասկք
ազականեալք, ազաղունք եւ խորչա-
24 կահարք ելանէին [9]ետ առ նոսա՝. Եւ
կլանէին եւթն հասկքն ազաղունք [5]եւ
խորչակահարք՝ զեւթն հասկն զգեղե-
ցիկս [5]եւ զառաջս՝։ Եւ պատմեցի երա-
զահանացն, եւ ոչ ոք էր որ մեկնէր ինձ։
25 Եւ ասէ Յովսէփ ցՓարաւոն, Երազն
Փարաւոնի մի է. զոր [10]ինչ Աստուած
26 առնելոց է՝ եղոյց Փարաւոնի։ Եւեթն
երինջքն գեղեցիկք՝ եւեթն ամ են, եւ
եւեթն հասկքն գեղեցիկք՝ եւեթն ամ են.
27 երազն Փարաւոնի մի է, եւ եւեթն երինջքն
ոտիւք եւ վոխաք որ ելանէին զհետ
նոցա՝ եւեթն ամ են, եւ եւեթն հասկքն
ոսինք եւ խորչակահարք՝ [9]լիցի զեւթն
28 ամ սով՝։ Բանն զոր ասացի Փարաւոնի՝
այն է, զոր [10]ինչ Աստուած առնելոց է՝
29 եղոյց Փարաւոնի։ Ահա ամք եւթն եկես-
ցեն բազում լիութեան յամենայն երկ-
30 րիս Եգիպտացւոց. Եւ յետ այսորիկ եկես-
ցէ եւեթն ամ սովոյ, եւ մոռասցին զլիու-
թիւնն յամենայն երկրիս Եգիպտացւոց.
31 եւ սպառեսցէ սովն զերկիրն. Եւ ոչ ծանե-
ցի [10]լիութիւնն յերեսաց սովոյն որ գայցէ
յետ այսորիկ. քանզի սաստիկ լինիցի
32 յոյժ։ Այլ վասն կրկնելոյ երազոյն Փարա-
ւոնի երկիցս անգամ, զի ճշմարիտ իցէ
բանն առ ի յԱստուծոյ, եւ փութացի
33 Աստուած առնել զնա։ Եւ արդ տես,
ինքնին այր մի իմաստուն եւ խորհրդա-
կան Փարաւոնի, եւ կացուսցես զնա ի
34 վերայ երկրիս Եգիպտացւոց։ Եւ արասցէ,
եւ կացուսցէ զործակալս Փարաւոնի ի
վերայ երկրիս, եւ հինգերորդեսցեն զար-
մտիս երկրիս Եգիպտացւոց զեւթն ա-
35 մացն լիութեան։ Եւ ժողովեսցեն զա-
մենայն կերակուրս [5]զեւթն ամացն բար-
եաց եկելոց, եւ ժողովեսցի ցորեանն
ընդ ձեռամբ Փարաւոնի, եւ կերակուրք
36 ի քաղաքս պահեսցին։ Եւ եղիցին կե-
րակուրքն պահեալ երկրիս եւեթն ամ
սովոյն որ լինիցին յերկրիս Եգիպտաց-
ւոց, եւ մի սատակեսցի երկիրս ի սովոյ։
37 Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի Փա-
րաւոնի եւ առաջի ամենայն ծառայից
38 իւրոց։ Եւ ասէ Փարաւոն ցամենայն
ծառայս իւր, Միթէ գտանիցո՞մք այր
այսպիսի որ ունիցի զոգի Աստուծոյ
39 յանձին իւրում։ Եւ ասէ Փարաւոն
ցՅովսէփ, Որովհետեւ եցոյց քեզ Աս-
տուած զայդ ամենայն, չիք այր իմաստ-
40 նագոյն եւ խորհրդական քան զքեզ։ Դու

---

[1] ՆԲԳ. ըստ մեկնութեան երազոյ իւրոյ [2] ԵԲԳ. դարձոյց զիս յիմ բարձ, և զնա կախեաց [3] ՆԲԳ. փոքրեաց զչերս իւր, և փոխեաց զպատմուճան իւր [4] ԵԲԳ. Ոչ ես. Աստուած տացէ պատասխանի ի խաղաղութիւն [5] ՅՆԲԳ. պակաս [6] ԵԲԳ. ոչ գիտացաւ թէ մտեալ էին յորովայն նոցա [7] ԵԲԳ. Եւ զարթեայ [8] ՆԲԳ. յետ նոցա

[9] ՆԲԳ. լիցին եւթն ամք սովոյ [10] ՆԲԳ. լութիւնն յերկրին

լեցիս ի վերայ տան իմոյ, եւ բերանոյ
քումմ հնազանդ լիցի ամենայն ժողո-
վուրդ իմ. բայց միայն ամրոտովս ի վե-
41 րոյ եղէց ես քան զքեզ։ Եւ ասէ Փա-
րաւոն ցՅովսէփ, Ահաւասիկ կացուցի
42 զքեզ այսօր ի վերայ երկրիս Եգիպտացո-
ւոց։ Եւ հանեալ Փարաւոնի զմատա-
նին իւր ի ձեռանէ իւրմէ՝ եդ ի ձե-
ռին Յովսեփայ, եւ զգեցոյց նմա պատ-
մուճան բեհեզեայ, եւ արկ մանեակ ոս-
43 կի ի պարանոց նորա։ Եւ հնար զնա
յերկրորդ կառս իւր. եւ քարոզ կարդայր
առաջի [1]նորա. եւ կացոյց զնա ի վերայ
44 երկրին Եգիպտացւոց։ Եւ ասէ Փարաւոն
ցՅովսէփ, Ահաւասիկ ես Փարաւոն,
առանց քո ոչ ոք համբարձցէ զձեռս
45 իւր եւ զոտս իւր ի վերայ ամենայն երկ-
րիս Եգիպտացւոց։ Եւ կոչեաց Փարաւոն
զանուն Յովսեփայ [2]Փսոմիւթոմփհանէ,
եւ ետ նմա զԱսմանէթ զուստր Պետափ-
րեայ քրմի Արեգ քաղաքի կնութեան.
եւ ել Յովսէփ [3]յերեսաց Փարաւոնի՝։
46 Եւ էր Յովսէփ ամաց երեսնից՝ յոր-
ժամ ընծայեցաւ առաջի Փարաւոնի ար-
քային Եգիպտացւոց։ Եւ Յովսէփ յերես-
աց Փարաւոնի, եւ չրջեցաւ ընդ ամե-
47 նայն Եգիպտոս։ Եւ արար երկիրն յեւթն
48 [4]ամս լիութեանն արդիւնս։ Եւ ժողով-
եաց զամենայն կերակուրս ամացն եւ-
թանց, [5]զորս էր լիութիւն՝ յերկրին Ե-
գիպտացւոց. եւ համբարեաց կերակուրս
ի քաղաքս, զկերակուրս պաշտաց քա-
ղաքին որ չուրջ զնովաւ, համբարեաց
49 ի նմա։ Եւ [6]ժողովեաց Յովսէփ զգորեան
իբրեւ զաւազ ծովու բազում յոյժ, մինչեւ
ոչ կարէր համարել, քանզի ոչ գոյր թիւ։
50 Եւ եղեն Յովսեփու երկու որդիք՝
մինչչեւ եկեալ էր եւթն ամացն սովոյ,
զորս ծնաւ նմա Ասանէթ զուստր Պե-
51 տափրեայ քրմի Արեգ քաղաքի։ Եւ
կոչեաց Յովսէփ զանուն անդրանկանն
[7]Մանասէ. զի ասէ՝ թէ Մոռացոյց ինձ
Աստուած զամենայն վիշտս իմ, եւ զա-
52 մենայն [8]վիշտս հօր իմոյ։ Եւ զանուն
երկրորդին կոչեաց [9]Եփրեմ, զի ասէ՝ թէ
Աճեցոյց զիս Աստուած յերկրի տառա-
պանաց իմոց։
53 Եւ անցին եւթն ամք լիութեանն որ
54 եղեն յերկրին Եգիպտացւոց։ Եւ սկսան
գալ եւթն ամք սովոյն, որպէս եւ ա-
սաց Յովսէփ. եւ եղեւ սով [10]յամենայն
երկրին, զի՝ յամենայն երկրին Եգիպ-
55 տացւոց [11]ոչ գտանէր հաց։ Եւ սովեցաւ
ամենայն երկիրն Եգիպտացւոց, եւ ա-
դաղակեաց [12]ամենայն ժողովուրդն առ
Փարաւոն վասն հացի. եւ ասէ Փարա-
ւոն ցամենայն Եգիպտացիսն, երթայք
առ Յովսէփ, եւ զոր ինչ ասիցէ ձեզ՝ ա-
56 րասջիք։ Եւ էր սով ի վերայ երեսաց ա-
մենայն երկրի. եւ երաց Յովսէփ զամե-
նայն չանւարանս ցորենով, եւ վաճառէր
ամենայն եգիպտացւոցն. եւ ոաստկացաւ
սովն [13]յամենայն երկրին՝ Եգիպտացւոց։
57 Եւ ամենայն աշխարհք գային յեգիպտոս
գնել ի Յովսեփայ, զի զօրանայր սովն
ընդ ամենայն երկիր։

Գլ. խԲ

1 Եւ տեսս Յակոբ եթէ գոյ [11]վաճառ յեր-
կրին Եգիպտացւոց, ասէ Յակոբ ցորդիսն
2 իւր, Ընդէ՞ր հեզդայք. Ահա լսեմ եթէ
գոյ ցորեան յեգիպտոս. իջէք անդր եւ
գնեցէք մեզ սակաւ մի կերակուր, զի
3 կեցցուք եւ մի մեռցուք։ Եւ իջին եղ-
բարքն Յովսեփայ տասնեքին՝ գնել ցոր-
4 եան յեգիպտոսէ։ Եւ զբենիամին զեղ-
բայրն Յովսեփայ ոչ արձակեաց Յակոբ
ընդ եղբարսն. քանզի ասէր թէ Գուցէ
պատահիցէ նմա [12]հիւանդութիւն։
5 Եւ եկին որդիքն Իսրայելի գնել ընդ
այլ երթեւեկսն. քանզի էր սով յերկրին
6 Քանանացւոց։ Եւ Յովսէփ էր իշխան
երկրին, եւ նա վաճառէր ամենայն ժողո-
վրդոյն երկրին. եւ եկեալ եղբարքն
Յովսեփայ երկիր պագանէին ի վերայ ե-
7 րեսաց իւրեանց երկիր։ Եւ իրրեւ տեսս
Յովսէփ զեղբարսն իւր, ծանեաւ. եւ
օտարանայր ի նոցանէ, եւ խօսեցաւ ընդ
նոսա խստագոյնս, եւ ասէ, Ուստի գայք.
եւ նոքա ասեն, Յերկրէն Քանանացւոց՝
8 գնել կերակուրս։ Ծանեաւ Յովսէփ զեղ-
բարսն իւր, եւ նոքա ոչ ծանեան զնա։
9 Եւ յիշեաց Յովսէփ զերազսն իւր զոր ե-
տես, եւ ասէ ցնոսա, Լրտեսք էք դուք,
եւ գիտել [13]զեղ եւ զմուտս աշխարհիս եկ-
10 եալ էք։ Եւ նոքա ասեն, Ոչ, տէր, ծա-

[1] ՆԲԷ. Նորա, Դիք ծունր [2] Ա.ՅԵՒՔ., փրկիչ երկ-
րին [3] ՆԲԷ. ընդ երկիրն Եգիպտացւոց [4] ԵԲԷ.
որ եղեն [5] Ա.ՅԵՒՔ., մոռացուցիչ [6] ԵԲԷ.
տուն [7] Ա.ՅԵՒՔ., պղտաբեր

[8] ՆԲԷ. յամենայն երկիրս, այլ [9] ՁԲԷ. գ-է-ռ
[10] ՆԲԷ յերկրին [11] ՆԲԷ. ցորեան [12] ՆԲԷ.
վտանգ [13] ՆԲԷ. զմերկութիւն

ռայք զո եկեալ եմք գնել կերակուրս։
11 Ամենեքին մեք եմք որդիք առն միոյ.
արք խաղաղութեան եմք, եւ չեն ծա-
12 ռայք զո լրտեսք։ Ասէ ցնոսա, Ոչ, այլ
[1]ղել եւ զմուտ՝ երկրիս եկեալ էք սե-
13 ռանել։ Եւ նոքա ասեն, Երկոտասան եղ-
բարք եմք ծառայք զո, որդիք առն միոյ,
յերկրէն Քանանացւոց. եւ կրտսերն առ
հօր իւրում է այսօր, եւ մեւսն չէ ի միջի։
14 Ասէ ցնոսա Յովսէփ, Ա՛յդ իսկ է զոր ա-
15 ռայի ձեզ, թէ լրտեսք էք. Եւ զսոսին
յայտ արարէք. երդուեալ յարեւն Փա-
րաւոնի, ոչ ելանէք աստի, եթէ ոչ ե-
16 կեսցէ եղբայրն ձեր կրտսեր այսր։ Արդ
առաքեցէք զմի ոք ի ձէնջ եւ ածցէ
զեղբայրն ձեր, եւ դուք կացէք ի պա-
հոջ, մինչեւ յայտնի լինիցին բանք
ձեր եթէ արդար խօսիցիք եւ թէ ոչ. ապա
թէ ոչ, երդուեալ յարեւն Փարաւոնի՝
17 թէ ոչ լրտեսք էք զուք։ Եւ եդ զնոսա
ի բանտի զերիս աւուրս։
18 Եւ ասէ ցնոսա Յովսէփ յաւուրն եր-
րորդի, Զայս արարէք եւ ապրիք. զի
19 եւ ես յԱստուծոյ երկիւղած եմ։ Եթէ
արք խաղաղութեան էք, եղբայր մի ի
ձէնջ աստ մնասցէ ի բանտի, եւ դուք
20 տարայք զվաճառ ցորենոյդ [2]ձերոյ. Եւ
զնեղբայրն ձեր կրտսերածէք առ իս, եւ
հաւատարիմ լինիցին բանք ձեր. [3]ապա
21 թէ ոչ, մեռանիք։ Ասացին՝ այնպէս։ Եւ
ասեն իւրաքանչիւր ընկերայր իւր, Ա՛յո,
քանզի ի մեղս եմք վասն եղբօրն մե-
ծոյ. զի արհամարհեցաք զնեղութիւն
ոգւոց նորա յորժամ աղաչէրն զմեզ, եւ
ոչ լուաք նմա. վասն այնորիկ եկն ի վե-
22 րայ մեր այս նեղութիւն։ Պատասխանի
եւ Ռուբէն եւ ասէ ցնոսա, Ո՞չ խօսե-
ցայ ընդ ձեզ եւ ասեմ, թէ Մի մեղանա-
չէք մանկանդ. եւ ոչ լուարուք ինձ. եւ
23 ահա արիւն նորա խնդրի։ Եւ նոքա ոչ
գիտէին թէ լսէր Յովսէփ, զի թարգման
24 կայր ի միջի։ Եւ անցեալ մեկուսի ի
նոցանէ՝ եւայց Յովսէփ. եւ եկն միւսան-
գամ առ նոսա, եւ խօսեցաւ ընդ նոսա.
եւ առ ի նոցանէ զՇմաւոն եւ կապեաց
առաջի նոցա։
25 Եւ ետ հրաման Յովսէփ լնուլ զա-
մանս նոցա ցորենով, եւ դնել զարծաթն
իւրաքանչիւր ի քրձի իւրում, եւ տալ
նոցա պաշար ի ճանապարհ։ Եւ եղեւ
26 նոցա այնպէս։ Եւ նոցա բարձեալ [4]իւ-
27 րաքանչիւր իշոյ՝ գնացին անտի։ Եւ
լուծեալ միոյ զքուրձ իւր տալ կերա-
կուր դրաստու իւրում յիջեւանին, եահս
զդրամ արծաթոյն իւրոյ զի կայր ի բերան
28 քրձի իւրոյ։ Ասէ ցեղբարս իւր, Դարձու-
ցաւ լնդ այսրէն արծաթն, եւ ահա աստէն
կայ ի քրձի իմում. եւ զարմացան միտք
նոցա, խռովեցան ընդ միմեանս եւ ասեն,
Ձինչ է այս զոր արար ընդ մեզ Աստուած։
29 Եւ եկին առ Յակոբ հայրն իւրեանց
յերկիրն Քանանու, եւ պատմեցին նմա
զամենայն ինչ որ անց ընդ նոսա, եւ ա-
30 սեն, Մեծեցաւ այրն, տէր երկրին, ընդ
մեզ խստաշունս, եւ [5]եղ զմեզ ի բան-
31 տի՝ իբրեւ լրտեսս երկրին։ Եւ ասեմք
ցնա, Արք խաղաղութեան եմք, եւ չեմք
32 լրտեսք. Երկոտասան եղբարք եմք որ-
դիք հօր մերոյ. մին չէ ի միջի, եւ
կրտսերն այժմ ընդ հօր մերում է յեր-
33 կրին Քանանացւոց։ Ասէ ցմեզ այրն,
տէր երկրին, Այսու դիտացից թէ արք
խաղաղութեան էք, եթէ զեղբայր մի ձեր
առ առ իս Թողուցուք, եւ զվաճառս
ցորենոյդ ի տունս ձեր առեալ տանիջիք,
34 Եւ զեղբայրն ձեր կրտսեր ածիջէք առ
իս, եւ գիտացից եթէ չէք լրտեսք, այլ
արք խաղաղութեան էք. եւ զայս ևս
եղբայր տայց ցձեզ, եւ յերկրի առ առ-
35 նիջէք վաճառս։ Եւ եղեւ ի թափիլն նոցա
զքուրձս իւրեանց, եւ կայր իւրաքան-
չիւր ուրաք ծրար արծաթոյ ի քրձի
իւրեանց. եւ իրրեւ տեսին զծրարս ար-
ծաթոյ իւրեանց, ինքեանք եւ հայր իւ-
36 րեանց, երկեան յոյժ։ Եւ ասէ ցնոսա
Յակոբ հայրն իւրեանց, Զիս անորդի ա-
րարէք. Յովսէփ չէ ի միջի, Շմաւոն չէ
ի միջի, եւ զԲենիամին ևս առնուցուք.
37 յիս վերայ եկն այս ամենայն։ Մեծեցաւ
Ռուբէն ընդ հօր իւրում եւ ասէ, Զեր-
կոսին զորդին իմ սպանջիր, եթէ ոչ ածից
զդա առ քեզ. տուր զդա յիմ ձեռս, եւ ես
38 ածից զդա առ քեզ։ Եւ նա ասէ, Ոչ ի-
ջանէ որդի իմ ընդ ձեզ. զի եղբայր սորա
մեռաւ, եւ սա միայն մնացեալ է. եւ ղէպ
լինիցի սմա [6]հիւանդանալ ի ճանապարհին
զոր երթայցէք, եւ իջուցանիցէք [7]զծե-
րութիւնս իմ տրտմութեամբ ի գժոխս։

[1]Նբգ. զվերկութիւն [2]Նբգ. ձերոյ վասն սովոյ տանց ձերոց [3]Նբգ. և մի՛ մեռանիջիք։ Եւ արացին
[4]Նբգ. զցորեան իւրեանց ի վերայ իշոց իւրեանց [5]Նբգ. Համարեցաւ զմեզ [6]Նբգ. վտանգ [7]Նբգ. զծերս

ԳԼ. ԽԹ

1 Եւ սոյն եւս քան զեւս սատականայր
2 ի վերայ երկրին ։ Եւ եղեւ իբրեւ սպա-
ւեցին ուտել զցորեանն զոր ըերին յերկ-
րէն Եգիպտացւոց , ասէ ցնոսա հայրն
իւրեանց , Դարձեալ երթայք գնեցէք
3 սակաւ մի կերակուր ։ Պատասխան ընդ
նմա Յուդա եւ ասէ , Վկայութեամբ եղ
ընդ մեզ վկայութիւն այրն եւ ասէ ,
Մի տեսանիցէք զերեսս իմ , եթէ ոչ եղ-
4 բայրն ձեր կրտսեր ընդ ձեզ իցէ ։ Արդ
եթէ արձակես զեղբայրդ մեր ընդ մեզ ,
5 իջցուք եւ [1]գնեցուք կերակուրս . Ապա
թէ ոչ արձակես [2]զեղբայրդ մեր ընդ մեզ՝
ոչ երթիցուք . զի այրն պատասխանի ընդ
մեզ եւ ասէ , Մի տեսանիցէք զերեսս
իմ , եթէ ոչ եղբայրն ձեր կրտսեր ընդ
6 ձեզ իցէ ։ Եւ ասէ Իսրայէլ , Զինչ չա-
րիս հասուցէք ի վերայ իմ , զի պատ-
մեցէք առնն թէ ունիցէ ձեր եղբայր ։
7 Եւ նոքա ասեն , Հարցանելով հարց
զմեզնջ այրն , եւ զազգէ մերմէ , եւ թէ
Տակաւին կենդանի՞ իցէ հայրն ձեր , եւ
եթէ իցէ՞ ձեր եղբայր . եւ պատմեցաք նմա
ըստ հարցանելոյն նորա . միթէ գիտէաք
թէ ասելոց է ցմեզ՝ Ածէք զեղբայրն
8 ձեր ։ Ասէ Յուդա ցիսրայէլ հայրն իւր ,
Արձակեա ընդ իս զպատանեակդ , եւ
յարուցեալ գնասցուք , զի կեցցուք եւ
մի՛ մեռցուք , Եւ մեք եւ դու եւ [3]ստա-
9 ուածք մեր ։ Ես առնումք զդա յերաչխի .
ի ձեռաց իմոց խնդրեսջիր զդա . եթէ
ոչ ածից զդա առ քեզ եւ կացուցից ա-
ռաջի քո , յանցաւոր [4]եղէց զամենայն
10 աւուրս ։ Զի եթէ չէաք յամեալ , արդ
11 երկիցս իսկ դարձեալ էր այսբէն ։ Ասէ
ցնոսա Իսրայէլ հայրն իւրեանց , [5]Այդ
պէս իցէ , արարէք զայդ . առէք ի պտղոց
երկրիս յամանս ձեր , եւ տարայք առնն
պատարագս , ռետին եւ մեղր եւ խունկս
12 եւ ստակն եւ բեւեռն եւ ընկոյզ . Եւ
արծաթ կրկին առէք ի ձեռս ձեր , եւ
զարծաթն որ դարձաւ յամանս ձեր՝ տա-
րայք ընդ ձեզ , գուցէ ընդ խաբս ինչ ի-
13 ցէ . Եւ զեղբայրդ ձեր առէք , եւ արիք
14 իջէք առ այրն . Եւ Աստուած [6]իմ տացէ
ձեզ չնորհս առաջի առնն , եւ արձա-
կեսցէ ընդ ձեզ զեղբայրն ձեր զմիւս
եւ զբենիամին . բայց ես որպէս ան-
զաւակեցայ , անզաւակեցայ ։
15 Եւ առեալ արանցն զպատարագն եւ
արծաթ կրկին ի ձեռս իւրեանց եւ զբե-
նիամին , յարուցեալ իջին յեգիպտոս ,
16 եւ կացին յանդիման Յովսեփայ ։ Իբրեւ
ետես [7]զնոսա Յովսէփ , եւ զբենիամին
ընդ նմա , ասէ ցհաղարապետ տանն
իւրոյ , Տար զարսդ ի տուն , եւ զնն
զենիլիս եւ պատրաստեա . զի ընդ իս
ուտիցեն արքդ այսօրիկ հաց ի մի-
17 ջօրէի ։ Եւ արար այրն որպէս եւ ասաց
Յովսէփ . եւ տարաւ ցարսն ի տուն
18 Յովսեփայ ։ Եւ տեսեալ արանցն եթէ
տարան զնոսա ի տուն Յովսեփայ , ասեն ,
Վասն արծաթիցն որ դարձաւ յամանս
մեր զառաջինն՝ մտանեմք մեք անդր
առ ի [8]խուզելոյ զմեզ , արկանել՝ ի վե-
րայ մեր , եւ առնուլ զմեզ ի ծառայս եւ
19 զէչս մեր ։ Մատուցեալ առ այրն , վե-
րակացու տանն Յովսեփայ , խօսեցան առ
20 դրանն , եւ ասեն , Աղաչեմք զքեզ , տէր ,
21 իջանք զառաջինն գնել կերակուրս . Եւ ե-
ղեւ իբրեւ հասաք յիջեւանս եւ բացաք
զամանս մեր , եւ արծաթն իւրաքանչիւր
յամանի իւրում էր . արդ զարծաթն այս-
րէն կշռով զարձուցաք , եւ աւասիկ ի ձե-
22 ռին մերում է . Եւ այլ արծաթ բերաք ընդ
մեզ , գնել՝ կերակուրս . եւ ոչ գիտեմք ո՛վ
23 եդ զարծաթն յամանս մեր ։ Եւ ասէ ցնո-
սա , Խաղաղութիւն ընդ ձեզ , մի՛ երկնչիք .
Աստուածն ձեր եւ հարցն ձերոց ետ ձեզ
գանձս յամանս ձեր . այլ իմ զձեր ար-
ծաթն առեալ եւ հաճեալ եմ ։ Եւ հանն
առ նոսա զՇմաւոն ։
24 Եւ տարաւ ի ներքս այրն զորեարն ի
տուն Յովսեփայ , եւ բերին ջուր լուա-
նալ զոտս նոցա , եւ ետ կերակուր
25 գրաստուց նոցա ։ Եւ նոքա պատրաստե-
ցին զպատարագն մինչեւ եկեալ էր
Յովսէփ ի միջօրէին . քանզի լուան թէ
26 անդ ճաշելոց է ։ Եմուտ Յովսէփ ի տուն ,
եւ մատուցին նմա զընծայսն զոր ու-
նէին ի ձեռս իւրեանց՝ ի տան անդ , եւ
երկիր պագին նմա ի վերայ երեսաց իւր-
27 եանց երկիր ։ Եհարց զնոսա եւ ասէ ,
Զի՞րդ կայք . եւ ասէ ցնոսա եթէ Ո՞ղջ
իցէ հայրն ձեր ծերունի , զորմէ ասացէք
28 թէ տակաւին կենդանի է ։ Եւ նոքա
ասեն , Ողջ է ծառայ քո հայր մեր , տա-

[1] ԵՔԲ. գնեսցուք քեզ [2] ՅԵՔԲ. պ-կ-ռ [3] ԵՔԲ. մանկունք [4] ԵՔԲ. եղէց քեզ [5] ԵՔԲ. եթէ այդ-պէս [6] ԵՔԲ. Ամենակալ

[7] ԵՔԲ. ընդ նոսա Յովսէփ զբենիամին [8] ԵՔԲ. գլորելոյ ի վերայ մեր, և անկանելոյ

կաւին կենդանի է. \և ասէ, Օրհնեալ
է այն ան յԱստուծոյ.» եւ խոնարհե-
29 ցան երկիր պագին նմա։ Ամբարձ զաչս
իւր եւ եահս զԲենիամին զեղբայր իւր
զհամամայր, եւ ասէ, Ա՞յդ է եղբայրն
ձեր կրտսեր զորմէ ասացէք ածել առ
իս. եւ ասէ, Աստուած ողորմեսցի քեզ,
30 որդեակ։ Եւ խոովեցաւ Յովսէփ, եւ
զալարէին ագիք նորա ի վերայ եղբօրն
իւրոյ, եւ խնդրէր լալ. մտեալ ի սենեակ
31 անդր եւայց։ Եւ լուացեալ զերեսս իւր
եկ, պնդեաց զանձն եւ ասէ, Արկէք
32 հաց։ Եւ արկին նմա միայնոյ, եւ նոցա
իւրաքանչիւր ուրեք, եւ Եգիպտացւոցն
որ ճաշէին ընդ նմա՝ իւրաքանչիւր առան-
ձինն. զի ոչ կարէին Եգիպտացիքն ու-
տել հաց ընդ Եբրայեցիսն, քանզի գար-
33 շելի էին Եգիպտացւոցն։ Նստաւ առաջի
նորա անդրանիկն՝ ըստ երիցութեան իւ-
րում, եւ կրտսերն՝ ըստ կրտսերութեան
իւրում. եւ զարմացեալ էին արքն իւ-
34 րաքանչիւր ընդ եղբօր իւրում։ Եւ առին
իւրեանց մասունս ի նմանէ, եւ մեծա-
ցաւ մասն Բենիամինի քան զմասունս
ամենեցուն հնգապատիկ քան զնոցայն.
արբին եւ արբեցան ընդ նմա։

Գլ. ԽԴ

4 Եւ հրամայեաց Յովսէփ հազարապետին
իւրում եւ ասէ, Լցէք զամանս արանցն
կերակրով որչափ եւ կարիցեն բառնալ,
եւ դիք զարծաթն իւրաքանչիւր ի բե-
2 րան ամանոյ իւրոյ։ Եւ զսկիհն իմ ար-
ծաթի դիջիք յամանի կրտսերոյն, եւ
զվինս ցորենոյ նորա։ Եւ եղեւ ըստ բա-
նին Յովսեփայ որպէս եւ ասաց։
3 Եւ իբրեւ առաւօտ եղեւ, արձակեցան
4 արքն, ինքեանք եւ էշք իւրեանց։ Եւ
իբրեւ ելին ըստ քաղաքն, եւ չէին
մեկնեալ ի բաց, ասէ Յովսէփ ցհազա-
րապետն իւր, Արի, պնդեաց զհետ ա-
րանցն, եւ հասցես նոցա, եւ առասցես
զնոսա, Զի՞ է զի հատուցէք չար փո-
խանակ բարեաց։ [1]Ընդէ՞ր գողացայք
5 զսկիհն արծաթի։» Ո՞չ այն էր որով ըմ-
պէր տէրն իմ, եւ նովաւ ինքն հմայե-
լով հմայէր. եւ արդ չար գործեցէք զոր
6 արարէքդ։ Եւ իբրեւ եկաց զնոսա, ասէ
7 ըստ բանիցս այսոցիկ։ Եւ նոքա ասեն
ցնա, Ընդէ՞ր խօսիցի տէր այդպիսի
բանս. քաւ լիցի ծառայից քոց առնել
8 ըստ բանիդ այդմիկ։ Զի եթէ զարծաթն
զոր գտաք յամանս մեր՝ դարձուցաք
առ ձեզ յերկրէն Քանանացւոց, զիա՞րդ
գողանայաք ի տանէ տեառն քո արծաթ
9 կամ ոսկի։ Եւ որում գտցի ի ծառայից քոց սկիհն՝ մեռցի, եւ մեք
10 եղիցուք տեառն մերում ծառայք։ Եւ նա
ասէ, Այդպէս եղիցի որպէս ասացէքդ.
առ որում գտցի սկիհն՝ եղիցի իմ ծառայ,
11 եւ դուք անպարտք լինիցիք։ Եւ փու-
թացան իջուցին զրեռն իւրաքանչիւր ի
գետին, եւ բացին իւրաքանչիւր զաման
12 իւր։ Եւ յուզեաց՝ սկսեալ յերիցուէն
մինչեւ ետն կատարեաց ի կրտսերն, եւ
եղիտ զսկիհն յամանի Բենիամինի։
13 Եւ պատառեցին զհանդերձս իւրեանց,
եւ եդին իւրաքանչիւր զրեռն իւր ի
վերայ իշոյ իւրոյ, եւ դարձան ի քա-
14 ղաքն։ Եւ եմուտ Յուդա եւ եղբարք
իւր առ Յովսէփ, մինչդեռ անդէն էր,
եւ անկան առաջի նորա ի վերայ երկրի։
15 Ասէ ցնոսա Յովսէփ, Զինչ են իրքդ
զոր արարէք. ո՞չ գիտէք թէ հմայելով
16 հմայէ այր որ իրրեւ դիս է։ Ասէ Յու-
դա, Զինչ ասացուք պատասխանի տեառն,
կամ զինչ խօսիցիմք, կամ զո՞ր իրա-
ւունս յուսանիցեմք. եգիտ Աստուած
զհանցանս ծառայից քոց. արդ ահաւիկ
կամք ծառայք տեառն մերոյ, եւ մեք եւ
17 առ որում գտաւ սկիհն գտաւ։ Եւ նա ասէ,
Քաւ լիցի ինձ առնել զբանդ զայդ.
այրն առ որում գտաւ սկիհն գտաւ՝ նա եղի-
ցի իմ ծառայ, եւ դուք ելէք ողջու-
թեամբ առ հայրն ձեր։
18 Մատուցեալ առ նա Յուդա եւ ասէ,
Աղաչեմ, տէր, խօսեսցի ծառայ քո բան
մի առաջի քո. մի բարկացիս ծառայի
19 քումմ, զի դու ես յետ Փարաւոնի։ Տէր,
դու հարցեր ցծառայս քո եւ ասացեր,
եթէ կայցէ ձեր հայր կամ եղբայր։
20 Եւ մեք ասեմք տեառն, Կայ մեր հայր
ծերացեալ, եւ մանուկ մի կրտսեր, որդի
ծերութեան նորա, եւ եղբայր նորա
մեռաւ, եւ նա միայն մնաց մօր իւրոյ,
21 եւ հայրն սիրէ զնա։ Եւ ասացեր ցծա-
ռայս քո, Իջուցէք զնա առ իս եւ [2]խնա-
22 մարկեցից նմա»։ Եւ ասացաք ցտէր,
Ոչ կարէ մանուկն թողուլ զհայր իւր.
ապա թէ թողուցու զհայրն իւր՝ մեռանի։
23 Եւ դու ասացեր ցծառայս քո, Եթէ ոչ

[1]ՅԵԲՐ. պղծեր

[2]ԵԲՐ. եդից զակն իմ ի վերայ նորա

իմանիցէ եղբայրն ձեր կրասեր ընդ ձեզ, մի յաւելցուք տեսանել զերեսս իմ։
24 Եւ եղեւ իբրեւ ելաք մեք առ ծառայ քո հայր մեր, պատմեցաք նմա զբանս
25 տեառն մերոյ։ Եւ ասէ հայրն մեր, Երթայք դարձեալ գնեցէք մեզ սակաւ
26 մի կերակուր։ Եւ մեք ասացաք Թէ Ոչ կարեմք իջանել անդր, եթէ ոչ եղբայրդ մեր կրասեր իջանիցէ ընդ մեզ, եւ ապա իջանիցեմք. զի ոչ կարեմք տեսանել զերեսս առնն, եթէ եղբայրդ մեր
27 կրասեր ընդ մեզ ոչ իցէ։ Եւ ասէ ցմեզ ծառայ քո հայր մեր, Դուք իսկ գիտէք
28 զի երկուս ծնաւ ինձ կին իմ։ Մին ել յինէն եւ [1]ասացէք Թէ գազանակուր եղեւ, եւ ոչ եւս տեսանեմ մինչեւ
29 ցայժմ։ Արդ եթէ զսա եւս առնուցուք յերեսաց իմոց, եւ պատահիցէ սմա [2]հիւանդութիւն ի ճանապարհի՝, իջուցանէք [3]զծերութիւնս իմ տրտմութեամբ
30 հանդերձ ի գժոխս։ Եւ արդ եթէ երթայցեմք առ ծառայ քո հայր մեր, եւ պատանեակս չիցէ ընդ մեզ, Եւ նորա
31 ոգին կախեալ կայ զոգոյդ. Եւ լինիցի իբրեւ ոչ տեսանիցէ ընդ մեզ զմանուկդ, վախճանիցի. եւ իջուցանիցեն ծառայք քո [3]զծերութիւնն ծառայի քո հօր մերոյ չարչարանօք հանդերձ ի
32 գժոխս։ Զի ծառայի քո առեալ է յերաշխի զմանուկդ ի հօրէ իւրմէ. ասեմ, եթէ ոչ ածից զսա առ քեզ [4]եւ կացուցից առաջի քո՝, յանցաւոր եղէց առ
33 հայր իմ զամենայն աւուրս։ Եւ արդ կայից ես ծառայ քո փոխանակ մանկանդ սորուկ տեառն իմոյ, եւ պատանեակդ ելցէ ընդ եղբարս իւր. Քանզի զիարդ ելանիցեմ առ հայրն իմ, եթէ պատանեակդ չիցէ ընդ մեզ. զի մի տեսից զչարիսն որ գտանիցին զհայրն իմ։

ԳԼ. ԽԵ

1 **Եւ** ոչ կարաց Յովսէփ ժոյժ ունել առաջի ամենեցուն որ չուրջ զնովաւն կային, [5]այլ ասէ՝, Հանէք զամենեսեսին արտաքս յինէն. եւ չկայր եւս ոք առ նմա, յորժամ եւս ծանօթս եղբարցն իւրոց։
2 Եւ ձայն [6]բարձեալ լալով հանդերձ՝ մինչ լուան եգիպտացիքն, եւ ազգ եղեւ ի
3 տուն Փարաւոնի։ Ասէ Յովսէփ ցեղբարս իւր, Ես եմ Յովսէփ. արդարեւ տակաւին կենդանի՞ իցէ հայր իմ. եւ ոչ կարէին եղբարքն նորա տալ նմա պատասխանի, զի խռովեցան յերեսաց նորա։
4 Ասէ Յովսէփ ցեղբարսն, Մօտ եւ կայք առ իս. եւ չոգան մօտ, եւ ասէ, Ես եմ Յովսէփ եղբայրն ձեր, զոր դուք
5 վաճառեցէք յԵգիպտոս։ Բայց մի՛ ինչ տրտմիք, եւ մի՛ խիստ խուսցի ձեզ զի վաճառեցէք զիս այսր. քանզի ի փրկութիւն առաքեաց զիս Աստուած առաջի
6 ձեր։ Զի այս երկրորդ աւր է սովոյն ի վերայ երկրի, եւ այլ եւս հինգ աւր՝
7 յորս ոչ լինիցի վար եւ ոչ հունձ։ Եւ զիս առաքեաց Աստուած առաջի ձեր առ ի թողուլ ձեզ զաւակ յերկրի, եւ [7]կերակրել վձեր՝ մեծաւորիս մեծամեծս։
8 Եւ արդ ոչ եթէ դուք առաքեցէք զիս այսր, այլ Աստուած. եւ արար զիս հայր փարաւոնի եւ տէր ամենայն տանն նորա, եւ իշխան ամենայն երկրին Եգիպտացւոց։
9 Արդ փութացեալ երթէք առ հայրն իմ եւ ասացէք ցնա, Այսպէս ասէ որդի քո Յովսէփ, Արար զիս Աստուած տէր ամենայն երկրիս Եգիպտացւոց. արդ նկ էջ առ իս, եւ մի՛ հեղգար.
10 Եւ բնակեսցես յերկրիս Գեսեմ՝ յԱրաբիա, եւ եղիցես մօտ առ իս, դու եւ որդիք քո եւ որդիք որդւոց քոց, եւ ոչխար քո եւ արջառ քո եւ որ ինչ քո իցէ։
11 Եւ կերակրեցից զքեզ անդ. զի այլ եւս հինգ ամ կայ սովոյս. զի մի՛ [8]սատակիցիս, դու եւ որդիք քո եւ ամենայն
12 ստացուածք քո՝։ Ահաւասիկ աչք ձեր տեսանեն եւ աչք Բենիամինի եղբօր իմոյ, զի բերան իմ խօսի ընդ ձեզ։
13 Արդ պատմեցէք հօր իմում զամենայն զփառս իմ որ են յԵգիպտոս, եւ որչափ ինչ տեսէք դուք. եւ փութացեալ ի-
14 ջուցէք զհայրն իմ այսր։ Եւ անկեալ ի վերայ պարանոցին Բենիամինի եղբօր իւրոյ ելաց, եւ Բենիամին ելաց ի վերայ
15 պարանոցի նորա։ Եւ համբուրեաց զամենայն եղբարսն իւր, եւ ելաց ի վերայ նոցա. յետ այնորիկ խօսեցան եղբարք նորա ընդ նմա։
16 Եւ հնչեաց համբաւն ի տուն Փարաւոնի, եւ ասեն, Եկին եղբարք Յովսեփու. ուրախ եղեւ Փարաւոն եւ ծա-
17 ռայք նորա։ Ասէ Փարաւոն ցՅովսէփ,

[1]ՆԲԳ. ասացի [2]ՆԲԳ. վտանգ [3]ՆԲԳ. զծերիս [4]ՅՈԻՆ ՁԵՌ. ցոյս [5]ՆԲԳ. և գոչեաց [6]ՆԲԳ. եբարձ [7]ՆԲԳ. կեցուցանել ձեզ [8]ՆԲԳ. չքաւորեսցիս դու և տուն քո և ամենայն որ ինչ քո է

Ասա ցեղբարս քո, Այսպէս արարէք. լցէք զբեռինս ձեր եւ երթայք յերկիրն
18 Քանանացւոց։ Եւ առեալ զհայրն ձեր եւ [1]զտեսացուածս ձեր՝ եկեսջիք առ իս. եւ տայց ձեզ յամենայն բարութիւնս Եգիպ-
տացւոց, եւ կերիջիք զուղիղ երկրիս։
19 Եւ [2]դու զայս հրաման տացես՝. առնուլ յերկրէս Եգիպտացւոց սայլս մանկանց եւ կանանց ձերոց, եւ առեալ զհայրն
20 ձեր ածիցէք։ Եւ մի ազահիցին աչք ձեր ի կահ ձեր, զի բարութիւն ամենայն երկրիս Եգիպտացւոց ձեզ լինիցի։
21 Եւ արարին այսպէս որդիքն Իսրայելի. եւ ետ նոցա Յովսէփ սայլս ըստ բա-
նին Փարաւոնի արքայի, եւ ետ նոցա
22 պաշար ի ճանապարհ։ Եւ ամենեցուն ետ կրկին պատմուճանս, եւ Բենիամինի ետ երիք հարեւր [3]դահեկան եւ հինգ
23 պատմուճան փոխանակս։ Եւ հօրն իւրում ետ տանել [4]նոյնպէս, տասն իշոյ լեռնիս յամենայն բարութեանց Եգիպ-
տացւոց, եւ տասն էգորի նպաստակաւոր, եւ՝ կերակուր հօրն իւրում ի ճանապարհ։
24 Եւ արձակեաց զեղբարս իւր եւ գնացին. եւ ասէ ցնոսա, Մի՛ զայրանայցէք ինչ
ի ճանապարհի։
25 Եկին յԵգիպտոսէ, եւ չոգան յերկիրն Քանանացւոց առ Յակոբ հայրն իւրեանց։
26 Եւ պատմեցին նմա եւ ասեն, Որդի քո Յովսէփ կենդանի է, եւ նա է իշխան
ամենայն երկրին Եգիպտացւոց։ Եւ [5]զարմացաւ ի միտս իւր Յակոբ՝, զի
27 ոչ հաւատայր նոցա։ Եւ խօսեցան ընդ նմա զամենայն ինչ զոր ասաց Յովսէփ. իբրեւ ետես զսայլսն զոր առաքեաց
Յովսէփ առնուլ զնա, արծարծեցաւ ո-
28 գին Յակոբայ հօր նոցա։ Եւ ասէ Իսրայէլ, Մեծ է ինձ եթէ արդարեւ տա-
կաւին կենդանի իցէ որդի իմ Յովսէփ. երթայց տեսից զնա մինչչեւ մեռանել իցեմ։

Գլ. ԽԶ

1 Յառնաց Իսրայէլ, ինքն եւ ամենայն որ
ինչ իւր էր, եւ եկն ի Ջրհորն երդման,
եւ մատոյց պատարագ Աստուծոյ հօր
2 իւրոյ Իսահակայ։ Խօսեցաւ Աստուած
ընդ Իսրայէլի ի տեսլեան գիշերոյ, եւ
ասէ, Յակոբ, Յակոբ. եւ նա ասէ,
3 [6]Ո՛վ ես՝։ Ասէ, Ես եմ Աստուած [7]հարցն
քոց՝. մի՛ երկնչիր իջանել յԵգիպտոս,
4 զի յազգ մեծ արարից զքեզ անդ։ Ես
իջից ընդ քեզ յԵգիպտոս, եւ ես հանից
զքեզ ի սպառ, եւ Յովսէփ դիցէ զձեռս
5 իւր ի վերայ աչաց քոց։ Յարեաւ Յակոբ
ի Ջրհորոյ անաթ երդման, եւ առին որդիքն
Իսրայելի զՅակոբ հայրն իւրեանց եւ
[8]զկազմած եւ զկանայս իւրեանց ի սայլսն
զոր առաքեաց [9]Յովսէփ առնուլ զնա։
6 Եւ առեալ [10]զինչս իւրեանց եւ զամենայն
ստացուածս զոր ստացան յերկրին Քա-
նանացւոց, մտին յԵգիպտոս Յակոբ եւ
7 ամենայն զաւակ նորա ընդ նմա, Որդիք
նորա եւ որդիք որդւոց նորա ընդ նմա,
դստերք նորա եւ դստերք [11]դստերաց
նորա, եւ զամենայն զաւակ իւր ած
յԵգիպտոս[12]։
8 Եւ այս են անուանք որդւոցն Իսրա-
յելի որ մտին յԵգիպտոս. Յակոբ եւ որ-
դիք իւր. անդրանիկ Յակոբու՝ Ռուբէն.
9 Եւ որդիք Ռուբենի՝ Ենովք եւ Փալլուս,
10 Ասրոմ եւ Քարմի։ Եւ որդիք Շմաւո-
նի՝ Յամուէլ եւ Յամին եւ Ասով եւ
Յաքին եւ Սահառ եւ Սաւուղ որդի
11 Քանանացւոյն։ Եւ որդիք Ղեւեայ՝ Գեր-
12 սոն եւ Կահաթ եւ Մերարի։ Եւ որդիք
Յուդայ՝ Էր եւ Աւնան եւ Սելովմ եւ
Փարէս եւ Զարա. եւ մեռան Էր եւ
Աւնան յերկրին Քանանացւոց. եւ եղեն
որդիք Փարեսի՝ Ասրոմ եւ Յամուէլ։
13 Եւ որդիք Իսաքարայ՝ Թովղա եւ Փուա
14 եւ Յասուբ եւ Զամրան։ Եւ որդիք Զա-
15 բուղոնի՝ Սերեդ եւ Սղոն եւ Էղէ։ Սո-
քա են որդիք Լիայ՝ զոր ծնաւ Յակոբայ ի
Միջագետս Ասորւոց, եւ զԴինա դստեր
նորա. ամենայն ոգիք, ուստերք եւ
16 դստերք, երեսուն եւ երիք։ Եւ որդիք
Գադայ՝ Սափոն եւ Մագիս եւ Սաւնիա
եւ Թաւսողամ եւ Ասկեղիս եւ Սրոյելիս
17 եւ Արիելիս։ Եւ սոքա են որդիք Ասերայ՝
Յեմնա եւ Յեսուա եւ Յէսուէ եւ Բարիա
եւ Սարա քոյր նոցա. եւ որդիք Բարիայ՝
18 Քոբոր եւ Մեղքիէլ։ Սոքա են որդիք
Զելփայ, զոր ետ Լաբան Լիայ դստերն
իւրում, որ ծնաւ զսոսա Յակոբայ, վի-

[1]ԵՓԲ. զընտանիս [2]ԵՓԲ. հրամայեալ քեզ
[3]ԵՓԲ. արծաթի [4]ԵՓԲ. զայս օրինակ. տասն իշոյ բեռինս ի բարութեանց Եգիպտացւոց, և տասն էշ մատակ որ բառնային ցորեան և հաց և
[5]ԵՓԲ. նուաղեցաւ սիրտ նորա
[6]ԵՓԲ. Աւասիկ եմ [7]ԵՓԲ., Աստուած հօր քո
[8]ԵՓԲ. զմանկունս [9]ԵՓԲ. Փարաւոն [10]ԵՓԲ. զանասունս [11]ԵՓԲ. որդւոց [12]ԵՓԲ՝ՅԵՒՏԷՆ յԵՒՏԷ, ընդ իւր

19 տասան [1]որդիս ։ Եւ որդիք Ռաքելայ
կնոջ Յակոբայ՝ Յովսէփ եւ Բենիամին ։
20 Եւ եղեն որդիք Յովսեփայ յերկրին Ե-
գիպտացւոց , զորս ծնաւ նմա Ասենէթ
դուստր Փետափրեայ քրմի Արեգ քաղա-
քի , զՄանասէ եւ զԵփրեմ ։ [2]Եւ եղեն
որդիք Մանասէի զոր ծնաւ նմա հարճն
Ասորի, զՄաքիր . եւ Մաքիր ծնաւ զԳա-
ղաադ ։ Եւ որդիք եփրեմի եղբօրն Մա-
նասէի՝ Սուտազաամ եւ Տաամ . եւ որդի
21 Սուտազաամայ Եզեմ" Եւ որդիք Բենիա-
մինի՝ Բագա եւ Բոքոր եւ Ասբեէ , [2]եւ
եղեն որդիք Բագայ" Դէկերա եւ Նէեման
եւ Ահաբիա եւ Ռոմա եւ Մաւիփիմ եւ
22 Ովփիմն, եւ [3]Դէկերա ծնաւ զԱդդար" ։ Սոքա
են որդիք Ռաքելի զոր ծնաւ Յակոբայ ,
23 ամենայն ոգիք [4]աւթ եւ տասն" ։ Եւ որդիք
24 Դանայ՝ Ասոմ ։ Եւ որդիք Նեփթաղեմի՝
25 Ասիել եւ Գունի եւ Ասար եւ Սեղեմ ։ Սո-
քա են որդիք Բալլայ զոր եա Լաբան Ռա-
քելի դստեր իւրում , եւ ծնաւ զսոսա
26 Յակոբայ . ամենեքին ոգիք եւթն ։ Եւ
ամենայն ոգիք որ մտին ընդ Յակոբայ
յեգիպտոս, որ ելեալ էին կերանայ նորա ,
առանց կանանց որդւոցն Յակոբայ , ա-
27 մենայն ոգիք վաթսուն եւ վեց ։ Եւ որ-
դիք Յովսեփայ որ եղեն նմա յեգիպտոս ,
ոգիք երկու . եւ ամենայն ոգիք տանն
Յակոբայ որ մտին յեգիպտոս՝ եւթանա-
սուն [2]եւ հինգ" ։
28 Եւ զՅուդա յառաջագոյն առաքեաց առ
Յովսէփ , [5]զալ նմա ընդ առաջ զԳեսեմայ
քաղաքաւն , յերկիրն Ռամեսա . եւ ինքն
29 եկն" յերկիրն Գեսեմ ։ Կազմեաց Յովսէփ
զկառս իւր , եւ ել ընդ առաջ Իսրայէլի
հօր իւրոյ [6]զԳեսեմայ քաղաքաւն". Եւ իւ-
րեւ յանգիման եղեւ նմա , անկաւ ի վե-
րայ պարանոցի նորա , եւ լայր ի լալիւն
30 մեծ ։ Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ, Մեռայց
այսուհետեւ , որովհետեւ տեսի զերեսս
31 քո զի տակաւին կենդանի ես ։ Եւ ասէ
Յովսէփ ցեղբարս իւր եւ ցտունն հօր
իւրոյ , Երթայց պատմեցից Փարաւոնի ,
[7]եւթէ եղբարք" իմ եւ տունն հօր իմոյ որ
էին յերկրին Քանանացւոց՝ եկին առ իս .
32 Եւ արք հովիւք են , եւ արք խաշնա-
գործանք են , եւ զանասունս եւ զարջառս
եւ զամենայն ինչ իւրեանց ածին այսր ։
33 Արդ եթէ կոչիցէ զձեզ Փարաւոն եւ ասիցէ
34 ցձեզ , Ջինչ գործ է ձեր , Անասնիք եթէ ,
Սիրք խաշնագործանք եմք ծառայք քո
ի մանկութենէ մինչեւ ցայժմ , եւ մեք
եւ հարք մեր . զի բնակիցէք յերկրին Գե-
սեմ . քանզի պարչելի է եգիպտացւոց
ամենայն հովիւ խաշանց ։

Գլ. ևթ

1 Եւ եկեալ Յովսէփ պատմեաց Փարաւոնի,
եւ ասէ , Հայր իմ եւ եղբարք , եւ խա-
շինք եւ առջառ նոցա , եւ ամենայն որ
ինչ նոցա , եկին յերկրէն Քանանացւոց ,
2 եւ ահա են ի Գեսեմ ։ Եւ յեղբարց անտի
իւրոց առ ընդ իւր հինգ այր , եւ կացոյց
3 զնոսա առաջի Փարաւոնի ։ Եւ ասէ Փա-
րաւոն ցեղբարսն Յովսեփա, Ջինչ գործ է
ձեր . եւ նոքա ասեն ցՓարաւոն, Հովիւք
խաշանց են ծառայք քո, եւ մեք եւ հարք
4 մեր ։ Եւ ասեն ցՓարաւոն , Պանդխտանալ
եկաք յերկրիս յայսմիկ, զի ոչ գոյր հարակ
խաշանց ծառայից քոց , քանզի սաստկա-
ցաւ սովն յերկրին Քանանացւոց. եւ արդ
բնակեսցուք ծառայք քո յերկրին ի Գե-
5 սեմ ։ Եւ խօսեցաւ Փարաւոն ընդ Յով-
սեփա եւ ասէ , Հայր քո եւ եղբարք քո
6 եկին առ քեզ . Ահա երկիրս եգիպտացւոց առաջի քո է . ի բարւոք երկրի բնա-
կեցո զհայր քո եւ զեղբարս քո . եւ բնա-
կեսցեն յերկրին ի Գեսեմ. ապա թէ գիտես
թէ իցեն ի նոսա արք զօրաւորք , կացո
զնոսա իշխանս ի վերայ խմոց խաշանց ։
7 Եւ ած Յովսէփ զՅակոբ հայր իւր , եւ
կացոյց առաջի Փարաւոնի . եւ օրհնեաց
8 Յակոբ զՓարաւոն ։ Եւ ասէ Փարաւոն
ցՅակոբ , Քանի՞ են տարք աւուրց կենդա-
9 քոց ։ Եւ ասէ Յակոբ ցՓարաւոն , Աւուրք
տարեաց կենդանի իմոց զորս պտպտեցայ՝
հասեալ եւ երեսուն տարի է . սակաւք եւ
գժուարինք եղեն աւուրք տարեաց կենդա-
10 նի իմոց , եւ ոչ հասին յաւուրս տարեաց կեն-
դանի հարց իմոց , զոր աւուրս պանդխտե-
11 ցան ։ Եւ օրհնեաց Յակոբ զՓարաւոն եւ
ել ի նմանէ ։
Եւ բնակեցոյց Յովսէփ զհայրն իւր եւ
զեղբարս իւր , եւ ետ նոցա բնակութիւն
յերկրին Եգիպտացւոց ի բարւոք երկրի ,
յերկրին Ռամեսա , որպէս հրամայեաց
12 Փարաւոն։ Եւ տայր Յովսէփ առճիկս հօրն
եւ եղբարց իւրոց , եւ ամենայն տան հօր
իւրոյ ցորեան ըստ բերան ։

---

[1]ԵԹԷ. ոգիք [2]ՅԺԷ. պ-ևթ [3]ԵԹԷ. Ադդ
[4]ԵԹԷ. չորեքտասան [5]ԵԹԷ. ցուցանել առա-
ջի իւր զԳեսեմ, և եկին [6]ԵԹԷ. ի Գեսեմ
[7]ԵԹԷ. եւ ասացից ցնա , Եղբարք

13 Եւ կերակուր ոչ զոյր յամենայն երկ-
րին, զի սաստկացաւ սովն յոյժ. եւ նուա-
զեաց երկիրն Եգիպտացւոց եւ երկիրն
14 Քանանացւոց ի սովլ անտի։ Եւ ժողո-
վեաց Յովսէփ զամենայն արծաթն գտեալ
յերկիրն Եգիպտացւոց եւ յերկիրն Քա-
նանացւոց ընդ ցորենոյն զոր վաճառէր,
[1]եւ տայր նոցա կերակուրս՝։ եւ տարաւ
Յովսէփ զամենայն արծաթն ի տուն Փա-
15 րաւոնի։ Եւ նուազեաց արծաթ յերկրէն
Եգիպտացւոց եւ յերկրէն Քանանացւոց.
եկին ամենայն Եգիպտացիք առ Յովսէփ
եւ ասեն, Տուր մեզ հաց, ընդէ՞ր մեռա-
նիմք առաջի քո. զի պակասեաց արծաթ։
16 Եւ ասէ ցնոսա Յովսէփ, Աձէք զանասունս
ձեր, եւ տաց ձեզ հաց փոխանակ անաս-
նոց ձերոց, եթէ պակասեաց արծաթ։
17 Եւ աձին զանասունս առ Յովսէփ, եւ
եւս նոցա Յովսէփ հաց փոխանակ ձիոյ
եւ փոխանակ ոչխարի եւ փոխանակ ար-
ջառոյ եւ փոխանակ իչոյ. եւ կերակրեաց
զնոսա հացիւ փոխանակ ամենայն ա-
նասնոց նոցա յամին յայնմիկ։
18 Եւ այն ամ, եւ եկին առ Յովսէփ յերկ-
րորդ ամին եւ ասեն ցնա, [2]Գուցէ սա-
տակիցիմք՝ ի տեառնէ մերմէ. եթէ որ-
ծաթ էր՝ պակասեաց, եւ եթէ խաչինք
եւ սատուաձք, առ քեզ են, տէր. եւ չէ
ինչ մնացեալ մեր առաջի տեառն, բայց
19 միայն անձինք եւ երկիրս մեր. Արդ [3]ա՛ի
մի՛՝ մեռանիցիմք առաջի քո, եւ՛ մեք,
եւ [4]երկիրս աւերեսցի՛։ սատկեր զմեզ եւ
զերկիրս մեր փոխանակ հացի, եղիցուք
մեք եւ երկիրս մեր ծառայք Փարաւոնի.
տուր սերմն [1]զի սերմանեսցուք՛, եւ կեց-
ցուք եւ մի մեռցուք, եւ երկիրս մի աւե-
20 րեսցի։ Եւ սատկաւ Յովսէփ զամենայն
երկիրն Եգիպտացւոց Փարաւոնի. քանզի
վաճառեցին Եգիպտացիքն զերկիրն իւր-
եանց Փարաւոնի, զի սաստկացաւ ի վե-
րայ նոցա սովն, եւ եղեւ երկիրն Փա-
21 րաւոնի։ Եւ զժողովուրդն [5]ծառայեցոյց
իւր ի տարուս՝, ի ծագաց սահմանաց
22 եգիպտոսի մինչեւ ի ծագս նորուն։ Բաց
յերկրէ քրմացն, զի ոչ սատկաւ զնոսա
Յովսէփ. քանզի տալով տայր պարկեաս
քրմացն Փարաւոն, եւ ուտէին զպար-
գեւսն զոր տայր նոցա Փարաւոն. վասն
այնորիկ ոչ վաճառեցին զերկիրն իւրեանց։
23 Ասէ Յովսէփ [6]ցամենայն եգիպտացիսն՝,
Ահա ստացայ զձեզ այսօր եւ զերկիր ձեր
Փարաւոնի. առէք ձեզ սերմանս եւ սեր-
24 մանեցէք զերկիրսդ։ Եւ եղիցին արդիւնք
դորա, եւ տայէք զհինգերորդ մասն Փա-
րաւոնի, եւ չորք մասունքն ձեր եղիցին
ի սերմն երկրիդ եւ ի կերակուր ձեզ եւ
ամենայն ընտանեաց ձերոց, եւ ի կերա-
25 կուր տղայոց ձերոց։ Եւ ասեն, Կեցու-
ցեր զմեզ, գտաք չնորհս առաջի տեառն
մերոյ, եւ եղիցուք ծառայք Փարաւոնի։
26 Եւ եղ նոցա օրէնս Յովսէփ մինչեւ ցայս-
օր յերկրին Եգիպտացւոց՝ հինգերորդիկ
Փարաւոնի, բայ յերկրէ քրմացն որ չէր
Փարաւոնի։
27 Եւ բնակեաց Իսրայէլ յերկրին Եգիպ-
տացւոց յերկրին ի Գեսեմ. եւ ժառան-
գեցան ի նմա, եւ աճեցին եւ բազմա-
ցան յոյժ։
28 Եւ եկեաց Յակոբ յերկրին Եգիպտա-
ցւոց ամս եւթն եւ տասն, եւ եղեն աւուրք
Յակոբայ ամայ կենացն նորա հարեւր եւ
29 քառասուն եւ եւթն ամ։ Եւ մերձեցան
աւուրք Իսրայէլի մեռանելոյ, եւ կոչեաց
զորդի իւր զՅովսէփ եւ ասէ ցնա, Եթէ
գտի չնորհս առաջի քո, դիր զձեռն քո
ընդ երանօք իմով, եւ արասցես ի վե-
րայ իմ ողորմութիւն եւ ճշմարտութիւն,
30 չթաղել զիս յԵգիպտոս. Այլ ննջեցից ընդ
հարսն իմ, եւ բարձցեն զիս յԵգիպտոսէ,
եւ թաղեսցեն զիս ի գերեզմանի նոցա։
Եւ նա ասէ, Ես արարից ըստ բանի քումմ։
31 Եւ ասէ, Երդուիր ինձ. եւ երդուաւ նմա։
Եւ երկիր եղաւ Իսրայէլ ի վերայ գլխոյ
[7]գաւազանի իւրոյ՝։

ԳԼ. ԽՀ

1 Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ ազդ եղեւ
Յովսեփայ եթէ Յակոբ հայր քո նեղեալ
է. եւ [8]առեալ Յովսեփայ՝ զերկուս որ-
գիսն իւր ընդ իւր, զՄանասէ եւ զԵփրեմ,
2 [1]ելին առ Յակոբ։՝ Ազդ եղեւ Յակոբայ
եւ ասեն, Ահա որդի քո Յովսէփ գայ առ
քեզ. եւ զօրացաւ Իսրայէլ եւ նստաւ
3 ի մահիճս։ Եւ ասէ Յակոբ ցՅովսէփ, Ա-
տուած [9]իմ երեւեցաւ ինձ ի Լուզ, յերկրին
4 Քանանացւոց. օրհնեաց զիս. Եւ ասէ
ցիս, Ահա ես աճեցուցից զքեզ, եւ բազ-
մացուցից զքեզ, եւ արարից զքեզ ի ժո-

[1] 3Եբէր. պ-ղ-ե [2] Եբէր. Մի՛ ինչ թաքուսցուք
[3] Եբէր. ընդէ՞ր [4] Եբէր. երկիր մեր [5] Եբէր. փո-
խեաց ի քաղաքս
[6] Եբէր. ցժողովուրդն [7] Կամ. մահճացն (Տես ԳԼ.
ԽՀ. 2) [8] Եբէր. Յովսէփ առ [9] Եբէր. Ամենակալ

զովս ազգայ. եւ տայ [1]քեզ զերկիրս զայս՝
5 ի ժառանգութիւն յաւիտենական։ Արդ
երկու որդիք քո որ եղեն ցեղիպտոս մինչ-
չեւ եկեալ էր իմ ցեղիպտոս՝ իմն են, Եփրեմ
եւ Մանասէ իբրեւ զՌուբէնն եւ զՇմաւոն
6 եղիցին ինձ։ Եւ այլ ծնունդք զոր ծնա-
նիցես յետ [2]այսորիկ՝ քեզ եղիցին. յա-
նուն եղբարց իւրեանց կոչեսցին ի նոցա
7 ժառանգութիւնս։ Եւ ես յորժամ գայի ի
Միջագետաց Ասորւոց, մեռաւ [3]մայր քո՝
Ռաքէլ յերկրին Քանանացւոց, [4]ի միջոն-
նալ ինձ յաւպարէզ երկրին Քարրաթայ,
ի գալն՝ ցԵփրաթա. եւ թաղեցի զնա
[5]յերկրի ասպարիսին՝ այն է Բեթղեհեմ։
8 Իբրեւ եւս Իսրայէլ զորդիսն Յով-
9 սեփայ, ասէ, Զինչ են սոքա քո։ Ասէ
Յովսէփ ցհայրն իւր, Որդիք իմ են զոր
ետ ինձ Աստուած աստ. եւ ասէ Յա-
կոբ, Մատո առ իս զդոսա, զի օրհնեցից
10 զդոսա։ Եւ աչք Իսրայէլի ծանրացեալ
էին ի ծերութենէ անտի, եւ ոչ կարէր
տեսանել. եւ մատոյց զնոսա առ նա,
եւ համբուրեաց զնոսա, եւ ի գիրկս իւր
11 առ զնոսա։ Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ,
[6]Ահա յերեսաց քոց ոչ կարօտ եղէ, եւ՝
եցոյց եւս ինձ Աստուած զզաւակ քո։
12 Եւ եհան զնոսա Յովսէփ ի ծնդաց նորա
եւ [7]երկիր պաղին նմա ի վերայ երեսաց
13 իբրեանց՝ յերկիր։ Եւ առեալ Յովսե-
փայ զերկուս որդիսն իւր, զԵփրեմ
ընդ աջմէ՝ ի ձախմէ Իսրայելի, եւ զՄա-
նասէ ի ձախմէ՝ յաջմէ Իսրայելի, մա-
14 տոյց զնոսա առ նա։ Եւ ձգեալ Իսրա-
յելի զաջ ձեռն իւր՝ արկ զղլխովն Եփրե-
մի, եւ նա էր կրտսեր, եւ զձախն՝ զղլե-
խովն Մանասէի, եւ փոփոխեալ [8]զձեռն,
15 զի Մանասէ էր անդրանիկ։ Եւ օրհնեաց
[9]զնոսա եւ ասէ, Աստուած, որում հա-
ճոյ եղեն հարքն իմ առաջի նորա, Աբ-
րահամ եւ Իսահակ, Աստուած՝ որ կե-
րակրէ զիս ի մանկութենէ իմմէ մինչեւ
16 ցայսօր, Հրեշտակն որ փրկեաց զիս
յամենայն չարեաց, օրհնեսցէ զմանկունս
զայսոսիկ, եւ կոչեսցի ի սոսա անուն
իմ եւ անուն հարց իմոց, Աբրահամու
եւ Իսահակայ, եւ օրհնեացին ի բազմու-
17 թիւն յոյժ ի վերայ երկրի։ Եւ տեսեալ
Յովսեփայ եթէ արկ հայրն զաջ իւր
զղլխովն Եփրեմի, ծանր թուեցաւ նմա.
եւ օգնեալ Յովսէփ ձեռն հօրն իւրոյ,
հանել զնա ի զղլխոյն Եփրեմի ի զլուխն
18 Մանասէի։ Ասէ Յովսէփ ցհայրն իւր, Ոչ
այդպէս է, հայր. քանզի սա է անդրանիկ.
19 դիր զաջ քո ի վերայ զլխոյ սորա։ Եւ ոչ
կամեցաւ հայրն նորա, այլ ասէ, Գիտեմ
որդեակ, գիտեմ. եւ դա եղիցի ի ժողո-
վուրդ, եւ դա բարձրասցի. այլ եղբայրն
փոքր կրտսեր՝ եղիցի մեծ քան զդա, եւ
զաւակ սորա եղիցի ի բազմութիւն ազ-
20 գաց։ Եւ օրհնեաց զնոսա յաւուր յայն-
միկ, եւ ասէ, [10]Ի ձեզ օրհնեսցի՝ Իս-
րայէլ. ասացեն, Թէ Արասցէ զքեզ Ա-
ստուած իբրեւ զԵփրեմ եւ զՄանասէ. եւ
եդ զԵփրեմ յառաջ քան զՄանասէ։
21 Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ, Ես աւասիկ
մեռանիմ, եւ Աստուած եղիցի ընդ ձեզ
եւ դարձուացէ զձեզ յերկիրս հարցն ձերոց։
22 Եւ ես տուի քեզ [11]զՍիկիմ սեպհական,
սրտաքոյ եղբարց քոց՝, զոր առի ի ձեռաց
Ամովրհայեցւոց սրով իմով եւ աղեղամբ։

Գլ. ԽԹ

1 Կոչեաց Յակոբ զորդիսն իւր եւ ասէ,
Ժողովեցարուք, զի պատմեցից ձեզ ինչ,
որ պատահիցէ ձեզ ի վախճանի աւուրց։
2 Ժողովեցարուք, եւ լուարուք, որդիք Յա-
կոբայ. լուարուք Իսրայէլի հօր ձերում։
3 Ռուբէն, անդրանիկ իմ, դու զօրու-
թիւն իմ եւ սկիզբն [12]որդւոց իմոց,
խառնութեամբ գնացեր եւ խառնութեամբ
4 յանդգնութեամբ թշնամանեցեր։ Իբրեւ
զջուր մի եռասցես՝. զի ելեր յանկողինս
հօր քո, յայնժամ պղծեցեր. [13]զանկո-
ղինս յոր ելեր՝։
5 Շմաւոն եւ Ղեւի եղբարք. [14]կատարե-
ցին զանիրաւութիւնն ի կամաց իւրեանց՝։
6 Ի խորհուրդս նոցա մի՛ մտցէ անձն իմ,
եւ ի ժողովս նոցա ոչ հաճեսցին միտք
իմ. զի սրտմտութեամբ իւրեանց սպա-
նին զարս, եւ ցանկութեամբ իւրեանց
7 կարթակոտոր արարին զցուլս։ Անի-
ծեալ սրտմտութիւնն նոցա, զի յանդուգն

---

[1] ՆԵՔԵ. զերկիրս զայս զաւակի քումմ յետ քո
[2] ՆԵՔԵ. Նոցա [3] ՅՈՒՆԵՔԵ. առընթեր ինձ [4] ՆԵՔԵ. ի ճանապարհին, մինչ էր տակաւին վայր ի մտա-
նել [5] ՆԵՔԵ. անդ ի ճանապարհին Եփրաթայ
[6] ՆԵՔԵ. Ոչ ակն ունէի տեսանել զերեսս քո, և ահա
[7] ՆԵՔԵ. երկիր եպագ ի վերայ երեսաց իւրոց
[8] ՆԵՔԵ. զձեռան խորհրդով [9] ՆԵՔԵ. զՅովսէփ
[10] ՆԵՔԵ. Ի քեզ օրհնեսցէ [11] ԿԱՄ. մեռս եւս բաժին, ի վերայ եղբարց քոց
[12] ՆԵՔԵ. զօրութեան իմոյ, առաւելութիւն բարձ-
րութեան և առաւելութիւն մեծութեան։ (4) Եռացեր իբրեւ զջուր, մի՛ առաւելցուս
[13] ՅՈՒՆԵՔԵ. . յանկողի՛նս իմ եւ [14] ՆԵՔԵ. անօթք ա-
նիրաւութեան՝ սուսերք նոցա

էր. եւ ասութիւն նոցա, զի խիստ էր. բաժանեցից զնոսա ի մէջ Յակոբայ, եւ ցրուեցից զնոսա ի մէջ Իսրայէլի։
8 Յուդա, զքեզ օրհնեսցեն եղբարք քո. ձեռք քո ի վերայ թիկանց թշնամեաց քոց. երկիր պագցեն քեզ որդիք հօր
9 քո։ Կորիւն առիւծու Յուդա. [1]ի չաւառաւիղէ եկեր, որդեակ իմ. եկեր բազմեցար, ննջեցեր իբրեւ զառիւծ եւ իբրեւ զկորիւն առիւծու. ո՞ յարուցանէ զնա։
10 Մի պակասեսցէ իշխան ի Յուդայ, եւ մի պետ յերանաց Նորա, մինչեւ [2]եկեսցէ նմա հանդերձեալքն՝, եւ նա է ակնկա-
11 լութիւն հեթանոսաց։ Կապեսցէ զորթոյ զյաւանակ իւր, եւ զղնդակէն՝ զյաւանակ իչոյն. լուասցէ պինդով զպատմուճան իւր, եւ արեամբ խաղողոյ զհանգերձս
12 իւր։ Զուարթագին են աչք նորա ի գինւոյ եւ սպիտակ առամունք իւր քան զկաթն։
13 Զաբուղոն յեզերս ծովու լինակեսցէ, եւ ինքն նաւահանգիստ նաւաց, եւ ձգեսցի մինչեւ ի Սիդոն։
14 Իսաքար [3]բարւոյ ցանկացաւ՝, հան-
15 զուցեալ ի մէջ [4]վիճակաց. Տեսանէ զհանգիստն զի գեղեցիկ էր, եւ զերկիրն զի պարարտ էր, եղ զուս իւր յաչխատանէ, եւ եղեւ [5]այր արդիւնաբար՝։
16 Դան դատեսցէ զժողովուրդ իւր իր-
17 բեւ [6]զմի այր ի մէջ՝ Իսրայէլի։ Եւ եւ դիցի Դան օձ [7]գարանակալ ի ճանապարհի՝, հարկանել զձարչապար երիվարի, եւ
18 ընկենուլ զհեծեալն յետս։ [8]Եւ մնալ
19 փրկութեան Տեառն՝։ [9]Գադ հինի ելցէ՝, եւ ինքն ելցէ հինիւ զհետ Նոցա։
20 Ասերայ պարարտ հաց իւր, եւ ինքն տացէ կերակուր իշխանաց։
21 Նեփթաղիմ [10]ծառ բարձրացեալ, աձեցուցանել արմատօք, զղեցուցանել արմտեօք զղեղեցկութիւն։
22 Որդեակ աճեցեալ Յովսէփ, որդեակ աճեցեալ նախանձելի. որդեակ իմ մա-
23 տաղ, առ իս գարձիր։ Զոր բանսարկուք բամբասէին եւ գատափոյտ առնէին, եւ
24 սխտային ընդ նմա արք ազեղանց։ Եւ փչրեցան զօրութեամբ ազեղունք իւրեանց, եւ լուծան չիղք բազկաց նոցա ձեռամբ Հզօրին Յակոբայ. անտի որ զօ-
25 րացոյց զԻսրայէլ, ՅԱստուծոյ հօրն քո, եւ օգնեաց քեզ Ամենակալ իմ, եւ օրհնեաց զքեզ օրհնութիւն երկնից ի վերուստ, եւ զօրհնութիւն երկրի՝ ի ամենայնի. վասն օրհնութեանց առանց եւ
26 արգանդի։ Օրհնութեանց հօր քո եւ մօր քո, որ զօրացան քան զօրհնութիւնս լերանց մշտնջենաւորաց, եւ քան զօրհնութիւնս բլրոց յաւիտենականաց. եղիցի ի վերայ գլխոյ Յովսեփայ, եւ ի վերայ գլխոյ եղբարցն որոց առաջնորդեաց։"
27 Բենիամին գայլ յափշտակող, զայգուձն գեռ եւս ուտիճ, եւ առ երեկս բաշխիցէ [11]կերակուրս։
28 Ամենեքեան սոքա [12]որդիք Յակոբայ՝ ազգք" երկոտասան. եւ այս է զոր խօսեցաւ ընդ նոսա հայրն իւրեանց, եւ օրհնեաց զնոսա. իւրաքանչիւր ըստ օրհնութեան իւրում օրհնեաց զնոսա։
29 Եւ պատուիրեաց Նոցա եւ ասէ ցնոսա, Ես յաւելումս առ Ժողովուրդ իմ. թաղեցէք զիս ընդ հարս իմ յայրն անդ որ է
30 յադարակին Եփրոնի Քետացւոյ. Յայրին որ յանգի անդ է, [13]ի կրկնուած, յանգիման Մամբրէի յերկրին Քանանացւոց՝ զոր առաքեալ Աբրահամ [14]զայրն յԵփրոնէ Քետացւոյ ի սեպհական չիրմի։
31 Անդ թաղեցին զԱբրահամ եւ զՍառա զկին նորա. անդ թաղեցին զԻսահակ եւ զՌեբեկա կին նորա. անդ [15]թաղե-
32 ցին զԼիա։ Ի սեպհականէն եւ այրին որ է ի նմա առ ի յորդւոցն
33 Քետացւոյ։ Եւ դադարեաց Յակոբ ի պատուիրելոյ որդւոցն իւրոց, եւ առեալ զոտս իւր անդրէն ի մահիճն՝ պակասեաց, եւ յաւելաւ առ ժողովուրդ իւր։

---

[1]ՆԲԷ. յաւարէ [2]ՆԲԷ. եկեսցէ Սիլով [3]ՆԲԷ. էշ ուժեղ [4]Կամ, գոմից [5]ՆԲԷ. հարկատու ծառայ [6]ՆԲԷ. զմին ի ցեղից [7]ՆԲԷ. ի ճանապարհի եւ իժ յուղտոջ [8]ՆԲԷ. Սպասեցի փրկութեան քումմ, Տէր [9]ՆԲԷ. Գադ՝ ելցէ ի նա հէն [10]ՆԲԷ. եղն արձակեալ, որ տայ բանս գեղեցկութեան։ (22) Յովսէփ շառաւիղ պտղատու, շառաւիղ առ աղբեր. դստերք (ոստք) նորա ելանեն զորմով։ (23) Աղեղնաւորք դառնացուցին զնա, նետահիգ լինէին և առէին ընդ նա։ (24) Այլ ա-

ղեղն նորա բնակեաց ի հաստի, և զօրացան բազուկք ձեռաց նորա ի ձեռաց Հզօրին Յակոբայ։ Անտի հովիւն, վէմ Իսրայէլի։ (25) ՅԱստուծոյ հօրն քո, և նա օգնեսցէ քեզ, Յամենակալէն՝ և նա օրհնեսցէ զքեզ, օրհնութիւն երկնից ի վերուստ, օրհնութիւնք անդնդոց որ ընկողմանին ի ներքոյ. օրհնութիւնք ստեանց և արգանդի։ (26) Օրհնութիւնք հօր քո զօրացան քան զօրհնութիւնս ծնանելեաց լմոց մինչեւ ի կատար բլրոց յաւիտենականաց. եղիցի ի գլուխ Յովսեփայ, ի գագաթան սքանչելոյն եղբարց իւրոց։ [11]ՆԲԷ. կողոպուտս [12]ՆԲԷ. ազգք Իսրայէլի [13]ՆԲԷ. ի Մաքփելա [14]ՆԲԷ. զարան [15]ՆԲԷ. Թաղեցի

Գ Լ . Ծ

1 Եւ անկաւ Յակոբ ի վերայ երեսաց հօր իւրոյ երաց գնա , եւ համբուրեաց գնա ։
2 Եւ հրամայեաց նա Յակոբ ծառայից իւրոց [1]զիաղարդաց պատկ գնային իւր . եւ
3 պատեցին [2]զիապատիկքն գիսրայէլ ։ Եւ էլան նորա աւուրք քառասուն, զի այսպէս թուէին աւուրք [3]թաղելոց. եւ սուգ առ վասն նորա Եգիպտոս աւուրս եւ-
4 թանասուն ։ Եւ իրրեւ անցին աւուրք սգոյն , խօսեցաւ Յակոբ ընդ [4]իշխանսն Փարաւոնի եւ ասէ , եթէ գտի շնորհս առաջի ձեր , խօսեցարուք ընդ Փարաւոնի եւ ասացէք , Հայր իմ երդմնեցոյց զիս եւ ասէ , Անաւասիկ ես մեռանիմ . ի
5 գերեզմանի զոր փորեցի ես ինձ յերկրին Քանանացւոց , անդ թաղեսցես զիս. արդ եկեալ թաղեցից գհայրն իմ , եւ եկից ։
6 Եւ ասէ Փարաւոն , Ել թաղեսա գհայր քո , որպէս եւ երդմնեցոյց զքեզ ։
7 Եւ ել Յակոբ թաղել գհայր իւր . ել ընդ նմա եւ ամենայն ծառայք Փարաւոնի , եւ ծերք տան նորա եւ ամենայն
8 ծերք երկրին Եգիպտացւոց ։ Եւ ամենայն տունն Յակոբայ եւ զաւրաբք նորա , եւ ամենայն հայրենի բնակութիւն նորա . եւ զաղգատոհմ եւ զոչխար եւ զարջառ թողին յերկրին ի Գե-
9 սեմ։ ելին ընդ նմա եւ կառք եւ հնձանաք,
10 եւ եղեն բանակ մեծ յոյժ ։ Եւ հասին ի կալն Ատադայ , որ է յայնկոյս Յորդանանու . եւ կոծեցան գնա անդ կոծ մեծ եւ սաստիկ յոյժ . եւ արար հօր իւրում
11 սուգ զեօթն օր ։ Տեսին բնակիչք երկրին Քանանացւոց զսուգն ի կալն Ատադայ , եւ ասեն , Սուգ մեծ է Եգիպտացւոց . վասն այնորիկ կոչեաց զանուն նորա Սուգ Եգիպտոսի , որ է յայնկոյս Յորդա-
12 նանու ։ Եւ արարին նմա այնպէս որդիքն Իսրայէլի , որպէս պատուիրեաց
13 նոցա ։ [5]Բարձին գնա եւ թաղեցին գնա անդ ." եւ տարան գնա որդիքն իւր յերկիրն Քանանացւոց , եւ թաղեցին յայրին [6]կրկնուհ , զոր գնացաւ Աբրահամ ի սեպհականութիւն գերեզմանի
14 յանդիման Մամբրէի ։ Եւ դարձաւ Յովսէփ յԵգիպտոս , ինքն եւ եղբարք իւր, եւ ամենեքեան որ ելեալ էին ընդ նմա թաղել գհայրն նորա ։
15 Իրրեւ տեսին եղբարքն Յովսեփայ եթէ մեռաւ հայրն նոցա , ասեն , Գուցէ ոխս ունիցի ընդ մեզ Յովսէփ , եւ հատուսցանիցէ մեզ հատուցումն զամենայն
16 չարեացն զոր անցուցաք ընդ նմա ։ [7]Եկին առ Յովսէփ եւ ասեն , Հայր քո [8]երդմնեցոյց զմեզ" մինչչեւ վախճանեալ էր
17 նորա , ասէ , Այսպէս ասասջիք ցՅովսէփ . Թողցես [9]գոցա գյանցանսն եւ գմեղս իւրեանց , զի չարիս անցուցին ընդ քեզ . եւ արդ ներեա յանցանսդ ծառայից Աստուծոյ հօր քո ։ Եւ լայ Յովսէփ վասն բանիցն զոր խօսեցան
18 ընդ նմա ։ Եւ եկեալ առ նա եղբարսն իւրոց՝ անկան առաջի նորա եւ ասեն ,
19 Անաւասիկ մեք ծառայք քո եմք ։ Եւ ասէ ցնոսա Յովսէփ, Մի երկնչիք, [10]քան-
20 զի եւ ես Աստուծոյ եմ"։ Դուք խորհեցարուք զինէն ի չարութիւն , եւ Աստուած խորհեցաւ [5]վասն իմ" ի բարութիւն . [11]որպէս եղեւ իսկ յաւուր յայսմիկ , [12]զի կեցուսցէ" ժողովուրդ բա-
21 զում ։ Եւ ասէ ցնոսա , Մի երկնչիք , ես կերակրեցից զձեզ եւ զտունս ձեր ։ Եւ մխիթարեաց զնոսա , եւ սփոփեաց
22 զսիրտս նոցա ։ Եւ բնակեաց Յովսէփ յԵգիպտոս , ինքն [5]եւ եղբարք իւր ," եւ ամենայն հայրենի տուն հօր իւրոյ . եւ եկեաց Յովսէփ ամս հարիւր եւ տասն ։
23 Եւ տեսս Յովսէփ զորդիս Եփրեմի մինչեւ յերրորդ ազգ . եւ որդիք Մաքիրայ որդւոյ Մանասէի ծնան յծունգս Յովսէ-
24 փայ ։ Եւ խօսեցաւ Յովսէփ ընդ եղբարս իւր եւ ասէ , Ես սաստիկ մեռանիմ . այցելութեամբ այց արասցէ ձեզ Աստուած, եւ հանիցէ զձեզ յերկրէս յայսմանէ յերկիրն զոր երդուաւ Աստուած տալ հարցն մերոց Աբրահամու , Իսահակայ եւ Յա-
25 կոբայ ։ Եւ երդմնեցոյց Յովսէփ զորդիսն Իսրայէլի եւ ասէ , Ցայցելութիւնն յորում այց առնիցէ ձեզ Աստուած՝ հանջիք եւ զիմ ոսկերս աստի ընդ ձեզ ։
26 Եւ վախճանեցաւ Յովսէփ ամաց հարեւր եւ տասնից . եւ [13]թաղեցին գնա , եւ եղեն գնա ի տապանի յԵգիպտոս ։

---

[1]Եբր. լժշկաց [2]Եբր. լժիշկսն [3]Եբր. պատեալց [4]Եբր. սան [5]Եբր. դուռ [6]Եբր. Մաքփելայ [7]Եբր. Առաքեցին [8]Եբր. պատուիրեաց մեզ [9]Եբր. եղբարց քոց Աստուծոյ հօրեմ ես [10]Եբր. միթէ փոխանակ [11]Եբր. առնել՝ որպէս [12]Եբր. կեցուցանել [13]Եբր. պատեցին

ԳԼՈՒԽՔ ԵԼԻՑՆ (*)

	Գլ.	Համ.
Թուէ զանկաւուԹիւն մտելոցն յԵգիպտոս, որք ըստ խոստմանն Աստուծոյ ածեցին յանԹիս բազմուԹիւն,	Ա.	1
Թէ յետ վախճանին Յովսեփայ նեղէին Եգիպտացիքն զԻսրայէլ ի շինուածս քաղաքաց և ի գործս դաշտաց,	Ա.	8
Թէ Հրաման ետ Փարաւոն մանկաբարձացն սպանանել ի ծնունդն զարուն Իսրայէլի, յորմէ վրիպեալ՝ Հրամայեաց զծնեալ արուսն ի գետ ընկենուլ,	Ա.	15
Վասն ծննդեանն Մովսիսի և գեղեցկեց լինելոյ և հանելոյ զնա գետէն Փարաւոնի,	Բ.	1
Զի սպան Մովսէս զզրկիչ Եգիպտացին, եւ ընդ սյնր գաւազանս կրեալ յիւրայոցն՝ փախեաւ ի Մադիամ,	Բ.	11
Ուր եւ առ ջրհորի անդ առաքինացեալ՝ չեթող զրկել հովուացն զդստերսն Հառագուելայ քրմի. և սմին վասն փեսայացեալ քրմին՝ ծնանէր որդիս,	Բ.	15
Թէ լուաւ Աստուած զողոք չարչարանացն Իսրայէլի, և յայտնեալ Մովսիսի ի Քորէբ հրով ասկ, Երթ Հան զժողովուրդն, և ես եղէց ընդ քեզ,	Բ.	23
Հրաման առնու Մովսէս ասել առ ժողովուրդն Թէ Որ Էն, Աստուածն Աբրահամու, առաքեաց զիս առ ձեզ,	Գ.	11
Հրաման առնու և առ Փարաւոն զարժանն,	Գ.	18
Զի ի վերայ երից նշանացն, այս է՝ գաւազանին եւ գունափոխութեան ձեռինն եւ որակութեան ջրոյն, զի դեռ հրաժարէը, զԱհարոն ևս տայ նմա ի գործակցութիւն,	Դ.	1
Զի ի գնալ նորա սպառնացաւ հրեշտակն, մինչեւ դարձոյց անդրէն զկինն և զորդիսն,	Դ.	19
Հրամանաւ Աստուծոյ գայ Ահարոն ընդառաջ Մովսիսի. և մտեալ նոցա ի ժողովուրդն՝ առնէ նշանս Մովսէս, և ուրախ եղեւ ժողովուրդն,	Դ.	27
Մատանեն առ Փարաւոն Հրամանաւ Աստուծոյ, եւ նա ըմբռոստանայ, և ծանրացուցանէ զչարչարանսն Իսրայէլի,	Ե.	1
Բողոքեաց ժողովուրդն դառնապէս, և Մովսէս դարձաւ առ Տէր, և եկն ի Տեառնէ խոստմամբ, և ոչ անաց նմա ժողովուրդն կարճամիտ,	Ե.	19
Կնքէ Հաւաստեաւ Թէ անվրէպ կատարի Հրաման ելիցն Իսրայէլի ի ձեռն Մովսիսի և Ահարոնի որք ի տանէն Ղեւեայ, Եւ ի տարակուսեն դեռ Մովսիսի, աստուած ևս դնէ զնա Փարաւոնի, զօրանալ նշանս և հանել զԻսրայէլ,	Զ.	10
Որպէս Թուեաց զազգն նախ վասն աստուգութեան, Թուէ եւ զժամանակ տիոցն Մովսիսեանց, որոց Հրաման տայ Տէր առ Փարաւոն գործել սքանչելիս,	Է.	7
Դառնայ յօձ գաւազանն Մովսիսի, եւ կլանէ զառաջօք օձակերպ գաւազանս կախարդացն՝ ի նշանակ կորըստեան նոցա,	Է.	10
Սկիզբն առնէ տանջել զԵգիպտոս, եւ դարձուցանէ զջուրսն յարիւն՝ վասն արեանն անմեղ տղայոցն զորս հեղ ձուցին ի գետն,	Է.	14
Երկրորդ տանջանք՝ գորտն, զի զազիրք և բորբոսալք էին չարեօք,	Ը.	1
Երրորդ հարուած՝ մուխն, խոշտանգիչ մարմնոյն բարուց եւ կծուակիծ բանից նոցա,	Ը.	16
Չորրորդ հարուած՝ չանճանճն, չնաբարոյ կնամոլեացն,	Ը.	20
Հինգերորդ՝ մահ անասնոցն, անբանաբար յոխորտացելոցն,	Թ.	1
Վեցերորդ հարուած՝ եռացեալ կեղն խաղաւարտ, խոյտառակիչ դիւթականն չար խորհրդոց,	Թ.	8
Եւթն հարուած՝ կարկուտն հրախառն, ամբարտաւան ցրտացելոցն ի սիրոյն Աստուծոյ,	Թ.	13
Ութերորդ պատուհաս՝ մարախն, ապականիչ պտղոց, զպլլոց արարս յափշտակողացն,	Ժ.	1
Իններորդ՝ խաւարն Թանձրամած, կրեփիչ խաւարելոցն կամոյս Թեամբ, և հրաւէր նոցին հանդերձեալ անյոյծ խաւարին,	Ժ.	21
Հրաման առնու Մովսէս պատուէր տալ որդւոցն Իսրայելի ի տաներորդումն աւուր ամենայն առաջնոյ պատրաստել զոչխարն ի զատիկ, սյլովք եւս նշանաւք ի խորհուրդ Փրկչին,	ԺԲ.	1
Թէ ըստ Հրամանին Տեառն պատուիրեաց Մովսէս ի չորեքտասան աւուր ամսոյն ղենուլ զզատիկն, և շաղախել արեամբն զսեամն դրանցն. զոր եւ արարին այնպէս,	ԺԲ.	21
Տասներորդ Հարուած՝ մահ անդրանկացն Եգիպտացւոց, յորմէ զարհուրեալ Փարաւոն Հրամանն ետ ելանել որդւոցն Իսրայելի,	ԺԲ.	29
Թէ ելին որդիքն Իսրայելի յԵգիպտոսէ գիշերի առանց խմորոյ, կողոպտեալ զնգիպտացիսն. եւ և խառնիճաղջուճճ բազում յօտար ազգաց ընդ նոսա,	ԺԲ.	34
Պատուիրէ զի անթլփատն մի՛ կերիցէ զգառն զատկին, որպէս և չեւ և		

(*) Բովանդակութիւն գլխոց պակասէն յԵբբայեցւոյն

	Գլ.	Համ.
մկրտեալն զՀոգեւոր գառնն Աստուծոյ ։	ԺԲ.	43
Զգուշացուցանէ դարձեալ ի խմորոյ, և հաստատէ զօրէնս զատկին. եւ խնդրէ ինքեան զանդրանիկս մարդոյ և դոնաստոց ։	ԺԳ.	1
Թէ երբարձ Մովսէս զոսկերսն Յովսեփու ։ Եւ զի սեամբ հրոյ և ամպոյ առաջնորդէր նոցա Աստուած ընդ ճանապարհս Կարմիր ծովուն ։	ԺԳ.	17
Թէ ել Փարաւոն զհետ Իսրայելի պատրաստութեամբ կառաց և զօրաց, յորոց զարհուրեալ Իսրայէլ. եւ պաշտպանեալ նոցա Աստուածոյ անյրպետեաց ամպովն ի մէջ երկոցունց, և հրամայեաց Մովսիսի բաժանել զծովն, ընդ որ էանց Իսրայէլ ։	ԺԴ.	5
Մտեալ Եգիպտացիք զհետ նոցա՝ հեղձան ի ջուրսն, որպէս Բանասարկուն ի գետ Յորդանիս սուրբ աւազանին ։	ԺԴ.	23
Թէ մեծ փրկութեամբն հաւատաց Իսրայէլ, և երգեաց Աստուածոյ զօրհնութիւնս յաղթականս ։	ԺԴ.	31
Զի քաղցրացոյց փայտիւ զդառն ջուրս Մեռային, որպէս Փրիստոսիւ և խաչիւն զընութիւնս ։	ԺԵ.	22
Եկին Յեղիմ, ուր երկոտասան աղբեւրքն եւ սրմաւենիք ի ցոյց խորհրդոյ, Թէ յետ դառն վշտաց հասանէ մխիթարութիւն. ևս և ի տիպ երկոտասան և եւթանասուն սուրբ առաքելոցն վարդապետութեան ։	ԺԵ.	27
Ի հնգետասաներորդ աւուր երկրորդի ամսեանն տրտնջեցին, և ետ նոցա Տէր զլորամարգն եւ զմանանայն չափով ըստ աւուր աւուր ։	ԺԶ.	1
Սկիզբն օրինադրութեան աւուրն շաբաթու ։	ԺԶ.	23
Հրամայէ ինուլ չափով զմանանայն ի սափոր ոսկի, եւ դնել ի պահեստ ի յիշատակ սքանչիցն եւ ի խորհուրդ Կուսին ։	ԺԶ.	32
Հասեալք յՈւփիդիմ տրտնջեցին վասն ջրոյ. և ետ նոցա ջուր ի վիմէն Հարմատիբ գաւազանին ։	ԺԷ.	1
Եկն Ամաղէկ պատերազմել ընդ Իսրաէլի, եւ տարածմամբ ձեռացն Մովսիսի յաղթահարեցաւ ։	ԺԷ.	8
Եկն Յոթորոր աներն Մովսիսի ի լուր սքանչելեացն. և հաւատացեալ անդէն զոհս Աստուածոյ մատոյց ։	ԺԸ.	1
Թէ խրատուն Յոթորայ լուեալ կարգեաց Մովսէս հազարապետս և հարիւրապետս դատել զԻսրայէլ ։	ԺԸ.	13
Յետ յիսուն աւուր ելիցն նոցա տայ Աստուած օրէնս, զտան պատգամն և այլ մանաւանդս ։	ԺԹ.	1
Թէ ի տեսիլ արհաւիրացն զարհուրեցաւ ժողովուրդն, որով կրկին զգուշացուցանէ ի կռամոլութենէ քանդակեալ նկարուց, եւ սեզան հողեղէն կամ յանտաշ քարանց իւր առնել պատուիրէ, յոր ոչ ոք ելցէ. ի խորհուրդ ողջս պահելոյ զչինուածոս ընութեան ։	Ի.	18
Յաւելու և զայս, զի չետ վեց ամի արձակեսցեն զծառայ Եբրայեցի, ի խորհուրդ ազատելոյն զմեզ Քրիստոսի ցկին վեց դարուն ։	ԻԱ.	2
Եւ Թէ ոք զդաստար իւր վաճառէ, և Թէ ոչ համեցցի ընդ նա որ գնեացն։	ԻԱ.	7
Օրէնք վասն կամաւոր և ակամայ սպանողաց ։	ԻԱ.	12
Օրէնք հարկանողաց զծնողս ։	ԻԱ.	15
Մարդագողն մահու սպանցի ։	ԻԱ.	16
Համբաստող ծնողացն սպանցի ։	ԻԱ.	17
Հարկանօղն զընկեր՝ ըստ չափոյ գանկն տուժեսցի ։	ԻԱ.	18
Սպանօղն զծառայ իւր՝ սպանցի. բայց Թէ մի օր կամ երկու կեցցէ, մի՛ սպանցի ։	ԻԱ.	20
Վասն որ զկին յղի հարցէ. Թէ սաղմն աննկար ելցէ կամ Թէ նկարեալ ։	ԻԱ.	22
Վասն որ հարկանէ զակն կամ զատամն ծառայի ։	ԻԱ.	26
Վասն Թէ ցուլ հարեալ զոք սպանցէ, և Թէ գիտէր տէրն նորա կամ ոչ ։	ԻԱ.	28
Թէ անասուն ի հոր կամ ի ջրհոր անկցի ։	ԻԱ.	33
Թէ ցուլ զցուլ հարեալ սպանցէ ։	ԻԱ.	35
Որ արջառ կամ ոչխար գողացցի ։	ԻԲ.	1
Թէ որ զգողն ի հատանել զտուն՝ սպանցէ, Թէ՛ ի գիշերի կամ Թէ՛ ի տուընջեան	ԻԲ.	2
Որ զայլոյ անդ կամ զայգի արածել տայցէ ։	ԻԲ.	5
Թէ որ զանգս հրդեհիցէ ։	ԻԲ.	6
Վասն յաւանդ տուեալ գրոհից, Թէ մեռցի կամ գողացցի կամ գերի առցի ։	ԻԲ.	7
Վասն ի վարձու առելոյ իրիք ։	ԻԲ.	14
Թէ որ խաբեացէ զկոյս զոչ խօսեալ ։	ԻԲ.	16
Չկախարդս սպանանել ։	ԻԲ.	18
Չանասնագէտս սպանանել ։	ԻԲ.	19
Զդիցապաշտս սպանանել Թէ Իսրայելացի իցէ ։	ԻԲ.	20
Չպանդուխտս չնեղել ։	ԻԲ.	21
Չայրիս և զորբս չզզուել ։	ԻԲ.	22
Զտալ զարծաթի վաշխիս ։	ԻԲ.	25
Զգրաւել զպարտականին ։	ԻԲ.	26
Չհայհոյել զիշխանս, զորս և աստուածս ասէ կամ զկուռս իսկ ։	ԻԲ.	28
Չպտուղս կալոյ և զհնձանի ոչ հատանել ։	ԻԲ.	29
Յուիերորդ աւուրն նուիրել զանդրանիկս անասնոց ։	ԻԲ.	30
Զգազանաբեկն ոչ ուտել ։	ԻԲ.	31
Չհամրաւ սուտ չընդունել ։	ԻԳ.	1
Մի՛ կցորդել չարաց ։	ԻԳ.	1
Ուսուտ չվկայել ։	ԻԳ.	2
Զդ տաւաստան մի՛ թիւրել ։	ԻԳ.	2
Զմոլորեալ և զանկեալ անասուն Թշնամւոյն՝ անտես ոչ առնել ։	ԻԳ.	4
Մի՛ առնուլ կաշառս իրաւանց ։	ԻԳ.	6
Մի՛ նեղել զպանդուխտն ։	ԻԳ.	9

	Գլ.	Համ.
Զի յամն չաթաթիս բերք այգեացն և ծառից՝ և տնտնկաց եւս լինիցի՝	ԻԹ.	10
Հանգչել յաւուր շաբաթիս՝	ԻԹ.	12
Զանուանս գից ոչ յիշել՝	ԻԹ.	13
Զերիս տօնս յանգիման լինել երախայրեաց Եհովայ Տէրութեանն՝	ԻԹ.	14
Զզօհել ի վերոյ խմորոյ, և վասն ճարպոյ և երախայրեաց. և չեփել զգառն ի կաթին մօր իւրոյ՝	ԻԹ.	18
Ի պահելն զՀրամանն՝ պաշտպանել խոստանալ ազգին յերեսաց Քանանացւոցն՝ հրեշտակաւ և պիծակօք՝	ԻԹ.	20
Կոչէ ընդ Մովսիսի ի թիկունս լերինն և զԱհարոն որդւովք և եւթանասնեան ծերովքն՝	ԻԹ.	1
Ի պատմելն Մովսիսի զՀրամանն Աստուծոյ՝ յանձն էառ ժողովուրդն լսել և առնել՝	ԻԹ.	3
Գրեալ Մովսիսի զօրէնսն՝ շինէ սեղան, եւ կանդնէ վէմս երկոտասան՝	ԻԹ.	4
Երիտասարդքն հանին ողջակէզս, զոյոց արիւնն խառնեալ ջրով սրսկէ զգրովքն և զժողովրդեամբն՝	ԻԹ.	5
Հրաւիրեալք յառաջ և սրբեալք ելանեն Մովսէս և Ահարոնեանք, եւ թանասունն ալեւորքն, և ընդ ուսինն Աստուծոյ տեղեաւ տեսանեն զի կայր ակն շափիղայ՝	ԻԹ.	9
Կոչի Մովսէս ի վեր յայլում աւուր առնել զսահմանակս օրինացն. և յանձնեալ զժողովուրդն Ահարոնի և Ովրայ ինքն ելանէ հանդերձ Յիսուսիւ, մտեալ ի մէզն առ Աստուած՝ ինայ անդէն զքառասունն տիւ և զքառասուն գիշեր՝	ԻԹ.	12
Անդ իսկ ցուցանի նմա Աստուած դէեւ խորանին իմանալապէս. և հրամայէ առնել զայն ըստ օրինակին յաստուածեալ նիւթոցն՝	ԻԵ.	1
Տայ նախ զնանգամանս չափոյ տապանակին զքաւութեանն և զքերովբէից. ուր և դնել հրամայէ զտախտական ի տապանակին՝	ԻԵ.	10
Առնել հրամայէ սեղան ի կնկոցն և զկահս նորին, ի կնկաղացն ուր աղայրին գխունկն, և զայլն եւս՝	ԻԵ.	23
Սեղան երեսաց Հոգւոյն զառաջաւոր սեղանն է, զոր հինգկանգնեան ասէ յառնելն՝	ԻԵ.	30
Ի տապանդէ միոյ ոսկւոյ զաշտանակն և զճրագունան առնել հրամայէ՝	ԻԵ.	31
Խորան առնել տասնփեղկեան, և նուագատան՝ որ է ծածկոյթ մազեղէն. և այլ ծածկոյթ ի կարմիր մորթոյ. և ասի անուն սիւնս քառասուն. եւ երկու սիւնս յանկեան, և վեց ի թիկունս, ընդ սմենայն քառասունն և ութ՝	ԻԶ.	1
Եւ վարագոյր ծածկոյթ տապանակին ի վերոյ սեռից չորից՝	ԻԶ.	31
Պնել ասէ արարչոյ այսր վարագուրի զսեղան հոգին ի կողմն հիւսիսոյ, զաշտանակն ի հարաւակողմն, և		

	Գլ.	Համ.
զսեղան ինկոցն՝	ԻԶ.	35
Եւ այս արտաքին խորանիս վարագոյր առնել ի վերոյ սեռից հնգից՝	ԻԶ.	36
Եւ ի դուռն խորանին պղինձի սեղանն զողջակիզից՝	ԻԿ.	1
Շուրջ զխորանաւն պարսպաձեւ առագաստ առնել, հարեւր կանգուն ընդ հարաւ, և հարեւր ընդ հիւսիսոյ, յիսուն ընդ արեւելս, և յիսուն ընդ արեւմուտս՝	ԻԿ.	9
Ի ձիթոյ ձիթենեաց լուցցէ Ահարոն զճրագունան յերեկորեայ մինչեւ ցառաւօտն՝	ԻԿ.	20
Առնել հրամայէ պատմուճան Ահարոնի ցպճղունան՝ յոսկւոյ և ի ծիրանւոյ և պատիւ փառաց. թող զբեհեզեայ պատմուճանն, որով ի սուրբն սրբոց մտանէր՝	ԻԼ.	1
Ի սոցուն նիւթոց և գվկիան ուսանոց, յորոյ ուսոցն վերոյ երկու ակունք զրմրըխտեալք՝ յանգիմանութիւնն և ճշմարտութիւնն՝	ԻԼ.	6
Վահանակն անօսր կտաւեայ ի լանջան և ի թիկունս. և մանուածոյքն վերջք, չուանք հիւսուածոյ, կապել զվահանակն ընդ ուսովք եւ ընդ անթովք՝	ԻԼ.	13
Ի տախտակն դատաստանի, որ է կրծատնոյն, ընդելուզանել ասէ զականան երկոտասանս. իսկ վահանակն զոր ասա ասէ, կամ նոյն է զոր նախ ասաց, կամ երկու տախտակ այլ է ի թիկանց և ի լանջից, պնդել գվկիան զի մի՛ զերծանիցի՝	ԻԼ.	15
Վտաւակն ներքնակ է. կապատակ անդերձ է, պճղնաւոր ի ներքոյ վակասին ունելով ի ստորան վանգակս և նռնաձեւս՝	ԻԼ.	31
Թիթեղն ոսկի, Թերթ անօսր, ի խոյր գլխոյն ի վերոյ ճակատուն՝	ԻԼ.	36
Ձիշէ գործել զպատմուճանն բեհեզէղէն՝	ԻԼ.	39
Զպատարօշն վերին զօտի ասէն զանթովքն ի վերոյ պճղնաւոր պատմուճանին. և կամար՝ բուն զօտին ի վերոյ միջոյն. եւ անդրաւարաւիքն ի ցոյցս ողջախոհութեան՝	ԻԼ.	40
Նուէրք քահանայանալոյ Ահարոնի եւ որդւոց նորա. զոր լուացեալ ջրով, և զգեցուցեալ մատուսցէ զողջակէզն, և արեամբ և իւղով ածցին հանդերձիւք քահանայապետութեան՝	ԼԹ.	1
Ի խոչ անտի կատարման՝ զերբուծն մատն առնուլ Մովսիսի, յօրինակ՝ զսկիզբն և զկատարումն ամենիցն անդամից բոժին Աստուծոյ նուիրել՝	ԼԹ.	26
Ի մանել քահանայիցն մի՛ կերիցէ օտար, որ չէ գործակից քահանայապետութեան՝	ԼԹ.	31
Զսեղանն եւս սրբել ասէ, որ սրբէ զի վերոյ եգեալսն ի տիպ Քրիստոսի՝	ԼԹ.	36

	Գլ.	Հմր.
Երկուս գառինս, զմին առաւօտս և զմիւսն երեկոյին. երեկոյին՝ այժմըս խորհուրդ Բրխատսի, և առաւօտուն՝ հանդերձելոյն. ուր և անդ՝ Նա ինքն է վայելքն մեր:	Լթ.	38
Ահեղանն ինկոց որիշ է յորմէ ինկոցացն ասաց, զի անդ ազացեալն ասո լինէր պահեցեալ: Աւր և մինդամ քահանայապետն ի տարւոջ քաւէր:	Լ.	1
Հրամայէ ի քահանայենից առնուլ կկես երկդրամեանն Հաս Տեառն:	Լ.	12
Աւազանն առ ի լուանալ ի խորհուրդ նորոյս, առանց որպ լուացման զգործս և զդնացս՝ ոչ մնջէ զբ յարբայութիւն:	Լ.	17
Նիւթք իւղոյն օծութեան խորհուրդ չորից առաքինութեանց, և օտարք ոչ տալն ի զգուշութիւն, զանուն Քրիստոսեութեան և առաքելական պատուոյ մի՛ տալ անարժանից:	Լ.	22
Եւ չորք խունկքն ցոյնք ծխելոյ ի հնար, անուշահոտ վարս պնդի օծմանն:	Լ.	34
Յուցեալոց սմա նիւթոցն և կանխից կոչէ Աստուած Հանճարիչս վերանորիլ Ոգբանից Յուպայեան, և վերծիւր ի ցեղէն Քանայ:	ԼԱ.	1
Զգուշացուցանէ եւս վասն գշարաթին պատուհասոյ:	ԼԱ.	12
Տայ Մովսիսի զտախտական զաստաւածագիրսն:	ԼԱ.	18
Թէ ժողովրդն կատեալ ի վերայ Ահարոնի արարին սրթ, և կատպաշտեցին:	ԼԲ.	1
Ագգ արար Աստուած Մովսիսի վանօրհնել ժողովրդեանն:	ԼԲ.	7
Թէ ազաչեալ Մովսիսի ցածեաւ Տէր ի ցասմանէն:	ԼԲ.	9
Խչեալ Մովսէս ի լեռնէն, և վասն մեծ չարեացն նոցա խորտակեաց խկպին զտախտական:	ԼԲ.	15
Ակրեաց զորթն զայն և խարեաց և արկ ի վասն ըմպել ի պատիժ երկրպագողաց նորին չնացելոց:	ԼԲ.	20
Կշտամբէ զԱհարոն ընդ այնր. և նա ցուցանէ զյանդգնութիւն խիստ ժողովրդեանն պատճառ որթ ուն:	ԼԲ.	21
Հրամանաւն Մովսիսի մատչին Ղեւտացիքն սրով առնուլ վրէժս յերկրպագուացն որթ ուն. և առնուն ընդ այնր օրհնութիւն քահանայապետ ուն:	ԼԲ.	25
Յուցանէ Մովսէս ժողովրդեանն զմեծութիւն մերազ առնելեաց որթ ուն. և ինքն դարձեալ աղաչէ զՏէր ընդ մեղաւորացն:	ԼԲ.	30
Զառնեմ անպարտ, ասէ, թէ ոչ զղջացին. թէպէտ ներբ առ ժամսըն, և առաջնորդել նմա հրամայէ. զորս և հարիանէ ասլա՝ առաւակմամբ առ սակաւ սակաւ:	ԼԲ.	33
Երեշտակ ասլ առաջնորդ նոցա ասէ և ոչ ինքն. և կշտամբէ վհատութիւնն և զառդն կերպարանօք, և զգուշացուցանէ դարձեալ զնոսա:	ԼԳ.	1
Թէ խորանն Մովսիսի կոչեցաւ խորան վկայութեան. զի չեւ եւս էր կազմեալ բուն խորանն:	ԼԳ.	7
Նպրէ Մովսէս առնանել զԱստուած խոսկաելոմն, և լսէ՝ թէ գյետոյս փառաց իմոց ցուցից քեզ:	ԼԳ.	12
Հրամանն առեալ Մովսիսի կոփէ երկուս քարեղէն տախտակս և առեալ ելանէ ի լեառնն. ուր իջեալ առնմա Տէր ի ծերպ վիմին՝ սիրական անուամբ զնա մեծարէ. աւստի զօրացեալ կարդաց զխորհրդական աստուածութեան ի վերայ Ատաւծոյ. և հայցեաց դարձեալ վերթալն Աստուծոյ ընդ նոսա:	ԼԳ.	1
Լնու Աստուած վկայացուածս նորա, բազանչելեօք մերժել զԻսանասացին, և զգուշացուցանել զժողովուրդն ի կրկին պատնկութենէ, զի Աստուած նախանձոտ է, և ոչ ներբ:	ԼԴ.	10
Պատուիրէ դարձեալ վասն տոնի բազատկութեացն:	ԼԴ.	18
Հրամայէ դարձեալ՝ զի իւր իսկ տացեն զանդրանիկս ամենայն:	ԼԴ.	19
Յիշէ դարձեալ վասն շաբաթու և վասն տոնի եւթներորդացն և տարտարաբահասց. և երկոցս ի տարւոջ յանդիման լինել ինքեան ընծայիւք:	ԼԴ.	21
Մի՛ զենգես զգոն իմ ի վերայ խմորոյ. թուի թէ ի խմորատ ամեն զարիւնն չառնուլ:	ԼԴ.	25
Զառաջինս արմտեացն ի տուն Տեառն նուիրել:	ԼԴ.	26
Մի՛ եփել զղ տաւն ի կաթն մոր իւրոյ:	ԼԴ.	26
Ի լրումն երկրորդի այսմ քառասնեակիս՝ հրամայէ Աստուած Մովսիսի դրել զպատգամն յաւգութիւն ժողովրդեանն. զոր և ինքն Աստուած գրեաց տառաջինն տասնեակն ի տախտակսն երկրորդս քարեղինս:	ԼԴ.	27
Զի փառաւորեցան երեսքն Մովսիսի, ի լրումն խոստմանն Աստուծոյ թէ հրաշս նոր գործեցից. ուստի և վասն ոչ կարելոյ նոցա հայել՝ արկանէր քող վերեսաց իւրոց:	ԼԴ.	29
Երկրորդեաց նոցա զՀրամանս օրինացն, և հրամայեաց բերել զնիւթսն ի կազմել խորանին:	ԼԵ.	1
Թէ յօժարութեամբ յաճախեաց ժողովուրդն ի բերել զնիւթսն ստացեալս. զորս և տան ի ձեռս Բեսաղիէլի և Ողիաբու:	ԼԵ.	20
Թէ գործեցին զփեղկս խորանին և զամենայն կալմած նորին և զվարագոյրսն:	ԼԶ.	8
Զի արար պատպանական բան ցուցեալմ օրինակին, և գբաւութիւնն և գբերսրկան:	ԼՀ.	1
Զառ աջաւոր սեղանն ասա՝ խնկոյն է. զի եւ կիսոն նորին զՀետ բերէ զխնկազացն և զպյլան:	ԼՀ.	10
Զի արար զաշտանական ասկի՝ ձոյլ՝ կա-		

	Գլ.	Համ.
հիւքն ։	ԼԷ.	17
Սեղանն ոսկի հինգկանգնեան՝ զառաջաւորն է, յորոյ վերայ հացն երեսաց յառաջին արմնեաց դնիւր ։	ԼԷ.	25
Զի արար գեւղն սուրբ օծումեան, եւ զխունկան ծխելոյ ։	ԼԷ.	29
Արար զսեղանն պղնձապատ որ է ողջակիզացն՝ ի բուրուառացն Կորխեանց՝ զոր ի Թիւան ասէ ։	ԼԸ.	1
Իսկ եւ զաւազանն ի հայելեաց կանանց պահողաց ։	ԼԸ.	8
Արար զառագաստան ի բարձրութիւն կանգունս հնգետասան, իսկ զդրբանն առագաստ՝ կանգունս քսան։	ԼԸ.	9
Միահամուռ թուէ զկշիռ ոսկւոյ եւ զարծաթոյ, եւ զթիւ համարոյ ժողովրդեանն զանցելոցն ի հանդիսի, որք եւ պատրաստեցին իսկ զնիւթսն ։	ԼԸ.	24
Արարին զպատմուճանն եւ զվկասն եւ		

	Գլ.	Համ.
զտախտակն զականակապ ։	ԼԹ.	1
Եւս եւ զպատմուճանն վտաւակ պրճղնաւոր, զանգակօք եւ նռնաձեւիւք ։	ԼԹ.	20
Եւս եւ զպատմուճանն բեհեզեղէն, զպարոյրն, զխոյրն, եւ զոսկի թիթեղն ի խոյրն ժապաւինեալ ։	ԼԹ.	27
Զի կատարեալ գործն ամենայն բերին առաջի Մովսէսի, եւ օրհնեաց ըզնոսա Մովսէս ։	ԼԹ.	32
Զի հրամայեաց Աստուած Մովսիսի կանգնել զխորանն ի մուտ ամսոյն առաջնոյ, եւ օծանել զնա եւ զամենայն կահ նորա, եւ զԱհարոն եւ զորդիս նորա յօծումն քահանայութեան ։	Խ.	1
Կանգնեաց Մովսէս զխորանն ըստ հրամանի Տեառն, եւ ծածկեաց զնա ամպն, եւ լի եղեւ խորանն փառաւքն Տեառն ։	Խ.	16

ԵԼՔ

ԳԼՈՒԽ Ա

1 [1]Ա՛Ց են անուանք որդւոցն Իսրա-
յելի մտելոցն յԵգիպտոս հան-
դերձ Յակոբա՝ [2]Հարբն իւրեանց՝. իւրա-
2 քանչիւր ըստ համօրէն տանց իւրեանց
3 մտանէին. Ռուբէն, Շմաւն, Ղեւի,
Յուդա. Իսաքար, Զաբուղոն եւ Բե-
4 նիամին. Դան եւ Նեփթաղիմ, Գադ եւ
5 Ասեր։ Եւ էին ամենայն ոդիք ելեալք [3]ի
Յակոբայ, եւ թանասուն [2]եւ հինգ՝ ոգի.
6 եւ Յովսէփ էր յԵգիպտոս։ Վախճանեա-
ցաւ Յովսէփ եւ ամենայն եղբարք նորա,
7 եւ ամենայն ազգն այն։ Եւ որդիքն Իս-
րայելի աճեցին եւ յօրացան, բազմա-
նային եւ զօրանային յոյժ, [4]զի բազմա-
յուցանէր զնոսա՝ երկիրն։
8 [5]Եկաց այլ թագաւոր՝ որ ոչ գիտէր
9 զՅովսէփ։ Եւ ասէ ցազգն իւր, Ահա ազգ
որդւոցն Իսրայելի մեծ է զօրութեամբ,
10 եւ զօրանայ քան զմեզ. Արդ եկայք
հնարեսցուք ինչ նոցա, զուցէ բազմա-
նայցեն, եւ յորժամ դիպիցի մեզ պա-
տերազմ, յաւելուցուն եւ նոքա ի թշնա-
միսն, եւ մարտուցեալ ընդ մեզ՝ ելա-
11 նիցեն յերկիրէ աստի։ Եւ կացոյց ի վե-
րայ նոցա գործավարս, զի չարչարեսցեն
զնոսա ի գործ. եւ չինեցին քաղաքս
[6]ամուրս Փարաւոնի, զՓիթոն եւ զՌամսէս
12 [2]եւ զՈն՝ որ է Արեգ քաղաք՝։ Եւ որչափ
ճնշէին զնոսա, այնչափ առաւել բազմա-
նային եւ զօրանային յոյժ. եւ [7]դարչե-
ցուցանէին Եգիպտացիքն զորդիսն՝ Իս-
13 րայելի։ Եւ յաղթահարէին Եգիպտացիքն
14 զորդիսն Իսրայելի բռնութեամբ։ Եւ կե-
ցէին զկեանս նոցա ի գործ խիստ կաւոյ
եւ աղիւսարկի եւ յամենայն գործ դաշ-
տաց, ըստ ամենայն գործոյ իւրեանց որով
ծառայեցուցանէին զնոսա բռնութեամբ։
15 Եւ խօսեցաւ արքայն Եգիպտացւոց ընդ
ծնուցիչսն Եբրայեցւոց, ընդ միումն որում
անուն էր Սեփտիրա, եւ անուն երկրոր-
16 դին Փուա, Եւ ասէ, Յորժամ ծնուցա-
նիցէք զհանայա Եբրայեցիս եւ լցեն մերձ
ի ծնունդս, թէ արու իցէ, սպանանիջիք
զնա, եւ թէ էգ՝ ապրեցուցանիջիք։
17 Եւ երկեան ծնուցիչքն յԱստուծոյ, եւ
ոչ արարին որպէս հրաման ետ նոցա
արքայն Եգիպտացւոց. եւ ապրեցուցա-
18 նէին զարուսն։ Կոչեաց արքայն Եգիպ-
տացւոց զծնուցիչսն եւ ասէ ցնոսա,
Զի՛ է զի արարէք զբիրս զայնոսիկ եւ
19 ապրեցուցէք զարուս։ Եւ ասեն ծնուց-
իչքն ցփարաւոն, Ոչ իբրեւ զկանայս
Եգիպտացիս են Եբրայեցիքն. քանզի
[8]նախ ծնանին՝ մինչչեւ մտեալ առ նոսա
20 մանկաբարձաց։ Եւ [2]ծնանէին. եւ՝ բա-
րի առնէր Աստուած մանկաբարձացն.
եւ բազմանայր յոյժ ժողովուրդն եւ զօ-
21 րանայր յոյժ։ Յորմէհետէ երկեան մանկ-
կաբարձքն յԱստուծոյ, [9]արարին իւրեանց՝
22 տունս։ Հրաման ետ փարաւոն ամենայն
ժողովրդեան իւրում, եւ ասէ, Զամե-
նայն արու որ ծնանիցի Եբրայեցւոց՝ ի
գետ ընկեսջիք, եւ զամենայն էգ ապ-
րեցուցանիջիք։

ԳԼ. Բ

1 [10]Եւ էր անդ ոմն յազգէ Ղեւեայ, որ առ
2 իւր կին ի գաւառաց անտի Ղեւեայ։ Եւ
[10]յղացաւ ծնաւ՝ արու, եւ [11]տեսանէին
զնա կայտառ, եւ [12]թաքուցին զնա ա-
3 միսս երիս։ Եւ իբրեւ ոչ եւս [13]կարէին
թաքուցանել, առ մայրն նորա տապա-
նակ պտուտակեայ, եւ ծեփեաց զնա կպրա-
ձիւթով, եւ եդ ի նմա զմանուկն, եւ
ընկէց զայն ի խաղ մի առ ափն գետոյն։
4 Եւ զքոյր նորա ի հեռաստանէ՝ տեսանել
թէ զինչ անցք անցանիցին ընդ

---

[1]ՆԵՔ. Եւ այս [2]ՅՕՔ. ոգիսոբ [3]ՆԵՔ. յերա-
նաց Յակոբայ [4]ՆԵՔ. եւ լցաւ նորօք [5]ՆԵՔ.
Եւ յարեաւ թագաւոր նոր ի վերայ Եգիպտոսի
[6]ՆԵՔ. ՀԹեբէից [7]ՆԵՔ. գաղչէին նոքա յորդւոցն
[8]ՆԵՔ. առոյգ են. ծնանին [9]ՆԵՔ. արար նոցա
[10]ՆԵՔ. յղացաւ կինն եւ ծնաւ [11]ՆԵՔ. եսեաս
[12]ՆԵՔ. թաքոյց [13]ՆԵՔ. կարէր

5 նա։ Եւ իջեալ զուսարն Փարաւոնի
լուանալ ի գետն, եւ նաժիշտք նորա
չրջէին առ զնառնէն. եւ անհնալ զառապա-
նակն ի խաղի անդ, առաքեաց զնաժիշտս
6 [1]մի առնուլ զնա. Երբայց եւ նոքա զմա-
նուկն, եւ լայր մանուկն [2]ի առապանակի
անդ". Խանդաղատեցաւ զնովաւ [2]զուսարն
Փարաւոնի", եւ ասէ, Ի մանկանց Եբ-
7 բայեցւոց է դա։ Եւ ասէ քոյրն նորա
ցզուսարն Փարաւոնի, Կամիս զի կոչե-
ցից քեզ կին մի գայեակ ի Հերբայեցւոց
անտի, եւ մնուցանիցէ քեզ զմանուկդ։
8 Ասէ զուսարն Փարաւոնի, Երթ. գնաց
9 աղջիկն եւ կոչեաց զմայր մանկանն։ Եւ
ասէ ցնա զուսարն Փարաւոնի։ Առ զմա-
նուկդ, եւ մնո ինձ զնա, եւ ես տաց քեզ
զվարձս քո. եւ առ կինն զմանուկն եւ
10 մնոյց զնա։ Եւ իրրեւ հասուցանեցաւ մա-
նուկն, այ զնա առ զուսարն Փարաւոնի,
եւ եղեւ նմա որդեկիրս. եւ անուանեաց
զանուն նորա [3]Մովսէս. ասէ, Ի ջրոյ անտի
հանի զդա։

11 Եւ եղեւ յետ աւուրց [2]բազմաց, իրրեւ
եղեւ մեծ Մովսէս, էլ առ եղբարս իւր
[2]որդիսն Իսրայելի", հայեցեալ ի չարչա-
րանս նոցա. եւտես այր մի Եգիպտացի,
զի հարկանէր զոմն Երբայեցի ազգարց
12 իւրոց [2]յորդւոցն Իսրայելի։" Հայեցեալ
յայս կոյս յայն կոյս՝ ոչ զոր տեսանէր,
Եհար զեգիպտացին եւ ծածկեաց զնա
13 ընդ աւազով։ Եւ երկիցորդումն ա-
ւուր, տեսանէր երկուս արս Երբայեցիս
ընդ միմեանս մարտուցեալս. եւ ասէ
ցայրն որ զրկէրն, Ընդէ՞ր հարկանես
14 զընկերդ։ Եւ նա ասէ, Ո՞ կացոյց զքեզ
այր իշխան եւ դատաւոր ի վերայ մեր.
եթէ սպանանել դիս կամիցիս որպէս
երէկ սպաներ զեգիպտացին։ Զահի նա-
բաւ Մովսէս եւ ասէ Թէ Այնպէս յայտ-
նի եղեւ բանն։

15 Եւ լուաւ Փարաւոն զբանն, եւ խնդրէր
սպանանել զՄովսէս. եւ փախեաւ Մով-
սէս յերեսաց Փարաւոնի, եւ բնակեաց
յերկրին Մադիամու. եւ [2]եկեալ յերկրին
Մադիամու" նստաւ առ ջրհորն միւսմ։
16 Եւ քրմին Մադիանացւոց էին զաստեր-
եւեքն, [2]որ արածէին զխաչինս հօր իւրե-
ան," եկեալ էին հանել ջուր, մինչեւ
լցին զաւազանսն՝ արբուցանել խաչանց
17 հօրն իւրեանց։ Եւ եկեալ [2]այլ հովիւք մեր-

[1]ԵԲԲ. իւր [2]ՅՃԵԲԲ. պակաս [3]Ա. յԵկեդն, Հան-
եալ ի ջրոյ

ժեցին զնոսա ի բաց. յարուցեալ Մովսէս
թափեաց զնոսա, եւ [2]հանդոյց ջուր եւ"
18 արբոյց զխաչինս նոցա։ Եւ եկին առ Հռա-
գուէլ հայրն իւրեանց եւ նա ասէ ցնոսա,
19 Զի՞ է զի յարեւուս եկիք այսօր։ Եւ նո-
քա ասեն, Այր մի եգիպտացի փրկեաց
զմեզ ի հովուաց անտի, եւ հանդոյց ջուր
20 եւ արբոյց խաչանց մերոց։ Եւ նա ասէ
ցդստերան իւր, Եւ ո՞ւր է, զինչ՞ թողէք
զայրն. արդ կոչեցէք զնա զի կերիցէ հաց։
21 Եւ յնակեցաւ Մովսէս առ առնն, եւ ետ
զՍեպփորա դուստր իւր Մովսէսի կնու-
22 թեան։ Եւ ձգացաւ կինն եւ ծնաւ որդի, եւ ա-
նուանեաց զանուն նորա Մովսէս Գերսամ.
ասէ, Զի պանդուխտ եմ ես յօտար երկրի։
23 Եւ յետ աւուրց բազմաց մեռաւ թա-
գաւորն Եգիպտացւոց. եւ տառապէին որ-
դիքն Իսրայելի ի գործոյ անտի, եւ աղա-
ղակէին ի վեր. եւ ել աղաղակ նոցա ա-
24 նաչի Աստուծոյ ի գործոյ անտի։ Եւ լուաւ
Աստուած հեծութեան նոցա, եւ յիշեաց
Աստուած զուխտ իւր որ ընդ Աբրահամու
25 եւ Իսահակայ եւ Յակոբայ։ Եւ հայեցաւ
Աստուած յորդիսն Իսրայելի, եւ [4]ծանուա-
ցաւ նոցա"։

Գլ. Գ

1 Եւ Մովսէս արածէր զխաչինս Յոթորայ
անդրոյ իւրոյ՝ քրմին Մադիանացւոց. եւ
առ զխաչինսն [5]յանապատ, եւ եկն ի
2 լեառնն Աստուծոյ ի Քորեբ։ Եւ երեւեցաւ
նմա հրեշտակ Տեառն բոցով հրոյ ի միջոյ
մորենւոյ. եւ տեսանէր զի մորենին վառ-
3 եալ էր հրով, եւ ոչ այրէր մորենին։ Եւ
ասէ Մովսէս, Անդեալ տեսից զտեսիլն
զայն մեծ. զի՞ է զի ոչ այրիցի մորենին։
4 Երբեւ տեսանէր Տէր եթէ մերձենայ տեսանել,
կոչեաց զնա [6]Տէր ի միջոյ մորենւոյն, ասէ,
Մովսէս, Մովսէս. եւ նա ասէ, [7]Զի՞ է"։
5 Եւ ասէ, Մի մերձենար այսր. լոյծ զկօ-
շիկս քո յոտից քոց, զի տեղի յորում կաս
6 դու ի գմա՝ երկիր սուրբ է։ Եւ ասէ ցնա,
Ես եմ Աստուած հօր քո, Աստուած Աբրա-
համու եւ Աստուած Իսահակայ եւ Աս-
տուած Յակոբայ. եւ [8]զարձոյց Մովսէս
զերեսս իւր, զանդրի երկնչէր հայել [9]առա-
ջի Աստուծոյ"։
7 Եւ ասէ Տէր [2]ցՄովսէս, Տեսանելով տեսի

[4]ԵԲԲ. ծանեաւ Աստուած [5]ԵԲԲ. յետ կոյս
անապատին [6]ԵԲԲ. Աստուած [7]ԵԲԲ Ահա-
ւասիկ եմ [8]ԵԲԲ. ծածկեաց [9]ԵԲԲ. յԱստուած

զարչարանս ժողովրդեան իմոյ որ յԵգիպտոս, 8 եւ լուայ ազաղակի նոցա ի գործատէրսն իւրեանց, զի գիտեմ զվիշտս նոցա. եւ իջի վրկել զնոսա ի ձեռաց Եգիպտացւոցն, եւ հանել զնոսա յերկրէն յայնմանէ, եւ տանել զնոսա յերկիր բարի եւ ընդարձակ, յերկիր՝ որ բղխէ զկաթն եւ զմեղր. յերկիրն Քանանացւոց եւ Փերեզացւոց եւ Ամովրհացւոց եւ Փերիզացւոց եւ Եւեացւոց 1եւ Յերգեսացւոց" եւ Ցեբուսացւոց. 9 եւ արդ աւասիկ աղաղակ որդւոցն Իսրայէլի հասեալ է առ իս, եւ տեսի ես զնեղութիւնն զոր նեղեն զնոսա Եգիպտացիքն. 10 եւ արդ եկ առաքեցից զքեզ առ Փարաւոն 1արքայ Եգիպտացւոց", եւ հանցես զժողովուրդ իմ, զորդիսն Իսրայէլի, 11 յերկրէն Եգիպտացւոց: Եւ ասէ Մովսէս ցԱստուած, Ո՛վ եմ ես ես որ երթայցեմ առ Փարաւոն 1արքայ Եգիպտացւոց", եւ հանիցեմ զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց: 12 Եւ ասէ, 2Ես եղէց ընդ քեզ. եւ այս եղիցի քեզ նշան [Ի՛ես եմ առաքեցի 3զքեզ հանել" զժողովուրդ իմ յԵգիպտոսէ, պաշտեսջիք զԱստուած ի լերինս յայսմիկ. 13 Եւ ասէ Մովսէս ցԱստուած, Ահա ես երթեալ առ որդիսն Իսրայէլի ասիցեմցնոսա, Աստուած հարցն ձերոց առաքեաց զիս առ ձեզ. եւ հարցանիցեն զիս [Ի՛ Զի՞նչ է անուն նորա, զի՞նչ ասացից ցնոսա: 14 Եւ ասէ Աստուած ցՄովսէս, Ես եմ 1Աստուած ՈՐ ԷՆ: Եւ ասէ, Այսպէս ասասցես ցորդիսն Իսրայէլի, ՈՐ ԷՆ առաքեաց զիս առ ձեզ: 15 Եւ ասէ դարձեալ Աստուած ցՄովսէս, Այսպէս ասասցես ցորդիսն Իսրայէլի, Տէր Աստուած հարցն ձերոց, Աստուած Աբրահամու եւ Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակոբայ, առաքեաց զիս առ ձեզ. այս է անուն իմ յաւիտենական, եւ յիշատակ ազգաց յազգս: 16 Արդ երթեալ ժողովեսցես զծերակայսն որդւոցն Իսրայէլի, եւ ասասցես ցնոսա, Տէր Աստուած հարցն ձերոց երեւեցաւ ինձ, Աստուած Աբրահամու եւ Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակոբայ, ասելով, Այցելութեամբ այց արարի ձեզ, եւ որ ինչ 17 անգը անցին ընդ ձեզ յԵգիպտոս: Եւ ասեմ, Հանից զձեզ յերկրէ չարչարանացն Եգիպտացւոցն՝ յերկիրն Քանանացւոց եւ Փերեզացւոց եւ Ամովրհացւոց եւ Փերիզացւոց 1եւ Գերգեսացւոց" եւ Եւեացւոց եւ Ցեբուսացւոց, յերկիր՝ որ բղխէ զկաթն 18 եւ զմեղր: Եւ լսելոյն ձայնի քումի. եւ մտցես դու եւ ծերակայք որդւոցն Իսրայէլի առ Փարաւոն արքայ Եգիպտացւոց, եւ ասասցես ցնա, Տէր Աստուած Եբրայեցւոց 4կոչէ զմեզ առ ինքն". արդ երթիցուք մեք երից աւուրց ճանապարհ յանապատ, զի զոհեսցուք Տեառն Աստուծոյ 19 մերում: Եւ ես գիտեմ, եթէ ոչ թողուցուն զձեզ արքայն Եգիպտացւոց գնալ, եթէ 20 ոչ ձեռօք ձեռամբ: Եւ ձգեալ զձեռն իմ հարից զԵգիպտոս ամենայն սքանչելիօք իմովք զոր արարից ի նոսա. եւ ապա արձակեսցէ զձեզ: Եւ տայց չնորհս ժողովրդեան իմոյ առաջի Եգիպտացւոցն. եւ յորժամ ելանիցէք, մի՛ ելանիցէք դատարկք. 22 Այլ խնդրեսցէ կին ի դրացւոյ եւ յիրակից իւրմէ անօթս ոսկւոյ եւ անօթս արծաթոյ եւ հանդերձս, եւ զարդարեսջիք զուստերս եւ զդստերս ձեր. եւ 5գաւազանեսջիք զԵգիպտացիսն:

ԳԼ. Դ

1 Պատասխանի եւ Մովսէս եւ ասէ, Եւ մէ՛ն ոչ հաւատասցին ինձ, եւ ոչ լսիցեն ձայնի իմում. քանզի ասիցեն մէ՛ն չիք երեւեալ քեզ 6Աստուծոյ, զի՞նչ ասացից 2 ցնոսա" Ասէ ցնա Տէր, Զի՞նչ է այդ որ ի ձեռին քումի է. եւ նա ասէ, Գաւազան: 3 Եւ ասէ, Ընկեա զգա ի գետին. եւ ընկէց զնա ի գետին, եւ եղեւ օձ, 4 եւ փախեաւ Մովսէս ի նմանէն: Եւ ասէ Տէր ցՄովսէս, Զգեա զձեռն քո եւ բռնեա հար զառաջինէն. եւ ձգեաց զձեռն իւր եւ բռնեաց հար զառաջինէն, եւ եղեւ գաւազան ի ձեռին նորա. 5 Զի հաւատասցեն քեզ թէ երեւեալ է քեզ Տէր Աստուած հարցնոցա, Աստուած Աբրահամու եւ Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակոբայ:

6 Ասէ ցնա դարձեալ Տէր, Արկ զձեռն քո ի ծոց քո. եւ արկ զձեռն իւր ի ծոց իւր, եւ հանեալ զնա ի ծոցոյ իւրմէ, եւ եղեւ ձեռն նորա բորոտ իբրեւ զձիւն: 7 Եւ ասէ, Արկ զձեռն քո ի ծոց քո. եւ արկ զձեռն իւր ի ծոց իւր, եւ հանեալ զնա ի ծոցոյ իւրմէ, եւ դարձեալ անպղծեալ ինքն 8 հասաստեցաւ ի գոյն մարմնոյ իւրոյ: Եթէ ոչ հաւատասցեն քեզ եւ ոչ լսիցեն ձայնի առաջնոյ նշանին, հաւատասցեն քեզ

---

1 ՅԵբր. գ-ի-ե-ե 2 Եբր. Ապաքէն ես զքեզ. յորժամ հանցես 3 Եբր. Տեառն 4 Եբր. պատահեաց մեզ 5 Եբր. կաղապատեսջիք 6 Եբր. Տեառն

9 ձայնի երկրորդի նշանիդ ։ Եւ եղիցի եթէ
ոչ հաւատասցեն երկոցունց նշանացդ
այսոցիկ, եւ ոչ լսելցեն ձայնի քումմ, առ-
իցես զուռ ի ջրոյ գետոյն եւ հեղցես ի ցա-
մաքի , եւ եղիցի ջուրն զոր առնուցուս ի
գետոյ անտի՝ արիւն ի ցամաքին ։
10 Եւ ասէ Մովսէս ցՏէր , Աղաչեմ զքեզ,
Տէր , չեմ [1]բաւական , որպէս թէ՞ յերէկէ
եւ յեռանդէ, եւ ոչ յորմէ հետէ սկսար խօ-
սել ընդ ծառայի քումմ. զի նըւազայն եւ
11 ծանրալեզու եմ ես։ Եւ ասէ Տէր ցՄովսէս,
Ո՞վ ետ բերան մարդոյ , կամ ո՞վ արար
զխուն եւ զհամր , զականին եւ զկոյր .
12 ո՞չ ապաքէն ես [2]Աստուած ։ Եւ արդ երթ,
եւ ես բացից զբերան քո եւ խելամուտ ա-
13 րարից զքեզ զոր պարտ իցէ խօսել ։ Եւ
ասէ, Աղաչեմ զքեզ, Տէր, առ քեզ ի ձեռն
14 զայլ ոք [3]ղօրաւոր զոր առաքիցես ։ Եւ
բարկացաւ Տէր սրտմտութեամբ ի վերայ
Մովսիսի եւ ասէ , Ո՞չ աւանիկ կայ Ահա-
րոն եղբայր քո Ղեւտացի. գիտեմ զի խօ-
սելով խօսեսցի նա [3]ընդ քեզ՞. եւ ահա նա
ելցէ ընդ առաջ քո , եւ ի տեսանելն զքեզ
15 բերկրեսցի ի միտս իւր։ Եւ խօսեսցիս ընդ
նմա , եւ տացես զպատգամս իմ ի բերան
նորա . եւ ես բացից զբերան քո եւ զբե-
րան նորա , եւ խելամուտ արարիմ զձեզ
16 զինչ առնիցէք։ Եւ նա խօսեսցի առ ի քէն
ընդ ժողովրդեանն. եւ նա եղիցի քո բե-
րան , եւ դու եղիցես նմա յաստուածա-
17 կոյս կողմանէ ։ Եւ զգաւազանդ [3]որ զար-
ձաւ յօձ՞ առցես ի ձեռին քումմ , որով ա-
րասցես նշանս ։
18 Գնաց Մովսէս եւ դարձաւ առ Յոթոր
աներ իւր եւ ասէ ցնա , Դարձայց եւ եր-
թայց առ եղբարս իմ որ յԵգիպտոս , եւ
տեսից թէ տակաւին կենդանի՞ իցեն . եւ
19 ասէ Յոթոր ցՄովսէս , Ողջ երթ ։ Եւ [3]յետ
աւուրցն բազմաց այնոցիկ վախճանեցաւ
արքայն Եգիպտացւոց. եւ՞ ասէ Տէր ցՄով-
սէս ի Մադիամ , Գնա եւ երթ յԵգիպտոս,
զի մեռան ամենայն արք որ խնդրէին
20 զանձն քո ։ Եւ առեալ Մովսիսի զկին իւր
եւ զմանկունս իւր , եւ եհան զնոսա ի
դրաստս, եւ դարձաւ յԵգիպտոս. առ Մով-
սէս զգաւազանն որ յԱստուծոյ՝ ի ձեռին
21 իւրում։ Եւ ասէ Տէր ցՄովսէս, Յերթալդ
քումմ եւ ի դառնալդ յԵգիպտոս՝ տեսջիր
զամենայն նշանս զոր ետու ի ձեռս քո, ա-
րասցես առաջի Փարաւոնի. եւ ես խստա-

[1] ՆԲէր. այր խօսող, ոչ գ-ւ-ո-ւ-ի [2] ՆԲէր. Տէր [3] ՅՆԲէր.

22 ցուցից զսիրտ նորա , եւ ոչ արձակեսցէ
զժողովուրդն։ Եւ դու ասասցես ցՓարաւ-
ոն , Այսպէս ասէ Տէր , Որդի անդրանիկ
23 իմ Իսրայէլ ։ Ասացի ցքեզ , Արձակեա
[4]զժողովուրդ իմ , զի պաշտեսցեն՞ զիս .
ապա թէ ոչ կամիցիս արձակել զդա , ես
եմ ապաքէն որ սպանանիցեմ զորդի քո
զանդրանիկ ։
24 Եւ եղեւ ի ճանապարհի յիջեւանս ,
պատահեաց նմա [5]հրեշտակ Տեառն՞ եւ
25 խնդրէր սպանանել զնա։ Եւ առեալ Սեպ-
փորայի գայլախառ՝ թլփատեաց զանդ-
թլփատութիւն որդւոյն իւրոյ. եւ [6]անկ-
եալ առ ոտս նորա ասէ , Ահա եկաց ար-
26 իւն թլփատութեան մանկան իմոյ՞։ Եւ
[7]դնաց հրեշտակն ինմանէ՞. քանզի ասաց
եթէ [8]եկաց արիւն թլփատութեան մանկ-
ան իմոյ՞։
27 Եւ ասէ Տէր ցԱհարոն , Երթ ընդ առաջ
Մովսիսի յանապատն . եւ գնաց եւ պա-
տահեաց նմա ի լերինն Աստուծոյ, եւ համ-
28 բուրեաց զնա ։ Եւ պատմեաց Մովսէս Ա-
հարոնի զամենայն պատգամս Տեառն որ
առաքեաց զնա , եւ զամենայն զնշանսն
զոր պատուիրեաց նմա ։
29 Գնացին Մովսէս եւ Ահարոն եւ ժողո-
վեցին զամենայն ծերակոյտ որդւոցն Իս-
30 րայելի։ Եւ խօսեցաւ Ահարոն զամենայն
պատգամսն զոր խօսեցաւ Տէր ընդ Մով-
սիսի . եւ արար նշանս առաջի ժողովուր-
31 դեանն։ Եւ հաւատաց ժողովուրդն եւ ու-
րախ եղեւ, զի արար [5]Աստուած այց որդ-
ւոցն Իսրայելի , եւ զի հայեցաւ [9]ինեղու-
թիւն նոցա. խոնարհեցաւ ժողովուրդն եւ
երկիր եսպագ ։

ԳԼ. Ե

1 Եւ ապա մտին Մովսէս եւ Ահարոն առա-
ջի Փարաւոնի եւ ասեն ցնա, Այսպէս ասէ
Տէր Աստուած Իսրայելի, Արձակեա զժո-
ղովուրդ իմ , զի արասցեն ինձ տօն յանա-
2 պատի ։ Եւ ասէ Փարաւոն , Ո՞վ է [5]Տէր ,
որում լուայց ձայնի նորա արձակել զոր-
ս[9]ան Իսրայելի . ոչ գիտեմ զՏէրն , եւ
3 զԻսրայէլ ոչ արձակեմ։ Եւ ասեն ցնա ,
Աստուածն Եբրայեցւոց [9]կոչեաց զմեզ առ

[4] ՆԲէր. զորդի իմ զի պաշտեսցէ [5] ՆԲէր. Տէր
[6] ՆԲէր. մերձեցոյց յոտս նորա եւ ասէ , Արդարեւ
փեսայ արեան ես դու ինձ [7] ՆԲէր. եւթող զնա
[8] ՆԲէր. Փեսայ արեան ես դու ինձ վասն թլփա-
տութեան [9] ՆԲէր. պատահեաց մեզ

լինքն". արդ երթիցուք երից աւուրց ճանա-
պարհ յանապատն, զի զոհեսցուք Տեառն
Աստուծոյ մերում. գուցէ պատահիցէ մեզ
4 մահ կամ սպանումն։ Եւ ասէ ցնոսա արք-
քայն Եգիպտացւոց, Ընդէ՞ր [1]դու, Մով-
սէս եւ Ահարոն, խափանէք զժողովուրդն
ի գործոյ իւրեանց. երթայք յիւրաքան-
5 չիւր գործ իւր։ Եւ ասէ Փարաւոն, Ահա
բազմանայ յոյժ ժողովուրդն յերկրիս. արդ
մի՛ հանդարտեցուսցուք զնոսա ի գործոյ։
6 Եւ հրամայեաց Փարաւոն յաւուր յայն-
միկ գործավարաց ժողովրդեանն եւ դպրաց
7 նորա. ասէ, Մի՛ եւս յաւելուցուք տալ
յարդ ժողովրդեանն յաղիւսաբկութիւն
որպէս յերէկն եւ յեռանդ. ինքեանք եր-
8 թիցեն եւ ժողովեսցեն իւրեանց յարդ։ Եւ
զսակ զաղիւսաբկին որպէս գործէին հա-
նապազ, արկէք ի վերայ նոցա. մի՛ հա-
տանիցէք ինչ անտի. զի դատարկացան եւ
վասն այնորիկ աղաղակեն եւ ասեն, եր-
թիցուք զոհեսցուք Աստուծոյ մերում։
9 Ծանրասցի գործ մարդկանն, եւ այնմ հո-
գասցեն, եւ մի՛ հոգասցեն ի բանս սուտս։
10 պարտս։ Եւ ոտիպէրն գնոսա գործավարք
ժողովրդեանն եւ դպիրք նորա, եւ խօ-
սէին ընդ ժողովրդեանն եւ ասէին, Ա՛յս-
պէս ասէ Փարաւոն, Ոչ եւս տայ ձեզ յարդ.
11 Դուք ձեզէն երթայք ժողովեցէք ձեզ յարդ
ուստի եւ գտանիցէք. զի ոչ թողացի ձեզ
12 ի սակէն ձերմէ եւ ոչ ինչ։ Եւ սփռեցաւ
ժողովուրդն ընդ ամենայն երկիրն Եգիպ-
13 տացւոց ժողովել եղէգն առ ի յարդ։ Եւ
գործավարքն ստիպէին գնոսա եւ ասէին,
Բովանդակեցէք զգործն ձեր ըստ հանա-
պազորդ սակին, որպէս մինչ յարդն տային
14 ձեզ։ Եւ տանջեցան դպիրք ազգի որդւոցն
Իսրայելի որ կային ի վերայ նոցա՝ ի վե-
րակացուացն Փարաւոնի, զի ասէին, Թէ
Ընդէ՞ր ոչ բովանդակեցէք զսակ ալիւսոյն
ձերոյ որպէս [2]յերէկն եւ յեռանդ՝ եւ զայսր
աւուրս"։
15 Եւ մտեալ դպրաց որդւոցն Իսրայելի՛
բողոք կալան առաջի Փարաւոնի եւ ա-
սեն, Ընդէ՞ր առնես այսպէս ընդ ծառայս
16 քո։ Յարդ ոչ տան ծառայից քոց, եւ զա-
ղիւսն հրամայեն մեզ գործել. եւ ահա
ծառայք քո ի տանջանս են. [3]բուռն առ-
17 նես ժողովրդեան քում"։ Եւ ասէ ցնոսա,
Դատարկ էք, պարապորդ էք. վասն այ-
նորիկ ասէք, երթիցուք զոհեսցուք [4]Ա՛ս-
18 տուծոյ մերում"։ Արդ երթայք գործեցէք,
քանզի յարդ ոչ ոք տայ ձեզ, եւ զսակ ա-
19 ղիւսոյն բովանդակ տայցէք։ Տեսանէին
դպիրքն որդւոյն Իսրայելի զանձինս իւր-
եանց [5]ի չարչարանս եւ ասէին, Ոչ ոք թո-
ղու մեզ զսակ հանապազորդ աղիւսա-
20 թուխն"։ Պատահեցին Մովսիսի եւ Ահա-
րոնի, զի գային հանդիպ նոցա՝ ելեալք
21 յերեսաց Փարաւոնի. Եւ ասեն ցնոսա,
Տեսցէ [6]Աստուած եւ դատեսցի զձեզ. զի
գարշեցուցէք զնոտ մեր առաջի Փարա-
ւոնի եւ առաջի ծառայից նորա, տալ սուր
ի ձեռս նորա կոտորել զմեզ։
22 Դարձաւ Մովսէս առ Տէր եւ ասէ, Տէր,
ընդէ՞ր չարչարեցեր զժողովուրդն քո,
23 եւ ընդէ՞ր առաքեցեր զիս։ Եւ յորմէ հետէ
մտի առ Փարաւոն խօսել յանուն քո
չարչարեաց զժողովուրդն, եւ փրկելով,
ոչ փրկեցեր զժողովուրդ քո։

ԳԼ. Զ

1 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Այժմ տեսցես զինչ
արարից ընդ Փարաւոն. զի հզօր ձեռամբ
արձակեսցէ զդոսա, եւ բարձրացեալ բազ-
2 կաւ հանցէ զդոսա յերկրէ իւրմէ։ Խօսե-
ցաւ Աստուած ընդ Մովսիսի եւ ասէ ցնա,
3 Ես եմ Տէր. Եւ երեւեցայ Աբրահամու եւ
Իսահակայ եւ [7]Յակոբայ. Աստուած նոցա
եմ, եւ անուն իմ՝ Տէր, եւ ոչ յայտնեցի
4 նոցա։" Եւ հաստատեցի զուխտ իմ առ նո-
սա, տալ նոցա զերկիրն Քանանացւոց,
5 [8]ուր պանդխտեցանն։ Եւ ես լուայ հեծու-
թեան որդւոցդ Իսրայելի զոր Եգիպտա-
ցիքդ ծառայեցուցանեն, եւ յիշեցի զուխտն
6 իմ։ Երթ խօսեաց ընդ որդիսն Իսրայելի,
եւ ասասցես, Ես եմ Տէր. եւ հանից զձեզ
ի բռնութենէ Եգիպտացւոցդ, եւ փրկեցից
զձեզ ի ծառայութենէ դոցա, եւ ապրե-
ցուցից զձեզ բարձր բազկաւ եւ մեծ ամեհ
7 դատաստանօք։ Եւ առից զձեզ ինձ ի ժո-
ղովուրդ, եւ եղէց ձեզ Աստուած. եւ ծա-
նիջիք թէ ես եմ Տէր Աստուած ձեր, որ
հանեմ զձեզ ի բռնութենէ Եգիպտացւոցդ։
8 Եւ տարայց զձեզ յերկիրն յոր ձգեցի զձեռն
իմ տալ զնա Աբրահամու, Իսահակայ եւ
Յակոբայ, եւ տայց զնա ձեզ [9]վիճակաւ.

[1]18Եբր. գ-ի-ուե [2]Եբր. յեռանդն, երէկ և այսօր և ս
[3]Եբր. և ժողովրդեան քո է վնաս [4]Եբր. Տեառն
[5]Եբր. ի չարչարանս, իբրեւ սասցաւ եթէ Ոչ նուազեսցի ի հանապազորդ աղիւսաթուէն ձերմէ
[6]Եբր. Տէր [7]Եբր. Յակոբայ յանուն Աստուծոյ Ամենակալի, և ոչ յայտնեցայ նոցա յանուն իմ Եհովայ (Տէր) [8]Եբր. զերկիր պանդխտութեան նոցա ուր [9]Եբր. ի վիճակ, կամ, ի ժառանգութիւն

9 զի ես եմ Տէր ։ Խօսեցաւ Մովսէս այնպէս
ընդ որդիսն Իսրայելի. եւ ոչ անսացին նմա
ի կարճմտութենէ եւ ի խիստ գործոյն ։
10 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
11 Մուտ խօսեաց ընդ Փարաւոնի արքային
Եգիպտացւոց , զի արձակեսցէ զորդիսն
12 Իսրայելի յերկրէն [1]Եգիպտացւոց ։ Խօսե-
ցաւ Մովսէս առաջի Տեառն եւ ասէ, Ահա
որդիքն Իսրայելի ոչ լուան ինձ, եւ զիա՞րդ
լսիցէ ինձ Փարաւոն . եւ ես [2]չեմ խօսող
13 ոք՚՝ ։ Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
ընդ Ահարոնի , եւ ետ նոցա հրաման առ
որդիսն Իսրայելի եւ առ Փարաւոն արքայ
Եգիպտացւոց , հանել զորդիսն Իսրայելի
յերկրէն Եգիպտացւոց ։
14 Եւ այս են նահապետք տանց ազգաց
նոցա . որդիք Ռուբինի անդրանկանն Իս-
րայելի՝ Ենովք եւ Փաղլուս , Ասրոմն եւ
15 Քարմի . այս ցեղ Ռուբինի է ։ Եւ որդիք
Շմաւոնի՝ Յամուէլ եւ Յամին եւ Ահովդ եւ
Յաքին եւ Սահառ եւ Սաւուղ [3]որ ի Փիւ-
նիկեացւոյ անտի էր՚՝ . այս ցեղք են որդւոցն
16 Շմաւոնի ։ Եւ այս անուանք են որդւոցն
Ղեւեայ ըստ ազգս իւրեանց . Գերսոն ,
Կահաթ եւ Մերարի ։ Եւ ամք կենաց Ղեւե-
17 եայ հարեւր երեսուն եւ եւթն ամ ։ Եւ այս
են որդիք Գերսոնի՝ Լոբենի եւ Սեմէի ,
18 տունք նահապետաց նոցա ։ Եւ որդիք Կա-
հաթայ՝ Ամրամ եւ Սահառ եւ Քեբրոն եւ
Ոզիէլ ։ Եւ ամք կենաց Կահաթայ՝ հարեւր
19 երեսուն եւ երիք ամ ։ Եւ որդիք Մերար-
եայ՝ Մոողլի եւ Մուսի . այս են տունք
նահապետաց Ղեւեայ ըստ ազգաց իւր-
20 եանց ։ Եւ առ Ամրամ զՅովքաբէթ [4]զքոյր
հօրն իւրոյ իւր կին՝ եբեր նմա զՀարոն, եւ զՄովսէս [5]եւ զՄարիամ
քոյր նոցա՚՝ ։ Եւ ամք կենաց Ամրամայ հա-
21 րեւր երեսուն եւ եւթն ամ ։ Եւ որդիք Սա-
22 հառայ՝ Կորհ եւ Նաւիկ եւ Զեքրի ։ Եւ
որդիք Ողիելայ՝ Միսայէլ եւ Եղիսափան
23 եւ Սեթրի ։ Եւ առ Ահարոն զԵղիսաբէթ
զքոյր Ամմինադաբայ գքոյր Նաասոնի իւր
կին՝ եբեր նմա [6]զՆադաբ եւ
24 զԱբիհուդ եւ զԵղիազար եւ զԻթամար ։ Եւ
որդիք Կորհայ՝ Ասիր եւ Եղկանա եւ Աբիա-
25 սափ . սոքա են ազգք Կորհայ ։ Եւ Եղիա-
զար Ահարոնեան առ ի գաւառաց անտի
Փուտիելի իւր կին՝ եբեր նմա
զՓինէէս . սոյա են իշխանք նահապետաց
Ղեւտացւոյն ըստ տոհմս իւրեանց ։
26 Եւ այս Ահարոն եւ Մովսէս, զորս ասաց
[7]Աստուած հանել զորդիսն Իսրայելի յերկ-
րէն Եգիպտացւոց հանդերձ զօրութեամբ
27 իւրեանց ։ Եւ սոքա են որ վիճէին ընդ Փա-
րաւոնի արքային Եգիպտացւոց , հանել
զորդիսն Իսրայելի յԵգիպտոսէ, այս Մով-
28 սէս եւ Ահարոն ։ Յաւուր յորում խօսե-
ցաւ Տէր ընդ Մովսիսի յերկրին Եգիպ-
29 տացւոց ։ Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի
եւ ասէ, Ես եմ Տէր. խօսեաց ընդ Փարա-
ւոնի արքային Եգիպտացւոց զամենայն
30 ինչ զոր ասեմ քեզ ։ Եւ՞ ասէ Մովսէս ա-
ռաջի Տեառն , Անշաւասիկ ես [2]ծանրաձայն
եմ՚՝, եւ զիա՞րդ լսիցէ ինձ Փարաւոն ։

Գլ. Է

1 Եւ ասէ Տէր ցՄովսէս , Ահա եսաւ զքեզ
աստուած Փարաւոնի, եւ Ահարոն եղբայր
2 քո եղիցի քեզ մարգարէ ։ Դու խօսեացիս
ընդ նմա զամենայն ինչ զոր պատուիրեմ
քեզ, եւ Ահարոն եղբայր քո խօսեսցի ընդ
Փարաւոնի , արձակել զորդիսն Իսրայելի
3 յերկրէ իւմմէ ։ Եւ ես խստացուցից զսիրտ
Փարաւոնի, եւ յամախեցից զնշանս իմ եւ
4 զարուեստս յերկրիդ Եգիպտացւոց։ Եւ ոչ
լուիցէ ձեզ Փարաւոն . եւ արկից զձեռն
իմ յԵգիպտոս, եւ հանից [8]հանդերձ զօրու-
թեամբ իմով՚՝ զժողովուրդ իմ , զորդիսն
Իսրայելի , յերկրէն Եգիպտացւոց , մեծաւ
5 վրէժխնդրութեամբ ։ Եւ ծանիցեն Եգիպ-
տացիքն, թէ ես եմ Տէր. եւ ձգեցից զձեռն
իմ յԵգիպտոս , եւ հանից զորդիսն Իսրա-
6 յէլ ի միջոյ նոցա ։ Եւ արարին Մովսէս եւ
Ահարոն , որպէս եւ պատուիրեաց նոցա
7 Տէր , նոյնպէս եւ արարին ։ Եւ Մովսէս էր
ամաց ութսնից , եւ Ահարոն էր որդի ա-
մաց ութսուն եւ երից , յորժամ խօսեցան
ընդ Փարաւոնի ։
8 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ
9 Ահարոնի եւ ասէ , Եթէ խօսեսցի ընդ ձեզ
Փարաւոն եւ ասասցէ , Տուք մեզ նշան
կամ արուեստս , ասասցես ցԱհարոն [5]եղ-
բայր քո՚՝, Առ դու զպաւազանդ, եւ ընկեա
զդա ի գետին առաջի Փարաւոնի [5]եւ ծա-
10 ռայիցէ նորա՚՝, եւ եղիցի վիշապ ։ Մտին
Մովսէս եւ Ահարոն առաջի Փարաւոնի ,
եւ արարին այնպէս, որպէս պատուիրեաց
նոցա Տէր. եւ ընկէց Ահարոն զպաւազանն

[1]Եբր. իբրեւ [2]Եբր. անթլփատ եմ շրթամբք
[3]Եբր. որդի կնոջ Քանանացւոյ [4]Եբր. զքոյր
[5]Եբր. պոյտ [6]Եբրայեցին առնէ նադաբ առ
ե ածեալն առբեւ առ Հայն ընթերցու զկա նադաբ
[7]Եբր. Տէր [8]Եբր. զզօրս իմ,

առաջի Փարաւոնի եւ առաջի ծառայից
11 նորա , եւ եղեւ վիշապ : Եւ կոչեաց Փա-
րաւոն զիմաստունս [1]Եգիպտացւոց եւ
զկախարդս . եւ արարին դէտքն Եգիպ-
տացւոց կախարդութեամբ իւրեանց նոյն-
12 պէս : Եւ ընկէց իւրաքանչիւր ոք զգաւա-
զան իւր եւ եղեն վիշապք . եւ եկուլ գա-
13 ւազանն Ահարոնի զգաւազանս նոցա : Եւ
կարծրացաւ սիրտն Փարաւոնի, եւ ոչ
լուաւ նոցա , որպէս խօսեցաւ Տէր :
14 Եւ ասէ Տէր ցՄովսէս , Մանրացեալ է
սիրտն Փարաւոնի չարձակել զժողովուրդն :
15 Երթ առ Փարաւոն ընդ առաւօտն . ահա
նա ելանէ ի ջուրն . եւ կացցես հանդիպ
նորա առ եզերբ գետոյն , եւ զգաւազանն
16 որ դարձաւ յօձ՝ առցես ի ձեռին քումմ, Եւ
ասասցես ցնա , Տէր Աստուած Եբրայե-
ցւոց առաքեաց զիս առ քեզ եւ ասէ , Ար-
ձակեա զժողովուրդ իմ զի պաշտեսցին զիս
յանապատի. եւ ահա ոչ լուար մինչեւ
17 ցայժմ : Այսպէս ասէ Տէր, Այդու գիտաս-
ցես թէ ես եմ Տէր. ահաւասիկ ես հարկա-
նեմ գաւազանաւս որ ի ձեռին իմում է՝
18 զջուրս գետոյդ , եւ դարձցի յարիւն . Եւ
ձկունք որ ի գետ այդր են՝ սատակեսցին,
եւ նեխեսցի գետդ . եւ ոչ կարասցեն Ե-
գիպտացիք ըմպել ջուր ի գետոյ այնմ :
19 Եւ ասէ Տէր ցՄովսէս , Ասա ցԱհարոն,
Առ զգաւազանդ եւ ձգեա զձեռն քո ի վե-
րայ ջրոցդ [2]Եգիպտոսի եւ ի վերայ" գետոց
նոցա եւ ի վերայ լճից նոցա եւ ի վերայ
խաղից նոցա եւ ի վերայ ջրակուսաց նո-
ցա , եւ եղիցի արիւն : Եւ [3]եղիցի արիւն
յամենայն երկրին Եգիպտացւոց, ի փայտս
20 եւ ի քարինս : Եւ արարին այնպէս Մով-
սէս եւ Ահարոն որպէս եւ պատուիրեաց
նոցա Տէր . եւ վերացուցեալ զգաւազանն
իւր՝ եհար զջուրս գետոյն առաջի Փարա-
ւոնի եւ առաջի ծառայից նորա , եւ դար-
21 ձոյց զամենայն ջուրս գետոյն յարիւն : Եւ
ձկունք որ ի գետ անդր էին՝ սատակեցան,
եւ նեխեցաւ գետն, եւ ոչ կարէին Եգիպ-
տացիքն ըմպել ջուր ի գետոյ անտի. եւ էր
արիւն յամենայն երկրին Եգիպտացւոց :
22 Եւ արարին այնպէս եւ գէտքն Եգիպ-
տացւոց կախարդութեամբն իւրեանց, եւ
խստացաւ սիրտն Փարաւոնի եւ ոչ լուաւ
23 նոցա, որպէս ասաց Տէր: Դարձաւ Փարա-
ւոն եւ եմուտ ի տունն իւր, եւ ոչ հաստա-
24 տեաց զմիտս իւր եւ ոչ այնու եւս : Եւ փո-

բոլոր ամենայն Եգիպտացիքն չուրջ զգե-
տովն ջուր ըմպելոյ, [4]եւ ոչ կարէին ըմպել
25 ջուր իգետոյ անտի : Եւ լցան աւուրք
եւթն յետ հարկանելոյ Տեառն զգետն :

Գ Լ . Ը

1 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Մուտ առ Փարա-
ւոն եւ ասասցես ցնա , Այսպէս ասէ Տէր,
Արձակեա զժողովուրդ իմ, զի պաշտեսցեն
2 զիս : Ապա թէ ոչ կամիս զոր արձակել ,
ահա ես հարից զամենայն սահմանս քո
3 գորտիւ : Եւ բղխեսցէ գետդ գորտ , եւ ել-
եալ մտանիցեն ի տունս քո եւ [5]ի չտնմա-
րանս սենեկայ քոյ" եւ ի գահոյս քո , եւ
ի տունս ծառայից քոյ եւ ժողովրդեան
քո , եւ ի թոնիրս քո եւ ի զանգուածս քո:
4 Եւ ի վերայ քո , եւ ի վերայ ժողովրդեան
քո , եւ ի վերայ ծառայից քոյ ելանիցեն
գորտք :
5 Եւ ասէ Տէր ցՄովսէս , Ասա ցԱհարոն
եղբայր քո , Զգեա ձեռամբ քով զգաւա-
զանդ քո ի վերայ գետոյն եւ ի վերայ ջրա-
րձից եւ ի վերայ խաղից , եւ հանիցես
6 գորտ ի վերայ երկրիւ Եգիպտացւոց : Եւ
ձգեաց Ահարոն զձեռն իւր ի վերայ ջրոցն
Եգիպտացւոց, եւ [1]հանան գորտք". եւ գորտն
7 եւ ծածկեաց զերկիրն Եգիպտացւոց : Ա-
բարին նոյնպէս եւ գէտքն Եգիպտացւոց
կախարդութեամբքն իւրեանց եւ հանին
գորտ յերկրին Եգիպտացւոց :
8 Կոչեաց Փարաւոն զՄովսէս եւ զԱհա-
րոն եւ ասէ, Ազօթս արարէք առ Տէր, եւ
ի բաց արասցէ զգորտս յինէն եւ ի ժողո-
վրդենէ իմմէ , եւ արձակիցից զժողո-
9 վուրդդ , եւ զոհեսցեն Տեառն : Եւ ասէ
Մովսէս ցՓարաւոն , Ժամ դիր ինձ , առ
երր արարից ազօթս վասն քո եւ ծառայից
քոց եւ ժողովրդեան քո, սատակել զգորտդ
ի քէն եւ [6]ի ժողովրդենէ քումմէ եւ ի
տանց ձերոց", բայց միայն ի գետ անդր
10 մնասցեն: Եւ նա ասէ, Առ վաղիւ : Եւ ա՛ս
ասէ, Որպէս ասացեր եղիցի. զի գիտաս-
ցես եթէ չիք [7]այլ ոք բայ ի Տեառնէ Աս-
11 տուածոյ մերմէ", Եւ բարձցին գորտքդ ի
քէն եւ ի տանց քոց , եւ ի ծառայից քոց
եւ ի ժողովրդենէ քումմէ , բայց միայն ի
12 գետ անդր մնասցեն : Եւ ելին Մովսէս եւ
Ահարոն ի Փարաւոնէ , եւ աղաղակեաց

[1]ՅԵբբ. գ-լ--ե [2]ՅԵբբ. եգիպտացւոց, ի վերայ
[3]ՅԵբբ. եղիցի
[4]ՅԵբբ. զի [5]ՅԵբբ. ի սենեակ անկողնոյ քո [6]ՅԵբբ.
ի տանց քոց [7]ՅԵբբ. իբրեւ զՏէր Աստուած մեր

Մովսէս առ Տէր վասն [1]ժամադրութեան գորտոյն, որպէս ժամադիր եղեւ" Փա-
13 րաւոնի ։ եւ արար Տէր որպէս եւ ասացն Մովսէս . եւ սատակեցաւ գորտն ի տանց
14 եւ ի սրահից եւ յանդաց ։ եւ ժողովեցին զնոսա կոյտս կոյտս, եւ նեհեցաւ երկիրն։
15 Իբրեւ ետես Փարաւոն եթէ եղեւ դիւրութիւն, ծանրացաւ սիրտ նորա եւ ոչ լուաւ
նոցա , որպէս եւ խօսեցաւ Տէր ։
16 Եւ ասէ Տէր ցՄովսէս , Ասա ցԱհարոն, Թէ Զգեա [2]զեռամբ քով" զգաւազանդ եւ
հար զհող երկրիդ. եւ եղիցի մուն [1]ի մարդ եւ յանասուն , եւ" յամենայն երկրիդ Ե-
17 գիպտացւոց։ Եւ արարին այնպէս. Ձգեաց Ահարոն զեռամբ իւրով զգաւազանն եւ
հար զհող երկրին , եւ եղեւ մուն ի մարդ եւ յանասուն , [3]եւ յամենայն հող" երկրին
18 Եգիպտացւոց։ Արարին նոյնպէս եւ զէնքն կախարդութեամբքն իւրեանց հանել մուն,
եւ ոչ կարէին . Եւ եղեւ մուն ի մարդ եւ
19 յանասուն ։ Եւ ասին զէնքն ցՓարաւոն , Մատն Աստուծոյ է այդ . Եւ խստացաւ
սիրտն Փարաւոնի, եւ ոչ լուաւ նոցա, որ-
պէս եւ խօսեցաւ Տէր ։
20 Եւ ասէ Տէր ցՄովսէս , Կանխեա ընդ
առաւօտն եւ կաց առաջի Փարաւոնի . եւ
ահա նա ելանէ ի ջուր անդր. եւ ասասցես
ցնա , Այսպէս ասէ Տէր , Արձակեա զժո-
21 ղովուրդ իմ զի պաշտեսցեն զիս. Ապա թէ
ոչ կամիցիս արձակել զժողովուրդ իմ, ա-
հա ես առաքեմ ի վերայ քո եւ ի վերայ
ծառայից քոց եւ ի վերայ ժողովրդեան քո
եւ ի վերայ տանց ձերոց չանաճանճ . Եւ
լցցին տունք եգիպտացւոցդ չանաճանճիւ,
22 եւ երկիրն յորում իցեն ի նմա ։ Եւ սքան-
չելի արարից յաւուրն յայնմիկ զերկիրն
Գեսեմ, յորում ժողովուրդն իմ իցէ , եւ
մի լիցի անդ չանաճանճ. զի գիտասցես Թէ
23 ես եմ Տէր, [4]Տէր ամենայն" երկրի։ Եւ տաց
խարոյց ի մէջ ժողովրդեան իմոյ եւ ի մէջ
ժողովրդեան քո. եւ վաղիւ եղիցի նշանդ
24 այդ [1]ի վերայ երկրիդ"։ Եւ արար Տէր այն-
պէս . Եւ եկն չանաճանճ բազում ի տունս
Փարաւոնի եւ ի տունս ծառայից նորա
եւ յամենայն երկիրն Եգիպտացւոց . Եւ
սատակեցաւ երկիրն իչանաճանճէ անտի։
25 Եւ կոչեաց Փարաւոն զՄովսէս եւ զԱ-
հարոն, եւ ասէ, Երթայք զոհեցէք [2]Տեառն
Աստուծոյ ձերում աստէն ի սմին երկրիս։
26 Եւ ասէ Մովսէս , Չէ մարթ այդմ լինել
եթէ զպարշելիս Եգիպտացւոցդ զոհիցեմք
Տեառն Աստուծոյ մերում. քանզի եթէ
զոհիցեմք զպարշելիս Եգիպտացւոցդ ա-
27 նաչք նոցա , քարկոծ առնեն զմիզ ։ Այլ
երթիցուք երկօրեայ ճանապարհ յանա-
պատ , եւ զոհեսցուք Տեառն Աստուծոյ
28 մերում , որպէս ասէ [5]ասաց միզ Տէր" ։ Եւ
ասէ Փարաւոն , Ես արձակեմ զձեզ , եւ
զոհեսջիք Տեառն Աստուծոյ ձերում յա-
նապատի. այլ մի՛ ուրեք հեռի ձգիցիք եր-
թալ . Եւ արդ աղօթս արարէք վասն իմ
29 [1]առ Տէր"։ Եւ ասէ Մովսէս, Ես ելից ի քէն
եւ աղօթս արարից առ [6]Աստուած , Եւ փա-
րաւոսի չանաճանճդ ի Փարաւոնէ եւ ի
ծառայից իւրոց եւ ի ժողովրդենէ իւրմէ
վաղիւ . բայց մի՛ եւս խաբեսցէ Փարաւոն
առ ի չարձակել զժողովուրդդ զոհել
30 Տեառն ։ Եւ Մովսէս ի Փարաւոնէ, եւ եկաց
31 յաղօթս առ [6]Աստուած ։ Եւ արար Տէր որ-
պէս եւ ասացն Մովսէս . Եւ վարատեաց
զչանաճանճն ի Փարաւոնէ եւ ի ծառայից
նորա եւ ի ժողովրդենէ նորա. եւ ոչ մնաց
32 եւ ոչ մի։ Եւ ծանրացոյց Փարաւոն զսիրտ
իւր եւ ի ժամանակին յայնմիկ, եւ ոչ կա-
մեցաւ արձակել զժողովուրդն ։

ԳԼ . Ք

1 Եւ ասէ Տէր ցՄովսէս , Մուտ առ Փա-
րաւոն եւ ասասցես ցնա, Այսպէս ասէ Տէր
Աստուածն Եբրայեցւոց , Արձակեա զժո-
2 ղովուրդ իմ զի պաշտեսցեն զիս. Ապա թէ
ոչ կամիս արձակել զժողովուրդ իմ , այլ
3 տակաւին ունիցիս զդա, Ահա ձեռն Տեառն
եղիցի ի խաչինս քո որ ի դաշտի են , եւ ի
ձիս եւ յեզս եւ յուղտս եւ յարջառս եւ յոչ-
4 խար մահու մեծաւ յոյժ ։ Եւ [7]արարից ես
սքանչելիս" ի մէջ խաչանցն Եգիպտաց-
ւոց , եւ ի մէջ խաչանցն Իսրայելի , եւ ոչ
ծախեսցի [8]յամենայն որդւոցն Իսրայելի
5 կորնչիլ ։ Եւ ժամանակեաց [6]Աստուած եւ
ասէ , Վաղիւ արասցէ Տէր զբանդ զայդ ի
6 վերայ երկրիդ։ Եւ արար Տէր զբանն զայն
ի վաղիւ անդր , եւ սատակեցաւ ամենայն
անասուն Եգիպտացւոցն . բայց յանասնոց
որդւոցն Իսրայելի ոչ ծախեցաւ եւ ոչ մինչ։
7 Իբրեւ ետես Փարաւոն , Թէ ոչ ծախեցաւ
յանասնոց որդւոցն Իսրայելի եւ ոչ մինչ ,
ծանրացաւ սիրտ նորա , եւ ոչ արձակեաց
զժողովուրդն ։

---

[1]Նբբ. գորտոյն զոր ած ի վերայ [2]Յնբբ. դարձ
[3]Նբբ. ամենայն հող երկրին եղեւ մուն , յա-
մենայն [4]Նբբ. ի մէջ
[5]Նբբ. ասասցէ միզ [6]Նբբ. Տէր [7]Նբբ. բաժա-
նեսցէ Տէր [8]Նբբ. յամենայնէ

8 Ասեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ընդ Ա-
հարոնի եւ ասէ , Առէք դուք լի ձեռօք
ձերովք մոխիր հնոցի , եւ ցանեսցէ զայն
Մովսէս ընդ երկինս առաջի Փարաւոնի
9 [1]եւ առաջի ծառայից նորա՝։ Եւ եղիցի
փոշի ընդ ամենայն երկիրս Եգիպտացւոց.
եւ եղիցի ի մարդ եւ յանասուն կիզ , ե-
ռասցեն խաղաւարտք , [2]իմարդ եւ յանա-
սուն՝ յամենայն երկիրս Եգիպտացւոց ։
10 Եւ առին զմոխիր հնոցին [2]առաջի Փարա-
ւոնի . եւ ցանեաց զայն Մովսէս ընդ եր-
կինս . եւ եղեւ կիզ , խաղաւարտք եռաց-
11 եալք , ի մարդ եւ յանասուն ։ Եւ ոչ կա-
րէին կախարդքն կալ առաջի Մովսէսի
վասն կիզին. քանզի եղեւ կիզն եւ ի կա-
խարդսն , եւ յամենայն [3]երկիրն Եգիպ-
12 տացւոց՝։ Եւ խոստացոյց Տէր զսիրտ Փա-
րաւոնի, եւ ոչ լուաւ նոցա , որպէս եւ ա-
սաց Տէր ցՄովսէս ։

13 Եւ ասէ Տէր ցՄովսէս , Կանխեա ընդ
առաւօտն, եւ կաց առաջի Փարաւոնի, եւ
ասասցես ցնա, Այսպէս ասէ Տէր Աստուած
Եբրայեցւոց , Արձակեա զժողովուրդ իմ
14 զի պաշտեսցեն զիս. Քանզի յայսմ ժամա-
նակի առաքեցից ես զամենայն պատա-
հարս ի սիրտ քո եւ ծառայից քոց եւ ժո-
ղովրդեան քո . զի դիտասցես [4]մէկ չիք ոք
15 իրրեւ զիս յամենայն երկրի։ Քանզի ձգեալ
զձեռն իմ հարից զքեզ եւ զժողովուրդ քո
16 մահաւամբ , եւ սատակեսցես յերկրէ ։ Եւ
վասն այնորիկ [4]պահեցար , զի ի քեզ ցու-
ցից զզօրութիւն իմ , եւ զի պատմեսցի
17 անուն իմ ընդ ամենայն երկիր ։ Եւ դու
տակաւին [5]թէ արկ՞ս զժողովրդեանդ իմ
18 մուլ չարչարել՝ զդոսա։ Եւ ես ահա տեղա-
ցից վաղիւ յայսմ ժամու կարկուտ սաս-
տիկ յոյժ, որպիսի ոչ եղեւ ցեղիպտոս յօրէ
19 յորմէ հաստատեցաւ մինչեւ ցայսօր ։ Եւ
արդ փութա ժողովել զանասունս քո եւ որ
ինչ իցէ քո ի դաշտի . զի ամենայն մարդ
եւ անասուն որ գտցի ի դաշտի եւ ոչ մտցէ
ի տուն , անկցի ի վերայ նոցա կարկուտն
20 եւ [6]սատակեսցէ ։ Որ միանգամ երկեաւ ի
բանէ Տեառն ի ծառայիցն Փարաւոնի, ժո-
ղովեաց զծառայս իւր եւ զանասունս ի
21 տուն , Եւ որ ոչն անսաց ի միտս իւր բա-
նիցն Տեառն, եթող զծառայս իւր եւ զա-
նասունն իւր ի դաշտի ։

22 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Զգնա զձեռն քո
յերկինս , եւ եղիցի կարկուտ ի վերայ ա-
մենայն երկրիդ Եգիպտացւոց , ի վերայ
մարդկան եւ անասնոյ , եւ ի վերայ ամե-
նայն բանջարոյ որ է ի դաշտի երկրիդ Ե-
23 գիպտացւոց ։ Եւ ձգեաց Մովսէս [7]զձեռն
իւր յերկինս. եւ ետ Տէր բարբառս եւ կար-
կուտ, եւ ընթանայր հուր ընդ երկիրն. եւ
եհեղաց Տէր կարկուտ ի վերայ երկրին Ե-
24 գիպտացւոց ։ Էր կարկուտ եւ հուր բոր-
բոքեալ ի մէջ կարկտին . եւ կարկուտն
սաստիկ էր յոյժ , որպիսի ոչ եղեւ յամե-
նայն երկրին Եգիպտացւոց , յորմէ հետէ
25 եղեալ էր ի վերայ նորա ազգ։ Եհար կար-
կուտն յամենայն երկրին Եգիպտացւոց
զամենայն որ ինչ էր ի դաշտի ի մարդոյ
մինչեւ յանասուն , եւ զամենայն բանջար
որ ի դաշտի էր՝ եհար կարկուտն , եւ զա-
մենայն փայտ որ ի դաշտս՝ մանրեաց ։
26 Բայց յերկրին Գեսեմ , ուր էին որդիքն
27 Իսրայէլի , ոչ եղեւ կարկուտ ։ Եւ առաք-
եալ Փարաւոնի կոչեաց զՄովսէս եւ զԱ-
հարոն եւ ասէ ցնոսա , [8]Մեղայ . այսու-
հետեւ՝ Տէր արդար է , եւ ես եւ ժողո-
28 վուրդ իմ ամպարիշտք ։ Կացէք յաղօթս
վասն իմ առ Տէր , եւ զադարեսցին ի լի-
նելոյ ձայնքն Աստուծոյ եւ կարկուտն եւ
հուր . եւ արձակեցից զձեզ , եւ ոչ ևս
29 յաւելուցուք մնալ ։ Եւ ասէ ցնա Մովսէս,
Այժմ իրրեւ ելից ըստ քաղաքս՝ ձգեցից
զձեռս իմ առ [9]Աստուած, եւ ձայնքն դա-
դարեսցեն , եւ կարկուտն եւ անձրեւ ոչ
ևս լիցի . զի ծանիցես թէ Տեառն է եր-
30 կիր ։ Եւ դու եւ ծառայք քո գիտեմ թէ
չեւ ևս երկերեսք ի Տեառնէ Աստուծոյ ։
31 Կտաւն եւ գարին հարաւ. զի գարին յած
32 կայր եւ կտաւն ծիրանացեալ էր։ Եւ ցոր-
ենոյն եւ հաճար ոչ հարան, զի անդաստան էին։
33 Եւ ել Մովսէս ի Փարաւոնի արտաքս
քան զքաղաքն , եւ ձգեաց զձեռն իւր առ
Տէր , եւ զադարեցին ձայնքն եւ կար-
կուտն , եւ անձրեւ ոչ ևս կաթեաց յեր-
34 կիր։ Իրրեւ եհաս Փարաւոն եթէ զադար-
եաց անձրեւն եւ կարկուտ եւ ձայնքն ,
յաւել ի մեղանչել , եւ ծանրացոյց զսիրտ
35 իւր [10]եւ զծառայից իւրոց՝։ Եւ խոստացաւ
սիրտն Փարաւոնի եւ ոչ արձակեաց զորդ-
իսն Իսրայէլի , որպէս խոսեցաւ Տէր ի
ձեռն Մովսէսի ։

---

[1]Յիբբ. պռ-ռ [2]Ոիբբ. և կացին առաջի [3]Ոիբբ. Եգիպտացիս [4]Ոիբբ. յարուցի զքեզ [5]Ոիբբ. խրոխտա՞ս ի վերայ ժողովրդեան իմոյ չարձակել [6]Ոիբբ. սատակեսցին

[7]Ոիբբ. զգաւազան [8]Ոիբբ. Մեղայ զայս նուագ . [9]Ոիբբ. Տէր [10]Ոիբբ. որպէս և ծառայք նորա

ԳԼ. Ի

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ, Մուտ առ Փարաւոն, դի ես խստացուցի զսիրտ նորա եւ զսիրտ ծառայից նորա, դի կարասցեն եկեսցեն նշանքս իմ ի վերայ նո-
2 ցա. Որպէս դի պատմիցէք յականջս որդւոց ձերոց, եւ որդւոց որդւոց ձերոց, որչափ խաղացի ընդ Եգիպտացիսդ, եւ զնշանս իմ զոր արարի ի նոսա, եւ ծանիջիք թէ ես եմ Տէր:
3 Մտին Մովսէս եւ Ահարոն առաջի Փարաւոնի, եւ ասեն ցնա, Այսպէս ասէ Տէր Աստուածն Եբրայեցւոց, Մինչեւ յո՞րդ ոչ կամիցիս [1]ամաչել յինէն". արձակեա զժո-
4 ղովուրդ իմ դի պաշտասցեն զիս: Ապա թէ ոչ կամիցիս զոյ արձակել զժողովուրդ իմ, ահաւասիկ ես ածից ի սոյն ժամու վաղիւ մարախ [2]սաստիկ ի վերայ [2]ամենայն սահ-
5 մանաց քոց. Եւ ծածկեսցէ [3]զամենայն երեսս երկրի, եւ ոչ կարիցես" տեսանել զերկիր. եւ կերիցէ զամենայն նչխարն զոր եմոց ձեզ կարկտան, եւ կերիցէ զամենայն փայտ բուսեալ ձեզ ի վերայ երկրի:
6 Եւ լցցին տունք քո եւ տունք ամենայն ծառայից քոց, եւ տունք յամենայն երկրիսդ Եգիպտացւոց. զոր ոչ երբեք տեսին հարք ձեր եւ ոչ հարք նոցա, յորմէ օրէ եղեն յերկրի մինչեւ ցայսօր: Եւ խոյս առեալ ել ի Փարաւոնէ:
7 Ասեն ցնա ծառայքն Փարաւոնի, Մինչեւ ե՞րբ իցէ մեզ խոչդ այդ. արձակեա զմարդիկն զի պաշտասցեն զՏէր Աստուած իւրեանց. եթէ գիտե՞լ կամիցիս զի կորիւս-
8 եգիպտոս: Եւ դարձուցին զՄովսէս եւ զԱհարոն առ Փարաւոն. եւ ասէ ցնոսա, Երթայք պաշտեցէք զՏէր Աստուած ձեր.
9 բայց ո՞վ եւ ո՞վ իցեն որ երթայցեն: Եւ ասէ Մովսէս, Երիտասարդօք հանդերձ եւ ծերովք մերովք երթիցուք. ուստերօք եւ դստերօք մերովք, արջառով եւ ոչխարով մերով երթիցուք, զի տօն [4]է Տեառն Աս-
10 տուածոյ մերոյ": Եւ ասէ ցնոսա, Եղիցի այդպէս, Տէր ընդ ձեզ, [5]քանզի արձակեմ զձեզ. միթէ եւ զտասցուածս ձեր. տեսա-
11 նէք զի չարիք կան իձեզ": Մի այդպէս. այլ երթիցեն արք եւեթ, եւ [6]պաշտեցեն զԱս-

տուած", քանզի զայդ իսկ խնդրէիք դուք: Եւ հանին զնոսա յերեսաց Փարաւոնի:
12 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Զգեա զձեռն քո ի վերայ երկրիդ Եգիպտացւոց, եւ ելցէ մարախ ի վերայ երկրիդ Եգիպտացւոց, եւ կերիցէ զամենայն բանջար երկրիդ, [2]եւ զամենայն պտուղ ծառոց" զոր եթող
13 կարկուտն: Եւ ամբարձ Մովսէս [7]զձեռն իւր յերկինս". եւ ած Տէր հողմ [8]հարաւոյ յերկիր զսիւն ամենայն եւ զղիչերն ամենայն. իրրեւ առաւօտ եղեւ, եւ հողմ [8]հարաւոյ առ զմարախն:
14 Եւ [9]հնձան յամենայն երկիրն Եգիպտացւոց, եւ [10]դադարեցոյց ի վերայ ամենայն սահմանացն Եգիպտացւոց. յառաջ քան զայն ոչ եղեւ այնպիսի մարախ, եւ յետ անորիկ ոչ [11]եղեւ այն-
15 պիսի: Եւ ծածկեաց զամենայն երեսս երկրին, եւ [12]ապականեցաւ երկիրն", եւ եկեր զամենայն բանջար երկրին եւ զամենայն պտուղ ծառոց որ մնաց ի կարկտէ անտի. եւ ոչ մնաց կանաչ, ոչ ի ծառս եւ ոչ յամենայն բանջար դաշտի յամենայն երկրին Եգիպտացւոց:
16 Եւ փութացաւ Փարաւոն կոչել զՄովսէս եւ զԱհարոն, եւ ասէ, Մեղայ առաջի
17 Տեառն Աստուծոյ ձերոյ եւ ձեզ. Արդ նե-րեցէք այսմ եւս յանցանսդ իմոց, եւ աղաչեցէք առ Տէր Աստուած ձեր, եւ [13]վաս-
18 րտասցէ յինէն զմարախս" զայս: Եւ ել Մովսէս ի Փարաւոնէ, եւ եկաց յաղօթս
19 առ [14]Աստուած: Եւ դարձոյց Տէր հողմ սաստիկ [15]ի ծովէ, եւ առ զմարախն եւ ամայ ի ծովն Կարմիր, եւ ոչ մնաց մարախ
20 յամենայն երկրին Եգիպտացւոց: Եւ խստացոյց Տէր զսիրտն Փարաւոնի, եւ ոչ արձակեաց զորդիսն Իսրայելի:
21 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Զգեա զձեռն քո յերկինս, եւ եղիցի խաւար ի վերայ երկրիդ Եգիպտացւոց, խաւար չօչափելի:
22 Զգեաց Մովսէս զձեռն իւր յերկինս, եւ եղեւ խաւար եւ մէգ եւ մութ ի վերայ ամենայն երկրին Եգիպտացւոց զերիս աւուրս.
23 Եւ ոչ ոք տեսանէր զեղբայր իւր [2]զերիս աւուրս", եւ ոչ յարեաւ ոք յանկողնէ իւրմէ զերիս աւուրս. բայց ամենայն որդւոցն Իսրայելի լոյս էր յամենայն բնակութիւնս իւրեանց:

---

[1]ԵԲԲ. խոնարհել առաջի իմ [2]ՅԵԲԲ. գոյ-ե [3]ԵԲԲ. զերեսս երկրի. և չիցէ մարթի [4]ԵԲԲ Տեառն է մեզ [5]ԼԲԲ. եթէ արձակեցից զձեզ և զողխ ձեր, տեսէք զի չարիք կան առաջի ձեր [6]ԵԲԲ. պաշտեցէք զՏէր [7]ԵԲԲ. զգաւազան իւր ի վերայ երկրին Եգիպտացւոց [8]ԵԲԲ. արեւելից [9]ԵԲԲ. ելին [10]ԵԲԲ. Հանգեան [11]ԵԲԲ. եղիցի [12]ԵԲԲ. եղեւ խաւար յերկրին [13]ԼԲԲ. բարձցէ միայն յինէն զմահս [14]ԼԲԲ. Տէր [15]Կամ, յարեւմտից

24 Եւ կոչեաց Փարաւոն զՄովսէս [1]եւ
զԱհարոն՝ եւ ասէ [1]ցնոսա, Երթայք պաշ-
տեցէք զՏէր [1]Աստուած ձեր՝, բայց զոր-
ջան եւ զոչխար ձեր առէք մնացէք, եւ
25 այլ ազիք ձեր երթիցին ընդ ձեզ։ Եւ
ասէ Մովսէս, Նա եւ դու եւս ասացես
մեզ ողջակէզս եւ զոհս զոր առնիցեմք
26 Տեառն Աստուծոյ մերում։ Այլ մեր ա-
նասունք իսկ երթիցեն ընդ մեզ, եւ ոչ թո-
զուցուք եւ ոչ կճղակ մի. քանզի ի
նոցանէ առնուցուք պաշտել զՏէր Աս-
տուած մեր. եւ մեք ոչ գիտեմք զինչ
մատուցանիցեմք Տեառն [1]Աստուծոյ մե-
27 րում՝ մինչեւ անդր հասանիցեմք։ Եւ
խոստացաւ Տէր զսիրտն Փարաւոնի, եւ
28 ոչ կամեցաւ արձակել զնոսա։ Եւ ասէ
Փարաւոն, Ի բաց գնա յինէն. զգոյշ լեր
անձին քումմէ, մի՛ եւս յաւելուցուս տես-
անել զերեսս իմ. գի յորում աւուր երեւիս
29 դու ինձ, մեռանիս։ Եւ ասէ Մովսէս,
[2]Ասացեր. ոչ եւս երեւեցայց երեսաց քոց։

ԳԼ. ԺԱ

1 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Այլ մեւս եւս հա-
րուածս ածից ի վերայ Փարաւոնի եւ ի վե-
րայ Եգիպտոսի, եւ ապա արձակեսցէ զձեզ
ասաի. այլ յորժամ արձակեսցէ զձեզ, ա-
2 մենեւին հանցէ զձեզ ասաի։ Արդ խօս-
եաց [1]գաղտ յականջս ժողովրդեանն, եւ
խնդրեսցին իւրաքանչիւր ոք յընկերէ
իւրմէ եւ կին ի դրացւոյ իւրմէ անօթս ոս-
կեզէնս եւ անօթս արծաթեղէնս [1]եւ հան-
3 զերձա՛։ Եւ ետ Տէր շնորհս ժողովրդեան
իւրում առաջի Եգիպտացւոցն, [1]եւ եւս-
նոցա ի գործ.՝ եւ այրն Մովսէս մեծապոյ
եղեւ յոյժ [3]առաջի Եգիպտացւոցն եւ ա-
ռաջի Փարաւոնի, եւ առաջի ամենայն
ծառայից նորա՛, եւ յաչս ժողովրդեանն։
4 Եւ ասէ Մովսէս, Այսպէս ասէ Տէր,
Զհասարակ ղիշերաւ ես մտից ի մէջ Ե-
5 գիպտոսի. Եւ ոտասկեսցի ամենայն անդ-
րանիկ յերկրին Եգիպտացւոց, յանդրանիկէ
անաի Փարաւոնի որ նստաի յաթոռ նորա,
մինչեւ ցանդրանիկ ագախնայն որ կայցէ
առ երկանս, եւ մինչեւ ցանդրանիկ ամե-
6 նայն անասնոց։ Եւ եղիցի ագաղակ մեծ
յամենայն երկրին Եգիպտացւոց, որպիսի
ոչ եղեւ եւ ոչ եւս յաւելուցու լինել նոյն-
7 պիսի։ Եւ [4]ի մէջ ամենայն՝ որդւոցն Իս-

[1] 3ԵԲԲ. պակաս [2] ԵԲԲ. Ահ զիս ասացեր [3] ԵԲԲ. յերկրին Եգիպտացւոց, յաչս ծառայից Փարաւոնի [4] ԵԲԲ. ումեք յամենայն

րայելի ոչ կատչեսցէ եւ ոչ չուն մի լեզուաւ
իւրով, եւ ոչ ի մարդոյ մինչեւ յանասունն.
զի [5]գիտասցես որչափ զինչ աջանչելիս ա-
րասցէ՝ Տէր ի մէջ Եգիպտացւոցդ եւ ի մէջ
8 Իսրայելի։ Եւ իջցեն ամենայն ծառայքս
քո այսոքիկ առ իս, եւ երկիր պագցեն ինձ
եւ ասասցեն, Ել դու եւ ամենայն ժողո-
վուրդ քո, որոյ դուք առաջնորդես. եւ
ապա ելից։ Եւ ել Մովսէս ի Փարաւոնէ
ի բարկութեամբ։
9 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Ոչ լսիցէ ձեզ
Փարաւոն, զի յաճախեցից զնշանս իմ [1]եւ
10 զարուեստս՝ յերկրին Եգիպտացւոց։ Եւ
Մովսէս եւ Ահարոն արարին զամենայն
նշանս [6]եւ զարուեստս զայսոսիկ յերկրին
Եգիպտացւոց՝ առաջի Փարաւոնի. եւ
խստացոյց Տէր զսիրտն Փարաւոնի, եւ ոչ
կամեցաւ արձակել զորդիսն Իսրայելի
յերկրէն [7]Եգիպտացւոց։

ԳԼ. ԺԲ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ընդ
Ահարոնի յերկրին Եգիպտացւոց, եւ ասէ,
2 Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց. ա-
3 ռաջին եղիցի ձեզ յամիսս տարւոց։ [8]Խօս-
եաց ընդ ամենայն ժողովրդեան որդւոցն
Իսրայելի եւ [9]ասասցես, Ի տասնիներորդում
ամսեանս այսորիկ առցեն իւրեանց իւրա-
քանչիւր [10]ոչխար ըստ տունս ազգացն
4 իւրեանց, [10]ոչխար ըստ երդ։ Եւ եթէ նա-
կաւք իցեն ի տանն՝ որպէս թէ չիցեն բա-
ւական լինել [11]ոչխարին, առցէ ընդ իւր
դրացի իւր եւ ըղնկոր իւր ըստ մարդա-
հաւն. իւրաքանչիւր ըստ բաւականի իւ-
5 րում համարեսցի [12]յոչխարն։ Ոչխար՝ կա-
տարեալ՝ արու, տարեւոր, անարատ լիցի
6 ձեզ. յօդեաց եւ յայծեաց առնուցուք։ Եւ
եղիցի ձեզ պահել մինչեւ ի չորս եւ ի
տասն աւուր ամսոյս այսորիկ. եւ սպանցեն
զնա ամենայն բազմութիւն ժողովրդեան
7 որդւոցն Իսրայելի ընդ երեկս։ Եւ առցեն
յարիւնէ անտի եւ դիցեն ի վերայ երկուց
սեմոցն եւ բարաւորին տանցեն յորս ուտի-
8 ցեն զնա ի նոսա։ Եւ կերիցեն զմսեն ի
գիշերիս յաստիկ. խորովեալ հրով, եւ բա-
9 րաջ ընդ եզեսկ կերիցեն. Եւ ոչ ուտիցէք
ի նոցանէ հում, եւ ոչ պարս եփեալ ջրով,

[5] ԵԲԲ. գիտասջիք եթէ բաժանեսցէ [6] ԵԲԲ. զայսոսիկ [7] ԵԲԲ. ի բակ [8] ԵԲԲ. Խօսեցարուք [9] ԵԲԲ. ասացէք [10] Կամ, գառն [11] Կամ, գառինն [12] Կամ, ի գառինն (5) Գառն

այլ խորովեալ հրով. զգլուխն ոտիւքն հան-
10 գերձ, եւ զիմորոտին նորա եւ ոչ թողու-
ցուք ի նմանէ մնալ մինչեւ առաւօտ. ¹եւ ոսկր մի ըեկա-
նիցէք ի նմանէ." եւ որ ինչ մնայցէ ի նմա-
11 նէ մինչեւ առաւօտ՝ հրով այրեսջիք : եւ այսպէս ու-
տիցէք . գօտիք ձեր ընդ մէջս , եւ կօշիկք
ձեր յոտս , եւ ցուպք ձեր ի ձեռին . փու-
թանակի ուտիցէք , զի ²զատիկ Տեառն է:
12 Եւ անցից ընդ ամենայն երկիրս Եգիպ-
տացւոց ի գիշերիս յայսմիկ, եւ հարից զա-
մենայն անդրանիկ երկրիս Եգիպտացւոց
ի մարդոյ մինչեւ յանասունս. եւ յամենայն
դիւս Եգիպտացւոց արարից վրէժխնդրու-
13 թիւն. զի ես եմ Տէր: Եւ եղիցի ձեզ արիւնդ
³նշանակեալ ի վերայ տանց՝ յորս իցէք
դուք անդ. եւ տեսից զարիւնդ եւ ⁴ապրե-
ցուցից զձեզ". եւ ոչ լինիցին ի ձեզ հար-
ուածք ի սատակել՝ յորժամ հարկանիցեմ
14 յերկիրս Եգիպտացւոց: Եւ եղիցի ձեզ օրդ
այդ ի յիշատակ , եւ տօնեցէք զդա՝ տօն
Տեառն . յազգս ձեր օրէն յաւիտենական
15 տօնեցէք զդա: Զեւթն օր բաղարջ ուտի-
ջէք . յառաջնումէ իսկ օրէ անտի անհետ
առնիջիք զխմոր ի տանց ձերոց. ամենայն
որ ուտիցէ խմորեալ՝ սատակեսցի անձն
այն յԻսրայէլէ՝ յառաջնումէ օրէն մինչեւ
16 յօրն եւթներորդ: Եւ ⁵օրն առաջին կոչեսջի
սուրբ , եւ օրն եւթներորդ նուիրեալ
եղիցի ձեզ" սուրբ. զամենայն գործ սպա-
սու մի գործիցէք ի նմա , բայց միայն ⁶որ
գործիցի ամենայն անձին" այն միայն գոր-
17 ծեսցի ձեզ: Եւ պահեսջիք ⁷զպատուիրանս
իմ զայս". զի յաւուրս յայսմիկ ⁸հանից զգօ-
ղութիւն ձեր յերկրէս Եգիպտացւոց . եւ
առնիցէք զօրս զայս յազգս ձեր օրէնս յաւի-
18 տենական: Ի սկանել չորեքտասաներ-
րորդի աւուր ամսոյն առաջնոյ յերեկորեայ
բաղարջ ուտիցէք մինչեւ ցքսան եւ մի օր
19 ամսոյն ցերեկոյ: Զեւթն օր մի գտցի խմոր
ի տունս ձեր. ամենայն որ ուտիցէ խմոր-
եալ՝ սատակեսցի անձն այն ի ժողովրդենէ
Իսրայէլի յերկայ եւ ի բնակայ երկրին :
20 Ամենայն խմորեալ մի ⁹ուտիցին . յամենայն բնա-
կութեան ձերում ուտիցէք բաղարջ :
21 Եւ կոչեաց Մովսէս զամենայն ծերա-
կոյս որդւոցն Իսրայէլի , եւ ասէ ցնոսա

¹3ԵԲՐ. պոլոխ ²ԵԲՐ. փեսախ , այսինքն անցա-
նել , (տես Նաւղս-Քնան 4): ³ԵԲՐ. ի նշան
⁴ԵԲՐ անցից զձեզ ⁵ԵԲՐ. յաւուրն առաջնում
եղիցի ժողով սուրբ , և յաւուրն եւթներորդի
եղիցի ձեզ ժողով ⁶ԵԲՐ. զոր ուտիցէ ամե-
նայն անձն ⁷ԵԲՐ զսոն բաղարջոյն ⁸ԵԲՐ.
Հանի ⁹ԵԲՐ. ուտիցէք

Երթայք առէք ձեզ ¹⁰ոչխար ըստ ազգս
22 ձեր , եւ զնիջիք ի զատիկ: Եւ առնուցուք
մշտիկ զազոյի թաթաւեալ յարեան որ
¹¹առ դրօքն" իցէ , եւ սրսկեսջիք զբարա-
ւորաւն եւ զերկոքումիք սեմովքն յարեանէ
առալ որ ¹¹առ դրօքն". բայց դուք մի ելա-
նիցէք իւրաքանչիւր ըստ դրան տան իւ-
23 րոյ մինչեւ յառաւօտ. Եւ անցցէ Տէր հար-
կանել զԵգիպտացիսդ, եւ տեսանիցէ զա-
րիւնն որ ի վերայ բարաւորին եւ ի վերայ
երկուց սեմոց , եւ զանց առնիցէ Տէր
զդրօքն , եւ ոչ տայցէ Թոյլ սատակչին
24 մտանել ի տունս ձեր հարկանել: Եւ պա-
հեսջիք զբանս զայս, օրէն քեզ եւ որդւոց
25 քոց մինչեւ ցյաւիտեան: Եւ եթէ մտա-
նիցէք յերկիրն զոր ասցէ ձեզ Տէր , որ-
պէս եւ խոսեցաւ , պահեսջիք զպաշտօնդ
26 զայդ : Եւ եղիցի եթէ ասիցեն ցձեզ որ-
27 դիք ձեր , Ընչ է պաշտօնս այս ձեզ , Ա-
սասջիք նոցա , եթէ Զոհ զատկի Տեառն է
այս, յորժամ ¹²պահեաց զտունս" որդւոցն
Իսրայէլի յԵգիպտոս, մինչ հարկանէր զԵ-
գիպտացիսն , եւ զտունս մեր ապրեցոյց :
Եւ խոնարհեցաւ ժողովուրդն եւ երկիր
28 եսպագ : Եւ գնացեալ որդիքն Իսրայէլի ա-
րարին որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի
եւ Ահարոնի , նոյնպէս եւ արարին :
29 Եւ եղեւ ի հասարակ գիշերի եւ Տէր ե-
հար զամենայն անդրանիկ յերկրին Եգիպ-
տացւոց, յանդրանկանէ անտի փարաւոնի
որ նստէր յաթոռ նորա , մինչեւ յանգրա-
նիկ գերեւն որ կայր ի վիրապի , եւ զա-
30 մենայն անդրանիկ անասնոց : Եւ յարեաւ
փարաւոն գիշերային , ինքն եւ ամենայն
ծառայք իւր եւ ամենայն Եգիպտացիք ,
եւ եղեւ ազաղակ մեծ յամենայն երկրին
Եգիպտացւոց . զի ոչ դոյր տուն յորում ոչ
դոյր մեռեալ ի նմա :
31 Եւ կոչեաց փարաւոն զՄովսէս եւ զԱ-
հարոն գիշերային , եւ ասէ ցնոսա , Արիք
եւ ելէք ի ժողովրդենէ իմմէ , եւ գուք եւ
որդիքն Իսրայէլի. երթայք եւ պաշտեցէք
զՏէր ¹Աստուած ձեր", որպէս ասացէք :
32 Եւ զարջառ եւ զոչխար ձեր առեալ գնա-
ցէք , որպէս եւ ասացէքն . բայց եւ զիս
33 օրհնեցէք: Եւ բռնադատէին Եգիպտացիքն
զժողովուրդն փութանակի հանել զնոսա
յերկրէ անտի . քանզի ասէին թէ Ամենե-
34 քեան իսկ մեռանիմք : Եւ առ ժողովուրդն
զնայն իւրեանց մինչչեւ խմորեալ էր ,

¹0կամ , գառն ¹1ԵԲՐ. ի կնքին ¹2ԵԲՐ. զանց
արար զառանց

զգանգուածս իւրեանց ծրարեալ ի կաւաս
35 իւրեանց , ի վերայ ուսոց իւրեանց ։ Եւ որդիքն Իսրայէլի արարին որպէս եւ հրամայեաց նոցա Մովսէս . եւ խնդրեցին յԵգիպտացւոցն անօթս ոսկեղէնս եւ անօթս
36 արծաթեղէնս եւ հանդերձս ։ Եւ ետ Տէր շնորհս ժողովրդեանն իւրում առաջի Եգիպտացւոցն , եւ եառնն նոցա [1]ի զարդ . եւ կողոպտեցին զԵգիպտացիսն ։
37 Եւ չուեցին որդիքն Իսրայէլի յԻամնասայ ի Սոկքովթ . վեց հարիւր հազար այր
38 հետեւակ, թող զայլ ազխ։ Եւ խառնիճաղանճ բազում ել ընդ նոսա , եւ արջառ եւ
39 ոչխար եւ անասունն բազում յոյժ ։ Եւ եփեցին զհայեան զոր հանին յԵգիպտոսէ՝ նկանս բաղարջս , քանզի ոչ խմորեցաւ . զի հանին զնոսա Եգիպտացիքն, եւ ոչ կարէին մնալ . եւ ոչ պաշար արարին իւրեանց ճանապարհին ։
40 Եւ բնակութիւն որդւոցն Իսրայէլի զոր բնակեցին յերկրին Եգիպտացւոց [2]եւ յերկրին Քանանացւոց՝ ինքեանք եւ հարք իւրեանց՝ , ամք չորեք հարիւր եւ երեսուն ։
41 Եւ եղեւ յետ չորեք հարիւր եւ երեսուն ամի , յաւուր յայնմիկ ելին ամենայն զօրութիւնք Տեառն յերկրէն Եգիպտացւոց։
42 [3]Գիչերի որէ յառաջապահաստ Տեառն՝ հանել՝ զնոսա յերկրէն Եգիպտացւոց . [4]այն գիչեր յառաջապահաստ Տեառն՝ լինել՝ ամենայն որդւոցն Իսրայէլի յաղգս նոցա ։
43 Ասեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ընդ Ահարոնի եւ ասէ, Այս է օրէնն զատկի. ամեն
44 նայն այլազգի մի՛ կերիցէ ի նմանէ. Եւ ամենայն ծառայ ուրուք եւ զարծաթգնելն թլփատեսցես , եւ ապա կերիցէ ի նմանէ։
45 Պանդուխտն եւ վարձկանն մի՛ կերիցէ ի
46 նմանէ։ Ի տան միում կերիցի. եւ մի՛ հանիցէք ի մսոյ անտի արտաքս քան զտունն,
47 եւ ոսկր մի՛ բեկանիցէք ի նմանէ ։ Ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի առնիւ-
48 ցեն զայն ։ Ասա թէ մերձենայցէ առ ձեզ եկամուտ եւ առնիցէ զզատիկն Տեառն , թլփատեսցես զամենայն արու մանուկ նորա , եւ ապա մերձեսցի առնել զնա, եւ եղիցի իբրեւ զբնակ երկրին. ամենայն անթլփատ մի՛ կերիցէ ի նմանէ ։ Օրէն՝ մի եւ
49 նոյն կացցէ բնակին եւ եկին որ դայցէ
50 մերձենալ ի ձեզ ։ Եւ արարին ամենայն որդիքն Իսրայէլի , որպէս պատուիրեաց
51 Տէր Մովսիսի եւ Ահարոնի , նոյնպէս արարին ։ Եւ եղեւ յաւուր յայնմիկ եհան Տէր զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց հանդերձ զօրութեամբ իւրեանց։

ԳԼ. ԺԳ

1 Ասեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
2 Սրբեա դու ինձ զամենայն անդրանիկ նախածին որ բանայ զամենայն արգանդ ի մէջ որդւոցդ Իսրայէլի , ի մարդոյ մինչեւ
3 յանասուն , քանզի իմ է ։ Եւ ասէ Մովսէս ցժողովուրդն , Ցիշեսջիք զօրս զայս յորում ելէք յԵգիպտոսէ ի տանէ ծառայութեան , զի հզօր ձեռամբ եհան զձեզ Տէր
4 աստի. եւ ոչ ուտիցէք խմորուն Ցի յայսմ աւուր ելանէք դուք յամսեանս կանխոց ։
5 Եւ եղիցի յորժամ [1]եթէ տանիցի զքեզ Տէր [2]Աստուած քո՝ յերկիրն Քանանացւոց եւ Քետացւոց եւ Ամովրհացւոց եւ ԵՒեւացւոց եւ Ցեբուսացւոց [2]եւ Փերեզացւոց եւ Գերգեսացւոց՝ , զոր երդուաւ հարցն քոց տալ քեզ, երկիր որ բղխէ զկաթն եւ զմեղր, եւ արասցես զպաշտօնս զայս յամսեանս
6 յայսմիկ։ Ցեւթն օր բաղարջ կերիջիք, եւ
7 յաւուրն եւթներորդի տօն Տեառն ։ Բաղարջ կերիջիք զեւթն օր, ոչ երեւեսցի առ քեզ խմորուն , եւ ոչ եղիցի խմոր յամենայն սահմանս քո ։ Եւ պատմեսցես որդւոյ քում յաւուր յայնմիկ եւ ասացես , Վասն այնորիկ արար ինձ Տէր [2]Աստուած,
9 մինչ ելանէի յԵգիպտոսէ ։ Եւ եղիցի քեզ նշան ի վերայ ձեռին քո , եւ յիշատակ առաջի աչաց քոց, զի լինիցին օրէնք Տեառն ի բերանի քում . զի հզօր ձեռամբ եհան
10 զքեզ Տէր յԵգիպտոսէ։ Եւ պահեսջիք զօրէնս զայս [3]ի ժամանակաց ի ժամանակս,
11 եւ՝ աւուրց յաւուրս ։ Եւ եղիցի յորժամ տանիցի զքեզ Տէր [2]Աստուած քո՝ յերկիրն Քանանացւոց , որպէս երդուաւ քեզ եւ
12 հարցն քոց , եւ տացէ զնա քեզ , Եւ զատուսցես Տեառն զամենայն [2]արու որ բանայ զարգանդ , եւ զամենայն որ բանայ զարգանդ յանդէտոց եւ յանասնոց քոց որ լինիցի քեզ. արուքն [2]սուրբ Տեառն լինի-
13 ցին ։ Եւ զամենայն որ բանայցէ զարգանդ իշոյ , փոխանակեսցես ընդ ոչխարի , եւ եթէ ոչ փոխանակեսցես, [4]փրկեսցես զնա. զամենայն անդրանիկս որդւոց քոց փրկես-
14 ցես ։ Եւ եթէ հարցանիցէ զքեզ որդին քո յետ այսորիկ եւ ասիցէ թէ Զինչ է այդ .

[1] ԵԲԷ. զոր խնդրեցին [2] ՅԱԲԷ. գ-ւ-ւ-ե [3] ՅԱԲԷ. Գիչեր պահպանութեան է այն Տեառն, զի հան [4] ԵԲԷ. այս իսկ է գիչեր պահպանութեան

[5] ԵԲԷ. ի ժամանակի իւրում, [6] ԵԲԷ. փոխեսցես

ասացեալս ցնա, Զի հզօր ձեռամբ եհան զմեզ Տէր յերկրէն Եգիպտացւոց ի տանէ
15 ծառայութեան. Ցորժամ խստացաւ Փարաւոն չարձակել զմեզ, կոտորեաց Տէր զամենայն անդրանիկս յերկրին Եգիպտացւոց, յանդրանիկ մարդոյ մինչեւ ցանդրանիկս անասնոյ. վասն այնորիկ ես մատուցանեմ Տեառն զամենայն արու որ բանայ զարգանդ, եւ զամենայն անդրանիկս որդւոց իմոց փրկեցից։ Եւ եղիցի նշան ի վերայ ձեռին քո, եւ
16 [1]անչարժ առաջի աչաց քոց, քանզի հզօր ձեռամբ եհան Տէր զմեզ յԵգիպտոսէ։

17 Եւ լուրեւ արձակեաց Փարաւոն զժողովուրդն, ոչ առաջնորդեաց նոցա Աստուած ընդ երկիրն Փղշտացւոց, ընդ կարճոյ ճանապարհ. քանզի ասաց Աստուած թէ Գուցէ զանգիտիցէ ժողովուրդն յորժամ տեսանիցէ զպատերազմն, եւ դառնայցէ
18 յԵգիպտոս։ Եւ պատեաց զած Աստուած զժողովուրդն ընդ ճանապարհ անապատին՝ առ Կարմիր ծովուն. եւ [2]ի հինգերորդ ազգի՝ եկեն որդիքն Իսրայէլի յերկրէն Եգիպ-
19 տացւոց։ Եւ առ Մովսէս զոսկերսն Յովսեփու ընդ իւր. քանզի երդմնեցոյց Յովսէփ զորդիսն Իսրայէլի, եւ ասէ, Եթէ այցելութեամբ այց արասցէ Աստուած զձեզ [3]Տէր, հան-
20 ջիք զոսկերս իմ ընդ ձեզ։ Եւ չուեալ որդւոցն Իսրայէլի ի Սոկքովթայ, բանակեցան յՈթոմ առ անա-
21 պատաւն։ Եւ [4]Աստուած առաջնորդէր նոցա ցերեկ սեամբ ամպոյ, ցուցանել նոցա զճանապարհն, եւ գայլ՝ սեամբ հրոյ, լուսաւոր լինել նոցա ի գնալն՝ գայլդ եւ
22 գցերեկ։ Եւ ոչ պակասէր սիւն ամպոյն ի տուէ եւ սիւն հրոյն ի գիշերի առաջի ամենայն ժողովրդեանն։

ԳԼ. ԺԴ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
2 Խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի, եւ դարձցին բանակեսցին դէմ յանդիման [5]Հանդրուանին, ընդ Մագդովղ եւ ընդ ծովն. հանդէպ Բէելզեփովնայ, յանդիման նո-
3 ցա բանակեսցիս առ ծովեզերբն։ Եւ ասասցէ Փարաւոն զորդւոցդ Իսրայէլի թէ Մոլորեալ են յերկրին, քանզի պատեաց
4 զնոսա անապատն։ Եւ ես խստացուցից զսիրտն Փարաւոնի եւ պնդեսցի զհետ գոցա. եւ փառաւորեցայց ի Փարաւոն, եւ յամենայն զօրս նորա, եւ ծանիցեն [6]ամենայն Եգիպտացիքն թէ ես եմ Տէր։ Եւ արարին այնպէս։

5 Եւ ազդ եղեւ արքային Եգիպտացւոց եթէ փախեաւ ժողովուրդն. եւ չրջեցաւ սիրտն Փարաւոնի եւ ծառայից իւրոց ի վերայ ժողովրդեանն, եւ ասեն, Զինչ գործեցաք զայն, զի արձակեցաք զորդիսն
6 Իսրայէլի, զի մի՛ ծառայեսցեն մեզ։ Եւ հանդերձեաց Փարաւոն զկառս իւր, եւ [7]առաւ ընդ իւր զամենայն ժողովուրդն՝
7 իւր. Եւ առ վեց հարիւր կառս ընտիրս, եւ զամենայն [8]երիվարս Եգիպտացւոց, եւ
8 սպառազէնս ի վերայ ամենեցունն։ Եւ խստացոյց Տէր զսիրտն Փարաւոնի արքային Եգիպտացւոց, եւ պնդեցաւ զհետ որդւոցն Իսրայէլի. եւ որդիքն Իսրայէլի
9 ելանէին բարձրացեալ ձեռամբ։ Եւ պնդեցան Եգիպտացիքն զհետ նոցա, եւ գան զնոսա բանակեալս առ ծովեզերբն. եւ ամենայն երիվարք եւ կառք Փարաւոնի եւ հնծեալք նորա եւ զօրք նորա յանդիման [5]Հանդրուանին, հանդէպ Բէելզեփովնայ։
10 Եւ եհաս մօտ Փարաւոն, եւ համբարձեալ որդւոցն Իսրայէլի զաչս իւրեանց [9]տեսանէին զի բանակեցան Եգիպտացիքն ի միկանց՝ նոցա, եւ երկեան յոյժ, եւ բո-
11 ղոքեցին որդիքն Իսրայէլի առ Տէր։ Եւ ասեն ցՄովսէս, Իրրեւ թէ՞ ոչ գոյին գեբզմանք յերկրին Եգիպտացւոց, հաներ զմեզ սպանանել յանապատի աստ. զինչ գործեցեր զայս ընդ մեզ, զի հաներ զմեզ
12 յԵգիպտոսէ։ Ո՞չ այս այն բանք են զոր խօսեցաք ընդ քեզ յերկրին Եգիպտացւոց, թէ Թոյլ աստ մեզ զի ծառայեսցուք Եգիպտացւոցն. զի լաւ էր մեզ ծառայել Եգիպտացւոցն, քան մեռանել յայսմ անապա-
13 տի։ Եւ ասէ Մովսէս ցժողովուրդն, Քաջալերեցարուք, պինդ կացէք, եւ տեսանիցէք զփրկու[10]թիւն ի Տեառնէ զոր արասցէ ձեզ այսօր. զի զոր օրինակ տեսէք զԵգիպտացիսն այսօր, ոչ եւս յաւելուցուք տեսանել զնոսա յաւիտեանս ժամանակաց։
14 Տէր տայ պատերազմ ընդ ձեր, եւ դուք լռեցէք։
15 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Զի՞ գոչես առ իս. խօսեսցայ ընդ որդիսդ Իսրայէլի եւ

[1]ԵԲբ. գրապանակ [2]ԵԲբ. գունդ կազմեալ
[3]ԵԲբ. Աստուած [4]ԵԲբ. Տէր [5]ԵԲբ. Փիայրոթ պ
[6]ՅԵԲբ. դ-ւ-ե-ե [7]ԵԲբ. առ ընդ իւր զժողովուրդ
[8]ԵԲբ. կառս [9]ԵԲբ. և ահա Եգիպտացիք պնդեին զհետ

16 չուեսցին . Եւ դու առ զգաւազանդ քո եւ
ձգեա զձեռն քո ի վերայ ծովուն եւ պա-
տառեա զնա. եւ մտցեն որդիքն Իսրայելի
17 ի մէջ ծովուն ընդ ցամաք : Եւ ահա ես
խստացուցից [1]զսիրտն Փարաւոնի եւ զԵ-
գիպտացւոցն ամենեցուն," եւ մտցին զկնի
դոցա . եւ փառաւորեցայց ես ի Փարաւոն
եւ յամենայն զօրս նորա եւ ի կառս նորա
18 եւ յերիվարս նորա : Եւ ծանիցեն ամենայն
Եգիպտացիքն թէ ես եմ Տէր , ի փառա-
որել իմում ի Փարաւոն եւ ի կառս նորա
եւ յերիվարս նորա :
19 Եւ ամպարձաւ հրեշտակն Աստուծոյ որ
երթայր առաջի բանակի որդւոցն Իսրա-
յելի , եւ չոգաւ զկնի նոցա , եւ վերացաւ
սիւն ամպոյն յերեսաց նոցա եւ եկաց ի
20 թիկանց նոցա . Եւ եմուտ ի մէջ բանակի
Եգիպտացւոցն եւ ի մէջ բանակի Իսրա-
յելացւոցն , եւ եղեւ խաւար եւ [2]մէգ , եւ
անց գիշերն". Եւ ոչ խառնեցան ընդ մի-
մեանս զամենայն գիշերն :
21 Եւ ձգեաց Մովսէս զձեռն իւր ի վերայ
ծովուն, եւ [3]դարձոյց անդրէն զծովն բունու-
թեամբ հողմոյ [4]հարաւոյ զամենայն գի-
շերն , եւ արար զծովն ցամաք , եւ պա-
22 տառեցաւ ջուրն : Եւ մտին որդիքն Իս-
րայելի ի մէջ ծովուն ընդ ցամաք . Եւ ե-
ղեւ ջուրն պարիսպ ընդ աջմէ նոցա , եւ
ընդ ահեկէ իւրեանց :
23 Պնդեցան Եգիպտացիքն եւ մտին զկնի
նոցա , ամենայն երիվարք Փարաւոնի եւ
կառք նորա եւ հեծեալք նորա ի մէջ ծո-
24 վուն: Եւ եղեւ յառաւօտուն պահուն հայե-
ցաւ Տէր ի բանակն Եգիպտացւոց սեամբ
հրոյ եւ ամպոյ, եւ խռովեաց զբանակն Ե-
25 գիպտացւոցն . Եւ կապեաց զանիւս կա-
ռացն նոցա, եւ վարէր զնոսա բունութեամբ.
ասեն Եգիպտացիքն, Փախիցուք յերեսաց
Իսրայելի , զի Տէր պատերազմի վասն նո-
ցա ընդ Եգիպտացիս :
26 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Զգեաս զձեռն քո
ի վերայ ծովուդ, եւ կարկատեսցի անդրէն
ջուրդ , եւ ծածկեսցէ զեգիպտացիսդ ,
27 զկառս դոցա եւ զհեծեալս իւրեանց : Եւ
ձգեաց Մովսէս զձեռն իւր ի վերայ ծո-
վուն , եւ դարձաւ ջուրն ընդ առաւօտն ի
տեղի իւր, եւ Եգիպտացիքն փախեան յա-
րեսաց ջրոյն. եւ թօթափեաց Տէր զեգիպ-
28 տացիսն ի մէջ ծովուն : Եւ դարձուցեալ
զջուրսն՝ ծածկեաց զկառս եւ զհեծեալս
եւ զամենայն զօրութիւնն Փարաւոնի , որ
մտեալ էին զհետ նոցա ի ծով անդր. եւ ոչ
29 մնաց ի նոցանէ եւ ոչ մի : Եւ որդիքն Իս-
րայելի գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն,
եւ ջուրն պարիսպ էր ընդ աջմէ նոցա եւ
30 ընդ ահեկէ իւրեանց : Եւ ապրեցոյց Տէր
զԻսրայէլ յաւուր յայնմիկ ի ձեռաց Եգիպ-
տացւոցն , եւ տեսին Իսրայէլ զեգիպտա-
31 ցիսն մեռեալս առ ափն ծովուն : Եւ տես
Իսրայէլ զձեռն մեծ զոր արար Տէր ընդ
Եգիպտացիսն . եւ երկեաւ ժողովուրդն ի
Տեառնէ , եւ հաւատացին [5]յԱստուած եւ
ի Մովսէս ծառայ նորա :

ԳԼ . ԺԵ

1 Յայնժամ երգեաց Մովսէս եւ որդիքն Իս-
րայելի զօրհնութիւնս զայս [6]Աստուծոյ ,
եւ ասեն , [7]Օրհնեսցուք զՏէր, զի փառօք
է փառաւորեալ . [8]զերիվարս եւ զհեծեալս
2 նոցա ընկէց ի ծով : Օրհնական ընդունելի
իմ" Տէր , եւ եղեւ ինձ փրկութիւն . սա
է իմ Աստուած եւ փառաւոր արարից զսա.
Աստուած հօր իմոյ , եւ բարձր արարից
3 զսա : Տէր [9]խորտակէ զպատերազմունս ,
4 Տէր՝ անուն նորա: Զկառս Փարաւոնի եւ
զզօրութիւնս նորա ընկէց ի ծով , զընտիր
հեծելոց եւ զսպառազէնս. ընկղմե-
5 ցան ի ծով Կարմիր: Խորք ծածկեցին զնո-
6 սա , բնկան յանդունդս իբրեւ զվէմ : Աջ
քո , Տէր , փառաւորեալ է զօրութեամբ .
7 աջ քո, Տէր, խորտակեաց զթշնամին : Եւ
բազմութեամբ փառաց քոց մանրեցեր
զհակառակորդս . առաքեցեր զբարկու-
թիւն քո եւ եկեր զնոսա իբրեւ զեղէգն :
8 Եւ հողմով սրտմտութեամբ քով պատա-
ռեցան ջուրք, պաղեցան իբրեւ զպարիսպ
9 ջուրք. պաղեցան ալիք ի մէջ ծովուն: Ա-
սաց թշնամին , Հալածեցից եւ հասից ,
բաժանեցից զաւարն, եւ լցուցից ինոցանէ
զանձն իմ. [10]սատակեցից սրով իմով, տի-
10 րեսցէ նոցա" ձեռն իմ: Առաքեցեր զհողմն
քո , եւ ծածկեաց զնոսա ծով . ընկղմե-
ցան իբրեւ զկապար ի ջուրս սաստիկս :
11 Ո՞վ լեալ նման քեզ յաստուածս , Տէր ,

[1]ԵԲԲ. զսիրտ Եգիպտացւոցն [2]ԵԲԲ. մէգ եւ էր-
պոյսն , և լուսաւորեաց զգիշերն Իսրայել-
ացւոց [3]ԵԲԲ. դարձոյց Տէր [4]ԵԲԲ. արեւելից
[5]ԵԲԲ. ի Տէր [6]ԵԲԲ. Տեառն [7]ԵԲԲ. Օրհնեցից
[8]ԵԲԲ. զերիվարն եւ զհեծեալն նորա ընկէց ի ծով:
(2) Զօրութիւն իմ և գովութիւն [9]ԵԲԲ. է
այր պատերազմի, ԵՀՈՎԱ [10]ԵԲԲ. մերկա-
ցուցից զսուր իմ, սատակեսցէ զնոսա

[1]եւ կամ ո՞վ նմանիցէ քեզ, փառաւորեալ
ի սուրբս, աքանչելի փառօք", որ առնես
12 զնշանս։ Զգեցար զալ քո, եւ եկուլ գնոսա
13 երկիր։ Առաքնորդեցեր արփարութեամբ
ժողովրդեան քումմ այսմ զոր վրկեցեր.
[2]մխիթարեցեր զօրութեամբ քով ի բանա-
14 կատ սրբութեան քո։ Լուան ազգք եւ
[3]բարկացան. եւ երկունք կալան զբնա-
15 կիչս [4]Քանանացւոց։ Յայնժամ տագնա-
պեցան գաւառորք Եդոմայ եւ իշխանք
Մովաբացւոց, կալաւ գնոսա զողումն.
հալեցան ամենայն բնակիչք Քանանա-
16 ցւոց։ Անկցի ի վերայ նոցա ահ եւ երկեւղ.
մեծութեամբ բազկի քո քարացցին, մին-
չեւ անցցէ ժողովուրդ քո, Տէր, մինչեւ
անցցէ ժողովուրդ քո այս զոր ստացար։
17 Տարեալ տնկեսցես զնոսա ի լեառն ժա-
ռանգութեան քո, [5]ի պատրաստութիւն
բնակութեան քո, զոր արարեր, Տէր.
սրբութիւն, Տէր, զոր պատրաստեցին
18 ձեռք քո։ Տէր թագաւոր յաւիտեան եւ
յաւիտեանս եւ եւս։
19 Զի մտին երիվարք Փարաւոնի կառօք
եւ հեծելովք նորա ի ծով, եւ ած ի վերայ
նոցա Տէր զջուրս ծովուն, եւ որդիքն Իս-
րայելի գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն։
20 Եւ առ Մարիամ մարգարէ քոյր Ահա-
րոնի զթմբուկն ի ձեռն իւր, եւ ելին ամե-
նայն կանայք զհետեւորս Յմիւրիօքեւ պա-
21 րուք։ Եւ յառաջէր Մարիամ եւ ասէր, [6]Օրհ-
նեսցուք զՏէր, զի փառօք փառաւորեալ.
[7]զերիվարս եւ զհեծեալս" ընկէց ի ծով։
22 Եւ խաղայոյց Մովսէս զորդիսն Իսրա-
յելի ի կարմիր ծովէ անապ, եւ ած գնոսա
յանապատն ի Սուր. եւ գնացին երեքօր-
եայ ճանապարհ յանապատի անդ, եւ ոչ
23 գտանէին ջուր ըմպելոյ։ Եկին ի [8]Մեռա,
եւ ոչ կարէին ըմպել ջուր ի Մեռայն, քանզի
գառն էր. վասն այնորիկ անուանեաց գա-
24 նուն տեղւոյն անորիկ Դառնութիւն։ Եւ
տրտնջեաց ժողովուրդն զՄովսէս եւ ա-
25 սեն, Զինչ արբցուք։ Աղաղակեաց Մով-
սէս առ Տէր, եւ ցոյց նմա Տէր փայտ,
եւ արկ զայն ի ջուրն, եւ քաղցրացաւ
ջուրն։ Եւ անդ եդ նմա իրաւունս եւ դա-
26 տաստանս. եւ անդ փորձեալ գնա, եւ
ասէ, Եթէ լսելով լսիցես ձայնի Տեառն
Աստուծոյ քումմ, եւ զհաճոյս առաջի նո-
րա արասցես, եւ ունկնդիր լիցիս պատ-
ուիրանաց նորա, եւ պահեսցես զամենայն
իրաւունս նորա, զամենայն զախտն զոր
ածի ի վերայ Եգիպտացւոցն, ոչ ածից ի
վերայ քո. զի ես եմ Տէր որ բժշկեմ զքեզ։
27 Եւ եկին յԵղիմ. եւ էին անդ երկոտասան
աղբեւր ջրոց եւ եւթանասուն ծառ արմ-
աւենեաց. եւ անդ բանակեցան առ ջրովն։

ԳԼ. ԺԶ

1 Զուեցին յԵղիմայ, եւ եկին ամենայն ժո-
ղովուրդ որդւոցն Իսրայելի յանապատն ի
Սին, որ է ընդ Եղիմ եւ ընդ Սինա, յա-
ւուրն հնգետասաներորդի յերկրորդի ամ-
սեան ելանելոյ նոցա յերկրէն Եգիպտա-
2 ցւոց։ Տրտնջեաց ամենայն ժողովուրդ որդ-
ւոցն Իսրայելի զՄովսէսէ եւ զԱհարոնէ
3 յանապատի անդ։ Եւ ասեն ցնոսա որդիքն
Իսրայելի, Լաւ էր թէ մեռեալ էաք [9]Հար-
ուածովքն ի Տեառնէ" յերկրին Եգիպտա-
ցւոց, մինչ նստէաք առ կաթսայս մսոյն
եւ ուտէաք հաց յազ, քան հանէք զմեզ
յանապատս յայս՝ սպանանել զամենայն
ժողովուրդս ի սովոյ։
4 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Ահա ես տեղացից
ձեզ հաց յերկնից, եւ ելցէ ժողովուրդ [10]յամ
եւ ժողովեսցեն զօրըստօրէն, զի փորձեցից
զնոսա եթէ գնայցեն յօրէնս իմ եթէ ոչ։
5 Եւ եղիցի յաւուրն վեցերորդի պատրաս-
տեսցեն զորչիչ բերիցեն, եւ եղիցի կրկին
քան զայն զոր օրըստօրէն ժողովիցեն։
6 Եւ ասեն Մովսէս եւ Ահարոն ցամենայն
ժողովուրդ որդւոցն Իսրայելի, Ընդ երե-
կոյս գիտասջիք եթէ Տէր եհան զձեզ
7 յերկրէն Եգիպտացւոց։ Եւ առաւօտուց
տեսջիք զփառսն Տեառն, ի լսել նորա
զտրտունջ ձեր [11]զԱստուծոյ. այլ մեք ո՞վ
8 եմք զի տրտնջէք զմէնջ։ Եւ ասէ Մով-
սէս, Ի տալ ձեզ Տեառն ընդ երեկոյս միս
ուտելոյ, եւ ընդ առաւօտս հաց յազ,
վասն լսելոյ Տեառն զտրտունջ ձեր զոր
դուք արտնջեցէք [12]զմէնջ. քանզի մեք
ո՞վ եմք. զի ոչ զմէնջ է տրտունջդ ձեր,
9 այլ [11]զԱստուծոյ։ Եւ ասէ Մովսէս ցԱհ-
արոն, Ասա ցամենայն ժողովուրդ որդ-
ւոցդ Իսրայելի, Մատերուք առաջ
Տեառն, քանզի լուաւ զտրտունջ ձեր։
10 Մինչդեռ խօսէր Ահարոն ընդ ամենայն
ժողովրդեան որդւոցն Իսրայելի, դարձան

---

[1]ՆԵԲ. ո՞վ երբեւ զքեզ փառաւորեալ՝ի սրբու-
թեան, ահեղ գովութեամբք [2]ՆԵԲ ածեր [3]կամ,
խռովեցան [4]ՆԵԲ. Փղշտացւոց [5]ՆԵԲ. ի տեղի
[6]ՆԵԲ. Օրհնեցէք [7]ՆԵԲ. զերիվարն եւ զՀեծեալ
նորա [8]Այսինքն, դառնութիւն

[9]ՆԵԲ. ձեռամբ Տեառն [10]ՅՆԵԲ. պարտ [11]ՆԵԲ.
զՏեառնէ [12]ՆԵԲ զնմանէ

յանապատն, եւ ահա փառք Տեառն երեւ-
41 ցան ամպով։ Եւ խօսեցաւ Տէր ընդ Մով-
42 սէսի եւ ասէ, Լուայ զաղաղակն որդւոցն
Իսրայէլի. արդ խօսեաց ընդ նոսա եւ
ասացուս, Ընդ երեկոյս միս կերիջիք,
եւ ընդ առաւօտս հայիւ յագեսջիք. եւ
ծանիջիք թէ ես եմ Տէր Աստուած ձեր։
43 Եւ եղեւ ընդ երեկոյն, եւ ել լորա-
մարղին եւ ծածկեաց զբանակն. եւ ե-
ղեւ ընդ առաւօտն՝ [1]ընդ արկանել գո-
44 ղոյն՝՝ չուրջ զբանակաւն, [2]եւ ահա՝՝ ի
վերայ երեսաց անապատին մանր [3]իբրեւ
զգինձ, սպիտակ՝՝ իբրեւ զեղեամն ի վա-
45 րայ երկրին։ Իբրեւ տեսին զայն որդիքն
Իսրայէլի, ասէն ընդ ընկեր ցընկեր, [4]Զի՞նչ
է այս՝՝. քանզի ոչ գիտէին զինչ լինէ. եւ
ասէ ցնոսա Մովսէս, Այդ է հացն զոր
46 ետ ձեզ Տէր ուտելոյ։ Եւ այս բան է
զոր պատուիրեաց Տէր. Ժողովեցէք ի
դմանէ իւրաքանչիւր ըստ բաւականի
իւրում, [5]չափով ըստ գլուխ, ըստ թուոյ
անձանց ձերոց, ըստ իւրաքանչիւր ըստ
47 վրանս ձեր ժողովեցէք։ Եւ արարին այն-
պէս որդիքն Իսրայէլի. եւ ժողովեցին,
48 որ չատ եւ որ սակաւ։ Եւ չափեցին
[6]չափովն. որոյ չատն էր՝ ոչ յաւելաւ,
եւ որոյ սակաւն էր՝ ոչ պակասեաց. ի-
րաքանչիւր ըստ բաւականի իւրում ժո-
49 ղովեցին։ Եւ ասէ ցնոսա Մովսէս, Մի ոք
50 թողուցու այսի յայգ։ Եւ ոչ լուան Մով-
սիսէ, այլ թողին ոմանք ի նմանէ յայգ, եւ
եւաց ինքա որդն եւ նեխեցաւ. եւ զար-
51 նացաւ ինոսա Մովսէս։ Եւ քաղէին այգուն
այգուն իւրաքանչիւր ըստ բաւականի ի-
րում. եւ իբրեւ արեւն ջեռոյր, հալէր։
52 Եւ եղեւ յաւուրն վեցերորդի ժողովի-
ցին զկէտսն կրկին՝ երկուս [7]չափս առ
մի մի. եւ մտին ամենայն իշխանք ժո-
53 ղովրդեանն եւ պատմեցին Մովսիսի։ Ասէ
ցնոսա Մովսէս, Այս բան է զոր խօսե-
ցաւ Տէր. Շաբաթ հանդիստ սուրբ Տեառն
վաղիւ, որ ինչ եփելոց էք՝ եփեցէք, եւ
որ ինչ հասուցանելոց էք՝ հասուցէք, եւ
զամենայն զաւելորդն թողուցուք յա-
54 մանս մինչեւ ցառաւօտ։ Եւ թողին ի
նմանէ յայգ, որպէս հրամայեաց նոցա
Մովսէս. եւ ոչ նեխեցաւ, եւ ոչ եղեւ
55 ի նմա որդն։ Եւ ասէ Մովսէս, Կերայք
զայգ այսօր, քանզի շաբաթ Տեառն է
այսօր. ոչ գտանիջք այսօր զայգ ի դաշ-
56 տի։ Զվեց օր ժողովեցէք զայգ, եւ յա-
ւուրն եւթներորդի շաբաթ, ոչ լինիցի
57 ի նմա։ Եւ եղեւ յաւուրն եւթներորդի
ելին ոմանք ի ժողովրդենէ անտի քաղել,
58 եւ ոչ գտին։ Եւ ասէ Տէր ցՄովսէս,
Մինչեւ յե՞րբ ոչ կամիք լսել պատուի-
59 րանաց իմոց եւ օրինաց։ Տեսէք զի Տէր
ետ ձեզ զօրս զայս չաբաթի, վասն այ-
նորիկ ինքն ետ ձեզ յաւուրն վեցերորդի
հայ երկուց աւուրց. նստարուք իւրա-
քանչիւր [8]ի տունս ձեր,՝՝ եւ մի՛ ոք ե-
լանիցէ ի տեղւոջէ իւրմէ յաւուրն եւթ-
60 ներորդի։ Եւ չաբաթացաւ ժողովուրդն
61 յաւուրն եւթներորդի։ Եւ անուանեցին
որդիքն Իսրայէլի զանուն նորա Ման. եւ
նա էր իբրեւ զսերմն գնձոյ՝ սպիտակ,
եւ համ նորա իբրեւ զխորիսխ մեղու։
62 Եւ ասէ Մովսէս, Այս բան է զոր հրա-
ման ետ Տէր. Լեցէք [9]ի չափով զմա-
նանայդ յաման մի, եւ պահեցէք՝՝ յազգս
ձեր, զի [10]տեսանիցէք զհացդ զոր [11]կե-
րայք զուք՝՝ յանապատի ատ ի ժամա-
նակի իբրեւ [12]հան զմեզ Տէր՝՝ յերկրէն
63 Եգիպտացւոց։ Եւ ասէ Մովսէս ցԱհարոն,
Առ սափոր մի [13]ոսկի, եւ արկցես ինա
լի [6]չափովդ մանանայ, եւ դիցես զդա
առաջի [14]Աստուծոյ ի պահեստ յազգս ձեր։
64 Որպէս հրամայեաց Տէր Մովսիսի, եւ
եդ դայն Ահարոն առաջի Վկայութեանն
65 ի պահեստ։ Եւ որդիքն Իսրայէլի կերան
զմանանայն զքառասուն ամ, մինչեւ հա-
սին ի չէն երկիրն զմանանայն ուտէին,
66 մինչեւ հասին [15]ի կողմն Փիւնիկեացւոց՝՝։ Եւ
[16]չափն էր սահմանորդ [17]երից դրուաց՝՝։

ԳԼ. ԺԷ

1 Եւ չուեցաւ ամենայն ժողովուրդ որդ-
ւոցն Իսրայէլի ի Սինէն անապատէ ըստ
բանակս իւրեանց բանիւ Տեառն, եւ
բանակեցան յԱւփիդիմ. եւ ոչ գոյր ջուր
2 ըմպել ժողովրդեանն։ Եւ բամբասեր ժո-
ղովուրդն զՄովսէս եւ ասէին, Տուր մեզ

---

[1]ՆԲԳ. Հանդեաւ ցօղն [2] ԲԷԳ. Եւ իբրեւ վերա-
ցաւ ցօղն որ հանդեաւ, ահա էր [3]ՆԲԳ. թե-
փաձեւ ինչ, մանր [4]ԼԲԳ. Մանհու (յոլմ Մա-
նահայ) [5]ՆԲԳ. օմէր [6]ՆԲԳ.օմէրիւ [7]ՆԲԳ.
օմէրս

[8]ՆԲԳ. ի տեղւոջ իւրում [9]ՆԲԳ. զօմէրն անտի
պահել [10]ՆԲԳ. տեսանիցին [11]ՆԲԳ. եւտու
ձեզ ուտել [12]ՆԲԳ. Հանի զձեզ [13]ՆԲԳ.
պէտս [14]ՆԲԳ. Տեառն [15]ՆԲԳ. ի սահմանս
երկրին քանանացւոց [16]ՆԲԳ.օմէրն [17]կամ,
արդուի

ջուր զի արբցուք . եւ ասէ ցնոսա Մովսէս , Զի՞ բամբասէք զիս , եւ զի՞ փորձէք զՏէր : Եւ ծարաւեաց անդ ժողովուրդն ի ջրոյ . եւ տրտնջեաց ժողովուրդն զՄովսէսէ, եւ ասեն , Ընդէ՞ր հաներ զմեզ յեգիպտոսէ, կոտորել զմեզ եւ զորդիս մեր եւ զխաչինս մեր ի ծարաւոյ : Եւ բողոքեաց Մովսէս առ Տէր եւ ասէ , Զի՞նչ արարից ժողովրդեանս այսմիկ , սակաւիկ մնաց եւս , եւ քարկոծ առնիցեն զիս : Եւ ասէ Տէր ցՄովսէս , Երթ առաջի ժողովրդեանդ , եւ առ ընդ քեզ ի ծերոց ժողովրդեանդ . եւ զգաւազանն զոր որով հարեր զգետն՝ առ ի ձեռն քո՛ւմ , եւ երթիցես : Եւ ես հասանեմ կայցեմ անդ յառաջադոյն քան զքեզ ի վերայ վիմին ի Քորեբ . եւ հարցես զվէմն եւ ելցէ ինմանէ ջուր , եւ արբցէ ժողովուրդդ : Եւ արար այնպէս Մովսէս առաջի [1]որդւոցն Իսրայելի : Եւ առնուանեաց զանունն տեղւոյն այնորիկ [2]Փորձումբիւն եւ Բամբասանս՝՝. վասն բամբասանաց որդւոցն Իսրայելի եւ վասն փորձելոյ նոցա զՏէր եւ ասելոյ , Եթէ իցէ՞ ի մեզ Տէր եւ եթէ ոչ :

Եկն Ամաղէկ , եւ տայր պատերազմ ընդ Իսրայելի յՈւափիդիմ : Եւ ասէ Մովսէս ցՅեսուե , Ընտրեա դու [3]քեզ այս զօրաւորս՝՝, եւ ելեալ տացես պատերազմ ընդ [4]Ամաղեկայ առ վաղիւ . եւ ահա ես եկեալ՝՝ կայցեմ ի վերայ պլխոյ բլրոյն , եւ գաւազանն Աստուծոյ ի ձեռն իմում : Եւ արար Յեսուե որպէս ասաց նմա Մովսէս , եւ ճակատեցաւ յանդիման Ամաղեկայ . եւ Մովսէս եւ Ահարոն եւ Ովր ելին ի գլուխ բլրոյն : Եւ լինէր յորժամ աւրհնայր Մովսէս զձեռս իւր , զօրանայր Իսրայէլ . եւ յորժամ խոնարհեցուցանէր զձեռս իւր , զօրանայր Ամաղէկ : Եւ ծանրէին ձեռքն Մովսեսի , եւ առեալ վէմ դնէին ընդ նովաւ , եւ նստէր ի վերայ նորա . եւ Ահարոն եւ Ովր հանատաւէին զձեռս նորա , մի ասափ եւ մի անտի , եւ լինէին ձեռքն Մովսեսի հանատաւոտալք մինչեւ ցմտանել արեգականն : Եւ եհար Յեսուե զԱմաղէկ եւ զամենայն զօրս նորա կոտորմամբ սրոյ : Եւ ասէ Տէր ցՄովսէս , Գրեա զայդ առ ի յիշատակ ի գիրս , եւ տուր յականջս Յեսուայ , զի ջնջելով ջնջեցից զյիշատակ Ամաղեկայ

[1] ՆԲէ. ծերոցն [2] ՆԲէ. Մասսա եւ Մերիպա [3] ՆԲէ. մեզ արս [4] ՆԲէ. Ամաղեկայ. առ վաղիւ ես

15 յերկրէ ինեւքոյ երկնից : Եւ չինեաց Մովսէս սեղան Տեառն , եւ անուանեաց զա-
16 նուն նորա՝ Տէր ապաւէն իմ , Եւ ասէ , Զի [6]ձաժուկ ձեռամբ Տեառն պատերազմի Տէր՝՝ ընդ Ամաղեկայ աղգայ յազգս :

ԳԼ . ԺԸ .

1 Եւ լուաւ Յոթոր քուրմ Մադիամու աներ Մովսեսի զամենայն զոր արար Տէր ընդ Մովսեսի եւ Իսրայելի ժողովրդեան իւրում , զի հնան Տէր զԻսրայէլ
2 յեգիպտոսէ : Եւ առ Յոթոր աներ Մովսեսի զՍեպփորա զկին Մովսեսի՝ յետ
3 [7]թողլոյն զնա . Եւ զերկուս որդիս նորա , յորոց միումն անուն էր Գերսամ ,
4 ասէ , Պանդուխտ էի յօտար երկրի . Եւ անուն երկրորդին Եղիազար , ասէ , Աստուած հօր իմոյ օգնական իմ , եւ ապրեա-
5 ցոյց զիս ի ձեռաց Փարաւոնի : Եւ եկն Յոթոր աներն Մովսեսի եւ որդիք նորա եւ կին նորա առ Մովսէս յանապատն , ուր բնակեալ էր ի լերինն Աստուծոյ :
6 Այդ եղեւ Մովսեսի եւ ասեն , Թէ Ահա աներ քո Յոթոր գայ առ քեզ , եւ կին
7 քո եւ երկու որդիք քո ընդ նմա : Ել Մովսէս ընդ առաջ աներան իւրոյ , եւ երկիր եպաղ նմա եւ համբուրեաց զնա . եւ ողջոյն եւուն միմեանց ի խաղաղու-
8 թիւն , եւ ատրաւ զնոսա ի խորանն : Եւ պատմեաց Մովսէս աներոյն իւրում զամենայն զոր արար Տէր ընդ Փարաւոն եւ ընդ Եգիպտացիսն վասն Իսրայէլի , եւ զամենայն աշխատութիւնս որ եղեւ նոցա ի ճանապարհի , եւ զի ապրեցոյց
9 զնոսա Տէր : Եւ [8]զարմացաւ Յոթոր ի վերայ ամենայն բարեացն զոր արար Նոյա Տէր , եւ զի ապրեցոյց զնոսա ի ձեռաց Եգիպտացւոցն [5]եւ ի ձեռաց Փարաւոնի՝՝ :
10 Եւ ասէ Յոթոր , Օրհնեալ է Տէր որ ապրեցոյց [9]զդոսա ի ձեռաց Եգիպտացւոցն եւ ի ձեռաց Փարաւոնի . զի փրկեաց զժողովուրդդ ինեւքոստ ձեռինն Եգիպ-
11 տացւոց : Արդ գիտեմ թէ մեծ է Տէր քան զամենայն աստուածս . [10]վասն այնորիկ զի բանսային ի վերայ դոցա՝՝ :
12 Եւ առ Յոթոր աներն Մովսեսի ողջա-

[5] ՅԲէ. պակաս [6] ՆԲէ. ձեռն ի վերայ աթոռոյ Տեառն, պատերազմ Տեառն [7] ՅԲէ. յղելոյն [8] ՅԲէ. ուրախ եղեւ [9] ՅԲէ. զձեզ [10] ՅԲէ. զի յորում ամբարտաւանէինն եղեւ ընդդէմ նոցա

կէզս եւ զոհս Աստուծոյ. եւ գնացին Մովսէս եւ Ահարոն եւ ամենայն ծերքն Իսրայելի՝ ուտել հաց ընդ աներոյն Մովսիսի առաջի [1]Տեառն։
13 Եւ եղեւ ի վաղիւ անդր նստաւ Մովսէս դատել զժողովուրդն. եւ կայր ա-մենայն ժողովուրդն չուրջ զՄովսիսիւ,
14 յառաւօտէ մինչեւ ցերեկոյ։ Եւ տեսեալ Ցոթորայ զամենայն ինչ զոր առնէր ժո-ղովրդեանն, եւ ասէ, Ձինչ է բանդ այդ զոր առնես դու ժողովրդեանդ. ընդէր դու նստիս միայն, եւ ամենայն ժողո-վուրդդ կայ չուրջ գքեւ յառաւօտէ մին-
15 չեւ ցերեկոյ։ Եւ ասէ Մովսէս ցաներն իւր, Քանզի գայ ժողովուրդդ առ ի-
16 նձդրել իրաւունս յԱստուծոյ։ Ցորժամ լինիցի ինչ դոցա հակառակութիւն, գան առ ի՛ս, եւ ես ընտրեմ ի մէջ իւրաքան-չիւր ուրուք, եւ իմացուցանեմ դոցա զՆրամանս Աստուծոյ եւ զօրէնս նորա։
17 Եւ ասէ ցնա աներն Մովսիսի, Ոչ է ու-
18 ղիղ բանդ զոր առնես։ Անհնարին տան-ջանօք տանջիս դու եւ ամենայն ժողո-վուրդդ որ է ընդ քեզ. ծանր է քեզ բանդ այդ, ոչ կարես միայն առնել։
19 Բայց արդ լուր ինձ, եւ տայ քեզ խրատ, եւ եղիցի Աստուած ընդ քեզ։ Լեր դու ժողովրդեանդ առ ի յԱստուծոյ, եւ տար-
20 ցես դու զբանս դոցա առ Աստուած. Եւ դիցես դոցա վկայութիւն զՆրամանացն [2]Աստուծոյ եւ զօրինաց նորա՝, եւ դուց-ցես դոցա ճանապարհս յորս գնայցեն, եւ
21 զգործս զոր գործիցեն։ Եւ դու տես քեզ յամենայն ժողովրդենէդ արս զօրաւորս, աստուածասէրս, արս արդարակորովս որ ատիցեն [3]զհպարտութիւն, եւ կա-ցուսցես գնոսա ի վերայ դոցա հազարա-պետս եւ հարիւրապետս եւ հինգապետս
22 եւ տասնապետս. Եւ դատեսցին զժողո-վուրդդ յամենայն ժամ. եւ զբան ինչ մեծ առ քեզ հասուցանիցեն, եւ զփոքր ինչ դատաստան՝ ինքեանք դատեսցին. եւ թեթեւացուսցեն ի քէն, եւ եղիցին քեզ
23 օգնականք։ Եթէ զայս բան արասցես, զօրացուսցէ զքեզ Աստուած, եւ կա-րասցես տոկալ, եւ ամենայն ժողովուրդդ երթիցէ ի տեղի իւր խաղաղութեամբ։
24 Եւ լուաւ Մովսէս ձայնի աներոյն իւ-րոյ, եւ արար զամենայն որ միանգամ
25 ասաց նմա։ Եւ ընտրեաց Մովսէս յա-մենայն Իսրայելէ արս զօրաւորս, եւ արար զնոսա ի վերայ նոցա հազարապետս եւ հարիւրապետս եւ հինգապետս եւ տաս-
26 նապետս։ Եւ դատէին՝ զժողովուրդն յա-մենայն ժամ. բայց զբան ինչ մեծ հասու-ցանէին առ Մովսէս, եւ զամենայն բան
27 թեթեւ՝ ինքեանք դատէին։ Եւ արձակեաց Մովսէս զաներն իւր, եւ գնաց յիրկիր իւր։

Գլ. ԺԹ

1 Յամսեանն երրորդի ելանելոյ որդւոցն Իսրայելի յերկրէն Եգիպտացւոց, յաւուրն
2 յայնմիկ եկին յանապատն Սինայ։ Զուե-ցին յԻափիդիմայ եւ եկին յանապատն Սինայի, եւ բանակեցան յանապատի անդ. եւ բանակեցաւ Իսրայէլ անդ հան-
3 դէպ լերինն։ Եւ Մովսէս ել [4]ի լեառնն Աստուծոյ՝. եւ կոչեաց զնա [5]Աստուած ի լեռնէ անտի եւ ասէ, Այսպէս ասաս-ցես տանն Յակոբայ, եւ պատմեսցես
4 որդւոցն Իսրայելի. Դուք ձեզէն տեսէք որչափ ինչ արարի ընդ Եգիպտացիսն, եւ առի զձեզ իբրեւ ի վերայ թեւոց
5 արծուոյ եւ յարեցի զձեզ առ ի՛ս։ Եւ արդ՝ եթէ լսելով լսիցէք ձայնի իմոյ, եւ պահիցէք զուխտն իմ, եղիջիք դուք ինձ ժողովուրդ սեպհական յամենայն ազգաց.
6 զի իմ է ամենայն երկիր։ Եւ դուք եղի-ջիք ինձ ի թագաւորութիւն [6]եւ ի քա-հանայութիւն՝ եւ յազգ սուրբ. զայս բանս խօսեսցիս ընդ որդիսն Իսրայելի։
7 Եկն Մովսէս եւ կոչեաց զծերս ժողո-վրդեանն, եւ եդ առաջի նոցա զամենայն զբանս զայսոսիկ զոր պատուիրեաց նմա
8 [5]Աստուած։ Պատասխանի ետ ժողովուրդն միահամուռ եւ ասեն, Զամենայն ինչ զոր ասաց [5]Աստուած, արասցուք [7]եւ լսի-ցուք՝։ Եւ տարաւ Մովսէս զպատգամս ժողովրդեանն առ [5]Աստուած։
9 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Ահաւասիկ ես եկից առ քեզ [8]սեամբ ամպոյ, զի լսիցէ ժողովուրդն միով ինչ ես ընդ քեզ խօսիմ, եւ հաւատասցին քեզ յաւի-տեան։ Եւ պատմեաց Մովսէս զբանս
10 ժողովրդեանն առ Տէր։ Եւ ասէ Տէր ցՄովսէս, [9]Էջ զկիր վկայութիւն ժողո-վրդեանն՝ եւ սրբեա զնոսա այսօր եւ վաղիւ, եւ լուասցին զձորձս իւրեանց,

[1] ԵՖԲ. Աստուծոյ [2] ԵՖԲ. և զօրինաց [3] ԵՖԲ. զշաքաղութիւն
[4] ԵՖԲ. առ Աստուած [5] ԵՖԲ. Տէր [6] ԵՖԲ. քահանայից [7] ԵՖԲ. պահ-ման [8] ԵՖԲ. ի միջոցեան [9] ԵՖԲ. երթ առ ժողովրդն

11 Եւ պատրաստեսցին աւուրն երրորդի. զի
յաւուրն երրորդի իջցէ Տէր յանդիման
ամենայն ժողովրդեանդ ի լեառնդ Սի-
12 նա։ Եւ զատուսցես զժողովուրդն չուրջ՝
եւ ասասցես, Զգոյշ կացէք անձանց յա-
լանելոյ ի լեառնն եւ մերձենալոյ ի նա.
զի ամենայն որ մերձեսցի ի լեառնն՝ մա-
13 հու սատակեսցի։ Մի՛ մերձեսցի ի նա
ձեռն. քանզի քարամբ քարկոծեսցի եւ
նետիւք խոցոտիցի. եթէ անասուն իցէ
եւ եթէ մարդ, մի՛ կեցցէ. այլ [1]յորժամ
ձայնքն եւ փողն եւ ամպն վերասցին ի
լեռնէ անտի," ելանիցեն նոքա ի լեառնն։
14 Եւ էջ Մովսէս ի լեռնէ անտի առ ժո-
ղովուրդն, եւ սրբեաց զնոսա. եւ լուա-
15 ցին զձորձս իւրեանց։ Եւ ասէ ցժողո-
վուրդն, Պատրաստ լերուք [2]զերիս ա-
ւուրս". ի կանայս մի՛ մերձենայք։
16 Եւ եղեւ յաւուրն երրորդի ընդ ա-
ռաւօտան ձայնք եւ փայլատակունք եւ
ամպ մրդախառն ի վերայ լերինն [3]Սի-
նայի լինէին, եւ ձայն փողոյն հնչէր մե-
ծաձայն, եւ զարհուրեցաւ ամենայն ժո-
17 ղովուրդն որ էր ի բանակի անդ։ Եւ
հանան Մովսէս զժողովուրդն ընդ առաջ
Աստուծոյ ի բանակէ անտի, եւ [4]կայցէյ
18 չուրջ" զատորոտով լերինն [3]Սինայի։ Եւ
լեառն Սինա ծխէր առ հասարակ, քանզի
իջեալ կայր [5]Աստուած ի վերայ նորա
հրով, եւ ելանէր ծուխ նորա իբրեւ զծուխ
հնոցի, եւ [6]զարհուրեցաւ ամենայն ժո-
19 ղովուրդն յոյժ։ Քանզի" հասանէին ձայնք
փողոյն ի բաց, յառաջացեալք եւ աստա-
կացեալք յոյժ, Մովսէս խօսէր, եւ Ա-
20 ստուած տայր նմա ձայն։ Եւ էջ Տէր ի
լեառնն Սինա, ի գլուխ լերինն. եւ կոչ-
եաց Տէր զՄովսէս ի գլուխ լերինն, եւ
21 ել անդր Մովսէս։ Եւ խօսեցաւ [5]Աստ-
ուած ընդ Մովսէսի եւ ասէ, Էջ, դիր
վկայութիւն ժողովրդեանդ, զուցէ մեր-
ձենայցեն հայել առ [5]Աստուած, եւ ան-
22 կանիցին բազումք ի նոցանէ։ Եւ քա-
հանայքն որ մերձենան առ [5]Աստուած՝
սրբեսցին, զուցէ սատակիցէ ի նոցանէ
23 Տէր։ Եւ ասէ Մովսէս [7]ցԱստուած, Ոչ
կարէ ժողովուրդն ելանել ի լեառնն Սի-
նա. զի դու լինքնին ուխտեցեր մեզ եւ
ասացեր, եթէ Զատուսցես զլեառնս եւ
24 սրբեսցես զդա։ Եւ ասէ ցնա Տէր, երթ
էջ, եւ ել այսրէն դու եւ Ահարոն ընդ
քեզ. բայց քահանայքն եւ ժողովուրդն
մի՛ ժամեսցին ելանել առ [5]Աստուած,
25 զուցէ սատակիցէ ի նոցանէ Տէր։ Էջ
Մովսէս առ ժողովուրդն եւ ասէ ցնոսա։

ԳԼ. Ի

1 Խօսեցաւ [8]Տէր զամենայն զպատգամս
զայսոսիկ եւ ասէ,
2 Ես եմ Տէր Աստուած քո որ հանի զքեզ
յերկրէն Եգիպտացւոց ի տանէ ծառա-
յութեան։
3 Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց
յինէն։
4 Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ա-
մենայն նմանութեան որ ինչ յերկինս ի
վեր է, եւ որ ինչ յերկրի ի խոնարհ,
5 եւ որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի. Մի՛
երկիր պագանիցես նոցա, եւ մի՛ պաշ-
տեսցես զնոսա. զի ես եմ Տէր Աստուած
քո, Աստուած նախանձոտ, որ հատու-
ցանեմ զմեղս հարանց որդւոց, յերիս եւ
6 ի չորս ազգս ատելեաց իմոց. Եւ առնեմ
ողորմութիւն ի հազար ազգս սիրելեաց
իմոց, եւ ոյք պահեն զնրամանս իմ։
7 Մի՛ առնուցուս զանուն Տեառն Աս-
տուածոյ քո ի վերայ սնոտեաց. զի ոչ
սրբեսցէ Տէր զայն որ առնուցու զա-
նուն նորա ի վերայ սնոտեաց։
8 Ցիշեսջիր զօրն չաբաթուց սրբել զնա։
9 Զվեց օր գործեսցես, եւ արասցես զա-
10 մենայն զգործս քո. Ցաւուրն եւթներորդի
չաբաթ Տեառն Աստուծոյ քո. մի՛ գոր-
ծեսցես ի նմա զամենայն գործ քո, դու եւ
ուստր քո եւ դուստր քո, ծառայ քո եւ
աղախին քո, [9]եզն քո եւ էշ քո եւ ամենայն
անասուն քո, եւ եկն" քո եւ պանդուխտն
11 որ ի քեզ. Զի զվեց օր արար Տէր Աստ-
ուած զերկինս եւ զերկիր, եւ զծով եւ
զամենայն որ ի նոսա, եւ հանգեաւ յա-
ւուրն եւթներորդի. վասն այնորիկ օրհ-
նեաց Տէր զօրն եւթներորդ եւ սրբեաց զնա։
12 Պատուեա զհայր քո եւ զմայր քո [3]զի
քեզ բարի լիցի, եւ" զի երկայնակեաց
լինիցիս ի վերայ երկրին [3]բարութեան
զոր Տէր Աստուած քո տացէ քեզ։
13 Մի՛ սպանաներ։
14 Մի՛ շնար։
15 Մի՛ գողանար։

[1] ԵԲբ. յերկարել փողոյն [2] ԵԲբ. յօրն երրորդ
[3] ԵԲբ. զ-ի՝ ոք [4] ԵԲբ. կացին [5] ԵԲբ. Տէր [6] ԵԲբ.
դողայր ամենայն լեառնն, (19) Եւ [7] ԵԲբ.
ցՏէր
[8] ԵԲբ. Աստուած [9] ԵԲբ. և անասուն

16 Մի՛ սուտ վկայութիւն վկայեր ընկերիդ քումմէ։
17 Մի՛ ցանկանար տան ընկերի քո, [1]եւ մի՛ անդոյ նորա.՝՝ մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, եւ մի՛ ծառայի նորա, եւ մի՛ աղախնոյ նորա, եւ մի՛ եզին նորա, եւ մի՛ իշոյ նորա, [1]եւ մի՛ ամենայն անասնոյ նորա՝՝ եւ մի՛ ամենայնի զինչ ընկերի քո իցէ։
18 Եւ ամենայն ժողովուրդն տեսանէր զձայնն եւ զհառաչայիսն եւ զբարբառ փողոյն եւ զլեառնն ծխել։ Ջահի հաբաւ ամենայն ժողովուրդն եւ խորշեցաւ
19 եկաց ի հեռաստանէ. Եւ ասեն ցՄովսէս, Դու խօսեաց ընդ մեզ եւ լուիցուք, եւ մի՛ խօսեսցի ընդ մեզ Աստուած, գուցէ մեռանիցիմք։ Եւ ասէ ցնոսա Մովսէս, Քաջալերեցարուք, մի՛ վասն փորձելոյ զձեզ եկն առ ձեզ Աստուած, որպէս մի՛ լինիցի երկիւղ նորա ի ձեզ, մի՛ մի՛ մեղանչիցէք։
21 Եւ կայր ժողովուրդն ի հեռաստանէ. Եւ Մովսէս եմուտ ի մէջն ուր էր Աստուած։
22 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Այսպէս ասասցես զու [1]առնդ Յակոբայ, եւ պատմեսցես՝՝ որդւոցդ Իսրայէլի, Դուք ձեզէն տեսէք, մի՛ յերկնից խօսեցայ ընդ ձեզ։ Մի՛ առնիցէք ձեզ աստուածս ոսկեզէնս եւ
24 աստուածս արծաթեզէնս։ Սեղան հողեզէն արասջիք ինձ, եւ մատուսջիք ի նմա զոզջակէզս ձեր եւ [2]զխրկութիւնս ձեր, զոչխարս ձեր եւ զարջառս ձեր, յամենայն տեղիս ուր անուանեցից զանուն իմ անդ, եկիցէ առ քեզ եւ օրհնեցից զքեզ։
25 Այլ եթէ սեղան ի քարանց առնիցես ինձ, մի՛ չինեսցես զնոսա կոփածոյս. քանզի զձեռնոցդ քո մերձեցուցեր ի նա,
26 եւ պղծեալ է։ Մի՛ ելանիցես ընդ աստիճանս ի սեղան իմ, զի մի՛ մերկասցին առականք քո ի վերայ նորա։

ԳԼ. ԻԱ

1 Եւ այս իրաւունք են զոր դիցես առաջի նոցա։
2 Եթէ գնեսցես ծառայ եբրայեցի, զվեց ամ ծառայեսցէ քեզ, եւ յամին եւթներորդի գնասցէ ազատ ձրի։ Եթէ ինքն միայն մտեալ իցէ, միայն գնասցէ. եւ եթէ կնաւ հանդերձ մտեալ իցէ, ելցէ եւ
4 կինն ընդ նմա։ Այլ եթէ տէրն իւր տացէ նմա կին, եւ ծնանիցի նմա ուստեր եւ դստեր, կինն եւ որդիք՝ տեառն նորա
5 եղիցին, եւ նա միայն ելցէ։ Ապա եթէ պատասխանի տուեալ ասիցէ [3]ծառայն, Սիրեցի զտէր իմ եւ զկին իմ եւ զորդիս իմ, եւ ոչ գնամ յազատութիւն,
6 Տարցի գնա տէրն իւր յատեան Աստուծոյ, եւ ապա մատուսցէ գնա առ սեամս դրանն. եւ ծակեսցէ զունկն նորա հերևամբ, եւ ծառայեսցէ նմա յաւիտեան։
7 Իսկ եթէ վաճառեսցէ ոք զդուստր իւր յազախնութիւն, մի՛ գնասցէ որպէս
8 ելանիցեն [3]ազախինք։ Եթէ ոչ լինիցի հաճոյ յաչս տեառն իւրոյ որում հաստատեսցէն, փրկեսցէ գնա. բայց յազգ օտար չէ իշխան վաճառել, զի անարգեաց գնա։ Ապա թէ որդւոյ իւրում հաստատեսցէ գնա, ըստ օրինաց դստերաց
10 արասցէ նմա։ Ապա թէ առ նովաւ այլ առնուցու, [4]զօրէնն եւ զհանդերձ նորա եւ զմերձաւորութիւն մի՛ հատցէ ինմանէ։
11 Ապա թէ զերիս զայսոսիկ ոչ առնիցէ նմա, ձրի իսկ ելցէ առանց արծաթոյ։
12 Եթէ հարցէ ոք զոք եւ մեռանիցի,
13 մահու մեռցի եւ նա։ Իսկ որ ոչ կամաւ՝ այլ Աստուած մատնեաց ի ձեռս նորա, տացի նմա տեղի ուր փախիցէ
14 սպանօղն։ Իսկ եթէ մտաբերեսցէ ոք յընկեր իւր սպանանել գնա նենգութեամբ եւ փախիցէ, եւ ի սեղանոյ իմմէ առնուցուս գնա եւ սպանանիցես։
15 Որ հարկանէ զհայր իւր կամ զմայր իւր, մահու մեռցի։
16 Որ ոք գողասցի [5]յորդւոցն Իսրայէլի՝՝ եւ վաճառեսցէ գնա, եւ գտցի առնմա, մահու մեռցի։
17 Որ [6]բամբասեսցէ զհայր իւր կամ զմայր իւր, մահու մեռցի։
18 Եթէ կռուիցեն արք երկու, եւ հարկանիցէ ոք ի նոցանէ զընկեր իւր քարիւ կամ բռնցի, եւ ոչ մեռանիցի, այլ
19 գնիցի ի մահիճս, եթէ յառնիցէ այրն եւ չրջիցի արտաքոյ ի ցպոյ, անպարտ լիցի որ եհարն, բայց զվաստանածոյ նորա եւ զբժշկութեանն տուժեսցի։
20 Եթէ ոք հարցէ զծառայ իւր կամ զաղախին իւր զաւազանաւ, եւ մեռցի ի ձեռանէ նորա, գատաստանաւ վրէժ-
21 խնդրութիւն լիցի. Բայց թէ մի օր կամ երկուս կեցցէ, մի՛ խնդրեսցի վրէժն. զի զինք արծաթոյ իւրոյ են։
22 Իսկ եթէ կռուիցեն արք երկու, եւ

[1] 8Եբր. պ-ի-ւ-ի [2] Եբր. զխաղաղականս
[3] Եբր. ծառայք [4] Ակյեդ. զկերակուր [5] Եբր. մարդ [6] Եբր. անիծցէ

հարկանիցեն զկին յղի եւ ելանիցէ սաղմն
[1]անկար , կէս վնասու" տուժեսցի , որ-
չափ ինչ արկանիցէ նմա այր կնոջն , եւ
23 տացէ [2]աղաչելով. Ապա եթէ [3]կերպարան-
24 եալ իցէ", տացէ անձն ընդ անձին, Ակն ընդ
ական, առաման ընդ առաման , ձեռն ընդ
25 ձեռին, ոտն ընդ ոտին, Խարան ընդ խարա-
նի, վէրն ընդ վիրի, հարուածն ընդ հարուածոյ։
26 Իսկ եթէ հարցէ ոք զակն ծառայի
իւրոյ կամ զակն աղախնոյ իւրոյ , եւ
կուրացուսցէ, արձակեսցէ [4]զնոսա ա-
27 զատս" փոխանակ ական [5]նոցա ։ Եւ եթէ
զառաման ծառայի իւրոյ , կամ զառաման
աղախնոյ թափեսցէ, արձակեսցէ [4]ա-
զատս փոխանակ առաման [5]նոցա ։
28 Իսկ եթէ հարցէ ցուլ զայր կամ զկին,
եւ մեռանիցին , ցուլն քարկոծ լիցի , եւ
միս նորա մի՛ կերիցի . եւ տէր ցլոն
29 անպարտ լիցի ։ Ապա թէ ցուլն հարկա-
նօղ էր էրէկին եւ չեռանդն, եւ բողո-
քեալ էր [6]տեառն նորա , եւ նորա չէր ի
միջոյ բարձեալ, եւ սպանանիցէ զայր կամ
զկին , ցուլն քարկոծ լիցի , եւ տէր ցլոն
30 առ նմին մեռցի ։ Իսկ եթէ փրկանք ան-
կանիցին ի վերայ նորա , տացէ փրկանս
ընդ անձին իւրում, ըստ ամենայնի որ-
31 չափ ինչ արկանիցեն նմա գին ։ Եւ եթէ
զուստր կամ զզուստր հարկանիցէ , ըստ
32 նմին օրինակի արասցեն նմա։ Իսկ եթէ
զծառայ կամ զաղախին հարկանիցէ ցուլն,
երեսուն [7]կրկին սատեր" արծաթ տացէ
տեառն նոցա , եւ ցուլն քարկոծ լիցի ։
33 Իսկ եթէ բացցէ ոք հոր , կամ փո-
րեսցէ ջրհոր , եւ ոչ խափանիցէ զնա, եւ
34 անկանիցի անդ արջառ կամ էշ , Տէր
հորոյն տուժեսցի արծաթ եւ տացէ
տեառն նորա , եւ չաղիղն նորա լիցի ։
35 Իսկ եթէ հարցէ ցուլ ուրուք զցուլ
ընկերի իւրոյ եւ մեռցի , վաճառեսցեն
զցուլն կենդանի , եւ բաժանեսցեն զգինս
նորա , եւ զցուլն սպանեալ՝ բաժանես-
36 ցեն ։ Ապա եթէ յերէկին եւ չեռանդն
գիտէին զցուլն , եւ [8]բողոքեալ իցէ
տեառն նորա , եւ նորա չիցէ ի միջոյ
բարձեալ զնա," տուժեսցի ցուլ ընդ
ցլոն , եւ սպանեալն նորա լիցի ։

[1] ԵԲԲ. Նորա , և չար ինչ ոչ պատահիցէ , տու-
ժելով [2] ԵԲԲ. ըստ դատաւորաց [3] ԵԲԲ. չար
ինչ պատահիցէ [4] ԵԲԲ. զնա ազատ [5] ԵԲԲ.
Նորա [6] Այլ՝ Նմա, ցուլր [7] ԵԲԲ. սիկղ [8] ԵԲԲ.
տեառն նորա չիցէ պահեալ զնա, տուժելով

ԳԼ . ԻԲ

1 Իսկ եթէ գողացի ոք արջառ կամ ոչ-
խար , եւ սպանցէ կամ վաճառեսցէ ,
հինգ արջառ ընդ արջառոյն տուժեսցի ,
2 եւ չորս ոչխար ընդ ոչխարին ։ Իսկ ե-
թէ յականն գտանիցի գող , եւ խոցեալ
մեռանիցի , չէ այն նմա ի սպանութիւն։
3 Ապա եթէ արեւն ի վերայ նորա ծագի-
ցէ , մահապարտ է , [9]փոխարէն մեռցի".
ապա թէ ոչինչ գտանիցի նորա , վա-
ճառեսցի փոխանակ գողութեանն ի-
4 րոյ ։ Իսկ եթէ ըմբռնեսցի եւ գտցի ի
ձեռին նորա գողոնն՝ յարջառոյ եւ յիշոյ
մինչեւ ցոչխար , կրկին տուժեսցի ։
5 Եթէ արածիցէ ոք զանդ կամ զայգի,
եւ թողլ տացէ խաչին իւրում արածել
զանդ այլոց , [10]յիւրմէ անդոյ անտի տուժ-
ժեսցի ըստ արգեանն։ Ապա թէ զամենայն
իսկ զանդն արածիցէ,"զընտիր կողմն անդոյ
իւրոյ եւ զընտիր այգւոյ իւրոյ տուժեսցի։
6 Իսկ եթէ ելանիցէ հուր եւ գտանիցէ
փուշ , եւ ընդ նմին այրիցէ զկալ կամ
ղօրան կամ զանդ , տուժելով տուժեսցի
որոյ ղերգեհն հանեալ իցէ ։
7 Իսկ եթէ ոք տացէ ընկերի իւրում
արծաթ կամ այլ ինչ կարասի զիւր յա-
ւանդ , եւ գողանայցի ի տանէ տանն ,
եթէ գտցի որ գողացաւն , կրկին տուժ-
8 եսցի . Ապա եթէ ոչ գտցի որ գողա-
ցաւն , մատիցէ տէր տանն առաջի [11]Աս-
տուածոյ , եւ երդուիցի եթէ իւր չէ նենդ-
զեալ ամենեւեւին զաւանիլ ընկերի իւրոյ ։
9 Ըստ ամենայն [12]վնասակար բանի", յար-
ջառոյ եւ յիշոյ եւ յոչխարէ եւ ի հան-
գերձէ , եւ յամենայն կորստենէ [13]որում
վնասակար առնիցեն , որ զինչ իցէ" ա-
ռաջի [11]Աստուածոյ եկեսցէ դատաստան
երկոցունն , եւ [14]որ ոք ի նոցանէ
ըմբռնեսցի ի ձեռն Աստուածոյ" , կրկին
տուժեսցի ընկերի իւրում ։
10 Եւ եթէ տացէ ոք ընկերի իւրում էշ
կամ եզն կամ ոչխար կամ այլ ինչ ա-
նասուն ի պահեստ , եւ բեկցի կամ մեռ-
ցի կամ գերի վարեսցի , եւ ոչ ոք գի-
11 տասցէ , երդումն [15]Աստուածոյ լիցի ի մէջ
երկոցունն , եթէ նենդանօք ինչ չիցէ

[9] ԵԲԲ. զի մարթի էր նմա տուժելով տուժել
[10] ՅԵԲԲ. պակաս [11] Կամ, դատաւորաց [12] ԵԲԲ.
բանի անիրաւութեան [13] ԵԲԲ. զորմէ ասիցէ
թէ այս է այն [14] ԵԲԲ. զոր դատապարտեսցէ
Աստուած, Կամ, դատապարտեսցեն դատաւորք
[15] ԵԲԲ. Տեառն

զնացեալ առնեսցի ընդ աւանդ ընկերին
իւրոյ, ապա յանձն առցէ տէր նորա, եւ մի
12 տուժեսցի։ Իսկ եթէ գողութեամբ գողա-
նայցի ի նմանէ, տուժեսցի տեառն նորա։
13 Ապա թէ գազանաբեկ լինիցի, [1]ածցէ
վկայ ի դէպ անպր՝, եւ մի տուժեսցի։
14 Իսկ եթէ խնդրեսցէ ոք [2]անօթ յընկե-
րէ իւրմէ, եւ բեկցի կամ մեռցի [3]կամ
գերի գնասցէ՝, եւ տէր նորա չիցէ ընդ
15 նմա, տուժելով տուժեսցի. Ապա թէ
տէր նորա ընդ նմա իցէ, ոչ տուժեսցի.
ապա թէ ի վարձու առեալ իցէ, ընդ
վարձուց իւրոց եղիցի նմա։
16 Իսկ եթէ ոք խաբեսցէ զկոյս զոչ խօս-
եալ եւ ննջեսցէ ընդ նմա, վարձանօք
17 վարձեսցի զնա իւր կնութեան։ Եւ եթէ
ոչ առնուցու յանձն հայր նորա տալ զնա
նմա կնութեան, տուժեսցի արծաթ [3]չօր
նորա՝ որպէս լցեն վարձանք կուսից։
18 [4]Զկախարդս մի՛ ապրեցուցանիցէք։
19 Զամենայն որ խառնակիցի ընդ անաս-
սունն՝ մահու ոպանանիցի՛ք։
20 Որ զերաց զոհիցէ՝ սատակեսցի, բայց
միայն Տեառն։
21 Զպանդուխտն մի՛ չարչարիցէք եւ մի՛
նեղիցէք զնա, զի եւ դուք պանդուխտք
22 էիք յերկրին Եգիպտացւոց։ Զամենայն
23 այրի եւ զորս մի՛ չարչարիցէք։ Ապա
եթէ չարչարելով չարչարիցէք զնոսա,
եւ բողոք բարձեալ աղաղակիցեն առ
24 իս, լսելով լուայց աղաղակի նոցա. Եւ
բարկացայց սրտմտութեամբ եւ կոտո-
րեցից զձեզ սրով, եւ եղիցին կանայք
ձեր այրիք եւ մանկունք ձեր որբք։
25 Եւ եթէ արծաթ փոխ տայցես [5]նեղոյ
քումմ՝՝ որ աղքատ իցէ առ քեզ, մի՛ [6]ճե-
պեսցես զնա՝՝, եւ մի՛ արկանիցես նմա տո-
26 կոսիս։ Եւ եթէ գրաւեսցես զբաճկոն ըն-
կերի քո, նախ քան զմտանել արեւուդար-
27 ձուսցես անդրէն. Զի այն է վերարկու նո-
րա, եւ այն է հանգերձ [7]առականաց նորա
որով ննջիցէ. Եւ եթէ բողոքիցէ առ իս,
լուայց նմա, քանզի ողորմած եմ։
28 [8]Զաստուածս քո՝՝ մի՛ բամբասիցես, եւ
զիշխան ժողովրդեան քո մի՛ հայհոյեսցես։
29 Զպտուղ կալոյ քո եւ զհնձանի մի՛
[9]հատանիցես. զանդրանիկս որդւոց քոց
30 լինիս տացես։ Նոյնպէս արասցես զար-
ջատ քո եւ զոչխար քո [3]եւ զկչ քո՝՝.
զեւթն օր եղիցի ընդ մօրն իւրով, եւ
յաւուրն ութերորդի տացես զնա նմա։
31 Եւ մարդք սուրբք լինիցին ինձ. եւ
զմիս գազանաբեկին ի բացի՝ մի՛ ուտի-
ցէք, այլ շան ընկեսցիք։

ԳԼ. ԻԹ

1 Եւ զհամբաւ սուտ մի՛ [10]ընդունիցիս։
Մի՛ հաւանիցիս ընդ անիրաւի լինել
2 վկայ անիրաւ։ Մի՛ յօժարեսցիս ընդ բա-
զումս ի չարիս։
Մի՛ յաւելուցուս ի բազմութիւն միտել
ընդ բազումս առ խոտորելոյ զիրաւունս։
3 Եւ մի՛ ողորմեսցիս անհնկին ի գատաս-
տանի։
4 Եւ եթէ պատահեսցես եզին թշնամւոյ
քո, կամ իշոյ նորա մոլորելոյ, դարձու-
5 ցես եւ հասուցես զնա առ նա։ Եւ եթէ
տեսանիցես զդրաստ [11]ընկերի քո անկ-
եալ ընդ բեռամբ, մի՛ զանց առնիցես
զնովաւ, այլ յարուցանես զնա ընդ նմա։
6 Մի՛ խոտորեսցես զիրաւունս տնանա-
7 կին ի դատաստանի իւրում։ [12]Յամե-
նայն ի զուր բանէ՝՝ ի բաց լինիցիս, եւ
զանպարտն եւ զարդարն մի՛ սպանանի-
ցես. [13]եւ զամպարիշտն մի՛ ապրեցու-
ցանիցես վասն կաշառի՝՝։
8 Եւ կաշառ մի՛ առնուցուս. զի կաշառ
կուրացուցանէ զաչս համարձակահայե-
ցից, եւ ապականէ [14]զբանս արդարս՝՝։
9 Եւ զպանդուխտն մի՛ նեղիցես. քան-
զի ճանաչէք դուք զանձինս պանդխտաց.
զի եւ դուք պանդուխտք էիք յերկրին
Եգիպտացւոց։
10 Զվեց ամ սերմանեսցես զերկիր քո, եւ
11 ժողովեսցես զարմտիս նորա. Եւ յամին
եւթներորդի թողուցիս զնա, եւ
հանգուսցես զնա, եւ կերիցեն տնանկք
ազգի քո, եւ զմնացեալն ի նոցանէ կե-
րիցին գազանք վայրի. այնպէս արաս-
ցես զայգի քո եւ զձիթենի քո։
12 Զվեց օր զործեսցես զգործ քո, եւ
յաւուրն եւթներորդի [15]հանգիչէ եզն քո
եւ էշ քո, եւ հանգուիչէ որդի աղախնոյ
քո եւ [16]պանդխտին։

---

[1]ԵԲԲ. բերցէ զնա վկայ [2]ԵԲԲ լինչ [3]ՅԵԲԲ. գ-ՀՈՒ [4]ԼԲԲ. Զկին կախարդ [5]ԵԲԲ. ումեք ի ժողովրդենէ իմմէ [6]ԵԲԲ. լիցիս նմա իբրեւ վաշխառու [7]ԵԲԲ. մերկութեան [8]ԵԲԲ. ԶԱստուած, կամ, զդատաւորս [9]ԵԲԲ. յամեցուսցես [10]ԵԲԲ. Հանցես [11]ԵԲԲ. թշնամւոյ [12]ԵԲԲ. Ի բանէ ստութեան [13]ԵԲԲ. զի ոչ արդարացուցից զամպարիշտն [14]ԵԲԲ. զբանս արդարոց, կամ, զիրաւունս արդարոց [15]ԵԲԲ. դադարեսցես, զի հանգիցէ [16]ԵԲԲ. պանդխտան

13 Զամենայն զոր ասացի ձեզ՝ պահեսջիք. եւ զանուն աստուածոց օտարաց մի յիշեսջիք, եւ մի լսելի ի բերանոյ ձերմէ։
14 Երիս ժամանակս ի տարւոջ արասջիք
15 ինձ տօնս։ Զտօն բազարջակերացն պահեսջիք. զեւթն օր բազարջ կերիջիք, որպէս պատուիրեցի ձեզ ըստ ժամանակի ամսոյն կանխոց. զի ի նմա ելէք դուք յերկրէն Եգիպտացւոց. ոչ երեւեսջիս առաջի իմ դատարկաձեռն. Եւ զտօն
16 տաս առաջի իմ դատարկաձեռն. Եւ զտօն [1]ամարայնոյ, առաջնոյ արմտեաց քոց, [2]արասցես զգործոց քոց," որ ինչ վաստակել իցէ յանդի քում, եւ զտօն [3]կատարածի ելից" տարւոյն՝ ի ժողովել գործոց
17 քոց յանդէ։ Երիս ժամանակս ի տարւոջ յանդիման լիցի ամենայն արու քո առաջի Տեառն [4]Աստուծոյ։
18 Եւ մի զոհեսցես ի վերայ խմորոյ զարիւն զոհից [5]քոց, եւ մի ագռի ճարպ
19 տօնի իմոյ մինչեւ ցառաւօտ։ Զպտուղս առաջնի արմտեաց քոց բերցես ի տունն Տեառն Աստուծոյ քո։

Եւ մի եփեսցես [6]զղաւն ի կաթն մօր իւրոյ։
20 Եւ ահա ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց, զի պահեսցէ զքեզ ի ճանապարհի. որպէս զի տարցի զքեզ
21 յերկիրն՝ զոր պատրաստեցի քեզ։ Զգոյշ լեր անձին քում եւ լսելիս նմա, եւ մի անհնազանդ լինիցիս նմա. զի ոչ [7]խորչիցի ի քէն", քանզի անուն իմ ի վերայ նորա
22 է։ Եւ եթէ լսելով լսիցես ձայնի իմում, եւ արասցես զամենայն զոր ինչ ասացի քեզ, եղէց թշնամի թշնամեաց քոց, եւ հակառակ կացից հակառակորդաց քոց։
23 Զի երթիցէ հրեշտակ իմ առաջնորդ քեզ, եւ տարցի զքեզ առ Ամովրհացին եւ Քետացի եւ Փերեզացի եւ Քանանացի եւ [8]Գերգեսացի եւ" Եւեւացի եւ Յեբուսացի
24 եւ, եւ սատակեցից զնոսա։ Մի պագանիցես երկիր աստուածոց նոցա, եւ մի պաշտեսցես զնոսա, եւ մի առնիցես ըստ գործոց նոցա. այլ քակելով քակեսցես զնոսա, եւ մանրելով մանրեսցես զարձանս նոցա։ Եւ պաշտեսցես զՏէր Աս-
25 տուած քո, եւ [8]օրհնեցից զհաց քո եւ զջուր քո, եւ զարձուցից ի ձէնջ զախտ
26 Եւ մի եղիցի անասերին եւ ամուլ յերկրի
27 քում. զթիւ աւուրց քոց լցուցից։ Եւ զահ իմ առաքեցից առաջնորդել քեզ, եւ զարհուրեցուցից զամենայն ազգս յորս մտանիցես ի նոսա, եւ տաց զամենայն
28 հակառակորդս քո փախստական։ Եւ առաքեցից առաջի քո զպիծակ, եւ մերժեսցէ [2]զԱմովրհացին եւ" զՔեւեացին եւ զՔանանացին եւ զՔետացին յերեսաց
29 քոց։ Եւ ոչ մերժեցից զնոսա յերեսաց քոց ի միում ամի, զի մի երկիրն անապատ լինիցի, եւ բազմանացեն ի վերայ
30 քո գազանք երկրին։ Աս սակաւ սակաւ մերժեցից զնոսա ի քէն, մինչեւ
31 աճեսցես եւ ժառանգեսցես զերկիր։ Եւ եդից զսահմանս քո ի կարմիր ծովէ մինչեւ ի ծովն Փղշտացւոց, եւ յանապատէն մինչեւ ի գետն մեծ Եփրատ. եւ մատնեցից ի ձեռս ձեր զբնակիչս երկրին,
32 եւ մերժեցից զնոսա ի քէն։ Եւ դու մի դնիցես ընդ նոսա եւ ընդ դիս նոցա
33 ուխտ։ Եւ մի բնակեսցեն յերկրի քում, գի մի յանցուցանիցեն զքեզ առ իս. զի եթէ ծառայեսցես դից նոցա, նոքա լինին քեզ ի պայմազուխիւն։

ԳԼ. ԻԴ

1 Եւ ասէ ցՄովսէս, ել առ Տէր, դու եւ Ահարոն եւ Նաւադ եւ Աբիուդ եւ եւթանասուն այր ի ծերոց Իսրայելի, եւ [9]երկիր պագջին Տեառն" ի հեռաստանէ։
2 Եւ մերձեսցի Մովսէս միայն առ [10]Աստուած, եւ նոքա մի մերձեսցին. բայց ժողովուրդն մի ելցէ ընդ նոսա։
3 Եւ եմուտ Մովսէս եւ պատմեաց ժողովրդեանն զամենայն պատգամս [11]Աստուծոյ եւ զամենայն իրաւունս. պատասխանի ետ ամենայն ժողովուրդն ի մի ձայն եւ ասեն, Զամենայն պատգամս զոր խօսեցաւ Տէր՝ արասցուք [2]եւ լսիցուք"։ Եւ գրեաց Մովսէս զամենայն
4 զպատգամսն Տեառն, եւ կանխեալ Մովսէս ընդ առաւօտն, չինեաց սեղան ի ստորոտս լերինն, եւ երկոտասան վէմ մկանգնեաց ըստ երկոտասան ազգացն Իսրայելի։
5 Եւ առաքեաց զերիտասարդս որդւոցն Իսրայելի, եւ հանին ողջակէզս, եւ զոհեցին զոհս [12]փրկութեան Աստուծոյ" որթս։
6 Եւ առեալ Մովսէսի զկէս արեանն արկ ի խառնկլխան, եւ զկէս արեանն եհեզ

---

[1]ԵՔԲ. Հնձոց [2]ՅԵՔԲ. գ-ի-ե [3]ԵՔԲ. ժողովելոյ յեղ [4]ԵՔԲ. ԵՀովայի [5]ԵՔԲ. իմոց [6]ԵՔԲ. զուլ [7]ԵՔԲ. Թողուցու զյանցանս ձեր [8]ԵՔԲ. .օրՀնեսցէ

[9]ԵՔԲ. երկիր պագանիցէք [10]ԵՔԲ. Տէր [11]ԵՔԲ. Տեառն [12]ԵՔԲ. խաղաղութեան Տեառն

7 [1]առաջի սեղանոյն ։ Եւ առեալ զգիր ուխտին ընդ[2]երցաւ յականջս ժողովրդեանն. եւ ասեն, Զամենայն զոր խօսեցաւ Տէր՝ 8 արասցուք եւ լսեցուք։ Եւ առեալ Մովսիսէ զարիւնն՝ ցանեաց ժողովրդեամն եւ ասէ, Ահա այս արիւն է ուխտին զոր ուխտեաց Տէր ընդ ձեզ վասն ամենայն բանիցս այսոցիկ ։

9 Եւ ելին Մովսէս եւ Ահարոն եւ Նադաբ եւ Աբիհուդ եւ եւթանասունք ի մեծոցն 10 Իսրայէլի, Եւ տեսին [2]զտեղին ուր կայր Աստուած՝ Իսրայէլի. եւ ընդ ոտիւքն նորա իբրեւ զղորձած ազիւտոյ չափիղայ, եւ իբրեւ [3]զտեսիլ հաստատութեան երկնից 11 սրբութեամբն։ Եւ չընդունէր Իսրայէլի ոչ ձախսեաց եւ ոչ մի. եւ երեւեցան ի տեղւոջն Աստուծոյ՝, եւ կերան եւ արբին։ 12 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Ել առ իս ի լեառնն, եւ անց լինիջիր, եւ տայ քեզ տախտակս քարեղէնս եւ օրէնս եւ պատուիրանս զոր գրեցի, [4]լինել նոցա օրէնս- 13 դիր՝։ Յարեաւ Մովսէս եւ Յեսու պաշտօնեայ նորա, եւ [5]ելին ի լեառնն Աստուծոյ. 14 Եւ ասէ ցծերսն, Դադարեցէք այլ մինչեւ դարձցուք առ ձեզ. եւ ահա Ահարոն եւ Ովր ընդ ձեզ են. եւ եթէ ուրուք պատահանի լինչ լինիցի, երթիցեն առ նոսա։ 15 Եւ ել Մովսէս ի լեառն, եւ ծածկեաց 16 ամպն զլեառնն ։ Եւ իջին փառքն Աստուծոյ ի լեառնն Սինա, եւ ծածկեաց զնա ամպն վեց օր. եւ կոչեաց Տէր զՄովսէս յաւուրն եւթներորդի ի միջոյ 17 ամպոյն։ Եւ տեսիլ փառացն Տեառն իբրեւ զնօսր բորբոքեալ ի վերայ գլխոյ լերինն՝ 18 յանկիման որդւոցն Իսրայէլի ։ Եւ եմուտ Մովսէս ի մէջ ամպոյն, եւ ել ի լեառնն, եւ էր Մովսէս ի լերին անդ զքառասուն տիս եւ զքառասուն գիշեր ։

ԳԼ. ԻԸ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսէ եւ ասէ, Առասցես ցորիսն Իսրայէլի. եւ առէք ինձ [6]պատրաստ ի նոցանէ, որոց հաճոյ թուեսցի ի սիրտս իւրեանց եւ առնուցես ցաւք [6]զպատրաստս իմ։ 3 Եւ այս է [6]պատրաստն զոր առնուցուք ի նոցանէ. ոսկի եւ արծաթ եւ պղինձ, 4 եւ կապուտակ եւ ծիրանի, եւ կարմիր կրկին, եւ բիսոզ մաքուր, եւ մազ այծեաց, 5 եւ մորթս խոյոց կարմիր ներկեալ, եւ մորթս [7]կապուտաձաւ- 6 կեայս, եւ փայտս [8]անփուտս, եւ եղ լուսոյ եւ խունկս՝ իւղ օծման եւ ի հանդերձանս խնկոց, 7 եւ ականս սարդիոնս, եւ ականս պրոյ ի զարդ [9]վահանն, եւ [10]զգեզնաւորն ։ 8 Եւ [11]արասցես ինձ սրբավիճն, եւ [12]եւ- 9 բնակեսցայց ի մէջ ։ Եւ արասցես ինձ ըստ [13]ամենայնի զոր ցուցի քեզ ի լերինն՝ օրինակ խորանին եւ օրինակ ամենայն սպասուց նորա, եւ այսպէս [14]արասցես։ 10 Արասցես տապանակ վկայութեան յանփուտ փայտից. յերկուց կանղնոց եւ ի կիսոյ վերկայնութիւն նորա, եւ ի կանգնոյ եւ ի կիսոյ զլայնութիւն նորա, եւ ի կանգնոյ եւ ի կիսոյ զբարձրութիւն նո- 11 րա ։ Եւ պատեսցես զնա ոսկւով սրբով, ներքոյ եւ արտաքոյ [15]օծցես զնա. եւ արասցես նմա ծնօտս ոսկիս չուրջ չրջա- 12 նակաւ ։ Եւ ձուլեսցես նմա չորս օղամանեակս ոսկիս, եւ դիցես ի չորեցունց կողմանց նորա, երկուս օղամանեակս ի մի- 13 ոյ կողմանէ, եւ երկուս օղամանեակս ի միւսմէ կողմանէ ։ Եւ արասցես լծակս յանփուտ փայտից, եւ պատեսցես զնոսա 14 ոսկւով ։ Եւ աղուսցես զլծակսն յօղամանեակսն ի կողմանս սապանակին, բառ- 15 նալ նոքօք զսապանակն. Չի յօղամանեակս սապանակի կոտորանացն կացցեն լծակքն. անչարժք անդսին ի նմա- 16 նէ ։ Եւ դիցես ի տապանակին զվկայութիւնն զոր ես տայ քեզ ։

17 Եւ արասցես զքաւութիւնն [13]խնկակալ յոսկւոյ սրբոյ, յերկուց կանղնոց եւ ի կիսոյ վերկայնութիւն նորա, եւ ի կանգ- 18 նոյ եւ ի կիսոյ լայնութիւն նորա ։ Եւ արասցես երկուս քերովբէս ոսկիս [16]ճախարակեայս, եւ դիցես զնոսա ի վերայ 19 երկոցունց կողմանց քաւութեանն. Եւ լինիցին քերովբէքն՝ մի ի միոյ կողմանէ, եւ մի ի միւսմէ կողմանէ քաւութեանն. եւ արասցես երկուս քերովբէս ի վերայ 20 երկոցունց կողմանց նորա ։ Եւ իցէ քերո- բէիցն տարածեալ վերուս իբրեւսնդ ի վե-

[1] ԵՔԲ. ի վերայ [2] ՆԲԲ. զԱստուած [3] ՆԲԲ. զբուն երկինս ըստ յոտակութեան։ (11) Եւ յընտրեալսն որդւոցն Իսրայէլի ոչ ձգեաց զձեռն իւր. և տեսին զԱստուած [4] ՆԲԲ. ուսուցանել նոցա [5] ՆԲԲ. եւ Մովսէս [6] ՆԲԲ. նուէր, կամ, ընծայ

[7] ՆԲԲ. թեհաշի, այլոց՝ խա և այլք [8] ՆԲԲ. սաստիկ, այլոց՝ ընդերջէք չտեսանի երես [9] Ա. յերեսն, երեսուին [10] ՆԲԲ. տախտակին (կրծանոցին) [11] ՆԲԲ. արասցեն [12] ՆԲԲ. բնակեսցայց ի միջի նոցա (9) Ըստ [13] ՆԲԲ. պոմոե [14] ՆԲԲ. արասջիք [15] ՆԲԲ. պատեսցես [16] Կամ, կռածդյս

բուստ, եւ հովանի ունիցին թեւօք իւրեանց ի վերայ քաւութեանն. եւ երեսք նոցա յանդիման միմեանց, զի ի քաւու-
21 թիւնն հայեսցին երեսք քերովբէիցն։ Եւ դիցես զքաւութիւնն ի վերայ տապանակին ի վերուստ կողմանէ. եւ զկնիս ի տապանակի անդ զկայութիւնն զոր ես
22 տաց քեզ։ Եւ յայտնեցայց քեզ անտի, եւ խօսեցայց ընդ քեզ ի վերուստ ի քաւութենէ անտի, ի միջոյ երկուց քերո-
բէիցն՝ որ իցեն ի վերայ տապանակին վկայութեան, ըստ ամենայնի զոր պատուիրեցից քեզ առ որդիսն Իսրայելի։
23 Եւ արասցես սեղան յանփուտ փայտից. յերկուց կանգնոց զերկայնութիւն նորա, եւ ի կանգնոյ զլայնութիւն նորա,
եւ ի կանգնոյ եւ ի կիսոյ զբարձրութիւն
24 նորա։ Եւ պատեսցես զնա ոսկւով սրբով, եւ արասցես նմա ծնօտս ոսկիս չրջա-
25 նակաւ չուրջանակի։ Եւ արասցես նմա պսակ ուղիւտս չուրջանակի. եւ արասցես պսակին [1]ծնօտս չրջանակաւ չուր-
26 ջանակի։ Եւ արասցես նմա չորս օղամանեակս ոսկիս, եւ դիցես զօղամանեակսն ի չորեսին կողմանսն, որ իցեն
27 չորեցունց ոտից նորա, ի ներքոյ պսակին։ Եւ եղիցին օղամանեակքն լաւիրք
28 լծակացն՝ բառնալ նոքօք զսեղանն։ Եւ արասցես զլծակսն յանփուտ փայտից, եւ պատեսցես զնոսա ոսկւով [2]սրբով.
29 եւ բարձցի նոքօք սեղանն։ Եւ արասցես [3]զխնկաղացսն եւ զտուփս նորա, եւ զճաչակս եւ զնուիրանոցս նորա ո-
րովք նուիրեսցես, յոսկւոյ սրբոյ ա-
30 րասցես [4]զսոսա։ Եւ դիցես ի վերայ [5]սեղանոյ հացին երեսաց հայ՝ յանդիման
իմ հանապազորդ։
31 Եւ արասցես աչտանակ յոսկւոյ սրբոյ. [6]ճախարակեալ գործեսցես զաչտանակն. բունն եւ ստեղունքն եւ սկահքն եւ
գնդակքն եւ չուչանքն անդամն ի նմա-
32 նէ իցեն։ Վեց ստեղունք արձակեալք ի կողմանց նորա. երեք ստեղունք աչտանակին ի միոջէ կողմանէ, եւ երեք ստե-
ղունք աչտանակին ի միւսմէ կողմանէ։
33 Եւ երեք սկահաձեւք ընկուզազարդք յօրինեալք ի միում ստեղանն, եւ գնդակ եւ չուչան. եւ երեք սկահաձեւք ընկուզ-
զազարդք յօրինեալք ի միւսում ստե-
ղանն, եւ գնդակ եւ չուչան. նոյնպէս վեցեցունց ստեղանցն արձակելոց յաչ-
34 տանակէ անտի։ Եւ յաչտանակի անդ չորք սկահաձեւք ընկուզազարդք յարդարեալք,
35 եւ գնդակք եւ չուչանք նորա։ Գնդակ ի ներքոյ երկուց ստեղանցն անդամն ի նմանէ, եւ գնդակ ի ներքոյ երկուց եւս
ստեղանցն անդամն ի նմանէ. նոյնպէս արասցես վեցեցունց ստեղանցն արձա-
36 կելոց յաչտանակէ անտի։ Զի գնդակք նոցա եւ ստեղունք անդամն ի նմանէ իցեն, համակ [6]ճախարակեալ ի միոջէ
37 ոսկւոյ սրբոյ։ Եւ արասցես նմա ճրագարանս եւթն, եւ [7]դիցես զճրագարանսն ի վերայ աչտանակին, եւ տայցեն լոյս
38 ի միոջէ՝՝ կողմանէ երեսաց նորա։ Եւ [8]զքաղմակալս նորա եւ զնեցուկսն՝՝ ա-
րասցես յոսկւոյ սրբոյ. ի տալանդէ միոյ յոսկւոյ սրբոյ արասցես զայն ամենայն
39 սպաս։ Զդոյչ լեր, որպէս ցուցաւ քեզ օրինակ ի լերինն՝ արասցես։

Գլ. ԻԶ

1 Եւ արասցես խորան տասնփեղկեան, ի լեհեղոյ մանեղոյ եւ ի կապուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի կարմրոյ կրկնեղոյ. [9]քե-
րոբ՝ գործ անկուածոյ՝՝ գործեսցես զնոսա։
2 Երկայնութիւն միոյ փեղկին ի քսան եւ յոթ կանգնոյ, եւ լայնութիւն ի չորից կանգնոյ փեղկի միոյ լինիցի. չափ՝ նոյն
3 եղիցի ամենայն փեղկիցն։ Հինդ փեղկ ընդ միմեանս կցեալ, եւ հինգ եւս այլ
4 ընդ միմեանս խառնեալ։ Եւ արասցես ճարմանդս կապուտակեայս առ եզերբ միոյ փեղկին ի միոջէ կողմանէ ի խառ-
նուածս. նոյնպէս արասցես եւ առ եզերբ արտաքնոյ փեղկին, երկրորդի խառ-
5 նուածոյն։ Յիսուն ճարմանդ արասցես միում փեղկի, եւ յիսուն ճարմանդ ա-
րասցես ի կողմանէ փեղկին ըստ երկրորդի խառնուածոյն. դէմ ընդ դէմ միմեանց իւրաքանչիւր խառնիցին ճարմանդքն։
6 Եւ արասցես յիսուն օղս ոսկիս, եւ խառնեսցես զփեղկսն ընդ միմեանս աղխիւքն. եւ եղիցի խորան մի։
7 Եւ արասցես վիրնափեղկս մազեղէնս նուագարան խորանին, մետասան փեղկ
8 գործեսցես զնոսա։ Երկայնութիւն միոյ

[1] ԵԲԲ. ծնօտս ոսկիս [2] 3ԵԲԲ. պ-ա-ս-ե [3] ԵԲԲ. զսկուտեղսն [4] ԵԲԲ. զնոսա [5] ԵԲԲ. սեղանոյն հաց երեսաց [6] Կամ, կռածոյ

[7] ԼԲԲ. բարձցէ զճրագարանս իւր, և տայցէ լոյս ի [8] ԵԲԲ. զսնեղիս նորա և զբազմակալս նորա [9] ԵԲԲ. քերոբէիւք՝ գործ ճարտարի

փեղկի՝ լինիցի յերեսուն կանդնոյ. եւ լայնութիւն միոյ փեղկի ի չորից կանդնոց. չափ նոյն եղիցի մեւասանեկունց փեղ-
9 կիցն։ Եւ խառնեսցես ընդ միմեանս զհինգ փեղկան ի միասին, եւ զվից փեղկին իմիա-
սին. եւ կրկնեսցես զվիկորդ փեղկին
10 առաջոյ կողմանէ խորանին։ Եւ արասցես ճարմանդս ցհատն առ եզերբ միոյ փեղկին ի մէջ խառնուածոյն. եւ ցհատն
ճարմանդ արասցես առ եզերբ փեղկին
11 երկրորդի խառնուածոյն։ Եւ արասցես օղս պղնձիս ցհատն, եւ խառնեսցես զօղսն ընդ ճարմանդսն, եւ կցեսցես զփեղկսն,
12 եւ եղիցին մի։ Եւ [1]դիցես զաւելորդ փեղկիցն ի ներքոյ խորանին. կիսով փեղկիւն
աւելորդաւ մնացելով ծածկեսցես զա-
պարուսն փեղկից խորանին յետոյ կող-
13 մանէ", կանդնաւ՝ յայսմ կողմանէ, եւ կանդնաւ՝ յայնմ կողմանէ, յաւելորդէ երկայնութեան փեղկից խորանին եղիցի
ծածկել զապարուսն խորանին աստի ան-
14 տի։ Եւ արասցես [2]զվիժակս խորանին ի չիւակարմիր մորթոյ խոյոց, եւ [3]ծած-
կելիս՝ ի կապուտակի" մորթոյ ի վերուստ։
15 Եւ արասցես [4]զսիւնակս խորանին յանդ-
16 փուտ փայտից կանդնաւորս։ Ի տասն կանդնոյ զերկայնութիւն միոյ [5]սիւնակին
առնիցես, եւ ի միոջէ կանդնոյ եւ ի կիսոյ
[6]զմանձրութիւնն եւ" զպայնութիւնն միոյ
17 [5]սիւնակին։ Եւ երկուս [7]սիւսիչս միում [5]սիւնակի՝ [8]ագուցեալ ընդ միմեանս". այնպէս արասցես ամենայն [9]սիւնակաց
18 խորանին։ Եւ [10]արասցես քսան սիւնակս
19 խորանին ի հիւսիսոյ կողմանէ"։ Եւ քա-
ռասուն խարիսխս արծաթիս արասցես
[11]քսանեցունց սեանցն". երկու խարիսխք
[12]առ մի սիւն յերկոցունց կողմանց", եւ
երկու խարիսխք [12]առ մի սիւն յերկոցունց
20 կողմանց խորանին"։ Եւ յերկրորդէ կող-
մանէ խորանին ընդ [13]հարաւ քսան սիւն",
21 Եւ քառասուն խարիսխք նոցա արծա-

[1] ՆԲգ. աւելորդն փեղկից վրանին, կէս փեղկին՝ աւելորդն, յետոյ կողմանէ խորանին կայցէ կախեալ [2]ՆԲգ. վիժակ (ծածկոյթ) [3] ՆԲգ. վիժակ ի թեհաշի [4]ՆԲգ. զտախտակս [5]ՆԲգ. տախտակին [6]ՅՆԲգ. պ-ւոսե [7] ՆԲգ. ձևս, պ-ւոնե՝ ագոյցս [8] ՆԲգ. Համեմատս միմեանց [9] ՆԲգ. տախտակաց [10] ՆԲգ. արասցես զտախտակս խորանին. քսան տախտակս ի հարաւոյ՝ ի հարաւ կոյս [11] ՆԲգ. ընդ քսանեքումբք տախտակսդն [12] ՆԲգ. ընդ միով տախտակաւ վասն երկուց ագուցից [13]ՆԲգ. հիւսիսի քսան տախտակք

[14] ՆԲգ. ընդ միով տախտակաւ, եւ երկու խարիսխք ընդ միով տախտակաւ [15]Ա.յ-ւնգ-ն, յարեւմտից [16]ՆԲգ տախտակ [17]ՆԲգ. տախտակս [18]ՆԲգ. կրկին, կամ, կցեալք [19] ՆԲգ. կցեալ ի վերուստ ի մի ճարմանդ. նգնպէս եղիցի երկոցունց նոցա. յերկոսին անկիւնսն եւ զկոյն [20] ՆԲգ. տախտակք [21] ՆԲգ. տախտակսն [22]ՆԲգ. տախտակացն [23]ՆԲգ. զտախտակսն [24] ՆԲգ. գործ ճարտարի գործեսցի քերոքէիւք [25] Ա.մ, ճարմանդք [26] ՆԲգ. ի ներքոյ ճարմանդիցն [27] ՆԲգ. դիցես զքաւուցն ի վերոյ տապանակի

սեղանոյն՝ ի կողմանէ խորանին ընդ հա-
րաւ. եւ զսեղանն դիցես ի կողմանէ [1]խո-
րանին ընդ հիւսիսի ։
36 Եւ արասցես սրահակ դրան խորանին
ի կապուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի կար-
մրոյ մանելոյ եւ ի բեհեզոյ նրբելոյ, գործ
37 նկարակերպ ։ Եւ արասցես վարագուրին
հինգ սիւնեակ յանխուռ վայրէից, եւ [2]օծցես
զնոսա ոսկւով, եւ [3]խոյակք նոցա ոսկիք.
եւ ձուլեսցես նոցա հինգ խարիսխ պղնձի։

ԳԼ. ԻԷ

1 Եւ արասցես սեղան յանխուռ վայրէից,
ի հինգ կանգնոյ զերկայնութիւն եւ ի
հինգ կանգնոյ զլայնութիւն. չորեքկուսի
սի լինիցի սեղանն. եւ յերից կանգնոց
2 զբարձրութիւն նորա ։ Եւ արասցես զեղ-
ջեւրս նորա ի վերայ չորեցունց անկեանց
իւրոց, ի անգամն [4]ընդարեալ լինին եղ-
3 ջեւրքն. եւ պատեսցես զնա պղնձով ։ Եւ
արասցես [5]պատակ սեղանոյն, եւ զնուար-
տանն՝ նորա, եւ զաւազան եւ զմաա-
հանան եւ զկրակարանն, եւ զամենայն
4 սպասն արասցես պղնձի ։ Եւ արասցես
նմա զահաւարակ վանդակակերպ պղնձի.
եւ արասցես զահաւարակին չորս օղա-
մանեակս պղնձիս ի չորեցունց կողմանէ.
5 Եւ դիցես [6]զնոսա ընդ դահաւարակաւ՝
սեղանոյն ի ներքոյ. եւ եղիցի գահաւա-
6 րակն մինչեւ ի մէջ սեղանոյն ։ Եւ արաս-
ցես լծակս սեղանոյն՝ լծակս յանխուռ
վայրէից. եւ պատեսցես զնոսա պղնձով.
7 Եւ արկցես պլծակսն ընդ օղսն, եւ եղիցի
լծակքն յերկոսունց կողմանց սեղա-
8 նոյն՝ առ ի բառնալ զնա ։ Խոռ տախտա-
կամածս արասցես զնա. ըստ օրինակին
որպէս ցուցաւ քեզ ի լերինն անդ, այն-
պէս արասցես զնա ։
9 Եւ արասցես [7]պատ խորանին. ի կողմ
հարաւոյ զառապաստ [8]սրահին ի բեհեզոյ
մանելոյ, հարիւր կանգնոյ երկայնութե-
10 ամբն միոյ կողմանն, եւ սիւնք նորա
քսան, եւ խարիսխք նոցա պղնձիք քսան,
եւ օղք նոցա եւ [9]խոյակք նոցա արծա-
11 թիք ։ Նոյնպէս եւ ի կողմանն որ ընդ հիւ-
սիսի՝ առապաստարն հարիւր կանգնոյն յեր-
կայնութիւն. եւ սիւնք նոցա պղնձիք
քսան, եւ խարիսխք նոցա պղնձիք քսան,
եւ [10]խոյօղք նոցա եւ խարիսխք նոցա
12 եւ խարիսխք պատեալ արծաթով՝ ։ Եւ
ի լայնութիւն [8]սրահին ընդ ծովակողմն՝
առապաստք ի յիսուն կանգնոյ, սիւնք
նոցա տասն եւ խարիսխք նոցա տասն ։
13 Եւ լայնութիւն [11]առաջին սրահին՝ որ ընդ
արեւելս՝ [1]առապաստք ի յիսուն կանգնոյ,
[1]սիւնք նոցա տասն եւ խարիսխք նոցա
14 տասն։ Եւ ի հնգետասան կանգնոյ բարձ-
րութիւն առապաստին ի միոյէ կողմա-
նէ. սիւնք նոցա երեք եւ խարիսխք նոցա
15 երեք ։ Եւ յերկրորդում կողմանն՝ հնգե-
տասան կանգունն առապաստին ի բարձ-
րութիւն. սիւնք նոցա երեք եւ խարիսխք
16 նոցա երեք ։ Եւ դրան [8]սրահին վարագոյր՝
քսան կանգունն ի բարձրութիւն, ի կա-
պուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի կարմրոյ
մանելոյ եւ ի բեհեզոյ նրբելոյ, նկա-
րէն յաստուածագործի. եւ սիւնք նոցա չորք
17 եւ խարիսխք նոցա չորք։ Ամենայն սիւնք
[8]սրահին չուրջանակի՝ [12]արծաթապատք,
եւ խոյակք՝ նոցա արծաթիք, եւ խա-
18 րիսխք նոցա պղնձիք ։ Եւ երկայնութիւն
[13]սրահին հարեւր առ հարեւր՝, եւ լայ-
նութիւն յիսուն առ յիսուն, եւ բարձրու-
թիւն [14]հնգետասան կանգունն, ի բեհեզոյ
մանելոյ. եւ խարիսխք նոցա պղնձիք ։
19 Եւ ամենայն կահ խորանին [15]եւ ամե-
նայն գործք նորա՝ եւ ամենայն ցիցք
[8]սրահին՝ պղնձիք ։
20 Եւ դու պատուիրեա որպէսզի Իսրա-
յէլ, եւ առցին քեզ ձէթ ի ձիթենեաց
պարզ, [16]տուրս, խակակութ՝, ի լոյս. վա
21 եղիցի ճրագ հանապազորդ ։ Ի խորանին
վկայու թեան՝ արտաքոյ վարագու րի ուս-
տին, լուսանիցէ զնա Ահարոն եւ որդիք
իւր յերեկոյեան մինչեւ ցառաւօտ առաջի
Տեառն. օրէնս յաւիտենական յազգս ձեր
առ ի յորդւոցն Իսրայէլի ։

ԳԼ. ԻԸ

1 Եւ դու մատուսցես առ քեզ զԱհարոն
զեղբայր քո, եւ զորդիս նորա ընդ նմա՝
յորդւոցն Իսրայէլի, քահանայանալ ինձ.
զԱհարոն եւ զՆադաբ եւ զԱբիուդ եւ
զեղիազար եւ զԻթամար զորդիս Ահա-

[1] ՅԻ։ ԺԵ։ [2] ԼԲ. պատեսցես [3] ԼԲ. ճարմանդք [4] ԼԲ. ի նմանէ [5] ԼԲ. զանօթս մինթոյ նորա և զբահս [6] ԼԲ. զնա ընդ ծնօ- սիս [7] ԼԲ գաւիթ [8] ԼԲ. գաւթին [9] ԼԲ. գօտիք

[10] ԼԲ. օղք սեանցն և գօտիք նոցա արծաթիք [11] ԼԲ. գաւթին առաջակողման [12] ԼԲ. գօտ Լօք արծաթիւնք, եւ օղք [13] ԼԲ. գաւթին հարեւր կանգուն [14] ԼԲ. հինգ [15] ԼԲ առ ամենայն սպաս նորա, և ամենայն ցիցք նորա [16] ԼԲ. ծեծեալ

2 րանի ։ Եւ արասցես [1]պատմուճան սուրբ
Ահարոնի եղբօր քումի ի պատիւ եւ ի փառս
3 Եւ դու խօսեսցիս ընդ ամենայն իմաստունս մտօք , զորս լցուցից հոգւով իմաստութեան , եւ արասցեն պատմուճան
[2]սուրբ Ահարոնի ի սրբութիւն, որով քա-
4 հանայանայցէ ինձ։ Եւ սոյն [3]օրինակ պատմուճանացն՝ զոր առնիցեն ։ [4]պատմնաւոն
եւ զվարս զուսովք եւ զղանջօք , եւ
զպատմուճանն բեհեզեայ՝ եւ խայր եւ
համար . եւ արասցեն պատմուճան սուրբ
Ահարոնի եղբօր քումի եւ որդւոց նորա՝
քահանայանալ ինձ ։
5 Եւ առցեն նոքա ոսկի եւ կապուտակ
եւ ծիրանի եւ կարմիր մանեալ եւ բեհեզ։
6 Եւ արասցեն զվարսն յոսկւոյ [2]սրբոյ եւ
ի կապուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի կարմրոյ մանելոյ եւ ի բեհեզոյ նիւթելոյ, գործ
7 [5]ոսաւանի՝ նկարակերպ՝։ Երկու [6]վարսաք
ընդ միմեանս խառնեալք , եւ եղիցին ի
վերայ երկոցունց կողմանց նորա հաս-
8 տատեալք ։ Եւ [7]գործ վարսին որ իսկ ի
վերայ նորա , ըստ նմին օրինակի գործ
անդամն ի նմանէ լինիցի , յոսկւոյ [2]սրբոյ
եւ ի կապուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի
կարմրոյ մանելոյ եւ ի բեհեզոյ նիւթելոյ։
9 Եւ առցես երկու ականս ղըմրուխտս ,
եւ գրեսցես ի նոսա զանուանս որդւոցն
10 Իսրայելի ։ Չվեց անուն նոցա ի միում
ականի , եւ զայն ևս վեց՝ յերկրորդում
11 ականն , ըստ [8]ազգս իւրեանց . Գործ
ճարտարութեան ակնագործաց , քանդակ
կնքոյ քանդակեսցես զերկոսին ականսն՝
ըստ անուանց որդւոցն Իսրայելի . [9]ասպա-
ւորեալս եւ քանդակեալս ոսկւով՝ արաս-
12 ցես զնոսա ։ Եւ դիցես զերկուս ականսն
ի վերայ ուսոց վարսին , զի լինիցին ա-
կանքն յիշատակ որդւոցն Իսրայելի . եւ
բառնայցէ Ահարոն զանուանս որդւոցն
Իսրայելի առաջի Տեառն ի վերայ երկուց
13 ուսոց իւրոց ի յիշատակ վասն նոցա ։ Եւ
14 արասցես [10]վահանակս յոսկւոյ [2]սրբոյ ։ Եւ
արասցես երկուս վերջս յոսկւոյ սրբոյ ,
մանուածոյս ծագկեալս՝ գործ հիւսկէն ,
եւ դիցես զվերջսն մանուածոյս ի վերայ
[11]երկոցուն վահանակացն առ վտաւա-
կօքն նոցա առաջոյ կողմանէ՝ ։
15 Եւ արասցես զդատաստան նաց գործ [12]նկարակերպ . ըստ ձեւոյ՝
վահանին արասցես զնա , յոսկւոյ եւ ի
կապուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի կարմրոյ
16 մանելոյ եւ ի բեհեզոյ [13]նիւթելոյ ։ Եւ ա-
րասցես զնա չորեքանկիւնի՝ , թզաւ յեր-
17 կայնութիւն եւ թզաւ ի լայնութիւն ։ Եւ
ընդկլուզցես ի նմա ընդկլուզածս , ըստ
չորեքկարգութեան ականց . կարգ ականցն ,
առաջին՝ ղըմրուխտ եւ սարդիոն եւ տպա-
18 զիոն , կարգ մի . Եւ կարգն երկրորդ՝
19 կարկեհան եւ չափիղա եւ յասպիս . Եւ
կարգն երրորդ՝ դոճազամ եւ ախատ եւ ամե-
20 տակ . Եւ կարգն չորրորդ՝ յակինթ եւ
բիւրեղ եւ եղունգն , [14]ընդկլուզեալ , յոս-
կի կապեալ՝ յիւրաքանչիւր կարգս կայ-
21 ցեն՝։ Եւ եղիցին ականքն յանուանց որդւոցն Իսրայելի երկոտասան , ըստ ա-
նուանց նոցա գրեալք քանդակաւ՝ իւրա-
քանչիւր ըստ անուան իւրում լիցին, ըստ
22 ազգացն երկոտասանից ։ Եւ արասցես
[15]տախտակ մի հիւսկէն վերջիւք , գործ
23 չղթայագործ՝ յոսկւոյ սրբոյ . Եւ արաս-
ցես ի վերայ տախտակին երկուս օղս
ոսկիս , եւ դիցես զերկուս օղսն ոսկիս ի
24 վերայ երկուց ծայրից տախտակին ։ Եւ
դիցես զերկուս [16]չղթայագործսն ոսկիս
ի վերայ երկոցունն օղոցն առ ծայրիւք
25 տախտակին . Եւ զերկուս ծայրս երկուց
[17]չղթայագործիցն տացես ի վերայ երկո-
ցունց [18]մած . եւ դիցես ի վերայ թիկանց
26 վահանին ի ճակատ երեսաց նորա ։ Եւ
արասցես երկուս օղս ոսկիս , եւ տացես
զնոսա ի վերայ երկուց ծայրից տախտա-
կին , առ եզերբն՝ որ իցէ հանդէպ վա-
27 հանին ի ներքոյ կողմանէ ։ Եւ արասցես
երկուս օղս ոսկիս , եւ տացես զնոսա ի
վերայ երկուց ուսոց վահանին ի ներքոյ
կողմանէ՝ յանդիման [19]միմեանց միաւան .
եւ զդաստս նորա ի վերայ մենքենայիցն՝՝
28 վահանին ։ Եւ պինդ անիցին զտախտակն
յօղոց նորա մինչեւ ցօղս վահանին , ի
նիւթոյ կապուտակէ . զի իցէ ի վերայ

---

[1]Պատմուճան, ասի երբեմն եւ բազմաբեթ, նշանակելով զգեստս որ զգեստ ոք հագանելիս [2]Յիշ. գլուխ ԻԸ [3]Բբ. են զգեստքն [4]Բբ. տախտակ (կրծանոց) եւ վահան (եփուդ), եւ պարեգօտ եւ շապիկ նկարէն [5]Բբ. Ճարտարի [6]Բբ. վարտակք (ուսանոց) [7]Բբ. Ժապաւէնն [8]Բբ. ծնունդս [9]Բբ. ընդկլուզեալս ի խորշս ոսկիս [10]Բբ. խորշս

[11]Բբ. խորշիցն [12]Բբ. Ճարտարի . ըստ գործոյ [13]Բբ. Նիւթելոյ զնա ։ (16) Զորեքանկիւնի եղիցի կրկնակ [14]Բբ. ընդկլուզեալք ի խորշս ոսկիս [15]Բբ. տախտակին չղթայս ոլորեալս , գործ հիւսկէն [16]Բբ. Հիւսուածսն [17]Բբ. Հիւսուածոցն [18]Բբ. խորշիցն [19]Բբ. խառնուածոյ նորա ի վերուստ ժապաւենի

[1]մինքեննայից վակասին, եւ մի՛ զերծա-
29նիցի տախտակն ի վակասէ մնալ։ Եւ առցէ Ահարոն զանուն որդւոցն Իսրայելի ի վերայ տախտակի դատաստանին ի լանջս իւր, ի մտանել իւրում ի սրբութիւնն ի յիշատակ հանապազորդ առաջի [2]Աստու-
30ծոյ։ [3]Եւ դիցես ի վերայ տախտակի դատաստանին զլմայագործս, յերկոցունց կողմանց տախտակին դիցես. եւ զերկուս վահանակն դիցես ի վերայ երկուց ուսոց վակասին յերեսաց կողմանէ ի ներքոստ։" Եւ դիցես ի վերայ տախտակի դատաստանին [4]զՅանդիմանութիւնն եւ զՃշմարտութիւնն". եւ եղիցի ի վերայ լանջային Ահարոնի յորժամ մտանիցէ ի
[3]ի սրբութիւնն առաջի Տեառն. եւ տարցի Ահարոն զդատաստանն որդւոցն Իսրայելի ի վերայ լանջաց իւրոց առաջի
Տեառն հանապազ։
31 Եւ արասցես [5]վտաւակս պզինաւորս"
32համակ կապուտակ։ Եւ [6]ղօձիկն գրասլաննաւ արարեալ, բոլորակ ձեւեսցես չուրջանակի՝ գործ անկուածոյ, եւ վնասնուածան անկեալ անդամին ի նմանէ. զի
33մի՛ սրատիցի"։ Եւ արասցես [7]առ ստորոտով վտաւակացն ի ներքոյ կողմանէ՝ իբրեւ նռնաձեւս ծազկեալս", ի կապուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի կարմրոյ մանեղոյ [3]եւ ի բեհեզոյ նրբութեղոյ", առ ստորոտով [8]վտաւակացն չուրջանակի, եւ տեսիլ նորա նռնաձեւ՝", եւ զանպակս ոսկիս
34ի մէջ նոցա չուրջանակի։ Զանգակ ոսկի եւ [9]նռնաձեւ՝ ծազկեալ առ ստորոտով վտա-
35ւակացն" չուրջանակի։ Եւ եղիցի ի վերայ Ահարոնի, յորժամ պաշտիցէ, հնչիցեն բարբառոյ ի մտանել իւրում ի սրբութիւնն առաջի Տեառն եւ յելանել նորա, զի մի՛ մեռանիցի։
36 Եւ արասցես թիթեղն յոսկւոյ սրբոյ, եւ քանդակեսցես ի նմա քանդակ կնքոյ՝
37 ՍՐԲՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ։ Եւ դիցես զնա ի վե-
38րայ [10]կապուտակին մանելոյ"։ Եւ եղիցի

[11]խուրին յերեսաց կողմանէ" ի վերայ ճակատուն Ահարոնի, եւ բարձցէ Ահարոն զմեղս նուիրացն, որչափ ինչ նուիրեսցեն որդիքն Իսրայելի, ըստ ամենայն սրոց սրբութեանցն իւրեանց. եւ եղիցի ի վերայ ճակատուն Ահարոնի հանապազ յընդունելութիւն նոցա առաջի Տեառն։
39 Եւ [12]զպճղնաւոր պատմուճանն" ի բեհեզոյ, եւ սրասցես [13]սպարօչ բեհեզ-
40ոչն, եւ կամար՝ գործ նկարակերպ։ Եւ որդւոցն Ահարոնի արասցես [14]պատմուճանս եւ կամարս եւ խոյրս", ի պատիւ
41 եւ ի փառս։ Եւ զգեցուսցես զայն Ահարոնի եղբօր քումդ, եւ որդւոց նորա ընդ նմա, եւ օծցես զնոսա, եւ [15]լցցես զձեռս" նոցա, եւ սրբեսցես զնոսա զի քահա-
42նայացին ինձ։ Եւ արասցես նոցա անդրաւարարս կտաւից, ծածկել զառակամս մարմնոյ իւրեանց, միջովք չափ եւ բար-
43ձիւք չափ։ Եւ ունիցի զայն Ահարոն եւ որդիք նորա, յորժամ մտանիցեն ի խորանն վկայութեան, կամ յորժամ մերձենայցեն ի սեղանն սրբութեան պաշտել, եւ մի՛ ածիցեն ի վերայ իւրեանց մեղս, զի մի՛ մեռանիցին. օրէնս յաւիտենական նմա եւ զաւակի իւրում յետ նորա։

Գլ. ԼԹ

1 Եւ այս ինչ է զոր առնիցես նոցա, [16]եւ սրբեսցես" զնոսա քահանայանալ նոցա ինձ. առցես զուարակ մի յանդից, եւ խոյս
2 երկուս անարատս, եւ պանս բաղարջս, եւ չօթս բաղարջս զանզեալ իւղով, եւ քաքաս բաղարջս օծեալ իւղով. նաչխ գորենոյ [17]զանզեալ իւղով արասցես զայն".
3 Եւ դիցես ի վերայ խանի միոյ. եւ մատուսցես զայն խանիւն, եւ զզուարակն
4 եւ զերկուս խոյսն։ Եւ զԱհարոն եւ զորդիս նորա մատուսցես ի դուռն խորանին վկայութեան, եւ լուասցես զնոսա ջրով։
5 Եւ առեալ զպատմուճանսն՝ զգեցուսցես Ահարոնի [18]եղբօր քումդ, եւ զպարեգօտս սպճղնաւորս ի վերայ ներքնակացն", եւ զվակասն եւ զսաղաւարն. եւ սնդեսցես

---

[1]ՆԵՔ. ժապաւենի [2]ՆԵՔ. Տեառն [3]ՅՆԵՔ. պատ-
[4]ՆԵՔ. ՂՈՒՐԻՄ և ՔՆՈՒՄԻՄ, այլեւն՝ դիւցազն եւ զկատարելութիւնն [5]ՆԵՔ. զպատեգօտն վակասին [6]ՆԵՔ. եղիցի բերան զլխոյ նորա ի մէջոցի նորա. չրմունք եղիցին բերանոյ նորա նորա շուրջանակի, գործ անկուածոյ իբրեւ զբերան զրահի եղիցին նմա, զի մի՛ պատառեսցի [7]ՆԵՔ. ի քղանցս նորա նռնաձեւս
[8]ՆԵՔ. քղանցիցն չուրջանակի [9]ՆԵՔ. նռնաձեւ, զանգակ ոսկի եւ նռնաձեւ ի վերայ քղանցից պարեգօտին [10]ՆԵՔ. ժապաւենի կապուտակին

[11]ՆԵՔ. ի վերայ խուրին. յերեսաց կողմանէ խուրին եղիցի (38) Եւ եղիցի [12]ՆԵՔ. անկեցս զշապիկն [13]ՆԵՔ. խոյր [14]ՆԵՔ. շապիկս, եւ արասցես նոցա կամարս, եւ ապարօշս արասցես նոցա [15]Նշանակ զձեռս՝ նշանակ ասպետութեան և այլն, նմանէ ի հանդերձիցն [16]ՆԵՔ. սրբել [17]ՆԵՔ. արասցես զնոսա [18]ՆԵՔ. զշապիկն եւ զպարեգօտ վակասին

6 զսահմանն [1]ընդ վակասն՝ եւ դիցես զծոյն ի վերայ գլխոյ նորա , եւ դիցես
7 զբիլիճսն սուրբ ի վերայ խուրձին : Եւ առցես յիւղոյ անոյն օծմանն , եւ արկցես
8 ի գլուխ նորա եւ օծցես զնա : Եւ զորդիս նորա մատուսցես , եւ զգեցուսցես
9 նոցա [2]պատմուճանս . Եւ ածցես նոցա կամարս , Ահարոնի եւ որդւոց նորա , եւ
ածցես նոցա ապարօչս . եւ եղիցի նոցա
[3]այն ինձ ի քահանայութիւն՝ յաւիտենական , եւ [4]կատարեսցես զձեռս Ահա-
րոնի եւ զձեռս որդւոց նորա :
10 Եւ մատուսցես զզուարակն առ դրան
խորանին վկայութեան , եւ դիցեն Ահա-
րոն եւ որդիք նորա զձեռս իւրեանց ի վե-
րայ գլխոյ զուարակին [5]առաջի Տեառն՝ առ
11 դրան խորանին վկայութեան : Եւ սպան-
ցես զզուարակին առաջի Տեառն առ դրան
12 խորանին վկայութեան : Եւ առցես յա-
րիւնէ զուարակին , եւ դիցես ի վերայ եզ-
ջերաց սեզանոյն մատամբ քով . եւ զայլն
ամենայն արիւն ցանեսցես առ յատակաս
13 սեզանոյն : Եւ առցես զամենայն ճարպ
թաղանթոյ քաղքիծին եւ զկերդարայքն եւ
զերկուս երիկամունսն ճարպովքին , [6]դիցես
14 ի վերայ սեզանոյն : Եւ զմիս զուարակին
եւ զմորթ նորա եւ զապաւանն արեսցես
արտաքոյ բանակին . զի այն իսկ է
վասն մեղաց :
15 Եւ զխոյն զմի՝ առցես, եւ դիցեն Ահա-
րոն եւ որդիք նորա զձեռս իւրեանց ի վե-
16 րայ գլխոյ խոյին : Եւ զնոցես զխոյն եւ
առեալ զարիւն նորա [7]հեղցես չուրջ զսե-
17 զանովք : Եւ զխոյն յօշոցս անդամ ան-
դամ , եւ լուացես զիւորոքինն եւ զոտս նո-
րա ջրով , եւ դիցես ի վերայ յօշուածոյն՝
18 հանդերձ գլխով նորա : Եւ հանցես լո-
վանդակ զխոյն ի վերայ սեզանոյն յոգ-
կէզ Տեառն ի հոտ անուշից . զոհ Տեառն է :
19 Եւ առցես զխոյն զերկրորդ , եւ դիցեն
Ահարոն եւ որդիք նորա զձեռս իւրեանց
20 ի վերայ գլխոյ խոյին : Եւ սպանցես զխոյն,
եւ առցես յարիւնէ նորա , եւ դիցես ի վե-
րայ բլթակի աջոյ ունկանն Ահարոնի , եւ
ի վերայ բլթակի աջոյ ունկան որդւոց
նորա , եւ [8]ի վերայ ծայրից ձեռին նորա
աջոյ , եւ ի վերայ ծայրից աջոյ ոտին նո-
րա , եւ ի վերայ աջուց լիմակաց սկանա-

[1]ԵՔԲ. ժապաւինիւ վկասին [2]ԻԲԲ. շապիկս
[3]ՆԲԲ. քահանայութիւնն օրէն [4]ԻԲԲ. լցցես, տե՛ս Գլ. ԻԸ. 41 : [5]ՑԵԲԲ. գոյոտ [6]ԵՔԲ. այրեսցես [7]ԵՔԲ. սրսկեսցես

ջաց որդւոց նորա , եւ՝ ի վերայ [8]ծայրից աջոյ ձեռաց նոցա , եւ ի վերայ [8]ծայրից աջոյ ոտից նոցա . եւ [7]հեղցես զարիւնն
21 չուրջ զսեզանովքն : Եւ առցես յարիւնէն որ ի վերայ սեզանոյն իցէ , եւ յիւղոյ օծութեանն , եւ ցանեսցես ի վերայ Ահարոնի եւ ի վերայ պատմուճանի նորա , եւ ի վերայ որդւոց նորա եւ ի վերայ պատմուճանաց որդւոց նորա ընդ նմա . եւ սրբեսցի ինքն եւ պատմուճան իւր , եւ որդիք նորա եւ պատմուճանք որդւոց նորա ընդ նմա . [5]եւ զարիւն խոյին ցա-
22 նեսցես չուրջ զսեզանովքն :՝ Եւ առցես ի խոյէ անտի զճարպն եւ զգմակն եւ զճարպ թաղանթոյ քաղքիծին , եւ զկերդարայքն եւ զերկուս երիկամունսն ճարպովքին , եւ զերդումն աջոյ . զի այն է [9]կատարումն :
23 Եւ սպան մի եւ չօթ մի իւղով զանգեալ , եւ քաքար մի ի բանէ անտի լազարջոցն
24 եղելոց առաջի Տեառն , Եւ դիցես զայն ամենայն ի վերայ ձեռացն Ահարոնի եւ ի վերայ ձեռաց որդւոց նորա , եւ [10]նուի-
25 րեսցես զայն նուէրս՝ առաջի Տեառն : Եւ առցես ի ձեռաց նոցա եւ [11]հանցես ի սեզանն՝ ողջակիզեալ ի հոտ անուշից առաջի
26 Տեառն . զի [12]պատուղ Տեառն է : Եւ առցես զերբուծն ի խոյէ անտի [13]կատարման՝ որ է Ահարոնի , եւ [14]նուիրեսցես զայն նուէրս՝ առաջի Տեառն . եւ եղիցի
27 քեզ ի մասն : Եւ սրբեսցես զերբուծն [15]ի նուէրս , եւ զերի նուիրելոյն զի նուիրելոյ ,
եւ որ ինչ հանիցի ի խոյէն կատարման
28 յԱհարոնէ եւ յորդւոց՝ նորա : Եւ եղիցի Ահարոնի եւ որդւոց նորա օրէն յաւիտենական առ ի յորդւոցն Իսրայելի . զի այն է [16]նոցա հաս, եւ եղիցի նուէր յորդւոցն Իսրայելի ի զնդեսից փրկութեանց իւրեանց , նուէր՝ նոցա Տեառն :
29 Եւ պատմուճանն սրբութեան որ է Ահարոնի , եղիցի որդւոց նորա յետ նորա ,
օծանել զնոսա նոքօք , եւ [17]կատարել նո-
30 քօք զձեռս նոցա : Զեւթն օր զգենուցուս զայն քահանայն որ փոխանակ նորա կայ-

[8]ԵՔԲ. բութի [9]ԵՔԲ. խոյ լրման, այլեւս՝ նուիրման [10]ՑԵԲԲ. երբեսցես զնոսա երբուծն
[11]ՑԵԲԲ. այրեսցես ի վերայ սեզանոյն [12]ՑԵԲԲ. պատարագ [13]ՑԵԲԲ. լրման , այլեւս՝ նուիրման
[14]ՑԵԲԲ. երբեսցես զայն երբուծն [15]ՑԵԲԲ. երբեմն , եւ զերին վերացմանն, որ երբեալ եւ որ վերացեալ իցէ, ի խոյէ անտի նուիրման որ վասն Ահարոնի եւ որ վասն որդւոց [16]ՑԵԲԲ. վերացումն , եւ վերացումն իցէ յորդւոցն Իսրայելի ի զոհից խաղաղութեան իւրեանց , վերացումն
[17]ՑԵԲԲ. ընդ. տե՛ս Գլ. ԻԸ. 41 :

ցէ յորգւոց իւրոց, որ մանիցէ ի խո-
րանն վկայութեան պաշտել ի սրբու-
31 թիւնն։ Եւ զխոյն [1]կատարման առցես,
եւ եփեսցես զմիս նորա ի սրբում տեղ-
32 ւոջ. Եւ կերիցեն Ահարոն եւ որդիք նո-
րա զմիս խոյին, եւ զպանան որ ի խաղի
անդ՝ առ դրան խորանին վկայութեան։
33 Եւ կերիցեն զնոսա, որովք սրբեցանն՝ ի
կատարել զձեռս նոցա եւ սրբել զնոսա.
օտարազգի ոք մի կերիցէ ի նոցանէ, զի
34 սրբութիւնք են։ Ապա թէ մնայցէ ի մսոյ
զոհին կատարման եւ ի հացէ անտի յայլ,
այրեսցես զնչխարն հրով, եւ մի կերիս-
ցի, զի սրբութիւն [2]Տեառն է։
35 Եւ արասցես Ահարոնի եւ որդւոց նորա
այսպէս, ըստ ամենայնի զոր միանգամ
պատուիրեցի քեզ, զեւթն օր կատարես-
36 ցես զձեռս նոցա։ Եւ [3]զզուարակն զվանն"
մեղաց՝ արասցես յաւուրն [4]սրբութեան.
եւ մաքրեսցես զսեղանն ի [5]սրբել քեզ ի
վերայ" նորա, եւ օծցես զնա առ ի սրբե-
37 լոյ զնա։ Եւ եւթն օր [6]մաքրեսցես զսե-
ղանն եւ սրբեսցես զնա. եւ եղիցի սե-
ղանն սուրբ սրբոյն. ամենայն որ մեր-
ձեսցի ի սեղանն՝ սրբեսցի։
38 Եւ այս ինչ իցէ զոր առնիցես ի վերայ
սեղանոյն. երկուս գառինս տարեւորս
[2]անարատս՝ առ օր ի վերայ սեղանոյն
յաճախութեամբ. [2]զի պատուղ յաճախու-
39 թեան է." Զմի գառնն առնիցես ընդ առա-
ւօտս, եւ զերկրորդ գառնն առնիցես ընդ
40 երեկոյս։ Եւ տասանորդ նաչխոյ՝ մղեալ
իւղով թրմեալ, եւ դ̈չորրորդ դորակի, եւ
նուէր ըստ չորրորդ դորակի գինւոյ առ
41 մի գառն։ Եւ զգառնն երկրորդ սպասես
ընդ երեկոյս՝ ըստ առաւօտին զո-
հին, եւ ըստ նորին նուիրին առնիցես նմա
42 ի հոտ անուշից [7]պատուղ Տեառն։ Ձոհ յա-
ճախութեան յաղագս ձեր, առ դրան խո-
րանին վկայութեան առաջի Տեառն, [8]ո-
րովք ծանուցայց քեզ անդ խօսել ընդ քեզ։
43 Եւ [9]ժամանակեցից անդ որդւոցն Իսրա-
44 յելի, եւ [10]սրբեցայց փառօք իմովք։ Եւ
սրբեցից զխորան վկայութեանն եւ զսե-
ղանն, եւ զԱհարոն եւ զորդիս նորա սրբե-
45 ցից ինձ ի քահանայութիւն։ Եւ [11]անուա-
նեցայց յորդւոցն Իսրայելի, եւ եղէց նոցա
46 Աստուած. Եւ ծանիցեն թէ ես եմ Տէր
Աստուած նոցա, որ հանի զնոսա յերկ-
րէն Եգիպտացւոց, [12]անուանել նոցա եւ
լինել նոցա Տէր Աստուած"։

ԳԼ. Լ

1 Եւ արասցես սեղան խնկակալ խնկոյ
2 յանիւտ փայտից. Եւ արասցես զնա
կանգնաւ յերկայնութիւն եւ կանգնաւ ի
լայնութիւն, չորեքկուսի լինիցի, եւ յեր-
կուց կանգնոց բարձրութիւն նորա. եւ
եղջերք իւր անդստին ի նմանէ լինի-
3 ցին։ Եւ պատեսցես զնա ոսկւով սրբով,
[13]զվանդակն նորա եւ զկողմանս չուր-
ջանակի եւ զեղջերս նորա. եւ արասցես
նմա պսակ ոսկի չրջանակաւ չուրջանա-
4 կի։ Եւ երկուս օղս ոսկիս [2]սուրբս ա-
րասցես ընդ չրջանակաւ պսակի նորա
յերկոցունց կողմանց. եւ արասցես յեր-
կոսին անկիւնս նորա, եւ եղիցին լծակք
5 օղաձեւացն բառնալ զնա նոքօք։ Եւ
արասցես զլծակսն յանիւտս փայտից,
6 եւ պատեսցես զնոսա ոսկւով. Եւ դիցես
զնա յանդիման վարագուրին, որ իցէ ա-
ռաջի տապանակին վկայութեան, ընդ-
դէմ [14]վկայութեանն՝ որ իցէ առ վկայու-
թեամբն, որով" երեւեցայց քեզ անդ։
7 Եւ արկցէ ի վերայ նորա Ահարոն [15]խունկ
հանդերձեալ՝ ազացեալ մանր" ընդ առա-
ւօտս առաւօտս, յորժամ զբազան հան-
դերձիցէ, ծխեսցէ խունկ [2]ի վերայ նորա"։
8 Եւ յորժամ լուսանիցէ Ահարոն զբազան
երեկորին, ծխեսցէ [2]ի վերայ նորա"
խունկս յաճախութեան հանապազորդ ա-
9 առաջի Տեառն յազգս [16]իւրեանց։ Եւ ոչ
հանիցէք ի վերայ նորա խունկ օտար, եւ
[17]պատուղս եւ զոհս", եւ նուէրս մի նուի-
10 րիցէք ի վերայ նորա։ Եւ քաւեսցէ Ահա-
րոն ի վերայ եղջերաց նորա միանգամ ի
տարւոջ. յարենէ առ ի վասն մեղացն
[2]սրբութեան եւ" քաւութեան միանգամ
ի տարւոջ [18]սրբեսցէ զնա յազգս [16]նոցա.
զի սրբութիւն սրբութեանց Տեառն է։
11 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
12 Եթէ առնիցիս զհամար որդւոցն Իսրայելի
ի հանգիսի իւրեանց, տացեն իւրաքան-
չիւր փրկանս ընդ անձին իւրոյ Տեառն

---

[1]ԵԲԲ. լման պսխն՝ նուիրման [2]ՅԲԲ. պոմոռ
[3]ԵԲԲ. զուարակ վասն [4]ՅԲԲ. վասն քաւութեան
[5]ՅԲԲ. քաւել քեզ՝ վասն [6]ԵԲԲ. քաւեսցես [7]ԵԲԲ.
պատարագ [8]ՅԲԲ. ուր [9]ՅԲԲ. Հանդիպեցայց
[10]ՅԲԲ. սրբեսցի Խորանն [11]ՅԲԲ. բնակեցայց
[12]ՅԲԲ. բնակել ի նոսա. ես եմ Տէր Աստուած
նոցա [13]ՅԲԲ. զյարկ [14]ՅԲԲ. քաւութեանն
որ իցէ առ վկայութեամբն, ուր [15]ՅԲԲ. խունկս
անուշանս [16]ՅԲԲ. ձեր [17]ՅԲԲ. ողջակէզս
եւ ընծայս [18]ՅԲԲ. քաւեսցէ

ըստ հանգիստին իւրեանց, եւ մի լինիցի
ի նոսա մահ ի հանդիստ անդ իւրեանց։
13 Եւ այս ինչ է զոր տացեն որք անցանիցեն
ի հանդիստ անդ. դիէս [1]երկպատմեսցին
որ իցէ ըստ սրբութեան [1]երկպատմեսցին.
քանզի գնդ է [2]երկպատմեան. եւ կէս
14 [1]երկպատմեսցին եղիցի հաս Տեառն։ Ամե-
նայն որ անցանիցէ ի հանդիստ անդ ի քա-
ռասներից եւ ի վեր՝ տացեն հաս Տեառն։
15 Մեծաւորն մի յաւելցէ, եւ անանկն մի
պակասեցուսցէ ի կիսոյ [1]երկպատմեսցին ի
տալ անդ զհաս Տեառն [3]յորդւոցն Իսրա-
յելի՝, առնել քաւութիւն վասն անձանց
16 ձերոց։ Եւ առցես զարծաթ [4]հասոյն յորդ-
ւոցն Իսրայելի, եւ տացես զնա ի գործ
խորանին վկայութեան, եւ եղիցի որդ-
ւոցն Իսրայելի յիշատակ առաջի Տեառն,
քաւել վասն անձանց նոցա։
17 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
18 Արա աւազան պղնձի, եւ զխարիսխն նո-
րա պղնձի, առ ի լուանալոյ ի նմա. եւ
դիցես զնա ընդ խորանն վկայութեան եւ
19 ընդ սեղանն, եւ տիկցես ի նա ջուր։ Եւ
լուասցեն Ահարոն եւ որդիք նորա ի
20 նմանէ զձեռս եւ զոտս իւրեանց։ Յոր-
ժամ մտանիցեն ի խորանն վկայութեան՝
լուասցին ջրով եւ մի մեռանիցեն, կամ
յորժամ մերձենայցեն ի սեղանն պաշտել,
21 եւ հանել զողջակէզն Տեառն. լուաս-
ցեն զձեռս եւ զոտս իւրեանց, զի մի մե-
ռանիցեն. եւ եղիցի նոցա օրէն յաւիտե-
նական, նմա եւ աղգայ նորա յաւ նոցա։
22 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
23 Եւ դու առ քեզ խունկս անուշս, ծա-
ղիկ լմաիր զմանեխաց հինգ հարեւր սիկղ,
եւ կինամոմն զանոյշ զկէս այնորիկ՝ եր-
կերիւր եւ յիսուն, եւ զխունկկէզն զա-
24 նոյշ՝ երկերիւր եւ յիսուն, եւ հիրիկ հինգ
հարեւր սիկղ ըստ սրբութեանն, եւ եւզ
25 ի ձիթենեաց հնմինաւ միով. Եւ արասցես զայն եւզ յօծումն սրբութեան, եւզ
եփեալ ըստ արուեստի խառնօրդայ, եւզ
26 յօծումն սրբութեան լինիցի։ Եւ օծցես
ի նմանէ զխորան վկայութեանն եւ զտա-
27 պանակ վկայութեանն, եւ զսեղանն եւ
զամենայն զկահ նորա, եւ զաչտանակն
եւ զամենայն զկահ նորա, եւ զսեղան
28 խնկոցն, եւ զսեղան ողջակիզացն եւ
զամենայն զկահ նորա, եւ զաւազանն
29 եւ [5]զպատակ նորա։ Եւ սրբեսցես զնոսա,
եւ եղիցի սրբութիւն սրբութեանց. ա-
մենայն որ մերձենայցէ ի նոսա՝ սրբես-
30 ցի։ Եւ զԱհարոն եւ զորդիս նորա օծ-
ցես եւ սրբեսցես զնոսա ինձ ի քահանա-
31 յութիւն։ Եւ ընդ որդիսն Իսրայելի խօ-
սեսցիս եւ ասասցես, եւզ յօծումն օծու-
32 թեան սորա եղիցի ձեզ յազգս ձեր։ Ի
մարմին մարդոյ ոչ օծանիցի, եւ ըստ
այսմ հանդերձանի ոչ առնիցէք ձեզ այ-
սպիսի, զի սուրբ է, եւ ի սրբութիւն եղիցի
33 ձեզ։ Որ ոք առնիցէ այսպիսի, եւ որ ոք
տայէ ի գմանէ այլազգւոյ, սատակեսցի
ի ժողովրդենէ իւրմէ։
34 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Առ դու քեզ
խունկս անուշս, առաչին եւ եղինդն
եւ զքաղբանն զանոյշ եւ զկնդրուկ զե-
րեւելի. զի հասարակ առ հասարակ լի-
35 նիցին. Եւ արասցես զայն խունկ եփ-
եալ, գործ իւրազգործայ հանդերձանի,
36 գործ մաքուր ի սրբութիւն։ Եւ աղաս-
ցես ի նոցանէ մանր, եւ դիցես ի նմա-
նէ յանդիման վկայութեանն ի խորանին
վկայութեան, ուստի երեւեցայց քեզ
անտի. ի սրբութիւն սրբութեանցն ե-
դիցի ձեզ խունկն այն զոր առնիցէք։
37 Ըստ այնմ հանդերձանի մի առնիցէք ձեզ
խունկս. զի սրբութիւն Տեառն եղիցի
38 ձեզ։ Այր ոք որ առնիցէ ըստ այնմ
օրինակի՝ առնուլ հոտ ի նմանէ, կորիցէ
ի ժողովրդենէ իւրմէ։

ԳԼ. ԼԱ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
2 Ահաւադիկ յանուանէ կոչեցեալ է իմ զԲե-
սելիէլ զՈւրիայեան, զորդի Ովրայ յազգէ
3 Յուդայ. Եւ լցուցի զնա աստուածեղէն
Հոգւով իմաստութեան եւ հանճարոյ եւ
4 գիտութեան ամենայն գործոյ, խելամուտ
լինել եւ ճարտարապետել, գործել զոս-
5 կին եւ զարծաթ եւ զպղինձ, [6]Քիւռա-
տակն եւ զձիրանին եւ զկարմիրն մանել. եւ զականապատն ի լրութիւն գոր-
ծոյն", եւ զնիւթանութիւն փայտից, գործել
6 ըստ ամենայն գործոյ։ Եւ ես ահա տուի
զնա եւ զԵղիաբ Աքիսամայ յազգէ Դա-
նայ. եւ ի սիրտ ամենայն իմաստնոյ եւտուի
գիմաստութիւն, եւ արասցեն զամե-
նայն զոր միանգամ պատուիրեցի քեզ.
7 Զխորանն վկայութեան եւ զտապանակ
կտակարանացն եւ զքաւութիւնն որ ի
վերայ նորա, եւ զամենայն զսպաս խո-

[1]Եբր. սկեղն [2]Եբր. սիկղն [3]Եբր. պ-ի-ոթ [4]Եբր. քաւութեանն [5]Կամ, զկարիսխ, տե՛ս Գլ. ԼԱ. 9։

[6]Եբր. Եւ զականապատն ի լրութիւն

8 բանին [1]եւ զզոհանոցն՝, եւ զսեղանն
եւ զամենայն զկահ նորա, եւ զաչտա-
նակն սուրբ եւ զամենայն զկահ նորա,
9 եւ զսեղան խնկոցն, եւ զսեղան ողջա-
կիզացն եւ զամենայն զկահ նորա, եւ
10 զաւազանն եւ զվարիխ նորա, եւ
զպատմուճանս պաշտամանն, եւ զհան-
դերձս սրբութեանն զԱհարոնի քահա-
նայի, եւ զպատմուճանս որդւոց նորա ի
11 քահանայանալ ինձ, եւ զեւղն օծու-
թեան եւ զխունկս հանդերձանաց սուր-
բութեանն, եւ զամենայն զոր միանգամ
պատուիրեցի քեզ՝ [2]արասցես։
12 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
13 Եւ դու խօսեաց ընդ որդիսն Իսրայելի եւ
ասասցես, Զգոյշ կացէք պահելոց զշա-
բաթս իմ. զի նշանակ է ընդ իս եւ ընդ
ձեզ յազգս ձեր, զի ծանիջիք թէ ես
14 եմ Տէր որ սրբեմ զձեզ։ Եւ պահեսջիք
զշաբաթս, զի սրբութիւն է այն [1]Տեառն
եւ՝ ձեզ. որ պղծեսցէ զնա՝ մահու մեռ-
սցի. ամենայն որ գործիցէ ինմա գործ,
սատակեսցի անձն այն ի միջոյ ժողովր-
15 դեան իւրոյ։ Զվեց օր գործեսցես գործ,
եւ յաւուրն եւթներորդի շաբաթ հան-
գրստեան սրբութիւն Տեառն. ամենայն
որ գործեսցէ գործ յաւուր շաբաթուս՝
16 մահու մեռցի։ Եւ պահեսցեն որդիքն
Իսրայելի [3]զշաբաթս՝ առնել զնոսա յազգս
17 ձեր՝ ուխտ յաւիտենական։ Ընդ իս եւ
ընդ որդիսն Իսրայելի, նշանակ [1]իմ է
յաւիտենական. զի զվեց օր արար Տէր
զերկինն եւ զերկիր, եւ յաւուրն եւթնե-
րորդի դադարեաց եւ հանգեաւ։
18 Եւ ետ Մովսիսի, իբրեւ դադարեաց լինքն
ի խօսից իւրոց ի լերինն Սինա, վերկուս
տախտակն վկայութեան, տախտակս
քարեղէնս գրեալս մատամբն Աստուծոյ։

ԳԼ. ԼԲ

1 Եւ տեսեալ ժողովրդեանն եթէ յամեաց
Մովսէս իջանել ի լեռնէ անտի, կուտե-
ցաւ ժողովուրդն ի վերայ Ահարոնի եւ
ասեն ցնա, Արի եւ արա մեզ աստուածս
որ առաջնորդեսցեն մեզ. զի այրն այն
Մովսէս որ հան զմեզ յեգիպտոսէ, ոչ
2 գիտեմք զի՛ եղեւ նմա։ Եւ ասէ ցնոսա
Ահարոն, Կոզոպտեցէք զկնդիս ոսկիս
յականջաց կանանց ձերոց եւ ուստերաց
եւ դստերաց ձերոց, եւ բերէք առ ի-
3 ս։ Եւ կոզոպտեաց ամենայն ժողովուրդն
զկնդիս ոսկիս յականջաց իւրեանց, եւ
4 բերին առ Ահարոն։ Եւ ընկալաւ ի ձե-
ռաց նոցա, եւ ձուլեաց զայն քանդա-
կագործով, եւ արար որթ ձուլածոյ։ Եւ
ասեն, Այս են աստուածք քո, Իսրայէլ,
որ հանին զքեզ յերկրէն Եգիպտացւոց։
5 Եւ իբրեւ ետես Ահարոն, չինեաց սեղան
առաջի նորա. եւ քարոզ կարդաց Ահա-
րոն եւ ասէ, Տօն Տեառն առ վաղիւ։
6 Եւ կանխեալ ի վաղիւ անդր եհան ող-
ջակէզս, եւ մատոյց զոհս [4]փրկութեան.
եւ նստաւ ժողովուրդն յուտել եւ յըմ-
պել, եւ յարեան ի խաղալ։
7 Եւ Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
ասէ, Գնա էջ դու աստի [1]վազվազակի,
զի անօրինեցաւ ժողովուրդն քո զոր
8 հաներ յերկրէն Եգիպտացւոց։ Անցին
վազվազակի զճանապարհսն զոր [5]պատ-
ուիրեցեր նոցա. արարին իւրեանց որթ
ձուլածոյ, եւ երկիր պաղին նմա, եւ
զոհեցին նմա եւ ասեն, Այս են աստ-
ուածք քո, Իսրայէլ, որ հանին զքեզ
9 յերկրէն Եգիպտացւոց։ Եւ ասէ Տէր
ցՄովսէս, Տեսի զժողովուրդն զայն, եւ
10 ահա ժողովուրդ խստապարանոց է։ Եւ
Արդ թող տուր ինձ, եւ բարկացեալ
սրտմտութեամբ իմով ի նոսա՝ սատակե-
ցից զնոսա, եւ արարից զքեզ յազգ մեծ։
11 Եւ աղաչեաց Մովսէս առաջի Տեառն
Աստուծոյ իւրոյ եւ ասէ, Ընդէ՞ր, Տէր,
բարկանաս սրտմտութեամբ քով ժողո-
վրդեան քումմ, զոր հաներ յերկրէն
Եգիպտացւոց զօրութեամբ մեծաւ եւ
12 բարձր բազկաւ. [6]Դուցէ խօսիցին Եգիպ-
տացիքն եւ ասիցեն, Առ չարութեան
հան զնոսա, կոտորել զնոսա ի լերինս
եւ ջնջել զնոսա յերկրէ. դադարեա ի
բարկութենէ սրտմտութեան քո, եւ
13 ցածիր ի չարեաց ժողովրդեան քո։ Թիչեա
դու զԱբրահամ եւ զԻսահակ եւ զՅակոբ
ծառայս քո, որոց երդուար յանձն քո,
խօսեցեալ ընդ նոսա եւ ասես, [1]Առաւել
բազմացուցից զզաւակ ձեր իբրեւ զաս-
տեղս երկնից բազմութեամբ. եւ զամե-
նայն երկիրն զայն զոր [7]ասացեր տալ
զաւակի նոցա՝ կալցին զնա յաւիտեան։
14 Եւ ցածաւ Տէր ի չարեացն զոր ասաց
առնել ժողովրդեան իւրում։

[1]3ԵՔ. պ-ե-ե [2]ԵՔ. արասցեն [3]ԵՔ. զշա-
բաթն՝ առնել զշաբաթն յազգս իւրեանց
[4]ԵՔ. խաղաղութեան [5]ԵՔ. պատուիրեցի
[6]ԵՔ. Ընդէ՞ր [7]ԵՔ. ասացի

15 Եւ դարձաւ Մովսէս էջ ի լեռնէ անտի,
եւ երիցս տախտակքն վկայութեան ի ձեռս
նորա. տախտակք [1]քարեղէնք, գրեալք
16 գրչաւքն Եւ տախտակքն գործ Աստուծոյ
էին. եւ գիրն՝ Գիր Աստուծոյ գրոչմեալ ի
17 տախտակն։ Եւ լուեալ Յեսուայ զձայն
ժողովրդեանն ազաղակելոց, ասէ ցՄովսէս, Ձայն պատերազմի է ի բանակի
18 անդ։ Եւ ասէ, Ոչ է ձայն նահատակաց
զօրութեան, եւ ոչ ըարբառ նահատակաց
[2]քաջութեան, այլ ձայն յանդգնելոց ի
19 գինւոյ՝ լսեմ ես։ Եւ իբրեւ մերձեցաւ ի
բանակ անդր, եւ եահս զորքին եւ զպաշտօնսն, բարկացեալ սրտմտութեամբ
Մովսէս՝ ընկէց ի ձեռաց իւրոց զտախտակսն [1]երկոսին, եւ խորտակեաց զնոսա
20 առ ատորոտով լերինն։ Եւ առեալ զորքին
զոր արարին՝ այրեաց հրով, եւ խարտեաց
զնա մանր, եւ ցանեաց ի վերայ ջրոցն
եւ արբոյց որդւոցն Իսրայելի։
21 Եւ ասէ Մովսէս ցԱհարոն, Ընդէ՞ր ա-
րար քեզ ժողովուրդդ, զի ածեր ի վե-
22 րայ զայնոսիկ մեղս։ Եւ ասէ
Ահարոն ցՄովսէս, Մի բարկանար սրտմտութեամբ, տէր իմ, զի դու ինքնին
գիտես զյանդգնութիւնն ժողովրդեանդ.
23 Զի ասացին՝ Թէ Արա մեզ աստուածս
որ առաջնորդեսցեն մեզ, զի այրն այն
Մովսէս որ եհան զմեզ յԵգիպտոսէ՝ ոչ
24 գիտեմք զի եղեւ նմա։ Եւ ասեմ ցնոսա, Եթէ իցէ ուրուք ոսկի, կողոպտեցէք եւ բերէք. եւ եաւն ցիս. եւ ընկեցի զայն ի հուր, եւ ել արձագ այդ։
25 Եւ եահս Մովսէս եթէ յանգեաւ ժողովուրդն, քանզի յանգոյց զնոսա Ահարոն յանհարութիւն թշնամեացն իւրեանց,
26 Եւ եկաց Մովսէս առ դրան բանակին եւ
ասէ, Որ ոք Տեառն իցէ՝ առ ինս մատիցէ.
հաւաքեցին առ նա ամենայն որդիքն Ղեւ-
27 եայ։ Եւ ասէ ցնոսա, Այսպէս ասէ Տէր
Աստուած Իսրայելի, Դիք իւրաքանչիւր
զսուր իւր յազդր իւրում. անցէք եւ
այսրէն դարձարուք դրանէ ի դուռն բա-
նակիդ, եւ կոտորեցէք իւրաքանչիւր զեղ-
բայր եւ իւրաքանչիւր զընկեր իւր, եւ
28 իւրաքանչիւր զմերձաւոր իւր։ Եւ արա-
րին որդիքն Ղեւեայ որպէս ասաց Մովսէս. եւ անկան ի ժողովրդենէ անտի յա-
29 ւուր յայնմիկ իբրեւ երիք հազար այր։ Եւ
ասէ ցնոսա Մովսէս, [3]Լցէք զձեռս ձեր
այսօր Տեառն իւրաքանչիւր յորդի իւր,
եւ իւրաքանչիւր յեղբայր իւր, տալ ի
վերայ ձեր այսօր օրհնութիւն։
30 Եւ եղեւ ի վաղիւ անդր, եւ ասէ Մովսէս ցժողովուրդն, Դուք մեղայք մեծապէս
զայդ գործեցէք. բայց ես արդ ելից առ [4]Աստուած, գի գուցէ վասն մեղայդ ձե-
31 րոյ։ Դարձաւ Մովսէս անդրէն առ Տէր
եւ ասէ, Ազաչեմ զքեզ, Տէր, մեղաւ
ժողովուրդն այն մեղս անհնարինս, եւ
արարին իւրեանց աստուածս ոսկեզէնս։
32 Արդ եթէ թողուս նոցա զմեղս իւրեանց,
թող. ապա թէ ոչ, ջնջեա զիս ի գպրութ-
33 թենէ գրոցդ զոր գրեցեր։ Եւ ասէ Տէր
ցՄովսէս, Եթէ ոք մեղաւ առաջի իմ,
34 ջնջեցից զնա ի գպրութենէ իմմէ։ Բայց
արդ՝ երթ էջ եւ առաջնորդեա ժողովրդեանն այնմիկ ի տեղին յոր ասացի քեզ.
եւ ահա հրեշտակ իմ երթիցէ առաջի
երեսաց քոց. բայց յաւուր յորում այց
արարից,ածից ի վերայ նոցա զմեղս իւր-
35 եանց։ Եւ եհար Տէր զժողովուրդն վասն
առնելոյ զորքին զոր արար Ահարոն։

ԳԼ. ԼԴ

1 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Երթ ել ասա-
ցես ցժողովուրդն քո զոր հաներ
յերկրէն Եգիպտացւոց, յերկրէն զոր երգ-
ուայ Աբրահամու, Իսահակայ եւ Յա-
կոբայ, ասեմ, Զաւակի ձերում տացից զնա-
2 Եւ առաքեցից առաջի երեսաց քոց [5]զհրեշ-
տակ իմ, եւ մերժեցից" զՔանանացին
եւ զԱմովրհացին եւ զՔետացին եւ զՓի-
րեզացին եւ [1]զԴերզեսացին եւ" զՅեբու-
3 սին եւ զՑերուսացին։ Եւ տարցի զքեզ
յերկիրն որ բղխէ զկաթին եւ զմեղր. բայց
ես ոչ ելից ընդ քեզ, վասն խստասրտա-
նոց լինելոյ ժողովրդեանն. զի մի սատա-
4 կիցեմ զքեզ ի ճանապարհի։ Եւ լուեալ
ժողովրդեանն զբանն զայն չար, սուգ առին
[1]սգաւորք. եւ ոչ ոք այր զզարդ զանձամբ
5 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Ասա դու ցորդիսն
Իսրայելի, Դուք ժողովուրդ խստասրտա-
նոց էք. զդոյչ լերուք, դուցէ եւ այլ
եւս հարուած ածիցեմ ի վերայ ձեր, եւ
սատակիցեմ զձեզ. արդ մերկացարուք
զպատմուճանս փառաց ձերոց, [1]եւ զզարդ
քո ի քէն," եւ [6]ցուցից քեզ" զինչ առ-

[1]3Եբր. պոռոտ [2]Եբր. պարտութեան, այլ ձայն երգոց
[3]Այլեւս՝ Նուիրեցէք [4]Եբր. Տէր [5]Եբր. հրեշտակ, և մերժեցից [6]Եբր. գիտացից

6 նիցեմ քեզ։ Եւ մերկացան որդիքն Իսրայէլի զզարդ իւրեանց, [1]եւ զպատմուճանս իւրեանց՝ ի Քորէբ լերին։
7 Եւ առեալ Մովսէսի [2]զխորան իւր՝ եհար արտաքոյ բանակին, մեկուսի ի բանակէ անտի, եւ [3]կոչեցաւ այն Խոր ան վկայութեան՝. եւ լինէր ամենայն ոք որ խնդրէր [4]ինչ ի Տեառնէ՝, ելանէր ի խորանն վկայութեան արտաքոյ բա8 նակին։ Եւ յորժամ երթայր Մովսէս ի խորանն, կայր ամենայն ժողովուրդն գէտաճն կայեալ իւրաքանչիւր ուրուք առ դուռս խորանի իւրոյ, եւ հայէին ընդ Մովսէս մինչ երթայր մտանէր ի խորանն.
9 Եւ յորժամ մտանէր Մովսէս ի խորանն, իջանէր սիւն ամպոյն եւ կայր առ դուռս խորանին, եւ խօսէր [1]Տէր ընդ Մովսէսի։
10 Եւ տեսանէր ամենայն ժողովուրդն զսիւն ամպոյն որ կայր առ դուռս խորանին. եւ կայեն ամենայն ժողովուրդն յոտն, եւ երկիր պագանէին իւրաքանչիւր առ
11 դուռս խորանի իւրոյ։ Եւ խօսէր Տէր ընդ Մովսէսի դէմ յանդիման, որպէս ոք զի խօսիցի ընդ բարեկամի իւրում. եւ դառնայր ի բանակ անդր. բայց պաշտօնեայն նորա Յեսու որդի Նաւեսեայ ոչ ելանէր ի խորանէ անտի։
12 Եւ ասէ Մովսէս ցՏէր, Ահա ասես ցիս, Հան զժողովուրդդ զայդ. եւ դու ոչ ցուցեր ինձ զո՛ առաքիցես ընդ իս. եւ դու ցիս ասացեր, Թէ ճանաչեմ զքեզ [5]քան զամենեսին՝, եւ ունիս շնորհս յի13 նէն։ Արդ եթէ զտի շնորհս առաջի քո, [6]ցոյց ինձ զանձն քո յայտնապէս, զի զիտացից թէ ի գտեալ իցէ իմ շնորհս առաջի քո. եւ զի ծանեայց թէ ժողո14 վուրդս քո այս՝ յազգ մեծ լինիցի։ Եւ ասէ, Ես ինքնին երթայց առաջի քո, եւ
15 զտեղեցից զքեզ։ Եւ ասէ ցնա, Եթէ ոչ դու ինքնին երթայցես՝ ընդ մեզ, մի
16 հաներ զմեզ աստի։ Եւ զիարդ յայտնի լինիցի, եթէ արգարեւ գտի շնորհս առաջի քո, եւ ես եւ ժողովուրդս քո, այլ յերթալն քո ընդ [7]մեզ փառաւորեսցուք՝, եւ ես եւ ժողովուրդս քո [8]քան զամենայն ազգս՝ որ իցեն ի վերայ երկրի։
17 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Եւ զայդ եւս դքո բան զոր ասացեր՝ արարից. քանզի գտեր շնորհս առաջի իմ, եւ ճանաչեմ
18 զքեզ [5]քան զամենեսեան՝։ Եւ ասէ,
19 Ցոյց ինձ զփառս քո։ Եւ ասէ, Ես [9]անցից առաջի քո փառօք իմովք՝, եւ կոչեցից յանուն Տեառն առաջի քո, եւ ողորմեցայց, եւ գթասցայց
20 յոր գթասցայց։ Եւ ասէ, Ոչ կարես տեսանել զերեսս իմ, զի ոչ տեսանէ մարդ
21 զերեսս իմ եւ ապրի։ Եւ ասէ Տէր, Ահա տեղի մի առաջի իմ, եւ կացցես ի վե22 րայ վիմին. Յորժամ անցանիցեն փառքն իմ, եւ եղից զքեզ ի ծերպի վիմին, եւ ծածկեցից զքեզ ձեռամբ իմով մինչեւ
23 անցից ես. Եւ բարձից զձեռն իմ [1]ի քէն, եւ տայս տեսցես զկնատոյն իմ, բայց երեսք իմ քեզ մի երեւեսցին։

ԳԼ. ԼԴ

1 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Կոփեա դու քեզ երկուս տախտակս քարեղէնս ըստ առաջինն տախտակացն, [1]եւ ես առ ի ի լեառնն.՝ եւ գրեցից ի վերայ տախտակացն զպատգամսն որ էին յառաջին տախ2 տակսն զոր խորտակեցեր։ Լեր պատրաստ առ վաղիւ, եւ ելանիցես ընդ առաւօտս ի լեառնն Սինա, եւ մնասցես
3 ինձ անդ ի վերայ գլխոյ լերինն։ Եւ մի ոք ելանիցէ ընդ քեզ, եւ մի ոք երեւեսցի ամենեւին ի լերինն, եւ արջառ եւ ոչխար մի արածեսցին մօտ ի լեառնն։
4 Եւ կոփեաց երկուս տախտակս քարեղէնս ըստ օրինակի առաջնոցն, եւ կանխեալ Մովսէսի ընդ առաւօտն՝ ել ի լեառնն Սինա, որպէս հրամայեաց նմա Տէր, եւ առ Մովսէս ընդ իւր զերկուս տախտակսն
5 քարեղէնս։ Եւ էջ Տէր ամպով, եւ կայր յանդիման նորա անդ. եւ կոչեաց յա6 նուն Տեառն։ Եւ անց Տէր առաջի նորա. եւ կարգաց, [10]Տէր Աստուած՝ զթած եւ ողորմած, երկայնամիտ, բազումողորմ եւ ճշմարիտ, Որ պահէ [1]զարգարութիւնս, եւ տանէ՝ զողորմութիւնն ի հազար սերունդս, բառնայ զանօրէնութիւնս եւ զանիրաւութիւնս եւ զմեղս, եւ ոչ

[1]3Ել։բէր. պակաս [2]Ել։բէր. զխորանն [3]Ել։բէր. կոչեաց զայն Խորան ժողովոյ (խորան ժողովոյ Բ։բ։ֆ։անեալ է մեզ բազմ։ անգամ խորան վկայութեան) [4]Ել։բէր. զՏէր [5]Ել։բէր. յանուանէ [6]Ել։բէր. տուր ինձ գիտել զՁանապարհ քո, և գիտացից զքեզ, զի գտից շնորհս յաչս քո, եւ տես զի ազգս այս ժողովուրդ քո է։ (14) Եւ ասէ, Երեսք իմ երթիցեն, եւ հանգուցից զքեզ։ (15) Եւ Մովսէս ասէ ցնա, եթէ ոչ երեսք քո երթիցեն [7]Ել։բէր. մեզ, եւ որոշեսցուք

[8]Ել։բէր. յամենայն ազգաց [9]Ել։բէր. անցուցից զամենայն բարութիւնս իմ ընդ երեսս քո [10]Ել։բէր. Տէր, Տէր,

անպարտ առնէ զպարտաւորն. ածէ զանօրէնութիւնս հարց յորդիս եւ յորդւոց յորդիս մինչեւ յերիս եւ ի չորս ազգս։
8 Եւ երդուաց Մովսէս, [1]խնամարն երկիր"
9 եւազ եւ ասէ, Եթէ գտի շնորհս առաջի քո, Տէր, երթիցէ ընդ մեզ Տէր. զի ժողովուրդս խստապարանոց է. եւ բարձցես դու զանօրէնութիւնս եւ զմեղս մեր, եւ եղիցուք մեք քո։
10 Եւ ասէ [2]Տէր ցՄովսէս", Ահա ես գնեմ ընդ քեզ ուխտ. առաջի ամենայն ժողովրդեան քո արարիւ սքանչելիս որ ոչ եղեն յամենայն երկրի եւ յամենայն ազգս. եւ տեսցէ ամենայն ժողովուրդ զորս ես դու ի միջի դոցա՝ զգործս Տեառն. զի զարմանալիք իցեն զոր ես արարիւ ձեզ։
11 Զգոյշ լեր դու ամենայնի զոր միանգամ ես պատուիրեմ քեզ այսօր. ահաւասիկ ես մերժեմ յերեսաց ձերոց զԱմովրնացին եւ զքանանացին եւ զքեւացին եւ զփերեզացին եւ զյեբուսացին [2]եւ զԳերգեսացին" եւ զՅերուսացին։ Զգոյշ լեր անձին քումդ, զուցէ գնիցես ուխտ ընդ բնակիչս երկրին, յոր դու մտանիցես ի նոսա, զուցէ լինիցի ձեզ գայթակղութիւն,
13 Զբագինս նոցա կործանեսջիք, եւ զարձանս նոցա փշրեսջիք, եւ [3]զանտառս նոցա կոտորեսջիք, [2]եւ զգրօշեալս գից
14 նոցա հրով այրեսջիք։" Եւ մի պագանիցէք երկիր աստուածոց օտարաց. զի [4]Տէր Աստուածդ՝ անուն նախանձելի է",
15 Աստուած նախանձոտ է։ Գուցէ գնիցեն ուխտ ընդ բնակիչս երկրին, եւ պոռնկիցին զկնի գից նոցա, եւ զոհիցեն աստուածոց նոցա, եւ կոչիցեն զքեզ, եւ
16 ուտիցես ի զոհից նոցա։ Եւ առնուցուս ի դստերաց նոցա ուստերաց քոց, եւ [5]ի դստերաց քոց տացես ուստերաց նոցա, եւ պոռնկիցին դստերք քո զկնի նոցա", եւ պոռնկացուցանիցեն զուստերս
17 քո զկնի գից իւրեանց։ Եւ աստուածս ձուլածոյս մի առնիցես քեզ։
18 Զտօն բաղարջակերաց պահեսցես. զեւթն օր բաղարջ կերիցես, որպէս պատուիրեցի քեզ, ի ժամանակի իւրում յամսեանն կանխոյ. զի յամսեանն կանխոյ եկեր յԵգիպտոսէ։

19 Ամենայն [2]արու որ բանայ զարգանդ՝ լինի քեզի, եւ ամենայն արուք անասնոյ քո, անդրանիկն արջառոյ եւ անդրանիկն ոչ-
20 խարի։ Եւ զանդրանիկն իշոյ փրկեսցես գառամբ. ապա թէ ոչ փրկեսցես գնա, [6]զդինս նորա տացես"։ Ամենայն անդրանիկս որդւոց քոց փրկեսցես. եւ ձեռնունայն առաջի իմ մի երեւեսցին։
21 Չվից օր գործեսցես, եւ յաւուրն եւթներորդի հանգիցես. ի սերմանս եւ ի հունձս հանգիցես։
22 Եւ տօն եւթներորդաց արասցես [7]լինի ի սկզբան հնձոյ գորենոյ, եւ տօն սրմբոնաց ամիսուկոյ՝ [8]յընդմիջել տարւոյն։
23 Երիս ժամանակս ի տարւոջ երեւեսցի ամենայն արու մանուկ քո առաջի Տեառն
24 Աստուծոյ Իսրայելի։ Քանզի մերժեցից զազգսն յերեսաց քոց. եւ ընդարձակեցից զսահմանս քո, եւ ոչ ոք իցէ որ ակն դնիցէ երկրին քումմ, յորժամ ելանիցես երեւել առաջի Տեառն Աստուծոյ քո երիս ժամանակս ի տարւոջ։
25 Մի զնուագս ի վերայ խմորիոյ զոհին զոհից իմոց, եւ մի՛ ականիցէ յայգի զնուագն ծնանի զառակն։ Զառաջինն արմտիս երկրի քո տարցես ի տունն Տեառն Աստուծոյ քո։

Մի եփեսցես [9]զգառն ի կաթին մօր իւրոյ։
27 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Գրեա դու քեզ զպատգամսդ զայդոսիկ. զի այդու բանիս
28 դնիցեմ ուխտ ընդ քեզ եւ ընդ [10]իսրայէլ։ Եւ էր Մովսէս առաջի Տեառն զքառասուն տիս եւ զքառասուն գիշեր. հաց ոչ եկեր եւ ջուր ոչ արբ. եւ գրեաց ի վերայ տախտակացն զբանս ուխտի զասան պատգամացն։
29 Մինչդեռ իջանէր Մովսէս ի լեռնէն Սինայ, եւ երկոքին տախտակքն ուխտի ի ձեռս Մովսիսի էին, եւ յիջանել իւրում ի լեռնէ անտի՝ ոչ գիտէր Մովսէս եթէ [11]փառաւորեալ իցէ տեսիլ գառնոյ" երեսաց Տեառն ի խօսել Տեառն ընդ նմա։
30 Եւ հառեաց Ահարոն եւ ամենայն որդիքն Իսրայէլի զՄովսէս, եւ [12]էր փառաւորեալ տեսիլ գառնոյ" երեսաց Տեառն, եւ երկեան
31 մերձենալ ի նա։ Եւ կոչեաց զնոսա Մովսէս, եւ դարձան առ նա Ահարոն եւ ամենայն իշխանք ժողովրդեանն, եւ խօ-
32 սեցաւ Մովսէս ընդ նոսա։ Եւ ապա մերձեցան առ նա ամենայն որդիքն Իսրայելի.

---

[1]ԵԲԲ. և խոնարհեցաւ յերկիր և երկիր [2]ՁԵԲԲ. պակաս [3]ԵԲԲ. Աշէրա, որ Նշանակէ ի-րեղէն առտնջայ Այսպէս կամ և այլոյ։ [4]ԵԲԲ. Տէր, Նախանձոտ անուն նորա [5]ԵԲԲ. պոռնկիցին դստերք նոցա զկնի գից իւրեանց

[6]ԵԲԲ. փոխանակեսցես զնա [7]ԵԲԲ. քեզ [8]ԵԲԲ. ի կատարածի [9]ԵԲԲ. զուլ [10]ԵԲԲ. Իսրայելի [11]ԵԲԲ. փայլէր մորթ [12]ԵԲԲ. ահա փայլէր մորթ

եւ պատմեաց նոցա զամենայն զոր խօսեցաւ ընդ նմա Տէր ի լերինն Սինայ։
33 [1]Եւ իջեալ դադարեաց ի խօսելոյ անտի ընդ նոսա, արկ՝ պատառուակ զերեսօք
34 իւրովք։ Իջեալ մտանէր Մովսէս առաջի Տեառն խօսել ընդ նմա, մերկանայր զպատառուակն մինչեւ այրէն ելանելոյ. եւ իջեալ ելանէր, խօսէր ընդ ամենայն որդիսն Իսրայելի զոր միանդամ պատ-
35 ուիրեաց նմա Տէր։ Եւ տեսին որդիքն Իսրայելի զերեսան Մովսիսի զի [2]փառաւորեալ էր տեսիլ գունոյ՝ երեսաց նորա. եւ արկանէր Մովսէս պատառուակ ի վերայ երեսաց իւրոց, մինչեւ անգրէն մտանելոյ եւ խօսելոյ ընդ նմա։

ԳԼ. ԼԵ

1 Եւ ժողովեաց Մովսէս զամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայելի եւ ասէ ցնոսա, Այս բանք են զոր ասաց Տէր առնել
2 զնոսա։ Զվեց օր դործեացես զդործ, յաւուրն եւթներորդի [3]հանգիցես. շաբաթ սուրբ է, հանդիստ՝ Տեառն. ամենայն
3 որ դործեացէ ի նմա, սատակեսցի. Մի լուսցի հուր յամենայն բնակութիւնս ձերում յաւուր շաբաթուց. [4]դի եւ ես եմ Տէր։՝
4 Եւ խօսեցաւ Մովսէս ընդ ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայելի եւ ասէ, Այս պատգամ է զոր պատուիրեաց Տէր
5 եւ ասէ, Առէք ի ձէնջ հաս Տեառն. ամենայն ոք զիարդ եւ յօժարեսցէ ի սրտի իւրում, բերցեն պատուդ Տեառն, ոսկի
6 եւ արծաթ, պղինձ, Եւ կապուտակ եւ ծիրանի եւ կարմիր կրկին մանեալ եւ
7 բեհեզ նրբեալ եւ մաղ այծեաց, Եւ մորթ խոյոց կարմիր ներկեալ, եւ մորթս [5]կապուտակս, եւ վայտս անփուտս, Եւ
8 եւղ լուսոյ, եւ խունկս իւղոյ օծման,
9 եւ խունկս հանդերձանաց, Եւ ականս սարդիոնս [4]եւ ականս զբիրեսիաս՝ եւ ականս ի զիր վկային, եւ [6]զպճղնաւորն։
10 Եւ ամենայն որ իմաստուն իցէ սրտիւ ի ձեզ, եկեսցէ գործեացէ զամենայն զինչ
11 զոր պատուիրեաց Տէր. Զխորանն, եւ զնուագարանս իւր, եւ զվիժակս նորա, եւ [7]զդահակս նորա, եւ զսեանսեակս

նորա, եւ զպարզունակս նորա, եւ զսիւնս
12 նակս նորա, եւ զվարիխս նորա, Եւ զատապանակն [4]վկայութեան եւ զվիժակս նորա, եւ զքաւութիւնն եւ [8]զվարագոյրն, զատապատ սրահին եւ զսիւնակս նորա, եւ զականսն զբիրեսիաս, եւ
13 զխունկսն եւ զեւզն օծման՝, Եւ զսեղանն, [4]եւ զամենայն զկահ նորա եւ զհովանոցս սեղանոյն՝ եւ զվիժակս նորա եւ զամենայն
14 զկահ նորա, եւ զհացն երեսաց, Եւ զաշտանակն լուսոյ եւ զամենայն զկահ նորա, եւ զճրագարանս նորա եւ զեւզն
15 լուսոյ, Եւ զսեղանն խնկոց, եւ զվիժակս նորա, եւ զեւզն օծութեան, եւ զխունկսն հանդերձանաց, եւ զվարագոյր դրան խո-
16 րանին, Եւ զսեղանն ողջակիզաց, եւ զպղնձակս նորա զպղնձիս, զվիժակս նորա եւ զամենայն զկահ նորա, եւ զա-
17 ւազանն եւ զվարիխս նորա, Եւ զառագաստ [9]սրահին եւ զսիւնակս նորա եւ զվարիխս նորա, եւ զսրահակ դրան
18 [9]սրահին, Եւ զցից խորանին եւ զցից
19 [9]սրահին եւ զապարանս նոցա, Եւ զպատմուճանսն սրտով պաշտիցին ի սրբութիւնն, եւ զպատմուճանսն սուրբս Ահարոնի քահանայի, եւ զպատմուճանս քահանայութեան որդւոցն Ահարոնի։
20 Եւ ել ամենայն ժողովուրդն որդւոցն
21 Իսրայելի առ ի Մովսիսէ։ Եւ բերին իւրաքանչիւր որպէս եւ յօժարէին սիրտք իւրեանց, եւ որոց զիարդ եւ կամ եղեւ անձանց իւրեանց, բերէին նուէրս Տեառն յամենայն գործս խորանին վկայութեան, եւ յամենայն նիւթս նորա, եւ յամենայն
22 պատմուճանսն սրբութեանն։ Եւ [10]բերին արք ի կանանց, ամենայն ոք որպէս եւ միտք իւր վարէին, ականս եւ՝ զինգս եւ մատանիս եւ ծամակալս եւ կչտապանակս, եւ զամենայն անօթս ոսկեղէնս. եւ ամենայն արք որ [4]եւ էին՝ բե-
23 րէին նուէրս ոսկւոյ Տեառն։ Եւ ամենայն այր առ որում գտանէր կապուտակ եւ ծիրանի եւ կարմիր մանեալ եւ բեհեզ, եւ մաղ այծեաց եւ մորթս խոյոց կարմիր ներկեալ եւ մորթս [5]կապու-
24 տակեայս, բերէին։ Ամենայն որ նուիրէր նուէրս, արծաթ եւ պղինձ բերէին զնուէրսն Տեառն, եւ ամենայն առ որում գտանէր փայտ անփուտ յամենայն գործ

---

[1] Կամ, մինչեւ ի դադարել Մովսիսի ի խօսելոյ ընդ նոսա, արկանէր [2]Եբբ. փայլէր մորթ [3]Եբբ. եղիցի ձեզ սրբութիւն, շաբաթ հանգստեան [4]Յեբբ. գ-ի-ո-ե [5]Եբբ. թեհաշի [6]Եբբ. տախտակին (կրծանոց) [7]Կամ, զճարմանդս

[8]Եբբ. զվարագոյրն որ ծածկէ [9]Եբբ. գաւթին [10]Եբբ. եկին արք հանդերձ կանամբք, իւրաքանչիւր յօժարութեամբ ի սրտէ, և բերին

25 կահին՝ բերէին։ Եւ ամենայն կին իմաս-
տուն մազ նրբէր ձեռօք իւրովք, եւ
բերէր մանեալ գկապուտակն եւ գձի-
րանի եւ գկարմիրն ներկեալ եւ գլինդն
26 Եւ ամենայն կանայք որ յօժարէին ի
միտս իւրեանց՝ մանէին իմաստութեամբ
27 գմազ այծենայն ։ Եւ իշխանքն բերէին
ականս զրմխոստս , եւ տախտ ի նրբի
28 վակասին եւ տախտակին , Եւ [1]զհան-
գերձանս խնկոցն , եւ զեւղն լուսոյ եւ
29 զեւղն օծութեան՝։ Եւ ամենայն այր եւ
կին, որոց յօժարէին միտք իւրեանց, մատա-
նէին գործել զամենայն գործն զոր պատա-
ուիրեաց Տէր գործել ի ձեռն Մովսիսի. բե-
րէին որդիքն Իսրայելի զնուէրսն Տեառն։
30 Եւ ասէ Մովսէս ցորդիսն Իսրայելի ,
Տեսէք, զի կոչեաց Աստուած յանուանէ
զԲեսաղիէլ զՈւրիայեան զորդի Հվրայ յազգէ
31 Ցուդայ . Եւ լեաց զնա աստուածեղէն
Հոգւով իմաստութեան, եւ հանճարով եւ
32 գիտութեամբ յամենայնի , Ըստ ամենայն
գործոյ ճարտարապետել ճարտարապե-
տութեամբ, գործել զոսկին եւ զարծաթն
33 եւ զպղինձ . Եւ քանդակել զականն , եւ
գործել զփայտն , առնել զամենայն գործ
34 իմաստութեան , Եւ [2]խելամտել , զի՛ եւս
ի սիրտ նորա զիմաստութիւն , եւ Եղիա-
բայ որդւոյ Աքիսամայ յազգէ Դանայ ,
35 Զորս եկից մազ իմաստութեան , [3]խե-
լամտել՝ գործել զամենայն դործ [4]սրբու-
թեանն , զոստայնանկութեան եւ զնկա-
րու , կապուտակաւն եւ ծիրանեամն եւ
կարմրովն ներկելով եւ լինդով անկա-
նել գործել զամենայն դործ ճարտարու-
թեան նկարակերտաց ։

Գլ. ԼԶ

1 Եւ արարին Բեսաղիէլ եւ Եղիաբ եւ ա-
մենայն այր իմաստուն մազ , որում
տուաւ ի Տեառնէ իմաստութիւն եւ զի-
տութիւն՝ խելամուտ լինել գործել զա-
մենայն գործ ատրաղու սրբութեանն ,
ըստ ամենայնի որպէս եւ հրամայեաց Տէր։
2 Եւ կոչեաց Մովսէս զԲեսաղիէլ եւ զԵղիաբ
եւ զամենեսեան որ ունէին իմաստութիւն
ի սրտի , որոց եւ [5]Աստուած հանճար ի
սիրտս նոցա , զամենեսեան որ կամէր
մտաք կամէին մերձենալ ի գործն եւ
3 կատարել ։ Եւ առին ի Մովսիսէ զամե-
նայն նուէրսն զոր բերին որդիքն Իսրա-
յելի յամենայն գործ ատրաղու սրբու-
թեանն առնել գայն . եւ [6]ինքեանք եւս
ընդունէին զնուէրսն ի նուիրելոցն՝՝
ընդ առաւօտս առաւօտս ։
4 Եւ գայլն ամենայն իմաստունք որ
գործէին գգործ սրբութեանն, իւրաքան-
չիւր ըստ ատրաղու իւրում գոր ինք-
5 եանք գործէին . Խօսեցան ընդ Մովսիսի
եւ ասեն , Կարի յաճախ բերիլ ժողո-
վուրդք քան զբաւական ատրաղու պի-
տոյից գործոյն , զոր հրամայեաց [5]Աս-
6 տուած առնել ։ Եւ հրամայեաց Մովսէս
քարոզ կարգել ի բանակին եւ ասել ,
Այր կամ կին՝ մի եւս գործեսցեն ի
պատուղ սրբութեանն ։ Եւ ապա արգելաւ
7 ժողովուրդն ի բերելոյ ։ Եւ [7]գործեալն
իւրեանց բերէին՝՝ յամենայն կազմած
գործոյն գործել գայն , եւ [8]գապարեցին։
8 Եւ գործէր ամենայն իմաստուն սրուխ-
ընդ գործաւորսն գգործ խորանին տասն-
փեղկեան , ի լինելոյ մանեալ եւ ի կա-
պուտակէ եւ ի ծիրանեայ եւ ի կարմրոյ
կրկնելոյ , [9]քերոր գործ անկուածոյ՝՝ գոր-
9 ծէին . Երկայնութիւն միոյ փեղկին ի
քան եւ չոր կանգնոյ , եւ լայնութիւն
ի չորից կանգնոյ միոյ փեղկի. չափ նոյն
10 էր ամենեցունց փեղկիցն։ Եւ կցեալ զհինգ
փեղկսն ընդ [10]մեւս հինգ փեղկից ,՝ եւ
զհինգն եւս փեղկս կցեալ ընդ [10]այլոց
11 հնգից՝։ Եւ արար ճարմանդս կապուտակ-
եայս առ եզերբ միոյ փեղկին ի կոզմանէ
առ ի խառնուածս . նոյնպէս արար եւ
առ եզերբ արտաքնոյ փեղկին երկրորդի
12 խառնուածոյն ։ Յիսուն ճարմանդ արար
միոյ փեղկի , եւ յիսուն ճարմանդ արար
ի կոզմանէ փեղկին ըստ երկրորդի խառ-
նուածոյն , առ ի խառնելոյ իւրաքանչիւր
13 ճարմանդացն ընդ միմեանս։ Եւ արար օղս
ոսկիս յիսուն, եւ խառնեաց զփեղկսն ընդ
միմեանս օղիւքն , եւ եղեւ խորան մի ։
14 Եւ արար փեղկս մազղէնս ծածկիչս
խորանին . մեւսասան փեղկ արար զնոսա։
15 Երկայնութիւն միոյ փեղկի յերեսունն
կանգնոյ , եւ լայնութիւն միոյ փեղկի ի
չորից կանգնոյ . չափ նոյն էր մեւսա-

[1] ԵԲԲ. Համեմունս և եւղս ի լոյս և յեւղ օծու-
թեան և ի խունկս անուշութեան [2] ԵԲԲ. առ ի
խելամուտ առնելոյ [3] ԵԲԲ.-ովաբ [4] ԵԲԲ.
ճարտարութեան քանդակագործաց [5] ԵԲԲ.Տէր
[6] ԵԲԲ. նորա տակաւին բերէին առ նա նուէրս
[7] ԵԲԲ. Նրբեցն եղեւ բաւական [8] ԵԲԲ. աւելի եւս
[9] ԵԲԲ. քերորէս՝ գործ ճարտարութեան [10] ԵԲԲ.
միմեանս

16 սանեցուն՝ փեղկիցն։ Եւ կցեաց զհինգ
փեղկան ի միասին եւ զվից փեղկան ի մի-
17 ասին։ Եւ արար յիսուն ճարմանգս առ
եզերբ փեղկին, որ ի մէջ խառնուած-
ոցն. եւ արար յիսուն եւս ճարմանգս առ
եզերբ փեղկին երկրորդի խառնուածոյն։
18 Եւ արար օղս պղնձիս յիսուն. եւ կցեաց
19 զխորանն զի լինիցի մի։ Եւ արար ղին-
ժական խորանին ի մորթոց խոյոց կար-
միր ներկելոց, եւ զարտաքուստն [1]ի
կապուտակէ ի վերոյ կողմանէ։
20 Եւ արար [2]զերկուս սիւնս՝ խորանին
21 յանփուտ փայտից կանգնուածս։ Ի տասն
կանգնոյ զերկայնութիւն միոյ սեան, եւ
ի կանգնոյ եւ ի կիսոյ [3]գիմանձրութիւն
22 եւ՝ զայնմանէ միոյ սեան։ Եւ երկուս
[4]սոսինչս առ մի մի սիւն խառնեալ ընդ
միմեանս. նոյնպէս արար ամենայն սեանց
23 խորանին։ Եւ արար զսիւնս խորանին.
24 քսան սիւն՝ ի հարաւոյ կողմանէ։ Եւ
քառասուն խարխս արծաթի՝ սեանցն
քառանկեանց. երկուս խարխս առ մի
սիւն յերկոցունց կողմանց, եւ երկուս
խարխս առ մեւս եւս սիւն յերկոցունց
25 կողմանց։ Եւ յերկրորդ կողման խորա-
26 նին ընդ հիւսիսի արար քսան սիւն, Եւ
քառասուն խարխս արծաթի, երկուս
խարխս առ մի սիւն, եւ երկուս խա-
27 րխս առ մեւս եւս սիւն։ Եւ ի թիկ
կանց խորանին ընդ [5]ծովակողմն արար
28 վից սիւն. Եւ երկուս սիւնս արար յան-
29 կիւնս խորանին յետուստ կողմանէ։ Եւ
էին [6]հաստարակ ի ներքուստ, եւ ըստ
նմին օրինակի [7]հաստարակ էին՝ ի գլխոյ
կողմանէ ի մի խառնուած. նոյնպէս ա-
րար եւ երկոցունց սեանցն որ [8]յան-
30 կիւնսն։ Եւ էին ութ սիւն, եւ խարխոյք
նոցա արծաթիք, վեցտասան խարխս.
երկու խարխոյք առ մի սիւն, եւ եր-
31 կու խարխոյք առ մի սիւն։ Եւ արար
պարզունակս յանփուտ փայտից, հինգ
առ մի սիւն ի միոջէ կողմանէ խորա-
32 նին, Եւ հինգ եւս պարզունակ առ մեւս
սիւն՝ յերկրորդ կողմանէ խորանին, եւ
հինգ պարզունակ առ մեւս սիւն ի թիկ-
33 կանց խորանին ընդ [5]ծովակողմն։ Եւ ա-
րար զմիջին պարզունակն [9]մտանելոցն
34 ի մէջ սեանցն ի կողմանէ ի կողմն։ Եւ
[9]զերկուս սիւնսն՝ պատեաց ոսկւով.
եւ [10]զերկուս օզամանեակս՝ նոցա արար
ոսկիս, յորս մտանիցին պարզունակքն.
եւ պատեաց զպարզունակսն ոսկւով։
35 Եւ արար վարագոյր ի կապուտակէ եւ
ի ծիրանեայ եւ ի կարմրոյ մանելոյ եւ ի
լեհնեղոյ նիւթելոյ. գործ [11]անկուածոյ
36 գործեաց զնա [12]քերովբ։ Եւ եղ զայն ի վե-
րայ չորից սեանցն յանփուտ փայտից ոս-
կիապատից. եւ խայտակք՝ նոցա ոսկիք, եւ
37 չորք խարխոյք նոցա արծաթիք։ Եւ ա-
րար զվարագոյր դրան խորանին վկա-
յութեան ի կապուտակէ եւ ի ծիրանեայ
38 եւ ի կարմրոյ մանելոյ եւ ի լեհնեղոյ նիւ-
թելոյ, գործ անկուածոյ [13]քերոբ. Եւ
զսիւնս նոցա հինգ եւ զօղս նոցան. եւ
պատեաց զխոյակս [14]նոցա ոսկւով. եւ
խարխոյք նոցա պղնձիք հինգ։

Գլ. Լէ

1 Եւ արար Բեսաղիէլ զտապանակն յան-
փուտ փայտից, յերկուց կանգնոց եւ ի
կիսոյ զերկայնութիւն նորա, եւ ի կանգ-
նոյ եւ ի կիսոյ զլայնութիւն նորա, եւ ի
կանգնոյ եւ ի կիսոյ զբարձրութիւն նորա
2 Եւ պատեաց զնա ոսկւով սրբով ներքոյ
եւ արտաքոյ, եւ արար նմա ծնօտս ոսկիս
3 չուրջանակի։ Եւ ձուլեաց նմա չորս օզա-
մանեակս ոսկիս ի չորեցունց կողմանց
նորա, երկուս օզամանեակս ի միոջէ
կողմանէ, եւ երկուս օզամանեակս ի
միւսմէ կողմանէ, [3]եւ ազոյց լծակացն։
4 Եւ արար լծակս յանփուտ փայտից, եւ
5 պատեաց զնոսա ոսկւով։ Եւ [15]ազուցին
զլծակսն յօզամանեակսն ի կողմանց տա-
պանակին, բառնալ զնա նոքօք։
6 Եւ [16]արարին զքաւութիւնն ի վերուստ
տապանակին՝ յոսկւոյ սրբոյ, յերկուց
կանգնոց եւ ի կիսոյ զերկայնութիւն
նորա, եւ ի կանգնոյ եւ ի կիսոյ զլայ-
7 նութիւն նորա։ Եւ արար երկուս քե-
րովբէս ոսկիս. [17]ճախարակեայս գործ-
եաց զնոսա՝ յերկուց կողմանց քաւու-
8 թեանն. Քերոբ մի ի վերայ միոյ գլխոյ
քաւութեանն, եւ քերոբ մի ի վերայ
երկրորդի գլխոյ քաւութեանն, անդստին
ի քաւութենէ անտի արար զերկոսին

---

[1] ԵԲԸ. ի մերթ ոգ թ ևշ չի [2] ԵԲԸ. տախտակս, (ջէ-նէ-
էմ գ-ոխ-ոս-ս) [3] ՅԵԲԸ. գ-ոս-ս [4] ԵԲԸ. ձեռս,
ա-ր-ճ-ի՝ ագոյցս [5] Կամ, արեւմուտս [6] ԵԲԸ.
զոյգ [7] ԵԲԸ. կցեալն [8] ԵԲԸ. յերկոսին անկիւնսն
[9] ԵԲԸ. զտախտակսն [10] ԵԲԸ. զօզամանեակս [11] ԵԲԸ.
ճարտարութեան [12] ԵԲԸ. քերովբէիւք (36)
Եւ արար նմա սիւնս չորս յանփուտ փայտից ոս-
կիապատս. և ճարմանդք [13] ԵԲԸ. նկարակերպ
[14] ԵԲԸ. նոցա և գլխոիս նոցա [15] ԵԲԸ. ագոյց
[16] ԵԲԸ. արար զքաւութիւնն [17] Կամ, կռածոյս

9 քերոան, յերկոցունց ծայրից նորա։ Եւ
էր փերոէլին տապանակ պիեւս իւր-
եանց ի վերատա, եւ հանգի ունէին
իեւօք իւրեանց ի վերայ քառասիեանն,
եւ երեք փերոէլին հանդէպ միմեանց
ի վերայ քառասիեանն։
10 Եւ արար զեզեքիէլ [1]զտապաստար յոս-
կւոյ արոյ. եւ ձուլեաց նմա չորս օղա-
մանեակս ոսկիս, երկուս ի միոյ կող-
մանէ, եւ երկուս յերկրորդ կողմանէ. եւ
ազոյցս, բառնալ զնա ազուլիքն։ Եւ
զազոյցս տապանակին եւ զսեղանոյն ա-
րար՝ յանփառս փայտից, [1]եւ պատեաց
զնոսա ոսկւով.” յերկուց կանգնոց զեր-
կայնութիւն նորա, եւ ի կանգնոյ եւ ի
կիսոյ զլայնութիւն նորա, եւ ի կանգնոյ
11 եւ ի կիսոյ զբարձրութիւն նորա։ Եւ
պատեաց զնա ոսկւով սրբով. եւ արար
12 նմա ծնօտս ոսկիս չուրջանակի։ Եւ արար
նմին պսակ ուղղական չուրջանակի, եւ
արար ծնօտս ոսկիս պսակին նորա չուր-
13 ջանակի։ Եւ արար նմա չորս օղամանե-
ակս ոսկիս. եւ եդ զօղամանեակսն ի
չորս կողմանս որ էին չորեքսունց ոսկի
14 նորա։ Ի ներքոյ պսակին եղեն օղա-
մանեակքն ազոյցք լծակացն առ ի բառ-
15 նալոյ զսեղանն։ Եւ արար երկուս լծակս
յանփառս փայտից, եւ պատեաց զնոսա
16 ոսկւով առ ի բառնալոյ զսեղանն։ Եւ
արար զկահ [2]սեղանոյն եւ զինկալացս
նորա եւ զարիւնահալս նորա” եւ զճա-
շակս նորա եւ զնուիրանոցան որովք նուի-
րիցեն՝ յոսկւոյ սրբոյ։
17 Եւ արար զաչտանակն [3]լուսոյ ձոյլ
ոսկի”, [1]զրունն, եւ զտեղատունն յերկու-
ցունց կողմանց նորա. եւ ի տեղատունն
չառաւիղք ընարեալք առ միմեանս՝ երեք
ի միոջէն եւ երեք ի միւսմէն՝ հաւասարք
միմեանց. եւ զլուսակալս նոցա որ էին
ի ծայրսն ընկուզազարդս անդսաին ընտ-
րեալս։ Եւ զշտակալսն ի նոսա, զի
իցեն ճրագարանքն ի վերայ նոցա. եւ
զշտակալսն վեցհներորդ՝ որ ի շլուխ
լուսակալին, որ ի վերայ բուն իսկ պլխոյն
ի վերուստ, ձոյլ՝ համակ ոսկի։ Եւ զեւթն
ճրագարանսն որ ի վերայ նորա ոսկիս,
եւ զանելիս նորա ոսկիս, եւ պյորդա-
բիչս նորա ոսկիս յոսկւոյ սրբոյ.” [4]ճախա-
րակեալ գործեաց զաչտանակն, զրունն
եւ զտեղատունս նորա, եւ զսկահա-
ձեւսն եւ զզնդակսն եւ զչուչանս նորա
18 անդսաին ի նմանէ։ Վեց սաեղս արձա-
կեալ ի կողմանց նորա, երեք սաեղունք
ի միոջէ կողմանէ աչտանակին, եւ երեք
սաեղունք յերկրորդ կողմանէ աչտանա-
19 կին. երեք սկահաձեւք ընկուզապարփք
յօրինեալք ի միում սաեղան, եւ գնդակ
եւ չուչան. եւ երեք սկահաձեւք ընկու-
զապարփք յօրինեալք ի միւսմ եւս սաե-
ղան, եւ գնդակ եւ չուչան. այսպէս վե-
ցեցունց սաեղանցն արձակելոց յաչտանա-
20 կէ անտի։ Եւ ի բուն աչտանակին չորք
սկահաձեւք ընկու զապարփք յօրինեալք,
21 եւ գնդակք նորին եւ չուչանք։ Եւ գնդակ
մի ընդ երկուք սաեղամիջն անդսաին ի
նմին, [5]վեցեցունց սաեղանցն արձակելոց
22 ի նմանէ։ Գնդակք նոցա եւ սաեղունք
իւրեանց անդսաին ի նմին, բովանդակ
[4]ճախարակեալ ի միոջէ՝ յոսկւոյ սրբոյ։
23 Եւ արար զճրագարանս նորա եւքն, եւ
զանելիս եւ զպյորդարիչս նորա յոսկւոյ
24 սրբոյ։ Ի տալանդէ միոյ ոսկւոյ սրբոյ
արար զնա եւ զամենայն զկահ նորա։
25 Եւ արար զսեղանն [6]ոսկիատաս յան-
փառս փայտից, [7]ի հինգ կանգնոյ զեր-
կայնութիւն նորա եւ ի հինգ կանգնոյ
զլայնութիւն” նորա՝ չորեքկուսի, եւ [8]յե-
րից կանգնոյ զբարձրութիւն նորա. եւ
26 զեղջերս նորա անդսաին ի նմանէ։ Եւ
պատեաց զնա ոսկւով սրբով, եւ զյարկ
նորա եւ զկողմանս նորա չուրջանակի
եւ զեղջերս նորա. եւ արար նմա
27 ծնօտս ոսկիս չուրջանակի։ Եւ երկուս
օղամանեակս ոսկիս ընդ ծնօտիւք նորա
առ ի կողմանէ բնդ երկոքեան մրք կող-
մամբք նորա՝ յազոյցս լծակացն, առ ի
28 բառնալոյ զնա նոքօք։ Եւ արար զլծակսն
յանփառս փայտից, եւ պատեաց զնոսա
29 ոսկւով։ Եւ արար զնւէրն օծութեան
զսուրբ, եւ զանմպերձանս խնկոցն, գործ
մաքուր իւղագործաց։

ԳԼ. ԼՐ

1 Եւ արար զսեղանն [9]զրնծատաս ի չուր-
բուրատացն զրնծասաց՝ որ էին ի ձեռս ա-
րանցն ազատամարդ հանդերձ ժողովրդ-

[1] Ցեբր. դ-ւ-ռ-ե [2] Եբր. սեղանոյն, զկուառս նորա և զինկալացս [3] Եբր. յոսկւոյ սրբոյ [4] Կ-մ, կռաձոյ

[5] Եբր. եւ գնդակ մի ընդ երկուք սաեղամիջն անդսաին ի նմանէ, եւ գնդակ մի ընդ երկուք սաեղամիջն անդսաին ի նմանէ, վեցեցունց [6] Եբր. խնկոց [7] Եբր. կանգնոյ երկայնութիւն նորա, և կանգնոյ լայնութիւն [8] Եբր. յերկուց [9] Եբր. ողջակիզաց

եաւրն Կորխայ," յանփուտ փայտից. ի հինգ կանգնոյ զերկայնութիւնն նորա, եւ ի հինգ կանգնոյ գլայնութիւնն նորա, չորեքկուսի, եւ չերից կանգնոյ բարձրութիւն նորա։ Արար եւ զեղջերս նորա ի վերայ չորեցունց անկանոց իւրոց. անդամն ի նմանէ էին եղջերք նորա, եւ պատեաց զնոսա պղնձով։ Եւ արար զամենայն կահ նորա արար պղնձի։ Եւ արար զպահաւորակս սեղանոյն, գործ վանդակագործ պղնձի ի բուրուառացն, ի ներքուստ մինչեւ ցմէջս։ Եւ եդ նմա չորս օղամանեակս պղնձիս ի չորեցունց կողմանց զահաւորակի սեղանոյն՝ տալոյց նգայն։ Եւ արար զվրկան յանփուտ փայտից, եւ պատեաց զնոսա պղնձով։ Եւ ազուցին զվրկան յօղամանեական ի կողմանս սեղանոյն, բառնալ զսեղանն նոքօք. ի վանդակ առհասակամած գործեալ էին։ Եւ արար զաւազանն պղնձի եւ զխառիսին նորա պղնձի՝ ի հայելեաց կանանց ուխտաւորաց, որք պահեցին պահս առ դրան խորանին վկայութեան՝ յաւուր յորում եհար զխորանն։ Եւ արար զսրահն՝ ի բևեռս ի մանելոյ հարեւր առ հարեւր. Եւ սիւնք նոցա քսան, եւ խարիսխք նոցա պղնձիք քսան. եւ զարդք սեանցն եւ յօսյակք նոցա արծաթիք։ Եւ ընդ կողմն հիւսիսոյ հարեւր առ հարեւր, եւ սիւնք նոցա քսան, եւ խարիսխք նոցա պղնձիք քսան. եւ զարդք սեանցն եւ յօսյակք նոցա արծաթիք։ Եւ ընդ կողմն արեւելից ի յհուսն կանգնոյ։ Եւ առագաստքն ի հնգեւտասան կանգնոյ՝ ի մի կողմն, եւ սիւնք նոցա երիք, եւ խարիսխք նոցա երիք։ Եւ յերկրորդ առ դրամբ սրահին, սրահք՝ ի հնգետասան կանգնոյ, եւ սիւնք նոցա երիք, եւ խարիսխք նոցա երիք։ Ամենայն սիւնք սրահին՝ չորեքկուսի, եւ յերից կանգնոց բարձրութիւն նորա։ Արար եւ զեղջերս նորա ի վերայ չորեցունց անկանոց իւրոց. անդամն ի նմանէ էին եղջերք նորա, եւ պատեաց զնոսա պղնձով։ Եւ արար զամենայն կահ նորա արար պղնձի։ Եւ արար զպահաւորակս սեղանոյն, գործ վանդակագործ պղնձի ի բուրուառացն, ի ներքուստ մինչեւ ցմէջս։ Եւ եդ նմա չորս օղամանեակս պղնձիս ի չորեցունց կողմանց զահաւորակի սեղանոյն՝ տալոյց նգայն։ Եւ արար զվրկան յանփուտ փայտից, եւ պատեաց զնոսա պղնձով։ Եւ ազուցին զվրկան յօղամանեական ի կողմանս սեղանոյն, բառնալ զսեղանն նոքօք. ի վանդակ առհասակամած գործեալ էին։ Եւ արար զաւազանն պղնձի եւ զխառիսին նորա պղնձի՝ ի հայելեաց կանանց ուխտաւորաց, որք պահեցին պահս առ դրան խորանին վկայութեան՝ յաւուր յորում եհար զխորանն։ Եւ արար զսրահն՝ ի բևեռս ի մանելոյ հարեւր առ հարեւր. Եւ սիւնք նոցա քսան, եւ խարիսխք նոցա պղնձիք քսան. եւ զարդք սեանցն եւ յօսյակք նոցա արծաթիք։ Եւ ընդ կողմն հիւսիսոյ հարեւր առ հարեւր, եւ սիւնք նոցա քսան, եւ խարիսխք նոցա պղնձիք քսան. եւ զարդք սեանցն եւ յօսյակք նոցա արծաթիք։ Եւ ընդ կողմն արեւելից ի յհուսն կանգնոյ։ Եւ առագաստքն ի հնգետասան կանգնոյ՝ ի մի կողմն, եւ սիւնք նոցա երիք, եւ խարիսխք նոցա երիք։ Եւ յերկրորդ առ դրամբ սրահին, սրահք՝ ի հնգետասան կանգնոյ, եւ

[1] ԵԲԲ. զանօթս մխոյ [2] ԵԲԲ. գ-կ-ե [3] ԵԲԲ. անամէջ [4] ԵԲԲ. պաշտէին, կ՚, ժողովէին [5] ԵԲԲ. զգաւթին. ի Տարաւ կոյս [6] ԵԲԲ. գաւթին [7] ԵԲԲ. կանգուն [8] ԵԲԲ. ճարմանդք [9] ԵԲԲ. գօսիք [10] ԵԲԲ. ընդ արեւմուտս առագաստք [11] ԵԲԲ. միոյ կողման դրանն [12] ԵԲԲ. կողման առ դրամբ գաւթին առագաստք [13] ԵԲԲ. առագաստք գաւթին [14] ԵԲԲ. սեանցն [15] ԵԲԲ. ճարմանդք սեանցն և գօսիք [16] ԵԲԲ. գօսիք ամենայն սեանց գաւթին արծաթիք [17] ԵԲԲ. հինգ [18] ԵԲԲ. արծաթապատառք, եւ գօսիք նոցա արծաթիք [19] ԵԲԲ. համար խորանին՝ [20] ԵԲԲ. որ համարեցաւ ըստ բերանոյ Մովսիսի ի սպաս

[1]հարեւր խոյակաց խորանին, եւ ի խոյակս վարագուրին. հարիւր տաղանդ ի հարիւր խոյակ, տաղանդ մի առ խոյակ"։
28 Եւ զհազար եւ զեւթն հարիւր եւ զեւթանասուն եւ հինգ սիկղն գործեաց ի խոյօղս սեանցն, եւ պատեաց [2]ոսկւով զխոյակս նոցա, եւ [3]զարդարեաց գնոսա։
29 Եւ պղինձ նուիրացն եւթանասուն տաղանդ, եւ երկու հազար եւ չորեք հա-
30 րեւր սիկղ։ Եւ արար անօթի վիճարիսիս դրան խորանին վկայութեան, եւ զսեղանն պղնձի, եւ զպատուարակ սեղանոյն պղնձի, եւ զամենայն զսպասս սե-
31 ղանոյն, Եւ զխարիսիս [4]սրահին չուրջանակի, եւ զխարիսիս դրան [4]սրահին, եւ զամենայն գործս խորանին, եւ զամենայն գործս [5]սրահին չուրջանակի. եւ զապարանսն ի կապուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի կարմրոյ մանելոյ։"

ԳԼ. ԼԹ

1 Եւ [6]արար պատմուճանս պաշտամանն, պաշտել նոքօք ի սրբութիւնն. եւ [7]արար պատմուճանս սրբութեանցն որ էին Ահարոնի [2]քահանայի, որպէս հրամայեաց Տէր Մովսիսի։
2 Եւ արարին զսկաման յոսկւոյ եւ ի կապուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի կարմրոյ մանելոյ եւ ի բեհեզոյ նիւթելոյ։
3 Եւ հաւանէին զթիթեղունս ոսկւոյն թելս թելս՝ անկանել ընդ կապուտակին եւ ընդ ծիրանւոյն եւ ընդ կարմրոյ մանել-
4 լոյ եւ ընդ բեհեզոյ նիւթելոյ։ [8]Գործ անկուածոյ վակասի գործեցին գնա", խառնեալ յերկոցունց կողմանց ընդ միմեանս [2]հիւսկէն. գործ անկուածոյ ի մի-
5 մեանս ի նոյն"։ Եւ ի նմանէ գործեցին [9]ըստ իւրում գործուածոյ, յոսկւոյ եւ ի կապուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի կարմրոյ մանելոյ եւ ի բեհեզոյ նիւթելոյ. որպէս եւ հրամայեաց Տէր Մովսիսի։
6 Եւ [10]գործեաց զերկոսին ականան զրմբուխաս՝ ժապաւինեալս եւ" ընդելուզեալս ոսկւով, քանդակեալս [2]եւ մա-

ծուցեալս" ի քանդակ կնքոյ, յանուանց որդւոցն Իսրայելի։ Եւ հասատատեաց զնոսա ի վերայ ուսոյ վակասին, ականս յիշատակի որդւոցն Իսրայելի, որպէս եւ հրամայեաց Տէր Մովսիսի։
8 Եւ արար զսախտատն գործ [11]անկուածոյ նկարակերպ" ըստ գործոյ վակասին, յոսկւոյ եւ ի կապուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի կարմրոյ մանելոյ եւ ի բեհեզոյ
9 նիւթելոյ. Զսրիկգուսի եւ կրկին գործեալ զսախտատն. թղալ յերկայնութիւն եւ թղալ ի լայնութիւն. Եւ անկանէր ընդ նմին անկուած ականակապ չորեքկարգեան ականց. կարգն առաջին՝ սարդիոն եւ տոպազիոն եւ զըմրուխտ,
11 կարգ մի. Եւ կարգն երկրորդ՝ կարկեհան եւ չափղտա եւ յասպիս. Եւ կարգն
12 երրորդ՝ սուտակ եւ գոճազմ եւ ակատ.
13 Եւ կարգն չորրորդ՝ ոսկեհան եւ եղունգն եւ բիւրեղ. պատեալ եւ ընդելուզեալ
14 ոսկւով։ Եւ ականքն ըստ անուանց որդւոցն Իսրայելի էին. երկոտասանք յանուանց նոցա գրեալք եւ քանդակեալք, ըստ իւրաքանչիւր անուանց ազգացն եր-
15 կոտասանից։ Եւ արարին ընդ սախտատակաւն վերջս փողփողակս ի վերայ [2]երկուց օղոցն, գործ հիւսկէն յոսկւոյ
16 սրբոյ։ Եւ արարին երկուս վահանակս ոսկիս եւ երկուս օղս ոսկիս. եւ եդին զերկուս օղսն ոսկիս յերկոսին առաջս տախ-
17 տակին։ Եւ եդին զվերջնն փողփողակս ի վերայ երկուց օղոցն յերկոսին կող-
18 մանս տախտակին։ Եւ յերկոսին խառնուածան զերկուս վերջնն փողփողակս եդին ի վերայ երկուց վահանակացն. եւ զնոսա եդին ի վերայ ուսոց վակասին
19 դէմ յանդիման յերեսաց կողմանէ։ Եւ արարին երկուս օղս ոսկիս, եւ եդին ի վերայ երկոցունց թեւոցն ի ծայրս տախտակին, ի գլուխ թիկանց վակասին ի
20 ներքոյ կողմանէ։ Եւ արարին երկուս օղս ոսկիս, եւ եդին ի վերայ երկոցունց ուսոց վակասին ի ներքոյ կողմանէ յերեսաց նորա՝ ըստ վերնոյ խառնուա-
21 ծոյ անկուածոյ վակասին։ Եւ պնդեցին զսախտատն յօղից նորա միմեանս ի զօղս վակասին, խառնեալ ընդ միմեանս ի կապուտակէ, [12]հիւսեալս ընդ միմեանս յանկուած" վակասին, ի մի զերծանելոյ սախտատն ի վակասէ անտի, որպէս հրամայեաց Տէր Մովսիսի։

---

[1] ԵՔԸ. խարխաց սրբութեանն և խարխաց վարագուրին. հարեւր տաղանդ ի հարիւր խարխս, տաղանդ մի առ խարիսխ [2] ՅԵՔԸ. գ-ի-ս-ե [3] ԵՔԸ. պնդեաց [4] ԵՔԸ. գաւթին [5] ԵՔԸ. գաւթին չուրջանակի [6] ԵՔԸ. ի կապուտակէ և ի ծիրանւոյ և ի կարմրոյ մանելոյ արարին [7] ԵՔԸ. արարին [8] ԵՔԸ. վ տաւակս արարին նմա [9] ԵՔԸ. զժապաւէնն որ ի վերայ վակասին ըստ [10] ԵՔԸ. գործեցին զականան՝ եղնգնաքարինս

[11] ԵՔԸ. ճարտարի [12] ԵՔԸ. զի էջ ի վերայ ժապաւինի

22 Եւ [1]արարին զվտաւական ի վերայ վա-
կասին", զոր անկուածոյ համակ կապուս-
23 տակ ։ Եւ [2]օձիք վտաւականացն անդէն ի
նորին ի միջի անկուածոյ հիւսէին՝ զրա-
24 պանս օձիքն չուրջանակի անքակ"։ Եւ
արարին առ առաքասով [3]վտաւականացն իբ-
րեւ ծազկեալս նմանաձեւս ի կապուտակէ
եւ ծիրանեայ եւ ի կարմրոյ մանելոյ եւ ի
25 բհնեզոյ նիւթելոյ ։ Եւ արարին զանգակս
յոսկւոյ սրոյ, եւ եդին զզանգակսն ի մէջ
նմանաձեւացն առ առաքասով [3]վտաւականացն
26 չուրջանակի ։ Ի մէջ նմանաձեւացն զանգ-
ակս ոսկիս եւ նմանաձեւ , զանգակ եւ
նմանաձեւ՝ առ առաքասով [3]վտաւականացն
չուրջանակի ի սպաս պաշտամանն , որ-
պէս հրամայեաց Տէր Մովսէսի ։
27 Եւ արարին [4]պատմուճանս բհնեզեւ-
զէնս գործ անկուածոյ՝ Ահարոնի եւ
28 որդւոց նորա ։ Եւ զապարօչսն ի բհնե-
զոյ , եւ պիսոյն ի բհնեզոյ , եւ զանգ-
րավարսիսն [5]առաքասն ի նիւթոյ բհնեզոյ".
29 Եւ [6]զկամարս նոցա" ի բհնեզոյ նիւթե-
լոյ եւ ի կապուտակէ եւ ի ծիրանեայ եւ
ի կարմրոյ մանելոյ , գործ նկարու , զոր
օրինակ հրամայեաց Տէր Մովսէսի ։
30 Եւ արարին զթիթեղն [7]ոսկի նուէր"
սրբութեանն յոսկւոյ սրոյ . եւ գրե-
ցին ի նմա գիր գրչութեամբ քանդակի ,
31 ՍՐԲՈՒԹԻՒՆ ՏԵԱՒՆ . Եւ եդին [8]առ
կապուտակեայ ժապաւինեացն", զի կայ-
ցէ ի խուրձն ի վերոյ կողմանէ , զոր
օրինակ հրամայեաց Տէր Մովսէսի ։
32 Եւ կատարեցաւ ամենայն գործ խո-
րանին յարկի [9]վկայութեան . եւ արարին
որպէսզի Իսրայէլ ըստ ամենայնի որպէս
եւ հրամայեաց Տէր Մովսէսի . նոյնպէս
եւ արարին ։ [10]Եւ զանելոյզ զոսկի նուէ-
բացն՝ արարին կահ պաշտելոյ նաքօք
33 առաջի Տեառն ։" Եւ բերին [11]զպատմու-
ճանն ի խորանն" առ Մովսէս , զյարկին
եւ զամենայն կահ նորա , եւ [12]զա-
ռանցին եւ զտախտակս նորա , եւ զպար-
զունակս նորա , եւ զսիւնակս նորա , եւ
34 զիարիխոս նորուն , Եւ [13]զմաչկին , եւ

[1] ԵԲԲ. արար զպարեգօտ վտկասին [2] ԵԲԲ. օձիք պարեգօտին ի միջոցի նորա իբրեւ զօձիս զրահի, զի մի՛ չուրջն բերանոյ նորա պատառեսցի [3] ԵԲԲ պարեգօտին [4] ԵԲԲ. շապիկս [5] ԵԲԲ. կուսեացս ի բհնեզոյ մանելոյ [6] ԵԲԲ. զկամարն [7] ԵԲԲ. պսակիս [8] ԵԲԲ. ի վերոյ նորա ժապաւէն կապուտակեայ [9] ԵԲԲ. ժողովոյ [10] ՅԵԲԲ. պ-ՀՀ-ռ [11] ԵԲԲ. զխորանն [12] ԵԲԲ. զՏարմանդսն [13] ԵԲԲ. զծածկոյթն ի մորթոյ խոյոց ներկեալոց կարմրով, եւ զծածկոյթս ի մորթոյ թահաշի

զմորթս խոյոցն ներկեալս կարմրով , եւ
զվիժական կապուտակեայս", եւ զսրա-
35 հարն որ ծածկէր , Զտապանակ կտա-
րանացն , եւ զվձական , եւ զքաւու-
36 թիւնն , Զսեղանն [10]զառաջաւոր եւ զա-
մենայն զկահ նորա , եւ զնաղն երեսաց,
37 Եւ զաչտանակն սուրբ եւ զճրագարանս
նորա եւ զճրագունսն այրելոյ , եւ զա-
մենայն զկահ նորա , եւ զեւզն լուսոյ ,
38 Եւ զսեղանն ոսկի , եւ զեւզն օծութեան,
եւ զխունկն հանդերձանաց , եւ զդրա-
39 տնա [14]զրանն, եւ զխորանն", Եւ զսեղանն
պղնձի եւ [15]զվձակս նորա , եւ զամենայն
զկահ նորա , եւ զաւազանն եւ զխարիսխ
40 նորա, Եւ [16]զառագաստս սրահին" եւ զսիւնս
նորա եւ զխարիսխս նորա, եւ զվարագոյր
դրան [17]խորանին եւ զպրան սրահին", եւ
զպատանդակս նորա եւ զպիրս նորա ,
41 եւ զամենայն զկահ խորանին յարկի
[9]վկայութեանն , Եւ զպատմուճանն
պաշտամանն պաշտել ի սրբութեանն, եւ
զպատմուճանսն սրբութեանն որ իցեն
Ահարոնի քահանայի, եւ զպատմուճանս
42 որդւոց նորա ի քահանայութիւն։ Ըստ
ամենայնի զոր պատուիրեաց
Տէր Մովսէսի՝ նոյնպէս եւ արարին որ-
պէսզի Իսրայէլ զամենայն կազմածն ։
43 Եւ եւս Մովսէս զամենայն զործն,
եւ էր գործեալ բուռ օրինակին որպէս
հրամայեաց Տէր Մովսէսի . նոյնպէս եւ
արարին . եւ օրհնեաց զնոսա Մովսէս ։

Գլ. Խ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
2 Յամսեանն առաջնում յամսեամի ամսոյն
կանգնեսցես զխորանն , զյարկ [9]վկայու-
3 թեանն ։ Եւ դիցես անդ զտապանակն
վկայութեան , եւ ծածկեսցես զտապա-
4 նակն վարագուրաւն եւ առցուս ի ներքս
զսեղանն , եւ յօրինեսցես զհացն ի վերայ
նորա . եւ առցուս ի ներքս զաչտանակն,
եւ դիցես ի վերայ նորա զճրագարանս
5 նորա ։ Եւ դիցես զսեղանն ոսկի՝ արկա-
նել խունկս առաջի տապանակի վկայու-
թեանն, եւ ձգեսցես զպատարագ [10]վա-
րագուրին ի՝ դրան խորանին [10]վկայու-
6 թեան ։ Եւ դիցես զսեղան ողջակիզացն
առ դրան խորանին, յարկի [9]վկայութեանն.
[10]եւ օծցես չուրջ զխորանն, եւ զամենայն

[14] ԵԲԲ. զդրան խորանին [15] ԵԲԲ. զպահաւորակ նորա սրընձի, զվձակս [16] ԵԲԲ. զառագաստս գաւթին [17] ԵԲԲ. գաւթին

ինչ որ ինձ իցէ՝ սրբեսցես չուրջանակի"
7 Եւ դիցես զաւազանն ընդ խորանն վկայութեան եւ ընդ սեղանն, եւ արկցես անդ
8 ջուր։ Եւ [1]օծցես [2]զսրահն չուրջանակի, եւ
9 ձգեսցես զսրահակ դրան [3]սրահին։ Եւ առցես զնէսն օծութեան եւ օծցես զխորանն եւ զամենայն որ ինչ ինձ է, եւ սրբեսցես զնա եւ զամենայն զկահ նո-
10 րա, եւ եղիցին սրբութիւնք։ Եւ օծցես զսեղանն ողջակիզաց եւ զամենայն զկահ նորա, եւ սրբեսցես զսեղանն. եւ
11 եղիցի սեղանն՝ սուրբ սրբութիւնից։ Եւ օծցես զաւազանն եւ զխարխին նորա,
12 եւ սրբեսցես զնա։ Եւ մատուսցես զԱհարոն եւ զորդիս նորա ի դուռն խորանին վկայութեան, եւ լուասցես զնոսա ջրով։
13 Եւ զգեցուսցես Ահարոնի պատմուճանին սուրբ, եւ օծցես զնա եւ սրբեսցես զնա,
14 եւ քահանայասցի ինձ։ Եւ մատուսցես զորդիսն նորա, եւ զգեցուսցես նոցա [4]պատ-
15 մուճանս։ Եւ օծցես զնոսա, զոր օրինակ օծեր զհայրն նոցա, եւ քահանայասցին ինձ. եւ եղիցի նոցա օծումն քահանայութեան ի յաւիտեան եւ յազգս նոցա։
16 Եւ արար Մովսէս բոլա ամենայնի զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր. նոյն-
17 պէս եւ արար։ Եւ եղեւ յամսեանն առաջնում յամի երկրորդի [5]կանգնելոյ նոցա յերկրէն Եղիպտացւոց՝ յամսեամսին կանգ-
18 նեցաւ խորանն։ Եւ կանգնեաց Մովսէս զխորանն, եւ եդ զխարխս նորա, եւ կանգնեաց [6]զսիւնս նորա, [5]եւ եդ ի վերայ զհայկս նորա։" եւ պարզեաց զվար-
19 զունակս [7]նորա։ Եւ առեալ եդ զվիմա-ժակս խորանին ի վերայ նորա ի վերուստ, [5]եւ յօրինեաց զպատսխուրակս նորա,"
20 որպէս հրամայեաց Տէր Մովսէսի։ Եւ առ զվկայութիւնն եւ եդ ի տապանակի անդ. եւ [8]եդ զնիզսն ընդ տապանակաւն", եւ եդ զքաւութիւնն ի վերայ տապանակին ի
21 վերուստ։ Եւ տարաւ ի ներքս զտապանակն ի խորանն, եւ ձգեաց զպատարաւակ վարագուրին եւ ծածկեաց զտապանակ վկայութեանն, զոր օրինակ հրամայեաց
22 Տէր Մովսէսի։ Եւ եդ զսեղանն ի խորանին վկայութեան ի հիւսիսակողմանէ խորանին, արտաքոյ վարագուրի խորանին.
23 եւ յօրինեաց ի վերայ նորա զնացս հրեայ առաջի Տեառն, զոր օրինակ հրա-
24 մայեաց Տէր Մովսէսի։ Եւ եդ զչաւա-նակն ի խորանին վկայութեան յանդիման սեղանոյն, ի հարաւակողմանէ
25 խորանին։ Եւ եդ զճրագարանն ի վերայ նորա առաջի Տեառն, զոր օրինակ
26 հրամայեաց Տէր Մովսէսի։ Եւ եդ զսեղանն ոսկի ի խորանին վկայութեան՝ յան-
27 դիման վարագուրին. Եւ արկ խունկ ի վերայ նորա ի հնոցոյ հանդերձանացն, որպէս
28 հրամայեաց Տէր Մովսէսի։ Եւ ձգեաց զարահակ դրան խորանին։ Եւ զսեղանն ողջակիզաց եդ առ դրան խորանին, յարկի վկայութեանն. եւ եհան ի վերայ նորա ողջակէզս եւ զոհս, որպէս պատուիրեաց
30 Տէր Մովսէսի։ Եւ եդ զաւազանն ընդ խորանն վկայութեան եւ ընդ սեղանն, եւ
31 արկ ի նա [9]ջուր։ Զի լուասցին" ի նմանէ Մովսէս եւ Ահարոն եւ որդիք նորա զձեռս
32 եւ զոտս իւրեանց. Յորժամ [10]մտանիցին ի խորանն վկայութեան, կամ յորժամ [11]մերձենայցեն ի սեղանն [5]պաշտել. եւ" լուանային ի նմանէ, որպէս եւ հրա-
33 մայեաց Տէր Մովսէսի։ Եւ կանգնեաց [12]զսրահն չուրջ զխորանաւն եւ զսեղանովն, եւ ձգեաց զսրահակ դրան [13]սրահին։ Եւ կատարեաց Մովսէս զամենայն զգործն։
34 Եւ ծածկեաց ամպն զխորանն վկայութեան, եւ լի եղեւ փառօք Տեառն խո-
35 րանն։ Եւ ոչ կարէր Մովսէս մտանել ի խորանն վկայութեան, զի ծածկեաց զնա ամպն, եւ լի եղեւ փառօք Տեառն խո-
36 րանն։ Յորժամ վերանայր ամպն ի խորանէ անտի, չուէին որդիքն Իսրայելի
[14]Հանգերձ ամենայն աղխիւ" իւրեանց.
37 Եւ եթէ ոչ վերանայր ամպն, ոչ չուէին
38 մինչեւ ցօրն վերանալոյ։ Զի ամպն Տեառն էր ի վերայ խորանին ի տուէ, եւ հուր կայր ի վերայ նորա ի գիշերի, առաջի ամենայն տանն Իսրայելի, յամենայն ի չուս իւրեանց։

---

[1]ԵԲԸ· դիցես [2]ԵԲԸ· զգաւթին [3]ԵԲԸ· գաւթին
[4]ԵԲԸ· չապիկս [5]ՅՈՒՆ· գ-ի-ե [6]ԵԲԸ· զսախտաակս [7]ԵԲԸ· նորա, և կանգնեաց զսիւնսնորա
[8]ԵԲԸ· ագոյց զՁեսկան ընդ տապանակն

[9]ԵԲԸ· Ջուր առ ի լուանալ։ (31) Եւ լուանային
[10]ԵԲԸ· մտանէին [11]ԵԲԸ· մերձենային [12]ԵԲԸ· զգաւթին [13]ԵԲԸ· գաւթին [14]ԵԲԸ· յամենայն տանն Իսրայելի, յաւուրս ի չուս

ԳԼՈՒԽՔ ՂԵՒՏԱԿԱՆԻՆ

	Գլ.	Համ.
Հրամայէ Աստուած Մովսիսի զօրինակ մատուցման ողջակիզացն, որ յորջառաց, որ յոչխարաց, ի թռչնոց, ի նաշխոյ, ի թմրի եփելոյ, ի տապակէ, ի կասկարայից :	Ա.	1
Զայս ամենայն առիւ յաղել եւ անխմոր. իսկ զմեղրեալ եւ զխմորեալ՝ պրտուղ տայցեն քահանայիցն . այլ ի սեղանն մի՛ ելցէ, բայց մուրկն փխրեալ, որ է եղի խանձեալ :	Բ.	11
Ի զոհէ փրկութեանն պատուղ Տեառն, թէ յարջառոց իցէ, թէ յօդեաց, թէ յայծեաց :	Գ.	1
Վասն չուտելոյ ցաւրիւն եւ զճարպ :	Դ.	17
Թէ վասն սկամոյ մեղաց քահանայապետին զուարակ մատուսցի, յորոյ արենէն տարցի ի ներքս ի սրբութիւնն, և զճարպն և զմատունն ի սեղանն ողջակիզաց . և զերիան և զմորթին և զապաւանն պրեսցեն ի տեղի մխրակուտին :	Դ.	1
Թէ ամենայն ժողովուրդն մեղիցէ յանգէտս , նմանապէս մատուսցի զուարակ , և պրեսցի արտաքոյ : Իշխանն մեղուցեալ սկամոյ , մատուսցէ նոխազ : Ժողովրդականն մեղուցեալ սկամոյ , մատուսցէ ալրջ կամ ոչխար :	Դ.	13
Հրամայէ չհրաժարել ուժէք զճշմարիտն վկայել յիրս զոր ետես :	Ե.	1
Մերձեցեալն ի մեռելոտի , և որ երդմամբ ինչ ուխտեաց չար առնել և կամբարի և ոչ կատարեաց, որոյ՛ եաւ կամ տատարակօք կամ նաշխով քաւեսցին :	Ե.	2
Որ սկամոյ խափանէ զտէրունիս՝ հատուսցէ լիով զգլուխն, և ի հինգ մասն զնի եւս ի վերայ, և խոյիւ քաւեսցի : Նոյնպէս և որ այլ ինչ սկամոյ՝ խոյիւ քաւեսցի :	Ե.	14
Թէ ընդ զրկանաց զոր՝ զգլուխն և զհինգերորդն եւս հատուսցէ , և խոյիւ քաւի :	Զ.	1
Զի մի՛ շիջցի հուր սեղանոյն. բատ որում Չէոզին մի՛ շիջուցանէք : Եւ զի քահանայն պատմճառաւն հանցէ զրնծայսն ի սեղանն :	Զ.	8
Ի զոհէ նաշխոյ մատն քահանային . զոր բաղարջ կերիցեն արուք քահանային :	Զ.	14
Ի տանէն Ահարոնի հանապազորդ պատարագ իւղով զանգեալ նաշխոյ, այգուն և երեկոյն . և զոհ քահանային մի՛ կերիցի, զի ողջակէ է:	Զ.	19
Թէ վասն մեղացն զոր վերոյ ասաց՝ ի սրահին կերիցեն արուք քահանային սուրբք. և զի յոր ինչ մերձեսցի ի նմանէ սրբի . զոր լուանայ և քերել ասէ զդուշութեամբ : Զոր վասն այսր իսկ և Անգեոս մարգարէ կշտամբէ զքահանայն զկնի գարձին՝ Սպոյ օրինակ կերիցեն և զխոյն որ վասն յանցանաց :	Զ.	24
Զի մորթ ողջակիզի փրկութեանն զոր վերոյ ասաց, զորոյ չէր օրէն այրել զմորթն, քահանային լիցի : Եւ զոհ եփեալ ի թմրումն և ի կասկարայս՝ քահանային . և միս զոհի գոհութեանն՝ քահանային լիցի , և յայգ մի՛ թողցի :	Է.	8
Զի կամաւոր զոհն կերիցի և ի վաղիւն , այլ ոչ և յերրորդն աւուր :	Է.	16
Անսուրբն որ կերիցէ ի զոհէ փրկութեանն՝ կորիցէ: Արպէս առ միւք , դաստատան անձին ուտէ և բմպէ:	Է.	20
Ճարպ մեռելոտոյ՝ ի փոկ և ի կաշի առցի ի գործ , այլ ոչ յուտել. որպէս մեռեալն ոգւով ի պէտս աշխարհի՝ այլ ոչ յԱստուծոյ :	Է.	22
Որ ուտէ զարիւն կորիցէ :	Է.	26
Ի զոհէ փրկութեանն մատն Ահարոնի և որդւոց նորա :	Է.	28
Զի հանդերձեալ է ասել վասն պաղոցն Տեառն, զոր մատուսցէ Ահարոն և որդիք նորա յաւուր օծմանն իւրեանց :	Է.	35
Հրամանն առնու Մովսէս օծանել զԱհարոն և զորդիս նորա, եկեղեցացուցեալ զժողովուրդն :	Ը.	1
Զի օծ նախ զեղանն և զխորանն և զԱհարոն որդովքն , իւղով և ապա արեամբ , և մատոյց զպատարագն վասն նոցա, և առ զերբուծն ի խոյէն կատարման . և պատուէր ետ նոցա չմիկնել ի դրանէ խորանին զեւթն օր :	Ը.	5
Միանգամ Մովսէս մատոյց պատարագ, որպէս և Վրիատոս , որ և աւանդեաց Թէ Զայս արարէք. և Մովսէս յԱհարոն և յորդիսն աւանդեաց . Մատո , ասէ, պատարագ ընդ անձին և ընդ ժողովրդեանն , եւ ընդ օրհնելն զժողովուրդն՝ էջ հուր ի Տեառնէ և եկէզ զպատարագն, զոր չէր օրէն շիջուցանել :	Թ.	1
Թէ Նադաբ և Աբիուդ օտար հուր մատուցեալ՝ մեռան . զոր ժողովրդեան լալ Մովսէս հրամայեաց , բայց Ահարոնի և որդւոցն ոչ , ի պատիւ օծմանն :	Ժ.	1
Պատուէր տայ քահանայիցն՝ ոչ ըմպել գինի ի մտանել ի խորանն, թերեւս՝ յայս պատճառս մեռան Նաբատ և Աբիուդ :	Ժ.	8
Մեծ արեաց Մովսէս զԱհարոն և զորդիսն՝ ուտել զբաժինն իւրեանց , և զնուէրքն զոր վասն մեղաց . և զի այրեցեալ էր զայն, բարկացաւ Մովսէս թէ ուտել պարտ էր և քաւել զմեղս ժողովրդեան : Եւ ցա-		

	Գլ.	Համ.
ծոյլ գնա Ահարոն, թէ առ երկիւղի ոչ կերան ։ Բայց տես զի առասջին պատարագն որ վասն մեղաց ժողովրդեանն էր՝ ոչ կերաւ. և ոչ քաւեցան ապա մեղք որթուն ։	Ա.	12
Թէ զո՛րս արքէ ուտել յանասնոց ի նշանակ բանաւորաց. զի կճղակն՝ անասայթաք վարուց, և որոճն բանի՝ սուրբք են ։	ԺԱ.	1
Թէ զո՛րս ի ջրայնոց. զի թեւք՝ առաքինութեան, և թեփք՝ ծածկոյթ պատկառանաց՝ սուրբք են ։	ԺԱ.	9
Ի թռչնոց զորս պիղծս ասէ՝ նշանակք են ամբարտաւանից և յափշտակողաց և խաւարասէր մարդկան ։	ԺԱ.	13
Ի սղեռուն թռչնոց չորս ազգս մարտախոյ, զորս արքէ ուտել, անչայտ առաքինութեանց նմանն ։	ԺԱ.	20
Վասն փայտեղէն կամ թեցեղէն պղծեալ անօթոյ ։	ԺԱ.	32
Վասն պղծեալ կերակրոց ։	ԺԱ.	34
Վասն ջրհորոց և վասն սերմանց ։	ԺԱ.	36
Զմերձենալ ի մեռելոտի, և զգուշանալ ի զենոց պղծոց ։	ԺԱ.	39
Սուրբք լերուք՝ զի ես սուրբ եմ։	ԺԱ.	44
Իրաւունք սրբութեան կնոջ որ արու կամ էգ ծնցի ։	ԺԲ.	1
Վասն այլ և այլ նշանաց բորոտութեան արքելոյ կամ պղծելոյ ։	ԺԳ.	1
Վասն բորոտութեան գլխոյ կամ մորուաց և վասն կնտութեան և ճեղուքեան ։	ԺԳ.	29
Վասն ածեւութեան բորոտի, և պըղծութեան ։	ԺԳ.	45
Վասն ասուեայ և կտաւեայ հանդերձից բորոտութեան ։	ԺԳ.	47
Իրաւունք սրբութեան բորոտի յառաջնում և յիւթներորդում աւուրն, խորհրդական նուիրօք ի տիպ Քրիստոսի ։	ԺԴ.	1
Վասն բորոտելոյ տան և պղծելոյ, և օրբութեան նորին ։	ԺԴ.	33
Վասն պղծութեան սերմնակալի, և յոր ինչ մերձեսցի ։ և վասն սրբելոյ նորին։	ԺԵ.	1
Վասն որ յերազս հոսի, կամ ընդ կնոջ լինի ։	ԺԵ.	16
Վասն կնոջ եւթնորեայ բղխման դաշտանի։ և վասն տեառատեսի պղծութեան կամ սրբութեան ։	ԺԵ.	19
Զի ի տանի քաւութեանն միայն մտցէ քահանայապետն ի ներքնագոյն սրբութիւնն ։	ԺԶ.	1
Զի ի տանի քաւութեանն արկցեն վիճակս երկուց նոխազաց զենոյլ և արձակելոյ, և խորհուրդ միութեան Տեառն Քրիստոսի ։	ԺԶ.	5
Օրինակ քաւելոյ զսրբութիւնն և զժողովուրդն, և արձակելոյ զնոխազն	ԺԶ.	11
Թէ զզեւարարն և զնոխազն որոց արեամբն սրբեցաւ խորանն, այրեսցեն արտաքոյ բանակին, ի խորհուրդ Յիսուսի արտաքոյ դրանն չարչարելոյ ։	ԺԶ.	27
Վասն պատուոյ աւուրն քաւութեան՝ ի տասներորդում աւուր եւթներորդի ամսոյն ։	ԺԶ.	29
Թէ յարիւնահեղս համարեալ է՝ որ առնէ զոհ կամ ողջակէզ արտաքոյ դրան խորանին ։	ԺԷ.	1
Վասն չուտելոյ զարիւն, և վասն զարիւն որոց ընդ հողով ծածկելոյ ։	ԺԷ.	10
Վասն որ զմեռելոտի կամ զգազանաբեկ կերիցէ ։	ԺԷ.	15
Զորիցս կրկնելով զնս եմՏէր Աստուածն՝ ի բաց տանի զնոսա յԵգիպտական ազգաչաղաճ պղծութենէ, յերից կողմանց ազգականութեան ի վեր և ի խնարհ և յառ ի կողմ։	ԺՀ.	1
Յառաջին աստիճանին ըստ առ ի վեր կուսէ՝ սաստէ չխայտառակել պըղծութեամբ առ իրեսս առաջին ազգին, այսինքն՝ դուստր առ հայր, կամ որդի առ մայր, կամ խորթ առ մօրու ։ Դարձեալ ինոյն ազգ և յաստիճան ըստ ի խնարհ կուսէ՝ չխայտառակել հօր զորդւոյ կին, այսինքն՝ զիւր հարսն, կամ զկնոջ իւրոյ դուստր, որ է զիւր խորթ ։	ԺՀ.	6
Իսկ յերկրորդ ազգին և աստիճանին՝ ըստ առ ի կողմն կուսէ, չպատկանել զիւր քոյր, թէ և յայլ մօրէ իցէ, ի տան ծնեալ կամ արտաքոյ ի հարճէ հօր կամ զխորթի հօրն իւրոյ, որ է հօրն կնոջ դուստր, կամ զեղբօր կին, կամ զիւր կնոջ քոյր ։ Եւս ի նոյն աստիճանի ըստ ի խնարհ կուսէ մի՛ խայտառակել զիւրն թոռնիսյ, որ է իւր որդւոյ կամ դստեր դուստր, կամ զհարսին դուստր զորդւոյ կնոջ, որ է որդւոյն խորթ, կամ զխորթուն դուստր ։	ԺՀ.	9
Իսկ յերրորդ ազգի և յաստիճանի ըստ առ ի կողմն կոյս՝ չմտանել առ իւր հօրաքոյր կամ մօրաքոյր կամ առ հօրեղբօր կին ։ Իսկ ի խնարհ կողմն՝ չմտանել առ իւր խորթուն թոռնիսյն կամ առ հարսին թոռնիսյն ։	ԺՀ.	12
Զմտանել առ ապարահ, և ոչ առ կին ընկերի ։	ԺՀ.	19
Ուժգին սաստիւ՝ չտալ զգաստերս ի պոռնկութիւն և զվարձն նուիրել կուռց, և ոչ ի կնութիւն հեթանոս իշխանի ։	ԺՀ.	21
Զգուշանալ ի մահուսփ մեղաց, յարուամտութենէ և յանասնագիտութենէ ։	ԺՀ.	22
Սուրբք եղերուք՝ զի ես սուրբ եմ։	ԺԹ.	1
Երկիւղ ի ծնողաց ։	ԺԹ.	3
Պահել զշաբաթ ։	ԺԹ.	3
Չյարել ի կուռս ։	ԺԹ.	4
Ի զոհէ փրկութեանն՝ յօրն և յերկրորդն ուտել և յերրորդն ոչ ։	ԺԹ.	5

	Գլ.	Հմր.
Ի հունձս իւր և ի կուլթս մի՛ առնել հասկաքաղ և ոչ ճաքաղ, այլ անանկին թողուլ	ԺԹ.	9
Զդողանալ	ԺԹ.	11
Զերդնուլ սուտ	ԺԹ.	12
Զզրկել զոք	ԺԹ.	13
Առ օրին տալ գվարձս վարձկանին	ԺԹ.	13
Չհամր և զկոյր չզծուել	ԺԹ.	14
Զառնուլ ակն ի դատաստանի	ԺԹ.	15
Մի՛ նեղգել զոք, և մի՛ յօժարել ի մահ ուրուք	ԺԹ.	16
Մի՛ առել զոք այլ յանդիմանել	ԺԹ.	17
Զառնուլ վրէժ, և չպահել ոխ	ԺԹ.	18
Սիրել զընկերն իբրեւ զանձն	ԺԹ.	18
Զտալ զանասունս յօտարախառնս	ԺԹ.	19
Զայգի՝ այլ եւ այլ չվարել, որ է առ կին մի՛ անբնական մտանել	ԺԹ.	19
Զորձս երկդիմիս մի՛, որ է նշանակ հերձուածոյ	ԺԹ.	19
Վասն քաւութեան որ պզծէ զաշխին ուրուք	ԺԹ.	20
Չերեամ մի՛ ուտել ինորահաս անկոց, այլ ի չորրորդն ամի	ԺԹ.	23
Զզոհել ի լերինս	ԺԹ.	26
Մի՛ հմայել զոր և գլուսին, կամ գիրըռնչս և գկռիչս հաւուց	ԺԹ.	26
Ցցունս վարսից, ծամս կամ խոպոպիս մօրուաց չառնել	ԺԹ.	27
Վէտս ասղնածեծս մի՛ առնել	ԺԹ.	28
Զկապել գերս ինչ զբազկաց	ԺԹ.	28
Զտալ զդուստր ի պոռնկոց, կամ հարան կամ ծառայ հնթանոսի	ԺԹ.	29
Երկիւղիւ պահել զշաբաթս	ԺԹ.	30
Զյարել ի վհուկս	ԺԹ.	31
Պատռել գծերս	ԺԹ.	32
Երկնչել յԱստուծոյ	ԺԹ.	32
Զնեգրվել վեկն	ԺԹ.	33
Սիրել վեկն իբրեւ զանձն	ԺԹ.	34
Արդարս լինել ի դատս, ի չափս, ի կշիռս	ԺԹ.	35
Թարձեալ սատակ չտալ զսերմ, որ է զաւակ իւր՝ հելհանոսի	Ի.	1
Դարձեալ սատակ չյարել ի գէտս	Ի.	6
Անարդ օգնի հօր կամ մօր ինձի	Ի.	9
Շնահօդքն մահու սպանցին	Ի.	10
Խորթ առ մօրու մտեալ՝ մահու մեռցին	Ի.	11
Առ կին որդւոյ մտեալն մահու սպանցին	Ի.	12
Արուագէտքն մահու մեռցին	Ի.	13
Զդուստր և զմայր առօդքն այրեսցին հրով	Ի.	14
Անանահպեղն սպանցի	Ի.	15
Առ բոյր մտեալն սպանցին	Ի.	17
Առ ապարահ մտեալն սպանցին	Ի.	18
Առ հօրաքոյր մտեալն սպանցին	Ի.	19
Առ կին քեռւոյ մտեալն սպանցին	Ի.	20
Առ կին եղբօր մտեալն սպանցին	Ի.	21
Զյարել ի վհուկս	Ի.	22
Քահանային մի՛ վայրապար պզծել ի դի մեռելոյ, և մի՛ խլել զհերս	ԻԱ.	1
Վասն կնոջ ոմանոյ քահանայի, և վասն դստեր քահանայի պոռնկեցեալ	ԻԱ.	7
Քահանայապետն բնաւին ի դի մի՛ պզծիցի, և ոչ ի հօր, նէ կին կոյս առցէ	ԻԱ.	10
Որ արատ կայցէ ի մարմնին՝ մի՛ քահանայասցի, այլ ի հասկին կերիցէ	ԻԱ.	16
Քահանայ որ չիցէ սուրբ՝ ի սրբութեանցն մի՛ կերիցէ մինչեւ սրբեսցի	ԻԲ.	1
Որ չիցէ Ղեւտացի մի՛ կերիցէ, եւ ոչ վարձկան քահանային. բայց բնաւորինն և արձաթգնին կերիցեն	ԻԲ.	10
Դուստր քահանայի այլոյ տուեալն մի՛ կերիցէ, բայց այրին անդրէն դարձեալն ի տունն հօրն	ԻԲ.	12
Որ ի հասիցն կերիցէ յանգէտս՝ զգոյշ ման և ջնդգեակն հատուսցէ	ԻԲ.	14
Զարատաւորս յանասնոց ոչ նուիրել, և ոչ ի ձեռաց հելհանոսի	ԻԲ.	17
Յուիերորդ օրէն և յառաջ ապա նուիրեցելգծնուիդս արջառոց և ոչխարաց	ԻԲ.	26
Զմայր և զծնունդն իւր ի միում աւուր մի՛ զբնուէր ի նուէր	ԻԲ.	28
Զզոհ գոհութեանն ի նմին աւուր ուտել, և ոչ թողուլ յայգ	ԻԲ.	29
Տօնիցն առաջին շաբաթն յաճախ, երկրորդ՝ զատիկն, երրորդ՝ պենտեկոստն, չորրորդ՝ քաւութեանն, հինգ՝ տաղաւարտհարքն	ԻԳ.	1
Զոլոր գիշերն ճրագունքն ոչ չիջցին	ԻԳ.	1
Երկոտասան բաղարջ դնել ի սեղանն՝ ի շաբաթէ ցշաբաթ	ԻԳ.	5
Բարկածել տալ զոյն որ անէծ զԱնունն	ԻԳ.	10
Մարդասպանն սպանցի	ԻԳ.	17
Որ անասուն սպանցէ՝ անձն ընդ անձին հատուսցէ	ԻԴ.	18
Որ խեղիցէ զոք՝ խեղիգեն զինքն, ակն ընդ ական և ատամն ընդ ատամանի	ԻԴ.	19
Աճն եւ ժնեերորդ՝ հանգիստ, և մի՛ գործեսցի անդ կամ այգի	ԻԵ.	1
Աճն չիանեերորդ՝ հանգստեան և թողուլթեան. յորում ի ծնի քաւուլթեանն փոզչին տգեղութեան և զի վաճառեալքն առ տէրան դարձցին	ԻԵ.	8
Հանգ ամանք տանց վաճառելոց ի քաղաքս պարսպաւորս կամ յագարակս կամ ի քաղաքս Ղեւտացւոց	ԻԵ.	29
Զտալ փոխ տոկոսեօք	ԻԵ.	35
Արձակել զծառայ Եբրայեցի յեւթն ամին	ԻԵ.	39
Զառնել տատուտծս ձեռագործս	ԻԶ.	1
Խոստանալ բարիս թէ կայցեն յօրէնսդ, ապա թէ ոչ ստատկապէս սպառնալ զգերելն ի Բաբելն, և խոստանալ զդարձն	ԻԶ.	2
Գինեք անձանց որոց նուիրեն զինեքանս Տեառն, կամ զանասուն կամ զգեաւին	ԻԷ.	1
Թէ որ զոր նուիրեաց Տեառն՝ գնել իւր կամեսցի, յաւելցէ ի գինն և գինն զերորդ եւս մասին, իսկ թէ վաճառեսցէ զանդն զոր փրկեաց՝ չէ վաճառն հաստատուն, ի թողուլթեանն ամի՝ Տեառն լիցի	ԻԷ.	19
Ամենայն ընչից տատանորդ Տեառն լիցի. յորոց թէ զպատրս ինչ դնել կամիցի նուիրողն, և գինդ երորդ եւս մասին յաւելցէ ի գինն. Իսկ զսուրբ անասնոց տատնակս, ոչ փրկել գնովք, և ոչ փոխանակել այլով	ԻԷ.	30

ՂԵՒՏԱԿԱՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ կոչեաց Տէր զՄովսէս, եւ խօսեցաւ ընդ նմա ի խորանէ անտի
2 [1]վկայութեան՝ եւ ասէ, Խօսեաց դու ընդ որդիսդ Իսրայելի, եւ ասասցես ցդոսա, Այր որ ի ձէնջ եթէ մատուցանիցէ պատարագ Տեառն՝ ի խաշանց, յարջառոց կամ յոչխարէ մատուցանիցէք զպատարագս ձեր։
3 Եթէ ողջակէզ իցէ պատարագն նորա յարջառոց, արու անարատ մատուսցէ, առ դուռն խորանին [1]վկայութեան ածցէ զնա ընդունելութիւն [2]ի նմանէ՝ առ ի
4 քաւելոյ առաջի Տեառն։ Եւ դիցէ զձեռն իւր ի վերայ գլխոյ [3]ընծային՝ յընդունելութիւն նմա առ ի քաւելոյ վասն անձին
5 իւրոյ։ Եւ [4]սպանցեն զողոտարակն առաջի Տեառն. եւ մատուսցեն քահանայքն որդիքն Ահարոնի զարիւնն, եւ [5]հեղցեն
6 չուրջ զսեղանովն որ կայցէ առ դրան խորանին [1]վկայութեան։ Եւ [6]մորթեսցեն զողջակէզն, եւ անդամ անդամ [7]յօշեսցեն զնա։
7 Եւ դիցեն որդիքն Ահարոնի քահանայքն հուր ի վերայ սեղանոյն, եւ
8 կուտեսցեն փայտ ի վերայ հրոյն. Եւ դիցեն որդիքն Ահարոնի քահանայքն զանդամսն եւ զգլուխն եւ զճարպն ի վերայ փայտին որ կայցէ ի վերայ հրոյ
9 սեղանոյն. Եւ զփորոտին եւ զոտսն [8]լուասցեն ջրով. եւ դիցէ քահանայն" զամենայն ի վերայ սեղանոյն. որ ողջակէզ զոհի է ի հոտ անուշից Տեառն։
10 Սակս թէ [9]յոչխարաց իցէ պատարագն Տեառն, ի գառանց եւ յուլոց" յողջակէզ, արու անարատ մատուսցէ
11 զնա։ Եւ [10]դիցէ զձեռն իւր ի վերայ գլխոյ նորա. եւ սպանցեն" զնա ի կողմանց սեղանոյն ընդ հիւսիսոյ" առաջի Տեառն. եւ [5]հեղցեն զարիւնն" որդիքն Ահարոնի քահանայք չուրջ զսեղանովքն։
12 Եւ [7]յօշեսցեն զնա անդամ անդամ, եւ զգլուխ նորա եւ զճարպ. եւ դիցեն զայն քահանայքն ի վերայ փայտին եւ
13 հրոյ որ ի վերայ սեղանոյն իցէ։ Եւ զփորոտին եւ զոտսն [11]լուասցեն ջրով. եւ մատուսցէ քահանայն զամենայն, եւ [12]դիցէ ի վերայ սեղանոյն. որ ողջակէզ զոհի է ի հոտ անուշից Տեառն։
14 Իսկ եթէ ի թռչնոց մատուցանիցէ յողջակէզ պատարագ Տեառն, ի տատրակաց կամ [13]յառաւնեաց տարցէ զպատարագն
15 իւր։ Եւ մատուսցէ զնա քահանայն առ սեղանն. եւ խառնեսցէ զգլուխ նորա, եւ [12]դիցէ քահանայն" ի վերայ սեղանոյն, եւ քամեսցէ զարիւնն առ յատակաւ սե-
16 ղանոյն։ Եւ կորկեսցէ [14]զարմկունսն[15] եւ զօքն հանդերձ". եւ հանդէր զայն առ [15]սե-
17 ղանովն ի տեղի մոխրակուտին։ Եւ ջախջախեսցէ զայն ի թեւսըն, եւ ի բաց մի զատուսցէ. եւ [12]դիցէ զայն քահանայն ի սեղանն ի վերայ փայտին եւ հրոյ. որ ողջակէզ զոհի է ի հոտ անուշից Տեառն։

ԳԼ. Բ

1 Եւ անձն որ եթէ մատուցանիցէ պատարագ Տեառն, նուիրեալ լինիցի պատարագն նորա. եւ արկցէ վնուաւ եւզ,
2 եւ դիցէ ի վերայ նորա կնդրուկ. [2]զի զոհ է" Եւ տարցի զայն առ քահանայսն որդիս Ահարոնի. եւ լցցէ զձեռն իւր ի նաչհոյ անաւ լեզուէն հանդերձ, եւ զամենայն զկնդրուկն նորա, [12]դիցէ քահանայն զյիշատակ նորա ի վերայ սեղա-
3 նոյն զոհ է ի հոտ անուշից Տեառն։ Եւ նչխարն ի զոհէ անաւ՝ Ահարոնի եւ որդւոց իւրոց լիցի, սրբութիւն սրբութեանց ի զոհից անաւ Տեառն։
4 Սակս թէ [16]մատուցանիցէ պատարագ

---

[1] ԵԲԲ. ժողովոյ [2] ԵԲԲ. դ-ւ-օ-ե [3] ԵԲԲ. ողջակիզին [4] ԵԲԲ. սպանցէ [5] ԵԲԲ. սրսկեսցեն զարիւնն [6] ԵԲԲ. մորթեսցէ [7] ԵԲԲ. յօշեսցէ [8] ԵԲԲ. լուասցէ ջրով և սրբեսցէ քահանայն [9] ԵԲԲ. ի հօտից իցէ պատարագն, յօզեաց և յայծեաց [10] ԵԲԲ. սպանցէ

[11] ԵԲԲ. լուասցէ [12] ԵԲԲ. սրբեսցէ [13] ԵԲԲ. ի ձագս աղաւնեաց [14] ԵԲԲ. զվաճին և զփեսաւրան, կամ, զաղբն [15] ԵԲԲ. սեղանովն ընդ արեւելս [16] ԵԲԲ. մատուցանիցես

[1]զոհ եփեալ իմոնրի, պատարագ Տեառն
ինաչհոյ՝ պանս բազարջս ինաչհոյ զանգեալ իւղով, եւ քաքարս բազարջս օծեալ իւղով։
5 Իսկ եթէ զոհ ի տապակէ իցէ պատարագն քո, նաչիհ զանգեալ իւղով
6 բազարջ լինիցի։ Եւ բրկեսցես զայն պատառս պատառս, եւ արկցես ի վերայ նոցա եւզ. զի զոհ [2]Տեառն է։
7 Ապա թէ զոհ ի կաթսայից իցէ պատարագն քո, նաչիհ իւղով գործեսցի։
8 Եւ մատուսցես զկոն զոր առնիցես ի նոցանէ Տեառն. եւ տարցիս առ քահանայն. եւ մատուցեալ քահանային առ
9 սեղանն, Հանցէ ի զոհէն զառ ի յիշատակէ նորա, եւ [3]դիցէ քահանային ի վերայ սեղանոյն. ընծայ անուշութեան
10 Տեառն է։ Եւ որ մնայցէ ի զոհէ անտի, Ահարոնի եւ որդւոց նորա լինիցի, սրբութիւն սրբութեանց ի զոհից [4]քոց։
11 Զամենայն զոհ զոր մատուցանիցէք Տեառն, ոչ առնիցէք խմորուն. զամենայն խմորուն եւ զամենայն մեղրակ՝ մի [5]մատուցանիցէք ի նոցանէ [2]պատուղ ի զոհ
12 Տեառն։ Պատարագ պտղոց մատուցանիցէք զայն Տեառն, բայց ի սեղանն մի՛ ելանիցէ
13 ի հոտ անուշից [2]Տեառն։ Եւ ամենայն պատարագ զոհից ձերոց ազիւ [2]Տեառն յազեցո՛։ Մի՛ պակասեցուցանէք զաղ ուխտին Աստուծոյ ի զոհից ձերոց. ընդ ամենայն պատարագս ազ մատուցանիցէք։
14 Իսկ եթէ յառաջին արմտեաց մատուցանիցես պատարագ Տեառն, մոլոկ նոր փխրեալ եւ մանրեալ [2]Տեառն, մատուցես
15 ցես զոհ զառաջինոց արմտեաց քոց. եւ արկցես ընդվաւ եւզ, եւ դիցես ի վերայ
16 նորա կնդրուկ. զի զոհ է։ Եւ հանցէ քահանայն զառ յիշատակէ նորա ի մոլոկէ անտի հանդերձ իւղովն, եւ զամենայն կնդրուկ նորա, զի պատուղ Տեառն է.

Գլ. Գ

1 Ապա թէ զոհ [6]փրկութեան իցէ պատարագ նորա [2]Տեառն, եթէ յարջառոց մատուցանիցէ, եթէ արու իցէ, եւ եթէ էգ իցէ, զանարատն մատուսցէ առաջի
2 Տեառն։ Եւ դիցէ զձեռս իւր ի վերայ գլխոյ պատարագին. եւ սպանցէ զնա առ դրան խորանին վկայութեան. եւ [7]հեղցեն որդիքն Ահարոնի քահանայք զարիւնն ի վերայ սեզանոյ ոզկակիզոյն չուրջանակի։
3 Եւ մատուսցէ ի զոհէն [6]փրկութեան պատուղ Տեառն՝ զճարպ թաղանթ քաղրթին, եւ
4 զամենայն ճարպ փորոտւոյն, եւ զերկուս երիկամունսն եւ զճարպն որ ի նոսա՝ որ առ մանամարքն իցեն, եւ զկերդպարոյթն երի-
5 կամարքն հանդերձ [8]կորզեսցեն։ Եւ հանցեն՝ զայն որդիքն Ահարոնի [2]քահանայք ի սեզանն յոզկակէզ ի վերայ փայտին եւ հրոյն պատուղ անուշից Տեառն։
6 Ապա թէ յոչխաց իցէ պատարագ նորա զոհ [6]փրկութեան Տեառն, արու կամ
7 էգ, անարատ մատուսցէ զայն։ Իսկ եթէ գառն մատուցանիցէ զպատարագն իւր, մատուսցէ զնա առաջի Տեառն.
8 Եւ դիցէ զձեռն իւր ի վերայ գլխոյ պատարագին իւրոյ, եւ սպանցէ զնա առ դրան խորանին վկայութեան. եւ [7]հեղցեն որդիքն Ահարոնի [2]քահանայք զարիւնն չուրջ զսեզանովն։ Եւ
9 [9]մատուսցեն ի զոհէն [6]փրկութեան պատուղ Տեառն. զճարպն եւ զմսանին անսրատ՝ հանդերձ ղրսատաքն հանցէ ի նմանէ, եւ զճարպ թաղանթ քաղրթին, եւ զամենայն ճարպ
10 փորոտւոյն, եւ զերկուսին երիկամունսն եւ զճարպն որ ի նոսա որ առ մանամարքն, եւ զկերդպարոյթն հանդերձ երիկամամբքն
11 կորզեսցէ՝ Հանցէ քահանային ի սեզանն հոտ անուշից պատուղ Տեառն։
12 Իսկ եթէ յայծեաց իցէ պատարագն
13 իւր, մատուսցէ առաջի Տեառն. Եւ դիցէ զձեռն իւր ի վերայ գլխոյ նորա, եւ [10]սպանցեն զնա [2]առաջի Տեառն՝ առ դրան խորանին վկայութեան. եւ [7]հեղցեն որդիքն Ահարոնի [2]քահանայք զարիւնն չուրջ զսեզանովն։ Եւ
14 [9]հանցեն ի նմանէ պատուղ Տեառն զճարպն զքաղանթ քաղրթին, եւ զամենայն զճարպ
15 փորոտւոյն, Եւ զերկուս երիկամունսն, եւ զճարպն ի նոսա՝ որ առ մանամարքն, եւ զկերդպարոյթն երիկամամբքն հան-
16 դերձ կորզեսցէ. Եւ [11]հանցէ քահանայն ի սեզանն պատուղ ի հոտ անուշից Տեառն.
17 զամենայն ճարպ Տեառն՝ Օրէնս յաւի-

---

[1]ԵՔԲ. մինխայ, ու ՝ՀՂՈՒՔ ԲՈՂՈՐ ՈՐԲԻ ՆՈՒԷՐ ՀՐ ընծայ ու լԷՒՔ ՈՐՔՈՒ ՈՐԲՈՒ [2]ՅԼԲ. պոյոե
[3]ԵՔԲ. այրեսցէ [4]ԵՔԲ. Տեառն [5]ԵՔԲ. այրիցէք
[6]ԵՔԲ. խաղաղութեան

[7]ԵՔԲ. սրսկեսցեն [8]ԵՔԲ. կորզեսցէ։ (5) Եւ այրեսցեն [9]ԵՔԲ. մատուսցէ [10]ԵՔԲ. սպանցէ
[11]ԵՔԲ. այրեսցէ զնոսա քահանայն ի վերայ սեզանոյն կերակուր պատարագի ի հոտ անուշից. ամենայն ճարպ Տեառն է

տեղական յազգս ձեր, յամենայն լնա-
կութեան ձերում. զամենայն ճարպ եւ
զամենայն արիւն մի ուտիցէք։

ԳԼ. Դ

4 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
2 Խօսեաց զա՛ս ընդ որդիսդ Իսրայէլի եւ
ասասցես, Անձն եթէ մեղիցէ [1]առանց
Տեառն՝ ակամայ յամենայն հրամանաց
Տեառն յորոց չէ արժան առնել եւ առ-
3 նիցէ ինչ ի նոցանէ, եթէ [2]քահանայա-
պետն օծեալ մեղանչիցէ առ ի զժողո-
վուրդն յանցագանելոյ, մատուսցէ վասն
մեղացն իւրոց զոր մեղաւ՝ զուարակ
յանպատ անարատ Տեառն՝ վասն մեղաց.
4 Եւ ածցէ զզուարակն ի գուռն խորանին
վկայութեան առաջի Տեառն, եւ դիցէ
զձեռս իւր ի վերայ գլխոյ զուարակին
[3]առաջի Տեառն, եւ սպանցեն՝ զզուա-
5 րակն առաջի Տեառն։ Եւ առցէ քա-
հանայն օծեալ [1]կատարելոյ ի ձեռս իւր՝
յարիւնէ զուարակին, եւ տարցի զայն ի
6 խորանն վկայութեան։ Եւ թացցէ քա-
հանայն զմատն իւր յարիւնն, եւ յա-
նեսցէ յարիւնէ անտի եւթն անգամ մա-
տամբն իւրով առաջի Տեառն առ վա-
7 րագուրաւն արտութեան։ Եւ դիցէ քա-
հանայն յարիւնէ զուարակին ի վերայ եղ-
կերաց սեղանոյ խնկոյն հանդերձանաց առաջի Տեառն՝ որ իցէ ի խորանին վկա-
յութեան, եւ զամենայն արիւն զուա-
րակին հեղցէ առ յատակաւ սեղանոյն
ողջակիզաց, որ կայցէ առ դրան խորա-
8 նին վկայութեան։ Եւ զամենայն ճարպ
զուարակին մեղայ կորզեսցէ ի նմանէ,
զճարպ թաղանթ քաղքիլն եւ զամե-
9 նայն ճարպ փորոտայն, Եւ զերիկա-
մունսն երիսքն, եւ զճարպն որ ի նո-
սա որ առ մանամբքն, եւ զլերզարոյքն
10 երիկամամբքն հանգերձ կորզեսցէ, Զոր
օրինակ առնուցու ի զուարակէ զոհի
[4]փրկութեանն, եւ հանցէ՞ քահանայն
11 ի սեղանն ողջակիզաց։ Եւ զմորթ զուա-
րակին եւ զամենայն մարմին նորա հան-
դերձ գլխովն եւ ոտիւք եւ քաղքիաւն
12 եւ ապաստառաւն [5]Հանցեն ողջոյն զզուա-
րակն արտաքոյ բանակին ի տեղի մի
սուրբ, ուր զմոխիրն հեղուցանեն, եւ
այրեսցեն զնա ի վերայ փայտի հրով.
ի վերայ մոխրակուտին այրեսցի։
13 Ապա եթէ ամենայն ժողովուրդ որդւոցն
Իսրայէլի անգիտանայցէ ակամայ, եւ
[6]մոռանայցի բանն յաչաց ժողովրդեանն,
եւ առնիցեն ինչ ի յամենայն պատուի-
րանաց Տեառն որ ոչ առնիցի, եւ յան-
14 ցանիցեն, Եւ յայտնիցի նոցա մեղքն
որ մեղան նմա, մատուսցէ ժողո-
վուրդն զուարակ անարատ յանգւոյ վասն
մեղաց. եւ ածցէ զնա ի գուռն խո-
15 րանին վկայութեան։ Եւ դիցեն ծերք
ժողովրդեանն զձեռս իւրեանց ի վերայ
գլխոյ զուարակին առաջի Տեառն. եւ
սպանցեն զզուարակն առաջի Տեառն։
16 Եւ տարցի քահանայն օծեալ յարիւնէ
զուարակին ի խորանն վկայութեան։
17 Եւ թացցէ քահանայն զմատն իւր յա-
րիւնէ զուարակին, եւ յանեսցէ եւթն
անգամ առաջի Տեառն յանդիման վա-
18 րագուրին [1]արտութեան։ Եւ դիցէ յարիւ-
նէ անտի քահանայն ի վերայ եղկերաց
սեղանոյն [1]խնկոյն հանդերձանաց՞, որ
կայցէ առաջի Տեառն ի խորանին վկա-
յութեան, եւ զամենայն զարիւնն հեղ-
ցէ առ յատակաւ սեղանոյն ողջակիզաց
որ է առ դրան խորանին վկայութեան։
19 Եւ զամենայն ճարպն կորզեսցէ ի նմա-
20 նէ եւ [7]հանցէ ի սեղանն՞։ Եւ արասցէ
զուարակին զոր օրինակ արար զուա-
րակին մեղաց, նոյնպէս արասցէ եւ
նմա. եւ քաւեսցէ վասն նոցա քահա-
21 նայն, եւ թողցին նոցա մեղքն։ Եւ
[8]հանցեն զզուարակն ողջոյն արտաքոյ
բանակին, եւ [9]այրեսցեն զզուարակն,
զոր օրինակ [10]այրեցին զառաջինն զուա-
րակն. զի վասն մեղաց ժողովրդեանն է։
22 Եւ եթէ իշխանն մեղիցէ, եւ արասցէ
ի մի ինչ ի պատուիրանաց Տեառն Աստուծոյ
որ ոչ առնիցի, եւ յանցանիցէ ակամայ,
23 Եւ յայտնասցին նմա մեղքն զոր մեղաւ,
մատուսցէ զպատարագն իւր նոխազ յայծ-
24 եաց՝ արու անարատ. Եւ դիցէ զձեռս
իւր ի վերայ գլխոյ նոխազին, եւ [11]սպան-
ցեն զնա ի տեղւոջ ուր սպանանիցեն
ողջակէզսն առաջի Տեառն. քանզի մե-
25 ղաց է։ Եւ առցէ քահանայն յարիւնէ
անտի [12]մեղացն մատամբ իւրով եւ դիցէ
ի վերայ եղկերաց սեղանոյն ողջակիզաց,

[1] 3Եբբ. պ-ի-ս-ե [2]Եբբ. քահանայն [3]Եբբ. և սպանցէ
[4]Եբբ. խաղաղութեան, և այրեսցէ զնոսա [5]Եբբ. Հանցէ
[6]Եբբ. ծածկեացի [7]Եբբ. այրեսցէ ի վերայ սեղա-
նոյն [8]Եբբ. Հանցէ [9]Եբբ. այրեսցէ [10]Եբբ.
այրեաց [11]Եբբ. սպանցէ [12]Եբբ. մեղացայոյն

և զամենայն արիւն նորա հեղցէ առ
26 յատակաւ սեղանոյ ողջակիզացն։ Եւ զամենայն զ[1]ճարպ նորա [1]հանցէ ի սե-
զանն", իբրեւ զճարպ զոհի [2]փրկութեանն. և քաւեսցէ վասն նորա քահանայն ի
մեղաց անտի [3]իւրոց, և թողցի նմա։
27 Եւ եթէ մեղիցէ անձն ակամայ ի ժո-
ղովրդենէ երկրին՝ յառնել նմա մի ինչ
յամենայն պատուիրանացն Տեառն որ
28 ոչ առնիցի, և յանցանիցէ, Եւ յայտնեա-
ցին նմա մեղքն զոր մեղաւ, մատուսցէ
պատարագ իւր ոչխ անարատ վասն
29 մեղացն զոր մեղաւ։ Եւ դիցէ զձեռս
իւր ի վերայ գլխոյ նորա, և [4]սպանցեն
զայրն՝ զվասն մեղացն ի տեղւոջ ուր
30 սպանանիցեն զողջակէզսն։ Եւ առցէ
քահանայն յարենէ նորա մատաւմբ իւ-
րով, և դիցէ ի վերայ եղջերաց սեղա-
նոյն ողջակիզացն, և զամենայն արիւն
նորա հեղցէ առ յատակաւ սեղանոյ ող-
34 ջակիզացն։ Եւ զամենայն զճարպն կոր-
զեսցէ՝ զոր օրինակ կորզիցի ճարպ յող-
ջակիզէ [2]փրկութեանն. և [5]հանցէ զայն
քահանայն ի սեղանն ի հոտ անուշից
Տեառն. և քաւեսցէ վասն նորա քա-
32 հանայն, և թողցի նմա։ Եւ եթէ ոչ-
խար մատուցանիցէ զպատարագն իւր,
33 էգ անարատ մատուսցէ զնա. Եւ դիցէ
զձեռն իւր ի վերայ գլխոյ նորա որ վասն
մեղացն իւրոց. և [4]սպանցեն զնա ի
տեղւոջն ուր սպանանիցեն զողջակէզսն։
34 Եւ առեալ քահանայն յարենէ այնր որ
վասն մեղացն իւրոց մատուսցէ իւրով, և
դիցէ ի վերայ եղջերաց սեղանոյ ողջա-
կիզացն. և զամենայն արիւն նորա հեղ-
ցէ առ յատակաւ սեղանոյն ողջակիզացն։
35 Եւ զամենայն զճարպ նորա կորզեսցէ՝
զոր օրինակ կորզիցի ճարպ ոչխարին
[2]փրկութեանն. և դիցէ զայն քահանայն
ի վերայ սեղանոյն յողջակէզ Տեառն. և
քաւեսցէ վասն նորա քահանայն ի մե-
ղաց անտի զոր մեղաւ, և թողցի նմա։

Գլ. Ե

5 Եւ եթէ մեղիցէ անձն, եւ լսիցէ
զբարբառ երդման, և նա իւր վկայ, կամ
թէ եւս կամ թէ իրազէտ իւր, եթէ
2 ոչ հանցէ ի վեր, մեղս ընկալցի։ Եւ
[1]ԵՔԲ. այրեսցէ ի վերայ սեղանոյն [2]ԵՔԲ. խա-
զաղութեանն [3]ԵՔԲ. նորա [4]ԵՔԲ. սպանցէ
[5]ԵՔԲ. այրեացէ

.անձն որ մերձեսցի յիրս պղծութեան,
կամ ի մեռելոտի, կամ ի գազանաւրէկ,
կամ ի պիղծ ինչ, կամ ի մեռելոտիս
անասնոյ պղծոյ, կամ ի մեռելոտիս սող-
նոյ պղծոյ, եւ անցանիցէ զնովաւ, եւ
3 ինքն պղծիցի եւ յանցանիցէ. Կամ
մերձենայցէ ի պղծութիւնս մարդոյ կամ
յամենայն պղծութիւնս նորա, յոր թէ
մերձեցեալ պղծիցի, եւ մոռացօնք լինիք-
ցին նմա, եւ յետ այնորիկ ի վերայ հա-
4 ասնիցէ, եւ յանցանիցէ։ Եւ անձն որ
ուխտիցէ չար ինչ առնել կամ բարի,
ըստ ամենայնի որ ինչ ուխտիցէ մարդ
երդմամբ չափ, եւ [6]մոռանայցի այն յա-
չաց նորա, եւ ապա ի վերայ հասանիցէ,
եւ մեղանչիցէ միով իւրք ի նոցանէ.
5 Եւ [7]խոստովան լինիցի զմեղն՝ զոր մե-
6 ղաւ. [8]Մատուսցէ վասն յանցանացն զոր
յանցեաւ Տեառն, եւ" վասն մեղացն զոր
մեղաւ, էգ յօգեաց որոյ, կամ ոչխ մի
յայծեաց վասն մեղացն. Եւ քաւեսցէ
վասն նորա քահանայն ի մեղաց անտի,
[9]Եւ թողցին նմա մեղքն։"
7 Ապա թէ չիցէ ձեռնտու լինել բաւա-
կան ոչխարաւ, մատուսցէ վասն մե-
ղացն զոր մեղաւ երկուս տատրակս
կամ երկուս ձագս աղաւնեաց, մին վասն
8 մեղացն, եւ մին յողջակէզ։ Աձցէ առ
քահանայն, եւ տարցի ի ներքս քահա-
նայն նախ զվասն մեղացն, եւ խառնեսցէ
քահանայն զղլուխն յուլանէ անտի եւ
9 մի հատցէ. Եւ ցանեսցէ յարենէ անտի
այնր որ վասն մեղացն իւրոց՝ զօրմով սե-
զանոյն, եւ զնիացեալ արիւնն քամեա-
ցէ առ յատակաւ սեղանոյն. քանզի
10 վասն մեղաց է. Եւ զերկրորդն արասցէ
յողջակէզ ըստ կարգի եւ օրէնս իւրք. Եւ քա-
ւեսցէ վասն նորա քահանայն զնդ մե-
ղացն զոր մեղաւ, եւ թողցի նմա։
11 Եւ եթէ ոչ գտանիցին զնդ ձեռամբ
նորա զոյգք տատրակաց կամ երկու
ձագք աղաւնեաց, բերցէ զպատարագն
իւր վասն որոյ մեղաւն՝ զատասներդ զրուի
միոյ նաչխ վասն մեղացն. Եւ եւդ մի
արկցէ ի նա, եւ կնդրուկ մի դիցէ ի վերայ
12 նորա, զի վասն մեղաց է։ Եւ տարցի զայն
առ քահանայն. եւ առեալ քահանայն ի
նմանէ լի ափով զառ ի յիշատակէն նորա,

[6]ԵՔԲ. ծածկեսցի [7]ԵՔԲ. եղիցի թէ մեղեցեալ
իցէ միով իւրք ի նոցանէ, և խոստովան [8]ԵՔԲ.
Եւ մատուսցէ Տեառն զվասն յանցանացն [9]ՅԵՔԲ.
զոհեսցէ

[1]դիցէ ի վերայ սեղանոյ ողջակիզացն"
13 Տեառն. քանզի վասն մնացէ է ։ Եւ քա-
ւեսցէ վասն նորա քահանայն զմեղսն զոր
մնացէ՝ որով իւիր եւ իւրէ ի նոցանէ,
եւ մոգոյն նմա. եւ մնացեալն՝ քահա-
նային եղիցի իրրեւ զպտղ նուէից ։
14 Ասացաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
15 Անձն որ լմէ վրիպեսցի եւ մեղիցէ ա-
կամայ ի սրբութիանց տեառն՝ մա-
տուսցէ վասն յանցանացն իւրոց Տեառն
խոյ անարատ յօգեաց՝ [2]գնոյ արծաթոյ
ի չիսուն սկիզբ" ըստ սրբութեան սկզբն,
16 վասն որոյ յանցուցանէն իւրէ ։ Եւ զոր
մեղաւն ի սրբութիւնն, հատուսցէ, եւ
զհինգերորդ եւս մասին յաւելցէ ի նոյն,
եւ տացէ զքահանային. եւ քաւեսցէ ի
նմանէ քահանայն խոյիւն որ վասն յան-
ցանացն իւրէ, եւ մոգոյն նմա ։
17 Եւ անձն որ մեղիցէ, եւ արասցէ մի ինչ
յամենայն պատուիրանաց Տեառն զոր չիւրէ
պարտ առնել, եւ ոչ իմանացէ եւ յան-
18 ցանիցէ եւ ընդունիցի մեղս, Անդէն խոյ
անարատ ի խաչանց [3]գնոյ արծաթոյ" վասն
յանցութեանն՝ առ քահանային. եւ քաւեսցէ
վասն նորա քահանայն վասն անգիտու-
թեանն զոր անգիտացաւ եւ ինքն ոչ գի-
19 տէր, եւ մոգոյն նմա. [4]Քանզի յանցեաւ
յանցութիւն յանցանաց առաջի Տեառն ։

Գլ. Զ

1 Ասացաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
2 Անձն ոք եթէ մեղիցէ, եւ արհամար-
հեսցէ արհամարհիցէ զպատուիրանս
Տեառն, եւ ստեսցէ ընկերի իւրում, եւ
թէ յաւանդի, եթէ ի գողութիւնն եւ
եթէ ի յափշտակութիւնն, եւ եթէ վնաս
3 տեսցէ ինչ ընկերի իւրում, եւ եթէ եւ
գիւտ կորուստ ինչ եւ ժխտիցէ ի վերայ
նորա, եւ երդնուցու ստուտ վասն միոյ
իրիք, յամենայնէ զոր եւ առնիցէ մարդ
4 առ ի մեղանչելոյ նորա նոքօք, Եւ եւ-
զիցի յորժամ մեղանչիցէ եւ յանցանիցէ,
հատուսցէ գյափշտակութիւնն զոր յա-
փշտակեաց, կամ զվնասն զոր վնասեաց,
կամ զաւանդն որ աւանդեցաւ նմա,
5 կամ զկորուստն զոր եգիտ. Յամենայն
իրաց վասն որոյ երդուաւ ստուտ, տուջ
ժնացի զղուխն, եւ զհինգերորդ մասն
յաւելցէ ի նոյն. եւ ոյր իցէ՝ հատուսցէ

6 նմա յաւուր յորում յանդիմանեսցի ։ Եւ
ընդ յանցանաց իւրոց մատուսցէ Տեառն
խոյ անարատ ի հօտիւ՝ [3]գնոյ արծա-
7 թոյ" վասն որոյ յանցեաւն։ Եւ քաւեսց-
էէ վասն նորա քահանայն առաջի Տեառն,
եւ թողցի նմա վասն միոյ իրիք յամե-
նայնէ զոր արար եւ յանցեաւ նա ։
8 Ասացաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
9 Պատուէր տուր Ահարոնի եւ որդւոց
նորա եւ ասասցես, Այս օրէնն է ողջա-
կիզիցին. [5]վասն այրելոյ նորա ի վերայ"
սեղանոյն զամենայն գիշերն մինչեւ ցա-
ռաւօտս, եւ հուր սեղանոյն որ այրիցի ի
10 վերայ նորա՝ մի չիմկցի ։ Եւ զգեցցի քա-
հանայն պատմուճան կտաւի, եւ անդ-
րավարտիս կտաւիս զգեցցի ի վերայ
մարմնոյ իւրոյ, եւ հանցէ [6]զընծայսն ող-
ջակիզին ի վերայ սեղանոյն զոր հուրն
ծախիցէ", եւ դիցէ առընթեր սեղանոյն։
11 Եւ մերկասցի զպատմուճանն իւր, եւ
զգեցցի այլ պատմուճան, եւ հանցէ
[7]զոգջակէզն արասցոյ բանակին ի տեղի
12 սուրբ ։ Եւ հուրն որ այրիցի ի վերայ
սեղանոյն՝ մի չիմկցի. եւ այրեսցէ ի վե-
րայ նորա քահանայն փայտս ընդ առա-
ւօտս, եւ դիցէ ի վերայ նորա զոգջա-
կէզն, եւ [8]դիցէ ի նմա զճարպ [9]փրկու-
13 թեանն ։ Եւ հուր հանապազ այրեսցի ի
վերայ սեղանոյն, եւ մի չիմկցի ։
14 Եւ այս օրէնն է [10]զոհին՝ զոր մատու-
ցանիցեն" որդիքն Ահարոնի [11]քահանայքն
15 առաջի Տեառն յանդիման սեղանոյն։ Առցէ
ամօվ իւրով ի նուաչոյ զոհին հանդերձ ի-
ւղով նորա եւ զիմպրկաւն որ իւրէ ի վերայ
զոհին, եւ [12]հանցէ ի սեղանն" պտուղ ի
16 հոտ անուշիչ յիշատակ նորա Տեառն։ Եւ
զմնացեալն ի նմանէ կերիցեն Ահարոն եւ
որդիք նորա. բազարջ կերիցի ի սուրբ
տեղւոջ. [13]ի սրահի խորանին վկայութեան
17 կերիցեն զնա ։ Ոչ եփեսցի խմորեալ.
մասն եւս զայն նուագս ի պտղոցն [14]Տեառն.
սրբութիւնք սրբութեանց են, որպէս
վասն մեղացն իւրէ, նոյնպէս եւ վասն
18 յանցանացն ։ Ամենայն արու քահանա-
յիցն կերիցէ զայն. օրէնն յաւիտենական
յազգս ձեր ի պտղոյ անտի Տեառն. ա-
մենայն որ մերձենայի ի նոսա՝ սրբեսցի ։

[1]Եբէ. այրեսցէ ի վերայ սեղանոյն ի վերայ պատա-
րագաց [2]Եբէ. ըստ գնոյ քոյ սկէզ արծաթոյ
[3]Եբէ. ըստ գնոյ քոյ [4]Եբէ. Վասն յանցանաց է այս.
[5]Եբէ. ողջակէզն կացցէ ի վերայ հրոյ [6]Եբէ. զմո-
խիրն որ ի ծախելոյ հրոյն զողջակէզն որ ի վերայ
սեղանոյն [7]Եբէ. զմոխիրն [8]Եբէ. այրեսցէ
[9]Եբէ. խաղաղութեանն [10]Եբէ. զոհին. մատու-
ցանիցեն զնա [11]Յիւբէ. պոռոնք [12]Եբէ. այրեսցէ
ի վերայ սեղանոյն [13]Եբէ. ի գաւթի [14]Եբէ. իմոյ

19 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
20 Ա.յս է պատուիրագ Ահարոնի եւ որդւոց նորա զոր մատուսցանիցեն Տեառն յաւուր յորում օծանիցեսս զնա. զտասանորդ զրուի միոյ նաչխոյ զոհ հանապազորդ, զկէս նորա՝ այգուն, եւ զկէս նորա՝ եւ
21 իրիկունն ։ ի տապակի խզով զանգեալ գործեսցի. եւ մատուսցէ զայն մաքրեալ զոհ ի պատուոյ, զոհ ի հոտ անուշիոյ
22 Տեառն ։ Քահանայն օծեալ փոխանակ նորա յորդւոց իւրոց՝ արասցէ զայն, օրէն յաւիտենական Տեառն. ամենեւին [1]կա-
23 տարեսցի ։ Եւ ամենայն զոհ քահանայիկն ողջակէզ լինիցի, եւ մի ուտիցի ։
24 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
25 Խօսեաց ընդ Ահարոնի եւ ընդ որդիս նորա եւ ասասցես, Ա.յս օրէն իցէ վասն մեղացեալն. ի տեղւոջ ուր սպանանիցեն զողջակէզն՝ սպանցեն եւ զվասն մեղացն առաջի Տեառն. սրբութիւն
26 սրբութեանց է ։ Քահանայն որ մատուսցանիցէ զայն՝ կերիցէ. ի սուրբ տեղւոջ կերիցէ, [2]ի սրահի խորանին վկայու-
27 թեան ։ Ամենայն որ մերձենայցէ ի միս նորա՝ սրբեսցի. եւ յոր ձորձոց վերայ սրսկեսցի ի նմանէ արիւն՝ լուասցի ի
28 սուրբ տեղւոջ ։ Եւ անօթ կաւեղէն յորում եփեսցի, փչրեսցի. եւ եթէ ի պղնձի անօթ եփեսցի, քերեսցէ զնա եւ
29 ջրով ողողեսցէ ։ Ամենայն արու քահանայիցն կերիցէ զայն. սրբութիւն սրբու-
30 թեանց է [3]Տեառն ։ Եւ ամենայն վասն մեղացն, յորոց մատնիցէ յարեանէ նոցա ի խորանն վկայութեան քաւել ի սրբութիւնն, մի կերիցի, այլ հրով այրեսցի։

Գլ. է

1 Եւ այս օրէն իցէ խոյին որ վասն յանցանացն իցէ. [4]զի սրբութիւն սրբու-
2 թեանց է. ի տեղւոջ ուր սպանանիցեն զողջակէզն՝ սպանցեն եւ զխոյն յանցանաց [4]առաջի Տեառն", եւ զարիւնն [5]հեղցէ առ յատակաւ" սեղանոյն չուր-
3 ջանակի. Եւ զամենայն զճարպ նորա առցէ [6]եւ զլկանն, եւ զամենայն ըզճարպ թաղանթ քազրթին եւ զամենայն
4 ճարպ փորոտւոյն". Եւ զերիկամունսն զերկոսին եւ զճարպն որ ի վերայ նոցա առ մանամբքն, եւ զլերզարդին երի-
5 կամբքն հանդերձ կորզեսցէ. Եւ [7]հանցէ զայն քահանայն իսեղանն" պատուզ Տեառն.
6 զի վասն յանցանաց է ։ Ամենայն արու քահանայիցն կերիցէ զայն. ի սուրբ տեղւոջ կերիցին զայն, քանզի սրբութիւն
7 սրբութեանց է ։ Որպէս զվասն մեղացն՝ նոյնպէս եւ զվասն յանցանացն. օրէն՝ մի եւ նոյն կացցէ նոցա. եւ քահանայն որ
8 քաւիցէ նովաւ՝ նմա լիցի։ Եւ քահանայն՝ որ մատուցանիցէ զողջակէզ ինչ մարդոյ, մորթ ողջակիզին զոր մատուցանէ՝ նմա
9 եղիցի ։ Եւ ամենայն [8]զոհ որ գործիցի ի թոնրի, եւ ամենայն որ գործիցի ի կապարայս կամ ի տապակի, քահանային որ
10 մատուցանիցէ զայն՝ եղիցի ։ Եւ ամենայն զոհ զանգեալ իւղով եւ որ չիցէ զանգեալ, ամենեցուն որդւոցն Ահարոնի իւրաքանչիւր ունիցէ եղիցի հաւասարակաց։
11 Ա.յս օրէն է զոհիցն [9]փրկութեան զոր
12 մատուցանիցեն Տեառն. Իսկ եթէ վասն գոհութեան մատուցանիցէ զայն, մատուսցէ վասն զոհի գոհութեանն պանս բազարջս [10]ի նաչխոյ զանգեալ իւղով, եւ քաքարս բազարջս օծեալ իւղով, եւ
13 նաչխոյ զանգեալ իւղով, չօրիւք։ Բազարջ հացիւ մատուսցէ զպատարագն իւր ի վերայ զոհին գոհութեան [9]փրկութեան ։
14 Եւ մատուսցէ մի ինչ յամենայն պատարագ իւրոց նուէր Տեառն. եւ այն, քահանային որ հեզուցու զարիւնն
15 [9]փրկութեան՝ լինիցի ։ Եւ միս զոհին գոհութեան [9]փրկութեան՝ նորին լինիցի," յորում աւուր պատարագիցի՝ կերիցի,
16 եւ մի թողուցուն ի նմանէ յայգ ։ Եւ եթէ [10]կամաւ ոք ուխտս մատուցանիցէ զպատարագն իւր", յաւուր յորում մատուցանիցէ գզոհն՝ կերիցի, եւ ի վաղիւ
17 [11]անդր. Եւ մնացեալն ի մսոյ զոհին միւն-
18 չեւ յօրն երրորդ՝ հրով այրեսցի ։ Ապա թէ ուտելով ուտիցի ի մսոյ զոհին [9]փրկութեան իւրոյ յաւուրն երրորդի, մի լինիցի ընդունելի, [12]մատուցանելեացն, եւ" մի համարեսցի նմա այն. քանզի [4]պատահաւ եւ" պղծութիւն է, եւ
19 անձն որ կերիցէ ինմանէ՝ մեղս առցէ։ Եւ միս որ մերձենայցի յամենայն պղծութիւն՝ մի կերիցի, այլ հրով այրեսցի. ամենայն

[1] ԵՓէ. այրեսցէ [2] ԵՓէ. ի գաւթի [3] ԵՓէ. այն [4] ՅԵՓէ. պոկոտ [5] ԵՓէ. սրսկեսցէ ի վերայ [6] ԵՓէ. զդմակն եւ զճարպն որ ծածկէ զփորոտին

[7] ԵՓէ. այրեսցէ զնոսա քահանայն ի վերայ սեղանոյն [8] Տե՛ս Գլ. Բ. 4։ [9] ԵՓէ. խաղաղութեան [10] ԵՓէ. ուխտ կամ կամաւոր ընծայ իցէ զոհ պատարագի նորա [11] ԵՓէ. անդր մնացեալն ի նմանէ կերիցի [12] ԵՓէ. որոմ մատուցանէն ըզայն՝

20 սուրբ կերիցէ միոյն ։ Եւ անձն որ կե-
րիցէ ի սրտէ [1]փրկութենան որ իւր Տեառն,
եւ պղծութիւն նորա ի նմա իցէ, կորիցէ
21 անձն այն ի ժողովրդենէ իւրմէ ։ Եւ
անձն որ միոյնէ յամենայն իւր պղծու-
թեան, ի պղծութիւնս մարդոյ կամ յա-
նասնոյ պղծոյ, կամ յամենայն զարշե-
լիս պիղծս, եւ կերիցէ ի մսոյ սրտին
[1]փրկութենան որ իւրէ Տեառն, կորիցէ
անձն այն ի ժողովրդենէ իւրմէ ։
22 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
23 Խօսեաց ընդ որդիսդ Իսրայէլի եւ ա-
սասցես, Զամենայն զճարպ զարջառոյ
եւ զոչխարի եւ զայծեաց մի ուտիցէք ։
24 Եւ ճարպ մեռելոտուց եւ գազանաբե-
կաց լինիցի յամենայն գործ, բայց ի կե-
25 րակուր մի ուտիցի ։ Եւ ամենայն որ ու-
տիցէ ի ճարպոյ անասնոյ զոր մատուցա-
նիցէք պատուղ Տեառն՝ կորիցէ անձն այն
26 ի ժողովրդենէ իւրմէ ։ Զամենայն արիւն
մի ուտիցէք յամենայն բնակութիւնս
ձեր, ի թռչնոյ եւ յամենայն անասնոյ։
27 Ամենայն անձն որ կերիցէ արիւն՝ կո-
րիցէ ի ժողովրդենէ իւրմէ ։
28 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
29 Խօսեաց ընդ որդիսդ Իսրայէլի եւ ա-
սասցես, Որ մատուցանիցէ զոհ [1]փրկու-
թեան Տեառն, ածցէ զպատարագն իւր
30 Տեառն ի զոհէ [1]փրկութեան իւրոյ ։ Զևաք
նորա մատուցցին [2]պատուղ Տեառն. [3]զճարպ
երբեմն եւ զներդաքոյթն մատուցէ զնել
31 առաջի Տեառն։ Եւ հանցէ զայն քահա-
նայն ի սեղանն՝. եւ եղիցի երբեմն Ա-
32 հարոնի եւ որդւոց նորա։ Եւ զերկին զաջոյ
տայցէք [4]հաս քահանային ի զոհից
33 [1]փրկութենան ձերոյ ։ Որ մատուցանիցէ
զարիւնն [1]փրկութենան եւ զճարպն առ ի
յորդւոցն Ահարոնի, նորա լիցի երկին աջոյ
34 ի մասն ։ Զի զերբուծն [5]վերադրաց եւ
զերկին [6]նուիրացն առի ես յորդւոցն Իս-
րայէլի ի զոհից [7]փրկութենան ձերոյ, եւ
ետու զայն՝ Ահարոնի քահանայի եւ որդ-
ւոց նորա, օրէնն յաւիտենական յորդւոցն
35 Իսրայէլի ։ Այս օծումն է Ահարոնի եւ
որդւոց նորա ի [8]պատուոյ անտի Տեառն,

յաւուր յորում [9]մատուցանէր զնոսա՝,
36 Որպէս պատուիրեաց Տէր տալ նոցա
յաւուր յորում օծ զնոսա յորդւոցն Իսրա-
յելի, օրէն յաւիտենական յազգս նոցա ։
37 Այս օրէն է ողջակիզացն եւ զոհից, եւ
վասն մեղացն, եւ վասն յանցանացդ, եւ
վասն [10]կատարմանն եւ զոհին փրկու-
38 թեան՝, Որպէս պատուիրեաց Տէր Մով-
սիսի ի լերինն Սինայ, յաւուր յորում
պատուիրեաց Տէր որդւոցն Իսրայելի,
մատուցանել զպատարագս իւրեանց ա-
ռաջի Տեառն յանապատին Սինայ ։

Գլ. Ը

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
2 Առ զԱհարոն եւ զորդիս նորա, եւ
զպատմուճանսն նորա եւ զեւղն օծու-
թեան, եւ զզուարակն զվասն մեղաց
եւ զխոյսն զերկոսին եւ զվասն բա-
3 րեկենի. Եւ զամենայն ժողովուրդն
եկեղեցացուսցես ի դուռն խորանին վկա-
4 յութեան։ Եւ արար Մովսէս որպէս հրա-
մայեաց նմա Տէր. եւ եկեղեցացոյց ժո-
ղովուրդն ի դուռն խորանին վկայու-
5 թեան ։ Եւ ասէ Մովսէս ցժողովուրդն,
Այս բան է զոր պատուիրեաց Տէր առ-
6 նել ։ Եւ մատոյց Մովսէս զԱհարոն եւ
զորդիս նորա, եւ լուացեալ զնոսա ջրով.
7 Եւ զգեցոյց [11]Ահարոնի զպատմուճանն՝,
եւ ած ընդ մէջ նորա գխամարն, եւ
արկ զնովաւ [12]զվառականն, եւ կապ ի
վերայ նորա զվակասն, եւ խառնեաց ի
նմա [13]ըստ գործուածոյ՝ վակասին, եւ
8 պնդեաց զնա ի նմա ։ Եւ կապ ի վերայ
նորա զսաւառականն, եւ կապ ի վերայ
սաւառակին [14]զՅանգիմանութիւնն եւ
9 զՃշմարտութիւն՝։ Եւ կապ ի վերայ գլխոյ
նորա զկոյսն, եւ կապ ի վերայ խոյսին
յերեսաց կողմանէ զմիմեանցն ոսկի,
զնուիրեալն եւ զսուրբ, որպէս պատ-
10 ուիրեաց Տէր Մովսիսի ։ Եւ առեալ Մով-
սիսի [15]իւղոյ օծութենանն՝ դպանեաց ի
11 վերայ սեղանոյն եւթն անգամ. Եւ օծ
զսեղանն եւ սրբեաց զնա եւ զամենայն

[1] Եբբ. խաղաղութեան [2] Եբբ. պատարագ [3] Եբբ. զճարպն հանդերձ երբեմն մատուցանէ. երբուծն երբեմն երբեւցի առաջի Տեառն ։ (31) Եւ զճարպն այրեսցէ քահանայն ի վերայ սեղանոյն [4] Եբբ. ի վերացումն [5] Եբբ. երբեմն [6] Եբբ. վերացման [7] Եբբ. խաղաղութեան նոցա, և ետու զնոսա [8] Եբբ. պատարագաց

[9] Եբբ. մերձեցուցանէր զնոսա ի քահանայապետ Տեառն [10] Եբբ. նուիրմանն և զոհին խաղաղութեան [11] Եբբ. Նմա զչուակին [12] Եբբ. զպատեգօտն [13] Եբբ. ժապաւինիւ [14] Եբբ. զԼուրիմ և զԹումիմ, տես Եզր. ԺՀ. 30 [15] Եբբ. զեւղն օծութեան՝ օծ զխորանն և զամենայն ինչ որ ի նմա և սրբեաց զնոսա ։ (11) Եւ սրսկեաց անտի ի վերայ սեղանոյն եւթն անգամ, և օծ զսեղանն և զամենայն սպաս նորա և զաւազանն և զխարիսխ նորա ի սրբել զնոսա

ասպա նորա, եւ զաւազանն եւ զխարիսխա
նորա, եւ արբեաց զնոսա. եւ օծ զխոս
րանն եւ զամենայն ինչ որ ի նմա, եւ
12 սրբեաց զնա": Եւ ասէ Մովսէս յիւդայ
օծութիւնն ի գլուխն Ահարոնի եւ օծ
13 զնա, եւ սրբեաց զնա: Եւ մատոյց Մով-
սէս զորդիսն Ահարոնի եւ զգեցոյց նոցա
[1]զպատմուճանսն, եւ ած ընդ մէջ նոցա
զկամարսն, եւ [2]եպ նոցա գխոյրսն", որ-
պէս եւ հրամայեաց Տէր Մովսիսի:
14 Եւ մատոյց Մովսէս զզուարակն զվանն
մեղացն. եւ եդին Ահարոն եւ որդիք
նորա զձեռս իւրեանց ի վերայ գլխոյ
15 զուարակին մեղաց: Եւ ասպա զնա, եւ
առ Մովսէս յարենէ անտի, եւ եդ ի վե-
րայ եղջերաց սեղանոյն չուրջանակի մա-
տամբ իւրով, եւ սրբեաց զսեղանն. եւ
զարիւնն եհեղ առ յատակաւ սեղանոյն,
եւ սրբեաց գնա առնել քաւութիւն ի
16 վերայ նորա: Եւ առ զամենայն ճարպ
փարատուցն, եւ գլեկպարոյնն եւ զեր-
կոսին զերիկամունսն, եւ զամենայն
ճարպն որ ի վերայ նոցա, եւ [3]եհան
17 Մովսէս ի սեղանն": Եւ զզուարակն եւ
զկաշի նորա եւ զմիսն եւ զաղբատան
արեամբ հրով արտաքոյ բանակին, որ-
պէս հրամայեաց Տէր Մովսիսի:
18 Եւ մատոյց Մովսէս զխոյն որ յողջա-
կէզ. եւ եդին Ահարոն եւ որդիք նորա
19 զձեռս իւրեանց ի վերայ գլխոյ խոյին: Եւ
ասպա [4]Մովսէս գխոյն, եւ եհեղ" զա-
20 րիւնն չուրջ զսեղանովն. Եւ զխոյն յօշեաց
անդամ անդամ. եւ [5]առ Մովսէս զգլուխն
21 եւ զանդամախիւնն եւ զճարպն. Եւ զքա-
զրիւնն եւ զոտսն լուաց ջրով. եւ [6]եհան
Մովսէս զխոյն ողջակէզ [6]ի սեղանն ողջակէզ
ի հոտ անուշից, [7]քանզի պատուէր" Տեառն
է, որպէս հրամայեաց Տէր Մովսիսի:
22 Եւ մատոյց Մովսէս գխոյն երկրորդ,
գխոյն [8]կատարման, եւ եդին Ահարոն եւ
որդիք նորա զձեռս իւրեանց ի վերայ
23 գլխոյ խոյին. Եւ ասպա զնա, եւ առ
Մովսէս յարենէ նորա, եւ եդ ի վերայ
լլիմակի ականջի աջոյ ունկանն Ահարոնի, եւ ի
վերայ [9]ծայրի աջոյ ձեռին նորա, եւ ի
24 վերայ [9]ծայրի աջոյ ոտին նորա: Եւ մա-
տոյց Մովսէս զորդիսն Ահարոնի, եւ եդ
Մովսէս յարենէ անտի ի վերայ լլիմա-
կոյ աջոյ ականջիցն նոցա, եւ ի վե-
րայ [10]ծայրից աջոյ ձեռացն նոցա, եւ ի
վերայ [10]ծայրից աջոյ ոտից նոցա. եւ
[11]եհեղ Մովսէս զարիւնն չուրջ զսեղա-
25 նովն: Եւ առ զճարպն եւ [12]զպկանն, եւ
զճարպն որ ի վերայ քաղրիին, եւ
զլերդաքոյին եւ զերիկամունսն զեր-
կոսին, եւ զճարպն որ ի վերայ նոցա,
26 եւ զերին աջոյ. Եւ ի բանէն [13]կա-
տարման որ կայր առաջի Տեառն՝ առ
պան մի բաղարջ եւ պան մի յիւդայ
[14]անտի, եւ եդ ի վերայ ճարպոյն եւ ի
27 վերայ երդոյն աջոյ. Եւ եդ զամենայն
ի վերայ ձեռացն Ահարոնի, եւ ի վերայ
ձեռացն որդւոց նորա, եւ [15]մատոյց զայն
28 նուէր" առաջի Տեառն: Եւ առ զայն
Մովսէս ի ձեռաց նոցա, եւ [16]եհան ի
սեղանն յողջակէզ կատարման, որ է ի
հոտ անուշից պատուէր Տեառն, որպէս
29 պատուիրեաց Տէր": Եւ առեալ Մովսէսի
զկրծուածն՝ [17]եհան նուէր" առաջի Տեառն
ի խաչ անտի [18]կատարման. եւ" եղեւ
Մովսիսի ի մաս, որպէս պատուիրեաց
30 Տէր Մովսիսի: Եւ առեալ Մովսէս զիւ-
ղայ օծութիւնն, եւ յարենէն որ ի վե-
րայ սեղանոյն, ցանեաց զԱհարոնիւ
եւ զպատմուճանսն նորա, եւ զորդւովք
նորա եւ զպատմուճանսն նոցա. եւ
սրբեաց զԱհարոն եւ զպատմուճանս
նորա, եւ զորդիս նորա եւ զպատմու-
ճանս որդւոց նորա ընդ նմա:
31 Եւ ասէ Մովսէս ցԱհարոն եւ ցորդիս
նորա, Եփցէք զմիսդ ի [19]սրահի խո-
րանին վկայութեան ի տեղւոջ", եւ անդ ուտիջէք զայն, եւ զհանսն որ
ի խառնի [8]կատարմանն իցեն, զոր օրի-
նակ հրամայեաց ինձ Տէր եւ ասէ, Ա-
հարոն եւ որդիք նորա կերիցեն զայն:
32 Եւ զնչխար հացի եւ մսոյ հրով այրես-
33 ջիք: Եւ ի դրանէ խորանին վկայու-
թեան մի ելանիցէք զեւթն օր, մինչեւ
յօր լրման աւուրց կատարմանն ձերոյ.
34 զի զեւթն օր լցցէ զձեռս ձեր: Որպէս
եւ արարն յաւուրսն յայսմիկ, որպէս
պատուիրեաց Տէր առնել, առ ի քաւելոյ

[1] ԵԲԲ. վշապիկն [2] ԵԲԲ. ած նոցա զսպարօշն [3] ԵԲԲ. այրեաց Մովսէս ի վերայ սեղանոյն [4] ԵԲԲ. եւ սպակեաց Մովսէս [5] ԵԲԲ. այրեաց [6] ԵԲԲ. ի վերայ սեղանոյն [7] ԵԲԲ. պատարագ [8] Այլ Ինչ, Նուիրման. [9] ԵԲԲ. բաւթոց [10] ԵԲԲ. բաւթոց [11] ԵԲԲ. սրսկեաց [12] ԵԲԲ. զդմակն [13] ԵԲԲ. բաղարջոյ [14] ԵԲԲ. անտի և բաքար [15] ԵԲԲ. երեքեաց զնոսա երեքումն [16] ԵԲԲ. այրեաց ի վերայ ողջակիզին որ ի սեղանին. սոքա են նուիրումն ի հոտ անուշից պատարագ Տեառն [17] ԵԲԲ. երեքեաց զայն երեքումն [18] Այլ Ինչ, Նուիրման. այս [19] ԵԲԲ. դրան խորանին ժողովոյ

35 վան ձեր։ Եւ առ զրան խորանին վկա-
յութեան նախիկիք զեղիմն օր, զպատ եւ
զպերակ, եւ պահեսջիք զպահպանութիւնս
Տեառն զի մի մեռանիցիք. զի այնպէս
36 պատուիրեաց ինձ Տէր։ Եւ արար Ա-
հարն եւ որդիք նորա զամենայն զրանս
զոր պատուիրեաց Տէր Մովսէսի։

Գլ. Թ

1 Եւ եղեւ յաւուրն ութերորդի կոչեաց
Մովսէս զԱհարոն եւ զորդիս նորա եւ
2 զծերակոյսն Իսրայէլի. Եւ ասէ Մովսէս
ցԱհարոն, Առ գու քեզ զուարակ մի
յանդոյ վասն մեղաց եւ խոյ յողջակէզ՝
անարատս. եւ մատո զնոսա առաջի
3 Տեառն։ Եւ ընդ [1]ծերակոյսն Իսրայէլի
խօսեացիս եւ ասասցես. Առէք զուք ձեզ
նոխազ մի յայծեաց վասն մեղաց, [2]եւ
խոյ՝ եւ զուարակ եւ գառն տարեւոր
4 յողջակէզ՝ անարատս. Եւ զուարակ եւ
խոյ՝ յողջակէզ [3]վերկոփեան առաջի
Տեառն, եւ [4]զոհ նաւիճի զանկեալ իւղով.
զի այսօր երեւեցի Տէր ի միջի ձե-
5 րում։ Եւ առին որպէս եւ հրամայեաց
Մովսէս առաջի խորանին վկայութեան.
եւ մատեան ամենայն ժողովուրդն եւ
6 կացին առաջի Տեառն։ Եւ ասէ Մով-
սէս, Այս բան է զոր ասաց Տէր առնել,
եւ երեւեսցին ի ձեզ փառք Տեառն։
7 Եւ ասէ Մովսէս ցԱհարոն, Մատիր առ
սեղանն, եւ արա զվասն մեղացն քո
եւ զողջակէզն քո, եւ քաւեա վասն
քո եւ [5]տան քո՝. եւ արա զպատարագս
ժողովրդեան [2]քո, եւ քաւեա վասն
նոցա, որպէս պատուիրեաց Տէր [2]Մով-
8 սիսի։ Եւ մատեաւ Ահարոն առ սեղանն,
եւ սպան զզուարակն զվասն մեղացն
9 իւրոց։ Եւ մատուցին որդիքն Ահարոնի
զարիւնն առ նա, եւ եմոյց զմատն
յարեանն, եւ եգ ի վերայ եղջերայ սե-
ղանոյն, եւ զարիւնն եհեղ առ յատակաւ
10 սեղանոյն. Եւ զճարպն եւ զերիկամունսն
եւ զլերդարթոյին զվասն մեղացացն՝
[6]եհան ի սեղանն՝, որպէս պատուիրեաց
11 Տէր Մովսիսի։ Եւ զմիսն եւ զկաշին [7]այ-
12 րեցին հրով արտաքոյ բանակին։ Եւ
սպան զողջակէզն. եւ մատուցին որ-
դիքն Ահարոնի զարիւնն առ նա, եւ
13 [8]եհեղ չուրջ զսեղանովն։ Եւ զողջակէզն
մատուցին առ նա անդամ անդամ՝ եւ
14 զգլուխն, եւ [7]եգ ի վերայ սեղանոյն։ Եւ
լուացեալ զբազկիսն եւ զսառն ջրով, եւ
[7]եգ ի վերայ ողջակիզին ի սեղանն։
15 Եւ [9]մատուցին զպատարագ ժողո-
վրդեանն, եւ առ զնոխազն գլխոյ ժո-
ղովրդեանն եւ սպան [10]զնա իբրեւ
16 զառաջինն։ Եւ մատոյց զողջակէզն, եւ
17 արար զնա որպէս եւ օրէնն էր։ Եւ մա-
տոյց [4]զզոհն, եւ եհեղ զձեռս ի նմանէ,
եւ [7]եգ ի վերայ սեղանոյն առաւօտեան
18 առաւօտին ողջակիզին։ Եւ սպան զզուա-
րակն եւ զխոյն զոչխ [3]վերկոփեան ժողո-
վրդեանն, եւ մատուցին որդիքն Ահարոնի
զարիւնն առ նա, եւ [8]եհեղ զայն չուրջ
19 զսեղանովն։ Եւ զճարպն որ ի զուարա-
կէն եւ ի խոյէն [11]եւ զիլկանն՝, եւ զճարպ
իւազանի քազրիին, եւ զերկասին երիւ-
կամունսն [2]ճարպովին, եւ զերդարթոյին.
20 Եւ եդին զճարպն ի վերայ երրծոյն, եւ
[7]հանին զճարպն [2]հանելոյն երրծոյն,
եւ եդին զճարպն՝ ի վերայ սեղանոյն։
21 Եւ զերրծոյն եւ զերկին զաջոյ [12]նուի-
եաց նուէր՝ առաջի Տեառն, որպէս
պատուիրեաց [13]Տէր Մովսիսի՝։
22 Եւ ամբարձեալ Ահարոն զձեռս իւր
ի վերայ ժողովրդեանն՝ օրհնեաց զնոսա.
եւ էջ [14]արար զվասն մեղացն եւ զող-
23 ջակէզն եւ [15]զերկրպարհեանն։ Եւ մտին
Մովսէս եւ Ահարոն ի խորանն վկայու-
թեան, եւ ելեալ անտի օրհնեցին զամենայն
ժողովուրդն. եւ երեւեցաւ փառք Տեառն
24 ամենայն ժողովրդեանն։ Եւ ել հուր ի
Տեառնէ, եւ եկեր որ [15]ինչ կայր ի վերայ
սեղանոյն, զողջակէզն եւ զճարպն. եւ
եաես ամենայն ժողովուրդն եւ զարհուրե-
ցաւ, եւ անկան ի վերայ երեսաց իւրեանց։

Գլ. Ժ

1 Եւ առեալ երկուց որդւոցն Ահարոնի,
Նադաբայ եւ Աբիհուայ, վիւրաքանչիւր
բուրուառ՝ եդին ի նոսա հուր, եւ ար-
կին խունկս եւ մատուցին առաջի Տեառն
2 հուր օտար, զոր ոչ հրամայեալ նոցա
Տէր։ Եւ ել հուր ի Տեառնէ եւ եկեր
3 զնոսա, եւ մեռան առաջի Տեառն։ Եւ ասէ
Մովսէս ցԱհարոն, Այս է զոր ասաց Տէր.

---

[1] ԵՔԲ. որդիան զուԹեան
[2] ՅԵՔԲ. պ-ով-ոբ
[3] ԵՔԲ. խաղաղուԹեան
[4] Տե՛ս Գլ. Բ. 4։
[5] ԵՔԲ. վասն ժողովրդեան
[6] ԵՔԲ. այրեաց ի վերայ սեղանոյն
[7] ԵՔԲ. այրեաց
[8] ԵՔԲ. սրսկեաց
[9] ԵՔԲ. մատոյց
[10] ԵՔԲ. զնա և արար զնա վասն մեղաց
[11] ԵՔԲ. զդմակն
[12] ԵՔԲ. երերեաց երերումն
[13] ԵՔԲ. Մովսէս
[14] ԵՔԲ. չետ մատուցանելոյ
[15] ԵՔԲ. զխաղաղուԹեանն

ասէ, ի մերձաւորս իմ սրբեցայց, եւ առաջի ամենայն ժողովրդեան իմոյ փառաւորեցայց. եւ ասրչացաւ Ահարոն։
4 Եւ կոչեաց Մովսէս զՄիսաագէլ եւ զԵղիսափան, զորդիս Ոզիելի, զորդիս հօրեղբօր Ահարոնի, եւ ասէ ցնոսա, Մատիք եւ բարձէք զեղբարս ձեր, [1]Հանդերձ պատմուճանօքն իւրեանց" յերեսաց սրտմտութեանդ արտաքոյ քան զլանականն։
5 Մատեան եւ բարձին զնոսա հանդերձ պատմուճանօքն իւրեանց արտաքոյ բանակին, զոր օրինակ ասաց Մովսէս։
6 Եւ ասէ Մովսէս ցԱհարոն եւ ցեղբայրս նորա [1]Ելեազար եւ ցԻթամար ցորդիս նորա Ցգլուխս ձեր մի ապախուրէք, եւ զհանդերձս ձեր մի պատառէք, զի մի մեռանիցիք, եւ ի վերայ ժողովրդեանդ լինիցի բարկութիւն, բայց եղբարք ձեր եւ ամենայն տունն Իսրայէլի լացցեն զհրայրեացն որ այրեցան ի Տեառնէ։ Եւ ի դրանէ խորանիդ վկայութեան մի ելանիցէք, զի մի մեռանիցիք. զի եւդն օծութիւնն որ ի Տեառնէ է՝ ի վերայ ձեր է. եւ արարին ըստ բանին Մովսիսի։
8 Խօսեցաւ Տէր ընդ Ահարոնի եւ ասէ,
9 Գինի եւ գբի մի ըմպիցէք դուք եւ որդիք քո ընդ քեզ յորժամ մտանիցէք ի խորանն վկայութեան, [1]կամ յորժամ մերձենայցէք ի սեղանն," զի մի մեռանիցիք. օրէնս յաւիտենական յազգս
10 ձեր, Զասանել ի մէջ սրբոյ եւ պղծոյ, եւ ի մէջ պարկեշտից եւ անպարկեշտից.
11 Եւ իմացուցանել որդւոցն Իսրայէլի զամենայն օրէնս զոր խօսեցաւ Տէր ընդ նոսա ի ձեռն Մովսիսի։
12 Եւ ասէ Մովսէս ցԱհարոն եւ ցեղբարսն որ եւ ցԻթամար որդիս նորա ցմնացեալս, Առէք [2]զպատն մնացեալ ի պատրաստ անտի Տեառն, եւ կերայք բաղարջ առաջի սեղանոյն. զի սրբութիւն սրբութեան է։
13 Եւ կերիջիք զայն ի սուրբ տեղւոջ, զի օրէնն քեզ լինիցի այն, եւ օրէնն որդւոց քոց ի պատրաստ անտի Տեառն. զի այնպէս հրամայեալ է ինձ։ Եւ [3]կերբուծ զնուիրին եւ զերի հասին" կերիջիք ի սուրբ տեղւոջ գու եւ որդիք քո եւ [4]տուն քո ընդ քեզ. զի օրէնն քեզ է այն, եւ օրէնն որդւոց քոց տուաւ ի զոհից [5]փրկութեան որդւոցն Իսրայէլի։
15 Զկերին [6]զհասի եւ զերբուծն [7]նուիրի ի վերայ ընծայից" ճարպոյն մատուցանեն [8]նուէր նուիրել" առաջի Տեառն. եւ եղիցի քեզ եւ որդւոց քոց եւ դստերաց քոց ընդ քեզ՝ օրէն յաւիտենական, զոր օրինակ հրամայեաց Տէր [1]Մովսիսի։
16 Եւ զնուիրսն զլանն մնդաց խնդրեալ խնդրեաց Մովսէս, եւ այն էր այրեցեալ. եւ բարկացաւ Մովսէս եղիազարու եւ Իթամարայ որդւոցն Ահարոնի
17 մնացեալոց եւ ասէ, Ընդէր ոչ կերայք զլանն մնդացն ի սուրբ տեղւոջ. զի սրբութիւն սրբութեանց է, եւ զայն եւս ձեզ ուտել, զի բառնայցէք զմեղս ժողովրդեանն. եւ տանիցէք քաւութիւն
18 վասն նոցա առաջի Տեառն։ Քանզի ոչ եմուտ յարինէ նորա ի սրբութիւնն [1]յանդիման երեսացն" ի ներքս. [9]արդ կերայք" զնա ի սուրբ տեղւոջ" զոր օրինակ հրամայեցաւ ինձ։ Խօսեցաւ Ահարոն ընդ Մովսիսի եւ ասէ, Զի եթէ այսօր մատուցին զվասն մեղացն իւրեանց եւ զողջակէզս իւրեանց առաջի Տեառն, եւ այսպիսի անցք անցին ընդ իս. եւ ուտիցեմ այսօր զվասն մեղացն,
20 զդուցէ չլինիցի հաճոյ առաջի Տեառն։ Եւ լուաւ Մովսէս եւ հաճոյ եղեւ նմա։

Գլ. ԺԱ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ
2 Ահարոնի եւ ասէ, Խօսեցարուք ընդ որդիսդ Իսրայէլի եւ ասացէք, Այս անասունք են զոր ուտիցէք յամենայն անասունս
3 նատնոց որ են ի վերայ երկրի։ Զամենայն անասուն թմթահերձ եւ կճղակաւոր որոյ յերկուս բաժանեալ լցեն թմթքն եւ որոճիցէ, յանասնոյ՝ զայն կերիջիք։
4 Բայց յայնցանէ մի ուտիցէք, որք որոճիցեն եւ կճղակահերձ ոչ լցեն. ուղտ զի որոճայ եւ կճղակն ոչ լաժանի, պիղծ
5 իցէ նա ձեզ։ Եւ նապաստակ զի որոճայ եւ թմթն ոչ բաժանի, պիղծ իցէ նա
6 ձեզ։ Եւ ճագար զի որոճայ եւ թմթն
7 ոչ բաժանի, պիղծ իցէ նա ձեզ։ Եւ խոզ զի թմթահերձ է եւ կճղակս ունի եւ
8 որոճայ ոչ, պիղծ իցէ նա ձեզ։ Ի մսոյ նոցա մի ուտիցէք, եւ ի գէշ նոցա մի մերձենայցէք. քանզի պիղծ իցէ ձեզ այն։
9 Եւ այս է զոր ուտիցէք յամենայնէ որ

[1]ՅԵԲԼ. պահաե. [2]ՏԵ. Գլ. Բ. 4. [3]ՅԵԲԼ. զերբուծն երեսման եւ զերին վերացման [4]ՅԵԲԼ. դստերք [5]ՅԵԲԼ. խաղաղութեան [6]ՅԵԲԼ. վերացման [7]ՅԵԲԼ. երեսման հանդերձ պատարագօք [8]ՅԵԲԼ. յերեսուն երեսման [9]ՅԵԲԼ. պարտ էր ձեզ ուտելով ուտել

ի ջուրս իցեն. ամենայնի որոյ իցեն թեւք
եւ թեփ ի ջուրս եւ ի ծովս եւ ի վտակս,
10 զայնս ուտիցէք։ Եւ ամենայնի որոյ ոչ
իցեն թեւք եւ թեփ [1]՝ի ջուրս եւ՝ ի ծովս
եւ ի վտակս, մի՛ ուտիցէք, յամենայնէ զոր
ջուրքն բղխիցեն, եւ յամենայն հնոյ
կենդանւոյ որ ի ջուրս. քանզի պիղծ է
11 այն, պիղծ լինիցի ձեզ։ Ի մսոց նոցա մի՛
ուտիցէք, եւ ի մեռելոց նոցա գարշեսջիք։
12 Զի ամենայնի որոյ ոչ իցեն թեւք եւ թեփ
որ ի ջուրս իցեն, պիղծ իցէ ձեզ այն։
13 Եւ սա իցեն ի թռչնոց յորոց գար-
չիջիք, եւ ոչ ուտիցի, այլ պիղծ իցէ ձեզ.
արծուի, եւ պասկուճ, եւ գետարծուի,
14 Եւ անղղ, եւ ցին, [2]եւ որ ինչ նման իցէ
15 նոցա՛՝, Եւ ագռաւ, եւ որ ինչ նման ի-
16 ցէ նմա, Եւ ջայլամին, եւ բու, եւ որոր,
եւ որ ինչ նման իցէ նոցա, եւ բազէ,
17 եւ որ ինչ նման իցէ նմա, Եւ հաւապա-
18 ուր, եւ հոդամաղ, եւ քաջահաւ, Եւ
19 սոխակ, եւ հաւալուսն, եւ կարապ, Եւ
արագիլ, եւ քարագր, եւ որ ինչ նման
իցէ նոցա, եւ յոդոդ, եւ չիղջ։
20 Եւ ամենայն գեռուն թռչուն որ ըղ-
21 նայցէ ի չորս՝ պիղծ եղիցի ձեզ։ Այլ
զայն ուտիցէք ի գեռնոց թռչնոց որ
գնայցեն ի չորս, որոյ իցեն կարճք ի
վերոյ քան զոտս ոստոստել նոքօք յերկ-
22 րէ։ Եւ սա իցէ զոր ուտիցէք ի նոցանէ.
զմորեակգ, եւ որ ինչ նման է նմա. եւ
զխարազուլ, եւ որ ինչ նման է նմա.
եւ զմարախ, եւ որ ինչ նման է նմա. եւ
զօձամարտ, եւ որ ինչ նման իցէ նմա։
23 Ամենայն գեռուն թռչուն, որոյ իցեն
24 չորք ոտք, պիղծ իցէ ձեզ. Մի՛ նոքօք
պղծիցիք. ամենայն որ մերձենայցէ ի
մեռեալ նոցա՝ պիղծ լիցի մինչեւ ցերե-
25 կոյ։ Եւ ամենայն որ բառնայցէ զմե-
եալ նոցա, լուասցէ զձորձս իւր, եւ
25 պղծ լիցի մինչեւ ցերեկոյ։ Ցամենայն
անասնոց որ կճղակահերձ իցէ եւ մա-
գիլս սփռիցէ եւ որոճիցէ ոչ, պիղծ լիցի
ձեզ այն ամենայն. որ մերձենայցէ ի մե-
եալ նոցա՝ պիղծ լիցի [1]մինչեւ ցերեկոյ՛՝։
27 Եւ ամենայն որ գնայցէ ի ձեռս իւր,
յամենայն զազանաց որ գնայցէ ի չորս,
պիղծ լիցի ձեզ այն. ամենայն որ մեր-
ձենայցէ ի մեռեալ նոցա՝ պիղծ լիցի մին-
28 չեւ ցերեկոյ։ Եւ որ բառնայցէ ի մեռե-
եալ նոցա, լուասցէ զձորձս իւր, եւ
պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ. զի այն
ամենայն պիղծ իցէ ձեզ։
29 Եւ սա իցէ ձեզ պիղծ յամենայն սող-
նոց որ սողիցին ի վերայ երկրի. աքիս եւ
30 մուկն եւ [3]տիտանն յատին՛՝, Եւ մկնաքիս
եւ գետնատեւծ եւ կոմպոիտ եւ մողէզ
31 եւ խլուրդ։ Այն ամենայն պիղծ իցէ ձեզ
յամենայն սողնոց որ սողին ի վերայ երկրի.
ամենայն որ մերձենայցէ ի մեռեալ նոցա՝
պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ։
32 Եւ յամենայնի յորոյ վերայ անկանիցի
ի մեռելոյ նոցա՝ պիղծ լիցի. յամենայն
փայտանզէն անօթոյ կամ ի հանգերձէ կամ
ի մաշկէ կամ ի քրձէ, ամենայն անօթ
յորում գործ ինչ գործիցի ի նմա, ի ջուր
թացցի եւ պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ,
33 եւ ապա սուրբ լինիցի։ Եւ ամենայն
անօթ խեցեղէն յոր անկանիցի ինչ ի նո-
ցանէ, եւ որ ինչ ի ներքուստ կայցէ, պիղծ
34 լիցի, եւ զայն բեկանիջիք։ Եւ ամե-
նայն կերակուր որ ուտիցի, եւ անկա-
նիցի ի վերայ նորա ի ջրոյ անտի, պիղծ
լիցի. եւ ամենայն ըմպելի որ ըմպիցի յա-
35 մենայն ամանի՝ պիղծ լիցի։ Եւ ամենայն
յոր ինչ անկանիցի ի մեռելոյ նոցա՝ պիղծ
լիցի. եւ թոնիրք եւ կասկարայք քա-
կեսցին. քանզի պղծեալ են, եւ պիղծք
36 իցեն ձեզ։ Բայց [4]յաղբերսայ ջրոյ եւ ի
ջրհորոյ եւ ի ջրակուսաց, որ՝ սուրբ
լինիցին ձեզ, եւ ամենայն որ մերձենայցէ
[5]ի պղծութիւնս չնչոյ մեռելոյ՝ նոցա, պիղծ
37 լիցի։ Իսկ եթէ անկանիցի ինչ ի մեռե-
լոյ նոցա ի վերայ ամենայն սերման
սերմանելոյ որ սերմանիցի, սուրբ լիցի։
38 Այլ թէ հեղուսցու ջուր ի վերայ ամե-
նայն սերման, եւ անկանիցի ինչ անդր
ի մեռելոյ նոցա, անսուրբ լիցի ձեզ։
39 Եւ եթէ մեռանիցի ինչ յանասնոց որ
ձեզ ուտելի են, որ մերձենայցէ ի մեռեալ
40 նոցա՝ պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ։ Եւ [6]որ
բառնայցէ ի մեռելոյնոցա՝ լուասցէ զձորձս
իւր, եւ պղծեալ լիցի մինչեւ ցերեկոյ։
41 Եւ ամենայն սողուն որ սողի ի վե-
րայ երկրի, պիղծ լիցի ձեզ, եւ մի՛ կե-
42 րիցի։ Ամենայն որ սողի ի վերայ որո-
վայնի իւրոյ, եւ ամենայն որ գնայցէ
ի չորս, մինչեւ ցամենայն բազմոտանիս,
յամենայն զեռնոց որ զեռայցեն ի վերայ

[1]ՅԲԲ. գոյոտ [2]ՅԲԲ. ըստ ազգի իւրում. այ-
պէս և ի Նէրսէս

[3]ՅԲԲ. տիտեան ըստ ազգի իւրում [4]ՅԲԲ. ազ-
բեւրք և գուբք, ջրակոյսք [5]ՅԲԲ. ի մեռելոտի
[6]ՅԲԲ. որ ուտիցէ ի մեռելոյնոցա՝ լուասցէ զձորձս
իւր և պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ, և որ

երկրի, մի ուտիցէք։ զի պիղծ է այն
43 ձեզ. Եւ մի գարշեցուցանիցէք զանձինս ձեր ամենայն սողունովք որ սողիցին ի վերայ երկրի. եւ մի պղծիցիք նոքօք,
44 եւ մի լինիցիք անասուր նոքօքւ։ Ես եմ Տէր Աստուած ձեր. եւ սրբիցիք եւ սուրբք լինիցիք, զի սուրբ եմ ես [1]Տէր Աստուած ձեր". եւ մի պղծիցէք զանձինս ձեր ամենայն զեղուովք որ չարժի-
45 ցին ի վերայ երկրի։ Զի ես եմ Տէր [1]Աստուած որ հանի զձեզ յերկրէն Եգիպտացւոց լինել ձեզ Աստուած, եւ եղիջիք սուրբք, զի ես սուրբ եմ։
46 Այս օրէն լինիցի վասն անասնոց եւ թռչնոց եւ ամենայն հոգւոյ որ չրջիցի ի ջուրս, եւ ամենայն հոգւոյ որ չրջիցի ի վե-
47 րայ երկրի. Որոշել ի մէջ սրբոյն եւ ի մէջ անսրբոյն, եւ խնամուտ առնել զոր-դիպ Իսրայէլի ի մէջ ուտելեացն կենդանեացն եւ ի մէջ չուտելեաց անասնոց։

ԳԼ. ԺԹ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
2 Խօսեաց ընդ սրդիսն Իսրայէլի եւ ասասցես ցնոսա, Կին որ եթէ սերմն առցէ եւ ծնանիցի արու, պիղծ լիցի զեւրին օր. ըստ աւուրց զատանելոյ զպատանին
3 իւրոյ պիղծ լիցի. Եւ յաւուրն ութե-րորդի թլփատեսցէ զմարմին անթլփա-
4 տելեան նորա։ Եւ զկնասան եւ զերիս աւուրս նստցի ի սրբութեան արեան իւրոյ. չամենայն ինչ սուրբ նա մի մեւ-ձենայցէ, եւ ի սրբութիւնն մի մտցէ, մինչեւ լցցին աւուրք սրբութեան նորա։
5 Ապա թէ էգ ծնանիցի, պիղծ լիցի [2]զեւրին օր" ըստ զատանելոյն, եւ զեւթնտասն եւ զերիս օր նստցի [3]ի սուրբ արեանն իւ-
6 րում"։ Եւ յորժամ լնուցին աւուրք սրբութեան նորա ի վերայ ուսոտերն կամ դստերն, ածցէ զտան տարեւոր յողջակէզ, եւ [4]զոչխար ապաստանեայ կամ տատրակի" վասն մեղայ ի դուռն խորանին վկայութեան
7 առ քահանայն, Եւ մատուսցէ առաջի Տեառն, եւ քաւեսցէ վասն նորա քահանայն, եւ սրբեսցէ զնա յաղբերէ արեան նորա։ Այս օրէն իցէ այնորիկ որ ծնանիցի
8 արու կամ էգ։ Ապա թէ ոչ գտանիցէ ձեռն նորա բաւական լինել պատարագ,

[1] 3ԵԲԲ. պակաս [2] ԵԲԲ. երկուս եւթներորդս [3] ԵԲԲ. ի վերայ արեան սրբութեանն [4] ԵԲԲ. ձագ ապաստանեայ կամ տատրակ

առցէ երկուս տատրակս կամ երկուս ձագս ապաստանեայ. զմին յողջակէզ եւ զմիւսն վասն մեղաց, եւ քաւեսցէ վասն նորա քահանայն, եւ սրբեսցի։

ԳԼ. ԺԹ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ընդ
2 Ահարոնի եւ ասէ, Մարդոյ որուք եթէ լինիցի ի մորթի մարմնոյ իւրոյ նշան սպրդոյ, կամ պալար, կամ պաղպաղ, եւ լինիցի ի մորթի մարմնոյ նորա արած բորոտութեան, եկեսցէ առ Ահարոն քահանայ, կամ առ մի յորդւոց նորա
3 քահանայից։ Եւ տեսցէ քահանայն զարածն ի մորթի մարմնոյ նորա, եւ [1]կամթէ" մազ արածին ի սպիտակ գարձեալ իցէ, եւ տեսիլ արածին ցնաւագոյն իցէ քան զմորթի մարմնոյն, արած բորոտութեան է. եւ տեսցէ քահանայն եւ [5]պղծեսցէ
4 զնա"։ Ապա թէ պալպալոյն սպիտակ իցէ ի մորթի մարմնոյ նորա, եւ ցնաւագոյն չիցէ տեսիլ նորա քան զմորթն, եւ մազն ի սպիտակ չիցէ դարձեալ, [1]եւ ինքն չլուացին իցէ," զատեսցէ քահա-
5 նայն զարածն զեւթն օր։ Եւ տեսցէ քահանայն յաւուրն եւթներորդի, եթէ կայցէ նմանպէս արածն առաջի նորա, եւ չիցէ [6]փոխեալ արածն ի մորթն, զատեսցէ զնա քահանայն այլ եւս աւուրս
6 եւթն։ Եւ տեսցէ քահանայն յաւուրն եւթներորդի մեւս անգամ, եւ ահա չլացին իցէ արածն, եւ [1]չայլագունացիցէ [6]փոխեալ ի մորթն, [7]սրբեսցէ զնա" քահանայն. զի [8]նշան ինչ" է այն. եւ լուացեալ զձորձս
7 իւր եղիցի սուրբ։ Ապա թէ [9]չրջելով չրջեսցի նշանն" ի մորթն յետ տեսանելոյ զնա քահանային եւ սրբիցոյ, եւ ե-
8 րեւեցոյն մեւս անգամ քահանային։ Եւ տեսցէ քահանայն, եւ ահա [10]այլագունեալ իցէ նշանն" ի մորթն, պղծեսցէ զնա քահանայն, զի բորոտութիւն է։
9 Եւ արած բորոտութեան եթէ լինիցի մարդոյ, [11]եկեսցէ առ Ահարոն քահանայ".
10 Եւ տեսցէ քահանայն. եւ ահա պալար սպիտակ իցէ ի մորթն, եւ մազ նորա ի սպիտակ գարձեալ իցէ, եւ [12]յառողջ
11 եւ ի կենդանի մարմնոյ ի պալար", Բո-

[5] Իմա՝ ձանուսցէ թէ պիղծ է [6] ԵԲԲ. տարածեալ [7] Իմա՝ ձանուսցէ թէ սուրբ է [8] ԵԲԲ. քոս [9] ԵԲԲ. տարածելով տարածեացի քոսն [10] ԵԲԲ. տարածեալ իցէ քոսն [11] ԵԲԲ. տարցի առ քահանային [12] ԵԲԲ. առողջութիւն մսոյ կենդանւոյ ի պալարի անդ

բոտութիւն հնացեալ իցէ ի մորթ մարմնոյ նորա. պղծեսցէ զնա քահանայն, եւ [1]զատուսցէ զնա զի պիղծ է։
12 Ապա թէ ածելով ածեսցի բորոտութիւնն ընդ մորթն, եւ ծածկեսցէ բորոտութիւնն զամենայն մորթ երանայն ի գլխոյ մինչեւ ցոտս, ըստ ամենայն տեսոյ[2]
13 քահանային, եւ տեսանիցէ քահանայն եւ ահա ծածկեաց բորոտութիւնն զամենայն մորթ մարմնոյն, [3]սրբեսցէ քահանայն զարածն. քանզի ամենայն ի սպիտակ դարձաւ, սուրբ է։ եւ յորում աւուր երեւեսցի ինձա մարմնին կենդանի,
15 պղծեսցի։ եւ տեսցէ քահանայն զմարմինն կենդանի, եւ պղծեսցէ զսուրբ մարմինն. եւ պիղծ լիցի, քանզի բորոտութիւն է։ Ապա թէ անդրէն հաստատեսցի մարմինն ողջ եւ դարձցի ի սպիտակ, եկեսցէ առ քահանայն. եւ տեսանիցէ զնա քահանայն, եւ ահա դարձեալ իցէ արածն նորա ի սպիտակ, սրբեսցէ քահանայն զարածն. քանզի սուրբ է։
18 Եւ մարդոյ եթէ լինիցի ի մորթ նորա
19 կեղ եւ ողջասցի, եւ եղիցի ի տեղի կեղոյն սպիտակ փայլուն, յանացեալ կամ կարմրացեալ, եւ երեւեսցի քահանային եւ տեսանիցէ քահանայն, եւ ահա տեսիլն խորագոյն քան զմորթն իցէ, եւ մազն ի սպիտակ դարձեալ իցէ, պղծեսցէ զնա քահանայն. զի բորոտութիւնէ ընդ կեղոյն
21 բորբոքեալ։ Իսկ եթէ տեսանիցէ քահանայն եւ չիցէ ի նմա մազ սպիտակ, եւ ոչ խորագոյն իցէ քան զմարմինն, եւ ինքն չագոյն իցէ, զատուսցէ զնա քահանայն
22 զեւթն օր։ եթէ ածելով ածեսցի ընդ մորթն, պղծեսցէ զնա քահանայն. քանզի արած [4]բորոտութեան ընդ կեղոյն բորբոքեցաւ։
23 Ապա եթէ անդէն ի տեղւոջ կացցէ փայլունն եւ ոչ տարածեսցի, ապի կեղոյն է. սրբեսցէ զնա քահանայն։
24 Եւ մարմնոյ եթէ լինիցի ի մորթ նորա այրեցած հրոյ, եւ լինիցի ողջացեալ մորթ նորա յայրեցածէ տանի, եւ լինիցի տեղի այրեցածին փայլուն կամ պազպազ սպիտակ, կամ կարմրացեալ,
25 կամ լծացեալ, եւ տեսանիցէ զնա քահանայն, եւ ահա փոխեալ իցէ մազն ի սպիտակ ի փայլուն, եւ տեսիլ նորա զիջագոյն իցէ քան զմորթն, բորոտութիւն է ընդ այրեցածին բորբոքեալ. եւ պղծեսցէ զնա քահանայն, զի արած
26 բորոտութեան է։ Եւ եթէ տեսանիցէ քահանայն, եւ ահա չիցէ ի նմա փայլուն քան զմաշկն, եւ ոչ զնատագոյն քան զմորթն, բայց չագոյն իցէ, զատուսցէ զնա քահանայն զեւթն
27 օր։ Եւ տեսցէ զնա քահանայն յաւուրն եւթներորդի, եթէ ածելով ածեսցի ընդ մորթն, պղծեսցէ զնա քահանայն. զի արած բորոտութեան է [5]ընդ
28 կեղոյն բորբոքեալ։ Եւ եթէ ի նմին տեղւոջ կացցէ փայլունն եւ ոչ ածեսցի ընդ մորթն, եւ ինքն չագոյն իցէ, ապի այրեցածոյն է. սրբեսցէ զնա քահանայն. զի դրոշմ այրեցածոյն է։
29 Եւ առն կամ կնոջ՝ եթէ լինիցի արած [5]բորոտութեան ի գլուխ կամ ի մօրուս,
30 եւ տեսանիցէ քահանայն զարածն, եւ ահա տեսիլ նորա զնատագոյն իցէ քան զմորթն, եւ ինձա մազ ազուամազ խարտեչացեալ, պղծեսցէ զնա քահանայն. քանզի [6]հարած է, բորոտութիւն գլխոյ է,
31 կամ բորոտութիւն մօրուսք։ Եւ եթէ տեսանիցէ քահանայն զարած հարածոյն, եւ ահա չիցէ զնատագոյն տեսիլն քան զմորթն, եւ ոչ մազ [7]խարտեչացեալ ի նմա, զատուսցէ քահանայն զարած հա-
32 րածին զեւթն օր։ Եւ տեսանիցէ քահանայն զարածն յաւուրն եւթներորդի. եւ ահա չիցէ տարածեալ հարածն ընդ մորթն, եւ մազ խարտեչացեալ չիցէ ի նմա, եւ ոչ տեսիլ հարածոյն զնատագոյն իցէ
33 քան զմորթն, [8]գերծցէ զնա", բայց զնա րածն մի գերծցէ. եւ զատուսցէ քահանայն զարածն զեւթն օր կրկին անգամ։
34 Եւ տեսանիցէ քահանայն զարածն յաւուրն եւթներորդի. եւ ահա չիցէ ածեալ հարածն ընդ մորթն [9]յետ գերծանելոյն զնա", եւ տեսիլ հարածոյն չիցէ զնատագոյն քան զմորթն, սրբեսցէ զնա քահանայն. եւ լուացեալ զձորձս իւր՝ եղիցի
35 սուրբ։ Ապա թէ ածելով ածեսցի հարածն ընդ մորթն յետ [9]գերծելոյն զնա,
36 եւ տեսանիցէ զնա քահանայն. եւ ահա ածեալ իցէ հարածն ընդ մորթն, մի դարմանեսցէ քահանայն զհան խարտեաչ
37 մազոյն, զի պիղծ է։ Իսկ եթէ կայցէ ի տեղւոջ հարածն, եւ մազ թուխ

[1] ԵՔԲ. մի՛ փակեսցէ [2] ՆԵՔԲ-ՅԵԷՆ յ-ԻԵԼ-, ալաց
[3] Իմա՝ ծանուսցէ թէ սուրբ է, այլոց ե ապրէ-
[4] ԵՔԲ. է այն
[5] ՅԵՔԲ. գլ-ւ-ե [6] ԵՔԲ. զանջութիւն, այլոց կամ ապրէ- [7] ԵՔԲ. թուխ [8] ԵՔԲ. Գերծցի
[9] ԵՔԲ. սրբելոյն

եկեսցէ ի նմա, ողջացաւ հարածն. սուրբ
է, եւ սրբեսցէ զնա քահանայն։
38 Եւ առն կամ կնոջ եթէ լինիցի ի
մորթի մարմնոյ իւրոյ փայլուն ինչ փայ-
39 լածին լնացեալ, եւ տեսանիցէ քահա-
նայն, եւ ահա ի մորթի մարմնոյ նորա փայ-
լին փայլածուն լնացեալ, թեփուկէ տա-
բածեալ ի մորթի մարմնոյ իւրոյ. սուրբ է։
40 Եւ եթէ մաչտեսցի գլուխ ոմանք՝
41 կռնատ է, սուրբ է։ Եւ եթէ յերեսաց
կողմանէ մաչելոյն գլուխ նորա՝ ճակ է,
42 սուրբ է։ Ապա թէ լինիցի ի կնատեղեան
նորա կամ ի ճակատեան արած սպիտակ
կամ կարմրագեղ, բորոտութիւն թա-
քուցեալ է ի կնատեղեան նորա կամ ի
43 ճակատեան։ Եւ տեսանիցէ զայն քա-
հանայն. եւ ահա տեսիլ արածին սպի-
տակ իցէ կամ կարմրադոյն ի կնատե-
ղեան նորա կամ ի ճակատեան, իբրեւ
զտեսիլ բորոտութեան ի մորթի մարմնոյ
44 նորա, Այր բորոտեալ է, պիղծ է.
պղծելով պղծեսցէ զնա քահանայն. զի ի
գլուխ իւրում է արածն իւր։
45 Եւ բորոտ յորում իցէ արած, հան-
դերձ նորա քակեալ լիցի, եւ գլուխ նո-
րա մերկ, եւ զբերան իւր պատեսցէ,
46 եւ [1]պիղծ կոչեսցի՝։ Զամենայն աւուրս
որչափ իցէ ի նմա արածն, պիղծ եղիցի.
եւ պիղծ է, մեկնեալ նստցի. եւ արտա-
քոյ բանակին եղիցի բնակութիւն նորա։
47 Եւ ձորձ յորում լինիցի արած բորո-
տութեան, եթէ ի ձորձ ասուի, եթէ ի
48 ձորձ կտաւի, եթէ յառէջ, եթէ ի թե-
զան, եթէ ի կտաւիս եւ եթէ յասուիս,
եթէ ի մորթ եւ եթէ յամենայն մաչ-
49 գործոյ, եւ լինիցի արած կանաչացեալ
կամ կարմրացեալ՝ ի մորթ կամ ի հան-
դերձ, կամ յառէջ կամ ի թեզան, կամ
յամենայն մորթ գործոյ, կամ յանօթ
ինչ, արած բորոտութեան իցէ, եւ
50 ցուցցէ քահանային։ Եւ տեսցէ քահա-
նայն զարածն, եւ պատսպասցէ քահանայն
51 զարածն վեցերորդ օր։ Եւ տեսցէ քահա-
նայն զարածն յաւուրն եւթներորդի.
եթէ սփռեալ իցէ արածն ընդ ձորձն
կամ ընդ առէջ կամ ընդ թեզան կամ
[2]ընդ կտաւիս կամ ընդ ասուիս կամ՝ ընդ
մորթ, ըստ ամենայնի որպէս եւ զոր-
ծիցի մորթ ի գործ, [3]բնակ բորոտու-
52 թիւն է արածն. պիղծ է։ Եւ այրեսցէ

զգործան եթէ առէջ իցէ, եւ եթէ թե-
զան, յասուեացն կամ ի կտաւեացն կամ
յամենայն մաչկեղէն նիւթոյ, յորում
իցէ արածն. քանզի [3]բնակ բորոտութիւն
53 է, հրով այրեսցի։ Ապա թէ տեսանիցէ
քահանայն եւ չիցէ սփռեալ հարածն
ընդ հանդերձն կամ ընդ առէջն կամ ընդ
թեզանն կամ ընդ [2]ասուն կամ ընդ կը-
տաւն կամ ընդ՝ ամենայն անօթ մաչ-
54 կեղէն, Հրամայեսցէ քահանայն, եւ
լուացցեն յորում իցէ արածն. եւ զա-
տեսցէ քահանայն զարածն զերկրն օր
55 երկիցս անդամ։ Եւ տեսցէ քահանայն
յետ լուանալոյ զարածն. եթէ չիցէ
փոխեալ տեսիլ արածին, եւ ոչ սփռեալ
իցէ արածն, պիղծ է, հրով այրեսցի.
[4]զի հաստատեալ է ի հանդերձին կամ
56 յառէջն կամ ի թեզան՝։ Եւ եթէ տես-
անիցէ քահանայն եւ չլագոյն իցէ ա-
րածն յետ լուանալոյն զնա, պատա-
ռեսցէ զայն ի հանդերձէ անտի կամ ի
մորթոյն կամ յառիջէ կամ ի թեզանոյ։
57 Ապա թէ դարձեալ երեւեսցի ի հանդեր-
ձին կամ յառէջ կամ ի թեզան կամ
յամենայն անօթ մաչկեղէն, բորոտու-
թիւն բորբոքեալ է. հրով այրեսցի յո-
58 րում իցէ արածն։ Եթէ հանդերձ իցէ,
եւ եթէ առէջ, եւ եթէ թեզան, եւ
եթէ ամենայն անօթ մաչկեղէն որ լուա-
նայցի եւ եւանիցէ ի նմանէ արածն,
59 կրկին լուասցի եւ սուրբ լիցի։ Այս օ-
րէնն իցէ արածի բորոտութեան ասուեայ
հանդերձի կամ կտաւոյ կամ առիջոյ
կամ թեզանոյ կամ ամենայն մաչկեղէն
անօթոյ, ի սրբել կամ ի պղծել զնա։

Գլ. ԺԴ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
2 Այս օրէնն եղիցի բորոտի յաւուր յորում
3 սրբեսցի. Անցցէ առ քահանայն։ Եւ ել-
ցէ քահանայն արտաքոյ բանակին, եւ
տեսանիցէ քահանայն. եւ ահա բժշկ-
եալ իցէ արած բորոտութեանն ի բորո-
4 տէ անտի, Հրամայեսցէ քահանայն,
եւ առցեն սրբելոյն երկուս հաւս կեն-
դանիս սուրբս, եւ փայտ եղեւնեայ եւ
5 [5]կարմիր մանեալ՝ եւ զոպա։ Եւ հրամայեսցէ
տացէ քահանայն, եւ սպանցեն զմի
հաւն յանօթի խեցեղէնի ի վերայ ջրոյ կեն-
6 դանւոյ։ Եւ զհաւն կենդանի առցէ, եւ

[1] ԵՒբ. գոչեսցէ՝ Պիղծ, պիղծ [2] ՅԵՒբ. դ-ոլ-ոե
[3] ԵՒբ. զայրացեալ
[4] ԵՒբ. փոխեալ է ի ներքոյ նորա, կամ արտա-
քոյ նորա [5] ԵՒբ. որդան կարմիր

զիայան եգեւնեայ եւ [1]կարմիրն մանեայ" եւ զղոսպայն, եւ թացցէ վնասս եւ զնան կենդանի յարիւն հաւուն սպանելոյ ի վերայ ջրոյն կենդանւոյ։ եւ զանեսցէ ի վերայ սրբկոյն ի բորոտաւթենէ եւթն անգամ, եւ սրբեսցէ զնա. եւ արձակեսցէ զնան կենդանի ի գաչտ։ եւ լուասցէ [2]սրբեալն զձորձս իւր, եւ կերծցէ զամենայն զմազ իւր, եւ լուասցի ջրով եւ սուրբ լիցի. եւ ապա մտցէ ի բանակն, եւ լիցի արտաքոյ ասն իւրոյ զեւթն օր։ եւ յաւուրն եւթներորդի կերծցէ զամենայն զմազ իւր եւ զգլուխ եւ զմօրուս եւ զյօնս, եւ զամենայն զմազ իւր կերծցէ. եւ ողոլսցէ զնանկերձս իւր, եւ լուասցէ զմարմին իւր ջրով, եւ սուրբ լիցի։

եւ յաւուրն ութներորդի առցէ երկուս գառինս անարատս [3]առնուրս, եւ որոջ մի անարատ առնուր, եւ երիս տասանորդս նաչխոյ ի գոհ իւզով զանգեալ, եւ ճաչակ մի իւղոյ։ եւ կացուսցէ քահանայն որ սրբիցէ զայն որ սրբիցի, եւ [4]զայն՝ առաջի" խորանին վկայութեան։ եւ առցէ քահանայն զմի գառնն, եւ մատուսցէ զնա վասն յանցանացն, եւ զճաչակն իւղոյ, եւ [5]նուիրեսցէ զայն նուէր" առաջի Տեառն։ եւ սպանցէ զգառնն [3]զնուա ի տեղւոջն ուր սպանանիցին զողջակէզն եւ զվասն մեղացն ի սուրբ տեղւոջ. զի որպէս որ վասն մեղացն իցէ, նոյնպէս եւ որ վասն յանցանացն իցէ, եւ եղիցի քահանային. զի սրբութիւն սրբութեանց է։ եւ առցէ քահանայն յարիւնէ այնր որ վասն յանցանացն իցէ, եւ դիցէ քահանայն յարիւնէ անտի ի վերայ բլթակի աջոյ ունկան այնորիկ որ սրբիցին, եւ ի վերայ [6]ծայրի աջոյ ձեռին նորա եւ ի վերայ [6]ծայրի ոտին նորա աջոյ։ եւ առեալ քահանային ի ճաչակէ անտի իւղոյ՝ արկցէ ի ձախոյ ձեռն քահանային։ եւ թացցէ քահանայն զմատն իւր աջոյ յիւղոյ անտի որ իցէ ի ձեռին իւրում ձախոյ, եւ ցանեսցէ մատամբ իւրով եւթն անգամ առաջի Տեառն։ եւ զմիւսեայ եւզն ի ձեռին իւրում՝ դիցէ քահանայն ի վերայ բլթակի աջոյ ունկան այնորիկ որ սրբիցին, եւ ի վերայ [7]ծայրի աջոյ ձեռին նորա եւ ի վերայ [7]ծայրի ոտին նորա աջոյ։ եւ զմնացեալն եւզն որ իցէ ի ձեռին քահանային՝ արկցէ ի գլուխ սրբիցելոյն, եւ քաւեսցէ վասն նորա քահանայն առաջի Տեառն։ եւ արասցէ զմի ի տատրակաց անտի կամ ի ձագուցն աստանաւոյ՝ զոր ընչին զոր եգիցէ ձեռն իւր, զմին՝ վասն մեղացն, եւ զմին ողջակէզ հանդերձ զոհիւն. եւ քաւեսցէ քա-

զիայան եգեւնեայ եւ [1]կարմիրն մանեայ" եւ զղոսպայն, եւ թացցէ վնասս եւ զնան կենդանի յարիւն հաւուն սպանելոյ ի վերայ ջրոյն կենդանւոյ։ եւ զանեսցէ ի վերայ սրբկոյն ի բորոտաւթենէ եւթն անգամ, եւ սրբեսցէ զնա. եւ արձակեսցէ զնան կենդանի ի գաչտ։ եւ լուասցէ [2]սրբեալն զձորձս իւր, եւ կերծցէ զամենայն զմազ իւր, եւ լուասցի ջրով եւ սուրբ լիցի. եւ ապա մտցէ ի բանակն, եւ լիցի արտաքոյ ասն իւրոյ զեւթն օր։ եւ յաւուրն եւթներորդի կերծցէ զամենայն զմազ իւր եւ զգլուխ եւ զմօրուս եւ զյօնս, եւ զամենայն զմազ իւր կերծցէ. եւ ողոլսցէ զնանկերձս իւր, եւ լուասցէ զմարմին իւր ջրով, եւ սուրբ լիցի։

եւ յաւուրն ութներորդի առցէ երկուս գառինս անարատս [3]առնուրս, եւ որոջ մի անարատ առնուր, եւ երիս տասանորդս նաչխոյ ի գոհ իւզով զանգեալ, եւ ճաչակ մի իւղոյ։ եւ կացուսցէ քահանայն որ սրբիցէ զայն որ սրբիցի, եւ [4]զայն՝ առաջի" խորանին վկայութեան։ եւ առցէ քահանայն զմի գառնն, եւ մատուսցէ զնա վասն յանցանացն, եւ զճաչակն իւղոյ, եւ [5]նուիրեսցէ զայն նուէր" առաջի Տեառն։ եւ սպանցէ զգառնն [3]զնուա ի տեղւոջն ուր սպանանիցին զողջակէզն եւ զվասն մեղացն. զի որպէս որ վասն մեղացն իցէ, նոյնպէս եւ որ վասն յանցանացն իցէ, եւ եղիցի քահանային. զի սրբութիւն սրբութեանց է։ եւ առցէ քահանայն յարիւնէ այնր որ վասն յանցանացն իցէ, եւ դիցէ քահանայն յարիւնէ անտի ի վերայ բլթակի աջոյ ունկան այնորիկ որ սրբիցին, եւ ի վերայ [6]ծայրի աջոյ ձեռին նորա եւ ի վերայ [6]ծայրի ոտին նորա աջոյ։ եւ առեալ քահանային ի ճաչակէ անտի իւղոյ՝ արկցէ ի ձախոյ ձեռն քահանային։ եւ թացցէ քահանայն զմատն իւր աջոյ յիւղոյ անտի որ իցէ ի ձեռին իւրում ձախոյ, եւ ցանեսցէ մատամբ իւրով եւթն անգամ առաջի Տեառն։ եւ զմիւսեայ եւզն ի ձեռին իւրում՝ դիցէ քահանայն ի վերայ բլթակի աջոյ ունկան այնորիկ որ սրբիցին, եւ ի վերայ [7]ծայրի աջոյ ձեռին նորա եւ ի վերայ [7]ծայրի ոտին նորա աջոյ։ եւ զմնացեալ եւզն որ իցէ ի ձեռին քահանային՝ արկցէ ի գլուխ սրբիցելոյն, եւ քաւեսցէ վասն նորա քահանայն առաջի Տեառն։ եւ արասցէ զմի ի տատրակաց անտի կամ ի ձագուցն աստանաւոյ՝ զոր ընչին զոր եգիցէ ձեռն իւր, զմին՝ վասն մեղացն, եւ զմին ողջակէզ հանդերձ զոհիւն. եւ քաւեսցէ քա-

[1] ԵՓԲ. զորդան կարմիրն [2] ԵՓԲ. որ սրբեն [3] ՅԵՓԲ. պոլոխ [4] ԵՓԲ. զնոսա առաջի Տեառն ի դրան [5] ԵՓԲ. երեսեսցէ զնոսա երեսուն [6] ԵՓԲ. բուռթ [7] ԵՓԲ. ի բուռթի

[8] ԵՓԲ. յերեսուն [9] ԵՓԲ. երեսեսցէ զնոսա քահանայն յերեսուն

հանայն վասն սրբեցելոյն առաջի Տեառն։
32 Այս օրէն լիցի յորում լիցի սրած բորո-
տութեան, եւ որ ոչ գտանիցի ի ձեռին
բաւական լինելոյ ի սրբութիւն իւր։
33 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ
34 Ահարոնի եւ ասէ, Յորժամ մտանիցէք
յերկիրն Քանանացւոց զոր ես տայ ձեզ
ի ստացուած, եւ տայցեմ սրած բորո-
տութեան ի տունս երկրին ստացուածոյ
35 ձերոյ, եւ գայցէ որոյ տունն իցէ, եւ
պատմիցէ քահանային եւ ասիցէ, Նման
36 Սրած ինն երեւեցաւ ի տան իմում։ Հրա-
ման տացէ քահանայն թաւալել զտունն,
մինչչեւ մտանել իցէ քահանային տես-
նել զտունն, եւ մի պղծեսցէ զամենայն
ինչ որ ի տանն կայցէ. եւ ապա մտցէ
37 քահանայն սրտնել զտունն. եւ տեսա-
նիցէ քահանայն զսրածն յորմս տանն,
ընտապոյնս, կանաչս կամ կարմրագե-
38 ղս, եւ տեսիլ նորա ընտագոյն իցէ
քան զյորմսն, եւ ելեալ քահանայն ի
տանէ անտի ի դուռն տանն, զաւուրսն
39 քահանայն զտունն զերծն օր։ Եւ եկեսցէ
զարձեալ քահանայն յաւուրն երրորդի,
եւ տեսանիցէ զտունն. նման սրածոյ
40 իցէ սրածն ընդ որմս տանն, Հրաման
տացէ քահանայն, եւ քակեսցեն զքա-
րինան յորս սրածն իցէ, եւ հանցեն զնոսա
արտաքոյ քաղաքին ի տեղի անսուրբ։
41 Եւ քերեսցեն զտունն ի ներքոյ շուրջա-
նակի, եւ հեղցեն զքերուածն արտաքոյ
42 քաղաքին ի տեղի անսուրբ։ Եւ առցեն
այլ քարինս [1]քերածոյս, եւ դիցեն փո-
խանակ անոց քարանց, եւ այլ հող առ-
43 ցեն եւ ծեփեսցեն զտունն։ Եւ եթէ անդ-
րէն կրկնասցի սրածն, եւ երեւեսցի ի
տանին յետ քարինան քակելոյ եւ զտունն
44 քերելոյ եւ [1]մխաանգամ ծեփելոյ, Մտցէ
քահանայն եւ տեսցէ, եթէ սրեալ իցէ
սրածն ընդ տունն, [2]բնակ բորոտութիւն
45 է ի տանն, պիղծ է։ Քակեսցեն զտունն
եւ զքարինս նորա եւ զքերինս նորա եւ
զամենայն հող տանն, եւ հանցեն սրտ-
46 տարոյ քաղաքին ի տեղի անսուրբ։ Եւ
որ մտանիցէ ի տունն զամենայն աւուրս
զոյանալոյ նորա, պիղծ լիցի մինչեւ ե-
47 րեկոյ։ Եւ որ ննջիցէ ի տան անդ՝ լուասցէ
զձորձս իւր, [1]եւ պիղծ լիցի մինչեւ ե-
րեկոյ։" Եւ որ կերիցէ ի տանն՝ լուասցէ
զձորձս իւր, [1]եւ պիղծ լիցի մինչեւ ե-
48 րեկոյ։" Եւ եթէ եկեալ մտանիցէ քա-
հանայն եւ տեսանիցէ, եւ ահա չիցէ
սրեալ սրածն ընդ տունն յետ ծեփե-
լոյ զոյնն, սրբեսցէ քահանայն զտունն,
49 զի բժշկեցաւ սրածն։ Եւ առցէ առ ի
սրբելոյ զտունն երկուս հաս [1]կենդանիս
տուրբս", եւ փայտ եղեւնեայ եւ [3]կար-
50 միր մանեալ" եւ զոպայ։ Եւ սպանցէ զմի
հաւն յաման խեցեղէն ի վերայ ջրոյ կեն-
51 դանւոյ։ Եւ առցէ զփայտն եղեւնեայ
եւ [4]զկարմիրն մանեալ" եւ զզոպային եւ
զհաւն կենդանի, եւ թաւցցէ զնոսա յար-
եան հաւսն սպանելոյ եւ ի վերայ ջրոյ
կենդանւոյ, եւ յանեսցէ նոքօք զտամբն
52 եւ[2]ն անգամ. Եւ սրբեսցէ զտունն ար-
եամբ հաւսն եւ ջրովն կենդանեաւ եւ
հաւսն կենդանեաւ եւ փայտիւն եղեւ-
նեաւ եւ զոպայիւն եւ [5]կարմրովն մա-
53 նեալով". Եւ արձակեսցէ զհաւն կենդանի
արտաքոյ քաղաքին ի դաշտ, եւ քա-
ւեսցէ վասն տանն, եւ մաքրեսցի [1]եւ
54 սուրբ եղիցի". Այս օրէն լիցի ըստ ամե-
նայն սրածոյ բորոտութեան եւ հա-
55 րածի, Եւ բորոտութեան հանդերձի եւ
56 տան, Եւ սպեաց եւ պալարի եւ պաղ-
57 պաղոյ։ Նշանակելոյ թէ յորում աւուր
պղծիցի եւ յորում աւուր սրբիցի, այս
օրէն լիցի բորոտութեան։

ԳԼ. ԺԵ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ Ա-
2 հարոնի եւ ասէ, Խօսեաց ընդ որդիսդ
Իսրայէլի եւ ասասցես ցդոսա, Առն ու-
րոյք առն որոյ լինիցի ծորումն ի մարմ-
3 նոյ իւրոյ, ծորումն իւր պիղծ է։ Եւ այս
[6]օրէն լիցի սրբութեան նորա, որոյ ծո-
րիցէ սերմն ի մարմնոյ իւրմէ, կամ թէ
հալիցի մարմին նորա ի ծորելոյն. պղծու-
թիւն իւր ի նմա է զամենայն աւուրս
ծորելոյ մարմնոյ իւրոյ, կամ թէ հալիցի
մարմին նորա ի ծորելոյ անտի", պղծու-
4 թիւն մարմնոյ է այն։ Ամենայն անկո-
ղին յորում ննջիցէ սերմնակաւքն՝ պիղծ
եղիցի. եւ ամենայն յորոյ վերայ նստիցի՝
5 պիղծ լիցի։ Եւ մարդ որ մերձենայցի յան-
կողնին նորա՝ ողողեսցէ զձորձս իւր, եւ
լուասցի ջրով, եւ պիղծ լիցի մինչեւ ե-

[1] ՅԵԲՐ. ԳՐԱԾ [2] ԵԲՐ. ՁԱՅՐԱՑԵԱԼ

[3] ԵԲՐ. ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ [4] ԵԲՐ. ՁՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐՆ
[5] ԵԲՐ. ՈՐԴԱՆ ԿԱՐՄՐԱՆՔ [6] ԵԲՐ. ԼԻՆԻՑԻ ՊՂԾՈՒ-
ԹԻՒՆ ՆՈՐԱ Ի ԾՈՐՄԱՆ ԻՒՐՈՒՄ. ԹԷ ՀՈՍԵՍՑԷ
ՄԱՐՄԻՆ ՆՈՐԱ ՁԾՈՐՈՒՄՆ ԻՒՐ, ԿԱՄ ԹԷ ԿԱՑՑԷ
ՄԱՐՄԻՆ ՆՈՐԱ Ի ԾՈՐԵԼՈՅՆ

6 բեկոյ ։ Եւ որ նաւիցի ի վերայ անօթոյ յորում նաւեալ իցէ սերմնակալին, ողողեսցէ զնա ջուր սրբութեան իւր եւ լուասցի ջրով,
7 եւ պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ ։ Եւ որ մերձենայցէ ի մարմին սերմնակալին, ողողեսցէ զձորձս իւր, եւ լուասցի ջրով,
8 եւ պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ ։ Եւ եթէ թօք սերմնակալին հասանիցէ ի սուրն, ողողեսցէ զձորձս իւր, եւ լուասցի ջրով,
9 եւ պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ ։ Եւ ամենայն հասիցս [1]իշոյ յորոյ վերայ նաւիցի սերմնակալին՝ պիղծ լիցի [1]մինչեւ ցերեկոյ"։
10 Եւ ամենայն որ մերձենայցի յամենայն որ ինչ ի ներքոյ նորա իցէ, պիղծ
11 լիցի մինչեւ [2]ցերեկոյ ։ Եւ յոր ինչ մերձենայցի սերմնակալին եւ զձիռս իւր ոչ լուանայցէ ջրով, ողողեսցէ զհանգերձս իւր, եւ լուասցէ զմարմին իւր ջրով, եւ
12 պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ ։ Եւ անօթ խեցեղէն յոր մերձենայցի սերմնակալին, փչրեսցի, եւ ամենայն անօթ փայտեղէն լուասցի ջրով, [1]եւ եղիցի սուրբ"։
13 Եւ եթէ սրբեսցի սերմնակալին ի բղխմանէ իւրմէ, համարեսցի իւր ևիմն օր ի սրբութիւն իւր, եւ ողողեսցէ զհանգերձս իւր, եւ լուասցէ զմարմին իւր
14 ջրով կենդանեաւ, եւ եղիցի սուրբ ։ Եւ յաւուրն ութերորդի առցէ երկուս ատտրակս կամ երկուս ձագս աղաւնեաց, եւ տարցի զայն առաջի Տեառն ի դուռն խորանին վկայութեան, եւ տացէ քահանային ։
15 Նայն ։ Եւ արասցէ քահանայն զմին վասն մեղաց, եւ զմին՝ յողջակէզ, եւ քաւեսցէ վասն նորա քահանայն առաջի Տեառն ի բղխմանէ անտի նորա ։
16 Եւ այր որ յորմէ ելանիցէ սերմն սերման, լուասցէ զամենայն մարմին իւր
17 ջրով, եւ պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ ։ Եւ ամենայն հանգերձ եւ մաշկ յորոյ վերայ հասանիցէ սերմն սերման, լուասցին ջրով, եւ պիղծ լիցին մինչեւ ցերեկոյ ։
18 Եւ կին ընդ որում հարկանիցի այր սերմամբ սերման, լուասցին ջրով, եւ պիղծ լիցին մինչեւ ցերեկոյ ։
19 Եւ կին որոյ [3]բղխիցէ արիւն, եւ լինիցի բղխումն արեան" նորա ի մարմնի իւրում, եղիցի օր եղիցի ի զաչտանի իւրում. ամենայն որ հարկանիցի ընդ նա,
20 պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ ։ Եւ ամենայն յորոյ վերայ ննջիցէ ի զաչտանին իւրում, եւ ամենայն յորոյ վերայ նաւիցի՝ պիղծ
21 լիցի ։ Եւ ամենայն որ մերձենայցէ յանկողինն նորա, ողողեսցէ զհանգերձս իւր, եւ լուասցէ զմարմին իւր ջրով, եւ պիղծ
22 լիցի մինչեւ ցերեկոյ ։ Եւ ամենայն որ մերձենայցէ յամենայն անօթ յորոյ վերայ նաւիցի նա, ողողեսցէ զհանգերձս իւր, եւ լուասցի ջրով, եւ պիղծ լիցի
23 մինչեւ ցերեկոյ ։ Եւ եթէ առկաւին յանկողնին իւրում իցէ, եւ կամ թէ ի վերայ անօթոյ իրիք յորոյ վերայ նաւեալ իցէ, ի մերձենալ ուրուք ի նա՝ պիղծ
24 լիցի մինչեւ ցերեկոյ ։ Եւ եթէ ննջելով ննջեսցէ ընդ նմա, եւ պղծութիւն նորա ի նմա իցէ, պիղծ լիցի զերեսին օր, եւ ամենայն անկողին յորոյ վերայ ննջիցէ՝ պիղծ լիցի [1]մինչեւ ցերեկոյ"։
25 Եւ կին որ բղխիցէ զբղխումն արեան զաւուրս բաժանման, ոչ ի ժամանակի զաչտանի իւրոյ, եւ եթէ բղխիցէ յետ զաչտանին իւրոյ, ամենայն աւուրք բղխման պղծութեան իւրոյ, այնպէս իցեն իբրեւ զաւուրս զաչտանին իւրոյ. եւ
26 եղիցի պիղծ ։ Եւ ամենայն անկողին յորոյ վերայ ննջիցէ զամենայն աւուրս բղխման իւրոյ, ըստ անկողնի զաչտանին իւրոյ լիցի անառուր, եւ ամենայն անօթ յորոյ վերայ նաւիցի՝ պիղծ լիցի ըստ պղծութեան աւուրց զաչտանին իւրոյ ։ Ամենայն որ մերձենայցի ի նա՝ պիղծ
27 լիցի, եւ ողողեսցէ զձորձս իւր, եւ լուասցէ զմարմին իւր ջրով, եւ պիղծ
28 լիցի մինչեւ ցերեկոյ ։ Սակայ եթէ սրբեսցի ի բղխմանէ անտի, համարեսցի իւր աւուրս եւթն, եւ ապա սրբեսցի ։ Եւ
29 յաւուրն եւթն, եւ ասցէ սրբեսցի ։ Եւ յաւուրն ութերորդի տացէ իւր երկուս ատտրակս կամ երկուս ձագս աղաւնեաց, եւ տարցի զայն առ քահանայն ի դուռն
30 խորանին վկայութեան ։ Եւ արասցէ քահանայն զմին վասն մեղաց, եւ զմին յողջակէզ. եւ քաւեսցէ վասն նորա քահանայն առաջի Տեառն ի բղխմանէ պղծութեան նորա ։
31 Եւ պահեսջիք զորդիսն Իսրայելի ի պղծութենանց իւրեանց, եւ ոչ մեռանիցին վասն անսրբութեան իւրեանց, առ ի պղծելոյ նոցա զխորանն իմ
32 որ է ի նոսա ։ Այս օրէնս իցէ սերմնակալին, եւ եթէ ելանիցէ յումեքէ սերմն
33 ի նա սերման՝ առ ի պղծելոյ նովաւ, եւ

[1] 8 Եբր. գալ-ոե [2] Եբր. գերեկոյ · և որ բառնայցէ զնոսա՝ լուասցէ զձորձս իւր · և լուասցի ջրով, և պիղծ լիցի մինչեւ գերեկոյ [3] Եբր. իցէ բղխումն , արիւն իցէ բղխումն

տեռատեսի ի դաչտանի իւրում, եւ սերմնակալին ի բղխման իւրում, արուին եւ իգի, եւ առն որ ննջիցէ ընդ դաչտանի։

ԳԼ. ԺԲ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի [1] եւ ասէ՝,
2 եթէ վախճանելոյ [2]որդւոցն Ահարոնի, [3]ի մատուցանել նոցա զնուէրն օտար՝ առաջի Տեառն եւ սատակել. եւ ասէ Տէր ցՄովսէս, Խօսեցաց ընդ Ահարոնի ընդ եղբօր քումի, եւ մի [4]մտցէն յամենայն ժամ ի սրբութիւնն ի ներքս քան զվարագոյրն յանդիման քաւութեանն, որ է ի վերայ տապանակի վկայութեանն, եւ ոչ մեռանիցի. զի ամպով երեւեցայց ի վերայ
3 քաւութեանն։ [5]Եւ ասա՝ մանաւանդ Ահարոն ի սրբութիւնն. զուարակաւ յանդուգն վասն մեղաց, եւ խոյիւ յողջակէզ։
4 Եւ [6]պատմուճան կտաւի սրբեալ զգեցցի, եւ անդրավարտիս կտաւիս ունիցի յանդամս իւր, եւ գօտի կտաւի ածեալ ընդ մէջ իւր, եւ խոյր կտաւի եդեալ ի գլուխ, զի հանդերձք սրբութեան են. եւ լուասցէ ջրով զամենայն մարմին իւր,
5 եւ զգեցցի զնոսա։ Եւ ի ժողովրդենէ որդւոցն Իսրայէլի առցէ երկուս նոխազս յայծեաց վասն մեղաց, եւ խոյ մի յողջակէզ։
6 Եւ մատուսցէ Ահարոն զզուարակն վասն մեղաց իւրոց, եւ քաւեսցէ
7 վասն իւր եւ վասն տան իւրոյ։ Եւ առցէ երկուս նոխազս եւ կացուսցէ զնոսա առաջի Տեառն առ դրան խորանին վկայութեան։
8 Եւ արկցէ Ահարոն ի վերայ երկուց նոխազացն վիճակս, վիճակ մի
9 Տեառն եւ վիճակ մի արձակելոյ։ Եւ մատուսցէ Ահարոն զնոխազն յորոյ վերայ [7]ելցէ վիճակն արձակելոյ, եւ կացուսցէ
10 զնա առաջի Տեառն կենդանի, Փաւելՙ նովաւ՝ առ արձակելոյ զնա յայծակումն, եւ թողլոյ զնա յանապատ. [1]եւ առցէ նոխազն յինքն զանօրէնութիւնս նոցա յանկոխն՝։
11 Եւ մատուսցէ Ահարոն զզուարակն զվասն մեղաց զիւր, եւ քաւեսցէ վասն իւր եւ վասն տան իւրոյ, եւ սպանցէ
12 զզուարակն զվասն մեղացն զիւր։ Եւ առցէ լի բուրուառաւ կայծակուսս հրոյ ի սեզանոյ առաջի որ է առաջի Տեառն, եւ լցցէ զձեռս իւր խնկով հանդերձանացն մանր ազացեալով, եւ տարցէ ի ներքս
13 քան զվարագոյրն։ Եւ դիցէ զխունկն ի վերայ հրոյն առաջի Տեառն, եւ ծածկեսցէ ծուխ խնկոյն զքաւութիւնն որ իցէ ի վերայ վկայութեանն, եւ ոչ մեռանիցի։
14 Եւ առցէ յարիւնէ զուարակին, եւ ցանեսցէ մատամբ իւրով ի վերայ քաւութեանն ընդ կողմն արեւելից ընդդէմ քաւութեանն, եւ ցանեսցէ եւթն անգամ յարիւնէ անտի մատամբ իւրով։
15 Եւ սպանցէ զնոխազն զվասն մեղաց, որ վասն ժողովրդենէն իցէ [1]առաջի Տեառն՝. եւ առցէ յարիւնէ անտի ի ներքս քան զվարագոյրն, եւ արասցէ զարիւն նորա զոր օրինակ արար զարիւն զուարակին. եւ ցանեսցէ զարիւն նորա ի վերայ [8]սեզանոյն յանդիման քաւութեանն։
16 Եւ քաւեսցէ զսրբութիւնն ի պղծութենանց որդւոցն Իսրայէլի եւ յանիրաւութենանց նոցա, վասն ամենայն մեղաց նոցա. եւ այսպէս արասցէ ի խորանին վկայութեան, [9]սատակելոյ ի նոսա ի մէջ
17 պղծութեան նոցա։ Եւ ամենեւին մարդ ոչ լինիցի ի խորանին վկայութեան ի մտանել նորա քաւել ի սրբութենանն, մինչեւ ելանիցէ եւ քաւեսցէ վասն իւր եւ վասն տան իւրոյ, եւ վասն ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի։
18 Եւ ելցէ ի սեզանն որ առաջի Տեառն, եւ քաւեսցէ ի վերայ նորա, եւ առցէ յարիւնէ զուարակին եւ յարիւնէ նոխազին, եւ դիցէ ի վերայ եղջերաց սեզանոյն չուրջ
19 չանակի։ Եւ ցանեսցէ յարիւնէ անտի մատամբ իւրով ի վերայ նորա եւթն անգամ, եւ մաքրեսցէ զնա, եւ սրբեսցէ զնա ի պղծութենանց որդւոցն Իսրայէլի։
20 Եւ վախճանեսցէ առ ի քաւելոյ զսրբութիւնն, եւ զխորանն վկայութեան եւ զսեզանն, [1]եւ վասն քահանայիցն սրբեսցէ՝, եւ մատուսցէ զնոխազն կենդանի
21 զանի. Եւ դիցէ Ահարոն զձեռս իւր ի վերայ գլխոյ նոխազին կենդանւոյ, եւ խոստովանի ի վերայ նորա զամենայն անօրէնութիւնս որդւոցն Իսրայէլի, եւ զամենայն անիրաւութիւնս նոցա եւ զամենայն զմեղս նոցա. եւ դիցէ զնոսա ի

---

[1] 3ԵԲԲ. պակ. [2]ԵԲԲ. երկուց որդւոցն [3]ԵԲԲ. ի մատչել նոցա [4]ԵԲԲ. մտցէ [5]ԵԲԲ. Այսուհետեւ [6]ԵԲԲ. շապիկ [7]ԵԲԲ. եւ վիճակն Տեառն, եւ արասցէ զնա վասն մեղաց. (10) Եւ զնոխազն յորոյ վերայ եւ վիճակն արձակելոյ՝ կացուսցէ կենդանի առաջի Տեառն, քաւել

[8] ԵԲԲ. քաւութեանն և [9] ԵԲԲ. զնակելոյ

վերայ գլխոյ նոխազին կենդանւոյ . եւ արձակեսցէ ի ձեռն առն պատրաստելոյ՝
22 յանապատ ։ Եւ տացէ նոխազն յանձն իւր զանօրէնութիւնս նոցա յերկիր անկոտն . եւ արձակեսցէ զնոխազն յանապատ ։
23 Եւ մտցէ Ահարոն ի խորանն վկայութեան , եւ մերկասցի զպատմուճանն կրատաւի զոր զգենոյր ի մատնելն իւրում
24 ի սրբութիւնն , եւ պիղծ զոյն անդ ։ Եւ լուասցէ զմարմին իւր ջրով ի տեղւոջն սրբութեան , եւ զգեցցի զպատմուճանն իւր . եւ ելեալ արասցէ զողջակէզն իւր եւ զողջակէզ ժողովրդեանն , եւ քաւեսցէ վասն իւր եւ [1]վասն տան իւրոյ եւ" վասն ժողովրդեանն [1]որպէս վասն քահանայիցն" ։ Եւ զճարպն որ վասն մեղայն իցէ՝
25 [2]հանցեն ի սեղանն" ։
26 Եւ որ արձակիցէ զնոխազն [1]ուխտեալ յարձակումն , լուացցէ զձորձս իւր , եւ լուասցէ զմարմին իւր ջրով , եւ ապա մտցէ ի բանակն ։
27 Եւ զղուարակն որ վասն մեղայ , եւ զնոխազն զվասն մեղայ , որոց արիւնն մուծաւ քաւել ի սրբութեանն , հանցեն արտաքոյ բանակին եւ այրեսցեն զնոսա հրով , եւ զմորթս նոցա եւ զմիս նոցա
28 եւ զաղբատառ նոցա ։ Եւ որ այրիցէն զնոսա՝ լուասցէ զհանգերձս իւր , եւ լուասցէ զմարմին իւր ջրով . եւ ապա մտցէ ի բանակն ։
29 Եւ եղիցի ձեզ այն օրէն յաւիտենական , յամսեանն եւթներորդի ի տասն ամսոյն , լկեսջիք զանձինս ձեր , եւ զամենայն գործ մի գործիցէք . բնակն եւ
30 պանդուխտն որ յեղեալ իցէ ի ձեզ ։ Զի յաւուրն յայնմիկ լինիցի քաւութիւն վասն ձեր՝ առ ի սրբելոյ զձեզ յամենայն մեղաց ձերոց առաջի Տեառն . եւ սրբեսա-
31 ջիք ։ Զի չաբաթ չաբաթուց է , եւ եղիցի ձեզ այն ի հանգիստ . եւ լկեսջիք զանձինս ձեր , զի օրէն յաւիտենական է ։
32 Եւ քաւեսցէ քահանայն զոր օծանիցեն , եւ զորոյ կատարիցեն զձեռս նորա քահանայանալ յետ հօր իւրոյ , եւ զգեցցի զպատմուճանն կտաւի՝ պատմուճանն
33 սուրբ . Եւ քաւեսցէ զսրբութիւն սրբութեանցն , եւ զխորանն վկայութեան եւ զսեղանն . եւ քաւեսցէ վասն քահանայիցն , եւ վասն ամենայն ժողովրդեանն
34 քաւեսցէ ։ Եւ եղիցի ձեզ այն օրէն յաւիտենական՝ քաւել վասն որդւոցն Իսրայելի յամենայն մեղաց նոցա մի անգամ [3]ի տարւոջ առնելի ," որպէս հրամայեաց Տէր Մովսէսի ։

[1] 3 Եբր. գ-ի-ա-ե [2] Եբր. այրեսցէ ի վերայ սեղանոյն

Գլ . ԺԷ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ ,
2 Խօսեաց զոյս ընդ Ահարոնի եւ ընդ որդիս նորա եւ ընդ ամենայն որդիսն Իսրայել
3 ի , եւ ասասցես ցնոսա , Այս բան է զոր պատուիրեաց Տէր եւ ասէ . Այր ոք այր յորդւոցն Իսրայելի որ սպանանիցէ արջառ կամ ոչխար կամ այծ ի բանակի , եւ որ ոք սպանանիցէ արտաքոյ բանակին ,
4 [1]եւ ի դուռն խորանին վկայութեան ոչ ածիցէ զայն , առ առնելոյ զնա յողջակէզ վասն փրկութեան՝ Տեառն ընդդատնելի ի հոտ անուշից . եւ որ սպանանիցէ արտաքոյ ," եւ ի դուռն խորանին վկայութեան ոչ ածիցէ առ ի մատուցանելոյ պատարագ Տեառն յանդիման խորանին վկայութեան Տեառն , յարիւն համարեսցի մարդոյն այնմիկ . որպէս թէ արիւն եւ հեղ . սատակեսցի անձն այն ի ժողովրդե-
5 ւենէ իւրմէ . Որպէս զի ածիցեն որդիքն Իսրայելի զզոհս իւրեանց՝ զոր ինքեանք սպանանիցեն ի գաշտս , եւ մատուսցեն առաջի Տեառն ի դուռն խորանին վկայութեան առ քահանայն , եւ զենուսցեն զնոսա զնաւսն փրկութեան՝ Տեառն ։
6 Եւ [4]հեղցէ քահանայն զարիւնն առ սեղանովն յանդիման Տեառն , առ դրան խորանին վկայութեան , եւ [5]հանցեն զճարպն
7 ի հոտ անուշից Տեառն ։ Եւ ոչ եւս զոհիցեն զզոհս իւրեանց սատանայ զորոց զնա ինքեանք պոռնկէին . օրէն յաւիտենական եղիցի ձեզ յազգս ձեր ։ Եւ
8 ասասցես ցնոսա , Մարդ ոք մարդ յորդւոցն Իսրայելի , եւ յորդւոց եկաց յեղեալ ի ձեզ , որ առնիցէ ողջակէզ կամ
9 զոհ , եւ ի դուռն խորանին վկայութեան ոչ ածիցէ առնել զնա Տեառն , սատակեսցի մարդն այն ի ժողովրդենէ իւրմէ ։
10 Եւ մարդ ոք մարդ յորդւոցդ Իսրայելի կամ յեկաց յեղելոց ի ձեզ , որ ուտիցէ զամենայն արիւն , հատուսցեմ զերեսս իմ ի մերայ անձինն որ ուտիցէ զարիւնն , եւ կորուսից զնա ի ժողովրդենէ իւրմէ .
11 Զի չունչ ամենայն մարմնոյ արիւն իւր

[3] Եբր. ի տարւոջ ։ Եւ արար [4] Եբր. սրակեսցէ
[5] Եբր. այրեսցէ

է. եւ ես եաւ զայն ձեզ ի սեղանն՝ քա-
ւել վասն անձանց ձերոց. զի արիւն
[1]նորա փոխանակ անձին [1]որում քաւես-
12 ցէ, վասն այնորիկ ասացի ցորդիսն Իս-
րայելի, Ամենայն անձն ի ձէնջ արիւն մի՛
կերիցէ. եւ ակն որ եկեալ լիցէ
13 ի ձեզ՝ արիւն մի՛ կերիցէ։ Եւ մարդ ոք
մարդ յորդւոցն Իսրայելի կամ յեկեալ յե-
ցելոց ի ձեզ, որ որսացէ որս երէ ինչ
կամ թռչուն որ ուտիցի, հեղցէ զարիւնն
14 նորա եւ ծածկեսցէ հողով։ Զի չունչ ա-
մենայն մարմնոյ արիւն իւր է. եւ ասացի
ցորդիսն Իսրայելի, Զարիւն ամենայն
մարմնոյ մի՛ ուտիցէք, զի չունչ ամե-
նայն մարմնոյ արիւն իւր է. ամենայն
որ ուտիցէ զայն՝ սատակեսցի։
15 Եւ ամենայն անձն որ ուտիցէ զմեռե-
լոսի կամ զպատառեալ, ի բնակաց կամ
ի պանդխտաց, ողողեսցէ զհանգերձս իւր,
եւ լուասցէ զմարմին իւր, եւ պիղծ լիցի
մինչեւ ցերեկոյ, եւ ապա սուրբ լիցի.
16 եւ եթէ ոչ ողողեսցէ զհանգերձս իւր,
եւ ոչ լուասցէ զմարմին իւր ջրով, ըն-
կալցի զանօրէնութիւնս յանձն իւր։

ԳԼ. ԺԸ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
2 Խօսեաց ընդ որդիսն Իսրայելի եւ ասա-
ցես ցնոսա, Ես եմ Տէր Աստուած ձեր։
3 Ըստ ամենայն գնացից երկրին Եգիպ-
տացւոց յորում պանդխտեցարուք՝ մի՛
առնիցէք, եւ ըստ գնացից երկրին Քա-
նանացւոց յոր ես տարայց զձեզ՝ մի՛ առ-
նիցէք, եւ ըստ օրինաց նոցա մի՛ գնայ-
4 ցէք։ Զիրաւունս իմ արասջիք, եւ
զհրամանս իմ պահեսջիք, գնալ ի նոսա.
5 ես եմ Տէր Աստուած ձեր։ Եւ պահես-
ջիք զամենայն հրամանս իմ եւ զամե-
նայն զիրաւունս իմ, եւ արասջիք զնո-
սա, զոր արարեալ մարդոյ՝ կեցցէ նո-
քօք. ես եմ Տէր [1]Աստուած ձեր"։
6 Մարդ ոք մարդ առ ամենայն ընտա-
նութիւն մարմնոյ իւրոյ մի՛ մերձենայք՝
յայտնել զառականս նորա. [1]զի ես եմ
7 Տէր։ Զառականս հօր քո եւ զառականս
մօր քո մի՛ յայտնեսցես. զի մայր քո է,
եւ մի՛ յայտնեսցես զառականս նորա։
8 Զառականս կնոջ հօր քո մի՛ յայտնես-
9 ցես. զի առականք հօր քումն են։ Զա-
ռականս քեռ քո, մի՛ առ ի հօրէ իւրմէ
կամ առ ի մօրէ, ի տան ծնեալ կամ ար-
տաքոյ, մի՛ յայտնեսցես զառականս նո-
10 րա։ Զառականս դստեր ուստեր քո կամ
դստեր դստեր քո, մի՛ յայտնեսցես զա-
ռականս նոցա. զի առականք քո են։
11 Զառականս դստեր կնոջ հօր քո մի՛ յայտ-
նեսցես, զի համահօրեայ քոյր քո է. մի՛
12 յայտնեսցես զառականս նորա։ Զառա-
կանս հօրաքեռ քո մի՛ յայտնեսցես. զի
13 ընտանի հօր քո է։ Զառականս մօրաքեռ
քո մի՛ յայտնեսցես, զի ընտանի մօր քո
14 է։ Զառականս հօրեղբօր քո մի՛ յայտնես-
ցես, եւ ան կին նորա մի՛ մտանիցես, զի
15 [2]աղգական քո է։ Զառականս նուսոյ քո
մի՛ յայտնեսցես, զի կին որդւոյ քո է.
մի՛ յայտնեսցես զառականս նորա։ [1]Եւ
զպատառ ուստեր նորա, կամ զդուստր
դստեր նորա մի՛ առնուցուս՝ յայտնել զա-
ռականս նոցա, զի ընտանի են քո. ամ-
16 պարշտութիւն է։" Զառականս կնոջ եղ-
բօր քո մի՛ յայտնեսցես, զի առականք
17 եղբօր քումն են։ Զառականս կնոջ եւ
զդստեր իւրոյ մի՛ յայտնեսցես. զդուստր
ուստեր նորա եւ զդուստր դստեր նորա
մի՛ առնուցուս՝ յայտնել զառականս նո-
ցա, զի ընտանի քո են. ամպարշտու-
18 թիւն է։ Կին առ քեռր իւրով մի՛ առնու-
ցուս նախանձելոյ[3]՝ յայտնել զառա-
կանս նորա առ նովաւ կենդանւոյն։
19 Եւ առ կին ի պաշտանի պղծութեան
իւրոյ մի՛ մտանիցես՝ յայտնել զառականս
նորա։
20 Եւ ի կին ընկերի քո մի՛ տացես զա-
րուքիւն սերման քո, առ ի պղծելոյ ընդ
21 նմա։ Եւ ի սերմանէ քումմէ մի՛ տացես
[3]ծառայել խլամանի", եւ մի՛ պղծեսցես զա-
22 նուն [4]իմ սուրբ. զի" ես եմ Տէր։ Եւ
ընդ արու մի՛ մտանիցես գիտաւ կանա-
23 նի. զի պղծութիւն է այն։ Եւ յամենայն
անասուն ոչ տացես զարուքիւն սերման
քո առ ի պղծելոյ ընդ նմա. եւ կին մի՛
կացցէ առաջի ամենայն անասնոյ մտա-
րերել ինա. զի գարշելի է այն։
24 Եւ մի՛ պղծիցիք այնու ամենայնիւ, զի
այնու ամենայնիւ պղծեցան ազգքն, զոր
25 ես մերժեցից յերեսաց ձերոց։ Եւ ե-
ղեւ գարշելի երկիրն, եւ հանդէս արարի
անիրաւութեանցն նորա ի նմանէ. եւ
տապակացաւ երկիրն ի բնակչաց իւրոց։
26 Եւ պահեցէք զօրինս իմ եւ զամենայն

[1]3Եբր. պոռնկ

[2]Եբր. կին հօրեղբօր [3]Եբր. անցուցանել ընդ հուր վասն Մողոքայ [4]Եբր. Աստուծոյ քո.

հրամանս իմ, եւ մի առնիցէք յամենայն պղծութեանցն այնոցիկ, ըստոյն եւ ոչն
27 եւ պանդուխան որ ի ձեզ իցէ. Զի զայն ամենայն պղծութիւնս արարին մարդիկ երկրին որ էին անդ յառաջ քան զձեզ,
28 եւ պղծեցաւ երկիրն։ Զի մի տապակասցէ եւ ձեզ երկիրն ի պղծել ձեր զնա, որպէս տապակացաւ ազգն որ էին յա-
29 ռաջ քան զձեզ։ Զի ամենայն մարդ որ արասցէ յամենայն պղծութեանցն այնոցիկ, սատակեսցին անձինքն որ առնիցեն զայն ի միջոյ ժողովրդեան իւ-
30 րեանց։ Եւ պահեսջիք զպահպանութիւնս իմ, զի մի առնիցէք յամենայն պղծութեան օրինացն որ գործեցան յառաջ քան զձեզ. եւ մի պղծիցիք նոքօք, զի ես եմ Տէր Աստուած ձեր։

Գլ. ԻԹ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
2 Խօսեաց ընդ ժողովրդեան որդւոցն Իսրայէլի եւ ասասցես ցնոսա, Սուրբ եղերուք, զի ես սուրբ եմ Տէր Աստուած ձեր։
3 Իւրաքանչիւր [1]ի հօրէ եւ ի մօրէ՝ իւրմէ երկնչիջիք. եւ զշաբաթս իմ պահեսջիք. զի ես եմ Տէր Աստուած ձեր։
4 Մի երթայցէք զհետ կռոց, եւ աստուածս ձուլածոյս մի առնիցէք ձեզ. ես եմ Տէր Աստուած ձեր։
5 Եւ եթէ զոհիցէք զոհ [2]փրկութեան Տեառն, զընդունելիսն ձեր զոհեսջիք։
6 Ցաւուր յորում մատուցանիցէք՝ կերիցի, եւ ի վաղիւ անդր. եւ եթէ մնասցէ մինչեւ
7 չեւ ցօրն երրորդ, հրով այրեսցի։ Այսպէս եթէ ուտելով ուտիցի յաւուրն երրորդի,
8 [3]անզոհ է, մի ընկալցի։ Եւ որ ուտիցէ զայն՝ մեղս առցէ, զի զսրբութիւն Տեառն պղծեաց, եւ սատակեսցին անձինքն որ ուտիցեն՝ ի ժողովրդենէ իւրեանց։
9 Եւ ի հնձել հնձողաց ձերոց զհունձս երկրին ձերոյ, մի սպառիցէք զհունձս անդոց ձերոց մօտ հնձելով. եւ զան-
10 կաւն ի հնձոց քոց մի ժողովեսցես։ Եւ զայգի քո ճոաքաղ մի առնիցես, եւ պտղաքաղ այգւոյ քո մի լինիցիս. անանկին եւ պանդխտին թողցես զայն. ես եմ Տէր Աստուած ձեր։
11 Մի գողանայցէք, եւ մի սուիցէք, եւ մի ըրպարտիցէք իւրաքանչիւր զընկեր
12 իւր։ Եւ մի երդնուցուք սուտ յանուն իմ, եւ մի պղծիցէք զանուն [4]Տեառն Աստուծոյ ձերոյ. ես եմ Տէր [4]Աստուած
13 ձեր՝։ Մի ըրկեսցես զընկեր քո, եւ մի յափշտակեսցես. մի ապրին վարձք վարձկանին առ քեզ մինչեւ ցառաւօտ։
14 [5]Չհամրին մի զդատիցես. եւ առաջի կուրին գայթակղութիւն մի գնիցես. եւ երկնչիցիս [6]ի Տեառնէ Աստուծոյ՝ քումմէ. ես եմ Տէր [4]Աստուած քո՝։
15 Անիրաւութիւն ի դատաստանի մի առնիցես, եւ ակն ազքատի մի առնուցուս, եւ մի երեսաց աչառիցես հարստի. արդարութեամբ դատիցես զընկեր քո։
16 Եւ նենգութեամբ ընդ ազգի քումմի մի գնայցես. յարիւն ընկերի քո մի յօժարիցես. ես եմ Տէր [4]Աստուած ձեր՝։ Մի
17 ատիացես զեղբայր քո ի մարի քումմ. յանդիմանութեամբ յանդիմանեսցես զընկեր քո, եւ մի ընդունիցիս վասն նորա զմեղս։
18 Մի խնդրեսցէ վրէժ ձեռն քո. եւ ընդ որդւոց ժողովրդեան քո ոխս մի ունիցիս, եւ սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո, զի ես եմ Տէր։
19 Զօրէնս իմ պահեսջիք. զանասունս քո յօտարատեսակս մի խառնիցես. եւ [7]զագրիս քո մի վարսեսցես այլեւայլ, եւ [8]զձորձս երկպիսիս զարչելիս՝ մի արկանիցես զքեզ։
20 Եթէ ոք ննջեսցէ ընդ կնոջ արուեթեամբ սերման, եւ նա իցէ ազախին [9]պահեալ առն, եւ փրկանօք չիցէ փրկեալ եւ ազատութեամբ չիցէ ազատեալ, հարց եւ փորձ լիցի նոցա. եւ մի մեռանիցին, զի չիցէ ազատեալ։ Եւ մատուսցէ ընդ
21 յանցանսն իւրոյ Տեառն առ դրան խորանին վկայութեան խոյ յանցանաց։ Եւ
22 քահանայն վկայութեան խոյ յանցանաց՝ քաւեսցէ վասն նորա քահանայն խոյիւն յանցանաց առաջի Տեառն վասն մեղացն զոր մեղաւ, եւ թողցին նմա մեղքն զոր մեղաւ։
23 Եւ յորժամ մտանիցէք յերկիրն [4]զոր Տէր Աստուած տայէ ձեզ՝, եւ տնկիցէք զամենայն վայտ ուտելի, սրբեսջիք զպղծութիւնն նորա. եւ պտուղ նորա զկնի եւ զկեր լիցի ձեզ եւ մի կերիցի։
24 Եւ յամին չորրորդի եղիցի ամենայն պտուղ նորա սուրբ, օրհնեալ Տեառն։

[1] Եբր. ի մօրէ և ի հօրէ [2] Եբր. խաղաղութեան [3] Եբր. պիղծ
[4] Յեբր. գ-Ասուած [5] Կամ, Չխուզն [6] Եբր. յԱստուծոյ [7] Եբր. զարտ [8] Եբր. ձորձ երկդիմի այլայլեալսն [9] Եբր. խօսեալ

25 Եւ յամին հինգերորդի կերիցիք զպտուղ նորա . յաւելուած ձեզ լիցին բերք նո-
26 րա . ես եմ Տէր Աստուած ձեր : Ի վե-
րայ [1]լերանց մի ուտիցէք . եւ մի՛ նա-
խանիցէք , եւ մի՛ հաւատարց եւ մի՛ հաւա-
27 զեաք լինիցիք : Ցցունս ի վարսից պլոյց
ձերոց մի՛ առնիցէք , եւ մի՛ ապականիցէք
28 զառեալ մօրուաց ձերոց : Եւ վէրս ի վե-
րայ ոգւոյ մի՛ առնիցէք ի մարմինս ձեր .
եւ գիր կառեալ մի՛ առնիցէք ի ձեզ , ես
եմ Տէր [2]Աստուած ձեր՝ :
29 Մի՛ պղծիցես զդուստր քո պոռնկեցու-
ցանելով զնա , զի մի՛ պոռնկասցի եր-
կիրն , եւ լցցի երկիրն անօրէնութեամբ :
30 Զշաբաթս իմ պահեսջիք , եւ ի սրբու-
թեանց իմոց երկնչիջիք , [2]ես եմ Տէր :
31 Զհետ վհկաց մի՛ երթայցէք եւ ի գէտս
մի՛ յարիցիք պղծել նոքօք . ես եմ Տէր
Աստուած ձեր :
32 Առաջի ալեաց յառնիցես , եւ պատ-
ուեսցես զերեսս ծերոյն , եւ երկնչիցիս
յԱստուծոյ քումմէ . ես եմ Տէր [2]Աստ-
ուած քո՝ :
33 Եւ եթէ յարեսցի առ ձեզ եկ յերկրին
34 ձերում , մի՛ նեղիցէք զնա : Իբրեւ զընակն
ձեր լինիցի ձեզ եւ սիրեսցես զնա իբրեւ զանձն քո . զի
պանդուխտք եղերաք եւ զաք յերկրին
Եգիպտացւոց . ես եմ Տէր Աստուած ձեր :
35 Մի՛ առնիցէք անիրաւութիւն ի գա-
տաստանի , ի չափս եւ ի կշիռս եւ ի
36 զոյգս : Զոյգք արդարք եւ կշիռք ար-
դարք , եւ [3]չափք արդարք , եւ կապիճ՝
արդար լինիցի ձեր , ես եմ Տէր Աստուած
ձեր որ հանի զձեզ յերկրէն եգիպտաց-
37 ցւոց : Եւ պահեսջիք զամենայն զօրէնս
իմ եւ զամենայն զդատաստանս իմ , եւ ա-
րասջիք զնոսա . զի ես եմ Տէր [2]Աստուած :

ԳԼ . Ի

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
2 Խօսեաց ընդ որդիսք Իսրայէլի եւ ասասց-
ցես , եթէ ոք յորդւոցդ Իսրայէլի կամ
յեկելոց պանդխտացն Իսրայէլի տացէ
[4]զաբրմն իւր իւրմանի՝ , մահու մեռցի .
եւ ազգք երկրին քարկոծ արասցին զնա
3 քարամբք : Եւ ես հաստատեցից զերեսս
իմ ի վերայ մարգոյն այնորիկ , եւ կո-

[1] Եբէ· արեան [2] 3 Եբէ· պ-ւ-ո-ե [3] Եբէ· արդու· ար-
դար և հիմն [4] Եբէ· ի զաւակէ իւրմէ Մողք-
քայ

րեսից զնա ի ժողովրդենէ իւրմէ . զի
եւ [4]ի սերմանէ իւրմէ իչխանին՝ պղծել
զսրբութիւն իմ , եւ զարշեցուցանել զա-
4 նուն [5]սրբեցելոցն իմոց՝ : Ապա թէ ակ-
նածելով ակնածեացեն բնակիչք երկրին
այսօր իւրեանց յանդն յայնմանէ՝ ի տալ
նորա [4]զաբրմն իւր իչխանին՝ չպագանանել
5 զնա , Հաստատեցից զերեսս իմ ի վերայ
առնն այնորիկ եւ ի վերայ ազգի նորա ,
եւ կորուսից զնա եւ զամենայն միաբ-
րանեալսն ընդ նմա առ ի պոռնկեցուցա-
նելոյ զնոսա ընդ [6]իչխանին՝ ի միջոյ ժո-
6 ղովրդեան իւրեանց : Եւ անձն որ երթիցէ
զհետ վհկայ կամ գիտաց՝ պոռնկել զկնի
նոցա , հաստատեցից զերեսս իմ ի վե-
րայ անձինն այնորիկ , եւ կորուսից զնա
7 ի ժողովրդենէ իւրմէ : Եւ սրբեսջիք եւ
եղիջիք սուրբ , զի [7]սուրբ եմ ես՝ Տէր
8 Աստուած ձեր : Եւ պահեսջիք զհրամանս
իմ եւ արասջիք զնոսա . ես եմ Տէր [2]Աստ-
ուած ձեր՝ որ սրբեմ զձեզ :
9 Մարդ ոք մարդ որ հայհոյեսցէ զհայր
իւր կամ զմայր իւր՝ մահու մեռցի . զհայր
իւր կամ զմայր իւր թէ բամբասեսցէ՝
10 մահապարտ է : Եւ այր ոք եթէ շնացցի
ընդ առնակնոջ կամ շնայցէ ընդ կնոջ ըն-
կերի իւրոյ , մահու մեռցին երկոքեան
11 եւ շնացեալն : Եւ այր ոք որ ննջիցէ ընդ
կնոջ հօր իւրոյ , զառակնան հօր իւրոյ
յայտնեաց . մահու մեռցին երկոքեան , զի
ամպարշտեցան , եւ մահապարտք են :
12 Եւ եթէ ննջեսցէ ոք ընդ նուսդ իւրում ,
մահու մեռցին երկոքեան , զի ամպարշ-
13 տեցան եւ մահապարտք են : Եւ այր ոք
եթէ ննջեսցէ ընդ արու զպործ կանաց-
ոյ , պղծութիւն գործեցին , մահու մեռ-
14 ցին երկոքեան , զի [3]մահապարտք են : Եւ
այր ոք որ առնուցու զկին եւ զմայր նո-
րա , անօրէնութիւն է , հրով այրեսցեն
զնա եւ զնոսա . եւ մի՛ լինիցի ի ձեզ ա-
15 նօրէնութիւն : Եւ այր ոք որ տացէ զա-
րուեթիւն իւր յանասուն՝ մահու մեռցի ,
16 եւ զանասունն սպանանիջիք : Եւ կին որ
մատչիցի յամենայն անասուն պղծել նմա
ի նմանէ , սպանանիջիք զկինն եւ զանա-
սունն . մահու մեռանիցին , զի մահա-
17 պարտ են : Եւ այր ոք որ առնուցու
զքոյր իւր զառ ի հօրէ կամ զառ ի մօ-
րէ , եւ տեսանիցէ զառակնան նորա , եւ
նա տեսանիցէ զառակնան նորա , նախա-

[5] Եբէ· սրբութեան իմոյ [6] Եբէ· Մողքայ [7] Եբէ·
ես եմ

տինք են, սատակեսցին յերեսաց որդւոց ազգին Իսրաէլի, զի զառաջինս քիս իւրոյ յայտնեաց. [1]ընկալցին զմեզս իւր-
18 եանց"։ Եւ այր որ ննջիցէ ընդ կնոջ պաշտանի եւ յայտնեացէ զառաջինս նորա, զի զաղբիւր արեան նորա յայտնեաց, եւ սա՝ յայտնեաց զբղխումն արեան իւրոյ, սատակեսցին երիցքեան յազգէ իւրեանց։
19 Եւ զառաջինս հօրաքրոջ քո եւ զմօրաքոյր քո մի՛ յայտնեացես, զի զընտանեաւթիան առաջինս յայտնեցին, զմեղս իւրեանց տարցին, [2]եւ անորդիք մեռցին։"
20 Եւ մարդ որ որ ննջիցէ ընդ կնոջ [3]քեռւոյ իւրոյ, զառաջինս [3]քեռւոյ իւրոյ յայտնեաց. զմեղս իւրեանց ընկալցին,
21 եւ անորդիք մեռցին։ Եւ մարդ որ որ առնուցու զկին եղբօր իւրոյ՝ պղծութիւն է. զառաջինս եղբօր իւրոյ յայտնեաց. անորդիք մեռցին։
22 Եւ պահեսջիք զամենայն հրամանս իմ եւ զամենայն գիրաւունս իմ, եւ արասջիք զնոսա, եւ ոչ տապալեսցի ձեզ երկիրն յոր ես տարայդ զձեզ բնակել ի
23 նմա։ Եւ մի՛ գնայցէք ըստ օրինաց ազգացն զոր մերժեցից ես ի ձէնջ զի զայն ամենայն արարին, եւ գարշեցայ ես ի
24 նոցանէն. Եւ ասացի ցձեզ, Դուք ժառանգեսջէք զերկիրն զայն, եւ ես տայ ձեզ զնա ի ստացուած, երկիր որ բղխէ զկաթն եւ զմեղր. ես եմ Տէր Աստուած ձեր որ մեկնեցի զձեզ յամենայն ազգաց։
25 Եւ զառաւօտիք [2]զանձինս ձեր" ի մէջ անասնոց սրբոց եւ անսրբոց, եւ ի մէջ թռչնոց սրբոց եւ անսրբոց. եւ մի՛ պղծեսջէք զանձինս ձեր անասնովք եւ թռչնովք եւ ամենայն սողնովք երկրի, զոր ես
26 զատուցի ձեզ ի պղծութիւն։ Եւ եղիջիք ինձ սուրբք, զի սուրբ եմ ես Տէր [2]Աստուած ձեր", որ զատուցի զձեզ յամենայն ազգաց լինել ինձ։
27 Եւ այր կամ կին որ լինիցի վհուկ կամ գէտ, մահու մեռցի. քարամբք քարկոծեցէք զնոսա զի մահապարտք են։

ԳԼ. ԻԱ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ, Խօսեաց ընդ որդիսդ Ահարոնի ընդ քահանայս եւ ասասցես ցդոսա. զի մի՛
2 [4]պղծիցին յոգիս ազգի իւրեանց, կամ

[1] ԵԲԲ. ընկալցէ զմեղս իւր [2] ՁԵԲԲ. զ-ի-ո-ե [3] Կամ, Հօրեղբօր [4] ԵԲԲ. պղծիցի վասն ուրուք ի ժողովրդեան իւրում, (2) Բայց եթէ վասն ազգականի որ մերձաւոր իւր իցէ, ի մայր կամ ի Հայր [5] ԵԲԲ. քոյր կոյս որ մերձաւոր իցէ նմա [6] ԵԲԲ. պղծեացի։ (4) Եւ մի՛ պղծեացի, իշխան է ի ժողովրդեան իւրում, ի պղծել զանձն։ [7] ԵԲԲ. զանկիւն [8] ԵԲԲ. սրբեսցես զնա, զի զՀանց Աստուծոյ քո [9] ԵԲԲ. զձեզ

3 կամ ի քոյր կամ կուսացեալ, կամ ի [5]քոյր կամ ի գուսար մերձաւոր իւր՝ զոր առն
4 չիցէ տուեալ, նոքօք [6]պղծեսցին։ Եւ մի՛ պղծեսցին վայրապար ի ժողովրդեան
5 իւրում ի պղծութիւն իւրեանց։" Եւ մի՛ զկրծատուցան զգլուխս իւրեանց [2]ի վիրայ մեռելոյ" ի կնաւթիւն, եւ [7]զանկիւն մօրուսացն մի՛ կիրծատուցեն, եւ ի մարմինս
6 իւրեանց վէրս մի՛ հատանիցեն. Զի սուրբ լինիցին Աստուծոյ իւրեանց, եւ մի՛ պարչկացուսցեն զանուն Աստուծոյ իւրեանց, զի զպոնան Տեառն, պատարագ Աստուծոյ իւրեանց, նոքա մատուցանեն. Եւ
7 եղիցին սուրբք։ Կին պոռնիկ եւ պղծեալ մի՛ առնուցուն. եւ զկին հանեալ յանէծ իւրմէ մի՛ առնուցուն. զի սուրբ է Տեառն
8 Աստուծոյ իւրում։ Եւ [8]սրբեսցէ զանձն, զի զպատարագն Տեառն Աստուծոյ ձեր" նա մատուցանէ. սուրբ եղիցի, զի
9 սուրբ եմ ես Տէր՝ որ սրբեմ [9]զնոսա։ Եւ գուսար առն քահանայի, եթէ ի պոռնկութիւն պղծեսցի, զանուն հօր իւրոյ բամբասեաց. հրով այրեսցի։
10 Եւ քահանայն մեծ յազգարդ իւրոց, յորոց վիրայ ղլխոյն արկեալ իցէ վերձն օծութիւնն եւ կատարեալ զձեռս նորա զգենուլ զպատմուճանն, զգլուխ իւր մի՛ ապականեսցէ, եւ զհանդերձս իւր մի՛
11 պատառեսցէ. Եւ յանձն վախճանեալ մի՛ մտցէ. ի հայր իւր կամ ի մայր իւր մի՛
12 պղծիցի։ Եւ ի սրբութենէն անաւ մի՛ ելանիցէ, եւ մի՛ պղծեսցէ զսրբութիւն Աստուծոյ իւրոյ. զի սուրբ ելոն օծութիւն Աստուծոյ իւրոյ ի վերայ նորա է.
13 [2]զի ես եմ Տէր։ Նա կին կոյս յազգէ
14 իւրմէ առնուցու. Զայրի եւ զհանեալ եւ պոռնիկ մի՛ առնուցու. այլ կոյս յազգէ
15 իւրմէ առնուցու կին, եւ մի՛ պղծեսցէ զսերմն իւր ի ժողովրդեան իւրում. զի ես եմ Տէր որ սրբեմ զնա։
16 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
17 Խօսեաց ընդ Ահարոնի եւ ասասցես, Այր որ յազգէ քումմէ, յամենայն ազգս ձեր,

յորում լիցէ արատ, մի՛ մատիցէ մատուցանել [1]պատարագ Աստուծոյ Իւրոյ.
18 Զի ամենայն այր յորում լիցէ արատ՝ մի՛ մատիցէ, այր կաղ կամ կոյր կամ կարճ-
19 ունչ կամ ականջատ, կամ այր ձեռնրնկ
20 կամ ոտնրնկ, կամ ատապատող կամ [2]չիլ կամ պղտակին, կամ այր յորում լիցէ քոս
21 կամ քաղցկեղ կամ միզէն. Ամենայն այր յորում լիցէ արատ, ի զաւակէ Ահարոնի քահանայի, մի՛ մերձենայր մատուցանել զոհս [3]Աստուծոյ քում՛՛. զի արատ պոյ ի նմա, եւ զպատարագն Աստուծոյ
22 մի՛ մատուիցէ մատուցանել. [4]Զի պատառոտեալն Աստուծոյ՝ սրբութիւնք սրբութեանց են. ի՛ սրբութենէ անտի կե-
23 րիցէ. Բայց ի վարագոյրն մի՛ մերձենայր, եւ առ սեղանն մի՛ մատիցէ, զի արատաւոր է, եւ մի՛ պղծեսցէ զսրբութիւն [5]Աստուծոյ իւրոյ՛՛, զի ես եմ Տէր որ սրբեմ
24 զնոսա. Եւ խօսեցաւ Մովսէս ընդ Ահարոնի եւ ընդ որդիս նորա, եւ ընդ ամենայն որդիսն Իսրայելի.

Գ.Լ. ԻԹ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսէ եւ ասէ,
2 Աստուածս ցԱհարոն եւ զորդիս նորա, եւ զլոյծ լինելոցն սրբութեանց որդւոցն Իսրայելի, եւ մի՛ պղծեսցեն զանուն իմ սուրբ, զոր նոքա սրբեն ինձ. [6]զի ես
3 եմ Տէր. Ասացես ցնոսա, Յազգս ձեր ամենայն այր յամենայն զաւակէ ձերմէ որ մերձենայցէ ի սրբութիւնսն, զոր սրբեցին որդիքն Իսրայելի Տեառն, եւ պղծութիւն իւր ի նմա լիցէ, ոտնակոխ անձնն այն յերեսաց իմոց. [6]զի ես եմ
4 Տէր. Եւ այր ոք ի զաւակէ Ահարոնի քահանայի, եթէ բորոտ կամ սերմնակաթ լիցէ, ի սրբութենէն անտի մի՛ կերիցէ մինչեւ սրբեսցի. եւ որ մերձենայցէ յամենայն պղծութիւն ոգւոյ, եւ կամ այր
5 յորմէ ելանիցէ արութիւն սերման, կամ որ մերձենայցէ յամենայն սողոն պիղծ [7]զոր պղծիցին, կամ ի մարդ որով պղծիցին վնաս՛՛ ըստ ամենայն պղծութեան նո-
6 ցա, Անձն որ մերձենայցէ ի նա՝ պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ, եւ մի՛ կերիցէ ի սրբութենէն անտի, եթէ ոչ լուանայցէ
7 զմարմին իւր ջրով. Եւ մտանիցէ արեգակն, սուրբ լիցի, եւ ապա կերիցէ ի սրբութենէն անտի, զի հաց նորա է այն.
8 Զմեռելոտի եւ զդազանատիկ մի՛ ուտիցէ պղծել նմա նոքօք. [6]զի ես եմ Տէր.
9 Եւ պահեսցին զպահպանութիւնս իմ, զի մի՛ ընդունիցին վասն նոցա մեղս, եւ մեռանիցին վասն այնորիկ, եթէ պղծիցեն զնոսա. [6]զի ես եմ Տէր որ սրբեմ զնոսա.
10 Եւ ամենայն օտարազգի մի՛ կերիցէ զսրբութիւնն, պանդուխտ քահանայիւն եւ վարձկանն մի՛ կերիցեն ի սրբու-
11 թենէն. Բայց թէ քահանայն առասցի ոգի ստացուածով արծաթով՝ նա կերիցէ ի հացէ անտի նորա. եւ ընտանիքն նո-
12 րա կերիցեն ի հացէ անտի նորա. Եւ դուստր առն քահանայի, եթէ լինիցի առն այլազգւոյ, նա ի պտղոյ սրբութենէնցն
13 մի՛ կերիցէ. Եւ զուստր առն քահանայի, եթէ լինիցի այրի կամ հանեալ, եւ զաւակ ոչ իցէ նորա, եւ դառնայցէ անդրէն ի տունն իւր հայրենի, ըստ մանկութեան իւրում ի հացէ անտի հօր իւրոյ կերիցէ. եւ ամենայն այլազգի՝ մի՛ կերիցէ ի նոցանէ.
14 Եւ մարդ որ յանգիտս կերիցէ զսրբութիւնն, յաւելցէ ի նոյն գինգերորդ մասնն, եւ տացէ զսրբութիւնն տեառնայն. Եւ մի՛ պղծեսցեն զսրբութիւնս
15 [6]սրբութեանցն որդւոցն Իսրայելի, զոր
16 գատուցեն նոքա Տեառն. Եւ ածիցեն ի վերայ իւրեանց անօրէնութիւն յանցանաց, ուտելով իւրեանց զսրբութիւնսն [6]սրբութեանցն. զի ես եմ Տէր որ սրբեմ զնոսա.
17 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսէ եւ ասէ,
18 Խօսեաց ընդ Ահարոնի եւ ընդ որդիս նորա եւ ընդ ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայելի, եւ ասասցես ցնոսա, Այր ոք այր յորդւոցն Իսրայելի, կամ յեկաց յարելոց ի նոսա ի մէջ Իսրայելի, որ մատուցանիցէ զպատարագս իւր ըստ ամենայն խոստովանութեանց իւրեանց, կամ ըստ ամենայն կամաց իւրեանց զոր ինչ մատուցանիցեն Տեառն [8]յողջակէզ
19 ընդունելի առ ի ձէնջ, Արու՛՛ անարատ
20 յանդուց եւ յոգեաց եւ յայծեաց. Զամենայն արատաւորն մի՛ մատուցանիցեն

[1] ՆԲԷ. զՀացն Աստուծոյ իւրոյ ի սրբութեանց սրբութեան և ի [2]ՆԲԷ. թզուկ [3]ՆԲԷ. Տեառն [4]ՆԲԷ. [5]ՆԲԷ. իմ [6]ՅԱՒԵ. դ-ի-ե [7]ՆԲԷ. որով պղծիցի, կամ ի մարդ որով պղծիցի

[8] ՆԲԷ. յողջակէզ. (19) Զի լինիցիք ընդունելի, եղիցի արու

[1]Տեառն , զի ոչ լինիցի ընդունելի առ ի
21 Ա[2]ստուածոյ ձերոյ , եւ այր որ մատուցանիցէ [2]զպատարագս իւր ըստ ամենայն խոստուա-
նումեան իւրեանց , կամ ըստ ամենայն կամաց իւրեանց զոհ փրկութեան Տեառն,
ուխտեալ ուխտ , կամ ըստ կամաց կամ ի տօնս ձեր՝, յանդուց կամ յոչխաց , ա-
նպատաս լինիցի չընդունելութիւն . ամե-
22 նայն արատ մի՛ լիցի ի նմա : Զկոյրն կամ զկաղն կամ զպակասն կամ [1]զպղատաս կամ
զմսրմատոտ կամ զբծոտս կամ զորքինոտ , մի՛ մատուցանիցեն զայն Տեառն .
եւ յողջակէզ ոչ տայցէք ի նոցանէ ի սե-
23 ղան Տեառն : Զարջառ եւ զոչխար [3]պակասեալս կամ զկրճատ՝ քեզ արասցես ի
զեղիս՝, եւ յուխտս քո մի՛ լիցին ընդ-
24 դունելի : Զմաղամսաւորն եւ զմանեան եւ զքածաւարոտն եւ զնաւեալն , մի՛
մատուցանիցես Տեառն . եւ յերկրի ձե-
25 րում մի՛ առնիցէք : Եւ ի ձեռանէ այլազգւոյն մի՛ մատուցանիցէք զպատարագս Աստուծոյ ձերոյ յամենայնէ յայնպիսեացս անտի . զի խեղութիւնք եւ ա-
րատք են ի նոսա , եւ ոչ լինիցի այն ընդունելի առ ի ձէնջ :
26 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
27 Արջառ կամ ոչխար կամ այծ , յորժամ ծնանիցին , կացցէ զևթին օր ընդ մարրն .
եւ յօրէն ութերորդէ եւ անդր ընդունելի
28 լիցի ի պատարագ ընծայ Տեառն : Զարջառ եւ զոչխար եւ զծնունդս իւրեանց
մի՛ սպանանիցէք ի միում աւուր :
29 Եւ եթէ զոհասցես զզոհ գոհութեան Տեառն , զընդունելին առ ի ձէնջ զոհաս-
30 ջիք . ի նմին աւուր կերիցի , եւ մի՛ թողուցուք ի մոյ անտի յայգ . [1]զի ես եմ Տէր :
31 Եւ պահեսջիք զպատուիրանս իմ , եւ
32 արասջիք զնոսա . [1]զի ես եմ Տէր : Եւ մի՛ պղծիցէք զանուն իմ սուրբ՝ [1]զի ես
եմ Տէր .՝ եւ սրբեցայց ի մէջ որդւոցն
Իսրայէլի . ես եմ Տէր որ սրբեմ զձեզ ,
33 Որ հանի զձեզ յերկրէն եգիպտացւոց լինել ձեզ Աստուած . ես եմ Տէր :

ԳԼ. ԻԳ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
2 Խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի եւ ասաց ցնոսա զնոսա , [4]Տօնս Տեառն զոր առնիցէք , կոչեցեալք եւ սուրբք՝ այնք իցեն
3 իմ տօնք . Զվեց օր գործեսցես գործ , յաւուրն եւթներորդի շաբաթ [5]հանդիսատ
անուանեալ սուրբ Տեառն՝. զամենայն գործ մի՛ գործիցէք , զի շաբաթ Տեառն
է յամենայն բնակութիւնս ձերում :
4 [6]Զի այն են տօնք Տեառն , եւ նոքա անուանեալք են սուրբք զորս անուա-
5 նիցէք ի տօնս նոցա՝: Յառաջնում ամսեանն ի տասն եւ ի չորս ամսոյն ի մէջ
6 երեկորեայսն զաւրիկ Տեառն . Եւ յաւուրն հնգետասաներորդի նորին ամսոյ՝ տօն բազարջակերաց Տեառն . վեցին օր
7 բազարջ կերիջիք : [7]Եւ օրն առաջին անուանեալ՝ սուրբ եղիցի ձեզ . զամենայն գործ սպասաւորութեան մի՛ առնիցէք :
8 Եւ մատուսջիք ողջակէզս Տեառն վեցին օր , [8]եւ օրն եւթներորդ՝ սուրբ կոչեցեալ՝ լիցի ձեզ . զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք :
9 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
10 Խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի եւ ասասցես ցնոսա , Յորժամ մտանիցէք յերկիրն զոր ես տայ ձեզ , եւ հնձիցէք զհունձս
11 նորա , բերիցէք զդարձն , զսկսուզ հնձոց ձերոց , առ քահանային . Եւ [9]հանցէ զդարձն առաջի Տեառն յընդունելութիւն առ ի ձէնջ . եւ ի վաղիւ անդր [10]աւուրն
12 առաջնոյ հանցէ՝ զդն քահանայն : Եւ [11]արասցէ յաւուրն յորում մատուցանիցէք զդարձն՝ ոչխար՝ անարատ տարեւոր յոչ-
13 ղակէզ Տեառն . Եւ զպահն իւր երկուս տասանորդս ի նաչհոյ զանգակոյ խլզով , զոհ Տեառն ի հոտ անուշիւ [1]Տեառն . եւ
նուէր նորա՝ չորորդ մասն [12]դորակի
14 զինւոյ . Եւ պան մի՛ եւ [13]զամենայն մուրկ փխրեալ՝ մի՛ ուտիցէք մինչեւ յօրն յորում մատուցանիցէք պատարագս Աստուծոյ ձերոյ . օրէն յաւիտենական յազգս
ձեր , յամենայն բնակութիւնս ձերում :
15 Եւ համարեսջիք ձեզ ի վաղուց չաբաթուն՝ յօրէ յորմէ մատուցանիցէք զդարայ [14]ուխտին , եւթն եւթներորդս բո-

[1]3Ի:ԹԲ. դ-ի-ոբ [2]ՅԹԲ. պատարագ խաղաղութեան Տեառն ի կատարել զուխտ կամ ընծայ կամաւոր [3]ՅԹԲ. որ ունիցի աւելի ինչ կամ պակաս՝ արասցես ընծայ կամաւոր

[4]ՅԹԲ. Տօնք Տեառն զորս կոչիցէք ժողովս սուրբս, [5]ՅԹԲ. Հանդստեան՝ ժողով սուրբ [6]ՅԹԲ Սոյս են տօնք Տեառն, ժողովք սուրբք զորս կոչիցէք ըստ ժամանակի իւրեանց [7]ՅԹԲ. յաւուրն յառաջնում ժողով [8]ՅԹԲ. յաւուրն եւթներորդի ժողով սուրբ [9]ՅԹԲ. երեքեսցէ [10]ՅԹԲ. չաբաթուն երեքեսցէ [11]ՅԹԲ. առնիցէք յաւուրն երրորդի որոյ մի [12]Կ՛. Հիմնի [13]ՅԹԲ. մաւրկ փխրեալ և հասկնոր [14]ՅԹԲ. երբորդ

16 վանդակս Թուխցես . Մինչեւ ցվաղիւն յետին ևբինեորդին Թուխցէք յիսուն օր,
եւ մատուցանիցէք զոհ նոր Տեառն ։
17 Ի բնակութիւնէ ձերմէ մատուցանիցէք պանս [1]նուիրի , երկուս պանս . յերկուց
տասանորդաց լինիցի պան մի , խմորեալք եփեսցին յառաջնոց արդեանց Տեառն ։
18 Եւ մատուցանիցէք ընդ հացին ևբին որոյ անարատ տարեւոր , եւ զուարակ
մի յանդուց , եւ խոյս երկուս [2]անարատս ,
եւ ևդիկին յողջակէզ Տեառն , եւ զոհք
նոցա եւ նուէրք նոցա՝ զոհ ի հոտ անուա-
19 չիս Տեառն ։ Եւ առնիցէք նախաղ մի
յայծեաց վասն մեղաց , եւ երկուս գա-
ռիս տարեւորս ի զոհ խաղաղականաց
20 [2]ընդ պանիս առաջնոյ արմտեացն՝ եւ
[3]նուիրեսցէ զնոսա քահանայն նուէր"
ընդ պանիս առաջնոյ արմտեացն յանդի-
ման Տեառն հանդերձ երկու գառամբքն .
սրբեսցին Տեառն , քահանային [2]որ մա-
21 տուցանիցէ զնոսա" եղիցին ։ Եւ [4]կոչես-
ջիք զօրն զայն անուանեալ կոչեցեալ ,"
սուրբ եղիցի ձեզ . զամենայն գործ սպա-
սաւորութեան մի՛ գործիցէք ինքս . օրէն
յաւիտենական եղիցի յաղգս ձեր յամե-
նայն բնակութեանս ձերում ։
22 Եւ յորժամ հնձիցէք զհունձս երկրի
ձերոյ , մի՛ աւ հասարակ զնչխար հնձոց
անգոյն քո ի հնձել քում ամիւսիփիսս .
եւ զանկեան հնձոյն քոյ մի՛ ժողովեսցես , այլ ազբատին եւ պանդխտին թո-
ղուցուս զայն . [2]զի ես եմ Տէր Աստուած
ձեր ։
23 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ ,
24 Խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի եւ ասասցես , Յամսեանն եւիներորդի որ օր մի
իցէ ամսոյն , եղիցի ձեզ հանդիստ , յիչատակ փողոց , [5]կոչեցեալ սուրբ Տեառն" ։
25 Զամենայն գործ սպասաւորութեան մի՛
գործիցէք , եւ մատուցանիցէք ողջակէզ
Տեառն ։
26 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ ,
27 Ի տասներորդում աւուր սմսոյն եւիներորդի , որ օրն քաւութեան է , [6]կո-
չեցեալ սուրբ եղիցի ձեզ . եւ խոնար-
հեցուսջիք զանձինս ձեր [2]յինեներորդ օ-
րէն յերեկոյիսյ" , եւ մատուսջիք ողջա-
28 կէզս Տեառն ։ Զամենայն գործ մի՛ գոր-
ծիցէք յաւուր յայնմիկ , զի օր քաւու-
թեան է նա ձեզ , քաւել վասն ձեր ա-
29 ռաջի Տեառն Աստուծոյ ձերոյ ։ [7]Ամենայն
անձն որ ոչ խոնարհեսցի յաւուր յայն-
միկ , սատակեսցի ի ժողովրդենէ իւրմէ ։
30 Եւ ամենայն անձն որ գործիցէ գործ յա-
ւուր յայնմիկ , կորիցէ անձն այն ի ժո-
31 ղովրդենէ իւրմէ ։ Զամենայն գործ մի՛
գործիցէք . օրէն յաւիտենական եղիցի
յազգս ձեր , յամենայն բնակութիւնս
32 ձեր ։ Շաբաթ չաբաթուց եղիցի ձեզ , եւ
խոնարհեցուսջիք զանձինս ձեր . յինեներորդի ամսեանն յերեկոյեայ մինչեւ ցե-
րեկոյն չաբաթայուսջիք զչաբաթս ձեր ։
33 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ ,
34 Խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի եւ ասասցես , Ի հնգետասաներորդի աւուր ամսեանն եւիներորդի սոն տաղաւարա-
35 հարաց վեմին օր Տեառն ։ Եւ օրն ա-
ռաջին [6]կոչեցեալ սուրբ . զամենայն գործ
36 սպասաւորութեան մի՛ գործիցէք։ Չեւիմն
օր մատուցանիսջիք [8]ողջակէզս Տեառն ,
եւ օրն եւիներորդ կոչեցեալ ," սուրբ եղիցի ձեզ , եւ մատուցանիցէք ողջակէզ
Տեառն . [9]քանզի ելք են" . զամենայն գործ
37 սպասաւորութեան մի՛ գործիցէք ։ Այս
են սոնք Տեառն՝ զորս կոչիցէք [10]կոչե-
ցեալ սուրբս , առ ի մատուցանելոյ [11]ընծայ Տեառն , ողջակէզս եւ զոհս իւր-
38 եանց", եւ նուէրս օր ըստ օրէ , Առանց
չաբաթուց Տեառն , եւ առանց ընծայիցն
ձերոց , եւ առանց ամենայն ուխտիցն
ձերոց , եւ առանց կամայականացն ձե-
39 րոց զոր տայցէք Տեառն ։ Եւ ի հնգետա-
սաներորդում աւուր ամսոյն եւիներորդի յորժամ բովանդակիցէք զարդիւնս
երկրին , սոնսնսջիք Տեառն զեւիմն օր .
յաւուրն առաջնում հանդիստ , եւ յա-
40 ւուրն ութերորդի հանդիստ ։ Եւ առնուցուք ձեզ յաւուրն առաջնում պտուղս
զգեղեցիկ ծառոց , կոզեաս չարմաւենեաց ,
եւ ոստս ի տերեւախիտ ծառոց եւ յուռ-
ենից [2]եւ ոստս հաղնեայ" ի ձորոց , ու-
41 րախ լինել առաջի Տեառն զեւիմն օր ։ Եւ
սոնսնսջիք զնա սոն Տեառն զեւիմն օր
տարեւոյն . օրէն յաւիտենական յաղգս
ձեր , յամենայն եւիներորդի սոնսնսջիք
42 զնա ։ Ի տաղաւարս բնակեսջիք զեւիմն

[1] ԵՔԲ. երբման [2] ՅԵՔԲ. պ-ւ-ռ [3] ԵՔԲ. երբեսցէ զնոսա քահանայն [4] ԵՔԲ. կարդ պղցէք ի նմին իսկ աւուր. ժողով [5] ԵՔԲ. ժողով սուրբ եղիցի [6] ԵՔԲ. ժողով [7] ԵՔԲ. Զի ամենայն [8] ԵՔԲ. պատարագ Տեառն , յաւուրն ութերորդի ժողով [9] ԵՔԲ. սոն մեծ է այն [10] ԵՔԲ. ժողովս [11] ԵՔԲ. զպատարագ Տեառն, ողջակէզ եւ ընծայ հացի , զոհս

օր . ամենայն բնակքն Իսրայելի բնա-
43 կեսցեն ի տաղաւարս . Զի զիաւացեն
ազգք ձեր , եթէ ի տաղաւարս բնակե-
ցուցի զորդիսն Իսրայելի ի հանելն զնո
զնոսա յերկրէն Եգիպտացւոց . Ես եմ
44 Տէր Աստուած ձեր : Եւ պատմեաց Մով-
սէս զօրնս Տեառն որդւոցն Իսրայելի :

ԳԼ . ԻԴ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
2 Պատուիրեա որդւոցն Իսրայելի , եւ առ-
ցեն քեզ եւզ ի ձիթենեաց սուրբ խա-
կակութ ի լոյս , վի այրիցի ճրագ հանա-
3 պազորդ , Արտաքոյ վարագուրին ի խո-
րանին վկայութեան . եւ [1]լուցցեն զայն
Ահարոն եւ որդիք նորա՝ , յերեկորեայ
մինչեւ ցառաւօտ առաջի Տեառն անդ-
պակաս . օրէն յաւիտենական յազգս ձեր :
4 Ի վերայ աշտանակին սրբոյ [2]այրիցէք ճրա-
գունս առաջի Տեառն [3]մինչեւ ցառաւօտ՝ :
5 Եւ [4]առնուցուք նաւիհ , եւ [5]առնիցէք
զայն երկոտասան սպան . յերկուց տասա-
6 նորդաց լինիցի սպան մի : Եւ [6]դնիցէք
զնոսա երկուս [7]նուէրս , վեց սպան զմի
նուէրն՝ ի վերայ սեղանոյն սրբոյ առաջի
7 Տեառն : Եւ դիցես ի վերայ [8]նուիրին
կնդրուկ սուրբ [9]եւ աղ՝ . եւ եղիցին ի
հաց յիշատակի [10]զառաջաւոր Տեառն :
8 Ցաւուրն չարաթուց դնիցէ առաջի Տեառն
հանապազորդ յորւոցն Իսրայելի ուխտ
9 յաւիտենական : Եւ եղիցի Ահարոնի եւ
որդւոցն նորա , եւ կերիցեն զայն ի սուրբ
տեղւոջն . զի սրբութիւն սրբութեանց է
այն նմա [11]ի զոհաւորացն Տեառն , օրէն
յաւիտենական :
10 Եւ եկ որդի կնոջ Իսրայելացւոյ , եւ
նա էր որդի առն Եգիպտացւոյ ի մէջ
որդւոցն Իսրայելի . եւ կռուեցան ի բա-
նակին [12]որ յիսրայելացւոյ անտի էր՝ եւ
11 այր մի Իսրայելացի . Եւ [13]անուանեալ
որդի կնոջն Իսրայելացւոյ զԱնուն՝ եւ
անէծ . եւ ածին զնա առ Մովսէս . եւ
անուն մօր նորա Սաղոմիթ՝ դուստր
12 Դաբրեայ , յազգէ Դանայ : Եւ արկին զնա
ի պահ , պատել զնա հրամանաւ Տեառն :
13 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
14 Հանէք զայն որ անէծն՝ արտաքոյ բա-
նակին , եւ դիցեն որք լուան զձեռս իւ-
րեանց ի վերայ զլխոյ նորա , եւ քարկո-
15 ծեսցեն զնա ամենայն ժողովուրդն : Եւ
ընդ որդիսն Իսրայելի խօսեացիս եւ ա-
սասցես ցնոսա , Այր ոք այր որ անիծա-
16 նիցէ [14]զԱստուած , մեղս ընկալցի . Զի
անուանեալ՝ զանուն Տեառն մահու մեռ-
ցի . քարընկեցութեամբ քարկոծ արասց-
ցեն զնա ամենայն ժողովուրդն . եթէ
պանդուխտ իցէ եւ եթէ բնակ , [15]յանուա-
նել նորա զանուն Տեառն , սատակեսցի :
17 Եւ մարդ որ հարկանիցէ զամենայն
անձն մարդոյ եւ մեռանիցի՝ մահու մեռցի
18 եւ նա : Եւ որ հարկանէ զանասուն՝ անձն
19 ընդ անձին տուժեսցի . Եւ եթէ խեղեսցէ
ոք զընկեր իւր , որպէս արարն՝ նոյնպէս
20 արասցի նմա . Բեկումն ընդ բեկման ,
ակն ընդ ական , ատամն ընդ ատամն .
որպէս առնիցէ ոք զխեղութիւն , նոյն-
21 պէս հատուսցի նմա : Եւ որ հարկանիցէ
[16]զմարդ եւ մեռանիցի , մահու մեռցի եւ
22 նա : Իրաւունք՝ մի եւ նոյն կացցեն ե-
կիցն եւ բնակիցն . զի ես եմ Տէր Աստ-
ուած ձեր :
23 Եւ խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իս-
րայելի , եւ հանին զայն որ անէծն՝ ար-
տաքոյ բանակին , եւ քարկոծ արարին
զնա [9]ամենայն ժողովուրդն՝ քարամբք .
եւ որպիսի Իսրայելի արարին որպէս
պատուիրեաց Տէր Մովսիսի :

ԳԼ . ԻԵ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի ի լերինն
2 Սինայ եւ ասէ , Խօսեաց ընդ որդիսն Իս-
րայելի եւ ասասցես ցնոսա , [17]Եթէ մտա-
նիցէք յերկիրն զոր ես տաց ձեզ , [18]եւ
հանգչիցի երկիրն զոր տաց ձեզ , զի
3 չաթաթ Տեառն է՝ : Զվեց ամ վարեսց-
ցես զանդ քո , եւ զվեց ամ յատցես
զայգի քո , եւ ժողովեսցես զպտուղ նո-
4 րա . Ցամսին եւթներորդի չաբաթ հան-
գիստ եղիցի երկրին , զի չաբաթ Տեառն
է . զանդ քո ոչ վարեսցես , եւ զայգի

---

[1] ԵԲԲ. յարդաբեսցէ զնոսա Ահարոն [2] ԵԲԲ. յարդաբեսցէ [3] ԵԲԲ. հանապազ [4] ԵԲԲ. առնուցուս [5] ԵԲԲ. առնիցես [6] ԵԲԲ. դիցես [7] ԵԲԲ. կարգս . վեց ի կարգի [8] ԵԲԲ. կարգացն [9] ԵԲԲ. զամենայն [10] ԵԲԲ. պատարագ [11] ԵԲԲ. ի պատարագս [12] ԵԲԲ. որդին կնոջն Իսրայելացւոյ [13] ԵԲԲ. Հայհոյեաց

[14] ԵԲԲ. զԱստուած իւր, եւ զմեղս իւր ընկալցի· (16) Եւ որ Հայհոյէն [15] ԵԲԲ. ի Հայհոյել [16] ԵԲԲ. զանասուն տուժեսցի, եւ որ հարկանիցէ զմարդ՝ սպանցի [17] ԵԲԲ. Յորժամ [18] ԵԲԲ. Թող շաբաթասցի երկիրն չաբաթ Տեառն

5 քո ոչ յատցես . Եւ զինքնեակն անդոյ քո
որ գայցէ՝ ոչ հնձեսցես , եւ զխաղող
սրբութեանն քո ոչ կթեսցես . զի սա
6 հանգստեան է այն երկրին : Եւ եղիցի
չաբաթ երկրին ձերոյ , կերակուր՝ քեզ
եւ ծառայի քումմ , եւ աղախնոյ քումմ ,
եւ վարձկանին քումմ , եւ պանդխտին
7 յեկելոյ ի քեզ , Եւ անասնոյ քումմ , եւ
գազանաց որ իցեն յերկրին քումմ եղիւ-
ցի ամենայն բերն նորա ի կերակուր :
8 Եւ թուեսցես դու քեզ եւթն հան-
գիստ ամաց՝ եւթն ամ եւթնկին , եւ
եղիցին եւթն եւթներորդքն ամաց՝ քա-
9 ռասուն եւ չորս ամ : Եւ ազդ առնիցէք
բարբառով փողոյ [1]յամենայն երկրին ձե-
րում՝ , յամսեանն եւթներորդի որ օր տասն
իցէ ամսոյն , յաւուրն քաւութեան ազդ
արասցիք փողով ընդ ամենայն երկիրն
10 ձեր : Եւ սրբեսցիք զամն յինսներորդ
տարւոյն , եւ քարոզեսցիք թողութիւն
ի վերայ երկրին ամենայն բնակչաց նո-
րա . զի [2]տարի թողութեան՝ եղիցի ձեզ
այն [1]ազդեցութիւն եւ դարձցի իւրա-
քանչիւր ոք ի տացուած իւր , եւ իւրա-
քանչիւր ոք յազգ իւր երթիցէ . [1]զի թո-
11 ղութեան ազդեցութիւն է այն՝ Ամն յին-
ներորդ՝ եղիցի ձեզ [3]տարեկան . մի սեր-
մանիցէք , եւ մի հնձիցէք զինքնեակս
նորա որ ելանիցեն , եւ մի կթիցէք
12 զսրբեցեալս նորա . Զի [2]թողութեան
ազդեցութիւն՝ է , սուրբ լիցի ձեզ . ի
13 դաշտաց կերիջիք զպտուղս նորա : [4]Ամին
ազդեցութեան թողութեան նորա՝ դարձ-
ցի իւրաքանչիւր ոք ի տացուած իւր :
14 Ապա թէ վաճառեսցէ ոք վաճառ ընկե-
րի իւրում , եւ ստացի յընկերէ իւրմէ ,
15 մի նեղեսցէ այր զընկեր իւր . Ըստ
թուոյ ամանն յետ [5]ազդեցութեանն
ստացի յընկերէ իւրմէ , ըստ թուոյ ա-
16 մաց արմտեացն վաճառեսցի քեզ : Ըստ
յաճախելոյ ամանն [6]յաճախեսցէ զտուա-
ւածս իւր՝ եւ ըստ պակասելոյ ամանցն
[7]պակասեցուսցէ զտուածուածն իւր՝ .
զի ըստ թուոյ արդեանցն վաճառեսցէ
17 նա քեզ : Մի նեղեսցէ այր զընկեր իւր ,
եւ երկնչիցիս [8]ի Տեառնէ Աստուծոյ՝
քումմէ . ես եմ Տէր Աստուած ձեր :
18 Եւ արասջիք զամենայն իրաւունս իմ
եւ զամենայն դատաստանս իմ , եւ պահես-
ջիք եւ արասջիք զնոսա , եւ բնակեսջիք
19 յերկրին [9]յաւուղ : Եւ տացէ երկիրն զբերս
իւր , եւ կերիջիք ցյագ . եւ բնակեսջիք
20 ի նմա վստահութեամբ : Ապա թէ ասի-
ցէք , Զի՞նչ կերիցուք յամին եւթներորդի
յայնմիկ , եթէ ոչ սերմանիցեմք եւ ոչ
21 ժողովիցեմք զարմտիս մեր . Առաքեցից
զօրհնութիւն իմ ի ձեզ յամին վեցերորդի ,
եւ արասցէ զարդիւնս իւր երից ամաց :
22 Եւ սերմանեսջիք յամին ութերորդի ,
եւ կերիջիք զհին արդեանցն մինչեւ ցամն
իններորդ . մինչեւ գայցեն արմտիք նո-
րա , կերիջիք հին ի հնոյ :
23 Եւ երկիրն ոչ վաճառեսցի [10]ի հաս-
տատութիւն . զի իմ է երկիրն . քանզի
պանդուխտք եւ նժդեհք էք դուք ա-
24 ռաջի իմ : Եւ ըստ ամենայն երկրին
կալուածոյ ձերոյ՝ փրկանս տայիք [11]երկ-
25 րին : Եւ եթէ աղքատասցի եղբայր քո
որ ընդ քեզ իցէ , եւ վաճառեսցէ ի կալ-
ուածոյ իւրոյ , եւ եկեսցէ մերձաւորիչն
որ մերձաւոր իցէ նորա , եւ փրկեսցէ
26 զվաճառ եղբօր իւրոյ : Ապա թէ չիցէ
ուրուք մերձաւորիչ , եւ ձեռնհաս իցէ ,
եւ գտանիցի նմա բաւական փրկանացն
27 իւրոյ , Եւ համարիցի զամս վաճառին
իւրոյ , եւ հատուսցէ [12]կարողն առնն ո-
րում վաճառեաց նմա , եւ դարձցի ի
28 կալուածս իւր : Ապա թէ ոչ գտցի ի
ձեռին նորա բաւականն առ ի հատուց-
ցանելոյ նմա , եղիցի վաճառ նորա այնմ
որ ստացաւն զնա մինչեւ յամն [2]թո-
ղութեան . եւ ելցէ յամին [13]թողութեան
եւ դարձցի անդրէն ի կալուածս իւր :
29 Եւ եթէ վաճառեսցէ ոք տուն բնա-
կութեան ի պարսպաւոր քաղաքի , եղիցի
փրկանք նորա մինչեւ ի կատարել
տարւոյն աւուրցն վաճառի նորա . օրաց
30 թուի լինիցին փրկանք նորա : Ապա թէ
ոչ փրկիցի մինչեւ լնուցու նորա տարին
ողջոյն , հաստատեսցի տունն որ իցէ ի
պարսպաւոր քաղաքի հաստատութեամբ՝
ստացողին իւրոյ յազգս իւր . եւ մի ելցէ
31 ի [5]թողութեանն : Իսկ տունք , որ յաւանս
իցեն , որոց պարիսպ ոչ գոցէ չուրջանակի , ընդ անդս երկրի համարիսցին ,
եւ հանապազ ընդ փրկանօք լինիցին .
32 եւ ի [5]թողութեանն ելցեն : Եւ ի քա-

[1] 3ԵՔԸ. պոռոք [2]ԵՔԸ. յոբելեան [3]ԵՔԸ. ամ յոբելեան [4]ԵՔԸ. Յամի աստ յոբելենի [5]ԵՔԸ. յոբելենին [6]ԵՔԸ. յաճախեսցես զգին նորա [7]ԵՔԸ. պակասեցուցես զգին նորա [8]ԵՔԸ. յԱստուծոյ [9]ԵՔԸ. վստահութեամբ [10]ԵՔԸ. ի սպառ [11]ԵՔԸ. վասն երկրին [12]ԵՔԸ. զինացորդն [13]ԵՔԸ. յոբելենի

ղաքս Ղեւտացւոց տունք որ ի քաղաքս կալուածոց նոցա իցեն՝ ընդ փրկանաւք լինիցին հանապազ որ ի մէջ Ղեւտացւոց անտի, եւ որ աք փրկեսցէ ի Ղեւտացւոյ անտի, ելցէ վաճառ տանց քաղաքաց կալուածոց նորա ի Յովբելեանն. զի տունք քաղաքացն Ղեւտացւոց կալուածք նոցա են այն ի մէջ որդւոցն Իսրայէլի. եւ ագարակքն պատուական գնալք ի քաղաքս նոցա՝ մի՛ վաճառեսցին. զի կալուած յաւիտենական է այն նոցա։

35 Եւ եթէ աղքատանայցէ եղբայր քո եւ տկարանայցէ ձեռօք, առ քեզ պատսպարեսցես զնա իբրեւ զեկն եւ զպանդխտեան. եւ կեցցէ եղբայրն քո որ ընդ քեզն իցէ։
36 Մի՛ առնուցուս ի նմանէ վաշխ եւ տոկոսիս. եւ երկնչիցիս ի Տեառնէ Աստուծոյ քումմէ, զի կեցցէ եղբայր քո ընդ քեզ։ Զարծաթ քո մի՛ տացես նմա ընդ տոկոսովք, եւ զկերակուր քո մի՛ տացես նմա ընդ չարիսաիւ։
38 Ես եմ Տէր Աստուած ձեր, որ հանի զձեզ յերկրէն Եգիպտացւոց՝ տալ ձեզ զերկիրն Քանանացւոց, առ ի լինելոյ ձեր Աստուած։
39 Եւ եթէ տնանկացի եղբայր քո առ քեզ եւ վաճառեսցի քեզ, մի՛ ծառայեսցէ քեզ
40 ծառայութիւն ստրկի. Իբրեւ զվարձական, իբրեւ զպանդխտեան եղիցի քեզ, մինչեւ յամին Յովբելեանն գործեսցէ առ
41 քեզ. Եւ ելցէ ի Յովբելեանն ինքն եւ որդիք իւր ընդ իւր, եւ դարձցի յազգ իւր, եւ ի հայրենի կալուած իւր երթիցէ։
42 Զի ծառայք իմ են նոքա զորս հանի յերկրէն Եգիպտացւոց. մի՛ վաճառեսցին ի վաճառ ստրկի։
43 Եւ մի՛ տառապեցուսցես զնա ընդ աչխատութեամբ. եւ երկնչիցիս ի Տեառնէ Աստուծոյ քումմէ։
44 Եւ ծառայ կամ աղախին որչափ եւ լինիցին քեզ՝ յազգացն որ չուրջ զքեզն իցեն, ի նոցանէ առնուցուք ծառայս եւ
45 աղախինս։ Եւ յորդւոց պանդխտացն որ ի միջի ձերում իցեն, ի նոցանէ առնուցուք, եւ յազգականաց նոցա որչափ ինչ լինիցին յերկրին ձերում՝
46 եղիցին ձեզ ի կալուածս. Եւ բաժանեսջիք զնոսա որդւոց ձերոց յետ ձեր, եւ եղիցին ձեզ ստրուկք յաւիտեան. բայց եղբարց ձերոց յորդւոցն Իսրայէլի՝ իւրաքանչիւր աք զեղբայր իւր մի՛ տառապեցուցանիցէք աչխատութեամբ։
47 Եւ եթէ բաւական իցէ ձեռն եկին եւ պանդխտին որ առ քեզ իցէ, եւ չքաւորեսցի եղբայր քո մօտանայն եկին կամ պանդխտին որ առ քեզ իցէ՝ անդէն ծնեալ պանդխտին, Յետ վաճառելոյն նորա փրկանաք լինիցին նմա. մի աք ար եւ իցէ
49 յեղբարէ իւրոյ՝ փրկեսցէ զնա. Եղբայր հօր կամ որդի հօրեղբօր փրկեսցէ զնա, կամ աք ընտանեսից մարմնոյ իւրոյ ի ցեղէ իւրմէ փրկեսցէ զնա. ապա թէ իւր իսկ ձեռամբ իցէ՝ ինքնին փրկեսցէ
50 զանձն. Եւ համարեսցի ընդ տասցոսին իւրոյ յամէ անտի յորում վաճառեսցաւ նմա մինչեւ յամին Յովբելեան. եւ ե՛ղիցի արծաթ գնոյ նորա իբրեւ վարձականի, ամ յամէ որչափ իցէ ընդ նմա.
51 Եւ եթէ աւելի եւս քան զայն ամս կայցէ, տացէ՝ զփրկանս իւր յարծաթոյ տասցոսին իւրոյ. Եւ եթէ սակաւ ինչ կայցէ
52 յամաց անտի մինչեւ յամին Յովբելեան, համարեսցի իւր բան տարւոյն իւրոյ, եւ
53 տացէ զփրկանս իւր։ Իբրեւ զվարձկան ամ յամէ որչափ եւ իցէ ընդ նմա. մի՛ տառապեցուցանիցէ զնա աչխատութեամբ
54 Թեամբ առաջի քո։ Այլ թէ ոչ փրկեսցէ ըստ այսմ օրինակի, ելցէ յամին Յովբելեան ինքն եւ որդիք իւր ընդ նմա.
55 Զի իմ են որդիքն Իսրայէլի ստրուկք, ծառայք իմ զորս հանի յերկրէն Եգիպտացւոց. ես եմ Տէր Աստուած ձեր։

ԳԼ. ԻԶ

1 Մի՛ առնիցէք ձեզ [11]ձեռագործս կամ զքանդակս, եւ մի՛ կանգնիցէք ձեզ արձան, եւ մի՛ քարիսիոզ դնիցէք յերկրի ձերում երկիր պագանել նմա. ես եմ Տէր Աստուած ձեր։
2 Զշաբաթս իմ պահեսջիք, եւ ի սրբութեանց իմոց երկնչիջիք. զի ես եմ Տէր։
3 Եթէ ըստ հրամանաց իմոց գնայցէք, եւ զպատուիրանս իմ պահիցէք եւ առնիցէք զնոսա, Տայց ձեզ անձրեւս ի ժամանակի իւրում, եւ երկիրն տացէ զարմտիս իւր, եւ ծառք պաչատաց տացեն
5 զպատուղս իւրեանց. Եւ հասանիցեն ձեր կալք ի կոխս, եւ կոխք ի սերմանս հասանիցեն, եւ կերիջիք զհաց ձեր յագուն, եւ բնակեսջիք անհոգութեամբ յերկրի

---

[1] ԵԲԲ. Ղեւտացւոյն [2] ԵԲԲ. յոբելեանին [3] ԵԲԲ. արուարձանաց քաղաքաց [4] ԵԲԲ. յԱստուածոյ քումմէ [5] ԵԲԲ. յոբելեան [6] ԵԲԲ. առ ի քէն [7] ԵԲԲ. տակաւին բազում ինչ կայցէ յամացն. ըստ այնմ տացէ [8] ԵԲԲ. գնոյն [9] ԵԲԲ. գ-ի-ս [10] ԵԲԲ. յոբելեանի [11] ԵԲԲ. կուռս

6 ձերում։ Եւ ասց Տաղաւոթիւն յերկրին
ձերում, եւ ննջիցէք, եւ ոչ ոք իցէ որ
զարհուրեցուցանիցէ զձեզ. եւ կորուսից
զգազանս չարս յերկրէ ձերմէ. եւ պա-
7 տերազմ մի՛ անցցէ յերկիր ձեր։ Եւ հա-
լածեսջիք զթշնամիս ձեր, եւ անկանիս-
8 ցին առաջի ձեր սպանմամբ։ Եւ հալա-
ծիցեն ի ձէնջ հինգք զհարիւր, եւ հա-
րիւրք ի ձէնջ հալածեսցեն զբեւրս, եւ
անկանիցին թշնամիք ձեր առաջի ձեր
9 սրով։ Եւ հայեցայց ի ձեզ, եւ աճեցու-
ցից զձեզ եւ բազմացուցից զձեզ, եւ
10 հաստատեցից զուխտ իմ ընդ ձեզ։ Եւ
կերիջիք զհին եւ զհնոյ հին, եւ զհինն
11 յերեսաց նորոյն հանիջիք ի բաց։ Եւ հաս-
տատեցից [1]զուխտ իմ ի ձեզ. եւ ոչ զար-
12 չանայ անձն իմ ի ձէնջ. Եւ գնայից ի
ձեզ, եւ եղէց ձեր Աստուած, եւ դուք
13 եղիջիք ինձ ի ժողովուրդ։ Ես եմ Տէր
Աստուած ձեր որ հանի զձեզ յերկրէն
Եգիպտացւոց, մինչ էիք դուք ծառայք.
եւ խզեցի զկապանս լծոյն ձերոյ, եւ
[2]ածի զձեզ համարձակութեամբ՝։
14 Այսպէս թէ ոչ լսիցէք ինձ, եւ ոչ առ-
նիցէք զամենայն հրամանս իմ զայսո-
15 սիկ, Այլ հնասիցէք սոցա, եւ չիրաւանց
լսից տապալայցեն անձինք ձեր, ասո ի
չառնելոյ ձեզ զամենայն զպատուիրանս
16 իմ եւ գրելոյ զուխտն իմ, Արարիչ նոյն-
պէս եւ ես ձեզ. Հասուսեցից ի վերայ
ձեր ապտնապաս սպասկուսանս, գքոս
եւ զդալուկն որ սարկուցանիցեն զաչս
ձեր, եւ հանիցէք յանձինս ձեր, եւ սեր-
մանեսջիք ի մնոտիս զսերմանիս ձեր, եւ
17 զայն հակառակորդք ձեր կերիցեն. Հաս-
տատեցից զերեսս իմ ի ձեզ, եւ անկա-
նիջիք առաջի թշնամեաց ձերոց, եւ հա-
լածեսցեն զձեզ առնիք ձեր, եւ լինի-
ջիք փախստական առանց ուրուք հալա-
18 ծելոյ զձեզ։ Եւ եթէ ասկաւին ոչ լսի-
ցէք ինձ՝ յաւելից խրատել զձեզ եւթնապա-
19 սիկ ի վերայ մեղացն ձերոց։ Եւ խոր-
տակեցից զպարտութիւնն ամբարտաւա-
նութեանց ձերոց. եւ արարից ձեզ զեր-
կինս երկաթի եւ զերկիր ձեր իբրեւ
20 պղնձի։ Եւ սկիցի ընդունայն զօրու-
թիւն ձեր. եւ մի՛ ասցէ երկիր ձեր զսեր-
մանիս իւր, եւ մի՛ ծառ վայրաց ասցէ
զպտուղ իւր։
21 Եւ եթէ տակաւին գնայցէք դուք խո-
տորնակս, եւ ոչ կամիցիք լսել ինձ,

[1] ԵՔԲ. զխորան [2] ԵՔԲ. եւս ձեզ գնալ ուղղորդ

յաւելից ձեզ հարուածս եւթնապատիկ ըստ
22 անօրէնութեան ձերում։ Եւ առաքեցից
ի վերայ ձեր գազանս չարս երկրի, եւ
[3]կերիցեն զձեզ, եւ սատակեսցեն զա-
նասունս ձեր, եւ նուազուսցեն [4]զարարից
զձեզ. եւ կուրասցին ճանապարհք ձեր։
23 Այսպէս թէ այնու եւս ոչ խրատիցիք, այլ
տակաւին խոտորնակս գնայցէք ընդ իս,
24 Գնացից եւ ես ընդ ձեզ [5]բարկութեամբ
խոտորնակ. եւ հարից զձեզ եւթնապա-
25 սիկ վրէժխնդիր մեղաց ձերոց։ Եւ սա-
տակեցից զձեզ սրով խնդրել զվրէժ ուխ-
տին. եւ թէ ամրանայցէք ի քաղաքս
ձեր, առաքեցից մահ ի ձեզ, եւ մատ-
26 նիցիք ի ձեռս թշնամեաց։ Ի նեղել զձեզ
ոսկաս հացի, եւիւոցեն տասն կին զհացն
ձեր ի մխում թոնրի, եւ տացեն զհաց
ձեր կչռով. եւ կերիջիք եւ մի՛ յագնիջիք։
27 Եւ եթէ այնու եւս ոչ լսիցէք ինձ,
28 այլ գնայցէք ընդ իս խոտորնակս, Եւ ես
գնացից ընդ ձեզ բարկութեամբ խոտոր-
նակ, եւ խրատեցից զձեզ եւթնապատիկ
29 ըստ մեղաց ձերոց. Եւ կերիջիք զմար-
մինս ուսուերաց ձերոց, եւ զմարմինս
30 դստերաց ձերոց կերիջիք։ Եւ կործանե-
ցից [6]զարձանս ձեր, եւ ասւերեցից զփայ-
տիզէն ձեռագործս ձեր՝, եւ արկից զդիս
ձեր զդիակամբք կռոց ձերոց, եւ գար-
31 չեսցի անձն իմ ի ձէնջ։ Եւ արարից զքա-
ղաքս ձեր աւերակս, եւ թափուր ա-
րարից զսրբութիւնս ձեր, եւ ոչ հոտա-
32 ւեցայց ի հոտ զոհից ձերոց։ Եւ աւե-
րեցից զերկիրն ձեր, եւ զարմասցին ընդ
նա թշնամիքն ձեր որ լինակեալ իցեն ի
33 նմա։ Եւ ցրուեցից զձեզ ընդ ազգս, եւ
սատակեսցէ զձեզ սուրն եկեալ ի վե-
րայ, եւ եղիցի երկիրն ձեր աւերակ եւ
34 քաղաքք ձեր թափուրք։ Յայնժամ հա-
ճեսցի երկիրն ընդ չարաթիս իւր զամե-
նայն աւուրս աւերածոյն իւրոյ, եւ դուք
եղիջիք յերկրին թշնամեաց ձերոց՝ յերկիր
օտար. յայնժամ չարաթասցի երկիրն,
35 եւ հաճեսցի ընդ չարաթիս իւր. Զամե-
նայն աւուրս աւերածոյն իւրոյ չարա-
թասցի զչարաթիսն զոր ոչ չարաթացաւ
ի չարաթիս ձեր՝ ի ժամանակի յորում
36 բնակէիքդ ի նմա։ Եւ ի վերայ մնացե-
լոցն ի ձէնջ ածից զոգւոյն ի սիրտս նոցա
յերկրի թշնամեացն իւրեանց. եւ հալա-

[3] ԵՔԲ. անզաւակեսցեն [4] ԵՔԲ. արասցեն [5] ԵՔԲ. պղծութ [6] ԵՔԲ. զբարձունս ձեր, եւ աւերեցից զպատկերս ձեր արեգական

ծեսցէ զնոսա ձայն տերեւոյ խարխա-
փելոյ, եւ փախիցեն որպէս որ վախչի-
ցին ի պատերազմէ, եւ անկանիցին ա-
37 ոանց ուրուք հալածելոյ։ Եւ [1]ողջ
եղիցի զքեզ իբր իբրեւ ի պատե-
րազմի՝ առանց ուրուք զնետ մտանելոյ,
եւ ոչ կարիցէք ընդդէմ գառնալ [2]կնամ-
38 եաց ձերոց։ Եւ կորնչիցիք ի մէջ ազ-
գաց, եւ կերիցէ զձեզ երկիրն [2]կնամ-
39 եաց ձերոց։ Եւ մնացեալքն ի ձէնջ սա-
տակեսցին վասն մեղաց իւրեանց յերկրի
[2]կնամեաց իւրեանց, եւ վասն մեղաց
հարց իւրեանց՝ որ ընդ նոսա մաչիցին։
40 [3]Եւ խոստովան լինիցին զմեղս իւր-
եանց եւ զհարց իւրեանց, զի յանցան
եւ արհամարհեցին զիս, եւ զի գնացին
41 առաջի իմ խոտորնակս, Եւ ես գնացից
ընդ նոսա [4]բարկութեամբ խոտորնակս,
եւ [5]կորուսից զնոսա յերկրի՝ [2]կնամեաց
իւրեանց, յայնժամ ամաչեսցէ սիրտ նո-
ցա անթլփատ, եւ յայնժամ հաճեսցին
42 ընդ [6]մեղս իւրեանց, Եւ յիշեցից զոր խոսի
Ցակոբայ եւ զուխտն Իսահակայ, եւ
զուխտն Աբրահամու յիշեցից, եւ զեր-
կիրն յիշեցից։
43 Եւ երկիրն լքեսցի ի նոցանէ. յայնժամ
ընկալցի երկիրն զշաբաթս իւր՝ յաւերել
նորա վասն նոցա, եւ նոքա բնկալցին
զանօրէնութիւնս իւրեանց, փոխանակ
զի զիրաւունս իմ արհամարհեցին, եւ
ի հրամանաց իմոց տագնապացաւ անձն
44 նոցա։ Եւ ես՝ մինչդեռ [7]էին յերկրի
[2]կնամեաց իւրեանց, ոչ անսաս [8]արարի
զնոսա, ու ոչ [9]տագնապացայ նոքօք առ
ի սատակելոյ զնոսա՝ ցրել զուխտ իմ որ
ընդ նոսա. զի ես եմ Տէր Աստուած
45 նոցա. Եւ յիշեցից զառաջին ուխտն
նոցա, յորժամ հանի զնոսա յերկրէն
Եգիպտացւոց [2]ի տանէ ծառայութեան՝,
առաջի ամենայն ազգաց՝ լինել նոցա
Աստուած. զի ես եմ Տէր։
46 Այս են իրաւունք եւ հրամանք եւ օ-
րէնք, զոր ետ Տէր ի մէջ իւր եւ ի մէջ
որդւոցն Իսրայելի ի լերինն Սինայ ի
ձեռն Մովսիսի։

ԳԼ. ԻԷ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
2 Խօսեաց ընդ որդիսն Իսրայելի եւ ասասց-

ցես ցնոսա, Որ ոք ուխտեսցէ ուխտ՝
3 տայ զգինս անձին իւրոյ Տեառն, եղիցի
պինք արուի, ի քահանայինից մին-
չեւ լիակատարանայ, եղիցին գինք նորա
յիւսուն [8]երկգրամեան արծաթոյ բան
4 սրբութեան սկզբն. Եւ իգին լիցին գինք՝
5 երեսուն [8]երկգրամեան։ Ապա թէ ի հինգ-
ամենից մինչեւ չքանամեանս, լինիցին
գինք արուին քսան [8]երկգրամեան,
6 եւ իգին տասն [8]երկգրամեան։ Եւ յամ-
սոցէն մինչեւ չհինգամեանն՝ եղիցի
արուին հինգ [8]երկգրամեան արծաթոյ,
եւ իգին երկք [8]երկգրամեանք արծա-
7 թոյ։ Ապա թէ ի վաթսնամենից եւ ի վեր
իցէ, եթէ արու իցէ, եղիցին գինք նորա
հնգետասան [8]երկգրամեան արծաթոյ, եւ
8 իգին՝ տասն [8]երկգրամեան։ Ապա թէ
աղքատ իցէ ի գնոցն, կացցէ առաջի
քահանային, եւ հատցէ նմա քահանայն
գին, եւ որչափ ինչ ի կարի իցէ ի ձեռին
ուխտաւորին՝ արկցէ նմա գինս քահանայն։
9 Եւ եթէ յանասնոց մատուցանիցեսց
Տեառն իցէ պատարագ, որչափ ինչ
10 տացէ ի նոցանէ Տեառն՝ սուրբ լիցի. Եւ
մի՛ փոխանակեսցէ զլաւն ընդ յոռւոյն,
եւ մի՛ զյոռւոյն ընդ լաւին. ապա թէ
փոխանակելով փոխանակեսցէ զայն ա-
նասուն ընդ անասնոյ, եղիցի եւ այն եւ
11 փոխանակն սուրբ։ Ապա թէ յամենայն
անասնոց անսրբոց իցէ յորոյ ոչ մատ-
չիցի պատարագ Տեառն, կացուսցէ զա-
12 նասունն առաջի քահանային. Եւ արկցէ
նմա գինս քահանայն ի մէջ լաւին եւ
յոռւոյն. եւ որպէս գիարդ արկցէ նմա
13 գինս քահանայն՝ այն կացցէ։ Իսկ եթէ
փրկելով փրկեսցէ գնա, եւ գհինգերորդ
մասն գնոյ նորա յաւելցէ ի նոյն։
14 Եւ մարդ ոք որ սրբեսցէ զտունն իւր
սրբութիւն Տեառն, արկցէ նմա գինս
քահանային ի մէջ լաւին եւ յոռւոյն. եւ
որպէս գիարդ արկցէ նմա գինս քահա-
15 նայն, նոյն կացցէ։ Ապա թէ որ սրբեացն
գնա փրկեսցէ զտունն իւր, յաւելցէ եւ
գհինգերորդ արծաթոյ գնոցն ի նոյն, եւ
նմին իսկ եղիցի։
16 Եւ եթէ յանգոյ կալուածոյ իւրոյ
սրբեսցէ ոք ինչ Տեառն, եղիցին գինք
նորա ըստ սերմանն իւրում. քոռի սիրոյ
գնանոյ՝ եղիցի յիսուն [8]երկգրամեան ար-
17 ծաթոյ։ Եւ եթէ յամէ [9]յոռելենէ

---

[1] Ա.-ԻՆՆ, ԵԹԷ [2] ՅԵԲԲ. ԳՈՒՐ-ՈՒԲ [3] ՅԵԲԲ. ԱԾԻՑ ԶՆոսա յերկիր [4] ԿՈՒՄ, պատուհաս [5] ՅԵԲԲ. իցեն [6] ՅԵԲԲ. արարից [7] ՅԵԲԲ. տաղտկացայց [8] ՅԵԲԲ. սիկղ [9] ՅԵԲԲ. յոբելենէ

18 ինչ իցեն, կացցէ։ Ապա թէ յետ [1]Թողութեանն սրբեսցէ զանդն իւր, համաբեսցի նմա քահանայն զարծաթին յայլ եւս ամն՝ մինչեւ ցտարին [2]Թողութեան, եւ հատցէ փոքր ինչ ի գնոց անտի նորա.
19 Ապա թէ փրկեսցէ զանդն որ սրբեացն զնա, յաւելցէ զհինգերորդ մասն արծաթոյն ի գինս իւր, եւ նորա իսկ լիցի։
20 Ապա թէ ոչ փրկեսցէ զանդն իւր, եւ վաճառեսցէ զանդն այլումէ մարդոյ, մի՛
21 եւս փրկեսցէ. Այլ եղիցի անդն, ելեալ ի [1]Թողութեանն՝ սուրբ Տեառն, իբրեւ գերկիր մի դաւառացեալ. քահանային եւ ղիցի ի կալուած։
22 Ապա թէ յանդոյ զոր գնեալ իցէ եւ չիցէ յիւրոց կալուածոց՝ սրբեսցէ Տեառն,
23 Հաչուեսցի ընդ նմա քահանայն ի գնոցն մինչեւ ցտարին [2]Թողութեան, եւ տացէ զդինսն յաւուր յայնմիկ սրբութիւն
24 Տեառն։ Եւ յամին [1]Թողութեան դարձցի անդն անդրէն առ այրն յորմէ ստացեալ իցէ, որոյ իւր իսկ էր կալուած երկրին։
25 Եւ ամենայն գինք եղիցին ըստ սրբութեան [3]կշռոյն. քսան [4]դանդ լիցի [5]երկդրամեանն։
26 Եւ ամենայն անդրանիկ որ ծնանիցի ի խաչանց քոց՝ Տեառն լիցի, եւ մի՛ ոք սրբեսցէ զայն. եթէ արջառ իցէ, եւ
27 եթէ ոչխար՝ Տեառն լիցի։ Եւ եթէ ի չորքոտանեաց անսրբոց փրկիցէ ըստ գնոց իւրոց, զհինգերորդ մասն ի նոյն յաւելցէ, եւ նորին լիցի. ապա թէ ոչ փրկեսցի, վաճառեսցի ըստ գնոց իւրոց։
28 Ամենայն նուէր զոր նուիրեսցէ ոք Տեառն յամենայնէ որ ինչ իւր իցէ, ի մարդոյ մինչեւ յանասունն եւ յանդոյ [6]մինչեւ ցկալուածս իւր, մի՛ զարձցի անդրէն՝ եւ մի՛ փրկեսցի. ամենայն նուէր՝
29 սուրբ սրբութեանց լիցի Տեառն։ Ամենայն նուէր որ նուիրիցի ի մարդկանէ՝ մի՛ փրկեսցի, այլ մահու մեռանիցի։
30 Ամենայն տասանորդ յերկրէ, ի սերմանեաց երկրին եւ ի պտղոց ծառոց, Տեառն է, ի սրբութիւն Տեառն։ Եւ եթէ
31 փրկելով ոք փրկեսցէ զտասանորդ իւր, զհինգերորդ մասն յաւելցէ ի նոյն, [7]եւ
32 նորին լիցի՝։ Եւ ամենայն տասանորդ արջառոյ եւ ոչխարի, ամենայն տասանորդ որ մտանիցէ ընդ թուով գաւազանի, սրբութիւն Տեառն լիցի։
33 Մի՛ լիցի խարիր ընդ բարին եւ ընդ չոռին, եւ մի՛ փոխանակեսցես զբարին ընդ չոռոյն. ապա թէ փոխանակելով փոխանակեսցես, եւ նա եւ փոխանակին իւր եղիցին սուրբ, եւ մի՛ փրկեսցի։
34 Այս են պատուիրանք զոր պատուիրեաց Տէր Մովսիսի առ որդիսն Իսրայելի ի լերինն Սինայի։

[1]Եբր. յոբելենին [2]Եբր. յոբելեան [3]Եբր. սկեղն
[4]Այսինքն՝ կերատ, ։մ, ցորեան [5]Եբր. սիկղն
[6]Եբր. կալուածոց իւրոց, մի վաճառեսցի
[7]Եբր. գ-կ-ո-ե

ԳԼՈՒԽՔ ԹՈՒՈՑՆ

	Գլ.	Համ.
Հրաման առնու Մովսէս հանդերձ իշխանօքն առնուլ զհամար ղօրացն Իսրայելի, ի քսանամենից եւ ի վեր՝ բաց յԼեւտացւոցն	Ա.	1
Կացուցանէ զԼեւտացիսն բարձող խորանին և կահից նորուն, եւ զգեղն երիս երիս ի չորից կողմանց ի բաւեայ նշանօք ազգացն	Ա.	48
Տայ զԼեւտացիսն պաշտօնեայս Ահարոնի, եւ առնուլ սակ յամօրէից եւ ի վեր զհամար երից որդւոցն Ղեւեայ, եւ բաժանէ զդործս իւրաքանչիւրցն ի խորանին	Գ.	1
Առնու զթիւ անդրանկացն Իսրայելի, եւ փոխանակ ընդ նոցա իւր զԼեւտացիսն յամօրէից, անձն ընդ անձին. եւ ընդ աւելորդաց անդրանկացն Իսրայելի՝ զհինգ զերկդրամ եանն, եւ տայ ցԱհարոն	Գ.	40
Տայ զպատիւ քահանայութեանն տանն Ահարոնի, եւ խնկարկուս տապանակին եւ սեղանոցն զԱհարոն եւ զորդիս իւր, եւ զայլ որդիսն Կահաթու բարձողս այսոցիկ։ Իսկ բարձողս փեղկից խորանին՝ գունդն Գերսոնի, եւ սեանցն խոյակացն՝ գունդն Մերարեայ	Դ.	1
Վասն զբորոտն եւ զնմանեան արտաքոյ պահել բանակին	Ե.	1
Զի զզրկանս, զգլուխն և զՆզգեակն հատուսցեն ի տեարսն կամ ի քահանայսն	Ե.	5
Վասն կնոջ զորմէ կասկածէ այրն շնացեալ գոլ, թէ իցէ կամ չիցէ, տալ զերդումն Նզովին ըրովի	Ե.	11
Զի մի՛ արբցէ ուխտաւորն գինի կամ զնմանեան, եւ նուէրքն ի կատարման ուխտին	Զ.	1
Օրհնութիւն քահանային զոր տայր ժողովրդեանն	Զ.	22
Ի նուագակատիս խորանին ընծայք երկոտասան իշխանաց ցեղիցն, եւ խօսելն Աստուծոյ ի միջոյ քերովբէիցն	Է.	1
Վասն լուցման ճրագաց աշտանակին	Ը.	1
Սրբէ զԼեւտացիսն արսկմամբ ի գործ սարկաւագութեան՝ ի քսանամենից մինչեւ յիսնամեանն	Ը.	5
Հրամայէ առնել զզատիկն ի չորեքտասան ամեանն առաջնոյ, Իսկ որք չիցեն սուրբք՝ յերկրորդում ամսեանն ի չորեքտասանն	Թ.	1
Զի հրամանաւ Տեառն չուեսցեն կամ բանակեսցին ի վերանալ կամ ի ծածկել ամպոյն գխորանն	Թ.	15
Փողս կռածոյս արծաթիս փողել՝ զի հաւաքեսցին, եւ ազդեցուիեան՝ զի ընթասցին բանակքն չորեքին, ի պատերազմունս, եւ յամամուտս ի վերայ զօհիցն. ի տիպ առաքելոցն փողոց, եւ հրեշտակայնոյն ի Տեառն գալուստն	Թ.	1
Վերացաւ ամպն, և չուեցին ըստ հրամանի ազդեցող փողոյն ի Սինայէ ի Փառան	Ժ.	11
Մեծարէ Մովսէս զՅոթոր զաներ իւր երթալ ընդ ինքեանս, եւ լինել քահանայ կամ աւագ	Ժ.	29
Թէ ի չուել նոցա, յառաջագոյն երիւք աւուրբք երթայր տապանակն, եւ ամպն ունէր հովանի	Ժ.	33
Տրտնջեաց ժողովուրդն, եւ պատժեցաւ հրով ի կէսեցեայն Հրայրեացս	ԺԱ.	1
Յանկացան մոլ, եւ խնդրեաց Մովսէս ինուլ զցանկութիւն նոցա, և տալ ինքեան օդնական, և ետ զեւթանասուն ծերսն, եւ զյորմանրգն՝ ամսօրեայ. եւ հարուածեաց զնոսա, եւ ի թաղելոյն կէսեցաւ տեղին՝ Գերեզմանն ցանկացողաց. յայն եւ յերկեւղ մեղ ի գնոխոց	ԺԱ.	4
Բորոտի Մարիամ վասն բամբասանացն զՄովսէսէ, զայժմուցս առ մեզ սաստն Աստուծոյ նկարագրելով	ԺԲ.	1
Թէ ի զանգիտեցուցիչ բանից լրտեսացն՝ յեգիպտոս դառնալ կամէին, ընդ որ բարկացեալ Աստուծոյ վճռեաց նոցա լթէ մտցեն ի հանգիստն, բայց որդիքն նոցա, եւ Քաղէբ եւ Յեսու	ԺԳ.	2
Ելին պատերազմել ընդ Ամաղեկայ, եւ պարտեցան վասն չլինելոյ ընդ նոսա Տեառն զոր յաստուցին	ԺԳ.	39
Օրինադրէ զկրաւունս ողջակիզացն նաշխով եւ գինւով, ընդ գառին, ընդ խոյի եւ ընդ զուարակի. Զառ մեզ կենդանի բանաւոր զոհից նուէրս նշանակելով զմեսեդին՝ ուղիղ աղօթիւքն խնկանուէր, ընդ սրբոյ Աաչեցարին հզօր եւ անմահ Գառինն Աստուծոյ	ԺԵ.	1
Ի խմորեալ հացից՝ զառաջինն նկանակն հաս Տեառն տալ հրամայէ	ԺԵ.	16
Եթէ ամենայն ժողովուրդն ակամայ յանցիցէ, զուարակ մի յողջակէզ, եւ նոխազ մի վասն մեղաց. իսկ ընդ միոյ անձին ակամայի՝ ալեղջ մի	ԺԵ.	22
Կամակար մոռաք մեղուցեալն՝ մահու մեռցի	ԺԵ.	30
Քարկոծել տայ զկրկտաքաղն ի շաբաթու՝ յայն և յերկեւղ ամենայն արհամարհողաց	ԺԸ.	32
Ծոպս ասղանիս առնել ի տուընս հանդերձից, նշանակ յիշման զպատուիրանաց	ԺԵ.	37
Յուժանն Կորխայ եւ Դաթանայ յարեան ի վերայ Մովսիսէ եւ Ահարոնէ, եւ կորեան չարաչար	ԺԶ.	1

	Գլ.	Համ.
Հրամայէ զբուրաստանն պղնձիա զպըրեղելոցն առնել ծածկոյթ սեղանոյն, յիշատակ յանցուցելոցն և ի սոսկումն ապագայիցն։	ԺԶ.	36
Տրանջեաց ժողովուրդն զՄովսիսէ՝ իբրեւ թէ յանձնէ պատժեաց զժողովն Կորխայ, և անկան ընդ այնր չորեքհարիւր հազարք, մինչեւ Ահարոն խնկարկեալ քաւեաց։	ԺԶ.	41
Հրամայէ առնուլ գաւազանս ըստ անուանց ցեղիցն, վասն ընտրութեան քահանայութեան. և ծաղկեցաւ գաւազանն Ահարոնի։	ԺԷ.	1
Տայ զՂեւեաւացիսն ի պաշտօն Ահարոնի պահել զխորանն, բայց մի՛ ի սեղանն մերձենալ։	ԺՐ.	1
Շնորհէ Ահարոնի և որդւոց նորա զհաց նուիրացն և զողից, եւ զնախապրաւունս արմտեացն համարձակէ ուտել ուստերաց և դստերաց տանն Ահարոնի. և զանդրանիկս անասնոյ և զերկանս անդրանկաց մարդոյ և մերձենալոցն։	ԺՐ.	8
Զաասանորդս մտից ժողովրդեանն տայ Ղեւեաւցւոցն. և սմին վասն ոչ տայ նոցա վիճակ կալուածոց երկրի. զի Տէր է բաժին նոցա։	ԺՐ.	21
Ի մտից անուի տասանորդացն՝ տացեն Ղեւեաւցիքն տասանորդս տանն Ահարոնի։	ԺՐ.	25
Զմեխիր պղրեցելոյ կարմիր երինջուն ուղել ի պահեստ առ ի սրսկումն սրբութեան. Նկարելով զսրբարար չարչարանսն Քրիստոսի։	ԺԹ.	1
Մերձեցելոցն ի դի կամ յոսկր մեռելոյ՝ սրբել սրսկմամբ մխրոյն յերրորդ և յեւթներորդ աւուր հրամայէ։	ԺԹ.	11
Մեռաւ Մարիամ ի Կադէս. և ի սրբանչել ժողովրդեանն ընդ ջրոյ՝ հրամայն առեալ Մովսէս հարկանել զվէմն երկիցս, և ապա ել ջուրն։ Վասն որոյ մեղադրին Մովսէս և Ահարոն. և կոչեցաւ տեղին՝ Ջուր բամբասանաց։	Ի.	1
Խնդրեաց Մովսէս ճանապարհ ընդ եդոմ, և նա ոչ եհաս, այլ ել պատերազմել. յորմէ խոյս տուեալ Իսրայէլ եկն ի Հովր լեառն։	Ի.	14
Անդ մեռաւ Ահարոն, և մինչդեռ ի սուգ էր ժողովուրդն՝ եկն պատերազմել Քանանացին, և նզովեաց զնա Իսրայէլ։	Ի.	23
Տրանջեցին վասն մանանայիսն, և յօձիցն բազումք սատակեցան, մինչեւ կանգնեաց զօձն պղնձի ի տիպ Քրիստոսի։	ԻԱ.	4
Զբաղում օթեւանօք անցեալ եկին ի ջրհորն մեծ ի ձորն Առնովնայ. ուր և նուագեցին Աստուծոյ ի վերայ ջրհորոյն մեծի։	ԻԱ.	10
Խնդրեաց Իսրայէլ ճանապարհ ընդ սահմանս Սէհոնի, և նա ոչ եհաս. եւ հար զնոս Իսրայէլ, և առ զամենայն սահմանս նորա. ուր և առակ-		

	Գլ.	Համ.
աբկոք վայ կարդան Մովաբու։ Առ և զիմաստութիւնն Ովգայ զիասանաստանն։	ԻԱ.	21
Եկն ժողովուրդն մնալ ի Յորդանան, և կոչեաց Բաղակ զԲաղաամ անիծանել զԻսրայէլ. որ և յօրհնէն գիարայել մարգարէացաւ եւս զքրիստոսէ թէ ծագեսցէ Աստղն Յակոբայ։ Եւ ապա ի ձեռն չար խրատու՝ գայթագղութիւն նիւթեաց Իսրայէլի, ուր և անկան քսան և չորք հազարք։	ԻԲ.	1
Անդ առաքինացեալ Փենեէս խոցեաց զԶամբրի, և տուաւ նմա ուխտ քահանայութեան. և ասաց Տէր առնուլ վրէժս ի Մադիանացւոց։	ԻԵ.	6
Հրամայէ դարձեալ թուել զխարայէլ, որոց տալոց էր զերկիրն ի ժառանգութիւն բաց յՂեւեաւացւոցն։	ԻԶ.	1
Գան դստերքն Սաղպաադու խնդրել ժառանգութիւն, և հրամայեաց զարժանն վասն ժառանգութեանց։	ԻԷ.	1
Հրամայէ Մովսիսի ելանել ի Նաբաւ լեառն և վախճանել. բայց նախ ձեռնադրել զՅեսուա առաջնորդ Իսրայելի։	ԻԷ.	12
Պատուէր տայ զհանապազորդ նուիրացն, զառաւօտուց և զերեկոյեայ գառանց, և զչաբաթուց և զամսոյն. եւս և զգլխաւոր տօնից, զՀաւկի, զՓենտեկոստէի, զՓառւթեան, զՏաղաւարաշարաց։	ԻԸ.	1
Հրամայէ զի զոր ուխտ ոք հատուսցէ. բայց թէ այրն կամ կայր չտացեն թողու՝ մի՛ հատուսցէ։	Լ.	1
Առին վրէժ ի Մադիանայ, սպանին զհինգ թագաւորսն, և զՔաղաամին. և եւսուն յաւարէն հաս Տեառն և Ղեւեաւցւոցն։	ԼԱ.	1
Խնդրեցին ի Մովսիսէ Գադ եւ Ռուբէն ի կալուած զերկիրն Սեհոնի եւ Ովգայ, եւ եհաս պատուիրեալ երթալ նոցա ընդ ինն ցեղիցն յառաջապահ նիզակակից՝ մինչեւ նուաճեսցեն զերկիրն ընդ ձեռամբ։	ԼԲ.	1
Բանակեցաք Իսրայելի Յեգիպտոսէ մինչեւ ցեղն Յորդանանու յանդիման երեքտղի։	ԼԳ.	1
Հրամայէ զի ի մտանելն յերկիր անդր կոթծանեսցեն զկուռսն և զքանդեսցեն	ԼԳ.	50
Որպէ զեզերս աշխարհին զոր ժառանգելոց էին՝ ըստ լայնութեան և երկայնութեան։	ԼԴ.	1
Անուանք իշխանացն, որ ժառանգեցուցանելոց են նոցա զերկիրն։	ԼԴ.	16
Հրամայէ զի տացեն Ղեւեաւցւոցն ի կալուած զքաղաքսն ապաստանի, յորս անկեալ սպրեսցի ականմայ սպանողն։	ԼԵ.	1
Թէ զինչ խնդրելն իշխանք ցեղին Մանասէի ի պատճառս դստերացն Սաղպաադու, և թէ զինչ օրինադրեցաւ վասն ժառանգութեան։	ԼՋ.	1

ԹԻՒ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի յանապատին Սինայի, ի խորանին [1]վկայութեան, ի միում՝ ամսեանն երկրորդի, յամին երկրորդի ելանելոյ նոցա
2 յերկրէն Եգիպտացւոց, ասէ, Առէք զհնամար ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայելի, ըստ ազգս, ըստ տունս նահապետաց, ըստ թուոց յանուանէ, ըստ
3 գլխոց նոցա՝ ամենայն արու, ի քսանամենից եւ ի վեր, ամենայն որ ելանիցէ ի զօրագ Իսրայելի, հանդէս առնել նոցա հանդերձ զօրութեամբ իւրեանց զոմ եւ
4 Ահարոն. [2]առնիցէք նոցա հանդէս։" Եւ ընդ ձեզ լինիցին իւրաքանչիւր ըստ ցեղի, իւրաքանչիւր իշխան, ըստ տանց նահապետաց լինիցին։
5 Եւ սոյս են անուանք արանցն որ յանդիման լինիցին ընդ ձեզ. Ռուբենի՝ Ե-
6 լիսուր որդի Սադիուրայ, Շմաւունի՝ Սա-
7 ղամիէլ որդի Սուրիսադայի, Յուդայի՝
8 Նաասոն որդի Ամինադաբայ, Իսաքա-
9 րայ՝ Նաթանայէլ որդի Սուկարայ, Զա-
10 բուղոնի՝ Եղիաբ որդի Քեղովնայ, Որդւոցն Յովսեփայ, Եփրեմի՝ Եղիսամա որդի Եմիուդայ, Մանասէի՝ Գամաղիէլ
11 որդի Փազասուրայ, Բենիամինի՝ Աբի-
12 դան որդի Գեդէոնի, Դանայ՝ Աքիեզեր
13 որդի Ամիսադայի, Ասերայ՝ Փագիէլ որդի
14 Եքրանայ, Գադայ՝ Եղիասափան որդի
15 Դագուէլի, Նեփթաղիմայ՝ Աքիրէ որդի
16 Ենանայ։ Սոքա են անուանիք ժողովրդեանն, իշխանք ցեղիցն ըստ նահապետաց՝ հազարապետք Իսրայելի։
17 Եւ առին Մովսէս եւ Ահարոն զարսն զայնոսիկ որք յանուանէն կոչեցան.
18 եւ զամենայն ժողովուրդն ժողովեցին ի միում ամսեանն երկրորդի, [2]յամին երկրորդի," եւ մտին ի հանդէս ըստ ազգաց իւրեանց, ըստ նահապետաց իւրեանց, ըստ թուոց անուանց նոցա, ի քսանամենից եւ ի վեր, [2]ամենայն արու"
19 ըստ գլխոց իւրեանց։ Որպէս հրամայեաց Տէր Մովսիսի, եւ մտին ի հանդէս յանապատին Սինայի։
20 Եւ եղեն որդիք Ռուբենի՝ անդրանկան Իսրայելի, ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոց անուանց իւրեանց, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու ի քսանամենից եւ ի վեր, ամենայն որ ելանէր ի զօրան [2]Իսրայելի՝
21 Հանդէս նոցա յազգէն Ռուբենի, քառասուն եւ վեց հազար եւ հինգ հարիւր։
22 Եւ որդւոցն Շմաւունի, ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոց անուանց իւրեանց, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու ի քսանամենից եւ ի վեր,
23 ամենայն որ ելանէր ի զօրան՝ Հանդէս նոցա ի ցեղէն Շմաւունի, հիսուն եւ իննհազար եւ երեք հարիւր։
24 Եւ որդւոցն Գադայ՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոց անուանց [2]նոցա, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու" ի քսանամենից եւ ի վեր,
25 ամենայն որ ելանէր ի զօրու՝ Հանդէս նոցա ի ցեղէն Գադայ, քառասուն եւ հինգ հազար եւ վեց հարիւր եւ հիսուն։
26 Եւ որդւոցն Յուդայ՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոց անուանց [2]նոցա, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու" ի քսանամենից եւ ի
27 վեր, ամենայն որ ելանէր ի զօրան՝ Հանդէս նոցա ի ցեղէն Յուդայ՝ եւթանասուն եւ չորք հազարք եւ վեց հարիւր։
28 Եւ որդւոցն Իսաքարայ՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոց անուանց [2]իւրեանց, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու" ի քսանամենից եւ ի վեր, ամենայն որ ելանէր ի զո-
29 րու՝ Հանդէս նոցա ի ցեղէն Իսաքարայ, հիսուն եւ չորք հազարք եւ չորեքհարիւր։

[1]ԵԲԲ. ժողովոյ. այլոց յաճախ. [2]ԵԲԲ. պակաս

30 Եւ որդւոյն Զաբուղոնի՝ ըստ գունդս իւրեանց, ըստ ազգս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց [1]իւրեանց, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր,
31 ամենայն որ ելանէր ի զօրու՝ Հանդէս նոցա ի ցեղէն Զաբուղոնի, չիսուն եւ եւթն հազար եւ չորեքհարիւր։
32 Եւ որդւոյն Յովսեփայ, որդւոց Եփրեմի՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց, [1]նոցա, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր, ամենայն որ ելանէր
33 ի զօրու՝ Հանդէս նոցա ի ցեղէն Եփրեմի, քառասուն հազար եւ հինգ հարիւր։
34 Եւ որդւոյն Մանասէի՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց [1]իւրեանց, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր, ամենայն որ ելանէր ի զօրու՝
35 Հանդէս նոցա ի ցեղէն Մանասէի, երեսուն եւ երկու հազար եւ երկերիւր։
36 Եւ որդւոյն Բենիամինի՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց [1]նոցա, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր, ամենայն որ ելանէր ի զօրու՝
37 Հանդէս նոցա ի ցեղէն Բենիամինի, երեսուն եւ հինգ հազար եւ չորեքհարիւր։
38 Եւ որդւոյն Դանայ՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց [1]նոցա, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր, ամենայն որ ելանէր ի զօրու՝
39 Հանդէս նոցա ի ցեղէն Դանայ, վաթսուն եւ երկու հազարք եւ եւթն հարիւր։
40 Եւ որդւոյն Ասերայ՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց [1]նոցա, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր,
41 ամենայն որ ելանէր ի զօրու՝ Հանդէս նոցա ի ցեղէն Ասերայ, քառասուն եւ մի հազար եւ հինգ հարիւր։
42 Եւ որդւոյն Նեփթաղիմայ՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց [1]նոցա, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր,
43 ամենայն որ ելանէր ի զօրու՝ Հանդէս նոցա ի ցեղէն Նեփթաղիմի, չիսուն եւ երեք հազարք եւ չորեքհարիւր։
44 Այս է հանդէս զոր արարին Մովսէս եւ Ահարոն եւ իշխանքն Իսրայելի, երկոտասան [2]իշխանք. այր մի ըստ [1]միում ազգի, ըստ ցեղից՝ ամենայն նահապետաց
45 իւրեանց էին։ Եւ եղեւ ամենայն հանդէս որդւոց Իսրայելի [3]հանդերձ զօրու՝ իւրեանց ի քսանամենից եւ ի վեր ամենայն որ ելանէր [4]առ պատերազմ՝ ի
46 միջոյ Իսրայելի. Եւ եղեն ամենայն անցեալքն ի հանդիսի վեց հարեւր հազար, եւ երեք հազար եւ հինգ հարեւր եւ չիսուն։
47 Բայց Ղեւտացիքն ի ցեղէ ազգին իւրեանց ոչ անցին ի հանդիսի [5]ընդ որդիսն
48 Իսրայելի՝։ Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի
49 եւ ասէ, Տեսջիր, զազգն Ղեւեայ մի՛ խառնեսցես ընդ նոսա ի հանդէս, եւ զհաւմար նոցա մի՛ առնուցուս ի մէջ որդւոցն
50 Իսրայելի. Եւ կացուսցես զՂեւտացիսն ի վերայ խորանին վկայութեան, եւ ի վերայ ամենայն կահի նորա, եւ ի վերայ ամենայնի որ ինչ է ի նմա. նոքա բարձցեն զխորանն եւ զամենայն զկահ նորա, եւ նոքա պաշտեսցեն ի նմա, եւ
51 չուրջ զխորանաւն բանակեսցին։ Եւ ի չուել խորանին իջուսցեն զնա Ղեւտացիքն, եւ ի բանակել խորանին կանգնեսցեն զնա Ղեւտացիքն. եւ այլազգի որ մերձեսցի ի նա՝ մեռցի։
52 Եւ բանակեսցին որդիքն Իսրայելի այր ըստ իւրաքանչիւր կարգի, եւ այր ըստ իւրաքանչիւր նահապետութեան հանդ
53 գերձ զօրու իւրեանց։ Բայց Ղեւտացիքն բանակեսցին չուրջ զխորանաւն վկայութեան [1]յանպիտան Տեառն՝, եւ ոչ լինիցին մեղք ի մէջ որդւոցն Իսրայելի. եւ պահեսցեն Ղեւտացիքն զպահպանութ
54 իւն խորանին վկայութեան։ Եւ արարին որդիքն Իսրայելի ըստ ամենայնի, որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի [1]եւ Ահարոնի՝. նոյնպէս եւ արարին։

Գլ. Բ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ
2 Ահարոնի եւ ասէ, Այր իւրաքանչիւր

[1] ՅԵՔ. գ-վ-ւթ

[2] ՅԵՔ. այր
[3] ՅԵՔ. ըստ տանց նահապետաց
[4] ՅԵՔ. ի զօրու
[5] ՅԵՔ. ի միջի նոցա

[1]զհետ նշանի գնդի իւրոյ գնասցեն , ըստ տանց նահապետաց իւրեանց , ըստ բանակաց իւրեանց բանակեսցին որպէսզի Իսրայէլի՚՝ ։
3 Եւ որ յառաջագոյնն բանակիցին յարեւելից կողմանէ՝ ցեղ բանակին Յուդայ իւրոց հանդերձ զօրուն իւրեանց . եւ իշխան որդւոցն Յուդայ՝ Նաասոն որդի
4 Ամինադաբայ ։ Եւ զօրք նորա անցեալք ի հանդիպի՝ եւթանասունն եւ չորք հազար եւ վեց հարեւր ։ Եւ որք բանակիցին զհետ նոցա՝ ցեղն Իսաքարայ իւրոց ,
5 եւ իշխան որդւոցն Իսաքարայ՝ Նաթանայէլ որդի Սուկսայայ ։ Եւ զօրք նորա անցեալք ի հանդիպի՝ յիսուն եւ չորք հազար եւ չորեքհարեւր ։
7 Եւ բանակեսցին առ նոքօք ցեղն Զաբուղոնի , եւ իշխան որդւոցն Զաբուղոնի՝ Եղիաբ որդի Քե-
8 ղովնի։ Եւ զօրք նորա անցեալք ի հանդիպի՝ յիսուն եւ եւթն հազար եւ չորեքհարեւր ։
9 Ամենեքին անցեալք ի հանդիպի բանակին Յուդայ , հարեւր ուխտուն եւ վեց հազար եւ չորեքհարեւր , հանդերձ զօրուն իւրեանց յառաջագոյն չուեսցին ։
10 Գունդ բանակին Ռուբինի ընդ հարաւակողմն , եւ զօրն նոցա . եւ իշխան որդւոցն Ռուբինի՝ Եղիսուր որդի Սա-
11 դիւրայ ։ Եւ զօրն նորա անցեալք ի հանդիպի՝ քառասուն եւ վեց հազար եւ
12 հինգ հարեւր ։ Եւ բանակեսցին առ նովաւ ցեղն Շմաւոնի . եւ իշխան որդւոցն Շմաւոնի Սագամիէլ որդի Սուրիսադայի՝
13 Եւ զօրն նորա անցեալք ի հանդիպի՝ յիսուն եւ հինն հազար եւ երեք հարեւր ։
14 Եւ բանակեալք առ նովաւ ցեղն Գադայ . եւ իշխան որդւոցն Գադայ՝ Եղիասափան
15 որդի Դագուկիլ ։ Եւ զօր նորա անցեալք ի հանդիպի՝ քառասուն եւ հինգ հազար
16 եւ վեց հարեւր եւ յիսուն ։ Ամենեքին անցեալք ի հանդիպի ցեղին Ռուբինի , հարեւր յիսուն եւ մի հազար եւ չորեքհարեւր եւ յիսուն , հանդերձ զօրուն իւրեանց երկրորդ չուեսցին ։
17 Եւ խորանն [2]վկայութեան եւ բանակ Ղեւտացւոցն ի մէջ բանակացն . որպէս բանակեսցին՝ նոյնպէս չուեսցին , իւրաքանչիւր [3]զհետ միմանց ըստ պետութեան՚՝ ։
18 Եւ գունդ բանակին Եփրեմի ընդ [4]ծովակողմն հանդերձ զօրուն իւրեանց . եւ իշխան որդւոցն Եփրեմի՝ Եղիսամա որդի
19 Եմիուդայ ։ Եւ զօրն նորա անցեալք ի հանդիպի՝ քառասուն հազար եւ հինգ
20 հարեւր ։ Եւ որ բանակիցին զհետ նոցա՝ ցեղն Մանասէի իւրոյ . եւ իշխան որդւոցն Մանասէի՝ Գամաղիէլ որդի Փադասուրայ ։ Եւ զօրն նորա անցեալք ի հանդիպի՝
21 երեսուն եւ երկու հազարք եւ երկե-
22 րեւր ։ Եւ որ բանակիցին զհետ նոցա՝ գունդն Բենիամինի իւրոց . եւ իշխան որդւոցն Բենիամինի՝ Աբիդան որդի Գեդէո-
23 նի ։ Եւ զօր նորա անցեալք ի հանդիպի՝ երեսուն եւ հինգ հազար եւ չորեքհա-
24 րեւր ։ Ամենեքին անցեալք ի հանդիպի բանակին Եփրեմի , հարեւր եւ ութ հազար եւ [5]երկերիւր , հանդերձ զօրուն իւրեանց՝ երրորդք չուեսցին ։
25 Եւ գունդ բանակին Դանայ ընդ հիւսիսակողմն հանդերձ զօրուն իւրեանց . եւ իշխան որդւոցն Դանայ՝ Աքիեզեր որդի
26 Ամիսադայի ։ Եւ զօր նորա անցեալք ի հանդիպի՝ վաթսուն եւ երկու հազարք
27 եւ եւթն հարեւր ։ Եւ որ բանակեսցին զհետ նորա՝ ազգն Ասերայ իւրոց . եւ իշխան որդւոցն Ասերայ՝ Փագիէլ որդի
28 Եքրանայ ։ Եւ զօր նորա անցեալք ի հանդիպի՝ քառասուն եւ մի հազար եւ հինգ
29 հարեւր ։ Եւ որ բանակեսցին զհետ նորա՝ ցեղն Նեփթաղիմի իւրոց . եւ իշխան որդւոցն Նեփթաղիմի՝ Աքիրէ որդի Ենա-
30 նայ ։ Եւ զօրն նորա անցեալք ի հանդիպի՝ յիսուն եւ երեք հազարք եւ չորեք-
31 հարեւր ։ Ամենեքին անցեալք ի հանդիպի բանակին Դանայ , հարեւր եւ յիսուն եւ եւթն հազար եւ վեց հարեւր . հանդերձ զօրուն իւրեանց յետոյ չուեսցին ըստ գունդս իւրեանց ։
32 Այս է հանդէս որդւոցն Իսրայէլի ըստ տանց նահապետաց իւրեանց . ամենայն հանդէս բանակացն հանդերձ զօրօք իւրեանց՝ վեց հարեւր հազար եւ երեք հա-
33 րիւր եւ հինգ հարեւր եւ յիսուն ։ Բայց Ղեւտացիքն ոչ անցին [6]ընդ նոսա՚՝ ի հանդիպի , որպէս պատուիրեաց Տէր
34 Մովսիսի։ Եւ արարին որդիքն Իսրայէլի զամենայն՝ որպէս հրամայեաց Տէր Մովսիսի . այնպէս բանակէին ըստ [7]գունդս

[1] Եբր. առ դրօշի իւրում ի նշանս տան հարց իւրոց, բանակեսցին որդիքն Իսրայելի, դէմ յանդիման շուրջ վերառնեն ժողովոյ բանակեսցին ։ [2] Եբր. ժողովոյ [3] Եբր. ի կոյս իւրում ըստ դրօշս իւրեանց

[4] Կամ, արեւմուտս [5] Եբր. հարեւր [6] Եբր. ի մէջ որդւոցն Իսրայելի [7] Եբր. դրօշուց

իւրեանց, եւ այնպէս չուէին իւրաքանչիւր զինչ ցղվից իւրեանց ըստ տանց նահապետաց իւրեանց։

Գլ. Դ

4 Եւ այս ազգք են Ահարոնի եւ Մովսիսի, յաւուր յորում խօսեցաւ Տէր ընդ
2 Մովսիսի ի լերինն Սինայի։ Եւ այս են անուանք որդւոցն Ահարոնի. անդրանիկ՝
[1]Նաբադ եւ Աբիուդ եւ Եղիազար եւ
3 Իթամար։ Եւ այս են անուանք որդւոցն Ահարոնի՝ քահանայիցն օծելոց, զորոց
կատարեցին զձեռս իւրեանց քահանա-
4 յանալ։ Եւ վախճանեցան Նաբադ եւ Աբիուդ առաջի Տեառն՝ մինչ մատուցա-
նէին զնուրն օտար առաջի Տեառն յանա-
պատին Սինայի, եւ որդիք ոչ էին նոցա. եւ քահանայացան Եղիազար եւ Իթա-
մար ընդ Ահարոնի ընդ հօրն իւրեանց։
5 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
6 ասէ, Ա՛ռ զազգն Ղեւեայ, եւ կացուս-
ցես զնոսա առաջի Ահարոնի քահանայի,
7 եւ պաշտեսցին զնա։ Եւ պահեսցին զպահպանութիւնս նորա եւ զպահպա-
նութիւնս որդւոցն Իսրայէլի առաջի
խորանին [2]վկայութեան՝ գործել զգործ
8 խորանին։ Եւ պահեսցին զամենայն սպաս խորանին [2]վկայութեան եւ զպահպանու-
թիւնս որդւոցն Իսրայէլի եւ զամենայն
9 գործ խորանին։ Եւ տացես զՂեւեացիսն Ահարոնի [3]եղբօր քումի՝ եւ որդւոց
նորա [3]քահանայից. հատուցանելն տուեալ
10 լինի նոցա յորդւոցն Իսրայէլի։ Եւ զԱհարոն եւ զորդիս նորա կացուսցես [3]ի
վերայ խորանին վկայութեան՝, եւ պա-
հեսցին զքահանայութիւնն իւրեանց [3]եւ
զամենայն ինչ զսեզանոյն, եւ որ ինչ
ի ներքոյ քան զվարագոյրն իցէ՝. եւ
այլազգի որ մերձենայցէ՝ մեռցի։
11 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
12 ասէ, Եւ ես ահա առի զՂեւեացիսն ի
միջոյ որդւոցն Իսրայէլի փոխանակ ամե-
նայն անդրանկան որ բանայ զարգանդ ի
միջոյ որդւոցն Իսրայէլի. [3]փրկանք նոցա
13 լիցին՝, եւ եղիցին ինձ Ղեւեացիքն։ Զի
իմ է ամենայն անդրանիկ. յաւուր յո-
րում հարի զամենայն անդրանիկ յերկ-
րին Եգիպտացւոց, սրբեցի ինձ զամենայն
անդրանիկս Իսրայէլի ի մարդոյ մինչեւ

[1] ԵՖԲ. Նադաբ, այլոք՝ Նաղաբ [2] ԵՖԲ. ժողովոյ [3] ՅԵՖԲ. պահ-

յանասուն. իմ լիցին. [3]զի ես եմ Տէր։
14 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի յա-
15 նապատին Սինայի եւ ասէ, Համրեա
զամս որդւոցն Ղեւեայ ըստ տանց նա-
հապետաց իւրեանց, [3]ըստ գունդս իւր-
եանց՝" ըստ ազգս իւրեանց, ամենայն
արուի՝ յամսոյէ եւ ի վեր առնիցէք
16 հանդէս։ Եւ [4]արարին նոցա հանդէս Մով-
սէս [3]եւ Ահարոն՝" ըստ բարբառոյ Տեառն՝
17 որպէս եւ [5]հրամայեաց նոցա Տէր՝"։ Եւ
առքս են որդիք Ղեւեայ ըստ անուանց
իւրեանց. Գերսոն, Կահաթ եւ Մերարի։
18 Եւ այս են անուանք որդւոցն Գերսոնի
ըստ գունդս իւրեանց. Ղորենի եւ Սե-
19 մէի։ Եւ որդիք Կահաթու ըստ գունդս
իւրեանց, Ամրամ եւ Իսահառ եւ Քեբ-
20 րոն եւ Ոզիէլ։ Եւ որդիք Մերարեայ
ըստ գունդս իւրեանց, Մոոզի եւ Մու-
սի. սոքա են գունդք Ղեւեացւոց ըստ
տանց նահապետաց իւրեանց։
21 Գերսոնի՝ գունդն Ղոբենեայ եւ գունդն
22 Սեմեայ. սոքա են գունդք Գերսոնի։ Եւ
հանդէս նոցա ըստ թուոյ ամենայն ար-
ուի, յամսոյէ եւ ի վեր, հանդէս նոցա՝
23 եւթն հազար եւ հինգ հարիւր։ Եւ այս
գունդք Գերսոնի՝ յետոյ խորանին ընդ
24 ծովակողմն բանակեսցին։ Եւ իշխան
տան նահապետաց գնղին Գերսոնի՝ Եղի-
25 սափան որդի Դուիզայ։ Եւ պահպա-
նութիւն որդւոցն Գերսոնի ի խորանին
վկայութեան՝ խորանն եւ [6]արտախուս-
րակք եւ նուագարանք խորանին վկայու-
26 թեան, եւ առագաստք սրահին, եւ վա-
րագոյր դրան խորանին, եւ այլ եւս
աւելորդ" ամենայն գործոյն նորա։
27 Եւ Կահաթու՝ գունդ մի Ամրամայ,
եւ գունդ մի Իսահառայ, եւ գունդ մի
Քեբրոնի, եւ գունդ մի Ոզիէլի. սոքա
28 են գունդք Կահաթու. Ըստ թուոյ ամե-
նայն արուի յամսոյէ եւ ի վեր, ութ
հազար եւ վեց հարիւր, որ պահէին
29 զպահպանութիւնս սրբութեանցն։ Եւ
գունդք որդւոցն Կահաթու բանակեսցին
30 ի կողմանէ խորանին ընդ հարաւ։ Եւ
իշխան տան նահապետաց գնղին Կահա-
31 թու՝ Եղիսափան որդի Ոզիէլի։ Եւ պահ-
պանութիւն նոցա՝ տապանակն եւ սե-

[4] ԵՖԲ. արար [5] հրամայեցաւ [6] ԵՖԲ. վրանն, նուագարան նորա եւ վարագոյր դրան խորանին ժողովոյ, (26) Եւ առագաստք գաւթին, եւ վարագոյր դրան գաւթին որ զխորանաւն եւ զսեզանոյն շուրջանակի, եւ ապաւանդակք նորա վասն

զանն եւ աչառանակն եւ զոհանոցքն եւ կահ սրբութեանն որպէս պաշտէին, եւ [1]սպասպանն, եւ ամենայն գործն նոցա։
32 Եւ իչխան ի վերայ իչխանացն Ղեւտացւոցն՝ եղիազար որպէս Ահարոնի քահանայի կացուցէ, պահել զպահպանութիւնս սրբութեանցն։
33 Եւ Մերարեայ՝ գունդն Մոսղեայ եւ գունդն Մուսեայ. սոքա են գունդք Մերարեայ։ 34 Եւ հանդէս նոցա ըստ թուոյ ամենայն արուք յամսօրէից եւ ի վեր՝ 35 վեց հազար եւ երկերիւր։ Եւ իչխան տան նահապետացն վնվէլ Մերարեայ՝ Սուրիէլ որպէս Աբիխեայ, ի կողմանէ խառանին բանակեսցին ընդ հիւսիսի, [2]եւ 36 հանդէս նոցա։ Եւ պահպանութիւն՝ որպէս Մերարեայ [3]յանակք խորանին եւ նիգք նորա եւ սիւնակք նորա, խառիսխք նորա եւ ամենայն կահ նոցուն 37 եւ գործն նոցին, եւ սիւնք [4]սրանին չուրջանակի եւ խարիսխք նոցա եւ ցիցք նոցա եւ ապառանդակք նոցուն։
38 Եւ որ բանակիցին յանդիման խորանին վկայութեան յարեւելից կողմանէ՝ Մովսէս եւ Ահարոն իւրեք, եւ որդիք նորա պահեսցեն զպահպանութիւնս սրբութեանցն ի պահպանութիւնս որդւոցն Իսրայէլի, եւ այլազգի որ մերձենայցէ՝ մեռցի։ 39 Ամենայն հանդէս Ղեւտացւոցն որոց ասպարին հանդէս Մովսէս եւ Ահարոն բանիւ Տեառն, ըստ գունդս իւրեանց, ամենայն արու յամսօրէից եւ ի վեր՝ քսան եւ երկու հազարք։
40 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ, Համրէս զամենայն անդրանիկս արու որդւոցն Իսրայէլի յամսօրէից եւ ի վեր, եւ կալ դիւիս նոցա 41 յանուանէ։ Եւ առցես զՂեւտացիսն ինձ, զիս ես Տէր, փոխանակ ամենայն անդրանկաց որդւոցն Իսրայէլի. եւ զանասունս Ղեւտացւոցդ՝ փոխանակ անասնոց նոցա, եւ եղիցին ինձ Ղեւտացիքն։ 42 Եւ համրեաց Մովսէս, որպէս պատուիրեաց Տէր նմա, ամենայն անդրանկաց որդւոցն 43 Իսրայէլի։ Եւ եղեն ամենայն արուք անդրանիկք [5]որդւոցն Իսրայէլի՝ ըստ թուոյ յանուանէ՝ յամսօրէից եւ ի վեր, ի հանդիսէ անտի նոցա՝ քսան եւ երկու հազարք եւ երկերիւր եւ եւթանասուն եւ երիք։
44 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ 45 ասէ, Առ զՂեւտացիսն փոխանակ ամենայն անդրանկաց որդւոցն Իսրայէլի, եւ զանասունս Ղեւտացւոց՝ փոխանակ անասնոց նոցա, եւ եղիցին ինձ Ղեւտացիքն. 46 [5]զիս ես եմ Տէր։ Եւ զփրկանսն վերիւրեքեան եւ վեցհարիւրեակն եւ զերիցն՝ ասեղորդացն քան զՂեւտացիսն յանդրանիցն 47 կաց որդւոցն Իսրայէլի՝ Ասցես հինգ սիկղ ըստ պրեի, ըստ սրբութեան [6]սիկղսն մեռնի ասցես. քսան [7]գանգ առ սիկղ։ 48 Եւ տացես զարծաթն Ահարոնի եւ որդւոց նորա փրկանս ընդ ասեղորդացն 49 ի նոցանէ։ Եւ առ Մովսէս զարծաթն՝ զփրկանս ասեղորդացն ի փրկանս Ղեւտացւոցն՝ Յանդրանկաց որդւոցն Իսրայէլի. 50 եւ առ զարծաթն հազար եւ երիք հարիւր եւ վեցհասն եւ հինգ սիկղ ըստ սրբութեան սիկղին։ 51 Եւ եա Մովսէս [8]զփրկանս ասեղորդացն Ահարոնի եւ որդւոց՝ ըստ բանի Տեառն, որպէս հրամայեաց Տէր Մովսէսի։

Գլ. Դ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ընդ 2 Ահարոնի եւ ասէ, Կալ զթիւ որդւոցն Կահաթեայ ի միջոյ որդւոցն Ղեւտացւոցն՝ ըստ գունդս իւրեանց, ըստ տանց 3 նահապետացս իւրեանց, [9]ի քսան եւ ի հինգամենից՝ եւ ի վեր մինչեւ ցհինսամեան, ամենայն որ մտանիցէ ի սպաս գործել գամենայն գործ ի խորանին 4 [10]վկայութեան։ Եւ այս իցէ գործ որդւոցն Կահաթեայ [5]ի միջոյ որդւոցն Ղեւտացւոցն՝ ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետացն՝ ի խորանին վկայութեան՝ 5 սրբութիւնք սրբութեանցն։ Եւ մտցէ Ահարոն եւ որդիք իւր յորժամ խաղայցէ բանակն, եւ իջուսցեն զվարագոյրն հավանոց, եւ ծածկեսցեն նովաւ 6 զասպանակն վկայութեան։ Եւ դիցեն ի վերայ նորա գնուարտանն մաշկեղէն [11]դկապուտակ, եւ արկցեն վնովաւ ձորձ համակ կապուտակ ի վերուստ կազմանէ, 7 եւ ագուսցեն զվնակն։ Եւ ի վերայ դառնջաւորի սեղանոյն արկցեն հանգերձ համակ ծիրանի, եւ զսափեղան եւ զսուափս եւ զճաչակս եւ զնուիրանոցսն որով

[1] Կամ, վարագոյրն [2] Եբր. (36) Եւ հանդէս պահպանութեան [3] Եբր. տախտակք [4] Եբր. գաւթին [5] Եբր. պ-ից-ե

[6] Եբր. սիկղն [7] Եբր. կերատ [8] Եբր. զարծաթն փրկանաց ցԱհարոն եւ ցորդիս [9] Եբր. Յերեսնամենից [10] Եբր. ժողովոյ, որպես և ի Եբր-ոյ [11] Եբր. թեհաշի

նուիրեսցին, եւ հացքն հանապազորդք
8 ի վերայ նորա կացցին. Եւ արկցին զնո-
վաւ հանդերձ կարմիր, եւ ծածկեսցին
զնա մաչկեղէն նուագարանաւ [1]կապու-
տակաւ. եւ ապուսցեն ի նմա զվձական։
9 Եւ առցեն հանդերձ կապուտակ եւ ծած-
կեսցեն զաշտանակն լուսոյ եւ [2]զերկո-
սին ձրագարանն՝ նորա եւ զունելիս
նորա եւ զպազմակալս նորա, եւ զամե-
10 նայն ամանս իւղոյ որով պաշտիցին. Եւ
արկցեն զնա եւ զամենայն զկահ նորա
ի նուագարան մաչկեղէն [1]կապուտակ, եւ
11 դիցեն զնա ի վերայ լծակացն։ Եւ զսե-
զանն ոսկի ծածկեսցեն հանդերձիւ կա-
պուտակաւ, եւ արկցեն ի վերայ նորա
նուագարան մաչկեղէն [1]կապուտակ. եւ
12 ապուսցեն ի նմա զվձակս նորա։ Եւ առ-
ցեն զամենայն զկահ պաշտաման՝ որով
պաշտիցեն ի սրբութիւնն, եւ արկցեն
ի հանդերձս կապուտակս, եւ ծածկեսց-
ցեն [3]զայն մաչկեղէն նուագարանաւ [1]կա-
պուտակաւ, եւ դիցեն ի վերայ լծա-
13 կացն։ Եւ [4]զնուագարանն դիցեն ի վե-
րայ սեզանոյն՝, եւ ծածկեսցեն զնա հան-
14 դերձիւ համակ ծիրանեաւ, Եւ դիցեն ի
վերայ նորա զսպասն որով պաշտիցեն
ի վերայ նորա, զլուսուրասս եւ զնաս-
հանս եւ [5]զտաշտսն, եւ զծածկիչսն եւ՝
զամենայն սպաս սեզանոյն, եւ արկցեն
ի վերայ նորա նուագարան մաչկեղէն [1]կա-
պուտակ. եւ անցուսցեն ընդ նա զվձակսն։
[6]Եւ առցեն հանդերձ ծիրանի եւ ծած-
կեսցեն զաւազանն եւ զխարխեսս նորա,
եւ արկցեն զնովաւ մաչկ կապուտակ,
15 եւ դիցեն ի վերայ լծակացն։՝ Եւ կա-
տարեսցեն Ահարոն եւ որդիք նորա ծած-
կել զսրբութիւնսն, եւ զամենայն կահ
սրբութեանն ի չուել բանակին. եւ ապա
մտցեն որդիքն կահաւմտու բառնալ. եւ
մի՛ մերձեսցին ի սրբութիւնսն՝ զի մի՛ մե-
ռանիցին. զայն բառնայցեն որդիքն կա-
հաւմտու ի խորանէ անտի վկայութեան։
16 Եւ [7]ոստիկան Եղիազար որդի Ահարոնի
քահանայի՝ զեղն լուսոյ եւ զխունկին
հանդերձանաց եւ զպոնն հանապազորդ
եւ զեղն օծութեան, եւ զհանդերձ՝ ամե-
նայն խորանին եւ որ ինչ ինամա, եւ որ ի
սրբութեանն եւ [8]յամենայն սրբութիւնսն՝։
17 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
18 ընդ Ահարոնի եւ ասէ, Մի՛ սատակիցէք
զդունդն կահաւմտու ի միջոյ Ղեւտացւոցն.
19 Զայս ինչ արասջիք նոցա եւ կեցցեն
եւ մի՛ մեռանիցին ի մերձենալ նոցա ի
սրբութիւն սրբութեանցն. Ահարոն եւ
որդիք նորա մտցեն ի ներքս, եւ կար-
գեսցեն զնոսա իւրաքանչիւր ըստ կարգի
20 եւ ըստ բնոին իւրում։ Եւ մի՛ մտանիցեն
վայրապար տեսանել [9]զսրբութիւնն
սրբութեանցն՝, զի մի՛ մեռանիցին։
21 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
22 ասէ, Կալ զդու զհամար որդւոցն Գեր-
սոնի, ըստ տանց նահապետաց իւրեանց,
23 ըստ գնդից իւրեանց. [10]ի քսան եւ ի
հինգամենից՝ եւ ի վեր մինչեւ ցյիսա-
մեանս, եւ արասցես նոցա հանդէս,
ամենայն որ մտանիցէ ի սպաս գործել
24 զգործ խորանին վկայութեան։ Այս իցէ
սպասաւորութիւն գնդին Գերսոնի՝ ի
25 մտանել ի տարկ եւ ի բառնալ. Եւ [11]բարձ-
ցէ զվերնափակսն՝ խորանին եւ զխո-
րանն վկայութեան եւ զարտախուրակս
նորա, եւ զնուագարանն [1]կապուտակեայ
որ ի նմա ի վերուստ կողմանէ, եւ զվա-
26 րագոյր [12]խորանին վկայութեան, Եւ
զառագաստ սրահին, եւ որ ինչ ի վե-
րայ խորանին վկայութեան՝, եւ զապա-
րուսին եւ զամենայն զկահ սպասուն
27 որով պաշտիցեն։ Եւ արասցեն ըստ
բերանոյ Ահարոնի եւ որդւոց նորա.
եղիցի սպասաւորութիւն որդւոցն Գեր-
սոնի ըստ ամենայն սպասաւորութեան
իւրեանց եւ ըստ ամենայն գործոց իւր-
եանց. եւ արասջիք նոցա հանդէս [6]յան-
ուանէ, եւ՝ ամենայնի որ ինչ բառնայցի
28 ի նոցանէ։ Այս իցէ սպասաւորութիւն
որդւոցն Գերսոնի ի խորանին վկայու-
թեան, եւ պահապանութիւն նոցա ի ձեռն
Իթամարայ որդւոյ Ահարոնի քահանայի։
29 Եւ որդւոցն Մերարեայ ըստ գնդից
իւրեանց, ըստ տանց նահապետաց իւր-
30 եանց հանդէս արասջիք հանդէս. [10]ի քսան եւ
ի հինգամենից՝ եւ ի վեր մինչեւ ցյիս-

---

[1] ԵԲԲ. թեհաշի [2] ԵԲԲ. զճրագարանս [3] ԵԲԲ. զնոսա [4] ԵԲԲ. մաքրեսցեն զզնահանցն [5] ԵԲԲ. զգաւն եւ զկոնքս. [6] ԵԲԲ. պոլ-ե [7] ԵԲԲ. ընդ տեսչութեամբ Եղիազարու որդւոյ Ահարոնի քահանայի եւզեղն լուսոյ եւ խունկքն հանդերձանաց եւ ընծայն հացի հանապազորդ եւ եւզեղ օծութեան, եւ տեսչութիւն

[8] ԵԲԲ. ի սպաս նորա [9] ԵԲԲ. զսրբութիւնսն [10] ԵԲԲ. Յերեսնամինից [11] ԵԲԲ. բարձցեն զվարագոյրս [12] ԵԲԲ. մոխ խորանին ժողովոյ. (26) Եւ զառագաստս գաւթին եւ զվարագոյր մուխ դրան գաւթին, որ զխորանաւն եւ զսեղանով շուրջանակի

նամեանս՝ արասջիք նոցա հանդէս , ամե-
նայն որ մտանիցէ ի սպաս գործոյ խո-
31 րանին վկայութեան ։ Եւ այս իցէ պահ-
պանութիւն ընտանցն որ բառնայցին ի
նոցանէ , ըստ ամենայն գործոյ նոցա ի
խորանին վկայութեան . [1]զխոյակս խո-
րանին եւ զնիգս եւ զսիւնակս նորա եւ
զխարիսխս նորա , [2]եւ զվարագոյրն եւ
զխարիսխս նոցա եւ զսիւնս նոցա . եւ
32 զվարագոյր դրան խորանին , եւ զսիւնս
սրահին՝ չուրջանակի եւ զխարիսխս
նոցա , եւ [3]զսիւնս վարագուրին դրան
սրահին , եւ զխարիսխս նոցա եւ՝ զցից
նոցա եւ զապաւանդակս նոցա , եւ զա-
մենայն զկահ նոցա եւ զամենայն սպաս
նոցա . եւ յանուանէ հանդէս առնիցէք
[3]նոցա , եւ՝ ամենայն կտիր պահպանու-
33 թեան որ բառնայցի ի նոցանէ . Այս իցէ
սպասաւորութիւն գնդի որդւոցն Մե-
րարեայ , յամենայն ի գործս իւրեանց ի
խորանին վկայութեան՝ ի ձեռն Իթա-
մարայ որդւոյ Ահարոնի քահանայի ։
34 Եւ արարին հանդէս Մովսէս եւ Ահա-
րոն եւ իշխանքն Իսրայելի որդւոցն կա-
հաթու ըստ գնդից իւրեանց եւ ըստ
35 տանց նահապետաց իւրեանց՝ [4]ի քսան
եւ ի հինգամենից՝ եւ ի վեր մինչեւ
ցյիսնամեանս , ամենայն որ մտանէր ի
սպաս եւ գործէր գործ ի խորանին վկա-
36 յութեան . Եւ եղեւ նոցա հանդէս ըստ
գնդից իւրեանց՝ երկու հազար եւ եւթն
37 հարիւր եւ յիսուն ։ Այս է հանդէս գնդին
կահաթու ամենայն որ մտանէր ի սպաս
ի խորանին վկայութեան , որպէս եւ ա-
րարին հանդէս Մովսէս եւ Ահարոն քա-
նիւ Տեառն ի ձեռն Մովսիսի ։
38 Եւ անցին ի հանգիսի որդիքն Գեր-
սոնի ըստ գնդից իւրեանց , ըստ տանց
39 նահապետաց իւրեանց՝ [4]ի քսան եւ ի
հինգամենից՝ եւ ի վեր մինչեւ ցյիսնամ-
եանս , ամենայն որ մտանէր պաշտել եւ
40 գործել գործ ի խորանին վկայութեան . Եւ
եղեւ հանդէս նոցա ըստ գնդից իւրեանց ,
ըստ տանց նահապետաց իւրեանց՝ երկու
41 հազար եւ վեց հարիւր եւ երեսուն ։ Այս է
հանդէս գնդի որդւոցն Գերսոնի, ամենայն
որ պաշտէր ի խորանին վկայութեան ,
որոց արարին հանդէս Մովսէս եւ Ահա-
րոն ըստ բանի Տեառն [5]ի ձեռն Մովսիսի՝։
42 Անցին ի հանգիսի եւ գունդք որդւոցն

Մերարեայ ըստ գնդից իւրեանց , ըստ
43 տանց նահապետաց իւրեանց՝ [4]ի քսան
եւ ի հինգամենից՝ եւ ի վեր մինչեւ ցյիս-
նամեանս , ամենայն որ մտանէր պաշ-
44 տել ի գործ խորանին վկայութեան . Եւ
եղեւ հանդէս նոցա ըստ գնդից իւր-
եանց , ըստ տանց նահապետաց իւրեանց՝
45 երեք հազար եւ երկերիւր ։ Այս է հան-
դէս գնդի որդւոցն Մերարեայ , որոց ա-
րարին հանդէս Մովսէս եւ Ահարոն ըստ
բանի Տեառն ի ձեռն Մովսիսի ։
46 Ամենեքեան անցեալք ի հանգիսի , ո-
րոց արարին հանդէս Մովսէս եւ Ահա-
րոն եւ իշխանքն Իսրայելի Ղեւտացւոցն՝
ըստ գնդից իւրեանց , ըստ տանց նա-
47 հապետաց իւրեանց՝ [4]ի քսան եւ ի հինգ-
ամենից՝ եւ ի վեր մինչեւ ցյիսնամեանս ,
ամենայն որ մտանէր ի գործ [6]սրբու-
թեանցն եւ ի գործ կրելեաց խորանին
48 վկայութեան , եղեն անցեալք ի հանգի-
սի ութ հազար եւ հինգ հարիւր եւ
49 [6]ութսուն ըստ բանի Տեառն ։ Արար նո-
ցա հանդէս Տէր՝ ի ձեռն Մովսիսի , այր
ըստ առնէ ի վերայ գործոյ իւրեանց , ի
վերայ բեռանցն զոր ինքեանք բառնա-
յին . եւ անցին ի հանգիսի՝ որպէս հրա-
մայեաց Տէր Մովսիսի ։

Գլ. Ե

4 [7]Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
2 Հրաման տուր որդւոցն Իսրայելի , եւ
արձակեսցեն ի բաց զամենայն բորոտ ի
բանակէ անտի , եւ զամենայն սերմնա-
3 կաթ եւ զամենայն պղծեալ յոգի . Ծա-
րուէ մինչեւ դէպ արձակեցէք ի բաց
ի բանակէ անտի , եւ մի՛ պղծեսցեն զբա-
4 նակս իւրեանց յոր եսք [7]ինչանիմ ։ Եւ ա-
րարին այնպէս որդիքն Իսրայելի , եւ
արձակեցին զնոսա ի բաց ի բանակէ ան-
տի . որպէս խօսեցաւ Տէր ընդ Մովսի-
սի , այնպէս արարին որդիքն Իսրայելի ։
5 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
6 Խօսեաց ընդ որդիսդ Իսրայելի եւ ա-
սասցես , Այր կամ կին , որ ոք արաս-
ցէ յամենայն մարդկունէն մեզաց , եւ
արհամարհելով [8]արհամարհիցէ եւ յան-
7 ցանիցէ անձինն այն , Խոստովան լիցի
զմեզս իւր զոր արար , եւ հատուսցէ
ընդ յանգամանսն զգլուխն , եւ զհինգե-

[1] Եբէր. զտախտակս [2] Եբէր. Եւ զսիւնս գաւթին
[3] Յեբէր. դ-ից-ն [4] Եբէր. Յերեսնամենից

[5] Եբէր. սպասու [6] Եբէր. ուխտսուն (49) Ըստ բանի Տեառն արարաւ նոցա հանդէս [7] Եբէր. բնա-կեմ ի միջի նոցա [8] Եբէր. արհամարհիցէ զՏէր

որդ եւս մանն նորա յաւելցէ ի նոյն,
8 եւ տայցէ այնմ որում յանցանաւն՝ Ա՛սպա
թէ չիցէ ոք առնն մերձաւորիչ հատու-
ցանել նմա զյանցանացն նորա, եւ ընդ
յանցանացն որ ինչ ընծայիցի Տեառն՝
այն քահանային եղիցի, բայց ի խոյզ
քաւութեանն որով քաւիցէ վասն իւր։
9 Եւ ամենայն պատուղ ընծայ ամենայնի
որ սրբիցի յորդւոցն Իսրայէլի զոր ինչ
մատուցանիցեն Տեառն, քահանային ե-
10 զիցի։ Եւ [1]յիւրաքանչիւր սրբելոց ան-
ա՛ի՝ նորա լինիցի. եւ այր ոք որ տացէ
քահանային՝ նորա լինիցի։
11 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
12 Խօսեաց ընդ որդիս Իսրայէլի եւ ա-
ասացես ցդոսա, Առն ուրուք առն, ե-
թէ յանցանիցէ կին իւր եւ արհամար-
13 հիցէ զնա, եւ ննջեսցէ ոք ընդ նմա
արութեամբ սերման, եւ վրիպիցի յա-
չեաց առն իւրոյ եւ ժաքռոցանիցէ, եւ
նա պղծեալ իցէ, եւ վկայ ոչ գտցէ
14 զնմանէ, եւ [2]յղի ոչ իցէ՛՝, Եւ հասա-
նիցէ ի վերայ առն նորա ոգի նախանձու, եւ նախանձ լիրիցէ ընդ կնոջ իւ-
րում, եւ նա իցէ պղծեալ. կամ հա-
սանիցէ ի վերայ նորա ոգի նախանձու,
եւ նախանձ լիրիցէ ընդ կնոջ իւրում,
15 եւ նա ոչ իցէ պղծեալ, Ածցէ այրն զկինն
իւր առ քահանայն, եւ մատուսցէ վասն
նորա պատարագ՝ զտասանորդ գրուի ա-
լիր զարիղէն, եւ եւզ մի՛ արկցէ ի նա,
եւ կնդրուկ մի՛ դիցէ ի վերայ նորա. զի
զոհ նախանձաւորութեան է, զոհ յի-
16 շատակի, զոհ յիշատակելոյ զմեղս։ Մա-
տուսցէ քահանայն եւ կացուսցէ զկինն
17 առաջի Տեառն։ Եւ առցէ քահանայն
ջուր սուրբ կենդանի խեցեղէն ամանաւ,
եւ ի հողոյ անտի որ իցէ առ յատակա-
խորանին վկայութեան՝ առեալ քահա-
18 նայն արկցէ ի ջուրն։ Եւ կացուսցէ քա-
հանայն զկինն առաջի Տեառն, եւ մեր-
կացուսցէ զգլուխ կնոջն, եւ տացէ ի
ձեռս նորա զզոհ յիշատակին, զզոհ նա-
խանձաւորութեանն. եւ ի ձեռին քա-
հանային կացցէ ջուրն յանդիմանութեան
19 նզովին այնորիկ. Եւ երդմնեցուսցէ զնա
քահանայն եւ ասացէ ցկինն, եթէ չիցէ
ննջեցեալ ընդ քեզ առն, եթէ չիցես
յանցուցեալ եւ պղծեալ առ արամբ քոյ,
քաւեալ լիցիր ի ջրոյդ [3]յանդիմանու-
20 թեան նզովիդ այգորիկ. Ապա թէ յան-
ցուցեալ իցես առ արամբ քով, կամ
պղծեալ իցես, եւ տուեալ իցէ ուրուք
զարուեստիւն իւր ի քեզ՝ առանց առն քո,
21 Եւ երդմնեցուսցէ քահանայն զկինն երդ-
մամբ նզովիս այսորիկ, եւ ասասցէ քա-
հանայն ցկինն, Տացէ զքեզ Տէր ի
նզովս եւ յերդումն ի մէջ ժողովրդեան
քո, ի տալ Տեառն զբարձս քո ի քակ-
տումն, եւ զորովայն քո յուռուցումն.
22 Եւ մտցէ ջուրս նզովեալ յորովայն քո,
ուռուցանել զմէջ քո եւ քակել զբարձս
քո. եւ ասասցէ կինն, Եղիցի, եղիցի։
23 Եւ գրեսցէ քահանայն զնզովս զայսոսիկ
ի մատեանի, եւ լուասցէ ի ջուրն յանդի-
24 մանութեան նզովիցն։ Եւ տացէ ըմպել
կնոջն զջուրն յանդիմանութեան նզովից,
եւ մտցէ ի նա ջուրն յանդիմանութեան
25 նզովեալ։ Եւ առցէ քահանայն ի ձեռանէ
կնոջն զզոհ նախանձաւորութեանն, եւ
[4]դիցէ զզոհն առաջի Տեառն, եւ մա-
26 տուսցէ առ սեզանն։ Եւ առցէ բռամբ
քահանայն ի զոհէ յիշատակին նորա եւ
[5]հանցէ զայն ի սեզանն՛՝, եւ ապա ար-
բուսցէ կնոջն զջուրն յանդիմանութեան։
27 Եւ եղիցի եթէ պղծեալ իցէ, եւ ծած-
կելով ծածկեալ իցէ յառնէն նորա, եւ
մտանիցէ ի նա ջուրն յանդիմանութեան
նզովեալ, ուռուսցէ զորովայն նորա եւ
քակեսցին բարձք նորա, եւ եղիցի կինն
28 ի նզովս ի մէջ ժողովրդեան իւրոյ։ Ապա
թէ չիցէ պղծեալ կինն եւ սուրբ իցէ,
29 քաւեալ լիցի եւ ընկալցի սերմն։ Այս
օրէնս իցէ նախանձաւորութեան, որոյ
յանցուցեալ իցէ կին՝ որ առնակին իցէ
30 եւ պղծիցի, կամ այր յորոյ վերայ հա-
սանիցէ ոգի նախանձու, եւ ի նախանձ
մտանիցէ ընդ կնոջ իւրում, կացուսցէ
զկինն առաջի Տեառն, եւ արասցէ նմա
քահանայն ըստ ամենայն օրինիս այսո-
31 րիկ. Եւ քաւեալ լիցի այրն ի մեղացն
անտի, եւ կինն ընկալցի զմեղս իւր։

Գլ. Զ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
2 Խօսեաց ընդ որդիս Իսրայէլի եւ ա-
ասացես, Այր կամ կին, որ մեծ ինչ
ուխտս ուխտեսցէ սրբել [6]զսրբութիւն

[1] Եբր. զոր իւրաքանչիւր ոք սրբիցէ՝ [2] Եբր. չիցէ ըմբռնեալ

[3] Եբր. դառնութեան, այսպէս է՛ս և ի տողիս
[4] Եբր. երևեսցէ [5] Եբր. այրեսցէ ի վերայ սե-
զանոյն [6] Եբր. զանձն

3 Տեառն, ի վինուոյ եւ ի ցքուոյ սրբեսցի. եւ
զքացախ վինուոյ եւ զքացախ ցքուոյ մի
արբցէ, եւ [1]վխտազ նոր եւ չչամիչ մի
4 կերիցէ։ Զամենայն աւուրս ուխտին իւ-
րոյ՝ յամենայնէ զինչ եւ լինիցի [2]յորթոյ,
զգինի՞ ի չամչոյ մինչեւ ցվերինն մի կե-
5 րիցէ։ Զամենայն աւուրս սրբութեանն,
սրբիչ մի ածիցէ զգլխոյ իւրով, մինչեւ
լցցին աւուրքն զորս ուխտաւոյ Տեառն՝
սուրբ կացցէ, աճեցուցեալ զվարսս մա-
6 զոյ գլխոյ իւրոյ։ Զամենայն աւուրս
ուխտին իւրոյ Տեառն, յոգի վախճան-
7 եալ մի մոցէ. ի հօր եւ ի մօր, յեղբօր
եւ ի քոյր, մի՛ պղծեսցի նմոքօք ի մահու-
նոցա, զի ուխտ [3]Տեառն ի վերայ գլխոյ
8 նորա է։ Զամենայն աւուրս ուխտին իւրոյ
9 սուրբ կացցէ Տեառն։ Եւ եթէ յանկարծ
մեռանիցի ոք ի վերայ նորա, առժամայն
պղծեսցի գլուխ ուխտի նորա. եւ գերծցէ
զգլուխ իւր յաւուր յորում սրբիցի, եւ
10 յաւուրն եւթներորդի գերծցի. Եւ յաւուրն
ութներորդի ածցէ երկուս սատրակս կամ
երկուս ձագս աղաւնեաց առ քահանային
11 ի դուռն խորանին վկայութեան։ Եւ ա-
րասցէ քահանայն զմին վասն մեղաց,
եւ զմին յողջակէզ. եւ քաւեսցէ վասն
նորա քահանայն ընդ մեղացն զոր մե-
ղաւ յոգի, եւ սրբեսցէ զգլուխ իւր յաւուր
12 յայնմիկ. [4]Զի յայնմ աւուր սրբեաց՞
Տեառն զաւուրս ուխտին իւրոյ, եւ ածցէ
զառն մի տարեւոր վասն յանցանացն. եւ
աւուրքն առաջինք անհամարք լինիցին,
զի պղծեցաւ [5]գլուխ ուխտի՞ նորա։
13 Եւ այս օրէնս իցէ ուխտաւորին յա-
ւուր յորում կատարիցէ զաւուրս ուխ-
տին իւրոյ, ածցէ ի դուռն խորանին
14 վկայութեան. Եւ մատուսցէ զպատա-
րագն իւր Տեառն, զառն մի տարեւոր
անարատ յողջակէզ, եւ որոջ մի տարե-
15 ւոր անարատ վասն մեղաց, եւ խոյ մի
անարատ [6]ի փրկութիւն, Եւ խառն մի
բաղարջաց նաշխոյ, եւ պանս զանգեալ
իւղով, եւ քաքարս բաղարջս օծեալս
իւղով, եւ զզոնս նոցա եւ զնուէրս իւր-
16 եանց։ Եւ մատուսցէ քահանայն առաջի
Տեառն, եւ արասցէ զվասն մեղացն
17 նորա եւ զողջակէզն նորա։ Եւ զխոյն
արասցէ զոհ [7]փրկութեան Տեառն ի վե-
րայ խանին բաղարջոյ, եւ արասցէ քա-
հանայն զպահն նորա եւ զնուէրս նորա։
18 Եւ կերիցէ ուխտաւորն առ դրան խո-
րանին վկայութեան զգլուխ ուխտին
իւրոյ, եւ կիցէ զմազն ի հուրն որ [8]ի
19 վերայ զոհին [7]փրկութեան։ Եւ առցէ
քահանայն զկերին եփեալ ի խոյէ անտի,
եւ պան մի բաղարջ ի խանձէն եւ քա-
քար մի բաղարջ, եւ դիցէ քահանայն
ի վերայ ձեռաց ուխտաւորին, յետ կեր-
20 ծելոյ նորա զգլուխն իւր. Եւ [9]մատուսցէ
զայն քահանայն ընծայ՞ առաջի Տեառն,
եւ եղիցի սուրբ, քահանային եղիցի ի
վերայ երրծոյն [10]նուիրի եւ ի վերայ
երեսին [11]հասի. եւ ապա արբցէ ուխտա-
21 ւորն զինի։ Այս օրէնն իցէ ուխտաւորի
որ ուխտիցէ ոք Տեառն զպատարագ իւր
վասն ուխտից, [12]բազ զայն որ ինչ գտա-
նիցէ ձեռն իւր. ըստ կարի ուխտին
իւրոյ զոր ուխտիցէ ըստ օրինի [12]սրբու-
թեան Տեառն՞։
22 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսէ եւ
23 ասէ, [13]Խօսեաց ընդ Ահարոնի եւ ընդ
որդիս նորա եւ ասասցես, Այսպէս օրհ-
նեսջիք զորդիսդ Իսրայելի, եւ ասասջիք
24 նոցա, Օրհնեսցէ զձեզ Տէր եւ պահես-
25 ցէ զձեզ. Երեւեսցուսցէ Տէր զերեսս իւր
26 ի ձեզ, եւ ողորմեսցի ձեզ. Ամբարձցէ
Տէր զերեսս իւր ի ձեզ, եւ տացէ ձեզ
27 խաղաղութիւն։ Եւ դիցեն զանուն իմ
ի վերայ որդւոցն Իսրայելի, եւ ես օրհ-
նեցից զնոսա։

Գլ. Է

1 Եւ եղեւ յաւուր յորում կատարեաց
Մովսէս առ ի կանգնելոյ զխորանն, եւ
օծ զնա[13] եւ զամենայն սպասս նորա, եւ
զզոհանոցն եւ զամենայն սպասս նորա,
2 եւ օծ զնոսա եւ սրբեաց զնոսա, Եւ
մատուցին իշխանքն Իսրայելի [14]երկո-
տասան իշխանք տանց նահապետաց նո-
ցա. նոքա էին իշխանք ցեղիցն, եւ
նոքա կային ի վերայ [15]ոստիկանութեանն։
3 Եւ մատուցին զընծայս իւրեանց առաջի
Տեառն, վեց սայլս զարգարեալս եւ ե-
զինս երկոտասանս, սայլ մի յերկուց իշ-
խանաց եւ զուարակ յիւրաքանչիւր ու-

[1] ԵՔԲ. զամենայն հոյզ խաղողոյ մի՛ արբցէ, և
[2] ԵՔԲ. յորթոյ գինւոյ, [3] ԵՔԲ. Աստուծոյ իւրոյ
[4] ԵՔԲ. Եւ սրբեսցէ [5] ԵՔԲ. ուխտ [6] ԵՔԲ. ի խա-
ղաղական [7] ԵՔԲ. խաղաղութեան

[8] ԵՔԲ. ի ներքոյ [9] ԵՔԲ. երեսեսցէ զնոսա քահա-
նայն երեսուն [10] ԵՔԲ. երեսման [11] ԵՔԲ.
վերացման [12] ԼԲԲ. Նուիրման, կամ, զատուց-
ման իւրոյ [13] ԵՔԲ. յաւելու, և սրբեաց զնա
[14] ՅԵՔԲ. պատուե [15] ԵՔԲ. հանգիսին

4 մեքէ. եւ ածին առաջի խորանին։ Ասաց
5 տեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ, Առ
զայդ ի դուցանէ, եւ եղիցին ի գործ սպա-
սաւորութեան խորանին վկայութեան.
եւ տացես զայդ ցղևտացիսն՝ իւրա-
քանչիւր ըստ իւրում սպասաւորութեան։
6 Եւ առնաւ Մովսէսի զայլն եւ զեղինն՝
7 եւ տացէ ցղևտացիսն։ Սայս երկուս եւ ե-
ղինս չորս եւ տորպիան Փերատնի ըստ
8 սպասաւորութեան իւրեանց. Եւ սայս
չորս եւ եղինս ութ եւ տորպիան Մե-
րարեայ ըստ սպասաւորութեան իւրեանց,
ի ձեռն Իթամարայ որդւոյ Ահարոնի քա-
9 հանայի։ Եւ տորպիան կահաթու ոչինչ
եւ. վի զսպասաւորութիւնն սրբութեան
սրբութեանցն ունէին, եւ յուսս իւր-
եանց բառնային։
10 Եւ մատուցին իշխանքն ի նաւակա-
տիս սեղանոյն, յաւուր յորում օծ զնա,
եւ բերին իշխանքն զընծայս իւրեանց
11 առաջի սեղանոյն։ Եւ ասէ Տէր ցՄովսէս,
Մի մի իշխան մի մի օր մատուսցեն զընծ-
այս իւրեանց ի նաւակատիս սեղանոյն։
12 Եւ մատուցանէր զընծայս իւր յաւուրն
առաջնում Նաասոն որդի Ամմինադաբայ,
13 իշխան ցեղին Յուդայ։ Մատոյց զընծ-
այսն իւր. կոնք մի արծաթի ի հարեւր
եւ յերեսուն կշռորդէ, տաշտ մի ար-
ծաթի՝ յեւթանասուն սկեղբ ըստ սրբու-
թեան սկեղն, երկոքին լի նաշհով զան-
14 գելով ընդ իւղոյ ի զոհ, Տուփ մի ոսկի
15 ի տասն [1]դահեկանէ լի խնկով, Զուարակ
մի յանդուց, խոյ մի, գառն մի տարեւոր
16 յոդջակէզ, եւ նոխազ մի յայծեաց վասն
17 մեղաց, եւ ի զոհ [2]փրկութեան՝ երինջն
երկուս, խոյս հինգ, նոխազս հինգ, որոյս
տարեւորս հինգ. այս ընծայ Նաասոնի
որդւոյ Ամմինադաբայ։
18 Եւ յաւուրն երկրորդի մատոյց Նա-
թանայէլ որդի Սուգարայ, իշխան ցեղին
19 Իսաքարայ։ Եւ մատոյց զընծայս իւր.
կոնք մի արծաթի ի հարեւր եւ յերեսուն
կշռորդէ, տաշտ մի արծաթի՝ յեւթանա-
սուն սկեղբ ըստ սրբութեան սկեղն,
երկոքեան լի նաշհով զանգելով ընդ իւ-
20 ղոյ ի զոհ, Տուփ [3]մի ի տասն դահե-
21 կանէ՝ լի խնկով, Զուարակ մի յանդուց,
խոյ մի, գառն մի տարեւոր յոդջակէզ,
22 Եւ նոխազ մի յայծեաց վասն մեղաց,
23 Եւ ի զոհ [2]փրկութեան՝ երինջն երկուս,
խոյս հինգ, նոխազս հինգ, որոյս տա-
րեւորս հինգ. այս ընծայ Նաթանայելի
որդւոյ Սուգարայ։
24 Եւ յաւուրն երրորդի՝ իշխան որդւոյն
Զաբուղոնի, Եղիաբ որդի Քեղոնիի,
25 Զընծայն իւր. կոնք մի արծաթի ի
հարեւր եւ յերեսուն կշռորդէ, տաշտ
մի արծաթի յեւթանասուն սկեղբ ըստ
սրբութեան սկեղն, երկոքին լի նաշհով
26 զանգելով ընդ իւղոյ ի զոհ, Տուփ [3]մի
27 ի տասն դահեկանէ՝ լի խնկով, Զուա-
րակ մի յանդուց, խոյ մի, գառն մի տա-
28 րեւոր յոդջակէզ, Եւ նոխազ մի յայծ-
29 եաց վասն մեղաց, Եւ ի զոհ [2]փրկու-
թեան՝ երինջն երկուս, խոյս հինգ, նո-
խազս հինգ, որոյս տարեւորս հինգ.
այս ընծայ Եղիաբու որդւոյ Քեղոնիի։
30 Եւ յաւուրն չորրորդի՝ իշխան որդւոյն
Ռուբինի, Եղիսուր որդի Սեդիւրայ,
31 Զընծայս իւր. կոնք մի արծաթի ի հա-
րեւր եւ յերեսուն կշռորդէ, տաշտ մի
արծաթի յեւթանասուն սկեղբ ըստ սրբու-
թեան սկեղն, երկոքին լի նաշհով զան-
32 գելով ընդ իւղոյ ի զոհ, Տուփ [3]մի ի
33 տասն դահեկանէ՝ լի խնկով, Զուարակ
մի յանդուց, խոյ մի, գառն մի տարե-
34 ւոր յոդջակէզ, Եւ նոխազ մի յայծեաց
35 վասն մեղաց, Եւ ի զոհ [2]փրկութեան՝
երինջն երկուս, խոյս հինգ, նոխազս
հինգ, որոյս տարեւորս հինգ. այս ընծայ
Եղիսուրայ որդւոյ Սեդիւրայ։
36 Եւ յաւուրն հինգերորդի՝ իշխան որդ-
ւոյն Շամաւնի, Սաղամիէլ որդի Սուրի-
37 սադայի, Զընծայս իւր. կոնք մի արծա-
թի ի հարեւր եւ յերեսուն կշռորդէ, տաշտ
մի արծաթի յեւթանասուն սկեղբ ըստ
սրբութեան սկեղն, երկոքին լի նաշհով
38 զանգելով ընդ իւղոյ ի զոհ, Տուփ [3]մի ի
39 տասն դահեկանէ՝ լի խնկով, Զուարակ
մի յանդուց, խոյ մի, գառն մի տարե-
40 ւոր յոդջակէզ, Եւ նոխազ մի յայծեաց
41 վասն մեղաց, Եւ ի զոհ [2]փրկութեան՝
երինջն երկուս, խոյս հինգ, նոխազս
հինգ, որոյս տարեւորս հինգ. այս ընծայ
Սաղամիելի որդւոյ Սուրիսադայի։
42 Եւ յաւուրն վեցերորդի՝ իշխան որդ-
ւոյն Գադայ, Եղիասափան որդի Դագու-
43 ելի, Զընծայս իւր. կոնք մի արծաթի
ի հարեւր եւ յերեսուն կշռորդէ, տաշտ
մի արծաթի յեւթանասուն սկեղբ ըստ
սրբութեան սկեղն. երկոքին լի նաշհով
44 զանգելով ընդ իւղոյ ի զոհ, Տուփ [3]մի

[1] ԵԲԲ. սկեղբ [2] ԵԲԲ. խաղաղութեան [3] ԵԲԲ. մի ոսկի ի տասն սկեղբ

45 ի տաան գահեկանէ" լի խնկով, Զուա-
րակ մի յանդուց, խոյ մի, գառն մի տա-
46 րեւոր յոզջակէզ, Եւ նոխազ մի յայծ-
47 եաց վասն մեղաց, Եւ ի զոհ [1]վրկու-
թեան՝ երինջս երկուս, խոյս հինգ, նո-
խազս հինգ, որոյս տարեւորս հինգ. այս
ընծայ Եղիասափանայ որդւոյ Դագուելի։
48 Եւ յաւուրն աւթներորդի՝ իշխան որդ-
ւոցն Եփրեմի, Եղիսամա որդի Եմիու-
49 դայ, Զընծայն իւր. կոնք մի արծաթի
ի հարեւր եւ յերեսուն կշռորդէ, տաշտ
մի արծաթի յեւթանասուն սկեղ ըստ
արբունեան սկեղն, երկոքին լի նաչհով
50 զանգելով ընդ իւղոյ ի զոհ, Տուփ [2]մի
51 ի տաան գահեկանէ" լի խնկով, Զուարակ
մի յանդուց, խոյ մի, գառն մի տարե-
52 ւոր յոզջակէզ, Եւ նոխազ մի յայծեաց
53 վասն մեղաց, Եւ ի զոհ [1]վրկութեան՝ ե-
րինջս երկուս, խոյս հինգ, նոխազս հինգ,
որոյս տարեւորս հինգ. այս ընծայ Ե-
դիամայ որդւոյ Եմիուդայ։
54 Եւ յաւուրն ութներորդի՝ իշխան որդ-
ւոցն Մանասէի, Գամալիէլ որդի Փա-
55 դասուրայ, Զընծայն իւր. կոնք մի ար-
ծաթի ի հարեւր եւ յերեսուն կշռորդէ,
տաշտ մի արծաթի յեւթանասուն սկեղ
ըստ արբունեան սկեղն. երկոքին լի
56 նաչհով զանգելով ընդ իւղոյ ի զոհ, Տուփ
57 [2]մի ի տաան գահեկանէ" լի խնկով, Զու-
արակ մի յանդուց, խոյ մի, գառն մի
58 տարեւոր յոզջակէզ, Եւ նոխազ մի յայծ-
59 եաց վասն մեղաց, Եւ ի զոհ [1]վրկու-
թեան՝ երինջս երկուս, խոյս հինգ, նո-
խազս հինգ, որոյս տարեւորս հինգ. այս
ընծայ Գամալիէլի որդւոյ Փադասուրայ։
60 Եւ յաւուրն իններորդի՝ իշխան որդ-
ւոցն Բենիամինի Աբիդան որդի Գեդէո-
61 նի, Զընծայն իւր. կոնք մի արծաթի
ի հարեւր եւ յերեսուն կշռորդէ, տաշտ
մի արծաթի յեւթանասուն սկեղ ըստ
արբունեան սկեղն. երկոքին լի նաչհով
62 զանգելով ընդ իւղոյ ի զոհ, Տուփ [2]մի ի
63 տաան գահեկանէ" լի խնկով, Զուարակ
մի յանդուց, խոյ մի, գառն մի տարեւոր
64 յոզջակէզ, Եւ նոխազ մի յայծեաց վասն
65 մեղաց, Եւ ի զոհ [1]վրկութեան՝ երինջս
երկուս, խոյս հինգ, նոխազս հինգ,
որոյս տարեւորս հինգ. այս ընծայ Ա-
բիդանայ որդւոյ Գեդէոնի։
66 Եւ յաւուրն տասներորդի՝ իշխան որդ-
ւոցն Դանայ Աքիեզեր որդի Ամիսա-
67 դայի, Զընծայն իւր. կոնք մի արծաթի
ի հարեւր եւ յերեսուն կշռորդէ, տաշտ
մի արծաթի յեւթանասուն սկեղ ըստ
արբունեան սկեղն. երկոքին լի նաչհով
68 զանգելով ընդ իւղոյ ի զոհ, Տուփ [2]մի
69 ի տաան գահեկանէ" լի խնկով, Զուարակ
մի յանդուց, խոյ մի, գառն մի տարե-
70 ւոր յոզջակէզ, Եւ նոխազ մի յայծեաց
71 վասն մեղաց, Եւ ի զոհ [1]վրկութեան՝
երինջս երկուս, խոյս հինգ, նոխազս
հինգ, որոյս տարեւորս հինգ. այս ընծայ
Աքիեզերայ որդւոյ Ամիսադայի։
72 Եւ յաւուրն մեւտասաներորդի՝ իշխան
որդւոցն Աշերայ, Փագիէլ որդի Եքրա-
73 նայ, Զընծայն իւր. կոնք մի արծաթի
ի հարեւր եւ յերեսուն կշռորդէ, տաշտ
մի արծաթի յեւթանասուն սկեղ ըստ
արբունեան սկեղն, երկոքին լի նաչհով
74 զանգելով ընդ իւղոյ ի զոհ, Տուփ [2]մի
75 ի տաան գահեկանէ" լի խնկով, Զուարակ
մի յանդուց, խոյ մի, գառն մի տարե-
76 ւոր յոզջակէզ, Եւ նոխազ մի յայծեաց
77 վասն մեղաց, Եւ ի զոհ [1]վրկութեան՝
երինջս երկուս, խոյս հինգ, նոխազս
հինգ, որոյս տարեւորս հինգ. այս ընծայ
Փադիկլի որդւոյ Եքրանայ։
78 Եւ յաւուրն երկոտասաներորդի՝ իշխան
որդւոցն Նեփթադիմայ, Աքիրէ որդի
79 Ենանայ, Զընծայն իւր. կոնք մի ար-
ծաթի ի հարեւր եւ յերեսուն կշռորդէ,
տաշտ մի արծաթի յեւթանասուն սկեղ
ըստ արբունեան սկեղն, երկոքին լի
80 նաչհով զանգելով ընդ իւղոյ ի զոհ, Տուփ
81 [2]մի ի տաան գահեկանէ" լի խնկով, Զուա-
րակ մի յանդուց, խոյ մի, գառն մի տա-
82 րեւոր յոզջակէզ, Եւ նոխազ մի յայծեաց
83 վասն մեղաց, Եւ ի զոհ [1]վրկութեան՝
երինջս երկուս, խոյս հինգ, նոխազս
հինգ, որոյս տարեւորս հինգ. այս ընծայ
Աքիրէի որդւոյ Ենանայ։
84 Այս է օրէն նաւակատեաց սեղանոյն
յաւուրն յորում օծ զնա. յիշխանաց որդ-
ւոցն Իսրայելի, կոնք արծաթիք երկոտա-
սան, տաշտք արծաթիք երկոտասան,
85 [3]տուփք երկոտասան, ի հարեւր եւ յե-
րեսուն սկեղ կոնք [4]մի, յեւթանասուն
սկեղ տաշտ մի. ամենայն արծաթ սպա-
սուցն՝ երկու հազար եւ չորեքհարեւր
86 սկեղ ըստ արբունեան սկեղն. Տուփք

[1]Եբր. խաղաղութեան [2]Եբր. մի ոսկի ի տաան սկեղ
[3]Եբր. տուփք ոսկիք [4]Եբր. մի արծաթի

ոսկիք երկոտասանք լի խնկով, [1]ամենայն ոսկի տփոցն՝ հարեւր եւ քսան
87 [2]դահեկան. Եւ ամենայն արջառ յողջակէզ, զուարակք երկոտասանք, խոյք երկոտասանք, գառինք տարեւորք [2]առաքաւք երկոտասան, եւ զոհք նոցա եւ նուէրք նոցին. եւ նախաղք յայծեաց
88 վանն մեղայ երկոտասանք. Եւ ամենայն արջառք ի զոհ [3]ողջակիզին [2]երկոտասանք, երինջք քսան եւ չորք, խոյք վաթսուն, նոխազք վաթսուն, որոշք տարեւորք [2]անարատաք վաթսուն. այս են նաւակատիք սեղանոյն յետ [4]կատարելոյ զձեռս նոցա"։
89 Ի մտանելն Մովսիսի ի խորանն վկայութեան խօսել ընդ նմա, եւ լսաւ զբարբառն [5]Տեառն ի խօսելն" ընդ նմա ի վերուստ ի քաւութենէ անտի՝ [6]ի միջոյ երկուց քերովբէից որ էին" ի վերայ տապանակին վկայութեան, ի միջոյ երկուց քերովբէիցն, եւ խօսէր ընդ նմա։

ԳԼ. Ը

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
2 Խօսեաց ընդ Ահարոնի եւ առաւջս ցնա, Յորժամ դնիցես զձրագուանն, ի [3]միոջէ կողմանէ երեսաց աչատանակին լուսա-
3 նիցին եւ իմանելքին ճրագարանքն։ Եւ արար այնպէս Ահարոն. [2]ի միոջէ կողմանէ" հանդէպ աչատանակին ելոյց զձրագարանս նորա, որպէս հրամայեաց Տէր Մովսիսի։
4 Եւ այս էր կազմած աչատանակին. [7]ձոյլ ոսկի, բուն նորա, եւ չուշանք նորա ձոյլ համակ", ըստ օրինակին որպէս ետես Տէր Մովսիսի՝ այնպէս արար դաշտանակին։
5 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
6 Առ զառ զՂեւտացիսն ի միջոյ որդւոցն
7 Իսրայէլի եւ սրբեացես զնոսա. Եւ այսպէս արասցես նոցա զսրբութիւնն իւրեանց. ցանեսցես զնոքօք ջուր սրբութեան, եւ ածցի ածելի ի վերայ ամենայն մարմնոյ նոցա, եւ լուասցին զձորձս
8 իւրեանց, եւ սուրբք եղիցին։ Եւ առցեն զառաջակ մի յանդուց, եւ ըստ նմին զոհ, նաչիւ զանգեալ իւղով, եւ առցես [8]որթ սարեւոր" յանդուց վանն մեղայ։
9 Եւ տարցիս զՂեւտացիսն առաջի խորանին վկայութեան. եւ ժողովեսցես զամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի։
10 Եւ մատուսցես զՂեւտացիսն առաջի Տեառն, եւ ղիցեն որդիքն Իսրայէլի զձեռս
11 իւրեանց ի վերայ Ղեւտացւոցն։ Եւ զառուսցէ Ահարոն զՂեւտացիսն ի հատուցումն առաջի Տեառն յորդւոցն Իսրայէլի, եւ եղիցին գործել զգործ խորա-
12 նին առաջի Տեառն։ Եւ Ղեւտացիքն ղիցեն զձեռս իւրեանց ի վերայ գլխոյ զուարակացն. եւ արասցես զմին վանն մեղայ, եւ զմին յողջակէզ Տեառն քա-
13 ւել վանն նոցա։ Եւ կացուսցես զՂեւտացիսն [2]առաջի Տեառն եւ" առաջի Ահարոնի եւ առաջի որդւոց նորա, եւ առցես զնոսա հատուցումն առաջի Տեառն։
14 Եւ զատուսցես զՂեւտացիսն ի միջոյ
15 որդւոցն Իսրայէլի, եւ եղիցին ինձ։ Եւ ապա մտցեն Ղեւտացիքն գործել զգործ խորանին վկայութեան. եւ սրբեացես զնոսա, եւ տացես զնոսա հատուցումն
16 [2]առաջի Տեառն". Զի հատուցումն հատուցեալ են նոքա ինձ ի միջոյ որդւոցն Իսրայէլի. փոխանակ ամենայն անդրանկաց որ բանան զամենայն արգանդ յորդ-
17 ւոցն Իսրայէլի՝ առի զնոսա ինձ։ Զի իմ է ամենայն անդրանիկ որդւոցն Իսրայէլի, ի մարդոյ մինչեւ յանասունն. յաւուր յոր-
18 ւում սարի զամենայն անդրանիկ յերկրին Եգիպտացւոց, սրբեցի զնոսա ինձ։
18 Եւ առի զՂեւտացիսն փոխանակ ամե-
19 նայն անդրանկաց որդւոցն Իսրայէլի։ Եւ տուի զՂեւտացիսն հատուցումն տուեալս Ահարոնի եւ որդւոց նորա ի միջոյ որդւոցն Իսրայէլի, գործել զգործ որդւոցն Իսրայէլի ի խորանին վկայութեան, եւ քաւել վանն որդւոցն Իսրայէլի [9]մերձենալով ի սրբութիւնն։
20 Եւ արարին Մովսէս եւ Ահարոն եւ ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի Ղեւտացւոցն. որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի վասն Ղեւտացւոցն՝ նոյնպէս ա-
21 րարին նոցա որդիքն Իսրայէլի. Եւ սրբեցան Ղեւտացիքն, եւ լուացին [10]զհանդերձս իւրեանց, եւ հատոյց զանձինս Ահարոնի ի հատուցումն" առաջի Տեառն. եւ քաւեաց վասն նոցա Ահարոն սրբել զնոսա։
22 Եւ ապա մտին Ղեւտացիքն պաշտել զպաշտօն իւրեանց ի խորանին վկայու-

---

[1] ԵՔԲ. մի մի տուփ ի տասն սկեղբ ըստ սրբութեան սկեղն. ամենայն [2] ՅԵԲԲ. գ-ի-ուք [3] ԵՔԲ. խաղաղութեան [4] ԵՔԲ. օծանելոյ զնա [5] ԵՔԲ. որպ խօսէրն [6] ԵՔԲ. որ [7] ԵՔԲ. ճախարակեայ, կամ կռատծոյ յոսկւոյ, ի բնոյ նորա մինչեւ ի շուշանն կռատծոյ [8] ԵՔԲ. մեւս եւս զուարակ

[9] ԵՔԲ. զի մի՛ դիպեսցի հարուած յորդիսն Իսրայէլի՝ ի մերձենալ որդւոցն Իսրայէլի [10] ԵՔԲ. զհանդերձս իւրեանց, եւ մատոյց Ահարոն զնոսա նուէր

Թհան՝ առաջի Ահարոնի եւ առաջի որդւոց նորա. որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի վասն Ղեւտացւոցն, նոյնպէս եւ արարին նոցա։

23 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
24 ասէ, Այս ինչ է որ վասն Ղեւտացւոցն իցէ. ի քսան եւ հինգամենից եւ ի վեր մացին գործել ի խորանին վկայութեան.
25 Եւ ի յիսնամենից՝ ի բաց կացցեն ի պաշտամանէ անտի, եւ ոչ եւս գործեսցեն։
26 Եւ [1]պաշտեսցէ եղբայր նորա՝ ի խորանին վկայութեան, [2]պահել պահեսցէ զպահպանութիւնս, բայց գործ ինչ մի՛ գործեսցէ՛. այնպէս արասցես Ղեւտացւոցն ի պահպանութիւնս իւրեանց։

Գլ. Թ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի յանապատին Սինայի, յամին երկրորդի ելանելոյ նոցա յԵգիպտոսէ յամսեանն առաջնում,
2 եւ ասէ, [3]Ասա եւ՝ արասցեն որդիքն Իսրայելի զզատիկն ի ժամանակի իւրում
3 ի չորեքտասաներորդում աւուր ամսոյն առաջնոյ [4]արասցեն զայն ընդ երեկս, ըստ ժամանակի, ըստ [5]օրինի իւրում, ըստ
4 ըստ [6]պայմանի իւրում [4]առնիցեն զնա։ Եւ խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իսրայելի
5 առնել զզատիկն։ [7]Ի սկսանել չորեքտասաներորդի աւուր ամսոյն՝ յանապատին Սինայի. որպէս հրամայեաց Տէր Մովսիսի, այնպէս արարին որդիքն Իսրայելի։
6 Եւ եղեն արք որ ոչ էին սուրբ ողոմի մարդոյ, եւ ոչ կարէին առնել զզատիկն յաւուրն յայնմիկ. եւ մատեան առաջի Մովսիսի եւ Ահարոնի յաւուրն
7 յայնմիկ, Եւ ասեն ցնոսա արքն այնոքիկ, Մեք անաւրէք եմք յողի մարդոյ. [8]արգ մի՛՝ յանենասցուք ի մատուցանելոյ պատարագ Տեառն ի ժամանակի իւրում
8 ի մէջ որդւոցն Իսրայելի։ Ասէ ցնոսա Մովսէս, Կացէք այդր, եւ լուայց թէ զինչ ասացէ հրամայն Տէր վասն ձեր։
9 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
10 ասէ, Խօսեաց ընդ որդիսն Իսրայելի եւ ասասցես, Մարդ որ՝ մարդ որ լինիցի անաւրէն յողի մարդոյ, եւ կամ թէ ի հեռի ճանապարհի ոք իցէ ի ձէնջ յազգս
11 ձեր, արասցէ զզատիկն Տեառն. Ըստ սահմանն երկրորդի, ի չորեքտասաներորդում աւուր ընդ երեկս արասցէ զնա, բաղարջով եւ եղեգով կերիցեն զնա.
12 Եւ մի՛ թողուցեն ինչ ի նմանէ յայգ, եւ ոսկր մի՛ բեկանիցեն ի նմանէ. ըստ
13 [5]օրինի զատկին արասցեն զնա։ Եւ մարդ ոք որ սուրբ իցէ, եւ ի հեռաւոր ճանապարհի ոչ իցէ, եւ հեզգասցի առնել զզատիկն, սատակեսցի անձն այն ի ժողովրդենէ իւրմէ, զի զպատարագն Տեառն ոչ մատոյց ի ժամանակի իւրում. զմեղս
14 իւր ընկալցի մարդն այն։ Եւ եթէ յարեսցի ի ձեզ եկ ոք յերկրին ձերում, եւ առնիցէ զզատիկն Տեառն, ըստ օրինակի զատկին եւ ըստ պայմանի իւրում արասցէ զնա. օրէն՝ մի եւ նոյն կացցէ ձեզ, եկին եւ բնակի երկրին։
15 Եւ յաւուրն յորում կանգնեցաւ խորանն՝ ծածկեաց ամպ զխորանն [9]եւ զտունն՝ վկայութեան. եւ ընդ երեկս լինէր ի խորանին իրրեւ զտեսիլ հրոյ մինչ-
16 չեւ ցառաւօտ։ Այնպէս լինէր հանապազ. ամպ ծածկէր զնա ի տուէ, եւ
17 տեսիլ հրոյ ի գիշերի։ Եւ յորժամ վերանայր ամպն ի խորանէ անտի, ապա չուէին որդիքն Իսրայելի. եւ ի տեղւոջ յորում զտիցի առնոյր ամպն՝ անդ բա-
18 նակէին որդիքն Իսրայելի։ Հրամանաւ Տեառն չուէին որդիքն Իսրայելի, եւ հրամանաւ Տեառն բանակէին. զամենայն աւուրս յորս հովանի [10]ունիցի ամպն ի վերայ խորանին, [11]բանակեսցին որդիքն
19 Իսրայելի՝։ Եւ յորժամ [12]ձգիցի ամպն ի վերայ խորանին աւուրս բազումս, [13]պահեսցեն որդիքն Իսրայելի զպահպանութիւնս
20 Տեառն, եւ [14]մի՛ չուեսցեն։ Եւ եղիցի՝ յորժամ հովանի [10]ունիցի ամպն զաւուրս թուով ի վերայ խորանին, ըստ բանի Տեառն [11]բանակեսցին, եւ
21 ըստ բանի Տեառն [15]չուեսցեն։ Եւ եղիցի յորժամ լինիցի՝ ամպն յերեկորեայ մինչչեւ ցառաւօտ, [16]եթէ վերանայցէ՝ ամպն ընդ առաւօտն, [17]չուեսցեն. զցերեկ կամ զգայգ. եւ եթէ ոչ վերասցի ամպն, ոչ

---

[1] ՆԲԳ. պաշտեսցեն զեղբարս իւրեանց [2] ՆԲԳ. պահել զպահպանութիւնս, բայց գործ ինչ մի՛ գործեսցեն [3] ՆԲԳ. ա-ւ-ե [4] ՆԲԳ. առնիցեք [5] ՆԲԳ. ամենայն օրինի [6] ՆԲԳ. ամենայն պայմանի [7] ՆԲԳ. Եւ արարին զզատիկն յամսեանն առաջնումի չորեքտասաներորդում աւուր ամսոյն ընդ երեկս [8] ՆԲԳ. ընդ՝ը

[9] ՆԲԳ. վրանաւն [10] ՆԲԳ. ունէը [11] ՆԲԳ. բանակէին [12] ՆԲԳ. ձգէը [13] ՆԲԳ. պահէին [14] ՆԲԳ. ոչ չուէին։ (20) Եւ էը [15] ՆԲԳ. չուէին։ (21) Եւ էը յորժամ լինէը [16] ՆԲԳ. Եւ վերանայցէ՝ [17] ՆԲԳ. և չուէին զցերեկ կամ զցայգ յորժամ վերանայը ամպն, չուէին։

22 չուեցեն։" Եւ եթէ [1]ամօրեայ ժամա-
նակ յաճախիցէ ամպն եւ հովանի լինիցի
ի վերայ նորա, բանակեսցին որդիքն
23 Իսրայելի՝ եւ մի՛ չուեսցեն"։ Ըստ հրա-
մանի [2]Տեառն չուեսցեն", եւ զպահպա-
նութիւնս Տեառն [3]պահեսցեն հրամա-
նաւ Տեառն ի ձեռն Մովսէսի։

Գլ. Ժ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
2 Արա դու քեզ երկուս փողս արծաթիս.
կռածոյս արասցես զնոսա, եւ եղիցին
քեզ ազդ առնելոյ ժողովրդեանն, եւ
3 չուելոյ բանակացն։ Եւ հարկանիցեն փող
նոքօք, եւ [4]ժողովեսցի ամենայն ժողո-
վուրդն ի դուռն խորանին վկայութեան։
4 Եւ եթէ ի միում հարկանիցեն փող,
եկեսցեն առ քեզ իշխանքն, զօրավարքն
5 Իսրայելի։ Եւ հարչիք փող ազդեցու-
թեան, եւ չուեսցեն բանակքն բանակ-
6 եալք ընդ արեւելս։ Եւ հարկանիցէք
զերկրորդ փողն ազդեցութեան, եւ չուես-
ցեն բանակքն բանակեալք ընդ հարաւ։
[5]Եւ հարկանիցէք զերրորդ փողն ազդե-
ցութեան, եւ չուեսցեն բանակքն բա-
նակեալք ընդ ծովակողմն։ Եւ հարկա-
նիցէք զչորրորդ փողն ազդեցութեան,
եւ չուեսցեն բանակքն բանակեալք ընդ
հիւսիսի." ազդեցութեան փող հարկա-
7 նիցեն ի չուելն իւրեանց։ Եւ յորժամ
ժողովիցէք զժողովուրդն՝ հարկանիցէք
8 փող, եւ ոչ ազդեցութեան։ Եւ որդիքն
Ահարոնի քահանայք հարցեն փող, եւ
եղիցի ձեզ օրէնս յաւիտենական յազգս
9 ձեր։ Եւ եթէ եղանիցէք ի պատերազմ
յերկրի ձերում ընդդիմակայացն որ կայ-
ցեն ձեզ հակառակ, ազդեսջիք փողով
եւ յիշատակեսջիք առաջի Տեառն[6], եւ
10 ապրիցէք ի թշնամեացն ձերոց։ Եւ յա-
ւուրս ուրախութեան ձերոյ [7]եւ յամ-
սագլուխս ձեր հարկանիցէք փող եւ ի
վերայ ողջակիզացն եւ ի վերայ զոհիցն
[8]փրկութեանց ձերոց. եւ եղիցի ձեզ
յիշատակ առաջի Աստուծոյ ձերոյ. ես
եմ Տէր՝ Աստուած ձեր։

11 Եւ եղեւ յամին երկրորդի յամսեանն
երկրորդում որ օր քսան էր ամսոյն, վե-
րացաւ ամպն ի խորանէն վկայութեան։
12 Եւ չուեցին որդիքն Իսրայելի [9]հանդերձ
աղխիւքն" իւրեանց յանապատէն Սի-
նայի. եւ եկաց ամպն յանապատին Փա-
13 ռանու։ Եւ չուեցին [10]որդիքն Իսրայելի"
14 ըստ բանի Տեառն ի ձեռն Մովսիսի։ Եւ
չուեցին նախ գունդք բանակի որդւոցն
Ցուդայ յառաջագոյն զօրուն իւրեանց.
եւ ի վերայ զօրացին նոցա Նաասոն որդի
15 Ամինադաբայ։ Եւ ի վերայ զօրաց որդ-
ւոցն Իսաքարայ՝ Նաթանայէլ որդի Սով-
16 գարայ։ Եւ ի վերայ զօրու ցեղի որդւոցն
17 Զաբուղունի՝ Եղիաբ որդի Քեղովնի։ Եւ
իջուցանէին զխորանն, եւ չուէին. որ-
դիքն Գերսոնի եւ որդիքն Մերարեայ
18 բանային զխորանն։ Եւ չուէին գունդք
բանակի որդւոցն Ռուբենի հանդերձ զօ-
րուն իւրեանց. եւ ի վերայ զօրու նոցա
19 Եղիսուր որդի Սեդիւրայ։ Եւ ի վերայ
զօրու ցեղի որդւոցն Շմաւունի՝ Սաղա-
20 միէլ որդի Սուրիսադայի։ Եւ ի վերայ
զօրու ցեղի որդւոցն Գադայ՝ Եղիասափան
21 որդի Դագուելի։ Եւ [11]չուեսցին որդիքն
կահաթիս բարձնալ զսրբութիւնսն. եւ
[12]կանգնեսցեն զխորանն մինչեւ [13]այլքն
22 հասանիցեն"։ Եւ չուեցին գունդք բա-
նակին Եփրեմայ հանդերձ զօրուն իւր-
եանց. եւ ի վերայ զօրու նոցա Եղիսա-
23 մա որդի Եմիուդայ։ Եւ ի վերայ զօրու
ցեղի որդւոցն Մանասէի՝ Գամաղիէլ որդի
24 Փադասուրայ։ Եւ ի վերայ զօրու ցեղին
որդւոցն Բենիամինի՝ Աբիդան որդի Գե-
25 դէոնի։ Եւ չուեցին գունդք բանակի որդ-
ւոցն Դանայ յետոյ քան զամենայն բա-
նակսն հանդերձ զօրուն իւրեանց. եւ
ի վերայ զօրու նոցա՝ Աքիեզեր որդի Ա-
26 միսադայի։ Եւ ի վերայ զօրու ցեղի որդ-
ւոցն Ասերայ՝ Փագիէլ որդի Եքրանայ։
27 Եւ ի վերայ զօրու ցեղի որդւոցն Նեփ-
28 թաղիմայ՝ Աքիրէ որդի Ենանայ։ Այս
են [14]զօրք որդւոցն Իսրայելի. եւ չուե-
ցին հանդերձ զօրուն իւրեանց։

29 Եւ ասէ Մովսէս ցՈբոբար որդի Հռա-
գուելի Մադիանացի, ցաներն Մովսիսի,
Ահա մեք չուեմք ի տեղին զոր ասաց Տէր
տալ զնա մեզ. եկ ընդ մեզ, եւ բարի
արասցուք քեզ. զի Տէր խոստացաւ

---

[1] ԵԲԲ. աւուրս երկուս, կամ ամիս մի, կամ տա-
րի մի յերկարէր ամպն մնալ ի վերայ խորա-
նին, բանակէին որդիքն Իսրայելի, և ոչ չուէին,
եւ յորժամ վերանայր, չուէին։ [2]ԵԲԲ. Տեառն
բանակէին, եւ ըստ հրամանի Տեառն չուէին
[3]ԵԲԲ. պահէին [4]ԵԲԲ. ժողովեսցի առ քեզ [5]ՑԵԲԲ.
գ-ի-ռ [6]ԵԲԲ-ՅԵՑԻ յ-ԵԼ-, Աստուծոյ ձերոյ
[7]ՍԲԲ. եւ ի տօնս ձեր և [8]ՍԲԲ. խաղաղականաց

[9]ԵԲԲ. ըստ չուեցն [10]ԵԲԲ. զառաջինն [11]ԵԲԲ.
չուեցին [12]ԵԲԲ. կանգնեցին [13]ԵԲԲ. ի հա-
սանել նոցա [14]ԵԲԲ. չուք

30 բարութիւնս Իսրայելի , եւ նա ասէ ,
Ոչ երթայց անդր , այլ յերկիրն իմ եւ
31 յազգն իմ գնացից : եւ ասէ ցնա , Մի՛
թողուր զմեզ . քանզի [1]Էիր ընդ մեզ
յանապատին . եւ եղիցես ընդ մեզ ձեր՝
32 եւ եղիցի թէ երթայցես ընդ մեզ , եւ
լինիցին բարութիւնքն զոր ինչ արասցէ
մեզ Տէր , բարի արասցուք եւ քեզ :
33 Եւ չուեցին ի լեռնէ անտի Տեառն
երեքօրեայ ճանապարհ . եւ տապանակ
ուխտին Տեառն յառաջագոյն քան զնոսա
երթայր երեքօրեայ ճանապարհաւ , դի-
34 տել նոցա հանգիստ : եւ [2]ամպն հովանի
ունէր ի վերայ նոցա ի տուէ ի չուել
նոցա ի բանակէ անտի :
35 Եւ եղեւ ի չուել տապանակին՝ ասէ
Մովսէս , Արի , Տէր , եւ ցրուեսցին թշնա-
միք քո , փախիցեն [3]ամենայն ատելիք քո՛՝
36 եւ ի դադարելն ասէ , Դարձիր , Տէր , ի
հազարաւորս եւ ի բիւրաւորս Իսրայելի :

Գլ . ԺԱ

1 Եւ ժողովուրդն տրտնջէր չարաչար ա-
ռաջի Տեառն . եւ լուաւ Տէր եւ բար-
կացաւ սրտմտութեամբ , եւ բորբոքեցաւ
2 ինչ բանակին : եւ աղաղակեաց ժողո-
վուրդն առ Մովսէս , եւ յաղօթս եկաց
Մովսէս առ Տէր , եւ զադարեաց հուրն :
3 Եւ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ
Հրայրեաց . զի բորբոքեցաւ ի նոսա հուրն
4 ի Տեառնէ : Եւ խառնաղանճն որ էր ի
մէջ նոցա ցանկացան ցանկութիւն , եւ
նստեալ լային որպէսզի Իսրայելի եւ ա-
5 սէին , Ո՞ տացէ մեզ միս ուտելոյ . Զի
յիշեցաք զձուկնն զոր ուտէաք յԵգիպ-
տոս ձրի , եւ զսեխն եւ զմեղրապոլ եւ
6 զպտուն եւ զսոխն եւ զխտոր . Եւ արդ
աւասիկ նքոցեալ են անձինք մեր , եւ
ոչ ուրեք բայց միայն ի մանանայն են
7 աչք մեր : Եւ մանանայն էր իբրեւ զսերմն
գինոյ [4]սպիտակ , եւ տեսիլ նորա իբրեւ
8 զտեսիլ սաւրն : Եւ չրջէր ժողովուրդն
եւ քաղէին , եւ աղային յերկանի եւ լա-
սուին յանգանի , եւ եփէին ի պուտան
եւ առնէին նմանս . եւ էր քաղցրութիւն
նորա իբրեւ զխորիսխ իւղոյ [4]եւ մեղու՛՝
9 Եւ յորժամ իջանէր ցող ի բանակն գյայգ ,
իջանէր եւ մանանայն ի վերայ նորա :

10 Լուաւ Մովսէս զլալիւն նոցա ըստ
զնղից իւրեանց , զիւրաքանչիւրն առ դրան
վրանի իւրոյ . եւ բարկացաւ սրտմտու-
թեամբ Տէր յոյժ , եւ առաջի Մովսիսի
11 չար թուեցաւ : Եւ ասէ Մովսէս ցՏէր ,
Ընդէր [4]Տէր , չարչարեցեր զծառայ քո ,
եւ հիմ ոչ գտի շնորհս առաջի քո ,
արկանել զինեւ [5]զբարկութիւն ժողո-
12 վրդեանս այսորիկ : Միթէ ես յղացայ
զամենայն ժողովուրդս զայս , կամ թէ ես
ծնայ զոսոս , զի ասես ցիս թէ՝ Առ զդա
ի գոգ քո , որպէս առնուցու դայեակ
զսանդրիաց , տանել յերկիրն զոր երդուար
13 հարցն նոցա : Եւ արդ ուստի՞ է ինձ միս՝
տալ ամենայն ժողովրդեանս այսմիկ , զի
լան զինեւ եւ ասեն , Տուր մեզ միս զի
14 կերիցուք : Ոչ կարեմ ես միայն կրել զժո-
ղովուրդս զայս , զի ծանրագոյն քան զիս
15 է բանդ : Եթէ այդպէս առնիցես ընդ իս ,
սպան իսկ զիս , եթէ հաճոյ իցէ քեզ ,
եթէ գտի շնորհս եւ ողորմութիւն առ
ի քէն , զի մի՛ տեսից զչարչարանս իմ :
16 Եւ ասէ Տէր ցՄովսէս , Ժողովեա ինձ
եւթանասուն այր ի ծերոցն Իսրայելի ,
զոր դու գիտես եթէ նոքա իցեն ծերա-
գոյնք ժողովրդեանն , եւ ընտիրք նոցա .
եւ հանցես զնոսա ի խորանն վկայու-
17 թեան , եւ կացցեն անդ ընդ քեզ . Եւ
իջից անդր եւ խօսեցայց ընդ քեզ . եւ
առից ի հոգւոյդ որ ի քեզ է եւ արկից զնո-
քօք . եւ բարձցեն ընդ քեզ [5]զյանձգնու-
թիւն ժողովրդեանդ այդորիկ , եւ ոչ
18 կրեսցես դու միայն : Եւ ցժողո-
վուրդն ասասցես , Սրբեցարուք առ վա-
ղիւ , եւ կերիջիք միս . զի լացէք առաջի
Տեառն եւ ասացէք , Ո՞ չամբեսցէ մեզ
միս . զի լաւ էր մեզ յԵգիպտոս . եւ տացէ
ձեզ Տէր միս [4]ուտելոյ , եւ կերիջիք միս :
19 Ոչ զմի օր ուտիցէք , եւ ոչ զերկուս ,
եւ ոչ զհինգ օր , եւ ոչ զտասն , եւ ոչ
20 զքսան օր . Այլ զամսօրեայ աւուրս ու-
տիցէք , մինչեւ ելանիցէ ընդ որնգունս
ձեր , եւ եղիցի ձեզ ի դառնութիւն . զի
հեսանիցէք Տեառն որ է ի մէջ ձերում ,
եւ լայէք առաջի նորա , եւ ասէիք՝ Ընդ-
դ՞էր էր մեզ ելանել յԵգիպտոսէ :
21 Եւ ասէ Մովսէս , Վեցհարիւր հազար
հետեւակաց է ժողովուրդն յորոց միջի
եմ ես , եւ դու ասես՝ Միս տաց նոցա եւ
22 կերիցեն ամսօրեայ ժամանակ . Միթէ
արջառ եւ ոչխար սպանանիցի եւ բա-

[1] ԵՓԲ. գիտես ուր ագցուք յանապատին , եւ ե-
ղիցես մեզ փոխանակ աչաց [2] ԵՓԲ. ամպն Տեառն
[3] ԵՓԲ. առելիք քո յերեսաց քոց [4] ՅԵՓԲ. պաղատ
[5] ԵՓԲ. զբեռն

ական լինիցի նոցա, կամ թէ ամենայն
ձո՛ւն ժողովուրդ եւ բաւական լինիցի նոցա։ Եւ ասէ Տէր ցՄովսէս,
23 Միթէ ձեռն Տեառն չիցէ՞ բաւական. այժմ դիտասցես եթէ հաստատիցէ ի վերայ
24 քո բանս իմ, եթէ ոչ։ Եւ ել Մովսէս եւ խօսեցաւ ընդ ժողովրդեանն զպատգամս Տեառն. եւ ժողովեաց եւթանասուն այր ի ծերոց ժողովրդեանն, եւ կա-
25 ցոյց զնոսա չուրջ զխորանաւն։ Եւ էջ Տէր ամպով, եւ խօսեցաւ ընդ Մովսիսի, եւ առ ի Հոգւոյն որ ի նմա, եւ արկ զնոսա եւթանասունն պատմքն պծկրովք. եւ իբրեւ հանգեաւ Հոգին ի վերայ նոցա, եւ մարգարէացան ի բանակին, եւ այլ
26 ոչ եւս յաւելին։ Եւ մնացին երկու այր ի բանակին, անուն միումն Եղդադ, եւ
27 անուն երկրորդին Մովզադ, եւ հանգեաւ ի վերայ նոցա Հոգին. եւ նոքա էին ի գրելոց անտի եւ ոչ եկին ի խորանն. եւ մարգարէացան ի բանակին։ Եւ ընթա-
28 ցեալ պատանի մի պատմեաց Մովսիսի եւ ասէ ցնա, Եղդադն եւ Մովզադն մարգարէացան ի բանակին։ Պատասխանի
տուեալ Յեսուայ որդւոյ Նաւեայ, պաշտօնէին Մովսիսի ընտրելոյ, եւ ասէ,
29 Տէր Մովսէս, արդեւ զնոսա։ Եւ ասէ ցնա Մովսէս, Մի՛ արկաներ դու ինձ նախանձուկս. եւ ո՛տար զամենայն ժողովուրդս Տեառն մարգարէս, յորժամ տայր Տէր
30 զՀոգին իւր ի վերայ նոցա։ Եւ գնաց Մովսէս ի բանակն, ինքն եւ ծերքն Իսրայէլի։
31 Եւ ել հոգմ ի Տեառնէ եւ խաղացոյց յայս կոյս զլորտամարգին ի ծովէն, եւ անկաւ զբանակաւն աւուր գնաց առաւ եւ աւուր գնաց անտի չուրջ զբանակաւն,
32 իբրեւ ցերկուս կանգունս յերկրէ։ Եւ յարուցեալ ժողովուրդն զտիւն ողջոյն եւ զգիշերն ողջոյն, եւ զտիւն ողջոյն ի վաղիւ անդր, ժողովեցին զլորտամարգին. որ սակաւ ժողովեաց՝ տասն քոռ. եւ ապանին եւ
տախտեցին իւրեանց ապուխտս ապուխտս
33 չուրջ զբանակաւն։ Մինչդեռ միսն յատամունս նոցա էր՝ յառաջ քան զպակասին, եւ Տէր բարկացաւ ժողովրդեանն, եւ եհար Տէր զժողովուրդն հարուածս
34 մեծամեծս յոյժ։ Եւ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Գերեզմանք ցանկութեանն, զի անդ թաղեցին զժողովուրդն ցան-
35 կացօղ։ Եւ ի Գերեզմանացն ցանկութեան չուեցաւ ժողովուրդն յԱսերովթ[1]։

[1] ԵԲբայէցին յոթելա, եւ եղեն յԱսերովթ

Գլ. ԺԲ

1 Եւ բամբասեցին Մարիամ եւ Ահարոն զՄովսէս վասն կնոջն Եթէովպացւոյ զոր առ Մովսէս. զի կին Եթէովպացի առ.
2 եւ ասեն, Միթէ ընդ Մովսիսո՞ միայն խօսեցաւ Տէր. ո՞չ ապաքէն եւ ընդ մեզ
3 խօսեցաւ. եւ լուաւ Տէր։ Եւ այրն Մովսէս հեզ էր յոյժ քան զամենայն մարդիկ որ էին ի վերայ երկրի։ Եւ ասէ Տէր
4 նոյնժամայնն ցՄովսէս եւ ցԱհարոն եւ ցՄարիամ, ելէք դուք երիքին ի խորանն վկայութեան. եւ ելին երիքին [2]ի խո-
5 րանն վկայութեան՝։ Եւ էջ Տէր սեամբ ամպոյ, եւ եկաց առ դրան խորանին վկայութեան. եւ կոչեցան Ահարոն եւ
6 Մարիամ, եւ ելին երկոքեան։ Եւ ասէ ցնոսա Տէր, Լուարուք բանից իմոց. եթէ լինիցի մարգարէ ի ձէնջ Տեառն, տեսլեամբ երեւեցայց նմա, եւ երազով
7 խօսեցայց ընդ նմա։ Ոչ այնպէս՝ որպէս ծառայն իմ Մովսէս, որ յամենայն տան
8 իմում հաւատարիմ է. բերան ի բերան խօսեցայց ընդ նմա, երեւոյթ եւ ոչ առակօք. եւ զփառսն Տեառն հառաչ. եւ ընդէր՞ ոչ երկերիք բամբասել զծառայն իմ Մովսէս։ Եւ եղեւ բարկութիւն սրտմտութեան Տեառն ի վերայ նոցա,
10 եւ [3]գնացին։ Եւ ամպն վերացաւ ի խորանէ անտի, եւ ահա Մարիամ բորոտեալ էր իբրեւ զձիւն. եւ հայեցաւ Ահարոն
11 ընդ Մարիամ, եւ ահա բորոտեալ էր։ Եւ ասէ Ահարոն ցՄովսէս, Խնդրեմ ի քէն, տէր, մի՛ ածեր ի վերայ մեր մեղս. զի
12 անգիտացաք, եւ քանզի մեղաք։ Մի՛ լինիցի հանդոյն մահու, իբրեւ զվիժած որ ելանիցէ յարգանդէ մօր եւ [4]ուտիցէ
13 զկէս՝ մարմնոյ նորա։ Եւ աղաղակեաց Մովսէս առ Տէր եւ ասէ, Խնդրեմ ի
14 քէն, Աստուած, բժշկեա զնա։ Եւ ասէ Տէր ցՄովսէս, եթէ հօր իւրոյ թքանելով թքեալ էր ընդ երեսս նորա, չամաչէր զեւթն օր. մեկնեսցի զեւթն օր արտաքոյ բանակին, եւ ապա մտցէ։
15 Եւ զատուցաւ Մարիամ արտաքոյ բանակին զեւթն օր. եւ ժողովուրդն ոչ չուեցոյց, մինչեւ սրբեցաւ Մարիամ։

Գլ. ԺԳ

1 Եւ ապա չուեցաց ժողովուրդն յԱսերովթէ, եւ բանակեցաւ յանապատին

[2]ԵԲբ. պակաս [3]ԵԲբ. գնաց [4]ԵԲբ. սպառեալ իցէ՝կէս

2 Փառանու ։ Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէս
3 սիսի եւ ասէ , Առաքեա արս եւ լրտե-
սեսցեն զերկիրն Քանանացւոց , զոր ես
տաց որդւոցն Իսրայէլի ի կալուածս .
այր մի ըստ ցեղի , ըստ ամենայ նահա-
պետաց իւրեանց առաքեսցես զնոսա՝
4 զամենայն զիւաւորս ի նոցանէ ։ Եւ ա-
ռաքեաց զնոսա Մովսէս յանապատէն
Փառանու ըստ բանին Տեառն . ամենե-
քեան արք զիւաւորք էին նոքա յորդ-
5 ւոցն Իսրայէլի ։ Եւ այս են անուանք
նոցա . ցեղին Ռուբենի , Սամաւիէլ որ-
6 դի Զաքուրայ . Ցեղին Շմաւոնի , Սա-
7 փատ որդի Քուրեայ . Ցեղին Յուդայ ,
8 Քաղէբ որդի Յեփոնեայ . Ցեղին Իսա-
9 քարայ , Դաղամ որդի Յովսեփայ . Ցեղին
10 Եփրեմայ , Աւսէս որդի Նաւեայ . Ցեղին
Բենիամինի , Փալտի որդի Ռափսւայ .
11 Ցեղին Զաբուղոնի , Գաղիէլ որդի Սոս-
12 դիայ . Ցեղին Յովսեփայ՝ որդւոցն Մա-
13 նասէի , Գադդէ որդի Սուսայ . Ցեղին
14 Դանայ , Ամիէլ որդի Գամալի . Ցեղին
15 Ասերայ , Սաթուր որդի Միքայելի . Ցե-
ղին Նեփթաղիմայ , Սբի որդի Յարիայ .
16 Ցեղին Գադայ , Դուպիէլ որդի Մակբևայ .
17 Այս անուանք են արանցն՝ զոր առաք-
եաց [1]Տէր լրտեսել զերկիրն Քանանաց-
ւոց . Եւ անուանեաց Մովսէս զՈսէ
18 Աւսեայ որդւոյ Նաւեայ՝ Յեսու ։ Եւ ա-
ռաքեաց զնոսա Մովսէս [2]յանապատէն
Փառանու՝ լրտեսել զերկիրն Քանանաց-
ւոց , եւ ասէ ցնոսա , Ելէք ընդ [3]անա-
19 պատ եւ ամբարձայք ի լեառնն . Եւ
տեսջիք զերկիրն զինչ իցէ , եւ զժողո-
վուրդն որ նստի ի նմա , եթէ զօրա-
ւորապոյն իցէ քան զնա , եթէ սա-
20 կաւք իցեն եթէ բազմամբ . Եւ զինչ իցէ
երկիրն յորում նոքա բնակեալ իցեն ,
եթէ բարւոյ իցէ եթէ չար . եւ զինչ ի-
ցեն քաղաքքն յորս նոքա բնակեալ են ,
պարսպաւորք իցեն եթէ անպարիսպք .
21 Եւ զինչ իցէ երկիրն , պարարտ իցէ
եթէ սակաւ . եթէ իցէ՞ ի նմա ծառա-
տունկ եթէ ոչ ։ Եւ ժրասջիք , առջիք
ի պտղոյ երկրին ։ Եւ [4]աւուրք գար-
նանոյ էին աւուրքն՝ խայծուածոյ խա-
22 ղողոյ ։ Եւ ելեալ լրտեսեցին զերկիրն
յանապատէն Սինայ մինչեւ ցՌոոբ ի
23 մուտս [5]Եփրեմայ ։ Ելին ընդ [3]անա-

պատն եւ եկին մինչեւ ցԿեդրոն . եւ անդ
Աքիման եւ Սէսի եւ Թաղամի , ազգքն
Ենաակայ . (եւ Կեդրոն եւթն ամաւ յա-
ռաջագոյն չհնեալ էր քան զՏանեսիս Ե-
24 գիպտացւոց ։) Եւ եկին մինչեւ ցՀովրն
ողկուզոյ , [2]եւ լրտեսեցին զնա՝ եւ հատին
անտի ուռ որթոյ , եւ ողկոյզ մի խաղո-
ղոյ ի նմա , եւ բարձին զնա լծակօք , եւ
25 ի նոանէ եւ ի թզոյ ։ Եւ անուանեցին
զանունն տեղւոյն՝ Ձոր ողկուզոյ , վասն
ողկուզին զոր հատին անտի որդիքն Իս-
26 րայելի ։ Եւ դարձան անդրէն [2]որդիքն
Իսրայելի՝ լրտեսել զերկիրն յետ ա-
27 ւուրց քառասնից . Եւ հասեալ եկին առ
Մովսէս եւ առ Ահարոն , եւ առ ամենայն
ժողովուրդ որդւոցն Իսրայելի յանապատն
Փառան Կադէս . եւ նոցա զբայց
եւ ամենայն ժողովրդեանն . եւ ցուցին
28 զպտուղ երկրին ։ Եւ պատմեցին նմա , եւ
ասեն ցնա , Զոգաք յերկիրն յոր առա-
քիցեր զմեզ . երկիր՝ որ լղիւկ զկաթն
29 եւ զմեղր , եւ այս է պտուղ նորա ։ Բայց
ազգն սաստիկ [6]էր որ բնակեալ [6]էին ի
նմա , եւ քաղաքք ամուրք եւ պարս-
պաւորք եւ մեծամեծք յոյժ . եւ զազգն
30 Ենաակայ տեսաք անդ ։ Եւ Ամաղէկ բնակ-
եալ [6]էր յերկրին ընդ հարաւակողմն . եւ
Քեւսացին [2]եւ Հեւսացին՝ եւ Յեբուսացին
եւ Ամաւրհացին բնակեալեն առ լերամբքն ,
եւ Քանանացին առ ծովեզերսն եւ առ
31 Յորդանանաւ ։ Լռեցոյց Քաղէբ զժողո-
վուրդն ի Մովսիսէ , եւ ասէ ցնոսա , [2]Ոչ
այդպէս է . այլ՝ ելանելով ելցուք եւ ժա-
ռանգեսցուք զնա . զի կարող եմք յաղ-
32 թել նոցա ։ Եւ արքն որ ընդ նմա երթեալ
էին՝ ասէին , Ոչ ելցուք , քանզի ոչ կա-
րեմք երթալ ի վերայ ազգին . զի զօրա-
33 գոյն քան զմեզ է յոյժ ։ Եւ զարհուրե-
ցուցին երկրաւն զոր լրտեսեցին՝ զորդիսն
Իսրայելի եւ ասեն , Երկիրն ընդ որ մեք
անցաք լրտեսել զնա , երկիր մարդա-
ծախ է բնակչաց իւրոց . եւ ամենայն
ազգն զոր տեսաք ի նմա՝ արք յաղթա-
34 հասակք են . Տեսաք անդ եւ [7]սկայս եւ
էաք յաչս նոցա իբրեւ մարախ՝ ։

Գլ . ԺԴ

1 Եւ ձայն բարձին ամենայն ժողովուրդն ,
եւ եկաց ազգն զգիչերն [8]զայն աղաղակ ։

[1] ԵԲԲ. Մովսէս [2] ՅԵԲԲ. գ-ԼՈ-Ե [3] ԵԲԲ. Հա-
րաւակողմն [4] ԵԲԲ. աւուրքն էին աւուրք [5] ԵԲԲ.
Եմաթայ

[6] ԵԲԲ. է [7] ԵԲԲ. սկայս, զորդիսն Ենաակայ ի Հսկայից.
և էաք յաչս մեր իբրեւ մարախ և այսպէս էաք
յաչս նոցա [8] ԵԲԲ. զայն ։ (2) Եւ տրտնջեցին

2 Եւ տրանջեաց ժողովուրդն՝ զՄովսէսէ
եւ զԱհարոնէ, ամենայն որդիքն Իսրա-
յելի. եւ ասէ ցնոսա ամենայն ժողո-
վուրդն, Լաւ էր եթէ մեռեալ էաք յերկ-
րին Եգիպտացւոց. կամ թէ աստէն յա-
3 նապատի սատ իսկ մեռանէաք։ Եւ ընդէր
[1]տանիցի զմեզ Տէր յերկիրն յայն՝ անկա-
նել մեզ պատերազմաւ, եւ կանայք մեր
եւ որդիք մեր լինիցին ի յափշտակու-
թիւն. եւ արդ լաւ իցէ մեզ դառնալ
4 անդրէն յԵգիպտոս։ Եւ ասէ այր ընկեր,
Արասցուք զօրավար, եւ դարձցուք յԵ-
5 գիպտոս։ Եւ անկան Մովսէս եւ Ահարոն
ի վերայ երեսաց իւրեանց առաջի ամենայն
6 ժողովրդեան որդւոցն Իսրայելի։ Բայց
Յեսու որդի Նաւեայ, եւ Քաղէբ որդի Ցե-
փոնեայ ի լրտեսաց երկրին՝ պատառեցին
7 զհանդերձս իւրեանց. Եւ խօսեցան ընդ
ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայելի
եւ ասեն, Երկիրն զոր մեք լրտեսեցաք՝
8 երկիր բարի է յոյժ։ Եթէ հաճեսցի միայն
ընդ մեզ Տէր, եւ տարցի յերկիրն յայն,
եւ տացէ զնա մեզ, երկիր է որ բղխէ
9 զկաթն եւ զմեղր։ Բայց ի Տեառնէ միայն
ապստամբք մի լինիցիք, եւ ի ժողովրդե-
նէ երկրին մի երկնչիջիք, քանզի կե-
րակուր մեր են. զի մեկնեցաւ ի նոցա-
նէ [2]Տէր, եւ ընդ մեզ է Տէր. մի զան-
10 գիտիցէք ի նոցանէ։ Եւ ասաց ամենայն
ժողովուրդն քարկոծել զնոսա քարամբք.
եւ փառք Տեառն երեւեցան ամպով ի
վերայ խորանին վկայութեան յանդիման
11 ամենայն որդւոցն Իսրայելի։ Եւ ասէ
Տէր ցՄովսէս, Մինչեւ յ՞երբ բարկացու-
ցանէ զիս ժողովուրդդ, եւ մինչեւ յ՞երբ
ոչ հաւատան ինձ ամենայն նշանօքն զոր
12 արարի ի մէջի դոցա։ [3]Թողլ տուր ինձ՝
եւ" հարից զգոսա մահաւամբ, եւ կորու-
սից զդոսա. եւ զքեզ [3]եւ զտուն հօր քո"
արարից յազգ մեծ եւ ի [4]բազում քան
13 զայդ։ Եւ ասէ Մովսէս ցՏէր, Իսկ արդ
լսիցեն եգիպտացիքն եթէ դու հաներ զո-
րութեամբ քո [3]մեծաւ զժողովուրդս զայս
14 ի նոցանէ, Այլ եւ ամենայն բնակիչք
երկրիս այսորիկ լսիցեն թէ դու, Տէր, ի
ժողովրդեանս յայսմիկ ես որ դէմ յան-
դիման երեւիս դու, Տէր, եւ ամպ քո
կայ ի վերայ դոցա, եւ սեամբ ամպոյ
երթաս դու առաջի դոցա ի տուէ, եւ
15 սեամբ հրոյ ի գիշերի։ Եւ սատակիցես

զժողովուրդս քո զայս իբրեւ զայր մի,
եւ խօսիցին ազգքն որ լուան զանուանէ
16 քումմէ, եւ ասիցեն, Վասն զի ոչ կա-
րէր տանել Տէր զժողովուրդն զայն յեր-
կիրն զոր երդուաւ նոցա, սրով զնոսա
17 տապատ յանապատի անդ։ Եւ արդ
բարձրասցի ձեռն քո, Տէր, որպէս խո-
18 սեցար եւ ասացեր, Թէ Տէր երկայնա-
միտ է եւ բազումողորմ [3]եւ ճշմարիտ",
բառնայ զանօրէնութիւնս [3]եւ զանիրա-
ւութիւնս" եւ զմեղս. եւ սրբելով ոչ
սրբէ զպատուհասն, հատուցանէ զմեղս
հարանց յորդիս մինչեւ յերիս եւ ի չորս
19 ազգս. Թող զմեղս ժողովրդեան քո ըստ
մեծի ողորմութեան քում, որպէս նե-
րեցեր դոցա յԵգիպտոսէ մինչեւ ցայժմ։
20 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Ներեցից դոցա
21 ըստ բանի քում. Բայց կենդանի եմ ես,
[3]եւ կենդանի է անուն իմ," եւ լցցեն
22 փառք Տեառն զամենայն երկիր. Զի ա-
մենայն արք՝ որ տեսին զփառսն իմ եւ
զնշանս զոր արարի ես յԵգիպտոս եւ
յանապատիս յայսմիկ, եւ փորձեցին զիս
այս տասն անգամ, եւ ոչ լուան ձայնի
23 իմում, թէ տեսանիցեն զերկիրն զոր
երդուայ հարցն նոցա. [3]այլ որդիք նոցա
որ են աստ ընդ իս, որ ոչ գիտեն զչար
կամ զբարի, ամենայն մանուկ տխմար,
նոցա տացե զերկիրն." Եւ ամենեքեան որ
24 բարկացուցին զիս՝ ոչ տեսցեն զնա. Բայց
Քաղէբ ծառայ իմ յորում եղեւ հոգի այլ,
եւ եկն ղհետ իմ, տարայց զնա յերկիրն
յոր եմուտ, եւ զաւակ նորա ժառան-
25 գեսցէ զնա։ Եւ Ամաղէկ եւ Քանանա-
ցին բնակեալ են ի ձորն. բայց դուք
վաղիւ դարձարուք եւ չուեցէք յանա-
պատէն ընդ ճանապարհ Կարմիր ծովուն։
26 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ
27 Ահարոնի եւ ասէ, Մինչեւ յ՞երբ զժո-
ղովուրդդ զայդ զչար կրիցեմ, եւ զդքա
տրանջեն առաջի իմ. զտրտունջ որդ-
ւոցն Իսրայելի որ տրանջին զձէնջ՝ լուայ։
28 Արդ ասասցես ցնոսա, կենդանի եմ ես,
ասէ Տէր, եթէ ոչ որպէս խօսեցայք յա-
29 կանջս իմ՝ նոյնպէս արարից ձեզ. Ցա-
նապատիս յայսմիկ անկցին ոսկերք ձեր.
եւ ամենայն հանդէս ձեր, եւ մտեալքն
ի ձէնջ ի հաշիւ՝ ի քսանամենից եւ ի վեր՝
30 որ տրանջեցին զինէն, Թէ մտանիցեն
յերկիրն յոր համբարձի զձեռն իմ բնա-
կեցուցանել զձեզ ի նմա, բայց Քաղէբ՝
31 որդի Ցեփոնեայ, եւ Յեսու Նաւեան։ Եւ

[1]ԵԲբ. ած զմեզ Տէր յերկիրս յայս [2]ԵԲբ. հովա-
նին իւրեանց [3]ՅԵԲբ. պ-ի-ս [4]ԵԲբ. հզօր

զորիւն զորմէ ասացէք թէ ի յափչտակութիւն լինիցին՝ տարայց զնասս յերկիր, եւ ժառանգեացին զնա, յորմէ
32 զուքն յափրայարուք։ Եւ ոսկերք ձեր
33 անկցին ասէն յանապատս ս եւ արդիք ձեր ճարակեսցին յանապատի աստ ամս
քառասուն, եւ յարձգին զպոռնկութիւն ձեր, մինչեւ մաչեսցին ոսկերք
34 ձեր յանապատի աստ։ Ըստ թուոյ աւուրցն [1]քառասնից, օր ընդ տարւոյ
ընդունիցիք զմիգս ձեր՝ զքառասուն ամ, եւ ծանիջիք զտրամասութիւն բարկու-
35 թեան իմոյ։ Ես Տէր խօսեցայ, եթէ ոչ արարից ժողովրդեանդ այդմիկ չարի
չարութեացոյ ի վերայ իմ. յանապատի աստ
36 ծախիցին, եւ աստէն մեռանիցին։ Եւ արքն զորս առաքեաց Մովսէս լրտեսել
զերկիրն եւ եկեալ բամբասացին զնմանէ
37 առ ժողովրդեանն՝ հանել համբաւ չար
զերկրէն, Մեռան արքն այնոքիկ որ
38 հանին համբաւ չար զերկրէն՝ չարաչար
հարուածովք առաջի Տեառն։ Եւ Յեսու
որդի Նաւեայ եւ Քաղէբ որդի Յեփոն-
նայ միայն ապրեցան յարանցն յայնցանէ
39 որ երթեալ էին լրտեսել զերկիրն։ Եւ
խօսեցաւ Մովսէս զպատգամս զայս առ
ամենայն որդիսն Իսրայէլի, եւ սուգ առ
40 ժողովուրդն յոյժ։ Եւ կանխեալ ընդ
առաւօտն ելին ի գլուխ լերինն եւ ա-
սեն, Ահաւասիկ կամք մեք, ելցուք ի
41 տեղին զոր ասաց Տէր, զի մեղաք։ Եւ
ասէ Մովսէս. Ընդէ՞ր [2]անցանէք զբանիս
42 Տեառն, եւ ոչ աջողեսցի ձեզ։ Մի ելա-
նէք, զի ոչ է Տէր ընդ ձեզ, եւ անկանիք-
43 ցիք առաջի թշնամեաց ձերոց. Զի Ամա-
ղեկ եւ Քանանացին են անդ առաջի ձեր,
եւ անկանիցիք սրով. փոխանակ զի դար-
ձայք յետս եւ հեստիցէք Տեառն, եւ ոչ
44 լինիցի Տէր ընդ ձեզ։ Եւ անտաստեալ
ելին ի գլուխ լերինն. բայց տապանակ
կտակարանացն Տեառն եւ Մովսէս ոչ
45 չարժեցան ի բանակէ անտի։ Էջ Ամա-
ղեկ եւ Քանանացին որ բնակեալ էր ի
լերինն, եւ հարին զնոսա եւ կոտորե-
46 ցին զնոսա մինչեւ ցՀերմա։ [3]Եւ դար-
ձան անդրէն ի բանակն։"

Գլ. ԺԵ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
2 Խօսեայ ընդ որդիսդ Իսրայէլի եւ ասասցես ցդոսա, Զարժամ մտանիցէք յերկիրն
3 բնակութեան ձերոյ զոր ես տայ ձեզ, եւ առնիցէք [4]ողջակէզ Տեառն՝ եւ ողջընծայ ի զոհ, մեծացուցանել՝ զուխտն կամ
զկամաւն, կամ ի տօնս ձեր առնել հոտ անուշից Տեառն, եթէ յարջառոյ եւ եթէ
4 ի հօտից, Եւ բերցէ որ մատուցանիցէ զպատարագն իւր Տեառն, զոհ նաչհոյ
զատանարդ գրաւին՝ գանգեալ իւղով,
5 չորրորդաւ գրաւկին, Եւ գինի ի նուէր գչորրորդ գրաւկին առնիցէք ըստ զոհին
կամ ըստ ողջակիզին առ գառն մի. [5]Այնչափ առնիցես ընծայ ի հոտ անուշից
6 Տեառն. Եւ խոյին յորժամ առնիցես զնա յողջակէզ կամ ի զոհ," արասցես զզոհ
նաչհոյն երկուս տասանորդս զանգեալ
7 իւղով երրորդաւ գրաւկին. Եւ գինի ի նուէր զերկրորդ գրաւկին մատուցանի-
8 ցէք ի հոտ անուշից Տեառն։ Ապա թէ յարջառոյ առնիցէք յողջակէզ կամ ի
զոհ, [6]մեծացուցանել զուխտն [7]ի վերուս-
9 թիւն Տեառն, Մատուսցէ ըստ զուարա-
կին զոհ նաչհոյ՝ երիս տասանորդս զան-
10 գեալ իւղով կիսով գրաւկին. Եւ գինի ի
նուէր՝ կէս գրաւկին, ընծայ ի հոտ ա-
11 նուշից Տեառն։ Սմինպէս առնիցես միում
զուարակին, կամ միում խոյին, կամ
միում գառինն, յօդեաց կամ յայծեաց։
12 Ըստ թուոյ նոցա, որպէս զինչ առնիցէք
նոյնպէս արասջիք միումն ըստ իւրա-
13 քանչիւր թուոյ նոցա։ Ամենայն բնակն
նոյնպէս արասցէ, նոյնպիսի ընծայս մա-
14 տուցանել ի հոտ անուշից Տեառն։ Եւ
եթէ եկ ոք յարեսցի ի ձեզ յերկրին ձե-
րում, որ լինիցի առ ձեզ յազգս ձեր,
արասցէ ընծայ ի հոտ անուշից Տեառն.
որպէս զուքն առնիցէք նոյնպէս առնիցէ
15 եւ [8]եկն եւ ժողովուրդն Տեառն։ Օրէնն
մի եւ նոյն կացցէ ձեր եւ եկայն որ յարի-
ցին ի ձեզ. օրէնն յաւիտենական յազգս
ձեր. որպէս եւ զուքն իցէք, եւ եկն
16 լինիցի առաջի Տեառն։ Օրէնն մի եւ նոյն
կացցէ, եւ իրաւունք մի եւ նոյն լինիցին ձեր եւ եկին որ յեցեալ իցէ ի ձեզ։
17 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ,
18 Խօսեայ ընդ որդիսդ Իսրայէլի եւ ասասցես ցդոսա, Ի մտանել ձեր յերկիրն յոր
19 ես տարայց զձեզ, Եւ եղիցի յորժամ

[1] ԵԲբ. յորս լրտեսեցէք զերկիրն աւուրս քառասուն [2] ԵԲբ. անցանէք [3] ԵԲբ. գ-ի-ա-ե [4] ԵԲբ. պատարագ Տեառն՝ ողջակէզ կամ զոհ ի կատարել [5] ԵԲբ. (6) Կամ առ խոյ [6] ԵԲբ. ի կատարել [7] ԵԲբ. կամ զհաղաղականս [8] ԵԲբ. Նա։ (15) Ո՛վ ժողովուրդ, օրէն

20 ուսիցէք զօրք ի հացէ երկրին, [1]Ասկիք հաս ի նուէր Տեառն զառաջին զանգուածոյ ձերոյ, եւ տարջիք զնայ հասին Տեառն, զատուածիք զայն Տեառն որպէս զնաան ի կալոյ. նոյնպէս եւ զայն զատուածիք
21 ցանիցէք՝ Զառաջին զանգուածոյն ձերոյ, եւ տայջիք Տեառն հաս յազգս ձեր՝:
22 Իսկ յորժամ յանցանիցէք, եւ ոչ առնիցէք զամենայն զպատուիրանս զայսոսիկ զոր խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի,
23 Որպէս հրամայեաւ ձեզ Տէր ի ձեռն Մովսիսի, յօրէ յորմէ հրամայեաւ ձեզ Տէր եւ յառ յապա ժամանակս յազգս ձեր,
24 եւ եղիցի եթէ յաչաց ժողովրդեանն վրիպիցի ակամայ լինել, արասցէ ժողովուրդն զուաղակ մի յանդուց [2]անարատ յողջակէզ ի հոտ անուշից Տեառն. եւ զոհ բուսոյ նմին եւ նուէր բուսոյ պայմանի, եւ
25 նոխազ մի յայծեաց վասն մեղաց: Եւ քաւեսցէ քահանայն վասն ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի, եւ թողցի նոցա, զի ակամայ է, եւ նոքա մատուսցեն զպատարագն իւրեանց ընծայ Տեառն՝ վասն մեղաց իւրեանց առաջի Տեառն
26 յաղագս ակամայիցն իւրեանց. Եւ թողցի ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի, եւ եկեղ յեցելոց ի ձեզ. զի ամենայն ժողովրդեանն է ակամայն:
27 Եւ եթէ մի անձն մեղիցէ ակամայ, մատուսցէ ալոզ մի տարեւոր վասն մեղաց.
28 Եւ քաւեսցէ քահանայն ի վերայ անձին ակամայացելոյ եւ մեղուցելոյ առաջի Տեառն ակամայ, քաւել վասն
29 նորա[3]: Բնակիչն որդւոցն Իսրայէլի եւ եկիչն յեցելոյ ի նոսա՝ օրէնս մի եւ նոյն կացցէ որ լինի առնիցէ ոք ակամայ:
30 Եւ անձն որ առնիցէ ձեռամբ հպարտութեան ի բնակաց կամ յեկաց, բարկացոյց նա զՏէր, սատակեսցի անձն այն
31 ի ժողովրդենէ իւրմէ: Զի զբանն Տեառն խոտեաց, եւ զպատուիրանս նորա ցրեաց, ընկնելով ընկեսցի անձնն այն ի ժողովրդենէ իւրմէ. զի մեղք նորա ի նմա են:
32 Եւ էին որդիքն Իսրայէլի յանապատի անդ եւ գտին այր մի որ քազէր փայտ
33 յաւուր չաբաթու: Եւ մատուցին զնա որք գտինն զի քազէր փայտ յաւուր չաբաթու՝ առ Մովսէս եւ առ Ահարոն՝ եւ առ ամենայն ժողովուրդ [2]որդւոցն Իսրայէլի՝:
34 Եւ եառուն զնա ի պահ, զի [4]ոչ
35 բնարեցին՝ թէ զինչ առնիցեն նմա: Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ, Մահու մեռցի այրն. քարամբք քարկոծեսցեն զնա ամենայն ժողովուրդն արտաքոյ բանակին:
36 Եւ հանին զնա ամենայն ժողովուրդն արտաքոյ բանակին, եւ քարկոծեցին զնա [5]ամենայն ժողովուրդն արտաքոյ բանակին՝ որպէս հրամայեաց Տէր Մովսիսի:
37 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
38 Խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի եւ ասասցես ցնոսա, զի արասցեն իւրեանց ծոպս ի տառունս հանգերձից իւրեանց յազգս իւրեանց. եւ գնիցէք ի վերայ ծոպիցդ
39 առնոցն ասգանի կապուտակ. Եւ լինիցի այն ձեզ ի ծոպն, եւ տեսանիցէք զայն եւ յիշիցէք զամենայն զպատուիրանս Տեառն առնել զնոսա. եւ ոչ խոտորիցիք զկնի [6]մտաց եւ աչաց ձերոց, որով գնաք
40 պոռնկիք զկնի նոցա. Զի յիշիցէք եւ առնիցէք զամենայն զպատուիրանս իմ, եւ եղիջիք սուրբք Աստուծոյ ձերում:
41 Զի ես եմ Տէր Աստուած ձեր որ հանի զձեզ յերկրէն Եգիպտացւոց լինել ձեզ Աստուած. ես եմ Տէր՝ Աստուած ձեր:

Գլ. ԺԶ

1 Եւ [7]խօսեցաւ Կորխ՝ որդի Իսահառայ որդւոյ Կահաթու որդւոյ Ղևեայ, եւ Դաթան եւ Աբիրոն որդիք Եղիաբայ [8]որդւոյ Ռուբենի, եւ Աւնան որդի Փաղեթայ
2 որդւոյ՝ Ռուբենի, Եւ կացին հակառակ Մովսիսի, եւ երկերիւր եւ յիսուն այր յորդւոցն Իսրայէլի գլխաւորք ժողովրդեանն՝ խորհրդականք խորհրդոյ եւ
3 արք անուանիք: Կուտեցան ի վերայ Մովսիսի եւ Ահարոնի եւ ասեն, Շատ լիցի ձեզ, զի ամենայն ժողովուրդն եւ ամենեքեան սուրբք են, եւ Տէր ի մէջ նոցա. եւ արդ ընդէ՞ր [9]ամբարձեալ էք ի վեր
4 քայ ժողովրդեանդ Տեառն: Եւ լուեալ Մովսիսի՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց.
5 Եւ խօսեցաւ ընդ Կորխայ եւ ընդ ամենայն ժողովրդեան նորա, եւ ասէ, [9]Յայգ եւ եւ ծանեաւ Աստուած՝ զիւրն եւ

[1] ԵԲԲ. մատուցէք ընծայ վերացման Տեառն. (20) Յառաջին զանգուածոյն ձերմէ մատուսջիք նուէր վերացման պան մի. որպէս զնուէր վերացման կալոյ՝ այնպէս վերացուսջիք զսա: (21) Զառաջին զանգուածոյ ձերոյ տայջիք նուէր վերացման Տեառն յազգս ձեր
[2] ՅԵԲԲ. գոխոռ
[3] ԵԲԲՅԵՑԻՆ յաւելու, եւ թողցի նմա
[4] ԵԲԲ. չէր յայտ
[5] ԵԲԲ. եւ մեռաւ,
[6] Կամ, սրտից
[7] ԵԲԲ. ա՛ռ որ
[8] ԵԲԲ. եւ Աւնան որդի Փաղեթայ, որդիք
[9] ԵԲԲ. Առաւօտուն յուցցէ Տէր

զսուրբն , եւ [1]մերձեցոյց առ ինքն . եւ
զորս [2]ոչն ընտրեաց՝ [1]ոչ մերձեցոյց՝՝ առ
6 ինքն : Արդ զայս արարէք . առէք ձեզ
զսուրսատս ձեր , կրակ եւ ամենայն
7 ժողովուրդ իւր . եւ դիք ի նոսա հուր,
եւ արկէք ի նոսա խունկ առաջի Տեառն
ի վաղիւ . եւ եղիցի այր զոր ընտրեսցէ
Տէր՝ նա է սուրբ . չա՛ս լիցի ձեզ , որդիք
8 Ղեւեայ : Եւ ասէ Մովսէս ցԿորհ , Լուա՛ս
9 բուք ինձ , որդիք Ղեւեայ . Միթէ փո՞քր
ինչ իցէ ձեզ այդ , զի զատոյց զձեզ Աս-
տուած Իսրայելի ի ժողովրդենէ իւրմէ ,
եւ մերձեցոյց զձեզ առ ինքն՝ պաշտել
զպաշտօն խորանին Տեառն , եւ կալ ա-
10 ռաջի ժողովրդեանն պաշտել զնա . Եւ
մերձեցոյց զքեզ առ ինքն , եւ զամենայն
եղբարս քո զորդիսն Ղեւեայ ընդ քեզ ,
11 եւ քահանայանա՞լ եւս իմշղրէք : Եւ այդ-
պէս դու եւ ժողովուրդ քո դումարեալ
էք զԱստուծոյ . եւ Ահարոն ո՞վ է զի
12 արտնջէք զնմանէ : Եւ առաքեաց Մով-
սէս կոչել զԴաթան եւ զԱբիրոն , զոր-
դիսն Եղիաբու . եւ ասեն , Ոչ ելեսցուք .
13 Միթէ փո՞քր իցէ այն զի հաներ զմեզ
յերկրէն որ բղխէր կաթին եւ մեղր ,
սպանանել զմեզ յանապատի սմա . եւ
արդ սաստի՞ս եւս մեզ , եւ դո՞ւ ես իշ-
14 խան : Միթէ յերկրէն որ բղխէր կաթին
եւ մեղր տարար զմեզ , եւ եռուր մեզ
անդ ժառանգութիւն անդաղ եւ այգեաց .
[3]եթէ զաչս մեր բրեսցես , ոչ ելեսցուք
15 առ քեզ՝՝ : Եւ ծանրացաւուն եղեւ յոյժ
Մովսէս , եւ ասէ ցՏէր , Մի՛ հայիր ի
զոհսն նոցա . [4]զի պցանկայի ինչ՝՝ ուրուք
ի նոցանէ ես ոչ առի , եւ ոչ զոք ի նոցա-
16 նէ չարչարեցի : Եւ ասէ Մովսէս ցԿորհ,
[5]Սրբեա դժողովուրդ քո , եւ՝՝ եղիջիք
պատրաստք առաջի Տեառն , դու [6]եւ
17 Ահարոն՝՝ առ վաղիւ . Եւ առէք իւրա-
քանչիւր զսուրսատս իւր , եւ դիջիք ի
վերայ նոցա խունկ , եւ մատուսջիք ա-
ռաջի Տեառն իւրաքանչիւր զսուրսատս
իւր, զերկերիւր եւ զյիսուն բուրսատան,
եւ դու եւ Ահարոն զիւրաքանչիւր բուր-
18 ուառ իւր : [7]Եւ եղին ի նոսա հուր , եւ
արկին ի նոսա խունկ, եւ կացին առ դրան
խորանին վկայութեան , [8]Մովսէս եւ Ա-
19 հարոն : Եւ կուսեաց ի վերայ նոցա կորհ
զամենայն ժողովուրդն իւր ի դուռն խո-
րանին վկայութեան. եւ երեւեցան փառք
Տեառն ամենայն ժողովրդեանն :
20 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ընդ
21 Ահարոնի եւ ասէ, Մեկնեցարուք ի միջոյ
ժողովրդեանդ այդորիկ , եւ սատակեցից
22 զդոսա միանգամայն : Անկան ի վերայ ե-
րեսաց իւրեանց եւ ասեն , Աստուած ,
Աստուած հոգւոց ամենայն մարմնոյ. եթէ
մի մարդ մեղաւ , ի վերայ ամենայն ժո-
ղովրդեանդ զայգէ բարկութիւն Տեառն :
23 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ա-
24 սէ, Խօսեաց ընդ ժողովրդեանն եւ ասասց
նոսս, Զատարուք չուրջ [9]զժողովրդեամբդ
25 Կորհայ եւ Դաթանայ եւ Աբիրոնի : Եւ
յարեաւ Մովսէս եւ գնաց առ Դաթան եւ
Աբիրոն , եւ գնացին ընդ նմա [2]ամենայն
26 ծերքն Իսրայելի : Եւ խօսեցաւ ընդ ժո-
ղովրդեանն եւ ասէ , Մեկնեցարուք ի
վրանաց արանց խստասրտացդ այդոցիկ ,
եւ մի՛ մերձենայցէք յինչ ի դոցա , զի մի՛
կորնչիցիք ընդ ամենայն մեղս դոցա :
27 Եւ մեկնեցան [10]ի ժողովրդենէն Կորհայ՝՝
չուրջ զնոքօք . եւ Դաթան եւ Աբիրոն
ելին եւ կացին առ դրան վրանաց իւրա-
նանց , եւ կանայք նոցա եւ մանկունք
28 իւրեանց եւ աղխն իւրեանց : Եւ ասէ
Մովսէս , Այսու գիտասջիք եթէ Տէր ա-
ռաքեաց զիս գործել զամենայն զգործս
29 զայսոսիկ , եւ եթէ ոչ յինէն ինչ է . եթէ
ըստ մահու ամենայն մարդկան մեռանիս-
ցին զոքա , կամ ըստ հանդիպի ամենայն
մարդկան լինիցի հանդէս դոցա , ապա
30 զիս Տէր ոչ առաքեաց : Այլ եթէ նորանչեն
ինչ ցուցցէ Տէր , եւ բացեալ երկրի զբե-
րան իւր կլանիցէ զդոսա [2]եւ զտունս
դոցա՝՝ եւ զամենայն ինչ որ դոցա իցէ ,
եւ իջանիցեն կենդանիսն ի դժոխս ,
գիտասջիք եթէ բարկացուցին արքդ
31 այդոքիկ զՏէր : Եւ իբրեւ դադարեաց
ի խօսելոյ զբանս զայսոսիկ , պատա-
32 ռեցաւ երկիրն ի ներքոյ նոցա . Եւ
[11]բացաւ երկիր՝՝ եւ եկուլ զնոսա եւ
զտունս նոցա , եւ զմարդիկն որ էին
33 ընդ Կորհայ եւ զանասունս նոցա : Եւ
իջին նոքա եւ որ ինչ էր նոցա կենդան-
ւոյն ի դժոխս . եւ ծածկեաց զնոսա եր-
կիրն , եւ կորեան ի միջոյ ժողովրդեանն :

[1]Եբր· մերձեցուսցէ [2]Յ Եբր· պ-ւ-ռ [3]Եբր· Մթէթ զաչս արանցդ այդոցիկ բրեսցե՞ս ոչ եկեսցուք [4]Եբր· զէչ [5]Եբր· Կու եւ ամենայն ժողովրդ քո [6]Եբր· եւ նոքա եւ Ահարոն [7]Եբր· Եւ առ-եալ իւրաքանչիւր զսուրսատս իւր՝ [8]Եբր· նոյնպէս Մովսէս

[9]Եբր· զթորանաւդ [10]Եբր· առ ի խորանէն Կորհայ, Դաթանայ եւ Աբիրոնի [11]Եբր· եբաց երկիր զբերան իւր

34 Եւ ամենայն Իսրայէլ որ չուրջ զնոքօք
էր՝ փախեան ի ձայնէ նոցա. զի համա-
րէին թէ դուչխ կլանիցէ եւ զնոսա եր-
35 կիրն ։ Եւ եկն Տէառն եւ եկեր
զերկերիւր եւ ղչխուն այրն՝ որ մատու-
ցանէին զխունկն ։
36 Եւ [1]ասէ Տէր ցՄովսէս (37)եւ[2]ցեղիա-
զար ցորդին Ահարոնի ցքահանայ, [3]Բարձէք
զրուտառաղ պղնձիս՝ ի միջոյ այրեցե-
լոցդ. եւ զնուրզ [3]օտար ցրուեսցես ի բայ.
38 Զի սրբեցան բուրուառքն՝ մեղաւորացդ
այսոցիկ յոգիս իւրեանց, [4]եւ արասցես
զայդ՝ զրուառս կռածոյս նուագուանս
սեղանոյն. զի մատուցան առաջի Տեառն
եւ սրբեցան. եւ եղիցին ի նշանակ որդ-
39 ւոցն Իսրայէլի ։ Եւ առ եղիազար [5]որ-
դի Ահարոնի քահանայի՝ զրուրուառն
պղնձիս զորս մատուցին այրեցեալքն,
40 եւ արար զրուառս սեղանոյն ի յիշատակ
որդւոցն Իսրայէլի, զի մի՛ մերձենայցէ
այլազգի ած որ չիցէ ի զաւակէ Ահարոնի՝
դնել խունկս առաջի Տեառն, զի մի՛ լի-
նիցի իբրեւ զԿորհ եւ զխռովման նորա.
որպէս խօսեցաւ Տէր ի ձեռն Մովսիսի ։
41 Եւ արտնջացին [6]որդիքն Իսրայէլի ի
վաղիւ անդր զՄովսիսէ եւ զԱհարոնէ,
եւ ասեն, Դուք կոտորեցէք զժողովուրդն
42 Տեառն։ Եւ եղեւ ի կատել ժողովրդեանն
ի վերայ Մովսիսի եւ Ահարոնի, [7]դիմե-
ցին ի խորանն վկայութեան, [8]եւ ծած-
կեաց զնա ամպն, եւ երեւեցան փառքն
43 Տեառն ։ Եւ կացին Մովսէս եւ Ահարոն
44 յանդիման խորանին վկայութեան ։ Եւ
խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի [9]եւ ընդ Ա-
45 հարոնի՝ եւ ասէ, Մերկեցարուք ի միջոյ
ժողովրդեանդ այսորիկ եւ սատակեցից
զդոսա միանգամայն. եւ անկան ի վե-
46 րայ երեսաց իւրեանց ։ Եւ ասէ Մովսէս
ցԱհարոն, Առ դու զրուրուառն, եւ դիցես
ի նմա հուր ի սեղանոյ անտի, եւ արկ
ի նա խունկ, եւ տար վաղվաղակի ի բա-
նակն եւ քաւեսցես վասն նոցա. քանզի
եկ յարկութիւն ի Տեառնէ եւ սկսաւ
47 սատակել ժողովուրդն ։ Եւ առ Ահա-
րոն, որպէս խօսեցաւ ընդ նմա Մով-
սէս, եւ ընթացաւ ի ժողովուրդ անդր,
եւ ահա սկսեալ էր սատակումն ի ժո-
ղովրդեանն, եւ արկ զխունկն, եւ քաւ-
48 եաց վասն ժողովրդեանն. Եւ եկաց ի
մէջ մեռելոց եւ կենդանեաց, եւ դա-
49 դարեաց սատակումնն ։ Եւ եղեն մեռ-
եալք ի սատակմանն չորեքտասան հա-
զար եւ եւթն հարիւր, թող զմեռեալսն
50 վասն Կորխայ ։ Եւ դարձաւ Ահարոն առ
Մովսէս ի դուռն խորանին վկայութեան,
եւ դադարեաց սատակումնն ։

ԳԼ. ԺԷ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ա-
2 սէ, Խօսեաց դու ընդ որդիսդ Իսրայէլի,
եւ առցես ի նոցանէ գաւազանս ըստ
տանց նահապետաց իւրեանց՝ յամենայն
իշխանաց իւրեանց, ըստ տանց աղգաց
իւրեանց՝ երկոտասան գաւազան. եւ
զիւրաքանչիւր անուն գրեսցես ի վերայ
3 գաւազանի իւրոյ ։ Եւ զանունն Ահարո-
նի գրեսցես ի վերայ [10]իւրոյ գաւազանի
եւ իցէ գաւազան մի ըստ ցեղից Իսրա-
յէլի՝ զոր ի տանց նահապետաց իւրեանց
4 տասներկուս։ Եւ դիցես զնոսա ի խորանին
[11]վկայութեան՝ որովք երեւեցայց քեզ
5 անդ. Եւ եղիցի մարդոյ զոր ընտրեցից՝
գաւազանն իւր ծաղկեսցի. եւ բարձից
յինէն զտրտունջ որդւոցն Իսրայէլի զոր
տրանջեն նոքա դէմ ինձ ։
6 Եւ խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իս-
րայէլի. եւ ետուն ցնա ամենայն իշ-
խանքն նոցա զգաւազանս իւրեանց, գա-
ւազան միոյ իշխանի ըստ տանց նահա-
պետաց իւրեանց, երկոտասան գաւազան,
եւ գաւազանն Ահարոնի ի մէջ գաւա-
7 զանացն նոցա ։ Եւ եդ Մովսէս զգաւա-
զանն առաջի Տեառն ի խորանին վկա-
8 յութեան։ Եւ եղեւ ի վաղիւ անդր [12]մտին
Մովսէս եւ Ահարոն՝ ի խորանն վկայու-
թեան. եւ ահա գալարացաւ գաւազանն
Ահարոնի ի տանն Ղեւեայ, եւ արձակ-
եաց չառաւիղ, եւ ծաղկեաց ծաղիկ, եւ
9 երեւեցոյց [13]ընկոյզ ։ Եւ եհան Մովսէս
զգաւազանսն յերեսաց Տեառն առ ամե-
նայն որդիսն Իսրայէլի, եւ տեսին. եւ
10 առ իւրաքանչիւր օք զգաւազան իւր ։ Եւ
ասէ Տէր ցՄովսէս, Դիր զգաւազանդ
Ահարոնի առաջի վկայութեանդն ի պա-
հեսս, ի նշանակ որդւոցն անհնազան-

[1]ՆԲԷ. Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ, (37)Ասա [2]ՆԲԷ. և բարձեալ զբուրուառան [3]ՆԲԷ. ցրուեսցես ի բաց, զի սրբեցան. (38) Զբուրուառս [4]ՆԲԷ. արասցեն զնոսա [5]ՆԲԷ. քահանայ [6]ՆԲԷ. ամենայն ժողովուրդ որդւոցն [7]ՆԲԷ. Հայեցան [8]ՆԲԷ. եւ ահա [9]ՑԲԷ. պատուէր

[10]ՆԲԷ. գաւազանն Ղեւեայ. զի գաւազան մի յիւրում ըստ գլխոյ հարց նոցա [11]ՆԲԷ. ժողովոյ առաջի վկայութեանն ուր երեւեցայց ձեզ [12]ՆԲԷ. եմուտ Մովսէս [13]ՆԲԷ. նուշ

դից . եւ դադարեսցէ սրանչելին նայ-
11 ցեղէն եւ մի մեռանիցին : Եւ [1]խօսեցաւ
Մովսէս եւ Ահարոն , ասելով Տեառն եւ
12 Տէր Մովսէսի՝ նոյնպէս եւ արարին" : Եւ
խօսեցան սրտիքն Իսրայելի ընդ Մով-
սիսի եւ ասեն , Ահաւասիկ սատակիմք ,
13 կորնչիմք , ծանիմք . Ամենայն որ մեր-
ձենայ ի խորանն վկայութեան Տեառն՝
մեռանի . մինչեւ ի սպառ մեռանիցիմք :

ԳԼ . ԺԸ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Ահարոնի եւ ասէ ,
Դու եւ որդիք քո եւ տուն հաւատուա-
թեան քո ընդ քեզ՝ առնուցուք զմեղս
սրբութեանցն . եւ դու եւ որդիք քո առ-
նուցուք զմեղս քահանայութեան ձերոյ :
2 Եւ զեղբարս քո ցղեղն Ղեւեայ , զցուցոյ
հօր քո , մատուսցես առ քեզ , եւ յա-
ւելցին ի քեզ , եւ պաշտասցին դքեզ . եւ
դու եւ որդիք քո ընդ քեզ , յանկրման
3 խորանին վկայութեան : Եւ պահեսցին
զպահպանութիւնս քո , եւ զպահպանու-
թիւնս խորանին վկայութեան . բայց ի
սպասն իմ ի սուրբ եւ ի սեղանն մի
մերձենասցին , զի մի մեռանիցին , եւ նո-
4 քա եւ դուք : Եւ յաւելցին ի քեզ ,
եւ պահեսցին զպահպանութիւնս խորա-
նին վկայութեան բաս ամենայն պաշ-
տաման խորանին . եւ օտարազգի մի
5 մերձենայի առ ձեզ : Եւ պահեսջիք զպահ-
պանութիւնս սրբութեանցն եւ զպահ-
պանութիւնս սեղանոյն , եւ ոչ եւս լի-
նիցի բարկութիւն յորդիսն Իսրայելի :
6 Եւ ես առի զեղբարս ձեր զՂեւետացիս ի
միջոյ որդւոցն Իսրայելի՝ վոխանակս
տուեալ Տեառն , պաշտել զպաշտօն խո-
7 րանին վկայութեան : Եւ դու եւ որդիք
քո ընդ քեզ պահեսջիք զքահանայութիւնն
ձեր բաս ամենայն պայմանի սեղանոյն , եւ
զներքին կողմն վարագուրին , եւ պաշ-
տեսջիք զպաշտօն քահանայութեան ձե-
րոյ . եւ այլազգին որ մերձենայցէ՝ մեռցի :
8 Խօսեցաւ Տէր ընդ Ահարոնի եւ ասէ ,
Ես ահաւասիկ տուի քեզ զպահպանս պաշտօ-
նից . յամենայն նուիրեցոյն ինձ յորդ-
ւոցն Իսրայելի՝ քեզ տուի զայն [2]ի պա-
տիւ , եւ որդւոց քոյ [3]յիւղ քո" , օրէնս
9 յաւիտենական : Եւ այս եղիցի [4]ձեզ ի
նուիրելոց սրբութեանցն բնծայից , յա-
մենայն պատարտաց նոցա եւ յամենայն
պահից" նոցա , եւ յամենայնէ առ ի յան-
ցանացն նոցա , եւ յամենայնէ առ ի մե-
ղացն նոցա , զոր տացեն ինձ յամենայն
սրբութեանցն՝ քեզ լիցի եւ որդւոց քոց :
10 Ի սրբութիւն սրբութեանցն կերիջիք
զայն . ամենայն արու ուտիցէ զայն , դու
եւ որդիք քո . դի սրբութիւնք եղիցին
11 քեզ : Եւ այն եղիցի քեզ [5]ի պատուոյ տրոցն
նոցա , յամենայն նուիրեցոյ" որդւոցն Իս-
րայելի , քեզ տուի զայն եւ ուստերաց
եւ դստերաց քոց ընդ քեզ , օրէնս յաւի-
տենական . ամենայն սուրբ ի տան քում
12 կերիցէ զայն : Եւ զամենայն [6]պտուղ իւ-
ղոյ , եւ զամենայն [6]պտուղ գինւոյ եւ
ցորենոյ , [7]զոր տացեն Տեառն զպատուղ
13 իւրեանց" քեզ տուի զայն : Ամենայն
առաջինք արմտեաց յերկրին իւրեանց
զոր մատուսցեն Տեառն՝ քեզ լիցին , եւ
ամենայն սուրբ ի տան քում կերիցէ զայն :
14 Եւ ամենայն նուիրեալ յորդւոցն Իսրա-
15 յելի քեզ լիցի : Եւ ամենայն որ բանայ
զարգանդ՝ յամենայն մարմնոյ , զոր մա-
տուցանիցեն Տեառն ի մարդոյ մինչեւ
յանասուն՝ քեզ լիցի . այլ վրկելով վրկեա-
ցես զանդրանիկս մարդկան , եւ զանդ-
րանիկս անասնոյ անսրբոյ վրկեացես :
16 Եւ վրկանք նորա յամաօրեկոյ [3]եւ ի վեր" ,
եւ գին նորա հինգ սիկղ ըստ սրբութեան
17 սիկղն , որ է քսան ղռնդ : Բայց զանդ-
րանիկս արջառոց եւ զանդրանիկս ոչխաց
եւ զանդրանիկս այծեաց ոչ վրկեացես ,
դի սուրբ են . եւ զարիւն նոցա հեղցես
առ սեղանովն , եւ զճարպն [8]հանցես ըն-
18 ծայ ի հուռ անուշից Տեառն . Եւ միսն
եղիցի քո , որպէս կրծած [9]նուիրին եւ
19 ազին աջոյ քեզ լիցին : Ամենայն [10]ինչ հաս"
ի սրբութիւնսն զոր [11]հանիցեն Տեառն
որդիքն Իսրայելի՝ քեզ եւսու եւ [3]որդւոց
քոց եւ" ուստերաց եւ դստերաց քոց ընդ
քեզ , օրէնս յաւիտենական . քանզի ուխտ
աղի է յաւուրս Տեառն , քեզ եւ զաւակի
20 քում [12]կից քո " : Եւ խօսեցաւ Տէր ընդ
Ահարոնի եւ ասէ , Յերկրի նոցա մի ժա-
ռանգեսցես , եւ բաժին քո ընդ նոսա մի
լիցի , դի ես եմ բաժին քո եւ ժառան-
գութիւն ի մէջ որդւոցն Իսրայելի :

---

[1] ՆԵԲ· արար Մովսէս որպէս հրամայեաց Տէր, նոյնպէս արար [2] ՆԵԲ· յաղագս օծութեան [3] ՅՆԵԲ· պակաս [4] ՆԵԲ· քեզ որ ի սրբութենէ սրբութեանցն առանց հրոյ· ամենայն պատարագ նոցա յամենայն ընծայիւք [5] ՆԵԲ· վերացուածի ընծայից նոցա , մինչեւ յամենայն երեսուն [6] ՆԵԲ· պտղոցս [7] ՆԵԲ· զերախտիսն նոցա զոր տացեն Տեառն՝ [8] ՆԵԲ· այրեսցես [9] ՆԵԲ· երեսման [10] ՆԵԲ· վերացուածն [11] ՆԵԲ· վերացուացեն [12] ՆԵԲ· ընդ քեզ

21 Եւ որդւոյն Ղեւեայ ահա եռու զամե-
նայն աստանորդս Իսրայէլի ի ժառանգ-
զութիւն, փոխանակ պաշտամանն նոցա
զոր նորայն պաշտէին ի խորանին վկա-
22 յութեան։ Եւ մի եւս մերձենային որդիքն
Իսրայէլի ի խորանն վկայութեան ընդու-
23 նել գմեղս մահարերս։ Եւ պաշտեսցէ
Ղեւեացին զպաշտօն խորանին
վկայութեան, եւ նոքա տացեն զմեղս
նոցա. օրէնս յաւիտենական յազգս ի-
ւրեանց. եւ ի ժառանգութիւն ոչ
24 ժառանգեսցեն ի մէջ որդւոցն Իսրայէլի։ Զի զաս-
տանորդս որդւոցն Իսրայէլի՝ զոր [1]զա-
տուսցեն Տեառն հաս՝ եռու Ղեւեացւոյն ի ժառանգութիւն. վասն այսորիկ
ասացի նոցա թէ ի մէջ որդւոցն Իսրա-
յէլի մի ժառանգեսցեն վիճակ։
25 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
26 Եւ ընդ Ղեւեացիսն խօսեացիս եւ ասասջիս
ցնոսա, եթէ առնուցուք յորդւոցն
Իսրայէլի տասանորդս զոր եռու [2]ձեզ,
հանիցէք եւ դուք անտի հաս՝ Տեառն՝
27 դասանորդն ի տասնորդէ։ Եւ համա-
րեսցի ձեզ [3]հասն ձեր իբրեւ զցորեան ի
28 կալոյ եւ իբրեւ զգաւազ ի հնձանէ։ Այն-
պէս եւ դուք [4]հանիցէք ի հասոյ անտի՝
Տեառն, յամենայն տասանորդսդ ձերոյ
զոր առնուցուք յորդւոցն Իսրայէլի, եւ
տայցէք ի նոցանէ [3]հաս Տեառն, Ահա-
29 րոնի քահանայի. Յամենայն ուրոյն ձե-
րոյ [5]հանիցէք հաս եւ յամենայն պատուոյ՝
30 զնուիրեալն ի նմանէ։ Եւ ասասցես
ցնոսա, [6]Յորժամ հանիցէք զպատուն
ի նմանէ՝ համարեսցի Ղեւեացւոյն իբ-
րեւ զարդիւնս ի կալոյ, եւ իբրեւ զգաւազ
31 ի հնձանէ։ Եւ կերիջիք զայն յամենայն տե-
ղւոջ, դուք եւ տունք ձեր. զի վարձ
ձեր է այն, փոխանակ պաշտամանցն
32 ձերոց ի խորանին վկայութեան։ Եւ մի՛
առնուցուք վասն այսորիկ մեղս, [7]յոր-
ժամ հանիցէք զպատուն ի նմանէ զնուի-
րեալն՝ որպէսզի Իսրայէլի ոչ պղծիցէք՝
զի մի մեռանիցիք։

ԳԼ. ԺԹ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ
2 Ահարոնի եւ ասէ, Այս օրէնսդիմն է օրի-
նին զոր պատուիրեաց Տէր [8]Մովսիսի եւ
ասէ, Խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի, եւ
առցեն առ քեզ երինջ մի կարմիր անա-
բաս, յորում՝ ոչ գոյցէ րիծ ինչ, եւ ոչ
3 իցէ մատեալ ընդ լծով։ Եւ տացես զնա
ցեղիտալար քահանայի. եւ հանեցեն զնա
արտաքոյ բանակին [8]ի տեղի սուրբ՝, եւ
4 սպանցեն զնա առաջի նորա։ Եւ առցէ
Եղիազար [9]յարինէ նորա՝, եւ ցանեսցէ
յանդիման խորանին վկայութեան յարինէ
5 նորա եւթն անգամ։ Եւ այրեսցեն զնա
առաջի նորա. եւ մորթ նորա եւ միս
նորա եւ արիւն նորա հանդերձ ապա-
6 տաւն իւրով այրեսցի։ Եւ առցէ քա-
հանայն փայտ եղեւնեայ եւ զոսպայ եւ
[10]կարմիր, եւ արկցեն ի մէջ այրեցեալի
7 երինջնոյն։ Եւ ողողեսցէ զհանդերձս իւր
քահանայն, եւ լուասցէ զմարմին իւր
ջրով, եւ ապա մտցէ ի բանակն. եւ ան-
սուր լիցի քահանայն մինչեւ երեկոյ։
8 Եւ որ այրիցէն զնա՝ ողողեսցէ զհանդերձս
իւր, եւ լուասցէ զմարմին իւր ջրով,
9 եւ անսուրբ լիցի մինչեւ երեկոյ։ Եւ ժո-
ղովեսցէ այր սուրբ զմոխիր երինջնոյն, եւ
կուտասցէ արտաքոյ բանակին ի սուրբ
տեղւոջ. եւ եղիցի ժողովրդեան որդ-
ւոցն Իսրայէլի ի պահեստ ջուր սրսկման,
10 զի սրբութիւն է։ Եւ լուասցէ զմարմին
իւր որ ժողովիցէ զմոխիր երինջնոյն, եւ
ողողեսցէ զհանդերձս իւր, եւ անսուրբ
լիցի մինչեւ երեկոյ. եւ եղիցի ժո-
ղովրդեան որդւոցն Իսրայէլի եւ եկաց-
ւոյն եկելոց ի նոսա օրէնս յաւիտենական։
11 Եւ որ մերձենայցէ ի մեռեալ ամենայն
անձին մարդոյ, անսուրբ լիցի զեւթն օր։
12 Եւ սրբեսցի [11]նա յաւուրն երրորդի եւ
յաւուրն եւթներորդի, եւ ապա սուրբ
լիցի. ապա թէ ոչ սրբեսցի յաւուրն եր-
րորդի եւ յաւուրն եւթներորդի, մի լիցի
13 սուրբ։ Ամենայն որ մերձենայցէ ի մեռ-
եալ անձին մարդոյ որ մեռանիցի, եւ
ոչ սրբեսցի, զխորանն Տեառն պղծեաց,
սատակեսցի անձն այն յԻսրայէլէ. զի
ջուրն սրսկման ոչ սրսկեցաւ ի վերայ
նորա, անսուրբ է, զի պղծութիւն իւր
14 ի նմա է։ Եւ այս օրէնս իցէ մարդոյ որ

---

[1] ՅԲԲ. վերացուսցեն Տեառն վերացումն [2] ՅԲԲ. ձեզ ի նոցանէ ի ժառանգութիւն ձեր՝ յայնժամ վերացուջիք եւ դուք անտի վերացումն [3] ՅԲԲ. վերացումն [4] ՅԲԲ. վերացուջիք անտի վերացումն [5] ՅԲԲ. վերացուջիք զամենայն վերացումն Տեառն յամենայն պարարտագունից նորա, [6] ՅԲԲ. ի վերացուցանել ձեր զպարարտագունսն նորա ի նմանէ, յայնժամ [7] ՅԲԲ. յորժամ վերացուցանիցէք զպարարտագունսն նորա ի նմանէ, եւ զպղծութիւն

[8] ՅԲԲ. պահ [9] ՅԲԲ. քահանայ յարինէ նորա մատամբ [10] ՅԲԲ. որդան կարմիր [11] ՅԲԲ. նովա

մեռանիցի ի [1]տան . ամենայն որ մտա-
նիցէ ի տունն եւ որ ինչ կայցէ ի տանն՝
15 անսուրբ լիցին վեցօրն օր : Եւ ամենայն
աման բաց որ ոչ իցէ խփեալ կամ սա-
16 րեալ՝ պիղծ լիցի : Եւ ամենայն որ մեր-
ձենայցէ ընդ երեսս դաշտի ի վիրաւոր
կամ ի մեռեալ , կամ յոսկր մարդոյ կամ
17 ի գերեզման , պիղծ լիցի զեւթն օր : Եւ
առցեն [2]պղծելոյն ի մոխրոյ այրեցելոյն
սրբութեան՝ , եւ արկցեն ի վիրայ նորա
18 [3]ջուր յամանի . Եւ առցէ գոլայ , եւ
թացցէ ի ջուրն այր սուրբ , եւ ցանեսցէ
զտունըն եւ զկահիւնն եւ զամանուքն եւ
զանձամբքն որ էյնն անդ , եւ զմերձե-
ցեալն յոսկր մարդոյ կամ ի վիրաւոր կամ
19 ի մեռեալ կամ ի գերեզման : Եւ ցանեսցէ
սուրբն զպղծոնքն յաւուրն երրորդի եւ
յաւուրն եւեթներորդի , եւ [4]սրբեսցի յա-
ւուրն եւեթներորդի . եւ ողոզեսցէ զհան-
դերձս իւր , եւ լուասցէ զմարմին իւր
ջրով , եւ [5]անսուրբ լիցի մինչեւ ցերե-
20 կոյ՝ : Եւ մարդ որ պղծիցի եւ ոչ սրբես-
ցի , սատակեսցի անձն այն ի ժողովրդենէ
իւրմէ . զի զսրբութիւնն Տեառն պղծեաց ,
եւ ջուր սրբման ոչ սրբեցաւ զնմա , ա-
21 նսուրբ է : Եւ եղիցի ձեզ այն օրէնս յա-
ւիտենական , եւ որ սրբէ զջուրն սրբման
լուասցէ զձորձս իւր . եւ որ մերձենայցէ
ի ջուրն սրբման , անսուրբ լիցի մինչեւ
22 ցերեկոյ : Եւ յամենայն ինչ յոր մերձե-
նայցէ պղծեալն , անսուրբ լիցի [6]մինչեւ
ցերեկոյ՝ , եւ անձն որ մերձենայցէ ի
նա , անսուրբ լիցի մինչեւ ցերեկոյ :

Գլ . Ի

1 Եւ եկին որդիքն Իսրայելի ամենայն
ժողովրդեամբն յանապատն [7]Սինայի , յա-
ռաջնում ամսեանն . եւ բանակեցաւ ժո-
ղովուրդն ի Կադէս . եւ վախճանեցաւ
անդ Մարիամ , եւ անդ թաղեցաւ :
2 Եւ ոչ ղոյր անդ ջուր ըմպելոյ ժո-
ղովրդեանն . եւ կուռեցան ի վերայ Մով-
3 սեսի եւ Ահարոնի : Եւ բամբասեաց ժո-
ղովուրդն զՄովսէս եւ ասեն , Լաւ էր
թէ մեռեալ էաք ի կորստեան եղբարց
4 մերոց առաջի Տեառն . Եւ ընդէր ածէք
զժողովուրդս Տեառն յայս անապատ՝ կո-
5 տորել զմեզ եւ զանասունս մեր : Եւ ընդ-

զէր հանէք զմեզ յերկրէն Եգիպտացւոց՝
դալ ի տեղիս յայս չար , ի տեղի ուր ոչ
սերմն սերմանի , եւ ոչ [8]սեւսենիք , եւ ոչ
այգիք , եւ ոչ նռնենիք . եւ ոչ ջուր զոյ
6 ըմպելոյ : Եւ մաին Մովսէս եւ Ահարոն
յերեսաց ժողովրդեանն ի դուռն խորանին
վկայութեան , եւ անկան ի վերայ երե-
սաց իւրեանց . եւ երեւեցան փառքն
Տեառն ի վերայ նոցա :
7 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ա-
8 սէ , Առ դու զգաւազանդն , եւ եկեղեցայս
զժողովուրդն դու եւ Ահարոն եղբայր
քո . եւ խորհեսջիք ի վերայ վիմին
յանդիման նոցա , եւ ասցէ զջուրս իւր .
եւ [9]հանիցէք նոցա ջուր ի վիմէ անտի ,
եւ [10]արբուսցիք ժողովրդեանն եւ անաս-
9 նոց նոցա : Եւ առ Մովսէս զգաւազանդն
[11]յանդիման Տեառն , որպէս հրամայեաց
10 նմա Տէր : Եւ ժողովեցին Մովսէս եւ Ա-
հարոն զժողովուրդն հանդէպ վիմին , եւ
ասէ ցնոսա , Լուարուք ինձ , անհաւանք ,
միթէ ի վիմէ՞ս յայմանէ հանիցեմք ձեզ
11 ջուր : Եւ ամբարձեալ Մովսէս զձեռն
իւր՝ հար զվէմն գաւազանաւն երկիցս
անգամ . եւ ել ջուր բազում , եւ արբ
ժողովուրդն եւ անասունն նոցա :
12 Եւ ասէ Տէր ցՄովսէս եւ ցԱհարոն ,
Փոխանակ զի ոչ հաւատացէք դուք ինձ՝
սուրբ առնել զիս առաջի որդւոցն Իս-
րայելի , վասն այդորիկ ոչ առնիցէք դուք
զժողովուրդդ յերկիրն զոր ետու զոյս :
13 Այն է Ջուր [12]բամբասանաց . զի բամ-
բասեցին որդիքն Իսրայելի առաջի՝
Տեառն , եւ սրբեցաւ ի նոսա :
14 Եւ առաքեաց Մովսէս հրեշտակս ի
կապեստ առ արքայն Եդոմայ եւ ասէ ,
Այսպէս ասէ եղբայր քո Իսրայէլ . Դուք
ինքներն գիտեա զամենայն աշխատութիւնս
15 որ պատն զմեզ . Եւ սրպէս իջին հարքն
մեր յԵգիպտոս , եւ պանդխտեցաք յԵ-
գիպտոս աւուրս բազումս . եւ չարչա-
րեցին զմեզ եգիպտացիքն եւ զհարսն
16 մեր : Եւ բազձեցաք առ Տէր , եւ լուաւ
Տէր ձայնի մերում . եւ առաքեալ հրեշ-
տակ՝ հանն զմեզ յեգիպտոսէ . եւ արդ
եմք մեք ի կադէս քաղաքի , ի կողմն մի
17 սահմանաց քոց . Եւ արդ անցցուք ընդ
երկիր քո . եւ ոչ անցցուք ընդ անդս

[1] Տուն բառէ՝ խմ վրան, այոպէս և ի Դեւտ [2] ՔԲԲ· վասն պղծելոյն ի մեռելոյ այրեցելոյն որ վասն մեռելոց [3] ՔԲԲ· Ջուր կենդանի [4] ՔԲԲ· սրբեսցէ զնա [5] ՔԲԲ· սուրբ լիցի յերեկոյին [6] ՅՔԲԲ· պակաս [7] ՔԲԲ· ի Սին

[8] ՔԲԲ· թզենիք [9] ՔԲԲ· հանցես [10] ՔԲԲ· արբուսցես [11] ՔԲԲ· յերեսաց [12] ՔԲԲ· Մերիպայ, այլեւն՝ հակառակութեան, որով հակառակեցան որդիքն Իսրայելի ընդդէմ

[1]քո , եւ ոչ ընդ այլոս [1]քո , եւ ոչ արբ-
ցուք ջուր ի ջրհորոց [1]քոց . ճանապարհն
զարքունի գնասցուք , ոչ խոտորեսցուք
յաջ կամ յահեակ , մինչեւ անցցուք զսա
18 սահմանս քո : Եւ ասէ ցնա Եդոմ , Մի՛
անցցես ընդ իս , զի թէ ոչ՝ [2]պատե-
19 բազմաւ ելից ընդդէմ քո : Եւ ասեն ցնա
որդիքն Իսրայելի , [3]Այս լեռնամբք՝ անց-
ցուք . եւ եթէ արիացուք ի ջուրց քումմէ
ես եւ խաչինք իմ , տացուք քեզ զգինս .
[4]արդ այլինչ են իրիդ , անցցուք առ լե-
20 բամբրզ՝ : Եւ նա ասէ , Ոչ անցցես ընդ
իս . եւ ել Եդոմ ընդդէմ նոցա ծանր սմա-
21 բոխիւ եւ հզօր ձեռամբ : Եւ ոչ կամեցաւ
Եդոմ տալ անց Իսրայելի ընդ սահմանս
իւր . եւ խոյս ետ Իսրայէլ ի նմանէ :
22 Եւ չուեցին ի Կադեսայ , եւ եկին որ-
դիքն Իսրայելի ամենայն ժողովրդեամբն
23 ի Հովր լեառն : Եւ խօսեցաւ Տէր ընդ
Մովսէսի եւ ընդ Ահարոնի ի Հովր լե-
ռինն , ի սահմանս երկրին Եդոմայեցւոց ,
24 եւ ասէ , Յաւելցի Ահարոն առ ժողովուրդ
իւր , զի մի մասցէ յերկիրն զոր ետու
որդւոցն Իսրայելի . քանզի [5]բարկացու-
ցէք զիս ի վիրայ Ջուրցն բամբասանացդ՝ :
25 Առ գուա զԱհարոն եւ զեղբայր զորսի
նորա , եւ տան զնոսա ի Հովր լեառն
26 [1]յանգիման ամենայն ժողովրդեանն՝. Եւ
մերկացո զԱհարոնէ զպատմուճան նորա ,
եւ զգեցուսցես եղբաւրեւ որդւոյ նո-
րա . եւ Ահարոն յաւելցի մեռցի անդ :
27 Եւ արար Մովսէս որպէս եւ հրամայեաց
նմա Տէր . եւ [6]ելան զնան՝ ի Հովր լեառն
28 առաջի ամենայն ժողովրդեանն : Եւ մեր-
կացոյց[7] զԱհարոնէ զնանգեղձս նորա ,
եւ զգեցոյց զնոսա եղբաւրեւ որդւոյ
նորա . եւ մեռաւ Ահարոն ի գլուխ լե-
ռինն . եւ իջին Մովսէս եւ Եղիազարոս ի
29 լեառնէ անտի : Եւ ետես ամենայն ժողո-
վուրդն թէ վախճանեցաւ Ահարոն , եւ
լացին զԱհարոն զերեսուն օր ամենայն
տունն Իսրայելի :

Գլ . ԻԱ

4 Եւ լուաւ [8]Քանանացին արքայն Արա-
դայ որ բնակեալ էր [9]առ անապատաւն՝ ,
եթէ եկն Իսրայէլ զճանապարհն Աթա-
րինայ , եւ ետ պատերազմ ընդ Իսրայելի ,
2 եւ առ ի նոցանէ գերի : Եւ ուխտեաց
Իսրայէլ ուխտ Տեառն եւ ասէ , Եթէ
մատնեսցես ընդ ձեռամբ իմով զազգն
զայն , [10]նզովեցից [1]զնա եւ՝ զքաղաքս
3 նորա : Եւ լուաւ Տէր ձայնի Իսրայելի ,
եւ մատնեաց զՔանանացին ի ձեռս նորա .
եւ նզովեաց զնա եւ զքաղաքս նորա . եւ
կոչեաց զանուն անդրն անդորիկ Նզովս :
4 Եւ չուեալ ի Հովր լեռնէ ընդ ճանա-
պարհ Կարմիր ծովուն՝ պատեցան զԵ-
դոմաս . եւ [11]յոգնեցաւ ժողովուրդն՝ ի
5 ճանապարհին : Եւ բամբասեաց ժողո-
վուրդն զԱստուած եւ զՄովսէս եւ ասեն ,
Ընդէ՞ր հաներ զմեզ յԵգիպտոսէ կտորել
զմեզ յանապատս յայսմիկ . զի ոչ գոյ
հաց եւ ոչ ջուր . եւ անձինք մեր տագա-
6 կացեալ են ի մտոյժ հացէս : Եւ առա-
քեաց Տէր ի ժողովուրդն օձս [12]կոտորիչս ,
եւ հարկանէին զժողովուրդն . եւ մեռաւ
ժողովուրդ բազում յորդւոցն Իսրայելի :
7 Եւ եկին առ Մովսէս եւ ասեն , Մեզաք
զի խօսեցաք չար զՏեառնէ եւ զքէն .
արդ կաց յաղօթս առ Տէր , եւ բարձցէ
ի մէնջ զօձսգ . եւ եկաց Մովսէս յաղօթս
8 [1]առ Տէր՝ վասն ժողովրդեանն : Եւ ասէ
Տէր ցՄովսէս , Արա դու քեզ [13]օձ , եւ
դիցես գնա ի վերայ նշանակի . եւ եղիցի
յորժամ հարկանիցէ օձ զմարդ , ամենայն
9 օձանաւր որ անսանիցէ գնա՝ կեցցէ : Եւ
արար Մովսէս օձ պղնձի , եւ կացոյց
գնա ի վերայ նշանակին . եւ լինէր՝ յոր-
ժամ հարկանէր օձ զմարդ , հայէր ընդ
օձն պղնձի եւ կեայր :
10 Եւ չուեցին որդիքն Իսրայելի եւ եկին
11 բանակեցան յԻրոսվթ : Եւ չուեալ յԻրոս-
վթայ բանակեցան յԱբեզգայիլ յայսկոյս
անապատին որ է յանդիման Մովաբայ
12 յարեւելից կողմանէ : Անտի չուեցին եւ
բանակեցան ի ձորն Զարեդ :
13 Եւ անտի չուեալ բանակեցան յայս-
կոյս Առնովնայ յանապատին՝ առ ելիւք
սահմանացն Ամովրհացւոց . քանզի Առ-
նովն սահման է Մովաբացւոց , ընդ Մո-
14 վաբայնն եւ ընդ Ամովրհայնն : Վասն
այնորիկ ասի [14]ի գրբ , Պատերազմ Տեառն ,
Զ,Զոհոր հրձիգ արար եւ գձորն Առնովն

[1]3ԵԲԸ. գԻ—ոՒ [2]ԵԲԸ. սրով [3]ԵԲԸ. Ընդ սլոգ-
ասին [4]ԵԲԸ. ոչ այլ ինչ անցից սակաւ իմով
[5]ԵԲԸ. Հեատեցէք բանի իմում ի վերայ Ջուրցն
Մերիպայ (Հակառակութեան) [6]ԵԲԸ. ելին
[7]ԵԲԸ.ԲՈՅՒ. յաՒԵԼԸ , Մովսէս [8]Կամ, Քանանեա
[9]ԵԲԸ. ի հարաւակողմանի

[10]Կամ, աւերեցից , սլոգես և ի հերետ : [11]ԵԲԸ.
կարճամտեցաւ անձն ժողովրդեանն [12]ԵԲԸ. կիզիչս
[13]ԵԲԸ. օձ կիզիչ [14]ԵԲԸ. ի գիրս պատերազմաց
Տեառն. Զ,ահէպ ի Սուփա, և զձորան Առնովնայ,
(15) Եւ հեղեղք ձորոց որ գնան ի բնակութիւնս
երայ, և հասանեն ի սահմանս Մովաբու

15 Նայ, եւ հասաատեաց զձորան բնակեալս
յէր, որ առընթեր կայ սահմանագիծ մո-
վաբու"։
16 Եւ անտի գան գնա Զրհորն, այն ի՝
Զրհորն զորմէ ասաց Տէր ցՄովսէս, Ժո-
ղովեա զժողովուրդն եւ տաց նոցա ջուր
17 ըմպելոյ։ Յայնժամ օրհնեաց Իսրայէլ
զօրհնութիւնս [1]զայս ի վերայ Զրհորին.
18 Նուագեցէք նմա. Զհրհորն զոր իշխանք
փորեցին, եւ տաչկունն գնա թագաւորք
ազգաց ի թագաւորութիւնն իւրեանց եւ
ի տիրել իւրեանց"։
19 Եւ [2]ի Զրհորոյ անտի ի Մանթանին, եւ
ի Մանթանինայ ի Մանայէլ, եւ ի Մանա-
20 յելէ ի Բամոթի, եւ [3]ի Բամոթիայ կնաա-
յէն, որ է ի դաշտին Մովաբայ, ի կատար
կոփածուին՝ որ նայի ընդ անապատն։
21 Եւ առաքեաց [4]Մովսէս հրեշտակս առ
արքայն Ամովրհացւոց բանիւք խաղա-
22 ղութեան եւ ասէ, Անցցուք ընդ երկիր
քո. զձանապարհայն գնացուք," ոչ խո-
տորեցուք՝ ոչ յանդս եւ ոչ յայգիս, եւ
ոչ արբցուք ջուր ի Զրհորոյ քոյ. ճա-
նապարհ զարքունի գնացուք մինչեւ
23 անցցուք բոլ սահմանս քո։ Եւ ոչ եա
Սեհոն անցանել Իսրայէլի ընդ սահմանս
իւր. եւ ժողովեաց Սեհոն զամենայն
ժողովուրդն իւր, եւ ել առ պատերազմ
ընդ Իսրայէլ յանապատին. եւ եկն ի
Յասսա եւ եա պատերազմ ընդ Իսրայէլի
24 եւ եհար գնա Իսրայէլ կոտորմամբ սրոյ,
եւ տիրեցին երկրի նորա յԱռնովնայ մին-
չեւ ցՅաբոկ, մինչեւ ցորդիան Ամմոնայ.
զի [5]Յաղեր է սահման" որդւոցն Ամո-
25 նայ։ Եւ առ Իսրայէլ զամենայն քա-
ղաքան զայնոսիկ. եւ բնակեցաւ Իսրա-
յէլ յամենայն քաղաքս Ամովրհացւոց,
յԵսեբոն եւ յամենայն արուարձանեայս
26 նորա. Քանզի Եսեբոն էր քաղաք Սե-
հոնի արքայի Ամովրհացւոց. եւ նա նախ
եա պատերազմ ընդ արքային Մովաբու,
եւ առ զամենայն երկիրն [6]նորա յԱրա-
27 յեր" մինչեւ ցԱռնոն։ Վասն այնորիկ
ասեն ամենայն առակարկուք. Եկայք

[1] ԵՔԲ. զայս. Բղխեաց, ով Զրհոր. Նուագեցէք նմա. (18) Զրհոր՝ զոր փորեցին իշխանք, փո-
րեցին գնա մեծամեծք ազգին գաւազանաւ
իւրեանց՝ հրամանաւ օրէնսդրին [2]ԵՔԲ. յամա-
պատ [3]ԵՔԲ. ի Բամոթիայ ի հովիտն որ է ի
դաշտին Մովաբայ, ի կատար Փասգայի [4]ԵՔԲ.
Իսրայէլ հրեշտակս առ Սեհոն արքայ Ամովրհաց-
ւոց եւ ասէ, (22) Անցից ընդ երկիր քո. [5]ԵՔԲ.
ամուր էին սահմանք [6]ԵՔԲ. ի ձեռաց նորա

յեսեբոն. զի [7]չինեցաւ, եւ հանդերձե-
28 ցաւ" քաղաքն Սեհոնի. Զի հուր ել յես-
եբոնայ եւ բոց ի քաղաքէն Սեհոնի,
եւ եկեր մինչեւ [8]ցՄովաբ, եւ լափեաց
29 զարձանան Առնովնայ։ Վայ քեզ, Մո-
վաբ, կորեար. ժողովուրդ Քամովսայ,
մատնեցան ուսանելք նորա ի փախուստ,
եւ գաւակք նորա ի գերութիւն թագա-
30 ւորին [9]Ամովրհացւոց. Եւ զաւակ նոցա
սատակեսցի յեսեբոնէ մինչեւ ցԴեբոն.
եւ կանայք նոցա բորբոքեցան հրով ի
վերայ Մովաբու"։
31 Եւ բնակեաց Իսրայէլ [10]յամենայն քա-
32 ղաքս" Ամովրհացւոց։ Եւ առաքեաց
Մովսէս լրտեսել զՅազեր. եւ առին զնա
եւ զաւանս նորա, եւ հանին զԱմովրհա-
ցին որ բնակեալ էր ի նմա։
33 Եւ կրկնեցան ելին ընդ ճանապարհն
ի Բասան. եւ ել Ովգ թագաւոր Բասա-
նու ընդդէմ նոցա, եւ սմենայն ժողո-
վուրդն նորա ի պատերազմ յեղբայրն։
34 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Մի երկնչիր ի
նմանէ. զի ի ձեռս քո մատնեցի զնա
եւ զամենայն ժողովուրդն նորա, եւ
զամենայն երկիր նորա. եւ արասցես
ընդ նա որպէս արարեր ընդ Սեհոն ար-
քայ Ամովրհացւոց որ բնակեալ էր յես-
35 բոն։ Եւ եհար զնա եւ զորդիս նորա եւ
զամենայն ժողովուրդն նորա, մինչեւ
ամենեւին չմնայր ի նմանէն ապրեալ.
եւ ժառանգեցին զերկիրն նորա։

ԳԼ. ԻԲ

1 Եւ չուեալ որդւոցն Իսրայէլի բանա-
կեցան [11]յարեւմտից Մովաբու առ Յոր-
դանանաւ յանդիման երիքովի։
2 Եւ տեսեալ Բազակայ որդւոյ Սեպ-
փովրայ զամենայն զոր արար Իսրայէլ
3 ընդ Ամովրհացին, երկեաւ Մովաբ յոյժ
ի ժողովրդենէ անտի, զի բազում էին.
եւ զանգիստեաց Մովաբ յերեսաց որդ-
ւոցն Իսրայէլի։ Եւ ասէ Մովաբ ցծերա-
կայսն Մադիամու, Արդ լիզանիէ ժողո-
վուրդս այս զամենայն որ չորջ զմեզ
գան, որպէս լիզանիցէ արջառ զդեզ գալար
ի գաշտի։ Եւ Բազակ որդի Սեպփովրայ
էր արքայ Մովաբու ի ժամանակին յայն-

[7] ԵՔԲ. չինեցի եւ հանդերձեցի [8]ԵՔԲ. ցԱրն
Մովաբու [9]ԵՔԲ. Ամովրհացւոց, Սեհոնի. (30)
Հարաբ գնասա նեսուբ. Նսեբան կորեաւ մինչեւ
ցԴիբան, եւ սատեքեցաք գնասա մինչեւ ի Նոբա
որ առ Մեդաբայ [10]ԵՔԲ. յերկիրն [11]ԵՔԲ.
յԱբաթովմ (ի դաշտս)

5 միկ ։ Եւ առաքեաց հրեշտակս առ Բա-
զաամ որպի Բէովրայ՝ առ Փաթուրն , որ
էր առ գետեզերբ երկրին որդւոց ազ-
գին իւրոյ , կոչել զնա եւ ասել , Ահա
ազգ ել յեգիպտոսէ , եւ ծածկեաց զե-
րեսս երկրի , եւ նստաւ սա մօտ առ իս .
6 Եւ արդ ել անէծ զսա ինձ զժոգովուրդս
զայս . զի զօրագոյն քան զիս է սա .
թերեւս կարասցուք հարկանել ի սոցա-
նէ , եւ հանից զսա յերկրէ իմմէ . քան-
զի գիտեմ թէ զոր օրհնես դու՝ օրհնեալ
է , եւ զոր անիծանես՝ անիծեալ ։
7 Եւ գնացին ծերակուտն Մովաբու եւ
ծերակուտն Մադիամու , եւ ըզձուխքիւնք
ի ձեռս նոցա . եկին առ Բաղաամ , եւ
առացին նմա զպատգամսն Բաղակայ ։
8 Եւ ասէ ցնոսա , Այսարուք աստ զայս
գիշեր , եւ արարից ձեզ պատասխանի
իրացդ ինչ զոր Տէր խօսեսցի ընդ իս .
եւ սպան իշխանքն Մովաբու առ Բա-
9 զաամու ։ Եւ եկն Աստուած առ Բաղաամ
եւ ասէ ցնա , Զի՞ են արք դոքա առ
10 քեզ ։ Եւ ասէ Բաղաամ ցԱստուած , Բա-
զակ որդի Սեպփովրայ արքայ Մովաբու
11 առաքեաց զքոսա առ իս եւ ասէ , Ահա
ազգ ել յեգիպտոսէ եւ ծածկեաց զերեսս
երկրի , [1]եւ նստաւ սա մօտ առ իս .՚՚ արդ
եկ անէծ զսա զոսոսա ինձ , թերեւս կա-
րացից հարկանել զսա եւ հանից զսա
12 յերկրէ իմմէ ։ Եւ ասէ Աստուած ցԲա-
զաամ , Մի երթայր ընդ նոսա , եւ մի՛
անիծանիցես զժողովուրդն , քանզի օրհ-
13 նեալ է ։ Եւ յարուցեալ Բաղաամ ընդ
առաւօտն , ասէ ցիշխանսն Բաղակայ ,
Գնացէք անդրէն առ տէրն ձեր . զի ոչ
14 թողու զիս [2]Աստուած գալ ընդ ձեզ ։ Եւ
յարուցեալ իշխանքն Մովաբու եկին առ
Բաղակ եւ ասեն , Ոչ կամեցաւ Բա-
զաամ գալ ընդ մեզ ։
15 Եւ յաւել առաքել Բաղակ իշխանս բա-
զումս եւ պատուականագոյնս քան զնո-
16 սա ։ Եկին առ Բաղաամ եւ ասեն ցնա ,
Այսպէս ասէ Բաղակ Սեպփովրեան , Ա-
զաչեմ զքեզ , մի դանդաղիցես գալ առ
17 իս . Զի պատուհասով պատուհասից զքեզ ,
եւ զոր ինչ ասիցես արարից քեզ . եւ արդ
18 եկ անէծ ինձ զժողովուրդս զայս ։ Պա-
տասխանի ետ Բաղաամ եւ ասէ ցիշխանսն
Բաղակայ , Եթէ տացէ ինձ Բաղակ լի
տամբ իւրով արծաթ եւ ոսկի , ոչ կա-
րացից անցանել զբանիւ Տեառն [3]Աստու-
ծոյ՝ առնել զնա փոքր կամ մեծ մօտ
19 իմովք՚՚ ։ Եւ արդ աղերսք [4]զքեզ աստ
զգիշերս զայս , եւ գիտացից զինչ յաւելցէ
20 Տէր խօսել ընդ իս ։ Եւ եկն Աստուած
առ Բաղաամ ի գիշերին եւ ասէ ցնա ,
Եթէ կոչել զքեզ եկեալ են արքդ այդո-
քիկ , արի երթ գնոսին դոցա . բայց զբանն
զոր ես խօսեցայց ընդ քեզ՝ զայն արասցես։
21 Եւ յարուցեալ Բաղաամ ընդ առաւ-
օսն հանդերձեաց զէշ իւր , եւ գնաց
22 ընդ իշխանսն Մովաբու ։ Եւ բարկացաւ
սրտմտութեամբ Աստուած ընդ երթալն
նորա . եւ եկաց հրեշտակ [5]Աստուծոյ լի-
նել նմա բանսարկու . եւ նա հեծեալ էր
ի վերայ իշոյ իւրոյ , եւ երկու պատա-
23 նիք նորա ընդ նմա ։ Եւ տեսեալ իշուն
զհրեշտակ [6]Աստուծոյ զի կայր նմա ընդդի-
ման ի ճանապարհին , եւ սուսեր մերկ
ի ձեռին իւրում , խոյանայ էշն ի ճանա-
պարհէն եւ երթայր ընդ դաշտն . եւ եւ
նար [7]գաւազանաւ զէշն ուղղել զնա ի
24 ճանապարհն ։ Եւ եկաց հրեշտակն [6]Աս-
տուծոյ յառուամէջս այգեացն . եւ էր
25 ցանդ ասաի՝ եւ ցանդ անտի ։ Եւ տեսեալ
իշուն զհրեշտակն [6]Աստուծոյ՝ նեղեաց
զինքն ընդ սրինն եւ ճմլեաց զոտն Բա-
զաամու . եւ յաւել եւս հարկանել զնա ։
26 Եւ յաւել հրեշտակն [6]Աստուծոյ երթալ
կալ ի նեղ անզօջ ուստի ոչ գոյր խուս-
27 սակ կամ յահեակ ։ Եւ տեսեալ իշուն
զհրեշտակն [6]Աստուծոյ , նստաւ ընդ Բա-
զաամու . եւ բարկացաւ Բաղաամ , եւ
28 հնար զէշն պատգամաւն ։ Եւ ետ բաց
[2]Աստուած զբերան իշուն , եւ ասէ ցԲա-
զաամ , Զինչ արարի քեզ զի հարեր զիս
29 այս երիցս անգամ ։ Եւ ասէ Բաղաամ
ցէշն , Փոխանակ զի խաղ արարեր զիս ,
եւ երթ էր սուր ի ձեռին իմում , արդ
30 եւ խոցեալ էր իմ քեզ ։ Եւ ասէ էշն
ցԲաղաամ , Մի՞ ես այն էշ եմ քո յորում
հեծանէիր ի մանկութենէ քումմէ մին-
չեւ ցայսօր ժամանակիս . միթէ յուլա-
նալով յուլայայ ինչ երբեք առնել քեզ
31 այսպէս . եւ նա ասէ , Ոչ ։ Եւ եւրաց [2]Աս-
տուած զաչս Բաղաամու , եւ եհաս
հրեշտակն Տեառն ընդիմեալ նմա ի ճա-
նապարհին , եւ սուսեր մերկ ի ձեռին
իւրում . եւ անկեալ ի վերայ երեսաց

[1] 6նբբ. պ-ւ-ե [2] նբբ. Տէր

[3] նբբ. Աստուծոյ իմով առնել փոքր կամ մեծ
[4] նբբ. զքեզ եւս [5] նբբ. Տեառն ի ճանապարհին
[6] նբբ. Տեառն [7] նբբ. Բաղաամ

32 իւրոց երկիր եպագ նմա ։ Եւ ասէ ցնա հրեշտակն [1]Աստուծոյ , Ընդէ՞ր հարեր դու զէշդ այս երիցս անդամ . եւ ահա ելի ես ի բանսարկուիլն քեզ . զի ոչ է
33 ճանապարհդ քո ուղիղ առաջի իմ . Եւ տեսեալ զիս իշոյդ՝ խուսափեալ յինէն այս երիցս անդամ . եւ եթէ չէր խուսաւիեալ յինէն , արդ իմ զքեզ սպանեալ
34 էր , եւ զդա ապրեցուցեալ ։ Եւ ասէ Բաղաամ ցհրեշտակն Տեառն , Մեղայ , զի ոչ գիտէի թէ դու ինձ ընկիճեալ կայցես ի ճանապարհին . եւ արդ՝ եթէ չիցէ
35 քեզ հաճոյ , դարձայց անդրէն ։ Եւ ասէ հրեշտակն [1]Աստուծոյ ցԲաղաամ , Երթ դու ընդ արսդ ընդ այդոսիկ , բայց բանի զոր ես ասացից քեզ , այնմ զդոյչ լինիջիր խօսելոյ . եւ գնաց Բաղաամ ընդ իշխանան Բաղակայ ։
36 Եւ լուեալ Բաղակայ եթէ գայ Բաղաամ , ել նմա ընդ առաջ ի քաղաքն Մովաբու որ է ի սահմանս Առնոնայ յե-
37 զեր մխում սահմանացն ։ Եւ ասէ Բաղակ ցԲաղաամ , Ո՞չ առաքեցի առ քեզ կոչել զքեզ . ընդէ՞ր ոչ գայիր առ իս . որպէս թէ ոչ էի արդեւք կարող պատ-
38 տուել զքեզ ։ Եւ ասէ Բաղաամ ցԲաղակ , Ահաւասիկ եկի առ քեզ . արդ կարո՞ղ իցեմ խօսել բան ինչ , բայց եթէ զոր արկանիցէ Աստուած ի բերան
39 իմ զայն խօսեցայց ։ Եւ գնաց Բաղաամ ընդ Բաղակայ , եւ [2]եկին ի քաղաքս
40 հանդրուանացն՝ ։ Եւ եղեն Բաղակ արջառս եւ ոչխար , եւ առաքեաց Բաղաամու եւ իշխանացն որ ընդ նմա էին ։
41 Եւ իբրեւ այգ եղեւ , առեալ ընդ իւր Բաղակայ զԲաղաամ եհան զնա [3]յարձանն Բահաղու , եւ եցոյց նմա անտի զմասն ինչ ժողովրդեանն ։

Գլ. ԻԳ

1 Եւ ասէ Բաղաամ ցԲաղակ , Շինեա ինձ աստ եւթն բագին , եւ պատրաստեա ինձ
2 աստ եւթն զուարակ եւ եւթն խոյ ։ Եւ արար Բաղակ որպէս եւ ասաց նմա Բաղաամ , եւ եհան՝ զուարակ եւ խոյ ի բա-
3 զին ։ Եւ ասէ Բաղաամ ցԲաղակ , Կաց ի վերայ զոհիդ քո , եւ ես երթայց , թե-
[4]ւեւս յայտնեսցի ինձ [5]Աստուած ընդ առաջ եկեալ . եւ բան զոր ցուցցէ ինձ՝

[1] ԵՔԲ. Տեառն [2] ԵՔԲ. եկին ի Կարիաթ Հուսովէ
[3] ԵՔԲ. ի բարձունսն [4] ԵՔԲ. յայելեն յաելս , Բաղակ եւ Բաղաամ [5] ԵՔԲ. Տէր

պատմեցից քեզ ։ [6]Եւ եկաց Բաղակ ի վերայ զոհին իւրոյ . եւ գնաց Բաղաամ հարցանել զԱստուած ." եւ երթայր [7]ուղ-
4 ղորդ ։ Եւ երեւեցաւ Աստուած Բաղաամու . եւ ասէ ցնա Բաղաամ , եւթն բագին պատրաստեցի , եւ հանի զուարակ եւ խոյ
5 ի բագին մի ։ Եւ արկ [5]Աստուած բան ի բերան Բաղաամու եւ ասէ , Դարձիր առ Բաղակ , եւ այսպէս խօսեսցիս ։ Եւ
6 դարձաւ առ նա . եւ նա կայր ի վերայ [8]ողջակիզացն իւրոց՝ ։ եւ ամենայն իշ-
7 խանքն Մովաբացւոց ընդ նմա ։ Եւ [6]ա-ռնու Հոգի Աստուծոյ ի վերայ նորա եւ՝ ամփարձեալ զառակս իւր ասէ , Ի Միջա-գետաց կոչեաց զիս Բաղակ արքայ Մո-
8 վաբացւոց , ի լերանցն արեւելից , եւ ասէ , Եկ նզովեա դու ինձ զՅակոբ , եւ
9 եկ անէծ ինձ զԻսրայէլ ։ Զինչ նզովեցից՝ զոր ոչ նզովէ Աստուած , կամ զինչ անիծից՝ զոր ոչ անիծանէ Տէր . Զի ի
10 լերանց տեսի զնա , եւ ի բլրոց [6]յառ-ջագոյն հայեցայ ի նա . եւ ահա ժողո-վուրդ լինակեսցէ առանձինն , եւ ընդ
11 ազգս մի՛ համարեսցի ։ [9]Ո՞՛ ճչգրտեաց զղաւաակն՝ Յակորայ , եւ ո՞ համարեսցի [10]զդաւնդան Իսրայելի . մեռցի անձն իմ [11]ընդ անձինս արդարոցն , եւ եղիցի զա-ւակ իմ իբրեւ զզաւակ նոցա՝ ։
12 Եւ ասէ Բաղակ ցԲաղաամ , Զինչ զործեսկեր ընդ իս . [12]յանիծանել թշնա-մեայ՝ կոչեցի զքեզ , եւ դու օրհնեցեր
13 օրհնութիւն ։ Եւ ասէ Բաղաամ ցԲաղակ , Ո՞չ ապաքէն զինչ արկանիցէ [5]Աստուած ի բերան իմ՝ զայն զգուշացայց խօսել ։
14 Եւ ասէ ցնա Բաղակ , Եկ զարձեալ ընդ իս յայլ տեղի , ուստի [6]ոչ տեսա-նիցես զնա , այլ զմասն ինչ ի նմանէ տեսանիցես , եւ զամենեսեան ոչ տեսա-
15 նիցես . եւ անէծ ինձ զնա անտի ։ Եւ առ գնաց զնա յագարակս դիտանոցին , ի կատար [13]կոփածոյին , եւ չինեաց անդ եւթն բագին , եւ եհան զուարակ եւ խոյ
16 ի բագին ։ Եւ ասէ Բաղաամ ցԲաղակ՝ ։ Եւ [14]հարցանել զԱստուած՝ ։ Եւ ընդ առաջ եղեւ [5]Աստուած Բաղաամու , եւ արկ բան ի բերան նորա , եւ ասէ , Դարձիր

[6] ՅԵՔԲ. գ-ն-ա [7] ԵՔԲ. ի բլուր մի [8] ԵՔԲ. ողջակիզին իւրոյ [9] ԵՔԲ. Ո՞ կարիցէ Թուել զփո-շին [10] ԵՔԲ. զչորրորդն [11] ԵՔԲ. զմահ արդարոց, և եղիցի վախճան իմ իբրև զնոցայն [12] ԵՔԲ. անիծանել զիշնամիս իմ [13] ԵՔԲ. Փսա-գայի [14] ԵՔԲ. ընդ առաջ անդր

անդրէն առ Բաղակ , եւ այսպէս խօսեաց-
17 ցիս ։ Եւ դարձաւ առ նա . եւ նա կայր
ի վերայ ողջակիզին իւրոյ , եւ ամենայն
իշխանքն Մովաբացւոց ընդ նմա . եւ
ասէ ցնա Բաղակ , Զինչ խօսեցաւ Տէր ։
18 Եւ ամբարձեալ զառակս իւր ասէ , Արի
Բաղակ եւ լուր . ունկն դիր [1]վկայդ՝ որ-
19 դիդ Սեպփովրայ ։ Ոչ իբրեւ զմարդ է
Աստուած [2]ի գարհնուլ , եւ ոչ իբրեւ
զորդի մարդոյ [3]ի սպառնալ . դու ասա-
ցեր թէ ոչ՞ արասցէ , [4]խօսեսցի եւ ոչ՞
20 կացուսցէ ։ Ահա՝ յօրհնել առեալ եմ .
21 [5]օրհնեցից եւ ոչ դարձուցից ։ Ոչ [6]լիցի
աչխատութիւն ի Յակոբ . եւ մի երե-
ւեսցի վաստակ՞ ի մէջ Իսրայելի . Տէր
Աստուած նորա ընդ նմա . [7]փառաւո-
22 րութիւնք իշխանաց՞ ի նմա ։ Եւ Աս-
տուած որ հնոյս զնոսա յերկրպատուէ՝ իբ-
րեւ փառք միեղջիւրու ի վերայ նորա ։
23 Զի ոչ գոն հմայք ի Յակոբ , եւ ոչ ըզ-
ձութիւնք ի մէջ Իսրայելի . ըստ ժա-
մանակի պատմեսցի Յակոբայ եւ Իսրա-
յելի , զինչ [8]կատարելոց իցէ՞ Աստուած ։
24 Ահա ժողովուրդն իբրեւ զկորիւն առիւ-
ծու յարիցէ , իբրեւ զառիւծ նագեսցի .
եւ ոչ ննջիցէ , մինչեւ կերիցէ որս եւ
զարիւն վիրաւորացն արբցէ ։
25 Եւ ասէ Բաղակ ցԲաղաամ , Մի՛ անիւ-
ծանելով անիծաներ ինձ գնա , եւ մի՛ օրհ-
26 նելով օրհնեսցես գնա ։ Պատասխանի ետ
Բաղաամ եւ ասէ ցԲաղակ , Ո՞չ խօսեցայ
ընդ քեզ բանս եւ ասեմ , Թէ Զոր ինչ
խօսեսցի ընդ իս [9]Աստուած՝ զայն արարից։
27 Եւ ասէ Բաղակ ցԲաղաամ , Եկ տա-
րայց զքեզ յայլ տեղի , Թերեւս հաճոյ
լիցի Աստուծոյ , եւ անիծանիցես ինձ
28 գնոսա անտի ։ Եւ տարաւ Բաղակ զԲա-
ղաամ ի կատարն Փոգովրայ որ [10]ձգի յա-
29 նապատն՝։ Եւ ասէ Բաղաամ ցԲաղակ ,
Շինեա ինձ աստ եւթն բագին , եւ պատ-
րաստեա ինձ աստ եւթն զուարակ եւ
30 եւթն խոյ ։ Եւ արար Բաղակ որպէս եւ
ասաց նմա Բաղաամ , եւ եհան զուա-
րակ եւ խոյ ի բագին ։

Գլ . ԻԴ

1 Եւ տեսեալ Բաղաամու Թէ բարւոք
Թուի առաջի Տեառն օրհնել զԻսրայէլ ,
ոչ չոգաւ ըստ սովորութեանն ընդ ա-
ռաջ հմայիցն , դարձոյց զերեսս իւր յա-
2 նապատն ։ Եւ ամբարձեալ Բաղաամու
զաչս իւր եւս զԻսրայէլ բանակեալ
ըստ ցեղից ցեղից . եւ եղեւ Հոգի Աս-
3 տուծոյ ի վերայ նորա . Եւ ամբարձեալ
զառակս իւր ասէ , Ասէ Բաղաամ որդի
4 Բէովրայ , ասէ այրն ճչմարտատես , [11]Որ
զտեսիլ Աստուծոյ՝ եւս ի քուն աչօք
5 իւրովք լացօք . Իրրեւ դի զեղեցիկ են
[12]տունք քո , Յակոբ , եւ խորանք քո ,
6 Իսրայէլ . Իրրեւ [13]զանուաոս հովտա-
ւորս՝ , եւ իրրեւ զբուրաստանս առ գե-
տովք , եւ իրրեւ [14]գխորանս զոր կանգ-
նեաց՝ Տէր , եւ իրրեւ զմայրս ի գնացս
7 ջուրց ։ [15]Եւ ելցէ այր ի զաւակէ նորա ,
եւ տիրեսցէ ազգաց բազմաց՝. եւ բարձ-
րացի քան [16]զԳովգայ Թագաւորութիւն՝
նորա , եւ ամեհացէ Թագաւորութիւն նո-
8 րա ։ Աստուած առաջնորդեաց նմա յԵ-
գիպտոսէ , իբրեւ փառք միեղջիւրու ի
վերայ նորա . կերիցէ ազգս թշնամեաց
իւրոց , եւ [17]զպարարտութիւն նոցա ուղ-
ղածուծ արասցէ՝. եւ նետիւք իւրովք
9 նետաձիգ լիցի ի թշնամիս ։ Եւ բազ-
մեալ հանգեաւ իբրեւ զառիւծ , եւ իբ-
րեւ զկորիւն առիւծու . եւ ո՞ յարուցա-
նիցէ զնա ։ Օրհնիչք քո օրհնեսցին , եւ
անիծիչք քո անիծցին ։
10 Եւ բարկացաւ Բաղակ Բաղաամու ,
եւ ծափ զծափի հարկանէր . եւ ասէ Բա-
ղակ ցԲաղաամ , Անիծանել զթշնամիս
իմ կոչեցի զքեզ , եւ ահա օրհնելով օրհ-
11 նեցեր զնա այս երիցս անգամ ։ Եւ արդ
փախիր դու ի տեղի քո . ասացի պա-
տուել զքեզ , եւ վրիպեցոյց զքեզ Տէր
12 ի վաստաց ։ Եւ ասէ Բաղաամ ցԲաղակ ,
Ո՞չ եւ ընդ հրեշտական քո զոր առա-
13 քեցեր առ իս՝ խօսեցայ եւ ասացի , Ե-
թէ տայցէ ինձ Բաղակ լի տամբ իւրով
արծաթ եւ ոսկի , ոչ կարիցեմ անցանել
զբանիւ Տեառն , առնել գայն չար կամ
բարի յանձնէ իմմէ . այլ զոր ինչ ասիցէ
14 [9]Աստուած՝ զայն խօսեցայց։ Եւ արդ ահա
գնամ ի տեղի իմ . եկ ասց քեզ խրատ ,
Թէ զինչ առնելոց է ժողովուրդն այն

[1] ԵՓԲ. ինձ [2] ԵՓԲ. զի սաեցէ [3] ԵՓԲ. Թէ զղջասցի-
ինչն ասաց , եւ ո՞չ [4] ԵՓԲ. խօսեցաւ եւ ո՞չ
[5] ԵՓԲ. եւ օրհնեաց [6] ԵՓԲ. դիտեաց անիրա-
ւութիւն ի Յակոբ եւ ոչ եսես յոտնութիւն
[7] ԵՓԲ. ցնծութիւնք Թագաւորի [8] ԵՓԲ. գործեաց
[9] ԵՓԲ. Տէր [10] ԵՓԲ. Հայի Լեսիմն

[11] ԵՓԲ. Ասէ որ լուաւն զպատգամն Աստուծոյ, որ
զտեսիլ Ամենակալին [12] ԵՓԲ. վրանք [13] ԵՓԲ.
զՀեղեզս տարածեալ են [14] ԵՓԲ. զՀայուէս զոր
անկեաց [15] ԵՓԲ. Հոսեսցէ ջուր ի դուլից նորա ,
եւ սերմն նորա ի ջուրս բազումս [16] ԵՓԲ. զԱ-
գագ՝ Թագաւոր [17] ԵՓԲ. զոսկերս նոցա մանրեսցէ

ընդ ժողովուրդ քո ի վախճանի աւուրց։
15 Եւ ամբարձեալ զառակս իւր ասէր, Ասէ
Բաղաամ որդի Բէովրայ, ասէ այրն
16 ճշմարտատես, Որ լուաւ զպատգամս
Աստուծոյ, եւ հմուտ է գիտութիւնս
Բարձրելոյ, եւ զտեսիլ [1]Աստուծոյ նախ
17 ի քուն աչօք իւրովք բացօք. [2]Ծուցից
նմա, եւ ոչ այժմ. երանեցից՝, եւ ոչ
ի մօտոյ. ծագեսցէ Աստղն Ձակոբայ, եւ
յարիցէ [3]այր յԻսրայէլէ, եւ հարցէ զիշ-
խանս Մովաբայ, եւ աւարս զա-
18 մենայն որդիս Սեթայ։ Եւ եղիցի նմա
եղեմ ժառանգութիւն [4]նաւաւ թշնամ-
ւոյ իւրոյ՝. եւ Իսրայէլ սպար գօրու-
19 թեամբ. Եւ յարիցէ այր ի Ձակոբայ, եւ
կորուսցէ զապրեալսն ի քաղաքէ անտի։
20 Եւ տեսեալ զԱմաղէկ, ամբարձեալ
զառակս իւր ասէ, Գլուխ ազգաց Ամա-
ղէկ, եւ [5]զաւակ նոցա կորիցէ՝։
21 Եւ տեսեալ զկինեցին, ամբարձեալ
զառակս իւր ասէ, Հզօր է բնակութիւն
քո, եւ [6]թէ դիցես ի քարանձաւս զբոյն
22 քո. [7]Եւ թէ լիցի ի Բէովր բոյն խար-
դախութեան քո, Ասորեստանեայք գե-
րեսցեն՝։
23 Եւ ամբարձեալ զառակս իւր ասէ,
Ո՞ ոք կեցցէ յորժամ դնիցէ զայն Ա-
24 տուած։ Եւ [8]ելցէ ի ձեռաց կիտացւոց,
եւ չարչարեսցեն զԱսուր. եւ չարչարես-
ցեն [9]զԵբրայեցիս, եւ ինքեանք միան-
դամայն կորիցեն։
25 Եւ յարուցեալ Բաղաամ դարձաւ
դնաց ի տեղի իւր, եւ Բաղակ դնաց
ընդ իւր կողմն։

Գլ. Իե

1 Եւ բանակեցաւ Իսրայէլ ի Սատիմ.
եւ պղծեցաւ ժողովուրդն պոռնկել ընդ
2 դստերսն Մովաբու։ Եւ կոչեցին զնոսա
ի զոհս կռոց իւրեանց, եւ եկեր ժողո-
վուրդն ի զոհից նոցա, եւ երկիր պագին
3 կռոց նոցա։ Եւ նուիրեցաւ Իսրայէլ
Բեղփեղովրայ, եւ բարկացաւ սրտմտու-
4 թեամբ Տէր ի վերայ Իսրայելի։ Եւ ասէ
Տէր ցՄովսէս, Ա՛ռ զամենայն իշխանս

ժողովրդեանդ, եւ առակեա զդոսա առաջի
Տեառն յանդիման արեգական, եւ դարձ-
ցի սրտմտութիւն բարկութեան Տեառն
5 յԻսրայէլէ։ Եւ ասէ Մովսէս [10]ցգեղն Իս-
րայելի, Կատարեցէք իւրաքանչիւր զընդ-
ծանի իւր զնուիրեալ Բեղփեղովրայ։
6 Եւ ահա այր Իսրայելացի գայր ածէր
[11]զեղբայր իւր առ կին Մադիանացի՝ յան-
դիման Մովսիսի եւ յանդիման ամենայն
ժողովրդեան որդւոցն Իսրայելի, եւ նոքա
լային առ դրան խորանին վկայութեան։
7 Եւ տեսեալ Փենեհէս որդւոյ Եղիազա-
րու որդւոյ Ահարոնի քահանայի, յար-
եաւ ի միջոյ ժողովրդեանն, եւ առեալ
8 գեղարդն ի ձեռն իւր՝ Եւ եմուտ զհետ
առնն Իսրայելացւոյ ի [12]հնոցն, եւ խոց-
եաց զերկոսին՝ զայրն Իսրայելացի եւ
զկինն ընդ արգանդ իւր. եւ դադարեաց
9 հարուածն յորդւոցն Իսրայելի։ Եւ եղեն
մեռեալքն ի հարուածոյն յայնցանէ քսան
եւ չորք հազարք։
10 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ա-
11 սէ, Փենեհէս, որդի Եղիազարու, որդւոյ
Ահարոնի քահանայի, ցածոյց զբարմտու-
թիւն իմ յորդւոցն Իսրայելի, ի նախան-
ձեցուցանել զինձ զնախանձ իմ ի նոսա.
եւ ոչ սատակեցի զորդիսդ Իսրայելի նա-
12 խանձու խմով։ Եւ արդ այսպէս ասասց-
ցես, Ահա ես տայց նմա ուխտ խաղաղ-
13 ութեան. Եւ եղիցի նմա եւ զաւակի
նորա յետ նորա ուխտ քահանայութեան
յաւիտենական, փոխանակ դի քինախնդիր
եղեւ Աստուծոյ իւրում, եւ քաւեաց
14 վասն որդւոցն Իսրայելի։ Եւ անուն առն
Իսրայելացւոյ հարելոյ որ հարաւ ընդ
հնոչն Մադիանացւոյ՝ Զամբրի որդի Սա-
ղովմայ, իշխան տան ազգի որդւոցն
15 Շմաւոնի։ Եւ անուն հնոչին Մադիա-
նացւոյ հարելոյ՝ Քազբի, դուստր Սու-
րայ իշխանի [6]ազգին Ամովբայ՝ տան
նահապետութեան Մադիամու։
16 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
17 ասէ, [6]Խօսեաց ընդ որդիսն Իսրայելի եւ
ասասցես," Թշնամեցայք ընդ Մադիա-
18 նացիսն եւ հարկանիջէք զնոսա. Զի
թշնամի են նոքա ընդ ձեզ նենգու-
թեամբ, որ նենգեցին զձեզ փազորաւ,
եւ Քազբեւս դստեր իշխանին Մադիա-
մու քերրն իւրեանց հարելով յաւուրն
հարուածոյ վասն Փազովրայ։

[1] ՆԵԲ. Ամենակալին [2] ՆԵԲ. Տեսից զնա, եւ ոչ այժմ. Հայեցայց ի նա [3] ՆԵԲ. գաւազան [4] ՆԵԲ. եւ Սէիր ժառանգութիւն թշնամեաց իւրոց [5] ՆԵԲ. վաթճան նորա մինչեւ ի կորուստ [6] ՅԱԿ. պ-ի-ա-ե [7] ՆԵԲ. Զի եղիցի յաւեր Կինեցին, մինչեւ Ասորեստանեայք գերեսցեն զքեզ [8] ՆԵԲ. ելցեն նաւք [9] ՆԵԲ. զԵբեր

[10] ՆԵԲ. ցգաւազանդն [11] ՆԵԲ. կին Մադիանացի առ եղբարս իւր [12] ՆԵԲ. վրանն

Գլ. ԻԶ

1 Եւ եղեւ յետ հարուածոցն, խօսեցաւ
Տէր ընդ Մովսիսի եւ ընդ [1]Եղիազարու
2 քահանայի եւ ասէ, Կալ զհամար ամե-
նայն ժողովրդեան որդւոցդ Իսրայէլի ի
քահանամենից եւ ի վեր ըստ տանց նա-
հապետաց իւրեանց, ամենայն որ ելա-
3 նիցէ յիսրայէլ տալ պատերազմ։ Եւ
խօսեցան Մովսէս եւ Եղիազար քահանայ
[2]յԻերովհ Մովաբու առ Յորդանովնաւ
4 յանդիման Երիքովի, եւ ասեն, Ի քա-
նամենից եւ ի վեր, որպէս հրամայեաց
Տէր Մովսիսի, [3]դու եւ որդիքդ Իսրայէլի
ելեալքդ՝ յԵգիպտոսէ, կազմեցարուք։
5 Ռուբէն անդրանիկն Իսրայէլի, եւ որ-
դիք Ռուբենի. Ենովք, եւ գունդն Ենո-
քայ. Փաղղուս, եւ գունդն Փաղղուսայ.
6 Ասրովմ, եւ գունդն Ասրովմայ. Քարմի,
7 եւ գունդն Քարմեայ։ Սոքա են գունդք
Ռուբենի. եւ եղեւ հանդիսն նոցա քա-
ռասուն եւ երեք հազարք եւ եւթն հարիւր
8 եւ երեսուն։ Եւ որդիք Փաղղուսայ Ե-
9 լիաբ։ Եւ որդիք Եղիաբու՝ Նամուէլ եւ
Դաթան եւ Աբիրոն. սոքա էին անուա-
նիք ժողովրդեանն, եւ սոքա են՝ որ յար-
կանն ի վերայ Մովսիսի եւ Ահարոնի ի ժո-
ղովրդեանն Կորխայ յարուցելոյ հակա-
10 ռակ Տեառն. Եւ բացեալ երկրի զբերան
իւր եկուլ զնոսա եւ զկորխ մահուամբ
ժողովրդեանն իւրոյ, յորժամ եկեր հուր
զերկերիսիւր եւ զյիսունսն. եւ եղեն ի
11 նշաւակ։ Եւ որդիքն Կորխայ ոչ մնացին։
12 Եւ որդիք Շմաւոնի, եւ գունդք որդ-
ւոցն Շմաւոնի. Նամուէլ, եւ գունդ մի
Նամուէլի. Յամին, եւ գունդ մի Յա-
մինայ. Յաքին, եւ գունդ մի Յաքինայ.
13 Զարա, եւ գունդ մի Զարայի. Սաւուղ,
14 եւ գունդ մի Սաւուղայ։ Այս են գունդք
Շմաւոնի ի հանդիսի իւրեանց, քսան եւ
երկու հազար եւ երկերիսիւր։
15 Եւ որդիք Գադայ՝ ըստ գնդից իւ-
րեանց, Սափոն, եւ գունդ մի Սափոնայ.
Անգի, եւ գունդ մի Անգիայ. Սունի,
16 եւ գունդ մի Սունիայ. Ազենի, եւ
գունդ մի Ազենիայ. Ադդի, եւ գունդ
մի Ադդիայ. Արուագի, եւ գունդն Ա-
17 րուագիայ. Արիէլ, եւ գունդ մի Արիել-
18 լի։ Սոքա են գունդք որդւոցն Գադայ

[1] Եբէր. Եղիազարու որդւոյ Ահարոնի [2] Այլ՝ ի գաշտս [3] Եբէր. եւ որդւոցն Իսրայէլի ելելոց

ի հանդիսի իւրեանց, քառասուն [4]եւ
չորք՝ հազարք եւ հինգ հարիւր։
19 Եւ որդիք Յուդայ՝ Էր եւ Աւնան [4]եւ
Սեղովմ եւ Փարէս եւ Զարա՝. եւ մե-
ռան Էր եւ Աւնան յերկրին Քանանաց-
20 ւոց։ Եւ եղեն որդիք Յուդայի ըստ գնդից
իւրեանց. Սեղովմ, եւ գունդ մի Սե-
ղովմայ. Փարէս, եւ գունդ մի Փարե-
21 սի. Զարա, եւ գունդ մի Զարայի։ Եւ
եղեն որդիք Փարեսի. Ասրովն, եւ գունդ
մի Ասրովնի. Յամուէլ, եւ գունդ մի
22 Յամուէլի։ Սոքա են գունդք Յուդայ
ըստ հանդիսի իւրեանց, եւ[5]թանասունն
եւ վեց հազար եւ հինգ հարիւր։
23 Եւ որդիք Իսաքարու՝ ըստ գնդից իւր-
եանց. Թովղայ, եւ գունդ մի Թովղայի.
Փուա, եւ գունդ մի Փուայի. Յասուբ,
24 եւ գունդ մի Յասուբայ. Սամրան, եւ
25 գունդ մի Սամրանայ։ Սոքա են գունդք
Իսաքարու ի հանդիսի իւրեանց, վաթ-
սուն եւ չորք հազարք եւ երեք հարիւր։
26 Եւ որդիք Զաբուղոնի՝ ըստ գնդից իւր-
եանց. Սարիզ, եւ գունդ մի Սարե-
դայ. Ադղոն, եւ գունդ մի Ադղոնի.
27 Ադէլ, եւ գունդ մի Ադելայ։ Սոքա են
գունդք Զաբուղոնի ի հանդիսէ իւրեանց,
վաթսուն հազար եւ հինգ հարիւր։
28 Եւ որդիք Յովսեփայ ըստ գնդից իւր-
29 եանց՝ Մանասէ եւ Եփրեմ։ Եւ որդիք
Մանասէի. Մաքիր, եւ գունդ մի Մա-
քիրայ. եւ Մաքիր ծնաւ զԳաղաադ.
Գաղաադ, եւ գունդ մի Գաղաադու։
30 Եւ որդիք Գաղաադու՝ Աբիեզեր, եւ
գունդ մի Աբիեզերայ. Քեղէդ, եւ գունդ
31 մի Քեղեդեայ. Եսրիէլ, եւ գունդ մի
Եսրիելի. Սիւքէմ, եւ գունդ մի Սիւ-
32 քեմայ. Սեմայի, եւ գունդ մի Սեմայ-
33 եայ. Ովփեր, եւ գունդ մի Ովփերայ։ Եւ
Սաղպաադայ որդւոյ Ովփերայ ոչ եղեն
ուստերք, այլ դստերք. եւ անուանք
դստերացն Սաղպաադայ՝ Մաաղա եւ
Նուա եւ Էգղա եւ Մեղգա եւ Թերսա։
34 Այս գունդք Մանասէի ի հանդիսէ իւր-
եանց, յիսուն եւ երկու հազարք եւ
եւթն հարիւր։
35 Եւ այս են որդիք Եփրեմայ. [5]Սուտա-
ղա, եւ գունդ մի Սուտաղայի՝. Տա-
36 նաք, եւ գունդ մի Տանաքայ։ Սոքա
են որդիք Սուտաղայի. Եղեն, եւ գունդ

[4] Եբէր. զոմ-ոբ [5] Եբէր. ըստ գնդից իւրեանց, Սուտաղա, և գունդ մի Սուտաղայի. Բովքոր, եւ գունդ մի Բովքորայ

37 մի եղենայ։ Այս գունդք Եփրեմայ ի
հանդիսէ իւրեանց, երեսուն եւ երկու
հազարք եւ հինգ հարեւր։ Սոքա են
գունդք Յովսեփայ ըստ տնից իւրեանց։
38 Եւ որդիք Բենիամինի ըստ գնդից իւր-
եանց. Բաղէ, եւ գունդ մի Բաղեայ.
Ասիբեր եւ գունդ մի Ասիբերայ. Յաքի-
39 բան, եւ գունդ մի Յաքիբանայ. Սա-
40 փան, եւ գունդ մի Սափանայ[1]։ Եւ ե-
ղեն որդիք Բաղեայ՝ Արեզ եւ Նոհ-
41 ման,[2] եւ գունդ մի Նոհեմանայ։ Այս
որդիք Բենիամինի, ըստ գնդից իւրեանց
ի հանդիսէ իւրեանց, [3]երեսուն եւ հինգ
հազար եւ [4]հինգ հարեւր։
42 Եւ որդիք Դանայ՝ ըստ գնդից իւր-
եանց. Սամի, եւ գունդ մի Սամեայ.
այս են գունդք Դանայ ըստ գնդից իւր-
43 եանց։ Ամենայն գունդք Սամեայ ըստ
հանդիսի իւրեանց՝ վաթսուն եւ չորք
հազարք եւ [5]վեց հարեւր։
44 Եւ որդիքն Ասերայ՝ ըստ գնդից իւր-
եանց. Յամին, եւ գունդ մի Յամինայ.
Յեսու, եւ գունդն Յեսուայ. Բարիա,
45 եւ գունդ մի Բարիայի։ [6]Քոռէր, եւ
գունդ մի Քոռերայ. Մեղքիէլ, եւ գունդն
46 Մեղքիելի։ Եւ անուն դստերն Ասերայ՝
47 Սարա։ Սոքա են գունդք Ասերայ ի
հանդիսէ իւրեանց, [7]քառասուն եւ երեք
հազարք եւ [5]վեց հարեւր։
48 Եւ որդիք Նեփթաղիմայ՝ ըստ գնդից
իւրեանց. Ասէղ, եւ գունդ մի Ասէղայ.
49 Դաւնի, եւ գունդ մի Դաւնեայ. Յե-
սեր, եւ գունդ մի Յեսերայ. Սեղեմ,
50 եւ գունդ մի Սեղեմայ։ Այս գունդք
Նեփթաղիմայ ի հանդիսէ իւրեանց, [8]քա-
ռասուն հազար եւ [5]երեք հարեւր։
51 Այս է հանդէս որդւոցն Իսրայելի,
վեց հարեւր հազար եւ հազար մի եւ
եւթն հարեւր եւ երեսուն։
52 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ա-
53 սէ, Դոցա բաժանեսցի երկիրն ժառան-
54 գել ըստ թուոյ անուանց։ Ըստ բազմայ՝
բազմացուսցես զժառանգութիւնն, եւ
ըստ սակաւուց՝ սակաւացուսցես զժա-
ռանգութիւնն իւրեանց. իւրաքանչիւր
որպէս եւ անցին ի հանդիսի՝ տացի ժա-
55 ռանգութիւնն իւրեանց։ Վիճակօք ժա-
ռանգեսցի երկիրն, ըստ անուանց, ըստ
ցեղից նահապետաց իւրեանց ժառան-
56 գեացն։ Վիճակաւ բաժանեսցին գժա-
ռանգութիւն նոցա ի մէջ բազմաց եւ
սակաւուց։
57 Եւ որդիքն Ղեւեայ ըստ գնդից իւր-
եանց. Գերսան, եւ գունդ մի Գերսանի.
Կահաթ, եւ գունդ մի Կահաթեայ. Մե-
58 րարի, եւ գունդ մի Մերարեայ։ Սոքա
են գունդք որդւոցն Ղեւեայ. գունդ մի
Ղոբնեի, եւ գունդ մի Քերրոնի[9], եւ
գունդ մի Կորհ, եւ գունդ մի Մուսի։
59 Եւ Կահաթ ծնաւ զԱմրամ։ Եւ անուն
կնոջ նորա Յովքաբեդ՝ դուստր Ղեւ-
եայ, որ ծնաւ զոսոս Ղեւեայ յեղիպ-
տոս. եւ ծնաւ Ամրամայ զԱհարոն, եւ
զՄովսէս, եւ զՄարիամ քոյր նոցա։
60 Եւ ծնան Ահարոնի Նադաբ եւ Աբիուդ,
61 Եղիազար եւ Իթամար։ Եւ մեռան Նա-
դաբ եւ Աբիուդ ի մատուցանել իւրեանց
զնուրն օտար առաջի Տեառն [10]յանա-
62 պատին Սինայի՝։ Եւ եղեն ի հանդիսէն
իւրեանց քսան եւ երեք հազարք, ա-
մենայն արու յամսօրէից եւ ի վեր. քան-
զի ոչ անցին ի հանդիսի ի մէջ որդւոցն
Իսրայելի, զի ոչ էր նոցա տուեալ վի-
ճակ ի մէջ որդւոցն Իսրայելի։
63 Եւ այս է հանդէս Մովսիսի եւ Եղիա-
զարու քահանայի, որ արարին հանդէս
որդւոցն Իսրայելի [11]յԱբաբովթ Մովաբու
առ Յորդանանու՝ յանդիման Երիքովի։
64 Եւ ընդ նոսա մի այր ոչ գոյր յանցելոցն
ի հանդիսի ի Մովսիսէ եւ յԱհարոնէ որ
արարին հանդէս որդւոցն Իսրայելի յա-
65 նապատին Սինայի։ Քանզի ասաց զնա-
ցանել Տէր թէ մահու մեռանիցին յանա-
պատին, եւ ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ
մի, բայց Քաղէբ որդի Յեփոնեայ, եւ
Յեսու որդի Նաւեայ։

ԳԼ. ԻԷ

1 Եւ մատուցին դստերքն Սաղպաադու
որդւոյ Ափերայ, որդւոյ Գաղաադու,
որդւոյ Մաքիրայ, ի գնդէն Մանասէի
որդւոցն Յովսեփայ. եւ սոքա են անուանք
նոցա. Մաալա եւ Նոա եւ Եգղա եւ
2 Միղքա եւ Թերսա. կացին առաջի Մով-
սիսի եւ առաջի Եղիազարու քահանայի
եւ առաջի իշխանացն, եւ առաջի ա-
մենայն ժողովրդեան ի դրան խորանին

[1] ՆԵԲՐԱՅԵՑԷՆ յՕԵԼԸ. Ոփիմ եւ գունդ մի Ոփիմայ
[2] ՆԵԲՐԱՅԵՑԷՆ յՕԵԼԸ, գունդ մի Արեզայ, Նոհեման
[3] ՆԵԲՐ. քառասուն [4] ՆԵԲՐ. վեց [5] ՆԵԲՐ. չորեք
[6] ՆԵԲՐ. Յորգւոցն Բարիայի Քոռեր [7] ՆԵԲՐ. յիսուն
[8] ՆԵԲՐ. քառասուն եւ հինգ
[9] ՆԵԲՐԱՅԵՑԷՆ յՕԵԼԸ, եւ գունդ մի Մոոզայ [10] ՅԵԲՐ. պաւոր [11] Այլոյն ի գաշտս

3 վկայութեան, եւ ասեն, Հայր մեր մե-
ռաւ յանապատի անդ. եւ նա ոչ էր ի
մէջ ժողովրդեանն գումարելոց առաջի
Տեառն ի ժողովրդեանն Կորխայ, [1]որ
վասն մեղաց իւրոց մեռաւ. եւ որդիք
4 ոչ եղեն նորա։ [2]Եւ արդ մի՛ ջնջեսցի
անուն հօր մերոյ ի միջոյ ցեղի իւրոյ,
վասն զի ոչ գոյր նորա որդի. տուք մեզ
ժառանգութիւն ի մէջ եղբարց հօր մե-
5 րոյ։ Եւ մատոյց Մովսէս զդատաստան
6 նոցա առաջի Տեառն։ Եւ խօսեցաւ Տէր
7 ընդ Մովսիսի եւ ասէ, Ուղիղ խօսեցան
դատերքն Սաղպաադու. տալով տացես
նոցա կալուածս ժառանգութեան ի մէջ
եղբարց հօր իւրեանց, եւ դիցես զվիճակ
8 հօրն իւրեանց զնոքօք. Եւ ընդ որդիսն
Իսրայելի խօսեցիս եւ ասացես, Այր
ոք եթէ մեռանիցի, եւ ուստր ոչ գուցէ
նորա, տացէ զժառանգութիւն իւր դստեր
9 իւրում. Եւ եթէ ոչ գուցէ նորա դուստր,
տայիք զժառանգութիւն նորա [3]եղբօր
10 իւրում՛՛. Եւ եթէ ոչ գուցեն նորա եղ-
բարք, տայիք զժառանգութիւն նորա
11 [4]հօրեղբօր իւրում՛՛. Եւ եթէ ոչ գուցեն
եղբարք հօր նորա, տայիք զժառան-
գութիւն ընտանւոյ մերձաւորի նորա.
ի ցեղէն նորա ժառանգեսցէ զնորայն.
եւ եղիցի այդ որդւոցն Իսրայելի իրա-
ւունք դատաստանի, որպէս հրաման ետ
Տէր Մովսիսի։

12 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Ել դու [5]ի
լեառնն որ յայսկոյս է ի լեառն ի Նա-
բաւ՛՛, եւ տես զերկիրն Քանանացւոց
զոր ես տացու որդւոցն Իսրայելի [6]ի կա-
13 լուած. Տեսցես զնա եւ յաւելցիս առ
ժողովուրդ քո եւ դու, որպէս յաւելաւ
Ահարոն եղբայր քո [6]ի Հովր լերինն՛՛.
14 վասն զի անցէք զբանիւ իմով յանապա-
տին ի Սին ի հակառակել ժողովրդեանն
առ ի սուրբ առնելոյ զիս [6]եւ ոչ արա-
րէք զիս սուրբ՛՛ ի վերայ ջրոցն յանդի-
ման նոցա. այն է Ջուր հակառակու-
թեան[7] յանապատին ի Սին։

15 Եւ ասէ Մովսէս ցՏէր, (16) Տեսցէ
Տէր Աստուած հոգւոց ամենայն մարմնոյ
այր ի վերայ ժողովրդեանս այսորիկ,
17 Որ ելանիցէ առաջի ոտից, եւ որ հա-
նիցէ եւ մուծանիցէ զոտս. եւ մի՛ լի-
նիցի ժողովուրդս Տեառն իբրեւ զոչ-
խարս որոց ոչ իցէ հովիւ։
18 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
ասէ, Առ դու քեզ զՅեսուէ որդի Նա-
ւեայ, զայր յորում դոյ Հոգի, եւ դիցես
19 զձեռս քո ի վերայ նորա. Եւ կացուսցես
զնա յանդիման Եղիազարու քահանայի
եւ [6]պատուիրեսցես նմա՛՛ յանդիման ա-
մենայն ժողովրդեանն, եւ պատուիրես-
20 ցես [8]վասն նորա՛՛ յանդիման նոցա. Եւ
տացես ի փառաց քոց ի վերայ նորա,
21 զի լուիցեն նմա որդիքն Իսրայելի։ Եւ
կացցէ առաջի եղիազարու քահանայի,
եւ [9]հարցցեն ի նմանէ զիրաւունս յայտ-
նութեանց՛՛ առաջի Տեառն. ըստ բանի
բերանոյ նորա ելանիցեն, եւ ըստ բանի
բերանոյ նորա մտանիցեն, ինքն եւ որ-
դիքն Իսրայելի միւսոյն եւ ամենայն
22 ժողովուրդն։ Եւ արար Մովսէս որպէս
պատուիրեաց նմա Տէր. եւ առեալ զՅե-
սուէ կացոյց առաջի եղիազարու [6]որդւոյ
Ահարոնի՛՛ քահանայի, եւ առաջի ամե-
23 նայն ժողովրդեանն։ Եւ եդ զձեռս իւր
ի վերայ նորա, եւ [10]արար զնա՝ յանձն՝
որպէս պատուիրեաց Տէր՛՛ Մովսիսի։

Գլ. ԻԸ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ա-
2 սէ, Պատուիրեա որդւոցն Իսրայելի, եւ
ասասցես ցնոսա, [11]Զպատարագս իմ եւ
զդահաւոնս իմ եւ զընծայս իմ ի հոտ
անուշից՝ զղուշասջիք մատուցանել ի
3 ժամս իմ՛՛։ Եւ ասասցես ցնոսա, Այս [12]են
ընծայք՛՛ զոր մատուցանիցէք Տեառն.
դառինս [13]երկուս անարատս հանապազ՛՛
4 յողջակէզ անպակաս. Զմի գառնն ա-
րասցես ընդ առաւօտս, եւ զերկրորդ
5 գառնն արասցես ընդ երեկոյս։ Եւ արաս-
ցես տասանորդ գրուի նաչիհ զանգեալ
6 իւղով մզելով՝ չորրորդաս դորակի։ Ող-
ջակէզ անպակասութեան, որպէս լինէր ի
լերինն Սինայի, ի հոտ անուշից [14]Տեառն։
7 Եւ նուէր նորուն չորրորդ դորակին առ
մի գառն. ի սրբութեանն նուիրեսցես
զնուէրն ըմպելի Տեառն. Եւ զգառնն
երկրորդ արասցես ընդ երեկոյս. ըստ

[1] ԵՔԲ. զի [2] ԵՔԲ. Ընդէ՞ր [3] ԵՔԲ. եղբարց իւրոց
[4] ԵՔԲ. հօրեղբարց իւրոց [5] ԵՔԲ. ի լեառնդ յայդ
յԱբարիմ [6] ՅԵՔԲ. գ-ի-ե-ե-ը-, Կադեսի
[7] ԵՔԲ-ՅԵՉԻՆ յ-ե-ը-, [8] ԵՔԲ. Հարցցէ նմա ըստ իրաւանցն Ուրիմայ
[9] ԵՔԲ. պատուիրեաց նմա՝ որպէս խօսեցաւ Տէր
ի ձեռն [10] ԵՔԲ. Զընծայն իմ, զՀաց իմ, ի պատա-
րագս իմ ի հոտ անուշից, զգուշասջիք մատուց-
անել, ինձ ի ժամանակի իւրում [11] ԵՔԲ. է պա-
տարագ [12] ԵՔԲ. երկուս տարեւորս անարատս,
երկուս յաւուրն [13] ԵՔԲ. պատարագ Տեառն

[1]զոհին իբրեւ՚ եւ ըստ նուիրին իբրեւ արասջիք ի հոտ անուշից Տեառն ։
9 Եւ յաւուրն չորեքմուտ մատուսջիր երկուս գառինս տարեւորս անարատս, եւ երկուս տասանորդս նաշհոյ զանգելոյ
10 իւղով ի զոհ ։ Եւ զնուէր ոդջակիզին չորեքմուտ ի չորեքս, ի վերայ հանապազորդ ողջակիզին եւ [3]զնորուն նուէրն՚ ։
11 Եւ յամսամուտս մատուսջիք ոդջակէզս Տեառն՝ զուարակս երկուս յանդոյ եւ խոյ մի, գառինս տարեւորս անարատս
12 եւթն եւթն . Եւ երիս տասանորդս նաշհոյ զանգելոյ իւղով առ զուարակ մի, եւ երկուս տասանորդս նաշհոյ զանգելով իւղով առ խոյ մի,
13 եւ տասանորդ նաշհոյ զանգելով իւղով առ գառն մի, ի
14 հոտ անուշից ընծայ Տեառն ։ Եւ նուէր նոցա կէս գորակին գինւոյ լիցի առ զուարակ մի, եւ երրորդ գորակին լիցի առ խոյ մի, եւ չորրորդ գորակին լիցի առ գառն մի, այս ոդջակէզք իցեն ա-
15 մին յամսոյ յամիսս տարւոյն ։ Եւ նոխազ մի յայծեաց Տեառն վասն մեղայ [4]իւրեանց ի վերայ հանապազորդ ողջակիզին առնիցի, եւ նուէրն նորա ։
16 Եւ յամսեանն առաջնում, ի չորեքտասաներորդում աւուր ամսեանն՝ զա-
17 տիկ Տեառն ։ Եւ ի հնգետասաներորդում աւուր նորուն ամսոյ՝ տօն . զեւթն օր
18 բաղարջ կերիջիք ։ Եւ [5]օրն առաջին կոչեցեալ՚ սուրբ լիցի ձեզ, զամենայն գործ
19 սպասաւորութեան մի՛ գործիցէք . Եւ մատուսջիք [6]ոդջակէզս եւ ընծայս՚ Տեառն, զուարակս երկուս յանդոյ եւ խոյ մի, գառինս տարեւորս անարատս
20 եւթն . Եւ զոհ նոցա՝ նաշհի զանգելով իւղով երիս տասանորդս առ զուարակ մի, եւ երկուս տասանորդս առ խոյ մի .
21 Եւ տասանորդ տասանորդ սրասցես առ
22 գառն մի եւթանեցունց գառանցն . Եւ նոխազ մի յայծեաց վասն մեղայ, քա-
23 ւել վասն նոցա ։ Թող զնանասպազորդ առաւօտին ողջակէզն, որ է ողջակէզ
24 յամենամուտեան ։ Զայս ըստ այսմ օրինակի արասջիք աւուր աւուր՝ զհացն օր, [7]պատարագ ողջակէզ՚ ի հոտ անուշից Տեառն . ի վերայ հանապազորդ ողջակիզին առնիցէք զնուէր նորին ։ Եւ
[8]օրն եւթներորդ կոչեցեալ՚ սուրբ եղիցի ձեզ . զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք ի նմա ։
26 Եւ յաւուրն նորեցաց յորժամ մատուցանիցէք [9]զոհ Տեառն զեւթներորդացն, [10]կոչեցեալ սուրբ եղիցի ձեզ . զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք .
27 Եւ մատուսջիք ոդջակէզս ի հոտ անուշից Տեառն՝ զուարակս երկուս յանդոյ եւ խոյ մի, գառինս տարեւորս [4]անարատս
28 բաւս եւթն . Եւ [11]զոհ նոցա նաշհի զանգեալ իւղով երեք տասանորդք առ զուարակ մի եւ երկու տասանորդք առ խոյ
29 մի, Եւ տասանորդ տասանորդ առ գառն
30 մի՝ եւթանեցունց գառանցն . Եւ նոխազ մի յայծեաց վասն մեղայ՝ քաւել վասն
31 ձեր ։ Թող զնանասպազորդ ողջակէզն, եւ [12]զզոհս նոցա զոր առնիցէք, եւ զնուէրս նոցա . Եւ անարատք լինիցին ձեզ՚ ։

Գլ. ԻԹ

1 Եւ յամսեանն եւթներորդի որ օր մի իցէ ամսոյն, [10]կոչեցեալ սուրբ եղիցի ձեզ . զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք. օր [13]նշանակելոյ եղիցի
2 ձեզ ։ Եւ արասջիք ոդջակէզս ի հոտ անուշից Տեառն, զուարակ մի յանդոյ, խոյ մի, գառինս տարեւորս անարատս
3 եւթն, Եւ [11]զոհ նոցա նաշհի զանգեալ իւղով, երիս տասանորդս առ զուարակ մի, եւ երկուս տասանորդս առ խոյ մի,
4 Եւ տասանորդ տասանորդ առ գառն մի
5 եւթանեցունց գառանցն . Եւ նոխազ մի յայծեաց վասն մեղայ՝ քաւել վասն ձեր ։
6 Թող զողջակէզն ամսամուխին, եւ [14]զոհն նոցա եւ նուէրք իւրեանց՚ ըստ պատմանի իւրեանց ի հոտ անուշից [15]Տեառն ։
7 Եւ ի տասներորդի [16]նորին ամսոյ՝ կոչեցեալ՚ սուրբ եղիցի ձեզ . եւ լկեսջիք զանձինս ձեր . զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք ։ Մատուսջիք ոդջակէզս ի հոտ անուշից [4]ընծայս Տեառն, զուարակ մի յանդոյ, խոյ մի, գառինս տարեւորս անարատս եւթն .

[1]Եբէր. առաւօտեան զոհին [2]Եբէր. եւ զնուէր նորա [3]Եբէր. նուիրի նորա [4]Եբէր. պահոց [5]Եբէր. յաւուրն առաջնում ժողով [6]Եբէր. պատարագ, ողջակէզ [7]Եբէր. հաց պատարագի [8]Եբէր. յաւուրն եւթներորդի ժողով [9]Եբէր. ընծայ հացի նոր [10]Եբէր. ժողով [11]Եբէր. ընծայ հացի [12]Եբէր. զընծայ հացի նորա, մատուսջիք (անարատք լինիցին ձեզ) եւ զնուէր նոցա [13]Եբէր. Հարկանելոյ փող [14]Եբէր. զընծայ հացի նորա, եւ զողջակէզն հանապազորդ եւ զընծայ հացի նորա, եւ զնուէրս նոցա [15]Եբէր. պատարագ Տեառն ; [16]Եբէր. ամսոյն այնորիկ եւեթներորդի ժողով

9 Եւ [1]զոհ նոցա նախիր զանգեալ իւղով, երիս տասանորդս առ զուարակ մի, եւ
10 երկուս տասանորդս առ խոյ մի, Եւ տասանորդ տասանորդ առ գառն մի,
11 եւ[2]մանեցունց զառանցն. Եւ նոխազ մի յայծեաց վասն մեղաց[3]քաւել վասն ձեր՝.
Թող զվասն մեղացն քաւութիւն, եւ [3]զողջակէզն հանապազորդս եւ զզոհս նորա, եւ զնուէր նորին ըստ պայմանի իւրում ի հոտ անուշից ընծայ Տեառն՝։
12 Եւ յաւուրն հնգետասաներորդի նորին եւթներորդի ամսոյ՝ [4]կոչեցեալ սուրբ ժողով. զամենայն գործ ապաստաւորութիւն մի՛ գործիջիք, եւ տօնեսջիք
13 [2]զնա տօն Տեառն զեւթն օր. Եւ մատուսջիք [5]ողջակէզս ընծայս՝՝ ի հոտ անուշից Տեառն, [2]յաւուրն առաջնում՝՝ զուարակս յանդուց երեքտասան, խոյս երկուս, գառինս տարեւորս չորեքտասան,
14 տան, անարատս լինիցին. Եւ [1]զոհք նոցա նախիր զանգեալ իւղով, երիս տասանորդս առ զուարակ մի՝ երեքտասանեցունց զուարակացն. եւ երկուս տասանորդս առ խոյ մի՝ երկոցունց խոյոցն,
15 Եւ տասանորդ տասանորդ առ մի մի գառն՝ չորեքտասանեցունց գառանցն.
16 Եւ նոխազ մի յայծեաց վասն մեղաց. Թող զհանապազորդ [6]ողջակէզն եւ զզոհս եւ զնուէրս նոցա՝՝։
17 Եւ յաւուրն երկրորդի՝ զուարակս երկոտասան, խոյս երկուս, գառինս տասրիւորս անարատս չորեքտասան. Եւ
18 [7]զոհք նոցա եւ նուէրք՝՝ զուարակացն եւ խոյոցն եւ գառանցն՝ ըստ թուոյ
19 նոցա եւ ըստ պայմանի իւրեանց. Եւ նոխազ մի յայծեաց վասն մեղաց. Թող զհանապազորդ ողջակէզն եւ [8]զզոհս նոցա՝՝ եւ զնուէրս իւրեանց։
20 Եւ յաւուրն երրորդի՝ զուարակս մեւտասան եւ խոյս երկուս, գառինս տասրիւորս անարատս չորեքտասան. Եւ
21 [7]զոհ նոցա եւ նուէր՝՝ զուարակացն եւ
22 խոյոցն եւ գառանցն՝ ըստ թուոյ նոցա[9]. Եւ քօչ մի յայծեաց վասն մեղաց. Թող զհանապազորդ [6]ողջակէզս նոցա եւ զնուէրս իւրեանց՝՝։
23 Եւ յաւուրն չորրորդի՝ զուարակս տասն, խոյս երկուս, գառինս տարեւորս
24 չորս անարատս չորեքտասան, Եւ [7]զոհք նոցա եւ նուէրք՝՝ զուարակացն եւ խոյոցն եւ գառանցն՝ ըստ թուոյ նոցա եւ
25 ըստ պայմանի իւրեանց. Եւ նոխազ մի յայծեաց վասն մեղաց. Թող զհանապազորդ [6]ողջակէզն եւ զզոհս նոցա եւ զնուէրս իւրեանց՝՝։
26 Եւ յաւուրն հինգերորդի՝ զուարակս ինն, խոյս երկուս, որոյս տարեւորս
27 անարատս չորեքտասան. Եւ [7]զոհք նոցա եւ նուէրք՝՝ զուարակացն եւ խոյոցն եւ գառանցն՝ ըստ թուոյ նոցա եւ ըստ պայ-
28 մանի [2]իւրեանց. Եւ նոխազ մի յայծեաց վասն մեղաց. Թող զհանապազորդ [6]ողջակէզն եւ զզոհս նոցա եւ զնուէրս իւրեանց՝՝։
29 Եւ յաւուրն վեցերորդի՝ զուարակս ութ, խոյս երկուս, գառինս տարեւորս
30 անարատս չորեքտասան. Եւ [7]զոհք նոցա եւ նուէրք՝՝ զուարակացն եւ խոյոցն եւ գառանցն՝ ըստ թուոյ նոցա եւ ըստ
31 պայմանի [2]իւրեանց. Եւ նոխազ մի յայծեաց վասն մեղաց. Թող զհանապազորդ [6]ողջակէզն եւ զզոհս նոցա եւ զնուէրս իւրեանց՝՝։
32 Եւ յաւուրն եւթներորդի՝ զուարակս եւթն, խոյս երկուս, գառինս տարեւորս
33 չորս անարատս չորեքտասան. Եւ [7]զոհք նոցա եւ նուէրք՝՝ զուարակացն եւ խոյոցն եւ գառանցն՝ ըստ թուոյ նոցա եւ
34 ըստ պայմանի իւրեանց. Եւ նոխազ մի յայծեաց վասն մեղաց. Թող զհանապազորդ [6]ողջակէզն եւ զզոհս նոցա եւ զնուէրս իւրեանց՝՝։
35 Եւ յաւուրն ութերորդի՝ [10]կէք լինիցին ձեզ. զամենայն գործ ապաստաւորութիւն
36 մի՛ գործիջէք ինձմէ։ Եւ մատուսջիք [11]ողջակէզս ի հոտ անուշից ընծայս՝՝ Տեառն զուարակ մի, խոյ մի, գառինս տարեւորս
37 անարատս եւթն. Եւ [7]զոհք նոցա եւ նուէրք՝՝ զուարակին եւ խոյի եւ գառանցն՝ ըստ թուոյ նոցա եւ ըստ պայմանի [2]իւրեանց.
38 եանց. Եւ նոխազ մի յայծեաց վասն մեղաց. Թող զհանապազորդ [6]ողջակէզն եւ զզոհս նոցա եւ զնուէրս իւրեանց՝՝։
39 Զայս առնիցէք ի տօնս ձեր Տեառն. Թող զուխտս ձեր եւ զողջակէզն ձեր եւ

[1]ԵԲբ. ընծայ հացի [2]ՅԱԲբ. պահաք [3]ԵԲբ. զողջակէզն հանապազորդ եւ զընծայ հացի նորա և զնուէրս նոցա [4]ԵԲբ. ժողով [5]ԵԲբ. ողջակէզ, պատարագ [6]ԵԲբ. ողջակէզն եւ զընծայ հացի նորա եւ զնուէր նորա [7]ԵԲբ. ընծայ հացի նոցա եւ նուէրք նոցա վասն [8]ԵԲբ. զընծայ հացի նորա [9]ԵԲբ-յեօթն յաԲլա, ըստ օրինի [10]ԵԲբ. տօնք [11]ԵԲբ. ողջակէզ, պատարագ ի հոտ անուշից

զհամայականան ձեր եւ [1]զգոնան ձեր եւ զնուէրան ձեր եւ [2]զպրկութիւնան ձեր ։
40 Եւ խօսեցաւ Մովսէս ընդ որդիան Իսրա-
յէլ՝ [3]որպէս պատուիրեաց Տէր Մովսէսի ։

Գլ. Ի.

1 Եւ խօսեցաւ Մովսէս ընդ իշխանս որդ-
ւոցն Իսրայէլի եւ ասէ , Այս բան է զոր
2 հրամայեաց Տէր . Այր ոք այր՝ եթէ ուխ-
տիցէ ուխտ Տեառն , կամ երդնուցու
[4]երդումն սահմանաւ , կամ սահմանիցէ՞
ինչ վասն անձին իւրոյ , մի արասցէ ա-
պաւսպաս զբան իւր . այլ զամենայն ինչ
որ ելանիցէ ի բերանոյ իւրմէ՝ արասցէ ։
3 Եւ եթէ կին ոք ուխտիցէ ուխտ Տեառն,
կամ սահմանիցէ սահման ինչ ի տան
4 հօր իւրոյ ի մանկութիւնան իւրում . Եւ
լսիցէ հայր նորա զուխտս նորա եւ զսահ-
մանս նորա զոր սահմանեաց վանձնէ
իւրմէ , եւ լռեսցէ նմա հայր նորա , կաց-
ցեն ամենայն ուխտք նորա , եւ ամենայն
սահմանքն զոր սահմանեաց վանձնէ իւր-
5 մէ՝ հաստատեսցին նմա ։ Եւ եթէ ոչ առ-
նուցու յանձն հայր նորա յաւուր յորում
լսիցէ զամենայն ուխտսն նորա , եւ զսահ-
մանան զոր սահմանեաց վանձնէ իւր .
մի՝ կացցեն . եւ Տէր անպարտ արասցէ
զնա . զի ոչ առ յանձն հայր նորա ։
6 Ապա թէ լինելով լինիցի ասն , եւ
ուխտք իւր ի նմա իցեն ըստ ուխտից
շրթանց իւրոց զոր սահմանեաց վանձնէ
7 իւրմէ , Եւ լսիցէ այրն նորա եւ լսիցէ
նմա յաւուր յորում լսիցէ , այնուհետեւ կաց-
ցեն ամենայն ուխտք նորա , եւ սահ-
մանքն նորա զոր սահմանեաց վանձնէ
8 իւրմէ՝ հաստատեսցին ։ Ապա թէ ոչ առ-
նուցու յանձն այր նորա յաւուր յորում
լսիցէն , ամենայն ուխտքն նորա եւ
ամենայն սահմանքն զոր սահմանեաց
վանձնէ իւրմէ՝ մի հաստատեսցին . զի
այրն ոչ առ յանձն . եւ Տէր անպարտ
արասցէ զնա ։
9 Եւ ուխտք այրոյ կամ հանիկոյ , զոր
ուխտիցէ վանձնէ իւրմէ՝ հաստատեսցին
10 նմա ։ Ապա թէ ի տան ասն իւրոյ իցեն
ուխտք նորա , կամ սահմանն զոր սահ-
11 մանիցէ երդմամբ վանձնէ իւրմէ , Եւ
լսիցէ այր նորա եւ լսիցէ նմա , եւ առ-
նուցու նմա յանձն , կացցեն ամենայն
ուխտք նորա , եւ ամենայն սահմանք
նորա զոր սահմանեաց վանձնէ իւրմէ՝
12 հաստատեսցին նմա ։ Եւ եթէ խափա-
նելով խափանեսցէ այրն նորա յաւուր
աւուր լսիցէ զամենայն ինչ որ ելանիցէ
ի շրթանց նորա ըստ ուխտից նորա եւ
ըստ սահմանացն նորա վանձնէ իւրմէ ,
մի հաստատեսցի նմա . վասն այր նորա
վանցոյց , եւ Տէր անպարտ արասցէ զնա ։
13 Զամենայն ուխտ եւ զամենայն երդումն
կապոյ առ լլկելոյ զանձն , այր նորա
հաստատեսցէ նմա , եւ այր նորա վան-
14 ցուսցէ ։ Եւ եթէ լռելով լռեսցէ նմա օր
ըստ օրէ , հաստատեսցէ նմա զամենայն
ուխտսն իւր , եւ զսահմանսն կացուսցէ
նմա . վասն զի լռեաց նմա յաւուրն յո-
15 րում լսեաւ ։ Եւ եթէ վանցուցանելով
վանցուսցէ այր նորա յետ աւուրն յո-
րում լսեաւ , ընկալցի զմեզս իւր ։
16 Այս իրաւունք են զոր պատուիրեաց
Տէր Մովսէսի ընդ այր եւ ընդ կին իւր ,
ընդ հայր եւ ընդ դուստր իւր՝ ի ման-
կութիւնան ի տան հօր իւրոյ ։

Գլ. ԼՕ.

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ա-
2 սէ , Առ զվրէժ որդւոցդ Իսրայէլի ի Մա-
դիանացւոց անտի . եւ ապա յաւելցիս
3 ի ժողովուրդ քո ։ Եւ խօսեցաւ Մովսէս
ընդ ժողովրդեանն եւ ասէ , Վառեցէք
ի ձէնջ արս՝ ճակատել [5]առաջի Տեառն՞
ի վերայ Մադիամու , հատուցանել վրէժ
4 ի Տեառնէ Մադիամու ։ Հազար այր ի ցե-
ղէ յամենայն ցեղիցն Իսրայէլի առաքես-
5 ցէք տալ պատերազմ ։ Եւ համարեցան
ի հազարաւորացն Իսրայէլի հազար այր
ի ցեղէ , երկոտասան հազար վառեալ ի
6 պատերազմ ։ Եւ արձակեաց զնոսա Մով-
սէս , հազար այր ի ցեղէ հանդերձ զօրու
իւրեանց , եւ զՓենեհէս որդի Եղիազա-
րու [5]որպէս Ահարոնի՞ քահանայի . եւ
զսպասն սրբութեան եւ փողքն ապես-
7 ցուխեան ի ձեռս [6]նոցա ։ Եւ ճակատե-
ցան ընդդէմ Մադիանացւոցն , որպէս եւ
հրամայեաց Տէր Մովսէսի . եւ կոտորե-
8 ցին զամենայն արու ։ Եւ զիւսպատոսն
Մադիանացւոց կոտորեցին հանդերձ վի-
րաւորօք նոցա , եւ զԵբէն եւ զՄսուր եւ
զՐեկոմ եւ զԶուր եւ զՈւռոր , զհինգ
թագաւորս Մադիամու . եւ զԲաղաամ

[1] ԵՖԲ. զՀայի ընծայ [2] ԵՖԲ. զխաղաղականա [3] ԵՖԲ. ըստ ամենայնի որպէս [4] ԵՖԲ. երդուեալ , սահմանաւ սահմանել

[5] ՅԵՖԲ. պահաւ [6] ԵՖԲ. նորա

որդի Բէովրայ սպանին սրով, [1]հանդերձ
9 վիրաւորօք նոցա"։ Եւ գկանայս Մա-
դիամու եւ զաղին նոցա եւ զանասունն
նոցա եւ զամենայն առացուածս նոցա
10 եւ զզօրս նոցա [2]առին յաւարի։ Եւ զա-
մենայն քաղաքս նոցա [3]տամիք իւրեանց
11 եւ զաւանս նոցա հրձիգ արարին։ Եւ
առին զամենայն զաւար նոցա եւ զամե-
նայն կապուտ նոցա ի մարդոյ մինչեւ
12 յանասունն։ Եւ ածին առ Մովսէս եւ առ
Եղիազար քահանայ եւ առ ամենայն
որդիսն Իսրայէլի զդերին եւ զկապուտ
եւ զաւար [4]բանակին յԻարովէ Մո-
վաբ", որ է յանդիման Երիքովի առ ե-
զերբ Յորդանանու։
13 Եւ ելին Մովսէս եւ Եղիազար քահա-
նայ եւ ամենայն իշխանք ժողովրդեանն
ընդ առաջ նոցա արտաքոյ բանակին։
14 Եւ բարկացաւ Մովսէս ի վերայ ոստի-
կանաց զօրուն, հազարապետաց եւ հա-
րիւրապետաց եկելոց ի ճակատէ պատե-
15 րազմին. Եւ ասէ ցնոսա Մովսէս, [5]Ընդէր
16 ապրեցուցէք" զամենայն էգ, Զի նոքա
էին որդւոցն Իսրայէլի ըստ բանիցն Բա-
ղաամու, առ ի վերիպեցուցանելոյ եւ ար-
համարհելոյ զբան Տեառն վասն Փոգոր-
բայ, եւ եղեւ հարուած ի ժողովրդեանն
17 Տեառն։ Եւ արդ կոտորեցէք զամենայն
արու յամենայն [6]ազխիդ, եւ զամենայն
կին որոյ դիտացեալ է զարուեստիւն արուի
18 կոտորեցէք։ Եւ զամենայն զաղա կա-
նանց որ ոչ իցէ վիտացեալ զարուեստիւն
19 արուի՝ ապրեցուցէք։ Եւ դուք բանա-
կեցարուք արտաքոյ բանակին զեւթն
օր. ամենայնի որոյ սպանանիցէ իցէ եւ
մերձեալ ի [7]վիրաւոր՝ սրբեսցի յաւուրն
երրորդի եւ յաւուրն եւթներորդի, դուք
20 եւ գերիդ ձեր։ Եւ զամենայն հանդերձ
եւ զամենայն անօթ մաշկեղէն եւ զամե-
նայն գործ մազագործ եւ զամենայն կահ
փայտակերտ սրբեսջիք։
21 Եւ ասէ Եղիազար քահանայ ցարս զօ-
րուն եկելոյ ի ճակատէ պատերազմին,
Այս իրաւունք օրինի են զոր հրամայեաց
22 Տէր Մովսէսի։ [8]Բաց յոսկւոյ եւ յարծա-

[1] ՅԵԲԲ. գոյոյ [2] ՅԵԲԲ. առին որդիքն Իսրայէլի
[3] ՅԵԲԲ. ի բնակութիւնս [4] ՅԵԲԲ. ի բանակն, ի դաշտսն Մովաբու [5] ՅԵԲԲ. Միթէ ապրեցուցէք
[6] ՅԵԲԲ. ազխ, յոճախ նշանակէ մանկունք։ [7] ՅԵԲԲ. վիրաւոր, յոճախ նշանակէ սպանեալ [8] ՅԵԲԲ. Միայն զոսկի եւ զարծաթի եւ զպղինձ եւ զերկաթ եւ զանագ եւ զկապար (23) Զամենայն որ անցանիցէ ընդ հուր՝ անցուցէք

թոյ եւ ի պղնձոյ եւ յերկաթոյ եւ ի կա-
23 պարոյ եւ յանագէ, Զամենայն որ անցա-
նէ" ընդ հուր՝ եւ սրբեսցի, այլ եւ ջրովն
սրսկման սրբեսցի. եւ ամենայն որ ոչ
անցանիցէ ընդ հուր՝ լուանայցի ջրով։
24 Լուասջիք զհանդերձս յաւուրն եւթներ-
որդի, եւ սուրբք լինիջիք, եւ ապա
մտանիցէք ի բանակն։
25 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
26 ասէ, Ա՛ս զհամար աւարի գերութեանդ
ի մարդոյ մինչեւ յանասունն, դու եւ Ե-
ղիազար քահանայ, եւ իշխանք նահա-
27 պետաց ժողովրդեանդ. Եւ բաժանեցէք
զաւարդ ի մէջ պատերազմողացդ եկելոցդ
ի պատերազմ, եւ ի մէջ ամենայն ժո-
28 ղովրդեանդ։ Եւ առջիք հաս Տեառն յա-
մենայն արանց պատերազմողաց երթե-
լոց ի պատերազմ, որպ մի ի հինգ հարիւ-
րոց՝ ի մարդոյ եւ [9]յանասնոյ եւ յարջա-
29 ռոյ եւ յոչխարէ եւ յայծեաց։ Եւ զկէս"
նոցա առնուցուս, եւ տացես Եղիազա-
30 րու քահանայի զպտուղն Տեառն։ Եւ
ի կիսոյ որդւոցն Իսրայէլի առցես մի ի
յիսնէ, ի մարդոյ եւ [9]յանասնոյ, յարջա-
ռոյ եւ յոչխարէ եւ յիշոյ եւ յամենայն
անասնոյ, եւ տացես զայն Ղեւտացւոցն
որ պահիցեն զպահպանութիւնս խորա-
31 նին Տեառն։ Եւ արարին Մովսէս եւ Ե-
ղիազար քահանայ որպէս հրամայեաց
Տէր Մովսիսի։
32 Եւ եղեւ աւելորդ աւարին զոր ածին
յաւարի արքն պատերազմողք՝ յոչխարաց
վեց հարիւր հազար եւ եւթանասուն եւ
33 հինգ հազար, Եւ արջառ՝ եւթանասուն
34 եւ երկու հազարք, Եւ էշք՝ վաթսուն
35 եւ մի հազար, Եւ ոգիք մարդկան՝ ի կա-
նանց որ ոչ գիտէին զարուեստիւն առն, ա-
մենայն ոգիք՝ երեսուն եւ երկու հազարք։
36 Եւ եղեւ կէս աւարին երթելոցն ի պա-
տերազմ՝ ի թուոյ ոչխարացն՝ երեք հա-
րիւր եւ երեսուն հազար եւ եւթն հա-
37 զար եւ հինգ հարիւր. Եւ եղեւ հասն
Տեառն յոչխարէ՝ վեց հարիւր եւ եւթա-
38 նասուն եւ հինգ. Եւ արջառ՝ երեսուն
եւ վեց հազար, եւ հասն Տեառն՝ եւթա-
39 նասուն եւ երկու. Եւ էշք՝ երեսուն հա-
զար եւ հինգ հարիւր, եւ հասն Տեառն՝
40 վաթսուն եւ մի. Եւ ոգիք մարդկան՝ վե-
ցտասն հազար, եւ հաս Տեառն՝
41 երեսուն եւ երկու ոգիք։ Եւ եւս Մով-

[9] ՅԵԲԲ. յաձխաւոյ եւ յիշոյ եւ յոչխարէ։ (29) Ի կիսոյ

աէս զնան Տեառն զնուէրն [1]Ասուածոյ՝
Եղիազարու քահանային, որպէս հրաման
եա Տէր Մովսէսի։
42 [2]Զհաւարական որդւոցն Իսրայելի՝
զորս բաժանեաց Մովսէս յարանձն պա-
43 աերազմոզաց։ Եւ եղեւ հաւարական ի
ժողովրդենէ անտի, յոլովարէ՝ երեք հա-
րեւր եւ երեսուն հազար եւ եւթն հա-
44 զար եւ հինգ հարեւր, եւ արջառ՝ երե-
45 սուն եւ վեց հազար, եւ էշք՝ երեսուն
46 հազար եւ հինգ հարեւր, եւ ոզիք մարդ-
47 կան՝ վեցհասան հազար։ Եւ առ Մով-
սէս ի հաւարականէ որդւոցն Իսրայելի՝
մի ի յիսնէ, ի մարդոյ եւ յանասնոյ, եւ
ետ զայն Ղեւտացւոցն որ պահէին զպաշ-
պանութիւն խորանին Տեառն, որպէս
հրաման եա Տէր Մովսէսի։
48 Եւ մատեան առ Մովսէս ամիրայն
վերակացուք հազարապետութեան զօ-
րուն, հազարապետք եւ հարիւրապետք.
49 եւ ասեն ցՄովսէս, Ծառայք քո կալան
զհամար արանց պաաերազմողաց առ ի
մէնջ, եւ ոչ ծախեցաւ ի նոցանէ եւ ոչ
50 մի։ Եւ բերաք մատուցանել ընծայ Տեառն,
այր որոյ գտանիցի ոսկի մինեւնոյն կամ
ապարանչանք, եւ մատանի եւ կնաս-
պանակ եւ փողչուկ ընդելուզիալ, քա-
51 ւել վասն մեր առաջի Տեառն։ Եւ ա-
ռին Մովսէս եւ Եղիազար քահանայ զոս-
կին ի նոցանէ, զամենայն անօթ զոյ-
52 ձեալ։ Եւ եղեւ ամենայն ոսկի հասին
զոր հանին Տեառն՝ վեցհասան հազար
եւ եւթն հարեւր եւ յիսուն սիկղ՝ ի հա-
53 զարապետաց [3]անտի։ Եւ արք պատե-
րազմօղք որ ածին աւար, իւրաքանչիւր
54 ոմն՝ք։ Եւ առին Մովսէս եւ Եղիազար
քահանայ զոսկին ի հազարապետաց ան-
տի եւ ի հարիւրապետաց, եւ տարան ի
խորանն վկայութեան, յիշատակ առ ի
յորդւոցն Իսրայելի առաջի Տեառն։

Գլ. ԼՐ

4 Եւ անասունն բազում էր որդւոցն [1]Ի-
սրայելի, որդւոցն՝ Ռուբենի եւ որդւոցն
Գադայ զհղեալ յոյժ. եւ տեսին զերկիրն
Յազերայ եւ զերկիրն Գաղաադու, եւ
2 էր տեղին տեղի խաչանց։ Եւ մատու-
ցեալ որդիքն Ռուբենի եւ որդիքն Գա-

[1] Ցհեբր. գ-ծոե [2] Եբեր. Եւ ի հաւարականէ (ի կիսոյ բաժնէն) [3] Եբեր. անտի եւ ի հարիւրապե-տաց։ (53) Զրանց պատերազմողաց առեալ էր աւար իւրաքանչիւր ոք վասն իւր

գայ ասեն ցՄովսէս եւ ցեղիազար քա-
3 հանայ եւ ցիշխանս ժողովրդեանն, Ատա-
րովթ եւ Դիբոն եւ Յազեր եւ Նեմբրա
եւ Եսբոն եւ Եղէալէ եւ Սեբամա եւ
4 Նաբաւ եւ Բէան, երկիրն զոր մատ-
նեաց Տէր առաջի որդւոցն Իսրայելի,
երկիր անասնասնոյց է. եւ ծառայից
5 քոց խաչիկք են։ Եւ ասեն, Եթէ գտաք
շնորհս առաջի քո, տացի երկիրն այն
ծառայից քոց ի կալուած, եւ մի ան-
ցուցաներ զմեզ ընդ Յորդանան։
6 Եւ ասէ Մովսէս ցորդիսն Գադայ եւ
ցորդիսն Ռուբենի, Եղբարք ձեր երթայցեն
ի պաաերազմ, եւ դուք նստիցիք աստ։
7 Եւ ընդէր խոտորեցուցանէք զսիրտ որդ-
ւոցն Իսրայելի չանցանել յերկիրն զոր
8 Տէր տացոյ է նոցա։ [1]Ո՛չ այդպէս արա-
րին հարքն ձեր, յորժամ առաքեցի զնա-
սա ի Կաղեսբարնեայ զնել զերկիրն։
9 Եւ ելին ի Զորն ողկուզի եւ դիտացին զեր-
կիրն, եւ զանգիանգուցին զսիրտս որդ-
ւոցն Իսրայելի, զի մի մտանիցեն յեր-
10 կիրն զոր ետ նոցա Տէր։ Եւ բարկացաւ
սրտմտութեամբ Տէր յաւուր յայնմիկ,
11 եւ երդուաւ եւ ասէ, Մի տեսցեն արք
որ ելին յԵգիպտոսէ, ի քսանամեայէ եւ
ի վեր, [1]որ գիտացին զչար եւ զբարի,"
զերկիրն զոր երդուայ տալ Աբրահամու
եւ Իսահակայ եւ Յակոբայ, զի ոչ եկին
12 զնեա իմ. Բայց Քազէր որդի Յեփոնեայ
[1]զաուազեանն, եւ Յեսու որդի Նաւեայ,
13 զի եկին զկնի Տեառն։ Եւ բարկացաւ
սրտմտութեամբ Տէր ի վերայ Իսրայելի,
եւ յածեցոյց զնոսա յանապատին ամ
քառասուն, մինչեւ սատակեսցաւ ամե-
նայն ազգն որ արարին զչարիս առաջի
14 Տեառն։ Եւ արդ դուք յարուցեալ էք
փոխանակ հարցն ձերոց, ժողովք մարդ-
կան մեղաւորաց, յաւելուլ միւսանգամ
ի սրտմտութիւն բարկութեան Տեառն ի
15 վերայ Իսրայելի։ Զի գարձեալ էք ի
. նմանէ, յաւելուլ միւսանգամ լքանել
նմա զձեզ յանապատի աստ. եւ անօ-
րինիք յաւնայն ժողովրդիս յայս։
16 Եւ մատեան առաջի նորա եւ ասեն,
Գաւարս ոչխարաց մերոց չինեսցուք եւ
անասնոց մերոց, եւ քաղաքս ազխից
17 մերոց. Եւ մեք վառեսցուք [1]առաջի
Տեառն", առաջապահք երթիցուք որդ-
ւոցն Իսրայելի, մինչեւ հանցուք զնոսա
յիւրաքանչիւր տեղի. եւ բնակեսցէ ազան

[1] Եբեր. Կինեզացի

մեր իքաղաքս պարսպաւորս վասն բնակ-
18 չաց երկրիս . Եւ ոչ դարձցուք ի տունս
մեր , մինչեւ բաժանեսցին որդիքն Իս-
րայելի զիւրաքանչիւր ժառանգութիւն ։
19 Եւ ոչ ևս ժառանգեսցուք ի մէջ նոցա
յանցիցին Յորդանանաւ եւ անդր . զի ու-
նիմք զվիճակս մեր յայսկոյս Յորդանա-
նու յարեւելից ։
20 Եւ ասէ ցնոսա Մովսէս , եթէ առնիք-
ցէք ըստ բանիդ ըստ այդմիկ , եթէ վա-
21 րիցիք առաջի Տեառն ի պատերազմ , Եւ
անցցէ ձեր ամենայն վառեալ ընդ Յոր-
դանան առաջի Տեառն , մինչեւ սատա-
22 կիցի թշնամին նորա առաջի նորա , Եւ
նուաճեսցի երկիրն առաջի Տեառն , եւ
ապա դառնայցէք , քաւեալ լիցիք առաջի
Տեառն եւ յիսրայելէ . եւ եղիցի երկիրս
23 այս ձեզ ի կալուած առաջի Տեառն ։ Ա-
պա թէ ոչ առնիցէք այդպէս , յանցաւոր
գտանիցիք առաջի Տեառն . եւ [1]ծանիր-
ջիք զմեղս ձեր , յորժամ հասանիցին
24 ձեզ չարիք" ։ Եւ չինեսջիք զուք ձեզ
քաղաքս ապրելոյ ձերոյ , եւ զադարս
խաչանց ձերոց , եւ որ ինչ ել ի բերա-
նոյ ձերմէ՝ առնիցէք ։
25 Եւ խօսեցան որդիքն Ռուբենի եւ որ-
դիքն Գադայ ընդ Մովսէսի եւ ասեն ,
Արասցին ծառայք քո որպէս հրամայեաց
26 մեզ տէրդ մեր ։ Ազխ մեր եւ կանայք
մեր եւ ամենայն անասունս մեր կացցին
27 ի քաղաքս Գաղաադու ։ Եւ ծառայք քո
անցցեն վառեալք եւ կազմեալք առաջի
Տեառն ի պատերազմ , որպէս եւ տէրդ ասէ ։
28 Եւ յանգիման արար նոցա Մովսէս
զեղիազար քահանայ , եւ զՅեսու որդի
Նաւեայ եւ զիշխանս նահապետաց ցե-
29 ղիցն Իսրայելի , Եւ ասէ ցնոսա Մովսէս , եթէ անցցեն որդիքդ Ռուբենի եւ
որդիքդ Գադայ ընդ ձեզ ըստ Յորդանան ,
ամենեքին վառեալ ի պատերազմ առաջի
Տեառն , եւ սիրիցէք երկիրն[2] առաջի
դոցա զերկիրն Գաղաադու ի կալուածս .
30 Ապա թէ ոչ անցցեն ընդ ձեզ [3]վառեալք
ի պատերազմ առաջի Տեառն , անցուս-
ջիք զաղխ դոցա եւ զկանայս դոցա եւ
զանասունս դոցա յաստաջագոյն քան զձեզ
յերկիրն Քանանացւոց , եւ" ժառանգեսցեն
31 ընդ ձեզ յերկրին Քանանացւոց։ Պատաս-
խանի ետուն որդիքն Ռուբենի եւ որդիքն
Գադայ եւ ասեն , Զոր ինչ ասէ տէրդ
32 ցծառայս իւր" արասցուք ։ Մեք անց-
ցուք վառեալք առաջի Տեառն յերկիրն
Քանանացւոց , եւ առաջիք մեզ կալուածս
33 յայսկոյս Յորդանանու ։ Եւ ետ Մովսէս
որդւոցն Գադայ եւ որդւոցն Ռուբենի եւ
կիսոյ ցեղին Մանասէի որդւոցն Յով-
սեփայ զթագաւորութիւնն Սեհոնի ար-
քային Ամովրհացւոց , եւ զթագաւորու-
թիւնն Ովգայ արքային Բաասանու , զեր-
կիրն եւ զքաղաքս սահմանօք իւրովք ,
եւ զքաղաքս երկրին չուրջանակի ։
34 Եւ չինեցին որդիքն Գադայ զԴեբոն
35 եւ զԱտարովթ եւ զԱրոյեր , Եւ [5]զՍո-
փար եւ զՅազեր , եւ [6]բարձրացուցին
36 զնոսա" , Եւ զՆամրան եւ զԲեսեթառան ,
քաղաքս ամուրս եւ դաղարս հօտից ։
37 Եւ որդիքն Ռուբենի չինեցին զԵսե-
38 բոն եւ զԵղեաղէ եւ զԿարիաթեմ . Եւ
[7]զԲէեղմէոնէն , չուրջ ամրացուցեալս ,"
եւ զԱերամայ . Եւ անուանեցին ըստ ա-
նուանց իւրեանց զանուանս քաղաքացն
զոր չինեցին ։
39 Եւ [8]զնայ որդի" Մաքիրայ որդւոյ Մա-
նասէի ի Գաղաադ եւ [9]առ զնա , եւ կո-
րոյս" զԱմովրհացին որ բնակեալ էր ի
40 նմա ։ Եւ ետ Մովսէս զԳաղաադ Մա-
քիրայ որդւոյ Մանասէի , եւ բնակեցաւ
41 անդ ։ Եւ Յայիր Մանասեան չորեաւ առ
զքաղաքս նոցա , եւ անուանեցաւ զնոսա
42 Աւանս Յայիրայ ։ Եւ Նոբաւ գնաց եւ
առ զԿանաթ եւ զաւանս նորա , եւ
անուանեցաւ [10]զնոսա Նոբաւթ ըստ ա-
նուան իւրոյ ։

Գլ . Լ Գ

1 Եւ այս են բանակատեղք որդւոցն Իսրա-
յելի՝ յորմէ հնաէ ելին յերկրէն Եգիպ-
տացւոց հանդերձ զօրուն իւրեանց ի ձեռն
2 Մովսիսի եւ Ահարոնի ։ Եւ գրեաց Մովսէս
զելս նոցա եւ զբանակատեղս իւրեանց
բանիւ Տեառն . եւ այս են բանակատեղք
3 ընդ ելից նոցա ։ Ճանեկին յԱմմիսեաց
յամսեանն առաջնում , ի հնգետասաներ-
որդում աւուր ամսոյն առաջնոյ . զայ-
դոյ զօրակին ելին որդիքն Իսրայելի բարձ-
րացեալ ձեռամբ առաջի ամենայն Եգիպ-
4 տացւոցն . Եւ Եգիպտացիքն թաղէին
զամենայն մեռեալսն ի նոցանէ , զորս

[1]ԵԲԲ. գիտասջիք եթէ մեղք ձեր գտցեն զձեզ [2]ԵԲԲ-ՅԵՆ յո-ԷԼ, որ առաջի ձեր, և [3]ԵԲԲ. վառեալք, յայնժամ [4]ԵԲԲ. ասաց Տէր ցծառայս քո, այնպէս [5]ԵԲԲ. զԱմբովմ-Սոփան [6]ԵԲԲ. զՅոգբեհա [7]ԵԲԲ. զնաբաւև-գիւեզմին, (փոխեալ զանուանս) [8]ԵԲԲ. զնացին որդիքն [9]ԵԲԲ. առին զնաև կորուսին [10]ԵԲԲ. զնա-

կոտորեաց Տէր, զամենայն անդրանիկս
[1]յերկրին Եգիպտացւոց", եւ ի դիս նոցա
արար [2]վրէժխնդրութիւն Տէր։
5 Եւ չուեալ որդւոցն Իսրայելի յԻա-
6 մնասայ բանակեցան ի Սոկքովթ։ Եւ
չուեալ ի Սոկքովթայ՝ բանակեցան [3]ի
Բովթան, որ է մատն լիզ" անապատին։
7 Չուեցին [4]բանակեցան առ բերանովը Ե-
պիրովթայ", որ է յանդիման Բէեղսեպ-
փովսայ, եւ բանակեցան հանդէպ Մագ-
8 դալայ։ Չուեցին [5]հանդէպ Եպիրով-
թայ", եւ անցին ընդ մէջ ծովուն յա-
նապատն, եւ գնացին նոքա երկօրեայ
ճանապարհ ընդ [6]անապատն եւ բանա-
9 կեցան [7]զԴաւռն ապրելրկն"։ Չուեցին [8]ի
Դաւռն աղրելրացն" եւ եկին յԵղիմ. եւ
էին յեղիմ երկոտասան ակն ջրոց, եւ
եւթանասուն ծառ արմաւենեաց. եւ
10 բանակեցան անդ [1]առ ջրովն"։ Չուեցին
յեղիմայ, եւ բանակեցան զափառմ կար-
11 միր ծովուն։ Չուեցին ի կարմիր ծովէն,
եւ բանակեցան յանապատին ի Սին։
12 Չուեցին ի Սին անապատէն, եւ բանա-
13 կեցան ի Դափկա։ Չուեցին ի Դափկայ,
14 եւ բանակեցան յԵղուս։ Չուեցին յԵղու-
սայ, եւ բանակեցան յՌափիդիմ. եւ ոչ
15 գոյր ջուր ըմպելոյ ժողովրդեանն։ Չուե-
ցին յՌափիդիմայ, եւ բանակեցան յա-
16 նապատին Սինայ։ Չուեցին յանապատէն
Սինայ, եւ բանակեցան ի Գերեզմանս
17 ցանկութեան։ Չուեցին ի Գերեզմանսն
ցանկութեան, եւ բանակեցան յԱսե-
18 րովթ։ Չուեցին յԱսերովթայ, եւ բա-
19 նակեցան յՌաթամա։ Չուեցին յՌաթա-
մայ, եւ բանակեցան յՌեմմոնփարէս։
20 Չուեցին յՌեմմոնփարեսայ, եւ բանա-
21 կեցան ի Ղեբնա։ Չուեցին ի Ղեբնայ,
22 եւ բանակեցան յՌեսսա։ Չուեցին ։
յՌեսսայէ, եւ բանակեցան ի Կեղղաթ։
23 Չուեցին ի Կեղղաթայ, եւ բանակեցան
24 [9]ի Սովփար։ Չուեցին ի Սովփարայ", եւ
25 բանակեցան ի Քարադաթ։ Չուեցին ի
Քարադաթայ, եւ բանակեցան ի Մակե-
26 ղովթ։ Չուեցին ի Մակեղովթայ, եւ
27 բանակեցան ի Կատասաթ։ Չուեցին ի
Կատասաթայ, եւ բանակեցան ի Տարաթ։
28 Չուեցին ի Տարաթայ, եւ բանակե-
29 ցան ի Մատեկա։ Չուեցին ի Մատեկայ,
30 եւ բանակեցան ի Սեղմոնա։ Չուեցին ի
Սեղմոնայ, եւ բանակեցան ի Մասու-
31 րութ։ Չուեցին ի Մասուրութայ, եւ
32 բանակեցան ի Բանէա։ Չուեցին ի Բա-
նէայ, եւ բանակեցան ի լերինն Գադ-
33 գադ։ Չուեցին ի լեռնէ անտի Գադգա-
34 դայ, եւ բանակեցան յԵտերբաթա։ Չուե-
ցին յԵտերբաթայ, եւ բանակեցան յԵբ-
35 րոնա։ Չուեցին յԵբրոնայ, եւ բանա-
36 կեցան ի Գասիոնգաբեր։ Չուեցին ի Գա-
սիոնգաբերայ, եւ բանակեցան յանա-
պատին ի Սին. [1]Չուեցին ի Սինն անա-
պատէ, եւ բանակեցան յանապատին
Փաւանու," այն է Կադէս։
37 Չուեցին ի Կադեսայ, եւ բանակեցան
ի Հովր լերինն, մերձ առ երկրաւն Եդով-
38 մայ։ Եւ ել Ահարոն քահանայ [10]ի լեառնն
հրամանաւ Տեառն եւ մեռաւ անդ, ի
քառասներորդի ամի ելանելոյ որդւոցն
Իսրայելի յերկրէն Եգիպտացւոց, յամ-
սեանն հինգերորդի, որ օր մի էր ամսոյն։
39 Եւ Ահարոն էր հարեւր եւ քսան եւ երից
ամաց յորժամ մեռաւ ի Հովր լերինն։
40 Եւ լուաւ Քանանիս արքայ Արադայ,
եւ ինքն բնակեալ էր [11]յերկրին Քանա-
նացւոց, յորժամ մտանէին որդիքն Իս-
րայելի։
41 Չուեցին ի Հովր լեռնէ, եւ բանակե-
42 ցան ի Սեղմոնա։ Չուեցին ի Սեղմոնայ,
43 եւ բանակեցան ի Փենով։ Չուեցին ի Փե-
44 նովայ, եւ բանակեցան յՈբովթ։ Չուե-
ցին յՈբովթայ, եւ բանակեցան ի Դայր՝
45 յայնկոյս սահմանացն Մովաբու։ Չուեցին
ի Դայեայ, եւ բանակեցան ի Դեմոնգադ։
46 Չուեցին ի Դեմոնգադայ, եւ բանակե-
47 ցան ի Գեղմոնդերղաթէմ։ Չուեցին ի
Գեղմոնդերղաթեմայ, եւ բանակեցան ի
լերինն Աբարիմ յանդիման Նաբաւայ։
48 Չուեցին ի լերանցն Աբարիմայ, եւ բա-
նակեցան [12]յարեւմտից Մովաբու առ Յոր-
49 դանանաւ յանդիման Երիքովի։ Եւ բա-
նակեցան զՅորդանանաւ [13]ի մէջ Եսի-
մովթայ", մինչեւ ցԱբելսատիմ [12]յա-
րեւմտից Մովաբու։
50 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի [12]յա-
րեւմտից Մովաբու առ Յորդանանաւ
51 յանդիման Երիքովի, եւ ասէ, Խօսեաց
ընդ որդիսդ Իսրայելի եւ ասասցես ցդո-
սա, Դուք անաւադիկ անցանէք ընդ

[1] ՅԵբէր. դ-ի-ւ-ե [2] ՅԵբէր. գատաստան [3] ՅԵբէր. յԱ-
թամ; որ է ի ծայր [4] ՅԵբէր. յՈՅոմայ եւ գար-
ձան պարէն ի Փիսգրոթ [5] ՅԵբէր. առ Փիսգրոթաւ
[6] ՅԵբէր. անապատն Ոմիոմ [7] ՅԵբէր. ի Մեռա [8] ՅԵբէր.
ի Մեռայ [9] ՅԵբէր. ի լերինն Սովփար։ (24) Չու-
եցին ի լեռնէն Սովփարայ

[10] ՅԵբէր. ի Հովր լեառն [11] ՅԵբէր. ի Հարաւոյ երկրին
[12] ՅԵբէր. ի դաշտան [13] ՅԵբէր. ի Բեթեսիմովթայ

52 Ցորդանան յերկիրն Քանանացւոց. Եւ
կորուսջիք զամենայն բնակիչս երկրին
յերեսաց ձերոց, եւ կործանեսջիք [1]զին-
տանոցս երկրի՛ նոցա, եւ զամենայն
կուռս ձուլածոյս նոցա կորուսջիք, եւ
զամենայն զարձանս նոցա բառնայջէք ի
53 միջոյ։ Եւ կորուսջիք զբնակիչս երկրին,
եւ բնակեսջիք դուք ի նմա. զի ձեզ ե-
54 տու զերկիրն նոցա ի վիճակ։ [2]Ըստ ցեղից
ձերոց, ըստ բազմայ՝ բազմացուցանիւ-
ջիք զկալուածս իւրեանց, եւ ըստ սա-
կաւուց՝ սակաւացուսջիք զկալուածս
իւրեանց. որպէս ելանիցէ յանուն ուրուք՝
անդ լինիցի. ըստ ցեղից նահապետաց-
55 Եւ ձերոց ժառանգեսջիք։ Եւ եթէ ոչ
կորուսանիցէք զբնակիչս երկրին յերե-
սաց ձերոց, եղիցին զոր թողուցուքն ի
նոցանէ՝ իւոյ յաչս ձերում եւ նեաւք ի
կողս ձեր, եւ եղիցին ձեզ [3]նեղիչք յերկ-
56 րին յորում դուք բնակիչք։ Եւ եղիցի
որպէս խորհէի առնել նոցա, արարից ձեզ։

ԳԼ. ԼԴ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ա-
2 ձէ, Պատուիրեա որդւոցն Իսրայէլի եւ
ասասցես ցնոսա, Դուք մտանէք յերկիրն
Քանանացւոց, եւ այն լիցի ձեզ ի ժա-
ռանգութիւն, երկիրն Քանանու հանդերձ
3 սահմանօք իւրովք. Եւ եղիցի ձեզ կողմն
ընդ հարաւ ի Սինայ անապատէ մինչեւ մօտ
յեդովմ. եւ եղիցին ձեզ սահմանքն որ
ընդ հարաւ իցեն, ի մասնէ Աղի ծովուն
4 յարեւելից կողմանէ. Եւ պատիցին սահ-
մանքն ձեր ի հարաւոյ՝ ընդ սարն Ակ-
րաբբինայ եւ անցցեն [3]յԵնան, եւ եղի-
ցին ելք նորա ընդ հարաւոյ կողմն Կա-
դեսբառնեայ. եւ ելցեն յայսմանն Արա-
5 գայ՝ եւ անցցեն յԱսեմոն. Եւ պատիցին
սահմանքն յԱսեմոնայ ձորոյն Եգիպտաց-
ւոց, եւ եղիցին ելք նորա ընդ ծովն։
6 Եւ սահմանք [5]ծովուն ձեզ լիցին. ծովն
մեծ սահման լիցէ, եւ այն լիցին ձեզ
սահմանք [5]ծովուն։
7 Եւ այս լիցին ձեզ սահմանք ընդ կողմն
հիւսիսոյ. ի մեծէ ծովէն չափեսջիք ձեզ
8 [6]զլեառնսնոսայն. Եւ՝ ի լեռնէ անտի չա-
փեսջիք զնոսն մինչեւ ի մուտան Եմաթայ,
եւ եղիցին ելք նորա սահմանքն Սեպա-
9 դայ. Եւ ելանիցէ առ սահմանօքն Զիփ-

[1] ԵԲԲ. զամենայն պատկերս [2] ԵԲԲ. Եւ ժառան-
գեսջիք զերկիրն վիճակաւ ըստ [3] ԵԲԲ. ի Սին
[4] ԵԲԲ. յԱսար-ադդար [5] ԵԲԲ. արեւմտից [6] ԵԲԲ.
մինչեւ զլեառնն Հովր. (8) Եւ ի Հովր

րոնայ, եւ եղիցին ելք նորա Ասիճաս-
յին. այն լիցին ձեզ սահմանք ի հիւսիսոյ։
10 Եւ չափեսջիք ձեզ սահման յարեւել-
11 լից՝ յԱսիճասյինայ յՍեփրւամար. Եւ ի-
ջանիցեն սահմանքն ի Սեպրւամարայ
ցԲեղա, յարեւելից կողմանէ սղբերացն.
եւ իջցեն սահմանքն ի Բեղայ մինչեւ
ցծովն Քենարայ յարեւելից կողմանէ.
12 Եւ իջանիցեն սահմանքն մինչեւ ցՑոր-
դանան, եւ ելք նորա լիցին ծովն Ա-
ղի։ Այն ամենայն երկիր լիցի ձեզ,
եւ սահմանք նորա չուրջանակի։
13 Եւ պատուիրեաց Մովսէս որդւոցն
Իսրայէլի եւ ասէ, Այս է երկիրն զոր
ժառանգիցէք զսա վիճակաւ, որպէս
հրամայեաց Տէր տալ զնա ինն ցեղիցն
14 եւ կիսոյ ցեղին Մանասէի. Զսան զի
[7]առ ցեղ որդւոցն Ռուբենի՛ եւ ցեղ որդ-
ւոցն Գադայ՝ ըստ տանց նահապետաց
իւրեանց, եւ կէս ցեղին Մանասէի,
15 զվիճակս իւրեանց [8]Յայնկոյս Յորդա-
նանու յանդիման Երիքովի [9]ի հարաւոյ
ընդ կողմն արեւելից։
16 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ա-
17 ձէ, Այս անուանք են այրանցն՝ որ ժա-
ռանգեցուցանիցեն ձեզ զերկիրն. Եղիա-
18 զար քահանայ եւ Յեսու Նաւեան. Եւ
մի մի իշխան ի ցեղէ առնուցուք ժա-
19 ռանգեցուցանել ձեզ զերկիրն։ Եւ այս
անուանք են արանցն. ցեղին Յուդայ՝
20 Քաղէբ որդի Յեփոնեայ. Ցեղին Շմաւո-
21 նի՝ Սաղամիէլ որդի Ամիուդայ. Ցեղին
Բենիամինի՝ Եղդագ որդի Քասղովղայ.
22 Ցեղին Դանայ՝ իշխան Բակքիր որդի Եգ-
23 դայ. Որդւոցն Յովսեփայ, ցեղի որդ-
ւոցն Մանասէի՝ իշխան Անիէլ որդի Սու-
24 փիայ. Ցեղի որդւոցն Եփրեմի՝ իշխան
25 Կամուէլ որդի Սաբաթայ. Ցեղին Զա-
բուղոնի՝ իշխան Եղիսափան որդի Փառ-
26 նաքայ. Ցեղի որդւոցն Իսաքարայ՝ իշ-
27 խան Փաղտիէլ որդի Ողիայ. Ցեղի որդ-
ւոցն Ասերայ՝ իշխան Սքիսվր որդի Սե-
28 ղոմայ. Ցեղին Նեփթաղիմայ՝ իշխան
29 Փաղայէլ որդի Ամիուդայ։ Սոքա են ո-
րոց հրամայեաց Տէր բաժանել որդւոցն
Իսրայէլի զերկիրն Քանանացւոց։

ԳԼ. ԼԵ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի [10]յարեւ-

[7] ԵԲԲ. առին ցեղ որդւոցն Ռուբենի ըստ տանց
նահապետաց իւրեանց, [8] ԵԲԲ. Երկու ցեղք
եւ կէս ցեղի առին զժառանգութիւն իւրեանց
յայնկոյս [9] ՅԵԲԲ. գ-ի-ե [10] ԵԲԲ. ի գաշտս

մուտս Մովաբու՝ առ եղերք Յորդանանու յանդիման Երիքովի , եւ ասէ , Հրամայ տուր որդւոցն Իսրայէլի , եւ տացեն Ղեւտացւոցն ի վիճակաց կալուածոց իւրեանց քաղաքս բնակութեանց , եւ [1]բուրաստանս չուրջ զքաղաքօք իւրեանց տացեն Ղեւտացւոցն : եւ եղիցին նոցա քաղաքք բնակութեան , եւ [2]զատուցեալքն նոցա եղիցին [3]խաչանց նոցա , եւ ամենայն չորքոտանեաց նոցա : եւ արուարձանք քաղաքացն զոր տայցէք Ղեւտացւոցն ի պարսպէ քաղաքին եւ արտաքոյ պարսպին [4]հրկուս հազարս կանգնունս՝ չուրջանակի : եւ չափեսջիք արտաքոյ քաղաքին , յարեւելից կողմանէ հրկուս հազարս կանգնունս , եւ ընդ հարաւոյ կողմն հրկուս հազարս կանգնունս , եւ ընդ ծովակողմն հրկուս հազարս կանգնունս , եւ ընդ կողմն հիւսիսի հրկուս հազարս կանգնունս . եւ քաղաք [5]ի մէջ այնորիկ լինիցի ձեզ . եւ զարուարձանս՝ քաղաքացն : եւ զքաղաքսն զոր տայցէք Ղեւտացւոցն , վեց քաղաքս ապաստանից զոր տայցէք , փախչել անդր սպանողին . եւ առ այնոսիկ քառասուն եւ երկուս քաղաքս : Զնոյ ամենայն քաղաքս՝ քառասուն եւ ութ քաղաք տայցէք Ղեւտացւոցն , եւ զնոսա եւ [6]զբուրաստանս իւրեանց : եւ զքաղաքս՝ զոր տայցէք ի կալուածոց որդւոցն Իսրայէլի , ի բազմաց բազումս , եւ ի սակաւուց՝ սակաւս . ըստ իւրաքանչիւր ժառանգութեան զոր ժառանգիցեն՝ տացեն ի քաղաքաց անտի՝ Ղեւտացւոցն :

9 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ , Խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի եւ ասասցես ցնոսա , Դուք աւազիկ անցանէք ընդ Յորդանան յերկիրն Քանանացւոց , եւ զատուսջիք ձեզ քաղաքս , որ լինիցին ձեզ ապաստանաց՝ փախչել անդր սպանողին , [7]ամենայն որ հարկանիցէ զանձն ուրուք ակամայ : եւ եղիցին ձեզ քաղաքք ապաստանի ի մերձաւորէ արեանն , եւ մի՛ մեռանիցի սպանողն մինչեւ կացցէ առաջի ժողովրդեանն ի դատաստանի : եւ քաղաքքն զոր տայցէք՝ վեց քաղաք ապաստանի լինիցին ձեզ :

14 Երիս քաղաքս տայիք յայնկոյս Յորդանանու , եւ երիս քաղաքս տայիք յերկրին Քանանացւոց , եւ եղիցի այն ապաստանել սպանողաց :

15 Իսրայէլի Որդւոցն Իսրայէլի , եկեղն եւ պանդխտին ի միջի ձերում , եղիցին քաղաքքն այնոքիկ վեց՝ ապաստանք , փախչել անդր ամենայնի որ հարկանիցէ զանձն ուրուք ակամայ :

16 Եւ եթէ երկաթեղէն անօթով ոք հարկանիցէ եւ սպանանիցէ զնա , սպանօղ է . մահու մեռցի սպանօղն : Եւ եթէ բռնաքարաւ որով մեռանիցի ոք՝ հարկանիցէ զնա եւ մեռանիցի , սպանօղ է . մահու մեռցի սպանօղն : Եւ եթէ փայտեղէն անօթով ի ձեռանէ որով մեռանիցի ոք՝ հարկանիցէ զնա եւ մեռանիցի , սպանօղ է . մահու մեռցի սպանօղն . 19 Մերձաւոր արեանն սպանցէ զսպանօղն . յորժամ պատահեսցէ նմա՝ սպանցէ զնա : 20 Եւ եթէ առ թշնամութեան մղեսցէ զնա , եւ ձգեսցէ նմա զամենայն անօթ խարդախութեամբ եւ մեռանիցի , 21 կամ առ քինալ հարկանիցէ զնա ձեռամբ իւրով եւ մեռանիցի , մահու մեռցի որ եհարն . սպանօղ է , [8]մահու մեռցի որ սպանիցէն . մերձաւոր արեանն սպանցէ զսպանօղն ի պատահելն նորա նմա :

22 Եւ զպ եթէ վրիպակաւ եւ ոչ առ թշնամութեան մղեսցէ զնա , եւ ձգեսցէ նմա զամենայն անօթ եւ ոչ խարդախութեամբ , 23 կամ զամենայն քար որով մեռանիցի , եւ ոչ գիտութեամբ հարկանիցէ զնա եւ մեռանիցի , եւ նա չէր նորա թշնամի եւ ոչ խնդրէր չար առնել նմա , 24 Դատեսցի ժողովուրդն ի մէջ [9]հարկանելեացն եւ ի մէջ մերձաւորի արեանն 25 ըստ դատաստանացս այսոցիկ . եւ ապրեցուսցէ ժողովուրդն զսպանօղն ի մերձաւորէ արեանն , եւ յուղարկեսցէ զնա ժողովուրդն անդրէն ի քաղաքն ապաստանի յոր ապաւինեալն էր . եւ բնակեսցէ անդ մինչեւ մեռանիցի քահանայն 26 մեծ զոր օծին իւղովն սրբութեան : Եւ եթէ ելանելով ելանիցէ սպանօղն ընդ սահմանս քաղաքին յոր ապաւինեցաւն , 27 եւ գտցէ զնա մերձաւոր արեանն արտաքոյ սահմանաց քաղաքին ապաստանի իւրոյ , եւ սպանցէ մերձաւոր արեանն զսպանօղն , մի լինիցի մահապարտ : 28 Վասն այնորիկ ի քաղաքի ապաւինին իւրոյ բնակեսցէ , մինչեւ մեռանիցի քահանայն մեծ , եւ յետ մահուան քահանային դարձցի սպանօղն յերկիր տիրութեան իւրոյ :

---

[1] ԵՓԷ· արուարձանս [2] ԵՓԷ· արուարձանքն [3] ԵՓԷ· աքլաւոց եւ խաշանց [4] ԵՓԷ· կանգունս հազար [5] ԵՓԷ· ի միջի. այս լինիցի նոցա արուարձանք [6] ԵՓԷ· զարուարձանս [7] 8ԵՓԷ· պ–ի–ե

[8] ԵՓԷ· հարկանելոյն (սպանողին)

հանայն մեծ . եւ յետ մեռանելոյ քահանային մեծի՝ զարձցի անպրէն սպանօղն
29 յերկիր կալուածոյ իւրոյ ։ Եւ եղիցի այս ձեզ յիրաւունս դատաստանի յազգս ձեր , յամենայն բնակութեան ձերում ։
30 Ամենայն որ հարկանիցէ զանձն , վկայիւք սպանցին զսպանօղն . եւ մի միայն վկայ մի վկայեսցէ սպանանելոյ զանձն ։
31 Եւ վրէհանս ընդ անձին ի սպանողէն որ մահապարտ իցէ՝ մի առնուցուք . այլ
32 մահու մեռանիցի ։ Եւ մի՛ առնուցուք վրէհանս վասն [1]վախչելոյ ի քաղաքն ապաստանի առ միւսանգամ բնակելոյ յերկիրն , մինչեւ մեռանիցի քահանայն
33 մեծ ։ Եւ մի՛ չաղաղիցէք զերկիրն[2] . եւ ոչ քաւիցի երկիրն յարենէն հեղելոյ ի վրայ նորա , եթէ ոչ արեամբն հեղողի եւ
34 մի պղծիցէք զերկիրն յորում դուք բնակիցէք ի նմա , յորում ես բնակեցայց ի միջի [3]ձերում . զի ես եմ Տէր [4]Աստուած , որ բնակիմ ի մէջ որդւոցն Իսրայէլի ։

Գլ. Լ.

1 Եւ մատեան իշխանք ցեղի որդւոցն Գաղաադու որդւոյ Մաքիրայ որդւոյ Մանասէի ի ցեղէ որդւոցն Յովսեփու , եւ խօսեցան առաջի Մովսիսի եւ [5]առաջի եղելատարս քահանայի , եւ" առաջի իշխանաց տանց նահապետաց որդւոցն
2 Իսրայէլի , եւ ասեն , Տէրունդ միրուամ հրամայեաց Տէր տալ զերկիրն Ժառանգութեան [6]վիճակ որդւոցն Իսրայէլի . եւ տեառնդ հրամայեաց Տէր տալ [7]Ժառանգութիւն դստերացն Սաղպատաղու
3 եղբօր մերում ." Եւ արդ եթէ լինիցին միւսում ցեղիցն Իսրայէլի կանայք , եւ բառնայցի վիճակ նոցա ի կալուածոյ հարց մերոց , եւ յաւելցուս ի ժառանգութիւն այնր ցեղի որոյ լինիցին կա-
նայք , եւ ի վիճակէ ժառանգութեան
4 մերոյ բառնայցի . Եւ եթէ լինիցի [8]Յոբելեանն որդւոցն Իսրայէլի , յաւելցուս ժառանգութիւն նոցա ի ժառանգութիւն ցեղին որոց լինիցին կանայք , եւ ի ժառանգութենէ ցեղի ազգիս մերոյ բառնայցի ժառանգութիւն նոցա ։
5 Եւ պատուիրեաց Մովսէս որդւոցն Իսրայէլի հրամանաւ Տեառն եւ ասէ , [9]առ այն զոր ասաց ինձ" ցեղ որդւոցն
6 Յովսեփայ ։ Այս բան է զոր հրամայեաց Տէր դստերացն Սաղպատաղու , եւ ասէ , Որոց հաճոյ թուիցի յայնոցանց՝ եղիցին նոքա կանայք , բայց ի ցեղէ հօրն
7 իւրեանց եղիցին կանայք . Եւ մի՛ փոխանայցի ժառանգութիւն որդւոցն Իսրայէլի ցեղէ ի ցեղ . զի իւրաքանչիւր ժառանգութիւն հայրենի ցեղի իւրոյ յա-
8 րիցին որդիքն Իսրայէլի ։ Եւ ամենայն օրիորդ [10]ժառանգութեան" ի ցեղից որդւոցն Իսրայէլի՝ միւսում ումեք յազգականէ հօր իւրոյ լինիցի կին , զի [11]ժառանգիցեն որդիքն Իսրայէլի իւրաքանչիւր զհայրենի ժառանգութիւն
9 իւր . Եւ մի՛ փոխեսցի վիճակ ի ցեղէ յայլ ցեղ . այլ իւրաքանչիւր յիւր ժառանգութիւն յարեսցին որդիքն Իսրայէլի ։
10 Եւ որպէս հրամայեաց Տէր Մովսէսի , այնպէս արարին դստերքն Սաղ-
11 պատաղու ։ Եւ եղեն Թերսա եւ Եգղա եւ Մեղքա եւ Նոա եւ Մաալա դստերքն Սաղպատաղու՝ հօրեղբարց որդւոյ իւր-
12 եանց կանայք ։ Ի ցեղէն [12]Մանասէի որդւոցն" Յովսեփայ եղեն կանայք , եւ եղեն ժառանգութիւնք նոցա յազգատոհ-
13 մի հօրն իւրեանց ։ Այս են պատուիրանք" [4]եւ իրաւունք" եւ դատաստանք զոր պատուիրեաց Տէր ի ձեռն Մովսիսի [12]յարեւմտեայս Մովաբու , առ եղերբ Յորդանանու յանդիման Երիքովի ։

---

[1] Եբբ. փախուցելոյն [2] Եբբ. յեբէլ- , յորում էր գութ , զի արիւնն այն պղծէ զերկիրն
[3] Եբբ. նորա [4] Եբբ. պ-ի-ե [5] Եբբ. վիճակաւ
[6] Եբբ. զժառանգութիւն Սաղպատաղու եղբօր մերոյ դստերաց նորա
[7] Եբբ. յոբելեան [8] Եբբ. Ուզիզ խօսեցաւ- [9] Եբբ. որ ժառանգ կոչէ ժառանգութիւն [10] Եբբ. ժառանգեացեն [11] Եբբ. որդւոցն Մանասէի որդւոյն
[12] Եբբ. որդւոցն Իսրայէլի ի դաշտն

ԳԼՈՒԽՔ ԵՐԿՐՈՐԴՄԱՆ ՕՐԻՆԱՑ

	Գլ.	Հմր.
Երկրորդելով մեկնէ Մովսէս զօրէնսն որպէս աղօրց, և ցուցանէ թէ գբաւոսաւն ամ յամէն յանապատին՝ ինքեանք իսկ արարին. զի Տէր Աստուած մեր վազ ուրեմն ասաց ի Խորեբ, թէ մտէք ժառանգեցէք զերկիրն զոր երդուայ տալ զնա ձեզ ի կալուած։	Ա.	1
Ցիշեցուցանէ եւս զի առ ի հանգիստ եւ ի զգուշութիւն նոցա կարգեաց գՇաբաթապետսն։	Ա.	9
Ի նոսա հանէ զպատճառս առաքմանն լբառեացն, եւ թէ զանգիտեցուցչացն լուայք եւ սրանջեցէք զԱստուծոյ, եւ բարկացաւ Տէր եւ ասաց՝ թէ մոլիք ի հանգիստն։	Ա.	19
Թէ զի բարկացուցէք զՏէր, եւ կամեցայք սպառ եյանել ժառանգել զերկիրն, պարտեցայք յԱմովրհացոցն, զի չէր Տէր ընդ ձեզ։	Ա.	41
Թէ յետ երեսուն և ութ ամի լբառեացն իրաց՝ ասաց Տէր դառնալ մնանել յերկիր անդր. այլ մի՛ գրգռել յանցանել ընդ Եդովմ կամ ընդ Մովաբայ։	Բ.	2
Թէ մնանեաց Տէր ի ձեռս նոցա զՍեհոն եւ զՈվգ. եւ ժառանդեցոյց զերկիր նոցա Ռուբենի եւ Գադայ։	Բ.	24
Թէ հրամայեաց Նոցուն երկուց եւ կէսոյ ցեղին՝ առաջապահս վառել առաջի Ցեսուայ յայնկոյս Յորդանանու, մինչեւ զետեղեսցի երկիրն ընդ ձեռամբ։	Գ.	18
Ըղձալի կամելով առնել նոցա զերկիրն՝ Աղաչեցի, ասէ, զՏէր մնանել ի լեառն Սիոն, և անտես արար զիս Տէր վասն ձեր։	Գ.	23
Յօրէնսն ասէ չյաւելուլ ինչ կամ հանանել, այլ պահել ի գովեստ եւ ի շահ անձանց։	Դ.	1
Ցիշեցուցանէ զահեղ երեւումնն Աստուծոյ յօրն եկեզեցւոյ, եւ պատուիրէ չառնել կուռս ձեռագործս։	Դ.	9
Մեծացուցանէ եւս զերբահան, թէ Ինձ բարկացաւ Տէր չմնանել յերկիրն, եւ դուք մնանէք ժառանգել. արդ զգոյշ լերուք՝ զի Աստուած հուր ծախիչ է։	Դ.	21
Համառօտ զերբահանն Աստուծոյ առ նոսա յԵգիպտոսէ եւ յաւաջ։	Դ.	32
Զատոյց զերիս քաղաքսն յանկոյս Յորդանանու՝ յապաւինումն ուկամայ սպանչից։	Դ.	41
Երկրորդէ յանկնջս նոցա զսան պատգամն, եւ զգուշացուցանէ սիրել զՏէր Աստուած, զի Տէր մի է. եւ երկնչել ի Տեառնէ Աստուծոյ՝ զի նախանձոտ է։	Դ.	44
Մի՛ փորձեսցես զՏէր Աստուած քո, եւ զՀաճոյսն առաջի նորա արասցես, զի քեզ բարի է։	Զ.	16
Զառնել խնամութիւն ընդ Քանանացին, այլ փշրել զարձանս նոցա։	Է.	1
Օրհնութիւնս խոստանալ ի պահելն զպատուիրանն։	Է.	11
Զխաստանալ մերժել ասէ զազգն առ սակաւ սակաւ, զի մի՛ թափուր բեսցի երկիրն եւ գազանք ի նմա բազմասցին։	Է.	17
Ցիշեցուցանէ զքանչելիս անապատին, որով վարահ առնէ մեծանալ զնոսա յերկիրն բարի։ Եւ ասա կայ՝ թէ Ոչ հայիւ միայն կեցցէ մարդ։	Ը.	1
Հայեաց յանձն քո, մի՛ հպարտասցիս, զի Տէր Աստուած քո՝ հուրն ծախիչ՝ սատակ զթշնամիս քո։ Աստ յիշէ դառաջին քառասնեակ պահոցն, եւ թէ վասն որթուն զոր մեղայք բարկացաւ ձեզ Տէր, սատակել, ուստի զահի հարեալ եմ եւ դողայ։	Ը.	11
Ցիշեցուցանէ զկրկին աչխատութիւնն երկրորդն քառասնեկի, եւ թէ լուսաւ լինձ Տէր եւ ոչ սատակեայ զձեզ։	Թ.	25
Երկնչել պատուիրէ նոցա ի Տեառնէ, որով ժառանգել մարթասցին զերկիրն։	Ժ.	12
Զգուշանալ պատուիրէ ի դից, եւ խօսել յօրէնն եւ խոկալ ի նմին, այլ եւ ի վերայ սեմոցն եւս գրել զնոյն։	ԺԱ.	13
Օրհնութիւնս եւ անէծս դնէ՝ ի լսելն կամ ի չլսել, եւ հրամայէ կարգալ զայն ի Գերիզիմ։	ԺԱ.	26
Փշրել հրամայէ զարձանս եւ զդրօշեալս ազգացն։	ԺԱ.	32
Ի միւսմ տեղւոջ մատուցանել ասէ զողջակէզսն ի մի աստուածպաշտութիւն զնոսա ժողովելով։	ԺԲ.	5
Աբիւն մի՛ ուտել, զի ուսեալին հեթանոսք զարիւն, եւ մի՛ զսհել պմարդ։	ԺԲ.	20
Մի՛ լսել երազահանաց որք խոտորեցուցանէն զքեզ յԱստուածդ, եւ ոչ եղբօր կամ հեռաւորի։ այլ քարկոծեցին ուր եւ գտանիցին։	ԺԳ.	1
Ի վերայ մեռելոց մի՛ ցեսել կամ ճաղկատ հարկանել։	ԺԴ.	1
Թէ ո՛րք են սուրբք եւ կամ պիղծք յանասնոց՝ ի ջրայնոց կամ յօդականաց։	ԺԴ.	3
Զմեռելոսին՝ պանդուխտ այլազգւոյն տալ ասէ, կամ վաճառել Ա՛յլ ի նորս կանոնք զոյս ոչ հրամայեն, զի պիղծ են գինքն սոցա։	ԺԴ.	21

	Գլ.	Համ.
Մի՛ եփել զգառն ի կաթն մոր իւրոյ։	ԺԳ.	21
Հատուցանել զամենայն տոհմանորդս հետ երից ամաց, մինչեւ սրբեսցի խորհրդով երիցն։	ԺԳ.	22
Ի յիսներորդ ամին՝ թողուլթիւն առնել եղբօրն պարտուց, և մի՛ կրծկել զձեռն առ ի չտալոյ փոխ եղբօրն ի մերձենալ ամին թողլոյ։	ԺԵ.	1
Ցեւթներորդումամի արձակել զերբայեցի ծառայն թողեալօք, որ ինչ չելանէ՝ ծակեսցի ականջն հետ բեամբ։	ԺԵ.	12
Նուիրել ասէ Տէրս ուսանիցին հօտից, իսկ զարտաւորան յամենայն քաղաքս զենուլ, եւ ուտել սրբոց եւ պղծոց։	ԺԵ.	19
Վասն պատուոյ երից մեծամեծ տօնիցն։	ԺԶ.	1
Օրինադրէ դատաւորաց առանց կաշառոց դատել։	ԺԶ.	18
Զառնկել անտառս մերձ առ սեղանն։	ԺԶ.	21
Զնուիրել Տեառն զարբատաւոր անասունն։	ԺԻ.	1
Երկուք եւ երիք վկայիւք մեռցի մահապարտն, եւ բարձեալք գնարն ի միջոյ։	ԺԻ.	2
Զմեծ ինչ դատաստան քահանայիւք դատեսցին, եւ ոչ հաւանեալքն սպանցին։	ԺԻ.	8
Մի՛ զգլխագործ՝ այլ զինսբայելացի կացուսցես իշխան, որում առ իւր ունել զգիրս զայս ասէ։	ԺԻ.	14
Հաս քահանային ի զենլեաց ժողովրդեանն։	ԺՐ.	1
Զդիւթել կամ կախարդել, զի մարգարէ յարուսցէ ձեզ Տէր։	ԺՐ.	9
Երիս եւս քաղաքս զատուցանել ասէ յապաստան ականայ սպանչաց։	ԺԹ.	1
Զկամեք սպանօղն սպանցեն։	ԺԹ.	11
Զյափշտակել զաշխման ընկերին։	ԺԹ.	14
Երկուք եւ երիք վկայիւք սպանցի մահապարտն։	ԺԹ.	15
Որո՛ց պարտ է երթալ ի պատերազմ, եւ որո՛ց դառնալ։	Ի.	1
Օրինակ պաշարելոյ զքաղաքս թշնամեացս։	Ի.	10
Զպղծագործ գիանանացիան ոչ ապրեցուցանել։	Ի.	16
Թէ գտցի սպանեալ ի դաշտի եւ չգիտիցեն զսպանօղն։	ԻԱ.	1
Զխառնակել ընդ գերեալ կանայս մինչեւ ածցէ ի տուն ըստ օրինի։	ԻԱ.	9
Վասն պատուելոյ զանգրանիկս, ի խորհուրդ անգրանկութեան ենկեղեցւոյ։	ԻԱ.	15
Ջարկոծել կամ խաչել ասէ զանառակ որդի, եւ թաղել զխաչեալն նախ քան զմուտս արեւուն։	ԻԱ.	18
Զմոլորեալ եւ զընդ բեռամբ անկեալ գրաստ եղբօրն յարուցանել։	ԻԲ.	1
Վասն պատշաճ զգեստուց արանց եւ կանանց, ի խորհուրդ ողջ պահելոյ զսահմանն բնութեանս։	ԻԲ.	5
Ջառնալ զմայրն եւ զձագս հաւուց։	ԻԲ.	6
Պատուաբս դնել չուրջ զտանեօք։	ԻԲ.	8
Զվարել այլ եւ այլ զայգի, ի խորհուրդ կնոջ մնաւանդ յղոյ։	ԻԲ.	9
Զվարել եզամբ եւ իշով, որ է չհաղորդել սրբոյն ընդ պղծուն։	ԻԲ.	10
Ականջախառն չզգենուլ, սուրբն զվարս պղծոց։	ԻԲ.	11
Ծոպս առնել նշան անմոռացութեան։	ԻԲ.	12
Որ բամբասէ զկին իւր ի չնութիւն նախ քան զառնուլն զնա։	ԻԲ.	13
Սպանանել զչնացեալսն։	ԻԲ.	22
Վասն խօսեցելոյ եւ պղծելոյ կուսի ի դաշտի կամ ի քաղաքի, եւ վասն ոչ խօսեցելոյ։	ԻԲ.	23
Զմտանել առ մերս։	ԻԲ.	30
Վասն կրճատելոց եւ վասն պոռնկորդեաց։	ԻԳ.	1
Մերժել զԱմմնացին եւ զՄովաբացին։	ԻԳ.	3
Վասն եկաց Եգիպտացւոց եւ Եդոմացւոյ։	ԻԳ.	7
Սուրբ պահել զբանակն ի բնական աղտեղութենէ, ցիցս զգօտեաւ կրեալով։	ԻԳ.	9
Զմտանել զծառայ ի չար տեառնէ փախուցեալ։	ԻԳ.	15
Զպոռնկել եւ չնուիրել դիւաց։	ԻԳ.	17
Գարշելի ասէ գոլ զվարձս չնութեան։	ԻԳ.	18
Հրաժեշտ տայ ի վաշխից։	ԻԳ.	19
Զեգեալ ուխտ չյապաղել։	ԻԳ.	21
Յարտ եւ յայգի այլոց մտեալ ուտել միայն, եւ ոչ ամանել։	ԻԳ.	24
Ոչ կարէ գրով արձակեալ կին եւ այլեալ եղեալ, ի մեռանել վերջնոյ առնն, դառնալ յառաջինն։	ԻԴ.	1
Նորոգ փեսայացեալն մի՛ ելցէ ի պատերազմ։	ԻԴ.	5
Զգրաւել զերկուս երկանաքարս։	ԻԴ.	6
Մարդագողն մահու սպանցի։	ԻԴ.	7
Բորոտն արտաքոյ բանակին լիցի։	ԻԴ.	8
Դարձուցանել զգրաւն նախ քան զմուտս արեւուն։	ԻԴ.	10
Զվարձ վարձկանին ի նմին աւուր վճարել՝ նախ քան զմուտս արեւուն։	ԻԴ.	14
Մի՛ մեռցի հայր ընդ մեղաց որդւոյ։	ԻԴ.	16
Զզղուել զորբս, եւ չգրաւել զանանկս։	ԻԴ.	17
Չառնել հասկաքաղ, ոչ ճռաքաղ եւ ոչ պտղաքաղ։	ԻԴ.	19
Քառասուն անգամ հարկանել զարժանին գանի, եւ այլ ոչ։	ԻԵ.	1
Զկապել զցուռկ եզին կալոտւոյ։	ԻԵ.	4
Կենդանի եղբայրն առցէ զկին անզաւակ եղբօր մեռելոյ, ապա թէ ոչ՝ տուն բոկացելոյ կոչեսցի։	ԻԵ.	5
Կին ոք թէ ի թափել զայր իւր զերկաւորեաց մարտակցին կոյցի՝ կրեսցի ձեռն։	ԻԵ.	11
Կշիռք եւ չափք արդար լինիցին։	ԻԵ.	13
Զանուն Ամաղեկայ ջնջել ասէ, որ կատարեցաւ ի ձեռն Մուրթքէի, յահ եւ յերկեղ խակագործաց։	ԻԵ.	17
Առաջին պտղովքն ելանել ասէ ի տեղի անուանն Աստուծոյ, եւ գոհանալ վանս քերոց երկրին։	ԻԶ.	1

	Գլ.	Համ.
Ցերկրորդումն ամին կրկին տաստանորդս տալ, զմին Ղեւտացւոց և զմեւսն աղքատաց։	Ի.	12
Ի վերայ բռնաւ քարեայ սեղանոյ գրել սակ զբանս օրինացն, զի ընթերցեալ ուսցին հեթանոսք յանցանելն ընդ Հունն Յորդանանու։	Իա.	1
Կարգէ անէծս եւ օրհնութիւնս ընթեռնուլ յերկուս լերինսն ի լուր ամենայն ազգին, կամ զարհուրել յանիծիցն կամ փափաքել օրհնութեանցն. և կարի տպետուր առնէ զանէծսն, եւ ասա կայ այն, թէ գկեանս քո տեսցես կախեալ զփայտէ։	Իե.	9
Համառօտէ զամենայն բարիսն Աստուծոյ առ նոսա յԵգիպտոսէ եւ յաւաջ. և զգուշացուցանէ եւ զոչ եւս ծնեալսն ի դից պաշտելոյ խառնելով նզովս։	Իթ.	2
Ահեղ ցուցանէ զսաստն Աստուածոյ ի յանցուցեալսն եւ կորուսիչս. եւ յոյս օրհնութեան տայ ի զղջանալն, խրատեալ յօրինացս՝ որ ոչ են հեռի, այլ ի սիրտս եւ յանձին։	Իփ.	19
Ցայտ տառնէ Մովսէս՝ զի յետ իւր Ցեսուայ յանձնի ժողովրդին, զոր եւ յորդորէ քաջալերելով։	Լև.	1
Գրեալ զօրէնսս տայ յաւանդ ցքահանայսն՝ ընթեռնուլ յամենից ժողովրդեանն։	Լև.	9
Եչ Տէր ամպով տայ Հրաման Ցեսուայ, եւ գուշակեաց Մովսիսի զոր ինչ առնելոց էր ժողովուրդն. եւ հրամայեաց գրել զօրհնութիւնն ի վկայութիւն անօրինելոցն ի գտանել զնոսա չարեացն իւրեանց։	Լև.	14
Քաջալերեալ Մովսիսի զՑեսու՝ գրեաց զօրհնութիւնն ի մատեան, և ետ ի պահեստ ՚Ղեւտացիսն։	Լև.	23
Հրաման առեալ Մովսիսի ելանել ի լեառն՝ տեսանել զերկիրն եւ վախճանիլ, և նախ քան զելանելն՝ յաւաջեաց օրհնեաց զԻսրայէլ միահամուռս, եւ ըստ ցեղից ցեղից՝ բաց ի Շմաւոնէ։	Լր.	48
Ել Մովսէս ի լեառն Նաբաւ. եւ տես զերկիրն զոր ունելոց էր Իսրայէլ, եւ վախճանեցաւ։	Լդ.	1
Չի եկաց Ցեսու փոխանակ Մովսիսի առաջնորդ ժողովրդեանն։	Լդ.	9

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՕՐԻՆԱՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 Ա՛ՅՍ են պատգամք զոր խօսեցաւ Մովսէս ընդ ամենայն Իսրայելի յայնկոյս Յորդանանու յանապատին [1]յարեւմուտս՝ մերձ ի Ծովն Կարմիր, ի մէջ Փառանտիփոզայ, եւ Ղոբանայ,
2 եւ Հանդրուանացն եւ Ոսկեկայ՝: (Մեւտասանօրեայ ճանապարհ ի Քորեբայ [2]ցլեառն Սէիր՝ մինչեւ ցկադեսբառնեայ)
3 Եւ եղեւ ի քառասներորդումն ամի, յամսեանն մետասաներորդումն, որ օր մի էր ամսոյն, խօսեցաւ Մովսէս ընդ [3]ամենայն որպիսի Իսրայելի, ըստ ամենայնի որպէս պատուիրեաց Նմա Տէր առ նա-
4 սա, Յետ հարկանելոյ զԱհեհն արքայ Ամովրհացւոց զրնակեալն յԵսեբոն, եւ զՈվգ արքայ Բասանու զրնակեալն
5 յԱստարովթ եւ յԵդրայիմ. Յայնկոյս Յորդանանու յերկրին Մովաբու սկսաւ Մովսէս մեկնել զօրէնս զայսոսիկ եւ ասէ,
6 Տէր Աստուած մեր խօսեցաւ ընդ մեզ ի Քորեբ եւ ասէ, Շատ լիցի ձեզ բնա-
7 կելդ ի լերինս յայսմ. Դարձարուք եւ չուեցէք դուք ասի, եւ մտանիցէք ի լեառնն Ամովրհացւոց, եւ առ ամենեսին որ չուրջ բնակեալ իցեն [4]զԱրաբաց-ուովք ի լերինս եւ ի դաշտս՝ ընդ հարաւ եւ ընդ [5]ծովեզրն Քանանացւոց, եւ յա-ներն Լիբանանու՝ մինչեւ ցգետն մեծ
8 ցգետն Եփրատ: Տեսէք զի ահա մատնեցի առաջի ձեր զերկիրն, մտէք ժառանգեցէք զերկիրն զոր երդուայ ես հարցն ձերոց, Աբրահամու եւ Իսահակայ եւ Յակոբայ, տալ նոցա եւ զաւակի նոցա յետ նոցա [3]զերկիրն որ բղխէ զկաթն եւ զմեղր՝:
9 Եւ խօսեցայ ընդ ձեզ ի ժամանակին յայնմիկ եւ ասեմ, Ոչ կարեմ միայն հան-
10 դարտել ձեզ. Տէր Աստուած [6]մեր բազմացոյց զձեզ, եւ ահաւասիկ էք դուք այսօր իբրեւ զաստեղս երկնից բազմու-
11 թեամբ: Տէր Աստուած հարցն [7]մերոց յաւելցէ ի ձեզ եւս քան որչափ էքդ հազարապատիկ, եւ օրհնեսցէ զձեզ որպէս
12 եւ խօսեցաւ ընդ ձեզ: Եւ զիա՞րդ կարիցեմ միայն կրել զաչխատութիւն ձեր եւ [8]զգաղտս ձեր եւ զհակառակութիւնս
13 ձեր: Արդ տուք ի ձէնջ արս իմաստունս եւ խորհրդականս եւ [9]հանճարեղս ի վերայ՝ ցեղից ձերոց, եւ կացուցից ի
14 վերայ ձեր իշխանս ձեզ: Եւ պատասխանի տուեալ ասացէք ցիս, Բարւոք է
15 բանդ զոր խօսեցար առնել: Եւ առի ի ձէնջ զգեղապետան, արս իմաստունս եւ հանճարեղս եւ խորհրդականս, եւ կացուցի զնոսա ի վերայ ձեր առաջնորդս. հազարապետս եւ հարիւրապետս եւ յիսնապետս եւ տասնապետս եւ տեղեա-կալս ազերոց ձերոց:
16 Եւ պատուիրեցի զատաւորացն ձերոց ի ժամանակին յայնմիկ եւ ասեմ, Լուարուք առենի ի մէջ եղբարց ձերոց, եւ զատեցարուք արդարութեամբ ի մէջ առն եւ եղբօր իւրոյ, եւ ի մէջ եկին իւրոյ.
17 Եւ մի առնուցուս ակն ի դատաստանի, [10]ըստ փոքուն եւ ըստ մեծին զատիցիս՝. եւ մի խորշիցիս երեսաց մարդոյ, զի դատաստանն Աստուծոյ է. եւ բան ինչ որ ծանրագոյն քան զձեզ իցէ, հասուս-
18 ջիք առ իս եւ լուայց: Եւ պատուիրեցի ձեզ ի ժամանակին յայնմիկ զամենայն բանս զոր առնիցէք:
19 Եւ չուեալ ի Քորեբայ չրջեցաք ընդ ամենայն անապատն ընդ մեծ եւ ընդ ահագին, զոր դուք իսկ տեսէք, զճանապարհ լերինն Ամովրհացւոց, որպէս պատուիրեաց Տէր Աստուած մեր մեզ, 20 եւ եկաք մինչեւ ցկադեսբառնեայ: Եւ ասացի ցձեզ, Եկայք մինչեւ ցլեառնն Ամովրհացւոց զոր Տէր Աստուած մեր

[1] ԵՖԳ. ի դաշտին, մերձ ի Սուփ, ի մէջ Փառանու եւ Տոփեղայ, եւ Ղոբանայ, եւ Աեբրովթայ եւ Տիզահաբայ [2] ԵՖԳ. ընդ ճանապարհ լերինն Սէիր [3] ՅԵՖԳ. գոլ-ե [4] ԵՖԳ. ի դաշտին, ի լերինն եւ ի հովտին եւ [5] ԵՖԳ. ծովեզրն, ընդ երկիրն Քանանացւոց եւ ի Լիբանան

[6] ԵՖԳ. ձեր [7] ԵՖԳ. ձերոց [8] ԵՖԳ. զբեռն [9] ԵՖԳ. ծանօթս [10] ԵՖԳ. որպէս մեծին, նոյնպէս փոքուն լուիջիք

21 տացէ [1]ձեզ ։ [2]Տեսէք զի Տէր Աստուած [3]մեր մատնեաց առաջի երեսաց [4]ձերոյ զերկիրն . [5]ելէք , ժառանգեցէք՝ որպէս ասաց Տէր Աստուած հարցն [6]մերոց ձեզ՝. մի [7]երկնչիցիք եւ մի զանգիտիցէք՝։

22 Եւ մատեայք առ իս ամենեքեան եւ ասացէք , Առաքեսցուք յառաջագոյն քան զմեզ արս , եւ դիտեսցեն մեզ զերկիրն , եւ պատմեսցեն մեզ զճանգամանս ճանապարհին ընդ որ ելանիցեմք անդր ,

23 եւ զքաղաքացն յորս մտանիցեմք ։ Եւ հաճոյ թուեցաւ առաջի իմ բանն . եւ առի ի ձէնջ երկոտասան այր , այր մի

24 ըստ ցեղի ։ Եւ գնացին ելին ի լեառնն , եւ հասին մինչեւ ի Ձորն ողկուզի , եւ

25 լրտեսեցին զնա ։ Եւ առին ի ձեռս իւրեանց ի պտղոյ երկրին , եւ իջին առ մեզ եւ բերին մեզ զբոյց . ասեն , Բարի է երկիրն զոր Տէր Աստուած տալոյ է մեզ ։

26 Եւ ոչ կամեցայք ելանել , եւ հեատեցէք

27 բանին Տեառն Աստուծոյ [8]մերոյ . Եւ տրտնջեցէք ի վրանս ձեր եւ ասացէք , Ա՛ռ առեալ[թ]եան Տեառն նէնան զմեզ յերկրէն եգիպտացւոց՝ մատնել զմեզ ի ձեռս Ամաղրնացւոց , սատակել զմեզ ։

28 Արդ յո՞ ելանիցեմք . եւ եղբարք [9]ձեր զանգիտեցուցին զսիրտս [9]ձեր եւ ասեն , Ազգ մեծ եւ բազում եւ գօրագոյն է քան զմեզ , եւ քաղաքք մեծամեծք եւ պարսպաւորք մինչեւ յերկինս . այլ եւ [10]որդիս սակայիւ՝ տեսաք մեք անդ ։ Եւ ասացի ցձեզ , Մի զանգիտիցէք եւ մի

30 զարհուրիք ի նոցանէ . Տէր Աստուած [11]մեր որ երթայ առաջի երեսաց ձերոց , նա տայ պատերազմ ընդ նոսա փոխանակ ձեր , ըստ ամենայնի զոր արար ձեզ յերկրին եգիպտացւոց առաջի աչաց ձե-

31 րոց ։ Եւ յանապատիս յայսմիկ զոր տեսէք , զի տոյց զքեզ Տէր Աստուած քո , որպէս տնուցանիցէ ոք զորդի իւր , ըստ ամենայն ճանապարհին զոր գնացէք մինչ-

32 չեւ եկիք ի տեղիս յայս ։ Եւ ի բանիս յայսմիկ ոչ հաւատացէք Տեառն Աստուա-

33 ծոյ ձերոյ , Որ երթայ առաջի ձեր ի ճանապարհի ընտրել ձեզ զտեղին , առաջնորդել ձեզ հրով ի գիշերի , գուցանել ձեզ ճանապարհ ընդ որ գնայցէք , եւ

34 ամպով ի տուէ ։ Եւ լուաւ Տէր զձայն բանիցն ձերոց , եւ բարկացեալ երդուաւ

35 եւ ասէ , Թէ տեսանիցէ ոք յարանցդ յայդցանէ[12] զերկիրն բարի զոր երդուայ

36 տալ հարցն նոցա . Բայց Քաղէբ որդի Յեփոնեայ , նա տեսցէ զնա , եւ նմա տայ զերկիրն յոր հետս եւ որդւոցն նորա ,

37 վասն յարելոյ նորա ի Տէր ։ Եւ ինձ բարկացաւ Տէր վասն ձեր եւ ասէ , Եւ դու

38 մի մտցես անդր ։ Այլ Յեսու որդի Նաւեայ սպասաւոր քո , նա մտցէ անդր . զնա զօրացո , զի նա ժառանգեցուցանէ

39 զնա Իսրայէլի ։ Եւ ծնունդք եւ որդիք ձեր զոյոց ասացէք թէ ի յափշտակութիւն լինիցին , եւ ամենայն մանուկ մատագ որ ոչ գիտիցէ այսօր զբարի կամ զչար , նոքա մտցեն անդր , եւ նոցա տայ զնա , եւ նոքա ժառանգեսցեն զնա ։

40 Եւ դուք դարձարուք եւ չուեցէք յանապատն ընդ ճանապարհ կարմիր ծովուն ։

41 Եւ պատասխանի եատուք ինձ եւ ասացէք , Մեղաք առաջի Տեառն Աստուծոյ մերոյ . ելցուք մեք , տացուք պատերազմ , որպէս պատուիրեաց մեզ Տէր Աստուած մեր . եւ առեալ իւրաքանչիւր զզէնսն պատերազմի իւրոյ՝ գումարեցայք ելեալ ի լեառնն ։ Եւ ասէ ցիս Տէր ,

42 Աստ ցնոսա , Մի ելանէք եւ մի մարտնչիք , զի չեմ ընդ ձեզ , գուցէ խորտակիցիք

43 առաջի թշնամեաց ձերոց ։ Եւ խօսեցայ ընդ ձեզ , եւ ոչ լուարուք ինձ , եւ անցէք զբանիւ Տեառն , եւ անսաստեցէք

44 ելէք ի լեառնն ։ Եւ ելեալ Ամաղրնացին , որ բնակեալն էր ի լերինն յայնմիկ , ընդդէմ ձեր՝ հալածեաց զձեզ , որպէս պատիցի մեղու , եւ խոցոտեցին զձեզ ի

45 Սէիրայ մինչեւ ցՀերմա ։ Եւ նստեալ լայիք առաջի Տեառն , եւ ոչ լուաւ Տէր

46 ձայնի ձերում , եւ ոչ անսաց ձեզ ։ Եւ նստայք ի Կադէս աւուրս յազումս , որչափ աւուրս երբեմն նստայք անդր ։

Գլ. Բ

1 Եւ դարձաք չուեցաք յանապատն ընդ ճանապարհ կարմիր ծովուն , զոր օրինակ խօսեցաւ Տէր ընդ իս , եւ պատեցաք

2 զԱսէիր լերամբ աւուրս բազումս ։ Եւ

3 ասէ ցիս Տէր , Շատ լիցի ձեզ պատել զլերամբդ . արդ դարձարուք ընդ կողմն

4 հիւսիսոյ ։ Եւ ժողովրդեանդ պատուէր տուր եւ ասասցես , Դուք աւազիկ ան-

---

[1] ԵԲԸ· մեզ [2] ԵԲԸ· Տես [3] ԵԲԸ· քո [4] ԵԲԸ· քոց
[5] ԵԲԸ· ել՝ ժառանգեա [6] ԵԲԸ· քոց քեզ [7] ԵԲԸ· երկնչիցիս եւ մի՛ զանգիտիցես [8] ԵԲԸ· ձերոյ
[9] ԵԲԸ· մեր [10] ԵԲԸ· զորդիան ենակայ [11] ԵԲԸ· ձեր

[12] ԵԲ-ոյեցն յ--ել--, յազգէ այսի չարէ ,

ցանէք առ սահմանօք եղբարց ձերոց՝ որդւոց Եսաւայ, որ բնակեալ են ի Սէիր. եւ երկնչիցին ի ձէնջ, եւ զգուշանայցէք յոյժ. Մի՛ զրգռիցիք ընդ նոսա ի պատերազմ, զի ոչ տայ ձեզ յերկիրէ նոցա եւ ոչ քայլ մի ոտին. քանզի վիճակաւ եւ տուաւ Եսաւայ զնոսայն Սէիր։ Կերակուրս գնեսջիք ի նոցանէ[1] եւ կերիջիք, եւ ջուր չափով արծաթոյ առջիք ի նոցանէ եւ արբջիք. Զի Տէր Աստուած [2]ձեր օրհնեաց զքեզ յամենայն գործս ձեռաց քոց. [3]Ծանիր զիարդ անցեր ընդ անապատն մեծ եւ ահագին. ահա քառասուն ամ Տէր Աստուած քո ընդ քեզ է, եւ ոչ իւիք կարօտացար։

Եւ անցաք առ եղբարսըք մերովք որդւովքն Եսաւայ բնակելովքն ի Սէիր, առ ճանապարհաւն [4]Արաբացւոց յԵղովմայ", եւ ի Գասիոնգաբերայ. եւ դարձեալ անցաք ընդ ճանապարհ անապատին Մովաբ։ Եւ ասէ ցիս Տէր, Մի՛ թշնամանայցիք ընդ Մովաբացիսն եւ մի՛ զրգռիցէք ընդ նոսա պատերազմ. զի ոչ տայ [5]ձեզ յերկրէն նոցա ի վիճակ. քանզի որդւոցն Ղովտայետուս [6]զՍէիր ի ժառանգութիւն։ Եւ Եմմինքն նախ բնակեալ էին ի նմա, ազգ մեծ եւ բազում եւ [7]հզօր. Որպէս Ենակիմք ընդ Ռափայիմն համարիցին," նոյնպէս եւ նոքա իբրեւ զենակիմս. եւ Մովաբացիք անուանեն զնոսա Եմմինս։ Եւ ի Սէիր նախ բնակեալ էր Քոռեղին. եւ որդիքն Եսաւայ կորուսին զնոսա, եւ սատակեցին զնոսա յերեսաց իւրեանց, եւ բնակեցան փոխանակ նոցա. զոր օրինակ արար Իսրայէլ զերկիր ժառանգութեան իւրոյ զոր ետ Տէր նոցա ի վիճակ։ Արդ արի՛ք եւ անցէք ընդ ձորն Զարեդ։ Եւ անցաք ընդ ձորն Զարեդ։ Եւ աւուրք որչափ անկան մեզ ի գնալն մեզ ի Կադեսբառնեայ մինչեւ անցաք ընդ ձորն Զարեդ, երեսուն եւ ութ ամ. մինչեւ անկաւ ամենայն ազգ արանց պատերազմողաց ի բանակէ անտի, որպէս երդուաւ նոցա [9]Աստուած։ Եւ ձեռն [10]Աստուծոյ էր ի վերայ նոցա ոտնակել զնոսա ի բանակէն, մինչեւ անկան։

Եւ եղեւ իբրեւ անկան ամենայն արք պատերազմողք մեռեալք ի միջոյ ժողովրդեանն, խօսեցաւ Տէր ընդ իս եւ ասէ, Դու անցանես այսօր առ սահմանս Մովաբու [11]ի Սէիր, եւ մօտ հասանիցէք յորդիսն Ամմոնայ, մի՛ թշնամանայցիք ընդ նոսա, եւ մի՛ զրգռիցէք ընդ նոսա պատերազմ. զի ոչ տայ ձեզ զերկիր որդւոցն Ամմոնայ ի վիճակ, քանզի որդւոցն Ղովտայ ետուս զնա վիճակաւ։ (Երկիր [12]որ Ռափիմայ համարիսցի". քանզի նախ՝ [13]Ռափայիմք բնակէին ի նմա, եւ Ամմոնացիք անուանեն զնոսա Զոմզոմիմս. Ազգ մեծ եւ բազում եւ [14]զօրաւոր իբրեւ զենակիմսն. եւ կորոյս զնոսա Տէր յերեսաց նոցա, եւ ժառանգեցին եւ բնակեցին փոխանակ նոցա. Որպէս արար որդւոցն Եսաւայ բնակելոց ի Սէիր, զոր օրինակ սատակեաց Տէր զՔոռեղին յերեսաց նոցա, եւ ժառանգեցին եւ բնակեցին փոխանակ նոցա մինչեւ ցայսօր։ Եւ Ղեւացիքն որ բնակեալ էին յԱխրովիթ մինչեւ ցԳազա. եւ [15]Գաւիրքն որ եկեալ էին ի Գամրաց" սատակեցին զնոսա, եւ բնակեցան փոխանակ նոցա։) Արդ արի՛ք չուեցէք եւ անցէք ընդ ձորն Առնովնայ. ահա մատնեցի ի ձեռս քո զՍեհոն արքայ Եսեբոնայ զԱմովրհայի. եւ զերկիր նորա սկսեր ժառանգել, եւ գրգռել ընդ նմա պատերազմ։ Յօրէ յայսմանէ [16]սկսեր տալ զահ եւ զերկիւղ քո առաջի ամենայն ազգաց որ են ի ներքոյ երկնից, զի որք լսիցեն զանուանէ քումմէ՝ խռովեսցին, եւ երկունք կալցին զնոսա յերեսաց քոց։ Եւ առաքեցի հրեշտակս յանապատէն Կեդմովթայ առ Սեհոն արքայ Եսեբոնայ խաղաղութեան, եւ ասեմ, Անցից ընդ երկիր քո, զճանապարհն գնացից, ոչ խոտորեցայց յայլ եւ ոչ յահեակ։ Կերակուր՝ արծաթոյ վաճառեսցես ինձ եւ կերայց, եւ ջուր՝ արծաթոյ վաճառեսցես ինձ եւ արբից, բայց զի ոտիւք եւ երթ անցից. Որպէս արարին ինձ որդիքն Եսաւայ բնակեալքն ի Սէիր, եւ Մովաբացիքն բնակեալք [17]յԱրոյէր, մինչեւ անցից ընդ Յորդանան յերկիրն զոր Տէր Աստուած տացէ մեզ։ Եւ ոչ կամեցաւ Սեհոն արքայ Եսեբոնայ անցանել

[1] ԵԲԸ-ՅԵՁԻՆ յ-ԻԼԸ-, արծաթոյ [2] ԵԲԸ· քո [3] ԵԲԸ· գիտէ [4] ԵԲԸ· դաշտին՝ յԵղաթայ [5] ԵԲԸ· քեզ [6] ԵԲԸ· զԻր [7] ԵԲԸ· երկայնահասակ իբրեւ զենակիմն. (11) Ընդ հակառակս համարէին [8] ԵԲԸ-ՅԵՁԻՆ յ-ԻԼԸ-, եւ անցաք ընդ ձորն Զարեդ [9] ԵԲԸ· Տէր [10] ԵԲԸ· Ցեռաձ

[11] ԵԲԸ· ընդ Ար [12] ԵԲԸ· հակառակ համարէր [13] Ա-ՅԻՆՆ-, հակառակ [14] ԵԲԸ· երկայնահասակ [15] ԵԲԸ· Կափթորացիքն որ եկեալ էին ի Կափթորայ [16] ԵԲԸ· սկսայց [17] ԵԲԸ· յԱր

մեզ առ նովաւ. զի խստացոյց Տէր Աստուած [1]մեր զոգի նորա, եւ կարծրացոյց զսիրտ նորա, զի մատնեսցի ի ձեռս
31 քո յաւուրս յայսմիկ։ Եւ ասէ ցիս Տէր, Ահա սկսեալ եմ մատնել առաջի երեսաց քոց զԱհեան [2]արքայ Եսեբոնի զԱմովրհացի՛ եւ զերկիրն նորա. սկսիր վիճակաւ
ժառանգել զերկիրն նորա։
32 Եւ ել Սհեան [2]արքայ Եսեբոնի՛ ընդդէմ մեր, ինքն եւ ժողովուրդ իւր պատեր-
33 բազմաւ ի Յասսա։ Եւ մատնեաց զնա Տէր Աստուած մեր ի ձեռս մեր, եւ հարաք զնա եւ զորդիս նորա եւ զամենայն
34 ժողովուրդ նորա. Եւ յալխեցաք զամենայն քաղաքսայն նորա ի ժամանակին յայնմիկ, եւ սատակեցաք զամենայն
[3]քաղաքս նորա մի բոլ մինչէ, եւ զկանայս նոցա եւ զմանկունս խրեանց. եւ՝
35 ոչ թողաք ի նոցանէ ապրեալ. Բայց զի զխաչխան ածաք յաւարի եւ զկապուտ
36 քաղաքաց զոր առաք։ ՅԱրոյերայ որ է առ եզերբ ձորոյն Առնովնայ, եւ զքաղաքն որ է ի ձորն, մինչեւ ցսահմանս Գաղաադու, ոչ էր քաղաք որ ապրեցաւ ի մէնջ. այլ զամենայն մատնեաց Տէր
37 Աստուած մեր ի ձեռս մեր։ Բայց յերկիր որդւոցն Ամմոնայ՝ ոչ մերձեցաք, զամենայն արուարձանս ձորոյն Յաբովկայ, եւ զամենայն քաղաքսն լեռնականս, որպէս՝ պատուիրեաց մեզ Տէր Աստուած մեր։

Գլ. Գ

3 1 Եւ դարձաք ելաք ընդ ճանապարհն Բասանու, եւ ել Ովգ արքայ Բասանու ընդդէմ մեր, ինքն եւ ամենայն ժողովուրդ
2 նորա պատերազմաւ յերկրային։ Եւ ասէ ցիս Տէր, Մի երկնչիցիս ի նմանէ, զի ի ձեռս քո մատնեցի զնա եւ զամենայն ժողովուրդ նորա եւ զամենայն երկիր նորա. եւ արասցես նմա որպէս արարեր Սհեոնի արքայի Ամովրհացւոց որ
3 բնակեալ էր Եսեբոն։ Եւ մատնեաց [2]զնա Տէր Աստուած մեր ի ձեռս մեր եւ զՈվգ արքայ Բասանու եւ զամենայն ժողովուրդն նորա. եւ հարաք զնա մինչ ոչ
4 թողուլ նմա զաւակ։ Եւ յալխեցաք ամենայն քաղաքացն նորա ի ժամանակին յայնմիկ. եւ ոչ էր քաղաք զոր ոչ առաք ի նոցանէ. վաթսուն քաղաք զամենայն չուրջ զպատառաւն Արգովբայ,
5 թագաւորին Ովգայ ի Բասան։ Ամենայն քաղաքք ամուրք բարձրապարիսպք դրամբք եւ դռնափակօք. Թող զքազաքն արձակաքաղաքս [2]Փերեզայոց
6 բազումս յոյժ։ Եւ սատակեցաք զնոսա, որպէս արարաք զԱհեոն արքայ Եսեբոնի. եւ սատակեցաք զամենայն քաղաքսն
[5]մի բոլ մինչ եւ զկանայս եւ զմանկունս եւ զմանկունս. եւ ոչ թողաք մազապուր։" Եւ
7 զամենայն զանասուն եւ զկապուտ քա-
8 զաքացն աձաք մեզ յաւար։ Եւ առաք ի ժամանակին յայնմիկ զերկիրն ի ձեռաց երկուց թագաւորացն Ամովրհացւոց, որ էին յայնկոյս Յորդանանու, յԱռ-
9 նովնայ մինչեւ ցՀերմոն։ Եւ [6]փիւնիկեցիք անուանեցին զՀերմոն Սանիովր, եւ Ամովրհացիքն անուանեցին զնա Սա-
10 նիր։ Ամենայն քաղաքք [7]Միսովրայ եւ ամենայն Գաղաադ եւ ամենայն Բասան, մինչեւ ցեղբա, եւ ցԵկրայիմ, քաղաքք թագաւորութեան Էին Ովգայ ի Բասան։
11 Զի Ովգ միայն արքայ Բասանու մնաց [8]յՌափայնոց անտի. եւ գահոյք նորա դահոյք կրկաթիք, եւ անա է այն յամրոյն որդւոցն Ամմոնայ. ինն կանգուն երկայնութիւն նորա եւ չորք կանգունք լայնութիւն նորա, [9]սկայից կանգնով։
12 Եւ զերկիրն զայն ժառանգեցաք ի ժամանակին յայնմիկ յԱրոյերայ որ է առ եզերբ ձորոյն Առնովնայ, [10]եւ զկէս ձորոյն՝
Գաղաադու եւ զքաղաքս նորա ետու
13 Ռուբինի եւ Գադայ. Եւ զաւելորդն Գաղաադու եւ զամենայն Բասան, պատառութիւնն Ովգայ, ետու կիսոյ ցեղին Մանասէի, զամենայն գաւառն Արգովբայ եւ զամենայն Բասանն, որ եր-
14 կիր [11]Ռափայնոյն համարիցի։ Եւ Յայիր, որդի Մանասէի, առ զամենայն գաւառն Արգովբայ մինչեւ ցսահմանս Գաղաադայ եւ Ումքաթայ. եւ անուանեաց [12]զնա յիւր անուն զԲասան՝ Աւովթ-Յայիր", մինչ-
15 չեւ ցայսօր ժամանակի։ Եւ Մաքիրայ
16 ետու զԳաղաադ։ Եւ Ռուբինի եւ Գադայ ետու ի Գաղաադէ մինչեւ ի ձորն

[1] ԵԲԲ. քո [2] ՅԵԲԲ. դե՛ւ-ս [3] ԵԲԲ. քաղաքս, զարս եւ զկանայս եւ զմանկունս. [4] ԵԲԲ. ոչ մերձեցաք, յամենայն կողմն ձորոյն Յաբովկայ, եւ ի քաղաքսն լեռնականս եւ յամենայն յոր
[5] ԵԲԲ. զարս եւ զկանայս եւ զմանկունս։ [6] ԵԲԲ. Սիդոնացիք [7] Այլ՝ Միդովնացիք [8] Այլ՝ Հաշխն, դաշտին բարձու [9] Այլ՝ Հաշխն, ի Հակայից [10] ԵԲԲ. մինչեւ ի կէս լերինն [11] Այլ՝ Հակայից [12] ԵԲԲ. զնոսա յիւր անուն Բասան-Աւովթ-Յայիր

Աստուածայ, ընդ մէջ ձորոյն՝ սահման մինչեւ ցՅարեովկ, ձորն սահման որդւոցն
17 Հոգն Ամմանայ, եւ [1]Արաբա, եւ Յորդանան սահման է նմա՞ի Քինկերեթայ մինչեւ ցծովն [2]Արաբայ՝ ծովն Ազի յԱստղաւլխայ յարեւելից Փասգայ՞։
18 Եւ պատուիրեցի ձեզ ի ժամանակին յայնմիկ եւ ասեմ, Տէր Աստուած [3]մեր ետ ձեզ զերկիրս զայս ի վիճակ. վառեսյարուք անցէք առաջի եղբարց ձերոց, որդւոցն Իսրայելի, ամենայն զօրաւոր.
19 բայց կանայք ձեր եւ մանկունք ձեր եւ անասունն ձեր, գիտեմ զի անասուն բազում է ձեր, բնակեսցին ի քաղաքս ձեր
20 զոր ետու ձեզ, մինչեւ զհանգուցէ Տէր [4]Աստուած մեր՞ զեղբարս ձեր, որպէս եւ զձեզդ, զի ժառանգեսցին եւ նոքա զերկիրն զոր Տէր Աստուած [3]մեր տացէ նոցա յայնկոյս Յորդանանու։ Եւ դարձջիք այսրէն իւրաքանչիւր ժառանգութիւն իւր զոր ետու ձեզ։
21 Եւ Յեսուայ պատուիրեցի ի ժամանակին յայնմիկ եւ ասեմ, Աչք [5]ձեր իսկ տեսին զամենայն զոր արար Տէր Աստուած [3]քո ընդ երկուս թագաւորսն ընդ այնոսիկ. նոյնպէս արասցէ Տէր ընդ ամենայն թագաւորութիւնս յորոց վերայ
22 դիմիցես դու. Մի զանգիտիցէք[6]. զի Տէր Աստուած [3]մեր ինքնին պատերազմեսցի փոխանակ ձեր։ Եւ աղաչեցի զՏէր
23 Աստուած ի ժամանակին յայնմիկ եւ ասեմ, Տէր, Տէր, դու սկսար ցուցանել ծառայի քումմ զառաքինութիւն քո եւ զզօրութիւն քո, զՁեռն հզօր եւ զբազուկ բարձր. քանզի ո՞վ է Աստուած յերկինս կամ յերկրի որ առնիցէ որպէս դու [7]արարեր ըստ՞ զօրութեան քումմ։
25 Արդ անցեալ տեսից զերկիրն բարի որ է յայնկոյս Յորդանանու, զլեառնն բա-
26 րի եւ [8]զերկրորդն Լիբանան՞։ Եւ անտես արար զիս Տէր վասն ձեր, եւ ոչ լուաւ ինձ. եւ ասէ ցիս Տէր, Շատ լիցի քեզ, մի՛ եւս յաւելուցուս խօսել զբանդ
27 զայդ. Ել ի կատար [9]կռմաձոյիդ, եւ հառեցեալ աչօք քովք ընդ ծովակոզմն եւ ընդ հիւսիսի եւ ընդ հարաւ եւ ընդ արեւելս, տես աչօք քովք. քանզի ոչ
28 անցանիցես ընդ այդ Յորդանան։ Եւ պատուիրեա Յեսուայ եւ զօրացուսցես զնա, եւ մխիթարեսցես զնա. զի նա անցցէ առաջի ժողովրդեանդ [4]իմոյ այդորիկ, եւ նա ժառանգեցուսցէ զդոյա
29 զերկիրն զոր տեսեր։ Եւ նստաք ի հովիտն [10]մերձ ի տունն Փոգովրայ՞։

Գլ. Դ

1 Եւ այժմ, Իսրայէլ, լուր իրաւանց եւ դատաստանաց զոր ես ուսուցանեմ [11]քեզ այսօր առնել. զի կեցջիք, եւ մտանիցէք ժառանգիցէք զերկիրն զոր Տէր Աս-
2 տուած [12]մեր տացէ ձեզ։ Մի յաւելուսցուք ինչ ի բանն զոր ես պատուիրեմ ձեզ, եւ մի՛ հատանիցէք ի նմանէ. պահեսջիք զպատուիրանս Տեառն Աստուծոյ [13]մերոյ զոր ես պատուիրեմ ձեզ։
3 Աչք ձեր տեսին զոր ինչ արար Տէր ընդ Բեղփեղովր. զի ամենայն մարդ որ չոգաւ զնաց Բեղփեղովրայ՝ ոչնչացոյց զնա Տէր
4 Աստուած [14]մեր ի ձէնջ՞։ Բայց դուք որ յարեցայք ի Տէր Աստուած ձեր, կեցդանի էք դուք ամենեքեան յաւուրս
5 յայսմիկ։ Տեսէք զի ուսուցի ձեզ պիտաւուն եւ զզատաստանս որպէս պատուիրեաց ինձ Տէր[15] առնել զայն յերկրին յոր դուք մտանիցէք ժառանգել զնա։
6 Եւ պահեսջիք եւ արասջիք, զի այն է իմաստութիւն ձեր եւ հանճար առաջի ամենայն ազգացն, որ լսիցեն զամենայն իրաւունս զայսոսիկ եւ ասիցեն, Ահա ժողովուրդ իմաստուն եւ հանճարեղ,
7 ազգս այս մեծ։ Քանզի ո՞վ իցէ ազգ մեծ որոյ իցէ Աստուած մօտ [16]ի նոսա՞, որպէս Տէր Աստուած մեր յամենայնի
8 որովք կարգացուք առնել։ Եւ ո՞ր ազգ մեծ որոյ իցեն իրաւունք եւ դատաստանք արդարք, ըստ ամենայնի օրինացս այսո-
9 սիկ զոր ես տամ այսօր առաջի ձեր։ Հայեաց ի քեզ եւ զգոյշ լեր անձին քումմ յոյժ. մի՛ մոռանայցես զամենայն բանս զայսոսիկ զոր տեսին աչք քո, եւ մի՛ մերժեսցին ի սրտէ քումմէ զամենայն աւուրս կենացդ քոց. եւ խնամուսջ ա-
10 րասցես որդւոց քոց եւ որդւոց որդւոց քոց։ Զօրն յորում կացէք դուք ի Քորեբ առաջի Տեառն Աստուծոյ ձերոյ [4]յաւուրն եկեղեցւոյ՞, յորժամ ասաց ցիս Տէր, Ժէ

---

[1]ԵՓԲ. զդաշտն եւ զՅորդանան եւ զսահմանն [2]ԵՓԲ. դաշտին, ծովն Ազի, ի ներքոյ Աստղովիմ. Փասգայ ընդ Արեւելս [3]ԵՓԲ. ձեր [4]ՅԵՓԲ. պ-ի-ս [5]ԵՓԲ. քո [6]ԵՓԲ-ՅԵՏԷՆ յ--ԵԼ--, ի նոցանէ [7]ԵՓԲ. արարեր ըստ գործոց եւ ըստ [8]ԵՓԲ. զԼիբանան [9]ԵՓԲ. Փասգայի

[10]ԵՓԲ. յանդիման Բեթ փոգովրայ [11]ԵՓԲ. ձեզ [12]ԵՓԲ. Հարցն ձերոց [13]ԵՓԲ. ձերոյ [14]ԵՓԲ. քո իմիջոյ քումմէ [15]ԵՓԲ-ՅԵՏԷՆ յ--ԵԼ--, Աստուած իմ [16]ԵՓԲ. ինձ

Եկեղեցացո առ իս զմոզովուրդ , եւ լուիցեն զպատգամս իմ զոր ուսուցից երկնչել զինէն զամենայն աւուրս որչափ կենդանի իցեն զոքա ի վերայ երկրի ,
11 եւ ուսուացին զորդիս իւրեանց : Եւ մատուցեալ կայիք զոք առ ատորոտով լերինն . եւ յետոնն բորբոքէր հրով մինչեւ յերկինս , եւ խաւար եւ մէգ եւ մահախուլ էր :
12 Եւ խօսեցաւ Տէր ընդ ձեզ ի միջոց հրոյն . զձայն պատգամացն լուաք զոք . եւ նմանութիւն ինչ ոչ տեսէք , բայց միայն զբարբառն : Եւ պատմեաց ձեզ զուխտն իւր զոր պատուիրեաց ձեզ առնել , զտասն պատգամսն , եւ գրեաց զնոսա ի վերայ երկուց քարեղէն տախտակաց :
14 Եւ պատուիրեաց [1]ինձ ի ժամանակին յայնմիկ ուսուցանել իրաւունս ձեզ եւ պատուաստանս , եւ առնել ձեզ զնոսա յերկրին յոր զոք մտանիցէք ժառանգել զնա :
15 Եւ զգուշացարուք յոյժ անձանց ձերոց . զի նմանութիւն ինչ ոչ տեսէք յաւուրն յայնմիկ յորում խօսեցաւ ընդ ձեզ Տէր
16 ի Խորէբ լերինն ի միջոց հրոյն . Մի ապօրինիցիք եւ առնիցէք ձեզ պատկեր , նմանութիւն արուսական կամ իգական ,
17 նմանութիւն անասնոց որ իցեն յերկրի , նմանութիւն ամենայն հաւուց թռչնոց որ թռչիցին ի ներքոյ երկնից ,
18 նմանութիւն ամենայն սողնոց որ սողիցին ի վերայ երկրի , նմանութիւն ամենայն ձկանց որ իցեն ի ջուրս ի ներքոյ
19 երկրի : Եւ մի՛ հայեցեալ ընդ երկինս տեսանիցես զարեգակն եւ զլուսին եւ զաստեղս եւ զամենայն զարդ երկնից , եւ մոլորեալ երկիր պաշտիցես նոցա եւ պաշտիցես զնոսա , զոր բաժանեաց Տէր Աստուած ամենայն ազգաց որ ի ներքոյ
20 երկնից : Եւ զձեզ առ [2]ի ձեռն Աստուած՝ , եւ ահան զձեզ յերկաթեզէն հնոցէն յԵգիպտոսէ , լինել նմա ժողովուրդ [3]վիճակաւ , որպէս եւ յաւուր յայսմիկ :
21 Եւ Տէր բարկացաւ ինձ վասն [4]բանիցն ասացելոց ի ձէնջ՝ , եւ երդուաւ զի մի անցից ընդ այդ Յորդանան , եւ զի մի մտանիցեմ [5]յերկիրն զոր Տէր Աստուած
22 քո տացէ քեզ ի ժառանգութիւն : Եւ արդ ես աւաղիկ մեռանիմ յերկրիս յայսմիկ , եւ ոչ անցանեմ ընդ Յորդանան . բայց դուք անցանէք եւ ժառանգէք զերկիրն բարի :
23 Զգոյշ լերուք զուցէ մոռանայցէք զուխտն Տեառն Աստուծոյ [6]մերոյ զոր ուխտեաց ընդ ձեզ , եւ առնիցէք ձեզ պատկեր , նմանութիւն յանմանէ յորոյ պատուիրեաց քեզ Տէր
24 Աստուած քո : Զի Տէր Աստուած քո հուր ծախիչ է , Աստուած նախանձոտ :
25 Եւ եթէ ծնանիցիս որդիս եւ [7]սորդիս որդւոց քոց՝ , եւ յամիցէք յերկրին , եւ անօրինիցիք եւ առնիցէք պատկեր նմանութիւն ամենայնի , եւ առնիցէք չար առաջի Տեառն Աստուծոյ մերոյ բարկացուցանել զնա ,
26 Ուրեմն ձեզ վկայս այսօր զերկինս եւ զերկիր , զի կորուստեամբ կորնչիցիք յերկրէն յոր զոք անցանէք ընդ Յորդանան ժառանգել զնա . եւ ոչ բազմացուցանիցէք զժամանակս աւուրց ի վերայ նորա , այլ սատակելով սատակիցէք :
27 Եւ ցրուեսցէ Տէր զձեզ ընդ ամենայն ազգս , եւ մնայցէք սակաւք թուով ի մէջ ազգացն յորս տարցի զձեզ
28 Տէր անդր : Եւ պաշտիցէք անդ զաստուածս օտարս , զձեռագործս մարդկան , զփայտեղէնս եւ զքարեղէնս , որք ոչ տեսանիցեն եւ ոչ լսիցեն եւ ոչ ուտիցեն
29 եւ ոչ հոտոտիցեն : Եւ խնդրիցէք անդ զՏէր Աստուած ձեր , եւ գտանիցէք յորժամ խնդրիցէք զնա յամենայն սրտէ
30 ձերմէ եւ յամենայն անձնէ ձերմէ : Ի նեղութեան ձերում , [8]եւ գտանիցին զքեզ ամենայն բանքս այսոքիկ ի վախճանի աւուրց , [9]եւ դարձցիս զուտ առ Տէր Աս-
31 տուած քո , եւ լսիցես ձայնի նորա , Զի Աստուած ողորմած է[10] , ոչ թողցէ զքեզ եւ ոչ սատակեսցէ զքեզ. եւ ոչ մոռասցի զուխտ հարցն քոց զոր երդուաւ նոցա :
32 Հարցէք զաւուրսն զառաջինս զեղեալս յառաջագոյն քան զձեզ , յօրէ յորմէ հաստատեաց Աստուած մարդ ի վերայ երկրի , ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս երկնից , եթէ եղեալ իցէ ըստ բանիս մեծի այսորիկ , եթէ ազգեալ իցէ լուր
33 այսպիսի . եթէ լուեալ իցէ ազգի ձայն Աստուծոյ [11]կենդանւոյ բարբառելոյ ի միջոյ հրոյ , որպէս լուար դու եւ կեցեր .
34 եթէ յօժարեալ իցէ Աստուածս մատնել առնուլ իւր ազգ ի միջոյ ազգի , փորձութիւնս եւ նշանս եւ արուեստս

[1] ԵՔԲ. ինձ Տէր [2] ԵՔԲ. Տէր [3] Այլուստ, սեպհական [4] ԵՔԲ. բանից ձերոց [5] ԵՔԲ. յերկիրն բարի [6] ԵՔԲ. ձերոյ [7] ԵՔԲ. որդիս որդւոց [8] Այլուստ յորժամ [9] Այլուստ՝ եթէ [10] ԵՔԲ բազումք յօրինակս , Տէր Աստուած քո [11] ԵՔԲ. պակաս

եւ պատերազմաւ , հզօր ձեռամբ եւ բարձր բազկաւ եւ մեծամեծ սեպհեամբք , քան ամենայնի զոր արար Տէր Աստուած [1]մեր յեղիպտոս յանդիման քո իսկ ա-
35 ռանելով : Զի պիտացես թէ Տէր նա է Աստուած , եւ չիք այլ ոք բաց ի նմանէ :
36 Յերկինից լսելի եղեւ բարբառ նորա խրատել զքեզ , եւ յերկրի եցոյց քեզ զհուր իւր մեծ , եւ պատգամս նորա լուար
37 ի միջոյ հրոյ : Վասն սիրելոյ նորա զհարցն քո , եւ ընտրեաց զզաւակ նոցա յետ նոցա , [2]զձեզ քան զամենայն ազգս ," եւ
38 հնար զքեզ ինքնին զօրութեամբ իւրով մեծաւ յեղիպտոսէ , Աստակել [2]քեզ զազգս մեծամեծս եւ հզօրագոյնս քան զքեզ յերեսաց քոց , առնել զքեզ եւ տալ քեզ զերկիր նոցա ի ժառանգութիւն ,
39 որպէս ունիս իսկ այսօր : Եւ ծանիցես այսօր եւ դարձցիս մասք , զի Տէր [2]Աստուած քո", նա է Աստուած յերկինս ի վեր եւ յերկիր ի խոնարհ եւ չիք այլ ոք
40 բաց ի նմանէ : Եւ պահեցես զիրաւունս նորա եւ զպատուիրանս նորա զոր ես պատուիրեմ քեզ այսօր , զի բարի լինիցի քեզ եւ որդւոց քոց յետ քո , եւ երկայնակեաց լինիցիս յերկրին զոր Տէր
[3]Աստուած տացէ քեզ յամենայն աւուրս :
41 Յայնժամ զատոյց Մովսէս երիս քաղաքս յայնկոյս Յորդանանու յարեւելից
42 կողմանէ , փախչել անդր սպանողին որ ոք սպանանիցէ զընկեր իւր եւ ոչ դիտութեամբ , եւ ինքն ոչ առեալր զնա յերէկն եւ յեռանդն , անկցի ի մի իքազաքացն
43 այոցիկ եւ կեցցէ : ԶԲոսոր յանապատին , ի դաշտին յերկրին Ռուբինի , եւ զՌամովթ ի Գազատացի՝ զԳադայ , եւ զԳազովն ի Բասան՝ զՄանասէի :
44 Եւ այս օրէնն է զոր եդ Մովսէս առաջի
45 որդւոցն Իսրայելի : Եւ այս են վկայութիւնք եւ իրաւունքն եւ դատաստանք զոր խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իսրայելի յելանել նոցա յերկրէն Եգիպտացւոց ,
46 ասդ , Յայնկոյս Յորդանանու , ի ձորն որ է [4]մերձ ի տունն Փողովրայ" , յերկրին Սեհոնի արքային Ամովրհացւոց որ բնակեալ էր յԵսեբոն , զոր հնար Մովսէս եւ որդիքն Իսրայելի յելանել իբրեւնց
47 յերկրէն Եգիպտացւոց : Եւ ժառանգեցին զերկիրն նորա , եւ զերկիր Ովգայ թագաւորին Բասանու , զերկուց թագաւո-
48 րացն Ամովրհացւոց որ էին յայնկոյս Յորդանանու ընդ արեւելս , ՅԱրոյերայ որ է առ եզերբ ձորոյն Առնովնայ , մինչեւ
49 լեառնն [5]Սեհոնի՝ որ է Հերմոն , Զամենայն զԱրաբա՝ որ է յայնկոյս Յորդանանու ընդ արեւելս , մինչեւ ծովն [6]Արաբացւոց ի ներքոյ Ասեդովթայ կոփածոյին" :

Գլ. Ե

1 Եւ կոչեաց Մովսէս զամենայն Իսրայէլ եւ ասէ ցնոսա , Լուր , Իսրայէլ , զիրաւունս եւ զպատուիրանս զոր ես խօսիմ յականջս ձեր յաւուր յայսմիկ , եւ ուսջիք զնոսա եւ ղծղոյլ լիցիք առնել զնո-
2 սա : Տէր Աստուած մեր ուխտեաց [7]ձեզ
3 ուխտ ի Քորեբ : Ոչ եթէ [8]հարցն ձերոց՝ ուխտեաց Տէր զուխտն զայն , այլ [9]ձեզ , եւ դուք ամենեքեան կենդանի էք այ-
4 սօր" : Դէմ յանդիման խօսեցաւ Տէր ընդ
5 ձեզ ի լերինն ի միջոյ հրոյն . (Եւ ես կացի ի մէջ Տեառն եւ ձեր ի ժամանակին յայնմիկ , պատմել ձեզ զպատգամն Տեառն . զի զարհուրեցայք յերեսաց հրոյն եւ ոչ ելէք ի լեառնն ,) ասէ ,
6 Ես եմ Տէր Աստուած քո որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց , ի տանէ ծառայութեան :
7 Մի լինիցին քեզ աստուածք օտարք առաջի աչաց իմոց :
8 Եւ մի առնիցես դու քեզ դրօշակ , եւ մի զնմանութիւն ամենայնի որ ինչ յերկինս ի վեր , եւ որ ինչ յերկրի ի խոնարհ , եւ որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկ-
9 րի : Մի երկիր պագանիցես նոցա եւ մի պաշտեսցես զնոսա . զի ես եմ Տէր Աստուած քո , Աստուած նախանձոտ , հատուցանեմ զմեղս հարանց որդւոց իբրեւնց , յերիս եւ ի չորս ազգս առելեաց
10 իմոց . Եւ առնեմ ողորմութիւն ի հազար ազգս սիրելեաց իմոց , եւ որոց պահիցեն զհրամանս իմ :
11 Մի առնուցուս զանուն Տեառն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց . զի ոչ սրբեսցէ Տէր Աստուած քո զայն որ առնուցու զանուն նորա ի վերայ սնոտեաց :
12 Զգուշացայիր ուսուցն չարաբեթս սրբել զնա , որպէս եւ պատուիրեաց քեզ Տէր

[1] ԵԲԸ. ձեր [2]ՁԵԲԸ. պ-ժ-ո-ք [3]ԵԲԸ. Աստուած քո
[4] ԵԲԸ. յանդիման Բեթ փեգովայ

[5] ԵԲԸ. Սիոնի որ է Հերմոն , (49) Եւ զամենայն զդաշտն [6]ԵԲԸ. դաշտին ի ներքոյ Ասեդովթ-փասգայ [7]ԵԲԸ. ընդ մեզ [8]ԵԲԸ. ընդ Հարս մեր [9]ԵԲԸ. ընդ մեզ , մեզ իսկ ամենեցուն որ աստ այսօր կենդանի եմք

13 Աստուած քո ։ Զվից օր զործեացես եւ
14 արարացես զամենայն զործ քո . Յաւուրն
եւթներորդի չարաթ Տեառն Աստուծոյ
քո . մի զործեացես ինձնա զամենայն զործ
քո , զու եւ ուստր քո եւ դուստր քո
եւ ծառայ քո եւ ազախին քո , եզն քո
եւ էչ քո եւ ամենայն անասուն քո , եւ
եկն որ ի ներքոյ դրանց քոց . զի հանդ-
պիցէ ծառայն քո եւ ազախին քո որպէս
15 եւ զու . եւ յիշեացես զու զի ծառայ էիր
յերկրին եգիպտացւոց , եւ եհան զքեզ
Տէր Աստուած քո անտի հզօր ձեռամբ
եւ բարձր բազկաւ . վասն այսորիկ պա-
տուիրեաց քեզ Տէր Աստուած քո պա-
հել զօրն չաբաթոյ [1]եւ սրբել զնա՝։
16 Պատուեա զհայր քո եւ զմայր քո,
որպէս պատուիրեաց քեզ Տէր Աստուած
քո , զի բարի լինիցի քեզ , եւ երկայնա-
կեաց լինիցես ի վերայ երկրին զոր Տէր
Աստուած քո տացէ քեզ ։
17 *Մի սպանանիցես ։*
18 *Մի՛ շնայցես ։*
19 *Մի զողանայցես ։*
20 *Մի վկայիցես զընկերէ քումմէ վկա-
յութիւն սուտ ։*
21 *Մի ցանկանայցես կնոջ ընկերի քո ,
եւ մի ցանկանայցես տան ընկերի քո ,
եւ մի անդոյ նորա , եւ մի ծառայի
նորա , եւ մի ազախնոյ նորա , եւ մի
եզին նորա , եւ մի իշոյ նորա , [1]եւ մի
ամենայն անասնոյ նորա,՚՚ եւ մի ամե-
նայնի զինչ ընկերի քո իցէ ։*
22 *Զայս պատգամս խօսեցաւ Տէր ընդ
ժողովրդեանն ձերում ի լերինն ի միջոյ
հրոյն , ուր խաւարն եւ մէգ եւ մառա-
խուզ էր , մեծաւ բարբառով , եւ ոչ եւս
յաւել . եւ գրեաց զնոսա ի վերայ երկուց
քարեղէն տախտակացն եւ եա ցիս ։*
23 Եւ եղեւ իբրեւ լուայք զբարբառն ի մի-
ջոյ [2]հրոյն , եւ լեառնն բոլորեալ էր
հրով , եւ մառուգեալ առ իս իշխանաց
ցեղիցն ձերոց եւ ծերակուտին ձերոյ՝
24 առէին , Ահա ետուց մեզ Տէր Աստուած[3]
զփառս իւր եւ զմեծութիւնն իւր , եւ
զբարբառ նորա լուաք ի միջոյ հրոյ .
յաւուր յայսմիկ տեսաք եթէ խօսիցի
25 Աստուած ընդ մարդոյ եւ կեսցէ ։ Եւ
արդ՝ [4]մի մեռցուք , զի մի՛՚ սատակեսցէ
զմեզ հուրս այս մեծ . եթէ յաւելուցուք
մեք լսել զձայն Տեառն Աստուծոյ մերոյ
26 միւսանգամ , եւ մեռանիցիմք ։ Զի՞
ա՛ր մահկի իցէ որ լուաւ զձայն Աստու-
ծոյ կենդանւոյ բարբառելոյ ի միջոյ հրոյ
27 որպէս մեք , եւ կեսցէ ։ Մատիր զու
եւ լուր զոր ինչ ասիցէ Տէր Աստուած
մեր , եւ զու խօսեացես ընդ մեզ զա-
մենայն ինչ զոր խօսիցի Տէր Աստուած
մեր ընդ քեզ , եւ լսեցուք եւ արաս-
28 ցուք ։ Եւ լուաւ Տէր զբարբառ բանիցն
ձերոյ խօսելոյ ընդ իս , եւ ասէ ցիս
Տէր , Լուայ զբարբառ բանից ժողո-
վրդեանն զոր խօսեցան ընդ քեզ . ուղիղ
29 խօսեցան զամենայն ։ Ա՛ւաղ լինիլ
այնպէս սրտից նոցա ի նոսա՝ երկնչիլ
յինէն եւ պահել [5]զպատուիրանս իմ զա-
մենայն աւուրս , զի բարի լինիցի նոցա
30 եւ որդւոց նոցա յաւիտեան ։ Երթ ասա
ցհոսա , Դարձարուք դուք [6]ի տունս
31 ձեր ։ Եւ զու առ կայ առ իս , եւ խօ-
սեցայց ընդ քեզ [5]զպատուիրանս եւ զի-
րաւունս եւ զդատաստանսն զոր ուսու-
ցանիցես նոցա , եւ արասցեն յերկրին զոր
ես տայ նոցա ի ժառանգութիւն ։
32 *Զգոյշ լերուք առնելոյ որպէս պա-
տուիրեաց [7]քեզ Տէր Աստուած քո , եւ
մի խոտորիցիս՚՚ յայլ եւ մի յահեակ ։*
33 *Ընդ ամենայն ճանապարհին զոր պա-
տուիրեաց [8]քեզ Տէր Աստուած մեր գնալ,
զի հանդուսցէ զքեզ եւ բարի արասցէ
քեզ՚՚, եւ երկայնօրեայք լինիցիք յերկ-
րին զոր ժառանգիցէք ։*

Գլ. Զ

1 *Եւ այս են պատուիրանք եւ իրաւունք
եւ դատաստանք զոր պատուիրեաց ձեզ
Տէր Աստուած [9]մեր , ուսուցանել զձեզ՝
առնել այնպէս յերկրին յոր զուք մտա-
2 նիցէք ժառանգել . Զի [10]երկնչիցիք ի
Տեառնէ Աստուծոյ [11]մերմէ , պահել զա-
մենայն իրաւունսն նորա եւ զպատուիրանս
նորա զոր ես պատուիրեմ [12]ձեզ այսօր՚՚,
զու եւ որդիք քո եւ որդիք որդւոց քոց ,
զամենայն աւուրս կենաց քոց , զի եր-
3 կայնօրեայք լինիցիք ։ Եւ լուր , Իսրայէլ ,
եւ զգոյշ լեր առնելոյ , զի բարի լինիցի
քեզ եւ բազմանայցէք յոյժ , որպէս խոս-
տացաւ Աստուած հարցն քոց տալ քեզ

[1] 3ԵԲԲ. գ-ւ-ե յ-ե-ե-, մեր [2] ԵԲԲ. խաւարին [3] ԵԲԲ-ՅԵՅԲ եւ բարի լինիցի ձեզ [4] ԵԲԲ. ընդէ՞ր մեռցուք, զի [5] ԵԲԲ. զամենայն պատուիրանս [6] ԵԲԲ. ի վրանս [7] ԵԲԲ. ձեզ Տէր Աստուած ձեր, և մի՛ խոտորիցիք [8] ԵԲԲ. ձեզ Տէր Աստուած ձեր գնալ, զի կեցջիք [9] ԵԲԲ. ձեր [10] ԵԲԲ. երկնչիցիս [11] ԵԲԲ. քումմէ [12] ԵԲԲ. քեզ

զերկիրն որ բզխէ զկաթն եւ զմեղր։ [1]Այս են իրաւունք եւ դատաստանք զոր պատուիրեաց Մովսէս որդւոցն Իսրայէլի յանապատին, յելանել նոցա յերկրէն Եգիպտացւոց։"

4 Լաբ, Իսրայէլ, Տէր Աստուած մեր՝ Տէր
5 մի է։ Եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն անձնէ քումմէ եւ յամենայն զօրութենէ
6 քումմէ։ Եւ եղիցին պատգամքս այսքիկ զոր ես պատուիրեմ քեզ այսօր՝ ի
7 սրտի [2]քում եւ յանձին քում. Եւ խրատեսցես" զայս որդւոց քոց, եւ խօսեսցիս առքօք ի նստել ի տան եւ ի զնալ ի
8 ճանապարհ եւ ի ննջել եւ ի յառնել.
8 Եւ արկցես զսոսա նշան ի ձեռին քում, եւ եղիցի [3]անչարժ առաջի աչաց քոց.
9 Եւ գրեսցես զսոսա ի վերայ սեմոց տանց քոց եւ ի դրունս քո։
10 Եւ եղիցի յորժամ տանիցի զքեզ Տէր Աստուած քո յերկիրն զոր երդուաւ [1]Տէր հարցն քոց Աբրահամու եւ Իսահակայ եւ Յակոբայ՝ տալ քեզ քաղաքս մեծամեծս
11 մեծս եւ զեղեցիկս զոր ոչ չինեցեր, Եւ տունս լի ամենայն բարութեամբ զոր ոչ լցեր, եւ ջրհորս փորեալս զոր ոչ փորեցեր, եւ այգիս եւ ձիթենիս զորս ոչ տնկեցեր, եւ ուտիցես եւ յագիցիս,
12 Զգոյշ լինիցիս անձին քումդ, զուցէ մոռանայցես զՏէր [1]Աստուած քո" որ հանեալ զքեզ յերկրէն Եգիպտացւոց ի տանէ ծառայութեան։ Ի Տէրն Աստուծոյ քումմէ երկիցիս եւ զնա միայն պաշտեսցես,
14 [1]եւ ի նա յարեսցիս" եւ յանուն նորա երդնուցուս։ Մի՛ երթայցէք զհետ աստուածոց օտարաց, եւ զհետ աստուածոց
15 ազգացն որ չուրջ զձեզ իցեն. Զի Աստուած նախանձոտ, Տէր Աստուած քո ի միջի քում. զուցէ բարկացեալ սրտմտիցի Տէր Աստուած քո ատակել զքեզ յերեսաց երկրէ։
16 Մի՛ փորձեսցես զՏէր Աստուած քո
17 որպէս փորձեցէք ի Փորձութիւնն։ Պահելով պահեսցես զպատուիրանս Տեառն Աստուծոյ քո, զվկայութիւնս եւ զկրա-
18 նունս զոր պատուիրեաց քեզ։ Եւ արասցես զարին եւ զհաճոյն առաջի Տեառն [1]Աստուծոյ քո", զի քեզ բարի լինիցի, եւ մտցես եւ ժառանգեսցես զերկիրն բարի զոր երդուաւ Տէր հարցն
19 [4]մերոց, Հալածել զամենայն թշնամիս յերեսաց քոց, որպէս եւ խօսեցաւ[5]։
20 Եւ եղիցի յորժամ հարցանիցէ զքեզ վաղիւ որդին քո եւ ասիցէ, Զինչ են վկայութիւնքն եւ իրաւունք եւ դատաստանք զոր պատուիրեաց Տէր Աստուած
21 մեր [6]մեզ. Եւ ասասցես ցորդին քո, Ծառայք էաք Փարաւոնի յեգիպտոս, եւ հան զմեզ Տէր Աստուած անտի ձեռամբ
22 [1]եւ բարձր բազկաւ". Եւ ետ Տէր նշանս եւ արուեստս մեծամեծս եւ չարաչարս յերկրին եգիպտացւոց, ի Փարաւոն եւ ի տուն նորա առաջի մեր. Եւ զմեզ հանան անտի, զի ածցէ այսր տալ մեզ զերկիրս զոյս զոր երդուաւ տալ
24 հարցն մերոց։ Եւ պատուիրեաց մեզ Տէր առնել զամենայն իրաւունս զայսոսիկ, երկնչել ի Տեառնէ Աստուծոյ մերմէ, զի բարի լիցի մեզ զամենայն աւուրս, զի կեցցուք որպէս եւ այսօր։ Եւ
25 [7]ողորմածութիւն եղիցի մեզ, եթէ զգուշացուք առնել զամենայն պատուիրանս զայսոսիկ առաջի Տեառն Աստուծոյ մերոյ, որպէս եւ պատուիրեաց մեզ։

Գլ. Է

1 Եւ եթէ տարցի զքեզ Տէր Աստուած քո յերկիրն յոր դու մտանիցես ժառանգել, եւ բարձցէ [8]զազգսն մեծամեծս եւ զբազումս" յերեսաց քոց, զՔետացին եւ զԳերգեսացին եւ զԱմովրհացին եւ զՔանանացին եւ զՓերեզացին եւ զՀեւեացին
2 եւ զՅեբուսացին, եւբեր ազգս մեծամեծս եւ զօրաւորս քան [9]զձեզ, Եւ մատնեսցէ զնոսա Տէր Աստուած քո ի ձեռս քո, հարցես զնոսա, եւ եղծանելով եղծցես զնոսա. մի՛ գնիցես ընդ նոսա ուխտ,
3 եւ մի՛ ողորմիցիս նոցա. Եւ մի՛ առնիցէք խնամութիւն ընդ նոսա. զդուստր քո մի՛ տացես ուստեր նորա, եւ զդուստր
4 նորա մի՛ առնուցես ուստեր քումդ. Զի մի՛ ապստամբեցուցանիցէ զսրտին քո յինէն, եւ պաշտիցէ զաստուածս օտարս, եւ բարկացի սրտմտութեամբ Տէր ի ձեզ, եւ սատակեսցէ [9]զձեզ վաղվաղակի։
5 Այլ այսպէս արասջիք նոցա. զբազինս նոցա կործանեսջիք, եւ զարձանս նոցա փշրեսջիք, եւ [10]զանտառս նոցա կտրեսջիք, եւ զպղծեալս նոցա այրեսջիք
6 հրով։ Զի ժողովուրդ սուրբ ես դու Տեառն

[1]ՅԵբր. պ-ի-ս-ե [2]ՅԵբր. քումբ. (7) եւ յեղյեզևացես [3]ՅԵբր. գրապանակ
[4]ՅԵբր. քոց [5]ՅԵբ-յեօէ յա-ե-ը-, Տէր [6]ՅԵբր. ձեզ [7]ՅԵբր. արդարութիւն [8]ՅԵբր. ազգս մեծամեծս [9]ՅԵբր. զքեզ [10]Տե- Ելից Լ.Թ. 13։

Աստուծոյ քում. եւ դրեց ընտրեաց Տէր
Աստուած քո լինել նմա ժողովրդ սեպ-
հական քան զազգս ամենայն որ ի վերայ
7 երեսաց երկրի։ Ոչ զի բազում էք դուք
քան զամենայն ազգս՝ հաճեցաւ Տէր ընդ
ձեզ եւ ընտրեաց զձեզ, զի դուք սա-
8 կաւաւոր էք քան զամենայն ազգս. Այլ
վասն սիրելոյ զձեզ Տեառն եւ պահելոյ
զերդումն զոր երդուաւ հարցն ձերոց՝
նմանզձեզ Տէր հզօր ձեռամբ [1]եւ բարձր
բազկաւ", եւ փրկեաց [2]զձեզ ի տանէ
ծառայութեան, ի ձեռաց փարաւոնի ար-
9 քային եգիպտացւոց։ Եւ ծանիցես զի
Տէր Աստուած քո նա է Աստուած, Աս-
տուած հաւատարիմ, որ պահէ զուխտ
եւ զողորմութիւնն սիրելեացդ իւրոց, եւ
որոց պահեն զպատուիրանս նորա՝ ի հա-
10 զար ազգ. Եւ հատուցանէ տակաւին
իւրոց յանպիտան ատելիսն գնոսա. եւ ոչ
յամենգատցէ յատելիսն, այլ յանպիտան
11 հատուսցէ նոցա։ Եւ պահեցես զպա-
տուիրանս եւ զիրաւունս եւ զդատաս-
տանս զոր [3]ես պատուիրեմ քեզ առնել։
12 Եւ եղիցի յորժամ լուիցէք զամենայն
իրաւունս զայսոսիկ եւ պահիցէք եւ առ-
նիցէք զոսա, պահեսցէ քեզ Տէր Ա-
ստուած քո զուխտն եւ զողորմութիւն
13 զոր երդուաւ հարցն [4]մերոց, Եւ սի-
րեսցէ զքեզ եւ օրհնեսցէ զքեզ. եւ բազ-
մացուսցէ զքեզ. եւ օրհնեսցէ զպտուղս
որովայնի քո եւ զպտուղ երկրի քո, զգո-
րեան քո եւ զկիճի քո եւ զեւզ քո, զան-
դեայս արջառոց քոց եւ զխօտս ոչխա-
րաց քոց յերկրին զոր երդուաւ Տէր
14 հարցն քոց տալ քեզ։ Օրհնեալ լի-
ցիս դու քան զազգս ամենայն. մի՛ լիցի
[5]ի ձեզ անձնանդ եւ մի՛ ամայ, եւ մի՛
15 յանասունս քո։ Եւ բարձցէ ի քէն Տէր
զամենայն ախտ, եւ զամենայն ցաւս
չարաչարս եգիպտացւոցն [1]զորս անսիրն
եւ" զորս գիտացեր. եւ մի՛ ածցէ զնոսա
ի վերայ քո, այլ ածցէ զնոսա [1]ի վերայ
թշնամեաց քոց եւ" ի վերայ ամենայն
16 ատելեաց քոց։ Եւ [6]կերիցես զամենայն
զկուռսա ազգացն" զոր Տէր Աստուած
քո ասցէ քեզ. եւ մի՛ խնայեսցէ ակն
քո ի նոսա, եւ ոչ պաշտեսցես զկս նո-
17 ցա, զի [7]խոչ է այն քեզ։ Ասա թէ ա-
սիցես ի մտի քում, զի Բազում է ազգն

այն քան զիս, դիմիլ կարացից սատա-
18 կել զնոսա. Մի՛ երկնչիցես ի նոցանէ,
յիշելով յիշեսցես զոր [1]ինչ արար Տէր
Աստուած քո ընդ Փարաւոնի եւ [1]ընդ ծա-
ռայս նորա եւ" ընդ ամենայն եգիպտա-
19 ցիսն, Զփորձանս մեծամեծս զոր տեսին
աչք քո, զնշանս եւ զարուեստս մեծա-
մեծս, զձեռնն հզօր եւ զբազուկն բարձր.
որպէս եհան զքեզ Տէր Աստուած քո
անտի, նոյնպէս արասցէ Տէր Աստուած
[8]մեր ընդ ամենայն ազգսն յորոց դու
20 երկնչիցիս յերեսաց նոցա։ Եւ զձիաս-
ացն առաքեսցէ Տէր Աստուած քո ի
նոսա, մինչեւ սատակեսցին մնացորդքն
21 եւ թագուցեալքն ի քէն։ Մի՛ զանպի-
տիցես յերեսաց նոցա. զի Տէր Աստուած
22 քո ի միջի քում է, [9]մեծ եւ հզոր"։ Եւ
ծախեսցէ Տէր Աստուած քո զազգսն
գայնոսիկ յերեսաց քոց առ սակաւ սա-
կաւ. ոչ կարասցես սատակել զնոսա
վաղվաղակի. զի մի՛ [1]վնիցի երկիրն ա-
հեղակ, եւ" բազմանայցեն ի վերայ քո
23 գազանք անապատի։ Եւ մատնեսցէ զնո-
սա Տէր Աստուած քո ի ձեռս քո, եւ
կորուսցէ զնոսա կորստեամբ մեծա-
24 մինչեւ սատակեսցէ զնոսա։ Եւ մատ-
նեսցէ զթագաւորս նոցա ի ձեռս [8]ձեր,
եւ կորուսջիք զանուն նոցա [10]ի տեղւոջն
չկնս յայնմանէ". եւ մի՛ ոք կացցէ ընդդէմ
25 քո մինչեւ սատակեսցես զնոսա։ Զգրօշ-
նաս պիղ նոցա այրեսցես հրով, եւ մի՛
ցանկանայցես արծաթոյ եւ ոսկւոյ [11]ի
նոցանէ, եւ մի՛ առնուցուս քեզ, եւ մի՛
[12]յանցանիցես նովաւ. զի գարշելի է այն
26 Տեառն Աստուծոյ քում։ Եւ մի՛ տանիցես զգարշելին ի տուն քո, եւ վնիցիս
ի նզովս իբրեւ զնոյն. այլ գարշելով
գարշեսցիս, եւ պղծելով պղծեսցես զնո-
սա, զի նզովեալ է։

Գլ. Ը

1 Ամենայն պատուիրանացդ զոր ես պա-
տուիրեմ ձեզ այսօր, զգոյշ լինիջիք առ-
նելոյ, զի կեցջիք եւ բազմապատիկք լի-
նիցիք, եւ մտանիցէք ժառանգիցէք զերկիրն զոր երդուաւ Տէր Աստուած
2 ձերոց։ Եւ յիշեսցես զամենայն ճանապարհն զոր
ած զքեզ Տէր[14] ընդ անապատն, զի կիկիցէ

[1]ՅԵՔԵ. գ-ՈՒ-Ռ [2]ԵՔԵ. զքեզ [3]ԵՔԵ. ես այսօր
[4]ԵՔԵ. քոց [5]ԵՔԵ. ի քեզ [6]ԵՔԵ. սպառեսցես զամենայն ազգս [7]Կամ, որոգայթ
[8]ԵՔԵ. քո [9]ԵՔԵ. Աստուած մեծ եւ ահաւոր
[10]ԵՔԵ. ի ներքոյ երկնից [11]ԵՔԵ. որ ի նոսա [12]ԵՔԵ. անկցիս ի խաւարդ [13]ԵՔԵ. ձերոց [14]ԵՔԵ. յԵԳԵՐ յ-ԱԼ-Լ-, Աստուած քո զայս քառասուն ամ

զքեզ եւ փորձիցէ զքեզ , եւ ճանաչիցէ
թէ զինչ կայցէ ի սրտի քումի , եթէ պա-
հեսցես զպատուիրանս նորա եւ թէ ոչ ։
3 Եւ չարչարեաց զքեզ , եւ սովեցոյ զ-
քեզ , եւ կերակրեաց զքեզ մանա-
նայիւն զոր ոչ գիտէիր եւ ոչ գիտէին
հարքն քո , զի յայտ արասցէ քեզ
թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ , այլ
ամենայն բանիւ որ ելանէ ի բերանոյ
4 [1]Աստուծոյ՝ կեցցէ մարդ ։ Հանդերձք քո
ոչ մաշեցան ի քէն , եւ սաք քո ոչ փա-
պարիցին զգան ամս քառասուն ։
5 Եւ ծանիցես ի սրտի քումի , թէ որպէս
այր ոք որ խրատէ զորդի իւր , այնպէս
6 Տէր Աստուած քո [2]խրատեսցէ զքեզ ։ Եւ
պահեսցես զպատուիրանս Տեառն Աս-
տուծոյ քո գնալ ի ճանապարհս նորա եւ
7 երկնչել ի նմանէ ։ Զի Տէր Աստուած քո
առցի զքեզ յերկիրն բարի [3]եւ յայգի՛
ուր վտակք ջրոց եւ աղբեւրք անդնդոց
8 բղխեն ընդ դաշտս եւ ընդ լերինս . եր-
կիր ցորենոյ եւ գարւոյ եւ վինոյ , [4]այ-
գեաց եւ նռնենեաց . երկիր ձիթենեաց ,
9 իւղոյ եւ մեղու . երկիր՝ յորում ոչ ազ-
քատութեամբ կերիցես զհաց քո , եւ ոչ
կարօտանայցես իմիք ինեւ . երկիր՝ ո-
րոյ քարինք իւր երկաթ , եւ ի լերանց
նորա հատանիցես սղինս ։
10 Եւ կերիցես եւ յագեացիս , եւ օրհնես-
ցես զՏէր Աստուած քո ի վերայ երկրին
11 բարութեան զոր ետ քեզ ։ Զգուշացիր
քո , զի մոռանայցես զՏէր Աստուած
քո՝ չպահել զպատուիրանս նորա եւ զդա-
տաստանս եւ զիրաւունս նորա զոր ես
12 քեզ պատուիրեմ[5] ։ Գուցէ յորժամ ու-
տիցես եւ յագիցիս , եւ տունս գեղեցիկս
13 շինեսցես եւ բնակեսցես ի նոսա , եւ
բազմանայցէ արջառ եւ ոչխար քո , եւ
յաճախիցէ քեզ արծաթ եւ ոսկի , եւ ա-
մենայն ինչ որ քո իցէ՝ բազմանայցէ ,
14 Հպարտանայցես ի սրտի քումի , եւ մո-
ռասցիս զՏէր Աստուած քո որ հան
զքեզ յերկրէն եգիպտացւոց ի տանէ ծա-
15 ռայութեան , եւ ած զքեզ ընդ անապատն
մեծ եւ ընդ ահագին , ուր օձն խածանէր
եւ կարիճ եւ ծարաւ , [6]եւ ոչ գոյր ջուր ,
եւ հան քեզ յապառաժ վիմէ սպրեալ
16 ջուրց . Որ կերակրեաց զքեզ մանանա-
յիւն յանապատին , զոր ոչ գիտէին հարքն
քո , զի չարչարեսցէ զքեզ եւ փորձեսցէ
զքեզ , եւ բարի արասցէ քեզ ի վախճանի
17 քումի . Մի ասիցես ի սրտի քումի , թէ
Զօրութիւն իմ եւ ուժգնութիւն ձեռին
իմոյ արար ինձ զդօրութիւնս զայս [3]մեծ .
18 Այլ յիշեսցես զՏէր Աստուած քո , զի
նա տայ քեզ այժ առնել զօրութիւն , զի
հաստատեսցէ զուխտն իւր զոր երդուաւ
հարցն քոց , որպէս եւ այսօր ։
19 Եւ եղիցի եթէ մոռանալով մոռասցիս
զՏէր Աստուած քո , եւ երթայցես զհետ
աստուածոց օտարաց եւ պաշտիցես զնո-
սա եւ երկիր պագանիցես նոցա , [7]ունիմ
ձեզ վկայ այսօր զերկինս եւ զերկիր՛ ,
20 զի կորուսանելով կորնչիցիք . Որպէս եւ
ազգքն զորս Տէր կորուսանէ յերեսաց ձե-
րոց , այնպէս կորնչիջիք , փոխանակ զի ոչ
լսեալոյ ձայնի Տեառն Աստուած ձերոյ ։

Գլ . Թ

1 Լուր , Իսրայէլ . դու անցանես այսօր զնգ
Յորդանան մտանել ժառանգել զազգսն
մեծամեծս եւ զօրագունս քան [8]զձեզ ,
եւ քաղաքս մեծամեծս եւ պարսպեալս
2 մինչեւ յերկինս , Ժողովուրդն մեծ եւ
զլայուռ եւ դյուցազնական , զորդիսն
Ենակայ զոր դու գիտես զնոսա , եւ լսեր
եթէ Ո՞վ կացցէ զնգդէմ որդւոցն Ենակայ ։
3 Եւ ծանիցես այսօր զի Տէր Աստուած
քո նա գնգն երթայցէ առաջի քո , որ
հուրն ծախիչ է , նա սատակեսցէ զնո-
սա , եւ նա կործանեսցէ զնոսա առաջի
երեսաց քոց , եւ [9]սատակեսցէ զնոսա եւ
կորուսցէ՛ զնոսա վազվազակի , որպէս
4 եւ ասաց քեզ Տէր ։ Մի ասիցես ի սրտի
քումի ի ծախել զնոսա Տեառն Աստուծոյ
քո յառաջագ քումմէ , թէ վասն արգա-
րութեան իմոյ ած զիս Տէր ժառանգել
զերկիրս զայս [10]բարի . զի ոչ վասն ար-
դարութեան քո , այլ՝ վասն ամբարչաւե-
ցութեան սպգայն այնոցիկ սատակեսցէ զնո-
սա Տէր [3]Աստուած քո՛ յառաջագ քումմ-
5 մէ ։ Քանզի ոչ վասն արդարութեան քո
եւ ոչ վասն անիծութեան սրտի քո մտա-
նես ժառանգել զերկիրս նոցա , այլ վասն
անօրէնութեան սպգայն այնոցիկ Տէր
Աստուած քո սատակեսցէ զնոսա յերե-
սաց քոց , եւ զի հաստատեսցէ [11]զխոսք
զոր երդուաւ Տէր հարցն [12]մերոց Աբրա-

[1] ԵՔԲ· Տեառն [2] ԵՔԲ· խրատէ [3] ՅՒՆԵՔԲ· գլուխ
[4] ԵՔԲ· Թզենեաց [5] ՆԵՔԲ·ՅԵԼԼ· , այսօր
[6] ԵՔԲ· ուր
[7] ԵՔԲ· վկայեմ ձեզ այսօր [8] ԵՔԲ· զքեզ [9] ԵՔԲ·
վանեսցես զնոսա եւ կորուսցես [10] ԵՔԲ· զի
[11] ԵՔԲ· զբանն [12] ԵՔԲ· քոց

6 համու եւ Իսահակայ եւ Յակոբայ ։ Եւ
ծանիցես այսօր զի ոչ վասն արդարու-
թեան քո Տէր Աստուած քո տայէ քեզ
զերկիրն բարի ժառանգել . զի ժողովուրդ
խստապարանոց ես ։
7 Յիշեա , մի մոռանայցես սրչափ բար-
կացուցեր զՏէր Աստուած քո յանապա-
տին . յօրէ յորմէ ելէք յերկրէն Եգիպ-
տացւոց , մինչեւ եկիք ի տեղիս յայս ,
խեռութեամբ վարէիք ի տեառնակողմն .
8 կոյս ։ Եւ ի Խորեբ բարկացուցէք զՏէր ,
9 եւ բարկացաւ Տէր սատակել զձեզ ։ Յե-
լանելն իմում ի լեառնն առնուլ զտախ-
տակսն քարեղէնս , զտախտակսն ուխտի
զոր ուխտաց Տէր ընդ ձեզ , եւ եկէ ի
լերինն զքառասուն տիւ եւ զքառասուն
գիշեր . հաց ոչ կերայ եւ ջուր ոչ սպրի .
10 Եւ ետ ինձ Տէր զերկոսին տախտակսն
քարեղէնս , գրեալս մատամբն Աստու-
ծոյ . եւ ի նոսա գրեալ էին ամենայն
պատգամքն զոր խօսեցաւ Տէր ընդ ձեզ
11 ի լերինն[1] յաւուրն սկսկզբան ։ Եւ եղեւ
յետ քառասուն տուրսկնան եւ քառա-
սուն գիշերոյ ետ ինձ Տէր զերկուս տախ-
տակսն քարեղէնս , տախտակս ուխտի ։
12 Եւ ասէ ցիս Տէր , Արի էջ վազվազակի
աստի , զի անօրինեցաւ ժողովուրդն քո
զոր հաներ յերկրէն Եգիպտացւոց . ան-
ցին արդէն զճանապարհատն զոր [2]պա-
տուիրեցեր նոցա , եւ արարին իւրեանց
13 ձուլածոյս ։ Եւ [3]ասէ ցիս Տէր , Խօսե-
ցայ ընդ քեզ մի անգամ եւ երկիցս եւ
ասեմ՝ , Տեսի զժողովուրդդ զայդ , եւ
14 ահա ժողովուրդ խստապարանոց է . Թող
տուր ինձ սատակել զդոսա , եւ ջնջեցից
զանուն դոցա ի ներքոյ երկնից , եւ ա-
րարից զքեզ յազգ [4]մեծ եւ ի՝ հզօր եւ
ի բազում առաւել քան զայդ ։
15 Եւ դարձեալ իջի ի լեռնէ անտի , եւ
լեառնն բորբոքէր հրով , եւ երկու տախ-
16 տակքն յերկոսին ի ձեռս իմում ։ Եւ տե-
սեալ եմէկ մեղայք առաջի Տեառն Աս-
տուծոյ [5]մերոյ , եւ արարէք ձեզ [6]ձու-
լածոյս , եւ անցէք զճանապարհատն զոր
17 պատուիրեաց Տէր , Առեալ զերկոսին
տախտակսն [7]ի ձեռաց իմոց՝ խորտակե-
18 ցի յանդիման ձեր ։ Եւ ազաչեցի առաջի
Տեառն կրկին անգամ իբրեւ զառաջինն

զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր ։
Հաց ոչ կերայ եւ ջուր ոչ սպրի , վասն
ամենայն մեղացդ ձերոց զոր մեղայք՝ առ-
նել զչար առաջի Տեառն [4]Աստուծոյ մե-
19 ծոյ՝ , բարկացուցանել զնա . [8]Եւ զահի
հարեալ եմ վասն բարկութեանն եւ
սրտմտութեանն , զի բարկացաւ Տէր ի
վերայ ձեր սատակել զձեզ . եւ լսեաւ
20 ինձ Տէր ի ժամանակին յայնմիկ ։ Եւ Ա-
հարոնի բարկացաւ Տէր յոյժ սատակել
զնա . եւ արարի ազօթս եւ վասն Ահա-
21 րոնի ի ժամանակին յայնմիկ ։ Եւ զմեղսն
ձեր զոր արարէք , զոլիճն , ասի եւ այ-
ծեցի զնա հրով , եւ կոտորեցի եւ խոր-
տակեցի զնա յոյժ , մինչեւ եղեւ մանր
իբրեւ զփոշի , եւ ընկեցի զփոշին ի վտակն
որ իջանէր ի լեռնէ անտի ։
22 Եւ ի Հրայրեւսյան եւ ի Փարանթեանն
եւ ի Գերեզմանս ցանկութեանն բարկա-
23 ցուցէք զՏէր [4]Աստուած ձեր՝ , Եւ յոր-
ժամ առաքեաց զձեզ Տէր ի Կադեսբառ-
նեայ , ասէ , Ելէք ժառանգեցէք զերկիրն
զոր տայոց եմ ձեզ , հնազանդեցէք բանին
Տեառն Աստուծոյ ձերոյ , եւ ոչ հաւա-
տացէք նմա , եւ ոչ լսեալոք ձայնի
24 Տեառն . Զի հնազանդ կայիք ի տեառնա-
կոչմանն յօրէ յորմէ [9]ծանուցաք ձեզ՝ ։
25 Եւ ազաչեցի առաջի Տեառն զքառա-
սուն տիւ եւ զքառասուն գիշեր , զորս
ազաչեցին , քանզի ասաց Տէր սատակել
26 զձեզ ։ Եւ կացի յաղօթս առ Տէր եւ ա-
սեմ՝ , Տէր , Տէր , [4]Թագաւոր աստուա-
ծոց ,՝ մի սատակեր զժողովուրդ քո եւ
զրաժին քո զոր փրկեցեր զօրութեամբ
քո մեծաւ , զորս հաներ յեգիպտասէ
[10]զօրութեամբ քո մեծաւ , եւ կարոզ ձե-
27 ռամբ եւ բարձր բազկաւ՝ ։ Յիշեա զու
զԱբրահամ եւ զԻսահակ եւ զՅակոբ ,
զծառայս քո , [1]որոց երդուար քեւ .՝ մի
հայիր ի խստութիւն ժողովրդիս այ-
սորիկ եւ յամպարշտութիւնս եւ ի մեղս
28 զոցա ։ Գուցէ խօսիցին բնակիչք երկրին
ուստի հաներ զմեզ , եւ ասիցեն , Առ ի
չկարելոյ Տեառն տանել զնոսա յերկիրն
զոր խոստացաւ նոցա , եւ առ ատել
զնոսա [4]Տեառն՝ հանն զնոսա կոտորել
29 զնոսա յանապատին ։ Եւ ոչ զայս ժողո-
վուրդ քո եւ ժառանգութիւնն քո զոր
հաներ յերկրէն եգիպտացւոց զօրու-
թեամբ քո մեծաւ եւ բարձր բազկաւ ։

---

[1] ԵԲԲ-յԵԽԷՆ յ-ԽԼ-, ի միջոյ հրոյն [2]ԵԲԲ· պատուիրեցի [3]ԵԲԲ· խօսեցաւ Տէր ընդ իս եւ ասէ
[4]ՁԵԲԲ· պ-ԼՈ-Ե [5]ԵԲԲ· ձերոյ [6]ԵԲԲ· որմէ ձուլածոյ
[7]ԵԲԲ· ընկեցի յերկոցունց ձեռաց իմոց, եւ

[8]ԵԲԲ·ԶՉի [9]ԵԲԲ· ծանեայ զձեզ [10]ԵԲԲ· կարոզ ձեռամբ

Գլ. Ժ

1 Ի ժամանակին յայնմիկ ասաց ցիս Տէր, Կոփեա դու քեզ երկուս տախտակս քա-
2 րեզէնս իբրեւ զառաջինսն, եւ [1]ել ի լեառնն. եւ արասցես դու քեզ տապա-
նակ փայտեղէն. եւ գրեցից ի տախտակսն զնոյն պատգամսն որ էին յառաջին տախ-
տակսն զորս դուն խորտակեցեր, եւ դիր-
3 ցես զնոսա ի տապանակին։ Եւ արարի տապանակ յանփուտ փայտից, եւ կոփեցի երկուս տախտակս քարեզէնս իբրեւ զառաջինսն, եւ ելի ի լեառնն,
եւ երկու տախտակքն [2]յերկոսին ի ձեռս
4 իմում։ Եւ գրեաց յերկոսին տախտակսն ըստ առաջին գրոյն զպատն պատգամսն զոր խօսեցաւ ընդ ձեզ Տէր ի լերինն ի
ի մէջոյ [3]հրոյն, եւ ետ զնոսա ցիս Տէր։
5 Եւ դարձայ իջի ի լեառնէ անտի, եւ եդի զտախտակսն ի ներքս [4]ի տապանակին,
եւ էին՝ անդ որպէս եւ պատուիրեաց ինձ Տէր։
6 Եւ որդիքն Իսրայելի չոգեցին ի Բեե-
րովթայ որդւոյն Յակիմայ ի [5]Մատսէր. եւ անդ մեռաւ Ահարոն եւ անդէն թա-
ղեցաւ, եւ քահանայացաւ Եղիազար
7 որդի նորա ընդ նորա։ Անտի չոգեցին ի Գադգադ, եւ ի Գադգադայ յԵտաևա, յերկիր վտակաց ջուրց։
8 Յայնմ ժամանակի զատոյց Տէր զգեղն Ղեւեայ բառնալ զտապանակ ուխտին Տեառն, կալ առաջի Տեառն պաշտել
եւ [6]ազօթս մատուցանել՝ յանուն նորա
9 մինչեւ ցայսօր։ Վասն այնորիկ ոչ ունի Ղեւեացւոյն բաժին եւ ժառանգութիւն
ի մէջ եղբարց իւրեանց, զի Տէր ինքն
է մասն եւ ժառանգութիւն նոցա, որպէս եւ ասաց [7]նոցա։
10 Եւ ես կայի ի լերինն[8] զքառասուն ա-
ւուր եւ զքառասուն գիշեր, եւ լուաւ ինձ Տէր ի ժամանակին յայնմիկ, եւ ոչ կա-
11 մեցաւ առաքել զձեզ։ Եւ ասէ ցիս Տէր, Գնա չուեա առաջի ժողովրդեանդ այդո-
րիկ, եւ մտցեն եւ ժառանգեսցեն զերկիրն զոր երդուայ հարցն նոցա առ նոսա
12 Եւ արդ, Իսրայէլ, զինչ խնդրէ ի քէն Տէր Աստուած քո. այլ երկնչիլ ի

Տեառնէ Աստուծոյ քումմէ, եւ գնալ յամենայն ի ճանապարհս նորա եւ սիրել
զնա եւ պաշտել զՏէր Աստուած քո
յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն
13 անձնէ քումմէ, եւ պահել զպատուիրանս Տեառն [2]Աստուծոյ քո՝ եւ զիրա-
ւունս նորա զոր ես պատուիրեմ քեզ
14 այսօր, զի բարի լիցի քեզ։ Ահաւասիկ Տեառն Աստուծոյ քո երկինք եւ երկ-
նից երկինք, եւ երկիր եւ ամենայն որ
15 է ի նոսա։ Բայց զնոսա հարան ձեր [2]յա-
ռաջագոյն հաճեցաւ Տէր սիրել զնոսա,
եւ ընտրեաց զզաւակ նոցա յետ նոցա,
զձեզ քան զամենայն ըստ աւուրս
16 ըստ այսմիկ։ Եւ թլփատեցէք [9]զխոտա-
սրտութիւն ձեր՝, եւ զպարանոցս ձեր
17 մի՛ եւս խստացուցանէք. Զի Տէր Աս-
տուած [10]մեր, նա է Աստուած աստու-
ծոց եւ Տէր տիրանց, Աստուած մեծ
եւ հզօր եւ ահաւոր, որ ոչ աչառի եւ
18 րնաց, եւ ոչ առնու կաշառ. Առնէ իրաւունս [2]եկին եւ՝ որբոյ եւ այրւոյ.
սիրէ զնժդեհն տալ նմա հաց եւ հան-
19 գերձ։ Եւ սիրեցէք զպանդխտեան. զի եւ դուք պանդխտք էիք յերկրին Ե-
20 գիպատացւոց։ Ի Տեառնէ Աստուծոյ քումմէ երկիցես, եւ զնա պաշտեսցես, եւ
ի նա յարեսցիս, եւ յանուն նորա երդ-
21 նուցուս։ Զի նա է պարծանք քո եւ նոյն Աստուած քո, որ արար ի քեզ
զմեծամեծան եւ զիսաւսորս զոր տե-
22 սին աչք քո։ Եւ [3]յիսնասան ոգւովք ի-
ջին հարքն քո յԵգիպտոս, եւ արդ ահա
արար զքեզ Տէր Աստուած քո իբրեւ
զաստեղս երկնից բազմութիւնս։

Գլ. ԺԱ

1 Եւ սիրեսցես զՏէր Աստուած քո, եւ պահեսցես զպահպանութիւնս նորա եւ
զիրաւունս նորա եւ զպատուիրանս նո-
րա եւ զպատուիրանս նորա զամենայն
2 աւուրս [2]կենդանւոյ քոյ՝։ Եւ ծանիջիք այսօր, եթէ ոչ վասն որդւոց քոց որք ոչ
գիտեն եւ ոչ տեսին զիրաւս Տեառն Աս-
տուծոյ քո եւ զմեծամեծս նորա, զձեռն
3 հզօր եւ զբազուկ բարձր, Զնշանս նորա
եւ [11]զարուեստս զոր արար ի մէջ Եգիպ-
տոսի, ի Փարաւոն արքայ Եգիպտացւոց
4 եւ յամենայն երկիր նորա. Եւ զոր ինչ

[1] ՅԵԲԲ. եւ ել առ իս [2] ՅԵԲԲ. պակաս [3] ՅԵԲԲ. հրոյն յաւուրն եկեղեցւոյ [4] ՅԵԲԲ. ի տապանակին զոր արարի. եւ եղեն [5] ՅԵԲԲ. Մոսերա [6] ՅԵԲԲ. օրհնել [7] ՅԵԲԲ. Տէր Աստուած քո նմա [8] ՅԵԲԲ. չեթէ չո-եը-, ըստ աւուրցն առաջնոց, [9] ՅԵԲԲ. դանդիւփատութիւն սրտից ձերոց [10] ՅԵԲԲ. ձեր [11] ՅԵԲԲ. զգործս նորա

արար ընդ զօրան Եգիպտացւոց , [1]զկառս նոցա եւ զերիվարս իւրեանց՝. որպէս ծփեաց զջուրս կարմիր ծովուն ի վերայ երեսաց նոցա ի յարձակել նոցա զկնի [2]մեր , կորոյս զնոսա Տէր մինչեւ յայսօր
5 ժամանակի . Եւ զոր ինչ արար ձեզ յանապատի անդ , մինչեւ եկիք ի տեղիս
6 յայս . Եւ զոր ինչ արար ընդ Դաթան եւ ընդ Աբիրոն , ընդ որդիս Եղիաբու որդւոյ Ռուբենի , որոց բացեալ երկիր զբերան իւր եկուլ զնոսա եւ զտունս նոցա եւ զվրանս նոցա , եւ զամենայն
7 ինչս նոցա ընդ նոսա ի միջոյ ամենայն Իսրայելի . Զի ձեր իսկ աչք տեսին զա-
մենայն զգործս Տեառն զմեծամեծս զոր
8 արար [3]ի ձեզ մինչեւ յայսօր՝։ Եւ պա-
հեցէք զամենայն պատուիրանս [4]նորա զոր ես պատուիրեմ ձեզ այսօր, դի [5]կեց-
ջիք եւ բազմապատիկք լինիցիք՝, եւ
մտանիցէք ժառանգիցէք զերկիրն , յոր
դուք անցանէք [5]ընդ Յորդանան՝ ժա-
9 ռանգել զնա . Զի երկայնօրեայք լինի-
ջիք ի վերայ երկրին զոր երդուաւ Տէր հարցն ձերոց տալ նոցա եւ զաւակի նոցա [3]յետ նոցա՝, երկիր՝ որ բղխէ զկաթին եւ զմեղր ։
10 Քանզի երկիրն յոր մտանելոց էք ժա-
ռանգել զնա՝ ոչ իրրեւ զերկիրն եգիպ-
տացւոց է ուստի ելէք դուք անտի , [6]յորժամ սերմանեն սերմանս , եւ ոռո-
գանեն ոտիւք՝ իրրեւ զպարտէզ բանջա-
11 րոյ . Այլ երկիրն յոր դուք մտանելոց էք ժառանգել՝ երկիր լեռնային եւ գաչաս-
կան է . յանձրեւոյ երկնից ըմպէ ջուր .
12 երկիր՝ զոր Տէր Աստուած քո դարմանէ զնա , հանապազ աչք Տեառն Աստուծոյ քո ի վերայ նորա , ի սկզբանէ տարւոյն
13 մինչեւ ցկատարումն տարւոյն ։ Եւ եթէ լսելով լսիցես [7]ամենայն պատուիրա-
նաց նորա՝ զոր ես պատուիրեմ քեզ այս-
օր , սիրել զՏէր Աստուած քո եւ պաշ-
տել դմա յամենայն սրտէ քումմէ , եւ
14 յամենայն անձնէ քումմէ , [8]Տայէ անձ-
րեւ երկրին ձերում ի ժամանակի իւրում զկանուխ եւ զանագան , եւ ժողովիցես զցորեան քո եւ զգինի քո եւ զեւղ քո ։
15 Եւ [8]տացէ խոտ յանդս քո անասնոյ քում ,
16 եւ կերիցես եւ յագեսցիս ։ Հայեցարուք յանձինս ձեր , գուցէ յուլանայցեն սիրտք ձեր եւ յանցանիցէք եւ պաշտիցէք զաս-
տուածս օտարս , եւ երկիր պաղանիցէք
17 նոցա . Եւ սրտմտեալ բարկանայցէ Տէր ի վերայ ձեր , եւ արգելուցու զերկինս եւ
ոչ լինիցի անձրեւ , եւ երկիր ոչ տացէ զպտուղ իւր , եւ կորնչիցիք արագ արագ յերկրէն բարւոքեան զոր ես ձեզ Տէր ։
18 Եւ դիջիք զբանս զայս ի սիրտս ձեր եւ յանձինս ձեր , եւ արկիջիք զսոսա նշան ի ձեռս ձեր , եւ եղիցին [9]անշարժ առաջի
19 աչաց ձերոց . Եւ [10]ուսուսջիք որդւոց ձերոց խօսել զսոսա ի նստիլ ի տան , եւ
ի գնալ ի ճանապարհի , եւ ի ննջել եւ ի
20 յառնել . Եւ գրեսջիք զսոսա ի վերայ սե-
21 մոյ տանց ձերոց եւ ի դրունս ձեր . Զի [11]բազմօրեայք լինիցիք՝, եւ աւուրք որդ-
ւոց ձերոց ի վերայ երկրին զոր երդուաւ Տէր հարցն [12]քոյ տալ քեզ՝ ըստ աւուրց երկնից ի վերայ երկրի ։
22 Եւ եղիցի եթէ [13]լսելով լսիցէք ամե-
նայն պատուիրանացս այսոցիկ՝ զոր ես պատուիրեմ ձեզ այսօր առնել , սիրել զՏէր Աստուած քո , գնալ ի ճանապարհս
23 նորա եւ յարիլ ի նա , Մերժեսցէ Տէր զամենայն ազգսն զայնոսիկ յերեսաց ձե-
րոյ , եւ ժառանգեսջիք զազգս մեծամեծս
24 եւ հզօրագոյնս քան զձեզ ։ Ամենայն տե-
ղի ուր կոխիցեն գնացք ոտիւ ձերոյ՝ ձեզ լիցի . յանապատէ անտի [14]մինչեւ ցԼիբանանէ , եւ ի գետոյն մեծէ ,
գետոյն՝ Եփրատայ մինչեւ ցծովն արեւ-
25 մտից եղիցին սահմանք ձեր ։ Եւ ոչ ոք դառնայցէ ընդդէմ ձեր , եւ զահ եւ զեր-
կեւղ ձեր արկցէ Տէր Աստուած ձեր ի վերայ երեսաց ամենայն երկրին զոր կո-
խիցէք , որպէս խօսեցաւ ընդ ձեզ Տէր ։
26 Եւ ես անաւասիկ տամ այսօր առաջի
27 ձեր օրհնութիւնս եւ անէծս . Օրհնու-
թիւն՝ եթէ լսիցէք պատուիրանաց Տեառն Աստուծոյ ձերոյ զոր ես պատուիրեմ ձեզ
28 այսօր . Եւ անէծս՝ եթէ ոչ լսիցէք պա-
տուիրանաց Տեառն Աստուծոյ ձերոյ [3]զոր ես պատուիրեմ ձեզ այսօր՝, եւ մո-
լորիցիք ի ճանապարհէն զոր ես պա-
տուիրեցի ձեզ , երթալ պաշտել զաս-

---

[1]ԵԲԲ· ընդ երիվարս նոցա, եւ ընդ կառս նոցա [2]ԵԲԲ· ձեր [3]ՏԵԲԲ· գոյ-ոյ [4]ԵԲԲ· զօրանայցէք [5]ԵԲԲ· անդր [6]ԵԲԲ· ուր սերմանէիր զսերմն քո, և ոռոգանէիր ոտիւք քովք [7]ԵԲԲ· պատուիրանաց իմոց [8]ԵԲԲ· Տայ

[9]ԵԲԲ· գրապանակ [10]ԵԲԲ· ուսուսջիք զնոսա [11]ԵԲԲ· բազմասցին աւուրք ձեր [12]ԵԲԲ· ձերոց տալ նոցա [13]ԵԲԲ· պահելով պահիցէք զամենայն պատուիրանս զայսոսիկ [14]ԵԲԲ· և ի Լիբանանէ եւ ի գետոյն, ի գետոյն

29 տուածս օտարս զորս ոչ ճանաչիցէք ։ Եւ
եղիցի յորժամ տարցի զքեզ Տէր Ա-
տուած քո յերկիրն յոր անցանես [1]ընդ
Յորդանան՝՝ ժառանգել զնա , եւ տայցես
զու զօրհնութիւնն ի լերինն Գարիզիմ ,
30 եւ զանէծս ի լերինն Գերազ . Ո՞չ ապա-
քէն յայնկոյս Յորդանանու է այն , յա-
տոյ ճանապարհին արեւմտից յերկրին
Քանանացւոց , [2]որոյ նիստն ընդ արեւ-
մուտս է մերձ ի Գազգազ՝ առ կաղնեաւն
31 բարձու՝՝ ։ Եւ զուք անցանէք ընդ Յոր-
դանան մտանել ժառանգել զերկիրն զոր
Տէր Ա.ստուած տալոց է ձեզ ի ժառան-
գութիւն [1]ամենայն աւուրս՝՝ , եւ ժա-
ռանգեսջիք զնա եւ բնակեսջիք ի նմա ։
32 Եւ զգուշասջիք առնել զամենայն հրա-
մանս նորա , եւ զդատաստանս զայս-
սիկ զոր ես առաջի ձեր այսօր ։

Գլ. ԺԲ

1 Եւ այս են հրամանք եւ դատաստանք
զոր զգուշանայցէք առնել յերկրին զոր
Տէր Ա.ստուած հարցն ձերոց տալոց է ձեզ
ի ժառանգութիւն , զամենայն աւուրս
2 զորս կեցցէք զուք ի վերայ երկրի ։ Կո-
րուսանելով կորուսջիք զամենայն տե-
ղիսն յորս պաշտեցին ի նոսա ազգքն ,
զորս զուք ժառանգիցէք զնոսա , զլերին-
նանց ի վերայ լերանց բարձանց եւ ի
վերայ բլրոց , եւ ի ներքոյ ամենայն
3 վարսաւոր ծառոց . Եւ կործանեսջիք
զբազինս նոցա , եւ փշրեսջիք զարձանս
նոցա , եւ այրեսջիք հրով , [3]զանտառս
նոցա , եւ զդրօշնակս դից նոցա կոտո-
րեսջիք , եւ կորուսջիք զանունս նո-
ցա ի տեղւոջէն յայնմանէ ։
4 Եւ մի՛ առնիցէք նոյնպէս Տեառն Ա.ս-
5 տուծոյ ձերում . Այլ ի տեղւոջն զոր
ընտրեսցէ Տէր Ա.ստուած ձեր ի միում
ի ցեղից ձերոց , [4]անուանել զանուն իւր
եւ կոչել ի նմա՝՝ , ինդրեսջիք եւ մտջիք
6 անդր . Եւ մատուսջիք զողջակէզս ձեր
եւ զզոհս ձեր եւ զտասանորդս ձեր եւ
[5]զպատուս ձեր՝՝ եւ զուխտս ձեր եւ զկա-
մայականս ձեր [1]եւ զիսոստովանութիւնս
ձեր՝՝ , եւ զանդրանիկս արջառոյ եւ ոչ-
7 խարի ձերոյ . Եւ կերիջիք առաջի Տեառն
Ա.ստուծոյ ձերոյ , եւ ուրախ լինիջիք ի
վերայ ամենայնի յոր մխիցէք զձեռս
ձեր , զուք եւ տունք ձեր , որպէս եւ
օրհնեաց զքեզ Տէր Ա.ստուած քո ։
8 Մի՛ առնիցէք զամենայն ինչ զոր այսօր
մեք առ [1]ոչ առնեմք , իւրաքանչիւր
9 զհաճոյն առաջի իւր ։ Քանզի ոչ հասէք
ի հանգիստն եւ ի ժառանգութիւնն զոր
Տէր Ա.ստուած [6]մեր տալոց է ձեզ , մին-
10 չեւ ցայսօր՝՝ ։ Եւ անցիջիք ընդ Յորդանան
եւ բնակեսջիք յերկրին զոր Տէր Ա.ստ-
ստուած [7]մեր ժառանգեցուցանէ ձեզ . եւ
հանգուսցէ զձեզ յամենայն թշնամեաց
ձերոց որ չուրջ զձեզ իցեն , եւ բնա-
11 կեսջիք [8]ապահովութեամբ . Եւ եղիցի տե-
ղին զոր ընտրեսցէ Տէր Ա.ստուած [9]մեր
կոչել զանուն իւր ի վերայ նորա , անդ
մատուսջիք՝՝ զամենայն զոր ես պատուի-
րեմ ձեզ [1]այսօր , զողջակէզս ձեր եւ
զզոհս ձեր եւ զտասանորդս ձեր եւ
[10]զպատուս ձեռաց ձերոց [1]եւ զզահա-
մունս ձեր՝՝ , եւ զամենայն ընտիրս [11]պա-
տարագաց ձերոց զոր ուխտիցէք [12]Ա.ս-
12 տուծոյ ձերում՝՝ ։ Եւ ուրախ լինիջիք
առաջի Տեառն Ա.ստուծոյ [13]մերոյ , զուք
եւ ուստերք ձեր եւ դստերք ձեր եւ ծա-
ռայք ձեր եւ աղախնայք ձեր , եւ Ղեւ-
տացին որ ի գրունս ձեր , զի ոչ գոյ նորա
բաժին եւ ոչ ժառանգութիւն ընդ ձեզ ։
13 Զգոյշ լիր անձին քումմէ , գուցէ մա-
տուցանիցես զողջակէզս քո յամենայն
14 տեղւոջ զոր տեսանիցես . Այլ ի տեղւոջն
զոր ընտրեսցէ Տէր [14]Ա.ստուած քո իւր
ի միում ի քաղաքաց՝՝ քոց , անդ մատու-
ցանիցես ողջակէզս քո , եւ անդ արաս-
ցես զամենայն զոր ես պատուիրեմ քեզ
15 այսօր ։ Այլ եւ բաւ ամենայն ցանկու-
թեան քումմէ զենցես եւ ուտիցես միս ըստ
օրհնութեան Տեառն Ա.ստուծոյ քո , զոր
տա քեզ յամենայն քաղաքս . անսուրբն
որ ի քեզ եւ սուրբն ի միասին կերիցեն
զայն՝ իբրեւ զայծեամն եւ զեղջերու ։
16 Բայց արիւն մի՛ ուտիցէք , այլ յերկիր
հեղուցուք զնա իբրեւ զջուր ։
17 Մի՛ ժամիցես ուտել ի քաղաքս քո զտա-
սանորդս ցորենոյ քո եւ զղինւոյ քո եւ
զիւղոյ քո , զանդրանիկս արջառոյ քո եւ

[1]3Եբր. պ-ի-ս-ե [2]Եբր. բնակելոց յԱրաբա (ի
դաշտին), մերձ ի Գազգազ, առ կաղնեօքն
Մորեհի [3]Տես Ելից Լ՚Ի. 13 ։ [4]Եբր. դնել
զանուն իւր անդ , բնակել նմա [5]Եբր. զվե-
րացմունս ձեռաց ձերոց [6]Եբր. քո տալոց է քեզ [7]Եբր. ձեր [8]Եբր.
յապահովս [9]Եբր. ձեր ի նմա , բնակեցուցա-
նել զանուն իւր անդր , անդր տարջիք [10]Եբր.
զվերացմունս [11]Եբր. ուխտից [12]Եբր. Տեառն
[13]Եբր. ձերոյ [14]Եբր. ի միում ի ցեղից

զոչխարի քո, եւ զամենայն ուխտս զոր ուխտիցէք, եւ [1]զխոստովանութիւնս ձեր
18 եւ զպտուղս ձեռաց ձերոց". Այլ առաջի Տեառն Աստուծոյ քո կերիցես զայն, ի տեղւոջն զոր ընտրեսցէ Տէր [2]Աստուած՝ իւր", դու եւ ուստր քո եւ դուստր քո, ծառայն քո եւ աղախին քո եւ [3]Ղեւտացին որ ի քաղաքս քո. եւ ուրախ լինիցիս առաջի Տեառն Աստուծոյ քո ի վերայ
19 ամենայնի յոր մխիցես զձեռն քո։ Զգոյշ լեր անձին քումմ, զուցէ թողուցուս զՂեւտացին զամենայն ժամանակս որչափ եւ կեցցես ի վերայ երկրին։
20 Եւ եթէ ընդարձակեսցէ Տէր Աստուած քո զսահմանս քո որպէս եւ խոստացաւ քեզ, եւ ասիցես թէ՝ կերայց միս, եթէ ցանկանայցէ անձն քո ուտել միս, քանզի ամենայն ցանկութեան անձին քո կերիցես միս։ Ապա թէ հեռագոյն իցէ ի քէն տեղին զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո [4]անուանել զանուն իւր ի վերայ նորա",
եւ զնուացուս յարջառոյ քումմէ եւ յոչխարէ քումմէ յորոյ տացէ քեզ [5]Աստուած, զոր օրինակ պատուիրեցի քեզ,
22 կերիցես ի քաղաքս քո ըստ ցանկութեան անձին քո։ Որպէս ուտիցի այծեամն եւ եղջերու, այնպէս կերիցես եւ զայն. անսուրբն ի քէզ եւ սուրբն նոյնպէս կե-
23 րիցեն։ Զգոյշ լեր չուտելոյ զարիւն, զի
24 արիւն նորա է չունչ իւր. Մի՛ ուտիցես չունչ ընդ մսոյ, յերկիր հեղուցուս զնա
25 իբրեւ զջուր։ Եւ մի՛ ուտիցես զնա, զի բարի լինիցի քեզ եւ որդւոց քոյ յետ քո, եթէ արասցես զարիւնն եւ զհաճոյ առաջի
26 Տեառն [6]Աստուծոյ քո"։ Բայց զուրուագ թիւնս քո որ լինիցին քեզ, եւ զուխտսն քո զոր ուխտիցես, առեալ եկեսցես ի տեղին զոր ընտրեսցէ Տէր [6]Աստուած քո իւր՝ կոչել զանուն իւր ի վերայ նորա",
27 եւ արասցես զոչխակէզսն քո, [7]զմին հանցես ի վերայ սեղանոյ Տեառն Աստուծոյ քո, եւ զարիւն զոհիցն հեղուցուս առ յատակաւ սեղանոյն Տեառն Աստուծոյ քո, եւ զմին կերիցես։
28 Զգոյշ լեր եւ լուր, եւ արասցես զամենայն զբանս զոր ես պատուիրեմ քեզ, զի բարի լինիցի քեզ եւ որդւոց [8]քոց

յաւիտեան, եւ արասցես զբարին եւ զնաճոյն առաջի Տեառն Աստուծոյ քո։
29 Եւ եթէ ատակեսցէ Տէր Աստուած քո զազգսն յերեսաց քոց, յորում գուն մտանիցիս եւ ժառանգել զերկիրն նոցա, եւ ժառանգեսցես զնոսա եւ բնակեսցես
30 յերկրի նոցա, Զգոյշ լեր անձին քումմ, զուցէ խնդրիցես երթալ զնա նոցա յետ սատակելոյ զնոսա յերեսաց քոց. մի՛ քննիցես զգիս նոցա եւ ասիցես, Զիարդ առնիցեն ազգքս այսոքիկ զկնի իմ եւ
31 զի եւ ես արարից [9]Տեառն Մի՛ առնիցես նոյնպէս Տեառն Աստուծոյ քումմ, զի զգարշելիսն զոր առեալ Տէր՝ արարին կիզին իւրեանց. զի զուսաներս իւրեանց եւ զդստերս
32 իւրեանց այրեն հրով կիզին իւրեանց։ Ամենայն բանի զոր ես պատուիրեմ քեզ [6]այսօր՝ զգուշանայցես առնելոյ, մի՛ յաւելուցուս ի նա եւ մի՛ հատանիցես ի նմանէ։

ԳԼ. ԺԳ

1 Եւ եթէ յառնիցէ ի միջի քումմ մարգարէ կամ երազահան երազոյ, եւ տացէ քեզ
2 նշան կամ սքանեաս, Եւ լինիցի նշանն կամ արուեստն զոր խօսեցաւ առ քեզ, եւ ասիցէ, Երթիցուք պաշտեսցուք զաստուածս օտարս զորս ոչ ճանաչիցէք,
3 Մի՛ լսիցէք բանից մարգարէին այնորիկ, կամ երազահանին երազոյ. զի փորձէ զձեզ Տէր [10]Աստուած ճանաչել", թէ սիրիցէք զՏէր Աստուած [11]մեր յամենայն սրտէ ձերմէ եւ յամենայն անձնէ ձերմէ։
4 Զկնի Տեառն Աստուծոյ ձերոյ երթիջիք, եւ ի նմանէ երկնչիջիք եւ զպատուիրանս նորա պահեսջիք. եւ ձայնի նորա
5 լուիջիք[12] եւ ի նա յարեսջիք։ Եւ մարգարէն այն կամ երազահանն երազոյ մեռցի, զի խօսեցաւ ապստամբեցուցանել զքեզ ի Տեառնէ Աստուծոյ քումմէ որ հանան զքեզ յերկրէն Եգիպտացւոց, որ փրկեացն զքեզ յերկրէն ծառայութեան, մերժել զքեզ ի ճանապարհէն զոր պատուիրեաց քեզ Տէր Աստուած քո գնալ ընդ նա. եւ բարձցես զչարն ի միջոյ ձերմէ։
6 Եւ եթէ ազգիսցէ զքեզ եղբայր քո [6]առ ի հօրէ կամ" առ ի մօրէ քումմէ, կամ ուստր քո, կամ դուստր քո, կամ կին ծոցոյ քո, կամ բարեկամ հանգոյն անձին քո, պաղատ եւ ասիցէ, Երթիցուք

---

[1] ԵՓ՝ զկամայականս և զվերացմունս ձեռաց քոց [2] ԵՓ՝ Աստուած քո [3] ԵՓ՝ Ղեւտացին [4] ԵՓ՝ դնել զնուն իւր անդ [5] ԵՓ՝ Տէր [6] ՅԵՓ՝ գ-ե-ւ [7] ԵՓ՝ զմին եւ զարիւն [8] ԵՓ՝ քոց յետ քո

[9] ԵՓ՝ այնպէս [10] ԵՓ՝ Աստուած ձեր ճանաչել զձեզ [11] ԵՓ՝ ձեր [12] ԵՓ՝ ե-խ-ե- և զնա պաշտեսջիք

պաշտեսցուք զաստուածս օտարս զորս
7 ոչ ճանաչիցես դու եւ հարք քո , Յաստուածոց ազգացն որ չուրջ զձեզ իցեն,
ի մերձաւորացն քոց կամ ի հեռաւորաց,
ի ծագաց երկրին մինչեւ ի ծագս երկրին,
8 Մի՛ հաւանիցիս նմա եւ մի՛ լսիցես նմա,
եւ մի՛ խնայեսցէ ակն քո ի նա, եւ մի՛
գթասցիս ի նա եւ մի՛ ծածկեսցես զնա.
9 [1]Պատմելով պատմեսցես զնմանէ՛. ձեռք
քո նախ լինիցի ի նա սպանանել զնա,
եւ ապա ձեռն ամենայն ժողովրդեանն.
10 եւ քարկոծեսցես զնա քարամբք եւ
մեռցի . զի խնդրեաց սպասաւորեցուցա-
նել զքեզ ի Տեառնէ Աստուծոյ քումմէ,
որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց
11 ի տանէ ծառայութեանն: Եւ լսեսցեն ամե-
նայն Իսրայելի զարհուրեսցի , եւ ոչ
եւս յաւելուցեն առնել ըստ բանին
այնորիկ չարի ի միջի ձերում:
12 Եւ եթէ լսիցես ի միում ի քաղաքացն
զորս Տէր Աստուած քո տացէ քեզ բնա-
13 կել անդ, ասել՝ եթէ ելին արք անօ-
րէնք ի մէնջ եւ ապստամբեցուցին զա-
մենայն բնակիչս քաղաքին իւրեանց ,
եւ ասեն , Երթիցուք եւ պաշտեսցուք
զաստուածս օտարս զորս ոչ գիտիցէք ,
14 Եւ քննեսցես եւ հարցցես եւ յաւելո-
ցես յոյժ , եւ արդ ստոյգ հաւաստեալ
իցէ բանն , եւ եղեալ իցէ զարչաւիքինն
15 ի ձեզ , կոտորելով կոտորեսջիք զամե-
նայն բնակիչս [2]երկրին այնորիկ կոտոր-
մամբ սրոյ , եւ նզովելով նզովեսջիք
զնա եւ զամենայն ինչ որ ի նմա եւ
16 զանասունս նոցա ի բերան սրոյ . Եւ զա-
մենայն կապուտ նորա ժողովեսցես յելս
նորա , եւ այրեսցես հրով զքաղաքն եւ
զամենայն զաւար նորա համօրէն [3]ա-
ստուծի Տեառն Աստուծոյ քո , եւ եղիցի
աւերակ յաւիտեան եւ ոչ եւս չինեսցի:
17 Եւ մի՛ կառչիցի ի ձեռին քումմ ինդովից
նորա , զի զարձցի Տէր ի բարկութենէ
սրտմտութեան իւրոյ , եւ տացէ քեզ
ողորմութիւն , եւ ողորմեսցի քեզ եւ
բազմացուսցէ զքեզ , զոր օրինակ երդ-
18 ուաւ Տէր հարցն քոց , եթէ լսիցես
ձայնի Տեառն Աստուծոյ քո պահել զա-
մենայն պատուիրանս նորա զոր ես քեզ
պատուիրեմ այսօր , առնել [4]զբարին եւ
զհաճոյն՝՝ առաջի Տեառն Աստուծոյ քո:

[1]ԵՔԸ. Սպանանելով սպանցես զնա [2]ԵՔԸ. քա-
ղաքին [3]ԵՔԸ. վասն [4]ԵՔԸ. զուղիղն

ԳԼ. ԺԴ

1 Որդիք էք դուք Տեառն Աստուծոյ
ձերոյ , մի՛ ցաւիցիք , եւ մի՛ հարկանի-
2 ցէք զճակատ ի վերայ մեռելոյ . Զի ժո-
ղովուրդ ես դու սուրբ Տեառն Աստուծոյ
քո. եւ զքեզ ընտրեաց Տէր [5]Աստուած քո՝՝
լինել քեզ նմա ժողովուրդ սեպհական
յամենայն ազգաց որ ի վերայ երեսաց
3 երկրի: Մի՛ ուտիցէք զամենայն գարշելիս:
4 Սա՛ սոքա անասունք են զորս ուտիցէք .
արջառ եւ ոչխար ի հօտից , եւ [6]նոխազ
5 յայծեաց , Զեղջերու եւ գայծեամն եւ
զդամէզ եւ զվայրերուզ եւ զայծքազ եւ
6 զյամոյր եւ զանդալոփ. Եւ զամենայն ա-
նասուն զմատահերձ եւ զկճղակաբաշխ
7 եւ զորոճով յանասնոց ուտիցէք. [7]Եւ զայն
մի՛ ուտիցէք որ որոճեն եւ մատահերձ
եւ կճղակաբաշխ ոչ իցեն . ուզտ եւ նա-
պաստակ եւ ճագար՝՝ զի որոճեն եւ
կճղակահերձ ոչ են . անսուրբք իցեն
8 նոքա ձեզ : Եւ խոզ զի մատահերձ եւ
կճղակաբաշխ է եւ որոճէ ոչ՝ անսուրբ
իցէ նա ձեզ. ի մսոյ նոցա մի՛ ուտիցէք,
եւ ի մեռեալ նոցա մի՛ մերձենայցէք :
9 Եւ այս են զոր ուտիցէք յամենայնէ
որ ի ջուրս են . ամենայնի որոյ իցեն
10 թեւք եւ թեփ , ուտիցէք , Եւ ամենայ-
նի որոյ ոչ իցեն թեւք եւ թեփ , մի՛
ուտիցէք . անսուրբ իցեն նոքա ձեզ :
11 Զամենայն հաւ սուրբ ուտիցէք :
12 Եւ այս է զոր ոչ ուտիցէք ի նոցանէ .
զարծուի եւ զկորճ եւ զգետաբծուի ,
13 Եւ զցին եւ զանկղ , եւ որ ինչ նման է
14 նոցա , Եւ զորի՝ եւ որ ինչ նման իցէ
15 նմա , Եւ զկայեաման եւ զբու եւ զճայ
16 եւ զարագիլ , Եւ զփոյտ եւ զհոգամազ
17 եւ զքաջահաւ , Եւ զսոխակ եւ զագռաւ
18 եւ զհաւալուսն , Եւ զքաւազր , եւ որ
ինչ նման է նոցա , եւ զյոպոպ եւ զչղջի:
19 Եւ ամենայն սողուն [8]ի թռչնոց՝՝ անսուրբ
լիցի ձեզ , եւ մի՛ ուտիցէք ի նոցանէ :
20 Եւ զամենայն թռչուն սուրբ կերիջիք :
21 Եւ զամենայն մեռելոտի մի՛ ուտի-
ցէք , այլ պանդխտին որ է ի քաղաքս
քո տացես զնա եւ կերիցէ , կամ վա-
ճառեսցես օտարոտւոյն . զի ժողովուրդ
սուրբ ես դու Տեառն Աստուծոյ քո:

[5]ՅԵՔԸ. պ-ւ-ած [6]ԵՔԸ. այծ [7]ԵՔԸ. Սակայն
յորոց որոճեն կամ կճղակաբաշխ իցեն՝ մի՛
ուտիցէք զդուսա . զուզտ , զնապաստակ եւ
զճագար [8]ԵՔԸ. թռչուն

Մի՛ եւիւսցես [1]զգառն ի կաթն մօր իւրոյ։
22 Տասանորդս տասանորդեսցես յամենայն արմտեաց սերմանց քոց, զարմտիս
23 անդոյ քոց ամ բուռ ամի, եւ կերիցես [2]ա՛յն առաջի Տեառն Աստուծոյ քո ի տեղւոջն զոր ընտրեսցէ [3]Տէր Աստուած քո անուանել զանուն իւր ի վերայ նորա, անդ մատուսցես՝ պտուղս տասանորդս գործոց քոց եւ զպինդ քո եւ զիւղոյ քո, եւ զանդրանիկս արջառոյ քո եւ զոչխարի քո. զի ուսցիս երկնչել ի
24 Տեառնէ Աստուծոյ քումմէ զամենայն աւուրս։ Ապա թէ հեռի իցէ ի քէն ճանապարհն, եւ ոչ կարիցես առնել զայն, վասն զի հեռի իցէ ի քէն անդին զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո [4]անուանել զանուն իւր անդ, զի օրհնեսցէ զքեզ
25 Տէր Աստուած քո, վաճառեսցես զայն արծաթով, եւ տացես զարծաթն ի ձեռն քում, եւ երթիցես ի տեղին զոր
26 ընտրեսցէ Տէր Աստուած քո. Եւ տացես զարծաթն ընդ ամենայնի որում ցանկանայցէ անձն քո, արջառոյ կամ ոչխարի կամ գինւոյ կամ ըմպելւոյ կամ ամենայնի որում ցանկանայցէ անձն քո, եւ կերիցես անդ առաջի Տեառն Աստուծոյ քո, եւ
27 ուրախ լինիցիս դու եւ [5]ուսար քո. Եւ Ղեւտացին որ ի քաղաքս քո, մի՛ թողուցուս զնա, զի ոչ կայ նորա բաժին եւ ոչ ժառանգութիւն ընդ քեզ։
28 Յետ երից ամաց հանիցես զամենայն տասանորդս արմտեաց քոց, եւ յամին
29 յայնմիկ դիցես զայն ի քաղաքս քո. Եւ եկեսցէ Ղեւտացին, զանգի ոչ կայ նորա բաժին եւ ժառանգութիւն ընդ քեզ, եւ եկն եւ որք եւ այրի ի քաղաքս քո, կերիցեն եւ յագեսցին. զի օրհնեսցէ զքեզ Տէր Աստուած քո յամենայն գործս քո զոր առնիցես։

Կ. ԺԵ

1 [6]Յեւթն եւթնեղորդ ամի՝ արասցես թո-
2 ղութիւն։ Եւ այս իցէ հրաման թողութեան. թողցես զամենայն պարտս քո զոր պարտիցի քեզ ընկեր քո, եւ մի՛ պահանջիցես զընկերէ եւ յեղբօրէ քումմէ, զի թողութիւն կոչեցեալ է [2]Տեառն Ա-
3 աստուծոյ քո՝։ Յօտարազուն [7]պահանջիցես

[1] ԵԲՐ. ղաղ [2] ՅՕԹ. պահաբ [3] ԵԲՐ. բնակեցուցանել զանուն իւր անդ. [4] ԵԲՐ. գնել
[5] ԵԲՐ. տուն [6] ԵԲՐ. Ի կատարածի եւթն ամաց
[7] ԵԲՐ. պահաջիցես. և որ ինչ իցէ քո ընդ եղբօր քումմ, թողցէ ձեռն քո

որ ինչ իցէ քո առ նմա, բայց եղբօրն քումմ թողութիւն արասցես զպարտսդ
4 քոց՝։ Եւ մի՛ լինիցի ի միջի քումմ կարօտեալ. զի օրհնելով օրհնեսցէ զքեզ Տէր [2]Աստուած քո՝ յերկրին զոր Տէր Աստուած քո տալոյ է քեզ ի ժառան-
5 գութիւն ժառանգել զնա։ Եւ եթէ լսելով լսիցես ձայնի Տեառն Աստուծոյ քո, պահել եւ առնել զամենայն պատուիրանս զոր ես պատուիրեմ քեզ այ-
6 սօր, Զի Տէր Աստուած քո օրհնեսցէ զքեզ, որպէս եւ խոստացաւ քեզ, եւ տացես փոխս ազգաց բազմաց, եւ դու ոչ առնուցուս փոխս. եւ տիրեսցես ազգաց բազմաց, եւ քեզ մի՛ տիրեսցեն։
7 Եւ եթէ լինիցի ի միջի քումմ կարօտեալ յեղբարց քոց, ի միում ի քաղաքաց քոց յերկրին զոր տացէ քեզ Տէր Աստուած քո, մի՛ զգաճա ցանիցես զսիրտ քո, եւ մի՛ կծկիցես զձեռն քո յեղբօրէ
8 քումմէ կարօտելոյ. Այլ ընդարձակելով ընդարձակեսցես նմա զձեռն քո, եւ տալով տացես նմա փոխ [8]որչափ եւ խնդրիցէ ի կարօտութիւնն իւրում՝։ Զգոյշ
9 լեր անձին քումմ, զուցէ լինիցի բան [2]ծածուկ անօրէնութիւնն ի սրտի քումմ, եւ ասիցես, Մերձ է ամն եւթներորդ, ամն թողութեան, եւ չարակնեսցէ ակն քո ի վերայ եղբօր քո կարօտելոյ, եւ ոչ տայցես նմա. եւ յողոքեսցէ զքէն առ Տէր, եւ լինիցին քեզ այն [9]մեղք մե-
10 ծամեծք։ Այլ պարգեւելով պարգեւեսցես նմա, եւ տալով տացես նմա փոխ որչափ եւ պիտոյ իցէ՝, եւ մի՛ աւամիցիս ի սրտի քումմ զկնի արացն քոց նմա. զի վասն բանին այնորիկ օրհնեսցէ զքեզ Տէր Աստուած քո յամենայն ի գործս քո, եւ յամենայնի յոր ինչ եւ մխեսցես
11 զձեռն քո։ Զի ոչ պակասք կարօտեալ յերկրէ, վասն այնորիկ ես պատուիրեմ զքեզ զայս եւ ասեմ, Ընդարձակելով ընդարձակեսցես զձեռն քո յեղբայր քո, յաղքատ եւ ի տառապեալ որ իցէ յերկրին քումմ։
12 Եւ եթէ վաճառեսցի քեզ եղբայր քո Եբրայեցի, կամ կին Եբրայեցի, ծառայեսցէ քեզ վեց ամ. եւ յամին եւթներորդի արձակեսցես զնա ազատ ի քէն։
13 Եւ յորժամ արձակեսցես զնա[10], ոչ ար-

[8] ԵԲՐ. ըստ բաւականի կարօտութեանն որում կարօտիցէ [9] ԵԲՐ. մեղք. (10) Տալով տացես նմա [10] ԵԲՐԱՅԵՑԻՔ ՅՕԵԼԵ, ազատ ի քէն

14 ձակեսցես զնա ուստի. Այլ հանդերձեալ հանդերձեսցես զնա յչխարայ քոյ
եւ ի ցորենոյ քումմէ եւ ի հնձանէ քումմէ. որպէս եւ օրհնեաց զքեզ Տէր Ա-
15 ստուած քո՝ տացես նմա։ Եւ յիշեսցես, զի եւ դու ծառայ էիր յերկրին Եգիպ-
տացւոց, եւ փրկեաց զքեզ Տէր Աստուած քո անտի. վասն այնորիկ ես պատու-
16 իրեմ քեզ առնել զբանս զայս։ Ապա թէ ասիցէ ցքեզ, Ոչ կամիմ ի քէն. զի սի-
րեաց զքեզ եւ զտունն քո, զի բարի իցէ
17 նմա առ քեզ, Առցես հերիւն, եւ ծա-
կեսցես զունկն նորա ի վերայ [1]սեմոց
դրանն, եւ եղիցի քեզ ստրուկ յաւի-
տեան. եւ զաղախնին քո նոյնպէս ա-
18 րասցես։ Եւ մի խիտ թուեսցի առա-
ջի քո յորժամ արձակեսցես զնաստ ա-
զատս ի քէն. զի ամի ամի վարձուք
վարձանի ծառայեաց քեզ զվեց ամ.
եւ օրհնեսցէ զքեզ Տէր Աստուած քո
19 յամենայնի զինչ եւ գործեսցես։
Զամենայն անդրանիկս որ ծնանիցին
յանդեսս քո եւ ի հօտս քո, զարուն
ի նոցանէ սրբեսցես Տեառն Աստուծոյ
քումմ. ոչ գործեսցես անդրանիկաւ եզին
20 քո, եւ մի կարիսցես զանդրանիկս հօ-
տիւ քոց։ Ամ յամէ կերիցես զնա ա-
ռաջի Տեառն ի տեղւոյն զոր ընտրեսցէ
21 Տէր Աստուած քո, դու եւ տունն քո։ Եւ
եթէ արատաւոր իցէ կամ կաղ կամ կոյր,
եւ կամ ամենայն արատ չար զինչ եւ
գուցէ ի նմա, մի զնիցես զնա Տեառն
22 Աստուծոյ քումմ. Այլ ի քաղաքս քո կե-
րիցես զնա. անաւրէն ի քեզ եւ սուրբն
նոյնպէս կերիցեն, իբրեւ զայծեամն կամ
23 զեզջերու։ Բայց զարիւնն մի՛ ուտիցես,
յերկիր հեղուցուս զնա իբրեւ զջուր։

ԳԼ. ԺԶ

1 Զգուշասջիր ամսոյն կանխոց, եւ արաս-
ցես զաւրհնէս Տեառն Աստուծոյ քո. զի
յամսեանն կանխոց [2]եղէք յԵգիպտոսէ ի
2 գիշերի։ Եւ զնիցես զզաւրհնէն Տեառն
Աստուծոյ քումմ, ոչխարս եւ արջառս,
ի տեղւոյն զոր ընտրեսցէ Տէր Աստուած
3 քո [3]անուանել զանուն իւր անդ. Մի
ուտիցէք ընդ նմա խմորեալն, զեւթն օր
բաղարջ կերիցես ընդ նմա, հաց չար-
չարանաց. քանզի տապնապաւ ելէք յԵ-
գիպտոսէ. զի յիշիցէք զօրն եղիցի ձերոց
յերկրէն Եգիպտացւոց զամենայն աւուրս
4 կենաց ձերոց։ Եւ մի՛ երեւեսցի ի քեզ
խմոր յամենայն սահմանս քո զեւթն օր.
եւ մի՛ ապրի ի մսոյն զոր զնոյնցաւս յե-
5 րեկորեայ յաւուրն առաջնոյ՝ յայգ։ Եւ
մի՛ ժամասցես զնոյնդ՝ յայգ։ Եւ մի՛
ժամասցես զնոյնդ զզաւրհնէն ի միում
ի քաղաքաց քոց զոր Տէր Աստուած քո
6 տացէ քեզ. Այլ ի տեղւոյն զոր ընտ-
րեսցէ Տէր Աստուած քո [3]անուանել զա-
նուն իւր ի նմա, անդ զնոցես զզաւրհնէն
առ երեկս ընդ արեւմուտս, ի ժամանա-
7 կին ելից քոյոց ի վաղվան երթիցես [4]ի տուն
քո։ Զփնց օր կերիցես բաղարջ, եւ յա-
ւուրն եւթներորդի [1]ելք ոճոն Տեառն Աս-
տուծոյ քո. մի գործեսցես ինձմէ զամե-
նայն գործ [4]բայց որ ինչ գործիցի անձին՝։
9 Եւ եւթն եւթներորդս համարեսցես քեզ.
ի սկսանելոյ մանկազի քո յամ՝ սկսանիցիս
10 համարել եւթն եւթներորդս։ Եւ արաս-
ցես ոճոն եւթներորդաց Տեառն Աստու-
ծոյ քումմ, որչափ կարող իցէ ձեռն քո
ըստ ընչին [5]զոր տացէ քեզ՝ որպէս պիարդ
11 օրհնեսցէ զքեզ Տէր Աստուած քո. Եւ
ուրախ լիցիս առաջի Տեառն Աստուծոյ
քո դու եւ ուստր քո եւ դուստր քո, ծա-
ռայ քո եւ աղախին քո, եւ Ղեւտացին
որ ի քաղաքս քո, եւ եկն եւ որբն եւ
այրին որ ի ձեզ, ի տեղւոյն զոր ընտրես-
ցէ Տէր Աստուած [3]անուանել զանուն իւր
12 անդ։ Եւ յիշեսցես զի ծառայ էիր յերկ-
րին Եգիպտացւոց, եւ զգուշասցիս եւ
արասցես զպատուիրանս զայսոսիկ։
13 Տօն տապաւարահարաց արասցես զեւթն
օր, ի ժողովել քեզ ի կալոյ քումմէ եւ
14 ի հնձանէ քումմէ։ Եւ ուրախ լիցիս ի
տօնի քում դու եւ ուստր քո եւ դուստր
քո, ծառայ քո եւ աղախին քո, եւ Ղեւ-
տացին եւ եկն եւ որբն եւ այրին որ ի-
15 ցեն ի քաղաքս քո։ Զեւթն օր տօնեսցես
Տեառն Աստուծոյ քումմ ի տեղւոյն զոր
ընտրեսցէ [6]Տէր Աստուած քո ի նմա. եւ
եթէ՝ օրհնեսցէ զքեզ Տէր Աստուած քո
յամենայն արմտիս քո եւ յամենայն գործս
ձեռաց քոց, եւ լինիցիս ուրախ։
16 Զերիս ժամանակս ի տարւոջ յանդիման
լիցի ամենայն արու քո առաջի Տեառն
Աստուծոյ քո ի տեղւոյն զոր ընտրեսցէ
Տէր. ի տօնի բաղարջակերացն, եւ ի

[1] ՑԵԲԲ. պաւսե [2] ՆԵԲԲ. ԵՀԱՆ ԶՔԵԶ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՔՈ [3] ԵԲԲ. ԲՆԱԿԵՑՈՒՑԱՆԵԼ
[4] ԵԲԲ. Ի ՎՐԱՆ [5] ԵԲԲ. ՏԱՑԵՍ [6] ԵԲԲ. ՏԷՐ, ԶԻ

ածնի եւ թիներորզայն , եւ ի ածնի սա-
զաւարտարացն . եւ ոչ երեւեսցիս ա-
ռաջի Տեառն [1]Աստուծոյ քո" ունայնա-
17 ձեռն . Իւրաքանչիւր ըստ կարի ձեռաց
իւրոց ըստ օրհնութիւնս Տեառն Աստու-
ծոյ քո զոր ետ քեզ ։
18 Դատաւորս եւատենապետս կացուս-
ցես յամենայն [2]քաղաքս քո զոր Տէր Աս-
տուած քո տայէ քեզ ըստ ցեղից , եւ
դատեցեն զժողովուրդն դատաստան
19 արդար ։ [3]Եւ մի՛ աչառիցեն երեսաց , եւ
մի՛ առնուցուն" կաշառս . քանզի կա-
շառ կուրացուցանէ զաչս իմաստնոց ,
20 եւ ապականէ զբանս արդարոց ։ [4]Ար-
դարութիւնովք արասցես զիրաւունս , զի
կեցցէք եւ մտանիցէք ժառանգել" զեր-
կիրն զոր Տէր Աստուած տայէ [5]ձեզ ։
21 Մի՛ անկեսցես քեզ անտառ զամենայն
փայտի առ սեղանով Տեառն Աստուծոյ
22 [6]քո ։ Եւ մի՛ արասցես ինչ քեզ ձօնի .
եւ" մի՛ կանգնեսցես քեզ արձան զոր
ատեաց Տէր Աստուած քո ։

Գլ . ԺԷ

1 Եւ մի՛ զոհիցես Տեառն Աստուծոյ քումմ
արջառ կամ ոչխար յորում իցէ արատ
ինչ , բոլ ամենայն արատաւոր բանիւ . զի
պիղծ է այն առաջի Տեառն Աստուծոյ քո։
2 Եւ եթէ գտցի ի միջի քումմ , ի միում
ի քաղաքացն զոր Տէր Աստուած քո տա-
ցէ քեզ , այր կամ կին որ առնիցէ զչար
առաջի Տեառն Աստուծոյ քո , անցանել
3 զուխտիւ նորա , եւ երթեալ պաշտիցեն
զաստուածս օտարս , եւ երկիր պագա-
նիցեն նոցա , արեգական կամ լուսնի ,
կամ ամենայնի որ իցէ ի զարգուէ երկ-
4 նից , զորս ոչ հրամայեցի . Եւ պատ-
մեսցի քեզ , [7]եւ քննեսցես յոյժ , եւ ա-
հա ճշմարիտ լեալ իցէ բանին , եւ եղեալ
իցէ պղծութիւնն այն ի մէջ Իսրայելի ,
5 Հանցես զայրն զայն կամ զկինն որ ա-
րարին զբանն չար ի գրունս [8]ձեր , եւ
քարկոծեցէք" զնոսա քարամբք եւ մեռա-
6 ցին ։ Երկուք եւ երիւք վկայիւք մեռցի
որ մեռանիցին , եւ մի՛ մեռցի միով

7 վկայիւ ։ Եւ ձեռն վկայիցն եղիցի նախ
ի նա սպանանել զնա , եւ ապա ձեռն
ամենայն ժողովրդեանն . եւ բարձցես
զչարն ի մէջդ [9]ձերմէ ։
8 Եւ եթէ [10]վրիպեսցէ ի քէն" բան ի դա-
տաստանի , ի մէջ արեան եւ արեան , եւ
ի մէջ դատաստանի եւ դատաստանի , եւ
ի մէջ [11]զրգռութեան եւ զրգռութեան ,
եւ ի մէջ հակառակութեան եւ հակա-
ռակութեան , բան դատաստանի ի քա-
ղաքս" քո , եւ յարուցեալ ելցես ի տե-
ղին զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո
9 [1]անուանել զանուն իւր" անդ , Եւ եր-
թայցես առ քահանայսն Ղեւտացիս , եւ
առ դատաւորն որ լինիցի յաւուրսն յայ-
նոսիկ , եւ [12]քննեալ պատմեսցեն քեզ
10 [13]զդատաստանն . Եւ արասցես բոլ հրա-
մանին զոր պատմեսցեն քեզ որ ի տե-
ղւոյն իցեն՝ զոր ընտրեսցէ Տէր [1]Աստուած
քո", եւ զգուշասջիր յոյժ առնել ըստ
ամենայնի որպէս օրինադրեսցի քեզ .
11 Ըստ [14]օրինացն եւ ըստ դատաստանի զոր
ասացեն քեզ՝ արասցես , եւ մի՛ խո-
տորեսցիս ի բանէն զոր պատմեսցեն քեզ
12 մի՛ յայ եւ մի՛ յահեակ ։ Եւ մարդ ոք
որ առնիցէ հպարտութիւնս առ ի չլսե-
լոյ քահանային որ կայցէ [15]պաշտել յա-
ռնուն Տեառն Աստուծոյ քո", կամ դա-
տաւորին [1]որ իցէ յաւուրսն յայնոսիկ" ,
մեռցի մարդն այն , եւ բարձցես զչարն
13 յիսրայելէ ։ Եւ ամենայն ժողովրդեանն
լուեալ երկիւղ , եւ մի՛ եւս ամպարշտեսցի։
14 Եւ եթէ մտանիցես յերկիրն զոր Տէր
Աստուած քո տայէ քեզ , եւ ժառան-
գեսցես զնա եւ բնակեսցես ի նմա , եւ
ասիցես , կացուցից ի վերայ իմ [16]իշխան
որպէս եւ այլ ազգք որ չուրջ զինեւ են ,
15 կացուցանելով կացուսցես ի վերայ քո
[16]իշխան , զոր ընտրեսցէ Տէր Աստուած
քո . յեղբարց քոց կացուսցես քեզ [16]իշ-
խան . եւ մի՛ իշխեսցես կացուցանել քեզ
16 զայր օտար որ չիցէ եղբայր քո ։ Զի
մի՛ յաճախեսցէ իւր երիվարս , եւ մի՛
դարձուսցէ զժողովուրդն յԵգիպտոս[17] . զի
Տէր ասաց , Թէ Մի՛ եւս յաւելուցուք
17 դառնալ ընդ նմին ճանապարհ ։ Եւ մի՛

[1]3ԵՔԲ. գ-լ-ե [2]ԵՔԲ. գրունս, այլոք բաղ-
-ղե+ [3]ԵՔԲ. Մի՛ դարձուսցես զիրաւունս ,
մի՛ աչառիցես եւ մի՛ առնուցուս [4]ԵՔԲ. Զար-
դարութեան, զարդարութեան երթիցես զնետ,
զի կեցցես եւ ժառանգեսցես [5]ԵՔԲ. քեզ [6]ԵՔԲ.
քո զոր առնիցես քեզ։ (22) Եւ [7]ԵՔԲ. եւ
յուիցես եւ [8]ԵՔԲ. քո, զայրն կամ զկինն ,
եւ քարկոծեսցես

[9]ԵՔԲ. քումմէ [10]Ա-ե-ն, գժտաբերն թ ուեսցի
քեզ [11]ԵՔԲ. Հարուածոյ եւ Հարուածոյ, բան
հակառակութեան ի գրունս [12]ԵՔԲ. Հարց-
ցես, եւ [13]ԵՔԲ. զպատգամ դատաստանին
[14]ԵՔԲ. օրինացն զոր ուսուսցեն քեզ [15]ԵՔԲ.
պաշտել անդ զՏէր Աստուած քո [16]ԵՔԲ. թա-
գաւոր [17]ԵՔԲ-յեղ-ե-ե-, յաճախել երիվարս

յամախանցէ իւր կանայս , զի մի՛ խոտո-
րեսցի սիրտ նորա . եւ արձամբ եւ ոսկի
18 մի՛ կարի յամախանցէ իւր : Եւ եղիցի
յորժամ նստիցի յիշխանութեան իւրում ,
[1]գրեսցէ նմա զկրկնօրէնսն՝՝ օրինացս
այսոցիկ ի մատեանի առ ի քահանայիցն
19 Ղեւտացւոց : Եւ լիցի առ նմա , եւ ըն-
թերցցի զամ զնայն աւուրս կենցաղ
իւրոց . զի ուսցի երկնչել ի Տէառնէ Ա-
ստուծոյ [2]քումմէ , պահել զամենայն պա-
տուիրանս [3]զայսոսիկ , եւ առնել զիրա-
20 ւունս զայսոսիկ . Զի մի՛ հպարտանայցէ
սիրտ նորա ի վերայ եղբարց իւրոց , զի
մի անցանիցէ զպատուիրանէն յա՛ կամ
յահեակ . զի երկայնակեաց լիցի յիշխա-
նութեան իւրում ինքն եւ որդիք իւր
ի մէջ [4]որդւոցն Իսրայելի :

ԳԼ . ԺԸ

1 Եւ մի՛ լիցի քահանայիցն Ղեւտացւոց ,
որդւոցն Ղեւեայ , բաժին եւ ժառան-
գութիւն ընդ Իսրայէլի . [5]երախայրիքն
Տէառն վիճակ նոցա , զայն՝՝ կերիցեն .
2 Եւ վիճակ մի՛ լիցի նոցա ի մէջ եղբարց
իւրեանց . զի Տէր է վիճակ նոցա , որ-
պէս ասաց նոցա :
3 Եւ այս են իրաւունք քահանայիցն ի
ժողովրդենէ անտի , որք զնոսուցն զնո-
ւիս . եթէ արջառ իցէ եւ եթէ ոչխար ,
տայցէ քահանային զերիվն եւ զծնօտսն եւ
4 զփախացոցն , եւ [6]զպատուղ այդրենոյ քո
եւ զգինւոյ քո եւ վիւղոյ քո , եւ [6]զպատու
5 կարոց խաչանց քոց տացես նոցա . Զի
զնա ընտրեաց [7]Տէր յամենայն ցեղիցն
քոց [8]կալ առաջի Տեառն Աստուծոյ քո ,
պաշտել եւ օրհնել յանուն նորա՝՝ , նա
եւ որդիք իւր զամենայն աւուրս :
6 Ապա թէ եկեսցէ Ղեւտացին ի [9]մի ի
քաղաքացն քոց յամենայն որդւոցն Իս-
րայէլի , ուր իցէ ինքն բնակեալ , եւ ե-
կեսցէ ըստ ցանկութեան անձին իւրոյ
7 ի տեղին զոր ընտրեսցէ Տէր , Պաշտել
զանուն Տեառն Աստուծոյ իւրոյ , իբրեւ
զամենայն եղբարսն իւր Ղեւտացիս որ
կացցեն անդ առաջի Տեառն [4]Աստու-
8 ծոյ : կերիցէ [10]զմասն հասեալ , բայց
իբրաքանչիւր յազգական վաճառէն՝՝ :
9 Եւ եթէ մտանիցես յերկիրն զոր Տէր
Աստուած տացէ քեզ , մի՛ ուսանիցիս
առնել ըստ գարշելեացդ ազգացն այնո-
10 ցիկ : Մի՛ գտանիցի ի քեզ որ ածիցէ
զուսար իւր կամ զդուսար իւր զբոցով ,
եւ զիւթիցէ զիւթութիւն , եւ հմայիցէ ,
11 եւ հաւահարց լինիցի , եւ կախարդիցէ
կախարդանօք , եւ վհուկ եւ նչանագէտ
12 լինիցի առ ի զմեռեալս հարցանելոյ . Քան-
զի պիղծ է Տեառն ամենայն որ առնէ
զայն . զի վասն այսպիսի գարշելեաց սա-
13 տակեսցէ զնոսա Տէր ի քէն : Կատարեալ
լինիցիս առաջի Տեառն Աստուծոյ քո .
14 Զի ազգքն այնոքիկ զորս դու ժառան-
գելոց ես , նոքա հմայից եւ գիւթու-
թեանց անսան . բայց քեզ ոչ այնպէս
ետ հրաման Տէր Աստուած քո :
15 Մարգարէ յեղբարց քոց իբրեւ զիս յա-
րուսցէ քեզ Տէր Աստուած քո , նմա
16 լուիջիք . Ըստ ամենայնի զոր խնդրեցեր
ի Տեառնէ Աստուծոյ քումմէ ի Քորէբ
յաւուրն եկեղեցւոյ , ասէիք , Ոչ եւս
յաւելցուսցեմք լսել զձայն Տեառն Ա-
ստուծոյ մերոյ , եւ զհուրդ զայդ զմեծ
ոչ եւս տեսցուք , զի մի՛ մեռանիցիմք :
17 Եւ ասէ ցիս Տէր , Ուղիղ է ամենայն
18 ինչ զոր խօսեցան . Մարգարէ յարուցից
նոցա յեղբարց իւրեանց իբրեւ զքեզ ,
եւ տայց զպատգամս իմ ի բերան նորա ,
եւ խօսեսցի ընդ նոսա որպէս եւ պա-
19 տուիրեցից նմա : Եւ մարդ որ ոչ լսի-
ցէ զոր խօսիցի մարգարէն յանուն իմ՝
ես խնդրեցից վրէժ ի նմանէ :
20 Բայց մարգարէն , եթէ ամպարշտեսցի
խօսել յանուն իմ բան ինչ զոր ես ոչ
հրամայեցի խօսել , եւ կամ թէ խօսիցի
յանուն աստուածոց օտարաց , մեռցի
21 մարգարէն այն : Ապա թէ ասիցէք ի
սրտի ձերում , Զիա՞րդ գիտասցուք զբանն
22 զոր ոչ խօսեցաւ Տէր . Զոր ինչ խօսիցի
մարգարէն յանուն Տեառն եւ ոչ լինիցի
բանն եւ ոչ դիպիցի , այն բան է զոր ոչ
խօսեցաւ Տէր . ամպարշտութեամբ խօ-
սեցաւ մարգարէն , մի՛[11] թողուցուք նմա՝՝ :

ԳԼ . ԺԹ

1 Եւ եթէ սատակեսցէ Տէր Աստուած քո
զազգսն զորոց Տէր Աստուած տացէ քեզ
զերկիրն նոցա , եւ ժառանգեսցես զնա

---

[1] ՆԲԳ· գրեսցէ իւր զպատճէն [2] ԲԳ· իւրմէ [3] ԵԲԳ· օրինացս այսոցիկ [4] ՅՆԵԲԳ· գ-ի-ա [5] ԵԲԳ· զպատարագս Տեառն և զժառանգութիւն նորա [6] ԵԲԳ· զերախայրիս [7] ԵԲԳ· Տէր Աստուած քո [8] ՆԵԲԳ· կալ պաշտել յանուն Տեառն [9] ՆԲԳ· միոջէ [10] ՆԵԲԳ· զբաժին իբրեւ բաժին, թող զառ-
ի վաճառացն նորա ի Հայրենիսն [11] ԵԲԳ· երկիցես ի նմանէ

եւ բնակեցաս ի քաղաքս եւ ի տունս
2 նոցա , երիս քաղաքս զատուցես քեզ
ի միջոյ երկրին զոր Տէր Աստուած քո
3 տացէ քեզ . Նկատացես քեզ զճանա-
պարհն , եւ բաժանեսցես քեզ
զսահմանս երկրին քո , զոր բաժանեսցէ
քեզ Տէր Աստուած քո . եւ եղիցի անդ
ապաստան ամենայն սպանողի ։
4 Այս սահման եղիցի ամենայն սպանողի
որ վախչիցի անդր եւ ապրեսցի . Որ ոք
հարկանիցէ զընկեր իւր ակամայ , եւ նա
5 ոչ ատեացր վնաս յերէկն եւ յեռանդ . Եւ
որ ոք մտանիցէ ընդ ընկերի իւրում ի
մայրի հարկանել փայտ , եւ ամբառնայցէ
զձեռն իւր վայտատուն հարկանել փայտ,
եւ անկանիցի երկաթն ի մեղկէ անտի ,
եւ զիպիցի ընկերին եւ մեռանիցի , վա-
խիցէ նա եւ անկցի ի մի ի քաղաքացն այ-
6 նոցիկ եւ կեցցէ , Զի մի՛ պնդեսցի մեր-
ձաւոր արեանն զկնի սպանողին մինչդեռ
այրեցի սիրտ նորա , եւ հասանիցէ նմա ,
եթէ հեռագոյն իցէ ճանապարհն , եւ
հարկանիցէ զանձն նորա , եւ նմա չէ
գատաստան մահու , զի ոչ ատեացր վնաս
7 յերէկն եւ յեռանդ ։ Վասն այնորիկ ես
պատուիրեմ քեզ զայս եւ ասեմ ,
Երիս քաղաքս զատուցես քեզ ։
8 Եւ եթէ ընդարձակեսցէ քեզ Տէր Ա-
ստուած քո զսահմանս քո որպէս եւ եր-
դուաւ [1]Տէր հարցն քոց , եւ տացէ քեզ
Տէր զամենայն երկիրն զոր խոստացաւ
9 տալ հարցն քոց , Եւ եթէ լուիցես առ-
նել զամենայն պատուիրանս զայսոսիկ
զոր ես պատուիրեմ քեզ այսօր , սիրել
զՏէր Աստուած քո , եւ գնալ յամենայն
ճանապարհս նորա զամենայն աւուրս .
եւ յաւելցես քեզ այլ եւս երիս քաղաքս
10 յայնս յերիսն . Եւ մի՛ հեղցի արիւն ան-
պարտ յերկրին քումմէ , զոր Տէր Աստուած
քո տացէ քեզ ի ժառանգութիւն . եւ մի՛
ոք լիցի ի մէջ քումմ պարտական արեան ։
11 Եւ եթէ լինիցի այր որ ատիցէ զընկեր
իւր , եւ գայրան զորձիցէ նմա , եւ յա-
րիցէ ի վերայ նորա եւ հարկանիցէ զանձն
նորա եւ մեռցի , եւ փախչիցի ի մի ի քա-
12 զաքացն այնոցիկ , Առաքիցեն ծարակայք
քաղաքի նորա եւ առցեն զնա անտի , եւ
մատնեսցեն զնա ի ձեռս մերձաւորի ար-
13 եանն եւ մեռցի ։ Եւ մի՛ խնայեսցէ ակն
քո ի նա . եւ սրբեսցես զարիւն անպարտ
ի միջոյ Իսրայէլի , եւ բարի լիցի քեզ ։
14 Մի՛ վտիտեսցես զսահմանս ընկերի քո
զոր հաստատեցին հարք քո ի ժառան-
գութեան քումմ , զոր ժառանգեսցես
յերկրին զոր Տէր Աստուած քո տացէ
քեզ ի ժառանգութիւն ։
15 Ոչ հաստատեսցի մի վկայ վկայել զմար-
դոյ ըստ ամենայն ապիրատութեան եւ
ըստ ամենայն յանցանաց , եւ ըստ ա-
մենայն մեզայ զոր մեզանիցէ . ի բե-
նոյ երկուց [2]եւ երից վկայից հաստա-
տեսցի ամենայն բան ։
16 Եւ եթէ կացցէ յառաջ սուտ վկայ
զմարդոյ , եւ չարախօսեսցէ զնմանէ
17 ամպարշտութիւն լինել , Կացցեն երկոքին
արքն որոց հակառակութիւնն իցէ ա-
ռաջի Տեառն եւ առաջի քահանայիցն եւ
առաջի դատաւորացն որ իցեն յաւուրսն
18 յայնոսիկ . Եւ քննեսցեն դատաւորքն
ճշմարտութեամբ . եւ ահա վկայ անի-
րաւ վկայեաց զանիրաւութիւն , եւ ե-
19 կաց հակառակ եղբօր իւրում . Արասջիք
նմա որպէս խորհեցաւ չար առնել ըն-
կերի իւրում , եւ բարձէք զչարն ի միջոյ
20 ձերմէ . Եւ այլոցն լուեալ զայն հարկա-
նելոցն , եւ մի՛ եւս յաւելուցուն առնել ըստ
21 բանին այնմիկ չարի ի միջի ձերում ։ Մի՛
խնայեսցէ ակն քո ի նա . անձն ընդ ան-
ձին , ակն ընդ ական , ատաւին ընդ ատա-
ման , ձեռն ընդ ձեռին , ոտն ընդ ոտին ։

Գլ . Ի

1 Եւ եթէ ելանիցես ի պատերազմ ի վե-
րայ թշնամեաց քոց , եւ տեսանիցես ե-
րիվարս եւ հեծեալս եւ ազգ բազում քան
զքեզ , մի՛ երկնչիցիս ի նոցանէ , զի Տէր
Աստուած քո ընդ քեզ է որ հան զքեզ
2 յերկրէն Եգիպտացւոց ։ Եւ եղիցի յոր-
ժամ մերձենայցես ի պատերազմ , մա-
տուցեալ քահանային խօսեսցի ընդ ազ-
3 գին , եւ ասասցէ ցնոսա , Լուր , Իսրա-
յէլ . դուք վիմեալ երթայք այսօր ի պա-
տերազմ աւազիկ ի վերայ թշնամեաց
ձերոց , մի՛ լքանիցին սիրտք ձեր , եւ մի՛
երկնչիցիք եւ մի՛ զարհուրիցիք , եւ մի՛
4 խուսիցէք յերեսաց նոցա . Զի Տէր Ա-
ստուած [3]մեր երթայ առաջի ձեր ընդ
ձեզ՝ տալ պատերազմ վասն ձեր ընդ
թշնամիս ձեր , ապրեցուցանել զձեզ ։
5 Եւ խօսեսցին գրիչքն ընդ ժողո-
վըրդեանն եւ ասասցեն , Այր ոք որոյ
չինեալ իցէ տուն նորաշէն , եւ ոչ իցէ

[1] 3Եբր. դ-ութ

[2] Եբր. կամ [3] Եբր. ձեր

արարեալ նմա նաւակատիս , գնասցէ եւ
զարձցի ի տուն իւր . զուցէ մեռանիցի
ի պատերազմի , եւ այլ այր առնիցէ նմա
6 նաւակատիս : Եւ այր ոք որոյ անկեալ
իցէ այգի , եւ չիցէ ուրախ լեալ ի նմա-
նէ , գնասցէ եւ զարձցի անդրէն ի տուն
իւր . զուցէ մեռանիցի ի պատերազմի ,
7 եւ այլ այր ուրախ լինիցի ի նմանէ : Եւ
այր ոք որոյ խօսեալ իցէ կին , եւ չիցէ
առեալ զնա , գնասցէ եւ զարձցի ի տուն
իւր . զուցէ մեռանիցի ի պատերազմի ,
8 եւ այլ այր առնուցու զնա : Եւ յաւել-
ցեն պետքն խօսել ընդ ժողովրդեանն եւ
ասասցեն , Այր ոք որ երկնչիցի եւ վա-
տասիրտ սրտիւ իցէ , գնասցէ եւ զարձ-
ցի ի տուն իւր . զի մի՛ զանդիմեցուսցէ
9 զսիրտ եղբօր իւրոյ իբրեւ զնա : Եւ ե-
ղիցի յորժամ դադարեսցին պետքն ի խօ-
սելոյ ընդ ժողովրդեանն , կացուսցեն իշ-
խանս զօրուն առաջնորդս ժողովրդեանն :
10 Եւ եթէ մերձենայցես ի քաղաք սուղ
պատերազմ ընդ նմա , կոչեսցես զնոսա
11 ի խաղաղութիւն : Եւ եղիցի եթէ տայ-
ցեն խաղաղութիւն պատասխանի եւ
բացցեն քեզ , եղիցի ամենայն ժողո-
վուրդն որ գտանիցին ի նմա հարկատուք
12 եւ հնազանդեալք քեզ : Ապա թէ ոչ
[1]հնազանդեսցին քեզ , եւ արասցեն ընդ
քեզ պատերազմ , պաշարեսցես զնա .
13 Եւ մատնեսցէ զնա Տէր Աստուած քո
ի ձեռս քո , եւ հարցես զամենայն արու
14 նորա կոտորմամբ սրոյ , Բայց ի կանայս
եւ [2]ի կանուխ եւ յամենայն անասունս .
եւ զամենայն ինչ զինչ եւ գտանիցի ի
քաղաքին , եւ զամենայն աղս տացես
քեզ յաւարի . եւ կերիցես զամենայն
զաւար թշնամեաց քոց զոր Տէր Աս-
15 տուած քո տայցէ քեզ : Նոյնպէս արաս-
ցես ընդ ամենայն քաղաքս ընդ յոյժ հե-
ռաւորս , որք ոչ ի քաղաքաց ազգացն
16 այնոցիկ իցեն : Բայց ի քաղաքաց ազգացն
այնոցիկ զոր Տէր Աստուած քո տայցէ
քեզ ժառանգութիւն , մի՛ ապրեցուցանիցէք ի նոցանէ զամե-
17 նայն հնչաւոր . Այլ նզովելով նզովեսջիք
զնոսա , զՔեւսացին եւ զԱմովրհացին եւ
զՔանանացին եւ զՓերեզացին եւ զԵվ-
ուսացին եւ զՅերուսացին [3]եւ զԳերգեսաց-
ցին" , զոր օրինակ պատուիրեաց Տէր Աս-
18 տուած քո . Զի մի՛ ուսուցանիցեն ձեզ
առնել զամենայն գարշութիւնս իւրեանց,
զոր արարին դիցս իւրեանց , եւ մեղա-
չիցէք առաջի Տեառն Աստուծոյ ձերոյ :
19 Եւ եթէ նստեալ պաշարեսցես զքա-
զաք աւուրս բազումս մարտնչել ընդ
նմա յառնուլ զնա , մի՛ հարկանիցես զծա-
ռատունկ նորա արկանելով ի նմա եր-
կաթ . այլ կերիցես ի նմանէ , եւ զնա մի՛
հարկանիցես . միթէ մարդ իցէ ձեռա-
տունկն որ յանդի անդ իցէ՝ մատանել յե-
20 րեսաց քոց ի պաունէչ : Այլ զփայտ զոր
գիտիցես թէ չիցէ պտղաբեր , զայն հար-
ցես եւ կոտորեսցես , եւ չինեսցես պատ-
նէչ չուրջ զքաղաքաւն որ տայցէ ընդ
քեզ պատերազմ , մինչեւ մատնեսցի :

ԳԼ. ԻԱ

1 Եւ եթէ գտանիցի [4]վիրաւոր յերկրի
քում զոր Տէր Աստուած քո տայցէ քեզ
ժառանգել , եւ անկեալ գնիցի ի պաշտի ,
եւ ոչ գիտիցին զայն որ խոցեսցաւն զնա .
2 ելցեն ծերակայքն քո եւ դատաւորքն
քո , եւ չափեսցեն չուրջ զվիրաւորսն
3 զվայրս քաղաքացն . Եւ եղիցի քաղաք
որ հուպ իցէ ի վիրաւորն , առցէ ծերա-
կայս քաղաքին այնորիկ երինջ մի յար-
ջառոց որ ընդ գործ չիցէ մաւալ եւ լուծ
4 չիցէ ձգեալ . Եւ իջուսցեն ծերակայս
ժողովրդեանն զերինջն ի ձոր մի ապա-
ւաժ ուր չիցէ գործեալ եւ ոչ սերմա-
նեալ , եւ [5]կարթակոտոր արասցեն" զե-
5 րինջն ի ձոր անդր : Եւ մատիցեն քա-
հանայքն Ղեւսացիք , զի զնոսա ընտ-
րեաց Տէր Աստուած քո կալ առաջի իւր
եւ օրհնել յանուն նորա . եւ ըստ բերա-
նոց նոցա վճարեսցի ամենայն հակառա-
6 կութիւն եւ ամենայն ղրգռութիւն : Եւ
ամենայն ծերակայք քաղաքին այնորիկ
որ հուպ իցէ ի վիրաւորն , լուասցեն
զձեռս իւրեանց ի վերայ գլխոյ երինջն
7 [6]կարթահարելոյ ի ձորն . Եւ պատաս-
խանի տուեալ առասցեն , Ձեռք մեր ոչ
հեղին զարիւնս զայս , եւ աչք մեր ոչ
8 տեսին . Քաւեա զժողովուրդ քո զԻսրա-
յէլ զոր փրկեցեր , Տէր , զի մի՛ եկեսցէ
արիւնս անպարտ ի վերայ ժողովրդեան
քո Իսրայէլի . եւ քաւեսցի ի նոցանէ
9 արիւնն . Եւ բարձցես դու զարիւնն ան-
պարտ [7]ի ձէնջ . եւ եթէ արասցես զբա-

[1] Եբր· արասցեն խաղաղութիւն ընդ [2] Եբր· ի մանկտւոյ [3] Եբր· գ-ի-ե
[4] Տե՛ս Թուոց Լ.Ա. 19 : [5] Եբր· փողոտեսցեն [6] Եբր· փողոտելոյ [7] Եբր· ի միջոյ քումմէ, զի արասցես զուղիղն առաջի Տեառն

բին եւ զնաճոյ առաջի Տեառն Աստուածոյ քո՝։
10 Եւ եթէ եւանիցես ի պատերազմ ի վերայ թշնամեաց քոց, եւ մատնեսցէ զնոսա Տէր Աստուած քո ի ձեռս քո, եւ
11 [1]առցես զաւար՝ նոցա, եւ տեսանիցես [2]յաւարին կին զեղեցիկ տեսլեամբ, եւ ցանկասցիս նմա, եւ առցես զնա քեզ
12 կնութեան, Եւ տարցես զնա ի տունն քո, եւ [3]զերծցես զգլուխ նորա, եւ արիցես
13 ցես զեղնուցնս նորա. Եւ հանցես զնանգերձ զերութեան նորա՝, եւ նստցի ի տան քումբ, եւ լացցէ զհայր եւ զմայր իւր զաւուրս ամսոյ միոյ. եւ ապա մտցես առ նա եւ ընակեսցես ընդ նմա,
14 եւ եղիցի քո կին։ Եւ եղիցի եթէ ոչ հաճեսցիս ընդ նա, արձակեսցես զնա ազատ. եւ վաճառելով մի՛ վաճառեսցես զնա արծաթոյ, եւ մի՛ անարգեսցես զնա, քանզի լկեցեր զնա։
15 Եւ եթէ լինիցին առն միում երկու կանայք, եւ լինիցի ի նոցանէ մին սիրելի եւ մեւսն ատելի, եւ ծնանիցին նմա որդիս, սիրելին եւ ատելին, եւ լինիցի
16 որդի անգրանիկ ատելւոյն, Եւ եղիցի յաւուր յորում ժառանգեցուցանիցէ որդւոց իւրոց զինչս իւր, մի՛ իշխեսցէ անգրանիկացուցանել զորդի սիրելւոյն, առնել զնա արարեալ զորդի ատելւոյն զանդրանիկ. Այլ զանդրանիկ ատելւոյն ծա-
17 նիցէ՝ տալ նմա կրկին յամենայնի որ ինչ գտանիցի նորա. զի նա է սկիզբն [4]որդւոց նորա, եւ նմա անկ է անդրանկութիւնն՝։
18 Եւ եթէ լիցէ ումեք որդի խեւ եւ անզգամ, եւ ոչ լսիցէ ձայնի հօր եւ մօր իւրոց, եւ իրատեցին զնա եւ ոչ անսայ-
19 ցէ նոցա. կալցեն զնա հայր եւ մայր նորա, եւ տարցեն զնա առ ծերակոյտ քաղաքին իւրեանց եւ ի դուռն անդւոյն
20 իւրեանց. Եւ ասասցեն [5]ցաւս քաղաքին իւրեանց, Որդիս մեր այս խեւ է եւ անզգամ, եւ ոչ լսէ ձայնի մերում,
21 հանգամանաւոր է եւ արբեխու։ Եւ քարկոծեսցեն զնա արք քաղաքին նորա քարամբք եւ մեռցի. եւ բարձջիք զչարն ի միջոց ձերմէ. եւ լուեալ [6]այլոցն՝ զանի հարկանելցին։
22 Եւ եթէ հասանիցէ ումեք մեղք մահապարտութեան եւ [7]մեռանիցի, կա-
23 խեսջիք զնա զվայտէ. Եւ մի՛ պագանիցի մարմին նորա ի փայտին, այլ թաղելով թաղեսջիք զնա ի նմին աւուր. զի անիծեալ յԱստուծոյ է ամենայն որ կախեցի զվայտէ. եւ մի՛ պղծիցէք զերկիրն զոր Տէր Աստուած քո տացէ քեզ ի ժառանգութիւն։

Գլ. ԻԲ

1 Գուցէ տեսանիս զարջառ եւ զոչխար եղբօր քո մոլորեալս ի ճանապարհի, եւ անտես առնիցես զնոսա. այլ զարձուցանելով զարձուսցես զնոսա եւ ածցես
2 առ եղբայրն քո։ Ապա թէ չիցէ մօտ եղբայրն քո առ քեզ, եւ ոչ ճանաչիցես զնա, ժողովեսցես զնոսա ի տունն քո, եւ եղիցին առ քեզ, մինչեւ խնդրեսցէ զնոսա
3 եղբայր քո, եւ առցես ցնա։ Նոյնպէս արասցես ղէշ նորա, նոյնպէս արասցես զնանգերձ նորա, նոյնպէս արասցես եւ զամենայն կորուսեալ եղբօր քո, որ ինչ կորնչիցի ի նմանէ եւ գտանիցես. մի՛ իշխեսցես անտես առնել զայն։
4 Գուցէ տեսանիցես զէշ եղբօր քո, կամ զեզն նորա անկեալ ի ճանապարհի, եւ զանց առնիցես զնոքօք, այլ յարուցանելով յարուսցես ընդ նմա։
5 Մի՛ եղիցի հանդերձ առնասի զկանամբք, եւ մի՛ զգեցցի այր զկնաս կանայի. զի սիրգ է Տեառն Աստուծոյ քումբ ամենայն որ առնէ զայն։
6 Եւ եթէ դիպեսցիս բունոյ հաւուց առաջի քո ի ճանապարհի, եթէ ի ծառ եւ եթէ ի գետնի, ձագուց կամ ձուոց, եւ մայրն ջերեալ նստիցի ի վերայ ձագուցն կամ ձուոց, մի՛ առնուցուս զմայրն
7 հանգերձ որդովքն. Արձակելով արձակեսցես զմայրն, եւ զորդիսն առցես քեզ. զի բարի լիցի քեզ, եւ բազմօրեայ լինիցիս [8]ի վերայ երկրի՝։
8 Եւ եթէ չինեսցես տուն նորաչէն, արասցես պատակ չուրջ զտանիդ, եւ մի՛ սպանումն գործեսցես ի տան քումբ, [9]զի մի՛ անկանիցի որ անկանելոցն իցէ՝ ի նմանէ։
9 Մի՛ վարեսցես զայգի քո այլ եւ այլ, զի մի՛ [10]սրբեսցին արմտիքն եւ սերմն զոր սերմանիցես ընդ բերիւ այգւոյն քո։

---

[1] Եբր. գերեսցես զգերութիւն [2] Եբր. ի գերութեան [3] Եբր. գերծցէ զգլուխ իւր, եւ սրբեսցէ զեղջիւնս իւր, (13) եւ հանցէ զնանգերձ գերութեան իւրոյ [4] Եբր. զսրբութեան նորա, նմա անկ են իրաւունք անդրանկութեանն [5] Եբր. ցծերս [6] Եբր. ամենայն Իսրայելի
[7] Եբր. եղիցի պարտաւոր մահու [8] Եբր. պոռնոյ [9] Եբր. յանկանել ուրուք [10] Կամ, ապականեսցին

10 Մի՛ վարեսցես ղէշ եւ ղեղն ի միասին ։
11 Մի՛ զգենուցցես այլայլախառն՝ զոսոր
եւ զկտաւն ի միասին ։
12 Ծոպս մանուածոյս արասցես ի վերայ
չորեցունց տանուց հանդերձից քոց , զոր
եւ զգենուցցես ։
13 Եւ եթէ առնուցու ոք կին եւ ամուսա-
14 նասցի ընդ նմա , եւ առեսցէ զնա , եւ
ղիցէ ի վերայ պատճառս բամբասական
բանից , եւ անուն չար հանիցէ զնմանէ
եւ ասիցէ , Զկինս զայս առի , եւ մեր-
ձեցեալ ի սա ոչ գտի զկուսութիւն օրիս.
15 Եւ առեալ հայր եւ մայր աղջկանն ,
հանցեն զկուսութիւնս աղջկանն առ ծե-
16 րակոյն ի դուռն . Եւ ասասցէ հայր
աղջկանն ցծերակոյն , Զդուստրս իմ
զայս եառու առնոյ այղմիկ կնութեան , եւ
17 առեցեալ զա՝ Դնէ ի վերայ պատճառս
բամբասաւոր բանից՝ եւ առէ , Ոչ գտի
զկուսութիւն դստեր քո . Եւ ահաւասիկ
կուսութիւնք դստեր իմոյ . եւ բացցեն
զհանդերձն առաջի ծերոց քաղաքին այ-
18 նորիկ ։ Եւ առցէ ծերակոյս քաղաքին
այնորիկ զայրն զայն եւ խրատեսցեն զնա,
19 Եւ առժեսցեն ի նմանէ հարիւր սիկղ ,
եւ տացեն հօր աղջկանն , վոխանակ զի
նման անուն չար գկուսէն Իսրայէլացւոց . եւ նորին լիցի կին, եւ մի՛ իշխեսցէ
արձակել զնա զամենայն ժամանակս ։
20 Այլ թէ ճշմարիտ լիցէ բանն , եւ ոչ
21 գայցեն կուսութիւնք աղջկանն , Հանցեն
զաղջիկն առ դուրս [1]հօր իւրոյ , եւ քար-
կոծ արասցեն զնա արք քաղաքին իւրոյ
եւ մեռցի. զի արար անզգամութիւն ի մէջ
որգւոցն Իսրայելի, պոռնկել ի տան հօր
իւրոյ. եւ բարձիջիք զչարն ի ձէնջ ։
22 Եւ եթէ գտցի այր չնացեալ ընդ առ-
նակնոջ , սպանջիք զերկոսեան , զայրն
չնացեալ ընդ կնոջն եւ զկինն. եւ բարձ-
ջիք զչարն յԻսրայելէ ։
23 Եւ եթէ եղիցի աղջիկ կոյս խօսեցեալ
առն , եւ գտանիցէ զնա այր ոք ի քա-
24 ղաքի եւ ննջեսցէ ընդ նմա , Հանջիք
զերկոսին ի դուռն քաղաքին իւրեանց, եւ
[2]քարկոծեսցեն զնոսա քարամբք եւ մեռ-
ցին . զաղջիկն՝ զի ոչ բողոքեաց ի քա-
ղաքին, եւ զայրն որ լկեաց զկին ընկերւոջ
իւրոյ. եւ բարձիջիք զչարն ի մէջոյ ձերմէ ։
25 Ապա թէ ի դաշտի գտցէ այր զաղջիկ
ոք խօսեալ առն , եւ բռնաբար ննջեսցէ
ընդ նմա , սպանջիք զայրն որ ննջեսց
26 ընդ նմա ։ Եւ աղջկանն մի՛ ինչ առնիջ-
ցէք . զի ոչ է աղջկանն վնաս մահու .
զի որպէս յարուխիցէ մարդ ի վերայ ըն-
կերւոյ իւրոյ եւ սպանանիցէ զնա , այս-
27 պէս է իրն ։ Զի ի բացի եզիտ զնա . եւ
բողոքեաց աղջիկն խօսեալ , եւ ոչ ոք
էր որ օգնէր նմա ։
28 Եւ եթէ գտանիցէ ոք զաղջիկ կոյս
որ չիցէ խօսեալ առն , եւ բռնաբար
29 ննջեսցէ ընդ նմա[3], Տացէ այրն որ
ննջեաց ընդ նմա՝ հօր աղջկանն հիսուն
արկղրամեան արծաթոյ , եւ նորա լիցի
կին[4]. եւ մի՛ իշխեսցէ արձակել զնա
զամենայն ժամանակս իւր ։
30 Մի՛ առցէ այր զկին հօր իւրոյ , եւ
մի՛ յայտնեսցէ զծածուկս հօր իւրոյ ։

Գլ. ԻԳ

1 Մի՛ մտցէ մալեալն եւ կրճատեալն յե-
2 կեղեցի [5]Աստուծոյ։ Մի՛ մտցէ պոռնկոր-
դի յեկեղեցի Տեառն[6]։
3 Մի՛ մտցէ Ամմոնացի եւ Մովաբացի
յեկեղեցի Տեառն. մինչեւ ցտասն ազգ մի՛
մտցեն յեկեղեցի Տեառն եւ մինչեւ ցյաւի-
4 տեան . վասն զի ոչ ելին ընդ առաջ ձեր
հացիւ եւ ջրով ի ճանապարհի ելանե-
լոյն ձերոյ յԵգիպտոսէ . եւ զի ի վարձու
կալան վասն քո զԲաղաամ որդի Բէով-
5 րայ [7]ի Մեզոպոտամացւոց անիծանել զքեզ. Եւ
ոչ կամեցաւ Տէր Աստուած քո լսել Բա-
զաամու , եւ դարձոյց Տէր Աստուած քո
զանէծսն յօրհնութիւնս. զի սիրեաց զքեզ
6 Տէր Աստուած քո ։ Մի՛ [8]խօսեսցիս ընդ
նոսա խաղաղութեամբ՝ զամենայն ա-
ւուրս քո մինչեւ ցյաւիտեան ։
7 Մի՛ [9]գարշեսցուք զեգովմայեցին,
զի եղբայր քո է ։ Մի՛ [9]գարշեսցուք զեգիպտացին , զի պանդուխտ էիր յերկ-
8 րի նորա ։ Եթէ լինիցին նոցա որդիք ,
յերրորդ ազգի մտցեն յեկեղեցի Տեառն ։
9 Եւ եթէ ելանիցես ի պատերազմ բա-
նակել ի վերայ թշնամեացդ քոց , զգոյշ
10 լինիջիր յամենայն բանէ չարէ ։ Եթէ
իցէ ի քեզ այր որ չիցէ սուրբ ի ցայ-
գուխտեան լղկմանէ , ելցէ արտաքոյ բա-
11 նակին , եւ մի՛ մտցէ ի բանակն . Եւ
ընդ երեկոն լուասցէ զմարմին իւր ջրով,

[1] ԵԲբ· տան հօր [2] ԵԲբ· քարկոծեսջիք
[3] ԵԲբ·յեցէն· յա-ելը- , եւ գտցին [4] ԵԲբ·յեցէն յա-ելը- , զի լկեաց զնա [5] ԵԲբ· Տեառն [6] ԵԲբ·յեցէն յա-ելը- , մինչեւ ցտասն ազգ մի՛ մտցէ յեկեղեցի Տեառն [7] ԵԲբ· ի Բեթօրայ Միջագետաց [8] ԵԲբ· խնդրեսցես գխաղաղութիւն եւ զբարութիւն նոցա [9] ԵԲբ· գարշելի համարեսցիս

եւ ընդ մտանել արեւուն մտցէ ի բա-
12նակն, եւ տեղի չայտ լիցի քեզ արտա-
քոյ բանակին, եւ ելցես դու արտաքս.
13 եւ ցից լինիցի զդօսդ քումմէ. եւ ե-
րիցի չոքիցես արտաքս, փո-
րեցես նովաւ, եւ ածեալ ծածկեսցես
14 զպատգուածիւն քո։ Զի Տէր Աստուած
քո չոքի ընդ բանակն քս փրկել զքեզ,
եւ մատնել զթշնամիս քո առաջի երե-
սաց քոց. եւ եղիցի բանակն քո սուրբ,
եւ [1]ոչ երեսեսցի ի միջի քում զ ապա-
գութիւն՝ իրացն, եւ դառնայցէ ի քէն։
15 Մի՛ մատնեսցես զծառայ անասն ի-
րում, որ յաւելցուս ի քեզ ի անասնէ
16 իւրմէ. Ընդ քեզ բնակեսցէ եւ ընդ քեզ
զետեղեսցի յամենայն տեղւոջ ուր եւ
հաճոյ իցէ նմա, եւ մի՛ նեղիցէք զնա։
17 Մի՛ լինիցի բոզ ի դստերաց Իսրայէլի,
եւ մի՛ պոռնիկ յուստերաց Իսրայէլի։
[2]Մի՛ լինիցի ձօնի ի դստերաց Իսրայէլի,
եւ մի՛ նուիրեալ ոք յուստերաց Իսրա-
18 յելի՝՝ Մի՛ տարցիս զկապչէնս պոռնկի,
եւ մի՛ զչանսխուրս ի տուն [3]Աստուծոյ
քո յամենայն ուխտս. զի պիղծ են ա-
ռաջի Տեառն Աստուծոյ քո երկոքեան։
19 Մի՛ տացես եղբօր քումմ արծաթ վաշ-
խու, եւ մի՛ զկերակուր չարիաւաշ, եւ
20 մի՛ [4]տոկոսեսցէ. Զամենայն ինչ փոխ
տայցես օտարին եւ եղբօր քումմ՝՝, զի
օրհնեսցէ զքեզ Տէր Աստուած քո յա-
մենայն ի գործս քո ի վերայ երկրին յոր
մտանելոյ ես ժառանգել զնա։
21 Եւ եթէ ուխտիցես ուխտ Տեառն Աս-
տուծոյ քումմ, մի՛ յամենայնս հատուցա-
նել զայն. զի պահանջելով պահանջեսցէ
Տէր Աստուած քո ի քէն, եւ լինիցի
22 քեզ ի մեղս. Ապա թէ ոչ կամիցիս
23 ուխտել, չլինիցի քեզ մեղք։ Որ ինչ
ելանէ ընդ շրթունս քո՝ զդոյշ լինիցիս,
եւ արասցես որպէս ուխտեցեր [3]Աստու-
ծոյ քումմ, զտուրսն զոր խոստացար
բերանով քով։
24 Եւ եթէ մտանիցես յայգի ընկերի քո,
կերիցես խաղող մինչեւ յագուել անձին
25 քո, բայց յաման մի՛ ամանայցես։ Եւ
եթէ մտանիցես ի հունձս ընկերի քո,
քաղեսցես ձեռօք քովք զհասկն, եւ
մանգաղ մի՛ արկանիցես յոճ ընկերի քո։

[1]Եբր. մի՛ տեսցէ քեզ զանկուածիւն [2]Եբր. պոռնիկ
[3]Եբր. Տեառն Աստուծոյ [4]Եբր. տոկոսեսցէ զանձ-
նայն ինչ որ տացի վաշխու. (20) Օտարին տացես
վաշխու, եւ եղբօր քումմ մի՛ տացես վաշխու։

ԳԼ. ԻԴ

1 Եւ եթէ առնուցու ոք կին եւ [5]մտա-
նիցէ առ նա, եւ եղիցի եթէ ոչ գտա-
նիցէ՝՝ չնարհս առաջի նորա, զի [6]եգիտ ի
նմա իմս անարգութեան, գրեսցէ նմա
գիր ազատարգանի եւ տացէ ի ձեռս նո-
րա, եւ արձակեսցէ զնա ի տանէ իւրմէ.
2 Եւ եթէ [7]գնացեալ լինիցի առն այլում,
3 եւ առիցէ զնա այրն վերջին, գրեսցէ
նմա գիր մեկնելոյ, եւ տացէ ի ձեռս
նորա, եւ արձակեսցէ զնա ի տանէ
իւրմէ. ապա թէ մեռանիցի այրն նորա
4 վերջին որ առ զնա կնութեան, Մի՛
կարասցէ այրն առաջին որ արձակեաց
զնա՝ դառնալ առնուլ զնա իւր կնու-
թեան, յետ պղծելոյն նորա. զի պիղծ
է այն առաջի Տեառն [2]Աստուծոյ քո՝՝.
եւ մի՛ պղծիցէք զերկիրն զոր Տէր Աս-
տուած տայէ ձեզ ի ժառանգութիւն։
5 Եւ եթէ առնուցու ոք կին նորոյ,
մի՛ մայէ ի պատերազմ, եւ մի՛ անկ-
ցին ի վերայ նորա եւ մի ինչ իրք. այլ
անպարա լիցի ի տան իւրում[8], եւ ու-
րախ արասցէ զկին իւր զոր առ։
6 Մի՛ [9]պրաւեսցես զվէրսն եւ զնկերքն՝՝
երկան. զի զոսկս գրաւ այնպիսին։
7 Եթէ ըմբռնեսցի այր ոք մարդագող
յեղբարց իւրոց յորդւոցն Իսրայէլի, եւ
բռնաբարեալ՝ վաճառեսցէ զնա, մեռցի
գողն, եւ բարձջիք զչարն ի միջոց ձերմէ։
8 Զգոյշ լեր անձին քում յաւուրս բո-
րոտութեան. զգոյշ լինիջիր՝ առնել ըստ
ամենայն օրինին զոր պատուիրեն ձեզ
քահանայքն Ղեւտացիք, զոր օրինակ
պատուիրեցի [10]ձեզ զգուշանալ՝՝ առնելոյ։
9 Յիշեցէք զոր ինչ արար Տէր Աստուած
քո ընդ Մարիամ ի ճանապարհի ելանե-
լոյն ձերոյ յԵգիպտոսէ։
10 Եւ եթէ պարտելով պարտիցի ընկեր
քո զինչ եւ իցէ, մի՛ մտանիցես ի տունն
11 նորա զրաւել զինչ զրաւ. Այլ արտաքոյ
կայցես, եւ այրն առ որում պարտքն
12 քո իցեն՝ հանցէ զզրաւն արտաքս։ Եւ
եթէ աղքատ իցէ այրն, մի՛ [11]ագին ընդ
զրաւեալն իւրով՝՝. Դարձուցանելով դար-
ձուսցես զզրաւ նորա ընդ մտանել արեւու,
եւ ննջեսցէ հանգերձիւն իւրով եւ օրհ-

[5]Եբր. լինիցի նմա այր, և եղիցի զի ոչ գտցէ կինն
[6]Եբր. եգիտ այրն [7]Եբր. ելցէ կինն ի տանէ նորա եւ
գնացեալ [8]Եբր.-յեղբ-ն յո-ել-ը, ի տի [9]Եբր. ոք
առնուցու գրաւ զաղօրիս կամ զվէրին [10]Եբր. Նա-
յեա, զգուշասջիք. [11]Եբր.-ագին ընդ գրաւեալ նորա

նեսցէ զքեզ. եւ եղիցի քեզ [1]յողոմա-
ծումքիւն առաջի Տեառն Աստուծոյ քո։
14 Մի՛ զլասցիս զվարձս անանկին եւ
զկարօտելոյ յեղբարց քոց, կամ յեկաց
15 քաղաքաց քոց։ Նոյն օրին հասուսցես
զվարձս նորա, եւ մի՛ մտանիցէ արե-
գակն ի վերայ այնորիկ. զի անանկ է,
եւ այն է յոյս նորա. եւ մի՛ բողոք
հարկանիցէ զքէն առ Տէր, եւ մի՛ լի-
նիցի այն քեզ ի մեղս։
16 Մի՛ մնացին հարք ընդ որդւոց, եւ
մի՛ որդիք մեռանիցին ընդ հարց. ի-
րաքանչիւր ոք ի մեղս իւրում մեռանիցի։
17 Մի՛ խոտորիցես զիրաւունս գեկին եւ
որբոյ [2]եւ զայրւոյ՝. եւ մի՛ գրաւեսցես
18 զձորձս այրւոյն. [3]Քանզի ծառայ էիր
դու յերկրին եգիպտացւոց, եւ փրկեաց
զքեզ Տէր Աստուած քո անտի. վասն
այնորիկ ես պատուիրեմ քեզ առնել
զբանս զայս։
19 Եւ եթէ հնձեսցես զհունձս յանդի
քումմէ, եւ մոռասցի որայ յանդի քումմէ,
մի՛ դառնայցես անդրէն առնուլ զնա.
[2]ազգատին եւ՝ եկեին եւ այրւոյ եւ որ-
բոյ եղիցի այն. զի օրհնեսցէ զքեզ Տէր
Աստուած քո յամենայն ի գործս ձեռաց
20 քոց։ Եւ եթէ կթեսցես ձէթ, մի՛
գարձցիս անդրէն պազաքազ առնել զկնի
քո. եկեին եւ որբոյ եւ այրւոյ եղիցի
21 այն։ Եւ եթէ կթեսցես զայգի քո, մի՛
ճաաքազ առնիցես զկնի քո. եկեին եւ
22 որբոյ եւ այրւոյ եղիցի այն։ Եւ յիշես-
ցես զի եւ դու ծառայ էիր յերկրին Ե-
գիպտացւոց. վասն այնորիկ ես պա-
տուիրեմ քեզ առնել զբանս զայս։

Գլ. ԻԵ

1 Եւ եթէ լինիցի հակառակութիւն ի
մէջ մարդկան, մատիցեն յատեան եւ
դատեսցին. եւ արդարացուսցեն զար-
դարն եւ պարտաւորեսցեն զամպար-
2 րիշն։ Եւ եղիցի եթէ արժանի իցէ
զանի ամպարիշն, [4]նստուսցին զնա
առաջի գատաւորացն՝, եւ հարցեն զնա
առաջի [5]նոցա ըստ ամպարշտութեան
3 նորա [6]Թուով քառասուն՝, եւ այլ մի՛
յաւելուցուն. ապա թէ յաւելուցուն հար-
կանել զնա աւելի քան զայն, անար-

[1]ԵԲէ. յարդարութիւն [2]3ԵԲէ. պ-ի-ւ [3]ԵԲէ. Եւ յիշեսցես զի [4]ԵԲէ. տացէ նմա դատաւորն անկանել ի գետին [5]ԵԲէ. նորա [6]ԵԲէ. Թուով (3) Քառասնից հարցէ

գութիւն լիցի եղբօրն քումմ առաջի քո։
4 Մի՛ կապեսցես զցուլ եղին կալոտոյ։
5 Եւ եթէ բնակեսցեն եղբարք ի միա-
սին, եւ մեռանիցի մի ոք ի նոցանէ, եւ
զաւակ ոչ իցէ նորա, մի՛ լինիցի կին մե-
ռելոյն արտաքոյ առն [7]ուրուք որ մեր-
ձաւոր չիցէ նորա՝. այլ եղբայր առն
իւրոյ մացէ առ նա, եւ առցէ զնա իւր
6 կնութեան, եւ [8]բնակեսցէ ընդ նմա՝. Եւ
եղիցի [9]մանուկն որ ծնանիցի՝ հաստա-
տեալ յանուն վախճանելոյն. եւ մի՛ ջնջես-
7 ցի անուն նորա յԻսրայէլ։ Ապա թէ ոչ
կամիցի այրն առնուլ զկին եղբօր իւրոյ,
ելցէ կինն ի գուռն անդր առ ծերակոյտն
եւ ասասցէ, Ոչ կամի եղբայր առն իմոյ
կանգնել զանուն եղբօր իւրոյ ի մէջ Իս-
8 րայելի[10]։ Եւ կոչեսցեն զնա ծերակոյտ
քաղաքին իւրոյ, եւ խօսեսցին ընդ նմա.
եւ նա կացցէ եւ ասիցէ, Ոչ կամիմ առ-
9 նուլ զգա. Եւ մատուցեալ կին եղբօր
նորա առաջի ծերոցն, հանցէ զկօշիկ մի
յոտանէ նորա, եւ թքցէ ընդ երեսս նո-
րա, եւ պատասխանի տուեալ ասասցէ,
Այսպէս արասցին առն որ ոչ չինիցէ
10 զտունն եղբօր իւրոյ։ Եւ կոչեսցի անուն
նորա ի մէջ Իսրայելի Տունն բոկացելոյ։
11 Եւ եթէ կռուեսցին արք ընդ միմեանս,
այր ընդ եղբօր իւրում, եւ մատուցեալ
կին միոյ ի նոցանէ թափել զայր իւր ի
ձեռաց այնորիկ որ հարկանիցէն զնա,
եւ ձգեալ զձեռն բուռն հարկանիցէ զոր-
12 կուրեաց նորա, Չատանիցես զձեռն,
եւ մի՛ խնայեսցէ ի նա ակն քո։
13 Մի՛ լինիցի չամանի քում կշիռ եւ կշիռ,
14 մեծ կամ փոքր։ Եւ մի՛ լինիցի ի տան
15 քումմ չափ եւ չափ, մեծ կամ փոքր։ Կշիռ
ստոյգ եւ արդար եղիցի քեզ, եւ չափ
ստոյգ եւ արդար եղիցի քեզ, զի բազ-
մօրեայ եղիցիս ի վերայ երկրին զոր Տէր
Աստուած քո տացէ քեզ [2]ի ժառանգու-
16 թիւն։ Զի պիղծ է Տեառն Աստուծոյ
քումմ ամենայն որ առնէ զայն, եւ ա-
մենայն որ առնէ զանիրաւութիւն։
17 Յուշ լիցի քեզ զոր արարն քեզ Ամա-
ղէկ ի ճանապարհի ելանելոյդ քո յԵ-
18 գիպտոսէ. Զիարդ ընդդէմ եկաց քեզ ի
ճանապարհին, եւ կրճատեաց զվերջն
քո եւ զայլասեալսն զկնի քո, եւ դու
քաղցեալ եւ աշխատեալ էիր, եւ ոչ

[7]ԵԲէ. օտարի [8]ԵԲէ. Հատուսցէ նմա զպարտս տագր [9]ԵԲէ. Անդրանիկն [10]ԵԲէ-յէյն յ-ի-ե-, ոչ կամի հատուցանել ինձ զպարտս տագր

19 երկեաւ յԱստուծոյ ։ Եւ եղիցի յորժամ
հանգուցանիցէ զքեզ Տէր Աստուած քո
յամենայն թշնամիսդ քոց որ չուրջ զքեզ
իցեն յերկրին զոր Տէր Աստուած քո
տայէ քեզ վիճակաւ ի ժառանգութիւն ,
ջնջեսցես զանուն Ամաղեկայ ի ներքոյ
երկնից , եւ մի՛ մոռասցիս ։

Գլ. ԻԶ

1 Եւ եղիցի երբէք մտանիցես յերկիրն զոր
Տէր Աստուած քո տայէ քեզ ի ժառան-
գութիւն , եւ ժառանգեսցես զնա եւ
2 բնակեսցես ի նմա , Առցես զառաջինս
պտղոց զերկրին քո զոր Տէր Աստուած
քո տացէ քեզ , եւ արկցես ի կողովի ,
եւ գնասցես ի տեղին զոր ընտրեսցէ Տէր
Աստուած [1]անուանել զանուն իւր անդ .
3 Եւ երթիցես առ քահանայն որ կայցէ
յաւուրսն յայնոսիկ , եւ ասասցես ցնա ,
Դոհանամ այսօր զՏեառնէ Աստուծոյ
[2]իմմէ , զի մտի յերկիրն զոր երդուաւ
4 Տէր հարցն մերոց տալ մեզ ։ Եւ առցէ
քահանայն զկողովն ի ձեռաց քոց , եւ
դիցէ զնա առաջի սեղանոյն Տեառն Աս-
5 տուծոյ քո . Եւ պատասխանի առեալ
ասասցես առաջի Տեառն Աստուծոյ քո .
[3]Ձհօրիս եմոզ՝ հայր իմ եւ էջ յեգիպ-
տոս , եւ պանդխտեցաւ անդ սակաւ ինչ
թուով , եւ եղեւ անդ յազգ մեծ , եւ
6 բազմացաւ անդ յոյժ յոյժ . Եւ չարչա-
րեցին զմեզ եգիպտացիքն , լկեցին զմեզ
եւ եդին ի վերայ մեր գործ խաւտիթեան .
7 Եւ աղաղակեցաք առ Աստուած հարցն
մերոց . եւ լուաւ Տէր ձայնի մերում ,
եւ եսեւ զտառապանս մեր եւ զաչխա-
8 տութիւն մեր եւ զնեղութիւն մեր . Եւ
եհան զմեզ Տէր յեգիպտոսէ ինքնին [4]զո-
րութեամբ մեծաւ , եւ՝ հզօր ձեռամբ եւ
բարձր բազկաւ , եւ մեծամեծ տեսլեամբք
9 եւ նշանօք եւ արուեստիւք . Եւ ած զմեզ
ի տեղիս յայս , եւ եաս մեզ զերկիրս զայս ,
10 երկիր՝ որ բղխէ զկաթն եւ զմեղր ։ Եւ
արդ ահաւասիկ բերի [5]զպտուղ արգեանց
երկրին զոր եաս ինձ Տէր , երկիր՝ որ
բղխէ զկաթն եւ զմեղր ։ Եւ՝ երկիր
պտղեաս անդ առաջի Տեառն Աստուծոյ
11 քո . Եւ ուրախ լիցիս անդ յամենայն
բարութիւնսն զոր եաս քեզ Տէր Աս-

[1] ԵԲԲ· քո բնակեցուցանել [2] ԵԲԲ· քումմէ [3] ԵԲԲ· Ասորի թափառական էր [4] ՅԵԲԲ· գօ-ե
[5] ԵԲԲ· զերախայրիս արգեանց երկրին զոր եաս ինձ , Տէր ։ Եւ գիցես զայն առաջի Տեառն Աստուծոյ քո , եւ

տուած քո եւ տան քումի , դու եւ Ղեւ-
տացին եւ պանդուխտն որ ի քեզ ։
12 Եւ երբ կատարեսցես տասանորդել
զամենայն տասանորդս երկրի քո , յա-
մին [6]երկրորդի կրկին տասանորդեսցես՝
Ղեւտացւոյն , եւ եկին եւ որբոյ եւ այրւ-
ոյ . եւ կերիցեն ի քաղաքս քո եւ յա-
13 գեսցին . Եւ ասասցես առաջի Տեառն
Աստուծոյ քո , Սրբեցի ի բաց զսրբու-
թիւնն ի տանէ իմմէ , եւ եաս զայն
Ղեւտացւոյն եւ եկին եւ որբոյ եւ այրւոյ ,
ըստ ամենայն պատուիրանաց [7]Տեառն
Աստուծոյ՝ զոր պատուիրեալ էր ինձ .
ոչ անցի զպատուիրանաւդ քով եւ ոչ մո-
14 ռացայ . Եւ ոչ կերայ ի վիշտս ի նոցա-
նէ եւ ոչ ընծայեցի ի նոցանէ սգծոյն ,
եւ ոչ եաս ի նոցանէ մեռելոյ . լուայ
ձայնի Տեառն Աստուծոյ իմոյ . եւ արա-
15 րի որպէս պատուիրեցեր ինձ ։ Արդ հայ-
եաց ի սրբոյ բնակութենէդ քումմէ յերկ-
նից , եւ օրհնեա զժողովուրդ քո զԻս-
րայէլ , եւ զերկիրն զոր եաս [8]նոցա .
որպէս երդուար հարցն մերոց , տալ մեզ
երկիր որ բղխէ զկաթն եւ զմեղր ։
16 Յաւուր յայսմիկ պատուիրեաց քեզ
Տէր Աստուած քո առնել զամենայն ի-
րաւունս զայսոսիկ եւ զդատաստանս .
[9]պահեսջիք եւ արասջիք՝ զսոսա յամե-
նայն սրտէ [2]ձերմէ եւ յամենայն անձնէ
17 [2]ձերմէ ։ ԶՏէր [4]Աստուած քո՝ ընտրեա
այսօր լինել քեզ Աստուած եւ [10]գնաս-
ջիք ի ճանապարհս նորա , եւ պահեսջիք
զիրաւունս եւ զդատաստանս նորա՝ լսել
18 ձայնի նորա . Եւ Տէր ընտրեաց զքեզ
այսօր լինել նմա ժողովուրդ սեպհական
որպէս եւ խոսեցաւ քեզ , պահել զա-
19 մենայն պատուիրանս նորա , Եւ լինել
քեզ ի վեր քան զամենայն [11]ազգս . որ-
պէս ասաց՝ զքեզ՝ անուանի եւ բարգա-
ւաճ եւ փառաւոր , լինել քեզ ժողո-
վուրդ սուրբ Տեառն Աստուածոյ քումմ ,
որպէս եւ խոսեցաւ քեզ ։

Գլ. ԻԷ

1 Եւ պատուիրեաց Մովսէս եւ ծերա-
կայան Իսրայէլի եւ ասեն , Պահեսջէք
զամենայն պատուիրանս զոր ես պատ-

[6] ԵԲԲ· երրորդի , յամին տասանորդաց , տացես
[7] ԵԲԲ· քոց [8] ԵԲԲ· մեզ [9] ԵԲԲ· պահեսջիր եւ արասջիր [10] ԵԲԲ· գնալ ի ճանապարհս նորա եւ պահել զիրաւունս նորա , եւ զպատուիրանս նորա , եւ զդատաստանս նորա, եւ [11] ԵԲԲ ազգս զորս արար՝

2 ուխտեմ ձեզ այսօր։ Եւ եղիցի յաւուր
յորում անցանիցես ընդ Յորդանան, յեր-
կիրն զոր Տէր Աստուած քո տացէ քեզ՝
կանգնեսցես անդ քարինս մեծամեծս,
3 եւ բռնացես զնոսա բոով. Եւ պիտացես
ի վերայ [1]քարանցն զամենայն պատգամս
օրինացս այսոցիկ, յորժամ [2]անցանի-
ցէք ընդ Յորդանան, ի ժամանակի իր-
բեւ մտանիցէք՝ յերկիրն զոր Տէր Աս-
տուած [3]հարցն ձերոց՝ տացէ քեզ, եր-
կիր՝ որ բղխէ զկաթն եւ զմեղր. որպէս
խոստացաւ Տէր Աստուած հարցն քոց
4 տալ քեզ։ Եւ եղիցի յորժամ անցանի-
ցէք ընդ Յորդանան, կանգնեսջիք զքա-
րինսն զայսոսիկ զոր ես պատուիրեմ
ձեզ այսօր՝ ի լերինն Գերզիզ, եւ բռնա-
5 ջիք զնոսա բոով։ Եւ չինեսցես անդ սե-
ղան Տեառն Աստուծոյ քո, սեղան ի քա-
րանց. եւ մի՛ հպեսցի ի նոսա երկաթ.
6 [4]Բոլորակ վիմօք չինեսցես զսեղանն
Տեառն Աստուծոյ քո. եւ հանցես ի վե-
րայ նորա ողջակէզս Տեառն Աստուծոյ
7 քումմ. Եւ զնասցես [5]անդ զնուէրն փրկու-
թեան Տեառն Աստուծոյ քումմ, եւ կե-
րիցես եւ յագեսցիս՝ անդ, եւ ուրախ
8 լիցիս առաջի Տեառն Աստուծոյ քո. Եւ
գրեսցես ի վերայ քարանցն զամենայն
զօրէնս զայսոսիկ յայտնապէս յոյժ։
9 Եւ խօսեցաւ Մովսէս եւ քահանայքն
[6]եւ Ղեւտացիք ընդ ամենայն Իսրայէլի
եւ ասեն, Լուռ լեր եւ լուր, Իսրայէլ.
յաւուր յայսմիկ եղեր ժողովուրդ Տեառն
10 Աստուծոյ քո. Եւ լուիցես ձայնի Տեառն
Աստուծոյ քո, եւ արասցես զամենայն
պատուիրանս նորա եւ զիրաւունս նո-
րա զոր ես պատուիրեմ քեզ այսօր։
11 Եւ պատուիրեաց Մովսէս ժողովրդեանն
12 յաւուր յայնմիկ եւ ասէ, Սոքա կացցեն
օրհնել զժողովուրդն ի լերինն Գարի-
զին, յորժամ անցանիցէք ընդ Յորդա-
նան. Շմաւոն, Ղեւի, Յուդա, Իսա-
13 քար, Յովսէփ եւ Բենիամին. Եւ սոքա
կացցեն ի վերայ անիծիցն ի լերինն Գե-
բաղ. Ռուբէն, Գադ, Ասեր, Զաբու-
ղոն, Դան եւ Նեփթաղիմ։
14 Եւ պատասխանի տուեալ Ղեւտացի-
ացն ասիցեն մեծաձայն ամենայն Իս-
15 րայէլի, Անիծեալ լիցի մարդն որ արաս-
ցէ գրօշեալ եւ ձուլածոյ, զի պիղծ է
Տեառն ձեռագործ ճարտարի, եւ դնիցէ
զնա ի թաքստեան. Եւ պատասխանի
տուեալ ժողովրդեանն՝ ասացեն, Եղի-
16 ցի։ Անիծեալ՝ որ անարգեսցէ զհայր իւր
կամ զմայր իւր. Եւ ասացէ ամենայն
17 ժողովուրդն, Եղիցի։ Անիծեալ՝ որ փո-
խեսցէ զսահմանս ընկերի իւրոյ. Եւ ա-
սացէ ամենայն ժողովուրդն, Եղիցի։
18 Անիծեալ՝ որ խոտորիցէ զիրաւունս ե-
կիր եւ որբոյ եւ այրւոյ. Եւ ասացէ
19 ամենայն ժողովուրդն, Եղիցի։ Անիծեալ՝
որ մոլորեցուսցէ զկոյրն ի ճանապարհէ.
Եւ ասացէ ամենայն ժողովուրդն, Ե-
20 ղիցի։ Անիծեալ՝ որ ննջեսցէ ընդ կնոջ
հօր իւրոյ, զի յայտնեաց զաներեւոյթս
հօր իւրոյ. Եւ ասացէ ամենայն ժողո-
21 վուրդն, Եղիցի։ Անիծեալ՝ որ ննջեսցէ
ընդ ամենայն անասնոյ. Եւ ասացէ ա-
22 մենայն ժողովուրդն, Եղիցի։ Անիծեալ՝
որ ննջեսցէ ընդ քոյր իւրում, որ առ ի
հօրէ իւրէ կամ առ ի մօրէ. Եւ ասացէ
24 ամենայն ժողովուրդն, Եղիցի։[7] Անի-
ծեալ՝ որ հարկանիցէ զընկեր իւր ներ-
գործութեամբ. Եւ ասացէ ամենայն ժո-
25 ղովուրդն, Եղիցի։ Անիծեալ՝ որ առ-
նուցու կաշառս հարկանել զանձն [8]արեան
արդարոյ՝. Եւ ասացէ ամենայն ժողո-
26 վուրդն, Եղիցի։ Անիծեալ ամենայն
մարդ՝ որ ոչ կացցէ յամենայն բանս օ-
րինացս այսոցիկ առնել զոսոսա. Եւ ա-
սացէ ամենայն ժողովուրդն, Եղիցի։

ԳԼ. ԻԸ

1 Եւ եղիցի եթէ լսելով [9]լուիցէք ձայնի
Տեառն Աստուծոյ [3]մերոյ, զգուշանալ
եւ առնել զամենայն պատուիրանս նո-
րա, զոր ես պատուիրեմ [10]ձեզ այսօր,
տացէ զքեզ Տէր Աստուած քո ի վեր քան
2 զամենայն ազգս երկրի։ Եւ եկեսցեն ի
վերայ քո ամենայն օրհնութիւնքս այ-
սոքիկ եւ գտցեն զքեզ, եթէ լսելցես
3 ձայնի Տեառն Աստուծոյ քո։ Օրհնեալ
լիցիս դու ի քաղաքի, եւ օրհնեալ յան-
4 դի. Օրհնեալ լիցին ծնունդք որովայնի
քո, եւ արարք երկրի քո, անդեայք ար-
ջառոց քոց, եւ հօտք ոչխարաց քոց.
5 Օրհնեալ լիցին չանմարանք քո եւ համ-
6 բարք քո. Օրհնեալ լիցիս դու յելանել
7 եւ ի մտանել քումմ. Մատնեսցէ Տէր

[1] ԵԲԲ. Նոցա [2] ԵԲԲ. անցանիցես մտանել [3] ԵԲԲ. քո [4] ԵԲԲ. Ողջ [5] ԵԲԲ. խաղաղականս եւ կե-
րիցես [6] ՅԵՐ. պ-ե-ս

[7] ԵԲԲ-ԽԵՑԻՆ յ-Ե-Լ-, (23) Անիծեալ՝ որ ննջիցէ
ընդ ղեքանչի իւրում. Եւ ասացէ ամենայն ժո-
ղովուրդն, Եղիցի։ [8] ԵԲԲ. անպարտ արեան
[9] ԵԲԲ. Լուիցես [10] ԵԲԲ. քեզ

[1]Աստուած քո զքննամիս քո եւ զհա-
կառակորդս՝ քո խորտակեալս առաջի
երեսաց քոց. ընդ մի ճանապարհ ելցեն
առ քեզ, եւ ընդ եւթն ճանապարհս փա-
8 խիցեն յերեսաց քոց։ Աւաքեսցէ Տէր ի
վերայ քո օրհնութիւն, ի չտեմարանս
քո եւ յամենայն ինչ ուր մխեսցես զձեռն
քո ի վերայ երկրին որ Տէր Աստուած
9 քո տացէ քեզ։ Կանգնեսցէ զքեզ Տէր
Աստուած քո իւր ժողովուրդ սուրբ,
որպէս երդուաւ [2]Տարցն քոց՝, եթէ լու-
ցես ձայնի Տեառն Աստուծոյ քո, եւ
10 գնասցես ի ճանապարհս նորա. եւ տես-
ցեն ամենայն ազգք երկրի զի անուն
Տեառն կոչեցեալ է ի վերայ քո, եւ նո-
11 կիցեն ի քէն։ Եւ բազմացուսցէ զքեզ
Տէր [3]Աստուած քո՝ ի բարութիւնս
ծննդեամբ որովայնի քո եւ արգեամբ
երկրի քո եւ ծննդեամբ խաչանց քոց
ի վերայ երկրին որ երդուաւ Տէր Տարցն
քոց տալ քեզ, [3]ըստ աւուրց երկնից ի
12 վերայ երկրի։՝ Բացցէ քեզ Տէր զգանձան
բարութիւնս իւրոյ զերկինս, սալ անձ-
րեւ ի ժամանակի իւրում երկրին քո,
օրհնել զամենայն գործս ձեռաց քոց.
եւ տացես փոխ ազգաց բազմաց, եւ
13 դու ոչ առնուցուս փոխ։ [3]Եւ իչխեսցես
ազգաց բազմաց, եւ քեզ մի՛ իչխես-
ցեն։՝ Հաստատեսցէ զքեզ Տէր Աստուած
քո ի գլուխ՝ եւ ոչ ի վերջ, եւ եղիցիս
ի վեր՝ եւ ոչ ի խոնարհ, եթէ լուիցես
պատուիրանաց Տեառն Աստուծոյ քո,
զոր ես պատուիրեմ քեզ այսօր պահել
14 եւ առնել, եւ ոչ անցանիցես զամենայն
բանիւք զոր ես պատուիրեմ քեզ այսօր՝
ոչ յաջ եւ ոչ յահեակ, երթալ զետս
աստուածոց օտարաց պաշտել զնոսա։
15 Եւ եղիցի եթէ ոչ լուիցես ձայնի
Տեառն Աստուծոյ քո, պահել եւ առնել
զամենայն պատուիրանս նորա զոր ես
պատուիրեմ քեզ այսօր, եկեսցեն ի վե-
րայ քո նանէձքս այսոքիկ եւ հասցեն
16 քեզ։ Անիծեալ լիցիր դու ի քաղաքի եւ
17 անիծեալ յանդի. Անիծեալ չտեմարանք
18 քո եւ համարք քո. Անիծեալ ծնունդք
որովայնի քո եւ արդիւնք երկրի քո, եւ
անդեայք արջառոց քոց եւ հօտք ոչխա-
19 րաց քոց. Անիծեալ լիցիր դու ի մտա-
20 նել, եւ անիծեալ յելանել։ Աւաքեսցէ
քեզ Տէր [5]գնուազութիւն եւ զկարօ-
աութիւն եւ ծախս՝ ի վերայ ամենայնի
յոր միտեսցես ձեռն քո, եւ զոր ինչ
առնիցես, մինչեւ սատակեսցէ զքեզ Տէր,
մինչեւ կորուսցէ զքեզ վազվազակի վասն
չարութեան գնացից քոց, զի թողեր
21 զիս պիտ։ Խանձեցուսցէ Տէր ի քեզ մահ,
մինչեւ սատակեսցէ զքեզ Տէր յերկրէն
յոր դու մատնիլոց ես ժառանգել զնա։
22 Հարցէ զքեզ Տէր [6]ապականութեամբ, եւ
ջերմամբ եւ սարսռով, եւ խիխիւք եւ
երկիւղիւ, եւ խորչակաւ եւ զառնով,
եւ հալածեսցեն զքեզ մինչեւ կորուսցեն
23 զքեզ։ Եւ եղիցին ի վերայ գլխոյ քո
երկինք պղնձի, եւ երկիր ի ներքոյ քո՝
24 երկաթի։ Տացէ Տէր զանձրեւ երկրի քո
փոշի, եւ հող յերկնից իջցէ ի վերայ քո,
մինչեւ սատակեսցէ զքեզ եւ կորուսցէ
25 զքեզ։ Տացէ զքեզ Տէր ի պարտութիւն
առաջի թշնամեաց քոց. ընդ մի ճան-
ապարհ ելցես ի վերայ նոցա, եւ ընդ եւթն
ճանապարհս փախիցես յերեսաց նոցա.
եւ եղիցիս ցրուեալ ընդ ամենայն թա-
26 գաւորութիւնս երկրի. Եւ [7]եղիցին մե-
ռեալք ձեր՝ կերակուր թռչնոյ երկնից
եւ գազանաց երկրի, եւ ոչ ոք իցէ որ
27 ընդոստացանիցէ։ Հարցէ զքեզ Տէր կե-
զով Եգիպտացւոյն եւ խնդիւք, եւ
զայրացեալ քոսով եւ մնով, զի մի կա-
28 րասցես բժշկել։ Հարցէ զքեզ Տէր յի-
մարութեամբ եւ չկացութեամբ եւ ապ-
29 շութեամբ մտաց. Եւ խարխափեսցես ի
մէջօրէի որպէս խարխափիլ կոյր ի խա-
ւարի, եւ ոչ ուղղեսցես զճանապարհս
քո. եւ եղիցիս յայժմէ զրկեալ եւ
յափշտակեալ զամենայն աւուրս, եւ ոչ
30 ոք իցէ որ օգնիցէ քեզ։ [8]Առնուցուս
կին, եւ այլ այր հանիցէ զնա ի քէն՝.
չինեսցես տուն, եւ մի՛ բնակեսցես ի
նմա. տնկեսցես այգի, եւ մի՛ կթեսցես
31 զնա. Արջառ քո սպանեալ առաջի քո,
եւ մի՛ կերիցես ինքեանէ. էշ քո յափշտա-
կեալ ի քէն, եւ մի՛ դարձցի առ քեզ.
ոչխար քո մատնեալ թշնամեաց քոց,
32 եւ ոչ ոք իցէ որ օգնիցէ քեզ։ Ուստերք
քո եւ դստերք քո մատնեալք ազգի օ-
տարի, եւ աչք քո կկոցեալ հայիցին ի
33 նոսա[9], եւ ոչ հաստանիցէ ձեռն քո։ Զգերս

[1] ԵՔԵ. զքննամիս քո յարուցեալս ի վերայ [2] ԵՔԵ. քեզ [3] ԵՔԵ. ԺԱ-ԻԵ-Ե [4] ԵՔԵ. ամենայն անէծքս

[5] ԵՔԵ. անէծս եւ տառապանս եւ կշտամբանս [6] ԵՔԵ. ծիւրութեամբ [7] ԵՔԵ. եղիցի դի քո [8] ԵՔԵ. խօսեացիս կին, եւ այլ այր ննջեսցէ ընդ նմա [9] ԵՔԵ-ՅԵՑԷ ՃԻ-ԵԼԵ-, զոր ամենայն

երկրի քո եւ ամենայն վաստակ քո
կերիցէ ազգ զոր դու ոչ գիտիցես , եւ
եղիցես զրկեալ եւ խորտակեալ ամե-
34 նայն աւուրս : Եւ եղիցես յիմարեալ
վասն տեսլեանց աչաց քոց զոր տեսա-
35 նիցես : Հարցէ զքեզ Տէր չարաչար կե-
ղով ի ծունկս եւ ի սրունս , եւ ոչ կա-
րասցես բժշկել ի թաթխից ոտից քոց մին-
36 չեւ ցգլուխ քո : Տարցի զքեզ Տէր եւ
[1]զիշխանսն զոր կացուսցես ի վերայ քո՝
յազգ զոր ոչ գիտիցես դու եւ ոչ հարք
քո . եւ պաշտեսցես անդ զաստուածս
օտարս՝ զփայտեղէնս եւ զքարեղէնս :
37 Եւ եղիցես յառակ եւ ի ցոյց եւ ի զրոյց
ի մէջ ամենայն ազգաց յոր տանիցի զքեզ
38 Տէր անդր : Սերմն բազում հանցես յան-
դի , եւ սակաւ ժողովեսցես . զի կերի-
39 ցէ զայն մարախ : Այգիս տնկեսցես եւ
պարծեսցես , եւ գինի ոչ արբցես , եւ
մի [2]ուրախ լինիցիս ի նմանէ՝ . զի կե-
40 րիցէ զայն որդն : Եւ եղիցին ձիթենիք
յամենայն սահմանս քո , եւ իւղով ոչ
օծցիս . զի թափեսցին ձիթենիքն քո :
41 Ուսանիս եւ դստերս ծնցիս , եւ ոչ լի-
նիցին քո . քանզի երթիցեն ի գերու-
42 թիւն : Զամենայն ծառատունկ քո եւ
զարդիւնս երկրի քո հարցէ թրթուր :
43 Եկն որ ի քեզ իցէ , ելցէ քան զքեզ
վեր ի վեր , եւ դու իջցիս վայր ի վայր .
44 Նա տացէ քեզ փոխ , եւ դու ոչ տա-
ցես նմա փոխ . նա եղիցի գլուխ , եւ
45 դու եղիցիս վերջ : Եւ եկեսցեն ի վերայ
քո [3]անէծքս այսոքիկ եւ հալածեսցեն
զքեզ եւ հասցեն քեզ , մինչեւ սատա-
կեսցեն զքեզ եւ մինչեւ կորուսցեն
զքեզ . զի ոչ լուար ձայնի Տեառն Աս-
տուծոյ քո , պահել զպատուիրանս նո-
րա եւ զիրաւունս նորա զոր պատուիր-
46 եաց քեզ . Եւ եղիցին ի քեզ նշանք եւ
արուեստք եւ ի զաւակի քում մինչեւ
47 յաւիտեան : Փոխանակ զի ոչ պաշտե-
ցեր զՏէր Աստուած քո ուրախութեամբ
եւ ճշմարիտ սրտիւ վասն [4]բազմութեանդ
48 ամենեցուն՝ , Պաշտեսցես զթշնամիս քո
զոր առաքեսցէ ի վերայ քո Տէր , ի սով
եւ ի ծարաւ եւ ի մերկութիւն եւ ի նուա-
զութեան ամենայնի . եւ դիցէ անուր
երկաթի ի պարանոցի քում մինչեւ սա-
49 տակեսցէ զքեզ : Ածցէ ի վերայ քո ազգ
ի հեռաստանէ ի ծագաց երկրի իբրեւ
զխոյանալ արծուոյ , ազգ՝ զորոյ ոչ լսի-
50 ցես զձայն նորա , Ազգ ժպիրն երեսօք
որ ոչ աչառիցէ երեսաց ծերոյ , եւ ոչ
51 ողորմեսցի տղայոյ . Եւ կերիցէ զծնունդս
խաշանց քոց եւ զարդիւնս երկրի քո .
եւ ոչ թողուցու քեզ ցորեան , գինի ,
եւղ , զանդեայս արջառոց քոց , եւ զհօտս
ոչխարաց քոց , մինչեւ կորուսցէ զքեզ .
52 Եւ նեղեսցէ զքեզ յամենայն քաղաքս
քո , մինչեւ կործանեսցին պարիսպք քո
բարձրացեալք եւ ամուրք յորս դուն յու-
սացեալ էիցես յամենայն երկրին քում .
եւ նեղեսցէ զքեզ յամենայն քաղաքս
53 քո զոր տա քեզ Տէր Աստուած քո . Եւ
կերիցես զծնունդս որովայնի քո , զմս
ուստերաց քոց եւ դստերաց քոց զոր
տա քեզ Տէր՝ յանձկութեան քում եւ ի
նեղութեան քում որով նեղեսցէ զքեզ
54 թշնամին քո : Գիրգն որ ի քեզ եւ փա-
փուկն յոյժ չարաչնեսցէ յեղբայր իւր եւ
ի կին ծոցոյ իւրոյ , եւ ի մնացեալ որ-
55 դիսն որ մնայցեն նմա , Տալ միում ի
նոցանէ ի մարմնոյ որդւոց իւրոց յորոց
ուտիցէ , վասն չմնալոյն նմա ինչ . յանձ-
կութեանն քում եւ ի նեղութեան որով
նեղիցեն զքեզ թշնամիքն քո յամենայն
56 քաղաքս քո : Եւ [5]գիրգն որ ի քեզ եւ
փափուկն յոյժ , որոյ ոչ իցէ ոտին իւրոյ
առեալ զփորձ դնելոյ ի վերայ երկրի
վասն փափկութեան իւրոյ եւ զրգու-
թեան , չարաչնեսցէ յայր ծոցոյ իւրոյ ,
57 եւ [6]զուստրն իւր եւ զդուստր , եւ զաղան
ելեալ ի միջոյ իւրմէ , եւ զծնունդն զոր
ծնանիցի՝ խորովեսցէ ի նոցանէ եւ կե-
րիցէ . եւ վասն նուազութեանն՝ յամե-
նայնէ թաքուսցէ՝ յանձկութեանն եւ ի
նեղութեանն , որով նեղիցէ զքեզ թշնա-
մին յամենայն քաղաքս քո :
58 Եւ եթէ ոչ լուիցէք առնել զամենայն
բանս օրինացս այսոցիկ , զգրեալս ի
գիրս յայսմիկ , երկնչել ի պատուական
եւ աքանչելի անուանէն Տեառն Աստուծոյ
59 քո , Եւթանչան արասցէ Տէր զնարուածս
քո եւ զնարուածս զաւակի քո , զնա-
րուածս մեծամեծս եւ զարմանալիս , եւ
60 զցաւս չարաչարս եւ զկարեւորս . Եւ
ածցէ ի վերայ քո զամենայն ախտս չա-
րաչարս զեգիպտացւոցն յորմէ սոսկա-

[1]ԵՔԲ. զԹագաւորս քո [2]ԵՔԲ. կի եսցես [3]ԵՔԲ. ամենայն անէծքս [4]ԵՔԲ. առատութեան ամենայնի

[5]ԵՔԲ. կին գիրգ [6]ԵՔԲ. յոստոր իւր և ի դուստր իւր, (57) Եւ յաղան ելեալ ի միջոյ իւրմէ, և յորդիս իւր զորս ծնանիցի , զի կերիցէ զնոսա վասն նուազութեանն յամենայնէ ի ծածուկ ,

յԼրն յերեսաց նոցա , եւ միւսցէն ի քէզ ։
61 Եւ զամենայն հիւանդութիւնս եւ զա-
մենայն հարուածս [1]որպէս ի գիրս օ-
րինացս այսոցիկ՝ ածցէ Տէր ի վերայ քո ,
62 մինչեւ սատակեսցէ զքեզ ։ Եւ մնասցիք
թուով սակաւք , փոխանակ զի էիք զուք
իբրեւ զաստեղս երկնից բազմա թիւամբ ,
[2]եւ ոչ լուարուք ձայնի Տեառն Աստու-
63 ծոյ ձերոյ ։ Եւ եղիցի , որպէս ուրախ
եղեւ ի ձեզ Տէր բարի առնել ձեզ եւ
բազմացուցանել զձեզ , նոյնպէս ուրախ
լինիցի Տէր ի ձեզ սատակել զձեզ , եւ
բարձիցիք յերկրէն յոր մտանիցէք ժա-
64 ռանգել զնա ։ Եւ ցրուեսցէ զքեզ Տէր
[3]Աստուած քո՝ ընդ ամենայն ազգս , ի
ծագաց երկրի մինչեւ ի ծագս երկրի , եւ
ծառայեսցես անդ աստուածոց օտարաց ,
փայտից եւ քարանց , զորս ոչ գիտէիր
65 դու եւ հարք քո ։ Այլ եւ յազգն յայ-
նոսիկ ոչ հանգուսցէ զքեզ , եւ ոչ լի-
նիցի կայ թաթիւ ոտից քոց . եւ տացէ
քեզ անդ սիրտ սրտմտել եւ աչս սորեալս
66 եւ անձն հաչեալ ։ Եւ եղիցին կեանք քո
կախեալ առաջի աչաց քոց , եւ զար-
հուրեսցիս զցայգ եւ զգերեկ , եւ ոչ հա-
67 ւատասցես կենացն քոց ։ Ընդ առաւօտս
ասիցես թէ ե՞րբ լինիցի երեկոյ , եւ ընդ
երեկոյս ասիցես թէ ե՞րբ լինիցի առա-
ւաւօտ , ի զարհուրանաց սրտի քո զոր
երկնչիցիս , եւ ի տեսլեանց աչաց քոց
68 զոր տեսանիցես ։ Եւ դարձուսցէ զքեզ
Տէր անդրէն յԵգիպտոս նաւօք [3]հազա-
րաւոր զօրօք , եւ՝ ընդ ճանապարհն [4]ընդ
նոյն՝ ոչ յաւելեցուք՝ տեսանել զնա . եւ
վաճառեսջիք անդ թշնամեաց ձերոց ի
ծառայս եւ յաղախնայս , եւ ոչ ոք իցէ
որ գնիցէ ։

Գլ. ԻԹ

1 Սյս բանք են ուխտին զոր պատուիրեաց
Տէր Մովսէսի , հաստատել սրտգոյն Իս-
րայելի յերկրին Մովաբու , թող զայն
ուխտ զոր ուխտեաց նոցա ի Քորեբ ։
2 Եւ կոչեաց Մովսէս զամենայն որդիսն
Իսրայելի եւ ասէ ցնոսա , Դուք ձեղէն
տեսէք զամենայն ինչ զոր արար Տէր
յԵգիպտոս առաջի ձեր , ընդ Փարաւոն
եւ ընդ ծառայս նորա , եւ ընդ ամենայն
3 երկիր նորա . Զփորձանսն մեծամեծս զոր
տեսին աչք ձեր , զնշանսն եւ զարուեստս
մեծամեծս զայնոսիկ , [3]զկնճռն նշոյր եւ
4 զբազուկ բարձր ։" Եւ ոչ ետ ձեզ Տէր
[3]Աստուած ձեր" սիրտ գիտելոյ եւ աչս
տեսանելոյ եւ ականջս լսելոյ մինչեւ
5 ցայսօր ։ Եւ [5]տայ զձեզ զքառասուն ամ
ընդ անապատն . ոչ հնացան հոտք ձեր
եւ ոչ մաշեցան կօշիկք ցոտից ձերոց .
6 Հաց ոչ կերայք եւ գինի եւ սիկեր ոչ արբ-
էք , զի ծանիցիք թէ ես եմ Տէր Աս-
7 տուած ձեր ։ Եւ եկիք մինչեւ ի տեղիս
յայս , եւ ել Սիհոն թագաւոր Եսեբո-
նայ , եւ Ովգ թագաւոր Բասանու ընդ-
8 դէմ մեր պատերազմաւք . Եւ հարաք զնա-
նա եւ առաք զերկիր նոցա , եւ [6]տուաք
զնա ի ժառանգութիւն Ռուբինի եւ Գա-
9 դայ եւ կիսոյ ցեղին Մանասէի ։ Եւ զգու-
շասջիք առնել զամենայն բանս ուխտիս
այսորիկ , զի [7]իմանայցէք զամենայն"
զոր առնիցէք ։
10 Դուք կայք աւազիկ այսօր ամենեքեան
առաջի Տեառն Աստուծոյ ձերոյ , ցեղա-
պետք ձեր եւ ծերակոյտ ձեր եւ դատա-
ւորք ձեր եւ տեղապահք ձեր , եւ ա-
11 մենայն այր Իսրայելի , Եւ կանայք ձեր
եւ որդիք ձեր , եւ եկն որ ի միջի բա-
նակին ձերում , ի փայտահատէ ձերմէ
12 մինչեւ ցջրերս ձեր ։ Յանցանել քո զուխ-
տիւ Տեառն Աստուծոյ քո , եւ [8]զնզո-
վիւք նորա զոր Տէր Աստուած քո ուխ-
13 տէ քեզ այսօր , Զի կացուսցէ զքեզ[9] իւր
ժողովուրդ , եւ նա եղիցի քեզ Աստուած
որպէս եւ ասաց[10] , եւ զոր օրինակ եր-
դուաւ հարցն քոց Աբրահամու եւ Իսա-
14 հակայ եւ Յակոբայ ։ Եւ ոչ ձեզ միայն
ուխտեմ ես զուխտս զայս եւ [11]զնզովս
15 զայսոսիկ" , Այլ եւ՝ որոյ աստ ընդ մեզ
իցեն այսօր առաջի Տեառն Աստուծոյ մե-
16 րոյ , եւ որոյ չիցեն ընդ մեզ այսօր . Զի
դուք ինքնին գիտէք , որպէս բնակեցաք
յերկրին Եգիպտացւոց , եւ որպէս ան-
ցաք ընդ մէջ ազգացն ընդ որս անցէք
17 դուք . Եւ տեսէք զպարշկլիս նոցա եւ
զկուռս խրեանց , զփայտն եւ զքար ,
18 զարծաթին եւ զոսկի որ է առ նոսա ։ Մի՛
ոք իցէ ի ձէնջ այր կամ կին , կամ ազգ
կամ ցեղ որոյ միտք իւր խոտորեալ [12]ի-
ցեն ի Տեառնէ Աստուծոյ մերմէ , երթալ

[1] ԵԲԲ. որ չիցեն գրեալ [2] ԵԲԲ. քանզի [3] ԵԲԲ. պակաս [4] ԵԲԲ. զորմէ ասացի քեզ՝ Ոչ յաւելուսցուս [5] ԵԲԲ. ածի [6] ԵԲԲ. տուաք [7] Կամ, յաջողեսջիք յամենայնի [8] ԵԲԲ. զերդմամբ [9] ԵԲԲ-ՅԵՏԷՆ Յ-ԵԼ-, այսօր [10] ԵԲԲ-ՅԵՏԷՆ Յ-ԵԼ-, քեզ [11] ԵԲԲ. զերդումն զայս [12] ԵԲԲ. իցեն այսօր

պաչտել զդիս ազգացն այնոցիկ , [1]մի՛ ոք իցէ ի ձէնջ՝ արմատ ի վեր բուսանել
19 զառնութեան եւ զաժանութեան . Եւ եղիցի եթէ լսիցէ զսլատգամս նզովիցս այսոցիկ , եւ [2]իսկասցի ի սրտի իւրում եւ ասիցէ , [3]Քաւութիւնդ եղիցին՝ ինձ , եթէ ես ըստ մոլորութեան սրտի իմոյ գնայցեմ . Նզի մի՛ կորուսանիցէ մեզա-
20 ւորն զանմեղն՝ . Եւ ոչ հաճեսցի [5]Աստուած ներել նմա . այլ յայնժամ բորբոքեսցի բարկութիւն նորա եւ նախանձ նորա ի մարդն յայն , եւ հասցեն նմա ամենայն նզովք ուխտիս այսորիկ՝ գրեալք
21 ի գրի օրինացս այսոցիկ , եւ ջնջեսցէ Տէր զանուն նորա ի ներքոյ երկնից . Եւ զատուսցէ զնա Տէր ի չարիս յամենայն որդւոցն Իսրայելի , ըստ ամենայն նզովից
22 ուխտիս գրելոյ ի գիրս օրինացս այսոցիկ . Եւ ասիցեն ազգքն [6]մեւս եւ՝ որդիքն ձեր որ յարիցեն յետ ձեր , եւ օտարոտին որ գայցէ յերկրէ հեռաստանէ , տեսանիցեն դնարութիւնս երկրին այնորիկ եւ զախտս նորա զոր առաքեաց
23 Տէր ի վերայ նորա , Ջծծումբն եւ զաղն այրեցեալ . յամենայն ի հող նորա մի՛ սերմանեսցի եւ մի՛ բուսցի , եւ մի՛ ելցէ ի վերայ նորա ամենայն զեղ գալար , որպէս կործանեցան Սոդոմ եւ Գոմոր , Ադամա եւ Սեբոյիմ , զորս կործանեաց Տէր սրտմտութեամբ եւ բարկութեամբ ,
24 Եւ ասասցեն ամենայն ազգքն , Ընդէր արար Տէր այնպէս երկրին այնմիկ , զինչ իցէ սրտմտութիւն մեծ բարկութեանն
25 այնորիկ , Պատասխանի տացեն եւ ասասցեն , Զի թողին զուխտն [7]Աստուծոյ հարց իւրեանց , զոր ուխտեաց հարցն նոցա յորժամ եհան զնոսա յերկրէն Եգիպ-
26 տացւոց , Եւ գնացեալ պաչտեցին զաստուածս օտարս , եւ երկիր պագին նոցա զոր ոչն ճանաչէին , եւ ոչ [8]բաժանեաց
27 նոցա ։ Եւ բարկացաւ Տէր սրտմտութեամբ ի վերայ երկրին այնորիկ , ածել ի վերայ նորա զամ ամենայն նզովից ուխտիս գրե-
28 լոյ [9]ի մատենի օրինացս այսոցիկ՝ . Եւ և բարձ զնոսա Տէր յերկրէ իւրեանց բարկութեամբ եւ սրտմտութեամբ եւ զայրացմամբ մեծաւ յոյժ , եւ մերժեաց զնոսա
29 յերկիր օտար մինչեւ ցայժմ ։ Ծածուկքն Տեառն Աստուծոյ մերում , եւ յայտնիքն մեզ եւ որդւոց մերոց յաւիտեան , առնել զամենայն պատգամս օրինացս այսոցիկ ։

Գլ . Լ

1 Եւ եղիցի եթէ հասանիցեն ի վերայ քո ամենայն պատգամքս այսոքիկ , կամ օրհնութիւնք կամ անէծք զորս ետու առաջի երեսաց քոց , եւ կալցես ի սրտի քում ընդ ամենայն ազգսն ուր ցրուեսյէ զքեզ Տէր անդ , Եւ զարձցես առ Տէր
2 Աստուած քո , եւ լսիցես ձայնի նորա ըստ ամենայնի զոր ես պատուիրեմ քեզ այսօր , [10]յամենայն սրտէ քումմէ եւ
3 յամենայն անձնէ քումմէ , Եւ [11]բժշկեսցէ Տէր զմեզն՝ քո եւ ողորմիսցի քեզ , եւ դարձեալ ժողովեսցէ զքեզ յամենայն ազգաց ուր ցրուեաց զքեզ [12]Տէր անդր ։
4 Եթէ իցէ ցրումն քո [13]ի ծագաց երկրի մինչեւ ի ծագս երկրի՝ , անտի ժողովեսցէ զքեզ Տէր Աստուած քո , եւ անտի առցէ զքեզ [14]Տէր Աստուած քո՝ . Եւ
5 ածցէ զքեզ Տէր Աստուած քո յերկիրն զոր ժառանգեցին հարք քո , եւ ժառանգեսցես զնա եւ բարի եղիցի քեզ , եւ բազմապատիկ արասցէ զքեզ քան զհարս
6 քո . Եւ [15]պարուրեսցէ Տէր զսիրտ քո եւ զսիրտ զաւակի քո , սիրել զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն անձնէ քումմէ , զի կեցցես
7 [14]դու եւ զաւակ քո՝ ։ Եւ տացէ Տէր Աստուած քո զնզովս զայս ի թշնամիս քո եւ յատելիս քո որք հալածեցինն զքեզ ։
8 Եւ դու զարձցիս եւ լսիցես ձայնի Տեառն [14]Աստուծոյ քո՝ , եւ արասցես զպատուիրանս նորա զոր ես պատու-
9 իրեմ քեզ այսօր ։ Եւ աճեցուսցէ զքեզ Տէր Աստուած քո յամենայն գործս ձեռաց քոց , ծննդովք որովայնի քո , եւ արգեամբք երկրի քո , եւ ծննդովք ա-
նասնոց քոց . զի զարձցի ի քեզ Տէր [14]Աստուած քո՝ ուրախ լինել քեւ ի բարութիւնս որպէս ուրախ եղեւ հարցքն
10 քովք , եթէ լսիցես ձայնի Տեառն Աստուծոյ քո , պահել եւ առնել զամենայն պատուիրանս նորա եւ զիրաւունս նորա եւ զպատասխանիս նորա զգրեալս ի

---

[1] Եբր· մի՛ լիցի ի ձեզ [2] Եբր· օրհնեսցէ զանձն [3] Եբր· Խաղաղութիւն եղիցի [4] Եբր· առ յաւելուլ զարբեցութիւն ի ծարաւ [5] Եբր· Տէր [6] Եբր· որ առ յապայ , [7] Եբր· Տեառն Աստուծոյ [8] Եբր· էին բաժին [9] Եբր· ի մատենիս յայսմիկ

[10] Եբր· դու եւ որդիք քո յամենայն [11] Եբր· դարձուսցէ Տէր Աստուած քո զգերութիւն [12] Եբր· Տէր Աստուած քո [13] Եբր· մինչեւ ի ծագս երկնից [14] 3Եբր· պ-ւ-ւ-ւ [15] Կար, թլփատեսցէ

գրի օրինացս այսոցիկ , եթէ զարձցիս առ Տէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն անձնէ քումմէ ։
11 Զի պատուիրանքս այս զոր ես պատուիրեմ քեզ այսօր , ոչ [1]ծանրաբեռն
12 ինչ է եւ ոչ հեռի ի քէն ։ Ոչ յերկինս թէ ասիցես , Ո՞վ ելանիցէ մեզ յերկինս եւ առնուցու զնա , եւ լուիցուք եւ ա-
13 րասցուք . Եւ ոչ յայնկոյս ծովու է , թէ ասիցես , Ո՞վ անցանիցէ յայնկոյս ծովու եւ առնուցու մեզ զնա , եւ լսելի արաս-
14 ցէ մեզ եւ արասցուք . Մերձ է բանն առ քեզ յոյժ , ի բերան քո եւ ի սրտի քում , [2]եւ ի ձեռս քո է՝ առնել զնա ։
15 Ահաւասիկ ետու այսօր առաջի երեսաց քոց [3]զկեանս եւ զմահ , զբարի եւ
16 զչար . Եւ եթէ լսիցես պատուիրանաց Տեառն Աստուծոյ քո՝ զոր ես պատուիրեմ քեզ այսօր սիրել զՏէր Աստուած քո , գնալ ի ճանապարհս նորա , պահել զիրաւունս եւ զպատուիրանս նորա եւ զդատաստանս նորա , [4]կեցցէք եւ բազումք լինիցիք՝ . եւ օրհնեսցէ զքեզ Տէր
17 Աստուած քո յամենայն երկրին յոր մտանես նելոյ ես ժառանգել զնա ։ Եւ եթէ դառնասցի սիրտ քո եւ ոչ լսիցես , եւ մոլորեալ երկիր պագանիցես աստուածոց
18 օտարաց եւ պաշտեսցես զնոսա , Պատմեմ [5]քեզ այսօր զի կորստեամբ կորնչիցիք , եւ ոչ լինիցիք բազմօրեայք ի վերայ երկրին յոր դուք անցանէք ընդ
19 Յորդանան ժառանգել զնա ։ Ունիմ ձեզ վկայ այսօր զերկինս եւ զերկիր . զկեանս եւ զմահ ետու առաջի երեսաց ձերոց , զօրհնութիւնս եւ զանէծս . եւ ընտրեա զկեանս , զի կեցցես դու եւ զաւակ քո .
20 Սիրել զՏէր Աստուած քո եւ լսել ձայնի նորա եւ ունել զնմանէ , զի այն ին կեանք քո եւ երկայնութիւն աւուրց քոց , բնակել յերկրին զոր երդուաւ Տէր հարցն քոց Աբրահամու եւ Իսահակայ եւ Յակոբայ՝ տալ նոցա ։

ԳԼ . ԼԱ

1 Եւ [6]կատարեաց Մովսէս խօսել զամենայն՝ զբանս զայսոսիկ առ ամենայն որ-
2 դիսն Իսրայելի , Եւ ասէ ցնոսա , Հասրեւ եւ քսան ամաց եմ ես այսօր , եւ ոչ եւս կարեմ ելանել եւ մտանել . [7]քանզի Տէր ասաց ցիս թէ ոչ անցանիցես
3 ընդ այդ Յորդանան . Տէր Աստուած քո երթայ առաջի երեսաց քոց , նա սատակեսցէ զազգսն զայսոսիկ յերեսաց քոց , եւ ժառանգեսցես զնոսա . եւ Յեսու երթայ առաջի երեսաց քոց որպէս
4 խօսեցաւ Տէր ։ Եւ արասցէ Տէր ընդ նոսա որպէս արար ընդ Սեհոն եւ ընդ Ովգ , ընդ [2]երկսեան թագաւորսն Ամովրացւոց [2]որ էին յայնկոյս Յորդանանու՝ , եւ
5 ընդ երկիր նոցա , [8]որպէս [8]սատակեցաք զնոսա . Եւ մատնեսցէ զնոսա Տէր առաջի ձեր , եւ արասջիք ընդ նոսա որպէս
6 պատուիրեցի ձեզ ։ Քաջ լերուք եւ զօրացիր , մի երկնչիր , եւ մի զանգիտիր , եւ մի զարհուրիցիս յերեսաց նոցա . զի Տէր Աստուած քո ինքնին է որ երթայցէ յառաջագոյն ընդ ձեզ ի միջի ձերում . ոչ թողցէ զքեզ եւ ոչ ընդ վայր հարկանիցէ ։
7 Եւ կոչեաց Մովսէս զՅեսու եւ ասէ ցնա առաջի ամենայն Իսրայելի , Քաջ լեր եւ զօրացիր . քանզի դու մտանելոց ես առաջի երեսաց ժողովրդեանդ այդորիկ յերկիրն զոր երդուաւ Տէր հարցն
8 [9]ձերոց տալ նոցա , եւ դու ժառանգեցուս ցնա զնոսա ։ Եւ Տէր որ երթայդ է [10]ընդ քեզ , ոչ թողցէ զքեզ եւ ոչ ընդ վայր հարցէ . մի երկնչիր եւ մի զանգիտիր ։
9 Եւ գրեաց Մովսէս [11]զամենայն բանս օրինացս այսոցիկ ի մատեան՝ , եւ ետ զայն ցքահանայսն , ցորդիսն Ղեւեայ , որ բառնային զտապանակ ուխտին Տեառն ,
10 եւ [12]ցծերս որդւոցն՝ Իսրայելի , Եւ պատուիրեաց նոցա Մովսէս [2]յաւուր յայնմիկ՝ եւ ասէ , Ցեաս եւթն ամի ժամանակի տարւոյն թողուլիսն ի տօնի տապա-
11 ւարաց , Ի գալարել ամենայն Իսրայելի յանդիման լինելոց առաջի Տեառն Աստուծոյ քո ի տեղւոյն զոր ընտրեսցէ Տէր , ընթեռնուցուք զօրէնս զայս ա-
12 ոյդի [13]Իսրայելի յականջս նոցա , եկեղեցացուսցես զժողովուրդն , զարս եւ զկանայս եւ զմանկունս , եւ զկին որ ի քաղաքս ձեր . զի լուիցեն եւ ուսանիցին երկնչել ի Տեառնէ Աստուծոյ [14]մերմէ , եւ ուսցին առնել՝ զամենայն պատ-

---

[1] Կամ, անհաս [2] 3ԵԲԲ. գ-ի-ոբ [3] ԵԲԲ. զկեանս եւ զբարի, եւ զմահ եւ զչար. (16) Զի [4] ԵԲԲ. եւ կեցցես եւ բազում լինիցիս [5] ԵԲԲ. ձեզ [6] ԵԲԲ. չզաւ Մովսէս եւ խօսեցաւ [7] ԵԲԲ. եւ [8] ԵԲԲ. սատակեաց [9] ԵԲԲ. նոցա [10] ԵԲԲ. առաջի քո . Նա եղիցի ընդ [11] ԵԲԲ. զօրէնս զայս [12] ԵԲԲ. ցամենայն ծերս [13] ԵԲԲ. ամենայն Իսրայելի [14] ԵԲԲ. ձերմէ պահել եւ առնել

13 գամս օրինացս այսոցիկ, եւ որպիսք նո-
ցա որ ոչ դիտիցին՝ լուիցին եւ ուսցին
երկնչել ի Տեառնէ Աստուծոյ [1]մերմէ զա-
մենայն աւուրս որչափ եւ կեցցին նո-
քա՝ ի վերայ երկրին յոր դուք անցանե-
լոյ էք ընդ Յորդանան ժառանգել զնա։
14 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Ահա մերձե-
ան աւուրք մահուան քո. կոչեա զՅե-
սու, եւ կացէք [2]առաջի դրան խորանին
վկայութեան՝, եւ հրամայ տայ Նմա։
Եւ գնացին Մովսէս եւ Յեսու [3]ի խորանին
վկայութեան՝, եւ կացին [2]առ դրան
15 խորանին վկայութեան՝։ Եւ [4]էջ Տէր՝
ետես ամպով [3]եւ եկաց առ դրան խո-
րանին վկայութեան՝, եւ եկաց սիւն
16 ամպոյն առ դրան խորանին։ Եւ ասէ
Տէր ցՄովսէս, Ահաւասիկ դու ննջես-
ցես ընդ հարս քո, եւ յարուցեալ ժողո-
վուրդդ այդ պոռնկեսցի զհետ աստուա-
ծոց օտարաց երկրին յոր մտանիցէ վա
ի նոսա, եւ թողուցուն զիս եւ զրիչն
17 զոր եդի ընդ դոսա։ Եւ բարկասցայց դոցա արտմտութեամբ յա-
ւուր յայնմիկ, եւ լքից զդոսա, եւ դար-
ձուցից զերեսս իմ ի դոցանէ, եւ եղիջին կերակուր [3]թշնամեաց. եւ գտցեն
զդոսա չարիք բազումք եւ նեղութիւնք,
եւ ասասցեն յաւուր յայնմիկ, Քանզի
չէ Տէր Աստուած մեր ընդ մեզ, գտին
18 զմեզ չարիքս այսոքիկ։ Եւ ես գարձու-
ցանելով գարձուցից զերեսս իմ ի նո-
ցանէ յաւուր յայնմիկ վասն ամենայն
չարեացն զոր արարին, զի գարձան յաս-
19 տուածս օտարոտիս։ Եւ արդ գրեցէք
զքանս օրհնութեանս այսորիկ, եւ ու-
սուսջիք զդա որդւոցն Իսրայելի, եւ
արկջիք զդա ի բերան նոցա, զի եղիցի
ինձ օրհնութիւնդ այդ ի վկայութիւն ի
20 մէջ որդւոցդ Իսրայելի։ Քանզի տա-
րայց զդոսա յերկիրն [3]բարի զոր երդուայ
հարց նոցա. երկիր՝ որ բղխէ զկաթն եւ
զմեղր, եւ կերիցին եւ լցեալ յագեսցին.
եւ գառնայցեն յաստուածս օտարոտիս
եւ պաշտիցեն զնոսա, եւ զայրացուցա-
նիցեն զիս, եւ զրիցեն զուխտն իմ զոր
21 ուխտեցի նոցա։ [5]Եւ ընդգէմ՝ կացցէ
նոցա օրհնութիւնդ այդ յանդիման լինել
վկայ. եւ մի մոռասցի [3]ի բերանոց նո-
ցա եւ՝ ի բերանոյ զաւակի նոցա. քանզի դիտեմ [6]զչարութիւն նոցա զոր ա-
րարին առա՝ այսօր յառաջ քան զտանելն
իմ զնոսա յերկիրն [3]յորում երդուայ նո-
22 ցա՝։ Եւ գրեաց Մովսէս զօրհնութիւնս զայս յաւուր յայն-
միկ, եւ ուսոյց զնա որդւոցն Իսրայելի։
23 Եւ պատուիրեաց [3]Մովսէս Յեսուայ
որդւոյ Նաւեայ եւ ասէ, Քաջ լեր եւ
զօրացիր. զի դու տանիցես զորդիսն
Իսրայելի յերկիրն զոր [7]խոստացայ տալ
նոցա Տէր, եւ Նա եղիցի՝ ընդ քեզ։
24 Եւ իւրեւ կատարեաց Մովսէս գրել զա-
մենայն զբանս օրհնացս այսոցիկ ի մա-
25 տեան մինչեւ ի սպառ, Եւ պատուիրեաց
Ղեւտացւոցն որ կրէին զտապանակ ուխ-
26 տին Տեառն, ասէ, Առեալ զմատեան օ-
րհնացդ այդոցիկ դնիցէք ի կողմանէ տա-
պանակի ուխտին Տեառն Աստուծոյ ձե-
րոյ, եւ եղիցի անդ ընդ քեզ ի վկայու-
27 թիւն. Զի ես գիտեմ զհնազանդութիւն քո
եւ զիմաստ պարանոց քո. զի մինչդեռ
ես ընդ ձեզ կենդանի եմ այսօր, դառ-
նացուցիչք էք [8]Աստուածակռմանն, որ-
պէս ոչ ապաքէն եւ յետ մահուան ի-
28 մոյ։ Արդ ժողովեցէք առ իս [9]զդեղա-
պետս եւ զծերս ձեր եւ զդատաւորս
ձեր՝ եւ զատենագիրս ձեր, [10]զի խօ-
սեցայց յականջս նոցա [3]զամենայն զբանս
զայսոսիկ, եւ կալայց [11]ձեզ վկայ զեր-
29 կինս եւ զերկիր. Քանզի գիտեմ եթէ
յետ վախճանի իմոյ անօրինելով անօրի-
նիցէք, եւ խոտորիցիք ի ճանապարհէն
զոր պատուիրեցի ձեզ, եւ պատահիցեն
ձեզ չարիքն ի վախճանի աւուրց. քանզի առնիցէք չար առաջի Տեառն՝ բար-
կացուցանել զնա գործովք ձեռաց ձե-
30 րոց։ Եւ խօսեցաւ Մովսէս յականջս ա-
մենայն եկեղեցւոյն Իսրայելի զբանս օրհ-
նութեանս այսորիկ մինչեւ ի սպառ։

ԳԼ. ԼԲ

1 [12]Այսուցարուք, երկինք, եւ խօսեցայց,
եւ լուիցէ երկիր զպատգամս բերանոյ ի-
2 մոյ։ [13]Ակնկալեսցի իբրեւ զանձրեւ բար-

---

[1] ԵԲԲ. ձերմէ զամենայն աւուրս զոր կենդանի իցէք [2] ԵԲԲ. ի խորանին ժողովոյ [3] ՅԵԲԲ. զա-ն-ե [4] ԵԲԲ. երեւեցաւ Տէր ի խորանին [5] ԵԲԲ. Եւ եղիցի յորժամ գացեն զնոսա չարիք բազումք եւ նեզութիւնք, եւ ընդգէմ [6] ԵԲԲ. զխորհուրդ նոցա զոր առնեն [7] ԵԲԲ. երդուայ տալ նոցա, եւ ես եղէց [8] ԵԲԲ. Տեառնակռմանն [9] ԵԲԲ. զամենայն ձերս ցեղից ձերոց [10] ԵԲԲ. եւ [11] ԵԲԲ. նոցա [12] ԵԲԲ. Ունկն դիք [13] ԿամԹեսցէ

բառ իմ, եւ իմ ցեղն իւրեւ զթօղ պատգամք իմ, իւրեւ զանձրեւ ի վերայ սիզոյ եւ իւրեւ զտեզատարափ ի վերայ
3 խոտոյ. Զի զանուն Տեառն կարդացի. տուք օրհնութիւն [1]Տեառն Աստուծոյ
4 մերոյ։ [2]Աստուած՝ որոյ ճչմարիտ են գործք նորա, եւ ամենայն ճանապարհք նորա իրաւամբք, Աստուած հաւատարիմ է եւ ոչ գոյ ի նմա անիրաւութիւն,
5 արդար եւ անարատ է Տէր։ [3]Մեղան եւ ոչ նմա որդիք արատոյ", ազգ թեւր եւ
6 խոտորեալ։ Զայդ Տեառն հատուցանէք այդպէս, ժողովուրդ յիմար եւ ոչ իմաստուն. ո՞չ նա է Հայրն որ ստացաւ զքեզ,
7 արար զքեզ եւ հաստատեաց զքեզ։ Յուշ լիցին քեզ աւուրքն յաւիտենից, իմացարուք զամսն ազգաց յազգս. հարց զհարսն քո եւ պատմեսցեն քեզ. եւ
8 ցծնորս քո, եւ ասասցեն քեզ. [4]Ցոյժամ բաժանեաց Բարձրեալն զազգս ամենայն, որպէս սփռեաց" զորդիսն Ադամայ, կացոյց սահմանս ազգաց ըստ թուոյ որդւոց
9 [5]Աստուծոյ, Եղեւ բաժին Տեառն ժողովուրդ իւր, Յակոբ վիճակ ժառան-
10 գութեան իւրոյ [1]Իսրայէլ։ Բաւական եղեւ նմա յանապատի, ի ծարաւ աւօրոյ յանմշրջի պաշտպանեաց զնա եւ խրատեաց եւ պահեաց զնա իբրեւ զբիբ ա-
11 կան։ [6]Իբրեւ զարծուի ի ծածկել զբոյն իւր, եւ ի ձագս իւր զթացաւ". տարածեաց զթեւս իւր եւ ընկալաւ զնա եւ բարձեալ բերեր զնա ի վերայ մի՛ջնո-
12 ղանց իւրոց. Տէր միայն ածէր [7]զնոսա, եւ ոչ գոյր ընդ [8]նոսա աստուած օտար։
13 [9]Ելան զնոսա ի զօրութիւն" երկրի, կերակրեաց զնոսա արգեամբք անդաստանաց. զթեկոյզ մեղր ի վիմէ եւ եւզ յա-
14 պառաժ վիմէ. Կոզի կովուց եւ կաթն մաքեաց, հանդերձ ճարպով զառանց եւ խոյոց, որզւոց ցլուց եւ նոխազաց՝ ընդ ճարպոյ երիկամանց ցորենոյ. եւ զարիւն
15 խաղողոյ ըմպէին գինի։ [1]Եկեր Յակոբ եւ յագեցաւ," յօրացաւ եւ անկուչեաց սիրելին. գիրացաւ, ստուարացաւ եւ լայնացաւ, եւ եթող զՏէր Աստուած

զԱրարիչ իւր, եւ [10]ապստամբեաց յԱ-
16 տուծոյ փրկչէ իւրմէ"։ Բարկացուցին [7]զիս օտարոտւովք, եւ գարշելիօք իւր-
17 հանց գառնացուցին [7]զիս։ Զոհեցին դիւաց եւ ոչ Աստուծոյ, զոյ՝ զորս ոչ գիտէին. նորք եւ ամօթամտիք եկեալ,
18 [11]զորս ոչ գիտէին" հարք ձեր։ Թողեր [12]զԱստուած որ ծնաւ զքեզ, մոռացար
19 զԱստուած [13]զկերակրիչն քո։ Եւնա Տէր եւ [14]նախանձեցաւ, եւ սրտմտեցաւ վասն բարկութեան" ուսուերաց եւ դստերաց
20 իւրոց. Եւ ասաց, Դարձուցից զերեսս իմ ի նոսայնէ, եւ [15]ցուցից նոցա" զինչ լինելոց իցէ [16]ի վախճանի աւուրց". զի ազգ թեւր են, որդիք՝ յորս ոչ գոն հա-
21 ւատք. Նոքա նախանձեցուցին զիս չաստուածովք, եւ բարկացուցին զիս կռովք իւրեանց. եւ ես նախանձեցուցից զնոսա չազգաւ, եւ անմտիւ ժողովրդեամբ
22 բարկացուցից զնոսա։ Զի հուր բորբոքեալ է ի բարկութենէ իմմէ, այրեսցէ մինչեւ ի գոխս ներքինս. կերիցէ զերկիր եւ զսերմս նորա, բորբոքեսցէ
23 զհիմունս լերանց։ Կուտեցից ի նոսա չարիս, եւ զնետս իմ սպառեցից ի նոսա։
24 Մաշեալք սովով եւ [17]կերակրով թռչնոց. լարս առանց բժշկութեան" եւ ժանիս գազանաց առաքեցից ի նոսա, [18]սրմտու-
25 թեամբ քարշել զնոսա ընդ երկիր"։ Արտաքուստ անզաւակեսցէ զնոսա սուր, եւ ի չանմարանոց երկուղ. զկրիտասարդն հանգերձ կուսիւն, եւ զանմղիացին հան-
26 գերձ հաստատեալով ծերով։ Ասացի թամ՝ Ցրուեցից զնոսա, դադարեցուցից ի մարդ-
27 կանէ զյիշատակս նոցա. Թէ [19]ոչ վասն բարկութեան թշնամեաց. զի մի [1]երկայնակեացք լինիցին, եւ զի մի" բարձրացին հակառակորդքն եւ ասիցեն, Թէ Զեռն մեր բարձր եւ ոչ Տէր արար զայս
28 ամենայն։ Զի ազգ խորհրդակորոյս են,
29 եւ ոչ գոյ ի նոսա իմաստութիւն. [20]Եւ ոչ խորհեցան ի միտ առնուլ զայս. արդ
30 ընկալցին առ յապա ժամանակս"։ Զիարդ հալածեսցէ մի զհազարս, եւ երիւք

---

[1] ՅԵԲԲ. դ-ի-ե [2] ԵԲԲ. Վ.ԷՅՆ [3] ԵԲԲ. Ապականեցան յանձինս, չեն որդիք նորա, արատ նոցա [4] ԵԲԲ. Ի ժառանգեցուցանել բարձրելոյն զազգս, ի բաժանել [5] ԵԲԲ. Իսրայէլի [6] ԵԲԲ. Որպէս արծուի գրգռէ զբոյն իւր, գրգիռ ի վերայ ձագուց իւրոց [7] ԵԲԲ. զնա [8] ԵԲԲ. նմա [9] ԵԲԲ. Հեծոյց զնա ի վերայ բարձանց

[10] ԵԲԲ. արհամարհեաց զՎԷՅՆ փրկութեան իւրոյ [11] ԵԲԲ. յորոց ոչ երկնչէին [12] ԵԲԲ. զՎԷՅՆ [13] ԵԲԲ. զսահզծիչն [14] ԵԲԲ. գաբշեցաւ, ի զայրացուցանել [15] ԵԲԲ. տեսից [16] ԵԲԲ. վախճան նոցա [17] ԵԲԲ. սպառեալք տապով և դառն տագնապու- [18] ԵԲԲ. Հանդերձ թառնով զեռնոց երկրի [19] ԵԲԲ. ոչ երկնչէք [20] ԵԲԲ. Եթէ լինէին իմաստունք, ի միտ առնուին զայս եւ իմանային զվախճան իւրեանց

չարժեացեն զբեւբա , եթէ ոչ [1]Աստուած
31 վաճառեաց զնոսա ։ Զի ոչ են իրրեւ զԱս-
տուած մեր աստուածք" նոցա , եւ ինքեանք
32 միք մեր [2]վատախոհուրդք ։ Զի յորմէ
Սոդոմայ է որթ նոցա , եւ ոստ նոցա ի
Գոմորայ . խաղող նոցա՝ խաղող լեղի , եւ
33 ողկոյզ նոցա՝ դառնութիւն . [3]Սրամտու-
թիւն վիշապաց գինի նոցա , եւ [3]սրամտու-
34 թիւն խժիլ առնոյ բժկութիւնն ։ Ո՞չ
ապաքէն այս ամենայն ժողովեալ է առ
իս , եւ կնքեալ կայ ի գանձի իմում ։
35 [4]Ծաւալս վրէժխնդրութիւնն հատուցից",
ի ժամանակի յորում սխալանօք ոտն նո-
ցա . զի մերձ է օր կորստեան նոցա ,
եւ հասեալ պատրաստեալ կայ [5]ձեզ ։
36 Զի դատեսցէ Տէր զժողովուրդ իւր , եւ
ի ծառայս իւր [6]միսիթարեսցի . զի տեաս
զնոսա լուծեալս եւ լքեալս եւ մատնեալս
37 ի գերութիւն ։ Եւ ասացէ Տէր , Ո՞ւր են
աստուածք նոցա՝ [7]յորս յուսացեալ էին
38 ի նոսա", Զորոց զճարպ զոհից նոցա [8]ու-
տէիք եւ բմպէիք" զգինի նուիրաց նո-
ցա . յարիցեն օգնեսցեն ձեզ եւ եղիցին
39 ձեր թիկունք ։ Տեսէք , [9]տեսէք զի ես եմ ,
եւ չիք այլ աք" բաց յինէն . ես սպա-
նանեմ եւ ես կեցուցանեմ , հարկանեմ
եւ բժշկեմ , եւ ոչ աք իցէ որ հանիցէ ի
40 ձեռաց իմոց ։ Զի ամբարձից յերկինս
զձեռս իմ , [10]եւ երդուայց յաՂ իմ ," եւ
ասացից , կենդանի եմ ես յաւիտեանս .
41 [11]Զի սրեցից իբրեւ զփայլակն զսու-
սեր իմ , եւ կալցի զդատաստանաց ձեռն
իմ , հատուցից վրէժս թշնամեաց իմոց ,
42 եւ ատելեաց իմոց հատուցից ։ Արբե-
ցուցից զնետս իմ յարիւն , եւ սուր իմ
կերիցէ միս յարիւն վիրաւորաց եւ գե-
րութեան , ի գլխոց իշխանաց թշնա-
մեաց ։ [10]Ուրախ լերուք , երկինք , հան-
դերձ նովաւ , եւ երկիր պագցեն նմա
43 ամենայն որդիք Աստուծոյ ։" Ուրախ լե-
րուք , ազգք , ընդ ժողովրդեան նորա ,
[12]եւ զօրացուսցեն զնա ամենայն հրեշ-
տակք Աստուծոյ , զի զինգրի վրէժ ար-
եան որդւոց նորա . եւ խնդրեսցէ վրէժ
եւ հատուսցէ գատաստանս թշնամեաց" ,
եւ [13]տանելեացն հատուսցէ եւ սրբեսցէ
Տէր զերկիր ժողովրդեան իւրոյ ։

Եւ գրեաց Մովսէս զօրհնութիւնս
զայս յաւուրն յայնմիկ , եւ ուսոյց զա-
44 րզուցն Իսրայելի" ։ Եւ եմուտ Մովսէս
[10]ի ժողովուրդն , եւ խօսեցաւ զամենայն
բանս [14]օրհնացս այսոցիկ" յականջս ժո-
ղովրդեանն , ինքն եւ Ցեսու որդի Նաւե-
45 եան ։ Եւ կատարեաց Մովսէս [15]խօսել
46 ընդ ամենայն Իսրայելի , Եւ ասէ ցնո-
սա , Զգոյչ լերուք սրտիւք ձերովք ա-
մենայն բանիցս այսոցիկ , զորոց ես
գնեմ վկայութիւն ընդ ձեզ այսօր , զոր
պատուիրեցէք որդւոց ձերոց , պահել եւ
առնել զամենայն բանս օրհնացս այս-
47 ցիկ ։ Զի ոչ եմէ բան ինչ ընդունայն
իցէ ձեզ . զի սա է կեանք ձեր , եւ վասն
այսր բանի երկայնօրեայք լինիցիք ի
վերայ երկրին յոր զուարթ անցանիցէք ընդ
Յորդանան ժառանգել զնա ։
48 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի ի նմին
49 աւուր եւ ասէ , Ել դու ի լեառնն Աբա-
րիմ , ի լեառն Նաբաւ , որ է յերկրին
Մովաբու յանդիման Երիքովի , եւ տես
[16]զերկիրն զոր ես տայ որդւոցն Իսրա-
50 յելի ի կալուածս . Եւ վախճանեաց ան-
ցին ի լերինն յոր ելանիցես , եւ յաւե-
լիր ի ժողովուրդ քո , զոր օրինակ մե-
ռաւ Ահարան եղբայր քո ի Հոր լերինն ,
51 եւ յաւելաւ առ ժողովուրդ իւր . Փո-
խանակ զի հեատացէք բանին իմոյ ի մէջ
որդւոցն Իսրայելի ի վերայ Ջուրցն Հա-
կառակութեան ի Կադէս , յանապատին
ի Սին . զի ոչ սրբեցէք զիս ի մէջ որդ-
52 ւոցն Իսրայելի ։ Յանդիման տեսցես զեր-
կիրն , եւ անդր մի մտանիցես[17] ։

Գլ . Լգ

1 Սյս է օրհնութիւն զոր օրհնեաց Մով-
սէս այրն Աստուծոյ զորդիսն Իսրայելի
2 յառաջ քան զվախճանելն իւր . Եւ ասէ ,
Տէր ի Սինայէ [18]եկեսցէ , եւ երեւեցաւ
[5]մեզ ի Սէիրայ , եւ [19]փութացաւ ի լեռնէն
Փառանու , [20]բիւրաւորօքն ի Կադեսայ" ,

---

[1]Եբէր. վաճառէր Վ.Էմ Նոցա զնոսա, եւ Տէր մատ-
նէր զնոսա ։ (31) Զի ոչ իբրեւ զՎ.Էմ մեր վՎմ
[2]Եբէր. գաստաւորք [3]Եբէր. Թոյն [4]Եբէր. Իմ է
վրէժխնդրութիւն եւ հատուցումն [5]Եբէր. Նոցա
[6]Եբէր. արգահատեսցի [7]Եբէր. վՎմն յոր յուսա-
ցեալ էին ի նա [8]Եբէր. ուտէին , ըմպէին
[9]Եբէր. արդ, զի ես , ես եմ, եւ չիք Աստուած
[10]ՅԵբէր. դալ-ոբ [11]Եբէր. եթէ [12]Եբէր. զի ինդ-
բեսցէ զվրէժ արեան ծառայից իւրոց , եւ հա-
տուսցէ վրէժ թշնամեաց իւրոց

[13]Եբէր. քաւեսցէ զերկիր իւր , զժողովուրդ իւր
[14]Եբէր. երգոյս այսորիկ [15]Եբէր. խօսել զամենայն
բանս զայսոսիկ [16]Եբէր. զերկիրն Քանանու
[17]Եբրայեցէն յա-եը- , զերկիրն զոր ես տայ որդ-
ւոցն Իսրայելի [18]Եբէր. եկն [19]Եբէր. ծագեաց
[20]Եբէր. եւ եկն բիւրով սրբովք

յաջմէ Նորա [1]հրեշտակք իւր ընդ իւր ։
3 Եւ լինայիս ի ժողովուրդ իւր . եւ ա-
մենայն սրտիւք ի նեղլոյ ձեռին քո , եւ
4 Նոքա ընդ քեւ են ։ Եւ ընկալաւ ի պատ-
ուամոյ Նորա օրէնս , զոր պատուիրեաց
մեզ Մովսէս , ժառանգութիւն ժողովրդեան
5 Յակոբայ ։ Եւ եղիցի իշխան ի մէջ սիրե-
լոցն , զուարթութիւն ժողովրդոյ Նանդերձ ցնծիցեն Իսրայէլ" ։
6 Կեցցէ Ռուբէն եւ մի մեռցի , եւ ե-
ղիցի բազմաւոր թիւով ։
7 Եւ զայս ասէ զՅուդայէ . Լուր , Տէր ,
ձայնի Յուդայի , եւ ի ժողովուրդ Նորա
[2]եկիցես , եւ ձեռք Նորա ընդարձակեն
նմա , եւ օգնական ի թշնամեաց եղիցես նմա" ։
8 Եւ զՂեւեայ ասէ , [3]Տուք Ղեւեայ
զյայտնութիւն Նորա , եւ զճշմարտու-
թիւն Նորա առնն անարատի , զոր փոր-
ձեցեր փորձանօք , եւ բամբասեցեր զնա"
9 ի վերայ Ջրացն Հակառակութեան ։ Որ
ասէր ցհայր իւր եւ ցմայր իւր՝ թէ Ոչ
տեսի զքեզ , եւ զեղբարս իւր ոչ ծա-
նեաւ , եւ զորդիս իւր ոչ գիտաց . [4]զգու-
շացաւ բանիւ քոյ , եւ զուխտ քո [5]պա-
10 հեաց ։ Պատմեացեն զիրաւունս քո Յա-
կոբայ , եւ զօրէնս քո Իսրայէլի . զիցն
խունկս [6]ի բարկութեան քում հանա-
11 պազ" ի վերայ սեղանոյ քո ։ Օրհնեա ,
Տէր , զզօրութիւն նորա , եւ ընկալ
զգործս ձեռաց նորա . խորտակեա զմէջս
ի վերայ յարուցելոց թշնամեաց Նորա ,
եւ ատելիք նորա մի կանգնեացին ։
12 Եւ զԲենիամինէ ասէ , Սիրելեալն ի
Տեառնէ բնակեսցէ [7]յուսով . եւ Աստուած
հալանի լիցի նմա զամենայն աւուրս ,
եւ ի մէջ ուսոց Նորա հանգիցէ ։
13 Եւ զՅովսեփայ ասէ , Օրհնութիւնն
Տեառն երկիր Նորա , [8]ի ժամանակայ
երկնից եւ ի յօզոյ , եւ յանդնդոց ապ-
14 բերայ ի ներքուստ , [8]ի ժամանակի արե-
ւանց արեգական [9]փափխմանց , եւ ի
15 գագաթունս աւուր միանգամ ամսոյ ," ի
գագաթանց լերանց ի սկզբան , եւ [8]ի
16 գլխոյ բլրոց մշանչենաւորաց , եւ [10]յա-
ժամանակի երկրի լրութեան . եւ ըն-
դունելութիւնք երեւելոյն" ի մանեակն
նիհացին ի վերայ գլխոյն Յովսեփայ եւ
ի վերայ գագաթան փառաւորելոյն ի մէջ
17 եղբարցն ։ Անդրանկի ցուլ գերզ Նորա , եւ
եղջերք մեծկոյս եղջերք Նորա . խո-
խոիկացէ Նոքօք զազգս միանգամայն
մինչեւ ցծագս երկրի . այս են բիւրաւորք
Եփրեմի , եւ սոքա հազարաւորք Մա-
նասէի ։
18 Եւ զՋաբուղոնէ ասէ , Ուրախ լեր ,
Ջաբուղոն , յկս [11]քո ։ Եւ վիճաբարայ
ասէ , ի բնակութիւնս նոցա ազգք սա-
19 տանեացն , Եւ անդր կոչեսջիք եւ զո-
հեսջիք զոհ արդարութեան . զի զմեծու-
թիւն ծովու զիւցուսցէ քեզ , եւ զչան
վաճառաց առ ծովեզեր բնակեալոց" ։
20 Եւ զԳադայ ասէ , Օրհնեալ որ ընդար-
ձակիցայ Գադայ . հանգիստ իւրոյ զա-
ւուծ , եւ խորտակեաց [12]զբազուկս եւ
21 զիչխանս . Եւ եհաս զիչխանութիւնն իւր .
զի անդ բաժանեցաւ երկիր իշխանաց
ժողովրդովք հանգերձ ազգաւածոք ապ-
զայ ցեղիւքն Իսրայէլի" , զարդարու-
թիւն Տեառն արար եւ զդատաստան
իւր ընդ Իսրայէլի ։
22 Եւ զԴանայ ասէ , Դան՝ կորիւն ա-
ւուծոյ , եւ յարձակեսցի ի Բասանայ ։
23 Եւ զՆեփթաղիմայ ասէ , Նեփթաղիմ
յագուրդ ընդունելութեանց , եւ լցցի
օրհնութեամբ ի Տեառնէ , եւ [13]զծով եւ
զհարաւ ժառանգեսցէ ։
24 Եւ զԱսերայ ասէ , Օրհնեալ յորդւոց
Ասեր , եւ եղիցի ընդունելութիւն եղ-
25 բարց , եւ մխեսցէ յեւզ զոտն իւր ։ Եւ
երկաթ եւ պղինձ եղիցին կօշիկք Նորա .
[14]քան աւուրց քոց եւ" զօրութիւն քո ։

[1] ԵԲԷ. Հուր՝ օրէնք Նոցա ։ (3) Նաեւ սիրեաց զժո-
ղովուրդս. ամենայն սուրբք Նորա ի ձեռին քում. եւ նոքա զեգերին առ ոտիւք քով ընդունել ի
բանից քոց ։ (4) Օրէնս պատուիրեաց մեզ Մով-
սէս. ժառանգութիւն ժողովրդեան Յակոբայ։ (5)
Եւ եղեւ յԻսուրուն (յԻսրայելի) թագաւոր ,
ի գումարել իւր զիչխանս ժողովրդեան հան-
դերձ ցեղիւքն Իսրայելի [2]ԵԲԷ. մնծցես զնա-
ձեռն Նորա բաւական լիցի նմա , եւ օգնական
ի թշնամեաց Նորա եղիցես [3]ԵԲԷ. ՑԻսուիմ
քո եւ զՈւրիմ քո (Տե՛ս ելից ԼԴ. 30) առնն
քում անարատի , զոր փորձեցեր ի Մասսա ,
ընդ որում հակառակեցար [4]ԵԲԷ. զի զգուշա-
ցան [5]ԵԲԷ. պահեցին [6]ԵԲԷ. յսինգունս քո
եւ սղջակէզ [7]ԵԲԷ. յապահովս առ նմա [8]ԵԲԷ.
ի բարութենէ

[9] ԵԲԷ. ի բարութենէ արգասեաց լուսնի [10]ԵԲԷ.
ի բարութենէ երկրի եւ ի լրութենէ Նորա ,
եւ ի կամաց որդի բնակէն [11]ԵԲԷ. քո , եւ
Իսաքար , ի վրանս քո ։ (19) Ցժողովուրդս ի
լեառնն կոչեսցեն . անդ զոհեսցեն զոհ արդա-
րութեան, զի զառատութիւն ծովուց ծծեսցեն,
եւ գգանձս ծածկեալս աւազոյ [12]ԵԲԷ. զբա-
զուկս , նա՛ եւ զգագաթն . (21) Եւ եհաս
վասն իւր զընտրեն , զի անդ բաժին օրէնսդրին
պահեալ , եւ եկն գլխաւորաբ ժողովրդեանն
[13]Կամ, զարեւմուտս [14]ԵԲԷ. և քան աւուրց քոց

26 Ոչ պայ իրրեւ զԱստուած [1]սիրեցեալն, որ ելանէ յերկրէս օդնականն քո
27 եւ մեծամեծացն հաստատութեան. եւ ծածկեալ Աստուածդ խխտանութեանն, եւ ի զօրս քոնէ բազկաց մշտնջենաւորաց", եւ մերժեալ յերեսաց քոց զթշնամին,
28 եւ ասացէ թէ կորիր: Եւ բնակեսցէ Իսրայէլ [2]յաւետ առանձինն յերկրին Յակոբայ՝ ի մէջ" ցորենոյ եւ գինւոյ, եւ
29 երկինք՝ նոմա համբարակ ցօղոյ: Երանեալ ես դու, Իսրայէլ. ո՞ նմանեցեալ քեզ, ժողովուրդ բնակեալ ի Տեառնէ. [3]պաշտպանեալ քեզ օգնականն քո, եւ սուր՝ պարծանք քո. եւ սկսցեն թշնամիք քո, եւ դու ելցես ի վերայ պարանոցի նոցա":

ԳԼ. ԼԴ

1 Եւ ել Մովսէս [4]յԱրաբովթ Մովաբայ, ի լեառն Նաբաւ, ի կատարն [5]Փասգայ, որ է յանդիման Երիքովի, եւ ե-
2 ցոյց նմա Տէր զամենայն երկիրն Գաղաադ մինչեւ ցԴան, եւ զամենայն երկիրն Նեփթաղիմայ, եւ [6]զամենայն երկիրն Եփրեմի եւ Մանասէի, եւ զամենայն երկիրն Յուդայ մինչեւ ցծով
3 վերջին, եւ [7]զանապատան եւ չորջ զԲրիքոյիս, եւ զքաղաքսն Արմաւենեաց

4 մինչեւ ցՍեգովր: Եւ ասէ Տէր ցՄովսէս, Այս է երկիրն զոր երդուայ Աբրահամու եւ Իսահակայ եւ Յակոբայ եւ ասելի, Զաւակի քում տացէ զայս. ցուցի աչաց քոց, եւ անդր մի մատնիցես:
5 Եւ վախճանեցաւ Մովսէս ծառայ Տեառն յերկրին Մովաբու բան բանի
6 Տեառն. եւ [8]թաղեցին զնա ի Գայ" մերձ ի տունն Փոգովրայ. եւ ոչ ոք գիտաց զերեզմանն նորա մինչեւ ցայսօր: Եւ Մովսէս էր ամաց հարեւր եւ
7 քսանից ի վախճանին իւրում, եւ ոչ վատացան աչք նորա եւ ոչ [9]խորչոմեցան ծնօտք" նորա:
8 Եւ լացին որդիքն Իսրայէլի զՄովսէս [10]յԱրաբովթ Մովաբու [11]առ Յորդանանաւ յանդիման Երիքովի" աւուրս երեսուն. եւ կատարեցան աւուրք սգոյ լալեացն Մովսիսի:
9 Եւ Յեսու որդի Նաւեայ լցաւ հոգւով իմաստութեամբ, զի եդ Մովսէս [12]զձեռն իւր ի վերայ նորա. եւ հնազանդեցան նմա որդիքն Իսրայէլի, եւ արարին որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի:
10 Եւ ոչ եւս եկաց մարգարէ յԻսրայէլի իրրեւ զՄովսէս, այլ՝ զոր ծանեաւ Տէր
11 դէմ յանդիման, Ամենայն նշանօք եւ արուեստիւք զոր առաքեաց Տէր առնել յերկրին Եգիպտացւոց, ի Փարաւոն եւ ի ծառայս նորա եւ յամենայն երկիր նո-
12 րա, [13]Զհնչմամբ մեծամեծս, զձեռն հզօր եւ զերասիկ բարձր" զոր արար Մովսէս առաջի որդւոցն Իսրայէլի:

---

1 ՆԲԳ. ո՛վ Եսուրուն (Իսրայէլ), նա նաեւ յերկինս յօդնութիւն քո, եւ ի մեծվայելչութեան իւրում յամպս: (27) Ապաւէն, Աստուած յաւիտենական, եւ ներքոյս զօրաւոր զբազուկ մշտնջենաւոր 2ՆԲԳ. յապահովս առանձինն աչն Յակոբայ յերկրի 3ՆԲԳ. Նա է ապաւէն օգնութեան քո, եւ սուր պարծանաց քոց. եւ հնազանդեսցին քեզ թշնամիք քո, եւ դու կոխեսցես ի վերայ բարձանց նոցա 4ՆԲԳ. ի դաշտացն 5ՆԲԳ. Փոգովր 6ՆԲԳ. վերկիրն 7ՆԲԳ. զՏարաւաստղին, եւ զդաշտն Հովհին Երիքովի, քաղաքին

8ՆԲԳ. թաղեաց զնա ի ձորն յերկրին Մովաբու 9ՆԲԳ. պակասեաց ոյժ 10ՆԲԳ. ի դաշտին 11ՅՆԲԳ. դ-ի-ո-ե 12ՆԲԳ. զձեռս 13ՆԲԳ. Ամենայն հզօր ձեռամբ, եւ ամենայն տիւ մեծաս

ԳԼՈՒԽՔ ԳՐՈՑ ՅԵՍՈՒԱՅ ՈՐԴՒՈՅ ՆԱՒԵԱՅ

	Գլ.	Համ.
Յանձն առնէ Աստուած Յեսուայ զԻսրա- յէլ, եւ վատահ առնէ յաղթել Քա- նանացւոց, բայց թէ զգուշացին զո- րէնն պահել։	Ա.	1
Հրամայէ Յեսու պատրաստել պաշար ի մանանայէն, զի յանցանելն ընդ Յորդանան պարապ լիցին տեսա- նել զաջառնէլիան։	Ա.	10
Վաւէ գնացեալ Ռուբէնի, յառաջապահ, զի մի՛ բնակցի սիրտ եղբարցն իւրե- անց չգնալովն։	Ա.	12
Առաքէ զլրտեսան ի քաղաքըն Երիքով, եւ ի փրկութիւն տանն Ռախաբու, եւ ի նշանակ մտին հե- թանոսաց քարոզութեամբ խաչին եւ արեանն Քրիստոսի։	Բ.	1
Բանակեցան առ Յորդանան ահ արկա- նել Քանանացւոցն, չմարտնչել եւ կորնչել. եւ ի պատիւ տապանակին որ առաջնորդէր նոցա ի տիպ Քրիստոսի նորա Իսրայէլի՝ բացար- ձակ հրամայէ կալ ժողովրդեանն։	Գ.	1
Բաժանեցաւ գետն ի խրախոյս ժողո- վրդեանն եւ յահ Քանանացւոցն, ի տիպ գաթի ի գրախտն եւ կո- րըստեան չարաց. եւ երկոտասան քարինքն առան ի ջուրցն ի յի- շատակ հրաշիցն եւ ի տիպ Առա- քելոցն, եւ արք սուզանն ի ջուրն ի նշանակ մեղաց։	Գ.	7
Լուան ազգքն զբաժանել գետոյն, եւ յիմարեցան. բայց յանդգնեցան մարտնչել ըստ Փարաւոնի, եւ կոր- եան ի Յեսուայ։	Ե.	1
Գայլայլագիւ թլփատեաց զԻսրայէլ, զի դիւրաւ ողջանայ, եւ զի խաւսե- լիւն նոցա օրինաւքն թլփատեցի, եւ ի տիպ գրաչվելոյն գվեզ Յիսու- սի Հոգւովն, եւ բառնայով զնա- խատինս ծառայութեան Աիգայն։	Ե.	2
Արարին զզատիկն, եւ արգելաւ մանա- նային, զի մի՛ անարգեսցի՛ որպէս ի Տարցն Նոցա։	Ե.	10
Երեւեցաւ հրեշտակն սուսերբը օգնել Իսրայէլի, եւ լուծանել սասց զկօշիկն, եւ հնձան Տարկանել զՔանանացիսն. եւ զի սրբեսցուք յաղտեղի իրաց զոր կոխեն կօշիկք։	Ե.	13
Շրջապատեն զԵրիքով զվեց օր. եւ զի ոչ հնազանդեցան պաշտեալքն՝ լուծին դշարաթն յառաջին պա- տերազմին, զի միշտ պատերազմս- ցուք ընդ դեւս. և զի յաղագսկել նոցա անկան պարիսպք ի նշա- նակ քակման գժոխոց, եւ զի Տնաց տունն Ռախաբու նշանաւն։		

	Գլ.	Համ.
զի ի վերջին քակտելն աշխարհիս՝ ոչ ասասանին դրաշվելքն խաչիւն։	Զ.	1
Ապրեցոյց Յեսու զԱխաբ վասն հաւա- տացն, եւ նղովեաց զԵրիքով ի փորձ ընտրութեան Իսրայէլի, զի յաղ- թեցուք ազատմութեան. սրբեաց Տեսուն զարծաթն եւ զոսկի տաստա- նարդս ի նշանակ հաւատոց և սուրբ վարուց։	Զ.	22
Անէծ որ չինէ զԵրիքով, զի առաջին յանդգնեցաւ ի մարտ, և այն յետ ներելոյն զեւթն օր. զի մեք մի՛ ար- համարհեսցուք զներելովն Աստուա- ծոյ, եւ մի՛ չինեսցուք զսէզս։	Զ.	26
Գողացաւ Աքար ի նուիրելոցն Տեսուն, ընդ որոյ պարտեցաւ Իսրայէլ. անտես եղեւ Յեսու մինչեւ ցերե- կոյ՝ զի գղջասցի Աքար. ապառնա- ցաւ վիճակաւն եւ ներեաց գդի- շերն. իբրեւ յանդիմանեցաւ, կոր- եաւ իւրայովքն որպէս Պափիր- եանքն՝ յահ եւ յերկեղ մեզ այժմ և յետոյ։	Է.	1
Դարանակալ լինի ի վերայ Գայեայ յաւ- սումն հնարից պատերազմի. ազդէ Յեսու կանգնելով նիշակին գժամ յաղթութեանն, և զիագաւարեալ մեղն կախէ խորհրդով խաչին։	Ը.	1
Գրեաց զօրէնն ի վերայ բռեալ սեղա- նայն, զի ուսցին հեթանոսք. բնթեր- ցաւ զօրհնութիւնն եւ զանէծն՝ նոցա և մեզ յերկեղ և ի փափա- քումն։	Ը.	30
Համաղիր եղեն Քանանացիք մարտն- չել ընդ Յեսուայ. այլ Գաբա- եանացիք անձնատուր եղեալ ապ- րեցան հնարիւք՝ յօրինակ դիմելոց յԱստուած։	Թ.	1
Կատեցան հնգերին թագաւորքն Ջնջել զԱրաւան. զի Աստանայ ցանուս գղջացելոց. խնդրեցին նորա փրկիչ զՅեսու, որոց օգնեալ վանեաց զմնարտեցեալսն սրով, եւ քարեայ կարկտիւ։	Ժ.	1
Արգել զարեգակն և զլուսին, զի ցուց- ցէ զոսկարութիւն պաշտելեացն հեթանոսաց, նկարելով և զնշանն որ եղեւ ի լուսաւորսն յօր խա- չին Քրիստոսի։	Ժ.	12
Սպան գՀինգ թագաւորան եւ կախեաց գփայտից, եւ զայլ բազմս գյեղա- նայինս եւ զգաշտայինս. կոտորեաց զքանն եւ զինն թագաւորաւն, և առ զաշխարհս նոցա։	Ժ.	16
Ինդրեաց Քաղէբ զերկիրն խոստացեալ նմա. եւ առին Յուդա եւ Եփ-		

	Գլ.	Համ.
րեմ և կէս ցեղին Մանասէի զբաժին ժառանգութեան իբեանց՝	ԺԳ.	6
Եկեղեցացաւ ժողովուրդն ի Սելով, եւ կանգնեցին անդ զխորանն վկայութեան ի վիճակն Եփրեմի, եւ բաժանեաց զմնացեալ երկիրն եւթն եւս ցեղիցն՝	ԺԷ.	1
Զի եառն Պետացւոցն յամենայն ցեղիցն քառասուն եւ ութ քաղաքս ապատատանի՝	Ի.	1
Ընակեաց Յեսու ի Թամնաստարաս. եւ զի հանգոյց Տէր ըստ խոստմանն իւրում զԻսրայէլ՝	ԻԱ.	42
Որ հնեաց Յեսու զՈւրիմեանն եւ արձակեաց Թումկօք ի վիճակս իւրեանց, և պատուիրեաց նոցա զգուշանալ օրինացն Տեառն՝	ԻԲ.	1
Նինեցին Ուրիմեանքն սեղան ի վիճակն իւրեանց. ընդ որոյ հարցեալք պատասխանեցին Թէ ի վկայութիւն որդւոց մերոց կանգնեցաք,		
առ ի չմերժելոյ որդւոց Ձերոց զմեզ ի զՏէր պաշտելոյ՝	ԻԲ.	9
Վերացեալ Յեսուայ՝ ժողովեաց զԻսրայէլ առաջի Տեառն, եւ յիշեցոյց նոցա լիով զերախտիսն Աստուծոյ՝ յԱբրահամէ մինչեւ ցայն վայր, եւ զգուշացոյց նոցա պաշտել զՏէր. և երկրորդեալ նոցա զխոստումն պաշտելոյ զՏէր, գրեաց եւ կանգնեաց վէմ ի վկայութիւն՝	ԻԳ.	1
Թէ վախճանեցաւ Յեսու, և զի Թազեցին ընդ նմա զսուրբն քարեղէնս, նշանակեալ Թէ ի մեռանելն Յեսուայ խափանեալ անյայտ լինի մարմնաւոր Թլփատութիւնն՝	ԻԴ.	30
Վասն Թաղման ոսկերացն Յովսեփու, և վասն մահուն Եղիազարու քահանայի, և Փենհեսի որդւոյ նորա՝	ԻԴ.	32
Ամբաստանութիւն կատարեալքն Իսրայէլի եւ մտանելոյն ընդ ծառայութիւնս՝	ԻԴ.	33

ԳԻՐՔ
ՅԵՍՈՒԱՅ ՈՐԴՒՈՅ ՆԱԻԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ եղեւ յետ վախճանելոյն Մովսիսէ ծառայի Տեառն, խօսեցաւ Տէր ընդ Յեսուայ որդւոյ Նաւեայ պաշտօնէի Մովսիսի եւ ասէ, Մովսէս ծառայ իմ վախճանեցաւ. արդ յարուցեալ անցցես ընդ այդ Յորդանան դու եւ ամենայն [1]ժողովուրդ քո՝ յերկիրն զոր 3 ես տաց որդւոյն Իսրայելի։ Ամենայն տեղիս յոր հասանիցին ոտքք նոցա ձերոց՝ ձեզ տայ զնա, որպէս խօսեցայ 4 ընդ Մովսիսի. [2]Զանապատն եւ զԼիբանանն՝ մինչեւ ցգետն մեծ, ցգետն Եփրատ, զամենայն երկիրն Քետացւոց. մինչեւ ցծովն [3]վերջին իմիջին արեւուն՝ 5 ձեզ լիցին սահմանքն։ Եւ ոչ ոք կացցէ ընդդէմ [4]ձեր զամենայն աւուրս կենցաղոյ քոյ. եւ որպէս էի ընդ Մովսիսի, նոյնպէս եղէց եւ ընդ քեզ. եւ ոչ թողից 6 զքեզ եւ ոչ անտես արարից զքեզ։ Զօրացիր եւ քաջ լեր. զի դու բաժանեսցես ժողովրդեանդ այդմիկ զերկիրն զոր 7 երդուայ հարցն [5]քոց տալ դոցա։ Արդ զօրացիր եւ քաջ լեր յոյժ, պահել եւ առնել բուռ ամենայն օրինացն որպէս պատուիրեաց քեզ Մովսէս ծառայ իմ. եւ մի խոտորիցիս ի նոցանէ յայլ կամ յահեակ, զի խելամուտ լիցիս ամենայնի 8 զինչ եւ գործեսցես։ Եւ մի մերժեսցի գիր օրինացս այսոցիկ ի բերանոյ քումմէ, եւ խոկասցես ի գա ի տուէ եւ ի գիշերի, զի խմասցիս առնել զամենայն գրեալսդ ի գիս. եւ ապա աջողեսցիս եւ ուղղեսցիս զճանապարհս քո, եւ ա- 9 պա խելամուտ լինիցիս։ Ահա պատուիրեմ քեզ. զօրացիր եւ քաջ լեր. մի զանգիտեսցես եւ մի երկնչիցիս, զի ընդ քեզ է Տէր Աստուած քո յամենայն ան- ձիս ուր եւ երթայցես։

10 Եւ պատուիրեաց Յեսու [6]դպրաց ժո- 11 ղովրդեանն եւ ասէ, Մակք ի մէջ բանակի ժողովրդեանդ, եւ հրամայեա ժողովրդեանդ ասացէք, Պատրաստեցէք ձեզ պաշար. զի այլ եւս երեք աւուրք, եւ անցանէք դուք ընդ այդ Յորդանան՝ մտանել առնել զերկիրն զոր Տէր Աստուած հարցն ձերոց տայէ ձեզ ի ժա- 12 ռանգութիւն։ Եւ ընդ Ռուբինի եւ ընդ Գադայ եւ ընդ կէսոյ ցեղին Մանասէի խօսեցաւ Յեսու 13 եւ ասէ, Յիշեցէք զբանն [7]Տեառն զոր պատուիրեաց ձեզ Մովսէս ծառայ [8]Տեառն եւ ասէ, Տէր Աստուած ձեր հանգուցանէ զձեզ, եւ նա ձեզ զերկիրս դոյս։ 14 Կանայք ձեր եւ մանկունք ձեր եւ անասունք ձեր լինիցին յերկիրս զոր նա ձեզ Մովսէս յայկոյս Յորդանանայ. բայց դուք զինեալք անցանիցէք յառաջագոյն քան զեղբարս ձեր, ամենայն զօրաւոր զօրութեամբ, եւ լինիցիք նա- 15 ցա մարտակիցք, մինչեւ զհանգուցանիցէ Տէր Աստուած ձեր զեղբարս ձեր որպէս եւ զձեզդ, եւ ժառանգեսցեն եւ նոքա զերկիրն զոր Տէր Աստուած ձեր տայէ նոցա. եւ դառնայցէք յիւրաքանչիւր ժառանգութիւն, եւ ժառանգիցէք զնա զոր նա ձեզ Մովսէս ծառայ Տեառն յայկոյս Յորդանանայ յարեւելից։

16 Եւ պատասխանի տուեալ ասեն ցՅես- սու, Զամենայն զոր միանգամ պա- տուիրես մեզ՝ արասցուք, եւ յամենայն անդիս ուր առաքիցես զմեզ՝ երթիցուք։ 17 Եւ ըստ ամենայնի որպէս լսեաք Մով- սիսի, նոյնպէս լուիցուք եւ քեզ. լոյծ միայն Տէր Աստուած [9]մեր եղիցի ընդ 18 քեզ, որպէս էր ընդ Մովսիսի։ Եւ այր որ անհնազանդիցի լիցի քեզ եւ ոչ լսիցէ բանից քոց, որպէս ինչ հրաման տացես նմա, մեռցի. բայց միայն զօրացիր եւ քաջ լեր։

---

[1]ԵՔԸ. ժողովուրդս այս [2]ԵՔԸ. Յանապատէն եւ ի Լիբանանէ անտի [3]ԵՔԸ. մեծ [4]ԵՔԸ. քո [5]ԵՔԸ. նոցա

[6]Գիրք սոփ Ե չլբաշխ ընդ նշանակ ասորական [7]ՅԵՔԸ. դասուբ [8]ԵՔԸ. Տեառն

ԳԼ. Բ

4 Եւ առաքեաց Յեսու որդի Նաւեայ ի Սատիմայ երկուս երիտասարդս լրտեսել զերիքով զայգ, եւ ասէ, Երթեալ լրտեսեցէք զերիքով եւ զերիքով. եւ գնացեալ [1]երկուց երիտասարդացն եկին յերիքով եւ մտեալ" ի տուն կնոջ պոռնկի միոջ որում անուն էր Ռախաբ, եւ անդ կա-
2 յան օթևանս։ Ազգ եղեւ թագաւորին Երիքովայ եւ ասեն, Ահա արք մտեալ են այսր գայգս յորդւոցն Իսրայելի լրտես-
3 անել զերիքով։ Եւ առաքեաց թագաւոր ան Երիքովայ եւ ասէ ցՌախաբ, Հան այսր զարագ մտեալագ առ քեզ որ եկին ի տուն քո [2]գայգ, զի լրտեսել զամենայն եր-
4 կիրս եկին։ Եւ առեալ կնոջն զերկոսին արան թագոյց զնոսա, [2]եւ խօսեցաւ ընդ նոսա" եւ ասէ, Մարդ առ իս արք, եւ
5 ես ոչ գիտէի ուստի իցեն. Եւ ընդ առնել դրանն ընդ աղջամուղս՝ [2]առաւօ-
6 տին եկին արքն արտաքս եւ ոչ գիտեմ յո գնացին. սրնգեցարուք սակս զնոսա, եւ կհասցուք զնոսա։ Նա ի տանիս զնոսա ընդ խրձամբք կտաւոց զոր գծկեալ
7 էր իւր ի տանիս։ Եւ գնդեկան արքն զկնի նոցա զճանապարհն Յորդանանու ի հանդն, եւ գուռն փակեցաւ, [2]եւ ե-
8 լիւ" իրրեւ եկին ընդզրակքն զնա նոցա։
8 Եւ մինչչեւ ի քուն մտանել էր նոցա,
9 եկ ինքն առ նոսա ի տանիսն, Եւ ասէ ցնոսա, Գիտեմ զի ետ ձեզ Տէր զերկիրս. քանզի անկաւ ահ ձեր ի վերայ մեր, եւ զի հաչեցան ամենեքեան որ
10 բնակեալ էին յերկրիս յայսմիկ յերեսաց ձերոց. Քանզի լուաք թէ ցամաքեցոյց Տէր զծովն Կարմիր յերեսաց ձերոց յե-
լանելն ձեր յԵգիպտոսէ, եւ զոր ինչ ա-
րարէք ընդ երկուս թագաւորսն Ամովրհացւոց որ էին յայնկոյս Յորդանանու, ընդ Սեհոնի եւ ընդ Ովգայ, զորս սա-
11 տակեցէք։ Եւ իրրեւ լուաք մեք, զար-հացաք սրտիւք մերովք, եւ ոչ եւս ոգի չհանչ յամենեքեան ձեր յերեսաց ձերոց. զի Տէր Աստուած ձեր, նա է Աս-տուած յերկինս ի վեր եւ յերկիր ի խո-
12 նարհ։ Եւ արդ երդուարուք ինձ ի Տէր Աստուած, զի առնիմ ձեզ ողորմութիւն, եւ արասջիք եւ դուք ողորմութիւն տան հօր իմոյ. եւ տուք ինձ նշան ճշմարիտ։

13 Եւ ապրեցուցէք [3]զտուն հօր իմոյ", եւ զմայր իմ եւ զեղբարս իմ եւ զքոյր իմ, եւ զամենայն որ ինչ իցէ նոցա, եւ
14 փրկեսջիք [4]զանձն իմ" ի մահուանէ։ Եւ ասեն ցնա արքն, Անձինք մեր փոխա-նակ ձեր ի մահ, եթէ ոչ պատմիցէք զբանս զայս զմեզնէ. եւ [2]ետ ասէ," ե-
պիցի յորժամ մատնեսցէ [5]Տէր զքա-զաքս, արասջիք ընդ իս" ողորմութիւն
15 եւ ճշմարտութիւն։ Եւ [6]կախեաց զնոսա չուանաւ ընդ պատուհանն. քանզի տուն նորա ի պարսպին էր եւ ինքն բնակեալ էր
16 ի պարսպին։ Եւ ասէ ցնոսա, Զբեռն-լուծանդ գնացէք, զի մի պատահեսցեն ձեզ խնդրակքն. եւ թաքիջիք անդ վե-րիս աւուրս, մինչեւ դարձցին խնդրակքն գնացեալ ձերմէ. եւ ապա երթիջիք զճա-
17 նապարհն ձեր։ Եւ ասեն արքն ցնա, Քաւեալ եմք մեք յերդմանէդ, զոր
18 երդուիցեալ զմեզ. Ահա մեք մտանի-գանք ի մասն ինչ քաղաքիդ, եւ գուք գնիցես նշանակ գլարդ կարմիր, եւ կա-պեսցես զպատուհանիդ ընդ որ զմեզ ի-ջուցեր. եւ զհայր քո եւ զմայր քո եւ զեղբարս քո եւ զամենայն տուն հօր քո
19 ժողովեսցես առ քեզ ի տունս քո։ Եւ եղիցի ամենայն որ ելանիցէ ի տանէ քումմէ արտաքս՝ ինքն եղիցի անձին իւրում պատասխան. եւ մեք քաւեալ լիցուք [2]յերդմանէդ քումմէ յայդմանէ". եւ որ
միանգամ լինիցին ընդ քով ի տան քում, մեք լիցուք պատասխանք, եթէ ձեռն
20 ուրուք մերձենայի ի նա։ Ապա թէ [2]ոք մեզանչեսցէ մեզ եւ" յայտնեսցես զբանս մեր զայսոսիկ, քաւեալ լիցուք յերդմա-
21 նէդ քումմէ յայդմանէ[7]։ Եւ ասէ, Եւ զիցի ըստ բանիդ ձերում, նոյնպէս եղիցի. եւ արձակեաց զնոսա եւ գնացին. եւ կապեաց [8]նշան կարմիր ի պատուհանին։
22 Եւ գնացին եւ եկին ի լեռնակոյտն, եւ կացին անդ զերիս աւուրս, մինչեւ դարձան խնդրակքն. եւ յուզեցին խնդրակքն զամենայն ճանապարհն եւ ոչ
23 գտին։ Եւ դարձան երկոքին երիտա-սարդքն եւ իջին ի լեռնէ անտի եւ եկին յայնկոյս, եւ հասին առ Յեսու որդի Նաւեայ, եւ պատմեցին զամենայն անցս
24 որ անցին ընդ նոսա. Եւ ասեն ցՅեսու

[1] ԵԲԲ· եկին [2] ՅԵԲԲ· պ-ւ-ռ

[3] ԵԲԲ· զՏայր իմ [4] ԵԲԲ· զանձինս մեր [5] ԵԲԲ· մեզ Տէր զերկիրս, արասցուք ընդ քեզ [6] ԵԲԲ· իջոյց [7] ԵԲԲ·ՅԵՒԼ· զոր եաւթ մեզ երդնուել [8] ԵԲԲ· զլարն

թէ մասնանայ Տէր [1]*Աստուած ի ձեռս մեր զամենայն երկիրն, եւ զարնուիցեն ամենայն բնակիչք երկրին ի մէնջ։*

Գլ. Գ

1 Եւ կանխեաց Յեսու ընդ առաւօտն եւ չուեցին ի Սատիմայ եւ եկին մինչեւ ցՅորդանան, ինքն եւ ամենայն որդիքն Իսրայելի. եւ բանակեցան անդ յառաջ
2 քան զանցանելն։ Եւ եղեւ յետ երից աւուրց անցին զօրքն ընդ բանակն. Եւ
3 պատուիրեցին ժողովրդեանն եւ ասեն, Յորժամ տեսանիցէք զապառնակ ուխտին Տեառն Աստուծոյ ձերոյ, եւ զքահանայսն [1]մեր եւ" զի՛ ասցիան որ բարձեալ ունիցին զնա, եւ դուք խոպասջիք ի տեղւոյ ձերոյ եւ գնասջիք վնտո-
4 նորա. Բայց հեռասցի լինիցի ընդ ձեզ եւ ընդ [2]նոսա՝ արջառի կանգնոյ երկաց տագաթոյ. [1]զտեղի առնուցուք" եւ ոչ մերձենացիք ի նա, զի վիճակք զնաւապարհն ընդ որ երթայցիք. զի ոչ [3]էք երթեալք զանաւապարհ երեկին եւ ե-
5 կանիցի"։ Եւ ասէ Յեսու ցժողովուրդն, Սրբեցարուք առ վաղիւ, զի վաղիւ առ-
6 թասցէ ի ձեզ Տէր սքանչելիս։ Եւ խօսեցաւ Յեսու ընդ քահանայսն եւ ասէ, Առէք զապառնակ ուխտին [1]Տեառն, եւ գնացէք յառաջագոյն առաջի ժողովրդեանն. եւ բարձին քահանայքն զապառնակ ուխտին [1]Տեառն եւ երթային առաջի ժողովրդեանն։
7 Եւ ասէ Տէր ցՅեսու, Յաւուր յայսմիկ սկսցի արարից բարձրացուցանել զքեզ առաջի ամենայն որդւոցն Իսրայելի, զի ծանիցեն թէ որպէս էի ընդ Մովսէսի,
8 նոյնպէս եղէց եւ ընդ քեզ։ Եւ զոր պատուիրեա քահանայիցն որ բառնան զապառնակ ուխտին եւ առասցես, Յորժամ մտանիցէք յեզր ջրոյն Յորդանանու, կայցիք ի ներքս ի Յորդանան։
9 Եւ ասէ Յեսու ցորդիսն Իսրայելի, Մատերուք այսր եւ լուարուք զբանս
10 Տեառն Աստուծոյ ձերոյ։ Եւ ասէ Յեսու, Այնու գիտասջիք եթէ Տէր կենդանի է ի ձեզ, եւ ոտասկիզբ ոտասկեսցէ յերեսաց ձերոց զՔանանացին եւ զՔետացին եւ զԵւեացին եւ զՓերեզացին եւ զԳերգեսացին եւ զԱմովրհացին
11 եւ զՅեբուսացին. Ահա ապակի առաջ-

[1] 3ԵԲԲ. գալ-ով [2] ԵԲԲ. նա [3] ԵԲԲ. անցեք զճանապարհն յերկիւղ յեռանդէ

նակ ուխտին Տեառն ամենայն երկրի անցանէ առաջի ձեր ընդ Յորդանան։
12 Եւ արդ յառաջ կալարուք ի ձենջ արս երկուասան յորովայն Իսրայելի, այր մի
13 յերեքանչիւր ցեղէ. Եւ եղիցի իբրեւ միանգին սար քահանայիցն կրելոցս զապառնակ ուխտին Տեառն ամենայն երկրի ի ջուրն Յորդանանու, պակասեսցէ ջուրն որ իջանէ ի վերուստ, կացցէ իբրեւ գկարկառակոյս մի։
14 Եւ եղեւ իբրեւ չուեցաց ժողովուրդն ի խորանաց իւրեանց անցանել ընդ Յորդանան, եւ քահանայքն բարձին զապառնակ ուխտին [1]Տեառն առաջի [1]ամենայն Ժողովրդեանն։ Եւ իբրեւ մտանէին
15 [1]քահանայքն որ կրէին զապառնակ ուխտին ի Յորդանան, եւ սար քահանայիցն կրելոցս ապառնակին մխոցան ցեղր ջրոյն Յորդանանու, եւ Յորդանան լցեալ զայր գարնւոյ եւ գարխ [4]որպէս յաւուրս
16 հնձոց ցորենոյ", Եւ կացին ջուրքն որ իջանէին ի վերուստ՝ միաձոյլք, անջրպետեալք, հեռացեալք յոյժ յոյժ, յԱդամա մակս քաղաքէ որ է [5]մեան Կարթհաթալիսայ". եւ որ իջանէին՝ իջին ի ծովն [6]Արաբայոյ, ի ծովն Ալի, մինչեւ ի սպառ նուազելոյ. եւ Ժողովուրդն [7]կայր
17 յանապնման երիքովի։ Եւ կացին քահանայքն որ կրէին զապառնակ ուխտին Տեառն ի վերայ ցամաքի ի մէջ Յորդանանու [8]պատրաստութեամբ. եւ ամենայն որդիքն Իսրայելի անցին ընդ ցամաք, մինչեւ վախճանեալ ամենայն ժողովուրդն անցանել ընդ Յորդանան։

Գլ. Դ

1 Եւ իբրեւ վախճանեալ ամենայն ժողովուրդն անցանել ընդ Յորդանան, խօ-
2 սեալ Տէր ընդ Յեսուայ եւ ասէ, Առեալ [9]քեզ ի ժողովրդենէ այսր արս երկուասան, այր մի յերեքանչիւր ցեղէ,
3 Հրամայեա տալ նոցա եւ ասացես, Առէք դուք ձեզ այսր ի մէջոյ Յորդանանու յանասակնայ քահանայիցդ պատրաստականն քարինս երկուասան, եւ սարջիք ընդ ձեզ. եւ գիջիք ի մէջ բանակին
4 ձերոյ ուր բանակիցիք գայս գիշեր։ Եւ կոչեաց Յեսու զսա երկուասան [10]ի վաստակաւորսն որդւոցն" Իսրայելի, մի յեր-

[4] ԵԲԲ. զամենայն աւուրս հնձոց [5] ԵԲԲ. առ քեմ ի ներ Մաբթանայ [6] ԵԲԲ. դաչտայ [7] ԵԲԲ. անդ
[8] Ա–ի. Հատատաւթեամբ [9] ԵԲԲ. ձեզ [10] ԵԲԲ. զորս պատրաստեալ էր յորդւոցն

5 բաքանչիւր ցեղէ . Եւ ասէ ցնոսա Յե-
սու , [1]Մատերազ առաջի իմ յանդիման
Տեառն՝ ի մէջ Յորդանանու , եւ առեալ
բարձցին անտի իւրաքանչիւր ոք քար
մի ի վերայ ուսոց իւրոց ըստ թուոյ ցե-
6 ղիցն Իսրայելի . Զի լինիցին նոքա ձեզ
կալ ի նչանակ հանապազորդ . զի յորժամ
հարցանիցէ ցքեզ առ վաղիւ որդին քո
եւ ասիցէ , Ջինչ են քարիցդ այսոքիկ
7 ձեզ , Պատմեսցես դու որդւոյն քումմ եւ
ասիցես , Թէ Զի պակասեալ դեան Յոր-
դանան յերեսաց տապանակի ուխտին
Տեառն [2]առնեալն երկրի՝ մինչ անցանէր
ընդ Յորդանան , նուազեալ չուրն Յոր-
դանանու . եւ եղիցին ձեզ քարինքս այ-
սոքիկ ի յիշատակ ի մէջ որդւոցն Իսրա-
8 յելի մինչեւ ցյաւիտեան : Եւ արարին
որդիքն Իսրայելի որպէս պատուիրեաց
[3]Տէր Յեսուայ՝ . եւ առեալ երկոտասան
քարինս ի միջոյ Յորդանանու , որպէս
հրաման եւս Տէր Յեսուայ , [4]ի վախճանի
անցանելոյ՝ որդւոցն Իսրայելի , եւ տա-
րան զնոսա ընդ իւրեանս ի բանակն եւ
9 եդին զնոսա անդ : Եւ կանգնեաց Յեսու
այլ եւս երկոտասան քարինս անդէն ի
Յորդանան , ի տեղւոջ ուր կային ոտք
քահանայիցն որ կրէին զտապանակ ուխ-
տին [2]Տեառն . եւ են անդ մինչեւ ցայսօր
10 ժամանակի : Եւ կային անդ քահանայքն
որ բարձեալ ունէին զտապանակ ուխ-
տին [2]Տեառն ի մէջ Յորդանանու՝ մինչեւ
վախճանեցաւ Յեսու զամենայն զոր պա-
տուիրեաց Տէր Յեսուայ պատմել ժո-
ղովրդեանն ըստ ամենայնի զոր պատուի-
րեաց Մովսէս Յեսուայ . եւ փութացաւ
11 ժողովուրդն եւ անց : Եւ եղեւ իբրեւ վախ-
ճանեաց ամենայն ժողովուրդն անցանել ,
անց եւ տապանակ ուխտին Տեառն , եւ
[5]երկոտասան քարինքն առաջի նոցա՝՝ ։
12 Անցին եւ որդիքն Ռուբենի եւ որդիքն
Գադայ եւ կէս ցեղին Մանասէի կազմեալք
առաջի որդւոցն Իսրայելի , որպէս պա-
13 տուիրեաց նոցա Մովսէս . Զորք բեւրք
վառեալք ի կռիւ , անցին առաջի Տեառն
ի պատերազմ [6]ընդ երիքով քաղաքի՝՝ ։
14 Յաւուր յայնմիկ աճեցոյց Տէր զՅեսու
առաջի ամենայն ազգին Իսրայելի , եւ
երկնչէին ի նմանէ որպէս երկնչէին ի
Մովսիսէ որչափ ժամանակս եւ կեցաց ։
15 Եւ խօսեցաւ Տէր ընդ Յեսուայ եւ ասէ ,
16 Հրամայ առ քահանայիցդ որ բարձեալ
ունին զտապանակ ուխտին վկայութեան՝
17 ելանել ի Յորդանանէ ։ Եւ հրամայ եւս
Յեսու քահանայիցն եւ ասէ , Ելէք ի
18 Յորդանանէ ։ Եւ եղեւ իբրեւ ելին քա-
հանայքն որ բարձեալ ունէին զտապա-
նակ ուխտին Տեառն ի միջոյ Յորդանա-
նու , եւ եդին զոտսն քահանայքն ի ցա-
մուրկ , զիմեալ չուրն Յորդանանու ի
տեղի իւր , եւ գնացեր որպէս յերէկին եւ
յեռանդ ընդ ամենայն յատակս նորա ։
19 Եւ ել ժողովուրդն ի Յորդանանէ ի
տասներորդում աւուր ամսոյն առաջնոյ .
եւ բանակեցան [2]որդիքն Իսրայելի՝ ի
Գազգազա , յարեւելից կողմանէ Երի-
20 քովի ։ Եւ զերկոտասան քարինսն զոր
առին ի Յորդանանէ՝ կանգնեաց Յեսու
21 ի Գազգազա . Եւ ասէ ցորդիսն Իսրա-
յելի , Յորժամ հարցանիցեն որդիքն ձեր
22 առ վաղիւ եւ ասացեն , Ջինչ են քա-
րինքս այսոքիկ , Պատմեսջիք որդւոց ձե-
րոց թէ՝ Ցամաքաւ անց Իսրայէլ ընդ
23 Յորդանան , ի ցամաքեցուցանել Տեառն
Աստուծոյ [7]մերոյ զչուրսն Յորդանանու
յերեսաց [8]նոցա մինչեւ անցին՝՝ , որպէս
արար Տէր Աստուած [9]մեր ընդ ծովն
կարմիր , զոր ցամաքեցոյց [2]Տէր Աս-
տուած մեր՝՝ առաջի մեր մինչեւ անց-
24 ցաք . Զի ծանիցեն ամենայն ազգք երկ-
րի թէ [10]զօրութիւն Տեառն զօրաւոր է ,
եւ զի դուք պաշտիցէք զՏէր Աստուած
ձեր զամենայն ժամանակս ։

Գլ. ե

1 Եւ եղեւ իբրեւ լուան ամենայն թա-
գաւորք Ամովրհացւոց , որ էին յայնկոյս
Յորդանանու [11]առ ծովիզերբն , եւ թա-
գաւորքն Փիւնիկեցւոց՝՝ որ առ ծովեզ-
երբն , եթէ ցամաքեցոյց Տէր [2]Աստուած
զՅորդանան գետ առաջի որդւոցն Իսրա-
յելի յանցանելն նոցա , հաչեցան սիրտք
նոցա [2]եւ զարհուրեցան՝՝ , եւ ոչ մնայր ի
նոսա [12]իմաստութիւն եւ ոչ մի՝՝ յերե-
սաց որդւոցն Իսրայելի ։
2 Ընդ այնու ժամանակաւ ասէ Տէր
ցՅեսու , Արա դու քեզ սուր ի գայլա-

---

[1] ԵԲԲ. Անցէք առաջի տապանակին Տեառն Աս-
տուծոյ ձերոյ [2]ՅԵԲԲ. գ-ի-ե [3]ԵԲԲ. Յեսու
[4] ԵԲԲ.ըստ թուոյ ցեղից ա-
ռաջի ժողովրդեանն [5]ԵԲԲ. քահանայքն ա-
[6]ԵԲԲ. ընդ դաշտն Ե-
րիքովի

[7] ԵԲԲ. ձերոյ [8]ԵԲԲ. ձերոց մինչեւ անցէք [9]ԵԲԲ.
ձեր [10]ԵԲԲ. ձեռն [11]ԵԲԲ. յարեւմտից , եւ
թագաւորքն Քանանացւոց [12]ԵԲԲ. ոգի

խազ վիմէ. եւ նսեմալ Քրիստեանցես
3 զորդիան Իսրայելի կրկնակի ։ Եւ արար
իւր Յեսու սուրս քարիւղենս դայլախա-
զեայս, եւ Քրիստեալ զորդիան Իսրա-
յելի ի տեղւոջն որ կոչէր Բրուր անդիրիա-
տից ։ [1]Եւ զոր օրինակ յապաւեալ Յե-
սու զորդիան Իսրայելի որ էին ի ճանա-
պարհի անդ, որ բնաւ չէին Քրիս-
տեալք յելելոցն յԵգիպտոսէ, զամենե-
4 սեան Քրիստեալ Յեսու ։ Եւ այս ժո-
ղովուրդ է զոր Քրիստեալ Յեսու. ա-
մենայն ժողովրդեանն ելելոց յԵգիպտո-
սէ զարու մանուկ. քանզի ամենայն
արք՝ պատերազմողք մեռան յանապա-
տին անդէն ի ճանապարհին յելանելն
5 իւրեանց յերկրէն Եգիպտացւոց ։ Զի
Քրիստեալք էին ամենայն ժողովուրդն
որ ելին, եւ ամենայն ժողովուրդն որ
ծնան յանապատին ի ճանապարհին ելա-
նելոյ նոցա յերկրէն [2]Եգիպտացւոց.
6 Քանզի զքառասուն եւ զերկուս ամս
չրջեցաւ Իսրայէլ յանապատին Արզա-
րեայ, վասն որոյ անքրիստ էին բա-
զումք ի պատերազմողացն ելելոց յերկ-
րէն Եգիպտացւոց՝ որք անհնազանդե-
ցան պատուիրանացն Աստուծոյ. որոց
եւ սահմանեալ Տէր չտեսանել զերկիրն
զոր [3]երդուաւ հարցն նոցա տալ [4]նոցա.
7 զերկիր՝ որ բղխէ զկաթն եւ զմեղր ։ Եւ
փոխանակ նոցա կացուցեալ զորդիս նոցա՝
զոր Քրիստեաց Յեսու, քանզի անքրի-
փատ էին, վասն լինելոյ նոցա անքրի-
8 փատս ի ճանապարհին ։ Եւ իբրեւ Քրիս-
տեցաւ ամենայն ազգն, հանդարտու-
թիւն կալեալ նոտան անդէն ի բանակին
9 մինչեւ ողջացան ։ Եւ ասէ Տէր ցՅե-
սու, Ցաւուր յայսմիկ բարձի զնախա-
տինս Եգիպտացւոց ի ձէնջ. եւ կոչեաց
զանուն տեղւոյն այնորիկ Գաղգազա
10 մինչեւ ցայսօր. Եւ անդ բանակեցան
որդիքն Իսրայելի. եւ արարին [5]որդիքն
Իսրայելի՝ զզատիկն ի չորեքտասաներ-
որդումն աւուր ամսոյն յերեկոյեայ, [6]յա-
11 րեւելից երիքովի ի դաշտի անդ՝ ։ Եւ
կերան ի ցորենոյ երկրին զայզոյ զաւա-
կին բազարչ, եւ նորի՝ յաւուր յայնմիկ ։
12 Եւ պակասեաց մանանայն[7] յետ ու-
տելոյ նոցա ի ցորենոյ երկրին, եւ ոչ
եւս գտանէր որդւոցն Իսրայելի մանա-
նայ. եւ [8]ժողովեցին զգաւուզ երկրին
[9]Փիւնիկեցւոց ի տարւոջն յայնմիկ ։
13 Եւ եղեւ մինչ էր Յեսու յերիքով,
ամբարձեալ զաչս իւր եւես զի կայր ա-
ռաջի նորա այր, եւ սուսեր մերկ ի ձե-
ռին նորա. եւ մատուցեալ Յեսուայ ասէ
ցնա, Մե՞ր ես դու ի թշնամեաց մերոց ։
14 Եւ նա ասէ ցնա, [10]Ես զօրավար եմ զո-
15 րու Տեառն, եւ այժմ եկի ։ Եւ անկաւ
Յեսու ի վերայ երեսաց իւրոց եւ երկիր
եսպագ եւ ասէ ցնա, Տէր, զինչ հրա-
16 ման ասացես ծառայի քումմ ։ Եւ ասէ զօ-
րավարն Տեառն ցՅեսու, Լոյծ զկօշիկս
քո յոտից քոց, զի տեղիդ յորում կաս՝
սուրբ է ։ Եւ արար այնպէս Յեսու ։

Գլ. Զ

1 Եւ երիքով փակեալ եւ ամրացեալ էր
յերեսաց որդւոցն Իսրայելի, եւ ոչ ոք
ելանէր ի նմանէ, եւ ոչ ոք մտանէր ։
2 Եւ ասէ Տէր ցՅեսու, ահա ես տամ ի
ձեռս քո զերիքով եւ զթագաւորն որ
ի նմա, եւ զզօրաւորս զօրութեամբ ։
3 Բայց դու ած պատեա զնովաւ զամե-
նայն մարտիկս [11]չուրջանակի յօրելի-
նաւն, ի լսել ձեզ զձայն եղջեր փողոյ. եւ
եղիցի իբրեւ հարկանիցէք զփողն պա-
տերազմողք՝ չուրջ զքաղաքաւն մի
անգամ. այսպէս առնիցէք զվեց օր ։
4 Եւ եւթն քահանայ առցեն զեւթն փողն
եղջերեայս յօրելեան առաջի տապա-
նակին. եւ յաւուրն եւթներորդի պա-
տեսջիք զքաղաքն եւթն անգամ. եւ
քահանայքն հարցեն զփողն եղջերեայս ։
5 Եւ [12]աղաղակեսցեն առնասարակ ամե-
նայն ժողովուրդն. եւ յաղաղակին նո-
ցա՝ կործանեսցին ինքնին պարիսպք
քաղաքին ի ներքոյ նոցա. եւ մտցէ ա-
մենայն ժողովուրդն դիմեալ իւրաքան-
չիւր հանդիպ երեսաց իւրոց ի քաղաքն ։
6 Եւ [13]Նաւեա Յեսու որդի Նաւեայ առ

---

[1] Եբէր. (4) Եւ այս է բանն վասն որոյ Քրիստեաց Յեսու. ամենայն արուք Հաւրէն ժողովրդեանն ելելոյ յԵգիպտոսէ, արք [2]Եբէր. Եգիպտացւոց՝ ոչ Քրիստեցան. (6) Քանզի դքառասուն ամ չրջեցան որդիքն Իսրայելի յանապատին, մինչեւ չեւ սպառել Հաւմբէն ազգին արանց պատերազմողաց ելելոց յԵգիպտոսէ [3]Եբէր. երդուաւ Տէր [4]Եբէր. մեզ [5]ՅԵբէր. դ-ի-ե [6]Եբէր. ի դաշտան Երիքովի

[7] Եբէ-յեբէն յ-ե-ե-. ի վերին [8]Եբէր. կերան [9]Եբէր. Քանանացւոց [10]Եբէր.Ոչ, զի ես [11]Եբէր. չուրջանակի, պատեսջիք [12]Եբէր. եղիցի յերկարել նոցա Հարկանել զեղջերն յօրելեան, ի լսել ձեր զձայն փողոյն՝ աղաղակեսցեն առ Հասարակ ամենայն ժողովուրդն աղաղակ մեծ, և [13]Եբէր. գոչեաց

քահանայն եւ ասէ ցնոսա, Առէք զամրոցն ի ձեռն քանդակ ուխտին. եւ եւիմն քահանայք առցեն եւիմն փող եղջերուական
7 առաջի տապանակին Տեառն։ Եւ իսկոյն [1]ընդ նոսա եւ ասէ, Պատերազմ առաք ժողովրդեանն անցանել պատակ" զքաղաքն. եւ մարտիկքն երթիցին [2]վառեալք առաջի տապանակին Տեառն։
8 Եւ եղեւ իբրեւ պատահ իրեաց ժողովրդեանն եւ եւիմնեցիքն քահանայքն որ ածէին եւիմն փող [3]ոտիւքն իւրեանց, [4]անցանէին դիմացն առաջի Տեառն՝ եւ [5]ազդեսցին ուժգին". եւ առաջնակ ուխտն Տեառն [6]երթիցէ գնա նոցա։
9 Եւ մարտիկքն [7]երթիցեն առաջի, եւ քահանայքն եւ որ հարկանիցեն զփողսն եղջերեայս՝ վերջապահք զհին առաքնակին Տեառն, հարկանելով զփողսն
10 եղջերեայս երթիցեն"։ Եւ ժողովրդեանն պատուէր եառ Յեսու եւ ասէ, Մի՛ աղաղակիցէք, եւ մի՛ ոք լսիցէ զբարբառ ձեր, եւ մի՛ ելանիցէ բան ի բերանոց ձերմէ, մինչեւ յօրն յորում [8]ինձն ազդ արասցէ" ազաղակելոյ, եւ ապա
11 աղաղակեսջիք։ Եւ չարչ եկեալ առաջնակին ուխտին Տեառն զքաղաքառն [9]գնաց անդրէն ի բանակն եւ անդ [10]ապաւ։
12 Եւ [2]յառաւօտն երկրորդի" յարեաւ Յեսու զնոյն առաւօտեան. եւ բարձին քահանայքն զառաջնակին Տեառն։ Եւ եւիմն
13 քահանայքն ածին եւիմն փող [11]ոտիւքն, եւ երթային առաջի Տեառն. եւ քահանայքն հարին զփողսն, եւ այլ եւս ամբոխն ամենայն, եւ զնացին զարձեալ անդրէն ի բանակն. եւ ապա մատնէին մարտիկքն, եւ այլ եւս ամբոխն" զհին առաջնակին ուխտին Տեառն. եւ երթային եւ հարկանէին զփողսն եղ-
14 ջերեայս։ Եւ պատերազմն զքաղաքն յաւուրն երկրորդի մի անգամ [2]ի մօտոյ, եւ զնոցին զարձեալ անդրէն ի բանակն.
15 այնպէս ապարին զիւր օր։ Եւ եղեւ յաւուրն եւիմներորդի, յարեան ընդ լոյս առաւօտեան եւ պատերազմն զքաղաքն ըստ
16 նմին օրինակի եւ զնոյն անգամ. [12]Եւ եղեւ" յեւիմներորդում նուագի պատերազն՝ հարին քահանայքն զփողսն. եւ ասէ Յեսու ցղովիան Իսրայէլի, Ազդ ազդաքարկեցէք, քանզի մատնեաց Տէր ի ձեռս
17 մեր զքաղաքս։ Եւ եղիցի քաղաքն նզովեալ, ինքն եւ ամենայն որ ինչ ի նմա իցէ ի Տեառնէ [2]գոյութենանց. բայց զՌաքաբ պոռնիկ ապրեցուսջիք, զնա եւ զամենայն որ ինչ իցէ ի տան նորա, զի թաքոյց զերեչտական զոր արձակե-
18 ցաք։ Այլ զոք զդգոյ լինիջիք ի նզովիցն. զուցէ ցանկայնալք առնուցուք ինչ զոք ի նզովիչ անտի, եւ առնիցէք զբանակ զրկոցդ Իսրայէլի ի նզովս եւ
19 [13]գնկիցէք զմեզ"։ Ամենայն ազի եւ արձամբ եւ պղինձ եւ երկաթ եղիցի սուրբ Տեառն. ի գանձ Տեառն մտցէ։
20 Եւ ազաղակեաց ժողովուրդն, եւ հարին քահանայքն զփողսն. իբրեւ լուաւ ժողովուրդն զձայն փողոյն՝ ազաղակեաց ամենայն ժողովուրդն առհասարակ մեծ եւ ուժգին ազաղակաւ, եւ անկաւ պարիսպն չափ իւրմանակի. եւ ել ամենայն ժողովուրդն ի քաղաքն իւրաքանչիւր
21 հանդէպ իւր, եւ առին զքաղաքն. եւ նզովեցին զնա եւ զոր ինչ էր ի քաղաքին յառնէ մինչեւ ցհին, եւ ցերիտասարդ մինչեւ ցծեր, եւ ցարջառ մինչեւ ցոչխար եւ ցէշ, սրիւն ի բերան սրոյ։
22 Եւ ցկերիսա երիտասարդսն որ լրտեսեցին զերկիրն՝ ասէ Յեսու, Մտէք ի տունն կնոջն պոռնկի, եւ հանէք զնա անտի, եւ զամենայն ինչ որ նորա իցէ,
23 որպէս երդուաք նմա։ Եւ մտին երկու երիտասարդքն որոց լրտեսեալ էր զքաղաքն՝ [2]ի տունն կնոջն," եւ հանին զՌաքաբ [2]պոռնիկ, եւ զհայր նորա եւ զմայր նորա եւ զեղբարս նորա, եւ զամենայն որ ինչ էր նորա, եւ զամենայն ազգատոհմն նորա, եւ կացուցին զնա արտաքոյ
24 բանակին Իսրայէլի։ Եւ քաղաքն այրեցին հրով եւ ամենայն ինչ որ ի նմա էր, բայց յոսկւոյ եւ յարծաթոյ եւ ի պղնձոյ եւ յերկաթոյ զոր եառուն ի գանձ
25 Տեառն մտցեն։ Եւ կեցոյց պոռնիկ եւ զտունն հօրն եւ զամենայնն ինչ որ տուրս էր՝ տպրեցոյց Յեսու. եւ

[1] ՆԵԲԳ. առ. ժողովուրդն. Այլեւ, պատեցէք [2] ՅԵԲԳ. պակաս [3] ՅԵԲԳ. յորելեանս, կամ, ազդեցուխեան [4] ՅԵԲԳ. անդին [5] ՅԵԲԳ. Հարին զփողսն [6] ՅԵԲԳ. երթայր [7] ՅԵԲԳ. երեսին առաջի քահանայիցն որ հարկանէին զփողսն, եւ վերջապահքն երթային զհին առաքնակին. երեսին եւ հարկանէին զփողսն [8] ՅԵԲԳ. ազդ արարից ձեզ [9] ՅԵԲԳ. ի անդամ, գնացին [10] ՅԵԲԳ. ագան [11] ՅԵԲԳ. յոտեւանս առաջի առաքնակի Տեառն. երեսին եւ հարկանէին զփողսն. եւ մատրիկքն երեսին առաջի նոցա, եւ վերջապահքն երեսին

[12] ՅԵԲԳ. բայց յաւուրն յորմիկ պատեցին զքաղաքն եւեթն անդամ (16) Եւ եղեւ [13] ՅԵԲԳ. խառնիցէք զնա

լնակեցար ի մէջ Իսրայէլի մինչեւ յայսօր ժամանակի. վասն դի խոստացար զրաւոնն զոր աւաքեաց Յեսու [1]յաւուրս յաղթութեան" լրացաւ զերկրով։

26 Եւ [2]նզովեաց Յեսու յաւուրն յայնմիկ [1]զերկրով եւ ասէ, Անիծեալ լիցի մարդն առաջի Տեառն, որ կանգնեսցէ եւ չինեսցէ զքաղաքն զԵրիքով. անդրանկաւ իւրով [3]դնիցէ զհիմունս նորա, եւ կրտսեր իւրով կանգնեսցէ զդրունս պարսպի նորա։ [4]Եւ այնպէս արար Աղան Բեթհելացի. Աբիրոնաւ անդրանկաւ իւրով եդ զհիմունս նորա, եւ Ջերծելով կրտսերով իւրով կանգնեաց զդրունս նորա։"

27 Եւ էր Տէր ընդ Յեսուայ, եւ էր առնուն նորա ընդ ամենայն երկիր։

Գլ. Ը

1 Եւ յանգեան որդիքն Իսրայէլի յանցանս, եւ զողացան ի նզովից անաթ. եւ առ Աքար որդի Քարմեայ, որդւոյ Զամբրեայ, որդւոյ Զարայի ի ցեղէ Յուդայ ի նզովից անաթ, եւ բարկացաւ սրտմտութեամբ Տէր որդւոցն Իսրայէլի։

2 Եւ աւաքեաց Յեսու ասա ցերիքովէ ի Գայի սպ է [5]յանդիման Բեթհէայ, եւ ասէ ցնոսա, [6]Երթեսցէք զԳայի". եւ 3 ելին արքն եւ լրացուցին զԳայի։ Եւ զարձան առ Յեսու եւ ասեն, Մի՛ ելցէ ամենայն ժողովուրդս, այլ իբրեւ երկու հազարք կամ երեք հազարք արանց ելցեն եւ [7]պատերազմեսցին զքաղաքն". մի՛ առնիր անդ զամենայն ժողովուրդն, 4 զի սակաւք են։ Եւ ելին անդր ի ժողովրդենէն իբրեւ երեք հազարք, եւ 5 փախան յերեսաց արանցն Գայեայ. Եւ կոտորեցին ի նոցանէ արք Գայեայ ասա երեսուն եւ վեց, եւ հալածեցին զնոսա ի զրանէն մինչեւ [8]խորտակեցին զնոսա", եւ վիրաւորեցին ի զառիվայրին. եւ պակուսեալ ժողովրդեանն եւ եղեն իբրեւ զՅուբ։

6 Եւ պատառեաց Յեսու զհանդերձս իւր, եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր առաջի պատանեկին Տեառն մինչեւ ցերեկոյ, ինքն եւ ծերքն Իսրայէլի, եւ 7 արկին հող զգլխովք իւրեանց։ Եւ ասէ Յեսու, Ագաչեմ զքեզ, Տէր, Տէր, [9]ընդէ՞ր իսկ բնաւ [8]անցանելով անցուցեր Յորդանան, մատնել [9]զմեզ Ամովրհացւոցն եւ" կորուսանել զմեզ. լաւ էր մեզ անկեալ զեւսիգեալ եւ բնակեալ էաք ասա 8 եկեալք Յորդանանու։ Յիա, Տէր, եւ արդ զինչ ասասցէ, որովհետեւ կոտացոյց Իսրայէլ զպատերազմ իւր առաջի 9 իշնամեաց իւրոց, եւ լսեալ Քանանացւոցն եւ ամենայն բնակչաց երկրին՝ պատեացեն զմեզ եւ սատակեացեն[10] յերկրէ, եւ զի՞նչ արասցես զանուն քո մեծ։

10 Եւ ասէ Տէր ցՅեսու, Ասա կաց. զի՞ անկեալ կաս ի վերայ երեսաց քոց։ 11 Մեղաւ Ժողովուրդն, եւ անց զսահմանս իմով զոր ասհանգի նոցա. եւ գողացան եւ ասին ի նզովիցն, առին եւ արկին յամանս իւրեանց. եւ ոչ եւս կարէցին որդիքն Իսրայէլի կալ առաջի իշնամեաց իւրեանց. այլ գարձուցին զպատերազմս առաջի իշնամեաց իւրեանց, զի եղեն ինքեանք նզովս. եւ ոչ եւս յաւելից լինիմ ընդ ձեզ, եթէ ոչ բառնայցէք զնզովսդ 13 զայդ ի միջոց ձերմէ։ Արի, սրբեա զժողովուրդդ, եւ [11]ասասցես արդ առ վաղիւ" այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի, նզովք են ի ձեզ, Իսրայէլ. ոչ կարէցէք կալ առաջի իշնամեաց ձերոց, մինչեւ բառնայցէք զնզովսն ի ձէնջ։ Եւ ժողովեսջիք ամենեքեան ընդ առաւոտան ըստ ցեղից ձերոց. եւ եղիցի ցեղն զոր յցուցէ Տէր՝ մատուսջիք ըստ առնմէ, եւ առնն զոր յանդիմանեսցէ Տէր՝ մատուսջիք ըստ առանց, եւ առն զոր յանդիմանեսցէ Տէր՝ մատուսջիք 15 ջիք ըստ արանց. Եւ որ յանդիմանեսցի ի նզովսն, արիւնսի ինքն հրով եւ ամենայն առն նմա, եւ ամենայն ինչ որ նորա իցէ. զի անց զսահմանն Տեառն, եւ արար անօրէնութիւն ի մէջ Իսրայէլի։

16 Եւ կանխեաց Յեսու ընդ առաւոտն, եւ մատոյց զժողովուրդն ըստ ցեղից իւրեանց, եւ յանդիմանեցաւ ցեղն Յուդայ։ 17 գայի. Եւ մատուցեալ ցեղն Յուդայի ըստ առնմէ, եւ յանդիմանեցաւ առնն Զարայի. եւ մատուցեալ առնն Զարայի ըստ արանց, եւ յանդիմանեցաւ Զաբդիի. 18 Եւ մատուցեալ առն նորա ըստ արանց, եւ յանդիմանեցաւ Աքար որդի Քարմեայ, որդւոյ Զաբդիեայ, որդւոյ Զարայի, ի 19 ցեղէն Յուդայ։ Եւ ասէ Յեսու ցԱքար, Որդեակ իմ, առ փառս տուր օրհնութիւն Տեառն

[1] ՅԵԲԲ. դ-ից-ե [2] ՅԵԲԲ. Երդուաւ [3] ՅԵԲԲ. դիցէ
[4] ՅԵԲԲ. մերձ ի Բեթհաւան յարեւելից [5] ՅԵԲԲ. ելեր եւ լրտեսեցէք զերկիրն [6] ՅԵԲԲ. Հարցէն զԳայի
[7] ՅԵԲԲ. ի Աբգարիմ [8] ՅԵԲԲ. անցուցանելով անցուցեր
[9] ՅԵԲԲ. զմեզ ի ձեռս Ամովրհացւոց [10] ՅԵԲԲ. չեջէ-ջ-ել-ջ-, զանուն մեր [11] ՅԵԲԲ. ասասցես, Արբեցարուք առ վաղիւ, զի

Աստուծոյ Իսրայելի, եւ առաք խոստովանութիւն եւ պատմեաց ինձ զինչ զործեցեր, եւ մի՛ թաքուցաներ յինէն։
20 Պատասխանի ետ Աքար եւ ասէ ցՅեսու, Արդարեւ ես մեղայ առաջի Տեառն Աստուծոյ Իսրայելի. զայս ինչ եւ զայս
21 գործեցի. Տեսի յաւարին ամրան մի նկարէն գեղեցիկ, եւ երկերիւր երկդրամեան արծաթոյ, եւ լեզու մի ոսկի որոյ կիսուն երկդրամեան էր ձոյլ նորա, եւ յանկացեալ նոցա առի. եւ ահաւասիկ թաքուցեալ կայ ընդ հողով ի վրանի իմում, եւ արծաթն թաքուցեալ կայ
22 ի ներքոյ նոցա։ Եւ առաքեաց Յեսու հրեշտակս արս, եւ ընթացան ի վրանն [1]ի բանակն. եւ անդ թաքուցեալ կայր ի վրանի նորա, եւ արծաթն ի ներքոյ
23 նոցա. Հանին զայն ի վրանէ անտի եւ բերին առ Յեսու եւ առ [2]ծերսն Իսրայելի, եւ եղին առաջի Տեառն։
24 Եւ առ Յեսու զԱքար գորդի Զարայի, եւ [3]հնձան զնա ի ձորն Աքորայ", եւ զուսաներս նորա եւ զդստերս նորա եւ զարջառ նորա եւ զէշ նորա եւ զամենայն զոչխարս նորա, եւ զվրանս նորա եւ զամենայն ինչս նորա, եւ ամենայն Իսրայէլ ընդ նմա, եւ ած զնոսա յնմանկի
25 Աքորայ։ Եւ ասէ Յեսու, Ընդէ՞ր [4]սատակեցեր զմեզ. սատակեսցէ՞ զքեզ Տէր բարձրեալ զաւուրս յաւիտենից. եւ քարկոծեցին զնա ամենայն Իսրայէլ քարամբք, եւ այրեցին զնոսա հրով. եւ քարկոծեցին զնոսա քարամբք։
26 Եւ կատեցին ի վերայ նոցա կարկառ մեծ քարանց մինչեւ ցայսօր։ Եւ դադարեաց Տէր ի սրտմտութենէ բարկութեան իւրոյ. վասն այնորիկ անուանեցաւ զնա Եմակ Աքորայ մինչեւ ցայսօր։

ԳԼ. Ը

1 Եւ ասէ Տէր ցՅեսու, Մի՛ երկնչիր եւ մի՛ զանգիտիցես. ա՛ռ դու ընդ քեզ զամենայն արս պատերազմողս, եւ յարուցեալ ելցես ի Գայի. ահա ես տամ ի ձեռս քո զթագաւորն Գայեայ եւ զժողովուրդ նորա, եւ զքաղաք նորա եւ զերկիր նորա. Եւ արասցես ընդ Գայի եւ ընդ թագաւորն նորա, զոր օրինակ արարեր ընդ Երիքով եւ ընդ թագաւորն
2 նորա, եւ զաւար նորա եւ զանասունս նորա ածցես յաւարի։ Եւ կացուսցես քեզ դարանամուտս քաղաքին զկին նորա։
3 Եւ յարուցաւ Յեսու եւ ամենայն ժողովուրդն պատերազմող ելանել ի Գայի. եւ ընտրեաց Յեսու երեսուն հազար արանց զօրաւորս զօրութեամբ, եւ առաքեաց զնոսա զգայդ. Եւ պատուիրեաց նոցա եւ ասէ, Տեսէք, դի դուք դարանամուտս լինիցիք յետուստ քաղաքին. եւ մի՛ կարի հեռի լինիջիք ի քաղաքէն, եւ կացիջիք պատրաստք ամենեքին. Եւ ես եւ ամենայն ժողովուրդն որ ընդ իս՝ մօտեսցուք ի քաղաքն. եւ եղիցի յորժամ ելանիցեն բնակիչքն Գայեայ ընդդէմ մեր իբրեւ զառաջինն,
6 փախիցուք յերեսաց նոցա. Եւ իբրեւ նոքա զկին մեր, մեկնեսցուք զնոսա ի քաղաքէ անտի, [5]եւ ասիցեն թէ Փախեան յերեսաց մերոց իբրեւ զառաջինն. եւ իբրեւ փախիցուք յերեսաց նոցա,
7 Դուք յարիջիք ի զարանէ անտի եւ [6]մայիք ի քաղաքն եւ հարջիք" զքաղաքն. եւ ասացէ զնոսա Տէր Աստուած
8 Իսրայելի ի ձեռս մեր"։ Եւ եղիցի յորժամ առնուցուք զքաղաքն, այրեսջիք զնա հրով. ըստ [8]այսմ օրինակի" առնիջիք,
9 ջիր, ահա պատուիրեցի ձեզ։ Եւ առաքեաց զնոսա Յեսու, եւ գնացին ի դարանն, եւ մահն զօղեցան ի մէջ Բեթէլայ եւ ի մէջ [9]Դանայ ի ծովակողմանէն Գայեայ. եւ ազատ Յեսու զայն գիշեր ի մէջ ժողովրդեանն։
10 Եւ կանխեաց Յեսու ընդ առաւօտն սպար հանդէս ժողովրդեանն. եւ ել ինքն եւ ծերքն Իսրայելի առաջի ժո-
11 ղովրդեան ի վերայ Գայեայ։ Եւ ամենայն զօր պատերազմող [10]ելին ընդ նոսա, եւ" զնացին եւ եկին հանդէպ քաղաքին [11]յարեւելից կողմանէ, եւ դադարեցուք քաղաքին ի ծովակոյս կողմանէ", եւ բանակեցան ի հիւսիսոյ Գայեայ, եւ ձոր ընդ մէջ նոցա եւ
12 Գայեայ։ Եւ սա հինգ հազար արանց եւ եդեալ զնոսա ի զարան ընդ [12]Բեթէլայ
13 եւ ընդ ծովն Գայեայ"։ Եւ արկ [12]զժողովուրդն եւ" զամենայն բանակն ի հիւս-

[1] ՅԵբբ. գ-ի-ե [2] ՅԵբբ. ամենայն որդիքն [3] ՅԵբբ. զարձաթն եւ զամղանն, եւ զլեզուն ոսկի [4] ՅԵբբ. խռովեցեր զմեզ. խռովեսցէ [5] ՅԵբբ. զի [6] ՅԵբբ. կայջիք [7] ՅԵբբ. ձեր ի ձեռս ձեր [8] ՅԵբբ. բանի Տեառն [9] ՅԵբբ. Գայեայ [10] ՅԵբբ. որ ընդ նմա [11] ՅԵբբ. Բեթէլ եւ ընդ Գայի ի ծովակոյս կողմանէ քաղաքին [12] ՅԵբբ. ժողովրդն

սխոյ քաղաքին, եւ վերջ նոցա ի ծա-
վակոզմն քաղաքին. եւ անդ Յեսու
զդիւչերն զայն ընդ մէջ ձորոյն։
14 Եւ եղեւ իբրեւ եահս թագաւորն
Գայեայ, [1]փութացաւ կանխեալ եւ ել
ընդդէմ նոցա. եւ ասէ քաղաքին ե-
թայն հանդէպ նոցա՝ ի պատերազմ,
ինքն եւ ամենայն ժողովուրդ իւր ի
ժամանակին յանգիման [2]Արաբայ. եւ
ինքն ոչ գիտէր եթէ դարան դոյծեալ
15 էր զնմա յետս քաղաքին։ [3]Իբրեւ
եահս Յեսու զարձաւ անդրէն ընդ
նոսա, եւ փախեան ընդ ճանապարհ ա-
16 նապատին։ Եւ [4]ամենայն ամենայն ժո-
ղովուրդ երկրին՝ երթալ զհետ նոցա.
եւ պնդեցան երթալ զկնի [5]որդւոցն Իս-
րայելի. եւ նոքա՝ մնկնեցան ի քաղա-
17 քէ անտի։ Եւ ոչ մնաց ի Գայի եւ ի Բե-
թէլ՝ որ ոչ պնդեցաւ զհետ Իսրայելի.
եւ թողին զքաղաքն ի բաց, եւ յար-
ձակեցան զհետ Իսրայելի։
18 Եւ ասէ Տէր ցՅեսու, Զգեա զձեռն քո
զայխառնազդ որ ի ձեռին քումի վերայ
քաղաքին, զի ի ձեռս քո մատնեցի զնա.
[6]եւ զարանակալքն ելցեն վազվազակի ի
տեղւոյէ իւրեանց։ Եւ ձգեաց Յեսու զգա-
յխառնն [7]եւ զձեռս իւր՝ ի վերայ քաղաքին.
19 եւ զարանակալքն յարեան վազվազակի ի
տեղւոյէ իւրեանց եւ ելին իբրեւ ձգեաց
զձեռն, եւ մտին ի քաղաքն, եւ առին
զնա, եւ փութացեալ այրեցին զքաղաքն
20 հրով։ Եւ հայեցեալ ընակչացն Գայեայ
ի թիկունս իւրեանց, տեսանէին զի ե-
լանէր ծուխ քաղաքին մինչեւ յերկինս.
եւ ոչ եւս ուրեք զոյր նոցա փախուստ այսր
կամ անդր, եւ ժողովուրդն որ թաքուս-
եալ էր յանապատին՝ յարեան ի վերայ
21 հետամտացն։ Եւ Յեսու եւ ամենայն
ժողովուրդն իբրեւ տեսին թէ առին զա-
րանակալքն զքաղաքն, եւ զի ելանէր
ծուխ քաղաքին մինչեւ յերկինս, դար-
ձան անդրէն ընդ կրունկն, եւ հարին
22 զարան Գայեայ։ Եւ նոքա ելին ի քա-
ղաքէ անտի ընդ առաջ նոցա. եւ եղեն
ի մէջ [8]բանակին. նոքա անտի՝ եւ սո-
քա աստի. եւ հարին զնոսա մինչեւ չմնաց

[1] ԵԲէ. փութացան եւ կանխեցին, եւ ելին աբք քաղաքին ընդդէմ Իսրայելի [2] Այէնդ, դաշտին [3] ԵԲէ. Եւ կերպարանեցան Յեսու [4] ԵԲէ. կոչեցան ամենայն ժողովուրդն որ ի քաղաքին [5] ԵԲէ. Յեսուայ եւ [6] ԵԲէ. պոյտ [7] ԵԲէ. որ ի ձեռին իւրում [8] ԵԲէ. Իսրայելի

լոյ ի նոցանէ ապրեալ եւ փախստական։
23 Եւ զթագաւորն Գայեայ ձերբակալ ա-
րարին կենդանւոյն, եւ ածին առ Յեսու։
24 Եւ իբրեւ դադարեցին որդիքն Իս-
րայելի ի կոտորելոյ զամենայն Գայացիս,
[9]զորս ի դաշտս, զորս ի լերինս զաբե-
լայրին մինչեւ հալածեցին՝ գնացին. եւ
անկան ամենեքին ի սուր սուսերի մին-
չեւ ի սպառ. եւ դարձաւ [10]Յեսու ի Գա-
25 յի, եւ եհար գնա սրով սուսերի։ Եւ ե-
ղեն անկեալք յաւուր յայնմիկ յառնէ
մինչեւ ցկին՝ երկտասան հազար, ամե-
26 նայն բնակիչքն Գայեայ։ Եւ Յեսու ոչ
դարձոյց զձեռն իւր զոր ձգեաց գայ-
սանաւն՝ մինչեւ նզովեաց զամենայն
27 բնակիչսն Գայացւոց. Բայց յանասնոյ եւ
յաւարէ քաղաքին զոր աւարեցին որ-
դիքն Իսրայելի ըստ հրամանի Տեառն՝
28 որպէս հրամայեաց Տէր Յեսուայ։ Եւ
այրեաց Յեսու զքաղաքն հրով եւ արար
զնա լերամբ հողոյ անչէն յաւիտեան մին-
29 չեւ ցայսօր։ Եւ զթագաւորն Գայեայ
կախեաց [11]զերկիճիւղ փայտէ, եւ էր ի
վերայ փայտին կախեալ՝ մինչեւ ցկրե-
կոյ. եւ ընդ մտանել արեգականն հրա-
մայեաց Յեսու եւ իջուցին զնա ի փայ-
տէ անտի, եւ ընկեցին զնա ի դուռն առ
դրան քաղաքին, եւ կուտեցին ի վերայ
նորա կարկառ քարանց մինչեւ ցայսօր։
30 Յայնժամ չինեաց Յեսու սեղան Տեառն
Աստուծոյ Իսրայելի ի լերինն Գեբաղ
31 որպէս պատուիրեաց Մովսէս ծառայ
Տեառն որդւոցն Իսրայելի. զոր օրինակ
գրեալ է յօրէնսն Մովսիսի, սեղան յող-
ջոց քարանց՝ յորս ոչ մկրձեալ իցէ եր-
կաթ. եւ անդ եհան ողջակէզ Տեառն
32 եւ զոհ [12]փրկութեան։ Եւ գրեաց Յեսու
ի վերայ քարանցն զերկրորդումն օրինացն
զօրէնսն Մովսիսի, զոր գրեաց առաջի
33 որդւոցն Իսրայելի։ Եւ ամենայն Իսրա-
յէլ, եւ ծերք նոցա եւ պատուականք նո-
ցա եւ գպիրք նոցա, երթային աստի
անտի հանդէպ տապանակին, եւ քա-
հանայքն Ղեւտացիք բարձին զտապա-
նակ ուխտին Տեառն, եւ եկն եւ գնաց.
եւ էին կէսք ի նոցանէ մերձ ի լեառն
Գարիզին, եւ կէսք ի նոցանէ մերձ ի
լեառն Գեբաղ, որպէս պատուիրեաց
Մովսէս ծառայ Տեառն՝ օրհնել նախ

[9] ԵԲէ. ի դաշտին, յանապատին ուր հալածեալ էր նոցա [10] ԵԲէ. ամենայն Իսրայել [11] ԵԲէ. զփայտե [12] ԵԲէ. խաղաղութեան

34 զժողովուրդն ։ Եւ ասպ ընթերցաւ զա-
մենայն բանս օրինացս այսոցիկ , զօրհ-
նութիւնս եւ զանէծս՝ ըստ ամենայն
35 գրելոցն [1]յօրէնսն Մովսէսի՝ ։ Եւ ոչ էր
բան յամենայնի զոր պատուիրեաց Մով-
սէս Յեսուայ՝ զոր ոչ ընթերցաւ Յեսու
յականջս ամենայն եկեղեցւոյն Իսրայե-
լի , սրանց եւ կանանց եւ մանկանց ,
եւ եկելոց յիցկոյն յԻսրայէլ ։

Գլ. Թ

1 Իբրեւ լսան ամենայն թագաւորքն [2]Ա-
մովրհացւոց որ յայնկոյս Յորդանանու՝
որ լեռնայինք եւ որ գաչտայինք , եւ որ
յամենայն ծովեզր ծովուն մեծի եւ
որք առ Լիբանանեօրն , եւ Քեւտացիքն
եւ Ամովրհացիք եւ [2]Գերգեսացիք եւ՝
Քանանացիք եւ Փերեզացիք եւ ԵՒե-
2 ւացիք եւ Յերուսացիք , ենկին ի միա-
բան ասել պատերազմ ընդ Յեսուայ եւ
ընդ Իսրայէլ՝ ամենեքեան առ հասարակ ,
3 Եւ բնակիչքն Գաբաւոնի լսեան զոր ինչ
արար Յեսու ընդ Երիքով եւ ընդ Գայի ։
4 Արբերին նոքա խորամանկութեամբ՝ եկ-
նեալք պատրաստ եւ պատրաստութեամբ ,
առին քուրձս հնացեալս ի վերայ [3]ուսոց
իւրեանց , եւ սիկս պինդս հնացեալս եւ
5 պատատուածս կարկատեալս ։ Եւ [2]ան-
կանուրկք կօշկաց նոցա ," հնացեալք եւ կարկատեալք
յոտս իւրեանց , եւ հանդերձք իւրեանց
հնացեալք զամբամբք իւրեանց , եւ հաց
պաշարի իւրեանց չորացեալ եւ ճճեկեր ։
6 Եւ եկին առ Յեսու ի բանակն Իսրայելի
ի Գաղգաղա , եւ ասեն ցՅեսու եւ ցա-
մենայն Իսրայէլ , Յերկրէ հեռաստանէ
եկեալ եմք , եւ արդ՝ դիք ընդ մեզ
7 ուխտ ։ Եւ ասեն [4]որդիքն Իսրայելի ցԵւ-
ացին , Տես՝ դուք" առ իս բնակիչ իս-
կս ։ եւ զիարդ զնեմք ընդ քեզ ուխտ ։
8 Եւ ասեն ցՅեսու , Ծառայք քո եմք ։ Եւ
ասէ ցնոսա Յեսու , Ուստի՞ էք դուք ,
9 եւ ուստի՞ եկեալ էք ։ Եւ ասեն ցնա ,
Յերկրէ հեռաստանէ յոյժ եկին ծառայք
քո յանուն Տեառն Աստուծոյ քո , զի
լուաք զանուն նորա , եւ զոր ինչ արար
10 ընդ Եգիպտոս , Եւ զոր ինչ արար ընդ եր-
կուս թագաւորսն Ամովրհացւոց որ էին
յայնկոյս Յորդանանու , ընդ Սեհոն թա-
գաւորն Եսեբոնի , եւ ընդ Ովգ թագա-
ւորն Բասանու՝ որ բնակիալ էր Աստա-
11 րովթ [2]եւ յԵդրային՝ ։ Եւ խօսեցան ընդ
մեզ ծերքն մեր , եւ ամենայն բնակիչք
երկրին մերոյ եւ ասեն , Առէք ձեզ պա-
շար ճանապարհի , եւ երթայք ընդ առաջ
նոցա , եւ ասասջիք ցնոսա , Ծառայք
ձեր եմք , եւ արդ կիք ընդ մեզ ուխտ ։
12 [2]Զի զնացս պաշս մեր , ջերմ առաք պա-
շար ի տանց մերոց յաւուր յորում ելաք
ի տանց մերոց եւ եկաք առ ձեզ , եւ
13 արդ՝ չորացաւ եւ եղեւ ճճեկեր . Եւ
սիկքս զոր լցաք գինւով՝ նորք էին , եւ
պատառեցան . եւ ձորձք մեր եւ կօշիկք
մաշեցան ի բազում երկայն ճանապար-
14 հէն ։ Եւ [5]առին իշխանքն զպաշար նո-
ցա" եւ զՏէր ոչ հարցին ։ Եւ արար ընդ
նոսա խաղաղութիւն Յեսու , եւ ուխ-
տեաց նոցա ուխտ ապրեցուցանել զնո-
ա . եւ երդուան նոցա իշխանք ժո-
15 ղովրդեանն ։ Եւ եղեւ յետ երից աւուրց
զնեալ ուխտիւց նոցա զոխտն՝ լսեան
եմք մօտաւորք են , եւ անդէն առ նո-
16 ա բնակեն ։ Զուեցին որդիքն Իսրայե-
լի , եւ եկին ի քաղաքս նոցա յաւուրն
երրորդի . եւ քաղաքք նոցա էին Գա-
բաւոն եւ Կեփիրա եւ Բերովթ , եւ քա-
18 ղաքք Յարիմայ ։ Եւ ոչ մահացան ընդ
նոսա որդիքն Իսրայելի . քանզի երդուան
նոցա [2]ամենայն իշխանք ժողովրդեանն
ի Տէր Աստուած Իսրայելի . եւ տրտնջե-
ցին ամենայն ժողովուրդն զիշխանացն ։
19 Եւ ասեն ամենայն իշխանքն ցամենայն
ժողովուրդն , Մեք երդուաք նոցա ի Տէր
Աստուած Իսրայելի , եւ ոչ կարեմք առնել
20 նոցա ։ Արդ՝ զայս արասցուք նոցա ապ-
րեցուցանել զնոսա , [2]եւ ասասցուք զնո-
ա." եւ մի եկեսցէ ի վերայ մեր բար-
կութիւն վասն երդմանն զոր երդուաք
21 նոցա ։ Եւ ասեն ցնոսա իշխանքն , կեց-
ցեն , եւ լինիցին վհատարերք եւ ջրա-
կիրք ամենայն ժողովրդեանդ . եւ ե-
ղեն փայտակոտորք եւ ջրաբերք , որ-
22 պէս եւ ասացին նոցա իշխանքն ։ Եւ կո-
չեաց զնոսա [2]միանամուռ Յեսու , եւ
խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ , Ընդէ՞ր
խաբեցէք [6]զիս եւ ասացէք , Հեռի եմք
ի ձէնջ յոյժ , եւ դուք [7]գաւառականք էք
23 լինակիացս որ ի միջի մերում" ։ Եւ արդ՝
անիծեալք էք , եւ մի պակասեսցէ ի ձէնջ

[1] ԵՔԲ. ի գիրս օրինաց [2] ՅԼԲԲ. պակաս [3] ԵՔԲ. ըշոց
[4] ԵՔԲ. ազգն Իսրայէլի ցԵւացին՝ Գուցէ

[5] Կամ, ընկալան զարան ի պաշարոց նոցա [6] ԵՔԲ. զմեզ [7] ԵՔԲ. ի միջի մերում բնակէք

ծառայ, փայտակոտոր եւ ջրկիր [1]ինձ
24 եւ Աստուծոյ իմում"։ Պատասխանի եւ
ասեն եւ ասեն ցՅեսու, Ազկեցե՛ք ամբ
ազգ հզիւ [2]միով, զոր ինչ հրամայեաց
Տէր Աստուած քո Մովսէսի ծառայի իւ-
րոյ, տալ ձեզ զերկիրս զայս, եւ սա-
սակել զամենայն բնակիչս սորա յերե-
սաց ձերոց. եւ երկեսաք յոյժ վասն ան-
ձանց մերոց յերեսաց ձերոց, եւ ա-
25 րարաք զիրն զայն։ Եւ արդ ահաւադիկ
եմք ընդ ձեռամբ ձերով. որպէս հա-
ճոյ [3]է ձեզ եւ որպէս կամիք" առնել
26 արարէք։ Եւ արարին նոցա այնպէս,
եւ ապրեցոյց զնոսա Յեսու [4]յաւուրս յայն-
միկ" ի ձեռաց որդւոցն Իսրայէլի, եւ
27 ոչ կոտորեցին զնոսա։ Եւ կացոյց զնոսա
յաւուր յայնմիկ փայտակոտորս եւ ջրա-
կիրս [5]ամենայն ժողովրդեանն եւ ա-
զանին [6]Աստուծոյ մինչեւ ցայսօր ժամա-
նակի, եւ ի տեղւոջն զոր ընտրեսցէ Տէր։

Գլ. Ժ

1 Եւ իբրեւ լսեաց [7]Ադոնիբեզեկ թագա-
ւորն Երուսաղեմի, թէ առ Յեսու զԳայի
եւ սատակեաց զնա. զոր օրինակ արար
ընդ Երիքով եւ ընդ թագաւոր նորա,
նոյնպէս արար ընդ Գայի եւ ընդ թագա-
ւոր նորա, եւ զի անձնաւուրք եղեն
բնակիչք Գաբաւոնի [8]առ Յեսու եւ" առ
2 Իսրայէլ եւ եղեն ի մէջ նոցա, Զար-
հուրեցան յանդիման իւրեանց յոյժ, քանզի
զիտէին թէ քաջք մեծ է Գաբաւոն
որպէս զմի ի մայրաքաղաքաց թագա-
ւորացն. քանզի նա մեծ էր քան զԳայի,
3 եւ ամենայն արք նորա զօրաւորք։ Եւ
առաքեաց [9]Ադոնիբեզեկ արքայ Երուսա-
զեմի առ Եղամ արքայ Քեբրոնի, եւ առ
Բիրեմ արքայ Յերմաթայ, եւ առ
Յեփիէ արքայ Լաքիսայ, եւ առ Դաբիր
4 արքայ Եգղոնայ, եւ ասէ, Եկայք ելէք
առ իս եւ օգնեցէք ինձ, եւ տացուք
պատերազմ ընդ Գաբաւոնի. զի անձնա-
ւուրք եղեն առ Յեսու եւ առ որդիսն
5 Իսրայէլի։ Եւ գումարեցան եւ ելին
հինգ թագաւորքն [10]Ամովրհացւոց, թա-
գաւորն Երուսաղեմի եւ թագաւորն
Քեբրոնի եւ թագաւորն Յերմաթայ եւ
թագաւորն Լաքիսայ եւ թագաւորն Եգղո-
նայ, բնակիչք եւ ամենայն ժողովուրդ
նոցա, եւ նստան պատերազմիւ եւ պա-
տերազմին զնա։
6 Եւ առաքեցին բնակիչք Գաբաւոնի
առ Յեսու ի բանակն [11]Իսրայէլի ի Գող-
գողա՝ եւ ասեն, Մի՛ թողուցանիս
զձեռն քո ի ծառայից քոց, ել առ մեզ
վազվազակի եւ ապրեցո զմեզ, եւ օգնեա
մեզ. զի ժողովեալ են ի վերայ մեր ա-
մենայն թագաւորք Ամովրհացւոց որ
7 բնակեալ են ի լեռնակողմանն։ Եւ ել
Յեսու ի Գողգողայ, ինքն եւ ամենայն
զօրն պատերազմօղ ընդ նմա, եւ ամե-
8 նայն որ կարող էր զօրաբեւեամբ։ Եւ
ասէ Տէր ցՅեսու, Մի՛ երկնչիցիս ի նո-
ցանէ, զի ի ձեռս քո մատնեցից զնոսա,
եւ ոչ ժուժկալեսցէ ի նոցանէ եւ ոչ մի
9 ոք առաջի [12]ձեր։ Եւ եհաս ի վերայ նոցա
Յեսու յանկարծակի զկոյսն ամենայն
10 գիշեր ի Գողգողայ։ Եւ պարտուցանոյց
զնոսա Տէր յերեսաց Իսրայէլի, եւ եղեւ
զնոսա բիկասն մեծ ի Գաբաւոն. եւ
[13]հալածեցին զնոսա ընդ ճանապարհ գա-
ղիմպոնի Բեհթորոնայ, եւ [14]կոտորեցին
զնոսա մինչեւ յԱզեկա եւ յՄակիդա։
11 Եւ ի փախչին նոցա յերեսաց որդւոցն
Իսրայէլի ընդ գառիվայրն Բեհթորոնայ,
եւ Տէր արկ ի վերայ նոցա քարինս [15]կար-
կտի յերկնից մինչեւ յԱզեկա". եւ եղեն
բազումք այնոքիկ որ մեռան ի քարանց
կարկտին, քան զորս սպան զոգս կատարե-
ցին որդիքն Իսրայէլի սրով պատերազմիւ։
12 Յայնժամ խօսեցաւ Յեսու ընդ Տեառն
յաւուր յորում մատնեաց Տէր [16]Ամովրհա-
զամավրհացին ընդ ձեռամբ որդւոցն Իս-
րայէլի, [17]ի ժամանակին յորում խորտակ-
եաց զնոսա ի Գաբաւոն, եւ խորտակե-
ցան յերեսաց Իսրայէլի, եւ ասէ Յեսու",
Կացցէ արեգակն հանդէպ Գաբաւոնի եւ
13 լուսին հանդէպ Ձորոյն Ելովեայ։ Եւ կա-
ցին արեգակն եւ լուսին ի կայի իւրեանց,
մինչեւ էառ [18]Ամովրհացին վրէժ ի թշնամ-
եաց [19]նոցա։ Ո՞չ ապաքէն գրեալ է այս
ի գիրս Ուղղութեան. Եւ եկաց արե-
գակն ի մէջ երկնից, եւ ոչ խազաց ընդ
արեւմուտս՝ մինչեւ ցկատարումն աւուր
14 միոյ։ Եւ ոչ եղեւ այսպիսի օր ոչ յա-
ռաջ եւ ոչ յետոյ, լսել [20]Աստուծոյ ձայնի

---

[1] 1ԵԲԸ. վասն առաւծոյ իմոյ [2] 1ԵԲԸ. ծա-
ռայից քոց [3] 1ԵԲԸ. եւ որպէս ուղիղ է յաչս ձեր
[4] 3ԵԲԸ. գԱյոթ [5] 1ԵԲԸ. Տեառն [6] 1ԵԲԸ. Ադոնի
սեդեկ [7] 1ԵԲԸ. Ամովրհացւոց

[8] 1ԵԲԸ. քո [9] 1ԵԲԸ. Հայածեաց [10] 1ԵԲԸ. կատարեաց
[11] 1ԵԲԸ. մեծամեծս յերկնից մինչեւ ցԱզեկա, եւ
մեռան [12] 1ԵԲԸ. և ասէ յանդիման Իսրայէլի [13] 1ԵԲԸ.
ժողովուրդն [14] 1ԵԲԸ. իւրոց

մարդոյ. զի Տէր պատերազմեցաւ [1]Իսրայէլ
ընդ" Իսրայելի ։
15 Եւ զարձաւ Յեսու եւ ամենայն Իս-
րայէլ ընդ նմա ի բանակն ի Գազգաղա ։
16 Եւ փախեան հնգիքն թագաւորքն այ-
նոքիկ եւ թաքեան ի յայրին ի Մակեդա ։
17 Եւ ազգ եղեւ Յեսուայ եւ ասեն , Գտան
հինգ թագաւորքն թաքուցեալք ի յայրի
18 անդ ի Մակեդա ։ Եւ ասէ Յեսու , Թա-
ւալեցուցէք վէմս մեծամեծս ի բերան
այրին , եւ կացուցէք ի վերայ նոցա արս
19 պահել զնոսա . Բայց դուք մի՛ դադարիջէք
ի պնդելոյ զհետ թշնամեացդ ձերոց , եւ
հասէք ի վերջս նոցա , եւ մի՛ տայք նոցա
թող մտանել ի քաղաքս իւրեանց . քանզի
մատնեաց զնոսա Տէր Աստուած ի ձեռս
20 [2]մեր ։ Եւ եղեւ իբրեւ դադարեաց Յեսու
եւ ամենայն որդիքն Իսրայելի ի կոտո-
րելոյ զնոսա կոտորումն մեծ յոյժ մինչեւ
ի սպառ , եւ ապրեալքն որ ապրեցան ի
21 նոցանէ՝ մտին ի քաղաքս ամուրս , Եւ
դարձաւ ամենայն ժողովուրդն ի բանակն
առ Յեսու ի Մակեդա ողջանդամք . եւ
ոչ ոք [3]կոնչեաց յորդւոցն Իսրայելի
22 լեզուաւ իւրով ։ Եւ ասէ Յեսու , Բացէք
զայրն եւ հանէք առ իս զհնգիսին թա-
23 գաւորսն յայրէ անտի ։ Եւ արարին այն-
պէս , եւ հանին առ նա զհնգիսին թա-
գաւորսն յայրէ անտի , զթագաւորն Ե-
րուսաղէմի եւ զթագաւորն Քեբրոնի
եւ զթագաւորն Յերիմոթայ եւ զթա-
գաւորն Լաքիսայ եւ զթագաւորն Եգ-
24 լոնայ ։ Եւ իբրեւ հանին զնոսա առ
Յեսու , եւ կոչեաց Յեսու զամենայն
Իսրայէլ եւ զպառաջամարտիկս երթայ
ընդ նմա , եւ ասէ ցնոսա , Մատիք յա-
ռաջ եւ դիք զոտս ձեր ի վերայ պարա-
նոցայ [4]նոցա . եւ մատուցեալ եդին զոտս
իւրեանց ի վերայ պարանոցայ նոցա ։
25 Եւ ասէ ցնոսա Յեսու , Մի՛ երկնչիք ի
նոցանէ եւ մի՛ զանգիտիջէք , քաջայա-
րուք եւ զօրացարուք , զի այսպէս ա-
րասցէ Տէր ընդ ամենայն թշնամիս ձեր
26 ընդ որս դուք մարտնչիցիք ։ Եւ կո-
տորեաց զնոսա Յեսու , եւ կախեաց
զնոսա հնգիսին զփայտիս , եւ կային
27 կախեալ զփայտիցն մինչեւ ցերեկոյ ։ Եւ
եղեւ ընդ արեւմտուան հրամայեաց Յեսու
եւ իջուցին զնոսա ի փայտիցն , եւ ընկե-
ցին յայրն յոր փախուցեալ անկեալ էին ,
եւ թաւալեցուցին քարինս մեծամեծս
ի վերայ այրին մինչեւ ցայսօր ժամանակի։
28 Եւ զմակեդա առին յաւուր յայնմիկ .
եւ կոտորեցին զնա սրով սուսերի եւ
զթագաւորն նորա , եւ սատակեցին զնա
եւ զամենայն հոգի որ ի նմա . եւ ոչ
ոք մնաց ի նմանէ ապրեալ եւ փախու-
ցեալ . եւ արար ընդ թագաւորն Մա-
կեդայ , զոր օրինակ արար ընդ թագա-
ւորն Երիքովի ։
29 Եւ զնաց Յեսու եւ ամենայն Իսրայէլ
ընդ նմա ի Մակեդայէ ի Լերնա , եւ պա-
30 տերազմեցան զկնա ։ Եւ մատնեաց [5]զնա
Տէր ի ձեռս Իսրայելի . եւ առ զնա" եւ
զթագաւոր նորա , եւ կոտորեաց զնա
սրով սուսերի եւ զամենայն հոգի որ
ի նմա , եւ ոչ մնաց ի նմա եւ ոչ մի
ապրեալ եւ փախստական . եւ արար ընդ
թագաւորն նորա՝ զոր օրինակ արար ընդ
թագաւորն Երիքովի ։
31 Եւ զնաց Յեսու եւ ամենայն Իսրայէլ
ընդ նմա ի Լերնայէ ի Լաքիս , եւ նստաւ
32 զնովաւ եւ պատերազմեցաւ զնա ։ Եւ մատ-
նեաց Տէր զԼաքիս ի ձեռս Իսրայելի , եւ
առ զնա յաւուրն երկրորդի , եւ կոտոր-
եաց զնա բերանաւ սրոյ , եւ սատակեաց
զնա[6] , զոր օրինակ արար ընդ Լերնա ։
33 Յայնժամ ել ելամարքայ Գազերայ օգ-
նել Լաքիսայ , եւ եհար զնա Յեսու սրով
սուսերի եւ զգօրս նորա մինչեւ չմնալ
ի նոցանէ ապրեալ եւ փախստական ։
34 Եւ չուեաց Յեսու եւ ամենայն Իս-
րայէլ ընդ նմա ի Լաքիսայ յԵգղոն , եւ
[7]նստաւ զնովաւ եւ պատերազմեցաւ զնա եւ
մատնեաց զնա Տէր ի ձեռս Իսրայելի" .
35 Եւ առ զնա յաւուր յայնմիկ , եւ կոտոր-
եաց զնա սրով սուսերի , եւ զամենայն
հոգի որ ի նմա յաւուր յայնմիկ կոտո-
րեցին , զոր օրինակ արարին ընդ Լաքիս ։
36 Եւ չուեաց Յեսու եւ ամենայն Իս-
րայէլ ընդ նմա յԵգղոնայ ի Քեբրոն , եւ
37 նստաւ զնովաւ . Եւ առին զնա , եւ հարին
զնա բերանաւ սուսերի , եւ զթագաւորն
նորա[8] , եւ զամենայն հոգի որ ի նմա ,
եւ ի նմա ոչ ոք էր ապրեալ . եւ արարին
ընդ նմա որպէս արարին ընդ Եգղոն . եւ
սատակեցին զնա եւ զամենայն հոգի որ
եւ զամենայն հոգի որ ի նմա ։

[1] ԵԲԲ. վասն [2] ԵԲԲ. ձեր [3] ԵԲԲ. կոնչեաց ուժեք [4] ԵԲԲ. Թագաւորացդ այդոցիկ

[5] ԵԲԲ. զնա եւս Տէր ի ձեռս Իսրայելի [6] ԵԲԲՅԷՆ յԱԲԼԱ , եւ զամենայն հոգի որ ի նմա
[7] ԵԲԲ. պատերազմեցին զնա եւ պատերազմեցան ընդ նմա
[8] ԵԲԲՅԷՆ յԱԲԼԱ , եւ զամենայն քաղաքս նորա

38 Եւ դարձաւ Յեսու եւ ամենայն Իսրայէլ ի Դարիր, եւ նստեալ զնովաւ՝
39 Առին զնա եւ զթագաւորն նորա եւ զամենայն [1]զօրս նորա. եւ հարին զնա բերանոյ սրոյ, եւ սատակեցին զնա եւ զամենայն հնչեալս որ ի նմա, եւ ոչ թողին եւ ոչ մի ապրեալ. զոր օրինակ արարին ընդ Քեբրոն՝ նոյնպէս արարին ընդ Դարիր եւ ընդ թագաւորն նորա, եւ որպէս արարին ընդ Լեբնա եւ ընդ թագաւորն նորա։
40 Եւ հարաւ Յեսու զամենայն երկիրն լեռնականն եւ [2]զնագեբ եւ զգաչատականն, եւ [3]զԱսեթովթ եւ զամենայն թագաւորս [4]նորա, եւ ոչ եթող [5]ի նմանէ ապրեալ, եւ զամենայն հնչեալսն [5]ի նմանէ, զոր օրինակ պատուիրեաց Տէր
41 Աստուած Իսրայէլի։ Եւ կոտորեաց զնոսա Յեսու ի կադէսբառնեայ մինչեւ ցԳազա, եւ զամենայն երկիրն Գոսոմայ մինչեւ
42 ցԳաբաւոն։ Եւ զամենայն թագաւորսն նոցա, եւ զերկիրն նոցա ա՛ռ Յեսու միանգամայն. զի Տէր Աստուած Իսրայէլի [6]հա-
43 մագունդ կռուէր ընդ՝ Իսրայէլի։ Եւ դարձաւ Յեսու եւ ամենայն Իսրայէլ ընդ նմա ի բանակն ի Գաղգաղա։

Գլ. ԺԱ

1 Եւ իբրեւ լուաւ Յաբին արքայ Ասովրայ, առաքեաց առ Յորաբ արքայ [7]Մադոնայ եւ առ արքայն Սէմերոնի եւ առ արքայն Աքիվայ,
2 Եւ առ թագաւորս [8]մնծի Սիզոնայ ի լեռնայինսն, եւ յԱրաբաթ հանդիպ Քինեռեթոյ, եւ ի գաչտայինն եւ ի նաբեթդոր, եւ ի ծովեզերեայսն,
3 Քանանացիս յարեւելից կողմանէ, ի ծովեզերեայն Ամովրհացւոց՝, եւ ի Քեւտացիս եւ ի Փերեզացիս եւ Եբուսացիս որ ի լերինն, եւ ի Հեւացիան որ
4 ընդ Հերմոնիւ ի Մասեփա։ Եւ ելին ինքեանք եւ [9]թագաւորք իւրեանց ընդ նոսա, եւ՝ զօր բազում իբրեւ զաւազ առ ափն ծովու բազմութեամբ, եւ ե-
5 րիվարք եւ կառք բազում յոյժ։ Գումարեցան ամենայն թագաւորքն այնո-

քիկ եւ եկին ի միասին, եւ բանակեցան միանգամայն առ Ջրովք Մառոնոյ՝ ասել պատերազմ ընդ Իսրայէլի։
6 Եւ ասէ Տէր ցՅեսու, Մի՛ երկնչիր յերեսաց նոցա, զի վաղիւ ի սոյն ժամու մատնեցից ես զամենեսեան զնոսա վանեալս առաջի որդւոցն Իսրայէլի. զերիվարս նոցա կարկտակոտորս արասցես,
7 եւ զկառս նոցա այրեցես հրով։ Եւ եկն Յեսու եւ ամենայն զօրն պատերազմով ընդ նմա ի վերայ նոցա ի Ջուրն Մառոնոյ յանկարծօրէն, եւ անկան ի վերայ
8 նոցա [5]ի լեռնակոյսմանն։ Եւ մատնեաց զնոսա Տէր ընդ ձեռամբ Իսրայէլի, եւ կոտորեալ զնոսա՝ արարին հալածական մինչեւ ցմեծն Սիդոն, եւ մինչեւ ցՄասեբեփաթմայիմ, եւ մինչեւ ցդաչտան Մասեփայ ընդ արեւելս. եւ կոտորեալ զնոսա
9 մինչեւ չմնալոյ ի նոցանէ ապրեալ։ Եւ արար ընդ նոսա Յեսու որպէս պատուիրեաց նմա Տէր. զերիվարսնոցա կարկտակոտորս արար, եւ զկառս նոցա այրեաց հրով։
10 Եւ դարձաւ Յեսու ի ժամանակին յայնմիկ, եւ առ զԱսովր եւ զքաղաքն նորա, եւ սպան զնա. զի Ասովր էր նախ իշխան ամենայն թագաւորութեանցն այ-
11 նոցիկ. Եւ կոտորեցին զամենայն հնչեալ որ ի նմա սրով սատակիւ, եւ սատակեցին զամենեսեան. եւ ոչ մնաց ի նմա
12 հնչեալ. եւ զԱսովր այրեցին հրով։ Եւ զամենայն քաղաքս թագաւորութեանցն այնոցիկ եւ զթագաւորսնոցա ա՛ռ Յեսու, եւ կոտորեալ զնոսա սրով սատակեաց զնոսա, զոր օրինակ հրամայեաց Մովսէս ծառայ Տեառն։
13 Այլ զամենայն քաղաքս [10]հոգայուտեալս ի նոցանէ՝ ոչ այրեաց Իսրայէլ, բայց միայն
14 զԱսովր զոր այրեաց Յեսու։ Եւ զամենայն կապուտ [11]հոտս եւ զանասունս առին իւրեանց յաւարի որդիքն Իսրայէլի. բայց [12]զնոսա զամենեսեան՝ սատակեցին սրով սատակեալ մինչեւ կորուսին զնոսա, եւ ոչ թողին ի նոցանէ եւ ոչ մի չնչա-
15 ւոր։ Զոր օրինակ հրամայեաց Տէր Մովսիսի ծառայի իւրում, եւ պատչէս պատուիրեաց Մովսէս Յեսուայ՝ նոյնպէս արար Յեսու, եւ ոչ անց եւ ոչ պիտեր յամենայնիւ զոր [13]պատուիրեաց Տէր Մովսէս՝։
16 Եւ ա՛ռ Յեսու զամենայն երկիրն զայն,

---

[1] Եբէ· քաղաքս [2] Այլ՝ նգաբայինն [3] Այլ՝ Ենգ, զաւորտան [4] Եբէ· Նոցա [5] Եբէ· պ–ի–ս [6] Եբէ· կռուէր վասն [7] Եբէ· Մադոնայ [8] Եբէ· որ ի հիւսիսոյ ի լերինն, եւ ի գաչտն որ ի հարաւոյ Քինեռեթոյ, եւ ի հովտին եւ ի գաւառս Դորոյ յարեւմտից, (3) Ի Քանանացիս յարեւելից եւ յարեւմտից կողմանէ, եւ յԱմովրհացիս, [9] Եբէ· ամենայն քանակ նոցա, ընդ նոսա,

[10] Եբէ· որ կայն ի վերայ հողաբլրոյ՝ [11] Եբէ· քաղաքացն այնոցիկ [12] Եբէ· զամենայն մարդ [13] Եբէ· պատուիրեալ էր Տէր Մովսիսի

զլեռնակողմինն եւ զամինայն [1]երկիրն Նեղեբ", եւ զամինայն երկիրն Գոսոմ, եւ [2]զգաւաոյինն եւ զարեւմտեայն", եւ զլեառնն Խորոկիլ եւ զնովիսա նորա [3]որ
17 առ լերամբն. Ի լեռնէն Աբելայ եւ ցկոյն Մաւրայ", մինչեւ ցհասուզպոյ, [4]եւ զգաշտայինն" Լիբանանու առ ոտամբն Հերմոնի, եւ զԹափասարա նոցա զամինեսին
18 առ եւ կոտորեաց։ Եւ ետուբ յաղտմս արար Յեսու ընդ ամինայն թագաւորսն
19 ընդ այնոսիկ պատերազմ։ Եւ ոչ էր քաղաք [5]զոր ոչ մատնեաց Տէր" որդւոցն Իսրայէլի, բայց ի Խեւացւոյն որ բնակեալ էր ի Գաբաւոն. զամինեսին առ պատե-
20 րազմաւ։ Զի ի Տեառնէ կարծրանային սիրտք նոցա պատահել պատերազմաւ Իսրայէլի զի սատակեսցին, եւ մի ասցի նոցա ողորմութիւն, այլ զի սատակեսցին որպէս հրամայեաց Տէր ընդ Մովսէսի։
21 Եւ եկն Յեսու ի ժամանակին յայնմիկ եւ սատակեաց զԵնակիմսն[6]ի լեռնակողմն Քեբրոնի եւ" Դաբիրայ, եւ յԱնովբայ եւ յամինայն լեռնէն Իսրայէլի եւ յամինայն լեռնէն Յուդայ, հանդերձ քաղաքօք նո-
22 ցա, եւ սատակեաց զնոսա Յեսու։ Եւ ոչ մնաց կենդանական [7]յորդւոցն Իսրայէլի, բայց միայն ի Գազա եւ ի Գէթ եւ յԱզոտոս մնացին։
23 Եւ առ Յեսու զամինայն երկիրն որպէս պատուիրեաց Տէր Մովսէսի, եւ ետ Յեսու ժառանգութիւն Իսրայէլի ըստ ցեղից նոցա. եւ դադարեաց երկիրն պատերազմել։

ԻԱ. ԺԲ

1 Եւ այս են թագաւորք զոր [8]կոտորեաց Մովսէս եւ" որդիքն Իսրայէլ, եւ ժառանգեցին զերկիրն նոցա յայնկոյս Յորդանանու [9]յարեւմտից կողմանէ, ի ձորն Առնովնայ մինչեւ ցերեսունն Հերմոն, եւ զամինայն [10]զԱրաբա յարեւելից
2 կողմանէ. ԶՍեհոն թագաւոր Ամովրհացւոց որ բնակեալ էր յեսեբոն, եւ սկսեալ յԱրոյերայ [11]մինչեւ ցձորն Առնովնայ եւ զկէս լերինն ձորոյն, եւ զԳԼԻԱՆ" Գազատացոց մինչեւ ցհնդկատան Յաբոկայ, [12]սահ-
3 մանք որգւոցն Ամմոնայ, եւ Արաբայ մինչեւ ցծովն Քինեերեթայ ընդ արեւելս [13]Արաբայ ցծովն," մինչեւ ցծովն Ազի, յարեւելից ընդ ճանապարհն Ասեմոթայ, եւ ի Թեմանայ որ է [14]ընդ Ասեդովթաւ
4 ի Փասգայնէ"։ Եւ սահմանք Ովգայ արքայի Բասանու որ մնացեալ էր ի սակաւից ածաւ, որ բնակեալ էր յԱստարովթ
5 եւ յԵդրայէլն, [15]Իշխան ի լեռնէն Հերմոնի եւ ի Սելքայ, եւ զամինայն Բասանն" մինչեւ ի սահմանս Գեսուրայ եւ
6 [16]զՄաքաթթի եւ զկէս" Գաղաադու սահմանացն Սեհոնի արքայի Եսեբոնայ։ Մովսէս ծառայ Տեառն եւ որդիքն Իսրայէլի հարին զնոսա, եւ ետ զայն Մովսէս ծառայ Տեառն ի ժառանգութիւն Ռուբինի եւ Գադայ, եւ կիսոյ ցեղին Մանասէի։
7 Եւ այս են թագաւորք [17]Ամովրհացւոց զորս կոտորեաց Յեսու եւ որդիքն Իսրայէլի յայնկոյս Յորդանանու [18]առ ծովեզերբն Դաղաադու" ի պաշտն Լիբանանու մինչեւ ցլեառն [19]Ագուկայ յելս Ակրայ". եւ ետ զնա Յեսու ցեղիցն Իսրայէլի ի ժառանգութիւն ըստ վիճակաց
8 նոցա. Ի լերինն եւ [20]ի դաշտի, եւ յԱրաբա" եւ յԱսեդովթ, եւ յանապատին եւ
9 [21]ի Նագեբ, զԽետացին եւ զԱմովրհացին եւ զԲանահացին եւ զՓերեզացին եւ զԵւեացին եւ զԵրեբուսացին եւ [22]զԵրեղնացին եւ" զՅեբուսացին. Զթագաւորն Երիքովայ զմի,
10 զթագաւորն Գայեայ որ մերձ ի Բեթէլ՝
11 զմի, Զթագաւորն Երուսաղէմի զմի,
12 զթագաւորն Քեղրոնի զմի, Զթագաւորն Յերիմոթայ զմի, զթագաւորն Լաքիսայ զմի, Զթագաւորն Եգղոնի զմի,
13 զթագաւորն Գազերայ զմի, Զթագաւորն Դաբիրայ զմի, զթագաւորն Գազերայ
14 զմի, Զթագաւորն Հերմեայ զմի, զթա-
15 գաւորն [23]Աբերայ զմի, Զթագաւորն Լոմնայ զմի, զթագաւորն Ոդողոմայ զմի,
16 Զթագաւորն Մակեդայ զմի, (17) [24]Զթագաւորն Թափուեայ զմի, զթագաւորն
18 Ափերայ զմի, Զթագաւորն Ափեկայ զմի,

---

[1] ՆԵԲԸ. Հարաւակողմն [2] ՆԵԲԸ. զՆովիսան եւ զդաշտն [3] ՆԵԲԸ. (17) Ի լեռնէն Բաղակայ որ ելանէ ի Սէիր [4] ՆԵԲԸ. ի Հաւթն [5] ՆԵԲԸ. որ արար խաղաղութիւն ընդ [6] ՆԵԲԸ. ի լեռնէն, ի Քերբոնէ, ի [7] ՆԵԲԸ. յերկրի անդ արդեանն [8] ՆԵԲԸ. կոտորեցին [9] ՆԵԲԸ. յարեւելից [10] ԱՅԼԱՆԴ՝ զդաշտն [11] ՆԵԲԸ. որ էր առ եզերբ ձորոյն Առնովնայ եւ մինչեւ ձորոյն, և կիսոյ [12] ՆԵԲԸ. որ ի սահմանս

[13] ՆԵԲԸ. եւ ցծովն Աբաբայ [14] ՆԵԲԸ. առ ստորոտով Ասեդովթփագոյ [15] ՆԵԲԸ. (5) Եւ տիրեր ի լերինն Հերմոնի եւ ի Սեղբա և յամինայն Բասան [16] ՆԵԲԸ. Մաքաթայ և կիսոյ [17] ՆԵԲԸ. երկրին [18] ՆԵԲԸ. յարեւմտեան կոյս, ի Բաաղգադայ [19] ՆԵԲԸ. Փաղակայ որ ելանէ ի Սէիր [20] ՆԵԲԸ. ի հովտին եւ ի դաշտին [21] ԱՅԼԱՆԴ՝ ի հարաւ [22] ՅԵՐԵՔ. ղ-ե-ե զմի, զթագաւորն Բեթելայ [23] ՆԵԲԸ. Արադայ [24] ՆԵԲԸ. Զթագաւորն

19 Զթագաւորն [1]Ասովրայ զմի , (20) Զթա-
գաւորն Սամրոնայ [2]զմի , զթագաւորն՝
Մաւոնեայ զմի , զթագաւորն Աքաս-
21 փայ զմի , Զթագաւորն Թանաքայ զմի ,
22 զթագաւորն Մակեդովայ զմի , Զթա-
գաւորն կեդեսայ զմի , զթագաւորն Յեկ-
23 նոամայ զԿեբրմէլայն զմի , Զթագաւորն
Դովրայ զնաֆեղովրայ զմի , զթագա-
24 ւորն Գելիմայ զԳելգելայն զմի , Զթա-
գաւորն Թերսայ զմի ։ Ամենեքեան սո-
քա թագաւորք [3]քանեւերեք ։

Գլ. ԺԲ

1 Եւ Յեսու ձերացեալ եւ անցեալ ա-
ւուրբք . եւ ասէ Տէր ցՅեսու , Դու ձե-
րացեալ ես եւ անցեալ դաւուրբք , եւ
երկիր բազում մնացեալ է ի ժառանգու-
2 թիւն ։ Եւ սա է երկիրն մնացեալ . ա-
3 մենայն սահմանք Փղշտացւոց , [4]Գեսու-
րի եւ Քանանացւոյն , Յանչինէ" անտի
ընդդէմ Եղիպտոսի՝ մինչեւ ի սահմանս
Ակկարոնի , [5]ընդ ասկէ" Քանանացւոյն
համարի , հնդից [6]թագաւորացն Փղշտաց-
ւոց , Գազացւոյն եւ Ազովտացւոյն եւ
Ասկազոնացւոյն եւ Գեթացւոյն եւ Ակ-
4 կարոնացւոյն , եւ [7]Եեւացւոյն . ի Թեւ-
մանայ" ամենայն երկիրն Քանանացւոյն ,
[8]Գազա եւ Սիդոնայիք" մինչեւ ցՅա-
փիկա՝ մինչեւ ցսահմանս Ամովրհաց-
5 ւոյն . եւ [9]զամենայն երկիրն Արաբայ ի
Փղշտացւոց՝ եւ զամենայն Լիբանան
յելից արեւու , ի Գազդազայ ," առ ո-
տամբ լերինն Հերմոնի մինչեւ ցմտս
6 Եմաթայ . Ամենայն որ բնակեալ իցէ
զերկնակողմին , ի Լիբանանէ մինչեւ ի
Մասերեփովթմայիմ , զամենայն Սիդո-
նացիս , եւ տատակեսից զնոսա յերեսաց
որդւոցն Իսրայելի . բայց դու բաչխեա
զնոսա ի ժառանգութիւն Իսրայելի , որ-
պէս պատուիրեցի քեզ ։
7 Եւ արդ բաժանեա զերկիրս զայս ի
ժառանգութիւն ինն գելգեղն եւ կիսոյ
գեղին Մանասէի , [10]ի Յորդանանէ մին-
չեւ ցծովն մեծ ընդ կողմն արեւմտից՝
8 յէ ։ Եւ երկու գելգեղն եւ կիսոյ գեղին
Մանասէի՝ որ են ընդ Ռուբինի եւ ընդ
Գադայ որ" տուին զժառանգութիւն իւ-
րեանց զոր [11]եւս Մովսէս յայնկոյս Յոր-
դանանու յարեւելից . [12]բաժանեաց նոցա
9 Մովսէս ծառայ Տեառն , ՅԱրոգերայ որ
է առ եզերբ Նեղւոցառին Առնովնայ , եւ
զքաղաքն որ է ի մէջ ձորոյն , եւ զա-
մենայն Միսովր , ի Մեդաբայ մինչեւ
10 ցԴիբոն , Զամենայն քաղաքսն Սեհոնի
արքայի Ամովրհացւոց որ թագաւորեաց
յեսեբոն , մինչեւ ցսահմանս որդւոցն Ա-
11 մմոնայ , եւ [13]զԳաղաադացիսն եւ զսահ-
մանս Գեսուրայ եւ զՄաքաթեայ , եւ
զամենայն լեառնն Հերմոն , եւ զամե-
նայն Բասանատանն մինչեւ ցՍելկա .
12 Զամենայն թագաւորութիւնն Ովգայ ի
Բասան , որ թագաւորեաց յԱստարովթ
եւ յԵդրայիս . նա մնաց ի մնացորդաց
սակաւոցն . եւ եհար զնա Մովսէս եւ սա-
13 տակեաց ։ Եւ ոչ սատակեցին որդիքն
Իսրայելի զԳեսուրի եւ զՄաքաթի [2]եւ
զՔանանացւոյն" . եւ բնակէր [14]թագաւորն
Գեսուրայ եւ Մաքաթեայ" ի մէջ որդ-
14 ւոցն Իսրայելի մինչեւ ցայսօր ։ Բայց
գեղին Ղեւեայ ոչ տուաւ [15]բաժին եւ
ժառանգութիւն . զի Տէր Աստուած Իս-
րայելի է նոցա ժառանգութիւն որպէս
ասաց նոցա Տէր ։ Եւ այս են բաժինք
զոր բաժանեաց Մովսէս որդւոցն Իս-
րայելի , յԱրտովթ Մովաբ յայնկոյս Յոր-
դանանու յանդիման Երիքովի ։"
15 Եւ ետ Մովսէս ըստ գելգեղն Ռուբինի
16 եւ ըստ տոհմից նոցա . Եւ եղեն սահ-
մանք նոցա ՅԱրոգերայ որ կայ յանդիման
ձորոյն Առնովնայ , եւ [16]քաղաքն ի ձորն
17 Առնովնայ , եւ ամենայն Միսովր . Եւ
Մեդաբայ մինչեւ ցեսեբոն , եւ զամե-
նայն քաղաքս նոցա որ են ի Միսովր" եւ
զԴեբոն, եւ զԲամոթբաղ. եւ զտունս
18 Բաալմէովթայ, եւ զՅասաս եւ զԿեդմովթ
19 եւ զՄեփայաթ եւ զկարիաթեմ եւ զՍե-
բամա եւ զՍարեթ եւ զՍիսովր ի լերինն
20 Ենակայ , Եւ զԲեթփեաղովր եւ զԱսե-

[1] ԵԲԲ. Ղասաարենայ զմի, (19) Զթագաւորն Մա-
դմոնայ զմի , զթագաւորն Ասովրայ [2] ՅԵԲԲ.
պղ-օթ [3] ԵԲԲ. երեսուն եւ մի [4] ՅԵԲԲ. եւ ամե-
նայն Գեսուր . (3) ի Սիովրայ [5] ՅԵԲԲ. ի հիւ-
սիսոյ որ [6] ԵԲԲ. Նախաբարացն [7] ԵԲԲ. Աւացւոցն
(4) Ի Հարաւոյ [8] ԵԲԲ. եւ Մէարա որ է Սիդո-
նացւոց [9] ԵԲԲ. երկիրն Գեբազացւոց եւ ամե-
նայն Լիբանան յարեւելից , ի Բաազգադայ
[10] ԵԲԲ. (8) Ընդ նմա Ռուբինեանք եւ Գադեանք

[11] ԵԲԲ. եւ նոցա [12] ԵԲԲ. որպէս բաժանեաց [13] ՅԵԲԲ.
զԳաղաադ [14] ԵԲԲ. Գեսուրացին եւ Մաքաթացին
[15] ՅԵԲԲ. բաժին. պատարագք Տեառն Աստուծոյ Իս-
րայելի , այն է ժառանգութիւն նոցա , որ-
պէս ասաց Նմա [16] ԵԲԲ. քաղաքն որ ի ձորն,
եւ ամենայն դաշտն յանդիման Մեդաբայ. (17)
ԶԵսեբոն եւ զամենայն քաղաքս նոցա որ են ի
դաշտին,

21 դովթիատա եւ զԵբեմսմովմ , եւ զա-
մենայն քաղաքս [1]Միսավրայ , եւ զամե-
նայն թագաւորութիւնն Ահհանի արքա-
յի Ամովրհացւոց , որ թագաւորեաց յե-
սերն , զոր եհար Մովսէս՝ դնա եւ զիչ-
խանս Մագիամա , զԵբէ եւ զՐեկոմ եւ
զՍուր եւ զՈւր եւ զՌուվբէ , [2]եւ զիչ-
խանս Պաղտասնայն՝ զրնակեալս յերկ-
22 րին : Եւ զԲաղասամ Բէովրեան գնար-
յուէն կռուարկին որպիքն Իսրայէլի զրով
23 [3]ի մուտ վայրկենի՝ : Եւ եղեն սահմանքն
[4]Ռուբինի , Յորդանան սահման՝ : Այս է
ժառանգութիւն որդւոցն Ռուբինի ըստ
տոհմից իւրեանց , քաղաքք եւ ա-
ւանք նոցա :
24 Եւ եհա Մովսէս որդւոցն Գադայ ըստ
25 տոհմից իւրեանց : Եւ եղեն նոցա սահ-
մանք Յազերայ , եւ ամենայն քաղաքք
Գաղաադու . եւ կէս երկրի որդւոցն Ա-
մմոնեայ մինչեւ ցԱրոէր որ է յանդիման
26 Խաբաթայ , Եւ յԵսեբոնայ մինչեւ ցՀռա-
մովթ՝ առ Մասփայիւ , եւ Բետոնիմ եւ
Մանայեմ մինչեւ գսահմանս Դաբիրայ ,
27 Եւ յհովակն , Բեթարամ եւ Բեթնամրա
եւ Սոքքով եւ Սափոն . [5]եւ զայլ եւս թա-
գաւորութիւնն՝ Սիհոնի արքայի Եսե-
բոնայ , Յորդանան [6]սահման է՝ , մինչ
ցեղք ծովուն Քինեռեթայ , յայնկոյս Յոր-
28 դանանու յարեւելից : Այս է ժառանգու-
թիւն որդւոցն Գադայ ըստ տոհմից իւր-
եանց , [7]ըստ քաղաքաց նոցա՝ եւ ագա-
րակք նոցին՝ :
29 Եւ եհա Մովսէս կիսոյ ցեղին Մանա-
սէի . եւ եղեւ կիսոյ ցեղի որդւոցն Մա-
30 նասէի ըստ տոհմից իւրեանց : Եւ եղեն
սահմանք նոցա ի Մանայեմայ , ամենայն
Բասան , եւ ամենայն թագաւորու-
թիւնն Ովգայ արքայի Բասանի , եւ ամենայն
աւանք Յայիրայ , որ են ի Բասանիտա-
31 տանի , վաթսուն քաղաք . Եւ կէս Գա-
ղաադու , եւ Աստարովթ եւ Եդրային ,
քաղաքք թագաւորութեանն Ովգայ ի
Բասանիտանի , տուան որդւոցն Մա-
քիրայ որդւոյ Մանասէի , կիսոյ որդւոցն
Մանասէի ըստ տոհմից իւրեանց :
32 Սոքա են զորս ժառանգեցոյց Մովսէս
յայնկոյս Յորդանանու [8]Յերիքովայ Մովաբ՝
33 յարեւելից յորդանանէ հանդէպ
Երիքովայ յարեւելից : Եւ ցեղին Ղեւեայ ոչ
եհա Մովսէս ժառանգութիւն . զի Տէր Աս-
տուած Իսրայէլի ինքնին է ժառանգու-
թիւն նոցա , որպէս խօսեցաւ ընդ նոսա :

Գլ . ԻԴ

1 Եւ [9]սոքա են որ ժառանգեցուցին որդ-
ւոցն՝ Իսրայէլի ցերկրին Քանանացւոց ,
որոց ժառանգեցուցին Եղիազար քահա-
նայ եւ Յեսու Նաւեան եւ իշխանք նա-
հապետութեան ցեղից որդւոցն Իսրա-
2 յէլի : Եւ վիճակօք ժառանգեցուցին , զոր
օրինակ պատուիրեաց Տէր ի ձեռն [10]Յե-
սուայ , իննեցունց ցեղիցն եւ կիսոյ ցե-
3 ղին : Քանզի եհա Մովսէս ժառանգու-
թիւն երկուց ցեղից եւ կիսոյ ցեղին
յայնկոյս Յորդանանու , եւ Ղեւտացւոցն
4 ոչ եհա ժառանգութիւն ի մէջ նոցա : Զի
էին որդիքն Յովսեփու երկու ցեղք ,
Մանասէ եւ Եփրեմ . եւ ոչ տուաւ բա-
ժին ցերկրին Ղեւտացւոցն , այլ՝ քաղաքք
բնակելոյ , եւ [11]պատուհասս ըստ նոցին՝
5 խաշանց [12]նոցա : Զոր օրինակ պատուե-
րեաց Տէր Մովսիսի , նոյնպէս արարին
որպիքն Իսրայէլի , եւ բաժանեցին զերկիրն :
6 Եւ մտանան որդիքն Յուդայ առ Յե-
սուե ի Գաղգաղա , եւ ասէ ցնա Քաղէբ
Յեփոնեայ Կենեզեան , Դու գիտես զբան
զոր խօսեցաւ Տէր ընդ Մով-
սիսի առն Աստուծոյ վասն իմ եւ վասն
7 քո ի Կադէսբառնէա : [13]Զի քառասնամեայ
էի ես , յորժամ առաքեաց զիս Մովսէս
ծառայ Տեառն ի Կադէսբառնէայ լրտե-
սել զերկիրն , եւ [14]բերաք նմա զբայց ըստ
8 մտաց [15]նորա . Բայց եղբարքն իմ որ ե-
լին ընդ իս՝ խիթացուն զմիաս ժողովըրդ-
եանն . բայց ես յաւելայ երթալ զհետ
9 Տեառն Աստուծոյ իմոյ : Եւ երդուաւ
Մովսէս յաւուրն յայնմիկ եւ ասէ , Ե-
կիցէ յոր հասեր՝ քեզ ւոտի ի ժառան-
գութիւն եւ որդւոց քոց յաւիտեան . զի
յաւելար երթալ զհետ Տեառն Աստուծոյ
10 իմոյ : Եւ արդ [16]կեցուցանէ զիս Տէր , որ-
պէս ասաց , այս ամ քառասներորդ հինգե-
րորդ է յորմէ հետէ խօսեցաւ Տէր զբանս
զայս ընդ Մովսիսի . եւ չրջեցաւ Իսրայէլ
յանապատին . եւ արդ աւասիկ եմ ես

---

[1] Ա.-ԷՒԴ դաշտին [2] ԵՔԷ. զնախարարս Ահհանի, [3] ԵՔԷ. ընդ սպանեալս նոցա [4] ԵՔԷ. որդւոցն Ռուբենի Յորդանան եւ սահմանն [5] ԵՔԷ. Մնացորդ թագաւորութեանն [6] ԵՔԷ. եւ սահմանն [7] ԵՔԷ. քաղաքք եւ աւանք նոցա [8] ԵՔԷ. ի դաշտին Մովաբու

[9] ԵՔԷ. այսոքիկ են զորս ժառանգեցին որդիքն [10] ԵՔԷ. Մովսիսի [11] Ա.-ԷՒԴ՝ արուարձանք [12] ԵՔԷ. եւ ստացուածոց նոցա [13] ՅԵՔԷ. գալ-ով [14] ԵՔԷ. քերի [15] ԵՔԷ. լմաց [16] ԵՔԷ. ահա կեցոյց

11 այսօր ամայ ուխտան եւ հնդիկ. Եւ կա-
րող եմ այսօր, որպէս յորժամ առաք-
եայ զիս Մովսէս, նայնպէս եւ արդ կա-
րող եմ մատանել եւ երանել ի պատերազմի
12 Եւ այժմ խնդրեմ ի քէն զհետան զայն,
որպէս ասայ Տէր յաւուր յայնմիկ. զի
դու ինքնին լաւ գիտես զայս յաւուր
յայնմիկ. եւ արդ առանիկ Ենակիմք են
անդ, եւ քաղաքք ամուրք եւ մեծա-
մեծք. [1]արդ եթէ Տէր ընդ իս է," ասա-
ւակիզիչ զնոսա, որպէս ասայ ինձ Տէր,
13 Եւ օրհնեաց զնա Յեսու, եւ եա ցԿեբրոն
Քաղեբայ որդւոյ Յեփոնեայ [2]կենեզացւոյ
14 ի ժառանգութիւն։ Վասն այնորիկ եղեւ
Կեբրոն Քաղեբայ որդւոյ Յեփոնեայ կենե-
զացւոյ ի ժառանգութիւն[3]. վասն եր-
թալոյ նորա զհետ հրամանի Տեառն Աս-
15 տուծոյ Իսրայէլի։ Եւ անուն Կեբրոնի
էր յառաջ քաղաք [4]Արբոկ. Նա էր [5]մայր
քաղաքաց Ենակիմացն"։

Եւ երկիրն դադարեաց ի պատերազմէ։

Գլ. ԺԵ

1 Եւ եղեն սահմանք ցեղի որդւոցն Յու-
դայ ըստ առնմից իւրեանց՝ ի սահմանացն
եդոմացւոցն, [6]ի Սինն անապատ մին-
չեւ ի Կադէս, ընդ հարաւակողմն"։
2 Եւ եղեն նոցա սահմանք ի հարաւոյ
մինչեւ ցկող ծովուն Ալսոյ, ի սապոյն
3 որ իջանէ ի հարաւակողմն, Եւ անցա-
նեն [7]մինչեւ ի զառ ի վերին Ակրաբիմայ,
եւ պատին [8]զՍինաքաւ, եւ վերանան ի
հարաւոյ ցԿադէսբառնեա, եւ երանեն [9]ի
Հեսրոն, եւ ձգին առ Ադդարաւ, եւ պա-
4 տին առ [10]արեւմտեաքն Կարկեայ", Եւ
երթան ցԱսեմոնա, եւ հանեն մինչեւ
ցձորն Եգիպտացւոց. եւ եղիցին նոքա
ելք սահմանացն ընդ ծովակողմն. [11]այս
են նոցա" սահմանք ի հարաւոյ։
5 Եւ սահմանք յարեւելից [12]ամենայն ծովն
Ալի մինչեւ ցկղն Յորդանանու։
Եւ սահմանք նոցա ընդ հիւսիսի ի սա-
6 րոյ ծովուն եւ ցեղերկ Յորդանանու, Հա-
սանեն սահմանքն ի Բէթհոգղա, եւ չրջին
առ հիւսիսով զԲէթհարաբա, եւ վերա-
նան սահմանքն առ Բէռվն վիմաւ որդ-
7 ւոյն Ռուբենի. Եւ երանեն սահմանքն

[12]առ չորրորդ մասամբ" ի ձորոյն Աքաղրայ,
եւ ընդ [13]հարաւակողմն, եւ իջանեն ի
Գալգալ, որ է հանդէպ [14]մասեացն Ե-
զոմիմայ, եւ" ընդ հարաւակողմն. եւ
հասանէ սահմանն ի ջուր Արեկ ապրեր,
եւ եղիցին նոցա ելք ապրերն Հով-
8 զեզայ. Եւ երանեն սահմանքն ի ձոր
որդւոյն Ենոմայ ի Թեկանոյ Յեբուսացւոյ
ի հարաւոյ, այն է Երուսաղէմ. եւ հա-
սանեն սահմանքն ի գլուխ լերինն որ է
հանդէպ ձորոյն Ենոմայ ի ծովակոյս
կողմանէ որ է յեզերս երկրին Փափայնոյ
9 ընդ հիւսիսի. Եւ հանէ սահմանն ի գլխոյ
լերինն յաղբիւր Ջրոյն Նեփտովիմայ, եւ
[15]հասանէ լեառնն Եփրեմի ի Գայէ". եւ
հանէ սահմանն ի Բաալ, այն է քաղաք
10 Յարիմայ. Եւ պտոյտ սահմանն ի Բաա-
լայ ընդ ծովակողմն [2]Աստրէս լերանն
Սէիր, եւ պտոյտ գլխոյ քաղաքին
Յարիմայ ի հիւսիսոյ, այն է Քասղեն.
եւ [16]իջանէ Սիրոգ քաղաք, եւ ան-
11 ցանէ ի հարաւ". Եւ հասանէ սահմանն
ի Թիկանոյ Ակկարոնի ընդ հիւսիսի. եւ
հանեն սահմանքն ի Սարբայովելայ, եւ
անցանեն առ լերամն երկրին Բաաղայ,
եւ հասանեն ցԱբինել. եւ եղիցին ելք
սահմանաց նոցա ընդ ծովակողմն։
12 Եւ զսահման նոցա [17]ի ծովէ՝ ծովն մեծ
զսահման։ Այսոքան սահմանք որդւոցն Յու-
դայ չուրջանակի՝ ըստ առնմից իւրեանց։
13 Եւ Քաղեբայ որդւոյ Յեփոնեայ հա-
բաժին ի մէջ որդւոցն Յուդայ հրամա-
նաւ [18]Աստուծոյ. եւ հա նմա Յեսու
զքաղաքն [19]Արբոկ, զմայր քաղաքացն"
14 Ենակայ, այն է Քեբրոն։ Եւ [20]սատակ-
եաց զնոսա անտի Քաղէբ [2]որպէս Յեփոն-
եայ", զերիս որդիսն Ենակայ՝ զԱռսի,
զԱղիմայի եւ զԱբիման, զծնունդս Ե-
15 նակայ։ Եւ ել անտի Քաղէբ ի վերայ
բնակչացն Դաբիրայ. եւ անուն Դաբի-
րայ էր յառաջագոյն քաղաք Նամակաց։
16 Եւ ասէ Քաղէբ, Որ զբ առցէ զքաղաքն
Նամակաց, եւ տիրեսցէ նմա, տայ նմա
17 զԱքսա դուստր իմ կնութեան։ Եւ առ
զնա Գոթոնիէլ որդի Կենազի, [21]եղբայր
Քաղեբայ կրտսեր". եւ եառ նմա զԱքսա
18 դուստր իւր կնութեան։ Եւ եղեւ յոր-

[1]ԵԲԴ.ի ձերեաս ընդ իս իցէ Տէր, և [2]ՅԵԲԴ. գոլոե
[3]ԵԲԴ.ոյեբէ յոբել, մինչեւ գայսօր [4]ԵԲԴ.
Արբոկայ [5]ԵԲԴ.այր մեծ յԱնակիմն [6]ԵԲԴ.
մինչեւ յանապատն ի Սին ի հարաւ կոյս, ի ծա-
գաց հարաւոյ [7]ԵԲԴ.ի հարաւոյ [8]ԵԲԴ.զԱմնա
[9]ԵԲԴ.յԵսբոն [10]ԵԲԴ.Կարկային [11]ԵԲԴ.այս եղիցին ձեզ

[12]ԵԲԴ.ի Կաբիր [13]ԵԲԴ.հիւսիսակողմն [14]ԵԲԴ.զառ
ի վերին Եզոմիմայ որ [15]ԵԲԴ.ելանէ ի քաղաքս
լերինն Եփրոնայ [16]ԵԲԴ.իջանէ յԱրեգ քաղաք
(ի Թեմասիս). և անցանէ ի Թումնա [17]Ա.ԸՆԴՀ.
յարեւմտից [18]ԵԲԴ.Տեառն առ Յեսու [19]ԵԲԴ.Ար-
բոկայ, Հօր [20]ԵԲԴ.զանեաց [21]ԵԲԴ.եղբօր Քաղեբայ

թաղն Նորա [1]խորհեցաւ ընդ նա եւ ասէ, Ինդրեցից ի հօրէ իմմէ ազարակ. եւ
աղազակեաց՝ յիչոյ անտի ։ Եւ ասէ ցնա
19 Քաղէր, Զի՞ է քեզ ։ Եւ ասէ ցնա, Տուր
ինձ օրհնութիւն. զի յերկիր [2]նազիր
եաւար պիս. տուր ինձ [3]գովլաթ մայիմ։
Եւ նա նմա քաղէր [4]զգովլաթն վերին
եւ [4]զգովլաթն ներքին ։
20 Այս է ժառանգութիւն ցեղի որդւոցն
Յուդայ՝ ըստ տոհմից իւրեանց ։
21 Եւ եղեն [5]նոցա քաղաքք. քաղաք
առաջին ցեղի որդւոցն Յուդայ ի սահ-
մանս Եդոմայ յանապատին," կասրեկ
22 եւ Եղրայէն եւ Ցաղուր Եւ Կինա եւ
23 Դիմոնա եւ Ադադա Եւ Կադէս եւ [6]Իթ-
24 նանղիփ Եւ Տէղէմ եւ Բաւազուիթ (25) Եւ
26 [7]քաղաքն Ասերոն, այն է Ասոր", Ամամ
27 եւ Սամա եւ Մոլիզադա Եւ Ասէրդադդա
28 եւ [8]Բեթփալէթ Եւ Ասարսուդա եւ [9]Բեր-
սաբէէ, եւ աւանք նոցա եւ ագարակք
29 նոցա։" Բաաղա եւ Աւիմ եւ Ասեմ (30) Եւ
31 Եղթոլադ եւ Քեսղ եւ Երմա Եւ Սի-
32 կղէկ եւ Մադեբենա եւ Սանսաննա Եւ
Ղամուիթ եւ Սէղէմի եւ [10]Ռեմոն. քա-
ղաքք քսանեւիններ եւ աւանք նոցա ։
33 Ի դաշտավայրն՝ Եսթաուղ եւ Սորաա
34 եւ Ասնա, [11]եւ Թամոն" Եւ Զանով եւ
35 [12]Ադիթեմ եւ Ենդադիմ Եւ Ցերիմոթ
եւ Ազեկամ եւ [11]Նեդմա եւ" Սոքով եւ
36 Ազեկա Եւ Սագարիմ եւ [13]Գադերա, եւ
ագարակք նոցա. քաղաքք չորեքտաս-
37 ան եւ աւանք նոցա ։ Սենան եւ Ա-
38 դաս եւ Մակղադդ Եւ Դադաան,
39 եւ Մասփա եւ Յեքթայել Եւ Ղաքիս
40 եւ Բազկաթ եւ Ագդոմ Եւ Քաբբա եւ
41 Լամաս եւ Քաւդոմ Եւ Գադերովթ եւ
Բեթդագոն եւ Նոմա եւ Մակեդդա.
քաղաքք վեչտասան եւ աւանք նոցա ։
42 Ղեբնա եւ [14]Աթեր (43) Եւ Յեփթա եւ Ա-
44 սննա եւ Նեսիբ Եւ Կէիլա եւ Աքզիբ
եւ Մարեսա [11]եւ Եղէմովմ". քաղաքք ինն
45 եւ աւանք նոցա ։ Ակկարոն եւ աւանք
46 Նորա եւ ագարակք Նորա. Եւ յԱկկա-
րոնէ [15]յԱշդէն, ամենայն արուարձանք
Ասերովդայ, եւ աւանք նոցա եւ ագա-
47 րակք նոցա ։ [16]Գազա եւ աւանք Նորա
եւ ագարակք Նորա՝ մինչեւ ցՀեղեզոնն
Եգիպտոսի, եւ ծովն մեծ զսահուցանէ ։
48 Եւ ի լեռնավայրսն՝ Սամիր եւ Յեթեր
49 եւ Սոքով Եւ Դաննա [11]եւ Լեսաննն Ա-
հերմոն," եւ քաղաքն [17]Նամակաց՝ այն
50 է Դաբիր, Եւ Անովբ եւ Եսթեմով
51 եւ Անիմ Եւ Գոսամ եւ Քիլուոն եւ
Գեղոն. քաղաքք մեւտասան եւ աւանք
52 նոցա ։ Երեք եւ [18]Եսան եւ Երումա"
53 Եւ Յանում եւ Բեթթափուէ եւ Ափա-
54 կա Եւ Քամմաաա եւ քաղաքն Ար-
բոկ՝ այն է Քերրոն, եւ Սիովբ. քա-
55 ղաքք ինն եւ աւանք նոցա ։ Մաւոն եւ
56 Քերմել եւ Զիփ եւ Ցիսաա Եւ Ցեզ-
57 րայել եւ Ցեկսամ եւ Զանովա, Եկիմ եւ
Գաբաա եւ Թամնա. քաղաքք [19]ինն եւ
58 աւանք նոցա ։ Ալուլ եւ Բեթսուր եւ
59 Գեդովր Եւ Մարովթ եւ Բեթանովթ
եւ Եղթեկոն. քաղաքք վեց եւ աւանք նո-
նոցա ։ [11]Թեկով եւ Եփրաթա՝ այն է Բեթ-
պահէմ, եւ Բագովր եւ Ետամ եւ Կու-
ղոմն եւ Տատամի եւ Սովրէս եւ Կա-
րեմ եւ Գաղղամ եւ Բեթեր եւ Մանու-
քով. քաղաքք մեւտասան եւ աւանք
60 նոցա"։ Կարիաթբաաղ, նա է քաղաք
Յարիմայ եւ Ռաբաա. քաղաքք երկու
եւ աւանք նոցա [20]եւ ագարակք իւրեանց ։
61 Բէթարաբա եւ" Բեթարաբա եւ Մա-
62 դոմն եւ Սոլքովա եւ Նեբսան, եւ քա-
ղաքք աղտիցն, եւ Ենգադի. քաղաքք
[21]եւթն եւ աւանք նոցա ։
63 Եւ Յերուսացին բնակեալ էր յերու-
սաղէմ, եւ ոչ կարացին որդիքն Յուդայ
[22]սպառնչել ընդ նոսա". եւ բնակեցան
Յերուսացիքն ընդ որդիսն Յուդայ յերու-
սաղէմ մինչեւ ցայսօր ։

Գլ. ԺԶ

1 Եւ եղեն որդւոցն Յովսեփայ սահմանք,
ի Յորդանանէ հանդէպ երիքովի, ի ջրոյ
անտի [11]որ հանդէպ" երիքովի յարեւե-
լից, ընդ անապատն եւ ամբարձան յե-
րիքովէ ի լեռնակողմ [23]անապատին ի

[1] ԵԲԲ. Հաւանեցաւց զնա խնդրել ի հօրէ իւրմէ ագարակ, եւ էջ [2] Այլ.ԵԱՆ՝ Հարաւոյ [3] Այլ.ԵԱՆ՝ զզբօսանս, կամ, զակունս ջուրց (Տէ՛ Դատ. Ա.15) [4] Այլ.ԵԱՆ՝ զակունս [5] ԵԲԲ. քաղաքք ի սպառաւածոյ անտի ցեղի որդւոցն Յուդայ առ սահմանօքն Եդոմայ ի հարաւոյ. [6] ԵԲԲ. Հասովր եւ Իթնան, (24) Զիփ [7] ԵԲԲ. (25) Հասովր Ագադայ եւ Քերիովթ, Հեսրոն, այն է Հասովր. [8] ԵԲԲ. Եսեման եւ Բեթփաղէթ [9] Այլ.ԵԱՆ՝ Ջրհոր երդմանն, (Տէ՛ Ծննդ. Իմ. 31) եւ Բաղիովթիա, եւ [10] ԵԲԲ. Այէն եւ Ռեմոն [11] ՅԵԲԲ. գ-է-ե [12] ԵԲԲ. Ենգանիմ եւ Իփափուա [13] ԵԲԲ. Աթեթայիմ եւ Գադերա (եւ Գագերովթայիմ) [14] ԵԲԲ. Աթեր եւ Ասան [15] ԵԲԲ. մինչեւ ի ծովն [16] ԵԲԲ. Ասեդովթ եւ աւանք նորա եւ ագարակք նորա, Գազա [17] ԵԲԲ. Սաննա [18] ԵԲԲ. Իումա եւ Եսան [19] ԵԲԲ. տասն [20] ԵԲԲ. Յանդագարին [21] ԵԲԲ. վեց [22] ԵԲԲ. վանել զնոսա [23] ԵԲԲ. ի Բեթէլ

2 Բեթէղդուզ՝, եւ ելանեն [1]ի Բեթէլ-
զուզայ եւ անցանեն առ սահմանօքն
3 Արքիատարովմայ, եւ ելանեն ընդ Ա-
վակոզմն ի սահմանսն Յեփլեթեայ, մին-
չեւ ցսահմանս Բեթ Որոնայ ներքինոյ եւ
մինչեւ ցԳազեր, եւ եղիցին ելք նոցա
4 ընդ Ծովակոզմն։ Եւ ժառանգեցին որ-
դիքն Յովսեփայ՝ Եփրեմ եւ Մանասէ։
5 Եւ եղեն սահմանք որդւոցն Եփրեմայ
ըստ առնմից իւրեանց. եւ եղեն սահ-
մանք ժառանգութեան նոցա յարեւելից՝
Աստարովթ Ադար, մինչեւ ցԲեթ Որոնն
6 վերին [2]եւ ցԳազեր՝։ Եւ անցանեն սահ-
մանքն ընդ Ծովակոզմն ի Մաքմեթ ի
հիւսիսոյ, եւ պտտիցի սահմանն ընդ
արեւելս ի Թենաթսելով, եւ ան-
7 ցանէ յարեւելից առ Ջանովա, եւ իջցէ
Ջանովայ յԱստարովթ եւ ի Նաարաթա,
եւ [2]ասէնք նոցա՝ անցցին առ Երիքովիւ
8 եւ հանցեն ի Յորդանան. Եւ ի Թափու-
ենայ անցցեն սահմանքն ի ծովակոզմն՝
ի հեղհզան կանայ, եւ եղիցին ելք նո-
րա ի ծովակոզմն։ Այս է ժառանգութիւն
ցեղի որդւոցն Եփրեմի ըստ առնմից իւ-
9 եանց. Եւ քաղաքքն զատուցեալք որդ-
ւոցն Եփրեմի ի մէջ ժառանգութեան
որդւոցն Մանասէի, ամենայն քաղաքք
եւ աւանք նոցա։
10 Եւ ոչ կորոյս Եփրեմ զՔանանացին
բնակեալ ի Գազեր, եւ բնակէր Քանա-
նացին ի մէջ Եփրեմայ մինչեւ ցայսօր.
[2]մինչեւ ել Փարաւոն արքայ Եգիպտա-
ցւոց եւ առ զքաղաքն, եւ այրեաց զնա
հրով, եւ զՔանանացին եւ զՓերեզացին
զբնակեսն ի Գազեր խոտեաց, եւ եա
զնա Փարաւոն պաշտաւսկան դստեր
իւրում.՝ եւ եղեն ծառայք հարկատուք։

Գլ. ԺԷ

1 Եւ եղեն սահմանք ցեղի որդւոցն Մա-
նասէի, զի նա էր անդրանիկ Յովսեփայ.
Մաքիրայ՝ անդրանկանն Մանասէի հօր
Գաղաադայ, քանզի այր պատերազմօղ
էր, Գաղաադացւոյն եւ Բասանատեան։
2 Եւ եղեւ այլոց որդւոցն Մանասէի, ըստ
առնմից իւրեանց, որդւոցն Աբիեզրայ
եւ որդւոցն Քեղիկայ եւ որդւոցն Եսրիե-
լայ եւ որդւոցն Սիւքեմայ եւ որդւոցն
Սեմիդայեայ, եւ որդւոցն Ովփերայ, ա-
րական են որդիք Մանասէի որդւոյ Յովսե-
3 փայ արուք ըստ առնմից իւրեանց։ Եւ

[1]ԵԲԸ ի Բեթէլայ ի Լուզ [2]ՅԵԲԸ պ-ի-ե

Սաղպաադայ որդւոյ Ովփերայ, որդւոյ
Գաղաադայ, որդւոյ Մաքիրայ, որդւոյ
Մանասէի, ոչ պակաս նորա ուսանելք,
այլ գտեալք. եւ սա են անուանք գտե-
լոցն Սաղպաադայ. Մահլա եւ Նուա
4 եւ Էգղա եւ Մելքա եւ Թիրսա։ Կա-
յին առաջի Եղիազարու քահանայի, եւ
առաջի Յեսուայ որդւոյ Նաւեայ եւ ա-
րանջի իշխանացն, եւ ասեն, [3]Առաւած
պատուիրեաց [2]ի ձեռն Մովսիսի տալ մեզ
ժառանգութիւն ի մէջ եղբարց մերոց։
Եւ տուաւ նոցա ժառանգութիւն հրա-
մանաւ Տեառն ի մէջ եղբարց հօր իւ-
5 եանց։ Եւ [4]կէ վիճակ Մանասէի գաչան
Ղարնկայ եւ Գազաապէ եւ Բասանայ՝,
6 որ է յայնկոյս Յորդանանու. Զի գտաւքն
[2]որդւոց Մանասէի ժառանգեցին վիճակ ի
մէջ [5]եղբարցիւրեանց՝, եւ երկիրն Գաղա-
ադու եղեւ որդւոցն Մանասէի մնացեալոցն։
7 Եւ եղեն սահմանք [2]որդւոցն Մանա-
սէի յԱսերմաքմովղմայ, որ է հանդէպ
Սիքեմայ, եւ երթան սահմանքն [6]ցձա-
մին եւ ցԱսեր՝ յաղբեւրն՝ Թափիոմիայ.
8 Մանասէի եղիցի երկիր Թափիոմիայ.
եւ Թափիոմիա ի սահմանս Մանասէի՝
9 որդւոցն Եփրեմայ։ Եւ իջանեն սահ-
մանքն ի ձորն Կանայի ընդ հարա-
ւակողմն հանդէպ ձորոյն [7]Յայրայ, եւ
բնակիցին Եփրեմայ ի մէջ քաղաքին Մա-
նասէի՝. եւ սահմանք Մանասէի ընդ
հիւսիսի ցՀեղզգատան, եւ եղիցին ելք
10 նորա ցկէք ծովն։ Ի հարաւակողմն կուսէ Եփ-
րեմայ եւ ի հիւսիսոյ Մանասէի. եւ ե-
ղիցի ծովն սահման նոցա. եւ յԱսեր՝
յարեւելից կողմանէ, եւ յԻ-
11 սաքար՝ յարեւելից կողմանէ։ Եւ եղի-
ցին Մանասէի ընդ Իսաքար եւ ընդ Ա-
սեր, Բեթսան եւ աւանք նորա, եւ
Ամրան եւ աւանք նորա, [8]բնակիչք
Ենդովրայ եւ աւանք նորա, եւ բնակիչք
Տանաքայ եւ աւանք նորա. եւ բնակիչք
Մակեդովայ եւ աւանք նորա, [9]եւ եր-
12 րորդ Նաֆեթովայ եւ աւանք նորա՝։ Եւ
ոչ կարացին որդիքն Մանասէի [10]սատա-
կել զքաղաքան զայնոսիկ. եւ [11]սկսաւ

[3]ՅԵԲԸ. Տէր [4]ՅԵԲԸ. եկին բաժինք սուն Մանա-
սէի, թող զԳաղաադ եւ զԱսսան [8]ՅԵԲԸ. որդ-
ւոց Նաթա [6]ՅԵԲԸ. յայժմ մինչեւ ցբնակեալսն
յաղբերն [7]ՅԵԲԸ. այս են քաղաքք Եփրեմայ ի
մէջ քաղաքացն Մանասէի [8]ՅԵԲԸ. եւ բնակիչք
Դովրայ եւ աւանք նորա, եւ բնակիչք [9]ՅԵԲԸ.
նահանգք երեք [10]ՅԵԲԸ. ժառանգել [11]ՅԵԲԸ.
յամառեցաւ

Քանանացին բնակել յերկրին յայնմիկ։
13 Եւ եղեւ իբրեւ [1]յաղթահարեցին որդիքն Իսրայելի, ալարին զՔանանացին [2]հնազանդս, բայց [3]սատակելով ոչ սատակեցին" զնոսա։
14 Ընդդէմ դարձան որդիքն Յովսեփայ Յեսուայ եւ ասեն, Ընդէր ժառանգեցուցեր մեզ մի ժառանգութիւն եւ մի վիճակ, եւ ես ժողովուրդ բազում եմ, եւ Աստուած
15 օրհնեաց զիա՞։ Եւ ասէ ցնոսա Յեսու, եթէ ժողովուրդ բազում ես դու, ել յանտառն եւ սրբեա դու քեզ զերկիրն, զՓերեզայիան եւ զՌափայինան, եթէ նեղ իցէ
16 քեզ լեառնդ Եփրեմի։ Եւ ասեն որդիքն Յովսեփայ, Չէ մեզ բաւական [5]լեառնն Եփրեմայ. եւ անդ ընտիր ընտիրք երիվարայ, եւ դէն ամենայն Քանանայեցւոյն բնակելոյ յերկրի իմում ընդ քա", ի Բեթսան եւ յաւանս նորա եւ ի ձորն Յեզրայէլ։
17 Եւ խօսեցաւ Յեսու ընդ որդիսն Յովսեփայ, ընդ Եփրեմի եւ ընդ Մանասէի եւ ասէ, Թէ ժողովուրդ բազում ես դու եւ զօրութիւն բազում ունիս,
18 մի՛ լիցի քեզ մի վիճակ. [6]Անտառն եւ պիտի քեզ, վի անտառ է եւ սրբեսցես զնա, եւ եղիցին քեզ ելք նորա յօժամ սատակեսցես զՔանանացին. [7]զի մէկ ասէս եւ երիվարք ընտիրք" իցեն նորա, եւ զօրագոն քան զքեզ իցէ, [8]դու յաղթահարեսցես զնա"։

Գլ. ԺԸ

1 Եւ ակնդեցաւ ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայելի ի Սելով, եւ կանգնեցին անդ վկայութեան. եւ
2 երկիրն նուաճեցաւ ի նոցանէ։ Եւ մնացին [9]որդիքն Իսրայելի եւ ոչ ժառանգ
3 գնային եւթն ցեղն"։ Եւ ասէ ցնոսա Յեսու, Մինչեւ յե՞րբ միգկիցիք չմտանել ժառանգել զերկիրն զոր ետ ձեզ Տէր
4 Աստուած հարցն [10]մերոց։ Տուք լինի եբիս արս ի ցեզէ, եւ առաքեցից զնոսա, եւ յարուցեալ անցանիցեն ընդ երկիրն, եւ գրեսցեն զնա [11]առաջի իմ՝ թէ որ-

[1]ԵԲԲ. զօրացան [2]ԵԲԲ. Հարկառու [3]ԵԲԲ. վանելով ոչ վանեցին [4]ԵԲԲ.ԱՅԵԼԵ. մինչեւ յայժմ [5]ԵԲԲ. լեառնն. եւ կառք երկաթիք ամենայն Քանանացւոց բնակելոց յերկրին անդ Հովսէի [6]ԵԲԲ. Լեառնն [7]ԵԲԲ. թէ. պետ եւ կառք երկաթիք [8]ՅԵԲԲ. պակաս [9]ԵԲԲ. յորդւոցն Իսրայելի եւթն ցեղք որ ոչ ժառանգեցին [10]ԵԲԲ. ձերոց [11]ԵԲԲ. քան ժառանգութեան իբրեանց, եւ գարձցին առ քա։ (5) Եւ բաժանեսցին զնա յեւթն մասն

5 պէս պարտ իցէ բաժանել զնա։ Եւ եկին առ նա. եւ բաժանեաց նոցա եւթն մասն". Յուդայ կացցէ նոցա սահման ի հարաւոյ, եւ որդիքն Յովսեփայ կաց-
6 ցեն ի սահմանս իւրեանց ի հիւսիսոյ։ Եւ դուք բաժանեցէք զերկիրն եւթն բաժին, եւ բերէք առ իս այսր, եւ հանից ձեզ վիճակ առաջի Տեառն Աստուծոյ
7 մերոյ։ Զի ոչ գոյ ընդ ձեզ բաժին որդւոցն Ղեւեայ, զի քահանայութիւն Տեառն է բաժին նորա. եւ Գադ եւ Ռուբէն եւ կէս ցեղին Մանասէի առին զժառանգութիւն իւրեանց յայնկոյս Յորդանանու յարեւելս, զոր ետ նոցա Մովսէս ծառայ Տեառն։
8 Եւ յարուցեալ արքն գնացին. եւ պատուիրեաց Յեսու արանցն երթելոց աշխարհագրել զերկիրն, եւ ասէ, Անցէք գնացէք եւ աշխարհագրեցէք զերկիրն. եւ եկեսջիք առ իս այսր, եւ հանից ձեզ վիճակս առաջի Տեառն ի Սելով։
9 Եւ գնացին արքն եւ չրջեցան ընդ երկիրն, եւ աշխարհագրեցին զերկիրն եւ տեսին գնա, եւ գրեցին ըստ քաղաքաց իւրեանց եւթն բաժին ի մատեանի, եւ
10 բերին առ Յեսու ի բանակն ի Սելով։ Եւ արկ նոցա Յեսու վիճակ ի Սելով առաջի Տեառն, եւ բաժանեաց անդ զերկիրն որդւոցն Իսրայելի՝ ըստ բաժանմանց իւրեանց։
11 Եւ ել նախ վիճակն Բենիամինի ըստ տոհմից իւրեանց. եւ էին սահմանք վիճակի նոցա ի մէջ Յուդայ եւ ի մէջ որդւոցն Յովսեփայ։
12 Եւ եղեն սահմանք նոցա ի հիւսիսոյ [12]Յորդանանու. եւ ամբարձին սահմանք [13]ի հարաւոյ Երիքովի ընդ հիւսիսի, եւ ամբարձին ի լեառնն ընդ ծովակողմն, եւ եղիցին նորա ելք [14]Մաղդա-
13 բայինն Բեթաւան. Եւ անցցին անտի սահմանքն [15]Լուզայ, ի թիկանց Լուզայ ի հարաւոյ կողմանէ, այն է Բեթէլ. եւ իջցին սահմանքն գԱտարովթ Ադդայ լերանն կողմն, որ է ի հարաւոյ Բեթորոնայ ներք-
14 նոյ։ Եւ անցցին սահմանքն եւ պատեսցին առ եղերքն որ հայի ընդ ծով ի հարաւոյ, ի լեռնէն որ հանդիպ Բեթորոնի է ընդ հարաւոյ, եւ եղիցին նորա ելք ի Կարիաթբաղ, այն է Կարիաթարիմ քաղաք որդւոցն Յուդայ. եւ այն է եղր
15 ընդ ծովակողմն։ Եւ եղր ընդ հարաւ յեզրէ Կարիաթարիմայ, եւ անցանէն

[12]ԵԲԲ. ի Յորդանանէ [13]ԵԲԲ. ի թիկունս [14]ԵԲԲ. ցանապատն [15]ԵԲԲ. ի Լուզ

սահմանքն [1]ի Գային , եւ եկին յաղբեւր
16 Ջրոյն Նափթոախ ։ Եւ իջին սահմանքն
յեղր լերինն որ է յանդիման հովտացն
որդւոցն Ենովմայ , որ է մատն Ենակայ.
Ռափայեացն , ի հիւսիսոյ . եւ իջին [2]ի
Գայի Ենովմայ ի թիկանդ Յեբուսայ ի
հարաւոյ , եւ իջին յաղբեւրն Ռոգելայ.
17 Եւ հասանեն ընդ հիւսիսոյ , եւ անցանեն
յաղբեւրն ի Սամիւս , եւ պատահեն առ
Գալիղովիթաւ , որ է հանդէպ գառնախրին
Եդոմմինայ , եւ իջին ի վէմն Բաան ,
18 որդւոյ Ռուբենի . Եւ անցանեն ի թիկանդ
[3]Բեթարաբայ ի հիւսիսոյ , եւ իջին յԱ-
19 բարա . Եւ իջին սահմանքն ի թիկանդ
Բեթագղայ ի հիւսիսոյ [4]ծովու , եւ եկին
ելք սահմանացն ի սար ծովուն Ազդոյ
ի հիւսիսոյ , եւ յեղր Յորդանանու ի հա-
րաւոյ . այս են սահմանքն նոցա ի հա-
20 րաւոյ։ Եւ Յորդանան զատանէ ի կող-
մանէ արեւելից ։ Այս է ժառանգութիւն
որդւոցն Բենիամինի , եւ սահմանք նոցա
չորջանակի բաց առնմից իւրեանց ։
21 Եւ եկին քաղաքք ցեղի որդւոցն Բե-
նիամինի բաց առնմից իւրեանց , Երի-
22 քով եւ Բեթագղա եւ Ամինդոսխոր Եւ
Բեթարաբա եւ Սեմարիմ եւ Բեթէլ եւ
23 Աւիմ եւ Ափար եւ Ափրա Եւ Կարեմ
24 եւ Քափերամմին եւ Գարաս . Քաղաքք
25 երկոտասան եւ աւանք նոցա ։ Գարաւեն
26 եւ Ռամմա եւ Բեերոթ Եւ Մասփա եւ
27 Կեփիրա եւ Ամոսա Եւ Ռեկեմ եւ Յեր-
28 փայէլ եւ Թարաղա Եւ Սելա , Եղէփ եւ
Յերուս՝ այն է Երուսաղէմ , եւ Գաբաաթ
եւ քաղաքն Արիմ . քաղաքք չորեքտա-
սան , եւ աւանք նոցա ։ Այս է ժառան-
գութիւն որդւոցն Բենիամինի բաց առն-
մից իւրեանց ։

Գլ. ԻԹ

1 Եւ եկ երկրորդ վիճակն Շմաւոնի , ցեղի
որդւոցն Շմաւոնի բաց առնմից իւրեանց .
եւ եղեւ ժառանգութիւն նոցա ի մէջ
2 վիճակի որդւոցն Յուդայ ։ Եւ եղեւ վի-
ճակ նոցա Բերսաբէէ եւ Սաբէէ եւ Մող-
3 զադա Եւ Ասերսուղ եւ Բալա եւ Ա-
4 սեմ Եւ Եղթոլզադայ եւ Բաթուղ եւ Երմա
5 Եւ Սիկեղա եւ Բեթմարքաբովթ եւ
6 Ասերսուսիմ Եւ Բեթզաբաթ , եւ [5]գաղա-
րակք նոցա՝ . քաղաքք երեքտասան եւ

7 աւանք նոցա ։ Ային եւ Ռեմմոն եւ Ե-
թեր եւ Ասան . քաղաքք չորք եւ ա-
8 ւանք նոցա ։ Եւ ամենայն գաւառակք
չուրջ զքաղաքսն այնոքիւք , մինչեւ
կիսատակի Բեերամմաթի , ի մուտս Ռա-
մաթայ ընդ հարաւ ։ Այս է ժառանգու-
թիւն ցեղի որդւոցն Շմաւոնի ըստ առ-
9 մից իւրեանց ։ Ի վիճակին Յուդայ ժա-
ռանգութիւն ցեղի որդւոցն Շմաւոնի .
քանզի եղեւ բաժին որդւոցն Յուդայ
մեծ քան զնոսայն , եւ ժառանգեցին որ-
դիքն Շմաւոնի ի մէջ վիճակի նոցա ։
10 Եւ եկ երրորդ վիճակն Զաբուղոնի
ըստ առնմից իւրեանց . եւ եղեն սահ-
մանք ժառանգութեան նոցա մինչեւ կիսա-
11 րիւ . Սահմանք նոցա ծովն եւ Մարա-
դա , եւ հասանեն գԴաբասքէթ . եւ հան-
դիպեսցին ձորոյն որ է հանդէպ Յեկնա-
12 մայ , Եւ դարձցին ի Սարիդա դէմ
յանդիման յարեւելից [6]Բեթսամայ , ի
սահմանս Քասալովթ Թաբորայ , եւ
անցանեն ի Դաբարաթ , եւ ամբարձցին
13 առ Յաբադայիւ ։ Եւ անտի պատիցին
հանդէպ ընդ արեւելս [7]ձղնայ ի քաղաքն՝
Կասասաթ , եւ անցանեն յԻեմնան , [8]Ա-
14 մաթարիմ , Աննեայ՝ , Եւ պատահեսցին
զսահմանօքն հիւսիսոյ ցեկեանթոնիւ , եւ
եղիցին ելք նոցա [2]ի Գայի՝ Յեփթայելի .
15 Եւ ընդ Կասասամաթ եւ ընդ Նասալովղ
եւ ընդ Սեմրան եւ ընդ Յաղեղա եւ ընդ
Բեթղեհեմ . քաղաքք երկոտասան եւ ա-
16 ւանք նոցա ։ Այս է ժառանգութիւն ցե-
ղի որդւոցն Զաբուղոնի ըստ առնմից իւ-
րեանց , քաղաքք նոցա եւ աւանք իւրեանց ։
17 Եւ Իսաքարայ ել չորրորդ վիճակն ,
որդւոցն Իսաքարայ ըստ ազգականու-
18 թեան իւրեանց ։ Եւ եղեն սահմանք նո-
ցա Յեզրէել եւ Ափասեղովի եւ Սու-
19 նամ Եւ Ափերեմ եւ Սիհան եւ [9]Ռամաթ
20 եւ Ենգանեմ եւ Ռեննաթ եւ՝ Անաթեթ
21 Եւ Ռաբբեթ եւ Կեսիոն եւ Աբեմէլ եւ
Ռամաթ եւ Ենզադիս եւ Ենգադդա եւ
22 Բեթֆասես . Եւ կցեսցին սահմանքն ի
Թաբոր եւ [10]ի Կասիմ ընդ Յովակազին՝ ,
եւ ի Բեթսամիս . եւ եղիցին ելք սահ-
մանաց նոցա Յորդանան . քաղաքք վե-
23 ցասան եւ աւանք նոցա ։ Այս է ժա-
ռանգութիւն ցեղի որդւոցն Իսաքարու-
ըստ առնմից իւրեանց . քաղաքք եւ ա-
պարակք իւրեանց ։

[1] ՆԵԲԳ. ընդ արեւմուտս ի Հանդիպոյ Աբրաթայ Սաբուհէն
[2] ՆԵԲԳ. ի Յորն
[3] ՆԵԲԳ. ի Հանդիպոյ Աբրաթայ
[4] ՅՇԵԲԳ. գոլոխ
[5] ՆԵԲԳ. Սաբուհէն
[6] ՆԵԲԳ. ի Գեթթափեր , ի
[7] ՆԵԲԳ. որ ձգի ի Նուա
[8] ՆԵԲԳ. ի Սահասիմ

24 Եւ ել վիճակն հինգերորդ ցեղի որդ-
25 ւոցն Սաւբայ ըստ տոհմից իւրեանց ։ Եւ
եղեն սահմանք նոցա Քեղկաթ եւ Ռոզի
26 եւ Բատնէ եւ Աքսափ եւ [1]Ամաթ եւ
Մասող . եւ կցեսցի ի Կարմէլ ընդ ծո-
վակողմն . եւ [2]Սիովր եւ ի Բազանաս-
27 յէ", եւ դարձցին յարեւելից կողմանէ ի
Բեթդագովն , եւ կցեսցի ի Զաբուղոն եւ
[3]ի Դայի , յԵփթայեղի , ընդ հիւսիսի . եւ
մտցին սահմանքն ի Սափաթա Բեթա-
մեկ . եւ գնասցեն ընդ սահմանակիցս
Աշայելի", եւ անցցեն ի Քարովղ յահե-
28 կէ կողմանէ , եւ յԱքրան , եւ յՌովբ ,
եւ յԱմմոնն , եւ ի կանայի մինչեւ ի Սի-
29 դոն մեծ . Եւ դարձցին սահմանքն յՌա-
մա մինչեւ ցքաղաք ամրոցին Տիւրաց-
ւոց , եւ դարձցին սահմանքն ի Սուսա ,
եւ եղիցին ելք նորա ծովն , եւ վիճակն
30 Ակզիփայ . Եւ Ամմա եւ Ափիկա եւ Ռա-
ւովբա . քաղաքք քսան եւ երկու եւ ա-
31 ւանք նոցա ։ Այս է ժառանգութիւն ցեղի
որդւոցն Սաւբայ ըստ տոհմից իւրեանց .
քաղաքք նոցա եւ աւանք իւրեանց ։
32 Եւ Նեփթաղիմայ ել վիճակն վեցե-
րորդ , որդւոցն Նեփթաղիմայ ըստ տոհ-
33 մից իւրեանց ։ Եւ եղեն սահմանք նոցա
[4]Մեղկի եւ Մայեղոմ եւ Բեսրանաս-
յիմ եւ Արմէ եւ" Նագեր եւ Ցաբնեղ
մինչեւ ցղականմ . եւ եղեն ելք նոցա
34 Յորդանան ։ Եւ դարձցին սահմանքն [5]ի
ծովն Ազանովթ Թաբովր , եւ անցցեն
անտի ի Կովկ . եւ կցեսցին ի հարաւոյ՝
Զաբուղոնի , եւ Սաւբայ կցեսցին [6]ի ծո-
վակողմն , Ծուկայ եւ" Յորդանան յա-
35 րեւելից կողմանէ ։ Եւ քաղաքք պարս-
պաւորք [7]Տիւրայուց՝ Տիւրոս" եւ Ամաթ
36 եւ Ռեկկաթ եւ Քինեռեթ Եւ Ադամի
37 եւ Ռամմա եւ Ասովր Եւ Կադէս եւ
38 Եդրայեի եւ Ակնասովր Եւ Յարովն եւ
Մակղադիէլ , Ափրամ եւ Բեթանաթ
եւ Բեթսամիւս . քաղաքք ինն եւ տասն
39 եւ ագարակք նոցա ։ Այս է ժառանգու-
թիւն ցեղի որդւոցն Նեփթաղիմայ , ըստ
տոհմից իւրեանց , քաղաքք եւ աւանք
նոցա ։
40 Եւ ցեղի որդւոցն Դանայ ըստ տոհ-
մից իւրեանց ել վիճակն հեմնիերորդ ։
41 Եւ եղեն սահմանք ժառանգութեան նո-
42 ցա Սարաա եւ [8]Եսթաւուղ Եւ Սաղաբին
43 եւ Յեթզա եւ Թամնա Եւ Եղեկով եւ
44 Բաաղովթ եւ Բանեբարակ , Եւ քա-
ղաքք Սամէս եւ Յաազուն եւ Եղոն եւ
45 Ակկարոն Եւ Գաւաթոն եւ Յուքթ եւ
46 Գեթրեմոն , Եւ ի ծովէն Բազէից , եւ
47 Բակրովնա . սահման մերձ Յոպպէ" ։ Եւ
ել սահման որդւոցն Դանայ ի նոցանէն ։
[9]Այս է ժառանգութիւն ցեղի որդւոցն
Դանայ՝ ըստ տոհմից իւրեանց , քաղաքք
եւ աւանք նոցա ։ Եւ ոչ ջնջեցին որ-
դիքն Դանայ զԱմովրհայսն զինեցիսն իւր-
եանց ի լերինն . եւ ոչ թողուն զնոսա
Ամովրհայիքն իջանել ի հովիտան , եւ
նեղէին ի նոցանէ զսահմանս բաժնի իւր-
եանց ։" Եւ գնացին որդիքն Դանայ եւ
եաուն պատերազմ ընդ Ղեսեմայ , եւ
առին զնա եւ հարին զնա սրով աւեա-
րի . եւ ժառանգեցին զնա եւ բնակեցին
ի նմա . եւ անուանեցին զՂեսեմ՝ Դան ,
48 ըստ անուան հօրն իւրեանց ։ Այս է ժա-
ռանգութիւն ցեղի որդւոցն Դանայ ըստ
ազգականութեան իւրեանց . քաղաքքս
այսոքիկ եւ ագարակք իւրեանց ։
49 Եւ վախճանեցին ժառանգել զերկիրն
ըստ սահմանաց իւրեանց ։ [9]Եւ Ամովրհա-
ցին տուեցաք բնակել յԵղով եւ ի Սաղա-
միմ . եւ ծանրացաւ ձեռն Եփրեմի ի վե-
րայ նոցա , եւ եղեն նոցա ի հարկա-
ւուս . եւ գնացին նկատել զերկիրն ըստ
սահմանաց նոցա ։" Եւ եաուն որդիքն
Իսրայելի ժառանգութիւն Յեսուայ որդ-
50 ւոյ Նաւեայ ի մէջ իւրեանց . Հրամա-
նաւ Տեառն եաուն նմա զքաղաքն զոր
խնդրեաց զԹամնաթսարա որ է ի լերինն
Եփրեմայ , եւ չինեաց զքաղաքն եւ բնա-
կեցաւ ի նմա ։
51 Այս են բաժինք՝ զորս բաժանեաց Ե-
զիազար քահանայ եւ Յեսու Նաւեան ,
եւ իշխանք նահապետութեանց ցեղիցն
Իսրայելի , վիճակօքն ի Սիւով առաջի
Տեառն առ դրան խորանին վկայու-
թեան . եւ [10]դնացին նկատել" զերկիրն ։

[1] ՆԵԲԲ. Ակամելէք եւ Ամաթ [2] ՆԵԲԲ. ի Սիովրզեբնաթ
[3] ՆԵԲԲ. ի ձորն Յեփթայեղի ընդ հիւսիսի ի Բեթամեկ
եւ ի Նէհէլ [4] ՆԵԲԲ. յԵղեփայ եւ յԵղովմայ ի
Սանանիմ եւ յԱդամի [5] ՆԵԲԲ. յարեւմտից
[6] ՆԵԲԲ. յարեւմտից, եւ ի Ծուկայ մինչեւ ի [7] ՆԵԲԲ.
Աեդիմ, Սէր

[8] ՆԵԲԲ. Եսթաւուղ եւ Իրսամէս (42) Եւ Սա-
ղաբին եւ Ակեղոն եւ Յեթզա (43) Եւ Եղոն և
Թամնա եւ Ակկարոն. (44) Եւ Եղեկէ եւ Գա-
բաղոն եւ Բաաղովթ (45) Եւ Յուդ եւ Բանե-
բարակ եւ Գեթրեմոն (46) Եւ Մէարկոն եւ
Ռակկոն Հանդերձ սահմանաւ յանդիման Յոպպէի
[9] ՅԵԲԲ. պակաս [10] ՆԵԲԲ. վախճանեցին բաժանել

Գլ. Ի

1 Խօսեցաւ Տէր ընդ Յեսուայ եւ ասէ,
Խօսեաց ընդ որիսն Իսրայելի եւ ա-
2 սացես, Տուք զքաղաքս ապաստանեայն
զորոց խօսեցայ ընդ ձեզ ի ձեռն Մով-
3 սիսի, Ապաստան ապանողի որ սպանանէ
զանձն ակամայ յանգէտս, եւ եղիցին
ձեզ քաղաքք ապաստանի, [1]եւ մի՛ մեռ-
ցի սպանօղն՝ ի մերձաւորէ արեանն,
[1]մինչեւ կացցէ առաջի ժողովրդեանն
4 յատենի.՝ Եւ փախիցէ ի մի ի քաղա-
քացն այնոցիկ, եւ կացցէ ի մուտս դրան
քաղաքին, եւ խօսեսցի յականջս ծերոց
քաղաքին այնորիկ զրանս իւր. եւ ժո-
ղովեսցին զնա ժողովուրդն առ ինքե-
անս, եւ սացին նմա տեղի, եւ բնա-
5 կեսցէ ընդ նոսա։ Եւ եթէ երթայցէ մեր-
ձաւոր արեանն զկնի նորա, մի՛ մատ-
նեսցեն զսպանօղն ի ձեռս նորա. քանզի
յանգէտս եհար զընկերն իւր, եւ ոչ
6 առեալր զնա յերէկն եւ յեռանդ։ Եւ
բնակեսցէ ի քաղաքին յայնմիկ մինչեւ
կացցէ առաջի ժողովրդեանն յատենի,
մինչեւ մեռանիցի քահանայն մեծ որ ի-
ցէ յաւուրսն յայնոսիկ. եւ ապա դարձ-
ցի սպանօղն եւ եկեսցէ ի տեղի իւր եւ
ի տուն իւր, ի քաղաքն ուստի փախեաւ։
7 Եւ զատուցին զկազէս ի Գալիլեա ի
լերինն Նեփթաղիմայ, եւ զՍիւքեմ ի
լերինն Եփրեմայ, եւ զքաղաքն Արբոկ՝
8 այն է Քեբրոն ի լերինն Յուդայ, եւ յայ-
կոյս Յորդանանու յարեւելից երկրայի,
եատուն զԲոսոր յանապատին ի դաշտի ի
ցեղէն Ռուբինի, եւ զՌամովթ ի Գա-
զաադ՝ ի ցեղէն Գադայ, եւ զԳովղան ի
9 Բասանաստան՝ ի ցեղէն Մանասէի։ Այն
են քաղաքք [2]հայակապք ամենայն որդ-
ւոցն Իսրայելի եւ եկին յեցելոյ ի նոս-
ա, փախչել անդր ամենայնի որ հարկա-
նիցէ զանձն ակամայ. զի մի՛ մեռանիցի
ի ձեռաց մերձաւորի արեանն, մինչեւ
կացցէ առաջի ժողովրդեանն յատենի։

Գլ. ԻԱ

1 Եւ մատեան նահապետք որդւոցն Ղեւ-
եայ առ Եղիազար քահանայ, եւ առ Յե-
սու Նաւեան, եւ առ նահապետս տոհ-
2 մից ցեղից որդւոցն Իսրայելի, Եւ խօ-
սեցան ընդ նոսա ի Սելով յերկրին Քա-
նանացւոց եւ ասեն, Հրամայեաց Տէր
ի ձեռն Մովսիսի՝ տալ մեզ քաղաքս բնա-
կելոյ, եւ զանդաստանս նոցա անասնոց
3 մերոց։ Եւ եատուն որդիքն Իսրայելի Ղեւ-
ացւոցն ի ժառանգութիւնն հրամանաւ
Տեառն զքաղաքան զայնոսիկ եւ զան-
դաստանս նոցա։
4 Եւ ել վիճակ առաջին կահաթեայ. եւ
եղեն որդւոցն Ահարոնի՝ քահանայիցն
Ղեւեացւոց, ի ցեղէն Յուդայ եւ ի ցե-
ղէն Շմաւոնի եւ ի ցեղէն Բենիամինի՝
5 վիճակաւ քաղաքք երիքասանք։ Եւ
այլոց որդւոցն կահաթեայ ինայելոյ յազ-
գականս ցեղէն Եփրեմայ, եւ ի
ցեղէն Դանայ եւ ի կիսոյ ցեղէն Մանա-
սէի՝ վիճակաւ քաղաքք տասն։ Եւ որդ-
ւոցն Գերսոնի յազգականս ցեղին
Իսաքարայ եւ ի ցեղէն Ասերայ, եւ ի
ցեղէն Նեփթաղիմայ եւ ի կիսոյ ցեղին
Մանասէի ի Բասան, վիճակաւ քաղաքք
7 երիքասան։ Եւ որդւոցն Մերարեայ
ըստ տոհմից իւրեանց, ի ցեղէն Ռուբե-
նի եւ ի ցեղէն Գադայ եւ ի ցեղէն Զա-
բուղոնի, վիճակաւ քաղաքք երկոտա-
8 սան։ Եւ եատուն որդիքն Իսրայելի Ղեւ-
ացւոցն զքաղաքան զայնոսիկ եւ զան-
դաստանս նոցա, զոր օրինակ պատուե-
րեաց Տէր Մովսիսի, վիճակաւ։
9 Եւ եատ ցեղ որդւոցն Յուդայ եւ ցեղ
որդւոցն Շմաւոնի [1]եւ ցեղ որդւոցն Բե-
նիամինի՝ զքաղաքան զայնոսիկ, որ կո-
10 չեցան [3]յանուն եւ յազգ Որդւոցն՝ Ա-
հարոնի, ի տոհմէ կահաթեայ որդւոցն
11 Ղեւեայ. զի նոցա էր նախ վիճակն։ Եւ
եատուն նոցա [4]զԿարիաթարբոկ զմայր
քաղաքացն՝ Ենակայ, այն է՝ Քեբրոն ի
լերինն Յուդայ, եւ զանդաստանս չուրջ
12 զնովաւ։ Եւ զագարակս նորա եւ զաւանս
նորա զոր [5]եատ Յեսու՝ ՚Քաղեբայ՚ որդւոյ
13 Յեփոնեայ ի կալուած։ Եւ որդւոցն Ա-
հարոնի քահանայի եատուն քաղաք ա-
պաստանի սպանողի՝ զԵբրոն եւ զդաս-
տուցեալսն ի նա, եւ զԼիբնա եւ զդաս-
14 տուցեալսն ի նա, Եւ զՅեթիր եւ զդաս-
տուցեալսն ի նա, եւ զԵսթեմոա եւ
15 զդաստուցեալսն ի նա, Եւ զՈլոն եւ զդաս-
տուցեալսն ի նա, եւ զԴաբիր եւ զդաս-
16 տուցեալսն ի նա, Եւ զԱյին եւ զդաս-
տուցեալսն ի նա, եւ զՅետտա եւ զդաս-
տուցեալսն ի նա, եւ զԲեթսամիսա եւ
զդաստուցեալսն ի նա. քաղաքք ինն,

[1]ՅԵԲԲ. ԳԻ--Ե [2]ԵԲԲ. ասհմանեալք
[3]ԵԲԲ. յանուանէ. (10) Եւ եղեն որդւոցն [4]ԵԲԲ. զքաղաքն Արբոկայ, Հօր [5]ԵԲԲ. եատուն

17 յերկուց ցեղից այնոցիկ ։ Եւ ի ցեղն
Բենիամինի՝ զԴարաւան եւ զղաաւ-
ցեան ի նա , եւ զԴարաա եւ զղաաւ-
18 ցեան ի նա , Եւ զԱնաթովթ եւ զղա-
աւցեան ի նա , եւ զԱլման եւ զղա-
19 աւցեան ի նա . քաղաքս չորս ։ Ամե-
նայն քաղաքք որդւոց Ահարոնի՝ քահա-
նայից , քաղաքք երկբաւասանք , եւ ան-
դաստանք նոցա ։
20 Եւ առնմից որդւոցն կահաթու Ղե-
աւացւոցն մնացելոց յորդւոցն կահաթու ,
եւ եղեն քաղաքք [1]սահմանաց նոցա ի
21 ցեղէն Եփրեմայ . Եւ տուն նոցա քա-
ղաք ապաւաանի սպանողի՝ զԱբդքիմ
եւ զղաաւցեան ի նա ի լերինն Եփ-
րեմայ , եւ զԳազեր եւ զղաաւցեան
22 ի նա , Եւ զկաբսեմ եւ զղաաւցեան
ի նա , եւ [2]զԲեթերն Բեհորն եւ զղա-
23 աւցեան ի նա . քաղաքք չորք ։ Ի ցե-
ղէն Դանայ՝ զԵղթեկով եւ զղաաւցեան
ի նա , եւ զԳեբեթովն եւ զղաաւցեան
24 ի նա , Եւ զՅաղոն եւ զղաաւցեան ի
նա , եւ զԳեթրիմոն եւ զղաաւցեան
25 ի նա . քաղաքք չորք ։ Եւ կիսոյ ցեղին
Մանասէի՝ զԹանաք եւ զղաաւցեան
ի նա , [3]եւ զԲեղեաման" եւ զղաաւցեան
26 ի նա . քաղաքս երկուս ։ Ընդ ամենայն՝
քաղաքս տասն եւ զղաաւցեան ի նոսա ,
առնմից որդւոցն կահաթու մնացելոց ։
27 Եւ որդւոցն Գերսոնայ , ազգականացն
Ղեւաւացւոց , ի կիսոյ ցեղէն Մանասէի
քաղաքս զաաւցեալս սպանողաց՝ զԳով-
ղան ի Բասանաւտանի եւ զղաաւցեան
ի նա , եւ զԲեեսթարա եւ զղաաւցեան
28 ի նա . քաղաքս երկուս ։ Եւ ի ցեղէն Ի-
սաքարայ՝ զԿեսիան եւ զղաաւցեան ի
նա , եւ զԴաբրաթ եւ զղաաւցեան ի
29 նա , Եւ զԵրմովթ եւ զղաաւցեան ի
նա , եւ [4]զաղբեւրն Նամակայ" եւ զղա-
30 աւցեան ի նա . քաղաքս չորս ։ Եւ ի
ցեղէն Ասերայ՝ զՄաաւաղ եւ զղաաւ-
ցեան ի նա , եւ զԱբդոն եւ զղաաւ-
31 ցեան ի նա , Եւ զԽելկաթ եւ զղա-
աւցեան ի նա , եւ զՌովբ եւ զղա-
32 աւցեան ի նա . քաղաքս չորս ։ Եւ ի
ցեղէն Նեփթաղիմայ՝ քաղաքս զաաւ-
ցեալս սպանողի , զԿադէս ի Գալիլեա
եւ զղաաւցեան ի նա , զԱմաթդոր եւ
զղաաւցեան ի նա , եւ [5]զՆոյամոն եւ
զղաաւցեան ի նոսա . քաղաքս երկու ։
33 Ընդ ամենայն քաղաքս Գերսոնի ըստ
առնմից իւրեանց քաղաքս երեքտասան ,
եւ զաաւցեալք նոցին ։
34 Եւ առնմի որդւոցն Մերարեայ այլոցն
Ղեւաւացւոց , ի ցեղէ որդւոցն Զաբու-
ղոնի՝ զՅեկնեամ եւ զանդաստանս նորա ,
[2]զկարէս եւ զանդաստանս նորա ," զկար-
35 թա եւ զանդաստանս նորա , ԶԴեմնա
եւ զանդաստանս նորա , զՆաազովզ եւ
զանդաստանս նորա . քաղաքս [6]չորս ։
36 Եւ [2]յայնկոյս Յորդանանու ի հանդիպակ
Երիքովի," ի ցեղէն Ռուբինի [2]քաղաքս
ապաւաանի սպանողի" զԲասեր [2]յանա-
պատին Մխաովրայ" եւ զանդաստանս
նորա , եւ զՅազեր եւ զանդաստանս նո-
37 րա , [7]Զկեդոն եւ զանդաստանս նորա ,
[8]զՄաեփաա եւ զանդաստանս նորա . քա-
38 զաքս չորս ։ Եւ ի ցեղէն Գադայ՝ քա-
զաքս ապաւաանի սպանողի , զՌամովթ
ի Գաղաադ եւ զանդաստանս նորա , զՄա-
39 նայամ եւ զանդաստանս նորա , ԶԵսեբոն
եւ զանդաստանս նորա , եւ զԱղեր եւ
զանդաստանս նորա . ընդ ամենայն՝ քա-
40 զաքս չորս ։ Ամենայն քաղաքք որդւոցն
Մերարեայ , ըստ առնմից իւրեանց մնա-
ցելոց ի ցեղէն Ղեւեայ , եւ եղեն սահ-
մանք նոցա քաղաքք երկոտասան ։
41 Ընդ ամենայն՝ քաղաքք Ղեւաւացւոցն
ի մէջ կալուածոց որդւոցն Իսրայելի՝
քառասուն եւ ութ քաղաք , եւ անդաս-
տանք նոցա [2]չորջ զքաղաքօքն այնո-
42 քիւք". Քաղաքք , եւ անդաստանք չորջ
զքաղաքօքն . նոյնպէս ամենայնումն քա-
ղաքացն այնոցիկ ։
[2]Եւ վախճանեաց Յեսու բաժանել զերկիրն սահմանօք իւրով ։ Եւ տուն որդիքն Իսրայելի բաժին Յեսուայ ըստ հրամանի Տեառն՝ տուն նմա զքաղաքն զոր խնդրեաց՝ զԹամնաստաքար ի լերինն Եփրեմայ . Եւ չինեաց Յեսու զքաղաքն եւ բնակեցաւ ի նմա ։ Եւ առ Յեսու զսուրն քարիզէնս որով թլփատեաց զորդիսն Իսրայելի զելեալս ի ճանապարհն անապատին , քանզի ոչ թլփատեցան յանապատի անդ , եւ եղ զնոսա ի Թամնաստաքար ։"
43 Եւ ետ Տէր Իսրայելի զամենայն երկիրն զոր երդուաւ տալ հարցն նոցա , եւ ժա-
44 ռանգեցին զնա , եւ բնակեցին ի նմա ։ Եւ
հանգոյց զնոսա Տէր չորջանակի՝ որպէս
երդուաւ հարցն նոցա . եւ ոչ որ յարեաւ
ընդդէմ նոցա ի թշնամեաց իւրեանց . զի

[1] Եբր. վիճակի [2] Եբր. գ-ի-ւ [3] Եբր. եւ զԳեթ-
բեհոն [4] Եբր. զԵնգանիմ [5] Եբր. զԿաբթան
[6] Եբր. չորս [7] Եբր. զԿադեմովթ [8] Եբր. զՄեփայաթ

դամնային թշնամիս նոցա մատնեսցէ
45 Տէր ի ձեռս նոցա ։ Եւ ոչ սխալեսցաս բան
մի յամենայն բանից բարեաց զոր խոսե-
ցաւ Տէր որդւոյն Իսրայէլի , այլ ամե-
նայն ինչ եղեւ ։

Գլ. Իհ

1 Յայնժամ կոչեաց Յեսու զորսին Ռու-
բենի եւ զորսին Գադայ եւ զկէս ցեղին
2 Մանասէի , Եւ ասէ ցնոսա , Դուք ձե-
ղիւն լուարուք զամենայն ինչ զոր պա-
տուիրեաց ձեզ Մովսէս ծառայ Տեառն ,
եւ ունկնդիր եղէք բարբառոյ իմոյ բոա
3 ամենայնի զոր պատուիրեցի ձեզ ։ Եւ ոչ
թողէք զեղբարս ձեր զայնչափ աւուրս ,
[1]եւս աւելի՛ մինչեւ ցայսօր ժամանակի
եւ պահեցէք զպատուիրանս Տեառն Ա-
4 ստուծոյ ձերոյ ։ Եւ արդ հանդոյց Տէր
Աստուած [2]մեր զեղբարս ձեր , որպէս եւ
ասաց նոցա . բայց արդ դարձեալ եր-
թայք ի տունս ձեր յերկիր կալուա-
ծոյ ձերոյ , զոր եա ձեզ Մովսէս ծա-
5 ռայ Տեառն յայնկոյս Յորդանանու ։ Այլ
զգոյշ լինիջիք յոյժ առնելոյ զպատուի-
րանսն եւ զօրէնսն զոր պատուիրեաց
ձեզ Մովսէս ծառայ Տեառն , սիրել զՏէր
Աստուած ձեր եւ գնալ յամենայն ճա-
նապարհս նորա , պահել զպատուիրանս
նորա , եւ յարել ի նա եւ պաշտել զնա
յամենայն սրտի ձերմէ եւ յամենայն անձ-
6 նէ ձերմէ ։ Եւ օրհնեաց զնոսա Յեսու
եւ արձակեաց զնոսա , եւ գնացին ի
7 տունս իւրեանց ։ Եւ կիսոյ ցեղին Մա-
նասէի եա Մովսէս ի Բասանիտասն , եւ
կիսոյն եա Յեսու ընդ եղբարս նոցա [3]առ
ծովեզերն՝ ։ Եւ յորժամ արձակեաց զնո-
սա Յեսու ի տունս իւրեանց , եւ օրհ-
8 նեաց զնոսա . Եւ խոսեցաւ ընդ նոսա՝
եւ ասէ , Ընդլայն բարձօք [4]երիվարին ի
տունս իւրեանց՝ , եւ անասուն բազում
յոյժ , եւ արծաթ եւ ոսկի , եւ պղինձ
եւ երկաթ , եւ հանդերձ բազում յոյժ
[5]բաժանեցարո՛ւք ընդ եղբարս իւրեանց՝ ։
9 Եւ դարձան եւ գնացին որդիքն Ռու-
բենի եւ որդիքն Գադայ եւ կէս ցեղին
Մանասէի յորդւոյն Իսրայէլի , ի Սիլո-
վայ , յերկրէն Քանաանացւոց , երթալ
յերկիրն Գաղաադու՝ յերկիր կալուածոց
իւրեանց զոր ժառանգեցին հրամանաւ
Տեառն ի ձեռն Մովսէսի ։
10 Եւ եկին [6]ի Գալիլովթ Յորդանանու ,
որ է յերկրին Քանաան , եւ շինեցին որ-
դիքն Ռուբենի եւ որդիքն Գադայ եւ կէս
ցեղին Մանասէի սեղան առ եզերբ Յոր-
11 դանանու , սեղան մեծ առնանելով ։ Եւ
լուան որդիքն Իսրայէլի եւ ասեն ահա
շինեցին որդիքն Ռուբենի եւ որդիքն Գա-
դայ եւ կէս ցեղին Մանասէի սեղան ի
սահմանս երկրին Քանաանացւոց [6]ի Գա-
լիլովթ Յորգանանու , յայնկոյս որդւոցն
12 Իսրայէլի . Եւ լուան որդիքն Իսրայէլի ,
եւ ժողովեցան որդիքն Իսրայէլի ի Սի-
լով , եկանել տալ ընդ նոսա պատերազմ ։
13 Եւ առաքեցին որդիքն Իսրայէլի առ որ-
դիսն Ռուբենի եւ առ որդիսն Գադայ եւ
առ կէս ցեղին Մանասէի ի Գաղաադ ,
զՓենհէես զորդի Եղիազարու [7]որպէս Ա-
14 հարոնի՛ քահանայի եւ առն այր միոյ
իշխանայն ընդ նմա , մի մի իշխան ի նա-
հապետացն՝ յամենայն ցեղիցն Իսրայէ-
լի . իշխանք առնց նահապետացն էին հա-
15 զարապետք Իսրայէլի . Եւ եկին առ որ-
դիսն Ռուբենի եւ առ որդիսն Գադայ եւ
առ կէս ցեղին Մանասէի ի Գաղաադ ,
16 խոսեցան ընդ նոսա եւ ասեն , Այսպէս
ասէ ամենայն ժողովուրդն Տեառն , Զինչ
են յանցանքդ այդոքիկ զոր յանցայք ա-
ռաջի [1]Տեառն Աստուծոյ Իսրայէլի , դառ-
նալ [7]յետս ի Տեառնէ , չինել ձեզ սե-
ղան , եւ լինել ձեզ [7]ապստամբ ի Տեառնէ
17 [1]Աստուծոյ մերմէ՛՝ ։ Միթէ փո՞քր իմն
մեզ մեղքն Փեգովրայ զի ոչ եմք սրբեալ
ի նմանէ մինչեւ ցայսօր , եւ եղեն հա-
րուածք ի վերայ ժողովրդեանն Տեառն .
18 Եւ դուք դարձայք այսօր ի Տեառնէ .
եւ եղիցի իմ ապստամբիցէք այսօր ի
Տեառնէ , եւ լինիցի վաղիւ բարկութիւն
19 ի վերայ ամենայն Իսրայէլի ։ Եւ արդ
եթէ [8]փոքր իցէ ձեզ երկիր կալուածոց
ձերոց , անցէք յերկիր կալուածոց Տեառն ,
ուր հաստատեալ է խորանն Տեառն , եւ ժա-
ռանգեցէք ի մէջ մերում . եւ մի՛ լինիք
ապստամբք ի Տեառնէ , եւ մի՛ ի մէնջ
ապստամբէք , վասն շինելոյ ձերոյ սե-
ղան արտաքոյ քան զսեղան Տեառն Ա-
20 ստուծոյ մերոյ ։ Ո՞չ ապաքէն Աքար Զա-
բդիայեան յանցաւոր յանցանս ի նզովիչ ան-

[1] ՅԱԻԵ. գ-լ-ա-դ [2] ՆԵԲ. ձեր [3] ՆԵԲ. յայսկոյս Յորդանանու ընդ արեւմտեաս [4] ՆԵԲ. գոր-ձարոք ի վրանս ձեր [5] ՆԵԲ. բաժանեցարուք զաւարն ի թշնամեաց ձերոց ընդ եղբարս ձեր

[6] Ա-յ-ե-ա-, ի սահմանս [7] ՆԵԲ-յետ-ե-լ-ս-, այսօր [8] ՆԵԲ. պիղծ

ահ , եւ ի վերայ ամենայն ժողովրդեանն Իսրայէլի եղեւ բարկութիւն . եւ [1]նա միայն էր ," միմէ ինքն միայն մեռաւ յիւրում ի մեղս ։
21 Պատասխանի եւտն որդիքն Ռուբենի եւ որդիքն Գադայ եւ կէս ցեղին Մանասէի , խօսեցան ընդ հազարապետան
22 եւ ասեն , Աստուած՝ Աստուած է Տէր , եւ Աստուած՝ Աստուած ինքնին գիտէ , եւ Իսրայէլ ինքնին գիտասցէ , եթէ վասն ապստամբութեան ինչ յանցեալք առաջի Տեառն , մի ապրեցուսցէ զմեզ յաւուրս
23 յայսմիկ . Եւ եթէ չինեցաք մեզ սեղան ապստամբելոյ ի Տեառնէ մերմէ , հանել ի վերայ նորա [2]զոհ ողջակիզաց", կամ եթէ առնել ի վերայ նորա զոհ [3]փրկու-
24 թեան , Տէր ինքնին խնդրեսցէ ։ Այլ վասն երկիւղի արարաք զայս . ասեմք , Գուցէ խօսեսցին որդիքն ձեր ընդ որդիսն մեր եւ ասիցեն , Թէ Զի՞ կայ ձեր
25 եւ Տեառն Աստուծոյ Իսրայէլի . Եւ սահման եդ Տէր ընդ մեզ եւ ընդ ձեզ , որդիք Ռուբենի եւ որդիք Գադայ , զՅորդանան , եւ չիք ձեր բաժին ի Տեառնէ . եւ օտարացուցանիցեն որդիք ձեր զորդիսն մեր [4]զի մի պաշտիցին զՏէր"։ Եւ
26 ասացաք առնել այսպէս . չինել զսեղանս զայս , ոչ վասն ողջակիզացս եւ ոչ վասն
27 զոհից , Այլ զի իցէ սա ի վկայութիւն ընդ մեզ եւ ընդ ձեզ եւ ընդ որդիս մեր յետ մեր , պաշտել զպաշտօն Տեառն առաջի նորա [5]ընծայիւք մերովք եւ պատարագօք մերովք եւ զոհիւք փրկութեանց մերոց", եւ ոչ ասասցին որդիք ձեր ցորդիս մեր վաղիւ , Թէ Ոչ գոյ ձեր
28 բաժին ի Տեառնէ ։ Եւ ասացաք Թէ լինիցի երբեք եւ խօսեսցին ընդ մեզ կամ ընդ ազգս մեր վաղիւ , եւ ասիցեն Թէ Տեսէք զնմանութիւն սեղանոյ Տեառն զոր արարին հարքն մեր , ոչ վասն ողջակիզաց եւ ոչ վասն զոհից , այլ վկայութիւն ընդ մեզ եւ ընդ ձեզ [1]եւ ի մէջ
29 որդւոց մերոց" ։ Այլ քաւ լիցի մեզ ապստամբել ի Տեառնէ [6]այսօր , առ ի չինելոյ մեզ սեղան զոհից կամ ողջակիզաց կամ զոհից փրկութեան" արտաքոյ քան զսեղան Տեառն Աստուծոյ մեր

[1] 8ԵԲԲ. գ-ւ-ե-ւ [2]ԵԲԲ. ողջակէզս եւ Նուէրս [3]ԵԲԲ. խաղաղութեան [4]ԵԲԲ. չերկնչել ի Տեառնէ [5]ԵԲԲ. ողջակիզօք մերովք, եւ պատարագօք մերովք եւ խաղաղականօք մերովք [6]ԵԲԲ. եւ դառնալ այսօր յետս ի Տեառնէ, չինել սեղան ողջակիզաց, հացի ընծայի եւ զոհի

րոյ որ է առաջի խորանի Նորա ։
30 Եւ իբրեւ լուաւ Փենէէս քահանայ եւ ամենայն իշխանք ժողովրդեանն եւ հազարապետքն Իսրայէլի որ էին ընդ նմա զրանան , զոր խօսեցան որդիքն Ռուբենի եւ որդիքն Գադայ եւ [7]կէս ցեղին"
31 Մանասէի , հաճոյ թուեցաւ նոցա ։ Եւ ասէ Փենէէս որդի եղիազարու քահանայ [1]Տեառն ցորդիսն Ռուբենի եւ ցորդիսն Գադայ եւ [8]կէս ցեղին" Մանասէի , Այսօր գիտացաք Թէ ընդ մեզ է Տէր , զի ոչ յանցեալք առաջի Տեառն զյանցումն զայդ , զի ապրեցուցէք զորդիսն Իսրայէլի ի ձեռաց Տեառն ։
32 Եւ դարձան Փենէէս քահանայ որդի եղիազարու եւ իշխանք տոհմիցն յորդւոցն Ռուբենի եւ յորդւոցն Գադայ [1]ի կիսոյ ցեղէն Մանասէի" , յերկրէն Գաղաադու՝ յերկիրն Քանանու առ որդիսն Իսրայէլի , եւ հաւն նոցա զպատգամսն ։
33 Եւ հաճոյ թուեցաւ լսանն [9]որդւոցն Իսրայէլի , եւ օրհնեցին զԱստուած [10]որդւոցն Իսրայէլի . եւ խօսեցան ընդ որդիսն Իսրայէլի եւ ասեն մի՛ եւս ելանել ընդ նոսա ի պատերազմ՝ սատակել զերկիր որդւոցն Ռուբենի եւ որդւոցն Գադայ
[11]եւ կիսոյ ցեղին Մանասէի . եւ բնակեցան ինդա ։ Եւ անուանեաց Յեսու զտեղանն Ռուբենի եւ զԳադայ եւ զկէս ցեղին Մանասէի եւ ասէ , Չի վկայութիւն է ի մէջ նոցա , Թէ Տէր՝ Աստուած է նոցա"։

Գլ. ԻԳ

1 Եւ եղեւ յետ աւուրցն բազմաց , յետ հանգուցանելոյ Տեառն զԻսրայէլ յամենայն թշնամեացն նոցա չուրջանակի , եւ Յեսու ծերացեալ եւ անցեալ զաւուրսք՝
2 կոչեաց Յեսու միանգամայն զամենայն որդիսն Իսրայէլի եւ զծերակոյտս նոցա , եւ զիշխանս նոցա եւ զդատաւորս նոցա եւ զգպիրս նոցա , եւ ասէ ցնոսա , Ես
3 ծերացայ եւ անցի զաւուրսք , Եւ դուք ձեզէն տեսէք զամենայն զոր արար Տէր Աստուած [12]մեր ընդ ամենայն ազգսն՝ [1]զոր երարձ" յերեսաց ձերոց . զի Տէր Աստուած ինքնին տայր պատերազմ ընդ
4 ձեր ։ Եւ արդ տեսէք զի թողի ձեզ

[7] ԵԲԲ. որդիքն [8]ԵԲԲ. ցորդիսն [9]ԵԲԲ. յաչս որդւոցն [10]ԵԲԲ. որդիքն [11]ԵԲԲ. որ բնակէին ի նմա ։ (34) Եւ կոչեցին որդիքն Ռուբենի եւ որդիքն Գադայ զտեղանն Վ-յ-ե-ւ, զի վկայ է նա ի մէջ մեր, եթէ Տէր է Աստուած [12]ԵԲԲ. ձեր

զազգան զմնացեալն զայնոսիկ ի ժառանգութիւն ըստ ցեղից ձերոց , ի Յորդանէ զամենայն ազգն զոր սատակեցի ի ծովէն մեծէ որ զատուցանէ
5 ի մտից արեւու : Արդ Տէր Աստուած [1]մեր նա սատակեսցէ զնոսա յերեսաց ձերոց մինչեւ կորիցին . [2]եւ արձակեսցէ ի վերայ նոցա ղպալանս վայրենիս՝ մինչեւ սատակեսցէ զնոսա եւ զկատարս նոցա յերեսաց ձերոց." եւ ժառանգեսջիք զերկիր նոցա որպէս խոսե-
6 ցաւ Տէր Աստուած [1]մեր ընդ [3]մեզ : Արդ զօրացարուք յոյժ զգուշանալ եւ առնել զամենայն զրեալս ի գիրս օրինացն Մովսիսի , զի մի խառորիցիք ի նմանէ յայ
7 կամ յահեակ . Զուցէ մոռանիցէք յազգն մնացեալս յայնոսիկ . եւ անուանք պիղ նոցա մի անուանեսցին ի միջի ձերում , մի երդնուցուք ի նոսա , եւ մի պաշտիցէք զնոսա , եւ մի երկիր պագանիցէք
8 նոցա . Այլ զնետ Տեառն Աստուծոյ [4]մերոյ երթիջիք՝ որպէս արարէք մինչեւ
9 յայսօր : Եւ սատակեաց զնոսա Տէր յերեսաց ձերոց զազգս մեծամեծս եւ զհզօրս, եւ ոչ ոք եկաց ընդդէմ ձեր մինչեւ յայս-
10 օր : Մի այր ի ձէնջ հալածեաց զհազարս . զի Տէր Աստուած ձեր ինքնին տայր պատերազմ ընդ ձեր , որպէս խոսեցաւ ընդ ձեզ :
11 Զգոյշ լինիջիք յոյժ անձանց ձերոց
12 սիրել զՏէր Աստուած ձեր : Ապա թէ զառնալով դառնայցէք եւ յաւելուցուք յազգն մնացեալս ի ձէնջ , եւ խնամութիւնս առնիցէք ընդ նոսա , եւ խառնակիցիք դուք ընդ նոսա եւ նոքա ընդ
13 ձեզ , գիտելով գիտասջիք , զի ոչ եւս յաւելուցու Տէր սատակել զազգան զայնոսիկ յերեսաց ձերոց . եւ լինիցին ձեզ յորոգայթս եւ ի գայթակղութիւնս , [5]խոչ ի զարչապարս" ձեր , եւ նետք յաչս ձեր , մինչեւ կորնչիցիք յերկրէս բարութեան
14 զոր եւ ձեզ Տէր Աստուած ձեր : Եւ ես ահա երթամ այսօր զճանապարհ որպէս ամենեքեան որ են յերկրի . եւ ծանիջիք յամենայն սրտէ ձերմէ եւ յամենայն անձնէ ձերմէ , զի ոչ վրիպեաց բան մի յամենայն [6]բանից զոր խոսեցաւ Տէր Աստուած ձեր . այլ ամենայն լինի եկն եւ հաս ձեզ , եւ ոչ սխալեցաւ ի նոցանէ
15 բան մի : Եւ եղիցի զոր օրինակ եկին ի վերայ ձեր ամենայն բանք բարիք զոր խոսեցաւ Տէր վասն ձեր , նոյնպէս ածցէ Տէր ի վերայ ձեր զամենայն բանս չարս , մինչեւ սատակեսցէ զձեզ յերկրէս բարութեան զոր եւս ձեզ Տէր Աս-
16 տուած ձեր , Յանցանել ձեզ զուխտին Տեառն Աստուծոյ ձերոյ զոր պատուիրեաց ձեզ , եւ յերթալ պաշտել զաստուածս օտարս եւ երկիր պագանել նոցա . եւ բարկանայցէ ձեզ Տէր , եւ կորնչիջիք վաղվաղակի յերկրէս բարութեան զոր եւս ձեզ Տէր :

ԳԼ . ԻԻ

1 Եւ ժողովեաց Յեսու զամենայն ցեղսն Իսրայելի [7]ի Սիլով , եւ կոչեաց զամենայն ծերսն Իսրայելի եւ զիշխանս նոցա եւ զդպիրս նոցա եւ զդատաւորս նո-
2 ցա , եւ կացին առաջի [8]Տեառն : Եւ խոսեցաւ Յեսու ընդ ամենայն ժողովրդեանն եւ ասէ , Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայելի , Յայնկոյս Փոտոյն պանդխտեան հարքն ձեր յառաջագոյն , Թարա՝ հայր Աբրահամու եւ հայր Նաքովրայ ,
3 եւ պաշտեցին զաստուածս օտարս : Եւ առի ես զհայր ձեր զԱբրահամ յայնմ կողմանէ Փոտոյն , եւ առաջնորդեցի նմա յամենայն երկրիս Քանանացւոց , եւ բազմացուցի զզաւակ նորա , եւ ետու նմա
4 զԻսահակ . Եւ ետու Իսահակայ զՅակոբ եւ զԵսաւ . եւ ետու Եսաւայ զկառնն Սէիր ի ժառանգութիւն . եւ Յակոբ եւ
5 որդիք նորա իջին յԵգիպտոս : [9]Եւ եղեն անդ յազգ մեծ եւ ի բազում եւ ի հզօր . եւ չարչարեցին զնոսա Եգիպտացիքն , եւ ևնար Տէր զԵգիպտացիսն նչանօք եւ
6 արուեստիւք՝ զոր արար ի նոսա . Եւ ապա եհան զձեզ յԵգիպտոսէ , եւ մտէք" ի ծովն , եւ պնդեցան Եգիպտացիքն զնետ հարցն ձերոց կառօք եւ երիվարօք ի
7 ծովն Կարմիր : Եւ [10]աղաղակեցաք առ Տէր , եւ եդ զամպն եւ զմէգ" ի մէջ ձեր եւ ի մէջ Եգիպտացւոց . եւ ած ի վերայ նոցա զծովն եւ ծածկեաց զնոսա . եւ տեսին աչք ձեր զոր [11]արար Տէր" ընդ երկիրն Եգիպտացւոց . եւ էիք յանապատի

[1]ԵՔԲ· ձեր [2]ՅԼԲԲ· պատուէր [3]ԵՔԲ· ձեզ [4]ԵՔԲ· ձերոյ [5]ԵՔԲ· խթան ի կողս [6]ԵՔԲ· բանից բարեաց

[7]ԵՔԲ· ի Սիւքեմ [8]ԵՔԲ· Աստուծոյ [9]ԵՔԲ· Եւ առաքեցի զՄովսէս եւ զԱհարոն. եւ հարի զԵգիպտոս որպէս արարի ի միջի նորա, եւ ապա հանի զձեզ. (6) Եւ հանի զհայր ձեր յԵգիպտոսէ, եւ եկիք [10]ԵՔԲ· աղաղակեցին առ Տէր եւ եդ խաւար [11]ԵՔԲ· արարի

8 անդ զաւուրս բազումս։ Եւ [1]ած զձեզ յերկիրն Ամովրհացւոց բնակելոց յայնկոյս Յորդանանու, եւ եասն ընդ ձեզ պատերազմ. եւ [2]մատնեաց զնոսա Տէր՝ ի ձեռս ձեր, եւ ժառանգեցէք զերկիրն նոցա, եւ [3]սատակեցէք զնոսա յեդ
9 բնաց ձերոց։ Եւ յարեաւ Բաղակ Անդիփովրայ արքայ Մովաբու եւ եաս պատերազմ ընդ Իսրայէլ, եւ առաքեաց կոչեաց զԲաղաամ որդի Բէովրայ նդո-
10 վել զձեզ. Եւ ոչ [4]կամեցաւ Տէր Աստուած քո կորուսանել՝, եւ օրհնելով օրհնաց զձեզ, եւ [5]ապրեցոյց զձեզ ի
11 ձեռաց նոցա, եւ մատնեաց զնոսա ի ձեռս ձեր՝։ Եւ անցէք ընդ Յորդանան, եւ եկիք յերիքով. եւ պատերազմեցան ընդ ձեզ բնակիչք Երիքովի, Ամովրհացին եւ Քանանացին եւ Փերեզացին եւ Հեւացին եւ Յերեսացին եւ Քետացին եւ Գերգեսացին, եւ [6]մատնեաց զնոսա
12 ի ձեռս ձեր։ Եւ [7]առաքեաց յաւագանդոն քան զձեզ զձիաստանն, եւ մեր-ժեաց զնոսա յերեսաց ձերոց՝ [8]զերկուսան թագաւորս Ամովրհացւոց, ոչ սրով
13 քով եւ ոչ պղեղամբ քով. Եւ [9]եա ձեզ Տէր՝ զերկիրս յորում ոչ վաստա-կեցէք. եւ բնակեցէք ի քաղաքս զոր ոչ չինեցէք, եւ յայգիս եւ [10]ի թզենիս՝ զոր ոչ անկեցէք դուք, եւ ուտէք։
14 Եւ այդ երկերեաք դուք ի Տեառնէ, եւ պաշտեցէք զնա ուղղութեամբ եւ արդարութեամբ. եւ ի բաց արարէք զաստուածս օտարոտիս զոր պաշտեցին հարք ձեր յայնկոյս Գետոյն եւ յԵգիպտոս, եւ
15 պաշտեցէք զՏէր։ Եւ այս թէ ոչ լոյծ ձեզ հաճոյ պաշտել զՏէր, ընտրեցէք այսօր թէ զի պաշտիցէք. զաստուածս հարցն ձերոց որ յայնկոյս Գետոյն էին, թէ զաստուածս Ամովրհացւոցն յորոց դուք բնակեալ էք յերկրի նոցա. այլ ես եւ տունն իմ պաշտեմ զՏէր, [11]զի սուրբ է՝։
16 Պատասխանի եասն ժողովուրդն եւ ասեն, Քաւ լիցի մեզ թողուլ զՏէր [11]Աստուած մեր՝ եւ պաշտել զաստուածս օ-
17 տարս. Զի Տէր Աստուած մեր նա հնձան զմեզ եւ զհայրս մեր յերկրէն Եգիպտացւոց ի տանէ ծառայութենան, եւ արար

[1] ԵԲԲ. ածէ [2] ԵԲԲ. մատնեցի զնոսա [3] ԵԲԲ. սատակեցի [4] ԵԲԲ. կամեցայ լսել Բաղաամոյ [5] ԵԲԲ. ապրեցուցի զձեզ ի ձեռաց նորա [6] ԵԲԲ. մատնեցի [7] ԵԲԲ. առաքեցի [8] ԵԲԲ. զերկուս [9] ԵԲԲ. եաս ձեզ [10] ԵԲԲ. ի ձիթենիս [11] ՅԵԲԲ. պոռնկ

մեզ զնշանս մեծամեծս զայնոսիկ, եւ պահեաց զմեզ յամենայն ճանապարհին յորում գնացաք, եւ յամենայն ազգս ընդ
18 որ անցաք։ Եւ մեռուցաց Տէր զԱմովրհացին եւ զամենայն ազգս բնակեալս յերկրին յերեսաց մերոց. այլ եւ մեք պաշտեսցուք զՏէր, զի նա է Աստուած մեր։
19 Եւ ասէ Յեսու ցժողովուրդն, Ոչ կարէք դուք պաշտել զՏէր, զի [12]սուրբ է՝, եւ նա նախանձակալ ոչ ներիցէ մեղաց
20 եւ անօրէնութեանց ձերոց, Յորժամ թողուցուք զՏէր, եւ պաշտիցեք զաստուածս օտարս, եւ հասեալ ի վերայ՝ չարչարիցէ զձեզ, եւ ծախեացէ զձեզ փոխանակ բարեացն զոր արար ձեզ։
21 Եւ ասէ ժողովուրդն ցՅեսու, Ոչ այդպէս, այլ զՏէր պաշտեսցուք։
22 Եւ ասէ Յեսու ցժողովուրդն, Ահա դուք ձեզէն եկերուք վկայք անձանց ձերոց, զի դուք ընտրեցէք զՏէր պաշ-
23 տել վնա. եւ ասեն, Վկայ եմք։ Եւ ասէ, Արդ ի բաց արարէք ի ձէնջ զաստուածս օտարոտիս, եւ ուղղեցէք զսիրտս
24 ձեր առ Տէր Աստուած Իսրայէլի։ Եւ ասէ ժողովուրդն ցՅեսու, ԶՏէր Աստուած մեր պաշտեսցուք եւ ձայնի նորա լսեցուք։
25 Եւ ուխտեաց Յեսու ուխտ ընդ ժողովրդեանն յաւուր յայնմիկ, եւ եառնա օրէնս եւ դատաստանս [13]ի Սեղեմ առաջի
26 [14]տեառնէն Աստուծոյ Իսրայէլի՝։ Եւ գրեաց Յեսու զբանս զայսոսիկ ի գիրս օրինացն Աստուծոյ. եւ առ վէմ մի մեծ եւ կանգնեաց զնա ի ներքոյ բեւեկնին [14]առաջի
27 Տեառն. Եւ ասէ Յեսու ցամենայն ժողովուրդն, Ահա վէմս այս եղիցի [15]ձեզ ի վկայութիւն, զի սա լուաւ զամենայն խօսեցեալսն ի Տեառնէ զոր խօսեցաւ ընդ [15]ձեզ այսօր՝. եւ եղիցի սա ձեզ ի վկայութիւն [16]աւուրց յետնոց յորժամ՝
28 ասիցէք Տեառն Աստուծոյ ձերում։ Եւ արձակեաց Յեսու զժողովուրդն, եւ գնաց
29 [17]ըստաքանչիւր ի տեղի իւր։ [17]Եւ պաշտեաց Իսրայէլ զՏէր զամենայն աւուրս Յեսուայ, եւ զամենայն աւուրս ծերոցն որ ձգեցին զժամանակս [18]ընդ Յեսուայ, որք եւ տեսին՝ զամենայն գործս Տեառն զոր արար յԻսրայէլ։

[12] ԵԲԲ. Աստուած սուրբ է նա [13] ՅԵԲԲ. ի Սիւքեմ [14] ԵԲԲ. որ առ սրբութեան [15] ԵԲԲ. մեզ [16] ԵԲԲ. գուցէ [17] Այս համար յԵԲԲ բնագրէն ի՛ այ վին 30 համարէ։ [18] ԵԲԲ. յետ Յեսուայ, եւ որ գիտէին

30 Եւ եղեւ յետ այսորիկ մեռանել Յեսուայ որդւոյ Նաւեայ ծառայի Տեառն՝
31 հարեւր եւ տասն ամաց. Եւ թաղեցին զնա առ սահմանօք ժառանգութեան իւրոյ ի Թամնաթսարա ի լերինն Եփրեմայ ի հիւսիսակողմն լերինն Գայասու։ [1]Եւ անդ եւս զին ընդ նմա՝ ուր թաղեցին զնա առ ի յիշատակ զսուրն քարեղէնս, որով թլփատեաց զորդիսն Իսրայէլի ի Գաղգաղա, յորժամ եհան զնոսա յերկրէն Եգիպտացւոց՝ որպէս հրամայեաց Տէր. եւ անդ են մինչեւ յայսօր ժամանակիս։"
32 Եւ զոսկերան Յովսեփու հանին որդիքն Իսրայէլի յԵգիպտոսէ, եւ թաղեցին զնա ի [2]Սիկիմ, ի բաժնի ագարակին զոր ետուսաւ Յակոբ [3]յԱմորհայեցւոյն հնակելոյն ի Սիկիմ՝ [4]որոյայ հարիւրից, եւ եղեւ զայն Յովսեփայ ի բաժնի։
33 Եւ [5]եղեւ յետ այսորիկ վախճանել Եղիազարու քահանայի որդւոյ Ահարոնի, եւ թաղեցաւ ի Գարաաթ Փինեէսի որդւոյ իւրում զոր ետ նմա ի լերինն Եփրեմայ։ Յաւուրսն յայնոսիկ առեալ որդւոյն Իսրայէլի զտապանակ ուխտին Աստուծոյ չրկնցուցանէին ընդ իւրեանս։ Եւ քահանայացաւ Փինեէս փոխանակ Եղիազարու հօր իւրոյ, մինչեւ մեռաւ եւ թաղեցաւ յիւրումն Գարաաթ։

Եւ որդիքն Իսրայէլի զնային յիւրաքանչիւր աեղիս իւրեանց, եւ յիւրաքանչիւր քաղաքս իւրեանց. եւ պաշտեցին որդիքն Իսրայէլի զԱստարտեան եւ զԱստարտեմ, եւ զաստուածս ազգացն որ չուրջ զնոքօք։ Եւ մատնեաց զնոսա Տէր ի ձեռս Եգղոմայ արքայի Մոաբացւոյ, եւ տիրեաց նոցա ամս ութեւտասան։

[1] 3ԵԲր. գ-լ-ա-դ [2] ԵԲր. Սիքեմ. յոգնս ե այբ-ր
[3] ԵԲր. յորգաղն Եմմորայ. Հօր Սիքեմայ. [4] Կամ, դահեկանաց
[5] ԵԲր. վախճանեցաւ Եղիազար, որդի Ահարոնի, եւ թաղեցին զնա ի բլուրն Փինեէսի որդւոյ Նաբա, որ տուաւ նմա ի լերինն Եփրեմայ

ԳԼՈՒԽՔ ԳՐՈՑ ԴԱՏԱՒՈՐԱՑՆ

	Գլ.	Համ.
Թէ յետ վախճանին Յեսուայ ելին Յուդայ կռուել զաւազնորդութիւնն, յորում եւ կրկնարանէ զառ Յեսուա եղելոց իրացն ի Վաղերայ,	Ա.	1
Թէ զի ոչ սատակեցին զազգն բոլ հրամանին Տեառն, երեւեցաւ Տէրչտակն, եւ յանդիմանեաց զանօրէնութիւն նոցա, եւ լացին ընդ այնր առաջի Տեառն,	Ա.	28
Ամբաստանութիւն չարեաց նոցա, զի յետ մնհան Յեսուայ յետս կացին յԱստուածոյ, եւ մոռանային զնոսա Տէր ի ձեռս Բուսորայ արքային Ասորւոց, եւ փրկեաց զնոսա ի ձեռն Գաթնիելի,	Բ.	7
Յաւելին ի չարիս եւ մոռանեցան Եդղոմայ Մովաբացւոյ, եւ յարոյց Տէր զԱեհուդ, որ սպան զԵգղոմ, եւ վանեաց զԼիովար,	Գ.	12
Յետ Նորա Սամեգարայ, որ սպան վեցհարիւր այր մանչիւ արօրայ,	Գ.	31
Մոռանեցան Յաբինայ Քանանացւոյ, եւ եղեւ պատգամ Տեառն ի ձեռն Դեբովրայ առ Բարակ. և նա երգաւ ընդ Յաբինայ. յաղթեաց Յաբինայ. սպանաւ և Յաբին. եւ օրհնեաց Դեբովրա օրհնութիւնս Տեառն յայսմ ոտանաւ,	Դ.	2
Նեղեաց զնոսա Մադիամ եւ յարեաւ Գեդէան, նկարեաց զրարձումն կռապաշտութեանն. և ինչպէս յայտնութեամբ անձրեւովն ի գեղմին զօրէնն Աստուծոյ առ Հրեայսն, և պիղծ Բանլն ի կոյան և զանարատ ծնունդն. եւ ապա դժամաքել Հրեից եւ զանձրեւէն աշխարհի. Այլ եւ ոսփորք Հրեայքն երկամեայ դաւազանաւ փշրեալ բոլ Քուշի եւ Երեմայ. յորոց եւ յայս երբորդ ալիքն փողովք Աստբելցն վանեաց զիշխանն աշխարհի. Այլ եւ ի խորտակել մարմնական դործոց պայծառանայ յայտնութիւն Հոգւոյ,	Զ.	1
Յետ մնհան Գեդէոնի Աբիմելէք հարճորդի Նորա սպան զևւթն անաստուն եղբարն իւր, եւ թագաւորեաց. եւ յետ սուղ ատեան բնդդրեցաւ ի նմանէ վրէժ, զի մանրեցաւ գլուխն եւ մեռաւ,	Ը.	33
Յետ Նորա Թովղա,	Ժ.	1
Յետ Նորա Յայիր,	Ժ.	3
Յետ Նորա Յեփթայի, որ եւ զոհեաց զդուստրն, և Աստուած հրաշիւք՝ որպէս առ Աբրահամ ոչ խափանեաց, զի այլ ոք յայնպիսի ուխտ մի՛ ժպրհեսցի. կատարեաց եւ զնփրեմ վասն անպատեհ գոռոզութեանն,	Ժ.	6
Յետ Նորա Եսերան Բեթղահեմացի,	ԺԲ.	8
Յետ Նորա Եղոն Զաբուղոնացի,	ԺԲ.	11
Յետ Նորա Լաբդոն,	ԺԲ.	13
Ապա Սամփսոն, որ ուժգին զարուեստիքն իւրով նկարէր զանչափ զօրութիւն Տեառն իւրոյ. եւ յայրելովն ի կնոջէն՝ նկարեր զխռնարհելն մարդկան առաջի մեզայ,	ԺԳ.	2
Ամբաստանէ զմիքեայ որ կանգնեաց զպատկեր կռոցն ի տուն իւր. զի ասաց ցմայր իւր թէ զարծաթն զոր գողացան ի քէն, եւ երդուաւ՝ զի թէ գտցի, արասցես տնտի պատկեր ձուլածոյ, արդ արծաթն առ քս է, առ և որս պատկեր ըստ երգմանն. եւ արհնեաց զնա մայրն, զի ասաց թէ որս պատկեր. արար և վակաս, և վարձեաց քրիստ զվեւտացին,	ԺԻ.	1
Ամբաստանէ եւ զգեղէն Դանայ, զի առին զկուռսն ի տանէն Միքեայ, որով եւ կռապաշտեցան՝ մինչեւ ցգերելն ի Յաղմանասարայ,	ԺՂ.	1
Պատնկեցաւ Հարճ Գաբեսացւոյն, և փախեաւ. եւ նա գարձոյց զնա, և եկն ի Գաբաա. իբրեւ լկեցին զՀարճն եւ մեռաւ, ժողովեցաւ Իսրայէլ ի վերոյ Գաբաայ. Եւ զի վասն կռապաշտելոյն ոչ նախանձեցան՝ որ մեծ էր. եւ վասն կնոջն իրաց նախանձեցան, թնդ եւ Աստուած պատերազմել ընդ մխեանս. մինչեւ ա՛ս սատակութիւնն գվրէժ չարեացն միմեամբք՝ յերկոցունց կողմանցն,	ԺԹ.	1
Իսկ զՀռութայ դիրսն՝ վճարմամբ իրացն եւ մեկնութեամբք անուանցն, թէ կամիս, ստգես ի պատճէն Ագամոյ եւ յերկն ի գրախտէն, եւ ի աւետաբերութիւնն Աստուծոյ առ Նա՝ ծննդեամբն ի տանէն Դաւթի,		

ԴԱՏԱՒՈՐՔ

ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ եղեւ յետ վախճանելոյն Յեհուայ՝ հարցանէին որդիքն Իսրայէլի զՏէր
եւ ասէին, Ո՞ երթայ մեզ առ Քանանացին առաջնորդ՝ պատերազմիլ ընդ նմա։
2 Եւ ասէ Տէր, Յուդա երթայ. զի եառ
3 զերկիրն ի ձեռս նորա։ Եւ ասէ Յուդա զՇմաւոն եղբայրս իւր, Ել ընդ իս ի վիճակիս իմում, եւ տացուք պատերազմ ընդ Քանանացւոյն. եւ սկսից եւ ես ընդ քեզ ի քում վիճակին. եւ գնաց ընդ նմա
4 Շմաւոն։ Եւ ել Յուդա, եւ եառ Տէր զՔանանացին եւ զՓերեզացին ի ձեռս [1]նորա.
եւ եհար՝ գնաստ ի Բեզեկ տասն հազար ա-
5 նձինս։ Եւ գտին զԱդոնիբեզեկ ի Բեզեկ,
եւ եառնն պատերազմ ընդ նմա. եւ հա-
6 րին զՔանանացին եւ զՓերեզացին։ Եւ
փախեաւ Ադոնիբեզեկ. եւ պնդեցան
զկնա նորա, եւ հասին նմա, եւ կապե-
ցին [2]զծայրս ձեռաց նորա եւ զծայրս՝
7 ոտից նորա։ Եւ ասէ Ադոնիբեզեկ, Եւ-
թանասուն թագաւորք ծայրակատուրք
ձեռաց եւ ոտից էին, որ քաղէին զփշրանս
ի ներքոյ սեղանոյ իմոյ. արդ որպէս ա-
րարի, նոյնպէս հատոյց ինձ Աստուած։ Եւ
տարին զնա Երուսաղէմ, եւ անդ մեռաւ։
8 Եւ պատերազմէին որդիքն Յուդայ ընդ
Երուսաղէմ, եւ առին զնա, եւ հարին
զնա սրով առաւելի, եւ զքաղաքն սպրդ-
ցին հրով։
9 Եւ յետ այնորիկ իջին որդիքն Յուդայ
պատերազմել ընդ Քանանացւոյն բնակե-
լոյ ի լեռնակողման եւ ի հարաւ եւ ի դաշ-
10 տավայրս։ Եւ գնաց Յուդա ի վերայ Քա-
նանացւոյն բնակելոյ ի Բերբրոն. [3]եւ էր
Բերբրոն ընդ առաջ։ Եւ էր անուն Բեր-
բրոնի յառաջ Կարիաթարբոկ [3]Արբեր. եւ
հարին զԱհման եւ զԱքիման եւ զԹոլմի։
11 [3]Զծնունդսն Ենակայ։ Եւ ելին անտի ի
վերայ բնակչացն Դաբիրայ. եւ անուն
Դաբիրայ էր յառաջագոյն Քաղաք Նա-
12 մակայ։ Եւ ասէ Քաղէբ, Որ ոք հարցէ
զքաղաք Նամակայ եւ առցէ զնա, տայց
նմա զԱքսա զդուստր իմ կնութեան։
13 Եւ առ զնա Գոթնիէլ որդի Կենեզի եղ-
բայր Քաղէբայ՝ կրտսեր քան զնա. եւ
եառ նմա Քաղէբ զԱքսա զդուստր իւր
14 կնութեան։ Եւ եղեւ ի գնալն նորա,
յորմժամ գնաց [4]Գոթնիէլ խնդրել ի հօրէ
իւրմէ ագարակ. եւ [5]ստանձնեաց եւ ա-
զաղակեաց յիչոյ անտի, եւ ասէ, Ցերկիր
հարաւոյ եառար զիս՝ եւ տուր ինձ եւ
15 ջուր ի վերուստ։ Եւ ասէ ցնա Քաղէբ, Զի՞ է քեզ։ Եւ ասէ ցնա Աքսա,
Տուր ինձ օրհնութիւն, զի յերկիր հա-
րաւոյ եառար զիս, եւ տացես ինձ ջրօ-
ղաններս ջրոց։ Եւ եառ նմա Քաղէբ [3]զբոլ
սրտի նորա՝ զբօղանս բարձանց, եւ զբօ-
ղանս հովտաց։
16 Եւ որդիքն [3]Յորթոյ կինեցւոյ անե-
ծելոյն Մովսիսի ելին ի քաղաքէն Արմա-
ւենեաց առ որդիսն Յուդայ ի յանապատն
Յուդայ, որ է ի հարաւոյ [3]Յուդայ, առ
զտեղիսդրին՝ Արադայ, եւ գնացին բնա-
17 կեցան ընդ ժողովրդեանն։ Եւ գնաց Յու-
դա ընդ Շմաւոնի եղբօր իւրոյ, եւ հա-
րին զՔանանացին բնակեալ ի Սեփաթ,
եւ [6]նզովեցին զնա [3]եւ սատակեցին զնա՝.
եւ կոչեցին զանուն քաղաքին [5]Աստա-
18 կումն։ Եւ [3]ոչ ժառանգեաց Յուդա զԳա-
զա եւ զսահմանս նորա, եւ զԱսկաղոն
եւ զսահմանս նորա, եւ զԱկկարոն
եւ զսահմանս նորա, [3]եւ զԱզոտոս եւ
19 զանդաստանս նորա։ Եւ էր Տէր ընդ
Յուդայ, եւ ժառանգեաց զլեառնն, զի
ոչ կարացին [6]ժառանգել զբնակիչս հով-
տացն. զի [3]Երկաթեայ զգեստք գնոսա. եւ
20 կառք երկաթիք էին նոցա։ Եւ եառն
Քաղէբայ զԲերբրոն որպէս եւ խօսեցաւ
Մովսէս. [3]եւ ժառանգեաց անտի զերիս
բազաքս որդւոցն Ենակայ։ եւ երբէք
անտի զերեսեան որդիսն Ենակայ։
21 Եւ զՅերուսաղէմացին զբնակեալսն յերու-
սաղէմ ոչ [7]ժառանգեցին որդիքն Բե-

[1] ԵԲբ. Նոցա. եւ Հարին [2] ԵԲբ. զբոլոր ձեռաց նորա եւ [3] ՅԵԲբ. պակաս
[4] ԵԲբ. Եղ յիշոյ անտի [5] ԵԲբ. Նստաւ [6] ԵԲբ. վանել [7] ԵԲբ. վանեցին

նիամինի . եւ բնակեաց Յակոբասպին ընդ որդիսն Բենիամինի յերուսաղէմ մինչեւ ցայսօր ։
22 Եւ եղեն որդիքն Յովնափա եւ ինք-
23 հանք ի Բեխէլ , եւ Տէր ընդ նոսա ։ Եւ [1]յանակեան տունն Իսրայելի ի Բեխէլ". եւ անուն քաղաքին էր յառաջ Լուզա ։
24 Եւ տեսին պահապանքն զայր մի եկեալ ի քաղաքէ անտի . [2]կալան զնա եւ ա-
մեն", Ցոյց մեզ զմուտ քաղաքիդ , եւ
25 արասցուք ընդ քեզ ողորմութիւն ։ Եւ եցոյց նոցա զմուտ քաղաքին . եւ հա-
րին զքաղաքն սրով սուսերի . եւ զայրն
26 եւ զազգատոհմն իւր արձակեցին ։ Եւ գնաց այրն յերկիրն ի Քեւտիմ, եւ չին-
եաց անդ քաղաք , եւ կոչեաց զանուն նորա Լուզա . եւ այն է անուն նորա մին-
27 չեւ ցայսօր ։ Եւ ոչ ժառանգեաց Մա-
նասէ զԲեթսան [3]որ է Սկիւթուպոլիս", եւ ոչ զդստերս նորա [3]եւ ոչ զանգաս-
տանս նորա", եւ ոչ զԹանաք եւ զդստերս նորա , եւ ոչ զբնակիչսն Նաւրայ [3]եւ ոչ զչուրջ բնակեալսն զնովաւ" եւ ոչ զդստերս նորա . [3]եւ ոչ զբնակիչս Բա-
զակայ եւ ոչ զչուրջ բնակեալսն զնովաւ եւ ոչ զդստերս նորա." եւ ոչ զբնակիչս Յեբղամայ եւ [3]ոչ զչուրջ բնակեալսն զնո-
վաւ եւ" ոչ զդստերս նորա . [4]եւ սկսաւ" Քանանացին բնակել յերկրին յայնմիկ ։
28 Եւ եղեւ իբրեւ զօրացաւ Իսրայէլ՝ եդ զՔանանացին ընդ հարկաւ , եւ բառնա-
լով ոչ եւրեմ զնա ։
29 Եւ Եփրեմ ոչ եւրեմ զՔանանացին զբնակեալսն ի Գազեր . եւ բնակեաց Քա-
նանացին ի մէջ նորա ի Գազեր, [3]եւ եղեւ նմա հարկատու ։"
30 Եւ Զաբուղոն ոչ եւրեմ զբնակիչսն Կեդրոնի եւ զբնակիչսն Ամանայ . եւ բնակեաց Քանանացին ի մէջ նորա , եւ եղեւ նմա հարկատու ։
31 Եւ Ասեր ոչ եւրեմ զբնակիչսն Ակքո-
վայ , [3]եւ եղեւ նմա հարկատու . եւ զբնա-
կիչսն Դովրայ ," եւ զբնակիչսն Սիդո-
նի , եւ զբնակիչսն Աքլափայ , եւ զԱ-
քազիվ եւ զԵրփա եւ զԱփիկ եւ զՌեովբ .
32 Եւ բնակեաց Ասեր ի մէջ Քանանացւոյն բնակչացն յերկրին . քանզի ոչ կարացին բառնալ զնա ։
33 Եւ Նեփթաղիմ ոչ եւրեմ զբնակիչսն Բեթսամիւսայ եւ ոչ զբնակիչսն Բեթա-
նաթայ . եւ բնակեաց Նեփթաղիմ ի մէջ Քանանացւոյն բնակչաց երկրին . եւ բնակիչքն Բեթսամիւսայ եւ Բեթանաթայ եղեն նմա հարկատուք ։
34 Եւ նեղեաց Ամովրհացին զորդիսն Դա-
նայ ի լերինն , զի ոչ տայր նոցա թոյլ
35 իջանել ի հովիտն ։ Եւ [5]կամաւ Ամովր-
հացին բնակել ի լերինն [6]Ահրատատանի, ուր արջք եւ ազուէսք ի Մտրատատանն" եւ ի Մազապին. եւ ծանրացաւ ձեռն Յով-
սեփայ ի վերայ Ամովրհացւոյն, եւ եղեն
36 նոցա հարկատուս . [7]Զի սահման Ամովր-
հացւոյն [3]Եգռվմայեցիքն էր ի վերայ զառի-
վայրին Ակրաբիմայ ի վիմէն եւ ի վեր ։

Գլ. Բ

1 Եւ ել հրեշտակ Տեառն ի Գազգալայ ի Լայեաղն , [8]եւ ի Բեխէլ եւ ի տունն Իսրայելի , եւ ասէ ցնոսա , Այսպէս ասէ Տէր. Տէր նհան"զձեզ յԵգիպտոսէ, եւ [9]ած
զձեզ յերկիրըզ՝ [10]յոր երդուաւ հարցն ձերոց տալ ձեզ , եւ ասէ ցձեզ , Ոչ" ցրեցից
2 զուխտն իմ որ ընդ ձեզ յաւիտեան ։ Եւ
մի դնիցէք ուխտ ընդ բնակիչս երկրիդ այդորիկ . [3]եւ մի ընդ դիս նոցա , եւ մի երկիր պատանիցէք նոցա . այլ զդրօշնալս նոցա կործանեսջիք . եւ" զանգանս նո-
ցա կործանեսջիք . եւ ոչ լսարուք ձայ-
3 նի իմում . [11]քանզի արարէք զայն ։ Եւ ասացի ես Ոչ [3]յաւելից փոխել զմոզո-
վուրդն զոր յաւելի տաւակել , եւ ոչ" բարձից զնոսա յերեսաց ձերոց . եւ եղի-
ցին ձեզ ի վտանգս , եւ դիք նոցա եղի-
4 ցին ձեզ ի գայթակղութիւն ։ Եւ եղեւ իբրեւ խօսեցաւ հրեշտակն Տեառն զբանս գայսոսիկ առ ամենայն որդիսն Իսրայէ-
լի , ամբարձին ժողովուրդն զձայնս իւր-
5 եանց եւ լային . Եւ վասն այնորիկ կո-
չեցաւ անուն տեղւոյն այնորիկ Լալտնք . եւ զոհեցին անդ Տեառն ։
6 Եւ արձակեաց Յեսու զմոզովուրդն . եւ գնացին որդիքն Իսրայելի [3]իւրա-
քանչիւր առն իւր եւ" իւրաքանչիւր ժառանգութիւն իւր՝ ժառանգել զերկիրն։
7 Եւ ծառայեաց ժողովուրդն Տեառն զա-
մենայն աւուրս Յեսուայ եւ զամենայն աւուրս ծերոցն , որ միանգամ երկայնաս-

---

[1] Եբբ. առնն Յովնափայ եւս լրանալ զԲեթել
[2] Եբբ. եւ ասեն ցնա [3] Եբբ. պահ-ոբ [4] Եբբ. և ոչ զբնակիչս Մակեդովայ, եւ ոչ զդստերս նորա . եւ յամառեցաւ
[5] Եբբ. յամառեցաւ [6] Եբբ. Հարբա, յԱյեղեն
[7] Եբբ. Եւ [8] Եբբ. եւ ասէ. Հանի [9] Եբբ. ածի [10] Եբբ. զոր երդուայ Տէրն ձերոց , եւ ասացի , Ոչ
[11] Եբբ. զի՞

կեացք եղեն [1]ընդ Քեսուայ, որ գիտակ լեալ էին ամենայն մեծամեծ գործոցն
8 Տեառն զոր արար Իսրայէլ։ Եւ վախճանեցաւ Քեսու որդի Նաւեայ ծառայ Տեառն,
9 որդի հարեւր եւ տասն ամաց. Եւ թաղեցին զնա ի սահմանին ժառանգութեան նորա, ի Թամնաթսարէս՝ ի լերինն Եփրեմ
10 ի հիւսիսոյ լերինն Գայասու։ Եւ ամենայն ազգն այն յաւիտեան առ հարս իւրեանց. յարեաւ այլ ազգ յետ նոցա որ ոչ ճանաչէին զՏէր եւ ոչ զգործսն զոր արար [2]ի մէջ Իսրայէլի։
11 Եւ արարին որդիքն Իսրայէլի չար առաջի Տեառն, եւ պաշտեցին զԲահաղիմ.
12 Եւ թողին զՏէր Աստուած հարցն իւրեանց, որ հանին զնոսա յերկրէն Եգիպտացւոց, եւ գնացին զհետ աստուածոց օտարաց, աստուածոց ազգացն որ չուրջ զնոքօք, եւ երկիր պագին նոցա,
13 եւ բարկացուցին զՏէր. Եւ թողին զնա եւ պաշտեցին զԲահաղ եւ զԱստարտան։
14 Եւ բարկացաւ սրամտութեամբ Տէր Իսրայէլի, եւ մատնեաց զնոսա Տէր ի ձեռս աւարառուացն, եւ [3]աւերեցին զնոսա. եւ ետ զնոսա Տէր ի ձեռս թշնամեաց իւրեանց չուրջանակի, եւ ոչ կարացին կալ ընդդէմ թշնամեաց [4]իւրեանց ամենայնեցունց՝ ընդ որս պատնկեցան։ Եւ՝ ձեռն Տեառն էր նոցա ի չարութիւն, որպէս եւ խօսեցաւ Տէր եւ որպէս երդուաւ Տէր, եւ [5]նեղեաց զնոսա՝ յոյժ։
16 Եւ յարոյց նոցա Տէր դատաւորս, եւ [6]փրկեաց զնոսա Տէր՝ ի ձեռաց աւարառուացն
17 նոցա։ Սակայն եւ [7]նոցա ոչ լսեան. զի պոռնկեցան զհետ աստուածոց օտարաց, եւ երկիր պագին նոցա, [8]եւ բարկացուցին զՏէր. եւ՝ խոստովեցան վաղվաղակի ի ճանապարհէն ընդ որ գնային հարք նոցա՝ լսել պատուիրանաց
18 Տեառն, եւ ոչ արարին այնպէս։ Եւ յորժամ յարոյց նոցա Տէր դատաւորս, եւ էր Տէր ընդ դատաւորին. եւ փրկեաց զնոսա ի ձեռաց թշնամեաց նոցա զամենայն աւուրս դատաւորին, զի [9]մխիթարեցաւ Տէր ի հեծութիւնէ՝ նոցա յերեսաց պաշարողացն նոցա որ չարչարէին զնոսա։
19 Եւ լինէր իբրեւ մեռանէր դատաւորն, դառնային միւսանգամ եղծանել աւելի քան զհարս իւրեանց, երթալ զհետ աստուածոց օտարաց, պաշտել զնոսա եւ երկիր պագանել նոցա. եւ ոչ ընկենային ի բաց [10]զարուեստս իւրեանց, եւ ոչ հատանէին ի խիստ ճանապարհայ իւրեանց։
20 Եւ բարկացաւ սրամտութեամբ Տէր Իսրայէլի, եւ ասէ, Փոխանակ զի եթող ազգդ այդ զուխտ իմ զոր պատուիրեցի հարց դոցա եւ ոչ լսեան ձայնի
21 իմում, Եւ ես ոչ յաւելից բառնալ զայր յերեսաց նոցա, յազգացն զոր եթող Քեսու [11]որդի Նաւեայ. Եւ եթող փորձել նոսա՝ զԻսրայէլ, եթէ զգուշանայցեն ճանապարհին Տեառն գնալ ընդ նա, զոր օրինակ զգուշացան հարքն նոցա, եւ ես
23 թէ ոչ։ Եւ եթող Տէր զազգսն զայնոսիկ չբառնալ գնոսա վաղվաղակի, եւ ոչ մատնեաց գնոսա ի ձեռս Քեսուայ։

Գլ. Գ

1 Եւ այս ազգք են զոր եթող [12]Քեսու փորձել նոքօք զԻսրայէլ, զամենեսեան որ ոչ գիտէին զամենայն պատերազմունս Քանանացւոց. Բայց [13]վասն ազգայ սրտուցն Իսրայէլի՝ ուսուցանել նոցա պատերազմ. [14]սակայն եւ՝ որ յառաջագոյնքան գնոսա էին՝ ոչ գիտէին. Զհինգ նահապետութիւնս [15]այլազգեաց, եւ զամենայն Քանանացին եւ զՄիդոնացին եւ զԽեւացին զբնակեալսն ի Լիբանան ի լեռնէն Բազհերմոնեայ մինչեւ [16]ցմատեր։
4 Եւ եղեւ ի փորձել նոքօք զԻսրայէլ, գիտել եթէ լսիցեն պատուիրանացն Տեառն զոր պատուիրեաց հարցն նոցա ի ձեռն Մովսիսի։
5 Եւ որդիքն Իսրայէլի բնակեցին ի մէջ Քանանացւոյն եւ Քետացւոյն եւ Ամովրհացւոյն եւ Փերեզացւոյն եւ Խեւացւոյն եւ Յեբուսացւոյն [8]եւ Գերգեսացւոյն՝։
6 Եւ առին զդստերս նոցա իւրեանց ի կանայս, եւ զդստերս իւրեանց եառն ետուն որդւոցն նոցա, եւ պաշտեցին զդիս նոցա։
7 Եւ արարին որդիքն Իսրայէլի չար առաջի Տեառն, եւ մոռացան զՏէր Աստուած իւրեանց եւ պաշտեցին զԲահաղ
8 եւ [17]զանտառսն։ Եւ բարկացաւ սրամտու-

---

[1] ԵՔԲ. յետ [2] ԵՔԲ. վասն [3] ԵՔԲ. յաւարի առին [4] ԵՔԲ. իւրեանց։ (15) Յո եւ երթային [5] ԵՔԲ. նեղուէին եղեւ նոցա [6] ԵՔԲ. փրկեցին զնոսա [7] ԵՔԲ. դատաւորաց իւրեանց [8] ՅՆԵՔԲ. պակաս [9] Կամ, սորջացաւ Տէր ընդ հեծութիւնն [10] ԵՔԲ. զգործս [11] ԵՔԲ. ի մեռանիլն, (22) Առ ի փորձելոյ նոքօք [12] ԵՔԲ. Տէր [13] ԵՔԲ. առ ի գիտել [14] ԵՔԲ. մանաւանդ զի [15] Ա՛լլազգի նշանակէ առ, որպես և այլ բազում տեղիս փաստացի։ [16] Ա՛յսինքն՝ ի մեւս Եմաթայ [17] ԵՔԲ. Աշերայ, (տես Եղից Ա՛Դ. 13։)

թեամբ Տէր Իսրայելի, եւ մատնեաց զնոսա ի ձեռս Քուսարսաթեմայ արքային Ասորւոց Միջագետաց. եւ ծառայեցին նմա ամս ութ։
9 Եւ աղաղակեցին որդիքն Իսրայելի առ Տէր. եւ յարոյց Տէր փրկիչ Իսրայելի, եւ եառ նոցա զԳոդոնիէլ որդի Կենազեայ, զեղբայր Քաղերայ՝ կրտսեր քան
10 զնա. եւ [1]լուաւ նոցա" Եւ եղեւ ի նմա Հոգի Տեառն, եւ դատեաց զԻսրայէլ. եւ ել ի պատերազմ [2]ընդ Քուսարսաթեմայ". եւ մատնեաց Տէր ի ձեռս նորա զՔուսարսաթեմ արքայ Ասորւոց. եւ
11 սաստկացաւ ձեռն նորա ի վերայ Քուսարսաթեմայ։ Եւ դադարեաց երկիրն ամս քառասուն. եւ մեռաւ Գոդոնիէլ որդի Կենազի։
12 Եւ յաւելին որդիքն Իսրայելի առնել չար առաջի Տեառն. եւ զօրացոյց Տէր զԵգղոմ արքայ Մովաբու ի վերայ Իսրայէլի՝ վասն առնելոյ նոցա չար առաջի
13 Տեառն։ Եւ ժողովեաց ի վերայ նոցա զամինեայն որդիսն Ամմոնայ եւ զԱմաղէկ, եւ չոգաւ եհար զԻսրայէլ, եւ ժառանգեցին զքաղաքն Արմաւենեաց։ Եւ ծառայեցին որդիքն Իսրայելի Եգղոմայ արքայի Մովաբու ամս ութեւտասան։
15 Եւ աղաղակեցին որդիքն Իսրայելի առ Տէր. եւ յարոյց նոցա Տէր փրկիչ զԱւոմղ որդի Գերեայ՝ [3]զորդի աւն Յեմինեցւոյ, զերկոցունց ձեռաց ախոռակն". եւ առաքեցին որդիքն Իսրայելի ի ձեռն նորա պատարագս Եգղոմայ արքայի Մո-
16 վաբու։ Եւ արար իւր Աւոմղ սուր երկաբերան՝ թզաչափ երկայնութիւն, եւ եզ յաջոյ ազդր իւրում ընդ տաւատակաւն,
17 [2]եւ մտոյց։" Եւ մատոյց զպատարագն Եգղոմայ արքայի Մովաբու. եւ Եգղոմ
18 էր այր յոյժ։ Եւ եղեւ իբրեւ վախճանեաց Աւոմղ մատուցանել զպատարագսն, եւ արձակեաց զպատարագ-
19 բարձան, Եւ [4]Եգղոմ դարձաւ [5]ի գրօչելոցն [6]հանդերձ Գաղգաղացն". եւ ասէ Աւոմղ, Բանք ինչ են ինձ ընդ քեզ լռելեայն, արքայ, եւ ասէ Եգղոմ. Լուռ լեր։ [2]Եւ ասէ ցամինեսն, Ի բաց գնացէք." եւ եկին պատաքս որ զնովաւն կա-
20 յին. [7]Եւ նա" նստէր յամարանոցի ի վեր-

նատանն իւրում միայն առանձինն. եւ ասէ Աւոմղ, Պատգամ Աստուծոյ է ինձ առ քեզ, արքայ։ Եւ յարեաւ Եգղոմ
21 [8]յաթոռոյն սերձ առ նա։ Եւ եղեւ ընդ յառնելն նորա" ձգեաց Աւոմղ զձեռն իւր զձախ, եւ առ զսուրն յաջոյ ազդրէ
22 իւրմէ, եւ եհար ի կչտի Եգղոմայ, [9]Արկ եւ զերախտակաւն եւս զինեա վիրին. եւ արգել ճարպն զվիրաբերանն", զի ոչ ձգեաց
23 ի բաց զսուրն ի կչտէ նորա։ [10]Եւ ել ի սրահչդանն, եւ անց ընդ վանդակապատսն, եւ" փակեաց զդուրս վերնա-
24 տանն զնոսա եւ ազխեաց. Եւ ինքն եւ գնաց. եւ ծառայքն նորա մտին եւ տեսին, եւ ահա դուրք վերնատանն փակեալ էին, եւ ասեն, Գուցէ ջամբոն
25 նստիցի ի սրահս ի սենեկին։ Եւ կացին մինչեւ ամաչեցեալք. եւ ահա ոչ [2]ոք էր որ" բանայր զդուրս վերնատանն. եւ առին զբանալին եւ բացին, եւ ահա աէրն իւրեանց անկեալ կայր մեռեալ ի
26 գետնի։ Եւ Աւոմղ զերծաւ [2]ի Սիրովքա՝ մինչ նոքա զաղմկաւն էին. [2]եւ ոչ ոք էր որ փոյթ առնէր զնմանէ," եւ նա անց [11]առ դրօչելովքն", եւ զերծաւ անկաւ ի Սիրովքա։
27 Եւ եղեւ իբրեւ եկն Աւոմղ [2]յերկիրն Իսրայելի", եհար փող ի լերինն Եփրեմայ. եւ իջին ընդ նմա որդիքն Իսրայելի ի լեռնէ անտի, եւ ինքն առաջի նոցա։
28 Եւ ասէ ցնոսա, Իջէք զկնի իմ, զի մատնեաց Տէր [2]Աստուած մեր" զթշնամիս [12]մեր զՄովաբացիս ի ձեռս [12]մեր. եւ իջին զկնի նորա, եւ կալան նախ զանցս Յորդանանու ի Մովաբայ, եւ ոչ
29 թողին մարդոյ անցանել։ Եւ հարին ի Մովաբայ յաւուր յայնմիկ իբրեւ տասն հազար արանց, զամինեայն պատերազմող ի նոցանէ եւ զամինեայն այր զօրութեան, եւ ոչ ապրեցաւ եւ ոչ մի այր։
30 Եւ վանեցաւ Մովաբ յաւուր յայնմիկ ընդ ձեռամբ Իսրայելի, եւ դադարեաց երկիրն ամս ութսուն. [2]Եւ դատեաց զնոսա Աւոմղ մինչեւ մեռաւ։"
31 Եւ յետ նորա յարեաւ Սամեղար որդի Անաթայ, եւ եհար յայլազգեացն վեց հարիւր այր [13]մաճով արօրոյ, եւ առ

[1] ԵԲԲ. փրկեաց զնոսա [2]3ԵԲԲ. պ[illegible]ւ Բենիամինեան, որոյ փակեալ էր աջոյ ձեռն [4]ԵԲԲ. ինքն [5]Կամ, ի քարահատէն [6]ԵԲԲ. մերձ ի Գաղգաղա [7]ԵԲԲ. Եւ Աւոմղ մտեալ առ նա, եւ նա

[8] ԵԲԲ. յաթոռոյն (21) Եւ [9]ԵԲԲ. Եւ եմուտ երախակաւն եւս գնեա երկաթոյն, եւ պատեցաւ ճարպն զերկաթոյն [10]ԵԲԲ. եւ հեզաւ աղբ նորա, (23) Եւ ել Աւոմղ ի պատշգամն, եւ [11]Կամ, քան քարահատն [12]ԵԲԲ. մեր [13]ԵԲԲ. խթանաւ եզին

յաւարի արջառ եւ ոչխար բազում յոյժ, թող զորթս արջառոց". եւ երկեաց նա զիսրայէլ։

Գլ. Ժ

1 Եւ յաւելին որդիքն Իսրայելի առնել չար առաջի Տեառն. եւ [1]Աստիպար մեռաւ։
2 Եւ մատնեաց զնոսա Տէր ի ձեռս Յաբինայ արքայի Քանանացւոց, որ թագաւորեաց յԱսովր. եւ իշխան զօրուն նորա Սիսարա, եւ ինքն բնակէր յԱրիսաւիմայ ազգաց։ 3 Եւ ազաղակեցին որդիքն Իսրայելի առ Տէր. զի հինգհարիւր կառք երկաթիք էին նորա, եւ նա նեղէր զԻսրայէլ սաստիկ ամս քսան։
4 Եւ Դեբովրա կին մարգարէ, կին Լաբիդովթայ, նա գատէր զԻսրայէլ ի ժամանակին յայնմիկ։ 5 Եւ ինքն բնակեալ էր [2]ընդ արմաւենեաւն" ի մէջ Հռամայ եւ ի մէջ Բեթէլայ ի լերինն Եփրեմայ, եւ ելանէին որդիքն Իսրայելի առ նա ի դատաստան։ 6 Եւ առաքեաց Դեբովրա եւ կոչեաց զԲարակ զորդի Աբինէեմայ ի Կադեսայ Նեփթաղիմի, եւ ասէ ցնա, Ո՞չ ապաքէն հրամայեաց քեզ Տէր Աստուած Իսրայելի, [3]եւ երթիցես" ի լեառն Թաբովր, եւ առցես ընդ քեզ տասն հազար արանց յորդւոցն Նեփթաղիմայ եւ 7 յորդւոցն Զաբուղոնի. եւ [4]տարցես ընդ" քեզ ի հեղեղատն Կիսոնի, ի վերայ Սիսարայ իշխանի զօրուն Յաբինայ, եւ զօրաց նորա եւ կառաց նորա, եւ մատնեցից զնա ի ձեռս քո։ 8 Եւ ասէ ցնա Բարակ, Եթէ երթիցես ընդ իս՝ երթայց, եւ եթէ ոչ երթիցես ընդ իս՝ ոչ երթայց. 9 [5]քանզի ոչ պիտեմ զօրն յորում աչողնես դու Տէր զերիչսուկ իւր ընդ իս" Եւ ասէ ցնա Դեբովրա, Երթալով երթայց ընդ քեզ. բայց պիտասչիր, զի ոչ քո լիցի քաչօթիւն ի ճանապարհին զոր երթայցես, քանզի ի ձեռն կնոջ մատնեսցէ Տէր զՍիսարա։ Եւ յարեաւ Դեբովրա, եւ 10 գնաց ընդ Բարակայ [6]ի Կադեսայ։ Եւ պատուէր ետ Բարակ Զաբուղոնի եւ Նեփթաղիմի" ի Կադէս. եւ ելին զնետ նորա տասն հազար արանց. եւ ընդ նմա 11 եւ Դեբովրա։ Եւ [7]մերձաւորք կինեցւոյն մեկնեցան" ի կինեայ յորդւոցն Յովրաբայ աներոջն Մովսեսի, եւ [8]հեծան վրան իւր առ կաղնեաւն [9]Սաանդուկայ՝ որ է մերձ ի Կադէս։
12 Եւ ազդ եղեւ Սիսարայ եթէ ել Բարակ որդի Աբինէեմայ ի լեառն Թաբովր։ 13 Եւ զօսմատեաց Սիսարա զամենայն կառս իւր, հինգհարիւր կառս երկաթիղէնս, եւ զամենայն զօրն որ ընդ իւր յԱրիսաւիմայ ազգաց՝ ի հեղեղատն Կիսոնի։
14 Եւ ասէ Դեբովրա ցԲարակ, Արի, զի այս օր է՝ յորում մատնեաց Տէր զՍիսարա ի ձեռս քո. զի ահա Տէր է առաջի քո։ Եւ էջ Բարակ ի լեռնէն Թաբովրայ, եւ տասն հազար արանց զնետ նորա։ 15 Եւ զարհոյ բեցոյց Տէր զՍիսարա, եւ զամենայն կառս նորա եւ զամենայն բանակն նորա սրով առաջի Բարակայ. եւ էջ Սիսարա ի կառաց իւրոց, 16 եւ փախեաւ հետիոտն։ Եւ Բարակ զնետ մնեալ երթայր զկնի կառացն, եւ զնետ բանակին մինչեւ [10]յանտառն ազգաց. եւ անկաւ ամենայն բանակն Սիսարայ սրով առաջի, եւ ոչ մնաց եւ ոչ մի։
17 Եւ Սիսարա մեկնեցաւ զնաց հետիոտն ի խորանն Յայելի կնոջ Քաբերայ կինեցւոյ. քանզի խաղաղութիւն էր ի մէջ Յաբինայ արքայի Ասովրայ եւ ի մէջ տանն 18 Քաբերայ կինեցւոյ։ Եւ ել Յայել ընդ առաջ Սիսարայ, եւ ասէ ցնա, Ուստա՛ր տաց իս, տէր իմ, խոստրիա՛ց, եւ մի երկնչիր։ Եւ խոստրեցաւ առ նմա ի խորանն. եւ ծածկեաց զնա ընդ վիզ 19 կիւք նորա։ Եւ ասէ ցնա Սիսարա, Արբո ինձ ասկա մի ջուր, զի ծարաւի եմ։ Եւ երաց զսիկ կաթինն եւ արբոյց նմա. 20 եւ ծածկեալ զերեսս նորա։ Եւ ասէ ցնա Սիսարա, Կաց դա առ դրան խորանիդ, եւ եղիցի եթէ եկեսցէ ոք առ քեզ եւ հարցցէ եւ ասացէ ոք դրեզ, եթէ է՞ 21 ոք այդր այր, ասացես թէ Ոչ է։ Եւ [11]ծածկեաց զնա ընդ վիզկիւքն նորա, եւ" առ Յայել կին Քաբերայ զցից խոռանին, եւ կալաւ զուռանն ի ձեռին իւրում, եւ եմուտ մեզմով առ նա, եւ բախեաց զցիցն ընդ ծամիւքս նորա եւ վարսեաց ընդ գետինն. եւ նա [12]տապալեցաւ 22 ի մէջ ոսից նորա եւ եհան զոգի"։ Եւ ահա Բարակ սպնդեալ զայր զնետ Սիսարայ. եւ ել Յայել ընդ առաջ նորա եւ

[1] Եբր. Աւոդ [2] Եբր. ընդ արմաւենեաւն Դեբովրայ [3] Եբր. Ե ասէ. Երթ և ել [4] Եբր. ձգեցից առ [5] Եբր. պակաս [6] Եբր. ի Կադես. (10) Եւ կոչեաց Բարակ զԶաբուղոն եւ զՆեփթաղիմ [7] Եբր. Քաբեր կինեցի մեկնեալ էր

[8] Եբր. Հարեալ էր [9] Եբր. ի Սաանանիմ [10] Եբր. յԱրիսովթ [11] Եբր. Թմբեալ էր եւ խանձեալ, եւ մեռաւ։

ասէ ինձ, Եկ այսր եւ ցուցից քեզ զայրն զոր դուն ինդրես։ Եւ եմուտ առ նա. եւ անա Սիսարա կայր անկեալ մեռեալ, եւ սիկն ի ծամիոջ նորա։
23 Եւ կոտացոյց [1]Տէր Աստուած յաւուր յայնմիկ զՅաբէն արքայ Քանանացւոց
24 առաջի որդւոցն Իսրայէլի։ Եւ ձեռն որդւոցն Իսրայէլի երթալով երթայր խստացեալ ի վերայ Յաբինայ արքային Քանանացւոց մինչեւ սատակեցին [2]զնոսա։

Գլ. Ե

1 Եւ օրհնեաց Դեբովրա եւ Բարակ որդի Աբինեեմայ յաւուր յայնմիկ, եւ ասեն,
2 [3]Ի սկսանել զօրավարացն Իսրայէլի՝ մասն զիւրաքանչիւրոցն ժողովրդեանն" օրհնեցէք
3 զՏէր։ Լուարուք, թագաւորք, եւ ունկնդիր լերուք, նախարարք. ես Տեառն երգեցից եւ սաղմոս ասացից [4]Աստուծոյ Իսրայէլի։
4 Տէր, յիւրանել քո ի Սէիրայ եւ ի չուիլ քումմ յանդաստանացն Եդոմայ՝ երկիր չայժեցաւ եւ երկինք [5]խռովեցան, եւ
5 ամպք ցօղեցին ջուր։ Լերինք չայժեցան յերեսաց [6]Տեառն Եղովայ Սինայի," յերեսաց
6 Տեառն Աստուծոյ Իսրայէլի։ Յաւուրս Սամիգարայ որդւոյ Անաթայ՝ յաւուրս Յայելի պակասեցին [7]թագաւորք, եւ [8]գնացին ընդ չաւիղս, գնացին" ընդ ճա-
7 նապարհս կամակորս։ Պակասեցին [9]փառազունք բնակելք ի մէջ Իսրայէլի, պակասեցին, մինչեւ յարեաւ Դեբովրա,
8 մինչեւ յարեաւ մայր Իսրայէլի։ [10]Ցանկացան իրրեւ դարեղէն նկանակի աստուածոց օտարաց մնոտւոց. յայնժամ պատերազմեցան քաղաքք իշխանաց, ծամկոմիեամբ նորոյ զեղարդանց, քառասուն հազար այր" ի մէջ Իսրայէլի։
9 Սիրտ իմ ի վերայ [11]կարգելոցն Իսրայէլի. զօրաւորք ժողովրդեանն", օրհնեցէք
10 զՏէր։ [12]Հեծեալք յերիվարս ի մէջ օրէի,

եւ ապիտակաց, երթեալք յատեանս աւանակալաց։
11 Տուք ձայն բարբառոյ նուագածուաց ի մէջ ցնծացելոց. անդ տացեն արդարութիւն Տեառն. զարդարութիւն զօրացոյց" ի մէջ Իսրայէլի. յայնժամ էջ ի քաղաքս ժողովուրդ
12 Տեառն։ Զարթիր, զարթիր, Դեբովրա, [1]զարթո զթիւրաւորս հանդերձ ժողովրդեամբ." զարթիր, զարթիր, խօսեաց երգով. զօրացեալ յարիցես, Բարակ. գեբնացես զդերութիւն քո, որպի Աբինեե-
13 մայ։ [13]Յայնժամ մնծացաւ զօրութիւն նորա. Տէր ընկրկեաց [2]նմ զզօրագունսն
14 քան զիս։ Ժողովուրդ եփրեմայ պատժեաց գնոսա ի հովիտան. եղբայր քո բնիամինի՝ քոյին ժողովուրդ. յինէն ի Մաքիր իջին խուզարկուք, եւ ի Զաբուղոնէ զօրացուցիչք՝ գաւազանաւ պատ-
15 մուխան դպրի։ Եւ զօրավարք Իսաքարու ընդ Դեբովրայ եւ ընդ Բարակայ. եւ ապա Բարակ ի հովիտան տարածեաց զոտս իւր. ի բաժինս Ռուբինի մնծա-
16 մեծ ճչդութիւնք սրտի։ Ընդէր նստիցին ի մէջ Մոսափաթմայ, լսել զչաչիւնս սաղնապողոց, անցանել ի կողմն Ռուբինի։ Մեծամեծ յարուցեալ կան հետա-
17 զօտութիւնք սրտից։ Գադ յայնկոյս Յորդանանու բնակեաց. եւ Դան, ընդէր բնաւ պանդխտիցիս ի նաւս". Ասեր՝ բնակեաց առ ծովեզերը ծովուց, եւ ի
18 կիրճս նորա բնակեսցէ։ Զաբուղոն ժողովուրդ անձնանախատ ի մահ, եւ Նեփ-
19 թաղիմ՝ ի բարձունս աղարակի։ Հասին թագաւորք եւ ճակատեցան. յայնժամ ռազմապեցան թագաւորք Քանանացւոց ի Թանաք ի վերայ Ջրոց Մակեդդովայ. զաղահութիւն արծաթոյ [14]ես ոչ առի"։

---

[1] 3Եբէր. պ-ւ-ո-ե [2] Եբէր. զՅաբին արքայ Քանանացւոց [3] Եբէր. Յառաջնորդել առաջնորդաց յԻսրայէլի, ի նուիրել ժողովրդեան զանձն [4] Եբէր. Տեառն Աստուծոյ [5] Եբէր. կաթեցուցին [6] Եբէր. Տեառն, Ահնա իսկ [7] Եբէր. Ճանապարհք [8] Եբէր. որ գնային ընդ շաւիղս, գնային [9] Այլեւն՝ ճախք, կամ, ուսանք [10] Եբէր. ընտրեցին աստուածս նորս, յայնժամ պատերազմ ի դրունս վահան մի՞թէ երեւեցաւ եւ գեղարդն ի մէջ քառասուն հազարաց [11] Եբէր. իշխանացն Իսրայէլի. նահատակք, կամաւորք ի ժողովրդեան, [12] Եբէր. Հեծեալք ի վերուց ի շուց սպիտակաց, նստեալք յատեանս աւանակալաց, եւ որ շրջիքդ ի ճանապարհի, խօսեացրուք։ (11) Ի ձայնէ բարբառոյ աղեղնաւորաց ի տեղիս ուր հանի ջուր. անդ տացեն զարդարութիւնս Տեառն, զարդարութիւնս ճոխութեան նորա

[13] Եբէր. Յայնժամ էջ մնացորդն ընդդէմ զօրաւորաց ժողովրդեանն. էջ Տէր առ իս ընդդէմ հզօրաց։ (14) Որ ենն յարմատոյն Եփրեմայ՝ ընդդէմ Ամաղեկայ. յետ քո Բենիամին ի ժողովուրդս քո. ի Մաքիրայ իջին իշխանք, եւ ի Զաբուղոնէ որ ունին գաւազան դպրի։ (15) Եւ զօրավարք Իսաքարու ընդ Դեբովրայ, եւ Իսաքար իբրեւ զիարակ առաքեցաւ ի հովիտն զհետ նորա. ի բաժինս Ռուբենի մեծամեծ վարանք սրտի։ (16) Ընդէ՞ր նստիցիս ի մէջ երկուց գոմից լսել զրառաչել հօտից. ի բաժինս Ռուբենի մեծամեծ հետազօտութիւնք սրտի։ (17) Գաղաադ յայնկոյս Յորդանանու բնակեաց, եւ Դան ընդէ՞ր պանդխտիցի ի նաւս [14] Եբէր. ոչ առին

20 Յերկնից ճակատեցան աստեղք յիւրա-
քանչիւր յօրինուածոց, եւ ետուն պատե-
21 րազմ ընդ Սիսարայ։ Հեղեզատան կիսո-
նի մերժեաց զնոսա, հեղեզատան [1]կա-
պեսիմայ, հեղեզատան կիսոնի. կոխեսցէ
[2]զնոսա անձն իմ, ասէ իմ զօրասցի՛
22 զօրութեամբ։ Յայնժամ կարճակոտորք
եղեն զարչապարք [3]երիվարաց Մադա-
րովիայ, եւ հարիւեցան գարշապարք
իմ զնպաստաւորիւնս զարհուրանաց նո-
23 ցա՛։ Նզովեցէք զՄարովզ, ասէ հրեշ-
տակն Տեառն, անիծանելով անիծէք
զբնակիչս նորա, զի ոչ եկին յօգնականու-
թիւն Տեառն, [4]օգնական Տէր ի մէջ նա-
24 հատակաց հզօրն՛։ Օրհնեալ լիցի ի կա-
նանց Յայէլ կին Քաբերայ Կինեցւոյ,
օրհնեսցի ի կանայս ի խորանի [5]իւրում։
25 Ջուր խնդրեաց, եւ ետ կաթն, գաչ-
խուրանաւ զօրաւորաց մատոյց կոպի։
26 Ձգեաց իւր [6]ձախ ձեռաց իւրոց ի ցից, եւ գալ
իւր [6]ի սպառազուսն Չաիսիսարայ անսի-
տանացուցանել, եւ վախճանեցոյց զՍի-
սարա. վարեաց ընդ ծամոլիս նորա եւ
անցոյց ցից ընդ գլուխ [7]նորա եւ սա-
27 տակեաց։ Ի մէջ ոտից նորա անկաւ
ծանրացեալ, եւ նիրհեցոյց ի մէջ ծնդաց
իւրոց, յորում կորացաւ՝ մինչեւ զկետ-
28 նեցաւ, անդ անկաւ չուաւականան։ Մայրն
Սիսարայ հայեցեալ զէտ ակն ունէր ի
վանդակապատ պատուհանէն, քանզի
տեսանէր զդարձեալսն ի Սիսարայ, վասն
զի՞ յետնեցան կառք նորա ի գալոյ։ Ըն-
29 զէր յամեցին հետք կառաց նորա։ Կա-
նայք խմաստունք [5]իչխանաց նորա ե-
տուն անդրէն պատասխանի նմա [5]եւ ա-
սեն՝՝. եւ ինքեսին անձամբ անձին առնէր
30 իւր պատասխանի. [8]Ոչ գտանիցեն զնա
աւարաբաչխք, առնել սէր բարեկամաց
ի գլուխ արանց։ Եւ եղեւ զաղխս նորա
կապուտ երանգոյն՝ Սիսարայ, կապուտ
երանգոյն գոյնագոյն նկարուց, նարօտ
պէսպէս նկարուց. այն էր պարանոցին
31 նորա կապուտ՝՝։ Այսպէս կորիցեն ամե-
նայն թշնամիք քո, Տէր, եւ որք սիրի-
ցենն զնա՝ իբրեւ զկիս արեգական ի զօ-
րութեան նորա։
32 Եւ դադարեաց երկիրն ամս քառասուն։

Գլ. Զ

1 Եւ արարին որդիքն Իսրայէլի չար ա-
ռաջի Տեառն, եւ ետ զնոսա Տէր ի ձեռս
2 Մադիամու ամս եւթն։ Եւ զօրացաւ
ձեռն Մադիամու ի վերայ Իսրայէլի. եւ
արարին իւրեանց որդիքն Իսրայէլի յե-
բեսաց Մադիամու [9]գոմս ի լերինս եւ
3 յայրս եւ յամուրս՝՝։ Եւ լինէր իրրեւ վա-
րէր այր Իսրայէլի, ելանէր Մադիամ եւ
Ամաղէկ եւ որդիքն արեւելեայց, հա-
4 սանէին ի վերայ նոցա. Եւ բանակէին
առ նոքօք, եւ ապականէին զերս երկ-
րին մինչեւ ի մուտս Գազայ. եւ ոչ թո-
ղուին [10]դատար կենդանի Իսրայէլի, ոչխար
5 եւ արջառ եւ էշ։ Զի ինքեանք եւ խա-
չինք իւրեանց ելանէին, եւ զվրանս իւր-
եանց բերէին, եւ հասանէին իրրեւ զմա-
րախ բազմութեամբ. եւ ոչ զայր թիւ
նոցա եւ ուղտուց իւրեանց. եւ հասա-
նէին յերկիրն Իսրայէլի ապականել զնա։
6 Եւ աղքատացաւ Իսրայէլ յոյժ յերեսաց
Մադիամու. եւ աղաղակեցին որդիքն
Իսրայէլի առ Տէր։
7 Եւ եղեւ իրրեւ աղաղակեցին որդիքն
Իսրայէլի առ Տէր վասն Մադիամու,
8 Եւ առաքեաց Տէր այր մարգարէ առ որ-
դիսն Իսրայէլի եւ ասէ ցնոսա, Այսպէս
ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Ես եմ
որ հանի զձեզ յերկրէն Եգիպտացւոց,
եւ կորզեցի զձեզ ի տանէ ծառայու-
9 թեան, Եւ փրկեցի զձեզ ի ձեռաց ե-
գիպտացւոցն, եւ ի ձեռաց ամենայն նեղ-
չաց ձերոց. եւ մերժեցի զնոսա յերեսաց
10 ձերոց, եւ ետու ձեզ զերկիրս նոցա. Եւ
ասացի ցձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր,
մի երկնչիք յաստուածոց Ամաւրհացւոցն,
յորոց դուք բնակեալ էք յերկրի
նոցա. եւ ոչ լուարուք ձայնի իմում։
11 Եւ եկն հրեշտակ Տեառն, եւ նստաւ
ընդ կաղնեաւն որ էր յԵփրա Բուխաւս,
հօր Եսրեայ, եւ Գեդէոն որդի նորա ծե-

[1]ԵԲԲ. ի վաղուց [2]ԵԲԲ. անձն իմ [3]ԵԲԲ. երի-
վարաց. յարշաւանաց, յարշաւանաց զօրաւո-
րաց նորա [4]ԵԲԲ. յօգնականութիւն Տեառն
ընդդէմ հզօրաց [5]ՅԵԲԲ. գլխոյ [6]ԵԲԲ. յաւն
գործաւորաց [7]ԵԲԲ. նորա (27) Ի մէջ ոտից նորա
կորացաւ, անկաւ, զգեաննեցաւ. ի մէջ ոտից
նորա կորացաւ անկաւ. ուր կորացաւն անդ
անկաւ կոտծանեալ (28) Ընդ պատուհանն հայե-
ցաւ, եւ գուժեաց մայրն Սիսարայ ընդ վանդակա-
պատն, Չի՞ [8]ԵԲԲ. Ո՞չ ապարէն գտանիցեն,
բաշխեն աւար, աղջիկ մի, նա՛ աղջկունս եր-
կուս առ այր. կապուտ երանգոյ՝ վասն Սիսա-
րայ, կապուտ երանգոյ նկարակերտ. երանգ
երկուսեքեան նկարէն՝ պարանոցի նորա կապուտ

[9]ԵԲԲ. սորս ի լերինս եւ յայրս եւ ամուրս [10]ԵԲԲ.
պաշար

ձէր ցորեան ի [1]կալ , փախչել՝ յերեսաց
12 Մադիամու : Եւ երեւեցաւ նմա հրեշտակ
Տեառն եւ ասէ ցնա , Տէր ընդ քեզ ,
13 հզօր զօրութեամբ : Եւ ասէ ցնա Գե-
դէոն , Ցիս , Տէր իմ . եթէ էր Տէր ընդ
մեզ , ընդէ՞ր դտին զմեզ ամենայն չա-
րիքս այսոքիկ . եւ ո՞ւր են ամենայն
սքանչելիքն նորա զոր պատմեցին մեզ
հարքն մեր եւ ասեն , Ո՞չ ապաքէն յե-
գիպտոսէ հանեալ զմեզ Տէր . եւ արդ ըն-
դէ՞ր մերժեաց զմեզ , եւ մատնեաց զմեզ
14 ի ձեռս Մադիամու : Եւ հայեցաւ ընդ
նա [2]հրեշտակն Տեառն՝ , եւ ասէ ցնա ,
երթ զօրութեամբդ քով այդուիկ , եւ
փրկեսցես զԻսրայէլ ի ձեռաց Մադիա-
15 մու . ո՞չ աւասիկ ես առաքեցի զքեզ : Եւ
ասէ ցնա Գեդէոն , Ցիս, Տէր, թէ փրկե-
ցից զԻսրայէլ . եւ ահա հազարաւորն իմ
խոնարհագոյն է ի մէջ Մանասէի , եւ
16 ես կրտսեր եմ ի տան հօր իմոյ : Եւ ա-
սէ [3]ցնա , Տէր՝ ընդ քեզ , եւ հարկես
17 զՄադիամ իբրեւ զայր մի : Եւ ասէ Գե-
դէոն , Եթէ գտի շնորհս առաջի աչաց
քոց , արասցես ինձ նշան եթէ [4]դու խո-
18 սեցեալ՝ ընդ իս : Մի գնասցես աստի
մինչեւ եկից առ քեզ , եւ բերից զպտո
իմ եւ եդից առաջի քո : Եւ ասէ , Ես
[5]եմ , եւ՝ նստայց մասս մինչեւ դարձցիս
19 առ իս : Եւ եմուտ Գեդէոն եւ հասոյց
ուլ մի յայծեաց , եւ արդու մի ալեւր
բաղարջ . եւ զմիսն եդ ի վերայ խանի ,
եւ զարգանակն արկ ի պոյտն , եւ ելան
առ նա ընդ կաղնեաւն եւ [6]երկիր ե-
20 պագ՝ : Եւ ասէ ցնա հրեշտակն [7]Տեառն ,
Առ զդու զմիսդ եւ զնացդ բաղարջ , եւ
դիր ի վերայ վիմին այնորիկ , եւ հեղ
21 զարգանակն . եւ արար այնպէս : Եւ
ձգեաց հրեշտակն Տեառն զծայր գաւա-
ղանին որ ի ձեռին իւրում , եւ հասոյց
ի միսն եւ ի բաղարջն . եւ բորբոքեցաւ
հուր ի վիմէ անտի , եւ եկեր զմիսն եւ
զբաղարջն . եւ հրեշտակն Տեառն գնաց
22 յաչաց նորա : Եւ տեսս Գեդէոն եթէ
հրեշտակ Տեառն է . եւ ասէ Գեդէոն ,
Ա՛, ա , Տէր , Տէր . զի տեսի զհրեշտակն
23 Տեառն դէմ յանդիման : Եւ ասէ ցնա Տէր ,
Խաղաղութիւն ընդ քեզ . մի՛ երկնչիր .
ոչ մեռանիցիս :

24 Եւ չինեաց անդ Գեդէոն սեղան Տեառն ,
եւ կոչեաց գնա Խաղաղութիւն Տեառն
մինչեւ ցայսօր . [8]եւ մինչգեռ իւրն ան-
դէն էր՝ յԵփրա հօր Իւրոյ Եսբեայ :
25 Եւ եղեւ ի գիշերին յայնմիկ եւ ասէ
ցնա Տէր , Առ դու քեզ դեղն պարարակ
հօր քո , եւ զեղն երկրորդ դեռնեամեան .
եւ քակեսցես զսեղանն Բահաղու որ է
հօր քո , եւ կոտորեսցես [9]զանտառն որ
26 գնովաւ : Եւ չինեսցես սեղան Տեառն
Աստուծոյ քումմ , [10]որ երեւեցաւ քեզ ի
գլուխ լերինն Մանովգայ , ի սեզոյ պա-
տերազմին՝ . եւ առցես զեղն զերկրորդ ,
եւ հանցես յողջակէզ փայտիւք [9]անտա-
27 ռին զոր կոտորեսցես : Եւ առ Գեդէոն
[11]երկտասան այր ի ծառայից իւրոց , եւ
արար որպէս եւ խօսեցաւ ընդ նմա Տէր .
եւ եղեւ իբրեւ երկեաւ ի տանէ հօր
իւրոյ եւ յարանց քաղաքին առնել ի
տուէ , արար դիշերի :
28 Եւ կանխեցին արք քաղաքին ընդ ա-
ռաւօտն , եւ ահա կործանեալ սեղանն
Բահաղու , եւ [9]անտառն որ գնովաւ՝ կո-
տորեալ , եւ եղեն պարարակ հանեալ ոզ-
29 ջակէզ ի սեղանն չինեալ : Եւ ասեն այր
ցընկեր իւր , Ո՞ արար զկոս զայս . եւ
յուզէին եւ քննէին եւ ասէին թէ Գե-
դէոն որդի Յովասու արար զիրս զայդ :
30 Եւ ասեն արք քաղաքին ցՅովաս , Հան
արտաքս զորդին քո եւ մեռցի . զի կոր-
ծանեաց զսեղանն Բահաղու , եւ կոտո-
31 րեաց [9]զանտառն որ գնովաւ : Եւ ասէ
Յովաս ցարս որ կային ի վերայ նո-
ցա , Դո՞ւք այժմ դատիցիք վասն Բա-
հաղու , եւ կամ դո՞ւք ապրեցուցանիցէք
զնա . որ [12]վիճաւեաց նմա՝ մեռցի մին-
չեւ ցառաւօտ . եթէ աստուած իցէ , ինքն
խնդրեսցէ զվրէժ անձին իւրոյ , զի կոր-
32 ծանեցին զսեղան նորա : Եւ կոչեաց գնա
յաւուր յայնմիկ Ցերոբաաղ , եւ ասէ ,
Դատաստան Բահաղու . զի կործանեաց
զսեղան նորա :
33 Եւ ամենայն Մադիամ եւ Ամաղէկ եւ
ամենայն որդիքն արեւելեայց ժողովե-
ցան ի միասին , եւ եկին բանակեցան ի
34 հովիտան Յեզրայելի : Եւ Հոգի Տեառն
[13]զօրացոյց զԳեդէոն՝ , եւ եհար փող եղ-
ջերուեան . եւ խրախոյս եւսրձ Աբիհզեր

[1] ԵԲԲ. Հնձանի փախուցանել , ՀՄ. թ աբուցանել
[2] ԵԲԲ. Տէր [3] ԵԲԲ. ցնա Տէր, Զի ես եղէց [4] ԵԲԲ. դու ես որ խօսիս [5] ՅԵԲԲ. գոեմ [6] ԵԲԲ. մնասցյց [7] ԵԲԲ. Աստուծոյ
[8] ԵԲԲ. եւ տակաւին անդ է [9] ԵԲԲ. աշերա , (տես ելից ԼԴ. 13։) [10] ԵԲԲ. ի գլուխ ամրոյս այսորիկ ըստ կարգի [11] ԵԲԲ. տասն [12] ԵԲԲ. դատիցին վասն նորա՝ [13] ԵԲԲ. արկաւ զԳեդէոնիւ , այսինքն՝ պատեաց զնա իբրեւ Հանգերձ

35 զկնի նորա ։ Եւ արձակեաց հրեշտակս
ընդ ամենայն Մանասէ , եւ զոչեաց եւ
նա զկնի նորա . եւ արձակեաց հրեշտակս
յԱսեր եւ ի Զաբուղոն եւ ի Նեփթաղիմ ,
եւ ելին ընդ առաջ նորա ։
36 Եւ ասէ Գեդէոն ցԱստուած , Եթէ
փրկեացես ձեռամբ իմով զԻսրայէլ որ-
37 պէս եւ խօսեցար , Ահա գնեմ զգեամ մի
ասեաւ ի կալ . եթէ լինիցի [1]անձրեւ ի
վերայ զգեամն միայն եւ ի վերայ ա-
մենայն երկրի ցամաքութիւն , գիտացից
եթէ փրկեացես ձեռամբ իմով զԻսրա-
38 յէլ՝ որպէս եւ խօսեցար ։ Եւ եղեւ այն-
պէս . եւ կանխեաց Գեդէոն ընդ առաւօտն
ի վաղիւ անդր , եւ քամեաց զգեամն ,
եւ էլ ցօղ ի զգամէ անտի լի կանթիւ
39 ջրոյ ։ Եւ ասէ Գեդէոն ցԱստուած , Մի
բարկասցի ցասումն քո ինձ , եւ խօսե-
ցայց զարձեալ միւսանգամ , եւ փորձե-
ցից միւսանգամ զգամէն . եւ եղիցի
միւսանգամ ցամաքութիւն ի վերայ զգա-
մէն միայնոյ , եւ ի վերայ ամենայն երկրի
40 եղիցի [1]անձրեւ ։ Եւ արար Աստուած այն-
պէս ի գիշերին յայնմիկ . եւ եղեւ ցա-
մաքութիւն ի վերայ զգամէն միայնոյ ,
եւ ի վերայ ամենայն երկրի եղեւ [1]անձրեւ ։

Գլ . Է

1 Եւ կանխեաց Յերոբաաղ , նա ինքն է
Գեդէոն , եւ ամենայն ղօրն ընդ նմա ,
եւ բանակեցան առ աղբերն Արեգայ . եւ
բանակն Մադիամու [2]եւ Ամաղեկայ՝ էր
նոցա ընդ հիւսիսոյ [3]ի Գաբաաթամ որ ի
2 հովտի անդ ։ Եւ ասէ Տէր ցԳեդէոն , Բա-
զում է զօրդ որ ընդ քեզ է , առ ի չմատ-
նելոյ ինձ զՄադիամ ի ձեռս ղոցա . դուք
3 ցեղ պարծիցի ի վերայ իմ Իսրայէլ եւ ա-
սիցէ , Թէ Զհեն իմ փրկեաց զիս ։ Եւ
ասէ գնա Տէր , Ձայնեաց յականջս ժո-
ղովրդեանդ , եւ ասասցես , Ո՛ ոք [4]վա-
տասիրտ իցէ՝ դարձցի . եւ գիմեցին՝ ի
լեռնէն Գաղաադու , եւ դարձան ի զօ-
րուէն քսան եւ երկու հազարք , եւ մնա-
4 ցին տասն հազար ։ Եւ ասէ Տէր ցԳեդ-
էոն , Տակաւին բազում է ղօրդ . իջո
զգոսա ի ջուրն եւ փորձեցից քեզ զդո-
սա անդ . եւ եղիցի զորմէ ասացից ցքեզ
եթէ Դա երթիցէ ընդ քեզ , նա երթիւ-
ցէ ընդ քեզ . եւ զամենայն զորմէ ա-
ասցից թէ Դա մի երթիցէ ընդ քեզ , նա
5 մի երթիցէ ընդ քեզ ։ Եւ իջոյց զղօրն
ի ջուրն . եւ ասէ Տէր ցԳեդէոն , Ամե-
նայն որ լափիցէ լեզուաւ իւրով ի ջրոյ
անտի իբրեւ զշուն , կացուսցես զնոսա
ուրոյն . եւ ամենայն որ անկցի ի վերայ
ծնկաց իւրոց ըմպել , կացուսցես զնոսա
6 առանձինն ։ Եւ եղեւ թիւ ամենեցուն
որ լափեցին ձեռամբ եւ լեզուով իւր-
եանց , երեք հարիւր այր . եւ մնացորդք
ժողովրդեանն անկան ի վերայ ծնկաց
7 իւրեանց ըմպել ջուր ։ Եւ ասէ Տէր ցԳեդ-
էոն , Երեք հարիւր արամբքդ որ լա-
փեցին զջուր՝ փրկեցից զձեզ , եւ ասց
զՄադիամ ի ձեռս քո . եւ ամենայն ժո-
ղովուրդդ երթիցէ այր իւրաքանչիւր ի
8 տեղի իւր ։ Եւ առին զպաշար ժողովուր-
դեանն ի ձեռս իւրեանց , եւ զիփոդս նո-
ցա եղջերեայս ։ Եւ զամենայն այր Իս-
րայելի արձակեաց զայր ի բնակութիւն
իւր , եւ զերիքհարիւր այրն եւեթ կա-
լաւ . եւ բանակն Մադիամու էին ի ներ-
քոյ նորա ի հովիտն ։
9 Եւ եղեւ ի գիշերին յայնմիկ եւ ասէ
ցնա Տէր , Արի էջ առ վաղվաղակի ի
բանակն , զի մատնեցի զնա ի ձեռս քո ։
10 Ապա թէ երկնչիցիս դու իջանել , էջ նախ
դու եւ պատանեակդ քո Փարա ի բա-
11 նակն . Եւ լուիցես եթէ զինչ խօսիցին ,
եւ ապա զօրասցին ձեռք քո , եւ իջցես
ի բանակն ։ Եւ էջ ինքն եւ պատանեակն
իւր Փարա ընդ նմա ի մասն ինչ գինե-
12 ւորեալ բանակին ։ Եւ Մադիամ եւ Ա-
մաղէկ եւ ամենայն որպիքն արեւելեայք
բանակեալ էին ի ծործորսն իբրեւ զմա-
րախ բազմութեամբ . եւ ուղտուց նոցա
ոչ գոյր թիւ , այլ էին իբրեւ զաւազ առ
13 եղերբ ծովու բազմութեամբ ։ Եւ եմուտ
Գեդէոն , եւ ահա այր պատմէր ընկերի
իւրում երազ . Տեսի , ասէ , երազ , եւ ա-
հա նկանակ դարեղէն հոլովեալ ի բա-
նակս Մադիամու , եւ եկն մինչեւ ի խո-
րանն Մադիամու , եւ եհար զնա եւ կոր-
ծանեաց , եւ անկաւ խորանն վերուստ
14 ի վայր ։ Պատասխանի եւս ընկերն նորա
եւ ասէ , Ոչ է այն՝ եթէ ոչ սուրն Գե-
դէոնի որդւոյ Յովասու առն Իսրայելաց-
ւոյ . մատնեաց Տէր ի ձեռս նորա զՄա-
դիամ եւ զամենայն բանակս ։
15 Եւ եղեւ իբրեւ լուաւ Գեդէոն զպատ-
մութիւն երազոյն եւ զմեկնութիւնն նո-
ցա , երկիր եպագ Տեառն , եւ դարձաւ

[1] Եբր· ցօղ [2] Յիբր· ագարեայն [3] Եբր· առ բլրոյն Մորէի [4] Եբր· վատասիրտ եւ երկչոտ իցէ՝ դարձցի եւ մեկնեսցի

անպրէն ի բանակն Իսրայելի, եւ ասէ, Արիք, զի մատնեաց Տէր զբանակն Մա-
16 դիամու ի ձեռս [1]մեր։ Եւ բաժանեաց զերեք հարիւր այրն յերիս առաջս. եւ
ետ զփողսն եղջերեայս[2] ի ձեռս ամենեց-
17 ցունց, եւ ջահս ի մէջ սափորացն։ Եւ ասէ ցնոսա, Ընդ իս հայեսջիք, եւ այն-
պէս արասջիք. ահա ես մտանեմ ի մէջ
18 բանակին, եւ եղիցի որպէս ես առնիմ, նոյնպէս եւ դուք արասջիք։ Եւ
հարից ես զփողն եղջերեայ, եւ ամե-
նեքեան որ ընդ իս էք՝ հարջիք եւ դուք զփողսն եղջերեայս, չուրջ զամենայն
բանակաւն, եւ ասասջիք, Սուր Տեառն
եւ Գեդէոնի։
19 Եւ եմուտ Գեդէոն եւ հարիւր այր ընդ նմա ի կողմն բանակին, ի սկզբան միջ-
նոյ պահուն, [3]միայն զարթուցանելով զարթուցիչն" զպահապանան, եւ հարին
զփողսն եղջերեայս, եւ [4]թօթափեցին
20 զսափորսն որ ի ձեռս իւրեանց։ Եւ հարին զփողսն եղջերեայս երեքին առաջքն, եւ
խորտակեցին զսափորսն, եւ առին ձա-
խոյ ձեռամբք իւրեանց զջահսն, եւ ա-
ջոյ ձեռօք իւրեանց զփողսն հարկանել,
եւ աղաղակեցին եւ ասեն, Սուր Տեառն
21 եւ Գեդէոնի։ Եւ կացին իւրաքանչիւր առանձինն չուրջ զբանակաւն. եւ բո-
թաւաւ ամենայն բանակն, [5]փող հա-
22 րին" եւ փախեան։ Եւ զոչեցին երեք-հարիւրեքին փողքն եղջերեայք. եւ եդ
Տէր զսուր առն յընկեր իւր եւ յամենայն
բանակն. եւ փախեաւ ամենայն բանակն
մինչեւ [6]ցԲեթասետա, եւ մեաս դանդն
մինչեւ" ցդպրն Աբէլմաուղայ եւ ցՏարէթ,
23 Եւ զոչեաց այր Իսրայելացի ի Նեփ-
թաղիմայ եւ յԱսերայ եւ յամենայն Մա-
24 նասէէ, եւ զհետ մտին Մադիամու։ Եւ հրեշտակս արձակեաց Գեդէոն յամենայն
սահմանս Եփրեմայ, եւ ասէ, Իջէք յա-
ռաջս Մադիամու, եւ կալարուք զկիրճս
ջրոյն մինչեւ ցԲեթփարա եւ ցՅորդա-
նան։ Եւ զոչեաց ամենայն այր Եփրե-
25 մի, եւ կալան իւրեանց զանցս ջրոյն մինչեւ ցԲեթփարա եւ ցՅորդանան։ Եւ
կալան զերկու իշխանս Մադիամու զՈրե-
բեր եւ զԶէր. եւ սպանին զՈրեբեր [7]ի
Սովրորեբա, եւ զԶէր սպանին [8]յԱկեր-
զեբա, եւ հալածեցին զՄադիամ. եւ
զգլուխս Որեբայ եւ Զէբայ բերին առ
Գեդէոն յայնմ կողմանէ Յորդանանու։

Գլ. Ը

1 Եւ ասեն ցԳեդէոն այր Եփրեմի, Ընդէ՞նչ
է բանդ այդ զոր արարեր ընդ մեզ, զի
ոչ կոչեցեր զմեզ յորժամ երթայիր պա-
տերազմել ընդ Մադիամու. եւ վիճէին
2 ընդ նմա սաստկագոյնս։ Եւ ասէ ցնո-
սա, Արդ զի՞նչ [9]ինչ արարի իբրեւ զձեզ.
ո՞չ ապաքէն լաւագոյն է ճռաքաղու-
թիւնդ Եփրեմի քան զկութան Աբիեզե-
3 րայ։ Ի ձեռս ձեր մատնեաց [9]Տէր զիշ-
խանս Մադիամու զՈրեբ եւ զԶէր. եւ
ընդէ՞նչ կարացի առնել իբրեւ զձեզ։ Եւ
ասա զդարձեալ ոգի նոցա ի նմանէ ի
խօսել նորա զբանս զայս։
4 Եւ եկն Գեդէոն ի Յորդանան, եւ անց
ինքն եւ երեք հարիւր արքն որ ընդ նմա
5 պատատեալք [10]եւ քաղցեալք"։ Եւ ասէ
ցարսն Սոկքովթայ, Տուք աւազիկ հաց
ի կերակուր զօրուս այսմիկ որ ընդ իս,
զի քաղցեալ են. եւ ես պնդեցայց զհետ
Զեբէի եւ Սաղմանայ թագաւորացն Մա-
6 դիամու։ Եւ ասեն իշխանքն Սոկքով-
թայ, Միթէ ձեռն Զեբէի եւ Սաղմա-
նայ լցե՞լ ի ձեռին քումմ, զի տացուք հաց
7 զօրականիդ քումմ։ Եւ ասէ Գեդէոն, Ոչ
այդպէս, այլ ի տալ Տէառն զԶեբէի եւ
զՍաղմանա ի ձեռս իմ, եւ ես [11]քարչե-
ցից զմարմինս ձեր փշովք անապատի եւ
8 բոբկոնիմաւ։ Եւ կղ անտի ի Փանուէլ,
եւ խօսեցաւ ընդ նոսա նոյնպէս. եւ պա-
տասխանի արարին նմա արք Փանուե-
լայ՝ զոր օրինակ արարին նմա պատաս-
9 խանի արք Սոկքովթայ։ Եւ խօսեցաւ
Գեդէոն ընդ արս Փանուելի եւ ասէ, Ի
դառնալ իմում այսրէն խաղաղութեամբ՝
կործանեցից զաչառարկդ զայդ։
10 Եւ Զեբէի եւ Սաղմանա էին ի Կար-
կար, եւ բանակ նոցա ընդ նոսա, իբ-
րեւ հնգետասան հազար այր ընդ ամե-
նայն՝ որ մնացեալ էին յամենայն բանա-
կէ որդւոցն արեւելից. եւ անկեալք էին
հարիւր եւ քսան հազար արանց սուսեր-
11 բամբկայ։ Եւ ել Գեդէոն ընդ ճանա-
պարհս վրանաբնակչացն յարեւելից Նո-
բաէի եւ հանդէպ Նաբեայ, եւ եհար զբա-

[1] ԵԲԲ. ձեր [2] ԵԲԲայեցին յոբելը-, եւ սահփռս թափուբս [3] ԵԲԲ. այն ինչ կացուցեալ էր նոցա [4] ԵԲԲ. խորտակեցին [5] ԵԲԲ. և աղաղակեցին [6] ԵԲԲ. ցԲեթասետա ի կողմն Սաբերայ, մինչեւ [7] Ա. յօ-ԲՈՔ՝ առ վիմին Որեբայ

[8] Ա. յԵՒՔՈՔ՝ առ հնձանին Զեբայ [9] ԵԲԲ. Աստուած [10] ԵԲԲ. ասկայն և հալածէին [11] ԵԲԲ. ծեծեցից

12 նաեւ . զի անա էր բանակն յանդոգս : Եւ
վախեան Զերբէէ եւ Սազմանա , եւ ասեցաւ
զնոսա . եւ ձերբակալ արար զերկուս թագաւորսն Մադիամու զՁեբէէ եւ զՍազմանա , եւ զամենայն բանակ նոցա զղջեցոյց :
13 Եւ դարձաւ Գեդէոն որպէ Յովաաս ի
պատերազմէն ի վտիտալէ անտի Արեւ-
14 սայ" : Եւ կալաւ պատանեակ մի յարանց
Սոկքովթայ , եւ հարց զնա . եւ գրեաց առ
նմա զիշխանսն Սոկքովթայ եւ զծերս
15 նորա եւթանասուն եւ եւթն այր : Եւ
եկն [2]Գեդէոն առ իշխանսն" Սոկքովթայ , եւ ասէ ցնոսա , Առաւասիկ Զերբէէ
եւ Սազմանա , վասն որոյ նախատեցէք
զիս եւ ասացէք , Միթէ ձեռն Զերբէէլ
եւ Սազմանայ այժմ ի ձեռին քում իցէ ,
զի տացուք հաց արանց քոց ներմելոց :
16 Եւ առ [3]զիշխանսն եւ" զծերս քաղաքին
եւ փուշս յանապատէ եւ զբոլկոնիին ,
եւ [4]քարչեաց նոքօք զարսն Սոկքովթայ :
17 Եւ զաչտարակն Փանուէլի կործանեաց ,
եւ կոտորեաց զարս քաղաքին :
18 Եւ ասէ ցՁերբէէ եւ ցՍազմանա , [5]Ո՞ր
են" արքն զոր կոտորեցէք ի Թաբովր :
Եւ ասեն , Արպէս զու , նոյնպէս եւ
[6]նոքա նման քեզ , եւ զու նման նոցա ,"
19 իբրեւ զաճել որդւոց Թագաւորի : Եւ
ասէ Գեդէոն , Եղբարք իմ եւ որդիք մօր
իմոյ էին . [3]եւ երդուաւ նոցա եւ ասէ ,"
կենդանի է Տէր , եթէ կենդանի պահեալ
20 էր ձեր զնոսա , ոչ սպանանէի զձեզ : Եւ
ասէ ցԵթեր ցանդրանիկ իւր , Արի սպան
զդոսա . եւ ոչ եհան պատանեակն զսուր
21 իւր զի երկեաւ , քանզի մանուկ էր : Եւ
ասեն Զերբէէ եւ Սազմանա , Արի եւ զու
քեզէն պատահեա մեզ , զի ըստ ասն եւ
զօրութիւն իւր . եւ յարեաւ Գեդէոն եւ
սպան զՁերբէէ եւ զՍազմանա , եւ առ զմանեակն ի պարանոցաց ուղտուց նոցա :
22 Եւ ասեն այր Իսրայէլի ցԳեդէոն , Իշ-
խեա մեզ զու եւ որդի քո , եւ որդի որդւոյ քո , զի փրկեցեր զմեզ ի ձեռաց
23 Մադիամու : Եւ ասէ ցնոսա Գեդէոն ,
Ոչ իշխեցից ես ձեզ , եւ ոչ իշխեսցէ ձեզ
որդի իմ . այլ Տէր իշխեսցէ ձեզ :
24 Եւ ասէ ցնոսա Գեդէոն , Խնդրեցից
ի ձէնջ հայցուածս մի , եւ տուք ինձ առ
այր վինդ մի յաւարէ անտի . զի զինդք
ոսկիք էին նոցա , քանզի Իսմայելացիք
25 էին : Եւ ասեն , Տալով տացուք . եւ տա-
բածեցին [7]պհանդերձս նորա" , եւ ընկե-
ցին անդր այր իւրաքանչիւր զդինդս
26 [3]ոսկիս զաւարի իւրոյ : Եւ եղեւ կշիռ
պնդացն ոսկեայ զոր խնդրեաց՝ հազար
եւ եւթն հարեւր սիկղ ոսկւոյ , Թոզ
զչանչառունսն եւ զմիհեւանդս եւ [8]զպատ-
կակսն եւ զծիրանիս , եւ որ ինչ ի թա-
պաւորսն" Մադիամու . եւ Թող զմա-
նեակս ոսկիս պարանոցաց ուղտուց նո-
27 ցա : Եւ արար զայն Գեդէոն կեփուդ , եւ
հաստատեաց զայն ի քաղաքի իւրում
կեփրա . եւ պոռնկեցաւ ամենայն Իսրա-
յէլ զկնի նորա անդր , եւ եղեւ Գեդէո-
նի եւ տան նորա ի գայթագղութիւն :
28 Եւ վանեցաւ Մադիամ առաջի որդւոցն
Իսրայէլի եւ ոչ եւս յաւելին սիրառնալ
զգլուխս իւրեանց . եւ զադարեաց երկիրն
աւուրս քառասուն յաւուրս Գեդէոնի :
29 Եւ գնաց Յերոբաաղ որդի Յովաաս ,
30 եւ բնակեաց ի տան իւրում : Եւ Գեդէո-
նի էին եւթանասուն որդիք ելեալք յե-
րանց նորա . զի կանայք բազումք էին
31 նորա . Եւ հարճ նորա որ ի Սիկեմայ՝
ծնաւ նմա եւ նա որդի , եւ եդ անուն նմա
32 Աբիմելէք : Եւ մեռաւ Գեդէոն որդի Յո-
վաաս ի բարւոք ծերութեան , եւ թա-
ղեցաւ ի գերեզմանի Յովաաս հօր իւ-
րոյ յԵփրա հօրն Եզրեայ :
33 Եւ եղեւ իբրեւ մեռաւ Գեդէոն , դար-
ձան որդիքն Իսրայէլի եւ պոռնկեցան
զկնի Բահաղիմայգն . եւ եկին զուխտ
իւրեանց ընդ Բահազուն Բերիթայ , լի-
34 նել նոցա յաստուած : Եւ ոչ յիշե-
ցին որդիքն Իսրայէլի զՏէր Աստուած
իւրեանց որ փրկեաց զնոսա յամենայն
35 թշնամեաց իւրեանց չուրջանակի : Եւ ոչ
արարին ողորմութիւն ընդ տանն Յերո-
բաաղայ , որ նա ինքն է Գեդէոն , ըստ
ամենայն բարութեանն զոր արար ընդ
Իսրայէլ :

ԳԼ . Թ

1 Եւ գնաց Աբիմելէք որդի Յերոբաաղայ
ի Սիկեմ առ եղբարս մօր իւրոյ , եւ խօ-
սեցաւ ընդ նոսա եւ ընդ ամենայն ազ-
գի տանն հօր մօր իւրոյ եւ ասէ ,
2 Խօսեցարուք յականջս ամենայն տանց
Սիկեմացւոց . Ո՞ր լաւ իցէ ձեզ , իշխել
ձեզ եւթանասնից արանց ամենայն որդ-

[1] Կա՛մ, յառաջ քան զելս արեւուս [2] Եբէ· առ արան
[3] Յեբէ· գոհոե [4] Եբէ· խրատեաց [5] Եբէ· Ուր-
պիսի՞ ոք էին [6] Եբէ· նոքա · ի բաքանչիւր
[7] Եբէ· հանդերձ [8] Եբէ· զծիրանիս որ ի վերայ
թագաւորացն

ւոցն Ցերոբաաղայ, եթէ տիրել ձեզ առն միով. եւ յիշեցէք զի ազգ ձեր եւ մարմին ձեր եմ ես։ 3 Եւ խօսեցան զնմանէ եղբարք մօր նորա յականջս ամենայն ազգին Սիկիմացւոց զամենայն բանս զայսոսիկ. եւ միտեցաւ սիրտ նոցա զկնի Աբիմելեքայ, զի ասացին թէ Եղբայր մեր է։ Եւ եռուն նմա ետքանասուն արծաթով ի տանէ Բահաղու Բերիթայ [1]ուխտին, եւ վարձեցաւ նոքօք Աբիմելէք արս արիկաս եւ զարհուրեցուցիչս, եւ 5 գնացին զնեա նորա։ Եւ եհաս ի տուն հօր իւրոյ յԵփրա, եւ կոտորեաց զեղբայրս իւր զորդիսն Երոբաաղայ արս եւթանասուն, ի վերայ վիմի միոյ. եւ մնաց Յովաթամ որդի Ցերոբաաղայ կրտսեր, քանզի թաքեաւ։ 6 Եւ ժողովեցան ամենայն արք Սիկիմացւոց եւ ամենայն տունն Մաւղոնայ, եւ չոգան թագաւորեցուցին զԱբիմելէք ի [2]դաշտ՝ առ կաղնեաւ կոտոնն որ ի Սիկիմա։ 7 Եւ ազդ եղեւ Յովաթամայ, եւ գնաց եւ եկաց ի վերայ գլխոյ լերինն ի Գարիզին. սիրարձ ձայն իւր եւ [3]ելաց, եւ ասէ ցնոսա, Լուարուք ինձ, արք Սիկիմացւոց, եւ լուիցէ ձեզ Աստուած։ 8 Գնացին ծառք օծանել իւրեանց թագաւոր, եւ ասեն ցձիթենին, Թա- 9 գաւորեա ի վերայ մեր։ Եւ ասէ ցնոսա ձիթենին, Թողից զպարարատութիւն իմ [4]յորոյ փառաւորուց զիս Աստուած եւ 10 մարդիկ", եւ երթայցեմ իշանել ծառոց։ Եւ ասեն ծառքն ցկնկին, Եկ թագաւորեա 11 ի վերայ մեր։ Եւ ասէ ցնոսա թզենին, Թողից զքաղցրութիւն իմ եւ զպտուղ բարութեան իմոյ, եւ երթայցեմ իշանել 12 լինել վայրիկ։ Եւ ասեն ծառքն ցորմ, 13 Եկ թագաւորեա ի վերայ մեր։ Եւ ասէ ցնոսա որմ, Թողից զգինի իմ [1]եւ զուրախութիւն Աստուծոյ եւ մարդկան, եւ 14 երթայցեմ իշանեն լինել վայրիկ։ Եւ ասեն ծառքն ցգմնիկ, Եկ թագաւորեա ի 15 վերայ մեր։ Եւ ասէ գմնիկ ցնոսա, Թէ արդարեւ օծանիցէք զիս թագաւորել ի վերայ ձեր, եկայք ծածկեցարուք ընդ հովանեաւ իմով, եթէ ոչ, ելանիցէ հուր ի գմնիկէ ասէ, եւ կերիցէ զեղեւնա- 16 փայսս լիբանանու։ Եւ արդ եթէ ճշմարտութեամբ եւ բարեաւթեամբ առարէք եւ թագաւորեցուցէք զԱբիմե-

[1] ՅՇԲԲ. գ-ւ-ե [2] ԵԲԲ. կոթողին, ՀՀ. պահակին
[3] ԵԲԲ. աղաղակեաց [4] ԵԲԲ. որով պատուեն յիս զԱստուած եւ զմարդիկ

լէք, եւ [5]թէ որպէս" արարէք ընդ Յերոբաաղ եւ ընդ տուն նորա, եւ եթէ ըստ հատուցման ձեռին նորա արարէք 17 նմա, Որպէս եւս պատերազմ հայր իմ փոխանակ ձեր, եւ ընկէց զանձն իւր յառաջ, եւ ապրեցոյց զձեզ ի ձեռաց 18 Մադիամու, Եւ դուք յարեայք ի վերայ տան հօր իմոյ այսօր, եւ կոտորեցէք զորդիս նորա, արս եւթանասուն ի վերայ վիմի միոյ, եւ թագաւորեցուցէք զԱբիմելէք զորդի աղախնոյ նորա ի վերայ արանց Սիկիմացւոց, զի եղբայր ձեր 19 է. եթէ ճշմարտութեամբ եւ բարեաւթեամբ արարէք ընդ Յերոբաաղայ եւ ընդ տան նորա յաւուրս յայսմիկ, [1]օրհնեալ զուք եւ" ասացէք զԱբիմելէք 20 եւ, եւ ասացէ եւ նա ի ձեզ. Եւ պա թէ ոչ, ելցէ հուր յԱբիմելեքայ եւ կերիցէ զարս Սիկիմացւոց, եւ զտունն Մաւղոնայ. [6]ապա թէ ոչ," ելցէ հուր յարանց Սիկիմացւոց եւ յտանէն Մաւղո- 21 նայ եւ կերիցէ զԱբիմելէք։ Եւ փախեաւ Յովաթամ եւ գնաց, եւ գնաց ընդ ճանապարհն ի Բեռա, եւ բնակեաց անդ յերեսաց Աբիմելեքայ եղբօր իւրոյ։

22 Եւ իշխեաց Աբիմելէք ի վերայ Իսրա- 23 յելի ամս երիս։ Եւ առաքեաց Աստուած ոգի չար ի մէջ Աբիմելեքայ եւ ի մէջ առանց Սիկիմացւոց, եւ [7]արհամարհեցին արք Սիկիմացւոց զտունն Աբիմելեքայ" 24 Այնել ի վերայ նորա զանիրաւութիւնն եւթանասանից որդւոցն Ցերոբաաղայ, եւ հատուցանել զարիւն նոցա ի վերայ Աբիմելեքայ եղբօրն իւրեանց որ կատարեաց զնոսա, եւ ի վերայ արանց Սիկիմացւոց՝ զի զօրացուցին զձեռս նորա կատարել 25 զեղբարս իւր։ Եւ գործեցին նմա դարան արք Սիկիմացւոց ի վերայ գլխոց լերանց, եւ յափշտակէին զամենեսեան որ անցանէին առ նոքօք ընդ ճանապարհն. 26 եւ ազդ եղեւ Աբիմելեքայ։ Եւ եկն Գաաղ որդի Աբեդդայ եւ եղբարք նորա, եւ անցին ի Սիկիմ, եւ վստահ եղեն ի նա 27 արք Սիկիմացւոց. Եւ ելին յանդաստանսն եւ կիթեցին զայգիս իւրեանց, եւ հարին հնձանս, եւ արարին պարանդիկս, եւ մտին ի տունս աստուածոցն իւրեանց, եւ կերան եւ արբին եւ անիծին զԱբի- 28 մելէք։ Եւ ասէ Գաաղ որդի Աբեդդայ, Ո՞ է Աբիմելէք, եւ ո՞ է [8]որդին Միքա-

[5] ԵԲԲ. եթէ բարիս [6] ԵԲԲ. եւ [7] ԵԲԲ. գործեցին գաւարք Սիկիմացւոց Աբիմելեքայ [8] ԵԲԲ. Միւքեմ

մայ՝ զի ծառայեմք նմա. ոչ նա է որ-
զի Յերոբաաղայ, եւ Զեբուղ [1]ծառայ իւր՝
ասելկան նորա, [2]հանդերձ արամիք՝ ե-
մոռայ հօր Միքեմայ, եւ զի՞ է զի ծա-
29 ռայիցեմք նմա: Եւ ո՛ տայր զժողովուրդս
զայս ի ձեռս իմ, եւ վռնէի զԱբիմե-
լէք. եւ ասէի ցԱբիմելէք, Բազմացո
զզօրս քո եւ ել ինձ:
30 Եւ լուաւ Զեբուղ իշխան քաղաքին
զբանս Գաաղայ որդւոյ Աւեդդայ, եւ
31 բարկացաւ բարկութեամբ. Եւ առաք-
ելով առ Աբիմելէք հրեշտակս [3]պատա-
րագօք եւ ասէ, Ահաւասիկ Գաաղ որ-
դի Աւեդդայ եւ եղբարք նորա եկին ի
Սիկեմ, եւ պաշարեն զքաղաքս ի վերայ
32 քո: Արդ արի գիշերի դու եւ զօրդ քո
որ ընդ քեզ է, եւ գիսանաւուտս լեր
33 յանդաստանին. Եւ եղիցի ընդ առաւօտն
ի ծագել արեգականն՝ կանխեսցես եւ
հասցես զքաղաքաս. եւ ահա ան եւ զօրս
որ ընդ սմա է ելանէ առ քեզ. եւ արաս-
ցես ընդ առ որպէս ինչ գտցէ ձեռն քո:
34 Եւ յարուաւ Աբիմելէք եւ ամենայն զօրն
որ ընդ նմա գիշեր, եւ մարին ի դարանս
35 զՍիկեմաս չորք ագաւք: Եւ եղեւ [4]ընդ
առաւօտն՝ ել Գաաղ որդի Աւեդդայ եւ
եկաց ի մուտս դրան քաղաքին. եւ յա-
րուաւ Աբիմելէք եւ ամենայն զօրն որ
36 ընդ նմա ի դարանացն: Եւ տեսս Գաաղ
որդի Աւեդդայ զզօրն, եւ ասէ ցԶեբուղ,
Ահաւասիկ զօր իջանեն ի գլխոյ լերանցն.
եւ ասէ ցնա Զեբուղ, Զստուեր լերանցն
37 տեսանես դու իբրեւ մարդիկ: Եւ յա-
ւելով եւս խօսել Գաաղ եւ ասէ, Ահաւա-
սիկ զօր իջանեն [4]ընդ ծովակողմն՝ առ
պորտով կռկրին, եւ առաջ մի ել ընդ
38 ճանապարհն կամնոյն [4]պիտանոցայ: Եւ
ասէ ցնա Զեբուղ, Արդ ո՞ւր է բերան
քո որ ասէր, Թէ Ո՞վ է Աբիմելէք, զի
ծառայեսցուք նմա. ոչ ասանիկ այն զօր
է զոր դուն արհամարէիր. արդ ել եւ տուր
39 ընդ նմա պատերազմ: Եւ ել Գաաղ ա-
ռաջի արանցն Սիկեմացւոց, եւ մար-
40 տեաւ ընդ Աբիմելէքայ: Եւ հալածեաց
զնա Աբիմելէք. եւ փախեաւ յերեսաց
նորա, եւ անկան վիրաւորք յաղուժս
41 մինչեւ դրունս քաղաքին: Եւ նստաւ Ա-
բիմելէք յԱրիմ, եւ հան Զեբուղ զԳաաղ
եւ զեղբարս նորա դի մի բնակեսցեն ի
42 Սիկեմ: Եւ եղեւ ի վաղիւ անդր եւ ել
ժողովուրդն ի դաշտն, եւ ազգ եղեւ Ա-
43 բիմելէքայ. Եւ առ զզօրն եւ բաժանեալ
յերիս առաջս, եւ եմուտ նովաւ ի զա-
րան, եւ եահս, եւ ահա զօր ելանէր ի
քաղաքէ անտի. եւ յարուաւ ի վերայ
44 նոցա եւ հար զնոսա: Եւ Աբիմելէք եւ
դունդքն որ ընդ նմա՝ ճակատեցան եւ
կացին առ դրան քաղաքին. եւ երկու
դունդքն ախեացան ի վերայ ամենեցունց
որ յանդաստանին էին, եւ հարին զնո-
45 սա: Եւ Աբիմելէք պատերազմէր ընդ
քաղաքին զօրն զայն ողջոյն, եւ առին
զքաղաքն, եւ զժողովուրդն որ ի նմա
կոտորեցին, եւ զքաղաքն կործանեցին
եւ ազարա վարեցին:
46 Եւ լուան ամենայն արք աչտարակին
Սիկեմացւոց, եւ եկին յամրոց տանն
47 Բեղեէլ Բերիթայ: Եւ ազգ եղեւ Աբի-
մելէքայ եթէ ժողովեցան ամենայն արք
48 աչտարակին Սիկեմացւոց: Եւ ել Աբի-
մելէք ի լեառնն Սեղմոն, ինքն եւ ամե-
նայն զօրն որ ընդ նմա, եւ առ Աբիմե-
լէք տապար ի ձեռն իւր եւ կոտորեաց
[5]բուռն մի փայտի, եւ առ զայն եւ եդ
զայն ի վերայ ուսոց իւրոց, եւ ասէ ցզօրն
իւր, Զինչ տեսանիցէք յիս զօր առնե-
ցեմ, արասջիք եւ դուք վազվազակի
49 իբրեւ զիս: Կոտորեցին եւ նոքա իւրա-
քանչիւր զառնէքին [5]բուռն մի փայտ,
եւ բարձին եւ զնացին զհետ Աբիմելե-
քայ. եւ եդին [6]ի վերայ ամրոցին՝, եւ
այրեցին ի վերայ նոցա զամրոցն հրով.
եւ մեռան ամենայն արք աչտարակին
Սիկեմացւոց իբրեւ հազար մի՝ ընդ այր
եւ ընդ կին:
50 Եւ չոգաւ Աբիմելէք ի Թերէս, եւ
51 նստաւ չուրջ զնովաւ, եւ առ զնա: Եւ
աչտարակ մի էր հզոր ի մէջ քաղաքին,
եւ փախեան անդր ամենայն արք եւ կա-
նայք եւ ամենայն պիտուրք քաղաքին,
եւ փակեալն ընդդէմ իւրեանց, եւ ելին
52 ի տանիս աչտարակին: Եւ եկն Աբիմե-
լէք մինչեւ յաչտարակն, եւ մարտեաւ
ընդ նմա, եւ մերձեցաւ Աբիմելէք ի
53 դուրս աչտարակին՝. Եւ բնկէց կին մի
բեկոր երկանի ի վերայ գլխոյ նորա, եւ
54 մանրեաց զգլուխն Աբիմելէքայ: Եւ
ազազակեաց վազվազակի առ պատա-
նեակն կռապաճակիր իւր եւ ասէ ցնա,
Մերկեա զսուր քո եւ սպան զիս, զա-

[1] ՅԵբր. ղ–ե–ւ [2] ՅԵբր. ծառայեցէք արանց [3] ՅԵբր. ի ծածուկ [4] Եբր. Մէռնենիմայ
[5] Եբր. ոստ [6] Եբր. զամրոցաւն [7] Եբր–յէդն յ–ե–լ–ո–, այրել զնա հրով

ցէ ասիցին թէ կին ասան զնա ։ Եւ խո-
ցեաց զնա պատանին իւր , եւ մեռաւ
55 Աբիմելէք ։ Եւ եաես այր Իսրայելացի
թէ մեռաւ Աբիմելէք , գնացին այր ի-
րաքանչիւր ի տեղի իւր ։
56 Եւ դարձոյց Աստուած զչարիսն Աբի-
մելեքայ ի գլուխ իւր զոր արար հօր ի-
րում կատարելով զեւթանասունն եղբարն
57 իւր ։ Եւ զամենայն չարիսն պանդ Սի-
կեմացւոց դարձոյց Աստուած ի գլուխս
նոցա , եւ եկին ի վերայ նոցա անէծքն
Յովաթամայ որդւոյ Յերոբաաղայ ։

Գլ. Ժ

1 Եւ յարեաւ յետ Աբիմելեքայ փրկել զԻս-
րայել Թովղա որդի Փուայ , [1]որդի հօրեղ-
բօր նորա" , այր յիսաքարայ . եւ նա բնա-
2 կէր [2]ի Սամարիա , ի լերինն Եփրեմայ։ Եւ
դատեաց զԻսրայէլ ամս քսան եւ երիս ,
եւ մեռաւ եւ թաղեցաւ [2]ի Սամարիա ։
3 Եւ յարեաւ յետ նորա Յայիր Գաղաա-
դացի , եւ դատեաց զԻսրայէլ ամս քսան
4 եւ երկուս ։ Եւ եղեն նորա որդիք երե-
սուն [3]եւ երկու" , որ հեծանէին յերեսուն
[3]եւ երկու" յովանակ . եւ երեսուն [3]եւ
երկու" քաղաքք նոցա . եւ [4]կոչեալ զնո-
ա ուանս Յայիրայ մինչեւ ցայսօր , որ
5 են ի Գաղաադ ։ Եւ մեռաւ Յայիր եւ
թաղեցաւ ի Կամովն ։
6 Եւ յաւելին որդիքն Իսրայելի առնել
չար առաջի Տեառն , եւ պաշտեցին զԲա-
ղեամն եւ զԱստարովթն , եւ զաս-
տուածս Ասորւոց եւ զաստուածս Սիդո-
նայ եւ զաստուածս Մովաբայ եւ զաս-
տուածս որդւոցն Ամմոնայ եւ զաստուածս
այլազգեացն . եւ թողին զՏէր եւ ոչ ծա-
7 առեցին նմա ։ Եւ սրտմտեցաւ բարկու-
թեամբ Տէր Իսրայելի , եւ մատնեաց
զնոսա ի ձեռս այլազգեացն , եւ ի ձեռս
8 որդւոցն Ամմոնայ ։ Եւ խախտեցին եւ
խորտակեցին զորդիսն Իսրայելի ի ժա-
մանակին յայնմիկ ամս ութ ուտասան , զա-
մենայն Իսրայելացիս յայնկոյս Յորդա-
նանու , յերկրի Ամաւրհացւոցն ի Գա-
9 ղաադ ։ Եւ անցին որդիքն Ամմոնայ ընդ
Յորդանան սալ պատերազմ ընդ Յուդայ
եւ ընդ Բենիամինի , եւ ընդ տանն Եփրե-
մայ . եւ նեղեցան որդիքն Իսրայելի յոյժ։
10 Եւ աղաղակեցին որդիքն Իսրայելի առ
Տէր եւ ասեն , Մեղաք քեզ , զի թողաք
զԱստուածդ մեր եւ պաշտեցաք զԲա-
11 ղաիմն ։ Եւ ասէ Տէր ցորդիսն Իսրա-
յելի , Ո՞չ ապաքէն Եգիպտացիք եւ Ա-
մովրհացիք եւ որդիք Ամմոնայ [3]եւ Մո-
12 վաբ" եւ այլազգիք եւ Սիդոնացիք եւ
Ամաղէկ եւ [5]Քանան նեղեցին զձեզ ,
եւ աղաղակեցէք առ իս եւ փրկեցի զձեզ
13 ի ձեռաց նոցա ։ Եւ դուք թողէք զիս եւ
ծառայեցէք աստուածոց օտարաց . վասն
14 այնորիկ ոչ յաւելից փրկել զձեզ ։ Եր-
թայք աղաղակեցէք առ աստուածսն զոր
ընտրեցէք ձեզ , եւ նոքա փրկեսցեն
զձեզ ի ժամանակի նեղութեանց ձերոց ։
15 Եւ ասեն որդիքն Իսրայելի ցՏէր , Մե-
ղաք , արա դու ընդ մեզ զամենայն որ
լինչ հաճոյ թեւի առաջի քո . բայց , Տէր ,
միայն ապրեսո զմեզ յաւուր յայսմիկ ։
16 Եւ մերժեցին զաստուածսն օտարոտիս
ի միջոյ խրեանց , եւ պաշտեցին [6]զՏէր
միայն . եւ ոչ հաչակեցաւ ընդ ժողո-
վրդեանն . եւ յոգիս ապառատն եղեւ
յաշխատութենէ" Իսրայելի ։
17 Եւ եկին որդիքն Ամմոնայ եւ բանա-
կեցան ի Գաղաադ . եւ եկին որդիքն
Իսրայելի եւ բանակեցան [7]ի պիտանո-
18 ցին ։ Եւ ասեն իշխանք ժողովրդեանն
Գաղաադու այր ցընկեր իւր , Այր որ
սկիզբն առնիցէ պատերազմել ընդ որ-
դիսն Ամմոնայ , եղիցի գլուխ ամենայն
բնակչաց Գաղաադու ։

Գլ. ԺԱ

1 Եւ Յեփթայէ Գաղաադացի էր այր հզօր
զօրութեամբ , եւ նա որդի կնոջ պոռնկի.
2 եւ ծնաւ [8]Գաղաադու զՅեփթայէ ։ Եւ
ծնաւ կինն Գաղաադու նմա որդիս . եւ
հասուցանէին որդիք կնոջն , եւ մերժե-
ցին զՅեփթայէ , եւ ասեն ցնա , Ոչ
ժառանգեսցես ի տան հօր մերոյ , զի
3 որդի կնոջ պոռնկի ես դու ։ Եւ փախ-
եաւ Յեփթայէ յերեսաց եղբարց իւրոց ,
եւ բնակեցաւ յերկրին ի Տոբ . եւ ժո-
ղովեցին առ Յեփթայէ արք սրիկայք ,
եւ ելանէին ընդ նմա ։
4 Եւ եղեւ յետ աւուրց , եւ պատե-
րազմեցան որդիքն Ամմոնայ ընդ Իսրայե-
5 լացիսն ։ Եւ եղեւ յորժամ եռաւն պա-
տերազմ որդիքն Ամմոնայ ընդ Իսրայելի՝
չոգան ծերք Գաղաադու առնուլ զՅեփ-

[1] ԵՔԲ. որդւոյ Թովղայ [2] ԵՔԲ. ի Սամիր [3] ՅԵՔԲ. պակաս [4] ԵՔԲ. կոչեցին
[5] ԵՔԲ. Մաանացիք [6] ԵՔԲ. զՏէր. եւ նեղացաւ անձն նորա ընդ տառապանս [7] ԵՔԲ. ի Մասփա, այլ ե՛ այլոր [8] ԵՔԲ. Գաղաադ

6 Թայէ վերկրէն Տովբայ ։ եւ ասեն ցՅեփ-
Թայէ , եկ եւ եղիցես մեզ ի զօրավար ,
եւ ասպռաւք պատերազմ ընդ որդիսն
7 Ամմոնայ ։ եւ ասէ Յեփթայէ ցձերան Գա-
ղաադացւս , Ո՞չ ապաքէն դուք ատեցէք
զիս , եւ հանէք ի տանէ հօր իմոյ , [1]եւ
արձակեցէք զիս ի ձէնջ ։" եւ արդ զի՞
8 եկիք առ իս յորժամ նեղեցայք ։ եւ
ասեն ծերքն Գաղաադացւս ցՅեփթայէ ,
[2]Ոչ այդպէս է . այլ եկաք" առ քեզ , եւ
երթիցես ընդ մեզ , եւ ասպռաւք պա-
տերազմ ընդ որդիսն Ամմոնայ . եւ եղի-
ցես մեզ ի գլուխ ամենայն բնակչաց
9 Գաղաադացւս ։ եւ ասէ Յեփթայէ ցձերան
Գաղաադացւս , եթէ դարձուցանիցէք զիս
պատերազմել ընդ որդիսն Ամմոնայ , եւ
մատնեսցէ զնոսա Տէր առաջի իմ , ես
10 եղէ՞ց իշխան ։ եւ ասեն ծերքն Գաղա-
ադացւս ցՅեփթայէ , Տէր կացցէ լսող ի
մէջ մերում , եթէ ոչ բան բանիդ քում
11 նոյնպէս եւ արասցուք ։ եւ գնաց Յեփ-
թայէ ընդ ծերսն Գաղաադացւս . եւ կա-
ցուցին զնա ժողովուրդն ի վերայ իւրա-
նանց պլուխ եւ առաջնորդ . եւ խոսե-
ցաւ Յեփթայէ զամենայն զբանս իւր ա-
առաջի Տեառն ի Մասփա ։
12 Եւ առաքեաց Յեփթայէ հրեչտակս
առ թագաւոր որդւոցն Ամմոնայ եւ ասէ ,
Զի՞ կայ իմ եւ քո , զի եկեալ ես առ
13 իս պատերազմել ցերկիր իմում ։ եւ ասէ
արքայ որդւոցն Ամմոնայ ցհրեչտակսն
Յեփթայեայ , [3]Ընդէ՞ր սո՛ւտ Իսրայէլ զեր-
կիր իմ յելանելն իւրում յԵգիպտոսէ՝
յԱռնոնայ մինչեւ ցՅաբոկ եւ մինչեւ
ցՅորդանան . եւ արդ դարձո զնա առ
իս խաղաղութեամբ [1]եւ զնասցից . եւ
14 դարձան հրեչտակքն առ Յեփթայէ" ։ եւ
յաւել եւս Յեփթայէ առաքել հրեչտակս
15 առ արքայ որդւոցն Ամմոնայ , եւ ասէ
ցնա , Այսպէս ասէ [1]Իսրայէլ եւ" Յեփ-
թայէ . Ոչ սո՛ւտ Իսրայէլ զերկիրն Մոաբ
եւ զերկիր որդւոցն Ամմոնայ յելա-
16 նել իւրեանց յԵգիպտոսէ . Այլ գնաց
Իսրայէլ ընդ անապատն մինչեւ ցծովն
17 կարմիր , եւ եկն մինչեւ ցկադէս . եւ
առաքեաց Իսրայէլ հրեչտակս առ արք-
քայ Եդոմայ եւ ասէ , Թող անցից ընդ
երկիր քո . եւ ոչ անսաց արքայն Եդո-
մայ . եւ առաքեաց առ արքայն Մոաբ-
բոյ . եւ ոչ կամեցաւ . եւ նստաւ Իս-
18 րայէլ ի կադէս ։ եւ չրջեցաւ ընդ անա-
պատն , եւ պատեցաւ զերկիրսն Եդոմայ
եւ զերկիրսն Մոաբայ . եւ եկն առ
արեւելից երկիրն Մոաբայ , եւ բանա-
կեցաւ յայնկոյս Առնոնայ , եւ ոչ մտին
ի սահմանս Մոաբայ . քանզի Առնոնն
19 էր սահման Մոաբայ ։ եւ առաքեաց
Իսրայէլ հրեչտակս առ Սհոն արքայ
Ամովրհացւոց՝ թագաւոր Եսեբոնայ [1]եւ
Ամովրհացւոց" , եւ ասէ ցնա Իսրայէլ ,
Թող անցից ընդ երկիր քո մինչեւ ցտե-
20 զ իմ ։ եւ ոչ կամեցաւ Սհոն զԻսրայէլ
անցանել ընդ սահմանս իւր . եւ ժողով-
եաց Սհոն զամենայն ժողովուրդ իւր ,
եւ բանակեցաւ յԱսա . եւ եհա պատե-
21 րազմ ընդ Իսրայէլ ։ եւ մատնեաց Տէր
Աստուած Իսրայէլի զՍհոն եւ զամե-
նայն ազգն նորա ի ձեռս Իսրայէլի , եւ
հար զնոսա , եւ ժառանգեաց Իսրայէլ
զերկիր Ամովրհացւոցն բնակչացն յեր-
22 կրին յայնմիկ ։ եւ ժառանգեաց Իսրայէլ
զամենայն սահմանս Ամովրհացւոցն յԱս-
նոնայ մինչեւ ցՅաբոկ , եւ յանապատէն
23 մինչեւ ցՅորդանան ։ եւ արդ Տէր Աս-
տուած Իսրայէլի եբարձ զԱմովրհացին
յերեսաց ժողովրդեան իւրոյ Իսրայէլի .
24 եւ դո՞ւ ժառանգիցես զնա ։ Ո՞չ ապաք-
քէն զոր ժառանգեցոյց քեզ Քամովս
աստուածն քո՝ զայն ժառանգիցես . եւ
զամենայն զոր ժառանգեցոյց Տէր Աս-
տուած մեր յերեսաց [4]մերոց՝ զայն մեք
25 ժառանգեսցուք ։ Իսկ արդ՝ միթէ լա՞ւ
ինչ իցես դու քան զԲաղակ որդի Սեպ-
փովրայ՝ զարքայն Մոաբայ . միթէ
մարտե՞ր մարտեաւ ընդ Իսրայէլի , կամ
պատերազմս պատերազմեա՞ւ ընդ նո-
26 սա , Ի բնակչին Իսրայէլի յԵսեբոն եւ
ի գաւառս նորա , եւ յԱրոյէր եւ ի գաւառս
նորա , եւ յամենայն քաղաքս որ առ
եզերբ [5]Յորդանանու ամս երեք հարիւր .
զի՞ է զի ոչ [6]փրկեցէք զնոսա ի ժամա-
27 նակին յայնմիկ ։ Եւ ես ոչ ինչ մեղայ
քեզ , եւ դու առնես ընդ իս չարու-
թիւն՝ տալ ընդ իս պատերազմ . դա-
տեսցէ Տէր որ դատելոցն է այսօր ի մէջ
որդւոցն Իսրայէլի եւ ի մէջ որդւոցն
28 Ամմոնայ ։ Եւ ոչ անսաց արքայ որդւոցն
Ամմոնայ բանիցն Յեփթայեայ զորս ա-
ռաքեաց առ նա ։
29 Եւ եղեւ ի վերայ Յեփթայեայ Հոգի
Տեառն , եւ անց ընդ Գաղաադ եւ ընդ

[1] ՅԵբր· գ-ւ-ռ [2] ՅԵբր· Վասն այսորիկ դարձաք
[3] ՅԵբր· Քանզի
[4] ՅԵբր· մերոց [5] ՅԵբր· Առնոնայ [6] ՅԵբր· թողեցեր

Մանասէ, եւ անց ընդ դիտանոցն Գա-
զաղու, եւ ի դիտանոցէն Գազաղու
30 յայնկոյս որդւոցն Ամմոնայ։ Եւ ուխտեաց
Յեփթայէ ուխտ Տեառն եւ ասէ, Եթէ
մատնելով մատնեսցես զորդիսն Ամմոնայ
31 ի ձեռս իմ, Եւ եղիցի որ ելանելով ե-
լանիցէ ի դրանց տան իմոյ ընդ առաջ իմ
ի դառնալն իմում խաղաղութեամբ յորդ-
ւոցն Ամմոնայ, եղիցի՝ ել մատուցից զնա
32 Տեառն յողջակէզ։ Եւ անց Յեփթայէ առ
որդիսն Ամմոնայ պատերազմել ընդ նոսա.
33 եւ մատնեաց զնոսա Տէր ի ձեռս նորա։ Եւ
եհար զնոսա յԱրոյէրայ մինչեւ ի մուտս
Մէննիթայ, քսան քաղաքք, մինչեւ
ցՓարբէլ այգեստանեացն, հարուածս մե-
ծամեծս յոյժ. եւ վանեցան որդիքն
Ամմոնայ յերեսաց որդւոցն Իսրայէլի։
34 Եւ եկն Յեփթայէ ի Մասփա ի տունն
իւր. եւ ահա դուստր իւր ելանէր ընդ
առաջ նորա թմբկօք եւ պարուք. եւ
նա էր միամօր [1]սիրելի նորա, եւ ոչ
գոյր նորա բաց ի նմանէ ուստր կամ
35 դուստր։ Եւ եղեւ իրրեւ տեսս զնա,
պատառեաց զհանդերձս իւր եւ ասէ,
Վայ է ինձ, դուստր իմ, ընկճեցեր զիս,
[2]խոչընդոտեալ եղեր ինձ". զի ես բացի
զբերան իմ [1]վասն քո" առ Տէր, եւ ոչ
36 կարացից դարձուցանել։ Եւ ասէ դնա,
[3]Եթէ վասն իմ" բացեր զբերան քո առ
Տէր, արա զիս որպէս եկ ի բերանոյ
քումմէ, փոխանակ զի արար քեզ Տէր
վրէժխնդրութիւն ի թշնամեացդ քոց յորդ-
37 ւոցն Ամմոնայ։ Եւ ասէ դհայր իւր, Ա-
րա ինձ զբանս զայս. Թողացո ինձ զեր-
կուս ամիսս, եւ երթայց չրջեցայց ընդ
լերինս եւ լացից զկուսութիւնս իմ ես
38 եւ ընկերք իմ։ Եւ ասէ դնա, Երթ. եւ
արձակեաց զնա զերկուս ամիսս. եւ
չոգաւ ինքն եւ ընկերք իւր, եւ լայր
39 զկուսութիւն իւր ի վերայ լերանց։ Եւ
եղեւ յետ կատարելոյ երկուց ամսոցն,
դարձաւ առ հայր իւր. եւ արար նմա
զուխտն զոր ուխտեաց. եւ նա ոչ գի-
40 տէր զայր։ Եւ եղեւ ի կրօնս ի մէջ Իս-
րայէլի [1]աղջիկ զգուսանն Յեփթայեայ",
աւուրց յաւուրս ժողովէին զաստեր Իս-
րայէլի աղջիկ զգուսանն Յեփթայեայ
Գաղաադացւոյ չորս աւուրս ի տարւոջ։

[1]ՅԵԲԲ. պոյոթ [2]ՅԵԲԲ. դու եւս եղեր ի ներչաց
իմոց [3]ՅԵԲԲ. Հայր իմ,

ԳԼ. ԺԲ

1 Եւ ժողովեցան որդիքն Եփրեմի եւ
անկին [4]ի Սեփենա, եւ ասեն ցՅեփթայէ,
Ձի՞ է վի ելեր պատերազմել ընդ որ-
դիսն Ամմոնայ, եւ զմեզ ոչ կոչեցեր եր-
թալ ընդ քեզ. արդ այրեսցուք հրով
2 զտունն քո ի վերայ քո։ Եւ ասէ ցնոսա
Յեփթայէ, [5]Այր գրկեալ էի ես եւ ժո-
ղովուրդ իմ, եւ որդիքն Ամմոնայ սատա-
պեցուցանէին զիս յոյժ". եւ կոչեցի զիս
առ ձեզ, եւ ոչ փրկեցէք զիս ի ձեռաց
3 նոցա։ Եւ տեսի զի ոչ ոք էր որ փրկէր,
եւ եդի զանձն իմ ի ձեռին իմում, եւ
անցի առ որդիսն Ամմոնայ, եւ մատնեաց
զնոսա Տէր ի ձեռս իմ. եւ արդ ընդէ՞ր
եկէք առ իս յաւուր յայսմիկ մարտնչել
[6]ընդ իս։ Եւ ժողովեաց Յեփթայէ զա-
մենայն արս Գաղաադու եւ տայր պա-
տերազմ ընդ Եփրեմի. եւ հարին արք
Գաղաադու զԵփրեմ, [7]զի ասացին ապ-
րեալքն Եփրեմի, Թէ Դուք Գաղաադա-
ցիք ի մէջ Եփրեմի եւ ի մէջ Մանասէի
5 էք"։ Եւ կալաւ Գաղաադ զկիրճս Յոր-
դանանու զԵփրեմի. եւ եղեւ իրրեւ ա-
սացին ապրելոքն Եփրեմայ, Թէ Թող
[8]անցցուք, ասեն գնոսա արք Գաղաա-
դու, Միթէ եւ դուք յԵփրեմէ՞ իցէք.
6 եւ ասեն, Չեմք ի նոցանէ։ Եւ ասեն
գնոսա, Տուք մեզ նչան ինչ, եւ ասա-
ցէք, Հասկ հասկ. եւ ոչ յաջողեցան
խօսել այնպէս. եւ կալան եւ կոտորե-
ցին զնոսա" յանցս Յորդանանու. եւ
անկան ի ժամանակին յայնմիկ յԵփրեմէ
քառասուն եւ երկու հազարք։
7 Եւ դատեաց Յեփթայէ զԻսրայէլ ամս
վեց, եւ մեռաւ Յեփթայէ Գաղաա-
դացի, եւ թաղեցաւ ի քաղաքի իւրում
ի Գաղաադ։
8 Եւ դատեաց յետ նորա զԻսրայէլ [8]Եսե-
9 րոն ի Բեթղեհեմէ։ Եւ եղեն նորա որդիք
երեսուն, եւ դուստերք երեսուն
տուեալ արտաքս. եւ երեսուն կին ած

[4]ՅԵԲԲ. ի Հիւսիս [5]ՅԵԲԲ. Այր կռուոյ եղէ ես եւ
ժողովուրդ իմ, եւ որդիքն Ամմոնայ յոյժ [6]ՅԵԲԲ.
քանզի ասացեալ էր նոցա Թէ Փոխանակայք
Եփրեմի էք դուք, Գաղաադացիք, ի մէջ Եփրեմի,
ի մէջ Մանասէի [7]ՅԵԲԲ. անցից. ասեն գնա արք
Գաղաադու, Միթէ եւ դու յԵփրեմէ՞ իցես. եւ
ասէ, Ոչ (6) Եւ ասեն գնա, Ասա, Շիպոլեթ,
եւ նա ասէր, Սիպոլեթ, եւ ոչ յաջողէր խօսել
այնպէս, եւ ունէին զնա եւ կոտորէին զնա
[8]ՅԵԲԲ. Աբեսան

ուստերաց իւրոց արտաքուստ. եւ զատ-
10 եաց զԻսրայէլ ամս եւթն։ Եւ մեռաւ
[1]Ենեքեան եւ թաղեցաւ ի Բեթղեհէմ։
11 Եւ դատեաց յետ նորա զԻսրայէլ Ելոն
12 Զաբուղոնացի ամս տասն։ Եւ մեռաւ
Ելոն Զաբուղոնացի եւ թաղեցաւ յԵփիմ
յերկրին Զաբուղոնի։
13 Եւ դատեաց յետ նորա զԻսրայէլ Աբ-
14 դոն որդի Ելղեքայ Փարաթոնացի։ Եւ
եղեն նորա որդիք քառասուն, եւ երե-
սուն որդիք որդւոց նորա, որ հեծանէին
յեզիծանասուն յաւանակս. եւ դատեաց
15 զԻսրայէլ ամս ութ։ Եւ մեռաւ Աբդոն
որդի Ելղեքայ Փարաթոնացի, եւ թա-
ղեցաւ [2]յԵփրաթոն, յերկրի Եփրեմայ
ի լերինն Ամաղեկայ։

Գլ. ԺԳ

1 Եւ յաւելին որդիքն Իսրայէլի առնել
չար առաջի Տեառն. եւ մատնեաց զնոսա
Տէր ի ձեռս [3]այլազգեացն ամս քառասուն։
2 Եւ եղեւ այր մի ի Սարայ ի գիւղէ
Դանայ, եւ անուն նորա Մանոավէ. եւ
3 կին նորա ամուլ էր եւ ոչ ծնանէր։ Եւ
երեւեցաւ հրեշտակ Տեառն կնոջն, եւ
ասէ ցնա, Ահաւադիկ դու ամուլ ես եւ
ոչ է քո ծնեալ, եւ յղացեալ եւ ծնցես
4 որդի։ Արդ զգոյշ լեր, գուցէ ըմպիցես
գինի եւ օղի, եւ մի՛ ուտիցես զամե-
5 նայն անսուրբ. Զի ահա յղացեալ դու
եւ ծնցես որդի, եւ [4]երկաթ մի՛ ելցէ ի
գլուխ նորա. զի ուխտաւոր Աստուծոյ
եղիցի մանուկն անտի՛ն յորովայնէ. եւ
նա սկսցի փրկել զԻսրայէլ ի ձեռաց
6 Փղշտացւոցն։ Եւ եմուտ կինն եւ ասէ
ցայր իւր, եւթէ Այր Աստուծոյ եկն առ
իս, եւ տեսիլ նորա իբրեւ զտեսիլ հրեշ-
տակի Աստուծոյ [5]երեւելի յոյժ. եւ՝ հարցի
ցնա թէ Ուստի՛ ես, եւ զանուն իւր ոչ
7 պատմեաց ինձ։ Եւ ասէ ցիս, Ահա
յղացեալ դու եւ ծնցես որդի. եւ արդ
մի՛ ըմպիցես գինի եւ օղի, եւ մի՛ ու-
տիցես զամենայն անսուրբ. զի ուխտա-
ւոր Աստուծոյ եղիցի մանուկն անտի՛ն
յորովայնէ մօր իւրոյ մինչեւ ցօր մահ-
ուան իւրոյ։
8 Եւ աղաչեաց Մանոավէ զՏէր եւ ասէ,
Ցիս, Տէր. այրն Աստուծոյ զոր առա-
քեցեր առ մեզ, եկեսցէ գարձեալ առ-
մեզ եւ լուսաւորեսցէ զմեզ, թէ զինչ
9 արասցուք մանկանն որ ծնանիցի։ Եւ
լուաւ Աստուած ձայնի Մանոավէի, եւ եկն
հրեշտակն Աստուծոյ մեւս անգամ առ
կին նորա մինչդեռ նստէր յանդի. եւ
10 Մանոավէ այր նորա չէր առ նմա։ Եւ
վազեցեալ կինն եւ ընդ առաջ արամեաց
առն իւրում եւ ասէ ցնա, Ահա երեւե-
ցաւ ինձ այրն որ եկն առ իս յաւուր
11 յայնմիկ։ Եւ յարեաւ գնաց Մանոավէ զհետ
կնոջ իւրոյ, եւ եկն առ այրն եւ ասէ
ցնա, Եթէ դո՞ւ իցես այրն որ խօսեցար
ընդ կնոջն. եւ ասէ հրեշտակն, Ես եմ։
12 Եւ ասէ Մանոավէ, Արդ գայցէ չափ բա-
նին քոյոյ, զինչ լինիցին իրաւունք ման-
13 կանն եւ գործք նորա։ Եւ ասէ հրես-
տակն Տեառն ցՄանոավէ, յամենայնէ զոր
14 ասացի կնոջգ՝ զգոյշ լինիցի. Յամենայնէ
որ ելանէ յորմոյ՝ մի՛ կերիցէ, եւ գինի
եւ օղի մի՛ արբցէ, եւ զամենայն ան-
սուրբ մի՛ կերիցէ. յամենայնէ զոր պա-
տուիրեցի նմա՝ զգոյշ լինիցի։
15 Եւ ասէ Մանոավէ ցհրեշտակն, Թող
բանապատեսցուք զքեզ, եւ արասցուք
16 առաջի քո ուլ մի յայծեաց։ Եւ ասէ
հրեշտակն Տեառն ցՄանոավէ, եթէ բանա-
պատեսցես զիս, ոչ կերայց ի հացից
քոց, եւ եթէ արասցես ողջակէզ՝ Տեառն
մատուսցես զնա. զի ոչ գիտաց Մանոավէ
17 թէ հրեշտակ Տեառն իցէ։ Եւ ասէ Մա-
նոավէ ցհրեշտակն Տեառն, Զինչ անուն
է քեզ, զի յորժամ եկեսցէ բանն քո,
18 փառաւորեսցուք զքեզ։ Եւ ասէ ցնա
հրեշտակն Տեառն, Զի՞ հարցանես զանու-
19 ն[6]անէ իմմէ, եւ նա է սքանչելի։ Եւ
առ Մանոավէ զուլն այծեայ զզոհն, եւ
մատոյց ի վէմսն ի վերայ վիմին՝ [7]Տեառն սքան-
չելագործի՛. եւ Մանոավէ եւ կին նորա
20 հայէին։ Եւ եղեւ ընդ ամբառնալ բո-
ցոյն ի վերուստ ի սեղանոյն յերկինս՝
ամբարձաւ հրեշտակն Տեառն բոցովսես-
զանոյն, եւ Մանոավէ եւ կին նորա հա-
յէին. եւ անկան ի վերայ երեսաց իւրե-
21 ցանց յերկիր։ Եւ ոչ եւս յաւել երեւել
հրեշտակն Տեառն Մանոավէի եւ կնոջ
նորա. յայնժամ գիտաց Մանոավէ թէ
22 հրեշտակ Տեառն է։ Եւ ասէ Մանոավէ
ցկինն իւր, Մահո՛ մեռանիցիմք զի

[1] ԵԲԲ. Աբեսան [2] ԵԲԲ. ի Փարաթոն [3] ԵԲԲ. Փղշտացւոց։ Թուրքմէնէ մը ըսեր էր ինծի՝ Յոյն ուրէն Փղշտացիք է Հնդամբէնէն. իսկ յետ այնորիկ ոթով՝ Ալլազգիք, Նշանակ ըլլա Յունին. ուստի պարտ է նմանալ Փղշտացիք։ [4] ԵԲԲ. սծելի [5] ԵԲԲ. աշխատր յոյժ. եւ ոչ [6] ԵԲԲ. եւ զընծայն Հացի [7] ԵԲԲ. Տեառն. եւ սքանչելիս եառ գործել

23 զԱստուած տեսաք։ Եւ ասէ ցնա կին
նորա, եթէ կամեցեալ էր Տէառն սպա-
նանել զմեզ, ոչ ընդունէր ի ձեռաց մե-
րոց զողջակէզն եւ [1]զպտոն, եւ ոչ [2]յու-
սաւորէր մեզ զայն ամենայն ընդ ժա-
մանակս ժամանակս, եւ ոչ լսելի առնէր
24 մեզ զայն"։ Եւ ծնաւ կինն որդի, եւ
կոչեաց զանուն նորա Սամփսոն. եւ ա-
ճեալ մանուկն, եւ օրհնեալ զնա Տէր։
25 Եւ սկսաւ Հոգի Տեառն չրջել ընդ նմա
ի բանակին Դանայ, ի մէջ Սարայ եւ
ի մէջ Եսթաւուղայ։

Գ Լ. Ժ Դ

1 Եւ էջ Սամփսոն ի Թաւնաթա, եւ ե-
տես կին մի ի Թաւնաթա ի դստերացն
այլազգեաց, 3եւ հառոյց [3]ընդ առաջի
2 նորա։" Եւ ել պատմեաց հօր իւրում եւ
մօր իւրում եւ ասէ, կին մի տեսի ի
Թաւնաթա ի դստերացն այլազգեաց. եւ
3 արդ առէք զնա ինձ կնութեան։ Ասէն
ցնա հայր եւ մայր իւր, Միթէ ոչ գտցէ
ի դստերաց եղբարցդ քոց եւ յամենայն
ժողովրդեան իմում կին, զի երթիկս
դու առնուլ կին յայլազգեաց անթլփա-
ւից. Եւ ասէ Սամփսոն ցհայր իւր,
Զնա առ ինձ, զի նա հաճոյ է աչաց ի-
4 մոց։ Եւ հայր նորա եւ մայր նորա ոչ
գիտացին թէ ի Տեառնէ է, զի [4]հատու-
ցումն խնդրիցէ" նա յայլազգեացն. եւ
ի ժամանակին յայնմիկ այլազգիքն տի-
րէին Իսրայէլի։
5 Եւ էջ Սամփսոն եւ հայր նորա եւ
մայր իւր ի Թաւնաթա. եւ խոստրեցաւ
Սամփսոն յայգեստանին Թաւնաթայ, եւ
ահա կորիւն մի առիւծուց գոչեաց
6 ընդդէմ նորա։ Եւ յաջողեցաւ ի վերայ
նորա Հոգի Տեառն, եւ ձեղքեաց զնա
իբրեւ զուլ մի այծեաց, եւ ոչ ինչ գոյր
ի ձեռին նորա. եւ ոչ պատմեաց հօր
7 իւրում եւ մօր իւրում զոր արար։ Եւ
իջին խօսեցան ընդ կնոջն. եւ հաճոյ
թուեցաւ առաջի Սամփսոնի։
8 Եւ դարձաւ յետ աւուրց առնուլ զնա.
եւ խոստրեցաւ տեսանել զպէշ առիւ-
ծուն, եւ ահա գունդ մեղուաց [5]ի բերան
9 առիւծուն եւ մեղր. Եւ առ զայն [6]ի
բերան իւր, եւ երթալով երթայր եւ
ուտէր. չոգաւ առ հայր իւր եւ առ
մայր իւր, եւ եառ նոցա եւ կերան. եւ
ոչ պատմեաց նոցա թէ [7]ի բերանոյ ա-
ռիւծուն եհան զմեղրն։
10 Եւ էջ հայր նորա առ կինն, եւ արար
անդ Սամփսոն [8]հարսանիս զեւթն օր".
11 զի այնպէս առնէին երիտասարդք։ Եւ
եղեւ [9]ի զարհուրել նոցա ի նմանէ",
կացուցին առ նա ընկերս երեսուն, եւ
էին ընդ նմա։
12 Եւ ասէ ցնոսա Սամփսոն, Արկից ձեզ
առասպել, եթէ առնդանելով առնդա-
նիցէք զնա ինձ զեւթն օր խրախուեանս
եւ գտանիցէք, տաց ձեզ երեսուն պատա-
ռակս եւ երեսուն պատմուճան հան-
13 դերձից. Այլ թէ ոչ կարիցէք առնդ-
ծանել ինձ, տայիք դուք ինձ երեսուն
պատառակս եւ երեսուն պատմուճան
հանդերձից. Եւ ասէն ցնա, Արկ մեզ
14 զառասպելն քո, եւ լուիցուք զնա։ Եւ
ասէ ցնոսա, Ի կերչէ ել կերակուր, եւ
ի հզօրէ ել քաղցր։ Եւ ոչ կարացին
առնդծանել զառասպելն նորա զերիս
15 աւուրս։ Եւ եղեւ յաւուրն [10]չորրորդի,
եւ ասէն ցկինն Սամփսոնի, Պատրեա
զայր քո եւ պատմեսցէ քեզ զառաս-
պելն, զգուշ այրիցիմք զքեզ եւ զտուն
հօր քո. թէ ապրեստայուցանել կոչեցեր
16 զմեզ այսր։ Եւ լայաց կինն Սամփսոնի
առ նա եւ ասէ ցնա, Ատեցեր զիս եւ
ոչ սիրեցեր զիս. զի զառասպելն զոր
արկեր որդւոց ժողովրդեան իմոյ՝ ինձ
ոչ պատմեցեր։ Եւ ասէ ցնա Սամփսոն,
Ահա հօր եւ մօր իմոյ ոչ պատմեցի, եւ
17 արդ քեզ պատմեցեմ։ Եւ ելաց առ նա
զեւթն օր յորս էր խրախուեանն. եւ
եղեւ յաւուրն եւթներորդի պատմեաց
նմա քանզի թախանձեաց զնա. եւ նա
18 պատմեաց որդւոց ազգին իւրոյ։ Եւ ա-
նդն ցնա արք քաղաքին յաւուրն եւթ-
ներորդի յառաջ քան զմտանել արեգա-
կանն, Զինչ քաղցրագոյն քան զմեղր,
կամ զինչ հզօրագոյն քան զառիւծ։ Եւ
ասէ ցնոսա Սամփսոն, եթէ ոչ [11]ճնչեալ
էր զերինջն իմ", ոչ գտանէիք զառաս-
19 պելն իմ։ Եւ յաջողեցաւ ի վերայ նորա
Հոգի Տեառն, եւ էջ յԱսկաղոն եւ ե-
հար անդ արս երեսուն. եւ առ եառ
զպատմուճանսն առնդծանելոցդ առաս-
պելին. եւ բարկացաւ սրտմտութեամբ

[1] ՆԲԳ· զընծայն Տացի [2] ՆԲԳ· ցուցանէր մեզ զայս
ամենայն, եւ ի ժամանակի սոսա ոչ տայր մեզ
լսել այսպիսի ինչ [3] ՆԲԳ· գ-ի-ոե [4] ՆԲԳ·
պատճառս խնդրէիր [5] ՆԲԳ· ի մարմնի [6] ՆԲԳ· ի ձեռս

[7] ՆԲԳ· ի մարմնոյ [8] ՆԲԳ· խրախուեիւն [9] ՆԲԳ·
իբրեւ տեսին զնա [10] ՆԲԳ· եւթներորդի [11] ՆԲԳ·
արօրադիր լեալ էր ձեր երկնաւ իմով

20 Սամփան, եւ ել ի տուն հօր իւրոյ. եւ
սմռանացաւ կինն Սամփանի ընդ հա-
ցերիցուն նորա որ էր նորա ընկեր։

Գլ. ԺԵ

1 Եւ եղեւ յետ աւուրց, յաւուրս հնձոյ
ցորենոյ, այց արար Սամփան կնոջ իւ-
րում, ածեալ ուլ մի յայծեաց, եւ ասէ,
Մտից առ կին իմ ի սենեակ. եւ ոչ
եթող զնա հայրն նորա մտանել առ նա։
2 Եւ ասէ հայրն նորա, Ասելով ասացի
թէ ատեցեր զնա, եւ եռաւ զնա ընկերի
քումմէ, ո՞չ աւանիկ քոյր նորա կրտսեր
յաւագոյն է քան զնա, եղիցի սա քեզ
3 փոխանակ նորա։ Եւ ասէ Սամփան,
Անպարա եմ ես ի մարդամարդն յայսմհե-
տոյ, եթէ արարից ես ընդ զոսա չա-
րութիւն։ Եւ գնաց Սամփան, եւ կա-
լաւ երիս հարիւր աղուէս. եւ առ ջահս
եւ կապեաց զնոսա ընդ միմեանս ձիս
ընդ ձիս, եւ եդ զջահն ի մէջ երկուց
ձիոցն, եւ կապեաց ի միջոցին զջահսն.
5 Եւ ելոյց հուր ի ջահն, եւ արձակեաց
յոմ այլազգիացն. եւ այրեաց [1]զօրանն,
եւ գյաւաջագոյն հնձեալսն՝ ի բարկից
մինչեւ ցկանգնաւորսն, եւ մինչեւ ցայ-
6 զիս եւ ցձիթխնիս։ Եւ ասեն այլազ-
գիքն, Ո՞ արար զայս։ Եւ ասեն, Սամ-
փոն փեսայ Թամնացւոյն. զի եհան
զկին նորա եւ եա ընկերի նորա։ Եւ
ելին այլազգիքն եւ այրեցին [1]զաւն հօր
նորա, եւ՝ զկինն եւ զհայր նորա հրով։
7 Եւ ասէ ցնոսա Սամփոն, [2]Եթէ զոյն
չափ եւս առնիցէք, սակայն ոչ հանձ-
ցայց. այլ զվրէժ իմ յիւրաքանչիւր ա-
8 մէնէ ի ձէնջ խնդրեցից՝։ Եւ հնար զնոսա
ի սրունից մինչեւ ցերանս հարուածս մե-
ծամեծս. եւ էջ բնակեցաւ [3]առ հեղե-
ղատուն յայրին՝ Եթամայ։
9 Եւ ելին այլազգիքն, եւ բանակեցան
10 զՅուդայիս, եւ [4]անկան զելբեաս՝։ Եւ
ասէ ցնոսա այր Յուդայ, Ընդէ՞ր ելէք
ի վերայ իմ. եւ ասեն այլազգիքն,
Կապել զՍամփոն եկաք, եւ առնել ընդ
11 նա զոր օրինակ արար ընդ մեզ։ Եւ
իջին երիս հազարք արանց Յուդայ ի
ծագ վիմին Եթամայ, եւ ասեն ցՍամ-
վոն, Ո՞չ գիտես զի իշխեն մեզ այ-
ազգիքն, եւ ընդէ՞ր արարեր զայն ընդ
մեզ. եւ ասէ ցնոսա Սամփոն, Որպէս
արարին ընդ իս, նոյնպէս արարի ընդ
12 նոսա։ Եւ ասեն ցնա, Կապել գքեզ
իջաք, եւ մատնել ի ձեռս այլազգեացն.
եւ ասէ ցնոսա Սամփոն, Երդուարուք
ինձ զուք չսպանանել զիս՝ եւ տուք զիս
ցնոսա. եւ զուք մի երիւք պատահիցէք
13 ինձ՝։ Եւ երդուան նմա եւ ասեն, Ոչ,
այլ կապելով կապեսցուք զքեզ, եւ
տացուք ի ձեռս նոցա. բայց մահու ոչ
սպանցուք զքեզ. եւ կապեցին զնա [5]երիւք
կարովք նորովք, եւ հանին զնա ի վիմէն։
14 Եւ եկն մինչեւ ցՕրնօան. եւ այլազ-
գիքն ալաղակիցին եւ ընթացան ընդ-
դէմ նորա. եւ յաջողեցաւ ի վերայ նո-
ա Հոգի Տեառն, եւ եղեն կարկն ի
բազուկս նորա իբրեւ զխծուծ յօրժամ
ի հուր հատուսիցի, եւ հալեցան կա-
15 պանքն ի բազկաց նորա։ Եւ եդիտ
ծնօտ մի իշոյ [6]ընկեցեալ, ձգեաց զձեռն
իւր եւ առ զնա, եւ եհար նովաւ հա-
16 զար այր։ Եւ ասէ Սամփոն, Ծնօտիւ
իշոյ [7]ջնջելով ջնջեցից զնոսա, զի՝ ծնօտիւ
17 իշոյ կատարեցի հազար այր։ Եւ եղեւ
իբրեւ կատարեաց զխօսելն, ընկէց զծնօտն
ի ձեռանէ իւրմէ. եւ կոչեաց զանուն
[8]Կատարած ծնօտի։
18 Եւ ծարաւեցաւ յոյժ, եւ աղաղակ-
եաց առ Տէր եւ ասէ, Դու յաջողեցեր
ձեռամբ ծառայի քո զփրկութիւնս զայս
մեծ. եւ արդ մեռանիցիմ ի ծարաւոյ,
եւ անկանիցիմ ի ձեռս անթլփատից։
19 Եւ եբաց [9]Տէր զծակ ծնօտին՝, եւ ել
ի նմանէ ջուր, եւ արբ. եւ զարձաւ
ոգի իւր առ ինքն եւ զովացաւ. վասն
այնորիկ կոչեաց զանուն նորա [10]Աղբիւր
20 անուանեալ ծնօտի՝ մինչեւ ցայսօր։ Եւ
դատեաց զնա Իսրայէլ յաւուրս այլազգեացն
ամս քսան։

Գլ. ԺԶ

1 Եւ չոգաւ Սամփոն անտի ի Գազա,
եւ տեսս անդ կին մի պոռնիկ, եւ եմուտ
2 առ նա։ Եւ ազդ եղեւ Գազացւոցն եւ
ասեն, Եկեալ է այսր Սամփոն։ Եւ
պատեցին եւ զարանակալ եղեն նմա

---

[1] ՅԵբէր. պոռնիկ [2] Եբէր. Թէպէտեւ արարէք այդ-
պէս, սակայն զվրէժ իմ խնդրեցից ի ձէնջ, եւ
ապա դադարեցայց [3] Եբէր. ի ծակ վիմին [4] Եբէր.
տարածեցան ի Լեքի (Լեքի Նշանակ ծնօտ։)

[5] Եբէր. երկաթ [6] Եբէր. գալար [7] Եբէր. չեզջ,
չեզջս երկուս, [8] Եբէր. Բլուր [9] Եբէր. Աստուած
գիտուն որ ի Լեքի [10] Եբէր. Ակնգորէ (որ Նշանակ
Աղբեր-ը Լուղին) ի Լեքի

զդիչներն ողջոյն առ զրան քաղաքին, եւ անչյունչ կացին զդիչերն ողջոյն, եւ ասեն, Աստ կացցուք մինչեւ ցառաւօտս,
3 եւ ապանդուք զնա։ Եւ ննջեաց Սամփսոն մինչեւ ցմէջ գիչերոյն, եւ յարեաւ զմէջ գիչերուան, եւ թափեաց զդրունս քաղաքին հանդերձ սեմովքն, եւ երարձ զնոսա հանդերձ նոքօքն, եւ եդ ի վերայ ուսոց իւրոց, եւ ևհան զնոսա ի գլուխ լերինն որ է հանդէպ Քեբրոնի, [1]եւ եդ զնոսա անդ։"
4 Եւ եղեւ յետ այսորիկ սիրեաց կին մի առ եղերբ հեղեղատին Սորեկայ,
5 եւ անուն նորա Դալիլա։ Եւ եկին առ նա նախարարք այլազգեացն եւ ասեն, Պատրեա զնա եւ տես ի՛ւ իցէ զօրութիւն նորա մեծ, եւ կամ ի՛ւ կարասցուք նմա հնար զառնել եւ կապել զնա առ ի տկարացուցանել զնա. եւ մեք տացուք քեզ այր իւրաքանչիւր հազար
6 եւ հարիւր արծաթոյ։ Եւ ասէ Դալիլա ցՍամփսոն, Պատմեա ինձ ի՛ւ իցէ զօրութիւն քո մեծ, եւ ի՛ւ կապիցիս առ
7 ի տկարացուցանելոյ զքեզ։ Եւ ասէ ցնա Սամփսոն, Եթէ կապիցեն զիս եւթն ջլօք զալարովք չվատելովք, տկարացայց
8 եւ եղէց իբրեւ զմի ի մարդկանէ։ Եւ բերին առ նա նախարարք այլազգեացն եւթն ջլս զալարս անվտիտս, եւ նա
9 կապեաց զնա նոքօք։ Եւ դարան նստէր նմա ի չտեմարանի. եւ ասէ ցնա, Այլազգիք հասեալ են ի վերայ քո, Սամփսոն. եւ խզեաց զջիլսն՝ զոր օրինակ խզիցի քուղ ի թօթափելոյ յորժամ ի հուր հոտասիցի. եւ ոչ ծանուցաւ զո-
10 րութիւն նորա։ Եւ ասէ Դալիլա ցՍամփսոն, Ահա խաբեեր զիս եւ խօսեցար սուտ. գոնէ արդ պատմեա ինձ ի՛ւ իցէ
11 կապիցիս։ Եւ ասէ ցնա, Եթէ կապիցեն զիս [1]եւթն կարովք նորովք, որովք չիցէ գործեալ գործ, տկարացայց եւ եղէց իբրեւ զմի ի մարդկանէ։
12 Եւ առ Դալիլա կարս նորս, եւ կապեաց զնա նոքօք, եւ ասէ ցնա, Այլազգիք հասեալ են ի վերայ քո, Սամփսոն. եւ դարան նստէր նմա ի չտեմարանի. եւ խզեաց զայն ի բազկաց իւ-
13 րոց իբրեւ զասղանի։ Եւ ասէ Դալիլա ցՍամփսոն, Մինչեւ ցե՞րբ խաբիցես զիս, եւ խօսիցիս ընդ իս սուտ. արդ պատմեա ինձ ի՛ւ կապիցիս։ Եւ ասէ ցնա, Եթէ

[1]ՅԵբր. գոլոխ

անկցես զեւթանեսին գլխոյ իմոյ ընդ ազբերն, [2]եւ վարեսցես ցցովք ընդ որմն, եղէց տկարացեալ իբրեւ զմի
14 ի մարդկանէ։ Եւ ննջեցոյց զնա Դալիլա, եւ առ զեւթանեսին գլխոյ նորա հանդերձ ազբամբն, եւ վարեաց ցցովք ընդ որմն", եւ ասէ ցնա, Այլազգիք հասեալ են ի վերայ քո, Սամփսոն։ Եւ զարթեաւ ի քնոյ իւրմէ, եւ կորզեաց զցիցն հանդերձ ոստայնիւն
15 եւ ազբամբն [1]յորմոյ անտի. եւ ոչ ծանուցանէր նմա զօրութիւն նորա"։ Եւ ասէ ցնա Դալիլա, Զիա՞րդ ասես թէ Սիրեցի զքեզ, եւ սիրտ քո չէ ուղիղ ընդ իս. այս եւրիցս անգամ խաբեցեր զիս, եւ ոչ պատմեցեր ինձ թէ ի՛ւ իցէ զօրութիւն
16 քո մեծ։ Եւ եղեւ իբրեւ վտանգեաց զնա բանիւք [3]զդիչերն ողջոյն" եւ թախանձեցոյց զնա, եւ պարտաւեցոյց զնա
17 մինչեւ ցմահ, Պատմեաց նմա զամենայն ինչ ի սրտէ իւրմէ, եւ ասէ ցնա, Ածելի ոչ [4]եկեալ ի գլուխ իմ, զի ուխտաւոր Աստուծոյ եմ ես յորովայնէ մօր իմոյ. ապա թէ գերծուցուի, մեկնեսցի յինէն զօրութիւն իմ, եւ տկարացայց
18 եւ եղէց իբրեւ զամենայն մարդիկ։ Իբրեւ ետես Դալիլա եթէ պատմեաց նմա զամենայն ինչ ի սրտէ իւրմէ, առաքեաց կոչեաց զնախարարս այլազգեացն եւ ասէ, Ելէք [5]միանգամայն, զի պատմեաց ինձ զամենայն ի սրտէ իւրմէ։ Եւ ելին առ նա [1]ամենայն նախարարք այլազգեացն, եւ բերին զարծաթն ի
19 ձեռս իւրեանց։ Եւ ննջեցոյց զնա ի մէջ ծնգաց իւրոց. եւ կոչեաց վարսավիրայ, եւ սգերծ զեւթանեսին գլխոյ նորա. եւ սկսաւ թօչնել, եւ մեկնեցաւ
20 ի նմանէ զօրութիւն նորա։ Եւ ասէ Դալիլա, Այլազգիք հասեալ են ի վերայ քո, Սամփսոն։ Եւ զարթեաւ ի քնոյ իւրմէ, եւ ասէ, Ելից եւ արարից որպէս միշտն, եւ թօթափեցից. եւ նա ոչ
21 դիտէր թէ Տէր մեկնեցաւ ի նմանէ։ Եւ կալան զնա այլազգիքն, եւ բրեցին զաչս նորա. եւ իջուցին զնա ի Գազա, եւ կապեցին զնա երկաթի կապանօք. եւ աղացեր ի տան բանտին։
22 Եւ սկսաւ մազ գլխոյ նորա բուսանել
23 յետ գերծելոյն։ Եւ իշխանք այլազգեացն ժողովեցան զոհել զոհ մեծ Դագոնայ

[2]ԵԲր. (14) Եւ Դալիլա վարեաց ցցովք [3]ՅԵբր. զամենայն աւուրս [4]ՅԵբր. եւ [5]ՅԵբր. զայս նուագ

աստուածդն իւրեանց, եւ ուրախ լինել. եւ ասէին, Մատնեսցէ աստուած մեր զԱմմիսոն թշնամի մեր ի ձեռս մեր։
24 Իրրեւ սեսին Ժողովուրդն, օրհնէին զաստուած իւրեանց. զի ասացին թէ Մատնեսցէ աստուած մեր զթշնամին մեր ի ձեռս մեր, եւ զսպականիչ երկրի մերոյ, որ յաճախեսցէ զվիրաւորս մեր։
25 Եւ եղեւ իրրեւ զսպեցան սիրտք իւրեանց, ասեն, Կոչեցէք զԱմմիսոն [1]ի ատենէ յանտեղն", եւ խաղացէ առաջի մեր. եւ կոչեցին զԱմմիսոն ի ատենէ բանտին, եւ [2]խաղային նոցա". եւ կա-
26 ղուղին զնա ի մէջ [1]երկուց սեանցն եւ ասէ Սամփսոն տղայոցանէն որ ունէր զձեռանէ նորա. Թոյլ տուր ինձ եւ զննեցից զսիւնս յորոց վերայ տունն հաս-
27 տատեալ կայ, եւ յեցայց ի նոսա։ Եւ տունն լի էր արամբք եւ կանամբք. եւ անդ ամենայն նախարարք այլազգեացն. եւ ի տանիսն իրրեւ երիք հազարք, արք եւ կանայք որ սեսանէին զխաղն Սամ-
28 փսոնի։ Եւ աղաղակեաց Սամփսոն առ Տէր եւ ասէ, Տէր, Տէր [1]զօրութեանց, յիշեա զիս. եւ զօրացո զիս զայս եւս մի նուագ, Աստուած, եւ խնդրեցից զվրէժխնդրութիւն իմ վոխանակ երկուց
29 աչաց իմոց յայլազգեացս տապի։ Եւ բռնեաց Սամփսոն զերկուսունց սեանցն զորոց վերայ տունն հաստատեալ կայր, եւ յեցաւ ի նոսա, ի մին աջով
30 իւրով եւ ի մեւսն ձախով իւրով։ Եւ ասէ Սամփսոն, Մեռցի անձն իմ ընդ այլազգիսս. եւ [3]չարժեաց զօրութեամբ. եւ անկաւ տունն ի վերայ ամենայն նախարարացն եւ ի վերայ ամենայն ժողովրդեան որ ինդա. եւ էին մեռեալքն զորս մեռոյց Սամփսոն ի մահուն իւրում, առաւել քան զորս սպան ի կենդանութ-
31 թեան իւրում։ Եւ իջին եղբարք նորա եւ ամենայն տունն հօր նորա, եւ բարձին եւ հանին թազեցին զնա ի մէջ Սարայա եւ ի մէջ Եսթաւուղայ ի վրեղեմանի Մանուհայ հօր իւրոյ. եւ նա դատեաց զԻսրայէլ ամս քսան։

Գլ. ԺԶ

1 Եւ եղեւ այր ի լեռնէն Եփրեմայ, եւ
2 անուն նորա Միքա։ Եւ ասէ ցմայր իւր,

[1] ՅԵԲԲ. գ-ի-ւ [2] ԵԲԲ. խաղաց առաջի նոցա
[3] ԵԲԲ. խոնարհեցաւ

[4] Զհազար եւ գհարեւր արծաթիցն զոր առեր առ քեզ, եւ երդուար եւ ասես յականջս իմ թէ" արծաթին առ ես է, ես առի զայն. եւ ասէ մայր նորա, Օրհնեալ լիցիս, որդեակ իմ, ի Տեառնէ։
3 Եւ դարձոյց անդրէն զհազար եւ զհարեւր արծաթիցն առ մայր իւր. եւ ասէ մայր նորա, Սրբելով սրբեցի զարծաթին Տեառն ի ձեռանէ իմմէ [5]եւ առանձինն", առնել դրօշակ եւ ձուլածոյ. եւ արդ դար-
4 ձուցից զնա առ քեզ։ Եւ դարձոյց զարծաթին առ մայր իւր, եւ առ մայր նորա երկերիւր արծաթիցն, եւ ետ զայն ցձուլիչ, եւ արար զայն դրօշակ եւ ձուլա-
5 ծոյ. Եւ եղեւ ի տան Միքայի։ Եւ տուն Միքայի նմա տուն Աստուծոյ. եւ արար եփուդ եւ թևշափ. եւ ելից զձեռս մոյ յորդւոց իւրոյ, եւ եղեւ նմա ի քահա-
6 նայ։ Յաւուրսն յայնոսիկ ոչ գոյր թագաւոր Իսրայելի, եւ այր իւրաքանչիւր զնաճոյս աչաց իւրոց առնէր։
7 Եւ եղեւ պատանեակ մի ի Բեթղեհեմ հնոմ Յուդայ, յազգէ տոհմին Յուդայի, եւ ինքն Ղեւտացի, եւ բնակէր նա անդ։
8 Եւ գնաց այրն ի քաղաքէ Բեթղեհեմի Յուդայ պանդխտել ուր եւ գտանիցէ. եւ եկն մինչեւ ցլեառնն եփրեմի եւ մինչեւ ցտունն Միքայ՝ առնել զճանա-
9 պարհն իւր։ Եւ ասէ ցնա Միքա, Ուստի գաս. եւ ասէ ցնա, Ղեւտացի եմ ես ի Բեթղեհեմէ Յուդայ, եւ երթամ պան-
10 դխտանալ ուր եւ գտանիցեմ։ Եւ ասէ ցնա Միքա, Նիստ առ իս, եւ լեր ինձ ի հայր եւ ի քահանայ. եւ ես տայց քեզ տասն արծաթիոյ [6]աւուրց յաւուրս" եւ զոյգս հորձոյ եւ առճիկ որով կեցցես.
11 եւ չորաւ Ղեւտացին՝ եւ սկսաւ պանդխտանալ առ առնն, եւ եղեւ նմա պա-
12 տանեակն իբրեւ զմի յորդւոց նորա։ Եւ ելից Միքա զձեռս Ղեւտացւոյն, եւ եղեւ նմա պատանեակն ի քահանայ, եւ
13 էր ի տան Միքայ։ Եւ ասէ Միքա, Այժմ գիտացի եթէ բարի արար ինձ Տէր, զի եղեւ ինձ Ղեւտացին ի քահանայ։

Գլ. ԺԷ

1 Յաւուրսն յայնոսիկ ոչ գոյր թագաւոր Իսրայելի. եւ յաւուրսն յայնոսիկ ցեղն

[4] ԵԲԲ. Հազար եւ հարեւր արծաթիցն որ հանաւ ի քէն, եւ նզովեցեր եւ ասացեր եւս յականջս իմ, ահա [5] ԵԲԲ. որդւոյ իմոմ [6] Ա. ՅԻՒՆԱՆ՝ ամ յամէ

Դանայ խնգրէր իւր ժառանգութիւն
լնակելոյ. զի ոչ ևնաս նմա ցաւուրան
ցայնոսիկ ի մէջ ցեղիցն Իսրայկլի ժա-
2 առանգութիւն։ Եւ առաքեցին որպիսի
Դանայ ի տոհմից իւրեանց արս հինգ,
[1]այր ըստ ցեղի՝ իւրեանց, որպիս զո-
րութիւնան ի Սարաայ եւ յեսթաւուզայ,
լրտեսել զերկիրն եւ հետազօտել զնա.
եւ ասեն ցնոսա, երթայր որպէսզի
զերկիրն. եւ չոգան ի լեառնն Եփրեմայ
մինչեւ ցառնն Միքայ, եւ հանգեան
3 անդ։ Եւ մինչդեռ էին նոքա [2]ի տան
Միքայ, ծանեան զձայն պատանեկին
Ղեւտացւոյ, եւ խոտորեցան անդ եւ
ասեն ցնա, Ո՞ած զքեզ այսր, եւ զինչ
գործես զու աստ, եւ կամ զի՞նչ կայ
4 քո աստ։ Եւ ասէ ցնոսա, Այսպէս եւ
այսպէս արար ինձ Միքա, եւ կալաւ զիս
5 ի վարձու, եւ եղէ նմա ի քահանայ։ Եւ
ասեն ցնա, Աղէ հարց զԱստուած, եւ գի-
տասցուք եթէ յաջողեսցի մեզ ճանապարհս
6 մեր յոր երթամք։ Եւ ասէ ցնոսա քահա-
նայն, երթայք ի խաղաղութիւն. առաջի
Տեառն է ճանապարհ ձեր զոր երթայք։
7 Եւ գնացին հնգեքին արքն, եւ չո-
գան ի Լայիսա. եւ տեսին զժողովուրդն
որ ի նմա, որ բնակեալ նստէր [3]յոյսով
ըստ սովորութեան Սիդոնացւոցն հանգար-
ուելոցն [4]յոյսով. եւ ոչ բաւական լինել
յոք իսկ ուժիւք բան մի յերկրի գան-
ձուն ժառանգաւորի. եւ՝ հեռի էին ի
Սիդոնէ, եւ բանք ինչ ոչ գոյին նոցա
8 ընդ [5]Ասորիս։ Եւ եկին հնգեքին արքն՝
առ եղբարս իւրեանց ի Սարաա եւ յես-
թաւուզ. եւ ասեն ցնոսա եղբարք իւր-
9 եանց, [6]Զի՞նչ գոյ քոք՝։ Եւ ասեն,
Արիք [7]կացարո ի վերայ նոցա, զի մտաք
եւ չրջկացաք ընդ երկիրն մինչեւ ցԼայիսա,
եւ տեսաք ժողովուրդ բնակեալ ի նմա
յոյսով հանգոյն Սիդոնացւոց, եւ հեռի
են ի Սիդոնէ, եւ բանք ինչ ոչ գոյ նո-
ցա ընդ Ասորիս. արիք՝ եւ կացուք ի
վերայ նոցա. զի ահա տեսաք զերկիրն,
եւ բարի է յոյժ, եւ զուք զադարիցի՞
կայք. եւ արդ է՞ր վատանայք երթալ
10 մտանել ժառանգել զերկիրն։ Եւ եղիցի
յորժամ երթայք, ունիք զաղգն յու-
լացեալ եւ զերկիրն ընդարձակ. զի ասա-

նեաց զնա Աստուած ի ձեռս [8]մեր. տեղի
յորում ոչ գոյ պակասութիւն ամենայն
բանի որ ինչ իցէ յերկրի։
11 Եւ խաղացին անտի յազգականութենէ
տոհմիցն Դանայ, ի Սարաայ եւ յեսթաւ-
ուզայ, արք վեց հարիւրք վառեալք զի-
12 նեաւ պատերազմի։ Եւ ելին բանակեցան
ի Կարիաթարիմ Յուդայ. վասն այնորիկ
կոչեցաւ անդրին այն բանակեաղ Դանայ
մինչեւ ցայսօր. որ է ի թիկանց Կարիա-
13 թարիմայ։ Եւ անցին անտի եւ եկին
մինչեւ ցլեառնն Եփրեմայ, եւ հասին
14 մինչեւ ի տունն Միքայի։ Պատասխանի
եառն արքն հնգեքին որ երթեալ էին
լրտեսել զերկիրն Լայիսա, եւ ասեն
ցեղբարս իւրեանց, Եթէ գիտէք [9]զի
ի տունս յայսոսիկ եփուդ եւ թերափ եւ
զրօշեալ եւ ձուլածոյ. արդ գիտասջիք
15 զինչ առնիցէք. Եւ խոտորեցան անդ,
եւ մտին ի տուն պատանեկին Ղեւտացւոյ,
որ էր ի տան Միքայ, եւ հարցին զող-
16 ջունէ նորա։ Եւ վեց հարիւր արքն վառ-
եալք պատերազմական զինու իւրեանց
արձանացեալք կային առ մուտս դրանն
17 որ էին յորդւոցն Դանայ։ Եւ ելին հնգե-
քին արքն որ երթեալ էին լրտեսել զեր-
կիրն, յարձակեցան եւ առին զդրօշեալն
եւ զեփուդ եւ զթերափ եւ զձուլածոյ.
եւ քահանայն արձանացեալ կայր ի մուտս
դրանն. եւ վեց հարիւր արքն վառեալք
18 պատերազմական զինու։ Եւ նոքա մտին
ի տունն Միքայ, եւ առին զդրօշեալն եւ
զեփուդ եւ զթերափ եւ զձուլածոյ. եւ
ասէ ցնոսա քահանայն, Զի՞նչ գոր-
19 ծէք զուք։ Եւ ասեն ցնա, Կարկաց,
ամփրեան լեր, եկ ընդ մեզ եւ լեր մեզ
ի հայր եւ ի քահանայ. միթէ լաւ իցէ
լինել քեզ քահանայ տան միոյ եւ ազգի
20 [10]Իսրայկլի։ Եւ զուարթացաւ սիրտ քա-
հանային, եւ առ զեփուդն եւ զթերափ
եւ զդրօշեալ [7]եւ զձուլածոյ՝, եւ եմուտ
21 ի մէջ զօրուն։ Եւ դարձան գնացին, եւ
[11]տարին համօրէն զտունն, եւ զտաս-
գուածն վայելչութեան նորա առաջի
22 նոցա՝։ Եւ ի հեռանալ նոցա ի տանէ
Միքայ, եւ [12]ահա Միքա եւ արքն որ

[1] ՆԲԳ· ի սահմանաց [2] ՆԲԳ· առ տան [3] ՆԲԳ· յանհոգս [4] ՆԲԳ· յանհոգս. եւ ոչ գոյր յերկրին յայնմիկ ճոխ որ նեղէր, եւ [5] ՆԲԳ· ուժիք։ (8) Եւ եկին [6] ՆԲԳ· Զի՞ ձեզ [7] ՆԲԳ· գ-ի-ե [8] ՆԲԳ· ձեր [9] ՆԲԳ· զի գոն [10] ՆԲԳ· Իսրայկլի [11] եղին զարդն եւ զանասունն եւ որ ինչ էր պատուական առաջի իւրեանց [12] ՆԲԳ· արքն որ ի տունս որ մերձ ի տունն Միքայ՝ ժողովեցան, Հասին որդւոցն Դանայ. (23) Եւ բողոք բարձին առ որդիսն Դանայ, եւ գարձուցին

ի տուն նորա էին ընդ Միքայ , լոզոք
23 բարձին եւ հասին որդւոյն Դանայ ։ Եւ
դարձուցին՝ զերեսս իւրեանց որդիքն
Դանայ , եւ ասեն ցՄիքա , Զի՞ է [1]քեզ, զի
24 ազաղակես՝։ Եւ ասէ Միքա , Զի պաս-
տառածան իմ զոր արարի ինձ առէք , եւ
զքահանայն , եւ գնացէք ։ եւ զի՞նչ կայ
այսուհետեւ ինձ . եւ զի՞նչ է այդ զոր
25 ասէք ցիս թէ Զի [2]ազաղակես ։ Եւ ասեն
ցնա որդիքն Դանայ , Մի լուիցի ձայն քո
զկնի մեր , գուցէ պատահիցեն քեզ արք
դառնացեալք սգւով , եւ [3]դնիցեն զանձն
26 քո եւ զանձն տան քո ։ Եւ գնացին որ-
դիքն Դանայ զճանապարհն իւրեանց . եւ
իբրեւ եահս Միքա եթէ բռնադոյն քան
գնա են , դարձաւ ի տուն իւր ։
27 Եւ նոքա առին զոր ինչ արարն Մի-
քա եւ զքահանայն նորա , եւ չոգան ի
Լայիսա՝ ի ժողովուրդն հանդարտացեալ
եւ վստահացեալ յուսով . եւ հարին զնոսա
սրով սուսերի , եւ զքաղաքն այրեցին ։
28 Եւ ոչ ոք էր որ փրկէր . զի հեռի էին ի
Սիդնացւոց , եւ բանք ինչ ոչ էին նո-
ցա ընդ ումեք ի մարդկանէ . եւ նա կայ ի
հովտի տանն Ռովբայ . եւ չինեցին զքա-
29 ղաքն եւ բնակեցան ի նմա ։ Եւ կոչեցին
զանուն նորա Դան՝ ըստ անուան հօրն
իւրեանց որ եղեւ Իսրայէլի . եւ էր ա-
նուն քաղաքին յառաջագոյն Լայիսա ։
30 Եւ կանգնեցին իւրեանց որդիքն Դանայ
զդրօշեալն [4]Միքայ . եւ Յովնաթան որդի
Գերսոնի որւոյ Մանասէի , ինքն եւ
որդիք իւր , էին քուրմք ցեղին Դանայ ,
31 մինչեւ ցօր գերութեան երկրին ։ Եւ
կարգեցին իւրեանց զդրօշեալն զոր ա-
րար Միքա , զամենայն աւուրս զորս էր
տունն Աստուծոյ ի Սեղեմ ։

ԳԼ. ԺԹ

4 Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ , եւ թա-
գաւոր ոչ զոյր յԻսրայէլի եւ էր այր Ղեւ-
ացի պանդխտեալ ի կողմանս լերինն
Եփրեմի . եւ առ իւր այրն կին հարճ ի
2 Բեթղեհեմէ Յուդայ ։ Եւ սաստկաւ ի
նմանէ հարճն իւր , եւ գնաց ի նմանէ
ի տուն հօր իւրոյ ի Բեթղեհեմ Յուդայ ,
3 եւ եղեւ անդ [5]զերիս ամիսս ։ Եւ յա-
րուցեալ այրն չոգաւ զնա նորա , խօ-
սել ի սիրտ նորա հաչտեցուցանել զնա
ընդ իւր , եւ ածել միւսանգամ առ ինքն .
և պատանի իւր ընդ իւր եւ զոյգ ի-
չոյ . եւ [6]չոգան մինչեւ ցաւուրն հօր նո-
րա՝ . իրրեւ եահս զնա հայր աղջկանն ,
4 [7]ել ընդ առաջ նորա՝ ։ Եւ սաստկաւ զնա
ի ներքս աներ իւր , հայր աղջկանն , եւ
նստաւ առ նմա աւուրս երիս . եւ կերան
եւ արբին եւ ննջեցին անդ ։
5 Եւ եղեւ յաւուրն չորրորդի կանխե-
ցին ընդ առաւօտն , եւ յարեաւ գնալ .
եւ ասէ հայր աղջկանն ցփեսայ իւր ,
Հաստատեա զսիրտ քո պատառով միով
6 հացիւ , եւ ապա գնասջիք ։ Եւ նստան
կերան եւ արբին ի միասին երկոքեան . եւ
ասէ հայր աղջկանն ցփեսայ իւր , [8]Արդ
սկսեալ առաէն իսկ՝ ապիր , եւ զուարա-
7 ճասցի սիրտ քո ։ Եւ յարեաւ այրն ի գնալ .
եւ բռնադատեաց գնա աներ իւր , եւ
8 նստաւ եւ անդէն ագաւ ։ Եւ կանխեաց
ընդ առաւօտն յաւուրն հինգերորդի ի
գնալ . ասէ հայր աղջկանն , Հաստատեա
զսիրտ քո հացիւ , եւ [9]դիսձիր մինչեւ
չրկնայի օրն՝։ եւ կերան եւ արբին եր-
9 կոքին ։ Եւ յարեաւ այրն գնալ , ինքն
եւ հարճն եւ պատանին իւր . եւ ասէ
[10]ցնա հայր աղջկանն , Ահա գիշաւ օրս
յերեկս , [11]աստէն ագիր եւ գո արքմասցի
սիրտ քո , եւ կանխեսջիր վաղիւ ի ճա-
10 նապարհ քո եւ երթիցես յարիս քո ։ Եւ
ոչ կամիցաւ այրն ագանել անդ , այլ
յարեաւ եւ գնաց . եւ եկն եհաս մինչեւ
դհանդէպ Յեբուսայ , այն է Երուսաղէմ .
եւ ընդ նմա զոյգք իշոց համեմատոյց , եւ
հարճն իւր ընդ նմա ։
11 Եւ նոքա հանդէպ Յեբուսայ , եւ օրն
խոնարհեցաւ յոյժ . ասէ պատանին ցտէր
իւր , Եկ խոտորեսցուք ի քաղաքն Յե-
12 բուսացւոց , եւ ագցուք ի նմա ։ Եւ ասէ
ցնա տէր իւր , Ոչ խոտորեսցուք ի քա-
ղաքս օտարատուացս , յորում ոչ գուցէ
յորդւոցն Իսրայէլի , այլ անցցուք մինչեւ
13 ցԳաբաա ։ Եւ ասէ ցպատանին իւր , Եկ
մերձեսցուք ի մի ուրեք ի տեղեացս , եւ
անդ ագցուք ի Գաբաա կամ ի Հաամա ։
14 Եւ անցին գնացին . եւ եմուտ նոցա ա-
րեգակն մերձ ի Գաբաա , որ է Բենիա-
15 մինի ։ Եւ խոտորեցան անդր մտանել ա-
գանել ի Գաբաա . եւ եմուտ նստաւ ի

[1] ՆԲէր· քեզ զի գումարեցար [2] ՆԲէր· է քեզ [3] ՆԲէր· կորուացես [4] ՅՆԲէր· պ-ֆ-ս [5] ՆԲէր· զչորս

[6] ՆԲէր· եմոյծ գնա կինն ի տուն հօր իւրոյ [7] ՆԲէր· ուրախ եղեւ ընդ պատահելն նմա [8] ՆԲէր· Հաճեաց, ագէ, եւ [9] ՆԲէր· յամեցին մինչեւ ի տարաժամել աւուրն [10] ՆԲէր· գնա աներ նորա, [11] ՆԲէր· ագէ, ագերուք · ահա տարաժամեալ է օրս, ասաէն

հրապարակի քաղաքին . եւ ոչ էր այր որ
ժողովէր զնոսա ի տուն իւր ասանել ։
46 Եւ ահա այր մի ձեր եմուտ ի գործոյ
իւրմէ յանդգն անապանի . եւ այրն ի
լեռնէ Եփրեմայ , եւ ինքն պանդխտեալ
էր ի Գաթաա եւ արք տեղւոյն՝ որպիք
17 Բենիամինի ։ Եւ ամբարձեալ զաչս իւր
հաւս զայրն ուղեւոր ի մէջ հրապարակի
քաղաքին . եւ ասէ այրն ձեր , Ցո՞ւ եր-
18 թաս եւ ուստի՞ գաս ։ Եւ ասէ ցնա ,
Անցանելով մեք ի Բեթղեհեմէ Ցուդայ
մինչեւ ցկողմանս լերինն Եփրեմայ . քան-
զի անտի եմ ես . եւ չոգայ մինչեւ
ցԲեթղեհէմ Ցուդայ , եւ ի տուն [1]Տեր
իմոյ՝ երթամ . եւ չիք այր որ ժողովիցէ
19 զմեզ ի տուն . Եւ յարդ եւ խաս կայ ի-
նոյ մերոյ , եւ հաց եւ գինի լիձ եւ
[2]աղջկանդ եւ պատանւոյդ՝ . եւ չէ ինչ
պակասութիւն ամենայն իրաց [3]ծառայիդ
20 քոց՝ ։ Եւ ասէ այրն ձեր , Խաղաղու-
թիւն ընդ քեզ . ամենայն պակասու-
թիւնդ քո ինձ , բայց զու ի հրապա-
21 րակի մի՛ գիշերիցես ։ Եւ տարաւ զնա
ի տուն իւր , եւ արկ խաս իշոյն , եւ
լուացին զոտս նոցա եւ կերան եւ արբին ։
22 Եւ ի զուարճանալ սրտից նոցա , եւ
ահա արք քաղաքին , արք՝ որպիք ան-
օրինաց , պատեցին զտունն եւ բախեցին
զդուրսն , եւ խօսեցան ընդ տանն ձերոյ
ընդ տեառն տանն եւ ասեն , Հան զայրդ
մտեալ ի տուն քո , զի գիտասցուք զգա-
23 նել զնոսա ։ Եւ ել առ նոսա այրն տէր տանն , եւ
ասէ ցնոսա , Ցաւ լիցի ձեզ , եղբարք ,
մի՛ ինչ անզգամեք ցնա մտանելոյ տանդ
այդորիկ ի տուն իմ. մի՛ առնէք զանզգա-
24 մութիւնդ զայդ ։ Ահաւասիկ դուստր
իմ կոյս , եւ հարճ նորա , հանից զնոսա
արտաքս , եւ լկեցէք զնոսա , եւ արա-
րէք ընդ նոսա զինչ հաճոյ է ձեր.
եւ առնս այսմիկ մի՛ առնէք ըստ անզգա-
25 մութեան բանիդ այդորիկ ։ Եւ ոչ կա-
մեցան արքն անսալ . եւ առ այրն զհարճն
իւր , եւ ետան զնա արտաքս . եւ գի-
տացին զնա , եւ լկեցին զնա զգիշերն
ողջոյն մինչեւ ցառաւօտ , եւ արձակե-
26 ցին զնա ի ծագել առաւօտուն ։ Եւ եկն
կին ընդ առաւօտան , եւ անկաւ առ
դրանդուռ դրան տան առնն՝ ուր էր տէր
27 նորա , [4]եւ եհան զոգին՝ ։ Եւ յարեաւ
տէր նորա ընդ առաւօտան , եւ եբաց
զդուրս տանն եւ ել գնալ զճանապարհս
իւր , եւ ահա կինն հարճ նորա անկեալ
կայր առ դրանն , եւ ձեռն իւր ի վերայ
28 դրանդուռնն ։ Եւ ասէ ցնա , Արի եւ գնա-
ցուք . եւ ոչ ետ նմա պատասխանի՝
[3]քանզի մեռեալ էր՝ ։ Եւ առ եհան գնա
յէշ , եւ յարեաւ այրն եւ չոգաւ ի տեղի
29 իւր ։ Իբրեւ եմուտ ի տուն իւր , առ
սուր , եւ բռնեաց եհար զհարճն իւրմէ
եւ յօշեայց զնա ըստ ոսկերաց իւրոց յեր-
կոտասան մասն . եւ առաքեաց զայն ընդ
30 ամենայն ցեղսն Իսրայելի ։ Եւ եղեւ զի ա-
մենայն որ տեսանէր՝ ասէր , Թէ Ոչ եղեւ
եւ ոչ երեւեցաւ այսպէս յաւուրց ելանելոյ
որդւոցն Իսրայելի յերկրէն Եգիպտացւոց
մինչեւ ցայսօր . արդ առէք ձեզ վասն
այդորիկ խորհուրդ , եւ խօսեցարուք ։

Գլ . Ի

1 Եւ ելին ամենայն որպիքն Իսրայելի ,
եւ ակնեցաւ ժողովուրդն իբրեւ զայր
մի ի Դանայ մինչեւ ցԲերսաբէէ եւ
երկիրն Գաղաադու՝ առ Տէր ի Մասփա ։
2 Եւ [5]եկաց կողմն՝ ամենայն ժողովրդե-
անն , [3]եւ ամենայն ցեղք Իսրայելի
յամենայն եկեղեցւոջ ժողովրդեանն Աս-
տուծոյ , չորիք հարիւր հազար [6]արանց
3 սուսերամարկաց ։ Եւ լուան որպիքն Բե-
նիամինի , եթէ ելին որպիքն Իսրայելի
ի Մասփա ։ Եւ ասեն որպիքն Իսրայելի ,
Խօսեցարուք թէ [7]ո՛ւր եղեւ այսպիսի
4 չարութիւն ։ Պատասխանի ետ այրն
Ղեւտացի այր կնոջն սպանելոյ , եւ
ասէ , Ի Գաբաա Բենիամինի եկի ես եւ
5 հարճ իմ ագանել ։ Եւ յարեան ի վերայ
իմ արք Գաբաացիք , եւ պատեցին չուրջ
զիս զտունն գիշերի , եւ զիս կամե-
ցան սպանանել . եւ զհարճն իմ լկեցին
6 [3]եւ հնձեցին՝ , եւ մեռաւ . Եւ առի
զհարճն իմ եւ յօշեցի զնա , եւ առա-
քեցի յամենայն սահմանս ժառանգու-
թեան Իսրայելի . զի արարին վնաս մեծ
7 եւ անզգամութիւն ի մէջ Իսրայելի։ Եւ
ահաւասիկ [8]մեք ամենեքեան որպիք
Իսրայելի , տուք [9]մեզ բան եւ խորհուրդ
8 Եւ յարեաւ ամենայն ժողովուրդն իբրեւ
զայր մի , եւ ասեն , Ոչ մտցուք այր
իւրաքանչիւր ընդ յարկս իւրով , եւ ոչ
խոտորեսցուք այր իւրաքանչիւր ի տուն

[1] Եբր· Տեառն [2] Եբր· աղախնոյ քումմ եւ պա-
տանեդդ որ ընդ ծառայս քո [3] Յ Եբր· պոռնէ
[4] Եբր· մինչեւ ցառաւօտ
[5] Եբր· կացին իշխանք [6] Եբր· արանց հետեւակաց
[7] Եբր· զիա՞րդ [8] Եբր· դուք [9] Եբր· մեզ

9 իւր։ Եւ արդ այս բան է զոր արաս-
ցուք ընդ Գաբաա. ելցուք ի վերայ նո-
10 ցա վիճակաւ։ Բայց առցուք տասն այր
ի հարիւրոց յամենայն ցեղիցդ Իսրայէլի,
եւ հարեւր ի հազարաց, եւ հազարս ի
բիւրուց. առնուլ պաշար զօրուն յա-
վանդակ երթողաց ի Գաբաա Բենիա-
մինի, [1]ըստ ամենայն անզգամութեան
11 զոր արարին ի մէջ Իսրայէլի։ Եւ ժողո-
վեցաւ ամենայն Իսրայէլ իրրեւ զայր մի
եկեալք ի քաղաքաց։
12 Եւ առաքեցին ցեղքն Իսրայէլի արս
յամենայն ցեղն Բենիամինի եւ ասեն,
Զինչ է չարութիւնդ այդ եղեալ ի միջի
13 ձերում։ Եւ արդ [2]տուէք զարսն զամպա-
րիշտս զԳաբաացիս զորդիսն Բելիարայ,
եւ սպանցուք զնոսա եւ բարձցուք զչա-
րիսն յԻսրայէլէ. եւ ոչ կամեցան որ-
դիքն Բենիամինի լսել ձայնի եղբարց
14 իւրեանց որդւոցն Իսրայէլի։ Եւ ժողո-
վեցան որդիքն Բենիամինի ի քաղաքաց
իւրեանց ի Գաբաա, ելանել ի պատե-
15 րազմ ընդ որդիսն Իսրայէլի։ Եւ հան-
դէս արարին որդիքն Բենիամինի յաւուր
յայնմիկ յիւրաքանչիւր քաղաքաց, քսան
եւ [3]հինգ հազար արանց սուսերամուխ-
կաց. թող զբնակիչս Գաբաացւոց, որ
16 անցին ի հանդիպակ՝ եւթն հարիւր այր, Ե-
րիտասարդք ընտրեալք յամենայն ժողովր-
դենէն, [4]յերկոցունց ձեռացն աջողակք՝.
ամենեքին նոքա պարսաւորք, որ ձգէին
17 քարինս եւ ի մազէ ոչ վրիպէին։ Եւ ա-
մենայն այր Իսրայէլի անցին ի հանդիպակ,
առանց որդւոցն Բենիամինի, չորեք
հարեւր հազարք արանց սուսերամերկաց,
ամենեքեան նոքա արք պատերազմողք։
18 Եւ յարեան եկին [5]ի Բեթէլ, եւ հար-
ցին զԱստուած եւ ասեն որդիքն Իսրա-
յէլի, Ո՞վ ելցէ մեզ առաջնորդ պատե-
րազմել ընդ որդիսն Բենիամինի. եւ
ասէ Տէր, Յուդա [6]ելցէ առաջնորդ՝։
19 Եւ յարեան որդիքն Իսրայէլի ընդ ա-
20 ռաւօտն եւ բանակեցան զԳաբաաւ։ Եւ
ել այր Իսրայէլացի պատերազմել ընդ
Բենիամինի. եւ ձակատեցան ընդ նոսա
այր Իսրայէլի ի պատերազմ առ Գաբաաւ։
21 Եւ եկին որդիքն Բենիամինի ի քաղա-
քէն, եւ սատակեցին յԻսրայէլէ քսան
եւ երկու հազար արանց յաւուր յայն-

22 միկ, եւ արկին տապաստ յերկիր։ Եւ
զօրացան զարձեալ այր Իսրայէլացի, եւ
յաւելին ձակատել ի պատերազմի ի տե-
ղւոջ ուր ձակատեցան յաւուրն առաջ-
23 նում։ Եւ ելին որդիքն Իսրայէլի եւ
լացին առաջի Տեառն մինչեւ երեկոյ.
եւ հարցին զՏէր եւ ասեն, Եթէ յաւել-
ցո՞ւք մերձենալ ի պատերազմ ընդ Բենիա-
մինի եղբօր մերում. եւ ասէ Տէր, Ելէք ի
24 վերայ նոցա։ Եւ ելին որդիքն Իսրայէլի ի
պատերազմ ընդ որդիսն Բենիամինի յա-
25 ւուրն երկրորդի։ Եւ ել Բենիամին ընդդէմ
նոցա [7]ի պատերազմ յաւուրն երկրորդի.
եւ սատակեաց միւսանգամ ի ժողովրդենէ
անտի [8]ութ հազար արանց յերկիր, ա-
մենեքեան նոքա սուսերաձիգք։
26 Եւ ելին ամենայն որդիքն Իսրայէլի
եւ ամենայն ժողովուրդն եւ եկին [9]ի
Բեթէլ. եւ նստան լացին առաջի Տեառն,
եւ պահեցին յաւուր [9]յայնմիկ, եւ մատ-
տուցին ողջակէզս [10]փրկութեան առաջի
27 Տեառն. Քանզի անդ էր տապանակ ուխ-
տին [11]Տեառն Աստուծոյ յաւուրն յայ-
նոսիկ. եւ Փենեէս որդի Եղիազարու
որդւոյ Ահարոնի կայր առաջի նորա յա-
28 ւուրն յայնոսիկ։ Եւ հարցին որդիքն
Իսրայէլի զՏէր, եւ ասեն, Յաւելցո՞ւք
միւսանգամ ելանել ի պատերազմ ընդ
որդիսն Բենիամինի եղբօր մերում, թէ
դադարեսցուք. եւ ասէ Տէր, Ելէք, եւ
վաղիւ տաց զնա ի ձեռս ձեր։
29 Եւ եդին որդիքն Իսրայէլի դարանա-
30 կաս չուրջ զԳաբաաւ։ Եւ ելին որդիքն
Իսրայէլի ի վերայ Բենիամինի յաւուրն
երրորդի, եւ ձակատեցան զԳաբաաւ
31 որպէս միանգամն եւ միւսանգամն։ Եւ
ելին որդիքն Բենիամինի ընդդէմ ժողո-
վրդեանն, եւ ձգեցան ի քաղաքէ անտի,
եւ սկսան հարկանել ի ժողովրդենէ անտի
վիրաւորս, որպէս միանգամն եւ միւս-
անգամն, առ ճանապարհօքն որ մին
ելանէր ի Բեթէլ, եւ միւսն ելանէր ի
Գաբաա, եւ հարին յանդի անդ իրրեւ
32 սպս երեսուն յԻսրայէլէ։ Եւ ասեն որ-
դիքն Բենիամինի, Կոտորեցաք են սոքա
առաջի մեր իրրեւ զառաջինն. եւ որ-
դիքն Իսրայէլի ասեն, Փախչեցուք եւ
մերժեսցուք զնոսա ի քաղաքէն ի ճա-
33 նապարհս։ Եւ ամենայն այր Իսրայէլի

[1] Եբբ. առնել ըստ [2] Եբբ. տուք [3] Եբբ. վեց
[4] Եբբ. եւթն հարեւր, որոց փակեալ էր աջոյ ձեռն
[5] Կամ, ի տուն Աստուծոյ [6] Եբբ. զառաջինն
[7] Եբբ. ի Գաբաայ [8] Եբբ. ութեւտասն [9] Եբբ. յայնմիկ մինչեւ երեկոյ [10] Եբբ. եւ խաղաղականս [11] Յ Եբբ. դաշինք

յարևան յիւրաքանչիւր ի տեղւոջէ իւրմէ, եւ ճակատեցան ի Բաղթաւար. եւ դարանակալքն Իսրայէլի [1]կոտէնն ի տեղւոջէ իւրմանէ յարեւմտից" Գաբաայ։
34 Եւ եկին հանդէպ Գաբաայ ասան հազար արանց ընտրելոց յամենայն Իսրայէլէ. եւ ծանրացաւ պատերազմն, եւ նոքա ոչ գիտէին թէ հասեալ են ի վրայ նոցա չարիք։ 35 Եւ վանեաց Տէր զԲենիամին առաջի որդւոցն Իսրայէլի, եւ սատակեցին որդիքն Իսրայէլի ի Բենիամինէ յաւուր յայնմիկ քսան եւ հինգ հազար եւ հարիւր այր, ամենեքեան նոքա
36 սուսերամարտիկք։ [2]Իրրեւ տեսին որդիքն Բենիամինի եթէ ի պարտութիւն մատնեալ են. տեղի եւուն այր Իսրայէլեան Բենիամինի, զի յուսացեալ էին ի դարանամուտսն որ էին զԳաբաայ։ Եւ
37 յարձակեցան գարանամուտքն եւ հեղան զԳաբաայ. եւ մտին եւ հարին զքաղաքն
38 ամենայն սրով սուսերի։ Եւ ժամադրութիւն էր առն Իսրայէլի առ գարանամուտսն հրով հանել նոցա զլոց ծխոյ
39 քաղաքին։ Եւ [3]դարձաւ այր Իսրայէլացի ի պատերազմէն". եւ Բենիամին սկսաւ հարկանել վիրաւորս [4]ի գարանակալացն Իսրայէլի իրրեւ արս երեսուն. զի ասացին թէ վանեալով վանին առաջի մեր
40 իրրեւ զպատերազմն զառաջինն։ Եւ [5]նշոյլն ամբարձաւ յորդեալ ի վերայ քաղաքին իրրեւ սիւն ծխոյ. եւ հայեցաւ Բենիամին ի թիկունս իւր, եւ ահա ելանէր վառման քաղաքին յերկինս։ Եւ
41 այր Իսրայէլացի դարձաւ անդրէն, եւ սատնաւորեցաւ այր Բենիամինի. զի տեսին հասեալ ի վերայ նոցա զչարիսն։
42 Եւ խոյս ետուն յերեսաց առն Իսրայէլի ընդ ճանապարհ անապատին, եւ պատերազմն ժամանեաց նոցա. եւ որ ի քաղաքացն ելանէին՝ սատակէին զնոսա
43 ի մէջ իւրեանց։ Եւ [6]հարին զԲենիամին, եւ մարին զնա նորա [7]ի Նուազ մինչեւ հանդէպ Գաբաայ՝ յարեւելից
44 կողմանէ։ Եւ անկան ի Բենիամինէ ութհազարս հզաւր արանց, ամենեքեան նոքա զօրաւորք։ 45 Եւ
տեսեալ մնացորդացն փախեան յանապատն առ պատառն ի վէմն Ռեմոնայ. եւ ձաւաքաղ արարին ի նմանէ ի ճանապարհին հազարս հինգ արանց. եւ պնդեցան զնա նոքա մինչեւ [8]ցԳադաադ, եւ հարին ի
46 Բենիամինէ երկուս հազարս արանց։ Եւ եղեւ ամենայն անկեալքն ի Բենիամինէ քսան եւ հինգ հազար արանց սուսերամարտիկաց յաւուր յայնմիկ, ամենեքեան
47 նոքա արք զօրաւորք։ Եւ խոյս տուեալ մնացորդացն փախեան յանապատն առ պատառն ի վէմն Ռեմոնայ՝ արք վեց հարիւր. եւ նստան ի վիմին Ռեմոնի
48 չորս ամիս։ Եւ այր Իսրայէլի դարձան [9]ընդ կրուին որդւոցն" Բենիամինի. եւ հարին զնոսա սրով սուսերի ի քաղաքէ [10]կարգաւ մինչեւ գանասունն, մինչեւ ցամենայն [11]գտեալ յամենայն քաղաքս". եւ զքաղաքան ապրեալս [12]առաքեցին եւ" այրեցին հրով։

Գլ. ԻԱ

1 Եւ այր Իսրայէլի երդուան ի Մասփա, եւ ասեն, Այր ոք ի մէնջ մի տացէ զդուստր իւր Բենիամինի կնութեան։
2 Եւ եկին ամենայն ժողովուրդն [12]ի Մասփա՝ [13]ի Բեթէլ, եւ նստան անդ մինչեւ երեկոյ առաջի Աստուծոյ, եւ ամբարձին զձայնս իւրեանց եւ լային լալիւն
3 մեծ։ Եւ ասեն, Ընդէ՞ր, Տէր Աստուած Իսրայէլի, եղեւ այս յԻսրայէլ, թնջկինչ լինել այսօր յԻսրայէլէ ցեղի միոյ։ Եւ եղեւ ի վաղիւ անդր կանխեաց ժողովուրդն եւ չինեցին անդ սեղան, եւ մատուցին ողջակէզս [14]փրկութեան։
5 Եւ ասեն որդիքն Իսրայէլի, Ո՞վ է որ ոչ ել յայս եկեղեցի յամենայն ցեղիցն Իսրայէլի առ Տէր [15]ի Մասփա. զի երդումն մեծ էր այնմ որ ոչ [15]ելանէր ի Մասփա եւ ասէին թէ Մահու մեռցի։
6 Եւ [16]մխիթարեցան որդիքն Իսրայէլի ի վերայ Բենիամինի եղբօր իւրեանց, եւ ասեն, Բարձաւ այսօր ցեղ մի յԻսրայէլէ։ 7 Եւ արդ զի՞նչ արասցուք մնացեալոցն առանց կանանց, եւ մեք երդուաք ի Տէր՝ չտալ նոցա ի գաւերայ մերոց
8 կանայս։ Եւ ասեն, Ո՞ր ոք մի ի ցեղիցն Իսրայէլի որ ոչ ել առ Տէր ի Մասփա. եւ ահա չէր ոք եկեալ Յաբիսայ Գաղաադայ ի բանակ եկեղեցւոյն։ 9 Եւ զանց

[1] ՆԲէր. դիմեցին ի տեղւոջէ իւրեանց, ի գաշտն [2] ՆԲէր. Եւ [3] ՆԲէր. խոյս ետ այր Իսրայէլացի ի պատերազմին [4] ՆԲէր. յարանց անտի [5] ՆԲէր. հրդեհն [6] ՆԲէր. պատեցին [7] ՆԲէր. Հարին զնա ուր հանդեան [8] ՆԲէր. ցԳեդեմ [9] ՆԲէր. առ որդիսն [10] ՆԲէր. ի մարդոյ [11] ՆԲէր. գտեալս [12] ՆԲէր. գոյոտ [13] Կամ, ի սուն Աստուծոյ [14] ՆԲէր. եւ խաղաղականս [15] ՆԲէր. ելանէր առ Տէր [16] ՆԲէր. սորջացան

ի հանդիպի ժողովրդեան, եւ ոչ գայր անդ
10 այր ի տանէ Յարբաայ Վաղաագու։ Եւ
առաքեցին անդր ժողովուրդն երկատա-
սան հազար արանց յորդւոցն գօրու-
թեան, եւ պատուիրեցին նոցա եւ ա-
սեն, Երթայք եւ հարէք զբնակիչս Յա-
բիսայ Վաղաագու սրով սուսերի, եւ
11 զկանայս եւ [1]զժողովուրդ։ Եւ այս բան
է զոր առնիցէք. զամենայն արու եւ
զամենայն կին որ գիտիցէ զանկողինս
12 արուի, նզովեսջիք։ Եւ գտին ի տանէ
Յաբիսայ Վաղաագու չորեքհարիւր աղ-
ջիկ կոյս որ ոչ գիտէին զայր յանկողինս
արուի. եւ ածին զնոսա ի բանակն ի
13 Սելով, որ է յերկրին Քանանու։ Եւ ա-
ռաքեաց ամենայն ժողովուրդն եւ խօսե-
ցան ընդ որդիսն Բենիամինի որ էին ի
վիմին Ռեմոնայ, եւ կոչեցին զնոսա ի
14 խաղաղութիւն։ Եւ դարձաւ Բենիամին
ի ժամանակին յայնմիկ [2]առ որդիսն Իս-
րայելի". եւ ետուն նոցա կանայս զայ-
նոսիկ որ էին ի կանանցն Յաբիսայ Գա-
զաադու. եւ [3]չհաճոյ եղեւ նոցա այն-
15 պէս"։ Եւ ժողովուրդն [4]մխիթարեցաւ
ի վերայ Բենիամինի. զի արար Տէր
իրամասուխիս ի մէջ ցեղիցն Իսրայելի։
16 Եւ ասեն ծերք ժողովրդեանն, Զինչ
արասցուք եւ գտանք այլոց անկանանցն.
17 զի սատակեալ կին ի Բենիամինէ։ Եւ
ասեն, Ժառանգութիւն զերծելոյ է ի
Բենիամինէ, եւ մի՛ ջնջեսցի ցեղն յԻս-
18 րայէլ. Եւ մեք ոչ կարեմք տալ նոցա
կանայս ի դստերաց մերոց, զի երդուա՛ք
որդիք Իսրայելի եւ ասելք Թէ Անիծ-
19 եալ լիցի որ տացէ կին Բենիամինի։ Եւ
ասեն, Ահա տօն Տեառն է ի Սելով
աւուրց յաւուրս, որ է ի հիւսիսոյ Բե-
թէլայ, ընդ արեւելս ճանապարհին որ
նայէ ի Բեթէլայ ի Սիկեմ, եւ ի հարա-
20 ւայ [5]Լիբանանու յելերոնայ։ Եւ պատ-
ուիրեցին որդւոցն Բենիամինի եւ ասեն,
Երթայք եւ զարանամուտ լերուք յայ-
21 գեստանին։ Եւ յորժամ տեսանիցէք Թէ
ելանեն դստերք բնակչացն Սելովայ պար
առեալ պարուք, ելէջիք յայգեստանեացն,
եւ յափչտակեսջիք այր իւրաքանչիւր
կին ի դստերաց Սելովայ, եւ երթիջիք
22 յերկիրն Բենիամինի։ Եւ եղիցի յորժամ
գայցեն հարքն նոցա կամ եղբարք նոցա
[6]դատել ընդ ձեզ", ասասցուք նոցա Թէ
[7]Ողորմեցաք նոցա. զի ոչ" առ այր զկին
իւր ի պատերազմին, եւ ոչ դուք ետուք
23 նոցա Թէ յանցանք ինչ լցեն։ Եւ արա-
րին այնպէս որդիքն Բենիամինի, եւ ա-
ռին կանայս ըստ թուոյ իւրեանց ի պա-
րուսարացն զորս յափչտակեցին. եւ գնա-
ցին եւ դարձան յիւրաքանչիւր ժառան-
գութիւնս իւրեանց, եւ չինեցին քա-
24 ղաքս եւ բնակեցին ի նոսա։ Եւ գնա-
ցին որդիքն Իսրայելի ի ժամանակին
յայնմիկ այր յիւրաքանչիւր ցեղ իւր եւ
յազգատոհմ իւր, եւ ելին անտի այր
25 յիւրաքանչիւր ժառանգութիւնն իւր։ Ա-
ւուրսն յայնոսիկ ոչ գոյր թագաւոր Իս-
րայելի, եւ այր իւրաքանչիւր զհաճոյս
աչաց իւրոց առնէր։

---

[1] Եբր. զմանկան [2] Յոյն. գոյ-ե [3] Եբր. չեղեւ նոցա բաւական [4] Եբր. սուրջացաւ [5] Եբր. ի դաստաստան առ մեզ [6] Եբր. Ննորհեցէք մեզ զնոսա. զի ոչ պահեցաք

ՀՌՈՒԹ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ եղեւ յաւուրս դատելոյ դատաւորացն եկն սով յերկիրն. եւ գնաց այր ի Բեթղեհեմէ Յուդայ պանդխտանալ ի [1]յարտակին Մովաբայ, ինքն եւ
2 կին իւր եւ երկու որդիք իւր։ Եւ անուն այնմն Ելիմելէք, եւ անուն կնոջ նորա Նոոմին, եւ անուն երկուց որդւոց նորա Մաալոն եւ Քեղիոն, Եփրաթացիք ի Բեթղեհեմէ Յուդայ. եւ գոզան
3 [2]յարտակին Մովաբու, եւ անդ էին։ Եւ մեռաւ Ելիմելէք այրն Նոոմինայ, եւ
4 մնաց կինն եւ երկու որդիք նորա։ Եւ առին իւրեանց կանայս Մովաբացիս. անուն միոյն Որփա, եւ անուն երկրորդոյն Հռութ. եւ բնակեցան անդ իր-
5 րեւ ամս տասն։ Եւ մեռան անդ՝ երկոքեան, Մաալոն եւ Քեղիոն, եւ մնաց կինն միայն յառնէ իւրմէ եւ յորդւոց իւրոց։
6 Եւ յարեաւ ինքն եւ երկոքեան նուաներն նորա, եւ գարձան [3]յարտակէն Մովաբայ. զի [4]լուան եթէ այց արար Աստուած ժողովրդեան իւրում տալ նոցա
7 հաց։ Եւ էլ ի տեղւոյնէն ուր էր, եւ երկոքեան նուաներք նորա ընդ նմա, եւ գնացին ճանապարհ՝ դառնալ յերկիրն
8 Յուդայ։ Եւ ասէ Նոոմին ցերկոսեան նուաներս իւր, երթայք դարձարուք իւրաքանչիւր առն [5]հօր իւրոյ. եւ արասցէ ընդ ձեզ Տէր ողորմութիւն, որպէս առ-
9 արէք ընդ մեռեալսն եւ ընդ իս։ Տացէ ձեզ Տէր եւ գտջիք հանդիստ իւրաքանչիւր ի տան առն իւրոյ. եւ համբուրեաց զնոսա. ամբարձին զձայնս իւր-
10 եանց եւ լացին։ Եւ ասեն ցնա, Ոչ այդպէս, այլ ընդ քեզ դարձցուք ի ժողո-
11 վուրդ քո։ Եւ ասէ Նոոմին, Դարձարուք, դստերք իմ. ընդէ՞ր գայցէք ընդ իս. միթէ դայեակալ որդիք իցեն յորովայնի իմում, եւ լինիցին ձեզ ա՞նր։
12 Դարձարուք, դստերք իմ, եւ երթայք, զի ես ծերացեալ եմ, եւ չեմ լինելոյ առն. եթէ ասիցեմ՝ եթէ կայցէ ինչ ինձ ազերս եւ լինիցիմ առն [6]աչխարհակա-
13 նացեալ, եւ ծնանիցիմ որդիս, Եւ նոցա սպասիցէք մինչեւ զարգանայցեն, եւ ի նոսա զրաւիցիք չլինել առն. մի, դստերք իմ. զի առաւել քան զձեզ դառնացեալ
14 եմ, զի ել ընդ իս ձեռն Տեառն։ Եւ ամբարձին զձայնս իւրեանց միւսանգամ, եւ լացին. եւ համբուրեաց Որփա զկեսուր իւր, [7]եւ դարձաւ ի ժողովուրդ
15 իւր։ բայց Հռութ դնաց զկնի նորա։ Եւ ասէ Նոոմին ցՀռութ, Ահա նէր քո դարձաւ ի ժողովուրդ իւր եւ առ աստուածս իւր, դարձիր եւ դու զկնի նիրին քո։
16 Եւ ասէ Հռութ, Մի [8]պատահեսցէ ինձ՝ թողուլ զքեզ եւ դառնալ ի քէն. զի ուր դու երթայցես՝ երթայց, եւ ուր հանգչիցիս՝ հանգիայց. ժողովուրդ քո՝ ժողովուրդ իմ, եւ Աստուած քո՝ Աստուած
17 իմ. Եւ ուր մեռանիցիս՝ մեռայց, եւ անդ թաղեցայց. օն եւ օն արասցէ ինձ Տէր եւ օն եւ օն յաւելցէ, բայց եթէ
18 մահ մեկնեսցէ ընդ իս եւ ընդ քեզ։ Եւ իբրեւ տեսս Նոոմին եթէ զնդեալ է երթալ նա ընդ նմա, դադարեաց այնուհետեւ ի խօսելոյ ընդ նմա։
19 Եւ գնացին երկոքեան մինչեւ գալ նոցա ի Բեթղեհեմ. եւ եղեւ ի գալն նոցա ի Բեթղեհեմ, հնչեաց ամենայն քաղաքն [9]զնոսա, եւ ասեն թէ Սա՞ իցէ Նոոմին։
20 Եւ ասէ ցնոսա, Մի կոչէք զիս [10]Նոոմին, այլ կոչեցէք զիս Դառնացեալ, զի դառ-
21 նացոյց զիս Բաւականն յոյժ. Լի չոգայ, եւ ունայն դարձոյց զիս Տէր. եւ արդ՝ ընդէ՞ր կոչէք զիս Նոոմին, եւ Տէր նկուն արար զիս, եւ Բաւականն չարչարեաց
22 զիս։ Եւ դարձան Նոոմին եւ Հռութ Մովաբացի նոյն իւր ընդ նմա՝ գնացեալ [3]յարտակէն Մովաբայ, եւ եկին ի Բեթղեհեմ ի սկզբան հնձոց գարւոյ։

---

[1] Կամ, յերկրին [2] Կամ, յերկիրն [3] Կամ, յերկրէն
[4] ԵԲԲ. լուաւ յերկրին Մովաբու եթէ այց արար Տէր [5] ԵԲԲ. մօր
[6] ԵԲԲ. յայսմ գիշերի [7] ՅԵԲԲ. պակաս [8] ԵԲԲ. բռնադատեր զիս [9] ԵԲԲ. զնոցանէ [10] Նշանակի Համեցեալ

Գլ. Բ

4 Եւ անդ էր այր ծանօթ առն Նոոմինայ, եւ այրն հզօր զօրութեամբ, յազգէն Ելիմելիքայ, եւ անուն նորա Բոոս.
[1]եւ նա Նոոմինայ առն այրուձիեան
2 բնակիչոյ ի նմա։" Եւ ասէ Հռութ Մովաբացի ցՆոոմին, Երթայց յանդ եւ քաղեցից հասկ զհետ ուրուք, որոյ գտից շնորհս առաջի աչաց նորա. եւ ասէ ցնա,
3 Երթ, դուստր։ Եւ գնաց. եւ երթեալ քաղէր հասկ յանդի զհետ հնձողացն, եւ դիպեալով դիպեցաւ վիճակի անդին Բոոսայ, ազգականի Ելիմելիքայ։
4 Եւ ահա Բոոս եկն ի Բեթղեհեմէ, եւ ասէ ցհնձողս իւր, Տէր ընդ ձեզ. եւ ասեն ցնա, Օրհնեսցէ զքեզ Տէր։
5 Եւ ասէ Բոոս ցպատանին իւր որ կայր ի վերայ հնձողացն, Ո՞ր է ազգիկդ այդ։
6 Պատասխանի եւ պատանին որ կայր ի վերայ հնձողացն եւ ասէ, Մովաբացի ազգիկն է որ դարձաւ ընդ Նոոմինայ
7 [2]յադարակէն Մովաբայ։ Եւ ասէ, Թող քաղեցից եւ ժողովեցից հասկ ի մէջ հունոյց զհետ հնձողացդ. եւ եկն եկաց յառաւօտէ մինչեւ ցայժմ, [3]եւ ոչ դադարեաց եւ ոչ սակաւիկ մի ինչ յանգիստ։"
8 Եւ ասէ Բոոս ցՀռութ, Լուա՞ր, դուստր. մի այլ ուրեք երթիցես քաղել հասկ յայլոց անդի, եւ մի գնաս ուրեք փնասցես տաք. այլ տաղէն իակ յարեաց յաղջկունս իմ։
9 Եւ զկուսնս իմ։ Եւ աչք քո յանդիս ուր եւ հնձեսցեն, եւ երթիցես զհետ նոցա. ո՞չ ապաքէն պատուէր եաւ մանկտաց իմոմ չմերձենալ ի քեզ. եւ եթէ ծարաւեսցիս, երթիցես յամանսն եւ արբցես
10 ուստի հանիցեն ջուր մանկտիք։ Եւ անկեալ ի վերայ երեսաց իւրոց երկիր եպագ յերկիր ի խոնարհ, եւ ասէ, Զի՞ է զի գտի շնորհս առաջի աչաց քոց ճանաչել
11 զիս, եւ ես եմ կին մի օտար։ Պատասխանի եւ Բոոս եւ ասէ ցնա, Պատմելով պատմեցաւ ինձ ամենայն ինչ զոր արարեր սկեսրի քումմ յետ մահուան ամուսնի քումմ, եւ զվարդ մօրդ քո եւ զմայր, եւ զերկիր ծննդեան քո, եւ եկիր ի ժողովուրդ զոր ոչ գիտէիր յերէկ եւ յեռանդ։ Հատուսցէ քեզ Տէր ըստ վաստակոց քոց, եւ եղիցի լի վարձք քո ի Տեառնէ Աստուծոյ Իսրայելի, յոր դիմեցեր ապաստան լինել ընդ թեւօք նորա։
13 Եւ նա ասէ, Գտի շնորհս առաջի աչաց քոց, տէր. զի մխիթարեցեր զիս, եւ զի խօսեցար ի սիրտ աղախնոյ քո. եւ ես [4]եղէց իբրեւ զմի յաղախնանց քոց։
14 Եւ ասէ ցնա [5]Բոոս, Ահա ժամ հաճոյ է, մատիր՝ այսր եւ կեր ի հացէդ, եւ թացցես զպատառ քո ի քացախիդ. եւ նստաւ Հռութ ի կողմանէ հնձողացն, եւ խառնեաց նմա Բոոս փոխինդ. եւ եկեր եւ յագեցաւ, եւ եթող նչխար։
15 Եւ յարեաւ քաղել հասկ, եւ պատուիրեաց Բոոս մանկտաց իւրոմ, եւ ասէ, Այլ եւ ի մէջ որայոցն քաղեսցէ, եւ մի
16 պատկառեսցուքէք զնա. Այլ եւ [1]բառնալով բարձուսջիք, եւ՝ արկանելով արկջիք առաջի նորա [6]ի փոխնդոյն խառնելոց՝", եւ մայր տաջիք նմա եւ [1]կերիցէ՝ եւ" քաղիցէ հասկ. եւ մի ինչ զգուշ
17 լիցէք զնա։ Եւ քաղեաց յանդին մինչեւ ցերեկոյ. եւ ծեծեաց զոր քաղեացն, եւ
18 եղեւ արդու մի գաւազ։ Եւ առ եւ եմուտ ի քաղաքն. իբրեւ եաես սկեսուրն նորա զոր քաղեացն, եւ եհան Հռութ եաս նմա ի նչխարէն յորոյ յագեցաւն։
19 Ասէ ցնա սկեսուրն իւր, Ո՞ւր ժողովեցեր այսօր, եւ կամ ո՞ւր եզեր. եղիցի որ ծանեաւն զքեզ՝ օրհնեալ. եւ պատմեաց Հռութ սկեսրին իւրոյ թէ ուր եզեւ, եւ ասաց զանուն առնն առ որում
20 եզեւ այն օր թէ Բոոս է։ Ասէ Նոոմին ցնոս իւր, Օրհնեալ է նա ի Տեառնէ, զի ոչ պակասեցոյց զգութ իւր ի կենդանեացդ եւ ի մեռելոց. եւ ասէ ցնա Նոոմին, Մերձ է այրն ի մեզ, ի մերձաւորացդ մերոց է։ Եւ ասէ Հռութ ցսկեսուրն իւր, [7]Իրաւ է, ասաց ցիս թէ Յաղջկունսդ՝ իմ յարեաց, մինչեւ վախճանեսցին զհունձսդ՝ որչափ իցեն իմ։
22 Եւ ասէ Նոոմին ցՀռութ նոս իւր, Բարի է դուստր, զի եզեր ընդ աղջկունս նորա, եւ մի պատահիցէ ոք քեզ յայլում
23 անդի։ Եւ յարեցաւ Հռութ յաղջկունսն Բոոսայ քաղել հասկ մինչեւ վախճանել հնձոցն գարեաց եւ հնձոց ցորենոյ. եւ նստաւ առ սկեսրի իւրում։

Գլ. Գ

1 Եւ ասէ ցնա Նոոմին սկեսուր իւր. Դուստր, [8]խնդրեցից քեզ հանդիստ, զի

[1] ՅԵԲԲ. պոյոսք [2] Կամ յերկրէն [3] ՅԵԲԲ. Նստաւ միայն սակաւիկ մի ի տան
[4] ՅԵԲԲ. չեմ [5] ՅԵԲԲ. Բոոս ի ժամ ճաշուն, Մատիր
[6] ՅԵԲԲ. յորոյոցն [7] ՅԵԲԲ. Ասաց եւս թէ ի մանկտէն
[8] ՅԵԲԲ. ո՞չ խնդրեցից

2 բարի լինիցի քեզ, եւ արգ ոչ ապաքէն
Բոոս ծանօթ մեր է, որոյ էիր ընդ աւ-
ջկունս նորա. ահաւասիկ նա արկանէ
3 կալ ի վարսդ ի պիչերիս յայսմիկ։ Եւ
դու լուացիր եւ օծցիս, եւ արկցես
զհանգերձ քո զքեւս եւ կացես ի կալն,
եւ մի ասացես առնն ծանօթս մինչեւ
վախճանեսցէ զուտել եւ զըմպել իւր։
4 Եւ եղիցի ի մտանելն նորա ի քուն,
նչմարեսցես զտեղին ուր ննջիցէ. եւ
երթիցես եւ բացցես յոտից կազմանէ, եւ
ննջիցես. եւ նա պատմեսցէ քեզ զինչ
5 առնելոց իցես։ Եւ ասէ ցնա Հռութ,
Զամենայն զոր ինչ ասացեր ցիս՝ արարից։
6 Էջ ի կալն, եւ արար ըստ ամենայնի
որպէս պատուիրեաց նմա սկեսուրն իւր։
7 Եկեր Բոոս եւ արբ. եւ զուարթացաւ
սիրտ նորա, եւ չոգաւ ննջեաց առ եղերբ
գալչին. եւ նա եկն գաղտ, եւ մերկա-
8 ցոյց յոտից կազմանէ եւ ննջեաց։ Եւ
եղեւ վհատաբարձաւ միջնուքն, զար-
հուրեցաւ այրն եւ խուսկեցաւ. եւ ահա
9 կին ննջէր առ ոտիւք նորա։ Եւ ասէ,
Ո՞վ ես դու. եւ ասէ, Ես եմ Հռութ
աղախին քո, եւ արկցես զգրօչակ
քո գաղախնիւ քով. զի մերձաւորիչ ես
10 դու։ Եւ ասէ Բոոս, Օրհնեալ ես դու ի
Տեառնէ [1]Աստուծոյ, դուստր, զի աղ-
նուացուցեր զքո զգալի քո վերջինս
քան զառաջինն. զի ոչ չոգար զհետ ե-
րիտասարդաց զաղքատաց կամ զհնձա-
11 հնձոյ։ Եւ արդ, դուստր, մի երկնչիր.
զամենայն զոր ինչ ասացես ցիս ա-
րարից քեզ. քանզի գիտէ ամենայն ցեղ
ժողովրդեան իմոյ եթէ կին զօրութեան
12 ես դու։ Եւ արդարեւ եմ ես մերձաւո-
րիչ քո. բայց գոյ եւ այլ եւս մօտ մեր-
13 ձաւորիչ՝ մօտագոյն քան զիս։ Այդր
առ զկիչերս զայս. եւ եղիցի այգուն,
եթէ մերձաւորեսցուցէ զքեզ մերձա-
ւորիչն, բարի է. ապա եթէ ոչ կամիցի
մերձաւորեցուցանել զքեզ, ես մերձա-
ւորեցուցից զքեզ, կենդանի է Տէր.
ննջեա այդր մինչեւ ցառաւօտս։
14 Եւ ննջեաց առ ոտս նորա մինչեւ ցա-
ռաւօտն. եւ յարեաւ կինն մինչչեւ ճա-
նաչէր այր զընկեր իւր. եւ ասէ Բոոս,
Մի որ գիտասցէ թէ կին որ եկն [1]առ
15 իս՝ ի կալս. Բեր զմեկնոցդ որ ի վերայ
քո է, եւ կալ առ. եւ նա կալաւ. եւ
չափեաց վեց չափունս գարի, եւ եդ ի
16 վերայ նորա, եւ եմուտ ի քաղաքն եւ
չոգաւ Հռութ առ սկեսուրն իւր. եւ
նա ասէ, Ձի՞ է դուստր. եւ պատմեաց
նմա զամենայն ինչ զոր արար նմա այրն
17 Եւ ասէ ցնա, Զայս վեց չափ գարւոյ
եա ինձ եւ ասէ, Զի մի՛ մտցես ունայ-
18 նաձեռն առ սկեսուրն քո։ Եւ նա ասէ,
[2]Նիստ դու՝ մինչեւ յայտ լիցի մեզ. որ-
պէս զի ոչ վրիպէ բանն, զի ոչ գազարէ
այրն մէկ ոչ կատարէ սոյն օրին զբանն։

Գլ. Դ.

1 Եւ Բոոս ել ի դուռնն եւ նստաւ անդ.
եւ ահա անցանէր առ նովաւ մերձաւո-
րիչն զորմէ խօսեցաւ Բոոս. եւ ասէ
ցնա Բոոս, Ա՛նց նիստ առ [3]վայր մի եւ
2 մնա՛. եւ նա անց նստաւ։ Եւ առ Բոոս
տասն այր ի ծերոց քաղաքին եւ ասէ,
3 Նստարուք առ, եւ նստան։ Եւ ասէ
Բոոս մերձաւորիչն, Զբաժին անդոյ որ
է եղբօր մերոյ Ելիմելիքայ՝ վաճառէ
Նոեմին, որ դարձեալն է [4]յազարակէն
4 Մովաբայ։ Եւ ես ասացի թէ յայտնեցից
յունկն քո. արդ առացիր առաջի սոցա
որ նստիս, եւ առաջի ծերոց ժողո-
վրդեան իմոյ. արդ եթէ մերձաւորե-
ցուցանես՝ մերձաւորեցի. ապա թէ ոչ
մերձաւորեցուցանես, պատմեա ինձ եւ
գիտացից. զի ոչ գոյ բայ ի քէն մերձա-
ւորարար, եւ յետ քո ես եմ մերձաւո-
5 րիչ։ [5] Եւ ասէ Բոոս, Յաւուր առնուլ
քո զագարակն ի ձեռաց Նոեմինայ,
եւ ի Հռութայ Մովաբացւոյ ի կնոջէ
մեռելոյն, եւ զնա պարտիս առնուլ եւ
յարուցանել զանուն մեռելոյն ի ժառան-
6 գութիւն թրոմի։ Եւ ասէ մերձաւո-
րիչն ցԲոոս, Ոչ կարեմ մերձաւորեցու-
ցանել ես ինձ, զուցէ եզծանիցեմ զժա-
ռանգութիւն իմ. մերձաւորեա դու քեզ
զմերձաւորութիւն իմ, զի ես ոչ կարեմ
7 մերձաւորեցուցանել։ Եւ այս օրէն էր
յառաջագոյն ի մէջ Իսրայէլի վասն մեր-
ձաւորութեան, եւ վասն գնելոյ առ ի
հաստատելոյ զամենայն բան. բակտայր
այր զկօշիկ իւր, եւ տայր ցընկեր իւր՝
[1]որ մերձաւորելոց էր զմերձաւորութիւն
նորա։" Եւ այն լինէր ի վկայութիւն ի
8 մէջ Իսրայելի։ Եւ ասէ մերձաւորիչն
ցԲոոս, Ստացիր զոս քեզ [1]զմերձաւո-

[1]ՅԵԲր. պ-ո-ւ-ւ-ւ

րութիւն իմ՝". եւ լոկացաւ զկօչիկ իւր
[1]*եւ ետ ցնա՝"։*
9 *Եւ ասէ Բոոս ցծերան եւ ցամենայն*
Ժողովուրդն , Վկայք իմ էք դուք այսօր,
զի ստացայ զամենայն ինչս Ելիմելեքայ,
եւ զամենայն ինչ որ է Քեղղոնայ եւ
10 *Մաալոնայ ի ձեռաց Նոոմինայ ։ Նա եւ*
զՀռութ Մոաբացի զկին Մաալոնայ
ստացայ ինձ կնութիւն , կանգնել զա-
նուն մեռելոյն ի ժառանգութիւնն իւ-
րում . եւ մի՛ ջնջեսցի անուն մեռելոյն
յեղբարց իւրոց եւ [2]*ի ցեղէ անդաստ իւ-*
11 *րոյ . եւ վկայք դուք էք այսօր ։ Պա-*
սասխանի եւս ամենայն Ժողովուրդն ի
դրանն եւ [3]*ասեն , Մեք եմք վկայք . եւ*
ծերքն ասեն ." Տացէ Տէր զկինն որ
մտանէ ի տուն քո իբրեւ զՀռաքէլ եւ
իբրեւ զԼիա, որ չինեցին երկոքեան զտունն
Իսրայէլի , առնել զօրութիւն յԵփրաթա,
12 *եւ կոչել անուն ի Բեթղեհէմ։ Եւ եղիցի*
տուն քո իբրեւ զտունն Փարեսի , զոր
ծնաւ Թամար Ցուդայի, յայնմ զաւակէ ,
[4]*եւ տացէ քեզ Տէր* [1]*որդի* [5]*յաղջկանէդ*
յայսմանէ ։
13 *Եւ առ Բոոս զՀռութ , եւ եղեւ նմա*
ի կնութիւն . եւ եմուտ առ նա , եւ
ետ նմա Տէր յղութիւն , եւ ծնաւ որդի։
14 *Եւ ասեն կանայքն ցՆոոմին , Օրհնեալ*
Տէր , որ ոչ թակեաց ի քէն այսօր զմեր-
ձաւորիչն , անուանել զանուն [6]*քո ի մէջ*
15 *Իսրայէլի . Եւ եղիցի քեզ ի դարձուցա-*
նել զոգի եւ կերակրել զծերութիւն քո.
զի նոա քո որ սիրեաց զքեզ՝ ծնաւ որդի
16 *որ լաւ է քեզ քան զեւթն որդիս ։ Եւ*
առ Նոոմին զմանուկն եւ եդ ի ծոց իւ-
17 *րում . եւ եղեւ նմա դայեակ։ Եւ կոչեցին*
անուն նմա դրացիքն եւ ասեն , Մնաւ
որդի Նոոմինայ, եւ կոչեցին զանուն նորա
Ովբէդ . նա է հայր Յեսսեայ հօր Դաւթի։
18 *Եւ այս են ծնունդք Փարեսի . Փարէս*
19 *ծնաւ զԵսրովմ, Եւ Եսրովմ ծնաւ զԱրամ,*
20 *Արամ ծնաւ զԱմմինադաբ , Ամմինադաբ*
ծնաւ զՆաասսովն , Նաասսովն ծնաւ
21 *զՍալմոն , Սալմոն ծնաւ զԲոոս , Բոոս*
22 *ծնաւ զՈվբէդ , Ովբէդ ծնաւ զՅեսսէ ,*
Յեսսէ ծնաւ զԴաւիթ ։

[1] ԵԲԲ· դ-ւոյ-ւ [2] ԵԲԲ· ի գրանէ [3] ԵԲԲ· ծերքն եւ ասեն , Մեք եմք վկայք
[4] ԵԲԲ· զոր [5] Կա՛մ , ի մանկամարդոյդ [6] ԵԲԲ· նորա

ԳԼՈՒԽՔ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑՆ

	Գլ.	Համ.
Վասն եզկանայ և երկաց կանանց նորա	Ա.	1
Ծնունդն Սամուելի ազօթիւք մօրն	Ա.	9
Զի մատուցին զնա երկիման առաջի Աստուծոյ	Ա.	22
Զի նուիրեալ զնա Տեառն յանձն արար զնին Հեղեայ	Ա.	25
Վասն երեքժանի մահանացին	Բ.	11
Զի ոչ լսէին խրատուս Հօրն որդիքն Հեղեայ	Բ.	21
Պատգամ Տեառն առ Հեղի՝ բառնալ զտունն նորա	Բ.	26
Սկիզբն յայտնելոյ բանին Տեառն առ Սամուէլ	Գ.	1
Զի խօսեցաւ Տէր բառնալ զքահանայութիւն տանն Հեղեայ	Գ.	11
Պարսիկն Խորայելի եւ գերել տապանակին	Գ.	1
Վասն ոգնաբեկ մահուանն Հեղեայ	Գ.	12
Հարուածք Ազովտայ եւ Պագնայ ի տապանակն	Ե.	1
Թէ զնացին տանջեալք սլաղդիքն խորհին դարձուցանել զտապանակն	Ե.	7
Թէ զինչպիսի նուիրօք արձակեցին զտապանակն	Զ.	3
Թէ եկն ինքնին տապանակն ի Բեթ-սամիւս, եւ վասն Հարուածոցն որ անդ	Զ.	13
Զի փոխեցաւ տապանակն ի Կարիաթ Յարիմ, եւ վասն ազօթիցն Սամուելի եւ ջրոյն զոր նուիրեաց Աստուծոյ	Է.	1
Զի յաղթեա Սամուելի որոտաց Տէր, եւ վանեաց զսլաղդիան առաջի Խորայելի	Է.	7
Զի թագաւոր խնդրեցին ի Սամուելէ	Ը.	1
Զի եցոյց Նոցա Սամուել զհարկս թագաւորին	Ը.	10
Զի եւ Սաւուղ ի խնդիր կորուսեալ իշոցն	Թ.	1
Եւ զի պատուհասց Նմա Սամուէլ, որպէս եւ Տէր յայտնեալ էր վասն Նորա	Թ.	10
Զի հիւրընկալեաց Սամուէլ զՍաւուղ	Թ.	22
Թէ օծ զՍաւուղ, եւ զի հասին Նմա տաեալ նշանքն ի Սամուելէ	Ժ.	1
Թէ ժողովեաց զԽորայէլ, եւ վիճակաւ թագաւորեցոյց Նոցա զՍաւուղ	Ժ.	17
Թէ դիմ՛ըզ գումարեաց Սաւուղ զԽորայէլ եւ յաղթեաց Ամմնացւոցն	ԺԱ.	1
Զի արարեալ Նաւակատիս՝ օծ Սամուէլ զՍաւուղ	ԺԱ.	14
Զի արգար գտաւ Սամուէլ ած. ժողովուրդն	ԺԲ.	1
Զի կշտամբեաց Նա զժողովուրդն ի կոչմանէ Տեառն, եւ ետ Տէր ձայնս ի վկայութիւն բանիցն. եւ թէ զերկեամ մի եկաց վիճակ Սաւուղ	ԺԲ.	5
Եհար Յոնաթան զսլաղդիս, եւ նորա գումարեցան զարձեալ	ԺԳ.	2
Թէ Սաւուղ ոչ կամեցաւ մատոյց, եւ կշտամբեաց զնա Սամուէլ	ԺԳ.	8
Թէ ծանրացան սլաղդիքն ի վերայ Խորայելի, եւ թէ անզէնք էին Խորայէլացիք բաց ի Սաւուղայ եւ Յոնաթանայ	ԺԳ.	15
Թէ վիա՛րդ Յոնաթան կապաբճակրաւն գդրդեցոյց զբանակս սլաղդացն	ԺԴ.	6
Աւասիկ խրախուսեալ Սաւուղ, յարձակեցաւ զօրօքն, եւ վանեաց զսլաղդիան	ԺԴ.	16
Զի երդմեցոյց Սաւուղ չուտել ինչ ումեք	ԺԴ.	23
Թէ ակսան ուտել արեամբ	ԺԴ.	32
Նշ վիճակ զի մեռցի Յոնաթան, եւ ոչ եմոզ ժողովուրդն	ԺԴ.	36
Պատգամ Տեառն առ Սաւուղ՝ երթալ նզովել ջնջել զԱմաղէկ	ԺԴ.	47
Զի ագահեաց Սաւուղ յաւարն Ամաղեկայ	ԺԵ.	4
Զի ինքնաձեռն ողջակիզեր Տեառն, եւ եհաս առ նա Սամուէլ	ԺԵ.	10
Զի կշտամբեաց զնա առատագին	ԺԵ.	16
Պատճառս իմն կարկատէ Սաւուղ, եւ փաղաքշէ եւս. զոր անընկալ առարեալ՝ սպառնայ առատկապէս եւ սպանանել զԱգագ գնաց ի Սաւուղայ	ԺԵ.	20
Հրամանն ապա առեալ յԱստուծոյ՝ օծ զԴաւիթ որդի Յեսսեայ	ԺԶ.	35
Զի Հալածէր Դաւիթ զդեւն ի Սաւուղայ	ԺԶ.	19
Ժողովեցան սլաղդիքն ընդդէմ Խորայելի ի պատերազմ	ԺԷ.	1
Թէ նախատէր Գողիաթ զԽորայէլ, եւ զի առաքեաց Յեսսէ զԴաւիթ ի բանակն	ԺԷ.	4
Զի խրախուսեաց Դաւիթ երթալ ընդդէմ սլաղդացն	ԺԷ.	26
Սպան Դաւիթ զԳողիաթ, եւ վանեցան սլաղդիքն, եւ նախանձեալ ընդ այն Սաւուղայ՝ չհանգոյր սպանանել զԴաւիթ	ԺԷ.	48
Զի նեղգոլեալ եամբ փեսայացոյց զԴաւիթ ի դստերս իւր, զի այնու արկցէ զնա ի սուր անհնփտութիւն	ԺՀ.	14
Առաց Սաւուղ սպանանել զԴաւիթ, և խափանեաց զայն Յոնաթան	ԺԹ.	1
Վրիպեաց ի խոցելոյ զԴաւիթ, եւ յամառէր ի նդն, եւ փախոյց զնա Մեզբպէ պաճուճեալ Հնարիւք	ԺԹ.	8
Եւ Սամուէլ գերծեալ Դաւթի՝ առաքէր Սաւուղ ըմբռնել զնա, որոյ երից դստերացն մարգ արհաւեալք, սպա եւ ինքն եկն անդ, եւ մարգարէանայր գկորուստն պիւր	ԺԹ.	18
Մուծանէ Դաւիթ զՅոնաթան յսխտա Տեառն, գուշակել նմա թէ արդարեւ ի միտս չարս էգէ զԴաւիթ է Սաւուղ	Ի.	1
Տայ Յոնաթան նշանակս ազդել		

	Գլ.	Համ.
Դաւթի նզոյր զկամս Աստուծոյ։	Ի.	17
Խորհանայ Աստուած ի վերայ Յովսեմեանս վասն արձակելոյն Դաւթի։	Ի.	27
Ազգ սրտմտութեան փչնաւն, եւ արձակեաց զԴաւիթ։	Ի.	35
Եկն Դաւիթ եւ ա՛ռ պաշար ի քահանայէն, եւ եհան զսուրն Գողիաթ Ասորւոյ։	ԻԱ.	1
Եկն Դաւիթ ի Գէթ, եւ երկուցեալ՝ պլատձեւեցաւ եւ զերծաւ. և գնայր եւ զմայր իւր յանձնեաց յորդւոյն Մովաբայ։	ԻԱ.	10
Կատարեաց Աստուած զքահանայն վասն Դաւթի, եւ զերծաւ Աբիաթար եւ եկն առ Դաւիթ։	ԻԲ.	5
Ետարց Դաւիթ ի Տեառնէ երթալ փրկել զԿէիլա։	ԻԳ.	1
Եկն Դաւիթ փրկեաց զԿէիլա, եւ դադարեցաւ անդ իբրայովքն. եւ Աստուած պատրաստէր պաշարել զնա անդ։	ԻԳ.	4
Զի ել Դաւիթ եւ իւրքն, եւ գնացին անտի։	ԻԳ.	13
Ել Դաւիթ ի լեառն Զիփա, եւ եկն առ նա Յովսեմեան եւ գտրձաւ, եւ Զիփացիք գուշակեցին Սաւուղի զԴաւիթ։	ԻԳ.	14
Ել Սաւուղ պաշարել զԴաւիթ, եւ գուժկան հասեալ առնու, գտրձաւ անդրէն։	ԻԳ.	24
Ել գտրձեալ Սաւուղ զհետ Դաւթի. եւ մտեալ Դաւիթ եհատ զդրօշակ նորա, եւ մեկնեալ խօսեցաւ առ նա զարժանն, եւ երգմնեցոյց զնա Սաւուղ. եւ թէ մեռաւ Սամուէլ։	ԻԴ.	2
Առաքեաց Դաւիթ առ Նաբաղ Հարցանել սիրով։	ԻԵ.	2
Զի անարգանօք գտրձայց նա զմանկտին Դաւթի։	ԻԵ.	9
Թիմեաց Դաւիթ բարկութեամբ ի վերայ Նաբաղայ, եւ յառաջեալ		

	Գլ.	Համ.
կնոջն բնծայիւք ցածոյց զԴաւիթ։	ԻԵ.	13
Թէ յետ սակաւ ինչ ապաղայ մեռանի Նաբաղ։	ԻԵ.	36
Եւ թէ ա՛ռ Դաւիթ զկնքիգեա կին նորա։	ԻԵ.	39
Նա Աստուած զդատաստան իւր այլոց արանց, եւ ինքն զհետ մտեալ խնդրէր զԴաւիթ. որոյ մտեալ ի վերայ նորա՝ ա՛ռ զգեղարդն եւ գկաժն, եւ զերծեալ աղաղակեաց առ զօրան։	ԻԶ.	44
Փաղաքշէ իմն Աստուած նենգաւոր, այլ Դաւթի Տեառն յանձնեալ զինքն՝ գնայ լինքեան։	ԻԶ.	17
Եկեալ Դաւիթ առ Աքիսաս ի Գէթ, եւ իւրովքն արամբք եւ տղայիւ նաեւ ի Սիկելակ։	ԻԷ.	1
Թէ ա՛ւր ուրեք արշաւէին Դաւթեանք, եւ զի հրաւիրեաց Աքիսաս զԴաւիթ զհետ իւր ի պատերազմ ընդ Իսրայէլի։	ԻԷ.	8
Թէ զի խրատուն Սամուելի երարձ Սաւուղ զվհուկն, եւ զի Տէր դարձոյց զերեսս իւր ի նմանէ, դարձաւ նա խնդրեաց վհկաւն, եւ ել դեւն ի նմանութիւն Սամուելի։	ԻՀ.	3
Զի հասոյց վհուկն զորթն, եւ եդ առաջի Սաւուղայ ուտել։	ԻՀ.	21
Զի ոչ կամեցան իշխանք այլազգեացն գնալ ընդ նոսա Դաւիթ ընդդէմ Իսրայէլի։	ԻԹ.	1
Զի յերրորդումն աւուրն հասեալ Դաւիթ ի Սիկելակ՝ եդիտ գերեալ գիւրեանսն, եւ զհետ մտեալ եհատ։	ԻԹ.	11
Զի լափեալ գգերին ամբոխ գտրձաւ յաղթութեամբ։	Լ.	18
Թէ առաքեաց բարեկամսդ իւրոց մասունս յաւուրն անտի։	Լ.	26
Զի պարտեցաւ Իսրայէլ ի պատերազմ անդր. եւ զի սպանաւ Սաւուղ եւ երեքին որդիք նորա։	ԼԱ.	1

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

Ա. ՈՒԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

Եւ այր մի էր յԱրիմաթեմայ, ի
1 Սիրայ՝ ի լեռնէ Եփրեմի, եւ անուն
նորա Եղկանա, որդի Յերեմիելի, որդ-
ւոյ Հեղեայ, որդւոյ Թովկեայ, [1]ի Նաեիր
2 Եփրեմի՝: Եւ էին նորա երկու կանայք,
անուն միումն Աննա, եւ անուն երկ-
րորդին՝ Փեննանա. եւ էին Փեննանայի
3 որդիք եւ Աննայի ոչ զոյր որդի: Եւ
ելանէր այրն ուստեր յաւուրս յաւուրս ի քա-
ղաքէ իւրմէ [2]յԱրիմաթեմայ երկիր պա-
գանել, եւ զոհել Տեառն [2]Ասուածոյ
զօրութեանց ի Սիլով. եւ անդ [2]Հեղի
եւ՝ երկու որդիք [3]նորա Ոփնի եւ Փե-
4 նեէս՝ քահանայք Տեառն: Եւ եղեւ օր
մի եւ զոհեաց Եղկանա, եւ եա Փեննա-
նայի կնոջ իւրում եւ ուստերաց նորա
5 եւ դստերաց նորա մասունս. Եւ Ան-
նայի եա մասն [4]մի զի ոչ զոյր նորա
որդի. բայց զԱննա սիրէր Եղկանա ա-
ռաւել քան զՓեննանա, եւ՝ Տէր փակ-
6 եաց զարգանդ նորա. [5]Զի ոչ եա նմա
որդի՝ ըստ նեղութեան իւրում եւ ըստ
սրտմտութեան անձին իւրոյ. եւ սրտմեալ
էր վասն այնորիկ՝. զի փակեաց Տէր
զարգանդ նորա [2]աա ի չտալոյ նմա որդի՝:
7 Եւ այնպէս առնէր ամի ամի յելանել
նորա ի տունն Տեառն. եւ սրտմէր եւ
8 լայր եւ ոչ ուտէր: Եւ ասէ ցնա Եղ-
կանա այր իւր, [6]Աննա. եւ ասէ ցնա,
Աւասիկ եմ, տէր: Եւ ասէ ցնա, Զի՞ է
քեզ զի՝ լաս, եւ ընդէ՞ր ոչ ուտես, եւ
ընդէ՞ր հարկանէ զքեզ սիրտ քո. ո՞չ լաւ
եմ ես քեզ քան զտասն որդի:
9 Եւ յարեաւ Աննա յետ ուտելոյ[7] նորա
ի Սիլով, եւ եկաց առաջի Տեառն.՝ եւ

[1] ԵԲԲ. որդւոյ Սուփայ Եփրեմացւոյ [2]ՅԲԲ. պակասէ [3]ԵԲԲ. Հեղեայ [4]ԵԲԲ. մի կրկին, զի զԱննա սիրէր, եւ [5]ԵԲԲ. Եւ զրգռէր զնա նեղիչ նորա ի բարկութիւն զայրացուցանել զնա [6]ԵԲԲ. Աննա, զի՞ [7]ԵԲԲ. եւ յետ ընկելոյ, ի Սիլով

Հեղի քահանայ նստէր աթոռով առ
10 սեամս տաճարին Տեառն: Եւ նա ցաւա-
կին անձամբ եկաց յաղօթս առ Տէր,
11 եւ ելաց լալով [8]եւ ասէ, Ադոնայ Տէր՝,
ելով Սաբաւովթ, եթէ հայելով հա-
յեսցիս ի տառապանս աղախնոյ քո, եւ
յիշեսցես զիս[9], եւ տացես աղախնոյ քում
զաւակ առն, տաց զնա [10]նուէր առաջի
քո մինչեւ ցօր մահուան իւրոյ. եւ զինի
եւ արբեցութիւն մի արբցէ, եւ՝ երկաթ
12 մի ելցէ ի գլուխ նորա: Եւ եղեւ իբրեւ
յաճախեաց կալ յաղօթս առաջի Տեառն,
եւ Հեղի քահանայ միտ դնէր բերանոյ
13 նորա: Եւ նա խօսէր ի սրտի իւրում,
եւ չրթունք իւր չարժէին, եւ բարբառ
իւր ոչ լսէր լսելի. [2]եւ լուաւ նմա Տէր:՝
14 Եւ համարեցաւ զնա Հեղի արբեալ. Եւ
ասէ ցնա [11]պատանեաին Հեղեայ՝, Մին-
չեւ յե՞րբ կայցես յարբեցութեան, թափ-
եա ի քէն զգինիդ քո, [2]եւ գնա յերե-
15 ակս Տեառն:՝ Եւ պատասխանի եա Աննա
եւ ասէ, Ոչ այդպէս, տէր. այլ կին
վշտագնեալ եմ ես ոչափ, եւ գինի եւ
արբեցութիւն ոչ է իմ արբեալ. եւ հե-
16 դում զանձն իմ առաջի Տեառն: Մի
համարիր զաղախին քո դուստր ժանա-
դի ի բազում սրտմտութենէ եւ ի սխրու-
թենէ իմմէ վարանեալ կամ մինչեւ ցայժմ:
17 Ետ նմա պատասխանի Հեղի եւ ասէ,
Երթ ի խաղաղութիւն, եւ Աստուած Իս-
րայելի տացէ քեզ զամենայն խնդրուածս
18 քո զոր խնդրեցեր ի նմանէ: Եւ ասէ
Աննա, [12]Եգիտ աղախին քո շնորհս ա-
ռաջի քո. եւ գնաց կինն զճանապարհս
իւր, [13]եւ եմուտ ի վանս իւր, եւ կե-
րաւ ընդ առն իւրում եւ խօսեցաւ՝,
եւ երեսք իւր այլ ոչ եւս տխրեցան:
19 Եւ կանխեցին ընդ առաւօտն, երկիր

[8] ԵԲԲ. Եւ ուխտեաց ուխտ եւ ասէ. [9]ԵԲԲ յԵ-ԼԼ. և ոչ մոռացցես զաղախին քո [10]ԵԲԲ. Տեառն զամենայն աւուրս կենացիւրոց, և [11]ԵԲԲ. Հեղի [12]ԵԲԲ. գոցէ [13]ԵԲԲ. եւ կերաւ

պային Տեառն, եւ [1]գնացին զճանապարհս իւրեանց. եւ եմուա Եզկանա ի տուն իւր յԱրիմաթեմ, եւ մերձեցաւ առ Անննա կին իւր", եւ յիչեաց զնա Տէր։
20 Եւ յղացաւ, եւ եղեւ ի ժամանակի աւուրցն եւ ծնաւ որդի, եւ կոչեաց զանուն նորա Սամուէլ, ասէ, Զի ի Տեառնէ [2]Աստուծոյ զօրութեանց" խնդրեցի զնա։
21 Եւ էլ այրն Եզկանա եւ ամենայն տունն նորա զոհել [3]ի Սեղով զզոհ աւուրցն. եւ զուխաս իւր [2]եւ զամենայն տագաւ-
22 նորդս իւր տարաւ"։ Եւ Անննա ոչ էլ գնաց նմա. զի ասաց ցայր իւր, Թէ Մինչեւ [4]ելցէ անդր մանուկս յորժամ հատուցից զնա ի ստենչ", եւ յանդիման լիցի աւագին Տեառն, եւ նստցի անդ մինչեւ
23 ցյաւիտեան։ Եւ ասէ ցնա Եզկանա այր իւր, Արա որ ինչ բարի թուի առաջի աչաց քոց. նիստ աստէն մինչեւ հատուցես զնա ի ստենչ. եւ Տէր հաստատեսցէ [5]որ ինչ ել ի բերանոյ քումմէ"։ Եւ նստաւ կինն եւ սնոյց զորդին իւր՝ մինչեւ հատոյց զնա ի ստենչ։
24 Եւ [6]եկ ընդ նմա ի Սեղով արեամբնեաւ զուարակաւ, եւ պանիւք" եւ արտուաւ նաչհոյ եւ սափրով գինւոյ. եւ [7]մատոյց ի տուն Տեառն ի Սեղով, եւ մանուկն ընդ նոսա, եւ մատուցին առաջի Տեառն.
25 Եւ սպան հայրն նորա զզոհն՝ զոր առնէր աւուրց յաւուրս Տեառն։ Եւ մատոյց մանուկն, եւ սպան զզուարակն վասն փրկութեան մանկանն։ Եւ մատոյց Անննա մայր մանկանն՝ զմանուկն առ Հեղի։
26 Եւ ասէ, Յիս տէր իմ, կենդանի է անձն քո, ես այն կին եմ՝ որ կայի առաջի քո ընդ քեզ՝ կալ յաղօթս առ Տէր
27 վասն մանկանս [8]այսորիկ. եւ" ետ Տէր զխնդրուածս իմ, զոր խնդրեցի ի նմանէ։
28 Եւ տամ դդա փոխ Տեառն զամենայն աւուրս որչափ եւ կեցցէ. եւ եղիցի զա փոխ Տեառն. եւ [9]պային երկիր" անդ Տեառն։

Գլ. Բ

1 Եւ յաղօթս եկաց Անննա եւ ասէ, [10]Հաս-
տատեցաւ սիրտ իմ ի Տէր, եւ բարձ-
բացաւ եղջիւր իմ [11]յԱստուած իմ". ընդարձակեցաւ բերան իմ ի վերայ թշնամեաց իմոց, ուրախ եղէ ի փրկութեան
2 քումմէ։ Զի ոչ գոյ սուրբ իւրիւս զՏէր, [12]եւ ոչ գոյ արդար իւրիւս զԱստուած մեր,
3 եւ ոչ գոյ աւուրբ բաց ի քէն"։ Մի պարծիք եւ մի խօսիք զամբարտաւանս, եւ մի ելցէ մեծարանութիւն ի բերանոյ ձերմէ. զի Աստուած գիտութեանց Տէր, եւ [13]Աստուած պատրաստէ զարուեստս իւր"։
4 Աղեղունք հզօրաց ակարացան, եւ տկարք
5 զգեցան զօրութիւն։ Լցեալք հացիւ [14]նուազեցին, եւ քաղցեալք բնակեցան յերկրի. զի" ամուլն ծնաւ եւթն, եւ
6 բազմածինն նուազեաց յորդւոց։ Տէր մեռուցանէ եւ կենդուցանէ, իջուցանէ ի
7 գժոխս եւ հանէ։ Տէր աղքատացուցանէ եւ մեծացուցանէ, խոնարհեցուցանէ
8 եւ բարձրացուցանէ։ Կանգնէ յերկրէ զանանկն, եւ յարուցանէ զաղքատն յաղբեւոյ, նստուցանել զնոսա ընդ զօրաւորս ժողովրդեան. եւ աթոռ փառաց
9 ժառանգեցուցանէ [15]նոցա։ Տայ զոխտս ոխատուորի, եւ օրհնեաց զամս արդասաւոյ". զի ոչ իւրով զօրութեամբ զօրաւորեսցի
10 նայ այր հզօր։ [16]Տէր տկար առնէ զհակառակորդս իւր, Տէր սուրբ է։ Մի պարծեսցի իմաստունն յիմաստութիւն իւր, եւ մի պարծեսցի հզօրն ի զօրութիւն իւր, եւ մի պարծեսցի մեծատունն ի մեծութիւն իւր. այլ այնու պարծեսցի՝ որ պարծիցին, իմանալ եւ ճանաչել զՏէր, եւ առնել զիրաւունս եւ զարդարութիւն ի մէջ երկրի։ Տէր ել յերկինս եւ որոտաց, եւ [17]ինքն զատ զծագս երկրի, որ արդարն է, տայ զօրութիւն թագաւորաց մերոց", եւ բարձրացուսցէ զեղջիւր
11 օծելոյ իւրոյ։ Եւ [17]թողին զնա անդ առաջի Տեառն, եւ գնացին յԱրիմաթեմ ի տուն իւրեանց։ Եւ մանուկն Սամուէլ կայր ի սպասու երեսաց" Տեառն առաջի
12 Հեղեայ քահանայի։ Եւ որդիքն Հեղեայ

---

[1] ԵՔԲ. դարձան եւ եկին ի տուն իւրեանց ի Հռամա, եւ գիտաց Եզկանա զԱննա զկինն իւր [2] ԵՔԲ. գՆէ-
[3] ԵՔԲ. Տեառն [4] ԵՔԲ. Հատուսցի մանուկս ի ստենչ, եւ տարայց զնա [5] ԵՔԲ. զբան իւր [6] ԵՔԲ. Հան զնա ընդ իւր իբրեւ Հատոյց զնա ի ստենչ երիւք զուարակօք [7] ԵՔԲ. եմոյծ զնա ի տուն Տեառն, ի Սեղով և մանուկն էր տղայ, (25) Եւ սպանին զզուարակն, եւ մատուցին [8] ԵՔԲ. այսորիկ կացի յաղօթս, եւ
[9] ԵՔԲ. երկիր եպագ նա (մանուկն) [10] ԵՔԲ. Յնծացաւ

[11] ԵՔԲ. ի Տէր [12] ԵՔԲ. զի ոչ գոյ բաց ի քէն, եւ ոչ վէմ իբրեւ զԱստուած մեր [13] ԵՔԲ. Նովաւ կշռին գործք [14] ԵՔԲ. եղեն վարձկան, եւ քաղցեալք Հանգեան, մինչեւ [15] ԵՔԲ. Նոցա. զի Տեառն են հիմունք երկրի, եւ ի վերայ Նոցա Հաստատեաց զաշխարհ։ (9) Զոտս երկիւղածաց իւրոց պահէ Նա, եւ ամբարիշտք լռեսցեն ի խաւարի [16] ԵՔԲ. խորտակեսցին Հակառակորդք Տեառն. Նա ի վերայ Նոցա յերկինս որոտայցէ, Տէր դատի զծագս երկրի. տայ զօրութիւն թագաւորին իւրում [17] ԵՔԲ. գնաց Եզկանա ի տուն իւր ի Հռամա. եւ մանուկն կայր ի սպասու

[1]քահանայի որդիք ժանտք , եւ ոչ ճա-
13 նաչէին զՏէր ։ Եւ իրաւունք քահանային
էին առ ի ժողովրդենէն յամենայնէ որ
զոհէր . գայր մանուկ քահանային՝ մինչ-
դեռ եփէր միս , եւ երկբժանի մսահան
14 ի ձեռին իւրում . եւ արկանէր զայն
[2]յաւազան կամ ի սան մին սրնձէ՛ կամ
ի պոյան , եւ զամենայն որ ինչ գայր ի
մսահանն՝ առնոյր իւր քահանայն ։ Ըստ
այսմ օրինակի առնէին ամենայն Իսրայ-
15 ելի որ գային զոհել [1]ի տուն Տեառն՛ ի
Սեղով ։ Եւ մինչչեւ ճարպն ճնճեալ
էր , գայր մանուկ քահանային եւ ասէր
ցայրն որ զոհէրն , Տուր միս խորովելոյ
քահանային , եւ ոչ [3]առնուի ի քէն միս
16 եփեալ ի սանէ՛ ։ Եւ ասէր այրն որ զո-
հէր , Ճնճղիրեսցի նախ ճարպն որպէս
օրէն է , եւ ապա առցես քեզ յամենայնէ
որոյ ևս ցանկասցի անձն քո . եւ նա
ասէր , Ոչ , բայց եթէ արդ տայցես. եւ
17 եթէ ոչ տաս՝ ուժդրէն առից ։ Եւ էին
այն մեղք մեծամեծք յոյժ մանկանցն
առաջի Տեառն[4] ։
18 Եւ Սամուէլ մանուկն սպասէր առաջի
19 Տեառն արկեալ զիւրիս եփուղ ։ Եւ
կրկնոց փոքրիկ առնէր նմա մայրն իւր ,
եւ տանէր նմա [5]աւուրց յաւուրս՛ յելա-
նել ընդ առն իւրում զոհել զղոհ [6]աւուրցն։
20 Եւ օրհնեալ Հեղի զԵղկանա եւ զկին
նորա , եւ ասէ , Հաստուսցէ քեզ Տէր
զաւակ ի կնոջէդ յայդմանէ փոխանակ
փոխոյն զոր եառեր Տեառն . եւ [7]դնայց
21 այրն ի տեղի իւր՛ ։ Եւ այց արար Տէր
Աննայի , եւ յղացաւ եւ ծնաւ եւս երիս
ուստերս եւ [8]երիս դստերս . եւ մնաց-
եալ մանուկն Սամուէլ աւուրս Տեառն։
22 Եւ Հեղի ծերացեալ էր յոյժ , եւ լսէր
զամենայն ինչ զոր առնէին որդիք նո-
ցա ընդ որպիսին Իսրայելի , եւ որպէս
ննջեցուցանէին զկանայս ուխտաւորս առ
23 դրան խորանին վկայութեան ։ Եւ ասէ
ցնոսա , Ընդէ՞ր առնէք ըստ բանին ըստ
այնմիկ , զոր ես լսեմ [9]բանս ի բերանոյ
24 ամենայն ժողովրդեանն [1]Տեառն ։ Մի՛,
որդեակք , զի ոչ է բարւոք լուրն զոր
ես լսեմ , [10]առ ի չծառայելոյ ժողովրդ-
25 եան Տեառն ։ Զի եթէ մեղանչելով
մեղանչիցէ այր առն , [11]կացցեն յաղօթս
վասն նորա առ Տէր՛. եւ եթէ Տեառն
մեղանչիցէ , ո՞վ կացցէ յաղօթս վասն
նորա ։ Եւ ոչ լսէին ձայնի հօրն իւրեանց,
զի կամելով կամէր Տէր եղծանել զնոսա։
26 Եւ մանուկն Սամուէլ երթայր եւ մե-
ծանայր , եւ հաճոյ էր Աստուծոյ եւ
մարդկան ։
27 Եւ եկն [12]հրեշտակ Աստուծոյ առ Հեղի
եւ ասէ , Այսպէս ասէ Տէր . Յայտնելով
յայտնեցայ ամենայն տան հօր քո մինչ-
դեռ էին նոքա յերկրին եգիպտացւոց
28 ծառայք տան Փարաւոնի . Եւ ընտրեցի
զտուն հօր քո յամենայն [13]գաւազանացն
Իսրայելի քահանայանալ ինձ , ելանել
առ սեղանն իմ , արկանել խունկս եւ
կրել զեփուդն առաջի իմ . եւ եառ տան
հօր քո զամենայն պատ ի հրոյն ողջոյն
29 Իսրայելի [1]ի կերակուր ։ Եւ ընդէ՞ր [14]հայե-
ցար ի խունկս իմ եւ ի զոհս իմ ժպիրդ
ակամբ՛, եւ փառաւորեցեր զորդիսն քո
քան զիս , [15]օրհնելով զպատուդ ամենայն
30 զոհիցն Իսրայելի որ է առաջի իմ՛։ Վասն
այդորիկ այսպէս ասէ Տէր Աստուած
Իսրայելի . Ասացի թէ տուն քո եւ տուն
հօր քո չրջեսցին առաջի իմ մինչեւ ցյա-
ւիտեան . եւ արդ ասէ Տէր , Քաւ լիցի
ինձ . այլ զփառաւորիչս իմ փառաւորե-
սցիմ , եւ որ արհամարհէն զիս՝ անար-
31 գեսցի ։ Ահա աւուրք եկեսցին եւ [16]սա-
տակիցիմ [17]զզաւակ քո եւ [17]զզաւակ
տան հօր քո , եւ մի՛ եղիցի ծեր ի տան
32 քում ։ Եւ [18]հայեսցիս սակս կողկողագին
յամենայն բարութիւնս զոր արասցէ Տէր
Աստուած Իսրայելի՛, եւ մի՛ եղիցի ծեր
33 ի տան քում զամենայն աւուրս ։ Եւ այր
ոչ սատակեցից ի սեղանոյ իմմէ , առ ի
սորելոյ աչաց [19]լերոյ եւ մաչելոյ զանձն
[20]նորա . եւ ամենայն մնացորդք տան քո
34 անկցին [21]սրով արանց՛։ Եւ այն նշա-
նակ լիցի քեզ որ եկեսցէ ի վերայ երկո-
ցունն որդւոցդ փոց Ովփնեայ եւ Փենեէսի .
35 ի միում աւուր մեռցին երկոքեան ։ Եւ

[1]ՅԵբբ. գաւեսք [2]ԵբբՀ. ի կամ սայն կամ ի սան կամ ի տապակ [3]ԵբբՀ. առնեսցէ ի քէն միս եփեալ, այլ ողջ [4]ԵբբՀ.եսէին յաւելու. զի արհամարհէին աքան զզոհ Տեառն [5]Ա.յունգ՝ ամբաստ ամէ [6]Ա.յունգ՝ տարեկանացն [7]ԵբբՀ. դնացին ի տեղի իւրեանց [8]ԵբբՀ. երկուս [9]ԵբբՀ. զբանս ձեր չարս [10]ԵբբՀ. տալ անսասել ժողովրդեանն Տեառն [11]ԵբբՀ. եւ դասեսցի գնա Աստուած [12]ԵբբՀ. այր [13]Կամ, ցեղիցն [14]ԵբբՀ. անարգեք զզոհս իմ եւ զնուէրս իմ զորս պատուիրեցի տան բնակութեանս [15]ԵբբՀ. պարարել զձեզ ընտիր ընտիր զոհիւք Իսրայելի, ժողովրդեան իմոյ [16]ԵբբՀ. խորտակեցից [17]ԵբբՀ. զբազուկ տեսցես զտառապանս բնակութեան իմոյ յամենայնի յորս վայելեսցէ Իսրայէլ [19]ԵբբՀ. քոց [20]ԵբբՀ. քո [21]ԵբբՀ. յերիտասարդութեան

յարուցից ինձ քահանայ հաւատարիմ, որ զամենայն ինչ որ ի սրտի իմում եւ յանձին իմում արասցէ. եւ չինեցից նմա տուն հաւատարիմ, եւ չրկնասցի առաջի
36 օծելոյ իմոյ զամենայն աւուրս։ Եւ եղիցի ամենայն որ մնացեալ է ի տան քումմէ, եկեսցէ երկիր սրազանել նմա զանգի միով ոսկեղծոյ եւ նկանակի միոյ հացի, եւ ասիցէ, Ընկեա զիս ¹ի տեղի մի քահանայութեան քո", զի կերայց հաց։

Գլ. Գ

1 Եւ մանուկն Սամուէլ կայր ի սպասու Տեառն առաջի Հեղեայ ²քահանայի. եւ բան Տեառն պատուական էր յաւուրսն յայնոսիկ, եւ ոչ զոյր տեսիլ որ գուշակէր։
2 Եւ եղեւ յաւուր յայնմիկ Հնձէր Հեղի ի տեղւոջ իւրում. եւ աչք նորա սկսան
3 ծանրանալ եւ ոչ կարէր տեսանել. Եւ ճրագն Աստուծոյ չիւ հաս էր անցանել, եւ Սամուէլ Հնձէր ի տաճարին Տեառն
4 ուր էր տապանակն Աստուծոյ։ Եւ կոչեաց ³Տէր եւ ասէ, Սամուէլ, Սամուէլ.
5 եւ ասէ", Առաւիկ եմ։ Եւ ընթացաւ առ Հեղի եւ ասէ, Առաւիկ եմ ես, զի կոչեցեր զիս։ Եւ ասէ, ոչ կոչեցի զքեզ, դարձիր անդրէն եւ հնձեա։ Եւ գարձաւ
6 անդրէն եւ հնձեաց։ Եւ յաւել Տէր միւսանգամ ⁴կոչել, եւ ասէ, Սամուէլ, Սամուէլ". եւ յարեաւ Սամուէլ չոգաւ առ Հեղի ²երկրորդ անգամ" եւ ասէ, Առաւիկ եմ, զի կոչեցեր զիս։ Եւ ասէ, ոչ կոչեցի զքեզ, որդեակ իմ, դարձիր անդ-
7 րէն եւ հնձեա։ Եւ ⁵Սամուէլ նախայծանօթ էր Աստուծոյ", եւ չեւ եւս յայտ-
8 նեալ էր նմա բան Տեառն Եւ յաւել Տէր միւս անգամ կոչել զՍամուէլ չերրորդում նուագին. եւ յարեաւ չոգաւ առ Հեղի եւ ասէ, Առաւիկ եմ ես, զի կոչեցեր զիս։ Եւ իմացաւ Հեղի թէ Տէր
9 կոչէ զմանուկն։ Եւ ասէ Հեղի ցՍամուէլ, Դարձիր անդրէն եւ հնձեա, ²որդեակ. եւ եղիցի եթէ կոչեսցէ զքեզ, ասասցես՝ Խօսեաց, Տէր, զի լսէցէ ծառայ քո։ Եւ գնաց Սամուէլ եւ հնձեաց
10 ի տեղւոջ իւրում։ Եւ եկն Տէր եկաց ի վերայ եւ կոչեաց զնա որպէս միանգամն եւ միւսանգամ, Սամուէլ, Սամուէլ. եւ ասէ Սամուէլ, Խօսեաց, Տէր,
11 զի լսէցէ ծառայ քո։ Եւ ասէ Տէր ցՍամուէլ, Ահա ես առնեմ զգանս իմ ի մէջ Իսրայելի, որպէս զի ամենայնի որ լսիցէ զնոսա՝ հնչեսցեն երկու քեան ականջք նորա։
12 Յաւուր յայնմիկ յարուցից ի վերայ Հեղեայ զամենայն ինչ զոր խօսեցայ ի վերայ տան նորա. սկսայց եւ կատարեցից.
13 Որպէս պատմեցի նմա եթէ խնդրեցից վրէժ ի տանէ նորա մինչեւ յաւիտեան վասն ⁶անօրէնութեան որում գոր նորա, զի հայհոյէին զԱստուած" որդիք նորա, եւ
14 նա ոչ խրատէր զնոսա։ ⁷Եւ ոչ այնպէս. այլ" երդուայ առանն Հեղեայ, եթէ ոչ քաւեսցի անօրէնութիւն տանն Հեղեայ ⁸խնկովք եւ զոհիւք մինչեւ յաւիտեան։
15 Եւ հնձեաց Սամուէլ մինչեւ ցառաւօտն, ²եւ կանխեաց ընդ առաւօտն" եւ երաց զդուռս տանն Տեառն. եւ Սամուէլ
16 երկեաւ պատմել զտեսիլն Հեղեայ։ Եւ ասէ Հեղի ցՍամուէլ, Սամուէլ, որդ-
17 եակ. եւ ասէ, Առաւիկ ես։ Եւ ասէ, Զինչ է բանն զոր խօսեցաւ ընդ քեզ. մի թաքուցանիր յինէն. օն եւ օն արասցէ ընդ քեզ Աստուած, եւ օն եւ օն յաւելցէ՝ եթէ թաքուցանես յինէն բան մի յամե-
18 նայն բանից զոր խօսեցաւցոյց յականջս քո։ Եւ պատմեացնոմա Սամուէլ զամենայն բանսն, եւ ոչ թաքոյց ի նմանէ։ Եւ ասէ Հեղի, ⁹Տէր որ ինչ բարի է առաջի իւր ինքն արասցէ։
19 Եւ մեծացաւ Սամուէլ, եւ էր Տէր ընդ նմա, եւ ոչ անկաւ յամենայն բա-
20 նից նորա ի գետին։ Եւ գիտաց ամենայն Իսրայէլ ի Դանայ մինչեւ ցԲերսաբէէ թէ հաւատարիմ է Սամուէլ ի մարգարէ
21 Տեառն։ Եւ յաւել Տէր ¹⁰գուշակել ի Սիլով, թէ" յայտնեցաւ Տէր Սամուէլի ի Սիլով ըստ բանին Տեառն. ²եւ հաւատարիմ եղեւ Սամուէլ լինել ի մարգարէ Տեառն յամենայն Իսրայէլի ի ծագաց երկրին մինչեւ ի ծագս։ Եւ Հեղի ծերացեալ էր յոյժ, եւ որդիք նորա երթալն երթայով եւ չար էր ճանապարհն նոցա։"

Գլ. Դ

1 Եւ եղեւ ¹¹ընդ աւուրսն ընդ այնոսիկ, ժողովէին այլազգիքն ի վերայ" Իսրայելի.

---

¹ԵՔԸ. ի մին ի քահանայութեանց ²ՅԵՔԸ. պակաս ³ԵՔԸ. Տէր զՍամուէլ. եւ նա ասէ ⁴ԵՔԸ. կոչել, Սամուէլ ⁵ԵՔԸ. Սամուէլ չեւ եւս գիտէր զՏէր

⁶ԵՔԸ. անօրէնութեանն զոր գիտաց, եթէ անէծն անէծս անձանց ⁷ԵՔԸ. վասն այնորիկ· ⁸ԵՔԸ. Նուիրօք ⁹ՅԵՔԸ. Տէր է նա· ¹⁰ԵՔԸ. երեւել ի Սիլով· զի ¹¹ԵՔԸ. բանն Սամուէլի ամենայն

եւ ել Իսրայէլ ընդդէմ [1]նոցա ի պատերազմ, եւ բանակեցան յԱբենեզեր. եւ
2 այլազգիքն բանակեցան յԱփեկ։ եւ եաս կաւէլն այլազգիքն ընդդէմ Իսրայէլի, եւ խմբեցաւ պատերազմն, եւ պարտեցաւ այր Իսրայելի յերեսաց այլազգեացն, եւ հարան ի ճակատու անդ չորք հազարք
3 արանց։ եւ եկն զօրն ի բանակն. եւ ասեն ծերքն Իսրայելի, Ընդէ՞ր արգելաք պարտեաց զմեզ Տէր այսօր առաջի այլազգեացն. ասցուք առ մեզ ի Սելովայ զաւազանակ ուխտին [2]Աստուծոյ մերոյ", եւ եկեսցէ ի մէջ մերում եւ փրկեսցէ զմեզ
4 ի ձեռաց թշնամեաց մերոց։ եւ առաքեաց ժողովուրդն ի Սելով, եւ առին անտի զաւազանակ ուխտին Տեառն զօրութեանց՝ որ նստի ի քերովբէս. եւ երկոքեան որդիքն Հեղեայ ընդ տապանակի ուխտին Աստուծոյ՝ Ոփնի եւ Փինեէս զնացին։
5 եւ եղեւ իբրեւ եկն տապանակ ուխտին Տեառն ի բանակն, աղաղակեաց ամենայն Իսրայէլ մեծաձայն,
6 եւ հնչեաց երկիրն։ եւ լուան այլազգիքն զբարբառ ալաղակին, եւ ասեն այլազգիքն, Ընդէ՞ր է բարբառ մեծի աղաղակին այնորիկ ի բանակի Եբրայեցւոցն. եւ գիտացին թէ տապանակն
7 Տեառն եկն ի բանակն։ եւ երկեան այլազգիքն եւ ասեն, [3]Ա՛ն Աստուածք նոցա եկին ի բանակն. տագնեցո զմեզ, Տէր, այսօր". վայ մեզ զի ոչ եղեւ [4]մեզ
8 այսպիսի յերէկ եւ յեւանդ. վայ մեզ, եւ ո՞ ապրեցուսցէ զմեզ ի ձեռաց Աստուածոցն հզօրացն այնոցիկ. այն Աստուածք են որ հարին զեգիպտացս ամենայն [5]հարուածովք, եւ յամենայն անա-
9 պատն"։ Քաջայարուք եւ լերուք արք, ո՛ այլազգիք, զուցէ ծառայիցէք Եբրայեցւոցն զոր օրինակ ծառայեցին ձեզ. լերուք արք եւ պատերազմիցայք ընդ նոս-
10 ա։ եւ պատերազմեցան ընդ նոսա, եւ վախեաւ այր Իսրայելի իւրաքանչիւր ի յարկս իւրեանց. եւ եղեւ հարուածք մեծամեծք յայժ, եւ անկան յԻսրայէլէ
11 երեսուն հազար [6]պատուց. եւ տապանակն Աստուծոյ առաւ, եւ երկոքեան որդիքն Հեղեայ մեռան, Ոփնի եւ Փինեէս։
12 Եւ ընթացաւ այր [7]Յամինացի ի բա-

նակէ անտի, եւ եկն ի Սելով յաւուր յայնմիկ. եւ ձորձք իւր պատառեալք
13 եւ հող զգլխով իւրով։ եւ եկն, եւ ահա Հեղի նստէր աթոռով իւրով առ դրանն, եւ դիտէր զճանապարհն. զի էր սիրտ նորա տագնապալ վասն տապանակին Աստուծոյ. եւ եմուտ այրն զոյժ արկանել ի քաղաքին, եւ աղաղակեաց
14 [8]քաղաքն։ եւ լուաւ Հեղի զձայն աղաղակին եւ ասէ, Զի՞նչ է ձայն ազդակին այնորիկ. եւ այրն փութացաւ
15 մատնել եւ տալ գոյժ Հեղեայ։ եւ Հեղի էր ամաց քննասնն եւ ութից, եւ աչք իւր վաստակ էին եւ ոչ տեսանէր. [9]եւ ասէ Հեղի ցարան որ չորք կային զնովաւ, Զի՞նչ է բարբառ աղաղակին այ-
16 նորիկ։ եւ այրն փութացեալ եմուտ առ Հեղի եւ ասէ ցնա", Ես եմ որ եկի ի բանակէ անտի, եւ ես եմ որ փախեայ այսօր ի պատերազմէն. եւ ասէ, Զի՞նչ
17 գոյծ գործեցաւ, որդեակ, պատմեաց[ին]։ Պատասխանի եւ [10]պատանին եւ ասէ, Փախեաւ այր Իսրայելի յերեսաց այլազգեացն, եւ հարուածք մեծամեծք եղեն ի ժողովրդեանն. եւ երկոքեան որդիքն քո մեռան, Ոփնի եւ Փինեէս, եւ տա-
18 պանակն Աստուծոյ առաւ։ Եւ եղեւ իբրեւ յիշեաց զտապանակն Աստուծոյ, անկաւ Հեղի յաթոռոյն յետս առ դրանն, եւ բեկաւ ողն նորա եւ մեռաւ, զի այր ծեր էր եւ ծանրացեալ. եւ նա դատեաց զԻսրայէլ ամս [11]քսան։
19 Եւ նոր նորա, կին Փինեէսի, յղի էր մերձ ի ծնունդս. լուաւ լուաւ զգոյժն եթէ առաւ տապանակն Աստուծոյ, եւ եթէ մեռաւ սկեսրայրն նորա եւ այր իւր,
[12]նեաց եւ ծնաւ, զի պատեցան զնովաւ
20 երկունք իւր։ Եւ ի ժամանակի իւրում մեռանէր. եւ ասեն ցնա կանայքն որ չորչ գնային կային, Մի երկնչիր, զի ուստր ծնար. եւ ոչ նա պատասխանի,
21 եւ ոչ իմացաւ սիրտ նորա։ Եւ [13]կոչեցին զմանուկն Վայքաբովթ". ի վերայ տապանակին Աստուծոյ եւ ի վերայ սկեսրայրին նորա եւ ի վերայ առն իւրոյ։
22 Եւ [14]ասեն, Բարձեալ են փառք Իսրայելի յառնուլ տապանակին Տեառն, [4]եւ

[1] ԵԲԲ. Փղշտացւոց (այլազգեաց) [2] ԵԲԲ. Տեառն [3] ԵԲԲ. Են Աստուած ի բանակն. եւ ասեն [4] ՅԵԲԲ. գոլոյ [5] ԵԲԲ. Հարուածովք յանապատին [6] ԵԲԲ. Հետեւակ [7] ԵԲԲ. Բենիամինեան
[8] ԵԲԲ. ամենայն քաղաքն [9] ԵԲԲ. (16) Եւ ասէ այրն ցՀեղի [10] ԵԲԲ. պատգամաւորն [11] ԵԲԲ. քառասուն [12] ԵԲԲ. խոնարհեցաւ [13] ԵԲԲ. կոչեաց զմանուկն Իքաբովթ. եւ ասէ, Բարձան փառք Իսրայելէ [14] ԵԲԲ. ասէ

վան մեռանելոյ սկեսրէին նորա եւ առն իւրոյ։"

Գլ. Ե

1 Եւ այլազգիքն առին զտապանակն Աս-
տուծոյ, եւ տարան զնա յԱբենեզերայ
2 յԱզովտոս։ Եւ առին այլազգիքն զտա-
պանակն [1]Տհառն եւ տարան ի տուն
Դագոնայ, եւ կանգնեցին զնա առ Դա-
3 գոնաւ։ Եւ կանխեցին Ազովտացիքն ի
վաղիւ անդր, [2]եւ մանն ի տուն Դա-
գոնայ," եւ տեսին զԴագոն կոծանեալ
ի վերայ երեսաց իւրոց ի գետին առաջի
տապանակին Տհառն. եւ կանգնեցին
զԴագոն, եւ կացուցին զնա ի տեղւոջ
իւրում։ [2]Եւ ծանրացաւ ձեռն Տհառն ի
վերայ Ազովտացւոցն եւ չարչարեաց
զնոսա, եւ եհար զնոսա յերաստանս իւր-
եանց, զԱզովտոս եւ զսահմանս նորա։"
4 Եւ եղեւ իբրեւ կանխեցին ընդ առաւօտն
ի վաղիւ անդր, եւ ահա Դագոն կործա-
նեալ կայր ի վերայ երեսաց իւրոց յեր-
կիր առաջի տապանակի ուխտին Տհառն.
եւ գլուխն Դագոնայ [2]եւ երկոքին թաթք
ոսից նորա խորտակեալք եւ ցրուեալք
ընդ մէջ զետինն", եւ երկոքին գաս-
տակք ձեռաց նորա անկեալք գետնովքն.
բայց միայն [3]ողնայարն Դագոնայ մնաց-
5 եալ էր։ Վասն այնորիկ ոչ կոխեն քու[մ]ք
Դագոնայ եւ ամենայն որ մտանէ ի տուն
Դագոնայ՝ գետնամն առին Դագոնայ յԱ-
զովտոս մինչեւ ցայսօր. [2]այլ քայլելով
6 քայլեն եւ անցանեն։" Եւ ծանրացաւ
ձեռն Տհառն ի վերայ [4]Ազովտայ, եւ
[5]ած ի վերայ նոցա հարուածս յերաս-
տանս, եւ եռացոյց մկունս յանդս նոցա.
եւ եղեւ չշուկ մեծ մահու ի քաղաքին"։
7 Եւ տեսին արք Ազովտայ [6]թէ այն
այնպէս է, ասեն, Ոչ նստցի տապտ-
նակն [6]Աստուծոյ առ մեզ, զի ծանրա-
ցաւ ձեռն նորա ի վերայ մեր եւ ի վե-
8 րայ Դագոնայ աստուծոյն մերոյ։ Եւ ա-
ռաքեցին ժողովեցին զամենայն նախա-
րարս այլազգեացն առ ինքեանս, եւ ա-
սեն, Զի՞նչ արասցուք տապանակին Ա-
ստուծոյ Իսրայելի. եւ ասեն [7]Գնթացիքն,
Փոխեսցի" տապանակն Աստուծոյ Իսրա-

[1] ԵԲէ. Աստուծոյ [2] ԵԲէ. գ-ի-ե [3] ԵԲէ. Դագո-
(ձկնիկն) մնացեալ էր ի վերայ նորա [4] ԵԲէ.
Ազովտացւոց, եւ սատակեաց զնոսա [5] Կ՚ա,
եհար զնոսա պատմամբ Թանչից, զԱզովտոս եւ
զսահմանս նորա [6] ԵԲէ. Աստուծոյ Իսրայելի
[7] ԵԲէ. Ի Գեթ փոխեսցի

յելի [2]առ մեզ". Եւ փոխեցաւ տապա-
9 նակն Աստուծոյ [8]ի Գէթ։ Եւ եղեւ յետ
փոխելոյ նորա անդր, լինէր ձեռն Տհառն
ի վերայ քաղաքին եւ խռովութիւն մեծ
յոյժ. եւ [3]չարչարեաց գարս քաղաքին
ի փոքրէ մինչեւ ցմեծամեծս, եւ [10]եհար
զնոսա յերաստանս իւրեանց. եւ արա-
րին Գեթացիքն իւրեանց հրատանս"։
10 Եւ առաքեցին զտապանակն Աստու-
ծոյ [11]յԱկարոն. եւ եղեւ ի մտանել տա-
պանակին Աստուծոյ [11]յԱկարոն, զրո-
ւոք բարձին [12]Ակարոնացիքն եւ ասեն,
[13]Վնդէ՞ր դարձուցէք զտապանակն Աս-
տուծոյ Իսրայելի առ մեզ սպանանել
11 զմեզ եւ զժողովուրդս մեր։ Եւ առա-
քեցին եւ ժողովեցին զամենայն նա-
խարարս այլազգեացն, եւ ասեն, Ա-
ռաքեցէք զտապանակն Աստուծոյ Իսրա-
յելի եւ նստցի ի տեղւոջ իւրում, եւ
մի՛ սպառնասցէ զմեզ եւ զժողովուրդս
մեր. զի եղեւ չշուկ մահու յամենայն
[14]քաղաքին ծանրացեալ յոյժ յոյժ հետ
եհաս տապանակն Աստուծոյ Իսրայելի
12 անդր"։ Եւ [15]կենդանիքն որ ոչ էին մեռ-
եալ՝ հարան [16]ցերաստանս իւրեանց", եւ
ել ազաղակ քաղաքին յերկինս։

Գլ. Զ

1 Եւ էր տապանակն Տհառն յանդաս-
տանին այլազգեաց վեցիւն ամիս. [2]եւ
2 եռացոյց յերկիր նոցա մուկն։" Եւ կո-
չեցին այլազգիքն զքուրմսն եւ զիզձան
[2]եւ զգէտս իւրեանց" եւ ասեն, Զի՞նչ
արասցուք տապանակին Տհառն, ցու-
ցէք մեզ ի՛ւ առաքեսցուք զնա ի տեղի
3 իւր։ Եւ ասեն եթէ առաքիցէք զտա-
պանակն Աստուծոյ Իսրայելի [2]ուխտին
Տհառն", մի՛ առաքիցէք զնա ունայն,
այլ տալով տայիք նմա [17]զհատուածոյն,
եւ ապա բժշկեսջիք եւ [18]հաչանեսցի ընդ
ձեզ. գուցէ" ոչ վերանայցէ ձեռն նորա
4 ի ձէնջ։ Եւ ասեն, Զի՞նչ տայցեմք [19]ընդ
գանձն նորա". եւ ասեն, Ըստ թուոյ
նախարարացն այլազգեաց հինգ [20]կրաս-
տանս ոսկիս արարէք եւ հինգ մուկն

[8] ԵԲէ. Իսրայելի [9] ԵԲէ. եհար [10] ԵԲէ. Երես-
ցան ի նոսա պատմութիւնք Թանչից [11] ԵԲէ. յԱկ-
կարոն [12] ԵԲէ. Ակկարոնացիքն [13] ԵԲէ. Դարձու-
ցին [14] ԵԲէ. քաղաքին. ծանրացեալ էր յոյժ ձեռն Աս-
տուծոյ անդ [15] ԵԲէ. արքն [16] Կ՚ա, պատմամբ
Թանչից [17] ԵԲէ. զգանձանացն [18] ԵԲէ. յայտնի
լիցի ձեզ թէ ընդէր [19] ԵԲէ. վասն զգանձանացն
[20] Կ՚ա, պատմութիւն Թանչից

ոսկի . զի [1]հարուածք են ի ձեզ եւ յիշ-
5 խանս ձեր եւ ի ժողովրդեանդ"։ Եւ արդ
արարէք զպատկերս [2]երաստանաց ձե-
րոց , եւ զմանուելիսն մկանց ձերոց՝
ապականչաց երկրին . եւ տուք [3]Տեառն
փառս , զի" թեթեւացուսցէ զձեռն իւր
ի ձէնջ եւ ի դից ձերոց եւ յերկրէ ձերմէ։
6 Եւ ընդէ՞ր ծանրացուցանէք զսիրտս ձեր,
որպէս ծանրացոյց եգիպտոս եւ Փարա-
ւոն զսիրտս իւրեանց . ո՞չ ապաքէն [4]յոր-
ժամ խազաց նոքօք", ապա արձակեցին
7 զնոսա եւ գնացին։ Եւ արդ առէք եւ
արարէք սայլ մի նոր , եւ երկուս երինջս
[5]անդրանկածինս առանց որոյզ", եւ
լծեցէք զերինջսն ի սայլին , եւ քեզեցէք
8 զորդիսն ի հետոյ նոցա ի տուն . Եւ ա-
ռէք զտապանակն Տեառն եւ դիք զնա
ի վերայ սայլին , եւ զանօթսն զոսկիս
զոր տայցէք նմա [6]ընդ զանկն", եւ դի-
ջիք [7]ի քովէն արգոք" ի կողմանէ նո-
ա , եւ առաքեսջիք զնա եւ [8]վարեսջիք
9 զնա եւ" երթիցէ . Եւ տեսջիք եթէ ի
մուտս սահմանաց իւրոց երթիցէ ընդ
Բեթսամիւս՝ նա արար մեզ զչարիսս մե-
ծամեծս զայսոսիկ. ապա թէ ոչ՝ գիտաս-
ցուք եթէ ոչ ձեռն նորա եկն ի վերայ
մեր, այլ [9]վրիպակ իմն գործեցաւ" ի մեզ։
10 Եւ արարին [10]այլազգիքն այնպէս , եւ
առին երկուս երինջս [11]անդրանկածինս
եւ լծեցին զնոսա ի սայլին , եւ զորդիս
11 նոցա արգելին ի տան ։ Եւ եդին զտա-
պանակն Տեառն ի վերայ սայլին , եւ
[12]զքուրձն արգոք" եւ զմկունսն ոսկիս
եւ զպատկերս [13]երաստանաց իւրեանց ։
12 Եւ ուղեցան երինջքն ընդ ճանապարհ
մահիցն Բեթսամիւսայ , ընդ մի չաւիղ
երթային եւ [14]վաստակէին եւ ոչ խոտո-
րէին ոչ յաջ եւ ոչ յահեակ . եւ նախա-
րարք այլազգեացն երթային զնոսա [15]նո-
ա մինչեւ ի սահմանս Բեթսամիւսայ ։
13 Եւ որ ի Բեթսամիւսն էին՝ հնձէին հունձս
ցորենոյ ի հովիտսն . եւ ամբարձին զաչս
իւրեանց եւ տեսին զտապանակն [8]Տեառն,
14 եւ ուրախ եղեն [16]ընդ առաջ նորա"։ Եւ

[1]ԵԲԲ. մի Հարուած է ամենեցուն ձեզ եւ նախա-
րարաց ձերոց [2]Կամ. պատմանց թանչից [3]ԵԲԲ.
Աստուծոյ Իսրայէլի փառս . Թերեւս [4]Կամ,
զարմանալիս արար ի նոսա [5]ԵԲԲ. սահատուս ,
յորոց վերայ չիցէ եղեալ լուծ [6]ԵԲԲ. վասն
յանցանացն [7]ԵԲԲ. յարկեղ [8]ՅԵԲԲ. պահեսջ
[9]ԵԲԲ. պատահար իմն եղեւ [10]ԵԲԲ. աքեն [11]ԵԲԲ.
սահատուս [12]ԵԲԲ. զարկղն [13]Կամ, պատմանց
թանչից [14]ԵԲԲ. քառաչէին [15]ԵԲԲ. նոցա
[16]ԵԲԲ. իբրեւ տեսին

սայլն եմուտ յանդաստանն Յեսուայ Բեթ-
սամիւսացւոյ . եւ [17]կանգնեցին անդ առ
նովաւ" վէմ մի մեծ , եւ պատառեցին
զփայտ սայլին , եւ զերինջսն հանին
15 յողջակէզս Տեառն ։ Եւ Ղեւի տացէք հա-
նին զտապանակն Տեառն , եւ [18]զքուրձն
արգոք ընդ նմին եւ զանօթսն ոսկիս որ
ի նմա", եւ եդին ի վերայ վիմին մեծի.
եւ արք Բեթսամիւսայ մատուցին ող-
ջակէզս , եւ զոհեցին զոհս յաւուր յայն-
16 միկ Տեառն ։ Եւ հինգ նախարարքն այլ-
ազգեաց տեսանէին , եւ դարձան յԱկ-
17 կարոն յաւուր յայնմիկ։ Եւ [19]երաստանքն
ոսկիք զոր հատուն այլազգիքն Տեառն [20]ընդ
զանին , մին Ազովտայ էր եւ մին Գազայ
եւ մին Ասկաղոնի եւ մին Գեթայ եւ մին
18 Ակկարոնի"։ Եւ մկունքն ոսկիք ըստ
թուոյ ամենայն քաղաքացն այլազգեաց,
հինգկուսն նախարարացն , յամուր քա-
զաքաց՝ մինչեւ ցաւանս [21]փերեզացւոյն ,
մինչեւ ցվէմն" յորոյ վերայ եդին զտա-
պանակ ուխտին Տեառն , մինչեւ ցայսօր
յանդին Յեսուայ Բեթսամիւսացւոյ ։
19 Եւ [22]ոչ հաճեցան որդիքն Յեքոնեայ
ընդ այս Բեթսամիւսացւոցն , զի տեսին
զտապանակն Տեառն . եւ" եհար ի նո-
ցանէ յիսուն հազար եւ եւթանասուն
այր . եւ սուգ առ ժողովուրդն , զի ե-
հար Տէր ի ժողովրդեանն հարուածս մե-
20 ծամեծս յոյժ ։ Եւ ասեն արք Բեթսա-
միւսացիք , Ո՞ կարասցէ [23]չբնկել առաջի
Տեառն Աստուծոյ սրբոյս այսորիկ . եւ
արդ առ ո՞ ելանիցէ [8]տապանակ Տեառն"
21 ի մէնջ ։ Եւ առաքեցին հրեշտակս առ
բնակիչս Կարիաթարիմայ եւ ասեն, Դար-
ձուցին այլազգիքն զտապանակն Տեառն ,
իջէք եւ հանէք զնա առ ձեզ ։

Գլ . Է

1 Եւ եկին արք Կարիաթարիմայ , եւ հա-
նին անտի զտապանակ ուխտին Տեառն,
եւ տարան զնա ի տուն Աբինադաբայ
որ ի բլրին . եւ զԵլիազար զորդի նորա
սրբեցին պահել զտապանակ ուխտին
2 Տեառն ։ Եւ եղեւ յօրէ յորմէ հետէ էր

[17]ԵԲԲ. եկաց անդէն. եւ էր անդ [18]ԵԲԲ. զարկղն
ընդ նմին, յորում էին անօթքն ոսկիք [19]ԵԲԲ.
այսորիկ են պատմանք թանչից [20]ԵԲԲ. վասն
յանցանացն . վասն Ազովտայ մի, վասն Գազայ
մի, վասն Ասկաղոնի՝ մի, վասն Գեթայ՝ մի, վասն
Ակկարոնի՝ մի [21]ԵԲԲ. անպարիսպս եւ մինչեւ
ցվէմն մեծ [22]ԵԲԲ. եհար զարան Բեթսամիւսայ ,
զի հայեցան ի տապանակ անդր Տեառն . եւ
[23]ԵԲԲ. կալ

տապանակն ի կարիաթարիմ՝ բազմա-
ցան աւուրքն եւ եղեն ամք քսան. եւ
[1]հայեցաւ ամենայն տունն Իսրայէլի զկնի
3 Տեառն։ Եւ խօսեցաւ Սամուէլ ընդ ա-
մենայն տունն Իսրայէլի եւ ասէ, Թէ
յամենայն սրտէ ձերմէ դարձեալ էք առ
Տէր, ի բաց արարէք զաստուածան օ-
տարոտիս ի միջոյ ձերմէ եւ [2]զանտառան,
եւ պատրաստեցէք զսիրտս ձեր առ Տէր,
եւ ծառայեցէք նմա միայնոյ, եւ փրկեսցէ
4 զձեզ ի ձեռաց այլազգեացն։ Եւ ի բաց
արարին որդիքն Իսրայէլի զԲահաալիմն
եւ [3]զանտառան Աստարտեայ", եւ ծա-
5 ռայեցին "Նմա միայնոյ։ Եւ ասէ Սա-
մուէլ, Ժողովեցէք զամենայն Իսրայէլ
ի Մասփա, եւ կացից յաղօթս վասն
6 ձեր առ Տէր։ Եւ ժողովեցան ի Մասփա
եւ հանին ջուր, եւ [5]հեղեն յերկիր ա-
ռաջի Տեառն. եւ պահեցին յաւուր յայն-
միկ, եւ ասեն, Մեղաք առաջի Տեառն։
Եւ դատեցաւ Սամուէլ զորդիսն Իսրա-
յէլի ի Մասփա։
7 Եւ լուան այլազգիքն եթէ ժողովե-
ցան որդիքն Իսրայէլի ի Մասփա, եւ
ելին նախարարք այլազգեացն ի վերայ
Իսրայէլի. եւ լուան որդիքն Իսրայէլի
8 եւ երկեան յերեսաց այլազգեացն։ Եւ
ասեն որդիքն Իսրայէլի ցՍամուէլ, Մի՛
դադարեր ի գոչելոյ վասն մեր առ Տէր
Աստուած [6]քո, եւ փրկեսցէ զմեզ ի ձե-
9 ռաց այլազգեացն։ Եւ առ Սամուէլ գառն
մի դիեցիկ, եւ եհան զնա [7]ողջակէզ
Տեառն հանդերձ ամենայն ժողովրդե-
ամբն". եւ գոչեաց Սամուէլ առ Տէր
վասն Իսրայէլի, եւ լուաւ նմա Տէր։
10 Եւ մինչդեռ մատուցանէր Սամուէլ
զողջակէզն, մերձեցան այլազգիքն ի
պատերազմ ի վերայ Իսրայէլի. եւ ո-
րոտաց Տէր մեծաւ բարբառով յաւուր
յայնմիկ ի վերայ այլազգեացն, եւ [8]չփո-
11 թեցան եւ անկան առաջի Իսրայէլի։ Եւ
ելին արքն Իսրայէլի ի Մասփայ եւ հա-
լածեցին զայլազգիսն, եւ հարին զնոսա
12 մինչեւ ի ներքոյ Բեթքովրայ։ Եւ առ
Սամուէլ վէմ մի, եւ կանդնեաց ի մէջ
Մասփայ եւ ի մէջ [9]Բեթհանայ զնոյն".
եւ կոչեաց զանուն նորա Աբենեզեր, [10]վէմ

[1]ԵՔԲ. ողբաց [2]ԵՔԲ. զԱստարովթ, ոչ եբ ՚ի ՝ա-
՝ո՝ո՝ Ա՛ք՝ն՝ա՝՝ [3]ԵՔԲ. զԱստարովթ [4]ԵՔԲ.
Տեառն [5]ԵՔԲ. Հեղին [6]ԵՔԲ մեր [7]ԵՔԲ.
բովանդակ ողջակէզ Տեառն [8]ԵՔԲ. խռովեցոյց
զնոսա, [9]ԵՔԲ. Սենայ [10]ՅԵՔԲ. պ՝ա՝՝ա՝

օդնականի." եւ ասէ, Մինչեւ ցայս վայր
13 օգնեաց մեզ Տէր։ Եւ կորացոյց Տէր զայլ-
ազգիսն. եւ ոչ եւս յաւելին ելանել ի վերայ
սահմանացն Իսրայէլի. եւ եղեւ ձեռն
Տեառն ի վերայ այլազգեացն զամենայն
14 աւուրս Սամուէլի։ Եւ դարձուցին զքա-
ղաքսն զոր առին այլազգիքն յորդւոցն
Իսրայէլի, եւ եւս զնոսա անդրէն Իս-
րայէլի, [11]յԱկարոնէ մինչեւ ցԳէթ. եւ
[12]զսահմանս Իսրայէլի հանին" ի ձեռաց
այլազգեացն. եւ էր խաղաղութիւն ի
մէջ Իսրայէլի եւ ի մէջ Ամովրհացւոցն։
15 Եւ դատեաց Սամուէլ զԻսրայէլ զա-
16 մենայն աւուրս կենաց իւրոց։ Երթայր
ամ յամէ, եւ պատէր զԲեթէլ եւ [13]զԳա-
լգաղ եւ զՄասփա, եւ դատէր զԻս-
րայէլ յամենայն [14]սրբեալսն յայնոսիկ։
17 Եւ դարձ իւր էր յԱրիմաթեմ, զի անդ
էր տունն նորա. եւ անդ դատէր զԻս-
րայէլ, եւ չինեաց անդ սեղան Տեառն։

ԳԼ. Ը

1 Եւ եղեւ իբրեւ ծերացաւ Սամուէլ,
կացոյց զորդիս իւր դատաւորս Իսրայէլի։
2 Եւ այս են անուանք որդւոց նորա. անդ-
րանիկանն՝ Յովէլ, եւ անուն երկրորդին
3 Աբիա. դատաւորք ի Բերսաբէէ։ Եւ ոչ
գնացին որդիքն նորա զճանապարհս նո-
րա, եւ թիւրեցան զետ զաչաքաղուե-
թեան. առնուին կաշառս եւ թիւրէին
զիրաւունս։
4 Եւ ժողովեցան ամենայն արք Իսրա-
յէլի եւ եկին առ Սամուէլ յԱրիմաթեմ,
5 Եւ ասեն ցնա, Դու առաջիկ ծերացար,
եւ որդիք քո ոչ գնան զճանապարհ քո.
եւ արդ կացո ի վերայ մեր թագաւոր
6 դատել զմեզ որպէս եւ այլ ազգք։ Եւ
չար թուեցաւ բանն յաչս Սամուէլի, զի
ասացին թէ Տուր մեզ թագաւոր զա-
տել զմեզ. եւ յաղօթս եկաց Սամուէլ
7 առ Տէր։ Եւ ասէ Տէր ցՍամուէլ, Լուր
ձայնի ժողովրդեանդ, որպէս եւ խօսե-
ցան ընդ քեզ. զի ոչ եթէ զքեզ [15]ա-
նարգեցին, այլ զիս մերժեցին չիշխա-
8 նորել ի վերայ նոցա։ Ըստ ամենայն
գործոց զոր արարին ընդ իս յօրէ յորմէ
հանի զնոսա յԵգիպտոսէ մինչեւ ցայսօր,
եւ թողին զիս եւ ծառայեցին աստուա-
ծոց օտարաց, նոյնպէս առնեն նոքա եւ

[11]ԵՔԲ. յԱկկարոնէ [12]ԵՔԲ. զսահման իւր զերծոյց
Իսրայէլ [13]ԵՔԲ. զԳաղգաղա [14]ԵՔԲ. տեղիսն
[15]ԵՔԲ. մերժեցին

9 ընդ քեզ ։ Եւ արդ լուր ձայնի նոցա . բայց գնելով գնիցես վկայութիւն նոցա,
եւ պատմեսցես նոցա դիրաւունս թա-
գաւորի որ թագաւորեսցէ նոցա ։
10 Եւ խօսեցաւ Սամուէլ զամենայն պատգամս Տեառն առ ժողովուրդն որ
11 խնդրեցին ի նմանէ թագաւոր . Եւ ասէ, Այս ինչ լիցին իրաւունք թագաւորին
որ թագաւորեսցէ ի վերայ ձեր . զուս-
տերս ձեր առցէ եւ արասցէ կառավարս
եւ հեծեալս եւ սուրհանդակս առաջի
12 կառաց իւրոց . Եւ կացուսցէ զնոսա իւր հազարապետս եւ [1]հարիւրապետս, եւ
հնձել զհունձս նորա [2]եւ կթել զկութս
նորա", եւ առնել նմա զէնս եւ անօթս
13 կառաց ։ Եւ զդստերս ձեր առցէ յիւղա-
գործս եւ ի խորակարարս եւ ի հացեփ-
14 եացս ։ Եւ զանդս ձեր եւ զայգիս ձեր
եւ զձիթենիս ձեր զաղնիւս՝ առցէ, եւ
15 տացէ ծառայից իւրոց ։ Եւ զսերմանս ձեր
եւ զայգիս ձեր տասանորդեսցէ, եւ տա-
ցէ ներքինեաց իւրոց եւ ծառայից իւրոց ։
16 Եւ զծառայս ձեր եւ զաղախնայս ձեր եւ [3]զանդիսայս ձեր զաղնիւս եւ զէշս ձեր
առցէ եւ [4]տասանորդեսցէ ի գործ իւր ։
17 Եւ զհօտս ձեր տասանորդեսցէ, եւ դուք
18 եղիջիք նմա ծառայք ։ Եւ աղաղակեա-
ջիք յաւուր յայնմիկ յերեսաց թագաւո-
րին ձերոյ զոր ընտրեցէք ձեզ, եւ ոչ
լուիցէ ձեզ Տէր յաւուրն յայնոսիկ . [2]զի
դուք ձեզէն ընտրեցէք ձեզ թագաւոր"
19 Եւ ոչ կամեցաւ ժողովուրդն լսել Սա-
մուէլի . եւ ասեն ցնա, Ոչ այպէս է,
20 այլ [5]թագաւորեսցէ ի վերայ մեր . Եւ եւ-
դիցուք եւ մեք իբրեւ զայլ ազգս, եւ
դատեսցի զմեզ թագաւորն մեր, եւ ելցէ
առաջի մեր եւ պատերազմեսցի զպա-
21 տերազմ մեր ։ Եւ լուաւ Սամուէլ զա-
մենայն բանս ժողովրդեանն, եւ խօսե-
22 ցաւ զնոսա յականջս Տեառն ։ Եւ ասէ Տէր ցՍամուէլ, Լուր ձայնի նոցա եւ
թագաւորեցո նոցա թագաւոր ։ Եւ ասէ
Սամուէլ ցարս Իսրայելի, Երթիցէ իւ-
րաքանչիւր ոք ի քաղաք իւր ։

Գլ . Թ

1 Եւ էր այր մի յորդւոցն Բենիամինի եւ
անուն նորա Կիս, որդի Աբիելի, որդւոյ

[6]Արեդայ, որդւոյ Բեքորաթայ, որդւոյ
Ափիայ, որդւոյ առն Ցեմինացւոյ . այր
2 զօրաւոր ։ Եւ էր նորա որդի, եւ անուն
նորա Սաւուղ, այր բարի եւ անձնեայ.
եւ ոչ զայր յորդիսն Իսրայելի այր լաւ
քան զնա . ուսովք չափ ի վեր բարձր էր
քան զամենայն ժողովուրդն ։
3 Եւ կորեան էշք[7] հօրն Սաւուղայ . ասէ
Կիս ցՍաւուղ յորդի իւր, Առ ընդ քեզ
մի ի մանկանցդ, եւ արիք երթայք
4 խնդրեցէք զէշսն ։ Եւ գնացին, եւ անցին
ընդ լեառնն Եփրեմի, եւ անցին ընդ եր-
կիրն Սարիսայ, եւ ոչ գտին . եւ անցին
ընդ երկիրն Սաղիմայ, եւ ոչ ուրեք էին.
եւ անցին ընդ երկիրն Ցեմինացւոյն, եւ
5 ոչ գտին ։ Եւ իբրեւ եկին ի Սիւփ, ասէ
Սաւուղ ցպատանեակն իւր որ ընդ նմա,
Եկ դարձցուք անդրէն, գուցէ թողեալ
հօր մերոյ զէշսն եւ զմտինջ հոգացէ ։
6 Եւ ասէ ցնա պատանին, Ահա այր Աս-
տուծոյ է ի քաղաքիս յայսմիկ, այր փա-
ռաւոր, եւ զամենայն զոր ինչ խօսիցի
լինելով լինի . եւ արդ երթիցուք անդր,
զի պատմեսցէ մեզ զճանապարհս մեր,
7 եւ գնացուք ։ Եւ ասէ Սաւուղ ցպա-
տանին [2]որ ընդ նմա", Ահա երթայ-
ցեմք, եւ զի՞նչ տանիցիմք առնն [2]Աս-
տուծոյ . զի հաց [2]եւս պակասեաց յա-
մանոց մերոց, եւ չիք ինչ որ կայցէ
ընդ մեզ աւելի տանել առնն Աս-
8 տուծոյ ։ Եւ յաւել պատանին տալ պա-
տասխանի Սաւուղայ եւ ասէ, Ահա գտա-
նի ի ձեռին իմում չորրորդ սակ ար-
ծաթոյ, եւ [8]տացես առնն Աստուծոյ,
եւ պատմեսցէ մեզ զճանապարհս մեր ։
9 Եւ յառաջ ի մէջ Իսրայելի այսպէս ա-
սէր իւրաքանչիւր ոք յորժամ երթայր
հարցանել զԱստուած, եկայք երթիցուք
առ տեսանօղն . զի զմարգարէ յառաջ
10 տեսանօղ կոչէր ժողովուրդն ։ Եւ ասէ
Սաւուղ ցպատանին իւր, Բարւոք է
բանդ, եկ երթիցուք . եւ չոքան ի քա-
11 ղաքն ուր էր այրն Աստուծոյ ։ Եւ մինչ-
դեռ ելանէին ընդ դառ ի վեր քաղաքին,
գտին նոքա աղջկունս որ ելանէին հա-
նել ջուր, եւ ասեն ցնոսա, Եթէ գուցէ՞
12 աստ տեսանօղ ։ Պատասխանի եւտուն
նոցա աղջկունքն եւ ասեն, Գոյ. ահա-
ւադիկ առաջի ձեր այդր . արդ արագե-
ցէք, զի վասն աւուրս եկեալ է ի քա-

[1] Եբր· յիւանապետս , եւ հերկել զհերկս նորա
[2] Յեբր· պ–ւ–ե [3] Եբր· զընտիրս կամ զեղ իտասարդս
[4] Եբր· վարեսցէ [5] Եբր· կացցէ թագաւոր
[6] Եբր· Սերորայ [7] Եբրայեցէն յ–ե–լը– , կիսեայ ,
[8] Եբր· տաց

զաքս , զի զոհ է այսօր ժողովրդեանն ի
13 [1]Բամա . Որժամ մտանիցէք ի քաղաքդ, ապագտանիցէք զնա ի քաղաքիդ, մինչեւ երթեալ լիցէ նորա ի Բամա ուտել, քանզի ոչ ուտէ ժողովուրդն մինչեւ ի մտանել նորա , զի նա օրհնէ զզոհն, եւ ապա ուտեն կոչնականքն . եւ արդ ելէք դի
14 վան աւուրս գտանէք զնա այդր : Եւ եկին ի քաղաքն . եւ իբրեւ մտին նոքա ի քաղաքամէջն , եւ ահա Սամուէլ ել ընդ առաջ նոցա երթալ ի Բամա :
15 Եւ էր Տեառն յայտնեալ յունկն Սամուելի աւուրբ միով յառաջ քան զգալն
16 Սաւուղայ առ նա , եթէ վաղիւ ի սոյն ժամու առաքեցից առ քեզ այր յերկրէն Բենիամինի , եւ օծցես զնա իշխան ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայելի . եւ փրկեսցէ զժողովուրդ իմ ի ձեռաց այլազգեացն . զի հայեցայ ի առաւապանս ժողովրդեան իմոյ , քանզի եհաս գոչիւն
17 նոցա առ իս : Եւ Սամուէլ տեսս զՍաւուղ , եւ Տէր ասէ ցնա , Ահաւադիկ է այրն զորմէ ասացի քեզ եթէ նա իշ-
18 խեսցէ ժողովրդեան իմում : Եւ մատեաւ Սաւուղ առ Սամուէլ ի մէջ [2]քաղաքին եւ ասէ , Պատմեա ինձ՝ ո՞ր առն իցէ
19 տեսանողին : Պատասխանի ետ Սամուէլ եւ ասէ ցՍաւուղ , Ես ինքնին իսկ եմ. ել առաջի իմ ի Բամա , եւ կերիցես ընդ իս այսօր , եւ արձակեցից զքեզ վաղիւ, եւ զամենայն ինչ որ ի սրտի քում է՝
20 պատմեցից քեզ : Եւ վասն իշոցն երեքօրէից կորուսելոց մի՛ ինչ ածեր զմտաւ քանզի գտեալ են . եւ ո՞ր [3]իցեն վայելչութիւնք՝ Իսրայելի , եթէ ոչ քո եւ ա-
21 մենայն տան հօր քո : Պատասխանի ետ Սաւուղ եւ ասէ , Ո՞չ ապաքէն առն միոյ Ցեմինացւոյ եմ ես , փոքու զաւազանի ցեղին Իսրայելի , եւ կրտսերոյ ցեղի յամենայն իշխանութենէ Բենիամինի . եւ ընդէ՞ր խօսեցար ընդ իս ըստ բանիդ ըստ
22 այսմիկ : Եւ առ Սամուէլ զՍաւուղ եւ զպատանին նորա , եւ տարաւ զնոսա [4]ի վանս իւր՝ . եւ ետ նոցա տեղի ի վերոյ կոչնականացն իբրեւ զերեսուն ա-
23 րամբ : Եւ ասէ Սամուէլ ցխոհակերն , Տուր ինձ զմասին զոր ետուր քեզ, զոր ի
24 ասացի զնել զնա առ քեզ : Եւ [5]եւիտաց խոհակերն զաղդրն եւ զլծամին որ վնո-

վաւ , եւ եդ զայն առաջի Սաւուղայ : Եւ ասէ Սամուէլ ցՍաւուղ , Ահաւասիկ նշխար , դիր զայդ առաջի քո եւ կեր , [6]զի վկայութիւն լիցի քեզ առ ի ժողովրդոց, եւ կրծեսցես՝ . եւ եկեր Սաւուղ ընդ Սամուէլի յաւուր յայնմիկ :
25 Եւ էջ ի Բամայ ի քաղաքն եւ [7]արկին անկողինս Սաւուղայ ի տանիսն , եւ
26 ննջեաց՝ : Եւ եղեւ ընդ ելանել առաւօտուն՝ կոչեաց Սամուէլ զՍաւուղ ի տանեացն եւ ասէ , Արի եկ եւ արձակեցից զքեզ . եւ յարեաւ Սաւուղ եւ ել ինքն
27 եւ Սամուէլ արտաքս : Եւ մինչդեռ իջանէին նոքա յեզր քաղաքին , ասէ Սամուէլ ցՍաւուղ , Ասա ցպատանիսդ եւ անցցէ յառաջ քան զմեզ . (եւ անց.) եւ դու կացցես այսօր աստ եւ լուիցես [8]զպատգամս Տեառն՝ :

Գլ. Ժ

1 Եւ առ Սամուէլ զսրուակն իւղոյ եւ եհեղ ի գլուխ նորա , եւ համբուրեաց զնա եւ ասէ ցնա , Ո՞չ ապաքէն օծ զքեզ Տէր ի վերայ ժառանգութեան իւրոյ իշխան , [9]եւ ի վերայ ժողովրդեան իւրոյ Իսրայելի . եւ դու իշխեսցես ժողովրդեան Տեառն , եւ փրկեսցես զնա ի ձեռաց թշնամեաց իւրոց չուրջանակի . եւ
2 այն եղիցի քեզ նշանակ՝ եթէ Տէր օծ զքեզ՝ : Իբրեւ երթայցես այսօր յինէն , գտցես երկուս արս առ գերեզմանսն Հռաքելի՝ [10]ի լերինն Բենիամինի , ի մեծամնծս վակիցին՝ , եւ ասիցեն ցքեզ , Գտան էշքն յորոց գուն ի խնդիր երթեալ էիր . եւ թողեալ հօր քո զիրս իշոյն՝ հոգայ վասն ձեր , եւ ասէ , Զի՞նչ
3 արարից վասն որդւոյ իմոյ : Եւ երթիցես անտի եւս անդր , եւ հասցես մինչեւ ի կաղնին [11]Դեբովրայ, եւ գտցես անդ երիս արս որ ելանիցեն առ Աստուած ի Բեթէլ . միոյն բարձեալ ուլս երիս , եւ միոյն բարձեալ երիս [12]ամանս հացի , եւ
4 միոյն բարձեալ տիկ մի գինւոյ : Եւ հարցցին զքէն ի խաղաղութիւն, եւ տացեն քեզ [13]երկուս պատուս հացի՝ , եւ
5 առցես ի ձեռաց նոցա : Եւ ապա մտցես

[1]Նշանակէ բարձրաւանդակ , այսպէս կոչ և է տեղի : [2]ԵԲԲ. գրան [3]կամ, իցէ ամենայն ցանկութիւն [4]ԵԲԲ. ի բազմականն [5]ԵԲԲ. եբարձ

[6]ԵԲԲ. զի ի սահմանեալ ժամանակին պահել է քեզ, յորժամ ասացի հրաւիրել զժողովուրդն [7]ԵԲԲ. խօսեցաւ ընդ Սաւուղայ ի տանիսն [8]ԵԲԲ. զպատգամն Աստուծոյ [9]ՅԵԲԲ. գլուխ [10]ԵԲԲ. ի սահմանս Բենիամինի ի Սեղսահ [11]ԵԲԲ. Փառղայ [12]ԵԲԲ. նկանակս [13]ԵԲԲ. զերկուս ի հացից անտի

ի բլուրն Աստուծոյ, ուր է գունդ պլազդացան. եւ եղիցի յորժամ մտանիցես ի քաղաքն, դիպիսցիս պոլոս մարգարէից իջևլոց ի Բամայ, եւ առաջի նոցա սրինգ եւ թմբուկ եւ փող եւ քնար, եւ ինքեանք մարգարէացեալք։ 6 Եւ խաղասցէ ի վերայ քո Հոգի Տեառն, եւ մարգարէասցիս եւ դու ընդ նոսա, եւ դարձդիս յայր յայլ։ 7 Եւ եղիցի յորժամ գայցեն նշանքս այսոքիկ ի վերայ քո, առասցիս զամենայն ինչ զոր գտանիցէ ձեռն քո, զի Աստուած ընդ քեզ է։ 8 Եւ իջցես յառաջ քան զիս ի Գաղգաղա. եւ ահա ես իջից առ քեզ մատուցանել ողջակէզս եւ զոհս խաղաղականս. զեւթներորդ օր գտարիսցես մինչեւ եկից առ քեզ, եւ իմացուսից քեզ զոր ինչ առնիցես։ 9 Եւ եղեւ ի դարձուցանել զթիկունս իւր գնալոյ ի Սամուէլէ՝ չրջեաց նմա Աստուած սիրտ այլ, եւ եկին նշանքն նմա ամենայն նշանքն յաւուր յայնմիկ։ 10 Եւ եկն անտի ի բլուրն, եւ ահա պայր մարգարէից ընդ առաջ նորա. եւ խաղաց ի վերայ նորա Հոգի Աստուծոյ, եւ մարգարէացաւ ի միջի նոցա։ 11 Եւ եղեւ իբրեւ ծանեան զնա ամենեքեան որոց յեռչէկն եւ յեռանդ ասեալ էր զնա, եւթէ ահա եւ նա ի մէջ մարգարէիցն մարգարէանայր, ասէ ժողովուրդն իւրաքանչիւր ցընկեր իւր, Ջի՞նչ է այդ որ եղեւ որդւոյ Կիսեայ, կամ թէ եւ Սաւո՞ւղ ընդ 12 մարգարէս իցէ։ Եւ պատասխանի ետ ումն ինոցանէ եւ ասէ, Եւ ո՞վ հայր նորա, [1]եթէ ոչ Կիս՞. վասն այնորիկ եղեւ յառակս թէ 13 Եւ Սաւո՞ւղ ի մարգարէս։ Եւ վախճանեաց զմարգարէանալն, եւ եկն ի բլուրն։ 14 Եւ ասէ [2]ընտանի նորա ցնա եւ ցծառայն նորա, Ո՞ գոգայք. եւ ասէն, Խնդրել զէշեան. եւ իբրեւ տեսաք թէ չեն 15 ուրեք, մտաք առ Սամուէլ։ Եւ ասէ [2]ընտանին ցՍաւուղ, Պատմեա ինձ զի՞նչ 16 ասաց քեզ Սամուէլ։ Եւ ասէ Սաւուղ [3]ցընտանին իւր, Պատմելով պատմեաց ինձ եթէ գտան էշքն։ Բայց զբան թագաւորութեանն ոչ ետան նմա ի վեր, զոր ասաց նմա Սամուէլ։

17 Եւ ժողովեաց Սամուէլ զամենայն 18 ժողովուրդն առ Տէր ի Մասփա։ Եւ ասէ ցորդիսն Իսրայէլի, Այսպէս խօսեցաւ Տէր Աստուած Իսրայէլի եւ ասէ, Ես եմ որ հանի զորդիսն Իսրայէլի յեզիպտոսէ, եւ փրկեցի զձեզ ի ձեռաց [1]Փարաւոնի արքային՝ Եգիպտացւոց, եւ յամենայն թագաւորութենանց նեղչաց 19 ձերոց։ Եւ դու այսօր [4]անարգեցէք զԱստուած՝, որ է փրկիչ ձեր [5]յամենայն ցունց որ չուրջ զձեզ են եւ նեղեն զձեզ՝, եւ ասացէք՝ Ոչ այդպէս, այլ զի կացուսցես ի վերայ մեր թագաւոր. եւ արդ կացէք առաջի Տեառն [1]ըստ իչխանութեանց ձերոց, եւ՝ ըստ [6]գասաղանաց 20 ձերոց, եւ ըստ հազարաւորաց ձերոց։ Եւ մատոյց Սամուէլ զամենայն գասաղանսն Իսրայէլի, եւ ել վիճակն գասաղանին Բենիամինի։ 21 Եւ մատոյց զգասաղանսն Բենիամինի ըստ ցեղից, եւ ելանէր վիճակն ցեղին Մատտարեայ. [1]եւ մատուցին զցեղն Մատտարեայ ըստ արանց՝, եւ ելանէր վիճակն Սաւուղայ որդւոյ Կիսեայ. եւ [7]խնդրէր զնա 22 եւ ոչ գտանէր։ Եւ [8]հարց միւսանգամ Սամուէլ՝ զՏէր, եթէ գայցէ՞ այսր այրն. եւ ասէ Տէր, Աւազիկ թաքուցեալ է ընդ 23 կարասեաւ։ Եւ [9]ընթացաւ եւ առ զնա անտի, եւ կացոյց զնա՝ ի մէջ ժողովրդեանն. եւ բարձրացաւ քան զամենայն ժողովուրդն թիկամբք չափ ի վեր։ 24 Եւ ասէ Սամուէլ ցամենայն ժողովուրդն, եթէ Տեսանիցէ՞ք զոր ընտրեացդ իւր Տէր, զի ոչ գոյնման զորա [10]յամենեսեան ի ձեզ. եւ ծանեան՝ ամենայն ժողովուրդն 25 եւ ասեն, Կեցցէ՛ արքայ։ Եւ ասաց Սամուէլ ժողովրդեանն զիրաւունս [11]թագաւորին, եւ գրեաց ի մատեանի եւ եդ առաջի Տեառն. եւ արձակեաց Սամուէլ զամենայն ժողովուրդն, եւ գնաց 26 իւրաքանչիւր որ ի տեղի իւր։ Եւ Սաւուղ գնաց ի տուն իւր ի Գաբաա. եւ գնացին որդիք զօրութեան զորոց զրգռեաց 27 Տէր զսիրտս նոցա՝ ընդ Սաւուղայ։ Եւ որդիք ժանտք ասէին թէ Ո՞ է սա որ փրկիցէ գմեզ. եւ անարգեցին զնա, եւ ոչ բերին նմա պատարագս[12]։

Գլ. ԺԱ.

1 Եւ [1]եղեւ յետ ամսոյ միոյ աւուրց՝ ել Նաաս Ամոնացի, եւ բանակեցաւ զԳաա-

[1] ՅԵԲԲ. պոլոսք [2] ՅԵԲԲ. հօրեղբայրն [3] ՅԵԲԲ. ցհօրեղբայրն
[4] ՅԵԲԲ. մերժեցէք զԱստուած ձեր [5] ՅԵԲԲ. յամենայն չարեաց ձերոց եւ ի նեղութեանց ձերոց [6] Ա.ՔՆԴ., ցեղից, այսուհետեւ ե է ոտրեւ. [7] ՅԵԲԲ. խնդրեցին [8] ՅԵԲԲ. հարցին միւսանգամ [9] ՅԵԲԲ. ընթացան եւ առին զնա անտի. եւ եկաց նա [10] ՅԵԲԲ. յամենայն ժողովրդեանդ. եւ գոչեաց [11] ՅԵԲԲ. թագաւորութեան [12] ՅԵԲԲՅԵՑԻՆ յոեԼԼ, եւ եղեւ որպէս խուլ

բիսաւ Գազաագու. եւ ասեն ամենայն
արք Յաբիսայ ցնասս Ամոնիացւոյ, Ուխա-
հա ընդ մեզ ուխտ, եւ ծառայեսցուք
2 քեզ։ Եւ ասէ ցնոսա Նաասայ Ամոնացի,
Ա՛յնու ուխտիցիմ ընդ ձեզ ուխտ, եթէ
[1]հանիցէք զամենեսեան աչս ձեր զոմով.
եւ եղիցի նախատինս ի վերայ ամենայն
3 Իսրայէլի։ Եւ ասեն արք Յաբիսայ ցնասս,
Թող տուր մեզ աւուրս եւթն, եւ ա-
ռաքեսցուք հրեչտակս յամենայն սահ-
մանս Իսրայէլի, եթէ չիցէ որ որ փրկիցէ
զմեզ, ելցուք առ քեզ։
4 Եւ եկին հրեչտակքն ի Գաբաաս [2]առ
Սաուղ", եւ խօսեցան զբանսն յականջս
ժողովրդեանն. եւ ամիարձին ժողո-
5 վուրդն զձայնս իւրեանց եւ լացին։ Եւ
ահա Սաուղ գայր [3]ընդ առաւօտն" յանապ,
եւ ասէ Սաուղ, Զի՞նչ իցէ վի լայ ժո-
ղովուրդն. եւ պատմեցին նմա զպատ-
6 գամս որդւոցն Յաբիսայ։ Եւ խաղայ
Հոգի [4]Տեառն ի վերայ Սաուղայ իրրեւ
լուաւ զբանսն զայնոսիկ. եւ սրտմտե-
7 ցաւ բարկութիւնն նորա յոյժ։ Եւ առ
երկուս եզինս եւ յօշեաց զնոսա, եւ ա-
ռաքեաց յամենայն սահմանս Իսրայէլի
ի ձեռն հրեչտակաց եւ ասէ, Որ ոք ոչ
ելանիցէ զհետ Սաուղայ եւ զհետ Սա-
մուէլի, բայ այսպէս օրինակի արածգին
զեզինս նորա։ Եւ անկաւ ահ Տեառն ի
վերայ [5]ամենայն ժողովրդեանն [5]Իսրա-
յէլի, եւ իսիսխոսեցին կրկեւ գմի այր։
8 Եւ հանդէս սպառ նոցա ի Բեզեկ. [6]ա-
մենայն այր Իսրայէլացի եկին վեց" հա-
րեւր հազար, եւ այր Յուդայ [7]եւթա-
9 նասուն հազար։ Եւ ասէ ցհրեչտակսն
եկեալս, Այսպէս ասասջիք ցարս Յա-
բիսայ Գաղաագու, Վաղիւ եղիցի ձեզ
փրկութիւն ընդ ջեռուցանել արեգա-
կանն. եւ եկին հրեչտակքն [5]ի քաղաքն,
եւ պատմեցին սրանցն Յաբիսայ. եւ
10 ուրախ եղեն։ Եւ ասեն արք Յաբիսայ
[5]ցնասս Ամմնացի", Վաղիւ ելցուք մեք
առ ձեզ, եւ արասջիք ընդ մեզ որ ինչ
11 հանաց լցել առասջիք ձեր։ Եւ եղեւ ի վա-
ղիւ անդր, եւ բաժանեաց Սաուղ զժո-
ղովուրդն յերիս առաջս. եւ մտին ի մէջ
բանակին յառաւօտին պահապն, եւ հար-
կանէին զորդիսն Ամմնայ մինչեւ ի ջեռ-
նուլ արեւուն, եւ եղեն մնացեալքն
ցրուեալք, եւ ոչ մնացին ի նոցանէ եր-
կու ի միասին։
12 Եւ ասէ ժողովուրդն ցՍամուէլ, Ո՞վ
է որ ասացն թէ մի՛ թագաւորեսցէ մեզ
Սաուղ. տուր ի ձեռս զարսն եւ սպան-
13 ցուք զնոսա։ Եւ ասէ [8]Սամուէլ, Մի՛
ոք մեռցի յաւուր յայսմիկ, զի այսօր
արար Տէր [9]զփրկութիւն Իսրայէլի"։
14 Եւ խօսեցաւ Սամուէլ ընդ ժողովր-
դեանն եւ ասէ, Երթիցուք ի Գաղգաղա,
եւ արասցուք նաւակատիս թագաւո-
15 րութեան։ Եւ չոգաւ ամենայն ժողո-
վուրդն ի Գաղգաղա, եւ [10]օծ անդ Սա-
մուէլ զՍաուղ ի թագաւոր" առաջի
Տեառն ի Գաղգաղա. եւ զոհեցին անդ
զոհս խաղաղականս առաջի Տեառն. եւ
ուրախ եղեւ անդ [8]Սամուէլ եւ ամե-
նայն ժողովուրդն յոյժ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ ասէ Սամուէլ ցամենայն արս Իս-
րայէլացիս, Ահաւասիկ լուայ ձայնի ձե-
րում յամենայնի զոր ասացէք ինձ, եւ
2 թագաւորեցուցի ձեզ թագաւոր։ Եւ
արդ աւասիկ թագաւոր երթայ առաջի
ձեր. ես ծերացեալ եմ, [11]եւ թոռունք".
եւ որդիքդ իմ աւագիկ են ի միջի ձե-
րում. եւ ես չորեցայ առաջի ձեր ի ման-
3 կութենէ իմմէ մինչեւ ցայսօր։ Ահաւա-
սիկ կամ ես. տուք զվնէն պատասխա-
նի առաջի Տեառն եւ առաջի օծելոյ նո-
րա, եթէ զեզն ուրուք առի՞, կամ զէշ
ուրուք վարեցի՞, կամ յաղթահարեցի՞
զոք ի ձէնջ, կամ թէ պրկեցի՞ ինչ զոք,
յո՞ր ձեռաց առի [12]նաս կամ կօշիկս. տուք
վնէն պատասխանի", եւ հաստուցից ձեզ։
4 Եւ ասեն [5]ցՍամուէլ, Ոչ մեղար մեզ եւ"
ոչ պրկեցեր զմեզ եւ ոչ նեղեցեր զմեզ,
եւ ոչ առեր ի ձեռաց ուրուք եւ ոչ ինչ։
5 Եւ ասէ Սամուէլ ցժողովուրդն, Վկայ
լիցի Տէր ի միջի ձերում, եւ վկայ օծ-
եալս նորա այսօր յաւուր յայսմիկ, զի
ոչ գտէք ի ձեռին իմում եւ ոչ ինչ. եւ
ասեն, Լիցի վկայ։
6 Եւ [13]խօսեցաւ Սամուէլ ընդ ժողովրդ-
եանն եւ ասէ, Վկայ լիցի" Տէր՝ որ ա-
րար զՄովսէս եւ զԱհարոն, որ եհան

[1] Ոչբբ. Հանից [2] Ոչբբ. Սաուղայ [3] Ոչբբ. զվեց եզանցն [4] Ոչբբ. Աստուծոյ [5] Ցոչբբ. գ-ի-ա-ե [6] Ոչբբ. եւ եղեն որդիքն Իսրայէլի երեք [7] Ոչբբ. երեսուն

[8] Ոչբբ. Սաուղ [9] Ոչբբ. փրկութիւն յԻսրայէլի [10] Ոչբբ. թագաւորեցուցին անդ զՍաուղ [11] Ոչբբ. եւ ալեւորեալ [12] Ոչբբ. կաշառս, եւ կափուցի զաչս իմ սմնոյ [13] Ոչբբ. ասէ Սամուէլ ցժողովուրդն,

7 զՏարան [1]մեր յԵգիպտոսէ , եւ արդ կացէք յառաջ եւ դատեցայց զձեզ առաջի Տեառն , եւ պատմեցից ձեզ զամենայն արդարութիւնս զոր արար Տէր ի միջի
8 ձերում եւ ի Հարան ձեր : Յորժամ եհմուտ Յակոբ եւ որդիք նորա յԵգիպտոս , [2]եւ ւկհաց զնոսա Եգիպտոս ," եւ ազատաւ կեցին հարքն [1]մեր առ Տէր , եւ առաքեաց Տէր զՄովսէս եւ զԱհարոն , եւ [3]հանան զՏարան մեր յԵգիպտոսէ եւ բնակեց
9 ցոյց" ի տեղւոջս յայսմիկ : Եւ մոռացան զՏէր Աստուած իւրեանց , եւ մատնեաց զնոսա ի ձեռս Սիսարայ զօրավարին [2]Յաբինայ արքային" Ասորւոյ , եւ ի ձեռս այլազգեաց եւ ի ձեռս թագաւորին Մովաբայ , եւ պատերազմեցան ընդ նոսա ;
10 Եւ ազաղակեցին առ Տէր եւ ասեն , Մեղաք՝ զի թողաք զՏէր եւ ծառայեցաք Բահաղիմացն եւ [4]անտառացն , եւ արդ ապրեցո զմեզ ի ձեռաց թշնամեաց
11 մերոց , եւ ծառայեսցուք քեզ : Եւ առաքեաց Տէր զՅերոբաաղ եւ [5]զԲարակ եւ զՅեփթայէ եւ [6]զՍամփսան , եւ ապրեցոյց զձեզ ի ձեռաց թշնամեաց ձերոց չուրջանակի , եւ բնակեցէք վստահութ
12 թեամբ : Եւ տեսէք զի Նաաս Ամմնայի եկն ի վերայ ձեր , եւ ասացէք , Ոչ այդպէս , այլ զի թագաւոր թագաւորեսցէ ի վերայ մեր . եւ Տէր Աստուած [1]մեր՝
13 թագաւոր [1]մեր : Եւ արդ աւադիկ թագաւորդ զոր ընտրեցէք եւ զոր խնդրեցէք , եւ տա Տէր ձեզ թագաւոր :
14 Եթէ երկնչիցէք ի Տեառնէ եւ ծառայեցէք նմա , եւ լսիցէք ձայնի նորա եւ ոչ հեստիցէք բերանոյ Տեառն , եւ լինիցիք դուք եւ թագաւորն որ թագաւորեսցէ ձեզ՝ երթալ զկնի Տեառն , [7]ոչ եղիցի ձեռն Տեառն ի վերայ ձեր եւ ի վերայ
15 թագաւորին ձերոյ" : Ապա թէ ոչ լսիցէք ձայնի Տեառն , եւ հեստիցէք բերանոյ Տեառն , եղիցի ձեռն Տեառն ի վերայ ձեր եւ ի վերայ [8]թագաւորին
16 ձերոյ" : Եւ արդ կացէք եւ տեսէք զբանս զայս մեծ , զոր արասցէ Տէր առաջի ա-
17 չաց ձերոց : Ո՞չ ապաքէն հունձք գոյ ընդ այս ամ , զոր արասցէ Տէր առաջի ա-
ձեր զոր արարէք առաջի Տեառն՝ խնդրել ձեզ թագաւոր :
18 Եւ կալոյց Սամուէլ առ Տէր , եւ ետ Տէր ձայնս եւ անձրեւս յաւուր յայնմիկ. եւ երկեաւ ամենայն ժողովուրդն յոյժ
19 ի Տեառնէ եւ ի Սամուէլէ : Եւ ասէ ամենայն ժողովուրդն ցՍամուէլ , Կաց յաղօթս առ Տէր Աստուած քո վասն ծառայից քոց , եւ մի՛ մեռցուք . զի յաւելաք յամենայն մեղս մեր եւ ի չարիս ,
20 եւ խնդրեցաք մեզ թագաւոր : Եւ ասէ Սամուէլ ցժողովուրդն , Մի՛ երկնչիք . զուք արարէք զայդ ամենայն չարիս , բայց մի՛ խոտորիցիք ի Տեառնէ , եւ ծառայեցէք Տեառն յամենայն սրտէ ձերմէ .
21 Եւ [9]մի՛ երթայցէք զհետ ոչնչիցն , որ ոչ ինչ վճարին , եւ ոչ փրկեն . քանզի [10]չեն
22 աստուածք" : Զի ոչ մերժեսցէ Տէր զժողովուրդ իւր վասն անուան իւրոյ մեծի զի [11]հեզութեամբ առ" զձեզ Տէր իւր
23 ժողովուրդ : Եւ ինձ քաւ լիցի մեղանչել Տեառն , հեզդալ առ ի չառնելոյ աղօթս վասն ձեր . [2]եւ ծառայեցէք Տեառն ," եւ յուսիկ ձեզ զճանապարհն զբարի եւ
24 զուղիղ : Բայց երկերեալ ի Տեառնէ , եւ ծառայեցէք նմա ճշմարտութեամբ յամենայն սրտէ ձերմէ . քանզի տեսէք
25 զինծամենծան զոր արար ընդ [12]մեզ : Եւ եթէ խափանութեամբ խարդախիցէք , եւ դուք եւ թագաւոր ձեր սատակիցիք :

ԳԼ . ԺԲ

1 Որպէս տարեւոր Սաւուղ ի թագաւորել իւրում , եւ երկուս ամս թագաւորեաց
2 ի վերայ Իսրայէլի : Եւ ընտրեաց իւր Սաւուղ երիս հազարս արս յարանցն Իսրայէլի . եւ էին ընդ նմա երկու հազարք ի Մաքմաս եւ ի լերինն Բեթէլայ , էին ընդ Յովնաթանու հազար ի Գաբաա Բենիամինի . եւ զինացորդս ժողովրդեանն արձակեաց իւրաքանչիւր բնակութիւնս :
3 Եւ եհար Յովնաթան [13]զՆասիբ այլազգի , որ էր ի լերին" , եւ լուան այլազգիքն : Եւ Սաւուղ փող եհար ընդ ամենայն երկիրն եւ ասէ , [14]եթէ անգոս-
4 նեցին ծառայքն" , եւ լուան ամենայն Իսրայէլ , եւ ասեն՝ եթէ եհար Սաւուղ

[1] ԵԲբ· ձեր [2] ՁԼԲբ· գ-ԼՈՒ [3] ԵԲբ· Հանին զՏարան ձեր յԵգիպտոսէ եւ բնակեցուցին [4] ԼԲբ· Աստտարովթայ [5] ՆԲբ· զԲեդան [6] ԼԲբ· զՅամուէլ [7] ԵԲբ· Աստուծոյ ձերոյ [8] ԵԲբ· Հարցն ձերոց

[9] ԵԲբ· մի՛ խոտորիցիք· քանզի [10] ԵԲբ· ոչինչ են նոքա [11] ԵԲբ· կամեցաւ առնել [12] ԵԲբ· ձեզ [13] ԵԲբ·զպահակ այլազգեացն որ ի Գաբաա [14] ԵԲբ· Լուիցեն եբրայեցիքն

[1]զնասիր այլազգի եւ յամօթ արարի Իսրայէլ զայլազգիան. եւ գնեցայ՝ Ժողովուրդն
5 գնաց Սաուղայ ի Գազզազա։ Եւ այլազգիքն Ժողովեալ էին ի պատերազմ ընդ Իսրայէլի. եւ ելին ի վերայ Իսրայէլի երեսուն հազար կառաց եւ վեց հազար հնձելոց, եւ ժողովուրդն իրրեւ զաւազ առ եզերբ ծովու բազմութիւնամբ. ելին եւ բանակեցան ի Մաքմաս, [2]յանդիման
6 Բեթաւորովնայ ընդ հարաւ"։ Եւ եւս այր Իսրայէլի ևՀէ անձոկ է նմա [3]միրձնալ առ նա", եւ թաքեաւ Ժողովուրդն յայրս եւ [4]ի գոմս եւ ի վիմս եւ [5]ի խոր-
7 խորատս եւ ի ջրհորս. Եւ [6]որ անցանելոցն էին ընդ Յորգանան անցին" յերկիրն Գադայ եւ Գաղաադու. եւ Սաուղ դեռ անդէն եւս էր ի Գազզազա, եւ ամենայն Ժողովուրդն [7]թօթափեցան ի նմանէ։
8 Եւ զազարեաց զերծն օր վկայութեանն որպէս եւ ասաց Սամուէլ". եւ ոչ եկն Սամուէլ ի Գազզազա. եւ ցրուեց-
9 ցաւ Ժողովուրդն իւր ի նմանէ։ Եւ ասէ Սաուղ, [8]Մատուցէք զի արարից" ողջակէզս եւ խաղաղականս. եւ եհան զող-
10 ջակէզն։ Եւ եղեւ իրրեւ կատարեաց մատուցանել զողջակէզն, եկն Սամուէլ. եւ ել Սաուղ ընդ առաջ նորա օրհնել
11 զնա։ Եւ ասէ Սամուէլ, Զինչ գործեցեր։ Եւ ասէ Սաուղ, Զի տեսի թէ ցրուեցաւ Ժողովուրդ իմ յինէն, եւ դու ոչ եկիր [9]որպէս ուխտեցեր ի վկայութեան" առաջին, եւ այլազգիքն Ժողո-
12 վեցան ի Մաքմաս, Եւ ասացի թէ արդ իջանիցեն այլազգիքն ի վերայ իմ ի Գազզազա, եւ զերեսս Տեառն չէր ապաչեալ.
13 Ժանեցայ եւ մատուցի զողջակէզն։ Եւ ասէ Սամուէլ ցՍաուղ, [10]Ի զուր է քեզ, զի ոչ պահեցեր զպատուիրանն իմ զոր պատուիրեաց Տէր". զի այժմ հաստա-
14 տէր Տէր զթագաւորութիւնն քո ի վերայ Իսրայէլի մինչեւ յաւիտեան. Բայց արդ մի կացցէ թագաւորութիւն քո. խնդրեաց

[1]ԵԲԲ. զպահակ այլազգեացն. այլ եւ նեխեցաւ Իսրայէլ յայլազգիսն, եւ խրախուսեաց [2]ԵԲԲ. յարեւելից Բեթաւանայ [3]ԵԲԲ. զի նեղեցաւ Ժողովուրդն [4]ԵԲԲ. յամուրս [5]ԵԲԲ. յաշտարակս [6]ԵԲԲ. Երբոյնեցիքն անցին ընդ Յորդանան [7]ԵԲԲ. երեսուն երկիւղիւ զկնի նորա։ (8) Եւ մնաց զաւուրս եւթեն ըստ սահմանելոյն Սամուէլի [8]ԵԲԲ. Մատուցէք առ իս [9]ԵԲԲ. ըստ ժամանակին սահմանելոյ [10]ԵԲԲ. Անմտացար, ոչ պահեցեր զպատուիրանս Տեառն Աստուծոյ քո, զոր պատուիրեաց քեզ

ցէ իւր Տէր այր ըստ սրտի իւրում, եւ ասացէ վնաս պատուիրանաւ յիշխան ի վերայ ժողովրդեան իւրոյ. զի ոչ պահեցեր զոր ինչ պատուիրեալ քեզ Տէր։
15 Եւ յարեաւ Սամուէլ եւ գնաց [11]ի Գազզազայ զճանապարհ իւր։ Եւ մնացորդք ժողովրդեանն ելին գնա Սաուղայ ընդառաջ պատերազմական ժողովրդեանն։ Եւ ի հասանել նոցա" ի Գազզազայ ի Գարասա Բենիամինի. եւ հանդէս սպար Սաուղ ժողովրդեանն գանել ընդ նմա,
16 իրրեւ վեց հարիւրոց արանց։ Եւ Սաուղ եւ Յովնաթան որդի նորա եւ ժողովուրդն գանեալ ընդ նոսա՝ նստան ի Գարասա Բենիամինի. եւ այլազգիքն բանակեալ էին ի Մաքմաս։
17 Եւ ելանէր ապականիչն [12]յանկ այլազգեացն յերից առաջս. առաջ մի [13]որ հայէր" ընդ ճանապարհն Ոփերայ [14]յազ-
18 րեւն Սպովբայ. Եւ առաջ մի [15]ընդ ճանապարհն որ հայէր ի Բեթաւորոն". եւ առաջ մի [16]ընդ ճանապարհն որ հայէր ի Գալայէ յառեալ ի Դայի Սպոյնին անապատին"։
19 Եւ գարբին երկաթոյ ոչ գտանէր յամենայն երկրին Իսրայէլի, քանզի ասէին այլազգիքն եմէ գուցէ առնիցեն Եբրայեցիքն
20 յերկիրն սուսեր եւ գեղարդն։ Եւ իջանէին ամենայն Իսրայելացիքն յերկիրն այլազգեաց՝ մեկնել իւրաքանչիւր [17]զդեռանդի իւր եւ զգործի իւր, եւ իւրաքանչիւր զվայտատ իւր եւ զմանգաղ իւր։
21 Եւ էին կուիք պատրաստ հնձելոյ, եւ կահին երեք սակզք էին՝ խոփոյ եւ կացնոյ եւ մանգաղի յարդ հանգոյն նմին"։
22 Եւ եղեւ յաւուրս պատերազմին [11]որ ի Մաքմաս" եւ ոչ գտանէր սուսեր եւ գեղարդն ի ձեռին ամենայն ժողովրդեանն որ էին ընդ Սաուղայ եւ ընդ Յովնաթանու [11]որդւոյ նորա". Եւ գտաւ Սաուղայ եւ Յովնաթանու որդւոյ նորա
23 Եւ եւ [18]ի ճամբար այլազգեացն յանցոյս Մաքմասայ. եւ հօր իւրում ոչ էին ի վեր։"

[11]ՅԵԲԲ. գ-ի-ա-ե [12]ԵԲԲ. ի բանակէ [13]ԵԲԲ. գեմ եդեալ էր [14]ԵԲԲ. յերկիրն [15]ԵԲԲ. գեմ եդեալ էր ընդ ճանապարհն Բեթաւորոնայ [16]ԵԲԲ. գեմ եդեալ էր ընդ ճանապարհ սահմանացն որ հայէր ի ձորն Ակբայիմայ յանապատն կայս։ [17]ԵԲԲ. զբրիչ իւր եւ զխոփ իւր, եւ զսապար իւր եւ զբահիւր (21)Իսկ էին նոցա խարտոցք իճեքեալ զբրիչ եւ զխոփ եւ զերկբժանի եւ զսապար եւ զիմեան [18]ԵԲԲ. պահակ այլազգեացն ի կիրճ անդր Մաքմասա

Գլ. ԺԲ

1 Եւ եղեւ օր, եւ ասէ Յովնաթան որդի Սաուղայ ցպատանին ցկապարճակիրն իւր, Եկ եւ անցցուք [1]ի կիրճս այլազգեացն յայնկոյս". եւ հօր իւրում ոչ պատմեաց։
2 Եւ Սաուղ նստէր ի ղեղս Բլուրն ընդ նռնենեաւն ի Մագդոլ. եւ էին ընդ նմա իբրեւ վեց հարիւր այր ի ժողո-
3 վրդենէն։ Եւ Աբիա որդի Աբիտովբայ եղբօր [2]Բարիվեի, որդւոյ Փենեհէսի, որդւոյ [3]Ղևեհայ քահանայի Աստուծոյ ի Սեղով որ կրէր զեփուդն. եւ ժողո-
վրդեանն ոչ գիտէր եթէ երթեալ իցէ
4 Յովնաթան։ Եւ ի մէջ կրճին ընդ որ խնդրէր անցանել Յովնաթան ի ճամբար այլազգեացն [4]ի կիրճս. եւ" քարաժայռ յայսմ կողմանէ, եւ քարաժայռ յայնմ կողմանէ, անուն միումն Բաղէս, եւ
5 անուն միւսումն Սենան։ [5]Եւ ժայռ մի ի հիւսիսոյ որ երթայր ընդ Մաքմաս, եւ միւս եւս ժայռ՝ որ երթայր ի հա-
6 րաւոյ ի Գաբայէ"։ Եւ ասէ Յովնաթան ցպատանին ցկապարճակիրն իւր, Եկ անցցուք [6]ի կիրճս անթլփատիցն այնոցիկ, թերեւս արասցէ Տէր մեզ Տէր. զի ոչինչ է խափր Տեառն ապրեցուցանել
7 բազմօք կամ սակաւուք։ Եւ ասէ ցնա կապարճակիրն իւր, Արա զամենայն ինչ յոր եւ յօժարեսցէ սիրտ քո. ահաւասիկ ես ընդ քեզ եմ. որպէս սիրտ քո՝ սիրտ
8 իմ։ Եւ ասէ Յովնաթան, Ահաւասիկ մեք անցանեմք առ արան, եւ [7]յայտնեսցուք
9 նոցա երթիցուք առ նոսա". Եթէ ասիցեն ցմեզ, Ի բաց կացէք այսր մինչեւ [8]պատմեսցուք ինչ" ձեզ, զտեղի կալ-
10 ցուք եւ մի ելցուք առ նոսա։ Ապա թէ ասիցեն, Ելէք առ մեզ, ելցուք, զի մատնեաց զնոսա Տէր ի ձեռս մեր. այս
11 լիցի մեզ նշանակ։ Եւ մտին երկոքեան [9]ի կիրճս այլազգեացն. եւ ասեն այլազգիքն, Ահա երբայեցիքն ելանեն ի ծակուց իւրեանց ուր թաքուցեալ էին։
12 Եւ պատասխանի ետուն արք [9]կրճայն եւ ասեն ցՅովնաթան եւ ցկապարճակիրն, Ելէք առ մեզ եւ ծանուսցուք ձեզ բան. եւ ասէ Յովնաթան ցկա-

[1] ԵԲԸ. ի պահակ այլազգեացն որ ի կրճին [2] ԵԲԸ. Իքաբովթայ [3] ԵԲԸ. Հեղեայ [4] ԵԲԸ. դ-ի-ո-ւ [5] ԵԲԸ. Մին ի ժայռից կայր ի հիւսիսոյ յանդիման Մաքմասայ, եւ մեւսն ի հարաւոյ հանդէպ Գաբայ [6] ԵԲԸ. ի պահակ [7] ԵԲԸ. յայտնեսցուք նոցա [8] ԵԲԸ. պատահեսցուք [9] ԵԲԸ. պահակին

պարճակիրն իւր, Եկ զկնի իմ, զի մատ-
13 նեաց զնոսա Տէր ի ձեռս Իսրայէլի։ Եւ ել Յովնաթան յաճախիբերս, եւ կապարճակիրն նորա [10]ընդ նմա եւ հայեցան ընդդէմ" Յովնաթանու, եւ [11]նոքա զնո-
սա. եւ կապարճակիրն սայր առէպ"
14 զնոսա նորա։ Եւ եղեն առաջին հարուածքն զոր եհար զնոսա Յովնաթան եւ կապարճակիրն իւր՝ իբրեւ քսան ա-
նոցց, [12]նետիւք եւ բռնաքարամբք դաշ-
15 սին"։ Եւ եղեւ խռովումբիւն յանդին, ի բանակին, եւ [13]ամենայն ժողովուրդն որ ի կիրճսն էին" եւ ապականիչքն զարհուրեցան, [14]եւ ոչ կամէին աշխատել". եւ դղրդեցաւ երկիրն, եւ եղեւ[15] ի Տեառնէ։
16 Եւ տեսին դէտքն Սաուղայ ի Գաբայ Բենիամինի, եւ ահա խռովեալ էր բա-
17 նակն յայսկոյս յայնկոյս։ Եւ ասէ Սաուղ ցժողովուրդն որ ընդ նմա, Հանդէս արարէք եւ տեսէք ո՞վ երթեալ իցէ ի մէջ. եւ հանդէս արարին, եւ ոչ գտանէր Յովնաթան եւ կապարճակիր
18 նորա։ Եւ ասէ Սաուղ ցԱքիա, Մատո [16]զնիւռդ. քանզի նա կրէր զնիւռդն." զի էր տապանակն Աստուծոյ յաւուր
19 յայնմիկ առաջի Իսրայէլի։ Եւ եղեւ մինչդեռ խօսէր Սաուղ ընդ քահանային, եւ աղաղակ ի բանակին այլազգեաց երթալով երթայր եւ յաճախէր. եւ ասէ Սաուղ ցքահանային, Ամփոփեա զձեռն քո
20 Եւ ել Սաուղ եւ ամենայն ժողովուրդն որ ընդ նմա, եւ եկին մինչեւ ցպատերազմն. եւ ահա եղեւ սուր առն ի վերայ ընկերի իւրոյ, եւ ազմուկ մեծ յոյժ։
21 Եւ [17]ծառայքն որ էին ընդ այլազգիսն յերկկին եւ յետնոյն՝ որ ելեալ էին ընդ բանակին, դարձան անդրէն լինել ընդ Իսրայէլի եւ ընդ Սաուղայ եւ Յովնա-
22 թանու։ Եւ ամենայն Իսրայէլ որ թաքուցեալ էին ի լերինն Եփրեմի, իբրեւ լուան եթէ փախեան այլազգիքն, խմբեցան եւ
23 նոքա եւս զնա նոցա ի պատերազմ։ Եւ փրկեաց Տէր յաւուր յայնմիկ զԻսրայէլ, եւ պատերազմն պատեաց զԲեթաւենաւ։
24 [18]Եւ ամենայն ժողովուրդն էր ընդ Սա-

[10] ԵԲԸ. զհետ նորա, եւ անկան առաջի [11] ԵԲԸ. կապարճակիր նորա սպանանէր [12] ԵԲԸ. իբրեւ ի վերայ կիսոյ արտավարի գեանոյ [13] ԵԲԸ. յամենայն ժողովրդեան. պահակն [14] ԵԲԸ. նոքա եւս [15] ԵԲԸ. յԱստուծոյ [16] ԵԲԸ. զտապանակն Աստուծոյ [17] ԵԲԸ. երբայեցիքն [18] ԵԲԸ. Եւ այր Իսրայէլ տագնապեցաւ յաւուր յայնմիկ. եւ Սաուղ երդմնեցոյց

ւուղայ իբրեւ տասն հազար արանց. եւ էր պատերազմ ցրուեալ ընդ ամենայն քաղաքն ի լերինն Եփրեմի։ Եւ Սաւուղ անդիտացաւ անգիտութիւն յաւուր յայնմիկ, եւ նզովեաց՝ զժողովուրդն եւ ասէ, Անիծեալ լիցի մարդն որ կերիցէ հաց մինչեւ ցերեկոյ. եւ ինդրեցից վրէժ ի թշնամեաց իմոց. եւ ոչ ճա-
25 չակեաց ամենայն ժողովուրդն հաց. Եւ ամենայն [1]երկիրն ճաչէր. եւ անդ էր
26 անտառ մեղուաց հանդչել անդրին։ Եւ եմուտ զօրն [2]ի մեղուանոցն, եւ անցանէին քրմծնկղով. եւ չէր ոք որ դարձուցանէր զձեռն իւր ի բերան իւր. քանզի երկեաւ ժողովուրդն յերդմանէն
27 [3]Տեառն։ Եւ Յովնաթանաւ չէր լուեալ երթ երդմնեցուցից հայր նորա զժողովուրդն, եւ կարկառ զձող գաւազանի իւրոյ որ ի ձեռին իւրում, եւ եհար ի խորիսխ մեղու. եւ դարձոյց զձեռն իւր ի բերան իւր, եւ բացան աչք նորա։
28 Եւ պատասխանի եառ մին ի զօրուէ անտի եւ ասէ, Երդմնեցուցանելով երդմնեցոյց հայր քո զժողովուրդս եւ ասէ, Անիծեալ լիցի այր որ կերիցէ հաց մինչեւ
29 ցերեկոյ։ Եւ լքաւ ժողովուրդն։ Եւ [3]իրեւ զիաց Յովնաթան ասէ, Կորոյս հայր իմ զերկիրս. զի եթէ տեսին աչք իմ, վասն զի ճաչակեցի սակաւ մի ի
30 մեղուէս յայսմանէ. եթէ ուտելով կերեալ էր այսօր ժողովրդեանն յաւարէ թշնամեաց իւրեանց զոր գտին, մինչ-
31 մեծ հարուածս առնէին յայլազգիսն։ Եւ [4]եհար յաւուր յայնմիկ յայլազգեացն [5]ի Մաքմաս. եւ աչխատեցաւ ժո-
32 ղովուրդն յոյժ։ Եւ յարձակեցաւ ժողովուրդն յաւարն. եւ առ ժողովուրդն զխօտս եւ զանգեայս եւ զծնունդս արջառոց, եւ սպանանէր ի վերայ երկրի, եւ ուտէր ժողովուրդն հանդերձ արեամբն։
33 Ազգ եղեւ Սաւուղայ եւ ասեն, թէ Մեղաւ ժողովուրդն Տեառն. զի կերան արեամբ հանդերձ. եւ ասէ Սաւուղ, [6]ի Գեթթաիմա անօրինեցայք՝. թաւա-
34 լեցուցէք ինձ այսր վէմ մի մեծ։ Եւ ասէ Սաւուղ, Սփռեցայք ընդ ժողովուրդս եւ ասացէք ցդոսա մատուցանել այսր զիւրաքանչիւր արջառս իւր եւ զիւրաքանչիւր ոչխար իւր, եւ սպանէք ի վերայ զորա եւ կերայք զդոսա. եւ մի մեղանչէք Տեառն ուտելով հանդերձ արեամբ։ Եւ մատոյց ժողովուրդն իւրաքանչիւր [7]որ ի ձեռն իւր գոմ՝ զոյգն,
35 եւ սպանանէին անդ։ Եւ չինեաց անդ Սաւուղ սեղան Տեառն. գայն նախ սկսաւ Սաւուղ չինել սեղան Տեառն։
36 Եւ ասէ Սաւուղ, Իջցուք զհետ այլազգեացն զգայգս եւ յաւիւտակեացուք ի նոցանէն մինչեւ լուսաւգի օր, եւ մի թողցուք ի նոցանէ այր. եւ ասեն ցնա, Զամենայն զոր ինչ հաճոյ թուի աւագի աչաց քոց՝ արա։ Ասէ քահանայն, Մա-
37 տիցուք առ առ Աստուած։ Եւ եհարց Սաւուղ զԱստուած, Իջցո՞ւք զհետ այլազգեացն, եթէ մատնեսցե՞ս զնոսա ի ձեռս Իսրայելի։ Եւ ոչ արար նմա պա-
38 տասխանի Տէր յաւուր յայնմիկ։ Եւ ասէ Սաւուղ, [8]Մատուցէք այսր զամենայն ազգս Իսրայելի՝, եւ գիտասջիք եւ տեսջիք թէ վասն ո՞յր եղեն այսօր մեղքս
39 այսոքիկ։ Զի կենդանի է Տէր որ փրկեաց զԻսրայէլ, եթէ զՅովնաթանայ որդւոյ իմոյ տայցէ պատասխանի, մահու մեռցի. եւ ոչ ոք էր որ տայր պատաս-
40 խանի յամենայն ժողովրդենէն։ Եւ ասէ ցամենայն այր Իսրայելի, Դուք լինջիք ի մի կողմն, եւ ես եւ Յովնաթան որդի իմ եղիցուք ի մի կողմն. եւ ասէ ժո-
41 ղովուրդն ցՍաւուղ, Որ ինչ հաճոյ լցէ առաջի աչաց քոց՝ արա։ Եւ ասէ Սաւուղ, Տէր Աստուած Իսրայելի, [9]զի՞ է զի ոչ ետուր պատասխանի ծառայի քումմէ յաւուր յայսմիկ. եթէ յիս լցեն այսօր եւ եթէ ի Յովնաթան յորդի իմ անօրէնութիւնք, տուր յայտնութիւն եւ եթէ ի ժողովրդեան քում Իսրայելի լցէ անիրաւութիւն՝ տուր քաւութիւն։ Եւ արկին վիճակս Յովնաթանու եւ Սաւուղայ՝.
42 եւ ել ժողովուրդն արտաքս։ Եւ ասէ Սաւուղ, Արկէք վիճակ ընդ իս եւ ընդ Յովնաթան որդի իմ. [3]եւ որում հանցէ Տէր գվիճակն՝ մեռցի։ Եւ ասէ ժողովուրդն ցՍաւուղ, Մի լիցի բանդ այդ։
Եւ ստիպեաց Սաւուղ զժողովուրդն, եւ արկին ընդ նա եւ ընդ Յովնաթան որդի

[1] ԵԲԲ. երկիրն, ՅԽԽ՝ ժողովուրդն, ԵԿՆ յանտառն, եւ էր մեղր ընդ երեսս դաշտին [2] ԵԲԲ. յանտառն, եւ ահա գնայր մեղր [3] ԵԲԲ. զ-ի-ո-ե [4] ԵԲԲ. Հարին [5] ԵԲԲ. ի Մաքմասայ ՅՕՅԵԳՆ [6] Ի Գեթթաիմա, ՅԵԲԲ-Ա-ՆԽՆ՝ Պղկատթեմ; ՆՂՆ-ԱԼԿ անօրինեցայք։

[7] ԵԲԲ. զարջառ իւր [8] ԵԲԲ. Մատերազ այսր ամենայն իշխանք ժողովրդեանն [9] ԵԲԲ. յայտնեա զարդարութիւն. եւ ըմբռնեցաւ Յովնաթան և Սաւուղ

նորա .” եւ ել վիճակն Յաշխաբաամու։
43 Եւ ասէ Սաուղ ցՅոնաթան , Պատմեա
ինձ զինչ արարեր . եւ պատմեաց նմա
Յաշխաբաամ եւ ասէ , Ճաչակելով ճաչա-
կեցի ծայրիւ գաւազանին որ ի ձեռն
իմում առեալ ի մեղր , եւ անա մեռա-
44 նեմ ես։ Եւ ասէ ցնա Սաուղ , Ոմն եւ
օն արասցէ ինձ Աստուած եւ օն եւ օն
յաւելցէ , եթէ ոչ մահա մեռանիցիս
45 [1]այսօր։ Եւ ասէ ժողովուրդն ցՍաուղ ,
Թաւ լիցի եթէ մեռանիցի [1]այսօր , որ
արար զփրկութիւնս զայս մեծ Իսրայէլի.
կենդանի է Տէր եթէ անկցի ի հերաց
գլխոյ նորա յերկիր . զի [2]ժողովուրդս
Աստուծոյ արար զմեզս զայսոքիկ ։ Եւ
եկաց ժողովուրդն յաղօխս առ Տէր վասն
Յաշխաբաամու յաւուր յայնմիկ”, եւ ոչ
46 մեռաւ ։ Եւ դարձաւ Սաուղ յայլազգիսն
նոցա , եւ այլազգիքն գնացին ի տեղիս
իւրեանց ։
47 Եւ եհար Սաուղ զիշխանութիւն , [3]եւ
վիճակեցաւ” ի վերայ Իսրայէլի. եւ ապր
պատերազմ չուրջ զնոսա զամենայն թշնա-
միս իւր , զՄովաբայ եւ զորդիսն Ամմոնի եւ զնոսա զԵդոմացիսն
[3]եւ զնոսա Բեհովրայ” եւ զնոսա զիշխանսն
Սուբայ եւ զնոսա այլազգիսն. եւ ապ չարչէր
48 վրիժէր։ Եւ առնէր զօրութիւնս առատիկս.
եւ եհար զԱմաղէկ , եւ ապրեցոյց զԻս-
րայէլ ի ձեռաց կոխողաց նորա ։
49 Եւ էին որդիք Սաուղայ Յաշխաբաամ
եւ Յեհուդ եւ Մելքիսուէ. եւ անունք
երկուց դստերաց նորա , անուն անդրան-
կանն Մերաբ , եւ անուն երկրորդին
50 Մելքող ։ Եւ անուն կնոջ նորա Աքի-
նոամ դուստր Աքիմաասա . եւ անուն զօ-
բաւարին նորա Աբենների , որդի Ներնայ
51 որբոյ [4]ընտանւոյ Սաուղայ ։ Եւ Կիս՝
հայր Սաուղայ , եւ Ներ՝ հայր Աբեննե-
րայ , [5]որդիք Յամինայ որբոյ Աբիելի
52 եղեսան եւ ութ”։ Եւ էր պատերազմ
սաստիկ ընդ այլազգիսն զամենայն աւուրս
Սաուղայ . եւ տեսանէր Սաուղ զոր-
մինայն զօրաւոր եւ զամենայն որդի
զօրաւիսան , ժողովեաց զնոսա առ ինքն։

Գլ. ժե

1 Եւ ասէ Սամուէլ ցՍաուղ , Զիս ա-
ռաքեաց Տէր օծանել զքեզ ի թագաւոր
ի վերայ ժողովրդեան իւրոյ Իսրայելի .
եւ արդ լուր ձայնի պատգամաց Տեառն։
2 Այսպէս ասէ Տէր զօրութեանց . Արդ
խնդրեցից զվրէժ , զոր արար Ամաղէկ
ընդ Իսրայելի . զիարդ պատահեաց նմա
ի ճանապարհն ելանելոյ նորա յԵգիպ-
3 տոսէ ։ Եւ արդ երթ եւ հարցես զԱմա-
զէկ եւ [6]զՅարիմ եւ” զամենայն որ ինչ
նորա իցէ . եւ մի ապրեցուցանիցես ի
նոցանէ , եւ սատակեսցես զնա եւ կո-
րուսցես յամէն մինչեւ ցկին եւ ի տղայոյ
մինչեւ ցանմղիացն , եւ յարջառոյ մինչեւ
ցոչխար եւ յուղտէ մինչեւ ցէշ ։
4 Եւ հրամայեաց Սաուղ ժողովրդեանն,
եւ համրէր զնոսա [7]Աղիմ , չորեք
հարիւր հազար զօտեականաց , եւ երե-
սուն հազարաց զօտեականաց” Յուդայ ։
5 Եւ եկն Սաուղ մինչեւ ցքաղաքն Ամա-
զեկայ , եւ զօրանոմուտ եղեւ ի հե-
6 ղեղաձոր ։ Եւ ասէ Սաուղ ցկինեացն ,
Երթ խոյս տուր ի միջոյ Ամաղեկացւոյն,
զի մի սատակիցիմ զքեզ ընդ նմա . եւ
դու արարեր ողորմութիւն ընդ ամե-
նայն որդիսն Իսրայելի յելանելն նոցա
յԵգիպտոսէ . եւ խոյս եաս կինեացն ի մի-
7 ջոյ Ամաղեկայ ։ Եւ եհար Սաուղ զԱ-
մաղէկ յԵւիլատայ մինչեւ ի Սուր , որ է
8 հանդէպ Եգիպտոսի . Եւ կալաւ զԹա-
գաւորն Ամաղեկայ զԱգագ կենդանւոյն,
եւ զամենայն ազգն [8]Յարիմայ կոտորե-
9 ցին սրով սաստիկ ։ Եւ ապրեցոյց Սա-
ուղ եւ [9]ամենայն ժողովուրդն զԱգագ
[8]կենդանի , եւ զընտիրս խաչանց եւ
զանդաց եւ [8]զկերակրից եւ զայգեաց
եւ զամենայն բարեվիճից”, եւ ոչ կա-
մեցաւ սատակել զնոսա . եւ զամենայն
գործ զանարգ եւ զարհամարհեալ սա-
տակեցին ։
10 Եւ եղեւ բան Տեառն առ Սամուէլ եւ
11 ասէ , Զղջացեալ եմ զի թագաւորեցուցի
զՍաուղ ի թագաւոր. զի դարձաւ յինէն
յետս , եւ զբանս իմ ոչ պահեաց ։ Եւ
արամեցաւ Սամուէլ , եւ գոչեաց Սա-
12 մուէլ առ Տէր զկնի ամենայն ։ Եւ
կանխեաց Սամուէլ եւ գնաց ընդ առաջ
[9]Իսրայելի ընդ առաւօտն . եւ աղդ ե-
ղեւ Սամուելի եւ ասեն , Եկն Սաուղ

[1] Եբբ. Յաշխաբաամ [2]Եբբ. Աստուածով արար չորեք-բիւրն յաւուր յայսմիկ։ Եւ փրկեաց ժողովուրդն զՅաշխաբաամ [3]Յեբբ. պակաս [4]Եբբ. Հօրեղբօր [5]Եբբ. որդի Աբիելի

[6]Եբբ. Նովկացիս [7]Եբբ. ի Տեզայիմ երկերիւր հազար հետեւակաց, եւ ոտն հազար արանց [8]Եբբ. զպարարան, եւ զգառինս եւ զամենայն բարեվիճիսն [9]Եբբ. Սաուղայ

ի Կարմելոս եւ կանգնեաց իւր ձեռն, եւ [1]գարձոյց զկառն" եւ էջ ի Զազզաղա։
13 Եւ ահն Սամուէլ առ Սաուղ. [2]եւ անա նա մատաղանէր զպակիղս Տեառն զառաջինս առաջին զոր ած յԱմաղեկայ։ Եւ ահն Սամուէլ առ Սաուղ," եւ ասէ ցնա Սաուղ, Օրհնեալ դու ի Տեառնէ. կատարի զոր ինչ խօսեցար Տէր։ Եւ ասէ Սամուէլ, Եւ զինչ է բարբառ հօտիցդ այգոյիկ յականջս իմ, եւ բարբառ արջառոյդ զոր ես լսեմ։ Եւ ասէ Սաուղ, ՅԱմաղեկայ ածին զայդ զոր ապրեցոյց ժողովուրդ, զընտիրս խաչանց եւ զարջառոց, զի զոհեսցին Տեառն Աստուծոյ քումմ. եւ զայլսն [3]ատակեցաք։
16 Եւ ասէ Սամուէլ ցՍաուղ, Անսա եւ պատմեցից քեզ զոր խօսեցաւ Տէր ընդ իս յայսմ գիշերի։ Եւ ասէ ցնա, Խօս17 եաց։ Եւ ասէ Սամուէլ ցՍաուղ, Ո՞չ ապաքէն փոքր [4]ես դու առաջի նորա զօրավար գլխոց ազգացն Իսրայէլի, եւ օծ զքեզ Տէր թագաւոր ի վերայ Իս18 րայէլի. Եւ առաքեաց զքեզ Տէր ի ճանապարհ, եւ ասէ ցքեզ, երթ եւ սատակեա զմեղաւորսն զիս զԱմաղէկ. եւ տացես ընդ նմա պատերազմ մին19 չեւ վախճանեսցես զնոսա. Եւ ընդէր ոչ լուար ձայնի Տեառն, այլ յարձակեար գիմիմ ի վերայ աւարիս, եւ արա20 րեր չար առաջի Տեառն։ Եւ ասէ Սաուղ ցՍամուէլ, [5]Վասն լսելոյ լսի ձայնի ժողովրդեանն", եւ չոգայ ի ճանապարհն զոր առաքեաց զիս Տէր, եւ ած զԱգագ արքայ Ամաղեկայ, եւ զԱ21 մաղէկ սատակեցի։ Եւ առ ժողովուրդս յաւարէ անտի հօտս եւ անդրանս գրնտիրս սատակմանն՝ [6]առաջի Տեառն Աս22 տուծոյ գոհել" ի Գաղգաղա։ Եւ ասէ Սամուէլ, Եթէ հաճոյ իցէ Տեառն ողջակէզ եւ զոհ իրրեւ լսել ձայնի Տեառն. ահա լաւ է ականկրտութիւն քան զզոհ ընտիր, եւ հնազանդութիւն քան զճարպ23 խոյոց։ Զի [7]հնազանդ մեղք են, եւ կամ եւ աչխատութիւնս սեռ է խեթացւոց ի վերայ". զի արհամարհեցեր զբան Տեառն, արհամարհեաց զքեզ Տէր չլինել թագաւոր [2]ի վերայ Իսրայէլի"։
24 Եւ ասէ Սաուղ ցՍամուէլ, Մեղայ զի անցի զբանիս Տեառն եւ զբանիս քոյ, զի երկեայ ի ժողովրդենէն եւ լսեայ25 ձայնի նոցա։ Եւ այժ թարձ զվնասս իմ, եւ դարձիր ընդ իս, եւ պագից երկիր26 Տեառն Աստուծոյ քումմ։ Եւ ասէ Սամուէլ ցՍաուղ, Ոչ դարձայց ընդ քեզ, զի արհամարհեցեր զբանն Տեառն, եւ արհամարհեաց զքեզ Տէր չլինել թա27 գաւոր ի վերայ Իսրայէլի։ Եւ դարձայց Սամուէլ զկերպս իւր ի գնալ, եւ բռնեաց նմա Սաուղ զտունդ կրկնոցի նորա եւ28 [8]պատառեաց գնա"։ Եւ ասէ ցնա Սամուէլ, Պատառեաց Տէր զթագաւորութիւնդ ի ձեռաց քոց յԻսրայէլ այսօր, եւ ասաց զայս ընկերի քումմ լաւագունի29 քան զքեզ։ [9]Եւ բամբասանաց Իսրայէլ ընդ երկա. եւ ոչ դարձցի եւ ոչ զղջասցի Տէր." զի ոչ մարմնի եւ ոչ զղջասցի30 Տէր." զի ոչ մարմնի իրրեւ դմարդ է ի զղջանալ. [2]ինքնին ապաշխացի" Եւ ասէ Սաուղ, Մեղայ. այլ մեծարեա զիս առաջի ծերոց ժողովրդեան իմոց, եւ առաջի Իսրայէլի. եւ դարձիր ընդ իս, եւ երկիր պագից Տեառն Աստուծոյ քումմ։
31 Եւ դարձաւ Սամուէլ զկնի Սաուղայ, եւ երկիր եպագ [10]Տեառն։
32 Եւ ասէ Սամուէլ, Մատուսկէք առ իս զԱգագ Թագաւորն Ամաղեկայ. եւ մատեաւ առ նա Ագագ [11]գողգողով. եւ ասէ Ագագ, [12]Եթէ այսպէս դառն իցէ մահ"։
33 Եւ ասէ Սամուէլ ցԱգագ, Զոր օրինակ որդեկատար արար սուր քո զկանայս, նոյնպէս որդեկատար լիցի ի կանանց մայր քո։ Եւ [13]սպան Սամուէլ զԱգագ առաջի Տեառն ի Գաղգաղա։
34 Եւ գնաց Սամուէլ յԱրիմաթեմ, եւ
35 Սաուղ եկ ի տուն իւր ի Գաբաա։ Եւ ոչ եւս յաւել Սամուէլ անտանել զՍաուղ մինչեւ յօր մահուան իւրոյ. զի տուր ունէր Սամուէլ ի վերայ Սաուղայ. եւ զղջացաւ Տէր զի թագաւորեցոյց զՍաուղ ի վերայ Իսրայէլի։

ԳԼ. ԺԶ

1 Եւ ասէ Տէր ցՍամուէլ, Մինչեւ գ՞երբ տուր տունաս ի վերայ Սաուղայ. եւ ես անարգեցի զնա չթագաւորել ի վե-

[1] ՆԵԲ. գարձաւ եւ անց [2] ՆԵԲ. պ-ի-ո-ե [3] ՆԵԲ. սատակեցաք [4] ՆԵԲ. էիր դու յաչս քո, եգեր գլուխ գեղին [5] ՆԵԲ. Լուայ ձայնի Տեառն [6] ՆԵԲ. զոհել Տեառն Աստուծոյ քումմ [7] ՆԵԲ. մեղք հմայից՝ ապստամբութիւն, եւ ստութիւն եւ թերափիմ՝ անաստուածութիւն

[8] ՆԵԲ. պատառեցաւ [9] ՆԵԲ. Զի Սպասէնն Իսրայէլի ոչ ստեացէ եւ ոչ զղջացի [10] ՆԵԲ. Աստուծ Տեառն [11] ՆԵԲ. փափկութեամբ [12] ՆԵԲ. Արդարեւ անց դառնութիւն մահու [13] ՆԵԲ. յօշեաց

բայ Իսրայելի. լից զեղջեր քո իւղով, եւ եկ առաքեմ զքեզ առ Յեսսէ [1]մինչեւ
2 Բեթղեհեմ՝". զի տեսի ես յորդւոցն նո- րա թագաւորել ինձ ի թագաւոր։ Եւ ասէ Սամուէլ, Զիարդ երթայց. եւ լսիցէ Սաւուղ եւ սպանանիցէ զիս։ Եւ ասէ Տէր, առ զոս ինձ երինջ մի յարջառոց.
3 եւ ասասցես՝ զոհել Տեառն եկի. Եւ կոչեսցես զՅեսսէ ի զոհն. եւ ցուցից քեզ զինչ առնիցես. եւ օծցես զոր ես ասացից քեզ։
4 Եւ արար Սամուէլ զամենայն զոր խօսեցաւ ընդ նմա Տէր, եւ եկն ի Բեթղեհեմ։ Եւ զարհուրեցան ծերք քաղաքին ի պատահել նմա, եւ ասեն, Խաղաղութիւն լցէ մուտդ քո, [2]տեսանօղդ։
5 Եւ ասէ, Խաղաղութիւն է. զոհել Տեառն եկի. սրբեցարուք եւ [3]ուրախ լերուք ընդ իս այսօր՝". եւ սրբեաց զՅեսսէ եւ զորդիս նորա, եւ կոչեաց զնոսա ի
6 զոհն։ Եւ եղեւ ի մտանելն նոցա եւես զեղբարս եւ ասէ, Այլ եւ առաջի իսկ
7 Տեառն օծեալ իւր։ Եւ ասէ Տէր ցՍամուէլ, Մի՛ հայիր ընդ տեսիլ դորա, եւ մի՛ ի միջոցիսն հասակի դորա, զի ա- նարգեցի զդա. զի ոչ եմէ որպէս տես- անիցէ մարդ՝ [2]տեսանէ Աստուած՝". զի մարդ հայի յերեսս, եւ [4]Աստուած
8 հայի ի սիրտս։ Եւ կոչեաց Յեսսէ զԱբի- նադաբ, եւ անց առաջի Սամուէլի. եւ
9 ասէ, Եւ ոչ զդա ընտրեաց Տէր։ Եւ անցոյց Յեսսէ զՍամմա. եւ ասէ, Եւ ոչ
10 զդա ընտրեաց Տէր։ Եւ անցոյց Յեսսէ զեւթանեսին զորդիսն իւր առաջի Սա- մուէլի. եւ ասէ Սամուէլ ցՅեսսէ, Ոչ
11 ընտրեաց ի դոցանէ Տէր։ Եւ ասէ Սա- մուէլ ցՅեսսէ, Ա՞յդչափ են մանկտիդ, Եւ ասէ, Կայ մնաւ եւս փոքրիկ եւ ա- րածէ խաչն։ Եւ ասէ Սամուէլ ցՅեսսէ, Առաքեա եւ առ զնա. զի ոչ բազմես-
12 ցուք մինչեւ ի դալ նորա այսր։ Եւ ա- ռաքեաց եւ առ զնա. եւ նա էր կար- միր եւ աչօք գեղեցիկ եւ բարւոք տես- անելով [2]Տեառն։ Եւ ասէ Տէր ցՍա- մուէլ, Արի օծ [5]զդաւիթ, զի գա է
13 [3]բարի։ Եւ առ Սամուէլ զեղջերն իւ- ղոյ, եւ օծ զնա ի մէջ եղբարց իւրոց. եւ խաղաց Հոգի Տեառն ի վերայ Դաւթի յօրէ յայնմանէ եւ առ յապա. եւ յար- եաւ Սամուէլ եւ գնաց Յարիմաթեմ։

14 Եւ Հոգի Տեառն վերացաւ ի Սաւու- ղայ, եւ խեղդէր զնա այս չար ի Տեառնէ։
15 Եւ ասեն ցնա ծառայքն իւր, Ահա այս
16 չար [6]ի Տեառնէ խեղդէ զքեզ. [7]Խօսեսցին ծառայք քո առաջի քո, եւ խնդրեսցեն տեառն մերում՝" այր մի որ դիտիցէ եր- դել քնարաւ. եւ եղիցի ի հասանել ի վերայ քո այսոյն չարի որ յԱստուծոյ՝ երգեսցէ քնարաւն, եւ դիւր լիցի քեզ
17 եւ հանդուսցէ զքեզ։ Եւ ասէ Սաւուղ ցծառայսն իւր, Տեսէք ինձ այր մի որ բարւոք երգիցէ, եւ ածէք զնա առ իս։
18 Պատասխանի ետ մի ոմն ի մանկտւոյ նորա եւ ասէ, Ահա տեսի զորդի Յես- սեայ զԲեթղեհեմացի, եւ գիտէ սաղ- մոս, եւ այր իմաստուն եւ այր պա- տերազմող, եւ այր հանճարեղ եւ ճար- տարան, եւ այր գեղեցիկ տեսլեամբ,
19 եւ Տէր ընդ նմա։ Եւ առաքեաց Սաւուղ հրեշտակս առ Յեսսէ, եւ ասէ, Առաքեա առ իս զԴաւիթ որդի քո որ ի հօտի
20 քումէ։ Եւ առ Յեսսէ [8]արդուս մի հացի՝" եւ տիկ մի գինւոյ եւ ուլ մի յայծեաց, եւ առաքեաց ի ձեռն Դաւթի որդւոյ
21 իւրոյ՝ Սաւուղայ։ Եւ եհուտ Դաւիթ առ Սաւուղ, եւ կայր ի պատուս առա- ջի նորա. եւ սիրեաց զնա յոյժ, եւ ե-
22 զեւ նորա կապարճակիր։ Եւ առաքեաց Սաւուղ առ Յեսսէ եւ ասէ, Կացցէ Դաւիթ առաջի իմ, զի եգիտ չնորհս ա-
23 ռաջի աչաց իմոց։ Եւ լինէր յորժամ հասանէր այն չար ի վերայ Սաւուղայ, առնոյր Դաւիթ զքնարն եւ նուագէր ձեռամբ իւրով, եւ հանգուցանէր զՍա- ւուղ, եւ դիւրանայր նմա, եւ մեկնէր ի նմանէ այն չար։

ԳԼ. ԺԷ

1 Եւ ժողովեցին այլազգիքն զբանակս իւրեանց ի պատերազմ, եւ գումարե- ցան ի Սոկքով Հրէաստանի. եւ բանա- կեցան ընդ Սոկքով եւ ընդ Ազեկա յԱ-
2 փեսդոմին։ Եւ Սաւուղ եւ արք Իսրա- յելի ժողովեցան եւ [9]նոքա ի հովիտն՝", եւ ճակատեցան ի պատերազմ ընդդէմ այլ-
3 ազգեացն։ Եւ այլազգիքն կային ի վերայ լերինն յայնմ կողմանէ, եւ Իսրայէլ կայր ի վերայ լերինն յայսմ կողմանէ, եւ հո-
4 վիտն ի մէջ նոցա։ Եւ ել այր զօրա-

[1] ԵԲԲ. Բեթղեհեմացի [2] ԵԲԲ. պահաբ եկայք ընդ իս ի զոհն [3] ԵԲԲ. Տէր [4] ԵԲԲ. Տէր [5] ԵԲԲ. զդա [6] ԵԲԲ. յԱստուծոյ [7] ԵԲԲ. Արդ խօսեսցի տէր մեր ծառայից իւրոց առաջի իւր, խնդրեսցեն [8] ԵԲԲ. հաց բերեալ հաց [9] ԵԲԲ. բանակեցան ի հովտին Եղայ, այ-ինձ՝ Կաղնւոյն

ւոր ի ճակատէ այլազգեացն, Գողիաթ անուն նորա ի Դեմեայ. բարձրութիւն
5 նորա վեց կանգունն եւ թղաւ, եւ [1]սաղաւարտ ի ղլուխ նորա, եւ զրահս վիրաս զգեցեալ. եւ կշիռ զրահիցն նորա հինգ
6 հազար սիկղ պղնձոյ [2]եւ երկաթոյ՝: եւ սռնապանկ պղնձիք ի վերոյ բարձեալ նորա, եւ վահան պղնձի ի վերոյ ի միջի նոցա: եւ բունն զեղարկանն նորա իբրեւ զաստիլ ոստայնանկաց, եւ ակն նորա ի վեց հարիւր սկղէ երկաթոյ. եւ զինակիր նորա առաջի նորա երթայր:
8 Եկն եկաց, ձայն եհաս ի ճակատն Իսրայէլի եւ ասէ ցնոսա, Ընդէ՞ր ելանէք ճակատել ի պատերազմ [2]ընդդէմ մեր՞. ոչ ապաքէն ես այլազգի եմ, եւ դուք [2]Երբայեցիքՙ ծառայք Սաւուղայ. ընտրեցէք
9 դուք ձեզ այր մի, եւ իջցէ առ իս. եթէ կարասցէ կռուել ընդ իս եւ հարկանել զիս, եղիցուք մեք ձեզ ի ծառայս. ապա թէ ես յաղթեցից եւ հարից զնա, եւ դուք մեզ ի ծառայս եւ ծառայեսջիք մեզ: Եւ ասէ այլազգին, Անհասեսիկ ես նախատեցի զճակատս Իսրայէլի յաւուր յայսմիկ. տուք այր մի, եւ ես եւ նա մենամարտեսցուք երկոքեան: Իբրեւ լուաւ Սաւուղ եւ ամենայն Իսրայէլ զբանս այլազգւոյն, զայն հարան եւ երկեան յոյժ:
12 Եւ էր այր մի որդի ածն Եփրաթացւոյ, եւ նա ի Բեթղեհեմէ Յուդայ, եւ անուն նորա Յեսսէ. եւ էին նորա որդիք ութ. եւ այրն յաւուրս Սաւուղայ
13 ծերացեալ հասեալ յարս: Եւ գնացին երիք որդիքն Յեսսեայ մեծագոյնքՙ երթեալ զհետ Սաւուղայ ի պատերազմ. եւ անուանք որդւոց նորա երթելոց ի պատերազմ, եղիաբ անդրանիկ նորա, եւ երկրորդ նորա Աբինադաբ, եւ երրորդ
14 նորա Սամաա. Եւ Դաւիթ էր կրասեր, եւ երիքեանն մեծագոյնքն երթեալ էին
15 զհետ Սաւուղայ: Եւ Դաւիթ գնացեալ դարձաւ ի Սաւուղայ արածել զոչխարս
16 հօր իւրոյ ի Բեթղեհեմ: Եւ մատուցեալ այլազգւոյնՙ կանխեալ եւ անպատնեալ առաջանայր աւուրս քառասուն:
17 Եւ ասէ Յեսսէ ցԴաւիթ ցորկի իւր, Առ դու եղբարց քոց զսրտաւ փռինգոյս այսորիկ, եւ զտասն նկանակս զայսոսիկ, եւ պնդեա ի բանակն եւ տուր եղբարց
18 քոց: Եւ զտասն մածառակս զկաթին

[1] ԵԲԲ. սաղաւարտ պղնձի [2] ՅԵԲԲ. պ-ի-ե

տարցես հազարապետին. եւ տեսցես զողջոյն եղբարց քոց, եւ [3]նիշ պիտիք
19 ինչ իցեն նոցա, իմասցիս՞: Եւ Սաւուղ եւ ամենայն այր Իսրայելացի էին ի հովիտ Կաղնւոյն, պատերազմեալ ընդ այլազգիսն:
20 Եւ կանխեաց Դաւիթ ընդ առաւօտն, եւ եթող զոչխարսն ի տուարածականն, առ եւ գնաց որպէս եւ հրամայեաց նմա Յեսսէ. եւ եկն [4]ի տափարակն եւ ի զօրն որ ելանէր ի ճակատն, եւ աղաղակեցին
21 ի պատերազմին, եւ ճակատեցան Իսրայելացիքն եւ այլազգիքն հանդէպ միմեանց ճակատ ընդ ճակատ: Եւ եթող Դաւիթ զկարասին յինքեանէ ի ձեռն վարնապանին, եւ ընթացաւ ի ճակատն, եւ եկն եհարց զողջոյն եղբարցն իւրոց:
23 Եւ մինչդեռ նա խօսէր, ահա այրն [5]Ցաւիմեացի ելանէր, Գողիաթ անուն նորա, փղշտացի ի Գեթայ՝ ի ճակատուց այլազգեացն, եւ խօսեցաւ ըստ նմին բանից,
24 եւ լսեաւ Դաւիթ: Եւ ամենայն Իսրայէլ ի տեսանել իւրեանց զայրն՝ փախեան յերեսաց նորա, եւ զարհուրեցան յոյժ:
25 Եւ ասէ այր Իսրայելի, եթէ Տեսանէ՞ք զայրն զայն որ ելանէ, զի նախատել ելանէ զԻսրայէլ. եւ եղիցի այր որ սպանանիցէ զնա, մեծացուսցէ զնա արքայ յոյժ մեծութեամբ, եւ զդուստր իւր ասցէ նմա ի կնութեան, եւ զտուն հօր նորա արասցէ ազատ ի մէջ Իսրայելի:
26 Եւ խօսեցաւ Դաւիթ ընդ այսն որ չուրջ կային զնովաւ եւ ասէ, Զի՞նչ առնիցի առն որ հարկանիցէ զայլազգին զայն, եւ բառնայցէ զնախատինս Իսրայելէ. զի ո՞վ է այլազգին այն անթլփատ, զի նախատեսցէ զճակատս Աստուծոյ կենդանւոյն:
27 Եւ խօսեցաւ ընդ նմա ժողովուրդն ըստ նմին բանից եւ ասէ, Այնպէս արասցի առն՝ որ սպանանիցէ զնա:
28 Իբրեւ լուաւ եղիաբ եղբայր նորա երէց զխօսել նորա ընդ արան, բարկացաւ սրտմտութեամբ եղիաբ Դաւթի եւ ասէ, Ընդէ՞ր իջեր այսր, եւ յո՞ր ձեռն թողեր զսակաւ ոչխարսդ յանապատի անդ. ես գիտեմ զպարծանս քո եւ զչարութիւն սրտի քո, զի վասն տեսանելոյ զպատերազմն իջեր:
29 Եւ ասէ Դաւիթ, Եւ արդ զի՞նչ արարի.
30 ոչ ապաքէն բանք իցեն: Եւ դարձաւ ի

[3] ԵԲԲ. գրաւ նոցա առցես [4] ԵԲԲ. ի տեղին կառաց [5] ԵԲԲ. ախոյեան

նմանէ ի մեւս կողմն եւ խօսեցաւ ըստ նմին բանից. եւ ետ նմա պատասխանի ժողովուրդն ըստ առաջնոյ բանիցն։
31 Եւ լու եղեն բանքն զոր խօսեցաւ Դաւիթ, եւ պատմեցին առաջի Սաւուղայ,
32 եւ անա զնա առ ինքն։ Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ, Մի՛ անկցի սիրտ [1]տեառն իմոյ՝ ի վերայ իւր. ծառայ քո երթիցէ եւ մարտիցէ ընդ այլազգւոյն ընդ այնմիկ։
33 Եւ ասէ Սաւուղ ցԴաւիթ, Դուզէ ոչ կարիցես երթալ կռուել ընդ այլազգւոյն. զի դու մանուկ ես, եւ նա այր պատե-
34 րազմօղ ի մանկութենէ իւրմէ։ Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ, Արածէր ծառայ քո զխաչխնս հօր իւրոյ, եւ յորժամ գայր առեւծ կամ արջ եւ առնոյր ոչխար ի
35 հօտէ անտի, ելանէի զնա նորա եւ հարկանէի զնա, եւ կորզէի ի բերանոյ նորա. եւ եթէ յառնէր ի վերայ իմ, ունէի զվիզից նորա եւ հարկանէի եւ
36 սպանանէի զնա։ Զառեւծ եւ զարջ սատակէր ծառայ քո. եւ եղիցի այլազ-գին անթլփատ իբրեւ զմի ի նոցանէն. [2]եւ արդ ո՞չ երթայց սատակեցից զնա, եւ բարձից այսօր զնախատինս յԻսրա-յելէ, զի ո՞ ոք է այն անթլփատ որ՝ նախատեաց զրանակս Սատուծոյ կենդ-
37 դանոյ։ Եւ ասէ Դաւիթ, Տէր [3]Սա-տուած որ ապրեցոյց զիս ի ձեռաց առիւծուն, եւ ի ձեռաց արջոյն, նոյն ապրեցուսցէ զիս ի ձեռաց այլազգւոյն [3]անթլփատին այնորիկ։ Եւ ասէ Սաւուղ,
38 Երթ, եւ Տէր եղիցի ընդ քեզ։ Եւ զգես-ցոյց Սաւուղ Դաւիթ զվարպանակս իւր, եւ սաղաւարտ պղնձի ի զլուխ
39 նորա, եւ ագոյց նմա զրահն։ Եւ ած Դաւիթ զսուսեր իւր ի վերայ վարպա-նակացն. եւ [4]պիեաց ի գնալն մի ան-զամ եւ երկիցս՝, եւ ասէ Դաւիթ ցՍա-ւուղ, Ոչ կարեմ երթալ սոքօք, զի չեմ հմուտ. եւ [5]հանին զայն ի նմանէ՝։
40 Եւ անա զգուսան իւր ի ձեռին իւրում, եւ ընտրեաց իւր հինգ քարինս ողորկս ի հեզեզատէն, եւ եդ գնոսա ի հովուա-կան մանապանն [3]յոր սովոր էր զքարն ժողովել՝, եւ զպարան ի ձեռին իւրում.
41 եւ մերձեցաւ առ այրն այլազգի։ Եւ գնայր գայր այլազգին եւ մերձենայր առ Դաւիթ. եւ այր վահանակիր առաջի
42 նորա։ Իբրեւ հայեցաւ այլազգին եւ ա-նաս զԴաւիթ, արհամարհաց զնա. զի էր պատանեակ, խարտեաշ եւ [6]աչօք գե-
43 զեցիկ՝։ Եւ ասէ այլազգին ցԴաւիթ, Զիա՞րդ. չո՞ւն եմ ես զի ցպով [7]եւ քա-րամբք գաս ի վերայ իմ. եւ ասէ Դաւիթ, Նա եւ վասնմար ևս ես քան զշուն՝։
44 Եւ նզովեաց այլազգին զԴաւիթ զիօքն իւրովք։ Եւ ասէ այլազգին ցԴաւիթ, Ելկ առ իս եւ տաց զմարմին քո թռչնոց
45 երկնից եւ գազանաց երկրի։ Եւ ասէ Դաւիթ ցայլազգին, Դու գաս ի վերայ իմ սրով եւ վեզարդեամբ եւ ասպարաս, եւ ես գամ ի վերայ քո անուամբ Տեառն զօրութեանց [8]ճակատուս Իսրայելի զոր
46 նախատեցեր [3]այսօր։ Եւ փակեսցէ զքեզ Տէր այսօր ի ձեռս իմ, եւ սպանից զքեզ, եւ առից զգլուխ քո ի քէն. եւ տաց [3]զդէշ քո եւ՝ զդիակունս բանակի այլ-ազգեացդ յառաւր յայսմիկ թռչնոց երկ-նից եւ գազանաց երկրի. եւ ծանիցէ ա-մենայն երկիր եթէ գոյ Աստուած ի մէջ
47 Իսրայելի. Եւ ծանիցէ ամենայն եկեղե-ցիս այս թէ ոչ սրով եւ վեզարդեամբ փրկէ Տէր. զի Տեառն է պատերազմ, եւ մատնեսցէ զձեզ Տէր ի ձեռս մեր։
48 Եւ յարեաւ այլազգին եւ եկն եւ մեր-ձեցաւ ընդդէմ Դաւիթի. եւ աճապար-եաց Դաւիթ եւ ընթացաւ ի հակառակ
49 ընդդէմ այլազգւոյն։ Եւ ձգեաց Դաւիթ զձեռն իւր ի մախաղն, եւ առ անտի քար մի, եւ պարաքարեաց եւ եհար զհակառակ այլազգւոյն. եւ եմուտ քարն [3]ընդ սալաւարտն՝ ի ճակատն, եւ ան-
50 կաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր։ Եւ զօրացաւ Դաւիթ քան զայլազգին պար-սիւքն եւ քարիւն, եւ եհար զայլազգին եւ սպան զնա. եւ սուր չէր ի ձեռին
51 Դաւթի։ Եւ ընթացաւ Դաւիթ եւ հարաւ ի վերայ նորա, եւ առ զնորին սուսեր, եւ մերկեաց զնա ի պատենից իւրոց, եւ սպան զնա եւ [10]եհատ զգլուխ նորա։ Իբրեւ տեսին այլազգիքն թէ մեռաւ
52 զօրաւորն նոցա, փախեան։ Եւ յարեան արք Իսրայելի եւ Յուդայ, աղաղակեցին եւ յարձակեցան զնետ նոցա մինչեւ [11]ի մուտս Գեթայ՝ եւ մինչեւ ի դրունս Ակկարոնի. եւ անկան վիրաւորք այլազ-

[1] ԵՓր. մարդոյ [2] ԵՓր. զի [3] ՅՁԵՓր. դ-ե-ւ-ե [4] ԵՓր. կամեցաւ գնալ, զի չէր վարժ. [5] ԵՓր. Հան զնոսա յինքենէ

[6] ԵՓր. միանգամայն գեղեցիկ ի տեսանել [7] ԵՓր. գաս ի վերայ իմ [8] ԵՓր. Աստուծոյ ճակատուց [9] ԵՓր. Դաւթի. [10] ԵՓր. եհատ նովաւ [11] ԵՓր. ի մուտս Հովթին

դեացն [1]զճանապարհային մինչեւ ցգրուն-
53 Գեթայ եւ Ակկարոնի՝: Եւ զարձան որք
Իսրայելի ասպատակելքն դէտ ապ-
ազդեացն, եւ կոխեցին զրանակս նոցա:
54 Եւ աւս Դաւիթ զղջութ այազգուցն, եւ
երեր գնաց յԵրուսաղէմ. եւ զզէն նորա
եդ ի վանս իւրում:
55 Եւ իրրեւ ետես Սաուղ զԴաւիթ ել-
եալ ընդդէմ այազգուցն, ասէ ցԱբներ-
ներ իշխան զօրուն, Ո՞ր որդի է պա-
տանեակդ այդ, Աբներներ. եւ ասէ Աբներ-
ներ, կենդանի է անձն քո, արքայ, թէ
56 գիտիցեմ: Եւ ասէ արքայ, Հարց թէ
57 ո՞ր որդի իցէ պատանեակդ: Եւ իրրեւ
դարձաւ Դաւիթ ի հարկանելոյ զայլազ-
գին, առ գնա Աբներներ եւ առ գնա ա-
նայ[2] Սաուղայ. եւ գլուխ այազգուցն
58 ի ձեռին նորա: Եւ ասէ ցնա Սաուղ,
Ո՞ր որդի ես, մանուկ գու: Եւ ասէ
Դաւիթ, Որդի ծառայի քո Յեսսեայ
Բեթղեհեմացւոյ:

ԳԼ. ԺՐ

1 Եւ եղեւ իրրեւ վախճանեցաւ գԱմաւելն
ընդ Սաուղայ, եւ ոգի Յովնաթանու
կապեցաւ ընդ ոգւոյն Դաւիթի, եւ սի-
րեաց գնա Յովնաթան ըստ անձին իւ-
2 րում: Եւ առ գնա Սաուղ առ իւր յա-
ւուր յայնմիկ, եւ ոչ ետ նմա դառնալ
3 ի տունն հօր իւրոյ: Եւ ուխտեաց ընդ նմա
Յովնաթան ուխտ առ ի սիրել զնա քան
4 անձին իւրում: Եւ մերկացաւ Յովնա-
թան զպողիկն որ զիւրեւ եւ ետ զայն
Դաւթի, եւ զմարտականսն իւր՝ մին-
չեւ զսուսեր իւր եւ զպաղտն իւր եւ զկա-
5 մար իւր: Եւ երթայր Դաւիթ ամենայն
ուրեք ուր եւ առաքէր զնա Սաուղ,
եւ խոհասնանայր. եւ կացոյց զնա Սա-
ուղ ի վերայ արանց պատերազմի. եւ
հաճոյ եղեւ առաջի աչաց ամենայն ժո-
ղովրդեանն, նա եւ առաջի աչաց ծա-
ռայիցն Սաուղայ:
6 Եւ եղեւ ի մտանելն նոցա իրրեւ դար-
ձաւ Դաւիթ ի սպանանելոյ զայլազգին,
եւ էին [2]պատարագք ընդ առաջ Դաւիթի՝ յա-
մենայն քաղաքաց Իսրայելի երգել, պար
առնուլ ընդ առաջ Սաուղայ արքայի
թմբկօք եւ ուրախութեամբ եւ ծնծղա-
7 յիւք: Եւ նուագէին կանայքն խաղալիկք
եւ ասէին, Եհար Սաուղ զհազարս, եւ
8 Դաւիթ զբեւրս: Եւ զչարեցաւ Սաուղ
վասն բանին այնորիկ, եւ ասէ, Դաւիթի
հատուն զբեւրս, եւ ինձ հատուն զհազարս.
եւ արդ զինչ պակաս նմա, բայց եթէ
9 թագաւորութիւնս: Եւ ընդ ակամբ հա-
յէր Սաուղ[3] յօրէ յայնմանէ եւ առ յառաջ:
10 Եւ եղեւ ի վաղիւ անդր եւ հարաւ ոգի
չար յԱստուծոյ ի վերայ Սաուղայ, եւ
մարգարէանայր ի մէջ տան իւրոյ, եւ
Դաւիթ երգէր ձեռամբ իւրով որպէս
եւ հանապազն. եւ գեղարդն ի ձե-
11 ռին Սաուղայ: [4]Եւ ասէ, Հարից կա-
խեցից զԴաւիթ [5]գեղարդեամբս ընդ պատին,
Եւ ձգեաց Սաուղ՝, եւ խոյս ետ յերես-
12 սաց նորա Դաւիթ երկիցս: Եւ երկնաւ
Սաուղ յերեսաց Դաւթի, զի Տէր էր ընդ
13 նմա, եւ ի Սաուղայ վերացեալ էր: Եւ
ի բաց արար զնա Սաուղ յիւրմէ, եւ
կացոյց զնա իւր հազարապետ, եւ ելա-
նէր եւ մտանէր առաջի ժողովրդեանն:
14 Եւ էր Դաւիթ խելամուտ յամենայն ճա-
15 նապարհս իւր, եւ Տէր ընդ նմա: Եւ ե-
տես Սաուղ թէ այնչափ խոհասուն է
16 յոյժ, սկսաւ յերկնալ նորա: Եւ ա-
մենայն Իսրայէլ եւ Յուդա սիրէր զԴա-
ւիթ, զի նա ելանէր եւ մտանէր առա-
ջի երեսաց ժողովրդեանն:
17 Եւ ասէ Սաուղ ցԴաւիթ, Ահա զուսար
իմ երէց Մերովբ, սայ զնա քեզ կնու-
թիւն. լայդ լեր զու ինձ յորդի զօրու-
թեան, եւ պատերազմիա զպատերազ-
մունս Տեառն. քանզի ասայ Սաուղ,
Մի եղիցի ձեռն իմ ի նա, այլ եղիցի ի
18 նա ձեռն այազգեացն: Եւ ասէ Դաւիթ
ցՍաուղ, Ո՞վ եմ ես եւ կամ կեանք ազ-
գատոհմի հօր իմոյ ի մէջ Իսրայելի, զի
19 լինիցիմ փեսայ արքայի: Եւ եղեւ ի ժա-
մանակի տալոյ զՄերովբ զուսար Սաուղ
զայ՝ Դաւթի, տուաւ նա եղբեկի Մոխ-
լաթացւոյ կնութեան:
20 Եւ սիրեաց Մեղքող՝ զուսար Սաուղ
զայ՝ զԴաւիթ. եւ ազդ եղեւ Սաուղ
զայ, եւ հաճոյ թուեցաւ բանն յաչս նո-
21 ցա: Եւ ասէ Սաուղ, Տայց զնա նմա
կնութեան, եւ եղիցի նմա ի գայթա-
ղութիւն. եւ [6]էր ի վերայ Սաուղայ՝
ձեռն այազգեացն: Եւ ասէ Սաուղ
ցԴաւիթ, Երկրորդումբք փեսայասցիս զու-
22 ինձ այսօր: Եւ պատուիրեաց Սաուղ

---

[1] ԵԲԲ. ի ճանապարհին Սագարիմայ, եւ մինչեւ ի Գէթ եւ Յակկարոն
[2] ԵԲԲ. կանայք
[3] ԵԲԲ-յԵԷՆ յաԼԼա, Դաւթի Սաուղ զգեղարդն, եւ
[4] ԵԲԲ. Եւ ձգեաց
[5] ԵԲԲ. ընդ որմն
[6] ԵԲԲ. եղեւ ի վերայ նորա

ծառայից իւրոց եւ ասէ , Խօսեցարուք
դուք լսելեան ընդ Դաւթի եւ ասացէք ,
Ահա արքայ հաճեալ է ընդ քեզ , եւ ա-
մենայն արք նորա սիրեն զքեզ . եւ արդ
23 փեսայացիր դու արքայի : Եւ խօսեցան
ծառայքն Սաւուղայ յականջս Դաւթի
ըստ ամենայն բանիցս այսոցիկ . եւ ա-
սէ Դաւթի , Թեթե՞ւ իցէ յաչս ձեր փե-
սայանալ արքայի . եւ ես այր մի տա-
24 ռապեալ եմ , եւ ոչ փառաւոր : Եւ պատ-
մեցին Սաւուղի ծառայքն իւր ըստ բանիցս
25 այսոցիկ զոր խօսեցաւ Դաւիթ : Եւ ասէ
Սաւուղ , Այսպէս ասասջիք ցԴաւիթ ,
եթէ Ոչ կամի արքայ վարձանս , այլ հա-
րեւր անթլփատութիւն այլազգեաց , առ-
նուլ վրէժ իթշնամեաց արքայի . եւ Սա-
ւուղ խորհէր սրկանել զնա ի ձեռս այլ-
26 ազգեացն : Եւ պատմեցին Դաւթի ծա-
ռայքն Սաւուղայ զբանս զայսոսիկ . եւ
հաճոյ թուեցաւ բանն յաչս Դաւթի փե-
սայանալ արքայի . եւ չէին լցեալ ա-
27 ւուրք , Եւ յարուցաւ Դաւիթ եւ գնաց ինքն
եւ արք իւր , եւ հնար յայլազգեացն այս
[1]հարիւր , եւ երիր զանթլփատութիւնս
նոցա եւ ելից զնոսա առաջի արքայի , [2]եւ
փեսայացաւ" արքայի . եւ ետ Սաւուղ
զՄեղքող դուստր իւր նմա կնութեան :
28 Եւ տեսս Սաւուղ եւ ծանեաւ եթէ Տէր
է ընդ նմա , եւ [3]ամենայն Իսրայէլ" սի-
29 րէր զնա , Եւ յաւել եւս[4] ակնածել ի
Դաւթէ . եւ եղեւ Սաւուղ թշնամութիւնս
30 ընդ Դաւթի զամենայն աւուրս : Եւ
ելին իշխանք այլազգեացն , եւ [5]եղեն ի բազում ժամանակս ելք" նոցա ,
խելամուտ էր Դաւիթ քան զամենայն
ծառայսն Սաւուղայ , եւ պատուեցաւ
անուն նորա յոյժ :

Դ. ԻԹ

1 Եւ խօսեցաւ Սաւուղ ընդ Յովնաթա-
նայ որդւոյ իւրում , եւ ընդ ամենայն
2 ծառայս իւր սպանանել զԴաւիթ : Եւ
Յովնաթան որդի Սաւուղայ հաճեալ էր
ընդ Դաւթի յոյժ . եւ պատմեաց Յովնա-
թան Դաւթի եւ ասէ , Հայր [6]իմ խնդրէ
սպանանել զքեզ . զդոյշ լեր վաղիւ ընդ
առաւօտն , եւ թաքիջիր եւ նստիջիր ի
3 թաքստեան . Եւ ես ելից եւ կացից մօտ
առ հօր իմում յանդին , ուր եւ իցես դու
անդ , եւ ես խօսեցայց վասն քո ընդ հօր
իմում , եւ տեսից եթէ զինչ իցէ եւ
4 պատմեցից քեզ : Եւ խօսեցաւ Յովնա-
թան վասն Դաւթի բանս բարիս ընդ Սա-
ւուղայ հօր իւրում , եւ ասէ ցնա , Մի
մեղիցէ արքայ ի ծառայ իւր Դաւթի , զի
ոչինչ մեղաւ նա քեզ . եւ գործք նորա
5 բարութեամբ են առ քեզ յոյժ : Եւ եդ
զանձն իւր ի ձեռին իւրում , եւ հնար
զայլազգին . եւ արար Տէր փրկութիւն
[7]մեծ , եւ ամենայն Իսրայէլ տեսին եւ
ուրախ եղեն". եւ ընդէր մեղանչիցես
յարիւն արդար սպանանել զԴաւիթ առ
6 բարեարուց : Եւ լուաւ Սաւուղ ձայնի
Յովնաթանու , եւ երդուաւ Սաւուղ եւ
ասէ , Կենդանի է Տէր եթէ մեռանիցի :
7 Եւ կոչեաց Յովնաթան զԴաւիթ , եւ
պատմեաց նմա Յովնաթան զամենայն
բանս զայսոսիկ . եւ տարաւ Յովնաթան
զԴաւիթ առ Սաւուղ , եւ էր առաջի
նորա իրրեւ յերէկն եւ յեռանդ :
8 Եւ յաւել եւս լինել պատերազմ , եւ
ելաց Դաւիթ տալ պատերազմ ընդ
այլազգին , եւ հնար ի նոցանէ հարուածս
մեծամեծս յոյժ . եւ փախեան յերեսաց
9 նորա : Եւ եղեւ այս չար ի Տեառնէ ի
վերայ Սաւուղայ , եւ ինքն նստէր ի
տան , եւ զեղարդն ի ձեռին նորա , եւ
10 Դաւիթ երգէր ձեռօք իւրովք : Եւ խնդրէր
Սաւուղ հարկանել զզեղարդն ընդ Դա-
ւիթ եւ ընդ որմն . Եւ խուսեաց յերես-
աց Սաւուղայ . եւ հնար զզեղարդն
յորմն , եւ Դաւիթ ել գնաց եւ [8]զերծաւ :
11 Եւ եղեւ ի գիշերին յայնմիկ" առաքեաց
Սաւուղ հրեշտակս ի տունն Դաւթի պա-
հել զնա , զի սպանցէ զնա ընդ առա-
ւօտն : Եւ պատմեաց Դաւթի Մեղքող
կին իւր եւ ասէ , Եթէ ոչ ապրեցուս-
ցես զանձն քո ի գիշերիս յայսմիկ , վա-
12 ղիւ մեռանելոց ես : Եւ իջոյց Մեղքող
զԴաւիթ ընդ պատուհանն , եւ փախեաւ
13 գնաց եւ ապրեաց : Եւ առ Մեղքող պա-
ճուճապատանս եւ եդ ի վերայ մահճացն ,
[9]եւ լաւրդ այծեաց" եւ կծիկ մազոյ եդ
ի մնարէ , եւ ծածկեաց զնա հանդերձիւ :
14 Եւ առաքեաց հրեշտակս Սաւուղ ունել
15 զԴաւիթ . եւ [10]ասեն թէ Ախտ է : Եւ ա-
ռաքեաց [11]ի վերայ Դաւթի զարձեալ" եւ

[1] Եբբ. երկերիւր [2] Եբբ. զի փեսայասցի [3] Եբբ. Մեղքող , դուստր Սաւուղայ , [4] Եբբ-յեչէն յաւելու Սաւուղ [5] Եբբ. լինէր յելանել [6] Եբբ. իմ Սաւուղ

[7] Եբբ. մեծ ամենայն Իսրայէլի, տեսեր դու եւ ուրախ եղեր [8] Եբբ. զերծաւ ի գիշերին յայնմիկ ։ (11) Եւ [9] Յերբ. պ-ախտ [10] Եբբ. ասէ կինն [11] Եբբ. Սաւուղ հրեշտակս տեսանել զԴաւիթ ,

ասէ , Հանէք զնա մահաբեր առ իս եւ
16 սպանից զնա ։ Եւ եկին հրեշտակքն , եւ
ահա պաճուճապատանդն ի վերայ մահ-
ճացն , [1]եւ լերդ այծեաց՝ եւ կծիկ մա-
17 զոյ ի մէնարան։ Եւ ասէ Սաուղ ցմեղքող,
Ընդէ՞ր այսպէս խաբեցեր զիս, եւ արձա-
կեցեր զթշնամին իմ եւ ապրեցաւ. եւ ասէ
Մեղքող ցՍաուղ, Ինքն ասացեալ արձակ-
եա զիս , ապա թէ ոչ՝ սպանանեմ զքեզ։
18 Եւ Դաւիթ փախեաւ եւ ապրեցաւ ,
եւ եկն առ Սամուէլ ցԱրիմաթեմ, եւ պատ-
մեաց նմա զամենայն ինչ զոր արար նմա
Սաուղ ։ Եւ գնացին Սամուէլ եւ Դա-
19 ւիթ եւ նստան ի Նաւաթ [1]Հռամայ։ Ազդ
եղեւ Սաուղայ եւ ասեն , Ահա Դաւիթ
20 ի Նաւաթ Հռամայ է ։ Եւ առաքեաց
Սաուղ հրեշտակս ունել զԴաւիթ . եւ
տեսին զեկեզեցին մարգարէից մարգա-
րէացելոց , եւ Սամուէլ կայր ի վերայ
նոցա . եւ եղեւ ի վերայ հրեշտակացն
Սաուղայ Հոգի Աստուծոյ , եւ մարգա-
21 րէացան եւ նոքա ։ Եւ պատմեցաւ Սա-
ուղայ . եւ յաւել Սաուղ առաքել այլ
հրեշտակս , եւ մարգարէացան եւ նոքա ։
Եւ յաւել Սաուղ առաքել այլ հրեշտակս,
22 եւ մարգարէացան եւ նոքա ։ Եւ [1]բար-
կացաւ սրտմտութեամբ Սաուղ , եւ"
գնաց ինքն յԱրիմաթեմ, եւ եկն մին-
չեւ ի Ջրհորն մեծ որ ի Սոկքով, եւ ե-
հարց եւ ասէ , Ո՞ւր է Սամուէլ եւ Դա-
ւիթ ։ Եւ ասեն , Ի Նաւաթ Հռամայ է ։
23 Եւ գնաց անտի ի Նաւաթ Հռամայ . եւ
եղեւ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ ,
եւ երթայր երթալով եւ մարգարէանայր ,
մինչեւ հասանել նմա ի Նաւաթ Հռա-
24 մայ ։ Եւ մերկացաւ զհանդերձ իւր ինք-
նին , եւ մարգարէացաւ առաջի [2]նոցա .
եւ անկաւ մերկ զօրեն ողջոյն եւ զգի-
չերն ամենայն . վասն այնորիկ ասէին
թէ եւ Սաո՞ւղ ի մարգարէս ։

Գլ. Ի

1 Եւ փախեաւ Դաւիթ ի Նաւաթայ Հռա-
մայ . եւ եկն խօսեցաւ առաջի Յովնա-
թանայ եւ ասէ , Զի՞նչ արարի , եւ զի՞նչ
վնաս է իմ , եւ զի՞նչ մեղայ առաջի Տէր
2 քո զի խնդրէ զանձն իմ ։ Եւ ասէ ցնա
Յովնաթան , Քաւ քեզ , ոչ մեռանիցիս .
զի ահա ոչ առնէ հայր իմ բան մի մեծ
կամ փոքր զոր ոչ յայտնէ յունկն իմ. եւ զի-
ա՞րդ իցէ զի թաքուցանիցէ հայր իմ յի-

[1]ՁԵբբ. պ-ի-ա-թ [2]ԵբԲ. Սամուելի

3 նէն զբանդ զայդ . չէ այդպէս ։ [3]Պատաս-
խանի եւ Դաւիթ եւ ասէ ցՅովնաթան՝
Գիտելով գիտէ հայր քո զի գտի շնորհս
առաջի աչաց քոց , եւ ասէ թէ Մի ի-
մասցէ Յովնաթան, գուցէ [4]ոչ կամիցի՝.
այլ կենդանի է Տէր եւ կենդանի է անձն
քո , զի [5]որպէս մասցի՛ վճարեալ է ընդ
4 իս եւ ընդ հայր քո մինչեւ ցմահ" ։ Եւ
ասէ Յովնաթան ցԴաւիթ , Զի՞նչ ցան-
5 կայ անձն քո՝ եւ արարից քեզ ։ Ասէ
Դաւիթ ցՅովնաթան , Ահա վաղիւ ամ-
սաւուր է . եւ ես նստելով՝ ոչ նստայց
ուսեալ հաց ընդ արքայի . եւ առաքես-
ցես զիս եւ թաքեայց ի դաշտի մասն
6 մինչեւ ցերեկերեկս աւուրն երրորդի . Ե-
թէ առնելով առնիցէ այդ զինէն հայր
քո , [6]ասասցես ՚ԵթԷ Հրաժարելով հրա-
ժարեաց՝ յինէն Դաւիթ երթալ մինչեւ
ցԲեթղեհեմ քաղաք իւր . զի զոհ աւուրդ
7 է անդ ամենայն ցեղին ։ Եթէ ասասցէ
թէ Բարւոք է , խաղաղութիւն է ծա-
ռայի քումմ . ապա թէ խօսիւ տացէ
պատասխանի , գիտասջիր զի վճարեալ
8 է չարութիւն առ ինձանէ ։ Եւ արաս-
ցես ողորմութիւն ընդ ծառայի քումմ .
զի յուխտ Տեառն մուծեր զծառայ քո
ընդ քեզ . եւ եթէ վնաս ինչ է [7]ծառայի
քումմ՝ , դու իսկ սպան զիս . եւ ընդէ՞ր
9 հասուցանիցես զիս առ հայր քո ։ Եւ ա-
սէ Յովնաթան , Քաւ լիցի քեզ . զի ե-
թէ գիտելով գիտացից եթէ վճարեալ է
չարութիւն առ ի հօրէ իմմէ զալ ի վե-
րայ քո՝ եթէ ոչ [8]ի քաղաքն իսկ քո"
10 պատմեցից քեզ ։ Եւ ասէ Դաւիթ ցՅով-
նաթան , Ո՞ պատմեսցէ ինձ եթէ խօսիւ
11 պատասխանի տացէ քեզ հայր քո ։ Եւ
ասէ Յովնաթան ցԴաւիթ , [9]Երթ եւ մնա
յանդիման՝՛. եւ գնացին երկոքեան յանդի ։
12 Եւ ասէ Յովնաթան ցԴաւիթ , Տէր
Աստուած Իսրայէլի գիտէ եթէ ոչ քննե-
ցից զհայր իմ [10]զվերեկ ժամանն՛. եւ ե-
թէ բարի ինչ իցէ զԴաւիթ եւ եթէ չար ,
13 առաքեցից առ քեզ [11]յանդս . Ոմն եւ օն
արասցէ Տէր Յովնաթանու , եւ օն եւ
օն յաւելցէ , եթէ [11]ոչ քննեցից զչարու-
թիւնն՛ վասն քո , եւ յայտնեցից յունկն քո

[3]ՁԵբբ. Նա երդուաւ եւս Դաւիթ եւ ասէ [4]ՁԵբբ. վշտանայցէ [5]ԵբԲ. քայլ մի է ի մէջ իմ և ի մէջ մահու [6]ԵբԲ. յայնժամ ասասցես , Խնդրելով խնդրեաց [7]ԵբԲ. յիս [8]ԵբԲ. եկ եւ ելցուք յանդն [9]ԵբԲ. ի ժամանակս վաղիւ, կամ, յերրորդումն [10]ԵբԲ. և յայտնեցից յունկն քո [11]ԵբԲ. բարւոք թուեսցի Տէր իմում չարութիւն

քո, եւ արձակեցից զքեզ եւ երթիցես
ի խաղաղութիւն, եւ եղիցի Տէր ընդ
44 քեզ՝ որպէս էր ընդ հօր իմում։ Եւ եթէ
թէ միւսգիտ ես կենդանի լինիմ, ապա-
ցոյց ընդ իս իակ ողորմութիւն. [1]եւ եթէ
45 մահու՞ մեռանիցիմ, եւ մի բարձցես
զողորմութիւնդ քո ի տանէ իմմէ մինչեւ
ցյաւիտեան. եւ եթէ ոչ, ի ջնջել Տեառն
զքննամիս Դաւթի զերեսաքանչիւր որ
46 յերկրէ. [2]Գայի անուն Յովնաթանու ի տան Դաւթի՞, ինդրեցէ Տէր
47 ի ձեռաց թշնամեաց Դաւթի։ Եւ յաւել
Յովնաթան երդմնեցուցանել զԴաւիթ
առ սէր նորա. զի [3]սիրեաց զանձն սի-
48 րելոյն իւրոյ՝։ Եւ ասէ ցնա Յովնա-
թան, Վաղիւ ամսամուտ է, եւ ինդրես-
49 ցիս. քանզի ինդրեսցի աթոռ քո։ Եւ
երկբօրեսցես [4]եւ ինդրեսցիս՞ եւ եկես-
ցես ի տեղի քո՝ ուր թաքեարն յաւուրն
գործոյ. եւ նստցիս առ [5]երդաքաւ
20 այգուիկ՞։ Եւ ես երկրինեցից փքնօք
21 [6]յորս՝ ածել եւ ձգել յամաստարայն՞։ Եւ
արձակեցից զպատանեակն, եւ ասացից,
երթ, գիա գփքինն. եւ եթէ ասելով ա-
ասցից ցպատանեակն, ի քէն եւ այր է
փքինն եւ այր առ վնաս, եկեսջիր, զի
խաղաղութիւն է քեզ, եւ չեն ինչ բանք,
22 կենդանի է Տէր. Ապա թէ ասացից ցպա-
տանին, ի քէն եւ անպէտ փքինն, գնասջիր,
23 զի արձակեաց զքեզ Տէր։ Եւ բանիցս զոր
խօսեցաք ես եւ դու, ահա Տէր լիցի վկայ
ընդ իս եւ ընդ քեզ մինչեւ ցյաւիտեան։
24 Եւ թաքուաւ Դաւիթ յանդին. եւ եհաս
ամսամուտն, եւ եմուտ արքայ ի սե-
25 ղանին ուտել հաց։ Եւ նստաւ արքայ
ցաթոռ իւրաւ, որպէս միանգամն եւ
միւսանգամ աթոռով յորմանցն. եւ [7]ա-
մանեաց Յովնաթան, եւ նստաւ Աբենն-
ներ ի կողմանէ Սաւուղայ, եւ ինդրե-
26 ցաւ տեղին Դաւթի։ Եւ ոչ խօսեցաւ
Սաւուղ եւ ոչ ինչ յաւուր յայնմիկ. քանզի
ասաց թէ Դէպք ինչ իցեն չլինելոյ
27 սուրբ, եւ չիցէ սրբեալ։ Եւ եղեւ ի
վաղիւ ամսամտին յաւուրն երկրորդի
ինդրելոյ տեղին Դաւթի. եւ ասէ Սա-
ւուղ ցՅովնաթան ցորդի իւր, Ձի՞ է զի
ոչ եկն որդին Յեսսեայ երէկ եւ այսօր
28 ի սեղանոյ Պատասխանի եւ Յովնաթան
եւ ասէ ցՍաւուղ, [8]Հրաժարեաց չինէն
29 երթալ ի Բեթղեհեմ [9]քաղաք իւր. Ա-
ասէ, Արձակեա զիս, զի զոհ է ցեղին մե-
ծոյ ի քաղաքին, եւ [10]պատուիրեցին ինա
եղբարք՞ իմ. եւ արդ եթէ գտի չնորհս
առաջի աչաց քոց, երթայց տեսից զեղ-
բարս իմ. վասն այնորիկ ոչ եկն ի սե-
30 ղան արքային եւ բարկացաւ Սաւուղ ի վե-
րայ Յովնաթանու եւ ասէ ցնա, Աղկորդի
անձնամոլան, ես ոչ գիտեմ, զի գաշնաւոր
ես դու որդւոյն Յեսսեայ՝ յամօթ քո եւ
31 յամօթ առականաց մօր քո. Զի զամե-
նայն աւուրս որչափ որդին Յեսսեայ
կենդանի [11]է, ոչ հաստատեսցի՞ թագա-
ւորութիւն քո. արդ առաքեա կալ զպա-
32 տանին, զի որդի մահու է նա։ Պատաս-
խանի եւ Յովնաթան Սաւուղայ հօր իւ-
րում, եւ ասէ ցնա, Ընդէ՞ր մեռանիցի.
33 զի՞նչ գործեցայ։ Եւ վերացոյց Սաւուղ
զզինւարդն իւրոյ Յովնաթանու սպանա-
նել զնա. եւ գիտաց Յովնաթան թէ
վճռեալ է չարութիւն ի հօրէ նորա
34 սպանանել զԴաւիթ։ Եւ դրմեաց Յով-
նաթան ի սեղանոյ անաւ արուագք բար-
կութեամբ եւ սրտմտութեամբ. եւ ոչ
եկեր յաւուրն երկրորդի ամսոյն հաց,
զի լեկաւ վասն Դաւթի, զի [12]վճարեաց
վասն նորա՞ հայրն իւր։
35 Եւ եղեւ ընդ առաւօտն եւ Յովնա-
թան յանդն, որպէս ժամադիր եղեւ Դա-
ւթի [9]ի վկայութիւն. եւ մանուկ փոք-
36 րիկ ընդ նմա։ Եւ ասէ ցպատանեակն,
Ընթա, գիտ զփքինն զոր ձգեցից. եւ
ընթացաւ պատանեակն. եւ նա ձգեաց
37 զփքինն, եւ [13]կերեր գնաց։ Եւ չոգաւ պա-
տանեակն մինչեւ ցտեղի փքինն զոր ձգեաց
Յովնաթան. եւ աղաղակեաց Յովնաթան
զկնի պատանեկին եւ ասէ, Ի քէն եւ անդր
38 է փքինն։ Եւ աղաղակեաց Յովնաթան
զկնի պատանեկին եւ ասէ, Փութացեալ
արագեա եւ մի կացցես։ Եւ քաղեաց
մանուկն Յովնաթանու զփքինն եւ ե-
39 կեր առ տէր իւր։ Եւ պատանեակն ոչ
ինչ գիտէր բաց ի Յովնաթանայ եւ ի
40 Դաւիթ, զի գիտէին զգանն։ Եւ ետ Յով-
նաթան զզէնսն իւր ցպատանեակն, եւ
ասէ ցպատանեակն իւր, Երթ մուտ ի
41 քաղաքն։ Եւ եմուտ պատանեակն. եւ

[1] ԵՔԲ. զի մի [2] ԵՔԲ. Եւ ուխտեաց Յովնաթան
ընդ տանն Դաւթի եւ ասե [3] ԵՔԲ. զսէր անձին
իւրոյ սիրեաց զնա [4] ԵՔԲ. իջցես վաղվաղակի,
[5] ԵՔԲ. վիմին նզել [6] ԵՔԲ. յայն կոյս իբրեւ ի
նպատակ [7] ԵՔԲ. յարեաւ

[8] ԵՔԲ. Ինդրելով ինդրեաց Դաւիթ [9] ԵՔԲ. պ-ով-ոթ
[10] ԵՔԲ. պատուիրեաց ինձ եղբայր [11] ԵՔԲ. է յերկրի,
ոչ հաստատեսցիս դու եւ ոչ [12] ԵՔԲ. Թշնա-
մանեաց գնա [13] ԵՔԲ. անցոյց անդր քան

յարեաւ Դաւիթ ՚ի Սէրդատայն, եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր, եւ երկիր եղաց նմա երիցս անգամ, եւ համբուրեցաւ իւրեանց միմեանս զընկերս իւր, եւ լացաք իւրաքանչիւր ի վերայ ընկերի իւրոյ մինչեւ [2]գտնծ վախճան՝։ 42 Եւ ասէ Յովնաթան ցԴաւիթ, երթ ի խաղաղութիւն. եւ զոր երդուաք մեք երկոքին յանուն Տեառն եւ խոստացաք, Տէր լիցի վկայ ընդ իս եւ ընդ քեզ, եւ ի մէջ զաւակի իմոյ եւ ի մէջ զաւակի քո մինչեւ 43 յաւիտեան։ Եւ յարեաւ Դաւիթ եւ գնաց, եւ Յովնաթան եմուտ ի քաղաքն։

Գլ. ԻԱ

1 Եւ եկն Դաւիթ ի Նոբա՝ առ Աքիմելէք քահանայ. եւ զարհուրեցաւ Աքիմելէք ի պատահել նորա, եւ ասէ ցնա, Զի՞ է պէտ զոր միայն եւ ոչ ոք է ընդ 2 քեզ։ Եւ ասէ Դաւիթ ցԱքիմելէք քահանայ, Բան ինչ հրամայեալ է ինձ արքայն այսօր, եւ ասէ ցիս՝ Մի ոք գիտասցէ զբանն զոր պատուիրեցի քեզ, եւ զոր պատուիրեցի քեզ. եւ հրաման եառաւ մանկտւսն ի տեղւոյն [3]որ կոչի Աստուծոյ հաստատմամբն, փոխ- 3 մանի երթանի՝։ Եւ արդ եթէ իցեն ի ձեռն քումն հինգ նկանակ հացի, տուր ի պէտս իմ, թէ որչափ եւ գտանիցի։ 4 Պատասխանի եւ քահանայն [4]Աստուծոյ եւ ասէ ցԴաւիթ, Ոչ կայ հաց պիղծ ընդ ձեռամբ իմով, այլ հաց սրբութեան. եւ եթէ իցեն զգուշացեալ մանկտւսն ի 5 կանանց, կուրեցին։ Պատասխանի եւ Դաւիթ քահանային եւ ասէ ցնա, Ի կանանց մեռանելոյ եմք յերեկ եւ յեռանդէ, յկանել ինձ [5]ի ճանապարհս սրբեցան եւ մանկտւսն, զի եւ ճանապարհս իսկ պիղծ է. եւ վասն այնորիկ այսօր սրբեսցի 6 զործովս իմով։ Եւ եառ նմա [6]Աքիմելէք քահանայ՝ ի զաւակատուր հացէն. զի չկայր անդ հաց, բայց ի հացէն երեսաց, [7]առեալ յերեսաց Տեառն, գնել առաջի հաց 7 ջեռեալ յաւուրն յորում [8]առ զայն։ Եւ անդ էր մի ի ծառայիցն Սաւուղայ յաւուր յայնմիկ [9]ներգեալ ներսաբաւ առաջի Տեառն. եւ անուն նորա Դոեկ [10]Ասորի, 8 ապատէր գլխաւոր Սաւուղայ։ Եւ ասէ Դաւիթ ցԱքիմելէք, Եթէ իցէ տակաւին ձեռամբ քում վկայարան կամ առեալ. զի զառեալ իմ եւ զկազմած իմ ոչ առի ի ձեռն իմում. քանզի բանն արքային 9 սաստկացաւ ինձ։ Եւ ասէ քահանայն, Անա առեալն Գողիաթայ այպազեայ Փղշտացւոյ զոր սպաներ ի հովիտն Եղայ. եւ այն պատեալ կայ ետոտով յետոյ վակասին. եթէ զայն առնուս քեզ՝ առ, զի ոչ գոյ առն բաց յայնմանէ. եւ ասէ Դաւիթ, Չիք իրրեւ զնա, առ ցիս զայն. եւ եառ նորա զայն։

10 Եւ յարեաւ Դաւիթ եւ փախեաւ յաւուր յայնմիկ յերեսաց Սաւուղայ, եւ եկն Դաւիթ առ Անքուս արքայ Գեթեայ։ 11 Եւ ասեն ծառայքն Անքուսայ ցնա, Ո՞չ առ է Դաւիթ թագաւոր երկրին. ոչ սմա նուագէին պարտուքն եւ ասէին, Եհար Սաւուղ զհազարս, եւ Դաւիթ զբեւրս։ 12 Եւ եդ Դաւիթ զբանսն ի սրտի իւրում, եւ երկեաւ յոյժ յերեսաց Անքուսայ արքայի Գեթեայ. 13 եւ այլակերպեաց առաջի նոցա զերեսս իւր, եւ պատճասեցաւ [11]յառաւ յայնմիկ. եւ կաթաւէր առ դրսի քաղաքին՝, եւ ծորեցուցանէր պղտճանս իւր ի վերայ մօրուսաց իւրոց, [4]եւ 14 յափսիմեցաւ բանսդ։ Եւ ասէ Անքուս ցծառայս իւր, Անա տեսէք զայրն այսպիսի 15 հար, եւ ընդէր մուծէք զնա առ իս։ Միթէ կարօտ ինչ իցեմ ես այսահարոք, զի ածէք զդա այսահարել առաջի իմ. [12]մի մտցէ՝ դա ի տուն իմ։

Գլ. ԻԲ

1 Գնաց անտի Դաւիթ եւ եկն զերծաւ յայրն Ոդոզամայ. եւ լուան եղբարք նորա եւ ամենայն տուն հօր նորա, եւ 2 իջին առ նա անդր։ Եւ ժողովին առ նա ամենայն վշտացեալք եւ ամենայն պարտապանք եւ ամենայն դառնութեամբ սրտիւ, եւ էր նոցա զօրագլուխ. եւ էին ընդ նմա երեսիւ արք չորեքհարիւր։ 3 Եւ գնաց անտի Դաւիթ ի Մատիա Մոաբացւոց. եւ ասէ ցարքայն Մոաբացւոց, Եղիցին հայր իմ եւ մայր իմ առ քեզ, մինչեւ գիտացից թէ զինչ արասցէ ինձ [4]Աստուած։ Եւ [13]ազաչեաց զերեսսն առ-

[1] ՆԲԳ. ի Հարաւոյ կուսէ [2] ՆԲԳ. յայ յայժ Դաւթի [3] ՆԲԳ. յայս նիշ եւ յայն նիշ [4] ՆԲԳ. գԱստուած [5] ՆԲԳ. ի ճանապարհս. եւ անօթք մանկտւսդ առբք են. եւ (Հայգ) այդ է ի կարգի պղծուածեան, նա եւ այսօր սրբի այլ (Հայց) յամանս։ [6] ՆԲԳ. քահանայն [7] ՆԲԳ. որ առնոյր [8] ՆԲԳ. առնոյր [9] ՆԲԳ. փակեալ

[10] ՆԲԳ. Եդովմացի, հզօրագոյն հովուաց [11] ՆԲԳ. մտել ընդ ձեռամբ նոցա և առնէր գեղծութիւնս ի վերայ փեղկից դրանն [12] ՆԲԳ. մտցէ [13] ած զնոսա առաջի

քային Մովաբայ, եւ բնակեցին առ նմա
զամենայն աւուրս մինչեւ էր Դաւիթ
յանձնաւին։
5 Եւ ասէ Դագ մարգարէ ցԴաւիթ, Մի՛
նստիր յանձաւիդ, այլ երթ եւ երթիցես
յերկիրն Ցուդայ։ Գնաց Դաւիթ եւ եկն
նստաւ ի քաղաքին Կարիթ։
6 Եւ լուաւ Սաւուղ եթէ յայտնեցաւ
Դաւիթ եւ արքն որ ընդ նմա. եւ Սա-
ւուղ նստէր [1]ի բլրին ի ներքոյ ներկին
որ ի Հռամա՝, եւ գեղարդն ի ձեռին
իւրում, եւ ամենայն ծառայք նորա կային
7 չուրջ զնովաւ։ Եւ խօսեցաւ Սաւուղ
ընդ ծառայսն իւր որ կային չուրջ զնո-
վաւ, եւ ասէ ցնոսա, Լուարուք արդեր
Բենիամինի, թէ արդարեւ ամենեցուն
ձեզ տացէ՞ որդին Յեսսեայ անդս եւ այ-
գեստանս, եւ զամենեսեան զձեզ առ-
նիցէ՞ հազարապետս եւ հարիւրապետս,
8 Զի միաբանեալ կայք ի վերայ իմ դուք
ամենեքեան. եւ ոչ ոք էր որ յայտնէր
յունկն իմ ի գնալ որդւոյն իմոյ ուխտ ընդ
որդւոյն Յեսսեայ, եւ չիք ոք ի ձէնջ
որում ցաւէր վասն իմ, եւ յայտնէր
յունկն իմ. զի յարոյց որդի իմ զծառայ
իմ ի վերայ իմ թէ՛նամի, որպէս ցաւուր
9 յայսմիկ։ Պատասխանի եւ Դաւիթ [2]Ադոր,
որ կայր ի վերայ [3]Ջորւոցն Սաւուղայ,
եւ ասէ, Տեսի զորդին Յեսսեայ եկեալ
ի Նոմբա առ Աքիմելէք որդի Աքիտով-
10 բայ առ քահանայ. Եւ հարցանէր նա
նմա ի Տեառնէ, եւ ետ նմա պաշար, եւ
զսուսերն Գողիաթայ այլազգւոյ ետ նմա։
11 Եւ առաքեաց արքայ, կոչեաց զԱքի-
մելէք որդի Աքիտովբայ զքահանայ, եւ
զամենայն [4]որդիս հօր նորա՝ զքահանայս
որ էին ի Նոմբա. եւ եկին ամենեքեան
12 առ արքայ։ Եւ ասէ Սաւուղ, Լսեր որդի
Աքիտովբայ. եւ ասէ, Ահաւասիկ կամ,
13 [5]խօսեաց, աէր։ Եւ ասէ ցնա Սաւուղ,
Ջի՞ է զի միաբանեցէք դու եւ որդին
Յեսսեայ հակառակ ինձ, սալ նմա հաց
եւ սուսեր, եւ հարցանել նմա յԱստուա-
ծոյ, գնալ զնա ինձ թէ՛նամի, որպէս եւ
14 յաւուր յայսմիկ։ Պատասխանի եւ Աքի-
մելէք արքայի եւ ասէ, Եւ ո՞վ է յամե-
նայն ծառայս քո հաւատարիմ իւրեւ
զԴաւիթ, եւ փեսայ արքայի, եւ իշխան
ամենայն հրամանի քո, եւ փառաւոր
15 ի տան քումմ։ Եթէ այսր աւուր [6]սկսայ իցեմ հարցանել նմա յԱստուածոյ.
քաւ մի՛ երբէք դիցէ արքայ ի վերայ
ծառայի իւրոյ այսպիսի բան, եւ ի վերայ
տան հօր իմոյ. զի ոչ գիտէ ծառայ քո
յամենայնի յայսմիկ բան մի մեծ կամ փոքր։
16 Եւ ասէ արքայ Սաւուղ, Մահու մեռ-
ցիս, Աքիմելէք, դու եւ ամենայն տունն
17 հօր քո։ Եւ ասէ արքայ ցսուրհանդական
որ կային չուրջ զնովաւ, Մատիք եւ
սպանէք զքահանայսն Տեառն, զի ձեռն
նոցա ընդ Դաւթի է. զի գիտացին եթէ
փախչէ նա, եւ ոչ յայտնեցին յունկն իմ.
եւ ոչ կամեցան ծառայքն արքայի արկա-
նել զձեռս իւրեանց, եւ մեզանչել ի
18 քահանայսն Տեառն։ Եւ ասէ արքայ
ցԴովէկ, Դարձիր դու եւ պատահեա քա-
հանայիցն [5]Տեառն։ Եւ դարձաւ Դովէկ
[2]Ադորի, եւ կոտորեաց զքահանայսն
[5]Տեառն, եւ սպան յաւուր յայնմիկ [6]երիս
հարեւր՝ եւ հինգ այր, զամենեսին որ
19 կրէին վեփուկն կտաւի։ Եւ զՆոմբա
քաղաք քահանայիցն հնար սրով սուսերի
յառնէ մինչեւ ցկին, ի տղայոց մինչեւ
ցսանդիսայ, յարջառոյ եւ յիշոյ մինչեւ
ցոչխար՝ բերանաւ սրոյ։
20 Եւ ապրեցաւ որդի մի Աքիմելէքայ,
որդւոյ Աքիտովբայ, եւ անուն նորա
Աբիաթար, եւ փախեաւ զհետ Դաւթի։
21 Եւ պատմեաց Աբիաթար Դաւթի եթէ
կոտորեաց Սաւուղ զամենայն քահա-
22 նայսն Տեառն։ Եւ ասէ Դաւիթ ցԱբիա-
թար, Գիտէի յաւուր յայնմիկ եթէ Դո-
վէկ [2]Ադովմացեցի պատմելով պատմէ Սաւու-
ղայ. ես եմ պարտական ոտից տան հօր
23 քո. Նիստ առ իս եւ մի՛ երկնչիր. զի
[7]ուր խնդրեցից անձին իմոյ տալի, խնդրե-
ցից եւ քումմ անձին՝, զի պահեցիս
դու առ իս։

ԳԼ. ԻԹ

1 Եւ ազդ եղեւ Դաւթի եւ ասեն, Ահա
այլազգիք պատերազմին ընդ Կեղիլայ,
2 եւ յաղէտակեցին զկալորայն։ Եւ եհարց
Դաւիթ ի Տեառնէ եւ ասէ, Եթէ եր-
թայց եւ հարկանիցեմ զայլազգիսն զայ-
նոսիկ։ Եւ ասէ Տէր ցԴաւիթ, Երթ եւ
հարցես զայլազգիսն, եւ փրկեացես զԿե-
3 իլա։ Եւ ասեն արք Դաւթի ցնա, Ահա
մեք աստէն ի Հրէաստանի յերկիւղի

[1] ԵՒԲ. ի Գաբաա ընդ ծառովն որ ի բլրին [2] ԵՒԲ. Եդովմացեցի [3] ԵՒԲ. ծառայիցն [4] ԵՒԲ. առն
[5] ՁԵՒԲ. պղծուի

[6] ԵՒԲ. ուխտառն [7] ԵՒԲ. որ խնդրիցէ զանձն իմ; խնդրեսցէ եւ զանձն քո

եմք, եւ զիաթդ լինիցի եթէ երթիցեմք
4 ի Կնկիա [1]յաւար այլազգեացն։ Եւ յաւել
միւսանգամ Դաւիթ հարցանել ի Տեառնէ.
եւ պատասխանի եա նմա Տէր եւ ասէ
ցնա, Արի էջ ի Կնկիա, զի ես մատնե-
5 զիցէ զայլազգիսն ի ձեռս քո։ Եւ գնաց
Դաւիթ եւ արքն որ ընդ նմա ի Կնկիա,
եւ մարտեաւ ընդ այլազգիսն. [2]եւ փախ-
ուցան յերեսաց նորա," եւ առ զանասունն
նոցա, եւ նահար ի նոցանէ հարուածս
մեծամեծս. եւ փրկեաց Դաւիթ զինա-
6 կիչսն Կնկիայ։ Եւ եղեւ ի փախչելն
Աբիաթարայ որդւոյ Աքիմելեքայ առ
Դաւիթ [2]եւ ինքն ընդ Դաւիթ էջ" ի
Կնկիա. եւ ունէր զեփուդն ի ձեռին իւրում։
7 Եւ ազդ եղեւ Սաւուղայ եթէ եկն
Դաւիթ ի Կնկիա. եւ ասէ Սաւուղ, Վա-
ճառեաց զնա Աստուած ի ձեռս իմ. զի
փակեցաւ մտեալ ի քաղաք պրանոյ եւ
8 դռնափակաց։ Եւ հրամայ եա Սաւուղ
ամենայն ժողովրդեանն իջանել ի պա-
տերազմ ի Կնկիա, ունել զԴաւիթ եւ
9 զարս նորա։ Եւ գիտաց Դաւիթ [3]զնա-
ւուղայ եթէ ոչ դադարէ ի չարութիենէ".
եւ ասէ Դաւիթ ցԱբիաթարայ քահանայ,
10 Մատո զեփուդդ [2]Տեառն։ Եւ ասէ Դաւիթ,
Տէր Աստուած Իսրայէլի, լսելով լուաւ
ծառայ քո եթէ խնդրէ Սաւուղ գալ ի
վերայ Կնկիայ, ապականել զքաղաքս
11 վասն իմ. [4]եթէ պաշարիցի". եւ եթէ
իջանիցէ՞ [2]այժմ այսր Սաւուղ որպէս
լուաւ ծառայ քո, Տէր Աստուած Իս-
րայէլի, պատմեա ծառայի քումմ։ Եւ
12 ասէ Տէր, [5]Պաշարեսցի։ Եւ ասէ Դաւիթ,
եթէ մատնեսցեն զիս Կնկիացիքս եւ
զարս իմ ի ձեռս Սաւուղայ։ Եւ ասէ
13 Տէր, Մատնեսցեն։ Եւ յարեաւ Դաւիթ եւ
արքն որ ընդ նմա իբրեւ [6]չորեքհարիւր,
ելին ի Կնկիայեւ գնացին յո եւ գնացին. եւ
ազդ եղեւ Սաւուղայ եթէ գերծաւ Դաւիթ
ի Կնկիայ, եւ դադարեաց գնալոյ։
14 Եւ նստաւ Դաւիթ յանապատին [2]ի
Մասերիմ յանձուկն, եւ նստէր ի լերին
անապատին Զիփայ [2]ի մոայ լերինն ի
մէջն երկրին"։ Եւ խնդրէր զնա Սաւուղ
զամենայն աւուրս, եւ ոչ մատնեաց
15 զնա Տէր ի ձեռս նորա։ Եւ եաես Դա-
ւիթ եթէ ելանէ Սաւուղ խնդրել զԴաւիթ,
եւ Դաւիթ նստէր յանապատին [7]ի մոայ
լերինն Զիփայ ի նորաւէ"։
16 Եւ յարեաւ Յովնաթան որդի Սաւու-
ղայ, եւ չոգաւ առ Դաւիթ [8]ի նորն.
17 եւ հաստատեաց զձեռս [9]նր ի Տէր". Եւ
ասէ ցնա, Մի երկնչիր, զի ոչ գտցէ
զքեզ ձեռն Սաւուղայ հօր իմոյ. եւ դու
թագաւորեացես ի վերայ Իսրայէլի, եւ
ես եղէց քո երկրորդ. եւ Սաւուղ հայր
18 իմ գիտէ եթէ այդպէս է։ Եւ ուխտեցին
ուխտ երկոքեան առաջի Տեառն։ Եւ
նստէր Դաւիթ [10]ի նորաւէնն. եւ Յովնա-
թան գնաց ի տունն իւր։
19 Եւ ելին Զիփացիքն [11]ի մոայ երկրէն
առ Սաւուղ ի գլուխն", եւ ասեն, Ո՞չ
աստանիկ Դաւիթ թաքուցեալ է առ մեզ
[2]ի Մասկոտ յանձուկս [12]նորոյն ի գլուխն
20 Եքեղատաւ [13]ընդ ա՛ջմէ" Յեսիմոնայ։ Եւ
արդ ըստ ամենայն ցանկութեան անձին
արքայի իջցէ իջանելով առ մեզ. [14]քանզի
21 փակեսցուք զնա ի ձեռս արքայի։ Եւ
ասէ ցնոսա Սաւուղ, Օրհնեալ էք դուք
ի Տեառնէ, զի ցաւեալ ձեզ վասն իմ։
22 Արդ երթայք եւ այլ եւս [15]կազմեցա-
րուք, եւ գիտեցէք եւ տեսէք զտեղին
ուր իցէ ոտն նորա. [16]հասէր վայրա-
կեակն անդր ուր տեսանէք թէ է, գուցէ
23 խորամանկիցէ"։ Եւ քննեսջիք եւ տես-
ջիք յամենայն տեղեացս ուր թաքուցեալ
իցէ, եւ դարձջիք առ իս պատրաստու-
թեամբ, եւ երթիցուք ընդ ձեզ. եւ ե-
թիցի եթէ իցէ յերկրին, խուզեցից զնա
24 [17]ամենայն հազարաւորօք" Յուդայ։ Եւ
յարեան եւ գնացին Զիփացիքն յերեսաց
Սաւուղայ. եւ Դաւիթ եւ արք նորա
էին յանապատին Մաոնայ [18]առ երեկս"
25 ընդ աջմէ Յեսիմոնայ։ Եւ գնաց Սաւուղ
եւ արք իւր խնդրել զԴաւիթ. եւ ազդ
արարին Դաւիթի, եւ էջ ի վէմն [19]որ յա-
նապատին Մաոնայ. եւ լուաւ Սաւուղ,
եւ պնդեցաւ գնալ Դաւիթի յանապատն
26 Մաոնայ։ Երթայր Սաւուղ [2]եւ արք
իւր" գայս կողմն լերինն, եւ Դաւիթ
եւ արք իւր առ ի կողմն գայն կողմն
լերինն. եւ եղեւ Դաւիթ [20]փաքառեամս

[1] ՆԲԳ· ի ճակատս [2] ՆԲԳ· պատ [3] ՆԲԳ· եթէ Սաւուղ նիւթէ նմա չարիս [4] ՆԲԳ· Մինթէ մատնեսցե՞ն զիս արք Կնկիայ ի ձեռս նորա [5] ՆԲԳ· Իջցէ [6] ՆԲԳ· վեցհարեւր

[7] ՆԲԳ· Զիփայ, յանտառին [8] ՆԲԳ· յանտառն [9] ՆԲԳ· նորա յԱստուած [10] ՆԲԳ· յանտառին [11] ՆԲԳ· առ Սաւուղ ի Գաբաա [12] ՆԲԳ· անտառին [13] Այլ, ի Հարաւոյ [14] ՆԲԳ· եւ [15] ՆԲԳ· ստուգեցէք [16] ՆԲԳ· ո՞ եաես զնա անդ, զի ասէն եթէ յոյժ խորամանկ է նա [17] ՆԲԳ· յամենայն հազարաւորս [18] ՆԲԳ· ի գաշտին [19] ՆԲԳ· եւ նստաւ [20] ՆԲԳ· ճեպով

երթալ յԱրեւսայ. եւ Սաւուղ
եւ արք նորա պատեցան զԴաւիթ եւ
27 զարամբք նորա ունկնել զնոսա: Եւ եկն
հրեշտակ առ Սաւուղ եւ ասէ, Փութա
եկ այսր, զի արշաւեցին այլազգիք յեր-
28 կիրս: Եւ դարձաւ Սաւուղ չպնդել զնա
Դաւթի, եւ չոգաւ ընդդէմ այլազ-
գեացն. վասն այնորիկ կոչեցաւ տեղին
այն Վէմ բաժանել:

Գլ. ԻԹ

1 Եւ յարեաւ Դաւիթ անտի եւ նստաւ
2 յանձաւսն [1]Դադայ: Եւ եղեւ իրրեւ գար-
ձաւ Սաւուղ յայլազգեացն, ազդ եղեւ
նմա եւ ասեն, Ահաւադիկ Դաւիթ յա-
3 նապատին [1]Դադայ է: Եւ [2]առ ընդ իւր
երիս հազարս արանց ընտրելոց յամե-
նայն Իսրայէլէ, եւ գնաց խնդրել զԴաւիթ
եւ զարս նորա, [3]Հանդէպ ելիմայ որոյն
4 եղջերուաց": Եւ եկն ի պատակս ոչխարին
որ առ ճանապարհանն. եւ անդ էր այր
մի, եւ եմուտ Սաւուղ հանգչել. եւ
Դաւիթ եւ արք նորա նստէին ի ներք-
5 նում այրին: Եւ ասեն արքն Դաւթի
ցնա, Ահա այս օր է, զորմէ ասաց Տէր
ցքեզ մատանել զթշնամին քո ի ձեռս քո.
եւ արասցես ընդ նա որպէս հաճոյ թուի
յաչս քո: Եւ յարեաւ Դաւիթ եւ հնաւ
6 զառնոն լոդկին Սաւուղայ զդաւղ: Եւ
եղեւ յետ այնորիկ զղջացոյց զԴաւիթ
սիրտն իւր, զի հնաւ զառնոն լոդկին
7 նորա: Եւ ասէ Դաւիթ ցարս իւր, Փառ
լիցի ինձ ի Տեառնէ, թէ արարից զբանդ
զայդ տեառն իմում օծելոց Տեառն, մխել
ի նա զձեռս իմ. զի օծեալ Տեառն է նա:
8 Եւ հաճեաց Դաւիթ զբանն իւր բանիւք,
եւ ոչ եհաս նոցա յանձն առնել եւ սպանանել
զՍաւուղ. եւ Սաւուղ յարեաւ յայրէ
9 անտի եւ էզ ի ճանապարհն: Եւ յարեաւ
Դաւիթ զկնի նորա եւ յայրէ անտի, եւ
ազաղակեաց Դաւիթ զկնի նորա եւ ասէ,
Տէր իմ արքայ: Եւ հայեցաւ Սաւուղ ի
թիկունս իւր. եւ անկաւ Դաւիթ ի վե-
րայ երեսաց իւրոց յերկիր, եւ երկա-
10 նդամ երկիր: Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ,
Ընդէ՞ր լսես բանից ժողովրդականն որ
ասեն թէ Դաւիթ խնդրէ [4]զանձն քո":
11 Ահա յաւուր յայսմիկ տեսին աչք քո,
որպէս մատնեաց զքեզ Տէր այսօր ի
ձեռս իմ յայրի անդ, եւ [5]ոչ կամեցայ
սպանանել" զքեզ. եւ խնայեցի ի քեզ,
եւ ասացի թէ Ոչ ձգեցից զձեռն իմ ի
12 տէր իմ. զի օծեալ Տեառն է նա: Եւ
տես, հայր իմ, ահա տատն լոդկի քո
ի ձեռին իմում. ես հատի զտատն հան-
գերձի քո, եւ ոչ սպանի զքեզ. եւ ծա-
նիր եւ տես [6]այսօր, զի ոչ գոյ ի ձեռին
իմում չարութիւն եւ ոչ արհամարհու-
թիւն եւ ոչ ամպարշտութիւն, եւ ոչ մե-
ղայ ինչ քեզ. եւ դու պաչարես զանձն
13 իմ առնուլ զնա: Դատ արասցէ Տէր ընդ
իս եւ ընդ քեզ. եւ տացէ Տէր զվրէժ
իմ ի քէն, եւ ձեռն իմ մի եղիցի ի քեզ:
14 Որպէս ասէ հին առասպելն, Ճանօրէն
ձեռաց ելցէ ճնշոս, եւ ձեռն իմ մի ե-
15 զիցի ի քեզ: Եւ արդ զո՞յր հետ ելեալ
ես, արքայդ Իսրայէլի, եւ զո՞ հալածես.
զհետ չան միոյ մեռելոյ եւ զհետ լուոյ
16 միոյ: Եղիցի Տէր դատաւոր եւ իրաւա-
րար ընդ իս եւ ընդ քեզ. տեսցէ Տէր
եւ պաշտպանեսցէ իմ, եւ ա-
րասցէ ինձ իրաւունս ի ձեռաց քոց:
17 Եւ եղեւ իրրեւ կատարեաց Դաւիթ
խօսել զբանս զայսոսիկ ընդ Սաւուղայ,
եւ ասէ Սաւուղ, Այդ քո՞ ձայն իցէ,
որդեակ իմ Դաւիթ. եւ ամբարձ Սա-
18 ւուղ զձայն իւր եւ լայր: Եւ ասէ Սա-
ւուղ ցԴաւիթ, Դու արդար ես քան զիս.
զի դու հատուցեր ինձ բարիս, եւ ես
19 հատուցի քեզ չարիս: Եւ դու պատմե-
ցեր ինձ այսօր զոր արարեր ինձ բարիս,
եւ թէ արդեօք փակեսցէ զիս Տէր այսօր
20 ի ձեռս քո եւ ոչ սպաներ զիս: Զի որ-
պէս գտանէ ոք զթշնամի իւր [6]ի նեղու-
թիւն, եւ արձակիցէ զնա բարեաւ ընդ
ճանապարհ, եւ Տէր հատուսցէ [7]նմա
21 բարիս. որպէս դու արարեր [8]այսօր: Եւ
արդ գիտեմ զի թագաւորելով թագաւո-
րեսցես, եւ հաստատեսցի ի ձեռս քո
22 թագաւորութիւնն Իսրայէլի: Եւ արդ
երդուիր ինձ ի Տէր, զի մի ստակեսց-
ցես զսերմն իմ զկնի իմ, եւ մի եղծցես
23 զանուն իմ ի տանէ հօր իմոյ: Եւ երդ-
ուաւ Դաւիթ Սաւուղայ: Եւ գնաց Սա-
ւուղ ի տեղի իւր, եւ Դաւիթ եւ արք
իւր [9]եկին ի Մասարա" յանձաւսն:

Գլ. Ի

1 Եւ մեռաւ Սամուէլ, եւ ժողովեցան ա-
մենայն Իսրայէլ եւ կոծեցան զնա, եւ

---

[1] ԵԲԲ. Ենգադդայ [2] ԵԲԲ. ա՛ռ Սաւուղ [3] ԵԲԲ. ընդ երեսս ապառաժից այծեմանց [4] ԵԲԲ. քեզ չարիս [5] ԵԲԲ. ասացին զի սպանից [6] ՅԵԲԲ. գալ-ով [7] ԵԲԲ. քեզ [8] ԵԲԲ. այսօր ինձ [9] ԵԲԲ. եկին

թագեցին զնա ի տան իւրում յԱրիմաթիա-
իմ։ Եւ յարեաւ Դաւիթ եւ էջ յանա-
պատն [1]Մաոնայ։
2 Եւ էր այր մի ի Մաոն, եւ [2]հօտք իւր
ի Կարմեղոս, եւ այրն մեծատուն էր յոյժ.
եւ նորա էին ոչխարք երիւք հազարք,
եւ այծք հազար. եւ եղեն կազումք հօ-
3 ւթին ի Կարմեղոս։ Եւ անուն նորա Նա-
բաղ, եւ անուն կնոջ նորա Աբիգեա.
եւ կին նորա առատ իմաստասիրեամբ եւ
գեղեցիկ տեսլեամբ յոյժ. եւ այրն խիստ
եւ չար խորհրդովք եւ այր [3]չնաշարագ։
4 Եւ լուաւ Դաւիթ [4]յաւազանի՝ եթէ
կալեալ Նաբաղ զհօտս իւր։
5 Եւ առաքեաց Դաւիթ մանկունս տասն,
եւ ասէ Դաւիթ ցմանկունսն, Ելէք ի
Կարմեղոս՝ եւ երթայք առ Նաբաղ, եւ
6 հարցէք յանուն իմ զողջունէ նորա, Եւ
ասասջիք այսպէս [5]ի սոյն աւուրս՝ Ողջ
իցես, գու եւ տունդ քո եւ ամենայն որ
7 ինչ քո՝ ողջ լիցի։ Եւ արդ աւասիկ լուայ
եթէ կտուրք են հօտից [6]քոց որ ընդ
մեզ էին յանապատի ասա՝, եւ ոչ ար-
գելաք զդոսա, եւ ոչ խուեցաք զդոսա
եւ ոչ իւիք զամենայն աւուրս որչափ եւ
8 էին ընդ մեզ ի Կարմեղոս։ Հարց զմանկտիդ
քո եւ պատմեսցեն քեզ, եւ գտցեն ման-
կունքդ չնորհս առաջի աչաց քոց, զի ի
բարի աւուր եկեն. արդ տացես որչափ
ինչ եւ գայէ ձեռն քո ծառայից քոց,
9 եւ որպէս քեզ Դաւիթ։ Եւ եկեն ման-
կունքն Դաւիթ, եւ խօսեցան զբանս
ընդ Նաբաղայ, ըստ ամենայն բանիցն
10 այնոցիկ յանուն Դաւիթ։ [7]Ընդդատա-
ցաւ, եւ՝ եւ պատասխանի ծառայիցն
Դաւիթ եւ ասէ, Ո՞ Դաւիթ, կամ ո՞
որդին Յեսսեայ. բազմացեալ են այսօր
ծառայք զնացականք իւրաքանչիւր ի-
11 րեանց տեառն իւրոյ։ Արդ առնուցում
զհաց իմ եւ [8]զգինի իմ եւ զդընկիս իմ
զոր զենի կտրուցայ իմոյ պատրաստակս,
եւ տայցե՞մ արանց զորս ոչ գիտեմ
12 ուստի իցեն։ Եւ գարձան մանկունքն
Դաւիթ ի ճանապարհ իւրեանց, եւ եկեն
պատմեցին Դաւիթ ըստ բանիցն այնո-
13 ցիկ։ Եւ ասէ Դաւիթ ցարան իւր, Ածէք
ընդ մէջ իւրաքանչիւր զսուր իւր. եւ
ածին ընդ մէջ այր իւրաքանչիւր զսու-
սեր իւր. ած ընդ մէջ եւ Դաւիթ զսուր
իւր. եւ եկին զհետ Դաւիթի իբրեւ արք
չորեքհարիւր, եւ երկերիսքն եւս անկէն
նստան առ կարասին։
14 Եւ Աբիգեայ կնոջ Նաբաղայ պատմեաց
մի ումն ի մանկտուց անտի եւ ասէ, Անա
առաքեաց Դաւիթ հրեշտակս յանապատ-
ատն օրհնել զտէր մեր, եւ նա [9]խաւսաց
15 ի նոցանէն՝, Եւ արքն երախտաւոր էին
մեզ յոյժ, եւ ոչ արգելին զմեզ, եւ ոչ
իւիք խաւեցին զմեզ՝ արչաւի եղեալ ընդ
16 նոսա ի բացի։ Եւ իբրեւ զպարիսպ էին
մեզ զգայդ եւ զդնկիկ զամենայն ա-
ւուրսն որչափ էաք ընդ նոսա եւ արա-
17 ծէաք զխաչինան։ Եւ արդ գիտասցես եւ
անացես զինչ գործեսցես. զի վճարեալ
է չարութիւն ի վերայ տեառն մերոյ, եւ
ի վերայ ամենայն տան նորա. եւ նա
այր ժանա է, եւ ոչ գոյ խօսել ընդ նմա։
18 Եւ աճապարեաց Աբիգեա, եւ առ երե-
կսիսքն նկանակ եւ երկուս սափոն գին-
եայ եւ հինգ ոչխար հատուցեալ եւ հինգ
արդու փոխնոյց եւ [10]կայի մի չափիչ՝,
եւ պատարեաս երկսիսքն, եւ եդ ի վե-
19 րայ իշոց։ Եւ ասէ ցմանկտին իւր, Եր-
թայք յառաջագոյն քան զիս, եւ ես գամ
զկնի ձեր. եւ առն իւրում Նաբաղայ ոչ
20 եհան ի վեր։ Եւ եղեւ ընդ ելանել նո-
ցա լեռն եւ ընդ իջանել ընդ գանխուղ
լերինն, եւ ահա Դաւիթ եւ արք նորա
իջանէին ընդ առաջ նորա, եւ զիարձաւ
21 նոցա։ Եւ ասէ Դաւիթ, Զուր ուրեմն
պահեցի զամենայն ինչ Նաբաղայ յան-
պատի անդ, եւ ոչ խուեցաք առնուլ յամե-
նայնէ որ ինչ էր նորա եւ ոչ ինչ. եւ հա-
22 տուցե զինձ չար երախտեաց իմոց։ Օն եւ օն
արասցէ Աստուած [11]Դաւիթի, եւ օն եւ օն
յաւելցէ, եթէ թողից յամենայնէ Նաբաղա-
մինչեւ ցառաւօտն որ զորմով միզիցէ։
23 Իբրեւ տեսս Աբիգեա զԴաւիթ փու-
թացաւ եւ վազեաց իջոյն, եւ անկաւ
առաջի Դաւիթի ի վերայ երեսաց իւրոց,
24 եւ երկիր նստաւ նմա յերկիր։ Եւ անկաւ առ ոտս նորա եւ ասէ, Ցիս, տէր,
ինձս իմ. բացց խօսեսցի աղախին քո
յականջս քո, եւ լուիցես բանից աղախնոյ
25 քո։ Մի դիցէ տէր իմ զսիրտ իւր ի վե-
րայ առն ժանտի Նաբաղայ. զի բան
անուան նորա եւ ինքն է. [12]Նաբաղ ա-
նուն նորա, եւ անզգամութիւն ընդ նմա.

[1] Եբբ. Փառանաս [2] Եբբ. արարք նորա [3] Կա՛մ, Ջաղբեան [4] Եբբ. յանապատին [5] Յեբբ. դ-ի-ա-ե [6] Եբբ. քոց. Հովիւք քո ընդ մեզ էին [7] Եբբ. Եւ Նաբաղ [8] Եբբ. զկոր

[9] Եբբ. անարգեաց զնոսա [10] Եբբ. Հարեւ ըստ կոչեցյ չափոյ [11] Եբբ. Թշնամեաց Դաւթի [12] Այլ ինդն, անզգամ

եւ ես ազախին քո ոչ ասի զմանկունս
26 քո զոր առաքեցեր։ Եւ [1]այլ կենդանի
է Տէր եւ կենդանի է անձն քո, որպէս
արգել զքեզ Տէր չգալ յարիւն [2]անպարտ,
այլ պահել զձեռն քո առ քեզ. եւ արդ
եղիցին իբրեւ զնաբալ թշնամիք քո եւ
27 որ խնդրիցեն տեառն իմոյ չարիս։ Եւ
արդ առ զօրհնութիւնս զայս զոր երեր
ազախին քո տեառն իմոյ. եւ տացես
մանկտւոյդ որ կան առաջի տեառն իմոյ։
28 Եւ լարձ զվնաս ազախնոյ քո. զի առ-
նելով արասցէ Տէր տեառն իմոյ տուն
հաստատուն. զի զպատերազմ [3]տեառն
իմոյ Տէր՝ պատերազմի, եւ չարութիւն
29 մի երեւեր գոյր ի քեզ։ Եւ [4]ոչ յարիցէ՝
մարդ հալածել զքեզ, եւ խնդրել զանձն
քո. եւ եղիցի անձն տեառն իմոյ ծրար-
եալ ի ծրարի կենդանւոյ [5]Տեառն Աստուծոյ՝,
եւ զանձն թշնամեացդ քոց [6]պարապաքա-
30 րեացես ի մէջ պարապարոյ։ Եւ եղիցի
յորժամ արասցէ Տէր տեառն իմոյ զա-
մենայն բարիս զոր խօսեցաւ ածել ի
վերայ քո, եւ առցէ զքեզ պատուիրա-
31 նաւ առաջնորդ ի վերայ Իսրայէլի, Մի
լիցի [7]պղծութիւն եւ գայթագղութիւն
ի սրտի տեառն իմոյ հեղուլ զարիւն
արդար առանապարատուց, եւ պահեցոյն
ձեռն տեառն իմոյ առ քեզ՝. եւ բարի
արասցէ Տէր տեառն իմոյ, եւ յիշես-
ցես զազախին քո [8]բարի առնել նմա՝։
32 Եւ ասէ Դաւիթ ցԱբիգաիա, Օրհնեալ
Տէր Աստուած Իսրայէլի որ առաքեացն
33 զքեզ այսօր ընդ առաջ իմ. Եւ օրհնեալ
բարք քո, եւ օրհնեալ լիցիս դու որ
արգելեր զիս այսօր առնւ չերթալ յա-
34 րիւն, եւ պահել զձեռն իմ առ քեզ։ Բայց
կենդանի է Տէր Աստուած Իսրայէլի, որ
արգել զիս այսօր չառնւոյդ քեզ չար.
զի թէ չէիր փութացեալ եւ եկեալ ընդ
առաջ [8]իմ. քանզի առաւօտ, թէ ոչ մնասցէ՝
Նաբաղայ մինչեւ ցլոյս առաւօտու որ
35 զորմով միզիցէ։ Եւ առ Դաւիթ ի ձե-
ռաց նորա զամենայն զոր երեր նմա,
եւ ասէ ցնա, Ել ի տուն քո խաղաղու-
թեամբ. տես զի լուայ ձայնի քումի, եւ
ակն առի երեսաց քոց։
36 Եւ գնաց Աբիգաիա առ Նաբաղ. եւ էր
խրախութիւն ի տան նորա իբրեւ զթա-
գաւորի խրախութիւն ի տան նորա, եւ
սիրտ Նաբաղայ զուարճացեալ էր ցինքեան, եւ ինքն
արբեալ էր յոյժ. եւ ոչ պատմեաց նմա
բան մի մեծ կամ փոքր մինչեւ ցլոյս
37 առաւաւտն։ Եւ եղեւ ընդ առաւօտն,
իբրեւ սփոփեցաւ Նաբաղ ի գինւոյ տանէ,
պատմեաց նմա կինն իւր զբանս զայ-
սոսիկ. եւ մեռաւ սիրտ նորա ի նմա,
38 եւ եղեւ իբրեւ զքար։ Եւ եղեն իբրեւ
աւուրք տասն, եւ եհար Տէր զնաբաղ,
եւ մեռաւ։
39 Եւ լուաւ Դաւիթ եթէ մեռաւ Նա-
բաղ, եւ ասէ, Օրհնեալ Տէր Աստուած
որ պատեաց զպատաստանս նախատինացդ
իմոց ի ձեռաց Նաբաղայ. եւ զծառայ
իւր սպրեցոյց ի ձեռաց չարեաց, եւ
զչարութիւն Նաբաղայ դարձոյց Տէր ի
գլուխ նորա. եւ առաքեաց Դաւիթ եւ
խոսեցաւ ընդ Աբիգաիա առնուլ զնա իւր
40 կնութեան։ Եւ եկին ծառայքն Դաւիթ
առ Աբիգաիա ի Կարմիղոս, խոսեցան ընդ
նմա եւ ասեն, Դաւիթ առաքեաց զմեզ
առ քեզ առնուլ զքեզ իւր կնութեան։
41 Եւ յարեաւ երկիր երեսաց իւրոց եւ
ասէ, Ահաւասիկ կաց ազախին քո ի սպասաւորութիւն լուա-
42 նալոյ զոտս ծառայից տեառն իմոյ։ Եւ
փութացեալ յարեաւ Աբիգաիա, եւ հե-
ծաւ ի էշ. եւ հինգ աղջիկ գնացին զնա նորա,
եւ չոգաւ զնաց ծառայիցն Դաւիթի, եւ
եղեւ նորա կին։
43 Եւ զԱքինոամ առ Դաւիթ յեզրայելէ.
44 եւ էին նորա երկոքեան կանայք։ Եւ
Սաւուղ եւ զՄեղքող զդուստր իւր զկին
Դաւիթի Փալտիելի որդւոյ Յեմեսացւոյ
Բաղմացւոյ։

ԳԼ. ԻԶ

1 Եւ եկին Զիփացիքն [9]ի մայրէն առ Սա-
ւուղ ի լրտեն՝ եւ ասեն, Ահա Դաւիթ
թաքուցեալ է առ մեզ ի լերին Եքեղա-
2 առ՝ հանդիպ Յեսիմոնայ։ Եւ յարեաւ
Սաւուղ եւ էջ յանապատն Զիփայ, եւ
ընդ նմա երեք հազարք արանց ընտրելոց
յիսրայէլէ, խնդրել զԴաւիթ յանապա-
3 տն Զիփայ։ Եւ բանակեցաւ Սաւուղ ի
լերին Եքեղաառ հանդիպ Յեսիմոնայ ի
վերայ ճանապարհին. եւ Դաւիթ նստէր
յանապատին. լրտես եւս Դաւիթ թէ
եկն Սաւուղ զկնի նորա յանապատն,

[1] ԵՔԵ. արդ. տէր իմ։ [2] ՅԱԵՔԵ. գ-ւ-ա-ե [3] ԵՔԵ. Տեառն տէր իմ [4] ԵՔԵ. յարեաւ [5] ԵՔԵ. ընդ Տեառն Աստուծոյ քումմ [6] ԵՔԵ. պարապաքեսցէ [7] ԵՔԵ. այս քեզ ի վարանս, եւ ի փիշ սրտի տեառն իմոյ հեղուլ զարիւն առանապատուց, և առնել փրկութիւն տեառն իմոյ իւրով [8] ԵՔԵ. իմ չէր մնացեալ

[9] ԵՔԵ. առ Սաւուղ ի Գաբաա

4 Առաքեաց Դաւիթ լրտեսս, եւ գիտաց եթէ եկեալ է Սաուղ պատասաոս-
խնամբ [1]ի Կեհլա։
5 Եւ յարեաւ Դաւիթ գաղտ եւ եկն ի տեղին ուր նստէր Սաուղ. եւ եահս
Դաւիթ զտեղին ուր ննջեաց Սաուղ, եւ անդ Աբենների որդի Ներեայ զօրա-
վար նորա. եւ Սաուղ ննջէր [2]ի պատ-
պաջուձան, եւ զօրն բանակեալ էր չուրջ
6 զնովաւ։ Պատասխանի եաս Դաւիթ եւ
ասէ ցԱքիմելէք Քետացի եւ ցԱբեսսա
որդի Շարուհեայ եղբայր Յովաբայ, եւ
ասէ, Ո՞ մտցէ ընդ իս առ Սաուղ ի
բանակն. եւ ասէ Աբեսսա, Ես մտից
7 ընդ քեզ։ Եւ մտին Դաւիթ եւ Աբեսսա
ի զօրն զկայզ. եւ ահա Սաուղ ննջէր
[2]ի պատպաջուձան, եւ զեղարկն ցցեալ
յերկրի ի մտարից նորա. եւ Աբենների եւ
8 զօր նորա ննջէին չուրջ զնովաւ։ Եւ ասէ
Աբեսսա ցԴաւիթ, Փակեաց Տէր այսօր
զքո[3]չնամիս քո ի ձեռս քո. արդ հարիւց
զսա զեղարկամբս յերկիր մի անգամ եւ
9 ոչ կրկնեցից։ Եւ ասէ Դաւիթ ցԱբեսսա,
Մի հարկաներ զդա. զի ո՞վ իցէ որ ձգիցէ
զձեռն իւր յօծեալ Տեառն եւ արիցի։
10 Եւ ասէ Դաւիթ, Կենդանի է Տէր, բայց
եթէ Տէր [3]խրատեսցէ զդա, եւ կամ թէ
օր իւր եկեսցէ եւ մեռցի, կամ թէ ի
11 պատերազմ մտցէ եւ յաւելցի. Քաւ լիցի
ինձ ի Տեառնէ ձգել զձեռն իմ յօծեալ
Տեառն. բայց արդ առ զդեղարկնդ ի
մտարից դորա եւ զկուժ ջրոյդ, եւ գնասջ-
12 գուք ի մեզ։ Եւ առ Դաւիթ զդեղարկն
եւ զկուժ ջրոյն ի մտարից նորա, եւ
գնացին յինքեանս. եւ ոչ ոք էր որ տես-
անէր եւ ոչ որ գիտէր, եւ ոչ որ էր
որ յառնէր. զի ամենեքեան ի քուն էին,
քանզի [4]մրրուեալ էին ի Տեառնէ անկա-
ւ վերայ նոցա։
13 Եւ անց Դաւիթ յայն կողմն, եւ եկաց
ի վերայ գլխոյ լերինն ի բացուստ, եւ
14 բազում ճանապարհ էր ի մէջ նոցա։ Բար-
բառեցաւ Դաւիթ ի զօրն, եւ խօսեցաւ
ընդ Աբեններայ եւ ասէ, Ո՞չ առնս պա-
տասխանի, Աբեններ. եւ [5]ասէ, Ո՞վ ես
15 դու որ կոչես [1]զիս առ արքայ։ Եւ ասէ
Դաւիթ ցԱբեններ, Ո՞չ ապաքէն այր
քաջ ես դու, եւ ո՞վ է իրրեւ զքեզ ի
մէջ Իսրայելի. եւ ընդէր ոչ պահես
զտէր քո զարքայ. զի եհտաւ այն ի
դօրուէդ սպանանել զտէր քո զարքայ։
16 Չէ բարի բանդ զոր արարեր. կենդանի
է Տէր զի որդիք մահու էք դուք որ
[6]պահէք զտէր ձեր զարքայ զօծեալ Տեառն.
եւ արդ աւասիկ զեղարկն արքային եւ
կուժ ջրոյն ո՞ր է որ առ մտարս նորա
17 կային։ Եւ ծանեաւ Սաուղ զձայնն
Դաւիթի եւ ասէ, Այդ ձայն քո՞ է, որդ-
եակ իմ Դաւիթ. եւ ասէ Դաւիթ, [7]Ա-
18 ւաղ քո եմ", տէր իմ արքայ։ Եւ ասէ,
Ընդէ՞ր է այդ, տէր իմ, զի հալածել ես
զկնի ծառայի քո. զի՞ մեղայ, եւ զի՞
19 գտաւ յիս վնաս։ Եւ արդ լուիցէ տէր
իմ արքայ զբանս ծառայի իւրոյ. եթէ
[7]Աստուծոյ չարժեալ է զքեզ ի վերայ
իմ, ձենձերեսցի զոհ [1]քո. եւ եթէ որդւոց
մարդկան, անիծեալ լիցին գոքա առաջի
Տեառն. զի մերժեցին զիս այսօր չհաս-
տատել ինձ ի ժառանգութիւնն Տեառն,
տուն, երթ ծառայեսա աստուածոց օտա-
20 րոյ։ Եւ արդ մի անկցի արիւն իմ յեր-
կիր առաջի երեսաց Տեառն. զի եկեալ
է խաղտաւոր Իսրայելի խնդրել [8]զանձն
իմ, որպէս ընթանայցէ ագռաւ" ընդ
լերինս։
21 Եւ ասէ Սաուղ, Մեղայ, դարձիր,
որդեակ իմ Դաւիթ, զի ոչ ինչ արարից
քեզ չար, փոխանակ զի պատուական է
անձն իմ առաջի աչաց քոց. եւ ես յայսմ
աւուր ժամանակի զրաժնիդիր եւ յան-
22 գաւար եմ յոյժ։ Պատասխանի եաս Դա-
ւիթ եւ ասէ, Ահաւասիկ զեղարկն ար-
քային, անցցէ մի ոք ի մանկտւդք եւ
23 առցէ զսա։ Եւ Տէր հատուսցէ իւ-
րաքանչիւր ումեք բաս արդարութեանց
իւրոց եւ բաս հաւատարմութեանն. թէ
ո՛րպէս մատնեաց զքեզ Տէր այսօր ի
ձեռս իմ, եւ ոչ կամեցայ ձգել զձեռն
24 իմ յօծեալ Տեառն։ Եւ որպէս մեծացաւ
անձն քո առ այսօր առաջի աչաց իմոց, այնպէս մեծասցի անձն իմ առաջի
Տեառն, [1]եւ ամրացուսցէ զիս" եւ ապ-
րեցուսցէ զիս յամենայն նեղութենէ։
25 Եւ ասէ Սաուղ ցԴաւիթ, Օրհնեալ ես
դու, որդեակ իմ Դաւիթ, եւ առնելով
արասցես եւ զօրանալով զօրասցիս։ Եւ
գնաց Դաւիթ զճանապարհ իւր, եւ Սա-
ւուղ դարձաւ ի տեղի իւր։

---

[1] ՅԵԲԲ. գ-ի-ս-ի [2] ԵԲԲ. ի մէջ կառուցս [3] ԵԲԲ. Տեառն [4] ԵԲԲ. հարցէ [5] ԵԲԲ. ոչ պահէք [6] ԵԲԲ. Ձայն իմ [7] ԵԲԲ. լաւ մի, որպէս հալածիցէ կաքաւ [8] ԵԲԲ. ասէ Աբեններ

Գլ. Իէ

1 Եւ խօսեցաւ Դաւիթ ի սրտի իւրում եւ
ասէ, Արդ անկանիցիմ յաւուր միում ի
ձեռս Սաուղայ. եւ չէ ինձ բարի, եւ
թէ ոչ գոյացայց յերկիրն Փղչաացւոց.
եւ [1]եթէ իցէ՝ խնդրեսցէ զիս Սաուղ՝
յամենայն սահմանս Իսրայէլի, ապրե-
2 ցայց ի ձեռաց նորա։ Եւ յարեաւ Դա-
ւիթ, եւ անց ինքն եւ վեց հարիւր արքն
որ ընդ նմա, եւ գնաց առ Անքուս որ-
3 դի Մաւաքայ՝ արքայ Գեթայ։ Եւ նստաւ
Դաւիթ ընդ Անքուսայ ի Գէթ, ինքն եւ
արք իւր՝ իւրաքանչիւր տանբ իւրով.
եւ Դաւիթ եւ երկոքին կանայք իւր,
Աքինոամ Յեզրայէլացի եւ Աբիգեա կին
4 Նաբաղայ Կարմղացւոյ։ Եւ ազդ եղեւ
Սաուղայ եթէ փախեաւ Դաւիթ ի Գէթ,
եւ ոչ եւս յաւել խնդրել զնա։
5 Եւ ասէ Դաւիթ ցԱնքուս, Եթէ եգիտ
ծառայ քո շնորհս առաջի աչաց քոց,
տացես ինձ տեղի ի միում քաղաքաց
յանդս, եւ նստայց անդ. եւ ընդէ՞ր նստի-
ցի ծառայ քո ի թագաւորական քաղաքի ընդ
6 քեզ։ Եւ եա նմա Անքուս յաւուր յայնմիկ
զՍիկեղակ. վասն այնորիկ եղեւ Սիկեղակ
7 արքայից Հրէաստանի մինչեւ ցայսօր։ Եւ
եղեւ թիւ աւուրցն զոր նստաւ Դաւիթ
յանդս այլազգեացն [2]աւուրք չորիսամսոց՝։
8 Եւ ելանէր Դաւիթ եւ արքն որ ընդ
նմա էին, եւ առպաստակէին ի վերայ [3]ա-
մենայն Գեսերացւոյն եւ Գեզերացւոյն
եւ Ամաղեկացւոյն. [4]եւ անտ բնակէր
երկիրն ի Գեզամաւրայ յայտնութեան
9 պարսպաւորաց մինչեւ ցԵգիպտոս՝։ Եւ
հարկանէր Դաւիթ զերկիրն, եւ ոչ ապ-
րեցուցանէր զայր եւ զկին. եւ առնոյր
հօտս եւ անդեայս եւ էշս եւ ուղտս եւ
հանդերձս, եւ դառնայր եւ գայր առ Անք-
10 քուս։ Եւ ասէր Անքուս ցԴաւիթ, Ո-
րո՞ւմ կողմանն արշաւեցէք այսօր։ Եւ
ասէր Դաւիթ ցԱնքուս, Ի կողմանս հա-
րաւոյ Հրէաստանի, եւ ի կողմանս [5]Յե-
11 րամեէլ, եւ ի կողմանս [5]Կենեզայ։ Զայր
եւ զկին ոչ [6]ապրեցուցի ածել ի Գէթ.
ասեմ՝, Դուցէ ազդ լինիցի զմէնջ ի Գէթ,
եւ ասիցեն թէ Զայս ինչ գործէ Դաւիթ,
եւ այս [7]իրաւունք էին՝ նորա զամենայն
աւուրս որչափ եւ նստաւ Դաւիթ [8]յան-
12 դի այլազգեացն։ Եւ հաւատաց Անքուս
Դաւթի յոյժ, եւ ասէ, [9]Ամաչելով ա-
մաչէ՝ ի ժողովրդենէ իւրմէ յԻսրայէլէ,
եւ եղիցի ինձ ծառայ յաւիտեան։

Գլ. Իը

1 Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ՝ ժողովե-
ցան այլազգիքն բանակօք իւրեանց եւ
լանալ պատերազմել ընդ Իսրայէլի. եւ
ասէ Անքուս ցԴաւիթ, Գիտելով դի-
տացես, զի ընդ իս ելանելոց ես ի պա-
2 տերազմ, դու եւ արք քո։ Եւ ասէ Դա-
ւիթ ցԱնքուս, Այդպէս լիցի, արդ գի-
տացես զինչ գործեսցէ ծառայ քո։ Եւ
ասէ Անքուս ցԴաւիթ, Այդպէս լիցի.
անձնապահպանիւ արարից զքեզ զամե-
նայն աւուրս։
3 Եւ Սամուէլ մեռաւ, եւ կոծեցան զնա
ամենայն Իսրայէլ, եւ թաղեցին զնա ի
քաղաքին իւրում յԱրիմաթեամ։ Եւ Սա-
ուղ եբարձ զվհուկս եւ զդէմս յերկրէ։
4 Եւ գումարեցան այլազգիքն, եւ եկին
բանակեցան ի Սովման. եւ ժողովեաց
Սաուղ զամենայն այր Իսրայէլի, եւ
5 բանակեցան ի Գեղբուէ։ Իրրեւ եաես
Սաուղ զբանակ այլազգեացն, երկեաւ
6 եւ զարհուրեցաւ սիրտ նորա յոյժ։ Եւ
եհարց Սաուղ ի Տեառնէ, եւ ոչ արար
նմա պատասխանի Տէր երազովք եւ
7 [10]ուրիմովք եւ մարգարէիւք։ Եւ
ասէ Սաուղ ցծառայս իւր, Խնդրեցէք
ինձ կին մի վհուկ, եւ երթայց առ նա
եւ խնդրեցիցէ նովաւ։ Եւ ասեն ծառայքն
նորա ցնա, Անահէ կին մի վհուկ յԱյենդովր։
8 Եւ ծպտեցաւ Սաուղ, եւ զգեցաւ այլ
հանդերձս, եւ գնաց ինքն եւ երկու արք
ընդ նմա, եւ եկին առ կինն գիշերի։
Եւ ասէ ցնա, Դիւթեա դու ինձ վհուկդ,
9 եւ հան ինձ զոր ասացից քեզ։ Եւ ասէ
կինն, Ահա դու ինքնին իսկ գիտես զոր
ինչ արար Սաուղ, որպէս ոչնչացոյց
զվհուկս եւ զդէմս յերկրէ. եւ արդ ընդ-
է՞ր որսաս զանձն իմ սպանանել զիս։
10 Եւ երդուաւ նմա Սաուղ ի Տէր եւ ա-
սէ, Կենդանի է Տէր, եթէ պատահեսցի
11 քեզ վնաս ի բանիս յայսմիկ։ Եւ ասէ
կինն, Զո՞ հանից քեզ։ Եւ ասէ, ԶԱս-
մուէլ հան ինձ։

[1] Եբէր. յաւաւհատ յիցի Սաուղ ի խնդրելոյ զիս այլ
եւս [2] Եբէր. մի ամ եւ ամիսք չորք [3] Եբէր. դ-ի-ւ-ե
[4] Եբէր. զի բնակէին նոքա ի վաղուց յերկրին յայն-
միկ ի մտից Սաբայ մինչեւ յերկիրն Եգիպտացւոց։
[5] Եբէրայեցի յաւելու, Հարաւոյ, [6] Եբէր. ապրեցուցա-
նէր Դաւիթ տանել հարքսա ի Գէթ զի ասէր,
[7] Կամ, էր սովորութիւն [8] Կամ, յերկրին [9] Եբէր.
Աստեղ աստեցաւ [10] Եբէր. ԵՒւրիմաւ.

12 Եւ եաես կինն զՍամուէլ, եւ ագա-
զակեաց ի ձայն մեծ. եւ ասէ կինն ցՍաու-
ւուղ, Ընդէ՞ր խարեցեր զիս. եւ դու
13 Սաուղ ես։ Եւ ասէ ցնա արքայ, Մի
երկնչիր, ասա զո՞ տեսեր։ Եւ ասէ կին
կինն, Աստուած տեսանեմ ելեալս յերկրէ։
14 Եւ ասէ ցնա, [1]Զինչ պատացեր՞։ Եւ ասէ
ցնա, Այր [2]ուղղորդ ելեալ յերկրէ՞, եւ
արկեալ զիւրեւ կրկնոց։ Եւ ծանեաւ
Սաուղ եթէ Սամուէլ է նա. եւ անկաւ
ի վերայ երեսաց իւրոց յերկիր, եւ երկ-
15 նեաց երկիր։ Եւ ասէ Սամուէլ ցՍաուղ,
Ընդէ՞ր եղեր զիս [3]յանել ինձ։ Եւ ասէ
Սաուղ, Նեղեալ եմ յոյժ, եւ այլազ-
գիք պատերազմին ընդ իս, եւ Աստուած
հեռացաւ յինէն, եւ ոչ լուաւ ինձ ոչ
մարգարէիւք, եւ ոչ երազովք. եւ արդ
կոչեցի զքեզ ցուցանել ինձ զինչ դոր-
16 ծեցից։ Եւ ասէ Սամուէլ, Ընդէ՞ր հարցա-
նես զիս, եւ Տէր հեռացաւ իքէն, եւ
17 եղեւ [4]ընդ ընկերի քումի՞։ Եւ արար ընդ
քեզ Տէր որպէս խօսեցաւ յիմ ձեռն. եւ
պատառեսցէ Տէր զթագաւորութիւնդ ի
ձեռաց քոց, եւ տացէ զգա ընկերի քումի՞
18 Դաւթի։ Ընդէ՞ր ոչ լուար ձայնի Տեառն,
եւ ոչ արարեր զսրտմտութիւն բարկու-
թեան նորա յԱմաղէկ. վասն այնր բանի
արար քեզ Տէր զայդ յաւուր յայսմիկ։
19 Եւ մասնեսցէ Տէր զԻսրայէլ քեզ հան-
դերձ ի ձեռս այլազգեացն, եւ վաղիւ
դու եւ որդիք քո [5]ընդ քեզ անկցին՞,
եւ զբանակն Իսրայէլի տացէ Տէր ի
ձեռս այլազգեացն։
20 Եւ փութացաւ Սաուղ եւ անկաւ
յոտանկէսեաց ի գետին. եւ զարհուրեցաւ
յոյժ ի բանիցն Սամուէլի, եւ զօրութիւն
ոչ եւս զոյր ի նմա. զի ոչ եկեր հաց
21 զամիսն ողջոյն եւ զգիշերն ամենայն։ Եւ
եմուտ կինն առ Սաուղ եւ եաես զի
տագնապեալ էր յոյժ, եւ ասէ ցնա, Ա-
հա լուաւ աղախին քո ձայնի քումի. եւ
եդի զոգի իմ ի ձեռին իմում, եւ ունկնդիր
22 եղէ բանիցն զոր խօսեցար ընդ իս։ Եւ
արդ լուր եւ դու ձայնի աղախնոյ քո,
եւ եղիցի առաջի քո պատառ մի հաց եւ
կերիցես, եւ եղիցի քեզ զօրութիւն. զի
23 երթիցես գճանապարհ քո։ Եւ ոչ [6]կա-
մեցաւ ուտել՞. եւ բռնադատեցին զնա
ծառայքն իւր եւ կինն, եւ լուաւ ձայնի
նոցա, եւ յարեաւ ի գետնոյն եւ նստաւ
24 [7]յաթոռ։ Եւ կնոջն անասնակ էր որթ մի
ի տան, եւ փութացաւ եզեն գնա. եւ
առ ալիւր, թրիաց, եւ եփեաց բազարջս.
25 Եւ մատոյց առաջի Սաուղոյ, եւ ա-
ռաջի ծառայից նորա, եւ կերան եւ յա-
րեան գնացին զգիշերն զայն։

Գլ. ԻԹ

1 Եւ ժողովեցին այլազգիքն զամենայն
զրանակս իւրեանց յԱփեկ, եւ բանակե-
ցաւ Իսրայէլ [8]յԱյենդովր Ցեզրայելի։
2 Եւ նախարարք այլազգեացն [9]հարիւրա-
տորօք եւ հազարատորօք, եւ Դաւիթ եւ
արք իւր երթային յետոյ ընդ Անքուսայ։
3 Եւ ասեն նախարարք այլազգեացն, Ո՞
են [10]գոքա որ անցանենդ՞։ Եւ ասէ Ան-
քուս ցնախարարս այլազգեացն, Ո՞չ զա
է Դաւիթ ծառայ Սաուղայ արքայի Իս-
րայելի, [11]եւ այս երկու ամք են զի առ
մեզ է՞, եւ ոչ ինչ գտի ի դմա յօրէ յոր-
մէ հետէ անկաւ ի մեզ մինչեւ ցայսօր։
4 Եւ խոժոռեցան նմա նախարարք այլազ-
գեացն, եւ ասեն ցնա, Դարձո զայրն,
եւ երթիցէ ի տեղի իւր ուր կացուցեր
զնա անդ. եւ մի եկեսցէ ընդ մեզ ի պա-
տերազմ, եւ մի լիցի զաւաճան բանա-
կիս. եւ ըստ հաճելի զա ընդ անասն իւ-
րում, եթէ ոչ գլխովք արանցդ այզոցիկ։
5 Ո՞չ այդ Դաւիթ է որում նուագէին ի
պարս եւ ասէին, եթէ Եհար Սաուղ
6 զհազարս եւ Դաւիթ զբիւրս։ Եւ կոչեաց
Անքուս զԴաւիթ, եւ ասէ ցնա, Կեն-
դանի է Տէր, զի ուղիղ եւ բարի ես դու
յաչս իմ, եւ մուտ քո եւ ել ի բանակի
առաջի ընդ իս. եւ ոչ գտի ի քեզ չարու-
թիւն յօրէ յորմէ հետէ եկեր առ իս մին-
չեւ ցայսօր ժամանակի. եւ յաչս նա-
7 խարարացն ոչ թուիս գու բարւոք. Եւ
արդ դարձիր եւ երթ ի խաղաղութիւն,
եւ ոչ արասցես [12]չարութիւն յաչս նա-
8 խարարաց այլազգեացս։ Եւ ասէ Դաւիթ
ցԱնքուս, Զինչ արարի քեզ, եւ զինչ
գտեր ի ծառայի քումի յօրէ յորմէ էի ա-
ռաջի քո մինչեւ ցայսօր. զի՞ ոչ գայցեմ
պատերազմել ընդ թշնամիս տեառն իմոյ
9 արքայի։ Պատասխանի եւս Անքուս եւ

[1] Եբր. Զինչ են կերպարանք նորա [2] Եբր. ծեր ելեալ [3] Եբր. Հանել զիս [4] Կամ, Թշնամի քո [5] Եբր. ընդ իս էքէք [6] Եբր. կամեցաւ, եւ ասէ, Ոչ կերայց

[7] Եբր. ի գահոյս [8] Եբր. առ աղբերն [9] Եբրայեցերէն յաւելու, անցանէին [10] Կամ, Երթայեցիքդ [11] Եբր. որ եղեւ առ իս այսչափ աւուրս [12] Եբր. չար

ասէ ցԴաւիթ, Գիտեմ զի բարւոք Թուխա
գու յաչս իմ իբրեւ զհրեշտակ Աստուա-
ծոյ. այլ նախատարք այլազգեացն ասեն,
10 Մի՛ եկեսցէ ընդ մեզ ի պատերազմ։ Եւ
արդ կանխեա գու ընդ առաւօտն, գու
եւ ծառայք անտի քո որ եկեալ են ընդ
քեզ, [1]եւ երթայք ի տեղին յորում կա-
ցուցի զձեզ. եւ բան ինչ յուսութիան
մի դիցես ի սրտի քումի, զի հաճոյ ես
գու առաջի իմ." եւ վաղվաղոյց յլինի-
ցիք ի ճանապարհն եւ լուսացոյն ձեզ եւ
11 գնասջիք։ Եւ կանխեաց Դաւիթ եւ արք
իւր գնալ ընդ առաւօտն [2]եւ պահել զեր-
կիր" այլազգեացն. եւ այլազգիքն եկին
[3]պատերազմել ընդ Իսրայէլ"։

ԳԼ. Ա.

1 Եւ եղեւ ընդ մտանել Դաւիթի եւ ա-
րանց նորա ի Սիկեղակ յաւուրն երրոր-
դի, եւ Ամաղէկ ասպատակեաց ի հա-
րաւակողմն եւ ի Սիկեղակ. եւ եհար զՍի-
2 կեղակ եւ այրեաց զնա հրով, Եւ զե-
րեաց զկանայս [1]եւ զամենայն ինչ" որ
ի նմա ի փոքուէ մինչեւ ցմեծ. եւ ոչ
սպանին զայր [1]եւ զկին", այլ գերեցին
3 եւ գնացին զճանապարհ իւրեանց։ Եւ
եկին Դաւիթ եւ արք իւր ի քաղաքն. եւ
ահա այրեցեալ էր քալաքն, եւ կանայք
նոցա եւ ուստերք եւ դստերք իւրեանց
4 գերեալք։ Եւ ամբարձին Դաւիթ եւ արք
նորա զձայնս իւրեանց եւ լային, մին-
չեւ ոչ եւս գոյր ի նոսա զօրութիւն լա-
5 լոյ։ Եւ երկոքին կանայքն Դաւիթի գե-
րեցան, Աքինոամ Յեզրայելացի եւ Ա-
6 բիգեա կին Նաբաղու Կարմելացւոյ։ Եւ
նեղեցաւ Դաւիթ յոյժ, զի ասաց ժողո-
վուրդն քարկոծել զնա. զի զայրացեալ
էր ոգի ամենայն ժողովրդեանն ի բա-
քանչիւր ի վերայ ուստերաց եւ դստե-
րաց իւրեանց։ Եւ զօրացաւ Դաւիթ ի
7 Տէր Աստուած իւր։ Եւ ասէ Դաւիթ ցԱ-
բիաթար քահանայ որդի Աբիմելեքայ,
Մատո զկիսուդդ։ Եւ մատոյց Աբիաթար
8 զկիսուդն առ Դաւիթ։ Եւ եհարց Դաւիթ ի
Տեառնէ եւ ասէ, Պնդեցայց զկնի [4]զգունդ-
րայն այնորիկ, եթէ հասանիցե՞մ նոցա։
Եւ ասէ ցնա Տէր, Պնդեաց եւ հասանելով
հասանես, եւ թափելով թափեսցես։
9 Եւ գնաց Դաւիթ եւ [5]չորեքհարիւր արքն
որ ընդ նմա, եւ եկին մինչեւ ցհեղե-

զատն Բոսորայ. եւ [6]աւելորդքն զտեղի
10 ահին։ Եւ պնդեցաւ Դաւիթ չորեքհա-
րեւր արամբ. եւ երկերիւր այր մնա-
ցին՝ [7]որք նստան" յայնկոյս հեղեզատին
11 Բոսորայ։ Եւ գտին այր մի եգիպտացի
յանդին եւ կալան զնա, եւ ածին զնա
Դաւիթ [1]յանդն. եւ հաւն նմա հաց եւ
12 կերաւ, եւ արբուցին նմա ջուր. Եւ ե-
տուն նմա կոտոր մի պաղաստաց եւ եր-
կուս չամչեայս, եւ կերաւ, եւ հաս-
տատեցաւ ոգին նորա. քանզի չէր
կերեալ հաց եւ ոչ արբեալ ջուր զերիս
13 տիւս եւ զերիս գիշերս։ Եւ ասէ ցնա
Դաւիթ, Ո՞յր ես դու, եւ ուստի՞ ես։
Եւ ասէ պատանեակն, Եգիպտացի եմ
ես ծառայ առն Ամաղեկացւոյ, եւ եթող
զիս տէր իմ. զի նքդողեցայ ես այս եր-
14 րորդ օր. Եւ մեք ասպատակեցաք ի
կողմանս հարաւոյ Քերեթեայ, եւ ի
կողմանս Հրէաստանի, եւ ի հարաւա-
կողմ Քաղեբայ, եւ զՍիկեղակ այրեցաք
15 հրով։ Եւ ասէ ցնա Դաւիթ, Եթէ ի-
ջուցանիցե՞ս զիս [8]ի գնդդունդն յայն։ Եւ
ասէ ցնա Եգիպտացին, Երդուր ինձ[9] ե-
թէ ոչ սպանցես զիս, եւ ոչ մատնես-
ցես զիս ի ձեռս տեառն իմոյ, եւ իջուցից
զքեզ [8]ի գնդդունդն։ [1]Եւ երդուաւ նմա"
16 Եւ իջոյց զնա անդր. եւ ահա նոքա
ցրուեալ էին ընդ երեսս ամենայն երկ-
րին, ուտէին եւ ըմպէին եւ տօնէին ա-
մենայն աւարօքն մեծամեծօք զոր ա-
ւհրն յերկրէն այլազգեաց եւ յերկրէն Յու-
17 դայ։ [1]Եւ եհաս ի վերայ նոցա Դաւիթ", [10]եւ եհար զնոսա Դաւիթ յերեկոյէ մինչեւ
առաւեկին մինչեւ ցերեկոյ եւ ի վաղիւ
անդր", եւ ոչ ապրեցաւ ի նոցանէ այր.
բայց միայն պատանեակք չորեքհարեւր
18 հնծան յուղտս եւ փախան։ Եւ թա-
վեաց Դաւիթ զամենայն ինչ զոր առին
Ամաղեկացիքն, եւ զերկոսին կանայս
19 իւր թափեաց Դաւիթ։ Եւ ոչ սխալե-
ցաւ ի նոցանէ ի փոքուէ մինչեւ ցմեծ,
եւ յուստերաց եւ ի դստերաց եւ յաւա-
րէն մինչեւ ցամենայն ինչ զոր առին ի
20 նոցանէ, զամենայն զարձոյց Դաւիթ։ Եւ
առ Դաւիթ զամենայն հօտս եւ զանդեայս,
եւ [11]տանէր առաջի աւարին. եւ [12]աւարին
անուն կոչէր" Թէ Այս աւար Դաւթի է։

[1] ՅԵբբ. պակաս [2] Եբբ. գառնալ յերկիր [3] Եբբ. Յզրայէլ [4] Եբբ. գնդին [5] Եբբ. վեցհարեւր [6] Եբբ. որ մնացինն [7] Եբբ. լքեալք անցանել [8] Եբբ. ի գունդն [9] Եբբ. յԱստուած [10] Եբբ. յայգուէ մինչեւ ցերեկոյ վաղուին [11] Եբբ. տանէին [12] Եբբ. աւէրն

21 Եւ եկն Դաւիթ առ երկերիւրեան զքեալս
յերթալոյ զկնի Դաւթի, եւ նստոյց զնոսա
ի հեղեղատին Բոսորայ. եւ կային ընդ
առաջ Դաւթի եւ ընդ առաջ զօրուն որ
ընդ նմա. եւ մատեաւ Դաւիթ առ զօրն,
եւ հարց զողջունէ նորա ի խաղաղու-
22 թիւն։ Եւ պատասխանի եաւն նմա ա-
մենայն արք ժանաք եւ անպիտանք յա-
նանց պատերազմողաց որ երթեալ էին
ընդ Դաւթի, եւ ասեն եթէ Զի ոչ ե-
զեն հետամուտ ընդ մեզ, ոչ տացուք
զոչա յաւարէ ասոի զոր թալանեցաք.
բայց եթէ պիրաքանչիւր զկին եւ զոր-
23 դիս տացին եւ գնասցին ի բաց։ Եւ ա-
սէ Դաւիթ, Մի արասցի այզպէս, եղ-
բարք իմ, յոտ մատանելոյ զնոսա մեզ
Տեառն եւ պահելոյ զմեզ. եւ մատնեալ
Տէր ի ձեռս մեր [1]զզեզդուրն եկեալ ի
24 վերայ մեր. Եւ ո՞ անսասցէ բանիդդ ձե-
րոյ այզոյիկ, զի ոչ[1]ինչ են բնկճատ ի
ձէնջ. քանզի բաս մասին երթելոյն ի պա-
տերազմ, նոյնպէս եղիցի մասն վանա-
պանին. բաս նմին օրինակի բաժանեա-
25 ցին։ Եւ եղեւ յօրէ յայնմանէ եւ անդր
հրեւ օրէնք եւ իրաւունք ի մէջ Իսրա-
յելի մինչեւ ցայսօր։
26 Եւ եկն Դաւիթ ի Սիկեղակ, եւ առա-
քեաց յաւարէ անտի ձերոցն Յուդայ [2]եւ
ընկերաց իւրոց, եւ ասէ, Այդ ձեզ օրհ-
նութիւն յաւարէ թշնամեաց Տեառն.
27 [3]Որ ի Բեթէլդ էք" եւ յԻեռամաթ հարա-
28 ւոյ, եւ որք յեթներ եւ յԱրոդեր, եւ որք
29 յեփթամովթ, եւ որք յեսթամա, Եւ
որք յերաքէլ, եւ որք ի քաղաքս Ցերե-
միայացոյն, եւ որք ի քաղաքս Կինեց-
30 ւոյն, Որք ի Հորմա, եւ որք ի Քորաշ-
31 ան, եւ որք յԱթաք, Եւ որք ի Քեբ-
րոն, եւ որք յամենայն տեղիս ընդ որ
չրջեցաւ Դաւիթ ինքն եւ արք իւր։

Գլ. ԼԱ

1 Եւ այլազգիքն պատերազմէին ընդ Իս-
րայելի. եւ վախեան արք Իսրայելի յե-
րեսաց այլազգեացն, եւ անկանէին վի-
2 րաւորք ի լերինն Գելբուէ։ Եւ հասին
այլազգիքն ի Սաւուղ եւ յորդիս նորա,
եւ հարին այլազգիքն զՅովնաթան եւ
զԱբինադաբ եւ զՄեղքիսուէ զորդիս
3 Սաւուղայ, Եւ ծանրացաւ պատերազմն
ի վերայ Սաւուղայ, եւ գտին զնա արք
կորովիք աղեղնաւորք, եւ վիրաւորե-
4 ցաւ [4]յոդ կարաւանդն ի ներքս"։ Եւ
ասէ Սաւուղ ցկապարճակիրն իւր, Մե-
կնա զսուր քո եւ խոցեա զիս նովաւ.
զուցէ գայցեն անթլփատքն եւ խոցո-
ւոցին զիս, եւ խաղայցեն զինեւ։ Եւ
ոչ կամեցաւ կապարճակիրն, քանզի եր-
կեաւ յոյժ։ Եւ առ Սաւուղ զսուրսն
5 իւր եւ անկաւ ի վերայ նորա։ Իրրեւ
եաեւ կապարճակիրն թէ մեռաւ Սաւուղ,
անկաւ եւ նա ի վերայ սուրսն իւրոյ
6 եւ մեռաւ ընդ նմա։ Եւ մեռաւ Սաւուղ
եւ երեքեան որդիք նորա, եւ կապար-
ճակիրն իւր, եւ ամենայն արք նորա
յաւուր յայնմիկ ի միասին։
7 Եւ իրրեւ տեսին արք Իսրայելի որ
յայնկոյս հովտացն եւ որ յայնկոյս Յոր-
դանանու, եթէ փախեան արք Իսրայե-
լի, եւ թէ մեռաւ Սաւուղ եւ որդիք նո-
րա, թողին զքաղաքս իւրեանց եւ փա-
խեան, եւ կային այլազգիքն եւ բնակե-
ցան ի նոսա։
8 Եւ եղեւ ի վաղիւ անդր եկին այլազ-
գիքն մերկացուցանել զդիակունսն. եւ
գտին զՍաւուղ եւ զերիս որդիս նորա
9 անկեալս ի լերինն Գելբուէայ։ [5]Գլխա-
ւորն զնա, եւ մերկացուցին զհանդերձ
նորա, եւ հասին զղջմէ" նորա. եւ ա-
ռաքեցին յերկիրն այլազգեաց չորջա-
նակի աւետաւորս ի կռատս իւրեանց եւ
10 ի ժողովուրդն։ Եւ եդին զկարասին նո-
րա յԱստարտեհնն, եւ [6]զմարմինն նորա"
կախեցին զպարսպէն Բեթսանայ։
11 Եւ լուան [7]զնոցանէն բնակիչք Յաբէ-
սայ Գաղաադացւոց զոր ինչ արարին այլ-
12 ազգիքն ընդ Սաւուղ. Եւ յարեան ա-
մենայն այր զօրաւորքն եւ գնացին զղի-
չերն ամենայն, եւ առին զմարմինն Սա-
ւուղայ եւ զմարմինն Յովնաթանու որդ-
ւոյ նորա ի պարսպէն Բեթսանայ, եւ
եկեալ եկին Յաբէս, եւ այրեցին զնո-
13 սա անդ։ Եւ առեալ զոսկերս նոցա եւ
թաղեցին զնոսա ընդ [8]անդիւն Յաբէս-
սայ", եւ պահեցին զեւթն օր։

---

[1] Եբէր. գոյնդն [2] Յեբէր. դ-ի-ե [3] Եբէր. Որք էին ի Բեթել

[4] Եբէր. յաղեղնաւորսն [5] Եբէր. Եւ հասին գգլուխ նորա եւ մերկացուցին զգենս [6] Եբէր. զմարմին նորա [7] Եբէր. զնմանէ [8] Եբէր. Յաւդիւն Յաբէս

ԳԼՈՒԽՔ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

	Գլ.	Հմր.
Զի սպան Դաւիթի զայրն որ առաց՝ թէ Ես սպանի զԱուրիա	Ա.	1
Ողբք Դաւթի ի վերոյ Սուրուղայ եւ Յովնաթանու	Ա.	17
Զի օծին զԴաւիթ ի Քեբրոն ի վերոյ Յուդայ	Բ.	1
Զի թագաւորեաց Յեբուսթէ որդի Սաւուղայ ի վերոյ մեռաւանցելոյն	Բ.	8
Կռիւն ի Գաբաւոն, ուր եւ սպանաւն Ասայէլ	Բ.	12
Զի զօրանայր տունն Դաւթի	Գ.	1
Տրտունջն Յեբուսթեայ, եւ սպառնալիքն Աբեններեայ	Գ.	6
Զի առաքեաց Աբեններ առ Դաւիթ քանս ուխտի	Գ.	12
Զի խօսեցաւ Աբեններ յականջս ամենայն Իսրայելի վասն Դաւթի թագաւորել նմա	Գ.	17
Մահն Աբեններեայ, եւ սուգն Դաւթի ի վերոյ նորա	Գ.	22
Զի սպան Դաւիթ զսպանողսն Յեբուսթեայ	Դ.	1
Զի օծին զԴաւիթ ի վերոյ ամենայն Իսրայելի	Ե	1
Ա՛ւ Դաւիթ զԱիմն, եւ սրար ողորմութիւն կալաց եւ կուրաց. եւ վասն որդւոց նորա	Ե.	6
Զի խրամատեաց Ցեր զպատգիան առաջի Դաւթի	Ե.	17
Զի դարձեալ եհար զպատգիան ի Նչան անտառին	Ե.	22
Թէ մեռաւ Ոզա առ տապանակաւն, վասն որոյ խոտորեցոյց Դաւիթ զտապանակն ի տուն Աբեդդարայ	Զ.	1
Զի եհան Դաւիթ զտապանակն յԿրուսաղէմ ի խորանն զոր ինքն կազմեաց. եւ թէ անգոնեաց Մեղքող զԴաւիթ	Զ.	12
Ասաց Դաւիթ ցՆաթան շինել տուն Աստուծոյ. եւ Նա յորդորեաց զնա առանց Տեառն ի նդն	Է.	1
Պատգամ Տեառն առ Դաւիթ՝ թէ Որ դի քո շինեսցէ ինձ տուն, եւ ես եղից նմա ի Հայր եւ Նա եղիցի ինձ Յորդի	Է.	4
Գոհութիւն Դաւիթ վասն այսր, եւ խնդրուածք վասն ինոյ խոստմանն	Է.	18
Կռկին Հայցուած վասն այսոցիկ	Է.	27
Զի սիրեաց Դաւիթ գԵսայն Եփրատայ, եւ յաւարէ հեթանոսացն պատրաստեաց պղինձ յոյժ ինիւթ կատ Հից տաճարին	Ը.	1
Սպան Դաւիթ զԱդրիազար. վասն որոյ առաքեաց Նմա արքայն Անտիոքոս՝ անօթս ոսկեզէնս	Ը.	9
Զի սրար Դաւիթ ողորմութիւն Մեմփիբոսթեայ որդւոյ Յովնաթանու	Ը.	15
Առաքեաց Դաւիթ մխիթարել զՀանան արքայ Ամմոնայ. որոյ նախատեալ գհրեշտական Դաւթի՝ վարձեաց զԱորիս կռուել ընդ Դաւթի	Ժ.	1
Զի առաքինացան ընդդէմ Նոցա Յովաբ եւ Աբեսա. եւ Նոքա դարձեալ գուժմարեցան	Ժ.	7
Անդ առաքինացեալ Դաւթի, եւ թագաւորքն անճնատուքք ծառայք լինէին Նմա	Ժ.	15
Եմռաւ Դաւիթ առ կինն Ուբիայ, ուստի յղացաւ կինն	ԺԱ.	2
Եւ զի ի պատերազմի անդ սպանաւ Ուբիա կամելով Դաւթի	ԺԱ.	14
Թէ զի՛նչ դիմեաց խօսեցաւ Նաթան ընդ Դաւթի վասն կնոջն Ուբիայ	ԺԱ.	26
Զի ի վճռելն Դաւթի գկրսէն, առատացաւ առ Նա քանն Տեառն. եւ զի յանձն ա՛ռ Դաւիթ զմեղանսն եւ ապրեցաւ	ԺԲ.	5
Վասն մահու մանկանն եւ վասն ծնընդեանն Սողոմոնի	ԺԲ.	15
Զոգաւ Դաւիթ եւ առ զԲաբաթի Ամմնացւոց, եւ յերկամիս սրկ զդերեալսն անտի	ԺԲ.	26
Զար խրատ ետ Յովնադաբ Ամնի վասն Թամարայ	ԺԳ.	1
Զի բռնադատեաց Ամնն զԹամար, եւ եղեւ ընդ նմա	ԺԳ.	6
Զի եղ իրքն ի վէր, եւ լուեալ Դաւթի բարկացաւ	ԺԳ.	15
Զի ընդ նախատանաց քեռն սպան Աբիսողոմ զեղբայր իւր զԱմն	ԺԳ.	22
Եւ զի փախեաւ Աբիսողոմ յերեսաց Դաւթի	ԺԳ.	37
Զի ի ձեռն բանեղ կնոջն զարթոյց Յովաբ զկամն Դաւթի զոր ուներ վասն Աբիսողոմայ	ԺԴ.	1
Զի գիտաց Դաւիթ թէ ինքն Յովաբ եգ քանս ի բերան կնոջն խօսել ընդ Դաւթի զԱբիսողոմայ	ԺԴ.	12
Զի հրամանաւ Դաւթի ած Յովաբ զԱբիսողոմ յԻրուսաղէմ, եւ վասն գեղոյ եւ հերաց Նորա	ԺԴ.	21
Զի այրեաց Աբիսողոմ զվիճակ գաբուին Յովաբայ, եւ գնացեալ Յովաբայ եմոյծ զնա առ արքայ	ԺԴ.	28
Զի Նենգութեամբ պատրէր Աբիսողոմ եւ քաջէր լինքն զԻսրայէլ	ԺԵ.	1
Թէ խրատուն Աբիտոփելայ Թագաւորեաց Աբիսողոմ	ԺԵ.	7
Զի փախեաւ Դաւիթ յԱբիսողոմայ, եւ զի դարձոյց յետս զտապանակն, եւ պատուիրեաց Սադովկայ գուշակել ինքեան զդիարդն	ԺԵ.	14
Զի դարձոյց յետս զԻուսի ցրել Նմա զխորհուրդն Աբիտոփելայ. Եւ զի եկն Սիբա պատանի Մեմփիբոսթեայ պատարագօք ընդ առաջ Դաւթի	ԺԵ.	32
Զի անիծանէր Սեմէի զԴաւիթ, եւ Նա չխոստանայր	ԺԶ.	5

	Գլ.	Համ.
Եկն Աբիսողոմ յԵրուսաղէմ, եւ եկն առ Նա Գուսի բարեկամ Դաւիթ։	ԺԶ.	15
Եւ զի խօսեցաւ Գուսի ըստ մտացն Աբիսողոմայ։	ԺԶ.	17
Զար խրատն Աբիտոփելայ՝ նսեմել Աբիսաղոմայ ընդ հարճս հօրն, և գժնեայ խորհուրդն նորա՝ փութով հասանել սպանանել զԴաւիթ։	ԺԶ.	20
Զի ցրեաց Գուսի զնենգ աւար խորհուրդն Աբիտոփելայ։	ԺԷ.	5
Զի առաքեաց գուշակեաց Գուսի ամփաւել Դաւիթի, զոր գիտացեալ Աբիտոփել խեղդամահ եղեւ։	ԺԷ.	15
ԶԱժեսայի կացոյց Աբիսողոմ ի տեղի Յովաբու, եւ թէ պէք էին որ կեբակրեցին զԴաւիթ ի փախչել անդ։	ԺԷ.	24
Զի պատեցաւ զօրն Աբիսողոմայ ի պատերազմի անդ՝ առաջի զօրացն Դաւիթի։	ԺՐ.	1
Նշաւակեալ մահն հայրապետին Աբիսաղոմայ։	ԺԷ.	9
Զի գադաբեցոյց Յովաբ զպատերազմն, եւ վան արձանին Աբիսողոմայ։	ԺՐ.	16
Զի եկն Գուսի առ Դաւիթ, եւ ասաց՝ թէ սպանաւ Աբիսողոմ։	ԺՐ.	19
Զի ողբաց Դաւիթ զԱբիսողոմ, և խոչեցան ի նմանէ զօրքն. եւ մեծարանեաց Յովաբ ի վերայ Դաւիթ եւ նա յանձին կալաւ։	ԺՐ.	33
Զի եկն ցեղն Յուդայ եւ այլքն գարձուցանել զԴաւիթ ի տուն իւր, եւ կազմեցին զՅորդանան անցանել արբայի։	ԺԹ.	9
Զի անյիշատակ եղեւ Դաւիթ առ Սեմէի, թէպէտ գաղանանայր Աբեսա։	ԺԹ.	18
Թէ զինչ փաղաքշեաց Մեմփիբոսթէ առաջի Դաւիթի։	ԺԹ.	24
Թէ զինչ խօսեցաւ Դաւիթ ընդ Բեբզելեայ՝ որ կերակրեացն զնա։	ԺԹ.	31
Եկին սասն ցեղքն Իսրայելի և կռուէին ընդ արս Յուդայ իրրեւ արհամարհեալք։	ԺԹ.	39
Ապատամբեաց Սաբէէ ի Դաւիթէ հանգերձ Իսրայելիւ։	Ի.	1
Վասն տասն հարճիցն, եւ զի առաքեաց Դաւիթ զԱմեսայի ժողովել զԻսրայէլ. եւ նա յամեաց։	Ի.	3
Զոգան Յովաբեանք զհետ Սաբէի Բերրեանց, եւ մահն Ամեսայեայ ի Յովաբայ։	Ի.	6
Խօսեցաւ կինն իմաստուն եւ խափեաց գրաղաքն ի Յովաբայ հատմամբ գլխոյն Սաբէի։	Ի.	14
Յարաց եցին սպանին Գաբաւոնացիք զորգիս Սաւուղայ, եւ լուաւ Տէր երկրին. եւ վասն պատերազմացն եւ սատակմանն Իսփայնոյ։	ԻԱ.	1
Օրհնութիւն զոր օրհնեաց Դաւիթ զԱստուած որ փրկեաց զնա ամենայն ուրեք։	ԻԲ.	1
Գոհութիւն իրաւանցն Աստուծոյ մարգարէութեամբ հանդերձ։	ԻԲ.	26
Վերջին բանք Դաւթայ ասացեալք։	ԻԳ.	1
Առաքինութիւնք քաջացն Դաւթի։	ԻԳ.	8
Զի նուիրեաց Դաւիթ Աստուծոյ զլուր չրհորդն Բեթղեհեմի։	ԻԴ.	14
Անուանք զօրաւորացն Դաւթի նախաթուելովքն՝ երեսուն եւ եւթն։	ԻԳ.	23
Թէ գրգռեաց Տէր զԴաւիթ թուել զԻսրայէլ։	ԻԴ.	1
Պատգամն Աստուծոյ առ Դաւիթ վասն երից պատժոյն, յորոց ընտրեաց զմիսն Դաւիթ. եւ զի կանգնեաց սեղան Տեառն, եւ գադաբեաց մահն Յարայելէ։	ԻԴ.	10

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆՑ

ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ եղեւ յետ մահուանն Սաւուղայ, եւ Դաւիթ դարձաւ ի հարկանելոյ զԱմաղէկ, եւ նստաւ Դաւիթ ի Սիկլակ 2 երկու աւուրս երկրորդի՝։ Եւ եղեւ [1]յետ աւուրն երկրորդի՝, եւ ահա այր եկաւ ի բանակէ զօրուն Սաւուղայ, եւ հանդերձք իւր պատառեալք, եւ հող ղլխով իւրով. եւ եղեւ ի մտանել նորա առ Դաւիթ, անկաւ յերկիր եւ երկիր երկրպագ նմա։ 3 Եւ ասէ ցնա Դաւիթ, Ուստի՞ գաս դու։ Եւ ասէ ցնա, ի բանակէն Իսրայելի գերծեալ եմ ես։ 4 Եւ ասէ ցնա Դաւիթ, Ինչ՞ գոյացեալ է, պատմեա ինձ։ Եւ ասէ, Փախեաւ ժողովուրդն ի պատերազմէն, եւ անկան բազումք ի ժողովրդենէն եւ մեռան. եւ Սաւուղ եւ Յովնաթան[2] մեռան։ 5 Եւ ասէ Դաւիթ ցպատանին որ պատմեաց նմա, Զիա՞րդ գիտես եթէ մեռաւ Սաւուղ եւ Յովնաթան որդի նորա։ 6 Եւ ասէ պատանին որ պատմեաց նմա, Դիպեալ պիպեայ ի լերինն Գեղբուէ, եւ ահա Սաւուղ յեցեալ կայր ի նիզակին իւր. եւ ահա կառք եւ ախոյանք հեծելոց գոմարեցան ընդ նմա։ 7 Եւ հայեցաւ ի թիկունս իւր եւ տեսս զիս, եւ կոչեաց զիս. եւ ասեմ, Այասիկ եմ ես։ 8 Եւ ասէ ցիս, Ո՞վ ես դու։ Եւ ասեմ, Ամաղեկացի եմ ես։ 9 Եւ ասէ ցիս, Արի ի վերայ իմ եւ սպան զիս, զի կապաւ զիս [3]մոլի անհնարին՝, մինչ դեռ ամենայն չունչ իմ յիս է։ 10 Եւ յարեայ ի վերայ նորա եւ սպանի զնա, զի գիտէի թէ ոչ է ապրանայ, յետ անկանելոյն նորա. եւ առի զմահակն ի գլխոյ նորա եւ զապարանջանսն ի բազկէ նորա, եւ բերի զնոսա առ տէառն իմում այսր։ 11 Եւ բռնեաց Դաւիթ զհանդերձիւք իւրոց եւ պատառեաց զնոսա. եւ ամենայն այր որ ընդ նմա՝ պատառեցին զհանդերձս իւրեանց։ 12 Եւ կոծեցան եւ պահեցին եւ լացին մինչեւ ցընդերեկս ի վերայ Սաւուղայ եւ Յովնաթանու որդւոյ նորա, եւ ի վերայ ժողովրդեանն [4]Յուդայ, եւ ի վերայ տանն Իսրայելի զի հարան սրով։

13 Եւ ասէ Դաւիթ ցպատանին որ պատմեաց նմա, Ուստի՞ ես դու։ Եւ ասէ, Որպի այն պանդխտի Ամաղեկացւոյ եմ ես։ 14 Եւ ասէ ցնա Դաւիթ, Եւ զիա՞րդ ոչ երկեար ձգել զձեռն քո [5]սպանանել զօծեալն Տեառն։ 15 Եւ կոչեաց Դաւիթ զմի ի մանկտացն եւ ասէ, Մատիր պատա՛ հնա զնա. եւ եհար զնա եւ մեռաւ։ Եւ ասէ ցնա Դաւիթ, Արիւն քո ի գլուխ քո. զի բերան քո խօսեցաւ ղքէն եւ ասէ, Եմ ես սպանի օծեալն Տեառն։ 17 Եւ ողբաց Դաւիթ զողբս զայս ի վերայ Սաւուղայ եւ ի վերայ Յովնաթանու 18 որդւոյ նորա. Եւ ասաց Դաւիթ ուսուցանել որդւոցն Յուդայ աղեղնաւորութիւն. եւ ահա գրեալ է ի դիպս Ուղղութեան։

19 [6]Սքանչացիր Իսրայէլ, ի վերայ բլրոցն ի բարձունս քո վիրաւորա՛յ. զիա՛րդ անկան զօրաւորքն։ Մի պատմէք ի Գէթ, եւ մի տայք զայդ աւետիս յերս Ասկաղոնի. զի մի երբեք ուրախ լիցին զաստեր՛ք այլազգեացն եւ մի ցնծասցեն զաստեր՛ք 21 անթլփատիցն։ Լերինք Գեղբուէ, մի իջցէ ի ձեզ ցօղ, եւ մի եկեսցէ ի վերայ ձեր անձրեւ, անդաստանք պտղոց, զի անդ [7]ապականեցաւ տապար զօրաւորաց. 22 վահանն Սաւուղայ ոչ օծաւ իւղով։ Յաբենէ վիրաւորաց եւ ի ճարպոյ զօրաւորաց ազեղն Յովնաթանու ոչ դարձաւ ունայն յետս, եւ սուրն Սաւուղայ ոչ 23 ամիծաւեցաւ դատարկացեալ։ Սաւուղ եւ Յովնաթան սիրելիք եւ գեղեցիկք եւ վայելուչք, չմեկնեալք ի կենդանութեան

[1] ՆԲԳ. յաւուրն երրորդի [2] ՆԲԳ. յեթէն յաբէլ-, որդի նորա [3] ՆԲԳ. տագնապ, կամ, թմբրութիւն [4] ՆԲԳ. Տեառն [5] կամ, կորուսանել [6] ՆԲԳ. Ով վայելչութիւնդ Իսրայել, ի վերայ բլրոց քոց վիրաւորեալ է [7] ՆԲԳ. ընկեցաւ

իբրեանց , եւ ոչ մնկնեցան ի մահուան
իբրեանց . Թէթեւացոյնք քան զարծուս ,
զօրացան առաւել քան զառիւծունս ։
24 Դասերք Իսրայելի , լայեք ի վերայ Սա-
ւուղայ , լայեք ի վերայ նորա որ զգե-
ցուցանէր ձեզ կարմիրս՝ հանդերձ զար-
դուն ձերով , որ արկանէր զարդս ոսկւոյ
25 ի վերայ հանդերձից ձերոց ։ Զիա՛րդ անե-
կան զօրաւորքն ի մէջ պատերազմի. Յով-
նաթան, ի վերայ բարձանց քոց վիրաւոր
26 Յաւէ ինձ ի վերայ քո , եղբայր իմ Յով-
նաթան . գեղեցկացար ինձ յոյժ . զար-
մանալի եղեւ սէր քո ինձ քան զսէր կա-
27 նանց ։ Զիա՛րդ անկան զօրաւորքն , եւ
կորեան անօթքն պատերազմականք ։

Գլ . Բ

1 Եւ եղեւ յետ այնորիկ եւ հարց Դա-
ւիթ ի Տէառնէ եւ ասէ , Եթէ ելանե-
ցի՞մ ի մի ի քաղաքացն Յուդայ ։ Եւ ա-
սէ ցնա Տէր , Ել ։ Եւ ասէ Դաւիթ , Ո՞
2 ելից ։ Եւ ասէ , ի Քեբրոն ։ Եւ ել Դա-
ւիթ ի Քեբրոն , եւ երկոքին կանայք
նորա՝ Աքինոամ Յեզրայելացի եւ Աբի-
3 գէա կին Նաբաղու Կարմելացւոյ ։ Եւ
արքն զորս եհան Դաւիթ իւրաքանչիւր
տամբ իւրով . եւ բնակէին ի քաղաքին
4 Քեբրոնի ։ Եւ եկին արք Հրէաստանի եւ
օծին անդ զԴաւիթ թագաւոր ի վերայ
տանն Յուդայ ։ Եւ պատմեցին Դաւթայ
եւ ասեն , Եթէ Արք Յաբիսայ Գաղաա-
5 գացւոյ թաղեցին զՍաւուղ ։ Եւ առա-
քեաց Դաւիթ հրեշտակս առ [1]առաջնորդս
Յաբիս Գաղաադացւոյն , եւ ասէ ցնոսա
Դաւիթ , Օրհնեալ էք դուք ի Տէառնէ ,
զի արարէք զօրս զգուշին զայն ի վե-
րայ տեառն ձերոյ Սաւուղայ [2]օծելոյ
Տեառն , եւ թաղեցէք զնա եւ զՅով-
6 նաթան զորդի նորա՝ ։ Եւ արդ արասցէ
Տէր ընդ ձեզ ողորմութիւն եւ ճշմար-
տութիւն . եւ ես հատուցից ձեզ ընդ
բարութեանն այնորիկ զի արարէք զբանն
7 զայն ։ Եւ արդ զօրացարուք ձեռք ձեր , եւ
լերուք յորդիս զօրութեան . զի մեռաւ
սէրն ձեր Սաւուղ , եւ զիս օծ տունն
Յուդայ իբրեանց ի թագաւոր ։
8 Եւ Աբենններ որդի Ներեայ զօրավար Սա-
ւուղայ առ զԵսբաւեթէ զորդի Սաւուղ
9 զայ , եւ տարաւ զնա [3]ի բանակն , եւ
թագաւորեցոյց զնա ի վերայ Գաղաա-
դաստանի եւ ի վերայ Թասիրայ եւ ի
վերայ Յեզրայելի եւ ի վերայ Եփրեմի
եւ ի վերայ Բենիամինի , եւ ի վերայ ա-
10 մենայն Իսրայելի ։ Եւ էր ամաց քառաս-
նից Յեսբաւեթէ որդի Սաւուղայ յորժամ
թագաւորեաց ի վերայ Իսրայելի , եւ եր-
կուս ամս թագաւորեաց . բայց ի տանէն
11 Յուդայ՝ որ էին զնա Դաւիթ ։ Եւ եղեն
աւուրք զորս թագաւորեաց Դաւիթ ի
Քեբրոն ի վերայ տանն Յուդայ՝ ամք
եւթն եւ ամիսք վեց ։
12 Եւ ել Աբեններ որդի Ներեայ եւ ծա-
ռայք Յեսբաւեթայ որդւոյ Սաւուղայ ի
13 բանակացն ի Գաբաւոն ։ Եւ Յովաբ որ-
դի Շարուհայ եւ ծառայք Դաւթի ելին
ի Քեբրոնէ , եւ դիպեցան միմեանց ի
վերայ աղբերն Գաբաւոնի . եւ նստան
նոքա անտի աղբերն Գաբաւոնի , եւ ա-
14 յլք ասէ ։ Եւ ասէ Աբեններ ցՅովաբ ,
Յարիցեն մանկտիք եւ խաղասցեն ա-
ռաջի մեր . եւ ասէ Յովաբ , Յարիցեն ։
15 Եւ յարեան , եւ անցին թուով ի տան-
կանցն Բենիամինի երկոտասանք , Յես-
բաւեթայ որդւոյ Սաւուղայ . եւ ի տան-
16 կանցն Դաւթի երկոտասանք . Եւ կալան
այր իւրաքանչիւր ձեռամբ զգլխոյ ընկե-
րի իւրոյ , եւ սուր ի կողս ընկերի իւրոյ .
եւ անկան անկանէին ։ [5]Եւ մեռանէին՝ .
եւ կոչեցաւ անուն ատենոյն այնորիկ
Վիճակ դաւճանաց , որ է ի Գաբաւոն ։
17 Եւ եղեւ պատերազմ խիստ յոյժ յա-
ւուր յայնմիկ . եւ պարտեցաւ Աբեններ
եւ արք Իսրայելի առաջի ծառայիցն Դաւ-
18 թի ։ Եւ անդ էին երիք որդիքն Շարու-
հայ , Յովաբ եւ Աբեսա եւ Ասայէլ .
եւ Ասայէլ թեթեւ էր ոտիւք իբրեւ դմի
19 յայծեմանց ի դաշտի ։ Եւ սկսեցաւ Ա-
սայէլ գնալ Աբեններեայ , եւ ոչ խոտո-
րեցաւ երթալ յաջ եւ ոչ յահեակ ի հե-
20 ւոց Աբեններեայ ։ Եւ հայեցաւ Աբեն-
ներ ի թիկունս իւր եւ ասէ , Եթէ դո՞ւ
21 իցես Ասայէլ ։ Եւ ասէ , Ես եմ ։ Եւ ա-
սէ ցնա Աբեններ , Խոտորեա դու յա-
ջակամ յահեակ, եւ կալ քեզ զմի ի մանկա-
ւոցդ , եւ առ դու քեզ զպատառպինու-
թիւն նորա . եւ ոչ կամեցաւ Ասայէլ
22 խոտորել ի հետոց նորա ։ Եւ յաւել եւս
Աբեններ ասել ցԱսայէլ , Ի բաց կաց յի-
նէն , զի մի հարից գքեզ ընդ գետին .
եւ զիա՞րդ ամբարձից զերեսս իմ առ Յո-
վաբ , [6]եւ ո՞ւր լինիցի այն . զարձիր
23 առ Յովաբ՝ եղբայր քո ։ Եւ ոչ կամե-

[1]Եբր. արս [2]Եբր. եւ թաղեցէք զնա [3]Եբր. ի Մանայիմ [4]Եբր. ի Մանայիմայ [5]Եբր միագամայն [6]Եբր. գ-ի-ր

ցաւ Թաթել. եւ եհար զնա Աբենների [1]նիզակաւն ընդ մէջ մականաչան, եւ ել նիզակն ընդ [2]զիւտ նորա, եւ անկաւ անդէն եւ մեռաւ ի ներքոյ նորա. եւ լինէր որ միանգամ գայր յանդին ցայն ուր անկաւ Ասայէլ եւ մեռաւ՝ զտեղի առնոյր։

24 Եւ սնդեցան Յովաբ եւ Աբեսա զկնի Աբենների. եւ արեւն եմուտ, եւ նոքա մերձ մինչեւ լերանն Ամմանայ որ է յանդիման Գայեայ, ընդ ճանապարհ անապատին Գաբաւոնի։

25 Եւ ժողովեցան որդիքն Բենիամինի զկնի Աբենների, եւ կացին ի վերայ
26 լերոյ միոյ։ Եւ կոչեաց Աբենների զՅովաբ եւ ասէ, Միթէ խափանէ ուտիլ սաբ, կամ թէ ոչ գիտիցես զի դառնութիւն լինի վախճանին. մինչեւ ցե՞րբ
27 ոչ ասիցես ժողովրդեանն դառնալ ի հետոց եղբարց իւրեանց։ Եւ ասէ Յովաբ, կենդանի է Տէր, զի եթէ քո չէր լռեցուցեալ, յայսմանէ իսկ [3]կանխէր ամբոխս իւրաքանչիւր զհետ եղբօր իւրոյ։
28 Եւ փող եհար Յովաբ, եւ [4]դիմեցան ժողովուրդն ամենայն, եւ ոչ եւս պնդեցան զհետ Իսրայէլի, եւ ոչ եւս յաւելին
29 լին պատերազմել։ Եւ Աբենների եւ արք նորա գնային ընդ [5]արեւելս զդիչերն զայն ողջոյն, եւ անցին ընդ Յորդանան եւ չոգան ընդ ամենայն [6]Ձգիան, եւ եկին
30 կին ի բանակն։ Եւ Յովաբ զարձաւ յԱբենների, եւ ժողովեաց զամենայն ժողովուրդն. եւ հանդէս եղեւ ծառայիցն Դաւթի որ կոտորեցան՝ ինն եւ տասն
31 առն, եւ Ասայէլ. Եւ ծառայքն Դաւթի հարին յորդւոցն Բենիամինի եւ յայրանց Աբենների երիս հարեւր եւ վաթսուն
32այր[7]։ Եւ բարձին զԱսայէլ եւ թաղեցին զնա ի գերեզմանի հօր իւրոյ ի Բեթղեհեմ. եւ [8]գնացին Յովաբ եւ արք նորա, եւ լուսացաւ նոցա ի Քեբրոն։

Գլ. Գ

1 Եւ էր պատերազմ սաստիկ ի մէջ տանն Սաւուղայ եւ ի մէջ տանն Դաւթի. եւ [9]տունն Դաւթի երթայր եւ զօրանայր, եւ տունն Սաւուղայ երթայր եւ տկարանայր։

2 Եւ ծնան Դաւթի որդիք ի Քեբրոն. անդրանիկ նորա՝ Ամմոն յԱքինոամայ
3 Ցզրայելացւոյ, եւ երկրորդ նորա՝ [10]Դաւիա, յԱբիգեայ՝ կարմղացւոյ, եւ երրորդ՝ Աբիսողամ, ի Մաաքեայ դստերէ
4 Թուղմեայ արքայի Գեսուրայ, Եւ չորրորդ՝ Ադոնիա, որդի Ագգիթայ, եւ հինգերորդ՝ Սափատիա, որդի Ամիտաղայ,
5 Եւ վեցերորդ՝ Եթրամ, յեզդաթայ կնոջէ Դաւթի. սոքա ծնան Դաւթի ի Քեբրոն։
6 Եւ եղեւ ի լինել պատերազմին ի մէջ տանն Սաուղայ եւ ի մէջ տանն Դաւթի, եւ Աբենների ունէր զտունն Սա-
7 ուղայ։ Եւ Սաուղայ էր հարճ մի, որում անուն էր Ռեսափա, դուստր Յուղայ։ Եւ ասէ Յերոսաթէ որդի Սաուղայ ցԱբենների, Ընդէ՞ր մտանիս դու առ հարճ հօր իմոյ։
8 Եւ բարկացաւ Աբենների յոյժ վասն բանին Յերոսաթեայ, եւ ասէ ցնա Աբենների, Միթէ չան գլո՞ւխ իցեմ ես, որ առարի ողորմութիւն այսօր ի վերայ տանն Սաուղայ հօր քո, եւ ի վերայ եղբարց եւ ի վերայ բարեկամաց, եւ ոչ [11]եղէ անձնատուր ի ձեռն։ Դաւթի. եւ
9 խնդրես յինէն այսօր վրէժ կնոջ միոյ։ Ոն եւ օն արասցէ Աստուած Աբենների եւ օն եւ օն յաւելցէ նմա, եթէ ոչ որպէս երդուաւ Տէր Դաւթի, այնպէս արարից նմա.
10 Բառնալ զթագաւորութիւնն [12]Սաուղայ, եւ կանգնել զթագաւորութիւնն Դաւթի ի վերայ Իսրայէլի եւ ի վերայ
11 Ցուդայ ի Դանայ մինչեւ ցԲերսաբէէ։ Եւ ոչ եւս կարաց Յերոսաթէ տալ պատասխանի Աբենների բան մի յերկիւղէն։
12 Եւ Առաքեաց Աբենների հրեշտակս առ Դաւթի [13]ի Թեսաղմու երկիր՝ առ ժամայն՝. եւ ասէ, Ուխտեա ընդ իս զուխտ քո, եւ ահա ձեռն իմ ընդ քեզ, դարձուցանել առ քեզ զամենայն տունն Իս-
13 րայելի։ Եւ ասէ Դաւթի, Բարւոք է. ես ուխտեցից ընդ քեզ ուխտ. բայց բան մի ես խնդրեմ ի քէն, մի տեսցես զերեսս իմ, եթէ ոչածցես զՄեղքող զուստր Սաուղայ ի գալն քում տեսանել զերեսս
14 իմ։ Եւ առաքեաց Դաւթի առ Յերոսաթէ որդի Սաուղայ հրեշտակս եւ ասէ, Տուր ցիս զկին իմ զՄեղքող, զոր առի ես ընդ հարեւր անթլփատու թանց այլ-

---

[1]Եբբ. Թիկամբ նիզակին [2]Եբբ. քամակ [3]Այլ՝ ՝ՀՀնկեր [4]Եբբ. զտեղի առ [5]Եբբ. դաշտն [6]Եբբ. Բեթրոն, եւ եկին ի Մանայիմ [7]Եբբ. ՝ՀՀեղեւ յահել, որք մեռան [8]Գնացին զգիշեր ողջոյն [9]Եբբ. Դաւիթ

[10]Եբբ. Քիղաբ յԱբիգեայ, ի կնոջէն Նաբաղայ [11]Եբբ. մատնեցեր գբեզ ի ձեռս [12]Եբբ. ի տանէն Սաուղայ [13]Եբբ. յԻբրմէ կուսէ, եւ ասէ, Ոչը է երկիրդ

15 ազգեսցան։ Եւ առաքեաց Յերուսաղէմ եւ առ զնա յառնէ իւրմէ Փազաիլէ որդւոյ
16 Ագգայ։ Եւ երթայր այր նորա զնացնորա եւ յայր մինչեւ ցԲարակիմ։ Եւ ասէ ցնա Աբենների, Երկի գարձիր. եւ գարձաւ։
17 Եւ խօսեցաւ Աբենների ընդ ծերս Իսրայելի եւ ասէ, Երկիւ եւ եռանդ խնդրելիք
18 զԴաւիթի թագաւորել ի վերայ ձեր. Եւ արդ արարէք, զի Տէր խօսեցաւ վասն Դաւիթի եւ ասէ, Ձեռամբ ծառայի իմոյ Դաւիթի փրկեցից զԻսրայէլ ի ձեռաց այլազգեացն եւ ի ձեռաց ամենայն
19 թշնամեաց իւրեանց։ Եւ խօսեցաւ Աբենների յահանձն Բենիամինի. եւ զնաց Աբենների խօսել յահանձն Դաւիթի ի Քեբրոն զամենայն ինչ որ հաճոյ թուեցաւ յաչս Իսրայելի, եւ յաչս ամենայն տանն
20 Բենիամինի։ Եւ եկն Աբենների առ Դաւիթի ի Քեբրոն, եւ ընդ նմա քսան այր։ Եւ արար Դաւիթ Աբենների եւ արանցն
21 որ ընդ նմա խրախալ թխիւն։ Եւ ասէ Աբենների ցԴաւիթի, Յարուցայց եւ գնացից եւ ժողովեցից առ քեզ իմ ամենայն Իսրայէլ, եւ [1]ուխտեցից ընդ քեզ ուխտ, եւ թագաւորեսցես ի վերայ [2]ամենեցունց որոց" ցանկայ անձն քո. եւ առաքեաց Դաւիթ զԱբենների, եւ գնաց խաղաղութեամբ։
22 Եւ ահա ծառայք Դաւիթի եւ Յովաբ եկին յասպատակէ, եւ առեալ բազում ածին ընդ իւրեանս. եւ [3]Յովաբ չէր ընդ Դաւիթի ի Քեբրոն [4]յորժամ արձակեաց գնա եւ գնաց խաղաղութեամբ։
23 Եւ Յովաբ եւ ամենայն զօր նորա եկին. եւ ազգ եղեւ Յովաբայ եւ ասեն, Եկին Աբենների որդի Ներեայ առ [5]Դաւիթ, եւ արձակեաց գնա եւ գնաց խաղաղութեամբ։
24 Եւ եմուտ Յովաբ առ Դաւիթ արքայ եւ ասէ, Զինչ գործեցեր զայդ, զի եկն Աբենների առ քեզ. եւ ընդէ՞ր
25 արձակեցեր գնա խաղաղութեամբ. Եթէ ոչ գիտեցես զչարութիւն Աբենների որդւոյ Ներեայ. զի խարել զքեզ եկն, եւ իմանալ զմուտս եւ զել քո, եւ տես
26 զնկատակ ամենայնի զինչ եւ գործես։ Եւ ել Յովաբ ի Դաւիթ, եւ արձակեաց հրեչտակս զկնի Աբենների, եւ դարձուցին գնա ի Յիւրայ անտի Սէիրայ.
27 Եւ Դաւիթ ոչ գիտէր։ Եւ գարձոյց զԱբենների ի Քեբրոն, եւ խոտորիցոյց գնա Յովաբ ի կողմանց գրանն խօսել ընդ նմա [6]գաւաճանութեամբ. եւ եհար ընդ մեսխաչան, եւ մեռաւ. վասն արիանն Ասայելի եղբօր [7]Յովաբայ։
28 Եւ լուաւ Դաւիթ յետ այնորիկ եւ ասէ, Անպարտ եմ ես եւ թագաւորութիւն իմ ի Տեառնէ մինչեւ ցյաւիտեան՝ յարենէն Աբենների որդւոյ Ներեայ։
29 Հասցին ի գլուխ Յովաբայ եւ ի վերայ ամենայն տան հօր նորա. եւ մի պակասեսցէ ի տանէ Յովաբայ սերմնակաթ եւ բորոտ եւ մաղրոյ որ չրջիցի ի ցպոյ, եւ
30 սրամահ եւ սովամահ։ Եւ Յովաբ եւ Աբեսա եղբայր նորա [8]սպասէին Աբենների", փոխանակ զի սպան զԱսայէլ զեղբայր նոցա ի Գաբաւոն ի պատերազմին։
31 Եւ ասէ Դաւիթ ցՅովաբ եւ ցամենայն ժողովուրդն որ ընդ նմա, Պատառեցէք զհանդերձս ձեր, եւ զգեցարուք քուրձ, եւ կոծեցարուք առաջի Աբենների. եւ արքայ Դաւիթ երթայր զնոտ զադաղային
32 Եւ թաղեցին զԱբենների ի Քեբրոն. եւ ամբարձ արքայ զձայն իւր եւ ելաց ի վերայ գերեզմանի նորա, եւ ելաց ամենայն ժողովուրդն ի վերայ Աբենների։
33 Եւ առ սգալ արքայ ի վերայ Աբենների, եւ ասէ, Միթէ որպէս մեռանիցի անզգամ, մեռաւ Աբենների. [9]Ձեռք քո ոչ կապեցան, եւ ոտք քո ոչ ապխեցան ի չղխայս. [9]եւ ոչ մատեար իրրեւ զնարագ առաջի որդւոց անիրաւութեանն եւ անկար. այլ՝ որպէս անկանիցին առաջի անիրաւաց անկար։ Եւ ժողովեցան ամենայն ժողովուրդն լալ
35 զնա։ Եւ եկն ամենայն ժողովուրդն տալ ընթրիս Դաւիթի մինչդեռ ասուր կայր. եւ երդուաւ Դաւիթ եւ ասէ, Ոն եւ օն արասցէ ինձ Աստուած եւ օն եւ օն յաւելցէ, եթէ ոչ մտանիցէ արեգակն եւ ապա ճաշակեցից հաց, եւ կամ զայլ ինչ
36 ամենայն։ Եւ գիտաց ամենայն ժողովուրդն, եւ հաճոյ թուեցաւ առաջի նոցա ամենայն ինչ զոր արար արքայ ա-
37 ռաջի ժողովրդեանն զրարութիւն։ Եւ գիտաց ամենայն ժողովուրդն եւ ամենայն Իսրայէլ յաւուր յայնմիկ եթէ ոչ յարքայէ եղեւ սպանանել զԱբենների որ-
38 դի Ներեայ։ Եւ ասէ արքայ ցծառայսն իւր, Ո՞չ գիտէք եթէ առաջնորդ մեծ

[1] Եբբ. ուխտեացեն [2] Եբբ. ամենայնի ընդ որ [3] Եբբ. Աբենների [4] Եբբ. քանզի [5] Եբբ. արքայ
[6] Եբբ. Հանդարտութեամբ, կամ, ի ծածուկ [7] Եբբ. իւրոյ [8] Եբբ. սպանին զԱբենների [9] Ցնե՛ւ գ-ի-ե

39 անկաւ յաւուր յայմիկ յիսրայէլ. Եւ [1]զի սա աղգական է այսօր եւ յարքայէ կացուցեալ է". եւ արդ այդոքիկ որդիք Շարուհեայ խստագոյնք քան զնա են. հաւասացէ Տէր չարին ըստ չարութեան իւրում։

Գլ. Բ

1 Եւ լուաւ Յեբուսթէ որդի Սաւուղայ եթէ մեռաւ Աբենների ի Քեբրոն, լուծան ձեռք իւր, եւ ամենայն արք Իսրայէլի 2 լքան։ Եւ արք երկու զլխաւորք գնդին Յեբուսթեայ որդւոյ Սաւուղայ, անուն միումն Բաանա, եւ անուն երկրորդին Ռեքաբ, որդիք Ռեմմոնայ Բերովթացւոյ, յորդւոցն Բենիամինի. զի եւ Բերովթ որդւոցն Բենիամինի ի համարի էր։ Եւ 3 փախան Բերովթացիքն ի Դեթթայիմ, եւ էին անդ պանդխտացեալք մինչեւ ցայսօր։ Եւ Յոնաթանու որդւոյ Սաւուղայ էր որդի մի հաշմ ոտիւք, որպի ամաց հնգից. եւ գնաց ի հասանել զուժն Սաւուղայ եւ Յոնաթանու որդւոյ նորա յեզրայելէ՝ առ դայեակ իւր եւ փախեաւ. եւ եղեւ ընդ փութանալն իւրում ի զաղթել՝ անկաւ եւ կաղացաւ. եւ ա- 5 նուն նորա Մեմփիբոսթէ։ Եւ գնացին որդիք Ռեմմոնայ Բերովթացւոյ, Ռեքաբ եւ Բաանա, եւ մտին ի ժամ ժամու աւուրն ի տուն Յեբուսթեայ. եւ նա ննջէր 6 յանկողնի ի հասարակ աւուր. [2]Եւ լաթուղան տանն սրբէր ցորեան, եւ նիրհեաց եւ ի քուն եմուտ. եւ Ռեքաբ եւ 7 Բաանա եղբարք զօվկին," եւ մտին ի տունն. եւ Յեբուսթէ ննջէր ի գահոյս իւրում ի սենեկի. եւ հարին գնա եւ սպանին, եւ հատին զգլուխ նորա եւ առին զգլուխն, եւ գնացին զճանապարհն 8 [3]արեւելից զամենայն գիշերն. Եւ բերին զգլուխն Յեբուսթեայ առ Դաւիթ ի Քեբրոն, եւ ասեն ցարքայ. Ահա գլուխ Յեբուսթեայ որդւոյ Սաւուղայ թշնամւոյ քո, որ խնդրէր զանձն քո. եւ Տէր եհան ահաւասիկ մերում արքայի վրէժխնդրութիւն [4]ի թշնամւոյ իւրոց, որպէս" յաւուր յայմիկ ի Սաւուղայ [4]ի թշնամւոյ 9 քումմէ" եւ ի զաւակէ նորա։ Եւ պատասխանի եհան Դաւիթ Ռեքաբայ եւ Բաանայ եղբօր նորա՝ որդւոց Ռեմմոնայ Բերովթացւոյ՝ եւ ասէ ցնոսա, կենդանի է Տէր որ փրկեաց զանձն իմ յամենայն 10 նեղութենէ, Զի որ պատմեաց ինձ եթէ Մեռաւ Սաւուղ, եւ նմա թուէր եթէ աւետիս տայցէ առաջի իմ, կալայ եւ սպանի զնա ի Սիկեղակ, որում օրէն էր 11 ինձ տալ աւետիս. Եւ արդ արք չարք սպանէք զայր արդար ի տան իւրում յանկողնի. եւ արդ խնդրեցից զարիւն նորա ի ձեռաց ձերոց, եւ սատակեցից զձեզ յերկրէ։ 12 Եւ հրամայեաց Դաւիթ մանկտւոց իւրում, եւ սպանին զնոսա, եւ կտրեցին զձեռս եւ զոտս նոցա, եւ կախեցին ի վերայ ջրվղելոյն ի Քեբրոն։ Եւ զգլուխն Յեբուսթեայ թաղեցին ի գերեզմանի Աբենների որդւոյ Ներեայ ի Քեբրոն։

Գլ. Ե

1 Եւ եկին ամենայն գեղքն Իսրայէլի առ Դաւիթ ի Քեբրոն, խօսեցան եւ ասեն, Ահաւասիկ ոսկերք քո եւ մարմինք քո 2 եմք։ Եւ յերէկն եւ յեռանգ մինչ էր Սաւուղ թագաւոր ի վերայ մեր, դու էիր որ մուծանէիր եւ հանէիր զիսրայէլ. եւ ասաց քեզ Տէր, Դու հովուեսցես ժողովրդեան իմոյ Իսրայէլի, եւ դու 3 լիցիս առաջնորդ ի վերայ Իսրայէլի։ Եւ եկին ամենայն ծերքն Իսրայէլի առ արքայ ի Քեբրոն, եւ ուխտեաց ընդ նոսա ուխտ արքայ Դաւիթ ի Քեբրոն առաջի Տեառն. եւ օծին զԴաւիթ թագաւոր ի վերայ ամենայն Իսրայէլի։

4 Որդի ամաց երեսնից Դաւիթ ի թագաւորել իւրում. եւ քառասուն ամ թա- 5 գաւորեաց։ Եւ[1] յեբրոն ամ եւ վեց ամս թագաւորեաց ի Քեբրոն ի վերայ Յուդայ, եւ երեսուն եւ երիս ամս թագաւորեաց ի վերայ ամենայն Իսրայէլի եւ Յուդայ յերուսաղէմ։

6 Եւ չոգաւ Դաւիթ եւ արք նորա յերուսաղէմ առ Յեբուսացին բնակիսն յերկրին. եւ ասացաւ Դաւթի թէ Ոչ մտցես դու այսր, [5]քանզի խնդրէմ զարձան կուրք եւ կաղք" եւ ասեն, Մի՛ մտցէ 7 այսր Դաւիթ։ Եւ առ Դաւիթ [6]զՍիոն եւ զամրոց նորա", այն է քաղաք Դաւ- 8 թի։ Եւ ասէ Դաւիթ յաւուր յայնմիկ, Ամենայն որ հարկանիցէ [4]սրով զՅեբուս-

[1] ԵՔԲ. ես ակար եմ այսօր, թէպէտեւ օծեալ թագաւոր [2] ԵՔԲ. Եւ ահա մինն մինչեւ ի մէջ տանն որպէս որ առնուցուն ցորեան. եւ Հարին զնա ընդ մանկուշն, եւ Ռեքաբ եւ Բաանա եղբայր նորա փախեան։ [3] ԵՔԲ. դաշտին [4] ՅԵՔԲ. պետ

[5] ԵՔԲ. մինչեւ վանեսցես զկոյրս եւ զկաղս [6] ԵՔԲ. զամրոցն զՍիոն

սային, եւ մատիկէ [1]սրով եւ ի կազան եւ ի կոյս [2]եւ յամենէն անձին Դաւիթի. վասն այնորիկ ասեն, Կայքը եւ կազք մի մսային
9 ի տուն [2]Տեառն։ Եւ նստաւ Դաւիթ յամբոխին, եւ կոչեցաւ այն քաղաք Դաւիթի. եւ չինեաց [2]զնա քաղաք՝ Դաւիթ չափ[3]ածէ ի ծագ, եւ զաւուն
10 իբր։ Եւ երթեալ երթայր Դաւիթ եւ մեծանայր, եւ Տէր ամենակալ էր ընդ նմա։
11 Եւ առաքեաց Քիրամ արքայ Տիրոսի հրեշտակս առ Դաւիթ, եւ փայտս եղեւնենայս եւ հիւսուն փայտից եւ ճարտարապետս քարանց, եւ չինեցին տուն
12 Դաւիթի։ Եւ գիտաց Դաւիթ եմէ հաստատեաց զնա Տէր թագաւոր ի վերայ Իսրայէլի, եւ թէ բարձրացաւ թագաւորութիւնն նորա վասն ժողովրդեան նո-
13 րա Իսրայէլի։ Եւ առ եւս Դաւիթ կանայս եւ հարճս յԵրուսաղէմ՝ յետ գալոյ նորա ի Քեբրոնէ. եւ ետուն Դաւիթ
14 եւ այլ եւս ուստերք եւ դստերք։ Եւ այս են անուանք ծնելոց որդւոց նորա յԵրուսաղէմ. Սամաայ, Յեսբաամ, Նաթան,
15 Սողոմոն, [4]Գադաաման, Յեբահար, Թեմհուսա,
16 Եղփաղատ, Նոգէք, Նաբեկ, Յեննուփա, Եղրաամա, Բաղիգադ," Եղիսուվէսա։
17 Եւ լուան այլազգիքն եմէ օծեալ է Դաւիթ թագաւոր ի վերայ Իսրայէլի, եւ ելին ամենայն այլազգիքն խնդրել զԴաւիթ. եւ լուաւ Դաւիթ եւ էջ յամրոցն։
18 Եւ այլազգիքն եկին հասին եւ խառնե-
19 ցան ի հովիտս Տիմանացւոց։ Եւ հարց Դաւիթ ի Տեառնէ եւ ասէ, եթէ ելից ի վերայ այլազգեացն, եւ մատնեսցե զնոսա ի ձեռս իմ։ Եւ ասէ Տէր ցԴաւիթ, Ել. զի մատնելով մատնեցից զայ-
20 ազգիան ի ձեռս քո։ Եւ եկն Դաւիթ [5]ի վերուստ խրամատիցն", եւ կոտորեաց անդ զայազգիան. եւ ասէ Դաւիթ, Տէր խրամատեաց զթշնամիս իմ առաջի իմ, որպէս խրամատիցն ջուրք. վասն այնորիկ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ
21 [6]ի վերայ խրամատից"։ Եւ թողին անդ դաստուածս իւրեանց, եւ առ զնոսա Դաւիթ եւ արքն որ ընդ նմա։
22 Եւ յաւելին այլազգիքն միւսանգամ երանել, եւ գումարեցան ի հովիտս Տի-
23 մանացւոց։ Եւ հարց Դաւիթ ի Տեառնէ։ Եւ [7]ասէ, մի՛ ելիցես ի վերայ այլազգեացն, եւ մատանեացես զնոսա ի ձեռս իմ։ Եւ ասէ Տէր, Մի՛ երանել ընդդէմ նոցա, դարձիր ի նոցանէն, եւ հակացես
24 ի [8]թեւէ նոցա մօտ ի Լալօնան". Եւ եղիցի յորժամ լսիցես զձայն չարժման [8]անտառին Լալօնից", յայնժամ իմիցես [2]առ նոսա". քանզի յայնժամ երթիցէ Տէր առաջի քո կոտորել [9]ի պաեբրաղմի այլազ-
25 գեացն։ Եւ արար Դաւիթ որպէս հրամայեաց նմա Տէր, եւ հարց զայլազգիսն ի Գաբաւոնէ մինչեւ ՅԳազերա։

ԳԼ. Զ

1 Եւ ժողովեաց միւսանգամ Դաւիթ զամենայն երիտասարդս յԻսրայէլէ իրրեւ
2 [10]եւթանասուն հազար։ Եւ յարուցեալ գնաց Դաւիթ եւ ամենայն ժողովուրդ նորա ընդ նմա [11]յիւխանայն Յուդայ ի գաւառն ընդ որ եւ առաքանակն" Աստուծոյ, յորոյ վերայ կոչեցաւ անուն Տեառն
3 [2]Աստուածոյ զօրութիանց, որ նստի ի քերովբէսս ի վերայ նորա։ Եւ [12]եհան եզ զառաքանակն Տեառն ի վերայ սայլի նո-
4 րայ։ Եւ առ գնա ի տանէ Աբինադաբայ որ էր ի Գաբաա. եւ Ազա եւ եղբարք նորա որդիք Աբինադաբայ վարէին զսայլն
5 հանդերձ առաքանակաւն, եւ եղբարք նորա երգային առաջի առաքանակին։ Եւ Դաւիթ եւ որդիքն Իսրայէլի խաղային առաջի Տեառն առաւօք եւ նուագարանօք զօրութեամբ, եւ երգովք եւ քնարօք եւ արմզօր եւ թմբկօր եւ ծնծղայիւք եւ վոգովք"։
6 Եւ եկին մինչեւ կալն [13]Աբինադաբայ. եւ ձգեաց Ազա զձեռն իւր ի առաքանակն Աստուծոյ ունել գնա, եւ կալաւ գնա. զի խիւրեալ գնա զառաքանակն

[1] ԵԲԲ. ի ջրանցն [2] ՅԵԲԲ. գ-ի-ե [3] ԵԲԲ. ի Մեղբատար, եւ ի ներքս [4] ԵԲԲ. և Սողոմն, (15) Եւ Յեբատար, եւ Եղիսուա եւ Նաբեկ եւ Յափիեկ, (16) Եւ Եղիսամա, եւ Եղիադա, եւ [5] ԵԲԲ. ի տեղի խրամատիցն [6] ԵԲԲ. Տեղի խրամատից

[7] ԵԲԲ. ասէ Տէր Մի՛ ելաներ, դարձիր յետս նոցա, եւ եկ առ նոսա ի թիկանց թթենեացն, (24) Եւ լսիցես զձայն պերեակ [8] ԵԲԲ. ի գլուխ թթենեաց, (24) Եւ Լալօնից [9] ԵԲԲ. ի բանակն [10] ԵԲԲ. երեսուն [11] ԵԲԲ. ի Բաղդա Յուդայ Հանել անտի զառաքանակն [12] ԵԲԲ. Հեծուցին զառաքանակն Աստուծոյ ի վերայ սայլի նորոյ, եւ բարձին զնա ի տանէ Աբինադաբայ որ էր ի Գաբաա Եւ Աքիով որդիք Աբինադաբայ վարէին զսայլն նորա։ (4) Եւ բարձին զնա ի տանէն Աբինադաբայ որ էր ի Գաբաա Հանդերձ առաքանակաւն Աստուծոյ. եւ Աքիով երթայր առաջի առաքանակին։ (5) Եւ Դաւիթ եւ ամենայն տունն Իսրայէլի խաղային առաջի Տեառն ամենայն ուժովք ի փայտից մայրի, եւ քնարօք եւ սաղմոսարանօք եւ թմբկօք եւ առաւղօք եւ ծնծղայիւք [13] ԵԲԲ. Նաբռնայ

7 [1]ուներայ անտի զնա՝։ Եւ բարկացաւ Տէր
Ողոյ, եւ եհար զնա անդ Աստուած
վասն յանդգնութեանն, եւ մեռաւ ան-
դէն առ տապանակին [1]Տեառն առաջի՛
8 Աստուծոյ։ Եւ արտմնցաւ Դաւիթ՝ զի
խրամասեաց Տէր խրամատութիւն յի-
զա. եւ կոչեցաւ անդէն այն Խրամա-
9 տութիւն Ողոյ մինչեւ ցայսօր։ Եւ եր-
կեաւ Դաւիթ ի Տեառնէ յաւուրն [2]յայս-
միկ եւ ասէ, Զիա՞րդ մտանիցէ առ իս
10 տապանակդ [2]Աստուծոյ։ Եւ ոչ կամե-
ցաւ Դաւիթ առնել առ ինքն զտապա-
նակ ուխտին Տեառն ի քաղաքն Դաւ-
թի. եւ խոտորեցոյց զնա Դաւիթ ի տունն
11 [3]Աբեդդարայ Գեթացւոյ։ Եւ նստաւ տա-
պանակն Տեառն ի տան [3]Աբեդդարայ Գե-
թացւոյ աւիրս երիս. եւ օրհնեաց Տէր
[4]զԱբեդդար եւ զամենայն տունն նորա։
12 Եւ պատմեցին Դաւիթի եւ ասեն, Օրհ-
նեաց Տէր զտունն [3]Աբեդդարայ եւ զա-
մենայն ինչ որ նորա վասն տապանակին
Աստուծոյ. եւ չոգաւ Դաւիթ եւ հան
զտապանակն Տեառն ի տանէ [3]Աբեդդա-
րայ ի քաղաք Դաւիթի ուրախութեամբ։
13 Եւ [5]էին ընդ նմա որ բառնային զտա-
պանակն Եհովին զատ պարուզ, եւ սպանդ
14 զառաւել եւ զատանց։ Եւ Դաւիթ հար-
կանէր զաւխտս նուագարանացն առա-
ջի Տեառն. եւ էր Դաւիթ զգեցեալ պատ-
15 մուճան հանդերձեալ՝։ Եւ Դաւիթ եւ ա-
մենայն տունն Իսրայելի հանին զտա-
պանակն Տեառն հոչակաւ եւ ձայնիւ
16 փողոյ։ Եւ եղեւ ի հասնել տապանակին ի
քաղաքն Դաւիթի, եւ Մեղբող դուստր
Սաւուղայ հայէր ընդ պատուհանն. եւ
եանս զԴաւիթ արքայ զի կաքաւէր
եւ [6]նուագէր զնուագարանն՝ առաջի
Տեառն, անզոմանեաց զնա ի սրտի իւ-
17 րում։ Եւ բերին զտապանակն Տեառն,
եւ եդին զնա ի տեղւոջ իւրում ի մէջ
խորանին զոր հարո նմա Դաւիթ. եւ
մատոյց Դաւիթ ողջակէզս առաջի Տեառն
18 եւ խաղաղականս։ Եւ իբրեւ կատար-
եաց Դաւիթ մատուցանել զողջակէզսն
եւ զխաղաղականս, օրհնեաց զժողո-
վուրդն յանուն Տեառն զօրութեանց։
19 Եւ բաշխեաց ամենայն ժողովրդեանն,

[1]3ԵԲԲ. պակաս [2]ԵԲԲ. Տեառն [3]ԵԲԲ. Աբդեդոմայ
[4]զԱբդեդոմ [5]ԵԲԲ. եղեւ իբրեւ գնացին որ բառ-
նային զտապանակն Տեառն քայլս վեց, եւ զՏէր
եզն եւ պարարակ։ (14) Եւ Դաւիթ կաքաւէր
ամենայն զօրութեամբ առաջի Տեառն եւ Դաւիթ
զգեցեալ էր եփոդ կտաւեայ [6]ԵԲԲ. խաղայր

[7]յամենայն զօրութեան Իսրայելի ի Դանայ
մինչեւ ցԲերսաբէէ," յառնէ մինչեւ
ցկին, իւրաքանչիւր ունէք բլիթ մի հա-
ցի, եւ պատառ մի ի կասկարայից, եւ
քաքար մի ի տապակէ. եւ գնաց ամե-
նայն ժողովուրդն իւրաքանչիւր աք ի
տուն իւր։
20 Եւ դարձաւ Դաւիթ օրհնել զտուն
իւր. եւ ել Մեղբող դուստր Սաւուղայ
ընդ առաջ Դաւիթի, եւ [1]օրհնեաց զնա
եւ" ասէ, Քանի՛ փառաւորեալ էր այսօր
արքայ Իսրայելի, որ հրամանեցաւ այսօր
առաջի ապախնանց եւ ծառայից իւրոց,
զոր օրինակ հրամանիցի հրամանիւզ մի ոք
21 ի կքաւչաց։ Եւ ասէ Դաւիթ ցՄեղ-
բող, Առաջի Տեառն կաքաւեցից, [1]օրհ-
նեալ է Տէր Աստուած" որ ընտրեաց զիս
քան զհայր քո եւ քան զամենայն տունն
նորա, եւ կացոյց զիս առաջնորդ ի վե-
րայ ժողովրդեան իւրոյ Իսրայելի, եւ
խաղացից [1]եւ կաքաւեցից" առաջի
22 Տեառն։ Եւ [8]հրամանեցայց սոյնպէս" եւս
քան զեւս. եւ եղէց անարհաման յաչս
[9]քո, եւ ընդ ապախնայս ընդ որս ասա-
23 ցեր [1]փառաւորել՝ փառաւորեցայց։ Եւ
Մեղբողայ դստեր Սաւուղայ ոչ եղեւ
որդի մինչեւ յօր մահուան իւրոյ։

Գլ. Է

1 Եւ եղեւ յորժամ նստաւ [10]Դաւիթ ի
տան իւրում, եւ Տէր հանդոյց զնա յա-
մենայն թշնամեաց իւրոց չուրջանակի,
2 Եւ ասէ արքայ ցՆաթան մարգարէ, Ա-
հաւասիկ ես բնակեալ եմ ի տան եղեւ-
նափայտից, եւ տապանակն Աստուծոյ
3 [11]չրջիցի ի մէջ խորանի՛։ Եւ ասէ Նա-
թան ցարքայ, Զամենայն որ ինչ իցէ
ի սրտի քումմ, երթ եւ արա. զի Տէր
ընդ քեզ է։
4 Եւ եղեւ ի գիշերին յայնմիկ եղեւ բան
5 Տեառն առ Նաթան եւ ասէ, Երթ եւ
ասա ցծառայ իմ Դաւիթ, Այսպէս ասէ
Տէր. [12]Ոչ չինեսցես դու" ինձ տուն բնա-
6 կելոյ. Զի ոչ բնակեցայ ի տան յօրէ
յորմէ հետէ հանի զորդիսն Իսրայելի յԵ-
գիպտոսէ մինչեւ ցայսօր, եւ չրջէի
7 [13]յիջականի խորանաւ։ Ամենայն ուրիք
ուր չրջէի ի մէջ ամենայն Իսրայելի,

[7]ԵԲԲ. ամենայն բազմութեան Իսրայելի [8]ԵԲԲ.
եղէց անարգ [9]ԵԲԲ. իմ [10]ԵԲԲ. արքայ [11]ԵԲԲ.
Նաթան ընդ վարագուրաւ [12]ԵԲԲ. Դո՞ւ չինեսցես
[13]ԵԲԲ. վրանաւ եւ

եթէ խօսելով խօսեցայ երբեք ընդ միւսմ ցեղի Իսրայէլի ումեք եւ հրամայեն եւ տուլ հովուել զժողովուրդ իմ զԻսրայէլ, ասել՝ թէ Ընդէր ոչ չինեցէք ինձ տուն
8 եղեւնափայտեայ ; եւ արդ այսպէս ասացես ցծառայ իմ Դաւիթ , Այսպէս ասէ Տէր ամենակալ . Առի ես զքեզ ի վանաց հօտից լինել քեզ յառաջնորդ ի
9 վերայ ժողովրդեան իմոյ Իսրայէլի . Եւ էի ընդ քեզ ամենայն ուրեք ուր եւ երթայիր , եւ սատակեցի զամենայն թշնամիս քո յերեսաց քոց , եւ արարի զքեզ անուանի քան անուանդ մեծամեծ
10 ծաց որ ի վերայ երկրի ; եւ եդից տեղի ժողովրդեան իմոյ Իսրայէլի , եւ տնկեցից զնա եւ բնակեսցէ [1]առանձինն . եւ մի՛ եւս հոգասցի՛ եւ ոչ եւս յաւելցէ որդի անօրէնութեան լլկել զնա իբրեւ
11 զառաջինն , ՃաւուրցՅորոց կարգեցի պատուարս ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայէլի. եւ հանգուցից զքեզ յամենայն թշնամանաց քոց . եւ [2]պատմեսցէ քեզ
12 Տէր զի չինեսցես նմա տուն՝՝ ։ Եւ եղիցի եթէ լցցին աւուրք քո , եւ ննջեսցես ընդ հարս քո , յարուսցից զզաւակ քո յետ քո , որ եղիցի յորովայնէ քումմէ , եւ [3]պատրաստեցից զարքայութիւնն [4]քո նմա՛՝՝ ,
13 Նա չինեսցէ տուն անուան իմոյ, եւ կանգնեցից զաթոռ նորա մինչեւ ցյաւիտեան.
14 Ես եղէց նմա ի հայր , եւնա եղիցի ինձ յորդի . եւ [5]եթէ եկեսցէ անիրաւութիւն նորա, յանդիմանեցից զնա , եւ՝՝ խրատեցից զնա զաւազանաւ արանց եւ
15 տանջանօք որդւոց մարդկան . Բայց զողորմութիւնն ոչ մերժեցից ի նմանէ, որպէս մերժեցի [6]յորոց մերժեցին առաջի
16 երեսաց իմոց՝՝ ։ Հաւատարիմ լիցի [7]աթոռ նորա եւ արքայութիւն նորա առաջի իմ՝՝ մինչեւ ցյաւիտեան , եւ աթոռ [8]նորա կացցէ կանգուն [9]առաջի իմ՝՝
17 մինչեւ ցյաւիտեան ։ Ըստ ամենայն բանիցս այսոցիկ եւ ըստ ամենայն տեսլեանս այսորիկ՝ սոյնպէս խօսեցաւ Նաթան ընդ Դաւիթ ։
18 Եւ եմուտ արքայ Դաւիթ եւ նստաւ առաջի Տեառն , եւ ասէ , Ո՞վ եմ ես ,
Տէր իմ Տէր , եւ ո՞ տունն իմ , զի [10]սի-
19 րեցեր զիս մինչեւ ցայդ վայր . Եւ [11]ոչ փոքրկացայ սակաւիկ ինչ՝՝ առաջի քո , Տէր իմ Տէր , եւ խօսեցար վասն տան ծառայի քո յերկար . եւ այս է օրէնք
20 մարդոյ , Տէր իմ Տէր ։ Եւ զի՞ եւս յաւելցուս Դաւիթ խօսել առ քեզ . եւ դու ինքնին գիտես զծառայ քո , Տէր իմ Տէր։
21 [12]Վասն ծառայի քո արարեր , եւ ըստ սմենայն՝՝ սրտի քո արարեր զամենայն զմեծութիւնս զայս ծանուցանել ծառայի
22 քումմ [13]վասն մեծացուցանելոյ զնա՝՝ , Տէր իմ Տէր . զի չիք որ իրրեւ զքեզ , եւ չիք Աստուած բաց ի քէն ի վերայ ամենայնի զոր լուաք ականջօք մերովք։
23 Եւ ո՞վ է ազգ ի վերայ երկրի իրրեւ զժողովուրդ քո զԻսրայէլ , որում առաջնորդեաց Աստուած վրկել իբր ժողովուրդ , գնել [14]քեզ անուն եւ առնել [14]քեզ մեծութիւն եւ [15]յայտնութիւն , մերժել քեզ՝՝ յերեսաց ժողովրդեանս քո զոր փրկեցեր դու քեզ յԵգիպտոսէ՝
24 [16]զազգս եւ զդիւականութիւնս՝՝ ։ Եւ պատրաստեցեր դու քեզ զժողովուրդ քո զԻսրայէլ ի ժողովուրդ մինչեւ ցյաւիտեան , եւ դու , Տէր , եղեր նոցա Աստուած ։ Եւ
25 արդ , Տէր իմ , զբանն զոր խօսեցար վասն ծառայի քո եւ տան նորա՝ հաստատեսցես մինչեւ ցյաւիտեան,
26 եւ արա որպէս եւ խօսեցար . Եւ մեծացի անուն քո մինչեւ ցյաւիտեան . եւ [17]ասիցէ , Տէր ամենակալ , Աստուած ի վերայ ամենայն Իսրայէլի . տուն ծառայի քո Դաւիթ եղիցի կանգուն առաջի
27 քո . Զի դու [9]ես Տէր ամենակալ Աստուած Իսրայէլի , [9]Եւ արդ որպէս խօսեցար մեծացի անուն քո մինչեւ ցյաւիտեան , ասէ Տէր ամենակալ Աստուած Իսրայէլի .՝՝ յայտնեցեր յունկն ծառայի քո եւ տացես , չինեցից քեզ տուն . վասն այնորիկ եգիտ ծառայ քո զսիրտ իւր՝ կալ առ քեզ յաղօթս զաղօթս զայսոսիկ ։ Եւ արդ , Տէր իմ Տէր , դու ես
28 Աստուած , եւ բանք քո եղիցին ճշմարիտ , եւ զոր խօսեցար վասն ծառայի
29 քո զամենայն բարութիւնս զայս ։ Եւ արդ սկսիր օրհնել զտուն ծառայի քո՝

---

[1] ԵԲԲ. ի տեղւոջ իւրում, եւ մի՛ եւս խախտեսցի
[2] ԵԲԲ. պատմէ քեզ Տէր, զի չինեսցէ քեզ Տէր տուն
[3] ԵԲԲ. Հաստատեցից [4] ԵԲԲ. Նորա [5] ԵԲԲ. ի խոտորել Նորա [6] ԵԲԲ. ի Սաւուղայ զոր մերժեցի յերեսաց քոց [7] ԵԲԲ. տուն քո եւ արքայութիւն քո առաջի քո [8] ԵԲԲ. քո [9] ԵԲԲ. պակաս

[10] ԵԲԲ. ածեր [11] ԵԲԲ. փոքր եղեւ այս տակաւին
[12] ԵԲԲ. Վասն բանի քո եւ ըստ [13] ԵԲԲ. Վասն որոյ մեծացար [14] ԵԲԲ. իւր [15] ԵԲԲ. արհաւիրս երկրի քումմ [16] ԵԲԲ. յազգաց եւ ի դից նոցա
[17] ԵԲԲ. ասիցի

լինել առաջի քո յաւիտեան. զի դու, Տէր իմ Տէր, խօսեցար, եւ յօրհնութենէ քումմէ օրհնեսցի տունն ծառայի քո յաւիտեան։

Գլ. Ը

1 Եւ եղեւ յետ այսորիկ եհար Դաւիթ զայլազգիսն եւ վանեաց զնոսա, եւ առ Դաւիթ [1]զքաղաքն գեթեայ ազգէ-
2 նայն։ Եւ եհար Դաւիթ զՄոաբ, եւ չափեաց զնոսա պարանոք, եւ զառացոյց զնոսա յերկիր. եւ եղեն երկու պարանքն սպանանելոյ եւ [2]երկու պարանքն՝ ապրեցուցանելոյ. եւ եղեւ Մոաբ Դաւթի ի ծառայս պատարագս բերել։
3 Եւ եհար Դաւիթ զԱդրազար զորդի Ռոհաբայ՝ զարքայ Սուբայ, յերթալ նորա արկանել զձեռն իւր ի վերայ զե-
4 տոյն Եփրատայ։ Եւ առ զնորա Դաւիթ հազար [3]կառս, եւ եւթն հազար՝ հեծեալս, եւ եւթն հազար՝ հետեւակս. եւ քակեաց Դաւիթ զամենայն կառսն, եւ եմոյծ իւր ի նոցանէ հարեւր կառս։
5 Եւ գայր Ասորին ի Դամասկոսէ օգնել Ադրազարայ արքայի Սուբայ. եւ եհար Դաւիթ յԱսորւոյն քսան եւ երկու հա-
6 զարս արանց։ Եւ եդ Դաւիթ պահակս յԱսորիս Դամասկոսի. եւ եղեն Ասորիք Դաւթի ի ծառայս պատարագս բերեալ. եւ փրկեաց Տէր զԴաւիթ
7 ամենայն ուրեք որ եւ երթայր։ Եւ առ Դաւիթ [4]զգաղտարանչեանսն ոսկիս որ էին ի ծառայսն Ադրազարայ [5]արքային
8 Սուբայ՝ եւ եբեր յԵրուսաղէմ։ [6]Եւ առ զայն Սաւսակիմ արքայ Եղիպտացւոց յետանել իւրում յերուսաղէմ յաւուրս Ռոբոամայ որդւոյ Սողոմոնի։ Եւ ի Մատաիայ առ արքայ Դաւիթ՝ յընտիր քնարիր քաղաքացն Ադրազարայ՝ պղինձ, որով արար Սողոմոն զծովն պղնձի եւ զսիւնսն եւ զաւազանսն եւ զամենայն կահն։
9 Եւ լուաւ Թովա արքայ Եմաթայ, եթէ եհար Դաւիթ զամենայն զօրն Ադ-
10 րազարայ, Եւ առաքեաց Թովա [7]զիդուրա զորդի իւր առ արքայ Դաւիթ՝ հարցանել զխաղաղութենէ նորա. եւ

[8]օրհնեսցէ զնա՝ փոխանակ զի սատակեաց զԱդրազար. (զի այր գոռ պատերազմաւէր էր նա ընդ Թովայ) [9]եւ հակառակ կայր նմա Ադրազար.» եւ ի ձեռն նորա էին անօթք ոսկեզէնք եւ արծաթեղէնք եւ
11 անօթք պղնձիք։ Եւ սրբեաց զայն արքայ Դաւիթ Տեառն ընդ արծաթոյն եւ ընդ ոսկւոյն, զոր սրբեալ յամենայն
12 պատերազմաց որոց յաղթեաց, [9]ՅԵդովմայ եւ ի Մովաբայ եւ յորդւոյն Ամմոնայ եւ յայլազգիսն եւ յԱմաղեկայ, եւ յաւարէ Ադրազարայ որդւոյ Ռոհաբայ արքային
13 Սուբայ։ Եւ արար Դաւիթ [10]անուն. եւ ի դառնալ իւրում եհար Դաւիթ զԱսորիս ի Գաղտեմ՝ յաքսաներս հազար։
14 Եւ եդ յԵդովմ պահակապետս՝ յամենայն Եդովմայեցիս[11], եւ եղեն ամենայն Եդովմայեցիք ծառայք արքայի. եւ փրկեաց Տէր զԴաւիթ ամենայն ուրեք ուր եւ երթայր։
15 Եւ [12]թագաւորեցոյց զԴաւիթ՝ ի վերայ ամենայն Իսրայէլի. եւ առնէր Դաւիթ իրաւունս եւ արդարութիւն ի վերայ
16 ամենայն ժողովրդեան իւրոյ։ Եւ Յովաբ որդի Շարուհեայ էր ի վերայ զօրացն, եւ Յովսափատ որդի Աքիայ ի
17 վերայ յիշատակաց. Եւ Սադովկ որդի Աքիտովբայ եւ Աքիմելէք որդի Աբիաթարայ՝ քահանայք, եւ [13]Աւա՝ գրագ-
18 պետ. Եւ Բանեա որդի Յովիդայեայ՝ [14]իւրհրպակից, եւ Քերեթին եւ Փելեթին՝ եւ որդիք Դաւթի խառապետք էին։

Գլ. Թ

1 Եւ ասէ Դաւիթ, եթէ իցէ՞ ոք մնացեալ ի տանէն Սաւուղայ, եւ արարից ընդ նմա ողորմութիւն վասն Յովնա-
2 թանու։ Եւ ի տանէն Սաւուղայ էր մանուկ մի, եւ անուն նորա Սիբա, եւ կոչեցին զնա առ Դաւիթ. եւ ասէ ցնա արքայ, եթէ դո՞ւ իցես Սիբան. եւ
3 ասէ, Ես եմ ծառայ քո։ Եւ ասէ արքայ, եթէ իցէ՞ ոք մնացեալ ի տանէ Սաւուղայ, եւ արարից ընդ նմա ողորմութիւն Աստուծոյ. եւ ասէ Սիբա ցարքայ, Ի որդի մի Յովնաթանու հաչմ

---

[1] Ուբե. զմեթեկամմա [2] Ուբե. ողջոյն պարան [3] Ուբե. եւ եւթն հարեւր [4] Ուբե. գաւազան [5] Ուբե. գոհոթ [6] Ուբե. Եւ ի Բեթահէ եւ ի Բերոթայէ, ի քաղաքաց Ադրազարայ, ա՛ռ արքայ Դաւիթ պղինձ բազում յոյժ [7] Ուբե. Զովփայ

[8] Ուբե. օրհնել զնա զի պատերազմեցաւ ընդ Ադրազարայ եւ սատակեաց զնա [9] Ուբե. յԱսորւոց [10] Ուբե. անուն ի գառնալ իւրում ի հարկանելոյ զԱսորիս ի ձորն Աղտից [11] Ուբե. յաբելաս պահակապանս [12] Ուբե. թագաւորեաց Դաւիթ [13] Ուբե. Սարայա [14] Ուբե. ի վերայ Քերեթացն եւ Ուելեթացն (Տես Գլ. Ի. 23։)

4 ոսիւք ։ Եւ ասէ արքայ , Ո՞ւր է նա ։ Եւ ասէ Սիբա ցարքայ , Ահա է ի տան Մաքիրայ որդւոյ Ամիէլի Լադաբարացւոյ
5 Եւ առաքեաց արքայ Դաւիթ եւ առ զնա ի տանէ Մաքիրայ որդւոյ Ամիէլի
6 Լադաբարացւոյ ։ Եւ եկն Մեմփիբոսթէ որդի Յովնաթանու որդւոյ Սաւուղայ առ արքայ Դաւիթ , եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց եւ երկիր եղագ նմա ։ Եւ ասէ ցնա Դաւիթ , Մեմփիբոսթէ .
7 եւ ասէ , Աւասիկ եմ ծառայ քո ։ Եւ ասէ ցնա Դաւիթ , Մի՛ երկնչիր , զի առնելով արարից ընդ քեզ ողորմութիւն վասն Յովնաթանու հօր քոյ . եւ դարձուցից քեզ զամենայն անդս Սաւուղայ՝ [1]պիտի հօր քո . եւ զաւուրեցս հաց
8 հանապազ ի սեղան իմում ։ Եւ երկիր եղագ Մեմփիբոսթէ եւ ասէ , Ո՞վ է ծառայ քո , զի հայեցար ի շուն մի մեռեալ
9 նմանազ ինձ ։ Եւ կոչեաց արքայ զՍիբա զծառայ Սաւուղայ եւ ասէ ցնա , Զամենայն ինչ որ է Սաւուղայ , եւ զամենայն որ տան նորա , տուաւ որդւոյ
10 տեառն քո ։ Եւ գործեսցես դմա ղերկիրն , դու եւ որդիք քո եւ ծառայք քո , եւ մուծցես ի տուն տեառն քո հաց եւ կերիցեն զայն . եւ Մեմփիբոսթէ որդի տեառն քո կերիցէ հաց հանապազ ի սեղան իմում ։ Եւ Սիբայի էին որդիք
11 հնգետասան եւ ծառայք քսան ։ Եւ ասէ Սիբա ցարքայ , Ըստ ամենայնի զոր հրամայեաց տէր իմ արքայ ծառային իւրում , այնպէս առասցէ ծառայ քո ։ Եւ Մեմփիբոսթէ ուտէր հաց ի սեղանոյ Դաւիթ իբրեւ զմի յորդւոցն արքայի ։
12 Եւ Մեմփիբոսթեայ էր որդի մի փոքրիկ, եւ անուն նորա Միքա . եւ ամենայն բնակութիւն տանն Սիբայի՝ ծառայք
13 Մեմփիբոսթեայ ։ Եւ Մեմփիբոսթէ բնակէր յԵրուսաղէմ , զի հանապազ ի սեղանոյ արքայի ուտէր . եւ ինքն էր կաղ յերկոցունց ոտից իւրոց ։

Գլ. Ը

1 Եւ եղեւ յետ այնորիկ եւ մեռաւ արքայ որդւոյն Ամմոնի . եւ թագաւորեաց
2 Անան որդի նորա ընդ նորա ։ Եւ ասէ Դաւիթ , Արասցեալ ողորմութիւն ընդ Անանայ որդւոյ Նաասայ , զոր օրինակ արար հայր նորա ընդ իս ողորմութիւն. եւ առաքեաց Դաւիթ մխիթարել զնա
3 ի ձեռն ծառայից իւրոց վասն հօր իւրոյ. եւ չոգան ծառայքն Դաւիթի յերկիր որդւոց Ամմոնի ։ Եւ ասեն իշխանք որդւոցն Ամմոնի ցԱնան տէրն իւրեանց , Միթէ փառաւորէ՞ զինչ զհայր քո առաջի քո առաքեալ առ քեզ Դաւիթ մխիթարիչս . ոչ , այլ զի որոնեսցին զքաղաքս եւ զիմանալն զառ , եւ [2]յրանալ զառ առաքեաց Դաւիթ զծառայս իւր
4 առ քեզ ։ Եւ կալաւ [3]զծառայսն Դաւիթի, եւ եգերթ [4]զմօրուս նոցա , եւ կտրեաց զպրաստս նոցա ի միջոց մինչեւ զերդ , եւ
5 արձակեաց զնոսա։ Եւ պատմեցին Դաւթի վասն արանցն . եւ առաքեաց Դաւիթ ընդ առաջ նոցա զի էին արքն անպատեպք յոյժ . եւ ասէ արքայ , Նստարուք յԵրիքով մինչեւ աճեսցեն մօրուք ձեր , եւ ապա դարձջիք ։
6 Եւ տեսին որդիքն Ամմոնայ եթէ [5]առաթ արարին ժողովրդեանն Դաւթի , առաքեցին որդիքն Ամմոնայ եւ ի վարձու կալան զՍիւրիա եւ զՍոբիա [6]Ռաւիւոյ եւ զԱսորիս Մաբայ փառն հազար հետեւակաց , եւ զարքայն [7]Ամաղեկայ հազար արամբք , եւ ի Մաւղայ երկտասան հազար արանց։
7 Լուաւ արքայ Դաւիթ , եւ առաքեաց զՅովաբ եւ զամենայն զօրն զօրաւոր ։
8 Եւ ելին որդիքն Ամմոնայ եւ հակառակեցան ի պատերազմ առ դրան [8]քաղաքին Ասորւոց Մաբայ , եւ Ռաւիւ եւ Սոովք
9 եւ Ամաղէկ՝ էին միայն յանդին ։ Եւ ետես Յովաբ՝ եկն հասոյն ի վերայ նորա՝ առաջոյ եւ ղկնի , ընտրեաց յամենայն [10]երիտասարդսդ Իսրայէլի , եւ
10 հակառակեցոյց ընդդէմ Ասորւոցն. Եւ զմնացորդս զօրուն ետ ի ձեռս Աբեսսայ եղբօր իւրոյ , եւ հակառակեցան ընդդէմ որդւոցն
11 Ամմոնայ ։ Եւ ասէ , Եթէ յաղթահասցեն զիս Ասորիքն, եղիջիք ինձ ի փրկութիւն . եւ եթէ որդիքն Ամմոնայ յաղթահասցեն զքեզ , եղիցեմք ապրեցուցանել զքեզ . քաջ լեր եւ ժրասցուք
12 ի վերայ ժողովրդեան մերոյ եւ ի վերայ քաղաքաց Աստուծոյ մերոյ . եւ Տէր արասցէ զհաճոյն առաջի աչաց իւրոց ։
13 Եւ մտանէր Յովաբ եւ զօրն որ ընդ նմա ի պատերազմ ընդ Ասորիսն , եւ

[1] ՅԵՐ. գոլոռ

[2] ՅԵՐ. կործանել [3] ՅԵՐ. զԱՆԱՆ [4] ՅԵՐ. զկէս մօրուսն [5] ՅԵՐ. գարշելի եղեն [6] ՅԵՐ. Բեթրովբայ [7] ՅԵՐ. Մաղաբայ [8] ՅԵՐ. քաղաքին և Ասորիքն Սուբայ և Ռոովբայ և Սաովք եւ Մաաբա [9] ՅԵՐ. էին նմա ճակատք կռուոյ

[10] ՅԵՐ. ընտրելոց

14 փախեան Ասորիքն յերեսաց Նորա ։ Եւ
որպիքն Ամմոնայ իրրեւ տեսին եթէ փախ-
եան Ասորիքն , փախեան եւ նոքա յե-
րեսաց Աբեսայ , եւ մտին ի քաղաքն .
եւ դարձաւ Յովաբ յորդւոցն Ամմոնայ
եւ եկն յԵրուսաղէմ ։
15 Իրրեւ տեսին Ասորին եթէ պարտեցաւ
առաջի Իսրայելի , ժողովեցան իմիասին ։
16 Եւ առաքեաց Ադրաազար եւ ժողովեաց
զԱսորիան յայնմ կողմանէ Գետոյն [1]ի Քա-
զամակ . եւ եկին հասին [2]Եղամ եւ Սով-
բակ իշխանք զօրացն Ադրաազարայ յա-
17 ռաջ քան զնա՝ ։ Եւ ազդ եղեւ Դաւթի ,
եւ ժողովեաց զամենայն Իսրայէլ եւ
անց ընդ Յորդանան , եւ եհաս [3]ի Քա-
զամակ . եւ ճակատեցան Ասորիքն ընդ-
դէմ Դաւթի տալ ընդ նմա պատերազմ ։
18 Եւ փախեան Ասորիքն յերեսաց Իսրա-
յելի . եւ կոտորեաց Դաւիթ յԱսորւոցն
եւլին հարեւր կառս , եւ քառասուն հա-
զար հեծելոց , եւ զՍովբակ իշխան զօրացն
19 Նորա եհար , եւ մեռաւ անդէն ։ Իրրեւ
տեսին ամենայն թագաւորք ծառայք
Ադրաազարու թէ պարտեցան առաջի
Իսրայելի , անձնատուրք եղեն [4]եւ ուխ-
տեցին ուխտ ընդ՝ Իսրայելի , եւ ծառա-
յեցին նոցա . եւ երկեան Ասորիքն ա՛լտու-
հետեւ ապրեցուցանել զորդիսն Ամմոնայ ։

ԳԼ . ԺԱ

1 Եւ եղեւ ի դառնալ տարւոյն ի նոյն ժա-
մանակ ելից թագաւորացն , եւ առաք-
եաց Դաւիթ զՅովաբ եւ զծառայս իւր
ընդ նմա եւ զամենայն Իսրայէլ , եւ
սատակեցին զորդիսն Ամմոնայ , եւ նստան
զՌաբաթմաս . եւ Դաւիթ նստեր յԵրու-
2 սաղէմ ։ Եւ եղեւ ընդ երեկս եւ յարեաւ
Դաւիթ յանկողնէ իւրմէ , եւ զբնայր ի
վերայ սանեաց սան թագաւորին . եւ
եւտես ի տանէացն կին մի լուացեալ , եւ
3 կինն գեղեցիկ տեսլեամբ յոյժ ։ Եւ ա-
ռաքեաց Դաւիթ եւ խնդրեաց զկինն ,
եւ ասէ , Ո՞չ դա է Բերսաբէէ , դուստր
4 Եղիաբայ , կին Ուրիայ Քետացւոյ ։ Եւ
առաքեաց Դաւիթ հրեշտակս եւ առ
զնա , եւ եմուտ առ նա եւ ննջեաց ընդ
նմա . եւ նա էր սրբեալ ի գաշտանէ իւրմէ .
5 եւ դարձաւ ի տուն իւր ։ Եւ յղացաւ
կինն , եւ առաքեաց պատմեաց Դաւթի
6 եւ ասէ , Յղի եմ ես ։ Եւ առաքեաց
Դաւիթ առ Յովաբ եւ ասէ , Առաքեա
առ իս զՈւրիա Քետացի . եւ առաքեաց
7 Յովաբ զՈւրիա առ Դաւիթ ։ Եւ եկեալ
Ուրիա եմուտ առ Դաւիթ , եւ եհարց
Դաւիթ զողջունէ Յովաբայ եւ զողջունէ
8 զօրսն եւ զողջունէ պատերազմին ։ Եւ
ասէ Ուրիա , Ողջոյն է՝ ։ Եւ ասէ Դաւիթ
ցՈւրիա , Արի էջ ի տուն քո եւ լուա զոտս
քո . եւ ել Ուրիա ի տանէ արքայի , եւ
ել զկնի նորա պարգեւ ի ձեռանէ արքայի ։
9 Եւ ննջեաց Ուրիա առ դրան տանն արքայի
ընդ ծառայս նորա , եւ ոչ էջ ի տուն
10 իւր ։ Եւ պատմեցին Դաւթի եւ ասեն ,
եթէ ոչ էջ Ուրիա ի տուն իւր ։ Եւ ասէ
Դաւիթ ցՈւրիա , Ո՞չ ի ճանապարհէ
եկեալ ես դու , ընդէ՞ր ոչ իջեր ի տուն
11 քո ։ Եւ ասէ Ուրիա ցԴաւիթ , Տապա-
նակն [1]Աստուծոյ եւ Իսրայէլ եւ Յուդա
բնակեալ են ի վրանս , եւ տէր իմ Յո-
վաբ եւ ծառայք տեառն իմոյ բնակեալ
են ի բացի , եւ ես մտանիցեմ ի տունն
իմ ուտել եւ ըմպել եւ ննջել ընդ կնոջ
իմում . [4]եւ զի՞արդ լինիցի այն .՝ կեն-
դանի է անձն քո եթէ արարից զբանդ
12 զայդ ։ Եւ ասէ Դաւիթ ցՈւրիա , Նիստ
այսօր աստ , եւ վաղիւ արձակեցից զքեզ ։
Եւ նստաւ Ուրիա յԵրուսաղէմ յաւուր
13 յայնմիկ , եւ ի վաղիւ անդր ։ Կոչեաց զնա
Դաւիթ , եկեր նա առաջի նորա եւ արբ
եւ [5]արբեցաւ , եւ ել առպաստն , ննջեաց
յանկողնի իւրում ընդ ծառայս տեառն
14 իւրոյ , եւ ի տուն իւր ոչ էջ ։ Եւ եղեւ
ընդ առաւօտն եւ գրեաց Դաւիթ հրո-
վարտակ առ Յովաբ , եւ առաքեաց
15 Դաւիթ ի ձեռն Ուրիայ ։ Եւ գրեաց ի
հրովարտակին եւ ասէ , Զառաս զՈւրիա
ընդդէմ առաջակացեալ պատերազմին , եւ
դարձջիք ընդ կրուկ ի նմանէ , եւ հարցի
16 եւ մեռցի ։ Եւ եղեւ ի պահել Յովաբայ
զքաղաքն , եւ եա զՈւրիա ի տեղին ուր
գիտէր թէ արք զօրաւորք էին անդ ։
17 Եւ ելին արք քաղաքին ի պատերազմ
ընդ Յովաբայ , եւ անկան ի զորուէ ծա-
ռայիցն Դաւթի [1]եւ մեռան՝ , եւ Ուրիա
18 Քետացի մեռաւ ։ Եւ առաքեաց Յովաբ
եւ պատմեաց արքայի զամենայն զբոյց
19 պատերազմին ։ Եւ պատուէր եա հրեշ-
տակին եւ ասէ , Ի վախճանել քումդ զա-
մենայն զբոյցս պատերազմիս խօսել ընդ
20 արքայի , Եւ եղիցի եթէ ելցէ յսաւմն

[1] 8ԵՔԸ. պակաս [2]ԵՔԸ. յԵղամ. եւ Սովբակ զօրա-
վար Ադրաազարայ առաջի նոցա [3]ԵՔԸ. յԵղամ

[4]ԵՔԸ. կենդանի ես դու եւ [5]ԵՔԸ. արբեցոյց զնա
Թ–ԷՐ

արքայի եւ ասացէ ցքեզ , եթէ Ընդէ՞ր մերձենայիք ի քաղաքն մարանչել , եւ ո՛չ գիտէիք եթէ ի վերուստ ի պարսպէն
21 նետաձիգ լինին . Ո՞ եհար զԱբիմելէք զորդի Յերոբաաղայ [1]որգւոյ Ներեայ՞. ո՛չ ապաքէն կին մի բեկոր երկանի ընկէց ի վերայ նորա ի վերուստ ի պարսպէն , եւ մեռաւ [2]ի Թամասի . ընդէ՞ր մօտեցար ի պարիսպն . եւ ասասցես ՔԷ՝ եւ ծա-
22 ռայ քո Ուրիա Քետացի մեռաւ : Եւ չոգաւ հրեչտակն [3]Յովաբայ առ արքայ յերուսաղէմ , եւ եհաս եւ պատմեաց Դաւիթ զամենայն [4]որ զոր պատուիրեաց նմա Յովաբ , զամենայն իրս պատերազմին : Եւ բարկացաւ Դաւիթ ի վերայ Յովաբայ , եւ ասէ ցհրեչտակն , Ընդէ՞ր մերձեցայք ի քաղաքն մարանչել . ո՛չ գիտէիք եթէ հարկանելոց էք ի պարսպէն , ո՞ եհար զԱբիմելէք որդի Յեռոբաաղայ . ո՛չ ապաքէն կին մի բեկոր երկանի ընկէց ի վերայ նորա ի պարսպէն , եւ մեռաւ ի Թամասի . ընդէ՞ր
23 մերձենայիք ի պարիսպն՝ : Եւ ասէ հրեչտակն ցԴաւիթ , Զի ոյստակացան ի վերայ մեր արք , եւ ելին առ մեզ արտաքս , եւ հասաք ի վերայ նոցա մինչեւ ցդուռն
24 քաղաքին . Եւ նետաձիգ եղեն աղեղնաւորքն ի ծառայս քո ի վերուստ ի պարսպէ անտի , եւ մեռան ի ծառայից արքային , եւ ծառայ քո Ուրիա Քետացի
25 մեռաւ : Եւ ասէ Դաւիթ ցհրեչտակն , Այսպէս ասասցես ցՅովաբ , Մի խռովեսցի չար բանդ յաչս քո . զի երբեմն այսպէս ուտէ սուր , եւ երբեմն այնպէս . սաստկացո զպատերազմն ընդ քաղաքիդ եւ կործանեսցես զդա . եւ [5]զօրացո զանձն
26 քո՝ : Եւ իբրեւ լուաւ կինն Ուրիայ եթէ մեռաւ Ուրիա այր իւր , կոծեցաւ ի
27 վերայ առն իւրոյ : Իբրեւ անց սուգն , առաքեաց Դաւիթ եւ ամփոփեաց զնա ի տուն իւր , եւ եղեւ նմա կին եւ ծնաւ նմա որդի : Եւ չար թուեցաւ բանն զոր արար Դաւիթ յաչս Տեառն :

ԳԼ . ԺԲ

1 Եւ առաքեաց Տէր զՆաթան [1]մարգարէ առ Դաւիթ . եւ եմուտ առ նա եւ ասէ ցնա , Արք երկու էին ի քաղաքի միում ,
2 մին մեծատուն եւ մեւսն աղքատ : Եւ մեծատունն էին հօտք եւ անդեայք բա-
3 զում յոյժ , Եւ աղքատին եւ ոչ ինչ , բայց ոչխ մի փոքր զոր առեալ եւ սպրեցուցեալ եւ սնուցեալ էր զնա , եւ հասուսեալ էր ընդ նմա եւ ընդ որդիս նորա ի միասին . ի հացէ նորա ուտէր եւ ի բաժակէ նորա ըմպէր եւ ի ծոց նորա ննջէր , եւ էր նորա իբրեւ զդուստր :
4 Եւ եկն անցաւոր առ այրն մեծատուն . եւ խնայեաց առնուլ ի հօտից իւրոց եւ յանդեաց իւրոց առնել հիւրոյն անցաւորի եկելոյ առ նա , եւ էառ զոչխ աղքատին եւ արար առն եկելոյ առ նա կե-
5 րակուր : Եւ բարկացաւ սրամտութեամբ Դաւիթ յոյժ առն , եւ ասէ Դաւիթ ցնաթան , կենդանի է Տէր զի որդի մահու
6 է այրն որ արար զայն : Եւ զոչխն տասնապատիկ , փոխանակ առնելոյ զգառն զայն , վասն զի ոչ խնայեաց :
7 Եւ ասէ Նաթան ցԴաւիթ , Դու ես այրն [1]որ արարեր զայն՝ . այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի , Ես եմ որ օծի զքեզ թագաւոր ի վերայ [1]ամենայն Իսրայէլի , եւ ես փրկեցի զքեզ ի ձեռաց
8 Սաւուղայ . Եւ եատու քեզ զտունս տեառն քո , եւ զկանայս տեառն քո ի ծոց քո . եւ եատու քեզ զԻսրայէլ եւ զՅուդա . եւ թէ սակաւ իցէ , յաւելից քեզ զդո-
9 ւայս եւ ընդէ՞ր անարգեցեր զբան Տեառն առնել չար առաջի աչաց նորա . զՈւրիա Քետացի հարեր դու սրով , եւ զկին նորա առեր դու քեզ կնութեան , եւ զնա սպաներ սրով որդւոցն Ամմոնայ :
10 Եւ արդ մի հեռասցի սուր ի տանէ քումմէ մինչեւ ցյաւիտեան , փոխանակ զի անարգեցեր զիս , եւ առեր զկինն Ուրիայ
11 Քետացւոյ լինել քեզ կնութեան : Այսպէս ասէ Տէր , Ահա ես յարուցից ի վերայ քո չարիս ի տանէ քումմէ . եւ առից զկանայս քո առաջի աչաց քոց եւ տացեմ ընկերի քումմ , եւ ննջեսցէ ընդ կանայս քո
12 յանդիման արեգականս այսորիկ : Զի դու արարեր զայդ ի ծածուկ , եւ ես արարից զբանդ զայդ յանդիման ամենայն Իսրայէլի
13 եւ առաջի արեգականս այսորիկ : Եւ ասէ Դաւիթ ցնաթան , Մեղայ Տեառն . եւ ասէ Նաթան ցԴաւիթ , Եւ Տէր անցոյց
14 զբեւ զմեղս քո եւ մի մեռանիս : Բայց քանզի գայրացուցանելով գայրացուցեր զթշնամիս Տեառն բանիւն այնուիկ , որդին որ ծնանելոց է քեզ՝ մահու մեռցի :

[1] ՁԵԲԲ. պ-ա-ե [2] ԵԲԲ. ի Թեբես [3] ԵԲԲ. եւ ելաս եւ պատմեաց Դաւիթ զամենայն յոյր սակս առաքեալ էր զնա Յովաբ [4] ԵԲԲ. դու զօրացո զնա [5] ԵԲԲ. չորեքպատիկ

15 Եւ գնաց Նաթան ի տուն իւր. եւ եհար Տէր զմանուկն զոր ծնաւ կինն
16 Ուրիայ Դաւթի, եւ հիւանդացաւ։ Եւ ինդրեաց Դաւիթ յԱստուծոյ վասն մանկանն, եւ պահեաց Դաւիթ պահս, եւ եմուտ[1]
17 անկաւ ի վերայ գետնոյ։ Եւ յարեան ի վերայ նորա [2]ծառայք տանն յարուցանել զնա, եւ ոչ կամէր յառնել ի գետնոյ
18 նոյն, եւ ոչ եկեր ընդ նոսա հաց։ Եւ եղեւ յաւուրն եւթներորդի մեռանել մանկանն. եւ երկեան ծառայքն Դաւթի պատմել նմա եթէ Մեռաւ մանուկն. զի ասացին, եթէ մինչդեռ կենդանի էր մանուկն խօսեցաք ընդ նմա եւ ոչ լուաւ ձայնի մերում, եւ զիա՞րդ ասացուք նմա թէ Մեռաւ մանուկն, եւ զործիցէ
19 չարիս։ Եւ տեսեալ Դաւիթ եթէ չշնջեն ծառայքն նորա, եւ իմացաւ Դաւիթ եթէ մեռաւ մանուկն. եւ ասէ Դաւիթ ցծառայսն իւր, եթէ Մեռեա՞լ իցէ մանուկն. եւ ասեն, Մեռաւ։ Եւ յարեաւ Դաւիթ ի գետնոյն, եւ լուացաւ եւ օծաւ, եւ փոխեաց զհանգերձ իւր, եւ եմուտ ի տունն [3]Աստուծոյ եւ երկիր եսպաղ նմա. եւ եմուտ ի տուն իւր, եւ խնդրեաց հաց ուտել. եւ եդին առաջի նորա հաց,
21 եւ եկեր։ Եւ ասեն ցնա ծառայքն իւր, Զի՞նչ է բանդ այդ զոր արարեր վասն մանկանն. մինչդեռ կենդանին էր, պահէիր եւ լայիր [4]եւ աքնէիր". եւ իրրեւ մեռաւ մանուկն, յարեար կերար եւ արբեր։
22 Եւ ասէ Դաւիթ, Մինչդեռ կենդանի էր մանուկն, պահէի եւ լայի. քանզի ասէի, Ո՞գիտէ, ողորմեսցի Տէր, եւ կեցցէ մա-
23 նուկն։ Արդ արդեհաւ մեռաւ մանուկն, ես ընդէ՞ր պահիցեմ. միթէ կարո՞ղ իցեմ դարձուցանել զնա այսրէն. ես առ նա երթալոց եմ, եւ նա առ իս ոչ դարձցի։
24 Եւ մխիթարեաց Դաւիթ զԲերսաբէէ զկին իւր, եւ եմուտ առ նա եւ ննջեաց ընդ նմա. եւ յղացաւ եւ ծնաւ որդի, եւ կոչեաց զանուն նորա Սողոմոն. եւ
25 Տէր սիրեաց զնա։ Եւ առաքեաց ի ձեռն Նաթանայ մարգարէի, եւ կոչեաց զանուն նորա [5]Յեդեդի վասն Տեառն։
26 Եւ պատերազմեցաւ Յովաբ յԱբաթթ որդւոյն Ամմոնայ, եւ եհան յառնուլ
27 զքաղաքն թագաւորութեան։ Եւ առաքեաց Յովաբ հրեշտակս առ Դաւիթ եւ

[1] ԵԲԲ-ՅԵՑԻՆ ՅՈՒԼԻՈՍ, եւ ոգաւ եւ [2] ԵԲԲ. ծերք [3] ԵԲԲ. Տեառն [4] ՅԵՐԿՈՒ ԳՐՈՒԹԵԱՆՑ ԲԱՆ, ՅՈՐՈՎՀԱՆ՝ սիրելի Տեառն [5] ԵԲԲ. Յեդեդիա, ՅԵՐԵՒԱՆ՝ սիրելի Տեառն

ասէ, Պատերազմեցայ ընդ Րաբաթթայ, եւ հասի յառնուլ զքաղաքս ջրոց.
28 Եւ արդ ժողովեա զմնացորդս ժողովրդեանդ, եւ բանակեսցիս զքաղաքաւս եւ առցիս զսա. զի մի՛ ես առից զքաղաքս եւ կոչեսցի անուն իմ ի վերայ սորա։
29 Եւ ժողովեաց Դաւիթ զամենայն ժողովուրդն եւ չորս յԱբաթթ, եւ պա-
30 տերազմեցաւ ընդ նմա եւ առ զնա։ Եւ առ զպսակն [6]Մեղբոմայ թագաւորին նոցա" ի գլխոյ նորա. եւ կշիռ նորա տաղանդ մի ոսկւոյ, եւ ականց պատուականաց. եւ էր ի գլուխ Դաւթի. եւ զառ քաղաքին եհան բազում յոյժ։
31 Եւ զժողովուրդն որ էր ի նմա՝ եհան արտաքս, եւ արկ ընդ սղոցաւ եւ ընդ քերանօք երկաթիւք, եւ [7]շրջեցուցանէր զնոսա ազիւսով". եւ այնպէս առնէր ընդ ամենայն քաղաքս որդւոցն Ամմոնայ. եւ գարձաւ Դաւիթ եւ ամենայն զօրն յԵրուսաղէմ։

Գլ. ԺԴ

1 Եւ եղեւ յետ այնորիկ, եւ Աբիսողոմայ որդւոյ Դաւթի էր քոյր մի յոյժ գեղեցիկ տեսլեամբ, եւ անուն նորա Թամար. եւ սիրեաց զնա Ամնոն որդի Դաւ-
2 թի։ Եւ նեղէր Ամնոն մինչեւ հիւանդանալ նմա վասն Թամարայ քեռի իւրոյ. զի կոյս էր նա, եւ ծանր էր յաչս Ամնոնի
3 առնել ինչ նմա։ Եւ էր ընկեր Ամնոնայ, եւ անուն նորա Յովնադաբ, որդի Սամայ եղբօր Դաւթի. եւ Յովնադաբ այր
4 իմաստուն յոյժ։ Եւ ասէ ցնա, Զի՞ է զի այդպէս ծխելիս, որդի արքայի, այգուն այգուն եւ ոչ պատմես ինձ։ Եւ ասէ ցնա Ամնոն, զԹամար զքոյր Աբի-
5 սողոմայ եղբօր իմոյ սիրեմ ես։ Եւ ասէ ցնա Յովնադաբ, Ննջեա ի մահիճս քո եւ հիւանդացիր, եւ մտցէ հայր քո տեսանել զքեզ. եւ ասասցես ցնա, Մտցէ Թամար քոյր իմ եւ տացէ ինձ [8]խիւս. եւ արասցէ առաջի աչաց իմոց կերակուր, զի տեսից եւ կերայց ի ձե-
6 ւոյ նորա։ Եւ [9]անկաւ Ամնոն եւ հիւանդացաւ". եւ եմուտ արքայ տեսանել զնա. եւ ասէ Ամնոն ցարքայ, եկեսցէ Թամար քոյր իմ առ իս, եւ արասցէ առաջի իմ

[6] ԵԲԲ-ՅԵՑԻՆ ՉԱՒՆ ԳՆԱՑ Մեղբոմ որ նշանակէ Թագաւոր նոցա [7] ԵԲԲ. ընդ տապարօք, եւ անցոյց զնոսա ընդ հնոց աղիւսոյ [8] ԵԲԲ. ուտել հաց [9] ԵԲԲ. ընկողմեցաւ Ամնոն եւ խոթացաւ եղեւ

[1]կերակուր բլիթս, եւ կերայր ի ձեռաց
7 Նորա։ Եւ առաքեաց Դաւիթ առ Թամար
ի տուն եւ ասէ, Երթ ի տուն Ամնոնի
եղբօր քո, եւ արա նմա կերակուր։
8 Եւ գնաց Թամար ի տուն Ամնոնի եղբօր
իւրոյ. եւ նա անկեալ դնէր. եւ առ
հաս եւ խրեաց, եւ արար առաջի Նորա
9 բլիթս, եւ եփեաց զբլիթսն. Եւ առ
զառագաստն եւ խափեաց առաջի Նորա.
եւ ոչ կամեցաւ ուտել. եւ ասէ Ամնոն,
Հանէք զամենայն այր յինէն արտաքս.
եւ հանին արտաքս զամենայն այր ի նմա-
10 նէ։ Եւ ասէ Ամնոն ցԹամար, Տար զխոր-
տիկդ ի սենեակ, եւ կերայց ի ձե-
ռաց քոց։ Եւ առ Թամար զբլիթսն զոր
արար, եւ տարաւ Ամնոնի եղբօր իւրում
11 ի սենեակն, Եւ մատոյց նմա ուտել։ Եւ
նա բռնեաց նմա ուտել եւ ասէ ցնա,
12 Եկ հնչեա ընդ իս, քոյր իմ։ Եւ ասէ
ցնա, Մի՛, եղբայր իմ, մի՛ տառապե-
ցուցաներ զիս. զի ոչ գործի այսպիսի
13 անզգամութիւն։ Եւ ես յո՞ տանիցիմ
զնախատինս իմ. եւ գու լինիցիս իբրեւ
զմի յանզգամաց ի մէջ Իսրայելի. եւ
արդ խօսեաց ընդ արքայի, եւ ոչ ար-
14 գելու զիս ի քէն։ Եւ ոչ կամեցաւ
Ամնոն լսել ձայնի նորա. եւ բռնադար-
եաց եւ բռնագաւազեաց զնա, եւ տա-
ռապեցոյց զնա եւ ննջեաց ընդ նմա։
15 Եւ առեալ զնա Ամնոն ատելութիւն մեծ
յոյժ. զի մեծ էր ատելութիւնն զոր ատ-
եաց զնա [2]եւ անհնարին վիրջին ա-
ղէտքն՝ քան զառաջին սէրն զոր սիրե-
ացն զնա. եւ ասէ ցնա Ամնոն, Արի
16 գնա։ Եւ ասէ ցնա Թամար, [3]Մեծ են
չարիքս այս քան զայն զոր արարեր
ընդ իս, արձակելդ քո զիս. եւ ոչ կա-
17 մեցաւ Ամնոն լսել ձայնի նորա։ Եւ կո-
չեաց զպատանին [4]իւր զվերակացու տան
իւրոյ՝, եւ ասէ ցնա, Հան զդա յինէն
արտաքս, եւ փակեա զդուրսդ զկնի դո-
18 րա։ Եւ էր զնովաւ [5]պարեգօտս ասղնա-
գործս եւ կոճկէնք՝, զի այնպէս զգես-
նուին զառնիւք թագաւորացդ կոյսք զձորձս
իւրեանց. եւ հանան զնա սպասաւորն
արտաքս, եւ փակեաց զդուրսն զկնի
19 նորա։ Եւ առ Թամար մոխիր եւ արկ
զգլխով իւրով, եւ [6]զպարեգօտսն կոճ-

[1] ՆԵԲ. կերակուս [2] ՆԵԲ. գ-կ-ե [3] ՆԵԲ. Մի՛ այդ-
պէս, մեծ [4] ՆԵԲ. զպասաւոր իւր [5] ՆԵԲ. պարե-
գօտ գոյնագոյն [6] ՆԵԲ. զպարեգօտն գոյնագոյն

կէնսն՝ զոր զգեցեալ էր՝ պատառեաց,
եւ եդ զձեռս իւր ի վերայ գլխոյ իւրոյ,
20 եւ երթայր երթալով եւ լայր։ Եւ ասէ
ցնա Աբիսողոմ եղբայր Նորա, Միթէ
Ամնոն եղբայր քո եղեւ ընդ քեզ. եւ
արդ, քոյր իմ, լուռ կաց, զի եղբայր
քո է, մի՛ ածեր զնոսաս քով խօսել
զբանդ գայդ. եւ նստաւ Թամար [7]այրու-
թիւնամբ ի տան Աբիսողոմայ եղբօր իւ-
21 րոյ։ Եւ լուաւ [8]արքայ զբանս զայսոսիկ
եւ բարկացաւ յոյժ. [2]եւ ոչ տրտմեցոյց
զոգի Ամնոնայ որդւոյ իւրոյ զի սիրէր
22 զնա, զի անդրանիկ Նորա էր։՝ Եւ ոչ
խօսեցաւ Աբիսողոմ ընդ Ամնոնայ ի չարէ
մինչեւ զյարի. զի ատեաւր Աբիսողոմ
զՄամն վասն բանին զոր տառապեցոյց
զԹամար զքոյր Նորա։

23 Եւ եղեւ յետ [9]երկոից աւուրց, եւ էին
կտուրք Աբիսողոմայ [10]ի Բեթմատն մերձ
յԵփրեմ. եւ կոչեաց Աբիսողոմ զամե-
24 նայն որդիսն արքային։ Եւ եկն Աբիսո-
զոմ առ արքայ եւ ասէ ցնա, Ահաւա-
նիկ կտուրք են ծառային քում, երթիցէ
արքայ եւ ծառայք իւր ընդ ծառային քում։
25 Եւ ասէ արքայ ցԱբիսողոմ, Մի՛, որդ-
եակ իմ, մի՛ երթիցուք ամենեքեան
մեք, եւ մի՛ ծանրասցուք քեզ. եւ
սաստեաց զնա, եւ ոչ կամեցաւ երթալ,
26 եւ օրհնեաց զնա։ Եւ ասէ Աբիսողոմ,
Ապա թէ ոչ՝ գոնէ եկեսցէ ընդ իս Ամնոն
եղբայր իմ. եւ ասէ արքայ, Ընդէր
27 երթիցէ ընդ քեզ Ամնոն։ Եւ սաստեաց
զնա Աբիսողոմ, եւ արձակեաց ընդ նմա
զՄամն եւ զամենայն զորդիսն արքային։
[2]Եւ արար Աբիսողոմ խրախուճիւն ըստ
28 խրախուճեան թագաւորի։՝ Եւ պատ-
ուէր ետ Աբիսողոմ մանկտւոյ իւրում
եւ ասէ, Տեսէք, յորժամ զուարթասցի
սիրտն Ամնոնայ ի գինւոյ, եւ առացից
ձեզ, Հարէք զՄամն եւ սպանէք զնա,
մի՛ երկնչիք. զի ո՞չ ապաքէն ես իցեմ
որ հրամայեցից ձեզ. քաջալերեցարուք
29 եւ լերուք յորդիս զօրութեան։ Եւ ա-
րարին մանկտին Աբիսողոմայ Ամնոնի
որպէս հրամայեաց Նոցա Աբիսողոմ. եւ
յարեան ամենայն որդիք արքային, եւ
հեծան այր իւրաքանչիւր ի ջորւոջ իւ-
30 րում եւ փախեան։ Եւ եղեւ մինչդեռ
նոքա էին ի ճանապարհին, գոյժ եկն առ
Դաւիթ եւ ասեն, Կոտորեաց Աբիսո-

[7] ՆԵԲ. անմխիթար [8] ՆԵԲ. արքայ Դաւիթ [9] ՆԵԲ.
երկեմն [10] ՆԵԲ. ի Բաալ-Հասոր

զոմ զամենայն որդիս արքայի , եւ ոչ
31 եթող ի նոցանէ եւ ոչ մի : Յարեաւ արքայ , պատառեաց զհանդերձս իւր, եւ անկաւ ի վերայ գետնոյ . եւ ամենայն ծառայք նորա կային չուրջ զնովաւ արա-
32 տառեալ զհանդերձս իւրեանց : Պատասխանի եւս Յովնադաբ որդի Սամայայ եղբօր Դաւթի եւ ասէ , Մի ասասցէ տէր իմ [1]արքայ եթէ ամենայն որդիք արքայի մեռան , զի Ամնոն միայն մեռաւ . քանզի ի բերան Աբիսողոմայ կայր , յօրէ յորմէ
33 տառապեցոյց զԹամար քոյր նորա : Եւ արդ մի դնիցէ [2]արքայ ի սրտի իւրում զանդ եւ ասասցէ թէ Ամենայն որդիքն արքայի մեռան . այլ զի Ամնոն
34 միայն մեռաւ : Եւ փախեաւ Աբիսողոմ : Եւ երաշխ պատանին դէտն զաչս իւր եւ նայեաց , եւ ահա ժողովուրդ բազում գայր ընդ ճանապարհն ի նմանէ առ կողմամբ լերինն [1]ընդ զառ ի վայրն . եւ
եկն դէտն պատմեաց արքայի եւ ասէ. Տեսի արս ի ճանապարհն Որովնիմայ
35 առ կողմամբ լերինն" : Եւ ասէ Յովնադաբ ցարքայ , Ահա որդիք արքայի եկին. ըստ բանի ծառայի քո նոյնպէս եղեւ :
36 Եւ իբրեւ վախճանեաց զխօսելն , եւ ահա որդիքն արքայի եկին , եւ ամբարձին զձայնս իւրեանց եւ լային . այլ եւ արքայ եւ ամենայն ծառայք իւր լային
37 լալիւն մեծ յոյժ : Եւ Աբիսողոմ փախեաւ , եւ չոգաւ առ Թողմևեմ որդի Եմիուդայ արքայի Գեսուրայ [1]լերկիր Մաքուայ" . եւ սուգ առ Դաւիթ արքայ ի վերայ որդւոյն իւրոյ զամենայն
38 աւուրս : Եւ Աբիսողոմ փախեաւ եւ զնաց ի Գեսուր , եւ էր անդ ամս երիս
39 Եւ [3]դադարեաց արքայ Դաւիթ լեանալ ի վերայ Աբիսողոմայ" , քանզի մխիթարեցաւ ի վերայ Ամնոնայ որ մեռաւն :

Գլ. ԺԴ

1 Եւ իմացաւ Յովաբ որդի Շարուհեայ , եթէ է սիրտ արքայի ի վերայ Աբիսո-
2 զոմայ : Առաքեաց Յովաբ ի Թեկուէ , եւ առ անտի կին մի իմաստուն , եւ ասէ ցնա , Սուգ առ եւ զգեցիր հանդերձ սգոյ . մի օծանիցիս իւղով , եւ եղիցես իբրեւ զկին մի սգացեալ ի վե-
3 րայ բազմօրեայ մեռելոյ : Եւ եկեսցես առ արքայ , եւ խօսեսցիս ընդ նմա ըստ

[1] ՅԵԲր. պ–ո–ե [2] ՅԵԲր. տէր իմ արքայ [3] ՅԵԲր. ցանկայր արքայ Դաւիթ ելանել առ Աբիսողոմ

բանիս ըստ այսմիկ . եւ եղ Յովաբ բանս
4 ի բերան նորա : Եմուտ կինն Թեկուացի առ արքայ , եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց ի գետին[4], եւ ասէ , Ապրեցո
5 [1]զիս արքայ , [1]ապրեցո : Եւ ասէ ցնա արքայ , Զի՞ է քեզ : Եւ նա ասէ , [1]Կարի իսկ տարտնաւ է ինձ." կին մի այրի եմ
6 ես . մեռաւ այր իմ . Եւ աղախնոյ քո երկու որդիք էին , մարտեան ընդ միմեանս երկոքեան յանդի . եւ ոչ ոք էր որ համոզէր ի մէջ նոցա , եւ եհար մին
7 զմեւս եղբայրն եւ սպան զնա : Եւ ահա յարուցեալ է ամենայն ազգն ի վերայ աղախնոյ քո , ասեն , Տուր զսպանօղն եղբօր իւրոյ , եւ սպանցուք զնա փոխանակ անձին եղբօր իւրոյ , եւ բարձցուք զժառանգակալն [1]քո . եւ չիջուցանիցեն զկայծակն իմ զմնացեալ , առ ի չթողոյ առն իմոմէ մնացորդ եւ ա-
8 նուն ի վերայ երեսաց երկրի : Եւ ասէ արքայ[5], Երթ [1]ողջամբ ի տուն քո , եւ
9 ես պատուիրեցից վասն քո : Եւ ասէ կինն Թեկուացի[6], Ցիմ վերայ , արքայ , անօրէնութիւնն , եւ ի վերայ տան հօր իմոյ , եւ արքայ եւ աթոռ իւր քաւեալ :
10 Եւ ասէ արքայ , Ո՞վ է որ խօսեսցի ընդ քեզ , եւ ածցես զնա առ իս եւ ոչ եւս
11 մերձենայի առ քեզ : Եւ ասէ , Յիշեսցէ արքայ զՏէր Աստուած իւր , ի յաճախել մերձաւորի արեանն ապականել . մի ջնջեսցեն զորդեակն իմ : Եւ ասէ Դաւիթ , կենդանի է Տէր եթէ անկցի ի
12 հերոյ որդւոյ քո մազ մի ի գետին : Եւ ասէ կինն , Խօսեսցի աղախին քո առաջի Տեառն իմոյ արքայի բան մի . եւ
13 ասէ , Խօսեաց : Եւ ասէ կինն , Ընդէր խորհեցար այդպիսի ինչ ի վերայ ժողովրդեանն Աստուծոյ [7]կամ թէ ի բերանոյ արքայիդ լսել բանն այն վնասու՝ չդարձուցանել արքայի զմերժեալնյիւրմէ .
14 Զի մահու մեռանիցի , եւ իբրեւ զջուր հեղեալ յերկիր ոչ ամփոփիցի , եւ ոչ առնուցու Աստուած զոգին , եւ խորհիցի
15 ոք մերժել" կինքենէ զմերժեալն : Եւ արդ եկի խօսել առ արքայի տեառն

[4] ՅԵԲր. յ–ե– , և երկիր եպագ նմա [5] ՅԵԲր. յ–ե– , ցկինն [6] ՅԵԲր. յ–ե– , ցարքայ [7] ՅԵԲր. զի ի խօսել արքայի զբանս զոյս՝ լինի իբրև յանցուցեալ , քանզի ոչ դարձուցանէ արքայ այսրէն զմերժեալն իւր . (14) Զի մահու մեռանելոց եմք , եւ եմք իբրեւ զջուր հեղեալ յերկիր որ ոչ ամփոփիցի . եւ ոչ առնու Աստուած զոգին , այլ հնարի հնարս առ ի չմերժելոյ

իմոյ զբանս զայս. դի [1]տեսանիցէ վիս ժողովուրդն եւ ասիցէ, թէ ապաքէն քո խօսեցաւ՝՝ ընդ արքայի, ի[2]ևրևւս արասցէ արքայ զբան աղախնոյ իւրոյ.
16 Չի լուեալ արքայ եւ փրկեսցէ վիս ի ձեռաց առնն, որ [3]ընդրէ ՚ննչել վիս եւ զորդի իմ ի ժառանգութենէ Աստուծոյ.
17 Եւ [2]ասէ կինն՝՝, Եղիցի բան տեառն իմոյ արքայի [3]ի ղոնս, զի իբրեւ դրկեչտակ Աստուծոյ այնպէս է տէր իմ արքայ ի լսել զբարի եւ զչար. եւ Տէր Աստուած
18 քո եղիցի ընդ վեզ։ Եւ պատասխանի կին արքայ եւ ասէ ցկինն, Մի թաքուցաներ յինէն զբան զոր ես հարցիլ վեզ։ Եւ ասէ կինն, Խօսեսցի տէր իմ արքայ
19 Եւ ասէ արքայ, Միթէ ձեռն Յովաբայ [4]ընդ վեզ ։ եւ ասէ կինն ցարքայ, կենդանի է անձն քո, տէր իմ արքայ, եթէ [4]լսել յաջ կամ ցահեակ յամենայնէ զոր խօսեցաւ տէր իմ արքայ. զի ծառայ քո Յովաբ՝ նա պատուիրեաց ինձ, եւ նա եդ ի բերան աղախնոյ քո զամենայն բանս զայսոսիկ,
20 Վասն բողոքելոյ երեսաց բանիս այսորիկ՝ զոր արար ծառայ քո Յովաբ զբանս զայսոսիկ, եւ տէր իմ իմաստուն է ըստ իմաստութեան հրեշտակի Աստուծոյ՝ գիտել զամենայն ինչ որ յերկրի։
21 Եւ ասէ արքայ ցՅովաբ Անաւասիկ արարի վեզ ըստ բանի քումմ բաս այդմիկ. երթ զարձո ած զպատանեակն
22 զԱբիսողոմ։ Եւ անկաւ Յովաբ ի վերայ երեսաց իւրոյ յերկիր եւ երկիր եպագ նմա, եւ օրհնեաց զարքայ. եւ ասէ Յովաբ, Այսօր գիտաց ծառայ քո եթէ գտի չնորհս յաչս քո, տէր իմ արքայ, զի արար տէր իմ
23 արքայ զբան ծառային իւրոյ։ Եւ յարեաւ Յովաբ եւ գնաց ի Գեսուր, եւ ած զԱ-
24 բիսողոմ յԵրուսաղէմ։ Եւ ասէ արքայ, Դարձցի ի տուն իւր, եւ զերեսս իմ մի տեսցէ։ Եւ դարձաւ Աբիսողոմ ի տուն իւր, եւ զերեսս արքայի ոչ ետես։
25 Եւ իբրեւ զԱբիսողոմ ոչ գոյր յամենայն Իսրայէլի այր գեղեցիկ գովելի յոյժ. ի թաթիղ ոտից իւրոց մինչեւ ի գլուխ
26 իւր ոչ գոյր ի նմա արատ։ Եւ ի փոքրել զներս իւր [1]լինէր ի սկսանելոյ աւուրց յաւուրս՝՝ փոքրել, զի կարի ծանրանայր

[1] ՚ԵՔԲ. երկեցցէ զիս ժողովուրդն. եւ ասէ աղախին քո, Խօսեցայց [2] ՚ԵՔԲ. ասաց աղախին քո
[3] ՚ԵՔԲ. ի հանգիստ լմ, ի մխիթարութիւն [4] ՚ԵՔԲ. եւ լինէր ի վախճանել տարւոյն

ի վերայ նորա, եւ [5]յորժամ փոքրէր, եւ կչտէր զներ գլխոյ իւրոյ երկերիւր սիկղ
27 բաս արքունական սկիղ։ Եւ ծնան Աբիսողոմայ երիք ուսուիրք եւ դուստր մի եւ անուն նորա Թամար. եւ նա էր կին գեղեցիկ յոյժ տեսլեամբ [5]եւ եգեւ կին Ռոբոամայ որդւոյ Սողոմոնի, եւ ծնաւ նմա զԱբիա՝՝։
28 Եւ նստաւ Աբիսողոմ յերուսաղէմ աւուրս ամաց երկուց, եւ զերեսս արքայի ոչ տեսս։ Եւ առաքեաց Աբիսո-
29 ղոմ առ Յովաբ յղել զնա առ արքայ. եւ ոչ կամեցաւ երթալ առ նա. եւ առաքեաց երկրորդ անգամ առ նա, եւ
30 ոչ կամեցաւ երթալ։ Եւ ասէ Աբիսողոմ ցծառայս իւր, Դիտէք զվիճակ դհանոյ Յովաբայ, լի գարեօվ մօտ է առ իս. երթայք այրեցէք զնա հրով։ Եւ այրեցին ծառայքն Աբիսողոմայ զվիճակն Յովաբայ հրով։ [5]Եւ եկին ծառայքն Յովաբայ առ նա պատառեալ զհանգերձս իւրեանց, եւ ասեն, Այրեցին ծառայքն
31 Աբիսողոմայ զվիճակն հրով՝՝։ Եւ յարեաւ Յովաբ եւ եկն առ Աբիսողոմ ի տունն եւ ասէ ցնա, Ընդէ՞ր այրեցին ծա-
32 ռայք քո զվիճակն իմ հրով։ Եւ ասէ Աբիսողոմ ցՅովաբ, Ձգեցի առ քեզ եւ ասեմ, Եկ այսր յզնցից զքեզ առ արքայ, ասել՝ Թէ Ընդէ՞ր եկի ի Գեսուրայ, լաւ էր ինձ տակաւին անդ լինել [6]քան ոչ տեսանել՝՝ զերեսս արքայի, եւ եթէ
33 վնաս ինչ կայցէ յիս, [7]սպան զիս։ Եւ եմուտ Յովաբ առ արքայ եւ պատմեաց նմա. եւ կոչեաց զԱբիսողոմ. եւ եմուտ առ արքայ եւ երկիր եպագ նմա, եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր առաջի արքայի. եւ համբուրեաց արքայ զԱբիսողոմ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ եղեւ յետ այնորիկ եւ արար Աբիսողոմ կառս եւ երիվարս, եւ յիսուն
2 այր սուրհանդակ առաջի իւր։ Եւ կանխէր Աբիսողոմ եւ կայր առ ճանապարհն դրանն. եւ լինէր ամենայն այր որոյ էր դատ գայ առ արքայ ի դատաստան, կոչեաւէր առ նա Աբիսողոմ եւ ասէր ցնա, Յորմէ՞ քաղաքէ ես դու. եւ ասէր
3 այրն, Ի միոյ ի ցեղիցն Իսրայէլի է ծա-

[5] ՅԵՔԲ. դ-ի-ա [6] ՚ԵՔԲ. եւ արդ տեսից [7] ՚ԵՔԲ. սպանցէ

բանք քո բարի են եւ դիւրինք, եւ որ
4 ունկնդիր լինիցի քեզ՝ չիք առ ի յար-
քայէ։ Եւ ասէր Արիսողոմ, Ո՛ կացու-
ցանէր զիս դատաւոր ի վերայ երկրիս,
եւ առ իս գայր ամենայն այր որոյ էր
հակառակութիւնն եւ գատաստան, եւ
5 առնէի նմա իրաւունս։ Եւ լինէր յոր-
ժամ մերձենայր առ նա այր երկիր պա-
զանել նմա, ձգէր զձեռն իւր եւ առ
ինքն մատուցանէր, եւ համբուրէր զնա։
6 Եւ առնէր Արիսողոմ ըստ բանիս բոլ
այսմիկ ամենայն Իսրայէլի եկելոց ի գա-
տաստան առ արքայ, եւ յանկուցանէր
յինքն Աբիսողոմ զսիրտս ամենայն ա-
նանց Իսրայէլի։
7 Եւ եղեւ ի կատարել [1]չորից ամաց,
ասէ Աբիսողոմ [2]ցնայր իւր՝, Երթայց եւ
հատուցից զուխտս իմ զոր ուխտեցի
8 Տեառն ի Քեբրոն. Զի ուխտիւք ուխ-
տեաց ծառայ քո մինչ էի ի Գեսուր յԱ-
սորիս. ասեմ, Եթէ դարձուցանելով
դարձուցէ զիս Տէր յԵրուսաղէմ, պաշ-
9 տելոց զՏէր։ Եւ ասէ ցնա արքայ,
Երթ խաղաղութեամբ. եւ յարուաւ գնաց
10 ի Քեբրոն։ Եւ առաքեաց Աբիսողոմ
պատուիրակս յամենայն ցեղս Իսրայէլի,
եւ ասէ, Ի լսել ձեր զձայն եղջեր փո-
ղոյ, ասասջիք եթէ Թագաւորեաց Աբ-
11 դաւոր Աբիսողոմ ի Քեբրոն։ Եւ ընդ Աբի-
սողոմայ գնացին արք երկերիւր [3]հրաւիր-
եալք, եւ երթային միամտութեամբ,
12 եւ ոչ դիտէին ամենեւին զդրացյան։ Եւ
առաքեաց Աբիսողոմ եւ կոչեաց զԱքի-
տոփէլ [4]Թեկուացի խորհրդակից Դաւթի
[5]ի քաղաք իւր ի Գովլա՝ ի գոնել իւրում
գզոհսն. եւ եղեւ [6]ժողով սաստիկ, եւ
ժողովուրդ բազում երթայր ընդ Աբի-
սողոմայ։
13 Եւ եհաս զուժկան առ Դաւթի եւ
ասէ, Եղեւ սիրտ արանց Իսրայէլի զինա
14 Աբիսողոմայ։ Եւ ասէ Դաւթի ցամե-
նայն ծառայս իւր որ ընդ նմա յերու-
սաղէմ, Արիք եւ փախիցուք. զի ոչ
դոյ մեզ փրկութիւն յերեսաց Աբիսո-
զոմայ. փութացարուք գնալ, զի մի
արագիցէ եւ հասանիցէ մեզ, եւ արկա-
նիցէ ի վերայ մեր չարիս, եւ հարկա-
15 նիցէ զքաղաքս սրով սուսերի։ Եւ ասէն
ծառայքն արքային գարքայ, Ըստ ամե-
նայնի զոր եւ կամիցի տէր մեր արքայ՝
ահաւասիկ կամք ծառայք քո։
16 Եւ ել արքայ եւ ամենայն տունն նորա
ի հետեւոտս. եւ եթող արքայ տասն կնայ
ի հարճից անտի իւրոց պահել զտունն։
17 Եւ ել արքայ եւ ամենայն ծառայք նորա
հետեւակք, եւ կացին [7]առ ձիմենուոյն
18 որ յանապատի անդ՝։ Եւ ամենայն ծա-
ռայք նորա մի ըստ միոջէ անցանէին
առ նովաւ, եւ ամենայն Քերեթիմն եւ
Փելեթիմն, եւ ամենայն Գեթացիք, վեց
հարեւր այր եկեալ հետեւակք ի Գեթայ,
19 անցանէին առաջի Դաւթի։ Եւ ասէ ար-
քայ ցԵթթի Գեթացի, Ընդէր գայցես եւ
դու ընդ մեզ. դարձիր անդրէն եւ բնակեա
ընդ արքային, զի այր օտար ես դու, եւ
[8]խոխանեցար ի տեղւոջէ քումմէ ի Գե-
20 թայ եւ եկիր՝, Եւ այսօր խոխոիցեմ
զքեզ գնալ ընդ մեզ. եւ ես երթայց յո
եւ երթալոց իցեմ, բայց դու դարձիր
եւ դարձո զեղբարս քո ընդ քեզ. եւ
[9]արասցէ ընդ քեզ Տէր՝ ողորմութիւն
21 եւ ճշմարտութիւն։ Պատասխանի ետ
Եթթի արքային եւ ասէ, Կենդանի է
Տէր, եւ կենդանի է տէր իմ արքայ, զի
ի տեղւոջ ուր տէր իմ արքայ իցէ, եւ
ի մահու եւ ի կեանս՝ անդ եղիցի եւ
22 ծառայ քո։ Եւ ասէ արքայ ցԵթթի, Եկ
անց [10]ընդ իս՝. եւ անց Եթթի Գեթացի,
եւ ամենայն ծառայք նորա եւ ամենայն
23 տղայոց նորա ընդ նմա։ Եւ ամենայն
երկիրն լայր մեծաձայն, եւ ամենայն զօրն
անցանէր [10]ընդ հեղեգսան կեդրոնի՝. անց եւ արքայ ընդ հեղեգսան կեդրոնի. եւ ամենայն զօրն անցին [11]եւ արքայ երթային՝ ընդ երեսս ճանապարհին անապատի։
24 Եւ ահա Սադովկ եւ ամենայն Ղեւ-
տացիք ընդ նմա, բարձին զտապանակ ուխտին [12]Տեառն ի Բեթարայ՝, եւ կա-
ցուցին զտապանակն Աստուծոյ. եւ ել
[13]ի Բեթարայ մինչեւ կատարեաց ամե-
նայն ժողովուրդն անցանել ի քաղաքէ
25 անտի։ Եւ ասէ արքայ ցԱդովկ, Դարձո
զտապանակ Աստուծոյ ի քաղաք, եւ
նստցի ի տեղւոջ իւրում. եթէ գտից
չնորհս առաջի Տեառն՝ դարձուսցէ զիս,
եւ ցուցցէ ինձ զդա եւ զվայելչութիւնն
26 դորա. Ապա թէ այսպէս ասասցէ ցիս

[1] ԵԲԸ. քառասուն [2] ԵԲԸ. ցորդայ [3] ԵԲԸ. ՚ՅԵՂԷՆ ՅՈՒԼԸ, յերուսաղեմէ [4] ԵԲԸ. Գեղնացի [5] ԵԲԸ. ի քաղաքէ իւրմէ ի Գեղնայ [6] ԵԲԸ. դաւն

[7] ԵԲԸ. ի Բեթժերչակ, ՚ՅԱՆԴ՝ ի հեռագոյն տան [8] ԵԲԸ. պանդխտեաց. գոլչէ ի տեղի քո։ (20) ԵԿԵԿ երեկ [9] ԵԲԸ. ընդ քեզ [10] ԵԲԸ. գ-ի-ս [11] ԵԲԸ. անցանէին [12] ԵԲԸ. Աստուծոյ [13] ԵԲԸ. Աբիաթար

թէ Ջեմ հաճեալ ընդ քեզ, ահաւասիկ
կամ, արասցէ ինձ որպէս հաճոյ լիցի
27 առաջի աչաց նորա։ Եւ ասէ արքայ
ցՍադովկ քահանայ, [1]Տեսէր, դի դու
զառնաս՝ խաղաղութեամբ ի քաղաք,
եւ Աբիաթառ որդի քո եւ Յովնաթան
որդի Աբիաթարայ՝ երկոքեան որդիք ձեր
28 ընդ ձեզ։ Եւ ահա ես բանակիցիմ [2]յԱ-
րաւովթ անապատին, մինչեւ եկեսցէ պատգամ
29 ի ձէնջ պատմել ինձ։ Եւ դարձուցին
Սադովկ եւ Աբիաթար զտապանակն
[3]Երուսաղէմ, եւ նստան՝ անդ։
30 Եւ Դաւիթ ելանէր ընդ զառ ի վերն
Ձիթենեացն, ելանէր եւ լայր, եւ գլուխ
իւր ծածկեալ. եւ ինքն երթայր բոկ.
եւ ամենայն ժողովուրդն ընդ նմա ձորձ
գլխով, այր իւրաքանչիւր երանէին եւ
31 լային։ Ազդ եղեւ Դաւիթ եւ ասեն,
Եւ Աքիտոփէլ ընդ ժողովեալսն առ Ա-
բիսողոմայ է։ Եւ ասէ Դաւիթ, Զրհա
զխորհուրդն Աքիտոփելայ, Տէր Ա-
32 տուած իմ։ Եւ եհաս Դաւիթ ի [4]Հոով-
ուր եզեալն երկիր Աստուծոյ. եւ ահա
ընդ առաջ նորա Քուսի Արաքացի [5]յա-
րեկամ Դաւիթ՝ պատառեալ զպատմուճա-
33 ճան իւր եւ հող ի գլուխ նորա։ Եւ ասէ
ցնա Դաւիթ, Եթէ անցանիցես ընդ իս՝
34 բեռն լինիս ինձ. Ապա թէ դարձցես ի
քաղաք, եւ ասասցես ցԱբիսողոմ, [5]Եմ է
Անդին եղբարք քո, եւ արքայ կամո-
զին էր զինի իմ, եւ անց հայր քո. եւ
արդ՝ ծառայ քո եմ, արքայ, [5]եւ ի հոգ
կացից առաջի քո.՝՝ ծառայ հօր քո էի
յայժմաւ, եւ արդ քո ծառայ եմ ես,
արքայ. եւ գրեսցես զինէն զխորհուրդն
35 Աքիտոփելայ։ Եւ ահա ընդ քեզ Սա-
դովկ եւ Աբիաթար քահանայք. եւ ե-
զիցի բան զոր լսիցես ի տանէ արքայի՝
պատմեսջիր Սադովկայ եւ Աբիաթարու
36 քահանայից։ Եւ ահա են ընդ նոսա եր-
կոքեան որդիք իւրեանց, Աքիմաաս
որդի Սադովկայ եւ Յովնաթան որդի
Աբիաթարայ. եւ առաքեսջիք ի ձեռն
նոցա առ իս զամենայն բան զոր եւ
37 լսիցէք։ Եւ եմուտ Քուսի բարեկամ
Դաւիթ ի քաղաքն. եւ Աբիսողոմ մտա-
նէր [6]ի քաղաքն։

Գ.Ի. ԺԶ

1 Եւ Դաւիթ անցեալ էր սակաւիկ մի
չափ [4]Հռովմ, եւ ահա Սիբա պատանի
Մեմփիբոսթեայ ընդ առաջ նորա, եւ
զոյգք իշոյ բեռնաւորաց, եւ ի նոսա
երկերիւր նկանակ եւ հարիւր [7]չամչեայ
եւ հարիւր արմաւ եւ մար՝ մի գինւոյ։
2 Եւ ասէ արքայ ցՍիբա, Զինչ է այդ
եւ ասէ Սիբա, Էշքդ [8]նստակաց արքայի,
եւ հացդ եւ արմաւդ՝ ի կերակուր ման-
կանցդ, եւ գինիդ՝ ըմպելի լբկոցդ յա-
3 նապատի ատա։ Եւ ասէ արքայ, Ո՞ւր
է որդի տեառն քո։ Եւ ասէ Սիբա ցար-
քայ, Ահա նստի յԵրուսաղէմ. զի ասէ,
Այսօր դարձուսցեն ինձ տունն Իսրայելի
4 զթագաւորութիւն հօր իմոյ։ Եւ ասէ
արքայ ցՍիբա, Ահա քեզ լիցի ամենայն
ինչ որ է Մեմփիբոսթեայ։ Երկիր եղաց
Սիբա եւ ասէ, Գտի չնորհս առաջի քո,
տէր իմ արքայ։
5 Եւ եկն արքայ Դաւիթ մինչեւ գԲա-
հուրիմ, եւ ահա ելանէր անտի այր
յազգականութենէ տանն Սաուղայ, եւ
անուն նորա Սեմէի որդի Գերեայ. ելա-
6 նելով ելանէր եւ անիծանէր. Եւ ձկէր
քարինս Դաւիթ եւ ամենեցուն որոց
ընդ արքայի Դաւիթ. եւ ամենայն ժո-
ղովուրդն եւ ամենայն զօրաւորք էին
7 ընդ ամմէ եւ ընդ ահեկէ արքայի։ Եւ
այսպէս ասէր Սեմէի յանիծանելն դնա,
ել, ել, այր արեանց եւ այր անօրէն.
8 Դարձոյց ի քեզ Տէր զամենայն արիւնս
տանն Սաուղայ, զի թագաւորեցեր
փոխանակ նորա. եւ ետ Տէր [9]զթագա-
ւորութիւնն քո՝՝ ի ձեռս Աբիսողոմայ
որդւոյ քո. [10]եղոյց քեզ զչարիս քո՝՝,
9 զի այր արեանց ես դու։ Եւ ասէ Աբեսո-
սա որդի Շարուհեայ ցԴաւիթ, Ընդէր
անիծանէ արդեաւս չուն մի մեռեալ զաղ
իմ զարքայ. անցից եւ առից զգլուխ
10 նորա։ Եւ ասէ արքայ, Զի կայ իմ եւ
ձեր, որդիք Շարուհեայ. Թող առնէ,
թող անիծանէ այնպէս. զի Տէր ասաց
նմա անիծանել զԴաւիթ. եւ ո՞վ ասասցէ
11 թէ Ընդէր արարեր այսպէս։ Եւ ասէ
Դաւիթ ցԱբեսոսա եւ ցամենայն ծառայս
իւր, Ահաւասիկ որդի իմ որ ելիցէ է

---

[1] Եբր. Ո՞չ ապաքէն տեսանող ես դու, դարձ
[2] Եբր. յանցս, կամ, ի դաշտս [3] Եբր. Ասուծոյ
յԵրուսաղէմ, եւ նստան [4] Եբր. Փազաթէն
[5] Յոբ. դ։ե։ [6] Եբր. յԵրուսաղէմ
[7] Եբր. ողկոյզ չամչոյ, և հարեւր պատղ ամառա-
յին եւ տիկ [8] Եբր. տանն արքայի ի հեծանելն
եւ հացդ եւ պատղք [9] Եբր. զթագաւորու-
թիւնն [10] Եբր. եւ՝ ահա դու ի չարի քումմ

յորովայնէ իմմէ՝ խնդրէ զանձն իմ, մրճ-
չաի եւս որպէս Յեմինայ. Թոյլ տուր
նմա եւ անիծցէ, զի Տէր ասաց նմա։
42 Թերեւս տեսցէ Տէր զառաւսպանս իմ,
եւ հատուսցէ ինձ բարիս փոխանակ
43 անիծիդ նորա յաւուր յայսմիկ։ Եւ Ե-
ղիայր Դաւիթ եւ ասէն որ ընդ նմա
զճանապարհն, եւ Սեմէի երթայր մօտ
առ նա ընդ կողաց լերինն, երթայր եւ
անիծանէր, եւ քարինս ի կողմանէ նո-
րա ընկենոյր, եւ հող ցանէր ի վերայ։
44 Եւ եկն արքայ եւ ամենայն զօրն որ ընդ
նմա աչխատեալք, եւ հանգեան անդ։
45 Եւ Աբիսողոմ եւ ամենայն Իսրայէլ
մարդն յերուսաղէմ, եւ Աքիտոփէլ ընդ
46 նմա։ Եւ եղեւ իբրեւ եկն Քուսի Արա-
քացի բարեկամ Դաւթի առ Աբիսողոմ,
եւ ասէ Քուսի ցԱբիսողոմ, կեցցէ
47 արքայ[1]։ Եւ ասէ Աբիսողոմ ցՔուսի,
Այդ գութ էր քո ընդ բարեկամին քում.
ընդէ՞ր ոչ չոգար ընդ բարեկամին քում։
48 Եւ ասէ Քուսի ցԱբիսողոմ, Ոչ այդպէս
է, այլ զնա այնորիկ զոր ընտրեաց
Տէր եւ ժողովուրդս այս եւ ամենայն
այր Իսրայէլի՝ երթայց, եւ նորա եղէց
49 եւ ընդ նմա նստայց։ Եւ երկրորդ անգ-
ամ՝ ահա ծառայիցեմ ես, ոչ ապաքէն
առաջի որդւոյ նորա. որպէս ծառայեցի
առաջի հօր քո, նոյնպէս եղէց առա-
ջի քո։
50 Եւ ասէ Աբիսողոմ ցԱքիտոփէլ, Ա-
ռէք խորհուրդ ի մէջ թէ զինչ գործես-
51 ցուք։ Եւ ասէ Աքիտոփէլ ցԱբիսողոմ,
Մուտ առ հարճս հօր քո զոր եթող պահ
զաւնն իւր, եւ լսիցէ ամենայն
Իսրայէլ թէ յամօթ արարեր զհայր քո.
եւ զօրացին ձեռք ամենեցուն որք են
52 ընդ քեզ։ Եւ հարին վրան Աբիսողոմայ
ի առնիս, եւ եմուտ Աբիսողոմ առ հարճս
53 հօր իւրոյ յանդիման ամենայն Իսրայէ-
լի։ Եւ խորհուրդ Աքիտոփէլայ զոր խոր-
հէր յաւուրսն[2] առաջինս, որպէս թէ
հարցանիցէ ոք բան յԱստուծոյ, այնպէս
էր ամենայն խորհուրդն Աքիտոփէլայ
եւ առ Դաւիթ եւ առ Աբիսողոմայ։

Գլ. ԺԷ

1 Եւ ասէ Աքիտոփէլ ցԱբիսողոմ, Ընտ-
րեցից ինձ երկոտասան հազար արանց,
եւ յարեայց եւ պնդեցայց զհետ Դաւթի
2 գայգոյ, եւ հասից ի վերայ նորա [3]զցայգ-
եւ նա աչխատեալ է եւ լքեալ ձեռօք,
եւ զարհուրեցուցից զնա, եւ փախիցէ
զօրն որ ընդ նմա. եւ [4]սպանից զարքայ
3 միայն։ Եւ գարձուցից զամենայն զօրն
առ քեզ, [5]զոր օրինակ գառնայցէ հարսն
առ այր իւր. քայց միայն զանձն միոյ
առն խնդրեսցես", եւ ամենայն զօրն եւ
4 դիցի ի խաղաղութիւն։ Եւ ուղիղ թուե-
ցաւ բանն առաջի Աբիսողոմայ եւ ա-
ռաջի ամենայն ծերոցն Իսրայէլի։
5 Եւ ասէ Աբիսողոմ, կոչեցէք զՔուսի
Արաքացի, եւ լսեցուք թէ զինչ կայ-
6 ցէ ի բերան նորա։ Եւ եմուտ Քուսի առ
Աբիսողոմ, եւ խօսեցաւ Աբիսողոմ ընդ
նմա ըստ բանին այնորիկ զոր խօսեցաւ
Աքիտոփէլ. եւ ասէ, Թէ Արասցո՞ւք ըստ
բանի նորա, ասա թէ ոչ, եւ դու խօ-
7 սեայ յինչ։ Եւ ասէ Քուսի ցԱբիսողոմ,
Ոչ է բարւոք խորհուրդն զոր խորհեցաւ
8 Աքիտոփէլ այս անգամ։ Եւ ասէ Քու-
սի, Դու ինքնին գիտես զհայր քո եւ
զարս նորա, զի կարի զօրաւորք են յոյժ,
եւ զառնացեալք ոգւով իբրեւ զարջ մի
որ կիսատոր ի վայրի [3]եւ զայրացեալ ի
գաշտի". եւ հայր քո այր պատերազմող,
9 եւ ոչ [6]առայ գալ" զօրուն. Եւ ահա ինքն
զգոգեալ իցէ ի միում [7]ի բլրոց կամ ի
միում ուրեք ի անկանց. եւ եղիցի յան-
կանել [8]ի վերայ նոցա զաւազինն հար-
կանիցէ", եւ լսիցէ որ լսիցէ, եւ ասիցէ
թէ եղեւ խորտակումն ժողովրդեանն
10 որ գկնի Աբիսողոմայ։ Քանզի եւ նա
այր զօրաւոր կան է, որոյ սիրտն իբրեւ
զսիրտ առիւծու, հաչելով հաչիցի. զի
գիտէ ամենայն Իսրայէլ թէ զօրաւոր է
հայր քո, եւ որդիք զօրութեան որ ընդ
11 նմայն են։ Եւ այսպէս առաջ քեզ խրատ.
ժողովելով ժողովեսցի ամենայն այր Իս-
րայէլի ի Դանայ մինչեւ ցԲերսաբէէ իբ-
րեւ զաւազ առ ափն ծովու բազմութեամբ,
12 եւ քո երեսք երթիցեն ի մէջ նոցա։ Եւ
հասցուք ի վերայ նորա ի միում ի տե-
ղեացն ուր եւ գտանիցեմք գնա անդ. եւ
պատեսցուք գնովաւ, որպէս իջանիցէ
ցօղ ի վերայ երկրի, եւ ոչ ապրեսցուս-
13 ցուք [9]գնորա եւ ոչ զոք։ Ապա թէ ի

[1] ՅԲԲ։ յԱբիսողոմ, կեցցէ արքայ [2] ՅԲԲ։ յայնոսիկ
[3] ՅԱԲԲ։ ոչ ։ [4] ՅԲԲ։ Հարից [5] ՅԲԲ։ իբրեւ զգառնայ ամենեցուն է այրն զոր դու խնդրես
[6] ՅԲԲ։ ագանի ընդ առաջինն [7] ՅԲԲ։ ի խորոց [8] ՅԲԲ։ ի զնա եւ յամենայն արանց որ ընդ նմա

քաղաք մտանիցէք, առջէ ամենայն Իսրայէլ քաղաքին այնմիկ պարանս, եւ քարչեացուք [1]զնոսա մինչեւ ցհեղեղատան.
14 զի մի մնասցէ անդ եւ մի մի քար: Եւ ասէ Աբիսողոմ եւ ամենայն այր Իսրայելի, Քաջ է խորհուրդ Քուսեայ Աբաքացւոյ քան զխորհուրդ Աքիտոփելայ: Եւ Տէր եաս հրամայեաց զրկել զքաջ խորհուրդն Աքիտոփելայ, զի տացէ Տէր ի վերայ Աբիսողոմայ զամենայն չարիսն:
15 Եւ ասէ Քաւսի Արաքացի ցՍադովկ եւ ցԱբիաթար քահանայս, Զայս ինչ եւ զայս խրատ ետ Աքիտոփէլ Աբիսողոմայ եւ Ծերոց Իսրայելի, եւ զայս ինչ
16 եւ զայս ես [2]խորհեցայ. Եւ արդ առաքեցէք վազվազակի եւ պատմեցէք Դաւթի եւ ասացէք, Մի ագանիցես զայս գիշեր [3]յԱրաւովթի անապատին, այլ փութով անցանել, գուցէ կլանիցէ զարքայ եւ զամենայն ժողովուրդն որ ընդ
17 նմա: Եւ Յովնաթան եւ Աքիմաաս կային առ աղբերն Ռովգելայ, եւ չոպաւ աղախին մի եւ պատմեաց նոցա, եւ նոքա գնացին եւ պատմեցին զայս արքայի Դաւթի. զի ոչ կարէին մտանել
18 երեւել ի քաղաքին: Եւ եաս գնոսա պատանեակ մի, եւ պատմեաց Աբիսողոմայ. եւ չոպան երկոքեան[5], եւ մտին ի տունն ումն ի Բաւուրիմ, եւ նորա էր գուբ մի [5]ի տան, եւ մտին անդր:
19 Եւ ած կինն եւ [6]կափեաց զխուփն" ի վերայ պրին, եւ ցամաքեցուցանէր ի վերայ նորա [7]արտորվի. եւ ոչ ել բանն ի
20 վեր: Եւ եկին ծառայքն Աբիսողոմայ առ կինն ի տունն անդր, եւ ասեն, Ո՞ւր են Աքիմաաս եւ Յովնաթան: Եւ ասէ կինն ցնոսա, Անցին յայնկոյս ջրոյդ: Եւ նոքա խնդրեցին զնոսա եւ ոչ գտին,
21 եւ գարձան յԵրուսաղէմ: Եւ եղեւ յետ գնալոյն նոցա, ելին ի պրէն եւ չոպան պատմեցին սպրտալի Դաւթի, եւ ասեն ցԴաւիթ, Արիր եւ անցէք[8] բան չարդ զի զայս ինչ եւ զայս խորհեցաւ վասն
22 ձեր Աքիտոփէլ: Եւ յարեաւ Դաւիթ եւ ամենայն ժողովուրդն որ ընդ նմա, եւ անցին ընդ Յորդանան մինչեւ ի լուսանալ առաւօտուն, մինչեւ ոչ մնացոյ եւ
23 ոչ մի ուրուք որ ոչ անց ընդ Յորդան: Եւ նան: Եւ Աքիտոփէլ լրեւ եաս եթէ ոչ եղեւ խորհուրդն նորա, հանդերձեաց էէշ իւր եւ յարեաւ գնաց ի տուն իւր ի քաղաք, եւ հրաման եաս տան իւրում, եւ խեղդ արկ եւ մեռաւ, եւ թաղեցաւ ի գերեզմանի հօր իւրոյ:
24 Եւ Դաւիթ եկաս [9]ի Բանակս. եւ Աբիսողոմ անց ընդ Յորդանան ինքն եւ
25 ամենայն Իսրայէլ ընդ նմա: Եւ զԱմեսսայի կացոյց Աբիսողոմ փոխանակ Յովաբայ ի վերայ զօրուն. եւ Ամեսսայի որդի էր ասն որում անուն էր Յեթր [10]Յեզրայելացի. Նա եմուտ առ Աբիգեա դուստր Յեսսեայ՝ քոյր Շարուհեայ մօր
26 Յովաբայ: Եւ բանակեցաւ Աբիսողոմ եւ ամենայն Իսրայէլ յերկրին Գաղաադացւոյ:
27 Եւ եղեւ լրեւ եկաս Դաւիթ [9]ի Բանակն, Վեսբի որդի Նաասայ յԱբարբայ որդւոյն Ամմնայ եւ Մաքիր որդի Ամիելի ի Լադաբարայ, եւ Բերզելի Գաաադացի յՈդողելիմայ, Բերին անկողինս
28 [11]տան, եւ [12]օխոցս եւ ամանս ստեայ", եւ անօխս բրաւ, եւ ցորեան եւ գարի եւ ալեւր եւ փոխինդ եւ ոլոռն եւ ոսպն[13]
29 Եւ մեղր եւ կողի եւ սպտուճեակս եւ [14]որիս գիեցիս", եւ մատուցին Դաւթի եւ զօրուն որ ընդ նմա՝ ուտել. [15]զի էր զօրն քաղցեալ" եւ ծարաւի եւ լքեալ յանապատի անդ:

ԳԼ. ԺԸ

1 Եւ հանդէս արար Դաւիթ զօրուն որ ընդ նմա, եւ կացոյց ի վերայ նոցա հազարապետս եւ հարիւրապետս:
2 Եւ առաքեաց Դաւիթ զերիր մասն զօրուն ի ձեռն Յովաբայ, եւ զերիր մասն ի ձեռն Աբիսողոմ որդւոյ Շարուհեայ՝ եղբօր Յովաբայ, եւ զերիր մասն ի ձեռն Եթթեայ Գեթթացւոյ. եւ ասէ Դաւիթ զգօրն, Ես
3 յանելով ելից եւ ես ընդ ձեզ: Եւ ասեն, Ոչ երթաս. զի եթէ փախչիցիմբք, ոչ զիցեն ի վերայ մեր զսիրտ. եւ եթէ կիսոյ կէս ի մէնջ մեռանիցիմբք, ոչ զիցեն ի վերայ մեր զսիրտ. զի դու իրրեւ զտասան հազար ի մէնջ ես. եւ արդ լաւ է թէ զա ի քաղաքն իցես, զի լինիցիս մեզ
4 հզօրակատարութիւն: Եւ ասէ գնոսա արքայ, Որ ինչ հաճոյ իցէ առաջի ձեր ա-

[1]ԵՔԲ· զնա [2]ԵՔԲ· եառ խրատ [3]ԵՔԲ· ի դաշտս [4]ԵՔԲ·ԵՑԵ յա-ե-լը-, շտապաւ [5]ԵՔԲ· ի գուբն [6]ԵՔԲ· տարածեաց ծածկոյթ [7]ԵՔԲ· ցորեան ծեծեալ(ձաւար) [8]ԵՔԲ·ԵՑԵ յա-ե-լը-, փութով [9]ԵՔԲ· ի Մանայիմ [10]ԵՔԲ· Իսրայելացի [11]ՅԵՔԲ· պղ-ե [12]ԵՔԲ· կանքս [13]ԵՔԲ·ԵՑԵ յա-ե-լը-, եւ սիսեռն [14]ԵՔԲ· պանիր կովու [15]ԵՔԲ· զի առացին Քաղցեալ իցէ զօրն

բարից . եւ եկաց արքայ յեց առ դրանն , եւ ամենայն զօրն ելանէր ըստ հարիւ-
5 րաւորաց եւ ըստ հազարաւորաց : Եւ պատուէր եառ արքայ Յովաբայ եւ Աբեսա-
սայ եւ Եթթէայ եւ ասէ , Ինայեսջիք [1]ի պատանեակին իմ" Աբիսողոմ . եւ ամե-
նայն զօրն լուաւ ի պատուիրելն արքայի ամենայն իշխանացն վասն Աբիսողոմայ :
6 Եւ էլ [2]ամենայն զօրն յանտառն" ընդ-
դէմ Իսրայելի , եւ եղեւ կռիւ յանտա-
7 ռին Եփրեմայ : Եւ պատեցաւ անդ զօրն Իսրայելի առաջի ծառայիցն Դաւթի . եւ
եղեւ խորտակումն մեծ յաւուր յայնմիկ ,
8 եւ անկան քան հազար արանց : Եւ ե-
ղեւ անդ պատերազմին ցրուեալ ընդ ա-
մենայն երեսս երկրին . եւ յաճախեաց անտառն ուտել ի զօրուէն քան զորս ե-
կեր սուրն ի զօրուէն յաւուրն յայնմիկ :
9 Եւ դիպեցաւ Աբիսողոմ առաջի ծառա-
յիցն Դաւթի . եւ Աբիսողոմ էր հեծեալ ի ջորւոջ [3]իւրում , եւ եհաս ջորին ընդ
մաս կաղնեաւ մեծաւ , եւ պատեցաւ ղլուխ նորա ընդ կաղնեացն , եւ կախե-
ցաւ ընդ երկինս եւ ընդ երկիր , եւ ջո-
10 րին անց ի ներքոյ նորա : Եւ եաես այր մի եւ պատմեաց Յովաբայ եւ ասէ , Ա-
հա տեսի զԱբիսողոմ կախեալ կկաղն-
11 ուն : Եւ ասէ Յովաբ ցայն որ պատ-
մեաց նմա , Եւ արդ տեսեր եւ ընդէ՞ր ոչ հարեր զնա ընդ գետին , եւ ես տայի քեզ [4]այսր չափոյ արծաթոյ եւ
12 տաւար" մի : Եւ ասէ այրն ցՅովաբ , Եւ եթէ կշռեալ իցէ առնուի [5]ի ձեռաց քոց" հազար սիկղ արծաթոյ , ոչ ձգէի զձեռն իմ յորդի արքայի . զի յականջս մեր պա-
13 տուիրեաց արքայ քեզ եւ Աբեսասայ եւ Եթթէայ , եւ ասէ , Զգուշ լինիջիք պա-
տանեկին Աբիսողոմայ , [6]Մի՛ ինչ վնաս առնիցէ անձին նորա" . եւ ամենայն քան ոչ թաքչիցէ յարքայէ , եւ դու [7]կայցես
14 ի բացակայ : Եւ ասէ Յովաբ , Վասն այդորիկ իսկ անդրէք առաջի քո" . եւ առ Յովաբ երիս նետս ի ձեռին իւրում , եւ
եհար զնոսա ի սրտի Աբիսողոմայ մինչ-
15 զեւ կենդանի կայր ի կաղնւոջն : Եւ պա-
տեցան տասն մանուկ ի դինակիրացն Յո-

[1] ՆԲԳ. ինձ ի պատանեակն [2] ՆԲԳ. զօրն ի ճակատ
[3] ՅԸՆ. գ-ի-ւ-ե [4] ՆԲԳ. տասն սիկղ արծաթոյ եւ կամար [5] ՆԲԳ. ի ձեռս իմ [6] ՆԲԳ. Ապա թէ ոչ արարեալ էր իմ ննդգութիւն ընդ-
դէմ անձին իմոյ [7] ՆԲԳ. կայիր հակառակ ինձ : (14) Եւ ասէ Յովաբ, Ոչ այդպէս ժամա-
վաճառ եղէց առաջի քո

վարայ , եւ հարին զԱբիսողոմ եւ սպա-
16 նին զնա : Եւ եհար Յովաբ զիւղն [3]եղ-
կերեայ , եւ դարձաւ զօրն [8]որ ընդ նմա , զի մի երթիցեն զհետ Իսրայելի . զի
17 խնայեաց Յովաբ ի զօրն : Եւ առ Յո-
վաբ զԱբիսողոմ , եւ ընկեց" զնա ի վիհ մեծ յանտառին , [9]ի խորին յոյժ . եւ ամե-
նայն Իսրայել փախեաւ այր իւրաքան-
չիւր ի բնակութիւն իւր :
18 Բայց Աբիսողոմ մինչդեռ կենդանի էր կանգնեաց իւր արձան , [10]եւ կանգ-
նեաց ի Յարին դարձանս ի հովիտս թա-
գաւորաց" . քանզի ասաց թէ չիք [11]իւր որդի որ յիշեցէ զանուն [11]նորա . եւ կո-
չեաց զարձանն յիւր անուն , եւ [12]կոչեաց զնա" ձեռն Աբիսողոմայ մինչեւ ցայսօր :
19 Եւ Աքիմաաս որդի Սադովկայ ասէ , Ընթացայց սարսցայ աւետիս արքայի , զի արար նմա Տէր իրաւունս ի ձեռաց
20 թշնամեաց իւրոց : Եւ ասէ ցնա Յովաբ , Ոչ ես գու այր աւետեաց յաւուր յայս-
միկ , եւ տացես աւետիս յայլում աւ-
ուր . բայց յաւուր յայսմիկ մի տացես աւետիս , քանզի որդի արքայի մեռաւ :
21 Եւ [13]ասէ ցԲուսի , երթ պատմեա զա-
քայի զոր ինչ տեսեր . եւ երկիր եպագ
22 Բուսի Յովաբայ եւ [14]ել : Եւ յաւել եւս Աքիմաաս որդի Սադովկայ եւ ասէ ցՅո-
վաբ , Եւ ո՞չ լինիցի եթէ ընթանայց-
ցեմ եւ ես զհետ Բուսեայ : Եւ ասէ Յո-
վաբ , Եւ ընդէ՞ր իցէ քեզ այն եթէ ընթանայցես , որդեակ իմ . [3]այսր եկ," ոչ ինչ են քեզ աւետիքն յօգուտ երթալոյ :
23 Եւ ասէ Աքիմաաս , Զի՛ է եթէ ընթա-
նայցեմ . եւ ասէ ցնա Յովաբ , Ընթա-
ցիր . եւ ընթացաւ Աքիմաաս ընդ ճանապարհն
24 [15]կաքաւայ եւ անց զԲուսեաւ : Եւ Դա-
ւիթ նստէր ի մէջ երկոցունց դրանցն . եւ գնաց դէպ ի տանիս դրանն ի պա-
րիսպն , ամբարձ զաչս իւր եւ եաես , եւ
ահա այր ընթանայր միայն [3]հանդէպ իւր" :
25 Եւ աղաղակեաց դէպն եւ աղդ արար արքայի . եւ ասէ արքայ , Եթէ միայն
է , աւետիք են ի բերան նորա . եւ գա-
26 լով գայր եւ մերձենայր : Եւ եաես դէպն մեւս եւս այր ընթացեալ , եւ աղաղա-
կեաց դէպն ի դուռն եւ ասէ , Ահա մեւս

[8] ՆԲԳ. ի հալածելոյ զԻսրայէլ . զի արգել Յովաբ զզօրն : (17) Եւ առին զԱբիսողոմ եւ ընկեցին
[9] ՆԲԳ. եւ կուտեցին ի վերայ նորա կարկաւ քա-
րանց մեծ [10] ՆԲԳ. ի Հովտին արքունի [11] ՆԲԳ. իմ [12] ՆԲԳ. կոչեցաւ այն [13] ՆԲԳ. ասէ Յովաբ [14] ՆԲԳ. ընթացաւ [15] ՆԲԳ. դաշտին

եւս այր ընթանայ միայն, եւ ասէ ար-
27 քայ, Եւ նա աւետաւոր է, եւ ասէ դէան,
Տեսանեմ զընթացս առաջնոյն իբրեւ
զընթացս Աքիմաասայ որդւոյ Սադովկայ,
եւ ասէ արքայ, Այր բարի է նա, եւ
28 բարի աւետաւօք դայ։ Եւ աղաղակեաց
Աքիմաաս եւ ասէ ցարքայ, Ողջոյն է.
եւ երկիր եպագ ի վերայ երեսաց իւրոց
ցերկիր եւ ասէ, Օրհնեալ է Տէր Աստուած
քո, որ փակեաց զարս[1] ասելիս քո՝ որ ամ-
բարձին զձեռս իւրեանց ի վերայ տեառն
29 մերոյ արքային, եւ ասէ արքայ, եթէ Ող-
ջո՞յն իցէ մանկանն [1]Իմոյ Աբիսողոմայ։
Եւ ասէ Աքիմաաս, Տեսի խուճապ մեծ [2]ու-
ղարկել առաքեացն Յովաբ զծառայ քո, զե-
քայ,՝՝ զիս ղծառայ քո, եւ ոչ գիտայի
30 թէ ինչ իցէ անդ։ Եւ ասէ արքայ, դարձ-
ձիր եւ արձանացիր. եւ դարձաւ եւ կա-
31 ցաւ։ Եւ եհաս Քուսի եւ ասէ [1]ցարքայ,
Աւետիք տեառն իմոյ արքային. զի արար
քեզ Տէր իրաւունս այսօր ի ձեռաց ա-
32 մենայն յարուցելոց ի վերայ քո։ Եւ ա-
սէ արքայ ցՔուսի, եթէ Ողջո՞յն իցէ
մանկանն [1]իմոյ Աբիսողոմայ։ Եւ ասէ
Քուսի, Եղիցին իրեւ զմանուկն թշնա-
միք տեառն իմոյ արքային, եւ ամենայն
յարուցեալք ի վերայ քո ի չարս թիւն։
33 Եւ խռովեցաւ արքայ եւ ել ի վերնա-
սունն դրանն եւ լացաւ. եւ այսպէս ասէր
[3]ի յել իւրում, Որդեակ իմ Աբիսողոմ,[4]
Աբիսողոմ որդեակ իմ, ո՛ տայր զմահ
իմ փոխանակ քո. [1]ես փոխանակ քո,՝՝
Աբիսողոմ որդեակ իմ, որդեակ իմ [1]Ա-
բիսողոմ։

Գ԰Լ. ԺԹ

1 Եւ պատմեցաւ Յովաբայ եւ ասեն, Ա-
հաւասիկ արքայ լայ եւ ողայ ի վերայ Ա-
2 բիսողոմայ։ Եւ եղեւ փրկութիւնն յա-
ւուր յայնմիկ ի ծուղ ամենայն զօրուն.
զի լուաւ զօրն յաւուր յայնմիկ, ասեն
թէ Տրտմեցաւ արքայ վասն որդւոյն իւ-
3 րոյ։ Եւ խորչէր զօրն յաւուր յայնմիկ
մտանել ի քաղաքն, որպէս խորշիցի զօր
ամաչելով յորժամ փախչիցի ի պատե-
4 րազմէ։ Եւ արքայ ծածկեաց զերեսս
իւր, եւ կոչեաց բարձ ի ձայն մեծ եւ
ասէ, Որդեակ իմ Աբիսողոմ, Աբիսո-
ղոմ որդեակ իմ։
5 Եւ եմուտ Յովաբ առ արքայ ի տունն եւ

[1] Ցերէ· գ-կ--ե [2] Ելեր· յառաքեն Յովաբայ զծա-
ռայն արքային, եւ [3] Ելեր· ի գնալ [4] Ելեր·յեղեկն
յ--եը--, որդեակ իմ

ասէ, Ամօթ արարեր այսօր զերեսս ա-
մենայն ծառայից քոց, որ ապրեցուցին
զքեզ այսօր, եւ զանձինս ուստերայ եւ
դստերայ քոց, եւ զանձինս կանանց եւ
6 զհարճից քոց. Սիրել զատելիս քո եւ ա-
տել զսիրելիս քո. եւ ուսուցեր այսօր
եթէ ոչ ինչ համարիս զիշխանս քո եւ
ոչ զծառայս քո. եւ ատուգիտ զիտեմ
այսօր, զի եթէ Աբիսողոմ կենդանի էր,
մեք ամենեքեան մեռեալ էաք, եւ այն
7 էր քեզ հաճոյ։ Եւ արդ յարուցեալ ել
եւ խօսեայ ի սիրտս ծառայից քոց. զի
ի Տէր երգուեալ, եթէ ոչ ելանիցես այ-
սօր, եթէ ազանիցի առ քեզ այր մի
զգիշերս գայս. եւ գիտասցիր յանձն քո,
թէ չար լինիցի քեզ այն քան զամենայն
չարիս որ եկին ի վերայ քո ի մանկու-
8 թենէ քումմէ մինչեւ ցայժմ։ Եւ յարեաւ
արքայ եւ նստաւ ի դրանն. եւ ամե-
նայն զօրուն պատմեցին եւ ասեն, Ահա
արքայ նստի առ դրանն, եւ եմուտ ա-
մենայն զօրն առաջի արքային. եւ Իս-
րայէլ փախեաւ այր իւրաքանչիւր ի
բնակութիւն իւր։
9 Եւ ամենայն ժողովուրդն լսէր յա-
մենայն ցեղսն Իսրայէլի. եւ ասէին, Արքայ
[1]Դաւիթ փրկեաց զմեզ յամենայն թշնամ-
նայ մերոյ, եւ նա ապրեցոյց զմեզ ի
ձեռաց այլազգեաց. եւ արդ փախաւական
է յերկրէս եւ ի խաղաւորութենէ իւրմէ
10 յԱբիսողոմայ. Եւ Աբիսողոմ զոր օծաք
մեզ՝ մեռաւ ի պատերազմի. եւ արդ զե՞
լանել կայք ի դարձուցանելոյ զարքայ։
11 [1]Եւ պատգամ ամենայն Իսրայէլի եկն
առ արքայ,՝՝ եւ արքայ Դաւիթ առաք-
նայ առ Սադովկ եւ Աբիաթար քահա-
նայս եւ ասէ, Խօսեցարուք ընդ ծերս
Յուդայ եւ ասացէք. Ընդէ՞ր լինիք ե-
տինք զարձուցանել զարքայ ի տունն իւր.
եւ պատգամ ամենայն Իսրայէլի եկն
12 առ [5]արքայ։ Եւ ասէ Դաւիթ ցղեղն
Յուդայ՝՝, Ազգարբ իմ եւ մարմինք իմ
դուք՝ ընդէ՞ր լինիք ետինք զարձուցա-
13 նել զարքայ ի տունն իւր։ Եւ ցԱմեսայի
ասացէք, Ո՞չ ոսկր իմ եւ մարմին իմ
ես դու. եւ արդ ա՛ն եւ ա՛ն արասցէ ինձ
Աստուած եւ ա՛ն եւ ա՛ն յաւելցէ, եթէ
ոչ իշխան զօրուն լինիցիս առաջի իմ
զամենայն աւուրս փոխանակ Յովաբայ։
14 Եւ զարձոյց զսիրտ ամենայն Յուդայ
իբրեւ զառն միոջ, եւ առաքեցին առ

[5] Ելեր· արքայ, ի տունն նորա (12)Ազգարբ իմ դուք

արքայ եւ ասէն , Դարձիր դու եւ ամի-
15 նայն ծառայք քո ։ Եւ գարձաւ արքայ
եւ եկն մինչեւ ցՅորդանան . եւ արք
Յուդայ եկին ի Գաղգաղա՝ երթալ ընդ
առաջ արքային , եւ անցուցանել զար-
քայ ընդ Յորդանան ։
16 Եւ աճապարեաց Սեմէի որդի Գերեայ
որդւոյ Յեմինեայ ի Բաւուրիմայ , եւ էջ
ընդ առն Յուդայ ընդ առաջ արքային
17 Դաւթի , եւ հազար այր ընդ նմա ի Բե-
նիամինէ , եւ Սիբա պատանի տանն Սա-
ուղայ , եւ հնգետասանկերին որդիք նո-
ա ընդ նմա , եւ քսանեքին ծառայք
նորա ընդ նմա , եւ [1]կազմեցին զՅոր-
18 դանան առաջի արքային։ Եւ [2]հարին սալա-
սաւորութիւն անցուցանելոյ զարքայ. եւ
անդին անցաւորք զարթուցանել՝ զառնն
արքային , եւ առնել [3]զողորմութիւն ա-
ռաջի աչաց նորա . եւ Սեմէի որդի Գեր-
եայ անկաւ ի վերայ երեսաց իւրոց ա-
ռաջի արքային՝ մինչ անցանէր ընդ Յոր-
19 դանան , եւ ասէ ցարքայ , Մի համա-
րեսցի տէր իմ արքայ անօրէնութիւն ,
եւ մի յիշեսցէ զոր [4]ինչ յանցեաւ ծա-
ռայ քո յաւուր յորում ելանէր տէր իմ
20 արքայ ի սրտի իւ-
րում . Զի գիտայ ծառայ քո թէ մեղայ.
եւ անաւասիկ ես եկի այսօր յառաջա-
գոյն քան զամենայն տունն Յովսեփայ,
իջանել ընդ առաջ տեառն իմոյ արքային։
21 Եւ պատասխանի եւս Աբիսա որդի Շա-
րուհեայ եւ ասէ , Միթէ փոխանակ այ-
նորիկ [5]ոչ մեռանիցէ Սեմէի , զի անէծ
22 զօծեալ Տեառն ։ Եւ ասէ Դաւթի , Զի
կայ իմ եւ ձեր , որդիք Շարուհեայ, զի
լինիք գոք լինէ այսօր ի դատաստանու-
թիւն . [6]մի ոք մեռցի՞ այսօր այր յԻսրա-
յէլէ . միթէ [7]ոչ գիտեմ եւս , զի այսօր
23 թագաւորեմ ես ի վերայ Իսրայէլի ։ Եւ
ասէ արքայ ցՍեմէի , Ոչ մեռցիս . եւ
երդուաւ նմա արքայ ։
24 Եւ Մեմփիբոսթէ որդի [8]Յովնաթանու
որդւոյ՝ Սաուղայ էջ ընդ առաջ ար-
քային . եւ ոչ էր գարմանեալ զոտս իւր,
[9]եւ ոչ էր հատեալ զեղունգունս իւր,՝ եւ
ոչ էր փարրեալ զմօրուս իւր , [10]եւ ոչ էր
արարեալ զրնչօք իւրովք,՝ եւ ոչ էր
լուացեալ զհանդերձս իւր , յորէ յորմէ
հետէ գնաց արքայ մինչեւ ցօրն յորում
25 եկն նա խաղաղութեամբ ։ Եւ եղեւ իւ-

[1] ԵՔԵ. անցին [2] ԵՔԵ. անց նաւակ անցուցանել
[3] ԵՔԵ. զբարին [4] ԵՔԵ. մեռցի՞ [5] ՅՅԵՔԵ. գոլոռ

րեւ եհռաս յերուսաղէմ, ել ընդ առաջ
արքային . եւ ասէ ցնա արքայ , Զի է
զի ոչ գնացեր ընդ իս , Մեմփիբոսթէ ։
26 Եւ ասէ ցնա Մեմփիբոսթէ , Տէր իմ
արքայ , ծառայ իմ [6]արհամարհեաց զիս ,
զի ասաց ծառայ քո [7]ցնա թէ կազմեա՝
ինձ էշ եւ հեծայց ի նա եւ գնացից ընդ
27 արքային . զի կաղ է ծառայ քո ։ Եւ
[8]զպարացոյց ընդ իս ծառայ քո զքեզ տէր
իմ արքայ . եւ տէր իմ արքայ արար
զբարին իւր առաջի իւր՝ իբրեւ զհրեշ-
տակ Աստուծոյ . եւ արդ արա որ ինչ
28 բարի է յաչս քո ։ Զի ոչ էր ամենայն
տուն հօր իմոյ եթէ ոչ արք մահու
տեառն իմոյ արքային , եւ կարգեցեր
զծառայ քո ընդ այնոսիկ որ ուտեն զսե-
ղան արքային . եւ արդ զի՞նչ իրաւունք
կան իմ այսուհետեւ լռզոք ունել միւս-
29 անդամ առ արքայ ։ Եւ ասէ ցնա ար-
քայ , Զի՞ եւս խօսիս զբանս քո . ասացի
թէ դու եւ Սիբա բաժանեցէք զդաշ-
30 րակն ։ Եւ ասէ Մեմփիբոսթէ ցարքայ ,
Զամենայն իսկ առցէ , որովհետեւ եկն
[9]արքայ խաղաղութեամբ ի տուն իւր ։
31 Եւ Բերզելի Գաղաադացին էջ յԻռգե-
լիմայ , եւ [10]անցոյց զարքայ՝ ընդ Յոր-
դանան , յուզարկել զնա ի Յորդանանէ ։
32 Եւ Բերզելի այր ծեր էր յոյժ , որդի ա-
ւուրց ութսնից . եւ նա կերակրեաց զար-
քայ մինչ բնակէր [11]ի Բանակս , զի այր
33 մեծ էր յոյժ ։ Եւ ասէ արքայ ցԲերզելի,
Դու անցցես ընդ իս եւ կերակրեցից
[12]զծնկութիւնն քո՝ ընդ իս յերուսաղէմ
34 Եւ ասէ Բերզելի ցարքայ , Քանի՞ ինչ
իցեն աւուրք կենաց իմոց , զի ելանիցեմ
35 ընդ արքային յերուսաղէմ. Որդի ամաց
ութսնից եմ ես այսօր . միթէ գիտիցե՞մ
ինչ ի մէջ բարւոյ եւ չարի , կամ թէ
իմանայցէ՞ ծառայ քո զոր ուտիմ կամ
զոր ըմպեմ , կամ թէ լսիցե՞մ տակաւին
զձայն գուսանաց եւ վարձակաց . եւ
ընդէ՞ր լինիցի ծառայ քո բեռն տեառն
36 իմոյ արքայի ։ Սակաւ ինչ [13]անց ծա-
ռայ քո բաւ Յորդանան ընդ արքային ,
եւ ընդէ՞ր հատուցանիցես ինձ, արքայ,
37 զհատուցումն զայդ . [14]Դարձցի ծառայ
քո եւ մեռցի ի քաղաքի իւրում , եւ ի

[6] ԵՔԵ. խաբեաց [7] ԵՔԵ. Կազմեցից [8] ԵՔԵ. չարախօս
եղեւ զծառայէ քումմէ առ տէր իմ արքայ,
եւ տէր իմ արքայ է [9] ԵՔԵ. տէր իմ արքայ
[10] ԵՔԵ. անց ընդ արքային [11] ԵՔԵ. ի Մանայիմ [12] ԵՔԵ.
զգեզ [13] ԵՔԵ. անցցէ [14] ԵՔԵ. Դարձցի

գերեզմանի հօր եւ մօր իւրոյ. եւ ահա ծառայ քո Քամաամ անցցէ ընդ Տեառն
38 իմում արքայի, եւ արա նմա որ ինչ բարի թուի առաջի աչաց քոց։ Եւ ասէ արքայ, Անցցէ ընդ իս Քամաամ, եւ ես արարից նմա որ ինչ բարի իցէ առաջի
39 աչաց Իմոց. եւ զամենայն որ ինչ ակն ունիցիս յինէն՝ արարից քեզ։ Եւ անց ամենայն ժողովուրդն ընդ Յորդանան, անց եւ արքայ։ Եւ համբուրեաց արքայ զԲերզելի, եւ օրհնեաց զնա, եւ դար-
40 ձաւ ի տեղի իւր։ Եւ անց արքայ ի Գաղգաղա, անց եւ Քամաամ ընդ նմա. եւ ամենայն ժողովուրդն Ծուզայ [2]անցին ընդ արքայի՝, եւ կէս ժողովրդեանն Իսրայելի։
41 Եւ ահա ամենայն այր Իսրայելի եկին առ արքայ եւ ասեն ցնա, Ջի՞ է զի զո-
զացան զքեզ եղբարք մեր այր Ծուզայ, եւ անցուցին զարքայ եւ զտուն իւր ընդ
42 Յորդանան[3]։ Եւ պատասխանի ետ այր Ծուզայ առն Իսրայելի եւ ասէ, Ջանզի մերձաւոր իակ է իմ արքայ. եւ ընդէ՞ր զժկամակ եղեր վասն բանիս այսորիկ. միթէ ուտելով կերա՞ք ինչ յարքայէ, կամ թէ պարգե՞ւ ետ մեզ, [4]կամ թէ
43 զքե՞զն ինչ երարձ զմեր։ Պատասխանի ետ այր Իսրայելացի առն Ծուզայ եւ ասէ, Տասն ձեռք իմ են յարքայի, [5]եւ անդրանիկ ես եմ քան զքեզ։ Նա եւ ի Դաւիթ ես ի մեր եմ քան զքեզ. եւ ընդէ՞ր այդպէս թշնամանեցեր զիս, եւ ոչ եղեւ ի համարի քան իմ, նախ ինձ
դարձուցանել զարքայ առ իս. եւ խոսա-
ցաւ բան առն Ծուզայ քան զբան առն Իսրայելի։

Գլ. Ի

1 Եւ անդ էր պատահումն այր անօրէն, եւ անուն նորա Սաբէ որդի Բոքորեայ այր Յեմինեացի, փող եհար եղջերեաւ եւ ա-
սէ, Ջիք մեր ման ի Դաւիթ, եւ ոչ ժառանգութիւն յորդին Յեսսեայ. չուեա այր իւրաքանչիւր ի բնակութիւնս քո,
2 Իսրայէլ։ Եւ եկ ամենայն Իսրայէլ ի Դաւ-
թէ զկնի Սաբէեայ որդւոյ Բոքորեայ, եւ այր Ծուզայ չոգան զնա ի Յորդանանէ մինչեւ ցԵրուսաղէմ։
3 Եւ եմուտ Դաւիթ ի տուն իւր ցԵրու-
սաղէմ. եւ առ արքայ զտասան կանայսն զնարճս իւր զորս եմոզ պահել զտունն, եւ ետ զնոսա ի տուն պահեսի. եւ կե-
րակրեաց զնոսա, եւ առ նոսա ոչ ե-
մուտ. եւ էին նեզեալք, մի մինչեւ ցօր մահուան իւրեանց կեցին այրիք։
4 Եւ ասէ Դաւիթ ցԱմեսայի, Ջայնեա առ իս զամենայն այր Ծուզայ գերիս ա-
5 ւուրս, եւ դու այսր եկեսցես։ Եւ գնաց Ամեսայի ձայնել զԾուզա, եւ յամեաց ի
6 ժամանակէն զոր եդ նմա։ Եւ ասէ Դաւիթ ցԱբեսսա, Արդ առնէ մեզ չար Սաբէ որպի Բոքորեայ [5]վասն Աբիաթ-
զոմայ՝. արդ ա՛ռ դու ընդ քեզ զծառայս տեառն քո, եւ պնդեաց զհետ նորա. գուցէ զառնիցէ իւր քաղաքս ամուրս, եւ [6]ածիցէ առուերածս ի վերայ աչաց՝
7 մերոց։ Եւ ելին զհետ նորա Աբեսսա եւ՝ արք Ծովաբայ, եւ Քերեթին եւ Ո-
փելեթին եւ ամենայն զօրաւորք, եւ ելին յերուսաղէմէ պնդել զհետ Սաբէ-
եայ որդւոյ Բոքորեայ։
8 Եւ մինչդեռ էին նոքա առ վիմին մեծի որ ի Գաբաւոն, եւ Ամեսայի եմուտ ա-
ռաջի նոցա. եւ Ծովաբ զգեցեալ էր վա-
րսպանական զրահիւ, եւ ի վերայ նորա սուսեր ընդ մէջ ծպտեալ առ միջոմն պա-
տենիւք հանդերձ, եւ այն էր թերաքա-
9 մեալ[7]։ Եւ ասէ Ծովաբ ցԱմեսայի, Եթէ ողջ իցես, եղբայր. եւ կալաւ Ծովաբ
աջով ձեռամն զմօրուացն Ամեսայայ
10 համբուրել զնա։ Եւ Ամեսայի ոչ զգու-
շացաւ ի սրոյն որ էր ի ձեռին Ծովաբայ. եւ եհար զնա նովաւ Ծովաբ ընդ տա-
կուշտն, եւ վայթեցաւ որովայն նորա յերկիր, եւ ոչ կրկնեաց նմա. եւ մե-
ռաւ Ամեսայի։ Եւ Ծովաբ եւ Աբեսսա եղբայր իւր պնդեցան զհետ Սաբէեայ
11 որդւոյ Բոքորեայ։ Եւ այր ոմն եկն ե-
կաց ի վերայ Ամեսայայ յերիտասարդացն Ծովաբայ եւ ասէ, Որ ոք սիրիցէ զԾո-
վաբ կամ զԴաւիթ, երթիցէ զհետ Ծո-
12 վաբայ [5]եւ Աբեսսայ՝։ Եւ Ամեսայի կայր թաւալեալ յարեանն ի մէջ ճանապար-
հին. եւ տեսեալ առնն եթէ զտեղի ա-
ռեալ կայ ամենայն զօրն, տապալեաց զԱմեսայի ի ճանապարհէն յանդն, եւ
ընկէց ի վերայ նորա հանդերձ. քանզի տեսանէր զամենայն ոք եկեալ կացեալ
13 ի վերայ նորա։ Եւ իբրեւ փոխեցաւ ի

[1] ՆԲՓ. քաց [2] ՆԲՓ. անցուցին զարքայ [3] ՆԲՓՅՒ-
ՆՅՈՒԼԼ., եւ զամենայն արս Դաւթի ընդ նմա
[4] ՑՆԲՓ. զ-ի-ս [5] ՆԲՓ. քան զԱբիսողոմ [6] ՆԲՓ. խուսափեսցէ
յաչաց [7] ՆԲՓՅՒՆՅՈՒԼԼ., եւ անկաւ

ճանապարհէն , անցանէր ամենայն այր [1]Իսրայելի զհետ Յովաբայ պղնդել զհետ
14 Սաբեհայ որդւոյ Բոքորեայ։ (Եւ անց ընդ ամենայն ցեղսն Իսրայելի յԱբէլ եւ ի Բեթմաքա , եւ ամենայն ընտիր ընտիրքն
15 ժողովեցան եւ եկին զհետ նորա) Եւ հասին եւ պատեցին [2]ի վերայ նորա զԱ-բէլ եւ զԲեթմաքա՝. եւ կոտեցին լուր հողոյ հանդէպ քաղաքին , եւ կանգնեցաւ [3]բրտեւ զպատուար . եւ ամենայն զօրն որ ընդ Յովաբայ՝ եղծանէր կոծանէր զպարիսպն ։
16 Եւ աղաղակեաց կին մի իմաստուն [3]ի պարսպէն եւ ասէ , Լուարուք , լուարուք . ասացէք ցՅովաբ , Մատիր այսր
17 եւ խօսեցայց ընդ քեզ ։ Եւ մատեաւ առ նա . եւ ասէ կինն , եթէ Դո՞ւ իցես Յովաբ ։ Եւ ասէ , Ես եմ ։ Եւ ասէ ցնա , Լուր բանից աղախնոյ քո ։ Եւ ասէ Յո-
18 վաբ , Ի լսել եկեալ եմ ես ։ Եւ խօսեցաւ եւ ասէ , Բան ճառէր յառաջինս եւ ասէին , Հարցանելով [4]հարցաւ յԱբէլ եւ ի Դան. եթէ պակասեցուսցե՞ն, եթէ ապատակիցե՞ն հաւատարիմք Իսրայելի .
19 հարցանելով հարցին յԱբէլ , եւ ապա թէ պակասեցուցանիցեն ։ Ես եմ խաղաղարար հաստատութեան Իսրայելի , եւ դու խնդրես կոտորել զքաղաք Իսրայելի՞. ընդէր ընկղմես զժառանգու-
20 թիւն Տեառն ։ Պատասխանի ետ Յովաբ եւ ասէ , Ցաւ լիցի ինձ , քաւ լիցի ե-
21 թէ ընկղմեցից եւ ապականեցից . Ոչ այդպէս է բանդ . զի այր մի ի լեռնէ Եփրեմի , Սաբեհ անուն նորա՝ որդի Բոքորեայ , հարմարձ զձեռն իւր ի վերայ արքային Դաւթի . տուք ինձ զնա միայն, եւ գնացից ի քաղաքէ աստի ։ Եւ ասէ կինն ցՅովաբ, Ահա գլուխ նորա ընկեցցի
22 առ քեզ ընդ պարիսպս ։ Եւ եմուտ կինն առ ամենայն ժողովուրդն . [5]եւ խօսեցաւ ընդ ամենայն քաղաքին իմաստութեամբ իւրով՝ հատանել զգլուխն Սաբեհայ որդւոյ Բոքորեայ . եւ հասին՝ ընկեցին զնա առ Յովաբ. եւ փող եհար եղջերուաւն, եւ սփռեցան ի քաղաքէն յայնմանէ այր իւրաքանչիւր ի բնակութիւնս իւրեանց. եւ Յովաբ դարձաւ յերուսաղէմ առ արքայ ։
23 Եւ Յովաբ էր ի վերայ ամենայն զօրուն Իսրայելի . եւ Բանեա որդի Յովիադայայ՝ ի վերայ Քերեթացն եւ Փելեթ-
24 ացն . Եւ Ադոնիրամ ի վերայ հարկաց . եւ Յովսափատ որդի Աքիլովթայ՝ յիշա-
25 տակաց . Եւ Սուդաէ՝ դպրապետ . եւ
26 Սադովկ եւ Աբիաթար՝ քահանայք . Եւ Իրաս [6]որ Յայրեն՝ էր քահանայ՝ Դաւթի ։

ԳԼ . ԻԱ

1 Եւ եղեւ սով յաւուրս Դաւթի զերիս ամս՝ ամ զամի զկնի , եւ խնդրեաց Դաւիթ յերեսաց Տեառն . եւ ասէ Տէր , վասն Սաուղայ եւ վասն արեանց տան նորա է [1]վնասող այդ , զի կոտորեաց զԳա-
2 բաւնացիսն ։ Եւ կոչեաց արքայ Դաւիթ զԳաբաւնացիսն , եւ ասէ ցնոսա . եւ Գաբաւնացիքն չէն [7]որդիք Իսրայելի , այլ յարեհէ Ամովրհացւոյն՝, եւ որդիքն Իսրայելի երդուան նոցա . եւ խնդրեաց Սաուղ հարկանել զնոսա , նախանձ առեալ վասն որդւոցն Իսրա-
3 յելի եւ Յուդայ ։ Եւ ասէ Դաւիթ ցԳաբաւնացիսն , Զինչ արարից ձեզ եւ ըստ քաւեցից , եւ օրհնիցէք զժառանգութիւն
4 Տեառն ։ Եւ ասեն ցնա Գաբաւնացիքն, Ոչ գոյ մեր արծաթ եւ ոսկի առ Սաուղայ եւ ի տան նորա , եւ ոչ պիտի մեզ այր սպանանել յԻսրայելէ ։ Եւ նա ասէ , Եւ արդ զինչ ասէք զի արարից
5 ձեզ ։ Եւ ասեն ցարքայ , Այր որ սպառնայ զմեզ եւ [8]հալածեաց զմեզ , որ համարեցաւ սատակել զմեզ , զնա ապա-
6 կանեսցուք . զի մի կացցէ՝ յամենայն սահմանս Իսրայելի , Տացին մեզ եւթն արք յորդւոց նորա , եւ յարագեսցուք զնոսա Տեառն ի Գաբաա Սաուղայ [9]ընտիրս Տեառն ։ Եւ ասէ արքայ , Ես տաց
7 ձեզ ։ Եւ խնայեաց արքայ ի Մեմփիբոսթէ որդի Յովնաթանու որդւոյ Սաուղայ վասն երդմանն Տեառն որ ի մէջ Յովնաթանու որդւոյ Սաուղայ եւ ի մէջ
8 Դաւթի ։ Եւ առ արքայ զերկուս որդիսն Ռեսփայ դստեր Այիայ զորս ծնաւ Սաուղայ , զԵրմոնի եւ զՄեռոսթէ , եւ զհնգետին որդիսն Մերոբայ դստեր Սաուղայ , զորս ծնաւ Եսդրիելի որդւոյ
9 Բերզելեայ Մովղաթացւոյ , Եւ ետ զնո-

[1] ՅԵբէ. դ-վ-ռ [2] ՅԵբէ. զնա յԱբէլ Բեթմաքայ
[3] ՅԵբէ. ի քաղաքէն [4] ՅԵբէ. Հարցեն յԱբէլ և այնպէս կատարեսցեն։ (19) Ես եմ խաղաղարար Հաստատմանց Իսրայելի . եւ դու խնդրես սատակել զքաղաք, որ է մայր յԻսրայելի [5] ՅԵբէ. իմաստութեամբ իւրով, եւ հատին զգլուխն Աբեհայ որդւոյ Բոքորեայ եւ

[6] ՅԵբէ. Յայիրացի էր քահանայ, կամ, նախապար
[7] ՅԵբէ. յորդւոցն Իսրայելի , այլ ի մնացորդաց Ամովրհացւոց [8] ՅԵբէ. Հնարեցաւ հակառակ մեզ զի եղիցուք բնաջինջք [9] ՅԵբէ. ընտրս

սա ի ձեռս Գաբաւնացւոցն . եւ յարա-
ձեցին զնոսա ի լերինն առաջի Տեառն .
եւ անդ անկան եւ մնացեալքն նոքա ի մես-
սին . եւ մեռան նոքա յաւուրս հնձոց ,
յառաջաւոր՝ ի սկզբան հնձոց գարնա-
10 նէ . եւ սա Ռեհաբ զօսասյ Այիայ քաղ-
եւ [1]արկ ի վերայ նոցա՝ իմիրն ի սկզբան
հնձոց [2]գալեալ , մինչեւ կամեցաւ ի վե-
րայ նոցա ջուր յերկնից . եւ ոչ սայր
թոյլ թողնոյ երկնից հանդչել ի վերայ
նոցա ի տուէ , եւ ոչ զազանաց անա-
11 պատի ի զիշերի : Եւ պատմեցաւ Դաւ-
թի զոր ինչ արար Ռեհաբ զօսասյ Ա-
յիայ՝ հարճ Սաւուղայ , [2]եւ լքան . եւ
եհաս ի վերայ նոցա Դան որդի Յակո-
12 սայ՝ ի ծննդոց սկայից՝ Եւ չոգաւ Դա-
ւիթ եւ առ զոսկերան Սաւուղայ եւ զոս-
կերան Յովնաթանու որդւոյ նորա յա-
նանց Յաբեսայ Գաղաադացւոյ , որ գող-
ցան զնոսա ի հրապարակացն Բեթսա-
նայ . զի արձանացուցին զնոսա անդ այլ-
ազգիքն յաւուր յորում Տարին զնոսա
13 այլազգիքն ի Գեղբուէ . Եւ եհան անտի
զոսկերան Սաւուղայ եւ զոսկերան Յով-
14 նաթանու որդւոյ նորա . [3]Ժողովեաց եւ
զյարադելոցն յերկրին Բենիամինի , ի զե-
լեզանն որ է մերձ առ Կիս հայր նո-
րա , եւ անդ թաղեցան՝ . եւ արարին
զամենայն ինչ զոր հրամայեաց արքայ ,
եւ լուաւ Աստուած երկրին յետ այնորիկ
15 Եւ եղեւ միւսանգամ պատերազմ այլ-
ազգեացն ընդ Իսրայէլ , եւ ել Դա-
ւիթ եւ ծառայք նորա ընդ նմա , եւ պա-
տերազմեցան ընդ այլազգիսն . եւ լքաւ
16 Դաւիթ : Եւ [4]Աբեսսա ի Յեսբէ՝ , որ էր
ի ծննդոցն Ռափայ , եւ կշռեալ նիզակի
նորա յերկնհարիւր սկղբէ կուռ պղնձոյ ,
եւ ինքն ունէր ընդ մէջ իւր թուր , եւ
17 խորհէր հարկանել զԴաւիթ : Եւ օգնեաց
Դաւթի Աբեսսա որդի Շարուհեայ , եւ ե-
հար զայլազգին եւ սպան զնա . յայնժամ
երդուան արք Դաւթի եւ ասեն , եթէ Ոչ
եւս ելցես ընդ մեզ ի պատերազմ , եւ
ոչ չիջուսցես զճրագդ Իսրայէլի :
18 Եւ եղեւ յետ այնորիկ , եղեւ միւսան-
գամ պատերազմ [5]ի Գեզեր ընդ այլազ-
գիսն . յայնժամ եհար Սիբբրաք Ուսացի
զԱիեփտան ի ծննդոցն Ռափայ :
19 Եւ եղեւ միւսանգամ պատերազմ
[5]ի Գեզեր ընդ այլազգիսն . եւ եհար Եղէա-
նան որդի Արիոլիմայ Բեթղեհեմացւոյ
զԳողիադ Գեթացի , եւ փայտ նիզակի
նորա իրրեւ առագի ոստայնանկաց :
20 Եւ եղեւ միւսանգամ պատերազմ ի
Գէթ . եւ էր անդ այր մի [6]Մաւղի , եւ
մատունք ձեռաց նորա եւ ոտից վեց վեց
քան եւ չորք թուով . եւ նա ծնաւ Ռա-
փայ : Եւ նախատէր զԻսրայէլ . եւ եհար զնա Յովնաթան որդի Սամաայ եղ-
22 բօր Դաւթի : Զորեքեան սոքա ծնան Ռա-
փայ [2]ի տան ի Գէթ . եւ անկան ի ձեռս
Դաւթի եւ ի ձեռս ծառայից նորա :

ԳԼ . ԽԲ

1 Եւ խօսեցաւ Դաւիթ Տեառն զբանս
օրհնութեանս այսորիկ յաւուր յորում
փրկեաց զնա Տէր ի ձեռաց ամենայն
թշնամեաց իւրոց եւ ի ձեռաց Սաւու-
2 ղայ , եւ ասէ , Տէր վէմ իմ , եւ ամրու-
3 թիւն իմ , եւ փրկիչ իմ ինձ . Աստուած
[7]պահապան եղիցի ինձ՝ , յաւուրս եղէց
ի նա . [8]վերակացու իմ եւ եղջեր
փրկութեան իմոյ , [9]պաշտպան իմ եւ ա-
պաւէն փրկութեան իմոյ . յանիրաւէ
4 փրկեացես զիս , Տէր : Զօրհնեալն զՏէր
կարդայից , եւ ի թշնամեաց իմոց ապրե-
5 ցայց : Զի պատեցին զիս ցաւքն մահու , ուղիք անօրէնութեան տագնա-
6 պեցուցին զիս : [10]Երկունք մահու՝ պա-
տեցան զինեւ , ժամանեցին ինձ որո-
7 գայիք մահու : Ի նեղութեան իմում
կարդացի առ Տէր , եւ առ Աստուած իմ
աղաղակեցի , եւ [11]լուիցէ ի տաճարէ սրբոյ՝
իւրմէ ձայնի իմում , եւ աղաղակ իմ
8 յականջս նորա : [12]Շարժեցաւ եւ՝ խոռվե-
ցաւ եւ չարժեցաւ երկիր , եւ հիմունք
երկնից խռովեցան եւ տատապեցան . զի
9 բարկացաւ նոցա Տէր : Ել ծուխ ի բար-
կութենէ նորա , եւ հուր ի բերանոյ նո-
րա կերիցէ . կայծակունք բորբոքեցան
10 ի նմանէ : Եւ խոնարհեցոյց զերկինս եւ
11 էջ , եւ մէգ ի ներքոյ ոտից նորա : Ել եւ
նստաւ ի վերայ քերովբէից եւ թռաւ ,
եւ երեւեցաւ ի վերայ թեւոց հողմոց :
12 Եւ եդ զխաւարն ծածկոյթիւն իւր ,

[1] ԵԲԲ· արկ իւր [2] ՅԵԲԲ· գ-ե-ւ [3] ԵԲԲ· եւ ժո-
ղովեցին զոսկերս յաբագելոցն : (14) Եւ թաղե-
ցին զոսկերս Սաւուղայ եւ Յովնաթանու որդւոյ
նորա յերկրին Բենիամինի ի Սելա , ի գերեզմանի
Կիսեայ Հօր նորա [4] ԵԲԲ· Յեսբի Բենոբ [5] ԵԲԲ·
ի Գովբ

[6] ԵԲԲ· բարձր Հասակաւ [7] ԵԲԲ· պարիսպ իմ [8] ԵԲԲ·
վահան [9] ԵԲԲ· բարձրութիւն [10] ԵԲԲ· Տո-
ւեալք դժոխոց [11] ԵԲԲ· Լուաւ ի տաճարէ [12] ԵԲԲ·
Յայնժամ

չուրջ զնովաւ խարան իւր. եւ խաւար
13 ՚ի րոյ թանձրացոյց զամպս օդոյ ։ Ի լու-
սոյն առաչի նորա բոլորեցան կայծա-
14 կունք հրոյ ։ Եւ որոտաց յերկնից Տէր,
15 եւ Բարձրեալն ետ զձայն իւր ։ Եւ ա-
ռաքեաց զնետս իւր եւ ցրուեաց զնոսա,
փայլատակեցոյց զփայլատակունս եւ
16 զարհուրեցոյց զնոսա ։ Եւ երեւեցան
յորդուածիւնք ծովու, եւ յայտնեցան հի-
մունք տիեզերաց ի սաստէ Տեառն եւ
ի շնչելոյ հողմոյ բարկութեան նորա ։
17 Առաքեաց ի բարձանց եւ առ զիս, ձգեաց
18 զիս ի ՚ի րոյ բազմաց ։ Կորզեաց զիս ի
բռնութենէ ի՛նամեաց իմոց եւ յատել-
եաց իմոց, զի սաստկացան քան զիս ։
19 Ժամանեցին ինձ ՚ատութք նեղութեան
իմոյ, եւ եղեւ ինձ Տէր հաստատու-
20 թիւն. Եւ ետան գիս յանդորր եւ ապրե-
21 ցոյց զիս, զի հաճեցաւ ընդ իս ։ Եւ
հատոյց ինձ Տէր ըստ արդարութեան իմում, եւ ըստ սրբութեան ձեռաց իմոց
22 հատուսդէ ինձ Տէր ։ Զի պահեցի զճա-
նապարհս Տեառն, եւ ոչ ամբարշտեցայ
23 յԱստուծոյ իմմէ ։ Զի ամենայն իրաւունք
նորա առաչի իմ են, եւ յարդարու-
24 թիւնս նորա ոչ հեռացայ ։ Եւ եղէց նմա
ամրիծ, եւ յառաչագոյն զգուշացայց
25 յանօրէնութենէ իմմէ ։ Եւ հատոյց ինձ
Տէր ըստ արդարութեան իմում, եւ ըստ
սրբութեան ձեռաց իմոց առաչի աչաց
26 նորա ։ Ընդ ՚սրբոյն սուրբ՝ եղիցես, եւ
27 ընդ առն կատարելոյ կատարեսցիս. Եւ
ընդ ընտրելոյն ընտրեալ եղիցես, եւ ընդ
28 ի՛րեղոյն ի՛րեսցիս ։ Զի դու զժողո-
վուրդ տանկի վրկեսցես, եւ ՚զաչս ամ-
29 բարտաւանից խոնարհեցուսցես՝. Զի դու
ես ճրագ իմ, Տէր, եւ դու, Տէր, լուսա-
30 ւորեսցես ինձ զխաւար իմ ։ Զի քեզ
ընթացայց ՚մննալինեալ, եւ Աստուծով
31 իմով անցից ընդ պարիսպ ։ Աստուած
՚իմ հզօր՝, որոյ անարատ է ճանապարհ
իւր. բան Տեառն ՚հզօր քննեալ, ՚վերա-
կացու է ամենայն ապաւինելոց իւրոց ։
32 Ո՞վ է հզոր՝ բայ ի՛քէն, Տէր, եւ ո՞վ է
33 ՚հաստիչ բայ յԱստուծոյ մերմէ ։ ՚Հզօր՝
որ զօրացուցանէ զիս զօրութեամբ.
34 ձգեաց անարատ՝ զճանապարհս իմ, Դնել
զոտս իմ իբրեւ զեզկերուաց. եւ ի վե-
35 րայ բարձանց կացուցանէ զիս ։ Ուսու-
ցանէ զձեռս իմ ի պատերազմ, եւ
հաստատեաց ազիզն պղնձի զբազուկս
36 իմ ։ Եւ ետուր ինձ ՚պաշտպանութիւն
փրկութեան իմոյ. եւ հնազանդութիւն իմ
37 յաճախեաց ինձ Ընդարձակութիւն ի՛ներ-
քոյ գնացից իմոյ՝, եւ ոչ սասանեցան
38 բարձք իմ ։ Հալածեցից զթշնամիս իմ
եւ ապականեցից զնոսա, եւ ոչ դարձայց
39 մինչեւ սպառեցից զնոսա ։ Խորտակեցից
զնոսա եւ մի կանգնեսցին, անկցին ի
40 ներքոյ ոտից իմոց ։ Եւ զօրացուսցես
զիս զօրութեամբ ի պատերազմ, եւ կո-
րացուսցես ի ներքոյ իմ զյարուցեալսն
41 ի վերայ իմ ։ Եւ զթշնամիս իմ դարձու-
ցեր յետս յինէն եւ զատելիս ՚իմ կո-
42 տորեցեր ։ Աղաղակեցին՝ եւ ոչ ո՛ք էիլ
որ օգնեսցէ.՝ առ Տէր՝ եւ ոչ լուաւնոցա
43 Եւ լեմ զնոսա իբրեւ զհող երկրի, եւ
իբրեւ զկաւ գահնաց մանրեցից զնոսա։
44 Եւ վրկեացես զիս ի կռուոյ ՚՚ժողովրդոց,
եւ պահեսցես զիս ի գլուխ աղգաց. ժո-
ղովուրդ զոր ոչ գիտէի՝ ծառայեաց ինձ,
45 ՚՚Եւ ի լուր ունկան լուան ինձ՝.՝ Որդիք
օտարոտիք ստիպին ինձ, եւ ի լուր ա-
46 կանջոյ լուան ինձ. Որդիք օտարոտիք
՚՚ընկճեսցին ի բաց, եւ սխալեսցին ի պա-
47 չարմանց իւրեանց՝՝։ Կենդանի է Տէր եւ
օրհնեալ է ՚՚պահապանն իմ եւ բարձ-
րասցի Աստուած իմ ՚՚պահապան փրկու-
48 թեան իմոյ ։ Հզօր Տէր որ առնէ զվրէժ-
խնդրութիւնն իմ, խրատէ զժողովուրդս ի
49 ներքոյ իմ ։ Եւ հանէ զիս ի թշնամեաց
իմոց. եւ յարուցեալոց ի վերայ իմ բարձ-
րացուսցես զիս, յառնէ անիրաւութենէն
50 վրկեսցես զիս ։ Վասն այսորիկ գոհա-
ցայց զքէն ի մէջ ազգաց, Տէր, եւ
51 անուան քում սաղմոս ասացից ։ Մեծա-
գործեացանէ զփրկութիւն թագաւորի, եւ
առնէ ողորմութիւն օծելոյ իւրում Դաւթի
եւ զաւակի նորա մինչեւ յաւիտեան ։

ԳԼ. ԻԹ

1 Եւ այս են բանք Դաւթի վերջինք. ՚՚Հա-
ւատարիմ Դաւիթ որդի Յեսսեայ, եւ

---

[1] ԵՓԲ. յաւուր [2] ԵՓԲ. ազորմածին ազորմած [3] ԵՓԲ. աչք քո ի վերայ ամբարտաւանից զի խոնարհեցուցես [4] ԵՓԲ. ի վերայ հինի [5] ԵՓԲ. պակաս [6] ԵՓԲ. ասպար [7] ԵՓԲ. վէմ [8] ԵՓԲ. Աստուած է ճերդ իմ ամուր որ առնէ կատարեալ

[9] ԵՓԲ. զասպար փրկութեան քո, եւ հզութիւն քո մեծացոյց զիս։ (37) Ընդարձակեցեր զդնացս իմ ընդ ինեւ [10] ԵՓԲ. իմ, եւ կոտորեցի զնոսա։ (42) Աղաղակեցինև ոչ որ էր որ օգնէր, ՚՚ընդ Տէրն [11] ԵՓԲ. ժողովրդեան իմոյ [12] ԵՓԲ. մնչեցան, եւ սարսափեցան ի թաւթտեանէ իւրեանց [13] ԵՓԲ. Վէմն [14] ԵՓԲ. վէմ [15] ԵՓԲ. Ասէ

[1]հաւատարիմ այր, զոր կացոյց Տէր յօծեալ Աստուծոյ ի վերայ" Ցակոբայ.
2 եւ վայելուչ [2]ձեռ նրեք" Իսրայելի Հոգի Տեառն խօսեցաւ յիս, եւ բան նորա ի
3 լեզուի իմում: Ասէ Աստուած Իսրայելի, ընդ իս խօսեցաւ [3]Վահանապետն Իսրայելի. "առաւօտուն առաջի ի մարգ. ո՞վ է որ կալցի զերկիւղէ Տեառն եւ
4 զԱստուծոյ, ի լոյս առաւօտուս: Ծագեալ գարնային ընդ առաւօտս եւ ոչ նուազեալ ի լուսոյ. եւ իբրեւ անձրեւոյ
5 գալարուոյ յերկրէ: Զի ոչ եղիէ այս առն իմ է ընդ տղօրին Աստուծոյ." ուստի յաւիտենական եղ ինձ, պատրաստական յամենայն ժամանակի պահել, զի ամենայն փրկութիւն իմ եւ ամենայն կամք [5]իմ
6 Տէր: Զի մի բազմոջեցան անօրէնքն· իբրեւ զխուչ մերժեալ են ամենեքեան նոքա՝
7 որ ոչ ձեռամբ առնուցուն: Եւ այնպիսեացի ի նոսա այր, եւ զամենայն երկամբ եւ զվայրս նիզակի հրով այրեսցէ, եւ բորբոքեալն ամօթով իբրեւ ցի:"
8 Այս անուանք են զօրավարացն Դաւթի. [6]Յեբուսթէ Բանանայի՝ իշխան երիս մասինն, Ամմոն Աւոմացի," ի վերայ ութ հարիւրոց վիրաւորաց ի միում նետափ.
9 Եւ յետ նորա [7]Եղէազան որդի Հոռեզբոր նորա՝ որդի Ահոգացին. ի մէջ երից զօրավարացն Դաւթի, յիւրմէ [8]նախատել նորա" զայրագործս, ուր պատերազմեցան ի պատերազմի եւ [8]խրախուսանաց այր
10 Իսրայելի, Եւ նա յարեաւ եւ եհար յայլազգեացն [9]մինչեւ մատներս ձեռն նորա որոնել. եւ" արար Տէր փրկութիւն մեծ յաւուր յայնմիկ. եւ զօրն [10]նստէր
յետոյ նորա, բայց միայն ի կապուտան:
11 Եւ յետ նորա Սամմա որդի [11]Սիռայ Արուկացի: Եւ Ժողովեցան այլազգիքն ի [12]Ղեհօան, եւ անդ էր վիճակ անդի լի ոսպոմբ, եւ զօրն փախեաւ յերեսաց
12 այլազգեացն. Եւ արձանացաւ ի մէջ վիճակին եւ ապրեցոյց զնա, եւ եհար զայլազգիսն, եւ արար Տէր փրկութիւն մեծ:
13 Եւ իջին երիք յերեսանից, եւ [13]իջին ի կաւավ" առ Դաւիթ յայրն Ոդոզոմայ, գունդք այլազգեացն բանակեալ էին ի
14 հովիտս Ռափայնոցն: Եւ Դաւիթ էր յայնժամ յամրոցին, եւ ճամբար այլազգեացն էր յայնժամ ի Բեթղեհեմ:
15 Եւ ցանկացաւ Դաւիթ եւ ասէ, Ո՛ արբուցանէր ինձ ջուր ի ջրհորոյն Բեթղեհեմի
16 որ առ դրանն է: [14]Եւ գունդք այլազգեացն էին ի Բեթղեհեմ:" Եւ հասին երիքն զօրավարքն դրանակին այլազգեաց, եւ հանին ջուր ի ջրհորոյն Բեթղեհեմի որ առ դրանն, եւ առին եւ եկին առ Դաւիթ. եւ ոչ կամեցաւ ըմպել զայն,
17 այլ նուիրեաց զայն Տեառն. Եւ ասէ, Քաւ լիցի ինձ, Տէր, առնել զայդ, եթէ զարիւն արանց երթելոց ոգւովք չափ՝ ըմպիցեմ. եւ ոչ կամեցաւ ըմպել զայն: Զայս արարին երիք զօրավարքն:
18 Եւ Աբեսսա եղբայր Յովաբայ որդի Շարուհեայ, ինքն իշխան ի մէջ երից. եւ նա կանգնեաց զնիզակն իւր ի վերայ երիցհարիւրոց վիրաւորաց. եւ նորա ա-
19 նուն ի մէջ երից. Յայնցանէ փառաւորեալ, եւ եղեւ նոցա իշխան, եւ մինչեւ [15]յերիսն ոչ հասաւ:
20 Եւ Բանեա որդի Յովիադայեայ, որդի առն զօրաւորի, որոյ բազում զործ զործեալ էր ի Կաբսեհղա. եւ նա եհար զերկուս որդիսն Արիելի Մոաբացւոյ, եւ նա էջ եւ սպան զառիւծն ի մէջ գրին յաւուր
21 ձեան: Եւ նա սպան զայրն երեւելի՝ զայրն եգիպտացի. եւ ի ձեռին եգիպտացւոյն էր նիզակ [14]իբրեւ զփայտ կառմրջի". եւ էջ առ նա [16]նիզակաւն, եւ յափշտակեաց զնիզակն ի ձեռաց եգիպտացւոյն, եւ սպան զնա նորին նիզա-
22 կաւ: Զայս արար Բանեա որդի Յովիադայ. եւ նորա անուն ի մէջ երից զո-
23 րաւորաց. [17]Յերիսն փառաւորեալ, եւ առ [15]երիսն ոչ հասանէր. եւ կարգեաց զնա

---

[1] ԵԲԲ. ասէ այլն Հաստատեալ բարձր, օծեալն Աստուծոյ [2] ԵԲԲ. երգիչն [3] ԵԲԲ. Վէմն [4] ԵԲԲ. Ո՛ր տիրէն մարդկան արդարութեամբ տէրեսոյ, որ տիրէն երկիւղիւ Աստուծոյ: (4) Եղիցի իբրեւ զլոյս առաւօտու ի ծագել արեգական, առաւօտուն՝ առանց ամպոյ ի բուսանել գոլար խոտոյ յերկրէ, ի ծագել լուսոյ ցնծութեան: (5) Ի՛ պէտս եւս ոչ այսպէս է տուն իմ ընդ Աստուծոյ, այլ [5] ԵԲԲ. իմ այս է, թէպէտեւ ոչ տացէ բողոքել: (6) Սակայն անօրէնքն, ամենեքեան մերժեալ են իբրեւ զփուշ որ ոչ առնուցուն ձեռամբ: (7) Այր որ մերձենայցի ի նոսա՝ վառեսցի երկամբ եւ փայտիւ նիզակի, եւ նոքա այրելով այրեսցին հրով ի գագաթս իւրեանց: [6] ԵԲԲ. Յոսեբ-բասեբեթ Թահքեմոնացի, զյուխ երրորդացն. նա ամբարձ զնիզակ իւր [7] ԵԲԲ. Եղիազար որդի Դովդայ որդւոյ Ահոհացւոյն. ի մէջ երից զօրավարացն ընդ Դաւթի, ի նախատել նոցա [8] ԵԲԲ. փախեաւ [9] ԵԲԲ. մինչեւ խոնջեցաւ ձեռն նորա եւ [10] ԵԲԲ. դառնայր

[11] ԵԲԲ. Ակբէայ [12] ԵԲԲ. գունդ [13] ԵԲԲ. եկին յաւուրս հնձոց [14] ՑԵԲԲ. պատ [15] Իմ՝ ՎԵՐԷՆ ՈՐ ՅՈՍԵՖԵԱՆ ՉԷՀՈՆ [16] ԵԲԲ. գաւազանաւն [17] ԵԲԲ. Յերեսնիցն

Դաւիթ ի վերայ [1]համբարաց իւրոց ։
24 [2]Եւ այս անուանք են զօրաւորացն
Դաւթի արքային. Ասայէլ եղբայր Յո-
վաբայ, նա էր ի մէջ երեսնից. Եղէա-
նան՝ որդի [3]Ագիւդայ հօրեղբօր նորա ի
25 Բեթղեհեմ՝, Սամաա Ռուդացի, [4]Ալղա-
26 կեղովիացի, [5]Ագղասփեղղատացի, Իրաս՝
27 որդի Եսկաբայ Թեկուացի, Աբիեզեր
Անաթովիացի՝ յորդւոյ Ասովիացւոյն,
28 [6]Եղդոն Ագիոյացի, Նեոբէ՝ Նետոփաթացի,
29 Ագաբ՝ որդի [7]Փամփանայ, Անաովէ Նե-
ղաթացի՝, Եթթի՝ որդի Ռիբայ ի Գաբաա-
30 թայ որդւոյն [8]Բենիամինի Եփրաթացւոյ՝,
31 Ագդայի ի Ձորոյն Գոռասայ, Աբիեղդոն [9]ի
դաշտավայրացն Ագդայի ի Նաքաղայ,
Գասրիէ Ղաղաբարացի, Աամոն Բարա-
32 սամացի՝, Եղիաս Սաղաբոնացի, որդի Ա-
33 սանայ՝ Ցոնէլեթան, Սամեան Արովդացի,
34 Եղիան՝ որդի Արեզայ Արաթիրացի, Ագի-
փաղեթ՝ որդի Աւերացւոյ՝ որդի Ամաքայ,
Եղիաբ՝ որդի Աբիտոփելայ Գաղամոնաց-
35 ւոյ, Ասաբէ Կարմելացի, [9]Տուբր եր-
36 քայի, Գաղա՝ որդի Նաթանայ ի զօրու-
37 թենէ որդի Գաղաադայ, Եղիէ Ամմոնացի,
Գեղովրէ Բեէրովթացի՝, կապարճակիր
38 Ցովաբայ որդւոյ Շարուհեայ, Իրաս Յե-
թիրացի, [10]Գարէբ Բեէթանացի՝, Ուրիա
39 Քեւացի ։ Ընդ ամենայն երեսուն եւ
եւթն ։ [2]այլք ի հղեղատէն Գաղաբելիի
որդւոյ Աբաովիթացւոյն՝

Գլ. ԻԹ

1 Եւ յաւել սատանայ [11]Տեառն բար-
կանալ ի վերայ Իսրայէլի, եւ դրդռեաց
զԴաւիթ ի նոսա եւ ասէ, Երթ թուեա
2 զԻսրայէլ եւ զՑուդա ։ Եւ ասէ արքայ
ցՅովաբ իշխան զօրուն որ ընդ նմա,
Շրջեա ընդ ամենայն ցեղսն Իսրայէլի՝ ի
Դանայ մինչեւ ցԲերսաբէէ, եւ հանդէս
արա ժողովրդեանդ, եւ գիտասցիմ զթիւ
3 զօրացն ։ Եւ ասէ Յովաբ ցարքայ, Յաւելցէ
Տէր[11] ի ժողովուրդն որչափ եւնն՝ հա-
րիւրապատիկ, եւ տեսցեն աչք սեառն

[1]ԵԲԲ. Թիկնապահաց [2]ԵԲԲ. գ-ԼՈՒԽ [3]ԵԲԲ. Դոդայ Բեթղեհեմացւոյ [4]ԵԲԲ. Եղիկա Հա-
րոդացի [5]ԵԲԲ. Աելմն Աքրաքացի, Ամաբա
[6]ԵԲԲ. Բաանայ Նետոփաթացւոյ [7]ԵԲԲ. Բենիա-
մինի, Բահաա Փարաթոնացի [8]ԵԲԲ. Արբաա-
թացի, Ազամաթի Բաուրիմացի, [9]ԵԲԲ. Փաարայ
Արբացի, (36) Իգալ որդի Նաթանայ Սոբացւոյ
Բանի Գադացի, (37)Սելեկ Ամմոնացի, Նաարայ
Բերոթացի [10]ԵԲԲ. Գարեբ Յեթերացի [11]ԵԲԲ-
յեչէն յ-ԼԼ-, Աստուած քո

իմոյ արքայի. եւ տէր իմ արքայ ընդէր
4 կամիցի զբանդ զայդ ։ Եւ սաստկացաւ
բանն արքայի առ Յովաբ եւ առ իշխանս
զօրուն. եւ ել Յովաբ եւ [12]ամենայն
իշխանք զօրուն՝ յերեսաց արքայի՝
առնել հանդէս ժողովրդեանն Իսրայէլի ։
5 Եւ անցին ընդ Յորդանան, եւ [13]պատե-
ցան ընդ Արոյեր՝ յաջմէ քաղաքին, որ
ի մէջ ձորոյն Գադայ եւ [14]եղէազարու,
6 Եւ անցին ընդ Գաղատաղ, եւ [15]ի Թա-
բասեն եւ յեսբեմն եւ յԱպասէ. եւ հա-
սին ի Դան՝, եւ պատեցան զՍիդոնաւ ։
7 Եւ եկին [16]ի Մատսար Տիւրոսի, եւ յա-
մենայն քաղաքս Խեւացւոյն եւ Քանա-
նացւոյն. եւ եկին ի հարաւոյ կողմանէ
8 [17]ի Յուդա եւ՝ ի Բերսաբէէ։ Եւ չրջեցան
ընդ ամենայն երկիրն, եւ եկին հասին
ի կատարել ինն ամսոց եւ աւուրց քսա-
9 նից՝ յԵրուսաղէմ ։ Եւ ետ Յովաբ զհա-
մար հանդիսի ժողովրդեանն արքայի.
եւ եղեւ Իսրայէլի ութ հարիւր հազար
արանց զօրու սուսերամերկաց, եւ այր
Յուդայ հինգ հարիւր հազար արանց
[2]մարտից ։
10 Եւ եհար զԴաւիթ սիրտն իւր յետ
մտանելոյ զժողովուրդն, եւ ասէ Դաւիթ
ցՏէր, Մեղայ յոյժ զոր արարի. եւ
արդ անցո զանօրէնութիւնն ի ծառայէ
11 քումմէ, զի ընդունայնասայ յոյժ ։ Եւ
յարեաւ Դաւիթ ընդ առաւօտն. եւ բան
Տեառն եղեւ ի վերայ Գադայ մարգարէի
12 տեսանողի [18]առ Դաւիթ՝, եւ ասէ, Երթ
խօսեաց ընդ Դաւթի եւ ասասցես, Այս-
պէս ասէ Տէր, Երիս [19]ինչս առեմ ի վե-
րայ քո, եւ ընտրեսցես քեզ զմի ինո-
13 ցանէ, եւ արարից քեզ զայն ։ Եւ եմուտ
Գադ առ Դաւիթ, եւ պատմեաց նմա
եւ ասէ ցնա, Ընտրեա քեզ լինել, եթէ
եկեսցէ սով [19]վերիս ամս յերկիր քո,
կամ վերիս ամիսս փախչել յերեսաց
թշնամեաց քոց եւ լինիցին հալածել
զքեզ, կամ լինել վերիս աւուրս մահ
յերկրի քումմ. եւ արդ ծանիր եւ տես
զինչ պատասխանի տացս առաքչին իմոյ։
14 Եւ ասէ Դաւիթ ցԳադ, [20]վասնզ է ինձ
յամենայն կողմանց՝ յոյժ. բայց արդ
անկայց ի ձեռս Տեառն, զի բազումք են

[12]ԵԲԲ. իշխանք զօրուն [13]ԵԲԲ. բանակեցան յԱ-
րոյեր [14]ԵԲԲ. ի Յազեր [15]ԵԲԲ. յերկիրն
Թաբթիմոդացւոյ, եւ եկին ի Դանեւտան [16]ԵԲԲ.
յամրոցն [17]ԵԲԲ. Յուդայ [18]ԵԲԲ. Դաւթի
[19]ԵԲԲ. զեւթն [20]ԵԲԲ. Տագնապ է ինձ

գթութիւնք նորա [1]յոյժ, եւ մի՛ անկայց
ի ձեռս մարդոյ. [1]եւ ընտրեաց իւր
Դաւիթ զմանն. եւ էին աւուրք հնձոյ
15 ցորենոյ." Եւ ետ Տէր մահ յիսրայէլ յա-
ռաւօտէ մինչեւ [2]ցճաշակժամ. եւ սկսաւ
սատակումն ի ժողովրդեանն", եւ մեռաւ
ի ժողովրդենէ անտի ի Դանայ մինչեւ
ցԲերսաբէէ՝ եւհմանասուն հազար արանց։
16 Եւ ձգեաց հրեշտակն [1]Աստուծոյ զձեռն
իւր յերուսաղէմ ապականել զնա. եւ
մխիթարեցաւ Տէր ի վերայ չարեացն,
եւ ասէ ցհրեշտակն որ ապականէր
զժողովուրդն, Շատ է, արդ ահիմակա
զձեռն քո. եւ հրեշտակն Տեառն կայր
17 առ կալովն Առնեայ Յեբուսացւոյ։ Եւ
ասէ Դաւիթ ցՏէր, իրրեւ եառես զհրեշ-
տակն որ հարկանէր զժողովուրդն, ասէ,
Ահաւասիկ կամ, ես մեղայ, ես [1]հովիւս
յանցեայ, եւ զդբա ոչխարդ զի՞ արա-
րին. եղիցի ձեռն քո յիս եւ ի տուն
հօր իմոյ։
18 Եւ եկն Գադ առ Դաւիթ յաւուրսն յայն-
միկ եւ ասէ ցնա, Ել եւ կանգնեա Տեառն
19 սեղան ի կալն Առնեայ Յեբուսացւոյ։ Եւ
ել Դաւիթ ըստ բանին Գադայ, որպէս
20 եւ պատուիրեաց նմա Տէր։ Եւ [3]խոնար-
հեցաւ Առնա իրրեւ" եառես զարքայ եւ
զծառայան նորա երթեալս առ նա, եւ
ել առ նա եւ երկիր եպազ [4]Տեառն ի
21 վերայ երեսաց իւրոց յերկիր։ Եւ ասէ
Առնա, Զի՞ է զի եկն տէր իմ արքայ
առ ծառայ իւր։ Եւ ասէ Դաւիթ, Գնել
ի քէն զկալս, չինել սեղան Տեառն. զի
զադարեսցէ ապականութիւն ի ժողո-
22 վրդենէն։ Եւ ասէ Առնա ցԴաւիթ,
Առցէ եւ մատուսցէ տէր իմ արքայ
[1]Տեառն, որպէս եւ հաճոյ իցէ առաջի
աչաց նորա. ահաւասիկ եզինքս յողջա-
կէզ, եւ անիւքդ եւ կահ եզանացդ ի վայոց
23 Զամենայն ետ [5]Առնա արքայի". Եւ ասէ
Առնա ցարքայ, Տէր Աստուած քո [6]օրհ-
24 նեսցէ զքեզ։ Եւ ասէ արքայ ցԱռնա,
Ոչ այդպէս, այլ գնելով գնեցից ի քէն
գնոց, եւ ոչ մատուցից Տեառն Աստուծոյ
իմոյ ողջակէզ ձրի. եւ գնեաց Դաւիթ
զկալն եւ զեզինսն արծաթով չիսուն սկզ։
25 Եւ չինեաց անդ Դաւիթ սեղան Տեառն
[1]Աստուծոյ, եւ եհան ողջակէզս եւ խա-
զաղականս ի վերայ նորա։ Եւ [7]յաւել
Սոզոմոն ի սեղանն չետոյ, զի վոքր էր
զառաջինն։ Եւ լուաւ Տէր" երկրին,
եւ արգիլաւ սատակումն չիսրայէլ։

---

[1] ՑԵԲԲ· պ-ով-ոե [2] ԵԲԲ· ի սահմանեալ ժամանակն
[3] ԵԲԲ· Հայեցաւ Առնա, եւ
[4] ԵԲԲ· արքայի [5] ԵԲԲ· Առնա արքայ՝ արքայի
[6] ԵԲԲ· ընկալցի [7] ԵԲԲ· մատուցաւ աղերս առ
Տէր վասն

ԳԼՈՒԽՔ ԵՐՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

	Գլ.	Հմր.
Զի ցուրտ ցաւով վտանգէր Դաւիթ, եւ զի ժուժկալ գտաւ առ Աբիսագ՝ փոխանակ Բերսաբեայ իրացն։	Ա.	1
Զի Ադոնիա անձամբ թագաւորել ջանայր։	Ա.	5
Թէ զինչ խրատ ետ Նաթան մարգարէ Բերսաբէի զՍողոմոնէ, եւ կամ զինչ խօսեցաւ ընդ Դաւիթ։	Ա.	11
Զի հրամանաւ Դաւիթի թագաւորեաց Սողոմոն, եւ նստաւ յաթոռն Դաւիթի։	Ա.	28
Զի ձեռամբ ուխտի արձակեաց Սողոմոն զԱդոնիա ի տուն իւր։	Ա.	50
Զի պատուէր ետ Դաւիթ Սողոմոնի յաստուածային եւ ի մարդկային, եւ ինքն ննջեաց ընդ հարս իւր։	Բ.	1
Թէ յորպիսի պատճառս սպան Սողոմոն զԱդոնիա եւ զՅովաբ, եւ մերժեաց զԱբիաթար Իմաւմբեան, և կացոյց զԱդոկ Եղիազարեան։	Բ.	13
Զի ա՛ռ Սողոմոն զդուստր Փարաւոնի, եւ վասն շինուածոց և ողջակիզաց ի կարճոյ։	Բ.	35
Ցիշէ աստ եւ վասն քաղաքացն զոր շինեաց յետ շինուելեան տաճարին։	Բ.	35
Թէ յինչափի պատճառս սպան Սողոմոն զՍեմէի որդի Գերեայ։	Բ.	35
Զի հազար ողջակէզս մատոյց Սողոմոն ի Գաբաւոն ի վերայ սեղանոյն զոր տրար Բեսելիէլ, որ կայր անդ առաջի խորանին զոր կանգնեաց Մովսէս։	Գ.	1
Երեւեցաւ Տէր Սողոմոնի եւ ասէ, Խնդրեա զոր ինչ կամիս. եւ խրատեաց զիմաստութիւն. եւ եաս նմա։	Գ.	5
Զի արար նա դատաստան ի մէջ երկուց կանանց։	Գ.	16
Վասն իշխանացն եւ երկոտասան գործակալացն ի վերայ Իսրայէլի, ամ սոյ ամոյ տալ ռոճիկ տանն Սողոմոնի. եւ վասն աւուր աւուր ծախիցն, եւ վասն կատաց եւ ձիոց նորա։	Դ.	1
Թէ իմաստնացաւ Սողոմոն քան զամենայն մարդիկ, եւ խօսեցաւ առակս եւ օրհնութիւնս, զիպայտից՝ զընձասնոց եւ զձկանց։	Դ.	29
Զի օգնէր Ւրիրամ փայտիւ, եւ սկսաւ Սողոմոն շինել զտունն Տեառն յանուն քարանց։	Ե.	1
Թէ զինչ խօսեցաւ Տէր ընդ Սողոմոնի ի շինելն զտունն. եւ Հանգամանք մանրապատում վասն շինուածոց տաճարին, եւ վասն սեանցն եւ ծովուն, եւ վասն տան դատերն Փարաւոնի։	Զ.	11
Երկրորդելով բովանդակ զպղնձեղէն գործն, եւ յաւելու վասն ոսկի սեղանոցն եւ վասն աշտանակացն եւ այլոց կահից։	Է.	13
Զի տարաւ Սողոմոն ամենայն եկեղեցեաւն Իսրայէլի զտապանակն ի Ներքս ի դաբիրն ընդ քերովբէից. եւս զամենայն սպասս արգելիցն տաճարին, եւ Հանին ողջակէզս։	Է.	51
Զի յերին փառք Տեառն զտունն ամպով, եւ թէ զինչ խօսեցաւ Սողոմոն։	Ը.	10
Զի օրհնեաց Սողոմոն զԱստուած Իսրայելի որ ուխտեաց Դաւթի՝ թէ Որդի քո Սողոմոն շինեսցէ ինձ տուն։	Ը.	14
Դարձեալ աղօթք Սողոմոնի առ Տէր վասն Հաստատութեան ամենայն Դաւթի։	Ը.	22
Խնդրուածք մարգարէութեամբ վասն բնակելոյ Տեառն ի տաճարին եւ մարմնանալոյն Քրիստոսի, եւ վասն լսելոյ Տեառն ամենայն խնդրոյ աղօթից։	Ը.	26
Թէ զիարդ օրհնեաց զՏէր յետ աղօթիցն, եւ յորդորեաց զժողովուրդն հաստատել յԱստուած։	Ը.	53
Զի զաւուրս չորեքտասան արար տօն մեծ ամենայն բազմութեամբն Իսրայելի, եւ նաւակատիս տաճարին։	Ը.	62
Երեւեցաւ Տէր Սողոմոնի կրկին անգամ խոստմամբք եւ սպառնալեօք։ Եւ զի Ւրիրամ օգնէր Սողոմոնի, եւ զի նաւք բերէին Սողոմոնի ոսկի։	Թ.	2
Զի եկն սիկիհն Սաբայ պատարագօք առ Սողոմոն։	Ժ.	1
Վասն ոսկի նիզակացն եւ փղոսկրեայ աթոռոյն եւ այլոց կահից եւ բազմութեան գանձուցն Սողոմոնի։	Ժ.	16
Թէ կնասէր գոլով Սողոմոն յաճախեաց առնուլ իւր կանայս, որք հեռացուցին զնա յԱստուծոյ։	ԺԱ.	1
Զի խոստացաւ Սողոմոն յԱստուծոյ գՀետ գարշելեացն, եւ բարկացաւ Տէր պատուել զթագաւորութիւնն ի տանէ նորա։	ԺԱ.	4
Զի յարոյց Տէր սատան Սողոմոնի զՀադեր Եդովմայեցի զփախուցեալն յԵգիպտոս, եւ զԻասոն Դամասկացի։	ԺԱ.	14
Զի Աքիա Սիլովացի խոստացաւ Ներոբովամայ նաբատեանց զթագաւորութիւն տասն ցեղիցն Իսրայէլի, եւ նա յարհէն Սողոմոնի փախեաւ յԵգիպտոս։	ԺԱ.	26
Թագաւորեաց Ռոբովամ, եւ խնդրեաց ժողովուրդն ի նմանէ թեթեւութիւն հարկին. եւ թէ զինչ խրատեցին զնա ծերքն, եւ կամ զինչ մանկտին։	ԺԲ.	43
Զի եթող Ռոբովամ զկորհուրդ ծերոցն անմտութեամբ։	ԺԲ.	12
Զի վասն խիստ պատասխանւոյն ճեղքե-		

	Գլ.	Հմր.
ցան տաճն ցեղքն ի Նմանէ։	ԺԶ.	16
Եւ զի արհամարհեալ զնա՝ քարկոծեցին զՀարկապետն Նորա։	ԺԸ.	18
Զի թագաւորեցոյց իւր Իսրայէլ զՅերոբովամ Նաբատեանց, եւ Իսրովամ կազմէր պատերազմել։	ԺԸ.	20
Զի արգել Տէր զՅերոբովամ չպատերազմել։ Նե զի արար Յերոբովամ վերկուս երինջան ի պաշտօն Իսրայելի, եւ ինքն իակ զոհէր։	ԺԸ.	22
Անդ հասեալ մարգարէն բանիւ Աստուծոյ պատուհասաց զսեղանն, եւ գօսացոյց զձեռն Յերոբովամայ, եւ դարձաւ ինքն ի գնալ։	ԺԹ.	1
Զի նենգեալ նմա մարդ արէն ծեր որ ի Բեթէլ դարձոյց զնա ուտել հաց. եւ ի գնալն անդրէն եհեղձ զնա առեւծ, եւ ծերն թաղեաց զնա։ Նե պատգամ Տեառն բարկութեամբ ի ձեռն Աքիայ Սիլովացւոյ ի վերայ տանն Յերոբովամայ, եւ մահ Նորա. եւ զի Նաբատ որդի Նորա տիրեաց ընդ Նորա։	ԺԹ.	11
Զի ի չարիս հատաւ Նոքովամ. եւ յաւուրս Նորա ել Սաւսակիմ Եգիպտացի յԵրուսաղէմ, և առ զգանձս տաճարին։	ԺԹ.	21
Ցութեստան ամին Յերոբովամայ թագաւորէ Աբիա, եւ գնաց Նա ի մեղս հօր իւրոյ։	ԺԹ.	30
Ի քսան ամին Յերոբովամայ թագաւորէ Ասա, եւ արար ուղղութիւն. եւ վարձեաց զարքային Ասորւոց ընդդէմ Բաասայ արքայի Իսրայելի։	ԺԿ.	8
Ի չորրորդ ամին Ասայի սպան Բաասա զնաբատ, եւ թագաւորեաց ամս քսան եւ չորս եւ արար չարիս. եւ ի քսան եւ ութ ամին Ասայի թագաւորեաց Ելա որդի Բաասայ ամս երկուս, եւ սպանաւ։	ԺԿ.	24
Յերեսուն ամի Ասայի թագաւորեաց Զամբրի աւուրս եւթն, եւ պրեաց զնա Ամբի, եւ թագաւորեաց ամն երկոտասան, եւ չինեաց զԹամարիա, եւ արար չարիս եւ մեռաւ։	ԺՋ.	15
Յերեսներորդ ութերորդ ամին Ասայի՝ թագաւորէ Աքաաբ որդի Ամբեայ՝ ամս քսան եւ երկուս. եւ չինեաց զԵրուսաղէմ։	ԺՋ.	28
Յաւուրս Աքաաբու փակեցան երկինք		

	Գլ.	Հմր.
յանձրեւոյ, եւ եկն Եղիա ի Սարեփթա, ուր եւ յարոյց զորդի կնոջն որ զնա ընկալաւ։	ԺԿ.	1
Հրաման ա՛ւ Եղիա, եւ պատահեալ Աքաաբու՝ հրամայեաց ժողովել զԻսրայէլ եւ զմարգարէսն Յեզաբելոյ ի Կարմէղոս։	ԺԿ.	1
Թէ դիարդ այպանեաց դբուբմն վասն անօդուտ զոհին։	ԺՀ.	20
Նե թէ դիարդ ինքն փառաւորեաց զԱստուած սուրբ պատարագաւն, եւ կոտորեաց դբուբմն Բելայ։	ԺՀ.	30
Զի յաղօթս Եղիայի եղեւ անձրեւ մեծ, եւ զի սպառնացաւ Յեզաբէլ սպանանել զնեղիա։	ԺՀ.	41
Երկուցեալ Եղիայի եւ կերակրեալ ի հրեշտակէ, գնաց այնու զաւուրս քառասուն եւ եկն ի Քորեբ. եւ ամբաստան լեալ Տեառն զԻսրայէլէ, հրաման ի Տեառնէ առեալ եկն եւ կոչեաց զնեղիսէ։	ԺՓ.	3
Արքայն Ասորւոցպաշարեաց զՍամարիա, եւ բանիւ Տեառն եղ Աքաաբ եւթն հաղարօքն, եւ յաղթեաց նմա։	Ի.	1
Կրկին անգամ յաղթեալ ըմբռնեաց զարքայն Ասորւոց, և արձակեաց։	Ի.	26
Զի վասն այնր բանի գանել ետ զինքն մարգարէն, եւ բանիւ Տեառն սպառնացաւ ի վերայ Աքաաբու։	Ի.	35
Զի ի պատճառս այգւոյն իւրոյ նենգ կրեալ ի Յեզաբելայ քարկոծեցաւ Նաբովէ, եւ թէ սպաց ընդ այնր Աքաաբ։	ԻԱ.	1
Պատգամ վրիժուց ի Տեառնէ վասն այնր ի ձեռն Եղիայի առ տունն Աքաաբու։	ԻԱ.	17
Պատրաստեցան Աքաաբ եւ Յովսափատ արքայ Յուդայ պատերազմել ընդ Ասամաթ Գաղաադու, եւ սուտ մարգարէքն քաջալերէին։	ԻԲ.	2
Ըստ բանին Տեառն ի ձեռն Միքայի սպանաւ Աքաաբ ի պատերազմի անդ։	ԻԲ.	13
Յամին չորրորդի Աքաաբու թագաւորեաց Յովսափատ որդի Ասայի ամն քսան եւ հինգ, արար ուղղութիւն եւ մեռաւ։	ԻԲ.	41
Յամին եւթնուտասներորդի Յովսափատայ թագաւորեաց Իսրայէլի Աքազիա որդի Աքաաբու ամն երկուս, եւ արար չարիս եւ մեռաւ։	ԻԲ.	52

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

ԵՐԿՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ եղև արքայ Դաւիթ ծերացեալ եւ անցեալ զաւուրքք, եւ ծածկէին
2 զնա հանդերձիւք եւ ոչ ջեռնոյր։ Եւ ասեն ծառայքն նորա, խնդրեսցին տեառն մերոյ արքայի աղջիկ մի կոյս, եւ կացցէ առաջի արքայի եւ եղիցի զարմանալ, եւ
3 ննջեսցէ ընդ նմա եւ ջեռցի տէր մեր արքայ։ Եւ խնդրեցին աղջիկ մի գեղեցիկ յամենայն սահմանացն Իսրայելի, եւ գտին զԱբիսակ Սոմնացի, եւ ածին
4 զնա առ արքայ։ Եւ էր աղջիկն գեղեցիկ յոյժ, եւ [1]ջեռուցանէր զարքայ եւ պաշտէր զնա. եւ արքայ ոչ գիտայ զնա։
5 Եւ Ադոնիա որդի Ագիթայ ամբարձնայր. ասէ, Ես թագաւորեսիմ. եւ արար իւր կառս եւ հնձեալս, եւ յիսուն այր սուր-
6 հանդակս ընթանալ առաջի նորա։ Եւ հայրն ոչ արգելոյր զնա, եւ ոչ երբեք ասէր՝ Թէ Ընդէր արարեր զայդ. եւ ինքն էր գեղեցիկ տեսանելով, եւ զնա
7 ծնաւ յետ Աբիսողոմայ։ Եւ եղեն բանք նորա ընդ Յովաբայ որդւոյ Շարուհեայ եւ ընդ Աբիաթարայ քահանայի. եւ
8 օգնէին Ադոնիայ։ Եւ Սադովկ քահանայ եւ Բանեա որդի Յովիդայեայ եւ Նաթան մարգարէ եւ Սեմէի եւ Ռէի, եւ [2]որդիք զօրաւորք Դաւթի չէին զնետ
9 Ադոնիայ։ Եւ եղեն Ադոնիա ոչխարս եւ եղինս եւ [3]գառինս առ վիմին Զոռոհեթայ, որ է մօտ [4]յերկիրն Ռոգելայ. եւ կոչեաց զամենայն զեղբարս իւր զորդիս արքայի, եւ զամենայն զարս Յուդայ
10 զծառայս արքայի. եւ զՆաթան մարգարէ եւ զԲանեա եւ զզօրաւորսն եւ զՍողոմոն զեղբայր իւր ոչ կոչեաց։
11 Եւ խօսեցաւ Նաթան [2]մարգարէ ընդ Բերսաբեայ մօր Սողոմոնի եւ ասէ, Ո՞չ լուար զի թագաւորեաց Ադոնիա որդի
12 Ագիթայ, եւ տէր մեր [2]արքայ Դաւիթ ոչ գիտայ։ Եւ արդ եկ տաց քեզ խրատ, եւ ապրեցուսցես զանձն քո եւ զանձն
13 որդւոյ քո Սողոմոնի։ Երթ մուտ առ արքայ Դաւիթ, եւ խօսեսցիս ընդ նմա եւ ասասցես, Ո՞չ դու, տէր իմ արքայ, երդուար աղախնոյ քումմէ եւ ասացեր Թէ Սողոմոն որդի քո թագաւորեսցէ յետ իմ, եւ նա նստցի յաթոռ իմ. եւ այն
14 զինչ է զի թագաւորեաց Ադոնիա։ Եւ անա մինչդեռ դու խօսիցիս անդ ընդ արքայի, ես մտից եւ լցից զբանս քո։
15 Եւ եմուտ Բերսաբէէ առ արքայ ի սենեակն. եւ արքայ ծերացեալ էր յոյժ, եւ Աբիսակ Սոմնացի կայր ի սպասու-
16 արքայի։ Խոնարհեցաւ Բերսաբէէ եւ երկիր եպազ արքայի։ Եւ ասէ արքայ,
17 Զի՞ է քեզ։ Եւ նա ասէ, Տէր իմ արքայ, դու երդուար ի Տէր Աստուած քո՝ աղախնոյ քումմէ եւ ասացեր, Թէ Սողոմոն որդի քո թագաւորեսցէ յետ իմ, եւ
18 նա նստցի յաթոռ իմ. Եւ անա Ադոնիա թագաւորեաց, եւ դու, տէր իմ արքայ,
19 ոչ գիտացեր. Եւ եղեն արջառս եւ ոչխարս եւ [3]գառինս բազումս, եւ կոչեաց զամենայն որդիս արքայի եւ զԱբիաթար քահանայ եւ զՅովաբ իշխան զօրուն. եւ զՍողոմոն զծառայ քո ոչ կոչեաց։
20 Եւ, տէր իմ արքայ, աչք ամենայն Իսրայելի ի քեզ են, պատմել նոցա Թէ ո՞ նստցի յաթոռ տեառն իմոյ արքայի յետ
21 նորա. Եւ եղիցի՝ եթէ ննջեսցէ տէր իմ արքայ ընդ հարս իւր, լինիցիմ ես եւ որդի իմ Սողոմոն վճասապարտք։
22 Եւ մինչդեռ նա խօսէր ընդ արքային,
23 եկն Նաթան մարգարէ։ Եւ պատմեցաւ արքայի, ասեն, Աւասիկ Նաթան մարգարէ. եւ եմուտ առաջի արքայի, եւ երկիր եպազ արքայի ի վերայ երեսաց
24 իւրոց յերկիր. Եւ ասէ Նաթան, Տէր իմ արքայ, դո՞ւ ասացեր եթէ Ադոնիա թագաւորեսցէ զկնի իմ, եւ նա նստցի յա-

[1] ԵԲէր. գարմանէր [2] ՅԵբէր. պ֊ոփ [3] ՅԵբէր. պարարակս [4] ՅԵբէր. յաղբեւրն

25 թոռ իմում. Զի էլ այսօր եւ եղեն արջառս եւ ոչխարս եւ [1]պահնս բազումս, եւ կոչեաց զամենայն որդիսն արքայի եւ զիշխանս գօրուն եւ զԱբիաթար քահանայ. եւ ահա ուտեն եւ ըմպեն առաջի նորա, եւ ասեն, կեցցէ արքայ Ադո-
26 նիա։ Եւ զիս զծառայ քո, եւ զՍադովկ քահանայ եւ զԲանեա որդի Յովիադայեայ եւ զՍողոմոն զծառայ քո ոչ
27 կոչեաց։ Եթէ ի նմանէ տեսեալ իմոյ արքայի եղեւ բանս այս, եւ ոչ յայտներ ծառայի քումդ թէ ո՞վ նստցի յաթոռ տեառն իմոյ արքայի յետ նորա։
28 Պատասխանի եւ Դաւիթ արքայ եւ ասէ, կոչեցէք առ իս զԲերսաբէէ։ Եւ եմուտ առաջի նորա, եւ եկաց յանդի-
29 ման նորա։ Եւ երդուաւ արքայ եւ ասէ, կենդանի է Տէր, որ փրկեաց
30 զանձն իմ յամենայն նեղութենէ, Զի որպէս երդուայ ի Տէր Աստուած Իսրայէլի եւ ասեմ, եթէ Սողոմոն որդի քո թագաւորեսցէ յետ իմ, եւ նա նստցի յաթոռ իմ փոխանակ իմ, եթէ ոչ այս-
31 պէս արարից յաւուր յայսմիկ։ Եւ խոնարհեցաւ Բերսաբէէ ի վերայ երեսաց իւրոց յերկիր, եւ երկիր եպազ արքայի եւ ասէ, կեցցէ տէր իմ արքայ Դաւիթ յաւիտեան։
32 Եւ ասէ արքայ Դաւիթ, կոչեցէք առ իս զՍադովկ քահանայ եւ զՆաթան մարգարէ եւ զԲանեա որդի Յովիադայեայ։
33 Եւ մտին առաջի արքայի։ Եւ ասէ ցնոսա արքայ, Առէք ընդ ձեզ զծառայս տեառն ձերոյ, եւ հեծուցէք զՍողոմոն զորդի իմ ի ջորւոյն իմում, եւ իջուցէք զնա
34 ի Գիհոն. Եւ օծցեն զնա անդ Սադովկ քահանայ եւ Նաթան մարգարէ ի թագաւոր ի վերայ Իսրայէլի. եւ փող հարէք եղջերեաւն եւ ասասջիք, կեցցէ
35 արքայ Սողոմոն. Եւ ելջիք զկնի նորա, եւ մտցէ եւ նստցի յաթոռ իմում, եւ նա թագաւորեսցէ ընդ իմ. եւ ես հատուցանել հրամայեցի նմա առաջնորդ ի վերայ
36 Իսրայէլի եւ Յուդայ։ Եւ պատասխանի Բանեա որդի Յովիադայեայ արքային եւ ասէ, Եղիցի այդպէս. հաստատեսցէ Տէր Աստուած տեառն իմոյ ար-
37 քային։ Եւ որպէս էր Տէր ընդ տեառն իմում արքային, եղիցի եւ ընդ Սողոմոնի. եւ մեծացուսցէ զաթոռ նորա քան զաթոռ տեառն իմոյ արքային Դաւիթ

[1] Եբր. պաթարակ

38 Եւ էջ Սադովկ քահանայ եւ Նաթան մարգարէ եւ Բանեա որդի Յովիադայեայ, եւ Քերեթիմն եւ Փելեթիմն. եւ հեծուցին զՍողոմոն ի ջորւոյն արքային Դաւթի,
39 եւ տարան զնա ի Գիհոն։ Եւ առ Սադովկ քահանայ զեղջերն իւղոյ ի խորանէն եւ օծ զՍողոմոն. եւ հնչեալ զեղջերեայ, եւ ասէ ամենայն ժողո-
40 վուրդն, կեցցէ արքայ Սողոմոն։ Եւ ել ամենայն ժողովուրդն զհետ նորա, եւ պար առեալ պարուք ուրախ լինէին մեծաւ ուրախութեամբ, եւ հնչեաց երկիրն ի բարբառոյ նոցա։
41 Եւ լուաւ Ադոնիա եւ ամենայն բազմականք նորա, եւ կատարեցին նոքա զուտելն. եւ լուաւ Յովաբ զձայն եղջերոյն, եւ ասէ, Ընդէ՞ր է բարբառն որ
42 հնչէ ի քաղաքին։ Եւ մինչդեռ նա խօսէր ահա Յովնաթան որդի Աբիաթարայ քահանայի եկաց. եւ ասէ Ադոնիա, Մուտ դի այր զօրութեան ես դու, եւ
43 բարութիւնս աւետարանես։ Պատասխանի եւ Յովնաթան եւ ասէ ցԱդոնիա, Եւ կարի իսկ քաջ. տէր մեր արքայ
44 Դաւիթ թագաւորեցոյց զՍողոմոն. Եւ առաքեաց ընդ նմա արքայ զՍադովկ քահանայ եւ զՆաթան մարգարէ եւ զԲանեա որդի Յովիադայեայ, եւ զքերեթին եւ զՓելեթին, եւ հեծուցին զնա
45 ի ջորւոյն արքային. Եւ օծին զնա Սադովկ քահանայ եւ Նաթան մարգարէ ի թագաւոր ի Գիհոն. եւ ելին անտի ուրախութեամբ, եւ հնչեաց քաղաքն. եւ
46 այն է բարբառն զոր լուաւուք։ Եւ նստաւ Սողոմոն յաթոռն արքայութեան.
47 Եւ մեծն ծառայքն արքային օրհնել զտէր մեր զարքայ Դաւիթ եւ ասեն, Մեծացուսցէ Աստուած[2] զանուն Սողոմոնի որդւոյ քո քան զանուն քո, եւ մեծացուսցէ զաթոռ նորա քան զաթոռ քո։ Եւ երկիր եպազ արքայ յանկողնէ իւր-
48 մէ։ Եւ այսպէս ասաց արքայ, Օրհնեալ է Տէր Աստուած Իսրայէլի՝ որ ետ ինձ այսօր ի զաւակէ իմմէ նստել յա-
49 թոռ իմ, եւ աչք իմ տեսանեն։ Եւ զարհուրեցան եւ յարեան ամենայն կոչնականքն Ադոնիայ, եւ գնացին այր իւրաքանչիւր զճանապարհ իւր։
50 Եւ Ադոնիա երկեաւ յերեսաց Սողոմոնի, եւ յարեաւ չոգաւ բռնեն եհար
51 զեղջերայ սեղանոյն։ Եւ ազգ եղեւ

[2] Եբրայեցերէն յաւելու, քո

Սողոմոնի եւ ասեն, Ահա Ադոնիա երկաւ յարքայէ Սողոմոնէ եւ ունի զդէջերաց սեղանոյն եւ ասէ, երդուիցի ինձ այսօր արքայ Սողոմոն, եթէ ոչ սպանցէ
52 զծառայ իւր սրով։ Եւ ասէ Սողոմոն, եթէ լինիցի յորդի զօրութեան, ոչ անկցի ի հերոյ նորա մազ մի ի գետին, ապա եթէ չարութիւն գտցի ի նմա՝ մահու
53 մեռցի։ Եւ առաքեաց արքայ Սողոմոն, եւ իջոյց զնա ի վերուստ ի սեղանոյ անտի։ Եւ եմուտ երկիր եպագ արքային Սողոմոնի. եւ ասէ ցնա Սողոմոն, երթ ի տուն քո։

Գլ. Բ

1 Եւ մերձեցան աւուրք Դաւթի մեռանելոյ, եւ պատուհասանի կա Սողոմոնի
2 որդւոյ իւրում, եւ ասէ, Ես երթամ զճանապարհ ամենայն երկրի. եւ դու
3 զօրասցիս եւ եղիցես յայր. Եւ պահեսցես զպահպանութիւնս Տեառն Աստուծոյ քո, գնալ ի ճանապարհս նորա եւ պահել զպատուիրանս նորա եւ զիրաւունս եւ զպատուհասանս եւ զվկայութիւնս նորա, զդրեալս յօրէնս Մովսիսի. զի [1]ի միտ առնուցուս զոր առնիցես, բան ամենայնի զոր պատուիրեմ քեզ"։
4 Զի հաստատեսցէ Տէր զբան իւր զոր խօսեցաւ վասն իմ եւ ասէ, եթէ պահեսցեն որդիք քո զճանապարհս իւրեանց գնալ առաջի իմ ճշմարտութեամբ յամենայն սրտէ իւրեանց եւ յամենայն անձնէ իւրեանց, ասէ՝ Մի [2]սատակեսցի
5 այր յաթոռոյ Իսրայելի։ Եւ դու գիտես, զոր [3]ինչ արար ինձ Յովաբ որդի Շարուհեայ, զոր ինչ արար երկուս իշխանս զօրաց Իսրայելի՝ զՆեր եւ զԱմեսայի որդի Յեթերայ, եւ սպան զնոսա, եւ [3]խրնդրեաց զարիւն պատերազմի ի խաղաղութիւն, եւ եա զարիւն [4]անպարտ ի կանս իւրում," ի մէջ իւր եւ ի կօշիկս
6 ոտից իւրոց։ Եւ արասցես բան իմաստութեան քումմ, եւ ոչ իջուսցես զալիս
7 նորա խաղաղութեամբ ի գժոխս։ Եւ որդւոցն Բերզելեայ Գաղաադացւոյ արասցես ողորմութիւն, եւ եղիցին ընդ այնոսիկ որ ուտիցին ի սեղանոյ քումմէ. զի այնպէս մերձեցան յիս ի փախչել ի-
8 մումբ յերեսաց Աբիսողոմայ եղբօր քո։ Եւ ահա ընդ քեզ է Սեմէի որդի Գերայ որդւոյ Յեմինայ Բաւուրիմացւոյ. եւ նա անէծ պիս անէծս ցաւագինս՝ յաւուր յորում գնացեալ երթայի [5]ի Բանակս. եւ նա էջ ընդ առաջ իմ ի Յորդանան, եւ երդուայ նմա ի Տէր եւ ասեմ եթէ Ոչ
9 սպանից զքեզ սրով։ Եւ մի անպարտ առնիցես գնա, զի այր իմաստուն ես դու, գիտասցիր որպէս առնիցես նմա, եւ իջուսցես զալիս նորա արեամբ ի գժոխս։
10 Եւ ննջեաց Դաւիթ ընդ հարս իւր, եւ
11 թաղեցաւ ի քաղաքի Դաւթի։ Եւ աւուրք զոր թագաւորեաց Դաւիթ ի վերայ Իսրայելի՝ ամք քառասուն. ի Քեբրոն թագաւորեաց ամս եւթն, եւ յԵրուսաղէմ թագաւորեաց ամս երեսուն եւ երիս։
12 Եւ Սողոմոն նստաւ յաթոռ Դաւթի հօր [6]իւրոյ, ամաց երկոտասանից, եւ պատրաստեցաւ" թագաւորութիւնն նորա յոյժ։
13 Եւ եմուտ Ադոնիա որդի Ագիթայ առ Բերսաբէէ մայր Սողոմոնի, եւ [7]երկիր եպագ նմա. եւ" ասէ, Խաղաղութի՞ւն է մատդ քո. եւ ասէ, Խաղաղութիւն
14 է. Եւ ասէ, Բանք ինչ են իմ ընդ քեզ.
15 եւ ասէ, Խօսեաց. Եւ ասէ ցնա, Դու ինքնին գիտես զի իմ էր թագաւորութիւնն, եւ յիմ վերայ եդ ամենայն Իսրայէլ զերեսս իւր ի թագաւոր, եւ դարձաւ թագաւորութիւնն եւ եգեւ եղբօր
16 իմում. զի ի Տեառնէ եղեւ նմա։ Եւ արդ խնդիր մի խնդրեմ ի քէն, մի դարձուցաներ զերեսս քո յինէն։ Եւ ասէ
17 ցնա Բերսաբէէ, Խօսեաց։ Եւ ասէ ցնա, Աստացես ցՍողոմոն արքայ, զի ոչ դարձուցէ զերեսս իւր ի քէն, եւ տացէ
18 ինձ զԱբիսաք Սունացի կնութեան։ Եւ ասէ Բերսաբէէ, Բարւոք է, ես խօսեցայց վասն քո ընդ արքային։
19 Եւ եմուտ Բերսաբէէ առ արքայ Սողոմոն խօսել ընդ նմա վասն Ադոնիայ. եւ յոտն եկաց արքայ ընդ առաջ նորա, եւ [8]համբուրեաց զնա". եւ նստաւ յաթոռ իւրում, եւ եդաւ աթոռ մօրն ար-
20 քային, եւ նստաւ ընդ աջմէ նորա. Եւ ասէ ցնա, Խնդիր մի փոքր խնդրեմ ես ի քէն, մի դարձուցանիցես զերեսս քո յինէն։ Եւ ասէ արքայ, Խնդրեա, մայր իմ. զի ոչ դարձուցից զերեսս իմ ի քէն։

[1] ԵՔէ. յաջողեսցես յամենայնի զոր առնիցես, եւ յո եւ դառնայցես [2] ԵՔէ. պակասեսցի քեզ
[3] ԵՔէ. եդ [4] ԵՔէ. պատերազմի
[5] ԵՔէ. ի Մանայիմ [6] ԵՔէ. իւրոյ և Հաստատեցաւ
[7] ԵՔէ. Բերսաբէէ [8] ԵՔէ. երկիր եպագ նմա

21 Եւ ասէ , Տայլ Աբիսակ Սունամացի Ագո-
22 նիայ եղբօր քումմ կնութիան : Պատա-
խանի եա արքայ Սողոմոն եւ ասէ ցմայր
իւր , Եւ ընդէ՞ր խնդրիցես զԱբիսակ
Սունամացի Ադոնիայ , այլ խնդրեա նմա
զթագաւորութիւնս . զի նա երէց եղ-
բայր է քան զիս , [1]եւ նորա Աբիաթար
քահանայ եւ Յովաբ որդի Շարուհեայ
23 սպարապետ եւ բարեկամ՚՚ : Եւ երդուաւ
արքայ Սողոմոն ի Տէր եւ ասէ , Օն եւ
օն արասցէ ինձ Աստուած եւ օն եւ օն
յաւելցէ՝ եթէ ոչ հակառակ անձին իւ-
24 րոյ խօսեցաւ Ադոնիա զբանդ զայդ : Եւ
արդ կենդանի է Տէր , որ [2]արար զիս
եւ եդ՚՚ յաթոռ Դաւթի հօր իմոյ , եւ նա
արար ինձ տուն որպէս եւ խօսեցաւ
Տէր , եթէ ոչ այսօր իսկ մեռցի Ադոնիա
25 Եւ առաքեաց արքայ Սողոմոն ի ձեռն
Բանեայ որդւոյ Յովիպայեայ , եւ սպան
զնա , եւ մեռաւ [3]Ադոնիա յաւուր
յայնմիկ՚՚ :
26 Եւ ցԱբիաթար քահանայ ասէ արքայ,
երթ յԱնաթովթ յագարակ քո , զի այր
մահու ես [4]զու յաւուր յայսմիկ . եւ ոչ՚՚
սպանից զքեզ , զի կրեցեր զտապանակ
տիրոջն Տեառն [5]առաջի հօր իմոյ . եւ
զի չարչարեցար ամենայն ուրեք ուր
27 չարչարեցաւ հայր իմ : Եւ եհան Սողո-
մոն զԱբիաթար չլինել քահանայ Տեառն,
առ ի կատարել բանին Տեառն զոր
խօսեցաւ ի վերայ տանն Հեղիայ ի Սիլո
28 Եւ լուր եհաս մինչեւ առ Յովաբ. զի
Յովաբ միացեալ էր զինս Ադոնիայ , եւ
ոչ միացաւ զինս [6]Սողոմոնի. եւ փախ-
եաւ Յովաբ ի խորանն Տեառն , եւ բռնե-
29 եհար զեղջերայ սեղանոյն : Եւ ապ
եղեւ [7]Սողոմոնի եւ ասեն , թէ փախ-
եաւ Յովաբ ի խորանն Տեառն . եւ ահա
ունի զեղջերայ սեղանոյն : [3]Եւ առաք-
եաց Սողոմոն առ Յովաբ եւ ասէ , Զի՞
եղեւ քեզ՝ զի փախեար ի սեղանդ : Եւ
ասէ Յովաբ , Զի երկեայ յերեսաց քոց,
եւ փախեայ առ Տէր՚՚ Եւ առաքեաց
Սողոմոն արքայ զԲանեա որդի Յովի-
դայեայ եւ ասէ , Երթ սպան զնա , [3]եւ
30 թաղեա զնա՚՚ Եւ չտաւ Բանեա [3]որդի
Յովիպայեայ առ Յովաբ՚՚ի խորանն Տեառն,
եւ ասէ ցնա , Այսպէս ասէ արքայ , ել
այսր . եւ ասէ Յովաբ , Չկամիմ , քան-
զի աստէն մեռանիմ . եւ դարձաւ Բանե-
եա [3]որդի Յովիպայեայ՚՚ , եւ խօսեցաւ
ընդ արքայի եւ ասէ , Զայս ինչ խօսե-
ցաւ Յովաբ , եւ զայս ինչ ետ պատաս-
31 խանի : Եւ ասէ ցնա արքայ , Երթ եւ
արա նմա որպէս եւ ասացն , եւ սպան
զնա եւ թաղեա զնա , եւ բարձցես այս-
օր զարիւնն զուր զոր եհեղ Յովաբ՝
32 յինէն եւ ի տանէ հօր իմոյ : Դարձցէ
Տէր զարիւն [3]անիրաւութեան նորա ի
գլուխ նորա , որպէս պատահեաց եր-
կուց արանց արդարոց եւ քաջաց քան
զնա , եւ սպան զնոսա սրով , եւ հայր
իմ ոչ գիտաց [3]զարիւն նոցա՚՚ , զԱբեն-
ներ որդի Ներեայ՝ զօգարապետն Իս-
րայելի , եւ զԱմեսայի որդի Յեթերայ՝
33 զօգարապետն Յուդայ : Եւ դարձան
արիւնք նոցա ի գլուխ գորա եւ ի գլուխ
զաւակի գորա յաւիտեան . եւ Դաւթի
եւ զաւակի իւրոյ եւ տան իւրոյ եւ
աթոռոյ իւրոյ հղիցի խաղաղութիւն ի
34 Տեառնէ յաւիտեան : Եւ ել Բանեա որդի
Յովիպայեայ , եւ պատահեաց Յովաբայ
եւ սպան զնա , եւ թաղեաց զնա ի տան
35 իւրում յանապատին : Եւ ետ արքայ
զԲանեա որդի Յովիպայեայ փոխանակ
նորա ի զօրավարութիւն , [3]եւ թագա-
ւորութիւնն ուղղէր յերուսաղէմ՚՚ եւ
զԱպիաթար քահանայ ետ արքայ փոխանակ
Աբիաթարու [3]ի քահանայապետի Տեառն :

Եւ ետ Տէր Սողոմոնի հանճար եւ խ-
մաստութիւն քաղում յոյժ , եւ լայնու-
թիւն սրտի իբրեւ զաւազ ուս եղր ծո-
վու . եւ բազմացաւ հանճար Սողոմոնի
քան զամենայն որդւոց նահապետաց , եւ
քան զիմաստունս Եգիպտացւոց : Եւ առ
ղրուսարն Փարաւոնի , եւ ած զնա ի
քաղաքն Դաւթի , մինչեւ կիսատարել
նորա զտունն իւր : Եւ նախ զտունն
Տեառն եւ զպարիսպն երուսաղէմի չոր-
չանակի զեւթն ամարաւ եւ կատարեաց :
Եւ էին Սողոմոնի ութհարիւրեայ հազար
բեռնակրաց , եւ ութսուն հազար քա-
րատաշաց ի լերինն : Եւ արար Սողոմոն
զծովն եւ զմոլեան եւ զաւազանսն մե-
ծամեծս , եւ զսիւնսն եւ զքրատուխան
սրահին եւ զծովն պղնձի : Եւ չինեաց
պարտաւանդակն մահարձանօք , եւ ան-
կանեաց զքաղաքն Դաւթի : Եւ ապա
դուստրն Փարաւոնի եկ ի քաղաքէն

[1] ՆԲԳ. եւ Նմա, եւ Աբիաթարայ քահանայի , եւ
Յովաբայ որդւոյ Շարուհեայ [2]ՆԲԳ. Հաս-
տատեաց զիս , եւ ետ Նստել ինձ [3]ՆԲԳ.
պակաս [4]ՆԲԳ. զու, եւ յաւուր յայսմիկ ոչ
[5]ՆԲԳ. ԵՀովայի առաջի Դաւթի [6]ՆԲԳ. Աբի-
սողմայ [7]ՆԲԳ. Սողոմոնի արքայի

Դաւթի ի տուն իւր զոր չինեաց նմա. եւ ապա չինեաց զբարձաւանդակն ։ Եւ Սողոմոն մատուցանէր երիցս ի տարւոջ ողջակէզս եւ խաղաղականս ի վերայ սեղանոյն զոր չինեաց Տեառն, եւ արկանէր խունկս առաջի Տեառն. եւ կատարեաց զտունն ։

Եւ այս են իշխանք որ կային ի վերայ գործոյն Սողոմոնի. երեք հազար եւ վեց հարեւր գործավարք ժողովրդեանն, որ գործէին զգործն ։ Եւ չինեաց զԱսուր եւ զՄակզով եւ զԱզեր եւ զբնեթորոն վերին եւ զբաղաաթ. բայց յետ չինելոյն նորա զտունն Տեառն եւ զպարիսպն երուսաղէմի չուրջանակի՝ ապա չինեաց զքաղաքն զայնոսիկ ։

Եւ մինչդեռ կենդանի էր Դաւիթ՝ պատուիրեաց Սողոմոնի եւ ասէ, Ահա ընդ քեզ է Սեմէի որդի Գերեայ՝ որդի զաւակի Յեմինեայ ի Բեզրոնէ. նա անէծ զիս անէծս ցաւագինս յաւուր յորում գնացեալ երթայի ի Բանակս ։ Եւ նա էջ ընդ առաջ իմ յափն Յորդանանու. եւ երդուայ նմա ի Տէր, թէ Ոչ մեռցիս սրով. եւ արդ մի առնիցես զնա անպարտ, զի այր իմաստուն ես դու, եւ գիտացես զինչ առնիցես նմա. եւ իջուսցես զալիս նորա արեամբ ի գժոխս։"

36 Եւ առաքեաց արքայ եւ կոչեաց զՍեմէի, եւ ասէ ցնա, Շինեա դու քեզ տուն յերուսաղէմ, եւ նիստ անդ, եւ
37 մի ուրեք ելանիցես անտի. Եւ եղիցի յաւուր ելանելոյ քո թէ անցանիցես ընդ հեղեղատն Կեդրոնի, գիտելով գիտասջիր զի մահու մեռանիցիս, եւ արիւն քո ի գլուխ քո եղիցի ։ [1]Եւ երդուաւ
38 նմա արքայ յաւուր յայնմիկ ։" Եւ ասէ Սեմէի ցարքայ, Բարի է բանդ զոր խօսեցար, այր իմ արքայ, այնպէս առնացէ ծառայ քո ։ Եւ նստաւ Սեմէի յերուսաղէմ [2]ամս երիս"։
39 Եւ եղեւ յետ երից ամաց փախեան ծառայք երկու Սեմէայ առ Անքուս որդի Մաաքայ արքայ Գեթեայ. եւ ազդ եղեւ Սեմէայ եւ ասեն, Ահա [1]երկու ծառայք
40 քո ի Գեթ են ։ Յարեաւ Սեմէի եւ հանդերձեաց զէշ իւր, եւ գնաց առ Անքուս իմնդրել զծառայս իւր. եւ չոգաւ Սեմէի եւ ած զծառայս իւր ի Գեթեայ։
41 Եւ պատմեցաւ Սողոմոնի, ասեն, [թէ] Չոգաւ Սեմէի յերուսաղէմ ի Գեթ եւ
42 [3]դարձոյց զծառայս իւր"։ Եւ առաքեաց արքայ եւ կոչեաց զՍեմէի եւ ասէ ցնա. Ո՞չ երդմնեցուցի զքեզ ի Տէր, եւ եղի քեզ վկայութիւն եւ ասեմ, Յաւուր յորում ելանիցես յերուսաղէմ եւ երթայցես յայլ կամ յայրեակ՝ գիտելով գիտասջիր զի մահու մեռանիցիս. եւ ասացեր ցիս, Բարի է բանդ զոր լուայ։
43 Եւ արդ զիա՞րդ է զի ոչ պահեցեր զերդումն Տեառն եւ զպատուէրն զոր պատ-
44 ուիրեցի քեզ։ Եւ ասէ արքայ ցՍեմէի, Դու ինքնին գիտես [4]զչարութիւն քո"՝ զոր գիտէ սիրտ քո զոր արարեր ընդ Դաւթի հօր իմում. եւ հատոյց Տէր
45 զչարիսն քո ի գլուխ քո. Եւ արքայ Սողոմոն օրհնեալ է, եւ աթոռ Դաւթի [5]պատրաստ առաջի Տեառն յաւիտեան։
46 Հրամայեաց արքայ [1]Սողոմոն Բանեայ որդւոյ Յովիդայեայ, եւ ել սպան զնա, եւ մեռաւ ։[6]

Գլ. Գ

1 Եւ [1]ի հաստատել թագաւորութեանն Սողոմոնի" խնամութիւն արար Սողոմոն ընդ Փարաւոնի արքային Եգիպտացւոց, եւ առ զդուստր նորա եւ ած ի քաղաք Դաւթի, մինչեւ կատարեաց չինել զտուն իւր եւ զտուն Տեառն եւ զպարիսպն
2 երուսաղէմի չուրջանակի ։ Սակայն ժողովուրդն [7]արկանէին խունկս" ի վերայ բարձանց, զի ոչ չինեցաւ տուն անուան Տեառն մինչեւ ցաւուրսն ցայնոսիկ ։
3 Եւ սիրեաց Սողոմոն զՏէր գնալ ըստ հրամանաց Դաւթի հօր իւրոյ, բայց ի բարձունս եւ նա զոհէր եւ արկանէր
4 խունկս ։ Եւ յարեաւ գնաց արքայ ի Գաբաւոն զոհել անդ, զի նա առաւել բարձրադոյն եւ մեծ էր. հազար ողջակէզ եհան Սողոմոն ի վերայ սեղանոյն
5 այնորիկ ։ Ի Գաբաւոն երեւեցաւ Տէր Սողոմոնի ի քուն գիշերոյ, եւ ասէ Տէր ցՍողոմոն, [8]Խնդրեա դու քեզ խնդիր
6 զինչ"։ Եւ ասէ Սողոմոն, Դու արարեր ողորմութիւն մեծ ընդ Դաւթի հօր իմոյ, որպէս եւ չրջեցաւ առաջի քո ճշմարտութեամբ եւ արդարութեամբ եւ ուղղութեամբ սրտի ընդ քեզ. եւ պա-

[1] ՅԵբբ. գոլոթ [2] ԵբբՀ. աւուրս քազում

[3] ԵբբՀ. դարձաւ [4] ԵբբՀ. զամենայն չարութիւն [5] ԵբբՀ. եղիցի հաստատուն [6] ԵբբՀեբեդ յօ-ելօ-, Եւ թագաւորութիւնն հաստատեցաւ ի ձեռս Սողոմոնի ։ [7] ԵբբՀ. զոհէր [8] ԵբբՀ. Խնդրեա ինչ, տաց քեզ

հեցեր նմա զողորմութիւնս զայս մեծ՝
սակ որպէսզի նորա նահել յամօտ նորա
7 որպէս եւ յաւուր յայմիկ։ Եւ ասէ,
Տէր Աստուած իմ, զոր [1]նաւուր գծառայ
քո փախանակ Դաւթի հօր իմոյ, եւ ես
եմ մանուկ փոքր եւ ոչ գիտեմ զկոյս եւ
8 զմուտս իմ. Եւ ծառայ քո ի մէջ ժողո-
վրդեանն քո է զոր ընտրեցեր ժողո-
վուրդ քո՝ բազում, անթիւ եւ անհա-
9 մար ի բազմութենէ։ Եւ տացես ծառայի
քումմի սիրտ լսելոյ եւ դատելոյ զժողո-
վուրդ քո արդարութեամբ, խելամուտ
լինել ի մէջ բարւոյ եւ չարի. քանզի ո՞
կարիցէ դատել զայս ժողովուրդ քո
10 զծանր։ Եւ հաճոյ թուեցաւ բանն ա-
ռաջի Տեառն, զի խնդրեաց Սողոմոն
11 զայն բան։ Եւ ասէ ցնա [2]Տէր, Փոխա-
նակ զի խնդրեցեր յինէն զբանդ զայդ, եւ
ոչ խնդրեցեր քեզ աւուրս բազումս, եւ
ոչ խնդրեցեր քեզ մեծութիւն, եւ ոչ
խնդրեցեր զանձինս թշնամեացդ քոյ,
այլ խնդրեցեր դու քեզ խելամուտ լի-
12 նել լսելոյ դերաւունս, Ահա արարի ըստ
բանիդ քումմ, ահա տուու քեզ սիրտ ի-
մաստուն եւ հանճարեղ. իրրեւ զքեզ
ոչ ոք եղեւ յառաջ քան զքեզ, եւ յետ
13 քո ոչ ոք յարիցէ նմանօղ քեզ։ Եւ զոր
ոչն եւս խնդրեցեր՝ տուու քեզ, զմեծու-
թիւնն եւ զփառս, որպէս ոչ ոք եղեւ
նման քեզ ի թագաւորս յամենայն աւուրս
14 քո։ Եւ եթէ դնասցես ի ճանապարհս
իմ պահել զհրամանս իմ եւ զպատուի-
րանս իմ որպէս եւ դնաց Դաւիթ հայր
15 քո, եւ բազմացուցից զաւուրս քո։ Եւ
զարթեաւ Սողոմոն եւ ահա երազ էր.
եւ յարեաւ եկն յԵրուսաղէմ, եւ եկաց
առաջի սնդանոյն ուղղութեան տապանակի
ուխտին Տեառն [3]ի Սիոն. եւ մատոյց
ողջակէզս եւ արար խաղաղականս, եւ
արար խրախուճիս մեծ [3]իւր եւ՝ ա-
մենայն ծառայից իւրոց։
16 Յայնժամ երեւեցան երկու կանայք
պոռնիկք՝ արքայի, եւ կային առաջի
17 նորա։ Եւ ասէ մի կինն, Ցիս ասէր իմ.
ես եւ կինս այս էաք ի միում տան,
18 եւ ծնայ[4] ի տանն. Եւ եղեւ յաւուրն
երրորդի[5] ծնաւ եւ կինս այս. եւ մեք
առանձինն էաք, եւ ոչ ոք զոյր ընդ
մեզ ի տանն՝ բայ ի մէնջ երկոցունց ի
19 տանն։ Եւ մեռաւ որդի տորա ի գիշերի,
20 քանզի ննջեաց ի վերայ նորա. Եւ յար-
եաւ ի հասարակ գիշերի, եւ առ զմա-
նուկն իմ ի դրկաց իմոց, եւ ազախէն
քո ի քուն էր. եւ ննջեցոյց զնա ի ծոց
իւրում, եւ զորդին իւր զմեռեալն ննջե-
21 ցոյց ի ծոց իմում։ Եւ յարեայ ընդ ա-
ուաւօտն դիւցուազանել զորդին իմ, եւ
նա էր մեռեալ. եւ հայեցայ ընդ նա
այգուընն, եւ ահա չէր որդին իմ զոր
22 ծնայ։ Եւ ասէ մեւս կինն, Ոչ, այլ որդի
քո է մեռեալն, եւ որդի իմ կենդանին։
Եւ մեւսն ասէ, Այլ որդի իմ կեն-
դանին, եւ որդի քո մեռեալն. եւ խօսեցան
23 առաջի արքայի։ Եւ [6]ասէ ցնոսա ար-
քայ, Դու ասես թէ՝ Այս որդի իմ է որ
կենդանին է, եւ որդի դորա մեռեալն.
եւ [7]դու ասես՝, Ոչ, այլ որդին քո մեռ-
24 եալն, եւ որդին իմ կենդանին։ Եւ ա-
ռէ արքայ, Առէք առ իս զսուր. եւ լի-
25 նին զսուրն առաջի արքայի։ Եւ ասէ
արքայ, Կտրեցէք զմանուկն [3]զանդիսից
կենդանի՝ յերկուս, եւ տուք զկէսն
26 նորա դմա, եւ զկէսն նորա նմա։ Եւ
պատասխանի ետու կինն որոյ որդին կեն-
դանի էր, եւ ասէ ցարքայ, քանզի խոո-
վեցան ողիք նորա ի վերայ որդւոյն
իւրոյ, եւ ասէ, Ցիս տէր, տուք նմա
զմանուկն կենդանի, եւ մանու մի՛
սպանանէք զնա։ Եւ մեւսն ասէր, Մի՛
իմ լիցի՝ եւ մի՛ զորա, կտրեցէք ընդ
27 մէջ։ Պատասխանի ետու արքայ եւ ասէ,
Տուք դմա զմանուկն կենդանի, [3]որ ա-
սայ թէ Տուք զդա նմա՝ եւ մանու մի՛
28 սպանանէք զդա. Նա է մայր դորա։ Եւ
լուաւ ամենայն Իսրայէլ զդատաստանն
զոր դատեցաւ արքայ, եւ զահի հարան
յերեսաց արքայի. զի տեսին թէ իմաս-
տութիւն Աստուծոյ է ի նմա առնել
իրաւունս։

ԳԼ. Դ

1 Եւ էր արքայ Սողոմոն թագաւորեալ
2 ի վերայ [8]Իսրայէլի։ Եւ այս էին իշխանք
նորա. Ազարիա որդի Սադովկայ՝ քա-
3 հանայ, Եղիարեփ եւ Աքիա որդիք Սի-
սայ՝ դպիրք, եւ Յովսափատ որդի Աքիւ-
4 դայ՝ ի վերայ յիշատակաց, Եւ Բանեա
որդի Յովիդայեայ՝ ի վերայ զօրաց, եւ
5 Սադովկ եւ Աբիաթար՝ քահանայք, Եւ

[1] ԵԲբ. թագաւորեցուցեր [2] ԵԲբ. Աստուած
[3] ՅԵԲբ. զոմոռ [4] ԵԲբ-ԵՀբէՆ յ-ե-լը-, առ նմա
[5] ԵԲբ-ԵՀբէՆ յ-ե-լը-, ծնանելոյ իմոյ
[6] ԵԲբ. ասէ արքայ, Սա ասէ, [7] ԵԲբ. սա ասէ
[8] ԵԲբ. ամենայն Իսրայէլի

Ազարիա որդի Նաթանայ՝ ի վերայ դործավարացն, եւ Զաբուդ որդի Նաթա-
6 նայ՝ [1]քահանայ բարեկամ արքային, եւ Աքիսար էր հրամանատար, [2]եւ Եղիակ՝
հազարապետ, եւ Եղիսէ որդի Սափայ՝ չահագ," եւ Ադոնիրամ որդի Աբդովայ՝
7 ի վերայ հարկացն։ Եւ էին Սողոմոնի երկոտասան դործակալք ի վերայ ամե-
նայն Իսրայելի, տալ առաքիկ արքային եւ
8 տան նորա մէն մի ամիս ի տարւոջ։ Եւ
այս են անուանք նոցա [3]Բէնհուր որդի Ու-
9 րայ՝ ի լերինն Եփրեմի. [2]Մի որդի Դե-
կարայ՝ ի Մաքմաս եւ ի Սաղաբիմ եւ
ի Բեթսամիս եւ յԱյիղոմ մինչեւ ցԲե-
10 թանան. Որդի Եղայ՝ յԱրաբովթին, նորա
Սոքով եւ ամենայն երկիրն Ոփերայ.
11 Որդի Աբինադաբայ ամենայն Նեփա-
դովր, որոյ Տափաթ դուստր Սողոմոնի՝
12 էր նորա կնութեան. Բանան՝ որդի Ա-
քիղովթայ, [4]զԹանաք եւ զՄաքդով եւ
զամենայն տունն Սանայ, որ առ Եղ-
սարթանաս", ի ներքոյ Եզրայելի, եւ ի
Բեթսանայ մինչեւ յԱբէլմաուլա, եւ
13 մինչեւ [5]զՄամրրաղա. Եկմաազ որդի"
Գաբերայ՝ յԱռամովթ Գաղաադ, նորա
Ահինովթ Յայիրայ որդւոյ Մանասէի ի
Գաղաադ, նորա վիճակն Արդոբ որ ի
Բասան. վաթսուն քաղաքք մեծամեծք
14 պարսպաւորք պղնձանիգք. Աքինադար
15 որդի Ադդովայ՝ ի Մայենեմ. Աքիմաս ի
Նեփթաղիմ. սա առ զՄասեմաթ դուստր
16 Սողոմոնի կնութեան. Բանասս որդի
17 Բուսեայ՝ յԱսեր եւ ի Բաղովթ. Յով-
18 սափատ որդի Փարուայ՝ յԻսաքար. Սե-
19 մէի որդի Եղայ՝ ի Բենիամին. Գաբեր որդի
Աբրայի՝ յերկրին Գաղաադու, յերկրին
Սեհոնի արքային Ամովրհացւոց եւ Ովգայ
արքային Բասանու. [6]Նաբիւթ յերկրին"։
20 Յուդա եւ Իսրայէլ բազում էր իբ-
րեւ զաւազ առ եզր ծովու բազմու-
թեամբ. ուտէին եւ ըմպէին եւ ուրախ
21 լինէին։ Եւ Սողոմոն իշխան էր [7]թա-
գաւորութեանց՝ ի գետոյ երկրին այլազգ-
եացն" մինչեւ ի սահմանս Եգիպտոսի.
բերէին պատարագս եւ ծառայէին Սո-
ղոմոնի զամենայն աւուրս կենաց նորա։
22 Եւ այս ռոճիկք էին Սողոմոնի ի միում
աւուր. երեսուն քոռ նաչխոյ, եւ [8]քա-
23 ռասուն քոռ ալեր գերմակոյ, Եւ տասն
եզն ընտիր, եւ քսան կով արօտական,
եւ հարեւր ոչխար. թող զեղջերու եւ
դայծեամն եւ զընտիր ընտիր հաւուց
24 պարարելոց։ Զի էր իշխան ամենայնի
յայնկոյս գետոյն՝ ի Թաւփասէ մինչեւ
ցԳազա, ամենայն թագաւորութեանց
յայնմ կողմանէ գետոյն. եւ էր նմա
խաղաղութիւն յամենայն կողմանց չուր-
25 ջանակի։ Եւ բնակեալ էր Յուդա եւ
Իսրայէլ վստահութեամբ, իւրաքանչիւր
ոք ընդ որթով իւրով եւ ընդ թզենեաւ
իւրով [9]ուտէին եւ ըմպէին" ի Դանայ
մինչեւ ցԲերսաբէէ զամենայն աւուրս
Սողոմոնի։
26 Եւ էին Սողոմոնի քառասուն հազար
[9]մատակ ձիոց ի կառս, եւ երկոտասան
27 հազար [10]երիվարաց։ Եւ տային [11]այնպէս
ոռճիկ գործակալքն արքային Սողոմոնի,
եւ զամենայն հրամանս սեղանոյն ար-
քայի" զիւրաքանչիւր ամիս, եւ ոչ
28 սխալէին բան մի։ Նոյնպէս եւ զգարին
եւ դյարդն [12]երիվարացն եւ կառամատացն"
բերէին ի տեղին ուր [13]էր արքայ" իւրա-
քանչիւր ոք ըստ սակի իւրում։
29 Եւ ետ [14]Տէր իմաստութիւն Սողո-
մոնի եւ հանճար բազում յոյժ, եւ զե-
զումն սրտի իբրեւ զաւազ առ եզր ծո-
30 վու։ Եւ բազմացաւ իմաստութիւնն
Սողոմոնի յոյժ քան զհանճար ամենայն
[15]նահապետաց մարդկան" եւ քան զամե-
31 նայն իմաստունս եգիպտոսի։ Եւ իմաստ-
նացաւ քան զամենայն մարդիկ, [16]եւ
իմաստնացաւ քան զԵթան Զարաացի",
եւ զԵման, եւ զՔաղքաղ եւ զԴարդան
որդիս Մաւուսայ. եւ էր անուանի յամե-
32 նայն ազգս չուրջանակի։ Եւ խօսեցաւ
Սողոմոն երիս հազարս առակս. եւ էին
33 օրհնութիւնք նորա [17]հինգ հազար"։ Եւ
խօսեցաւ զխոտոյ՝ զկեդրենատիայէն
որ ի Լիբանան, մինչեւ զդոպային որ
յորմն ելանէ. եւ խօսեցաւ զանասնոց
34 եւ զթռչնոց եւ [18]զկանաց։ Եւ գային

[1] Կամ, նախարար. [2] 3ԵԲԲ. գոլոխ [3] ԵԲԲ. Բենհուր [4] ԵԲԲ. ի Թանաք եւ ի Մակգոլ եւ յամենայն տանն Սաանայ որ առ Սարթանայ [5] ԵԲԲ. յայնկոյս Յեկմաազոյ։ (13) Որդի [6] ԵԲԲ. և մի գործակալ յերկրին [7] ԵԲԲ. ամենայն թագաւորութեանց ի Գետոյն մինչեւ յերկիրն Փղշտացւոց, եւ [8] ԵԲԲ. վաթսուն [9] ԵԲԲ. տասպատանք [10] ԵԲԲ. հեծելոց [11] ԵԲԲ. ոռճիկ գործակալքն այնոքիկ արքային Սողոմոնի և ամենեցունց որ մերձենային ի սեղանն արքային Սողոմոնի [12] ԵԲԲ. ձիոց եւ երիվարաց [13] ԵԲԲ. էին՝ [14] ԵԲԲ. Աստուած [15] ԵԲԲ. որդւոց արեւելից [16] ԵԲԲ. քան զԵթան Եզրահացի, [17] ԵԲԲ. Հազար եւ հինգ [18] ԵԲԲ. զզեռնոց եւ զկանաց

[1]ամենայն ազգք՝ լսել զիմաստութիւնն Սողոմոնի, յամենայն թագաւորաց երկրի՝ որ լսէին զիմաստութիւն նորա։

Գլ. Ե

1 Եւ առաքեաց Քիրամ արքայ Տիւրոսի զծառայս իւր առ Սողոմոն, քանզի լուաւ
2 զԴաւիթ զամենայն աւուրս։ Եւ առաքեաց
3 նայ Սողոմոն առ Քիրամ եւ ասէ, Դուք ինքնին գիտէք զԴաւիթ զհայր իմ, զի ոչ կարաց չինել տուն անուան Տեառն Աստուծոյ [2]իմոյ յերեսաց պատերազմացն որ չուրջ էին զնովաւ, մինչեւ տայ
4 Տեառն զնոսա ընդ ոտիւք նորա։ Եւ արդ յաղագս Տէր Աստուած իմ չուրջ զինեւ, եւ ոչ գոյ մեզաւակար եւ ոչ պատահար
5 չար։ Եւ ահա ես ասեմ չինել տուն անուան Տեառն Աստուծոյ իմոյ, որպէս խոսեցաւ Տէր [3]Աստուած ընդ Դաւիթ հայր իմում եւ ասէ, Որդի քո զոր տացի փոխանակ քո յաթոռ քո՝ նա չինեսցէ
6 տուն անուան իմոյ։ Եւ արդ հրամայեա տուր, եւ հարցեն ինձ [4]փայտս ի Լիբանանէ. եւ ահա ծառայք իմ եղիցին ընդ ծառայս քո. եւ զվարձս [5]ծառայութեան քո՝ տացի քեզ ըստ ամենայնի զոր եւ ասացեր. զի դու ինքնին գիտաս, զի ոչ գոյ մեր այր որ գիտէ հարկանել փայտս իրրեւ զՍիդոնացիս։
7 Եւ եղեւ իրրեւ լուաւ Քիրամ զբանս Սողոմոնի՝ ուրախ եղեւ յոյժ եւ ասէ, Օրհնեալ է Տէր [3]Աստուած այսօր, որ ետ որդի իմաստուն Դաւիթ ի վերայ
8 բազում ժողովրդեանն այնորիկ։ Եւ առաքեաց Քիրամ առ Սողոմոն եւ ասէ, Լուայ զանն ամենայնի զոր առաքեցեր առ իս. ես արարից զամենայն
9 զկամս [6]քո. եղեւնափայտս եւ մայրս՝ իջուսցեն ծառայք իմ ի Լիբանանէ ի ծով, եւ ես արարից զնոսա լաստս ի ծովս մինչեւ տանիցի յոր առաքեսցես առ իս, եւ [7]տանից յերդ՝ եւ դու առցես, եւ արասցես զկամս իմ տալ հաց
10 տան իմոյ։ Եւ տայր Քիրամ Սողոմոնի եղեւնափայտս եւ մայրս, զամենայն կամս նորա։ Եւ Սողոմոն տայր Քիրամայ քանի հազար գրա [8]գորներով եւ քանի հազար ասխար [9]ձիթոյ՝ սկսեալ, զոր տայր Սողոմոն Քիրամայ [9]ի տարւոջէ
12 եւ ետ Տէր իմաստութիւն Սողոմոնի, որպէս եւ խոստեցաւ [10]նմա. եւ էր խաղաղութիւն ի մէջ Քիրամայ եւ ի մէջ Սողոմոնի, եւ ախտեցին ուխտ
13 ի մէջ իւրեանց։ Եւ արկ արքայ Սողոմոն մարզանարկ յամենայն Իսրայէլ, եւ էր հարկն երեք
14 տասն հազար արանց։ Եւ առաքէր զնոսա ի Լիբանան տասն հազար յամսեան, փոխանակաւ կայր ամիս մի ի Լիբանան եւ երկուս ամիս ի տունս իւրեանց. եւ Ադոնիրամ ի վերայ հարկին։
15 Եւ էին Սողոմոնի եւթանասուն հազար բեռնակրաց եւ ութսուն հազար [10]քարհատաց ի լերինն, Թող պիտանա
16 կացուցեալս Սողոմոնի ի վերայ գործոյն, երիք հազարք եւ [11]հինգ հարիւր, ի վերայ ժողովրդեանն որ գործէին զգործն։
17 Եւ հրամայեաց արքայ եւ բերին վէմս մեծամեծս, քարինս պատուականս ի
18 հիմն տանին, եւ քարինս [12]անուաչս։ Եւ տաշեցին [13]արպիքն Սողոմոնի եւ [13]արպիքն Քիրամայ եւ [14]Բիբլոսեցիքն. եւ պատրաստեցին զվայրն եւ զքար[3]զերիս առն՝ չինել զտունն։

Գլ. Զ

1 Եւ եղեւ յամին չորեքհարիւրերորդի եւ [15]քառասներորդի ելանելոյ որդւոցն Իսրայելի յԵգիպտոսէ, յամին չորրորդի [16]ամսեանն երկրորդի՝ թագաւորելոյ արքայի Սողոմոնի ի վերայ Իսրայելի՝ չինէր զտունն Տեառն։
2 Եւ տունն զոր չինեաց արքայ Սողոմոն Տեառն՝ վաթսուն կանգնաչափ երկայնութիւնն նորա, եւ քսան կանգնաչափ լայնութիւնն նորա, եւ [17]քսան կանգնաչափ
3 բարձրութիւնն նորա։ Եւ կամարակապ առագի [18]տանն, ի քսան կանգնոյ երկայ-

---

[1]ԵԲԲ. յամենայն ազգաց [2]ԵԲԲ. Իւրոյ [3]ՅԵԲԲ. պահաւ [4]ԵԲԲ. եղեւնին [5]ԵԲԲ. ծառայից քոց [6]ԵԲԲ. քո զեղեւնափայտից եւ զմայր փայտից։ [7]ԵԲԲ. քակեցից զնոսա անդ

[8]ԵԲԲ. գորներով ի կերակուր տան նորա եւ քսան քոռ իւղոյ [9]ԵԲԲ. ամ ըստ ամէ [10]ԵԲԲ. Համաձաղաց [11]ԵԲԲ. երեք [12]ԵԲԲ. կոփածոյս [13]ՅԵԲԲ. շինողք [14]ՅԵԲԲ. Գեբալացիքն [15]ՅԵԲԲ. ամենեքրորդի [16]ԵԲԲ. յամենեան Զիւս որ է ամիս երկրորդ. [17]ՅԵԲԲ. երեսուն [18]ԵԲԲ. տաճարի տանն

նուիրեն նորա՝ հանդէպ [1]բարձրութեան տանն, եւ ի տան կանգնոյ լայնութիւն նորա՝ առանձի երեսաց տանն. [2]եւ չինա-
4 նայ զառնն եւ կատարեալ զնա՝" եւ արար տանն պատուհանս հայկիկս ծա-
5 ծուկս։ Եւ ած զդրմոիքն տանն [3]պատուարս չուրջանակի՝ առ դրմոիքն տանն չուրջանակի առաջարին եւ դարիրայն. եւ արար [4]կողմանոցս չուրջանակի։
6 Կողմանոցին ներքնոյ՝ ի հինգ կանգնոյ լայնութիւն նորա, եւ միջնոյն՝ ի վեց կանգնոյ լայնութիւն, եւ երրորդին՝ եւթն կանգնոյ լայնութիւն նորա. քանզի ան-
7 չրագատութիւն եղեալ տանն չուրջանակի արտաքուստ կողմանէ տանն, զի մի հարկանիցին ընդ դրմս տանն։ Եւ ի չինել տանն [5]ապառաժ եւ անգործ քա-
8 րամբք չինեցաւ, եւ մուրճ եւ ամենայն ինչ՝ երկաթի ոչ հնչեալ ի չինել նորա։ Եւ զառն [6]կողմանոցին ի ներքոյ աջոյ՝" ուստի տանին, եւ կամարիւք չուրջանակաւ՝ ի միջինն, եւ ի միջնոյն՝
9 յերրորդ յարկին։ Եւ չինեալ զառնն եւ կատարեալ զնա, եւ դրուագեալ զառնն սախտակամածօք պահանգօր եւ յօրինուածովք եղեւնափայտիւ։ Եւ չինեալ
10 [7]զկողակս ամենայն տանն՝", ի հինգ կանգնոյ բարձրութիւն նոցա, եւ պատեալ [8]զկողակն եղեւնափայտիւ։
11 Եւ եղեւ բան Տեառն առ Սողոմոն
12 եւ ասէ, Զառնդ զոր չինես դու, եթէ ըստ հրամանաց իմոց գնասցես եւ զիրաւունս իմ արասցես եւ պահեսցես զամենայն պատուիրանս իմ գալ գնոքօք, հաստատեցից զբան իմ ընդ քեզ՝ զոր
13 խօսեցայ ընդ Դաւիթ հօր քո. Եւ բնակեցայց ի մէջ որդւոցն Իսրայէլի, եւ ոչ թողից զժողովուրդ իմ զԻսրայէլ։
14 Եւ չինեալ Սողոմոն զառնն եւ կա-
15 տարեալ զնա։ Եւ չինեալ զդրմս տանն ի ներքուստ յեղեւնափայտից, ի յատակէ տանն մինչեւ [9]ցորմն եւ մինչեւ ցգեղանն, եւ" պատեալ չուրջանակի փայտիւ ի ներքուստ, եւ դրուագեալ [10]ի ներքոյ տանն կողմանոցօք" մայրիւք։
16 Եւ չինեաց քառն կանգուն [11]ի ծագէ որմոյն զմի կողմանոցն" ի յատակէ տանն մինչեւ գՆեծանան. եւ արար ի ներքոյ կողմանէ նորա [12]զդարբիրն ի սրբութեան"
17 սրբութեանցն։ Ի քառասուն կանգնոյ
18 էր առնն, [13]առաջարն ներքին"։ Եւ դրուագեաց զառնն ի ներքոյ եղեւնափայտիւք [14]զկամարան եւ զկոզակս, եւ զդրօ-
չատաձ" զամենայն յեղեւնափայտից, եւ
19 ոչ երեւէր քարն. [15]Հանդէպ դարիրայն" ի մէջ տանն ի ներքուստ կողմանէ պատրաստանալ, դնել անդ զառապանակ
20 ուխտին Տեառն։ Եւ հանդէպ դարիրայն քառն կանգուն յերկայնութիւն եւ քառն կանգուն ի լայնութիւն, եւ քառն կանգուն ի բարձրութիւն նորա. եւ դրուագեաց զնա ոսկւով ձուլով. եւ [16]արար
21 սեղան եղեւնափայտեալ"։ Եւ դրուագեաց Սողոմոն զառնն ի ներքուստ ոսկւով զտով. եւ [17]հաստատեալ ոսկի բեւեռօք" հանդէպ դարիրայն եւ պատ-
22 եաց զնա ոսկւով։ Եւ զամենայն առնն [18]օծ ոսկւով մինչեւ ի սպառ ամենայն տանն. եւ [19]ամենայն ներքին կողման դարիրայն՝ արար թիթեղունս ոսկիս"։
23 Եւ արար ի ներքս ի դարիրն երկուս քերովբէս ի փայտից [20]նոճից, ի տասն
24 կանգնոյ մեծութիւն միոյն՝ կշռով"։ Եւ ի հինգ կանգնոյ թեւս մի նորա, եւ ի հինգ կանգնոյ թեւն երկրորդ. տասն կանգուն թեւէ ի թեւ թեւոց նորա։
25 Նոյնպէս եւ երկրորդի քերովբէին, միով չափով միութեանգանակութիւն քերովբէիցն։
26 Եւ բարձրութիւն միոյ քերովբէի ի տասն կանգնոյ, նոյնպէս եւ երկրորդի քերով-
27 բէին։ Եւ եդ զերկոսին քերովբէսն ի մէջ տանն ներքնոյ, եւ տարածեալ զթեւս նոցա. եւ հասանէր թեւ միոյն յորմն, եւ հասանէր թեւ քերովբէին երկրորդի՝ յորմն երկրորդ. եւ թեւք նոցա ի մէջ
28 տանն հասանէին թեւէ ի թեւ. Եւ պատեալ զքերովբէսն ոսկւով։
29 Եւ զամենայն որմս տանն չուրջա-

---

[1] ԵԲԲ. լայնութեան [2] 31։ԲԲ. պահեաւ [3] 11.-ԻՆԱ, կողմանոցս կամ յարկս [4] ԵԲԲ. սեղեակս [5] ԵԲԲ. չինեցաւ քարամբք կոփելովք ի քարահատս և մեբեջ և տապար, ամենայն գործի [6] ԵԲԲ. կողմանոցին միջնոյ յաջոյ [7] ԵԲԲ. կողմանոց զամենայն զտաճարն [8] ԵԲԲ. զառն [9] ԵԲԲ. ցորմս ձեղուան [10] ԵԲԲ. զյատակ տանն տախտակամածօք

[11] ԵԲԲ. զկետուստ տանն տախտակամածօք յեղեւնափայտից [12] ԵԲԲ. զդաբիրն, զբրութիւնն [13] ԵԲԲ. այսինքն տաճարն որ առաջի (դաբիրայ) [14] ԵԲԲ. գնդակօք և ծագիկօք փթթելովք [15] ԵԲԲ. Եւ զդաբիրն [16] ԵԲԲ. դրուագեաց զսեղանն եղեւնափայտիւ [17] ԵԲԲ. անցոյց գվարդայն ի շղթայս ոսկիս [18] ԵԲԲ. դրուագեաց [19] ԵԲԲ. զամենայն սեղանն Հանդէպ դաբիրայ դրուագեաց ոսկւով [20] ԵԲԲ. խզղայ, ի տան կանգնոյ բարձրութիւն նորա

Նակի քանզակեալ գրեայց զբչաւ քերթօք
եւ արմաւենիս , եւ [1]գրօչուածս հայկիս"
30 ի ներքսագոյնն եւ յարտաքինն : Եւ զդա-
սակ սանն գրեաւագեայց ոսկւով գնելոք-
նոյն եւ զարտաքնոյն :
31 Եւ զրաց զարիւրայն արար [2]գուբա
ի փայտից [3]գեաց , եւ սեամս հնգեկիւնս ,
32 եւ երկուս գուբս ի փայտից մայրից , եւ
քանզակս ի նոսյանէ մածուցեալս քերթօք
եւ արմաւենիս եւ [4]ծիծեղս նոսա-
եալս" , եւ պատեաց ոսկւով , եւ իջա-
նէր ի վերայ քերովբէիցն եւ արմաւեն-
եացն ոսկին :
33 Այնպէս արար զրաց տաճարին սեամս
34 ի փայտից [4]գեաց չորեքկինս . Եւ երկո-
ցունց գրանցն փայտս մայրս , երկբա-
ցիկս , մի մի գուռն , եւ ծիրանք նոցա
35 երկքայրիկք : Եւ գուռն երկրորդ չբչա-
նակաւ՝ գրօչեալ" ի նմա քերթս եւ ար-
մաւենիս , եւ [5]ծաղուցեալ ծիծեղս ,
եւ պատեալ" ոսկւով իջեալով ի վերայ
յօրինուածոցն :
36 Եւ չինեաց [6]զսրահն ներքին երեք-
կարգեան [7]յանաւաչից , եւ գարիսեայ գործ-
եալ յերեսնափայտից" :
37 Յամին չորրորդի արկ հիմն տանն
Տեառն , յամսեանն Զիւ՝ [8]երկրորդում
38 ամսեանն ," Եւ յամին ետասաներորդի՝
յամսեանն ի Բուլ , այն է ամիան ութ-
րորդ , կատարեցաւ տունն ըստ ամե-
նայն բանի նորա , եւ ըստ ամենայն
յօրինուածոցն իւրոց . եւ չինեաց զնա
զեւեւիս :

Գլ . Է

1 Եւ զիւր տունն չինեաց Սողոմոն զե-
ւրեքտասան ամ , եւ կատարեաց զամե-
նայն զտունն իւր :
2 Եւ չինեաց զտուն անտառին Լիբա-
նանու՝ հարեւր կանգուն երկայնութիւն
եւ լիսուն կանգուն լայնութիւն նորա ,
եւ երեսուն կանգուն բարձրութիւն նո-
րա , [9]եւ երից" կարգաց սեանցն եղեւ
նափայտիւ , եւ [10]ուսք եղեւնեայք ի վե-
3 րայ սեանցն . Եւ [11]էյարկ զառնն ի
վերայ կազմանոցացն սեանցն" . եւ թիւ
սեանցն քառասուն եւ հինգ , եւ հնգե-
4 տասան կարգ : Եւ [12]պատուարք երեք ,
եւ անդրպետք առ անդրպետօք" երեք-
5 կին : Եւ ամենայն դրունք եւ ամենայն
[13]անդրպետք չորեքկուսիք [14]պատուա-
րաւորք , եւ ի դրանէ ի գուռն" երեքկին :
6 Եւ [15]զկամար սեանցն" արար լիսուն
կանգուն յերկայնութիւն եւ երեսուն ի
լայնութիւն , զօդեալ կամարքն հան-
դէպ միմեանց , եւ սեանքն եւ խարիսխք
7 ի զիմաց կազմանէ կամարացն : Եւ զկա-
մարն աթոռոցն ուր դատէր [16]ի կամարի
սեանին՝ արար , եւ յարկ" եղեւնափայ-
տիւք ի յատակէ մինչեւ [17]ցյատակ :
8 Եւ սան նորա յորում նստիցի՝ սրահ
մի կամարակապ ըստ նմին գործոյ . եւ
[18]տուն դստերն Փարաւոնի զոր առ Սո-
զոմոն ըստ նմին օրինակի կամարակապ :
9 Ամենայն ի քարանց պատուականաց ,
չափով [19]յանկոփից կցեալ ընդ միմեանս
ներկարաւոր" ի ներքոյ եւ արտաքոյ , ի
հիմանէ մինչեւ [20]ցյատաստան . եւ ար-
10 տաքուստ ի սրահին մեծի" Հատատեալ
քարամբք մեծամեծօք տասնկանգնէիւք
11 եւ ութկանգնէիւք , եւ իվերուստ կազմա-
նէ քարամբք պատուականօք ըստ նմին
չափոյ [21]անատչիւք , եւ եղեւնափայտիւք :
12 [6]Զսրահն մեծ չուրջանակի երեքկար-
գեանս [22]յանաւաչից , եւ կարգ մի [23]մա-
ծուցեալ եղեւնափայտիւ : Եւ չինեաց
զսրահ տանն Տեառն զներքին կամարաց
տանն Տեառն հանդէպ տաճարին" :
13 Եւ առաքեաց արքայ Սողոմոն , եւ
14 առ զԻրիամ ի Տիւրոսէ , Որդի կնոջ
այրւոյ , եւ նա էր ի ցեղէն Նեփթալի-

---

[1] ՆԲԲ· ծաղիկս փթթեալս [2] ՆԲԲ· փեղկս [3] ՆԲԲ· իւղոյ· Հանդերձ դրանդեօք Հինգերորդ մասն ուրն : (32) Այսպէս երկուս փեղկս ի փայտից իւղոյ· եւ քանդակեաց ի նոսա քանդակս քերթօք եւ արմաւենիս եւ ծաղիկս փթթեալս [4] ՆԲԲ· իւղոյ, չորրորդ մասն ուրն : (34) Եւ փեղկքն երկոքին ի մայր փայտէ · երկու կողք միոյ փեղկին ծալածոյ , եւ երկու կողք միւսոյ փեղկին՝ ծալածոյ : (35) Եւ գրօշեաց [5] ՆԲԲ· ծաղիկս փթթեալս , եւ պատեաց [6] ՆԲԲ· զգաւիթն [7] ՆԲԲ· ի քարինս կոփածոյս , եւ մի կարգի գերան եղեւնափայտեայ [8] ՅՇԲԲ· գաւառ

[9] ՆԲԲ· ի վերայ չորից [10] ՆԲԲ· Հեծանք ծածկեաց եղեւնափայտիւք ի վերուստ զսենեակն որ ի վերայ սեանց [11] ՆԲԲ· լուսանցոյց երեքկին, և պատուհան առ պատուհան [12] ՆԲԲ· դրանցիք [13] ՆԲԲ· ի տեսանել, եւ պատուհան առ պատուհան [14] ՆԲԲ· զբաշն կամարակապ, ուղիղ և վինէ [15] ՆԲԲ· արար ի կամար (սրահ), առանի եւ ծաղկաց [16] ՆԲԲ· Աթոռն, ցեղոյն [17] ՆԲԲ· արար տուն [18] ՆԲԲ· ի կափածոյից աղցելոց աղցիւք [19] ՆԲԲ· ցառաստաղն, եւ արտաքուստ մինչեւ ի գաւիթն մեծ . [20] ՆԲԲ· կոփելովք [21] ՆԲԲ· ի քարանց կոփելոց [22] ՆԲԲ· Հեծանօք եղեւնափայտիւք, նոյնպէս եւ գաւթի տանն Տեառն ներքին, որպես եւ սրահ տանն

մայ, եւ հայր նորա այր Տիւրացի. ձար-
տարապետ պղնձոյ եւ լի արուեստիւ
եւ խմաստութեամբ եւ գիտութեամբ՝
գործել զամենայն գործ պղնձոյ. եւ ե-
մուտ առ արքայ Սողոմոն, եւ արար
15 զամենայն զգործն։ Եւ ձուլեաց վերկո-
ւմն սիւնոն [1]կամարի աւանն", ութ եւ
տասն կանգուն բարձրութիւնն [2]սեանին,
եւ չուրջ զնովաւ չափ [3]չորեքտասան
կանգուն չուրջանակի [4]թմանդութիւնն
սեանն, եւ ի չորից մասանց մասունքն".
16 Նոյնպէս եւ երկրորդ սիւնոն։ Եւ երկուս
խոյակս արար ասել ի վերայ գլխոյ սեանցն
ձոյլ պղնձիա. հինգ կանգուն բարձ-
րութիւնն միոյ խոյակին, եւ հինգ կան-
գուն բարձրութիւնն երկրորդ խոյակին։
17 [5]Եւ արար երկուս վանդակս ծածկել գլխոյակն, եւ արար երկուս եւս վան-
դակս ծածկել զերկրորդ խոյակն, գործ
18 կախազանաւ. Եւ երկոցունց սեանցն
նմանեաւս պղնձիս ի վանդակապատսն,
գործ կախազանաւ, կարգ առ կարգ.
19 եւ այնպէս արար երկրորդի խոյակին ի
վերայ գլխոյ սեանցն", գործ չուչանա-
գործ [6]առ կամարաւ" ի չորից կանգնոյ։
20 [6]Եւ պատեաւր ի վերայ երկոցունց
սեանցն ի վերուստ ի կողմանացայ խոյա-
կին պատեաւր, եւ նմանաձեւացն եր-
կերիւր կարգ" չուրջ զերկրորդիւ խոյա-
21 կան։ Եւ կանգնեաց զսիւնս [7]կամարի
տաճարին, եւ կանգնեաց [8]զմի սիւնոն,
եւ կոչեաց զանուն նորա [9]Յաքաւմ. եւ
կանգնեաց զսիւնն [10]երկրորդ, եւ կոչ-
22 եաց զանուն նորա [11]Բոոզ։ Եւ ի վերայ
գլխոյ սեանցն՝ գործ չուչանագործ. եւ
կատարեցաւ գործ սեանցն։
23 Եւ արար զծովն ձուլածոյ, տասն կան-
գուն չրխմանէ ի չուրին, գործ բոլորչի

[1]ԵԲԲ. պղնձիս [2]ԵԲԲ. միոյ սեանն [3]ԵԲԲ. եր-
կոտասան [4]ՅԱԲԲ. պատ [5]ԵԲԲ. Վարձ հիւս-
կէն վանդակակերպ, չղմնայադործ վանն խո-
յակացն որ ի վերայ գլխոյ սեանցն, եւ բնն վանն
միոյ խոյակի, եւ եւթն վանն միւսոյ խոյակի.
(18) Եւ արար սիւնս, եւ կարգս երկուս նմանա-
ձեւուց չուրջանակի ի վերայ միոյ վանդակակեր-
պին ծածկել զխոյակն որ ի վերայ գլխոյ սեանն.
այնպէս արար երկրորդի խոյակին. (19) Եւ խո-
յակքն որ ի վերայ գլխոյ սեանցն որ ի սրահին
[6]ԵԲԲ. Եւ խոյակք ի վերայ երկոցունց սեանցն եւս
ի վերուստ, առ փորձն առքիներ վանդակա
կերպին. եւ երկերիւր նմանաձեւք կարգաւ
[7]ԵԲԲ. սրահի [8]ԵԲԲ. զաջոյ կողման [9]ԵԲԲ. Յա-
քին, Նչոնակ, Հաստատեսցէ [10]ԵԲԲ. ձախոյ
կողման [11]Նչոնակ զօրութիւն ի նմա

[12]նոյնաձեւ. հինգ կանգուն բարձրու-
թիւն նորա, եւ [13]գոգաւորք երեսաւն եւ
երիւք կանգնովք պատչին" ինա չուր-
24 ջանակի։ Եւ [14]նեցուկք ի ներքոյ նորա՝
չուրջանակի պատչին ինա ի տասն կանգ-
նոյ չուրջանակի", երկու կարգ [15]ուրիթ
ձուլեալք ի ձուլին նորա [4]հաստատեալք։
25 Եւ երկոտասան եզն ի ներքոյ ծովուն.
երեքն հայէին ընդ հիւսիսի, եւ երեքն
հայէին ընդ [16]ծով, եւ երեքն հայէին
ընդ հարաւ, եւ երեքն հայէին ընդ ա-
րեւելս. եւ ծովն ի վերայ նոցա ի վե-
րուստ կոդմանէ. եւ ամենեցունն [17]թի-
26 կունք ի ստէնն"։ Եւ թմանդութիւն նո-
րա [18]թզաւ, եւ չուրն նորա իբրեւ
գգործ չրխման բաժակի. եւ բոյս չու-
չանի ի վերայ նորա. եւ տանէր իբրեւ
երկուս հազարս մարս։
27 Եւ արար [19]մեքենովթս տասն պղնձիս.
[20]հինգ կանգուն երկայնութիւն միոյ մե-
քենովթայ, եւ չորք կանգունք լայնու-
թիւն նորա, եւ [21]վեց կանգուն բարձրու-
28 թիւն նորա։ Եւ այս գործ էր մեքենով-
թացն, [22]խորչք խորչք ի վերայ, եւ խորչք
29 ի մէջ առանցկին։ Եւ ի վերայ խորչիցն
նոցա ի մէջ առանցկին" առեւծք եւ ե-
զինք եւ քերովբէ, եւ ի վերայ [23]առան-
ցկին նոյնպէս ի վերոյ, եւ ի ներքոյ
առեւծուն եւ եզանց՝ ոստիկք գործ գառ
30 ի թմաթի։ Եւ չորք անիւք պղնձիք մի-
ւսի մեքենովթայն եւ առանցք պղնձիք.
եւ ի չորեցունց կողմանց նոցա ուսք
նոցա ի ներքոյ [24]աւազանացն եւ ուսք
ձուլեալք հանդպանք մարդոյ առ ընդհա-
31 րակայք". Եւ բերան նորա ի ներքեւոյ
ի խոյակէն եւ ի վեր կանգնուս. եւ բե-
րան նորա [25]գործ բոլորչի", նոյնպէս ի
կանգնոյ եւ ի կիսոյ թմանդութիւն նո-
րա. եւ առ բերանովք նորա [26]ձախարակ-
եայ հաստատուն" չարեքկուսի եւ ոչ քա-

[12]ԵԲԲ. չուրջանակի [13]ԵԲԲ. ծիր երեսաւն կանգ-
նովք պատէր [14]ԵԲԲ. գնգակք ընդ ծնօտիւ
նորա պատչին ինա չուրջանակի տասն տասն
առ կանգուն [15]ԵԲԲ. գնգակաց [16]ԵԲԲ.
արեւմտեան [17]ՅԱԲԲ. չեռագք ի ներքոյ [18]ԵԲԲ.
ուղղեաւ [19]Նչոնակ՝ խարխխ, այսպէս Է ի սոյնս
[20]ԵԲԲ. չորք [21]ԵԲԲ. երեք [22]ԵԲԲ. սպառուածք
ի նոսա. եւ սպառուածք ի մէջ եզերացն (29)
Եւ ի վերայ սպառուածոց որ ի մէջ եզերացն՝
[23]ԵԲԲ. եզերացն [24]ԵԲԲ. առաջնին ուսք ձուլ-
եալք հանդերձ զարդուք առ ընդհակ միոյ միոյ
[25]ԵԲԲ. բոլորչի գործ խարխխի [26]ԵԲԲ. քանդակք
եւ սպառուածք

32 լորչի։ Եւ չորք անիւք ի ներքոյ [1]հասա-
ստակացն, եւ [2]ձեռք յանիւսն, ի մեքե-
նովքեան. եւ բարձրութիւն միոյ անուագ
33 ի կանգնոյ եւ ի կիսոյ։ Եւ գործ անուագին՝
իբրեւ զգործած անուագ կառաց, եւ
[2]ձեռք նոցա եւ պատուգիք լերանց եւ
թիկունք իւրեանց եւ ամենայն արար
34 նոցա ձուլածոյ։ Եւ չորք ուսք ի վե-
րոյ չորեցունց անկեանց միոյ մեքենով-
քեան. անգամին ի մեքենովքեան ուսք
35 իւր։ Եւ ի գլուխ մեքենովքեան կէս
կանգնոյ [3]մեծ բոլորակ չուրջ գնովաւ ի
վերոյ գլխոյ մեքենովքեան, եւ սկիզբն
ձեռաց նորա եւ խորչք՝ նորա անդամին
36 ի նմանէ։ Եւ [4]բանալին ի սկիզբն ձեռաց
նորա, եւ խորչք՝ նորա քերովբէ եւ ա-
րիւծունք եւ արմաւենիք [5]կանգնեալք
առ հասարակ։ իւրաքանչիւր հանգէպ ի-
րեարց իւրաց ինդրքս եւ՝ չուրջանակի։
37 Ըստ նմին օրինակի արար զամենայն
գոտանեսին մեքենովքեան. մի պայման
եւ մի չափ եւ մի օրինակ ամենեցունն։
38 Եւ արար տասն պատուարդս պղնձիս.
եւ ունէր պատուարդ մի քառասուն սա-
կաւոր. ի չորից կանգնոց պատուարդ մի
չափով, եւ պատուարդ մի ի վերայ միոյ
մեքենովքեայ՝ տասնեցունց մեքենով-
39 քեացն։ Եւ եդ զմեքենովքեան հինգ յասպ
տասն յաջմէ, եւ զհինգն յասպ տասն
ի ձախմէ. եւ ծովն յասպ տասն ընդ
աջմէ՝ ընդ արեւելս ի հարաւայ կողմանէ։
40 Եւ արար Քիրամ [6]զսանսն եւ [7]զչա-
ուղիչսն եւ զաւազսն. եւ կատարեաց
Քիրամ առնել զամենայն գործն զոր ա-
րար արքայի Սողոմոնի ի տան Տեառն.
41 Սիւնս երկուս, եւ չրջանակս քանդակա-
գործից սեանցն ի վերայ գլխոյ սեանցն.
երկուս երկուս վանդակապատս՝ ծած-
կել զերկոսին չրջանակս քանդակա-
գործացն որ էին ի վերայ սեանցն.
42 Չհնանաձեւսն զչորիքհարիւր երկոցունց
վանդակացն, երկու կարգ նռնաձեւաց
միոյ վանդակի, ծածկել չուրջ զերկու-
սին չրջանակս մեքենովքեացն ի վերայ
43 երկոցունց սեանցն. Եւ զմեքենովքեան

[1] ԵՔԲ. սպառուածոցն [2] Ա.ՀԵՒՆ՝ առանց [3] ԵՔԲ. բարձրութեամբ բոլորակ չուրջանակի. եւ ի վերայ գլխոյ մեքենովքեայն եզերք նորա եւ սպառուած [4] ԵՔԲ. քանդակեալ էին ի վերայ տախտակաց եզերաց նորա եւ սպառուածոց [5] ԵՔԲ. ըստ պատշաճութեան իւրաքանչիւր եւ զարդք կախեալք [6] ԵՔԲ. զպուանարդսն [7] ԵՔԲ. զաւազն

44 եւ զպուանարդսն տասնեսին ի վերայ
մեքենովքեացն. Եւ գծովն միմի, եւ զեր-
կոտասանեսին եզինսն ինդրքոյ ծովուն.
45 Եւ զաման եւ [7]զչուլուղիչսն [8]զերեսին
եւ զաւազսն, եւ զամենայն կահն զոր
արար Քիրամ արքայի Սողոմոնի ի տանն
Տեառն [9]եւ սիւնք քառասուն եւ ութ
տանն արքայի եւ տանն Տեառն. զա-
մենայն զոյժ զարքայի պատրաստեաց
Քիրամ պղնձի համօրէն. եւ ոչ գոյր
կշիռ պղնձոյն որով արար զամենայն
զգործսն զայնոսիկ ի բազմութիւնէ ան-
սի յոյժ, եւ ոչ գոյր չափ կշռոյ պղնձոյն՝
46 վայրկեանց։ Ձա ամն Յորդանանու ձուլեաց
զայն արքայի, ի մանրատեղիս երկրին
ի մէջ Սոկրաթայ եւ ի մէջ Սիրարթա-
47 նայ։ Եւ [10]եդ արքայ Սողոմոն [11]յամե-
նայն կահն, քանզի կարի յոյժ էր բազ-
մութիւնամբ եւ ոչ գոյր թիւ պղնձոյն։
48 Եւ արար Սողոմոն զամենայն կահն որ
ի տան Տեառն, զզոհանոցն ոսկի, եւ
զսեղանն յորոյ վերայ հացն պատարագի՝
49 ոսկի, եւ զաչտանակսն հինգ ընդ աջմէ
եւ հինգ ընդ ձախմէ հանդէպ դարբրայն
ի զուտ ոսկւոյ, եւ զրաղմակալսն եւ
50 զձրագուսնն եւ զայրգարիչսն ոսկիս, եւ
[12]զգրանդսն եւ զլուեւռան՝ եւ զաչտան
եւ [13]զսկաւառակսն եւ զաւուփան՝ ոս-
կիս զուտ, եւ [14]զդրուսնս տանն ներք-
նոյ, զսրբութեանն սրբութեանցն, եւ
զդրուսնս տան տաճարին՝ ոսկիս։
51 Եւ բովանդակեցաւ ամենայն գործն
զոր արար արքայ Սողոմոն զտանն
Տեառն. եւ տարաւ արքայ Սողոմոն
զսրբութիւնսն Դաւթի հօր իւրոյ [8]եւ
զամենայն սրբութիւնս Սողոմոնի՝ զար-
ծաթ եւ զոսկի եւ զկահ՝ եդ ի գանձս
տանն Տեառն։

ԳԼ. Ը

1 Յայնժամ եկեղեցացոյց արքայ Սողո-
մոն զամենայն ծերս Իսրայելի, հան-
դերձ ամենայն գլխաւք [15]պատուականացն
համարձակից՝ հարց որդւոյն Իսրայելի
առ արքայ Սողոմոն [16]ի Սիոն, հանել
զտապանակ ուխտին Տեառն ի քաղաքէ
2 Դաւթի՝ այս է Սիոն։ Եւ ակեղեցացան

[8] ՑԵՔԲ. գ-ի--ե [9] ԵՔԲ. ի պղնձոյ [10] ԵՔԲ. եթող լ-ե [11] ԵՔԲ. զամենայն [12] ԵՔԲ. զբաժակսն եւ զրազմակալսն [13] ԵՔԲ. զկնկամանսն եւ զրուռուռառան [14] ԵՔԲ. զծխնիս դրանց [15] ԵՔԲ. ցեղից, զիշխանս [16] ԵՔԲ. յԵրուսաղէմ.

առ արքայ Սողոմոն ամենայն այր Իսրայելի, յամենայն Ազմահիմ ի տո-
3 նէն, այն է ամիան եւ իներորդ։ Եւ եղեն ամենայն ծերք Իսրայելի, եւ բար-
4 ձին քահանայքն զտապանակն։ Եւ հանէն զտապանակն Տեառն եւ զվառանն վկայութեան, եւ զամենայն սպասն սրբութեան որ ի խորանին վկայութեան. եւ հանին զայն քահանայքն եւ Ղեւ-
5 տացիք։ Եւ արքայ Սողոմոն եւ ամենայն ժողովուրդն Իսրայելի գումարեալք առ նա՝ հանդերձ նմա առաջի տապանակին զնուէին արջառս եւ ոչխարս անհամարս եւ անթիւս ի բազմութենէ։
6 Եւ տարան ի ներքս քահանայքն զտապանակ ուխտին Տեառն ի տեղի իւր, ի դարիր տանն, սրբութեան սրբութեանցն՝
7 ընդ թեւովք քերովբէիցն. Զի քերովբէքն թառուցեալ թեւովք ի վերայ տեղւոյ տապանակին, եւ ծածկէին քերովբէքն զտապանակն եւ [1]զդրբութիւնս
8 նորա ի վերուստ։ Եւ [2]կային ի վերայ սրբեցելոցն, եւ հայէին պլուխք սրբեցելոցն՝ ի սրբութենէն անտի հանդէպ դարբերայն, եւ արտաքս ոչ երեւէին.
9 եւ եղեն անդ մինչեւ ցայսօր։ Եւ ոչ ինչ գոյր ի տապանակին, բայց երկու տախտակքն քարեղէնք [3]տախտակք ուխտի՛, զորս եդ անդ Մովսէս ի Քորէբ, զորս ուխտեաց Տէր ընդ որդիսն Իսրա-
10 յելի յելանել նոցա յերկրէն Եգիպտացւոց։ Եւ եղեւ իրրեւ ելին քահանայքն ի սրբութենէն, եւ ամպն ելից զտունն
11 Տեառն. Եւ ոչ կարէին քահանայքն կալ ի սպասու յերեսաց ամպոյն, զի փառք Տեառն լցին զտունն։
12 Յայնժամ ասէ Սողոմոն, Տէր ասաց
13 [4]հովանի լինել միգով՛։ Շինելով շինեցի քեզ տուն բնակութեան, հաստատուե-
14 թիւն ամոռոյ քում յաւիտեան։ Եւ դարձոյց արքայ զերեսս իւր եւ օրհնեաց զամենայն Իսրայէլ. եւ ամենայն
15 ակեղեցին Իսրայելի կայր. Եւ ասէ, Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի [3]այսօր, որ խօսեցաւ բերանով իւրով [5]վասն Դաւթի հօր իմոյ, եւ ձեռօք իւրովք
16 եկից. եւ ասէ, Յօրէ յորմէ հանի զժողովուրդ իմ զԻսրայէլ յԵգիպտոսէ՝ ոչ ընտրեցի ի քաղաքի միում ուրեք զաւազանաց Իսրայելի չինել տուն զի լինիցի անուանն իմոյ. եւ ընտրեցի զԴաւիթ լինել ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրա-
17 յելի։ Եւ եղեւ ի սրտի Դաւթի հօր իմոյ չինել տուն անուան Տեառն Աստուծոյ
18 Իսրայելի. Եւ ասէ Տէր ցԴաւիթ հայր իմ, Փոխանակ զի եկն ի սիրտ քո չինել տուն անուան իմոյ, բարւոք արարեր
19 զի եղեւ ի սրտի քումի. Բայց դու ոչ չինեսցես զտունն, այլ որդի քո որ ելանիցէ յերանաց քոց՝ նա չինեսցէ տուն
20 անուան իմոյ։ Եւ կանգնեաց Տէր զբան իւր զոր խօսեցաւ. եւ կացի ես փոխանակ Դաւթի հօր իմոյ, եւ նստայ յաթոռն Իսրայելի որպէս եւ խօսեցաւ Տէր. եւ չինեցի տուն անուան Տեառն Աս-
21 տուծոյ Իսրայելի. Եւ եդի անդ տեղի տապանակին, ուր է ուխտն Տեառն զոր ուխտեաց Տէր ընդ հարսն մեր, ի հանել նորա զնոսա յերկրէն Եգիպտացւոց։
22 Եւ յարեաւ Սողոմոն յերեսաց սեղանոյն Տեառն առաջի ամենայն եկեղեցւոյն Իսրայելի, եւ տարածեաց զձեռս
23 իւր յերկինս, Եւ ասէ, Տէր Աստուած Իսրայելի, չիք իրրեւ զքեզ Աստուած յերկինս ի վեր եւ յերկիր ի խոնարհ, որ պահեցեր զուխտ եւ զողորմութիւն [6]ծառայի քում գնացելոյ առաջի քո ամե-
24 նայն սրտիւ իւրով՛, Պահել ծառայի քում Դաւթի հօր իմոյ զոր խոստացար նմա եւ խօսեցար բերանով քով, եւ ձեռօք քովք կատարեցեր որպէս եւ յաւուր
25 յայսմիկ։ Եւ արդ, Տէր, Աստուած Իսրայելի, պահեա ծառայի քում Դաւթի հօր իմոյ զոր խոստացար նմա եւ ասացեր, Ոչ բարձցի քո այր յերեսաց իմոց որ նստիցի յաթոռ Իսրայելի, միայն թէ զգուշ չասցին որդիք քո ճանապարհաց իւրեանց գնալ առաջի իմ, որպէս եւ
26 գնացեր առաջի իմ։ Եւ արդ, Տէր, Աստուած Իսրայելի, հաւատարիմ լիցի բանն քո զոր խոստացար ծառայի քում Դաւթի հօր իմոյ։
27 Թէ [7]բնակիցէ Աստուած ընդ մարդկան որ ի վերայ երկրի. եթէ երկինք եւ երկնից երկինք չեն քեզ բաւական, 28 արդ զի՞րդ տունս զոր չինեցի։ Եւ արդ հայեաց յաղօթս ծառայի քում եւ ի խնդրուածս իմ, Տէր Աստուած [8]Իսրայելի,

---

[1] Եբր. զվճակս [2] Եբր. երկայնեցեր զվճակն, եւ երեւէին գլուխք վճակացն [3] Ընդ. զսոսեր [4] Եբր. բնակել ի միգի [5] Եբր. ընդ [6] Եբր. ծառայից քոց որ գնան առաջի քո ամենայն սրտիւ իւրեանց [7] Եբր. արդարեւ բնակիցէ Աստուած ի վերայ երկրի. ահա [8] Եբր. իմ

լսել պաղատանաց աղօթից ծառայի քո
29 որ [1]կայ առաջի քո առքիզ", լինել բաց
աչաց քոց զգայգ եւ զգերեկ ի տեղւոջս
զորմէ ասացեր թէ եղիցի անուն իմ անդ,
ի լսել աղօթից զոր ազաչէ ծառայ քո ի
տեղւոջս յայսմիկ [2]ի տուէ եւ ի գիչերի",
30 եւ լուիցես ձայնի ծառայի քո եւ ժո-
ղովրդեան քո Իսրայելի, զոր կայցեն
յաղօթս ի տեղւոջս յայսմիկ. եւ դու
լուիցես ի տեղւոջ բնակութեան քո յեր-
31 կինս, եւ [3]արասցես եւ քաւեսցես զոր
ինչ ոք մեղիցէ ընկերի իւրում. եւ եթէ
առցէ ի վերայ նորա անէծս անիծանել
զնա, եւ խոստովան լիցի" առաջի սե-
32 զանոյ քո ի տանս յայսմիկ, եւ դու
լուիցես յերկինից եւ արասցես, եւ դա-
տեսցես [4]զժողովուրդ քո զԻսրայէլ" յա-
նօրինել անօրինին, տալ ըստ ճանա-
պարհաց նորա ի գլուխ նորա եւ ար-
դարացուցանել զարդարն՝ տալ նմա ըստ
արդարութեան նորա։
33 Եւ ի պարտել ժողովրդեան քո Ի-
սրայելի առաջի թշնամեաց, յորժամ մե-
ղանչիցեն քեզ եւ դառնայցին առ քեզ
եւ խոստովան լիցին անուան քում, եւ
յաղօթս կայցեն եւ ազաչիցեն առ քեզ
34 ի տանս յայսմիկ, եւ դու լուիցես յերկ-
նից եւ քաւեսցես զմեղս ժողովրդեան
քո Իսրայելի, եւ դարձուսցես զնոսա
յերկիրս զոր տուեր հարց նոցա։
35 Եւ յարգելուլ երկնից եւ ի չինել
անձրեւի, զի մեղուցեալ իցեն քեզ, եւ
յաղօթս կացցեն ի տեղւոջս յայսմիկ, եւ
խոստովան լինիցին անուան քում, եւ
ի մեղաց իւրեանց դառնայցեն, յորժամ
36 նկուն առնիցես զնոսա, լուիցես յերկ-
նից եւ քաւեսցես զմեղս ծառայից քոց
եւ ժողովրդեան քո Իսրայելի. զի յուղ-
ես նոցա ճանապարհ լաւի գնալ ի նա,
եւ տացես անձրեւ յերկիր քո զոր տուեր
ժողովրդեան քում ի ժառանգութիւն։
37 Եւ սով եթէ լինիցի յերկիր, կամ թէ
մահ լինիցի, կամ թէ հրայրեայգք կամ
գալուկն կամ ջորեակ, կամ ժանգ եթէ
լինիցի, եւ նեղիցէ զնա թշնամի իւր ի
միում ի քաղաքացն իւրոց, ամենայն պա-
38 տահար եւ ամենայն ցաւ, Ամենայն ա-

[1] ԵԲԲ· կայ յաղօթս առաջի քո այսօր [2] ՁԵԲԲ· գ֊ի֊օ֊ե [3] ԵԲԲ· լուիցես եւ քաւեսցես։ (31) Եթէ մեղիցէ ոք ընկերի իւրում, եւ նա խնդրեացէ ի նմանէ երդումն, եւ երդումն գայցէ [4] ԵԲԲ· զծառայս քո

ղօթք, եւ ամենայն խնդրուածք որ լի-
նիցին ամենայն մարդոյ, ամենայն ժո-
ղովրդեան քո Իսրայելի, որպէս զիարդ
գիտիցեն իւրաքանչիւր զախտ սրտի
իւրոյ, եւ ապաշխարեսցէ զձեռս իւր ի
39 տանս յայսմիկ, եւ դու լուիցես յերկ-
նից ի պատրաստ բնակութենէ քումմէ,
եւ քաւեսցես եւ արասցես. եւ տացես
ամն ըստ ամենայն ճանապարհաց իւրոց,
որպէս եւ գիտիցես զսիրտ նորա. զի
դու միայն գիտես զսիրտ ամենայն որդ-
40 ւոց մարդկան. Զի երկիցեն ի քէն զա-
մենայն աւուրս իւրեանց որչափ եւ
կեցցեն ի վերայ երեսաց երկրին զոր
տուեր հարցն մերոց։
41 Եւ օտարոտին որ ոչ իցէ ի ժողովրդե-
նէ քումմէ Իսրայելէ, եւ նա եկեալ ի-
42 ցէ յերկրէ հեռաստանէ[5], Ուր եւ լսիցէ
զանուանէ քումմէ մեծէ եւ զձեռանէ
քումմէ հզօրէ եւ զբազկէ քումմէ ձգե-
լոյ, եւ եկեսցէ եւ յաղօթս կացցէ ի
43 տեղւոջս յայսմիկ, Եւ դու լուիցես յերկ-
նից ի պատրաստ բնակութենէ քումմէ, եւ արասցես բան ամենայնի զոր
եւ կարդասցէ առ քեզ օտարոտին. զի
ծանիցեն ամենայն ազգք երկրի զանուն
քո. եւ երկիցեն ի քէն որպէս եւ ժո-
ղովուրդ քո Իսրայէլ. եւ ծանիցեն զի
անուն քո կոչեցեալ է ի վերայ տանս
զոր շինեցի։
44 Եւ եթէ ելանիցէ ժողովուրդ քո ի պա-
տերազմ ընդ թշնամիս իւր ի ճանապարհի
[6]յորմէ դարձուսցես զնոսա, եւ կացցեն
յաղօթս յանուն Տեառն ի ճանապարհի
քաղաքիս զոր ընտրեցեր, եւ տանս զոր
45 շինեցի անուան քում, Եւ լուիցես
յերկնից ազօթից նոցա եւ իննդրուածոց
նոցա, եւ արասցես նոցա իրաւունս։
46 [7]Քանզի մեղանչիցեն քեզ, զի չիք
մարդ որ ոչ մեղանչէ, եւ եթէ [8]բարկասցես ի վերայ" նոցա, եւ մատնեսցես զնոսա
առաջի թշնամեաց, եւ գերիցեն զնոսա
գերիչք իւրեանց յերկիր թշնամւոյ ի
47 հեռաւոր կամ ի մօտաւոր, Եւ դար-
ձուսցեն զսիրտս իւրեանց յերկրին յոր
գերեցան, եւ դառնայցեն եւ ազաչես-
ցեն զքեզ յերկրին գերութեան իւրե-
անց, եւ ասիցեն, Մեղաք, անօրինե-
48 ցաք, անիրաւեցաք, Եւ դարձցին առ քեզ

[5] ԵԲԲ֊յեցէն յա֊ելս֊, վասն անուան քո [6] ԵԲԲ· ընդ որ առաքեսցես [7] Կամ, Յորժամ [8] ԵԲԲ· բարկասցիս

յամենայն սրտէ իւրմանց եւ յամենայն անձնէ իւրեանց յերկրին Քնանացւոց իւրեանց յոր վտխեցեալ գնասա, եւ յաղօթս կացցեն առ քեզ [1]վասն ճանապարհի երկրին իւրեանց զոր ետուր հարցն նոցա եւ քաղաքիս զոր ընտրեցեր եւ տանն զոր շինեցի անուան քումմ,
49 եւ լսիցես յերկնից ի պատրաստ բնակութենէ քումմէ ազօթից նոցա եւ խնդրուածոց նոցա, եւ պատցես նոցա
50 իրաւունս. եւ քաւեսցես զանիրաւութիւնս նոցա զոր մեզան քեզ, եւ բոլո ամենայն արհամարհանաց նոցա զոր արհամարհեցին զքեզ. եւ տացես գնոսա ի գթութիւն առաջի գերչաց իւրեանց, եւ գթասցին ի նոսա. Զի ժո-
51 ղովուրդ քո եւ ժառանգութիւն քո են զորս հաներ յերկրէն Եգիպտացւոց ի
52 միջոց երկաթոյն հալոցայ: եւ եղիցին աչք քո [2]եւ ականջք քո՝ բաց ի խնդրուածս ծառայի քո. եւ ի խնդրուածս ժողովրդեան քո Իսրայելի՝ լսել նոցա յամենայնի որովք եւ կարդայցին առ
53 քեզ: Զի դու զատուցեր գնոսա քեզ ի ժառանգութիւն յամենայն ժողովրդոց երկրի, որպէս խօսեցար ի ձեռն Մովսիսի ծառայի քո ի հանել զհարսն մեր յԵգիպտոսէ, Տէր Տէր:

[2]Յայնժամ խօսեցաւ Սողոմոն վասն տանն իբրեւ կատարեալ չինել գնա. Զարեգական ծանեաւ յերկինս. Տէր ասաց բնակել ի միգի. Շինեա զտունն իմ տուն վայելուչ բնակել ի նմա նորոգութեամբ: Ո՞չ աւանիկ զրեալ է այս ի
54 գիրս երգոյ՞: եւ եղեւ իբրեւ կատարեաց Սողոմոն կալ յաղօթս առ Տէր զամենայն ազօթս զայս եւ զխնդրուածս, յարուաւ յերեսաց սեղանոյն Տեառն ուր կայր ի ծունգս ի վերայ ծնգաց իւրոց, եւ ձեռք իւր ընդ երկինս տարածեալ,
55 Եւ եկաց եւ օրհնեաց զամենայն եկեղեցին Իսրայելի մեծաձայն, եւ ասէ,
56 Օրհնեալ է Տէր [2]այսօր, որ ետ հանգիստ ժողովրդեան իւրում Իսրայելի ըստ ամենայնի զոր եւ խօսեցաւ. ոչ վրիպեաց բան մի յամենայն բանից նորա բարեաց որովք խօսեցաւ ի ձեռն Մովսիսի ծա-
57 ռայի իւրոյ: Եղիցի Տէր Աստուած մեր ընդ մեզ որպէս էր ընդ հարսն մեր,
58 եւ մի՛ թողցէ [3]զմեզ, Այլ գարձուսցէ

[1] ԵՒԲ. ի [2] ՁԵՒԲ. պետ [3] ԵՒԲ. զմեզ, եւ մի՛ լքցէ զմեզ, (58) Այս ի չխոտորելոյ

զմեզ առ ի չխոտորելոյ՝ սրտից մերոց ի նմանէ, գնալ յամենայն ճանապարհս նորա եւ պահել զամենայն պատուիրանս նորա եւ զդրամանս նորա եւ զիրաւունս նորա զոր պատուիրեաց հարցն մերոց:
59 Եղիցին բանքս իմ այսոքիկ որովք պատեցայ առաջի Տեառն [2]Աստուծոյ մերոյ՝ մերձենալ առ Տէր Աստուած մեր ի տուէ եւ ի պիչերի, առնել իրաւունս ծառայի քումմ, եւ իրաւունս ժողովրդեան քումմ Իսրայելի, գրան օր ըստ օրի:
60 Զի ծանիցեն ամենայն ժողովուրդք երկրի, զի Տէր՝ նա է Աստուած, եւ չիք
61 այլ ոք: եւ եղիցին սիրտք [1]մեր կատարեալք առ Տէր Աստուած մեր [2]անարատութեամբ գնալ ըստ հրամանաց նորա, եւ պահել զպատուիրանս նորա որպէս եւ յաւուր յայսմիկ:
62 Եւ արքայ եւ ամենայն որդիքն Իսրայելի ընդ նմա զոհեցին զոհս առաջի
63 Տեառն: եւ զոհեաց արքայ Սողոմոն զոհս խաղաղականաց զորս զոհեաց Տեառն յարջառոց քսան եւ երկուս հազարս, եւ յոչխարաց հարեւր եւ քսան հազար. եւ արար նաւակատիս տանն Տեառն արքայ եւ ամենայն որդիքն Իս-
64 րայելի: Յաւուր յայնմիկ սրբեաց արքայ զմիջոց [5]սրահին որ հանդէպ տանն Տեառն. զի անդ արար զողջակէզսն եւ զպատարագսն եւ զճարպսն խաղաղականաց. զի սեղանն պղնձի որ առաջի Տեառն կայր՝ փոքր էր. եւ ոչ կարէր ընդունել զողջակէզսն եւ զպատարագս եւ զճարպս խաղաղականաց:
65 Եւ արար Սողոմոն յաւուր յայնմիկ տօն, եւ ամենայն Իսրայէլ ընդ նմա եկեղեցի մեծ, ի մտից Եմաթայ մինչեւ ցգետն Եգիպտացւոց. առաջի Տեառն Աստուծոյ մերոյ [2]ի տանն զոր չինեաց, ուտելով եւ ըմպելով եւ ուրախ լինելով առաջի Տեառն Աստուծոյ մերոյ՝ զեւթն օր եւ զեւթն օր, աւուրս չորեքտասան:
66 Եւ յաւուրն ութերորդի արձակեաց զժողովուրդսն. եւ օրհնեցին զարքայ եւ գնացին իւրաքանչիւր ի բնակութիւնս իւրեանց, խնդութեամբ եւ սրտիւ զուարթութեամբ ի վերայ ամենայն բարեացն զոր արար Տէր ծառայի իւրում Դաւթի եւ Իսրայելի ժողովրդեանն իւրում:

[1] ԵՒԲ. ձեր [5] ԵՒԲ. գաւթին

Գ Ի. Թ

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Սողոմոն
շինել զաւնն Տեառն եւ զաւնն ար-
քայի, եւ զամենայն հանգերձանս Սո-
2 ղոմոնի զոր կամեցաւ առնել, եւ երե-
ւեցաւ Տէր Սողոմոնի երկրորդ անգամ,
3 որպէս երեւեցաւ նմա ի Գաբաւոն, եւ
ասէ ցնա Տէր, Լուայ ձայնի աղօթից քոց
եւ պաղատանաց զոր պաղատեցար ա-
ռաջի իմ, [1]արարի քեզ բան ամենայն աղօ-
թից քոց." որպէսի զաւնն զոր չինե-
ցեր գնել զանուն իմ անդ յաւիտեան,
եւ եղիցին աչք իմ եւ սիրտ իմ անդ զա-
4 մենայն աւուրս։ Եւ դու եթէ գնասցես
առաջի իմ, որպէս գնաց Դաւիթ հայրդ
[2]սրտիւթեամբ արդեւ եւ ուղղութեամբ՝
առնել բան ամենայնի զոր պատուիրեցի
նմա, եւ զհրամանս իմ եւ զսաստուե-
5 րանս իմ պահեացես, կանգնեցից զա-
թոռ թագաւորութեան քո ի վերայ Իս-
րայելի յաւիտեան, որպէս խոսեցայ
Դաւթի հօր քում եւ ասացի, Մի պա-
կասեսցէ քեզ այր [3]առաջնորդ յիւրայիսէ՞։
6 Ապա թէ դառնալով դառնայցէք դուք
եւ որդիք ձեր յինէն, եւ ոչ պահիցէք
զուք զպատուիրանս իմ եւ զհրամանս իմ
զոր [4]ետու Մովսէս" առաջի ձեր, եւ եր-
թայցէք եւ ծառայիցէք աստուածոց օ-
տարաց եւ երկիր պագանիցէք նոցա,
7 Բարձից զԻսրայէլ յերկրէն զոր ետու
նոցա եւ զտունդ զայդ զոր սրբեցի ա-
նուանն իմոյ՝ ընկեցից յերեսաց իմոց. եւ
եղիցի Իսրայէլ [5]յառականութիւն եւ ի
8 խօսա ընդ ամենայն ժողովրդս։ Եւ
տունդ բարձրեալ՝ ի զրոյցս. ամենայն
որ անցանիցէ առ գոմս՝ զարմացի եւ
չչեզոքէ եւ ասասցէ, Ընդէր արար Տէր
այսպէս երկրիս այսմիկ եւ տանս այս-
9 սիկ։ Եւ ասացեն, Փոխանակ զի լա-
ղին զՏէր Աստուած իւրեանց որ հա՛ն
զնարս նոցա յԵգիպտոսէ ի տանէ ծառայ-
ութեան, եւ բուռն տարին զառաւածոց
օտարաց, եւ երկիր պագին նոցա եւ
ծառայեցին նոցա, վասն այնորիկ ած
Տէր ի վերայ դորա զամենայն չարիսդ
զայդսոսիկ։ [1]Յայնժամ հա՛ն Սողոմոն
զդուստրն Փարաւոնի ի քաղաքէ Դաւ-
թի ի տունն իւր՝ զոր չինեաց իւր։"
10 Եւ եղեւ [6]յաւուրսն յայնոսիկ յամս քսան

[1] 3ԵԲԲ. գ-ի-ե [2] ԵԲԲ. կատարեալ [3] ԵԲԲ. յա-
թոռոյ Իսրայելի [4] ԵԲԲ. եետու [5] ԵԲԲ. յառակս
[6] ԵԲԲ. ի կատարածի ամաց քսանից յոբս

զոր" չինեաց Սողոմոն զերկոսին տուն-
զաւնն Տեառն եւ զաւնն արքայի,
11 Քիրամ արքայ Տիւրոսի ձեռնաւէր էր
Սողոմոնի ևգիւնամատեամբ եւ փայտիւք
մայրիոյ եւ ոսկւով, [7]եւ ամենայն կա-
մօք իւրովք". յայնժամ ետ արքայ Սո-
ղոմոն Քիրամայ քսան քաղաք ի Գալի-
12 լիա։ Եւ ել Քիրամ ի Տիւրոսէ [1]եւ չո-
գաւ ի Գալիլիա" տեսանել զքաղաքսն
զոր ետ նմա Սողոմոն, եւ ոչ եղեւ նմա
13 հաճոյ. Եւ ասէ, Զինչ են քաղաքս
այսոքիկ զոր ետուր ինձ, եղբայր. եւ
կոչեաց զնոսա [8]սահմանս մինչեւ ցայ-
14 սօր։ Եւ [9]ետու Քիրամ Սողոմոնի հա-
րիւր եւ քսան տաղանդ ոսկւոյ։
15 Եւ այս [10]են հանգերձանք աւարին",
զոր եհան արքայ Սողոմոն չինել զաւնն
Տեառն եւ զտունն [11]արքայի, եւ զՄեղոն
եւ զբարձաւանդակսն, ինուել զխրոմս
քաղաքին Դաւթի, եւ զՅաւսր եւ
զՄայդան եւ զպարիսպսն Երուսաղեմի,
եւ զԵսեր եւ զՄակեդդով եւ զԳազեր,
16 փարաւոնի արքայի Եգիպտացւոց. քան-
զի ել" եւ առ զԳազեր, եւ այրեաց
զնա հրով, եւ զքանանացին որ նստէր
ի քաղաքին՝ սպան, եւ ետ զնա պաշ-
տաւնական զաւսր իւրում կնոջ Սողոմո-
17 նի։ Եւ չինեաց Սողոմոն զԳազեր եւ
18 զԲեհթորան զներքին, եւ զԲաղաթ եւ
[12]զԹերմոդթ յանապատի յերկրի անդ,
19 Եւ զամենայն քաղաքս [13]բնակութեանց
որ էին Սողոմոնի, եւ զքաղաքս կա-
ռաց եւ զամենայն քաղաքս երիվարաց,
եւ զհանգերձանս Սողոմոնի զոր հաս-
կերձեալ չինել յԵրուսաղէմ եւ ի Լի-
20 բանան եւ յամենայն [14]երկրին. Զամն
չիշխելոյ նորա ամենայն ազգին մնացե-
լոյ՝ յԱմաւրհացւոցն եւ ի Քետացւոց
եւ ի Փերեզացւոց եւ ի Հեւացւոց եւ
[15]ի Բանանացւոց եւ ի Ցեբուսացւոց եւ
ի Գերգեսացւոց", որ ոչ յորդւոցն Իս-
21 րայելի էին. Արդիք նոցա մնացեալք
յետ նոցա յերկրին, զորս ոչ կարացին
որդիքն Իսրայելի սատակել. եւ արկ

[7] ԵԲԲ. բան ամենայն կամաց նորա [8] ԵԲԲ. երկիր
Վաթզոզոյ, այլեւս՝ անհամոյ [9] ԵԲԲ. տասներեսաց
[10] ԵԲԲ. է բան Հարիին [11] ԵԲԲ. իւր և զՄեղոն և զպա-
րիսպն Երուսաղեմի, եւ զՀասոր, եւ զՄակեդ-
դով. եւ զԳազեր։ (16) Փարաւոն արքայ Եգիպ-
տացւոց եկ [12] ԵԲԲ. զԹատմոր [13] ԵԲԲ. Համ-
բարոց [14] ԵԲԲ. երկրին իշխանութեան իւրոյ.
(20) Զամենայն ազգն զմնացեալ [15] ԵԲԲ. ի Ցե-
բուսացւոց

զնոսա Սողոմոն ընդ հարկօք ծառայու-
22 թեան մինչեւ ցայսօր։ Եւ յորդւոցն Իսրայելի ոչ [1]եդ Սողոմոն ի ստրկա-
ծառայութիւն". զի նոքա արք պատե-
րազմօղք էին, եւ ծառայք նորա եւ իշ-
խանք նորա եւ սպառազինք նորա եւ
23 [2]հնծեալք նորա։ Եւ այս են իշխանք
որ կային ի վերայ գործոյն Սողոմոնի,
հինգ հարեւր եւ յիսուն, որ ունէին
զժողովուրդն որ գործէին զգործն։
24 Բայց դուստրն Փարաւոնի էլ ի քա-
ղաքէն Դաւթի ի տունն իւր, զոր շի-
նեաց նմա. յայնժամ շինեաց զՄեղոն։
25 Եւ հանէր Սողոմոն երիցս անգամ ի
տարւոջ ողջակէզս եւ խաղաղականս ի
վերայ սեղանոյն զոր շինեաց Տեառն,
եւ արկանէր խունկս առաջի Տեառն։
26 Եւ բովանդակեաց զտունն։ Եւ արար
նաեւ արքայ Սողոմոն ի Գասիոնգաբեր,
որ է մերձ յԵղաթ՝ յեզեր [3]վիրջնոյ ծո-
27 վուն յերկրին Եդոմայ։ Եւ առաքեաց
Քիրամ ընդ նաեան ի ծառայից իւրոց
նաւորդս հմուտս նաւարկութեան ծով-
28 ընդ ծառայս Սողոմոնի։ Եւ չորան [4]ի
Սովփիրա, եւ առին անտի ոսկի չո-
բեքհարեւր եւ քսան տաղանդ, եւ բե-
րին արքայի Սողոմոնի։

Գլ. Ժ

1 Եւ տիկինն Սաբայ լուաւ զանուն Սո-
զոմոնի եւ զանուն Տեառն [5]եւ զիմաս-
տութիւն Սողոմոնի". եւ եկն փորձել
2 զնա առակօք։ Եւ եկն Երուսաղէմ զօ-
րու ծանու յոյժ, եւ ուղտուք որ բար-
ձեալ բերէին խունկս եւ ոսկի բազում
յոյժ եւ ականս պատուականս. եւ ե-
կեալ առ Սողոմոն, եւ խօսեցաւ ընդ
նմա զամենայն ինչ որ էր ի սրտի ի-
3 րում։ Եւ մեկնեաց նմա Սողոմոն զա-
մենայն բանս նորա, եւ ոչ էր բան
ածեալ յարքայէ զոր ոչ մեկնեաց նմա։
4 Եւ եաես [5]տիկինն զամենայն իմաստու-
թիւնն Սողոմոնի, եւ զտունս զոր շի-
5 նեաց, Եւ զխորհուրդս Սողոմոնի, եւ
զպէտս ծառայից նորա, եւ զկարգ պաշ-
տօնէից նորա, եւ զհանդերձեանս նոցա,
եւ զմատուռակս նորա, եւ [7]զողջա-
կէզս նորա զոր մատուցանէր" Տեառն,
6 եւ յիմարեցաւ։ Եւ ասէ ցարքայ Սողո-
մոն, Ճշմարիտ էր բանն զոր լուայ յեր-
կրին իմում վասն բանից քոց եւ վասն
7 իմաստութեան քո. Եւ ոչ հաւատացի
խօսելացն առ իս, մինչեւ ինձէն եկի
եւ տեսին աչք իմ. եւ ահա ի կէս չէ
զոր պատմեցին ինձ իմաստութեանդ
զոր յաւելեր եւ բարութեան, եւ ամե-
նայն համբաւոյն զոր լսէին յերկրին ի-
8 մում։ Երանելի են [8]կանայք քո եւ ե-
րանելի ծառայք քո որ կան առաջի քո՝
եւ հանապազ լսեն զիմաստութիւն քո։
9 Եւ եղիցի Տէր Աստուած քո օրհնեալ
որ հաճեցաւ ընդ քեզ տալ զքեզ յա-
թոռ Իսրայելի. վասն սիրելոյ Տեառն
զԻսրայէլ հաստատել յաւիտեան. եւ
կացոյց զքեզ արքայ ի վերայ նոցա,
առնել իրաւունս եւ արդարութիւն [9]յա-
10 տեանս նոցա"։ Եւ ետ Սողոմոնի հա-
րեւր եւ քսան տաղանդ ոսկւոյ եւ
խունկս բազումս յոյժ եւ ականս պա-
տուականս. եւ ոչ էին եկեալ այնպիսի
խունկք բազումք [9]եւ անուշունք", զորս
ետ տիկինն Սաբայ արքայի Սողոմոնի։
11 Եւ նաեւ Քիրամայ որ բերէր ոսկի
[9]ի Սովփիրայ, բերէր [9]ի Սովփիրայ փայտ
[10]անտաչ բազում յոյժ եւ ականս պա-
12 տուականս։ Եւ արար արքայ զփայտսն [10]անտաչս մոյթս տանն Տեառն եւ տանն
արքայի, եւ քնարս եւ տաւիղս երգե-
ցողաց. եւ չէր եկեալ այնպիսի փայտ
[10]անտաչ յերկիրն", եւ ոչ երեւեցաւ
ուրեք մինչեւ ցայսօր։
13 Եւ արքայ Սողոմոն ետ տիկնոջն Սա-
բայ զամենայն ինչ զոր կամեցաւ եւ
զոր խնդրեաց, բայ յայնմանէ զորս
տուեալ էր [11]նորա ի ձեռս" արքայի
Սողոմոնի. եւ դարձաւ եւ գնաց յերկիր
իւր՝ ինքն եւ [5]ամենայն ծառայք իւր։
14 Եւ էր կշիռ ոսկւոյն եկելոյ Սողոմոնի
ի միում տարւոջ վեց հարեւր եւ վաթ-
15 սուն եւ վից տաղանդ ոսկւոյ. Թող զհար-
կացն կարգելոց եւ զվաճառաց վաճառա-
կանաց, եւ զամենայն թագաւորաց
[12]այնր կողմանն" եւ նախարարաց երկրին։
16 Եւ արար արքայ Սողոմոն [13]երեքհա-
րեւր նիզակ" ոսկի կռածոյ, եւ [14]երեքհա-

---

[1]ԵԲԲ. առ Սողոմոն ծառայ [2]ԵԲԲ. վերակացուք կառուց եւ երիվարաց [3]ԵԲԲ. Կարմիր
[4]ԵԲԲ. Ոփիր [5]ՅԵԲԲ. պէտս [6]ԵԲԲ. տիկնին Սաբայ [7]Կամ, զանգուռն որ ելանէր ի տունն
[8]ԵԲԲ. արք [9]ԵԲԲ. Ոփիրայ [10]ԵԲԲ. ալմուկ
[11]ԵԲԲ. նմա ըստ ձեռին [12]ԵԲԲ. Արաբացւոց, կամ, խառն ժողովրդոց [13]ԵԲԲ. երկերիւր վահան
[14]ԵԲԲ. վեցհարեւր դահ

բեւր դահեկան՝ ի վերայ միոյ [1]նիզակի.
17 Եւ երկքարեւր [2]ղէն ոսկի կուռ, [3]եւ
երեք մանք ոսկւոյ ի մի ղէն՝. եւ եդ զայն
արքայ ի տուն անտառին Լիբանանու։
18 Եւ արար արքայ աթոռ փղոսկրեայ
մեծ, եւ պատեաց զնա ոսկւով վսե-
19 ռով. վեց աստիճան աթոռոյն, եւ [4]գլուխ
եզանց՝ ի թիկանց կողմանէ աթոռոյն,
եւ ձեռք աստի եւ անտի ի վերայ ա-
թոռոյն նստելոյ, եւ երկու առիւծունք
20 կային առընթեր ձեռացն։ Եւ երկոտա-
սան առիւծք կային ի վերայ վեցկնոյց
աստիճանացն աստի եւ անտի. եւ ոչ եղեւ
այնպիսի յամենայն թագաւորութիւնս։
21 Եւ ամենայն կահ սպասու արքայի
Սողոմոնի ոսկի [5]գործեալ, եւ աւազանք
ոսկիք՝, եւ ամենայն կահ տան անտա-
ռին Լիբանանու [6]ոսկւով պատեալ՝. եւ
ոչ գոյր արծաթ, քանզի ոչ էր հա-
մարեալ արծաթ յաւուրս Սողոմոնի ի-
22 նչէ ինչ։ Զի նաւ Թարսեացի էր Սո-
ղոմոնի արքայի ի ծովս ընդ նաւս
Քիրամայ, եւ յերեամ գայր արքայի
նաւ ի Թարսէ, ոսկւոյ եւ արծաթոյ
եւ ժանեակաց փղոյ եւ կապկայ եւ
սիրամարգաց։
23 Եւ մեծացաւ Սողոմոն քան զամենայն
թագաւորս երկրի մեծութեամբ եւ ի-
24 մաստութեամբ։ Եւ ամենայն [7]թագա-
ւորք երկրի խնդրէին տեսանել՝ զերես
Սողոմոնի, լսել զիմաստութիւն նորա
25 զոր եւս [8]Տէր ի սիրտ նորա։ Եւ նոքա բե-
րէին իւրաքանչիւր զպատարագս իւր-
եանց, անօթս արծաթեղէնս եւ անօթս
ոսկեղէնս եւ հանդերձս, [9]սատափն եւ
խունկս եւ ձիս եւ ջորիս, ամի ամի։
26 Եւ ժողովեաց Սողոմոն կառս եւ հե-
ծեալս. եւ էին Սողոմոնի [10]քառասուն
հազար ձիք մատակք՝ կառաց, եւ երկո-
տասան հազար երիվարաց, եւ եդ զնոսա
ի քաղաքս կառաց, եւ որ ընդ արքայի
յերուսաղէմ։ [5]Եւ էր իշխան ամենայն
թագաւորաց ի Գետոյն մինչեւ ցայլազգիս,
27 եւ մինչեւ ցսահմանս Եդիպտացւոց։՝ Եւ
եւս արքայ զարծաթ [5]եւ զոսկի՝ յերու-
սաղէմ իբրեւ զքարինս, եւ զկեդրոնա-
փայս՝ իբրեւ զմոլաթիւնիս ի գաչս
28 բազմութեան։ Եւ ելք երիվարաց Սո-
ղոմոնի յԵգիպտոսէ, եւ [11]ի թեկուաց
վաճառս արքայի. եւ առնուին ի թե-
29 կուաց գնովք՝։ Եւ ելանէին ելք կա-
ռաց յԵգիպտոսէ վոհմանակ [12]արծա-
թով, եւ ձի ընդ հարեւր եւ յիսուն ար-
ծաթով. եւ նոյնպէս թագաւորացն ա-
մենեցունց Քետացւոց, եւ թագաւորացն
Ասորւոց [13]որ ընդ ծովակողմն՝ ելանէին։

Գլ. ԺԱ

1 Եւ արքայ Սողոմոն [14]էր իսկսէր. եւ
այո իւր՝ կանայս օտարոտիս բազումս,
եւ զդուստրն Փարաւոնի, եւ Մոաբացիս եւ Ամմոնացիս եւ Եդոմացիս եւ
[15]Ասորիս եւ Քետացիս [5]եւ Ամորհացիս՝,
2 Յազգացն յորոց [16]ՀՀարեաց Տէր որդւոցն
Իսրայելի չմտանել առ նոսա, եւ նոքա
մի մտցեն առ ձեզ թէ գուցէ խոտո-
րեցուցանիցեն զսիրտս ձեր զհնի կռոցն
իւրեանց. ի նոսա յարեալ Սողոմոն
3 սիրել։ Եւ էին նորա կանայք տիկնայք
եւթն հարիւր, եւ հարճք երեք հա-
րիւր. եւ խոտորեցուցին կանայք նորա
4 զսիրտ նորա։ Եւ եղեւ ի ժամանակի
ծերութեան Սողոմոնի կանայք նորա
խոտորեցուցին զսիրտ նորա զհետ աս-
տուածոց օտարաց. եւ ոչ էր սիրտ նո-
րա կատարեալ ընդ Տեառն Աստուծոյ
իւրոյ իբրեւ զսիրտ Դաւթի հօր իւրոյ։
5 Եւ գնաց Սողոմոն զհետ Աստարտեայ
գարշելւոյ Սիդոնացւոց, եւ զհետ Մեղ-
6 քոմայ գարշելւոյ որդւոցն Ամմոնայ։ Եւ
արար Սողոմոն չար առաջի Տեառն, եւ
ոչ չոգաւ զհետ Տեառն իբրեւ զԴաւթիթ
7 զհայր իւր։ Յայնժամ չինեաց Սողոմոն
դրարձանդակն Քամոսայ [17]կռոցն
Մոաբացւոց ի լերինն հանդէպ Երուսաղե-
մի, եւ Մեղբոմայ [17]կռոց որդւոցն Ամմո-
նայ [5]եւ Աստարտեայ գարշելւոյ Սիդո-
8 նացւոց՝։ Եւ այնպէս արար ամենայն
կանանց իւրոյ օտարուհւոց. արկանէին
խունկս եւ զոհէին կռոց իւրեանց։
9 Եւ բարկացաւ Տէր Սողոմոնի, զի
խոտորեցոյց զսիրտ իւր ի Տեառնէ Աս-
տուածոյ Իսրայելի որ երեւեցաւ նմա
10 երկիցս, եւ պատուիրեաց նմա վասն

---

[1]ԵՔԲ. վահանի [2]ԵՔԲ. ասպար [3]ԵՔԲ. երեք
մնաս ոսկւոյ ի մի ասպար [4]ԵՔԲ. գլուխ բոլորշի
[5]ՅԵՔԲ. գ-ի-ս [6]ԵՔԲ. ոսկի զուտ [7]ԵՔԲ. եր-
կիր թագաւոր [8]ԵՔԲ. Աստուած [9]ԵՔԲ. զէնս
[10]ԵՔԲ. հազար եւ չորեքհարեւր

[11]ԵՔԲ. վաճառականք արքային առնուին երա-
մակ գնովք [12]ԵՔԲ. վեցհարեւր արծաթով
[13]ԵՔԲ. ի ձեռն նոցա [14]ԵՔԲ. սիրեաց [15]ԵՔԲ.
Սիդոնացիս [16]ԵՔԲ. ասաց [17]ԵՔԲ. գար-
շելւոյ

քանին այնորիկ, ամենեւին չհրմայ զհետ
սատուածոց օտարաց, եւ [1]պահել եւ
առնել՝ զոր պատուիրեաց նմա Տէր
41 [2]Աստուած։ Եւ ասէ Տէր ցՍողոմոն,
Փոխանակ զի եղեւ այդ ընդ քեզ, եւ
ոչ պահեցեր զկտականն իմ եւ զպատ-
ուիրանս զոր պատուիրեցի քեզ, պա-
տառեալով պատառեցից զթագաւոր-
թիւնդ ի ձեռանէ քումմէ, եւ տայ
42 զդա ծառայի քումմ։ Բայց ի քո աւուրս
ոչ արարից զայն վասն Դաւթի հօր քո,
այլ ի ձեռանէ որդւոյ քո առից զդա։
43 Սակայն զամենայն թագաւորութիւնդ ոչ
առից. զաւազան մի տայ որդւոյ քումմ
վասն Դաւթի ծառայի իմոյ եւ վասն
երուսաղէմի քաղաքի զոր ընտրեցի։
44 Եւ յարոյց Տէր սատան Սողոմոնի
[3]զԱգեր զԵդոմացեցի ի զաւակէ թա-
45 գաւորութեանն Եդոմացւոց։ Եւ եղեւ
ՙի սատակել Դաւթի զԵդոմ՚, յեր-
թալ Յովաբայ իշխանի զօրուն թաղել
զվիրաւորսն, զի կոտորեցին զամենայն
46 արու յԵդոմ. Զի զվեց ամիս նստաւ
անդ Յովաբ եւ ամենայն Իսրայէլ [2]յԵ-
դոմ, մինչեւ սատակեաց զամենայն
47 արու Եդոմացւոց. Եւ փախեաւ
[5]Ագեր ինքն եւ ամենայն արք Եդոմա-
յեցիք ի ծառայից հօր նորա եւ մտին
յԵգիպտոս. եւ [5]Ագեր մանուկ փոքր
48 էր։ Եւ յարեան [6]արքն ի քաղաքէ ան-
տի Մադիամու՚ եւ եկին ի Փարան, եւ
առին ընդ իւրեանս արս ի Փարանէ եւ
եկին յԵգիպտոս առ Փարաւոն արքայ
Եղիպտացւոց, [2]եւ եմուտ Ագեր առ
Փարաւոն՚. եւ եւս նմա տուն եւ կար-
գեաց նմա հաց, եւ եւս նմա գեամն։
19 Եւ եպիտ [5]Ագեր շնորհս առաջի Փարա-
ւոնի յոյժ, եւ եւս նմա կին զքոյր կնոջ
20 իւրոյ՝ զքոյր [7]Թեկեմինայ զերէց։ Եւ
ծնաւ քոյրն Թեկեմինայ Ագերայ՚ զԳա-
նեղաթ զորդի նորա. եւ մնոյց զնա
[8]Թեկեմինա ի մէջ որդւոցն Փարաւոնի.
եւ էր Գանեղաթ ի տան Փարաւոնի ի
21 մէջ որդւոցն Փարաւոնի։ Եւ լուաւ
[5]Ագեր յԵգիպտոս եթէ ննջեաց Դաւիթ
ընդ հարս իւր, եւ եթէ մեռաւ Յովաբ
իշխան զօրուն. եւ ասէ [5]Ագեր ցՓա-
րաւոն, Արձակեա զիս եւ դարձայց
22 յերկիր իմ։ Եւ ասէ Փարաւոն [9]ցԱգեր,
Զինչ պակաս է քեզ առ իս զի խնդրես
երթալ յերկիր քո. եւ ասէ [10]նմա Ագեր,
Ոչ՝ արձակելով արձակեսցես զիս. [2]Եւ
գայթաւ Ագեր յերկիր իւր։՚
23 Եւ յարոյց [11]Տէր սատան Սողոմոնի
զՌասոն զորդի Եղիադայ, որ փախեաւ
յԱդրաստադայ արքայէ Սուբայ ի տեառ-
24 նէ իւրմէ։ Եւ ժողովեցան առ նա արք,
եւ էր իշխան գնդին ի կոտորել զնոսա
Դաւիթ. եւ գնացին ի Դամասկոս եւ
նստան ի նմա. եւ [12]թագաւորեաց ի
25 Դամասկոս։ Եւ եղեւ հակառակ Իսրա-
յէլի զամենայն աւուրս Սողոմոնի. [13]այս
է չարութիւն Ադերայ՚. եւ ծանրացա-
սումն եղեւ Իսրայէլի, եւ թագաւոր-
եաց յերկրին [14]Եդոմայ։
26 Եւ Յերոբովամ որդի Նաբատայ Եփ-
րաթացի ի Սարիրայ, եւ անուն մօր
նորա Սարուա կին այրի, [2]եւ նա էր
որդի կնոջ այրւոյ՚ ծառայ Սողոմոնի.
27 եւ ամբարձ զձեռն իւր յարքայ։ Եւ այն
իրք էին զի վերացոյց զձեռն իւր յար-
քայ [2]Սողոմոն. արքայ՚ Սողոմոն չինեաց
[15]զպարսպատունդսն, եւ լման զվերամ
28 քաղաքին Դաւթի հօր իւրոյ. Եւ այրն
Յերոբովամ նշոյր զօրավարեամբ. իրրեւ
եաես Սողոմոն զպատանեակն եթէ
այր գործոյ է, կացոյց զնա ի վերայ
հարկաց բեռնակրաց տանն Յովսեփայ։
29 Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ եւ էլ
Յերոբովամ յերուսաղէմէ, եւ եգիտ
զնա Աքիա Սիլովնացի մարգարէ ի ճա-
նապարհի [2]եւ մեկուսացոյց զնա ի ճա-
նապարհէն՚. եւ Աքիա զգեցեալ էր
հանդերձ նոր. եւ երկոքեան ի դաշ-
30 տին։ Եւ բռնեաց Աքիա զհանդեր-
ձէն իւրմէ զնոյն որ ի վերայ իւր,
եւ պատառեաց զնա յերկոտասան կա-
31 ւորս։ Եւ ասէ ցՅերոբովամ, Առ դու
քեզ զտասն կտակերաստ. զի այսպէս
ասէ Տէր Աստուած Իսրայէլի, Ահա ես
պատառեցից զթագաւորութիւնն ի ձե-
ռաց Սողոմոնի, եւ տայ քեզ զտասն
32 գաւազանան։ Եւ [16]երիս գաւազանքն
եղիցին՚ նորա վասն Դաւթի ծառայի ի-
մոյ, եւ վասն երուսաղէմի քաղաքի

---

[1]ԵԲԸ. Նա ոչ պահեաց [2]ՅԱՒՆ. պակաս [3]ԵԲԸ. զԱդադ [4]ԵԲԸ. ի լինել Դաւթի յԵդոմ [5]ԵԲԸ. Ադադ [6]ԵԲԸ. ի Մադիամայ [7]ԵԲԸ. Թահփենեսի տիկնոջ. (20) Եւ ծնաւ նմա քոյրն Թահփենեսի [8]ԵԲԸ. Թահփենես

[9]ԵԲԸ. ցԱդադ [10]ԵԲԸ. Ոչինչ, այլ [11]ԵԲԸ. Աստուած [12]ԵԲԸ. Թագաւորեցին [13]Կամ, Թագ զչարութիւնն Ադադայ [14]ԵԲԸ. Ասորւոց [15]ԵԲԸ. զՄեղոն, տես Գլ. Թ. 15։ [16]դաւազան (ցեղ) մի եղիցի

զոր բնաւեցի յամենայն ցեղին Իսրա-
33 յելի փոխանակ զի Լեհոզ գա , եւ ե-
կիր եղբայր Աստուծոյ զարչիւղ" Ա-
զոնացւոց , եւ Քամեհայ կաց Մալա-
բայ , եւ Մեղքամմայ [2]զաղրուտց որդ-
ւոցն Ամմոնայ . եւ ոչ [3]գնաց ի ճանա-
պարհս իմ առնել ուղղութիւն առաջի
իմ , եւ զչմարտութիւնս եւ զարատա-
ռանս իմ իրրեւ զԴաւիթ զնայր իւր ։
34 Եւ ոչ առիւ զամենայն խաղաղութիւնն ի ձեռանէ նորա , [4]զի հակառա-
կութիւնոյ կացից հակառակ նմա" զա-
մենայն աւուրս կենաց նորա , վասն
Դաւթի ծառայի իմոյ զոր ընտրեցի , որ
պահեաց զպատուիրանս իմ եւ զձչմար-
35 տութիւնս ։ Եւ առից զխաղաղութիւնն
ի ձեռանէ [5]նորա , եւ տացէ քեզ զաւան
36 գաւազանան . Եւ որդոյ նորա տացէ
[6]զերկուս գաւազանան" , վասն ձեռայ
ճրագի ծառայի իմոյ Դաւթի զամե-
նայն աւուրս առաջի իմ յԵրուսաղէմ
քաղաքի զոր ընտրեցի զինել զանուն իմ
37 անդ ։ Եւ զքեզ առից եւ թագաւորես-
ցես որոց եւ ցանկասցի անձն քո . եւ
դու եղիցես թագաւոր ի վերայ Իսրա-
38 յելի ։ Եւ եղիցի եթէ պահեսցես զամե-
նայն ինչ զոր ես պատուիրեմ քեզ , եւ
գնասցես ի ճանապարհս իմ եւ արա-
սցես ուղղութիւն առաջի իմ , զգաչանալ
պատուիրանաց իմոց եւ հրամանաց ի-
մոց , որպէս արար Դաւթի ծառայ իմ ,
եւ եղէց ընդ քեզ , եւ չինեցից քեզ
տուն հաստատուն որպէս չինեցի Դաւ-
39 թի . եւ տացէ քեզ զԻսրայէլ ։ Եւ չար-
չարեցից զզաւակն Դաւթի վասն այնո-
40 րիկ . բայց ոչ զամենայն աւուրս ։ Եւ
խնդրեաց Սողոմոն սպանանել զՅերո-
վաամ . եւ յարեաւ Յերոբոամ եւ վա-
խեաւ յեգիպտոս առ Սուսակիմ արքայ
Եգիպտացւոց . եւ էր յեգիպտոս մին-
չեւ մեռաւ Սողոմոն ։
41 Եւ մնացորդք բանից Սողոմոնի եւ
ամենայն զոր արար եւ ամենայն
իմաստութիւնն նորա ոչ ասնիկ զրեալ
42 է ի վէրս բանից Սողոմոնի ։ Եւ աւուրք
զոր թագաւորեաց Սողոմոն յԵրուսա-
զէմ ի վերայ ամենայն Իսրայէլի տա-
43 րաւսեան ։ Եւ ննջեաց Սողոմոն ընդ
նորա իւր , եւ թաղեցին զնա ի քաղա-
քի Դաւթի հօր իւրոյ եւ թագաւորեաց
Ռոբոամ որդի նորա ընդ նորա ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ չոգաւ [7]արքայ Ռոբոամ ի Սիկիմ.
զի ի Սիկիմ գայր ամենայն Իսրայէլ
2 թագաւորեցուցանել զնա ։ Եւ եղեւ իր-
բեւ լուաւ Յերոբոամ որդի Նաբատայ ,
եւ ինքն էր ասկաւսն յեգիպտոս յորմէ
հնաւէ փախեաւ յերեսաց արքայի Սողո-
մոնի , եւ [8]զարձաւ Յերոբոամ յեգիպ-
3 տոսէ" ։ Եւ առաքեցին եւ կոչեցին զնա .
եւ եկն Յերոբոամ եւ ամենայն եկե-
ղեցին Իսրայելի . եւ խօսեցաւ ամենայն
ժողովուրդն ընդ [7]արքային Ռոբոամայ
4 եւ ասեն , Հայր քո ծանրացոյց զանուր
մեր , եւ դու թեթեւացո ի խիստ ծա-
ռայութենէ հօր քո եւ ի ծանր անուց
նորա զոր եդ ի վերայ մեր , եւ ծառա-
5 յեսցուք քեզ ։ Եւ ասէ ցնոսա , երթայք
մինչեւ ցերեկս աւուրս , եւ դարձիք առ
իս . եւ գնացին ։
6 Եւ խորհեցաւ արքայ Ռոբոամ ընդ
ծերան որ կային առաջի Սողոմոնի հօր
նորա մինչդեռ կենդանի էր , եւ ասէ ,
Զիա՞րդ խորհիք եւ տայցուք պատաս-
7 խանի ժողովրդեանն ։ Եւ խօսեցան ընդ
նմա եւ ասեն , եթէ յաւուր յայսմիկ լի-
նիցես ծառայ ժողովրդեանն այնմիկ եւ
ծառայեսցես նոցա , եւ անսասցես նոցա
եւ խօսեսցես ընդ նոսա բանս բարիս ,
եղիցին քեզ ծառայք զամենայն աւուրս ։
8 Եւ նորա զիտարտուզ ծերացն զոր խոր-
հեցաւ ընդ նոսա , եւ խորհեցաւ ընդ
մանկտին անդրպակիցս իւր որ կային
9 առաջի նորա , Եւ ասէ ցնոսա , Զինչ
տայք խրատ , եւ տայց պատասխանի
ժողովրդեանն որ խօսեցան ընդ իս եւ
ասեն , Թեթեւացո յամենայն զոր եդ հայր
10 քո ի վերայ մեր ։ Եւ խօսեցան ընդ
նմա մանկտին անդրպակիցք իւր որ
կային առաջի նորա եւ ասեն , Այսպէս
խօսեսցիս յամենայն ժողովրդեանն որ
խօսեցան ընդ քեզ եւ ասեն , Հայր քո
ծանրացոյց զանուր մեր , եւ դու թե-
թեւացո ի մէնջ . այսպէս խօսեսցիս ընդ
նոսա , Մկրտիք իմ առաւար է քան զմէջ
11 հօր իմոյ . Եւ արդ հայր իմ եդ ի վե-
րայ ձեր անուր ծանր , եւ ես յաւելից

[1]ԵԲԲ. թողին զիս եւ երկիր պագին Աստուածոյ , աստուածդն [2]ԵԲԲ. աստուածդն [3]ԵԲԲ. գնացին [4]ԵԲԲ. այլ կացուցից զնա իշխան [5]ԵԲԲ. որդւոյ նորա [6]ԵԲԲ. զմի գաւազանն

[7]ՅԵԲ. պաՅոՅ [8]ԵԲԲ. բնակեր Յերոբոամ յեգիպտոս

յանուն ձեր. հայր իմ խրատեաց զձեզ
գանիւք, եւ ես խրատեցից զձեզ [1]քրքովք։
12 Եւ ելին [2]ամենայն Իսրայէլ առ արքայ՝ Ռոբովամ յաւուրն երրորդի որպէս խօսեցաւ ընդ նոսա արքայ, եւ
ասէ, Դարձջիք առ իս յաւուրն երրոր-
13 դի։ Եւ պատասխանի եաս արքայ ժողովրդեանն խստութեամբ. եւ եթող
Ռոբովամ զխորհուրդ ծերոցն զոր խոր-
14 հեցան ընդ նմա, Եւ խօսեցաւ ընդ նոսա ըստ խորհրդեան մանկտացն եւ ասէ,
Հայր իմ ծանրացոյց զանուր ձեր, եւ
ես յաւելից յանուր ձեր. հայր իմ
խրատեր զձեզ գանիւք, եւ ես խրատե-
15 ցից զձեզ [1]քրքովք։ Եւ ոչ լուաւ արքայ ժողովրդեանն, զի էր խոտորումն
ի Տեառնէ. զի հաստատեսցէ Տէր զբան
իւր զոր խօսեցաւ ի ձեռն Աքիայ Սիլովնացւոյ, վասն Ներոբովամայ որդւոյ
16 Նաբատայ։ Իրրեւ տեսին ամենայն Իսրայէլ եթէ ոչ լուաւ նոցա արքայ, պա-
ասխանի եաս ժողովուրդն արքային եւ
ասէ, Զինչ բաժին կայ մեր ընդ Դաւիթ, եւ ոչ դոյ մեր ժառանգութիւն
ընդ որդւոյ Յեսսեայ. [3]դնդացայ ի բնակութիւնս քո, Իսրայէլ, եւ արդ դա-
[4]րաձեա զառանն Դաւիթ։ Եւ գնաց
17 Իսրայէլ [3]ի բնակութիւնս իւր։ Եւ որդւոցն Իսրայէլի որ նստէին ի քա-
ղաքս Յուդայ՝ թագաւորեաց Ռոբովամ։
18 Եւ առաքեաց արքայ Ռոբովամ զԱդոնիրամ հարկապետ, եւ քարկոծեցին
զնա ամենայն Իսրայէլ քարամբք եւ մեռաւ։ Եւ արքայ Ռոբովամ ամապարեալ
եւ ելանել ի կառս՝ փախչել յԵրուսաղէմ.
19 Եւ արհամարհեալ Իսրայէլ զառանն Դաւիթ մինչեւ ցայսօր։
20 Եւ եղեւ իրրեւ լուաւ ամենայն Իսրայէլ եթէ դարձաւ Ներոբովամ, առաքե-
ցին եւ կոչեցին զնա ի ժողովուրդն, եւ
թագաւորեցուցին զնա ի վերայ Իսրայէլի. եւ ոչ ոք էր զկնի տանն Դաւիթ,
բայց միայն ի պատուականէ տանն Յու-
21 դայ [5]եւ Բենիամինի՝։ Եւ Ռոբովամ եմուտ յԵրուսաղէմ, եւ եկեղեցացոյց
զժողովուրդն Յուդայ եւ զպատուականն
Բենիամինի՝ հարեւր եւ ութսուն հազար երիտասարդաց պատերազմողաց՝
պատերազմել ընդ տանն Իսրայէլի,
դարձուցանել զթագաւորութիւնն [6]Ռոբովամայ որդւոյ՝ Սողոմոնի։
22 Եւ եղեւ բան [7]Տեառն առ Սամեա
23 այր Աստուծոյ եւ ասէ, Խօսեաց ընդ Ռոբովամայ որդւոյ Սողոմոնի, արքայի
Յուդայ, եւ ընդ ամենայն տանն Յու-
դայ եւ Բենիամինի, եւ ընդ մնացորդս
24 ժողովրդեանն, եւ ասասցես, Այսպէս ասէ Տէր, Մի՛ ելանէք եւ մի՛ տայցէք
պատերազմ ընդ եղբարս ձեր ընդ որ-
դիսն Իսրայելի, դարձի իւրաքանչիւր
ոք ի տուն իւր, զի յինէն եղեւ բանն
այն։ Եւ լուան բանի Տեառն, եւ դա-
դարեցին երթալոց ըստ բանին Տեառն։
25 Եւ չինեաց Ներոբովամ զՍիկիմ ի լերինն Եփրեմայ եւ բնակէր ի նմա.
26 եւ ել անտի եւ չինեաց զՊանուէլ։ Եւ
ասէ Ներոբովամ ի սրտի իւրում, Ահա
արդ դառնայցէ [8]թագաւորութիւնս իմ՝
27 ի տունն Դաւիթ։ Եթէ ելանիցէ ժողովուրդս զոհել զոհս ի տան Տեառն
յԵրուսաղէմ, եւ դառնայցէ սիրտ ժո-
ղովրդեանս այսորիկ առ [9]Տէր, եւ առ՝
ինէր իւրեանց Ռոբովամ արքայ Յուդայ,
եւ սպանանիցեն զիս եւ դառնայցեն
28 առ Ռոբովամ արքայ Յուդայ։ Եւ խորհեցաւ արքայ, եւ չորս արար երկուս
երինջս ոսկիս, եւ ասէ ցժողովուրդն,
Շատ լիցի ձեզ ելանել յԵրուսաղէմ.
ահա աստուածք քո, Իսրայէլ, որ հա-
29 նին զքեզ յերկրէն Եգիպտացւոց։ Եւ
եդ զմին ի Բեթէլ եւ զմիւսն ի Դան։
30 Եւ եղեւ բանն այն ի մեղս. եւ երթայր
ժողովուրդն առաջի երեսաց միոյն մին-
31 չեւ Դան։ Եւ արար տունս ի վերայ բարձանցդ. եւ արար քուրմս [9]զհասն ինչ
ժողովրդեանն որ ոչ էին ի տանց՝ Ղեւեայս։
32 Եւ արար Ներոբովամ տօն յամենեանն ութներորդի յաւուր հնգետասաներորդի
նորին ամսոյ ըստ տօնին որ յերկրին
Յուդայ, եւ [10]ել ի սեղանն զոր՝ արար
ի Բեթէլ զոհել երինջոցն զոր արար եւ
կացոյց ի Բեթէլ քուրմս բարձանցն
33 զոր արար. Եւ [11]ել ի սեղանն զոր արար ի Բեթէլ, որ օր հնգետասան էր
ամսոյն ութներորդի [12]ի ամսին զոր ստեղծ
ի սրտէ իւրմէ, եւ արար տօնս որդւոցն
Իսրայելի, եւ ել ի սեղանն [13]զոհել։

---

[1] Կամ, կարճօք [2] Եբբ. Ներոբովամ եւ ամենայն ժողովուրդն առ [3] Եբբ. ի վրանս [4] Եբբ. տես զտուն քո, Դաւիթ [5] Յոբբ. պակաս
[6] Եբբ. ի Ռոբոամ, որդի [7] Եբբ. Աստուծոյ [8] Եբբ. թագաւորութիւնն [9] Եբբ. ի յհանոց ժողովրդեան որ ոչ էին յորդւոց [10] Կամ, եհան զոհս ի սեղանն. Նոյնպէս [11] Կամ, եհան զոհս [12] Եբբ. յամենեանն [13] Եբբ. արկանել խունկս

ԳԼ. ԻԹ

4 Եւ ահա այր Աստուծոյ եհաս ի Յուդայ բանիւ Տեառն ի Բեթէլ, եւ Եր-
րոբովամ կայր ի վերայ սեզանոյն [1]իբրեւ
2 զտնել ի վերայ՝ եւ կոչեաց զսեզանն բա-
նիւ Տեառն եւ ասէ, Սեզան, սեզան, այսպէս ասէ Տէր, Ահա որդի ծնցի տան Դաւթի Յովսիա անուն նորա, եւ զո-
հեսցէ ի վերայ քո զքուրմս բարձանցդ որ [2]զոհին ի վերայ քո, եւ ոսկերս
3 մարդկան այրեսցեն ի վերայ քո։ Եւ ետ յաւուր յայնմիկ նշան եւ ասէ, Այս նշան է զոր խօսեցաւ Տէր եւ ասէ, Ահա սեզանդ պատառեսցի, եւ հեղցի [3]պարարտութիւնդ որ ի վերայ դորա։
4 Եւ եղեւ իբրեւ լուաւ արքայ Երո-
բովամ զբանս առնն Աստուծոյ բարձա-
ւելոյ ի վերայ սեզանոյն որ ի Բեթէլ, ձգեաց արքայ զձեռն իւր ի սեզանոյ առնէ եւ ասէ, Կալարուք զդա. եւ զօ-
սացաւ ձեռն նորա զոր ձգեաց ի նա, եւ ոչ կարաց դարձուցանել զնա առ
5 ինքն։ Եւ սեզանն պատառեցաւ եւ հեղաւ [4]պարարտութիւնն ի սեզանոյ առնէ, բան նշանին զոր ետ այրն Աս-
6 տուծոյ բանիւ Տեառն։ Եւ ասէ արքայ Երոբովամ ցայրն Աստուծոյ, Աղաչեա զերեսս Տեառն Աստուծոյ քո, եւ արա աղօթս վասն իմ եւ դարձցի ձեռն իմ առ իս. եւ աղաչեաց այրն Աստուծոյ առաջի Տեառն, եւ դարձաւ ձեռնն արքային առ նա, եւ եղեւ իբրեւ
7 զառաջինն։ Եւ խօսեցաւ արքայ ընդ առնն Աստուծոյ եւ ասէ, Մուտ ընդ իս ի տուն եւ ճաշեա, եւ տաց քեզ
8 պարգեւ։ Եւ ասէ այրն Աստուծոյ ցար-
քայ, Եթէ տացես ինձ զկէս տան քո, ոչ մտից ընդ քեզ, եւ ոչ կերայց հաց, եւ ոչ արբից ջուր ի տեղւոյս յայսմիկ.
9 Զի այսպէս պատուիրեաց ինձ Տէր բա-
նիւ եւ ասէ, Մի ուտիցես հաց, եւ մի ըմպիցես ջուր, եւ մի [5]դնայցես ընդ
10 նոյն ճանապարհն ընդ որ երթայցես՝։ Եւ գնաց զճանապարհն իւր, այլ ոչ ընդ նոյն ճանապարհն ընդ որ եկն [6]գնաց ի Բեթէլայ՝։
11 Եւ մարգարէ մի ծեր բնակեալ էր ի Բեթէլ, եւ եկին որդիք նորա եւ պատ-
մեցին նմա զամենայն գործսն զոր ա-
րար այրն Աստուծոյ յաւուր յայնմիկ ի Բեթէլ, եւ զբանսն զոր խօսեցաւ ընդ արքային, եւ [7]զարձուցին զերեսս՝ հօրն
12 իւրեանց։ Եւ խօսեցաւ ընդ նոսա հայրն նոցա եւ ասէ, Ընդ ո՞ր ճանապարհ գնաց. եւ ցուցին նմա որդիքն նորա զճանապարհն ընդ որ գնաց այրն Աս-
13 տուծոյ որ եկեալ էր ի Յուդայ։ Եւ ա-
սէ ցորդիս իւր, Կազմեցէք զէշն. եւ
14 կազմեցին նմա էշն, եւ ել ի նա. Եւ գնաց զհետ առնն Աստուծոյ, եւ եգիտ զնա նստեալ ընդ կաղնւոջն, եւ ասէ ցնա, Եթէ դո՞ւ էիցես այրն Աստուծոյ
15 եկեալ ի Յուդայ. եւ ասէ, Ես եմ։ Եւ ասէ ցնա, Եկ ընդ իս ի տուն, եւ կեր
16 հաց։ Եւ ասէ, Ոչ կարեմ դառնալ ընդ քեզ եւ ոչ գալ ընդ քեզ, եւ ոչ կե-
րայց հաց եւ ոչ արբից ջուր ի տեղւոջս
17 յայսմիկ. Զի այնպէս հրամայեաց առաքել է ինձ բանիւ Տեառն եւ ասացեալ, Թէ Մի ուտիցես անդ հաց, եւ մի ըմպիցես ջուր, եւ մի դառնայցես ընդ նոյն
18 ճանապարհն ընդ որ երթայցես։ Եւ ասէ ցնա, Եւ ես մարգարէ եմ իբրեւ զքեզ. եւ հրեշտակ Տեառն խօսեցաւ ընդ իս եւ ասէ, Դարձո զնա առ քեզ ի տուն քո, եւ կերիցէ հաց եւ արբցէ ջուր. եւ առեալ նմա։
19 Եւ դարձեալ գնաց ընդ իւր, եւ եկեր
20 հաց ի տան նորա, եւ արբ ջուր։ Եւ լինէր մինչդեռ նստէին նոքա ի սեղանն, եղեւ բան Տեառն առ մարգարէն որ
21 դարձեալ գնաց, եւ խօսեցաւ ընդ առնն Աստուծոյ եկեալ ի Յուդայ եւ ասէ, Այսպէս ասէ Տէր, Փոխանակ զի դառ-
նացուցեր զբանն Տեառն, եւ ոչ պահե-
ցեր զպատուէրն զոր պատուիրեաց քեզ
22 Տէր Աստուած քո, Եւ դարձար, եւ կե-
րար հաց եւ արբեր ջուր ի տեղւոջդ յայսմիկ զորմէ խօսեցաւ ընդ քեզ եւ ասէ, Մի ուտիցես հաց եւ մի ըմպիցես ջուր, արդ մի մացէ մարմին քո ի գերեզման հարց քոց։
23 Եւ եղեւ յետ ուտելոյն նորա հաց եւ ըմպելոյ ջուր, հանգերձեաց զէշ մարգա-
24 րէին. Եւ գնաց, եւ եգիտ զնա առիւծ ի ճանապարհին, եւ սպան զնա. եւ էր մարմին նորա ընկեցեալ ի ճանապարհին, եւ էշն կայր առ նմա,

[1] Եբր. արկանել խունկս [2] Եբր. արկանեն խունկս [3] Եբր. մխիթդ [4] Եբր. մխիթն [5] Եբր. դառնայցես ընդ ճանապարհն ընդ որ եկիր [6] Եբր. ի Բեթէլ [7] Եբր. պատմեցին

25 եւ առեւծն կայր առ մարմնին : Եւ անա արք անցաւորք առին մեռեալ ընկեցեալ ի ճանապարհին , եւ առեւծն կայր առընթեր մեռելոյն . եւ մարն եւ խօսեցան ի քաղաքին ուր մարգարէն ծեր
26 բնակեալ էր : Իրրեւ լուաւ[1] որ գարձոյցն զնա ի ճանապարհէն , ասէ , Այն այրն Աստուծոյ է որ դառնացոյց զբանն Տեառն. եւ ետ զնա Տէր առիծու եւ երեկ զնա, եւ ապան զնա ըստ բանին Տեառն զոր
27 խօսեցաւ ընդ նմա : Եւ խօսեցաւ ընդ որդիան իւր եւ ասէ , Հանդերձեցէք զիս.
28 եւ հանդերձեցին : Եւ գնաց եւ եգիտ զմարմինն նորա ընկեցեալ ի ճանապարհին. եւ էշն եւ առեւծն կային առ մարմնին. եւ ոչ եկեր առեւծն զմարմին առն Աս-
29 տուծոյ , եւ ոչ երեկ զէշն : Եւ առ մարգարէն զմարմին առն Աստուծոյ , եւ եդ զնա ի վերայ իշոյն , եւ դարձոյց զնա եւ եկն ի քաղաք [2]մարգարէին ծերոյ՝ կո-
30 ծել եւ լալով զնա . Եւ [3]յածոյց զդին նորա մարգարէն ի թաղել զնա՝ ի գե-
31 զումանի իւրում. եւ կոծեցան զնա եւ առն , Վա՛յ եղբայր : Եւ եղեւ յետ կոծելոյն զնա , խօսեցաւ ընդ որդիան իւր եւ ասէ , Եթէ մեռանիցիմ , թաղեսջիք զիս յայսմ գերեզմանի ուր թաղեցաւ այրն Աստուծոյ , առ ոսկերս դորա զիս-
32 ջիք [4]զիս , զի ապրեսցին ոսկերք իմ ընդ ոսկերս դորա՛. Զի լինելով լինիցի բանն զոր խօսեցաւ բանիւ Տեառն ի վերայ սեղանոյն ի Բեթէլ , եւ ի վերայ ամենայն բարձանց որ [5]ի Սամարիա :
33 Եւ յետ բանիցս այսոցիկ ոչ դարձաւ Յերոբոամ [6]ի չարեաց իւրոց՝. եւ դարձաւ եւ արար [7]ի մանէ ժողովրդեանն քուրմս բարձանց . որ կամէր ինոյր զձեռս
34 իւր , եւ լինէր քուրմ բարձանց : Եւ եղեւ բանն այն ի մեղս առնն Յերոբոամայ, եւ ի սատակումն եւ յապականութիւն յերեսաց երկրին :

Գլ. ԺԳ

1 Ի ժամանակին յայնմիկ հիւանդացաւ
2 Աբիա որդի Յերոբոամայ : Եւ ասէ Յերոբոամ ցկին իւր , Արի եւ այլակերպեաց , եւ մի գիտասցին թէ գու կին Յերոբոամայ իցես , եւ երթիցես ի Սկով . ահա անդ է Աքիա մարգարէ . նա խօսեցաւ վասն իմ թագաւորել ի
3 վերայ ժողովրդեանս այսորիկ . Եւ առ ի ձեռն քո [8]առն Աստուծոյ՝ հաց , եւ բլիթս [9]որպես նորա , եւ չամիչ՝ եւ սաւման մի մեզու , եւ երթիցես առ նա, եւ պատմեսցէ քեզ զինչ լինելոց իցէ
4 մանկանն : Եւ արար այնպէս կինն Յերոբոամայ , եւ յարուցաւ եւ գնաց ի Սեղոմ , եւ եմուտ ի տուն Աքիայ . եւ այրն ձերացեալ ի տեսանելոյ . եւ վատեալ աչք իւր ի ծերութիւնէ իւրմէ :
5 Եւ ասէ Տէր ցԱքիա , Ահա կինն Յերոբոամայ գայ հարցանել բան ի քէն վասն որդւոյ իւրոյ , զի հիւանդ է . զայս ինչ եւ զայս ասասցես նմա . եւ [10]եղեւ ի մտանելն նորա , եւ ինքն յանծանօթս
6 [11]լինէր : Եւ եղեւ իբրեւ լուաւ Աքիա զձայն ոտից նորա , ի մտանելն նորա [12]եւ ի բանալ՝, ասէ , Մուտ , կին Յերոբոամայ . ընդէր լեգ այլ դի յանծանօթս լինիս . եւ ես եմ առաքեալ
7 առ քեզ խոստութեամբ : Երթ եւ ասա ցՅերոբոամ , Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի , Փոխանակ զի բարձրացուցի զքեզ ի միջոց ժողովրդեանդ , եւ ետուր զքեզ յառաջնորդ ի վերայ ժողո-
8 վրդեան իմոյ Իսրայէլի , Եւ պատառեցի զի պատառուածիւնն ի տանէն Դաւիթի , եւ ետուր զնա քեզ , եւ ոչ եղեր իբրեւ զծառայ իմ Դաւիթ որ պահեաց զպատուիրանս իմ , եւ որ զկնի իմ ամենայն սրտիւ իւրով առնել ուղղութիւն առա-
9 ջի իմ , Եւ չարացար առնել քան զամենեսեան որ եղեն յառաջ քան զքեզ , եւ գնացեր եւ արարեր քեզ աստուածս օտարոտիս եւ ձուլածոյս բարկացուցանել զիս , եւ զիս ընկեցեր յետս ի մարմնոյ քումմէ , Վասն այսորիկ ես ածից
10 չարիս ի վերայ տանն Յերոբոամայ , եւ սատակեցից զՅերոբոամայ որ միզկէզ զօրժով , կծկեալ եւ լքեալ ի մէջ Իսրայէլի . եւ հատաքեցից զհետս տանն Յերոբոամայ , որպէս հատաքիցի աղբ ,
11 մինչեւ ապառել գնա : Զգիսակոնս Յերոբոամայ ի քաղաքի կերիցեն շունք , եւ զմեռեալս յանկի՝ կերիցեն թռչունք
12 երկնից . զի Տէր խօսեցաւ : Եւ գու արի գնա ի տուն քո , եւ ի մտանել ոտից
13 քոց ի քաղաքն՝ մեռցի մանուկն . Եւ

---

[1] ԵԲԲ· յաւելու . մարգարէն [2] ԵԲԲ· մարգարէն ծեր [3] ԵԲԲ· եդ զդին նորա [4] ԵԲԲ· զոսկերս իմ [5] ԵԲԲ· ի քաղաքս Սամարիոյ [6] ԵԲԲ· ի ճանապարհէ իւրմէ չարէ [7] ԵԲԲ· ի յետնոց [8] ԵԲԲ· տանն [9] ԵԲԲ· պոլոռ [10] ԵԲԲ· եղիցի [11] ԵԲԲ· լցէ [12] ԵԲԲ· ընդ դուռնն

կոձեսցին զնա ամենայն Իսրայէլ, եւ թաղեսցեն զնա. զի նա միայն Յերոբաալամայ մեռանի ի գերեզման. զի դառնի ի նմա բան բարի վասն Տեառն Աստուծոյ Իսրայէլի ի տան Յերոբաալամայ։
14 Եւ յարուցանէ Տէր իւր թագաւոր ի վերայ Իսրայէլի, որ հարցէ զտունն Յերոբաալամայ յաւուր յայմիկ. եւ արդ
15 զինչ եւս։ Հարցէ Տէր զԻսրայէլ որպէս չարժի եղէգն ի ջուր, եւ խլեսցէ Տէր զԻսրայէլ յերկրէս բարութեան յայսմանէ զոր ետ հարց նոցա, եւ հոսեսցէ զնոսա յայնկոյս Գետոյն, փոխանակ զի արարին խնդրանց անտառս
16 բարկացուցանել զՏէր. Եւ մատնեսցէ Տէր զԻսրայէլ վասն մեղացն Յերոբաալամու, որ մեղաւ եւ մեղոյց զԻսրայէլ։
17 Եւ յարեաւ կինն Յերոբաալամու, եւ գնաց [1]ի Սարիրա. եւ եղեւ իբրեւ եմուտ սեամի դրան տանն, մեռաւ մա-
18 նուկն։ Եւ կոձեցան զնա, եւ թաղեցին ամենայն Իսրայէլ բան բանին Տեառն զոր խօսեցաւ ի ձեռն ծառայի իւրոյ Աքիայ մարգարէի։
19 Եւ մնացորդք բանից Յերոբաալամայ, թէ որչափ պատերազմեցաւ, եւ որչափ թագաւորեաց, ահա գրեալ են ի գրոց բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի։
20 Եւ աւուրք զոր թագաւորեաց Յերոբաալամ, ամք քսան եւ երկու. եւ հնձեաց ընդ հարս իւր, եւ թագաւորեաց Նադաբ որդի նորա ընդ նորա։
21 Եւ Ռոբովամ որդի Սողոմոնի թագաւորեաց ի վերայ Յուդայ. որդի քառասնից եւ մի ամաց Ռոբովամ ի թագաւորել իւր, եւ եւթնուտասան ամ թագաւորեաց յԵրուսաղէմ քաղաքի՝ զոր ընտրեաց Տէր գնել զանուն իւր անդ յամենայն ցեղից Իսրայէլի. եւ անուն մօր նորա Նաամա Ամմնացի։
22 Եւ արար [2]Ռոբովամ չար առաջի Տեառն, եւ [3]նախանձեցոյց ընդ ամենայն զոր արարին հարք նորա, եւ քան մեղացն
23 նոցա՝ զոր մեղան։ Եւ չինեցին նոքա իւրեանց բարձունս եւ [4]անտառս ի վերայ ամենայն բլրոյ բարձր, եւ ի ներքոյ ամենայն վարսաւոր ծառոյ։ Եւ
24 [5]նուէրք եղեն՝ յերկրին, եւ արարին ամենայն գարշութեանց աղգացն զորս երար Տէր յերեսաց որդւոցն Իսրայէլի։
25 Եւ եղեւ ի հինգերորդ տարւոջն յորում թագաւորեաց Ռոբովամ՝ եկն Սուսակիմ արքայ Եգիպտոսի ի վերայ Երուսաղէ-
26 մի, եւ առ [6]զամենայն գանձս՝ տանն Տեառն եւ զգանձս տանն արքային, եւ [7]զնիզակն ոսկիս զոր առ Դաւիթ ի ձեռաց Ադրասարայ արքայի Սուբայ, եւ տարաւ յԵրուսաղէմ զամենայն զոր առ. եւ առ զվէնան՝ ոսկիս զոր արար
27 Սողոմոն։ Եւ արար արքայ Ռոբովամ փոխանակ նոցա [8]զվէնս պղնձիս. եւ [9]զմնացեալն ի վերայ նոցա զօրագլուխք՝ սուրհանդակացն որ պահէին զդրունս
28 տանն արքային։ Եւ լինէր յորժամ մտանէր արքայ ի տունն Տեառն, բառնային զայն [10]պահ սուրհանդակքն եւ [11]յետոյ դառնային զնոսա ի [12]սուրհանդակացն։
29 Եւ մնացորդք բանից Ռոբովամայ եւ ամենայն զոր արար, ոչ աւանդ գրեալ են ի գիրս բանից աւուրց
30 թագաւորացն Յուդայ։ Եւ պատերազմ էր ի մէջ Ռոբովամայ եւ ի մէջ Յերոբաալամայ զամենայն աւուրս։ Եւ հնձեաց
31 Ռոբովամ ընդ հարս իւր եւ թագեցաւ ընդ հարս իւր ի քաղաքի Դաւիթի. եւ անուն մօր նորա Նաամա Ամմնացի. եւ թագաւորեաց Աբիու որդի նորա ընդ նորա։

Գլ. ԺԵ

1 Եւ յամին ութտասաներորդի թագաւորութեանն Յերոբաալամայ արդեոյ նաբատայ թագաւորէ Աբիու [12]որպէս Ռո-
2 բովամայ՝ ի վերայ Յուդայ։ Եւ երեք ամ թագաւորեաց ի վերայ Երուսաղէմի. եւ անուն մօր նորա Մաաքա
3 դուստր Աբիսողոմայ։ Եւ գնաց ի մեղս հօր իւրոյ զոր արար [13]առաջի Տեառն Աստուծոյ իւրոյ՝, եւ ոչ էր սիրտ նորա կատարեալ ընդ Տեառն Աստուծոյ իւրոյ իբրեւ զսիրտն Դաւիթի հօր իւրոյ։
4 Զի [14]ի ձեռն Դաւիթի ետ նմա Տէր Աստուած զանուն [15]մնացորդ յԵրուսաղէմ, զի կացուսցէ զորդի նորա յետ նորա, եւ հաստատեսցէ զԵրուսաղէմ. Որպէս արար Դաւիթ ուղղութիւն առաջի Տեառն, եւ ոչ

[1] ԵՔԲ. եւ եկն ի Թերսա [2] ԵՔԲ. Յուդայ [3] ԵՔԲ. Նախանձեցուցին զնա ամենայնիւ առաւել քան զոր արարին հարք նոցա մեղօք իւրեանց [4] ԵՔԲ. արձանս և անտառս [5] ԵՔԲ. իգացեալս գոյր [6] ԵՔԲ. գանձս [7] ԵՔԲ. առ. զամենայն, եւ առ զամենայն ասպարան [8] ԵՔԲ. տապարս [9] ԵՔԲ. յանձն արար զնոսա ի ձեռս զօրագլխաց [10] ԵՔԲ. զնոսա [11] ԵՔԲ. բերէին զնոսա այսրէն ի սենեակ [12] ՅԵՔԲ. դ-ւոյ [13] ԵՔԲ. յառաջ քան զնա [14] ԵՔԲ. վասն [15] ԵՔԲ. ճրագ

խառնեցաւ յամենայնէ զոր պատուիրեաց նմա զամենայն աւուրս կենացն իւրոյ, բայց ի բանէն Ուրիայ Քետացւոյ։
6 Եւ պատերազմ էր ի մէջ [1]Սիրիայ եւ ի մէջ Յերոբոամայ զամենայն աւուրս կենացն նորա։
7 Եւ մնացորդք բանից Աբիայ եւ ամենայն ինչ զոր արար, ո՞չ աւանիկ գրեալ են ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ. եւ պատերազմ էր ի մէջ Աբիայ եւ ի մէջ Յերոբոամայ։
8 Եւ ննջեաց Աբիա ընդ հարս իւր, եւ թաղեցան ի քաղաքի Դաւթի. եւ թագաւորէ Ասա որդի նորա ընդ նորա։
9 Եւ յամի քառասներորդի Յերոբոամայ արքայի Իսրայէլի թագաւորէ Ասա ի
10 վերայ Յուդայ. Եւ քառասուն եւ մի ամ թագաւորեաց յԵրուսաղէմ. եւ անուն մօր նորա Մաաքա դստեր Աբիսողոմայ։ Եւ արար Ասա ուղղութիւն առաջի Տեառն իբրեւ զԴաւիթ հայր
12 իւր։ Եւ եղարձ [2]զնուէրս յերկրէն, եւ ջնջեաց զամենայն [3]խարդախութիւնսն
13 զոր արարին հարք նորա։ Եւ զՄաաքա զմայր իւր ի բաց արար ի սիրնուիհնէ. քանզի արար [4]ժողով յանտառին իւրոմ." Եւ կոտորեաց Ասա [5]զամրոցս նորա, եւ այրեաց հրով ի հեղեղատին
14 Կեդրոնի։ Սակայն զբարձունսն ոչ եբարձ, բայց սիրտ նորա կատարեալ էր ընդ
15 Տեառն զամենայն աւուրս իւր։ Եւ եբեր [6]զսիւնսն հօր իւրոյ եւ զսիւնսն զիւր ետայ" ի տուն Տեառն, արծաթ եւ ոսկի եւ անօթս։
16 Եւ պատերազմ էր ի մէջ Ասայի եւ ի մէջ Բաասայ արքայի Իսրայէլի զամենայն
17 Նայն աւուրս նոցա։ Եւ ել Բաաս արքայ Իսրայէլի ի վերայ Յուդայ, եւ չինեաց զԱրամա, զի մի լիցի ելանել եւ
18 մտանել Ասայի արքայի Յուդայ։ Եւ առ Ասա զամենայն արծաթն եւ զոսկի գտեալ ի գանձս տանն Տեառն եւ ի գանձս տան թագաւորին, եւ ետ գոյն ի ձեռս ծառայից իւրոց, եւ առաքեաց զնոսա Ասա արքայ առ [7]որդին Ադերայ որդւոյ Աբենդրայիմայ որդւոյ Ազայելի" արքայի Ասորւոց բնակելոյ ի Դամասկո՝

49 եւ ասէ, [8]Ուխտեա ուխտ" ընդ իս եւ ընդ քեզ, եւ ի մէջ հօր իմոյ եւ ի մէջ հօր քո. ահաւադիկ առաքեցի քեզ պատարագ արծաթի եւ ոսկի, եւ լոյծ զուխտ քո որ ընդ Բաասայ արքայի Իսրայէլի,
20 եւ դադարեսցէ յինէն։ Եւ լուաւ [9]որդի Ադերայ" արքայի Ասայի, եւ առաքեաց [10]զիշխանսն իւր" ի քաղաքսն Իսրայէլի. եւ եհար զԱյիոն եւ զԴան եւ [11]զԱբէլ տանն Մաաքայ", եւ զամենայն զՔինեռէթ մինչեւ յամենայն երկիրն Նեփթաղիմ։
21 Եւ եղեւ իբրեւ լուաւ Բաասա, դադարեաց ի չինելոյ զԱրամա, եւ դար-
22 ձաւ ի Թերսա։ Եւ արքայ Ասա պատուիրեաց ամենայն Յուդայ [12]որ էին չենակիմ", զի առցեն զքարիւնն Բամայ եւ զփայտ նորա, զոր չինեաց Բաասա. եւ չինեաց նոքօք արքայ Ասա [13]զամենայն բլուր Բենիամինի եւ զԳիբաաթոյն"։
23 Եւ մնացորդք բանիցն Ասայի եւ ամենայն զօրութիւնն նորա, եւ ամենայն ինչ զոր արար, եւ [14]քաղաքն զոր" չինեաց, ո՞չ աւանիկ գրեալ են ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ. բայց ի ժամանակի ծերութեան իւրոյ ցաւեա-
24 ցին ոտք իւր։ Եւ ննջեաց Ասա ընդ հարս իւր, եւ թաղեցաւ ընդ հարս իւր ի քաղաքին Դաւթի. եւ թագաւորէ Յովսափատ որդի նորա ընդ նորա։
25 Եւ [15]Նադաբ որդի Յերոբոամայ թագաւորէ Իսրայէլի, յամին երկրորդի Ասայի արքայի Յուդայ. եւ թագաւորեաց ի վերայ Իսրայէլի ամս երկուս.
26 Եւ արար չար առաջի Տեառն, եւ գնաց ճանապարհն հօր իւրոյ եւ ի մեղս իւր
27 որով յանգոյց զԻսրայէլ։ Եւ [16]նատաւ դաւաճան Բաասա որդի Աքիայ ի վերայ տանն" Իսաքարու, եւ եհար զնա Բաասա ի Գաբաթոնն այազգեայ. եւ [15]Նադաբ եւ ամենայն Իսրայէլ նաւէին
28 զԳաբաթոնաւ. Եւ սպան զնա Բաասա յամին երրորդի Ասայի արքայի Յուդայ,
29 եւ թագաւորեաց ընդ նորա։ Եւ եղեւ իբրեւ թագաւորեաց, եհար զամենայն տունն Յերոբոամու. եւ ոչ մնաց զամենայն շնչաւոր տանն Յերոբոամայ, մինչեւ ոչնչակել զնա ըստ բանին

---

[1] ԵՔԲ. Ռոբոամայ [2] ՏԽ. Գլ. ԺԴ. 24. [3] ԵՔԲ. կուռս [4] ԵՔԲ. պատկեր Աստարթեայ [5] ԵՔԲ. զպատկերն [6] ԵՔԲ. զնուէրս հօր իւրոյ եւ զնուէրս իւր [7] ԵՔԲ. Բենհադադ որդի Տաբրեմմոնի որդւոյ Եզիոնի

[8] ԵՔԲ. Ուխտ է [9] ԵՔԲ. Բենհադադ [10] ԵՔԲ. զիշխանս զորուն իւրոյ [11] ԵՔԲ. զԱրկեբեթմաաքայ [12] ԵՔԲ. անխափ [13] ԵՔԲ. զԳեբաա Բենիամինի եւ զՄասփա [14] ԵՔԲ. քաղաքքն զոր [15] ԵՔԲ. Նադաբ [16] ԵՔԲ. դաւ գործեաց նմա Բաասա որդի Աքիայ ի տանէն

Տեառն զոր խօսեցաւ ի ձեռն ծառայի
30 իւրոյ Աբիայ Սիլովնացւոյ, վասն ամե-
նայն մնացեալ Յերոբովամայ որ մե-
զաւ եւ յանցոյց զիսրայէլ ի զայրացու-
ցանել իւրեամ, որովք զայրացոյց զՏէր
Աստուած Իսրայէլի։
31 Եւ մնացորդք բանից [1]Նադաբայ եւ
ամենայն ինչ զոր արար, ոչ աւանիկ
գրեալ են ի գիրս բանից աւուրց թագա-
32 ւորացն Իսրայէլի։ Եւ էր պատերազմ ի
մէջ Ասայի եւ ի մէջ [2]Նաբաատայ ար-
քայի Իսրայէլի զամենայն աւուրս նոցա։
33 Եւ յամին երրորդի Ասայի արքայի
Յուդայ թագաւորէ Բաասա որդի Աբիայ
ի վերայ ամենայն Իսրայէլի ի Թերսա
34 ամս քսան եւ չորս։ Եւ արար չար ա-
ռաջի Տեառն, եւ գնաց զճանապարհն
Յերոբովամայ [3]որդւոյ Նաբաատայ՝, եւ ի
մեզ նորա զոր պիսրայէլ յանցոյց զԻսրայէլ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ եղեւ բան Տեառն ի ձեռն Յէուայ
որդւոյ Անանիայի առ Բաասա եւ ասէ,
2 Փոխանակ որ բարձրացուցի զքեզ յերկրէ,
եւ եդու զքեզ առաջնորդ ի վերայ ժողո-
վրդեան իմոյ Իսրայէլի, եւ գնացեր զճա-
նապարհն Յերոբովամայ, եւ յանցուցեր
զժողովուրդ իմ զիսրայէլ, բարկացու-
3 ցանել զիս [4]մեռուելովք իւրեանց, Ահա
ես [5]յարուցից զետ Բաասայ եւ զետ
ան նորա՝. եւ տաց զտուն քո իբրեւ
զտունն Յերոբովամայ որդւոյ Նաբաա-
4 տայ։ Որ մեռանիցի Բաասայ ի քաղաքի՝
չուանք կերիցեն, եւ որ մեռանիցի նորա ի
դաշտի՝ կերիցեն գնա թռչունք երկնից։
5 Եւ մնացորդք բանից Բաասայ, եւ
ամենայն ինչ զոր արար եւ զօրութիւնք
նորա, ոչ աւանիկ գրեալ են ի գիրս
բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի։
6 Եւ ննջեաց Բաասա ընդ հարս իւր, եւ
թաղեցաւ ի Թերսա. եւ թագաւորէ
Եղա որդի նորա ընդ նորա, [3]յամի քսա-
7 ներորդի Ասայի արքայի։" Եւ ի ձեռն
Յէուայ որդւոյ Անանիայ մարգարէի խօ-
սեցաւ Տէր ի վերայ Բաասայ եւ ի վե-
րայ տան նորա զամենայն չարիսն զոր
արար առաջի Տեառն ի բարկացուցանել
զնա գործովք ձեռաց իւրոց. առ ի վե-
նելոյ իբրեւ զտունն Յերոբովամայ, եւ
վասն հարկանելոյ զնա։
8 Յամին քսաներորդի եւ վեցներորդի
[6]արքայի Ասայի, թագաւորեաց Եղա
որդի Բաասայ ի վերայ Իսրայէլի ի Թեր-
9 սա ամս երկուս։ Եւ [7]ժողովեաց ի վե-
րայ նորա՝ Զամբրի ծառայ իւր՝ իշխան
կիսոյ սայառաջինոյ. եւ նա բժկէր եւ
արբեալ էր ի տանն Արսայ հանդերձա-
10 պետի ի Թերսա. Եւ եմուտ Զամբրի, եւ
եհար զնա եւ սպան զնա, յամի քսա-
ներորդի եւեթներորդի Ասայի արքայի
Յուդայ, եւ թագաւորեաց ընդ նորա։
11 Եւ եղեւ ի թագաւորել նորա եւ նստել
յաթոռն իւրում, եհար զամենայն տունն
Բաասայ, եւ ոչ եթող նմա որ միզիցէ
զպատի, եւ ամենայն նորա եւ գաս-
12 րեկամս նորա։ Եւ ջնջեաց Զամբրի զա-
մենայն տունն Բաասայ՝ բան բանին
Տեառն զոր խօսեցաւ ի վերայ տանն
Բաասայ ի ձեռն Յէուայ մարգարէի.
13 վասն ամենայն մեղացն Բաասայ՝ եւ
Եղայ որդւոյ նորա որ [8]մեղան, եւ որ-
պէս յանցուցին՝ զԻսրայէլ, բարկացուցա-
նել զՏէր Աստուած Իսրայէլի սնոտեաւք
իւրեանց։
14 Եւ մնացորդ բանիցն Եղայ, եւ ամե-
նայն ինչ զոր արար, ոչ աւանիկ գրեալ
են ի գիրս բանից աւուրց թագաւորացն
Իսրայէլի։
15 Յամի քսաներորդի եւեթներորդի Ասայի
արքայի Յուդայ, թագաւորեաց Զամբրի
աւուրս եւթն ի Թերսա. եւ բանակն
Իսրայէլի ի Գաբաթոնի այլազգեաց.
16 Եւ լուաւ ժողովուրդն ի բանակի անդ՝
ասեն, Դաւաճանեաց Զամբրի եւ եհար
զարքայն. եւ [9]թագաւորեցուցին Իսրա-
յէլ՝ զԱմբրի զօրավար զօրուն ի վերայ
Իսրայէլի յաւուր յայնմիկ ի բանակին։
17 Եւ ել Ամբրի եւ ամենայն Իսրայէլ ընդ
նմա ի Գաբաթոնէ, եւ նստաւ զԹիր-
18 սա։ Եւ եղեւ իբրեւ ետես Զամբրի
թէ յառնուլ եղեւ քաղաքն, եմուտ ի
սենեակ մի տանն արքայի, եւ այրեաց
ի վերայ [10]նորա զտունն արքայի հրով.
19 Եւ մեռաւ վասն մեղաց իւրոց զոր ա-
րար՝ առնել չար առաջի Տեառն. եւ
գնաց զճանապարհն Յերոբովամայ [3]որդ-
ւոյ Նաբաատայ՝, եւ ի մեղս նորա զոր ա-

[1]ԵԲԲ. Նադաբայ [2]ԵԲԲ. Բաասայ [3]ՅԵԲԲ. զա-
յս-ն [4]ԵԲԲ. մեղօք [5]Այ-ինչ՝ ընջեցից ի սպառ
զԲաասա և զտուն նորա
[6]ԵԲԲ. Ասայի արքայի [7]ԵԲԲ. գաւ գործեաց նմա
[8]ԵԲԲ. մեղան, և որպէս յանցուցին [9]ԵԲԲ. թա-
գաւորեցոյց ամենայն Իսրայէլ [10]ԵԲԲ. իւր

լար որովք յանցոյց զԻսրայէլ ։
20 *Եւ մնացորդք բանից Ջամբրեայ , եւ*
խումբք նորա զոր խմբեցաւ , ո՞չ աւա-
նիկ գրեալ են ի գիրս բանից աւուրց
թագաւորացն Իսրայէլի ։
21 *Յաղթեաց բաժանեցաւ ժողովուրդն*
Իսրայէլի . կէս ժողովրդեանն լինէր զկնի
Թամնեայ որպէս Գովլեամայ թագաւո-
րեցուցանել զնա , եւ կէս ժողովրդեանն
22 *լինէր զկնի Ամրեայ ։ Եւ յաղթեցաւ*
ժողովուրդն որ զկնի Ամրեայ , եւ պար-
տեցաւ ժողովուրդն որ զհետ Թամնեայ
որպէս Գովլեամայ . եւ մեռաւ Թամնի ,
[1]*եւ Յաղիամ եղբայր նորա ի ժամանակի*
յայնմիկ . եւ թագաւորեաց Ամրի յետ
23 *Թամնեայ "։ Յամին երեսներորդի եւ ա-*
ռաջնորդի Ասայի արքայի Յուդայ , թա-
գաւորէ Ամրի ի վերայ Իսրայէլի ամս
երկոտասան . ի Թերսա թագաւորեաց
24 *ամս վեց ։ Եւ ետուաւ Ամրի զլեառնն*
Սեմերան ի Սամերայ [2]տեառնէ լերինն"
երկուց տաղանդաց արծաթոյ . եւ չինեաց զլեառնն , եւ կոչեաց զանուն [3]լե-
րինն զոր չինեաց՝ յանուն Սամերեայ
տեառն լերինն Սեմերան ։
25 *Եւ արար Ամրի չար առաջի Տեառն ,*
եւ չարացաւ քան զամենայն եղեալս
26 *յառաջ քան զնա . եւ գնաց զամենայն*
ճանապարհս Յերոբաւամայ որդւոյ Նա-
բաատայ , եւ ի մեղս նորա զորով յանե-
ցոյց զԻսրայէլ՝ ի բարկացուցանել զՏէր
Աստուած Իսրայէլի սնոտեաւք իւրեանց ։
27 *Եւ մնացորդք բանից Ամրեայ եւ ա-*
մենայն ինչ զոր արար , եւ զօրութիւն
նորա զոր արար , ո՞չ աւանիկ գրեալ են
ի վէպ բանից աւուրց թագաւորացն
28 *Իսրայէլի ։ Եւ ննջեաց Ամրի ընդ հարս*
իւր , եւ թաղեցաւ ի Սամարիա . եւ թա-
գաւորեաց Աքաաբ որդի նորա ընդ նորա ։
29 *Եւ Աքաաբ որդի Ամրեայ թագաւո-*
րեաց ի վերայ Իսրայէլի . յամին երես-
ներորդի եւ ութներորդի Ասայի արքայի
Յուդայ թագաւորեաց Աքաաբ որդի
Ամրեայ ի վերայ Իսրայէլի ի Սամարիա
30 *ամս քսան եւ երկուս ։ Եւ արար Աքաաբ*
որդի Ամրեայ չար առաջի Տեառն քան
զամենեսեան որ յառաջ քան զնա էին ։
31 *Եւ ոչ ինչ էր նմա բնդհատ գնալ բնա-*
մեղայ Յերոբաւամայ որդւոյ Նաբատայ .
եւ առ կին զԻեզաբէլ դուստր Յովրա-
դայ արքայի Սիդոնացւոց , եւ գնաց եւ
ծառայեաց Բահաղու եւ երկիր եղեալ
32 *նմա ։ Եւ կանգնեաց սեղան Բահաղու*
ի տան գարշելեացն որ զոր չինեաց ի
33 *Սամարիա ։ Եւ արար Աքաաբ անտառ .*
եւ յաւել Աքաաբ առնել առ ի բարկա-
ցուցանել զՏէր Աստուած Իսրայէլի քան
զամենայն թագաւորս Իսրայէլի եղեալս
34 *յառաջ քան զնա ։ Յաւուրս նորա չին-*
եաց Աքիէլ Բեթելացի զերիքով , Աբի-
րոնաւ անդրանկաւ իւրով արկ նմա հի-
մունս , եւ Սեգուբաւ կրտսերաւ իւրով
կանգնեաց զդրունս նորա , ըստ բանին
Տեառն զոր խօսեցաւ ի ձեռն Յեսուայ
որդւոյ Նաւեայ ։

Գլ . ԺԷ

1 Եւ ասէ Եղիա մարգարէ ի Թեղբեայ
Գաղաադու ցԱքաաբ , կենդանի է Տէր
[2]*Աստուած զօրութեանց" , Աստուած Իս-*
րայէլի , որոյ կայի առաջի նորա , եթէ
եղիցի յամս յայսոսիկ զօղ կամ անձ-
րեւ , բայց եթէ բանիւ բերանոյ իմոյ ։
2 *Եւ եղեւ բան Տեառն առ Եղիա եւ*
3 *ասէ , Գնա ասեմ ընդ արեւելս եւ թա-*
քիցես ի հեղեգաձին Քոսաթմու , որ է
4 *յանդիման Յորդանանու . Եւ եղիցի ըմ-*
պել քեզ ջուր ի հեղեգաձէն , եւ հրա-
ման տուայ ագռաւուց կերակրել զքեզ
5 *անդ ։ Եւ գնաց եւ արար եղիա ըստ*
բանին Տեառն , եւ չոգաւ եւ նստաւ ի
հեղեգաձին Քոսաթմայ յանդիման Յոր-
6 *դանանու ։ Եւ ագռաւք բերէին նմա*
հաց եւ միս ընդ առաւօտս , եւ հաց եւ
միս ընդ երեկոյս . եւ ի հեղեգաձէն ըմ-
7 *պէր ջուր ։ Եւ եղեւ յետ աւուրց եւ*
ցամաքեցաւ հեղեգաձն , զի ոչ եղեւ
անձրեւ ի վերայ երկրի ։
8 *Եւ եղեւ բան Տեառն առ Եղիա եւ*
9 *ասէ , Արի եւ գնա ի Սարեփթա Սի-*
դոնացւոց , եւ նստացես անդ . եւ ահա
պատուիրեալ է իմ անդ կնոջ միոյ այր-
10 *ւոյ կերակրել զքեզ ։ Եւ յարուաւ գնաց*
ի Սարեփթա ի դուռն քաղաքին , եւ ա-
հա անդ կին մի քաղէր փայտ . եւ ա-
զաղակեաց զկնի նորա Եղիա եւ ասէ
ցնա , Առ դու ինձ սակաւ մի ջուր ա-
11 *մանով եւ արբից ։ Եւ գնաց բերել . եւ*
աղաղակեաց զհետ նորա Եղիա եւ ասէ ,
Առցես ինձ պատառ մի հաց ի ձեռին
12 *քումի ։ Եւ ասէ կինն , կենդանի է Տէր*
Աստուած քո , եթէ դուցէ իմ նկատակ .

[1] ԵՖ· եւ թագաւորեաց Ամրի [2] ԵՖ· պահոց
[3] ԵՖ· քաղաքին

բայց եթէ որչափ լռամբ մի ոմնեք
ի սափորի, եւ սակաւ մի եւզ ի կամ-
փսակի. եւ ահա քարկամ կրկուտս եր-
կուս, եւ մահից եւ սարսափիւ զայն ինձ եւ
[1]մանկանց իմոց". եւ կսկիծեալ զայն եւ
13 մնացաք։ Եւ ասէ ցնա Եղիա, Փաչա-
լերեայ, մնաս եւ արա բան քանի քում.
այլ սրտագին նախ ինձ անակ նկանակ
մի փոքրիկ եւ բերես ինձ, եւ ապա
14 արասցես քեզ եւ [2]մանկանց քոյ"։ Զի
այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի,
Ափոր ալերն մի պակասեսցէ եւ կամ-
փսակ իւղոյն մի նուազեսցէ մինչեւ յօր
ասայ Տէրն անձրեւ ի վերայ երեսաց
15 երկրի։ Եւ գնաց կինն, եւ արար բան
բանին Եղիայի, եւ կերաւ նա եւ նա եւ
16 [3]որդիք նորա. Եւ յօրէ յայնմանէ սա-
փոր" ալերն ոչ պակասեաց, եւ կամ-
փսակ իւղոյն ոչ նուազեաց բան բանին
Տեառն զոր խօսեցաւ ի ձեռն Եղիայի։
17 Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ հիւանդ-
գոցաւ որդի տիկնոջ տանն, եւ էր ախա
նորա աստիճ յոյժ, մինչ ոչ ինայ ի
18 նմա չունչ։ Եւ ասէ ցեղիա, Զի՞ կայ
իմ եւ քո, այրդ Աստուծոյ, մտեր առ
իս յիշատակիլ զանօրէնութիւնս իմ, եւ
19 սպանանի՞լ զորդի իմ։ Եւ ասէ Եղիա
ցկինն, Տուր ցիս զորդիդ քո. եւ առ
զնա ի գրկաց նորա, եւ տանէր զնա ի
վերնատունն յորում ինքն նստէր, եւ
արար զնա ի կոզմն ի վերայ մահճակ
20 իւրոյ. Եւ աղաղակեաց [4]Եղիա եւ ասէ,
Ո՛հ ինձ Տէր, որ վիշդ ես այրոյն" առ
որում ես բնակեմ, զոչ չարչարեցեր
21 զորդի նորա մեռուցանել։ Եւ [5]փչեաց
երիցս ի մանուկն, եւ կարկաչ զՏէր
եւ ասէ, Տէր Աստուած իմ, դարձցի
22 չունչ մանկանս ի սա։ Եւ [6]եղեւ այնպէս.
եւ աղաղակեաց, եւ" լուաւ Տէր ձայնի
Եղիայի, եւ դարձաւ չունչ մանկանն ի
23 փոր նորա եւ կենդանացաւ։ Եւ առ Ե-
ղիա զմանուկն եւ իջոյց զնա ի վերնա-
տանէ անտի ի տունն եւ ետ ցմայր իւր.
եւ ասէ Եղիա, Տես զի կենդանի է որդիդ
24 քո։ Եւ ասէ կինն ցեղիա, Ահա արդ վի-
տացի եթէ այր Աստուծոյ ես դու, եւ
բան Տեառն ճշմարիտ է ի բերան քո։

[1]Ելք. մանկան իմում [2]Ելք. մանկան քում
[3]Ելք. տուն նորա աւուրս (16) Սափոր [4]Ելք. առ Տէր և ասէ, Տէր Աստուած իմ, զայրի՞ն եւս
[5]Ելք. տարաձեաց զանձն երից ի վերայ մանկանն
[6]Ելք. գոհ-ոռ

ԳԼ. ԺԸ

1 Եւ եղեւ յետ աւուրց բազմաց եւ բան
Տեառն եղեւ առ Եղիա յամին երրորդի,
եւ ասէ, Երթ եւ երեւեաց Աքաաբու,
եւ ասց անձրեւ ի վերայ երեսաց երկ-
2 րի։ Եւ չոգաւ Եղիա երեւել Աքաաբու.
3 եւ սաստիկ էր ի Սամարիա։ Եւ
կոչեաց Աքաաբ զԱբդիա զհազարա-
պետ իւր. եւ Աբդիա երկիւղած էր ի
4 Տեառնէ յոյժ. Եւ եղեւ ի կոտորել Ից-
զաբելայ զմարգարէսն Տեառն, առ Աբ-
դիա հարեւր այր մարգարէ, եւ թա-
ղոյց զնոսա վեսեն վեսեն յայրի, եւ
5 կերակրեաց զնոսա հացիւ եւ ջրով։ Եւ
ասէ սրբոյ ցԱբդիա, Եկ չրջեսցուք
ընդ երկիրդ առ ամենայն ակունսդրք ջրոց
եւ առ հովտատաք, թերեւս գտցուք
խոտ եւ ապրեցուսցուք զձիս եւ զջո-
րիս, եւ ոչ սատակեսցին յանասնոց։
6 Եւ [7]բաժանեցաք իրեանց զհանապարհն
չրջել". Աքաաբ գնաց ընդ մի ճանա-
պարհ միայն, եւ Աբդիա գնաց ընդ այլ
ճանապարհ միայն։
7 Եւ էր Աբդիա ի ճանապարհին, եւ
ահա ել եղիա ընդ առաջ նորա [8]միայն,
եւ աճապարեաց Աբդիա անկաւ ի վե-
րայ երեսաց իւրոց եւ ասէ, Եթէ գո՞ւ
8 իցես տէր իմ Եղիա։ Եւ ասէ Եղիա,
Ես եմ. երթ ասա ցտէր քո եթէ Ահա-
9 ւասիկ Եղիա։ Եւ ասէ Աբդիա, Զի՞նչ
մեղայ, զի մատնես զծառայ քո ի ձեռս
10 Աքաաբու սպանանել զիս։ կենդանի է
Տէր Աստուած քո, եթէ իցէ ազգ կամ
թագաւորութիւն ուր ոչ առաքեաց տէր
իմ խնդրել զքեզ. եւ ասեն թէ Չէ ու-
րեք. եւ [8]այրեաց զթագաւորութիւնն
եւ զաշխարհն նորա" զի ոչ եգիտ զքեզ։
11 Եւ արդ դու ասես, թէ երթ եւ ասասցես
12 տեառն քումդ թէ Ահաւասիկ Եղիա. Եւ
եղիցի եթէ ես երթայցեմ ի քէն, եւ
Հոգի Տեառն առնուցու զքեզ յերկիր
զոր ոչ գիտեմ, եւ մատնիցեմ պատա-
մել Աքաաբու, եւ ոչ գտանիցէ զքեզ,
եւ սպանանիցէ զիս. եւ ծառայ քո եր-
կիւղած է ի Տեառնէ ի մանկութենէ
13 իւրմէ։ Եւ ոչ պատմեցաւ տեառն իմում
զոր ինչ արարի ես ի կոտորել Ցեզաբե-
լայ զմարգարէսն Տեառն. Թաքուցի ի
մարգարէիցն Տեառն հարեւր այր՝ վեսեն

[7]Ելք. բաժանեցին իւրեանց զերկիրն չրջել ի նմա
[8]Ելք. երդմնեցոյց զթագաւորութիւնն և զազգն

յիսուն այր յայրի , եւ կերակրեցի զնո-
14 սա հացիւ եւ ջրով ։ Եւ արդ դու ասես
ցիս , Երթ եւ ասա տեառն քումի Թէ
Ահաւասիկ եղիա , եւ սպանանիցէ զիս ։
15 Եւ ասէ Եղիա , կենդանի է Տէր զօրու-
թեանց , որոյ կայի առաջի նորա , զի
այսօր երեւեցայց նմա ։
16 Եւ գնաց Աբդիու ընդ առաջ Աքաա-
բայ եւ պատմեաց նմա . եւ ընթացաւ
Աքաաբ եւ գնաց ընդ առաջ Եղիայի ։
17 Եւ եղեւ իբրեւ տեսս Աքաաբ զԵղիա ,
ասէ Աքաաբ ցԵղիա , Եթէ Դո՞ւ իցես
18 խանդարիչն Իսրայէլի ։ Եւ ասէ Եղիա ,
Ես ոչ խանդարեմ զԻսրայէլ , այլ դու
եւ տուն հօր քո , ի թողուլ ձեր [1]զՏէր
Աստուած ձեր՝ եւ երթալ զհետ Բա-
19 ղաղիմացն ։ Եւ արդ առաքեա ժողովեա
առ ի ամենայն Իսրայէլ ի լեառն Կար-
մէղոս , եւ զմարգարէսն Բահաղու զչո-
րեքհարիւր եւ զչիսուն , [2]եւ զմարգա-
րէսն ամօթոյ զչորեքհարիւր եւ զչի-
սուն ,՝ եւ զմարգարէսն անտառայ զչո-
րեքհարիւր , որ ուտեն զսեղանն Ցեզա-
20 բելայ ։ Եւ առաքեաց Աքաաբ ընդ ամե-
նայն Իսրայէլ , եւ ժողովեաց զմարգա-
րէսն ի լեառնն Կարմէղոս ։
21 Եւ [3]մերձեցաւ Եղիա ամենայն՝ ժողո-
վուրդն , եւ ասէ ցնոսա Եղիա , Մինչեւ
ցե՞րբ կաղայք յերկուս հետս . եթէ Տէր է
Աստուած , երթայք զհետ նորա , եւ եթէ
Բահաղն իցէ , երթայք զհետ նորա . եւ
ոչ ետ ժողովուրդն նմա պատասխանի ։
22 Եւ ասէ Եղիա ցժողովուրդն , Ես մնայեալ
եմ մարգարէ Տեառն միայն , եւ մարգարէք
Բահաղու արք չորեքհարիւր եւ չիսուն
[2]եւ մարգարէք անտառին՝ չորեքհարիւր՝ ։
23 Տացեն մեզ երկուս եղինս , եւ ընտ-
րեսցեն իւրեանց զմին , եւ յօշեսցեն եւ
դիցեն ի վերայ փայտից , եւ հուր մի դի-
ցեն . եւ ես արարից զմիւս եղնն , եւ ե-
դից ի վերայ փայտից , եւ հուր ոչ մատու-
24 ցից ։ Եւ կարդասջիք զանուն աստու-
ծոցն ձերոց , եւ ես կոչեցից զանուն
Տեառն [2]Աստուծոյ իմոյ՝ . եւ եղիցի աս-
տուած որ լուիցէ հրով՝ նա է Աստուած .
պատասխանի եւեւն ամենայն ժողո-
վուրդն եւ ասեն , Բարի է բանդ [2]դեր
25 իսօսեցար՝ ։ Եւ ասէ Եղիա ցմարգարէսն
[4]ամօթոյ , Ընտրեցէք դուք ձեզ զուա-

[1]ԵԲԲ. զպատուիրանս Տեառն [2]ՅԵԲԲ. պակաս
[3]ԵԲԲ. մերձեցաւ Եղիա առ ամենայն [4]ԵԲԲ. Բահաղու

26 րակ մի , եւ արարէք յառաջագոյն ,
քանզի դուք բազում էք . եւ կարգա-
եցէք զանուն աստուածոյն ձերոց , եւ
հուր մի դնէք ի վերայ ։ Եւ առին զզուա-
րակն զոր ետ նոցա , եւ արարին . եւ
կարգացին զանուն Բահաղու յայգուէ
մինչեւ ցհասարակ օր . եւ ասէին , Լուր
մեզ , Բահաղ , [2]լուր մեզ ." եւ ոչ գոյր
բարբառ եւ ոչ ունկնդրութիւն . եւ ըն-
թանային չուրջ զսեղանումն զոր արա-
27 րին ։ Եւ եղեւ ի միջօրէին եւ այսպա-
տեաց զնոսա Եղիա [2]Թեզբացի եւ ասէ ,
Մեծաձայն կարդացէք , զի աստուած
[5]է , թերեւս զբօսանք լինի իւրեան նմա ,
եւ միանգամայն թերեւս առնիցէ հրա-
ման՝ , կամ թէ ի քուն իցէ եւ յառնիս-
28 ցէ ։ Եւ կարդային մեծաձայն , եւ ցուէին
ըստ օրինի իւրեանց սրով եւ դեղար-
դեամբք մինչեւ ցհեղուլ արեան ի վերայ
29 նոցա ։ Եւ եղեւ իբրեւ միրձեցան չրջե-
րեկն , եւ մարգարէանային մինչեւ ցժա-
մանակ մատուցանելոյ զոհն , եւ ոչ գոյր
[6]ձայն . եւ խօսեցաւ Եղիա Թեզբացի
ընդ մարգարէս զարչելիացն եւ ասէ , Ի
բաց կացէք , արդ ես արարից զոհ զնա-
կէզն իմ ։ Եւ ի բաց կային եւ գնացին՝ ։
30 Եւ ասէ Եղիա ցժողովուրդն , Մատե-
րուք առ իս . եւ մատան ամենայն
Ժողովուրդն առ նա . եւ ողջացոյց զսե-
31 զանն Տեառն զկործանեալ ։ Եւ առ Ե-
ղիա երկոտասան քար ըստ թուոյ ցե-
ղիցն [7]Իսրայէլի , որպէս խօսեցաւ Տէր
ընդ նմա եւ ասէ , Իսրայէլ եղիցի ա-
32 նուն քո . Եւ չինեաց [8]զքարինան յա-
նուն Տեառն , եւ արար [9]ծով որ աս-
նէր երկուց դրուագ սերմն չուրջ զսե-
33 զանումն ։ Եւ եդեալ զկերատան [2]ի վերայ սե-
զանոյն զոր արար՝ , եւ յօշեաց զոզնա-
կէզն եւ եդեալ ի վերայ չերտիցն [2]եւ ե-
34 դեալ ի վերայ սեզանոյն՝ . Եւ ասէ , Ա-
ոէք լնէք չորս սափորս ջրոյ , եւ հեղէք
ի վերայ ողջակիզիդ եւ ի վերայ չեր-
տիցդ . եւ ասէ , Կրկնեցէք . եւ կրկնե-
ցին . եւ ասէ , Երեքկնեցէք . եւ երեք-
35 կնեցին . Եւ գնայր ջուրն չուրջ զսե-
զանումն , եւ [10]զծովն լցին ջրով ։
36 Եւ եղեւ ի ժամու մատուցանելոյ պա-

[5]ԵԲԲ. է նա, թերեւս խօսք ինչ իցէ նմա, թերեւս զրաղումն ինչ իցէ նորա . և Թերեւս իցէ ի ճանապարհի [6]ԵԲԲ. ձայն , եւ ոչ գոյր պատասխանի , և ոչ գոյր ունկնդրութիւն
[7]ԵԲԲ. որդւոցն Յակոբայ [8]ԵԲԲ. զքարինան սեզան [9]ԵԲԲ. խրամ [10]ԵԲԲ. զխրամն

տարադին ազազակեաց Եղիա յերկինս ,
և ասէ , Տէր Աստուած Աբրահամու եւ
Իսահակայ եւ Իսրայէլի , այսօր ծանիցին
եթէ դու ես Տէր Աստուած Իսրայէլի , եւ
ես ծառայ քո . եւ [1]ես արարի՝ զգործս
37 զայսոսիկ. Լուր լինի, Տէր, լուր լինի [2]հրամ.
եւ ծանիցէ ժողովուրդս եթէ դու ես Տէր
Աստուած , եւ դու դարձուցեր զսիրտ
38 ժողովրդեանս այսորիկ յետս : Եւ անկաւ հուր ի Տեառնէ [2]յերկինից , եւ եկեր
զողջակէզսն եւ զչերեսն, եւ [3]զհողն եւ
զջուրն որ [4]ի ծովէն լափեաց հուրն :
39 Իբրեւ տեսին ամենայն ժողովուրդն ,
անկան ի վերայ երեսաց իւրեանց եւ
ասեն , Արդարեւ Տէր , նա է Աստուած,
40 Տէր , նա է Աստուած : Եւ ասէ Եղիա
ցժողովուրդն , Կալարուք զմարգարէսն
Բահաղայ , եւ մի ոք ապրեսցի ի նոցանէ . եւ կալան զնոսա . եւ իջոյց զնոսա Եղիա ի հեղեղատն Կիսոնի եւ կո-
սորեաց զնոսա անդ :
41 Եւ ասէ Եղիա ցԱքաաբ , Ել, կեր եւ
42 արբ , զի ոռնաձայն [5]անձրեւի է : Եւ
ել Աքաաբ ուտել եւ ըմպել . եւ Եղիա
ել ի գլուխ լերինն Կարմեղոս , եւ խո-
նարհեցաւ յերկիր , եւ եդ զերեսս իւր
43 ի մէջ ծնգաց իւրոց . Եւ ասէ ցպառանա-
ւորն իւր , Ել եւ հայեաց բոլ ճանա-
պարհ ծովու . եւ ել եւ հայեցաւ պա-
ռանաւորն , եւ ասէ , Ոչ ինչ է . եւ ասէ
Եղիա , Դարձ դու դարձիր եւթն անգամ:
44 Եւ գարձաւ պառանաւորն եւթն անգամ.
եւ եղեւ յետ եւթնեքսանից նաւապին ,
եւ ահա ամպ մի փոքրիկ իբրեւ զմարդ
ածն [6]հանէր ջուր՝. եւ ասէ , ել եւ ա-
սա ցԱքաաբ , Լծեա զկառս քո եւ էջ ,
45 գուցէ հասանիցէ քեզ անձրեւ : Եւ ե-
դեւ մինչ նա այսր եւ անդր զառնայր ,
երկինք մթացան ամպովք եւ հողմով ,
եւ եղեւ անձրեւ մեծ . եւ [7]լայր եւ
46 երթայր Աքաաբ յեզրայել : Եւ ձեռն
Տեառն եղեւ ի վերայ Եղիայի . եւ
պնդեաց զմէջ իւր եւ ընթացաւ առաջի
Աքաաբայ , մինչեւ մտանել յեզրայել :

Գլ. ԺԹ

1 Եւ պատմեաց Աքաաբ Յեզաբելայ [2]կնոջ
իւրում՝ զամենայն զոր արար Եղիա ,
եւ որպէս կոտորեաց զամենայն մար-

2 գարէսն սրով : Եւ առաքեաց Յեզաբէլ
հրեշտակ առ Եղիա եւ ասէ , [2]Եթէ
դու Եղիա իցես , եւ ես Յեզաբէլ՝ ես
եւ ես արասցին ինձ աստուածքն եւ ես
եւ ես յաւելցին , եթէ ոչ վաղիւ ի սոյն
ժամու եդից զանձն քո իբրեւ զանձն
միոյ ի նոցանէ :
3 Եւ [3]երկեաւ Եղիա՝ եւ յարեաւ գնաց
[4]առանձինն , եւ եկն ի Բերսաբէէ յեր-
կիրն Յուդայ , եւ եթող անդ պատա-
4 նեակն իւր : Եւ ինքն գնաց յանապատ
աւուր միոյ ճանապարհ , եւ չոգաւ եւ
նստաւ ընդ բեւեհնեաւ . եւ խնդրեաց
մահ անձին իւրոյ , եւ ասէ , Շատ է
արդ , Տէր , առ զոգի իմ [2]յինէն , Տէր՝.
5 զի ոչ եմ ես լաւ քան զհայր իմ : Եւ
ի քուն եմուտ եւ ննջեաց ընդ մեհեզն.
եւ ահա [10]ոմն միւնգեաւ ի նա եւ ա-
6 սէ , Արի եւ կեր : Եւ հայեցաւ Եղիա
եւ ահա ի մարիոյ նորա հնկանակ [11]հա-
ճարայ եւ կուժ ջրոյ . եւ յարեաւ եկեր
7 եւ արբ , եւ դարձաւ ննջեաց : Եւ դար-
ձաւ հրեշտակն Տեառն երկրորդ անգամ
միւնգեաւ առ նա եւ ասէ ցնա , Արի
կեր , զի բազում է ի քէն եւ անդր
8 ճանապարհդ : Եւ յարեաւ եկեր եւ արբ,
եւ զնաց զօրութեամբ կերակրոյն այ-
նորիկ զքառասուն աւուր եւ զքառասուն
գիշեր , մինչեւ գլեառնն Աստուծոյ ի
Քորէբ :
9 Եւ եմուտ անդ յայրն եւ [12]դադարեաց.
եւ ահա բան Տեառն եղեւ առ նա եւ
10 ասէ , Զի՞ ես զդա աստ , Եղիա : Եւ ա-
սէ Եղիա , Նախանձեցայ զնախանձ
Տեառն ամենակալի . զի Որդիք [13]զքեզ
որդիքն Իսրայելի , զսեպհան քո կոր-
ծանեցին , եւ զմարգարէս քո կոտորե-
ցին սրով . ես միայն մնացեալ եմ , եւ
11 խնդրեն զանձն իմ առնուլ գաս : Եւ
ասէ , Ելցես գես [2]վաղիւ եւ կացցես ի
լերին առաջի Տեառն : Եւ ահա Տէր
[14]անցցէ . եւ հոգմ մեծ ուժգին որ պե-
ղէր զլերինս քակտէր եւ զվէմս խորտակէր ա-
ռաջի Տեառն , եւ ոչ ի հոգմն Տէր . եւ
յետ հոգմոյն չարժումն , եւ ոչ ի չարժ-
12 մանն Տէր . եւ յետ չարժմանն հուր , եւ
ոչ ի հուրն Տէր . եւ յետ հրոյն ձայն
13 մեղմ օդոյ : Եւ եղեւ իբրեւ լուաւ Ե-
ղիա , ծածկեաց զերեսս իւր մաչկեկաւն ,

[1]ԵՖԲ. բանիւ քով արարի զամենայն [2]ՅԵՖԲ. գ-ինոջ
[3]ԵՖԲ. զքարինան և զՀողն [4]ԵՖԲ. ի խորամին
[5]ԵՖԲ. բազմութեան անձրեւի [6]ԵՖԲ. ելանէր ի
ծովէ [7]ԵՖԲ. Հեծաւ

[8]Կամ, եառես [9]ԵՖԲ. ՚ի ձանձնապուր [10]ԵՖԲ.
հրեշտակ [11]ԵՖԲ. ի թոնրոյ [12]ԵՖԲ. անդ
ագաւ [13]ԵՖԲ. զսեպհան քո [14]ԵՖԲ. անցանէ

եւ ել եւ եկաց [1]ի ներքոյ այրին. եւ
ահա բարբառ առ նա եւ ասէ, Զի՞ նս
14 դու աստ, Եղիա։ Եւ ասէ Եղիա, Նա-
խանձեցայ զնախանձ Տեառն ամենակա-
լի, զի թողին զուխտ քո որդիքն Ի-
սրայելի, զսեղանս քո քակեցին, եւ
զմարգարէս քո կատարեցին սրով. ես
միայն մնացեալ եմ, եւ խնդրեն զանձն
15 իմ առնուլ զնա։ Եւ ասէ ցնա Տէր, Գնա
եւ դարձիր զճանապարհ քո, եւ եր-
թիցես զճանապարհ անապատին Դա-
մասկոս, եւ երթիցես եւ օծցես զԱ-
16 զայէլ ի թագաւոր Ասորւոց. Եւ զՅէ-
ուդ որդի Նամեսեայ ի թագաւոր ի վերայ
Իսրայելի. եւ զԵղիսէ որդի Սափա-
տայ յԱբելմաուղայ՝ օծցես ի մարգարէ
17 փոխանակ քո։ Եւ եղիցի զապրեալն ի
սրոյ Ազայելի սպանցէ Յէուա, եւ զապ-
րեալն ի սրոյ Յէուայ սպանցէ Եղիսէ.
18 Եւ [2]թողցես դու յԻսրայէլ եւթն հա-
զար արանց զամենայն որոյ ոչ իցէ
կրկնեալ ծունր Բահաղու, եւ զամենայն
բերան որոյ ոչ իցէ պագեալ զնա։
19 Եւ գնաց անտի, եւ եգիտ զԵղիսէ
որդի Սափատայ, եւ նա [3]վարէր երկո-
տասան եզամիւք. եւ զոյգք զոյգք ե-
զանց առաջի նորա, եւ ինքն ի վերայ
երկոտասաներից։ Եւ եհաս Եղիա առ
նա, եւ ընկէց զմանչկեակն իւր ի վե-
20 րայ նորա. Եւ եթող Եղիսէ զեզինան,
եւ ընթացաւ զհետ Եղիայի, եւ ասէ,
Համբուրեցից զհայր իմ եւ զմայր իմ,
եւ եկից զկնի քո. եւ ասէ ցնա, Երթ
դարձիր անդրէն, զի՞նչ արարի քեզ։
21 Եւ դարձաւ ի նմանէ, եւ առ [4]զզոյգ
զոյգս" եզանցն եւ եզեն, եւ գործեաց
եզանցն հասոյց զնոսա, եւ եւս Ժո-
ղովրդեանն եւ կերան, եւ յարեաւ գնաց
զհետ Եղիայի եւ պաշտէր զնա։

ԳԼ. Ի

1 Եւ [5]որդի Ադերայ" արքայ Ասորւոց Ժո-
ղովեաց զամենայն զօրս իւր, եւ [6]եկ եւ
նստաւ զԱմարիտաւ, եւ" երեսուն եւ
երկու թագաւորք ընդ նմա, եւ [6]ամե-
նայն երիվարք եւ կառք. [7]եկին եւ նստան
զԱմարիտաւ, եւ տային" պատերազմ
2 ընդ նմա։ Եւ առաքեաց հրեշտակս առ Ա-
3 քաաբ արքայ Իսրայելի ի քաղաքն, եւ
ասէ ցնա, Այսպէս ասէ [5]որդի Ադերայ".
Արծաթ քո եւ ոսկի քո իմ է, եւ կա-
նայք քո եւ որդիք քո գեղեցիկք իմ
4 են։ Պատասխանի եւ արքայն Իսրայե-
լի եւ ասէ, Որպէս խօսեցար, տէր իմ
արքայ, քո եմ ես եւ ամենայն ինչ իմ։
5 Եւ դարձան հրեշտակքն եւ ասեն,
Այսպէս ասէ [5]որդի Ադերայ". Ես յղեցի
զի զարծաթ քո եւ զոսկի քո եւ զկա-
նայս քո եւ զորդիս քո ցիս ասացս.
6 Զի վաղիւ ի յայն ժամու առաքեցից
զծառայս իմ, եւ յուզեսցեն զտուն քո
եւ զտուն ծառայից քոց, եւ եղիցին
ցանկալիք աչաց "նոցա, յոր արկանիւ-
7 ցեն զձեռս իւրեանց՝ առցեն։ Եւ կոչեաց
արքայն Իսրայելի զամենայն ծերակոյտ
երկրին եւ ասէ, Գիտասջիք եւ տեսջիք
զի չարիս ինն խնդրէ նա, զի առաքեաց առ
ես [9]զուսաւերսյ իմոց եւ զդստերսյ իմոց,"
զարծաթ իմ եւ զոսկի իմ ոչ արգելի ի
8 նմանէ։ Եւ ասեն ցնա ծերքն եւ ամենայն
ժողովուրդն, Մի լսեր եւ մի յանձն
9 առնուր։ Եւ ասէ ցհրեշտակս [10]որդւոյն
Ադերայ", Ասացէք ցտէրն [11]ձեր ցար-
քայ. Զամենայն ինչ զոր առաքեցեր առ
ծառայ քո յառաջնում՝ նուաղին՝ արա-
րից, բայց զայդ բան ոչ կարեմ առնել.
եւ դնացին արքն եւ դարձուցին նմա
պատասխանի։
10 Եւ առաքեաց առ նա [5]որդին Ադերայ"
եւ ասէ, Օն եւ օն արասցեն ինձ դիքն
եւ օն եւս օն յաւելցեն, եթէ բաւեսցէ հող
Սամարիայ՝ [12]ափսաւք հանդերձ" ամե-
11 նայն զօրականի հետեւակաց իմոց։ Եւ
պատասխանի եւ արքայն Իսրայելի եւ
ասէ, [13]Շաւէ արդ, մի պարծեսցի կորն
12 [իբրեւ զուզիղն"։ Եւ եղեւ [իբրեւ [14]պա-
տասխանի եւ նմա" զբանս զայս, եւ
ինքն ի դինուոջ էր եւ ամենայն թագա-
ւորք որ ընդ նմա ի խորանս. եւ ասէ
ցծառայսն իւր, [15]Շինեցէք պատնէշ. եւ
եղին պատնէշ" չուրջ զքաղաքաւն։
13 Եւ ահա մարգարէ մին մատեաւ առ
Աքաաբ արքայ Իսրայելի եւ ասէ, Այս-
պէս ասէ Տէր. եթէ տեսանիցե՞ս զայն

---

[1]ԵԲԲ. ի բերան [2]ԵԲԲ. թողի. (տես Հռովմ. ԺԱ.4։)
[3]ԵԲԲ. վարէր երկոտասան զոյգս առաջի իւր, եւ
ինքն յերկոտասաներորդին [4]ԵԲԲ. զզոյգ [5]ԵԲԲ.
Բենադադ [6]ՁԵԲԲ. պահեաւ [7]ԵԲԲ. եւ ել և
պաշարեաց զԱմարիա եւ տայր

[8]ԵԲԲ. քոց [9]ԵԲԲ. զկանանց իմոց եւ զորդւոց
իմոց, և [10]ԵԲԲ. Բենադադայ [11]ԵԲԲ. իմ [12]ԵԲԲ.
ափոց [13]ԵԲԲ. Ասացէք, Մի պարծեսցի որ ածէն
սուր՝ իբրեւ զայն որ ի բաց դնէ [14]ԵԲԲ. լուաւ
[15]ԵԲԲ. Ձակատեցարուք, եւ ճակատեցան

ամրոխ մեծ. ահա ես մասնեցից զնոսա այսօր ի ձեռս քո, եւ գիտասցես թէ ես
14 եմ Տէր։ Եւ ասէ Աբեսաղոմ, Ի՛ւ. եւ ասէ, Այսպէս ասէ Տէր, Մանկաւագ իշխանաց դաւադաց։ Եւ ասէ Աբեսաղոմ,
15 Ո՞ նախ զրգռեսցէ զպատերազմն. եւ ասէ, Դու։ Եւ հանդէս արար [1]Թաւազիայ իշխանաց դաւադաց, եւ եկեն երկիր-
բիւր եւ [2]երեսուն. եւ տպա հանդէս արար ամենայն ժողովրդեանն, ամենայն արուց [3]զօրաւիճակն՝ երկին հա-
16 զար արանց, եւ [4]կանէր զմիջօրէիւ։ Եւ [5]որդին Ագեայ՝ ընդ պիղծ մանել էր եւ արբեալ [6]ի Սոկքալ, ինքն եւ երեսուն
եւ երկու թաղաւարքն օգնականք նո-
17 ցա։ Եւ եկեն նախ մանկունք իշխանաց դաւադացն, եւ [7]առաքեցին առ որդին Ագեայ՝, եւ պատմեցին նմա եւ ասեն,
18 Արք եկեն ի Սամարեայ։ Եւ ասէ ցնոսա, Եթէ ի խաղաղութիւն եկանիցեն, կալջիք զնոսա կենդանիս, եւ եթէ ի
պատերազմ եկանիցեն, կալջիք զնոսա
19 կենդանիս։ Եւ եկեն ի քաղաքէն մանկտի իշխանաց պատառացն, եւ զօրն զինի
20 նոցա. Եւ եհար Իեբաքանչիւր ոք արուժ զիպեցեալ. եւ փախան Աւորիքն, եւ հալածեաց զնոսա Իսրայէլ. եւ ապրեցաւ [5]որդին Ագեայ՝ արքայ Ասորւոց հեծեալ ձիով՝ հանդերձ [8]երիւք ամամբք՝
21 հեծելովք։ Եւ եկ արքայն Իսրայէլի եւ [9]առ զերիվարս եւ զկառս, եւ եհար յԱսորւոց հարուածս մեծամեծս։
22 Եւ մատեաւ մարգարէն առ արքայ Իսրայէլի, եւ ասէ ցնա, Զօրացիր եւ գիտա, եւ տես զինչ զործեսցես. զի ի
գարձի տարւոյն այսորիկ [8]որդի Ագեայ՝ արքայ Ասորւոց ելանելոց է ի վերայ քո։
23 Եւ ծառայք արքային Ասորւոց ասեն ցնա, Աստուած լերանց է Աստուածն Իսրայէլի, [8]եւ ոչ աստուած գաչառաց՝ վասն այնորիկ յաղթահարեցին զմեզ. եթէ տայցեմք ընդ նոսա պատերազմ ի
24 գիւրի, յաղթեմք նոցա։ Եւ զայս բան արասցես. ի բաց արա զթագաւորան յիւրաքանչիւր տեղւոջէ, եւ դիր ընդ
25 նոցա նահապարա. Եւ [10]փոխանակեսցաւք քեզ զօրս ընդ զօրացն որ անկան ի քէն, եւ երիվարս ընդ երիվարացն,
եւ կառս ընդ կառացն. եւ տացուք ընդ նոսա պատերազմ ի գիւրի եւ յաղթեսցուք նոցա։ Եւ անսաց բարբառոյ նո-
26 ցա, եւ արար այնպէս։ Եւ եղեւ ի գալ նոր տարւոյն հանդէս արար [5]որդին Ագեայ՝ Ասորւոց. եւ եկ յԱփեկա ի պա-
27 տերազմ ընդ Իսրայէլի։ Եւ որդիքն Իսրայէլի արարին հանդէս, եւ [11]երկցնգեան եւ հասին յառաջ նոցա. եւ ճա-
կատեցան որդիքն Իսրայէլի ընդդէմ Ասորւոցն իբրեւ երկու ևրամակիք այծից. եւ Ասորիքն լցին զերկիրն։
28 Եւ մատեաւ այրն Աստուծոյ եւ ասէ ցարքայն Իսրայէլի, Այսպէս ասէ Տէր, Փոխանակ զի ասացին Ասորիքն թէ Աս-
տուած լերանց է Տէր [8]Աստուած Իսրայէլի՝ եւ ոչ Աստուած գաչառաց, [12]նա ասացէ զզօրն՝ զայն զինեալ ի ձեռս քո, եւ
29 [13]գիտասցես թէ ես եմ Տէր։ Եւ բանակեցան նոքա ընդդէմ սոցա զեւթն օր. եւ եղեւ յաւուրն եւթներորդի ընդխառնեցաւ պատերազմն. եւ եհար Իսրայէլ
յԱսորւոցն հարեւր հազար հետեւակաց
30 ի միում աւուր. Եւ մնացեալքն վազեցին յԱփեկա ի քաղաքն [8]Իբեռանց, եւ անկաւ պարիսպն ի վերայ քսան եւ եւթն հազար արանց մնացելոց. եւ [8]որդին Ագեայ՝ փախեաւ եւ եմուտ [14]ի
առն իւր՝ սենեակ ի սենեկէ։
31 Եւ ասեն ցնա ծառայք իւր, Ահաւասիկ [15]զիտեմք զի թագաւորք տանն Իսրայէլի թագաւորք ողորմութեան են. արկցուք գոտեաս զինջոյք մերովք եւ
չուանս ի գլուխս մեր, եւ ելցուք առ արքայն Իսրայէլի. գերեսաց ապրեցուսցէ
32 զկ [16]զանձինս մեր՝։ Եւ զգեցան գոտեաս ի մէջս իւրեանց, եւ եդին չուանս ի գլուխս իւրեանց. եւ [17]ասեն ցարքայն Իսրայէլի՝, Ծառայ քո [5]որդի Ագեայ՝ ասէ, Կեցցէ անձն իմ։ Եւ ասէ, Եթէ տակաւին կենդանի իցէ, եղբայր իմ է։
33 Եւ արքն հնայեցին եւ [18]նուէրեցին եւ քաղեցին զբանն ի բերանոյ նորա. եւ ասեն, Եղբայր քո [5]որդի Ագեայ՝ ասաց է. եւ ասէ, Մա՛ք եւ ածէ՛ք զնա. եւ
եկ առ նա [5]որդին Ագեայ՝, եւ հանին
34 զնա առ նա ի կառսն։ Եւ ասէ ցնա, Զքաղաքսն զոր առ հայր իմ ի հօրէ

---

[1] ՆԲԳ. Մանկուցն [2] ՆԲԳ. երեսուն եւ երկու [3] ՆԲԳ. Իսրայէլի [4] ՆԲԳ. եկին [5] ՆԲԳ. Բենադադ [6] ՆԲԳ. ի խորանս [7] ՆԲԳ. առաքեաց Բենադադ [8] ՅՆԲԳ. պակաս [9] ՆԲԳ. եհար [10] ՆԲԳ. դու գտեսցես [11] ՆԲԳ. կազմեցան [12] ՆԲԳ. եւ ասաց զամենայն զօրն [13] ՆԲԳ. գիտասջիք [14] ՆԲԳ. ի քաղաքն [15] ՆԲԳ. լուեալ է մեր [16] ՆԲԳ. զանձն քո [17] ՆԲԳ. եւ ասեն առ արքայն Իսրայէլի եւ ասեն [18] ՆԲԳ. փութացեալ

քումմէ՝ զարձուցից առ քեզ , եւ [1]հանցես քեզ հարկս՝ ի Դամասկոս , որպէս եղ հայր իմ ի Սամարիա . եւ ասէ , Եւ ես արձակեցից զքեզ ուխտիւ . եւ եղ ընդ նմա ուխտ , եւ արձակեաց զնա :
35 Եւ այր մի յորգւոց մարգարէիցն ասէ ցընկեր իւր բանիւ Տեառն , Հար զիս . եւ ոչ կամեցաւ այրն հարկանել զնա :
36 Եւ ասէ ցնա , Փոխանակ զի ոչ լուար ձայնի Տեառն , ահա իրրեւ զնացես ինէն՝ ապանցէ զքեզ առիւծ . եւ իրրեւ զնաց ինէնանէ , եգիտ զնա առիւծ եւ սպան
37 զնա : Եւ եգիտ այլ այր եւ ասէ , Հար զիս . եւ եհար զնա այրն , եհար եւ
38 ջաղջախեաց : Եւ չոգաւ մարգարէն եւ եկաց առաջի արքային ի վերոյ ճանապարհին , եւ կապեաց պատանաւ զաչս
39 իւր : Եւ եղեւ իրրեւ անցանէր ընդ այն արքայ , եւ նա աղաղակեաց առ արքայ եւ ասէ , Ծառայ քո ել ընդ զօրս ի պատերազմն , եւ ահա այր մի եած առ իս այր եւ ասէ , Պահեա զայրդ զայդ , ապա թէ զկնի անկանիցի զկնի , եղիցի անձն քո ընդ անձին նորա , կամ տաղանդ մի արծաթոյ կշռեսցես :
40 Եւ եղեւ մինչ ծառայ քո այսր եւ անդր հայէր , եւ նա չէր ուրեք . եւ ասէ արքայն Իսրայէլի ցնա , [2]Ահա եւ այդ վճիռն կոդմանէ դաւ է . սպանիր ուրեմն՝ : Եւ փութացաւ ի բայ առ զպատանին յաչաց իւրոց . եւ ծանեաւ զնա արքայն Իսրա-
42 յէլի թէ ի մարգարէից անտի է նա : Եւ ասէ ցնա , Այսպէս ասէ Տէր . Փոխանակ զի հաներ զու զայրն վհատակար ի ձեռաց [3]իմոց , եղիցի անձն քո փոխանակ անձին նորա , եւ ժողովուրդ քո
43 փոխանակ ժողովրդեան նորա : Եւ գնաց արքայն Իսրայէլի ի տուն իւր ախտեալ եւ լքեալ , եւ եկն ի Սամարիա :

Գլ . ԻԱ

1 Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ , այգի մի էր Նաբովթայ Յեզրայելացւոյ [4]մերձ առ կալ՝ Աքաաբու արքայի Սամարեայ :
2 Եւ խօսեցաւ արքայ ընդ Նաբովթա եւ ասէ , Տուր ինձ զայգին քո , եւ եղիցի ինձ ի պարտէզ բանջարոյ , զի մերձ է ի տուն իմ . եւ տայ քեզ այլ այգի լաւ քան զնա . եւ եթէ հաճոյ իցէ առաջի քո , տայ քեզ արծաթ գինս այգւոյն քո . 3 եւ եղիցի ինձ ի պարտէզ բանջարոյ :՝ Եւ ասէ Նաբովթ ցարքայ , Քաւ լիցի ինձ [5]յԱստուծոյ իմմէ՝ տալ քեզ զժառանգութիւն հարց իմոց :
4 Եւ եկն Աքաաբ ի տուն իւր ախտեալ եւ լքեալ վասն բանին զոր խօսեցաւ ընդ նմա Նաբովթ Յեզրայելացի եւ ասէ , Ոչ տայց քեզ զժառանգութիւն հարց իմոց . եւ ննջեաց ի մահիճս իւր , եւ ծածկեաց զերեսս իւր , եւ ոչ ակեր հաց :
5 Եւ եմուտ առ նա Յեզաբէլ կին իւր եւ խօսեցաւ ընդ նմա եւ ասէ , Զի՞ խռո-
6 վեալ է սիրտ քո եւ ոչ ուտես հաց : Եւ ասէ ցնա , Զի խօսեցայ ընդ Նաբովթայ Յեզրայելացւոյ եւ ասեմ , Տուր ինձ զայգին քո ընդ արծաթոյ , եւ եթէ կամիս՝ տայ քեզ այլ այգի փոխանակ նորա . եւ ասէ , Ոչ տայց քեզ [6]զժառան-
7 գութիւն հարց իմոց՝ : Եւ ասէ ցնա Յեզաբէլ կին իւր , Արդ այդպէս առնիցես դմայաւորութիւնդ ի վերայ Իսրայէլի . արի՝ կեր հաց եւ սիրտդ ցնծասցէ . եւ ես տայց քեզ զայգին Նաբովթայ Յեզրայելացւոյ :
8 Եւ գրեաց հրովարտակ յանուն Աքաաբայ , եւ կնքեաց մատանեաւ նորա . եւ առաքեաց զհրովարտակն առ ծերս եւ առ ազատս բնակիչս նորա , որ բնա-
9 կեալ էին ընդ Նաբովթայ : Եւ գրեալ էր ի հրովարտակին այսպէս . [7]Պահեցէք պահս , եւ նստուցէք զնաբովթ ի գլուխ ժո-
10 ղովրդեանն . եւ նստուցէք երկուս արս որդիս անօրինաց հանդէպ նորա , եւ վկայեսցեն զնմանէ եւ ասասցեն , Թէ [8]Օրհնեցեր զԱստուած եւ զարքայ . եւ հանցեն զնա եւ քարկոծեսցեն , եւ մեռցի :
11 Եւ արարին արք քաղաքին նորա՝ ծերք եւ ազատք որ նստէին ի քաղաքին նորա՝ որպէս առաքեաց առ նոսա Յեզաբէլ , զոր օրինակ գրեալ էր ի հրո-
12 վարտակն , զոր առաքեաց ցնոսա : Կարգեցին պահս , եւ նստուցին զնաբովթ ի գլուխ ժողովրդեանն :
13 Եւ եկին երկու արք՝ որդիք անօրինաց , եւ նստան հանդէպ նորա . եւ վկայեցին արքն ապստամբութեան զնաբովթայ առաջի ամենայն ժողովրդեանն եւ ասեն , Թէ Օրհնեաց Նաբովթ զԱստուած եւ զարքայ . եւ հանին զնա արտաքոյ քաղաքին , եւ քարկոծեցին զնա քա-

[1] ԵԲէր. դիցես քեզ պողատայս [2] ԵԲէր. Այսպէս է դատաստան քո, գու վճռեցեր [3] ԵԲէր. պոխոե [4] ԵԲէր. Յեզրայէլ մերձ յաքսունիս [5] ԵԲէր. ի Տեառնէ [6] ԵԲէր. զայգի իմ [7] ԵԲէր. Քարոզեցէք [8] Ըստ ԵԲէրայեցւոյն Նաբովթ Հայհոյեցեր

14 րամբք , եւ մնաւս ։ Եւ առաքեցին առ
Ցեզաբէլ եւ ասեն , Քարկոծեցաւ Նա-
բովթ եւ մեռաւ ։
15 Եւ եղեւ իբրեւ լուաւ Ցեզաբէլ թէ
քարկոծեցաւ Նաբովթ եւ մեռաւ , ասէ
Ցեզաբէլ ցԱքաաբ , Արի ժառանգեա
զայգին Նաբովթայ Ցեզրեկլայեցւոյ՝ զոր
ոչ եաս քեզ ընդ արծաթոյ . զի ոչ է Նա-
16 բովթ կենդանի , քանզի մեռաւ ։ Եւ ե-
ղեւ իբրեւ լուաւ Աքաաբ թէ մեռաւ
Նաբովթ [1]Ցեզրեկլայի , պատառեաց
զհանդերձս իւր եւ քուրձ ղգեցաւ ։ Եւ
եղեւ յետ աւուրիկ եւ՝ յարեաւ Աքաաբ
եւ էջ յայգին Նաբովթայ Ցեզրեկլայե-
ւոյ ժառանգել ,
17 Եւ խօսեցաւ Տէր ընդ Եղիայի Թես-
18 բայեցւոյ եւ ասէ , Արի էջ ընդ առաջ Ա-
քաաբու արքայի Իսրայէլի որ ի Սամա-
րիա . զի նա էջ յայգին Նաբովթայ ժա-
19 ռանգել գնաց . Եւ խօսեսցիս ընդ նմա
եւ ասասցես , Այսպէս ասէ Տէր . [2]Որպէս
սպանար եւ ժառանգեցեր . վասն այդո-
րիկ՝ այսպէս ասէ Տէր , Ի տեղւոջ ուր
լափեցին շունք [1]եւ խոզք՝ զարիւն Նա-
բովթայ , անդ լափեսցին զարիւն քո
20 [3]եւ բոզք լուասցին յարեան քումմ՝՝ ։ Եւ
ասէ Աքաաբ ցԵղիա , Եթէ գտե՞ր զիս ,
թշնամի իմ ։ Եւ ասէ , Գտի . զի [4]ի զուր
հպարտացար՝ զործել չար առաջի Տեառն
21 [1]առ ի բարկացուցանելոյ զնա՝՝ ։ Ահա ես
ածից ի վերայ քո չարիս . եւ [5]բորբո-
քեցից զկնի քո՝՝ , եւ սատակեցից զԱ-
քաաբու որ միզիչ զրմամ , եւ զնո-
22 ղեալն եւ զլքեալն յԻսրայէլ . Եւ տայ
զտունն քո իբրեւ զտունն Երոբովամու
որդւոյ Նաբատայ , եւ իբրեւ զտունն Բաա-
սայ որդւոյ Աբիայ , վասն բարկութեանն
որով բարկացուցեր զիս եւ յանցուցեր
23 զԻսրայէլ ։ Եւ առ Ցեզաբէլ խօսեցաւ
Տէր եւ ասէ , Շունք կերիցեն զնա առ
24 պարսպին Ցեզրայելի ։ Զմեռեալ Աքաա-
բու ի քաղաքի կերիցեն շունք , եւ զմե-
ռեալ նորա ի դաշտի կերիցեն թռչունք
երկնից ։
25 Սակայն [6]ի զուր մեծամեծապ Աքաաբ՝՝
առնել չար առաջի Տեառն , որպէս յիմա-
26 րեցոյց զնա Ցեզաբէլ կին իւր ։ Եւ դար-
չացաւ յոյժ երթալ զհետ դարչնութեան
բոլոր ամենայնի զոր արար Ամովրհացին ,
զոր սատակեաց Տէր յերեսաց որդւոցն
Իսրայէլի ։
27 Եւ [7]լսեն բանին զի սարչացաւ Ա-
քաաբ յերեսաց Տեառն եւ երթայր լալով ,
եւ՝՝ պատառեալ զպատմուճան իւր եւ
զգեցեալ քուրձ ի վերայ մարմնոյ իւրոյ ,
եւ պահեալ եւ զգեցեալ քուրձ [1]յաւուրն
յորում սպան զՆաբովթ Ցեզրեկլայեցի՝՝ ,
28 եւ զնացեր կոտորեր ։ Եւ եղեւ բան Տեառն
[8]ցԵղիա Թեզբացի եւ ասէ ,
29 Աքաաբու , եւ ասէ Տէր՝՝ , Տեսե՞ր զի
ապչացաւ Աքաաբ յերեսաց իմոց . վա-
խճանակ զի ակնկռութեամբ յերեսաց իմոց ,
ոչ ածից չարիս յաւուրս նորա , այլ յա-
ւուրս որդւոյ նորա ածից չարիս ի վե-
րայ տան նորա ։

ԳԼ. ԻԲ

1 Եւ նստան զհրեամ , եւ ոչ էր պատե-
րազմ ի մէջ Ասորւոց եւ ի մէջ Իսրա-
2 յէլի ։ Եւ եղեւ յամին երրորդի էջ Յո-
սափատ արքայ Յուդայ առ արքայ Իս-
3 րայէլի ։ Եւ ասէ արքայն Իսրայէլի ցծա-
ռայս իւր , Ո՞չ գիտէք եթէ մեր է Ռա-
մովթ Գաղաադ , եւ մեք լռեալ կամք
առնուլ զնա ի ձեռաց արքային Ասո-
4 ւոց ։ Եւ ասէ [1]արքայ Իսրայէլի՝՝ ցՅո-
սափատ , Եկցե՞ս ընդ մեզ յԻռամովթ Գա-
զաադ ի պատերազմ . եւ ասէ Յո-
սափատ ցարքայն Իսրայէլի , Որպէս ես՝
նոյնպէս ես դու , եւ որպէս զօրք իմ՝ զօրք
քո , եւ որպէս երիվարք իմ՝ երիվարք քո ։
5 Եւ ասէ Յոսափատ [1]արքայ Յուդայ՝՝
ցարքայն Իսրայէլի , Ապէ , հարցէք այսօր
6 զՏէր ։ Եւ ժողովեաց արքայն Իսրայէլի
[9]զամենայն մարգարէս՝՝ իբրեւ արս չորեք-
հարիւր . եւ ասէ ցնոսա արքայ , Եր-
թա՞յց յԻռամովթ Գաղաադ ի պատերազմ ,
թէ զանցի կացայց . եւ ասեն , Ել , եւ
7 տացէ Տէր ի ձեռս արքային ։ Եւ
ասէ [10]Յոսափատ ցարքայն Իսրայէլի ,
Այլ ոք արդեւք աստ մարգարէ Տեառն՝
թէ չիցէ՝՝ , եւ հարցցուք զՏէր նմանէ ։
8 Եւ ասէ արքայն Իսրայէլի ցՅոսափատ ,
Ի տաս այր մի հարցանել նմանէ զՏէր ,
եւ նա տանջի զնա , զի ոչ խօսի զինէն

[1] ՅԵՔԲ. պակաս [2] ՆԵՔԲ. Սպաներ, եւ ժառանգե՞ս
եւս. եւ խօսեսցիս առնա եւ ասասցես. [3] ՆԵՔԲ.
զքո իսկ [4] ՆԵՔԲ. վհատեցեր զանձն [5] ՆԵՔԲ.
ընդեցից զետրունգ քո [6] ՆԵՔԲ. չեղեւ իբրեւ
զԱքաաբ որ վհատեաց զանձն

[7] ՆԵՔԲ. եղեւ իբրեւ լուաւ Աքաաբ զբանս զայսո-
սիկ , [8] ՆԵՔԲ. առ Եղիա Թեզբացի , եւ ասէ
[9] ՆԵՔԲ. զմարգարէս [10] ՆԵՔԲ. Յոսափատ, Միթէ
չիցէ՞ աստ այլ մարգարէ Տեառն

բարի , այլ չար . Միքիա որդի Յեմլեայ ։
Եւ ասէ Յովասիաս [1]արքայ Յուդայ՝
Մի՛ առասցէ այդպէս արքայ ։
9 Եւ կոչեաց արքայն Իսրայելի զներքինի մի եւ ասէ , Վազվազակի առ զայր
10 զՄիքիա որդի Յեմլեայ ։ Եւ արքայն Իսրայելի եւ Յովասիաս արքայ Յուդայ նստէին այր իւրաքանչիւր յաթոռ իւրում վառեալ ի դրունս Սամարիայ , եւ ամենայն մարգարէքն մարգարէանային
11 առաջի նոցա ։ Եւ արար իւր Սեդեկիա որդի Քանանու եղջիւրս երկաթիս եւ ասէ , Այսպէս ասէ Տէր , Առքօք խթիւնսոցս զԱսորիս մինչեւ սպառեսցին ։
12 Եւ ամենայն մարգարէքն մարգարէանային նոյնպէս , եւ ասէին , Ել յԲաամովթ Գաղաադ , եւ յաջողեսցիս , եւ առցէ Տէր ի ձեռս [2]քո զարքայն Ասորւոց՝ ։
13 Եւ հրեշտակն որ չոգաւ կոչել զՄիքիա , պատմեաց նմա եւ ասէ , Ահա ասեն ամենայն մարգարէքն խօսին լրիւս ընդ մի բերան բարի զարքայէ . արդ եղիցի բան քո իբրեւ զմիոյ ի նոցանէն ,
14 եւ խօսեսցայ բարի ։ Եւ ասէ Միքիա , կենդանի է Տէր , եթէ ոչ զոր ինչ ասացէ ցիս Տէր , զայն խօսեսցայց ։
15 Եւ եկն առ արքայ , եւ ասէ ցնա արքայ , Միքիա, ելցո՞ յԲաամովթ Գաղաադ ի պատերազմ , եթէ զսեղի կալայց ։ Եւ ասէ , Ել եւ յաջողեսցիս , եւ առցէ Տէր
16 ի ձեռս արքայի ։ Եւ ասէ ցնա արքայ , [3]Դարձեալ կրկին երդմնեցուցեալ՝ դիպեղ , զի խօսեսցիս ընդ իս ճշմարտութիւնս
17 յանուն Տեառն ։ Եւ ասէ , [4]Ոչ այդպէս է ։՝ Տեսի զամենայն Իսրայէլ ցրուեալ ընդ լերինս իբրեւ զհօտ որոյ ոչ գուցէ հովիւ . եւ ասէ Տէր , Ոչ գոն դոցա տէրք , դարձցին իւրաքանչիւր օք ի
18 տուն իւր խաղաղութեամբ ։ Եւ ասէ արքայն Իսրայէլի ցՅովասիաս [1]արքայ Յուդայ՝ , Մի՞ չ ասացի քեզ թէ Ոչ մարգարէանայ նա ինձ բարի , բայց եթէ
19 չար ։ Եւ ասէ Միքիա , [4]Ոչ այդպէս . ոչ ես ինչ , այլ՝ լուր զպատգամ Տեառն . [5]ո՞չ ասպաքէն տեսի զՏէր Աստուած Իսրայէլի՝ նստեալ ի վերայ աթոռոյ իւրոյ , եւ ամենայն զօրք երկնից կային չուրջ
20 զնովաւ յաջմէ եւ յահեկէ . Եւ ասէ Տէր , Ո՞ պատրեսցէ զԱքաաբ [1]արքայ Իսրայէլի՝ , եւ կացէ անկցի յԲաամովթ Գաղաադ .
21 Եւ ել ոգի եւ եկաց առաջի Տեառն եւ
22 ասէ , Ես պատրեցից զնա . Եւ ասէ ցնա Տէր , Ի՞նչ ։ Եւ ասէ , Ելից եւ եղէց ոգի սուտ ի բերան ամենայն մարգարէից նորա ։ Եւ ասէ , Պատրեսցես եւ կարասցես , ել եւ արա այդպէս ։ Եւ արդ ահա ետ Տէր ոգի սուտ ի բերան ամենայն մարգարէիցդ քոց այդոցիկ , եւ Տէր խօսեցաւ ի վերայ քո չարիս ։
23 Եւ մատեաւ Սեդեկիա որդի Քանանու , եւ եհար Միքիայի զծնօտս նորա , եւ ասէ , Ո՞ր հոգի Տեառն է այն , որ
24 անց յինէն եւ խօսեցաւ ի քեզ ։ Եւ ասէ Միքիա , Ահա դու իսկ տեսցես յաւուր յայնմիկ յորում մտանիցես սենեակ ի սենեկէ թաքչիլ ։
25 Եւ ասէ արքայն Իսրայելի , Կալայք զՄիքիա եւ տուք զնմա քաղաքապետ
26 եւ զՅովաս որդի արքայի , Եւ ասասջիք , Այսպէս ասէ արքայ . Դիք զայս ի բանտի , եւ կերիցէ հաց նեղութեան եւ ջուր նեղութեան, մինչեւ դարձայց խաղաղութեամբ ։
28 Թեամբ ։ Եւ ասէ Միքիա , Եթէ դու դառնալով դարձցիս խաղաղութեամբ , ապա ոչ խօսեցաւ յիս Տէր . Եւ ասէ , Լուարուք , [6]ղօրք ամենեքեան ։
29 Եւ ել արքայն Իսրայելի եւ Յովասիաս արքայն Յուդայ ընդ նմա յԲաամովթ Գաղաադ ։ Եւ ասէ արքայն Իսրայելի ցՅովասիաս [1]արքայն Յուդայ՝ , Այլակերպեցայց եւ մտից ի պատերազմ , եւ դու զգեցիր [7]զիմ հանդերձ՝ . եւ այլակերպեցաւ արքայն Իսրայելի , եւ եմուտ ի
31 ճակատն ։ Եւ արքայն Ասորւոց պատուէր եհան կառապետաց իւրոց[8] եւ ասէ , Մի՛ մարանչիցիք ընդ մեծ կամ ընդ փոքու ,
32 այլ միայն ընդ արքայն Իսրայելի ։ Եւ եղեւ իբրեւ տեսին կառապետքն զՅովասիաս[1]արքայն Յուդայ՝ , եւ ասեն ցմիմեանս , Թուի թէ սա իցէ արքայն Իսրայելի . եւ պատեցին զնա պատերազ-
33 մել . Եւ աղաղակեաց Յովասիաս ։ Եւ եղեւ իբրեւ տեսին կառապետքն եթէ չէ նա արքայն Իսրայելի , դարձան ի
34 նմանէ ։ Եւ ձգեաց մի ամի[9]կրօղովութեամբ պարեղն իւր , եւ եհար զարքայն Իսրայէլի ընդ պլանան եւ ընդ թաթառաչան , եւ ասէ ցկառապետան իւր , Դարձ զձեռն քո եւ հան զիս ի պատերազմէս զի խո-

[1] ՅԵբբ. պ-ԼՈ-ռ [2] ՅԵբբ. արքայի [3] ՅԵբբ. Ընդ ինչ երդմնեցուցից [4] ՅԵբբ. Վասն որոյ [5] ՅԵբբ. տեսի զՏէր [6] ՅԵբբ. Ժողովուրդդ [7] ՅԵբբ. զՀանդերձ քո [8] ՅԵբբ-յեն յ-ԼԵ-, երեսուն եւ երկուց [9] ՅԵբբ. յանգետաց

35 ցեալ եմ՝ եւ սատակացաւ պատերազմն
յաւուր յայնմիկ. եւ արքայ կայր ի վե-
րայ կառացն ընդդէմ Ասորւոցն [1]յայզուէ
մինչեւ ցիրկով". եւ հոսէր արիւնն ի
վիրէ անտի [2]եւ ընդ ղծոց կառացն. եւ
36 իբրեւ ընդ երեկս եղեւ, ել ոգին"։ Եւ
եկաց քարոզ զօրացն ի բանակին ընդ
մտանել արեւուն եւ ասէ, Իւրաքան-
չիւր ոք ի քաղաք իւր եւ յերկիր [3]իւր,
37 զի մեռաւ արքայ։ Եւ եկն" ի Սամարիա,
38 եւ թաղեցին զարքայ ի Սամարիա։ Եւ
լուացին զկառան յաւազանս Սամարեայ.
եւ լիզէին [4]խոզք եւ" չունք զարիւն
նորա, եւ [5]բոզք լուացան յաւազանն", ըստ
բանին Տեառն զոր խօսեցաւ։
39 Եւ մնացորդք բանին Աքաաբու, եւ
ամենայն ինչ զոր արար, եւ առնն
փղոսկրեայ զոր չինեաց, եւ ամենայն
քաղաքքն զոր արար, անուանիկ գրեալ
է ի գիրս բանից աւուրց թագաւորացն
40 Իսրայելի։ Եւ ննջեաց Աքաաբ ընդ հարս
իւր, եւ թագաւորեաց Ոքոզիա որդի
նորա ընդ նորա։
41 Եւ Յովսափատ որդի Ասայի թագա-
ւորեաց ի վերայ Յուդայ, յամին չոր-
րորդի Աքաաբու արքայի Իսրայելի [6]թա-
42 գաւորեաց։ Յովսափատ որդի երեսուն
եւ հինգ ամաց էր ի թագաւորել իւրում,
եւ քսան եւ հինգ ամ թագաւորեաց յե-
րուսաղէմ. եւ անուն մօր նորա Ասու-
43 բա գուստր Սեղեքեայ։ Եւ գնաց յամե-
նայն ճանապարհս Ասայի հօր իւրոյ, եւ
ոչ խոտորեցաւ ի նմանէ առնել ուղիս
44 թիւն ուղղի Տեառն։ Բայց ի բարձունսն
դի ոչ եւրարձ, քանզի ժողովուրդն եւ արկանէր խունկս ի վե-
45 րայ բարձանց։ Եւ խաղաղութիւնս էր
Յովսափատ ընդ արքային Իսրայելի։
46 Եւ մնացորդք բանից Յովսափատու
եւ զօրութիւնքն զոր արար եւ որչափ
պատերազմեցաւ, ոչ աւանիկ գրեալ են
ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յու-
47 դայ։ Եւ [7]զաւելորդս նուիրելոցն" որ
մնացին յաւուրս հօր նորա՝ քակեաց
յերկրէն։
48 Եւ թագաւոր ոչ դայր Եդովմ հաստա-
տակ։
49 Եւ արքայ Յովսափատ արար նաւս
Թարսացիս երթալ Ովիր զոսկւոյ, եւ
ոչ գնացին, քանզի խորտակեցան նաւքն
50 ի Գասիոնգաբեր։ Յայժմ ասէ Ոքո-
զիա որդի Աքաաբու ցՅովսափատ, Եր-
թիցեն ծառայք քո ընդ ծառայս [8]իմ, եւ
նաւք քո ընդ նաւս իմ". եւ ոչ կամե-
51 ցաւ Յովսափատ։ Եւ ննջեաց Յովսա-
փատ ընդ հարս իւր, եւ թաղեցաւ առ
հարս իւր ի քաղաքի Դաւիթի հօր իւրոյ.
եւ թագաւորեաց Յովրամ որդի նորա
ընդ նորա։
52 Եւ Ոքոզիա որդի Աքաաբու թագա-
ւորեաց ի վերայ Իսրայելի ի Սամարիա,
յամին եւթնուտասներորդի Յովսափա-
տայ արքայի Յուդայ. եւ թագաւորեաց
53 յԻսրայելի ամս երկուս։ Եւ արար չար
առաջի Տեառն, եւ գնաց զճանապարհս
[9]Աքաաբու հօր իւրոյ, եւ զճանապարհս
[9]Յեղոբելայ մօր իւրոյ, եւ ի մեղս տանն
Յերոբոամայ որդւոյ Նաբատայ որ յան-
54 ցոյցն գԻսրայէլ. Եւ ծառայեաց Բահա-
զիմայն, եւ երկիր եղաւ նոցա. եւ
բարկացոյց զՏէր Աստուած Իսրայելի
[10]ըստ ամենայն եղելոցն յառաջ քան զնա"։

---

[1] ՆԷԲ. եւ մեռաւ ընդ երեկս [2] ՆԷԲ. ի ծոց կառացն [3] ՆԷԲ. իւր։ (37) Եւ մեռաւ արքայ, եւ բերաւ [4] ՅԱ. գ-ի-ւ-ք [5] Կամ, զգէնան եւս լուացին

[6] ՆԷԲ. զնացորդն իգ ացելոց [7] ՆԷԲ. իմ նաւուք
[8] ՆԷԲ. ըստ ամենայնի զոր արար Հայր նորա

ԳԼՈՒԽՔ ՁՈՐՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

	Գլ.	Համ.
Թէ հիւանդացեալ Ազդիա Աքաաբեանց՝ առաքեաց հարցանել զՀանճիկ վասն կենացդ. և եղև առն նորա պատգամ մահու ի ձեռն Եղիայի։	Ա.	1
Չի իջոյց Եղիա հուր և եկեզ զլիսուն զօրականաւն Ազդիայ։	Ա.	9
Թէ եւ զերկրորդ եւս լիսուէնն պղտեցեալ, էջ ապա ընդ երրորդին և խօսեցաւ ընդ Ազդեայ որ եւ մեռաւ անորդի ըստ բանի նորին։	Ա.	11
Չի թագաւորեաց Յովրամ եղբայր Ազդեայ ի վերայ Իսրայելի, յերկրորդ ամին Յովրամայ որդւոյ Յովսափատայ՝ առն երկոտասան. եւ սպար չարիս։ (Եւ գայս գուշեաւ կալ զի կրկնօրանութեամբ իմն է դրեալն։)	Ա.	17
Վերանայն Եղիայի հրեղէն կառաւք յերկինս, եւ զի դարձաւ Եղիսէ յԵրիքով։	Բ.	1
Բժշկեաց Եղիսէ զմահագործ ջուրն Երիքովի, եւ անէծ զմանկտին անօրինաց, եւ եկն ի Սամարիա։	Բ.	19
Վերատին յիշէ զՅովրամ եղբայր Ազդեայ զորդին Աքաաբու, եւ զի հարկատուէր Աքաաբու Մովաբացին։	Գ.	1
Գումարեցաւ Յովրամ, Յովսափատ եւ Եդովմայեցին ի վերայ Մովաբու, եւ ըստ բանին Եղիսէի առաւատուցեալք ջրովք՝ հարին սաստիկ զՄովաբ, մինչեւ զՔհեաց թագաւորն զորդին, եւ ի բաց կացին ինքեանք։	Գ.	5
Բողոք կալաւ կինն այրի առ Եղիսէ, եւ նա ազօթիւք ածեցոյց զեւղն, որով հատոյց զպարտսն։	Դ.	1
Չի յաղօթս Եղիսէի տուաւ որդի կնոջն Սունացւոյ։	Դ.	8
Թէ մեռաւ մանուկն, եւ ազօթիւք յարոյց զնա Եղիսէ։	Դ.	18
Չի վտլրի բանջարով ընկալաւ զհիւանդն։	Դ.	38
Չի սակաւ նկանակօք յագեցոյց զՀարեւրեան բանիւ Աստուծոյ։	Դ.	42
Չի առաքեաց արքայն Ասորւոց զնեեման բորոտ առ արքայն Իսրայելի արբել զնա. եւ նա տարակուսեալ պատառեաց զհանդերձս իւր։	Ե.	1
Չի արբեաց զնա Եղիսէ լուացմամբ ի Յորդանան, եւ արձակեաց։	Ե.	9
Չի դարձոյց զբորոտութիւն առնն ի Գեհեղի վասն ագահութեանն։	Ե.	20
Չի վերացոյց փայտիւ զերկաթն ի միջոյ Յորդանանու։	Զ.	1
Չի շլացոյց զլօրսն Ասորւոց եւ ած ի Սամարիա, եւ կերակրել եւ արձակեաց։	Զ.	8
Իրք մնկակեր կանանցն ի սովի պաշարման Սամարեայ, եւ զի մարգարէացաւ Եղիսէ վասն փութով առատութեանն։	Զ.	24
Չի խուճապեալ պաշարիչքն փախեան գիշերի, եւ ի թողեալ ռոճկացն եղեւ առատութիւն։	Է.	3
Պատուէր ետ Եղիսէ կնոջն Սունացւոյ՝ երթալ յերեսաց սովոյն պանդխտանալ յայլազգիս։	Ը.	1
Չի յետ եւթն ամի դարձաւ կինն, եւ դարձոյց ի նա Յովրամ զամենայն գոյն վասն Եղիսէի։	Ը.	3
Եկն Եղիսէ ի Դամասկոս, եւ մարգարէացաւ թագաւորել Ազայելի ըստ բանին Տեառն առ Եղիա։	Ը.	7
Թագաւորեաց Ասորւոց Ազայել, եւ ի հինգ ամին Յովրամայ Աքաաբեանց՝ թագաւորէ Յովրամ որդի Յովսափատայ Յերուսաղէմ, եւ սպար չարիս. եւ ապստամբեաց ի նմանէ Եդովմայեցին։	Ը.	16
Մեռաւ Յովրամ Յերուսաղէմ. եւ յերկոտասան ամին Յովրամայ Աքաաբու թագաւորեաց Ազդիա որդի Յովրամայ տարի մի Յերուսաղէմ, եւ զՅովրամ Աքաաբու խոցեցին զօրքն Ազայելի ի պատերազմի։	Ը.	24
Առաքեաց Եղիսէ՝ մարգարէ մի յԱրամոթ Գաղաադ, եւ օծ զՅեհու թագաւոր Իսրայելի ըստ բանին Տեառն առ Եղիա։	Թ.	1
Գումարեցաւ Յեհու ի վերայ Յովրամայ Յեզրայէլ եւ սպան զնա ի վիճակին Նաբովթայ, ընդ նմին եւ զԱզդիա թագաւոր Յուդայ։	Թ.	14
Կրկնաբանութիւն վասն սպանելոյ թագաւորացս։	Թ.	29
Չի նշաւակեալ մահուամբ խնդրեցաւ ի Յեզաբելայ մօրէն Յովրամայ վրէժն Նաբովթայ։	Թ.	30
Պատանի եւթանասուն որդիքն Աքաաբու, եւ քառասուն եւ երկու եղբարքն Ազդիայ։	Ժ.	1
Չի առաջի որդւոցն Ոսաբաբու եհար Յեհու եւ սպառեաց զտուննն Աքաաբու։	Ժ.	15
Չի պատրանօք սպան Յեհու զգուրմանիսհաղել եւ ետ յաղբոցս զԸհոհազայել յերկնչելոյն ոչ եկաց ի բաց, բայց վասն վրէժուցն զոր խնդրեաց՝ մինչեւ ի չորս ազգս տուաւ նմա թագաւորել։ եւ զի Ազայել նեղեր զԻորայել։	Ժ.	18
Քսան եւ ութ ամ թագաւորեաց Յեհու, եւ մեռաւ։	Ժ.	35
Գոթողիա դուստր Յեզաբելի թագաւորեաց յԻրուսաղէմ ամս եւթն. եւ զի օծ Յովիդա քահանայ մեծ զՅովաս թագաւոր Յուդայ։	ԺԱ.	1
Չի պանաւ Գոթողիայ, եւ պատուէր ետ Յովաս վասն կազմելոյ տաճարին. եւ գործումն Ազայելի Յերուսաղէմ յետս դարձոյց պատրաստօք։	ԺԱ.	13
Չի սպանին զՅովաս Յերուսաղէմ, թա-		

Գլ. Համ.

գաւօրեալ սմն քառասուն՝ ԺԲ. 19
Ի քսան եւ երկու ամին Յովսաս թագաւորեաց Յովաքազ որդի Ջէուայ, եւ սաստիկ նեղեալ Ասորեստէ՝ յոյժ աղքատացաւ եւ մեռաւ՝ ԺԴ. 1
Յերեսուն եւ յեօթն ամին Յովասաս թագաւորի Յուդայ թագաւորէ Յովաս որդի Յովաքազայ Իսրայելի սմն երկոտասան, եւ յաղթեալ Ամասիայ արքային Յուդայ՝ եհատ զպարիսպն Երուսաղէմի՝ ԺԴ. 10
Մեռաւ Նգիսէ՝ եւ յոսկերս Նորա հասեալ մեռելոյն՝ յարեաւ՝ ԺԴ. 14
Չի խնայեաց Տէր յԻսրայէլ յերեսաց Ազայելի՝ վասն ուխտին Աբրահամու՝ ԺԴ. 22
Չի յետ մահուն Ազայելի ա՛ռ Յովաս յԱսորեստս զքաղաքն զոր առին ի Յովաքազայ Հօրէ Նորա՝ ԺԴ. 24
Յերկրորդ ամին Յովասաս արքային Իսրայէլի թագաւորեաց Ամասիա որդի Յովասաս սմն քառասուն եւ հինգ յԻրուսաղէմ. սպան զպապանօղս Հօր իւրոյ, եւ եհար զնգովմ ի ձորն Ազգից տուան Հազար՝ ԺԴ. 1
Գրգռեաց Ամասիա զՅովաս ի պատերազմ եւ պարտեցաւ ի Նմանէ. եւ յետ հնգետասան ամի սպանաւ Ամասիա յիւրոցն՝ ԺԴ. 8
Թագաւորեաց Ազիա յԻրուսաղէմ՝ ԺԴ. 21
Ի հնգետասան ամին Ամասիայ թագաւորեաց Յերոբովամ որդի Յովասայ, եւ գնաց ի չարին, եւ նուաստացաւ Իսրայէլ. այլ քան բանին Յովնանու տակաւին խնայեաց Տէր յԻսրայէլ՝ ԺԴ. 23
Մեռաւ Յերոբովամ եւ թագաւորեաց Զաքարիա որդի Նորա ամիսս վեց՝ ԺԴ. 29
Ի քսան եւ եօթն ամի Յերոբովամայ արքայի Իսրայէլի թագաւորեաց Ազիա ամն յիսուն եւ երկու. եւ արար բարիս. եւ էր բարեառեալ. եւ մեռաւ՝ ԺԵ. 1
Յերեսուն եւ ութ ամին Ազիայ՝ թագաւորեաց Իսրայէլի Զաքարիա, որպէս Յերոբովամայ, ամիսս վեց, եւ սպանաւ յիւրոցն եւ Հատաւ տունն Յէուայ՝ ԺԵ. 8
Յերեսուն եւ հնգ ամին Ազիայ թագաւորեաց Մեզղուէ յԻսրայէլ ամիս մի, եւ սպանաւ յիւրոցն՝ ԺԵ. 13
Յերեսուն եւ հնգ ամին Ազիայ թագաւորեաց Մանայեմ տասն, եւ եմեալ ընդ Հարկաւ Փաւղ արքային Ասորեստանեայց՝ ԺԵ. 16
Ի յիսներորդ ամին Ազիայ թագաւորեաց Իսրայէլի Փակէէ որդի Մանայեմայ սմն տասն, եւ սպան զնա Փակէէ որդի Ռոմէլեայ՝ ԺԵ. 22
Ի յիսուն եւ երկու ամին Ազիայ թագաւորեաց Իսրայէլի Փակէէ որդի Ռոմէլեայ սմն քսան՝ Առ Նովաս դերեաց Թագ զամէ փաղասար զմնան ինչ Իսրայէլի, եւ սպան զՓակէէ Ովսէէ որդի Եղայ՝ ԺԵ. 27
Յերկրորդ ամին Փակէի թագաւորեաց Յովաթամ որդի Ազիայ յԻրուսաղէմ սմն վեչտասան, եւ մեռաւ՝ ԺԶ. 32
Յեւթնեւտասն ամին Փակէի որդւոյ Ռոմէլեայ թագաւորեաց յԻրուսաղէմ Ազազ սմն վեչտասան, եւ արար չարիս. եւ ետ ձեռս ի Թագլաթփաղասար փրկել զնա ի Փակէէ եւ յԱսորեստէ՝ ԺԶ. 38
Մեռաւ Աբազ եւ թաղեցաւ առ Հարսն իւր՝ ԺՀ. 19
Յերկոտասան ամին Աբազու թագաւորեաց Իսրայելի Ովսէէ որդի Եղայ սմն ինն. Առ նովաս Սաղմանասար ի սպառ զերեաց զԻսրայէլ վասն չարեացն զոր ամբաստանէ յերկար՝ ԺԿ. 1
Ամբաստանէ կրկին եւս զԻսրայէլէ, եւ պատմէ վասն օտար ազգացն զոր Սազմանասար բնակեցոյց ի Սամարիա, որք առին զերկիրն Ասուրեստանի, եւ ոչ էին զպաշտօնս իւրեանց՝ ԺԿ. 21
Պատմէ թէ ասուրեստանեայքն եզեկիայ, եւ գործեալ ամբաստանութիւն զԻսրայէլէ. վասն որոյ գերեցուն իսկ՝ ԺՀ. 1
Եւ Աւենքերիմ ի Հրէաստան, եւ առաքեաց պատգամն գոռոզս առ եզեկիա՝ ԺՀ. 13
Չի քանզ բերաց արքայ յԱսպեայ ազօթել առ Տէր. եւ յաւել Աւենքերիմ առաքել զՏեառնէ հրովարտակս նախատանաց՝ ԺԹ. 1
Չի յաղօթս Հնդպեայ եւ Եզեկիայ՝ եհար Տէր զզորն Աւենքերիմայ, եւ ինքն փախուցեալ սպանաւ ի յորդւոցն՝ ԺԹ. 20
Չի վասն բարձրութեան սրտի իւրոյ հիւանդացաւ Եզեկիա ի մահ՝ Ի. 1
Եկաց Եզեկիա առաջի Տեառն, եւ լուաւ նմա եւ ետ նմա նշանակ կենաց ղշառնոյն յետս արեւուն՝ Ի. 1
Չի երկն առ նա Բաբելացիքն պատարագօք, եւ եթէ զինչ խօսեցաւ Եսայի առ Եզեկիա՝ Ի. 12
Ամբաստանութիւն չարեացն Մանասէի, իսկ գերել նորա ի Բաբելոն, եւ անդրէն դառնալն եւ ապաչխարել պատմի ի դիրս անդ Անցագրացն՝ Ի. 21
Ամբաստանութիւն չարեացն Ամոնեայ, եւ մահ նորին՝ ԻԱ. 18
Գովութիւն ասուրեստանեայն Յովսիայ՝ ԻԲ. 1
Չի սրբեաց Յովսիա զտաճարն եւ գաչխարհն բնակիչն ի կռոց, եւ պրեաց զոսկերս քրմացն, եւ սրար զզոհիսն՝ ԻԲ. 4
Չի սպանաւ Յովսիա առ Նեփրատ գետով ի Փարաւոնէ՝ ԻԳ. 28
Թագաւորեաց Յովահազ որդի Յովսիայ ամիսս երիս, եւ Հան զնա Նեքաւով եւ տարաւ յԵգիպտոս, որ անդէն մեռաւ՝ ԻԳ. 30
Եղիակիմ որ եւ Յովակիմ եղբայր Յովա-

Գլ. Համ.

քաղաք ամն տասն. ի սորա երրորդ ամին եկ զաւաջինն Նաբուքոդոնոսոր, եւ հնազանդեաց զՀրէաստան, եւ տարաւ զԻովակիմ, Եւ ի մետասան ամին սորա եկ գարձեալ Նաբուքոդոնոսոր, զնիգիակիմ ապան, եւ զՅեքոնիա Թագաւորեցոյց, ԻԴ. 34

Թագաւորեաց Յեքոնիա որ եւ Յովակիմ ամիսս երիս, եւ արար չարիս, ԻԴ. 6

Եկ երրորդ անգամ Նաբուքոդոնոսոր, եւ գերի վարեաց զՅեքոնիա որ եւ Յովակիմ, եւ զնզեկիել ընդ նմա. եւ Թագաւորեցոյց զՍեդեկիա որդի Յովսիայ ի Երկրորդ անգամ՝ առ զերուսաղէմ, կուրացոյց զՍեդեկիա,

Գլ. Համ.

եւ վարեաց ի Բաբելոն, ԻԴ. 10

Զի այրեաց Նաբուզարդան զտաճարն եւ զերուսաղէմ, եւ զկահն ամենայն բարձին ի Բաբելոն, Իե. 8

Զի կացոյց Նաբուքոդոնոսոր զԳոդոդիա ի վերայ մնացորդաց երկրին, Իե. 22

Ժողովեցան մնացեալքն առ Գոդոդիա. եւ եկն Իսմայէլ Նաթանայ եւ սպան զԳոդոդիա, եւ որ մնացին՝ չոգան մտին յԵգիպտոս, Իե. 23

Զի չերեքերորդ եւ Թներորդ ամի գերութեանն Յովակիմայ՝ որ եւ Յեքոնիա որդի Եղիակիմայ, զսարթացոյց գնա Եւիլմարովդաք. Սա ձնաւ զՍաղթիէլ, եւ նա զՋորաբաբէլ, Իե. 27

ԹՒՂԱԽՈՐՈՒԹԵԱՆՑ

ԶՈՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ նկատեալ Մովսէս զի պատրաստ կայ
2 մեռանելոյն Աբրահամ՝ եւ անկաւ Աքսղիա ի վանդակապատ վիրապանն իւրոց որ ի Սամարիա եւ խօսէացաւ. եւ առաքեաց հրեշտակս, եւ ասէ ցնոսա, երթայք հարցէք ի Բահազ զձանճիկ" աստուածն Ակկարոնի, եթէ ապրելիք եւս յախաւէ առի յայսմանէ: 2Եւ դնացին
3 հարցանել ի նմանէ." Եւ հրեշտակ Տեառն կոչեաց զԵղիա Թեզբացի եւ ասէ, Արի երթ ընդ առաջ հրեշտակացն Աքսղեայ սրբոյն Սամարիայ, եւ առացես ցնոսա, Ա՛ռ ի չդոյէ Աստուծոյ ի մէջ Իսրայէլի երթայք դուք հարցանել 1ի Բահազ զձանճիկ" աստուածն Ակկարոնի.
4 3Ոչ այդպէս. այլ" այսպէս ասէ Տէր, ի մահիճսդ յոր եկիր՝ ոչ իջցես այսր, այլ ի դժին մահու մեռցիս. եւ չդաւ Եղիա 2եւ ասէ ցնոսա":
5 Եւ դարձան հրեշտակքն առ նա. եւ
6 ասէ ցնոսա, Ձի՛ է դի դարձարուք: Եւ ասեն ցնա, Այր մի ել ընդ առաջ մեր, եւ ասէ ցմեզ, երթայք դարձարուք առ արքայն որ առաքեաց զձեզ, եւ առաջիք ցնա, այսպէս ասէ Տէր. Ա՛ռ ի չդոյէ Աստուծոյ ի մէջ Իսրայէլի 4երթալ առաքանել 1ի Բահազ զձանճիկ" աստուածն Ակկարոնի. 3ոչ այդպէս, այլ" ի մահիճսդ յոր եկիր՝ ոչ իջցես այսր, այլ մահու
7 մեռցիս: Եւ խօսեցաւ ընդ նոսա եւ ա-
8 ասէ, Ջինչ նշանք են առնն որ ել ընդ առաջ ձեր, եւ խօսեցաւ ընդ ձեզ զբանդ զայդոսիկ: Եւ ասեն ցնա, Այր մեռաւոծ մի, եւ զօսա մազկեզէն ածեալ ընդ մէջ իւր: Եւ ասէ, Եղիա Թեզբացի է այն:
9 Եւ առաքեաց առ նա իշխան հիւ-
նապետ եւ զհիսունս նորա, եւ ել եւ եկն առ նա. եւ Եղիա նստէր ի վերայ

1 ՆԷԲ. զԲահազ ճանճիկ 2ՅՈՒԷԲ. պակաս 3ՆԷԲ. վասն այսորիկ 4ՆԷԲ. առաքեա զոս

ղլխոյ լերինն. եւ խօսեցաւ հիւանապետն եւ ասէ ցնա, Այրդ Աստուծոյ, արքայ
10 կոչեաց զքեզ, էջ այսր: Պատասխանի նա Եղիա եւ ասէ ցհիւանապետն, Եթէ այր Աստուծոյ իցեմ ես, իջցէ հուր յերկնից եւ կերկրէ զքեզ եւ զհիսունդ քո: Եւ էջ հուր յերկնից, եւ եկեր զնա եւ զհիսունս նորա:
11 Եւ յաւել երկրորդ առաքել առն նա ալ հիւանապետ եւ զհիսունս նորա. եւ ել եւ խօսեցաւ հիւանապետն եւ ասէ ցնա, Այրդ Աստուծոյ, այսպէս ասէ արքայ,
12 այսր վայրագակի: Պատասխանի նա Եղիա եւ ասէ ցնա, Եթէ այր Աստուծոյ իցեմ, իջցէ հուր յերկնից եւ կերկրէ զքեզ եւ զհիսունս քո: Եւ էջ հուր Աստուծոյ յերկնից եւ եկեր զնա եւ զհիսունս նորա:
13 Եւ յաւել եւս երրորդ առաքել հիւանապետ երրորդ եւ զհիսունս նորա. եւ ել եկն առ նա հիւանապետն երրորդ, եւ անկաւ ի վերայ ծնգաց իւրոց առաջի Եղիայի եւ աղաչեաց զնա, եւ խօսեցաւ ընդ նմա եւ ասէ, Այրդ Աստուծոյ, պահեսցի անձն իմ եւ անձինք ծառայից քոց այսոցիկ հիւանդից առաջի քոյ.
14 Ձի ահա անկաւ հուր յերկնից եւ եկեր զերկուս հիւանապետսն զառաջիններն եւ զհիսունս նորա. եւ արդ 5պահեսցին անձինք ծառայից քոց" յաչս քո:
15 Եւ խօսեցաւ հրեշտակ Տեառն ընդ Եղիայի եւ ասէ, Էջ ընդ դմա, եւ մի՛ երկնչիցիս յերեսաց 6նորա. եւ յարուցեալ
16 Եղիա եւ էջ ընդ նմա առ արքայ: Եւ խօսեցաւ ընդ 7նմա եւ ասէ", Փոխանակ զի առաքեցեր հրեշտակս հարցանել 1ի Բահազ զձանճիկ" աստուածն Ակկարոնի, արդեօք առ ի չդոյէ Աստուծոյ ի մէջ Իսրայէլի հարցանել ի նմանէ, 3ոչ այդպէս, այլ" ի մահիճսդ յոր եկիր՝ մի՛

5 ՆԷԲ. պատեսցի անձն իմ 6ՆԷԲ. նորա 7ՆԷԲ. նմա. Այսպէս ասէ Տէր

լինցես այսի, այլ մահու մեռցիս։
17 Եւ մեռաւ ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ Եղիա։ [1]Եւ Յովրամ որդի Աքաաբայ թագաւորէ ի վերայ Իսրայէլի ի Սամարիա ամս երկոտասան, յամի ութե-
տասներորդի Յովսափատայ արքայի Յուդայ. եւ արար չար առաջի Տեառն, բայց ոչ իբրեւ զհայրս իւր եւ ոչ իբրեւ զմայր իւր։ Եւ հարաւ զարձանան Բահաղայ զոր արար հայր նորա, եւ խոցոտակեաց զնա։ Սակայն ի մեղս ամենայն Ներոբովամայ որ յանցոյցն զԻսրայէլ՝ յարեցաւ, եւ ոչ մեկնեցաւ ի նոցանէն. եւ սրամտեցաւ բարկութեամբ Տէր ի վերայ ամենայն Աքաաբայեան։ Եւ թագաւորեաց Յովրամ [1]Եղբայր նորա՝ ընդ նորա, յամի երկրորդի Յովրամայ արքայի Յուդայ՝ որդւոյ Յովսափատայ, զի ոչ զայր նորա որդի։
18 Եւ մնացորդք բանին Աքազեայ [1]եւ ամենայն [2]ինչ՝ զոր արար, ոչ ասեղիկ գրեալ են ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի։

Գլ. Բ

1 Եւ եղեւ ի վերացուցանել Տեառն զնիա [2]չարժամբ յերկինս, եւ գնացին
2 Եղիա եւ Եղիսէ ի Գազզատայ։ Եւ ասէ Եղիա ցԵղիսէ, Նիստ դու աստ, զի Տէր առաքեաց զիս ի Բեթէլ։ Եւ ասէ Եղիսէ, Կենդանի է Տէր եւ կենդանի է անձն քո՝ եթէ թողից զքեզ. եւ [3]եկին
3 ի Բեթէլ։ Եւ ելին որդիքն մարգարէիցն որ ի Բեթէլ՝ առ Եղիսէ, եւ ասեն ցնա, Թէ գիտացե՞ր զի այսօր առնու Տէր զտէրդ ի գլխոյ քումմէ. եւ ասէ, Գիտեմ եւ ես,
4 լուռ լերուք։ Եւ ասէ Եղիա ցԵղիսէ, Նիստ դու աստ, զի Տէր առաքեաց զիս յԵրիքով։ Եւ ասէ, Կենդանի է Տէր եւ կենդանի է անձն քո՝ եթէ թողից զքեզ.
5 Եւ եկին յԵրիքով։ Եւ մատեան որդիք մարգարէիցն որ յԵրիքով առ Եղիսէ, եւ ասեն ցնա, Եթէ գիտացե՞ր զի այսօր առնու Տէր զտէրդ ի գլխոյ քումմէ. եւ
6 ասէ, Գիտեմ եւ ես, լուռ լերուք։ Եւ ասէ ցնա Եղիա, Նիստ դու աստ, զի Տէր առաքեաց զիս ի Յորդանան։ Եւ ասէ Եղիսէ, Կենդանի է Տէր եւ կենդանի է անձն քո՝ եթէ թողից զքեզ.
7 եւ գնացին երկոքեան։ Եւ կացուն այր

յորդւոց մարգարէիցն[4], եւ կացին ի հանդիպոյ ի բացակ. եւ երկոքեան կացին
8 յեզերն Յորդանանու։ Եւ առ Եղիա զմաշկեակն իւր, ծալեաց եւ եհար զջուրն, եւ բաժանեցաւ չուրն յայսկոյս եւ յայնկոյս, եւ անցին երկոքեան ընդ ցամաք։
9 Եւ եղեւ ընդ անցանելն նոցա, ասէ Եղիա ցԵղիսէ, Խնդրեա զինչ արարից քեզ, մինչեւ վերացեալ լինիմ ի քէն։ Եւ ասէ Եղիսէ, Եղիցի կրկին ոգիդ քո
10 ի վերայ իմ։ Եւ ասէ Եղիա, Դժուարինս խնդրեցեր, բայց եթէ տեսցես զիս յամրաւանդն իմմէ ի քէն, եղիցի այնպէս, ապա թէ ոչ մի՛ եղիցի։
11 Եւ եղեւ մինչդեռ գնային նորա, երթային եւ խօսէին, եւ ահա կառք հրեղէնք եւ երիվարք հրեղէնք, եւ անջրպետեցին ի մէջ երկոցունց. եւ վերացաւ
12 Եղիա [2]չարժամբ յերկինս։ Եւ Եղիսէ հայէր եւ ազաղակէր, Հայր, հայր, կառգդ Իսրայէլի եւ հեծեալդ նորա. եւ այլ ոչ եւս նմա գնաց. եւ բռնեալ հար զհանդերձս իւրոց, եւ պատառեաց յերկուս
13 ծուէնս։ Եւ առ եղեալ զմաշկեակն եղեալ [5]զոր ընկէց ի վերայ նորա՛. եւ դարձաւ Եղիսէ, եւ եկաց առ եզերն
14 Յորդանանու։ Եւ առ զմաշկեակն եղեալ [5]զոր ընկէց ի վերայ նորա՛, եւ եհար զջուրսն եւ ասէ, Ո՞ւր ես, Տէր Աստուած Եղիայի [6]ասեմ. եւ եհար զջուրսն, եւ բաժանեցան յայսկոյս եւ յայնկոյս, եւ անց Եղիսէ։
15 Իրրեւ տեսին որդիք մարգարէիցն որ յԵրիքով ի հանդիպոյն, եւ ասեն, Հանդեաւ ոգին Եղիայի ի վերայ Եղիսէի. եւ եկին ընդ առաջ նորա, եւ երկիր
16 պագին նմա ի վերայ երկրի։ Եւ ասեն ցնա, Ահաւասիկ են ընդ ծառայս քո որդիք զօրութեան արք յիսուն. երթիցեն եւ խնդրեսցեն զտէրն քո, գուցէ առ դնա Հոգի Տեառն, եւ ընկէց զնա [1]առ Յորդանանու, կամ՝ ի վերայ միոյ ուրուք լերանց, կամ ի վերայ միոյ ուրուք [7]բլրոյ. եւ ասէ Եղիսէ, Մի՛ ա-
17 ռաքէք։ Եւ խնդագտացին զնա մինչեւ ամաչէր, եւ ասէ, Առաքեցէք։ Եւ առաքեցին յիսուն այր, եւ խնդրեցին զնա
18 լիս աւուրս, եւ ոչ գտին զնա։ Եւ դարձան առ նա, եւ նա նստէր յԵրիքով.

---

[1] ՅԲԲ. գ-ի-ա-ւ [2] ՆԲԲ. մրրկաւ [3] ՆԲԲ. ՀԳԻՆ
[4] ԵԲԲ-յԷԳԷՆ յ-ա-ԲԼ-ը-, ՀԳԳ-ան [5] ՅԲԲ. որ ան-կաւ ի նմանէ [6] ՆԳ-ՈՎ-Ի ինքն իսկ [7] ՅԲԲ. Հովտաց

եւ ասէ ցնոսա Եղիէ , Ո՞չ ասացի ձեզ
թէ Մի երթայք ։
19 Եւ ասեն արք քաղաքին ցԵղիէ ,
Ահաւասիկ բնակութիւն քաղաքիս բա-
րի է , որպէս եւ աէրդ իսկ անասնէ ,
եւ ջուրքս չար եւ երկիրս անպտուղ ։
20 Եւ ասէ Եղիսէ , Առէք առ իս կուժ
մի նոր , եւ դիք [1]այդր ։ եւ բերին առ
21 նա ։ Եւ ել Եղիսէ յահանս ջուրցն , եւ
արկ անդ ազ եւ ասէ , Այսպէս ասէ Տէր ,
Բժշկեմ զջուրսդ զայդոսիկ , եւ մի՛ եւս
22 լիցի այսի մահ եւ անպտղութիւն ։ Եւ
բժշկեցան ջուրքն մինչեւ ցայսօր ըստ
բանին Եղիսէի զոր խօսեցաւ ։
23 Եւ ել անտի ի Բեթէլ ։ եւ մինչդեռ
երանէր զճանապարհն , մանկունք մանրիկ
ելին ի քաղաքէն , ազաղակէին ի նա եւ
24 ասէին , Ել կնատակ , ել կնատակ ։ Դարձաւ ի
թիկունս իւր եւ եհան զնոսա ։ եւ անէծ
զնոսա յանուն Տեառն [2]եւ ասէ , Որպիք
յանցանաց եւ դատարկութեան՝ ։ Եւ ելին
երկու արջք յանտառէն եւ պատառեցին
ի նոցանէ քառասուն եւ երկուս մանու-
25 կունս ։ Եւ գնաց անտի ի լեռն ի Կար-
մեղոս , եւ անտի դարձաւ ի Սամարիա ։

Գլ. Գ

1 Եւ Յովրամ որդի Աքաաբու թագաւո-
րեաց ի վերայ Իսրայելի ի Սամարիա ,
յամի ութեւտասաներորդի Յովսափատայ
արքայի Յուդայ . եւ թագաւորեաց ամս
2 երկոտասան ։ Եւ արար չար առաջի
Տեառն , բայց ոչ իբրեւ զնայր իւր , եւ
ոչ իբրեւ զմայր իւր . եւ կործանեաց
զարձանն [3]իւր զոր արար հայր նորա ։
3 Սակայն ի մեղս Յերոբովամայ որդւոյ
Նաբաատայ որ յանդգնի զԻսրայէլ՝ յարու-
ցաւ , եւ ոչ մեկնեցաւ ի նոցանէ ։
4 Եւ Մովա արքայ Մովաբայ էր [4]նեկաթ ,
եւ տայր արքային Իսրայելի [2]հարկս՝
հարեւր հազար [5]մաքսաց եւ հարեւր
5 հազար խոյոց գեղմնաւորաց ։ Եւ եղեւ
յետ մեռանելոյ Աքաաբու , ուխտադրուժ
արքայն Մովաբու զարքային Իսրայելի ։
6 Եւ ել արքայ Յովրամ յաւուր յայնմիկ
ի Սամարիայ , եւ հանդէս արար Իսրա-
7 յելի , Եւ գնաց , եւ առաքեաց առ Յովսա-
փատ արքայ Յուդայ եւ ասէ , Արքայ Մո-
վաբու ուխտադրուժ եղեւ ինձ , եթէ երթայցե՞ս ընդ
իս ի պատերազմ ի վերայ Մովաբու ։ Եւ
ասէ , Ելից . զի որպէս դու՝ եւ ես , եւ
որպէս զօրք քո՝ զօրք իմ , եւ որպէս ձիք
8 վարք քո՝ ձիովարք իմ ։ Եւ ասէ , Ընդ ո՞ր
ճանապարհ ելից ։ Եւ ասէ , Ընդ ճանապարհն
անապատին Եդոմայ ։ Եւ գնաց արքայն
9 Իսրայելի եւ արքայն Յուդայ , եւ արքայն
Եդոմայ . եւ պատեցան զեւեղն օր ի
ճանապարհին , եւ ոչ գոյր ջուր ի բանա-
կին , եւ ոչ անասնոցն որ ընդ նոսա ։
10 Եւ ասէ արքայն Իսրայելի , Ո՛հ , [6]պա-
տահեաց Տէր զերիս թագաւորսս եկեալս՝
11 տալ զոսոսա ի ձեռս Մովաբայ ։ Եւ ասէ
Յովսափատ , Ո՞չ գուցէ աստ մարգարէ
Տեառն , եւ հարցցուք զՏէր նովաւ . եւ
պատասխանի ետ մի ումն ի մանկտուցն
արքային Իսրայելի եւ ասէ , Ի աստ Ե-
լիսէ որդի Սափատայ որ արկանէր ջուր
12 ձեռաց Եղիայի ։ Եւ ասէ Յովսափատ ,
Գոյ բան Տեառն ընդ նմա . եւ իջին առ
նա արքայն Իսրայելի եւ Յովսափատ [2]արքա-
13 քայն Յուդայ՝ եւ արքայն Եդոմայ ։ Եւ
ասէ Եղիսէ ցարքայն Իսրայելի , Զի՞
կայ իմ եւ քո . երթ առ մարգարէս հօր
քո եւ առ մարգարէս մօր քո ։ Եւ ասէ
ցնա արքայն Իսրայելի , [7]Մի՛թէ արգելաւ
կոչեաց՝ Տէր զերիս թագաւորսս եկեալս՝
14 տալ զոսոսա ի ձեռս Մովաբու ։ Եւ ասէ
Եղիսէ , Կենդանի է Տէր զօրութեանց
որոյ կացի առաջի նորա , եթէ չէր ա-
ռեալ ակն Յովսափատայ արքայի Յու-
դայ , եթէ բնաւ հայէի իսկ ի քեզ եւ
15 տեսանէի զքեզ ։ Բայց արդ առ իս
սաղմոսասաց . եւ եղեւ իբրեւ նուա-
գեաց սաղմոսասացն , եկն ի վերայ նո-
16 ցա ձեռն Տեառն , Եւ ասէ , Այսպէս ա-
սէ Տէր . Արարէք զհեղեղատդ զայդ գոբս
17 գոբս . Զի այսպէս ասէ Տէր . Ոչ տե-
սանիցէք հոգի , եւ ոչ տեսանիցէք անձ-
րեւ . եւ հեղեղատդ լցցի ջրով , եւ արբե-
ջիք գուք եւ անասունն ձեր եւ գրաստ
18 ձեր ։ Եւ թեթեւ է այդ յաչս Տեառն .
19 Եւ [8]մատնեցից զՄովաբ ի ձեռս ձեր . Եւ
հարջիք զամենայն քաղաք ամրացեալ եւ
զամենայն քաղաք ընտիր , եւ զամենայն
ծառ զալնիւ կոտորեսջիք , եւ զամե-
նայն ակբերս ջրոց խցջիք եւ զամենայն
վիճակս բարիս անպիտանացուսջիք քա-
20 րամբք ։ Եւ եղեւ ընդ առաւօտն յորժամ
զոհն էանէր , եւ ահա ջուրք գային [9]ճա-

[1] ՆԵԲ· այդր ազ [2]ՅԵԲ· պտ-ոյ [3]ՅԵԲ· Բա-
հաղու [4]Նէշեռնէկ , չպետ (խաշնարած) [5]ՅԵԲ·
գառանց

[6] ՅԵԲ· զի կոչեաց . [7]ՅԵԲ· Ոչ , զի կոչեաց [8]ՅԵԲ·
մատնեսցէ [9]ՅԵԲ· ի ճանապարհէն

լիցին եղովմայ , եւ լցաւ երկիրն ՚Իդումէ :
21 Եւ ամենայն Մովաբ լուաւ եթէ եկին թագաւորքն պատերազմիլ ընդ նոսա , եւ եկին յամենայն գօտիաձուաց եւ ի վեր , եւ կացին առ սահմանաւն , եւ կանխեցին ընդ առաւօտն : Եւ ծագեաց արեւ ի վերայ ջրոցն , եւ եաեա Մովաբ
23 ի հանդիպոյն զջուրսն կարմիր իբրեւ զարիւն , Եւ ասեն , [1]Սրիւնն այն արոյ է . կոտորեցան ընդ միմեանս՝ թագաւորքն , եւ հարին այր զընկեր իւր . եւ
24 արդ՝ հասցա յաւար , Մովաբ : Եւ մտին ի բանակն Իսրայէլ . եւ յարիան Իսրայէլացիքն եւ հարին զՄովաբ . եւ փախեան յերեսաց նոցա , եւ մտանելով մտանէին եւ հարկանէին զՄովաբ . Եւ
25 զքաղաքան կործանեցին , եւ յամենայն վիճակ բարի ընկենգին այր իւրաքանչիւր զքար իւր , եւ լցին զնա . եւ զամենայն ապրեւս ջրոյ լցին , եւ զամենայն փայտ պտղոյ հարին , [2]մինչեւ թագուլ զքարինս արմտից քակաւաղն՝ , եւ պատեցան պար-
26 սաւորք եւ հարին զնոսա Եւ եաեա արքային Մովաբայ եթէ առաւակոյաւ քան զնոսա պատերազմին , առ ընդ իւր եւթն հարեւր այր սուսերաձիգս , հատանել երթալ առ
27 արքայն եղովմայ , եւ ոչ կարացին : Եւ առ զորդին իւր զանդրանիկ՝ [3]արքային , զոր թագաւորէր ի փոխանակ իւր՝ , եւ եհան զնա ողջակէզ ի վերայ պարսպին. եւ եղեւ [4]զիւղ մեծ ի վերայ Իսրայէլի , եւ չուեցին ինքեանք եւ դարձան յերկիր իւրեանց :

Գլ. Դ

4 Եւ կին մի ի կանանց որդւոց մարգարէիցն աղաղակէր առ Եղիսէ եւ ասէր , Ծառայ քո , այր իմ մեռաւ . եւ դու ինքնին գիտես զի ծառայ քո էր երկիւղած ի Տեառնէ . եւ փոխառուն եկն առնուլ զերկուսին զորդիս իմ իւր ի ծառայութիւն :
2 Եւ ասէ ցնա Եղիսէ , Զինչ արարից քեզ . պատմեա ինձ զինչ կայ ի տան քումմ : Եւ նա ասէ , Ոչ դոյ ի տան ա-
3 ղախնոյ քո եւ ոչ ինչ , բայց եւզ ոտիւ ծծանիւիմ : Եւ ասէ ցնա , Երթ խնդրեա քեզ սնտուս յամենայն դրացեաց քոյ՝ ա-
4 մանս ունայնս եւ մի սակաւագոյանիս . Եւ մտցես եւ փակեսցես զդուրսն ընդդէմ քո եւ ընդդէմ որդւոց քոյ , եւ

[1] ԵՒԲ. Արիւն է այս . կործանեալ կործանեցան
[2] ԵՒԲ. թողին միայն զքարինս Կիր Հարեսեթայ
[3] ԵՒԲ. որ թագաւորէրզոց էր փոխանակ նորա
[4] ԵՒԲ. ցասումն

սրկեսես յամենայն սնտուսն մինչեւ լցցին ,
5 եւ առցես : Եւ գնաց ի նմանէ , եւ փակեաց զդուռնն ընդդէմ իւր եւ ընդդէմ որդւոց իւրոց . նոքա մատուցանէին առ
6 նա , եւ նա արկանէր : Մինչեւ լցան սնտնքն , եւ ասէ ցորդին իւր , Մատուցէք առ իս եւ այլ սնտն , եւ ասէն ցնա ,
7 Ոչ է այլ սնտն . եւ եկաց եւզն : Եւ չոգաւ պատմեաց սնտն Աստուծոյ . եւ ասէ Եղիսէ , Երթ վաճառեա զեւզն , եւ հատուսցես [5]զտեկոսիան քո . եւ դու եւ որդիք քո կեցջիք մնացեալով իւզովք :
8 Եւ եղեւ օր , եւ անց Եղիսէ ի Սունիա . եւ անդ էր կին մի մեծ , եւ կալաւ զնա ուտել հաց . եւ լինէր ի չաւ ժամանակ ի մտանել իւրում անդր , իջանէր ու-
9 տել [6]եւ ըմպել՝ : Եւ ասէ կինն ցայր իւր , Գիտեմ զի սրն Աստուծոյ սուրբ է , եւ
10 ճանապարհն նորա առ մեզ է . Արասցուք նմա վերնատուն մի փոքրիկ , եւ դիցուք ի նմա մահիճս եւ սեղան եւ աթոռ եւ աչառանակ . եւ եղիցի ի գալ նորա առ
11 մեզ մտցէ անդր : Եւ եղեւ օր , եւ եկն անդր , եւ եմուտ ի վերնատունն եւ
12 ննջեաց անդ . Եւ ասէ ցԳէեզի ցպաասնեակն իւր , Կոչեա առ իս զՍունամացին զայն . եւ կոչեաց զնա , եւ եկաց
13 առաջի նորա : Եւ ասէ ցպաասնին , Ասա ցնա . Ահա կազմեցեր մեզ զայս ա-մենայն կազմած , զինչ պարտ իցէ առնել քեզ . եթէ իցէ քո բանք ինչ առ արքայ եւ կամ առ իշխան զօրուն . եւ նա ասէ , Ի մէջ ժողովրդեան իմոյ բնա-
14 կեալ եմ ես : Եւ ասէ , Զինչ պարտ իցէ առնել նմա : Եւ ասէ Գէեզի [7]պատանեակն նորա , Եւ կաթի իսկ քաջ , քանզի որդի ոչ գոյ նորա , եւ այրն իւր չէ
15 ինչ ծեր՝ : Եւ ասէ , Կոչեա զնա : Եւ կոչեաց զնա , եւ եկաց առ դրան :
16 Եւ ասէ ցնա Եղիսէ , Ի ժամանակի յայսմիկ [8]ի սոյն աւուրս՝ ունիցիս ի գիրկս մանուկ : Եւ նա ասէ , Մի , տէր , այրդ Աստուծոյ , մի սուտ ազաղինոյ քումմ :
17 Եւ յղացաւ կինն , եւ ծնաւ որդի ի ժամանակի յայսմիկ , [9]մինչդեռ կենդանի էր՝ , որպէս խօսեցաւ ընդ նմա Եղիսէ :
18 Եւ [9]հասաստեցաւ մանուկն . եւ եղեւ իբրեւ ել նա առ հայր իւր ի հնձօղան ,
19 Ասէ ցհայր իւր , Գլուխ իմ , գլուխ իմ .

[5] ԵՒԲ. զդարաս [6] ԵՒԲ. Հաց [7] ԵՒԲ. Արդարեւ որդի ոչ գոյ նորա, եւ այր նորա ծեր է [8] ԵՒԲ. ըստ ժամանակի կենաց [9] ԵՒԲ. աճեաց

եւ ասէ ցպատանին , Տար զդա առ մայր
20 իւր ։ Եւ տարաւ զնա առ մայր իւր , եւ
ննջեաց ի վերայ ծնգաց նորա մինչեւ ցմի-
21 ջօրեայ , եւ մնաւ ։ Եւ եհան գնա , եւ
կոչմնեցոյց ի մարիճս առնն Աստուծոյ , եւ
22 փակեաց ընդդէմ նորա եւ կլ. Եւ կոչեաց
զայր իւր եւ ասէ , Աւազիկա առ իս զմի-
օր ի մանկաւոյդ , եւ էդ մի յիշոյդ , եւ
արդեօք մինչեւ առ այրն Աստուծոյ
23 եւ զարձայց ։ Եւ ասէ , Չի՞ է դի երթաս
գու առ նա այսօր , զի ոչ ամսամուտ է
եւ ոչ չարաթ ։ Եւ նա ասէ , Ողջոյն է ։
24 Եւ հանգերձեաց էշն , եւ ասէ ցպա-
տանին իւր , Վարեա եւ գնա . եւ [1]մի՛
ունիր ինչ երանել ի գա՛ . բայց եթէ ա-
սացից [2]քեզ՝ թէ եկ այսր , եւ եկեսցես ։
25 Եւ երթիցես՛ առ այրն Աստուծոյ ի
լեառնն ի Կարմելոս. եւ եղեւ իբրեւ ե-
տես [3]Եղիսէ զգալ նորա առ նա , ասէ
ցԳԷեզի ցպատանեակն իւր , Ահա այն
26 Սոնամացին է . Ընդդէմ ընդ առաջ նորա
եւ ասասցես , Ողջո՞յն է քեզ , եւ ողջո՞յն
է առն քումդ , եւ ողջո՞յն է մանկանն ։
27 Եւ նա ասէ , Ողջոյն է ։ Եւ եկն առ [3]Ե-
զիսէ ի լեառնն , եւ բռնեաց եհար զոտից
նորա . եւ մատեաւ Գէեզի մերժել զնա .
եւ ասէ [3]Եղիսէ , Թո՛ղ զսա զի , զի
անձն դորա ցաւագին է . եւ Տէր թա-
28 ղոյց յինէն եւ ոչ պատմեաց ինձ ։ Եւ
նա ասէ , Միթէ խնդրեցի որդի ի տեառ-
նէ իմմէ . ո՞չ ասացի թէ Մի՛ խարեր զիս ։
29 Եւ ասէ Եղիսէ ցԳԷեզի , Զգե գօտի ընդ
մէջ քո , եւ առ զցուպ իմ ի ձեռին քո
եւ երթ . եւ եթէ գտանիցես զայր ոք՝
մի՛ օրհնեսցես զնա , եւ եթէ օրհնեսցէ
զքեզ այր ոք՝ մի՛ տացես նմա պատաս-
խանի . եւ զիցես զցուպդ իմ ի վերայ
30 երեսաց մանկանն ։ Եւ ասէ մայր ման-
կանն , կենդանի է Տէր եւ կենդանի է
անձն քո , եթէ թողից զքեզ ։ Եւ յա-
31 րեաւ Եղիսէ եւ գնաց զկնի նորա ։ Եւ
Գէեզի անց առաջի նոցա , եւ եդ զցուպն
ի վերայ երեսաց մանկանն , եւ ոչ ցայր
բարբառ եւ ոչ լսել . եւ դարձաւ ընդ առաջ
նորա , պատմեաց նմա եւ ասէ , Ոչ յա-
32 րեաւ մանուկն ։ Եւ եհոտա Եղիսէ ի
տունն , եւ ահա մանուկն մեռեալ , եւ
33 կոչմնեցուցեալ ի մահիճս նորա ։ Եւ ե-
մոտա Եղիսէ ի տունն , եւ փակեաց
զդուռան ընդդէմ երկոցունց . եւ եկաց
34 յաղօթս առ Տէր . Եւ ել եւ անկաւ ի
վերայ մանկանն , եւ եդ զբերան իւր ի
վերայ բերանոյ նորա , եւ գաչս իւր ի
վերայ աչաց նորա , եւ գձեռս իւր ի վե-
րայ ձեռաց նորա . եւ կծկեցաւ ի վերայ
35 նորա , եւ ջեռաւ մարմին մանկանն ։ Եւ
դարձաւ եւ զընացաւ ի տանն յայսկոյս
եւ յայնկոյս , եւ ել եւ [4]ծածկեաց զմա-
նուկն՝ մինչեւ ցեւթն անգամ . եւ երաց
36 մանուկն զաչս իւր ։ Եւ բարբառեցաւ
Եղիսէ առ Գէեզի եւ ասէ , Կոչեա զայր
զՍոնամացին . եւ կոչեաց զնա . եւ եհոտա
առ նա . եւ ասէ Եղիսէ , Առ զորդի
37 քո ։ Եւ եհոտա կին եւ անկաւ առ ոտս
նորա , եւ երկիր եպագ նմա յերկիր . եւ
առ զորդին իւր եւ ել ։
38 Եւ Եղիսէ զարձաւ ի Գալգաղա . եւ
սով էր յերկրին , եւ որդիք մարգարէիցն
նստէին առաջի նորա . եւ ասէ Եղիսէ
ցպատանեակն իւր , Կաւառ զօ զանձն
մեծ , եւ եփեա եփոյ որդւոց մարգա-
39 րէիցդ ։ Եւ [5]ել յանդն քաղել [6]արմաւիթ .
եւ եգիտ որթ յանդին , եւ քաղեաց ի
նմանէ [7]ազգս լի չալակաւ իւրով , եւ
եկն եւ արկ ի սան եփոյին , քանզի ոչ
40 [8]ճանաչէր ։ Եւ արկ առաջի արանցն ու-
տել . եւ եղեւ յօտել նոցա յիւղոյէ ան-
օթ , աղաղակեցին եւ ասեն , Մահ է ի
սանի սա , այր Աստուծոյ . եւ ոչ կա-
41 րացին ուտել ։ Եւ ասէ , Առէք ալեւր
եւ արկէք ի սան այր ։ Եւ ասէ [9]Եղիսէ
ցԳԷեզի ցպատանեակն իւր՝ , Արկ առաջի
ժողովրդեանդ եւ կերիցեն . եւ ոչ եղեւ
վնաս ինչ ի սանէ անտի ։
42 Եւ եկն այր [10]ի Բեթսարիսայ , եւ եբեր
առն Աստուծոյ նախանակս յառաջնոց
արմտեաց , նախանակս [11]զարիզէնս , եւ
պաղատիաս՝ բակեղաթաւ ։ Եւ ասէ ,
43 Տուք ժողովրդեանդ եւ կերիցեն ։ Եւ
ասէ սպասաւորն նորա , Զինչ ասց զայս
առաջի հարիւրից արանցդ . եւ ասէ ,
Տուր ժողովրդեանդ եւ կերիցեն . զի
այսպէս ասէ Տէր , Կերիցեն եւ նչխա-
44 րեացեն ։ Եւ եդ առաջի նոցա եւ կերան ,
եւ թողին նչխար ըստ բանին Տեառն ։

---

[1] ԵՔԲ. մի՛ յամեցուացես զիս ի դնալն [2] ԵՔԲ. քեզ. (25) Եւ ընդաւ եւ եկն [3] ԵՔԲ. այրն Աստուծոյ

[4] ԵՔԲ. կծկեցաւ ի վերայ նորա , եւ փռնգաց մանուկն [5] ԵՔԲ. եւ ոմն [6] Սպաղ խոտ [7] ԵՔԲ. վարունգ վայրի [8] ԵՔԲ. ճանաչէին [9] ԵՔԲ. ցԳԷեզի [10] ԵՔԲ. ի Բաղաղ-սաղիսայ [11] ԵՔԲ. գարեզէնս քսան , եւ Հասկս ատոքս գալարս

Գլ. Ե

1 Եւ Նէեման իշխան զօրուն Ասորւոց էր այր մեծ առաջի տեառն իւրոյ, եւ [1]պատնէշելի երեսաց՝. դի նովաւ եա Տէր փրկութիւն Ասորւոց. եւ այրն հզօր զօրութեամբ էր, եւ բորոտեալ։ 2 Եւ Ասորիքն մեկնակալէնք ելին եւ գերեցին յերկրէն Իսրայելի աղջիկ մի փոքրիկ, եւ էր առ կնոջն Նէեմանայ։ 3 Եւ ասէ ցտիկնին իւր, Ցանկարծ, երթայր տէրդ իմ առաջի մարգարէին [2]Սամարիա՝ որ ի Սամարիա, եւ անդէն ապաքէր զդա ի բորոտութենէ իւրմէ։ 4 Եւ եմուտ եւ պատմեաց տեառն իւրում եւ ասէ, Այսպէս եւ այսպէս խօսեցաւ աղջիկն որ յերկրէն Իսրայելի։ 5 Եւ ասէ արքայն Ասորւոց ցՆէեման, Երթ, եւ ես առաքեցից հրովարտակս առ արքայն Իսրայելի։ Եւ գնաց, եւ առ ի ձեռն իւրում տասն տաղանդ արծաթոյ, եւ վեց հազար [3]դահեկան, եւ տասն պատմուճան հանդերձ։ 6 Եւ տարաւ հրովարտակս առ արքայն Իսրայելի, եւ էր գրեալ այսպէս. Արդ իբրեւ հասցէ առ քեզ հրովարտակդ այդ, ահա առաքեցի առ քեզ զՆէեման ծառայ իմ, եւ ապաքինեսես զդա ի բորոտութենէ իւրմէ։ 7 Եւ եղեւ իբրեւ ընթերցաւ արքայն Իսրայելի զհրովարտակն, պատառեաց զհանդերձս իւրեւ ասէ, Միթէ Աստուած իցեմ ես սպանանել կամ կեցուցանել, զի առաքեաց առ իս ապաքինել զայրդ ի բորոտութենէ իւրմէ. բայց գիտասջիք եւ տեսջիք զի պատճառի իմն նա առ իս։ 8 Եւ եղեւ իբրեւ լուաւ եղիսէ այրն Աստուծոյ եթէ պատառեաց արքայն Իսրայելի զհանդերձս իւր, առաքեաց առ արքայն Իսրայելի եւ ասէ, Ընդէր պատառեցեր զհանդերձս քո. եկեսցէ առ իս [2]Նէեման, եւ գիտասցէ թէ գոյ մարգարէ յԻսրայելի։ 9 Եւ եկն Նէեման երիվարօք եւ կառօք, եւ եկաց առ դրան տանն եղիսէի։ 10 Եւ առաքեաց եղիսէ առ նա հրեշտակ եւ ասէ, Երթ լուա եւ լո՛ւ անդամ ի Յորդանան, եւ դարձցի մարմին քո եւ սրբեսցիս։ 11 Եւ բարկացաւ Նէեման, գնաց եւ ասէ, Ես ասէի, թէ բերեալ ելցէ առ իս, եւ կացցէ եւ կարդասցէ զանուն Տեառն Աստուծոյ իւրոյ, եւ [4]դիցէ զձեռն իւր ի վերայ տեղւոյ եւ աւաքեսցէ զբորոտութիւնս։ Ո՞չ լաւ իցեն Աբանա եւ Փարփարա գետք Դամասկոսի քան զամենայն ջուրս Իսրայելի. եւ ընդէ՞ր ոչ երթայց եւ լուացայց ի նոսա եւ սրբեցայց. եւ դարձաւ 13 եւ գնաց սրամտութեամբ։ Եւ մատեան ծառայք նորա եւ խօսեցան ընդ նմա, եւ ասեն ցնա, Հայր, եթէ մեծ ինչ բան խօսեցեալ էր ընդ քեզ մարգարէին, ո՞չ ապաքէն պարտ էր առնել. մանաւանդ 14 եթէ՝ լուացիր եւ սրբեցիս։ Եւ էջ Նէեման եւ մկրատեցաւ ի Յորդանան ըստ [5]բանին եղիսէի՝. եւ դարձաւ մարմին նորա իբրեւ զմարմին մանկան մատաղոյ եւ սրբեցաւ։

15 Եւ դարձաւ առ [6]եղիսէ ինքն եւ ամենայն բանակն իւր, եւ եկն եկաց առաջի նորա եւ ասէ, Ահա գիտացի թէ ոչ գոյ Աստուած յամենայն երկրի բայց միայն ի մէջ Իսրայելի. եւ արդ առ 16 օրհնութիւն ի ծառայէ քումմէ։ Եւ ասէ եղիսէ, կենդանի է Տէր որոյ կացի առաջի նորա, եթէ առից ինչ. եւ ստիպեաց զնա առնուլ, եւ ոչ հաւանեցաւ։ 17 Եւ ասէ Նէեման, Իսկ որովհետեւ ոչ, տայցին ծառայի քումմ բեռինք ղոզից ջորւոյ ի հողոյ երկրիս, զի ոչ եւս առնուցէ ծառայ քո պաղչակէզս եւ զոհս առաւաւածոյ օտարոյ, բայց միայն Տեառն։ 18 վասն բանիս այսորիկ քաւեսցէ Տէր ծառայ քո ի մտանել տեառն իմոյ ի տունն Ռեմմանայ երկիր պագանել նմա յորժամ յենուցանէ ի ձեռս իմ, եւ երկիր պագանիցեմ ի տան Ռեմմանայ ի պագանելն նորա երկիր ի տան Ռեմմանայ, քաւեսցէ Տէր ծառայ քո վասն բանին այսորիկ։ 19 Եւ ասէ եղիսէ ցՆէեման, Երթ խաղաղութեամբ. եւ զնաց ի նմանէ [7]յերկրէն Իսրայելի՝։

20 Եւ ասէ Գէեզի պատանեակն եղիսէի[8], Ահա խնայեաց տէր իմ ի Նէեման Ասորի, չառնուլ ի ձեռանէ նորա յորոց մատուցին. կենդանի է Տէր, եթէ ոչ ընթացայց զնմա նորա եւ առից ինչ ամի։ 21 Եւ անդունդաբար Գէեզի զնաց Նէեմանայ. եւ եաեսս զնա Նէեման ընթացեալ զնա նորա եւ գարձաւ ի կառացն ընդ 22 առաջ նորա եւ ասէ, Ողջո՞ւն է։ Եւ ասէ Գէեզի, Ողջոյն է. տէր իմ առա-

---

[1] Ըստ Եբրայեցւոյն՝ մեծարոյ [2] Եբր. գալոյ
[3] Եբր. ոսկի [4] Եբր. շարժեսցէ
[5] Եբր. բանի տեառն Աստուծոյ [6] Եբր. այրն Աստուծոյ [7] Եբր. վայր մի [8] Եբրայեցին յաբելաւ, տեառն Աստուծոյ

քեաց պիս առ քեզ եւ ասէ , Ահա եկին առ իս երկու պատանեակք ի լեռնէն Եփրեմի յորդւոց մարգարէից . տուր նոցա տալանդ մի արծաթոյ , եւ երկուս
23 պատմուճանս հանդերձեալս : Եւ ասէ Նէեման , [1]Թէ այսպէս իցէ , առ երիս տալանդս արծաթոյ"։ Եւ բռնապատեաց զնա , եւ ծրարեաց [2]երիս տալանդս արծաթոյ յերկուս պարկս , եւ երկուս պատմուճանս հանդերձեալս . եւ եառ ցերկուս ծառայս իւր եւ բարձին առաջի
24 նորա ։ [3]Եւ եկին ի մթինն", եւ առ ի ձեռաց նոցա եւ եդ ի տան , եւ արձակեաց
25 զարան եւ գնացին . Եւ ինքն եմուտ եւ կայր առաջի տեառն իւրոյ . եւ ասէ ցնա Եղիսէ , Ուստի՞ գաս Գէհազի . եւ ասէ Գէհազի , Չի՛ երթեալ ծառայ քո ոչ
26 յայսկոյս եւ ոչ յայնկոյս ։ Եւ ասէ ցնա Եղիսէ , Ո՞չ սիրտ իմ վնաց յորժամ դարձաւ այրն ի կառաց անտի ընդ առաջ քո . [4]եւ արդ առեր զարծաթն եւ զհանդերձան՝ ի ձիթենիս եւ յայգիս եւ յարջառս եւ յոչխարս եւ ի ծառայս եւ
27 յաղախինս"։ Եւ բորոտութիւնն Նէեմանայ յարեսցի ի քեզ եւ ի զաւակ քո յաւիտեան ։ Եւ ել յերեսաց նորա բորոտեալ իրրեւ զձիւն ։

Գլ . Զ

1 Եւ ասեն որդիք մարգարէիցն ցԵղիսէ , Ահա տեսիլ տեղւոյ մերոյ
2 [5]բնակեմք՝ նեղ է մեզ ։ Երթիցուք մինչեւ ցՅորդանան , եւ առցուք անտի այր իւրաքանչիւր գերան մի , եւ արասցուք մեզ անդ բնակութիւն. եւ ասէ,
3 Երթայք ։ Եւ ասէ մի նոցանէ , [6]Կամ եւ դու մեղմով երթիցես" ընդ ծառայս քո . եւ
4 Նա ասէ , Ես երթից ։ Եւ գնաց ընդ նոսա . եւ հասին ի Յորդանան , եւ հարին
5 կանէին փայտս ։ Եւ ահա մին մինչդեռ ընկենոյր գնեծանն , անկաւ երկաթին ի ջուրն . եւ վայեաց եւ ասէ , Ո՛հ , տէր ,
6 եւ զայն յանօթ առեալ էր ։ Եւ ասէ այրն Աստուծոյ , Ծո՛ւր վայր անկաւ . եւ եցոյց նմա զտեղին . եւ ձեղքեաց փայտ եւ ընկէց անդր , եւ ի վեր եկաց երկաթին .
7 Եւ ասէ , Վերացո քեզէն . եւ ձգեաց զձեռն իւր եւ առ գնա ։
8 Եւ արքայն Ասորւոց սայր պատերազմ ընդ Իսրայէլ . խորհեցաւ ընդ ծառայս իւր եւ ասէ , [7]Ի տեղի մի յայսմանէ" բանակեցայք ի գաղտի ։ Եւ ա-
9 ռաքեաց [8]եղիսէ առ արքայն Իսրայէլի եւ ասէ , Զգոյշ լեր , գուցէ անցանիցես ընդ այն տեղի , զի անդ թաքուցեալ են Ասորիք ։ Եւ առաքեաց ար-
10 քայն Իսրայէլի ի տեղին զոր ասաց նմա [8]եղիսէ , եւ զգուշացաւ անտի ոչ մի անդամ եւ
11 ոչ երկիցս ։ Եւ զայրացաւ անձն արքային Ասորւոց վասն բանին այնորիկ , եւ կոչեաց զծառայս իւր եւ ասէ ցնոսա , Ո՞չ պատմէք ինձ , եթէ ո՞մանէ դիս արքային Իսրայէլի ։ Եւ ասէ մի ոմն ի ծա-
12 ռայից նորա , Ոչ , տէր իմ արքայ . այլ Եղիսէ մարգարէ յԻսրայէլի պատմէ արքային Իսրայէլի զամենայն զբանս զոր
13 խօսեացիս ի սենեկի քում քո ։ Եւ ասէ , Երթայք տեսէք ուր իցէ նա , եւ առաքեցից բռնեցից զնա ։ Եւ պատմեցին նմա եւ ասեն, Ահաւանիկ ի Դովթայիմէ ։
14 Եւ առաքեաց անդր կառս եւ երիվարս եւ զօր ծանր . եւ եկին գիշերի եւ պա-
15 տեցին զքաղաքն ։ Եւ կանխեաց յառնել [9]ի պատուհան եղիսէ , եւ ել գնաց". եւ ահա զօր պատեալ էր զքաղաքաւն , եւ երիվարք եւ կառք . եւ ասէ ցնա պատանեակն , [10]Տէր , զի՞ գործեացուք ։
16 Եւ ասէ եղիսէ , Մի՛ երկնչիր , զի բազումք են քան ընդ նոսա ։
17 Եւ եկաց յաղօթս եղիսէ եւ ասէ , Տէր , բաց զաչս պատանեկիս եւ տեսցէ . եւ երաց Տէր զաչս նորա , եւ տեսանէր եւ ա-
18 հա լեառնն լի էր ձիովք եւ հրեղէն կառօք չուրջ զեղիսէէ ։ Եւ իջին առ նա . եւ եկաց յաղօթս եղիսէ առ Տէր եւ ասէ , Հար զազգդ զայդ չացուխեամբ ։ Եւ եհար զնոսա չացուխեամբ ըստ բա-
19 նին եղիսէի ։ Եւ ասէ ցնոսա եղիսէ , Ոչ այս ճանապարհ է եւ ոչ այս քաղաք. եկայք ընդ իս եւ տարայց զձեզ առ այրն զոր խնդրէք . եւ տարաւ զնոսա
20 ի Սամարիա ։ Եւ եղեւ իրրեւ եմուտ ի Սամարիա , ասէ եղիսէ , Բաց , Տէր , զաչս նոցա եւ տեսցեն . եւ երաց Տէր

---

[1] Եբէր. Կամիս զ՚ո երկուս տալանդս [2] Եբէր. երկուս [3] Եբէր. Իրբեւ եկն ի բարձրաւանդակն [4] Եբէր. իցէ՞ ժամանակ առնոյ արծաթ եւ առնոյ հանդերձս, եւ ձիթենիս եւ այգիս եւ ոչխարս եւ արջառս եւ ծառայս եւ աղախնայս [5] Եբէր. բնակեմք առաջի քո [6] Եբէր. Կամիս, եւ եկ

[7] Եբէր. Յայս ինչ , յայն ինչ տեղւոջ [8] Եբէր. այրն Աստուծոյ [9] Եբէր. պատշգամն առն Աստուծոյ եւ եկ [10] Եբէր. Ո՛հ , Տէր

զաչս նոցա եւ տեսին , եւ անա էին ի մէջ Սամարիայ ։
21 Իբրեւ եհաս զնոսա արքայն Իսրայէլ , ասէ ցԵղիսէ , եթէ Հարկանելով
22 հարից զդոսա , հայր ։ Եւ ասէ , Մի հարկանիր , [1]քանզի եթէ զգնոսիկ զոր գերեսցես սրով քով եւ ազեղամբ քով՝ հարկանիցես՞. դիր հաց եւ ջուր առաջի դոցա , եւ կերիցեն եւ արբցեն եւ երթիցեն առ տէր իւրեանց ։ Եւ [2]արկ առաջի նոցա խոտս տակաւ մեծաւ՞ եւ կերան եւ արբին . եւ արձակեաց զնոսա , եւ գնացին առ տէր իւրեանց . եւ ոչ եւս յաւելին մեկնակազէնքն Ասորւոց զալ յերկիրն Իսրայելի ։
24 Եւ եղեւ յետ այնորիկ , ժողովեաց [3]որդի Ադերայ՞ արքայ Ասորւոց զամենայն զբանակն իւր , եւ ել նստաւ զՍամարիա ։ 25 Եւ եղեւ սով մեծ ի Սամարիա , եւ նստէին գնովաւ , մինչեւ եզեւ խալամ իչոյ [4]յիսուն սկզբ սրծաթոյ , եւ չորրորդ կապճի ալրոյ ապաւ-
26 նեայ՝ [5]յիսուն եւ՞ հինգ արծաթոյ ։ Եւ արքայ Իսրայելի չրջէր ի վերայ պարսպին . եւ կին մի ազաղակեաց առ նա
27 եւ ասէ , Ապրեցո զիս , ա՛ր արքայ ։ Եւ ասէ , [6]Մի՛ ապրեցուսցէ զքեզ Տէր , ուստա՞ր ապրեցուցից զքեզ , ի կալո՞ւմէ ի
28 հնձանէ ։ Եւ ասէ ցնա արքայ , Զի՞ է քեզ . եւ ասէ , Կինս այս ասաց ցիս , Տուր զորդիդ քո եւ կերիցուք զդա այսօր , եւ զորդիս դիմ կերիցուք առ վաղիւ ։
29 Եւ եփեցաք զորդին իմ եւ կերաք զնա . եւ ասեմ ցնա յաւուրն երկրորդի , Տուր զորդիդ քո եւ կերիցուք զդա . եւ թա-
30 քոյց զորդին իւր ։ Եւ եղեւ իբրեւ լուաւ արքայ զբանս կնոջն , պատառեաց զհանդերձս իւր . եւ ինքն չրջէր ի վերայ պարսպին. եւ եւս ժողովուրդն զքուրձն որ ի վերայ մարմնոյ նորա ի ներքոյ ։
31 Եւ ասէ , Օն եւ օն արասցէ ինձ Աստուած , եւ օն եւ օն յաւելցէ , եթէ կայցէ զլուխն Եղիսէի որդւոյ Սափատ
32 այ ի վերայ նորա այսօր ։ Եւ Եղիսէ նստէր ի տան իւրում , եւ ծերքն նստէին ընդ նմա . եւ առաքեաց այր առաջի երեսաց իւրոց . եւ մինչչեւ եկեալ էր հրեշտակին առ նա , ասէ ցծերսն , եթէ Դիտիցէ՞ք զի առաքեաց որդի սպանողին առնուլ զգլուխ իմ . [7]իբրեւ մտանիցէ հրեշտակն," կալջիք զնա ընդ դրօքն . ո՞չ ապաքէն ձայն ոտից տեառն նորա զկնի
33 նորա լսէ ։ Եւ մինչդեռ խօսէր ընդ նոսա , անա հրեշտակն էջ առ նոսա . եւ ասէ , Ահա այս չարութիւն ի Տեառնէ է . զի՞ եւս համբերիցէ Տեառն ։

Գլ . Ի

1 Եւ ասէ Եղիսէ , Լուր զբան Տեառն . այսպէս ասէ Տէր . [5]Քանզի վաղիւ այս ժամ իցէ գրեթէ մի նաչխոյ սկզբ միոյ , եւ երկու գրեթէ դահուց՝ սկզբ միոյ իդրամնա
2 Սամարիայ ։ Եւ պատասխանի եառ սպասաւորն յորոյ արքայ կնոյր ի ձեռն նորա՝ [8]Եղիսէի եւ ասէ , Եթէ ահաւասիկ յերկինս արասցէ Տէր , միթէ լինիցի՞ բանդ այդ . եւ ասէ Եղիսէ , Ահա տեսցես աչօք քովք , եւ անտի մի կերիցես ։
3 Եւ էին արք չորք բորոտք առ դրան քաղաքին , եւ ասեն այր ցընկեր իւր ,
4 Զի՞ նստիմք աստ եւ մեռանիմք . եթէ ասեմք՝ եթէ մտցուք ի քաղաք , սով է ի քաղաքին , եւ մեռանիմք անդ . եւ եթէ աստէն նստիցիմք , սակայն մեռանիմք . եւ արդ եկայք դիմեսցուք ի բանակն Ասորւոց . եթէ ապրեցուսցեն զմեզ , կեցցուք , եւ եթէ սպանցեն զմեզ , մեռ-
5 ցուք ։ Եւ յարեան ընդ երշալուրյն մտանել ի բանակն Ասորւոց , եւ եկին [9]ի մասն ինչ" բանակին Ասորւոց , եւ անա
6 ոչ զայր անդ մարդ . Զի Տէր հնչեցոյց ի բանակն Ասորւոց չաչիւն կառաց [10]եւ բարբառ զօրու մեծի . եւ ասեն այր ցեղբայր իւր , Արդ ի վարձու կալաւ ի վերայ մեր արքայն Իսրայելի զթագաւորս Քեւտացւոց , եւ զթագաւորս [11]Եգիպ-
7 տացւոց ։ Եւ յարեան եւ փախեան ընդ մուխն , եւ թողին զվրանս իւրեանց եւ զձիս իւրեանց եւ զէշս իւրեանց ի բանակին որպէս եւ կային , եւ փախեան
8 մարդապաւր ։ Եւ մտին բորոքն մինչեւ [9]ի մասն մի" բանակին , մտին ի վրան մի եւ կերան եւ արբին . եւ առին անտի արծաթ եւ ոսկի եւ հանդերձս , եւ գնացին եւ չոգան թաքուցին . եւ դարձան եւ մտին յայլ վրան , եւ առին ան-

---

[1] Կամ , միթէ զոր գերիցես սրով քով եւ աղեղամբ քով՝ հարկանիցե՞ս [2] Եբբ· արար նոցա խնջոյս մեծ [3] Եբբ· Բենադադ [4] Եբբ· տասն [5] Եբբ· պ՚ոոթ [6] Եբբ· եթէ ոչ
[7] Եբբ· տեսէք, իբրեւ մտանիցէ հրեշտակն, փակեցէք զդուռնն եւ [8] Եբբ· առնն Աստուծոյ [9] Եբբ·ի ծայր [10] Եբբ· եւ չաչիւն երիվարաց , [11] Եբբ· եգիպտացւոց գալ ի վերայ մեր

9 սի եւ չոգան եւ թաքուցին ։ Եւ ասեն
այր ցինակր իւր , [1]Ոչ այսպէս է՞ զոր
մեք ասեմք . օրս այս օր աւետաց
է , եւ մեք լռիցո՞մք , եւ մնայցեմք լու-
սոյ առաւօտու , եւ պատնիցեմք անօ-
րէնութիւն . բայց արդ եկայք մտցուք
եւ պատմեսցուք զայս ի տան թագա-
10 ւորին ։ Եւ մտին եւ աղաղակեցին առ
դրան քաղաքին , եւ պատմեցին նոցա
եւ ասեն , Մտաք ի բանակն Ասորւոց ,
եւ ոչ գոյր անդ այր եւ ոչ ձայն մարդ-
գոյ , բայց միայն ձիք կապեալք եւ էշք
կապեալք , եւ վրանք նոցա նոյնպէս կան ։
11 Եւ աղաղակեցին բարաստանքն , եւ ազդ
արարին ի տուն թագաւորին ի ներքս ։
12 Եւ յարեաւ արքայ գիշերայն , եւ ա-
սէ ցծառայս իւր , Պատմեցից ձեզ զոր
ինչ արարին մեզ Ասորիքն . գիտացին
թէ մեք սովիմք , ելին ի բանակէն եւ
թաքեան ի բացի , ասեն , Թերեւս ել-
ցեն ի քաղաքէն , եւ բմբռնեսցուք զնո-
սա կենդանիսն , եւ մտցուք ի քաղաքն
13 [2]եւ կրցուք՞ ։ Եւ պատասխանի ետ մի
ոմն ի ծառայից նորա եւ ասէ , Առցեն
հինգ ի ձիոց մնացելոց որք մնացեալ են
ասահն յամենայն բազմութենէ Իսրա-
յելի [3]նուազութիւն , եւ առաքեսցուք
14 անդր եւ տեսցուք ։ Եւ առին երկուս
հնձեալս ձիոց , եւ առաքեաց արքայ
զհետ [4]արքային Ասորւոց եւ ասէ , Եր-
15 թայք եւ տեսէք ։ Եւ գնացին զհետ
նոցա մինչեւ ցՅորդանան . եւ ահա ա-
մենայն ճանապարհն լի էր հանդերձիւ
եւ կահիւ՝ զոր ընկեցին Ասորիքն ի խու-
ճապին իւրեանց . եւ դարձան հրես-
տակքն եւ պատմեցին արքային ։
16 Եւ ել ժողովուրդն եւ յափշտակեաց
զբանակն Ասորւոց . եւ եղեւ գրիւ նաչ-
հոյ՝ սկեղ միոյ , եւ երկու գրիւք գարե-
17 սկեղ ըստ բանին Տեառն ։ Եւ արքայ
կացոյց զպատառաղէնն , յորոյ ձեռն
արքայ ի ձեռս նորա , [5] եւ կոխեաց զնա
ի խառնն ժողովրդին առ դրանն , եւ մե-
ռաւ , որպէս խօսեցաւ այրն Աստուծոյ ,
որ խօսեցաւ յիջանել [6]հրեշտակին առ
18 նա ։ Եւ եղեւ որպէս խօսեցաւ [7]Ելիսէ
ընդ արքային եւ ասէ , Թէ երկու գրիւք
գարեայ սկեղ միոյ լինիցին , եւ գրիւ
նաչհոյ՝ սկեղ . եւ եղիցի վաղիւ ի սոյն
19 ժամ ի դրունս Սամարիոյ . Եւ պատաս-
խանի եաս սպառազէնն [8]Ելիսէի եւ ա-
սէ , եթէ սահանս յերկինս սպասցէ Տէր ,
միթէ լինիցի՞ բանդ այդ . եւ ասէ Ելի-
սէ , Ահա տեսցես աչօք քովք եւ ան-
20 տի մի կերիցես ։ Եւ եղեւ նմա այն-
պէս . եւ կոխեաց զնա ժողովուրդն ի
խառնն առ դրանն , եւ մեռաւ ։

Գլ. Ը

1 Եւ խօսեցաւ Ելիսէ ընդ կնոջն զորոյ
կեցոյց զորդին , եւ ասէ , Արի դնա դու
եւ տուն քո եւ լեր պանդխտեալ ուր եւ
պանդխտիցես , զի կոչեաց Տէր [9]սով ի
վերայ երկրիս . քանզի՞ եկն իսկ սով
2 զհետն ամ ի վերայ երկրին ։ Եւ յարեաւ
կինն եւ արար բան բանին [8]Ելիսէի , եւ
դնաց ինքն եւ տուն իւր , եւ պանդխտե-
ցաւ յերկրին այլազգեաց եւթն ամ ։
3 Եւ եղեւ յետ կատարելոյ ամացն եւ-
թանց , դարձաւ կինն յայլազգեացն ,
եւ եկն բողոք արկանել առ արքայ վասն
տան իւրոյ եւ վասն անդոյ իւրոյ ։
4 Եւ արքայ խօսեցաւ ընդ Գէհազեայ պա-
տանեկին [2]Ելիսէի առնն Աստուծոյ եւ
ասէ , Պատմեա գու ինձ զամենայն մե-
5 ծամեծսն զոր արար Ելիսէ ։ Եւ եղեւ
ի պատմելն նորա արքային թէ որպէս
կենդանացոյց զորդին մեռեալ , եւ ա-
հաւասիկ առաջի անկաւ կինն զորոյ կեն-
դանացոյց զորդին նորա Ելիսէ , ազա-
ղակէր առ արքայ վասն տան իւրոյ եւ
վասն անդոյ իւրոյ . եւ ասէ Գէհազի .
Տէր արքայ , այս կին է եւ այս որդի
6 զոր զոր կենդանացոյց Ելիսէ ։ Եւ
հարց արքայ կինն , եւ պատմեաց նմա ,
եւ ետ նմա արքայ ներքինի մի եւ ա-
սէ , Դարձո դմա զամենայն գարդիւնան ,
եւ զամենայն զարմտիս անդոյն , յօրէ
յորմէ եթող զերկիրս մինչեւ ցայժմ ։
7 Եւ եկն Ելիսէ ի Դամասկոս . եւ
[10]որդի Ադերայ՞ արքայ Ասորւոց հիւան-
դանայր . եւ պատմեցին նմա եւ ասեն ,
8 Եկն այրն Աստուծոյ այսր ։ Եւ ասէ ար-
քայ ցԱզայէլ , Ա՛ռ ի ձեռին քում [11]մանա-
նա , եւ կաց ընդ առաջ առնն Աստուծոյ ,
եւ հարց զՏէր նորա՝ եւ ասացես , Ե-
թէ կեցցե՞մ ի հիւանդութենէ աստի

---

[1] ԵՖր. Չէ ուղիղ [2] ՅԵՖր. պակաս [3] ԵՖր. [՝որ
մնացին ասեն . ահա են յամենայն բազմու-
թենէ Իսրայելի՝ որ սպառեցան [4] ԵՖր. բանակին
[5] ԵՖրայիմն յոսելոս , ի վերայ դրանն [6] ԵՖր. Թա-
գաւորին [7] ԵՖր. այրն Աստուծոյ

[8] ԵՖր. առնն Աստուծոյ [9] ԵՖր. սով. եւ [10] ԵՖր.
Բենհադադ [11] ԵՖր. ընծայ

9 իմմէ յայսմանէ։ Եւ դնաց Ագայէլ ընդ ա-
ռաջ նորա , եւ սո՛ւ [1]մանեան ի ձեռին իւ-
րում , եւ՝ զամենայն բարութիւնս Դա-
մասկոսի բերին ուղտուց քաւանիից .
չոգաւ եկաց առաջի նորա եւ ասէ , [2]Հայր
Ենիսէ , որպի քո որպի Ագերայ՝ ար-
քայ Ասորւոց առաքեաց զիս առ քեզ
եւ ասէ , եթէ կեցցեմ ի հիւանդութե-
10 նէ ասաի իմմէ յայսմանէ։ Եւ ասէ ցնա
Ենիսէ , Երթ եւ ասա ցնա , կեցո-
ցես . եւ եցոյց ինձ Տէր զի մահու մե-
11 ռանիցի։ Եւ [3]եկաց առաջի երեսաց նորա
պատկառեալ՝ եւ եկաց այրն Աստուծոյ։
12 Եւ ասէ Ագայէլ , Ընդէ՞ր լաս , տէր իմ. եւ
ասէ, Գիտեմ զինչ գործիցես ես ընդ որդիսն
Իսրայելի[4] . զամուրս նոցա հրձիգ արաս-
ցես , եւ զընտիրս նոցա սրով կոտո-
րեսցես , եւ զաղայս նոցա սատակես-
13 ցես , եւ զյղիս նոցա հերձցես։ Եւ ա-
սէ Ագայէլ , Ո՞վ է ծառայ քո չուն մի ,
եթէ առնիցէ զբանդ [5]զայդ ։ Եւ ասէ Ե-
ղիսէ , Եցոյց ինձ Տէր թագաւորել քեզ
14 ի վերայ Ասորւոց ։ Եւ գնաց Ագայէլ յԵ-
ղիսէէ եւ եմուտ առ տէր իւր . եւ ա-
սէ ցնա , Զինչ ասաց Ենիսէ ։ Եւ ա-
15 սէ , Ասաց ցիս թէ կեցով կեցցէ ։ Եւ ե-
ղեւ ի վաղիւ անդր եւ սո՛ւ [6]մահման եւ
եթաց ի ջուր եւ արկ վերնաօք [7]իւրովք
եւ մեռաւ . եւ թագաւորեաց Ագայէլ
ընդ նորա ։
16 Յամի հինգերորդի Յովրամայ որդւոյ
Աքաաբեւ արքայի Իսրայելի , թագա-
ւորեաց Յովրամ որդի Յովսափատայ
17 արքայի Յուդայ ։ Որդի երեսուն եւ եր-
կուց ամաց էր ի թագաւորել իւրում ,
եւ ութ ամ թագաւորեաց յԵրուսաղէմ ։
18 Եւ գնաց զճանապարհ թագաւորացն Իս-
րայելի , որպէս արար տունն Աքաաբեւ .
դի դուստր Աքաաբեւ էր նորա կնու-
թեան . եւ արար չար առաջի Տեառն ։
19 Եւ ոչ կամեցաւ Տէր ապականել զՅու-
դա վասն Դաւթի ծառայի իւրոյ , որ-
պէս եւ ասաց տալ նմա ճրագ եւ որդ-
ւոյ նորա զամենայն աւուրս ։
20 Եւ յաւուրս նորա նկնհանաց Եդովմ ի
ներքուստ ձեռին Յուդայ , եւ թագա-
21 ւորեցոյց ի վերայ իւր թագաւոր ։ Եւ ել
Յովրամ ի Սիւր , եւ ամենայն կառք
ընդ նմա . եւ եղեւ ընդ վազապարոյցս
լինելոյ գիշերին , եւ հա՛ար զԵդովմ [8]զպա-
տեան զիւրեան՝ եւ զիշխանս կառացն .
եւ փախեաւ զոյն յիւրաքանչիւր խո-
22 րանս իւրեանց ։ Եւ նկնհանաց Եդովմ
ի ներքուստ ձեռին Յուդայ մինչեւ ցայս-
օր ։ Յայնմ ժամանակի նկնհանաց եւ
Լոբնա ։
23 Եւ մնացորդք բանից Յովրամայ , եւ
ամենայն զոր արար , ո՞չ աւանիկ
գրեալ են ի գիրս բանից աւուրց թա-
24 գաւորացն Յուդայ ։ Եւ ննջեաց Յովրամ
ընդ հարս իւր , եւ թագեցաւ ընդ հարս իւր
ի քաղաքի Դաւթի [9]հօր իւրոյ՝ , եւ թա-
գաւորեաց Ոքոզիա որպի նորա ընդ նորա ։
25 Յամի երկոտասաներորդի Յովրամայ
որդւոյ Աքաաբեւ արքայի Իսրայելի թա-
գաւորեաց Ոքոզիա որպի Յովրամայ ար-
26 քայի Յուդայ ։ Քսան եւ երկուց ամաց
էր Ոքոզիա ի թագաւորել իւրում , եւ
տարի մի թագաւորեաց յԵրուսաղէմ .
եւ անուն մօր նորա Գոթողիա դուստր
27 Ամբրեայ արքայի Իսրայելի ։ Եւ գնաց
զճանապարհ տանն Աքաաբեւ , եւ արար
չար առաջի Տեառն որպէս եւ տունն
Աքաաբեւ . քանզի փեսայ էր տանն Ա-
28 քաաբեւ ։ Եւ գնաց ընդ Յովրամայ որդ-
ւոյ Աքաաբեւ ի պատերազմ ի վերայ Ա-
զայելի արքայի Ասորւոց յՌամովթ Գա-
ղաադ , եւ հարին Ասորիքն զՅովրամ ։
29 Եւ դարձաւ արքայ Յովրամ բժշկել ի
Յեզրայէլ ի վիրացն զոր խոցեցին զնա
Ասորիքն յՌամովթ՝ ի պատերազմիլ նո-
րա ընդ Ագայելի արքայի Ասորւոց ։ Եւ
Ոքոզիա որդի Յովրամայ արքայ Յու-
դայ՝ էջ տեսանել զՅովրամ որդի Աքաա-
բեւ Յեզրայէլ , զի հիւանդանայր նա ։

Գլ . Թ

1 Եւ եղիսէ մարգարէ կոչեաց զմի յորդ-
ւոց մարգարէիցն եւ ասէ ցնա , Պնդեա
զմէջ քո , եւ առ գսրուակ իւղոյս ի ձե-
ռին քում , եւ երթ յՌամովթ Գաղաադ ։
2 Եւ մտցես անդր , եւ տեսցես անդ զՅէհու
զորդի Յովսափատայ որդւոյ Նամեսսեայ .
եւ մտցես եւ յարուսցես զնա ի միջոց
եղբարց իւրոց , եւ տարցես զնա սե-
3 նեակ ի սենեկի . Եւ առցես զսրուակդ
իւղոյ , եւ արկցես ի գլուխ նորա եւ ա-
սասցես , Այսպէս ասէ Տէր . Օծի զքեզ

[1] Եբր. ընծայ ի ձեռին իւրում այսինքն [2] Եբր. Որդի քո Բենհադադ . [3] Եբր. յառեալ Հայեցաւ ինձ մինչեւ պատկառել նմա [4] Եբր. յաւելուածն յոռելս , չարիս [5] Եբր. զայդ մեծ [6] Եբր. մաքսպար , որ նշանակէ՝ կապերտ խոշոր [7] Եբր. նորա [8] Այսինքն, որ պաշարեալ էր զնա [9] Եբր. պապոյ

թագաւոր ի վերայ Իսրայէլ. եւ բացցեա զդուռն եւ փախիցես, եւ մի՛ ևնաս-
4 ցես։ Եւ գնաց պատանեակն մարգարէ յՌամաթացի Գաղաադ։
5 Եւ եմուտ անդր. եւ ահա իշխանք զօրուն նստէին. եւ ասէ, Բան ինչ է ինձ ընդ քեզ, իշխանդ. եւ ասէ Ցէու, Ա՛ւ ո՞ յամենեցունց ի մէնջ. եւ ասէ,
6 Ա՛ւ քեզ, իշխանդ։ Եւ յարուցաւ եմուտ ի սենեակն, եւ արկ զեւդն ի զլուխ նորա, եւ ասէ ցնա, Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Օձի զքեզ ի թա-
7 գաւոր ժողովրդեան Տեառն ի վերայ Իսրայէլի. Եւ սատակեսցես զտունն Ա-քաաբու տեառն [1]քո յերեսաց դուց, եւ առցես՝ գվրէժ արեանն ծառայից մարգարէից, եւ զարիանց ամենայն ծա-
ռայից Տեառն ի ձեռաց [2]Յեզաբելայ եւ
8 ի ձեռաց ամենայն տան նորա։ Եւ սատակեսցես զտունն Ա-քաաբու՝ որ միզիչ զօրմով, եւ զնեղեալն եւ զնեա-
9 ցեալն յԻսրայէլէ. Տայ զտունն Ա-քաաբու իբրեւ զտունն Յերոբովամու որդւոյ Նաբատայ եւ իբրեւ զտունն Բաաս-
10 սայ որդւոյ Աքիայ. Եւ զՅեզաբէլ կերիցեն շունք ի վիճակին Յեզրայելի, եւ ոչ ոք լցէ որ թաղիցէ։ Եւ եբաց զդուռնն եւ փախաւ։
11 Եւ Ցէու ել առ ծառայս տեառն իւրոյ. եւ ասեն ցնա, Ողջո՞ւն է. ընդէ՞ր եկն առ քեզ մոլին այն. եւ ասէ ցնոսա, Դուք ինքնին գիտէք զայրն եւ զրաղա-
12 զանս նորա։ Եւ ասեն, [3]Անիրաւութիւն է այդ՝. պատմեա մեզ։ Եւ ասէ ցնոսա Ցէու, Այսպէս եւ այսպէս խօսեցաւ ընդ իս, եւ ասէ, Այսպէս ասէ Տէր. Օձի զքեզ թագաւոր ի վերայ Իսրայե-
13 լի։ Իբրեւ լուան, փութացան եւ առին իւրաքանչիւր զպահկն իւր, եւ եդին ի ներքոյ նորա ի վերայ մխոյ սանդեա-նացն ուր նստէին, եւ փող հարին եղ-
ջերեաւն՝ եւ ասեն, Թագաւորեաց Ցէու։
14 Եւ զօրաժողով եղեւ Ցէու որդի Յով-սափատայ որդւոյ Նամեսեայ ի վերայ Յովրամայ. եւ Յովրամ զղուշացեալ էր յՌամաթացի Գաղաադ, ինքն եւ ամենայն Իսրայէլ, յերեսաց Ազայելի արքայի Ա-
15 սորւոց. Եւ դարձաւ Յովրամ արքայ բժշկել ի Յեզրայել ի վիրաց անտի զոր խոցեցին զնա Ասորիքն ի պատերազմել նորա ընդ Ազայելի արքայի Ասորւոց. եւ ասէ Ցէու, Եթէ իցէ ոգի ձեր ընդ իս, մի՛ ելցէ վախճանական ի քաղաքէ ասել
16 երթալ պատմել ի Յեզրայէլ։ Եւ հնձաւ Ցէու եւ գնաց, [4]եւ էջ՝ Յեզրայէլ. զի Յովրամ [5]արքայ Իսրայելի բժշկէր ի Յեզրայէլ ի նեսիցն զոր խոցեցին զնա յՌամաթացի ի պատերազմել ընդ Ազայելի արքայի Ասորւոց. ալի նա գօրաւոր էր եւ այր գօրութեան. եւ ննջեաց՝ անդ. եւ Ազոզիա արքայ Յուդայ էջ տեսանել
17 զՅովրամ։ Եւ դէտն [6]կայ յաշտարակին՝ Յեզրայելի, եւ եահս [7]փոչի ի գալն Ցէուայ եւ ասէ, [7]Փոչի տեսանեմ ես. եւ ասէ Յովրամ, Ա՛ռ հնծեալ մի եւ առաքեա ընդ առաջ նոցա, եւ ասասցէ,
18 Ողջո՞ւն է։ Եւ չոգաւ հնծեան ձիով ընդ առաջ նորա եւ ասէ, Այսպէս ասէ արքայ, Թէ Ողջո՞ւն իցէ. եւ ասէ Ցէու, Զի՞ կայ քո եւ ողջունի. դարձիր զկնի իմ։ Եւ պատմեաց դէտն եւ ասէ, Եհաս ի նոսա եւ ոչ դարձաւ։
19 Եւ առաքեաց երկրորդ հնծեալ մի ձիով եւ ասէ, Այսպէս ասէ արքայ, Թէ Ողջո՞ւն իցէ. եւ ասէ Ցէու, Զի՞ կայ քո եւ ող-
20 ջունի. դարձիր զկնի իմ։ Եւ պատմեաց դէտն եւ ասէ, Եհաս ի նոսա եւ ոչ դարձաւ. եւ վարելն իբրեւ զվարիլն Ցէուայ որդւոյ Նամեսեայ, քանզի տագնապաս-
21 [8]նէաս։ Եւ ասէ Յովրամ, Լծեա. եւ լծանցին կառս. եւ ամբարձաւ Յովրամ արքայ Իսրայելի, եւ Ազոզիա արքայ Յուդայ՝ այր իւրաքանչիւր ի կառս իւր, եւ ելին ընդ առաջ Ցէուայ. եւ գտին զնա ի վիճակին Նաբովթայ Յեզրայելացւոյ։
22 Եւ եղեւ իբրեւ եահս Յովրամ զՑէու, եւ ասէ, Ողջո՞ւն է, Ցէու. եւ ասէ Ցէու, Զինչ ողջոյն է, տակաւին պոռնկու-
23 թիւն Յեզաբելայ մօր քո եւ կախար-դութիւնք նորա յաճախիցեն։ Եւ դար-ձոյց Յովրամ զձեռս իւր եւ փախեաւ, եւ ասէ ցՈքոզիա, Դաւ է, Ազոզիա։
24 Եւ Ցէու ընդ զիրկս եհմուտ, եւ եհար զՅովրամ ընդ մէջ թիկանց նորա, եւ ել նետն ընդ սիրտ նորա, եւ կծկեցաւ
25 [9]ի վիրայ ծնգաց իւրոց։ Եւ ասէ ցԲա-դկար սպասաւորն իւր, Վերկա՛ց զդա ի վիճակ ագարակին Նաբովթայ Յեզրեայե-

[1] Եբր. քո, եւ առիր [2] Եբր. Յեզաբելայ։ (8) Եւ կորիցէ ամենայն տուն Ա-քաաբու, եւ սատակեցից զԱ-քաաբու [3] Եբր. Սուտ է
[4] Յեբր. գ-լ-ա-ե [5] Եբր. անկեալ գնէր [6] Եբր. կայր ի վերայ աշտարակին [7] Եբր. գուշդ [8] Եբր. վարէր [9] Եբր. ի կառս իւր

լացուց. զի [1]յիշեմ մինչդեռ ես եւ դու հնծեալ էաք ի զոյգս զկնի Աքաաբու
հօր դորա, եւ Տէր առ ի վերայ դորա
26 զառաջս զայս. եթէ ոչ զարիւն Նաբովթայ եւ զարիւն որդւոց նորա զոր
տեսի երէկ, ասէ Տէր, հատուցից [2]նմա
ի վիճակիս յայսմիկ, ասէ Տէր. եւ արդ
առ ընկեա զդա ի վիճակ այդր ըստ
բանին Տեառն։
27 Եւ Աքազիա արքայ Յուդայ եւտես եւ
փախեաւ ընդ ճանապարհ [3]Բեթհանգանայ.
եւ սկսեցաւ զհետ նորա Ցէհու եւ ասէ.
Հապա, եւ զդա եւս. եւ եհար զնա ի
կառն մինչդեռ ելանէր ընդ զառ ի
վերն [4]Բելբայի, որ է Ցիբղաամ. եւ
փախեաւ ի Մակեդդով, եւ անդ մեռաւ։
28 Եւ հանին զնա ծառայք [5]իւր յերուսա-
ղէմ, եւ թաղեցին զնա ի գերեզմանի
իւրում ընդ հարս իւր ի քաղաքի Դաւթի։
29 Եւ յամին մեռաւսանկերորդի Յովրամայ
[6]արքային Իսրայէլի, Թագաւորեաց
Աքազիա ի վերայ Յուդայ։
30 Եւ եկն Ցէհու Ցեզրայէլ. եւ Ցեզա-
բէլ լուաւ, եւ ծաղրեաց զայն իւր եւ
զարդարեաց զդլուխ իւր, եւ հայէր ընդ
31 պատուհանն։ Եւ Ցէհու մտանէր [7]ի
քաղաքն. եւ ասէ, Միթէ՞ խղճմտի Զամբրի
32 սիրասպան։ Եւ՝ ամբարձ զերեսս իւր
ի պատուհանն եւ ասէ, [8]Ո՞վ ես դու. էջ
առ իս՝. եւ հայեցան ի խոնարհ առ նա
33 [9]երկու ներքինիք։ Եւ ասէ, Ընկեցէք
զդա ի խոնարհ. եւ ընկեցին զնա, եւ
ցայտեցաւ յարնէ նորա զորմովքն եւ
զձիովքն, եւ [10]կոխեցին զնա առաքեալ։
34 Եւ ինքն եմուտ եկեր եւ արբ, եւ
ասէ, Տեսէք զանիծեալն զայն եւ թա-
զեցէք զնա, զի դուստր թագաւորի է։
35 Եւ չոգան թազել զնա, եւ ոչ ինչ գտին
ի նմանէ, բայց զգլխարկն եւ զոտսն
36 եւ զձեռս ձեռացն։ Եւ դարձան պատ-
մեցին նմա. եւ ասէ, Բան Տեառն է
զոր խօսեցաւ ի ձեռն Եղիայի Թեզբացւոյ եւ ասէ, Ի վիճակին Ցեզրայելի կե-
37 րիցեն շունք զմարմինս Ցեզաբելայ. Եւ
եղիցի դին Ցեզաբելայ իբրեւ զաղբ ի
վերայ երեսաց անդոյ ի վիճակին[11]. զի
մի լինիցի ասել նոցա՝ թէ Այս է Ցեզաբէլ։

Գլ. Ժ

1 Եւ Աքաաբու էին որդիք եւթանասուն
ի Սամարիա. եւ գրեաց Ցէհու հրովար-
տակ եւ առաքեաց ի Սամարիա առ
իշխանսն՝ [12]Սամարիայ եւ՝ առ ծերս եւ
առ դայեկան Աքաաբու, եւ ասէ,
2 Իբրեւ հասանիցէ առ ձեզ հրովարտակդ
այդ, ընդ ձեզ են որդիք տեառն ձերոյ,
եւ ընդ ձեզ կառք եւ երիվարք, եւ
ընդ ձեզ քաղաքք ամուրք եւ զէնք.
3 Եւ տեսանիցէք զլաւ եւ գուղիլ յորդ-
ւոց տեառն ձերոյ, եւ հաստատիցէք
զնա ի վերայ ախոռոյ հօր իւրոյ, եւ
սայցէք պատերազմ ի վերայ տան
4 տեառն ձերոյ։ Եւ երկեան յոյժ եւ ասեն,
Ահա երկու թագաւորքն ոչ կալան զդէմ
նորա, եւ մեք վիթխարդ ունիցիմք զդէմ։
5 Եւ առաքեցին [13]ի տանէն եւ ի քաղա-
քէն՝ եւ ծերքն եւ դայեակք առ Ցէհու
եւ ասեն, Ծառայք քո եմք մեք, եւ
զոր ինչ տասացես մեզ՝ արասցուք. եւ
ոչ թագաւորեցուսցուք զոք, այլ որ ինչ
բարին է առաջի քո՝ [14]արասցուք։
6 Եւ գրեաց առ նոսա հրովարտակ երկ-
րորդ եւ ասէ, Եթէ իմ էք դուք եւ
ձայնի իմում լսէք, առէք զգլուխս ա-
նանց որդւոց տեառն ձերոյ եւ բերէք
առ իս վաղիւ ի սոյն ժամու ի Ցեզրայէլ.
եւ որդիք արքայի էին արք եւթանա-
սուն, եւ [15]ազնք քաղաքին՝ մնուցանէին
7 զնոսա։ Եւ եղեւ իբրեւ հասս հրովար-
տակն առ նոսա, կալան զորդիսն ար-
քայի եւ սպանին արս եւթանասուն,
եւ եդին զգլուխս նոցա ի կողովս, եւ
8 առաքեցին առ նա Ցեզրայէլ։ Եւ եկն
հրնշտակն եւ պատմեաց եւ ասէ, Բե-
րին զգլուխս որդւոցն արքայի։ Եւ ասէ,
Դիք զնոսա երկուս դրահանս [16]արտա-
9 քոյ քաղաքիս՝ մինչեւ յառաւօտս։ Եւ
եղեւ ընդ առաւօտն ել եւ եկաց, եւ
ասէ ցամենայն ժողովուրդն, Արդար էք
դուք. ահաւասիկ ես յարեաց ի վերայ
տեառն իմոյ եւ սպանի զնա, [17]տեսէք
10 զոսոնա ամենեքին՝ ո՞ կոտորեաց։ Զի՝ մի
անկանիցի ի բանէն Տեառն յերկիր, զոր

[1] ՅԵԲԲ. յիշեա [2] ՅԵԲԲ. քեզ [3] Նշանակի՝ տան պարտիզին [4] ՅԵԲԲ. Գուրբայ [5] ՅԵԲԲ. իւր կառաւք
[6] ՅԵԲԲ. որդւոյ Աքաաբու Թագաւորեալ էր
[7] ՅԵԲԲ. ընդ դուռն, և Յեղբէել ասէ, Ողջոյն եղիցի Զամբրեայ սիրասպանի։ (32) Եւ Ցէհու [8] ՅԵԲԲ. Ո՞վ ընդ իս, ո՞վ. [9] ՅԵԲԲ. երկու երեք [10] ՅԵԲԲ. կոխեցաւ [11] ՅԵԲԲ. յԵզրաելեան յոռելա, Ցեզրայելի
[12] ՅԵԲԲ. Ցեզրայելի [13] ՅԵԲԲ. որ ի վերայ տանն եւ որ ի վերայ քաղաքին էին, [14] ՅԵԲԲ. արա [15] ՅԵԲԲ. էին ընդ ճոխս քաղաքին որ [16] ՅԵԲԲ. ի մուտս դրանն [17] ՅԵԲԲ. եւ ո՞ կոտորեաց զամենեսին զնոսա։ (10) Արդ գիտասջիք զի

խօսեցաւ Տէր ի վերայ տանն Աքաաբայ, եւ Տէր արար զայ ինչ խօսեցաւ ի ձեռն
11 ծառային իւրոյ Եղիայի։ Եւ եհաս Յէու զամենայն մնացեալս ի տանէ Աքաաբայ ի Յեզրաէլ, եւ զամենայն մնծամեծս նորա եւ զծանօթս նորա եւ զքուրմս նորա, մա ի չմոռոյ նմա մնացորդ։
12 Եւ յարեաւ գնաց եւ եկաց ի Սամարիա. եւ մինչդեռ ի բնմակապ հովուացն
13 ի ճանապարհին էր, եղիաս Յէու զեղբարս Աքազիայ արքայի Յուդայ, եւ ասէ, Ո՞յր էք դուք. եւ ասեն, Եղբարք Աքազիայ եմք մեք, եւ իջաք յողջոյն որդւոց արքային եւ որդւոց [1]թագուհւոյն։
14 Եւ ասէ, Կալարուք զդոսա կենդանիս. եւ կալան զնոսա կենդանիս, եւ կատարեցին զնոսա [2]ի Բնմակապ՝ որ քառասուն եւ երկուս, եւ ոչ մնաց ի նոցանէ այր։
15 Եւ գնաց անտի, եւ եղիաս զՅովնադաբ որդի Ռեքաբայ ընդ առաջ իւր, եւ օրհնեաց զնա. եւ ասէ ցնա Յէու, Եթէ իցէ սիրտ քո ուղիղ իրրեւ զսիրտ իմ ընդ սրտի քում. եւ ասէ Յովնադաբ, Է։ Եւ ասէ Յէու, Եթէ այո՝ տուր ցնա զձեռն քո. եւ եհ զձեռն իւր, եւ եհան
16 զնա առ իւր ի կառսն. Եւ ասէ ցնա, Եկ ընդ իս եւ անս գնտիսնձ իմ վասն Տեառն. եւ նստոյց գնա ի կառս իւր։
17 Եւ եհաս ի Սամարիա, եւ եհար զամենայն մնացեալսն Աքաաբայ ի Սամարիա. մինչեւ ապականել նմա զնոսա բաց ընդ Տեառն զոր խօսեցաւ ընդ Եղիայի։
18 Եւ ժողովեաց Յէու զամենայն ժողովուրդն եւ ասէ ցնոսա, Աքաաբ ծառայեաց Բահաղու սակաւ մ ինչ, Յէու
19 ծառայեսցէ նմա բազում։ Եւ արդ զամենայն մարգարէս Բահաղու, զամենայն ծառայս նորա եւ զքուրմս նորա կոչեցէք առ իս, եւ այր ոք մի վրիպեսցէ. զի զոհ մեծ է Բահաղու, եւ որ վրիպեսցէ, մի ապրեսցի. եւ Յէու արար խարանօք, զի կորուսցէ
20 զծառայս Բահաղու։ Եւ ասէ Յէու, Սրբեցէք նուէրս Բահաղու. եւ քարոզ
21 կարդացին։ Եւ առաքեաց Յէու ընդ ամենայն Իսրայէլ, եւ եկին ամենայն ծառայք Բահաղու, եւ ոչ մնաց որ ոչ եկն. եւ մտին ի տունն Բահաղու, եւ
22 լցաւ տունն Բահաղու ծայր ի ծայր։ Եւ ասէ Յէու [3]ցմիսիմազան, Հանեք զպատ-

մուճանդ ամենայն ծառայից Բահաղու.
23 եւ հանին նոցա զպատմուճանան։ Եւ եմուտ Յէու եւ Յովնադաբ որդի Ռեքաբայ ի տունն Բահաղու. եւ ասէ ցծառայսն Բահաղու, Որոնեցէք եւ տեսէք՝ մի իցէ ոք աստ ընդ ձեզ ի ծառայից Տեառն, բայց դուք միայն ծառայք Բա-
24 հաղու։ Եւ [4]եմուտ առնել խունկս եւ ողջակէզս Յէու. եւ Յէու կացոյց իւր արտաքոյ [5]երկնասաւեալ եւ ասէ, Այր որ ազատեսցէ յառնոյն զոր ես հանեմ ի ձեռս ձեր, անձն նորա
25 փոխանակ անձին նորա։ Եւ եղեւ իրրեւ կատարեաց առնել զողջակէզն, եւ ասէ Յէու ցսաւրանդպետան եւ ցսպատաղէնս, Մտեալ հարէք զնոսա, եւ այր մի ելցէ ի նոցանէն. եւ հարին զնոսա սրով սուսերի, եւ ընկեցին սուրհանդակքն եւ սպատաղէնք. եւ գնացին մինչեւ քաղաք
26 տաճարի Բահաղու. Եւ հանին զարձան
27 առնին Բահաղու, եւ այրեցին զնա եւ կոտրեցին զարձան Բահաղու, եւ քակեցին զտունն Բահաղու, եւ կարասեցին զնա ի
28 լուալիս մինչեւ ցայսօր։ Եւ ապականեաց
29 Յէու զԲահաղ յԻսրայէլ։ Բայց ի մեղսն Յերոբոամայ որդւոյ Նաբատայ որ տանցոյն զԻսրայէլ՝ ոչ մեկնեցաւ Յէու, յերինջսն ոսկեայս որ ի Բեթէլ եւ ի Դան։
30 Եւ ասէ Տէր ցՅէու, Փոխանակ զի բաջացար առնել ուղղութիւն առաջի իմ, ըստ ամենայնի՝ որ ինչ ի սրտի իմում՝ արարեր տանն Աքաաբայ, որդիք չորրորդք նստցին քեզ յաթոռ Իսրայէլի։
31 Եւ Յէու ոչ զգուշացաւ գնալ յօրէնս Տեառն Աստուծոյ Իսրայէլի յամենայն սրտէ իւրմէ, եւ ոչ մեկնեցաւ ի մեղսն Յերոբոամայ որ տացոյցն զԻսրայէլ։
32 Յաւուրսն յայնոսիկ սկսաւ Տէր կտրել յամենայն սահմանս Իսրայէլի, եւ եհար զնոսա Ազայէլ յամենայն սահմանս
33 Իսրայէլի, ի Յորդանանէ եւ ընդ արեւելս, զամենայն երկիրն զԳաղաադ, զԳադացի եւ զՌուբինեան եւ զՄանասէի, յԱրոգերայ, որ է յեզեր հեղեղատին Առնովնայ, եւ զԳաղաադ եւ զԲասան։
34 Եւ մնացորդք բանից Յէուայ եւ ամենայն ինչ զոր արար, եւ ամենայն զօրութիւն նորա [5]եւ ամենայն խուժդուժն զոր խմբեաց՝, ոչ աւանիկ գրեալ են ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իս-
35 րայէլի։ Եւ ննջեաց Յէու ընդ հարս իւր,

[1] ԵԲԲ. տիկնոջն [2] ԵԲԲ. առ ջրհորոյն Բեթակադայ [3] ԵԲԲ. ցՀանգերմապեան

[4] ԵԲԲ. մուտն առնել զհանդողջակէզս [5] ՁԵԲԲ. պակաս

եւ թաղեցին զնա ի Սամարիա. եւ թա-
զաւորեաց Յովաքազ որդի նորա ընդ
36 նորա։ Եւ աւուրք դորա թագաւորեաց
Յէհու ի վերայ Իսրայելի ամք քսան եւ
ութ ի Սամարիա։

ԳԼ. ԺԱ

1 Եւ Գոթողիա մայր Ոքոզեայ, տեսեալ եթէ
[1]մեռան որդիք նորա, կորոյս՚ զամենայն
2 զաւակ թագաւորութեանն։ Եւ առ Յով-
սաբէէ դուստր արքայի Յովրամայ քոյր
Ոքոզեայ, զՅովաս զորդի Ոքոզեայ, եւ
գողացաւ զնա ի միջոյ որդւոց արքայի
սպանելոցն, զնա եւ զդայեակ նորա ի
սենեկի անկողնոյ, եւ թաքոյց զնա յե-
3 րեսաց Գոթողիայ, եւ ոչ սպեաւ։ Եւ էր
ընդ նմա ի տան Տեառն թաքուցեալ ամս
վեց. եւ Գոթողիա թագաւորեալ էր ի
վերայ երկրին։
4 Եւ յամին եւթներորդի առաքեաց
Յովիդայէ եւ առ զհարիւրապետսն եւ
[2]զքսոփն եւ զռասխա՚, եւ առ զնոսա ի
տունն Տեառն, եւ ուխտեաց նոցա [3]զուխտ
Տեառն. եւ եդոյց նոցա [4]Յովիդայէ զոր-
5 դին արքայի։ Եւ պատուէր ետ նոցա
եւ ասէ, Սա յա՛ն է զոր առնիցէք.
երրորդ մասն ի ձէնջ մտցէ չաբաթա-
մուտ, եւ պահապիք զպահպանութիւնն
6 տանն արքունի [5]ի դրանն. Եւ երրորդ
մասն ի դրան [5]ճանապարհին, եւ եր-
րորդ մասն ի դրան զկնի օժանդակացն,
եւ պահապիք զպահպանութիւն տանն[6]։
7 Եւ երկու ձեռք ի ձեզ, ամենայն որ ե-
լանիցէ ընդ չաբաթամուտսն [4]զզուչանալ
տանն Տեառն՚, զզուչացեալ պահպանու-
8 թիւն տանն Տեառն առ արքայ։ Եւ
պատսպիք զարքայիւ այր եւ զործի իւր
ի ձեռին իւրում. եւ որ մտանիցէ ի [7]սա-
զերովքին՚ մեռցի. Եւ [8]ինքն էր՚ ընդ
արքայի ի մտանել նորա եւ յելանել նորա։
9 Եւ արարին հարիւրապետքն զամենայն
զոր պատուիրեաց Յովիդայէ [9]քահանայն.
եւ առնոյր այր զարս իւր, [4]եւ զհնոցն
ի չաբաթամուտսն հանգերձ եղեալսն ի
չաբաթամտին, եւ մտանէր առ Յովի-
10 դայէ քահանայ։ Եւ ետ քահանայն հա-
րիւրապետացն [10]զեղարդունս եւ զվահան

զակ զէնն՚ արքայի Դաւթի որ կայր ի
11 տանն Տեառն։ Եւ յարեան օժանդակքն,
այր եւ զործի իւր ի ձեռին իւրում, յա-
ջոյ ուսոյ տանն մինչեւ ցձախոյ ուս
տանն եւ սեզանոյն եւ տանն արքունի
12 չուրջանակի։ Եւ [11]առաքեաց զարքայորդ-
ին, եւ եդ ի վերայ նորա [12]զկեզերն եւ
զվկայութիւնն. եւ թագաւորեցոյց զնա
եւ օծ զնա, եւ [13]ծափս եհար եւ ասէ՚,
կեցցէ արքայ։
13 Եւ լուաւ Գոթողիա զձայն ընթանա-
լոյ ժողովրդեանն, եւ եմուտ առ ժողո-
14 վուրդն ի տունն Տեառն. Եւ տեսե՛ւ եւ
ահա [14]կայր ի վերայ սեանն ըստ օրինի
[4]իւրում, եւ [15]երգիչք եւ փողարք չուրջ
զարքային, եւ ամենայն ժողովուրդք
երկրին խնդային եւ փողս հարկանէին
փողովք, եւ պատառեաց Գոթողիա
զհանդերձս իւր, ազաղակեաց եւ ասէ,
15 Դաւ է, դաւ է։ Եւ պատուէր ետ Յո-
վիդայէ քահանայ հարիւրապետացն ոս-
տիկանաց զօրուն եւ ասէ ցնոսա, Հա-
նէք զդա ի ներքուստ [7]սպերովքդ՚, եւ որ
մտանիցէ զկնի դորա՝ մեռցի սրով.
քանզի ասաց քահանայն մի՛ մեռցի
16 ի տան Տեառն։ Եւ արկին ձեռն ի նա,
[16]մտին ընդ ճանապարհ մտից երիվարաց
տանն արքայի, եւ մեռաւ անդ։
17 Եւ ուխտեաց Յովիդայէ ուխտ ի մէջ
Տեառն եւ ի մէջ արքայի եւ ի մէջ ժողո-
վրդեանն, լինել ի ժողովուրդ Տեառն. եւ
18 ի մէջ արքայի եւ ի մէջ ժողովրդեանն։ Եւ
եմուտ ամենայն ժողովուրդ երկրին ի տունն
Բահաղու, եւ կործանեցին զնա եւ զսե-
զանս նորա, եւ զպատկերս նորա խոր-
տակեցին մանր. եւ զՄաթթան զքուրմն
Բահաղու սպանին յանդիման սեզանոյն.
եւ եդ քահանայն ոստիկանս ի տան
19 Տեառն։ Եւ առ զհարիւրապետսն եւ
[2]զքսոփն եւ զռասխա՚ եւ զամենայն
ժողովուրդ երկրին, եւ իջուցին զար-
քայ ի տանէ Տեառն. եւ [17]եմուտ ընդ
ճանապարհն սուրհանդակաց գրան [18]տանն
արքունի, եւ [19]նստոյց զնա՚ յաթոռ
20 թագաւորացն։ Եւ ուրախ եղեւ ամե-
նայն ժողովուրդ երկրին, եւ քաղաքն
դադարեաց. եւ զԳոթողիա սպանին սրով

[1] ԵԲԲ. մեռաւ որդի իւր եւ յարեաւ եւ կորոյս [2] ԵԲԲ. զթիկնապահսն եւ զսուրհանդակս [3] ԵԲԲ. ուխտ եւ ետ նոցա երդնուլ ի տան [4] ՅԵԲԲ. պահել [5] ԵԲԲ. Սուրայ [6] ԵԲԲ. պահեցէք զսահմանս [7] Նշանակ՚ կարգ [8] ԵԲԲ. եղերուք [9] ԵԲԲ. քահանայ [10] ԵԲԲ. զգեղարդունս եւ զվահան

[11] ԵԲԲ. եհան [12] ԵԲԲ. զնեզերն, որ նշանակ՚ թագ [13] ԵԲԲ. ծափս հարին եւ ասեն [14] ԵԲԲ. կայր արքայ [15] ԵԲԲ. իշխանք [16] ԵԲԲ. և եմուտ մտին [17] ԵԲԲ. մտին [18] ԵԲԲ. ի տունն [19] ԵԲԲ. նստաւ

21 ի սան արքայի, Որպէ եւ ինձ տայց Յո-
վան ի մատաւորել իւրում։

ԳԼ. ԺԲ

1 Յաղին եւ ինդրոտպի Ձէուայ մատաւո-
եայ Յովան, եւ քառասուն ամ մա-
տաւորեայ յԵրուսազէմ. եւ անուն մօր
2 նորա Սաբիա ի Բնոսարէէ։ Եւ տուայ
Յովան ուզղովիին տասի Տհաոն գա-
մինայն աւուրս գոյս լուսաւորեայ գինս
3 Յովիպայէ քահանայ. Բայց ի բարձանցին
ոչ մնինեցան, եւ անդ տակաւին զոհէր
ժողովուրդն, եւ արկանէր խոնկս ի
բարձունսն։
4 Եւ ասէ Յովան գքահանայսն, Զամե-
նայն արծամի սրոտ մնանցին մտեալ ի
տուն Տհաոն, արծամի՝ ի լուքանչիւր
սան [1]անցեալ ի համարի ոսկոյ, զամե-
նայն արծամի որ անկանիցի ի սերտ մար-
5 գոյ բերել ի տուն Տհաոն, Ասցեն քա-
հանայքն, այր իւրաքանչիւր [2]ի
վաճառէ իւրմանց. Եւ նոքա կազմնա-
ցեն [3]զբեկել սանն Տհաոն՝ յամինայն
իմիք ուր գտանիցի անդ [3]բեկել։
6 Եւ եղեւ ի քառասներորդի եւ չկրորդի
ամի Յովասայ արքայի՝ ոչ կազմեցին
7 քահանայքն [3]զբեկել սանն Տհաոն։ Եւ
կոչեաց արքայ Յովաս զՅովիպայէ քա-
հանայ եւ զքահանայսն եւ ասէ ցնոսա,
Ընդէ՞ր ոչ կազմեցէք [3]զբեկել սանն
Տհաոն. Եւ արդ մի եւս առնուցուք
արծամի [2]յամինայն վաճառացն՝ ձերոց,
այլ ի [3]բեկել սանն Տհաոն տայիք գայն։
8 Եւ ուխտեցին քահանայքն չառնուլ ար-
ծամի ի ժողովրդենէն, եւ ոչ կարգել
9 [3]զբեկել սանն։ Եւ առ Յովիպայէ քա-
հանայ ատապանակ մի, եւ ծակեաց ծակ
ի բերան նորա, եւ եդ զնա ի կազմանէ
սեղանացն [4]Տհաոն. եւ հաուն՝ քահա-
նայքն որ պահէին զդուռնն՝ զամենայն
10 արծամի [5]գանեալ ի սանն՝ Տհաոն։ Եւ
եղեւ իւրեւ եաես եղէ [6]բազում է ի
ատապանակի անդ, [7]եկ գրագրանն եր-
քումն եւ քահանայն մնծ, [8]եւ սինգեցին՝
11 զարծամին գտեալ ի սան Տհաոն. Եւ
[9]հաուն զարծամին գրագրաւանացն ի
ձեռս գործելոց զգործս կալի սանն
Տհաոն. եւ հաուն չխնաւնս վայելից
12 եւ չչինօղս գործել ի սան Տհաոն, Եւ
[10]չնկարիչս եւ չճարտարս՝ եւ չբերա-
կոս քարանց գնել վայս եւ քարս
տաչելս, կազմել [3]զբեկել սանն Տհաոն,
չամինայն ինչ չար եւանիցէ ի տունն
13 կազմել։ Բայց [11]գի մի լինիցին՝ սանն
Տհաոն [12]զրանք արծամիք, [13]բեւեռք
եւ տաչաք եւ փոզք, ամենայն անօթ
ոսկի եւ անօթ արծամիի չարծամոյ
14 մտելոց ի տուն Տհաոն, Այլ [14]գի գոր-
ծօղսոյ գործոյն [15]տային գայն. եւ [16]կազ-
15 մացին զտունն Տհաոն։ Եւ ոչ [17]ասէին
համար արանցն՝ չորոց ձեռս տային գար-
ծաթին, այլ գործատարաց գործոյն, գի
16 չատատ գործէին։ Եւ արծամի վասն մե-
ղաց եւ վասն յանցանաց ոչ մտանէր ի
տուն Տհաոն, այլ քահանայիցն լինէր։
17 Յայնժամ եկ Ազահէլ արքայ Ասորւոց,
եւ եւս պատերազմ ընդ Գեթայ եւ առ
զնա. եւ եդ Ազահէլ զերեսս իւր եղա-
18 նել ի վերայ Երուսազեմի։ Եւ առ Յո-
վաս արքայ Յուդայ զամենայն զսրբու-
թիւնսն զոր սրբեաց Յովսափատ եւ
Յովրամ եւ Ոզոզիաս հարք նորա թա-
գաւորք Յուդայ, եւ զիւր սրբութիւնսն
եւ զամենայն արծամի գտեալ ի գանձս
սան Տհաոն եւ ի սան թագաւորին,
եւ առաքեաց Ազահէլի արքայի Ասո-
ւոց, եւ դնաց չերուսազեմէ։
19 Եւ մնացորդք բանից Յովասու եւ ա-
մենայն ինչ զոր արար, ո՞չ աւանիկ գրեալ
են ի սիրս բանից աւուրց թագաւորացն
20 Յուդայ։ Եւ յարիան ծառայք նորա եւ
եկին նմա դաւաճանութիւն, եւ հարին
զՅովաս ի տան Մաղնոյ [18]բնակեալ ի
21 Գաղասա՝։ Եւ Յովզաբար որդի Ցե-
մաւաթայ եւ Յեհոզաբ որդի [19]նորա,
պանտանդք՝ ծառայք նորա, հարին զնա
եւ [20]սպանին. եւ թաղեցին զնա ընդ
հարս իւր ի քաղաքի Դաւիթի. եւ թա-
գաւորեաց Ամասիա որդի նորա ընդ նորա։

ԳԼ. ԺԳ

1 Ի քառներորդի եւ երրորդի ամի Յովա-
աս որդւոյ Ոզոզիայ արքայի Յուդայ,
թագաւորեաց Յովաքազ որդի Ցէուայ ի

---

[1] ՆԵԲԲ. անցելոյ, արծաթ [2] ՆԵԲԲ. ի ծանօթից [3] Նշանակի՝ թարմատ [4] ՆԵԲԲ. յայնմ մնանելոյ սրանց ի տունն Տհաոն. և հաուն անդր [5] ՆԵԲԲ. մտեալ ի տունն [6] ՆԵԲԲ. արծամի բազում [7] ՆԵԲԲ. եկան եր [8] ՆԵԲԲ. պնդէին եւ համարէին [9] ՆԵԲԲ. տային

[10] ՆԵԲԲ. ցորմնագիրս [11] ՆԵԲԲ. ոչ արարան [12] ՆԵԲԲ. բաժակք [13] ՆԵԲԲ. բաժանակք [14] ՅԵՐԵՄ. պակաս [15] ՆԵԲԲ. տային [16] ՆԵԲԲ. կազմէին [17] ՆԵԲԲ. առնուին համար չարանցն [18] ՆԵԲԲ. ի գաւ-
ղսրին Սիղղայ [19] ՆԵԲԲ. Սովմերայ, [20] ՆԵԲԲ. ժեռաւ

վերայ Իսրայելի ի Սամարիա ամս եւթն
2 եւ տասն : Եւ արար չար առաջի Տեառն,
եւ գնաց զնա մեղայն Յերոբովամայ
որդւոյ Նաբատայ որ յանցոյցին զԻսրայէլ,
3 եւ ոչ մեկնեցաւ ի նոցանէն : Եւ բար-
կացաւ սրտմտութեամբ Տէր Իսրայելի,
եւ եա զնոսա ի ձեռս Ազայելի արքայի
Ասորւոց, եւ ի ձեռս [1]որդւոյ Ադերայ՝
որդւոյ Ազայելի զամենայն աւուրս :
4 Եւ ազաչեաց Յովաքազ զերեսս Տեառն,
եւ լուաւ նմա Տէր . զի ետես զնեղու-
թիւն Իսրայելի զոր նեղեաց զնա ար-
5 քայն Ասորւոց : Եւ եա Տէր փրկիչ Իս-
րայելի, եւ ելին ի ձեռանէ Ասորւոց, եւ
նստան որդիքն Իսրայելի ի բնակութիւնս
իւրեանց որպէս յերէկն եւ յեռանդն :
6 Սակայն ոչ մեկնեցան ի մեղացն Յերո-
բոամայ որդւոյ Նաբատայ որ յանցոյցին
զԻսրայէլ, այլ ի նոսա գնացին. նա եւ
7 անտառն կայր ի Սամարիա : Եւ ոչ մնաց
Յովաքազայ զօր, այլ հեծելազ միայն
եւ կառք տասն, եւ տասն հազար հետե-
ւակաց. զի կորոյս գնոսա արքայն Ասորւոց
եւ եդ զնոսա իբրեւ զհող ի կոխումն :
8 Եւ մնացորդք բանից Յովաքազու եւ
ամենայն ինչ զոր արար եւ զօրութիւնք
նորա, ո՞չ աւանիկ գրեալ են ի գիրս
բանից աւուրց թագաւորացն Իսրայելի :
9 Եւ ննջեաց Յովաքազ ընդ հարս իւր, եւ
թաղեցին զնա [2]ընդ հարս նորա՝ ի Սա-
մարիա. եւ թագաւորեաց Յովաս որդի
նորա ընդ նորա :
10 Յամի երեսնեւմեկերորդի եւ եւթներորդի
Յովասայ արքայի Յուդայ թագաւո-
րեաց Յովաս որդի Յովաքազու ի վերայ
Իսրայելի ի Սամարիա ամս [3]երկոտասան :
11 Եւ արար չար առաջի Տեառն, եւ ոչ
մեկնեցաւ յամենայն մեղացն Յերոբո-
ամայ որդւոյ Նաբատայ որ յանցոյցին
զԻսրայէլ, այլ ի նոսա գնաց :
12 Եւ մնացորդք բանից Յովասայ եւ ա-
մենայն ինչ զոր արար եւ զօրութիւնք
նորա [4]զոր արար ընդ արքային՝ Յուդայ,
ո՞չ աւանիկ գրեալ են ի գիրս բանից
13 աւուրց թագաւորացն Իսրայելի : Եւ
ննջեաց Յովաս ընդ հարս իւր, եւ Յե-
րոբոամ նստաւ յաթոռ նորա . եւ թա-
գեցաւ Յովաս ի Սամարիա ընդ թա-
գաւորս Իսրայելի :
14 Եւ Եղիսէ հիւանդացաւ հիւանդու-
թիւն, որով եւ մեռաւ իսկ. եւ էջ առ
նա Յովաս արքայ Իսրայելի, եւ լայր
ի վերայ երեսաց նորա եւ ասէ, Հայր,
հայր, կառքդ Իսրայելի եւ հեծեալք նո-
15 ա : Եւ ասէ ցնա Եղիսէ, Ա՛ռ գու [5]զա-
զեղն քո եւ զնետս քո՛. եւ առ զազեղն
16 եւ զնետս : Եւ ասէ ցարքային Իսրայելի,
Մուա ընդ ազեղնդ ձեռօք քովք. եւ ե-
մուա ընդ ազեղնն ձեռօք իւրովք. եւ
եդ Եղիսէ զձեռն իւր ի վերայ ձեռաց
17 արքային, եւ ասէ, Բաց պատուհանդ
որ է ընդ արեւելս. եւ եբաց, եւ ասէ
Եղիսէ, Ձգեա. եւ ձգեաց. եւ ասէ,
Նետ փրկութեան Տեառն, եւ նետ փրկու-
թեան ընդդէմ Ասորւոց. եւ հարցես զԱ-
18 սորիս յԱփեկ մինչեւ ի սպառ : Եւ ասէ
ցնա Եղիսէ, Ա՛ռ զնետս. եւ
առ : Եւ ասէ ցարքային Իսրայելի, Ձգեա
եւ հար զգետինդ. եւ եհար արքայն ե-
19 րիցս եւ եկաց : Եւ [6]արամնացաւ ի վերայ
նորա այրն Աստուծոյ, եւ ասէ, Եթէ
հարեալ էիր հնգիցս կամ վեցիցս, յայն-
ժամ հարկանէիր զԱսորիս մինչեւ ի
սպառ. եւ արդ երիցս հարցես զԱսորիս :
20 Եւ մեռաւ Եղիսէ եւ թաղեցին զնա.
եւ մեկնակազմքն Մոաբացւոյ գային յեր-
21 կիրն ի գալ ամառանն : Եւ եղեւ ի թա-
ղել նոցա զայր մի, եւ ահա տեսին զմեկ-
նակազմն եւ ընկեցին զայրն ի գերեզ-
մանն Եղիսէի. եւ գնաց եւ մերձեցաւ
յոսկերսն Եղիսէի եւ կենդանացաւ, եւ
կանգնեցաւ ի վերայ ոտից իւրոց :
22 Եւ Ազայէլ արքայ Ասորւոց նեղեաց
զԻսրայէլ զամենայն աւուրս Յովաքա-
23 զու : Եւ ողորմեցաւ նոցա Տէր եւ գթա-
ցաւ ի նոսա եւ հայեցաւ ի նոսա վասն
ուխտին իւրոյ որ ընդ Աբրահամու եւ ընդ
Իսահակայ եւ ընդ Յակոբայ. եւ ոչ
կամեցաւ Տէր ապականել զնոսա, եւ
ոչ բնկէց զնոսա յերեսաց [7]իւրոց :
24 Եւ մեռաւ Ազայէլ արքայ Ասորւոց,
եւ թագաւորեաց [8]որդի Ադերայ՝ որդի
25 նորա ընդ նորա : Եւ դարձաւ Յովաս որդի
Յովաքազու, եւ առ զքաղաքսն ի ձեռաց
[1]որդւոյ Ադերայ՝ որդւոյ Ազայելի, զորս
առ ի ձեռաց Յովաքազու հօր նորա ի
պատերազմին. երիցս եհար զնա Յովաս,
եւ դարձոյց զքաղաքսն Իսրայելի :

[1] ԵԲԲ. Բենադադայ [2] ՅԵԲԲ. պա-ռ [3] ԵԲԲ. վեցտասան [4] ԵԲԲ. որով մատեան ընդ Ամա-
զիայ արքայի [5] ԵԲԲ. ազեղն եւ նետս [6] ԵԲԲ. բարկացաւ [7] ԵԲԲ.
իւրոց մինչեւ ցայժմ [8] ԵԲԲ. Բենադադ

ԳԼ. ԺԴ

1 Յաղին երկրորդի Յովասայ որդւոյ Յո-
վաքազու արքայի Իսրայելի, թագա որ-
եաց Ամասիա որդի Յովասու թագաւոր
2 Յուդայ։ Որդի քսան եւ հինգ ամաց
էր ի թագաւորել իւրում, եւ քսան
եւ ինն ամ թագաւորեաց յԵրուսաղէմ,
եւ անուն մօր նորա Յովադին յԵրու-
3 սաղեմէ։ Եւ արար ուղղութիւն առաջի
Տեառն, լայդ ոչ իբրեւ Դաւիթ հայր
իւր. ըստ ամենայնի զոր ինչ արար Յո-
4 վաս հայր իւր՝ արար։ Բայց զբարձունսն
ոչ եհարած, եւ առաքաբն ժողովուրդն
զոհէր եւ արկանէր խունկս ի բարձունսն։
5 Եւ եղեւ իբրեւ հաստատեցաւ թագա-
ւորութիւնն ի ձեռին նորա, եւ եհար
զծառայսն իւր որ հարին զարքայ հայր
6 նորա։ Եւ զորդիս սպանողացն ոչ սպան,
որպէս գրեալ է ի գիրս օրինացն Մովսէ-
սի, զոր օրինակ պատուիրեաց Տէր եւ
ասէ, Մի մեռցին հարք վասն որդւոց,
եւ մի որդիք մեռցին վասն հարց, այլ
իւրաքանչիւր ոք ի մեղս իւրում մեռ-
7 ցի։ Նա եհար զԵդոմ [1]ի Մայիլս սահն
Նաղար, եւ առ զՎէմն պատերազմաւ.
եւ կոչեաց զանուն նորա Յեկթոռէլ մին-
չեւ յայսօր։
8 Յայնմ ժամանակի առաքեաց Ամասիա
հրեչտակս առ Յովաս որդի Յովաքազու
որդւոյ Յէուայ արքայի Իսրայելի՝ եւ ա-
սէ, Եկ յանդիման լինցուք միմեանց ե-
9 րեսօք։ Եւ առաքեաց Յովաս արքայ Իս-
րայելի առ Ամասիա արքայ Յուդայ եւ
ասէ, Ակռան ի Լիբանանէ յղեաց առ ե-
զնատիպսն որ ի Լիբանան՝ եւ ասէ,
Տուր զդուստր քո որդւոյ իմում կնու-
թիան. եւ անցին գազանք անապատի
որ ի Լիբանան եւ կոխեցին զակռանն։
10 Հարկանելով հարեր զԵդոմ, եւ հպար-
ծացայդ զքիզ սիրտ քո. մնծարեաց եւ
նիստ ի տան քում. ընդէր զդրդես զքիզ
չարութիւն քո, եւ անկանիցիս դու եւ
11 Յուդա ընդ քիզ։ Եւ ոչ անսաց Ամա-
սիա. եւ ել Յովաս արքայ Իսրայել
ի, եւ երեւեցան երեսօք, ինքն եւ Ա-
մասիա արքայ Յուդայ, ի Բեթսամիս
12 Հրէաստանի։ Եւ պարտեցաւ Յուդա յե-
րեսաց Իսրայելի եւ փախեաւ այր ի-
13 րաքանչիւր ի բնակութիւն իւր։ Եւ զԱ-
մասիա զարքայ Յուդայ, զորդի Յովա-
աս որդւոյ Ոքոզեայ, կալաւ Յովաս [2]որ-
դի Յովաքազու՝ արքայ Իսրայելի ի Բեթ-
սամիս. եւ եկն յԵրուսաղէմ եւ հատ
զպարիսպն Երուսաղեմի ի դրանէ Եփ-
բեմի մինչեւ ցդուռն Անկեանցն, չորեք-
14 հարիւր կանգուն։ Եւ առ [3]զոսկի եւ
զարծաթի եւ զամենայն անօթս գտեալ ի
տանն Տեառն եւ ի գանձս տան թագա-
ւորին, եւ [4]զորդիս խառնակութեանցն՝
եւ գարձաւ ի Սամարիա։
15 Եւ մնացորդք բանից Յովասու եւ որ
ինչ արար զօրութեամբ իւրով եւ պա-
տերազմն զոր պատերազմեցաւ ընդ Ա-
մասիա արքայի Յուդայ, ոչ աւանիկ
գրեալ են ի գիրս բանից աւուրց թագա-
16 ւորացն Իսրայելի։ Եւ ննջեաց Յո-
վաս ընդ հարս իւր, եւ թաղեցաւ ի
Սամարիա ընդ թագաւորս Իսրայելի. եւ
թագաւորեաց Յերոբոամ որդի նորա
ընդ նորա։
17 Եւ եկեաց Ամասիա որդի Յովասու
արքայ Յուդայ յետ մահուանն Յովասու
որդւոյ Յովաքազու թագաւորի Իսրա-
18 յելի՝ ամս հնգետասան։ Եւ մնացորդք
բանից Ամասեայ [2]եւ ամենայն ինչ զոր
արար՝ ոչ աւանիկ գրեալ են ի գիրս
բանից աւուրց թագաւորացն Յուդայ։
19 Եւ գումարեցան ի վերայ նորա դաւդք
յԵրուսաղէմ, եւ փախեաւ ի Լաքիս. եւ
առաքեցին զկնի նորա ի Լաքիս եւ սպա-
20 նին զնա անդ։ Եւ բարձին զնա ձիով,
եւ թաղեցաւ յԵրուսաղէմ ընդ հարս իւր
21 ի քաղաքի Դաւթի։ Եւ առ ամենայն
ժողովուրդն Յուդայ զԱզարիա, եւ նա
էր ամաց վեցտասանից, եւ թագաւորե-
ցուցին զնա փոխանակ հօր իւրոյ Ամա-
22 սեայ։ Նա շինեաց զԵլաթ, եւ դար-
ձոյց զնա անդրէն ի Յուդա, յետ ննջե-
լոյ արքային ընդ հարս իւր։
23 Յամի հնգետասաներորդի Ամասեայ
որդւոյ Յովասու արքայի Յուդայ, թա-
գաւորեաց Յերոբոամ որդի Յովասու
արքայի Իսրայելի [2]ի վերայ Իսրայելի՝ ի
24 Սամարիա ամս քառասուն եւ մի։ Եւ
արար չար առաջի Տեառն, եւ ոչ մեկ-
նեցաւ յամենայն մեղաց Յերոբոամու
որդւոյ Նաբատայ որ յանցուցին զԻսրա-
25 յէլ։ Նա [5]մերժեաց զսահմանս Իսրայելի
ի մտից Եմաթայ մինչեւ ցծովն [6]Արա-
բայ ըստ բանին Տեառն Աստուծոյ Իս-

[1]ԵՒԲ. ի ձորն Աղտից

[2]ՅԵՒԲ. գ-Լ-ՈՒԹ [3]ՅԵՒԲ. զամենայն ոսկի [4]ՅԵՒԲ. պատանդս [5]ՅԵՒԲ. դարձոյց [6]Ա.ԹԱԳԱՐԱՑ, դաշտին

բայելի զոր խօսեցաւ ի ձեռն Ծառայի
իւրոյ Յովհաննու որպէս Ամաթիայ մար-
26 գարէի ի Դեբդբերայ։ Զի եւս Տէր
զտառապանս Իսրայելի զոյժ գառնու-
թիան, եւ սակաւաւորս եւ նեզեալս եւ
անօսրացեալս եւ լքեալս, եւ ոչ ոք էր
27 որ օգնէր Իսրայելի։ Եւ ոչ խօսեցաւ
Տէր ջնջել [1]զաշակ Իսրայելի ի ներքոյ
երկնից. եւ փրկեաց զնոսա Տէր [2]ի ձե-
ռաց Յերոբոամու որդւոյ Յովասու։
28 Եւ մնացորդք բանից Յերոբոամայ
եւ ամենայն ինչ զոր արար եւ զօրու-
թիւնք նորա զոր պատերազմեցաւ, եւ
որպէս կարգայց զԴամասկոս եւ [3]զեմաթ
անդրէն առ Յուդա յԻսրայելէ՞, ո՞չ ա-
ւանիկ գրեալ են ի վիրս բանից աւուրց
29 թագաւորացն Իսրայելի։ Եւ հնջեաց Յե-
րոբոամ ընդ հարս իւր ընդ թագաւորս
Իսրայելի, եւ թագաւորեաց Զաքարիա
որդի նորա փոխանակ [4]հօր իւրոյ՝։

Գլ. ԺԵ

1 Յամի քառներորդի եւհնևրորդի Յերո-
բոամայ արքայի Իսրայելի, թագաւո-
րեաց Ազարիա որդի Ամասեայ արքայի
2 Յուդայ։ Որդի վեցտասան ամաց էր ի
թագաւորել իւրում, եւ յիսուն եւ եր-
կուս ամս թագաւորեաց յԵրուսաղէմ,
եւ անուն մօր նորա Յեկոլիա յԵրու-
3 սաղեմէ։ Եւ արար [5]բարի առաջի Տեառն
ըստ ամենայնի զոր արար Ամասիա հայր
4 նորա, Բայ ի բարձունսն զոր ոչ եւարձ,
եւ տակաւին ժողովուրդն զոհէր եւ ար-
5 կանէր խունկս ի բարձունսն։ Եւ արկ
Տէր ձեռն ի թագաւորն, եւ էր բորո-
տեալ մինչեւ յօր մահուան իւրոյ. եւ
նստէր ի տան [6]ազատութեան, եւ Յով-
թամ որդի արքայի էր ի վերայ տանն
դատել զժողովուրդ երկրին։
6 Եւ մնացորդք բանից Ազարեայ եւ ա-
մենայն ինչ զոր արար, ո՞չ աւանիկ գրեալ
են ի վիրս բանից աւուրց թագաւորացն
7 Յուդայ։ Եւ հնջեաց Ազարիա ընդ հարս
իւր, եւ թաղեցին զնա առ հարս իւր
ի քաղաքի Դաւթի. եւ թագաւորեաց
Յովթամ որդի նորա ընդ նորա։
8 Յամի երեսներորդի ութներորդի Ազա-
րեայ արքայի Յուդա թագաւորեաց Զա-
քարիա որդի Յերոբոամայ ի վերայ Իս-
9 րայելի ի Սամարիա ամիսս վեց։ Եւ ա-
րար չար առաջի Տեառն որպէս արարին
հարք նորա, եւ ոչ մեկնեցաւ ի մեղացն
Յերոբոամայ որդւոյ Նաբատայ որ յան-
10 ցոյցն զԻսրայէլ։ Եւ [7]դաւաճեցան ի վերայ
նորա Սելղում որդի Յաբիսայ եւ [8]կեր-
դասաւ, եւ հարին զնա յանդիման ժո-
ղովրդեանն եւ սպանին՝ զնա, եւ թա-
գաւորեաց Սելղում ընդ նորա։
11 Եւ մնացորդք բանից Զաքարեայ ա-
հա գրեալ են ի վիրս բանից աւուրց
12 թագաւորացն Իսրայելի։ Այս է բան
Տեառն զոր խօսեցաւ առ Յէու եւ ա-
սէ, Որդիք չորրորդք նստցին քեզ յա-
թոռն Իսրայելի. եւ եղեւ այնպէս։
13 Եւ Սելղում որդի Յաբիսայ թագաւո-
րեաց յամին երեսներորդի [9]Ս-
զարեայ արքայի Յուդայ. եւ թագաւո-
րեաց Սելղում ամսօրեայ մի աւուրց ի
14 Սամարիա։ Եւ ել Մանայեմ որդի Գադ-
դեայ ի Թերսայ, եւ եմոա ի Սամարիա
եւ եհար զՍելղում զորդի Յաբիսայ ի
Սամարիա, եւ սպան զնա եւ թագա-
ւորեաց ընդ նորա։
15 Եւ մնացորդք բանից Սելղումայ եւ
դաւաճութիւնք նորա զոր դաւաճեցաւ՝
ահաւասիկ գրեալ են ի վիրս բանից ա-
16 ւուրց թագաւորացն Իսրայելի։ Յայնմ
ժամանակի եհար Մանայեմ զԹափսա եւ
զամենայն ինչ որ ի նմա, եւ զահմանս
նորա ի Թերսայէ. քանզի ոչ բացին նմա,
եւ եհար զնա եւ զկնոջ նորա պատառեաց։
17 Յամի երեսներորդի իններորդի Ազա-
րեայ արքայի Յուդայ թագաւորեաց Մա-
նայեմ որդի Գադդեայ ի վերայ Իսրայե-
18 լի ի Սամարիա ամս տասն։ Եւ արար
չար առաջի Տեառն, եւ ոչ մեկնեցաւ
յամենայն մեղացն Յերոբոամայ որդւոյ
Նաբատայ որ յանցոյցն զԻսրայէլ [10]մե-
ղօք լցոյքն՝։
19 Եւ ել Փուա արքայ Ասորեստանեայց
ի վերայ երկրին. եւ Մանայեմ ետ Փուայ
հազար տալանդ արծաթոյ՝ լինել ձեռին
նորա ընդ նմա, հաստատել զթագաւո-
20 րութիւնն [11]ի ձեռն նորա՝։ Եւ արկ Մա-
նայեմ զարծաթն ի վերայ Իսրայելի, ի
վերայ ամենայն զօրաւորի զօրութեամբ՝
առ արքային Ասորեստանեայց յիսուն
սիկղ արծաթոյ առ այր մի, եւ դարձաւ

[1] ԵԲԲ. զանուն [2] ԵԲԲ. ի ձեռն [3] ԵԲԲ. զԵմաթի Յուդայ՝ անդրէն Իսրայէլ [4] ԵԲԲ. Նորա [5] ԵԲԲ. ուղղութիւն [6] Նշանակի առանձինն [7] ԵԲԲ. գաւաճեցաւ [8] ԵԲԲ. եհար զնա յանդիման ժողովրդեանն եւ սպան [9] ԵԲԲ. Ոզիայ [10] ԵԲԲ. զամենայն աւուրս իւր [11] ԵԲԲ. ի ձեռն նորա

արքայն Ասորեստանեայց , եւ ոչ ևկաց յերկիրն ։
21 Եւ ևնայորդք բանիւ Մանայեմայ եւ ամենայն ինչ զոր արար՝ ոչ աւանիկ գրեալ են ի պիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի ։
22 գաւառացն Իսրայէլի ։ Եւ նստեալ Մանայեմ ընդ հարս իւր , եւ թագաւորեալ փակէիա որդի նորա ընդ նորա ։
23 Յամի քսաներորդի Ազարեայ արքայի Յուդայ թագաւորեաց [1]Փակէիա ի վերայ Իսրայէլի ի Սամարիա ամս [2]տասն ։
24 Եւ արար չար առաջի Տեառն , եւ ոչ մեկնեցաւ ի մեղացն Երոբովամայ որդւոյ Նաբատայ որ յանցուցին զԻսրայէլ ։
25 Եւ գումարեցաւ ի վերայ նորա Փակէհ որդի Ռոմմելեայ սպառազէն իւր , եւ եհար զնա ի Սամարիա [3]առաջի տանն արքայի . եւ ընդ նմա Արգոբ , եւ ընդ նմա գիսաւն այր ՚ի չորեքհարիւրոցն . եւ սպան զնա եւ թագաւորեաց ընդ նորա ։
26 Եւ ևնայորդք բանիցն Փակէհ եւ ամենայն ինչ զոր արար՝ ահա գրեալ են ի պիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի ։
27 Յամի յիսներորդի եւ երկրորդի Ազարեայ արքայի Յուդայ թագաւորեաց Փակէհ որդի Ռոմմելեայ ի վերայ Իսրայէլ-
28 լի ի Սամարիա ամս քսան ։ Եւ արար չար առաջի Տեառն , եւ ոչ մեկնեցաւ [5]յամենայն մեղացն՚՚ Երոբովամայ որդւոյ Նաբատայ որ յանցուցին զԻսրայէլ ։
29 Յաւուրս Փակէհ արքայի Իսրայէլի եկն Թագղաթփաղասար արքայ Ասորեստանեայց , եւ առ զԱյիոն եւ [6]զԿաբեհզ , զԻենմաաքա եւ զՅանովէ եւ զԿեհզ՚՚ եւ զԱսովր եւ զԻազոդ եւ զԳաղիլեա , զամենայն երկիրն Նեփթազիմայ , եւ խա-
30 զացոյց զնոսա յԱսորեստանեայս ։ Եւ գումարեցաւ զոնդ Ովսէհ որդի Եղայ ի վերայ Փակէհի որդւոյ Ռոմմելեայ , եւ եհար զնա եւ սպան զնա , եւ թագաւորեաց ընդ նորա յամի քսաներորդի Յովաթամայ որդւոյ Ոզիայ ։
31 Եւ ևնայորդք բանից Փակէհ եւ ամենայն ինչ զոր արար՝ ահաւանիկ գրեալ են ի պիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի ։
32 Յամի երկրորդի Փակէհ որդւոյ Ռոմմելեայ թագաւորի Իսրայէլի թագաւորեաց Յովաթամ որդի Ոզիայ արքայի
33 Յուդայ ։ Որդի քսան եւ հինգ ամաց էր ի թագաւորել իւրում , եւ վեցտասն ամ թագաւորեաց յԵրուսաղէմ , եւ անուն մօր նորա Երուսա զուստր Սա-
34 դովկայ ։ Եւ արար ուղղութիւն առաջի Տեառն ըստ ամենայնի զոր արար Ոզիա
35 հայր նորա , բայց ի բարձունսն զոր ոչ եբարձ , եւ ասեալ են ժողովուրդն զոհէր եւ արկանէր խունկս ի բարձունսն . նա չվինաց զդուռն տանն Տեառն զվերին ։
36 Եւ ևնայորդք բանից Յովաթամայ եւ ամենայն ինչ զոր արար՝ ոչ աւանիկ գրեալ են ի պիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ ։
37 Յաւուրսն յայնոսիկ սկսաւ Տէր առաքել ի Յուդա զՌասան արքայ Ասորւոց , 38 եւ զՓակէհ որդի Ռոմմելեայ ։ Եւ ննջեաց Յովաթամ ընդ հարս իւր , եւ թաղեցաւ առ հարս իւր ի քաղաքին Դաւթի հօր իւրոյ . եւ թագաւորեաց Աքազ որդի նորա ընդ նորա ։

ԳԼ. ԺԶ

1 Յամի եւմնուտասաներորդի Փակէհ որդւոյ Ռոմմելեայ թագաւորեաց Աքազ որդի
2 Յովաթամայ արքայի Յուդայ ։ Որդի աւթամայ քսանից էր Աքազ ի թագաւորել իւրում , եւ վեցտասն ամ թագաւորեաց յԵրուսաղէմ . եւ ոչ արար ուղղութիւն առաջի Տեառն [7]Աստուծոյ հա-
տատարմութեամբ՚՚ իւրում զԴաւիթ պնայր
3 իւր . Եւ գնաց [8]զճանապարհ Երոբովամայ որդւոյ Նաբատայ արքայի՚՚ Իսրայէլի , նա եւ զորդի իւր անցոյց ընդ հուր ըստ պարչութեանց ազգացն զորս երարձ
4 Տէր յերեսաց որդւոցն Իսրայէլի ։ Եւ զոհէր եւ արկանէր խունկս ի բարձունս , եւ ի վերայ բլրոյ եւ ի ներքոյ անտառախիտ ծառոյ ։
5 Յայնժամ ել Ռասան արքայ Ասորւոց եւ Փակէհ որդի Ռոմմելեայ արքայ Իսրայէլի յԵրուսաղէմ ի պատերազմ , եւ պաչարէին զնա ի վերայ Աքազու . եւ ոչ
6 կարէին պատերազմիլ ։ Ի ժամանակին յայնմիկ դարձոյց Ռասան արքայ Ասորւոց զԵլաթ յԱսորիս , եւ հնան զՀրեայսն յԵլաթայ , եւ եկին [9]Եդոմացիքն յԵ-

[1] ՆԲԳ. Փակէհա որդի Մանայեմայ [2] ՆԲԳ. եր. կուս [3] ՆԲԳ. յապարանս [4] ՆԲԳ. յորդւոց Փաղատացւոց [5] ՆԲԳ. ի մեղացն [6] ՆԲԳ. զԱբեհբեթմաաքա եւ զՅանովէն եւ զԿադես

[7] ՆԲԳ. Աստուծոյ իւրոյ [8] ՆԲԳ. զճանապարհ թագաւորացն [9] Կամ, Ասորիք

լաթ եւ բնակեցին անդ մինչեւ ցայսօր։ 7 Եւ առաքեաց Աքազ հրեչտակս առ Թագլաթփաղասար արքայ Ասորեստանեայց եւ ասէ, Ծառայ քո եւ որդի քո եմ ես, ել եւ փրկեա զիս ի ձեռաց արքային Ասորւոց եւ ի ձեռաց արքային Իսրայելի՝ յարուցելոց ի վերայ իմ։ 8 Եւ առ Աքազ զարծաթ եւ զոսկի զգաստալ ի տան Տեառն եւ ի գանձս տանն թագաւորին, եւ առաքեաց արքային Ասորեստանեայց պատարագս։ 9 Եւ լուաւ նմա արքայն Ասորեստանեայց, եւ ել արքայն Ասորեստանեայց ի Դամասկոս եւ առ զնա, եւ վարեալ զնա ի գերութիւն ի Կիւրէն, եւ զԻսաան սպան։ 10 Եւ չգաւ արքայ Աքազ ընդ առաջ Թագլաթփաղասարայ արքային Ասորեստանեայց ի Դամասկոս, եւ եաես զսեղանն որ ի Դամասկոս, եւ առաքեաց արքայ Աքազ առ Ուրիա քահանայ զնմանութիւն սեղանոյն եւ զձեւ նորա՝ ըստ ամենայն գործուածոյն նորա։ 11 Եւ չինեաց Ուրիա քահանայ զսեղանն ըստ ամենայնի որպէս առաքեաց արքայ Աքազ ի Դամասկոսէ, նորոգէս արար Ուրիա քահանայ մինչեւ ի գալ արքային Աքազու ի Դամասկոսէ։ 12 [1]Եւ սեղանն՝, եւ մատեաւ արքայ 13 ի սեղանն եւ [2]ել ի վեր՝։ Եւ ձկնեղերայ զողջակէզսն իւր եւ զպտղոն, եւ նուիրեաց զնուէրս իւր, եւ եհել զարիւն խաղաղականաց [3]իւրոց։ 14 Եւ զսեղանն պղնձի որ կայր առաջի Տեառն՝ փոխեաց յերեսաց [4]տանն Տեառն ի սեւելոյէ իւրմէ՝, եւ եդ զնա ի կողմանէ սեղանոյն ընդ հիւսիսի։ 15 Եւ պատուէր ետ արքայ Աքազ Ուրիայ քահանայի եւ ասէ, Ի վերայ մեծի սեղանոյդ մատուցանիցես զողջակէզս առաւօտուն եւ զպտղոն երեկոյին եւ զողջակէզս արքային եւ զպտղոն նորա, եւ զողջակէզս ժողովրդեան երկրի եւ զպտղոն նոցա եւ զնուէրս նոցա, եւ զամենայն արիւն ողջակիզացն եւ զամենայն արիւն զոհից ի վերայ նորա հեղուցուս. բայց սեղանն պղնձի եղիցի 16 [5]ինձ։ Եւ արար Ուրիա քահանայ ըստ ամենայնի որպէս պատուիրեաց նմա արքայ Աքազ։ Եւ կատարեալ արքայ Աքազ զոլխան մնքենովքիացն, եւ [6]վոխեաց ի նոցանէն զաւազանն, եւ զծովն իջոյց ի ցուցն պղնձեայ [7]երկոտասանեցունց որ ի ներքոյ նորա, եւ 18 եդ զնա ի վերայ քարակէն խարսխի։ Եւ [8]զհին ախոռսն՝ չինեաց ի տան Տեառն, եւ զմուտս թագաւորին զարտաքին գարձոյց ի տուն Տեառն յերեսաց արքային Ասորեստանեայց։

19 Եւ մնացորդք բանից Աքազու զոր արար՝ ո՞չ ասանիկ գրեալ են ի գիրս բանից 20 նից աւուրց թագաւորացն Յուդայ։ Եւ ննջեաց Աքազ ընդ հարս իւր, եւ թաղեցաւ ընդ հարս իւր ի քաղաքին Դաւիթ. եւ թագաւորեաց Եզեկիա որդի նորա ընդ նորա։

ԳԼ. ԺԷ

1 Յամի երկոտասաներորդի Աքազու արքայի Յուդայ, թագաւորեաց Ովսէէ որդի Եղայ ի վերայ Իսրայելի ի Սամարիա 2 ամս ինն։ Եւ արար չար առաջի Տեառն, բայց ոչ իբրեւ զթագաւորսն Իսրայելի 3 որ էին յառաջ քան զնա։ Ի վերայ նորա ել Սաղմանասար արքայ Ասորեստանեայց, եւ եղեւ նորա Ովսէէ ծառայ, 4 եւ տայր տանել նմա [9]մանեայս։ Եւ եգիտ արքայ Ասորեստանեայց յՈվսէէ վնաս։ զի առաքեաց հրեչտակս առ Սուա արքայ Եգիպտացւոց, եւ ոչ եաս [9]մանեայս արքային Ասորեստանեայց [10]ի տարեւոջն յայնմիկ՝. եւ պաշարեաց զնա արքայն Ասորեստանեայց. եւ կապեաց 5 զնա ի տան բանտի։ Եւ ել արքայն Ասորեստանեայց յամենայն երկիրն, ել եւ ի Սամարիա եւ պաշարեաց զնա ամս երիս։ 6 Յամին իններորդի Ովսէէ առ արքայ Ասորեստանեայց զՍամարիա, եւ խաղացոյց զԻսրայէլ յԱսորեստանեայս, եւ բնակեցոյց զնոսա յԱղաղ եւ յԱբովր՝ գետաւն Գովզանայ եւ [11]զլերամբքն Մարայ։ Եւ եղեւ իբրեւ մեղան որդիքն Իսրայելի Տեառն Աստուծոյ իւրեանց որ եհան զնոսա յերկրէն Եգիպտացւոց՝ ի ձեռաց Փարաւոնի արքային Եգիպտացւոց, եւ երկեան յաստուածոց օտարաց, 8 Եւ գնացին ըստ կրօնից ազգացն զորս երաշխ Տէր յերեսաց որդւոց [12]Իսրայելի, 9 Եւ թագաւորքն Իսրայելի որչափ ինչ

[1] ՅԵԲԸ. Եւ եկն արքայ ի Դամասկոսէ եւ եաես զբաքայ զսեզանն [2] ՀԱՄ, եհան ի վերայ նորա ողջակէզս [3] ՅԵԲԸ. իւրոց ի վերայ սեզանոյն [4] ՅԵԲԸ. տանն՝ ի միջոյ սեզանոյն եւ ի միջոյ տանն Տեառն [5] ՀԱՄ, ի հմայս

[6] ՅԵԲԸ. եբարձ [7] ՅԵԲԸ. պ-ի-ե [8] ՅԵԲԸ. զբահ շարաթուան զոր [9] ՅԵԲԸ. մինհա, այսինքն՝ ընծայ, կամ, հարկ [10] ՅԵԲԸ. որպէս ամ ըստ ամէ [11] ՅԵԲԸ. ի քաղաքս [12] ՅԵԲԸ. Իսրայելի, եւ ըստ սրոց արարին թագաւորքն Իսրայելի։ (9) Եւ

արարին եւ որչափ ինչ" պաճուճեցին
որովքն Իսրայէլի բան, [1]ոչ այնպէս ինչ
զՏեառնէ" Աստուծոյ իւրեանց. եւ չինե-
ցին իւրեանց բարձունս յամենայն քա-
ղաքս իւրեանց, յաչս արակէ պանապա-
10 նացն մինչեւ ի քաղաքն սմաբ: Եւ
կանգնեցին իւրեանց արձանս եւ ան-
տառս յամենայն լերս բարձունս, եւ
ի ներքոյ ամենայն անտառախիտ ծա-
11 ռոյ. եւ արկանէին խունկս յամենայն
բարձունս, իբրեւ զամենայն ազգսն զորս
մերժեաց Տէր յերեսաց [2]նոցա. արարին
զոլօգս եւ բնակիչսկեցին" առ ի բար-
12 կացուցանելոյ զՏէր. Եւ պաչտեցին
զկուռս, [3]որովք ասաց նոցա Տէր թէ
Մի առնիցէք զբանդ զայդ [4]Տեառն:
13 Եւ եղ վկայութիւն Տէր ընդ Իսրա-
յէլի եւ ընդ Յուդայ ի ձեռն ամենայն
մարգարէից իւրոց, ամենայն տեսանո-
ղաց, եւ ասէ, Դարձարուք ի ճանապար-
հայ ձերոց չարաց, եւ պահեցէք զպա-
տուիրանս իմ եւ զիրաւունս իմ [5]եւ զամե-
նայն օրէնս" զոր պատուիրեցի հարց ձերոց,
զորս առաքեցի առ ձեզ ի ձեռն ծառայից
14 իմոց մարգարէից: Եւ ոչ լուան նոքա, եւ
խստացուցին զորն իւրեանց [6]քան զորն
հարց իւրեանց, որ ոչ հաւատացին ի Տէր
15 Աստուած իւրեանց. Եւ ընկեցին ի բաց
զհաստատութիւնս [7]իւրեանց, եւ զպա-
չինան զոր կռեաց ընդ հարս նոցա, եւ
զվկայութիւնս նոցա զոր ուխտեաց նո-
ցա ոչ պահեցին. եւ գնացին զնեա սնոտ-
եաց, եւ սնոտեցան զնեա ազգացն որ
չուրջ զնոքօք, յորոց պատուիրեաց նոցա
16 Տէր չառնել ըստ նմին օրինակի: Թողին
զամենայն պատուիրանս Տեառն Աստուա-
ծոյ իւրեանց, եւ արարին իւրեանց ձու-
լածոյս, երկուս երինջս, [8]եւ երկիր պա-
տին" զօրութեան երկնից, եւ պաչտեցին
17 զԲահազ, Եւ անցուցին զորս առեալս եւ
զդստերս իւրեանց ընդ հուր, եւ զիւթե-
ցին զիւթութիւնս եւ նմայեցին նմայս,
եւ նամարձակեցան առնել չար առաջի
18 Տեառն առ ի բարկացուցանելոյ զնա: Եւ
բարկացաւ Տէր յոյժ Իսրայէլի, եւ մեր-
ժեաց զնոսա յերեսաց իւրոց, եւ ոչ մնաց՝
բայց միայն ցեղն Յուդայ:

19 Սակայն եւ Յուդա ոչ պահեցին զպա-
տուիրանս Տեառն Աստուծոյ իւրեանց,
եւ գնացին ըստ կրօնից Իսրայէլի զոր
20 արարին: Եւ [9]մերժեցին զՏէր յամենայն
զա՛ս ազգէն" Իսրայէլի. եւ չարժեաց գնո-
սա եւ եաւ գնոսա ի ձեռս աւարառուաց
իւրեանց, մինչեւ բնկէց գնոսա յերեսաց
21 իւրոց: [10]Սակայն Իսրայէլ առ առաջն իակ
Դաւթի" թագաւորեցուցին զՅերոբաամ
որդի Նաբատայ. եւ մերժեաց Յերոբո-
ամ զԻսրայէլ ի գնացից Տեառն, եւ
22 մեղոյց գնոսա մեծ մեծամեծս: Եւ ա-
րարին որդիքն Իսրայէլի ըստ ամենայն
մեղաց Յերոբաամայ զոր արար, եւ ոչ
23 մերժեցան ի նոցանէն, Մինչեւ փոխեաց
Տէր զԻսրայէլ յերեսաց իւրոց, որպէս
եւ խոստացաւ Տէր ի ձեռն ամենայն ծա-
ռայից իւրոց մարգարէից. եւ վարեցաւ
Իսրայէլ յերկրէ իւրմէ յԱսորեստանեայս
24 մինչեւ յայսօր: Եւ ած արքայն Ասորես-
տանեայց ի Բաբելոնէ եւ ի Բութայ եւ
յԱյայ եւ յԵմաթայ եւ ի Սեփարուի-
մայ, [11]եւ բնակեցան ի քաղաքս Սամա-
րիայ փոխանակ որդւոցն Իսրայելի, եւ
ժառանգեցին զՍամարիա, եւ բնակեցին
25 ի քաղաքս նորա: Եւ եղեւ ի սկզբան
բնակութեան նոցա անդ ոչ երկնան ի
Տեառնէ. եւ առաքեաց Տէր [12]առեւծս եւ
26 կոտորէին զնոսա: Եւ խօսեցան ընդ ար-
քային Ասորեստանեայց եւ ասեն, Ազգն
զոր փոխեցեր եւ նստուցեր [4]փոխանակաւ
ի քաղաքս Սամարիայ՝ ոչ գիտեն զկրօնս
Աստուծոյ երկրին, եւ առաքեաց [4]Տէր
ի նոսա առեւծս, եւ ահա կոտորեն զնո-
սա. քանզի ոչ գիտեն զկրօնս Աստու-
27 ծոյ երկրին: Եւ հրամայեաց եաւ արքայն
Ասորեստանեայց եւ ասէ, Տարայք անդր
զմի ոք ի քահանայիցն զերեցեց անտի
զի երթեալ բնակեսցէ անդ, եւ ցուցցէ
զկրօնս [4]Տեառն, եւ լուսաւորեսցէ գնո-
28 սա իրաւամբք" Աստուծոյ երկրին: Եւ
տարան զմի ի քահանայիցն զոր գերեցին
ի Սամարիայ. եւ նստաւ ի Բեթէլ, եւ
լուսաւորէր գնոսա, [13]զի երկնչիցին ի
29 Տեառնէ: Եւ արարին ազգ ազգ աս-
տուածս իւրեանց, եւ եդին ի տունս
բարձանցն զոր արարին Սամարացիքն.
ի բաքանչիր ազգքն ի քաղաքս իւր-

[1] ՆԵԲ. որ ոչ էր ուղիղ առաջի Տեառն [2] ՆԵԲ. նոցա, եւ արարին բանս չարս [3] ՆԵԲ. որոց վասն [4] ՅՈՒՆ. ՕՏ. [5] ՆԵԲ. ըստ ամենայն օրինաց [6] ՆԵԲ. իբրեւ [7] ՆԵԲ. նորա [8] ՆԵԲ. եւ արարին Աչերա, (ՆԼՔ ԼՊ. 13). եւ երկիր պա-
գին ամենայն

[9] ՆԵԲ. մերժեաց Տէր զամենայն զաւակ [10] ՆԵԲ. Չի պատառեցաւ Իսրայէլ ի տանէն Դաւթի, եւ [11] ՆԵԲ. բնակեցուցեալ [12] ՆԵԲ. ի նոսա առեւծս [13] ՆԵԲ. Թէ զնարդ

30 եանց յորս ինքեանք բնակէին։ Եւ արք Բաբելոնի սարսին զՍոքքոթ Բանովթ, եւ արք Քութայ սարսին զՆեգեղ, եւ արք Եմաթայ սարսին զԱսի-
31 մաթ, Եւ Այեացիք սարսին [1]զԱբղազեր եւ՝ զՆիբհաս եւ զԹարթակ եւ [2]զՍեփարուիմ, ուր՝ այրէին զորդիս իւրեանց ի հուր Ադրամելեքայ եւ Ամմելեքայ
32 աստուածոց Սեփարուիմայ. [1]Եւ երկնչէին ի Տէառնէ, եւ յանկնցուցին զզարչեիսն իւրեանց ի տունս բարձանցն զոր արարին ի Սամարիա իւրաքանչիւր ազգայ յորում բնակէին՝" Եւ երկնչէին ի
33 Տէառնէ, եւ արարին իւրեանց քուրմս [3]բարձանց։ Եւ երկնչէին ի Տէառնէ, եւ պաշտէին զաստուածս իւրեանց, բաց կրօնից ազգացն՝ զորս Աստուած մերժեաց անտի։
34 Եւ մինչեւ յայսօր առնէին նոքա բաց [4]կրօնից նոցա, եւ երկնչէին ի Տէառնէ. եւ՝ առնէին բաց կրօնից [5]նոցա եւ բաց իրաւանց [6]նոցա եւ՝ բաց օրինաց եւ բաց պատուիրանին զոր պատուիրեաց Տէր որդւոցն Յակոբայ, որում
35 եդ անուն Իսրայէլ։ Եւ ուխտեաց Տէր ուխտ եւ պատուիրեաց նոցա եւ ասէ, Մի երկնչիլիք յաստուածոց օտարաց, եւ մի երկիր պագանիցէք նոցա, եւ մի պաշտիցէք զնոսա, եւ մի զոհիցէք նո-
36 ցա. Այլ Տէառն [1]Աստուածդ որ հանի զձեզ յերկրէն Եգիպտացւոց մեծաւ զօրութեամբ եւ բազկաւ բարձր բազկաւ, ի նմանէ երկնչիցիք, եւ նմա երկիր պագանիցէք եւ
37 նմա զոհիցէք. Եւ իրաւանց եւ պատուիրանացն եւ օրինաց եւ պատուիրանացն զորս գրեաց ձեզ՝ զգուշանայցէք առնել. եւ մի երկնչիցիք յաստուածոց օտա-
38 րաց. Եւ զուխտն զոր ուխտեաց ընդ ձեզ՝ մի գիտիցէք. եւ մի երկնչիցիք յաս-
39 տուածոց օտարաց. Այլ ի Տէառնէ Աստուածդ ձերմէ երկնչիցիք, եւ նա փրկեսցէ զձեզ յամենայն թշնամեաց ձերոց։
40 Եւ [7]մի ականկոիր լինիցիք կրօնից նոցա
41 զոր նոքա առնիցեն"։ Եւ երկնչէին ազգքն այնոքիկ ի Տէառնէ, եւ զրօչիկս իւրեանց ծառայէին. եւ որպիսի նոցա եւ որդիք որդւոց նոցա որպէս արարին հարք իւրեանց, առնեն մինչեւ ցայսօր։

ԳԼ. ԺԸ

1 Եւ եղեւ յամին երրորդի Ովսէի որդւոյ Եղայ արքայի Իսրայէլի թագաւորեաց Եզեկիա որդի Աքազու արքայի
2 Յուդայ։ Որդի քսան եւ հինգ ամաց էր ի թագաւորել իւրում, եւ քսան եւ ինն ամ թագաւորեաց յԵրուսաղէմ. եւ անուն մօր նորա [8]Աբի՝ դուստր Զա-
3 քարեայ։ Եւ արար ուղղութիւն առաջի Տէառն բաց ամենայնի զոր արար Դաւիթ հայր նորա։ Նա ելարձ զբարձունսն եւ խորտակեաց [9]զանկնայն արձանսն" եւ կոտորեաց զանտառսն, եւ զօձն պղնձի զոր արար Մովսէս, զի մինչեւ
4 ցայն աւուրս [10]զոհէին նմա որդիքն Իսրայէլի, եւ [11]կոչեցին զնա Նեհեմթան։
5 Ի Տէր Աստուած Իսրայէլի յուսացաւ. եւ յետ նորա նման նմա ոչ եղեւ յամենայն թագաւորս Յուդայ եւ յեղելեանց
6 յառաջագոյն քան զնա։ Յարեցաւ ի Տէր եւ ոչ մեկնեցաւ ի զնացից նորա, եւ պահեաց զպատուիրանս նորա զոր պա-
7 տուիրեաց [12]Մովսէս։ Եւ էր Տէր ընդ նմա, յամենայնի զոր ինչ եւ առնէր՝ խելամտանայր, եւ նչհամեաց զարքային
8 Ասորեաստանի եւ ոչ ծառայեաց նմա։ Նա եհար [13]զպղշտիմն մինչեւ ցԳազա եւ մինչեւ զսահմանս նորա, յաշտարակէ պահապանացն մինչեւ ցքաղաքն ամուր։
9 Եւ եղեւ յամին չորրորդի Եզեկեայ արքայի, այն է ամ եւթներորդ Ովսեայ որդւոյ Եղայ արքայի Իսրայէլի, էլ Սազմանասար արքայ Ասորեաստանեայց ի վե-
10 րայ Սամարիայ, եւ պաշարեալ զնա. Եւ առ զնա ի կատարել ամաց երից, յամի վեցերորդի Եզեկեայ, այն ամ իններորդ էր Ովսեայ արքայի Իսրայէլի, առաւ
11 Սամարիա։ Եւ խաղացոյց արքայն Ասորեաստանեայց [14]զՍամարիա յԱսորեաստանեայս, եւ նստոյց զնոսա յԱղաւէ եւ յԱբովր՝ առ գետովն Գոզանայ եւ [15]լե-
12 րամբքն Մարաց. Զի ոչ լսեան ձայնի Տէառն Աստուծոյ իւրեանց, եւ անցին զուխտիւ նորա ըստ ամենայնի զոր պա-

---

[1] 3Եբր. գոյ-ե [2] Եբր. Սեփարուիմացիք [3] Եբր. բարձանց, եւ զոհէին վասն նոցա ի տունս բարձանցն [4] Եբր. առաջին կրօնից. ոչ երկնչէին ի Տէառնէ, եւ ոչ [5] Եբր. իւրեանց [6] Եբր. իւրեանց, եւ ոչ [7] Եբր. ոչ լսեան, այլ ըստ առաջին սովորութեան իւրեանց առնէին

[8] Եբր. Աբիա [9] Եբր. զարձանան [10] Եբր. խունկս արկանէին [11] Եբր. կոչեաց [12] Եբր. Տէր Մովսիսի [13] Եբր. զՓղշտացիան, որպես և բազմ-օրեայ [14] Եբր. զԻսրայէլ [15] Եբր. ի քաղաքս

տուբրեաց Նոգա Մոաբէս ծառայ Տեառն. ոչ լուան եւ ոչ արարին։
13 Եւ յամին չորեքտասաներորդի արքայի Եզեկեայ, կռ Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց ի վերայ ամուր ամուր
14 քաղաքացն Յուդայ, եւ առ գնաց։ Եւ առաքեալ Եզեկիա արքայ Յուդայ հրեշտակս առ արքայ Ասորեստանեայց ի Լաքիս եւ ասէ, Մեղայ, դարձիր յինէն, եւ զոր ինչ դիցես ի վերայ իմ՝ բարձից. եւ եդ արքայն Ասորեստանեայց
15 ի վերայ Եզեկեայ արքայի Յուդայ երկքսահարեաւ տուգանիդ արծաթով եւ երեսուն
16 տաղանդ ոսկւոյ։ Եւ ետ Եզեկիա զամենայն արծաթ գտեալ ի տան Տեառն եւ ի գանձս տան թագաւորին։ Ի ժամանակի յայնմիկ կտուրեաց Եզեկիա
17 զդրունս տաճարին Տեառն, եւ զսեամն զոր սպատեաց ոսկւով Եզեկիա արքայ Յուդայ, եւ ետ զայն արքային Ասորեստանեայց։
18 Եւ առաքեաց արքայ Ասորեստանեայց զԹարթան եւ զՌաբսարիս եւ զՌաբսակ ի Լաքիսայ առ արքայ Եզեկիա զօրս ծանուս ի վերայ Երուսաղեմ. եւ եկին եւ եկին յԵրուսաղէմ, եւ կացին ի վերայ ջրմղին վերնոյ աւազանին, որ է ի ճանապարհի ագարակին Թափչէ.
19 եւ ագաղակեցին առ Եզեկիա. եւ եկին առ նոսա Եղիակիմ որդի Քեղկեայ հազարապետ, եւ Սոմնեաս զպրապետ, եւ Յովաք որդի Ասափայ որ ի վերայ յիշատակաց։
20 Եւ ասէ ցնոսա Ռաբսակ, Ասացէք ցԵզեկիա, այսպէս ասէ արքայ մեծ, արքայն Ասորեստանեայց. Զինչ լոյծ յայսմ
21 չորս զոս յուսացեալ լիցես. [1]Բայց եթէ ասիցես՝ Թէ Բանք չրթանց, եւ խորհուրդ եւ զօրութիւն պիտոյ իցէ ի պատերազմ". եւ արդ յո՞ յուսացեալ նչկա-
22 հնցեր դիս։ Ահա յուսացեալ իցես ի ցոպն եղեգնեայ չազխահեայ՝ յԵղիպտոս, յոր թէ յենուցու այր՝ մասնիցէ զնովն ձեռն նորա, եւ խոցիցէ զնա. այնպէս Փարաւեն արքայ Եգիպտացւոց ամենայն
23 յուսացելոց իւրոց։ Եւ զի ասացեր ցիս՝ Թէ ի Տէր Աստուած[2] յուսացեալ եմք, ո՞չ զա այն է՝ զորոյ մերժեաց Եզեկիա զբարձունս նորա եւ զսեղանս նորա, եւ ասէ ցՅուդա եւ ցԵրուսաղէմ, Առաջի սեղանոյս այսորիկ երկիր պագէք
24 յԵրուսաղէմ։ Եւ արդ ապէ խառնեցարուք ի տէր իմ արքայ Ասորեստանեայց, եւ տաց քեզ երկուս հազարս երիվարաց, եթէ կարասցես տալ զոս քեզ հեծեալս
25 ի վերայ նոցա։ Եւ զիա՞րդ կարիցես զդէմ առնել միոյ ուրուք կուսակալի ի ծառայից տեառն իմոյ ի նուազոց, զի յուսացեալ ես յԵգիպտոս ի կառս եւ յերիվարս։ Իսկ արդ առանց Տեառն ինչ ելանիցեմք ի տեղիս յայս ապականել զայս. Տէր ասաց ցիս, Ել յերկիրն յայն եւ ապականեա զնա։
26 Եւ ասէ Եղիակիմ որդի Քեղկեայ եւ Սոմնեաս եւ Յովաք Ասափայ՝ ցՌաբսակ, Խօսեաց ընդ ծառայս քո Ասորերէն, քանզի լսեմք մեք. եւ մի խօսիր Հրեարէն յականջս ժողովրդեանդ որ կան
27 ի պարսպիդ։ Եւ ասէ ցնոսա Ռաբսակ, Միթէ առ տէրն քո եւ առ քե՞զ առաքեաց զիս տէր իմ խօսել զբանս զայսոսիկ. ո՞չ ապաքէն առ արս որ նստին ի վերայ պարսպիդ՝ ուտել զաղբ իւրեանց եւ ըմպել զմէզ իւրեանց ձեւք հանդերձ։
28 Եւ յարեաւ Ռաբսակ, եւ աղաղակեաց մեծաձայն Հրէարէն եւ խօսեցաւ եւ ասէ, Լուարուք զպատգամս արքային մեծի, արքային Ասորեստանեայց.
29 Այսպէս ասէ արքայ. Մի հպարտացուսցէ զձեզ Եզեկիա, զի ոչ կարէ ապրեցուցանել զձեզ ի ձեռաց իմոց. Եւ մի յուսացուսցէ զձեզ Եզեկիա ի Տէր, եւ ասասցէ եթէ Փրկելով փրկէ զմեզ Տէր,
30 եւ ոչ մատնեսցի քաղաքս ի ձեռս արքային Ասորեստանեայց։ Մի լսէք Եզեկեայ, զի այսպէս ասէ արքայն Ասորեստանեայց. Արարէք ընդ իս [3]օրհնութիւն, եւ ելէք առ իս. եւ կերիցէ այր իւրաքանչիւր զայգի իւր եւ զթզենի իւր, եւ արբցէ ջուր ի ջրհորոյ իւրմէ,
32 մինչեւ եկից առից եւ տարայց զձեզ յերկիրն որ իրրեւ զերկիրս ձեր է, երկիր ցորենոյ եւ գինւոյ, այգեաց եւ հացի, երկիր ձիթենեաց՝ իւղոյ եւ մեղու. եւ կեցէք եւ ոչ մեռանիցիք. եւ մի լսէք Եզեկեայ, զի խարէ զձեզ եւ
33 ասէ, Թէ Տէր փրկեսցէ զմեզ։ Միթէ փրկեալ փրկեցի՞ն աստուածք ազգացն զիւրաքանչիւր այրմարդ ի ձեռաց ար-

[1] Եբր. Ասացեր, Ներհուզիդ եւ զօրութիւն է իմ ի պատերազմ. բանք շրթանց եւ եթէ են [2] Եբր. Յեհովա Էլոհենու, մեր

[3] Կամ, խաղաղութիւն, կամ հաշտութիւն

34 քոյին Աստուածոյն։ Ո՞ւր է աս-
տուածն Եմաթայ եւ Արփաթայ, եւ ո՞ւր է
աստուածն Սեփարուիմայ [1]քաղաքին,
Անայ եւ Աւայ. միթէ փրկեցի՞ն զՍամարիա
35 ի ձեռաց իմոց. Ո՞վ ոք յամենայն աս-
տուածոց աշխարհաց որ փրկեցին գեր-
կիր իւրեանց ի ձեռաց իմոց, զի փրկես-
ցէ Տէր զԵրուսաղէմ ի ձեռաց իմոց։
36 Եւ լսեցին եւ ոչ եաուն նմա պա-
տասխանի, զի պատուէր տուեալ էր
արքայի Իսկ Մի՛ ապրիցէք նմա պատաս-
խանի։
37 Եւ եմուտ եղիակիմ որդի Քեղկեայ
հազարապետ եւ Սոբնիայ դպրապետ եւ
Յովաք որդի Ասափայ որ ի վերայ հի-
շատակաց՝ առ եզեկիա, պատառեալ
զհանդերձս, եւ պատմեցին նմա զպատ-
գամս Րաբսակայ։

ԳԼ. ԺԹ

1 Եւ եղեւ լսելով լուաւ արքայ եզեկիա,
պատառեաց զհանդերձս իւր եւ զգեցաւ
2 քուրձ, եւ եմուտ ի տունն Տեառն։ Եւ առա-
քեաց զեղիակիմ հազարապետ եւ զՍովմ-
նաս դպրապետ, եւ զծերս ի քահանա-
յից քրձազգածս առ Եսայի մարգարէ
3 որդի Ամովսայ։ Եւ ասեն ցնա, Այսպէս
ասէ եզեկիա. Օր նեղութեան եւ կշտամ-
բանաց, եւ պայրատութեան օրս այս, զի
հասեալ են մանկունք ի ծնանելիս, եւ չիք
4 զօրութիւն ի ծնանելիս։ Թերեւս լսէ
[2]Աստուած քո զպատգամս Րաբսակայ,
զոր առաքեաց զնա արքայն Ասո-
րեստանեայց տէր իւր նախատել զԱս-
տուած կենդանի եւ հայհոյել բանիւք,
զորս լուաւ Տէր Աստուած քո. եւ ա-
րասցես աղօթս ի վերայ մնացորդաց
5 որ մնացին։ Եւ եկին ծառայք արքայի
6 եզեկիայ առ Եսայի. Եւ ասէ ցնոսա
Եսայի, Այսպէս ասասջիք առաւն ձե-
րում, այսպէս ասէ Տէր. Մի՛ երկնչիր
յերեսաց պատգամացն զորս լուար՝ ո-
րովք հայհոյեցին զիս ծառայք արքային
7 Ասորեստանեայց։ Ահա ես ածց ի նա
այս, եւ լսիցէ զոյժ, եւ դարձցի յեր-
կիր իւր, եւ կործանեցից զնա սրով
յերկրի իւրում։
8 Եւ դարձաւ Րաբսակ եւ եգիտ զար-
քայն Ասորեստանեայց պատերազմեալ
ընդ Ղոբնայի. զի լուաւ թէ չուեաց ի
9 Լաքիսայ։ Եւ նա լուաւ զԹարակայ ար-
քայէ Եթովպացւոց, ասեն, Ահա ել պա-
տերազմել ընդ քեզ. եւ գարձաւ անդ-
րէն, եւ առաքեաց հրեշտակս առ եզե-
10 կիա եւ ասէ, Այսպէս խօսեսջիք ընդ
եզեկիայ արքայի Ցուդայ՝ ասել, Մի՛
հպարտացուսցէ զքեզ Աստուած քո յոր
դուն յուսացեալ ես, ասել՝ Թէ ոչ մատ-
նեսցի Երուսաղէմ ի ձեռս արքային Ա-
11 սորեստանեայց։ Ահա դու քեզէն իսկ
լուար զամենայն ինչ զոր արարին թա-
գաւորք Ասորեստանեայց ընդ ամենայն
աշխարհս [3]նզովել զնոսա, եւ դու փրկի-
12 ցի՞ս Միթէ փրկեցի՞ն զնոսա աստուածք
ազգացն զորս ապականեցին հարք իմ,
զԳոզան եւ զԽառան եւ զՐեսափեթ եւ
13 զորդիս Եդեմայ [4]առ Թալվզերբ՞։ Ո՞ւր է
արքայն Եմաթայ եւ արքայն Արփաթայ,
եւ արքայ քաղաքին Սեփարուիմայ,
Անայ եւ Աւայ։
14 Եւ առ եզեկիա զհրովարտակն ի ձե-
ռաց հրեշտակացն, եւ ընթերցաւ զնո-
սա. եւ ել ի տունն Տեառն, եւ տարա-
ձեաց զնոսա եզեկիա առաջի Տեառն։
15 Եւ եկաց յաղօթս եզեկիա առաջի Տեառն
եւ ասէ, Տէր Աստուած Իսրայէլի որ
նստիս ի քերովբէս, դու ես միայն Ա-
ստուած յամենայն թագաւորութիւնս
երկրի, դու արարեր զերկինս եւ զեր-
16 կիր։ Խոնարհեցո, Տէր, զունկն քո եւ
լուր, բաց, Տէր, զաչս քո եւ տես, եւ
լուր զբանս Սենեքերիմայ զոր առա-
քեաց նախատել զԱստուած կենդանի։
17 Զի արդարեւ, Տէր, աւերեցին թագա-
ւորք Ասորեստանեայց զազգս եւ զեր-
18 կիր նոցա. Եւ եառն զաստուածս նո-
ցա հրոյ, զի չէին աստուածք, այլ գործք
ձեռաց մարդկան, փայտ եւ քար. եւ
19 կորուսին զնոսա։ Եւ արդ, Տէր Ա-
ստուած մեր, փրկեա զմիզ ի ձեռաց նո-
ցա. եւ ծանիցեն ամենայն թագաւո-
րութիւնք երկրի, զի դու ես Տէր Ա-
ստուած միայն։
20 Եւ առաքեաց Եսայի որդի Ամովսայ
առ եզեկիա եւ ասէ, Այսպէս ասէ Տէր
[1]զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի.
զոր կացեր յաղօթս առ իս վասն Սե-
նեքերիմայ արքայի Ասորեստանեայց՝
21 լուայ։ Այս բան է զոր խօսեցաւ Տէր
վասն նորա. Արհամարհեաց, անգոս-
նեաց զքեզ կոյս դուստր Սիոնի.
զլուխ չարժեաց ի վերայ քո, դուստր

[1] Յիշէր. պղ-ի-ե [2] Յիշէր. Տէր Աստուած
[3] Այլեւս, կորուսանել [4] Յիշէր. ի Թելասար

22 Երուսաղեմի՝ Զո՞ հախտանցեր եւ հայհոյեցեր, եւ յո՞յր վերայ բարձրացուցեր զաչսդ քո նախատել. եւ սքանչելիս ի բարձունս զաչս քո ի Սուրբն
23 Իսրայելի՝ ի ձեռն հրեշտակաց քոց նախատանցեր զՏէր եւ ասացեր, Բազմութեամբ կառաց իմոց եկի ի բարձրութիւն լերանց ի կողմն Լիբանանու, եւ կտրեցից զմնծութիւն եղեւնոփայտից նորա եւ զընտիր ընտիր նոճից նորա, եւ հասի յեզր սպառուածոյ անտառին
24 կարմելայ։ Ես [1]պահեցի եւ արբի զջուրս օտարոտիս եւ [2]աւերեցի թաթիւ ոտին
25 իմով զամենայն գետս [3]ապականից։ Միթէ չիցէ լուեալ ի հեռաստանէ զայդ զոր արարի յաւուրց առաջնոց. ստեղծի զդա եւ ածի հաստուցի, [4]եւ եղեն ի հարստութիւն գերեվարաց պատերազմողաց
26 քաղաքք ամուրք՝. Բնակեալք ի նոսա տկարացան ձեռամբ եւ զարհուրեցան, եւ ամաչեցին եւ եղեն իբրեւ զխոտ վայրի, եւ իբրեւ զդալարի բանջարոյ եւ զդալարի տանեաց, [5]եւ կոխան ա-
27 ռաջի հասելոցն՝։ Արդ զնիստ քո եւ զել եւ զմուտ քո գիտեմ, եւ զսրամասու-
28 թիւն [6]քո. ի բարկանալ քո ինձ, եւ խայտալդ քո կ յականջս իմ. եւ արկից կարիճ ի քիթս քո, եւ դանդաղանաւդ ի կղակս քո, եւ դարձուցից զքեզ ընդ ճանապարհն ընդ որ եկիր։
29 Եւ քեզ այս նշանակ լիցի. կերիցես այս ամ զինքնեակս, եւ յամին երկրորդի զինչնեակաց ինքնեակս. եւ յամին երրորդի՝ [7]տնկեցէք եւ հունձք եւ տունկք այսպեսց՝, եւ կերիջիք զպտուղ նոցա։
30 Եւ յաւելցի ապրեալ տանդ Յուդայ. ճնացեալն արձակեսցէ արմատս ի խոնարհ եւ ապրեալ. նախանձ Տեառն զօրութեանդ արասցէ զայս։
31 Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր. Արքայն Ասորեստանեայց մի՛ մտցէ ի քաղաքդ յայդ, եւ մի՛ ձգեսցէ ի նա նետս, եւ մի՛ պատեսցէ զդա վահանօք, եւ մի՛
33 կոտեսցէ զդոփաւ հող. Ընդ ճանապարհ ընդ որ եկն՝ ընդ նոյն դարձցի,

[1] Ելբ. փորեցի [2] Ելբ. ցամաքեցուցի [3] Ելբ. ամրացեալս, կամ, Եգիպտոսի [4] Ելբ. զի դարձուսցես յամպստիճն, ի կոյսս աւերակաց զքաղաքս ամրացեալս [5] Ելբ. Հարեալ ի խորշակէ մինչչեւ Հասեալ [6] Ելբ. քո առ իս
[7] Ելբ. սերմանեցէք և հնձեցէք և անկեցէք այդիս

եւ ի քաղաքդ յայդ մի՛ մտցէ, ասէ Տէր։
34 Եւ վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ փրկել զդա վասն իմ եւ վասն Դաւթի ծառայի իմոյ։
35 Եւ ի հասանել գիշերոյն կ հրեշտակ Տեառն, եւ եհար ի բանակէն Ասորեստանեայց հարիւր եւ ութսուն եւ հինգ հազար. եւ կանխեցին ընդ առաւոտն, եւ ահա ամենայն մարմինք մեռեալ։
36 Եւ չուեաց գնաց, եւ դարձաւ Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց եւ բնա-
37 կեաց ի Նինուէ։ Եւ եղեւ մինչդեռ երկիր պագանէր ի տան Նեսրաքայ աստուածոյ իւրում, Ադրամելէք եւ Սարասար որդիք նորա հարին գնա սրով, եւ [8]ինքեանք գերծան յերկիրն Արարատայ. եւ թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա։

Գլ. Ի

1 Յաւուրսն յայնմիկ հիւանդացաւ եղեւ կիա ի մահ. եւ եմուտ առ նա Եսայի որդի Ամովսայ մարգարէ, եւ ասէ ցնա, Այսպէս ասէ Տէր. Հրամայ տուր վասն տան քոյ, զի մեռանիս դու եւ ոչ ապրիսցես։ Եւ դարձոյց եզեկիա զերեսս իւր յարմն, եւ եկաց յաղօթս առ Տէր
3 եւ ասէ, Ա՛ւ Տէր, յիշեա որպէս գնացի առաջի քո ճշմարտութեամբ եւ կատարեալ սրտիւ, եւ զբարին առաջի քո արարի։ Եւ լայաց եզեկիա լալիւն մեծ։
4 Եւ էր Եսայի ի սրահին միջնում. եւ
5 բան Տեառն եղեւ առ նա եւ ասէ, Դարձիր անդրէն, եւ ասասցես ցեզեկիա զառաջնորդ ժողովրդեան իմոյ, Այսպէս ասէ Տէր Աստուած Դաւթի հօր քո. Լուայ աղօթից քոց եւ տեսի զարտասուս քո. ահա ես բժշկեցից զքեզ, եւ յաւուրն երրորդի ելցես ի տունն Տեառն.
6 Եւ յաւելից յաւուրս քո ամս հնգետասան, եւ ի ձեռաց արքային Ասորեստանեայց փրկեցից զքեզ եւ զքաղաքդ զայդ, եւ վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ վասն իմ եւ վասն Դաւթի ծառայի իմոյ։ Եւ ասէ Եսայի, [8]Առցեն պաղտարիս թզոյ. եւ առին. եւ դիցին ի վերայ վիրիդ եւ ողջացիր՝։
8 Եւ ասէ եզեկիա ցԵսայի, Զինչ նշան է մեզ բժշկեսցէ զիս Տէր, եւ ելանիցեմ
9 ի տունն Տեառն յաւուրն երրորդի։ Եւ ասէ Եսայի, Այս նշան է ի Տեառնէ զի

[8] Ելբ. Առէք պաղտարիս թզոյ. եւ առին, եւ եդին ի վերայ վիրին եւ ողջացաւ

արասցէ Տէր զբանն զոր խօսեցաւ. եր-
10 թիցէ սաւևերն զաման ասաքմանաօք[1], եւ
ասէ Եղեկիա, Դիւրին է սաւևերն [2]դառ-
նալ զաման ասաքմանաօք. եւ ասէ, Ոչ
այգպէս է. այլ զարձցի սաւևերն զաման
11 ասաքմանաօք անդրէն յետս։ Եւ ազատա-
կեաց Եսայի մարգարէ առ Տէր, եւ զար-
ձոյց սաւևերն զաման[նկ]ասքմանաօք ասաքմա-
նաօք անդրէն յետս, զաման[նկ]քսմբք ասա-
քմանաօքն Աքազու։
12 Ի ժամանակին յայնմիկ առաքեաց Մա-
րոդաք Բաղդան որդի Բաղդանայ ար-
քայ Բաբելացւոց հրովարտակս եւ պատա-
րագս առ Եզեկիա, կի լուաւ թէ հի-
13 ւանդացաւ Եզեկիա։ Եւ ուրախ եղեւ
ի նոսա Եզեկիա, եւ եցոյց նոցա [3]զա-
մենայն սաւևս Նաքովիմ՝, զարծաթ
եւ զոսկի եւ զխունկս եւ զեւղս անոյ-
շունս, եւ զտունս անօթոց, եւ որ ինչ
գտանէր ի գանձս նորա. եւ ոչ էր տեղի
զոր ոչ եցոյց նոցա Եզեկիա ի տան իւրում
եւ յամենայն իշխանութեան իւրում։
14 Եւ եմուտ Եսայի մարգարէ առ Եզե-
կիա արքայ եւ ասէ ցնա, Զի՞նչ խօսե-
ցան արքքն այգոքիկ, եւ ուստա՞ եկին
առ քեզ. եւ ասէ Եզեկիա, Ցերկրէ հե-
15 ռաստանէ եկին առ իս ի Բաբելոնէ։ Եւ
ասէ, Զի՞նչ տեսին ի տան քումմ. եւ
ասէ Եզեկիա, Զամենայն ինչ որ ի տան
իմում էր՝ տեսին, եւ ոչ ինչ էր ի տան
իմում զոր ոչ ցուցի նոցա, այլ եւ ոչ ի
16 գանձս իմ։ Եւ ասէ Եսայի ցեզեկիա,
17 Լուր զբան Տեառն. Ահա աւուրք գան,
եւ առցի զամենայն որ ինչ ի տան քումմէ,
եւ զոր ինչ պանձկին հարք քո մինչեւ
ցայսօր, եւ երիցէ ի Բաբելոն, եւ մի՛
ինչ [4]մնասցէ. զի բան է զոր խօսեցաւ
18 Տէր՝. Եւ [5]որդիք քո՝ որ ելանիցեն ի
քէն՝ առցին, եւ եղիցին հերքինիք ի
19 տան արքային Բաբելացւոց։ Եւ ասէ
Եզեկիա ցԵսայի, Բարի է բանն Տեառն
զոր խօսեցաւ. եւ ասէ, [6]Եղիցի խաղա-
զութիւն եւ ճշմարտութիւն յաւուրս իմ։
20 Եւ մնացորդք բանից Եզեկիայ եւ ամե-
նայն զօրութիւնք նորա, եւ որպէս ա-
րար [7]զԼճարտւպիան եւ զԽիմուդն. եւ ած
ջուր ի քաղաքն, ո՞չ աւանիկ գրեալ են
ի դիւրս բանից աւուրց թագաւորացն
21 Յուդայ։ Եւ ննջեաց Եզեկիա ընդ հարս
իւր, եւ թագաւորեաց Մանասէ որդի
նորա ընդ նորա։

ԳԼ. ԻԱ

1 Որդի երկոտասանից ամաց Մանասէ ի
թագաւորել իւրում, եւ յիսուն եւ [8]ինն
ամ թագաւորեաց յԵրուսաղէմ. եւ ա-
2 նուն մօր նորա Եփսիբա։ Եւ արար չար
առաջի Տեառն բոա զարշելիսն ազ-
գային, զորս հերձ Տէր յերեսաց որդ-
3 ւոցն Իսրայէլի։ Եւ զարձաւ չինեաց
զբարձունսն զոր կործանեաց Եզեկիա
հայր նորա, եւ կանգնեաց [9]զսեզանն
Բահաղու, եւ արար [10]անտառ՝ որպէս
արար Աքաաբ արքայ Իսրայելի. եւ եր-
կիր երագ ամենայն զօրութիւնն երկ-
4 նից եւ ծառայեաց նոցա. Եւ չինեաց
սեզանս ի տան Տեառն, [11]որպէս ասաց
Տէր, Ցերուսաղէմ եղից [12]զաթոռ իմ։
5 Եւ չինեաց սեզանս ամենայն զօրու-
թիւնն երկնից [13]յամենայն սրահս՝ տանն
6 Տեառն։ Եւ անցոյց [14]զորդիս իւր ընդ
հուր, եւ հմայէր եւ հաւատարց լիներ.
եւ արար վհուկս եւ ղէտս. եւ յաճա-
խեաց առնել չար առաջի Տեառն առ ի
7 բարկացուցանելոյ զինա։ Եւ եդ [15]զդրօ-
շեալս անառաջոյ ի տան Տեառն՝, զոր-
մէ ասաց Տէր ցԴաւիթ եւ ցՍողոմոն
որդի նորա, Ի տանս յայսմիկ եւ յԵ-
րուսաղէմ զոր ընտրեցի յամենայն ցե-
ղից Իսրայելի՝ եղից զանուն իմ յաւի-
8 տան, եւ ոչ յաւելից չարժել զոտն Իս-
րայելի յերկրէդ զոր ետու հարց նոցա,
[16]որք զգուշանայցեն առնել զամենայն
որ ինչ պատուիրեցի նոցա զամենայն
պատուիրանին զոր պատուիրեաց նոցա
9 ծառայ իմ Մովսէս։ Եւ ոչ լուան. եւ
մոլորեցոյց զնոսա Մանասէ առնել չար
[17]առաջի Տեառն՝ առաւել քան զազգսն
զոր ապականեաց Տէր յերեսաց որդ-
ւոցն Իսրայելի։
10 Եւ խօսեցաւ Տէր ի ձեռն ծառայից
11 իւրոց մարգարէից՝ եւ ասէ, Փոխանակ
զի արար Մանասէ արքայ Յուդայ զգար-
շելիսդ զայգոսիկ, զչարս առաւել քան
զամենայն զոր արար Ամովրհացիքն ա-

---

[1] ԵԲԸ՝ՀԵՏԷ՝ յա-ԲԼ-, կամ գարձցի զաման ասաք-
ճանաօք [2] ԵԲԸ՝ ԻՔԱՆԵԼ [3] ԵԲԸ՝ զամենայն
տուն իւր զգանձսն [4] ԵԲԸ՝ մնասցէ, ասէ
Տէր [5] ԵԲԸ՝ յորդւոց քոց [6] ԵԲԸ՝ Ո՞չ ապա-
քէն եղիցի [7] ԵԲԸ՝ զաւազանն

[8] ԵԲԸ՝ ՀԻՆԳ [9] ԵԲԸ՝ սեզանս [10] ԵԲԸ՝ Աչերա,
(Ել.ԼԴ. 13.) [11] ԵԲԸ՝ զորմէ [12] ԵԲԸ՝
զանուն [13] ԵԲԸ՝ յերկսին գաւիթս [14] ԵԲԸ՝
զորդի [15] ԵԲԸ՝ զդրօշսն Աչերայ զոր արար
ի տանն [16] ԵԲԸ՝ եթէ միայն [17] ՅԵԲԸ՝ պա՛սաք

ռաջի իմ, եւ [1]յանկաւ Ծուզա կառքն
12 իւրմանց", վասն այնորիկ այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայելի. Ահա ես ածեմ չարիս ի վերայ Երուսաղեմի եւ ի վերայ Ծուզայ, զի ամենայն որ լսիցէ՝ հնչեսցին
13 դունն երկաքին ականջք իւր։ Եւ ձգեցից ի վերայ Երուսաղեմի զչափն Սամարիայ եւ զկշիռ տանն Աքաաբայ, եւ ջնջեցից զերուսաղէմ որպէս չիչ մի [2]ջնջեալ որ կործանիցի" ի վերայ երեսաց իւրոց։
14 Եւ մերժեցից զմնացորդս ժառանգութեան իմոյ, եւ մատնեցից զնոսա ի ձեռս թշնամեաց իւրեանց, եւ եղիցին ի յափշտակութիւն եւ յաւար ամենայն թշնա-
15 մեաց իւրեանց. Փոխանակ զի արարին չար առաջի իմ, եւ բարկացուցանէին զիս յօրէ յորմէ հետէ հանի զնոսա յԵ-
16 գիպտոսէ մինչեւ ցայսօր։ Նա եւ արիւն անպարտ ևհեղ Մանասէ բազում յոյժ, մինչեւ լիով զերուսաղէմ ծայր ի ծայր. Թող զմեղս իւր որով մեղոյցն զՅուդա առնել չար առաջի Տեառն։
17 Եւ մնացորդք բանից Մանասէի եւ ամենայն ինչ զոր արար եւ մեղք նորա զոր մեղաւ, ո՞չ ասանկիւ գրեալ են ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յու-
18 դայ։ Եւ ննջեաց Մանասէ ընդ հարս իւր, եւ թաղեցաւ ի պարտիզի տան իւրոյ, ի պարտիզին Ոզիայ. եւ թագաւորեաց Ամմոն որդի նորա ընդ նորա։
19 Որդի քսան եւ երկուց ամաց Ամմոն ի թագաւորել իւրում, եւ [3]երկուասան ամ" թագաւորեաց յԵրուսաղէմ. եւ անուն մօր նորա Մեսոզոմիթ՝ դուստր Ա-
20 րուսայ Ջեսերացւոյ։ Եւ արար չար առաջի Տեառն, որպէս արար Մանասէ
21 հայր նորա. Եւ գնաց յամենայն ճանապարհս յոր գնաց հայր նորա, եւ պաշտեաց զկուռս զոր պաշտեաց հայր նո-
22 րա, եւ երկիր նպաւ նոցա. Եւ եթող զՏէր Աստուած հարցն իւրոց, եւ ոչ գնաց ի ճանապարհս Տեառն։
23 Եւ դաւաճանեցան ծառայք Ամմոնայ ի վերայ նորա, եւ սպանին զարքայ ի տան
24 իւրում։ Եւ նահար ամենայն ժողովուրդն զսպանողսն զդաւաճանեալսն ի վերայ սրբոյ Ամմոնայ, եւ թագաւորեցոյց ժողովուրդ երկրին զՅաւսիա որդի նորա ընդ նորա։

25 Եւ մնացորդք բանից Ամմոնայ զոր արար, ո՞չ ասանկիւ գրեալ են ի գիրս բա-
26 նից աւուրց թագաւորացն Յուդայ։ [4]Եւ ննջեաց Ամմոն ընդ հարս իւր," եւ թաղեցին զնա ի դերեզմանի իւրում ի պարտիզին Ոզիայ. եւ թագաւորեաց Յոսիա որդի նորա ընդ նորա։

Գլ. ԼԲ

1 Որդի ամաց ութից Յոսիա ի թագաւորել իւրում, եւ երեսուն եւ մի ամ թագաւորեաց յԵրուսաղէմ. եւ անուն մօր նորա Ցեդիդա, դուստր Ադայեայ ի Բոսկաթացւոյ։ 2 Եւ արար ուղղութիւն առաջի Տեառն, եւ գնաց յամենայն ճանապարհս Դաւթի հօր իւրոյ, եւ ոչ խոտորեցաւ յոչ կամ յահեակ։
3 Եւ եղեւ յամի ութերորդի Յոսիայ արքայի [4]Յուդայ, յամսեանն երիներորդի" առաքեաց արքայ զՍափան գրագրի Եսելիայ որդւոյ Մեսոզոմայ 4 դպրապետ տանն, եւ ասէ, Երթ առ Քեղկիա քահանայ մեծ, զի [5]ձուլեսցեն զարծաթն մտեալ ի տունն Տեառն, զոր ժողովեցին պահապանքն [6]կղեակ ի ժո-
5 ղովրդենէն. Եւ տացեն զայն ի ձեռս գործաւորաց գործոյն՝ յվերակացուս տանն Տեառն. եւ տունն գործաւորս գործոյն ի տան Տեառն, գօրացուցանել
6 [7]զրեկեկ տանն Տեառն, ձհլատունս եւ ցվնդոց եւ ցճարտարս, գնել փայտ եւ քարինս կոփածոյս՝ առ ի կազմիլով [8]զրեկ-
7 զեկ տանն Տեառն"։ բայց ոչ ասեն ընդ նմա համար արծաթոյն տալոյ նոցա, քանզի ի յաւուր գործէին։ 8 Եւ ասէ Քեղկիա քահանայ մեծ ցՍափան դպրապետ, Մատեան օրինացն գտի ի տան Տեառն. եւ եա Քեղկիա ցՍափան. եւ ընթերցաւ
9 զայն։ Եւ [9]տարաւ առ արքայ զպատասխանին", եւ ասէ, [10]Զուխցին ծառայք քո զարծաթն գտեալ ի տան Տեառն, եւ եւ տունն զայն ի ձեռս գործաւորաց գոր-
10 ծոյն վերակացուաց ի տան Տեառն։ Եւ յանձնեցաւ Սափան դպրապետ ընդ արքայի եւ ասէ, Մատեան մի եա ցիս Քեղկիա քահանայ. եւ ընթերցաւ զայն
11 Սափան առաջի արքայի։ Եւ եղեւ իւր-

[1] Եբբ. յանցոյց,զՅուզա կառքն իւրովք [2] Եբբ. զոր ջնջիցէ որ եւ գարձուսցէ [3] Եբբ. զերկուս ամս

[4] Յեբբ. գ-ԻԵ-Ե [5] Եբբ. Համարեսցի [6] Եբբ. դրանն [7] Ալ-Ե՝ խրամատ [8] Եբբ. զտունն [9] Եբբ. եկն Սափան դպրապետ առ արքայ, եւ պատմեաց արքայի զբանն [10] Եբբ. Հանին

րեւ լուաւ արքայ զբանս մատենի օրի-
12 նացն, պատառեաց զհանդերձս իւր։ Եւ
պատուէր ետ արքայ Քեղկիայ քահա-
նայի, եւ Աքիկամայ որդւոյ Սափանայ
եւ Աքոբորայ որդւոյ Միքէի եւ Սափա-
նայ գլխապահի եւ Յասայեայ ծառայի
13 արքայի, եւ ասէ, Երթայք խնդրեցէք
ի Տեառնէ վասն իմ եւ վասն ամենայն
ժողովրդեանդ եւ վասն ամենայն Յու-
դայ, վասն բանից մատենիդ գտելոյ այ-
սորիկ. զի մեծ բարկութիւն Տեառն
բորբոքեալ է ի մեզ. վասնզի ոչ
լուան հարք մեր բանից մատենիդ այդո-
րիկ առնել ըստ ամենայն գրելոցդ զմեզ։
14 Եւ գնաց Քեղկիա քահանայ եւ Աքի-
կամ եւ Աքոբովր եւ Սափան եւ Յա-
սայիա՝ առ Ողդա մարգարէ՝ կին Սեղ-
ղումայ որդւոյ Թեկուայ, որդւոյ Սրա-
սայ պատմուճառի. եւ նա բնակէր յե-
րուսաղէմ ի Մասենա. եւ խօսեցան ընդ
15 նմա։ Եւ ասէ ցնոսա, Այսպէս ասէ Տէր
Աստուած Իսրայէլի. Ասացէք ցայն որ
16 առաքեաց զձեզ առ իս, Այսպէս ասէ
Տէր. Ահա ածեմ չարիս ի վերայ տեղ-
ւոյդ այդորիկ եւ ի վերայ բնակչաց գո-
րա ըստ ամենայն բանից մատենին զոր
17 ընթերցաւ արքայ Յուդայ. Փոխանակ
զի թողին զիս, եւ արկանէքին խունկս
ատուածոց օտարաց, զի բարկացուս-
ցեն զիս [1]գործովք ձեռաց իւրեանց, եւ
բորբոքեսցի սրմանութիւն իմ ի տեղւոջդ
18 յայդմիկ, եւ մի՛ չիջցի։ Եւ ցարքայ Յու-
դայ որ առաքեաց զձեզ խնդրել զՏէր՝
դայս ասասջիք. Այսպէս ասէ Տէր Աս-
տուած Իսրայէլի. [2]Բանքն զոր լուար՝
19 այս են։ Փոխանակ զի կակղացաւ սիրտ
քո, եւ պատկառեցեր յերեսաց Տեառն
իբրեւ լուար զոր ինչ խօսեցաւ ի վե-
րայ տեղւոյդ այդորիկ եւ ի վերայ բնակ-
չաց դորա լինել յապականութիւն եւ
յանէծս, եւ պատառեցեր զհանդերձս
քո, եւ լացեր առաջի իմ. եւ ես լուայ,
20 ասէ Տէր։ Վասն այդորիկ ես յաւելում
զքեզ առ հարս քո, եւ ժողովեսցիս [3]ի
տեղւոջ քում յերուսաղէմ՝. եւ ոչ տես-
ցեն աչք քո զամենայն չարիսն զոր ես
ածից ի վերայ տեղւոյդ այդորիկ։

ԳԼ. ԻԳ

1 Եւ դարձուցին արքայի [4]զպատգամն
զոր յղեաց արքայ. եւ ժողովեաց առ
ինքն՝ զամենայն ծերս Յուդայ եւ զե-
2 րուսաղէմ։ Եւ ել արքայ ի տաճն Տեառն,
եւ ամենայն այր Յուդայ եւ ամենայն
բնակիչք Երուսաղէմի ընդ նմա, եւ քա-
հանայք եւ մարգարէք եւ ամենայն ժո-
ղովուրդն ընդ նմա ի փոքուէ մինչեւ
ցմեծ. եւ ընթերցաւ յականջս նոցա զա-
մենայն բանս մատենին ուխտին գտելոյ
3 ի տան Տեառն։ Եւ եկաց արքայ [5]ի վե-
րայ սեանն, եւ ուխտեաց ուխտ առաջի Տեառն երթալոյ զհետ Տեառն, եւ
պահելոյ զպատուիրանսն նորա եւ զվկա-
յութիւնսն նորա եւ զիրաւունս նորա յա-
մենայն սրտէ եւ յամենայն անձնէ, կանգ-
նել զբանս ուխտին զրելոյ ի մատենին
յայնմիկ. եւ եկաց ամենայն ժողովուրդն
4 յուխտ։ Եւ պատուէր ետ արքայ Քեղ-
կիայ քահանայի մեծի եւ քահանայիցն
երկրորդաց եւ պահապանաց [6]կշռոյն՝
հանել ի տաճարէն Տեառն զամենայն ա-
նօթ գործեալ Բահաղու եւ [7]անտառայն
եւ զօրութեան երկնից. եւ այրեաց զնո-
սա արտաքոյ Երուսաղէմի ի [8]Սադեմովթ
Կեդրոնի, եւ արկ զմոխիր նոցա ի Բե-
5 թէլ։ Եւ [9]այրեաց զքուրմարիսն՝ զոր
տուեալ էր արքայիւ Յուդայ. եւ ար-
կանէքէն խունկս ի բարձունսն եւ յամե-
նայն քաղաքս Յուդայ եւ չուրջ զերու-
սաղէմա, եւ վնկարկուսն [10]զարեգա-
կան եւ զլուսնի եւ զաստեղսդայ եւ զամե-
6 նայն զօրութիւն երկնից։ Եւ [11]զանտառն
ի տանէ Տեառն արտաքոյ Երուսաղէմի
ի հնդեղատան Կեդրոնի. եւ այրեաց զայն
ի հնդեղատին Կեդրոնի, եւ մանրեաց
իբրեւ զփոշի, եւ ցանեաց զմոխիրն նո-
րա ի գերեզմանս որդւոց ժողովրդեանն։
7 Եւ քակեաց զառն [12]կադեսիմացն որ ի
տան Տեառն. յորում կանայքն անկա-
8 նէին [13]զպատմուճանս անտառացն՝։ Եւ
եհան զամենայն քուրմսն ի քաղաքացն
Յուդայ, եւ սրբեաց զբարձունսն յոր
արկանէքին խունկս քուրմքն, ի Գաբաայ

[1] ԵԲԲ. ամենայն գործովք [2] ԵԲԲ. վասն բանիցն զոր լուար։ [3] ԵԲԲ. ի գերեզմանի քում ի խա-ղաղութիւն

[4] ԵԲԲ. զպատգամն։ Եւ յղեաց արքայ, եւ ժողո-վեցին առ նա [5] Կամ, առ [6] ԵԲԲ. սեմոց, կամ, գրանն [7] ԵԲԲ. Աշերայ [8] Կաղաւաւ՝ Հովիտ [9] ԵԲԲ. եբարձ գրութեան [10] ԵԲԲ. Բահաղու, զա-բեգական [11] ԵԲԲ. եհան զԱշերա [12] Կաղաւաւ՝ Նուիրելոց (Տես. Գ Թագ. ԺԴ. 24։ ԺԵ. 12։) [13] ԵԲԲ. զտունս, այինքն՝ զվարագոյրս Աշերայ

մինչեւ կբերասցէ. եւ զակեաց [1]զաւն
զրանցն որ առ զրանցով զրանն Յետա-
ւայ իշխանի [2]զրանն ի ձախմէ առ զրան
9 քաղաքին։ Բայց ոչ ելանէին քուրմք
բարձանցն ի սեղան Տեառն որ կերու-
սաղէմ. [3]եթէ ոչ" ուտէին բազարջ ի մէջ
10 եղբարց իւրեանց. Եւ պղծեաց զՏա-
փնէթ, որ ի ձոր որդւոցն Ենոմայ, առ
ի չածելոյ առն զուսար իւր կամ զդուսար
11 զրացով Մեղբովնայ։ Եւ [4]այրեցին զՖան
զորս [5]ետ արքայն" Յուդայ արեզական
ի մուտս տան Տեառն [6]ի զանձանակի
Նաթանայ Նեբզինուց արքայի" որ ի Փա-
րուրիմ. եւ զկառն արեզական այրեաց
12 հրով։ Եւ զսեղանս որ ի վերայ տանեաց
[7]վերնատանն, զոր արարին Թագաւորք
Յուդայ, եւ զսեղանս զոր արար Մա-
նասէ յերկուս [8]սրահս տանն Տեառն,
քակեաց զայն արքայ եւ կործանեաց
անտի, եւ ընկէց գհողն նոցա ի հեղե-
13 դաձն Կեդրոնի։ Նա եւ [9]զուսնն որ ի
դիմաց Երուսաղեմի ընդ աջմէ լերինն
[10]Մոսաթայ, զոր չինեաց Սողոմոն աթ-
գայ Իսրայելի Աստարտայ գարչելուոյ
Սիդոնացւոյ, եւ Քամովսայ զպղծու-
ւոյ Մովաբայ, եւ Մեղբոմայ գարչել-
ւոյ որդւոցն Ամմոնայ, պղծեաց արքայ.
14 Եւ խորտակեաց զարձանսն, եւ կատե-
րեաց [11]զանտառսն, եւ ելից զանգիսն նո-
ցա ոսկերօք մարդկան։
15 Եւ զսեղանն որ [12]ի Բեթէլ զրարձ",
զոր արար Յերոբովամ որդի Նաբատայ
որ մեղսոյն գԻսրայէլ, եւ զայն եւս
[13]սեղան զրարձ կործանեաց եւ խոր-
տակեաց զքարինս նորա", եւ հնդկեաց
իբրեւ զփոշի, եւ այրեաց զանտառսն։
16 Եւ հայեցաւ Յովսիա եւ ետես զգերեզ-
մանս որ [14]ի զաղարին, եւ առաքեաց
եւ առ զոսկերս ի գերեզմանացն եւ
այրեաց ի վերայ սեղանոյն, եւ պղծեաց
զնա բան բանին Տեառն, զոր խօսեցաւ
այն Աստուծոյ [15]մինչեւ կայր Յերոբո-
վաամ ի տեղին ի վերայ սեղանոյն։ Եւ
դարձոյց զաչս իւր ի գերեզման առնն
Աստուծոյ" որ խօսեցաւ զրանս զայս-
17 սիկ, եւ ասէ, Զինչ է կոթողն այն զոր
ես տեսանեմ. եւ ասեն գնա արք քա-
ղաքին, [16]Այն Աստուծոյ է" որ եկն ի
Յուդայ, եւ բարբառեցաւ զրանս [17]զայ-
18 սսիկ ի վերայ սեղանոյն Բեթէլայ։ Եւ
ասէ, Թոյլ տուք զայն, մի ոք չար-
ժեսցէ զոսկերս նորա. եւ [18]պատն ոս-
կերաց" նորա ընդ ոսկերս մարգարէին ե-
19 կելոյ ի Սամարիայ։ Նա եւ զամենայն
տունս բարձանց զոր ի քաղաքս Սա-
մարիայ արարին թագաւորք Իսրայելի
առ ի բարկացուցանելոյ զՏէր՝ մերժեաց
Յովսիա արքայ Իսրայելի. եւ արար բան
ամենայն գործոցն զոր արար ի Բեթէլ։
20 Եւ ձենձեղեաց զամենայն քուրմս բար-
ձանց, որ էին անդ, ի վերայ սեղա-
նոյն, եւ այրեաց զոսկերս մարդկան ի
վերայ նոցա. եւ դարձաւ յերուսաղէմ։
21 Եւ պատուէր ետ արքայ ամենայն
ժողովրդեանն եւ ասէ, Արարէք զաւրիկ
Տեառն Աստուծոյ ձերում, որպէս եւ
գրեալ է ի մատեանի ուխտիս այսորիկ։
22 Զի ոչ եղեւ զատիկն այն յաւուրց դա-
տաւորացն որ դատէին զԻսրայէլ, եւ
յաւուրս թագաւորացն Իսրայելի եւ թա-
23 գաւորացն Յուդայ։ Բայց զի յոլովա-
պատկեցաւ զաւրիկն այն Տեառն յերուսաղէմ
24 Եւ զվհատս եւ զկէս եւ զթերա-
փիմս եւ զկուռսն եւ զամենայն գար-
շելիսն եգեալս ի Յուդա եւ յերուսա-
ղէմ՝ եբարձ Յովսիա. զի հաստատեսցէ
զբանս օրինացն գրելոց ի մատեանին,
զոր եգիտ Քեղկիա քահանայ ի տան
25 Տեառն։ Նման նմա ոչ եղեւ յառաջ քան
զնա թագաւոր, որ դարձաւ առ Տէր
յամենայն սրտէ իւրմէ եւ յամենայն
անձնէ իւրմէ եւ յամենայն զօրութենէ
իւրմէ, ըստ ամենայն օրինացն Մովսիսի.
26 եւ յետ նորա ոչ եկաց նման նմա։ Սա-
կայն ոչ դարձաւ Տէր ի սրտմտութենէ
բարկութեան իւրոյ մեծէ զոր սրտմտե-
ցաւ բարկութեամբ իւրով ի վերայ Յու-
դայ վասն զայրացուցմանցն որովք զա-
27 յրացոյց զնա Մանասէ։ Եւ ասէ Տէր,
Նա եւ զՅուդա մերժեցից յերեսաց իմոց,
որպէս մերժեցի զԻսրայէլ. եւ մերժեցից

---

[1] ԵԲԲ. զբարձունս [2] ՆԵԲԲ. բազարին [3] ՆԵԲԲ. սակայն [4] ՆԵԲԲ. երարձ [5] ՆԵԲԲ. տուեալ էր արքային [6] ՆԵԲԲ. առ սենեկին Նաթանմելեքայ Նեբրինուց [7] ԵԲԲ. վերնատանն Աքազու [8] ՆԵԲԲ. գաւթիս [9] ՆԵԲԲ. զբարձունն [10] Նշ-ՆՈՒ՝ Ապականութիւն [11] Աչերայ (Ելից Լ. 13.) [12] ՆԵԲԲ. ի Բեթէլ. զբարձունն [13] ԵԲԲ. սեղան եւ զբարձունն կործանեաց, եւ այրեաց զբարձունն [14] ՆԵԲԲ. ի լերինն [15] ՆԵԲԲ. գ-ՀԻ-Ե

[16] ՆԵԲԲ. Վերեզման է առն Աստուծոյ [17] ՆԵԲԲ. զայսոսիկ զոր գուգ առնես [18] ՆԵԲԲ. Թողին զոսկերս

զքաղաքդ զայդ զոր ընտրեցի զԵրուսաղէմ, եւ զաունդ զորմէ ասացի Թէ եւ
28 ինձն անուն իմ անդ։
Եւ մնացորդք բանիցն Յովսիայ եւ ամենայն ինչ զոր արար, ո՞չ աւանիկ
29 գրեալ են ի վիպս բանից աւուրց թագաւորացն Յուդայ։ [1]Յաւուրսն յայնոսիկ՝
եկն Փարաւոն Նեքաւով արքայ Եգիպտացւոց ի վերայ արքային Ասորեստանեայց առ Եփրատ գետով. եւ գնաց Յովսիա արքայ ընդ առաջ նորա. եւ սպան զնա ի Մակեդով ի տեսանելն նորա զնա։
30 Եւ բարձին [2]զնա ծառայք նորա ի Մակեդովայ, եւ բերին զնա յԵրուսաղէմ, եւ թաղեցին զնա ի գերեզմանի իւրում. եւ առ ժողովուրդ երկրին զՅովաքազ որդի Յովսիայ, եւ օծին զնա եւ թագաւորեցուցին զնա փոխանակ հօր իւրոյ։
31 Որդի քսան եւ երից ամաց էր Յովաքազ ի թագաւորել իւրում, եւ երիս ամիսս թագաւորեաց յԵրուսաղէմ. եւ անուն մօր նորա Ամիտալ դուստր Երե-
32 միայի ի Ղոբնայ։ Եւ արար չար առաջի Տեառն ըստ ամենայնի զոր արարին
33 հարք նորա։ Եւ [3]փոխեաց զնա Փարաւոն Նեքաւով ի Ռեբղաթա յերկիրն Եմաթայ՝ չթագաւորել նմա յԵրուսաղէմ. եւ արկ հարկ երկրին հարեւր տալանդ արծաթոյ եւ [4]տասն տալանդ՝ ոսկւոյ։
34 Եւ թագաւորեցոյց Փարաւոն Նեքաւով ի վերայ նոցա զԵղիակիմ որդի Յովսիայ
[5]արքայի Յուդայ՝ փոխանակ Յովսիայ հօր իւրոյ, եւ փոխեաց զանուն նորա Յովակիմ. եւ զՅովաքազ առ եւ ատրաւ-
35 յեցիպտոս, եւ մնաւ անդ։ Եւ զարծաթն եւ զոսկին ետ Յովակիմ Փարաւոնի. սակայն ճգռոյ [6]զրեկոն զերկիրն տալ զարծաթն բանիւ Փարաւոնի. այր ըստ սակի իւրում եառն զարծաթ եւ զոսկի հանդերձ ժողովրգեամբ երկրին տալ Փարաւոնի Նեքաւովայ։
36 Որդի քսան եւ հինգ ամաց էր Յովակիմ ի թագաւորել իւրում, եւ մեասան ամ թագաւորեաց յԵրուսաղէմ. եւ անուն մօր նորա [7]Եղդաի՝ դուստր
37 Ազդկայ՝ յԻռմայ։ Եւ արար չար առաջի Տեառն ըստ ամենայնի զոր արարին հարք նորա։

[1]ԵՐԷ. Յաւուրս նորա [2]ԵՐԷ. զնա կառաք [3]ԵՐԷ. կապեաց [4]ԵՐԷ. տասնդ մի [5]ՅԻԵՐ. պոյ-ե [6]ԵՐԷ. գրեաց [7]ԵՐԷ. Զաբիդայ դուստր Փադեայ

ԳԼ. ԻԴ

1 Յաւուրս նորա ել Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելոնի, եւ եղեւ նորա ծառայ Յովակիմ ամս երիս, եւ դարձաւ վատ-
2 բանչեաց ի նմանէ։ Եւ առաքեաց Տէր նմա զմնակազէնան Քազդէացւոց, եւ զմնակազէնան Ասորւոց, եւ զմնակազէնան Մոաբայ, եւ զմնակազէնան որդւոցն Ամմոնայ. եւ առաքեաց զնոսա յերկիրն Հրէաստանի՝ սատակել զնա ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ ի ձեռն
3 ծառայից իւրոց մարգարէից։ Քանզի [8]բարկութիւն Տեառն էր՝ ի վերայ Յուդայ մերժել զնա յերեսաց իւրոց վասն մեղաց Մանասէի, ըստ ամենայնի զոր
4 արար, Եւ վասն անպարտ արեանցն զոր հեղեալ եւ լիով զերուսաղէմ անպարտ արեամբ. եւ ոչ կամեցաւ Տէր ցածնուլ։
5 Եւ մնացորդք բանիցն Յովակիմայ եւ ամենայն ինչ զոր արար՝ ո՞չ աւանիկ գրեալ են ի գիրս բանից աւուրց թա-
6 գաւորացն Յուդայ։ Եւ ննջեաց Յովակիմ ընդ հարս իւր, եւ թագաւորեաց Յովաքազին որդի նորա ընդ նորա։
7 Եւ ոչ եւս յաւել արքայն եգիպտացւոց ելանել յերկրէն իւրմէ. քանզի առ արքայն Բաբելոնի ի հեղեղատէն Եգիպտացւոց մինչեւ գետան Եփրատ՝ զամենայն ինչ որ էր արքային Եգիպտացւոց։
8 Որդի ամաց ութեասանից էր Յովաքին ի թագաւորել իւրում, եւ երիս ամիսս թագաւորեաց յԵրուսաղէմ, եւ
9 անուն մօր նորա Նեհաստա՝ դուստր Եղամայ յԵրուսաղեմէ. Եւ արար չար առաջի Տեառն ըստ ամենայնի զոր ա-
10 րար հայր նորա։
Ի ժամանակի յայնմիկ [9]ել Նաբուքոդոնոսոր արքայ՝ Բաբելոնի յԵրուսաղէմ,
11 եւ եկն քաղաքն ի պաշարումն։ Եւ [10]եմուտ արքայն Բաբելացւոց ի քաղաքն,
12 եւ ծառայք նորա պաշարեալ պահէին զնա։ Եւ ել Յովաքին արքայ Յուդայ առ արքայն Բաբելացւոց ինքն եւ ծառայք իւր, եւ մայր իւր եւ իշխանք իւր եւ ներքինիք իւր. եւ առ զնա արքայն Բաբելացւոց, յամի ութերորդի թագաւո-
13 րութեան իւրոյ։ Եւ հնան զամենայն գանձս տանն Տեառն, եւ զգանձս տան

[8]ԵՐԷ. ըստ բանի Տեառն եղեւ [9]ԵՐԷ. ելին ծառայք Նաբուքոդոնոսորայ արքայի [10]ԵՐԷ. եկն Նաբուքոդոնոսոր

թագաւորին. եւ կոտորեաց զամենայն անօթս ոսկեզէնս զոր արար Սողոմոն արքայ Իսրայելի ի սուճարին Տեառն ըստ
14 բանին Տեառն։ Եւ խաղացոյց զամենայն Երուսաղէմ եւ զամենայն իշխանս եւ զամենայն զօրաւորս զօրավարսն ի գերութեան, ասեն հազար գերեաց, եւ զամենայն զինուսունս եւ [1]զդահիճս, եւ ոչ ոք մնաց բայ յազքատացն երկրին։
15 Եւ խաղացոյց զՅովաքիմ ի Բաբելոն, եւ զմայր թագաւորին եւ զկանայս նորա եւ զներքինիս նորա. եւ զզօրաւորս երկրին վարեաց ի գերութիւն յերուսա-
16 զեմէ ի Բաբելոն։ Եւ զամենայն արս զօրավարին՝ արս եւիմն հազար. եւ զինուսունս եւ [1]զդահիճս հազար այր, ամենեքին զօրաւարք պատերազմօղք. եւ վարեաց զնոսա արքայն Բաբելացւոց
17 ագոյ ի գերութիւն ի Բաբելոն։ Եւ թագաւորեցոյց արքայն Բաբելացւոց զՄաթթանիա [2]որդի նորա ընդ նորա. եւ եդ
18 նմա անուն Սեդեկիա։ Որդի քսան եւ մի ամաց էր Սեդեկիա ի թագաւորել իւրում, եւ մեսասան ամ թագաւորեաց յերուսաղէմ. եւ անուն մօր նորա Ամատեղ դստեր Երեմիայի ի Լաբնայ։
19 Եւ արար չար առաջի Տեառն ըստ
20 ամենայնի զոր արար Յովակիմ։ Զի սրտմտութիւն Տեառն էր ի վերայ Երուսաղէմի եւ Յուդայ, մինչեւ բնկէց զնոսա յերեսաց իւրոց. եւ նշհանեաց Սեդեկիա զարքայն Բաբելացւոց։

ԳԼ. Խ

1 Եւ եղեւ յամին իննևերորդի թագաւորութեանն նորա, յամսեանն տասներորդի որ օր տասն էր ամսոյն, եկն Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելոնի եւ ամենայն զօրք նորա ի վերայ Երուսաղէմի, եւ բանակեցան վնովա, եւ չինեալ
2 չուրջ վնովա պարիսպ։ Եւ պաշարեցաւ քաղաքն մինչեւ յամին մեսասան-
3 ներորդ Սեդեկիայ արքայի, եւ յամսեան իննևերորդ. եւ սաստկացաւ սով ի քաղաքին, եւ ոչ դոյր հաց ժողովրդեան
4 երկրին։ Եւ խրամատեցաւ քաղաքն. եւ ամենայն արք պատերազմի ելին առաքս գիշերի ի ճանապարհ դրանն ի մէջ [3]պարսպացն, որ է առ պարտիզան արքունի. եւ Քազդէացիքն պատեալ
5 էին չուրջ զքաղաքաւն. եւ գնաց ընդ ճանապարհն [4]Արաբայ։ Եւ պնդեցաւ զօրն Քազդէացւոց զկնի թագաւորին, եւ հասին նմա [5]Յերիքովայ. եւ ամենայն զօրք նորա ցրուեցան ի
6 նմանէ. Եւ կալան զթագաւորն եւ ածին առ արքայն Բաբելոնի ի Ռեբղաթա· եւ խօսեցաւ ընդ նմա դատաստանաւք։
7 Եւ զորդիսն Սեդեկիայ սպան առաջի նորա, եւ զաչսն Սեդեկիայ կուրացոյց, եւ կապացս զնա կապանօք եւ տարաւ ի Բաբելոն։
8 Եւ յամսեանն հինգերորդի, որ օր եւթն էր ամսոյն, այն ամ ինն եւ տասներորդ էր Նաբուքոդոնոսորայ արքայի Բաբելացւոց, եկն Նաբուզարդան դահճապետ՝ յանդիմանակաց արքային Բաբելոնի յեր-
9 ուսաղէմ, Եւ այրեաց զտունն Տեառն եւ զտուն թագաւորին, եւ զամենայն տունս երուսաղէմի եւ զամենայն [6]տունս
10 այրելոց հրով։ Եւ զպարիսպն երուսաղէմի չուրջանակի քակեցին ամենայն զօրքն Քազդէացւոց որ ընդ դահճապե-
11 տաւն։ Եւ զաւելորդս ժողովրդեանն գինաց գերեալս ի քաղաքին, եւ զանկեալսն յարքային Բաբելացւոց, եւ զայլ եւս խուժան ժողովրդեանն, խաղացոյց Նա-
12 բուզարդան դահճապետ։ Եւ յազքատաց երկրին եթող դահճապետն յայգեզործս եւ յարդիւնագործս։
13 Եւ զպղնեան սիւնսն [7]զերկոսին որ ի տան Տեառն, եւ զմեքենովքն եւ զծովն պղնձի որ ի տան Տեառն, խորտակեցին Քազդէացիքն եւ բարձին
14 զպղինձ նոցա ի Բաբելոն։ Եւ զսանձն եւ զխառատսն եւ զաւազան եւ զսուսփս, եւ զամենայն անօթս պղնձիս որով
15 պաշտէին՝ առին։ Եւ զրուբռատան եւ զսխահանան զարծաթիս եւ զոսկիս առ
16 դահճապետն. Եւ զերկոսին սիւնսն, եւ զծովն միմ, եւ զմեքենովքն զոր արար Սողոմոն ի տան Տեառն. եւ ոչ դոյր կշիռ պղնձոյ ամենայն անօթոցն։
17 Յութասուն կանգնոյ բարձրութիւն միոյ սեամն, եւ [8]բովիտ պղնձի ի վերայ նորա. եւ բարձրութիւն միոյ բովիտոյ՝ յերից կանգնոյ. եւ [9]սալաք, եւ նռնաձեւք ի վերայ բովիտոյն չուրջանակի՝ ամենայն պղնձի. ըստ նմին

[1] Եբր. զդաշնին [2] Եբր. զՅօրեզրայր [3] Եբր. երկուց պարսպացն
[4] Այլոյն՝ դաշտին [5] Այլոյն՝ ի դաշտան [6] Եբր. տուն մեծ [7] Յեբր. պոռոս [8] Սլաքաձեւ՝ խոյակ [9] Սլաքաձեւ՝ վանդակակերպ

օրինակի եւ սեանն երկրորդի ի վերայ սաւաքին ։
18 Եւ առ դահճապետն զՄարայիա քահանայն զառաջինն , եւ զՍոփոնիա զերկրորդ քահանայ , եւ զերիս պահապանս
19 [1]կղոցն . Եւ ի քաղաքէ անտի առ ներքինի մի , որ էր ոստիկան արանց պատերազմողաց , եւ հինգ այր ի յանդիմանողացդ արքային դտելոց ի քաղաքին , եւ զզպրապետ իշխան զօրուն՝ զկարդիչ ժողովրդեան երկրին , եւ վաթսուն այլ այր ի ժողովրդենէ երկրին զգտեալս ի քաղա-
20 քին ։ Եւ առ զնոսա Նաբուզարդան զդահճապետ , եւ տարաւ զնոսա առ արքայն
21 Բաբելոնի ի Ռեբղաթա ։ Եւ եհար զնոսա արքայն Բաբելոնի , եւ սպան զնոսա ի Ռեբղաթա յերկրին Եմաթայ ։ Եւ գերե-
22 ցաւ Յուդայ յերկրէ իւրմէ ։ Եւ զժողովուրդն որ մնաց ի Յուդայ՝ եթող Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելոնի , եւ կացոյց ի վերայ նոցա զԳոդոդիա որդի Աքիկամայ որդւոյ Սափանայ ։
23 Եւ լուան ամենայն իշխանք զօրուն նորա եւ արք նոցա եթէ կացոյց ի վերայ արքային Բաբելոնի զԳոդոդիա . եւ եկին առ Գոդոդիա ի Մասփա , Իսմայէլ որդի Նաթանեայ եւ Յովհանան որդի Կարէի , եւ Սարայիա որդի Թանայեմայ [2]Նետոփաթացի , եւ Յեզոնիա որդի Մաքաթեայ , ինքեանք եւ արք իւրեանց ։
24 Եւ [3]երդուան Գոդոդիայ՝ ինքեանք եւ

[1] Ելբ. դրան [2] Ելբ. Նետոփաթացի [3] Ելբ. երդուաւ Գոդոդիա , նոցա եւ արանց նոցա

արք իւրեանց՝ . եւ ասէ ցնոսա , Մի երկնչիք [4]յառաջատակէ Քաղդեացւոցն . նստարուք յերկրիս , եւ ծառայեցէք արքային Բաբելոնի , եւ բարի եղիցի ձեզ ։
25 Եւ եղեւ յամսեանն եւթներորդի եկն Իսմայէլ որդի Նաթանեայ որդւոյ Եղիսամայ ի զաւակէ թագաւորաց , եւ տասն այր ընդ նմա , եւ հարին զԳոդոդիա եւ մեռաւ , եւ զՀրեայսն եւ զՔաղդէացիսն
26 որ էին ընդ նմա ի Մասփա ։ Եւ յարեաւ ամենայն ժողովուրդն ի փոքուէ մինչեւ ցմեծ , եւ իշխանք զօրուն մտին յԵգիպտոս . զի երկեան յերեսաց Քաղդեացւոցն ։
27 Եւ եղեւ յերեսներորդի եւ յեւթներորդի ամի գերեցաւ Յովաքինայ արքայի Յուդայ , յամսեանն երկոտասաներորդի , ի քսան եւ յեթն ամսոյն , բարձրացոյց Եւիլմարովդաք արքայ Բաբելոնի յամի թագաւորելոյն իւրոյ՝ զգլուխ Յովաքինայ արքայի Յուդայ , եւ հան զնա ի տանէ բանտին իւրոյ .
28 եւ խօսեցաւ ընդ նմա քաղցրութեամբ . եւ արկ զաթոռ նորա ի վերոյ քան զաթոռ թագաւորացն որ ընդ նմա ի Բաբելոնի ։ Եւ փոխեաց զհանդերձս բանտի
29 նորա . եւ ուտէր հաց հանապազ առաջի նորա զամենայն աւուրս կենաց իւրոց ։
30 Եւ առճիկ նորա առճիկ հանապազորդ տուաւ նմա ի տանէ թագաւորին , հաւմարոյ օր բան օրէ զամենայն աւուրս կենաց իւրոց ։

[4] Ելբ. ի ծառայից

ԳԼՈՒԽՔ ԱՌԱՋԻՆ ՄՆԱՑՈՐԴԱՑ

	Գլ.	Համ.
ՅԱդամայ մինչեւ ցՆոյ	Ա.	1
Ազգք երից որդւոցն Նոյի, որք յերեսաց նոսուն եւ երկիր լեզուս բաժանեցան	Ա.	4
Ի Սեմայ մինչեւ ցԱբրահամ, Հանգերձ Սեմայ մեռոսան ծնունդք	Ա.	24
Որդիք Աբրահամու որ ի Հագարայ են՝ երկոտասան ազգ	Ա.	28
Նոյինպէս եւ որք ի Քետուրայ՝ երկոտասան ազգ	Ա.	32
Որդիք Եսաւայ վեցոտասան ազգ. եւ Բոռեցին քոան եւ ութ ազգ	Ա.	35
Ութ թագաւորք ազգին Եսաւայ	Ա.	43
Եւ յետ Նոցա մեռոսան իշխանք	Ա.	51
Երկոտասան որդիք Յակոբայ	Բ.	1
Տունն Յուդայ ի Փարեսայ մինչեւ ցԿուբիհ տասն ազգ	Բ.	3
Չի ի տանէն Փարիսի է Բեսսլիէլ	Բ.	18
Որդիք Դաւթի մինչեւ ցՁորաբաբէլ. եւ ի Զորաբաբելէ մինչեւ ցՅեսնիա, յորոյ աւուրս գրեցաւ գիրս այս	Գ.	1
Երկոտասան որդիք Յակոբայ	Գ.	9
Կալաւածք որդւոցն Ճմաւնի	Գ.	24
Չի Ռուբէն Փոգաւ եւ Մանասէ իւրացան կալով ընդ Ասուածոյ, եւ յուխտազանց լինելն գերեացն ընտոխագաթի փաղաւար	Ե.	1
Ի տանէն Կահաթայ որդիք Ամրամայ Ահարան եւ որդիք իւր քահանայապետք մինչեւ ցՅովսեդեկ որ գերի չոգաւ ի Բաբելոն	Զ.	1
Ի նոյն տանէն Կահաթայ որդիք Սահառայ Կորխ եւ որդիք Նոցա. յորոց Սամուէլ, եւ յորդւոց Նորա սաղմոսասացն կարգեալք ի Դաւիթայ. եւ այլք ի տանէն Գերսոնի եւ Մերարեայ	Զ.	22
Քաղաքքն ապատնուէեան, յորս բնակեցան Ղեւտացիքն	Զ.	54
Հանդէս որդւոցն Իսաքարու, Նեփթադիմայ, Մանասէի, Եփրեմի, Ասեր, Բենիամինի	Է.	1
Եւ այլ էին դռնապանք և իշխանք գործոյ տաճարին	Թ.	10
Առնն Սաուղայ եւ որդւոց Նորա	Թ.	35
Թագաւորեաց Դաւիթ ի Քեբրոն, եւ առ զԵրուսաղէմ	ԺԱ.	1
Քաջութիւնք զօրականացն Դաւթի	ԺԱ.	10
Ժողովեցան ի Քեբրոն յամենայն ցեղիցն՝ երեքհարեւր երեսուն եւ եւթն հազար եւ չորեք հարեւր, եւ թագաւորեցուցին զԴաւիթ ամենայն Իսրայէլի	ԺԲ.	23
Եւ զի ոչ ուսուցեալ բարձին զտապանակն՝ սպան Աստուած զՈզա քահանայ	ԺԳ.	1
Բարեկամեալին Ֆիրամայ ընդ Դաւիթի, եւ վասն որդւոցն որ ծնան Նմա յԵրուսաղէմ	ԺԴ.	1
Եհար Դաւիթ երկիցս զպղտդիան	ԺԴ.	8
Ելան Դաւիթ զտապանակն ի տանէն Աբեղդարայ, եւ հանգոյց ի խառանն զոր ինքն կազմեաց	ԺԵ.	2
Կարգեաց պ'Ղեւտացիան սաղմոսասացս առաջի տապանակին յերուսաղէմ	ԺԶ.	4
Կարգեաց քահանայս եւ ի Թաքուան առաջի խորանին եւ սեղանոյն զօրարն Բեսեղիել	ԺԶ.	39
Ասաց Դաւիթ չինել տուն Աստուծոյ, եւ ասաց Տէր. Ոչ գու՝ այլ որդին քո շինեսցէ ինձ տուն, եւ գոհացաւ ընդ այնր զՏեառնէ	ԺԷ.	1
Սպան Կուխիթ զաբքային Մծբնայ, եւ տիրեաց մինչեւ ցԵփրատ գետ, կոտրեաց զԱդովմ եւ հարկեաց զՍամսկոս	ԺՀ.	1
Սրբեաց Տեառն զանօթն ոսկեղէն, զոր առաքեաց Նմա աքբայն Ասորեաց	ԺՀ.	9
Առաքեաց Դաւիթ մխիթարել զՀանան. եւ Նորա նախատեալ զհրեշտական, իմն հնամեայ իւնեկն և յաղթեցաւ	ԺԹ.	2
Չի յայլ եւ այլ պատերազմունս անկան սկսյքն անճոռնիք	Ի.	4
Բարկութեանն Ասուածոյ իրրեւ ինքնայորդոր գահիճ բանտարկուն, դրգեաց զԴաւիթ թուել զԻսրայէլ, և իլինել հարուածոց մահուն յԻսրայէլ, եկաց ի միջի Դաւիթ բարեխօս	ԻԱ.	1
Նշոյց Տէր Դաւթի զտեղի տաճարին զկայն Արաւնայ՝ ուր կոնգնեաց սեղան, ուր եւ ընկալաւ Աստուած ղողջակէզն հրով	ԻԱ.	18
Կացոյց Դաւիթ քարահատս եւ հիւսուն եւ նիւթ տաճարին, եւ քաջ չալերեաց զՍողոմոն եւ զիշխանսն ի գործն	ԻԲ.	1
Կոչոյց Դաւիթ գաւառապետս յԼեւտացւոցն, եւ գաւրանուոցս ազգատաց. և զի որդիքն Մովսիսի թուեցան յԼեւտացիսն	ԻԳ.	3
Որդւոցն Ամարամի Սադովկ ի տանէն Նզիւազարու, եւ Աբիաթար յԻթամարայ. և որք ըստ իւրաքանչիւր գաւուցն ի պաշտօնն	ԻԿ.	1
Իշխանք եւ գործավարք Դաւթի յամենայն ցեղիցն	ԻՋ.	32
Ղատուէր եւ Սողոմոն պահել զօրէնս Աստուծոյ, եւ եւս նմա զՀանգամանս չինուածոյ տաճարին	ԻՐ.	1
Չի Նպաստ եղեն իշխանքն ի նիւթ տաճարին	ԻԹ.	6
Չի վասն այսորիկ գոհացաւ Դաւիթ, և յանձնեաց Տեառն զժողովուրդն	ԻԹ.	10

ՄՆԱՑՈՐԴԱՑ

ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Ա ԴԱՄ, Սէթ, Ենոս, (2) Կայնան,
3 Մաղաղայէլ, Յարէդ, Ենովք,
4 Մաթուսաղա,Ղամէք, Նոյ. [1]Որպիք
Նոյի՝ Սէմ, Քամ, Յաբեթ։
5 Որպիք Յաբեթի՝ Գամեր, Մագովգ,
Մադայ, [1]Յավանան, [2]Եղիսան, Թուբէլ,
6 Մոսոք եւ Թիրաս։ Եւ որպիք Գամե-
րայ՝ Աքքանազ եւ Հոխիփի եւ Թոր-
7 գոմա։ Եւ որպիք [3]Յավիդանայ՝ Եղիսա եւ
Թարսիս, Կիտացիք եւ [4]Հռոդացիք։
8 Եւ որպիք Քամայ՝ Քուշ եւ Մեսրա-
9 իմ, Փուտ եւ Քանան։ Եւ որպիք Քու-
շայ՝ Սաբա, եւ Եւիլա եւ Սաբաթա եւ
Հանգմա եւ Սաբաքաթա։ Եւ որպիք
10 Հանգմայ՝ Սաբա եւ Դեդան։ Եւ Քու-
շ ծնաւ զՆեբրովդ. սա սկսաւ լինել հակայ
11 [1]որսորդ ի վերայ երկրի։ Եւ Մեսրայիմ
ծնաւ զԼուդիմացիս եւ զՂաբիմացիս
եւ զԱնամիմացիս եւ զՆեփթաքիմացիս
12 Եւ զՊաստրոսիմացիս եւ զՔասղոնիի-
մացիս, ուստի ելին անտի Փղշտացիք,
13 եւ զՔաւղիմորիմացիս։ Եւ Քանան ծնաւ
զԱիդոն զանդրանիկ իւր եւ [5]զԵնաւա-
14 նացին Եւ զՅեբուսացին եւ զԱմորհա-
15 նացին եւ զԳերգեսացին Եւ զԵւեսացին
16 եւ զԱրքեսացին եւ զԱնենացին Եւ
զԱրադացին եւ զՄամոթացին եւ զԱ-
մաթացին։
17 Որպիք Սեմայ՝ Եղամ եւ Ասսուր եւ Ար-
փաքսադ եւ Լուդ եւ Արամ, եւ [1]որ-
պիք Արամայ՝ Հաւս եւ Եմուզ եւ Փա-
18 թեր եւ Մոսոք։ Եւ Արփաքսադ ծնաւ
[1]զԿայինան, եւ Կայինան ծնաւ՝ զԱ-
19 զա, եւ Սաղա ծնաւ զԵբեր։ Եւ Եբե-
րայ ծնան երկու որդիք, անուն միումն
Փազէկ, զի յաւուրս նորա բաժանեցաւ
երկիր. եւ անուն եղբօր նորա Յեկտան։
20 Յեկտան ծնաւ զԵղմոդադ եւ զՍազաֆ
21 եւ զԱսարմաւէթ եւ [6]զԿեդրուբան եւ զԵ-
22 դէլ եւ զԴիկղան եւ զԴիբազ եւ զԱ-
23 բիմէլ եւ զՍաբա Եւ [7]զՍուփիր եւ զԵ-
ւիլա եւ զՅովբաբ. ամենեքեան սոքա որ-
դիք Յեկտանայ։
24 [8]Որպիք Սեմայ՝ Եղամ եւ Ասսուր եւ՝
25 Արփաքսադ, [1]Կայինան, Սաղա, Եբեր,
26 Փազէկ, Ռագաւ, Սերուգ, Նաքսոր,
27 Թարայ, Աբրամ, նա ինքն է Աբրահամ։
28 Եւ որպիք Աբրահամու՝ Իսահակ եւ Իս-
29 մայէլ։ Սոքա են [9]ծնունդք Իսմայելի՝
30 Նաբէոթի եւ Կեդար եւ Ադբէէլ,
Մաբսան, Մասմա եւ Դումա, Մասէ,
31 Քադադ, Թեման, Իտուր, Նաբիս եւ
Կեդմա. սոքա են որպիք Իսմայելի։
32 Եւ որպիք Քետուրայ հարճին Աբրա-
համու, [10]եւ ծնաւ նմա՝ զԵմրան եւ
զՅեկսան եւ զՄադան եւ զՄադիան եւ
զՅեսբակ եւ զՍուսբէէ։ Եւ որպիք Յեկ-
սանայ՝ Սաբա եւ Դեդան. [1]եւ որպիք
Դեդանայ՝ Ռագուէլ եւ Աբդեէլ եւ Աս-
սուրիիմ եւ Լատուսիիմ եւ Լաումիմն՝
33 Եւ որպիք Մադիանայ՝ Եփա եւ Ափեր
եւ Ենովք եւ Աբիդա եւ Եղդա. ամենե-
քեան սոքա որպիք Քետուրայ։
34 Եւ ծնաւ Աբրահամ զԻսահակ. եւ որ-
35 պիք Իսահակայ՝ Եսաւ եւ [11]Յակոբ։ Որ-
պիք Եսաւայ՝ Եղիփազ եւ Հառգաւէլ եւ
36 Յեւս եւ Եղղամ եւ Կորհ։ Որպիք Ե-
լիփազայ՝ Թեման եւ Ումար, Սոփա,
Գոլոմ եւ Կենէզ. եւ [12]Թամար հարճ
37 Եղիփազու՝ ծնաւ նմա զԱմաղէկ՝։ Եւ
որպիք Ռագուելի՝ Նաքէթ, Զարհ, Սո-
38 մէ եւ Մոզէ։ Եւ որպիք Սէիրայ՝ Ղոլ-
ման, Սոբաղ, Սեբէգոն, Անա, Դիսան
39 եւ Ասար եւ Դիսան։ Եւ որպիք Ղոլ-
մանայ՝ Փուռ եւ Լոման. եւ քոյր Ղոլ-
40 մանայ՝ Թամնա։ Որպիք Սոբաղայ՝

---

[1] ՅԵբբ. պ-ի-ե [2] ՅԵբբ. Յաւան [3] ՅԵբբ. Յաւա-
նայ [4] Կամ, Դոդացիք [5] ՅԵբբ. զՔետ
[6] ՅԵբբ. զՅաբոք և զՅոմ որամ [7] ՅԵբբ. զԱփփեր [8] ՅԵբբ.
Սէմ [9] ՅԵբբ. ծնունդք նոցա. անգրանիկն Իսմայելի
[10] ՅԵբբ. Նա ծնաւ [11] ՅԵբբ. Իսրայէլ [12] ՅԵբբ.
Թամիա եւ Ամաղէկ։

Գովղամ եւ Մանաքաթ եւ Գեդրաղ եւ
Սովփա եւ Յովնան. եւ որդիք Սկըւ-
41 գանի՝ Աչիա եւ Անա։ Եւ որդիք Անայ՝
Դիսան [1]եւ Եղիբամա գուսար Անայի՞.
եւ որդիք Դիսանի՝ Ամրան եւ Եսեբան եւ
42 Յեթրան եւ Քառան։ Եւ որդիք Ասա-
րայ՝ Բաղաան եւ [2]Ազուկամ եւ Յովի-
կամ եւ Ուկամ՞. եւ որդիք Դիսանայ՝
Ումա եւ Առան։
43 Եւ այսոքիկ թագաւորք նոցա որք
թագաւորեցին յեղովմ, յառաջ քան
զթագաւորել թագաւոր որդւոցն Իսրա-
յելի. [3]Բաղակ որդի Սեփովրայ՞. եւ ա-
44 նուն քաղաքի նորա Դինաբա։ Եւ մե-
ռաւ [4]Բաղակ, եւ թագաւորեաց փո-
խանակ նորա Յոբաբ, որդի Զարեհի ի
45 Բոսորայ։ Եւ մեռաւ Յոբաբ, եւ թա-
գաւորեաց փոխանակ նորա Ասովմ յերկ-
46 րէն Թեմանացւոց։ Եւ մեռաւ Ասովմ, եւ
թագաւորեաց փոխանակ նորա Ադադ,
որդի Բադադայ, որ եհար զՄադիամ ի
գաւառին Մովաբայ, եւ անուն քաղաքի
47 նորա [5]Գէթեմ։ Եւ մեռաւ Ադադ, եւ
թագաւորեաց փոխանակ նորա Սամլա
48 ի Մասրեկայ։ Եւ մեռաւ Սամլա, եւ
թագաւորեաց փոխանակ նորա Սաւուղ
49 յՌոռովթայ, որ առ Գետեղերբն էր։ Եւ
մեռաւ Սաւուղ, եւ թագաւորեաց փո-
խանակ նորա Բաղանեան որդի Աքբոռո-
50 բայ։ Եւ մեռաւ Բաղանեան [1]որդի Ա-
քբոռորայ՞, եւ թագաւորեաց փոխանակ
նորա Ադադ, եւ անուն քաղաքի նորա
Փոգով, եւ անուն կնոջ նորա Մեհետ-
բեէլ՝ գուսար Մատրադայ[6]։
51 Եւ մեռաւ Ադադ. եւ այս են իշխանք
եդովմայ. իշխան Թամնա, իշխան
52 Գովղա, իշխան Յեթաթ, Իշխան Ողի-
բամասա, իշխան Հէլա, իշխան Փինովն,
53 Իշխան Կենէզ, իշխան Թեմանի, իշխան
54 [7]Գարսար, Իշխան Մագդիէլ, իշխան
Զաբոյին. սոքա են իշխանք եդովմայ։

Գլ. Բ

1 Եւ այս են անուանք որդւոցն Իսրա-
յելի. Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա,
2 Իսաքար, Զաբուղոն, Դան, Յովսէփ,
Բենիամին, Նեփթաղիմ, Գադ, Ասեր։
3 Եւ որդիք Յուդայ, Էր եւ Աւնան եւ
Սելովմ. երեք սոքա ծնան նմա ի դստե-
րէն Շաւայ Քանանացւոյ. եւ [8]էր ան-
դրանիկն Յուդայ չար առաջի Տեառն,
4 եւ սպան զնա։ Եւ Թամար նոր նորա
ծնաւ նմա զՓարէս եւ զԶարա. ամե-
նեքեան սոքա որդիք Յուդայ հինգ։
5 Որդիք Փարեսի՝ Եսրոմ եւ Յամուէլ։
6 Եւ որդիք Զարայի՝ Զամրի եւ Եթան եւ
Եման եւ Քաղքաղ եւ Դարա, ամենեքե-
7 ան հինգ։ Եւ որդիք Քարմիայ՝ Աքար
խախանիչն Իսրայելի որ անօրէնեացաւ ի
8 Նզովսն։ Եւ որդիք Եթանայ՝ Ազարիա։
9 Եւ որդիք Եսրոմայ որք ծնան նմա՝ Յե-
րամէլ եւ [9]Արբամ եւ Աքուբէլ եւ Արամ՞։
10 Արամ ծնաւ զԱմմինադաբ, եւ Ամմի-
նադաբ ծնաւ զՆաասոն զիշխան տանն
11 Յուդայ. Եւ Նաասոն ծնաւ զՍազմոն,
12 Սազմոն ծնաւ զԲոոս, Եւ Բոոս ծնաւ
13 զՈվբեդ, եւ Ովբեդ ծնաւ զՅեսսէ, Եւ
Յեսսէ ծնաւ զանդրանիկն իւր զԵղիաբ,
եւ զԱբինադաբ երկրորդ, եւ զՍամաա
14 երրորդ, Եւ զՆաթանայէլ չորրորդ, եւ
15 զՀռադդայ հինգերորդ, Եւ զԱսոմ վե-
16 ցերորդ, եւ զԴաւիթ եւթներորդ։ Եւ
քոյր նոցա Շարուհեա եւ Աբիգեա. եւ
որդիք Շարուհեայ՝ Աբիսաա եւ Յովաբ
17 եւ Ասայէլ, երեք։ Եւ Աբիգեա ծնաւ
զԱմեսսայի. եւ հայր Ամեսսայ՝ Յեթրի
Իսմայելացի։
18 Եւ Բազէբ որդի Եսրոմայ [10]առ զԱզուբա
կին իւր, եւ ծնաւ զերիմովթ՞. եւ սո-
քա են որդիք նորա. Յովսաբ եւ Սով-
19 բաբ եւ [11]Ոռնա։ Եւ մեռաւ Ազուբա, եւ
առ իւր Բազէբ զԵփրաթ, եւ ծնաւ
20 նմա զՈվր։ Եւ Ովր ծնաւ զՈվրի, եւ
Ովրի ծնաւ զԲեսեղիէլ։
21 Եւ յետ այսորիկ եհուա Եսրոմ առ
գուսար Մաքիրայ հօրն Գաղաադայ, եւ
նա առ զնա. եւ ինքն էր ամաց վաթ-
22 սուն. եւ ծնաւ նմա զՍեգուբ։ Եւ Սե-
գուբ ծնաւ զՅայիր. եւ էին նորա քսան
23 եւ երեք քաղաքք ի Գաղաադ։ Եւ առ
զԳեսուր եւ զԱրամ, զհաղն Յայիրայ
ի նոցանէ, զկանաթ եւ զաւանս նորա
վաթսուն քաղաք, զամենեսեան որդ-
24 ւոցն Մաքիրայ հօրն Գաղաադայ։ Եւ
յետ մեռանելոյն Եսրոմայ՝ ևկն Բազէբ

[1] Յերբ. գ-ւ-ռ [2] Երբ. Զաաւան և Յաական [3] Երբ. Բաղա որդի Բէովրայ [4] Երբ. Բաղա [5] Երբ. Աւիթ [6] Երբ-յերբէ յ--ե-, գուսար Մեզեաբայ։ [7] Երբ. Մաքզար

[8] Երբ. եղեւ էր [9] Երբ. Բամ (Արամ) եւ Բե-
զուբա (Բաղէբ), (տե՛ս Հմր. 18. 42։) [10] Երբ.
ծնաւ յԱզուբայ կնոջէ իւրմէ եւ յերիմովթայ
[11] Երբ. Արդոն

Եվրաթա . եւ կին Եսրոմայ Արիա ծնաւ
նմա զԱսգամ զհայր Թեկուայ ։
25 *Եւ էին որդիք Յերամիելի անդրան-*
կանն Եսրոմայ , անդրանիկ Համմա եւ
Բաան եւ Առան եւ Ասոլմ [1]եղբայրս նո-
26 *րա՞ ։ Եւ էր կին այլ Յերամիելի , եւ ա-*
նունն նորա Ատարա . նա է մայր Ռնո-
27 *մայ ։ Եւ էին որդիք Համմայ անդրան-*
կանն Յերամիելի՝ Մաաս եւ Յամին եւ
28 *Ակար ։ Եւ էին որդիք Ռնամայ՝ Սամայի*
եւ Յազայի . եւ որդիք Սամայայ՝ Նա-
29 *դաբ եւ Աբիսուր ։ Եւ անուն կնոջն Ա-*
բիսուրայ [2]Աբիսհա . եւ ծնաւ նմա զՄա-
30 *զաար եւ զՄովղիդ ։ Եւ որդիք Նադա-*
բայ Սազադ եւ Ափիսեմ . եւ մեռաւ Սա-
31 *զադ , եւ ոչ զոյր նորա որդի ։ Եւ որ-*
դիք Ափիսեմայ՝ Յեսան . եւ որդիք Յես-
սեայ՝ Սովսան . եւ որդիք Սովսանայ՝
32 *Ազայի ։ Որդիք [3]Ազայեայ՝ Աքիսամա եւ՞*
Յեմեր եւ Յոնադաբան . եւ մեռաւ Յե-
33 *թեր , եւ ոչ զոյր նորա որդի ։ Եւ որդիք*
Յոնադաբանայ՝ Փաղէթ եւ Զազա . սոքա
են որդիք Յերամիելի ։
34 *Եւ ոչ զոյին Սովսանայ ուսաներք , այլ*
դստերք միայն . եւ Սովսանայ էր ծառայ
Եգիպտացի , եւ անուն նորա Յովքազ .
35 *Եւ եա Սովսան զդուստրն իւր Յովքազի*
ծառային իւրում կնութիան , եւ ծնաւ
36 *նմա զԵթթի ։ Եւ Եթթի ծնաւ զՆա-*
37 *թան , եւ Նաթան ծնաւ [4]զԱբեզ , Եւ*
Աբեզ՞ ծնաւ զՄիփազ , եւ Միփազ ծնաւ
38 *զՄովեզ , Եւ Մովեզ ծնաւ զՅէհու , եւ*
39 *Յէհու ծնաւ զԱզարիա , Եւ Ազարիա*
ծնաւ զԲեղէս , եւ Բեղէս ծնաւ զեղէ-
40 *ասա , Եւ եղէասա ծնաւ զՍատամէ , եւ*
41 *Սատամէ ծնաւ զՄազդում , Եւ Մազդում*
ծնաւ [5]զՅեքամիա , եւ Յեքամիա՞ ծնաւ
զեղիասամա ։
42 *Եւ որդիք Քաղեբայ եղբօր Յերամիե-*
լի՝ [6]Մարիսա անդրանիկ նորա . սա է
հայր Զիփայ . եւ [7]որդիք Մարիսայ հօր՞
43 *Բեթլեհեմ ։ Եւ որդիք Քերրոնի՝ Կորհ եւ*
44 *Թափաի եւ Հասկամ եւ Սեմաա ։ Եւ*
Սեմաա ծնաւ զՀռաւամ զհայրն [8]Յերա-
կայ , եւ Յերակայա՞ ծնաւ զՄազդամա ։
45 *Եւ որդիք նորա Մաոնի , հայր Բեթսուր-*
46 *բայ ։ Եւ Գեփա հարճ Քաղեբայ՝ ծնաւ*
47 *զՀառան եւ զՅովսա եւ զԳեզուէ[9] ։ Եւ*
որդիք Ագայի՝ Հոադեմ եւ Ովթամ եւ
Գեսամ եւ Փաղէտ եւ Գեփա եւ Սա-
48 *գաւ ։ Եւ հարճն Քաղեբայ Մովքա՝ ծնաւ*
49 *զՍեբեր եւ զԹիրհանա ։ Եւ ծնաւ [10]Սա-*
գաւ զհայրն Մադմենայ , եւ Սաուս զ-
հայրն Մաքաբենայ , եւ զհայրն Բաա-
զայ . եւ դուստր Քաղեբայ Ասքա՞ ։
50 *Սոքա էին որդիք Քաղեբայ . [11]որդիք*
Ովրայ անդրանկանն Եփրաթայ՝ Սովքազ
51 *հայր Կարիաթարիմայ , Սալմոն հայր*
[12]Բեթղեհեմայ , հայր Բեթգեդէմ , Արի՞հայր
52 *Բեթգեդովրայ ։ Եւ էին որդիք Սովքա-*
53 *զայ հօրն Կարիաթարիմայ՝ [13]Արա , Ե-*
սի , Ամանիթի , Թիւմաթացի եւ Հոհա-
թիւսեր , Եթթազիմ եւ Եփրիթին եւ Սա-
մաթիին , Հնամաարին՞ . ի նոցանէ ելին
54 *Սարաթացիք եւ Եսթաւուղացիք ։ Որ-*
դիք Սալմայի՝ Բեթղեհեմ եւ Նետոփա-
թի , Ատարովթ , տուն Յոաբայ եւ [14]կես-
55 *մանախայ , Եաբացի՞ . Տոհմ գրչացն*
որք բնակէին ի Գաբէս , [15]Ագաթեմի եւ
Սամաթիթիմ , Սուկաթիթիմ՞ . սոքա են
[16]աւնք որք ելին յեմաթայ , [17]հօր տան
Հաքաբայ ։

ԳԼ . Գ

1 Եւ սոքա են որդիք Դաւթայ որք ծնան
նմա ի Քեբրոն. անդրանիկն Ամմոն՝ յԱ-
քինոամայ Յեզրայելացւոյ . եւ երկ-
րորդն [18]Դանուխա՝ յԱբիգեայ Կարմե-
2 *ղացւոյ. Երրորդն Աբիսողոմ , որդի Մաւ-*
քայ՝ դստեր Թողմայ թագաւորին Գե-
սուրայ . չորրորդ Ադոնիա՝ որդի Ագի-
3 *թայ . Հինգերորդ Սափատիա՝ յԱբիտա-*
ղայ. վեցերորդ Յեթրաամ , յեգդամայկնոջէ
4 *իւրմէ ։ [19]Սոքա ծնան նմա ի Քեբրոն .*
եւ թագաւորեաց անդ զեւթն ամ եւ
զվեց ամիս . եւ երեսուն եւ երիս ամս
թագաւորեաց յԵրուսաղէմ ։
5 *Եւ սոքա ծնան նմա յԵրուսաղէմ ,*
Սամաա , Սովաբ , Նաթան , եւ Սողոմոն

---

[1] Եբբ. Ե Աքիա [2] Եբբ. Աբիհայիլ [3] Եբբ. Ագայայ , եղբօր Սամայայ , [4] Եբբ. զԶաքագ. (37) Եւ Զաքագ [5] Եբբ. զՅեկամիա , եւ Յեկամիա [6] Եբբ. Մեսա [7] Եբբ. որդի Մարեսա էր Հայր [8] Եբբ. Յարկաամայ, եւ Հառկամ

[9] Եբբ. եւ Առան ծնաւ զԳեզուէ [10] Եբբ. զԱագափ զՀայրն Մադմենայ, և զՇաւա զՀայրն Մաքաբենայ եւ զՀայր Գաբաայ . եւ դուստր Քաղեբայ էր Աքսա [11] Եբբ. որդւոյ [12] Եբբ. Բեթզեհեմայ, Հարեփ [13] Եբբ. Հարեէ, կէս Մանաքաթի ացւոց. (53) Եւ տոհմք Կարիաթարիմայ՝ Յեթերացիք , Փութացիկ , Սամաթացիք, Մասարացիք. [14] Եբբ. կէս Մանաթայ եւ Սրթացիք [15] Եբբ. Թարգաթացիք , Սամաթացիք, Սովկաթացիք [16] Եբբ. կենեզկը [17] Եբբ. ի հօրէ [18] Եբբ. Դանիէլ [19] Եբբ. Սոքա վեցեքին

[1]ի Բերսաբեացւոյն ի գաւառէ Աւիկի. 6 Եւ Յերսաւ եւ Եղիսամա եւ Եղիփաս 7 ղէտ եւ Նազեր եւ Նաւիկ եւ Յաւիւի 8 եւ Եղիսամա եւ Եղիադա. [2]սոքա էին 9 եւ տան որդի՝ Դաւթայ, առանց որդ- ւոց Հարճից նորա. եւ Թամար քոյր նոցա։ 10 Որդիք Սոզոմանի, Ռոբովամ եւ Ա- բիաս որդի նորա, Ասա որդի նորա, 11 Յովսափատ որդի նորա, Յորամ որդի նորա, Ազոքիաս որդի նորա, Յոտամ որդի նորա, Աքսիաս որդի նորա, Ա- 12 զարիա որդի նորա, Յովղամ որդի 13 նորա, Աքազ որդի նորա, Եզեկիա որ- 14 դի նորա, Մանասէ որդի նորա, Ամովն 15 որդի նորա, Յոսիա որդի նորա։ Եւ որդիք Յոսիայ, անդրանիկ՝ [3]Յովաքազ, երկրորդ Յոակիմ, երրորդ Սեդեկիա, 16 չորրորդ Սելում։ Եւ որդիք Յոակի- մայ, Յեքոնիաս որդի նորա, Սեդեկիաս 17 որդի նորա։ Եւ որդիք Յեքոնեայ, Ասիր, 18 Սաղաթիէլ որդի նորա։ Մեղքիրամ եւ Փադայիաս եւ [4]Սովսամով եւ Նարա- 19 ւիաս եւ Սանեսար եւ Յեքոնիաս։ Եւ որդիք Սաղաթիելի՝ Զորաբաբելի եւ Սեմէի. եւ որդիք Զորաբաբելի՝ Մաս- զամոս եւ Ասանիաս եւ Սաղովմիթ քոյր 20 նոցա, Եւ Ասեբա եւ Ոող եւ Բարա- քիաս եւ Ասադիաս եւ Ասոբասէդ, [5]ուխ- 21 եւ որդիք Անասեայ՝ Փազէտիա, եւ Յե- սիա որդի նորա, Հասիայիա որդի նո- րա, Ռոնա որդի նորա, Ասդիա որդի 22 նորա, Սեքենիա որդի նորա։ Եւ որդիք Սեքենեայ՝ Սամայիա. եւ որդիք Սամայ- եայ՝ Քետտուս եւ [6]Յովէլ եւ Բերիա եւ Նոադիա եւ Մաիտա եւ Սափեք՝, վեց- 23 Եւ որդիք [7]Նոադեայ՝ Եղիսէ, Եզե- 24 կիաս, Եսբրիամ, երեք։ Եւ որդիք Ե- լիոնեայ, Ոզկոսիա եւ Եղիասիբ եւ Փադայիա եւ Ակկուբ եւ [8]Յովհան եւ Դադայիա եւ Անանիա, եւթն։

Գլ. Գ

1 Որդիք Յուդայ Փարէս, Եսրոմ եւ Քարմի 2 եւ Ոմր եւ Սուբադ, Եւ [9]Կիրիա որդի նորա. եւ Սուբադ՝ ծնաւ զՅէբ, եւ Յէբ ծնաւ զԱքիմայի եւ զՂազա. սոքա 3 են ծնունդք Սարաթհայ։ Եւ սոքա են որդիք Եւամայ, Յեսրայէլ եւ Յեսմա եւ Դաբէս, եւ անուն քեռ նոցա Եսկղե- 4 փան։ Եւ Փանուէլ հայր Գեդուրայ. եւ Եզեր՝ հայր Ովսանայ. եւ Սոքա են որ- դիք Ովրայ անդրանկանն Եփրաթայ՝ հօրն Բեթզեհեմայ։

5 Եւ Ասքուրայ՝ հօրն Թեկուայէն եր- 6 կու կանայք, Ասզա եւ Նաարա. Եւ ծնաւ նմա Նաարա զՔոզամ եւ զՆե- փայ եւ զԹեհման եւ զԱհիհաան. ամե- 7 նեքեան սոքա որդիք Նաարա։ Եւ որ- դիք Ասզայ՝ Սարեթ եւ Ասաար եւ 8 Եթնան։ Եւ Կոս ծնաւ զԱնովբ, եւ զՍովբոբա, եւ [9]այս են ծնունդք ազգօրն Հաքարայ՝ որդւոյ Յարիմայ։

9 Եւ էր Դաբէս փառաւոր քան զեղբարսն իւր, եւ մայրն կարգաց զանուն նորա Դաբէս, եւ ասէ, Ծնայ [10]իրրեւ զԴաբէս։ 10 Եւ կոչեաց Դաբէս զԱստուած Իսրայելի եւ ասէ, Եթէ օրհնելով օրհնեսցես զիս, եւ յաճախեսցես զսահմանս իմ, եւ եղիցի ձեռն քո ընդ իս, եւ [11]արասցես զի- տութիւն՝ ոչ խռովարհեցուցանել զիս։ Եւ ած Աստուած ի վերայ նորա զամենայն զոր ինչ խնդրեաց։

11 Եւ [12]Քաղեր հայր Եսքաստայ՝ ծնաւ 12 զՄաքիր. սա է հայր Ասթոնայ։ Եւ Ասթոն ծնաւ զՍաստրափա եւ զՓհեսէ եւ զԹահնա զհայն [13]քաղաքին Նաասայ, եղբօրն Եսկղովնի կենեզացւոյ՝, սոքա 13 են արք Հռեփայ։ Եւ որդիք Կենեզայ՝ Գոթնիէլ եւ Սարայիա. եւ որդիք Գո- 14 թնիէլի՝ Ատթաի։ Եւ Մանաթի ծնաւ զՈովփարայ, եւ Սարայիա ծնաւ զՅոաբ հայրն Գերասեխայ. քանզի հիւսունք 15 էին։ Եւ որդիք Քազեբայ [14]Յեփոնէ, Եզա եւ Նաամ. եւ որդիք [15]Ատամայ՝ կե- 16 նէզ. Եւ որդիք Յայելելի Զիփ եւ Զե- 17 փա եւ Թիրա եւ Եսրայէլ։ Եւ որդիք Եզրայի Յեթեր, Մովրադ եւ Գաիեր. եւ [16]Ազան ծնաւ զՅեթեր եւ զՄարան եւ զՅեսամա, եւ զԱյիսբա՝ հայրն Էսթե- 18 մոայ։ Եւ կին նորա [17]ծնաւ զՅարեզ, հայրն Գեդովրայ, եւ զՅաբար հայրն

[1]ԵԲԲ. չորեքին սոքա ի Բաթսուայ, այլինն ի Բերսաբեայ։ [2]ԵԲԲ. եւ եղիփազէտ. ինն. (9) Ամենեքին որդիք [3]ԵԲԲ. Յոհանան [4]ԵԲԲ. Սանեսար, Յեկամիա, Ովամա եւ Նատաբիա էին, (19) Եւ որդիք Փադայիայ՝ [5]ԵԲԲ. Հինգ [6]ԵԲԲ. Իգազ եւ Բերիա եւ Նաարիա և Սափատ [7]ԵԲԲ. Նաարեայ [8]ԵԲԲ. Ռեփայիա որդի Սու- բաղայ

[9]ԵԲԲ. զտոհմն Ա.Հարհելայ [10]ԵԲԲ. զնա ի ցաւս [11]ԵԲԲ. փրկեսցես ի չարէ զի մի՛ ցաւեսցէ ինձ [12]ԵԲԲ. Բեզոբ եղբայր Սուհայ [13]ԵԲԲ. Երնա- սայ [14]ԵԲԲ.որդւոյ Յեփոնեայ՝ Իրու, [15]ԵԲԲ. Եղայ [16]ԵԲԲ. Աղան. եւ կին նորա ծնաւ զՄա- րիամ եւ զՍամայի, եւ զՅեսբա, [17]ԵԲԲ. Յուդիա ծնաւ

Սաքվէայ, եւ զՅեքթիէլ զհայրն Զովնանայ. եւ սոքա են որդիք Բեթթեայ զսահմանն Փարաւնի, զոր առ Մովաբ։
49 Եւ որդիք կնոջ Ովկեայ՝ քեռն [1]Նաքիմայ, եւ Դանա հայր Կեսեայ, եւ Սիմէոն հայր Յովմամայ. եւ որդիք Նաւմայ հօր Կէիլայ՝ Ոսորմի եւ Յեսթիմոն
20 եւ Մաքաթի։ Եւ որդիք Սամիւնայ՝ Ամնոն եւ Հոանննոն [2]որդի Մնանայ՝ եւ Թիլոն. եւ [3]որդի Յեսեայ՝ Զոհեթ, եւ որդիք Զոհեթայ՝
21 Որդիք Սեղումայ. որդւոյ Յուդայ՝ էր հայր Ղեքեայ, եւ Ղադա հայր Մաբնայ. եւ [4]Յնոնեդեք նոցա՝ Երպաթ,
22 Աբեսաան, Նեսոա՝ եւ Զովակիմ. եւ արք Քուզեբայ եւ Յովաս եւ Սարափ, որք բնակեցին ի Մովաբ. եւ [5]դարձոյց
23 նոցա զԱբեթար ի Նաթուկիմ։ Սոքա էին բրուտք որք բնակէին յԱնատիմ, եւ ի Թեմեկա ընդ Թագաւորին [6]ի Թագաւորութեան նորա, զօրացան եւ՝ բնակեցին անդ։
24 Որդիք Շմաւոնի՝ Նամուէլ եւ Յամին
25 եւ Յարիբ, Զարհ, Սաւուղ, Սաղէմ որդի նորա, Բասան որդի նորա, Ասա-
26 ման որդի նորա, Մազբա որդի նորա, Ամասէլ որդի նորա, [7]Սարուղ որդի նորա,՝ Զաքար որդի նորա, Սեմէի որդի
27 նորա։ Եւ Սեմեայ որդիք [8]վից եւ դստերք [9]տասն. եւ եղբարց նոցա ոչ էին որդիք բազումք. եւ ամենայն առնին նոցա ոչ առաւելաւ իրրեւ զորդիսն Յուդայ։ Եւ բնակեցին ի Բերսաբէէ
28 եւ [7]Սամսա եւ՝ Մոլզադա եւ Ասերսուզա
29 եւ ի Բաալա եւ ի Բասսում եւ ի Թուա-
30 զադայ եւ ի Բաթուէլ եւ յԵրմա եւ ի
31 Սիկեզակ եւ [10]Բեթմարա եւ Բաբսրա, եւ կէան Սեռմիմ եւ առէնն Բարուայ եւ Սէովրիմայ՝. այսոքիկ են քաղաքք Նո-
32 ցա մինչեւ ցարքայ Դաւիթ. Եւ [11]բաղաքք նոցա՝ Երամ եւ Երեմոն՝ եւ Թոքան եւ Եսան [7]եւ Թեկեն՝, քաղաքք
33 հինգ։ Եւ առնեայն [12]քաղաքք նոցա, եւ չուրջ զքաղաքօքն իւրեանց՝ մինչեւ ի Բաալ. սոյն են կալուածք նոցա՝
34 եւ վիճակք իւրեանց։ Եւ Մոսոբաբ եւ
35 Յամղէկ եւ Յովսա որդի Ամասեայ. Եւ
Յովէլ եւ Յէու որդի Սաբեայ, որդի
36 Սարեայ, որդի Սասիէլի. Եւ Եղիոնէ եւ Յեկեբա եւ [7]Յասաէ եւ՝ Յասուբա եւ
Ասայիա եւ Եղիէլ եւ Իսմայէլ եւ Բանա-
37 եա Եւ Զուզա որդի Սեփերեայ, որդւոյ Ազոնեայ, որդւոյ Յեդեայ, որդւոյ Սա-
38 մարեայ, որդւոյ Սամուեայ։ Սոքա են որ անկան յանուանս իշխանացն՝ յազգս իւրեանց, եւ ի տունս տոհմից իւրեանց
39 բազմացան յաճախութեամբ։ Եւ գնացին մինչեւ ի գալ [13]ի Գերարա՝ մինչեւ յարեւելից [14]Գայեայ, խնդրել արօտս
40 անասնոց իւրեանց. Եւ գտին արօտս բազումս եւ բարիս. եւ երկիր ընդարձակ առաջի նոցա, եւ խաղաղութիւն եւ հանդարտութիւն. վասն զի յորգւոցն Քամայ էին որք բնակէին անդ յառաջ։
41 Եւ եկին նոքա գրեալք յանուանէ յաւուրս Եզեկեայ արքայի Յուդայ, եւ հարին զրնակիչսն նորա, եւ զմնեցեան զորս գտին անդ, եւ նզովեցին զնոսա մինչեւ յօրս յայս, եւ բնակեցին փոխանակ նոցա. վասն զի արօտս անասնոց իւրեանց գտին անդ։ Եւ ի նոցանէ յորգւոցն Շմաւոնի գնացին ի լեառն Սէիրայ
42 արք հինգ հարեւր, եւ Փաղատիա եւ Նեոարիա եւ Հռափայիա եւ Ոզիէլ՝ որդիք [15]Յեսեսեայ՝ իշխանք նոցա. Եւ հարին զմնացորդսն որք էին մնացեալք Ամաղեկայ, եւ բնակեցին անդ մինչեւ յօրս յայս։

Գլ. Ե

1 Եւ որդիք Ռուբինի՝ անդրանկանն Իսրայելի, վասն զի նա էր անդրանիկ. եւ յիւրանէն նորա յանկողինս հօր՝ իւրոյ՝ եա զօրհնութիւնն նորա որդւոյ իւրում Յովսեփայ՝ որդւոյ Իսրայելի. եւ ոչ համարեցաւ յաղգ յանդրանկութեանն
2 իւրում. վասն զի Յուդա զօրաւոր էր ումեմն յեղբարսն իւրում. եւ [16]էր իշխան նոցա. եւ եղեւ օրհնութիւնն՝
3 Յովսեփայ։ Որդիք Ռուբինի անդրանկանն Իսրայելի՝ Ենովք եւ Փաղուս, Ես-

[1]Եբբ. Նայեմայ էին հայր Կհլայ՝ Պաթեցի, եւ Յեսթեմոն Մաթաթացի [2]Եբբ. Բենաան [3]Եբբ. որդիք Յեսեայ՝ Զոհեթ եւ Բենզոհեթ [4]Եբբ. առնմէ տոհմն բեհեզագործաց ի տան Աբգեայ։ [5]Եբբ. Յաստբի-զեհէմ. եւ այսոքիկ զբոյդք հինգ [6]Եբբ. ի սպասաւ նորա [7]Յեբբ. դ-ասաէ [8]Եբբ. վեհասան [9]Եբբ. վից [10]Եբբ. ի Բեթմարքաբաովթ եւ յԱերսուսիմ եւ ի Բեթբարէի և ի Սազարայիմ [11]Եբբ. աւանք նոցա, Եթամ եւ Այն, Ռեմոն [12]Եբբ. աւանք նոցա որ շուրջ զքաղաքօքս այսոքիւք

[13]Եբբ. ի կեդովրա [14]Եբբ. Հովտին [15]Եբբ. Յեսեայ [16]Եբբ. իշխանն՝ ի նմանէ, եւ եղեւ անդրանկութիւնն

4 թոմմ եւ Քարմի ։ [1]Որդիք Ցովելայ ,
5 Սեմէի , եւ Բերենա որդի նորա , եւ որ-
դիք Գովղայ . որդիք Սեմէի , որդի նո-
6 րա Բաալ՝ , Որդի նորա Բեէրա , զոր
վերեաց Թագղաթփաղասար արքայ Ա-
սորեստանի . նա էր իշխան Ռուբենի ։
7 Եւ եղբարք նորա ի ազգին իւրեանց ,
եւ ի վիճակին իւրեանց . յագին իւր-
8 եանց իշխան [2]Ցովէլ եւ Զաքարիա ։ Եւ
Բաղէ որդի Ազազայ , որդի Սեմայ , որդի
Ցոէլի . նա բնակեալ յԱրոյեր եւ ի
9 Նաբաւ եւ ի Բեսմաան . Եւ յարեւելս
բնակեալ , մինչեւ ի գալ յանապատն ի
գետոյն Եփրատայ . վասն զի անասունն
10 բազում էր նոցա ի Գաղաադ ։ Եւ յա-
ւուրսն Սաւուղայ արարին պատերազմ
ընդ [3]բնակիչսն , եւ անկան ի ձեռս նո-
ցա [4]բնակեալքն ի խորանսն՝ մինչեւ յա-
մենայն յարեւելից Գաղաադացւոյ ։
11 Որդիք Գադայ յանդիման նոցա բնա-
12 կեցին ի Բասան մինչեւ ի Սեղքէ , Ո-
վէլ անդրանիկն , եւ Սափա երկրորդն ,
13 եւ Ազայէլ [5]որ է զոլիր՝ ի Բասան . Եւ
եղբարք նոցա [6]բնակեցան ի տունս տոհ-
մին իւրեանց . Միքայէլ եւ Մոսղաամ
եւ Սեվրայէ եւ Ցովէբ եւ Ցաքան եւ
14 Ազիա եւ Ովէբ , եւթն ։ Սորա որդիք
Աբիքայելի , որդւոյ Ուրիայ , որդւոյ [7]Ա-
դայէ , որդւոյ Գաղաադու , որդւոյ Մի-
քայելի , որդւոյ Ցեսեսայ , որդւոյ Ցեզ-
15 դայէլ , Որդւոյ [8]Աբդիէլի , որդւոյ՝
16 Աբղիելի , որդւոյ Գունեայ . Իշխան տան
տոհմից [9]բնակչաց ի Գաղաադ , ի Բա-
սան եւ յաւանս նոցա , եւ յամենայն
[10]չուրջ գաւառն Սարովնայ մինչեւ յելս
17 ամենեցուն համարոյն նոցա՝ , յաւուրս
Ցովաթամայ արքայի Ցուդայ , եւ յա-
ւուրս Ցերոբովամայ արքայի Իսրայէլի ։
18 Որդիք Ռուբենի եւ Գադայ եւ կիսոյ
ցեղին Մանասէի՝ յորդւոցն զօրութեան ,
արք որ առնուին վահանս եւ սուսերս ,
եւ լարէին աղեղունս , եւ ուսեալ էին
պատերազմ , քառասուն եւ չորք հա-
զարք եւ եւթն հարեւր եւ վաթսուն ,
19 որք ելանէին ի մարտ , Եւ առնէին պա-
տերազմ ընդ Հագարացիսն եւ ընդ Տու-
րէիսն եւ ընդ Նափեսացիսն եւ ընդ
20 Նոդոբայիսն [6]եւ ընդ Նաբդեացիսն՝ . Եւ
զօրացան ի վերայ նոցա , եւ տուան [11]Հագ-
նոցա Հագարացիքն եւ [11]ամենայն խո-
րանք նոցա՝ . վասն զի առաւաւած զո-
չեցին ի պատերազմին՝ եւ լուաւ Նո-
21 ցա , զի յուսացան ի Նա ։ Եւ գերեցին
[12]զպատրաստութիւն նոցա , ուղտս [13]հինգ
հազար , եւ յոչխարաց երկերիւր եւ յիսուն
հազար , էշս երկուս հազարս , եւ ոգիս ա-
22 րանց հարիւր հազար . Վասն զի վիրա-
ւորք բազումք անկան , զի [14]ի Տեառնէ
եղեւ պատերազմն . եւ բնակեցին փո-
խանակ նոցա մինչեւ ի գերութիւնն
23 [6]իւրեանց ։ Եւ կէս ցեղին Մանասէի
բնակեալ յերկրին Բասանայ մինչեւ ի
Բաալհերմոն եւ Սանիր , եւ ի լեառնն
Աստերոնի [6]եւ ի Լիբանան՝ . բազմացան
24 բազմացան ։ Եւ այսոքիկ իշխանք ազգ
առնմէից նոցա . Ովփեր եւ Ցեսոլ եւ Ե-
զրիէլ եւ Եղրիկ եւ Ցերեմիա եւ Ցովէլ
եւ Իդիէլ , արք զօրաւորք ուժով , արք
անուանկոչ իշխանք ազգ առնմէին իւ-
րեանց ։
25 Եւ ոտնատրեցին զերկիր Աստուծոյ հարցն
իւրեանց , եւ պոռնկեցան զհետ աս-
տուածոց օտարաց երկրին զորս հրաբռ
26 Աստուած յերեսաց նոցա ։ Եւ յարոյց
Աստուած Իսրայելի զՓուռն [15]Փանավէթ
արքային Ասորեստանեայց , եւ զՆոզին
Թագղաթփաղասարայ արքային [16]Աս-
սեր , եւ գերեցոյց զՌուբէն եւ զԳադ՝
եւ զկէս ցեղին Մանասէի , եւ տարաւ
գնոսա ի Քալա եւ ի Քաբոր [17]առ գե-
տեզերն Գովզանայ , մինչեւ յօրս յայս ։

Գլ. Զ

1 Որդիք Ղեւեայ՝ Գերսոն , Կահաթ եւ
2 Մերարի ։ Որդիք Կահաթու՝ Ամրամ եւ
3 Իսահառ , Քեբրոն եւ Ոզիէլ ։ Եւ որդիք
Ամրամայ՝ Ահարոն եւ Մովսէս եւ Մա-
րիամ . եւ որդիք Ահարոնի՝ Նադաբ եւ
4 Աբիուդ , Եղիազար եւ Իթամար ։ Եւ
Եղիազար ծնաւ զՓինեհէս , Փինեհէս ծնաւ
5 զԱբիսուա , Աբիսուա ծնաւ զԲոկկի ,

---

[1] ԵԲԲ. Որդիք Ցովելայ, Սեմայիա՝ որդի նորա, Գոգ՝ որդի նորա, Սեմէի՝ որդի նորա, (5) Միքա՝ որդի նորա, Ռեայա՝ որդի նորա . Բաաղ՝ որդի նորա
[2] ԵԲԲ. Ցեհիէլ [3] ԵԲԲ. Հագարացիս [4] ԵԲԲ. եւ բնակեցին ի խորանս նոցա [5] ԵԲԲ. եւ Սափատ
[6] ՅԵԲԲ. պակաս [7] ԵԲԲ. Ցարդայ [8] ԵԲԲ. Բուզայ. (15) Աքի որդի [9] ԵԲԲ. նոցա, (16) Եւ բնակեցին
[10] ԵԲԲ. արուարձանս Սարովնայ մինչեւ յելս նոցա ։ (17) Ամենեքին մտին յազգահամար
[11] ԵԲԲ. ամենեքին որ ընդ նոսա [12] ԵԲԲ. զանասունս [13] ԵԲԲ. յիսուն [14] ԵԲԲ. յԱստուծոյ
[15] ԵԲԲ. Փուզայ [16] ԵԲԲ. Ասորեստանեայց, եւ գերեաց զՈւռբենեանն եւ զԳադեանս [17] ԵԲԲ. եւ ի Քաբա եւ առ

6 Բակկի ծնաւ զՈզիա, Ոզիա ծնաւ զՍա-
րէա, Սրէա ծնաւ զՄարէովթ, Մա-
7 րէովթ ծնաւ զԱմարիաս, Ամարիաս
8 ծնաւ զԱքիտովբ, Աքիտովբ ծնաւ զՍա-
9 դովկ, Սադովկ ծնաւ զԱքիմաաս, Աքի-
10 մաաս ծնաւ զԱզարիաս, Ազարիաս ծնաւ
զՅովնաս, Յովնաս ծնաւ զԱզարիաս.
սա էր քահանայ ի տանն Աստուծոյ,
11 որ չինեաց Սողոմոն յերուսաղէմ։ Եւ
ծնաւ Ազարիա զԱմարիաս, Ամարիաս
12 ծնաւ զԱքիտովբ, Աքիտովբ ծնաւ զՍա-
դովկ, Սադովկ ծնաւ զՍելլում, Սել-
13 լում ծնաւ զԲելկիաս, Բելկիաս ծնաւ
14 զԱզարիաս, Ազարիաս ծնաւ զԱրեաս,
15 Արեաս ծնաւ զՅովսեդեկ, Եւ Յովսե-
դեկ գնաց ի գերութեանն ընդ Յուդայի
եւ Երուսաղեմի ի ձեռն Նաբուքոդոնո-
սորայ։

16 Որդիք Ղեւեայ՝ Գերսոն, Կահաթ եւ
17 Մերարի։ Եւ այսոքիկ անուանք որդ-
14 Եւ թագաւորեաց Դաւիթ ի վերայ ամենայն Իսրայէլի , եւ էր առնել իրաւունս եւ արդարութիւն ամենայն ժողովրդեան իւրում ։ 15 Իսկ Յովաբ որդի Սարուհայ ի վերայ զօրացն , եւ Յովսափատ որդի Աքիղուդայ՝ յիշատակագ գիր . 16 եւ Սադովկ՝ որդի Աքիտովբայ , եւ Աբիմելէք՝ որդի Աբիաթարայ՝ քահանայք , եւ Սուսա՝ դպրապետ . 17 Եւ Բանեա որդի Յովիդայայ՝ ի վերայ Քերեթեացն եւ Փելեթեացն . եւ որդիք Դաւթի առաջինք՝ [2]փոխանորդք արքայի ։

ԳԼ . ԺԹ

1 Եւ եղեւ յետ այսորիկ մեռաւ Նաասա արքայ որդւոցն Ամմոնայ , եւ թագաւորեաց Անան որդի նորա ընդ նորա ։ 2 Եւ ասէ Դաւիթ , Արասցուք ողորմութիւն ընդ Անանայ որդւոյն Նաասայ , որպէս արար հայր նորա ընդ իս ողորմութիւն . եւ առաքեաց հրէշտակս Դաւիթ մխիթարել զնա վասն հօր նորա . եւ եկին ծառայքն Դաւթի յերկիրն որդւոցն Ամմոնայ մխիթարել զնա ։ 3 Եւ ասեն իշխանքն Ամմոնայ ցԱնան , Միթէ փառաւորէ Դաւիթ զհայր քո առաջի քո առաքեալ քեզ զմխիթարիչս . ոչ ապաքէն [3]պի քննեսցին զքաղաքս ," եւ պիտել զերկիրն 4 կիրս եկին ծառայքն նորա առ քեզ ։ Եւ առ Անան զծառայսն Դաւթի , եղերդ զնոսա , եւ եհատ [4]զդրօշական նոցա զհասարակածն մինչեւ ի վեր" , եւ արձակ 5 կեաց զնոսա ։ Եւ եկին պատմել Դաւթի վասն արանցն . առաքեաց ընդ առաջ նոցա , վասն զի էին ամաչեցեալք յոյժ ։ եւ ասէ արքայ , Նստարուք յԵրիքով մինչեւ աճեսցին մօրուք ձեր , եւ ապա եկեսջիք ։
6 Եւ տեսին որդիքն Ամմոնայ թէ [5]առ մաչեաց զօրն Դաւթայ" , առաքեաց Անան եւ որդիքն Ամմոնայ հազար տալանդ արծաթոյ , եւ ի վարձու կալան իւրեանց յԱսորեաց Մեսոպոտամացւոց եւ յԱսորեաց Մաաքայ եւ Սուբայ՝ կառս եւ հեծեալս ։ 7 Եւ վարձեցին զերեսուն եւ երկու հազարս կառաց , եւ զարքային Մաաքայ եւ զժողովուրդն նորա , եւ եկին բանակեցան յանդիման Մեդաբայ . եւ որդիքն Ամմոնայ ժողովեցան ի քաղաքացն իւրեանց , եւ եկին պատերազմել ։
8 Լուաւ Դաւիթ , եւ առաքեաց զՅովաբ 9 վար եւ [6]զզունդ զօրաւորացն ։ Եւ եկին որդիքն Ամմոնայ եւ ճակատեցան ի պատերազմի առ դրան քաղաքին . եւ թագաւորքն եկեալք բանակեցան առանձին ի դաշտին ։ 10 Եւ տես Յովաբ եթէ եղեն դէմ յանդիման պատերազմել ընդ նմա , առաջի երեսաց եւ ղհին , ընտրեաց յամենայն [7]երիտասարդացն Իսրայէլի եւ կարգեաց ընդդէմ Ասորւոցն . 11 Եւ զմնացորդս զօրուն ետ ի ձեռս Աբիսհայ եղբօր իւրոյ , եւ կարգեաց ընդդէմ որդւոցն Ամմոնայ . 12 Եւ ասէ , Եթէ զօրասցի քան զմեզ Ասորին , լիցիս մեզ ի փրկութիւն . եւ եթէ որդիքն Ամմոնայ զօրասցին քան զքեզ , ապրեցուցից զքեզ ։ 13 Քաջ լեր , եւ զօրասցուք վասն ժողովրդեան մերոյ եւ վասն քաղաքաց Աստուծոյ մերոյ , եւ Տէր որ ինչ բարի իցէ յաչս նորա՝ արասցէ ։ Եւ ճակատեցաւ Յովաբ եւ զօրն որ ընդ նմա ընդդէմ Ասորւոցն ի պատերազմին , եւ 15 փախեան ի նմանէ ։ Եւ որդիքն Ամմոնայ տեսին թէ փախեան Ասորիքն , փախեան եւ նոքա յերեսաց [8]Յովաբայ եւ յերեսաց" Աբիսհայ եղբօր նորա , եւ մտին ի քաղաքն ։ Եւ եկն Յովաբ յԵրուսաղէմ ։
16 Եւ տես Ասորին եթէ յաղթեցաւ նմա Իսրայէլ , առաքեաց հրէշտակս եւ եհան [9]զԱսորեստանեայն յայնմ կողմանէ Գետոյն , եւ զՍովափաք զօրավար զօրացն 17 Ադրազարու առաջի նոցա ։ Եւ ազդեցաւ Դաւթի , եւ զումարեաց զամենայն Իսրայէլ , անց ընդ Յորդանան եւ եկն ի վերայ նոցա , եւ ճակատեցաւ ընդդէմ նոցա , եւ կարգեցաւ Դաւիթ ընդդէմ Ասորւոյն , եւ պատերազմէր ընդ 18 նմա ։ Եւ փախեաւ Ասորին յերեսաց [10]Դաւթայ , եւ կոտորեաց Դաւիթ յԱսորւոցն եւթն հազար կառաց եւ քառասուն հազար հեւեւակաց , եւ զՍովափաք 19 զօրավար զօրուն սպան ։ Եւ տեսին ծառայքն Ադրազարու եթէ անկան առաջի Իսրայէլի , եղեն ուխտ ընդ Դաւթայ ,

[1] ԵԲԲ. յհինգերորդ պահակապանն , եւ եղեն ամենայն [2] ԵԲԲ. առաջնեքն [3] ԵԲԲ. քննել եւ ապականել [4] ԵԲԲ. զՀանդերձս նոցա ի միջոց մինչեւ յերաստանն [5] ԵԲԲ. գարշելի եղեն Դաւթի

[6] ԵԲԲ. զամենայն գունդ [7] ԵԲԲ. ընտրեցաց [8] ՅԵԲԲ. պակասէ [9] ԵԲԲ. զԱսորին [10] ԵԲԲ. Իսրայելի

եւ ծառայեցին նմա. եւ ոչ եւս կամեցաւ Սաւուղ օրհնել զդաւն Ամմայ։

Գլ. Ի

1 Եւ եղեւ ի միւսում տարւոջն յետանել թագաւորացն՝ ած Յովաբ զամենայն զաւնդս զօրացն, եւ ապականեաց զամմնայն երկիր որդւոցն Ամմայ. եկին եւ նստան չուրջ զՀաւաթմա. եւ Դաւիթ նստէր յԵրուսաղէմ. եւ առ Յովաբ զՀաւաթմա, եւ կործանեաց զնա։
2 Եւ առ Դաւիթ զգլուխն [1]Մեղբոմայ թագաւորին նոցա ի գլխոյ նորա, եւ գտաւ կշիռ նորա տալանդ ոսկւոյ, եւ ի նմա անկն պատուական, եւ էր ի գլուխն Դաւթայ. եւ առար բազում յոյժ երեր[2]։
3 Եւ զժողովուրդն որ էր ի նմա՝ հնան, եւ սղոցեաց սղոցօք եւ [3]ուրագօք երկաթիօք". եւ այնպէս արար Դաւիթ ամենայն քաղաքաց որդւոցն Ամմայ. եւ դարձաւ Դաւիթ եւ ամենայն զօրն իւր յԵրուսաղէմ։
4 Եւ եղեւ յետ այնորիկ եղեւ միւսանգամ պատերազմ ի Գազեր ընդ այլազգիսն. յայնժամ հնար Սաբաքէ Աասվթայի զԱեփփիսա յորդւոց [4]ակայիցն եւ
5 վանեաց զնա"։ Եւ եղեւ դարձեալ պատերազմ ընդ այլազգիսն, եւ հնար Էլհանան որդի Յայիրայ զՂէմի զեղբայրն Գողիաթու Գեթացւոյ. եւ փայտ նիզակի նորա իբրեւ գաւազի ածաղնանկայ։
6 Եւ եղեւ դարձեալ պատերազմ ի Գէթ. եւ էր այր ումն մեծ յոյժ, եւ մատունք նորա վեց վեց՝ քսան եւ չորք. եւ նա
7 էր յորդւոց [5]ակայիցն։ Եւ բշնամանէր զԻսրայէլ. եւ հնար զնա Յովնաթան որդի Սամայ, որդի եղբօր Դաւթայ։
8 Նոքա եղեն Հաափայ ի Գէթ. [1]ամենեքեան էին արք հսկայք," եւ անկան ի ձեռն Դաւթայ եւ ի ձեռն ծառայից նորա։

Գլ. ԻԱ

1 Եւ ակաց Բանաարիւ ի մէջ Իսրայէլի, եւ գրգռոյց զԴաւիթ թուել զԻսրայէլ։
2 Եւ ասէ Դաւիթ ցՅովաբ եւ ցիշխանս զօրուն, երթայք թուեցէք զԻսրայէլ ի Բերսաբէէ մինչեւ ցԴան, եւ բերէք առ
3 իս, եւ գիտացից զթիւ նոցա։ Եւ ասէ Յովաբ, Յաւելցէ Տէր ի ժողովուրդ իւր որպէս են դոքա՝ հարիւր բազմապիկ, եւ աչք տեառն իմոյ տեսցեն, զի ամենեքեան ծառայք են տեառն իմոյ. եւ ընդէ՞ր խնդրէ տէր իմ զայդ, զի մի լինիցի մեղք
4 ի ժողովրդեանդ Իսրայէլի։ Եւ բանն արքայի զօրացաւ ի վերայ Յովաբայ. եւ ել Յովաբ եւ ակն յամենայն սահմանսն Իսրայէլի, եւ եկն յԵրուսաղէմ։
5 Եւ ետ Յովաբ զթիւ համարոյ ժողովրդեանն՝ Դաւթի. եւ էր ամենայն Իսրայէլ հարիւր հազարաց, եւ հարիւր հազար արանց որ ձգէին սուսերս. եւ Յուդաս չորեք հարիւր [6]յիսուն հազար արանց
6 սուսերաւորաց։ Բայց զՂեւի եւ զԲենիամին ոչ թուեաց ի մէջ նոցա. վասն զի տագնապացաւ բանն արքային առ Յովաբայ։
7 Եւ չար երեւեցաւ առաջի Աստուծոյ վասն իրային այնոցիկ, եւ եհար զԻսրայէլ։
8 Եւ ասէ Դաւիթ ցԱստուած, Մեղայ յոյժ, զի արարի զիրդ զայդ. եւ արդ ի բաց յարձակ զչարութիւն ծառայի քո, վասն զի ընդունայնացայ յոյժ։
9 Եւ խօսեցաւ Տէր ընդ Գադայ տեսա-
10 նողի առ Դաւիթ եւ ասէ, Երթ խօսեաց ընդ Դաւթայ եւ առասցես, Այսպէս ասէ Տէր. Երիս ինչս ես առեմ ի վերայ քո, ընտրեա անձին [7]քումմ ի նո-
11 ցանէ եւ արարից քեզ։ Եւ եկն Գադ առ Դաւիթ եւ ասէ ցնա, Այսպէս ասէ Տէր. Ընտրեա քեզ՝ կամ երիս ամս սովոյ, կամ զերիս ամիսս փախչել քեզ յերեսաց թշնամեաց քոց, եւ սուր թշնամեաց քոց եղիցի ի սատակել զքեզ, կամ զերիս աւուրս սուր Տեառն եւ մահ յերկրի քում, եւ հրեշտակ Տեառն սատակեսցէ յամենայն ժառանգութիւնս Իսրայէլի. եւ արդ տես զինչ բան տաց
13 պատասխանի որ առաքեացն զիս։ Եւ ասէ Դաւիթ ցԳադ, Նեղութիւն է ինձ յոյժ [1]երեքեան այգոքիկ". բայց անկայց ի ձեռս Տեառն, վասն զի բազում են գթութիւնք նորա յոյժ, եւ ի ձեռս մարդ-
14 կան մի անկայց։ Եւ ետ Տէր մահ յԻսրայէլ, եւ անկան յԻսրայէլէ եւթանասուն հազար արանց։ Եւ առաքեաց Աս-
15 տուած զհրեշտակն յերուսաղէմ սատակել զնա. եւ մինչդեռ սատակէր, եւտես Տէր, եւ զղջացաւ ի վերայ չարութեանն, եւ ասէ հրեշտակին որ սատակէր, Շատ լիցի քեզ, թողացո զձեռն քո. եւ հրեշ-

[1] 3ԵԲբ. գոխ-ով [2] ԵԲբ-յեբէն յա-ելս-, ի քաղաքէն [3] ԵԲբ. կամեսապիւք երկաթեօք եւ ուրագօք [4] ԵԲբ. Հռափայ, եւ նոսաճեցան նոքա [5] ԵԲբ. Հռափայ

[6] ԵԲբ. եւթանասուն [7] ԵԲբ. քումմ զմին

տակն Տեառն կայր ի կալն Ոռնեայ Եբ-
16 բուսացւոյ։ Ամբարձ Դաւիթ զաչս իւր
եւ եաս զհրեշտակն Տեառն, զի կայր
ի վէմ երկնի եւ երկրի, եւ սուրն իւր
ձգեալ ի ձեռին իւրում, եւ կարկառեալ
ի վերայ Երուսաղեմի. եւ անկան Դա-
ւիթ եւ ծերքն զգեցեալ քուրձս ի վե-
17 րայ երեսաց իւրեանց։ Եւ ասէ Դաւիթ
ցԱստուած, Ո՞չ ապաքէն ես ասացի
թուել զժողովուրդն. ես եմ որ մեղայ,
առնելով արարի զչարիսդ, եւ ոչխարքդ
այդոքիկ զի՞ արարին. Տէր Աստուած,
եղիցի ձեռն քո յիս եւ ի տուն հօր իմոյ,
եւ մի՛ ի ժողովուրդ քո կորուսանել, [1]Տէր։
18 Եւ ասէ հրեշտակն Տեառն ցԳադ, Ա-
սա ցԴաւիթ դի ելցէ կանգնեսցէ սե-
ղան Տեառն ի կալն Ոռնեայ Եբերուսացւոյ։
19 Լոյ։ Եւ ել Դաւիթ ըստ բանին [2]Տեառն,
20 զոր խօսեցաւ յանուն Տեառն։ Եւ դար-
ձաւ Ոռնա, իրրեւ եաս [3]զարքայ եւ
զչորեսին որդիսն նորա ընդ նմա ծած-
կեալս". եւ Ոռնա կասայր ի կալն ցո-
21 րեան։ Եւ եկն Դաւիթ առ Ոռնա [4]եւ
ել Ոռնա" ի կալոյն եւ երկիր եպազ
Դաւթայ ի վերայ երեսաց իւրոց յեր-
22 կիր։ Եւ ասէ Դաւիթ ցՈռնա, Տուր
ինձ տեղիդ քո զայդ զկալդ, եւ չինես-
ցից այդր սեղան Տեառն, արծաթոյ որ-
քան արժիցէ՝ տացես ինձ դդա. եւ դա-
դարեսցին հարուածքն ի ժողովրդենէն։
23 Եւ ասէ Ոռնա ցԴաւիթ, Ա՛ռ դու քեզ,
եւ արասցէ տէր իմ արքայ զբարին ա-
ռաջի իւր. ահա եւս զեղինդ յողջա-
կէզս, եւ զփայտ սայլիցդ եւ զդրիանդ
24 ի զոհս, զամենայն եւս քեզ։ Եւ ասէ
արքայ Դաւիթ ցՈռնա, Ոչ այդպէս,
այլ գնելով գնեցից արծաթոյ որքան
արժիցէ. եւ ոչ առից որ ինչ է քո,
25 մատուցանել ողջակէզ ձրի Տեառն։ Եւ
ետ Դաւիթ Ոռնեայ վասն տեղւոյն նո-
26 րա վեց հարիւր սիկղ ոսկւոյ կշռով։ Եւ
չինեաց Դաւիթ անդ սեղան Տեառն, եւ
եհան ողջակէզս եւ [5]վասն փրկութեան".
եւ գոչեաց առ Տէր, եւ լուաւ նմա հրով
յերկինից ի վերայ սեղանոյ ողջակիզին, [6]եւ
27 ծախեաց ղողջակէզսն։ Եւ ասէ Տէրց հրեշ-
տակին, [6]Դարձո զսուր քո" ի պատեանս

28 ի ժամանակին յայնմիկ ի տեսանել
Դաւթի, վասն զի լուաւ նմա Տէր ի կալն
Ոռնեայ Եբերուսացւոյ, եզեն անդ զոհս։
29 Եւ խորանն Տեառն զոր արար Մովսէս
յանապատին, եւ սեղան ողջակիզացն
ի ժամանակին յայնմիկ էին [7]ի Բամա
30 Դաբաւնի։ Եւ ոչ կարէր Դաւիթ եր-
թալ առաջի նորա խնդրել յԱստուծոյ,
վասն զի տագնապեցաւ յերեսաց սրոյ
հրեշտակին Տեառն։

Գլ. ԻԲ

1 Եւ ասէ Դաւիթ, Այս է տուն Տեառն
Աստուծոյ, եւ այս սեղան ողջակիզաց
2 Իսրայելի։ Եւ ասաց Դաւիթ ժողովել
զամենայն եկն յերկրին Իսրայելի. եւ
կացոյց քարահատս հատանել քարինս
կոփածոյս եւ չինել զտունն Աստուծոյ։
3 Եւ երկաթ բազում ի բեւեռս [8]դրացն եւ
դրանն, եւ զչրջանական արար" Դա-
ւիթ, եւ պղինձ բազում յոյժ որոյ ոչ
4 գոյր կշիռ. Եւ մայր փայտս որոյ ոչ գոյր
թիւ, վասն զի բերէին Սիդոնացիքն եւ
Տիւրացիք մայր փայտս յաճախութեամբ
Դաւթի։
5 Եւ ասէ Դաւիթ, Սողոմոն որդի իմ
մանուկ [9]փոքր է. եւ տունս զոր չինէ"
Տեառն՝ մեծ եւ ի վեր անուամբ եւ ի
փառս յամենայն երկրի. պատրաստե-
ցից նմա նիւթս. եւ պատրաստեաց Դա-
ւիթ յաճախութեամբ յառաջ քան զլաս-
6 ճան իւր։ Եւ կոչեաց զՍողոմոն զոր-
դի իւր, եւ պատուիրեաց նմա չինել
[10]զտունն անուան" Տեառն Աստուծոյ Իս-
րայելի։
7 Եւ ասէ Դաւիթ ցՍողոմոն, Որդեակ,
իմ եղեւ ի մտի չինել տուն անուան
8 Տեառն Աստուծոյ. Եւ բան Տեառն ե-
ղեւ առ իս եւ ասէ, Արիւն բազում
հեղեր եւ պատերազմունս մեծամեծս
արարեր. ոչ չինեսցես դու տուն անուան
իմոյ, վասն զի արիւն բազում հեղեր ի
9 վերայ երկրի առաջի իմ. Ահա ծնցի քեզ
որդի, եւ նա եղիցի այր հանդստաւան.
եւ հանդուցից զնա յամենայն թշնամեաց
չուրջանակի. քանզի [11]Սողոմոն անուն
է նորա. եւ զխաղաղութիւն եւ զհան-
դարտութիւն տաց ի վերայ Իսրայելի

[1] 3Եբր. պ-ո-ւ [2] Եբր. Գադայ [3] Եբր. զՀրեշ-
տակն, եւ չորեքին որդիքն նորա ընդ նմա ծած-
կեալք [4] Եբր. եւ Հայեցեալ Ոռնայ ետես
զԴաւիթ, և ել [5] Եբր. խաղաղականս [6] Եբր.
և նա դարձոյց զսուրն

[7] Այլ.՝ ի բարձունս [8] Եբր. փեղկից դրանն
եւ [9] վասն շրջանակաց պատրաստեաց [9] Եբր. է
եւ մատաղ, եւ տունս որ չինեսցի [10] Եբր. տուն
[11] Այլ.՝ խաղաղարար

10 յաւուրս նորա ։ Նա չինեսցէ տուն ա-
նուան իմոյ . նա եղիցի ինձ յորդի եւ
ես եղէց նմա ի հայր , եւ [1]ուղղիցից զա-
թոռ թագաւորութեան նորա յԻսրայէլի
11 մինչեւ յաւիտեան ։ Եւ արդ , որդեակ
իմ, եղիցի ընդ քեզ Տէր եւ յաջողես-
ցէ , եւ չինեսցես տուն Տեառն Աստու-
12 ծոյ քո , որպէս խօսեցաւ վասն քո ։ Եւ
տացէ քեզ Տէր հանճար եւ իմաստու-
թիւն , եւ զօրացուսցէ զքեզ ի վերայ
Իսրայէլի , եւ պահեսցես առնել զօրէնս
13 Տեառն Աստուծոյ քո ։ Եւ յայնժամ յա-
ջողեսցիս , եթէ պահեսցես առնել դնրա-
մանս եւ զիրաւունս զոր պատուիրեաց
Տէր Մովսէսի ի վերայ Իսրայէլի . քաջ
լեր եւ զօրացիր . մի երկիցես եւ մի
14 զարհուրիցիս ։ Եւ ահա ես ըստ ազքա-
տութեան իմում պատրաստեցի ի տուն
Տեառն ոսկի տաղանդս հարիւր հազար ,
եւ արծաթ տաղանդս հազար հազար ,
եւ պղինձ եւ երկաթ որոյ ոչ գոյ թիւ ,
վասն զի բազում է յոյժ , եւ փայտ եւ
քարինս պատրաստեցի , եւ դու [2]յաւել-
15 ցես յոյզ բազմութեամբ՝ Առնել զործ
արուեստից՝ , չինօղս քարանց եւ հիւ-
սուն փայտից , եւ ամենայն իմաստուն՝
16 յամենայն գործս Ոսկւոյն եւ արծաթոյ
եւ պղնձոյ եւ երկաթոյ , որոյ ոչ գոյ
համար . արդ արի եւ արա , վասն զի
Տէր ընդ քեզ է ։
17 Եւ պատուիրեաց Դաւիթ ամենայն
իշխանացն Իսրայէլի օգնել Սողոմոնի
18 որդւոյ իւրում . Եւ ասէ , Ո՞չ ապաքէն
Տէր[3] ընդ ձեզ է , եւ հանգոյց զձեզ չուրջ-
ս[4]անակի . վասն զի եա ի ձեռս [4]ձեր զբնա-
կիչսդ երկրիդ , եւ հնազանդեցաւ եր-
կիրդ առաջի Տեառն եւ առաջի ժո-
19 ղովրդեան նորա ։ Եւ արդ տուք զսիրտս
ձեր եւ զանձինս ձեր խնդրել զՏէր Աս-
տուած ձեր . արիք եւ չինեցէք զսրբու-
թիւնս Տեառն Աստուծոյ [5]մերոյ , տա-
նել ի ներքս զտապանակ ուխտին Տեառն
եւ զսպասս սրբութեանցն Աստուծոյ ի
տունն զոր չինէք անուան Տեառն ։

Գլ . ԻԹ

1 Եւ Դաւիթ էր ծեր եւ լի աւուրբք . եւ
թագաւորեաց Սողոմոն որդի նորա [5]փո-

2 խանակ նորա՝ ի վերայ Իսրայէլի ։ Եւ
ժողովեաց զամենայն իշխանսն Իսրա-
յէլի , եւ զքահանայս եւ զԼեւեսցիս ։
3 Եւ մտին ի թիւն Ղեւեսցիքն յերես-
նամենից եւ ի վեր . եւ եղեւ թիւ նո-
ցա ըստ գլխոց իւրեանց՝ արք ութ հա-
4 զար եւ երեսուն ։ Եւ ի նոցանէ գոր-
ծակալք ի վերայ գործոյ տանն , եւ քա՛ն
եւ չորք հազարք գրիք , եւ գասա-
5 ւորք վեց հազար , Եւ չորք հազարք
դռնապանք , եւ չորք հազարք օրհնիչք
Տեառն՝ նուագարանօքն [6]որով արա-
6 րին՝ օրհնել զՏէր ։ Եւ որոշեաց գնո-
սա Դաւիթ [7]ըստ բանի օրէ պաշտաւնէից՝
զորսիան Ղեւեայ , զԳերսոն , զԿահաթ
եւ զՄերարի ։
7 [8]Եւ Գերսոն եւ՝ Եղեազան եւ Սե-
8 մեի . [9]Որդի Եղեազանայ իշխան Իա-
9 զայէլ . եւ Եթամ եւ Յովէլ՝ ։ Եւ որդիք
Սեմեայ՝ Սաղովմիթ եւ Ազիէլ եւ Սբան .
երեք սոքա իշխանք տոհմիցն Եղեա-
10 զանայ ։ Եւ որդիքն Սեմեայ՝ Յեհի եւ
Զիզա եւ Յովաս եւ Բարիա . սոքա որ-
11 դիք Սեմեայ չորք։ Եւ էր Յեհի [10]իշխան ,
եւ Զիզա երկրորդ . եւ Յովաս եւ Բա-
րիա ոչ յաճախեցին որդիս , եւ եղեն ի
12 տուն տոհմին ի միում համարի ։ Որդիք
Կահաթու՝ Ամրամ եւ Իսահար , Քեբրոն
13 եւ Ողիէլ՝ չորք ։ Որդիք Ամրամայ՝ Ա-
հարոն եւ Մովսէս . եւ որոշեցաւ Ահա-
րոն սուրբ լինել ի սրբութիւնս սրբու-
թեանցն՝ ինքն եւ որդիք իւր մինչեւ
յաւիտեան , ծխել խունկս առաջի Տեառն,
պաշտել եւ աղօթս առնել յանուն նո-
14 ա մինչեւ յաւիտեան ։ Եւ Մովսէս այրն
Աստուծոյ եւ որդիք նորա կոչեցան ի
15 ցեղն Ղեւեայ ։ Որդիք Մովսէսի Գեր-
16 սամ եւ Եղիազար ։ Որդիք Գերսամայ՝
17 Սուբայէլ [10]իշխան . Եւ էր որդի Եղիա-
զարու Հռաբիա [10]իշխան , եւ ոչ գոյր այլ
որդի Եղիազարու . եւ որդիքն Հռաբիայ
18 առեցին ի բարձրութիւն ։ Որդիք Իսա-
հառայ՝ [11]Սաւուղ եւ Մալէ իշխանք՝ ։
19 Որդիք Քեբրոնի՝ Յերիա [10]իշխան , Ամա-
րիա երկրորդ , եւ Ողիէլ երրորդ , եւ
20 Յեկեմիաս չորրորդ ։ Որդիք Ողիելի՝ Մի-
քիա [10]իշխան , եւ Յեսիաս երկրորդ ։
21 Որդիք Մեռարեայ՝ Մոսղի եւ Մու-

---

[1] Կամ, Հաստատեցից [2] Եբէր. յաւելցես յոյզ ։ (15) Եւ ընդ քեզ բազմութիւն ձեռագործոց [3] Եբէր. յեհոբ , Աստուած ձեր [4] Եբէր. իմ [5] Յեբէր. պահ [6] Եբէր. զորս արարի [7] Եբէր. ի բաժին Ի Գերսոնեանց [8] Եբէր. Որդիք Եղեազանայ , իշխան՝ Յեքիէլ , և Զեթան եւ Յովէլ , երեք [9] Եբէր. առաջին [10] Եբէր. առաջին [11] Եբէր. Սաղոմովթ առաջին

սի . որդիք Մոզեայ՝ Եղիազար եւ Կիս ։
22 Եւ մեռաւ Եղիազար , եւ ոչ դային նո-
րա որդիք , այլ դստերք միայն . եւ ա-
ռին զնոսա որդիքն Կիսեայ եղբարքն
23 իւրեանց ։ Որդիք Մուսեայ՝ Մոզղի եւ
Եդեր եւ Երիմովթ՝ երեք ։
24 Սոքա որդիք Ղեւեայ ըստ տանց տոհ-
մից իւրեանց , իխանք ցեղիցն իւր-
եանց , ըստ համարոյ իւրեանց եւ ըստ
թուոյ անուանցն ըստ գլխոյն իւրեանց ,
առնէին զգործ պաշտաման ի տան Տեառն
25 ի քսանամենից եւ ի վեր ։ Վասն զի ա-
սաց Դաւիթ , Հանդոյց Տէր Աստուած
զժողովուրդ իւր զԻսրայէլ , եւ [1]բնա-
26 կեաց յԻսրայէլ" մինչեւ յաւիտեան ։ Եւ
Ղեւտացիքն [2]ոչ լսանային աւելնելքեան"
զիսորանն եւ զամենայն սպասս նորա ի
27 պաշտաման նորին ։ Վասն զի ի բանիւն
Դաւթայ ի վերջինս էր թիւ որդւոցն
28 Ղեւեայ ի քսանամենից եւ ի վեր ։ Քան-
զի կացոյց զնոսա [3]ի ձեռն որդւոցն Ա-
հարոնի պաշտել ի տանն Տեառն , [4]ի
սրահան եւ ի սենեական եւ ի սրբու-
թիւնեան , եւ ի վերայ ամենայն սրբու-
թեանցն , եւ ի պաշտամունն տանն Ա-
29 տուծոյ , Հացին առաջադրութեան , եւ
ի վերայ նաչոյ պատարագացն եւ քա-
քարացն բաղարջացն եւ տապակիլն , եւ
զանգելոցն իւղով , եւ չափնայն չափոն ,
30 կալ առաւօտուց օրհնել եւ խոստո-
վան լինել Տեառն , նոյնպէս եւ ընդ ե-
31 րեկս , եւ ի վերայ ամենայն մատուցե-
լոց ողջակիզաց Տեառն , ի շաբաթն եւ
յամսամուտս եւ ի տօնս , ըստ թուոյն ,
ըստ իրաւանցն , ի վերայ նոցին չափո-
32 նայն ժամ [5]Տեառն ։ Եւ պահէին զպահ-
պանութիւնս խորանին [6]վկայութեան ,
եւ զպահպանութիւնս որդւոցն Ահա-
րոնի եղբարցն իւրեանց պաշտել ի տանն
Տեառն ։

ԳԼ. ԻԴ

1 Եւ [7]զորդիսն Ահարոնի զատոյց" . որ-
դիք Ահարոնի՝ Նադաբ եւ Աբիուդ , եւ
2 Եղիազար եւ Իթամար ։ Եւ մեռան Նա-
դաբ եւ Աբիուդ առաջի հօրն իւրեանց .
եւ որդիք ոչ դային նոցա . եւ քահանա-
յացան Եղիազար եւ Իթամար 3 ըստ որդիքն
Ահարոնի" ։ Եւ զատոյց զնոսա Դաւիթ ,
[9]զՍադովկ յորդւոցն Եղիազարու , եւ
[10]զԱքիմելէք յորդւոցն Իթամարայ , ըստ
համարոյն իւրեանց եւ ըստ պաշտաման
իւրեանց , 4 եւ ըստ տանց տոհմիցն Նա-
ցա" ։ Եւ գտան որդիքն Եղիազարու յո-
լովագունք յիշխանս զօրաւորացն քան
զորդիսն Իթամարայ , եւ արուհաց զնո-
սա . որդիսն Եղիազարու կացոյց ի շ-
խանս տանց տոհմիցն , ութ վեցտասան .
եւ զորդիսն Իթամարայ ըստ տանց տոհ-
5 միցն , ութ ուրք ։ Եւ զատոյց զնոսա
[11]ըստ վիճակին նոցա" . վասն զի էին ի-
խանք սրբութեանցն եւ առաջնորդք ի
տանն [12]Տեառն յորդւոցն Եղիազարու եւ
6 յորդւոցն Իթամարայ ։ Եւ գրեաց զնոսա
Սամէաս որդի Նաթանայելի , դպիր Ղեւ-
տացւոցն յանդիման արքային եւ իշխա-
նացն , եւ Սադովկայ քահանային եւ Ա-
քիմելեքայ որդւոյ Աբիաթարայ եւ [13]իշ-
խանք տոհմիցն քահանայիցն եւ Ղեւտաց-
ւոցն ի մանէ ազգին իւրեանց , [14]մի մի
առ որդիսն Եղիազարու , եւ մի մի առ
որդիսն Իթամարայ" ։
7 Եւ ել վիճակն առաջին՝ Յուրիբայ , եւ
8 երկրորդն՝ Յազնիայ , երրորդն՝ Խարե-
9 մայ , չորրորդն՝ Սեւուրինայ , Հինգե-
րորդն՝ Մելքիայ , վեցերորդն՝ Մերեայ ,
10 եւթներորդն՝ Ակկուսայ , ութերորդն՝
11 Աբիայ , Իններորդն՝ Յեսուայ , տասնե-
12 րորդն՝ Սեքենեայ , Մեւասաներորդն՝
Եղիասիբայ , երկոտասաներորդն՝ Սաղա-
13 կիմայ , երեքտասաներորդն՝ Ովփիայ ,
14 չորեքտասաներորդն՝ Իզբայելի , Հնգետա-
սաներորդն՝ Բեղգայ , վեցտասաներորդն՝
15 Եմմերայ , եւթնետասաներորդն՝ Եզիրայ ,
16 ութոտասաներորդն Ափեսայ , Իննետա-
17 ներորդն՝ Փեղեթայ , քսաներորդն՝ Եզեկի-
ելի , Քսանևերորդ առաջներորդն՝ Յաքինայ ,
18 քսաներորդ երկրորդն՝ Դամուելի , Քսա-
նևերորդ երրորդն՝ Դազայեայ , քսաներորդ
19 չորրորդն՝ Մոզեայ ։ Այս է համար նոցա
ըստ պաշտամանն իւրեանց մտանել ի
տունն Տեառն , ըստ իրաւանց իւրեանց , ի
ձեռն Ահարոնի հօրն իւրեանց , որպէս
պատուիրեաց Տէր Աստուած Իսրայելի ։
20 Եւ յորդւոցն Ղեւեայ մնացելոց՝ յորդ-

[1] ՆԵՂ· բնակեսցի յԵրուսաղէմ [2] ՆԵՂ· ոչ եւս բառնային [3] ՆԵՂ· ընդ ձեռամբ [4] ՆԵՂ· ի գաւիթն [5] ՆԵՂ· առաջի Տեառն [6] ՆԵՂ· ժողովոյ , եւ զպահպանութիւնս սրբութեանն [7] ՆԵՂ· դասակարգութիւն որդւոցն Ահարոնի [8] ՆԵՂ· պղծեաց [9] ՆԵՂ· եւ Սադովկ [10] ՆԵՂ· Ակիմելէք [11] ՆԵՂ· վիճակաւ [12] ՆԵՂ· Աստուծոյ [13] ՆԵՂ· իշխանաց [14] ՆԵՂ· մի վասն եղիազարու , եւ մի վասն Իթամարայ

ւոյն Ամրամայ՝ Մուբայէլ , [1]Յագդիա .
21 Ագգիա . յորդւոյն Աբիայ՝ իշխան՝ Յե-
22 ռիա . Յորդւոյն Սարայիայ՝ Սազա-
մալիթ . Յորդւոյն Սազամալիթայ՝ Յա-
23 նամ . Եւ յորդւոյն Քեբրոնի՝ Յերիա
առաջին , Ամարիա երկրորդ , Յեզիէլ
24 երրորդ , Յեկիմաս չորրորդ . Որդիքն
Ոզիելի՝ [2]Միքա առաջին , եւ Յուսա
երկրորդ , եւ որդի Միքայի՝ Սամիր .
25 Եւ եղբայր Միքայի՝ Յեսիէ . [3]որդիք Յե-
26 սեայ՝ Զաքարիա . Որդիք Մերարեայ՝
27 Մոզղի եւ Մաւսի . [4]Ազիա որդի Նորա ,
Բանիա որդի Նորա՝ , եւ Զաքկուր եւ
28 Որբիա . [5]Մոզղի , եղիազար եւ Կիս որ-
29 դի Նորա . Եւ որդի Կիսեայ՝ Երմայէլ՝ .
30 Եւ որդիք Մուսեայ՝ Մոզղի եւ Յեզեր
եւ Յերիմոթի . Առաքէն որդիք Ղեւսացւ-
31 ւոց ըստ տանց առնմին իւրեանց , Ա-
րոն եւ Նորա վիճակ , որպէս եւ եղ-
բարքն իւրեանց որդիքն Ահարոնի , ա-
ռաջի [6]Թագաւորին . եւ Սադովկ եւ Ա-
քիմելէք յիշխանաց առնմից քահանա-
յիցն , եւ ի Ղեւսացւոցն ցեղէն՝ որք կա-
ցին իրրեւ զեղբարան իւրեանց զկրասե-
բագործան՝ ,

ԳԼ . ԻՆ

1 Զորս կացուցէ Դաւիթ արքայ եւ իշխանք
զօրուն ի գործն , [3]ընդ որպիսի՝ Աա-
փսայ եւ Եմանայ եւ Իդիթունայ . որք
[7]երգէին տաւղօք եւ քնարօք եւ ծնծղա-
յիւք . եւ եղեւ թիւն նոցա որք պար-
2 ձէին զպարծս իւրեանց , [3]Որպիք Աա-
փսայ՝ Զակքուր եւ Յովսէփ եւ Նաթա-
նիա եւ Յեսիէլ . որպիք [8]Աասիայ մօտ
3 առ թագաւորն , եւ Իդիթունայ որ-
պիքն՝ Գոդոդիա , Եզրի եւ Եսայի եւ
Սեմէի եւ Ասարիա եւ Մատաթիա ,
վեց , [9]Հանոկերդ հարցն իւրեանց Իդի-
թունայ երդէին՝ քնարօքն զգոհութիւնս
4 եւ զօրհնութիւնս Տեառն , [10]եւ որպիք՝
Եմանայ՝ Բոկքիա եւ Մատթանիա եւ
Ոզիէլ եւ Սուբայէլ եւ Յերիմոթ եւ Ա-
նանիաս եւ Անան եւ Եղէլթան եւ Գի-
ղթոպաթի եւ Յոսամոթիզեր եւ Սակա-
նատան եւ Մեղիթ եւ Յոսբեքասա եւ Մա-
5 զիոթ . Սամնեքիան առաք որպիք Եմա-
նայ , [11]որք նուագէին առաջի՝ արքայի
բանիւքն Ատտուծոյ՝ բարձրացուցանել
եղջերաւն . եւ ետ Ատտուած որդիս Եմա-
6 նայ [12]Հնգետասան , եւ դստերս երիս : Ա-
սմնեքիան նոքա [13]հանդերձ հարցն՝ իւր-
եանց երգէին օրհնութիւնս Տանն Տեառն
ծնծղայիւք եւ աւազօք եւ քնարօք [14]մերձ
առ արքայն . եւ՝ Ասափ եւ Իդիթունն եւ
7 Եման : Եւ եղեւ թիւ նոցա հանդերձ եղ-
բարբքն իւրեանց , որք ուսեալ էին
գերգան Տեառն , ամենեքեան հանճարեղքն
երկերիւր եւ ութսուն եւ ութ :
8 Արկին եւ նոքա վիճակս հանապա-
զորդ պաշտաման , ըստ փոքու եւ մեծի՝
9 կառավարողն եւ որք ուսանէին : Եւ ել
վիճակն առաջին [15]Ասափայ եւ որդւոց
նորա եւ եղբարցն իւրոց . Յովսէփ ա-
ռաջին՝ . Գոդոդիա երկրորդ՝ ինքն եւ
եղբարք իւր եւ որդիք իւր երկոտաս-
10 ան . Երրորդ՝ Զակքուր , որդիք իւր եւ
11 եղբարք իւր երկոտասան . Չորրորդ՝
Եզրի , եւ որդիք իւր եւ եղբարք իւր
12 երկոտասան . Հինգերորդ՝ Նաթանիա ,
որդիք իւր եւ եղբարք իւր երկոտասան .
13 Վեցերորդ՝ Բոկքիա , որդիք իւր եւ եղ-
14 բարք իւր երկոտասան . Եւթներորդ՝
Յեսարէլ , որդիք իւր եւ եղբարք իւր եր-
15 կոտասան . Ութերորդ՝ Եսայի , որդիք
16 իւր եւ եղբարք իւր երկոտասան . Ին-
նեներորդ՝ Մատթանիա . որդիք իւր եւ եղ-
17 բարք իւր երկոտասան . Տասներորդ՝
Սեմէի , որդիք իւր եւ եղբարք իւր եր-
18 կոտասան . Մեասանեներորդ՝ Եզրիել ,
որդիք իւր եւ եղբարք իւր երկոտա-
19 սան . Երկոտասաներորդ՝ Ասարիա , որ-
դիք իւր եւ եղբարք իւր երկոտասան .
20 Երեքտասաներորդ՝ Սուբայէլ , որդիք
21 իւր եւ եղբարք իւր երկոտասան . Չո-
րեքտասաներորդ՝ Մատթանիա , որդիք
22 իւր եւ եղբարք իւր երկոտասան . Հնգե-

[1] ԵԲԲ. յորդւոյն Աբրայէլի՝ Յագդիա . (21) Ի Հռաքեայ. յորդւոյն Հռաքեայ՝ առաջին [2] ԵԲԲ. Միքա , յորդւոյն Միբայ՝ [3] ԵԲԲ. յորդւոյն [4] ԵԲԲ. Որդի Յազեայ՝ Բենոյ . (27) Որդիք Մերարեայ ի Յազեայ՝ Բենոյ եւ Սոհամ [5] ԵԲԲ. Ի Մոզղեայ՝ Եղիազար , եւ ոչ էին նորա որդիք . (29) Ի Կիսեայ , յորդւոց Կիսեայ՝ Յերամէլ [6] ԵԲԲ. Դաւթի արքային, եւ Սադովկայ և Աբիմելեքայ և իշխանաց տոհմից քահանայիցն և Ղեւսացոց . որպէս տոհմք իշխանացն , նոյնպէս և կրասեբագործն եղբարք նոցա [7] ԵԲԲ. մարգարէանային [8] ԵԲԲ. Աասիայ ընդ ձեռամբ Աասիայ որ մարգարէանայր ընդ ձեռամբ Թագաւորին ; (3) ՅԻդիթունայ, որդիք Իդիթունայ [9] ԵԲԲ. ընդ ձեռամբ Հօր իւրեանց Իդիթունայ մարգարէանային

[10] ԵԲԲ. Յեմանայ , որդիք [11] ԵԲԲ. աւետաւորի [12] ԵԲԲ. չորեքտասան [13] ԵԲԲ. ընդ ձեռամբ Հօր [14] ԵԲԲ. ի սպաս տանն Տեառն ընդ ձեռամբ արքային [15] ԵԲԲ. Յովսեփայ որ Աասիայն

տասաներորդ՝ Ցերիմովթ, որդիք իւր եւ
23 եղբարք իւր երկոտասան. Վեչտասանե-
րորդ՝ Անանիաս, որդիք իւր եւ եղբարք
24 իւր երկոտասան. Եւ քնուտասաներորդ՝
Եզրակասան, որդիք իւր եւ եղբարք
25 իւր երկոտասան. Ութ ուտասներորդ՝ Ա-
նանի, որդիք իւր եւ եղբարք իւր եր-
26 կոտասան. Քնու ուտասներորդ՝ Մեղեթի,
որդիք իւր եւ եղբարք իւր երկոտա-
27 ասան. Քսաներորդ՝ Եղիաթ, որդիք իւր
28 եւ եղբարք իւր երկոտասան. Քսան եւ
առաջներորդ՝ Յովքիրի, որդիք իւր եւ
29 եղբարք իւր երկոտասան. Քսան եւ երկ-
րորդ՝ Գեդոզաթի, որդիք իւր եւ եղբարք
30 իւր երկոտասան. Քսան եւ երրորդ՝ Մա-
զիոթ, որդիք իւր եւ եղբարք իւր եր-
31 կոտասան. Քսան եւ չորրորդ՝ Հեմոմո-
թիեղեր, որդիք իւր եւ եղբարք իւր
երկոտասան։

ԳԼ. ԻԴ

1 Եւ ի գատուցեալս դրանցն յորդւոցն
Կորխայ՝ Մասդամ որդի Կորխայ յորդ-
2 ւոցն Ասափայ, Եւ Մասեզամիայ որդիք
Զաքարիա անդրանիկ, Յազիել երկ-
րորդ, Զեբադիաս երրորդ, Նաթանա-
3 էլ չորրորդ, Եղամ հինգերորդ, Յովհանան
4 վեցերորդ, Եղիովէ եւթներորդ։ Եւ Ա-
ղեդովմայ որդիք՝ Սամէաս անդրանիկ եւ
Յովազադազ երկրորդ, Յովաթա եր-
րորդ, Սաքար չորրորդ, Նաթանայէլ
5 հինգերորդ, Ամիէլ վեցերորդ, Իսաքար
եւթներորդ, Փեղաթի ուԹերորդ. վասն
6 որի օրհնեալ զնա Աստուած։ Եւ Սե-
մէեայ որդւոյ նորա անդրանիկան Ծնան
որիք զօրաւորք ի տան հօրն իւրոյ,
7 վասն զի հզօրք էին։ Որդիք Սամէա-
եայ՝ Աթնի եւ Ռափայէլ եւ Յովեդ
եւ Եզազաբէթ, Աքիու [1]եւ եղբարք իւր՝
որդիք զօրաւորք ուժով, Եղիու եւ Սա-
8 մաքիաս [1]եւ Իդլիակաս։ Ամենեքեան
սոքա որդիք Աղեդովմայ, ինքեանք եւ
որդիք իւրեանց եւ եղբարք իւրեանց՝
զօրացեալք զօրութեամբ, գործէին զո-
րութեամբ զգործս, վաթսուն եւ երկու
9 Ազեդովմայ։ Եւ Մասդամայ՝ որդիք եւ
10 եղբարք հասուննք՝ ութսուտասան։ Եւ Ով-
դեայ յորդւոցն Մերարեայ որդի մի՝ Շա-
մարի, որում պահէին զդլխաւորու-
թիւն. զի ոչ գոյր անդրանիկին ի մէջ,
11 եւ ած եզ զնա հայր իւր սկիզբն. Ենդ-

[1] 8Եբր. պա---ե

կիա՝ երկրորդ, Տաքէլ՝ երրորդ, Զա-
քարիա՝ չորրորդ. ամենեքեան սոքա Ու-
դայեայ որդիք, եւ եղբարք նորա՝ [2]չո-
12 րեքտասանք։ Սոցա եղ բաժին վիճակաւ
դրանցն գլխաւորութեանց՝ կալ չարա-
քաւոր առաջի եղբարցն իւրեանց, եւ
13 պաշտել ի տան Տեառն։ Եւ արկին վի-
ճակ ըստ փոքուն եւ ըստ մեծին, ըստ
տանց ազգատոհմին իւրեանց ի դրունս
14 դրանց։ Եւ ել վիճակ դրանն արեւե-
լից Սեմեայ. եւ Զաքարեայ որդւոյ նո-
րա խորհրդական ի միտս իւր, արկա-
նէին վիճակս, եւ ել նմա վիճակն ընդ
15 կողմն հիւսիսոյ։ Եւ Աբդեդովմայ ընդ
հարաւակողմն կոյս. եւ որդւոյ իւրոց
16 ընդդէմ տանն Ասուպիմ։ [3]Ցերրորդեան՝
սեմոն Ովասայ ընդ արեւմտեաս կոյս.
դրամին հանդերձ պահապանին, ելից ճա-
նապարհին, պահ առ պահ ընդ արեւելս՝։
17 Իսկ Ղեւեացիքն վեց [4]վեց, յաւուր ընդ
կողմանս հիւսիսոյ չորս չորս, յաւուր ընդ
կողմանս հարաւոյ չորս չորս, [5]յաւուր՝ յԱ-
սաւփինն. եւ երկուս երկուս ի փոխանա-
18 կել։ Եւ ընդ արեւմտեաս չորս, եւ ի ճա-
նապարհ երկուս երկուս փոխանակաւ՝։
19 Այս վիճակ բաժնիւ գաւազանաց որդ-
ւոցն Կորխայ եւ որդւոցն Մերարեայ։
20 Եւ [6]Ղեւեացիքն եղբարքք իւրեանց
հանդերձ՝ ի վերայ գանձին տանն Տեառն,
21 եւ ի վերայ գանձին սրբոց։ [8]Որ-
դիքն Ղադանայ որդւոյ Գերսամ, Ղա-
դանա իշխանք ազգաց առնմին Ղա-
22 դանա եւ Գերսամայ, Յեհիել, եւ՝ Զե-
թամ, եւ Յոէլ՝ եղբայր նորա ի վերայ
23 գանձին տան Տեառն։ [9]Եւ Ամրամ եւ
24 Իսահառ, Քեբրոն եւ Ոզիել եւ Սեբուէլ
Գերսամեանց Մուշեանց՝ զօրագլուխք՝
25 ի վերայ գանձուցն։ [10]Եւ եղբայր նորա
Եղիազար՝, Հաբրիա որդի նորա, Եսայի

[2] 3Եբր. երեքտասան [3] 5Եբր. Սուփիմայ եւ Ովե-
դայ ընդ արեւմտեաս կոյս առ դրան Սաղեքե-
թայ յելս ճանապարհին պահ առ պահ [4] 6Եբր.
վեց ըստ արեւելս [5] 8Եբ. եւ ընդ կողմն Ասու-
փիմայ երկու երկու. (18)Ընդ կողմն Փարպարայ
յարեւմտեաս կոյս ընդ ճանապարհ առնդղոյն՝
չորս, եւ ի Փարպարի՝ երկու [6] 9Եբր. ի Ղեւ-
տացւոցն Աբիա [7] 11Եբր. Ասուեծդոյ [8] 12Եբր. Որդ-
ւոցն Ղադանայ, յորդւոցն Ղադանայ Գերսամ
եանց, յիշխանաց տոհմից Ղադանայ Գերսամ
եանց՝ [9] 14Եբրէից (22)Եւ որդիք Յեբրեկայ [10] 15Եբր.
յԱմրամեանց, յԻսահառ եանց, ի Հեբրոնեանց,
յԱզոպիէլեանց, (24)Եւ Սաբայէլ որդի Գերսամայ
որդւոյ Մովսիսի՝ վերակացու [10] 16Եբր. եղբայրք
նորա, յԵղիազարայ

որպի Նաթա, Յովբաս որպի Նաթա,
26 Զաբբի որպի [1]Նաթա, եւ ինքն Մազամովի
եւ եղբարք իւր ի վերայ ամենայն գան-
ձուն արքային արրոյ, զոր նուիրեալ Դա-
ւիթի եւ իշխանք առնմիցն՝ նուիրեալ
27 րեալ հանցն, Զոր աւելալ էր [2]ի քաղա-
քաց անտի աւար, եւ նաեւ իրեալ էր ի
նոցանէն, զի սի նուազեալ գործք չի-
28 նուածոյ առնն Աստուծոյ։ Զոր նուի-
րեցին Սամուէլ տեսանողն եւ Սաուլ
Կիսեանց եւ Աբենների Ներեանց, եւ Յո-
վաբ որպի Շարուհեայ. եւ ամենայն
նուէրք որ էին ի ձեռս Մազամովիթայ եւ
29 եղբարց իւրոց. [3]Յեսաբի եւ՝ Քոնոնիա
եւ որպիք իւր. [4]եւ գործքն՝ գործոյն
արտաքինոյ ի վերայ Իսրայելի, [5]զի գրի-
30 գին եւ վճարիցին ի Քերրոնիա. Ա-
պիտա՝ եւ եղբարք իւր, որպիք զօրա-
կան հազար եւ երկին հարեւր, ի վե-
րայ տաճկանաւորացն Իսրայելի յայնկոյս
Յորդանանու զեւտոյն ընդ արեւմուտս,
յամենայն գործ պաշտաման Տեառն, եւ
31 ի գործ արքունի. [6]Քերրոնեայ Ի բրատ
իշխան, Քերրոնեայ ազգատոմարն իւ-
րեանց հանդերձ. յաժին՝ քահանայապետի
Թոգաւորեանն Դաւիթ՝ այս յաշ-
խարհագրի անդ գաւառ այր գօրաւորեանց
32 ի նոսա Յազերն [7]Գազապետացոյց։ Եւ
եղբարք իւր որպիք զօրաւորք, երկու
հազար եւ երկին հարեւր, պետաւորք
տոհմին. եւ կացոյց զնոսա արքայ Դա-
ւիթ ի վերայ գնդին Ռաւբենայ եւ Գա-
դայ եւ կէս ազգին Մանասեան գնդին,
վասն ամենայն բանից Աստուծոյ, եւ
բանից արքունի։

ԳԼ. ԻԱ

1 Եւ որպիք Իսրայելի իւրաքանչիւր թուոյ,
նահապետաք ազգատոհմին հազարապետաք
եւ հարիւրապետաք. եւ հաճարակաւ գպիրք
որ պաշտէին ի ժողովրդեանն զամենայն
համարս արքունի, յոտ իւրաքանչիւր
գործոյն համարոյ ելիցն եւ մտին ամի
ամսոյ յամենայն ամիս [8]ասպետն։
2 [9]Ընդ որս ի վերայ համարոյ ա-
ռաջնոյ ամսեանն՝ Յեզբաամ [10]եւ Բա-
զիել՝, եւ բնակութիւն ելից նորա զաս
3 եւ չորս հազարք. Յորդանայ Փարեցոյ,
որ գլուխ էր ամենայն իշխանացն զո-
4 րոյ եւ ամսեանն առաջնոյ։ Ընդ որ-
ում ամսոյն երկրորդի՝ Դոդոյի [11]եւ
Դաբոնի՝, եւ Մազովաւիի առաջնորդ,
եւ բնակութիւն նորա գասն եւ չորս
5 հազարք։ Իշխան զորութեան երրորդ
յամսեանն երրորդի՝ Բանեա, [12]Յոյակ՝
քահանայի, իշխան. եւ բնակութեան
6 նորա, գասն եւ չորս հազարք։ Ինքն
Բանեա հզօրացոյն գասն զերեսնեան,
եւ ի վերայ երեսնից [13]զօրին բնակու-
7 թեան իւրոյ՝։ Յաւսեհան եղբայր Ա-
սայէլ եղբայր Յովաբու, եւ Զաբդէաս
որպի նորա [14]եւ եղբարք իւր՝ ակնի նո-
րա. եւ բնակութիւնք զաւրին նորա գասն
8 եւ չորս հազարք։ Հինգերորդ ամսեանն՝
հինգերորդ իշխան Սամհովի յիզրայ.
եւ զաւրին ամսին նորա գասն եւ չորս
9 հազարք։ Վեցերորդ ամսեանն՝ վեցե-
րորդ իշխան [15]Իկէս որպի Եկկեայ Թե-
կուացոյ. եւ ամսոյ զաւրին նորա գասն
10 եւ չորս հազարք։ Եւ ի եօթներորդում ամ-
սեանն՝ եւ ի եօթներորդ իշխան Քեզ Փապո-
ւեանց յոյզուց Եփրեմայ. եւ ամսոյ զաւ-
11 րին նորա գասն եւ չորս հազարք։ Ու-
թերորդ ամսեանն ութերորդի՝ [16]Ուսաք
Հեղիսմայեանց Զարայեայ՝, եւ ամսոյ
զաւրին նորա գասն եւ չորս հազարք։
12 Իններորդ ամսեանն իններորդի՝ Ափե-
դեր որ յԱնաթովթայն, որ ի Բենիամին
երկրի. եւ ամսոյ ի զաւրին իւրում գասն
13 եւ չորս հազարք։ Տասներորդ յամսեանն
տասներորդի՝ Մաւարի Նետոփաթեանց
Զարայ. եւ ամսոյ զաւրին իւրում գասն
14 եւ չորս հազարք։ Մետասաներորդն
յամսեանն մետասաներորդի՝ Բանեա ի
Փարաթովնայ, յոյզուցն Եփրեմի, եւ
ի զաւրուցեալսն նորա գասն եւ չորս
15 հազարք։ Երկոտասաներորդն յամսեանն
երկոտասաներորդի՝ Քաղդայ ի Նետոփա-
թովայ, [17]որպի Գոթոնիելի՝, եւ ի զաւրու-
ցեալսն նորա գասն եւ չորս հազարք։
16 Եւ ի կուղիցն Իսրայելի, Ռաւբենի իշ-
խան՝ Եղիեզեր որպի Զիքրեայ, եւ Շեմա-
17 ւոնի՝ Սափատիաս որպի Մաիքեայ, Եւ

---

[1]ԵԲԲ. Նաթա, եւ Աազամովի որդի Նորա [2]ԵԲԲ. ի պատերազմից [3]ԵԲԲ. Յիսահաեանց [4]ԵԲԲ. ի վերայ [5]ԵԲԲ. ասիկանք և գաւառք. (30) ի Քերրոնեանց Աստիա [6]ԵԲԲ. Ի Քերրոնեանց Յերիա իշխան ազգատոհմին Քերրոնեանց, յամին [7]ԵԲԲ. Գաղատացոյ [8]ԵԲԲ. տասնեայն քասն եւ չորք հազարք [9]ԵԲԲ. Գասակարգութիւն ՅՈՒ, քաժին, տղայք և վինչ

[10]ԵԲԲ. որդի Զաբդիելի [11]ԵԲԲ. Աքուբացի [12]ԵԲԲ. որդի Յովհաքայ [13]ԵԲԲ. եւ ի քաժնի նորա Ամիզաբագ որդի նորա [14]ԵԲԲ. պակաս [15]ԵԲԲ. Իրաս [16]ԵԲԲ. Սովբաքի Ավացի Զարայեանց [17]ԵԲԲ. Փոդոնիելեան

Ղևեայ՝ Աասբիա որդի Կամուելի, եւ
18 Ահարոնի՝ Սադովկ, եւ Յուդայ՝ Եղիար
յեղբարցն Դաւթի, եւ Իսաքարայ՝ Ա-
19 մարիաս որդի Միքայելի, եւ Զաբու-
ղոնի՝ Սամէաս որդի Աբդեայ, եւ Նեփ-
20 թաղիմայ՝ Երիմովթ որդի Ազիելի, եւ
Եփրեմի՝ Ովսեր որդի Ազեայ, եւ կիսոյ
ցեղին Մանասէի՝ Յովէլ որդի Փադեայ,
21 Եւ կիսոյ ցեղին Մանասէի որ էր ի Գա-
ղաադ՝ Յադայի որդի Զաքարեայ, որդ-
ւոցն Բենիամինի՝ Ասիէլ որդի Աբենն-
22 րայ, Դանայ՝ Եզրիէլ որդի Յովրամայ.
սոքա էին նահապետք ցեղիցն Իսրա-
յելի։
23 Եւ ոչ առ Դաւիթ զթիւն նոցա ի
քառասունենից եւ ի վեր. վասն զի Տէր
ասաց բազմացուցանել զԻսրայէլ իբրեւ
24 զաստեղս երկնից։ Եւ Յովաբ որդի Շա-
րուհեայ սկսաւ թուել զժողովուրդն,
եւ ոչ կատարեաց. եւ եղեւ յայտս
այնորիկ բարկութիւն ի վերայ Իսրայե-
լի. եւ ոչ յարգեցաւ թիւն ի գիրս բա-
նից աւուրց թագաւորին Դաւթի։
25 Եւ ի վերայ գանձուց արքային Ազա-
մաւթի որդի Ազիելի. եւ ի վերայ գանձ-
ուց անդաստանաց ի դաշտն եւ ի տունս
եւ յաչտարակս՝ Յոնաթանի որդի Ո-
26 զեայ. Եւ ի վերայ երկրագործացն որք
27 գործէին՝ Եզրաս որդի Քենղեայ. Եւ
ի վերայ [1]ագարակացն՝ Սեմէի Արիմա-
թացի. եւ ի վերայ [2]չամփառանացն գիւ-
28 դից դինուն՝ Զաբդի որդի Սեփփեայ։ Եւ
ի վերայ ձիթենեացն եւ մոպմզենեացն
որք ի գաչտս՝ Բաղդանա [3]որդի Գեդէա-
նի՝. եւ ի վերայ չամփառանաց ձիւղն՝
29 Յովաս. Եւ ի վերայ արջառոց [4]արօտա-
կանաց որք էին՝ ի Հովիանն՝ Սոփփատ
30 որդի Ադայեայ. Եւ ի վերայ ուղտուցն՝
Ուբիաս Իսմայելացի. եւ ի վերայ իշոցն՝
31 Յադիաս Մարաթովնացի. Եւ ի վերայ
հօտիցն՝ Յազազ Ագարացի. ամենեքեան
սոքա վերակացուք ստացուածոցն Դաւ-
թի արքային։
32 Եւ Յովնաթան հօրեղբայր Դաւթի՝
խորհրդակից, այր հանճարեղ. եւ ինքն
գպրապետ. եւ Եհիէլ որդի Ագեմոնեայ
33 ընդ որդիս արքային։ Եւ Աքիտոփէլ՝
խորհրդակից արքային, եւ Քուսի [5]ա-

[1] ԵԲԲ· այգեաց [2] ԵԲԲ· արդեանց այգեաց, չամեմարանաց գինւոյ [3] ԵԲԲ· Գագերացի
[4] ԵԲԲ· արօտականաց որ ի Սարոն՝ Սեպրա Սարոնացի. եւ ի վերայ արջառոց [5] ԵԲԲ· Արաքացի

34 ռաչին բարեկամ արքային, եւ [6]զկնի
նորա Աքիտոփէլ մերձ ի նա, եւ Յովի-
դայեայ՝ որդի Բանեայ եւ Աբիաթար.
եւ զօրավար զօրացն արքային Յովաբ։

ԳԼ· ԻԸ

1 Եւ ժողովեաց Դաւիթ զամենայն իշ-
խանսն Իսրայելի, զիշխանս [7]գաւառ-
ացն եւ զամենայն իշխանս օրամատին՝
ի սպաս անձնասպահաց՝ թագաւորին,
եւ զիշխանս հազարաւորացն եւ հարիւ-
րաւորացն եւ զանձապահացն, որք էին
ի վերայ ստացուածոցն [8]նորա, եւ՝ զզօ-
րաւորսն եւ զպատերազմօղս զօրավա-
2 րացն յերուսաղէմ։ Եւ եկաց Դաւիթ
արքայ [9]ի մէջ եկեղեցւոյն՝ եւ ասէ,
Լուարուք ինձ, եղբարք իմ եւ ժողո-
վուրդ իմ. ի սրտի իմում եղեւ չինել
տուն հանգստեան տապանակի ուխտին
Տեառն, եւ կայան ոտից [10]Տեառն մե-
ծի. եւ պատրաստեցի եւ ի բնակու-
թիւնն յայն զկազմածգ պայգ, ոսկի եւ
արծաթ եւ պղինձ եւ արոյր եւ երկաթ
3 եւ փայտ բազում՝. Եւ ասաց Աստուած
ցիս, Ոչ չինեսցես տուն ինձ անուն,
անուանել զանուն իմ ի վերայ նորա. վասն
զի այր պատերազմօղ ես դու, եւ հե-
4 ղեր արիւն բազում։ Եւ ընտրեաց Տէր
[11]Աստուած յամենայն ազգաց զԻսրայէլ,
եւ յամենայն Իսրայելէ՝ ընտրեաց զՅու-
դաս, կանգնել զթագաւորութիւնն իւր յա-
ւիտեան՝. եւ ի տանէն Յուդայ ընտրեաց
զտունն հօր իմոյ, եւ յորդւոց հօր իմոյ կա-
մեցաւ զիս լինել թագաւոր ի վերայ ամե-
5 նայն Իսրայելի։ Եւ յամենայն որդւոց իմ-
ոց, վասն զի որդիս բազումս ետ ինձ Տէր,
ընտրեաց զՍողոմոն որդի իմ, նստուցանել
յաթոռ թագաւորութեան Տեառն ի վե-
6 րայ Իսրայելի։ Եւ ասաց ցիս Աստուած,
Սողոմոն որդի քո չինեսցէ զտունն իմ եւ
[12]զաւլիսն իմ. վասն զի ընտրեցի զնա լինել
7 ինձ որդի, եւ ես եղէց նմա ի հայր. Եւ
[13]ուշգնեցից զթագաւորութիւնն նորա մին-
չեւ յաւիտեան, եթէ զօրացեալ պահել զպա-

[6] ԵԲԲ· զկնի Աքիտոփելայ Յովիադա [7] ԵԲԲ· ցեղիցն եւ զիշխանս գաւակարգութեանց ի սպաս
[8] ԵԲԲ· արքայի եւ որդւոց նորա, զնեղբինիս եւ [9] ԵԲԲ· ի վերայ ոտից իւրոց [10] ԵԲԲ· Աստուծոյ մերոյ, եւ պատրաստեցի ի շինել [11] ԵԲԲ· Աստուած Իսրայելի յամենայն տանէ հօր իմոյ զիս՝ լինել թագաւոր ի վերայ Իսրայելի յաւիտեան. զի ընտրեաց զառաջնորդն ի Յուդայ [12] ԵԲԲ· զգաւիթս [13] Կամ, Հաստատեցից

առաքանս իմ եւ վերադունս իմ իրրեւ յա-
8 ւուրս յայսմիկ։ Եւ արդ [1]դիք առաջի
երեսաց ամենայն՝ եկեղեցւոյս Տեառն,
եւ յահաւոնս Աստուծոյ մերոյ, պահեցէք
եւ ինդրեցէք զամենայն պատուիրանս
Տեառն Աստուծոյ ձերոյ, զի ժառան-
գեսցեք զերկիրս քաջի, եւ ժառանգե-
ցուցանիցէք որպէս ձերոյ յետ ձեր
մինչեւ յաւիտեան։
9 Եւ դու, Սողոմոն որդի իմ, ծանիր
զԱստուած [2]հարցն քոց՝, եւ ծառայեա
նմա կատարեալ սրտիւ, եւ մտօք կա-
մաց քոց. վասն զի զամենայն սիրտս
քննէ Տէր եւ զամենայն խորհուրդս ճա-
նաչէ. եթէ խնդրեսցես զնա գտցի քեզ,
եւ եթէ թողցես զնա լքցէ զքեզ ի
10 սպառ։ Տես այժմ, զի Տէր ընտրեաց
զքեզ չինել նմա տաճն ի սրբութիւն.
զօրացիր եւ արա։
11 Եւ եա Դաւիթ Սողոմոնի որդւոյ իւ-
րում զօրինակ [3]տաճարին եւ սենեկաց
նորա եւ գանձարանաց նորա եւ վեր-
նատանցն եւ չտեմարանացն ներքինոց
12 եւ տանն քաւութեան. Եւ [4]զօրինակ
զոր ունէր ի մտի իւրում՝ սրտիւ՝ տանն
Տեառն, եւ զամենայն չտեմարանացն
չուրջանակի, յամրարս տանն [*]Տեառն
13 եւ սիներից սրբութեանցն. Եւ [5]ձեռ-
ագործացն յօրամարիս ի պաշտօն քահա-
նայիցն եւ Ղեւտացւոց յամենայն գործ
պաշտամանց տանն Տեառն, եւ չտեմա-
րանաց անօթոց սպասուց տանն Տեառն։
14 Եւ զմեսս կշռոց նոցա՝ զոսկւոյ եւ
15 զարծաթոյ, Զկշիռս աչառակաց նոցա,
16 եւ զլաստիակացն նմանութիւնս՝, Եւ
զկշիռս սեղանոցն առաջադրութեան, եւ
պիւրաքանչիւր սլուտք սակուղէն սեպ-
17 հոց. Նոյնպէս եւ գարծաթեղինացն. Եւ
զմսահանացն եւ զնաւթրանոցացն եւ

[1] ՆԵԲԲ. առաջի աչաց ամենայն Իսրայէլի [2] ՆԵԲԲ. Հօր քո [3] ՆԵԲԲ. սրահին [4] ՆԵԲԲ. զօրինացն ամենայնի որ եղեւ Հոգւով առնա վասն գաւթի [*] ՆԵԲԲ. Աստուծոյ [5] ՆԵԲԲ. հրամայեաց վասն գաւառակարգութեան քահանայիցն և Ղեւտացւոց, եւ վասն ամենայն գործոյ պաշտամանց տանն Տեառն, եւ վասն ամենայն անօթոց սպասուսաւ տանն Տեառն. (14) Վասն կշռոյ սակուցն, վասն ամենայն սակեղէն անօթոց սպասուս եւ պաշտամանն, վասն կշռոյ ամենայն արծաթեղէն անօթոց, վասն ամենայն անօթոյ պաշտամանն և պաշտամանն. (15) Եւ վասն կշռոյ սակեղէն աչտանակաց, և վասն ամենայնսակեղէն ճրագարանաց նորա, եւ վասն կշռոյ ամենայն աչտանակի արծաթոյ և ճրագարանաց նորա, ըստ պիտոյից իւրաքանչիւր աշտանակի

[6] ՆԵԲԲ. զոսկեզինացն յոսկւոյ սրբոյ, և զտաշտիցն սակեզինաց, զկշիռ իւրաքանչիւր տաշտի, և զտաշտիցն արծաթեզինաց, զկշիռ իւրաքանչիւր տաշտի [7] ՆԵԲԲ. կառուցն քերովբէիցն [8] ՆԵԲԲ. Այս ամենայն գրեալ ի ձեռանէ Տեառն ծանուցեալ ինձ, ամենայն գործ օրինակիս այսորիկ։ [9] ՆԵԲԲ. ԳԼՀԵ [10] ՆԵԲԲ. ահա գաւառակարգութիւնք [11] ՆԵԲԲ. զոր միայն [12] ՆԵԲԲ. ինձ տան Աստուծոյ իմոյ զարծաթն եւ ոսկին որ էր իմ առանձինն՝

[6] զտաշտիցն ոսկեզինաց, եւ զկշիռս
ոսկւոյ եւ արծաթոյ, եւ զտիցն զի բա-
18 զանչիւր ուրուք՝։ Եւ զտեղանոյ խնկոցն
ի մաքուր ոսկւոյ զկշռութիւնն եղոյց
նմա, եւ զօրինակ [7]քերովբէիցն՝ որոց
տարածեալ էր զթեւսն իւրեանց եւ հո-
վանի ունէին ի վերայ տապանակի ուխ-
19 տին Տեառն։ [8]Զամենայն զրով ի ձե-
ռանէ Տեառն ետ Դաւիթ Սողոմոնի,
ըստ եղելոյ ի նմա իմաստութեանն եւ
ըստ օրինակին՝։
20 Եւ ասէ Դաւիթ ցՍողոմոն որդի իւր,
Զօրացիր եւ քաջ լեր, արա եւ մի եր-
կիցիր եւ մի զարհուրեսցիս. վասն զի
Տէր Աստուած իմ է ընդ քեզ. ոչ թողցէ
զքեզ եւ ոչ լքցէ՝ մինչեւ կատարեսցես
զամենայն գործ սպասուս տանն Տեառն։
[9]Եւ ահա այդ է օրինակ տաճարին եւ
սենեկաց նորա եւ սրահից նորա եւ վեր-
նատանցն եւ չտեմարանացն, ներքնա-
տանցն եւ տանն քաւութեան. եւ օ-
21 րինակ տաճարին Տեառն այդ է՝, Եւ
[10]օրամարիք քահանայիցն եւ Ղեւտացւոց,
յամենայն ի պաշտամունս տանն Աստու-
ծոյ. եւ ընդ քեզ եղիցի յամենայն իրս
ամենայն որ որ յօժարեսցէ իմաստու-
թեամբ ըստ հաւատոյն արուեստից, իշ-
խանքն եւ ամենայն ժողովուրդք յա-
մենայն ի բանս քո։

Գլ. ԻԹ

1 Եւ ասէ Դաւիթ առքսայ ցամենայն ե-
կեղեցին, Սողոմոն որդի իմ [11]զոր ընտ-
րեաց իւր [*]Տէր, մանուկ փոքր է, եւ
գործս մեծ է. վասն զի ոչ մարդոյ է
2 չինուածս, այլ Տեառն Աստուծոյ։ Ըստ
ամենայն զօրութեան իմոյ պատրաս-
տեցի նիւթս տանն Աստուծոյ իմոյ,
ոսկի եւ արծաթ, պղինձ եւ երկաթ,
փայտս եւ քարինս անկեանց եւ կամա-
րաց, եւ քարինս ընտիրս եւ ականս
պատուականս, եւ այլ պատրաստութիւն
3 բազում։ Եւ եւս վասն հաճոյն լինելոյ
[12]իմ ի տան Աստուծոյ իմոյ եղեւ ինձ զոր

նուիրեցիր Տեառն, ոսկի եւ արծաթ. եւ անասունք" եառ զայդ ի տուն Աստուծոյ իմոյ [1]ի բարձրութիւն. քայ յոյնցանէ զոր պատրաստեցեր ի տուն սրբութեանդ, երիս հազարս տաղանդս ոսկի [2]ի Սոփիրայ, եւ եւթն հազար տաղանդ լնելոյ արծաթ, օծանել նա-
5 քօք զերս [3]տաճարին ի ձեռն" արուեստաւորաց. եւ որ ոք յօժարիցէ մտօք [4]հնալ ձեռս իւր" այսօր Տեառն:
6 Եւ յառաջամիտք եղեն իշխան տոհմիցն եւ իշխանք սրզուոյն Իսրայելի, հաղարապետք եւ հարիւրապետք եւ վի-
րակացուք [1]գործոցն, եւ գաւառապետք"
7 արքային. Եւ եառն ի գործ տանն [5]Տեառն ոսկի՝ տաղանդս հինգ հազար, եւ լեր դահեկան. եւ արծաթ՝ տաղանդս տասն հազար. եւ պղինձ՝ տաղանդս լեր եւ
ութ հազար, եւ երկաթ՝ տաղանդս հա-
8 րեր հազար: Եւ որ ոսկեղք գտան քար պատուական՝ եառն ի չանեմարանս տանն Տեառն, ի ձեռս Յեքոնիայի որդւոյ Դեր-
9 տանի: Եւ զուարճացաւ ժողովուրդն յաղագս յառաջամիտ լինելոյն. վասն զի լի սրտիւ եղեն յառաջամիտք Տեառն. եւ Դաւիթ արքայ ուրախ եղեւ մեծապէս:
10 Եւ օրհնեաց արքայ Դաւիթ զՏէր առաջի եկեղեցւոյն՝ եւ ասէ, Օրհնեալ [6]է Տէր Աստուած Իսրայելի հարցն մերոց
11 յաւիտենից մինչեւ յաւիտեան. Քո է, Տէր, մեծութիւն եւ զօրութիւն եւ պատիւ եւ յաղթութիւն եւ կատարած-
թիւն. վասն զի [7]զոյ ամենեցուն որք են յերկինս եւ ի վերայ երկրի՝ տէրութիւն. յերեսաց քոց զղան ամենայն թագա-
12 ւորք եւ ազգք": Ի քէն է մեծութիւն եւ փառք. գու ես ամենեցուն իշխան, [1]Տէր, եւ իշխան ամենայն իշխանութեանց." ի ձեռին քում է զօրութիւն եւ տարաւթիւն, եւ ի ձեռին քում ամենակալ մեծութիւն՝ զօրացուցանել
13 զամենայն: Եւ արդ, [8]Տէր, գոհանամք զքէն, եւ օրհնեմք զանուն պարծանացդ
14 քոց: Ո՞ եմ ես, եւ ո՞ է ժողովուրդ [9]քո,

զի կարացաք յօժարամիտ լինել քեզ յայսմ ամենայնի. վասն զի քո է ամենայն ինչ, եւ ի քոյոց տուաք քեզ:
15 Բանզի պանդխտաք եմք մեք առաջի քո եւ նժդեհք՝ որպէս ամենայն հարք մեր. իբրեւ զստուեր են աւուրք մեր ի վե-
րայ երկրի, եւ ոչ դոն մեր ւմեացուածք
16 ինչ: Տէր Աստուած մեր, ամենայն բազմութիւնս այս զոր պատրաստեցի չինել զտուն անուան սրբութեանդ քո, է ի ձե-
ռանէ քումմէ, եւ քո է ամենայն ինչ:
17 Եւ ծանեայ, Տէր, եմէ դու ես որ քննես զսիրտս, զարդարութիւն սիրես. եւ
[10]մեք պարզ սրտիւք յօժարամիտք [11]եղաք յայսմ ամենայնի. եւ արդ զժո-
ղովուրդս քո որ գտաւ աստ՝ տեսի ու-
րախութեամբ լի, եղեալ առ քեզ յո-
18 ժարամիտ: Տէր Աստուած Աբրահամու եւ Իսահակայ եւ Իսրայելի հարցն մերոց, պահեա զայս ի միտս եւ ի սիրտ
ժողովրդեան քո յաւիտեան, եւ ուղ-
19 ղեա զսիրտս նոցա առ քեզ: Եւ Սողոմոնի որդւոյ իմում տուր սիրտ բարի՝ առնել զպատուիրանս քո եւ զվկայու-
թիւնս քո եւ զհրամանս քո, եւ [12]լ կա-
տարումն ածել զպատրաստութիւն տան քո":
20 Եւ ասէ Դաւիթ ցամենայն եկեղեցին, Օրհնեցէք զՏէր Աստուած ձեր: Եւ օրհնեաց ամենայն եկեղեցին զՏէր Աստուած հարցն իւրեանց, եւ խոնարհեցուցեալ դժունկս՝ երկիր պագին Տեառն եւ ար-
21 քային: Եւ [13]եղեն Դաւիթ" Տեառն զոհս, եւ [14]մատոյց ողջակէզս Աստուծոյ" ի վաղիւն առաջնոյ աւուրն, զուարակս հա-
զար, խոյս հազար, գառինս հազար, եւ գինուէրսնոցս եւ զզոհսն յամախութեամբ
22 ամենայն Իսրայելի: Կերան եւ արբին առաջի Տեառն յաւուր յայնմիկ ուրախու-
թեամբ[15]. եւ թագաւորեցուցին երկրորդ անգամ զԱդոնիա որդի Դաւթի, եւ օ-
ծին զնա Տեառն ի թագաւոր, եւ զՍա-
23 դովկ ի քահանայապետին: Եւ նստաւ Սողոմոն յաթոռ[16] Դաւթի հօր իւրոյ, եւ յաջողեցաւ. եւ հնազանդեցաւ նմա ա-
24 մենայն Իսրայէլ: [17]Իշխանք եւ զօրաւորք

---

[1] ՅԲԲ. պ-ե-ե [2] ՅԲԲ. Ոփիրայ [3] ՅԲԲ. տաճարին. (5) Վասն ոսկեղինաց՝ ոսկի, եւ վասն արծաթեղինաց՝ արծաթ, եւ վասն ամենայն գործոյ որ ի ձեռն [4] Ա.ԽԽ.Ն՝ մատուցանել ընծայ [5] ՅԲԲ. Աստուծոյ [6] ՅԲԲ. ես [7] ՅԲԲ. ես Ա թագաւորութիւն եւ դու ես բարձրացեալ ի վերայ ամենեցուն իբր գլուխ [8] ՅԲԲ. Աստուած մեր [9] ՅԲԲ. իմ

[10] ՅԲԲ. ես [11] ՅԲԲ. եղէ [12] ՅԲԲ. կատարել զամենայն եւ չինել զտաճարն վասն որոյ պատրաստեցի [13] ՅԲԲ. զնին [14] ՅԲԲ. մատուցին ողջակէզս Տեառն [15] ՅԲԲ-յեօթն յ-ե-ը-, մեծաւ [16] ՅԲԲ-յեօթն յ-ե-ը-, Տեառն ի թագաւոր փոխանակ [17] ՅԲԲ. Համարէն իշխանք

և ամենայն որդիք արքային Դաւթի
25 [1]տային նորա հնազանդական նուէր՝ և
մեծապէս Տէր զՍողոմոն ի վերուստ ա-
ռաջի ամենայն Իսրայէլի, և եւս նմա
փառս թագաւորութիւնն, որ ոչ ումեք
եղեւ ամենեցուն թագաւորացն որք յա-
ռաջ քան զնա[2]։
26 Եւ Դաւիթ որդի Յեսսեայ թագաւո-
րեաց ի վերայ [3]Իսրայէլի ամս քառա-
27 սուն՝. ի Քեբրոն ամս եւթն, և յԵրու-
28 սաղէմ ամս երեսուն և երիք։ Եւ
վախճանեցաւ բարի ծերութեամբ, լի
աւուրբք, մինծութեամբ և փառօք. և
թագաւորեաց Սողոմոն որդի նորա փո-
29 խանակ նորա։ Եւ [4]վասն եւս բանք արա-
քային Դաւթի՝ առաջինք և վերջինք,
գրեալ են ի բանս Սամուէլի տեսանողի
և ի բանս Նաթանայ մարգարէի և ի
30 բանս Գադայ տեսանողի, Յաղագս ա-
մենայն թագաւորութեան նորա և
[5]հզօրութեան նորա, և [6]ժամանակք
որ եղեն նորա ի վերայ Իսրայէլի և
ի վերայ ամենայն թագաւորութեանց
երկրի՝։

---

[1] Եբբ. հնազանդեցան արքային Սողոմոնի [2] Եբբ. բայց էր յԵլեր՝ ի վերայ Իսրայէլի [3] Եբբ. ամենայն Իսրայէլի։ (27) Եւ աւուրբ յորս թագաւորեաց ի վերայ Իսրայէլի՝ եղեն քառասուն ամք

[4] Յետ պ-ի-ե [5] Եբբ. քաջութեան [6] Եբբ. յայտագս անցից որ անցին ընդ նա եւ ընդ Իսրայէլ եւ ընդ ամենայն թագաւորութիւնս աշխարհաց

ԳԼՈՒԽՔ ԵՐԿՐՈՐԴ ՄՆԱՑՈՐԴԱՑ

	Գլ.	Հմր.
Թէ հազար ողջակէզս եհան Սողոմոն Աստուածոյ ի Գաբաւոն, որում երեւեալ Աստուածոյ ասէ, Ինդրեա զինչ կամիս. եւ խնդրեաց զՀանճար, եւ ետ նմա Տէր։	Ա.	1
Զի խնդրեաց ի Բիբլամայ որուեւաստուրս եւ փայտս ի Լիբանանէ, եւ նա առաքեաց նմա։	Բ.	1
Հանգամանք շինուածոյ տաճարին, եւ ամենայն կահից նորա։	Բ.	17
Զի առաքն զօսպանակն ի Ներքս ի գաբլիրն, եւ տուն ն լցաւ ամպով. եւ յետ խնդրելոյն Սողոմոնի՝ հուր էջ եւ եկեր զողջակէզսն ի նաւակատիան անդ։	Ե.	2
Կրկին երեւեալ նմա Տէր զգուշացոյց զնա։	Է.	12
Վասն քաղաքային ղը ետ Բիբլամ Սողոմոնի, և վասն մեացելոյ ազգացն որք եղեն նմա հարկատուք։	Ը.	1
Զի կարգեաց զԼեւտացիսն ըստ հրամանացն Դաւթի ի վերայ իւրաքանչիւր գործոց։	Ը.	12
Զի եկն առ նա տիկինն Սաբայ, վասն մեծ հարստութեանն Սողոմոնի. և ի մեացորդք բանից նորա ի գիրս մարգարէիցն Նաթանայ և Աբիայ եւ Յովէլայ։	Թ.	1
Թէ վասն խիստ պատասխանւոյն Ռոբովամայ բամբասեցան տասն ցեղքն ի տանէն Դաւթի. եւ վասն քաղաքացն ղը շինեաց նա եւ ամրացոյց։	Թ.	31
Զի յաւելան Լեւտացիքն յԻսրաէլէ և զօրացուցին զՈսպատութիւնն յԵրուսաղէմ. եւ զի զառաջինն բարի էր Ռոբովամ, եւ ի ի[illegible]բելն եւ ի վերայ նորա Սուսակիմ Եգիպտացի։	ԺԱ.	13
Թագաւորեաց Աբիա եւ դատմպրեալ ի վերայ Երուսաղէմ նախատեաց զկառավարչին նորա, և ինքն պարծէր յԱստուած եւ ի պաշտօն քահանայիցն յերուսաղէմ որ եւ վանեաց զՅերոբովամ զամենայն աւերս իւր։	ԺԳ.	16
Թագաւորեաց Ասա, և էր բարի առաջի Տեառն եւ զօրացեալ. եւ էլ ի վերայ նորա Զարէհ Եթէովպացի հազար հազարօք. և կոչեաց առ Տէր, և կատարեաց զՆզիկան և զմիաստանն նման մինչ ոչ ճնալ սպրեալ. եւ առ աւար բազում։	ԺԴ.	1
Ի բանից Ազարեայ մարգարէի զօրացեալ Ասայի յԱստուած՝ սրուր նաւակատիս սեղանոյն, եւ սրբեաց զնաւին գՅուդա։	ԺԵ.	1
Էլ ի վերայ նորա Բաաս սրբոյ Իսրայէլի, եւ նա առաքեաց գանձս որդ-		

	Գլ.	Հմր.
ւոյ Ադերայ որ էլ եւ մերժեաց ի նմանէ զնաս։	ԺԶ.	1
Եւ զի վասն այսր իրի յանդիմանեաց Ասանիա մարգարէ զԱսա, թէ զի ոչ յԱստուած՝ այլ ի մարդ յուսացար. ընդ որ բարկացեալ էգ զնա ի բանտի. եւ ի ցաւել ոտից նորա ոչ խնդրեաց զՏէր, այլ խնդրեաց բժիշկս. եւ մեռաւ։	ԺԶ.	7
Գովութիւն Յովսափատայ. եւ զի յերկոսայ նորա ընդ Ախաաբայ՝ ապրեցոյց զնա Տէր ի սրոյ Ասորւոցն, որպէս վկայեցաց Ասանիա մարգարէ։	ԺՀ.	1
Ժողովեցան ի վերայ նորա Ամմն, Մովաբ և Մինեցիք. և գոչեաց Յովսափատ առ Տէր, եւ ի ձեռն Ակիելի մարգարէի քաջալերեաց զնա Տէր. եւ ի կարգէն ընդգէմ թշնամեացն եւ նաւագել զսազմանն Աստուծոյ զինուանա Նարին թշնամիքն, ուստի առին աւար աւար յոյժ։ Եւ զի խնամութիւն արար ընդ Ախաաբայ՝ խորտակեցաւ նաւ նորա։ Եւ թէ Յեհու գրեաց զդիրս թագաւորացն Իսրայելի։	Ի.	1
Թագաւորեաց Յովրամ եւ սրար չար առաջի Տեառն, եւ ապստամբեաց ի նմանէ Եդովմ։ Գրեաց առ նա Ելիա մարգարէ և ասէ, Զի թողեր զՏէր, չարաչար հիւանդութեամբ մեռանիս. եւ հեզաւ որովայն նորա, եւ մեռաւ։	ԻԱ.	1
Թագաւորեաց Ոզոզիա, եւ սրար չար, եւ սպան զնա Յեհու՝ այն որ ջընջեաց զտունն Ախաաբու։	ԻԲ.	1
Թագաւորեաց Գոզողիա, և յետ եօթն ամի սպանաւ. եւ թագաւորեաց Յովաս, եւ սրար բարի, եւ յետ մահուն Յովիդայ քահանայի պարձաւ իկառս, և յանդիմանեալ յԱզարեայ որդւոյ Յովիդայ՝ սպան զնա ընդ որոյ չարաչար հիւանդացեալ՝ սպանաւ յիւրոցն։	ԻԲ.	10
Թագաւորեաց Ամասիա և սրար սակաւ[illegible] բարի, վարձեաց յԻսրայելէ ընդ իւր ի մարտ ընդ Եդովմ և ոչ տարաւ ընդ իւր. եհար զԵդովմ և առ զաստուածոսնոցա իւր յաստուածս. մանեցաւ ի ձեռս Յովասայ արքայի Իսրայելի, եւ յետոյ յիւրոցն սպանաւ։	ԻԴ.	27
Թագաւորեաց Ազիա եւ սրար ուղղութիւն. այլ չպարտացեալ մնասեաւ խնկարկել, եւ էր բորոտեալ մինչեւ մեռաւ։	ԻՀ.	1
Թագաւորեաց Յովթամ և սրար ուղղութիւն. եւ նա հարկեաց զորդիսն Ամմնայ։	ԻՀ.	23

	Գլ.	Հմր.
Թագաւորեաց Ախազ և արար չարիս. նեղեաց զնա Ասսան. և մեծ հարուածս եհար ի Յուդայ Փակեհ, և գերեաց զՅուդա, զոր Ավդեդ մարգարէ յետս ետ դարձուցանել. ձեռս ետ Ախազ ի Թագղաթ փազասար եւ ի կատս նորա, եւ մեռաւ	ԻՀ.	9
Ասուածապաշտ գոլով Եզեկիա արար գվարսիկն յամենեսեան երկրորդումն. և վասն հինին Ասորւոց եթող զազբեւբան որ արտաքոյ քաղաքին եւ զելը Գեհոնի	ԻԿ.	26
Թագաւորեաց Մանասէ, և յաճախեալ ի չարիս, ածաւ կապանօք ի Բաբելոն, եւ ի վտանգելն դարձաւ աղաչեաց զԱստուած, և դարձոյց զնա ի թագաւորութիւնն իւր, եւ պաշտեաց զՏէր մինչեւ մեռաւ	ԼԲ.	33
Թագաւորեաց Ամմոն, եւ արար չարիս զոր արար Մանասէ, եւ սպանաւ յիւրոցն	ԼԳ.	20
Գովեստ Յովսեայ որ որբեաց զՅուդա և պղծեաց զսակեբս քրմացն. արար զգաստիկն, յորհնեաց զկարդ քահանայիցն ըստ պայմանին Դաւթայ. սպանաւ ի Փարաւանէ՝ զոր ողբաց Երեմիա	ԼԿ.	25
Թագաւորեաց Յովաքազ եւ արար չարիս. կապեաց զնա Փարաւոն և ած յեգիպտոս՝ ուսաի ոչ դարձաւ	ԼՋ.	1
Թագաւորեցոյց Փարաւոն զԵղիակիմ որ և Յովակիմ, զեղբայր Ողզեայ. և եդ հարկս ի վերայ երկրին	ԼՋ.	4
Յաւուրս Եղիակիմ Յովակիմայ եկ Նաբուքոդոնոսոր զառաջինն, եղեւ նմա Եղիակիմ ծառայ, եւ դարձաւ ապստամբեաց	ԼՋ.	5
Եկ ի վերայ նորա Նաբուքոդոնոսոր եւ կապեաց զնա, զամ բան ոմանց՝ սպան. եւ զի առէ մանն ինչ առնուլ ի պատուոյն Տեառն, կարծիս տայ թէ այժմ տարաւ գՔանիել	ԼՋ.	6
Թագաւորեաց որդի նորա Յեքոնիա, և յետ երից ամանց ապստամբեաց. և աստ ոմանք երբորդ գայ ասեն Նաբուքոդոնոսորայ և թագաւորեցուցանել զՍեդեկիա, եւ տանել զՅեքոնիա, յորժամ եւ գնզեկիէլ. և յինն ամին Սեդեկիայ՝ գալ դարձեալ Նաբուքոդոնոսորայ զվերջինն. իսկ այլք երիցս ասեն գալ Նաբուքոդոնոսորայ յԵրուսաղէմ	ԼՋ.	8
Իսկ յառաջին ամին Կիւրոսի եւ թանաուսն ամ լցաւ ի սկզբանէ մարգարէութեանն Երեմեայ, եւ ըստ վճռին Աստուծոյ՝ հրամանն ետ Կիւրոս ելանել գերւոյն յԵրուսաղէմ եւ շինել զտունն Աստուծոյ	ԼՋ.	22

ՄՆԱՑՈՐԴԱՑ

ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ զօրացաւ Սողոմոն որպէս Դաւիթ
ի թագաւորութիւնն իւրում, եւ
Տէր Աստուած իւր ընդ նմա էր, եւ մեծա-
2 ցոյց զնա ի բարձրութիւն։ Եւ ասաց Սո-
ղոմոն ցամենայն Իսրայէլ, ցհազարապետս
եւ ցհարիւրապետս եւ ցդատաւորս եւ ցա-
3 մենայն իշխանս[1] տոհմից, եւ գնաց Սո-
ղոմոն եւ ամենայն եկեղեցին ընդ նմա՝ ի
բարձրաբանդակն Գաբաւոնի, ուր էր անդ
խորանն վկայութեան Աստուծոյ զոր
արար Մովսէս ծառայ Տեառն յանապա-
4 սին. Բայց զտապանակն Աստուծոյ ե-
հան Դաւիթ ի [2]քաղաքէն Կարիաթարիւ-
մայ, վասն զի պատրաստեաց նմա խո-
5 րան Դաւիթ յԵրուսաղէմ. Եւ սեղանն
պղնձի զոր արար Բեսելիէլ որդի Ու-
րեայ որդւոյ Յովրայ՝ անդ էր առաջի
խորանին Տեառն. եւ խնդրեաց [3]ինքն
6 Սողոմոն եւ եկեղեցին։ Եւ [4]հնձան անդ
Սողոմոն ի վերայ պղնձի սեղանոյն ա-
ռաջի Տեառն ի խորանին, եւ մատոյց
ի վերայ նորա ողջակէզս հազար։
7 Ի գիշերին յայնմիկ երեւեցաւ Աստուած
Սողոմոնի, եւ ասէ ցնա, Խնդրեա, պինչ
8 տայ քեզ։ Եւ ասէ Սողոմոն ցԱստուած,
Դու արարեր ընդ Դաւիթ հօր իմում ո-
9 գորմութիւն մեծ, եւ թագաւորեցուցեր
զիս փոխանակ նորա. Եւ արդ, Տէր
Աստուած, հաստատեսցի լիցի [5]անուն քո
ի վերայ՝ Դաւիթ հօր իմոյ. վասն զի
դու թագաւորեցուցեր զիս ի վերայ բա-
զում ժողովրդեանս, որ է իբրեւ զհող
10 երկրի։ Եւ արդ զիմաստութիւն եւ գհան-
ճար տացես ինձ, զի ելանիցեմ առաջի
ժողովրդեանս քո այսոքիկ եւ մտանիցեմ. վասն զի ո՞ դասիցէ զժողովուրդս
11 քո զմեծ գայս։ Եւ ասէ Աստուած ցՍո-
ղոմոն, Փոխանակ զի եղեւ այդ ի սրտի
քում, եւ ոչ խնդրեցեր մեծութիւն ընչից, ոչ փառս եւ ոչ զանձինս հակառակորդաց քոց, եւ աւուրս բազումս ոչ խնդրեցեր, այլ խնդրեցեր դու քեզ
զիմաստութիւն եւ զհանճար, զի գահեսցես զժողովուրդ իմ յորոյ վերայ
12 թագաւորեցուցի զքեզ, Զիմաստութիւն
եւ զհանճար տամ քեզ, եւ զմեծութիւն
եւ զընչս եւ զփառս տայ քեզ, որպէս
զի ոչ եղեւ նման քեզ ի թագաւորս յառաջագոյն քան զքեզ, եւ զկնի քո ոչ
13 լինիցի այսպէս։ Եւ եկն Սողոմոն [6]ի
Բամայ Գաբաւոնի յԵրուսաղէմ, յերեսաց խորանին վկայութեան, եւ թագաւորեաց ի վերայ Իսրայելի։
14 Եւ ժողովեաց Սողոմոն կառս եւ հեծեալս, եւ եղեն նմա հազար եւ չորեք
հարեւր կառք եւ երկոտասան հազար
հեծելոց. եւ եթող զնոսա ի քաղաքս [7]հնձոցին, եւ ընդ [8]ինքն ընդ արքայի Յերուսաղէմ։
15 Եւ եդ արքայ զոսկի եւ զարծաթ իբրեւ զքարինս յԵրուսաղէմ, եւ
զմայրս [2]ի Հրէաստանի, իբրեւ զմոլա-
16 թզենիս ի դաշտի բազմութեամբ։ Եւ
ելք ձիոց Սողոմոնի յԵգիպտոսէ, եւ
[8]գինք վաճառուց արքայի երթեալ
17 գնէին՝, Եւ ելանէին ածէին յԵգիպտոսէ
կառս մի վեց հարեւր արծաթոյ, եւ ձի
հարեւր եւ հիսուն. եւ այնպէս ամենայն թագաւորացն Քետացւոց եւ թագաւորացն Ասորեաց իձեռնոցա բերէին։

ԳԼ. Բ

1 Եւ ասաց Սողոմոն չինել տուն անուան Տեառն, եւ տուն թագաւորու-
2 թեան իւրոյ։ Եւ ժողովեաց Սողոմոն
եւթանասուն հազար արանց բեռնակրաց, եւ ութսուն հազար քարհատ-

[1] ԵԲբայեցէն յաբել-, ամենայն Իսրայելի, գլխաւորաց [2] ՅԵԲբ. գալաթ [3] ՅԵԲբ. զայն [4] Կամ, և [5] ՅԵԲբ. քան քո ընդ

[6] Այսինքն, ի բարձրաբանդակն [7] ՅԵԲբ. կառաց և [8] ՅԵԲբ. խումբք վաճառականաց արքայի առնուին երամակս գնոց

տաց ի լերինս. եւ վերակացուք նոցա երեք հազար եւ վեց հարիւր։
3 Եւ առաքեաց Սողոմոն առ Քիրամ արքայ Տիւրոսի եւ ասէ, Որպէս արարեր ընդ հօրն իմոյ Դաւիթի, եւ եառեր նմա մայր փայտս՝ չինել իւր տուն բնակելոյ ի նմա,
4 եւ արդ անա ես [1]որպէս նորա՝ չինեմ տուն անուան Տեառն Աստուծոյ իմոյ, սրբել զնա նմա, ծխել առաջի նորա [2]խունկս եւ առաջադրութիւնս յամենայն ժամ, եւ մատուցանել ողջակէզս [1]հանապազ առաւօտուց եւ երեկորին, եւ ի շաբաթս եւ յամսամուտս եւ ի տօնս Աստուծոյ
5 մերոյ, յաւիտեան զայն յիսրայէլի։ Եւ տունն զոր ես չինեմ՝ մեծ է. վասն զի մեծ է Աստուած մեր քան զամենայն աստուածս. եւ ո՛ կարացէ չինել նմա տուն. զի եթէ երկինք եւ երկնից երկինք ոչ տանին [3]զինա նորա, եւ զինչ ես՝ չինեցից նմա տուն, այլ զի ծխեցից
7 ցնծ խունկս առաջի նորա։ Եւ արդ առաքեա ինձ այր իմաստուն, որ գիտիցէ գործել զոսկի եւ զարծաթ եւ զպղինձ եւ զերկաթ եւ զծիրանի եւ զկարմիր եւ զկապուտակն [1]եւ զբիւսոն՝, եւ որ գիտիցէ քանդակել զքանդակս ընդ իմաստունս իմ, որք են ի Հրէաստանի եւ յերուսաղէմ, զորս պատրաստեաց
8 Դաւիթ հայր իմ։ Եւ տուր բերել ինձ փայտս մայրս եւ սարուս եւ թխոչս ի Լիբանանէ. վասն զի ես գիտեմ, իրրեւ զծառայս քո ոչ ոք գիտէ հատանել փայտ ի Լիբանանէ. եւ արդ ծառայք քո եր-
9 թիցեն ընդ ծառայս իմ, Պատրաստել ինձ փայտ բազում. վասն զի տունս զոր
10 ես չինեմ, է մեծ եւ փառաւոր։ Եւ գործաւորիցն որք հատանեն զփայտն՝ ի կերակուր եղուս հաց առնիկ ծառայից քոց, քսան հազար քոռ ցորենոյ, եւ քսան հազար քոռ գարւոյ, եւ քսան հազար [4]չափ գինւոյ, եւ ձէթ քսան հազար [4]չափս։
11 Եւ ասաց Քիրամ արքայ Տիւրոսի գրով, եւ առաքեաց առ Սողոմոն, վասն սիրելոյ Տեառն զմոզովուրդ իւր՝ եւ
12 զքեզ ի վերայ զոցա թագաւոր։ Եւ ասէ Քիրամ, Օրհնեալ է Տէր Աստուած Իսրայէլի որ արար զերկինս եւ զերկիր, որ եւս Դաւիթի արքայի որդի իմաստուն՝ գիտել գհանճար եւ զխմաստութիւն, որ չինեացէ զտունն Տեառն եւ զտունն թա-
13 գաւորութեան իւրոյ։ Եւ արդ անա առաքեցի քեզ այր իմաստուն, որ գիտէ
14 գհանճար գՔիրամ [5]զծառայ իմ. Մայր զորա է ի դստերացն Դանայ, եւ հայր զորա՝ այր Տիւրացի. գիտէ գործել զոսկի եւ զարծաթ եւ զպղինձ եւ զերկաթ եւ զքարինս եւ զփայտս, եւ անկանել զծիրանին եւ զկապուտակն եւ զբիւսոնն եւ զկարմիրն եւ քանդակիլ քանդակս, եւ խմտալ զամենայն հնարս զորս տացես ցգա՝ ընդ իմաստունս քո եւ ընդ իմաստունս Դաւթի տեառն իմոյ հօր քո։
15 Եւ արդ զցորեանն եւ զգարին եւ զձէթն եւ զգինին, զոր ասաց ա՛ր իմ, տացէ
16 ծառայից իւրոց. Եւ մեք հատանիմք փայտս ի Լիբանանէ ըստ ամենայն սիրոյդ քոյ. եւ ածցուք զնոսա բնդ ծով յաստս ի Յոպպէ, եւ հաւաքեսցես զայն յերուսաղէմ։
17 Եւ ժողովեաց Սողոմոն զամենայն արս պանդուխտս [6]յերուսաղէմ զկնի թուոյն զոր թուեաց զնոսա Դաւիթ հայր նորա, եւ գտան հարիւր յիսուն հազար
18 եւ երեք հազար եւ վեց հարիւր. Եւ արար ի նոցանէ եւեթանասուն հազար բեռնակիրս եւ ութսուն հազար քարահատս [7]եւ զերիս հազարսն եւ վեց հարիւրսն՝ վարձավարս ի վերայ նոցա։

Գլ. Գ

1 Եւ սկսաւ Սողոմոն չինել զտունն Տեառն յերուսաղէմ, [8]ի լերինն Ամորհացւոցն՝ ուր երեւեցաւ Տէր Դաւթի հօր նորա, ի տեղւոջն յորում պատրաստեաց Դա-
2 ւիթ, ի կալն Առնայ Յեբուսացւոյ։ Եւ սկսաւ չինել յամսեանն [9]երկրորդի, յամին չորրորդի թագաւորութեանն իւրոյ.
3 [10]Եւ սկսաւ Սողոմոն՝ չինել զտունն Աստուծոյ. երկայնութիւն չափոյ առաջնոյն ի վաթսուն կանգնոյ, եւ լայնութիւն ի
4 քսան կանգնոյ։ Եւ [11]էզամ դէմ յանդիման սանն, երկայնութիւնն առաջին՝ եւ լայնութիւն՝ սանն կանգնոյ քսան նից, եւ բարձրութիւն հարիւր եւ քսան կանգնոյ. եւ պատեաց զնա ոսկւով սրբով
5 ի ներքուստ։ Եւ զտունն մեծ պրսպեաց մայր փայտիւք, եւ պատեաց ոսկւով

[1] 3ԵԲբ. պ֊ով֊ե [2] ԵԲբ. խունկս անուշութեան [3] ԵԲբ. զնա, ո՞բզեմ ես զի [4] ԵԲբ. մոր
[5] ԵԲբ. զնայր, ԽՄ՝ ձարտարապետ [6] ԵԲբ. յերկրին Իսրայէլի [7] ԵԲբ. ի լերինս եւ [8] ԵԲբ. ի լերինն Մորիա [9] ԵԲբ. երկրորդի յերկրորդումն աւուր [10] ԵԲբ. Սկսք են հիմունքն զոր արկ Սողոմոն [11] ԵԲբ. երկայնութիւն գաւթին որ դէմ յանդիման՝ ըստ լայնութեան

սրբով, եւ քանդակեաց ի նմա արմաւենիս
6 եւ չքմայագործս. եւ զարդարեաց զտունն
ակամբք պատուականօք ի փառս. եւ
7 [1]ոսկւով սրբով ի Սեփարուիմայ՝: եւ
պատեաց զտունն ոսկւով, եւ զսիմն
եւ զդրունսն եւ զձկղտունն եւ զդուրս,
եւ քանդակեաց քերովբէս յսիմն:
8 Եւ արար զտունն սրբութիւն սրբու-
թեանցն, զերկայնութիւնն նորա [2]առա-
ջոյ կոզմանէ՝ ի քսան կանգնոյ, եւ
զլայնութիւնն ի քսան կանգնոյ, եւ
պատեաց զնա վաթսուն ոսկւով [3]ի քա-
9 րովբէս վից հարեւր տաղանդով: Եւ
կշիռ բեւեռացն միոյ միոյ կշռութիւն
հիսուն սիկղ ոսկւոյ. եւ զվերնատունն
10 պատեաց ոսկւով: Եւ արար ի տան
սրբութեան սրբութեանցն քերովբէս
երկուս [4]գործ. եւ պատեաց զնոսա ոսկ-
11 ւով: Եւ թեւք քերովբէիցն՝ երկայնու-
թիւն քսան կանգուն. թեւ մի ի հինգ
կանգնոյ կցեալ յորմ տանն, եւ թեւն
միւս ի հինգ կանգնոյ՝ կցեալ ի թեւ քե-
12 րովբէին միւսոյ. Եւ թեւն քերովբէին
միւսոյ ի հինգ կանգնոյ կցեալ յորմ
տանն, եւ մեւս թեւն ի հինգ կանգնոյ
13 կցեալ ի թեւ քերովբէին միւսոյ: Եւ
թեւք քերովբէիցն տարածեալք ի քսան
կանգնոյ. եւ ինքեանք կային ի վերայ
ոտից իւրեանց, եւ դէմք նոցա ի տունն:
14 Եւ արար զվարագոյրն ի կապուտակէ
եւ ի ծիրանւոյ, ի կարմրոյ եւ ի բհնե-
զոյ, եւ անկանէր ի նմա քերովբէս:
15 Եւ արար առաջի տանն սիւնս երկու
յերիսուն եւ հինգ կանգնոյ բարձրու-
թիւն, եւ գլխոյկս նոցա ի հինգ կանգ-
16 նոյ: Եւ արար վանդակապատ ի դարի-
բսոյն, եւ եզ ի վերայ գլխոյ սեանցն. եւ
արար նռնաձեւս հարիւր, եւ եզ ի վերայ
17 չքմայագործացն: Եւ կանգնեաց [5]զսիւնն
առաջի տաճարին, զմին յաջմէ եւ զմիւսն
յահեկէ. եւ կոչեաց զանուն այնորիկ որ
յաջմէն էր՝ Ուղղութիւն, եւ զանուն
այնորիկ որ ի ձախմէն էր՝ Զօրութիւն:

Գլ. Դ

1 Եւ արար սեղան պղնձի՝ ի քսան կանգ-
նոյ զերկայնութիւնն, եւ ի քսան կանգ-
նոյ զլայնութիւնն, եւ զբարձրութիւնն ի
տասն կանգնոյ:

2 Եւ արար զծովն հալածոյ ի տասն կանգ-
նոյ [6]զչափն, բոլորակ չուրջանակի, եւ
ի հինգ կանգնոյ զբարձրութիւն, եւ
3 չուրջանակի յերիսուն կանգնոյ: Եւ
նմանութիւն եզանց ի ներքոյ նորա,
որք չուրջ կային, ի տասն կանգնոյ
չուրջ պատեալք զնոսա. եւ ձուլեցին
[7]զզուարական ըստ ձուլածոյն իւրեանց,
4 Որպէս արարին զնոսա երկոտասան
զուարակս՝: երիքն հայէին ի հիւսիսի,
եւ երիքն հայէին յարեւմտեաս, եւ ե-
րիքն հայէին ի հարաւ, եւ երիքն հա-
յէին յարեւելս. եւ ծովն ի վերայ նո-
5 ցա, եւ յետոյքն իւրեանց ի ներքոյ: Եւ
թանձրութիւն ծովուն [8]թզաւ եւ չուրթն
նորա իբրեւ գչուրթն բաժակի, քան-
զակեալ բոյս շուշանի, եւ տանէր երիս
հազարս [9]չափ. [3]եւ կատարեաց զնաւ՝
6 Եւ արար աւազանս տասն, եւ եդ
զհինգն յաջմէ, եւ զհինգն ի ձախմէ.
լուանալ ի նոսա զգործ ողջակիզացն եւ
ողոգել ի նոսա. եւ ծովն առ ի լուա-
նալ ի նմա քահանայիցն զինքեանս:
7 Եւ արար զաւանական ոսկիս տասն
ըստ յօրինուածոյն իւրեանց, եւ եդ
զնոսա ի տաճարին, զհինգն յաջմէ եւ
զհինգն ի ձախմէ:
8 Եւ արար սեղանս տասն, եւ եդ ի
տաճարին, հինգ յաջմէ եւ հինգ ի ձախ-
մէ. եւ արար տաչտս ոսկիս հարիւր:
9 Եւ արար [10]զսրահն քահանայիցն եւ
[10]զսրահն զմեծ, եւ զդրունս սրահին.
10 եւ զդրունս նոցա պատեաց պղնձով: Եւ
զծովն եդ [11]յանկեանն տաճարին յաջմէ
11 կողմանէ իբրեւ յարեւելս առաջի՝: Եւ
արար Քիրամ [12]զմսահանսն եւ զկատսայս
եւ զկաճարայս սեղանսն, եւ զամենայն
զկահն նորա՝: Եւ կատարեաց Քիրամ առ-
նել զամենայն գործն զոր հրամայեաց ար-
12 քայ Սողոմոն ի տանն Աստուծոյ. Զսիւնսն
երկուս. եւ [13]ի վերայ նոցա զխոյական,

[1] ՆԵԲ. ոսկին՝ ոսկի Փարուիմայ [2] ՆԵԲ. ըստ լայն նուիրեան տանն [3] ՁՆԵԲ. պակաս [4] ՆԵԲ. զործ քանդակազործ [5] ՏԵ՝ Գ. Թագ. Է. 21:

[6] ՆԵԲ. ի շրթանէ ի չուրթն [7] ՆԵԲ զզուարական երկուս կարգս ի ձուլել նորա, (4) Կայր ի վերայ երկոտասան զուարակաց [8] ՆԵԲ. ուղկաւ [9] ՆԵԲ. մետր [10] ՆԵԲ. զգաւիթն [11] ՆԵԲ. յաջմէ կողմանէ յարեւելս Հարաւոյ [12] ՆԵԲ. գկատսայս եւ զմխաղն եւ զկանթս [13] ՆԵԲ. զգունդն, և գխոյական որ ի վերայ գլխոյ երկուց սեանցն, եւ զվանդակագործսն զերկուս առ ի ծածկել զերկոսին գունդս խոյականցն որ ի վերայ գլխոց սեանցն: (13) Եւ զնռնաձեւսն չորեքհարիւրեայ վասն երկուց վանդակագործացն, երկուս կարգս նռնաձեւաց առ ի ծածկել զերկոսին գունդս խոյականցն որ ի վերայ գլխոց սեանցն

եւ ի վերայ խոյակաց սեանցն գլուխ-
լուխն գերկոսեան եւ գվանդակապօրան
գերկուս՝ առ ի ծածկել գխոյակս գուխ-
թարուխայսն, որք էին ի վերայ պիտոյ
13 սեանցն։ Եւ գանգակս ասկղէնս չո-
րեքհարիւր յերկոսեան վանդակապատուն,
եւ գերկուս ազգս նռնաձեւեացն ի միում
վանդակապօրինի՝ ծածկել գերկոսեան
14 խոյակսն որ էին ի վերայ սեանցն՝։ Եւ
գսկեքնովփան [1]արար սուան՝ եւ զա-
15 ւազանն ի վերայ սկեքնովփայն. Եւ
զծովն զմի, եւ զուարակս երկոտասան
16 ի ներքոյ նորա. Եւ [2]զկաճակարայս եւ
զքառնալսն եւ զսանս՝ եւ գմսահանսն,
եւ զամենայն կահ նոցա գոր արար
Փիրամ, [3]ում տուաւ՝ արքայի Սողոմո-
նի ՝ի տունն Տեառն ի մարդուր պղնձոյ։
17 Ըստ գաւազանակուքեան երկրին Յորդանա-
նու ձուլեաց [5]զայն արքայ, ի խմանդրու-
քեան հողոյն [6]ի տանն Սողոմիայ, եւ
18 ի մէջ Սարեխայ։ Եւ արար Սողոմոն
զամենայն սպասս զայն բազում յոյժ.
վասն զի ոչ [7]պակասեաց կշիռ պղնձոյն։
19 Եւ արար Սողոմոն զամենայն սպաս
տանն [8]Տեառն. եւ զսեղանն ոսկի եւ
զայլ սեղանսն, եւ ի վերայ նոցա զհացն
20 առաջաւորութեան, Եւ զաչտանակսն
եւ զճրագուսն լուսոյ ըստ յօրինուա-
ծոյն յանդիման զարիւրայն ի մաքուր
21 ոսկւոյ, Եւ [9]ճրագարանք իւրեանց՝.
22 Եւ բազմակալք իւրեանց եւ տաչտքն եւ
խնկամանքն եւ բուրուատքն ի մաքուր
ոսկւոյ. եւ [10]դուրք տանն՝ ներքինոյ ի
սրբութիւն սրբութեանցն, եւ [11]դրունս
տաճարին ոսկեզէնս՝։

Գլ. Ե

1 Եւ կատարեցաւ ամենայն գործն զոր
արար Սողոմոն ՝ի տանն Տեառն, եւ
տարաւ Սողոմոն զսրբութիւնսն
Դաւթի հօր իւրոյ. եւ զարծաթն եւ
զոսկին եւ զսպասսն եդ ի գանձս տանն
[8]Տեառն։

2 Յայնժամ եկեղեցացոյց Սողոմոն
զծերսն Իսրայէլի եւ զամենայն իշխանս
ցեղիցն, զառաջնորդս տոհմիցն որդւոցն

[1]ԵԲԲ. արար [2]ԵԲԲ. զկահսսայս եւ զթիակս.
[3]ԵԲԲ. Ճարտարապետ [4]ԵԲԲ. վասն տանն [5]ԵԲԲ.
գնոսա [6]ԵԲԲ. ի մէջ [7]ԵԲԲ. խնդրէր [8]ԵԲԲ.
Աստուծոյ [9]ԵԲԲ. զծաղիկսն եւ զճրագարանսն
եւ զանելիսն ի մաքուր ոսկւոյ [10]ԵԲԲ.
զդուրս տանն, զփեղկս դրանն [11]ԵԲԲ. զփեղկս
տանն, տաճարին, ոսկեզէնս

Իսրայէլի յերուսաղէմ, հանել զտապա-
նակ ուխտին Տեառն ի քաղաքէն Դաւթի՝
3 նա է Սիան։ Եւ ժողովեցաւ առ արքայ
ամենայն այր Իսրայէլի ի տօնին, այն
4 է ամիսն եւթներորդ։ Եւ եկին ամե-
նեքեան ծերքն Իսրայէլի. եւ առին [12]ա-
մենեքեան Ղեւտացիքն զտապանակն,
5 Եւ հանին զնա, եւ զխորանն վկայու-
թեան եւ զամենայն սպասս սուրբ ար
էր ի խորանին, հանին զայն քահանայքն
6 եւ Ղեւտացիքն։ Եւ արքայ Սողոմոն
եւ ամենայն ժողովուրդն Իսրայէլի [13]եւ
երկիւղածքն եւ ժողովեալքն նոցա՝ ա-
ռաջի տապանակին վնուէին զուարակս
եւ սչխարս որոց ոչ գայր թիւ եւ ոչ
7 համար ի բազմութենէն։ Եւ տարան ի
ներքս [14]Ղեւտացիքն զտապանակ ուխ-
տին Տեառն ի անդրին իւր՝ ի գաբիր
տանն ի սրբութիւն սրբութեանցն, ի
8 ներքոյ թեւոց քերովբէից։ Եւ էր քե-
րովբէիցն թառեալ զթեւս իւրեանց ի
վերայ տապանակին, եւ ծածկէին քե-
րովբէքն զտապանակն եւ զբառնալսն ի-
9 րա ի վերուստ։ Եւ [15]չուէջ ունէին բառ-
նալքն՝, եւ հայէին գլուխք բառնալ-
ացն ի սրբութեանցն ի դէմս գաբիրայն,
եւ ոչ երեւէին արտաքս. եւ էին անդ
10 մինչեւ ցայսօր։ Եւ ոչ ինչ էր ի տա-
պանակին՝ բայց երկու տախտակքն զոր
եդ անդ Մովսէս ի Քորէբ, զոր ուխտ-
եաց Տէր ընդ որդիսն Իսրայէլի յեր-
կրին Եգիպտոսի։

11 Եւ եղեւ իրրեւ ելին քահանայքն ի
սրբութենէն, (վասն զի ամենեքեան
քահանայքն սուրբ գտան անդ՝ սրբեցան,
եւ ոչ էին կարգեալ օր ըստ օրէ պաշ-
12 տօնեայքն, Եւ Ղեւտացիքն սաղմոսա-
նուագք, ամենեքեան յազգացն Ասա-
փայ եւ Եմանայ եւ Իդիթունայ, եւ
յորդւոցն նոցա եւ եղբարցն նոցա, որք
զգեցեալ էին պատմուճանս բեհեզա-
զկս, եւ տաւղօք եւ քնարօք եւ սրընդ-
զօք կային յարեւելից կողմանէ սեղա-
նոյն, եւ ընդ նոսա քահանայք հարիւր
13 եւ քսան՝ հարկանէին փող.) Եւ եղեւ
միանգամայն ձայն ի հարկանել զփողն
եւ երգել զգալումն եւ ամպառնալ
զձայնսն միաբան տալով, Խոստովան
եղերուք եւ օրհնեցէք զՏէր. եւ յարձ-
բացուցին զձայնսն փողոցն եւ ծնծղայս-

[12]ԵԲԲ. պահ [13]ԵԲԲ. ժողովեալք առ նմա
[14]ԵԲԲ. քահանայքն [15]ԵԲԲ. ագուցին զբառնալսն

իւք եւ գործեսջք երգոյն, եւ ասացին Աստուած եղերութք Տեառն. դի բարի է, դի յաւիտեան է ողորմ նորա. եւ տունն լցաւ ամպով [1]փառացն Տեառն.
14 եւ ոչ կարէին քահանայքն կալ ի պաշտամանն յերեսաց ամպոյն, վասն զի լցեալ փառքն Տեառն զտունն Աստուծոյ.

Գլ. Զ

1 Յայնժամ խօսեցաւ Սողոմոն, Տէր ասաց բնակել ի մառախղի։ 2 Եւ ես չինեցի տուն [2]անուան քումդ զօրութիւնս քո, եւ պատրաստեցի բնակել ի սմա" յաւիտեանս։ 3 Եւ դարձոյց արքայ զերեսս իւր, օրհնեաց զամենայն եկեղեցին Իսրայելի, եւ ամենայն եկեղեցին Իսրա-
4 յելի կայր լուրջ, եւ ասէ, Օրհնեալ է Տէր Աստուած Իսրայելի, որ խօսեցաւ բերանով իւրով ընդ Դաւիթ հօր իմում,
5 եւ ձեռօք իւրովք լից. Եւ ասէ, Յօրէ յորմէ հանի զժողովուրդ իմ յերկրէն Եգիպտոսի՝ ոչ ընտրեցի քաղաք ի յամենայն ցեղիցն Իսրայելի չինել տուն, դի լինիցի անուն իմ անդ. եւ ոչ
6 ընտրեցի այր ոք լինել առաջնորդ ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայելի։ Եւ արդ ընտրեցի զերուսաղէմ լինել անուան իմոյ ասա. եւ ընտրեցի զԴաւիթ դի լինիցի ի վերայ ժողովրդեան իմոյ
7 Իսրայելի։ Եւ եղեւ ի սրտի Դաւիթ հօր իմոյ չինել տուն անուան Տեառն Աս-
8 տուծոյ Իսրայելի. Եւ ասաց Տէր ցԴաւիթ հայր իմ, վասն զի եղեւ ի սրտի քումի չինել տուն անուան իմոյ՝ բարւոք արարեր դի եղեւ այդ ի սրտի քումի.
9 Բայց սակայն դու ոչ չինեսցես ինձ տուն, այլ որդի քո որ ելցէ յորովայնէ քումմէ. նա չինեսցէ տուն անուան ի-
10 մոյ։ Եւ կատարեաց Տէր զբան իւր զոր խօսեցաւ, եւ եղէ ես փոխանակ Դաւթի հօր իմոյ. նստայ յաթոռն Իսրայելի որպէս խօսեցաւ Տէր, եւ չինեցի զտունս
11 սոյս անուան Տեառն Աստուծոյ Իսրայելի։ Եւ եդի ասա զտապանակ ուր-
12 անից զոր ուխտեաց ընդ որդիսն Իսրայելի։ Եւ եկաց յանդիման սեղանոյն Տեառն առաջի ամենայն եկեղեցւոյն Իսրայելի,
13 եւ սմրարձ զձեռս իւր։ (Վասն զի արար Սողոմոն [3]խարիսխ պղնձի եւ եդ զնա ի մէջ [4]սրահին տաճարին", ի հինգ
կանգնոյ զերկայնութիւնն նորա, եւ ի հինգ կանգնոյ գլայնութիւնն, եւ յերից կանգնոյ գբարձրութիւնն նորա. եւ եկաց ի վերայ նորա, անկաւ ի վերայ ծնգաց իւրոց առաջի ամենայն եկեղեցւոյն Իսրայելի, եւ սմրարձ զձեռս իւր յերկինս։)
14 Եւ ասէ, Տէր Աստուած Իսրայելի, ոչ ոք է նման քեզ Աստուած յերկինս եւ ոչ ի վերայ երկրի, որ պահես զուխտ եւ զողորմութիւնն [5]ամենեցուն որ գնան առաջի քո ամենայն սրտիւք իւրեանց,
15 Զի պահեցեր ծառայի քումի Դաւթի հօր իմոյ զոր խօսեցար ընդ նմա եւ [6]առացեր, խօսեցար բերանով քով եւ ձեռօք քովք
16 լցեր այսօր։ Եւ արդ, Տէր Աստուած Իսրայելի, պահեա ծառայի քումի Դաւթի հօր իմում զոր ինչ խօսեցար ընդ նմա եւ առացեր, Ոչ պակասեսցէ քո այր յերեսաց իմոց որ նստիցի յաթոռն Իսրայելի. լայց միայն թէ պահեսցեն որդիք քո զճանապարհս իւրեանց գնալ
17 [7]առաջի իմ, որպէս գնացեր դու առաջի իմ։ Եւ արդ, Տէր Աստուած Իսրայելի, հաւատարիմ լիցի բանն քո [8]Դաւթի։
18 Եթէ սակաւութիւնամբ բնակեսցէ Աստուած ընդ մարդկան ի վերայ երկրի. դի եթէ երկինք եւ երկնից երկինք ոչ են բաւական քեզ, եւ զի՞նչ է տունս
19 այս զոր չինեցի։ Եւ սակ հայեսցիս յաղօթս ծառայի քո եւ ի խնդրուածս [9]իմ, Տէր Աստուած", լսել զաղաչանս եւ զաղօթս զոր ծառայ քո աղաչէ առաջի քո
20 այսօր, Լինել բաց աչաց քոց [6]եւ մտաց" ի տանս յայսմ ի տուէ եւ ի գիշերի, ի տեղւոջս յորում ասացեր կոչել զանուն քո ի սմա, առ ի լսել զաղօթս զոր ծա-
21 ռայ քո աղաչէ ի տեղւոջս յայսմ։ Եւ լուիցես զինդրուածս ծառայի քո եւ ժողովրդեան քո Իսրայելի, զոր ինչ աղաչեսցեն ի տեղւոջս յայսմ. եւ դու լուիցես ի տեղւոջէ բնակութեան քո յերկնից, լուիցես՝ եւ քաւիչ լինիս։
22 Զոր ինչ մեղանչիցէ այր ընկերի իւրում, եւ [10]առնուցու նզովս յաղագս այնորիկ նզովել զնա, եւ եկեսցէ կացցէ
23 առաջի սեղանոյս" ի տանս յայսմիկ, Եւ դու լուիցես յերկնից, եւ արասցես եւ

[1] ՆԵԲ. տունն [2] ՆԵԲ. բնակութեան քեզ և տեղի նստելոյ [3] Կամ, բեմ [4] ՆԵԲ. գաւթին [5] ՆԵԲ. ծառայից քոց [6] ՅԻՆԴ. գ-ի-ե [7] ՆԵԲ. յօրէնս [8] ՆԵԲ. զոր խօսեցար ծառայի քումի Դաւթի [9] ՆԵԲ. նորա, Տէր Աստուած իմ [10] ՆԵԲ. եթէ արկցի նմա երդումն առ երդնուլ, և եկեսցէ երդումն առաջի սեղանոյ քո

պատեսցիս զծառայն քո՝ հատուցանելով անօրինին, տալ ըստ ճանապարհաց նորա ի գլուխ նորա, եւ արդարացուցանել զարդարն [1]եւ տալ ի բաժանչս ումեք" ըստ արդարութեան իւրում։

24 Եւ եթէ վանեսցի ժողովուրդ քո Իսրայէլ առաջի թշնամեաց, եթէ մեղիցեն քեզ եւ դարձցին եւ խոստովան լիցին անուանդ քումմ, եւ յաղօթս կացցեն եւ պաղատեսցին առաջի քո ի տանս յայսմ,

25 նե դու լուիցես յերկնից, եւ քաւիչ լիցես մեղաց ժողովրդեան քո Իսրայելի. եւ դարձուսցես զնոսա յերկիրն զոր ետուր նոցա եւ հարց նոցա։

26 Ցարգելոյ քո զերկինս ոչ լինել անձրեւ՝ եթէ մեղիցեն քեզ, եւ յաղօթս կացցեն ի տեղւոջս յայսմ, եւ օրհնեսցեն զանուն քո, եւ ի մեղացն իւրեանց դարձցին, վասն զի նկուն արասցես

27 զնոսա, նե դու լուիցես յերկնից, եւ քաւիչ լիցիս մեղաց ծառայից քոց եւ ժողովրդեան քո Իսրայելի. վասն զի յայտնեսցես նոցա զճանապարհն բարի յոր գնասցեն ի նմա. եւ տայցես անձրեւ ի վերայ երկրի քո զոր ետուր ժառանգութիւն ի ժառանգութիւն։

28 Սով եթէ լինիցի ի վերայ երկրի, մահ եթէ լինիցի, խորշակահարութիւն եւ դալուկն եւ մարախ եւ ջորեակ եթէ լինիցի, եթէ նեղիցէ զնոսա թշնամի յանդիման քաղաքացն իւրեանց, զամենայն հարուածոյ եւ զամենայն

29 ցաւոց, Ամենայն ազօթք եւ ամենայն պաղատանք որ լինիցին ամենայն մարդոյ եւ ամենայն ժողովրդեան քո Իսրայելի, եթէ ծանիցէ մարդ [2]զվտարուածութիւն իւր եւ զպատ իւր", եւ ամբարձցէ

30 ձեռս զձեռս իւր ի տունս յայս, Եւ դու լուիցես յերկնից ի պատրաստ բնակութենէ քումմէ, եւ բժշկեսցես, եւ տասցես ումն ըստ սրտի իւրում՝ որպէս եւ ծանիցես զսիրտ նորա. վասն զի դու միայն ճանաչես զսիրտս որդւոց մարդ-

31 կան. Որպէս զի [3]երկիցին ի ճանապարհաց քոց" զամենայն աւուրս զորս կեցցեն նոքա ի վերայ երեսաց երկրին զոր ետուր հարցն [4]նոցա։

32 Եւ ամենայն օտարական որ ոչ իւրէ ի ժողովրդենէ քումմէ յիսրայելէ ընդն, եւ եկեսցէ յերկրէ հեռաստանէ՝ վասն անուան քո մեծի եւ հզոր ձեռին քո եւ բարձր բազկի քո, եկեսցեն եւ յաղօթս

33 կացցեն ի տեղւոջս յայսմ, Եւ լուիցես յերկնից ի պատրաստ բնակութենէ քումմէ, եւ արասցես բաս ամենայնի զոր ինչ եւ կարդասցէ առ քեզ օտարականն. զի ծանիցեն ամենայն ժողովուրդք երկրի զանուն քո, եւ երկիւղած լինիցեն քեզ որպէս եւ ժողովուրդ քո Իսրայէլ, եւ գիտասցեն եթէ կոչեցեալ է անուն քո ի վերայ տանս այսորիկ զոր չինեցի։

34 Եթէ ելցէ ժողովուրդ քո ի պատերազմ ի վերայ թշնամեաց իւրոց ի ճանապարհ՝ զոր առաքեսցես զնոսա, եւ յաղօթս կացցեն առ քեզ ի ճանապարհի քաղաքիս այսորիկ զոր ընտրեցեր գոյ, եւ տանն զոր չինեցի անուան

35 քումմ, Եւ լուիցես յերկնից պաղատանաց նոցա եւ աղօթից նոցա, եւ ա-

36 րասցես իրաւունս նոցա։ Վասն զի մեղանչեն քեզ, քանզի ոչ գոյ մարդ որ ոչ մեղանչէ, եւ հարցես զնոսա եւ մատնեսցես զնոսա առաջի երեսաց թշնամեաց, եւ գերելով [5]գերեսցին յերկիր թշնամեացն," յերկիր հեռաւոր կամ մո-

37 տաւոր, Եւ դարձցին սրտիւք իւրեանց յերկրին յոր վտխեցան անդր, դարձցին եւ աղաչեսցեն զքեզ ի գերութեանն իւրեանց, եւ ասասցեն, Մեղաք եւ

38 [6]անօրինեցաք, Եւ դարձցին առ քեզ յամենայն սրտից իւրեանց եւ ի բոլոր անձնէ իւրեանց յերկրի գերութեանն[7], եւ յաղօթս կացցեն ի ճանապարհ երկրիս այսորիկ զոր ետուր հարցն նոցա եւ քաղաքիս զոր ընտրեցեր եւ տանս զոր

39 չինեցի անուան քումմ, Եւ լուիցես յերկնից ի պատրաստ բնակութենէ քումմէ զաղօթից նոցա եւ պաղատանաց իւրեանց, եւ արասցես իրաւունս, եւ քաւիչ լի-

40 ցիս ժողովրդեանն մեղուցելոյ քեզ։ Եւ արդ, [8]Տէր, եղիցին աչք քո բաց, եւ ականջք քո առ ի լսել զպաղատանաս ի

41 տեղւոջս յայսմ։ Եւ արդ արի, Տէր Աստուած, ի հանգիստ քո, դու եւ տապանակ [9]սրբութեան քո. քահանայք քո, Տէր Աստուած, զգեցցին զփրկութիւն, եւ [10]որդիք քո ուրախ եղիցին ի

---

[1] Ն։Բբ. տալ նմա [2] Ն։Բբ. զախտ իւր եւ զցաւ իւր
[3] Ն։Բբ. երկիցեն ի քէն գնալ ի ճանապարհս քո
[4] Ե։Բբ. մերոց
[5] Ն։Բբ. տարցին զնոսա գերիս որ գերեն զնոսա
[6] Ն։Բբ. անօրինեցաք եւ անիրաւեցաք [7] Ե։Բբ. չէն յ–Ե–լ–ս–, ուր վարեցին զնոսա գերիս [8] Ն։Բբ. Աստուած իմ [9] Ե։Բբ. զօրութեան [10] Ն։Բբ. սուրբք

42 բարեմբլնա ։ Տէր Աստուած , մի զարձուցանիր զերեսս քո յօծելոյ քումմէ , յիշեա ողորմութեամբ քո զԴաւիթ ծառայ քո ։

Գլ . է

1 Եւ իբրեւ կատարեաց Սողոմոն զաղօթսն , հուր էջ յերկնից եւ եկեր զողջակէզսն եւ զզոհսն . եւ փառք Տեառն լցին զտունն ։ 2 Եւ ոչ եւս կարէին քահանայքն մտանել ի տունն Տեառն [1]ի ժամանակին յայնմիկ" , վասն զի լցին փառքն 3 Տեառն զտունն ։ Եւ ամենայն որդիքն Իսրայելի տեսանէին զիջանել հուրն եւ զփառսն Տեառն ի վերայ տանին . եւ անկան ի վերայ երեսաց յերկիր ի քարափատակ տեզսըն , եւ երկիր պագին եւ օրհնեցին զՏէր , զի բարի է , զի յաւիտեան է ողորմութիւն նորա ։ 4 Եւ արքայ եւ ամենայն ժողովուրդն զնուէրն 5 զոհս առաջի Տեառն ։ Եւ եզեն Սողոմոն զզոհսն , զուարակս քսան եւ երկու հազարս , եւ ոչխարս [1]արօտականս հարիւր քսան հազարս . եւ արար զնաւակատիս տաճարին Աստուծոյ արքայ 6 եւ ամենայն ժողովուրդն ։ Եւ քահանայքն ըստ պահապանութեանն իւրեանց կային , եւ Ղեւտացիքն նուագարանօք երգոյն Տեառն [2]եւ Դաւթայ արքային , խոստովան լինել առաջի Տեառն՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա . օրհնութեամբքն Դաւթայ ի ձեռն նոցա . եւ քահանայքն հարկանէին փողս առաջի նոցա . եւ ամենայն Իսրայէլ կոան կայր ։ 7 Եւ սրբեաց Սողոմոն զմիջոց [3]սրահին որ էր ի տանն" Տեառն , վասն զի անդ արար զողջակէզսն եւ զճարպն [4]փրկութեան . քանզի սեղանն պղնձի զոր արար Սողոմոն՝ ոչ կարէր ընդունել զողջակէզսն եւ [5]զմանրացն եւ զճարպսն ։ 8 Եւ արար Սողոմոն զաւուրն ի ժամանակին յայնմ աւուրս եւթն , եւ ամենայն Իսրայէլ ընդ նմա , եկեղեցի մեծ յոյժ , ի մտից Եմաթայ մինչեւ ի հեղեզատան 9 Եգիպտոսի ։ Եւ [6]արար յաւուրն ութերորդի [7]ելս . վասն զի զնաւակատիսն [6]արար սեզանոյն զեւթն [8]օր աւնին" ։ 10 Եւ ի քսան եւ երիս աւուրն եւթներորդի արձակեաց զժողովուրդն ի խորանս իւրեանց ուրախութեամբ եւ բարի սրտիւ , յամենայն բարութիւնսն զոր արար Տէր Դաւթի եւ Սողոմոնի եւ ժողովրդեան իւրում Իսրայէլի ։

11 Եւ կատարեաց Սողոմոն զտունն Տեառն եւ զտունն արքայի . եւ զամենայն [1]զոր կամեցաւ անձն Սողոմոնի տանել ի տանն Տեառն եւ ի տանն իւրում՝ յաջողեցաւ ։ 12 Եւ երեւեցաւ [9]Աստուած Սողոմոնի ի գիշերին յայնմ" , եւ ասէ ցնա , Լուայ աղօթից քոց , բնարեցի զտեզիդ զայդ 13 [1]ինձ ի տուն զոհից ։ Եթէ արգելից զերկինսն եւ ոչ լինիցի անձրեւ , եւ եթէ պատուիրեցից մարախոյ ուտել [10]զփայտ , եւ եթէ առաքեցից մահ ի ժողովուրդ 14 իմ , Եւ եթէ [11]անուանեցեալ ժողովուրդ իմ յորոց կոչեցեալ է անուն իմ ի վերայ նոցա , եւ յաղօթս կացցեն եւ խնդրեսցեն զերեսս իմ , եւ դարձցին ի ճանապարհաց իւրեանց չարաց , եւ ես լուայց յերկինից եւ քաւիչ եղէց նոցա եւ բժշկեսցի 15 յից զերկիր նոցա ։ Եւ այժմ աչք իմ եւ զիկունք բաց , եւ ականջք իմ առ ի լսել 16 զաղօթս ի տեղւոջս յայսմ ։ Եւ արդ ահա ընտրեցի զտունս զայս , եւ սրբեցի զանառ ի լինել անուանն իմոյ աստ յաւիտեան , եւ եղիցին աչք իմ եւ սիրտ աստ 17 զամենայն աւուրս եւ դու եթէ գնասցես առաջի իմ իբրեւ զԴաւիթ հայր քո , եւ արասցես ըստ ամենայնի զոր ինչ պատուիրեցի քեզ , զհրամանս իմ եւ զիրաւունս իմ պահեսցես , 18 [1]կանգնեցից զաթոռ թագաւորութեան քո , որպէս ուխտեցի ընդ Դաւթի հօր քո եւ ասացի , Ոչ բարձցի քո այր առաջնորդ 19 յԻսրայէլ ։ Ապա թէ դարձչիք դուք եւ թողիցիք զհրամանս իմ եւ զպատուիրանս իմ զոր ետու առաջի ձեր , եւ երթայցէք պաշտիցէք զաստուածս օտարս եւ երկիր պագանիցէք նոցա , 20 Բարձից զձեզ յերկրէս զոր ետու ձեզ , եւ զտունս զայս զոր սրբեցի անուանն իմոյ՝ ի բաց դարձուցից յերեսաց իմոց , եւ առց զսա յաւակ եւ ի պատմութիւն յամենայն ազգս , Զտունս զայս զբարձր . եւ ամենայն որ անցանիցէ առ սովաւ՝ զարմացի եւ ասասցէ , Ընդէր արար [12]Տէր երկրիս այսմ եւ տանս այսմիկ ։

---

[1] ՅԵԲԲ· գ-ի-ե [2] ՅԵԲԲ· զոր արարեալ էր [3] ՅԵԲԲ· գաւթին որ էր առաջի տանն [4] ՅԵԲԲ· խաղաղութեան [5] ՅԵԲԲ· զընծայսն Հացի [6] ՅԵԲԲ· արարին [7] ՅԵԲԲ· տօն, կամ, ժողով մեծ [8] ՅԵԲԲ· օր , եւ զտօնն զեւթն օր

[9] ՅԵԲԲ· Տէր Աղոմանի ի գիշերի [10] ՅԵԲԲ· զերկիր [11] ՅԵԲԲ· խոնարհեացի [12] ՅԵԲԲ· Տէր այսպէս

22 Եւ ասացեն, Վասն դի թողին զՏէր Աստուած հարցն իւրեանց՝ որ եհան զնոսա յերկրէն Եգիպտոսի, եւ բռնեալ զաստուածս օտարս, երկիր պագին նոցա եւ ծառայեցին նոցա, յաղագս այնորիկ ած ի վերայ դոցա զամենայն չարիսդ զայդոսիկ։

Գլ. Ը

1 Եւ եղեւ յետ քան ամաց յորս չինեաց Սողոմոն զաւանն Տեառն եւ զաւանն իւր,
2 Եւ զքաղաքան զոր ետ Քիրամ Սողոմոնի, չինեաց զնոսա Սողոմոն, եւ բնակեցոյց անդ զորդիսն Իսրայէլի։
3 Եւ եկն Սողոմոն յԵմաթ Սովբայ, եւ [1]զօրացոյց զնա։
4 Եւ չինեաց զԹադմոր յանապատին, եւ զամենայն քաղաքան [2]ամուրս չինեաց յԵմաթ։
5 Եւ չինեաց զԲեթհորոն վերին եւ զԲեթհորոն ներքին, քաղաքս ամուրս սարսպօք եւ դրամիք եւ նոխք։
6 Եւ զԲաղաաթ, եւ զամենայն քաղաքան [2]ամուրս որք էին Սողոմոնի, եւ զամենայն քաղաքս կառատն եւ զամենայն քաղաքս ձիոց։ եւ զոր ինչ ցանկացաւ Սողոմոն բան ցանկութեան իւրում չինել ի Երուսաղէմ եւ ի Լիբանան եւ յամենայն իշխանութեան իւրում։
7 Ամենայն ժողովուրդ որ մնացեալ էր ի Քետացւոցն եւ ի Յեբուսացւոցն եւ ի Փերեզացւոցն եւ ի Քեւացւոցն եւ ի Յեբուսացւոցն, որք ոչ էին յորդւոցն Իսրայէլի,
8 Այլ էին յորդւոց այնոցիկ որք մնացեալ էին [3]ընդ նոսա՝ երկրին զորս ոչ սատակեցին որդիքն Իսրայէլի, եւ ած զնոսա Սողոմոն ի հարկատուս մինչեւ ցհս գայսօր։
9 Եւ յորդւոցն Իսրայէլի ոչ առ Սողոմոն ի ծառայս իշխանութեան իւրոյ. վասն զի նոքա էին արք պատերազմողք եւ իշխանք զօրաւորք եւ
10 իշխանք կառաց եւ երիվարաց, եւ սոքա էին իշխանք հրամանաց իշխանութեան Սողոմոնի, երկերիւր եւ յիսուն գործավարք ժողովրդեանն։
11 Եւ զդուստերն Փարաւոնի եհան Սողոմոն ի քաղաքէն Դաւթի ի տունն զոր չինեաց նմա. վասն զի ասաց, Ոչ բնակեսցէ կին իմ [4]ի քաղաքին Իսրայէլի արքային Դաւթի՝ վասն զի սուրբ է ուր եւ եմուտ անդր տապանակն Տեառն։
12 Յայնժամ եհան Սողոմոն ողջակէզս Տեառն ի վերայ սեղանոյն [5]Տեառն զոր չի-
13 նեաց յանդիման [6]տաճարին, եւ ըստ բանին աւուրէ յաւուր մատուցանել ըստ պատուիրանացն Մովսիսի ի շաբաթին եւ յամսամուտսն եւ ի տօնսն. երիս ժամանակս ի տարւոջ, ի տօնի բաղարջակերացն, եւ ի տօնի եւթներորդացն, եւ ի
14 տօնի տաղաւարաց։ Եւ կայոյց ըստ կրաւանցն Դաւթի զդասս քահանայիցն ըստ պաշտաման նոցա. եւ Ղեւտացիքն ի վերայ պահապանութեանն իւրեանց, օրհնել եւ պաշտել առաջի քահանայիցն ըստ օրինին օր ըստ օրէ. եւ գռնապանք ըստ որոշմանն իւրեանց ի դրունս դրունս. վասն զի այսպէս էր պատուիրանն Դաւ-
15 թայ մարդոյն Աստուծոյ։ Եւ ոչ անցին զպատուիրանէն արքային յաղագս քահանայիցն եւ Ղեւտացւոց, յամենայն բանի եւ ի գանձարանս։ Եւ պատրաստեաց ամենայն գործն յորէ յորմէ սկսաւ մինչեւ յորն յորում կատարեաց Սողոմոն զտունն [7]Տեառն։
17 Յայնժամ գնաց Սողոմոն ի Գասիոնգաբեր, եւ յԵլաթ՝ որ առ ծովեզերն
18 [8]Հրէաստանի էր։ Եւ առաքեաց [9]Քիրամ ի ձեռն ծառայից իւրոց նաւս, եւ արս որ գիտէին նաւել ընդ ծովն, եւ գնացին ընդ ծառայսն Սողոմոնի [10]ի Սոփիրա. եւ տարին անտի չորեքհարիւր եւ վաթսուն տաղանդ ոսկւոյ, եւ եկին առ արքայ Սողոմոն։

Գլ. Թ

1 Եւ թագուհին Սաբայ լուաւ զանուն Սողոմոնի, եւ եկն փորձել զՍողոմոն առակօք յերուսաղէմ, յոյժ ծանր զօրութեամբ, եւ ուղտս որ բարձեալ բերէին խունկս եւ ոսկի բազում եւ ականս պատուականս. եւ եկն առ Սողոմոն, եւ խօսեցաւ ընդ նմա զամենայն որ ինչ էր
2 ի միտս իւր։ Եւ պատմեաց նմա Սողոմոն զամենայն բանս նորա, եւ ոչ վրիպեաց բան մի ի Սողոմոնէ զոր ոչ պատմեաց նմա։
3 Եւ եհաս թագուհին Սաբայ զխոհմտութիւնն Սողոմոնի. եւ
4 զտունն զոր չինեաց, եւ զկերակուրս [11]սեղանոյն, եւ զխոհս ծառայից նորա, եւ զկարգս պաշտօնէից նորա, եւ զպատմուճանս նոցա, եւ զմատուռսն նո-

[1] ԵԲԲ. Նաւաճեաց [2] ԵԲԲ. շահեմորանաց [3] ԵԲԲ. յետ նոցա [4] ԵԲԲ. ի տանն Դաւթի որքայի Իսրայելի [5] ԵԲԲ. Տեառն [6] ԵԲԲ. սրահին [7] ԵԲԲ. Տեառն; Կատարեցաւ տունն Տեառն [8] ԵԲԲ. յերկրին Եգիպտոսի [9] ԵԲԲ. առ Նա Քիրամ [10] ԵԲԲ. Ոփիր [11] ԵԲԲ. սեղանոյ նորա, եւ զբնակութիւն

բա , եւ զգեսան նոցա , եւ [1]զոչՁակէզն զոր մատուցանէր ի տանն" Տեառն, ի զարմացման եղեւ , եւ ասէ ցարքայ ,
5 Ձչմարիտ էր բանն զոր լուայ ցերկրին իմում յարագս բանից քոց , եւ վասն ի-
6 մաստութեան քո . Եւ ոչ հաւատացի բանից մինչեւ եկի եւ տեսին աչք իմ. եւ ահա ոչ է ի կէս զոր պատմեցին, ի բազմութենէ իմաստութեան քո զոր
7 յաւելեր ի համբաւն զոր լուայ : Երանելիք են արքդ եւ երանելի [2]կանայք քո , եւ" ծառայքդ այդոքիկ որք կան առ քեզ հանապազ եւ լսեն զիմաստու-
8 թիւնդ քո : Եղիցի Տէր Աստուած քո օրհնեալ որ հաճեցաւ ընդ քեզ, [3]տալ զքեզ յաթոռ թագաւորութեան իւրոյ՝ Ժողովրդական քում". զի յագագս սիրելոյ [2]Տեառն Աստուծոյ քո զԻսրայէլ եւ կացուցանելոյ զնա յաւիտեան՝ եդ զքեզ ի վերայ դատաստ թագաւոր , առնել իրաւունս եւ
9 արդարութիւն : Եւ ետ արքայի հարիւր եւ քսան ոսկւոյ , եւ խունկս բազումս յոյժ , եւ սկանս պատուականս . եւ ոչ գոյր իրրեւ զխունկն զայնոսիկ զոր ետ արիկին Սաբայ արքայի Սոզոմոնի :
10 Եւ ծառայքն Սոզոմոնի եւ ծառայքն Քիրամայ բերին ոսկի Սոզոմոնի [4]ի Սոփիրայ , եւ փայտս նոճս եւ սկանս պա-
11 տուականս : Եւ արար արքայ զփայտն նոճ՝ աստիճանս տանն Տեառն եւ տանն արքայի , եւ քնարս եւ տաւիղս երգեցողացն . եւ ոչ երբեք երեւեցաւ այնպէս յաւուրսդոն յերկրին Ցուդայ :
12 Եւ արքայ Սոզոմոն ետ արիկնոջն Սաբայ զամենայն զոր ինչ կամեցաւ նա եւ զոր ինչ խնդրեաց , բայց յայնցանէ զոր ետ արքայի Սոզոմոնի . եւ դարձաւ յերկիրն իւր[5] :
13 Եւ էր կշիռ ոսկւոյն զոր բերին Սոզոմոնի ի միում տարւոջ , վեց հարիւր եւ վաթսուն եւ վեց տալանդ ոսկւոյ ,
14 Աւանդ արանցն [6]կալուցելոյ եւ վաճառականացն որք բերէին . եւ յամենայն թագաւորսն Արաբացւոց եւ կուսանաց երկրին բերէին ոսկի եւ արծաթ արքայի Սոզոմոնի :
15 Եւ արար արքայ Սոզոմոն [7]երեք հարիւր" վահան ոսկի կռածոյ, վեց հարիւր [8]դահեկան մաքուր ոսկի" ի մի վահան .
16 Եւ երեք հարիւր [9]նիզակ ոսկի կռածոյ , երեք հարիւր [10]դահեկան ի մի նիզակ յիւրաքանչիւր օր ի նոցանէ . եւ ետ զայն" արքայ ի տունն անտառին Լիբանանու :
17 Եւ արար արքայ աթոռ ի ժանեաց փղոյ մեծ , եւ պատեաց զնա մաքուր
18 ոսկւով : Եւ վեց աստիճանք էին աթոռոյն [11]կապակալք ոսկւով . եւ անկիւնք" աստի եւ անտի յաթոռն նստելոյ. Եւ երկու առիւծք կային առ [12]ոտս անկեանցն" :
19 Եւ երկոտասան առիւծք կային աստի եւ անտի առ վեց աստիճանսն . եւ ոչ երբեք եղեւ այնպիսի յամենայն թագաւորութեան ուրեք :
20 Եւ ամենայն սպասք արքայի Սոզոմոնի ոսկեզէն , եւ ամենայն սպասք տան անտառին Լիբանանու [13]ոսկւով բեւեռեալ". եւ ոչինչ էր համարեալ արծաթ
21 յաւուրս Սոզոմոնի : Վասն զի նաւ արքայի Սոզոմոնի երթայր ի Թարսիս ընդ ծառայսն Քիրամայ , եւ միանգամ յերիս ամս գայր նաւն ի Թարսիս արքայի , լի ոսկւով եւ արծաթով եւ ժանեօք փղոյ եւ կապիոք եւ սիրամարգօք :
22 Եւ մեծացաւ Սոզոմոն քան զամենայն թագաւորս երկրի խնդրէին զերեսս Սոզոմոնի ականալ , եւ լսել զիմաստութիւն նորա զոր ետ Աստուած
24 ի սիրտ նորա : Եւ նորա բերէին իւրաքանչիւր օր ընծայ նմա՝ անօթս արծաթեղէնս եւ անօթս ոսկեղէնս եւ պատմուճանս, եւ [14]սաւրան եւ խունկս եւ ձիս եւ ջորիս ամի ամի :
25 Եւ էին Սոզոմոնի [15]չորք բիւրք մատակ ձիք ի կառս , եւ երկոտասան հազարք երիվարք". եւ ետ զնոսա ի քաղաքս կառացն , եւ էին ընդ Սոզոմոնի
26 յԵրուսաղէմ : Եւ էր իշխան ամենայն թագաւորացն ի գետոյն Եփրատայ մինչեւ յերկիրն [16]այլազգեաց, եւ մինչեւ ի
27 սահմանս Եգիպտոսի : Եւ եդ արքայ

[1] ՆԲԲ. զսանգաւազն որ եյանէր ի առաջն [2] ՅԲԲ. պ-ւ-ո-ւ [3] ՆԲԲ. դնել զբեզ յաթոռ իւր լինել քեզ թագաւոր վասն Տեառն Աստուածոյ քո [4] ՆԲԲ. յՈփիրայ [5] ՅԲԲ. ՆԱ-ՐԱ-Ա . նա եւ ՅՈՎՐԱՅԼ նորա [6] ՆԲԲ. թանգարաց

[7] ՆԲԲ. երկերիւր [8] ՆԲԲ. ՈՒՆ ոսկի ի մի տապար [9] ՆԲԲ. տապար [10] ՆԲԲ. ՈՒՆ ոսկի ի մի տապար, եւ եդ զնոսա [11] ՆԲԲ. եւ պատեանդան ոսկի՝ կապեալ ընդ ամառոյն և նեցուկք [12] ՆԲԲ. նեցուկան [13] ՆԲԲ. յոսկւոյ սրբոյ [14] ՆԲԲ. զԶՆա [15] ՆԲԲ. չորեք հազար տասնտասնեակ ձիոց եւ կառաց , և երկոտասան հազար հեծեալք [16] ՆԲԲ. Փղշտացւոց

[1]զսակի եւ" զարծաթ իրրեւ զքաբինս յերուսաղէմ, եւ զփայտս մայրս իրրեւ
28 զմոլախզնիս ի դաշտս լազուտ. Եւ եկը Ֆիռոն Սոզոմոնի յեգիպտոսէ եւ յամենայն երկրէ ։
29 Եւ սկացորդք բանիցն Սոզոմոնի առաջինք եւ վերջինք ահա գրեալ են ի բանս Նաթանայ մարգարէի, եւ ի բանս Աքիայ Սիլովնացւոյ, եւ խտեսին [2]Յովկայ տեսանողի վասն Ներոբոամայ որդւոյ
30 Նաբատայ։ Եւ թագաւորեաց [3]արքայ Սոզոմոն" ի վերայ ամենայն Իսրայէլի ամս
31 քառասուն ։ Եւ ննջեաց Սոզոմոն[4], եւ թաղեցին զնա ի քաղաքին Դաւթի հօր իւրոյ ։ Եւ թագաւորեաց Ռոբոամ որդի նորա փոխանակ նորա ։

Գլ. Ժ

1 Եւ եկն Ռոբոամ ի Սիւքեմ, վասն զի ի Սիւքեմ գայր ամենայն Իսրայէլ թա-
2 գաւորեցուցանել զնա ։ Եւ եղեւ իրրեւ լուաւ Ներոբոամ որդի Նաբատայ, եւ ինքն էր յեգիպտոս փախուցեալ յերեսաց արքայի Սոզոմոնի, [1]եւ բնակէր Ներոբոամ յեգիպտոս" եւ գարձաւ Ներոբոամ յեգիպտոսէ ։ Առաքեցին եւ
3 կոչեցին զնա, եւ եկն Ներոբոամ եւ ամենայն [5]եկեղեցին Իսրայէլի առ արքայ" Ռոբոամ եւ ասեն, Հայր քո խոտացոյց զլուծ մեր. եւ արդ թուլացո զկիսոտ ծառայութիւնն հօր քո, եւ զլուծ նորա զծանր զոր եղ ի վերայ մեր, եւ ծա-
5 ռայեսցուք քեզ ։ Եւ ասէ ցնոսա, Երթայք մինչեւ յաւուրս երիս, եւ եկեսջիք առ իս. եւ գնաց ժողովուրդն ։
6 Եւ ժողովեաց արքայ Ռոբոամ զծերան որք կային առաջի Սոզոմոնի հօր նորա մինչդեռ կենդանի էր նա, եւ ասէ, Զիա՞րդ թուի ձեզ, եւ զինչ խորհիք պատասխանի առնել ժողովրդեանն այնմ
7 բան ինչ ։ Եւ խօսեցան ընդ նմա եւ ասեն, Եթէ այսօր լինիս բարի ժողովրդեանդ այսմ, եւ հաճոյ լիցիս եւ խօսեսցիս ընդ նոսա բանս բարիս, եւ եւ զիցեն քեզ ծառայք զամենայն աւուրս ։
8 Եւ նա զխորհուրդ ծերոցն զոր խորհեցան ընդ նմա, եւ խորհեցաւ ընդ մանկտի անդպակիցսն իւր որք կային առ
9 ասէ նորա. Եւ ասէ ցնոսա, Զինչ

[1]ՅԵԲԲ. պոռնիկ [2]ԵԲԲ. Ադդովայ [3]ԵԲԲ. Սոզոմոն յերուսաղէմ [4]ԵԲԲ-ՅԵՏԷ յոՒԼԸ, ընդ հարս իւր [5]ԵԲԲ. Իսրայէլ և խօսեցան առ

թուի ձեզ, եւ պատասխանի տայ բան ժողովրդեանն այնմիկ որք խօսեցան ընդ իս եւ ասացին, Թուլացո ի լծոյն զոր
10 եդ հայր քո ի վերայ մեր ։ Եւ խօսեցան ընդ նմա մանկտին անդպակիցքն նորա, Այսպէս խօսեսցիս ընդ ժողովրդեանն որ խօսեցաւ ընդ քեզ եւ ասաց, Հայր քո ծանրացոյց զլուծն մեր, եւ դու թուլ մեզ. այսպէս ասացես. Փոքր մատանս իմ աստաբաղոյն է քան զմէջ հօր ի-
11 մոյ. Եւ արդ հայրն իմ խրատեաց զձեզ ծանր լծով, եւ ես յաւելից ի լուծն ձեր. հայր իմ խրատեաց զձեզ գաւազանօք, եւ ես խրատեցից զձեզ կարճօք ։
12 Եկն Ներոբոամ եւ ամենայն ժողովուրդն առ Ռոբոամ յաւուրն երրորդի, որպէս խօսեցաւ արքայ եւ ասաց,
13 Դարձիք առ իս յաւուրն երրորդի ։ Եւ պատասխանի արար արքայ խիստ, եւ եմոզ արքայ Ռոբոամ զխորհուրդ ծե-
14 րոցն, Եւ խօսեցաւ ընդ նոսա ըստ խորհրդոյ մանկտացն եւ ասէ, Հայրն իմ ծանրացոյց զլուծ ձեր, եւ ես յաւելից յայն. հայրն իմ խրատեաց զձեզ գաւազանօք, եւ ես խրատեցից զձեզ կար-
15 ճօք ։ Եւ ոչ լուաւ արքայ ժողովրդեանն. վասն զի էր [6]կործանումն յԱստուծոյ. եւ հաստատեաց" Տէր զբան իւր զոր խօսեցաւ ի ձեռն Աքիայ Սիլովնացւոյ յաղագս Ներոբոամայ որդւոյ [7]Նաբատայ եւ ամենայն Իսրայէլի. եւ" ոչ լուաւ
16 արքայ նոցա. Պատասխանի եւս ժողովուրդն արքային եւ ասեն, Զինչ բաժին կայ մեր ընդ Դաւթի, եւ կամ ժառանգութիւն ընդ որդւոյն Յեսսեայ. երթ գնա ի բնակութիւնս քո, Իսրայէլ. եւ արդ տես դու զտուն քո, Դաւիթ. եւ գնաց ամենայն Իսրայէլ ի բնակութիւնս
17 իւր ։ Եւ [8]արքն Իսրայէլի մնացեալքն" ի քաղաքս Յուդայ թագաւորեցուցին ի
18 վերայ իւրեանց զՌոբոամ ։ Եւ առաքեաց արքայ Ռոբոամ զԱդոնիրամ որ էր ի վերայ հարկացն, եւ քարկոծեցին գնա որդիքն Իսրայէլի քարամբք, եւ մեռաւ ։ Եւ արքայ Ռոբոամ փութացաւ եւանել ի կառս իւր եւ փախչել
19 յերուսաղէմ ։ Եւ անդրանեայ Իսրայէլ զատանն Դաւթի մինչեւ յօրս յայս ։

[6]ԵԲԲ. պատճառեալ առ ի յԱստուծոյ, զի հաստատեսցէ [7]ԵԲԲ. Նաբատայ ։ (16) Եւ ամենայն Իսրայէլ իրրեւ տեսեն եմէ [8]ԵԲԲ. որդիքն Իսրայելի որ բնակեալ էին

Գ Ի. ԺԱ

1 Եւ եկն Ռոբովամ յԵրուսաղէմ, եւ ժո-
ղովեաց զՅուդաս եւ զԲենիամին հա-
րիւր եւ ութսուն հազար երիտասար-
դաց որք առնէին պատերազմ, [1]եւ տայր
պատերազմ ընդ Իսրայէլի գարձուցա-
2 նել զթագաւորութիւնն յինքն։ Եւ ե-
ղեւ բան Տեառն առ Սամէաս այրն Աս-
3 տուծոյ եւ ասէ, Խօսեայ ընդ Ռոբո-
վամայ որդւոյ Սողոմոնի [2]եւ ընդ ամե-
նայն Յուդայ եւ Բենիամինի՝ եւ ասասցես, Այսպէս ասէ Տէր. Մի՛ ելանէք եւ
4 մի՛ պատերազմիք ընդ եղբարս ձեր,
դարձցի իւրաքանչիւր ոք ի տուն իւր.
վասն զի յինէն եղեւ բանդ այդ։ Եւ
լուան բանին Տեառն, դարձան ոչ եւս
երթալ ի վերայ Յերոբովամայ։

5 Եւ բնակեաց Ռոբովամ յԵրուսաղէմ,
եւ չինեաց քաղաքս պարսպաւորս ի
6 Հրէաստանի. Եւ չինեաց զԲեթղեհեմ
7 եւ զԵտամի եւ զԹեկուա Եւ զԲեթ-
8 սուրա եւ զՍոկքով եւ զՈդոդամ Եւ
9 զԴէլթ եւ զՄարիսան եւ զԶիփ եւ զԱ-
դորայիմ եւ զԼաքիս եւ զԱզեկա եւ
10 զՍարաա Եւ զԱյղոն եւ զԲեթլրոն [3]որ
էր Յուդայ եւ ի Բենիամին քաղաքս
11 պարսպաւորս։ Եւ ամրացոյց զնոսա
պարսպօք՝, եւ ետ ի նոսա իշխանս եւ
12 համարս կերակրոյ՝ ձէթ եւ գինի. Եւ
քաղաքաց վահանս եւ նիզակս, եւ զօ-
րացոյց զնոսա յաճախութիւնս յոյժ. եւ
էին նորա Յուդաս եւ Բենիամին։

13 Եւ քահանայքն եւ Ղեւտացիքն որք
էին յամենայն Իսրայէլի, ժողովեցան
14 առ նա յամենայն սահմանաց. (Վասն
զի թողին Ղեւտացիքն զընակութիւնս
կալուածոց իւրեանց, եւ գնացին առ
Յուդա եւ յԵրուսաղէմ. քանզի եհան
զնոսա Յերոբովամ եւ որդիք նորա, ոչ
15 եւս պաշտել զՏէր։ Եւ կացոյց իւր
քուրմս բարձանցն [4]եւ կռոցն՝ եւ մնոտ-
եոցն, եւ երինջոցն զոր արար Յերո-
16 բովամ.) Եւ [5]եհան զնոսա ի ցեղիցն Իս-
րայէլի, որք հաստն զսիրտս իւրեանց
խնդրել զՏէր Աստուած Իսրայէլի, եւ
կին յԵրուսաղէմ զոհել Տեառն Աստու-
17 ածոյ հարցն իւրեանց։ Եւ զօրացու-

ցին զթագաւորութիւնն Յուդայ. եւ
հզօրացաւ Ռոբովամ որդի Սողոմոնի
ամս երիս. վասն զի գնացք ի ճանա-
պարհս Դաւթի եւ Սողոմոնի զերիս ամս։
18 Եւ առ իւր Ռոբովամ կին զՄաղաթ
դուստր Յերիմոթայ որդւոյ Դաւթի,
եւ զԱբիհագ դուստր Եղիաբայ որդւոյ
19 Յեսսեայ. Եւ ծնան նմա որդիս զՅե-
20 ուսի եւ զՄամաբրա եւ զՋաամ։ Եւ յետ
այսորիկ առ զՄաաքա դուստր Աբիսա-
զամայ, եւ ծնաւ նմա զԱբիա եւ զԹե-
21 թի եւ զԻզա եւ զՄաղեմովթ։ Եւ ա-
րիտաց Ռոբովամ զՄաաքա դուստր Աբի-
սողոմայ քան զամենայն կանայս իւր
եւ զնարճս իւր. վասն զի կանայս ու-
նէր ութսուտասն եւ հարճս վաթսուն,
եւ ծնաւ ուսաներս քսան եւ ութ եւ
22 դստերս վաթսուն։ Եւ կացոյց իշխան
Ռոբովամ զԱբիա որ էր ի Մաաքայ, իշ-
խան ի վերայ եղբարցն իւրոց, վասն
զի թագաւորեցուսցէ խորհէր զնա։
23 Եւ [6]առեալ առաւել քան զամենայն որ-
դիս նորա՝ յամենայն սահմանս Յուդայ
եւ Բենիամինի, ի քաղաքսն ամուրս,
եւ եդ ի նոսա կերակուր բազում յոյժ.
եւ խնդրեաց բազմութիւն կանանց։

Գ Ի. ԺԲ

1 Եւ եղեւ իբրեւ [7]պատրաստեցաւ թա-
գաւորութիւնն Ռոբովամայ, եւ յորժամ
զօրացաւ, եթող զպատուիրանս Տեառն,
եւ ամենայն Իսրայէլ ընդ նմա։
2 Եւ եղեւ ի հինգերորդի ամի թագա-
ւորութեանն Ռոբովամայ եկն Սաւսակիմ
արքայ եգիպտոսի ի վերայ Երուսաղե-
մի, վասն զի մեղան առաջի Տեառն,
3 Հազար եւ երկերիւր կառօք եւ վաթ-
սուն հազար երիվարօք. եւ ոչ գոյր թիւ
բազմութեանն եկելոց ընդ նմա յեգիպ-
տոսէ. Լիբէացիք, Տրոգղոդացիք, Ե-
4 թովպացիք. Եւ զօրացան ի վերայ ա-
մուր քաղաքացն որ էին Յուդայ. եւ
5 եկն յԵրուսաղէմ։ Եւ Սամէաս մար-
գարէ եկն առ Ռոբովամ եւ առ իշխանսն
Յուդայ ժողովեալսն յԵրուսաղէմ յերե-
սաց Սաւսակիմայ, եւ ասէ ցնոսա,
Այսպէս ասէ Տէր. Դուք թողէք զիս,
եւ ես թողից զձեռս Սաւսակիմ-
6 մայ։ Եւ [8]ամաչեցին իշխանքն Իսրա-
յելի եւ արքայն, եւ ասեն, Արդար է

[1] Եբէր. տալ [2] Եբէր. արքայի Յուդայ և ընդ ամե-
նայն Իսրայելի ի Յուդա և ի Բենիամին [3] Եբէր. որ
էին քաղաքք պարսպաւորք ի Յուդա եւ ի Բենի-
ամին։ (11) Եւ ամրացոյց զպարիսպսն [4] Յեբէր.
գոլոսի [5] Եբէր. զՀետ նոցա յամենայն ցեղիցն

[6] Եբէր. առնէր իմաստութեամբ եւ ցրուէր զամե-
նայն որդիս իւր [7] Եբէր. Հաստատեցաւ [8] Կամ,
խոնարհեցան

7 Տէր ։ Եւ իբրեւ եհաս Տէր եմէ [1]պատ-
կառելին , հղեւ յան Տեառն առ Սա-
մէաս եւ ասէ , [1]Պատկառելին , ոչ ա-
պականիցիս զդուստ . ապ զդուստ իբրեւ
ստացա մի ի փրկութիւն . եւ մի կա-
թեսցէ սրտմտութիւն իմ ի վերայ [2]Ե-
8 րուսաղէմի . Վասն զի եղիցին ինձ՝ ի
ծառայս , եւ ծանիցին զծառայութիւնն
իմ եւ զծառայութիւնն թագաւորու-
9 թեանցդ երկրիս ։ Եւ եկ Սաւսակիմ ար-
քայ [3]Եգիպտոսի , եւ առ զդանձան որ
էին ի տանն Տեառն , եւ զդանձս տանն
արքայի զտուննայն առ . առ եւ զվա-
հանան ոսկեզէնս զոր արար Սողոմոն ։
10 Եւ արար Ռոբոամ վահանս պղնձիս
փոխանակ նոցա . եւ կացոյց ի վերայ
նոցա [4]Սաւսակիմ իշխանս սուրնան-
դակացն որք պահէին զդուռն արքա-
11 յին ։ Եւ լինէր ի մտանել արքային ի տունն
Տեառն՝ տանէին [5]եւ պահապանքն՝ եւ
սուրնանդակքն , եւ [5]բառնային ընդ ա-
12 ռաջ՝ սուրնանդակացն ։ Եւ [6]ի պատկա-
ռելն նորա՝ զարձաւ ի նմանէ բարկու-
թիւն Տեառն եւ ոչ ապականեցաւ ի
սպառ . վասն զի էին բանք բարիք ի
13 Յուդա ։ Եւ զօրացաւ Ռոբոամ յԵրու-
սաղէմ , եւ թագաւորեաց . քառասուն
եւ միոյ ամի էր ի թագաւորելն իւրում .
եւ վեցին եւ տասն ամ թագաւորեաց
յԵրուսաղէմ , ի քաղաքին զոր ընտրեաց
Տէր անուանել զանուն իւր անդ յամե-
նայն ցեղիցն Իսրայէլի . եւ անուն մօր
14 նորա Նաամա Ամմնացի ։ Եւ արար չար ,
վասն զի ոչ ուղղեցաւ սիրտ նորա խնդրել
15 զՏէր ։ Եւ բանքն Ռոբոամայ առաջինք
եւ վերջինք , ո՞չ անա գրեալ են ի բանս
Սամեայ մարգարէի եւ Ագիայ տես-
անողի [7]եւ գործք նորա՝ ։ Եւ պատե-
բազմ էր Ռոբոամայ ընդ Յերոբոամ
16 մայ զամենայն աւուրս ։ Եւ [8]մեռաւ Ռո-
բոամ , եւ թաղեցաւ ընդ հարս իւր՝ ի
քաղաքին Դաւթի ։ Եւ թագաւորեաց
Աբիա որդի նորա փոխանակ նորա ։

Գլ. ԺԴ

1 Յամի եւ տասներորդի ամի թագաւո-

[1] Կամ, խոնարհեցան [2]Եբբ. Երուսաղէմի ի ձեռն Սաւսակիմայ։ (8) Բայց եւ այնպէս եղիցին նմա [3]Եբբ. Եղիպտոսի ի վերայ Երուսաղէմի [4]Յոբբ. գ-ւոթ [5]Եբբ. բառնային զնոսա , եւ տանէին զնոսա ի սենեակ [6]Կամ, ի խոնարհելն [7]Եբբ. յազգաչամարին [8]Եբբ. ննջեաց Ռոբոամ ընդ հարս իւր, եւ թաղեցաւ

րութեանն Յերոբոամայ թագաւորեաց
Աբիա ի վերայ [9]Յուդայ եւ Երուսաղէմի
2 ամս երիս՝. Եւ անուն մօր նորա [10]Մաա-
քա դուստր Աբիսողոմայ՝. եւ էր պատե-
բազմ ի մէջ Աբիայ եւ ի մէջ Յերոբոա-
3 մայ ։ Եւ կարգեցաւ Աբիա ի պատերազ-
մին զօրաւոր մարտիկօք չորիւք հարեւր
հազարօք արամբք զօրաւորօք . եւ Յե-
րոբոամ ճակատեցաւ ընդդէմ նորա ի
պատերազմին ութ հարեւր հազարօք զօ-
րաւորօք պատերազմողաց զօրութեամբ ։
4 Եւ յարեաւ Աբիա ի լեռնէն Սոմո-
րոնայ , որ էր ի լերինն Եփրեմի , եւ ա-
սէ , Լուարուք , Յերոբոամ եւ ամե-
5 նայն Իսրայէլ . Ո՞չ է ձեր ճանաչել եւ-
թէ Տէր Աստուած Իսրայէլի ետ զթա-
գաւորութիւնն [11]Իսրայէլի յաւիտեան՝
6 Դաւթի՝ եւ որդւոց նորա ուխտ աղի ։ Եւ
յարեաւ Յերոբոամ որդի Նաբատայ՝
ծառայ Սողոմոնի որդւոյ Դաւթի , եւ
7 ապստամբեաց ի տեառնէ իւրմէ . Եւ
ժողովեցան առ նա արք ժանտք , որպիք
անօրէնք . եւ ընդդէմ եկաց Ռոբոամ
մայ որդւոյ Սողոմոնի . եւ Ռոբոամ էր
մանուկ եւ երկչոտ սրտիւ , եւ ոչ եկաց
8 ընդդէմ նոցա ։ Եւ արդ դուք ասէք կալ
հակառակ երեսաց թագաւորութեան
Տեառն , որ է ի ձեռս որդւոց Դաւթի .
եւ դուք բազում էք յոյժ , եւ ընդ ձեզ
երինջք ոսկեզէնք զոր արար ձեզ Յե-
9 րոբոամ յաստուածս ։ Միթէ ո՞չ հանէք
դուք զքահանայսն Տեառն զորդիսն Ա-
հարոնի եւ զղեւտացիսն , եւ արարէք
ձեզ քուրմս ի ժողովրդենէ երկրիդ . ա-
մենեքեան որ գային ընտր զձեռս զուա-
րակօք յարչառաց եւ եւթն խոյօք , եւ
10 լինէր քուրմ չաստուածոցն ։ [12]Եւ մեք
զՏէր Աստուած մեր ոչ թողաք , եւ քա-
հանայքն նորա պաշտեն զՏէր , որպիք
Ահարոնի եւ Ղեւտացիք , եւ հանապազոր-
11 դեալքն ի նոցանէ՝ Սիմեն խոնարհ Տեառն ,
եւ զուլչակէզս՝ ընդ առաւօտս եւ ընդ
երեկոյս , եւ պիտնկան խառնուածոյս .
եւ հացքն առաջադրութեան ի վերայ
սուրբ սեղանոյն , եւ աչառնակն ոսկե-
զէն եւ ձրագունքն վառեալք՝ յերեկո-

[9] Եբբ. Յուդայ ։ (2) Ամն երիս թագաւորեաց յԵրուսաղէմ [10]Եբբ. Միքայիա դուստր Ուրիէլի Կաբաացւոյ [11]Եբբ. Դաւթի ի վերայ Իսրայէլի յաւիտեան, նմա [12]Եբբ. Ա՛լ Տէր է Աստուած մեր, եւ մեք ոչ թողաք զնա, եւ քահանայքն որ պաշտեն զՏէր՝որդիք Ահարոնի են, և Ղեւտացիքն ի պաշտաման. (11) Եւ

րեայ լուցեալք. վասն զի պահեմք մեք զպահպանութիւնս Տեառն Աստուծոյ [1]հարցն մերոյ՝, եւ դուք թողէք զնա։
12 Եւ ահաւասիկ ընդ մեզ իշխան Տէր, եւ քահանայք նորա եւ փողք [2]նշանակաց նշանակել ի մեզ. եւ դուք, որդիք Իսրայէլի, պատերազմիք ընդ Տեառն Աստուծոյ հարցն մերոց, եւ ոչ եւս՝ աջողեսցի ձեզ։
13 Եւ Յերոբովամ դարձոյց զդարանսն կալն գալ [3]նմա զկին կողմանէ՝, եւ եղեն առաջի Յուդայ, եւ դարանակալքն
14 յետուստ։ Եւ դարձաւ Յուդա, եւ ահա պատերազմն նոցա առաջի եւ կին. եւ զոչեցին առ Տէր, եւ քահանայքն
15 հարին զփողսն, եւ գոչեցին արք Յուդայ. եւ եղեւ ի գոչել արանց Յուդայ, եւ [4]Տէր եհար զՅերոբովամ եւ զԻսրա-
16 յէլ առաջի Աբիայ եւ Յուդայ։ Եւ փախեան որդիքն Իսրայէլի յերեսաց Յուդայ, եւ մատնեաց զնոսա [5]Տէր ի ձեռս
17 նոցա։ Եւ եհար ի նոցանէ Աբիա եւ զօրն նորա հարուածս մեծամեծս, եւ անկան վիրաւորք յԻսրայէլ [6]հինգ հազար՝ արք
18 զօրաւորք։ Եւ նկուն եղեն որդիքն Իսրայէլի յաւուր յայնմիկ, եւ զօրացան որդիքն Յուդայ. վասն զի յուսացան ի
19 Տէր Աստուած հարցն իւրեանց։ Եւ հալածեաց Աբիա զՅերոբովամ, եւ առ ի նմանէ քաղաքս, զԲեթէլ եւ զգեղս նորա, եւ [7]զԱնա եւ զգեղս նորա, եւ զԵփրան եւ [8]զգաւառս նորա, եւ զԵնա
20 եւ զգեղս նորա՝։ Եւ ոչ եւս գոյր զօրութիւն Յերոբովամայ զամենայն աւուրս Աբիայ. եւ եհար զնա Տէր եւ վախճանեաց։
21 Եւ զօրացաւ Աբիա, եւ առ իւր կանայս չորեքտասան, եւ ծնաւ ուստեր քսան եւ երկուս եւ դստեր վեցտա-
22 սան։ Եւ մնացեալ բանքն Աբիայ եւ գործք նորա եւ խօսք նորա, անա գրեալ են ի գիրս մարգարէին Այդովայ։

Գլ. ԺԴ

1 Եւ [9]մեռաւ Աբիա ընդ հարս իւր, եւ թաղեցին զնա ի քաղաքին Դաւթի. եւ թագաւորեաց Ասա որդի նորա փոխա-
նակ նորա. յաւուրս Ասայի հանդարտեաց երկիրն Յուդայ ամս տասն։ Եւ
2 արար բարի եւ ուղղութիւն առաջի Տեառն
3 Աստուծոյ իւրոյ. Եւ ի բաց արար զսեւանս օտարացն եւ զբարձունսն, եւ խարտակեաց զարձանսն, եւ այրեաց
4 զանտառսն։ Եւ ասաց յՅուդա խնդրել զՏէր Աստուած հարցն իւրեանց, եւ
5 առնել զօրէնս եւ զպատուիրանս։ Եւ ի բաց արար յամենայն քաղաքացն Յուդայ. վասն զի խաղաղացաւ երկիրն,
6 եւ ոչ գոյր ումեք նմա պատերազմ յամին յայնմիկ. վասն զի հանդոյց Տէր։
7 Եւ ասէ յՅուդա, Շինեսցուք զքաղաքսն զայնոսիկ, եւ արասցուք պարիսպս եւ աշտարակս եւ դրունս եւ նիգս [10]որով տիրեմք երկրիս՝. զի զոր օրինակ խնդրեցաք զՏէր Աստուած մեր, [11]եւ նա խնդրեաց զմեզ՝ եւ հանդոյց զմեզ չուր-
8 ջանակի, եւ [12]յաջողեաց մեզ՝։ Եւ եղեւ Ասայի զօր կենդանեաց որք բառնային վահանս եւ նիզակս յերկրին Յուդայ՝ երեք հարիւր հազար. եւ յերկրին Բենիամինի ասպարաւորք եւ ազեղնաւորք՝ երկերիւր
եւ [13]վաթսուն հազար. ամենեքեան նոքա պատերազմողք զօրութեամբ։
9 Եւ ել ի վերայ նոցա Զարեհ Եթէովպացի զօրութեամբ հազար հազարօք եւ երկհարիւր կառօք, եւ եկն մինչեւ ի
10 Մարիսա։ Եւ գնաց Ասա ընդդէմ նորա, եւ ճակատեցաւ պատերազմն [14]ի
11 ձորն՝ ի հիւսիսոյ Մարիսայ՝։ Եւ գոչեաց Ասա առ Տէր Աստուած իւր, եւ ասէ, Տէր, ոչ տկարանայ քեզ ապրեցուցանել բազմօք եւ սակաւուք. զօրացո զմեզ, Տէր Աստուած մեր, վասն զի ի քեզ յուսացաք, եւ անուամբ քով եկաք ի վերայ բազմութեանս այսորիկ. Տէր
12 Աստուած մեր, մի յաղթահարեսցէ զքեզ մարդ։ Եւ եհար Տէր զԵթէովպացիսն առաջի [15]Յուդայ, եւ փախեան Եթէովպա-
13 կիքն։ Եւ հալածեաց Ասա եւ զօրն իւր մինչեւ [16]ի Գերարա

[1] ԵԲԲ. մերոյ [2] ԵԲԲ. ազգեցութեան ազգ առնել ընդդէմ ձեզ. որդիք Իսրայէլի, մի՛ պատերազմիք ընդ Տեառն Աստուծոյ հարցն ձերոց, զի ոչ
[3] ԵԲԲ. զկին կողմանէ նոցա [4] ԵԲԲ. Աստուած [5] ԵԲԲ. հինգ հարեւր հազար [6] ԵԲԲ. զՅեսանա [7] ԵԲԲ. զգեղս նորա [8] ԵԲԲ. ննջեաց
[9] ԵԲԲ. զբարձունսն եւ զպատկերս արեգական. եւ հանգեաւ թագաւորութիւնն առաջի նորա։ (6) Եւ շինեաց քաղաքս պարսպաւորս [10] ԵԲԲ. մինչդեռ երկիրս առաջի մեր է [11] ԵԲԲ. խնդրեցաք [12] ԵԲԲ. շինեցին եւ յաջողեցան [13] ԵԲԲ. ութսուն [14] ԵԲԲ. ի ձորն Սեփաթայ առ Մարիսայ [15] ԼԻԲ. Ասայի եւ առաջի Յուդայ [16] ԵԲԲ. ի Գերարա

պայիքն մինչեւ ոչ մնալ ի նոցանէ ապրելով. քանզի խորտակեցան առաջի Տեառն եւ առաջի զօրուն Իսրայէլի եւ
14 կողոպտեցին աւար բազում։ Եւ կոչեցան[1] զգեզս նոցա չարչ զԻնգուբաան", վասն զի եղեն արհաւիրք ի Տեառնէ ի վերայ նոցա. եւ տէրն աւար
15 բազում եղեւ նոցա։ Այլ եւ զվրանս անասնոցն նոցա[2] առին, եւ զմիաանիսեան կոտորեցին, եւ առին" խաչինս բազումս եւ ուզտս, եւ զարձան յերուսաղէմ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ Ազարիաս որդի Ովդայ եղեւ ի վերայ նորա Հոգի [3]Տեառն. Եւ ել ընդ առաջ Ասայի եւ [4]ամենայն Յուդայ եւ Բենիամինի եւ ասէ", Լուարուք ինձ, Ասա եւ ամենայն Յուդա եւ Բենիամին. Տէր ընդ ձեզ, վասն լինելոյ ձեր ընդ նմա. եւ արդ եթէ խնդրէք զնա, գտցի ձեզ, եւ եթէ թողուք զնա,
3 թողցէ զձեզ։ Եւ աւուրք բազումք յիսրայէլի եղեն՝ ոչ Աստուած ճշմարիտ, եւ ոչ քահանայ որ ցուցանէր, եւ ոչ օ-
4 րէնք։ [5]Որ դարձոյց զնոսա ի Տէր Աստուած Իսրայէլի", եւ գտաւ ի նոսա։ Ի ժամանակին յայնմիկ ոչ զոյր խաղաղութիւն այնոցիկ որք մտանէին եւ որք ելանէին. վասն զի արհաւիրք [6]ի Տեառնէ անկան ի վերայ ամենեցունցն բնակչաց գաւառացն. Եւ պատերազմէր ազգ ընդ ազգի եւ քաղաք ընդ քաղաքի.
7 վասն զի Աստուած գարնուբեցոյց զնոսա ամենայն նեղութիւնմբք։ Եւ արդ զուք զօրացարուք, եւ մի լսցին ձեռք ձեր. քանզի գոն վարձք գործոց ձերոց։
8 Եւ [7]ի լսել զբանս գայաոսիկ եւ զմարգարէութիւն Ազարիայ մարգարէի, զօրացաւ եւ եհան արտաքս զանմնայն զպղծութիւնսն յամենայն երկրէն Յուդայ եւ Բենիամինի, եւ ի քաղաքացն զոր կալաւ ի լերինն Եփրեմի, եւ աբար նաւակատիս սեզանոյն Տեառն որ
9 էր առաջի տաճարին Տեառն. Եւ եհաւ զկացոյց զՅուդա եւ զԲենիամին, եւ զեկն եւ զպանդուխտսն ընդ նմա, յԵփրեմայ եւ ի Մանասէէ եւ ի Շմաւունէ.
վասն զի յաւելան ի նա բազումք յիսրայէլէ ի տեսանելն նորա՝ թէ Տէր Աստուած նորա ընդ նմա է։ Եւ ժողովեցան յերուսաղէմ յամսեանն երրորդի,
11 ի հնգետասաներորդում ամի թագաւորութեանն Ասայի. Եւ [8]եզին Տեառն յաւուրն յայնմ յաւարացն զոր ածին՝ զուարակս եւթն հարիւր եւ ոչխարս
12 եւթն հազար։ Եւ [9]եդ ուխտ՝ խնդրել զՏէր Աստուած հարցն իւրեանց յամենայն սրտէ եւ յամենայն անձնէ.
13 Եւ ամենայն որ ոչ խնդրիցէ զՏէր Աստուած Իսրայէլի՝ մեռցի յերիասարդէ մինչեւ
14 ի ծերն եւ յառնէ մինչեւ ցկին։ Եւ նոքա երդուան Տեառն [10]մեծաձայն եւ եղկելաւ
15 փոզաւք", Եւ ուրախ եղեւ ամենայն Յուդա վասն երդմանն, զի յամենայն սրտիկ իւրեանց երդուան, եւ ամենայն կամօք խնդրեցին զնա. եւ գտաւ նոցա եւ հանդոյց զնոսա Տէր չուրջանակի։
16 Եւ զմաւրա զմայրն իւր ի բաց մերժեաց[11], վասն զի էր Աստարտեայ պաշտանեայ. եւ խորտակեալ զկուռն եւ
17 այրեալ ի հնդեպատն Կեդրոնի։ Սակայն [12]զբարձունսն ոչ բարձին, եւ սակաւն եւս կայր ի Յուդա եւ յիսրայէլ". բայց սիրտն Ասայի եղեւ [13]լի ամենայն
18 աւուրս կենաց իւրոց։ Եւ տարաւ ի տունս զարբութիւնսն [14]Դաւթի հօր իւրոյ, եւ զարբութիւնս Տեառն" Աստուծոյ,
19 արծաթ եւ ոսկի եւ սպասս, եւ պատերազմ ոչ զոյր [15]նմա մինչեւ յերեսնեւորդ եւ հինգերորդ ամ թագաւորութեանն Ասայի։

ԳԼ. ԺԶ

1 Եւ յերեսներորդ [16]ութերորդ ամի թագաւորութեանն Ասայի եկն Բաաս արքայ Իսրայէլի ի վերայ Յուդայ, եւ չինեաց զՌամա, [17]ոչ տալով ելս Ասայի արքայի Յուդայ։ Եւ առ Ասա ոսկի եւ արծաթ ի գանձուց տանն Տեառն եւ ի տանէ թագաւորին, եւ առաքեաց առ [18]որդին Ադերայ" արքայն Ասորւոց որ բնակէր
3 ի Դամասկոս, եւ ասէ, [19]Դիր ուխտ ի մէջ իմ եւ քո, եւ ի մէջ հօր իմոյ եւ

[1] Եբր. զաժենայն քաղաքս չուրջ զԳերարաս [2] Եբր. Հարին, եւ առին [3] Եբր. Աստուածոյ [4] Եբր. ասէ ցնա [5] Եբր. Եւ ի նեղութեան իւրեանց դարձան ի Տէր Աստուած Իսրայէլի եւ խնդրեցին զնա [6] Եբր. դ-ւ-ւ [7] Եբր. ի լսել Ասայի [8] Եբր. զնին [9] Եբր. եդին [10] Եբր. ձայնիւ մեծաւ եւ գնծութեամբ եւ փողով եւ չեփորաւ [11] Եբր-յեցէն յ-ե-լը-, ի սիկնութիենէ [12] Եբր. բարձունք ոչ բարձան յիսրայէլէ [13] Եբր. ողջ, կամ կատարեալ [14] Եբր. Հօր իւրոյ եւ զարբութիւնս իւր ի տունն [15] Եբր. վեցերորդ [16] Եբր. չորս երեսներորդ առ Ասա արքայ [17] Եբր. Ենեադագ [18] Եբր. կ

հօր քո. ահաւադիկ առաքեցի քեզ արծաթ եւ ոսկի, եկ [1]ևս մերժեա յինէն զիաւս ալքայ" Իսրայէլի, եւ գնասցէ
4 ի քաց յինէն։ Եւ լուաւ [2]սրտին Ադերայ ալքայ Աստուծոյ", եւ առաքեաց վիշխանս զօրացն իւրոց ի քաղաքն Իսրայելի. եւ հնար գԱհան եւ զԴան եւ զԱբելմային, եւ զամենայն [3]չուրջ զգա-
5 ւառան" Նեփթալիմայ։ Եւ եղեւ իբրեւ լուաւ Բաաս, ի քաց [4]արձակեաց՝ ոչ եւս չինել զԻամա. եւ դադարեաց
6 գործն նորա"։ Եւ Ասա ալքայ ած զամենայն Յուդաս, եւ առ զքարինս Բաասայ եւ զփայտս նորա զոր չինեաց Բաաս, եւ չինեաց նոքօք զԳաբաա եւ զՄասփա։
7 Ի ժամանակին յայնմ եկն Անանիան մարգարէ առ Ասա ալքայ Յուդայ եւ ասէ ցնա, Վասն զի յուսացար դու յարքան Ասորւոց եւ ոչ յուսացար ի Տէր Աստուած քո, յաղագս այնորիկ ապրեցաւ զօր ալքային [5]Իսրայէլի ի ձեռաց
8 քոց։ Ո՞չ ապաքէն Եթէովպացիք եւ Լիբւոսիք էին զօրք բազումք, [6]համաձակուխումբ բազում հնձելովք յոյժ եկին", եւ ի յուսալն քո ի Տէր՝ մատնեաց զնոսա Տէր ի ձեռս քո. Վասն զի
9 աչք Տեառն հային յամենայն երկիր զօրացուցանել [7]յամենայն լի սրտից զնա". եւ արդ ապիտացար յայսմհետէ. յայսմ հետ
10 եւ եղիցի քեզ պատերազմ։ Եւ սրտմտեցաւ Ասա մարգարէին եւ եդ զնա ի բանտի. վասն զի բարկացաւ յաղագս այնորիկ. եւ [8]ժանտացաւ Ասա ի ժողովուրդն" ի ժամանակին յայնմ։
11 Եւ ահա բանք Ասայի առաջինք եւ վերջինք՝ գրեալ են ի գիրս Թագաւորացն
12 Յուդայ եւ Իսրայէլի։ Եւ ախտացան Ասայի ոտք յերանելորդի եւ յինեներորդի ամի թագաւորելոյ նմա, եւ յոյժ հիւանդացաւ. եւ ի հիւանդանալն իւրում ոչ խնդրեաց զՏէր, այլ խնդրեաց լիմչկա-
13 Եւ ննջեաց Ասա ընդ հարս իւր, եւ վախճանեցաւ ի քառասաներորդի եւ յոտասներորդի ամի թագաւորելոյ իւրոյ։
14 Եւ թաղեցին զնա ի չիրմին զոր փորեաց իւր ի քաղաքին Դաւթի, եւ ընկղմա-

[1] Ւ:Բբ. եղիր վե՛ր քո ընդ Բաասայ արքայի [2] Ւ:Բբ. Բենադադ արքայի Ասայի [3] Ւ:Բբ. շրջմտրանս քաղաքացն [4] Ւ:Բբ. եկաց ի չինելոյ զիամա, եւ դադարեցոյց զգործս իւր [5] Ւ:Բբ. Ասորւոց [6] Ւ:Բբ. կառաք եւ հեծելովք բազում յոյժ [7] Ւ:Բբ. զամենայն որ կատարեալ է սրտիւ առ նա [8] Ւ:Բբ. չարչարեաց Ասա ի ժողովրդենէն

նեցուցին զնա ի գահոյն, եւ լցին խնկովք եւ ազգի ազգի խադովք խազեփեցայ, եւ [9]արարին նմա յուզարկութիւն մեծ" յոյժ։

Գլ. ԻԶ

1 Եւ թագաւորեաց Յովսափատ որդի նորա փոխանակ նորա. եւ զօրացաւ
2 Յովսափատ ի վերայ Իսրայելի։ Եւ եհան զօրս յամենայն քաղաքսն Յուդայ յամուրս, եւ կացոյց իշխանս [10]յամենայն քաղաքսն" Եփրեմի, զորս առ արքայ
3 Ասա հայրն նորա։ Եւ եղեւ Տէր ընդ Յովսափատայ. վասն զի գնայ ի ճանապարհս հօր [11]իւրոյ յառաջինս, եւ ոչ
4 խնդրեաց [12]զկռոնսն, Այլ զՏէր Աստուած հօր իւրոյ խնդրեաց, եւ ի պատուիրանս [13]հօրն իւրոյ" գնայ. եւ ոչ էին իրրեւ
5 զԻսրայէլի գործք նորա։ Եւ [14]յաջողեցաւ Թագաւորութիւնն" ի ձեռս նորա. եւ եհան ամենայն Յուդա ընծայ Յովսափատայ, եւ եղեն նորա մեծութիւն եւ
6 փառք բազումք. Եւ բարձրացաւ սիրտ նորա ի ճանապարհս Տեառն. եւ այլ եւս եհար զբարձունսն, եւ զանտառսն յերկրէն Յուդայ։
7 Եւ յերրորդ ամի Թագաւորութեանն իւրոյ առաքեաց զիշխանս իւր [15]եւ զորս զիս զօրս Թեանցն" զԱբդիաս եւ զԶաքարիաս եւ զՆաթանայէլ եւ զՄիքիաս՝
8 ուսուցանել ի քաղաքսն Յուդայ. Եւ ընդ նոսա Ղեւտացիքն Սամեիաս եւ Նաթանաս եւ Զաբդիաս եւ Ասահէլ եւ Սեմիրամովթ եւ Յովնաթան եւ Ադոնիաս
[16]եւ Տաբատոնիաս՝ Ղեւտացիք. եւ ընդ նոսա եղիսամա եւ Յովրամ քահանայք.
9 Եւ ուսուցանէին զՅուդա, եւ ընդ նոսա գիրք օրինացն Տեառն, եւ անցանէին ընդ քաղաքսն Յուդայ, եւ ուսուցանէին զժողովուրդն։
10 Եւ եղեն արհաւիրք ի Տեառնէ ի վերայ թագաւորացն երկրին որ չուրջ զՅուդայիս, եւ ոչ պատերազմէին ընդ Յովսափատ-
11 տայ։ Եւ յարզանդացն բերէին Յովսափատայ ընծայս [17]ոսկի եւ արծաթ եւ պատարագս", եւ Արաբացիքն ածէին նմա խոյս յոչխարաց՝ եւթն հազար եւ եւթն հարիւր, եւ նոխազս եւթն հա-

[9] Ւ:Բբ. արեցին նմա խնկարուզում [10] Ւ:Բբ. յերկրին Յուդայ եւ ի քաղաքսն [11] Ւ:Բբ. իւրոյ Դաւթի [12] Ւ:Բբ. զկնահոլիմ [13] Ւ:Բբ. Նորա [14] Ւ:Բբ. Հաստատեաց Տէր զթագաւորութիւնն [15] Ւ:Բբ. զԱնհոլիմ եւ [16] Ւ:Բբ. եւ Տուբիաս եւ [17] Ւ:Բբ. եւ արծաթ ի հարկ

12 զար եւ ելթն հարիւր ։ Եւ երթալով Յովսափատ մեծանայր ի բարձրութիւն . եւ չինեաց [1]տուներ ի Հրէաստանի քա-
13 ղաքս ամուրս՝ ։ եւ գործք բազումք եղեն նորա [2]ի Հրէաստանի . եւ արք զօրաւորք պատերազմօղք ուժով յերուսա-
14 ղէմ ։ Եւ այս էր թիւ նոցա ըստ տանց հայրապետացն իւրեանց . ի Յուդայի հազարապետք՝ Եդնաս իշխան , եւ ընդ նմա արք զօրաւորք զօրս երկոտասան
15 հարիւր հազար . Եւ [3]ընդ նոսա՝ Յովհանան իշխան , եւ ընդ նմա երկերիւր ութսուն
16 հազար . Եւ [3]ընդ նմա՝ Ամասիա որդի Զաքարեայ յօժարեալն ի Տէր , ընդ նմա
17 երկերիւր հազար զօրաւորք ուժով ։ Եւ ի Բենիամինէ զօրաւոր ուժով Եղիադա , եւ ընդ նմա զինուսաւորք եւ [4]պարսա-
18 տորք երկերիւր հազար . Եւ [3]ընդ նոսա՝ Յովզաբադ , եւ ընդ նմա հարիւր եւ ութսուն հազար զօրաւորք ի պատե-
19 րազմի ։ Սոքա էին պաշտօնեայք արքային , բայ յայնոցանէ զոր եդ արքայ ի քաղաքն ամուրս յամենայն Հրէաստանի ։

ԳԼ . ԺՀ

1 Եւ եղեւ Յովսափատայ մեծութիւն եւ այլ եւս , եւ փառք բազում . եւ սիար
2 խնամութիւն ընդ տանն Աքաաբու ։ Եւ էջ ի կապարել [5]տարւոյն առ Աքաաբ ի Սամարիա . եւ եզին նմա Աքաաբ ոչխարս եւ զուարակս բազումս , եւ զօրսն որ ընդ նմա. եւ [6]սիրէր զնա՝ հանել
3 ընդ նմա յԱրամոթ Գաղաադ ։ Եւ ասէ Աքաաբ արքայ Իսրայէլի ցՅովսափատ արքայ Յուդայ , Գա՞ս ընդ իս յԱրամոթ Գաղաադ . եւ ասէ ցնա , Որպէս եւ՝ նոյնպէս եւ դու , եւ որպէս զօրք քո՝ զօրք իմ ընդ քեզ ի պատերազմին ։
4 Եւ ասէ Յովսափատ սարքայն Իսրա-
5 յէլի , [7]Խնդրեսցուք այսօր զՏէր ։ Եւ ժողովեաց արքայն Իսրայէլի զմարգարէսն [8]Իսրայէլի արս չորեք հարիւր , եւ ասէ ցնոսա , Եթէ երթա՞յց յԱրամոթ Գաղաադ ի պատերազմ , եւ կամ թէ զադարեցից . եւ ասեն , Ել , եւ յաղոդեսցէ
6 Աստուած ի ձեռս արքայի ։ Եւ ասէ Յովսափատ , Մի՞ գոյ աստ եւ այլ եւս մար-

գարէ Տեառն , եւ խնդրեսցուք ի նմա-
7 նէ ։ Եւ ասէ արքայն Իսրայէլի ցՅովսափատ , Է մեւս եւս այր առ ի խնդրել զՏէր նովաս . եւ ես ատեցի զնա , զանի ոչ մարգարէանայ [9]նա ի բարիս , [9]եւ զի ամենայն աւուրք իւր են՝ ի չարութիւն . նա է Միքիաս որդի Գեմլեայ ։ Եւ ասէ Յովսափատ , Մի՛ խօսեսցի արքայ այդպէս ։
8 Եւ կոչեաց արքայն Իսրայէլի ներքինի մի եւ ասէ , Վազվազակի առ զՄիքիա որդի Գեմլեայ ։ Եւ արքայն Իսրայէլի եւ Յովսափատ արքայ Յուդայ նստէին իւրաքանչիւր ոք յաթոռ իւրում զգեցեալ պատմուճանս. եւ նստէին [10]յընդարձակ դրանն Սամարիայ . եւ ամենեքեան մարգարէքն առաջի նոցա մար-
10 գարէանային ։ Եւ արար իւր Սեդեկիաս որդի Քանանեա եղջերս երկաթեղէնս , եւ ասէ , Այսպէս ասէ Տէր . Սոքօք հար-
11 սցես զԱսորիս մինչեւ վախճանեացես ։ Եւ ամենեքեան մարգարէքն նոյնպէս մարգարէանային եւ ասէին , Ել յԱրամոթ Գաղաադ , եւ յաջողեսցիս . եւ տացէ Տէր ի ձեռս արքայի ։
12 Եւ հրեշտակն որ չոգաւ կոչել զՄիքիաս , խօսեցաւ ընդ նմա եւ ասէ , Ահա խօսեցան մարգարէքն իբրեւ ընդ մի բերան յաղագս արքայի յարիս . եղիցին եւ քո բանք իբրեւ զմիոյ նոցա , եւ խո-
13 սեսցիս բարիս ։ Եւ ասէ Միքիաս , Կենդանի է Տէր զի զոր ինչ ասացէ Աստուած [11]ցիս՝ զայն խօսեցայց ։
14 Եւ եկն առ արքայ . եւ ասէ ցնա արքայ , Միքիաս , եթէ երթա՞յց յԱրամոթ Գաղաադ ի պատերազմ , եթէ զադարեցից ։ Եւ ասէ , Ել եւ յաջողեսցի , եւ
15 տացին ի ձեռս ձեր ։ Եւ ասէ ցնա արքայ , Քանի՞ցս անդամ երդմնեցուցից զքեզ , զի մի այլ ինչ խօսեսցիս ընդ իս , բայց զճշմարտութիւն յանուն Տեառն ։
16 Եւ ասէ , Տեսի ցրուեալ զիսրայէլ ի լերինս՝ իբրեւ զոչխարս որոց ոչ գոյ հովիւ . եւ ասէ Տէր , Ոչ գոյ դոցա իշխան . դարձցի իւրաքանչիւր ոք ի տունն
17 իւր խաղաղութեամբ ։ Եւ ասէ արքայն Իսրայէլի ցՅովսափատ , Ո՞չ ասացի քեզ թէ ոչ մարգարէանայ նա վասն իմ բա-
18 րիս , այլ չարութիւն ։ Եւ ասէ , Ոչ այդպէս . լուարուք զբան Տեառն . տեսի

[1] Եբէր. ի Հրէաստանի բերդս եւ քաղաքս շրջմանեացս [2] Եբէր. ի քաղաքս Հրէաստանի [3] Եբէր. քան նմանէ [4] Եբէր. ասպարատորք [5] Եբէր. ամաց [6] Եբէր. հաւանեցոյց [7] Եբէր. խնդրեա [8] Յոեբէր. գ-ե-օ-ե [9] Եբէր. այլ զամենայն աւուրս իւր [10] Եբէր. ի հրապարակի ի մուտս [11] Եբէր. իմ

զՏէր զի նստէր յաթոռն իւրում, եւ ա-
մենայն զօրք երկնից մերձ կային յա-
19 ձ նորա եւ յահեկէ. Եւ ասէ Տէր, Ո՞
խաբեսցէ զԱքաաւ արքայ Իսրայելի,
զի ելցէ եւ անկցի յԻեռամովթ Դաղաադ.
եւ ասեն, ոմն այսպէս, եւ ոմն այն-
20 պէս։ Եւ ել հոգի եկաց առաջի Տեառն
եւ ասէ, Ես խաբեցից զնա։ Եւ ասէ
21 Տէր, Ի՞նչ։ Եւ ասէ, Ելից եւ եղէց հո-
գի սուտ ի բերան ամենայն մարգարէիցն
նորա. եւ ասէ, Խաբեսցես եւ կարաս-
22 ցես, ել եւ արա այդպէս։ Եւ արդ ա-
հա եդ Տէր հոգի սուտ ի բերան մար-
գարէիցդ քոց սոցունիկ, եւ Տէր խօսե-
ցաւ վասն քո չարիս։
23 Եւ մատուցեալ Սեդեկիա որդի Քա-
նանեայ եհար զծնօտն Միքիայի, եւ ասէ
ցնա, Որո՞վ ճանապարհաւ անց Ոգի
Տեառն զինեւ, եւ խօսեցաւ ընդ քեզ։
24 Եւ ասէ Միքիաս, Ահա տեսցես յաւուրն
յայնմիկ, յորում մտանիցես չտեմարան
ի չտեմարանէ թաքչել։
25 Եւ ասէ արքայն Իսրայելի, Առէք
զՄիքիաս եւ դարձուցէք զդա առ [1]Ամ-
մոն իշխան քաղաքին, եւ առ Յովաս
26 [2]իշխան որդի արքային, Եւ ասացէք,
այսպէս ասէ արքայ. Տուք զդա ի տուն
բանտին, եւ կերիցէ հաց նեղութեան,
եւ ջուր նեղութեան արիցէ, մինչեւ ի
27 դառնալն իմում խաղաղութեամբ։ Եւ
ասէ Միքիաս, Եթէ դառնալով դարձ-
ցիս խաղաղութեամբ, ոչ խօսեցաւ ընդ
իս Տէր. լսարուք ժողովուրդք ամե-
նեքեան։
28 Եւ ել արքայն Իսրայելի եւ Յովաս
փատ արքայ Յուդայ յԻեռամովթ Դա-
29 դաադ։ Եւ ասէ արքայն Իսրայելի ցՅով-
սափատ, [3]Մածկեա զիս՝ եւ մարիր ի պա-
տերազմն, եւ դու զգեցիր զպատմու-
ճանն [4]իմ։ Եւ ծածկեցաւ արքայն Իս-
30 րայելի, եւ եմուտ՝ ի պատերազմ։ Եւ
արքայն Ասորւոց պատուիրեաց իշխա-
նաց կառացն որք էին ընդ նմա եւ ա-
սէ, Մի պատերազմիցէք ընդ փոքու եւ
մի ընդ մեծի, բայց ընդ արքայն Իս-
31 րայելի միայն։ Եւ եղեւ իբրեւ տեսին
իշխանք կառացն զՅովսափատ, եւ ա-
սեն նոքա, Սա է արքայն Իսրայելի.
եւ չուրջ եղեն զնովաւ պատերազմել.

[1] ԵԲԲ. Ամման [2] ՅԵԲԲ. պ-ի-ե [3] ԵԲԲ. Ածլակեր-
պեցայց [4] ՅԵԲԲ. քո. և այլակերպեցաւ արքայն
Իսրայելի, եւ մեռաւ

եւ գոչեաց Յովսափատ, եւ Տէր ապրե-
ցոյց զնա. եւ դարձոյց զնոսա Աստուած
32 ի նմանէ։ Եւ եղեւ իբրեւ տեսին իշ-
խանք կառացն թէ ոչ է նա արքայն Իս-
33 րայելի, դարձան ի նմանէ։ Եւ այր ոմն
ելից զազեղն [5]կորովութեամբ, եւ եհար
զարքայն Իսրայելի ընդ մէջ թոքացն եւ
լանջից. եւ ասէ [6]ցնեղքինն, Դարձո
զձեռն քո եւ հան զիս ի պատերազմէս,
34 վասն զի վաւնգեցայ։ Եւ պատեցաւ
պատերազմն յաւուր յայնմիկ, եւ ար-
քայն Իսրայելի կայր ի վերայ կառացն
իւրոց մինչեւ երեկոյ ընդդէմ Ասո-
ւեացն. եւ մեռաւ ի մատենել արեգականն։

ԳԼ. ԺՓ

1 Եւ դարձաւ Յովսափատ արքայ Յու-
դայ ի տուն իւր խաղաղութեամբ յե-
2 րուսաղէմ։ Եւ ել ընդ առաջ նորա Եհու
որդի Անանեայ մարգարէ, եւ ասէ նա
ցարքայ Յովսափատ, [2]Եթէ մեղաւորին
դու օգնե՞ս, եւ կամ ատելոյն ի Տեառ-
նէ բարեկա՞մ լինիս. վասն այդորիկ ե-
ղեւ ի վերայ քո բարկութիւն ի Տեառ-
3 նէ։ Այլ գի գտան ի քեզ բանք բարիք,
եւ զի բարձեր պանտասն յերկրէս Յու-
դայ, եւ ուղղեցեր զսիրտ քո խնդրել
4 [7]զՏէր, տպրեցոյց զքեզ Տէր՝։ Եւ բնա-
կեաց Յովսափատ յերուսաղէմ. եւ [8]մեա-
նգամ ել ժողովուրդն՝ ի Բեերսաբէէ
մինչեւ ի լեառնն Եփրեմի, եւ դարձոյց
զնոսա առ Տէր Աստուած հարցն իւ-
5 րեանց։ Եւ կացոյց դատաւորս յամե-
նայն քաղաքն Յուդայ եւ յամենայն գի-
6 ւաքաղաքին Յուդայ, եւ ասէ ցդատաւ-
որսն, Տեսէք զինչ առնիցէք գործ.
վասն զի ոչ վարձկան իրս դատիք գործ՝
այլ զՏեառն, եւ ընդ ձեզ [9]ին բանք ի-
7 րաւանց՝։ Եւ արդ եղիցի երկեալ Տեառն
ի վերայ ձեր, պահեցէք եւ արարէք,
զի ոչ գոյ Տեառն Աստուծոյ մերոյ ա-
նիրաւութիւն, եւ ոչ երեսաց աչառել,
եւ ոչ առնուլ կաշառս։
8 Այլ եւ յերուսաղէմ կացոյց Յովսա-
փատ ի քահանայից եւ ի Ղեւտացւոց եւ
ի հայրապետաց Իսրայելի՝ յիրաւունս
Տեառն դատել [10]զընակիչսն երուսաղէ-
9 մի՝։ Եւ պատուիրեաց նոցա եւ ասէ,

[5] Կամ, պարզութեամբ [6] ՅԵԲԲ. ցկառապետն
[7] ՅԵԲԲ. զԱստուած [8] ՅԵԲԲ. դարձաւ և ել ընդ
ժողովրդեանն [9] ՅԵԲԲ. է ի բանի դատաստանի
[10] Կամ, եւ դարձան յերուսաղէմ

Այնպէս արարէք երկիւղիւ Տեառն,
10 ճշմարտութեամբ եւ լի սրտիւ։ [1]Ա-
մենայն այր զիրաւունն" զեկեալս առ
ձեզ յեղբարէ ձերոջ՝ ի բնակչէ քաղա-
քացն իւրեանց, ի մէջ արեան եւ ա-
րեան, եւ ի մէջ իրաց եւ պատուիրա-
նի, եւ զիրաւունս եւ զդատաստանս ու-
րոչկղէք նոցա, եւ մի մեղիցին առ Ա-
տուած, եւ ոչ լիս եղիցի ի վերայ ձեր
բարկութիւն, եւ ոչ ի վերայ եղբարց
ձերոց. այսպէս արասջիք եւ ոչ մեղա-
11 չիցէք։ Եւ ահա Ամարիաս քահանայ՝
առաջնորդ ի վերայ ձեր յամենայն բանի
Տեառն. եւ Զաբդիաս որդի Իսմայելի ա-
ռաջնորդ ի տանն Ցուդայ յամենայն բանի
արքայի. եւ [2]դպիրքն եւ Ղեւտացիք"
առաջի ձեր. զօրասարուք եւ արարէք,
եւ եղիցի Տէր ընդ բարւոյն։

Գլ. Ի

1 Եւ յետ այսորիկ եկին որպիքն Ամմոնայ
եւ որպիքն Մովաբայ, եւ ընդ նոսա [3]ի
Մինեցւոց անտի առ Յովսափատ ի պա-
2 տերազմ։ Եկին եւ [4]ցուցին Յովսափա-
տայ եւ ասեն, Եկն ի վերայ քո ամբոխ
բազում յայնմ կողմանէ ծովուն յԱսո-
րիոց, եւ ահա են յԱսասանթամար՝ որ
3 է Ենգադդի։ Եւ երկեաւ, եւ եաս Յով-
սափատ զերեսս իւր խնդրել զՏէր, եւ
4 քարոզեաց պահս յամենայն Ցուդա։ Եւ
ժողովեցաւ Ցուդաս խնդրել զՏէր, եւ
յամենայն քաղաքացն Ցուդայ եկին
5 խնդրել զՏէր։ Եւ յարեաւ Յովսափատ
ի մէջ եկեղեցւոյն Ցուդայ յԵրուսաղէմ
ի տանն Տեառն՝ յանդիման [5]սրահին նո-
6 րոյ, եւ ասէ, Տէր Աստուած հարցն մե-
րոց, ո՞չ ապաքէն դու ես Աստուած յեր-
կինս, եւ դու տիրես ամենայն թագա-
ւորութեանց հեթանոսաց, եւ ի ձեռս
քո զօրութիւն ուժոյ, եւ ոչ ոք կարէ
7 կալ ընդդէմ քո. Ո՞չ ապաքէն դու ես
[6]Տէր որ սատակեցեր զբնակիչս երկրիս
այսորիկ յերեսաց ժողովրդեան քո Իս-
րայէլի, եւետուր զսա զաւակի Աբրա-
8 համու սիրելւոյն քո յաւիտեան։ Բնա-
կեցին ի սմա, եւ շինեցին սուրբ սրուա-
9 խիւն անուան քումմ, եւ ասացին, Եթէ
եկեսցեն ի վերայ մեր չարիք, սուր,
դատաստանք, մահ, սով, կացցուք ա-

ռաջի տանս այսորիկ եւ առաջի քո, վասն
զի անուն քո ի վերայ տանս այսորիկ
է, եւ դոչեսցուք առ քեզ ի նեղութեան,
10 լուիցես եւ ապրեցուսցես զմեզ։ Եւ արդ
ահա որպիքն Ամմոնայ եւ Մովաբու եւ
լեառն Սէիրայ, ընդ որս ոչ եաւր ան-
ցանել ընդ նոսա Իսրայէլի յելանելն նո-
ցա յերկրէն Եգիպտոսի, վասն զի խո-
տորեցան ի նոցանէ, եւ ոչ սատակեցին
11 զնոսա, Եւ արդ աւասիկ նոքա [7]յանդգ-
նին գալ ի վերայ մեր, եւ հանել" զմեզ
յերկրէս ժառանգութեան մերոյ զոր ե-
12 տուր մեզ։ [8]Տէր Աստուած մեր, ո՞չ առ-
նես դատաստանս ի նոսա. վասն զի ոչ
դոյ զօրութիւն մեր ընդդէմ կալ բազում
ամբոխին այնորիկ, եւ ոչ դիտեմք զինչ
արասցուք [8]նոցա. այլ առ քեզ են աչք
13 մեր։ Եւ ամենայն Ցուդաս կայր առա-
ջի Տեառն եւ մանկունք նոցա եւ կա-
նայք նոցա։

14 Եւ Ոգիելի որդւոյ Զաքարիայ յորդ-
ւոցն Բանեայ, եւ յորդւոցն Եղիելի՝ որդ-
ւոյն Մաթանեայ Ղեւտացւոյ՝ յորդւոցն
Ասափայ, եղեւ ի վերայ նորա Հոգի
15 Տեառն ի մէջ եկեղեցւոյն. Եւ ասէ,
Լուարուք, ամենայն Ցուդա եւ բնա-
կիչք Երուսաղէմի եւ արքայ Յովսափատ,
այսպէս ասէ Տէր ցձեզ. Մի երկնչիք եւ
մի զարհուրիք յերեսաց բազում ամբոխին
այնորիկ. վասն զի ոչ ձեր է պատե-
16 րազմ՝ այլ Աստուծոյ։ Վաղիւ իջէք ի
վերայ նոցա. ահա [9]իջանեն ընդ զառ ի
վայրն Ասեր", եւ գտջիք զնոսա առ ե-
17 զր գետոյն [10]անապատին Երիելի։ Ոչ
է ձեր պատերազմել անդ. [11]իմասջիք եւ
տեսջիք զփրկութիւն Տեառն որ է ընդ
ձեզ, Ցուդա եւ Երուսաղէմ. մի երկնչիք
եւ մի զարհուրիք վաղիւ իջանել ընդ
18 առաջ նոցա, զի Տէր է ընդ ձեզ։ Եւ
խոնարհեալ Յովսափատ ի վերայ երե-
սաց իւրոց, եւ ամենայն Ցուդաս եւ
բնակիչք Երուսաղէմի, անկան առաջի
19 Տեառն եւ երկիր պագին Տեառն։ Եւ
յարեան Ղեւտացիքն յորդւոցն Կահաթու
եւ յորդւոցն Կորխայ օրհնել զՏէր Աս-
տուած[12] ձայնիւ մեծաւ ի բարձունս։
20 Եւ կանխեցին ընդ առաւօտս եկին յա-

[1] ԵՔԲ. Զամենայն վէճս [2] ՅԲԲ. Ղեւտացիքն [3] ԿամՀամ. ՅԱմենացւոց [4] ԵՔԲ. պատմեցին
[5] ԵՔԲ. Գաւթին [6] ԵՔԲ. Աստուած մեր [7] ԵՔԲ. փոխանակ գան ի վերայ մեր Հանել [8] ՅԵՔԲ. պատ-
ուհաս [9] ԵՔԲ. ելանեն ընդ զառ ի վէրն ընդ Սիս, [10] ՅԵՔԲ. յանդիման անապատին [11] ԵՔԲ. կանգ-
նեսջիք, կացջիք [12] ԵՔԲ. յեհել յոհել, Իս-
րայելի

նապատան Թեկուայ. եւ յելանէին իւրեանց եկաց Յովսափատ գոչեաց եւ ասէ, Լուարուք ինձ, Յուդաս եւ բնակիչք Երուսաղեմի. հաւատացէք Տեառն Աստուծոյ [1]մերում, եւ հաւատացի ձեզ. հաւատացէք մարգարէից նորա, եւ յա-
21 ջողեսցի ձեզ։ Եւ խորհեցաւ ընդ ժողովրդեանն. եւ կացոյց սաղմոսանուագս[2] եւ օրհնիչս՝ [3]խոստովան լինել եւ օրհնել զսրբութիւնն՝ յելանելն առաջի զօրուն. եւ ասէին, Խոստովան եղիրուք Տեառն, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։
22 Եւ եղեւ ի սկսանելն զօրհնութիւնս Տեառն եւ զխոստովանութիւնն նորա, եդ Տէր [4]պատերազմել որդւոցն Ամմոնայ, ի վերայ Մովաբու եւ լերինն Սէիրայ, որք եկեալ էին ի վերայ Յուդայ.
23 եւ պարտեցան։ Եւ յարեան որդիքն Ամմոնայ եւ Մովաբու ի վերայ բնակչաց լերինն Սէիրայ սատակել եւ խորտակել. եւ իբրեւ վախճանեցին զբնակիչսն Սէիրայ, յարեան ի վերայ միմեանց սա-
24 տակել։ Եւ Յուդաս եկն ի դիտանոցն անապատին, հայեցաւ եւ եւեթ զբազմութիւնն, եւ ահա ամենեքեան մեռեալք եւ անկեալք ի վերայ երկրի, եւ
25 ոչ ոք էր ապրեալ։ Եւ եկն Յովսափատ եւ զօրն կողոպտել զաւարն նոցա, եւ գտին [5]անասունս բազումս եւ զկազմածն եւ զաւարն՝ եւ անօթս ցանկալիս, եւ աւարեցին [6]զայն. եւ եղեւ զերիս աւուրս ժողովել նոցա զաւարն, վասն զի բազում էր յոյժ։
26 Եւ յաւուրն չորրորդի ժողովեցան ի Հովիսան օրհնութեան. վասն զի անդ օրհնեցին զՏէր, յաղագս այնորիկ կոչեցին զանուն տեղւոյն այնորիկ՝ Հովիսա-
27 օրհնութեան մինչեւ յօրս յայս։ Եւ դարձաւ ամենայն այր Յուդայ [7]յերուսաղէմ, եւ Յովսափատ առաջնորդ նոցա ուրախութեամբ [8]մեծաւ. քանզի ուրախ արար զնոսա Տէր ի թշնամեացն իւրեանց. Եւ մտին յերուսաղէմ քնարօք
28 եւ տաւղօք եւ փողովք ի տունն Տեառն։
29 Եւ եղեն արհաւիրք [9]ի Տեառնէ ի վերայ ամենայն թագաւորութեանց երկրի ի լսել նոցա եթէ Տէր եւ պատերազմ
30 ընդ հակառակորդսն Իսրայելի։ Եւ խաղաղեցաւ թագաւորութիւնն Յովսափատայ, եւ հանդոյց զնա Աստուած նորա չուրջանակի։
31 Եւ թագաւորեաց Յովսափատ ի վերայ Յուդայ. եւ էր ամաց [10]երեսնից ի թագաւորելն իւրում, եւ քսան եւ հինգ ամ թագաւորեաց յերուսաղէմ. եւ անուն մօրն նորա Ազուբա՝ դստեր Սա-
32 զիայ։ Եւ գնաց ի ճանապարհս հօր իւրոյ Ասայի, ոչ [11]խոտորեցաւ առնել ուղ-
33 զութիւն առաջի Տեառն։ Սակայն բարձունքն սակաւուն եւս էին, եւ ժողովուրդն ոչ ուղղեաց զսիրտ իւր առ Տէր Աստուած
34 հարցն իւրեանց։ Եւ մնացեալ բանքն Յովսափատայ առաջինք եւ վերջինք՝ ահա գրեալ են ի բանս Եհուայ որդւոյ Անանեայ, [12]որ գրեաց զդիրս՝ թագաւորացն Իսրայելի։
35 Եւ յետ այսորիկ հաղորդութիւն արար Յովսափատ արքայ Յուդայ ընդ Ոքոզեայ արքայի Իսրայելի. [13]եւ անօրինեցաւ նա յառնել եւ երթալ առ նա,
36 եւ առնել նաւ՝ գնալ ի Թարսիս. եւ [14]ա-
37 րար նաւ ի Գասիոնգաբեր։ Եւ մարգարէացաւ Եղիազար որդի Ովդրայ ի Մարեսայ առ Յովսափատ, եւ ասէ, Վասն զի եղեր սիրելի Ոքոզեայ, խորտակեաց Տէր զգործսն քո. եւ [15]խորտակեցաւ նաւն քո եւ ոչ կարաց՝ երթալ ի Թարսիս։

Գլ. Իւ

1 Եւ ննջեաց Յովսափատ ընդ հարս իւր, եւ թաղեցաւ ընդ հարս իւր ի քաղաքի Դաւթի. եւ թագաւորեաց Յովրամ որ-
2 դի նորա փոխանակ նորա։ Եւ նորա էին եղբարք՝ որդիք Յովսափատայ վնց, Ազարիա եւ Եհիէլ եւ Զաքարիա եւ [16]Միքայէլ եւ Սափատիա եւ Ադարիա. ամենեքեան որդիք Յովսափատայ արքայի Իսրա-
3 դայ։ Եւ եւ նոցա հայրն իւրեանց պարգեւս բազումս, արծաթ եւ ոսկի եւ [17]ընչս, հանդերձ պարսպաւոր քաղաքօքն Յուդայ. եւ զթագաւորութիւնն եւս Յովրամայ,
4 վասն զի նա էր անդրանիկ։ Եւ յարեաւ Յովրամ ի թագաւորութեանն իւրում եւ

---

[1] ՆԵՔ. ձերում [2] ՆԵՔ. երգեցողսն յաւելու, Տեառն [3] ՆԵՔ. ի վայելչութիւն սրբութեանն [4] ՆԵՔ. դարանակալս ի վերայ [5] ՆԵՔ. ինոսա բազմաթեամբ կազմածս եւ հանդերձս [6] ՆԵՔ. զայն մինչեւ չկարել բառնալ [7] ՆԵՔ. և երուսաղեմի [8] ՆԵՔ. յերուսաղէմ [9] ՆԵՔ. Աստուծոյ

[10] ՆԵՔ. երեսուն եւ հնգից [11] ՆԵՔ. խոտորեցաւ ի նմանէ [12] ՆԵՔ. որ գրեալ են ի գիրս [13] ՆԵՔ. ապարար չար։ (36) Եւ յարեցաւ ի նա առնել նաւս [14] ՆԵՔ. արարին [15] ՆԵՔ. խորտակեցան նաւքն և ոչ կարացին [16] ՆԵՔ. Միքայէլ [17] ՆԵՔ. ընծայս

զօրացաւ , եւ սպան զամենեսեան զեղբարն իւր սրով , եւ յիշխանացն Խաբայելի ։
5 Էր ինքն երեսուն եւ երկուց ամաց յորժամ եկաց ի թագաւորութեանն իւրում , եւ զաթ ամ թագաւորեաց յերուսաղէմ։ եւ գնաց ի ճանապարհս թագաւորացն Իսրայելի , որպէս արար տունն Աքաաբու . վասն զի դուստր Աքաաբու էր նորա կին , եւ արար չար առաջի
7 Տեառն ։ եւ ոչ կամեցաւ Տէր սատակել զտունն Դաւթի վասն ուխտին զոր եդ ընդ Դաւթի . եւ որպէս ասացն ցնա՝ տալ նմա հրաւ եւ որդւոց նորա զամենայն աւուրս ։
8 Յաւուրսն յայնոսիկ ապստամբեաց Եդոմ ի Յուդայ , եւ թագաւորեցուցին ի
9 վերայ իւրեանց թագաւոր ։ եւ գնաց Յովրամ հանդերձ իշխանօքն , եւ ամենայն երիվարք ընդ նմա . եւ եղեւ ի յառնելն նորա գիշերի , եհար [1]Եգոմի զոյնոսիկ՝ որ պատկային գնա , եւ զիշխանս կառացն . [2]եւ փախեաւ զօրն ի բնակութիւնս իւրեանց՝ եւ ի բաց եկաց եդոմ ի
10 ձեռանէ Յուդայ մինչեւ յօրս յայս . յայնժամ ապստամբեաց Ղոբնա ի ձեռանէ նորա ի ժամանակին յայնմիկ . վասն զի [3]թողին զՏէր Աստուած հարցն իւրեանց՝ ։
11 Ջանզի արար իւր բարձունս ի քաղաքան Յուդայ , եւ պոռնկեցոյց զրնակիչսն Երուսաղէմի , եւ մոլորեցոյց զՅուդա ։
12 Եւ եկն նմա գիր յԵղիայէ մարգարէէ , եւ ասէ , Այսպէս ասէ Տէր Աստուած Դաւթի հօր քո . Փոխանակ զի ոչ գնացեր գու ի ճանապարհս Յովսափատայ հօր քո , եւ ոչ ի ճանապարհս Ասայի
13 արքայի Յուդայ , Այլ գնացեր ի ճանապարհս թագաւորացն Իսրայելի , եւ պոռնկեցուցեր զՅուդա եւ զրնակիչսն Երուսաղէմի , որպէս պոռնկեցաւ տունն Աքաաբու , եւ զեղբարս քո զտոհմիս հօր քո , զորս ագահն քան զքեզ , սպաներ ,
14 Եւ ահա Տէր հարանէ զքեզ հարուածովք մեծաւք ի ժողովրդեան քում , եւ զորկս քո եւ զկանայս քո եւ զամենայն ստացս
15 ցուածս քո . Եւ գու չար հիւանդութեամբ եւ ախտիւ որովայնի հաչեսցիս , մինչեւ ելցէ որովայն քո հիւանդութեամբն հանդերձ՝ աւուրց յաւուրս ։
16 Եւ յարոյց Տէր ի վերայ Յովրամայ այլազգիս , եւ զԱրաբացիս զմերձաւորսն
17 ետիոպացւոց . Եւ եկն ի վերայ Յուդայ եւ հարաւահարէին զնա . եւ գարձուցին զամենայն պատրաստութիւնն զոր գտին ի տան արքային , եւ զուստերս նորա եւ [4]զդստերս նորա . եւ ոչ մնաց նմա որդի , բայց Ոքոզիաս միայն՝ կրտսերագոյն յորդիս նորա ։
18 Եւ յետ սոցա ամենայնի եհար զնա Տէր ախտիւ որովայնի որոյ ոչ գոյր
19 բժշկութիւն ։ Եւ եղեւ աւուրց յաւուրս , [5]իբրեւ եկն ժամանակ աւուրցն նորա , յերկուս աւուրս եւ որովայն նորա հանդերձ ախտիւն՝՝ , եւ մեռաւ ի չար հիւանդութեանն յայնմիկ . եւ ոչ արար նմա ժողովուրդն [6]յուզարկութիւն , իբրեւ զյուզարկութիւն հարցն նորա ։
20 Էր ամաց երեսուն եւ երկուց յորժամ թագաւորեաց , եւ զութ ամ թագաւորեաց յերուսաղէմ . եւ մեռաւ ոչ զովութեամբ , եւ թաղեցաւ ի քաղաքին Դաւթի , եւ ոչ ի գերեզմանս թագաւորացն ։

Գլ . Իբ

1 Եւ թագաւորեցուցին բնակիչքն Երուսաղեմի զՈքոզիաս որդի նորա զկրտսերագոյնն փոխանակ նորա . վասն զի զամենեսեան զերիցագոյնսն կոտորեաց հէնն եկեալ ի վերայ նոցա , [7]Ախաբացիքն եւ Աղխմազովկայքն՝՝ . եւ թագաւորեաց Ոքոզիաս որդի Յովրամայ արքային Յուդա ։
2 Էր [8]քսան եւ երկուց ամաց յորժամ թագաւորեաց Ոքոզիա , եւ տարի մի թագաւորեաց յերուսաղէմ . եւ անուն մօր նորա Գոթողիա դուստր Ամբրեայ ։
3 Եւ նա գնաց ի ճանապարհս տանն Աքաաբու . վասն զի մայրն իւր էր
4 խորհրդակից նմա մեղանչել ։ Եւ արար չար առաջի Տեառն որպէս արար տունն Աքաաբու . քանզի նոքա էին խորհրդակիցք նմա յետ մեռանելոյ հօրն նորա
5 սատակել զնա ։ Ըստ խորհրդոյն նոցա գնաց նա , եւ չգաւա ընդ Յովրամայ որդւոյ [9]Աքաաբու ի պատերազմ ի վերայ Ազայելի արքայի Ասորեաց յՌամովթ Գաղաադ , եւ հարին [10]աղեղնաւորքն
6 զՅովրամ ։ Եւ գարձաւ Յովրամ բժշկել յԵզրեայել ի վիրացն զոր խոցեցին զնա

[1] ԵԲԸ. գնդովմ [2] ՑԵԲԸ. գ-ի-ւե [3] ԵԲԸ. եհմ զՏէր Աստուած հարցն իւրոց

[4] ԵԲԸ. զկանայս [5] ԵԲԸ. իբրեւ եկն ժամանակ վախճանի աւուրց ամաց երկուց , վայ ի եան ախիւ նորա յախաէն [6] ԵԲԸ. պլուռմն [7] ԵԲԸ. ընդ Արաբացիս ի բանակն [8] ԵԲԸ. քառասուն [9] ԵԲԸ. Աքաաբու , արքայի Իսրայելի [10] ԵԲԸ. Ասորիք

Ասորիքն յԱրամէ՝ ի պատերազմել նո-
ա ընդ Ազայելի արքայի Ասորեաց. եւ
Ոքոզիաս որդի Յովրամայ արքայի Յու-
դայ՝ էջ տեսանել զՅովրամ որդին Ա-
քաաբայ յեզրաչէլ, վասն զի հիւանդ էր։
7 Եւ ի Տեառնէ եղեւ կործանումն Ոքո-
զեայ յերթալն առ Յովրամ. եւ յեր-
թալն նորա ել [1]նա առ Եհու՝ որդին Ա-
8 մեսեայ օծեալն Տեառն։ Եւ եղեւ իր-
բեւ առ Եհու զվրէժ առնն Աքաաբու,
եգիտ եւ զիշխանսն Յուդայ եւ զեղ-
բարսն Ոքոզեայ որք պաշտէին զՔո-
9 զիաս, եւ կատարեաց զնոսա. Եւ [2]ասաց
խնդրել զՔոզիաս. եւ կալան զնա ի
բժչկելն՝ ի Սամարիա, եւ ածին զնա առ
Եհու, եւ [3]սպան զնա, եւ թաղեցին
զնա անդէն. վասն զի ասացին, Որդի
է Յովսափատայ որ խնդրեաց զՏէր ի
բոլոր սրտէ իւրմէ. եւ ոչ գոյր ի տանն
Ոքոզեայ [4]զօրացուցանել զոք յաղտս
զօրութեան թագաւորութեանն։
10 Եւ Դոմոզիա մայրն Ոքոզեայ տեսեալ
թէ մեռաւ որդին նորա, յարուաւ եւ
կորոյս զամենայն զաւակ թագաւորու-
11 թեան ի տանն Յուդայ։ Եւ առ Յով-
սաբեթ դուստր արքայի զՅովաս որդի
Ոքոզեայ, եւ զոզացաւ զնա ի միջոյ
որդւոցն արքայի կոտորելոցն. եւ եմ
զնա եւ զդայեակ նորա ի սենեակս ան-
կողնացն, եւ թաքոյց զնա Յովսաբեթ
դուստր արքային Յովրամայ՝ քոյրն Ո-
քոզեայ, կին Յովիադայ քահանայի,
եւ ծածկեալ զնա յերեսաց Դոմոզիայ,
12 եւ ոչ սպան զնա։ Եւ էր ընդ նմա թա-
քուցեալ ի տանն Աստուծոյ ամս վեց. եւ
Դոմոզիա թագաւորեաց ի վերայ երկրին։

Գլ. Իգ

1 Եւ յամին եւթներորդի զօրացաւ Յո-
վիադայ, առ ինարիւրապետսն՝ զԱ-
զարիան որդի Յովրամայ, եւ զԻսմա-
էլ որդի Յովհանայ, եւ զԱզարիան որ-
դի Յովբադայ, եւ զՄասիան որդի Ա-
դայեայ, եւ զԵղիսափատ որդի Զաքա-
2 րեայ [5]ի տունն Տեառն։ Շրջեցան՝ ընդ
Յուդա, եւ ժողովեցին զԼեւտացիսն
յամենայն քաղաքացն Յուդայ, եւ զիշ-
խանս տոհմիցն Իսրայելի, եւ եկին յԵ-
3 րուսաղէմ։ Եւ եդին ուխտ [6]ընդ ամե-
նայն կհեղեցւոյն Յուդայ ի տանն Տեառն
եւ ընդ արքային. եւ ետուն նոցա զոր-
դին արքայի, եւ՝ ասէ ցնոսա, Ահաւա-
սիկ որդի արքային Յուդայ, թագա-
ւորեսցէ կա, որպէս խոսեցաւ Տէր ի
4 վերայ սանն Դաւթի։ Եւ արդ զայս
է զոր առնիցէք. երրորդ մասն ի ձէնջ
մտցէ ի չաբաթուց քահանայիցն եւ
5 Ղեւտացւոց ի մուտս պրանցն, Եւ եր-
րորդ մասն ի տան արքային, եւ եր-
րորդն ի պրանն [7]միջնում, եւ ամենայն
ժողովուրդն [8]ի սրահն տանն Տեառն լի-
6 ցի. Եւ մի՛ ոք մտցէ ի տունն Տեառն,
բայց միայն քահանայքն [9]եւ Ղեւտա-
յիքն՝ եւ պաշտօնեայքն ի Ղեւտացւոց՝
նոքա մտցեն, վասն զի սուրբք են. եւ
ամենայն ժողովուրդն պահեսցէ զպահ-
7 պանութիւնս Տեառն։ Եւ պատեսցեն
Ղեւտացիքն չուրջանակի զարքայ՝ այր
եւ զէն իւր ի ձեռին իւրում. եւ որ ոք
մտանիցէ ի տունն, մեռցի. եւ [10]նոքա
եղիցին՝ ընդ արքայի ի մտանել եւ յե-
8 լանել նորա։ Եւ արարին Ղեւտացիքն
եւ ամենայն Յուդա ըստ ամենայնի զոր
[11]պատուիրեաց Յովիադայ քահա-
նայ. եւ առ իւրաքանչիւր ոք զընկեր
իւր [11]ի սկսանելոյ չաբաթուն՝ վասն զի
ոչ արձակեաց Յովիադայ զհանապազոր-
9 դեան պահապանսն։ Եւ նա [12]նոցա զսու-
սերն եւ զվահանսն եւ զվէնսն՝ որք
էին արքայի Դաւթի ի տանն Աստուծոյ.
10 Եւ կացոյց զամենայն ժողովուրդն՝ զիւ-
րաքանչիւր ոք զինուն իւրով՝ յուսոյ
տանն յաջմէ, մինչեւ յուս ահեկի կող-
մանն սեղանոյն եւ տաճարին զվիսպա-
11 տուրսն չուրջանակի։ Եւ եհան զորդին
արքայի, եւ եդ ի վերայ նորա զմասկն
եւ զվկայութիւնն. եւ թագաւորեցու-
ցին եւ օծին զնա Յովիադայ եւ որդիք
իւր, եւ ասեն, կեցցէ արքայ։
12 Եւ լուաւ Դոմոզիա զձայն ժողովուր-
դեանն զվնիմանալոյն, զղոհանալոյն եւ
զօրհնելոյն զարքայ, եւ եմուտ [13]առ ար-
13 քայն՝ ի տունն Տեառն. Եւտս, եւ ահա
թագաւորն կայր ի աեղւոյն իւրում, ի

[1] Նեբ. Նա ընդ Յովրամայ [2] Եբր. խնդրեաց զՔո-
զիաս. և կալան զնա որ թաքուցեալ էր [3] Նեբ.
սպանին [4] Եբր. զօրութիւն առնել զթագաւորու-
թիւնն [5] Նեբ. ընդ իւր յուխտին, (2) Եւ շրջեցան
[6] Եբր. ամենայն եկեղեցին ի տանն Աստուծոյ ընդ
արքային. եւ Յովիադայ [7] Նեբ. Հիման [8] Եբր.
ի գաւիթս [9] Ոչ Նեբ. պակաս [10] Նեբ. եղիջիք
[11] Եբր. եթէ զորս գային ի չաբաթի անդր, և եթէ
զորս ելանէին ի չաբաթէն [12] Նեբ. Յովիադայ
քահանայ հարիւրապետաց զինիզակս և զասպարս
եւ զվահանս [13] Եբր. առ ժողովուրդն

մուտս ճանապարհին, սիտաքն եւ փողքն
[1]եւ իչխանքն՝ չուրջ զարքայիւ. եւ ա-
մենայն ժողովուրդն զուարճացեալ հար-
կանէին զիպազան, եւ երգէին նուագա-
բանօքն երգս, եւ օրհնէին զօրհնու-
թիւնսն. եւ պատառեաց Գոթողիա
զզգեստս իւր, [2]դոչեաց եւ ասէ, Դա-
14 ւաճանաւթիամբ իարդախնեցէք։ Եւ կլ
Ոովիդայէ քահանայ, պատուիրեաց Ո-
վիդայէ քահանայ հարիւրապետացն եւ
իչխանաց զօրուն, եւ ասէ ցնոսա, Հա-
նէք զդա արտաքոյ ի տանէդ, եւ ելէք՝
զկնի դորա, մեռցի սրով. վասն զի ա-
սաց քահանայն, Մի մեռցի նա ի տանն
15 Տեառն. եւ [3]ի՛նոյն եառան նմա", եւ անց
ընդ դուռն հնձելոց տան արքային, եւ
սպանին զնա անդ։
16 Եւ ոչխաւաց Ոովիդայէ ուխտ ի մէջ
իւր եւ ժողովրդեանն եւ արքային, լի-
17 նել ժողովուրդ Տեառն։ Եւ եմուտ ա-
մենայն ժողովուրդ երկրին ի տունն Բա-
հաղու, եւ կործանեցին զնա եւ զսե-
զանս նորա, եւ զկուռսն նորա մանր
եցին, եւ զՄաթան քուրմն Բահաղու
18 սպանին առաջի սեղանոյ նորին։ Եւ [4]սա
Ոովիդայէ քահանայ զգործ տանն ի ձեռն
քահանայից Ղեւտացւոց. եւ կանգնեաց
զհանապազորդեան պաշտօնեայս՝ զբա-
հանայս եւ զՂեւտացիս զորս զաւուցն
Դաւիթ՝ ի տունն Տեառն, եւ մատոյց
ողջակէզս Տեառն, որպէս եւ գրեալ է
յօրէնսն Մովսիսի, ուրախութեամբ եւ
19 երգովք ի ձեռն Դաւիթի։ Եւ [5]կացին
դռնապանքն՝ ի դրունս տանն Տեառն, եւ
ոչ մտանէր անմաքուր ոք անպր յամե-
20 նայն իրս։ Եւ առ զգեստս առնիցին եւ
զզօրաւորսն եւ զիչխանս ժողովրդեանն,
եւ զամենայն ժողովուրդ երկրին, եւ
[6]հանին զարքայ ի տանէ Տեառն, եւ
մտին ընդ դուռն [7]ներքին ի տունն Թա-
գաւորին, եւ նստուցին զարքայ յաթո-
21 ռն թագաւորութեանն. Եւ ուրախ եղեւ ա-
մենայն ժողովուրդ երկրին, եւ քաղաքն
լռեաց. եւ զԳոթողիա սպանին սրով։

ԳԼ. ԻԴ

1 Էր եւթն ամաց Յովաս ի թագաւորելն
իւրում, եւ յառաջնումն ամ թագաւո-
րեալ յերուսաղէմ. եւ անուն մօր նո-
2 րա Սարիա ի Բերսաբէէ։ Եւ արար Յո-
վաս ուղղութիւն առաջի Տեառն զամե-
նայն աւուրս Յովիդայեայ քահանայի։
3 Եւ առ իւր Յովաս երկուս կանայս, եւ
ծնաւ սոսերս եւ դստերս։
4 Եւ յետ այսորիկ եղեւ ի սրտին Յո-
5 վասու կամիլ զտունն Տեառն։ Եւ ժո-
ղովեաց զքահանայսն եւ զՂեւտացիսն,
եւ ասէ ցնոսա, Ելէք ի քաղաքս Յու-
դայ, եւ ժողովեցէք յամենայն Իսրա-
յէլէ արծաթ, զօրացուցանել զտունն
Տեառն ամի ամէ. եւ փութացարուք
[8]խօսել. եւ ոչ հաւատացին՝ Ղեւտա-
6 ցիքն։ Եւ կոչեաց Յովաս արքայ զՅո-
վիդայէ զիչխան, եւ ասէ ցնա, Ընդէր
ոչ արարեր այդ Ղեւտացւոցն, բերել ի
ներքս ի Յուդայ եւ յերուսաղէմ որ ինչ
սահմանեալ էր ի Մովսիսէ [9]յանէն Ա-
ստուծոյ. վասն զի եկեղեցացոյց զԻս-
7 րայէլ ի խորանն՝ վկայութեան։ Զի Գո-
թողիա էր անօրէն, եւ որդիք նորա
կործանեցին զտունն Աստուծոյ. [10]քան-
զի եւ՝ զսրբութիւնսն տանն Աստուծոյ
8 արարին Բահաղիմացւն։ Եւ ասէ արքայ,
Լիցի արկղ, եւ դիցի ի դրան տանն Տեառն
9 արտաքոյ. Եւ քարոզեցին ի Յուդա եւ
յերուսաղէմ, բերել Տեառն, որպէս ա-
սացն Մովսէս ծառայն Աստուծոյ Իսրա-
10 յելի յանապատին։ Եւ [11]եառն ամենեւ-
քեան՝ իչխանքն եւ ամենայն ժողո-
վուրդն, եւ բերէին ի ներքս եւ արկա-
11 նէին յարկղն մինչեւ լցաւ։ Եւ լինէր
իրրեւ բերէին զարկղն առ վերակացուս
արքային ի ձեռն Ղեւտացւոցն, իրրեւ
տեսանէին թէ առաւելոյր արծաթն,
գայր դպրապետն արքայի եւ վերակա-
ցու մնծի քահանային, եւ թափէին
զարկղն, եւ կացուցանէին անդրէն ի
տեղւոյն իւրում. այնպէս առնէին օր
ըստ օրէ, եւ ժողովէին արծաթ բա-
12 զում։ Եւ եառ զայն արքայ եւ Յովիդայէ
քահանայ յայնսպիսի որք առնէին զգործն
ի պատրաստութիւնն տանն Տեառն. եւ

[1] ՑԱբր. գ-ի-ե [2]Աբր. եւ ասէ, Դաւաճանու-
թի՛ւն, դաւաճանութի՛ւն։ (14) Եւ ելան
Յովիդայէ քահանայ զհարիւրապետս, զիչխանս
զօրուն, եւ ասէ ցնոսա, Հանէք զդա ի միջոյ
կարգացէք եւ որ ելանէ [3]Աբր. արկին ի նա
ձեռս [4]Աբր. կացոյց Յովիդայէ պաշտօնեայս ի
տան Տեառն ի ձեռն քահանայից Ղեւտացւոց
զորս գաւուցն Դաւիթ ի տանն Տեառն մատու-
ցանել [5]Աբր. կացոյց դռնապանս [6]Աբր. ի ջոյց
[7]Աբր. բարձր

[8] Աբր. ի գործն. եւ ոչ փութացան [9]Աբր. Ծա-
ռայէ Տեառն եւ ի ժողովրդենէն Իսրայէլի վասն
խորանին [10]Աբր. Նա եւ [11]Աբր. ուրախ եղեն
ամենայն

կացուցին ի վարձու քարահատս եւ հիւ-
13 սունս կապիլ զտունն [1]Տեառն։ Եւ առ-
նէին զգործն, եւ ելանէր յօդոտիթիւն
գործոյն ի ձեռս նոցա. եւ կանգնեցին
զտունն [2]Տեառն ի կայանին իւրում, եւ
14 զօրացուցին զնա։ Եւ իբրեւ կատարե-
ցին, բերին առ արքայ եւ առ Ցովի-
դայէ զմնացեալ արծաթին. եւ արարին
սպաս ի տանն Տեառն, կահ պաշտաման
ողջակիզացն, եւ խնկարանս ոսկեզէնս եւ
արծաթեղէնս. եւ մատուցանէին ողջա-
կէզս ի տան Տեառն հանապազ զամե-
նայն աւուրս Ցովիդայեայ։
15 Եւ ծերացաւ Ցովիդայէ լի աւուրբք,
եւ վախճանեցաւ ամաց հարեւր եւ ե-
16 րեսնից։ Եւ ի վախճանին նորա թագա-
ցին զնա ի քաղաքի Դաւթի ընդ թա-
գաւորս. վասն զի արար բարութիւնս
ընդ Իսրայէլ, եւ ընդ Աստուծոյ եւ
ընդ տան նորա։
17 Եւ եղեւ յետ վախճանելոյն Ցովիդա-
եայ՝ մտին իշխանքն Ցուդայ եւ երկիր
պաշին արքայի, [3]եւ չընկալին զմիտան
Ցովաստու". յայնժամ լուաւ նոցա ար-
18 քայ։ Թողին [4]զՏէր Աստուած" հարցն
իւրեանց, եւ ծառայեցին կռոց եւ Աս-
տարտայիցն. եւ եղեւ բարկութիւն Տեառն
ի վերայ Ցուդայ եւ Երուսաղեմի [5]յա-
19 ւուրան յայնոսիկ"։ Եւ առաքեաց առ նո-
սա մարգարէս՝ դարձուցանել առ Տէր,
[3]եւ ոչ լուան". եւ եղ նոցա վկայութիւն,
եւ ոչ անսացին։
20 Եւ Հոգի [6]Տեառն զգեցաւ Ազարիաս
որդի" Ցովիդայեայ քահանայի, կարեաւ
ի մէջ [3]ամենայն ժողովրդեանն եւ ասէ,
Այսպէս ասէ [7]Տէր. Ընդէր խոտորեցայք
ի պատուիրանացն Տեառն, եւ ոչ յա-
ջողեսցի ձեզ. վասն զի թողէք զտէր
21 զՏէր, եւ նա լքոյց զձեզ։ Եւ յարեան ի վե-
րայ նորա եւ քարկոծեցին զնա պատու-
իրանաւ Ցովաստու արքային [8]ի սրահի տանն
22 Տեառն։ Եւ ոչ յիշեաց [9]Ցովաս զգութն զոր
արար ընդ նմա Ցովիդայէ հայրն նորա,
եւ սպան զորդի նորա. եւ եղեւ ի մեռա-
նելն՝ ասաց, Տեսցէ Տէր եւ դատեսցի։
23 Եւ ի կատարել տարւոյն այնորիկ ել ի
վերայ նորա զօրն Ասորեաց, եւ եկն ի
վերայ Ցուդայ եւ Երուսաղեմի, եւ կո-
տորիցին զամենայն իշխանս ժողովր-
դեանն ի զօրուն, եւ զամենայն աւար
նոցա առաքն առնել արքային Դամաս-
24 կոսի. վասն զի սակաւ այսմբք եկն
զօրն Ասորեաց, եւ [10]Աստուած մատնեաց
ի ձեռս նոցա զօր բազում յոյժ, վասն
Թողուն նոցա զՏէր Աստուած հարցն
իւրեանց, եւ ընդ Ցովասայ արար զգա-
25 տաստանն։ Եւ յետ դնալոյն նոցա ի
նմանէ, Թողին զնա ի հիւանդութիւնս
մեծ. եւ յարեան ի վերայ նորա ծա-
ռայքն իւր, վասն արեան [11]որդւոյն Ցո-
վիդայեայ քահանայի, եւ սպանին զնա
ի գահոյն իւրում եւ մեռաւ. եւ թա-
ղեցին զնա ի քաղաքին Դաւթի, եւ ոչ
թաղեցին զնա ի գերեզմանի թագաւո-
26 րացն։ Եւ որք յարեան ի վերայ նորա՝
էին Զաբդիա որդի Սամնիթայ Ամմոնա-
ցի, եւ Ցովսաբեթ որդի Սամարիթայ
27 Մոաբացի։ [12]Եւ որդիք նորա ամենե-
քեան. եւ եկին առ նա հնգեքեան, եւ
բազում մխիթար ի վերայ դնէին։ Եւ մին-
չեւ բանքն Ցովասու՝ ահա գրեալ են ի
գիրս թագաւորացն։ Եւ թագաւորեաց
Ամասիա որդի նորա փոխանակ նորա։

ԳԼ. ԻԹ

1 Էր ամաց քսան եւ հնգից ի թագաւո-
րելն Ամասիա, եւ քսան եւ ինն ամ
թագաւորեաց յԵրուսաղէմ. եւ անուն
2 մօր նորա Ցովադին յԵրուսաղեմէ։ Եւ
արար ուղղութիւն առաջի Տեառն, բայց
ոչ լի սրտիւ։
3 Եւ եղեւ իբրեւ հաստատեցաւ թա-
գաւորութիւնն ի ձեռին նորա, սպան
զծառայսն իւր որք սպանին զարքայ
4 զհայրն նորա. եւ զորդիսն նոցա ոչ սպան՝
ըստ ուխտի օրինացն Տեառն, որպէս եւ
պրիալ է եւ զօր օրինակ պատուիրեաց
Տէր եւ ասաց, Ոչ մեռցին հարք փո-
խանակ որդւոց, եւ որդիք ոչ մեռցին
փոխանակ հարց իւրեանց, այլ իւրա-
քանչիւր ոք ի մեղս իւրում մեռցի։
5 Եւ ժողովեաց Ամասիա [13]զտունն Ցու-
դայ", եւ կացոյց նոցա ըստ տանց տա-
վիցն իւրեանց հազարապետս եւ հարիւ-

[1] 1Եդր. Տեառն, եւ դարբինս երկաթոյ եւ պղնձոյ ի գործացուցանել զտունն Տեառն [2] 2Եդր. Աս-
տուծոյ [3] 3Եդր. գ-ի-ս-ե [4] 4Եդր. զտուն Տեառն Աստուծոյ [5] 5Եդր. վասն այսր յանցուածոյ
նոցա [6] 6Եդր. Աստուծոյ ելից զՁաքարիա զորդի [7] 7Եդր. Աստուած [8] 8Եդր. ի գաւթի [9] 9Եդր. Յո-
վաս արքայ

[10] 10Եդր. Տէր [11] 11Եդր. որդւոյն [12] 12Եդր. Իսկ որդիք նորա, և յաճախութիւն հարկայն որ առնուաւ
եւ նորոգութիւնն տանն Աստուծոյ, ահա գրե-
եալ են ի յիշատակարանս գրոց թագաւորաց
[13] 13Եդր. զՑուդա

բապետս յամենայն Յուդա եւ [1]յԵրուսաղէմ. եւ Թուեաց զնոսա ի քառասնիցն եւ ի վեր, եւ եղեալ զնոսա երեքհարիւր հազար զօրաւորս, որք ելանէին ի պատերազմ ունելով նիզակ եւ ասպար։ 6 Եւ ի վարձու կալաւ յԻսրայէլէ հարիւր հազար զօրաւորս ուժով։ 7 Հրեաւ տաղանդով արծաթոյ։ Եւ այր ումն Աստուծոյ եկն առ նա եւ ասէ, Արքայ, մի երթիցէ ընդ քեզ զօրդ Իսրայելի, վասն զի ոչ է Տէր ընդ Իսրայելի, եւ ոչ ընդ 8 ամենայն որդիս Եփրեմի. [2]Եթէ կարծեացես զօրանալ դոքօք," ի պարտուիլն մանեսցէ զքեզ [3]Տէր առաջի թշնամեաց քոց. քանզի [4]ի Տեառնէ լինի զօրանալ եւ ի պարտուիլն մատնել։ 9 Եւ ասէ Ամասիա ցայրն Աստուծոյ, Եւ զինչ արարից զհարիւր տասնգան զոր ետու զօրուդ Իսրայելի. եւ ասէ ցնա այրն Աստուծոյ, Դոյ Տեառն 10 տալ քեզ առաւելագոյն քան զայն։ Եւ որոշեաց Ամասիա զգունդն որ եկեալ էր առ նա յեփրեմայ՝ երթալ ի տեղի իւրեանց. եւ բարկացան յոյժ ի վերայ Յուդայ, եւ դարձան ի տեղիս իւրեանց բարկութեամբ եւ ցասմամբ։

11 Եւ Ամասիա զօրացաւ, առ զզօրն իւր եւ գնաց ի Հովիաս ալտիցն. եւ եհար զորդիսն Սէիրայ տասն հազար. 12 եւ այլ եւս տասն հազար կենդանի որդիքն Յուդայ, եւ ածին զնոսա ի գլուխ քառանձաւին եւ գահավէժ առնէին զնոսա ի ծայրից բարձրաւանդակին, եւ ամենեքեան սատակէին։

13 Եւ որդիք զօրութեանցն զորս դարձոյց Ամասիա ոչ երթալ ընդ իւր ի պատերազմ՝ յարձակեցան ի քաղաքսն Յուդայ, ի Սամարիայ մինչեւ ի Բեթորոն, եւ հարին ի նոցանէ երիս հազարս, եւ առին աւար բազում։

14 Եւ եղեւ յետ գալոյն Ամասիայ ի հարկանելոյն զԵդովմ, երեր [5]առ նոսա" զաստուածս որդւոցն Սէիրայ, եւ կացոյց զնոսա իւր յաստուածս, եւ երկիր պագանէր առաջի նոցա, եւ [6]զոհէր ինքն" 15 նոցա։ Եւ եղեւ բարկութիւն Տեառն ի վերայ Ամասիայ. առաքեաց առ նա մարգարէ եւ ասէ ցնա, Ընդէր խնդրեցեր զաստուածս ժողովրդեանն այնոր-

[1] ԵԲԲ. ի Բենիամին [2] ԵԲԲ. Չի եթէ երթայցես, արա. զօրացիր ի պատերազմ։ [3] ԵԲԲ. Աստուած [4] ԵԲԲ. յԱստուծոյ [5] ՅՇԲԲ. գոլոսե [6] ԵԲԲ. ծխեր խունկս

րիկ, որք ոչ փրկեցին զժողովուրդն իւրեանց ի ձեռաց քոց։ 16 Եւ եղեւ ի խօսելն նմա զայն, Միթէ խորհրդակից թագաւորի եսաւ զքեզ. զդադար լեր՝ զուցէ տանջեսցիս. եւ լռեաց մարգարէն, եւ ասէ, Գիտեմ զի խորհի Տէր ի վերայ քո կործանել զքեզ. վասն զի արարեր զայդ, եւ ոչ անսացեր խրատուս իմոյ։

17 Եւ խորհեցաւ Ամասիա, առաքեաց առ Յովաս որդի Յովաքազայ որդւոյ Ջէուայ՝ առ արքայն Իսրայելի, եւ ասէ, եկ եւ երեսացուք երեսաց։ 18 Եւ առաքեաց Յովաս արքայ Իսրայելի առ Ամասիա արքայ Յուդայ եւ ասէ, Ոքոյն որ ի Լիբանան է՝ յղեաց առ մայրն Լիբանանու եւ ասէ, Տուր զդուստր քո ուսանիր իմոյ կնութեան. եւ անց անցին գազանք անապատին Լիբանանու, եւ եկեալ կոխեցին զամենայն զեկքան։ 19 [7]Ահա հարեր զԵդովմէացս", եւ հպարտացեալ ես եւ սիրտ քո [8]ծանրութեամբ. նիստ այսուհետեւ ի տան քումմէ, եւ ընդէր անկանիս դու ի չարութիւն, եւ սաստկիցիս դու եւ Յուդաս ընդ քեզ։ Եւ ոչ լուաւ Ամասիա. վասն զի [9]ի Տեառնէ եղեւ մատնել զնա ի ձեռս Յովասու՝ յաղագս խնդրելոյն նորա զաստուածսն 21 Եդովմայեցւոց։ Եւ ել Յովաս արքայ Իսրայելի եւ երեսացան միմեանց նա եւ Ամասիա արքայ Յուդայ, ի Բեթսամիս որ է Յուդայ։ 22 Եւ պարտեցաւ Յուդա առաջի Իսրայելի, եւ փախեաւ իւրաքանչիւր որ ի բնակութիւն իւր։ 23 Զամասիա արքայ Յուդայ որդի Յովասու[9] կալաւ Յովաս արքայ Իսրայելի ի Բեթսամիս, եւ տարաւ զնա յԵրուսաղէմ. եւ քակեաց ի պարսպէն Երուսաղէմի, ի դրանէն Եփրեմի մինչեւ ի դուռն 24 Անկեանն, [10]երեսուն հարիւր կանդուն։ Եւ զամենայն ոսկի եւ արծաթ, եւ զամենայն սպաս՝ որ գտաւ ի տանն [11]Տեառն առ Աբդեդոմայ, եւ զգանձս տանն թագաւորին եւ [12]զորդիս խառնակութեանցն՝ առ եւ դարձաւ ի Սամարիա։

25 Եւ եկեաց Ամասիա որդի Յովասու արքայ Յուդայ՝ յետ մեռանելոյն Յովասու որդւոյ Յովաքազու արքայի Իսրա-
26 յելի, ամս հնգետասան։ Եւ մնացեալ

[7] ԵԲԲ. Ասացեր. Ահա հարի զԵդովմ [8] ԵԲԲ. ի փառասիրել [9] ԵԲԲ-ԼԵԷ-. որդւոյ Յովաքազու [10] ԵԲԲ. չորեք [11] ԵԲԲ. Աստուծոյ [12] ԵԲԲ. զպատանդս

բանքն Ամասեայ առաջինք եւ վերջինք՝ ոչ անա գրեալ են ի գիրս թագաւորացն
27 *Իսրայելի եւ Յուդայ։ Եւ ի ժամանակին յորում ի բաց եկաց Ամասիա ի Տեառնէ՝ յարեան ի վերայ նորա զօրքն Երուսաղէմ, եւ փախեաւ ի Լաքիս. եւ առաքեցին զկնի նորա ի Լաքիս, եւ*
28 *սպանին զնա անդ։ Եւ բարձին զնա ի վերայ ձիոց, եւ թաղեցին զնա ընդ հարս իւր ի քաղաքի Դաւթի։*

ԳԼ. ԻԶ

1 Եւ առ ամենայն ժողովուրդ [2]երկրին զՈզիաս, եւ էր նա ամաց վեցտասանից, եւ թագաւորեցուցին զնա փոխա-
2 նակ հօրն իւրոյ Ամասեայ։ Նա չինեաց զԵլաթ, եւ նա դարձոյց զնա անդրէն ի Յուդա՝ յետ [3]մեռանելոյն արքային ընդ
3 հարս իւր։ Որդի վեցտասան ամաց թագաւորեաց Ողիաս, եւ յիսուն եւ երկուս ամս թագաւորեաց յԵրուսաղէմ. եւ անուն մօր նորա Բեքելիա յԵրուսաղեմէ։
4 Եւ արար ուղղութիւն առաջի Տեառն, ըստ ամենայնի զոր արար Ամասիա հայր
5 նորա։ Եւ խնդրեաց զՏէր յաւուրս Զաքարիայ իմաստնոյ [4]երկիւղիւ Տեառն. յաւուրս նորա՝ խնդրեաց նա զՏէր, յա-
6 ջողեաց նմա Տէր։ Եւ ել եւ պատերազմեցաւ ընդ այլազգիս, եւ քակեաց զպարիսպն Գեթայ եւ զպարիսպն Յաբնեայ եւ զպարիսպն Ազովտայ, եւ չինեաց [5]զքա-
7 ղաքն Ազովտայ՝ ի մէջ այլազգեացն։ Եւ զօրացոյց զնա [6]Տէր ի վերայ այլազգեացն եւ ի վերայ Արաբացւոցն որք բնակէին [7]ի վիմին եւ ի վերայ Մինեց-
8 ւոցն։ Եւ տային [8]Մինեցիքն ընծայս Ողիայ, եւ էր անուն նորա մինչեւ ի մուտսն Եգիպտոսի, վասն զի զօրացաւ ի վեր։
9 Եւ չինեաց Ողիաս [9]զաշտարակսն Երուսաղէմի առ դրան Զորոյն եւ առ անկ-
10 եանն, եւ զօրացոյց։ Եւ չինեաց աշտարակս յանապատին, եւ փորեաց ջրհորս բազումս, վասն զի անասունս բազում էր նորա [10]ի Սեփելա եւ ի դաշտին, [11]եւ այգեգործս ի լերինն եւ ի Կարմեղոս. քանզի սիրէր զերկրագործութիւնն։ Եւ
11 *եղեն Ողիայ զօրք որք առնէին պատերազմ, եւ կազմէին ի մարտ գունդք. եւ թիւն նոցա ի ձեռն Յեհիէլի պարապետի եւ Մաասեայ պատուարի, ի ձեռն Անա-*
12 *նիայի [12]փոխանակի արքային։ Ամենայն գունդք զեղապետին զօրաւորաց ի պատերազմին երիս հազար եւ վեց հա-*
13 *րիւր։ Եւ ընդ նոսա զօր պատերազմօղ՝ երեք հարիւր հազար եւ եւթն հազար եւ հինգ հարիւր. նոքա էին որք առնէին պատերազմ զօրութեամբ մեծաւ, [13]օգ-*
14 *նական լինելով արքային ի հակառակորդսն։* Եւ պատրաստեաց նոցա Ողիաս ամենայն զօրուն՝ վահանս եւ նիզակս եւ սաղաւարտս եւ զրահս եւ աղեղունս եւ
15 *պարսս ի քարինս։* Եւ արար յերուսաղէմ մեքենայս արուեստից ճարտարութեան՝ լինել ի վերայ պարսպաց եւ ի վերայ անկեանց, ձգել նետս եւ քարինս մեծամեծս։ Եւ լսելի եղեւ [14]պատրաստու-
16 թիւն նորա մինչեւ ի հեռաստան. վասն զի սքանչելի էր նա յօգնել մինչեւ զո-
16 *բացաւ։* Եւ իբրեւ զօրացաւ, բարձրացաւ սիրտ նորա առ յապականել, եւ անիրաւեցաւ ի Տէր Աստուած իւր. եւ եմուտ ի տաճարն Տեառն ծխել խունկս
17 *ի վերայ սեղանոյ խնկոցին։* Եւ եմուտ զկնի նորա Ազարիաս քահանայ, եւ ընդ նմա քահանայքն Տեառն ութսուն՝ որ-
18 *դիք զօրաւորք.* Կացին ի վերայ Ողիայ արքայի եւ ասեն ցնա, Ոչ է քո, Ողիաս, ծխել խունկս Տեառն, այլ քահանայից որդւոց Ահարոնի սրբեցելոցդ է ծխել զայդ. ել արտաքս ի սրբութենից, վասն զի ապստամբեցեր գու
19 *[1]ի Տեառնէ, եւ ոչ եւս լիցի քեզ այդ ի փառս ի Տեառնէ Աստուծոյ։* Եւ սրտմտեաւ Ողիաս, եւ ի ձեռին իւրում բռնութեամբ ծխել զխունկս [1]ի տաճարին. եւ ի բարկանալն նորա քահանայիցն՝ երեւեցաւ բորոտութիւն ի ճակատն նորա յանդիման քահանայիցն ի տանն Տեառն
20 *[15]ի վերայ սեղանոյ խնկոցին։* Եւ դարձաւ առ [16]նա քահանայն առաջին եւ այլ քահանայքն, եւ անա բորոտեալ էր ճակատն նորա, եւ [17]պատարեցուցին զնա անտի. քանզի եւ ինքն իսկ վճռեցաւ եւս անել, զի [18]յանդիմանեաց զնա Տէր։

[1] ՃԽԲ. գ-ի-ե [2] ԵԲԲ. Յուդայ [3] ԵԲԲ. ննջելոյն
[4] ԵԲԲ. ի տեսիլս Աստուծոյ. եւ յաւուրսն յորս
[5] ՆԲԲ. քաղաքս յԱզովտ [6] ԵԲԲ. Աստուած [7] ԵԲԲ. ի Գուրբաղեայ [8] ՆԲԲ. Ամնացիքն [9] ԵԲԲ. աշտարակս յԵրուսաղէմ առ դրան Անկեանն եւ առ դրան Զորոյն, եւ առ դրան Անկեանն եւ զօրացոյց զնոսա
[10] ՆԲԲ. ի Հովտին [11] ՆԲԲ. և երկրագործս և
[12] ՆԲԲ. յիշխանաց [13] ԵԲԲ. յօգնականէն արքային ընդդէմ թշնամեաց [14] ՆԲԲ. համբաւ [15] ՆԲԲ. առընթեր [16] ԵԲԲ. Նա Ազարիա [17] ՆԲԲ. փոթացուցին [18] ՆԲԲ. եհար

21 Եւ էր Ոպիա արքայ բորտեալ մինչեւ
ցօր վախճանի իւրոյ, եւ ի տանն [1]տա-
փատոմի նստէր բորտեալ. վասն որ ո-
րոշեցաւ ի տանէն Տեառն. եւ Յովաթամ
որդի նորա էր ի վերայ [2]թագաւորութեան
նորա", դատել զժողովուրդ երկրին։
22 Եւ մնացեալ բանքն Ոպիայ առաջինք
եւ վերջինք՝ գրեալք են յնոսցանց որդ-
23 ւոյ Ամովսայ մարգարէիւ։ Եւ ննջեաց
Ոպիա ընդ հարս իւր, եւ թաղեցին զնա
ընդ հարս նորա ի դաշտի գերեզմանի
թագաւորացն. վասն որ ասացին թէ
Բորոտ է. եւ թագաւորեաց Յովաթամ
որդի նորա փոխանակ նորա։

Գլ. Իէ

1 Որդի քսան եւ հինգ ամաց էր Յովա-
թամ ի թագաւորելն իւրում, եւ վեչ-
ոտասան ամ թագաւորեաց յԵրուսաղէմ.
եւ անուն մօր նորա Երուսայ դստեր
2 Սադովկայ։ Եւ արար ուղղութիւն ա-
ռաջի Տեառն ըստ ամենայնի զոր ինչ
արար Ոզիաս հայրն նորա. բայց ոչ ե-
մուտ ի տաճարն Տեառն. եւ ամենայն
3 եւս ժողովուրդն ապականեալ էր։ Նա
չինեաց զդուռն տանն Տեառն վերադր,
եւ ի պարսպին Ոփլայ չինեաց բա-
4 զումս։ Եւ քաղաքս չինեալ ի լերինն
Յուդայ, եւ յանտառս [3]ընակութիւնս
5 եւ աչտարակս։ Նա կռուեցաւ ընդ ար-
քայի որդւոց Ամմոնայ, եւ զօրացաւ ի
վերայ նոցա. եւ տային նմա որպէս
Ամմոնայ ի միում ամում հարիւր տա-
ղանդ արծաթոյ, եւ տասն հազար քոռ
ցորենոյ, եւ գարի՝ տասն հազար քոռ.
[4]բերէր զայն նմա արքայն Ամմոնայ ամ
ամի. եւ յառաջնում ամին եւ յերկրոր-
6 դին եւ յերրորդին[5]։ Եւ զօրացաւ Յո-
վաթամ, վասն որ պատրաստեալ զճա-
նապարհն իւր առաջի Տեառն Աստու-
ծոյ իւրոյ։
7 Եւ մնացեալ բանքն Յովաթամայ եւ
[6]պատերազմին նորա եւ մարտք իւր՝ ա-
հա գրեալ են ի գիրս թագաւորացն Յու-
8 դայ եւ Իսրայէլի։ Քսան եւ հինգ ա-
մաց էր յորժամ թագաւորեաց, եւ վեչ-
տասան ամ թագաւորեաց յԵրուսաղէմ։
9 Եւ ննջեաց Յովաթամ ընդ հարս իւր,
եւ թաղեցաւ ի քաղաքին Դաւթի, եւ
թագաւորեաց Աքաղ որդի նորա փոխա-
նակ նորա։

Գլ. Իզ

1 Որդի քսան ամաց էր Աքաղ ի թագա-
ւորելն իւրում, եւ վեչտասան ամ թա-
գաւորեաց յԵրուսաղէմ. եւ ոչ արար
ուղղութիւն առաջի Տեառն իւրոյ զԴա-
2 ւիթ հօր իւրոյ. եւ գնաց ըստ ճանա-
պարհաց թագաւորացն Իսրայէլի. [8]քան-
3 զի արար զբօշնալս. Եւ կռոց նոցա զո-
հէր յերկրին Բնինոմայ", եւ անցուցանէր
զորդիս իւր ընդ հուր, ըստ գարշե-
լեացն ազգացն զորս ատակեաց Տէր յե-
4 րեսաց որդւոցն Իսրայէլի. [7]Եւ ծխէր
խունկս ի վերայ բարձանց եւ ի վերայ
[8]ամենայն եւ ի ներքոյ ամենայն վար-
սաւոր ծառոց։
5 Եւ մատնեաց զնա Տէր Ասուած նո-
րա ի ձեռս արքային Ասորեաց, եւ ե-
հար զնա, եւ գերեաց ի նոցանէ գերու-
թիւն բազում, եւ տարան ի Դամաս-
կոս. եւ ի ձեռս արքային Իսրայէլի մատ-
նեաց զնա, եւ եհար զնա հարուածս մե-
6 ծամեծս։ Եւ կոտորեաց Փակէէ որդի
Ռեմղիայ [9]արքայ Իսրայելի" ի Յուդայ
ի միում աւուր հարիւր եւ քսան հազար
արանց զօրաւորաց զօրութեամբ, ի մո-
ռանալ նոցա զՏէր Աստուած հարցն ի-
7 րեանց։ Եւ սպան Զեքրի զօրաւոր Եփ-
րեմի զԱմասիաս զորդի արքային, եւ
զԱզրիկամ իշխան տան նորա, եւ զԵղ-
8 կանա զփոխանորդ արքային։ Եւ գերե-
ցին որդիքն Իսրայելի յեղբարցն իւրեանց
[10]երկու հարիւր" հազար կանայս, եւ ուս-
տեր եւ դստերս, եւ առին բազում
աւար ի նոցանէ. եւ տարան զաւարն ի
Սամարիա։
9 Եւ էր անդ մարգարէ Տեառն, Ովկէդ
անուն նորա. եւ նա ընդ առաջ զօրուն
եկելոյ ի Սամարիա, եւ ասէ ցնոսա, Ա-
հա բարկութիւն Տեառն Աստուծոյ հարցն
մերոց եղեւ ի վերայ Յուդայ, եւ մատ-
նեաց զնոսա ի ձեռս ձեր, եւ կոտորե-
ցէք զնոսա բարկութեամբ, եւ մինչեւ
10 յերկինս ժամանեաց։ Եւ արդ զորդիսդ
Յուդայ եւ զներուսաղէմի, դուք ասէք

---

[1] Ա.-ԽԴ. զատեցեալ [2] ՆԲԳ. տան թագաւորին
[3] ՆԲԳ. ամրոցս [4] ՆԲԳ. եւ եռասն նմա որպէս Ա-
մմոնայ եւ յերկրորդում ամին, և յերրորդումն
[5] ՆԲԳ. ամենայն պատերազմունք նորա եւ ճա-
նապարհք նորա

[6] ՆԲԳ. և արար դրօշնալս Եհոազիմայ (3) Եւ ծխէր
ի հովիտն որդւոցն Ենովմայ [7] ՆԲԳ. Եւ զսէր և
[8] ՆԲԳ. բլրոց [9] ՁՆԲԳ. դ-ի-ա-ե [10] ՆԲԳ. երկերիւր

առանալ ի ծառայս եւ յազախնայս . ոչ
ապաքէն [1]աւասիկ եմ ընդ ձեզ , վկայ
11 լինել" Տեառն Աստուծոյ ձերոյ : Եւ
արդ լուարուք ինձ , եւ գարձուցէք անդ-
րէն զգերութիւնդ զոր վերկեցէք գուք
յեղբարց ձերոց . վասն զի բարկութիւն
սրամտութեան Տեառն լինի ի վերայ ձեր :
12 Եւ յարեան իշխանք որդւոցն Եփրեմի ,
Ազարիաս որդի Յովհանայ , եւ Բարա-
քիաս որդի Մոսոքղոմովթայ , եւ Եզե-
կիաս որդի Սելումայ , եւ Ամեսայի որդի
Ագդիայ ի վերայ եկելոցն ի պատերազմէն ,
13 Եւ ասեն ցնոսա , Մի ածէք զգերու-
թիւնդ զայդ այսր առ մեզ . վասն զի
մեղանչել մեզ առ Տէր գուք ասէք , եւ
յաւելուլ ի մեզն մեր եւ ի պիտոու-
թիւնս . քանզի բազում են մեղք մեր
այդպիսի , եւ բարկութիւն սրամտու-
թեան Տեառն լինի ի վերայ Իսրայէլի :
14 Եւ [2]մոգին պատերազմողքն զգերութիւնն
եւ զաւարն առաջի իշխանացն եւ ամե-
15 նայն եկեղեցւոյն : Եւ յարեան ամենայն
արք որ կոչեցան յանուանէ , եւ բռնա-
մակալս կացին վասն գերեացն . զամենեսեան զմերկան զգեցուցին յա-
ւարէն , եւ ագուցին նոցա [3]կօշիկս , եւ
եռուն ուտել" , եւ օծին իւղով . եւ ա-
նօին պրաստուք զամենայն ախտս , եւ
տարան զնոսա ցերիքով քաղաք Արմա-
ւենայց առ եղբարսն իւրեանց , եւ ին-
քեանք դարձան ի Սամարիա :
16 Ի ժամանակին յայնմիկ առաքեալ Ա-
քազ [4]առ արքայն Ասորեաց" օգնել նմա .
17 Վասն զի Եդովմայեցիքն [5]յարձակեցան ի
վերայ , եւ հարին զՅուդա եւ գերեցին
18 գերութիւն : Եւ այլազգիքն գիմեցին ի
քաղաքս գաչաին , [6]եւ Լիբէացիքն եկին ի
Յուդա" եւ ասին զԵհեմասիա եւ զԱգ-
գեն եւ զԳապերովի եւ զՄոկքովեւ զգեղս
նորա , եւ զԹամնա եւ զգեղս նորա , եւ
զԳամզոկ եւ զգեղս նորա , եւ բնակե-
19 ցին անդ : Վասն զի նկուն արար Տէր
զՅուդա յաղագս Աքազու արքայի [6]Յու-
դայ , զի" ի բաց եկաց ապստամբութեամբ
20 ի Տեառնէ : Եւ եկն ի վերայ նորա Թագ-
զաթփազասար արքայ Ասորեստանեայց ,
21 եւ [7]նեղար զնա , եւ" ոչ Աքազ զոր ինչ
էր ի տանն Տեառն եւ ի տան թագաւո-
րին եւ իշխանացն , եւ եա արքային Ա-
սորեստանեայց , եւ ոչ էր օգնականու-
22 թիւն ինչ [8]նոցա , Այլ նեղել զնոսա . եւ"
23 յաւել եւս ի բաց կալ [9]ի Տեառնէ , Եւ ա-
սաց արքայն , Մեղրեցից զաստուածս
Դամասկոսի որք հարին զիս . եւ ասէ ,
Եթէ աստուածք թագաւորին Ասորես-
տանեայց նոքա են զօրաւորք" , նոցա
այսուհետեւ զոհեցից եւ օգնեսցին ինձ .
եւ նոքա եղեն նմա [10]խոչ եւ ամենայն
24 Իսրայէլի : Եւ ի բաց արար" Աքազ զսպաս
տանն [11]Տեառն , կոտորեաց զայն" եւ փա-
կեաց զդրունս տանն Տեառն . եւ արար
իւր սեղան յամենայն անկիւնան Երու-
25 սաղեմի : Եւ յամենայն քաղաքան Յու-
դայ [12]արարին բարձունս , ծխել խունկս
աստուածոց օտարաց , եւ [13]բարկացու-
ցին զՏէր Աստուած հարցն [14]իւրեանց :
26 Եւ մնացեալ բանքն նորա [15]առաջինք
եւ վերջինք՝ ահա գրեալ են ի գիրս բա-
նից թագաւորացն Յուդայ եւ Իսրայէ-
27 լի : Եւ հանգեաց Աքազ ընդ հարս իւր ,
եւ թաղեցաւ ի քաղաքին [16]Դաւթի . վասն
զի ոչ մուծին զնա ի գերեզմանս [17]թա-
գաւորացն . եւ թագաւորեաց [18]Եզեկիաս
փոխանակ նորա :

Գլ. ԻԹ

1 Եւ էր Եզեկիաս ի թագաւորելն իւրում
քսան եւ հինգ ամաց , եւ ամս քսան եւ
ինն թագաւորեաց Երուսաղէմ . եւ ա-
նուն մոր նորա Աբիա դուստր Զաքա-
2 րեայ : Եւ արար ուղղութիւն առաջի
Տեառն՝ ըստ ամենայնի զոր ինչ արար
Դաւիթ հայրն նորա :
3 [19]Եւ եղեւ իբրեւ եկաց ի թագաւորու-
թիւնն իւրում" , յառաջնում ամենայն
նոցա զդրունս տանն Տեառն , եւ կազ-

[1] ՆԲԳ. եւ ընդ ձեզ անօրէնութիւնք են [2] ՆԲԳ. Հանգերձս և կօշիկս և եռուն ուտել և ըմպել [3] ՆԲԳ. առ արքայս Ասորեստանեայց [4] ՆԲԳ. դարձեալ յարձակեցան [5] ՆԲԳ. եւ ի Հարաւոյ Յուդայ [6] ՆԲԳ. Իսրայէլի . զի անօրինեցաւ ի Յուդա եւ

[7] ՆԲԳ. Նեղեաց զնա եւ ոչ օգնեաց նմա ; (21) Զի թէպէտ [8] ՆԲԳ. նմա ; (22) Եւ ի ժամանակի նեղութեան իւրոյ [9] ՆԲԳ. ի Տեառնէ , ինքն արքայ Աքազ . (23) Եւ զոհեաց աստուածոցն Դամասկոսի որ հարին զնա , և ասէ , Որովհետեւ աստուածք թագաւորացն Ասորոց նոքա օգնեցին նոցա [10] ՆԲԳ. կործանումն եւ ամենայն Իսրայէլի ; (24) Եւ ժողովեաց [11] ՆԲԳ. Աստուծոյ եւ կոտորեաց զսպաս տանն Աստուծոյ [12] ՆԲԳ. արար [13] ՆԲԳ. բարկացոյց [14] ՆԲԳ. իւրոց [15] ՆԲԳ. և ամենայն գնացք նորա առաջինք [16] ՆԲԳ. Յերուսաղէմ [17] ՆԲԳ. թագաւորացն Իսրայէլի [18] ՆԲԳ. Եզեկիաս որդի նորա [19] ՆԲԳ. Եւ առաջնում ամի թագաւորութեան իւրոյ

4 մեաց գնոսա ։ Եւ տարաւ ի նեկրս գրաւ-
հանայան եւ զՂեւտացիս , եւ կացոյց
5 գնոսա ի կողմն արեւելից ։ Եւ ասէ գնո-
սա , Լուարուք , Ղեւտացիք . այսուհե-
տեւ սրբեցարուք , եւ սրբեսջէք զտունն
Տեառն Աստուծոյ Հարցն ձերոց , եւ ի
բաց հանէք զպղծութիւնսն ի սրբու-
6 թենէն . Վասն դի ապաստատիցին Հարքն
մեր , եւ արարին չար առաջի [1]Տեառն ,
եւ թողին զնա եւ զադաւսն զերեսս
7 ի խորանէն Տեառն , եւ ընդվզեցան . եւ
փակեցին զդրունս [2]տաճարին , եւ չի-
ջուցին զճրագունսն , եւ խունկս ոչ ծխե-
ցին նմա , եւ ոչ ողջակէզս մատուցին
8 [3]սրբոյն Աստուծոյ Իսրայէլի ։ Եւ բար-
կացաւ սրտմտութիւնմ Տէր ի վերայ
Յուդայ եւ Երուսաղէմի , եւ եհա գնո-
սա ի յիմարութիւն եւ յապականութիւն
եւ ի շրչիւն , որպէս զաչք անասնոյ ա-
9 չօք ձերովք ։ Եւ անա վիրաւորեցան
հարքն մեր սուսերօք , եւ ուստերք [4]ձեր
եւ դստերք [4]ձեր եւ կանայք [4]ձեր են ի գե-
րութիւն [5]յերկրի ոչ իւրեանց , ուր նոքա
10 այժմ"։ Եւ այսուհետեւ [6]լիցի ի սիրտս
մեր" զնել ուխտ Տեառն Աստուծոյ Իս-
րայէլի , եւ զարձուսցէ զբարկութիւնն
11 բարկութեան իւրոյ ի մէնջ ։ Որդիք
ինչ նուաղեք առնել յայսմ հետէ"։ վասն
դի զձեզ ընտրեաց Տէր կալ ի պաշտել
առաջի իւր , եւ լինել նմա սպասաւոր ,
եւ ծխել խունկս ։
12 Եւ յարեան Ղեւտացիքն՝ Մայէթ որ-
դի Ամասեայ եւ Յովէլ որդի Ազարեայ ,
յորդւոցն կահաթացւոց եւ յորդւոցն Մերա-
րեայ , Կիս որդի Աբդիայ եւ Ազարիաս
որդի Յեհելէլ , եւ յորդւոցն Գեդսոնի՝
Յոախ որդի Զեմմաթայ եւ Յովաղան որ-
13 դի Յովաքայ , Եւ յորդւոցն Եղիսափա-
նայ՝ Սամմրի եւ Յեհիէլ , եւ յորդւոցն Ա-
սափայ՝ Զաքարիաս եւ Մատթանիաս ,
14 Եւ յորդւոցն Եմմանայ՝ Յեքիէլ եւ Սեմէի ,
եւ յորդւոցն Իդիթմունայ՝ Սեմէիա եւ
15 Ոզիէլ ։ Եւ ժողովեցին զեղբարսն իւ-
րեանց , եւ [8]սրբեցան ինքեանք՝ ըստ
պատուիրանի թագաւորին Դաւթի որ-
16 Տեառն , սրբել զտունն Տեառն ։ Եւ մտին
քահանայքն ի տունն Տեառն սրբել զնա ,
եւ հանին զաւազա գտեալնոյն ապտե-

[1] ՆԲԳ· Տեառն Աստուծոյ մերոյ [2] ՆԲԳ· սրահին
[3] ՆԲԳ· ի սրբութեան [4] ՆԲԳ· մեր [5] ՆԲԳ· վասն
այսորիկ [6] ՆԲԳ· է ի սրտի իմում [7] ՆԲԳ·
որդեակք, մի լինիք յանհոգս [8] ՆԲԳ· սրբեցան
եւ մտին ինքեանք

զութիւնսն որք գտան [9]ի տանն Տեառն
եւ ի սրահի" տանն Տեառն . եւ առին
Ղեւտացիքն հանել գայն ի հեղեղատն
17 Կիդրոնի արտաքս ։ Եւ սկսան յառաջի
առաջնոյ յամսեանն առաջնոյ տեսանն
որդիք գնա . եւ որ օր ութ էր տեսանն՝
մտին [10]ի տաճարն Տեառն , եւ սրբեցին
զտունն Տեառն յաւուրս ութ , եւ յա-
ւուրն վեցտասաներորդի տեսանն առաջ-
18 նոյ կատարեցին ։ Եւ մտին ի ներքս առ
Եզեկիաս արքայ եւ ասեն , Սրբեցաք
զամենայն որ էին ի տանն Տեառն ,
զսեղան ողջակիզացն եւ զսպասս նորա ,
զսեղանն առաջադրութեան եւ զսպասս
19 իւր , Եւ զամենայն կահն զոր պղծեաց
թագաւորն Աքազ կամաւ թագաւորու-
թեանն եւ յապստամբութեանն իւրում ,
պատրաստեցաք եւ սրբեցաք , եւ անա
է առաջի սեղանոյն Տեառն ։
20 Եւ կանխեաց Եզեկիաս արքայ ժո-
ղովեաց զիշխանս քաղաքին , եւ ել ի
21 տունն Տեառն . Եւ եհան զոտ արարս եւթն
եւ խոյս եւթն եւ որջս եւթն եւ նո-
խատս այծեաց եւթն՝ վասն մեղայ թա-
գաւորութեանն եւ վասն սրբութեանցն
եւ [11]Իսրայէլի . եւ ասէ յորդիսն Ահա-
րոնի կքահանայս , Մատերուք առ սե-
22 զանն Տեառն։ Եւ [12]զնէք զոչուարսկան .
եւ ընկալան քահանայքն զարիւնն , եւ
հեղին գնա առ սեզանովքն . եւ զնոսին
զխոյսն , եւ հեղին զարիւնն առ սեզա-
նովքն . եւ զնոսին զորջսն , եւ հեղին
23 զարիւնն առ սեզանովքն ։ Եւ մատուցին
զնոխազան զվասն մեղացն առաջի ար-
քային եւ ժողովրդեանն , եւ եդին զձեռս
24 իւրեանց ի վերայ նոցա ։ Եւ զնոսին գնո-
սա քահանայքն , եւ քաւեցին զարիւնն
նոցա առ սեզանովքն , եւ արարին քաւու-
թիւնս ամենեցուն Իսրայէլի , զի յայտագս
ամենեցուն Իսրայէլի առաց թագաւորն
ողջակէզսն եւ զվասն մեղացն առնել ։
25 Եւ [13]կացուցին զՂեւտացիսն ի տանն
Տեառն՝ ծնծղայիւք եւ տաւղօք եւ քնա-
րօք , ըստ պատուիրանին Դաւթի եւ
Գադայ տեսանողի թագաւո-
րին եւ Նաթանայ մարգարէի . վասն զի
պատուիրանաւ Տեառն էր ձեռամբն ի
26 ձեռն մարգարէիցն ։ Եւ կացին Ղեւտա-
յիքն նուագարանօքն Դաւթի , եւ քա-

[9] ՆԲԳ· ի տաճարին Տեառն եւ ի գաւթի [10] ՆԲԳ·
ի սրահն [11] ՆԲԳ· վասն Յուդայ [12] ՆԲԳ· զնէին
[13] ՆԲԳ· կացոյց

27 հանապէն փողովքն։ Եւ ասաց Եզեկիա հանել զողջակէզսն ի վերայ սեղանոյն. եւ իբրեւ սկսան հանել զողջակէզսն, սկսան երգել Տեառն փողովքն եւ նուագարանօքն Դաւթայ արքայի Իսրայելի։
28 Եւ ամենայն եկեղեցին երկիր պագանէր, եւ սաղմոսանուագքն երգէին, եւ հարիանէին զփողսն մինչեւ կատարեցան ողջակէզքն։ Եւ իբրեւ կատարեցին մատուցանել, խոնարհեցաւ թագաւորն եւ ամենայն քահանայքն եւ երկիր պագին։
30 Եւ ասաց արքայ Եզեկիաս եւ իշխանքն ցղեւտացիսն օրհնել զՏէր բանիւքն Դաւթի եւ Ասափայ մարգարէի. եւ օրհնէին յուրախութեամբ, եւ անկան ի վերայ երեսաց եւ երկիր պագին։
31 Պատասխանի եւ Եզեկիաս եւ ասէ, Այժմ լցէք զձեռս ձեր Տեառն, մերձեցարուք այսուհետեւ եւ [1]բերէք ի տունն Տեառն։ Եւ երեր [2]եկեղեցին պատարագս օրհնութեան, եւ ամենայն որ ոք յօժարեալ
32 էր սրտիւ՝ ողջակէզս։ Եւ եղեւ թիւ ողջակիզին զոր մատոյց եկեղեցին, զուարակք եւթանասուն, խոյք հարիւր, ուրբք երկերիւր. յողջակէզսն Տեառն ա-
33 մենեքեան այնոքիկ։ Եւ որք նուիրեցան, զուարակք վեց հարիւր, ոչխարք
34 երիք հազար։ Այլ քահանայքն էին սակաւք եւ ոչ կարէին [3]պնտել զողջակէզսն, եւ օգնէին նոցա եղբարքն ի բնակս Ղեւտացիքն՝ մինչեւ կատարեցաւ գործն եւ մինչեւ սրբեցան քահանայքն. վասն զի Ղեւտացիքն յօժարութեամբ
35 սրտից քան զքահանայսն. Եւ ողջակէզքն էին բազումք ի ճարպս [4]կատարմանն եւ ի փրկութիւնսն" եւ ի նուէրս ողջակիզացն. եւ յօրինեցաւ գործն ի
36 սանն Տեառն։ Եւ ուրախ եղեւ Եզեկիաս եւ ամենայն ժողովուրդն վասն [5]պատրաստելոյ զսպասն Աստուծոյ" ժողովրդեանն. քանզի յանկարծակի եղեւ բանն։

Գլ. Լ

1 Եւ առաքեաց Եզեկիա յամենայն Իսրայէլ եւ Յուդա, եւ գրեաց թուղթ յԵփրեմ եւ ի Մանասէ, զալ ի տունն Տեառն յերուսաղէմ, եւ առնել զպա-
2 սեքն Տեառն Աստուծոյ Իսրայելի։ Եւ խորհեցաւ արքայ եւ իշխանքն, եւ ամենայն եկեղեցին որ յերուսաղէմ, առնել
3 զպասեքն յամսեանն երկրորդի. Վասն զի ոչ կարացին առնել զնա ի ժամանակին յայնմիկ, զի քահանայքն ոչ սրբեցան բաւականք, եւ ժողովուրդն ոչ ժողովեցաւ
4 յերուսաղէմ։ Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի արքային եւ առաջի եկեղեցւոյն.
5 Եւ հաստատեցին բան, զի անցցեն քարոզքն ընդ ամենայն Իսրայէլ, ի Բերսաբէէ մինչեւ ի Դան, գալ եւ առնել զպասեքն Տեառն Աստուծոյ Իսրայելի յերուսաղէմ. վասն զի [6]բազմութիւնն ոչ արար" ըստ գրոյն։
6 Եւ գնացին սուրհանդակքն հանդերձ թղթովքն ի թագաւորէն եւ յիշխանացն յամենայն Իսրայէլ եւ Յուդա, ըստ հրամանի թագաւորին. եւ ասէին գորգիան Իսրայելի, Դարձարուք առ Տէր Աստուած Աբրահամու, Իսահակայ եւ [7]Յակոբայ, եւ դարձցի նա առ ապրեալսդ եւ մնացեալսդ ի ձեռաց արքային Ասորեստ
7 ան։ Եւ մի լինիք իբրեւ զհարբարան ձեր եւ զհարան ձեր որք ի բաց կացին ի Տեառնէ Աստուծոյ հարցն իւրեանց, եւ մատնեաց զնոսա ի կործանումն, որպէս
8 դուք տեսանէք։ Եւ արդ մի խստացուցանէք զպարանոցս [8]ձեր. տուք փառս Աստուծոյ", եւ մտէք ի սրբութիւնն որ զոր սրբեաց յաւիտեան, եւ ծառայեցէք Տեառն Աստուծոյ ձերում, եւ դարձուցէ ի ձէնջ զբարկութիւն սրտմտութեան
9 իւրոյ։ Վասն զի ի դառնալն ձերում առ Տէր, եղբարք ձեր եւ որդիք ձեր եղիցին ի գթութիւնս առաջի [9]ամենայն գերչացն իւրեանց, եւ դարձուսցէ զնոսա յերկիրս յայս. քանզի ողորմած եւ գթած է Տէր Աստուած [10]մեր, եւ ոչ դարձուսցէ զերեսս իւր [11]ի մէնջ եթէ դառնայցեմք" առ նա։
10 Եւ սուրհանդակքն երթային քաղաք ի քաղաք, [12]ի լերինս Եփրեմի եւ Մանասէի, մինչեւ ի Զաբուղոն. եւ լինէր իբրեւ ծաղր իմն առնել զնոսա եւ ար-

---

[1] ԵԲԲ. բերէք զոհս եւ պատարագս օրհնութեան
[2] ԵԲԲ. եկեղեցին զոհս եւ [3] ԵԲԲ. մերթ եւ
[4] ԵԲԲ. խաղաղականացն [5] ԵԲԲ. որոյ պատրաստեացն Աստուած
[6] Կամ, ի բազում ժամանակաց հետէ չէր նոցա արարեալ [7] ԵԲԲ. Իսրայէլի [8] ԵԲԲ. ձեր որպէս հարքն ձեր. տուք ձեռն Տեառն [9] ԵԲԲ. գոլոթ [10] ԵԲԲ. ձեր [11] ԵԲԲ. ի ձէնջ եթէ դառնայցէք [12] ԵԲԲ. յերկիրն

14 համարիլ։ Բայց արք յԱսորեայ եւ ի
Մանասէէ եւ ի Զաբուլոնէ պատկառե-
12 ցին եւ եկին յերուսաղէմ։ Եւ ի Յուդա
գաս եւս եղեւ ձեռն [1]Տեառն տալ նոցա
[2]սիրտ՝ ի գոլ եւ՝ առնել ըստ հրամանի
թագաւորին եւ իշխանացն բանիւ Տեառն։
13 Եւ գումարեցաւ յերուսաղէմ ժողո-
վուրդ բազում առնել զաւն բաղարջոյն
յամսեանն երկրորդի, եկեղեցի բազում
14 յոյժ։ Եւ յարեան քակտին զսեղանսն
որ էին յերուսաղէմ, եւ զամենայն սե-
զիսն ուր ծխէին խունկս ստութեանցն՝
կործանեցին եւ ընկեցին ի հեղեղատն
15 Կեդրոնի։ Եւ զնոսին զպասեկն որ օր չո-
րեքտասան էր ամսոյն երկրորդի. եւ
քահանայքն եւ Ղեւտացիկ պատկառե-
ցին եւ սրբեցան, եւ ատրան ի ներքս
16 զոզջակէզսն ի տունն Տեառն։ Եւ կա-
ցին ի կայանին իւրեանց ըստ օրինին
իւրեանց, ըստ պատուիրանին Մովսիսի
աստն Աստուծոյ. եւ քահանայքն [3]ընդ-
դունէին զարիւնն ի ձեռաց Ղեւտացի-
17 ացոցն։ Վասն զի բազումք յեկեղեցւոյն
ոչ սրբեցան. եւ Ղեւտացիքն զնոսին
զպասեկն ամենայնի որ ոչ կարաց սուրբ
18 լինել Տեառն։ Քանզի յամբոխէ ի ժողո-
վրդենէն Եփրեմի եւ Մանասէէ եւ Իս-
սաքարայ եւ Զաբուլոնի ոչ սրբեցան,
այլ կերան զպասեկն ապստաքոյ զրոյն.
եւ յամօթս եկաց Եզեկիաս վասն նոցա եւ
ասէ, Տէր բարերար, քաւիչ լեր ամենայն
19 սրտիւ ուղղոյ, Որք խնդրեն [4]զքեզ Տէր՝
Աստուած հարցն իւրեանց, եւ ոչ են
20 ըստ սրբութեան սրբութեանցն։ Եւ լուաւ
Տէր Եզեկիայ եւ բժշկեաց զժողովուրդն։
21 Եւ արարին որդիքն Իսրայէլի որք
գտան յերուսաղէմ՝ զաւն բաղարջակե-
րացն աւուրս եւթն ուրախութեամբ մե-
ծաւ, [5]յայտնելով Տեառն՝ օր ըստ օրէ
եւ քահանայքն եւ Ղեւտացիքն նուա-
22 գարանօքն Տեառն։ Եւ խօսեցաւ Եզե-
կիաս ի սիրտ ամենայն [6]Ղեւտացւոցն
եւ յայլոց իմաստնոցն՝ որք իմանային
զնախճար բարի Տեառն, եւ կատարեցին
զաւն բաղարջոյն աւուրս եւթն, զե-
նուլ զզոհս [7]փրկութեանն եւ խոստովան
լինել Տեառն Աստուծոյ հարցն իւրեանց։
23 Եւ խորհեցաւ եկեղեցին միաբանական
առնել այլ եւս աւուրս եւթն, եւ ա-
րարին զուրախութիւնն զեւթն եւս օր։
24 Վասն զի [8]Եզեկիաս սկսաւ տալ ի Յու-
դայ եկեղեցւոյն՝ զուարակս հազար եւ
ոչխարս եւթն հազար. եւ իշխանքն
[9]սկսան տալ՝ ժողովրդեանն զուարակս
հազար եւ ոչխարս տասն հազար. եւ
սրբեցան ի քահանայիցն բազումք յոյժ։
25 Եւ ուրախ եղեւ ամենայն [10]եկեղեցին,
քահանայքն եւ Ղեւտացիքն եւ ամենայն
ժողովուրդն [11]Յուդայ, եւ արք զաւն
անդ՝ լիսրայելէ, եւ եկեղ արք եկեալ
էին յերկրէն Իսրայելի, եւ բնակիչքն Յու-
26 դայ։ Եւ եղեւ ուրախութիւն մեծ յե-
րուսաղէմ. յաւուրսն Սողոմոնի որդւոյ
Դաւթի արքայի Իսրայելի ոչ եղեւ այն-
պէս ասն յերուսաղէմ։
27 Եւ յարեան քահանայքն Ղեւտացիք
օրհնեցին զժողովուրդն, եւ լսելի եղեւ
ձայն նոցա, եւ եկեալ աղօթք նոցա ի
բնակութիւն [12]սուրբ Տեառն՝ յերկինս։

ԳԼ. ԼԱ

1 Եւ իբրեւ կատարեցաւ այն ամենայն,
ել ամենայն Իսրայէլ գտնալքն՝ ի քա-
ղաքսն Յուդայ, եւ փչրեցին զարձանսն
եւ կտրտեցին զտնտառսն եւ կործա-
նեցին զբարձրաւանդակսն եւ զբագինսն
յամենայն Հրէաստանի եւ Բենիամինի
եւ յԵփրեմի եւ ի Մանասէէ մինչեւ ի
սպառ. եւ դարձաւ ամենայն Իսրայէլ
իւրաքանչիւր ոք ի ժառանգութիւնն իւր,
եւ ի քաղաքսն իւրեանց։
2 Եւ կարգեաց Եզեկիաս հանապազոր-
դեանն պաշտօնեայս քահանայից եւ Ղե-
ւտացւոց, դհանապազորդեայս իւրաքան-
չիւր ուրոք ըստ պաշտաման իւրում,
քահանայից եւ Ղեւտացւոց, յողջակէզն
եւ ի զոհսն [13]փրկութեան, եւ յօրհնելն եւ
խոստովան լինել եւ պաշտել ի դրունս
3 սրահից տանն Տեառն։ Եւ մասն թագաւո-
րին յընչից իւրոց յողջակէզսն առաւօտս
եւ երեկորեայն, եւ յողջակէզսն շաբաթուց
եւ ամսոցն եւ ի տօնսն սրեալս յօրէնս
4 Տեառն։ Եւ ասաց ժողովրդեանն որ
բնակէին յերուսաղէմ, տալ զմասն քա-
հանայիցն եւ Ղեւտացւոց, զի զօրաս-
5 ցին ի սպասու տանն Տեառն։ Եւ որ-
պէս հրամայեաց բանն, յաւելին եւս
որդիքն Իսրայելի զպտուղ ցորենոյն եւ

[1] ԵԲԸ. Աստուածոյ [2] ԵԲԸ. սիրտ մի [3] ԵԲԸ. սրսկէին
[4] ԵԲԸ. զԱստուած, Տէր [5] ԵԲԸ. և գովէին զՏէր [6] ԵԲԸ.
Ղեւտացւոցն իմաստնոց [7] ԵԲԸ. խաղաղութեանն
[8] ԵԲԸ. Եզեկիաս արքայ Յուդայ եւ եկեղեցւոյն [9] ԵԲԸ.
եւսան [10] ԵԲԸ. ժողովուրդն Յուդայ եւ [11] ԵԲԸ. եկեալ
[12] ԵԲԸ. սրբութեան նորա [13] ԵԲԸ. խաղաղականաց

գինուց եւ ձիթոյ եւ մեղու, եւ զամենայն արմտեաց անդաստանաց, եւ դասանաւորգան զամենայն բերդին բազում
6 չափ։ Եւ արդեօք Իսրայէլի եւ Յուդայ, որք բնակեալ էին ի քաղաքան Յուդայ, եւ նոքա ածին պատանութիւն զաւազակացն եւ [1]ոչխարաց, եւ [2]բերեալ կուռ
7 տեսին չեղջիւր չեղջիւ Յամանանն երրորդի ականն չեղջիւր սիրելին առնուլ, եւ յեղծ
8 նեալ երկրպագեալ ամենայն կատարեցան։ Եւ ելին Եզեկիաս եւ իշխանքն եւ տեսին զչեղջիւրն, եւ օրհնեցին զՏէր եւ զժո-
9 ղովուրդ նորա զԻսրայէլ։ Եւ հարցանէր Եզեկիաս զբահանայսն եւ զԼեւտացիսն
10 զոմն չեղջիւրն։ Եւ ասէ ցնա Ազարիա քահանայ իշխան ի տանէն Սադովկայ, Յարմէ հետ ականն զպատուղով բերել ի տունն Տեառն, կերաք եւ արբաք եւ [3]մնացաք զինեպարպակ. վասն զի Տէր օրհնեալ զժողովուրդ իւր, եւ մնաց եւս
11 յոլով թիւնդ այդ։ Եւ ասէ Եզեկիաս, Պատրաստեցէք եւ այլ եւս չեմարանս
12 ի տունն Տեառն. եւ պատրաստեցին։ Եւ բերին անդր զպատուականսն եւ [4]զպատանութիւնսն հաւատով. եւ էր նոցա վերակացու Քաւքենիա Ղեւտացի, եւ Սեմէի եղ-
13 բայր նորա վերանորդ նորին, եւ Յեքիէլ եւ Ազիա եւ Նահաթ եւ Ասայէլ եւ Յերիմոթ եւ Յովզաբադ եւ Եղիէլ եւ Սամաքիա եւ Մաաթ եւ Բանեա, [5]եւ արդեօք նորա" որք կային անդ ի ձեռն Քաւքենեայ եւ Սեմէայ եղբօր նորա, որպէս եւ հրամայեաց արքայ Եզեկիաս, եւ Ազարիա առաջնորդ տանն Տեառն։
14 Եւ Կորէ որդի Յեսիայ Ղեւտացի դռնապանն ընդ արեւելս կողմն ի վերայ [6]առաջնացն տալ զպատուան Տեառն, եւ
15 զպղտութիւնսն սրբութեանցն, [7]ի ձեռն Ադոնայ եւ Մինիամինի եւ Յեսուայ եւ Սեմէայ եւ Մարիայ եւ Սեքենեայ, [8]ի ձեռն քահանայիցն հաւատարմութեամբ, տալ եղբարցն նոցա բաս հանապազորդեան պաշտօնէիցն, բաս մեծի եւ փո-
16 քր, [9]բաց ի ծննդոց" արուացն յերես-
17 ընդ կարգին իւրեանց։ Եւ [10]այս էր հաշիւ" քահանայիցն ըստ տանց տոհմիցն, եւ [11]Ղեւտացիքն ի հնգետասնամեայ պաշտաւնանն ի քահանայիսկ եւ ի վեր,
18 ի կարգի ըստ հաշուոյն. [12]Յամենայն ծնունդս" ուսուցից նոցա եւ զամենայն, հանդերձ ամենայն յոլովութեամբ. վասն զի հաւատացեալք [13]սրբեցին զսրբութիւն"։ Եւ սրբացան [14]Ասարոնի, որք ի-
19 նէին քահանայք. եւ ի քաղաքսն նոցա", յամենայն քաղաքի սրք անուանիք սրք անուանեցան տալ զբաժին ամենայն արուի քահանայիցն, եւ յամենայնի որ
20 մտեալ էր ի թիւ Ղեւտացւոցն։ Եւ արար այնպէս Եզեկիաս յամենայն Յուդա. եւ արար բարի եւ [15]ուղղութիւն առաջի Տեառն
21 Աստուծոյ իւրոյ։ Եւ ամենայն գործովք որովք սկսաւ գործել [16]ի տանն Տեառն", ըստ օրինացն Տեառն եւ ըստ հրամանացն, խնդրեալ զԱստուած իւր յամենայն սրտէ իւրմէ, արար եւ յաջողեցաւ։

ԳԼ. ԼՐ

1 Եւ յետ բանիցս այսոցիկ եւ ճշմարտութիւնս այսոցիկ եկն Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց ի վերայ Յուդայ, եւ բանակեցաւ զպատսպարս քաղաքացն,
2 եւ ասէր առնուլ զնոսա։ Եւ տեսեալ եզեկիաս թէ եկն Սենեքերիմ դէմ յանդիման նորա պատերազմիլ ընդ Երու-
3 սաղէմ, խորհեցաւ ընդ ծերսն եւ ընդ զօրաւորսն խնուլ զջուրս ակընթացն որք էին արտաքոյ քաղաքին, եւ խոչն գնա-
4 ա։ Եւ գումարեցաւ ժողովուրդ բազում, եւ խոչն զջուրս ակընթացն, եւ զգետն որ բաժանէր անցանելով ընդ մէջ [15]քաղաքին, եւ ասեն, Մի գուցէ եկեալ արքայն Ասորեստանի գտցէ ջուր բազում
5 [3]եւ զօրացցի"։ Եւ հզօրացաւ եզեկիաս, եւ չինեաց զամենայն պարիսպս կոր-
6 ծանեալս [16]եւ զաշտարակս, եւ արտաքոյ զպատսին պարիսպն եւ զմիւսն եւս". եւ զօրացոյց [17]զպատուարան քա-

[1] ՆԲԳ. աչխարացն, եւ զպատանեօքդ սրբութեանցն սրբելոց Տեառն Աստուծոյ իւրեանց, [2] ՆԲԳ. զպատանեօքդն եւ զնուէրսն [3] ՆԲԳ. պահեաց [4] ՆԲԳ. նուիրացն Աստուծոյ [5] ՆԲԳ. ի ձեռն նորա" [6] ՆԲԳ. ի քաղաքս [7] ՆԲԳ. Նա եւ Թուելոյ յաղգ ահմանարին [8] ՆԲԳ. Թուելոյն յաղգ ահմանարին ամենայն մանկանց նոցա, կանանց նոցա եւ [11] ՆԲԳ. սրբեցին զանձինս ի սրբութիւն [12] ՆԲԳ. Ահարոնի, քահանայից, յանդ ատենս արուարձանս քաղաքացն նոցա [13] ՆԲԳ. ուղղութիւն եւ ճշմարտութիւն [14] ՆԲԳ. ի սպասս տանն Աստուծոյ և [15] ՆԲԳ. երկրին [16] ՆԲԳ. եւ բարձրացոյց մինչեւ ցաշտարակն, կամ բարձրացոյց զաշտարակն եւ արտարոյ մեւս եւս պարիսպ [17] ՆԲԳ. զՄեղոն (տե՛ս Գ Թագ. Թ. 24։)

զաքին Դաւթի, եւ կացմեաց զԷնս [1]քա-
6 զուհի ։ Եւ արար իշխանս պատերազմի
ի վերայ զօրուն, եւ [2]ժողովեցան առ նա
ի հրապարակ ձորոյն". խօսեցաւ ի սիրտս
7 նոցա եւ ասէ, Զօրացարուք եւ քաջ լի-
ցուք, մի երկնչիք յերեսաց թագաւորին
Ասորեստանեայց, եւ մի յիշեսցուք ամենայն
ազգացն որ ընկ նմա. վասն զի ընդ մեզ
8 բազումք են քան ընդ նմա ։ Ընդ նմա
բազուկ մարմնական է, եւ ընդ մեզ Տէր
Աստուած մեր՝ ապրեցուցանել զմեզ, եւ
պատերազմել զպատերազմ մեր ։ Եւ
քաջալերեցաւ ժողովուրդն բանիւքն
Եզեկիայ արքայի Յուդայ ։
9 Եւ յետ այսորիկ առաքեաց Աննեքե-
րիմ արքայ Ասորեստանեայց զծառայս
իւր յԵրուսաղէմ, եւ ինքն էր ի Լաքիս,
եւ ամենայն զօրք ընդ նմա. եւ առա-
քեաց առ Եզեկիա արքայ [3]Յուդայ յԵ-
10 րուսաղէմ, եւ ասէ, Այսպէս ասէ Սե-
նեքերիմ արքայ Ասորեստանեայց. Յո՞
զոք յուսացեալ նայիք յայմհոգի ելեալ
11 առաջի. Մի՞ ազաքէն Եզեկիա խաբէ
զձեզ, մատնել զձեզ ի մահ, ի սով եւ
ի ծարաւ, եւ ասէ, Տէր Աստուած մեր
փրկեսցէ զմեզ ի ձեռաց արքային Աս-
12 սորեստանեայց ։ Մի՞ այդ Եզեկիաս է, որ
բակեաց զսեղանս նորա եւ զբարձունս
նորա, եւ ասաց ցՅուդա եւ ցյԵրուսաղէմ,
Առաջի սեղանոյս այսորիկ
միայն երկիր պագէք, եւ ի վերայ նո-
13 րա [4]զոհեցէք ։ Մի՞ գիտացէք զինչ ա-
րարեալ են եւ հարքն իմ ամենայն ժո-
ղովրդոց գաւառաց. միթէ կարելով կա-
րացին աստուածք ազգաց ամենայն երկ-
րի փրկել զժողովուրդ իւրեանց ի ձե-
14 ռաց իմոց ։ Զի՞ ոք յամենայն աստուա-
ծոց ազգացն այնոցիկ ոչ աստակեցին
հարքն իմ. միթէ կարացի՞ն ապրեցու-
ցանել զժողովուրդ իւրեանց ի ձեռաց
իմոց. եւ զիա՞րդ կարասցէ Աստուածդ
15 ձեր փրկել զձեզ ի ձեռաց իմոց ։ Արդ
մի խաբեսցէ զձեզ Եզեկիաս, եւ մի
յուսացուսցէ զձեզ յայդ. մի հաւատայք
նմա. վասն զի ոչ կարացին աստուածք
ամենայն ազգաց եւ թագաւորութեանց
ապրեցուցանել զժողովուրդս իւրեանց ի
ձեռաց իմոց եւ ի ձեռաց հարցն իմոց.
եւ Աստուածդ ձեր ոչ փրկէ զձեզ ի ձե-
16 ռաց իմոց ։ Եւ այլ եւս խօսեցան ծա-
ռայք նորա ի Տէր Աստուած եւ յեզե-
17 կիաս ծառայ նորա ։ Եւ թուղթ գրեաց
ի՛նքնամանակ զՏէր Աստուած Իսրայէլի,
եւ ասաց յայտնապէս նորա, Զօր օրինակ
աստուածք ազգաց երկրի՛ ոչ փրկեցին
զժողովուրդս իւրեանց ի ձեռաց իմոց,
նոյնպէս եւ Աստուածդ Եզեկիայ զժո-
ղովուրդ իւր ոչ ապրեցուսցէ ի ձեռաց
18 իմոց ։ Եւ [5]գոչեաց մեծաձայն Հրէից
առ ժողովուրդն Երուսաղէմի որ էր ի
վերայ պարսպին, [6]ահնական լինել ին-
քեանց եւ կործանել զպարիսպն, զի
19 վաւաշակի՛ առցեն զքաղաքն ։ Եւ
խօսեցան յԱստուածն Երուսաղէմի որ-
պէս յաստուածս ժողովրդոց երկրի, ի
գործս ձեռաց մարդկան ։
20 Եւ յայսմ կացին Եզեկիաս արքայ
եւ Եսայիաս որդի Ամովսայ մարգարէ՝
յայտս այնոցիկ եւ գոչեցին յերկինս ։
21 Եւ առաքեաց Տէր հրեշտակ, եւ աս-
տակեաց զամենայն զօրաւոր եւ զպա-
տերազմող, զիշխան եւ զպետս ի բա-
նակի արքային Ասորեստանեայց. եւ
դարձոյց զերեսս իւր ամօթով յերկիրն
իւր, եւ չգաւա ի տուն աստուածոյն իւ-
րոյ. եւ որք եկեալ էին յարմատոյ նո-
22 ցա՝ լնկեցին զնա անդ սրով ։ Եւ ապ-
րեցոյց Տէր զԵզեկիաս եւ զբնակիչս Ե-
րուսաղէմի ի ձեռաց Սենեքերիմայ ար-
քային Ասորեստանեայց եւ ի ձեռաց ա-
մենեցունց. եւ հանդոյց զնոսա չուրջա-
23 նակի ։ Եւ բազումք բերէին պատարագս
Տեառն յԵրուսաղէմ, եւ ընծայս Եզեկիայ
արքայի Յուդայ. եւ ամբարձաւ առաջի
աչաց ամենայն ազգաց յետ այսորիկ ։
24 Յաւուրսն յայնոսիկ հիւանդացաւ Ե-
զեկիաս մերձ ի մահ. եւ յաղօթս եւ
կաց առ Տէր, եւ լուաւ նմա եւ ետ
25 նմա նշան ։ Եւ ոչ բան հատուցմանն
պար ետ նմա Աստուած՝ հատոյց անպէտն
Եզեկիաս, այլ բարձրացաւ սիրտ նորա.
եւ եղեւ ի վերայ նորա բարկութիւն,
26 եւ ի վերայ Յուդայ եւ Երուսաղէմի ։ Եւ
խոնարհեցաւ Եզեկիաս ի բարձրութենէ
սրտին իւրոյ եւ բնակիչքն Երուսաղէմի,
եւ ոչ եկն ի վերայ նոցա բարկութիւնն
Տեառն յաւուրս Եզեկիայ ։
27 Եւ եղեւ Եզեկիայ մեծութիւն եւ

[1] ՆԲԳ. բազում եւ ապստամբ [2] ՆԲԳ. ժողովեաց զնոսա առ ինքն ի հրապարակ դրան քաղաքին
[3] ՆԲԳ. Յուդայ եւ առ ամենայն Յուդա որ [4] ՆԲԳ. խոստկա արկէք
[5] ՆԲԳ. գոչեցին [6] ՆԲԳ. զարհուրեցուցանել զնոսա եւ խռովել զնոսա, զի

փառք բազում յայժ. եւ արար իւր զանձս ոսկւոյ եւ արծաթոյ եւ ականց պատուականաց, եւ խոնկս եւ զկնս
28 եւ անօթս ցանկալիս, եւ քաղաքս յարմարս ցորենոյ եւ գինւոյ եւ ձիթոյ, եւ զնդս եւ կայանս ամենայն անասնոց
29 եւ գոմս հօտից։ Եւ քաղաքս զոր չինեաց իւր, եւ պատրաստութիւնս խաչանց եւ արջառոց բազում. զամն գի նա նմա Տէր տացուածս բազումս յայժ։
30 Ինքն եղեկիաս նիւոյ զերծ ջրոյն Գիհոնի վերին, եւ ուղղեաց գնա խնդարհադոյն յարեւմուտս կողմն քաղաքին Դաւթի. եւ յաջողեցաւ եղեկիա յամենայն գործս իւր։
31 Եւ այսպէս արար հրէշտակաց իշխանաց որք ի Բաբելոնէ առաքեցան առնա հարցանել զնամն [1]նորա եւ՝ նշանաց որ եղեն ի վերայ երկրի. եւ եհոզ զնա Տէր փորձել զնա եւ գիտել զինչ է ի սրտի նորա։
32 Եւ մնացեալ բանքն եզեկիայ եւ ողորմութիւնն նորա նա գրեալ է ի մարգարէութիւնն Եսայեայ որդւոյ Ամովսայ մարգարէի, եւ ի գիրս թագաւորացն
33 Ցուդայ եւ Իսրայէլի։ Եւ ննջեաց եզեկիաս ընդ հարս իւր եւ թաղեցին զնա ի բարձրաւանդակի գերեզմանաց որդւոցն Դաւթի. եւ փառս եւ պատիւ նստեն նմա ի մահուն նորա ամենայն Ցուդա եւ բնակիչք Երուսաղէմի. եւ թագաւորեաց Մանասէ որդի նորա փոխանակ նորա։

ԳԼ. ԼԳ

1 Էր ամաց երկոտասանից Մանասէ ի թագաւորելն իւրում, եւ եհան եւ հինգ
2 ամ թագաւորեաց յերուսաղէմ։ Եւ արար չար առաջի Տեառն յամենայն գարշելեացն ազգացն զորս ոտնակոխ
3 Տէր յերեսաց որդւոցն Իսրայէլի։ Եւ դարձաւ չինեաց զբարձրանդակս զորս կործանեաց եզեկիաս հայրն նորա, եւ կանգնեաց [2]արձանս Բահաղիմայ. եւ արար անտառս. եւ երկիր եպազ ամենայն զօրութիւնս երկնից, եւ ծառա-
4 յեաց նոցա։ Եւ չինեաց [2]սեղան ի տանն Տեառն, [3]յորում ասաց Տէր՝ Յերուսա-
5 զէմ եղիցի անուն իմ յաւիտեան։ Շինեաց անդ [2]սեղան ամենայն զօրութեան երկնի յերկուսեան [4]ի սրահս տանն
6 Տեառն։ Եւ ինքն անցուցանէր զորդիս իւր ընդ հուր [5]յերկրին Բննոմայ՝, եւ հմայէր եւ հաւատարց լիներ եւ գիտէր. եւ արար վհուկս եւ խաւիչս. բազմացոյց առնել չար առաջի Տեառն
7 առ ի բարկացուցանելոյ զնա։ Եւ դրօշիալ եւ ձուլածոյ եւ պատկեր զոր արար ի տանն [6]Տեառն, զորմէ ասաց Աստուած ցԴաւիթ եւ ցՍաղոմոն որդի նորա, Ի տանս յայսմ եւ յԵրուսաղէմ զոր ընտրեցի յամենայն ցեղիցն Իսրայէլի՝ եդից
8 զանուն իմ յաւիտեան. Եւ ոչ եւս յաւելից սասանեցուցանել զոտն Իսրայէլի յերկրէս զոր եառ հարց նոցա, բայց միայն թէ պահեսցեն առնել զամենայն որ ինչ պատուիրեցի նոցա, ըստ ամենայն օրինաց եւ առաքինութեանց եւ իրաւանց ի ձեռն Մովսիսի։ Եւ մոլորեցոյց
9 Մանասէ զՅուդաս եւ զբնակիչսն Երուսաղէմի առնել չար առաւել քան զամենայն ազգսն զորս եհարց Տէր յերեսաց որդւոցն Իսրայէլի։ Եւ խօսեցաւ
10 Տէր ընդ Մանասէի եւ ընդ ժողովրդեան նորա, եւ ոչ լսեան։
11 Եւ ած Տէր ի վերայ նորա զիշխանս զօրուս արքային Ասորեստանեայց. կալան զնա եւ կապիցին կապանօք եւ տա-
12 րան ի Բաբելոն։ Եւ իբրեւ վտանգեցաւ, ինդրեաց զերեսս Տեառն Աստուծոյ իւրոյ, եւ խոնարհեցաւ յոյժ յերեսաց Աս-
13 տուծոյ հարցն իւրոյ։ Յաղօթս եկաց առ նա. եւ լուաւ զաչման նորա, եւ դարձոյց զնա յերուսաղէմ ի թագաւորութիւնն իւր. եւ ծանեաւ Մանասէ, եթէ Տէր՝ նա է Աստուած։
14 Եւ յետ այսորիկ չինեաց պարիսպ արտաքոյ քաղաքին Դաւթի յարեւմտից [7]ընդ հարաւակողմն՝ ի հեղեզատին, եւ յելս [8]դրանցն չուրջանակի յիփազ՝, եւ բարձրացոյց յոյժ. եւ կացոյց իշխանս զօրուց յամենայն քաղաքս պարսպաւորս
15 Ցուդայ։ Եւ ի բաց հերձ զաստուածան օտարս եւ զդրօշիալսն ի տանէն Տեառն, եւ զամենայն սեղանսն զորս չինեաց ի լերին տանն Տեառն եւ յերուսաղէմ եւ
16 [9]արտաքոյ քաղաքին։ Եւ ուղղեաց զսեղանն Տեառն, եւ զոհեաց ի վերայ նորա զոհս [10]փրկութեան եւ օրհնութեան.

[1] 3Եբր. գ-ւ-ռ [2] Եբր. սեզանս [3] Եբր. զորմէ
[4] Եբր. ի գաւիթս
[5] Եբր. ի հովիտն որդւոյն Ենոմոյ [6] Եբր. Աստուածոյ [7] Եբր. Կեհոնի [8] Եբր. դրան Ձկանցն, եւ պատեաց չուրջանակի վկիտ [9] Եբր. ընկեց արտաքոյ [10] Եբր. խաղաղութեան

եւ ասաց ցՅուդաս ծառայել Տեառն Աս-
17 տուծոյ Իսրայէլի։ Բայց Ժողովուրդն տակաւին եւս երկայր ի բարձունսն.
սակայն [1]Տէր Աստուած էր նոցա"։
18 Եւ Հեզեկիա բանքն Մանասէի, եւ աղօթք նորա որ առ Աստուած է, եւ բանք անանուղացն որք խօսեցան ընդ նա յանուն Տեառն Աստուծոյ Իսրայել-
19 ի, Ահա են ի բանս [2]աղօթից նորա, եւ յորս լուաւն նմա", եւ ամենայն մեղք նորա եւ անպատուբութիւնն նորա, եւ տեղիքն զորս չինեալ զբարձունսկան եւ արար անդ անտառս եւ զքանդակս յառաջ քան զպատնայն իւրում, ահա
20 գրեալ են ի բանս [3]անանունացն։ Եւ հնչեաց Մանասէ ընդ հարս իւր, եւ թաղեցին զնա [4]ի պրտիսի տանն իւրոյ". եւ թագաւորեաց փոխանակ նորա Ամմոն որդի նորա։
21 Էր ամաց քսան եւ երկուց Ամոնն ի թագաւորելն իւրում, եւ երկուս ամս
22 թագաւորեաց յԵրուսաղէմ։ Եւ արար չար առաջի Տեառն որպէս արար Մանասէ հայր նորա. եւ ամենեցուն կռոց զոր արար հայր նորա Մանասէ զոհեաց
23 Ամոնն եւ ծառայեաց նոցա։ Եւ ոչ խոնարհեցաւ առաջի Տեառն, որպէս խոնարհեցաւ Մանասէ հայր նորա. այլ [5]որպէս նորա Ամոնն յանցանս յինեցաւ։
24 Եւ յարեան ի վերայ նորա ծառայքն իւր,
25 եւ նորին զնա ի տան իւրում։ Եւ եհար ժողովուրդ երկրին զյարուցեալսն ի վերայ [6]թագաւորին. եւ թագաւորեցուցեալ ժողովուրդ երկրին զՅովսիաս որպէս նորա փոխանակ նորա։

Գլ. ԼԴ

1 Էր ութ ամաց Յովսիաս ի թագաւորելն իւրում, եւ երեսուն եւ մի ամ թագա-
2 ւորեաց յԵրուսաղէմ։ Եւ արար ուղղութիւն առաջի Տեառն. գնաց ի ճանապարհս Դաւթի հօր իւրոյ, եւ ոչ խո-
3 նարհեաւ յայլ եւ ոչ յահեակ։ Եւ յամի ութերորդ ամի թագաւորութեանն իւրոյ, եւ ինքն էր տակաւին եւս մանուկ, սկսաւ խնդրել [7]զՏէր Աստուած" Դաւթի հօր իւրոյ. եւ յերկոտասաներորդ ամի թագաւորութեանն իւրոյ սկսաւ սրբել զՅուդա եւ զԵրուսաղէմ ի բարձանցն
4 եւ յանտառացն [8]եւ ի ձուլածոյիցն։ Եւ [9]կործանեաց զեմ յանկիման իւր զսանդանս Բահաղիմացդն եւ [10]զբարձաւանդական յորոց վերայ էին. եւ կտաւրեաց զանտառան", եւ զպրօչեալսն եւ զձուլածոյսն վիշեաց եւ մանրեաց եւ ընկէց յանդիման չիրմացն այնոցիկ որք զոհէին
5 նոցա։ Եւ զսկսիս քրմացն այրեաց ի վերայ սեղանացն, եւ մաքրեաց զՅուդա
6 գաս եւ զԵրուսաղէմ, եւ զքաղաքն Եփրեմի եւ Մանասէի եւ զՇմաւոնի եւ զՆեփթալիմայ, եւ զաւերսն նոցա չոր-
7 ջանակի։ Եւ ի բաց երթալ զանտառան եւ զպագինսն, եւ զկուռսն փշրեաց մանր, եւ զամենայն [11]բարձունսն ի բաց երթալ յերկրէն Իսրայէլի, եւ դարձաւ յԵրուսաղէմ։
8 Եւ յամին ութերորդի թագաւորութեանն իւրոյ, յորժամ վախճանեաց մաքրել զերկիրն եւ [12]զտունն թագաւորութեանն", առաքեաց զՄափան որդի Ասեղեայ եւ զՄաասիա իշխան քաղաքին եւ զՅովախաս որդի Յովաքազայ զպաշտի յիշատակացն իւրոյ, զօրացուցանել զտունն Տեառն Աստուծոյ իւրոյ։
9 Եւ եկին առ Բիղկիաս քահանայ մեծ. եւ նա զարծաթն որ մտեալ էր ի տունն [13]Տեառն, զոր ժողովեցին Ղեւտացիքն պահապանք դրանն, ի ձեռանէ Մանասէի եւ Եփրեմի [14]եւ իշխանացն", եւ յամենայն մնացորդացն Իսրայէլի, եւ յուդայէ եւ Բենիամինի, եւ
10 բնակչացն Երուսաղէմ։ Եւ եւտուն զայն [15]ի ձեռս որք ունէին զգործն, որք կային ի տանն Տեառն՝ կազմել եւ զօրացուցանել զտունն. Եւ եւտուն հիւսանցն
11 եւ չինողացն՝ գնել քարինս չորեքանկիւնս մեծս", եւ փայտս ի գերանս՝ յարկանել զտունսն զորս քակեցին թա-
12 գաւորքն Յուդայ։ Եւ արքն այնոքիկ կային հաւատարիմք ի վերայ գործոյն. եւ

---

[1] ՆԵԲ. Տեառն Աստուծոյ իւրեանց [2] ՆԵԲ. Թագաւորաց Իսրայելի, (19) Եւ աղօթք նորա եւ լսելի լինել նորա [3] Կամ, Հոգւոյ [4] ՆԵԲ. ի տան իւրում [5] ՆԵԲ. այս Ամմոն [6] ՆԵԲ. Ամմոնի թագաւորին [7] ՆԵԲ. զԱստուած

[8] ՆԵԲ. եւ ի գրօշելոց եւ [9] ՆԵԲ. կործանեցին [10] ՆԵԲ. զարձանս արեգական որ ի բարձունս ի վերայ նոցա՝ կատարեաց, եւ զանտառան [11] ՆԵԲ. արձանս արեգական [12] ՆԵԲ. զտունն [13] ՆԵԲ. Աստուծոյ [14] ՅՆԵԲ. գլխոյ [15] ՆԵԲ. ի ձեռս որոց առնէին զգործն, վերակացուաց տանն Տեառն, եւ եւտուն զայն որոց գործէին զգործն ի տանն Տեառն ի կազմել եւ զօրացուցանել զտունն, (11) Եւ եւտուն հիւսանցն եւ չինողացն գնել քարինս կոփեալս

վերակացուքն նոցա՝ Ցէթ եւ Աբգիաս՝ Ղեւտացիք յորդւոյն Մերարեայ, եւ Զաքարիաս եւ Մեսոզամ՝ յորդւոյն կահա-
լոթ, այց առնել. եւ ամենայն Ղեւտացի որ ոք էր իմաստուն նուագարանօք եր-
13 գոյն։ Եւ ի վերայ բեռնակրացն, եւ ի վերայ այնոցիկ որք առնէին զգործն եւ զպատրաստութիւն գործոյն, եւ ի Ղեւ-
տացւոյն էին զպրապետք եւ դատաւորք եւ դռնապանք։
14 Եւ ի հանելն նոցա զարծաթն մանալ ի տունն Տեառն, եղեալ Քեզկիաս քա-
հանայ զիրս օրինացն Տեառն որ ի ձեռն
15 Մովսէսի։ Պատասխանի եւ Քեզկիաս եւ ասէ ցԱսիան զպրապետ, Զիրս օ-
րինաց գտի ի տանն Տեառն, եւ եա Քեզ-
16 կիաս զգիրսն ցԱսիան։ Եւ տարաւ Ասափան զգիրսն առ արքայ. եւ եա արքայ
զի [1]գնամբ ամենայն տուելոց արծա-
թոյն ի ձեռս ծառայիցն նորա որք առ-
17 նէին զգործն։ Եւ ձուլեցին՝ զարծաթն գտեալ ի տունն Տեառն, եւ տուն զայն
ի ձեռս վերակացուացն, եւ ի ձեռս այ-
18 նոցիկ որք առնէին զգործն։ Եւ պատմեաց Սափան զպրապետ արքայի եւ
ասէ, Զիրս օրինաց եա ցիս Քեզկիաս
քահանայ. եւ ընթերցաւ զայն Սափան
19 առաջի թագաւորին։ Եւ եղեւ իբրեւ լուաւ արքայ զբանս օրինացն, պատառ-
20 եաց զպատմուճան իւր։ Եւ պատուիրեաց արքայ Քեզկեայ եւ Աքիկամայ որդւոյ Սափանայ, եւ Աբդիայ որդւոյ
Միքիայ, եւ Սափանայ զպրապետի, եւ
Ասայեայ՝ մանկան արքայի, եւ ասէ,
21 Երթայք խնդրեցէք ի Տեառնէ վասն իմ եւ վասն ամենեցուն մնացելոցս յԻսրա-
յէլէ եւ Յուդայ յառդս բանիցդ գրոցդ
այդոցիկ որք գտան. վասն զի մեծ սրտմտութիւն Տեառն բորբոքեալ է ի մեզ.
զի ոչ լուան հարքն մեր զբանս Տեառն առնել ըստ ամենայնի որ ինչ գրեալ է
22 ի գիրսդ յայդոսիկ։ Եւ գնաց Քեզկիաս եւ որոց ասացն արքայ՝ առ Ողդան մար-
գարէ կին Սեղեմայ որդւոյ Թակուաթայ
որդւոյ Եսերայ, որ պահէր [2]զպատուի-
րանսն, եւ ինքն բնակէր յԵրուսաղէմ
ի Մասենա. եւ խօսեցան ընդ նմա ըստ
բանիցն այնոցիկ։
23 Եւ ասէ ցնոսա, Այսպէս ասէ Տէր Աս-

[1] ՆԲԲ. զհամար, և ասէ, Զամենայն ինչ որ տուաւ ի ձեռս ծառայից քոց՝ արարին նոքա. (17) Եւ Թափեցին [2]ՆԲԲ. զպատմուճանն

տուած Իսրայէլի. Ասասջիք ցայրն որ
24 առաքեաց զձեզ առ իս, Այսպէս ա-
սէ Տէր. Ահա ես ածեմ չարիս ի վերայ
անդրդյ [3]այդորիկ, զամենայն բանս
գրեալս ի գիրսդ զոր ընթերցան առաջի
25 արքային Յուդայ. Փոխանակ զի թողին
զիս եւ [4]զոհեցին աստուածոց օտարաց,
զի բարկացուցանիցեն զիս գործովք
ձեռաց իւրեանց, եւ [5]բորբոքեցաւ
սրտմտութիւն իմ ի տեղւոջդ յայդմիկ,
26 եւ ոչ եւս չիջցի։ Եւ զթաղաւորն Յու-
դայ որ առաքեաց զձեզ խնդրել զՏէր,
այսպէս ասասջիք ցնա. Այսպէս ասէ
Տէր Աստուած Իսրայէլի. Զբանսդ զոր
27 լուար դու, եւ պատկառեաց սիրտ քո,
եւ խոնարհեցար առաջի երեսաց Իմոց
ի լսել զբանսդ իմ ի վերայ տեղւոյդ այ-
դորիկ եւ ի վերայ բնակչացդ գորա. եւ
դու խոնարհեցար առաջի իմ, պատառ-
եցեր զպատմուճանս քո, եւ լացեր
յանդիման իմ, եւ ես լուայ, ասէ Տէր։
28 Ահա յաւելից զքեզ առ հարս քո, եւ
դիցեն զքեզ ի չիրմին քումմ խաղաղու-
թեամբ, եւ ոչ անսցեն աչք քո զամե-
նայն չարիսն զոր ես ածից ի վերայ տե-
ղւոյդ այդորիկ եւ ի վերայ բնակչաց գո-
րա։ Եւ առաւն թագաւորին զբանս զայ-
առիկ։
29 Եւ առաքեաց արքայ եւ ժողովեաց
30 [6]զծերսն Յուդայ եւ զերուսաղեմի։ Եւ
ել արքայ [7]Յուդայ ի տունն Տեառն,
եւ ամենայն Յուդայ եւ բնակիչք Ե-
րուսաղեմի, եւ քահանայքն եւ Ղեւ-
տացիք, եւ ամենայն ժողովուրդն ի մե-
ծէ մինչեւ ի փոքր, եւ ընթերցաւ յա-
կանջս նոցա զամենայն բանս [8]կտակին
31 գտելոյ ի տանն Տեառն։ Եւ [9]յարեաւ
թագաւորն, եկաց ի վերայ սեանն", եւ
եդ ուխտ առաջի Տեառն երթալ զհետ
Տեառն, պահել զպատուիրանս նորա եւ
զվկայութիւնս նորա եւ զհրամանս նո-
րա ի բոլոր սրտէ եւ ի բոլոր անձնէ,
[10]զբանս ուխտին զգրեալսն ի գիրսդ յայդո-
32 սիկ։ Եւ կացոյց զամենեսեան զգտեալսն
ներուսաղէմ եւ ի Բենիամին. եւ արա-
րին բնակիչքն Երուսաղեմի [11]ուխտ ի
33 տանն" Աստուծոյ հարցն իւրեանց։ Եւ

[3] ՆԲԲ. եւ ի վերայ բնակչաց նորա [4]ՆԲԲ. խունկս արկին [5]ՆԲԲ. բորբոքեցաւ [6]ՆԲԲ. զամենայն ծերսն [7]ՅԻՆ. Ցոսիա [8]ՆԲԲ. գրոց կտակին [9]ՆԲԲ. եկաց թագաւորն ի տեղւոջ իւրում [10]ՆԲԲ. առնել զբանս [11]ՆԲԲ. ըստ ուխտին Աստուծոյ,

ի բաց եթող Յովսիա զամենայն գար-
շելիս յամենայն երկիրէ , որ էր որդւոցն
Իսրայելի . եւ ամենայն զոմանցն
[1]*յերուսաղէմ եւ՝ յիսրայելի ծառայել*
Տեառն Աստուծոյ իւրեանց . զամենայն
աւուրս իւր ոչ [2]*խոտորեցաւ ի հետոյ*
Տեառն Աստուծոյ հարցն [3]*իւրոց :*

Գ Լ . Լ Ե

1 Եւ ամէն [4]*Յովսիա զպասեքն Տեառն*
[1]*Աստուծոյ իւրոյ* . եւ զնէին զպասեքն
ի չորեքտասաներորդում աւուր ամսոյն
2 *առաջնոյ* : Եւ կայցեալ զքահանայսն ի
վերայ պահպանութեանն իւրեանց , եւ
զօրացոյց զնոսա ի գործս տանն Տեառն :
3 Եւ ասէ [5]*ցԼեւտացիսն եւ ցզօրաւորսն*
յամենայն Իսրայէլի , սրբել զնոսա Տեառն .
եւ եղէն՝ զաւազանակն սրբութեան ի
տանն զոր շինեաց Սողոմոն որդի Դաւ-
*թի արքայի Իսրայելի . [1]*եւ ասէ ցա-
րքայ ,՝ Ոչ է ձեզ բառնալ ի վերայ ուսոց
եւ ոչ ինչ . արդ պաշտեցէք զՏէր Աս-
տուած ձեր եւ զժողովուրդ նորա զիս-
4 *րայէլ . Եւ պատրաստեք ի տուն ձեր*
տոհմիւ ձերոյ եւ ըստ օրամասից պաշ-
տաման ձերոյ , ըստ գրոյ Դաւթայ ար-
քայի Իսրայելի , եւ [6]*ի ձեռն Թագաւո-*
5 *րին՝ Սողոմոնի որդւոյ նորա : Եւ կա-*
ցէք ի տաճարիդ ըստ որոշման տանց
տոհմից ձերոց , տասնմի եղբարց ձերոց
եւ որդւոց ժողովրդեան ձերոյ . եւ բաժ-
6 *նի տան ցեղիդ Ղեւտացւոց . Եւ զոհե-*
ցէք զպասեքդ , եւ [7]*պատրաստեցէք*
զսրբութիւնս՝ եղբարց ձերոց , առնել
ըստ բանիդ Տեառն որ ի ձեռն Մովսե-
7 *սի : Եւ սկսաւ Յովսիա տալ որդւոց*
ժողովրդեանն խոյս եւ որջս եւ նոխազս
յորդւոց այծեացն , զամենայն ի պասեքն .
*եւ զամենեսեան որ ինչ գտաւ՝ [8]*տալ*
երեսուն հազար , եւ զտասնակս երիք
հազար . այսոքիկ ի տուոյ տաճարին :
8 *գտաւորին : Եւ իշխանքն նորա սկսան*
տալ ժողովրդեանն եւ քահանայիցն եւ
*Ղեւտացւոցն . [1]*եւ Հաւն՝ Քնդկիա եւ*
Զաքարիա եւ Յէքիէլ , իշխանք տանն
Աստուծոյ , քահանայիցն Հաւն ի պա-
սեքն խոյս եւ որջս եւ նոխազս երկու-

[1] Յերր· պ·ով·ե [2] Ելբ· խոտորեցան [3] Ելբ· իւրեանց [4] Ելբ· Յովսիա յիերուսաղէմ [5] Ելբ· ցՂեւտացիան, ուսուցիչս ամենայն Իսրայելի, սրբեալս Տեառն, Դիք [6] Ելբ· ըստ գրոց [7] Ելբ· սրբեցարուք եւ պատրաստեցէք վասն

հազար եւ վից հարեւր , եւ զտասնակս
9 *երիք հարեւր : Եւ Քոնենիա* [1]*եւ Բա-*
նեա՝ եւ Սամէա եւ Նաթանայէլ եղ-
բարք նորա , եւ Ասաբիա եւ Յէհիէլ եւ
Յովզաբադ իշխանք Ղեւտացւոցն , ական-
տալ յՂեւտացիսն ի պասեքն խոյս հինգ
հազար եւ զտասնակս հինգ հարեւր :
10 *Եւ ուղղեցաւ պաշտօնն , եւ կացին քա-*
հանայքն ի կարգն իւրեանց եւ Ղեւ-
տացիքն ի պատուիրանն ի բանից՝ ըստ
11 *պատուիրանի արքային : Եւ զնէին զպա-*
սեքն , եւ հեղին քահանայքն զարիւնն
ի ձեռանէ իւրեանց , եւ Ղեւտացիքն
12 [8]*գօշեցին , Եւ պատարաստեցին զողջա-*
կէզսն տալ նոցա ի բաժանիլս ումիք
ըստ պատուիրանին , ուստի տանց տոհ-
մից որդւոց ժողովրդեանն մատուցանել
Տեառն , որպէս եւ գրեալ է ի գիրս օ-
րինացն Մովսէսի : Նոյնպէս եւ [9]*յառա-*
13 *ւօտինան : Եւ խորովեցին զպասեքն հրով*
ըստ օրինին , եւ զսրբութիւնն եփեցին
կաթսայիւք եւ սանիւք , եւ [10]*յաջողես-*
տաւ . եւ բնթացան առ ամենեսեան որ-
14 *դիս ժողովրդեանն : Եւ յետ պատրաս-*
տելոյն նոցա եւ քահանայիցն , վասն զի
քահանայքն էին մատուցանել զճարպսն
եւ զողջակէզսն մինչեւ ի գիշերն , եւ
Ղեւտացիքն պատրաստեցին իւրեանց
եւ եղբարցն իւրեանց որդւոցն Ահարո-
15 *նի : Եւ սաղմոսասացքն որդիք Ասա-*
փայ ի կարգին իւրեանց ըստ պատու-
իրանին Դաւթայ , եւ [11]*Ասափ եւ Եման եւ*
Իդիթուն՝ մարգարէք արքային , եւ դր-
ան եւ՝ գոնապանք դրանն եւ դրան .
եւ ոչ էր նոցա [12]*հնար չարժել՝ ի պաշ-*
տամանէ սրբութեանն . վասն զի եղբարք
նոցա Ղեւտացիքն պատրաստեցին նո-
16 *ցա : Եւ ուղղեցաւ եւ պատրաստեցաւ*
ամենայն պաշտօնն Տեառն յաւուրն յայն-
միկ՝ առնել զպասեքն եւ մատուցանել
զողջակէզսն ի վերայ սեղանոյն Տեառն ,
ըստ պատուիրանին Յովսիայ արքայի :
17 *Եւ արարին որդիքն Իսրայէլի որք գտան*
անդ՝ զպասեքն ի ժամանակին յայնմ ,
18 *եւ զտօն անխմորիցն զեւթն օր : Եւ ոչ*
երբեք եղեւ պասեք նման նմա յիսրա-
յէլի յաւուրսն Սամուէլի մարգարէի ,
եւ ամենայն թագաւորքն Իսրայէլի ոչ

[8] Ելբ· մատեցին [9] Ելբ· առնէին զաւուրսացն [10] Ելբ· տապակօք [11] Ելբ· Ասափայ եւ Եմանայ և Իդիթունի, տեսանողի արքային, եւ [12] Ելբ· պնոյ ի բաց կալ

արարին պատեք որպէս արար Յովսիաս, եւ քահանայքն եւ Ղեւտացիք, եւ ա-
մենայն Յուդաս եւ Իսրայէլ որ գտաւ
19 անդ եւ բնակիչքն Երուսաղեմի։ Արա-
րին Տեառն յաթն աւուրսն զատկի թա-
զաւորութեանն 1Յովսիայ։ Եւ զվեճս
եւ զէշս եւ զդիւթս եւ զկուռս եւ
զկախարդս, որք էին յերկրին Յուդայ
եւ յԵրուսաղէմ, ի բաց եբարձ եւ այ-
րեաց հրով արքայ Յովսիաս, զի հաս-
տատեսցէ զբանս օրինացն զգրեալսն ի
գիրս զոր եգիտ Քեղկիաս քահանայ ի
տանն Տեառն։ Նման նմա ոչ եղեւ յա-
ռաջ քան զնա, որ դարձաւ առ Տէր Աս-
տուածն ի բազո սրտէ եւ ի բոլոր
անձնէ եւ յամենայն զօրութենէ
իւրմէ, ըստ ամենայն օրինաց Մովսիսի.
եւ յետ նորա ոչ ոք յարեաւ նման նմա։
Սակայն ոչ դարձաւ Տէր ի բարկութենէ
սրտմտութեան իւրոյ մեծէ, զոր բար-
կացաւ սրտմտութեամբ Տէր ի վերայ
Յուդայ, ամենայն բարկութեամբքն ա-
րեալք բարկացոյց զնա Մանասէ. եւ ա-
սաց Տէր, Այլ եւ զՅուդաս մերժեսցեմ
յերեսաց իմոց, որպէս մերժեցի զԻս-
րայէլ. եւ ի բաց արարից զքաղաքն զոր
ընտրեցի զԵրուսաղէմ, եւ զտաճարն զոր
20 մէ ասացի՝ Եղիցի անուն իմ անդ։ Եւ
եկ Փարաւնա՝ Նեքաւով արքայ Եգիպ-
տոսի 2ի վերայ արքային Ասորեստա-
նեայց, առ գետովն Եփրատայ. եւ գնաց
21 արքայ Յովսիա ընդդէմ նորա։ Եւ ա-
ռաքեաց առ նա հրեշտակս, եւ ասէ,
Զինչ կայ իմ եւ քո, արքայ Յուդայ.
ոչ եմ եկեալ ի վերայ քո այսօր 3պա-
տերազմ առնել". եւ Աստուած ասաց
զուարթալ ինձ. զդադչ լեր յԱստուծոյ որ
է ընդ իս, մի՛ գուցէ սպանանիցէ զքեզ։
22 Եւ ոչ դարձոյց Յովսիա զերեսս իւր ի
նմանէ, այլ պատերազմել ընդ նմա 4զօ-
բացաւ. եւ ոչ լուաւ բանիցն Նեքաւով
վայ որ ի բերանոյ Տեառն, եւ եկն պա-
23 տերազմել ի դաշտին Մակեդովայ։ Եւ
հարին ազեղնաւորքն զարքայ Յովսիաս.
եւ ասէ արքայ ցծառայս իւր, Հանի՛ր
զիս ասաի, զանի զի վանդեցաւ յոյժ։
24 Եւ հանին գնա ծառայքն նորա ի կա-

ռայն իւրոյ, եւ եդին գնա ի կառն
երկրորդս՝ որ էր նորա, եւ տարան գնա
յԵրուսաղէմ. եւ մեռաւ եւ թաղեցաւ
ընդ հայրս իւր. եւ ամենայն Յուդաս
եւ Երուսաղէմ սուգ առին ի վերայ Յով-
25 սիայ։ Եւ ասաց ողբս Երեմիաս ի վե-
րայ Յովսիայ, եւ ամենայն 5իշխանքն
արք եւ կանայք, ասացին զողբսն ի
վերայ Յովսիայ մինչեւ ցայսօր, եւ ե-
տուն զայն իրրեւ հրամանաւ ի մէջ Իս-
րայելի. եւ ահա գրեալք են ի ճառս
ողբացն։
26 Եւ 6էին բանքն Յովսիայ եւ յոյս նո-
27 րա գրեալ՝ յօրէնսն Տեառն, եւ մնա-
ցեալ բանքն նորա առաջինք եւ վեր-
ջինք՝ ահա գրեալ են ի գիրս թագաւո-
րացն Իսրայելի եւ Յուդայ։

Գլ. Լ.

1 Եւ առ Յոզաղոզդ երկրին զՅովաքազ
որդի Յովսիայ, եւ 7օծին գնա եւ" կա-
ցուցին գնա թագաւոր փոխանակ հօր
2 նորա յԵրուսաղէմ։ Որդի քսան եւ ե-
րից ամաց էր Յովաքազ ի թագաւորիլն
իւրում. եւ զերիս ամիսս թագաւորեաց
յԵրուսաղէմ. 8եւ անուն մօր նորա Ա-
միտալ, դստեր Երեմիայի ի Ղոմնայ.
եւ արար չար առաջի Տեառն՝ ըստ ա-
մենայնի զոր էին արարին հարքն նորա։
3 Եւ կապեաց գնա Փարաւն Նեքաւով
ի Դերզաթա յերկիրն Եմաթայ, ոչ եւս
թագաւորել նմա յԵրուսաղէմ. եւ տա-
րաւ գնա արքայն յԵգիպտոս". եւ արկ
ի վերայ երկրին հարկ հարեւր տաղանդ
4 արծաթոյ, եւ տաղանդ մի ոսկւոյ։ Եւ 9կա-
ցոյց Փարաւն Նեքաւով զԵղիակիմ որ-
դի Յովսիայ արքայի Յուդայ փոխանակ
Յովսիայ հօր նորա". եւ փոխեաց զա-
նունն նորա Յովակիմ. եւ զՅովաքազ
եղբայր նորա առ 7Փարաւն Նեքաւով,
եւ տարաւ յԵգիպտոս. 7եւ մեռաւ անդ։
Եւ զարծաթն եւ զոսկին եւտուն Փարա-
ւնի. յայնմ հետէ սկսաւ տալ հարկս
երկիրն. եւ եւտուն զարծաթն ըստ բա-
նից Փարաւնի. եւ յիւրաքանչիւր
ումեքէ ըստ զօրութեան իւրոյ պահան-

---

1 ԵԲԲ. Յովսիայ զպասէքն (20) Յետ ամենայնի այսորիկ իբրեւ պատրաստեաց Յովսիաս զտունն, եւ 2ԵԲԲ. պատերազմել ի Քարքեմիս 3ԵԲԲ. այլ ի վերայ տան ընդ որում է իմ պատերազմ
4 ԵԲԲ. ծպտեցաւ, կամ, խնդրեաց
5 ԵԲԲ. երգեցողք 6ԵԲԲ. Մնացորդք բանիցն Յովսիայ եւ ողորմութիւնք նորա որպէս գրեալ են
7 ՅԵԲԲ. գոմոե 8ԵԲԲ. (3) Եւ ընկէց գնա արքայն Եգիպտացւոց ,Երուսաղէմ 9ԵԲԲ. Թագաւո-
րեցոյց արքայն Եգիպտացւոց զԵղիակիմ զեղ-
բայր նորա ի վերայ Յուդայ եւ Երուսաղէմի

ՅԷին զարձաթն եւ զոսկին ի Ժողովրդենէ երկրին, տալ զայն Փարաւոնի Նեքաւովայ։"

5 Էր քան եւ հինգ ամաց Յովակիմ ի թագաւորելն իւրում, եւ վհատասան ամ թագաւորեաց յԵրուսաղէմ. [1]եւ անուն մօր նորա Զեկբուդա դուստր Ներեայ ի Ռամայ. եւ արար չար առաջի Տեառն ըստ ամենայնի զոր ինչ արարին հարքն նորա։ Յաւուրս նորա ել Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց յԵրկիրն. եւ դա-
ձայեաց նմա ամիսս երիս, եւ ապաստա-
բեալ ինձանէ։ Եւ առաքեաց Տէր զԲաղ-
գացիսն եւ զաւազակսն Ասորւոց, եւ
զաւազակսն Մովաբացւոց եւ որդւոցն
Ամմոնայ եւ Սամարիայ։ Եւ ի բաց կա-
ցին յետ բանիցս այսոցիկ ըստ բանի
Տեառն ի ձեռն ծառայից իւրոց մարգա-
րէից. սակայն սրտմտեաւքիւն ի Տեառ-
նէ էր ի վերայ Յուդայ, ի բաց բառնալ
զնա յերեսաց իւրոց, վասն մեղացն Մա-
նասէի յամենայնի զոր ինչ արար, եւ
անպարտ արեանցն զոր հեղու Մանասէ,
եւ լիից զԵրուսաղէմ անպարտ արեամբ.
եւ ոչ կամեցաւ Տէր սատակել զնոսա"։
6 Եւ եղ ի վերայ նորա Նաբուքոդոնո-
սոր արքայ Բաբելացւոց, եւ կապեաց զնա
պղնձի կապանօք [2]եւ տարաւ" զնա ի
7 Բաբելոն։ Եւ մահ ինչ ի սպասուց սանին
Տեառն տարաւ ի Բաբելոն, եւ եգ զայն
8 ի տաճարին իւրում որ ի Բաբելոն։ Եւ
մնացեալ բանքն Յովակիմայ եւ [3]ամե-
նայն ինչ զոր արար", ո՞չ սուսիկ գրեալ
են նոքա ի գիրս բանից [4]աւուրց թա-
գաւորացն Յուդայ։ Եւ ննջեաց Յո-
վակիմ ընդ հարս իւր, եւ թագեցաւ ի
Գանաղա՝ ընդ հարս իւր." եւ թագա-
ւորեաց Յեքոնիա որդի նորա փոխա-
նակ նորա։
9 Որդի ութ եւտասան ամաց էր Յեքոնիաս
ի թագաւորելն իւրում, եւ ամիսս երիս
եւ աւուրս տասն թագաւորեաց յԵրու-
սաղէմ եւ արար չար առաջի Տեառն։
10 Եւ ի գառնալ տարւոյն առաքեաց ար-
քայն Նաբուքոդոնոսոր եւ տարաւ զնա
ի Բաբելոն, հանդերձ յանկալի սպասուք
տանն Տեառն. եւ թագաւորեցոյց զՍե-
դեկիաս եղբայր հօր նորա ի վերայ Յու-
դայ յԵրուսաղէմ։
11 Ամաց քսան եւ միոյ էր Սեդեկիաս
ի թագաւորելն իւրում, եւ մնասասան
12 ամ թագաւորեաց յԵրուսաղէմ։ Եւ ա-
րար չար առաջի Տեառն Աստուծոյ իւ-
րոյ. ոչ պատկառեաց յերեսաց Երեմիա-
յի մարգարէի [5]եւ ի բանից" Տեառն։
13 Եւ յապստամբելն նորա ի Նաբուքոդո-
նոսորայ արքայէ, եւ անցանելոյ զերդ-
մանէրն զոր երդմնեցոյց զնա Աստուած
իւր, խաւսոյցոյց զպարանոց իւր, եւ
զսիրտ իւր կարծրացոյց՝ ոչ եւս դառ-
14 նալ առ Տէր Աստուած Իսրայէլի։ Եւ
ամենայն [6]վհատաւորքն Յուդայ, եւ քա-
հանայքն" եւ Ժողովուրդք երկրին յա-
ճախեցին անօրինել անօրէնութիւնս ըստ
գարշելեացն ազգացն, եւ պղծեցին զտունն
15 [7]Տեառն յԵրուսաղէմ։ Եւ առաքեաց Տէր
Աստուած հարցն նոցա ի ձեռն մարգա-
րէիցն [8]կանխեալ առաքեաց ղնրնչուակս
իւր"։ վասն զի խնայէր ի Ժողովրդին
16 իւր եւ ի սրբութիւնն իւր։ Արհամար-
հէին զնրնչուակսն նորա, եւ անպոռնկէին
զբանսն նորա, եւ խաղ առնէին զմար-
գարէսն. մինչեւ եղեւ բարկութիւն
Տեառն ի վերայ Ժողովրդեան իւրոյ, եւ
ոչ եւս գոյր այնուհետեւ նոցա բժշկու-
17 թիւն։ Եւ ած ի վերայ նոցա զթագաւ-
սն Քաղդէացւոց. կատարեաց զերկ-
առասարսն նոցա սրով ի սուրբ տեղիս
իւրոյ, եւ ոչ խնայեաց [9]ի Սեդեկիաս.
կուռանայ նոցա ոչ ողորմեցաւ, եւ զծերս
նոցա զամենեսեան մատնեաց ի ձեռս
18 նոցա"։ Եւ զամենայն սպաս տանն Աս-
տուծոյ զմեծամնծս եւ զվսրբոնս, եւ
[10]զամենայն գանձս" արքային եւ մեծա-
մեծացն, զամենայն տարաւ ի Բաբելոն։
19 Եւ այրեաց զտունն Տեառն, եւ կործա-
նեաց զպարիսպսն Երուսաղէմի, եւ զա-
պարանսն որ ի նմա այրեաց հրով, եւ
զամենայն անօթ զեղեցիկ սպականեաց։
20 Եւ զերեայս [11]գինացորդսն ի Բաբելոն.
եւ էին անդ՝ նմա եւ որդւոց նորա ի
ծառայութիւն, մինչեւ ի թագաւորու-

---

[1] ՆԵԲ. եւ արար չար յաչս Տեառն Աստուծոյ իւրոյ [2] ՆԵԲ. տանել [3] ՆԵԲ. գարշելութիւնսն Նորա զոր արար եւ որ ինչ գտաւ ի նմա [4] ՆԵԲ. թագաւորացն Իսրայէլի եւ Յուդայ

[5] ՆԵԲ. ի բերանոյ [6] ՆԵԲ. իշխանք քահանայից [7] ՆԵԲ. Տեառն զոր սրբեալ էր [8] ՆԵԲ. կանխելով եւ առաքելով [9] ՆԵԲ. երիտասարդին եւ կուսին, ծերոյն եւ ալեւորին. զամենեսեան մատնեաց ի ձեռս նորա [10] ՆԵԲ. զգանձս տանն Տեառն, եւ զգանձս [11] ՆԵԲ. զինացեալսն ի սրոյ

21 թիւնն [1]Մարաց. Առ ի լնուլ բանին Տեառն
ի բերանոյ Երեմիայի, մինչեւ ընկալաւ
երկիրն զշաբաթս իւր. եւ չարաթանա-
լով զամենայն աւուրս աւերածին իւրոյ,
չաբաթացաւ ի կատարումն ամացն եւ-
թանասնից։
22 Յառաջնում ամին Կիւրոսի արքայի
Պարսից, յեւս ընդոյ բանին Տեառն ի բե-
րանոյ Երեմիայի, զարթոյց Տէր զհոգի

[1]Եբր. Պարսից

Կիւրոսի Պարսից արքայի. եւ պատուի-
րեաց քարոզել յամենայն թագաւորու-
թիւնն իւրում ձրով եւ ասել,
23 Այսպէս ասէ Կիւրոս արքայ Պարսից.
Զամենայն թագաւորութիւնս երկրի ետ
ինձ Տէր Աստուած երկնից. եւ նա պա-
տուիրեաց ինձ շինել իւր տուն յԵրու-
սաղէմ ի Հրէաստանի։ Որ ոք ի ձէնջ
յամենայն ժողովրդենէ նորա իցէ, Տէր
Աստուած իւր եղիցի ընդ նմա, եւ ելցէ։

Ե Զ Ր

ԳԼՈՒԽ Ա

1 ՅԱՌԱՋՆՈՒՄ ամին Կիւրոսի արքային Պարսից, ի կատարել բանին Տեառն ի բերանոյ Երեմիայի մարգարէի, զարթոյց Տէր զոգին Կիւրոսի թագաւորին Պարսից, եւ ետ հրաման պատուիրանի յամենայն թագաւորութիւնսն իւրում, եւ գրեաց առ ամենեսեան օրինակ զայս.

2 Այսպէս ասէ Կիւրոս թագաւոր Պարսից. Զամենայն թագաւորութիւնս երկրի ետ ինձ Տէր Աստուած երկնից, եւ նա հրամայեաց ինձ առնել եւ չինել նմա
3 տաճար յերուսաղէմ Հրէաստանի. Ո ոք եւ իցէ ի ձեզ յամենայն ժողովրդեան Տեառն, ընդ որում է Աստուած նորա ընդ նմա, ելցէ յերուսաղէմ Հրէաստանի եւ չինեսցէ զտունն Տեառն Աստուծոյ Իսրայելի. եւ ինքն Աստուած որ բնակեալ է յերուսաղէմ՝ եղիցի ընդ նմա,
4 [1]եւ զամենայն պատրաստութիւնն իւր առցէ ընդ իւր, եւ տարցի ի տեղին յայն ուր ինքն ընակեսցէ. եւ առցէ այր ընդ իւր զամենայն կազմած իւր՝ որ ինչ եւ իցէ, արծաթեղէն եւ ոսկեղէն, եւ զայլ կահ եւ զանասուն՝ հանդերձ ընկերօք իւրեանց առցեն ընդ իւրեանս" ի պատրաստութիւնն տաճարին Տեառն Աստուծոյ յերուսաղէմ.

5 Եւ յարեան իշխանք հայրապետաց որդւոցն Յուդայ եւ Բենիամինի, եւ քահանայքն եւ Ղեւտացիք ամենեքեան՝ զորոց զարթոյց Տէր Աստուած զոգիս նոցա ելանել եւ չինել զտաճարն Տեառն
6 Աստուծոյ յերուսաղէմ. Եւ ամենեքեան որ չուրջ էին գնոքօք՝ օժնէին եւ զօրացուցանէին զձեռս նոցա՝ տալով արծաթ եւ ոսկի եւ զկահ եւ զանասուն, եւ [2]ընծայիւք եւ պատարագօք լցուցանէին գնոսա".

7 Եւ թագաւորն Կիւրոս ետ բերել զամենայն սպասս եւ զկահ տաճարին Տեառն զոր առ Նաբուքոդոնոսոր յերուսաղէմէ, եւ ետ ի պահ ի տուն աստուածոյ
8 իւրոյ. Ետ բերել զայն ամենայն Կիւրոս թագաւոր Պարսից ի ձեռն Միթրադատայ գանձապետի, եւ համարեալ՝ ետ
9 [3]յԱմանիատար իշխան Բուդայ. Եւ այս է թիւ համարուցն. [4]զոհարանք ոսկեղէնք՝ երեսուն, եւ [4]զոհարանք սպասուն արծաթեղէնք՝ [5]հազար քսան եւ
10 հինն, Սկաւառակք ոսկիք՝ երեսուն, եւ
11 [6]արծաթեղէնք՝ կրկին" հազար. Ամենայն կահք ոսկեղէնք եւ արծաթեղէնք՝ հինգ հազար եւ չորեք հարիւր. [7]Եւ ընդ ամենայն որ էին ընդ Սամանիատարայ եւ" ընդ ելելոյ գերութեանն ի Բաբելոնէ յերուսաղէմ.

ԳԼ. Բ

1 Ա՛յս են [8]որդիքն Իսրայելի՝ ըստ իւրաքանչիւր տոհմացն" որ ելանէին ի գերութենէն զոր գերեաց Նաբուքոդոնոսոր թագաւոր Բաբելացւոց ի Բաբելոն, [9]դարձ եւ դարձոյց Կիւրոս ի Բաբելոնէ" յերուսաղէմ եւ ի Հրէաստան՝ այր ի իւրաքանչիւր քա-
2 ղաքս. Եւ որք էին գալեալ ընդ Զորաբաբելի, Յեսուա, Նէեմի, Սարէաս, Հռէիղեաս, Մարդոքէոս, Բաղասան, Մասփար, Բագուաւար, Հռէում, Բաանա. Այս է թիւ
3 ժողովրդեան որդւոցն Իսրայելի. Որդիք Փարոսայ՝ երկու հազար հարիւր եւ թսան-
4 սուն եւ երկու, Որդիք Սափատայ՝ [10]չո-

[1] ՆԲԳ. Եւ ամենայն մնացորդ ի տեղիս տեղիս յորս պանդխտեալ իցէ. օգնեսցեն նմա արք տեղւոյն նորա ոսկւով եւ արծաթով, կահիւք և անասնովք, թող զկամաւոր ընծայս,

[2] ՆԲԳ. ընծայս պատուականս, թող զամենայն նուէրս կամաւոր [3] ՆԲԳ. ցԱմաբասար [4] ՆԲԳ. կոնքք [5] ՆԲԳ. Հազար, դանակք [6] ՆԲԳ. սկաւառակք արծաթեղէնք երկրորդ կարգի չորեքհարեւր տասն, այլ եւս ամանք [7] ՆԲԳ. Զամենայն եհան Ասաբասար [8] ՆԲԳ. որդիք գաւառացն [9] ՆԲԳ. եւ որ դարձան [10] ՆԲԳ. երեք

րիք հարեւր եւթանասուն եւ երկու.
5 Որդիք Սրհայ՝ եւթն հարեւր եւթա-
6 նասուն եւ [1]վեց, Որդիք [2]Նեփթաղի-
մի Մալաթացւոց եւ՝ որդւոց Յեսուայ
եւ Յովաթայ՝ երկու հազար ութ հա-
7 րեւր եւ երկոտասան, Որդիք Յեզամայ՝
[3]երկու հազար երկերիւր յիսուն եւ չորս,
8 Որդիք Զաւնայ՝ իննն հարեւր քսուա-
9 սուն եւ հինգ, Որդիք [4]Քորրայ՝ եւթն
10 հարեւր [5]յիսուն, Որդիք Բանեայ՝ [6]հա-
11 զար քսուասուն եւ ութ՝, Որդիք Բի-
բեայ՝ [7]ութ հարեւր քսան եւ երիք,
12 Որդիք [8]Աբգեայ՝ երիք հազար երիք հա-
13 րեւր՝ քսան եւ երկու, Որդիք Ադոնի-
կամայ՝ [9]ութ հարեւր եւթանասուն եւ
14 եւթն՝, Որդիք [10]Բաեւրայ՝ երկու հազար
15 [11]ութ հարեւր՝ եւ վեց, Որդիք Ադո-
նեհամ՝ չորիք հարեւր յիսուն եւ չորս,
16 Որդիք Աթեր Եզեկեայ՝ իննսուն եւ [12]վեց,
17 Որդիք Բեսսեայ՝ երիք հարեւր քսան եւ
18 երիք, Որդիք Յարեփայ՝ հարեւր եւ եր-
19 կոտասան, Որդիք Ասուր՝ երկերիւր
20 քսան եւ երիք, Որդիք Դալեփի՝ իննս-
21 սուն եւ հինգ, Որդիք Բեթզեհեմ՝ հա-
22 րեւր քսան եւ երիք, [13]Որդիք Նետո-
23 փայ՝ յիսուն եւ վեց, [13]Որդիք Անաթովթի՝
24 հարեւր քսան եւ ութ, Որդիք Ասմաւթի
25 քառասուն եւ երկու, Որդիք Կարիաթ-
թարիմ, Քափիրայ եւ Բերովթ՝ եւթն հա-
26 րեւր քառասուն եւ երիք, Որդիք Ռա-
մայ եւ [14]Գայեբայ՝ հազար՝ քսան եւ
27 մի, [13]Որդիք Մաքմաս՝ հարեւր քսան եւ
28 երկու, [13]Որդիք Բեթելայ եւ [15]Յեդեայ՝
29 չորիք հարեւր՝ քսան եւ երիք, Որդիք
30 Նաբովթի՝ յիսուն եւ երկու, Որդիք Մա-
31 կբիս՝ հարեւր յիսուն եւ վեց, Որդիք
[16]Եղեմարայ՝ հազար երկերիւր յիսուն եւ
32 չորս, Որդիք Լոմ՝ երիք հարեւր քսան,
33 Որդիք Ղիպղան, Ղոփրագիղ եւ Ոնոյ՝ եւթն
34 հարեւր քսան եւ հինգ, Որդիք Երիքովայ՝
35 երիք հարեւր քառասուն եւ հինգ, Որդիք
Սեննայ՝ երիք հազար վեց հարեւր երեսուն
36 [17]Եւ որդիք քահանայիցն՝ որդիք Յե-
դաւայ տանն Յեսուայ [18]Յովսեդեկեանց՝

37 իննն հարեւր եւթանասուն եւ երիք,
38 որդիք Եմերայ հազար յիսուն եւ երկու,
որդիք Փասուրայ հազար երկերիւր քառա-
39 սուն եւ եւթն, Որդիք Երեմայ հազար
[18]եւթն հարեւր՝։
40 Ղեւտացիքն, որդիք Յեսուայ եւ Կադմիէլ
որդւոցն Ովդուեայ՝ եւթանասուն եւ
չորք։
41 Եւ որ էին սաղմոսասացք եւ երգեցիկք,
որդիքն Ասափայ՝ հարեւր քսան եւ ութ։
42 Որդիք դռնապանացն, որդիք Սեղում,
որդիք Ատաեր, որդիք Տեղմոն, որդիք
Ակուբ, որդիք Ատիտայ, որդիք Սոբա-
ի, ամենեքեան հարեւր երեսուն եւ իննն։
43 Եւ [19]Նաթինայ՝ որդիք Սուեղայ, որդիք
44 Ասուփայ, որդիք Տաբաովթ, Որդիք Կե-
45 րոս, որդիք Սիայ, որդիք Փադովն, Որ-
դիք Ղաբանայ, որդիք Ագաբայ, որդիք
46 Ակուբ, որդիք Ագաբ, որդիք Սաղա-
47 մէլ, որդիք Անան, Որդիք Գեդդէլ, որ-
48 դիք Գեար, որդիք Հոագեայ, Որդիք
Հասանովն, որդիք Նեկովգան, որդիք
49 Գազամ, Որդիք Գազայ, որդիք Փասէ,
50 որդիք Բասի, Որդիք Ասենայ, որդիք
51 Մաանիմ, որդիք Նեփուսիմ, Որդիք
Բակուբ, որդիք Ակուփայ, որդիք Արուր,
52 Որդիք Բասղովթ, որդիք Միդայ, որ-
53 դիք Ագսայ, Որդիք Բարկոս, որդիք Սի-
54 սարայ, որդիք Թոմայ, Որդիք Նեսեայ,
55 որդիք Ասուփայ։ Որդիք Ծառայից Սողո-
մոնի, որդիք Սոտէ, որդիք Սոփերաթ,
որդիք Փակրեթ բայ, որդիք Յեդայ, որդիք
56 [20]Կերգովն, որդիք Կերդիէլ, Որդիք Սա-
57 փատեայ, որդիք Ատտիլ, որդիք Փաքե-
րեթ Սեսսուրայ Ասպսեմ, որդիք Եմէլի Ամենայն
58 [19]որդիք Նաթինայ՝ եւ որդիք Ծառայից
Սողոմոնի, երիք հարեւր իննսուն եւ երկու։
59 Եւ այս են ելեալքն [21]ի Թելմելէդ Թե-
լարիսա, Քերուբ, Եդար՝ Եմեր՝, եւ ոչ
կարացին պատմել զտուն հայրն իւ-
րեանց, եւ թէ իցէ զաւակ նոցա յիսրա-
60 յելէ. Որդիք Դալայայ, որդիք Տոբիու,
որդիք Նեկովթայ, վեց հարեւր յիսուն
61 եւ երկու։ Եւ յորդւոց քահանայիցն՝
որդիք Աբայայ, որդիք Ակուս, որդիք
Բերզելայի. [22]յորմէ առին՝ ի գաւառացն
Բերզելայի Գաղաադացւոյ [23]իբրեանց կա-

[1]ԵՖԲ. հինգ [2]ԵՖԲ. Փաաթ-մովաբայ. [3]ՅԵՖԲ. պ-ւ-ռ [4]ԵՖԲ. Զաքքայ [5]ԵՖԲ. եւ վաթ-
սուն [6]ԵՖԲ. վեց հարեւր քառասուն եւ երկու
[7]ԵՖԲ. վեց [8]ԵՖԲ. Ագգադայ՝ հազար երկերիւր
[9]ԵՖԲ. վեց հարեւր վաթսուն եւ վեց [10]ԵՖԲ. Բա-
գուէի [11]ԵՖԲ. յիսուն [12]ԵՖԲ. ութ [13]ԵՖԲ.
Աքք [14]ԵՖԲ. Գաբայայ՝ վեցհարեւր [15]ԵՖԲ.
Գայեայ՝ երկերիւր [16]ԵՖԲ. միւսոյ Եղամայ
[17]ԵՖԲ. Քահանայք

[18]ԵՖԲ. եւթնհարիւրսան [19]ԵՖԲ. Նաթանայիմք՝
(տե՛ս Նէեմ. Ը. 60.) [20]ԵՖԲ. Գերկոփն, որդիք
Կեղդելի [21]ԵՖԲ. ի Թելմեղեայ, ի Թեղհար-
սայ, ի Փերուբայ, յԱդդանայ, յԱմմերայ
[22]ԵՖԲ. որ առ [23]ԵՖԲ. իւր կին, եւ կոչեցաւ
քան անուանց

նայս , եւ եղեւ մոռացումն անուանց"
62 նոցա ։ Եւ խնդրեցաւ ազգաւանդար գրոց
նոցա եւ ոչ գտաւ , եւ որոշեցին զնոսա
63 ի քահանայիցն ։ Եւ ասէ [1]Նէեմիա թիրսա
ցնոսա , Զէ արժան ձեզ ուտել ի սրբու-
թիւն սրբութեանցն՝ մինչեւ յարիցէ
քահանայապահ եւ յայտնիցէ ցուցցէ ,
եւ նովաւ լուսաւորեսցի ամենայն մին-
չեւ ի սպառ"։
64 Եւ էր ամենայն եկեղեցին միանգա-
մայն , չորք բիւրք եւ երկու հազար եւ
65 երեք հարիւր վաթսուն , Առանց ծառա-
յից եւ աղախնայ [2]Լուսինոյ , եւ կրասերք
նոցա" եւքն հազար երեք հարիւր երե-
սուն եւ եւթն , եւ երգիչք սաղմոսա-
ցաց նոցա արք եւ կանայք՝ երկերիւր ։
66 Ձիք նոցա՝ եւքն հարիւր երեսուն եւ
վից , Ջորիք նոցա՝ երկերիւր քառասուն
67 եւ [3]եւթն , Ուղտք նոցա՝ չորիք հարիւր
երեսուն եւ հինգ , էշք նոցա՝ վից հա-
զար եւթն հարիւր քսան ։
68 Եւ իշխանք հայրապետացն որք եկին
ի տունն Տեառն յԵրուսաղէմ , նպաս-
տաւորեցան ի տունն Աստուծոյ ի պատ-
69 րաստութիւն չինուելոյ նորա ։ Արչափ
եւ էր ի զօրութիւն նոցա , տալն ի
գանձս գործուածոյ նմին՝ ոսկի դրամս
ութ հազար , եւ [4]հազար , եւ հարիւր պատմուճանս քահա-
70 նայից ։ Եւ նստան քահանայքն եւ Ղեւ-
տացիքն , եւ ի ժողովրդոյն , եւ երգի-
չքն եւ դռնապանքն եւ [5]նաթինացիքն ի քաղաքս իւրեանց , եւ ամենայն
Իսրայէլ յերկրանչիւր քաղաքս ։

Գլ. Գ

1 Եւ ժամանեալ եհաս ամիսն եւթնե-
րորդ . եւ էին որդիքն Իսրայէլի յիւրա-
քանչիւր քաղաքս . եւ ժողովեցան ա-
մենայն ժողովուրդն իբրեւ զմի այր
2 րուսաղէմ ։ Եւ յարեաւ Յեսու Յովսե-
դեկեանց եւ եղբարք նորա քահանայք ,
եւ Զորաբաբէլ որդի Սաղաթիէլի եւ
եղբարք նորա [6]ից , եւ չինեցին սեղան
զոնից Տեառն Աստուծոյ Իսրայէլի՝ մա-
տուցանել ի վերայ նորա ողջակէզս , բան
զրիւոցն յօրէնսն Մովսիսի առնն Աստու-

3 ծոյ ։ Եւ պատրաստեցին զսեղանն բան
կազմուածեան իւրում . վասն զի կաս-
կածէին յազգացն երկրին . եւ մատուցին
ի վերայ նորա ողջակէզս [6]վաղվաղակի
Տեառն [6]Աստուծոյ իւրեանց" , մի՛ ընդ
4 առաւօտս , եւ մի՛ ընդ երեկոյս ։ Եւ ա-
րարին զտօն տաղաւարահարացն բան
գրելոցն , եւ ողջակէզս օր բան օրէ [7]ի
մի թուեալ որպէս եւ պատուիրեալ էր
5 նոցա ։ Եւ մատուցանէին այլ եւս ող-
ջակէզս" յամսագլուխս եւ [6]ի չարաթս ,
եւ" յամենայն սոսն սուրբկանաց Տեառն
սրբութեանց , եւ զամենայն [8]ակամա-
6 յին զոր մեզանչէին" Տեառն Եւ յառա-
ջնում ամսեանն եւթներորդին սկան
մատուցանել ողջակէզս Տեառն [6]Աստու-
ծոյ , եւ սանն Տեառն ոչ եւս էր հիմն
7 արկեալ ։ Եւ եառն արծաթ քարտա-
սացն եւ հրեսանցն , եւ կերակուրս եւ
ըմպելիս եւ ձէթ Սիդոնացւոց եւ Տիւ-
րացւոց , եւ բերէին փայտս մայրս ի Լի-
բանանէ ընդ ծով ի Յոպպէ , որպէս եւ
հրամայեաց նոցա Կիւրոս թագաւոր
Պարսից ։
8 Եւ յերկրորդ ամի եղանելոյ նոցա՝ յոր-
ժամ եկին ի տաճարն [9]Տեառն յԵրուսա-
ղէմ յամենեանն երկրորդի , սկսան Զորա-
բաբէլ Սաղաթիէլեանց եւ Յեսու Յով-
սեդեկեանց , եւ եղբարք նոցա , քահա-
նայքն եւ Ղեւտացիքն եւ ամենայն ե-
կեալքն ի գերութենէն յԵրուսաղէմ . եւ
կացուցին զՂեւտացիսն ի քահանայից
եւ ի վեր՝ վերակացուս ի վերայ գործոց
9 տանն Տեառն ։ Եւ [10]Յեսու եւ որդիք նո-
րա եւ եղբարք նորա , Կադմիէլ եւ որ-
դիք նորա , որդիք Յուդայ [11]վերա-
կացուք՝ ի վերայ գործոյ" տանն Տեառն ,
[12]որդիք Ենադադ եւ եղբարք նորա" Ղեւ-
տացիք ։
10 [13]Եւ արկին հիմն եւ սկսան չինել զտունն
Տեառն , եւ կային քահանայքն" զգես-
տեալ պատմուճանաւն , եւ հարկանէին
զփող իւրեանց . եւ Ղեւտացիքն որդիք
Ասաւայ ձնծղայիւք օրհնէին զՏէր [6]Ա-

---

[1] ԵԲէր· Ասէ երեսից ցնոսա մի՛ ուտել ի սրբու-
թեանցն՝ մինչեւ յարիցէ քահանայ Ուրիմու և
Թումիմու [2] ԵԲէր· ի բեանց որ էին [3] ԵԲէր·
հինգ [4] ԵԲէր· հազար , եւ ութ արծաթի՝
հինգ հազար [5] ԵԲէր· Նաթինայիկք [6] ԵԲէր· գ-ից-ոյ

[7] ԵԲէր· թուով ըստ պատուիրանին օր բան օրէ ։
(5) Եւ յետ այնորիկ մատուցանէին հանապա-
զորդ ողջակէզս եւ [8] ԵԲէր· զկամաւոր նուէրն
զոր մատուցանէին [9] ԵԲէր· Աստուծոյ [10] ԵԲէր·
Եկաց Յեսու [11] ԵԲէր· իբրեւ զմի հսկել ի վերայ
գործուածոցն [12] ԵԲէր· որդիք Ենադադայ , որ-
դիք նոցա եւ եղբարք նոցա [13] ԵԲէր· Յորժամ
արկին հիմն չինողքն տաճարին Տեառն , կացու-
ցին քահանայս

տուած , որպէս եւ կարգեաց Դաւիթ
11 թագաւոր Իսրայելի. Եւ սահն այր ըղնկեր
իւր , Խոսուանի եղերութ եւ զոհացա-
րութ զՏեառնէ , զի քաղցր է , զի յաւի-
տեան է ողորմութիւն նորա ի վերայ Իս-
րայելի ։ Եւ ամենայն ժողովուրդն մեծա-
ձայն օրհնէին զՏէր [1]Աստուած Իսրայելի".
վասն զի անկան հիմունք տանն Տեառն ։
12 Եւ բազում ի քահանայիցն եւ ղՂեւ-
տացւոցն եւ յիշխանաց հայրապետացն ,
ի ծերոցն որոց տեսեալ էր [2]զառա-
ջարն Տեառն", եւ յայնժամ տեսին աչօք
իւրեանց զհիմն նորա , լային մեծաձայն .
եւ [3]ժողովուրդքն ամենայն նշանակէին
զուրախութիւնն եւ բարձրացուցանէին
13 զձայնս իւրեանց . Եւ ոչ ոք էր ի ժո-
ղովրդեանն որ կարէր [4]կրեալ եւ լսել"
զձայն ուրախութեանն[5]. վասն զի ժողո-
վուրդն ազաղակէր մեծաձայն , եւ լսելի
լինէր ձայնն մինչեւ ի հեռաստ տեղիս ։

ԳԼ . Ի

1 Եւ լուան որք նեղէին զՅուդա եւ զԲե-
նիամին , եմք որդիքն Իսրայելի եւ գալո-
ւստ ի գերութենէն չինեն զտունն Տեառն Աս-
2 տուծոյ Իսրայելի , Եւ մերձեցան առ
Զորաբաբէլ եւ առ իշխանս հայրապե-
տացն , եւ ասեն ցնոսա , Շինեսցուք եւ
մեք ընդ ձեզ , [6]եւ որպէս եւ դուք
խնդրեսջուք ի Տեառնէ Աստուծոյ ձեր-
մէ . քանզի" եւ մեք նմայնպէս զոհեմք
զոհս , յօրէ յորմէ Ասորգան թագաւոր
3 Ասորւոց ած զմեզ այր , Եւ ասեն ցնո-
սա Զորաբաբէլ եւ Յեսու [1]Յովսեդե-
կեանց եւ մնացորդք իշխանաց հայրա-
պետացն Իսրայելի , Ոչ է արժան մեզ
եւ ձեզ հասարակ շինել զտունն [1]Տեառն
Աստուծոյ մերոյ . մեք մեզն իսկ շի-
նեսցուք զտունն Տեառն Աստուծոյ Իս-
րայելի , որպէս հրամայեաց մեզ Կիւրոս
4 թագաւոր Պարսից ։ Եւ ժողովուրդք
երկրին այնորիկ լքուցանէին զձեռս ժո-
ղովրդեանն Հրէաստանի , եւ խափա-
5 նէին զնոսա ի շինելոյ ։ Եւ կալեալ վար-
ձառուս՝ խորհէին զնոսա խափանել զա-
մենայն աւուրս կիւրոսի թագաւորու-
թեանն Պարսից մինչեւ յաւուրս Դարեհի
6 Պարսից արքայի ։ Ի թագաւորութեանն

[1]Յ‌ԵՒ . պ‌ԼՈ‌Ե [2]ՆԵՐ . զառաջին տունն [3]ՆԵՐ . բաղում ազաղակեին ուրախութեամբ՝ բարձ-
բացուցեալ [4]ՆԵՐ . ընդունել [5]ՆԵՐ‌ՐԵՔԷՆ յ‌ՈՒԼ‌Ը‌Ո‌Ւ , ի ձայնէ լալոյ ժողովրդեանն [6]ՆԵՐ . զի որ-
պէս դուք , խնդրեմք զԱստուած ձեր ։

7 Աստասդերու Պարսից", ի սկզբան թա-
գաւորութեան նորա՝ գրեցին Թուղթ
8 որք բնակեալ էին ի Հրէաստանի եւ
յերուսաղէմ ։

(7) Եւ յաւուրս Արտաշիսի դրեցին Բեսեղամ,
Միթրիդատէս , Տաբեել եւ այլ ընկերք նոցա
առ Արտաշէս արքայ Պարսից եւ գիր նամակին
էր գրեալ Արտաբէրն եւ մեկնեալ Արտաբէրն ։
(8) Հռեհում հրամանատար եւ Սամսայի գպիր
գրեցին Թուղթ հակառակ Երուսաղեմի առ
Արտաշէս արքայ օրինակ զայս ։ (9) Յայնժամ
Հռեհում հրամանատար եւ Սամսայի գպիր և
այլ եւս ընկերք նոցա, Դինայիք, Ափարսաթա-
քայիք, Տարփաղեցիք , Ափերսայիք , Արքուե-
ցիք , Բաբելոնացիք , Նուշանացիք , Դաւեցիք ,
Եղամացիք ։ (10) Եւ այլ ազգք զըրս ած
Ասենափար մեծ եւ պատուական , եւ բնակե-
ցոյց ի քաղաքս Սամարացւոց եւ զմնացեալսն
յայս կողմն Գետոյն , այլովքն հանդերձ ։ (11)
Եւ այս են բանք Թղթոյն զոր առաքեցին նոքա
առ Արտաշէս թագաւոր ։

Ծառայք քո որ եմք բնակեալ յայս կողմն
Գետոյն, այլովքն հանդերձ ։ (12) Գիտութիւն
լիցի քեզ , թագաւոր , զի Հրեայքն որ ելին ի
քէն , եկին առ մեզ յերուսաղէմ. շինեն զքա-
ղաքն ապստամբ եւ զպանտ , եւ պարիսպս
կանգնեցին եւ հիմունս եդին ։ (13) Այժմ
յայտնի լիցի քեզ արքայ, զի եթէ քաղաքն այն
շինեցին, և պարիսպք նորա կանգնեցին, հասս և
տուրս եւ մաքս քոյ սովորութեանն ոչ տացեն,
եւ ի վախճանի ուշիցես գնաս թագաւորաց ։
(14) Եւ արդ քանզի զաղ մեր յաղբուհուստ
ուտեմք , եւ չէ արժան մեզ տեսանել զվնաս
թագաւորին, վասն այսորիկ առաքեցաք և ազդ
արարաք արքայի ։ (15) Զի խնդրեսցես ի գիրս
հիշատակարանաց հարցն քոց, եւ գտցես ի գիրս
պատմութեանց, և գիտասցես զի քաղաքն այն
է քաղաք ապստամբ և վնասակար թագաւորաց
եւ գաւառաց , եւ դաւաճանութիւնս գործե-
ալ են ինքեան ի վաղուց անտի, և վասն այսորիկ
կործանեալ է քաղաքս ։ (16) Յայտ առնեմք
թագաւորիդ , զի եթէ քաղաքս այս շինեսցի ,
եւ պարիսպք նորա կանգնեսցին , այնուհետեւ
ման որ յայսկոյսGետոյն է՝ ոչ լինիցի այն քեզ ։

(17) Եւ առաքեաց թագաւորն առ Հռեհում
հրամանատար եւ առ Սամսայի գպիր եւ առ
այլ ծառայակից նորա որք բնակեալ էին ի
Սամարիա , եւ առ այլ մնացորդս որ յայն
կողմն Գետոյն , եւ ասէ , Խաղաղութիւն ,
այլովքն հանդերձ ։ (18) Թուղթն զոր առա-
քեցէք առ իս՝ յայտ յանդիման ընթերցաս
առաջի իմ; (19) Եւ տուաւ լինել հրաման եւ
խնդրեցին եւ գտին , զի քաղաքն այն ի վաղուց
անտի հակառակ թագաւորաց լեալ է , եւ
ապստամբութիւն եւ դաւաճանութիւն լինէին
ի նմա ։ (20) Եւ թագաւորք հզօրք եղեն ի վե-
րայ Երուսաղեմ , եւ տիրէին ամենեցուն որ
յայսկոյս Գետոյն էին , եւ հաս եւ տուրս եւ
մաքս քոյ սովորութեան տային նոցա ։ (21) Եւ
արդ տուք հրաման դադարեցուցանել զարան

1 Եւ գրեցին յաւուրս Արտաշէսի Մեծ-
բիգատէս Տարեէլ՝ հանդերձ եւ այլ ծա-
ռայիւք նորա հարկահանօքն. եւ գրե-
ցին զիր Աստրկէն, եւ էր գնա թագա-
8 ւանեալ Հէդում Բաագաւոմ՝ եւ այս են
բանք թղթոյն զոր առաքեցին նորա ա-
Արտաշես թագաւոր. Ծառայք քո՝ ար
9 նմք բնակեալ յայս կողմն Գետայն, Հէ-
դում Բաագաւոմ եւ Սամսայէ գրիչ, եւ
այլ եւս ծառայակիցք մեր, Դենինէս,
Սիտրապաքսիէ, Տարփապէէ, Աֆար-
սէէ, Աքաւէէ, Բաբելացիէ, Սուսանա,
10 Քեէգաւէէ, եւ այլ մնացեալ ազգք,
զոր բնակեցոյց Ասենափար մեծ եւ պա-
ծառական ի քաղաքս Սամարիա, այսինքն
Սամարիա յայս կողմն Գետայն, առ Ար-
13 ծաւա թագաւոր խաղաղութիւն։ Այժմ
գիտելի լիցի քեզ, թագաւոր, զի
եթէ քաղաքն այն չինեսցի եւ պարիսպք
նորա կանգնեսցին, հարկս քեզ ոչ ար
14 ծայ. Այլ եւ ընդդիմադարձ եւս լիցին
թագաւորաց. եւ զայնպիսի յանդգնու-
թիւն մեք ընդդէմ թագաւորաց՝ ոչ կա-
րիմք տեսանել. եւ վասն այսր ամե-
15 նայնի գրեցաք առ ձեզ, թագաւոր, Զի
տեսցես եւ պարայես եւ գտցես ի գիրս
յիշատակարանաց հարցն քոց. եւ գի-
տացեալ եղիցէ քաղաքս այս ապստամ-
բողաց է, եւ յամենայն ժամ ընդդէմ
կացին թագաւորաց, եւ ապստամն են
ամենայն փախստէից յամենայն ժամա-
նակս յաւերմանէ, եւ վասն այսորիկ
16 քաղաքս այս խոկ ասերեցաւ։ Արդ առաք
մեք քեզ գիտել, թագաւոր, եթէ քա-
ղաքս այս չինեսցի եւ պարիսպք սորա
կանգնեսցին՝ չէ քեզ խաղաղութիւն։
17 Եւ առաքեաց թագաւորն առ Հէդում
Բաագաւոմն եւ Սամսայէ գրիչ. եւ այլ
ծառայակցաց նոցա որք բնակեալ էին
ի Սամարիա, եւ մնացորդացն յայն կողմն
18 Գետայն, եւ ասէ. Խաղաղութիւն ընդ
ձեզ. զնարկահանս զոր առաքեցէք առ
ես, մանաւանդ յիմ եւ ակնկատաւ-
19 ցեալ ինձ զամենայն, Հասի ի վերայ եւ
պոռ զի քաղաքդ այդ յաւիտենից ժա-
մանակաց ապստամբ է, եւ ընդդէմ թա-
20 գաւորաց լեալ է, եւ թագաւորք հզօրք
եւ բռնաւորք կացեալ են յերուսաղէմ,
բռնացեալ կալեալ զամն կողմն արեւմտից՝
յամն կողմն եփրատ գետոյ. Արդ դիք ի վե-
րայ գոյս հարկս եւ հասս, զի մի եւ այլ
21 կամակարեալ բռնասցին. Արդ այժմ առե-
նալ ձեզ անդրկոյս Բաբ, երթայք արդիւք
եւ խոտանեցէք զգործս նորա, զի մի
22 չինեսցի քաղաքն. Եւ մի՛ ներէք նոցա եւ
թագայացանէք, այլ վասն յանձին կալեալ
պահանջել զամենայն հարկս եւ գհասս.
զի մի երբեք բազմասցին եւ գօրասցին, եւ լիցին ընդդէմ թագաւորաց։
23 Յայնժամ հարկահանն Արտաշես թագա-
ւորի՝ այսինքն է Արտաչէսի՝ յերկիր
կարգաց զիրն առաքի Հէնեմիայ եւ
Սամսայի գրչի, եւ ծառայակցաց նորա.
եւ եղեալ փութապէս յերուսաղէմ եւ ի
Հրէաստան մեծաւ զօրութեամբ եւ այ-
րուձիով՝ արգելին եւ խոտանեցին
24 զՀրեայսն ի չինելոյ։ Յայնժամ խափա-
նեալ գաւարկացաւ գործ տաճարին
[1]Տեառն Աստուծոյ յերուսաղէմ, եւ էր
դադարեցեալ մինչեւ յերկրորդ ամն
Դարեհի արքայի Պարսից։

Գլ. Ե

1 Եւ մարգարէանային [2]Անգեաս եւ Զա-
քարիաս Աղգովայ, մարգարէանային ի
վերայ Հրէաստանի եւ Երուսաղէմի՝
յանուն [1]Տեառն Աստուծոյ Իսրայէլի։
2 Յայնժամ յարեան Զորաբաբէլ Սաղա-
թիէլեանց եւ Յեսու Յովսեդեկեանց՝ եւ
սկսան չինել [3]զտունն Տեառն Աստուծոյ
Իսրայէլի՝, եւ միաբանեալ ընդ նոսա
մարգարէքն Աստուծոյ օգնէին նոցա։
3 Յայնմ ժամանակի եկին առ նոսա Թա-
թանա իշխան կողմանց գետայն եփրա-
տա, եւ Սաթրաբուզան եւ ծառայա-
կիցք նոցա, եւ ասեն ցնոսա, Ո՞ հրա-
մայեաց ձեզ չինել զտունս զայս, եւ կամ
զայր բանիւ կանգնեցէք՝ զայսպիսիս զորա,
4 Եւ կամ զինչ անուանք են արանցն այ-

զայնոսիկ, եւ քաղաքն այն մի՛ չինեսցի, մինչ-
չեւ ելցէ լինին պատուէր հրամանի։ (22) Եւ
այժմ զգոյշ լերուք մի՛ ինչ վրիպել յերկիդ
յայդմիկ. զի մի՛ յաճախեսչէ աւերն ի վնաս
թագաւորաց։

(23) Արդ՝ իբրեւ պատճէն հրամարատակին
Արտաշիսի որքայի ընդ երցաս առաջի Հէդ-
ումայ եւ Սամսայեայ դպրի եւ ընկերաց նոցա,
փութացան երթալ յերուսաղէմ ի վերայ
Հրէից, եւ դադարեցուցին զնոսա զօրաւ-
թեամբ բազկի եւ բռնութեան։

---

[1] ՅԱբահ. գ-յ-ե [2] Աբահ. Անգեաս մարգարէ եւ Զաքարիաս որդի Ադդովայ մարգարէ ի վերայ Հրէից որ ի Հրէաստանի և յերուսաղէմ [3] Աբահ. զտունն Աստուծոյ որ յերուսաղէմ [4] Աբահ. զայսպիսիս զորա։ (4) Յայնժամ ասացաք ցնոսա թէ զինչ էին անուանք արանցն որ զշինուածս զայս կանգնէին

նոցիկ՝ որք են առաջնորդք չինելոց զքա-
5 զաքս զայս"։ Եւ էին այսք [1]Տեառն Աս-
տուածոյ ի վերայ [2]Հրէիցն գարձկոցն ի
գերութենէն"։ եւ ոչ խափանեցին գնո-
սա մինչեւ տային զիտել Դարեհ [3]զար-
քայի. եւ յայնժամ առաքեցին զհարկա-
հանս վասն իրացս այսոցիկ՝ զի տեզե-
կասցին զրով։

6 Եւ այս է գրեան. Թաղթանս իշխան
7 կողմանց գետոյն, եւ Սաթրաւզանէ եւ
ծառայակիցք նորա Փարաթաքեէ եւ Ար-
8 սիմ," Դարեհի թագաւորի խաղաղ թիւն
բազում։ Գիտութիւն լիցի թագաւորիդ,
զի երթեալ մեր յերկիրն Հրէաստանի [4]ի
քաղաքն երուսաղէմ, անսաք գտաճարն
Տեառն" Աստուծոյ մեծի, զի չինէին ըն-
սիր քարամբք, եւ փայտս պահանդս
դնէին յորմն. եւ գործն էր յայտզակ,
9 եւ յառաջէր ի ձեռս նոցա։ Յայնժամ
հարցաք զծերս նոցա եւ ասեմք, Ո՞
հրամայեաց ձեզ չինել զտունս զայս,
10 եւ [5]կամ զի բանիւ հաստատէք զգա՞։ Եւ
խնդրեալ զանունս առաջնորդացն, զի
տացուք տեղեկութիւն ձեզ, եւ զի գրեսց-
ցուք զանունս արանց իշխանացն նո-
11 ցա։ Եւ զայս պատասխանի արարեալ
Հրէիցն ասեն ցմեզ. Մեք եմք ծառայք
[1]Տեառն Աստուծոյ երկնի եւ երկրի, եւ
չինեմք զտունս զայս որպէս եւ էր չի-
նեալ յառաջ քան զբազում ամս, զոր
չինեաց [6]թագաւորն Իսրայէլի մեծն Սա-
զոմոն. բայց այնմ օրինակի եւ մեք հաս-
12 տատեմք զգա։ Վասն զի" հարքն մեր
բարկացուցին զԱստուած երկնի [1]եւ երկ-
րի", եւ եա զնոսա ի ձեռս Նաբուքոդո-
նոսորայ արքային Բաբելացւոց եւ Քաղ-
դէացւոց, եւ զտունս զայս քակեաց,
եւ զժողովուրդն պանդխտեացոյց ի Բա-
13 բելն։ Եւ յառաջեաւ ամի Կիւրոսի
թագաւորի Բաբելացւոց, Կիւրոս թա-
գաւոր հրամայեաց. չինել զտունս զայս
14 [1]Տեառն Աստուծոյ։ Եւ զկահ տանս [7]այ-
սորիկ զարծաթեղէնս եւ զոսկեղէնս՝
զորս Նաբուքոդոնոսոր [8]առ յերուսաղէ-
մէ, եւ եկն եբեր ի տունն աստուածոց
Բերոց", առեալ զայն Կիւրոսի թագաւո-
րի [9]ի տանէ թագաւորին, եւ եա յԱս-
15 մանասար զանձաւոր", Եւ ասէ ցնա,
Զամենայն սպասս եւ զկահ առ եւ երթ
յերուսաղէմ ի տունն Տեառն որ է անդ,
եւ [10]տայ զիր զկահ" ի տեզս իւրում։
16 Յայնժամ [11]Սամանասար եկն եւ արկ
զհիմն տաճարիս [1]Տեառն Աստուծոյ յե-
րուսաղէմ. եւ յայնմ հետէ չինեմք, եւ
17 ոչ եւս է կատարեալ։ Արդ եթէ բար-
ւոք թուի քեզ, թագաւոր, այդ արա
եւ տես ի տունս [12]պահպանութեանց գրոց
յիշատակարանաց թագաւորաց Բաբե-
լացւոց". զի գիտասցես թէ արդարեւ
Կիւրոս թագաւորն հրամայեաց չինել
[13]զտունս Տեառն ի Հրէաստանի" յերու-
սաղէմ. եւ տեզեկացեալ քո, թագա-
ւոր, վասն իրացս այսոցիկ՝ առաքիս-
ջիր առ մեզ։

Գլ. Զ

1 Յայնժամ Դարեհ թագաւոր [14]այց արար՝
խնդրեաց եւ եգիտ ի տունս թագաւո-
րաց գրոց յիշատակարանացն ի Բաբե-
2 լոնի։ Եւ գտեալ յԱմաթաս քաղաքի
Բաստանացւոց" գլուխ մի գրոց տումա-
րի, եւ գայս ինչ գրեալ էր ի գիրս յի-
շատակարանին։

3 Յամին առաջնում Կիւրոսի, Կիւրոս
թագաւոր հրամայեաց եա վասն տանն
[7]Տեառն որ յերուսաղէմ. ասէ, Շինեսցի
տաճարն [7]Տեառն, տեղին ուր զոհին
զզոհսն Տեառն. եւ [15]եա գչափ" բարձ-
րութեանն կանգնեսցեն վեհասուն, եւ լայ-
4 նութեանն կանգնեսցեն վեհասուն. Եւ
կարգք երիք ի զօրաւոր քարանց, եւ
կարգ մի փայտեղէն. եւ [16]այսպէս չի-
նեսցի եւ յարկցի ամենայն տաճարն"։
5 Եւ զկահ տանն [7]Տեառն՝ զարծաթեղէնս

---

[1] 3Աբամ. պակաս [2] Աբամ. ձերոց Հրէիցն [3] Աբամ. և բերել հրովարտակս վասն իրացս այսոցիկ։ (6) Այս է պատճէն թղթին զոր առաքեցին առ Դարեհ արքայ՝ Թաթանա իշխան յայսկոյս Գետոյն, եւ Սաթրաւզան, եւ բնակիք նոցա Աֆարաթաքացիք որ յայսկոյս Գետոյն։ (7) Եւ էր գրեալ այսպէս ի թղթին զոր առաքեցին. [4] Աբամ. ի տուն [5] Աբամ. զպարիսպս գորա կանգնել [6] Աբամ. մեծ ամն թագաւոր Իսրայէլի եւ կատարեաց։ (12) Բայց [7] Աբամ. Աստուծոյ

[8] Աբամ. տարաւ ի տաճարէն որ յերուսաղէմ, և եկն եբեր ի մեհեան Բաբելոն [9] Աբամ. ի մեհենէ անտի որ ի Բաբելոն, եւ եա զՍասաբասար զոր էր կարգել հրամանատար [10] Աբամ. տունն Աստուծոյ չինեցի [11] Աբամ. Սասրասար [12] Աբամ. գանձուց արքունի որ ի Բաբելոն [13] Աբամ. զտունն Աստուծոյ [14] Աբամ. եւ հրամայ, եւ խնդրեցաւ ի մատենադարանին ուր գանձքն պահէին ի Բաբելոն։ (2) Եւ գտեալ չեկբատանա յաքրունիս որ է յաշխարհին Մարաց [15] Աբամ. արկղն հինն նորա զօրութեամբ · չափ [16] Աբամ. ծախքն յարքունեաւս տացին

եւ զոսկեզէնս զոր երեր Նաւուքոդոնոսոր ի տանէ Տեառն յերուսաղէմ եւ եդ
ի Բաբելոն, արդ տացեն ի բաց եւ տարցեն ի տաճարն [1]Տեառն յերուսաղէմ. եւ
երթեալ տարցին ի տեղի իւր ի տունն Աս-
6 տուծոյ ուր լեալ էր։ Յայնժամ Դարեհ
եաս զկիր հրամանի իշխանաց կոզմանց
Գետոյն, Սաթրաբոզանայ եւ ծառա-
յակցաց նորա ի կոզմանս Գետոյն, եւ
7 եւս ի հեռագոյն տեղիս"։ Եւ արդ յայսմ
հետէ թոյլ տուք չինել զտունն Աստու-
ծոյ իշխանացն Հրէից եւ ծերոցն Իս-
րայելի եւ չինեսցին զտունն Աստուծոյ ի
8 տեղւոջ իւրում։ Եւ իմ [2]հրամայեալ՝ մի
ոք արգիլեալ գծերս Իսրայելի" ի չինել
զտուն Տեառն Աստուծոյ իւրեանց. [3]եւ
յիշխանութենէ թագաւորութեան իմոյ
ամենայն զգուշութեամբ ստացին զծախս
արանցն այնոցիկ եւ մի իսափանիսցին։
9 Եւ [4]զորդիս ցլուց" եւ խոյս եւ ամիկս
յոլջակէզս [5]Տեառն Աստուծոյ երկնից,
ցորեան եւ աղ եւ գինի եւ ձէթ, որ-
պէս եւ հրամայեսցին [6]քահանայապետքն
յերուսաղէմ. եւ լիցի անիսափան տուե-
նել օր ըստ օրէ [5]որպէս եւ խնդրես-
10 ցեն". Եւ մատուսցեն պատարագ ի հոտ
անուշից [5]Տեառն Աստուծոյ երկնից, եւ
աղօթս վասն կենաց թագա-
11 ւորին եւ որդւոց նորա։ Եւ յինէն եդ
հրամանս այս. եւ ամենայն մարդ որ
կացցէ ընդդէմ հրամանի իմոյ՝ [7]քակես-
ցի տուն նորա, եւ առեալ" փայտ ի
տանէ նորա ուղղեսցին եւ բեւեռեսցին
զայրն [8]ի նմա որ եկաց ընդդէմ հրա-
մանի իմոյ, եւ եղիցի նմա ի նախատինս
12 յաւիտենից"։ Եւ Աստուած՝ որոյ բնա-
կեալ է անուն նորա անդ, ելցէ եւ ա-
ւերեսցէ զթագաւորութիւնն եւ զժողո-
վուրդն, որ յանդգնեցաւ ձգել զձեռն
իւր եւ արգելուլ սպանանել զտունն
Աստուծոյ որ յերուսաղէմ. ես Դարեհ
13 Յայնմ ժամանակի [10]իշխան կոզմանց"
Գետոյն եւ Սաթրաբոզան եւ ծառա-
յակիցք նոցա, առ որս առաքեաց Դա-
րեհ թագաւոր, վաղվաղակի կատարէին
14 զհրամանս նորա։ Եւ ծերքն Հրէից [11]եւ
Ղեւտացիքն չինէին", ի ժամանակս մար-
գարէութեան Անգէայ եւ Զաքարիայ
որդւոյ Ադդովայ. եւ չինեցին եւ հաս-
տատեցին ըստ հրամանին [5]Տեառն Աս-
տուծոյ Իսրայելի. եւ որպէս հրամայե-
ցին Կիւրոս [5]թագաւոր եւ Դարեհ, եւ
ի ժամանակս Արտաչիսի թագաւորին
15 Պարսից։ Եւ որ օր երիք էր ամսոյն Ա-
դարայ, յամին վեցերորդի Դարեհի ար-
քայի, կատարեցաւ տաճարն։
16 Եւ արարին որդիքն Իսրայելի՝ քա-
հանայքն եւ Ղեւտացիքն եւ որք եկեալ
էին ի գերութենէ նաւակատիս տանն
17 [12]Տեառն մեծաւ ուրախութեամբ։ Եւ
մատուցանէին ի նաւակատիս տանն
[12]Տեառն զուարակս հարիւր, խոյս եր-
կուերիւր, գառինս չորեքհարիւր, եւ ա-
միկս յայծեաց վասն մեղաց ամենայն
Իսրայելի՝ երկոտասան, ըստ թուոյ գլ-
18 ուխն Իսրայելի։ Եւ կացուցին զքահա-
նայսն ըստ ուղեցայիւրանց, եւ զՂեւտա-
յիսն ըստ վիճակի բաժանման իւրեանց
ի պաշտաւորութիւնն [13]Տեառն Աստուծոյ
յերուսաղէմ, երկոտ հաւարեւ երկկերիւր,"
որպէս եւ գրեալ է ի գիրս Մովսիսի։
19 Եւ արարին որդիքն Իսրայելի եկեալք
ի գերութենէն զզատիկն Տեառն ի չո-
րեքտասաներորդում ամսոյն առաջնոյ.
20 [14]Եւ երեկան քահանայքն եւ Ղեւտա-
յիք, եւ եղեն ամենեքեան սուրբք, եւ
զնին զզատիկն [15]Տեառն, ամենայն որք
եկեալ էին ի գերութենէն, եւ եղբարք
21 իւրեանց եւ քահանայք". Եւ կերան
որդիքն Իսրայելի զզատիկն ամենեքեան
[16]որք որպէսեալ էին ի պղծութենէ ազ-
գայ երկրին, [17]եւ որք եկեալ էին առ
նոսա" խնդրել զՏէր Աստուած Իսրայե-
22 լի։ Եւ արարին զտօն բաղարջակերացն

[1] Աչմ. որ է յերուսաղէմ ի տեղի իւր, և իջուա-
ցես ի տունն Աստուծոյ, (6) վասն պատրիկ արք,
Թաթանա, Հրամանատար յայնկոյս Գետոյն,
Սաթրաբուզան և ընկերք նոցա Ափարսաքացիք
որ յայնկոյս Գետոյն, ի բաց կացէք անտի
[2] Աչմ. Հրամայեալ է թէ զինչ առնիցէք ծե-
րոցն Իսրայելի [3] Աչմ. յարքունի գանձուց,
ի հարկացն որ յայնկոյս Գետոյն [4] Աչմ. որ
ինչ պիտոյ իցէ նոցա՝ զուարակս [5] Ա չմ.
պահաք [6] Եբր. քահանայքն որ [7] Աչմ. քա-
կեսցեն [8] Աչմ. ինմա, եւ վասն պատրիկ
եղիցի տուն նորա յաղբեւս

[9] Աչմ. թող վաղվաղակի կատարեսցի [10] Աչմ.
Թաթանա իշխան յայս կոզս [11] Աչմ. չինէին
և յաջողէին [12] Աչմ. Աստուծոյ [13] Աչմ.
Աստուծոյ յերուսաղէմ, [14] Եբր. Զի [15] Եբր. վասն
ամենայն որդւոցն գերութեան, և վասն եղբարց
իւրեանց քահանայից եւ վասն իւրեանց [16] Եբր.
որք եկեալ էին ի գերութենէ եւ ամենեքին որք
[17] Ա չմ. պահաք

զեւթն [1]օր , եւ ուրախ եղեն յերուսաղէմ՝. վասն զի ուրախ արար զնոսա Տէր [2]Աստուած Իսրայելի՝. եւ Տէր դարձոյց զսիրտ թագաւորին [3]Ասորւոց առ նոսա , զի օգնասցէ եւ զօրացուսցէ զձեռս նոցա ի գործ [4]տաճարին Տեառն՝ Աստուծոյ Իսրայելի ։

ԳԼ. Է

1 Եւ յետ բանիցս այսոցիկ ի թագաւորութեանն Արտաչիսի պարսից էզրա որդի Սարուայ , որդւոյ Ազարիայ ,
2 որդւոյ Քեղկիայ , Որդւոյ Սեզումայ , որդւոյ Սադովկայ , որդւոյ Աքիտովբայ ,
3 Որդւոյ Ամարիայ , որդւոյ Ազարիայ ,
4 որդւոյ Մարովթայ , Որդւոյ Զարեայ ,
5 որդւոյ Ազեայ , որդւոյ Բովկայ , Որդւոյ Աբիսուայ , որդւոյ Փենեհէսի , որդւոյ Եղիազարու , որդւոյ Ահարոնի առաջին
6 քահանայի . Այս Եզրա որ եւ ի Բաբելոնէ . եւ սա էր գրիչ արագագիր օրինացն Մովսիսի զոր ետ Տէր Աստուած Իսրայելի . եւ ետ նմա թագաւորն զամենայն որ ինչ խնդրեաց ի նմանէ , զի ձեռն Տեառն Աստուծոյ[5] էր ընդ նմա ։
7 Եւ եկին ընդ նմա յորդւոցն Իսրայելի եւ ի քահանայից եւ ՚Ղեւտացւոց , եւ յերգեցիկ պաշտօնէից եւ ի դռնապանաց եւ ի Նաթինայացւոցն՝ յերուսաղէմ. յամին եւթներորդի Արտաչիսի թագաւորի ,
8 [6]եկին յերուսաղէմ յամսեանն հինգերորդի , որ էր ամ եւթներորդ թագաւորին .
9 [7]Եւ յամսեանին հինգերորդի ամսեանն եկին եզրա յերուսաղէմ. վասն զի ձեռն [8]Տեառն Աստուծոյ բարւոքեաց
10 էր [9]ընդ նոսա ։ Եւ եզ Եզրա ի սրտի իւրում՝ խնդրել զօրէնսն Տեառն , եւ [9]գրել զնա եւ ուսուցանել Իսրայելի զհրամանս եւ զդատաստանսն ։
11 Եւ այս են իրք հրամանի զոր ետ Արտաչէս թագաւոր Եզրի քահանայի եւ գրչի գրոց բանի օրինացն Տեառն եւ
12 հրամանաց նորա ի վերայ Իսրայելի . Արտաչէս՝ թագաւորաց թագաւոր , [10]Եզրի՝ գրչի օրինացն Տեառն Աստուծոյ երկնից . Ամենայն հաստատութեամբ եւ
13 նից . Ամենայն հաստատութեամբ եւս՝ հրաման ի վերայ ամենեցունց որ են ընդ թագաւորութեամբ իմով , ժողովրդոցն Իսրայելի եւ քահանայիցն եւ Ղեւտացւոցն . զի [11]եկեալն ամենեքեան
14 յերուսաղէմ ընդ քեզ ։ Յերեսաց թագաւորի եւ եւթն խորհրդակցացն առաքեցաւ զիրս այս , այց առնել Հրէից եւ երուսաղէմացւոցն առաջնորդութեամբ եզրի , որոյ են օրէնք Աստուծոյ ի ձեռն
15 ոին իւրում ։ Եւ հրամայեաց թագաւորն տալ ի տուն Տեառն արծաթ եւ ոսկի ,
16 հանդերձ խորհրդակցօք իւրովք յերուսաղէմ , եւ գնել ի տաճարին առաջի Տեառն Աստուծոյ Իսրայելի . Եւ ամենայն որոյ գտցի արծաթ եւ ոսկի , Հրեայք որք կացեն պանդխտեալք ի Բաբելոն՝ ժողովրդովքն եւ քահանայիւք , առցեն ընդ

---

[1] Եբր. օր ուրախութեամբ [2] Յոբ. պ-ե
[3] Եբր. Ասորեստանեայց [4] Եբր. տանն Աստուծոյ , [5] Եբր-եբէն յա-ել- , իւրոյ [6] Եբր. Եւ եկն [7] Եբր. Ռանգի յամսամտին ամսեանն առաջնոյ սկիզբն արար ելանել ի Բաբելոնէ . և [8] Եբր. ընդ նմա՝ (10) Ռանգի Եզրա պատրաստեաց զսիրտ իւր [9] Եբր. կատարել [10] Աբ-ր. Եզրի քահանային, դպրի կատարելոյ օրինացն Աստուծոյ երկնից, այլեվքն հանդերձ (13) Ես ետուս

[11] Աբ-ր. ամենեքին որ իւրեանց կամաւ կամեցան ելանել յերուսաղէմ՝ եկեալն ընդ քեզ. (14) Առաքիս դու յերեսաց թագաւորին եւ եւթն խորհրդականացն այց առնել Հրէից եւ երուսաղեմացւոց ըստ օրինացն Աստուծոյ քո որ ի ձեռին քում. (15) Եւ տարցես զարծաթն եւ զոսկին զոր թագաւորն եւ խորհրդակիցք նորա իւրեանց կամաւք ետուն ընծայ Աստուծոյ Իսրայէլի որոյ բնակութիւն է յերուսաղէմ. (16) Եւ զամենայն արծաթ եւ զոսկի զոր գտցես յամենայն երկրին Բաբելացւոց հանդերձ կամաւոր ընծայիւք ժողովրդեանն և քահանայից, ընծայ կամաւոր վասն տանն Աստուծոյ ձերոյ որ յերուսաղէմ՝ (17) Վասն այնորիկ գնեսցես դու ամենայն փութով արծաթովն այնուիկ զուարակս եւ խոյս եւ ամիկս հանդերձ ընծայիւք նոցա հացի եւ նուիրօք հեղմանն եւ մատուսցես զնոսա ի վերայ սեղանոյ տանն Աստուծոյ ձերոյ որ յերուսաղէմ. (18) Եւ որ ինչ հաճոյ թուեսցի քեզ եւ եղբարց քոց առնել ինացեալ արծաթովն եւ ոսկւով՝ արասջիք ըստ հրամանի Աստուծոյ ձերոյ. (19) Եւ զկահս տուեալ քեզ ի սպասաւորութիւն տանն Աստուծոյ քո՝ մատուսցես առաջի Աստուծոյ երուսաղեմի . (20) Եւ որ ինչ այլ եւս պիտոյ իցէ վասն տանն Աստուծոյ քո , զոր արժան իցէ քեզ տալ , տացես ի տանէ դանձուց թագաւորին ։ (21) Եւ ես , Արտաչէս արքայ, եւս հրամայեմ ամենայն գանձաւորաց որ յայնկոյս Գետոյն՝ զի զոր ինչ եզրաս քահանայ , դպիր օրինաց Աստուծոյն երկնից խնդրեսցէ ի ձենջ , տացի վաղվաղակի . (22) Մինչեւ Հարեւր քանքար արծաթոյ , եւ Հարեւր քոռ ցորենոյ եւ Հարեւր մար գինւոյ եւ Հարեւր մար ձիթոյ , եւ աղ առանց գրելոյ զչափն թէ իցէ ։ (23) Որ ինչ եւ հրամայեսցի յԱստուծոյն երկնից , արարեք վաղվաղակի վասն տանն Աստուծոյ երկնից . քանզի ընդէ՞ր գայցէ բարկութիւն ի վերայ թագաւորութեան արքային եւ որդւոց նորա ։

իւրեանս եւ տարցին ի տուն Տեառն յեռ-
17 րուսաղէմ։ Եւ ամենեքեան որք եկեալ
պատրաստեցան զայս օրինակ, որպէս
եւ գրեցաք. զուարակս, խոյս, դառնիս,
եւ զգոնս եւ զնուէրս իւրեանց, եւ մա-
տուցին ի վերայ սեղանոյ Տեառն Աս-
18 տուծոյ իւրեանց յերուսաղէմ։ Եւս ա-
ռաւել վասն քո, ասէ, եւ վասն եղ-
բարց քոց արարի բարութիւն, եւ թո-
ղի արձաթ եւ ոսկի. որպէս վայել Աս-
19 տուծոյ ձկոյ՝ արարէք։ Եւ դկահ տուե-
ալ քեզ ի պատասխանութիւն սանին
Տեառն, առ ընդ քեզ եւ տար յերու-
20 սաղէմ. Եւ գաւխորդն տալիր ի պա-
21 հեստ գանձու տանն թագաւորաց։ Ես
Արտաչէս թագաւոր եառ հրաման ա-
մենայն գանձապետաց որ իցեն յայն կողմն
Եփրատ գետոյն. զամենայն ինչ որ եւ
խնդրեսցէ ի ձէնջ Եզրա քահանայ եւ
դպիր օրինացն Տեառն Աստուծոյ երկ-
նից, տալիք ի տուն Տեառն Աստուծոյ
22 նորա։ Պատրաստ արարէք արծաթ տա-
ղանդս հարեւր, եւ ցորեան՝ քոռս հա-
րեւր, եւ գինի՝ նոյնչափ, եւ ձէթ՝ նոյն-
չափ. եւ մի ոք կացցէ ընդդէմ հրա-
23 մանաց թագաւորի։ Ամենայն ինչ զոր
հրամայեցի ի տուն Տեառն Աստուծոյ
երկնից եւ երկրի՝ այս եղիցի, եւ մի ոք
ձեռնարկեսցէ խափանել ի տանէ Տեառն
Աստուծոյ Իսրայէլի. զի մի եղիցի բար-
կութիւն ի Տեառնէ Աստուծոյ ի վերայ
թագաւորութեան իմոյ եւ որդւոց իմոց։"
24 Եւ եառ ձեզ գիտել՝ թէ ամենայն որ
իցեն ի քահանայից եւ ղեւեացւոց եւ
ի սաղմոսերգողաց, ի դռնապանացն եւ
ի Նաթինայացւոցն, եւ որք իցեն սպա-
սաւորք տանն Աստուծոյ, մի տալն
հարկս եւ մի ոք իշխեսցէ ծառայեցու-
25 ցանել զնոսա։ [1]Եւ դու, Եզրա, որոյ է
իմաստութիւն Աստուծոյ ի ձեռին քում,
կացո գրիչս եւ գատաւորս զի գատա-
ցին զամենայն ժողովուրդս որ են յայն
կողմն Գետոյն, եւ ուսուցէք ամենե-
ցուն որք ոչ գիտիցին զօրէնս Աստու-
26 ծոյ քո։ Եւ ամենեքեան որք ոչ գիտե-
ցին, եւ ամենեքեան որք ոչ առնիցին
ըստ օրինացն Տեառն եւ ըստ օրինաց թա-
գաւորին, մատնեալք լիցին ի պատաս-
ան ըստ գործոյ իւրեանց, եւ իցէ ի մահ,
եւ իցէ ի աքսորանս", եւ իցէ ի տուգանս եւ
եւ իցէ ի կապանս։
27 Օրհնեալ է Տէր Աստուած հարցն մե-
ծոց, որ արկ զայս ի սիրտ թագաւորին,
եւ փառաւորեաց զտունն Տեառն [2]Աստու-
28 ծոյ միոյ" որ է յերուսաղէմ, եւ արար առ
իս զողորմութիւն, եւ պատուական գիս
առաջի թագաւորին եւ խորհրդակցաց
նորա, եւ առաջի ամենայն իշխանաց թա-
գաւորին. եւ ես զօրացայ, վասն զի ձեռն
Տեառն [3]ամենայն բարութեամբ" էր ընդ
իս. ժողովեցի զամենայն իշխանս Իս-
րայելի երանել ընդ իս։

Գ Լ. Ը

1 Եւ այս են իշխանք հայրապետացն [4]որ
երանէին ընդ իս ի թագաւորութեան
Արտաչիսի թագաւորի [5]Բաբելացւոց.
2 Որդւոցն Փինեհէսի՝ Գերսոն, յորդւոցն
Իթամարայ՝ Դանիէլ, յորդւոցն Դաւ-
3 թայ՝ Ատտուս, Որդւոցն Սեքենեայ՝
յորդւոցն Փարոսայ՝ Զաքարիա, եւ ընդ
նմա արք հարեւր յիսուն. Որդւոցն
Փաահմոաբայ՝ Եղիանա որդի Զարայ, եւ
5 ընդ նմա երկերիւր արանց. Որդ-
ւոցն [6]Զատուելի՝ Սեքենիա՝ որդի Ա-
զիելի, եւ ընդ նմա երեք հարեւր ա-
6 րանց. Որդւոցն Ադինայ՝ Աբեդ որդի
Յովնաթանայ, եւ ընդ նմա վեցեւն ա-
7 րանց. Որդւոցն Եղամի՝ Եսայիաս որդի
Աթալեայ, եւ ընդ նմա եւթանասուն ա-
8 րանց. Որդւոցն Սափատեայ՝ Զարաքիա
որդի Միքայելի, եւ ընդ նմա [7]եւթանա-
9 սուն արանց. Որդւոցն Յովաբայ՝ Ա-
բդիա որդի Յեքիելի, եւ ընդ նմա երկե-
10 րիւր եւ ութսուն արանց. Որդւոցն
Բանւոյ՝ Սղղիմութ որդի Յովսեփեայ",
եւ ընդ նմա հարեւր վաթսուն արանց.
11 Որդւոցն Բաբէի՝ Զաքարիա որդի Բա-
բի, եւ ընդ նմա քսան եւ ութ արանց.
12 Որդւոցն [8]Ազգադայ՝ Յովհանան որդի
Ակատանայ", եւ ընդ նմա
13 հարեւր եւ տասն արանց. Որդւոցն Ա-

[1] Ա֊՛. Եւ դու, Եզրա, ըստ իմաստութեան Աստուծոյ քո որ ի ձեռին քում է, կացուսցես իշխանս եւ գատաւորս, որ դատեսցին զամենայն ժողովուրդն որ յայնկոյս Գետոյն, զամենայն որ գիտիցէ զօրէնս Աստուծոյ քո, եւ ուսուսջիք զոր ոչն գիտեն. (26) Եւ որ ոչ առնիցէ զօրէնս Աստուծոյ քո եւ զօրէնս արքայի, եղիցի գատաստան ի վերայ նորա վաղվաղակի, եթէ ի մահ եւ եթէ յաքսոր

[2] Յ֊ԵՐ. գ֊ի֊ն֊ [3] Ե֊ԲՐ. Աստուծոյ իմոյ [4] Ե֊ԲՐ. և ազգահամար նոցա որ [5] Ե֊ԲՐ. ի Բաբելոնէ [6] Ե֊ԲՐ. Սեքենեայ [7] Ե֊ԲՐ. ութսուն [8] Ե֊ԲՐ. Սեդիմութայ որդի Յովսեփայ [9] Ե֊ԲՐ. Ազգադայ՝ Յովհանան որդի Ակատանայ

դոնիկամ՝ [1]Էսքարի, եւ այս են անուանք նոցա, Եղիփազաթ, Զէխէլ եւ Սամա,
14 եւ ընդ նմա վաթսուն արանց. Յորդանոյն Բապուի՝ Ուխայի եւ Զաբուդի, եւ ընդ նմա եւթանասուն արանց։
15 Եւ ժողովեցի զնոսա առ եղր զհատն որ գայ [2]յԱհաւա, եւ առեալ անդ օթեւանս աւուրս երիս. եւ ի բազմութեան ժողովրդեանն՝ յորդւոց քահանայիցն եւ
16 յորդւոցն Ղեւեայ ոչ գտի զոք։ Եւ առաքեցի առ Եղիազար եւ առ Արիէլ եւ առ Սեմեա, եւ [3]զԱնանամ եւ զԱրիբ եւ զԵղնաթան եւ զՆաթան եւ զԶաքարիա
եւ զՄէսողամ եւ զՅովարիբ եւ զՅեղ-
17 մաթան։ Եւ իմացուցեալ ածին զնոսա առաջի իշխանացն որ էին ի տեղւոջ դանձաւորացն՝. եւ եղի բանս ի բերանս նոցա խօսել ընդ [4]եղբարս իւրեանց Նաթանիմ, որ էր ի տեղի դանձաւորացն զորս
18 ածին առ մեզ, որք երկէին ի տան Աստուծոյ մերոյ։ Եւ եկին՝ առ մեզ, քանզի էր ձեռն Տեառն ի բարութիւն ընդ մեզ, յորդւոցն [5]Ղեւեայ որդւոյ Իսրայելի. եւ գտանէին եկին առ մեզ որդիք նորա եւ եղբարք նորա ուժեւտասան.
19 Եւ Ասերիա եւ Յեսէա որդի Մերարեայ, եւ եղբարք նորա եւ որդիք նորա՝ արք
20 քսան. Եւ ի Նաթանայ՝ զոր եւս Դաւիթ եւ իշխանքն ի ծառայութիւն Ղեւեացւոցն [6]եւ ի Նաթանայիմ՝ երկերիւր եւ քսան. ամենեքեան ժողովեցան ըստ անուան իւրեանց։
21 Եւ քարոզեցաք անդ պահս առ եղր զհատն [7]Ահաւա, եւ մատուցաք անդ աղօթս առաջի [8]Տեառն Աստուծոյ մերոյ, խնդրել ի նմանէ ճանապարհ ուղղութեան մեզ եւ որդւոց մերոց եւ ամենայնի որ
22 ընդ մեզ. Վասն զի ամաչեցաք խնդրել

[1]ԵԲԲ. վերջինքն [2]ԵԲԲ. յԱհաւա [3]ԵԲԲ. առ Եղնաթան եւ առ Յարիբ եւ առ Եղնաթան եւ առ Նաթան եւ առ Զաքարիա եւ առ Մեսուղամ իշխանս, եւ առ Յովարիբ եւ առ Եղնաթան իմաստունս։ (17) Եւ պատուէր տուեալ առաքեցի զնոսա առ Ադդով իշխան որ ի Քասիփիա [4]ԵԲԲ. Ադդովայ, ընդ եղբարս նորա Նաթանայիմն ի Քասիփիա՝ ածել առ մեզ պաշտօնեայս վասն տանն Աստուծոյ մերոյ։ (18) Եւ ածին [5]ԵԲԲ. Մողեայ, որդւոյ Ղեւեայ, որդւոյ Իսրայելի, այր մի հանճարեղ, այսինքն զԱսարաբիա եւ զորդիս նորա եւ զեղբարս նորա ուժեւտասան. (19) Նա եւ զԱսաբիա եւ ընդ նմա յորդւոցն Մերարեայ զԵսայի եւ զեղբարս նորա եւ զորդիս նոցա արս քսան. (20) Եւ ի Նաթանայիմեանց [6]ԵԲԲ. Նաթանայիմն [7]ԵԲԲ. Ահաւայ [8]ԵԲԲ. դէմ-ե

ի թագաւորէն [9]հեծեալս՝ ապրեցուցանել զմեզ ի թշնամեացն մերոց ի ճանապարհին. վասն զի ասացաք ցթագաւորն այսպէս, եթէ Ձեռն [10]Տեառն մերոյ օգնէ ամենեցունն որ խնդրեն զնա ի բարութիւն. եւ զօրութիւն նորա եւ բարկութիւն նորա ի վերայ ամենեցուն որք
23 թողուն զնա։ Եւ պահեցաք եւ խնդրեցաք յԱստուծոյ մերոյ վասն այսր ամենայնի, եւ լուաւ [11]Տէր։
24 Եւ առաքեցաք՝ յիշխանացն քահանայից երկոտասան, զՍարաբիա եւ զԱսաբիա, եւ ընդ նոսա յեղբարց նոցա
25 տասն, Եւ կշռեցաք եւ տուաք ցնոսա զարծաթն եւ զոսկին եւ զսպաս [12]առաջաւորութեան տանն Աստուծոյ մերոյ, զոր [13]բարձրացոյց զմեզ՝ թագաւորն եւ խորհրդակիցք նորա եւ իշխանք նորա եւ ամենայն Իսրայէլ որ միանգամ էին
26 անդ. Եւ կշռեալ եւս ցնոսա արծաթն տասն հարիւր քիսան, եւ կահ արծաթոյ՝ հարիւր, եւ ոսկւոյ՝ տասնհատ
27 հարիւր, Եւ տայլ կահ ոսկւոյ՝ քսան [14]եւ երկք. եւ կահ պղնձոյ սուրբ եւ մաքուր
28 ոսկեզօծ՝։ Եւ ասացի ցնոսա, Եւ դուք սրբեալք Տեառն [8]Աստուծոյ էք, եւ անոքայ կահ սուրբ է [8]Տեառն, եւ ոսկէզենք եւ արծաթիզենք [15]ընտրեալք Տեառն
29 Աստուծոյ հարցն մերոց. Արթուն կացէք եւ պահեցէք՝ մինչեւ կշռեսջիք զդոսա առաջի իշխանաց քահանայիցն եւ Ղեւեացւոցն, եւ իշխանաց հայրապետացն Իսրայելի որ են յԵրուսաղէմ
30 ի խորանս տան Տեառն։ Եւ [16]առեալ քահանայիցն եւ Ղեւեացւոցն՝ զհամար ոսկւոյ եւ արծաթոյ եւ զկահն ի տանել յԵրուսաղէմ ի տուն Աստուծոյ մերոյ։
31 Եւ յարուցեալ չուեցաք ի գետոյն [17]Էտոս որ ի երկոտասան էր ամսոյն առաջնոյ, [18]եւ եկեալ հասաք՝ յԵրուսաղէմ. Եւ ձեռն [8]Տեառն Աստուծոյ մերոյ էր ընդ մեզ, եւ փրկեաց զմեզ ի ձեռաց թշնամեաց մերոց, եւ ի պատեհ
32 բազմոցաց զճանապարհն. Եւ եկաք յԵրուսաղէմ եւ հանգեաք անդ աւուրս
33 երիս։ Եւ յաւուրն չորրորդի կշռեալ

[9]ԵԲԲ. զօրս եւ հեծեալս [10]ԵԲԲ. Աստուծոյ [11]ԵԲԲ. մեզ (24) Եւ որոշեցի [12]ԵԲԲ. ի նուէրս [13]ԵԲԲ. մատուցին [14]ԵԲԲ. իւրաքանչիւր ի փայլուն պղնձոյ պատուական իբրեւ զոսկի [15]ԵԲԲ. նուէրք [16]ԵԲԲ. առին քահանայքն եւ Ղեւատացիքն [17]ԵԲԲ. Ահաւայ [18]ԵԲԲ. երթալ

տուաք զարծաթ եւ զոսկի եւ զկահ ի տուն Տեառն Աստուծոյ մերոյ, ի ձեռս [1]Մարեմովթ որդւոյ Ուրիայ՝ քահանայի, եւ որ էր ընդ նմա եղիազար որդի Փենեհէսի, [2]եւ Յովզաբաթ որդի Յեսուայ, եւ Նովադիա որդի Բանուայ, [3]եւ այլ՝
34 Ղեւտացիք. եւ էր թուով եւ համարով ամենայն, եւ գրեցաւ ամենայն կշիռ համարոյն բովանդակ ի ժամանակին յայնմիկ։
35 Որք եկեալ էին ի գերութենէն որդիք պանդխտութեան, մատուցին ողջակէզս [3]Տեառն Աստուծոյ Իսրայէլի, զուարակս երկոտասան վասն ամենայն Իսրայէլի, խոյս իննսուն եւ վեց, գառինս եւթանասուն եւ եւթն, [4]ամիկս վասն մեղացն երկոտասան. զայս ամենայն ողջակէզս
36 մատուցին Տեառն [3]Աստուծոյ։ Եւ ետուն զգիր [5]կարասուն, զոր հրամայեալ էր թագաւորին ցիչխանս կողմանց գետոյն Եփրատու. եւ փառաւորեցին զժողովուրդն եւ զտաճարն Աստուծոյ»։

ԳԼ. Թ

1 Եւ ի կատարել այսր ամենայնի՝ մերձեցան առ իս իշխանքն եւ ասեն, Ոչ որոշեցան ժողովուրդն Իսրայէլի եւ քահանայքն եւ Ղեւտացիքն ի ժողովրդոց [6]եւ յերկրէ՝ որ են հեթացւոյն ինոցանէ.» Քանանացին եւ Քետացին եւ Փերեզացին եւ Եբուսացին եւ Ամմոնացին եւ Մովաբացին եւ եգիպտացին եւ Ամովրհացիք։
2 Զի առին Քանզի զդստերանց նոցա, ընդքանիք եւ որդիք իւրեանց. եւ խառնակեալ սրբոյ սերմն սրբութեան [8]նոցա ընդ ժողովուրդ երկրին այնորիկ, եւ եղեւ սկիզբն անօրէնութեան
3 թեանս այսորիկ [7]յիշխանացն։ Եւ եղեւ յորժամ լուայ ես զբանս զայսոսիկ, սատակեցի զհանդերձս իմ, եւ փետեցի զհեր եւ զմօրուս իմ, եւ այնպէս
4 նստէի ի տուգ։ Եւ ժողովեցան առ իս ամենեքեան որք էին երկիւղածք [8]յԱստուծոյ Իսրայէլի, որք էին ժողովեալք յերկիրն պանդխտութեան՝. եւ ես այնպէս նստէի ի տուգ մինչեւ ի ժամ զոհի
5 երեկորեին։ Եւ ի զոհել երեկորեին՝ յարեայ ի տառապանաց իմոց, եւ պատառեալ հանդերձիւք իմովք, խոնարհեալ կորանայի ի վերայ ծնգաց իմոց. եւ տարածեալ ամբարձեալ զձեռս իմ առ Տէր
6 Աստուած, Եւ ասեմ, Աստուած իմ [9]եւ Տէր, ամաչեմք եւ զարհուրիմք ի քէն. բարձրացա, Տէր Աստուած իմ,» զերեսս իմ առ քեզ. վասն զի անօրէնութիւնք մեր բազմացան ի վերայ գլխոց մերոց, եւ մեղք մեր մեծացան եւ բարձրացան
7 մինչեւ յերկինս։ Յամաց եւ ի ժամանակաց հարցն մերոց, եմք մեք ի մեղս մեծամեծս մինչեւ ցայսօր. եւ վասն մեղաց մերոց մատնեցեր զմեզ եւ զթագաւորս մեր եւ [10]զորդիս մեր ի ձեռս թագաւորացն հեթանոսաց, ի սուր եւ ի գերութիւն եւ ի յափշտակութիւն, եւ յամօթ երեսաց մերոց եգեալք մինչ
8 չեւ յօրս յայս։ Եւ [11]այժմ զթութիւնք քո եղեն ի վերայ մեր, Տէր Աստուած մեր, եւ չնորհեցեր մեզ փրկութիւն, եւ հաստատեցեր զմեզ ի տեղի սրբութեան քո, եւ լուսաւորեցեր զաչս մեր այսօր, Տէր Աստուած մեր. եւ ետուր մեզ կենդանութիւն փոքր ի չասէ ի
9 ծառայութեան մերում։ Վասն զի ծառայ եղաք, եւ ի ծառայութեան մերում ոչ թողեր զմեզ, Տէր Աստուած մեր. եւ խոնարհեցան առ մեզ ողորմութիւնք քո առաջի թագաւորին Պարսից՝ տալ զմեզ ի կենդանութիւն, եւ բարձրացուցանել զտուն Աստուծոյ մերոյ, կանգնել եւ չինել զանապատս զայս, եւ արկանել ցանգ եւ պարիսպ ամրութեան Ցուդայ եւ Երուսաղեմի։
10 Եւ արդ՝ զի՞նչ տացուք պատասխանի առաջի քո, [12]Տէր, վասն այսր ամենայնի. քանզի անցաք զօրինօք քովք,
11 Տէր, եւ զհրամանօք զոր եետուր ի ձեռն ծառայից քոց մարգարէից, ասելով այսպէս եթէ, Երկիրն յոր մտանելոց ես ժառանգել զնա, է երկիր պղծեալ ի պղծութենէ ազգաց երկրին այնորիկ, եւ ապականութեամբ իւրեանց լցին
12 զնա[13]։ Եւ արդ մի՛ առնուցուս ի դուստ-

---

[1] ԵԲԲ. Մերեմովթայ որդւոյ Ուրիայ [2] ԵԲԲ. եւ ընդ նոսա [3] ՅԱՒԲ. տ-ո-ւ [4] ԵԲԲ. Նոխազս [5] ԵԲԲ. Թագաւորին ցիչխանս որ յայսկոյս Գետոյն, և նորա եղեն ձեռնտու ժողովրդեանն և տանն Աստուծոյ [6] ԵԲԲ. երկրին, այլ առնեն ըստ պղծութեանորպէս [7] ԵԲԲ. յիշխանացն և ի վերակացուաց [8] ԵԲԲ. ի բանից Աստուծոյ Իսրայելի վասն յանցանաց գերութեանն

[9] ԵԲԲ. ամաչեմ եւ ոչ իշխեմ ամբառնալ [10] ԵԲԲ. զքահանայս [11] ԵԲԲ. այժմ սակաւ ինչ ժամանակ [12] ԵԲԲ. Աստուած մեր [13] ԵԲԲ յե-ե-լ-ս-ե, ծայրէ ի ծայր

բաց նոցա կանայս որդւոց քոց, եւ զդստերս քո մի՛ առցես կանայս որդւոց նոցա, եւ մի՛ խնդրեսցես [1]առնել խառզումբիւն ընդ նոսա զամենայն ժամանակս. եւ եղիջիր զաս զօրաւոր ուսուել զբարուքիւն երկրին, եւ ժառանգեսցին որդիք քո զերկիրն զայն յաւիտեան
13 եանս ժամանակաց։ Եւ որ ինչ միանգամ անցք անցին ընդ մեզ՝ վասն գործոց մերոց եւ չարութեան մերոց մեծ ես դու, Տէր, բայց դու անգամ [2]ողորմիր մեզ մեր, եւ եառ մեզ այս-
14 պիսի զաւակ եւ արմատ։ Եւ մեք դարձեալ խոստովեցաք՝ անցեալ զօրինօքդ քովք, եւ խաւնակեցաք ընդ ազանզութիւնս հեթանոսաց երկրին. եւ ոչ բարկացար մեզ ի կորուսանել զմեզ մինչեւ ցայս վայր՝ եթէ ոչ մնասցէ արմատ եւ զաւակ
15 եւ անուն մեր։ Տէր, Աստուած Իսրայելի, դու արդար եւ ճշմարիտ ես, որ ոչ ազատեցեր զղաւակ մեր, այլ մնաց մեր արմատ եւ զաւակ մինչեւ ցայսօր. եւ այդ անաւասիկ եմք այսօր առաջի քո յանօրէնութիւնս մեր, եւ ոչ եւս կարեմք ամբառնալ զդլուխ մեր եւ կալ առաջի երեսաց քոց. զի բազմացան անօրէնութիւնք մեր եւ չարիք առաւել քան զդլուխս մեր"։

Գլ. Ժ

1 Եւ յորժամ եկաց Եզրաս յաղօթս հանդերձ խոստովանութեամբքս այսոքիւք եւ ողբովք մեծամեծօք՝ անկեալ էր ի վերայ երեսաց երկրի [2]առաջի Տեառն". ժողովեցան առ նա [3]ամենայն որ էին յերուսաղէմ" ժողովուրդ բազում, արք

[1] ՆԵԲ. գնալ զաղաւթիւն նոցա եւ մի՛ զբարութիւն նոցա յաւիտեան. զի եղիցես դու զօրաւոր եւ կերիցես զբարութիւն երկրին, եւ թողցես զայն ի ժառանգութիւն որդւոց քոց յաւիտեան։ (13) Եւ յետ ամենայն անցից որ անցին ընդ մեզ վասն գործոց մերոց չարաց եւ վասն մեծաց յանցառածոց մերոց, տեսեալ զի դու, Աստուած մեր, ոչ պատժեցեր զմեզ բան չափ մեղաց մերոց, այլ եառեր մեզ այսպէս մնացորդս։ (14) Միթէ արժա՞ն էր մեզ դարձեալ անգանել զօրինաց քովք եւ առնել խնամութիւնս ընդ ազգացս այսոցիկ գարշելեաց. եւ ո՞չ բարկացիս մեզ եւ սպառեցես զմեզ մինչեւ չմնալոյ ի մէնջ մնացորդ եւ փրկեալ։ (15) Ով Տէր, Աստուած Իսրայելի, դու արդար ես, զի թողաք [4]մնացորդ որ ապրեցաւ, որպէս յաւուր յայսմիկ. ահա կամք առաջի քո յանօրէնութիւնս մեր. քանզի ոչ ոք կարէ կալ առաջի քո վասն այսորիկ

[2] ՆԵԲ. առաջի տանն Աստուծոյ [3] ՆԵԲ. Իսրայելէ

եւ կանայք, երիտասարդք եւ կուսանք, եւ ողբայր ժողովուրդն, եւ համբարձին
2 զձայնս լալոյ իբրեւանց։ Եւ պատասխանի եւ [4]Ցեքոնիա որդի Եղեամայ որդւոյն" Եզրասայ, եւ ասէ ցեզրա, Մեք մեղաք առ Տէր Աստուած մեր, եւ ապրաք զկանայս այլազգեաց երկրիս այսորիկ. եւ այժմ [5]են անօրէնութիւնք
3 այսօր ի մէջ Իսրայելի"։ Եւ արդ ուխտեսցուք ուխտս առաջի Տեառն Աստուծոյ մերոյ հանել զամենայն կանայս այլազգիս եւ զզաւակս որ [6]ի նոցանէ. եւ արդ որպէս կամիս արի եւ կեցո զսոսա օրինօքն Տեառն Աստուծոյ եւ
4 որպէս պատուիրանք հրամայեն. Արի եւ լուիցուք ի ներքոյ քումմէ". եւ մեք ընդ քեզ. զօրացիր եւ արա [7]որպէս
5 եւ հրամայեալ է ի Տեառնէ Աստուծոյ"։ Եւ յարուցեալ եզրաս երգմնեցոյց զիշխանս ցեղից քահանայից եւ Ղեւտացւոց եւ զամենայն Իսրայէլ առնել ըստ
6 այսմ օրինակի երգման։ Եւ յարուցեալ եզրաս յերեսաց տանն Աստուծոյ, երթեալ ի սենեակն առ Յովհանան որդի Եղիսուայ՝ հաց ոչ եկեր եւ ջուր ոչ արբ, [8]եւ ողբացեալ ի վերայ անօրէնութեանն եւ մեծամեծաց մեղաց բազմութեանն"։ Եւ քարոզ կարգային ի Հրէ-
8 աստանի եւ [9]յԵրուսաղէմ. Ամենայն ոք՝ որ ոչ եկեսցէ յերուսաղէմ մինչեւ յերիս աւուրս [10]չիշխանաց եւ ի ծերոցն", եւ զկնի նզովեալ ամենայն ստացուածոնորա, եւ ինքն ի բաց եղիցի յեկեղեցւոյ
9 [11]ժողովրդոյն Իսրայելի"։ Եւ ժողովեցան ամենայն արք Յուդայ եւ Բենիամինի յերուսաղէմ յերիս աւուրս, չիններորդ ամսեանն որ օր քսան էր ամսոյն. եւ նստան ամենայն ժողովուրդն ի հրապարակի տանն Տեառն. եւ [12]էին զար-
10 հուրեալք ի բանից նորա եւ ի գրաւթենէ ձմերայնոյն։ Եւ յարուցեալ եզրաս" ասէ

[4] ՆԵԲ. Սեքենիա որդի Եղեայ յորդւոցն [5] ՆԵԲ. գոյ ակնկալութիւն վասն Իսրայելի յաղագս այսորիկ [6] ՆԵԲ. ի նոցանէ բան խորհրդոյ տեառնդ եւ որոց երկնչին ի հրամանաց Աստուածոյ մերոյ. եւ եղիցի այս բան օրինաց։ (4) Արի, զի քեզ անկ են իրքն [7] ՅՈՒՆ. գ-ՀՈՒՆ [8] ՆԵԲ. զի ահեղ սուգ վասն անօրէնութեան գերութեանն [9] ՆԵԲ. յԵրուսաղէմ ամենայն որդւոցն գերութեան ժողովել յԵրուսաղէմ [10] ՆԵԲ. բան հրամանի իշխանացն եւ ծերոց [11] ՆԵԲ. գերութեանն [12] ՆԵԲ. դողային վասն բանին այնորիկ եւ վասն անձրեւացն։ (10) Եւ յարուցեալ եզրաս քահանայի

ցնոսա, Դուք [1]էք որ՝ մեղայք, եւ ա-
րարէք կանայս ղպտիս այլազգեաց, եւ
յաւելիք վրդով եւ զանօրէնութիւնս ի
11 վերայ Իսրայէլի։ Եւ արդ տուք զօրհ-
նութիւն Տեառն Աստուծոյ հարցն ձե-
րոց, եւ արարէք զհաճոյսն առաջի Նո-
րա. եւ զատեալ որոչեցայք յամենայն
հեթանոսաց երկրի եւ ի կանանց այլ-
ազգեաց զորս արարէք։
12 Եւ պատասխանի ետուն ամենայն եւ
կեղեցին եւ [2]ասեն, Մեծ է բանս այս
13 զոր ասես դու ի վերայ մեր. վասն զի՝
ժողովուրդ բազումք եմք, եւ ժամա-
նակս ձմեռն է. եւ ոչ կարեմք կալ ար-
տաքոյ, եւ գործդ ոչ է զմի օր կամ
զերկու, վասն զի սաստիկ մեղաք յիրս
14 յայս։ Կացցեն [3]իշխանք ամենայն տե-
ղիս եւ ի քաղաքս, եւ՝ որոց իցէ ա-
րարեալ կանայս [4]յայլազգեաց՝ եկեսցեն
ի ժամանակին զոր ծերքն եւ հայրա-
պետքն կարգեսցեն ի քաղաքս քաղաքս,
եւ զատեալ քաւեսցեն զմեղս գայս ի
մէնջ, եւ զարձուսցեն զբարկութիւնն
Աստուծոյ ի մէնջ որ վասն բանիս այ-
16 սորիկ։ [5]Եւ արարին՝ այսպէս որ եղեալ
էին ի գերութենէն. եւ [6]ընտրեաց Եզրաս
արս իշխանս ի հայրապետաց տանն իւ-
րոյ՝ զարս անուանիս. եւ չրջեցան՝ յամ-
սամսի տասներորդ [7]ամսոյն՝ եւ վճա-
17 րեցին. Եւ որոչեցին զամենայն արս՝
որք ունէին զկանայս յայլազգեացն մին-
չեւ ի մուտ ամսոյն առաջնոյ։
18 Եւ գտան յորդւոց քահանայիցն որք
ունէին զկանայս յայլազգեացն, յորդ-
ւոցն Յեսուայ Յովսեդեկեանց եւ [8]եղ-
բօր նորա Մաասէի եւ Եղիազարու,
19 Յարիբ եւ Դաղալիա. Եւ սկան՝ հաս-
նել զկանայս այլազգեացն կինքեանց,
եւ մատուցին իւրաքանչիւր [9]խոյս վասն
Թողութեան մեղացն անդիտութեան։
20 Եւ յորդւոցն Երամ՝ Մասիաս, Եղիա,
22 Սամայիա եւ Յեհիէլ եւ Ողիա. Եւ յորդ-
ւոցն Փաշուր՝ Եղիանաս, Մասիէլ, Մի-
սայէլ, Նաթանայէլ, Յովզաբադ եւ Եղա-
23 սա. Եւ յորդւոցն Ղեւտացւոց՝ Յեւզաբադ,
Սաւմէթ, Կովղիա՝ այս է Կովկիտոս, եւ
Սաբեթիաս եւ Յուդաս եւ Եղիազար.
24 Եւ ի սաղմոսերգացն՝ Եղիասիբ, եւ ի
դռնապանացն՝ Սողէմ, Լակզէս եւ Ուբի
25 Եւ յիսրայէլէ, յորդւոցն Փարոսայ՝ Հռա-
մայիա, Յազիա, Մեղքիա, Լակիմ, Եղի-
26 ազար, Ասաբիա, Ներաննիա. Եւ յոր-
ւոցն Եղամ՝ Մաասիանիա, Զաքարիա,
27 Յաւէլ, Սրդիա, Երիմոթ եւ Եղիա. Եւ
յորդւոցն Զաթուայ՝ Եղիհնէ, Եղիասիբ,
Մաթթանա, Յարմոթ, Զաբադ, Սղիա.
28 Եւ յորդւոցն Բաբէի՝ Յոհանան, Անանիա
29 Եւ Զաբու եւ Սթաղի. Եւ յորդւոցն Բանի՝
Մոսողամ, Մաղաք, Ադայիաս, Յասուբ,
30 Սաալ եւ Հաւմոթի. Եւ յորդւոցն Փաաթ-
մովաբ՝ Ադնէ, Քաղէլ, Բանուա, Մասեա,
Մաթթա, Բեսեէլ, Բանուի, Մանասէ.
31 Եւ յորդւոցն Երամ՝ Եղիեզեր, Եսիա,
Մեղքիա, Սամհրաս, Սիմէոն, Բենիա-
32 մին, Մաղուք, Սամարիա. Եւ յորդ-
33 ւոցն Ասէմ՝ Մատթանիա, Մատաթթիա,
Զաբաթ, Եղիփաղէտ, Յերեմի, Մանասէ,
34 Սամէի. Եւ յորդւոցն Բանի՝ Մովաքոս,
35 Ամրամ, Ուէլ, Բանուա, Բադայիա, Փե-
36 դիա, Ուանիա, Մարիմոթ, Եղիասիբ,
37 Մաթթանիա, Մաթթանա. Եւ [10]արարին որ-
38 դիքն Բանի եւ որդիքն՝ Սեմէի, Սեղե-
39 միաս, Նաթան, Ադայիաս, Մաքնա,
40 Գայադու, Սէսէ, Արաւ, Եղրիէլ, Սա-
դամիաս, Սամարիաս, Սեղեմ, Սամա-
41 րիաս, Յովսէփ. Յորդւոցն Աբուրէ՝ Յէ-
42 ուէլ, Մատաթիաս, Զաբաթ, Զեբինա-
43 նաս, Յադայի, Յադէ, Յովզէ, Բա-
44 նեա։ Այսք էին ամենեքեան որ ու-
նէին զկանայս յայլազգեացն, եւ ծնան
ի նոցանէ ուստերք եւ դստերք։

---

[1]Յեբր. գոլաւ [2]Եբր. ասեն ի ձայն մեծ, Այս-
պէս ըստ բանի քումդ որ առ մեզ եղիցի. (13)
Այլ [3]Եբր. իշխանք մեր վասն ամենայն ժողո-
վրդեանն, եւ ամենեքեան [4]Եբր. յայլազգեացս
ի քաղաքս մեր՝ եկեսցեն ի ժամանակն զոր կար-
գեսցեն, եւ ծերքն և դատաւորք որ ի քաղաքս
քաղաքս եղիցին ընդ նոսա, մինչեւ զարձցի բար-
կութիւնն [5]Եբր. (15) Ապա Յովնաթան որդի
Ասայելի, եւ Յազիա որդի Թիկուայ կարգեցան
ի վերայ այսորիկ, եւ Մեսուլամ եւ Սաբեթա
Ղեւտացիք օգնեցին նոցա, (16) Եւ արարին
[6]Եբր. ընտրեցան Եզրաս քահանայ եւ արք յիշ-
խանաց հայրապետաց ըստ տոհմից իւրեանց,
եւ ամենեքեան յանուանէ, եւ նստան [7]Եբր.
ամսոյն քննել զիրան. (17) Եւ վճարեցին զգործս
արանցն [8]Եբր. յեղբարց նորա Մաասիա, Եղիա-
զար, Յարիբ եւ Թոմոզիա։ (19) Եւ խոստացան

[9]Եբր. խոյս ի հօտից վասն մեղաց, զի էին յան-
ցեալք։ (20) Եւ յորդւոցն Ներիր՝ Անանի
եւ Զաբադիա. (21) Եւ յորդւոցն Հարիմայ՝
[10]Եբր. Յաասու. (38) Բանի, Բանուի,

ԳԼՈՒԽՔ ԳՐՈՑՆ ՆԷԵՄԵԱՑ

	Գլ.	Համ.
Ցետս երեքտասան ամի արձակելոյն Եզրի յերկայնաձեռն Արտաշիսէ՝ եւ Նէեմի եւս արձակեալ գայ յԵրուսաղէմ, և հանդերձ իշխանօքն սկսաւ շինել զպարիսպն Երուսաղեմի, եւ կանգնել զդրունսն։	Ա.	1
Զի կամեցան հեթանոսքն խափանել զգործն, եւ ոչ զօրեցին. և խրատ յելեանքն ապա մեծաւ զգուշութեամբ կազմեցան՝ կէսք զինու վառեալ ընդդէմ թշնամեացն, եւ այլքն ի գործ շինուածոյն փութաբեալք։	Դ.	1
Զի թափեաց Նէեմի զմոգովուրգն ի ծանր հարկից իշխանացն Յուդայ, եւ դարձոյց ի տեարան զյափշտակութիւնս, եւ զերկոտասան ամ ինքն կալաւ զիշխանութիւնն լարեձեռութեամբ։	Ե.	1
Դարձեալ խորհէին այլազգիք չարիս՝ խափանել զգործն, եւ ոչ կարացին. այլ կատարեաց զպարիսպն յամի երկոտասան, եւ կանգնեալ զդրունսն՝ զգուշութեամբ փակէր եւ բանայր։	Զ.	1
Ընտրութիւն ցեղիցն ելելոց ի Բաբելոնէ, որք բնակեցին ի քաղաքս իւրեանց։	Է.	5
Ծանեցին զտաղաւարացն, եւ պահել եւ աղօթեալ գրեցին ուխտ, եւ կնքեցին պահել զօրէնս Աստուծոյ։	Է.	73
Վիճակաւ նոցան յերուսաղէմ եւ ի Հրէաստան՝ Ցուդա եւ Բենիամին, եւ քահանայք եւ Ղեւտացիք, և արարին զնաւակոտիս պարսպին առ Ցովդայեաւ քահանայապետիւ, որ էր որդի Եղիասիբայ որդւոյ Ցովակիմայ՝ որդւոյ Ցեսուայ Ցովսեդեկեանց։	ԺԱ.	1
Կարգեցին վերակացուս գանձուց տաճարին, եւ դռնապանս եւ սաղմոսերգս ՝Ղեւտացւոցն, և լուեալ յօրինացն իբաց հանին զայլազգիսն յարայելէ։	ԺԲ.	44
Եղիասիբ քահանայապետ տուեալ էր Տուբիայ այլազգւոյ տուն գանձի ի գաւիթ տաճարին. զոր մերժեաց Նէեմի զՏուբիա. եւ զի զրկեալք էին Ղեւտացիք՝ դարձոյց ի նոսա զբաժին իւրեանց, եւ կարգեաց ի պաշտօնն Տեառն։	ԺԳ.	4
Սրբեաց Նէեմի զչաբաթն, եւ ի բաց եհան զայլազգի կանայս քահանայիցն եւ Ղեւտացւոց. եւ սրբեալ զՂեւտացիսն՝ կարգեաց ի պաշտօնն։	ԺԳ.	15

ԳԻՐՔ ՆԵՄԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 ԲԱՆՔ Նեհեմեայ որդւոյ Աքալիայ ։ Եւ եղեւ յամսեանն Քասղեւ յամի քսաներորդի Արտաշիսի արքայի , ես էի [1]ի Շուշ ի մայր քաղաքացն արիերայ .
2 եւ եկն առ իս՝ յեղբարցն իմոց , նա եւ արք Ցուդայ , եւ հարցի զնոսա վասն վրկելոցն որք ապրեցան եւ ելին ի գե-
3 րութենէն եւ վասն Երուսաղեմի ։ Եւ ասեն ցիս , Զերծեալքն ի գերութենէն են անդէն յաշխարհին իւրեանց ի մեծ նեղութեան եւ ի նախատինս . եւ պա-
րիսպքն Երուսաղեմի կան նոյնպէս քակեալ եւ աւերեալ , եւ դրունք նորա հրկիզեալ հրով ։
4 Եւ եղեւ յորժամ լուայ ես զբանս զայս, նստայ եւ լայի եւ սուգ առի զաւուրս եւ պահեցի պահս , եւ կացի յաղօթս ա-
5 ռաջի [2]Տեառն Աստուծոյ երկնից , եւ ասեմ , Տէր , Աստուած երկնի [3]եւ երկ-
րի , որ զօրաւորդ ես եւ՝ մեծ եւ ա-
հարկու , պահես զուխտս եւ ողորմու-
թիւնս ոյք սիրեն զքեզ , եւ ոյք առնեն
6 զօրէնս քո , եղիցին ականջք քո ի լսել եւ աչք քո ի տեսանել . եւ արդ լուր եւ տես զաղօթս ծառայի քո զոր ես [4]աս-
օր մատուցանեմ առաջի քո , վասն որդւոցն Իսրայելի ծառայից քոց , [5]որք մատնեցաք ի նեղութիւն վասն մեղաց մերոց զոր մեղաքն . ես՝ եւ տուն հօր
7 իմոյ մեղաք ։ Վասն զի յանցանելով յանցեաք , եւ ոչ պահեցաք զօրէնս եւ զնշանսն եւ զդատաստանս քո զոր պատուիրեցեր մեզ ի ձեռն ծառային քո
8 Մովսիսի ։ Յիշեա , Տէր , զբանն քո զոր պատուիրեցեր ծառային քո Մովսիսի եւ ասացեր , եթէ դուք ոչ պահեսջիք զօ-
րէնս իմ , եւ ես ցրուեցից զձեզ ընդ
9 հեթանոսս . Եւ եթէ դարձջիք եւ պա-
հիցէք զօրէնս իմ եւ արասջիք զնոսա , եւ եթէ իցէք ցրուեալք մինչեւ ի ծագս
[6]երկրի , եւ անտի ժողովեցից եւ ածից զձեզ ի տեղին զոր [7]ընտրեցից եւ յո-
10 րում բնակէ անուն իմ ի նմա՝ ։ Եւ արդ սոքա ծառայք քո եւ ժողովուրդք զորս վրկեցեր զօրութեամբ քով մեծաւ եւ
11 բարձր բազկաւ ։ [8]Մի թողուր ի ձեռաց-
այլ՝ եղիցին ականջք քո հայկ յաղօթս ծառայից քոց , եւ անսայ խնդրուածոց որոց երկնչին յանուանէ քումմէ . եւ յաջողեա զխնդրուածս ծառայի քո այս-
օր , եւ տուր ինձ գտանել զթութիւնս առաջի առնս այսորիկ ։ Եւ ես էի տա-
կառատեալ թագաւորին ։

ԳԼ. Բ

1 Եւ եղեւ յամսեանն Նիսան ի քսանե-
րորդ ամի Արտաշիսի արքայի , [9]եւ խնդրեաց յինէն գինի՝ . եւ առեալ զգի-
նին ետուն թագաւորին , եւ [10]էր թա-
2 գաւորն միայն ։ Եւ յորժամարբ զգինին, ասէ ցիս՝ , Ընդէր տրտում եւ տխուր են երեսք քո . եւ [11]ոչ ինչ են այսմ պատճառք , եթէ ոչ չարութիւն՝ սրտի
3 քո . եւ ես երկեայ յոյժ ։ Եւ ասեմ ցթա-
գաւորն , Արքայ , դու յաւիտեան կեաց. ընդէր ոչ տրտում եւ տխուր լինիցին եր-
եսք իմ . վասն զի [12]քաղաքն եւ տուն հօր իմոյ՝ անապատ է , եւ դրունքն ա-
4 պականեալ ի հրոյ ։ Եւ ասէ ցիս թագա-
ւորն , [13]վասն որո՞յ իրաց խնդրես դու զայս՝ ։ Եւ կացեալ իմ յաղօթս [14]առ աս-

---

[1] ԵՔԲ. ի բերդաքաղաքին Շուշ, (2) Եւ եկն Անանի, մին [2] ՅԵՔԲ. դ-է-ե [3] ԵՔԲ. որ ես Աստուած [4] ԵՔԲ. այսօր զցայգ և զցերեկ [5] ԵՔԲ. խոստովանեալ զմեզ որդւոցն Իսրայելի զոր մեղաք քեզ. քանզի ես

[6] ԵՔԲ. երկնից [7] ԵՔԲ. ընտրեցի բնակեցուցանել զանուն իմ անդ [8] ԵՔԲ. ՈՀ, Տէր, [9] ԵՔԲ. կայր առաջի նորա գինի [10] ԵՔԲ. իմ չէր երեւեալ առաջի նորա արտում, (2) Եւ ասէ ցիս թագաւորն [11] ԵՔԲ. դու չես հիւանդ, եթէ ոչ տխրութիւն [12] ԵՔԲ. քաղաքն որ է տեղի գերեզմանաց Հարց իմոց [13] ՅԵՔԲ. Ջի՞նչ խնդրես դու վասն իրացս այսոցիկ [14] ԵՔԲ. առ

բարձեալ զմիտս իմ առ Տէր՝ Աստուած երկնից, Ասեմ ցթագաւորն, [1]Եղիցի ի վիրաց թագաւորութեանդ քումդ բարութիւն՝, եւ եթէ եղիցի ծառայ քո չնորհս առաջի երեսաց քոց, [2]եւ կամիս՝ յղեա զիս ի Հրէաստան [3]ի քաղաք յիշատակարանաց՝ հարցն իմոց, եւ ես [2]շինիցեմ զհրամանի քո՝ չինեցից զնա։ Եւ ասէ ցիս թագաւորն, եւ [4]հարճ նորա՝ որ նստէր առ նմա, Ծո՞րժամ ժամանեսցէ դուս, եւ կամ երբ դարձցիս. եւ [5]արար առ իս բարութիւն թագաւորն եւ արձակեաց՝ զիս. եւ ես կայ առ նմա ժամանակս։ Եւ ասացի ցթագաւորն, Եթէ զտի չնորհս առաջի քո, տուր ինձ թուղթս առ իշխանս կողմանց Ասորւոյն, եւ տարցեն զիս մինչեւ երթայց ի Հրէաստան, Եւ թուղթ մի առ Ասափ, որ է պահապան դրախտին արքունի. զի տացէ ինձ փայտս ի կազմած [6]դրանցն եւ պարսպաց քաղաքին, եւ տանն յոր ես մտից անդր։ Եւ ետ ինձ թագաւորն. ըստ ձեռն Աստուծոյ իմոյ էր ընդ իս բարութեամբ։

Եւ եկի առ իշխանս [7]Գետոյն, եւ ետու առ նոսա զգիրսն թագաւորին. եւ առաքեաց ընդ իս թագաւորն զօրս հեծելոց եւ ձիս։ Եւ լուան Սանաբաղատ [8]իշխան, եւ Տուբիա ծառայ [9]Ամմոնի, եւ չար թուեցաւ առաջի [10]նոցա. վասն զի խնդրեցի արս ի բարութիւնս եւ ի պէտս՝ Իսրայելի։ Եւ եկի յԵրուսաղէմ, եւ եղէ անդ աւուրս երիս։

Եւ յարուցայ ի գիշերի ես եւ սակաւ արք ընդ իս. եւ ոչ պատմեցի արանցն, եթէ զինչ Աստուած արկ ի սիրտ իմ առնել [11]վասն Իսրայելի՝. եւ դրաստ ոչ էր ընդ իս, բայց միայն դրաստն յորոյ վրայ նստէի ես։ Եւ եկի ես ընդ դուռն [12]հեղհեղատին, եւ առ բնաւրով երկրի թզնեւոյն՝ եւ մինչեւ ի դուռն Աղբերցն. եւ ճանչէի ի նեղութենէ անցին առ պարսպատն Երուսաղեմի, զոր էին նոցա սրբեալ, եւ դրունք նորա ապականեալ էին ի հրոյ՝։ Եւ անցի ընդ դուռն Աղբերն առ ջրովաք թագաւորին. եւ ոչ էր անդ տեղի գրաստու իմոյ անցանել ընդ նա հեծեալ։ Եւ ելանէի ի վեր [2]ի պարիսպն առ հեղհեղատանն գիշերի, եւ [13]ի նեղութենէն էի ճանչել ի պարսպէն, եւ էի առ դրան՝ Ջորոյն։ Եւ դարձայ, եւ ոչ գիտացին պահապանքն եթէ գինչ էի երթեալ եւ կամ գինչ առնէի, եւ Հրէից եւ քահանայիցն եւ պատուականացն եւ զօրագլխաց եւ այլոցն որք վճարէին գործն՝ մինչեւ [14]ցայն վայր ոչ պատմեալ էր նոցա՝։

Եւ ասացի ցնոսա, Դուք տեսէք զչարիս յորում եմք այժմ, եւ զիարդ Երուսաղէմ անապատ է եւ դրունք սորա հրկէզ. եկայք եւ չինեսցուք զպարիսպս Երուսաղէմի, եւ ոչ եւս եղիցուք ի նախատինս։ Եւ պատմեցի նոցա զձեռն Տեառն որ էր ընդ իս բարութեամբ, եւ զբանս թագաւորին զոր ասաց ցիս. եւ [15]ասեմ ցնոսա՝՝, Արդ եկայք յարիցուք եւ չինեսցուք. եւ զօրացան ձեռք նոցա ի բարութիւն։

Եւ լուան [16]Սանաբաղատ եւ Տուբիա ծառայ [17]Ամմոնի եւ Գեսամ Արաբացի, եւ ծաղր առնէին զմեզ. եւ եկին առ մեզ եւ ասեն ցմեզ, Զինչ են իրքդ այդ զոր դուքդ առնէք, եւ կամիք դուք ի թագաւորէն ապստամբել։ Եւ ետու պատասխանի նոցա եւ ասեմ, Աստուած երկնից [18]եւ երկրի յաջողեաց՝՝ մեզ, եւ մեք ծառայք նորա [19]եմք սուրբք, եւ չինեմք զքաղաքս՝՝, եւ ձեզ ոչ գոյ բաժին եւ յիշատակ եւ [20]արդարութիւն յԵրուսաղէմ։

Գլ. Գ

Եւ յարեաւ Եղիասիբ քահանայ մեծ եւ եղբարք նորա քահանայք, եւ չինեցին զդուռն [21]Աւազանայ՝ զրմղին՝՝, եւ սրբեցին զնա եւ կանգնեցին զգրեանս նորա, եւ [22]կանգնեցին զնա մինչեւ՝՝ յաշտարակն Մէայ, մինչեւ

---

[1]ԵԲԲ. եթէ հաճոյ թուեսցի արքայի, [2]ՅԲԲ. գ-ի-ե [3]ՅԲԲ. ի քաղաքն գերեզմանաց [4]ՅԲԲ. դշխոյն [5]ԵԲԲ. Հաճոյ թուեցաւ արքայի յղել [6]ՅԲԲ. դրանց ապարանից տանն [7]ՅԲԲ. որ յայնկոյս Գետոյն [8]ՅԲԲ. Որոնացի [9]ՅԲԲ. Ամմոնացի [10]ՅԲԲ. նոցա յոյժ, զի եկն այր որ խնդրէր զբարութիւն որդւոցն [11]ՅԲԲ. վասն Երուսաղէմի [12]ՅԲԲ. Հեղեզատին գիշերայն առ աղբերբը Վիշապին մինչեւ ի դուռն Աղբեւացն, եւ դիտէի զպարիսպն Երուսաղեմի կործանեալս եւ զդրունսն այրեալս ի հրոյ

[13]ՅԲԲ. տեսի զպարիսպն, եւ դարձեալ մտի ընդ դուռն [14]ՅԲԲ. ցայժմ չասացի ինչ [15]ՅԲԲ. ասեն նոքա [16]ՅԲԲ. Սանաբաղատ Որոնացի [17]ՅԲԲ. Ամմոնացի [18]ՅԲԲ. յաջողեացէ [19]ՅԲԲ. յարիցուք եւ չինեսցուք [20]ՅԲԲ. իրաւունք [21]ՅԲԲ. Ոչխարաց [22]ՅԲԲ. սրբեցին զնա մինչեւ յաշտարակն Մէայ, մինչեւ

2 րակն Ամամայելի, [1]ի ձեռն որդւոց ա-
րանց Երիքովի, եւ ի ձեռն որդւոց Զա-
3 քուր, որդւոցն Ամարի։ Եւ զդուստրն
Նեքաիւբրան չինեցին որդիքն Աստանայ՝,
եւ նորա յարդարեալ կազմեցին զնա,
4 եւ զփականս եւ զնիւթս նորա. [2]Եւ ի
ձեռանէ նոցա ունէին Մոսոզամ որդի
Բարաքի որդի Մասիկերէլ. եւ ի ձեռանէ
նոցա ունէին Սադովկ որդի Բաանայ.
5 Եւ ի ձեռանէ նոցա ունէին Թեկուա-
դորեմ. եւ ոչ արկին զպարանոցս իւրա-
6 նայութիւն նոցա։ Եւ զդուստրն տին ու-
նէին Ծուզայ որդիք, Փասեկ՝ եւ Մե-
սոզամ՝ որդի Բաասդնայ. եւ սաքա կազ-
մեցին զնա, եւ կանգնեցին զդրունս նո-
8 րա եւ զդռնափակս եւ [3]զնիւթս։ Եւ զնետ
նոցա ի կարգին կալաւ Անանիա որդի
Հոռսկկիմ եւ եհոզ Երուսաղեմացւոցն
9 մինչեւ ի պարիսպն հրապարակայ։ Եւ
զնետ նորա կալաւ Հասափիա իշխան կող-
10 մանց տեղեացն Երուսաղեմի. Եւ ի ձե-
ռանէ նորա կալաւ Յերապիա որդի Ցե-
բոմոք, եւ ի կողմանէ տանն իւրոյ. եւ
ի ձեռանէ նորա կալաւ Աստուս որդի
11 Սաբանեայ։ Եւ երկրորդ կալաւ՝ Եզքի-
աս որդի Երամ, եւ Աստր որդի Փա-
ազմովաք, մինչեւ յայտարակն Թանու-
12 բիմ. Եւ [4]ի ձեռանէ նորա կալաւ՝ Սա-
ղում որդի Աղոհեմ՝ իշխան կիսոյ կող-
մանն Երուսաղեմի, ինքն եւ դստերք
13 իւր։ Եւ զդուռն Զորոյն [5]կալաւ Անուս,
եւ որք բնակեալ էին Զանուս. նորա շի-
նեցին զնա, եւ կանգնեցին զդրունս
նորա եւ զդռնափակս եւ զնիւթս. եւ հա-
զար կանդուն չինեցին ի պարսպէն մինչ
14 ի դուռն Մոխրոցին։ Եւ զդուռն Մոխ-
րոցին կալաւ Մեղքիա որդի Հոնքաբ՝
իշխան տեղեացն Բեթհաքարմայ, [6]ինքն
եւ տեղիք իւր. եւ յարկին զնա եւ
կանգնեցին՝ զդրունս եւ զփակս եւ
15 զնիւթս նորա։ [7]Եւ զպարիսպ Ջրբուղս
ալրերն կալաւ Սափոն՝ իշխան՝ թագա-
ւորին, մինչեւ յաստիճանսն որ իջանէ
16 ի քաղաքէն Դաւիթ։ Եւ զնետ նորա
[8]կալաւ Նէեմաս որդի Ազբուք՝ իշխան
կողմանն Բեթսուր մինչեւ ի պարտէզ
տեղեացն Դաւիթ, մինչեւ ի Ջրբուղիսն
կազմիլոյ՝, եւ մինչեւ գԲեթագաբարին.
17 Եւ զնետ նորա կալան Ղեւտացիքն,
Հասյում որդի Բանեայ. [9]Եւ ի ձեռանէ
նոցա կալաւ Ասաբիա՝ իշխան կողմանցն
18 Կէիլայ՝. Եւ զնետ նորա կալան եղբարք
նորա, Բենայի որդի Ադադ՝ իշխան
19 [10]կողմանցն Կէիլայ։ Եւ զնետ նորա կա-
լաւ Աղուր որդի Ցեսու, իշխան Մաս-
փեայ, [11]չափ երկրորդ պարսպին, որ
գալանէր եւ խառնէր յանկիւնս աչտարա-
20 կին՝։ Եւ զնետ նորա կալաւ Բարուք
որդի Զաբու, [12]չափ երկրորդ յանկիւ-
նէն մինչեւ ի դուռն Բեհեկիասուբ, ուր
21 կայր քահանայն մեծ՝։ Եւ զնետ նորա
կալաւ Մերամովթ որդի Ուրիայ, որդի
Ակովս, [13]չափ երկրորդ ի դրանցն Բե-
հեկիասուբ՝ մինչեւ ի սպասուած նորա։
22 Եւ զնետ նորա կալան քահանայքն արք

---

[1] Եբբ. Եւ առընթեր նորա չինեցին արքն Երիքովի. եւ առընթեր նոցա չինեցաՋաքուր որդի Իմրեայ։ (3) Եւ զդուռն Հասնայի չինեցին որդիքն Սենեայ
[2] Եբբ. Եւ առընթեր նոցա Նորոգեաց Մերամովթ որդի Ուրիայ որդւոյ Ակովսայ. եւ առընթեր նոցա Նորոգեաց Մեսուղամ որդի Բարաքեայ որդւոյ Մասիզեփեղայ. եւ առընթեր նոցա Նորոգեաց Սադովկ որդի Բաանայ։ (5) Եւ առընթեր նոցա Նորոգեցին Թեկուացիք. այլ ի-շխանք նոցա ոչ խոնարհեցուցին զպարանոց իւրեանց ի գործ Տեառն իւրեանց։ (6) Եւ զդուռնն Հին Նորոգեցին Յոյիադա որդի Փասեայ
[3] Եբբ. զնիթս։ (7) Եւ առընթեր նոցա Նորոգեցին Մե-զաղիա Գաբաւոնացի եւ Յադոն Մերոնոթացին, արք Գաբաւոնի եւ Մասփայ, մինչեւ յաթոռ անդր իշխանին որ յայսկոյս Գետոյն. (8) Առընթեր նորա Նորոգեաց յոսկերչաց անտի Ոզիել որդի Հարհայայ. Եւ առընթեր նորա Նորոգեաց Անանիա որդի դեղագործաց, եւ թողին զԵրուսաղեմ մինչեւ ի պարիսպն լայն։ (9) Եւ առընթեր նոցա Նորոգեաց Հռափայիա որդի Իվրայ իշխան կիսոյ մասին Երուսաղեմի. (10) Եւ առընթեր նոցա եւ յանդիման տան իւրոյ Նորոգեաց Յեդայիա որդի Հարումափայ. Եւ առընթեր նորա Նորոգեաց Փեսաուս որդի Ասաբանեայ։ (11) Զերկրորդ բաժինն Նորոգեցին
[4] Եբբ. առընթեր նորա Նորոգեաց

[5] Իմա. Նորոգել, այսպէս Ե է Նէեմ՝ [6] Եբբ. Նա չինեաց զնա եւ կանգնեաց [7] Եբբ. Եւ զդուռն Աղբերն Նորոգեաց Մեղզում որդի Փողղեայ, իշխան կողմանցն Մասփայ. Նա չինեաց զնա եւ յարկեաց, եւ կանգնեաց զդրունս նորա եւ զդռնափակս և զնիթս, եւ զպարիսպ աւազանին Սիլովայ որ մօտ ի պարտէզ անդր [8] Եբբ. Նորոգեաց Նէեմիա որդի Ազբուքայ իշխան կիսոյ մասին Բեթսուրայ մինչեւ յանդիման գերեզմանացն Դաւիթի, եւ մինչեւ ի ջրբուխան կազմեայս [9] Եբբ. առ նմա Ասաբիա իշխան կիսոյ մասին Կէիլայ, Նորոգեաց զիւր տեղիան [10] Եբբ. կիսոյ մասին [11] Եբբ. զմեսս եւս մասն, ի կողմանէ ելից անկեան տան զինուց [12] Եբբ. վերվարակի զմեսս եւս մասն յանկիւնն մինչեւ ի դուռն տանն Եղիասիբ քահանայի մեծի [13] Եբբ. զմեսս եւս մասն ի դրանց տանն Եղիասիբայ

Աքերայ . եւ զհետ նորա կալաւ Բենիամին եւ Ասուբ առաջի տանց իւրեանց։
23 Եւ զհետ նորա [1]կալաւ Աւարիա որդի Մասու , որպի Անանեայ՝ մօտ առ տաճարն
24 իւրով ։ Եւ զհետ նորա կալաւ Բանի որդի Ենղադայ , [2]չափ երկրորդ" ի Բեթազարայ մինչեւ յանկիւնն . եւ չրջան
25 գարձի տեղւոյն . կալաւ Փաղաք որդի Ուզայի՝ ընդդէմ անկեանն . եւ դաչտաբակն որ էր արտաքոյ ապարանից թագաւորին վերագոյն քան զդաւիթի բանտին. եւ զհետ նորա Փաթաւա որդի Փարոսայ ։
26 Եւ Նաթանայիմքն որ բնակեալ էին յՈփաղ [1]պարտիզի գրան Ջրոյն կողմանն արեւելից , եւ աչտարակին որ
27 արտաքոյ կողմանն ։ Եւ զհետ նորա կալան Թեկուացիքն , [3]չափ երկրորդ" ընդդէմ աչտարակին մեծի , որ էր արտաքոյ մինչեւ ի պարիսպն Ոփղայ ։
28 Եւ վերագոյն գրան Ձիոյն կալան քահանայքն՝ այր իւրաքանչիւր հանդէպ
29 տանց իւրեանց ։ Եւ զհետ նորա կալաւ Սադովկ որդի Եմեր , հանդէպ տան իւրոյ . եւ զհետ նորա կալաւ Սամէիա որդի Սեքենեայ, որ էր պահապան դրանն
30 արեւելից ։ Եւ զհետ նորա կալաւ Անանեիա որդի Սելեմեայ , եւ Անան [3]որդի Սելեփայ , [2]չափ երկրորդ". եւ զհետ նորա կալաւ Մեսողամ որդի Բարաքայ՝
31 ընդդէմ [4]դանձուց տանն" իւրոյ ։ Եւ զհետ նորա կալաւ Մեղքիա որդի Սարեփի , մինչեւ [5]ի Բեթանաթան . եւ այլ մեծատունք քաղաքին" հանդէպ դրանն Մափ-
32 կաթ մինչեւ յելս չրջանակին ։ Եւ [6]ի մէջ գրանն Ջրոյ ոսկերչացն կալան Փեղկիա եւ մեծատունք քաղաքին" ։

Գլ . Դ

4 Եւ եղեւ իբրեւ լուաւ Սանաբաղատ , եթէ չինեմք զպարիսպն [7]եւ կանգնեմք զաչտարակս նորա , չար թուեցաւ առաջի նորա" , եւ զայրացեալ ուժգին
2 ծաղր առնէր [8]զՀրէաստան ։ Եւ ասէր առաջի եղբարց [9]իւրոց . Ա՞յս է զօրութիւն ձեր , ոյլ Սամարացիք . եւ զինքդ Հրեայք չինեն եւ ամրացուցանեն զքաղաքս իւրեանց ։ Եւ Տուբիա Աման ի տես եկեալ առ նոսա ասէր , Մի կարիցեն չինել եւ զոհել զոհս , եւ կամ ուտել զնուէրան ի տեղւոջ իւրեանց . եւ ո՞չ ելանեն այժմ ազուէնք եւ քակեն զքարինս պատսպաց նորա ։ Եւ ասեմք
4 մեք ," Լուր մեզ , Տէր Աստուած մեր , զի եղաք մեք յարհամարհանս եւ ի թշնամանս , եւ գարձո զնախատինս նոցա ի գլուխս իւրեանց . եւ տուր զնոսա
5 ի թշնամանս առաջի գերչաց նոցա . եւ մի ծածկեսցին անօրէնութիւնք [10]նոցա ։
7 Եւ եղեւ իբրեւ լսեան Սանաբաղատ եւ Տուբիա , Արաբացիք եւ [11]Ամմնացիք , թէ աջողեցաւ չինուած պարսպին երուսաղէմի , եւ [12]սկսաք իւրաքանչիւր տեղացին զպործն երեւեցուցանել , թուեցաւ նոցա չար առաջի նոցա" . Եւ ժողովեցան ամենեքեան ի միասին՝ գալ եւ պատեր
9 բաղմել ընդ [13]երուսաղէմի ։ Եւ կացաք յաղօթս առ [1]Տէր Աստուած մեր , եւ կացուցաք պահանորդս ի վերայ մեր ի տուէ եւ ի գիչերի առ ի յերեսաց թշնա-
10 մեացն ։ Եւ ասէն արք Հրէաստանի , [14]Ոչ բաւեմք այսպիսի՝ պատերազմել եւ չինել միանդամայն . այլ ոմանք կազմ կացցեն զինու , եւ ոմանք չինեսցեն" ։ Եւ
11 ասէն արք գմեզ նեղէինն . Ոչ տաքք նոցա գիտել եւ ոչ ասասնել , մինչեւ յիւրաքանչիւր տեղեաց յարուցեալ եկեսցուք ի մէջ նոցա եւ սպանցուք զնոսա ,
12 եւ խափանեսցուք զպործս նոցա ։ Եւ եղեւ իբրեւ եկին Հրեայքն որ բնակեալ էին

---

[1]Եբէր. պ-ւ-ե [2]Եբէր. զմեա եւ-մասն [3]Եբէր. վեցերորդ որդի [4]Եբէր. սենեկի [5]Եբէր. ի տան Նաթանայիմայն եւ վաճառականաց [6]Եբէր. յելից անտի անկեանն մինչեւ ի դուռնն Ոչխարաց նորոգեցին ոսկերիչքն եւ վաճառականք [7]Եբէր. ցասումն եղեւ նմա [8]Եբէր. զՀրեայս

[9]Եբէր. իւրոց , եւ զօրուն Սամարիայ եւ ասէ , Զի՞նչ առնեն Հրեայքս այսոքիկ ապաժամանք. միթէ թողի՞ նոցա . միթէ մատուսցե՞ն զոհս , եւ վճարեսցե՞ն այսօր. միթէ յարուսցե՞ն զքարինն ի հողակուտէն , եւ նոքա այրեցեալք են։ (3) Եւ Տուբիա Ամմնացի էր առ նմա, և ասէ, Եթէ ագուէս մի եւս ելցէ յոր չինեն նոքա , կործանեսցէ պարիսպ նոցա քարաշէն ։ [10]Եբէր. նոցա . եւ մի՛ ընծեսցին մեզք նոցա առաջի քո. զի բարկացուցին առաջի շինողացն ։ (6) Եւ շինեցաք զպարիսպն և կապեցաւ պարիսպն մինչեւ ի կէս , զի էր սիրտ ժողովրդեանն ի շինել
[11]Եբէր. Ամմնացիք եւ Աղվաստացիք [12]Եբէր. սկսան խրամատիքն լնուլ , ցասումն եղեւ նոցա յոյժ [13]Եբէր. երուսաղէմի , եւ առնել նմա վնաս [14]Եբէր. Սպառեցաւ զօրութիւն բեռնակրաց , եւ հող բազում է , եւ մեք ոչ բաւեմք շինել ի պարսպին

[1]ի տեղիս տեղիս, եւ ասացին ցմեզ", եթէ Ելանեն յանկարծակի յամենայն տեղեաց ի վիրայ մեր։
13 Եւ կայցուք ի խառնարհատգին տեղւոյն յեսոյ պարսպին ընդ յարիւթն՝ [2]արս հանդերձ զինու եւ գնացարդեամբ եւ ազեղամբ իւրեանց։ Եւ իմ յարուցեալ ասեմ ցարսն որ կազմ պատրաստեալ կային, եւ ցղօրապլուխս նոցա՝ եւ ցայնս որ տեղեաց տեղեաց պահապանքն էին, Մի երկնչիք յերեսաց նոցա, յիշեցէք [3]զԱստուած մեր՝ զմեծ եւ զահարիւռ, եւ պատերազմեցարուք վասն եղբարց ձերոց, եւ վասն կանանց եւ որդւոց եւ զաստերաց եւ տանց ձերոց։
15 Եւ եղեւ յորժամ լուան թշնամիքն մեր եթէ լսեցաք [4]եւ կազմեալ պատրաստեցաք", ցրուեաց Աստուած զխորհուրդս նոցա, եւ մեք ամենեքեան դարձաք ի չինել զպարիսպն՝ այր յիւրաքանչիւր
16 գործ իւր։ Եւ եղեւ յօրէ յայնմանէ, [5]կէսքն կարգեալ լինէին ի գործն, եւ կէսքն զինեալ ընդդէմ թշնամեացն եւ զհարդն եւ սասարս եւ սպեղն ի ձեռին իւրեանց, եւ [6]կայր պատրաստ այր իւրաքանչիւր յեսոյ եղբօր իւրում
17 որ չինէր զպարիսպն։ Եւ էր ժամ ի օգնէր եղբօր իւրում՝ կրելով զգէնն ի ձեռին իւրում, եւ միւսով ձեռամբն տայր ցեղբայր իւր զիւթեն կամ զտա-
18 զամ"։ Եւ որք չինէին՝ ունէր այր զսուսեր իւր ընդ մէջ իւր [7]եւ զմիաոայրի ի վերայ բարձի իւրոյ, եւ այնպէս չինէին զպարիսպն երուսաղէմի"։ Եւ որ հարկանէր զփող՝ զնորա եղբերեայ՝ կայր մօտ [8]առ նոսա։
19 Եւ ասեմ ցայնս որք կային զինեալ եւ պատրաստեալ, եւ ցիշխանս նոցա", Գործս մեծ եւ ընդարձակ է, եւ մեք ցրուեալ եմք ի չինուած պարսպիս, եւ հեռի եմք ի միմեանց այր յեղբօրէ իւրմէ։
20 [9]Արդ կացուցուք ի տեղիս տեղիս զարան որ հարկանեն զփողն, եւ յորժամ լսիցէ ոք" զձայն եղջեր փողոյն, անդր ժողովեսցին ամենեքեան, եւ Աստուած մեր
21 պատերազմեսցի ընդ թշնամիս մեր վասն մեր։ Եւ կէսքն գործէին եւ կէսքն ունէին զզէնսն պատրաստ, ի ծագելոյ առաւօտուն մինչեւ յելանել աստեղն։
22 Եւ ասեմ ես յայս ժողովրդեանն, [10]Ննջեսցուք եւ բնակեսցուք ի մէջ քաղաքիս Երուսաղէմի, եւ զյայդ պահ արկցուք զմիւք չուրջ, եւ զդերեկ գործեսցուք։
23 Եւ կայի ես" եւ արքն չուրջ զինեւ որ պահէին զիս, եւ ոչ ոք ի մէնջ մերկանայր եւ կամ հանէր զզէն իւր յինքենէ։

Գլ. Ե

1 Եւ եղեւ ազաղակ մեծ ժողովրդեանն եւ կանանց իւրեանց՝ այր առ եղբայր
2 [11]եւր. Եւ ասէն, Վասն որդւոց մերոց եւ զաստերաց մերոց, որոց պահանջին կեանսդ, երթիցուք գինեսցուք" եւ կեցցուք։ Եւ ոմանք ասէին, Զանպատանս մեր եւ [12]զայգիս դիցուք ի պրաւի, եւ
4 առցուք ցորեան [13]եւ կերիցուք"։ Եւ էին ոմանք որ ասէին, Տուաք զտաղտուածս մեր, եւ առաք ասկի եւ արծաթ, եւ
5 տուաք ի հարկս թագաւորի։ Եւ արդ որպէս մարմինք եղբարց մերոց են մարմինք մեր, եւ որպէս որդիք նոցա՝ որդիք մեր։ եւ արդ [14]ընդէ՞ր տուաք մեք զորդիս մեր ի ծառայութիւն, եւ դստերք մեր վարեալ են ի բռնութիւն, եւ ոչ դոյ ի ձեռս մեր կայ՝ [15]որով փրկեսցուք զնոսա"։
6 Եւ տրամեցայ ես յոյժ յորժամ լուայ
7 զաղաղակն եւ զբանս նոցա։ Եւ տարի խորհուրդ ընդ միտս իմ. եւ կալեցայ ընդ պատուականս եւ ընդ իշխանս նոցա, եւ ասեմ ցնոսա, Դուք էք որ խնդրէք [16]զհարկս յեղբարց ձերոց. եւ [17]հրամայեցի նոցա լի-
8 նել" ժողով մեծ։ Եւ ասեմ ցնոսա, Մեք փրկեցաք զեղբարս մեր զՀրեայս որ վաճառեցան հեթանոսաց, [18]զոր մեք ոչ

[1] ԵԲԲ. առ նոսա, և ասացին ցմեզ տասնիցս [2] ԵԲԲ. արս ըստ տոհմից իւրեանց [3] ԵԲԲ. զՏէր [4] ՅԵԲԲ. պոռ-ւթ [5] ԵԲԲ. կէսքն ի մանկանց իմոց [6] ԵԲԲ. իշխանքն յեսոյ ամենայն տան Յուդայ. (17) Որ չինէին զպարիսպն եւ բեռնակիրքն եւ որ զբեռինն բառնային, միով ձեռամբ գործէին, եւ միւսովն ունէին զզէնսն [7] ԵԲԲ. եւ այնպէս չինէին [8] ԵԲԲ. առ իս։ (19) Եւ ասեմ ցիշխանս եւ ցվերակացուս եւ ցմնացորդ ժողովրդեանն [9] ԵԲԲ. Յորում տեղւոջ և լսիցէք

[10] ԵԲԲ. իւրաքանչիւր որ և մանուկ նորա ագցեն ի մէջ Երուսաղեմի, եւ զցայգ պահ արկցեն վասիք չուրջ, եւ զդերեկ գործեսցեն։ (23) Եւ ոչ ես եւ ոչ եղբարք իմ եւ մանկունք իմ [11] ԵԲԲ. իւր Հրեայ։ (2) Եւ էին որ ասէին, Ուստերք մեր եւ դստերք բազում եմք. գնեսցուք ցորեան և կերիցուք [12] ԵԲԲ. զայգիս մեր եւ զտունս մեր [13] ԵԲԲ. վասն սովու [14] ԵԲԲ. զուստերս եւ զդստերս [15] ԵԲԲ. զի արդ մեր եւ այգիք են պլոց [16] ԵԲԲ. վաշխս [17] ԵԲԲ. դումարեցի ընդդէմ նոցա [18] ԵԲԲ. ըստ կարի մերում. եւ դուք վաճառէ՞ք զեղբարս ձեր, եւ վաճառեսցի՞ն նոքա մեզ.

գիտացաք, եւ զուք վաճառեցէք զնոսա"։ Եւ լռեցին, եւ ոչինչ կարացին տալ
9 պատասխանի։ Եւ ասացի, Ոչ բարւոք է գործդ զոր գուդդ առնէք, [1]վասն զի ոչ երկնչիք յԱստուծոյ. եւ վասն այսորիկ ոչ եւս զկրծաք մեք ի նախատանսդ հե-
10 թանոսաց, ի թշնամեաց մերոց։ Եւ ասեմ ես ցեղբարսն իմ եւ ցծանօթս, Եւ ես եւ գուք տացուք արծաթ եւ արդիւնս ի փրկանս զոր խնդրեն հարկա-
11 հանդէ, Եւ զարձուացուք" այսօր զանդաստանս՝ զայգիս եւ զձիթհնիս եւ զտունս գոցա. [2]եւ ընդ արծաթոյ մերոյ դնեսցեն զցորեան՝ զգինի եւ զձէթ, եւ
12 բերդեն գոցա։ Եւ ասեն իշխանքն եւ այլ մեծամեծքն", Դարձուացուք անդրէն եւ ի գոցանէ ոչ ինչ խնդրեսցուք, եւ այդպէս արասցուք որպէս հրամայեցեր. եւ կոչեցի զքահանայսն եւ երդմնեցու-
13 ցի զնոսա [3]վասն բանիս այսորիկ։ Եւ զարկանելին իմ թօթափեցի ուժգին, եւ ասեմ, Այսպէս թօթափեսցէ Աստուած զամենայն այր որ ոչ կատարեսցէ զբանս գայս՝ [4]ի կենաց իւրոց եւ ի տեղեաց իւրոց". եղիցի այսպէս ունայնասցեալ եւ թօթափեալ [5]ի կենաց իւրոց"։ Եւ ասացին ամենայն ժողովուրդ եկեղեցւոյն այնորիկ, Ամէն, եւ օրհնեցին զՏէր, եւ արարին եւ կատարեցին ամենայն ժողովուրդքն զբանս գոյս։
14 Եւ յօրէն յայնմանէ յորմէ հետէ [6]պատուիրեցի՝ զի մի լիցին նոցա իշխանք Յուդայ", ի քսաներորդ ամէն մինչեւ յամն երեսներորդ երկրորդ Արտաշէսի արքայի՝ զերկոտասան ամ, ես եւ եղբարք իմ
15 [7]եղաք իշխանք. բայց զուրուք մեք ոչ կերաք եւ արբաք։ Եւ որք էին բանա-ցեալ զառաջինն՝ ծանրացուցի նոցա, եւ առի ի նոցանէ գնաց եւ գդինի եւ զայլ ամենայն, արծաթ դիդրաքմայս քառասուն, եւ դարձուցի ի տեարս իւրեանց, եւ ի բաց արարի զնոսա յիշխանութենէ ժողովրդեանն", եւ ես ոչ եղէ իբրեւ
16 զնոսա վասն երկիւղին Աստուծոյ։ [8]Եւ յաջողէր գործ պարսպին, եւ ոչ զուրուք բանացայ ունել զանդաստանս եւ կամ գայգիս, եւ ամենեքեան էին անխափան
17 ի գործ պարսպին։ Եւ արս հարեւր ի Հրէից, եւ այլք որ գային ի հեթանոսաց առ մեզ որ չուրջ էին զմեզ՝ ես
18 ծախէի եւ խառնէի ի ճաշն իմ"։ Եւ լինէր յաւուր միում զուայակ մի, եւ ոչխարք վեց՝ ընտիրք, եւ [9]ամիկ մի. այս էր յաւուր ծախքն իմ". եւ ընդ ամէն տասն աւուր անխնայ տային զգինին բոպել ամենեցուն, եւ ոչ [10]յուսէքէ առի զհաց բանի", քանզի դիտէի եթէ ծանր [11]է
19 գործ ժողովրդեանն։ Յիշեսցէ զիս Աստուած" ի բարութիւն, որպէս արարի ամենայն ժողովրդեանն։

Գլ. Զ

1 Եւ եղեւ յորժամ լուան Սանաբաղատ եւ Տուբիա եւ [12]երկիրն Արաբացւոց եւ այլք յազգէ՛ք" ի թշնամեաց մերոց, եթէ չինեցի զպարիսպն, եւ ոչ մնաց ի նոսա [13]զօրութիւն. (եւ դայն ժամ եւս
2 զդրունսն ոչ էր կազմեալ.) Եւ առաքեաց Սանաբաղատ եւ Գեսամ առ իս, եւ ասեն, Եկ եւ ժողովեսցուք ի միասին ի գեղ մի ի դաշտին Անէոյ. եւ նոքա
8 կամէին խորհել չար ի վերայ իմ։ Եւ առաքեցի առ նոսա հրեշտակս, եւ ասեմ, Գործս զոր գործեմ ես՝ գործ մեծ է, եւ ոչ ժամանեմ իջանել առ ձեզ, [14]զի մի" խափանեսցի գործս, յորժամ
4 [15]կատարեմ զա՛ զայս" իջից առ ձեզ։ Եւ առաքեցին առ իս [16]բազում անգամ", եւ ես զնոյն պատասխանի արարի նոցա։

---

ամենից՝ ընդ որդւոց նոցա.՝ զի ա-
սէր Ցոբ, թէ Գուցէ որդիքն իմ ի միտս
իւրեանց իմացան չարութիւն զԱստուա-
ծոյ. այսպէս առնէր Ցոբ զամենայն
աւուրս [7]նոցա:

6 Եւ եղեւ իբրեւ օրս այս, եւ ահա
եկին [8]հրեչտակք Աստուծոյ կալ առաջի
Տեառն. եկն եւ Սատանայ ընդ նոսա
[9]չածեալ ընդ երկիր եւ չրջեալ ի նմա՝:
7 Եւ ասէ Տէր ցՍատանայ, Դու ուստի՞
դաս: Պատասխանի ետ Սատանայ Տեառն,
եւ ասէ, Շրջեալ ընդ երկիր եւ չած-
եալ [10]ի ներքոյ երկնից՝ եկեալ կամ՝:
8 Եւ ասէ ցնա Տէր, Նայեցա՞ր մաօք քովք
ընդ ծառայ իմ ընդ Ցոբ, զի ոչ գոյ
իրրեւ զնա ի վերայ երկրի, այր [11]անա-
րատ, ճչմարիտ՝ աստուածապաչտ, մեր-
9 հնալ [12]յամենայն իրաց չարայ՝: Ետ պա-
տասխանի Սատանայ, եւ ասէ ընդդէմ
Տեառն, Միթէ ձրի պաչտեցէ Ցոբ [13]զՏէր.
10 Ո՞չ դու ամրացուցեր զարտաքին նորա
եւ զներքին տան նորա, եւ որ ինչ մի-
անդամ արտաքոյ չուրջ զնովաւ է. զգործս
ձեռաց նորա օրհնեցեր, եւ զանասունս
նորա բազմացուցեր ի վերայ երկրի:
11 Բայց ոչ, ազէ առաքեա զքո ձեռն քո
եւ արկ յամենայն ինչս նորա. եթէ ոչ
12 յերեսս իակ օրհնեացէ զքեզ: Ցանկամ
ասէ Տէր ցՍատանայ, Ահա զամենայն
ինչս նորա տամ ի ձեռս քո, բայց ի նա
մի՛ մերձենայցես: Եւ ել Սատանայ յե-
րեսաց Տեառն:

13 Եւ էր իրրեւ զօրս զայս, ուսաներքն
Ցոբայ եւ գաւառք նորա՝ ուտէին եւ
ըմպէին գինի ի տան երիցու եղբօրն
14 իւրեանց: Եւ ահա հրեչտակ եկն առ
Ցոբ եւ ասէ ցնա, Հարկիք եզանցն
վարէին, եւ էզքն մատակք արածէին
15 առ նոքօք, եւ եկին [14]գերեվարք եւ գե-
րեցին զնոսա, եւ զմանկտին կոտորեցին
սրով. եւ միայն ապրեալ՝ եկի պատմել
16 քեզ: Եւ մինչդեռ նա խօսէր, այլ
հրեչտակ եկն առ Ցոբ՝ եւ ասէ ցՑոբ,
[15]Հուր անկաւ յերկնից եւ այրեաց զհօտսն,
եւ զհովիւսն քան նմին օրինակի եկեր.
ես միայն մնացեալ՝ եկի պատմել քեզ:
17 Եւ մինչդեռ նա խօսէր, այլ հրեչտակ
եկն եւ ասէ ցՑոբ, [16]Աստղատակաւորք
ասպատակեցին ի մեզ երեք առաջք,
եւ պատեցան զուզաւորքն եւ գերեցին
զնոսա, եւ զմանկտին կոտորեցին սրով.
ես միայն ապրեալ՝ եկի պատմել քեզ:

---

[1] ՆԲԲ. յաչխարհին Հուսդեա ԾՆՆգաց, ԻԲ.21: [2]ՆԲԲ. կատարեալ եւ [3]ՆԲԲ. ի չարութենէ [4]ՅՆԲԲ. պ-ւ-օ-ի [5]ՆԲԲ. որդիք [6]ՆԲԲ. ի նմա [7]ՆԲԲ. կատարեալ եւ արդար եւ [8]ՆԲԲ. զԱստուած [9]ՆԲԲ. Սարայեցիք [10]ՆԲԲ. Հուր Աստուծոյ [11]ՆԲԲ. Քաղդէացիք

18 Եւ մինչդեռ նա խօսէր, այլ հրեշտակ
գայր եւ ասէր ցՈզ, Մինչդեռ ուս-
տերքն քո եւ զտակերք ուտէին եւ ըմ-
19 պէին առ երիցս եղբօրն իւրեանց, Յան-
կարծակի հողմն մեծ եկն յանապատէ եւ
հնար ղչորեսին անկինս տանն, եւ ան-
կաւ տունն ի վերայ որդւոցն քոց եւ
վախճանեցան. ես միայն ազատեալ՝ եկի
պատմել քեզ։
20 Ապա յարուցեալ Ոզր պատառեաց զհան-
դերձս իւր, եւ կարեաց զվարսս գլխոյ
իւրոյ, եւ անկեալ ի գետին երկիր եպագ
21 Տեառն, Եւ ասէ, Մերկ ելի ես
յորովայնէ մօր իմոյ, եւ մերկանալով
դարձայց անդրէն. Տէր ետ եւ Տէր առ.
[1]որպէս Տեառն հաճոյ եղեւ՝ նոյն-
պէս եւ եղեւ։" եղիցի անուն Տեառն
22 օրհնեալ։ Եւ յայսմ ամենայնի [1]անցս որ
անցին ընդ նա" ոչ մեղաւ Ոզր [1]առաջի
Տեառն", եւ ոչ ետ անզգամութիւն
Աստուծոյ։

Գլ. Բ

1 Եւ եղեւ իրրեւ զօրս գայս, եւ եկին
[2]հրեշտակք Աստուծոյ կալ առաջի [3]Աս-
տուծոյ. եկն եւ Սատանայ ի մէջ նոցա
2 ընդ նոսա կալ առաջի Տեառն։ Եւ ասէ
Տէր ցՍատանայ, Դու ուստի գաս։
Յամենայն ասէ Սատանայ առաջի Տեառն,
[4]Ման եալ ի ներքոյ երկնից եւ չըլեալ
3 ընդ ամենայն, եկեալ կամ"։ Եւ ասէ
Տէր ցՍատանայ, Ապաքէն հայեցար ընդ
ծառայ իմ Ոզր, զի ոչ գոյ իրրեւ նմա
ի վերայ երկրի այր [5]ճշմարիտ, անա-
րատ," առատաձեռնեալ, մեհենալ [6]յա-
ւիտենից չարութենէ", եւ առաքեալն կայ
[7]յանմեղութիւն. եւ գու տարապարա
խօսեցար կործանել զինչս նորա"։
4 Կրկնեաց անդրէն Սատանայ եւ ասէ
ցՏէր, Մորթ ընդ մորթոյ, եւ որ ինչ
ինչ մարդոյ՝ ընդ անձին իւրոյ առաջեցի.
5 Ապա թէ ոչ, ազէ առաքես զձեռն քո
եւ արկ զոսկերօք եւ զմարմնովք նորա,
եթէ ոչ յերեսս իսկ օրհնասցէ զքեզ։
6 Եւ ասէ Տէր ցՍատանայ, Ահա մատ-
նեմ զնա քեզ, բայց միայն զոգի նորա
պահեսցես։
7 Եւ ել Սատանայ յերեսաց Տեառն, եւ
եհար ցՈզր չարաչար կեզով յոտից մին-
8 չեւ գլուխ։ Եւ առեալ խեցի՝ քերէր
[8]զիմսորսին, եւ նստէր յաղբեւս արտա-
քոյ քաղաքին։
9 Եւ իրրեւ լազում ժամանակ անցանէր
ի վերայ, ասէ ցնա կինն իւր, Մինչեւ
յո՞րչ ժուժկալեալ ասիցես, թէ Ահա համ-
բերիմ տակաւին սակաւ մի ինչ ժամանակ՝
ակն կալեալ յուսոյ վերջին իմոյ։
Անհաւատիկ ապականեալ է յիշատակ քո ի
վերայ երկրի, ուստերք քո եւ զտակերք՝
իմոյ որովայնի երկիք եւ երկունք, յորս տա-
ռապարտուց վաստակեցի տառապանօք։
Դու ինքն ի զգլուխիդն որպանց նոսին
օրհատացեալ բացական, եւ ես՝ մորո-
նալ եւ հարիւնահար առն ի տանէ եւ
անդի ի տեղւոջէ, սպասեմ թէ երբ
մահկիցէ արեգակն՝ զի հանգիստ ցաս-
առապանաց իմոց եւ ի ցաւոց իմոց որ
այժմ պատեալ են զինեւ։ Ազէ ասա
10 բան մի ինչ ի Տէր, եւ վախճանեաց։ Եւ
նորա հայհոյեալ ընդ նա՝ ասէ", Իրրեւ
զմի ի կանանց անզգամաց խօսեցար.
եթէ զբարիսն ընկալաք [9]ի ձեռանէ
Տեառն", չարեացս ոչ համբերիցեմք։ Եւ
յայսմ ամենայնի [1]որ ինչ անցք անցին
ընդ նա", ոչ մեղաւ Ոզր չրթամբք ի-
մովք [1]առաջի Տեառն, եւ ոչ ետ անզ-
գամութիւն Աստուծոյ"։
11 Եւ լուեալ երից բարեկամացն զչարիսն
ամենայն որ հասին ի վերայ նորա,
եկին իւրաքանչիւր ա՛յսքարշէ առ նա,
Եղիփազ [10]արքայ Թեմնացւոց, Բաղ-
դատ բնաւոր Սաւքեցւոց, Սոփար
արքայ Մինեցւոց". եւ եկին առ նա
միաբան մխիթարել եւ ամոխել զնա։
12 Եւ տեսեալ զնա ի բացուստ՝ ոչ ճանեան,
եւ բարբառեալ մեծաձայն լացին, եւ
պատառեցին իւրաքանչիւր զպատմու-
ճան իւր, եւ ցանեցին հող ի վերայ
գլխոյ իւրեանց ընդ երկինս [11]հայելով։
13 Եւ նստան չուրջ զնովաւ յերկրի զեւթն
օր եւ զեւթն գիշեր. եւ ոչ ոք ի նո-
ցանէ խօսեցաւ ընդ նմա բան. քանզի
անասանէին [11]զանհնարին հարուածսն եւ
զմեծամիծս յոյժ"։

---

[1] Յերբ. պ-ե-ռ [2] Երբ. որդիք [3] Երբ. Տեառն
[4] Երբ. Շրջեալ ընդ երկիր, եւ յածեալ ի նմա
[5] Երբ. կատարեալ եւ արդար եւ [6] Երբ. ի չա-
րութենէ [7] Երբ. ի կատարելութեան իւրում.
թէպետ եւ դու զրդռեցեր զիս ի նա՝ կլանել
զնա տարապարտուց

[8] Երբ. զանձն նոսին, եւ նստէր ի մէջերի։ (9) Եւ
ասէ ցնա կինն իւր, Տակաւին կա՞ս ի կատարե-
լութեան քումմ. ազէ օրհնեա զԱստուած, եւ վախ-
ճանեաց։ (10) Եւ ասէ ցկինն [9] Երբ. յԱստուծոյ
[10] Երբ. Թեմնացի, Բաղդատ Սաւքեցի, Սոփար Նա-
ամացի [11] Երբ. եթէ մեծ էր յոյժ վիշտ նորա

Գլ. Գ

1 Եւ ասաց ցնա երկայ զեւ-
2 բան իւր, եւ անէծ զօրն իւր, [1]Եւ ասէ,
3 Կոխեսջէ օրն յորում ես ծնայ, եւ գի-
շերն՝ յորում ասացին թէ Ահա արու-
4 Ճաւարեցաւ [2]գիշերն այն, եւ մի՛ երկնըր-
բնայէ զնա [3]Տէր ի վերուստ. մի՛ եկեսցէ
5 ի վերայ նորա լոյս։ Ընկալցի զնա խա-
ւար եւ ստուեր մահու, եկեսցէ ի վե-
6 րայ նորա [4]մէգ։ Անթնդալ լիցի օրն այն
եւ գիշերն, եւ ասրցի զնա՝ խաւար.
մի՛ եղիցի յաւուրս ամսոց, եւ մի՛
7 թուեսցի յաւուրս ամսոյ։ Այլ գիշերն
այն եղիցի [5]ի ցաւս, եւ մի՛ եկեսցէ ի
վերայ նորա ուրախութիւն եւ ցնծու-
8 թիւն։ [6]Այլ նզովեսցէ զնա որ նզովիլոցն
է զօրն զայն, որ զբոամբ ածելոյն իակ
9 է՝ զմեռ վիշապն։ Խաւարեսցին աս-
տեղք գիշերոյն այնորիկ, ոչ յուսասցէ [7]եւ
ի լոյս մի՛ եկեսցէ, եւ մի՛ անասցէ զա-
10 րեւանին ծագիւք՝։ Զի ոչ փակեաց
դրունս արգանդի մօր իմոյ, [8]զի թնե-
11 ւեա մերժէր՝ զցաւս յաչաց իմոց։ Իակ
ընդէր յորովայնի ոչ վախճանեցայ, այլ
ելի յարգանդէ եւ ոչ անգէն վաղվաղակի
12 կորեայ։ Ընդէր [9]գիւակեցան ինձ ծնուն՛ք՝,
կամ ընդէր գինոյ ես զամնա մօր իմոյ։
13 Զի այժմ հանգարտեալ դադարէի, եւ
14 հանգչէի ընդ թագաւորս եւ
ընդ խորհրդականս երկրի ոյք [10]հզար-
15 ացուցին իւրեանց՝, կամ
ընդ իշխանս որոց բազում էր ոսկի,
որք լցին զտունս իւրեանց արծաթով.
16 կամ իբրեւ զանդատեալն՝ որ ելնէ յար-
դանդ մօր իւրոյ, կամ իբրեւ զանայս
17 որ ոչ տեսին զլոյս։ Անդ տմարիչքն
[11]որ բարկացեալն զադարսուրթիւն բար-
կութեան. անդ հանգեան աշխատեալքն
18 մարմնով, ի միասին յանհանգանք՝
19 որք ոչ լուան զձայն հարկատանի՝։ Փոքր

[1]Ելք. Եւ եղ պատասխանի Յոր եւ [2]Ելք. օրն
[3]Ելք. Աստուած [4]Ելք. Մէգ, եւ զարհուրեցուա-
ցեն զնա որ մի՛ այսպէս ցանկան զանել։ (6) Զգիշերն
գայն՝ կալցի [5]Ելք. ամպի [6]Ելք. Նզո-
վեսցեն զնա, որ նզովեն զաւր, ճարտարք ի
յարուցանել [7]Ելք. լուսոյ եւ ոչ լցէ, և մի՛
անասցէ զարեան անուն այգուն [8]Ելք. եւ ոչ
թաղոյց [9]Ելք. ընկալան զիս ծունկք [10]Ելք.
չինեն իւրեանց աւերակս [11]Ելք. գադա-
րեն ի տանջելոյ, եւ անդ հանգչին պարտա-
եալք յուժոյ։ (18) Նոյնպէս կապելք հանդ-
չին, ոչ լսեն զձայն հարկատանւոյն

եւ մեծ անդ են, եւ ծառայ անելիւզ
20 ի տեառնէ իւրմէ։ Իակ ընդէ՞ր տուեալ
լոյս անձանց դառնացելոց լոյս, եւ կեանս
21 ցաւագնելոց սրտիւք, Որ ցանկան մա-
հու, եւ ոչ [12]հասանեն. փորեն իբրեւ
22 զգանձս՝. Եւ ընդալից լինին եթէ գտա-
23 նիցեն զմահ. Մարդոյ [13]հանդիսաւ է յորմէ
ճանապարհն իւրեանց ի նմանէ՝, զի
24 փակեաց զնովաւ Աստուած։ Յառաջ քան
զկերակուրս իմ՝ հնծութիւն նոցա, ար-
25 տասուք եւ ահիւ նեզեալ եմ։ Զի եր-
կեաւղն յորմէ խիմայի ակն ի վերայ իմ,
26 եւ յորմէ կասկածէի պատահեաց ինձ։ Ոչ
խաղաղեցայ, ոչ դադարեցի, ոչ հանգեայ.
քանզի եկն ի վերայ իմ բարկութիւն։

Գլ. Դ

1 Կրկնեալ անդրէն Եղիփազ Թեմանաց-
2 ւոյ ասէ, Մինչ [14]բազո՞ւմ անգամ լեալ
լցեն զբ բանք աչխատասիեամբ, եւ
զօրութեան բանից քոց ո՞ հանդարտեսցէ։
3 Զի եղե՞ խրատակեր զոս զրազումս, եւ
4 զձեռս ակարի միխիթարեցեր. Եւ [15]զհի-
ւանդացեալս կանգնեցեր բանիւք, եւ
ծնկաց կիսուցելոց քաջալերութիւն զեռ-
5 ցուցեր, Եւ արդ եկեն հասին ի վերայ
[16]քո ցաւք. ատկան զոս վաղվաղակի՛։
6 Ո՞չ ապաքէն երկիւղդ քո [17]անդգամու-
թիւն է, եւ կասկած քո եւ անյուսա-
7 թիւն ճանապարհի քո՞։ Արդ յիշեա, ո՞
որ որ՝ աւբդ էր՝ կորեաւ, կամ ճչմա-
8 րիտք արմատաւք երբեք խլեցան։ Զոր
օրինակ տեսի զայնոսիկ որ [18]զանպատ-
ուհան արօրագիր անկան, որ սերմանեն
9 [19]զնոսա՝ ցաւս հնձեցեն ի նոցանէ։ Ի
հրամանէ Տեառն՝ կորիցեն, ի հոգւոյ
10 բարկութեան նորա սատակեսցին։ [20]Զօ-
րութիւն առիւծու, գոչիւն մատակ ա-
րիւծու, [21]պերճութիւն վիշապաց՝ չի-
11 ջան։ Մրջնատեւծն՝՝ սատակեցաւ առ ի
չգոյէ կերակրոյ, կորիւնք առիւծուլքին

[12]Ելք. Հասանէ. խնդրեն զայն առաւել քան
զգանձս ծածկեալս [13]Ելք. որում ճանապարհ
նորա թաղուցեալ է [14]Ելք. խոժռեացիս,
եթէ փորձեսցուք խօսել առ քեզ. սակայն ո՞
կարիցէ ժուժկալել առ ի չխօսել։ (3)Ահա [15]Ելք.
զոր սահելոյ էր [16]Ելք. քո, եւ խոժռեցար,
մերձեցաւ ի քեզ, եւ տագնապեցար [17]Ելք.
յոյս քո է, և ակնկալութիւն քո՝ ուղղութիւն
ճանապարհաց քոց [18]Ելք. զանօրէնութիւն
[19]Ելք. զձշմարտութիւն զոյն հնձեացեն։ (9) Ի
շնչոյ Աստուծոյ [20]Ելք. Առնչիւն [21]Ելք.
ժանիք կրծանց առիւծու խորտակեցան։ (11)
Առեւծ հուժկու

12 զմիմեանս ։ [1]Եթէ էր տակաւին բան
ճշմարիտ եղեալ ի խօսս քո, ոչ ինչ
յայդպիսեաց չար պատահէր քեզ ։ Ա-
բեղիմն ո՞չ ընդունիցի ունկն իմ հրաչա-
13 կերտս ի նմանէ ։ Արտասուքս եւ բամ-
բիւնք պիղծականք, հասեալ ած ի վե-
14 րայ մարդկան", Դոդովմն եւ տակուման
պատահելոյն ինձ, եւ մնծասէս զտակերս
15 իմ չարժանսն ։ Եւ ելոյ [2]հոգի ի վերայ
երեսաց իմոց, քաւիւնկսն [3]հնրք իմ եւ
16 մարմինք ։ Կանգնեցայ՝ եւ ոչ գիտացի.
անո՛ր եւ ոչ" էին կերպարանք տասոյն
աչաց իմոց, [4]բայց միայն օգ եւ ոս-
17 տաւիւն լսէի ։ Իսկ ապ միթէ տո՞ւրը
լինիցի մարդ ստացող Տեառն, կամ ի
18 գործոց իւրոց անարա՞մս այր, եթէ ծա-
ռայից իւրոց ոչ հաւատացցէ, եւ գնրհչ-
տակաց խոտորագոյնս ինչ իմացաս ։
19 Իսկ արդ զրնակեալս ի տունս կաւի-
զէնս, յորոց եւ ինքեանք ի նմին կաւոյ
եմք, եհար գնոսա ըստ օրինակի ցեցոյ
20 եւ յաստուածս միջնէ յերկոյ ոչ եւս
լցին. քանզի անձամբ անձին օգնել ոչ
21 կարէին, կրնան ։ Փչեաց ի նոսա եւ
ցամաքեցան, աստուածն՝ քանզի ոչ
էր ի նոսա իմաստութիւնն"

Գլ. Ե

1 **Աւրդ** ազէ կարգա, թէ ոք ատցէ՞ քեզ
ձայն, [5]կամ թէ զոք ի տիւչտակաց սրբոց
2 տեսցի՞ս" ։ Քանզի եւ զանզգամ ատա-
նանէ բարկութիւնն, եւ զմոլորեալն մե-
3 ռուցանէ նախանձ ։ Նա՝ ես տեսի ան-
զգամաց արմատս ձգեալ, այլ վազվա-
4 զակի [6]հարան յարկը" նոցա ։ Հեռի լի-
ցին որդիք նոցա ի փրկութենէ, կոզկո-

զեսցին առ դրունս [7]վատխտից, եւ ոչ
5 ոք լցէ որ փրկիցէ ։ Զի զոր նոքա
ժողովեցին [8]արգարք կերկերին, եւ նո-
քա մի եպիցին առնուագք ի չարեաց ։
6 Ծծնսցի զօրութիւնն նոցա" ։ Զի ոչ եթէ
փրկիչ եղանիցէ [9]աչխատութիւնն, եւ ոչ
7 ի լսանց բռնաւորիցին ցաւք ։ Այլ մարդ
աչխատութեամբ ծնանի. ձագք ար-
8 ծուեաց" ի բարձունս խոչին ։ Բայց սա-
կայն ես [10]ինդրեցից ի Տեառնէ, եւ գՏէր
9 գամենեցուն իշխանն կարդացից", Որ
առնէ զհեծամեծս եւ զանգնելիս եւ
զհրաշագործս եւ զնրաչակերտս որոց ոչ
10 գոյ թիւ. Որ տայ անձրեւ յերկիր, ա-
11 ռաքէ ջուրս ի ներքոյ երկնից. Որ առնէ
զխոնարհս ի բարձունս, եւ [11]կանգնէ
12 զկորուսեալս", Եւ փոխեսէ զիարհուրդս
խորամանկաց, եւ [12]ոչ գործեացին ձեռք
13 նոցա զձշմարտութիւնն. Որ հասանէ ի-
մաստնոց հանճարով", եւ զիարհուրդս
14 բազմանիւթից յիմարեցոյց ։ Ի տուէ
պատահիցէ նոցա խաւար, եւ ի միջօրէի
15 իրրեւ ի գիշերի խոպոպիցին ։ [13]Ա-
տակացոյն պատերազմաս", եւ աղքատն
16 ապրեսցի ի ձեռանէ հզօրին ։ Եղիցի յոյս
17 տկարի, բերան անիրաւի խցցի ։ Երան-
եալ է մարդ զոր յանդիմանեսցէ [14]Տէր,
եւ ի խրատուէ Ամենակալին մի հրա-
18 ժարւեսցես ։ Զի նա ցաւեցուցանէ, եւ
գխոտանգամ անպրէն հատուսանէ. եհար՝
19 եւ ձեռք նորա բժշկեցին ։ Վեցից ի
գնատց փրկեսցէ զքեզ, եւ յեւթներորդ-
20 դումն ոչ մերձեսցի առ քեզ չար ։ Ի
սովի՝ փրկեսցէ զքեզ ի մահուանէ, ի
պատերազմի՝ ի ձեռաց երկաթոյ աս-
21 ձակեսցէ զքեզ ։ Ի տանջանաց լեզուի
ծածկեսցէ զքեզ, եւ մի երկիցես ի չար-
22 եաց [15]եկելոց ի վերայ քո. Զանիրաւս
եւ զանօրէնս արհամարհեսցես", ի գա-
23 զանաց վայրենեաց ոչ երկիցես. Զի ընդ
քարինս վայրի գաչինք քո, եւ գազանք

[1]Եթէ. Արդ առ իս բան գազտագողի եհաս, եւ ընկալաւ ունկն իմ չշնջինն ի նմանէ։ (13) Յարհուրս տեսլեանց գիշերոյ, յանկանել թմբրութեան ի վերայ մարդկան [2]Ա՛հ, ոգի [3]Եթէ մազք մարմնոյ իմոյ ։ (16) Կանգնեցայ եւ ոչ գիտացի զտեսիլ նորա ։ [4]Եթէ. լսութիւն եղև եւ լսէի բարբառ։ (17) Միթէ լինիցի՞ մարդ արդար քան զԱստուած. միթէ այր քան զԱ-րարիչ իւր իցէ՞ սուրբ ։ (18) Ահա ի ծառայս իւր ոչ հաւատայ, եւ ի հրեշտակս իւր գտանէ բիծս ։ (19) Ա՛րբաճ եւս առաւել ի բնակեալսն ի տունս կաւեղէնս, որոց ի փշուրջ հիմունք նոցա. ճմլին նոքա վաղ քան զցեց ։ (20) Յառաւօտէ մինչեւ երեկոյ խորտակին. կորնչին յաւիտեան առ ի չառնելոյ ուրուք փոյթ։ (21) Ոչ ապաքէն մեկնեալ է փառաւորութիւն նոցա ար ի նոսա. մեռանին նոքա, եւ ոչ իմաստութեամբ ։ [5]Եթէ. եւ յո՞ք ի սրբոց հայեցցիս [6]Եթէ. անկեծի զրնակութեան [7]Եթէ. պ-ո-ռ-ս [8]Եթէ. քաղցեալն կերկերէ, եւ ի փշոյ կսրկիցէ զայն, եւ ծարաւին կլանէ զտատ-գուածս նոցա [9]Եթէ. անօրէնութեան, եւ ոչ ի գանոյ բռնաւորիցի թմբռնութեան (7) Այլ մարդ ի թմբռնութեան ծնանի, որպէս սրդիք կայծականց [10]Եթէ. կարդացից առ Աստուած, եւ Աստուծոյ յանձն արարից զգաս իմ [11]Եթէ. գտատուրք եւանեն ի գեւբ [12]Եթէ. ոչ առնիցեն ձեռք նոցա հաստատութիւն (13) Ի՛մբռնէ զիմաստունս ի խորամանկութեան իւրեանց [13]Եթէ. Եւ ապրեցուցանէ ի սրոյ, ի բերանոյ նոցա [14]Եթէ. Աստուած [15]Եթէ. եկելոց ։ (22) Ի վերայ կործանման եւ աւերս ծիծաղեսցիս

24 վայրենիք խազազասցին ընդ քեզ։ Ապա
պիտասցես թէ խազաղութիւն է տան
քո, եւ [1]քնակութիւն յարկի քո մի՛
25 վրիպեսցի՝։ Եւ ծանիցես զի բազում է
զաւակ քո, եւ սերիք քո եղիցին իբ-
26 րեւ զբանջար վայրի։ Եւ երթիցես ի
գերեզման [2]իբրեւ զցորեան հասեալ՝ ի
ժամանակի հնձելոյ, կամ՝՝ իբրեւ դ[3]ղեզ
27 կալոյ ի ժամանակի ամբարելոյ։ Ա[4]հա-
ւասիկ զայս այսպէս քննեցաք, այս է
զոր լուաքն. բայց դու պիտասչիր յանձն
քո՝ զինչ գործեցեր։

Գլ. Զ

1 Կրկնեալ անդրէն Յովբ առէ, (2) Եթէ
կշռեալ ոք կշռեր զյարկութիւնս իմ,
եւ զդաւս իմ միանգամայն բառնայր ի
3 լուծ կշռոյ, քան զաւազ ծովու ծան-
բագոյն լինէր. նա ուրեմն բանք իմ
4 անզգամք են։ Զի նետք [5]Տեառն ի
մարմնի իմում են, եւ սրտմտութիւն
նորա ծծէ զարիւն իմ. յորժամ սկսա-
5 նիմ խօսել՝ կատան պնա՝։ Իսկ արդ՝
զինչ կրծիդ, մինչ տարտարարուց խանչիկ
գիս, բայց եթէ կերակուր ընդդիրիկ.
կամ թէ զոչիղ[6] եղն առ մսուր յորժամ
6 ունիցի զկերակուր. Կամ ուտելի՞ [4]հաց
առանց աղի, կամ գուցէ՞ համ [5]ի բանս
7 ունայնս։ Սա՝ ոչ կարէ հանդպարտիլ
անձն իմ, զի չարաւուղ անասնոյ զկեր-
8 րակուր իմ՝ իբրեւ զնոսա առնեմ։ Զի
եթէ ասացէ՝ եւ տացէ Տէր ինձ զխնդրուածք
9 իմ, եւ զոյս իմ ասցէ Տէր։ Հաճա-
Տէր խոցոտել զիս, բայց ի սպառ մի՛
10 սպանցէ զիս։ Եղիցի ինձ քաջաքն իմ
գերեզման՝ յորոյ վերայ պարապացին ձեմիչք,
եւ ի նոս ոչ խնայեցիցէ. զի ոչ առաւ զբան-
11 բից սրբոյն Աստուծոյ իսոյ։՝ Զի
զինչ է զօրութիւն իմ եթէ համբերիցէ,
կամ զինչ [6]ժամանակ՝ զի հանգարտեսցէ

12 անձն իմ՝։ Միթէ զօրութիւն վիմաց իցէ
զօրութիւն իմ, կամ մարմինք իմ պղնձիք.
13 [7]կամ թէ ոչ ի նա ապաւինէի՝ Արդ՝
օգնութիւն իմ մերժեցաւ յինէն, եւ
սղոմութիւն հրաժարեալ [8]յինէն, այ-
ցելութիւն Տեառն անտես արար զիս։
14 Ոչ հայհոյանս յիս մերձաւորք իմ, (15) Իբրեւ
զվտակ պակասեալ եւ իբրեւ զալիս ան-
16 ցին զինեւս։ Որք սարսէին յինէն՝ արդ
17 անհաւասիկ հասին ի վերայ իմ։ Իբ-
րեւ զձիւն կամ իբրեւ զասուն պղեալ՝
որ հալիցի ի հասանելոյ ջերմութեան եւ
18 ոչ ճանաչիցի թէ որպէս էր, Նոյնպէս
եւ ես լքայ յամենայնումն, կորեայ եւ
19 անհնկացայ։ Տեսէք զճանապարհս Թեմա-
նայեցոց՝ որք ի չարիս Սաբայ հայիք,
20 եւ ամօթ կրեսցին յուսացեալքն ի քա-
21 զաքս եւ յինչս։ Դա եւ դուք ուտարիկ
անդորրս հասէք ի վերայ իմ. հայեցեալ
22 ի վէրս իմ՝ երկեցուք։ Արդ ես զձե՞զ
23 [9]ինչ խնդրեցի, կամ ձերո՞վ զօրութեամբդ
կարօտեալ իցեմ ապրեցուցանել զիս ի
թշնամեաց, կամ ի ձեռաց հզօրաց փրկել
24 զիս։ Ուսուցէք զիս՝ եւ ես լռեցից. եւ
եթէ մոլորեալ [10]ինչ իցեմ, արարէք զիս

[1] Եբր. այլ արասցես բնակութեան քում, եւ մի՛ վրիպեսցիս [2] Եբր. ի բարւոք ծերութեան, [3] Եբր. Աժենակալին յիս են, կծոյն նոցա ծծէ ոգի իմ. արհաւիրք Աստուծոյ ճակատին ընդդէմ ինձ [4] Եբր. անհամ [5] Եբր. ի սպիտակուց ձուոյ։ (7) Յորս մերձենալ դադրէր անձն իմ, այնք եղեն ինձ կերակուր դըժանոյց։ (8) Ո՛ տայր թէ գայր խնդրուած իմ, եւ զսպնկալութիւն իմ տայր Աստուած. (9) Եւ կամէր Աստուած ճնշել զիս, ձգէր զձեռն եւ բառնակէր զիս։ (10) Եւ լիցի ինձ տակաւին մխիթարութիւն, եւ ուրախ եղէց ի ցաւս անողորմս, զի ոչ ուրացայ զբանս Սրբոյն։ [6] Եբր. կատարած իմ, զի երկայնամիտ եղէց

[7] Եբր. (13) Ո՞չ ապարէն [8] Եբր. յինէն։ (14) Լքելոյն դժուարութիւն ի բարեկամէ իւրմէ. բայց նա զերկեղ Աժենակալին եթող։ (15) Եղբարք իմ խաբեցին իբրեւ զնեղէզ իբրեւ զնեղեղս ձորոց որ անցանեն. (16) Որ պղտորին ի սառնամանեաց, ի դիզելոյ ձեան ի վերայ նոցա ։ (17) Ի ժամանակի ջերմանալ նոցա ցամաքեցին, ի տօթի անհետ լինին ի տեղւոջէ իւրեանց։ (18) Կարաւանք խոտորեցուցանեն զճանապարհ իւրեանց, ելանեն յամայութիւն եւ կորնչին. (19) Հայեցան կարաւանք Թեմանացւոց, ճանապարհորդք Սաբայ սկն կային նոցա. (20) Յամօթ եղեն զի յուսացան. եկին մինչեւ անդր, եւ ամաչեցին։ (21) Զիա՞րդ եղերուք յայնչ. տեսէք բեկումն, եւ երկերուք։ (22) Միթէ ասացի՞ ձեզ, Բերէք ինձ, եւ յընչից ձերոց տուք վասն իմ։ (23) Կամ ապրեցուցէք զիս ի ձեռանէ թշնամւոյն, եւ ի ձեռաց հզօրաց փրկեցէք զիս. (24) Ուսուցէք զիս, եւ ես լռեցից. եթէ մոլորեալ ինչ իցեմ, արարէք զիս թեզամուտ։ (25) Քանի՛ զօրեզ են բանք ուղղութեան, այլ զինչ կշտամբանք յանդիմանութեանդ ի ձէնջ։ (26) Միթէ ի յանդիմանել զբանս խորհեցարուք. այլ ընդ հողմն են բանք յուսահատելոյն։ (27) Ապարէն անկանիք ի վերայ որբոյ, եւ փորք վասն բարեկամի ձերոյ։ (28) Եւ այժմ կամեցարուք հայել յիս, եւ յայտնի լինիցի ձեզ եթէ ստեցի՞ց։ (29) Դարձարուք, մի՛ լիցի անիրաւութիւն. եւ դարձարուք այսօրէն, արդարութիւն իմ ի սմին։ (30) Միթէ գուցէ՞ անիրաւութիւն ի լեզուի իմում. միթէ քիմք իմ ո՞չ խորհեցան զանիրաւութիւնս։

25 խեղամուտ։ Այլ ուրուն խոտան են
բանք ճչմարտի. քանզի ոչ ելիէ ի ձէնջ
26 հնոցիւմ զօրութիւն։ Եւ ոչ կշտամբանք
բանից ձերոց լսեցուցանեն զիս, եւ ոչ
27 բարբառոյ լանից ձերոց անասպիծ։ Բայց
զի իրրեւ ի վերայ որոյ չարուցեալ էք
ի վերայ իմ, եւ խազացեալ էք ի վերայ
28 բարեկամի ձերոյ։ Բայց արդ հայեցեալ
յերեսս ձեր ոչ սակաչիչ. նատարուք, եւ
մի՛ ինչ լիցի անիրաւութիւն ի գատաս-
29 տանի, ես դարձեալ իրաւանց ուչ ու-
30 նիցիք։ Զի ոչ կոյ ի լեզուի իմում անի-
րաւութիւն, կամ կոկոյզ իմ ոչ խա-
կասցէ յիմաստութիւն։"

ԳԼ. Է

1 [1]Ո՞չ ապաքէն իրրեւ զվորձութիւն են
վարք մարդոյ ի վերայ երկրի, եւ իրրեւ
զաւօրեայ վարձք վարձկանի կեանք
2 նորա։ Կամ իրրեւ զծառայ երկուցեալ
ի անառնէ իւրմէ եւ զօղեալ ընդ հո-
վանեաւ, եւ իրրեւ զվարձկան որ սպաս-
3 սիցէ վարձուց իւրոց, Նոյնպէս եւ ես
սպասեցի ամսոց անտեսից. գիշերք յա-
4 ւագին տուեալ են ինձ։ Եթէ ննջելիցէ՝
ասեմ, ե՞րբ իցէ տիւ. եւ եթէ յառնիցեմ՝
զարձեալ իմէ ե՞րբ իցէ երեկ. լի ցաւօք
լինիմ յերեկորեայ մինչեւ յառաւօտ։
5 Թաթաւեին մարմինք իմ զպղրութեամբ
որդանց, մաշեցի զկոչոտս երկրի առ ի
6 գիտալախս քերելոյ։ Եւ կեանք իմ իմեւ
իմեւպոյնք են քան զիսօտ, եւ կորեան
7 յոյսոյնութեան յուսոյ։" Ցիշեա զի փուք
են կեանք իմ, եւ ոչ զարձցի աչն իմ
8 ի տեսանել զբարի։ Եւ ոչ հայեսցի յիս
աչն տեսողի. աչք քո յիս՝ եւ ես ոչ
9 եւս իցեմ։ Իրրեւ զամպ չննչեալ յերկ-
նից. զի եթէ իչանիցէ մարդ ի գժոխս,
10 ոչ եւս ելցէ եւ ոչ զարձցի ի տուն իւր,
11 եւ ոչ եւս ծանիցէ զնա տեղի իւր։ Ա-
ռաւհասիկ ոչ եւս խնայեցից ի բերան

[1] ՆԲԳ. (1) Ո՞չ ապաքէն պատերազմ է մարդոյ ի վերայ երկրի, եւ իբրեւ աւուրք վարձկանի աւուրք նորա։ (2)Որպէս ծառայ ցանկայ ստուերի, եւ որպէս վարձկան սպասիցէ վարձու իւրում, (3) Նոյնպէս եւ ինձ եղեն բաժին ամիսք ապականութեան, եւ գիշերք տառապանաց հաշուեցան ինձ։ (4) Եթէ ննջեմ, ասեմ, ե՞րբ յարիցայց, եւ երկայն է երեկոյ, և յագեալ եմ ի շրջմջելոյ մինչեւ յառաւօտս։ (5) Ներկեալ է մարմին իմ որդովքը եւ կաշտիւք հողոյ. մորթ իմ պատառեալ եւ հալի։ (6) Աւուրք իմ արագագոյն են քան զկոճ ոստայնանկաց, եւ սպառին ի վախճանի անյոյս։

իմ, խոսեցայց մինչեւ իցեմ ի վիչտս,
յոյսիչ զդառնութիւն անձին իմոյ ասա-
12 նասա։ Մթիէ ծով իցեմ կամ վիչապ,
13 զի կարգեցեր զինեւ պահ։ [2]Ասացի թէ
Մխիթարեսցին զիս մահիճք իմ, վաս-
ելցից զինէն զբանս յանկողնի իմում՝,
14 Զարհուրեցուցանես զիս երազովք, եւ
15 տեսլեամբք հարկանես զիս։ [3]Թափես
զոգի իմ ածանել իմէ, եւ ի մարմնոյ գչունչ
16 իմ, եւ ի մահուանէ զկեանս իմ. Զի ոչ
ելիէ յաւիտեան կեցի, ելիէ երկայնա-
միա եղէց՝. ի լաց կոյ յինէն, զի ընդ-
17 դունայն են կեանք իմ։ Զի զինչ է
մարդ՝ զի մեծացուցեր զնա, կամ զի
18 հայիցիս ինդ մտօք, [4]կամ այցելութիւն
առնիցես նմա մինչեւ յառաւօտ, եւ ի
19 հանդիպաս գատիցիս զնա՞։ Մինչեւ յո՞րր
ոչ թողուցուս զիս, եւ ոչ ընդարձա-
կիցես ինձ մինչեւ յաւուրք կլանիցեմ
20 զառգուկս իմ։ Զի իմէ մեղայ՝ զինչ կա-
րիցեմ առնել քեզ, որ զիսանագ զմիտս
մարդկան. ընդէր եդիր զիս քեզ ասոխ,
21 եւ իցեմ [5]քեզ բեռն։ Եւ ընդէր ոչ ա-
յտրեր մատացումն անօրէնութեան իմոյ
եւ արդութիւն մեղաց իմոյ. արդ ահա
[6]յերկիր գառնայցեմ՝՝ կանխեալ, եւ այլ
ոչ եւս իցեմ։

ԳԼ. Ը

1 Կրկնեալ անդրէն Բազդատայ Սաւքեց-
2 ւոյ ասէ, Մինչեւ ցո՞ր խոսիցիս զայդ,
եւ ոչ [7]մեծաբանութեան բերան քո՞՝։
3 Միթէ անիրաւ գատիցի [8]Տէր, կամ որ
զամենայն արար՝ պղտորիցէ՞ զիրաւունս։
4 Եթէ որդիքն քո մեղան առաջի նորա,
աւաքեաց [9]ի ձեռն զանօրէնութիւնս
5 նոցա։ Բայց դու կանխեա առ Տէր ա-
6 նինակալ աղօթիւք՝, եթէ սուրբ եւ
ճչմարիտ իցես՝ աղօթից քոց լսիցէ,
գարձուսցէ քեզ զյարին արդարութեան.
7 Եւ լինիցին առաջինքն քո սակաւք, եւ
վերջինքն քո անչաւք։

[2] ՆԲԳ. Եթէ ասեմ, Անկողին իմ մխիթարեսցէ զիս, մահիճք իմ բարձցեն զարտասուս իմ [3] ՆԲԳ. Եւ ընտրեաց զկեդր առնուլ անձն իմ, զմա՞ք քան զոսկերս իմ։ (16) Գարշեալ իմ, ոչ յաւիտեան կեցից [4] ՆԲԳ. Եւ այցելութիւն առնիցես նմա առաւօտուց, եւ փորձեսցես զնա յաժենայն ժամ [5] ՆԲԳ. ինձ [6] ՆԲԳ. ննջեցից ի հող, եւ եթէ խնդրեսցես առ [7] ՆԲԳ. ուժգին բանք բերանոյ քո [8] ՆԲԳ. Աստուած, եւ Ամենակալն [9] ՆԲԳ. զնոսա ի ձեռս անօրէնութեան նոցա. (5) Եթէ դու կանխեացես առ Աստուած, և կացցես յաղօթս առ Ամենակալն

8 Բայց ազէ հարց զազգն առաջին, եւ
9 քննեա բուս առնմիոյ հարցն. (Զի երիկ-
ամանք եմք, եւ ոչ գիտեմք. քանզի
ստուեր են կեանք մեր ի վերայ երկրի.)
10 Կամ քէ ո՞չ նոքին քեզ ուսուցանեն զքեզ
եւ պատմեսցեն, եւ ի սրտէ հանցեն
11 զբանս. Միթէ կանաչանայ պուռտ ա-
ռանց ջրոյ, կամ բարձրանայցէ՞ կնիւն
12 առանց ըմպելոյ. Մինչդեռ անդէն ի վե-
րայ արմատոյ իւրոյ է՝ [1]ոչ հնձեսցի.
յառաջ քան զայրենալ ամենայն բանջար
13 եթէ ոչ առոգանի՝ ո՞չ ցամաքիցի. Այդ
այնպէս եղիցի վախճան ամենեցուն որ
մոռանայցեն [2]զԱՏԵր. զի յոյս ամբարչաի
14 կորիցէ. [3]Անչէն լիցի տուն նորա,
անդցէ իբրեւ սարդիսոսային յարկ նորա՞.
15 Թէպէտ եւ [4]հաստատեսցէ զտուն իւր՝
մի՛ կացցէ, յարկանել ձեռին նորա՝ մի՛
16 հանդարտեսցէ. Զի խոնաւութիւն յա-
րեգականէ է, եւ ի նեխութենէ՞ նորա
17 եղէզ չառաւ իւր. [5]Ի վերայ կարկաւի
քարանց ննջեսցէ, եւ ի մէջ մանրախիճ
քարանց կեցցէ. եթէ ընկիցէ զնա տե-
18 գին՝ ատեսցէ. Ա՞չ տեսեր այսպիսի ինչ.
19 Զի կործանումն ամպարչաի այսպիսի է,
20 եւ յերկրէ այլ բուսցի. Զի Տէր՞ ոչ
մերժէ զանմեղն, [6]զամենայն պատարագ
21 ամպարչաի ոչ ընկալցի. Բերանք ճչմար-
սիոյ լցցին ծաղու, եւ շրթունք նոցա՞
22 գոհու թեամբ. Թշնամիք նոցա զգեցցին
ամօթ, յարկք ամպարչաի ոչ եւս իցեն։

Գլ. Թ

1 Կրկնեալ անդրէն Յովբայ ասէ, (2)Ճչմար-
սիս գիտեմ թէ այդ այդպէս իցէ. քանզի զինչ մարդ արդար առաջի
3 Աստուծոյ. [7]Զի եթէ կամիցի դատել ընդ
նմա, [8]ոչ լուիցէ նմա. զի եւ մի բան
հազար բանի՞ պատասխանի ոչ տացէ.
4 Զի իմաստուն է սրտիւ՝ զօրաւոր եւ մեծ՝
ո՞ խաստացաւ ընդդէմ նորա, եւ հան-
5 դարեաց. Որ [9]հնացուցանէ զլերինս
եւ ոչ գիտեն, որ տապալէ զնոսա բար-
6 կութեամբ. Որ [10]շարժէ զաս ի ներքոյս
երկրէ ի հիմանց՞, եւ սիւնք նորա դո-
7 զան. Որ ասէ արեգական եւ ոչ ծագէ,
8 եւ ընդդէմ աստեղաց կնքէ. Որ ձգեաց
զերկինս միայն, եւ չրջի ի վերայ ծո-
9 վու իբրեւ յատակի. Որ արար զԲազ-
մաստեղսն եւ [11]զԳիշերաւարսն եւ զՄայրն
10 եւ զչտեմարանս հարաւոյ. Որ առնէ
զմեծամեծս [12]եւ զանքննիս եւ զփառա-
ւորս՞ եւ զհրաշակերտս՝ որոց ոչ գոյ
11 թիւ. եթէ վերասցի քան զիս՝ ոչ տես-
ցից, եւ եթէ անցցէ առ իմեւ՝ եւ ոչ
12 այնպէս գիտացից. Եւ եթէ [13]առաս-
կեսցէ՝ ո՞ դարձուսցէ, կամ ո՞վ ասիցէ
13 ցնա թէ Զինչ արարեր. [14]Զի նա դար-
ձեալ ի բարկութենէ, եւ ի նմանէ տար-
14 սեղնն կէտք որ ի ներքոյ երկնից. Իցէ՛
թէ լուիցէ ինձ, կամ լրաւացուսցանիցէ
15 զբանս իմ. եթէ լցեմ արդար՝ ոչ լուիցէ
ինձ. եւ զդատաստան նորա աղաչեցից՞
16 եւ եթէ կարդացից եւ անսասցէ՝ չհա-
17 ւատամ թէ լուաւ իսկ ինձ. Եւ որ մի-
գով առաւակեսցէ զիս. բազում են հար-
ուածք զոր արար ինձ տարապարտուց.
18 Ոչ տայ ինձ հանգչել. զի լցոյց զիս
19 դառնութեամբ. [15]Քանզի հզօր է բռնա-
նայ. իսկ արդ ո՞ իցէ, որ դատաստանի
20 նորա կացցէ հակառակ՞. Իսկ եթէ իցեմ
եւս արդար, սակայն բերան իմ ամ-
պարչասցէ. եւ եթէ իցեմ անարատ,
21 կամակոր գասանիցիմ. [16]Զի եթէ ամ-
պարչասցի յանձն իմ՝ ոչ գիտեմ, բայց
22 զի բառնան յինէն կեանք իմ. Վասն որոյ

---

[1] ԵՒԲ. մինչեւ հատեալ. յառաջ քան զամենայն
խոտ [2] ԵՒԲ. զԱստուած [3] ԵՒԲ. Յոյս նորա հատցի,
եւ տուն սարդիսոսային՝ վստահութիւն նորա
[4] ԵՒԲ. յենուցու ի տուն իւր՝ եւ մի՛ կացցէ. հաստա-
տեսցէ զնա, եւ մի՛ կանգնեսցի (16) Խոլոր է նա
յառաջ քան զարեգակն, եւ ի վերոյ պարտիզի
[5] ԵՒԲ. Արմատք նորա պատին զկարկաւ քա-
րանց, զտուն քարանց տեսանէ. (18) Եթէ
խլեսցէ որ զնա ի տեղւոջէ իւրմէ, սա յուրասա
լիցի զնմանէ թէ ոչ տեսի զքեզ. (19) Ահա
այս է սրախաթութիւն ճանապարհի նորա, եւ ի
հողոյ այլք բուսցին. (20) ահա Աստուած [6] ԵՒԲ.
ոչ ձեռնտու լիցի ամպարչասց, (21) Մինչեւ
լցցէ զբերան քո ծաղու, եւ զշրթունս քո
[7] ԵՒԲ. Եւ [8] ԵՒԲ. միում ի հազարից

[9] Կամ, փոխ [10] ԵՒԲ. սասանեցուցանէ զերկիր
ի տեղւոջէ իւրմէ [11] ԵՒԲ. զԱյգին [12] ԵՒԲ.
որ ոչ քննին [13] ԵՒԲ. յափշտակեսցէ [14] ԵՒԲ.
Աստուած ոչ դարձուսցէ զբարկութիւն իւր,
ընդ նովաւ խոնարհեցին օգնականք ամբար-
տաւանութեան. (14) Զիարդ տաց նմա պա-
տասխանի, ընտրեցից զբանս իմ ընդ նմա. (15)
Զի եթէ արդար եւս իցեմ, ոչ տաց պատաս-
խանի. առ որ դատաւոցն է զիս՝ արկից աղերս։
[15] ԵՒԲ. եթէ զզօրութենէ, տպաւորն հզոր է, եւ
եթէ զիրաւանց, ո՞ընդ այնցեսցէ զիս [16] ԵՒԲ.
եթէ ասէ Կատարեալ եմ, ոչ գիտեմ զանձն
իմ, արհամարհեմ զկեանս իմ։ (22) Մի եւ նոյն
է. վասն որոյ ասացի եթէ Զարդարն եւ զամ-
պարիշտս սպառէ նա։ (23) Եթէ հարուածն
սպանցէ վաղվաղակի, զփորձանաց անմեղին
ծիծաղեսցի նա։ (24) Երկիր տուեալ է ի ձեռս
ամպարշտին. զերեսս

ասացի, Թէ զմեծն եւ զպզտին կորուս-
23 սանէ բարկութիւն։ Զի չարք յանհնա-
րին մահու կորնչին, այլ արդարք ծագր
լինին, վի մասանին ի ձեռս ամպարչտի։
24 Զերեսս՝ դատաւորաց նորա ծածկեսցէ.
25 եւ եթէ ոչ նա է՝ ո՛վ իցէ։ Այլ իմ կեանք
Թերեւս զոյն են քան զսուրհանդակ,
26 վախեան եւ ոչ [1]երեւեցան։ Եւ կամ
Թէ իցեն նաւաց հետք ճանապարհի,
եւ կամ արծուոյ Թռուցեալոյ որ ինդրիցէ
զկերակուր։
27 [2]Եթէ ասիցեմ եթէ խօսեցայց՝ մոռա-
նամ, զերեսս ի վայր արկեալ՝ հնձեմս
28 ցից։ Շարժեալ եմ ամենայն անդամօք
իմովք, վի պիտեմ զի անարատ վիս ոչ
29 Թազուցուս։ Արդեհաեւ ամպարչտէի,
30 ընդ՞ր ոչ մեռայ։" Եթէ լուացայց ձեռամբ,
31 եւ արեցայց ձեռօք սրբեցկլովք, [3]Սատա-
կացեալ ազատով էնեկ զիս, զպրացոյց
32 զիս պատմուճան իմ"։ Զի ոչ ես իրրեւ
զիս մարդ՝ ընդ որում գտանցայց, եթէ
33 հատարակ եկեսցուք ի դատաստան։ Իսկ
յանկարծ զոյր միջնորդ, եւ յանդիմա-
34 նէր եւ լսէր ի մէջ երկոցունց։ Ի բաց
արասցէ յինէն զգաւազանն, եւ ահ նո-
35 րա զիս մի զարհուրեցուսցէ, եւ մի
երկեայցէ՝ այլ խօսեցայց. "Ես եւ ոչ այն-
պէս ես պիտեմ, աչխատեալ անձամբ
իմով"։

ԳԼ. Ժ

1 [5]Հեծեծելով հասուցից ի նա զբանս իմ,
խօսեցայց գառնութեամբ անձին իմոյ։
2 Ձեալ, Եւ ասացից, Տէր, մի ուսուցա-
ներ զիս ամպարչտել. եւ ընդե՞ր այս-
3 պէս գատեցար զիս. Կամ Թէ բարւոք
Թուիցի քեզ՝ Թէ անիրաւիցեմ. զի վեր-
ժեցեր զգործս ձեռաց քոց, եւ ի խոր-
4 հուրդս ամպարչտաց հայեցար։" Մի՛թէ

[1] Եբր. տեսին բարութիւն [2] Եբր. Եթէ ա-
սիցեմ, Մոռացայց զողջոյ իմ, Թողից զնեղու-
Թիւն իմ եւ եղէց ուրախ, (28) Երկնչիմ յա-
նէնայն ցաւոց իմոց, զի գիտեմ զի անարատ
զիս ոչ Թողուցուս։ (29) Զի պարտաւորեալց
եմ, ընդէ՞ր ի զուր չանայեցեմ։ [3] Եբր. Յայնժամ
ընկղմեսցես զիս ի փոս, գարշեսցի յինէն պատ-
մուճանիմ [4] Եբր. զիչեմ այնպիսի յանձին իմում
[5] Եբր. Յաղտկացեալ է անձն իմ ի կենաց իմոց
արձակեցից զբողոք իմ։ խօսեցայց դառնութեամբ
անձին իմոյ։ (2) Ասացից ցԱստուած, Մի՛ դա-
տապարտ առներ զիս. տուր ինձ գիտել Թէ
վասն է՞ր հակառակիս ընդ իս։ (3) Նպաստո՞ք
Թուիցի քեզ տանջել զիս, զի խոտես զգործս
ձեռաց քոց, եւ տաս լոյս խորհրդոց ամպարըչ-
տաց։

որպէս հայի աչք՝ հայիցիս, կամ որպէս
5 տեսանիցէ մա՞րդ՝ տեսանիցես. [6]կամ Թէ
6 տաք քո իբրեւ զաւուր, Զի վերատին
խնդրեսցես զանօրէնութիւնս իմ, եւ զմեղս
7 իմ քննեսցես։ Գիտես զի ոչ ամպարչ-
տացայ, այլ ո՞վ է որ ի ձեռաց քոց
հանիցէ։
8 Ձեռք քո ստարին զիս եւ [7]տեսղծին,
9 եւ ապա չրչկեցար հատիր" զիս։ Ցիշեա
զի կաւ տեսղծեր զիս, եւ յերկիր՞ զիս ա-
10 նդամ զարձուցանես զիս։ Կամ Թէ
ոչ իրրեւ զկաթն կԹեցեր զիս, եւ մա-
11 ծուցեր զիս իրրեւ զպանիր։ Մորթ եւ
միս զգեցուցեր ինձ, ոսկերօք եւ ջլօք
12 հանար զիս։ Ձկեանս եւ զողորմութիւն
եղեր ի վերայ իմ, այցելութիւնն քո
13 պահեաց զոգի իմ։ [8]Զայս ամենայն ու-
նես ի քեզ. զիտեմ զի յամենայնի կա-
րող ես, եւ ոչ ինչ տկարանայ քեզ"։
14 Թէ եւ մնզանչեմ՝ պահես զիս, եւ յա-
նօրէնութենէ անարատ ոչ ստարեր զիս։
15 Եթէ ամպարչտեցայց՝ վայ է ինձ, եւ
եթէ արդարացայց՝ ոչ կարեմ հայել ի
16 վեր, զի լի եմ [9]անարգանօք։ Որպես-
նայ եմ իբրեւ զառեւծ ի սպանումն.
զարձեալ կրկնեալ չարաչար սատակես
17 զիս. Նորոգես ի վերայ իմ զհարուածս
իմ. բարկութեամբ մեծաս ձեռն արկեր
18 յիս, եւ ածեր ի վերայ իմ հէն։" Ընդ-
ընդ՞ր հաներ զիս յորովայնէ եւ ոչ ան-
դէն մեռայ, եւ ակն չէր տեսանել զիս,
19 Իրրեւ զչեզեալ լինէի. ընդե՞ր յարգանդէ
20 ի գերեզման ոչ վճարեցայ։ Կամ Թէ ո՛չ
սակաւ իցէ ժամանակ կենաց իմոց.
[10]Թող արա ինձ սակաւիկ մի հանդչել,
21 Մինչչեւ երԹեալ իցեմ՝ ուստի ոչ գա-
նայցեմ՝ յերկիր խաւարին եւ [11]մթին,
22 Յերկիր աղջամղջին յաւիտենական, ուր
ոչ գոյ լոյս եւ ոչ տեսանել զկեանս
մարգկան։"

[6] Եբր. Մի՛թէ իբրեւ զաւուրս մարդոյ աւուրք
քո, կամ [7] Եբր. տեղծին բովանդակ, եւ
արդ չնչես [8] Եբր. Եւ զայսոսիկ Թաքուցեր
ի սրտի քում. գիտեմ զի ի քեզ է այդ [9] Եբր.
անարգանօք. Հայեաց ի տառապանս իմ։ (16)
Եթէ ամբարձայց, իբրեւ առեւծ որսայցես զիս,
եւ դարձեալ, զարմանալի եղեալս յիս։ (17) Նո-
րոգես զվկայս քո յանդիման ինձ, եւ յաճա-
խեացես զբարկութիւն քո ի վերայ իմ. փոփո-
խութիւնք եւ մարտք ընդ իս։ [10] Եբր. դադա-
րեաց, ի բաց կաց յինէն, Թոյլ [11] Եբր. տառե-
բաց մահու. (22) Յերկիր աղջամղջին իբրեւ
զվէգ տառերաց մահու, ուր չիք կարգ, եւ
մթասցի իբրեւ մառախուղ։

Գլ. ԺԱ

1 [1]Արկնեալ անդրէն Սոփարայ Մինեցւոյ
2 ասէ, Որ չաս խօսի՝ ապաքէն ըստ նմին
եւ լսիցէ. կամ որ խօսողն իցէ՝ կա-
3 րիցէ[א] բանիւք արդարանալ։ Օրհնեալ է
ծնունդ կանանց սակաւակեաց։ Մի՛
պրազում բանիւք անկանիր, զի ոչ պոյ
4 որ ապացէ քեզ պատասխանի։ Մի՛ ասէր
Իմ է մարդ եմ դործովք եւ անարատ ա-
5 ռաջի Տեառն։ Այլ Ի՛նքդ Տէր խօ-
սեսցի ընդ քեզ, եւ բացցէ դչրմտնս
6 իւր ընդ քեզ։ Ասա պատմեսցէ քեզ
դգրծուածին իմաստութեան, զի կրկին
եղիցի քան զքոյն. եւ ապա վիտաս-
ցես՝ Ի՛նքն արժանի ըստ պոյ մեզարն
7 անդ ընդ քեզ ի Տեառնէ։ Եթէ գնատ
Տեառն գտանիցե՞ս, կամ ի վերջինն
հասանիցե՞ս զոյ արար Ամենակալն։
8 Բարձր են երկինք, եւ զի՞ դործիցես.
խոր են գոլոք, եւ դու՞ զի՞ խելա-
9 մեցես։ Երկայն է չափ [2]երկրի, լայն
է ծով։ Եւ Ի՛նքն ասդուիսցէ [2]զամե-
նայն՝՝, ո՛վ ասասցէ ցնա Ի՛նչ դոր-
11 ծեցեր։ Ինքն զիտէ զդործս անօրինաց,
տեսանէ զանարժանս՝ ո՞չ արասցէ ան-
12 տես։ Բայց [3]մարդ ի խօսել ընդ վայր,
զօրի բանիւք՝՝. այր կանանցածին հան-
13 գոյն է ցաոյ անապատականի։ Իսկ Ի՛նքն
դու սուրբ հոգիդ զոլորտ քո, ատրածես
14 առ նա զձեռս քո։ Ասա [4]ծագիսցեն կրնաք
քո իրրեւ զչուր յատակ, մերկասցես
16 զապահզուԻ՛ն՝՝ եւ ոչ երկիցես, [5]եւ
մոռասցես զաչխատութիւն իրրեւ զպիս
17 անցեալս՝ եւ ոչ զարհուրեսցես։ Ազօթք
քո իրրեւ զարեւածագի, ի միջօրէի ծա-
գեսցեն քեզ կեանք, վատահացեալ լի-
ցես՝՝ զի կայ քո յոյս, ի հոգոյ եւ ի
տատասխանելոյն երեւեսցի քեզ խաղա-
18 զութիւն։ Հանդարտեսցես՝՝ եւ ոչ ոք
19 իցէ որ պատերազմիցի ընդ քեզ։ Դարձ-
ցին բազումք եւ աղաչեսցեն զքեզ.
20 վերկութիւն պակասեսցէ Ի՛նոցանէ. Զի
յոյս նոցա կորուստ անձանց իւրեանց.
աչք ամպարչտեաց հալեսցին։՝՝

Գլ. ԺԲ

1 Արկնեալ անդրէն Ցոբայ ասէ, (2) [6]Արդ
եւ դուք մարդիկ իցէք՝՝, կամ ընդ ձեզ
3 վախճանիցի իմաստութիւն։ Եւ իմ
4 սիրտս իրրեւ զձերդ [7]է։ Զի այր ար-
դար եւ անարատ եղեւ ի կատականս։
5 Ի ժամանակ սահմանեալ պատրաստե-
ցաւ, կործանեալ յօտարէ՝ զատունս իւր
6 հանեա աւերեալս չանօրինաց։ Սակայն
մի՛ ոք որ չար իցէ՝ յուսացցէ անպարտ
լինել. ամենայն որ միանգամ բարկա-
յուցանեն զՏէր, մինչէ՞ չինիցի նոցա
7 [ինկերքն՝՝՝ Բայց ապէ հարց զչորքոտա-
նիս՝ եմէ ասիցեն քեզ, զմռչունս երկ-
8 նից՝ եմէ պատմեսցեն քեզ։ Ծառեա
երկրի, եմէ խելամուտ արասցէ զքեզ,
եւ կամ պատմեսցեն քեզ ձկունք ծո-
9 վու։ Ո՞վ է որ ոչ գիտայ այսու ամե-
նայնիւ եմէ ձեռն Տեառն արար զայս։
10 Եւ եմէ ո՞չ ի ձեռնն նորա իցէ չունչ
ամենայն կենդանւոյ եւ ոգի ամենայն

---

[1] Եբէր. Արկնեալ անդրէն Ովփարայ Նաամացւոյ ասէ, (2) Մեթէ բազմաբանեան բանից ո՞չ տացի պատասխանի, կամ որ խօսողն իցէ՝ կարիցէ՞ բանիւք արդարանալ։ (3) Բանքդ քո լռեցուսցե՞ն զմարդիկ։ եւ ատելեաս ծաղր, եւ չիցէ՞ որ յամօթ արասցէ։ (4) Զի ասացեր եթէ Սուրբ են բանք իմ՝ եւ եմ անարատ յաչս քո։ (5) Ա՛լ ո՞ տայր թէ խօսէր Աստուած, եւ բանայր զբերանն իւր ընդ քեզ։ (6) Եւ յայտներ քեզ զգաղտնիս իմաստութեան, զի կրկին է յաղագեցութեան. եւ գիտասցիր զի ոչ արժանի քան զոր ոգեդ անց ընդ քեզ ի Տեառնէ։ (7) Միթէ զգաղտնիս Աստուծոյ գտանիցե՞ս, կամ մինչեւ ի կատարելութիւն Ամենակալին հասանիցե՞ս։ (8) Բարձր է քան զերկինս, զի՞ գործեցես. խոր է քան զդժոխս, [2]Եբէր. Նորա քան զերկիր, լայն՝ քան զծով։ (10) Եթէ յարձակեսցի, եւ փակեսցէ եւ ժողովեսցէ [3]Եբէր. մարդ անոտի պակասութիւն է [4]Եբէր. ամպարձեցես զերեսս քո անարատ, եւ եղիցիս պինդ

[5] Եբէր. Զի դու զտառապանս մոռասցիս, իբրեւ եւ զպիս անցեալս յիշեսցես։ (17) Եւ քան զմիջօրեայ ծագեսցեն կեանք քո. խաւարեսցիս, իբրեւ զառաւօտ եղիցիս։ (18) Եւ վստահացեալ լիցիս, զի կայ քո յոյս. եւ որանեսցես, ննջեսցես յապահովի։ (19) Եւ հանդիցես, եւ աչ ոք զարհուրեսցէ զքեզ, եւ խնդրեսցեն զերեսս քո բազումք։ (20) Իսկ աչք ամպարչտից հալեսցին, եւ ապաւէն կորիցէ ի նոցանէ, եւ յոյս նոցա՝ փչումն ոգւոյ։ [6]Եբէր. Արդարեւ դուք էք ժողովուրդ [7]Եբէր. է, չեմ նկուն քան զձեզ. եւ ո՞չ գիտիկ զայսպիսիս։ (4) Այսպէս եղեալ ընկերի իւրում եղէ ես, որ կարդայն առ Աստուած, եւ նա տացէ նմին պատասխանի. այր արդար կատարեալ լինի ի կատականս։ (5) Պատրաստեալ աւերեալ յաչս ամբարտաւանից, այնպէս այր որոյ ահեղ իցեն ոտք։ (6) Ի յաջողութեան են վրանք աւարառուից, եւ յապահովի որ բարկացուցանեն զԱստուած, յղեացանէ Աստուած զձեռս նոցա

11 մարգոյ ։ [1]Զի միաք գրանս քննեն՝, եւ
12 քիմք զկերակուրս ճաչակեն ։ [2]Բազում
ժամանակաւ իմաստութիւն, եւ ի բա-
13 զում կեանս հանճար՝։ Ի նմանէ է ի-
մաստութիւն եւ զօրութիւն, նորա է
14 խորհուրդ եւ հանճար ։ Եթէ կործանեսցէ՝
ո՛ չինեսցէ, եւ եթէ փակեսցէ ընդկէմ
15 մարդկան՝ ո՛ բանայցէ ։ Եթէ արգելցէ
զջուրս՝ յամաքեցուցանէ զերկիր, եւ
եթէ թոյլ տացէ՝ կորոյս զնա կործան-
16 եալ ։ Ի նմանէ է զօրութիւն եւ ուժ-
գնութիւն, նորա է [3]հանճար եւ իմաս-
17 տութիւն՝։ Վարէ զխորհրդականս ի գե-
րութիւն, եւ զդատաւորս երկրի յիմա-
18 րեցոյց ։ [4]Նստուցանէ զթագաւորս յա-
թոռս՝, եւ ածէ գօթ մէջ նոցա ։
19 Առաքէ զքահանայս ի գերութիւն. եւ
20 զզօրաւորս երկրի կործանեալ. Փոփոխէ
զչիւռնս հաւատարմաց, եւ գնահատար
21 ձերոց [5]ծանեալս ։ Հեղու անարգութիւն
ի վերայ իշխանաց, եւ [6]զխոտարն լծէչ-
22 կեաց՝։ Յայտնէ զխորս խաւարի, եւ ե-
23 հան ի լոյս զստուերս մահու ։ [7]Մոլորե-
ցուցանէ զազգս՝ եւ կորուսանէ զնոսա,
24 սփռէ զազգս՝ եւ առաջնորդէ նոցա փո-
փոխէ զսիրտս իշխանաց երկրի, մոլո-
բեցոյց զնոսա ի ճանապարհի զոր ոչ
25 դիտէին ։ Շօշափեսցեն զխաւար եւ ոչ
զլոյս, [8]մոլորեսցին իբրեւ զարբեալ ։

ԳԼ. ԺԴ

1 Ահա զայս ամենայն տեսեալ աչք իմ, եւ
2 լուաւ ունկն [9]իմ ։ Եւ զիտեմ եւ՝ որ-
չափ եւ գուք խելամուտ էք, եւ չեմ
3 անմտագոյն քան զձեզ ։ Բայց սակայն
ես ընդ [10]Տեառն խօսեցայց, յանգիմա-
նեցայց առաջի նորա՝ եթէ կամիցի ։
4 Բայց գուք ինձ բժիշկք մեզանչականք
էք, եւ ողջացուցիչք չարեաց ամենե-
5 քեան՝։ Եղիցի ձեզ համրանալ, եւ համա-
6 րեալ լիցի ձեզ յիմաստութիւն։ Լուարուք
զյանդիմանութիւն բերանոյ իմոյ, եւ
զաստանին չրմանց իմոց անասչէք ։

7 Ո՞չ ապաքէն [11]առաջի Տեառն խօսիցիք՝,
եւ յանդիման նորա նենգութիւն քար-
8 տախք ։ Կամ [12]եթէ խնդրուիցէ՞ք. [13]զի
գուք ամենևքեան գաւառարք եղերուք
9 Զի բարւոք է եթէ քննեսցէ զձեզ. զի
եթէ զամենայն այարեալ յոյ եղեցուք
10 ի նա, Ոչ ինչ սակաւ կշտամբեսցէ զձեզ.
11 եւ՝ եթէ ի ծածուկ աչսակեսցէք՝ Ո՞չ ա-
պաքէն արհաւիրք նորա զարհաւեցու-
ցանիցեն զձեզ, եւ ահ նորա անկցի ի
12 վերայ ձեր ։ [13]Եւ զիպելոյն պիտակս
խիտրդ ձեր հանգոյն մոխրոյ, եւ մար-
13 մին կաւեղէն՝։ Կարկեցարուք՝ զի խօ-
սեցայց ես, [14]եւ հանդիցայց ի սրամտու-
14 թիւն ։ Առեալ՝ զմարմինս իմ յատա-
մանս իմ, եւ զոգի իմ եղիցի ի ձեռին
15 իմում ։ [15]Եթէ արկցէ զձեռն իւր զինեւ
Հզօրն, քանզի եւ սկսեալ իսկ է. եթէ
ոչ խօսեցայց եւ յանդիմանեցայց առաջի
16 նորա ։ Եւ այն պիտասցի՝ ինձ ի փրկու-
թիւն, քանզի ոչ մատչ առաջի նորա
17 նենգութիւն ։ Լուարուք, լուարուք
բանիւ իմով, զի սրամիտցիմ ձեզ լու ի
18 լու ։ Զի անաւասիկ մերձեալ եմ ի գա-
տաստանս իմ, եւ գիտեմ զի արդար
19 երեւելոց եմ ։ Զի ո՞վ է ոսոխն իմ եկեսց-
ցէ, զի արդ կարկեցայց եւ պակա-
20 սեցայց ։ [16]Երկու բանք սիրեալ են ինձ՝,
եւ յայնժամ յերեսաց քոց ես ոչ թա-
21 քեայց ։ Զձեռն քո ի բաց արա յինէն, եւ
22 ահ քո զիս մի՛ զարհուրեցուսցէ ։ Եւ
ապա կոչեսցես զիս, եւ ես [17]լուայց քեզ.
եւ եթէ խօսեցայիս, եւ ես տաց քեզ՝
23 պատասխանի ։ Քանի՞ բանք են մեզք
եւ անօրէնութիւնք իմ, ուստ բնաւ՝
24 [18]քանի՞օն իցեն՝։ Ընդէ՞ր թաքուցանես
[19]երեսն, համարիցիս զիս քեզ սասն,

[1] ՆԵԲԲ. Ո՞չ ականջք ընտրեն զբանս [2] ՆԵԲԲ. Առ-
ածեալս է իմաստութիւն, եւ յերկարութեան ա-
ւուրց՝ հանճար [3] ՆԵԲԲ. որ խորէն եւ
որ խորհի [4] ՆԵԲԲ. Լուծանէ զիշխանութիւն
թագաւորաց [5] ՆԵԲԲ. քառանայ [6] ՆԵԲԲ. զբռա-
նութիւն հզօրաց ակարացոյց [7] ՆԵԲԲ. Բազմա-
ցուցանէ [8] ՆԵԲԲ. մոլորեցուցանէ զնոսա [9] ՆԵԲԲ. իմ
եւ ի միտ առ [10] ՆԵԲԲ. Աստուծոյ կամեցայց (4) Բայց դուք
սուտ օգուտ էք, բժիշկք ունայնութեան ամենեքեան

[11] ՆԵԲԲ. վասն Աստուծոյ խօսիք զանիրաւութիւն
[12] ՆԵԲԲ. կամ վասն Աստուծոյ լինիցիք դատախազք.
(9) Միթէ բարւոք է եթէ քննեսցէ զձեզ, միթէ որպէս խաբէք զմարդ, խաբիցէ՞ք զնա։(10)
Յանդիմանելով յանդիմանեսցէ զձեզ [13] ՆԵԲԲ.
Յիշատակք ձեր առակք մոխրոյ, պատանէիք ի
կուռ՝ պատանէիք ձեր [14] ՆԵԲԲ. եւ անցցէ բնդ
իս վինչ եւ անցցէ ։ (14) Ընդէ՞ր առիք [15] ՆԵԲԲ.
Թէպէտ եւ սպանցէ զիս, յուսացայց ինա. բայց
եւ այնպէս զճանապարհս իմ առաջի երեսաց
նորա յանդիմանեցից ։ (16) Արդարեւ նա է
[16] ՆԵԲԲ. Չերկուս եւ եթէ միւսանգամ ընդ իս [17] ՆԵԲԲ.
տաց պատասխանի. կամ խօսեցայց եւ տացես
ինձ [18] ՆԵԲԲ. զյանցուածս իմ [19] ՆԵԲԲ. զերեսս
քո ։ եւ

25 [1]կամ թէ ի հպարտչարժ անբեւնոյ երկնչիցես, կամ իբրեւ հպմամբար խոռոյ կայցես
26 ինձ հակառակ՝: Զի զրկեր զինեն չարիս, եւ արկեր զինեւ զմեզս մանկտիւնան:
27 Եգիր [2]զոտն իմ ի պաշարման, պահեցեր զամենայն զգործս իմ՝, եւ չար-
28 մատոս ոսից իմոց հաւատ, [3]Որ իբրեւ զսիկ հնացեալն՝, կամ իբրեւ զձորձս ցիցակեր:

Գլ. ԺԻ

1 Զի այր կանանցածնն սակաւակեաց է
2 եւ լի [4]բարկութեամբ. Որ իբրեւ զծաղիկ ծաղկեալ՝ թօխամածեցաւ, խոյս եաս
3 իբրեւ սաւեր, եւ մի կացեր: [5]Ո՞չ ապաքէն եւ այնմ հասոյ առնիցես, եւ նմա՝ տարեր մատանել ի դատաստան
4 [6]առաջի քո՞: Իսկ ապ ո՞վ [7]կէզ սուբր
5 չարաւոյ՝, այլ եւ ոչ ոք: [8]Թէպէտ եւ միոյ աւուր իցեն կեանքք նորա ի վերայ երկրի. հանարեալ են սահմանք նորա առ Ննամանէ՝. ժամանակ եղիր եւ ոչ անցցէ:
6 Ի բաց լեր ի նմանէ՝ զի գոգարեսցէ [9]եւ ամբերսցէ զկեանս՝ իբրեւ զվարձան
7 կան: Զի զոյ յոյս ծառոյ անպրէն. զի թէպէտ եւ կտրեսցի՝ միւսանգամ ծաղկեսցէ, եւ չառաս իւղ նորա մի պակասես-
8 ցէ՝ եւ եթէ ծերասցի կիրկիլ արմատս նորա՝ եւ ի քարի վախճանեսցի բուն նորա,
9 ի հոտոյ ջրոյ ծաղկեսցի, եւ արասցէ
10 հանձս իբրեւ զնորատունկ: Բայց այր վախճանեալ զնայ, անկեալ մարդ՝ եւ
11 ոչ եւս իցէ: Զի ժամանակաւ անօգուտ ծով, եւ գետք աւերեալ ցամաքեցան.
12 Եւ մարդ ննջեսցէ՝ եւ ոչ յարիցէ. մինչեւ երկինք չիցեն՝ ոչ կարկատեսցին,
13 եւ ոչ զարթիցեն ի քնոյ իւրեանց: Եւ թաքուցանէիր զիս մինչեւ անցանէր բարկութիւն քո. եւ ժամանակիր ինձ ժամանակ՝ յոլովս առնէիր ինձ ցիչատակ,
14 եթէ մեռանիցի մարդ՝ կեցցէ՞, [10]վախճանեալ զաւուրս կենաց իւրոց. ապա-
15 սեցից մինչ միւսանգամ լինիցիմ՞. Ապա կոչեսցես զիս, եւ ես ասց քեզ պատասխանի. [11]զգործս ձեռաց քոց մի՛ մերժեր.
16 Թուեսցե՞ զդնացս իմ, եւ մի՛ անցցէ
17 ինչ զքէն ի մեղաց իմոց: Կնքեցեր զանօրէնութիւնս իմ ի քսակի, եւ [12]նշանակեցեր իմ ակամայ ինչ յանցեայ:
18 Սակայն եւ լեառն որ փլանելոց է փլցի, եւ վէմ հնասցի՞ ի տեղւոյն իւրմէ:
19 Զքարինս ողորկեցին ջուրք, եւ ողողեցին ջուրք [13]զդաչաս քանդուածեան՞ երկրի. եւ զանկալութիւն մարդոյ կո-
20 րուսեր. [14]Մերժեցեր զնա՞ ի սպառ, եւ գնաց. հաստատեցեր ի վերայ նորա զե-
21 րեսս՝ եւ արձակեցեր: [15]Թէպէտ եւ բազում որդիք լինիցին նորա՝ ոչ գիտէ, եւ եթէ սակաւք առնիցին՝ ոչ ճանաչէ՞.
22 Այլ մարմինք նորա ախտացան ի վերայ իւր, եւ ողի նորա սգացաւ զինքն:

Գլ. ԺԵ

1 Կրկնեալ անդրէն եղիփազաւ Թեմնացւոյ ասէ, [16]Այսպէսքն հանճարեղն ոգւով՝ իմաստութեամբ սացէ պատասխանի. եւ գնուցու աշխատութեամբ որովայնի՞,
3 Յանդիմանել բանիւք որ ոչ իցէ արժան, կ խօսիւք որ ոչ իցէ յօգուտ: [17]Զոյոյ եւ զոյ զկիրկիլ մերժեցեր, եւ զուսարեցեր առաջի Տեառն զայգպիսի բանս:
5 Պարաւորիցայր բանիւք բերանոյ քո, եւ ոչ քննեսցեր զրանս հզօրաց՞: Կշտամբեսցէ զքեզ քո բերան՝ եւ ոչ ես, շրթունք քո հակառակ քեզ վկայեսցեն:
7 Իսկ արդ պիտի՞դ. միթէ [18]առաջինն քան զմարդիկ՞ ծնեալ իցես, կամ յառաջ
8 քան զբլուրս հաստատեցար: [19]կամ զդրաման Տեառն լուար, թէ ի քո՞զ եհաս
9 իմաստութիւն՞: Զի՞նչ է զոր գու գի-

---

[1] 1:Եբր. Միթէ զհողմաշարժ տերեւ երկեցուցանե՞ս կամ զմղեզ ցամաքեալ հալածե՞ս
[2] 2:Եբր. զսոտս իմ ի կոճեզս եւ դիտեցեր զամենայն շաւիղս իմ [3] 3:Եբր. Եւ նա (Յոբն էր) իբրեւ զերբ փտեալ է [4] 4:Եբր. տառապանօք [5] 5:Եբր. Այլ եւ ի վերայ նո՞ցա բանաս զսէս քո, և ինձ
[6] 6:Եբր. ընդ քեզ [7] 7:Եբր. Հանդէ սուբր յանդրբոյ
[8] 8:Եբր. Եթէ սահմանեալ են աւուրք նորա, թիւ ամսոց նորա ընդ քեզ է [9] 9:Եբր. մինչեւ կատարեսցէ զօր իւր [10] 10:Եբր. զամենայն աւուրս զինուորութեան իմոյ, սպասեցից մինչեւ եկեսցէ փոփոխութիւն իմ

[11] 15:Եբր. գործոց ձեռաց քոց ցանկասցիս (16)Զի արդ թուեցեր [12] 18:Եբր. կարեցեր ի վերայ անզգամութեան իմոյ (18)Արդարեւ լեառն անկեալ կործանի, և վէմ խախուտ [13] 19:Եբր. զհող [14] 20:Եբր. Յաղթեցեր նմա [15] 21:Եբր. Փառաւորին որդիք նորա, եւ նա ոչ գիտէ, արհամարհին, եւ նա ոչ իմանայ [16] 1:Եբր. Միթէ իմաստունն ասացէ պատասխանի դիտութեամբ հողմոյ, և ընդարձակեան հողմով զորովայն իւր [17] 3:Եբր. Առնուն դու արհամարհես զերկեւղ, եւ խափանես զաղօթս առաջի Աստուծոյ: (5) Զի ցուցանէ զանօրէնութիւն քո բերան քո, եւ բնտրեցեր զլեզուս նենգաւորաց [18] 7:Եբր. առաջի՞ն մարդ [19] 8:Եբր. Միթէ գաղտնեաց Աստուծոյ եղե՞ր ունկնդիր, եւ պահեցե՞ր քեզ զիմաստութիւն

տկցես, եւ մեք ոչ գիտիցեմք. կամ
10 զի՞նչ գուժ իմանայցես՝ եւ ոչ մեք։ Նա
եւ ի մեզ ծեր եւ հին աւուրց գոյ եւ
երիցագոյն քան զհայր քո աւուրբք։
11 [1]Սակաւս քան զորս մեզարն սանդե-
գար, եւ առաւել մեծարանս խօսեցար"։
12 Ընդէ՞ր յանդգնեցար սիրտ քո, կամ թն-
13 զի՞ր լինեցան աչք քո, Զի խափեցեր
զսրամտութիւն առաջի Տեառն, եւ հա-
ներ ի բերանոյ քումմէ զբանս այպի-
14 սիս։ Ա՞ռ ոք էիցէ մարդ որ եզեւ անա-
բասո, կամ ո՞ ոք կանանցածին լինելոց
15 է արդար։ Զի եթէ սրբոց ոչ հաւատայ,
եւ երկինք ոչ են անարատ առաջի նո-
16 ցա, Թող թէ այր գարշ եւ անտրբ՝
որ ըմպէ զանօրէնութիւնս հանդոյն ըմ-
պելոյ։
17 Պատմեցից քեզ, Ծո՛ր, լո՛ւր ինձ,
18 զոր ինչ տեսի պատմեցից քեզ. Զոր
իմաստունք ասեն, եւ ոչ թաքուցին
19 [2]հարց իւրեանց։ Նոցա միայն ետուա
երկիր, եւ ոչ եկն օտարածին ի վերայ
20 նոցա։ Ամենայն կեանք ամպարշտի հո-
գովք. ամք թուով տուեալ են [3]հզօրի.
21 Եւ ահ նորա՝ յականջս նորա. յորժամ
համարիցի թէ ի խաղաղութեան իցէ,
22 եկեսցէ կործանումն նորա։ Մի՛ հաւա-
տասցէ գառնալ ի խաւարէ, զի հրա-
մայեալ է արգէն ի ձեռս երկաթոյ։
23 [4]Կարգեալ է ի կերակուր անգիտաց. գիտէ
ի միտս իւր՝ թէ մնալոց է ի կործա-
24 նումն։ Օրն մթին զարհուրեցուսցէ զնա,
անձկութիւն եւ նեղութիւն հասցէ նմա՝
իբրեւ զօրավար յառաջակաց կործան-
25 եալ։ Զի ամբարձ ձեռս ընդդէմ [5]Տեառն,
եւ առաջի Տեառն ամենակալի ընդվզե-
26 ցաւ։ Ընթացաւ առաջի նորա հպարա-
տութեամբ, յանդրուեւամբ վահանի
27 իւրոյ։ Զի ծածկեաց զերեսս իւր ճար-
պոլ իւրով, եւ արար [6]երկայրի յագ-
28 կեր իւրում"։ Բնակեսցէ ի քաղաքս
աւերակս, եւ մացէ ի տունս [7]անշէնս.
զոր նոքա պատրաստեցին՝ այլք ապր-
29 ցին"։ Մի՛ մնծասցի, եւ մի՛ ննասցին
ինչք նորա, եւ [8]մի՛ արկցէ յերկիր
պատուար, եւ մի՛ ապրեսցէ ի խաւարէ։
30 Զորպրոջ նորա թռուցանիցուսցէ հողմ,
31 թօխափեսցի ծագիկ նորա։ Մի՛ հաս-
տատցէ՝ թէ հանդարտիցէ. մնասիւք պա-
32 տանեացն նմա" կարճն նորա ապրա-
ժամ հարցի, եւ չաւաւիղ նորա մի
33 լցիանացէ։ Իբրեւ զթագակալ մին ապրա-
ժամ կիմեացի, թօխափեսցի իբրեւ զձո-
34 գիկ ձիթենւոյ։ [9]Զի վիայութիւն ամ-
պարչացս մահ է". Հուր ապրեսցէ զաւետս
35 կաչառառուաց։ [10]Յղացան զցաւս, եւ ծնա-
նին զանօրէնութիւն, եւ որովայն նոցա պատ-
րաստէ զխնդութիւն։

ԳԼ. ԺԶ

1 Կրկնեալ անդրէն Յոբայ ասէ, (2) Լաւ-
այսպիսիք լինչ ապազուամ.[11]մխիթարիչք չա-
3 րեաց ամենեքեան։ Իսկ արդ միթէ կա՞րդ
լինի իցէ բանից հողմոյ, կամ թէ թա-
խանձիցէ՞ ոք զքեզ՝ զի ասացես պատաս-
4 խանի։ Եւ ես ընդ ձեզ խօսեցայց՝ եթէ
հնազանդէր անձն ձեր ըստ իմում ան-
5 ձին։ Արդ զկնճռուցից եւ ես զձեզ բա-
նիւք, չարժեցից եւ ես իբրեւ զձեզ
զգլուխ իմ։
6 Թևրեւս լիցի զօրութիւն ի բերան իմ,
դչարժել չրմանց իմոց ոչ խնայիցիկ։
7 Զի եթէ խօսեցայց՝ ոչ փարատեսցին ցաւք
վիրաց իմոց, եւ եթէ լռիցեմ՝ նուա-
8 զագոյն ինչ վիրաւորիցեմ։ Այժմ կոտո-

---

[1] ՆԲԳ. Մինեթ սակաւ իցեն մխիթարութիւնք Ա-
ստուծոյ առ քեզ, եւ բանք քաղցրութեան ընդ
քեզ [2] ՆԲԳ. ի հարց [3] ՆԲԳ. բռնաւորի. (21)
Ձայն երկիւղի [4] ՆԲԳ. Յածի նա վասն հացի
թէ Ո՞ւր իցէ. գիտէ թէ պատրաստ է ի ձեռն
իւրում օր խաւարին. (24) Զարհուրեցուսցեն զնա
անձկութիւն եւ նեղութիւն, յաղթեսցեն նմա
իբրեւ թագաւոր պատրաստեալ ի պատերազմ
[5] ՆԲԳ. Ասաւ ծոյ [6] ՆԲԳ. պատրաստութիւն գե-
րիկամամբք իւրովք [7] ՆԲԳ. անշէնս որ փու-
թան ի կործանումն

[8] ՆԲԳ. մի՛ տարածեսցի յերկրի լիութիւն նոցա։
(30) Մի՛ դարձցի ի խաւարէ, ցամաքեցուսցէ
զոց զտաս նորա, եւ ի շունչ բերանոյ նորա
սպառեսցի։ (31) Մի՛ լիցի վստահ ունայնու-
թեան խաբեալ, զի ունայնութիւն եզիցի փո-
խարէն նորա։ [9] ՆԲԳ. Զի ժողով ամպարշտաց
ամայասցի [10] ՆԲԳ. Յղանան զցաւս, եւ ծնա-
նին զանօրէնութիւն, եւ որովայն նոցա պատ-
րաստէ զխնդութիւն։ [11] ՆԲԳ. ողորմիչի մխի-
թարիչք ամենեքեան։ (3) Միթէ իցէ՞ վախճան
բանից հողմոյ, կամ զի՞նչ զրդիցէ զքեզ զի
տացես պատասխանի։ (4) Եւ ես եւս իբրեւ զձեզ
խօսէի. եթէ լիներ անձն ձեր փոխանակ անձին
իմոյ, զումարէի ի վերայ ձեր բանիւք, եւ շար-
ժէի ի վերայ ձեր գլխով իմով։ (5) Զօրացուա-
նէի զձեզ բերանով իմով, եւ շարժումն չրմանց
իմոց սփոփէր։
(6) Եթէ խօսեցայց, ոչ սփոփեսցին ցաւք իմ,
եւ եթէ լռեցից, զի՞նչ պակասեսցի յինէն։ (7)
Սակայն արդ աշխատ արարեր զիս, աւերեցեր
զամենայն տուն իմ։ (8) Խորչմեցուցեր զիս,
եղեւ ի վկայութիւն. եւ յարեաւ ընդդէմ ինձ
ծիւրութիւն իմ, յերեսս իմ տացէ պատաս-

բնալ արար զիս, վտանալ, ընդարմա-
ցեալ. եւ բուռն հարեալ զինէն ի վկայու-
9 թիւն եղեւ ինձ։ Եւ յարոյց ինձ զաւուր-
թիւն իմ. քանզի արար ինձ ընդդէմ պա-
10 տասխանի։ Բարկութեամբ վարեալ կոր-
ծանեաց զիս, կրճատաց ի վերայ իմ զա-
տամունս. նեաքք հինից նորա սեղացին
ի վերայ իմ, տիպօք աչաց խաղաց ի վե-
րայ իմ. արագ արագ եհար զիս ի ծունկս.
միանգամայն ապատակեցին ի վերայ
11 իմ։" Քանզի մանեաց զիս [1]Տէր ի ձեռս
անիրաւին, եւ ի մէջ ամպարշտաց ընկէց
12 զիս։ Մինչգեռ ի խաղաղութեան էի,
քայքայեաց զիս. [2]առեալ զվարսից իմոց
վնատեաց զիս. կազդոյց զիս իբրեւ զղէտ։
13 Պատեցին զիս տէգք, յանխնայ խոցո-
տեցին զերիկամունս իմ, եհեղ յերկիր
14 զմաղձ իմ։ Կործանեցին զիս հարուա-
ծովք ի վերայ հարուածոց. յարձակեցան
15 ի վերայ իմ զօրաւորք, Կարեցին քուրձ
ընդ մարմն իմ. զօրութիւն իմ յերկիր
16 չկիզաւ։ Ողբեցաւ փոր իմ ի լալոյ", եւ
ի վերայ արտեւանանց իմոց սուսերք
17 մտանէ։ Անիրաւութիւն ինչ ոչ էր ի ձե-
18 ռին իմում, ազօթք իմ սուրբ էին։ Երե-
կիր, մի ծածկեր զարիւն [3]մարմնոյ իմ-
մոյ", եւ մի լիցի տեղի ազազակի իմոյ։
19 Եւ արդ տես յերկինս է վկայն իմ, եւ
20 իրաւապէտն իմ ի բարձունս։ [4]Հասցին
ինդրուածք իմ առ Տէր, եւ յանդիման
21 նորա կաթեցուսցէ ակն իմ։ Եղիցի յան-
դիմանութիւն ատն առաջի Տեառն, եւ
22 որդւոյ մարդոյ առ ընկերսն իւրում։ Սակ
թուով հասին ինձ. ընդ ճանապարհն ան-
դարձ գնայից։"

Գլ. ԺԷ

1 [5]Հոգմաւար կորնչիմ, կարօտիմ գերեզ-
2 մանի՛ եւ ոչ հասանեմ։ Տառապիմ աչ-
3 խատեալ՝ եւ զինչ զպտնչից։ Գոզացան
օտարք զստացուածս իմ. ո՞վ է նա ընդ
4 ձեռին իմում կապեսցի։ Զի զսիրտս իւ-
րեանց խաւսեցան յիմաստութենէ, վասն
5 այսորիկ մի՛ բարձրասցեսն զնոսա։ Ի
մասին իւրում պատմեսցէ զչարութիւնս.
6 աչք իմ ի վերայ որդւոց հալեցան. Եղեր
զիս բամբասանս աղգաց, եղէ նոցա
7 ծաղր։ Չլացան ի բարկութենէ աչք իմ,
զի պաշարեալ եմ մնծապէս յամենից
8 ցունդս։" Զարմանք կալան զձչմարիտս ի
վերայ այսոցիկ, արդար ի վերայ անօ-
9 րինի յարիցէ։ Կալցի հաւատարիմն զիւր
ճանապարհ, սուրբն ձեռօք առցէ քա-
10 ջալերութիւն։ Բայց արդ ազէ դուք եւ
կայք յարկսպատուք ամենեքեան, քանզի
11 ոչ զտանեմ ի ձեզ [6]ճչմարտութիւն։ Ա-
ւուրք իմ անցին չարաւուղ, սայթեցին
12 երակք" սրտի իմոյ։ Զգիչեր՝ տիւ եղին,
13 յոյս մերձենալ յերեսաց խաւարի։ Զի ե-
թէ համրերից՝ գժոխք են տուն իմ, ի
14 միգի տարածեալ են անկողինք իմ։ [7]Զմահ
կոչեցի հայր, մայր եւ քոյր ինձ՝
15 զկերր։ Ապ ո՞ր է յոյս իմ, կամ թէ
16 զարտութիւնս իմ [8]տեսանիցեմ։ Կամ թէ
ընդ ես իսկ ի գժոխս իջանիցեմ, կամ
թէ միանգամայն ի հող իջանիցեմք։"

Գլ. ԺԸ

1 Արձնեալ անդրէն Բաղդասայ Սաւքեա-
2 ցւոյ ասէ, Մինչեւ յ՞երբ ոչ զադարիցես,
հանդարտեա՝ զի եւ մեք խօսեսցուք։

խանի։ (9) Բարկութիւն նորա պատառեաց,
եւ ատեաց զիս, կրճատաց ի վերայ իմ զատա-
մունս իւր. թշնամին իմ սրէ զաչս իւր յիս։
(10) Բացին ի վերայ իմ զբերան խւրեանց, եւ
ի թշնամանս հարին զծնօտս իմ, միանգամայն
գումարեցան ի վերայ իմ։

[1] ԵՒԲ. Աստուած [2] ԵՒԲ. կալեալ զպարանոցէ
իմմէ ջախջախեաց զիս, կացոյց զիս իւր ինդա-
տակ։ (13) Պատեցին զիս ազեղնաւորք նորա,
խոցոտէ զերիկամունս իմ և ոչ խնայէ. հեղոյ
յերկիր զմաղձ իմ։ (14) Պրոմնատեաց զիս խրոմատ
ի վերայ խրոմատի. ընթացաւ ի վերայ իմ իբ-
րեւ զօրաւոր։ (15) Կարեցի քուրձ ընդ մարմն իմ.
և արկի զեղջեր իմ ի հող։ (16) Երեսք իմ կար-
մրացան ի լալոյ [3] ԵՒԲ. իմ [4] ԵՒԲ. Որ ծագր
առնեն զիս՝ բարեկամք իմ են, առ Աստուած
կաթեցուցանէ ակն իմ։ (21) Եցէ՛ թէ վիճակր
մարդ ընդ Աստուծոյ, որպէս որդի մարդոյ ընդ
ընկերսն իւրում։ (22) Զի սակս թուոյ եկեսցեն,
եւ զճանապարհ, ընդ որ ոչ դարձայց այսբէն,
գնացից։

[5] ԵՒԲ. Ոգի իմ ապառ. աւուրք իմ շիջանին. գե-
րեզմանն վասն իմ։ (2) Ո՞չ ապաքէն այսպիսիք
են ընդ իս. ի գրգռութիւնս նոցա զկայ առ-
նուն աչք իմ։ (3) Ազէ, դիր երաշխաւորութիւն
ընդ իս. ո՞վ է որ կալցի զձեռն իմ։ (4) Զի զսիրտ
նոցա թաղեցեր յիմաստութենէ. վասն այնո-
րիկ մի՛ բարձրացուսցես զնոսա։ (5) Որ մասն
յինէն բարեկամոց վանաւարի, աչք որդւոց նորա
հալեսցին։ (6) Եւ կացոյց զիս յատակ ժողովրդոց,
եւ եղէ ի գարշանս առաջի նոցա։ (7) Նա եւ
շլացան ի տրտմութենէ աչք իմ, եւ ամենայն
անդամք իմ իբրեւ զստուեր։ [6] ԵՒԲ. իմաս-
տուն։ (11) Աւուրք իմ անցին. խոփանեցան
խորհուրդք իմ, ուրախութիւն [7] ԵՒԲ. Զապա-
կանութիւն [8] ԵՒԲ. ո՞վ տեսցէ։ (16) Ի գրունս
դժոխոց իջցէ, յորժամ ի հող եղիցի հանգիստ

3 [1]Ընդէ՞ր իբրեւ զչորքոտանիս լռեալ եմք առաջի քո , եւ դու միանգամ ես բարկու-
4 թեամբ : Իսկ արդ եթէ դու միանձինքս՝ անչէ՞ն միայն առ իննեքսան երկնիք , կամ
5 մի՞ եւ լերինք ի հիմանէ տատանեսցին : Եւ լոյս ամպարշտացն չիջանիցի ,
6 եւ ոչ պատառեսցէ նոցա լոյս :՚ Եւ լոյս նորա խաւար ի յարկի իւրում, եւ ճրագ
7 ի վերայ նորա չիջցի : [2]Որպատճէն յե-
8 սիրեաք զինչ նորա . սիրելոյ են խոր-
9 հուրդք նորա :՚ Անկցի ասն նորա յորս-
պայի , եւ չարեսցի ի թակարդի : [3]Ե-
կեսցեն ի վերայ նորա պատգայիք , զո-
10 րացուսցէ ի վերայ նորա զձարտուհաւ՚
Զի թաքուցեալ են յերկրի առաւնք
11 նորա , եւ կալանք նորա ի վերայ չեզոց
նորա : [4]Սատակեսցին գինս ցասք չուր-
ջանակի , բազումք զոսիւք նորա պա-
12 տեսցին ի նեզութեան սովոյ : Պատրաս-
տեալ է նմա կործանումն անակն , կե-
13 րիցին կինք ոսիկ նորա : Կերիցէ մանր
14 ատրաժամ զղեղակութիւն նորա , վա-
րեսցի բժկութիւն ի յարկայ նորա .
հասցէ նմա տագնապաւ պատուհաս ար-
15 քունի : Բնակեսցէ ի յարկի նորա ի պի-
չերի իւրում . ցրուեսցին վայելչութիւնք
16 նորա ծծրմբով՚ : Ի ներքուստ արմատ
նորա ցամաքեսցին , եւ ի վերուստ [5]ան-
17 ցին հունձք՚ նորա : Ձիչատակ նորա կո-
րիցէ յերկրէ , եւ ոչ գոյցի անուն նորա
18 [6]առ երեսօք արտաքնով՚ : Մերժեսցին
զնա ի լուսոյ ի խաւար , եւ [7]մի եղիցի
19 նմա ծանօթ ի ժողովրդեան իւրում , մի
ինչի ապրեալ ի ներքոյ երկնից առն նո-
ցա , այլ ի նորայն կեցցեն օտարք :
20 Հիանացեսցին ի վերայ նորա յետինք , զա-
21 ռաջինս կալան զարմանք ,՚ Թէ այս են առնք անիրաւացն , եւ այս տեղի այ-
նոցիկ որք [8]գՏէր ոչ ճանաչեցին :

ԳԼ. ԻԹ

1 Արկնեալ անդրէն Յոբայ առէ , (2) Մինչեւ յե՞րբ այխատ առնէք զանձն իմ , եւ
3 խախտէք զիս բանիւք . [2]Բայց գիտաջիք զի Տէր արար ընդ իս այսպէս . բամ-
բասէք զիս՝ եւ ոչ ամաչէք յարձակեալ
4 ի վերայ իմ : Այո , արդարեւ ես մոլո-
րեցայ եւ յիս հանգուցեալ է մոլորու-
թիւն , խօսել բան զոր ոչ է արժան . եւ
5 բանք իմ մոլորեալ են՝ եւ ոչ են ի գէղ
ժամանակի : Թողջուք զայդ որ յիմ վե-
րայ մեծարանեալ էք , եւ յարձակեալ
6 էք ի վերայ իմ նախատանօք : Արդ գի-
տասջիք՝ զի Տէր է որ խոտորեցոյց , եւ
7 ամբառս ի վերայ իմ բարձրացոյց : Եւ
ահա ծայր լինիմ նախատանօք , եւ ոչ
խօսեցայց . աղաղակեցից՝ եւ ոչ ուսանիմ
8 իրէ զատաստան՚ : Շուրջ պատեալ եմ ,
եւ ոչ կարացից անցանել . եղ ի վերայ
9 [10]երեսաց իմոց խաւար : Մերկացոյց յի-
նէն զփառս իմ , վերացոյց զպսակն ի
10 գլխոյ իմմէ : Պատրեսաց չուրջ զինիւ՝
եւ գնացի , եհատ իբրեւ զծառ զյոյս իմ .
նի, ցնծացայց ի փրկութեան քումդ։
16 Ընկալան հեթանոսք [4]յապականութեան
իւրեանց՝ զոր արարին, որոգայթ զորձա-
17 քուցին՝ ասէ զոտս նոցա։ Ճանաչի Տէր
յատնել զդատաստանս իւր, եւ ի գործս
ձեռաց իւրեանց կապեացին մեղաւորք։[5]
18 Դարձցին մեղաւորք անդրէն ի գժոխս,
եւ ամենայն հեթանոսք որ մոռացան
19 զԱստուած։ Ոչ ի սպառ մոռանայ Տէր
զաղքատն, համբերութիւնն անանկաց
20 մի՛ կորիցէ ի սպառ։ Արի, Տէր, եւ մի՛
զօրասցի մարդ. դատեսցին հեթանոսք
21 առաջի քո։ Կացո, Տէր, [6]օրէնսգիր ի
վերայ նոցա, եւ ծանիցեն հեթանոսք՝
թէ մարդիկ են։[7]

[1] ՆԵՐ. աւերք սպառեցան [2] ՆԵՐ. յիշատակ իսկ
նոցա։ (8) Բայց Տէր [3] ՆԵՐ. պատուէր [4] ՆԵՐ. ի
խորխորատ [5] ՆԵՐ. ՅԱՕԵԼՈՆ. Հիկկայօն
այնինչ խոկումն։ Նանգիատ։ [6] ԿԱՄ. երկեալ
[7] ՆԵՐ. ՅԱՕԵԼՈՆ. Նանգիատ։

(Ժ)

1 [8]Ընդէր, Տէր, կացեր ի հեռաստանէ,
անտես արարեր ի դէպ նեղութեան ժա-
2 մանակի։ Յամբարտաւանել ամպարշտի՝
այրի ագքասն. արդիւնեսցին ի խորհուրդս
3 իւրեանց զոր եւ խորհեցան։ Զի գովի
մեղաւոր ի ցանկութիւն անձին իւրոյ.
4 [9]որ զրկէն, եւ նա դաւի։ Իսկ ընդէր
բարկացոյց մեղաւորն զԱստուած, ըստ
բազում բարկութեան իւրում թէ ոչ
խնդրի՞. ոչ է Աստուած առաջի աչաց
5 նորա։ [10]Պիղծ են ճանապարհք նորա յա-
մենայն ժամ, բարձեալ են լրաւունք
յերեսաց նորա, ի վերայ ամենայն թշնա-
6 մեաց իւրոց [11]տիրեսցէ։ Ասաց ի սրտի
իւրում՝ Ոչ սասանեցայց, ազգէ յազգ
7 [12]առանց չարի՞։ Անիծից եւ դառնու-
թեամբ եւ նենգութեամբ լի է բերան
նորա. ի ներքոյ լեզուի նորա ցաւք եւ
8 վաստակք։ Նստի [13]դարանակալ ընդ մե-
ծամեծս՞, ի գաղտնիս սպանանել զան-
9 իծն, աչք նորա ի տնանկս հայիին։ Դա-
րանի ի գաղտնիս՝ որպէս զառիւծ ի մօ-
րովջ իւրում. դարանի յափշտակել զաղ-
քատն, յափշտակել զաղքատն եւ ձգել զնա
10 յոտոգալմ իւր։ [14]Խոնարհեսցուսցէ զինա,
խոնարհեսցի եւ անկցի ի տիրել իւրում
11 ի վերայ անանկաց։՞ Զի ասաց ի սրտի
իւրում թէ Մոռացաւ Աստուած, դարձոյց
զերեսս իւր զի մի՛ տեսցէ ի սպառ։
12 Արի, Տէր Աստուած իմ, բարձր ե-
ցիցէ ձեռն քո, եւ մի՛ մոռանար զաղքատիկս։
13 Իսկ ընդէ՞ր բարկացոյց ամպարիշտն զԱս-
տուած, զի ասաց ի սրտի իւրում թէ
14 ոչ [15]քննի։ Տեսանես զոյ զինա, ի ցաւս,
եւ ի սրտմտութիւնս հայիս մատնել զինա
ի ձեռս քո. ի քեզ թողցէ՛ աղքատն
15 եւ որբոյն դու ես օգնական։ Խորտա-

[8] Այս սկսած ի երրորդ սաղմոս յերեսուն բնաբերին։ գինչ է պերճ բառիս մանրամասնութիւնն, որպես և յերեսունեքին, ինչ երեք ընդ մի երրորդին, և այսպես ի երրորդն ըստ հանգամած մի. երրորդաւն ըստ երեսունին։ Զայս օրինակ երից յաւել կարճ Սաղմոսացն է պեղ գինչ է ձ ի 2 երրորդ։ որ բոլոր երեսուն ընդ գինչ համարս երից անձին է։ [9] ՆԵՐ. և ապահ երանի տայ անձին է։ (4) Ամպարիշտն ըստ ամբարտաւանութեան ցասման իւրոյ ոչ խնդրէ զնա։ [10] ՆԵՐ. Ժողովրդին [11] ՆԵՐ. չչեսցէ [12] ՆԵՐ. ոչ եղէց ի չարիս [13] ՆԵՐ. ի դարանս գեղից [14] ՆԵՐ. կծկի, խոնարհի, և անանկք անկանին ի ճիրանս նորա։ [15] ՆԵՐ. քննեսցես

կեսցի բազուկ մեղաւորի եւ չարի, խնդրեսցին մեղք նորա եւ նա մի՛ գոյի։
16 Տէր թագաւոր յաւիտեան յաւիտենից, կորիցեն հեթանոսք յերկրէ նորա։
17 Զցանկութիւն անանկայց լսեար, Տէր. [1]ի պատրաստութիւն սրտից նոցա հայեա-
18 ցաւ ունկն քո՛, Դատ առնել որբոյն եւ անանկի, զի մի՛ եւս յաւելցու [2]մարդ ի մեծամտանալ իւրում ի վերայ երկրի՛»։

ՍԱՂՄՈՍ Ծ (ԺԱ)

1 [3]Ի կատարած. Սաղմոս Դաւթի։

2 Ի Տէր յուսացայ. ո՞րպէս ասիցէք ցանձն իմ, Փոփոխեաց ի լերինս որպէս ճնճղուկ։
3 Զի ահա մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց, պատրաստ արարին զնետս [4]ի կապարճս, ձգել ընդ խաւար անկողիկ
4 ոյք ուղիղ են սրտիւք։ Զի [5]զոր գուն չինեցեր՝ նոքա աւերեցին՛». իսկ արդարն
5 ղի՞ արար։ Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում. աչք նորա ի տնանկս հայեին, արտեւանունք նորա
6 քննեն զորդիս մարդկան։ Տէր քննէ զարդարն. եւ զամպարիշտն, [6]որ սիրէ
7 զմեզս տանէ զանձն իւր՛»։ Տեղասցէ ի վերայ մեղաւորաց որոգայթ, հուր եւ ծծումբ. այսմբրիկ բաժին բաժակի նո-
8 ցա։ Արդար է Տէր, զարդարութիւն սիրէ, զուղղութիւն տեսանին երեսք նորա։

ՍԱՂՄՈՍ ԺԲ (ԺԲ)

1 [3]Ի կատարած. ի վերայ Ութերորդացն. Սաղմոս Դաւթի։

2 Ա՛սպրեցո զիս, Տէր, զի նուազեաց սուրբ. նուազեցան ճշմարտութիւնք յորդւոց ի
3 մարդկանէ։ Ի նանիր խօսեցաւ այր ընդ ընկերի իւրում, շրթամիւք նենգաւորօք
4 սրտէ ի սիրտ խօսեցաւ։ Սատակէ Տէր զամենայն շրթունս նենգաւորս եւ զլե-
5 զուս մեծաբանս, Ոյք ասացին, Զլեզուս մեր մեծս արասցուք, շրթունք մեր առ
6 մեզ են, եւ արդ մեր ո՞վ է տէր։ Վասն տառապանաց աղքատին եւ հեծութեան անանկին՝ Այժմ յարեայց ասէ Տէր, եդից
7 զփրկութիւն իմ եւ համարձակեսցայց ի նոսա՛»։ Բանք Տեառն են բանք սուրբ, արպէս զարծաթ ընտրեալ եւ փորձեալ յերկրէ, սրբեալ եւ պարզեալ եւ[7]նա-
8 տիկ ի հողոյ։ Դու, Տէր, պահեսցես [8]զմեզ, եւ ապրեսցուցես յաղգէ յայսմանէ մինչեւ-
9 յաւիտեան։ Շուրջանակի ամպարիշտք չրջին, ըստ [9]բարձրութեան քումմեծ արասցես զու զորդիս մարդկան՛»։

ՍԱՂՄՈՍ ԺԲ (ԺԳ)

[3]Ի կատարած. Սաղմոս Դաւթի։

1 Մ՛ինչեւ յո՞րժ, Տէր, մոռանաս զիս ի սպառ, մինչեւ յո՞րժ դարձուցանես զե-
2 րեսս քո յինէն։ Մինչեւ յո՞րժ գնեմ զխորհուրդս յանձն իմ, եւ ցաւք սրտի իմոյ
3 զաւուրս։ Մինչեւ ցո՞րժ բարձրանայ թշնամին ի վերայ իմ։ Նայեաց եւ լուր ինձ, Տէր Աստուած իմ. լոյս աուր, Տէր, աչաց իմոց, զի մի՛ երբեք ննջե-
5 ցից ի մահ։ Մի՛ ասասցէ թշնամին իմ թէ Յաղթեցի նմա, կամ նեղիչք իմ
6 ցնծասցին թէ ես սասանեցայց։ Ես յո-ղորմութիւնս քո, Տէր, յուսացայ, ցնծասցաւ սիրտ իմ ի փրկութեան քում. օրհնեցից զՏէր, զի բարերարեալ իմ։

ՍԱՂՄՈՍ Ժ Ե (ԺԴ)

[3]Ի կատարած. Սաղմոս Դաւթի։

1 Ա՛սաց անզգամն ի սրտի իւրում, թէ Ոչ գոյ Աստուած. ապականեցան եւ պղծեցան յանօրէնութեան իւրեանց,
2 եւ ոչ ոք է որ առնէ զբարի։ Տէր յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդ-
3 կան, տեսանել թէ իցէ՞ ոք խոհասուն որ խնդրիցէ զԱստուած։ Ամենեքեան խոտորեցան, ի միասին անպիտանա-
4 ցան. ոչ ոք է որ առնէ զբարի, եւ չէ ոք մինչեւ ի մի։ Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան ոյք գործեն զանօրէնութիւն, ոյք ուտէին զժողովուրդ իմ որ-
5 պէս կերակուր հացի, եւ առ Տէր ոչ կարդացին։ Անդ երկիցեն զերկեւղ [10]ուր ոչ իցէ երկեւղ, զի Տէր՛ է յազգս ար-
6 դարոց։ Զխորհուրդ աղքատի յամօթ
7 [11]արարին, զի Տէր է յոյս նորա։ Ո՛ տացէ ի Սիոնէ զփրկութիւն Իսրայէլի. ի

---

[1] ԵԲԲ. պատրաստ արասցես զսիրտս նոցա, ունկնդիր լիցիս նոցա [2] ԵԲԲ. երկեցուցանել մարդ որ յերկրէ [3] ԵԲԲ. Աւ գլուխ երաժշտացն. [4] ԵԲԲ. յաղեղունս [5] ԵԲԲ. Հիմունք կործանին [6] ԵԲԲ. եւ զոր սիրէն զմեղս՝ ատեայ անձն նորա

[7] ԵԲԲ. ի փրկութեան զոր ծաղր առնին [8] ԵԲԲ. զնոսա [9] ԵԲԲ. բարձրանալ անարգաց յորդիս մարդկան [10] ԵԲԲ. զի Աստուած [11] ԵԲԲ. արարէք

դարձուցանել Տեառն զդերութիւնն ժողովրդեան իւրոյ , ցնծասցէ Յակոբ եւ ուրախ եղիցի Իսրայէլ :

ՍԱՂՄՈՍ ԾԲ (ԾԵ)

[1]Ի կատարած . Սաղմոս Դաւթի :

4 **Տ**էր , ո՞վ կացցէ ի խորանի քում , կամ
ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո :
2 Որ գնայ անարատ , գործէ զարդարութիւն ,
խօսի զճշմարտութիւն ի սրտի իւրում .
3 Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով ,
եւ չար ընկերի իւրում ոչ արար , նախատինս [2]ի վերձաւորաց նա ոչ առ-
4 նու : Արհամարհեալ է առաջի նորա չարագործն , զերկիւղածս Տեառն փառաւորառնէ , երդնու [3]ընկերի իւրում"
5 եւ ոչ սատ : Զարծաթի իւր ի վարձու ոչ տայ , կաշառ ի վերայ [4]իրաւանց ոչ առնու . որ զայս արասցէ , նա մի՛ սասանեսցի յաւիտեան :

ՍԱՂՄՈՍ ԾԵ (ԾԶ)

[5]Սրճանաւոր Դաւթի :

2 **Պ**ահեա զիս , Աստուած , զի ես ի քէզ
յուսացայ . ասացի Տեառն , Տէր իմ ես
3 դու , եւ բարիք իմ ինձ ի քէն են՝ [6]Սրբոց
քոց որ են յերկրի քում , սքանչելի առարեր զամենայն կամս իմ" ի նոսա :
4 Յաճախեսցին հիւանդութիւնք [7]նոցա , յետ այսորիկ ապա վազվազեսցին . ոչ ժողովեցայց ի ժողովս" նոցա յարեանց , եւ ոչ յիշեցից զանուանս նոցա ի չրթունս
5 իմ : Տէր բաժին ժառանգութեան իմոյ եւ բաժակի իմոյ , դու ես , որ այսբէն դարձուցանես զժառանգութիւն իմ յիս :
6 Վիճակք եղեն ինձ ընդ ընտիրս , եւ ժա-
7 ռանգութիւն իմ հաճոյ եղեւ ինձ : Օրհնեցից զՏէր որ խրատոյն արար զիս . մինչ ի գիշերի եւս խրատեցին զիս երի-
8 կամունք իմ : Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ , զի է ընդ աջմէ իմմէ զի մի՛ սասանեցայց :
9 Վասն այսորիկ ուրախ եղեւ սիրտ իմ , եւ ցնծացաւ լեզու իմ , եւս եւ մարմին իմ բնակեսցէ յուսով :
10 Զի ոչ թողցես զանձն իմ ի դժոխս , եւ ոչ տացես սրբոյ քումմ տեսանել զապականութիւն :
11 Ծաներ լինձ զճանապարհս [8]քո կենդանոյ , լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց , ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ" քո մինչեւ ի սպառ :

ՍԱՂՄՈՍ ԾԶ (ԾԷ)

Աղօթք Դաւթի :

1 **Լ**ուր , Տէր , արդարութեան , եւ նայեաց
ի խնդրուածս իմ . ունկն դիր աղօթից
իմոց , զի ոչ չրթամբք նենգաւորօք :
2 Յերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն , եւ
3 աչք [9]իմ տեսցեն զուղղութիւն : Փորձեցեր զսիրտ իմ եւ քննեցեր ի գիշերի , փորձեցեր զիս եւ ոչ գտաւ յիս [10]անի-
4 րաւութիւն : Մի՛ խօսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան . վասն բանից չրթանց քոց ես պահեցից զճանապարհս
5 խրատու" : Հաստատեա զչաւիղս իմ ի ճանապարհի քում , զի մի՛ դայթակղեսցին
6 գնացք իմ : Ես առ քեզ , Տէր , կարգայի զի լսեար ինձ , Աստուած . խոնարհեցո առ իս զունկն քո եւ լուր բա-
7 նից իմոց : Սքանչելի արարեր զողորմութիւնս քո , ո փրկիս զյուսացեալսն ի քէզ՝ յայնցանէ որ հակառակ կան աջոյ քո : Պահեա զիս որպէս
8 զբիբ ականն , ընդ հովանեաւ թեւուց քոց
9 ծած կեցացո զիս Յերեսաց անպարչտացն որք տառապեցուցին զիս . թշնամիք զանձն
10 իմ պաշարեցին . ի ճարպս իւրեանց արգելան . բերանք նոցա խօսեցան զամբար-
11 տաւանութիւն : [11]Մերձեցին զիս եւ" այժմ դարձեալ պատեցան զինեւ , աչք եղին խո-
12 նարհեցուցանել զիս յերկիր : Հասարեցան զինձ որպէս առիւծ զի պատրաստեսցի , որպէս կորիւն առիւծու զինոտի դարանեալ :
13 Արի , Տէր , ժամանեա նոցա եւ խափանեա զնոսա . փրկեա զանձն իմ յամպարշտացն
14 [11]իսրոյ եւ ի ձեռանէ թշնամեացն : Տէր , կորո զնոսա յերկրէ , բաժանեա եւ խա-
15 փանեա զնոսա ի կեանս իւրեանց : Պատա-

---

[1] ՃԵԲԲ. պահատ [2] ԵԲԲ. ի վերայ մերձաւորի իւրոյ [3] Կամ , ի վնաս իւր [4] ԵԲԲ. անմեղին [5] ԵԲԲ. Երգ [6] ԵԲԲ. Ի սուրբս որ են յերկրի , նոքին են պատուականք ամենայն ուրախութիւն իմ է [7] ԵԲԲ. Նոցա որ այլոյ վազվազեն , ոչ նուիրեցից զնուէրս

[8] ԵԲԲ. կենդանի , լիութիւն ուրախութեան երեսաց քո , վայելչութիւն յաջ [9] ԵԲԲ. քո [10] ԵԲԲ. անիրաւութիւն . խորհեցայ , մի՛ յանցանիցէ բերան իմ : (4) Ի գործս մարդկան ըստ բանից չրթանց քոց ղպուշացայ ի ճանապարհաց անօրինին [11] ԵԲԲ. սրով քով . (14) Ի մարդոց ձեռամբ քով Տէր , ի մարդոց աշխարհի որոց բաժին ի կեանս իւրեանց եւ ի շռնմարանոց քոց լցուցանես զորովայնս նոցա . յագեսցին որդիք և թողցեն զմնացուած իւրեանց տղայոց

նեռք քովք լցան որովայնք նոցա , յա-
զեցան կերակրովք եւ խոզին զմնա-
15 ցուածս ազգաց իւրեանց։ Ես արպարու-
թեամբ եւեւեցայց երեսաց քոց , յա-
զեցայց յերեւիլ փառաց քոց՝՝

ՍԱՂՄՈՍ ԻԷ (ԺԴ)

1 [1]Ի կատարած ի վերայ պատերազմօղ նա-
հատակի՝՝, Դաւթի Տեառն Դաւթի , զոր
խօսեցաւ ընդ Տեառն զբանս օրհնու-
թեան , յաւուր յորում փրկեաց զնա Տէր
ի ձեռաց ամենայն թշնամեաց , եւ ի ձե-
ռաց Սաւուղայ . եւ ասէ ,

2 Սիրեցից զքեզ , Տէր , զօրութիւն իմ.
Տէր [2]հաստատուիչ իմ , ապաւէն իմ եւ
3 փրկիչ իմ։ Աստուած օգնական իմ եւ
ես յուսամ ի նա , ապաւէն իմ եղջիւր
փրկութեան իմոյ , ընդունելի իմ է՝՝։
4 Օրհնելով կարդայից առ Տէր , եւ ի
5 թշնամեաց իմոց ապրեցայց ։ Շուրջ զ-
զեն զինեալ [3]սիրելիք մահու , եւ ուղիք
անօրէնութեան խռովեցուցին զիս ։
6 [3]Վիշապք դժոխոց պատարեցին զիս , եւ ժա-
7 մանեցին ինձ որոգայթք մահու ։ Ի նե-
ղութեան իմում ես առ Տէր կարդայի ,
եւ առ Աստուած իմ աղաղակեցի . լուաւ
[4]ինձ ի սուրբ տաճարէ իւմմէ ձայնի ա-
ղօթից իմոց՝՝, եւ աղաղակ իմ առաջի
8 նորա մտից յականջս նորա ։ [5]Ապա եցաւ
եւ դողաց երկիր , եւ հիմունք լերանց
տապանեցան եւ խռովեցան , զի բարկա-
9 ցաւ ի վերայ նոցա Աստուած ։ Ել ծուխ
ի բարկութենէ նորա , եւ հուր [6]յերեսաց
նորա բորբոքեցաւ , եւ փայլատակունք
10 հատան ի նմանէ ։ Խոնարհեցոյց զերկինս
եւ էջ , եւ մէգ ի ներքոյ ոտից նորա ։
11 Եւ ի քերովբէս եւ թռեաւ , եւ սլացաւ նա
12 ի թեւս հողմոյ ։ Եդ զխաւար ի ծած-
կոյթ իւր , եւ չուրջ զնովաւ են յարկք
իւր , [7]եւ խաւարային ջուրք մինչեւ
13 յամպս՝՝ օդոյ ։ Ի փայլատակել նորա ա-
ռաջի նորա , ամպք անցուցին զկարկաւա
14 եւ զկայծակունս հուր ։ Որոտաց Տէր

յերկինից , եւ Բարձրեալն եա զձայն իւր
15 ի կարկուտ եւ ի կայծակունս հուր ։ Ա-
ռաքեաց զնետս իւր եւ ցրուեաց զնո-
սա , յաճախեաց զփայլատակունս իւր
16 եւ խռովեցոյց զնոսա ։ Երեւեցան ապ-
բիւրք ջուրց , եւ յայտնեցան հիմունք
աշխարհի , ի սաստէ բանիմէ , Տէր , եւ
ի շնչել հողւոյ բարկութեան քո ։
17 Առաքեաց ի բարձանէ եւ ընկալաւ
զիս , ընկալաւ զիս ի ջուրց բազմաց ։
18 [8]Փրկեաց զիս Տէր՝՝ ի թշնամեաց իմոց
հզօրաց , եւ յատելեաց իմոց՝ զի հզօրք
19 եղեն քան զիս ։ Ժամանեցին ինձ յա-
ւուր չարչարանաց իմոց . եղեւ Տէր հզօ-
20 րիչ իմ . Եւ եհան զիս յանդարձ , եւ
փրկեաց զիս Տէր . զի կամեցաւ զիս ։
21 Հատուսցէ ինձ Տէր ըստ արդարութեան
իմում , ըստ անբծութեան [9]իմում հա-
22 տուսցէ ինձ։ Եւ պահեցից զճանապարհս
Տեառն , եւ ոչ ամպարշտացայց յԱստու-
23 ծոյ իմմէ ։ Ամենայն իրաւունք նորա ա-
ռաջի իմ են , եւ զարդարութիւն [10]իւր ոչ
24 ի բացէ արար՝՝ յինէն ։ Եղէց եւ ես ամ-
բիծ ընդ նմա , եւ զգուշացայց յանօրէնու-
25 թենէ իմմէ ։ Հատուսցէ ինձ Տէր ըստ
արդարութեան իմում , ըստ սրբութեան
ձեռաց իմոց առաջի աչաց իւրոց ։
26 [11]Ընդ սրբոյն տուր եղիցես , ընդ առն
27 ամբծի ամբիծ եղիցես՝՝. Ընդ ընտրեալսն
ընտրեալ եղիցես , եւ [12]ընդ ոխերն կոր-
28 ծանեացես՝՝։ Զի զժողովուրդս խոնարհս
կեցուցանես , եւ զաչս ամբարտաւանից
29 դու խոնարհեցուցանես ։ Զի լուսաւոր
առնես զձրագ իմ . Տէր Աստուած իմ ,
30 լոյս արա ինձ ի խաւարի ։ [13]Քեւ փրկե-
ցայց ի փորձութենէ՝՝, Աստուծով իմով
31 անցից զպարիսպս։ Աստուած իմ ,
ամբիծ են ճանապարհք քո , եւ բանք
Տեառն ընտրեալ են , եւ ապաւէն ամե-
32 նեցուն որք յուսան ի նա։ Վասն զի ո՞վ
է Աստուած՝ բաց ի Տեառնէ , կամ ո՞վ է
[14]Աստուած՝ բաց յԱստուծոյ մերմէ ։
33 Աստուած , որ զգեցուցեալ ինձ զօրու-
թիւն , եւ եդիր յանբծութիւն զճանա-
34 պարհս իմ ։ Հաստատեալ զոտս իմ որ-
պէս վիղկերաց , եւ ի վերայ բարձանց

իւրեանց ։ (15) Եւ արդարութեամբ տեսից զե-
րեսս քո . յագեցայց ի զարթնուլ իմում ի տե-
սիլ քո ։

[1]ՆԵԲ. Ալ գլուխ երաժշտացն [2]ՆԵԲ. վէմ իմ,
եւ ամրութիւն իմ, եւ փրկիչ իմ։ (3)Աստուած
պարիսպ իմ եւ ես յուսամ ի նա, վահան իմ և
եղջիւր փրկութեան իմոյ, աշտարակ բարձրու-
թեան իմոյ է։ [3]ՆԵԲ. տոռունք [4]ՆԵԲ. ձայնի իմում
ի տաճարի իւրմէ [5]ՆԵԲ. Յայնմ ամի խռովեցաւ [6]ՆԵԲ.
ի բերանոյ [7]ՆԵԲ. Թանձրութիւն ջուրց, ամպք

[8]ՆԵԲ. Փրկեաց զիս [9]ՆԵԲ. ձեռաց իմոց [10]ՆԵԲ.
նորա ոչ ի բաց տարար [11]ՆԵԲ. Ընդ ողորմածն
ողորմած եղիցես, եւ ընդ առն կատարելոյ կա-
տարեացես [12]ՆԵԲ. ընդ թիւրեղսն թիւրեացես
[13]ՆԵԲ. Զի քեւ արշաւեցից ի վերայ հինի [14]ՆԵԲ.
վէմ

35 կացուցեր զիս ։ Ուսուցիր զձեռս իմ ի
պատերազմ, եւ տարերիր զբազուկ իմ որ-
36 պէս զպղնձին հասցս ։ Եւ հասեր ինձ
[1]զպաշտպանութիւն փրկութեան քո . աչ
քո ընկալաւ զիս , եւ խրատ քո կանգ-
նեաց զիս ի ոտս , եւ խրատ քո ուս-
37 ուսցէ զիս" ։ Ընդարձակեցեր զշնաց
իմ ի տակիս իմով , եւ ոչ սկարացան
38 չաւիղք իմ ։ Հալածեցից զթշնամիս իմ
եւ հասից նոցա , եւ ոչ դարձայց ի նո-
39 ցանէ մինչեւ ոսպառեցից զնոսա ։ Նե-
ղեցից զնոսա , եւ այլ մի կարասցեն
կալ . եւ անկցին ի ներքոյ ոտից իմոց ։
40 Եւ զգեցուցեր ինձ զօրութիւն ի պա-
տերազմի , զյարուցեալսն ի վերայ իմ
41 ի ներքոյ իմ տարեր ։ Զթշնամիս իմ հա-
լածականս տարեր , եւ զատկիս իմ
42 ոստակեցեր ։ Աղաղակեցին , եւ ոչ ոք
էր որ փրկէր զնոսա . կորզացին առ Տէր,
43 եւ ոչ լուաւ նոցա ։ Մանրեցից զնոսա
որպէս փոշի առաջի հողմոյ , որպէս կա-
44 ղանհայ կոխեցից զնոսա ։ Փրկեսցէ զիս
Տէր ի հակառակութենէ ժողովրդոց , եւ
կացուսցէ զիս գլուխ հեթանոսաց . ժո-
45 ղովուրդ զոր ոչ գիտէի ծառայեաց ինձ. Եւ
ի լուր ականջաց լուաւ ինձ , որպէս օտա-
46 րազգիք եղեն ինձ։ Որպէս օտարազգ մաշե-
ցան եւ [2]կապացան ի չաւղսն" իւրեանց ։
47 Կենդանի է Տէր եւ օրհնեալ է [3]Աս-
տուած , եւ բարձր եղիցի Աստուած
48 փրկութեան իմոյ։ Աստուած է որ ինդրէ
զվրէժ իմ , եւ հնազանդ առնէ զժողո-
49 վուրդս իմ [4]յարկացուցոյ , յոյնպանէ որ յա-
րուցեալ են ի վերայ իմ բարձր տարեր
զիս , եւ յառնէ անվրաւէ վրիժեցեր զիս ։
50 Վասն այսորիկ խոստասցի եղէց քեզ ի
հեթանոսս , եւ անուանի քում սաղմոս
51 ասացից ։ Մեծ տարեր զփրկութիւն
թագաւորի նորա , առնել ողորմութիւն
ընդ օծեալ նորա ընդ Դաւիթ , եւ ընդ
զառակի նորա մինչեւ յաւգ ։

ՍԱՂՄՈՍ ԻԵ (ԻԴ)

1 [5]Ի կատարած . Սաղմոս Դաւիթի ։

2 Երկինք պատմեն զփառս Աստուծոյ , եւ
զործարածս ձեռաց նորա պատմէ հաս-
3 տատութիւն ։ Օր աւուր բղխէ զբան ,
եւ գիշեր գիշերի յայտնէ զգիտութիւն ։
4 Ոչ են բանք եւ ոչ են խօսք , որոց ոչ
5 լսին ձայնք նոցա ։ Ընդ ամենայն երկիր
ել բաշխուած նոցա , մինչեւ ի ծագս աշ-
6 խարհի են խօսք նոցա ։ [6]Յարեւուս եհար
գիսպան իւր" , եւ ինքն որպէս փեսայ
գի ելանէ յառագաստէ իւրմէ , յնծայ
նա որպէս ակայ յրնթանալ զճանապարհս
7 իւր ։ Ի ծագոյ երկնից են ելք նորա ,
[7]հանդիպուած նորա մինչեւ ի ծագս նո-
րուն . եւ ոչ ոք իցէ որ թաքիցէ ի տա-
պսպ նորա ։
8 Օրէնք Տեառն ամրիծ են եւ դարձու-
ցանեն զոգիս . վկայութիւն Տեառն հա-
ւատարիմ է , եւ իմաստուն առնէ զտղայս ։
9 [8]Արդարութիւնք Տեառն ուղիղ են եւ
ուրախ առնեն զսիրտս , պատուիրանք
10 Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց ։ Եր-
կիւղ Տեառն սուրբ է եւ մնայ յաւի-
տեան , դատաստանք Տեառն ճշմարիտ
11 է , եւ արդար ի նմին ։ Ցանկալի է նա
քան զոսկի եւ քան [9]զականս պատուա-
կան բազումս , քաղցր է նա քան զմե-
12 զս խորիսխ" ։ Քանզի ծառայ քո պահեա-
ցէ զայս , ի պահել նմա հատուցումն
բազում ։
13 Զանցսս ածս իւր ո՞վ կարէ առնուլ ի
միտ . ի գաղտնեացդ իմոց սուրբ արա
14 զիս , Տէր . [10]Եւ յօտարէն" պահեա զծա-
ռայս քո . ապա թէ ոչ տիրեսցեն ինձ .
յայնժամ ամրիծ եղէց , եւ սուրբ եղէց
15 ի մեզաց մեծաց։ Եղիցին քեզ հաճոյ բանք
բերանոյ իմոյ , եւ խորհուրդք սրտի իմոյ
առաջի քո յամենայն ժամ , Տէր [11]օգնա-
կան իմ" եւ փրկիչ իմ ։

ՍԱՂՄՈՍ ԻԶ (Ի)

1 [5]Ի կատարած . Սաղմոս Դաւիթի ։

2 Լսելոյ քեզ Տէր յաւուր անձկութեան ,
օգնական եղիցի քեզ անուն Աստուծոյ
3 Յակովբայ ։ Առաքեսցէ քեզ Տէր օգնու-
թիւն ի սրբութենէ իւրմէ , եւ ի Սիովնէ
4 ընկալցի զքեզ ։ Յիշեսցէ Տէր զամենայն
պատարագս քո , եւ զողխաս քո ընդու-
5 նելի արասցէ ։[11] Տացէ քեզ Տէր ըստ
սրտի քումմէ , եւ զամենայն խորհուրդս
6 քո նա կատարեսցէ ։ Ցնծասցուք մեք

[1] Ել՝ Զօրութիւն փրկութեան քո, եւ աջ քո զո
բացոյց զիս, եւ հնազանդիւն քո մեծացոյց զիս
[2] Ել՝ սարսափեցան ի ճանապարհէ [3] Ել՝ Վէմիմ
[4] Ել՝ դո-ւ-ե [5] Ել՝ Առ զլուխ երաժշտացն
[6] Ել՝ Արեգական հմար խորան ի նոսա [7] Ել՝
շրջան [8] Ել՝ Կանոնք [9] Ել՝ զոսկի փարձակ
յոյժ, քաղցր է նա քան զմեղր, եւ քան զմեղր
հոսեալ ի խորսխէ ։ [10] Ել՝ Ցամբարտաւանից եւս
[11] Ել՝ յօ-ե-լո-, Հանգիստ ։

ի փրկութեան քումմ, յանուն Աստուծոյ մերոյ [1]մեք մնձք եղիցուք՝. լցուսցէ Տէր զամենայն խնդրուածս քո։
7 Այժմ ծանեայ՝ զի կեցոյց Տէր զօծեալ իւր. լուաւ սմա յերկնից ի սրբութենէ իւրմէ, ի զօրութիւն փրկութեան աջոյ
8 իւրոյ։ Սոքա կառօք եւ սոքա երիվարօք, այլ մեք զանուն Տեառն Աստուծոյ մերոյ կարգասցուք։ Սոքա խոտեցան եւ անկան, մեք յարեաք եւ ուղիղք եղաք։ Տէր, կեցո զթագաւորն,
10 եւ լսեր մեզ յաւուր յորում կարգասցուք առ քեզ։

ՍԱՂՄՈՍ Ի (ԻԱ)

1 [2]Ի կատարած. Սաղմոս Դաւթի.

2 Տէր, ի զօրութիւն քումմ ուրախ եղիցի թագաւորն, ի փրկութիւն քումմ
3 ցնծասցէ յոյժ։ Զցանկութիւնն սրտի նորա ետուր նմա, եւ զկամս չդիմանց նո-
4 րա ոչ արգելեր ի նմանէ։[3] Ժաման առաջիր զնա յօրհնութիւն քաղցրութեան քո, եւ եդիր ի գլուխ նորա պսակ [4]ի
5 քարէ պատուականէ՝. Կեանս խնդրեաց ի քէն, եւ ետուր նմա երկայն աւուրս, յաւիտեանս յաւիտենից։ Մեծ
6 է փառք նորա ի փրկութեան քումմ, զփառս եւ զմեծավայելչութիւնն դիցես ի
7 վերայ նորա։ Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից, ուրախ արասցես զնա յուրախութիւն երեսաց քոց։
8 Թագաւոր յուսացաւ ի Տէր, յողորմութենէ Բարձրելոյն նա մի սասանեսցի։
9 Գտցի ձեռն քո ի վերայ թշնամեաց քոց, եւ աջ քո գտցէ զամենայն ատելիս քո։ 10 Դիցես զնոսա որպէս հնոց հրոյ՝ ի ժամանակի [5]երեսաց քոց՝. Տէր բարկութեամբ իւրով խռովեցուսցէ զնոսա, եւ հուր կերիցէ զնոսա։ Պտուղ
11 նոցա յերկրէ կորիցէ, եւ զաւակ նոցա յորդւոց ի մարդկանէ։ Խոտորեցան ի քէն չարութեամբ, խորհեցան խորհուրդ զոր
13 ոչ կարասցեն հաստատել։ Արասցես զնոսա հալածական, [6]ի մնացուածս քո պատ-
14 րաստեսցես զերեսս՝ նոցա։ Բարձր լեր, Տէր, ի զօրութեան քումմ. օրհնեսցուք, եւ սաղմոս ասասցուք զօրութեան քումմ։

ՍԱՂՄՈՍ ԻԱ (ԻԲ)

1 [7]Ի կատարած. վասն առաւօտին օգնականութեան՝. Սաղմոս Դաւթի։
2 [8]Աստուած, Աստուած իմ, նայեաց առ ի՝, ընդէր լքեր զիս. հեռի եղեր ի փրկութենէ իմմէ՝ [9]վասն բանից յանցանացս իմոց՝։ Աստուած իմ, ի տուէ կարգայի առ քեզ, եւ ինձ ոչ լուար. ի գիշերի եւ [10]ինձ ոչ անսայեր։ Դու ի սուրբս բնակեալ ես, գովեալդ յիսրայէլ՝։ Ի քեզ յուսացան հարքն մեր,
5 յուսացան ի քեզ եւ փրկեցեր զնոսա։
6 Առ քեզ աղաղակեցին եւ կեցին, ի քեզ յուսացան եւ ոչ ամաչեցին։
7 Այլ ես որդն եմ եւ ոչ իմ մարդ, նախատինք մարդկան եւ արհամարհանք
8 ժողովրդոց։ Ամենեքեան որ տեսանէին զիս արհամարհէին զինեւ, խօսէին չրթամբք եւ շարժէին զգլուխս իւրեանց։
9 Յուսացար ի Տէր եւ փրկեսցէ զնա, կեր-
10 դասցէ զնա զի կամի զնա։ Դու ես որ հաներ զիս յարգանդէ, յոյս իմ ի տանց
11 մօր իմոյ։ Ի քեզ անկայ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ, դու ես Աստուած
12 իմ։ Մի ի բացեայ առնիր յինէն, զի նեղութիւնք մերձեալ են, եւ ոչ որ է որ
13 օգնէ ինձ։ Շուրջ եղեն զինեւ զուարակք բազումք, եւ ցուկք [11]զերք պա-
14 չարեցին զիս։ Բացին ի վերայ իմ զբերան իւրեանց, որպէս առիւծ զի մռնչէ
15 եւ յափշտակէ։ Ես որպէս զջուր հեղայ, եւ ցրուեցան ամենայն ոսկերք իմ, եւ եղեւ սիրտ իմ որպէս մոմ հալեալ ի
16 մէջ որովայնի իմոյ։ Զորացաւ որպէս խեցւոյ զօրութիւն իմ, լեզուս իմ ի քիմս իմ կցեցաւ, եւ ի հող մահու [12]իջուցեր
17 զիս։ Շուրջ եղեն զինեւ չունք բազումք, եւ ժողովք չարաց պաշարեցին
18 զիս։ Ծակեցին զձեռս իմ եւ զոտս իմ, եւ [13]թուեցին զամենայն ոսկերս իմ.
19 նոքա հայեցան եւ տեսին զիս։ Բաժանեցին զհանդերձս իմ ի մէջ իւրեանց, եւ ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս
20 արկանէին։ Դու, Տէր, մի հեռի [14]առներ զօգնականութիւն քո յինէն, եւ,

---

[1] Եբր. կանգնեսցուք նշան [2] Եբր. Առ գլուխ երաժշտացն [3] Եբր. չեչեն յ—ելս—, Հանդիսատ։
[4] Եբր. յոսկւոյ սրբոյ [5] Ա. յ—ինդն, բարկութեան քո
[6] Եբր. յողնեալսն քո պատրաստ եղիցես ընդդէմ [7] Եբր. Առ գլուխ երաժշտացն. ի վերայ Ա.յելէդ Շահարի [8] Եբր. Աստուած իմ, Աստուած իմ
[9] Եբր. ի բանից աղաղակի իմոյ [10] Եբր. ոչ դադարեցից։ (4) Դու սուրբ ես, բնակեալդ ի գովութիւնս Իսրայէլի։ [11] Եբր. Բաստնու
[12] Եբր. ի հողեայ [13] Եբր. Թուեցից [14] Եբր. առնէր. զօրութիւն իմ, փութա օգնել ինձ

21 Տէր, յօգնել ինձ նայեաց՝։ Փրկեա ի
զոյց զանձն իմ, եւ ի ձեռսց չանց զմիա-
22 մօրութիւն իմ։ Փրկեա զիս ի բերանոյ
առիծու, յեղջիւրէ մինչեւ[1] զխոնար-
հութիւն իմ՝։
23 Պատմեցից զանուն քո եղբարց իմոց,
24 ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ։ Երկիւղածք Տեառն, օրհնեցէք զՏէր. ա-
մենայն զաւակ Յակովբայ փառաւորեցէք զնա. եւ երկիւղ ի Տեառնէ ա-
25 մենայն զաւակ Իսրայէլ։ Զի ոչ արհամարհեաց եւ ոչ անարգեաց Տէր զաղօթս աղքատին, եւ ոչ դարձոյց զերեսս
իւր [2]յինէն, այլ ի կարդալ [3]իմում առ
26 նա լուաւ [4]ինձ։ Ի քէն է գովեստիւն
[5]իմ, յեկեղեցիս մեծ օրհնեցից զքեզ՝. զոհեսցեմ իմ կատարեցից առաջի ամե-
նայն երկիւղածաց նորա։
27 Կերիցին անանկք եւ յագեսցին, օրհնեսցեն զՏէր ոյք խնդրեն զնա. կեցցեն
սիրտք [6]նոցա յաւիտեան յաւիտենից։
28 Յիշեսցեն եւ դարձցին առ Տէր ամենայն ծագք երկրի. երկիր պագցեն [7]նմա ա-
29 մենայն առնմք ազգաց։ Զի Տեառն է արքայութիւն, եւ նա տիրէ ի վերայ
30 ամենայն հեթանոսաց։ Կերան եւ երկիր պագին նմա ամենայն պարարտք երկ-
րի. առաջի նորա անկցին ամենեքեան
31 որ իջանեն [8]ի հող։ Անձն իմ նովաւ կեսցէ, եւ զաւակ իմ՝ ծառայեսցէ նմա։
32 Պատմեսցի Տեառնէ ազգի որ գալոցն է. պատմեսցեն զարդարութիւն նորա ժողովրդեան որ ծնանելոցն իցէ, [9]զոր ա-
րար Տէր՝։

ՍԱՂՄՈՍ ԻԲ (ԻԴ)

1 [4]Ի կատարած. Սաղմոս Դաւթի։

2 Տէր հովուեսցէ զիս, եւ ինձ ինչ ոչ պա-
կասեսցէ։
Ի վայրի գարդարոյ անդ բնակեցոյց զիս, եւ առ ջուրս հանգստեան սնոյց զիս։
3 Դարձոյց զանձն իմ առ իս, առաջնորդեսցէ ինձ ի ճանապարհս արդարութեան
4 վասն անուան իւրոյ։ Թէպէտեւ գնասցիմ եւ [10]ի մէջ սաւերսոյ մահու, ոչ երկեսցայ ի չարէ. զի դու, Տէր, ընդ իս ես. ցաւդ քո եւ գաւազան, նոքա մխիթա-
5 րեսցին զիս։ Պատրաստ արարեր առաջի իմ սեղան, ակն յանդիման հնդկաց իմոց. օծեր իւղով զգլուխ իմ, [11]բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս։
6 Ողորմութիւն քո, Տէր, զհետ իմ եկեսցէ՝ զամենայն աւուրս կենաց իմոց, բնակել ինձ ի տան Տեառն ընդ երկայն աւուրս։

ՍԱՂՄՈՍ ԻԳ (ԻԴ)

Առաջին Դաւթի. [4]միաշաբաթիան։

1 Տեառն է երկիր լրիւ իւրով, աշխարհ
2 եւ ամենայն բնակիչք նորա։ Նա ինքն ի վերայ ծովու հիմնեաց զայն, ի վերայ գետոց պատրաստեաց զնա։
3 Ո՞վ կայցէ ի լեառն Տեառն, կամ ո՞վ կաց-
4 ցէ ի տեղւոջ սրբութեան նորա։ Որ սուրբ է ձեռօք եւ ամբիծ սրտիւ, որ ոչ առ զնանրութիւնս զանձն իւր, եւ ոչ երդուաւ նենգութեամբ [5]ընդ ընկերի իւ-
5 րում՝։ Սա առցէ զօրհնութիւն ի Տեառնէ, [12]զողորմութիւն յԱստուծոյ փրկչէ
6 իւրմէ։ Այս ազգ է որ խնդրէ զՏէր, խնդրէ տեսանել զերեսս Աստուծոյ Յա-
7 կովբայ[13]։ Համարձակ, [14]իշխանք, զդրունս ձեր ի վեր, համարձայնի՝ դրունք յաւիտենից, եւ մտցէ Թագաւոր փառաց։
8 Ո՞վ է սա Թագաւոր փառաց, Տէր հզօր զօրութեամբ իւրով, Տէր հզօր
9 ի պատերազմի։ Համարձակ, [14]իշխանք, զդրունս ձեր ի վեր, համարձայնի՝ դրունք յաւիտենից եւ մտցէ Թագաւոր
10 փառաց։ Ո՞վ է սա Թագաւոր փառաց, Տէր զօրութեանց. սա ինքն է Թագաւոր փառաց։[13]

ՍԱՂՄՈՍ ԻԵ (ԻԶ)

1 [4]Ի կատարած. Առաջին Դաւթի։

2 Առ քեզ, Տէր, համարձակ զանձն իմ.
3 Աստուած իմ, ի քեզ յուսացայ, մի ամաչեցից, եւ մի ծիծաղեսցին զինեւ
4 [6]թշնամիք իմ։ Ամենեքեան որք համբերեն քեզ՝ մի ամաչեսցին, այլ ամաչեսցին անօրէնք յանցանգութեան իւ-
5 րեանց։ Ճանապարհս քո, Տէր, ցոյց ինձ, եւ շաւիղս քո ուսոյ ինձ. առաջնորդեա ինձ ի ճշմարտութեան քում եւ

---

[1] Եբր. մուր ինձ պատասխանի [2] Եբր. ի նմանէ
[3] Եբր. նորա [4] Յեբր. պ-ասոք [5] Եբր. իմ յեկեղեցիս մեծս [6] Եբր. ձեր [7] Եբր. առաջի քո
[8] Եբր ի հող և նոսա ոչ ապրեցուցանէ զանձն։ (31) Զաւակն [9] Եբր. զի նա արար [10] Եբր. ի մէջ ձորոյ
[11] Եբր. բաժակ իմ լի է։ (6) Արդարեւ բարութիւն և ողորմութիւն պիտի հետեւին իմ եկեսցեն [12] Կամ, պարգեւատրութիւն [13] Եբրայեցի յաքոբ, Հանգիստ։
[14] Եբր. դրունք, դոլոխս ձեր ի վեր. ամբարձարուք,

ուսս պիս , զի զու ես Աստուած վրկիչ իմ . եւ ես քեզ համրելի զօրհանապազ ։
6 Ցիչես , Տէր , զգիւտիւնս քո եւ զողոր-
7 մուիւնս որ են յաւիտենից ։ Զմեզս մանկութեան իմոյ եւ զանցիսութեան իմոց մի՛ յիչեր , այլ յիչես պիս , Տէր , քոյ ողորմութեանդ՝ վասն քաղցրու թեան
8 քո . Քի քաղցր եւ ու պիղ ես , Տէր . վասն այսորիկ օրէնսդիս տանիս զմեղաւորս ի
9 ճանապարհի։ Առաջնորդես հեզոց ի դատաստանի , եւ ուսուցանես հեզոց զճանա-
10 պարհս քո ։ Ամենայն ճանապարհք Տեառն ողորմութեամբ եւ ճշմարտութեամբ են այնոցիկ , որ խնդրեն զուխտ եւ զվկայու-
11 թիւն նորա ։ Վասն անուան քո , Տէր , քաւեա զմեղս իմ , զի բազում եղեն ։
12 Ո՞վ է մարդ որ երկնչի ի Տեառնէ . օ-
13 րէնսդիր տանի զնա ի ճանապարհի յոր
14 եւ հաճեսցի ։ Անձն նորա ի բարութեան հանգիցէ , եւ զաւակ նորա ժառանգես-
15 ցէ զերկիր ։ [1]Զօրութիւն է Տէր՝ երկիւղածաց իւրոց , եւ զկտակարանս իւր
16 ուսուցանել նոցա ։ Աչք իմ յամենայն ժամ առ Տէր են , եւ նա հանէ յորոգայթէ զոտս
17 իմ ։ Նայեա առ իս եւ ողորմեա ինձ , զի միամօր եւ ալքատ եմ ես ։ Նեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն յոյժ ,
18 եւ ի վշասից իմոց հան զիս ։ Տես վշտութիւն իմ եւ զվաստակ իմ , եւ
19 թող ինձ զամենայն մեղս իմ ։ Տես զթշնամիս իմ զի բազում եղեն , ատելութիւն զոր ի նանիր առեալն զիս ։
20 Պահեա զանձն իմ եւ փրկեա զիս , եւ մի՛ յամօթ եղէց զի յուսացայ ի քեզ ։
21 [2]Ամբիծք եւ ուղիղք կցորդ եղեն ինձ ,
22 եւ՝ ես քեզ համրելի Փրկեա , Աստուած , զիսրայէլ յամենայն նեղու թեանց նորա ։

ՍԱՂՄՈՍ ԻԵ (ԻԶ)

[3]Ի կատարած . Սաղմոս Դաւթի ։

1 Դատ արա ինձ , Տէր , զի ես յամբծութեան իմում գնացի , ի Տէր յուսացայ
2 զի մի՛ [4]եղէց հիւանդ՝։ Փորձեա զիս , Տէր , եւ քննեա զիս , փորձեա զերիս
3 կամս իմ եւ զսիրտ իմ ։ Ողորմութիւն քո , Տէր , առաջի աչաց իմոց , եւ
4 [5]հաճոյ եղէց՝ ճշմարտութեան քում ։ Ոչ նստայ ես յամիս նանրից , եւ ընդ
5 անօրէնս ես ոչ մտից ։ Ատեցի ես ժողով չարաց , եւ ընդ ամպարիշտս ես
6 ոչ նստայց ։ Լուացայց սրբութեամբ զձեռս իմ , եւ չուրջ եղէց զսեղանոյ
7 քո՛, Տէր ։ [6]Լսել ինձ՝ ձայն օրհնութեան քո , եւ պատմել զամենայն սքանչելիս
8 քո ։ Տէր , սիրեցի զվայելչութիւն տանն
9 քո , եւ զտեղի յարկի փառաց քոց ։ Մի՛ կորուսաներ ընդ ամպարիշտս զանձն իմ, եւ մի՛ ընդ արս արիւնահեղս զկեանս
10 իմ ։ Որոց ձեռք իւրեանց յանօրէնութիւն են , եւ աջ նոցա լի է կաշառօք ։
11 Ես յամբծութեան իմում գնացի , փրկեա
12 զիս , Տէր , եւ ողորմեա ինձ ։ Ոտն իմ կացցէ յուղղութեան , յեկեղեցիս [7]մեծ օրհնեցից զքեզ՝։

ՍԱՂՄՈՍ ԻԹ (ԻԷ)

Առ զիս Դաւթի , [3]մինչեւ օծեալ էր ։՝

1 Տէր լոյս իմ եւ [8]կեանք իմ, ես յումմէ երկնչայց . Տէր ապաւէն կենաց իմոց ,
2 ես յումմէ դողայցայց ։ Ի մերձենալ առ իս չարաց ուտել զմարմին իմ , նեզիկք իմ եւ թշնամիք իմ նոքա ակարացան եւ
3 անկան ։ Թէ պատրաստեսցի ի վերայ իմ պատերազմ , ոչ երկիւղէ սիրտ իմ . թէ յարիցէ ի վերայ իմ ճակատամարտ , սակայն եւ յայսմիկ ի քեզ , Տէր , յուսա-
4 յայ ։ Զմի խնդրեցի ի Տեառնէ եւ զսոյն ազաչեմ , բնակել ինձ ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց . տեսանել ինձ զվայելչութիւն Տեառն , եւ
5 [9]հրամայեսցի՝ ի տաճարի նորա ։ Ծածկեսցէ զիս ի խորանի իւրում յաւուր չարի , ընդ գարկաւ տարաւ զիս ի ծածկոյթ խորանի իւրում . ի վիմի բարձր տարաւ-
6 րեր զիս ։ Եւ այժմ բարձր արաւ զգլուխ իմ ի վերայ թշնամեաց [10]իմոց . չուրջ եղէց՝ եւ մատուսցից ի խորանի նորա զատարագ օրհնութեան , օրհնեցից եւ
7 ասացից տեսցին Տեառն ։ Լաւ , Տէր , ձայնի իմում , զի կարգայի առ քեզ .
8 ողորմեա ինձ եւ լուր ինձ։ Զքեզ ասաց սիրտս իմ , [11]եւ խնդրեցին երեսք իմ՝, զերեսս
9 քո , Տէր , խնդրեցից ։ Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն , եւ մի՛ խոտորիր բարկութեամբ ի ծառայէ քումմէ . օգնական իմ եր , Տէր , եւ մի՛ անարգեր զիս , եւ

[1] Ներ. Գաղտնիք, կամ, ընտանութիւն Տեառնէ ընդ [2] Ներ. Ամբծութիւն եւ ուղղութիւն նպաստեսցեն ինձ, քանզի [3] Ներ. գլուխ [4] Ներ. տատնեցայց [5] Ներ. գնացի ի [6] Ներ. Զի ասց լսել [7] Ներ. օրհնեցից զՏէր [8] Ներ. փրկութիւն [9] Ներ. խնդրել ընդ- [10] Ներ. իմոց որ չուրջ են զինեա , [11] Ներ. Ինդրեցէք զերեսս իմ.

մի՛ թողուր զիս , Աստուած փրկիչ իմ։
10 Հայր իմ եւ մայր իմ թողին զիս , եւ
11 Տէր ընկալաւ զիս ։ Օրէնսդէտ ա՛ռ զիս , Տէր , ի ճանապարհի քո՛մ , եւ առաջնոր-
12 դեա՛ զիս ի չարիս քո ուղիղս ։ Վասն թշնամեաց իմոց , մի՛ մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց . յարեան ի վերայ իմ՛ վկայք մեզաց , եւ ստեղին ինձ անօրէնութիւն։
13 իւրեանց ։ Հաւատացի տեսանել զբարութիւն Տեառն յերկրին կենդանեաց ։
14 Համբեր Տեառն եւ քաջալերեսցի , զօրասցի սիրտ քո եւ համբեր Տեառն ։

ՍԱՂՄՈՍ ԻԵ (ԻԸ)

Սաղմոս Դաւթի ։

1 Ա՛ռ քեզ , Տէր , կարգապէ . [1]Աստուած իմ , մի՛ լռեր յինէն . մի՛ երկեր յոհասցես յինէն , զի մի՛ նմանիցիմ այնոցիկ ոյք ի-
2 ջանեն ի գործ ։ Լուր , Տէր , ձայնի խնդրուածոց իմոյ յաղաչել ինձ առ քեզ , ի համբառնալ ձեռաց իմոց ի տաճար
3 սուրբ քո ։ Մի՛ համարիր ընդ մեղաւորիչսս զանձն իմ , եւ մի՛ ընդ այնոսիկ ոյք գործեն զանօրէնութիւն՝ կորուսաներ զիս . ոյք խօսէին զխաղաղութիւն ընդ ընկերս իւրեանց , եւ չարութիւն է
4 ի սիրտս նոցա ։ Տո՛ւր նոցա , Տէր , ըստ գործոց նոցա , ըստ անօրէնութեան գործոցից նոցա հատո՛ւր նոցա . ըստ գործոյ ձեռաց նոցա հատո՛ւր նոցա՝ զհատուցումն
5 նոցա նոցին ։ Ոչ իմացան նոքա զգործս Տեառն , եւ ոչ ի գործս ձեռաց նորա հայեցան . կործանեսցես զնոսա եւ այլ մի՛
6 չինեսցին ։ Օրհնեալ է Տէր որ լուաւ
7 ձայնի աղօթից իմոց ։ Տէր օգնական իմ եւ պաշտպան իմ . ի նա յուսացաւ սիրտ իմ , օգնեցաւ եւ զուարճացաւ մարմին իմ . եւ ես[2] կամօք իմովք խոստովան եղէց
8 նմա ։ Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ , ապաւէն փրկութեան օծելոյ իւ-
9 րոյ ։ Փրկեա զժողովուրդս քո , եւ օրհնեա զժառանգութիւնս քո , հովուեա եւ բարձրացո զնոսա մինչեւ յաւիտեան ։

ՍԱՂՄՈՍ ԻԶ (ԻԹ)

Սաղմոս Դաւթի ։

1 Մ՛աստուցէք Տեառն , որդիք [3]Աստուծոյ , մատուցէք Տեառն զորդիս խոյոց՝. մատուցէք Տեառն զփառս եւ զպատիւ ։
2 Մատուցէք Տեառն զփառս անուան նորա . եւ երկիր պագէք Տեառն [4]ի սրահ սրբութեան նորա՝։
3 Ձայն Տեառն ի վերայ ջուրց , եւ Աստուած փառաց որոտաց , եւ Տէր ինքն
4 ի վերայ ջուրց բազմաց ։ Ձայն Տեառն զօրութեամբ , եւ ձայն Տեառն մեծա-
5 յեղութեամբ ։ Ձայն Տեառն փշրէ զմայրս , եւ մանրէ Տէր զմայրսն Լիբանանու ։
6 [5]Մանրեսցէ զնոսա որպէս զմատաղաոտնն Լիբանանու , որ սիրելին է որպէս
7 զորպիս միեղջերու՝։ Ձայն Տեառն հա-
8 տանէ բոց ի հրոյ ։ Ձայն Տեառն չարժէ զանապատն , եւ խռովեցուցանէ Տէր զա-
9 նապատն կադէս ։ Ձայն Տեառն [6]նաստաւ զեղջերուս՝ , եւ յայտնի առնէ զանտառս . ի տաճարի նորա ամենեքեան
10 ասացին զփառս նորա ։ Տէր [7]զջրհեղեղս զնաուսցանէ եւ ցածուցանէ՝ , թագաւորեսցէ Տէր յաւիտեան ։ Տէր զօրու-
11 թիւն ժողովրդեան իւրոյ տացէ , եւ օրհնեսցէ զժողովուրդ իւր ի խաղաղութիւն։

ՍԱՂՄՈՍ ԻՓ (Լ)

Սաղմոս օրհնութեանց , նաւակատեաց տաճարին , Դաւթի ։

1 Բ՛արձր առնեմ զքեզ , Տէր , զի [8]ընկալար զիս , եւ ոչ ուրախ արարեր զթշնա-
2 մին իմ յիս ։ Տէր Աստուած իմ , կարդայի առ քեզ եւ բժշկեցեր զիս . Տէր ,
4 հաներ ի դժոխոց զանձն իմ , փրկեցեր զիս յայնցանէ որ իջանեն ի գուբ ։
5 Սաղմոս ասացէք Տեառն , սուրբք նորա , խոստովանեցարուք յիշատակի
6 սրբութեան նորա ։ [9]Սրտմտութիւն է ի բարկութեան նորա , եւ կեանք են ի կամս նորա . ընդ երեկոյս հանգիցին լաւիք , առաւօտու նպիսի ուրախութիւն ։
7 Ես ասացի ի բարեկենդանութեան իմում , թէ Ոչ սասանեսցայց յաւիտեան ։
8 Տէր , ի կամս քո հատուր [10]զգեղոյ իմոյ զօրութիւն , զարձուցեր զերեսս քո յիս-
9 նէն՝ եւ ես եղէ խռովեալ ։ Առ քեզ , Տէր , կարդացի , եւ առ Աստուած իմ աղաչեցի ։
10 Զի՞նչ օգուտ է քեզ յարեա-

---

[1] ԵԲՐ. Վ,ԷՄ [2] ԵԲՐ. ԵՐԳՈՎՔ [3] ԵԲՐ ՀԶՕՐԱՑ [4] ԵԲՐ. Ի ՎԱՅԵԼՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ [5] ԵԲՐ. Տայ խայտալ նոցա իբրեւ զորմի , Լիբանանու եւ Սիրիոնի՝ իբրեւ զորդիս միեղջերուց։ [6] ԵԲՐ. տայ ծնանել եղջերուաց [7] ԵԲՐ. Նստի ի վերայ ջուրց հեղեղաց [8] ԵԲՐ. փրկեցեր [9] ԵԲՐ. Վայրկեան [10] ԵԲՐ. լերին

նէ իմմէ, թէ լչանիմ ես յապականու-
թիւն. մի թէ նոյ խոստանայր ածիկի
սա քեզ, կամ պատուական[1] զնչմարտու-
11 թիւնս քո։ Լուաւ ինձ Տէր եւ ողորմե-
12 ցաւ, եւ Տէր եղեւ ինձ օգնական։ Դար-
ձոյց զսուգ իմ յուրախութիւն, կերծ
չինէն զքուրձ եւ ինձ զգեցոյց զուրախու-
13 թիւն։ Որպէս սպրմոս սաղմոս քեզ
փառք իմ, եւ այլ մի՛ եւս զղջացայց. Տէր
Աստուած իմ, յաւիտեան խոստովան ե-
զէց քեզ։

ՍԱՂՄՈՍ Լ (Լ.Ա)

1 Ի կատարած. օրհնութիւն Նաւասա-
կուիանու[2] Սաղմոս Դաւթի,

2 Ի քեզ, Տէր, յուսացայ, մի՛ ամաչեցից
յաւիտեան. յարդարութեան քումդ փրկեա
3 եւ ապրեցո զիս։ Ականջս քո ինձ
զնորին քո, վազվազեա կենդանի
պիս. լեր [3]ինձ, Աստուած, պաշտպան
եւ տուն ապաւենի սպրեցուցանել պիս.
4 Զի [3]նգորիչ իմ եւ ապաւէն իմ դու ես.
վասն անուան քո առաջնորդեսցես ինձ,
5 եւ սնուցես զիս. Եւ հանցես զիս յսու-
գայթէ յայսմանէ որ թաքուցին ինձ.
6 դու ես պաշտպան իմ, Տէր։ Ի ձեռս քո
յանձն առնեմ զհոգի իմ. փրկեցեր զիս,
Տէր [4]Աստուած, ճշմարտութեամբ քով։
7 Ատեցեր[5] զպահապիկ որ պահին զերկիւղ
8 ի սնոտիս. ես ի Տէր յուսացայ։ Ցնծա-
ցայց եւ ուրախ եղէց [6]ի փրկութեան
քումդ. Հայեցար ի խոնարհութիւնն իմ,
9 եւ փրկեցեր ի վշաց զանձն իմ. Եւ
ոչ մատնեցեր զիս ի ձեռս նեղչաց իմոց,
եւ կացուցեր յանդորրութեան զոտս իմ։
10 Ողորմեա ինձ, Տէր, զի նեղեալ եմ ես.
խռովեցաւ ի սրտմտութենէ աչն իմ[7]
11 անձն իմ եւ փոր իմ։ Պակասեցան ի
ցաւոց կեանք իմ, եւ ամք իմ յոգոց
եւանիցեալ. աղքատացաւ ի տկարութենէ
զօրութիւն իմ, եւ ոսկերք իմ խռովե-
12 ցան։ Ըստ ամենայն թշնամիս իմ եղէ
ես նախատ զրացւոց իմոց յոյժ, ահ ես
երկիւղ ծանօթից իմոց. ամենեքեան որք
տեսանէին զիս արտաքս, փախչէին յի-
13 նէն։ Մոռացեալ եղէ ես որպէս մեռեալ
ի սրտէ, եւ եղէ ես որպէս զանօթ կո-

[1] Նբբ. Առ գլուխ երաժշտացն։ [2] Նբբ. իմ վեր
ամրութեան [3] Նբբ. վէմ [4] Նբբ. Աստուած
ճշմարտութեան։ (7) Ատեցի [5] Նբբ. յոգը-
մութեան

14 րուսեալ։ Զի լուայ ես զլամրութեան
բազմաց՝ ոչք չուրջ էին զինեւ, ի ժո-
ղովել նոցա ի միասին՝ առնուլ զանձն
իմ խորհեցան։
15 Այլ ես ի քեզ, Տէր, յուսացայ, ա-
16 սացի՝ Դու ես Աստուած իմ. Եւ ի ձեռս
քո [6]է ժամանակութիւնք իմ. փրկեա զիս
ի ձեռաց թշնամեաց իմոց եւ ի հալած-
17 չաց իմոց։ Երեւեսցո զերեսս քո ի ծա-
ռայս քո, ապրեցո զիս, Տէր, ըստ ո-
ղորմութեան քումդ։
18 Տէր, մի՛ յամօթ եղէց զի կարդացի
առ քեզ. ամաչեսցին ամպարիշտք եւ
19 իջցեն ի գժոխս։ Եւ համր եղիցին չրմունք
նենգաւորք՝ որք խօսէին զարդարոյ զա-
նիրաւութիւն յամբարտաւանութեան եւ
յանդոնութիւն իւրեանց։
20 Որպէս զի՛ լաւորութիւն է ողորմութիւն
քաղցրութեան քո, Տէր, զոր պահեցեր
երկիւղածաց քոց. արարեր զոս աստ-
ղիկ ոյք յուսացեալ են ի քեզ, առաջի
21 որդւոց մարդկան։ Ամբարձցես զինոսա
ի ծածկոյթ երեսաց քոց ի խռովութենէ
մարդկան. ծածկեսցես զինոսա ի խորանի
22 քումդ ի հակառակութենէ լեզուաց։ Օրհ-
նեալ է Տէր, զի սքանչելի արար զո-
ղորմութիւն իւր ինձ ի քաղաք ամուր։
23 Ես ասացի ի զարմանալ իմում, թէ
Ընկիցայ ուրեմն յերեսաց աչաց քոց.
[7]վասն այսորիկ լուար ձայնի աղօթից ի-
24 մոց՝ յաղաղակել իմում առ քեզ։ Սի-
րեցէք զՏէր, ամենայն սուրբք նորա,
[8]զի առուգութիւն ինդրէ Տէր, եւ հա-
տուցանէ այնոցիկ որ առատով՝ առնեն
25 գործարարութիւն։ Քաջալերեցա-
րուք եւ զօրասցին սիրտք ձեր, ամե-
նեքեան որք յուսացեալ էք ի Տէր։

ՍԱՂՄՈՍ Լ.Ա (Լ.Բ)

Իմաստութեան Սաղմոս Դաւթի։

1 Երանի՛ ումի թողութիւն եղեւ մեղաց,
եւ ծածկեցան ամենայն յանցանք նորա։
2 Երանի՛ առն՝ որում ոչ հաշուեսցի Տէր
զմեղս նորա, եւ ոչ գոյ նենգութիւն [9]ի
3 բերան նորա։ Լռեցի ես եւ մաշեցան
[10]ամենայն ոսկերք իմ առ ալաղակիլ ինձ
4 [10]առ Տէր՝ զօրհնասարս։ Ի տուէ եւ ի գի-
շերի ծանրացաւ ձեռն քո ի վերայ իմ,

[6] Նբբ. ենժամանակք [7] Նբբ. սակայն դու [8] Նբբ.
զհաւատարիմն պահէ Տէր, եւ հատուցանէ ա-
ռատութեամբ որ [9] Նբբ. յանձին [10] Նբբ. գ-ից-ից

[1]դարձայ ի թչուառութիւն զի հարան
5յիս փուչք՝։ Հանդիսա ։ Զմեղս իմ յոյժ
ցից քեզ , եւ զանօրէնութիւնս իմ ոչ
ծածկեցից ի քէն . ասացի թէ [2]Պատմե-
ցից ինձէն զմեղս իմ՝, եւ դու թողցես
զամենայն ամպարշտութիւնս մեղաց ի-
6մոյ ։ Հանդիսա ։ Վասն այսորիկ յաղօթս
կացցեն առ քեզ ամենայն սուրբք ի ժամ
ընդունելի . [3]բայց միայն ի ջուրցն հեղե-
ղաց բազմաց , որ առնուս ինչ ոչ մեր-
7ձնցի՝։ Դու ես ապաւէն իմ ի նեղու-
թենէ յայտմանէ , [4]որ չուրջ եղեն զի-
նեա . ցնծութիւն իմ . փրկեա զիս յայս-
8ցանէ՝ որ պաշարեցին զիս ։՝ Իմաստուն
արարից զքեզ եւ խելամուտ ի ճանա-
պարհ յոր եւ գնասցես , եւ հաստատեցից
9 ի վերայ քո ղէպս իմ ։ Մի՛ լինիք որպէս
ձիս եւ ջորիս զի ոչ գոյ [5]նոսա ի-
մաստութիւն ։ ի սանձս եւ ի զանգանա-
ւանդս ծնկանցես զիղակս նոցա , որ առ
10քեզ ինչ ոչ մերձենացին Բազում տան-
ջանք են մեղաւորաց , բայց այք յուսան
ի Տէր՝ ողորմութիւն Տեառն չուրջ ե-
11 զիցի զնոքօք ։ Ուրախ եղերուք եւ ցնծա-
ցէք , արդարք , ի Տէր . [6]պարծեցարուք
ամենեքեան այք ուղիղ էք սրտիւք ։

ՍԱՂՄՈՍ ԼԲ (ԼԴ)

[6]Սաղմոս Դաւթի ։՝

1 Ցնծացէք , արդարք , ի Տէր . ուղղոց
2 վայելէ օրհնութիւն ։ Խոստացան եղե-
ւուք Տեառն [7]օրհնութեամբ , առնել
զնա աղաղակաւորութեամբ սաղմոսի
3նմա ։ Օրհնեցէք զՏէր յօրհնութիւնս նոր ,
[8]զի բարի է ,՝ սաղմոս ասացէք նմա օրհ-
4նութեամբ։ Ուղիղ են պատգամք Տեառն ,
եւ ամենայն գործք նորա հաւատարմ-
5են . Եւ սիրէ [9]ողորմութիւն եւ ղիրա-
ւունս Տէր . ողորմութեամբ Տեառն լի
6եղեւ երկիր . Եւ բանիւ Տեառն երկինք
հաստատեցան , եւ հոգւով բերանոյ նո-
7րա ամենայն զօրութիւնք նոցա ։ Ժո-
ղովեաց որպէս ի սիկ զջուրս ծովու ,
8եւ դնէ [9]ի խորս զգանձս իւր՝։ Երկիցի ի
Տեառնէ ամենայն երկիր , եւ ի նմանէ
դողասցին ամենայն բնակիչք աշխարհի ։
9 Զի նա ասաց՝ եւ եղեն , ինքն հրամայ-
եաց՝ եւ հաստատեցան ։
10 Տէր յորում զխորհուրդս հեթանոսաց ,
անարգէ Տէր զխորհուրդս ժողովրդոց ,
[6]եւ արհամարհէ Տէր զխորհուրդս իշ-
11խանաց ։՝ Խորհուրդ Տեառն յաւիտեան
մնայ , խորհուրդ սրտի նորա ազգէ մին-
12 չեւ յազգ ։ Երանի՛ ազգի որոյ [10]Տէր Աս-
տուած օգնական է նմա՝, ժողովուրդ
զոր ընտրեաց ի ժառանգութիւն իւր ։
13 Յերկնից նայեցաւ Տէր յամենայն որդիս
14 մարդկան . ի պատրաստ բնակութենէ
իւրմէ հայեցաւ յամենայն բնակիչս աշ-
15 խարհի ։ Ո ստեղծ [11]առանձին զսիրտս
նոցա , ի միտ առնու զամենայն գործս
16նոցա ։ Ոչ թէ ի բազում զօրս իւր ապ-
րեսցի թագաւոր , եւ ոչ սիայ ի բազում
17 զօրութեան իւրում։ Սուտ է ձի [12]փրկու-
թեան իւրում՝, ի բազում զօրութեան
իւրում ոչ ապրեցուսանէ [6]զնենգեալն ։
18 Այլ Տեառն ի վերայ երկիւղածաց
իւրոց , եւ այք յուսան յողորմութիւնն
19նորա , Փրկել ի մահուանէ զանձինս նո-
20 ցա , կեցուցանել զնոսա ի սովու ։ Անձինք
մեր համբերեսցին Տեառն , զի օգնա-
21 կան եւ պաշտպան մեր է ։ Ի նա ուրախ
եղիցին սիրտք մեր , եւ յանուն սուրբ նորա
22 յուսացաք։ Եղիցի ողորմութիւնքս Տէր ,
ի վերայ մեր , որպէս յուսացաք ի քեզ ։

ՍԱՂՄՈՍ ԼԳ (ԼԵ)

1 Սաղմոս Դաւթի . ի ժամանակի զի այ-
լայտանեալ զերկնս իւր առաջի Աբի-
մելեքայ . եւ առա արձակեաց զինս ,
եւ գնաց ։

2 Օրհնեցից զՏէր յամենայն ժամ , յամե-
նայն ժամ օրհնութիւն նորա ի բերան
3 իմ։ Ի Տէր պարծեսցի անձն իմ , լուիցեն
4 զայն հեզք եւ ուրախ եղիցին ։ Մեծ ա-
րարէք զՏէր ինձ , եւ բարձր արասցուք զանուն նորա ի միասին ։
5 Խնդրեցի ի Տեառնէ եւ լուաւ ինձ ,
յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս ։
6 Մատիք առ Տէր եւ առէք զլոյս , եւ
7 երեսք ձեր մի՛ ամաչեսցին ։ Այս աղքատ
կարդաց առ Տէր , եւ Տէր լուաւ սմա ,
յամենայն նեղութենէ նորա փրկեաց
8 զնա ։ [13]Բանակ հրեշտակաց Տեառն չուրջ

[1]Ձեռ. պարբառութիւն իմ դարձաւ յերեսաւո-
թիւն ամարան [2]Ձեռ. Խոստովան եղեց գյան-
ցածոն իմ Տեառն [3]Ձեռ. արդարեւ ի յորդել
ջուրց բազմաց՝ ինձ ոչ մերձենացին [4]Ձեռ. յերգս
փրկութեան չուրջ եղիցիս զինեւ ։ Հանդիսա ։
[5]Ձեռ. զանիկեր ասրանութիւնսմ [6]Յ[1]Ձեռ. պա-
[7]Ձեռ. քնարաւ [8]Ձեռ. վասն արա թիւն [9]Ձեռ.
զանդունդս ի շեմմարանս

[10]Ձեռ. Աստուած Տէր է [11]Ձեռ. Համօրէն [12]Ձեռ.
ի փրկութիւն [13]Ձեռ. Հրեշտակ Տեառն դնէ
զբանակ իւր չուրջ

է՝ վերկիւզածովք իւրովք, եւ պահէ
9 զնոսա։ Ճաչակեցէք եւ տեսէք՝ զի
քաղցր է Տէր, երանելի է այր որ յու-
10 սայ ի նա։ Երկերտուք ի Տեառնէ ամե-
նայն սուրբք նորա, զի ոչ լինի է պա-
11 կասութիւն երկիւղածից նորա։ [1]Մե-
ծամեծք ազքատացան եւ քաղցեան,
բայց որք խնդրեն զՏէր՝ մի՛ պակասեցէ
ի նոցանէ ամենայն բարութիւն։
12 Եկայք, որդիք իմ, եւ լուարուք ինձ,
13 եւ վերկիւզ Տեառն ուսուցից ձեզ։ Ո՞վ է
մարդ որ կամի զկեանս, սիրէ զաւուրս
14 իւր տեսանել ի բարութիւն։ Լեզուս
զկեզուս քո ի չարութենէ, եւ շրթունք
15 քո մի՛ խօսեսցին զնենգութիւն։ Խո-
տորեա ի չարէ եւ արա զբարի, խնդրեա
զխաղաղութիւն եւ երթ զհետ նորա։
16 Աչք Տեառն ի վերայ արդարոց, եւ
ականջք նորա ի վերայ աղօթից նոցա։
17 Երեսք Տեառն ի վերայ չարագործաց,
սատակել յերկրէ զյիշատակս նոցա։
18 Կարգային արդարք առ Տէր՝ եւ Տէր
լուաւ նոցա, յամենայն նեղութենէ նո-
19 ցա փրկեաց զնոսա։ Մերձ է Տէր առ
այնոսիկ որ մաչեալ են սրտիւք, եւ
20 զհոգեպարս հոգւով կեցուցանէ։ Բազում
նեղութիւնք են արդարոյ, յամենայնէ
21 փրկէ զնոսա Տէր. Եւ պահէ զամենայն
ոսկերս նոցա, եւ մի ի նոցանէ մի՛
22 փշրեսցին։ [2]Մահ մեղաւորի չար է՝, բայց
23 որ ատեայ զարդարն՝ [3]զղջասցի։ Փրկէ
Տէր զանձինս ծառայից իւրոց, մի՛
[4]զղջասցին ամենեքեան որք յուսացեալ
են ի նա։

ՍԱՂՄՈՍ Լ՚Ի (Լե)

[5]Ի կատարած. Սաղմոս Դաւթի։

1 Դատեա, Տէր, զդատաւորիկ այնք դատին
զիս, մարտիր ընդ այնոսիկ որ մարտին
2 ընդ իս։ Առ զղէն եւ զասպար քո,
3 եւ արի յօգնել ինձ։ Հան զսուր քո
ընդդէմ հալածչաց իմոց, ասելով զնոսա,
եւ ասա զուս փանձն իմ թէ Փրկութիւն
4 քո ես եմ։ Ամաչեսցին եւ յամօթ լիցին
որք խնդրէին զանձն իմ. դարձցին յետս
եւ ամաչեսցին որք խորհէին ինձ չար։
5 Եղիցին նոքա որպէս փոշի առաջի հող-
մոյ, եւ հրեշտակ Տեառն նեղեսցէ զնո-
6 սա։ Եղիցին ճանապարհք նոցա ի խա-
ւար եւ ի գայթակղութիւն, եւ հրեշ-
7 տակ Աստուծոյ հալածեսցէ զնոսա։ Ի
դանիր խաբեսցին ինձ [6]որոգայթք յապա-
կանութեան իւրեանց, եւ ի դանիր նա-
8 խատեսցին զանձն իմ՚։ Հասցէ ի վերայ
նոցա պատգամ զոր ոչ գիտացին, եւ
որս զոր թաքուցին՝ առցէ զնոսա նոցա,
9 եւ յորոգայթ ի նոյն անկցին։ Այլ անձն
իմ ցնծասցէ ի Տէր, ուրախ եղիցի ի
10 փրկութեան նորա։ Եւ ամենայն ոսկերք
իմ ասասցեն, Տէր, ո՞ նման է քեզ. որ
փրկեալ զաղքատն ի ձեռաց հզօրի, զաղ-
քատն եւ զանդանկն յայնցանէ որ յա-
փրշտակեն զնա։
11 Յարեան ի վերայ իմ վկայք չարեաց,
12 զոր զինչ ոչ գիտէի հարցանէին ցիս։ Հա-
տուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ,
անմժառանգել զանձն [7]իմ խորհեցան յորդ-
13 ւոյ ի մարգկանէ։ Եւ ի նեղել՚ նոցա
քուրձ զգեցաւ, խոնարհ առնէի պահօք
զանձն իմ, եւ աղօթք իմ ի ծոց իմ
14 դարձցին։ Որպէս զեղբայր եւ զընկեր՝
այնպէս [8]հաճոյ լինէի, որպէս սգաւոր
եւ արտուժ այնպէս խոնարհ առնէի։
15 Ի վերայ իմ՚ ուրախ եղեն եւ ժողո-
վեցան, ժողովեցան ցիս տանջանք եւ
ես ոչ ծանեայ. [9]ցրուեցան եւ ոչ զղջա-
16 ցան։ Փորձեցին զիս եւ արհամարհեցին
արհամարհանօք, կրճտեցին ի վերայ իմ
զատամունս իւրեանց։
17 Տէր, երբ տեսցես. իրաց զանձն
իմ ի խորամանկութենէ նոցա, եւ յա-
18 րուցեալ զմիամօրութիւն իմ։ Խոստո-
վան եղէց քեզ, Տէր, յեկեղեցիս մեծս,
եւ ի ժողովս բազմաց օրհնեցից զքեզ։
19 Մի՛ ուրախ եղիցին ցիս թշնամիք իմ
ոյք ատելիս զիս ի տարապարտուց. ակ-
20 նարկիւ առնելիս ցիս աչօք իւրեանց։ [10]Ընդ
իս զխաղաղութիւն խոսելիս, եւ ընդ քեանք
բարկութեամբ զնենգութիւն խորհելիս՚։
21 Բացին ի վերայ իմ զբերանս իւրեանց,
եւ ասացին՝ Այո, այո, տեսին աչք մեր։
22 Տեսեր, Տէր, եւ մի՛ լռեր, Տէր, մի՛
23 ի բացեայ առնիր զնենգ։ Զարթիր եւ
հասեայ, Տէր, յիրաւունս իմ, Աստուած
իմ եւ Տէր իմ, ի դատաստանս իմ։

---

[1] Ել՚Բ. Կարիքն առեալ զամպարիշան չարութիւն։ [2] Ել՚Բ. Կարասպէ չար է։ [3] Ել՚Բ. յանցասցի եղիցի։ [4] Ել՚Բ. յանցասցին։ [5] Ել՚Բ. դաւաճ

[6] Ել՚Բ. զորոգայթն իւրեանց ի փոս. ի նմին փո-
սին անձին իմում։ [7] Ել՚Բ. իմ։ (13) Եւ ի հիւանդութեան։ [8] Ել՚Բ. գնայի ընդ նոսա. իբրեւ որ ազգ ի վերայ մօր, ցիս այնպէս խոնարհ առնէի (15)։ Ի կապել իմում։ [9] Ել՚Բ. պատառ եղեն։ [10] Ել՚Բ. Զի ոչ խօսէին զխաղաղութիւն, և ընդ գեղ հանդարտելոց երկրի զնենգս խորհէին։

24 Եւ իրաւ սրա ինձ ըստ սրտագրութեան քումդ, Տէր Աստուած իմ. մի՛ ուրախ
25 եղիցին յիս թշնամիք իմ. Եւ մի՛ ասասցեն ի սիրտս իւրեանց թէ վաչ վաչ անձանց մերոց մի՛ ընկղմեսցաք զնա։
26 Ամաչեսցեն եւ յամօթ լիցին ոչք ըմբռնողին զնդ չար իմ. զգեցցին զամօթ եւ զանարգանս ոչք մեծաբանէին ի վե-
27 րայ իմ։ Ցնծասցեն եւ ուրախ լիցին ի քեզ ամենեքեան, ոչք կամին զնդ արդարութիւն իմ. ասասցեն յամենայն ժամ՝ [1]Մեծ է Աստուած, եւ ոչք կամին
28 զխաղաղութիւն ծառայի քո՝։ Լեզու իմ խօսեսցի զարդարութիւնս քո, զօրհնասլաց զքովութիւնս քո։

ՍԱՂՄՈՍ Լ (Լ)

1 [2]Ի կատարած. ծառայի Տեառն, Սաղմոս Դաւթի։

2 [3]Ա՛ստ անօրէնն՝ ի մեզանչել զնդ միտս իւր՝։ Թէ Չիք երկիւղ Աստուծոյ առաջի
3 աչաց նորա։ [4]Ննջեսցէ առաջի նորա զանանել զանօրէնութիւն, եւ ատել զնա՝։
4 Բանք բերանոյ նորա՝ անօրէնութիւն եւ նենգութիւն են. ոչ կամեցաւ նա իմանալ
5 զբարի։ Զանօրէնութիւն խորհեցաւ յանկողնի իւրում. եկաց նա յամենայն ճանապարհ որ ոչ է բարի, եւ ի չարէ նա
6 ոչ ձանձրացաւ։ Տէր, յերկինս է ողորմութիւն քո, ճշմարտութիւն քո մին-
7 չեւ յամպս։ Արդարութիւն քո որպէս [5]լերինք, Աստուած՝, իրաւունք քո որպէս խոր բաղումս. զմարդիկ եւ զա-
8 նասունս կեցուցանես դու, Տէր։ Որպէս պի՛ բազում արարեր զողորմութիւն քո, Աստուած, այլ որդիք մարդկան ի հո-
9 վանի թեւուց քոց յուսասցին։ Արբեսցին նոքա ի պարարտութենէ տան քո, եւ զուղիս փափկութեան քո ասցես ըմպել
10 նոցա։ Ի քէն է, Տէր, աղբիւր կեանց, եւ լուսով [6]երեսաց քոց՝ տեսա-
11 նեմք զլոյս։ Ծաղկա զողորմութիւնս քո ոչք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս
12 քո որ ուղիղ են սրտիւք։ Մի՛ եկեսցէ ի վերայ մեր ոտն ամբարտաւանից, եւ ձեռք մեղաւորաց մի՛ գոլացուսցեն զմեզ։
13 Անդ անկցին ամենեքեան ոչք զործեն զանօրէնութիւն, մերժեսցին եւ այլ մի՛ կարասցեն հաստատել։

ՍԱՂՄՈՍ ԼԱ (ԼԱ)

Սաղմոս Դաւթի։

1 Մի՛ նախանձիր զնդ չարս, մի՛ զնդ այնոսիկ որ զործեն զանօրէնութիւն։
2 Զի որպէս խոտ վազվազակի չամաքեսցին, որպէս զդալարի խոտոյ վազվա-
3 զակի անցցեն։ Ցուսա ի Տէր, եւ արա զբարեգործութիւն, բնակեա յերկրի եւ [7]հո-
4 վեսցիս ի մեծութեան նորա։ Փափաց ի Տեառնէ՝ եւ նա տացէ քեզ զխնդրուածս
5 սրտի քո։ Յայտնեա առաջի Տեառն զճանապարհս քո եւ յուսա ի նա, նա ա-
6 րասցէ. Եւ հանցէ որպէս զլոյս զարդարութիւնս քո, եւ զիրաւունս քո որ-
7 պէս կէս օր հաստատակ։ Հնազանդ լեր Տեառն եւ ծառայեա նմա, եւ մի՛ նախանձիր զնդ այնոսիկ որոց [8]առաջեալ լինին ճանապարհք իւրեանց, զնդ մարդոյ որ
8 զործէ զանօրէնութիւն։ Լռեա ի բարկութենէ եւ հանգիր ի սրամտութենէ,
9 եւ մի՛ նախանձիր զնդ չարս։ Զի չարք վազվազակի ատասկեսցին, բայց ոչք համբերեն Տեառն՝ նոքա ժառանգեսցեն
10 զերկիր։ Փոքր մի՛ եւ այլ ոչ եւս լիցէ ամպարիշտն, խնդրեսցես զտեղի նորա
11 եւ ոչ գտցես։ Այլ որ հեզքն են՝ նոքա ժառանգեսցեն զերկիր, եւ փափկասցին ի բազում խաղաղութենէ իւրեանց։
12 Սպասէ մեղաւոր արդարոյ, եւ կրճտէ
13 ի վերայ նորա զատամունս իւր։ Այլ Տէր ծիծաղեսցի զնովաւ, քանզի յառաջագոյն տեսանէ, զի հասեալ է օր նո-
14 րա։ Սուր հանին մեղաւորք եւ լարեցին զաղեղունս իւրեանց՝ հարկանել զաղքատսն եւ զանանկն, սպանանել [9]զոյն որ
15 խոնարհն է սրտիւ՝։ Սուրք նոցա մտցեն ի սիրտս նոցա եւ աղեղունք նոցա փշրեսցին։
16 Լաւ է սակաւիկ մի՛ արդարոյ քան
17 զբազում մեծութիւն մեղաւորաց։ Եւ բազուկք ամբարչաց խորտակեսցին.
18 հաստատէ Տէր զարդարս, Եւ ճանաչէ[10] զաւուրս ամբիծ. ժառանգութիւն նո-
19 ցա յաւիտեան եղիցի։ Մի՛ ամաչեսցին

---

[1] ՅԲԲ. Մեծացի Տէր, որ կամի զխաղաղութիւն ծառայից իւրոց [2] ՅԲԲ. Առ զլուխ երաժշտացն [3] ՅԲԲ. Բանք զանօրէնութենէ անզգ ամին իսրտի իմում
[4] ՅԲԲ. Զի ոչք զանձն յայս իւր, Թէ անօրէնութիւն իւր ոչ յայտնեացի եւ եղիցի ատելի։
[5] Կամ, լերինս հզօրս [6] ՅԲԲ. քով

[7] ՅԲԲ. ճարակեա զՏէրմարտութիւն։ (4) Եւ ուրախ լեր Տէրամբ [8] ՅԲԲ. յաջողեալ [9] ՅԲԲ. զայնոսիկ որոց ուղիղ են ճանապարհք [10] ՅԲԲ-յեբէն յա-ել-, Տէր

Նոքա ի ժամանակս չարութեան, այլ
20 յաւուրս սովոյ յագեցան։ Ահա մեղա-
ւորք կորիցին, եւ ինչ[1] Տեառն վի-
փառաւորել եւ ի բարձրանալ իւրեանց՝
պակասեցին որպէս ծուխ [2]ի պակա-
21 սէ՝։ Փոխ առնու մեղաւորն եւ ոչ հա-
տուցանէ, այլ որ արդարն է ողորմի եւ
22 տայ։ [3]Ոչք օրհնեն զՏէր՝ ժառանգեսցեն
զերկիր, եւ որք անիծանեն՝ սատակեսց-
ին ի նմանէ։՝
23 Ի Տեառնէ ուղղին գնացք առն, զհա-
24 ճոյսն նորա նա կամի յոյժ։ Թէպէտ
եւ գայթակղեսցի, նա մի՛ կործանեսցի,
25 զի Տէր ձեռնկալաւ է նորա։ Մանուկ
էի ես եւ ծերացայ, եւ ոչ տեսի զարդարն
արհամարհեալ, եւ ոչ զաւակ նորա թէ
26 մուրանայ հաց։ Զօրհնաւազ ողորմի
եւ տայ վոխ, զաւակ նորա օրհնեալ ե-
ղիցի [2]յաւիտեան։
27 Խոտորեա ի չարէ եւ արա զբարի,
բնակեսցես յաւիտեանս յաւիտենից [2]ի
28 նմա։ Տէր սիրէ զիրաւունս, եւ ոչ ընդ
վայր հարկանէ զառաքեալս իւր, այլ յա-
ւիտեան պահէ զնոսա. [3]անօրէնք հա-
լածեսցին ի մէնէն,՝ եւ զաւակ անի-
29 պարչեալ սատակեսցի։ Այլ արդարք
ժառանգեսցեն զերկիր, եւ բնակեսցեն
յաւիտեանս յաւիտենից ի նմա։
30 Բերան արդարոյ պատմէ զիմաստու-
թիւն, եւ լեզու նորա խօսեսցի զիրա-
31 ւունս։ Օրէնք Աստուծոյ իւրոյ են ի սրտի
իւրում, եւ մի՛ գայթակղեսցին գնացք
32 նորա։ Հայի մեղաւորն ընդ արդար եւ
33 խնդրէ սպանանել զնա. Այլ Տէր ոչ թո-
ղու զնա ի ձեռս նորա, եւ ոչ պատաս-
34 պարէ զնա՝ յորժամ դատի զնա։ Համ-
բեր Տեառն եւ պահեա զճանապարհս
նորա, եւ բարձր արասցէ զքեզ ի ժա-
ռանգել զերկիր, եւ զսատակումն մե-
ղաւորաց տեսցես.
35 Տեսի զամպարիշտն վերացեալ բարձ-
36 րացեալ որպէս [4]զմայրս Լիբանանու։՝ Անց-
ի՝ եւ ահա ոչ էր, խնդրեցի՝ եւ ոչ գտաւ
37 տեղի նորա։ [5]Պահեա զանմեղութիւնն, եւ
անս զուղղութիւնն. զի գոն մնայուածք
38 առն խաղաղարարի։՝ Անօրէնք հալածեալ-
ցին ի միասին, եւ զաւակ ամպարշտից
39 կորիցէ։ Փրկութիւն արդարոց ի Տեառնէ
է, վերակացու է նոցա ի ժամանակս
40 նեղութեան։ Օգնեսցէ նոցա Տէր եւ
փրկեսցէ զնոսա. ապրեցուսցէ ի մեղա-
ւորաց եւ կեցուսցէ զնոսա, զի յուսա-
ցան ի նա։

ՍԱՂՄՈՍ ԼԷ (ԼՐ)

1 Սաղմոս Դաւթի. առ ի յիշատակ [2]չա-
բաթու։

2 Տէր, մի՛ սրտմտութեամբ քով յանդի-
մաներ զիս, եւ մի՛ բարկութեամբ քով
3 խրատեր զիս։ Զի նետք քո տարան յիս,
4 եւ յիս հաստատեցար ձեռն քո։ Ոչ գոյ
բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բար-
կութեան քո. ոչ է խաղաղութիւն ոս-
5 կերաց իմոց յերեսաց մեղաց իմոց։ Ա-
նօրէնութիւնք իմ բարձրացան քան
զգլուխ իմ, որպէս բեռն ծանր ծանրա-
6 ցան ի վերայ իմ։ Նեհեցան եւ փտե-
ցան վէրք իմ յերեսաց անզգամութեան
7 իմոյ։ Տառապեցայ եւ խոնարհ եղէ յոյժ,
8 զօրհնաւազ արտաւմ գնայի. Զի ամէն
իմ լի եղեւ չարչարանօք, եւ ոչ գոյ
9 բժշկութիւն մարմնոյ իմոյ։ Չարչարե-
ցայ եւ խոնարհ եղէ մինչեւ յոյժ, մռնչէի
առ հնծութեան սրտի իմոյ։
10 Տէր, առաջի քո է ամենայն ցանկու-
թիւն իմ, եւ հեծութիւն իմ ի քէն ոչ
11 ծածկեցաւ։ Սիրտ իմ խռովեցաւ յիս
եւ եթող զիս զօրութիւն իմ, լոյս աչաց
12 իմոց՝ եւ այս ոչ եղեւ ընդ իս։ Բարե-
կամք իմ եւ մերձաւորք իմ [6]առաջի իմ
մերձեցան եւ՝ կային, եւ մերձաւորք
13 իմ հեռի եղեն յինէն. [7]Բռնադատէին
զիս եւ՝ խնդրէին զանձն իմ. ոյք խընդ-
րէին չար ի վերայ իմ՝ խօսեցան զա-
նօրէնութիւն, եւ զնենգութիւն զօրհնա-
14 նաւազ խորհեցան։ Այլ ես որպէս խուլ՝
զի ոչ լսէ, որպէս համր՝ որ ոչ բանայ
15 զբերան իւր։ Եղէ ես որպէս մարդ՝ որ
ոչ լսէ, եւ ոչ գոն խօսք ի բերան նորա։
16 Ես ի քեզ, Տէր, յուսացայ, եւ դու
17 լուիցես ինձ, Տէր Աստուած իմ։ Ասացի
թէ մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք
իմ, ի սասանել ոտից իմոց՝ ի վերայ իմ
18 մեծամեծս խօսեցան։ Ես [8]ի սանձս
պատրաստ եմ, եւ ցաւք իմ առաջի իմ
19 են յամենայն ժամ։ Զանօրէնութիւնս
իմ պատմեցից, եւ հոգայցու վասն մե-

[1] ՆԲԳ. իբրեւ զճարպ գառանց ապառեցան, [2] ՅԲԳ. պակաս [3] ՅԲԳ. Ինդի օրհնեալք նորա ժառանգեսցեն զերկիր, եւ անիծեալք նորա սատակեսցին։ [4] ՅԲԳ. ծառ գալար ի տեղոջ իւրում [5] ՅԲԳ. Նկատեա զամբիծն, և հայեաց յուղիղն, զի վախճան առնն՝ խաղաղութիւն է

[6] ՅԲԳ. յերեսաց տառապանաց իմոց ի բաց [7] ՅԲԳ. Եւ որոգայթս լարէին ոչք [8] ՅԲԳ. ի գայթել

20 զայ իմոց ։ Իսկ արդ թէ նահապետ իմ կեն-
զանի են , եւ զօրացեալ են քան զիս .
եւ բազումք էին ոչ ածէին զիս ի տա-
21 բապարտուց ։ Ոչ հասուցին ինձ չար
վտանգակ ընդ բարւոյ . չարախօսէին
զինէն , զի ես երթայի զհետ արդարոյ .
22 Տեառն ։ Մի՛ թազուր զիս , Տէր , Աս-
տուած իմ , եւ մի՛ ի բացակայ առնիր
յինէն , հայեաց յօգնակ ինձ , Տէր փրկու-
թեան իմոյ ։

ՍԱՂՄՈՍ Լ.Ը (Լ՟)

1 [1]Ի կատարած , Խղճութեամբ՝ . Սաղմոս
Դաւթի ։

2 Աստուա՛ծ թէ պահելոյ զճանապարհս իմ,
զի մի՛ մեղայց լեզուաւ իմով . եդի պա-
հապան բերանոյ իմոյ՝ ի հակառակել
3 մեզաւորին առաջի իմ ։ Մունջ եղէ [2]եւ
խոնարհեցայ՝ , լռեցի ի բարութենէ եւ
4 ցաւք իմ նորոգեցան յիս ։ Ջեռաւ սիրտ
իմ ի փորի իմում , եւ ի խորհուրդս իմ
5 վառեցաւ հուր ։ Խօսեցայ լեզուաւ իմով
եւ ասացի ,

Ցոյց ինձ , Տէր , զկատարած իմ եւ
զթիւ աւուրց իմոց զանիսո՛ն է , զի ի-
ասցից թէ որչափ լինչ պակասակաց է
6 յինէն ։ Ահա [3]չափով եղիր զաւուրս իմ,
եւ կար զօրութեան իմոց որպէս ոչինչ է
առաջի [4]ի՛մ . սակայն ամենեւին ընդու-
7 նայն է ամենայն մարդ մսեղիս՝ Ապա-
քէն որպէս ի պատկերի չրջի մարդ ,
սակայն ի զուր խռովի , զանձէ եւ ոչ
գիտէ ումի ժողովէ ։

8 Իսկ արդ՝ ո՞վ է հաւերսութիւն իմ՝
թէ ոչ դու , Տէր , [5]կամ կար զօրու-
9 թեան իմոյ՝ թէ ոչ ի քէնո՛ Յամենայն
անօրէնութենէ իմմէ [6]փրկեսցես զիս ,
եւ նախատինս անզգամաց [7]արարեր զիս ։
10 Լուռ եղէ եւ ոչ բացի զբերան իմ , զի
11 դու արարեր ։ Իրաց արա յինէն զտան-
ջանս իմ , զի ի զօրութենէ ձեռին քո
12 ես պակասեցայ ։ Կշտամբութեամբ վասն
մեզաց խրատեսցես զմարդ , մաչեսցես որ-
պէս [8]արգիւտասայն զանձն՝ նոցա . սա-
կայն ընդունայն է ամենայն մարդ ։ Տան-
13 գիսա ։ Լուր , Տէր , աղօթից իմոց ,
ունկն դիր խնդրուածոց իմոց . արտաս-

[1] ԵԲԲ. Ա. գլուխ երաժշտացն Խղճութեան [2] ԵԲԲ. լռութեամբ [3] ԵԲԲ. Թզոյս [4] ԵԲԲ. քո. արդարեւ ամենայն մարդ ընդունայն է ի հաստատութեան իւրում։ Հանդիման ։ [5] ՅԵԲԲ. պակաս [6] ԵԲԲ. փրկեսցես [7] ԵԲԲ. մի՛ առներ [8] ԵԲԲ. ցեց գոյանկալիս

ուաց իմոց մի՛ լռեր . պանդուխտ եմ
ես առաջի քո , հնդկեւ եւ անցաւոր որ-
14 պէս ամենայն հարք իմ ։ Թոյլ արա ինձ
զի հանգիցայց մինչչեւ երթալ իցեմ ,
առաւ ոչ եւս գտանիցեմ ։

ՍԱՂՄՈՍ Լ.Թ (Խ)

1 [9]Ի կատարած . Սաղմոս Դաւթի ։

2 Համբերելով համբերի Տեառն , եւ նա-
յեցաւ առ իս , եւ լուաւ աղօթից իմոց ։
3 Եհան զիս ի գրոյ տառապանաց , ի կա-
ւոյ եւ ի տղմոյ . հաստատեաց ի վիմայ
զիմի զոտս իմ , եւ ուղղեաց զընթացս
4 իմ ։ Արկ ի բերան իմ օրհնութիւն նոր,
զօրհնութիւն [5]Տեառն Աստուծոյ մերոյ ։
5 Տեսցեն բազումք եւ երկիցեն եւ յու-
սասցին ի Տէր . երանելի է այր [10]որոյ
անուն Տեառն յոյս է նորա՝ . ոչ հայե-
ցաւ նա ի նանրութիւն , եւ ոչ ի մո-
լութիւն սուտ ։
6 Բազում արարեր զու , Տէր Աստուած
իմ , զսքանչելիս քո , եւ [11]խորհրդոց քոց ոչ
ոք է որ նմանի քեզ . պատմեցի եւ խօ-
սեցայ՝ եւ բազում եղեն՝ քան զթիւ ։
7 Ընդ զոհս եւ ընդ պատարագս ոչ հա-
ճեցար , լսելիս հաստատեցեր ինձ . զող-
ջակէզս եւ զվասն մեղացն ոչ խնդրե-
8 ցեր ։ Յայնժամ ասացի թէ Ահաստկի
գամ ես , ի գլուխս գրոց գրեալ է վասն
9 իմ , Առնել զկամս քո , Աստուած իմ ,
կամեցայ , եւ զօրէնս քո ի մէջ որո-
10 վայնի իմոյ ։ Աւետարանեցից զարդա-
րութիւնս քո յեկեղեցիս մեծ . ահա
զչրթունս իմ ոչ արգելից ի քէն . Տէր,
11 դու գիտացեր ։ Զի զարդարութիւնս քո
ոչ ծածկեցի ի սրտի իմում , զճշմար-
տութիւնս քո եւ զփրկութիւն քո . ա-
սացի եւ ոչ թաքուցի զողորմութիւնս
քո , եւ ճշմարտութիւնս քո ի ժողո-
12 վրդենէ մեծէ ։ Այլ դու , Տէր , մի՛
հեռի առներ զողորմութիւնս քո յինէն . զի
ողորմութիւն քո եւ ճշմարտութիւն քո
13 յաւիտեան ժամ ընկալցի զիս ։ Շուրջ
եղեն զինէն չարք որոց ոչ էր նոցա
թիւ , հասին ինձ անօրէնութիւնք իմ ,
եւ ես ոչ կարացի տեսանել . բազում
եղեն քան զհեր գլխոց իմոց , եւ սիրտ
14 իմ եհատ զիս ։ Կամեսցայ , Տէր , փրկել զիս ,
15 եւ , Տէր , յօգնել ինձ նայեաց ։ Ամա-

[9] ԵԲԲ. Ա. գլուխ երաժշտացն [10] ԵԲԲ. որ եղ կոյսն իւր ի Տէր [11] ԵԲԲ. զխորհրդս քո որ առ մեզ չէ հնար կարգել առաջի քո . պատմէի եւ խօսէի, սակայն բազում են

չհացին եւ յամօթ լիցին ոք խնդրէին զանձն իմ բառնալ զայս . դարձցին յետս եւ ամաչեցցին որ խնդրէին ինձ չար ։
16 Կրեցցեն զամօթ առ ժամայն վազվա-
17 զակի, որ ասէին ինձ վայ վայ ։ Ցնծա-ցին եւ ուրախ լիցին ի քեզ , ամենեքեան որ խնդրեն զքեզ , Տէր . ասացեն յամենայն ժամ՝ [1]Մեծ է Աստուած՝ , եւ
18 ոչ պիտին զիրկոխիւն քո ։ Եւ ազքատ եւ անանկ եմ , Աստուած , խորհեա զիս. օգնական եւ պաշտպան իմ ես , եւ դու, Աստուած իմ , մի՛ յամենար ։

ՍԱՂՄՈՍ Խ (ԽԱ)

1 [2]Ի կատարած . Ասղմոս Դաւթի ։

2 Երանի՛ որ խորհի զաչքսան եւ զալա-նանին , յաւուր չարի փրկէ զինա Տէր ։
3 Տէր փրկէ զնա եւ կեցուցանէ , երանելի առնէ զնա ի վերայ երկրի , եւ ոչ մատնէ
4 զնա ի ձեռս թշնամեաց իւրոց ։ Տէր օգնական է նմա ի մահճսն ցաւոց իւ-րոց , զամենայն անկողինս նորա պատ-ձուցանէ ի հիւանդութենէ նորա ։
5 Ես ասացի , Տէր , ողորմեա ինձ , բժշկեա զանձն իմ , ես մեղայ քեզ ։
6 Թշնամիք իմ ասացին ինձ չար , Ե՞րբ իցէ պի մեռցի եւ կորիցէ անուն նորա։
7 Մտանէր տեսանել զիս սուտ խօսէր , իւսէր ի սրտի իւրում , եւ ժողովէր զանօրէնու-թիւնս ցանձն իւր . արտաքս երթայր եւ
8 զնոյն խօսէր ։ Զինէն չչնչէին ամենայն թշնամիք իմ. խորհեցան չար ի վերայ իմ.
9 Բան անօրէնութեան [3]եդին ի վերայ իմ. միթէ որ ննջիցէն՝ այլ ոչ՝ եւս յարու-
10 ցցուս ։ Քանզի եւ այրն խաղա-ղութեան իմոյ յոր եւ եհան յուսացայ . որ ուտէր զհաց իմ՝ յաճախեաց սանկ ինձ խարէութիւն ։
11 Այլ դու , Տէր , ողորմեա ինձ , կանգ-
12 նեա զիս , եւ հատուսցիմ նոցա ։ Ցայսմ ծանեայց թէ հաճեցար ընդ իս , զի մի՛
13 ուրախ եղիցին զիս թշնամիք իմ ։ Այլ զիս յանմեղութեան իմում ընկալար , եւ հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան։
14 Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի յա-ւիտեանս յաւիտենից ։ Եղիցի , եղիցի ։

ՍԱՂՄՈՍ ԽԱ (ԽԲ)

1 [2]Ի կատարած . իմաստութիւն որդւոցն Կորխայ ։

2 Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ ,
3 Աստուած ։ Ծարաւի է անձն իմ առ [4]քեզ , Աստուած հզօր եւ՝ կենդանի . Ե՞րբ եկիցէ երեւեցայց երեսացդ Աստուա-
4 ծոյ ։ Եղեն ինձ արտասուք իմ կերա-կուր ի տուէ եւ ի գիշերի , եւ այն զի ասէին ցիս զօրհնասազ՝ Թէ Ո՞ւր է
5 Աստուած քո ։ Զայս որպէս յիշէի՝ սաս-ռասէր ցիս անձն իմ . [5]քանզի երբէք զի մտից ընդ յարկաւ սքանչելագոյ տանն՝ Աստուծոյ . ի ձայն գնդութեան խոստո-վանութեան , եւ ի ձայն բարեկենդա-նութեան ։
6 Արդ ընդէ՞ր տրտում ես , անձն իմ , կամ ընդէ՞ր խռովին զիս . յուսա առ Աստուած , [6]խոստովանեսցիմ նմա , փրկիչ երեսաց իմոց Աստուած է ։
7 Անձն իմ յոյժ խռովեցաւ՝ , վասն այ-սորիկ յիշեցի զքեզ յերկրէն Յորդանա-
8 նու , ի Հերմոնէ , ի լեռնէ Փոքուէ։ Սուրբ ի խորոց կարդացին առ քեզ , ի ձայն ահանաւոց քոց . ամենայն պրօսանք քո
9 եւ ալիք քո անցին ի վերայ իմ ։ Ի տուէ պատուիրեաց Տէր ղողորմութիւն իւր , գիշերի զօրհնութիւն նոր. եւ ա-ղօթք իմ առ Աստուած վասն կենդանի իմոյ։
10 Ասացի Աստուծոյ՝ [7]Ընդունելի իմ ես . ընդէ՞ր մերժեցեր զիս , ընդէ՞ր արտում
11 գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ։ Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ , յասել ցիս զօրհնասազ
12 Թէ Ո՞ւր է Աստուած քո ։ Արդ ընդէ՞ր տրտում ես , անձն իմ , կամ ընդէ՞ր խռովին զիս . յուսա առ Աստուած , [8]խոս-տովանեսցիմ նմա՝ , փրկիչ երեսաց իմոց Աստուած է ։

ՍԱՂՄՈՍ ԽԲ (ԽԳ)

[9]Սաղմոս Դաւթի ։՝

1 Դատա զիս , Աստուած , եւ խրատ-սա զիս ի զատաստանի իմում. յազգէ

---

[1] ԵԲԲ·Մեծասցի Տէր [2] ԵԲԲ·Առ զլուխ երաժշտացն [3] ԵԲԲ· Հեղաւ ի նա , եւ որ ՆՆՋԷՆ՝ ոչ [4] ԵԲԲ· Աստուած , առ Աստուած [5] ԵԲԲ· որպէս երթայի ընդ բազմութեան , գնայի ընդ նոսա մինչեւ ի տուն [6] ԵԲԲ· զի փրկութիւն երեսաց նորա ։ (7) Աստուած իմ՝ խռովեցաւ զիս անձն իմ [7] ԵԲԲ· վէմ [8] ԵԲԲ· զի փրկութիւն երեսաց նորա ։ եղէց նմա , ի փրկութիւն երեսաց նորա ։ [9] ԵԲԲ· պ-ւ--ե

որ ոչ է սուրբ, ի մարգոյ մեղաւորէ
2 ձեռնգաւազէ փրկիա զիս։ Դու, Աստուած,
հզօրիչ իմ ես, ընդէ՞ր մոռացար զիս,
ընդէ՞ր սրտաւմ գնամ ես ի նեղել թըշ-
3 նամւոյ իմոյ։ Աաքեա, Տէր, ելոյս քո
եւ զճշմարտութիւն քո, զի առաջնոր-
դեացեն ինձ, եւ հանցեն զիս ի լեառն սուրբ
4 եւ ի յարկս քո։ Մտից առաջի սեղա-
նոյ Աստուծոյ, առ Աստուած [1]որ ու-
րախ առնէ զմանկութիւն իմ" խոստո-
վան եղէց քեզ օրհնութիւնս, Աստուած,
Աստուած իմ։
5 Արդ ընդէ՞ր տրտում ես, անձն իմ,
կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ
Աստուած, [2]խոստովանեա նմա", փրկիչ
երեսաց իմոց Աստուած է։

ՍԱՂՄՈՍ ԽԳ (խԲ)

1 [3]Ի կատարած. իմաստութիւն որդւոցն
Կորխայ. [4]Առաջմա Դաւթի։"

2 Աստուած, ականջօք մերովք լուաք,
զոր հարձն մեր պատմեցին մեզ. զգործն
զոր գործեցեր յաւուրսն նոցա, յաւուրսն
3 առաջինս։ Ձեռն քո ի լեառնս կենիմա-
նոսս, եւ զնոսա անկեցեր. չարչարեցեր
4 զժողովուրդս եւ հաներ զնոսա։ Ձի ոչ թէ
սրով իւրեանց ժառանգեցին զերկիր,
եւ ոչ բազուկ նոցա փրկեաց զնոսա.
այլ աջ քո եւ բազուկ քո եւ լոյս երե-
սաց քոց, զի հաճեցար նոսա։
5 Դու ինքն ես Թագաւոր իմ եւ Աս-
տուած իմ, որ հրամայեցեր զփրկութիւնս
6 Յակոբայ։ Ընդ քեզ զթշնամիս մեր հարցուք,
եւ անուամբ քով արհամարհեսցուք
7 զյարուցեալսն ի վերայ մեր։ Ոչ թէ
յաղեղն իմ յուսացեալ եմ, եւ ոչ սուր
8 իմ կեցուցանէ զիս. Այլ դու փրկեցեր
զմեզ ի թշնամեացս մերոց, եւ զատելիս
9 մեր յամօթ արարեր։ Աստուծով պար-
ծեսցուք զօրհնասպաս, եւ անուան նո-
րա խոստովան եղիցուք յաւիտեան։[5]
10 Բայց արդ մերժեցեր եւ անարգեցեր
զմեզ, եւ ոչ ելեր, Աստուած, ընդ զօրս
11 մեր։ Դարձուցեր զմեզ յետս քան զթշըն-
նամին մեր, եւ ատելիք մեր յաւիշաս-
12 կեցին զմեզ։ Եւտուր զմեզ որպէս զոչ-
խար ի կենուրն, եւ ընդ հեթանոս
13 ցրուեցեր զմեզ։ Վաճառեցեր զժողո-
վուրդս քո առանց գնոյ, եւ ոչ [6]գոյ
14 [7]իւրաքանչիւր մերոյ"։ Արարեր զմեզ
նախատինս դրացեաց մերոց, ծաղր եւ
սպաս կատականաց անդոցիկ որ չուրջ
15 էին զմեզ։ Արարեր զմեզ յառակս հե-
թանոսաց, ի շարժել գլխոյս ժողովուր-
16 դոց։ Զօր ամենայն նախատինք իմ ա-
ռաջի իմ են, եւ ամօթ երեսաց իմոց
17 ծածկեաց զիս։ Ի ձայնէ նախատողին
եւ չարախոսի, յերեսաց թշնամւոյն եւ
հալածչի։
18 Այս ամենայն եկեն ի վերայ մեր, եւ
մեք զքեզ ոչ մոռացաք եւ ոչ սուտացաք
19 ուխտի քումմէ, եւ ոչ գարձաք յետս
սրտիւք մերովք. [8]զոհ դարձուցեր զնա-
20 ւիղս" մեր ի ճանապարհաց քոց. Ընդ-
նարհ արարեր զմեզ [9]ի տեղի չարչարա-
նաց", եւ ծածկեցեր զմեզ ստուերք
մահու։
21 Թէ մոռացեալ իցէ մեր զանուն Ա-
ստուծոյ մերոյ, կամ ձգեալ իցէ զձեռս
22 մեր յաստուածս օտարս, Ոչինչ Աս-
տուած [9]խնդրէ զայս, զի Նա քննէ
23 զղաղտնիս սրտից մերոց։ Վասն քո մե-
ռանիմք զօրհնասպաս, համարեցաք
որպէս զոչխար ի զենուման։
24 Զարթիր, ընդէ՞ր ննջես, Տէր. արի
25 եւ մի՛ մերժեր զմեզ ի տապառ. Զմէ՞
դարձուցանես զերեսս քո ի մէնջ, մո-
ռանաս զաղքատութիւն եւ զնեղու-
26 թիւնս մեր։ Խոնարհ եղեն մինչեւ ի
հող անձինք մեր, եւ յերկիր կցեցան
27 մէնք մեր։ Արի, Տէր, օգնեա մեզ, եւ
փրկեա զմեզ վասն [10]անուան քո։

ՍԱՂՄՈՍ ԽԴ (խԳ)

1 [11]Ի կատարած. զատանցելոց ժամանա-
կաց, որդւոցն Կորխայ իմաստութիւն.
Սաղմոս օրհնութեան վասն սիրելւոյն։"

2 Բզխնցէ սիրտ իմ զպատգամս քո բարիս,
եւ ասեմ զգործս իմ թագաւորի. լեզու
3 իմ որպէս գրիչ արագագիր գրչի։ Գե-
ղեցիկ տեսանելով քան զամենայն որդ-
ւոց մարդկան. սիրեցան շրթունք ի շըր-

---

[1] ԵՔԲ. ուրախութեան ցնծութեան իմոյ [2] ԵՔԲ. զի միւսանգամ խոստովան եղէց առ նա [3] ԵՔԲ. Առ գլուխ երաժշտացն [4] ՅԵՔԲ. պահ [5] ԵՔԲ. յաւիտեան յաւելու, Հանգիստ։

[6] ԵՔԲ. մեծագոյ գնովք նոցա [7] ԵՔԲ. եւ ոչ խոստո. րեցան ոտք [8] ԵՔԲ. ի տեղւոջ վիշապաց [9] ԵՔԲ. ոչ խնդրիցէ [10] ԵՔԲ. ողորմութեան [11] ԵՔԲ. Առ գլուխ երաժշտացն. ի վերայ նուագանիւի. իմաստութիւն որդւոցն Կորխայ, երգ սիրոյ։

թանց քոց, վասն այսորիկ օրհնեաց
զքեզ Աստուած յաւիտեան։
4 Ած զսուբ ընդ մէջ քո, Հզօր, վայել-
5 չութեան եւ զեղոյ քո։ Լարեա, ուղղեա
եւ թագաւորեա վասն ճշմարտութեան,
հեզութեան եւ արդարութեան, եւ ա-
ռաջնորդեսցէ քեզ աջանչելապէս աջ քո։
6 Նետք քո սրեալ են, Հզօր, եւ ժողո-
վուրդք ի ներքոյ քո անկցին, ի սիրտս
թշնամեաց թագաւորի։
7 Աթոռ քո, Աստուած, յաւիտենից
յաւիտենից, գաւազան ուղղութեան գա-
8 ւազան արքայութեան քո։ Սիրեցեր
զարդարութիւն, եւ ատեցեր զանօրէ-
նութիւն. վասն այսորիկ օծ զքեզ, Աս-
ուած, Աստուած քո իւղով ուրախու-
9 թեան առաւել քան զընկերս քո։ Զմուռս
եւ ահաւլոն եւ կասիա ի զգեստ քումմէ,
ի տաճարաց փղոսկրեայց, ուստի ուրախ
10 արարին զքեզ Դաւիթք թագաւորաց ի
պատիւ. կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ,
ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ եւ
11 պաճուճեալ։ Լուր, դուստր, եւ տես,
խոնարհեցո զունկն քո. մոռա զժողո-
12 վուրդ քո եւ զտուն հօր քո. Զի ցան-
կացաւ թագաւոր գեղոյ քո. ա՛ն ինքն
13 է Տէր քո, երկիր պագցես ա՛մա։ Եւ
դուստր Ծուրայ [1]երկիր պագցէ ա՛մա. եւ
պատարագօք զերեսս սորա՝ պաշտեսցեն
մեծամեծք ի ժողովրդոց։
14 Ամենայն փառք դստեր թագաւորի ի
15 ներքոյ. ի վերջաւորս ոսկեհուռս զար-
դարեալ եւ [2]պաճուճեալ. տարցեն թա-
գաւորի կուսանք զհետ նորա, եւ զըն-
16 կերս նորա տարցեն ձեզ՝ Ածցին ցնծու-
թեամբ եւ ուրախութեամբ եւ տարցեն
17 ի տաճար թագաւորի։ Եւ փոխանակ
հարց քոց եղիցին որդիք քո. կացու-
ցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր։
18 Յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս
ազգաց. վասն այսորիկ ժողովուրդք
խոստովան եղիցին ա՛ռ քեզ, յաւիտեան
եւ յաւիտեանս յաւիտենից։

ՍԱՂՄՈՍ ԽԵ (ԽԶ)

1 [3]Ի կատարած. որդւոցն Կորխայ ի վե-
րայ պսալմոսի։

2 Աստուած մեր ապաւէն եւ զօրութիւն,
օգնական ի վերայ նեղութեանց որ գտին
3 զմեզ յոյժ։ Վասն այսորիկ ոչ երկեսցուք
մեք ի խռովել երկրի, ի փոփոխել լե-
4 ռանց ի սիրտս ծովու։ Դոչեսցեն եւ խռո-
վեսցան ջուրք նոցա, խռովեսցան լերինք
5 ի զօրութենէ նորա։ [4]Գնացք գետոց ու-
րախ առնեն զքաղաքն Աստուծոյ, [6]եւ
սուրբ արար զյարկս իւր Բարձրեալն։
6 Աստուած ի մէջ նորա եւ նուքա մի
սասանեսցին, օգնեսցէ նոցա Աստուած
ի վաղորդայնէ մինչ ի վաղորդայն։
7 Խռովեցան հեթանոսք, եւ խոնարհեցան
թագաւորութիւնք. եա ձայն իւր
8 Բարձրեալն եւ խռովեցաւ երկիր։ Տէր
զօրութեանց ընդ մեզ, [7]ընդունելի է
9 մեր Աստուած Յակոբայ։[5] Եկայք եւ
տեսէք զգործս [8]Աստուծոյ, որ արար
զնչեանս եւ զարեւնաւս ի վերայ երկրի։
10 Նշար զպատերազմ ի ծագաց մինչ ի
ծագս երկրի. զաղեղնսն փշրեաց,
զզէնս խորտակեաց եւ զասպարս այր-
11 եաց նոց հրով։ Կանխեցէք եւ ծանեարուք զի
ես եմ Աստուած. բարձր եղէց ի հեթա-
նոսս, եւ բարձրացայց ի վերայ երկրի։
12 Տէր զօրութեանց ընդ մեզ, [7]ընդունելի
է մեր Աստուած Յակոբայ։[5]

ՍԱՂՄՈՍ ԽԶ (խէ)

1 [9]Ի կատարած. վասն որդւոցն Կորխայ.
Սաղմոս Դաւթի։

2 Ծափս հարէք, ամենայն հեթանոսք,
ազաղակեցէք առ Աստուած ի ձայն
3 ցնծութեան։ Տէր բարձրեալ եւ անար-
կու, թագաւոր մեծ ի վերայ ամենայն
4 երկրի։ Հնազանդ արար ժողովուրդս
ընդ մեզ, եւ զհեթանոսս ի ներքոյ ոտից
5 մերոց։ Ընտրեաց [10]զմեզ իւր ի ժառան-
գութիւն, զեղեգնաւթեանցն՝ Յակո-
6 բայ զոր եւ սիրեաց։[5] Համբարձաւ Աս-
տուած օրհնութեամբ, եւ Տէր մեր
7 ձայնիւ փողոյ։ Սաղմոս ասացէք [11]Աս-
տուծոյ մերում՝, սաղմոս ասացէք
8 Թագաւորին մերում, սաղմոս ասացէք։
Թագաւոր [12]մեծ ի վերայ ամենայն երկրի
Աստուած է, սաղմոս ասացէք նմա ի-
9 մաստութեամբ։ Թագաւորեաց Աստուած

---

[1] Եբր. Ահա եղեալ պատարագօք, զերեսս քո [2] Եբր. պաճուճեալ. տարցի թագաւորի. կուսանք, ընկերք նորա տարցին քեզ [3] Եբր. Առ գլուխ երաժշտացն. որդւոցն Կորխայ ի վերայ Ալամովթայ երգ։

[4] Եբր. յոյժ գտանի ի նեղութիւնս [5] Եբր. յետ յաւելուածոյ՝ Հանգիստ։ [6] Եբր. բնակութիւն արքունութեան Բարձրելոյն [7] Եբր. ապաւէն [8] Եբր. Տեառն [9] Եբր. Առ գլուխ երաժշտացն. որդւոցն Կորխայ Սաղմոս։ [10] Եբր. մեզ զմեր ժառանգութիւն մեր, զգեառուրութիւն [11] Եբր. Աստուծոյ, սաղմոս ասացէք [12] Յետ. գրեաւ

ի վերայ հեթանոսաց , Աստուած նատաւ
10 *յաթոռ սրբութեան իւրոյ : Իշխանք ժո-*
ղովրդոց ժողովեցան առ Աստուած
Աբրահամու , [1]զի Աստուծոյ զօրութիւնք
երկրի յոյժ համբարձան :"

ՍԱՂՄՈՍ ԽԷ (ԽՀ)

1 *[2]Սաղմոս օրհնութեան արդեամբ Կոփայ.*
երկրորդ չաբաթ առ :"

2 Մեծ է Տէր եւ օրհնեալ է յոյժ՝ ի քա-
ղաք Աստուծոյ մերոյ , ի լեառն սուրբ
3 նորա : [3]Հաստատեաց ցնծացեալ ցնծու-
թեամբ ամենայն երկիր , լերինք Սիոնի,
կողմանք" հիւսիսոյ, քաղաք Թագաւորի
4 մեծի : [4]Աստուած ի տաճարի իւրում
յայտնի , ի ժամանակի որպէս օգնական
5 լինէր նոցա :" Ահաւասիկ ի հաւաքուա-
թիւնք երկրի ժողովեցան , եւ անցին ի
6 միասին : Ինքեանք տեսին այսպէս եւ
զարմացան , խռովեցան , սասանեցան :
7 Եւ զողումն կալաւ զնոսա անդ . երիվարք
8 որպէս ի ծննդեան : Ի հողմ [5]սաստիկ
9 փշրեացես զնաւս ի Թարսիս" : Որպէս
լսեաք՝ այնպէս եւ տեսաք , ի քաղաք
Տեառն զօրութեանց՝ ի քաղաք Աստուա-
ծոյ մերոյ . Աստուած հիմնեաց զսէ նմա
10 յաւիտեան :[6] Ընկալաք , Աստուած , զ-
ողորմութիւն քո ի մէջ [7]ժողովրդեան
11 քո : Ըստ անուան քումմ, Աստուած ,
այդպէս եւ օրհնութիւն քո ընդ ամե-
նայն երկիրս , եւ արդարութեամբ լի
12 է աջ քո : Ուրախ եղիցի լեառն Սիոն ,
եւ ցնծասցեն դստերք Յուդայ , վասն
իրաւանց քոց , Տէր :
13 Շրջեցարուք զԱիոնեաւ , պաշարեցէք
զնա, եւ [8]պատեցէք զաշտարակս նորա :
14 Դիք զսիրտս ձեր ի վերայ զօրութեանց
նորա , [9]յաժանեցէք զամուրս" նորա ,
15 զի պատմիչ կարասջիք յազգ յայլ : Սա
է Աստուած , Աստուած մեր յաւիտեան
յաւիտենից , եւ սա հովուեսցէ զմեզ
մինչեւ յաւիտեան :

[1] Եբէր. զի նորին իսկ Աստուծոյ են ասպարք երկրի.
բարձր է նա յոյժ : [2] Եբէր. Երգ, Սաղմոս որդ-
ւոյն Կորխոյ : [3] Եբէր. Փեղեցիկ բարձրու-
թեամբ, ուրախութիւն ամենայն երկրի, լեառն
Սիոն . կողմն [4] Եբէր. Աստուած յայտնեալ նորա
ծանուցեալ իբրեւ ապաւէն : [5] Եբէր. արեւելից
փշրեացես զնաւս Թարսիսի [6] Եբէ-այեցին յե-ելե-,
Հանգիստ : [7] Եբէր. տաճարի [8] Եբէր. թուեցէք
[9] Կա՛մ, զննեցէք զապարանս

ՍԱՂՄՈՍ ԽԸ (ԽԹ)

1 [10]*Ի կատարած. Սաղմոս որդւոյն Կորխոյ.*
2 Լուարուք զայս , ամենայն ազգք, ունկ-
կընդիր լերուք ամենեքեան որք բնակ-
3 եալ էք յաշխարհի : [11]Մինուղք երկրի
եւ որդիք մարդկան", ի միասին մեծա-
4 մեծք եւ անանկք : Բերան իմ խօսեսցի
զիմաստութիւն, եւ խորհուրդ սրտի իմոյ
5 զգնաճառ : Ածանարկեցուցից յառակուսին
զունկն իմ , բացից [12]զառակս օրհնու-
թեան ի սկզբանէ" :
6 Ընդէ՞ր երկնչիմ ես յաւուրս չարիս,
զի անօրէնութիւնք փոխոյ իմոց չարչ
7 եղեն զկնե : Յաւատացելքն ի զօրութիւն
իւրեանց , ի բազմութիւն մեծամեծան
8 իւրեանց պարծեցան : [13]Եղբայր ոչ փրկէ,
եւ ոչ փրկէ մարդ եւ ոչ ասց Աստուա-
9 ծոյ փրկանս , Եւ ոչ պակաս փրկանաց
10 անձին իւրոյ : Վաստակեսցէ յաւիտեան ,
եւ կեսցէ մինչ ի սպառ , եւ ոչ տես-
11 ցէ զապականութիւն : Յարժամ տես-
ցէ" իմէ իմաստունք մեռանին , ի մի-
ասին անպատմ եւ անմիտք կորիցեն, եւ
մոռցին օտարաց զմեռանելն իւրա-
12 նանց : [14]Գերեզմանք նոցա տունք նոցա
յաղթեցին յաւիտեան , եւ յարկք նոցա
ազգէ մինչեւ յազգ , եւ կոչեցան ա-
13 նուանք նոցա ի հոգս իւրեանց : Մարդ ի
պատուի [15]էր եւ ոչ իմացաւ , հաւա-
սարեցաւ անասունս անբանից եւ նման-
14 եաց նոցա : Այս ճանապարհ է գայթակ-
ղութեան նոցա նոցին . յետ այսորիկ
բերանօք իւրեանց հաճեացին"
15 Որպէս խաչն ի գժոխս մատնեսցին ,
եւ մահ հովուեսցէ զնոսա , եւ տիրես-
ցեն նոցա ուղիղք ընդ առաւօտս . [16]օ-
նութիւնք նոցա մաշեսցին ի գժոխս ,
16 եւ [17]ի փառսդ իւրեանց անկցին : Բայց
ասկայն Աստուած վրկեսցէ զանձն իմ
ի ձեռաց գժոխոց , յարժամ ընդունելին զիս :[6]

[10] Եբէր. Եւս գլուխ երաժշտացն [11] Եբէր. Որդիք
մարդոյ եւ որդիք առն [12] Եբէր. քնարաւ զա-
ռեղծուածս իմ [13] Եբէր. Զեղբայրս ոչ փրկե-
լով փրկէ այր , եւ ոչ տայ Աստուծոյ զփրկանս
նորա : (9) Զի պատուական է փրկանք անձին
նոցա , եւ թողցի ի ապառ : (10) Եւ կեցցէ
մինչեւ յաւիտեան , գ' ոչ-ցէ զապականու-
թիւնն : (11) Զի տեսցէ [14] Կա՛մ, Ի խորհրդեան
[15] Եբէր. ոչ ճանացեալ, հաւասարեալ անասնոց կորու-
սեալց : (14) Այս ճանապարհ նոցա է յիմարու-
թիւն նոցին, յետինք նոցա ընդ բերան նոցա
հաճեացին : Հանգիստ : [16] Եբէր. կերպարանք
[17] Եբէր. ի քնակութենէ

17 Մի՛ երկնչիր յորժամ մեծանայ մարդ,
եւ յորժամ բազում լինին փառք տան
18 նորա. Զի ոչ թէ ի մեռանիլ իւրում
առցէ ընդ իւր զամենայն, եւ ոչ թէ
19 իջցեն փառք տան նորա ընդ նմա։ Այլ
անձն նորա ի կեանս իւրում օրհնեսցի,
խոստովան եղիցի քեզ՝ յորժամ բարի
20 արասցես դու նմա։ Մտցէ նա մինչեւ
յազգ հարց իւրոց, մինչեւ յաւիտեան
21 լոյս մի՛ տեսցէ։ Մարդ ի պատիւ [1]էր
եւ ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց
անբանից եւ նմանեցաւ նոցա"։

ՍԱՂՄՈՍ ԽԹ (Ծ)

Սաղմոս Ասաֆայ։

1 **Աստուած աստուածոց՝** Տէր խօսեցաւ,
եւ կոչեաց զերկիր յարեւելից մինչեւ ի
2 մուտս արեւու։ [2]Ի Սիոնէ մեծ վայել-
չութիւն, փրկութիւն ղեզմ նորա։
3 Աստուած մեր յայտնապէս եկեսցէ, եւ
Աստուած մեր մի՛ դադարեսցէ"։ Հուր
առաջի նորա լորթեսցի, եւ չուրջ
4 զնովաւ մրրիկ յոյժ։ Կոչեսցէ զերկինս
ի վերուստ, եւ զերկիր՝ ի դատել զմո-
5 ղովրդ իւր, [3]ժողովել առնէքն զսուրբս
իւր, եւ այք գնեն զպատարագս ուխ-
6 տից ի վերայ անզանոց նորա" Պատ-
մեսցեն երկինք զարդարութիւնն նորա,
զի Աստուած դատաւոր է։ Հանդիստ։
7 Լուր, ժողովուրդ իմ, եւ խօսեցայց ընդ
քեզ, եւ Իսրայէլ, քեզ վկայեցից. զի
8 Աստուած, Աստուած քո ես եմ։ Ոչ թէ
վասն պատարագաց քոց կշտամբեմ զքեզ.
զի ողջակէզք քո առաջի իմ են յամե-
9 նայն ժամ։ Ոչ ընդունիմ ի տանէ քումմէ
զուսարակս, եւ ոչ ի հօտից քոց նախատս,
10 իմ է ամենայն գազան անտառի, եւ
11 լերանց՝ եւ ամենայն անասունք"։ Գիտեմ
ես զամենայն [4]թռչունս [5]երկնից, զե-
12 ղեցկութիւնն՝ վայրի ընդ իս է։ Թէ
քաղցեալ լինիմ, քեզ ինչ ոչ ասացից. զի իմ
13 է աշխարհ լրիւ իրովք։ [6]Ոչ ուտեմ ես
զմիս զուարակաց քոց, եւ ոչ զարիւն
14 նոխազաց քոց ըմպեմ։" Մատո Աստու-

ծոյ պատարագ օրհնութիւնդ, հատուցցես
15 Բարձրելոյն զուխտս քո։ Կարգասցես
առ իս յաւուր նեղութեան քո, ես
փրկեցից զքեզ, եւ դու փառաւոր ա-
րասցես զիս։
16 Մեղաւորին ասէ Աստուած,
Իսկ դու ընդէ՞ր պատմես [7]զարդա-
րութիւն իմ, կամ առնուս զուխտ իմ
17 ի բերան քո։ Զի դու ատեցեր զկարգաս
իմ, մերժեցեր եւ յետս դնեցեր [8]զամե-
18 նայն բանս բերանոյ իմոյ"։ Թէ տեսա-
նէիր զգող՝ ընդհատեալ ընդ նոսա, եւ
19 ընդ չունս զինէիր զբաժին քո։ Բերան
քո յաճախէր զչարութիւն, եւ լեզու քո
20 նիւթէր զնենգութիւն։ Նստեալ զեղ-
բօրէ քումմէ չարախօսէիր, եւ ի վերայ
որդւոյ մօր քո դնէիր զպայմակղուե-
21 լիւն։ Զայս ամենայն արարեր, եւ ես
լռեցի քեզ. կարծեցեր [9]անօրէնդ ի մաղ
քոյ, թէ եւ ես քեզ նմանիցեմ. արդ
յանդիմանեցից եւ կացուցից զայս ամե-
22 նայն առաջի քո։ Իմացարո՛ւք, ամենա-
քեան զայդ մոռացեալ իցէ զԱստուած,
գուցէ երբեք [10]յափշտակիցիք, եւ ոչ ոք
իցէ որ փրկիչէ։
23 Պատարագ օրհնութեան փառաւոր
արասցէ զիս. եւ [11]անդ է ճանապարհ
ուր՝ ցուցից նմա զփրկութիւն Աստուծոյ։

ՍԱՂՄՈՍ Ծ (ԾԱ)

1 [12]Ի կատարած. Սաղմոս Դաւթի, (2) ի
ժամանակի իրրեւ եկն առ նա Նաթան
մարգարէ, յորժամ մտեալ էր առ
Բեղսաբէէ։

3 **Ողորմեա** ինձ, Աստուած, ըստ [9]մեծի
ողորմութեան քումմ, եւ ըստ բազում գթու-
թեան քումն քաւեա զանօրէնութիւնս
4 իմ. Առաւել լուա զիս յանօրէնութենէ
իմմէ, եւ ի մեղաց իմոց սուրբ արա
5 զիս։ Զանօրէնութիւնս իմ ես ինձէն
գիտեմ, եւ մեղք իմ առաջի իմն են յա-
6 մենայն ժամ։ Քեզ միայն մեղայ, Տէր,
եւ չար առաջի քո արարի. արդարա-
գար եղիցիս ի բանս քո, եւ [13]յաղթող
7 ի դատել քեզ։ Ահաւադիկ յղա-
ցեալ, եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ։
8 Դու, Տէր, զճշմարտութիւնն [14]սիրես-
կեր, զանկայտս եւ զծածկեալս իմաս-

[1] ՆԲԳ. է եւ ոչ իմացաւ, հաւասարէ անասնոց կո-
րուսեալց [2] ՆԲԳ. Ի Սիոնէ՝ ի մեծ վայելչու-
թենէ գեղոյ, Աստուած փայլատակեաց։ (3) Աս-
տուած մեր եկեսցէ եւ մի՛ լռեսցէ [3] ՆԲԳ. ժողովեցէք
առ իս զսուրբս իմ, զորս եդին ուխտ ընդ իս
պատարագաւ։ [4] ՆԲԳ. հազարաւորաց [5] ՆԲԳ.
լերանց, եւ գազան [6] ՆԲԳ. Մինթէ ուտեմ ես
զմիս ցլուց, կամ զարիւն նոխազաց ըմպեմ։

[7] ՆԲԳ. զօրէնս [8] ՆԲԳ. զբանս իմ [9] ՅԳ. գ-ի-ե
[10] ՆԲԳ. յափշտակիցեմ [11] ՆԲԳ. որում ուզղէն
զճանապարհ ե-ք՝ [12] ՆԲԳ. Առ զլուխ երա-
ժըշտին [13] ՆԲԳ. սուրբ եղիցիս [14] ՆԲԳ.
սիրեցեր յերիկամունս

9 տուիր ամէն քով յայտնեցեր ինձ։ Յօդուա
յիս մշակաւ եւ տուրք եղէց, լուա եւ
10 քան զձիւն սպիտակ եղէց։ Լսելի արա
ինձ զյուժութիւն եւ զուրախութիւն, եւ
ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։
11 Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց, եւ զա-
մենայն անօրէնութիւնս իմ քաւեա յի-
12 նէն։ Սիրտ սուրբ հաստատ ջիս, Ա-
տուած, եւ հոգի ուղիղ նորոգեա ի
13 փորձ իմում։ Մի՛ ընկենուր զիս, Տէր,
յերեսաց քոց, եւ զՀոգի Սուրբ քո մի՛
14 հաներ յինէն։ Տուր ինձ ցնծութիւն
փրկութեան քո, եւ հոգւով [1]պետութեան
քո՝ հաստատեա զիս։
15 Ուսուցից անօրինաց զճանապարհս
քո, եւ ամպարիշտք առ քեզ դարձցին։
16 Փրկեա զիս յարենէ, Աստուած, Ա-
տուած փրկութեան իմոյ. ցնծասցէ լի-
17 զու իմ յարդարութեան քումմ։ Տէր,
եթէ զչրթունս իմ բանայ, բերան իմ
18 երգեսցէ զօրհնութիւնս քո։ Թէ կա-
մեցեալ էիր պատարագ՝ մատուցանէի՛ք,
բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճե-
19 ցար։ Պատարագ Աստուծոյ՝ հոգի խո-
նարհ. զսիրտ տուրբ եւ զհոգի խոնարհ
Աստուած ոչ արհամարհէ։
20 Բարի արա, Տէր, կամօք քովք Սի-
ոնի, եւ շինեսցին պարիսպք Երուսա
21 զեմի։ Յայնժամ հաճեսցիս ընդ պատա-
րաս արդարութեան, [2]ուխտից պա-
տարագս՝ հանցեն ի սեղան քո զուռա-
րակս։

ՍԱՂՄՈՍ ԾԱ (ԾԲ)

1 [3]Ի կատարած. Սազմոս՝ Դաւթի. (2) ի
ժամանակի զի եկն Դոէկ եդոմացեցի
պատմեաց Սաւուղի, թէ Անհատիկ
Դաւիթ ի տան Աքիմելիքայ է։

3 Ձի՞ [4]պարծիս ի չարութեան, հզօր, [5]զա-
4 նօրէնութիւնն. Զօրհնապազ զանիրա-
ւութիւն՝ լեզուդ քո ի նենգի իւրում,
որպէս մանկիլ սուր արուեստ գործիս։
5 Սիրեցեր զչարութիւն քան զբարութիւն.

[1]ԵԲԲ. կամաւորաւ, կամ, ազնուաւ [2]ԵԲԲ. քեզ զՁո եւ ընդ ողջակէզս. յայնժամ [3]ԵԲԲ. Առ գլուխ երաժշտացն. Երգ [4]ԵԲԲ. պարծիս, Այսպես ԵԲԲ-ից՝ բնագրին խոյս տեղերդ գեհոն գնելը է վերծանո խոնհարդ հոմարին։ [5]ԵԲԲ ապօրինութիւն Աստուածոյ է զըրհանապազ։ (2) Զանիրաւութիւն

զանօրէնութիւն քան զխօսս արդարու-
6 թեան։ [6]Սիրեցեր նա զամենայն խօսս
կորնծանման, եւ զլեզուս նենգաւորս։
7 Վասն այսորիկ Աստուած կործանեսցէ
զնա ի նմա՛ն, խլեսցէ եւ հանցէ զնա
ի յարկաց իւրոց եւ զարմատս նորա յերկ-
8 րէն կենդանեաց։ [7]Տեսցեն արդարք եւ
երկիւղն, զնովաւ ծիծաղեսցին եւ ա-
9 սասցեն, Այս այր է որ ոչ արար զԱս-
տուած իւր օգնական, այլ յուսացաւ
առ ի բազում մեծութիւն իւր, եւ զօ-
րացաւ ի նանրութեան իւրում։
10 Այլ ես որպէս ձիթենի պտղաւից ի
տան Աստուծոյ. յուսացայ յողորմու-
թիւն Աստուծոյ յաւիտեան եւ յաւիտե-
11 ան՛ն յաւիտենից։ Խոստովան եղէց քեզ
յաւիտեան զի արարեր, եւ համբերից
անուանդ քումմ, զի քաղցր է առաջի
սրբոց քոց։

ՍԱՂՄՈՍ ԾԲ (ԾԳ)

[7]Ի կատարած. վասն Մաղաղեթայ. ի-
մաստութիւն՝ Դաւթի։

1 Ասաց անզգամն ի սրտի իւրում՝ թէ
2 Ոչ գոյ Աստուած. Այլականացան եւ
պղծեցան յանօրէնութեան իւրեանց, եւ
3 ոչ ոք է որ առնէ զբարեգործութիւն։ Ա-
տուած յերկնից նայեցաւ յամենայն որդիս
մարդկան, տեսանել թէ իցէ ոք խոհական
4 որ խնդրիցէ զԱստուած։ Ամենեքեան
խոտորեցան ի միասին եւ անպիտա-
նացան. ոչ ոք է որ առնէ զբարի, եւ
5 չէ ոք մինչեւ ի մի։ Ո՞րպէս ոչ ծանիցեն
ամենեքեան, որ գործեն զանօրէնու-
թիւն. ոյք ուտէին զժողովուրդ իմ որ-
պէս կերակուր հացի, եւ առ Աստուած
6 ոչ կարդային։ Անդ երկիւղն զերկեւղ ուր
ոչ իցէ երկեւղ. զի Աստուած ցրուեսցէ
զոսկերս [8]մարդահաճոյից. ամաչեսցեն
եւ յամօթ լիցին, զի Աստուած անար-
7 գանց զնոսա։ Ո՛ տացէ ի Սիոնէ զփրկու-
թիւնն Իսրայելի. ի դարձուցանել
[9]Տեառն զգերութիւնն ժողովրդեան իւ-
րոյ, ցնծասցէ Յակոբ եւ ուրախ եղիցի
Իսրայէլ։

[6]ԵԲԲ-ից յոյլը, Հանգիստ։ [7]ԵԲԲ. Առ գլուխ երաժշտացն. ի վերայ Մահաղեթայ, երգ
[8]ԵԲԲ. որոց պաշարեն զքեզ [9]ԵԲԲ. Աստուծոյ

ՍԱՂՄՈՍ ԾԳ (Ծ՛Ի)

1 [1]Ի կատարած. ընդ օրհնութիւնն՝, իմաս-
2 տուիւն Դաւթի, ի ժամանակի զի
եկին Զիփացիքն, եւ ասեն ցԱստուած՝
Ահաւասիկ Դաւիթ թաքուցեալ նստի
առ մեզ։

3 Աստուած, յանուան քումմէ կեցո զիս,
եւ ի զօրութիւնն քումմէ իրաւ արա զիս։
4 Աստուած, լուր աղօթից իմոց, ունկն
5 դիր բանից բերանոյ իմոյ։ Օտարք յա-
րիան ի վերայ իմ, եւ հզօրք խնդրեցին
զանձն իմ, եւ ոչ համարեցան զքեզ
Աստուած առաջի իւրեանց։[2]
6 Ահա Աստուած օգնական իմ, եւ Տէր
7 [3]ընդունելի հոգւոց իմոց՝։ Ի դարձուցա-
նել զչարն ի թշնամիս իմ, ճշմարտու-
8 թեամբ քով սատակեա զնոսա։ Ես կա-
մօք իմովք պատարագս մատուցից քեզ,
խոստովան եղէց անուան քումմ, Տէր,
9 զի բարի է։ Ամենայն նեղութենէ իմմէ
փրկեցեր զիս, եւ ի թշնամիս իմ նահա-
ւակն իմ։

ՍԱՂՄՈՍ ԾԴ (ԾԵ)

1 [1]Ի կատարած. ընդ օրհնութիւնս իմաս-
տութիւն՝. Սաղմոս Դաւթի։

2 Լսելո զաղօթից իմոց, Աստուած, աղօթից իմոց,
եւ մի՛ անտես առներ զինքզքուածս իմ։
3 Նայեաց առ իս եւ լուր ինձ, զի արա-
մեցայ ես ի ձանձրանալ իմում եւ խռո-
4 վեցայ. ի ձայնէ թշնամւոյն եւ ի նե-
ղել մեզաւորի, [4]խոտորեցան յիս անի-
րաւութեամբ՝, բարկութեամբ ոխս պա-
հէին ինձ։
5 Սիրտ իմ խռովեցաւ յիս, եւ երկեւ-
6 մահու անկաւ ի վերայ իմ։ Այ եւ դո-
ղումն եկն ի վերայ իմ, եւ ծածկեաց
7 զիս խաւար։ Ասէի՝ Տայր ոք ինձ թեւս
որպէս զաղաւնւոյ, զի թռչէի, վերա-
8 նայի։ Հեռացեալ դադարէի յանապատի.
9 [5]Ակն ունէի Աստուծոյ որ փրկէր զիս ի
կարճմտութենէ ի քայրանալոյ, եւ ի մրրիկ-
10 եալ նեղութենէ՝։ Ընկէր, Տէր, եւ
բաժանեա զլեզուս նոցա, զի տեսի զա-
նօրէնութիւն եւ զհակառակութիւնն ի
11 քաղաքի։ Ի տուէ եւ ի դիշերի չորջ
եղեն զպարսպօք նորա անօրէնութիւնք,

12 չարիք եւ մեղք են ի մէջ նորա։ Եւ ոչ
պակասեաց ի հրապարակաց նորա վաչխ
13 եւ նենգութիւն։ Զի թէ թշնամւոյն
նախատեալ էր՝ համբերէի արդեւք, կամ
առիւծոյն մեծարանեալ էր ի վերայ իմ՝
14 թաքչէի այսպէսք ի նմանէ։ Իսկ դու,
մարդ, հաւասար իմ, [6]առաջնորդ իմ եւ
15 ծանօթ իմ. [7]Ախորժքն ի նոյն քաղցրա-
գոյցեր ինձ եւ քեզ կերակուր, զի՝
գնայաք միաբանութեամբ ի տունն Աս-
16 տուծոյ։ Եկեսցէ մահ ի վերայ նոցա,
եւ կենդանւոյն իջցեն ի դժոխս. զի
չարութիւն է ի բնակութեան նոցա եւ
17 ի մէջ նոցա։ Ես առ Աստուած կար-
18 գացի, եւ Տէր լուաւ ինձ։ Երեկոյս, ի
վաղորդայն, եւ ի հասարակ աւուր՝ պատ-
մեցի եւ առացի, եւ լսիցէ ձայնի ի-
19 մում։ Փրկեսցէ խաղաղութեամբ զանձն
իմ [8]ի մերձաւորաց իմոց, զի կարիօք՝
20 հասին ի վերայ իմ։ Լսիցէ Աստուած
եւ [9]խոնարհ արասցէ զնոսա, որ յառաջն
է քան զյաւիտեանս. զի ոչ դոյր նոցա
փոխանակ,՝ եւ ոչ երկնաւ յԱստուծոյ։
21 Չկեաց զձեռն իւր [10]ի հատուցանել նո-
ցա, եւ նոքա պղծեցին զօրէնս նորա։
22 Բաժանեցան ի սրտմտութենէ երեսաց
նորա, եւ եհաս ի սիրտս նոցա՝. կա-
րկուղ էին բանք նոցա քան զձէթ, եւ
ինքեանք էին որպէս սլաք։
23 Ընկեա ի Տէր զնոգս քո, եւ նա կե-
րակրէ զքեզ, եւ ոչ տայ յաւիտեան
24 սասանութիւն արդարոյ։ Դու, Աս-
տուած, իջուսցես զնոսա ի դուր ա-
պականութեան, արք արիւնահնդք եւ
նենգաւորք մի՛ հասարակեսցին զա-
ւուրս իւրեանց. այլ ես ի քեզ, Տէր,
յուսացայ։

ՍԱՂՄՈՍ ԾԵ (ԾԶ)

1 [11]Ի կատարած. վասն ժողովրդեանն, որ
ի սրբոյն հեռացեալ էին. ի ժամանակի
զի կալան զնա այլազգիքն ի Գէթ. յար-
ձանագիր. Սաղմոս Դաւթի։՝

2 Զղօրմէս լինէ, Աստուած, զի կոխեաց

[1] Եբր. Առ գլուխ երաժշտացն, ի վերայ Նկինով թիոյ. [2] Եբրայեցէն յօ-եբը- Հանգիստ։ [3] Եբր. է ընդ որս պաշտպան են անձին իմում՝ Եբր. զի ածէին յիս անիրաւութիւն. [5] Եբր. Հանգիստ։ (9)Աճապարէի փախչել ի սաստկութենէ հողմոյ, ի մրրկէ։

[6] Կամ, ընկեր [7] Եբր. Ախորժք ընդ միմեանս քաղցրութեամբ, [8] Եբր. յորոց մերձենան յիս, զի բազմութեամբ [9] Եբր. տապէ պատասխանի, որ բնակէն ի յաւիտենից։ Հանգիստ։ Զի ոչ փոխին նոքա [10] Եբր. յորս հաշտ էին ընդ նմա. պղծեաց զուխտ իւր։ (22)Ներան նորա կակուղ է քան զկոգի, այլ ի սրտի նորա պատերազմ

[11] Եբր. Առ գլուխ երաժշտացն, ի վերայ Աղաւնւոյ համրէ՝ հեռացելոյ. Արձանագիր Դաւթի, ի ժամանակի զի կալան զնա այլազգիքն ի Գէթ։

զիս մարդ, զօրհանապազ պատերազ-
3 մունք նեղեցին զիս։ Կոխեցին զիս թըշ-
նամիք իմ զօրհանապազ, եւ բազում
4 եղեն ոյք մարանչէին ընդ իս ի բար-
ձանց։ [1]Ի տուէ ես ոչ երկեայց, զի ի
5 Տէր յուսացայ. Աստուծով զովեցից
զբանս իմ". յԱստուած յուսացայ եւ ոչ
6 երկեայց զի՞ արասցէ ինձ մարդ։ Զօր-
հանապազ զբանս իմ անարգեին, զի-
նէն էին խորհուրդք նոցա ի չարութիւն
7 [2]Պանդուխտք եղիցին եւ թաքթաքունք
չրչեսցեն". նոքա զարշապարի իմում
սպասեսցեն՝ որպէս եւ սպասէին անձին
8 իմոյ։ [3]Որպէս առ ոչինչ մերժեցես
զնոսա". բարկութեամբ զժողովուրդս
9 հնատանդեցուսցես, Աստուած։ [4]Զկեանս
իմ պատմեցից քեզ. եղից զարտասուս
10 իմս առաջի քո որպէս խոստացար դու
ինձ։" Դարձցին թշնամիք իմ յետս իւր-
եանց, յաւուր յորում կարդացից առ
քեզ. ահա ծանեայ զի Աստուած իմ ես
դու։ [5]ԶԱստուած օրհնեցից ի լսելս իմ,
11 եւ զՏէր զովեցից ի խօսս իմ". յԱս-
տուած յուսացայ եւ ոչ երկեայց, զի՞
արասցէ ինձ մարդ։
12 [6]Զինէն են ուխտք իմ, զոր տացց քեզ,
13 Աստուած, օրհնութեամբ" փրկեցեր
զանձն իմ ի մահուանէ, [7]զաչս իմ յար-
տասուաց, եւ զոտս իմ ի գայթակղու-
թենէ. հաճոյ եղէց առաջի Տեառն
յերկրին կենդանեաց"։

ՍԱՂՄՈՍ ԾԶ (ՃԵ)

1 [8]Ի կատարած. Մի՛ ապականեր. Դաւթի
արձանագիր. ի ժամանակի զի փախու-
ցանել [9]աքսեցուցանել էր նա յերեսաց Աւետ-
նայ՝ յայրի անդ։

2 Ողորմեա ինձ, Աստուած, ողորմեա
ինձ, զի ի քեզ յուսացաւ անձն իմ. ի
հովանի թեւուց քոց յուսացայց, մինչեւ
3 անցցէ անօրէնութիւն։ Աղաղակեցի առ
Աստուած բարձրեալ, առ Աստուած բա-

4 րերար իմ։ [9]Առաքեաց յերկնից եւ կեց-
ցոյց զիս, եգ ի նախատինս որ կոխէին
զիս. առաքեաց Աստուած զողորմու-
5 թիւն եւ զճշմարտութիւն իւր. Եւ
փրկեաց զանձն իմ ի միջոյ զազանաց, զի
ննջէի ես խռովեալ". որդւոց մարդկան
առամունք իւրեանց զէն եւ նետք են,
եւ լեզուք նոցա որպէս զսուր սուսերի։
6 Բարձրեալ ես դու յերկինս, Աստուած,
եւ յամենայն երկրի են փառք քո։
7 Որոգայթ պատրաստեցին ոտից իմոց,
[10]խոնարհ ապարին զանձն" իմ. փորեցին
առաջի իմ խորխորատ, եւ անկան ինք-
8 եանք ի նոյն։[11] Պատրաստ է սիրտ իմ,
Աստուած, պատրաստ է սիրտ իմ օրհ-
նել եւ սաղմոս ասել [12]քեզ փառօք ի-
9 մովք". Զարթիր, փառք իմ, զարթիր
սաղմոսիւք եւ օրհնութեամբ, եւ ես
10 զարթեայց առաւօտուն։ Խոստովան եղէց
քեզ ի ժողովուրդս, Տէր, եւ սաղմոս
11 ասացից քեզ յազգս։ Մեծ եղեւ մինչ-
չեւ յերկինս ողորմութիւն քո, մինչեւ
12 յամպս ճշմարտութիւն քո։ Բարձրեալ ես
դու յերկինս, Աստուած, եւ յամենայն
երկրի են փառք քո։

ՍԱՂՄՈՍ ԾԷ (ՃԶ)

1 [8]Ի կատարած. Մի՛ ապականեր. ար-
ձանագիր Դաւթի։

2 Թէ արդարեւ զարդարութիւն խօսէիք,
եւ ուղի՞ղս դատէիք, որդիք մարդկան։
3 Քանզի եւ սրտիւ իսկ ի սրտի ձերում զա-
նօրէնութիւն գործէք, յերկրի զանիրա-
4 ւութիւն ձեռք ձեր նիւթեն։ Օտար եղեն
մեղաւորք ի մօրէ, խարխլան յարգանդէ
5 եւ խօսեցան սուտ։ [13]Սրտմտութիւն
նոցա բան նմանութեան օձի, որպէս
իժի եւ քարոյր զի խցել է զականջս
6 իւր, Զի մի՛ լուիցէ նա զձայն թովչի
ճարտարի, [14]եւ մի՛ առցէ զնզ ի պե-
7 զատուէ իմաստնոյ։ Աստուած փչրեսցէ
զատամունս նոցա ի բերանս իւրեանց,
եւ զժանիս առիւծուց խորտակեաց Տէր։
8 [15]Անարգ եղիցին՝ նոքա որպէս ջուր զի
հեղուլ, ի լարել աղեղան նոցա սիւս-

---

[1] ԵԲԲ. Ցաւուր յորում երկեայց, ի քեզ յուսացայց։ Աստուածով զովեցից զբանս նորա [2] ԵԲԲ. Ժողովին եւ թաքչին [3] ԵԲԲ. Ցանօրէնութեան յիջի՞ նոցա խուսափել [4] ԵԲԲ. Զմոփառել իմ հաշուեցեր. դիր զարտասուս իմ ի տակի քում. ո՞չ ապաքէն ի գրութեան քում են։ [5] ԵԲԲ. Աստուածով օրհնեցից զբան Նորա, Տէրամբ օրհնեցից զբան Նորա [6] ԵԲԲ. Ձիմ վերայ են, Աստուած, ուխտք քո, մատուցից գովութիւն նուիրեալ քեզ։ [7] ԵԲԲ. ո՞չ եւ զոտս իմ ի գայթակղութենէ, զի գնացից առաջի Աստուծոյ ի լոյս կենդանեաց [8] ԵԲԲ. Առ գլուխ երաժշտացն

[9] ԵԲԲ. Առաքեաց յերկնից եւ փրկեաց զիս ի նախատանաց որոց կլանեն զիս։ Հանգիստ։ Առաքեաց Աստուած զողորմութիւն իւր եւ զճշմարտութիւն իւր։ (5) Անձն իմ ի մէջ առիւծուց, ննջեմ ի մէջ ցոլբացելոց [10] ԵԲԲ. խոնարհեցուսանձն [11] ԵԲԲ. Պատրաստեալ յոտեալս, Հանգիստ։ [12] ԵԲԲ. զ-ի-ո-ե [13] ԵԲԲ. Թոյն [14] ԵԲԲ. որ հմայէ հմայս [15] ԵԲԲ. Հալեսցին

9 բասցին. Որպէս [1]մոմ զի հալի, եւ
10 սպառեսցին՝ Անկաւ հուր եւ ոչ տեսին զարեւ, մինչչեւ ի միտ առնուլ էր զփուչս իւրեանց. որպէս գմոխիկ լարկութեամբ կենդանւոյն կիզոյ զնոսա՝"
11 Ուրախ եղիցի արդար՝ յորժամ առնոյ զհատուցումն, եւ [2]զձեռս իւր լուասցէ
12 յարեան մեղաւորի՝ Եւ ասասցէ մարդ, թէ Արդարեւ գոյ պտուղ արդարոյ, եւ է Աստուած որ դատի զնոսա յերկրի

ՍԱՂՄՈՍ ԾԸ (ԾԹ)

1 [3]Ի կատարած. Մի՛ ապականիր, Դաւթի սրճանաչիդ, ի ժամանակի որ առաքեաց Սաւուղ պահարեաց զտունն Նորա, զի սպանցէ զնա։

2 Փրկեա զիս ի թշնամեաց իմոց, Աստուած, յայնցանէ որ յարուցեալ են ի
3 վերայ իմ ապրեսո զիս։ Փրկեա զիս յայնցանէ ոյք գործեն զանօրէնութիւն, յարանց արիւնահեղաց ապրեսո զիս։
4 Որսալ զանձն իմ կամեցան, եւ հասին ի վերայ իմ հզօրք. ոչ մեղք իմ եւ ոչ
5 յանցանք՝ Առանց մեղաց [4]ընթացայ եւ ուղիղ եղէ". զարթիր ընդ առաջ իմ եւ
6 տես։ Դու Տէր զօրութեանց, Աստուած Իսրայելի. Նայեսցայ եւ այց արա ամենայն հեթանոսաց, մի՛ ողորմիր ամենեցուն ոյք գործեն զանօրէնութիւն[5]
7 Դարձցին ընդ երեկոյս, [6]սովեսցին որպէս չունք եւ չրջեսցին զքաղաքաւ։
8 Նոքա զօղանջեսցեն բերանովք իւրեանց, եւ սուր ի շրթունս նոցա. իսկ
9 արդ ո՞վ լուաւ զայս։ Զի դու, Տէր, ծիծաղեսցես զնոքօք, եւ արհամարհես
10 զամենայն հեթանոսս։ [7]Զզօրութիւն իմ առ քեզ սահեցից", զի Աստուած
11 օգնական իմ է։ Աստուած իմ, ողորմութիւն Նորա կանխեսցէ առ իս, եւ Աստուած իմ ցուցցէ ինձ ի թշնամիս իմ։
12 Մի՛ սպանաներ զնոսա, զի մի՛ [8]մոռասցին զմոզուզուրգս քո". ցրուեա զնոսա զօրութեամբ քով եւ ընկճեա զնոսա, զի դու ես պաշտպան իմ, Տէր։

13 Մեղք բերանոյ նոցա եւ բանք շրթանց նոցա, ընկալցին նոքա յամբարտաւանութեան իւրեանց. յանէծս եւ ի ստութիւն մասնեսցին. ի կատարածի բարկութեան սպառեսցին, եւ մի՛ գոյցին. գիտասցեն զի Աստուած տիրէ Յակոբ
15 բայ, եւ ամենայն ծագաց երկրի։ [9]Դարձցին ընդ երեկոյս, [10]սովեսցին որպէս
16 չունք եւ չրջեսցին զքաղաքաւ. Նոքա սփռեսցին յուտել, ապա թէ ոչ յագեսցին՝ տրտնջեսցեն։
17 Ես օրհնեցից զօրհնութիւնս Տեառն, գնածացայց աւուրս յողորմութեան
18 քումմ, զի եղեր իմ պաշտպան Եւ տուն ապաւինի, յաւուր նեղութեան իմոյ։
19 Օգնական իմ, քեզ սաղմոս ասացից, Աստուած ապաւէն իմ, Աստուած ողորմութեան իմոյ։

ՍԱՂՄՈՍ ԾԹ (Կ)

1 [11]Ի կատարած. զառանցելոյ ժամանակաց
2 առ ուսմանէ. Ի ժամանակի զի հրձիգ արար նա զմիջապետս եւ զԱսորեաստանն Սորոզայ, եւ ի զարձին հարկանէր Գողիաթ զգօրն Ազաից յերկոտասան հազարս. արձանագիր. Սաղմոս Դաւթի"

3 Աստուած, մնրժեցեր եւ աւերեցեր զմեզ, բարկացար եւ գթացեր ի մեզ։
4 Շարժեցեր զերկիրն եւ խոովեցուցեր զայս, բժշկեա զվարուածս սորա զի սասանեցաւ։ Ցուցեր ժողովրդեան քումմ խստութիւն, եւ եռեր ըմպել մեզ գինի յիմարութեան։ Եւտուր երկիւղածաց քոց
6 նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղանց։
7 Որպէս փրկեսցան սիրելիք քո, կեցո աջով քով եւ լուր մեզ։ Աստուած խօսեցաւ ի սրբութենէ իւրմէ, ցնծացայց, բաժանեցայց զՍիւքէմ, եւ զհովիտն [10]Յարկաց չափեցից։ Իմ է
9 Գաղաադ եւ իմ է Մանասէ, Եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ, Յուդա [11]թագաւոր
10 իմ, Մովաբ աւազան [12]յուսոյ իմոյ. Ցնծովմէ ուղղեցից զգնացս իմ, [13]եւ ինձ
11 այլազգիք հնազանդ եղեն"։ Ո՞ տարցի

---

[1] ԵԲԲ. խղուենջ զի Հալի ի գնալ իւրում իբրեւ զվիժած կնոջ որ ոչ տեսցէ զարեւ։ (10) Մինչչեւ կամ՝ այլից ձերոց առեալ զագուցն փշոց, թէ՝ լցեն դալար թէ՝ բորբոքեալ մըրրկաւ տրուեսցէ զնոսա։ [2]ԵԲԲ. զոտս [3]ԵԲԲ. Առ գլուխ երաժշտացն [4]ԵԲԲ. էի, ընթացան եւ պատրաստ եղէն [5]ԵԲԲԱՅԵՑԻՆ յաւելու, Հանգիստ։ [6]ԵԲԲ. Հայհոյեցեն [7]ԵԲԲ. Ով զօրութիւն իմ կամ, Նորա, քեզ սպասեցից [8]ԵԲԲ. մոռասցի ժողովուրդ իմ

[9] ԵԲԲ. Առ գլուխ երաժշտացն, ի վերայ Շուշանեաստութիւն. արձանագիր Դաւթի, առ ուսմանէ.(2)Ի կռուել Նորա ընդ Ասորւոց Միջագետաց եւ ընդ Ասորւոց Սուբայ, եւ ի գարձին հարկանէր Յովաբ զԵդովմացեցիս ի ձորն Աղտից երկոտասան հազարս։ [10]ԵԲԲ. Սակբոմիս [11]ԵԲԲ. օրէնսդիր [12]ԵԲԲ. յուսացման [13]ԵԲԲ. ցնծացէք, Փղշտացիք, ցնծացէք

զիս ի քաղաք ամուր, կամ ո՞ առաջ-
12 նորդեսցէ ինձ մինչեւ յԵդոմէ. եթէ ոչ դու, Աստուած, որ մերժեցեր զմեզ, եւ ոչ ելեր, Աստուած, ընդ զօրս մեր։
13 Տուր մեզ օգնութիւն ի նեղութեան, զի
14 ընդունայն է փրկութիւն մարդոյ։ Աստուծով արասցուք զօրութիւն, եւ նա արհամարհեսցէ զայնոսիկ որ նեղեն զմեզ։

ՍԱՂՄՈՍ Կ (ԿԱ)

1 [1]Ի կատարած ընդ օրհնութիւնս. Սաղմոս Դաւթի։

2 Լուր, Աստուած, աղօթից իմոց, եւ
3 նայեաց, Տէր, յաղօթս իմ։ Ի ծագաց երկրէ կարդացի առ քեզ, մինչ ի վաստակիլ սրտի իմոյ. [2]ի վիմէ բարձր ա-
4 րարեր զիս, առաջնորդեցեր զիս. եւ՝ իմ եղեր յոյս, եւ աշտարակ հզօր եղեր
5 ինձ յերեսաց թշնամւոյն։ Բնակեցայց ես ի յարկս քո յաւիտեան, եւ ծածկեսցայց ընդ հովանեաւ թեւուց քոց։[3] Դու,
6 Աստուած, լուար աղօթից իմոց, ետուր ժառանգութիւն՝ ոյք երկնչին յանուանէ
7 քումմէ։ Աւուրս յաւուրս յաւելցուր թագաւորի, [4]ամացս նորա, աւուրս աղգաց
8 մինչեւ յաղգս նորա՝։ Կայ եւ մնայ յաւիտեան առաջի Աստուծոյ. [5]ողորմութիւն, եւ ճշմարտութիւն ոյք խնդրեսցեն ի նմանէ՝։ Այսպէս սաղմոս ասացից
9 քեզ յաւիտեանս յաւիտենից, եւ տացց քեզ զաղօթս իմ օր ըստ օրէ։

ՍԱՂՄՈՍ ԿԱ (ԿԲ)

1 [6]Ի կատարած. ի վերայ Իդիթունայ. Սաղմոս Դաւթի։

2 Բայց միայն Աստուծոյ հնազանդ լեր, անձն իմ, զի ի նմանէ է ինձ վրկու-
3 թիւն։ Նա է [7]Աստուած իմ եւ փրկիչ իմ, ապաւէն իմ՝ զի մի սասանեցայց
4 առաւել։ Մինչեւ կերր յառնէք ի վերայ մարդոյ՝ սպանանել ամենեքեան, որպէս յորմոյ թիւրելոյ եւ ի ցանգոյ[8] մերժե-
5 լոյ։ Բայց միայն [9]զպատիւ իմ խորհեցան մերժել լինէն, եւ ընթացան ի ծարաւս

[1] ԵԲԲ. Ա. գլուխ երաժշտացն. ի վերայ Նկինովթայ, նորին Դաւթի։ [2] ԵԲԲ. ի վէմ որ բարձր է քան զիս՝ առաջնորդեա ինձ. (4) Զի եղեր յոյս իմ, Հանգիստ։ [3] ԵԲԲ. ամբ նորա իբրեւ ազգաց յազգս [4] ԵԲԲ. զսղորմութիւն եւ զճշմարտութիւն պատրաստեա որ պահեցեն զնա [5] ԵԲԲ. Ա. գլուխ երաժշտացն [6] ԵԲԲ. վէմ [7] ԵԲԲ. խախտելոյ [8] ԵԲԲ. ի պատուոյ նորա խորհեցան մերժել զնա, սիրեցին զնդ. սուտ[թիւն]

իւրեանց՝. բերանովք իւրեանց օրհնէին, եւ սրտիւք իւրեանց անիծանէին։[3]

6 Բայց սակայն Աստուծոյ հնազանդ լեր անձն իմ, զի ի նմանէ է ինձ համբերու-
7 թիւն։ Նա է [7]Աստուած իմ եւ փրկիչ իմ, ապաւէն իմ՝ զի մի սասանեցայց։
8 [8]Աստուծոյ է զօրութիւն իմ եւ փառք իմ. Աստուած օգնութեան իմոյ, յոյս
9 իմ է առ Աստուած։ [8]Յուսացարուք ինձ ամենայն ժողովք ժողովրդոց, սփռեցէք առաջի նորա զսիրտս ձեր, զի Աստուած օգնական է մեր [10]յաւիտեանս ժամանակաց՝։ Հանգիստ։

10 Սակայն ընդունայն են որդիք մարդկան, սուտ են որդիք [11]մարդկան, ի կշիռս իբրեանց մեղանչեն, եւ ինքեանք յաւ-
11 նայնութեան են ի միասին՝։ Մի յուսայք յանիրաւութիւն, յաւիշտակութեան մի ցանկայք. եւ մեծութիւն եթէ առատով գայցէ, մի յօժարեսցին սիրտք ձեր։
12 Միանգամ խօսեցաւ Աստուած, [12]եւ երկուս՝ զայս լուայ. Աստուծոյ է զո-
13 րութիւն. Եւ քո, Տէր, ողորմութիւն, եւ դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս նորա։

ՍԱՂՄՈՍ ԿԲ (ԿԳ)

1 Սաղմոս Դաւթի, մինչ էր նա յանապատին Հրէաստանի։

2 Աստուած, Աստուած իմ, ես առ քեզ առաւօտս առնեմ. ծարաւեաց առ քեզ հոգի իմ, քանիպատիկ եւս եւ մարմին
3 իմ, որպէս երկիր անապատ եւ անջուր, [13]Ուր ոչ գոյ ինձմա ճանապարհ, այսպէս ի սուրբս երեւեցայց քեզ՝, տեսանել
4 զիմ զզօրութիւն քո եւ զփառս քո։ Վասն զի լաւ է ինձ ողորմութիւն քո
5 քան զկեանս իմ, եւ շրթունք իմ գո-
6 վեսցեն զքեզ։ Այսպէս օրհնեցից զքեզ ի կեանս իմ, եւ յանուն քո համբարձից
7 զձեռս իմ։ Որպէս ի ճարպոյ սպարասութենէ լցցի անձն իմ, շրթամբք ցնծու-
8 թեան օրհնեսցէ զքեզ բերան իմ։ Զի թէ յիշէի զքեզ յանկողնի իմում, ընդ առաւօտս կանխեալ խօսէի ընդ քեզ։ Զի
9 եղեր իմ օգնական, ի հովանի թեւուց քոց ցնծացայց։ Եկն զկնի քո անձն իմ,
10 եւ զիս ընկալաւ աջ քո։ Եւ նոքա ի նա-
նիր խնդրեցին զանձն իմ. մտցեն ի ներս

[9] ԵԲԲ. ի պատուոյ նորա խորհեցան մերժել զնա, սիրեցին ընդ. սուտ[թիւն] [10] ԵԲԲ. պ-ի-ա-ե [11] ԵԲԲ. ադնուաց. ի կշռս[դի վերանան ամենեքին միանգամայն առ]նայնութիւն [12] ԵԲԲ. երկիցս [13] ԵԲԲ. Հայեցայ ի քեզ ի սրբութեան քում

11 քոյ անպղտոց երկրի. Մաանեսցին ի
ձեռս սրոյ, եւ բաժինք ագռաւաց լ-
12 ղիցին։ Թագաւոր յուսասցաւ [1]ի Տէր, գո-
վեսցին ամենեքեան որ երդնուն նովաւ.
խցցին բերանք այնոցիկ որք խօսէին զա-
նիրաւութիւն։

ՍԱՂՄՈՍ ԿԳ (ԿԱ)

1 [2]Ի կատարած. Սաղմոս Դաւթի։

2 Լուր, Աստուած, աղօթից իմոց յարա-
չել ինձ առ քեզ, յերկիւղէ թշնամեան
3 հրէիցես զանձն իմ։ Ծածկեսցես զիս ի ժո-
ղովոյ չարաց, ի բազմութենէ որք գոր-
4 ծեն զանօրէնութիւն։ Որք սրեցին որ-
պէս սուսեր զլեզուս իւրեանց, լարե-
ցին զաղեղունս իւրեանց հրոս զառա-
5 նութեան, Ձգել ի գաղտնիս անպղտից որք
ուղիղ են սրտիւք. յանկարծակի ձգեսա-
6 ցեն ի նոսա եւ մի երկիցեն։ Որք զո-
բացուցին յանձինս իւրեանց զրանս չա-
րութեան, խորհեցան թաքուցանել լինել
որոգայթ, եւ ասացին՝ [3]Ո՛չ տեսանէ զայս
7 Տէր։ Քննեցին զանօրէնութիւն, պար-
8 տասեցան ի քննել զքննութիւն։ Մատի-
ցէ այր ի խորութիւն սրտի իւրոյ, եւ
9 բարձր եղիցի Աստուած։ Նետք տղայոյ
եղեն վէրք նոցա, տկարացան ի նոսա
լեզուք իւրեանց. եւ խռովեսցին ամե-
10 նեքեան որք հային ընդ նոսա։ Երկեսցի
ամենայն մարդ եւ պատմեցին զգործս
Աստուծոյ, եւ զարարածս նորա ի միտ ա-
11 րին։ Ուրախ եղիցի արդար ի Տէր, եւ
յուսասցի ի նա. Նովաւ գովեսցին ամե-
նեքեան որք ուղիղ են սրտիւք։

ՍԱՂՄՈՍ ԿԴ (ԿԲ)

1 [4]Ի կատարած. Սաղմոս Դաւթի. օրհնու-
թիւն երեմիայի եւ եղկելւոյն եւ ժո-
ղովրդեանն յորժամ ի պանդխտութենէն
կամէին ելանել։

2 Ցեղ վայելէ օրհնութիւն, Աստուած, ի
Սիոն, եւ քեզ տացին աղօթք [5]յերու-
3 սաղէմ։ Լուր աղօթից իմոց, զի առ քեզ
4 ամենայն մարմին եկեսցէ։ Բանք անօ-
րինաց զօրացան ի վերայ մեր, զամ-
պարչութիւնս մեր դու քաւեսցես։
5 Երանի՛ զոր ընտրեցեր եւ ընկալար, եւ
բնակեսցէ ի գաւիթս քո. լցցուք մեք ի
բարութենէ տանն քո, սուրբ է տաճար քո։
6 Ահաւասիկ արդարութեամբ, լուր մեզ,
Աստուած փրկիչ մեր, յոյս ամենայն ծա-
7 գած երկրի եւ որ ի ծով հեռի։ Ո պատ-
րաստէ զկերինս զօրութեամբ իւրով, եւ
8 զգեցեալ է զօրութիւն։ Ո [6]խռովեցու-
ցանէ զմինծութիւն ծովու, եւ զձայն
ալեաց նորա ցածուցանէ. խռովեսցին
9 հեթանոսք։" Եւ երկիցին բնակիչք երկ-
րի ի [7]նշանաց քոց. յելս առաւօտու եւ ընդ
երեկոյս զու արձասցին։"

10 Հայեցար յերկիր՝ արբեցուցեր զնա,
եւ բազում արարեր զմինծութիւն նորա.
գետն Աստուծոյ լի եղեւ ջուրբ. պատ-
րաստ արարեր զկերակուր նորա, զի
11 այսպէս է պատրաստութիւն։ Զակօս
նորա արբուցեր, եւ [8]բազում արա-
րեր զարմսիս նորա". ի ցօղել նորա՝
12 գուարթ եղիցի բոյս նորա. [9]Օրհնեացի
պսակ տարւոյ քաղցրութեան քո.
դաշտք քո լցցին պարարտութեամբ.
13 Պարարտասցին գեղեցկութիւնք անա-
պատի". լուրք ցնծութիւն զգեցցին.
14 Ձգեցցին [10]խոյք մաքուց". Հովիտք բա-
զում արասցին ցորեան. ազաղակեսցեն
եւ օրհնեսցեն։

ՍԱՂՄՈՍ ԿԵ (ԿԳ)

1 [11]Ի կատարած. Սաղմոս Դաւթի. վասն
յարութեան։"

2 Ազաղակեցէք առ Աստուած ամենայն
երկիր. սաղմոս ասացէք անուան նորա,
եւ տուք զփառս օրհնութեան նորա։
3 Ասացէք Աստուծոյ՝ Որպէս զի՛ ահեղ են
գործք քո, ի բազում զօրութեան քում
4 ստիցին քեզ թշնամիք քո։ Ամենայն եր-
կիր երկիր պագցեն քեզ, սաղմոս ա-
սացեն քեզ, եւ սաղմոս ասասցեն
անուան քում։[12]

---

[1] Եբր. յԱստուած [2] Եբր. Առ գլուխ երաժշտացն
[3] Եբր. Ո՞ տեսցէ զնոսա։ (7) Թարհեցան զանօրէ-
նութիւն. կատարեցին զխորհուրդն զոր խորհե-
ցան, ներքինն մարդոյ եւ սիրտ խոր են։ (8) Հարցէ
զնոսա Աստուած նեռիւք, յանկարծակի առ-
ցեն վէրս։ (9) Այսպէս տացի նոցա գթել, զի
հակառակ անձանց նոցա է լեզու նոցա. խռո-
վեսցեն ամենեքեան որք տեսցեն զնոսա։ [4] Եբր.
Առ գլուխ երաժշտացն. Սաղմոս Դաւթի, երգ։
[5] Եբր. գոլոթ

[6] Եբր. ցածուցանէ զձայն ծովու, զձայն ալեաց
նորա, եւ զխռովութիւն ազգաց։ [7] Եբր. գելս
առաւօտու եւ գերեկոյն գու ուրախ առնես
[8] Եբր. Հարթեցեր փոսս նորա [9] Եբր. Պսակեցեր
զտարին քաղցրութեամբ քով. եւ շուիդք
քո կաթեցուսցեն պարարտութիւն։ (13) Կաթե-
ցուսցեն յարօտս անապատի [10] Եբր. Դաշտք
խաշամբք [11] Եբր. Առ գլուխ երաժշտացն.
երգ, Սաղմոս։ [12] Եբրայեցն յ–ե–լ–ե–, Հանգիստ

5 Եկայք եւ տեսէք զգործս Աստուծոյ,
որպէս զի՛ ահեղ են խորհրդովք քան զա-
6 մենայն որդիս մարդկան։ Ո դարձոյց
զծովն ի ցամաք, եւ ընդ գետս անցցեն
յոտանաւոր. անդ ուրախ եղիցուք մեք
7 ի նա։ Որ տիրէն զօրութեամբ իւրով յա-
ւիտենից, աչք նորա ի հեթանոսս հայիին.
ոչք դառնացուցին զնա՝ մի բարձրաս-
ցին յանձինս իւրեանց։[1]
8 Օրհնեցէք, հեթանոսք, զԱստուած
մեր, լսելի արարէք զձայն օրհնութեան
9 նորա։ Այն որ եդ զանձն իմ ի կեանս,
10 եւ ոչ եթող զոտին իմոյ։ Փոր-
ձեցեր զմեզ, Աստուած, եւ քննեցեր,
11 որպէս եւ քննի արծաթ։ Իջուցեր զմեզ
յորոգայթ, եդեր նեղութիւն ի թիկունս
12 մեր։ Անցուցեր զմարդիկ ի վերայ գլխոց
մերոց. անցաք մեք ընդ հուր եւ ընդ
ջուր, եւ հաներ զմեզ ի հանգիստ։
13 Մտից ի տունս քո պատարագօք, տաց
քեզ զուխտս իմ զոր խոստացան քեզ
14 շրթունք իմ, Զոր բերան իմ խօսեցաւ
15 ի նեղութեան։ Զողջակէզս ուղղալից
մատուցից քեզ խոյովք եւ խնկովք, եւ
քեզ մատուցից զուարակս եւ նոխազս[1]
16 Եկայք լուարուք ինձ, եւ պատմիցից
ձեզ, ամենեքեան որք երկնչիք յԱստուա-
17 ծոյ, զոր ինչ արար անձին իմոյ։ Առ
նա բերանով իմով կարդացի, եւ բարձր
18 արարի զնա լեզուաւ իմով։ Զմիտս թէ
տեսանէի ի սրտի իմում, մի՛ լսիցէ ինձ
19 Տէր։ Վասն այսորիկ լուաւ Աստուած,
եւ նայեցաւ ի ձայն խնդրուածոյ իմոյ։
20 Օրհնեալ է Աստուած որ ոչ ի բացեայ
արար զաղօթս իմ, եւ ոչ զողորմու-
թիւն իւր յինէն։

ՍԱՂՄՈՍ ԿԶ (ԿԷ)

1 [2]Ի կատարած ընդ օրհնութիւն. Սաղ-
մոս երգոյ։"

2 Աստուած, ողորմեա մեզ եւ օրհնեա
զմեզ, երեւեցո զերեսս քո ի մեզ, [3]եւ
3 ողորմիա մեզ", Ճանաչել յերկրի զճա-
նապարհս քո, յամենայն ազգս փրկու-
4 թիւնս քո։ Խոստովան եղիցին առ քեզ
ժողովուրդք, Աստուած, խոստովան ե-
ղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն։
5 Ուրախ եղիցին եւ ցնծասցին ազգք,

[1] ԵԲԸ՝ ՅՈՒԲԼԵՈՆ ՏՕՆԻ, Հանգիստ։ [2]ԵԲԸ։ Առ գլուխ երաժշտացն։ ի վերայ Նկինովթայ։ Սաղմոս, երգ։ [3]ԵԲԸ։ Հանգիստ

զի դու դատիս զժողովուրդս յուղղութիւն, եւ ազգաց երկրի դու առաջնորդես[1]։ Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք, Աստուած, դոհասցին զքեզ ժողովուրդք ամենայն։ Երկիր ետ զպտուղ իւր, եւ օրհնեաց զմեզ Աստուած, Աստուած մեր։ Աստուած մեր օրհնեսցէ զմեզ, եւ ի նմանէ երկիւղն ամենայն ծագք երկրի։

ՍԱՄՂՈՍ ԿԷ (ԿԸ)

1 [4]Ի կատարած. Սաղմոս Դաւթի։"

2 Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ամե-
նայն թշնամիք նորա, փախչեն ատե-
3 լիք նորա յերեսաց նորա։ Որպէս պա-
կասէ ծուխ՝ պակասեսցին. որպէս հալի
մոմ առաջի հրոյ՝ այնպէս կորիցեն մե-
4 ղաւորք յերեսաց Աստուծոյ։ Արդարք
ուրախ եղիցին՝ ցնծասցեն առաջի նո-
րա, եւ զուարճասցին յուրախութեան
իւրեանց։
5 Օրհնեցէք զԱստուած, եւ սաղմոս ա-
սացէք անուան նորա. ճանապարհ ա-
րարէք այնմիկ որ [5]նստի ընդ արեւ-
մուտս, եւ Տէր է անուն նորա. ցնծաս-
ցեն առաջի նորա, եւ խռովեսցին յե-
6 րեսաց նորա"։ Որ հայրն է որբոց եւ
դատաւոր այրեաց, Աստուած ի տեղւոջ
7 սրբութեան իւրում։ Աստուած բնակե-
ցուցանէ զմիակրօնս ի տան, եւ հանէ
զկապեալս [6]քաջութեամբ իւրով, սոյն-
պէս եւ զդառնացօղս որ բնակեալ են ի
գերեզմանս"։
8 Աստուած, ընդ ելանել քեզ առաջի
ժողովրդեան քո, ընդ անցանել քեզ ընդ
9 անապատս,[1] Երկիր չարժեցաւ, քանզի
եւ երկինք ցօղեցին յերեսաց Աստուծոյ,
[7]ի Սինէ առաջի" Աստուծոյ Իսրայէլի։
10 Անձրեւ [8]կամաց պատրաստեցեր, Աս-
տուած, ժառանգութեանն քում. [9]Քէ-
պէտեւ հիւանդացաւ՝ սակայն դու հաս-
11 տատեցեր զնա։ [9]Նէ գազանք" քո բնա-
կեսցեն ի նմա. պատրաստ արարեր քաղց-
րութեամբդ քով աղքատի, Աստուած։
12 Տէր տացէ պատգամս աւետարանողաց
13 [10]թագաւորք զօրութեանց

[4] ԵԲԸ։ Առ գլուխ երաժշտացն, Սաղմոս Դաւթի, երգ։ [5]ԵԲԸ։ Հեծեալն է յարեւապաս, Տէր է անուն նորա. ցնծացէք առաջի նորա [6]ԵԲԸ։ ի յաջողութիւն. սակայն ապատամբք բնակեն ի ցամաքի, [7]ԵԲԸ։ Այս Սինայ ընդէնջ յերեսաց Աստուածոյ [8]Կամ, առատ [9]Կամ, ժողովուրդ [10]ԵԲԸ։ Թագաւորք զօրաց փախչին, փախչին, եւ կին բնակեալ ի տան բաժանէ զաւարն։

սիրելոյ, զկեղեցկութիւն տան քո լա-
14 ժանալ յաւուրի՝ Թէպէտ եւ ննջես
ջիք ի մէջ վիճակաց, թեւք աղաւնւոյ
արծաթապատ, եւ թիկնամէջք նորա ի
15 գոյն ոսկւոյ։ [1]Ի զատարել երկնաւորին
զթագաւորս ի վերայ նորա, ձիւնասա-
ցին՝ ի Սալման։
16 Լեառն Աստուծոյ լեառն [2]պարարտ,
լեառն մածնալ եւ լեառն պարարտ,
17 Եւ ընդէ՞ր կարծէք, լերինք հպարտա-
ցեալք՝, լեառն ընդ որ հաճեցաւ Աս-
տուած բնակել ի նմա. քանզի եւ Տէր
իսկ բնակեսցէ ի նմա ի սպառ։
18 Կառք Աստուծոյ բիւրապատիկք, հա-
զարք ուրախչաց, եւ Տէր ի նոսա ի Սինէ
19 սրբութենէ իւրմէ։ Ել ի բարձունս՝ գե-
րեաց գերութիւն. առ աւար, յաչ-
խատաց պարգեւս եւ ետ որդւոց մարդ-
կան. [3]քանզի թերահաւատից եւս բնա-
կեալ եղիցին ի նմա. Տէր Աստուած օրհ-
20 նեալ՝. Օրհնեալ Տէր զօրհնութապաղ, [4]ա-
ռաջնորդեսցէ մեզ Աստուած փրկիչ մեր՝։
21 Աստուած մեր Աստուած կենարար, եւ
22 ի Տեառնէ են ելք մահու։ Բայց սակայն
Աստուած փչրեսցէ զգլուխս թշնամեաց
իւրոց, եւ գներան կարճողին որ գնան
23 յանօրէնութեան ի բերանց։ Ասաց Տէր,
[5]Ի խորոց անդնդոց դարձուցից, եւ ի
միջոց ժանեաց դիմի ի դարս կորզեցից՝։
24 Արդէն ի լացցի ոտն քո յարեան, եւ լե-
զուք չանց քոց յարինէ թշնամեաց քոց,
25 Երեւեցան գնացք քո, Աստուած,
գնացք Աստուծոյ թագաւորին [6]մերոյ
26 սրբոյ։ Կանխեցին իշխանք հնձել զօրհ-
նութիւն, ի մէջ գուսանաց եւ գովչաց՝։
27 Ցեկեղեցիս օրհնեցէք զԱստուած, եւ
28 զՏէր՝ յաղբերացն Իսրայելի։ Անդ Բենիա-
մին ի տղայս թեան [7]զարմանալի, իշ-
խանք Ցուդայ առաջնորդք նոցա՝ իշխանք
Զաբուղոնի եւ իշխանք Նեփթաղիմայ։
29 [8]Հրամայեա, Աստուած, զօրութեան քո,
զօրացո՝ զայս զոր հաստատեցեր ի
30 մեզ։ Ի տաճարէ քումմէ յերուսաղէմ
քեզ մատուսցեն թագաւորք պատա-
31 րագս։ Սաստեա ի գազան եղեգան, ի
ժողովս զօրարակաց եւ ի զաս երինջոց.
խոտեսցին այնոքիկ որ ընտրեալ են ար-
ծաթով, ցրուեա զհեթանոսս այք կա-
32 մին ընդ պատերազմ։ Եկեսցեն [9]հրեշ-
տակք յեգիպտոսէ, Հնդիկք յառաջա-
գոյն ձեռնտու լիցին՝ առ Աստուած։
33 Թագաւորութիւնք երկրի, օրհնեցէք
զԱստուած, եւ ասղմոս ասացէք [10]Տեառն.
34 Ձանապարհ արարէք այնմիկ, որ նստի
յերկինս երկնից ընդ արեւելս՝. ահա տա-
35 յէ զձայն իւր՝ զձայն զօրութեան։ Եւ
տուք զփառս Աստուծոյ. ի վերայ Իս-
րայէլի մեծ վայելչութիւն նորա, եւ զօրու-
36 թիւն նորա մինչեւ յամպս երկնից։ Ա՛քան-
չելի է Աստուած ի վերայ սրբոց իւրոց,
Աստուած Իսրայելի. նա տացէ զօրու-
թիւն հաստատութեան ժողովրդեան իւ-
րոյ. օրհնեալ է Աստուած։

ՍԱՂՄՈՍ ԿԸ (ԿԹ)

[11]Ի կատարած. վասն զառանցելոյ.՝ Ասղ-
մոս Դաւթի։

2 Կեցո զիս, Աստուած, զի հասին ջուրք
յանձն իմ, ընկղմայ ես ի խորս անդնդոց,
3 ուր ոչ գոյ հնձ հանդիստ։ Եկի ես ի
խորս ծովու, եւ չրջանք ընկղմեցին զիս։
4 Վաստակեցի ես առ ազաղակել, կերկե-
ցաւ կոկորդ իմ. նուազեցին աչք իմ,
առ յուսալ հնձ [12]առ Տէր Աստուած՝ իմ։
5 Բազում եղեն քան զվիրս գլխոյ իմոյ
այք ատելին զիս ի տարապարտուց. զօ-
րացան յիս թշնամիք իմ եւ ատելիք իմ
ի նանիր. զինչ զոր ոչ յափշտակեալ էր՝
առաջի նոցա։
6 Աստուած, դու ծանեար զանզգամու-
թիւն իմ, եւ յանցանք իմ ի քէն ոչ ծած-
7 կեցան։ Մի ամաչեսցեն վասն իմ որ
համբերեն քեզ, Տէր, Տէր զօրութեանց.
մի պատկառեսցեն վասն իմ այք խնդրեն
8 զքեզ, Աստուած Իսրայելի։ Վասն քո
հանդերձ նախատանաց, եւ ծածկեաց
9 ամօթ զերեսս իմ. Օտար եղէ ես յոյ-
բայոց իմոց, եւ հնար որդւոց մօր իմոց։

---

[1]ԵԲԲ. Ի գրոել Աժենակալին զմի ազաւորս ի նմա, սպիտակացաւ որպէս ձիւն [2]ԵԲԲ. Բաշան, լեառն գագաթանց, լեառն Բասան։ (17)Եւ զի՞ գչարիք, լերինք գագաթանց [3]ԵԲԲ. Թերահաւատից եւս, ի բնակել Տեառն Աստուծոյ
[4]ԵԲԲ. եթէ գիցի բեռն ի վերայ մեր, Աստուած փրկութիւն մեր է։ Հանգիստ։ [5]ԵԲԲ. Ի Բասանէ դարձուցից, ի խորոց անդնդոց դարձուցից
[6]ԵԲԲ. իմոյ ի սրբութեան։ (26) Յառաջեցին երգեցիկք, նուագածուք զկնի, ի միջի կուսանաց որ հարկանէին թմբուկ [7]ԵԲԲ. որ իշխէ նոցա
[8]ԵԲԲ. Հրամայեաց Աստուած քո զզօրութիւն քո, զօրացո, Աստուած

[9]ԵԲԲ. մեծամեծք յեգիպտոսէ, եթովպիա փութասցէ ձգել զձեռս իւր [10]ԵԲԲ. Տեառն, Հանդիստ, (34) Ահ նուիրէ յերկինս երկնից ի յարեւելից [11]ԵԲԲ. Առ գլուխ երաժշտացն. ի վերայ Նոշաննիմի. [12]ԵԲԲ. յԱստուած

10 Նախանձ տան քո եկեր զիս , նախատինք նախատչաց քոց անկան ի վերայ իմ։
11 Ածարհեցուցի պահօք զանձն իմ , եւ
12 եղեն ինձ այս նախատինք ։ Արարի զհանդերձս իմ քուրձ , եւ եղէ յառակ նոցա ։
13 Ընդէն խորհէին ոչք նստեալն առ դրունս , ընդ այսր առնէին ոչք ըմպէին գինի ։
14 Ես յաղօթս կայի առ քեզ , Տէր , ի ժամանակ ընդունելի . Աստուած , ի բազում ողորմութենէն քումմէ լուր ինձ , ի
15 ճշմարտութիւն փրկութենէն քո ։ Ապրեցո զիս ի կաւոյ զի մի՛ ընկղմայց , ապրեցայց ես յատելեաց իմոց եւ ի խորոց
16 ջուրց բազմաց ։ Մի՛ ընկղմեսցէ զիս պոռոյտ ջուրց , եւ մի՛ ընկղմեսցեն զիս անդունդք խորոց . եւ մի՛ կտիրասցէ ղբերան
17 իւր ի վերայ իմ։ Լուր ինձ , Տէր, զի քաղցր է ողորմութիւն քո , ըստ բազում գթու-
18 թեան քումմ հայեաց ցիս. Եւ մի՛ դարձուցաներ զերեսս քո ի ծառայէ քումմէ , զի նեղեալ եմ ես . վաղվաղակի լուր ինձ։
19 Հայեա յանձն իմ եւ փրկեա զիս , եւ վասն թշնամեաց իմոց ապրեցո զիս ։
20 Զի դու դիտես զնախասինս իմ , զամօթ իմ եւ զպատկառանս իմ . առաջի
21 քո են ամենայն նեղիչք անձին իմոյ ։ Նա խատինայ հոմրեր սիրտ իմ եւ թչուառութեան . ակն ունէի ես ի տրտմեալ ընդ իս , եւ ոչ ոք էր . եւ մխիթարիչ
22 ինձ ոք ոչ դտաւ ։ Եւտուն ի կերակուր ինձ լեղի , եւ ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ ։
23 Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորոգայթ , [1]ի հատուցումն եւ ի՛ գայ-
24 թակղութիւն ։ Խաւարեսցին աչք նոցա զի մի՛ տեսցեն , եւ զթիկունս նոցա հա-
25 նապազ կորացո ։ Սրկեսս ի վերայ նոցա զբարկութիւնդ քո, եւ սրտմտութիւնդ բար-
26 կութեան քո հասցէ ի վերայ նոցա ։ Եւ վկեսցին բնակութիւնք նոցա աւերակ , եւ ի յարկս նոցա մի՛ ոք իցէ որ բնակիցէ ։
27 Զի զոր դուն հարեր՝ հալածեցին , եւ ի
28 վէրս ցաւոց իմոց յաւելին ։ Դիր զմեղս ի վերայ մեղաց նոցա , զի մի՛ մտցեն
29 յարդարութիւն քո ։ Ջնջեսցին նոքա ի գպրութենէ քումմէ կենաց , եւ ընդ արդարս քո մի՛ գրեսցին ։
30 Աղքատ եւ ցաւած եմ ես , փրկութիւն քո , Աստուած , ընկալցի զիս ։
31 Օրհնեցից զանուն Աստուծոյ իմոյ օրհնութեամբ , եւ բարձր արարից զնա դո-

[1] ԵԲԲ. ի խաղաղութեան

32 վութեամբ ։ Հաճոյ եղիցի Աստուծոյ քան զորթ մատաղ , որ բերէ զեղջերս եւ
33 զկճղակս ։ Տեսցեն աղքատք եւ ուրախ եղիցին . խնդրեցէք զԱստուած եւ կեց-
34 ցեն անձինք ձեր ։ Զի լուաւ Տէր անանկաց , եւ զկապեալս իւր ոչ արհամարհաց ։
35 Օրհնեսցեն զնա երկինք եւ երկիր , ծով եւ ամենայն որ գոհոյ ի նոսա ։ Աստուած վերկէ զՍիոն , եւ չինեսցին քաղաքք Հրէաստանի. [2]չինեսցեն, բնակիս-
37 ցեն եւ ժառանգեսցեն ի նմա ։ Զաւակ ծառայից քոց հաստատեսցի անդ , եւ ոչք սիրեն զանուն քո բնակեսցեն ի նմա ։

ՍԱՂՄՈՍ ԿՓ (Հ)

1 [3]Ի կատարած . Սաղմոս Դաւթի՝ առ յիշատակի փրկելոյ զնա Տեառն ։"

2 Աստուած , յօգնել ինձ նայեա , եւ , Տէր, 3 չընկերել ինձ փութա ։ Ամաչեսցեն եւ յամօթ լիցին որ խնդրէին զանձն իմ , դարձցին յետս եւ ամաչեսցեն ոչք խոր-
4 հէին ինձ չար ։ Դարձցին առժամայն ամաչեցեալք՝ որ ասէին ինձ վաշ վաշ ։
5 Ցնծասցեն եւ ուրախ լիցին ի քեզ ամենեքեան ոչք խնդրեն զքեզ, Տէր. ասասցեն յամենայն ժամ , [4]Մեծ է" Աստուած , ոչք սիրեն զփրկութիւնս քո ։
6 Ես աղքատ եւ անանկ եմ , Աստուած , [5]օգնեա ինձ". օգնական եւ փրկիչ իմ ես դու , Տէր իմ , մի՛ յամենար ։

ՍԱՂՄՈՍ Հ (ՀԱ)

1 [2]Ի կատարած . Սաղմոս Դաւթի, որդւոցն Յովնադաբայ՝ եւ առաջին գերութեանն։"

2 Խզել , Տէր , յուսացայ , մի՛ ամաչեցից յաւիտեան . յարդարութեան քումմ փրկեա զիս եւ ապրեցո զիս . խոնարհեցո առ
3 իս զունկն քո , եւ կեցո զիս ։ Լեր իմ , [3]Աստուած , ապաւէն եւ տեղի ամուր կեցուցանել զիս . զի հաստատութիւն
4 իմ եւ ապաւէն իմ դու ես ։ Աստուած իմ , փրկեա զիս ի ձեռաց մեղաւորի , ի
5 ձեռաց անօրինի եւ անիրաւի ։ Դու ես համբերութիւն իմ , Տէր , Տէր , յոյս իմ
6 ի մանկութենէ իմմէ ։ Ի քեզ հաստատեցայ ես յարդանդէ , յորովայնէ մօր իմոյ

[2] ՑԵԲԲ. գլուխ [3] ԵԲԲ. Առ գլուխ երաժշտացն . Դաւթի՝ առ յիշատակէ ։ [4] ԵԲԲ. Մեծացսի [5] ԵԲԲ. փութա ինձ օգնել

դու ես ապաւէն իմ, եւ [1]առ ի քէն է
7 օգնութիւն" իմ յամենայն ժամ։ Որպէս
զի՝ նշաւակ եղէ ես բազմաց, եւ դու
8 օգնական իմ եւ հզօրիչ իմ։ Լցցի բե-
րան իմ [2]գովեստիւդ, ամենայն օրհնե-
ցից գվառո քո, զօրհնութեամբ դմիծ-
9 ւայելչութիւնս քո"։ Մի՛ ընկենուր զիս,
Տէր, ի ժամանակի ծերութեան, ի պա-
կասել զօրութեան իմոյ մի՛ թողուր զիս։
10 Ասացին թշնամիք իմ ինձ, եւ ոք պա-
հապանեցին զանձն իմ, խորհեցան ի միա-
11 սին, եւ ասացին, Աստուած եթող զնա՝
հալածեսցուք եւ հասցուք նմա, զի ոչ
12 ոք է որ փրկէ զնա։ Աստուած իմ, մի՛
հեռի առնիր յինէն, եւ, Աստուած, յօգ-
13 նել ինձ նայեաց։ Ամաչեսցին եւ պա-
կասեսցին որ չարախօս կայնին զանձնէ
իմմէ, զգեցցին զամօթ եւ զպատկա-
ռանս ոք խնդրէին ինձ չար։
14 Ես յամենայն ժամ յուսացայց, եւ յա-
15 ւելից յօրհնութիւնս քո։ Բերան իմ
պատմեսցէ զարդարութիւնս քո, զօր-
հանապազ [3]զփրկութիւնս քո. որպէս
ոչ թէ խարպատութիւն ինչ գիտէի ես
16 գպրութեան. Այլ մտից՝ ի զօրութիւնս
Տեառն. եւ, Տէր, յիշեցի զարդարու-
17 թիւնս քո միայն։ Աստուած իմ, ու-
սուցեր զիս ի մանկութենէ իմմէ, եւ
ցարդ եւս պատմեցից [4]զարդարութիւնս
18 քո։ Մինչեւ յաւուրս եւ ի ծերանալ,
Աստուած իմ, մի՛ թողուր զիս. մինչեւ
[5]պատմեսցի բազուկդ ազգի ամենայնիւր
19 գալոցն է։ Զզօրութիւնս քո եւ զարդա-
րութիւնս՝ մինչ ի բարձունս, զոր արարեր
մեծամեծս. Աստուած, ո՞նման քեզ։
20 Որչափ ցուցեր ինձ նեղութիւնս բա-
զում եւ չարչարանս, դարձեալ միսիթա-
րեցեր զիս, եւ ի խորոց անդնդոց երկ-
21 րէ հաներ զիս։ Յաճախեցեր [6]ի զօրու-
թիւնս քո՝, զարձար եւ միսիթարեցեր
զիս. [7]եւ ի խորոց երկրէ միւսանգամ
22 հաներ զիս։" Արդ եւ ես խոստովան ե-
ղէց քեզ ի պատրաստութիւն սաղմո-
սաց, ճշմարիտդ Աստուած. սաղմոս ա-
սացից քեզ օրհնութեամբ, սուրբդ Իս-
23 րայելի։ Ցնծասցին շրթունք իմ՝ յոր-

ժամ սաղմոս ասիցեմ քեզ, եւ անձն իմ
24 զոր եւ փրկեցեր։ Եւս եւ լեզու իմ զօր-
հանապազ խոսեսցի զարդարութիւնս քո.
[8]ի ժամանակի՝ որպէս" յամօթ լինին եւ
ամաչեսցին ոք խորհէին ինձ չար։

ՍԱՂՄՈՍ ՀԱ (ՀԲ)

1 [9]Ի Սողոմն Սաղմոս։"
2 Աստուած, զիրաւունս քո՝ արքայի
տուր, եւ զարդարութիւնս քո որդւոյ
թագաւորի, դատել զժողովուրդս քո
արդարութեամբ, եւ զաղքատս քո ի-
3 րաւամբք։ Առցեն լերինք զխաղաղու-
թիւն ժողովրդեան, եւ բլուրք զարդա-
4 րութիւն։ Իրաւ արասցէ աղքատաց ժո-
ղովրդեան, եւ կիցուսցէ զորդիս անձա-
կաց, եւ խոնարհեցուսցէ զամբարտա-
5 ւանս։ [10]Կացցէ եւ մնասցէ ընդ արեւու,
յառաջ քան զլուսին" ազգէ մինչեւ յազգ։
6 Իջցէ որպէս զանձրեւ ի վերայ [11]գիզման,
7 որպէս ցօղ զի ցօղէ յերկիր։ Ծագեսցի
յաւուրս նորա արդարութիւն՝ բազում
խաղաղութիւն, մինչեւ կատարեսցի լու-
8 սին։ Տիրեսցէ նա ի ծովէ մինչեւ ի ծով,
9 ի գետոց մինչեւ ի ծագս աշխարհի։ Առա-
ջի նորա [12]նախ Հնդիկք" անկցին, եւ
10 թշնամիք նորա հող կերիցեն։ Թագա-
ւորք Թարսիսի եւ կղզեաց պատարագս
մատուսցեն նմա. թագաւորք [13]Արաբայ եւ
11 Սաբայ պատարագս բերցեն նմա։ Երկիր
պագցեն նմա ամենայն թագաւորք երկ-
րի, եւ ամենայն ազգք ծառայեսցեն նմա։
12 Զի փրկեաց զաղքատն [14]ի հզօրէ, զաղ-
քատն եւ զանանկն որոյ ոչ է իւր օգ-
13 նական։ Անխնայեսցէ նա յաղքատն եւ
ի անանկն, եւ զանձինս սանկաց կե-
14 ցուսցէ. Ի վաչխէ չարաց փրկեսցէ զան-
ձինս նոցա. պատուական է [15]անուն նո-
15 րա առաջի նոցա"։ Կեցցէ եւ տացի նմա
յոսկւոյն [13]Արաբացւոց. յաղօթս կացցեն
[16]առ նա" յամենայն ժամ, եւ զօրհնա-
16 պազ օրհնեսցեն զնա։ Եղիցի [17]հաստա-
տութիւն ընդ ամենայն երկիր, եւ ի վե-
րայ գլխոյ լերանց. [18]բարձրասցի զան"
զիւրանման պտուղ նորա, ծաղկեսցեն [19]ի
քաղաքի Տեառն" որպէս խոտ երկրի։

---

[1] ԵՒԲ. ի քեզ է գովութիւն [2] ԵՒԲ. գովութեամբ քո, զօրհանապազ փառաւք քո [3] ԵՒԲ. փրկութիւն քո. զի ոչ գիտացի զհամար նոցա։ (16) Մտից [4] ԵՒԲ. զարդարութիւն [5] ԵՒԲ. պատմեցից զբազուկ քո ազգի, զզօրութիւն քո ամենայնի որ գալոցն է։ (19) Արդարութիւն քո, Աստուած, [6] ԵՒԲ. զնեձութիւն իմ [7] ՅԵՐ. պ-ից-ե

[8] ԵՒԲ. զի [9] ԵՒԲ. Վասն Սողոմնի [10] ՅԵՐ. Երկիցեն ի քէն մինչ միան արեւ եւ լուսին [11] կամ, խոտոյ հնձելոյ [12] ԵՒԲ. բնակիչք անապատի [13] ԵՒԲ. Շաբայ [14] ԵՒԲ. յաղաղակէն նորա [15] ԵՒԲ. արիւն նոցա առաջի նորա [16] ԵՒԲ. վասն նորա [17] ԵՒԲ. առատութիւն ցորենոյ [18] ԵՒԲ. չարժեսցի իբրեւ [19] ԵՒԲ. ի քաղաքէ

17 Եղիցի անուն [1]Տեառն օրհնեալ յաւիտեան, զի յառաջ քան զարեւ է՝ անուն նորա. ի նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի, եւ ամենայն ազինք երանեսցեն
18 նմա։ Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի՝
19 որ առնէ սքանչելիս միայն. եւ օրհնեալ է անուն [2]սուրբ փառացն նորա յաւիտեան. լցցի փառօք նորա ամենայն երկիր, եղիցի, եղիցի։[3]

ՍԱՂՄՈՍ ՀԲ (ՀԴ)

Սաղմոս Աստուծոյ։

1 Իրրեւ ղի՛ բարի է Աստուած՝ Իսրայէլ, եւ այք ուղիղ են սրտիւք։
2 Բայց ղի իմ փոքր մի եւս ասացանել էին ոտք, սակաւիկ մի եւ դադրակղակալ էին զնացք իմ,
3 Նախանձեցայ ես ընդ անօրէնս՝ վերազգութիւն մեղաւորաց որպէս ասացեալ է.
4 Զի [4]ոչ դոյր վրէպ մահու՝ նոցա. հաստատուն [5]են տանջանք՝ նոցա։ Ի վաստակս մարդկան չեն նոքա, եւ ըստ մարդկան
6 ոչ տանջեսցին։ Վասն այսորիկ կալաւ զնոսա ամբարտաւանութիւն, արկան զիրեարս զամպարշտութիւն եւ զանիրաւութիւն իւրեանց։ Ելցին որպէս
8 ի ճարպոյ [6]անիրաւութիւնք նոցա, զի գնացին նոքա ըստ խորհրդոց սրտից իւրեանց։ Խորհեցան՝ եւ խօսեցան չարութիւնս, զապիրատանութիւն ի բարձունս
9 խորհեցան։ Եդին յերկինս զերեսս իւրեանց, եւ լիզուս իւրեանց անէին
10 զերկիր։ Վասն այսորիկ ժողովուրդ իմ դարձցի այսրէն, եւ [7]աւուրք իմ լի կատարեալ գտցին՝ ի նոսա։ Աստցին՝ Զիա՞րդ գիտաց Աստուած, կամ գուցէ արդեւք
12 գիտութիւն առ ի Բարձրելոյն։ Ահա մեզաւորք են եւ յաջողեալ է նոցա, կանեն
13 եւ անկին զմեծութիւն այնարին։ Ասացի, ի զուր արդարացուցի զսիրտ իմ. լուացայ սրբութեամբ զձեռս
14 իմ. եւ եղէ ես խոչտանգեալ զօրհնատաղ. եւ կշտամբանք իմ ընդ առաւօտս։
15 [8]Թէպէտ եւ՝ ասէի, թէ այսպէս պատմիցիմ, ահաւասիկ ազգ որդւոց քոց [9]ո-
16 րոց եւ ուխտեցի՝։ Ի մտի եդի [10]թէ սա-
17 կայն եւ այս չան է առաջի իմ. Մինչեւ չեւ մտից ի սրտութիւնն Աստուծոյ եւ ի

18 միտս առից զկատարած նոցա։ Սակայն [11]վանեն նենգութեան նոցա տարագիր ածեսցես զնոսա, եւ կործանեսցես զնոսա
19 յամրարտաւանութեան իւրեանց՝։ Իսկ զկնի եղեն յաւեր յանկարծակի, սաստկեցան, պակասեցան, կորեան [12]վասն
20 անօրէնութեան իւրեանց՝. Եւ եղեն որպէս երազք զարթուցելոց. Տէր, [13]ի քաղաքի քում՝ զպատկերս նոցա անարգեսցես։
21 Զի հուր բորբոքեցաւ ի սրտի իմում, եւ
22 երիկամունք իմ այլայլեսցան։ Ես արհամարհեալ եղէ եւ ոչ գիտացի, որպէս
23 պանասուն համարեցայ առաջի քո։ Եւ ես յամենայն ժամ ընդ քեզ եմ. կալար
24 զաջոյ ձեռանէ իմմէ. Ի խորհուրդս քո առաջնորդեցեր զիս, եւ փառօք ընկալար զիս։ Զինչ կայ իմ բնաւ յերկինս,
25 [14]կամ ի քէն՝ զինչ եւս ինդրեցից յերկրի։ Նուազեաց սիրտ իմ եւ մարմին իմ. Աստուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան։
27 Ահաւասիկ այք հեռի արարին զանձինս իւրեանց ի քէն՝ կորիցեն, ապստակեցեր զամենեսեան որ պոռնկաբար եղեն ի քէն։
28 Ինձ մերձենալ առ Աստուած բարի է, եւ դնել առ Տէր զյոյս իմ. [15]պատմել զամենայն օրհնութիւնս քո ի դրունս դստերաց Սիոնի՝։

ՍԱՂՄՈՍ ՀԳ (ՀԴ)

Իմաստութիւն Աստուծոյ։

1 Ընդէր մերժեցեր, Աստուած, ի սպառ. բարկացաւ սրտմտութիւն քո ի վերայ
2 հաւկին արօտի քո։ Ցիշեա զժողովուրդ քո զոր ստացար ի սկզբանէ, փրկեցեր գվիճակ ժառանգութեան քո. լեառն Սիոն այս՝ ուր բնակեցեր դու ի սմա։
3 Համբարձ [16]զձեռն քո ի վերայ ամբարտաւանութեան նոցա՝ ի սպառ. որ ինչ

[1] ԵԲԲ. Նորա յաւիտեան, զի առաջի արեգական մնասցէ [2] ՅԵԲԲ. ԳԵ-ՆԵ [3] ԵԲԲ. ՅԵՍԷՆ յ-ԵԼԵ-, (20) Կատարեցան աղօթք Դաւթի որդւոյ Յեսսեայ
[4] ԵԲԲ. ոչ գան ցասք ի մահուան [5] ԵԲԲ. է զբուխիւն [6] ԵԲԲ. աչք նոցա. անցանեն ըստ ցնորս սրտի։ (8) Ծագր արարին [7] ԵԲԲ. չար լիութեամբ քամեսցի [8] ԵԲԲ. ԵԹԷ [9] ԵԲԲ. ՆԵՆԳ-ԱԼ ԵՐ [10] ԵԲԲ. գիտել զայս։
[11] ԵԲԲ. ի լպիրծս եգիր զնոսա, եւտուր նոցա անկանել յաւեր [12] ԵԲԲ. յերկիւղէ [13] Կամ, ի զարթնուլ քո [14] ԵԲԲ. բաց ի քէն [15] ԵԲԲ. ի պատմել զամենայն գործս քո [16] ԵԲԲ. զգնացս քո ի վերայ աւերածոցն

անիրաւեցաւ Թշնամին ի սրբութիւնն
4 քումմէ։ Պարծեցան ատելիք քո ի մէջ *տա-
րեկենդանութեան քո. եդին զնշանս իւր-
5 եանց զնշանս. [1]եւ ճանեցան ոչ ծանեան
6 զկնի ի վերուստ։ Որպէս յանտառի փայ-
տատոք կատարեցին զդրունս նորա," ի
միասնութիւնատոք եւ մրճոփք կործանե-
7 ցին [2]զնա։ Այրեցին ի հուր սրբութիւնն
քո, յերկրի պղծեցին վխտարան անուան քո։
8 Ասացին ի սիրտս իւրեանց ազգ նոցա ի
միասին, եկայք լռեցուսցուք զամենայն
9 տօնս Աստուծոյ յերկրէ։ Նշանս մեք ինչ
ոչ տեսաք, եւ ոչ եւս գուժէ մարգարէ,
եւ [3]զմեզ ինչ ոք ոչ ճանաչիցէ"։
10 Մինչեւ յե՞րբ, Աստուած, նախատէ
Թշնամին, բարկացուցանէ հակառակորդն
11 զանուն սուրբ քո։ Ընդէ՞ր դարձուցա-
նես զձեռն քո, եւ զաջ քո ի միջոց ծո-
12 ցոյ քումմէ ի սպառ։ Աստուած, թա-
գաւոր մեր յառաջ քան զյաւիտեանս,
որ արարեր զփրկութիւնն ի մէջ երկրի։
13 Դու [4]հաստատեցեր զօրութեամբ քով
զծով, դու խորտակեցեր զգլուխս վիշա-
14 պաց ի վերայ ջուրցդու։ Դու փշրեցեր զգլուխս
Վիշապին, եւ ետուր զնա կերակուր [5]զո-
15 րացն Հնդկաց"։ Դու բղխեցուցեր զաղ-
բիւրս եւ զվտակս, դու ցամաքեցուցեր
16 զգետս սաստիկս։ Քո է օրն եւ քո է
գիշեր, զլոյս եւ զարեւ դու հաստատե-
17 ցեր։ Եւ դու հաստատեցեր զամենայն
սահմանս երկրի. զգարուն եւ զամառն
դու ստեղծեր։
18 Այս յուշ լիցի քեզ՝ զի Թշնամին նա-
խատեաց զՏէր, ժողովուրդ անզգամ
19 բարկացոյց զանուն սուրբ քո։ Մի՛ մատ-
ներ գազանաց զանձն [6]որ խոստովան
առնի առ քեզ", եւ զանձինս անանկայ
20 քոց մի՛ մոռանայր ի սպառ։ Հայեաց յուխտ
քո, զի լցան [7]տունք ափշելոյ յերկրի
21 անիրաւութեամբ"։ Մի՛ դարձցի անանկն
ամաչեցեալ, այլ աղքատն եւ անանկ
22 օրհնեացեն զանուն [8]սուրբ քո. Արի,
Աստուած, եւ դատեա զդատաստանս
քո. յիշեա զնախատինս որ յանդգնմանէն
23 զօրհասապաղ։ Մի՛ մոռանայր զձայն

*ԵԲԲ. ժողովրդեան [1]ԵԲԲ. Անհայտի օրէնս որ բառնային ի վեր ի վերոյ ծառոյ անտառի փայտատոս. (6)եւ արդ զրահագործ նորա [2]ՅԱ-ՅՈՒ [3]ԵԲԲ. չիք որ ընդ մեզ որ գիտիցէ մինչեւ ցերկար [4]ԵԲԲ. պատատեցեր [5]ԵԲԲ. ժողովրդոց բնակելոց յանապատի [6]ԵԲԲ. աստրակի քո [7]ԵԲԲ. անգիտ խաւարինք երկրի բնակութեամբք անիրաւութեան [8]պաչտօնէից քոց. ամբարտաւանութիւն ատելեաց քոց [9]վերացայ հանապազ։

ՍԱՂՄՈՍ Հ (ՀԵ)

1 [10]Ի կատարած. Մի՛ ապականիր. Սաղմոս
օրհնութեան Ասափայ։

2 Խոստովան եղիցուք առ քեզ, Աս-
տուած, խոստովան եղիցուք եւ [11]կար-
գացուք զանուն քո. պատմիցիմ" զա-
3 նունդ աքանչելիս քո։ Յորժամ ժամ
առից՝ ես ուղիղ դատիցայց։ Մաշեցաւ
երկիր եւ ամենայն բնակիչք նորա, ես
հաստատեցի զսիւնս նորա[12]
5 Ասացի անօրինաց՝ թէ Մի՛ անօրինիք.
եւ մեղաւորաց՝ թէ Մի՛ բարձրացուցանէք
6 զեղջիւրս ձեր։ Մի՛ հանդուգնանայք ի բար-
ձունս զեղջիւրս ձեր, եւ մի՛ խօսիք[13]զան-
7 տուժոյ անիրաւութիւն"։ Զի ոչ յարե-
ւելից եւ ոչ յարեւմտից եւ ոչ յանապա-
8 տէ [14]լերանց, Այլ Աստուած դատաւոր
է, զայս խոնարհ առնէ, եւ զայն բարձ-
9 րացուցանէ։ Բաժակ ի ձեռն Տեառն
գինի լի անուռակ արկեալ, եւ [15]խոնար-
հեցոյց յայսմանէ յայս. սակայն մրուր
նորա ոչ սպառեսցի", եւ արբցեն զնա
ամենայն մեղաւորք երկրի։
10 Ես յինեանցայց յաւիտեան, սաղմոս ա-
11 սացից Աստուծոյ Յակոբայ։ Զամենայն
եղջիւրս մեղաւորաց [16]փշրեսցեն, եւ
բարձր եղիցի եղջիւր արդարոյ։

ՍԱՂՄՈՍ ՀԶ (ՀԶ)

1 [17]Ի կատարած ընդ օրհնութիւնս. Սաղ-
մոս Ասափայ. երգ առ Աստուածն հայոց"
2 Յայտնի է [18]ի Հրէաստանի Աստուած", եւ
3 յիսրայէլ մեծ է անուն նորա։ Եղեւ
[19]խաղաղութիւն անդր" նորա, եւ բնա-
4 կութիւն նորա ի Սիոն։ Անդ խորտա-
կեաց Տէր զզօրութիւն ամպանն, զրկէն՝
5 զսուր եւ զճակատամարտս[12] Լուսաւոր
ես դու աքանչելագոյս [20]լերանցն յար-
6 անց. Խռովեցան ամենեքեան որ անա-
միա" են սրտիւք. ննջեցին զքունս իւ-

[8]ԵԲԲ. Թշնամեաց [9]ԵԲԲ. բարձրանայ [10]ԵԲԲ. Առ գլուխ երաժշտացն [11]ԵԲԲ. մերձ է անուն քո. պատմեն [12]ԵԲԲ-ՅԵՅՆ ՅՈՒԼԼ-, Հանգիստ։ [13]ԵԲԲ. պարանոցաւ գոռոզութեան [14]ԵԲԲ. ի՞ցէ բարձրանալ [15]ԵԲԲ. Հեղոյ ի նմանէ. և զմրուր նորա քամեացեն [16]ԵԲԲ. փշրեցից [17]ԵԲԲ. Առ գլուխ երաժշտացն. ի վերայ Նկինոթայ, Սաղմոս Ասափայ, երգ։ [18]ԵԲԲ. Աստուած ի Յուդա [19]ԵԲԲ. ի Սաղէմ խորան [20]ԵԲԲ. քան զլերինս յափշտակութեան։ (6) Կողոպտեցան որ զօրեղ

բեանց եւ ինչ ոչ գոին ամենայն արք
7 ի մեծութեան ձեռաց իւրեանց ։ Ի սաս-
տիկ քումմէ , Աստուած Յակոբայ , [1]նն֊
8 ցին , եւ այք հեծեալ էին ի ձիս՝ ։ Դու
ահաւոր ես , եւ ո՞վ կարէ կալ առաջի
9 [2]քո . Որպէս երեւեցար դու յերկինից ,
յայտնի եղեւ բարկութիւն քո՝ . երկիր
10 երկեաւ եւ սարսեաց ։ Հնդ յառնկն Աս-
տուծոյ ի զառաստան՝ ապրեցուցա-
11 նել զամենայն հեզս [3]երկրի ։ Որհնութիւ
մարդկան խոստովան առնիցն առ քեզ ,
եւ ծածկեալք իմաստութեամբ օրհնես-
12 ցեն զքեզ ։՝ Ուրախ դիք եւ կատարե-
ցէք Տեառն Աստուծոյ [4]մերոյ ամենա-
քեան որ չուրջ էք զնովաւ . մատուցէք
13 պատարագս Ահաւորին ։ Ո քաղէ զհո-
գիս իշխանաց , ահաւոր է նա քան զա-
մենայն թագաւորս երկրի ։

ՍԱՂՄՈՍ ՀՋ (ՀԷ)

*1,[5]Ի կատարած . վասն Իդիթունայ . Սաղ-
մոս Ասափայ ։՝*

2 Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի , ձայ-
նիւ իմով առ Աստուած , եւ նայեցաւ
3 առ իս ։ Ցաւուր նեղութեան իմոյ զԱս-
տուած խնդրեցի [6]ձեռօք իմովք , ի գի-
շերի առաջի նորա , եւ ոչ խաբեցայ՝ ։
4 ոչ կամէր մխիթարել անձն իմ ։ Ծիշեցի
զԱստուած եւ [7]ուրախ եղէ՝ ։ Հոգայի եւ
5 նուազէր ինն հոգի իմ ։ Հանդիսաւ ։ փա-
ծեանեցին պահուց աչք իմ , խռովեցայ
6 եւ ոչ խօսեցայ ։ Խորհեցայ զաւուրսն
զառաջինս , եւ զամս [8]յաւիտենից յիշե-
7 ցի ։ Խօսեցայ ի գիշերի ընդ սրտի իմում , հոգայի եւ տառապէր ինն՝ հոգի
8 իմ ։ Միթէ յաւիտենից մերժեսցէ՞ զինն
Տէր , եւ ո՞չ եւս յաւելուցու ի հաճել եւ
9 եւս ։ Կամ ի սպառ արգիլեցէ զողորմու-
թիւն իւր յինէն , կամ կատարեսցի զբան
10 իւր ազգէ մինչեւ յազգ ։ Կամ մոռասցի՞
գթալ Աստուած իմ եւ եւս , կամ ար-
գելցէ՞ զգթութիւն իւր բարկութեամբ
իւրով ։ Հանդիսաւ ։

11 Ասացի թէ [9]Այժմ սկսայ՝ . այս է նո-
12 րոգումն աջոյ Բարձրելոյն ։ Ծիշեցի
զգործս Տեառն . ի սկզբանէ յիշեցի
13 զսքանչելիս նորա ։ Խորհեցայ յամենայն
գործս քո , եւ ի ձեռագործս քո խորհե-
ցայ ։

14 Աստուած , ի սրբութեան են ճանա-
պարհք քո . ո՞վ է Աստուած մեծ որպէս
15 զԱստուած մեր ։ Դու ես Աստուած՝ որ
առնես սքանչելիս . ցուցեր ժողովրդեան
16 քումմ զզօրութիւն քո ։ Փրկեցեր բազ-
կաւ քով զժողովուրդս քո զորդիսն Յա-
17 կոբայ եւ Յովսեփու ։ Հանդիսաւ ։ Տեսին
զքեզ ջուրք , Աստուած , տեսին զքեզ ջուրք
եւ երկեան , եւ խորք [10]խռովեցան ի ձայնէ
18 ջուրց բազմաց ։ Ձայն ետուն ամպք ,
19 քանզի՝ եւ նետք քո գնան՝ [11]ի ձայնէ որո-
տալոյ քո անուա՛ի՝ . երեւեցան փայլա-
տակունք քո տիեզերաց , խռովեցաւ եւ
20 դողաց երկիր ։ Ի ծովու են ճանապարհք քո ,
եւ չաւիղք քո ի ջուրս բազումս , եւ հետք
21 քո ոչ եւս երեւին ։ Առաջնորդեցեր որպէս
խաչին ժողովրդեան քո , ի ձեռն Մով-
սիսի եւ Ահարոնի ։

ՍԱՂՄՈՍ ՀԸ (ՀԸ)

Իմաստութիւն Ասափայ ։

1 [12]Ա՛ունկն դիր , ժողովուրդ իմ՝ , յօրէնս իմ ,
խոնարհեցուցէք զականջս ձեր ի բանս բե-
2 րանոյ իմոյ ։ Բացիւ առակաւ զբերան իմ ,
3 եւ խօսեցայց զառակս ի սկզբանէ ։ Որպէս
լուաք եւ ծանեաք զայս , եւ հարքն մեր
4 պատմեցին մեզ ։ Ոչինչ ծածկեցաք յորդ-
ւոց նոցա . յազգ յայլ պատմիլ զօրհնու-
թիւնս Տեառն՝ զզօրութիւն եւ զսքան-
չելիս իւր զոր արար ։

5 Հաստատեաց զվկայութիւնն իւր առ
Յակոբ , եւ օրէնս եդ ի վերայ Իսրա-
յէլի . որ ինչ միանգամ պատուիրեաց
հարցն մերոց՝ ցուցանել զայս որդւոց
6 իւրեանց . Զի ծանիցեն յազգ յայլ , որ-
դիքն որ ծնանիցին , յարիցեն եւ պատմեսցեն
7 զայս որդւոց իւրեանց . Զի դիցեն առ
Աստուած զյոյս իւրեանց , եւ մի՛ մո-
ռասցին զգործս Աստուծոյ , զպատուի-
8 րանս նորա խնդրելով խնդրեսցեն , Եւ
մի՛ եղիցին որպէս եւ հարքն իւրեանց ,
ազգ չար եւ դառնացօղ , ազգ որ ոչ ուղ-

---

[1] Եբէր. թմբեցան ե՛ւ կառք ե՛ւ ձի [2] Եբէր. քոյ, ի ժամէ բարկութեան քո ։ (9) Յերկնից լսելի արարեր զդատաստան [3] Եբէր. երկրի։ Հանդիսաւ ։ (11) Ապաքէն ցաւսումն մարդկան խոստովան առնի առ քեզ. զմնացորդ ցասմանն դու նուաճեա ։ [4] Եբէր. Ձերում [5] Եբէր. Առ գլուխ երաժշտացն , ի վերայ Իդիթունայ. երգ Ասափայ ։ [6] Եբէր. Ձեռն իմ գիշերի տարածեցաւ և ոչ թուլացաւ [7] Եբէր. խռովեցայ [8] Եբէր. յաւիտենից։ (7) Ծիշեցի զմմանէնջ իմ ի գիշերի. ընդ սրտի իմում մխորհէի, եւ հետազօտէր

[9] Եբէր. Այս է տկարութիւն իմ. [10] Եբէր. խռովեցան։ (18) Ձեղացին ջուրս ամպք . ձայն ետուն երկինք [11] Եբէր. Ձայն որոտալոյ քո ի մրրկի [12] Եբէր. Ունկն դիր, ժողովուրդ իմ

զնայ զսիրտ իւր եւ ոչ հաստատեսցի առ
Աստուած զհոգի իւր ։
9 Որպիք եկեսցին լիանձիցք եւ սինդա-
ձիցք , յաւուր պատերազմի կռապարձս
10 գարձուցին ։ Ոչ կայցին նոքա յուխտի
[1]Տեառն , եւ ըստ իրաւանց նորա ոչ կա-
11 մեցան գնալ։ Մոռացան զերախտիս նո-
րա , եւ զքանչելիսն զոր երայց նոցա ։
12 Առաջի հարց նոցա զար արար զքանչ-
չելիս իւր , յերկրին Եգիպտացւոց եւ ի
գաշարին Տոյանեա ։
13 Հերձ զծովն եւ անցոյց զնոսա , եւ կա-
14 յոյց զջուրսն որպէս [2]ի սկիս ։ Առաջ-
նորդեաց նոցա ամպով ի տուէ , եւ զա-
15 մենայն գիշեր ի լոյս հրոյ ։ Հերձ զվէմն
յանապատին , եւ եառ ըմպել նոցա որպէս
16 ի խորոյ մեծ ։ Հան զջուրսն ի վիմէ , եւ
հոսեաց որպէս զգետս զջուրսն ,
17 Սակայն յաւելին ի մեղանչել , եւ եւս
բարկացուցին զԲարձրեալն յանապատի ։
18 Փորձեցին զԱստուած ի սիրտս իւրեանց ,
ի խնդրել զկերակուր անձանց իւրեանց ։
19 Տրտնջեցին զԱստուծոյ եւ ասացին ,
Միթէ կարո՞ղ իցէ Աստուած պատրաս-
20 տել սեղան յանապատի ։ [3]Քանզի հար-
կանէր զվէմն եւ հոսէին ջուրք , եւ վտակք
խաղային ի նմանէ . Այլ՝ հաց եւս կա-
րասցէ տալ նա մեզ , կամ պատրաս-
տեսցէ [4]սեղան ժողովրդեան իւրոյ ։
21 Վասն այսորիկ լուաւ զայս Տէր եւ
[5]յապաղեաց . Հուր բորբոքեցաւ ի Յա-
կոբ , եւ բարկութիւն ել ի վերայ Իս-
22 րայելի ։ Զի ոչ հաւատացին յԱստուած ,
եւ ոչ յուսացան ի փրկութիւն նորա ։
23 Հրամայեաց եւ ամպոց ի վերուստ եւ
24 զդրունս երկնից եցոյց , Եւ անձեաց ի
նոսա մանանայ ի կերակուր. զհաց երկ-
25 նից եառ նոցա . Հաց [6]հրեշտակաց կե-
րան մարդիկ . եւ լիացոյց ի նոսա կերա-
կուր ի լիութիւն ։
26 Հան զհովմ [7]հարաւոյ , եւ ած զօրու-
27 թեամբ իւրով [8]զհիւսիսոյ ։ Տնկեաց ի նո-
սա մին որպէս զհող , որպէս զաւազ ծո-
28 վու զմոչմնս թեւաւորս . Արկ ի մէջ
բանակի նոցա , եւ չուրջ զվրանօք նո-
29 ցա ։ Կերան եւ յագեցան յոյժ , եւ զգան-
30 կութիւն նոցա եառ նոցա , Եւ ոչինչ կա-
րօտ եղեն ի ցանկութենէ իւրեանց , մինչ-
զեւ կերակուրք ի բերանս իւրեանց էին ,
31 Բարկութիւն յԱստուծոյ ել ի վերայ նո-
ցա , սպան [9]զպաղումս ի նոցանէ , եւ
զընտիր ընտիրս յիսրայէլ սասա-
կեաց ։
32 Ցայսմ ամենայնի մեղան եւս , եւ
33 ոչ հաւատացին զքանչելեացդ նորա ։ Պա-
կասեցան յաշխատութիւնս աւուրք նո-
ցա , եւ ամք նոցա [10]փութապէս անցին ։
34 Ցորժամ սպանանէր զնոսա՝ խնդրէին
զնա , դառնային եւ առաւօտս առնէին
35 առ Աստուած ։ Յիշեցին զի Աստուած
օգնական էր նոցա , Աստուած բարձ-
36 րեալ փրկիչ էր նոցա ։ [11]Սիրեցին զնա՝
բերանօք իւրեանց , եւ լեզուօք իւրեանց
37 ստեցին նմա. Եւ սիրտք նոցա ոչ էին ու-
ղիղ ընդ նմա , եւ ոչ հաւատացին ուխ-
տի նորա ։
38 Այլ նա ինքն գթած էր , քաւէր զմեղս
նոցա եւ ոչ ապականէր . յաճախէր դար-
ձուցանել զբարկութիւն իւր , եւ ոչ բորբո-
39 քէր զամենայն սրտմտութիւն իւր ։ Յի-
շեաց եմք մարմին են նոքա . հոգի որ
երանէ՝ եւ ոչ եւս դառնայ ։
40 Քանի՛ցս անգամ դառնացուցին զնա
յանապատի , բարկացուցին զԲարձրեալն
41 յանկրկի ։ Դարձան եւ փորձեցին զԱս-
տուած , եւ զՍուրբն Իսրայէլի զայրա-
42 ցուցին ։ Ոչ յիշեցին զձեռն նորա յաւուր
յորում փրկեաց զնոսա ի ձեռաց նեղչաց
43 նոցա ։ Որպէս արար զնշանս եւ զա-
րուեստս իւր յերկրին Եգիպտացւոց եւ
44 ի գաշարն Տոյանեա ։ Դարձոյց յարիւն
զգետս նոցա , եւ զանձրեւս նոցա զի մի
45 արբցեն ։ Առաքեաց ի նոսա չանճանճ
եւ եկեր զնոսա , եւ գորտիւ ապականեաց
46 զնոսա ։ Եւ ժանդոյ զպտուղ նոցա , եւ
47 զվաստակս նոցա մարախոյ ։ Եհար կար-
կտիւ զայգիս նոցա , եւ զվզենիս նոցա
48 [12]եղեմամբ ։ Մատնեաց ի կարկտաւ զա-
նասունս նոցա , եւ զստացուածս նո-
49 ցա հրոյ պատեցաւ ։ Առաքեաց ի նոսա
զբարկութիւն բարկութեան իւրոյ ,
զբարկութիւն, զբարկութիւն եւ զնե-
զութիւն. առաքեաց ի նոսա տանջանս ի
50 ձեռն հրեշտակի չարի ։ Դիմեցոյց ի նո-
սա զբարկութիւն բարկութեան իւրոյ.
ոչ անխայեաց ի մահուանէ զանձինս նո-
ցա , եւ զանասունս նոցա ի մահ մատ-
51 նեաց ։ Եհար զամենայն անդրանիկս ե-
զիպտացւոց , զսկիզբն ամենայն վաս-

[1] ԵԲԲ. Աստուծոյ [2] ԵԲԲ. գետս [3] ԵԲԲ. Մինչ
[4] ԵԲԲ. մին [5] ԵԲԲ. բարկացաւ [6] ԵԲԲ. հզօրաց
[7] ԵԲԲ. արեւելից [8] ԵԲԲ. զՀարաւ
[9] ԵԲԲ. զպարարսս [10] ԵԲԲ. յերկիւղի [11] ԵԲԲ. Նենգեցին նմա [12] ԵԲԲ. սառնամանեաւք

տակոց նոցա ի յարկս Քամայ։ [1]Հանեալ
52 զիստ։ Հորդան եւ որպէս խաչին՝ ժո-
ղովրդեան իւրոյ, եւ եհան զնոսա որ-
53 պէս հօտ յանապատ։ Առաջնորդեաց նո-
ցա յուսով եւ ոչ երկեան, եւ զթշնա-
54 միս նոցա ծով ծածկեաց։ Եհան զնոսա
[2]ի լեառն սրբութեան իւրոյ, ի լեառն՝ այն
55 զոր ստացեալ էր աջով նորա։ Եր-
ժեաց յերեսաց նոցա զհեթանոսս, եւ վի-
ճակեցոյց ի նոսա զվիճակ ժառանգու-
թեան իւրոյ, եւ բնակեցոյց ի յարկս
56 նոցա զազգն Իսրայելի։
Փորձեցին զառնացուցին զԱստուած
Բարձրեալն, եւ զվկայութիւնն նորա
57 ոչ պահեցին։ Դարձան խոտորեցան որ-
պէս եւ հարքն իւրեանց, դարձան եւ ե-
58 զեն որպէս զաղեղն թեւբ։ Դարձուել
բարկացուցին զնա ի բազմս իւրեանց,
եւ գրոչկովք իւրեանց նախանձ ար-
կին նմա։
59 Լուաւ Աստուած եւ արհամարհեաց
զնոսա, եւ անարգեաց յոյժ զԻսրայէլ։
60 Մերժեաց յիւրմէ վաթանն ի Սելով,
զվոթանն՝ զոր բնակեցոյց իմէջ մարդկան,
61 Մատնեաց ի գերութիւն զզօրութիւնս
[3]նոցա, եւ զվեզ նոցա՝ ի ձեռս թշնա-
62 միոց նոցա։ Արկուլ ի սուր զժողովուրդ
իւր, եւ զժառանգութիւն իւր անտես
63 արար։ Զերիտասարդս նոցա եկեր հուր,
եւ [4]վաներ կուսանայ նոցա ոչ ոք պատ-
64 ցաւ։ Քահանայք նոցա անկան ի սուր,
եւ [5]այրիս նոցա ոչ ոք էր որ լայր։
65 Զարթեաւ որպէս ի քնոյ Տէր, որպէս
66 հզօր պի թմրեալ զինւոյ։ Եհար յետս
զթշնամիս իւր, նախատինս յաւիտենից
արար զնոսա։
67 Մերժեաց նա զվոթանն Յովսեփեա,
68 եւ զազգն Եփրեմի նա ոչ ընտրեաց։ Այլ
ընտրեաց նա զազգն Յուդայ, զլիառն
69 Սիոն զոր եւ սիրեաց։ Շինեաց որպէս
[6]միեղջերուց զսրբութիւն նորա, յերկրի՝
70 հաստատեաց զնա յաւիտեան։ Ընտրեաց
զԴաւիթ ծառայ իւր եւ բնկալաւ զնա
71 ի հօտէ խաչանց. Ի վերջին ծնելոցն բնա-
կաւ զնա, հովուել զՅակոբ ծառայ
իւր, եւ զԻսրայէլ ժառանգութիւն իւր։
72 Արածէր զնոսա խոհականութեամբ սրտի

իւրոյ, [7]յանմեղութիւն ձեռաց իւրոց ա-
ռաջնորդէր նոցա։

ՍԱՂՄՈՍ ՀԸ (ՀՓ)

Սաղմոս Ասափայ։

1 Աստուած, մտին հեթանոսք ի ժառան-
գութիւն քո, պղծեցին զտաճար սուրբ
քո, արարին զերուսաղէմ [8]որպէս զհիւս
2 մրգապահաց։ Արկին զդիակունս ծառա-
յից քոց կէր թռչնոց երկնից, եւ զմար-
3 մինս սրբոց քոց զազանաց երկրի։ Հե-
ղին զարիւնս նոցա որպէս ջուր շուրջ
զերուսաղէմս, եւ ոչ ոք էր որ թաղէր
4 զնոսա։ Եղաք մեք նախատինք դրացեաց
մերոց, ծաղր եւ այպն կատականաց
անդոլիկ որ չուրջ էին զմեզ։
5 Մինչեւ յո՞ր, Տէր. բարկանա՞ս գեա
ի սպառ. բորբոքեսցի՞ որպէս հուր նա-
6 խանձ քո։ Հեղ զբարկութիւն քո ի վե-
րայ ազգացդ որ զքեզ ոչ ճանաչիցին, ի
վերայ [9]թագաւորութեանց որ զանունն քո ոչ
7 կարդացին։ Զի կերան զՅակոբ եւ
զտեղի նորա աւերեցին։
8 Մի՛ յիշեր զմեզս մեր զառաջինս,
վաղվաղ եկեսցէ առ մեզ ողորմութիւն
9 քո, Տէր, զի ապերասացաք յոյժ։ Օգ-
նեա մեզ, Աստուած փրկիչ մեր, վասն
փառաց անուան քո. Տէր, փրկեա զմեզ
եւ քաւեա զմեզս մեր վասն անուան
10 քո։ Մի՛ երբէք ասասցին ի հեթանոսս,
Թէ Ո՞ւր է Աստուած նոցա. այլ յայտ-
նի լինի ի վերայ հեթանոսաց առաջի
աչաց մերոց, առ ի խնդրել զվրէժ ա-
րեանն ծառայից քոց որ հեղաւ։
11 Մտցէ առաջի քո հեծեծութիւն կապե-
լոց. բաս մեծութեան բազկի քո [10]չա-
12 հեա զորդիս սպանելոցդ։ Հասո զրա-
յեաց մերոց եւթնապատիկ ի ծոց նոցա,
նախատինս զոր նախատեցին զքեզ, Տէր։
13 Մեք ժողովուրդ եւ խաչն արօտի քո
խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան,
ազգէ յազգ պատմեսցուք զօրհնու-
թիւնս քո։

---

[1] Յիբր. պ-ի-ե [2] Ընդր. ի սահման [3] Ա-ր, իւր, եւ զփառս իւր [4] Ա-ր, կուսանք նոցա ոչ ամբն սուգ, ի-ր, ոչ մնին ի սրսկապան [5] Կամ, այրիք նոցա ոչ լացին [6] Ընդր. բարձունս զորքութիւն իւր, որպէս զերկիր

[7] Ընդր. ճարտարութեամբ [8] Ընդր. յաւերակս
[9] Ընդր. թագաւորութեանց [10] Ընդր. ապրեցո

ՍԱՂՄՈՍ ՀԲ (Ղ)

1 [1]Ի կատարած . ի վերայ զառանցելոցն վկայութիւն. Աստուծոյ Աստուածոյ մերոյ, ի վերայ Եիւսեվպացւոցն :՝

2 Որ հաւատով Իսրայէլի՝ նայեցար, որ առաջնորդես որպէս խաչին Յովսեփու .
3 որ նստիր ի քերովբէս՝ յայտնեսցես : Առաջի Եփրեմի , Բենիամինի եւ Մանասէի , զարթո զզօրութիւն քո , եւ եկ
4 ի կեցուցանել զմեզ : Աստուած [2]զօրութեանց , դարձո զմեզ , երեւեսցո զերեսս քո ի մեզ եւ կեցցուք :
5 Տէր Աստուած զօրութեանց , մինչեւ յերբ բարկանաս յաղօթս ծառայից քոց :
6 Ջամբեցեր [3]մեզ հաց արտասուաց , եւ արբուցեր [3]մեզ արտասուս [4]չափով :
7 Արարեր զմեզ նախատինս դրացնաց մերոց , այսր կատականայ թշնամիացն մեր-
8 ոց : Աստուած զօրութեանց , դարձո զմեզ , երեւեսցո զերեսս քո ի մեզ եւ կեցցուք :
9 Այգի յեկեղեցասէ փոխեցեր , հաներ զհեթանոսս եւ տնկեցեր . Եւ առաջնորդեցեր նմա , հաստատեցեր զար-
11 մատս նորա եւ լցից զերկիր : Ծածկեաց զլերինս հովանի նորա , եւ բարուձակ
12 նորա զմայրս Աստուծոյ : Ձգեաց զտերեւ իւր մինչեւ ի ծով , մինչեւ ի գետս են
13 չաւաւեղք նորա : Ընդէր քակեցեր զպատե նորա , կիթեն զնա անցաւորք ճանապար-
14 հի : Ապականեաց զնա խոզ անտառի , եւ երէց վայրի արածեցաւ ի նմա :
15 Աստուած զօրութեանց , դարձ հայեաց յերկինից եւ տես , այց զայս այգեստս այս-
16 միկ, Եւ զարմանս տար սմա զոր անկեաց աջ քո , ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զո-
17 րացուցեր զնա ի քեզ : Այրեցեալ ի հուր եւ աւերեալ , ի սաստէ քումմէ կորից-
18 ցեն : Եղիցի ձեռն քո ի վերայ առն , այլ քո ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրաց-
19 ուցեր զնա ի քեզ : Ոչ եւս ի բացակայ եղիցաք մեք ի քէն . կեցուսցես զմեզ , եւ զանունն քո կարզասցուք :
20 Տէր Աստուած զօրութեանց , դարձո զմեզ , երեւեսցո զերեսս քո ի մեզ եւ կեցցուք :

[1] Եբր. Ա գլուխ երաժշտացն. ի վերայ Նշանակիմ Հուսգայ. Սաղմոս Ասափայ : [2] Յոբ. պ–ե–ե [3] Եբր. նոցա [4] Եբր. չափով մեծաւ

ՍԱՂՄՈՍ Զ (ՁԱ)

1 [5]Ի կատարած . վասն հնձանացն. Սաղմոս Ասափայ, հինկերորդ չաբաթուան :՝
2 Ցնծացէք առ Աստուած , օդնականն է մեր , ազաղակեցէք առ Աստուած Յա-
3 կոբայ : Առէք սաղմոս եւ առէք օրհնութիւն, սաղմոսասացէք նմա ի ձայն յոգ-
4 րութեան : Փող հարէք ի պատեհ ամսոյ, յատուկ նշանաւորի տարեկանաց մերոց :
5 Հրաման է այս Իսրայէլի , եւ իրաւունք
6 են Աստուծոյ Յակոբայ : Վկայութիւն Յովսեփու զար եդ ընդ նմա . որպէս ե-
լանէր նա յերկրէն Եգիպտացւոց . լեզու զոր ոչ գիտէր լուաւ :
7 Ի բաց արարի ի բեռանդ զմիկաւնս նո-
ա , եւ գեղս նորա յորմի եւ ի մի ծա-
8 ռայեայ : Ի նեղութեան կարգացեր առ
իս եւ փրկեցի զքեզ , լուայ քեզ ի գաղա-
տնեմենէ մրրկին , եւ փորձեցի զքեզ ի
9 վերայ Ջուրցն Հակառակութեան[6] Լուր , ժողովուրդ իմ , եւ վկայեմ քեզ , եւ Իս-
10 րայէլ՝ թէ լսիցես ինձ : Մի եւս եղիցին քեզ աստուածք առժամանք եւ մի երկիր պագանիցես զաստուածոյ օ-
11 տարի : Եես եմ Տէր Աստուած քո՝ որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց , բաց
12 զբերան քո եւ լցից զայն : Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում , եւ Իսրայէլ
13 ինձ ոչ նայեցաւ : Բարձի զոգի զնա ա երիվար զնտ կամաց սրտից իւրեանց, զի գնացին նոքա ըստ կամս անձանց
14 իւրեանց . Զի թէ ժողովրդեան իմոյ լուեալ էր ինձ , կամ Իսրայէլ զճանա-
15 պարհս իմ գնացեալ էր , Արագս զոչինչ իտուարն սպառեալ էր իմ զիւրեանս նո-
ա , ի վերայ նեղչեայ նորա սրկեալ էր
16 զձեռն իմ : Թշնամիք Տեառն ստեցին նմա , եւ եղիցին ժամանակք նոցա [7]յաւ-
17 իտեան : Կերակրեցայ զնոսա ի պարար-
աւելնէ ցորենոյ , ի վիմէ մեղր յագե-
ցուցայ նոցա :

ՍԱՂՄՈՍ ՁԱ (ՁԲ)

Սաղմոս Ասափայ :

1 Աստուած եկաց ի ժողովս [8]աստուա-
ծոց , եւ ի միջի աստուածոց, էհ, դատաւորաց

[5] Եբր. Ա գլուխ երաժշտացն. ի վերայ Կիթթիթայ. Սաղմոս Ասափայ : [6] Եբր. յաբեղէն յ–եբ– , Հանգիստ : [7] Եբր. յաւիտեան [8] Եբր. Աստուածոյ, էհ, Հզօրի, եւ ի միջի աստուածոց, էհ, դատաւորաց

2 Մինչեւ յերբ դատիք անիրաւութեամբ,
3 եւ աչն առնուք մեզաւորաց։[1] Դատ ա-
րարէք պարզն եւ այրեայ, իրաւունս ա-
4 րարէք անանկին եւ խնդալոյ։ Ազերեցու-
ցէք զաղքատն եւ զանանկն, ի ձեռաց
մեզաւորի փրկեցէք զնոսա։
5 Ոչ լմացան եւ ոչ ի միտ առին, ի
խաւարի գնացին, եւ չարժեցան ամե-
6 նայն հիմունք երկրի։ Ես ասացի թէ
աստուածք էք եւ, կամ որդիք Բարձրե-
7 լոյ ամենեքեան։ Դուք աւուրիկ որպէս
մարդիկ մեռանիք, եւ որպէս զմի իշ-
խանաց անկանիք։
8 Արի, Աստուած, եւ դատեա զերկիր,
զի դու ժառանգեսցես զամենայն հե-
թանոս։

ՍԱՂՄՈՍ ՁԲ (ՁԲ)

1 *Սաղմոս օրհնութեան Ասափայ։*

2 Աստուած, [2]ո՞ գնդնմանիցէ՞. մի լռեր
3 եւ մի դադարիր, Աստուած։ Զի ահա
թշնամիք քո զաչեցին, եւ ատելիք քո
4 համբարձին զգլուխս իւրեանց։ Ի վերայ
ժողովրդեան քո [3]խորհուրդս զգիւ-
տութիւն, խորհեցան ի վերայ սրբոյ
5 քոյ, Եւ ասացին, Եկայք սատակեսցուք
զնոսա յազգս, եւ մի յիշեսցի անուն
6 Իսրայելի եւ եւս։ Վասն հնդամեցան միաբա-
նութեամբ ի միասին, եւ վասն քո ուխտ
7 արարին։ Բանակք Եդոմացւոց եւ
Իսմայելացիք, Մովաբ եւ Հագարացիք,
8 Գեբաղ, Ամմոն, Ամազէկ, եւ այլազ-
գիքն ամենայն բնակչօքն Հանդերձ Ծռո-
9 րայ։ Նա եւ Ասուր եկեալ էր ընդ նո-
սա. ամենեքեան սգաւ զօրավիրն էին
որդւոցն Ղովտայ։[4]
10 Արա զնոսա որպէս զՄադիամ, որպէս
զՍիսարա, որպէս զՅաբին ի ձորձորան
11 կիսոնի։ Սատակեցան նոքա յականս
Դովրայ, եւ եղեն որպէս զաղբ երկրի։
12 Արա զիշխանս նոցա որպէս զՈվրէբն,
զԶէբն, զԶևրէկ եւ զՄադմանա եւ զա-
13 մենայն իշխանս նոցա. Այլ ասացին
ժառանգեսցուք ի մեզ զսրբութիւն Ա-
14 ստուծոյ։ Աստուած իմ, արա զնոսա որ-
պէս [4]զանիւ, որպէս զեզեգն առաջի
15 հողմոյ։ Որպէս հուր զի այրէ զանտառս,
16 որպէս լոյս զի կիզուս զլերինս։ Այսպէս
հալածեսցես զնոսա մրրկաւ քով, եւ
բարկութեամբ քով խռովեցուսցես զնո-
17 սա։ Լիցի զերեսս նոցա անարգանօք, եւ
18 խնդրեսցեն զանուն քո, Տէր։ Ամաչե-
ցեն եւ խռովեսցին յաւիտեանս յաւի-
19 տենից, եւ ամօթալից կորիցեն Ծանիւ-
ցեն զի անուն քո Տէր է, եւ դու միայն
բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի։

ՍԱՂՄՈՍ ՁԳ (ՁԳ)

1 *[5]Ի կատարած. վասն հնձանացն՝. որդ-
ւոցն Կորխայ Սաղմոս։*

2 Որքան սիրելի են յարկք քո, Տէր զո-
3 րութեանց։ Ցանկայ եւ փափաքէ անձն
իմ ի դաւիթս քո. սիրտ իմ եւ մարմին
իմ ցնծացին առ Աստուած կենդանի։
4 Քանզի ճնճղուկ եղիւթիւտուն, եւ[6] տատ-
րակ զբոյն ուր դիցէ վնազս իւր, [7]սե-
զան քո, Տէր զօրութեանց, Թագաւոր
5 իմ եւ Աստուած իմ։ Երանի ամենեցուն
որ բնակեալ են ի տան Տեառն, յաւի-
տեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ։[1]
6 Երանեալ է այր որոյ օգնութիւն իւր ի
7 քէն է, ելս եդ ի մտի իւրում. [8]Ի հովտէս
արտասուաց ի տեղւոջ յորում ոչխա-
տեաց. զօրհնութիւնս տացէ՛ որ զօրէնս
8 դնէ։՝ Գնասցէ նա ի զօրութենէ ի զօրաւ-
թիւն, եւ երեւեսցի [9]Աստուած ի Սիոն։
9 Տէր Աստուած զօրութեանց, լուր աղօ-
թից իմոց, ունկն դիր, Աստուած [10]Յա-
10 կոբայ։ Ընդունելի՛ ես դու միշ, տես,
Աստուած, եւ նայեաց յերեսս օծելոյ քո։
11 Վասն զի լաւ է ինձ մի օր ի դաւիթս քո,
քան զհազարս. ընտրեցի [11]ընդ աղբ զալ
ի տան՝ Աստուծոյ, առաւել քան բնա-
12 կանալ ի յարկս մեղաւորաց։ [12]Զօրու-
թութիւնն եւ զճշմարտութիւն սիրէ Տէր
Աստուած մեր՝, զնարն եւ զփառս տացէ
Տէր, ոչ պակաս առնէ զօրութիւնն
իւր յայնոցանէ որ գնան յանմեղութեան։
13 Տէր Աստուած զօրութեանց, երանեալ
է այր որ յուսայ ի քեզ։

---

[1] ԵԲբ-յեչէն յ-ԱԼբ-, Հանգիստ։ [2] ԵԲբ. մի՛ կացցես անքարբառ. [3] ԵԲբ. Նենգութեամբ կա-
լան խորհուրդ. խորհեցան ի վերայ թաքու-
ցեալոց [4] Կամ, մրրիկ

[5] ԵԲբ. Առ գլուխ երաժշտացն, ի վերայ Կիթթի-
թայ [6] ԵԲբ. Թիծառն [7] ԵԲբ. առ սեղանոյ
[8] ԵԲբ. Անցեալ ի հովիտ տրտմութեան առնեն
զնա Լբեբ- ագրեւր. այլ եւ անձրեւ կառնէ
ձածկեացէ՛ զնա օրհնութեամբ։ [9] Կամ, առաջի
Աստուծոյ [10] ԵԲբ Յակոբայ։ Հանգիստ։ (10)
Վասն [11] ԵԲբ. ես կալ ի տեառն տանն [12] ԵԲբ.
Քանզի արեգական եւ վասն է Տէր Աստուած

ՍԱՂՄՈՍ ՃԴ (Ճ6)

1 [1]Ի կատարած. որգւոյն Կորհայ Սաղմոս։
2 Հաճեցար, Տէր, ընդ երկիր քո, եւ
3 դարձուցեր զգերութիւնն Յակոբայ. թո-
ղեր զանիրաւութիւնն ժողովրդեան քո,
4 ծածկեցեր զամենայն մեղս նոցա։ [2]Լաւ-
ցուցեր զամենայն սրտմտութիւնս քո,
դարձար ի բարկութենէ սրտմտութեանն
5 քո։ Դարձ առ մեզ, Աստուած փրկիչ
մեր, եւ դարձո զբարկութիւն քո ի
6 մէնջ։ Մի յաւիտեան բարկանայր մեզ,
Տէր, եւ մի ձգեր զբարկութիւն քո ազգէ
7 մինչեւ յազգ։ Աստուած, դու դարձեալ
կեցուսցես զմեզ, ժողովուրդ քո ուրախ
8 եղիցի ի քեզ։ Ցոյց մեզ, Տէր, զողոր-
մութիւնս քո, եւ զփրկութիւնս քո
տուր մեզ։
9 Լուայց զինչ խօսի Տէր Աստուած մեր.
խօսեսցի վասն խաղաղութիւն ժողովրդեան
[3]իւրոյ առ սուրբս իւր՝ եւ առ այնոսիկ
10 որ դարձեալ են առ նա սրտիւք"։ Սակայն
մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւնն
նորա, բնակել փառաց նորա յերկրի մե-
11 րում։ Ողորմութիւն եւ ճշմարտութիւն
[4]պատահեցին, արդարութիւն եւ խա-
12 ղաղութիւն [5]համբուրեցին։ Ճշմարտու-
թիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն
13 յերկնից նայեցաւ։ Տէր տացէ զքաղցր-
րութիւն եւ երկիր մեր տացէ զպտուղ
14 իւր։ Արդարութիւն առաջի նորա գնաց-
ցէ, դիցէ ի ճանապարհի զդնացս իւր։

ՍԱՂՄՈՍ Ճ6 (ՃՁ)

Աղօթք Դաւթի։

1 Խնամարկեա, Տէր, զունկն քո եւ լուր
2 ինձ, զի աղքատ եւ անանկ եմ ես։ Պա-
հեա զանձն իմ զի սուրբ եմ ես.
փրկեա զծառայս քո, Աստուած իմ, որ
3 ի քեզ յուսացեալ։ Ողորմեա ինձ, Տէր,
զի առ քեզ աղաղակեցի զօրանաւղալ։
4 Ուրախ արա զանձն ծառայի քո,
զի առ քեզ, Տէր, համբարձի զանձն իմ։
5 Զի դու, Տէր, քաղցր եւ [6]ուղիղ ես,
բազումողորմ առ ամենեսեան որ կար-
6 գան առ քեզ։ Ունկն դիր, Տէր, ա՛ղօ-
թիւդ իմոյ, եւ նայեալ ի ձայն խնդրուա-
7 ծոյ իմոյ։ Յաւուր նեղութեան իմոյ
կարդացի առ քեզ, եւ լուար ինձ։
8 Ոչ ոք է նման քեզ յաստուածս, Տէր,
9 եւ ոչ ոք է որպէս գործս քո։ Զամե-
նայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն եւ
երկիր պագցեն առաջի քո, եւ փառաւո-
10 րեսցեն զանուն քո [7]յաւիտեան։ Մեծ
ես դու, Տէր, եւ առնես սքանչելիս,
11 եւ դու միայն ես Աստուած։ Առաջնոր-
դեա ինձ ի ճանապարհի քումմէ, եւ գնա-
ցից ի ճշմարտութեան քումմէ, եւ ուրախ
եղիցի սիրտ իմ՝ երկնչել յանուանէ
12 քումմէ։ Խոստովան եղէց առ քեզ, Տէր
Աստուած իմ, յամենայն սրտէ իմմէ,
փառաւորեցից զանուն քո յաւի-
13 տեան։ Մեծ եղեւ ի վերայ իմ ողորմու-
թիւն քո, փրկեցեր զանձն իմ ի
գ՚ոհասոյ ներքինոյ։
14 Աստուած, անօրէնք յարեան ի վերայ
իմ, եւ ժողովք զօրաւոր խնդրեցին զանձն
իմ, եւ ոչ համարեցան զքեզ Աստուած
15 առաջի իւրեանց։ Այլ դու, Տէր Աստուած
իմ, գթած եւ ողորմած, երկայնա-
16 միտ՝ բազումողորմ եւ ճշմարիտ։ Նայեաց
առ իս եւ ողորմեա ինձ. տուր զօրու-
թիւն ծառայի քո, կեցո զորդի աղախ-
17 նոյ քո. Եւ արա առ իս նշան բարու-
թեան. տեսցեն ատելիք իմ եւ ամաչեսց-
ցեն, զի դու, Տէր, օգնեցեր ինձ եւ
մխիթարեցեր զիս։

ՍԱՂՄՈՍ ՃՁ (Ճէ)

1 Որգւոյն Կորհայ Սաղմոս օրհնութեան։
2 Հիմունք նորա ի լեռան սուրբ նորա.
սիրէ Տէր զդրունս Սիոնի առաւել քան
3 զամենայն յարկան Յակոբայ։ Փառաւո-
րեալն խօսեցաւ վասն քո, ա՛նուանդիկ
4 քաղաքդ Աստուծոյ։ [2]Յիշեցի զԻսահաք
եւ զԲաբելովնէ [8]ոյք ճանաչեն զիս. ա՛ահ
Սյսպղիւք եւ Ծուր եւ Ժողովուրդք
5 [9]Հնդկաց՝ սոքա եղեն անդ։ Սիոնի [10]ա-
սի մայր, եւ մարդ" ծնաւ ի նմա, եւ
ինքն հիմունս արկ ի նմա Բարձրեալն։
6 [11]Տէր պատմեսցէ գրովք ժողովրդեան,
7 իշխանացս այսոցիկ որ եղեն անդ։ Որ-
պէս զի ուրախ լիցին ի քեզ ամենեքեան,
որոց բնակութիւն լերանց ի քէն է։"

---

[1] ՃԲէր. Առ գլուխ երաժշտացն. [2] ՃԲէրպէեցին յո-ԲԸ-, Հանգիստ։ [3] ՃԲէր. իւրում, եւ առ սուրբս իւր, որ ոչ դառնան ի յիմարութիւն։ [4] ՃԲէր. պատահեցան [5] ՃԲէր. Համբուրեցան [6] ՃԲէր. Ներող

[7] ՅՃԲէր. պ-ի-ո-ե [8] ՃԲէր. որոց [9] ՃԲէր. Քաւշայ [10] ՃԲէր. ասի, Այր եւ այր [11] ՃԲէր. Ի գրել Տեառն զժողովուրդս ասացէ, Սա ծնաւ անդ։ Հանգիստ (7) Եւ երգեցողք, որպէս եւ քնարահարք, ա-ասոյնք՝ Աժենայն աղբեւրք իմ ի քեզ են։

ՍԱՂՄՈՍ ՁԷ (ՁԸ)

1 [1]Ի կատարած. վասն Մաղաղեթայ խմաս-
տութիւն. զի ես պատասխանի եմ ես
Եղբայրլացդ։"

2 **Տէր** Աստուած փրկութեան իմոյ, ի
տուէ կարդացի եւ ղիշերի առաջի քո։
3 Մտցին աղօթք իմ առաջի քո, Տէր,
խոնարհեսցի ունկն քո ի թախանձս իմ։
4 Զի լցաւ չարչարանօք անձն իմ, եւ
5 կեանք իմ ի դժոխս մերձեցան. Եւ հա-
մարեցայ ես ընդ այնոսիկ որ իջանեն ի
գուբ. եղէ ես որպէս մարդ առանց օգ-
6 նականի, ի մեռեալս [2]ազատ, որպէս վի-
րաւորս, որ ննջեն ի գերեզմանի. զորս
դուն ոչ յիշեցեր, եւ նոքա ի ձեռանէ
7 քումմէ մերժեցան։ Եդիր զիս ի գուբ
ներքինումն, ի խաւարի եւ ի ստուերս մա-
8 հու։ Ձիս հաստատեցաւ սրտմտութիւն
քո, զամենայն զրօսանս քո ածեր ի վի-
9 րաս իմ։[3] Հեռի արարեր յինէն զծանօթս
իմ, եւ [4]նզիս զիս նշանակ իւրեանց".
10 մանեցայ եւ ոչ ելանէի։ Աչք իմ տկա-
րացան յաղքատութենէ. աղաղակեցի
առ Տէր զօրհնութեամբ, եւ համբարձի
առ քեզ զձեռս իմ։
11 Մի՛թէ մեռելոց առնիցես զաքանչելիս քո
կամ [5]բժիշկք յարուցանիցեն", խոստովան
12 առնիցի՞ն առ քեզ։[3] Մի՛թէ պատմեսցէ՞
ոք ելեսդ ի գերեզմանի զողորմութիւնս
քո, կամ զճշմարտութիւնս քո ի կորս-
13 ման։ Մի՛թէ ճանաչեսցին ի խաւարի
աքանչելիք քո, կամ արդարութիւն քո
14 յերկիրն մոռացեալ։ Ես առ քեզ, Տէր,
աղաղակեցի, առաւօտուս ապօթք իմ
ժամանեսցին առ քեզ։
15 Ընդէ՞ր, Տէր, մերժես զանձն իմ, կամ
16 դարձուցանես զերեսս քո յինէն։ Տնանկ
եւ [6]վաստակաւոր եմ ես ի մանկութենէ
իմմէ, [7]ի բարձրութենէ խոնարհեցայ եւ"
17 ապչեցայ։ Ձիս հաստատեցաւ բարկու-
թիւնք քո, արտասուք քո խռովեցուցին
18 զիս։ Շրջեցան զինեւ որպէս ջուր զօր ա-
19 մինաւն, պաշարեցին զիս ի միասին։ Հեռի
արարեր յինէն զբարեկամս իմ [8]եւ զծա-
նօթս իմ, վասն թշուառութեան իմոյ"։

[1] ԵԲԲ. Երգ, Սաղմոս որգւոյն Կորխայ առ գլուխ եբաշշացի ի վերայ Մահալաթ-Լէաննովթայ. իմաստութիւն Եմանայ Եզրահացւոյ։ [2] ԵԲԲ ընկեցեալ [3] ԵԲԲ.ՅԵՔԷՆ յ-ԵԼԼ-, Հանգիստ։ [4] ԵԲԲ. եդիր զիս նշանակ նոցա [5] ԵԲԲ. մեռեալք յարիցե՞ն [6] ԵԲԲ. ի մեռանիլ [7] ԵԲԲ. ի կրել զահ քո [8] ԵԲԲ. ծանօթք իմ ի խաւարի են

ՍԱՂՄՈՍ ՁՀ (ՁԹ)

1 Իմաստութիւն [9]Եմանայ Եզրայեղացւոյ"։
2 **Զ**ողորմութիւնս քո, Տէր, յաւիտեան
օրհնեցից, ազգէ յազգ պատմեցից զճըշ-
3 մարտութիւնդ քո բերանով իմով։ [10]Ա-
սացեր թէ Աշխարհս ողորմութեամբ
չինեացի, յերկինս պատրաստ եղիցի
4 ճշմարտութիւնդ քո։ Եդի ուխտ ընտրե-
լոց իմոց", երդուայ Դաւթի ծառայի ի-
5 մոյ։ Յաւիտեան հաստատեցից զզաւակ
քո, եւ չինեցից ազգէ յազգ զաթոռ քո։[3]
6 Խոստովան եղիցին երկինք աքանչելեաց
քոց, Տէր, եւ ճշմարտութիւն քո յեկե-
7 ղեցիս սրբոց։ Մի՛վ է յամպս որ հաւա-
սարէ քեզ, կամ ո՛վ նմանիցէ Տեառն
8 յորդիս [11]Աստուծոյ։ Աստուած փառաւո-
րեալ է ի խորհուրդս սրբոց իւրոց, մեծ
եւ ահաւոր ի վերայ այնոցիկ որ չուրջ
9 են զնովաւ։ Տէր Աստուած զօրութեանց,
ո՞ նման է քեզ. հզօր ես դու, Տէր, եւ
10 ճշմարտութիւն քո չուրջ է զքեզ։ Դու
տիրես զօրութեանց ծովուս, եւ զիւռա-
ւմութիւն ալեաց նորա դու յուժեցու-
11 ցանես։ Դու խոնարհեցուցանես որպէս
վիրաւորս [12]զսիրարտաւանս, ի զօրու-
թեան թագի քո գրուեցեր զթշնամիս
12 քո։ Քո են երկինք եւ քո է երկիր,
աշխարհս եւ լրիւ իւրով դու հաստատե-
13 ցեր։ Հիւսիս եւ վաղատ դու արարեր,
Թաբոր եւ Հերմոն յանուն քո ցնծասա-
14 ցին։ Քո է բազուկ եւ քո է զօրութիւն,
զօրացի ազ քո եւ բարձր եղիցի ձեռն
15 քո։ Յարդարութիւն եւ յիրաւունս հաս-
տատեալ է սիմա քո, ողորմութիւն եւ
ճշմարտութիւն դնասցին առաջի երե-
սաց քոց։
16 Երանի ժողովրդեան որ գիտեն զօրհ-
նութիւնս քո, Տէր, ի լոյս երեսաց քոց
17 դնասցին. Եւ յանուն քո ցնծասցին զօր-
հնութեամբ, եւ յարդարութեան քում
18 բարձր եղիցին։ Պարծանք զօրութեանց
[13]մերոց դու ես, եւ ի կամս քո բարձր
19 եղիցի եղջեւր մեր [14]ի Տեառնէ է օգ-
նութիւն սրբոյն Իսրայէլի թագաւորին
մերոյ"

[9] ԵԲԲ. եմանայ Եզրահացւոյ [10] ԵԲԲ. Զի ասացեր, Ողորմութիւն յաւիտեան չինեսցի, յերկինս հաստատեսցես զճշմարտութիւն քո։ (4) Եդի ուխտ ընտրելոյսիմոյ [11] ԵԲԲ. աստուածոց, կամ, հզօրաց [12] կամ, զինահար [13] ԵԲԲ. նոցա [14] ԵԲԲ. Տեառն է վահան մեր, եւ Սրբոյն Իսրայէլի թագաւոր մեր։

20 Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ
[1]որդիս քո եւ ասացեր, Եդից զօգնու-
թիւն ի վերայ հզօրին, եւ բարձր ա-
րարից զընտրեալն ի ժողովրդենէ [2]իմ-
21 մէ։ Գտի զԴաւիթ ծառայ իմ, ի զով
22 սրբով իմով օծի զնա։ Զկնի իմ ընկալցի
զնա, եւ բազուկ իմ զօրացուսցէ զնա։
23 Մի մեկլիցէ նմա թշնամի, եւ որդի ա-
նօրէնութեան մի չաչարեսցէ զնա։
24 Հարից առաջի նորա զթշնամիս նորա, եւ
զատելիսնորաի սպառութիւն մատնեցից։
25 Ճշմարտութիւն իմ եւ ողորմութիւն իմ
ընդ նմա, եւ յանուն իմ բարձր եղիցի
26 եղջեր նորա։ Եդից ի ծովս զձեռն նորա,
27 եւ ի վերայ գետից զաջ նորա։ Նա կար-
դասցէ առ իս, Հայր իմ ես դու, Աստուած
28 [3]ընդունելի փրկութեան իմոյ։ Ես անդ-
րանիկ սպարիչ զնա եմ, եւ բարձր քան
29 զամենայն թագաւորս երկրի։ Յաւի-
տեան պահեցից նմա զողորմութիւն իմ,
30 եւ ուխտ իմ հաւատարիմ ընդ նմա։ Հաս-
տատեցից յաւիտենից յաւիտենից զզա-
ւակ նորա, եւ զաթոռ նորա որպէս զա-
31 ւուրս երկնից։ Թէ թողցեն որդիք նորա
զօրէնս իմ, եւ յիրաւունս իմ ոչ կամիս-
32 ցին գնալ, Թէ զպղծութիւնս իմ ա-
նօրինացն, եւ զպատուիրանս իմ ոչ
33 պահեսցեն, Հարից գաւազանաւ զանօ-
րէնութիւնս նոցա, եւ տանջանօք զանի-
34 րաւութիւնս նոցա։ Բայց զողորմու-
թիւն իմ ոչ արգիլից ի նոցանէ, եւ ոչ
35 նենդեցից ճշմարտութիւն իմմէ։ Եւ
ոչ անարգեցից զուխտ իմ, եւ զինչ ար
ելանէ ընդ շրթունս իմ՝ զայն ոչ արհա-
36 մարհից։ Միանգամ երդուայ ի սրբու-
թիւն իմ, Թէ Դաւթի ես ոչ սասկից։
37 Զաւակ նորա յաւիտեան կացցէ, եւ աթո-
ռ նորա որպէս արեգակն առաջի իմ,
38 Որպէս լուսին զի հաստատեալ է յաւի-
տեան վկայ հաւատարիմ յերկինս[5]։
39 Իսկ արդ դու մերժեցեր եւ անարգե-
ցեր եւ ընդ վայր հարեր զօծեալ քո։
40 Դարձուցեր զուխտ ի ծառայէ քումմէ,
պղծեցեր յերկրի [6]սրբութիւն նորա։
41 Քակեցեր զպատնեշս սպարիսպս նորա,
եւ եդեր զամուրս նորա ի զրոյծ։
42 Յափշտակիցին զնա անցաւորք ճանա-
պարհի, եղեւ նա նախատ զրացեաց իւ-
43 րոց։ Բարձր արարեր զաջ նեղչեայ նո-
րա, ուրախ արարեր զամենայն թշնա-
44 միս նորա։ Դարձուցեր [7]զօրութիւն
ի սուր՝ նորա, եւ ոչ զինեալ զնա ի
45 պատերազմի։ Անարգեցեր զսրբութիւն
նորա, եւ զաթոռ նորա յերկիր կործա-
46 նեցեր։ Նուազ արարեր զաւուրս [8]ժա-
մանակաց նորա, եւ հեղեր զնովաւ զա-
մօթ։[9]
47 Մինչեւ յո՞րդ դարձուցանես զերեսս
քո ի սպառ, բորբոքեսցի՞ որպէս հուր
48 բարկութիւն քո։ Իսկ արդ յիշեա [9]եւ
տես թէ ո՛վ է իմ հանդիման. մինէ ի
զո՞ր ինչ՝ տանեզեր զամենայն որդիս
49 մարդկան։ Ո՞վ է մարդ որ կեսցէ եւ ոչ
տեսցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր
50 ի ձեռաց գժոխոց։[5] Ո՞ւր են ողորմու-
թիւնք քո, Տէր, առաջինք, զոր եր-
դուար Դաւթի ճշմարտութեամբ քով։
51 Յիշեա զնախատինս ծառայից քոց, զոր
ընկալայ ի ծոց իմ յազգաց բազմաց։
52 Զոր նախատեցին թշնամիք քո, Տէր,
53 նախատեցին փոխանակ օծելոյ քո։ Օրհ-
նեալ Տէր [2]Աստուած յաւիտենից յա-
ւիտեանս։ Եղիցի, եղիցի։

ՍԱՂՄՈՍ ՁԹ (Ղ)

Սղոմք Մովսիսի առնն Աստուծոյ։

1 Տէր, ապաւէն եղեր մեր ազգէ մինչեւ
2 յազգ։ Մինչչեւ լերինք հաստատեալ էին,
եւ մինչեւ առեղծեալ էր զերկիր եւ
զամենայն տիեզերս, յաւիտենից մինչեւ
3 յաւիտեան դու [10]ես. Եւ մի դարձու-
ցանես զմարդ ի տառապանս՝, եւ ասա-
ցեր, Դարձարուք [2]առ իս՝, որդիք մարդ-
4 կան։ Հազար ամ յաչս Տեառն որպէս
օր երեկի զի անց, որպէս պահ մի գի-
5 շերոյ. [11]Եւ առ նոցա անարդութեամբ՝
եղիցին. ընդ առաւօտս որպէս զարարի
6 [12]բուսցին. Ընդ առաւօտս որպէս զարարի
զառաջնացսն եւ ծաղկեսցին, ընդ ե-
րեկոյս թարշամեսցին, չորասցին եւ անկ-
7 ցին։ Նուազեցաք մեք ի բարկութենէ
քումմէ, եւ ի սրտմտութենէ քումմէ
8 խռովեցաք։ Եդեր զմեղս մեր առաջի

---

[1] Ձեռ. երկիւղած [2] Ձեռ. պահ-ե [3] Ձեռ. իմ ևվեմ
[4] Ձեռ. ի նմանէ [5] Ձեռ. պահեցէն յաւելս, Հանգիստ
[6] Ա-Ր, զպատակ [7] Ձեռ. զաւգր սուսերի [8] Ձեռ. մանկ.
[9] Ձեռ. քանզի ժամանակի եմ. յո՛ր ունայնութիւն [10] Ձեռ. ես Աստուած (3) Դարձու-
ցեր զմարդ ի հող [11] Ձեռ. Ողջոյս զնոսա, քուն [12] Ձեռ. որ բուսանի

քո, եւ [1]զկնանս մեր ի լոյս երեսաց
9 քոյ։ [2]Ամենայն աւուրք մեր հնաձե-
ցան, եւ ի բարկութենէ քումմէ խռո-
վեցաք. ժամանակ ամաց մերոց անգա-
10 դար որպէս սարդի. Եւ [3]թէ աւուրք
ամաց մերոց ի հնոսա հարիւրամեան ամ.
ապա թէ առաւել եւս՝ ութսան ամ.
որ ինչ աւելի քան զայն՝ ցաւօք եւ հե-
ծութեամբ. [4]եկն ի վերայ մեր հեղաբեխն
11 եւ խրատեցաք". Իսկ արդ՝ պիտացէ զօ-
րութիւն բարկութեան քո, եւ կամչահ
քումմէ զսրամասութիւն քո համարեսցին։
12 [5]Այսպէս ցոյց ինձ զաջ քո, եւ որ խանարհ
են սրտիւք՝ կիմասասութիւնս քո"։
13 Դարձ, Տէր, մինչեւ ե՞րբ. միխիթա-
14 եաց ի ծառայս քո։ [6]Լցաք առաւօտս
ողորմութեամբ քո, [7]ցնծացաք եւ ու-
րախ եղաք" զամենայն աւուրս կե-
15 նաց մերոց։ Ուրախ [7]եղաք փոխանակ
աւուրցն յորս խանարհ արարեր զմեզ,
եւ ամսոյն՝ յորս տեսաք դչարչարանս։
16 [8]Հայեաց, Տէր, ի ծառայս քո եւ ի գործս
ձեռաց քոց, եւ առաջնորդեա որդւոց"
17 նոցա։ Եղիցի լոյս Տեառն Աստուծոյ ի
վերայ մեր. զգործս ձեռաց մերոց ու-
ղիղ արա ի մեզ, Տէր, զգործս ձեռաց
մերոց աղոցեա մեզ։

ՍԱՂՄՈՍ Ղ. (Ղ.Ա)

[9]Օրհնութիւն դաւթի։"

1 Որ բնակեալ է յօգնութեան Բարձրե-
լոյն, ընդ հովանեաւ [10]Աստուծոյ յեր-
2 կինս հանգիցէ։ Ասասցէ" Տեառն, Ընդ-
դունելի իմ եւ, ասասցէ իմ Աստուած,
3 եւ ես յուսասմ ինդ։ Նա փրկեսցէ [11]զձա
յսրտորսացիէ որսողին, եւ [12]ի բանից խռո-
4 վութեան"։ Ի թիկնամէջս իւր ընկալցի
զքեզ, ի հովանի թեւոց նորա յուսասց-
ցիս. սրպէս զէն՝ չուրջ եղիցի զքեզ
5 ճշմարտութիւնն նորա։ Ոչ երկիցես զու-
յերկիւղէ պիշերի, եւ ոչ ինեաէ որ թռչի
6 ի տուէ, [13]Ցիրէ որ չրջի ի խաւարի, [14]ի
գայթակղութենէ դիւին" ի հասարակ ա-
7 ւուր։ Անկցին ի կողմանէ քումմէ հա-
զարք, եւ բեւրք ընդ աջմէ քումմէ, եւ
8 առ քեզ ինչ ոչ մերձեսցին։ Բայց միայն
աչօք քովք հայեսցիս զու, եւ զհատու-
ցումն մեղաւորաց տեսցիս։
9 Զի զու, Տէր, յոյս իմ ես. զԲարձրեալն
10 արարեր ապաւէնդ քեզ. Ոչ հասցին առ քեզ
չարք, եւ տանջանք մի մերձեսցին ի յարկս
11 քո։ Հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ վասն քո, պահել զքեզ յամենայն ճա-
12 նապարհս քո։ Ի յաղուկս իւրեանց ըն-
կալցին զքեզ, զի մի երբեք հարցես
13 զքարի զոտն քո։ Ի վերայ [15]իժիւ եւ
քարիւղ դնասցես զու, առ ոտն կոխես-
ցես պառիւծն եւ զվիշապն։
14 Բանզի յիս յուսացաւ եւ փրկեսցիս
զնա, հովանի եղէց նմա, զի ծանեաւ
15 զանուն իմ։ Կարդասցէ առ իս՝ եւ ես
լուայց նմա, եւ առ նմա եղէց ի նե-
ղութեան. փրկեսցիս, փառաւոր արա-
16 ցիս զնա. Երկայն աւուրբք լցուցից զնա
եւ ցուցից նմա զփրկութիւն իմ։

ՍԱՂՄՈՍ Ղ.Ա (Ղ.Բ)

1 Մաղմոս օրհնութեան աւուր չարաթու։
2 Բարի է խոստովան լինել Տեառն, սաղ-
մոս ասել անուան քումմ, Բարձրեալ։
3 Պատմել առաւօտս զողորմութիւնս քո,
4 եւ զճշմարտութիւնս քո ի պիշերի։ Տաղ-
նապաւ սաղմոսարանաւ, ի ձայն օրհ-
5 նութեան դովիթ։ Ուրախ արարեր զիս
Տէր, յարարածս քո, եւ ի գործս ձե-
6 ռաց քոց ցնծացայց։ Որպէս զի՛ մեծ են
գործք քո, Տէր, եւ յոյժ խոր են խոր-
7 հուրդք քո։ Այր անզգամ զայս ոչ ծա-
նիցէ, եւ անմիտն զայս ոչ առնու ի
8 միտ։ Ի բուսանիլ մեղաւորաց որպէս
խոտ, ի ծագիլ ամենայն ոյք գործեն
զանօրէնութիւն, սատակիացին յաւի-
9 տեանս յաւիտենից. Եւ զու բարձրեալ
ես յաւիտեան, Տէր։ Զի ահա թշնա-
միք քո, Տէր, զի ահա թշնամիք քո
10 կորիցեն. Ցրուեսցին ամենեքեան ոյք
11 գործեն զանօրէնութիւն։ Բարձր [16]եղիցի
որպէս միեղջերուի եղջեր իմ, եւ ծե-
րութիւն իմ" ի ձէթ պարարութեան։
12 Եւ հայս ակն իմ ի թշնամիս իմ ոյք յա-

---

[1]ՆԵԲ. զծածուկս [2]ՆԵԲ. Զի ամենայն աւուրք մեր անցին ի բարկութեան քումմ. սպառեցաք զամս մեր իբրեւ զնորս։(10)Աւուրք [3]ՆԵԲ. զի հնոսան վաղվաղակի. և թռանիմք [4]ՆԵԲ.Ծուռել զաւուրս մեր այնպէս ուսոյ մեզ, զի առասցուք սիրտ իմաստութեան։ [5]ՆԵԲ. Յայտեցո զմեզ [6]ՆԵԲ. զի ցնծացուք եւ ուրախ եղիցուք [7]ՆԵԲ արա զմեզ [8]ՆԵԲ. Երեւեսցին ի ծառայս քո գործք քո, եւ փառք քո՝ յորդիս [9]ՅԵԲ. պսոլոե [10]ՆԵԲ. Ամենակալին Հանգիցէ։ (2) Ասացից [11]ՆԵԲ. զքեզ [12]ՆԵԲ. յապականէ ժանաւ

[13]ՆԵԲ.Ի ժանաւէ [14]ՆԵԲ. ի հարուածոյ որ սատակէ [15]ՆԵԲ. առիւծուց [16]ՆԵԲ. արասցես զեղջեր իմ որպէս միեղջերուի, եւ ծեր

բուցեալ են ի վերայ իմ չարութիւնամբ,
13 ի նոսա լսիցէ ունկն իմ։ Այպարքն որպէս զարմանային ծադկեացն, որպէս
զմայրան Լիբանանու բազումք եկիցեն,
14 Տնկեալք [1]եղիցին ի սան Տեառն, [1]եւ
ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծադկեսցին։
15 Եւս եւ յազումս եղիցին ի ծերութիւնն
պարարտութեան, զիրգք եւ վարուկք
16 եղիցին, ի պատմել [2]ուղիղ է Տէր Աստուած մեր" եւ ոչ կայ ի նմա անիրաւութիւն։

ՍԱՂՄՈՍ ՂԲ (ՂԴ)

[1]Ցօրն առաջին չաբաթու յոր հաստատեցաւ երկիր. օրհնութիւն պսակի Դաւթի։"

1 Տէր թագաւորեաց՝ վայելչութիւն զգեցաւ, զգեցաւ Տէր զօրութիւն՝ ընդ մէջ
2 իւր ածաւ։ Հաստատեաց զաչխարհ զի մի սասանեսցի. պատրաստ է աթոռ քո
3 ի սկզբանէ, յաւիտենից դու ես։ Ամբարձան գետք, Տէր, եւ ամբարձին գետք զձայնս իւրեանց. յարիցեն գետք ի
4 գնացս իւրեանց։ [3]Ի ձայնէ ջուրց բազմաց, սքանչելի եղեն զրօսանք ծովու. սքանչելի ես դու, Տէր, ի բարձունս։"
5 Վկայութիւնք քոյ մնք յոյժ հաւատացեալք. տան քում վայելէ սրբութիւն, Տէր, ընդ երկայն աւուրս։

ՍԱՂՄՈՍ ՂԳ (ՂԴ)

[1]Սաղմոս Դաւթի. չորեքշաբաթու։"

1 Աստուած՝ վրէժխնդիր Տէր, Աստուած
2 վրէժխնդիր [4]յայտնեցար։ Բարձր լեր որ դատիս զերկիր, հատո զհատուցումն
3 ամբարտաւանից։ Մինչեւ յե՞րբ մեղաւորք, Տէր, մինչեւ յե՞րբ մեղաւորք
4 պարծեսցին։ Բորբառեալ խօսեսցին զանիրաւութիւն, խօսեսցին ամենեքեան
5 որ գործեն զանօրէնութիւն։ Զժողովուրդս քո, Տէր, խոնարհ արարին, եւ
6 զժառանգութիւնդ քո չարչարեցին։ Զայրին եւ զպանդխտեան սպանին, զորբան
7 կոտորեցին. Եւ ասացին, Ոչ տեսանէ զայս Տէր, եւ ոչ ի միտ առնու Աստուած
8 Յակոբայ։ Իմացարուք, անզգամք ժողովրդոց եւ անմիտք, մինչեւ յե՞րբ ոչ
9 ածնուք ի միտ։ Որպէս զի թէ որ անկեաց

[1] Յ|Եբր. գլուխ։ [2] Եբր. եթէ ուղիղ է Տէր. վէմ իմ է։ [3] Եբր. Քան զձայնս ջուրց բազմաց, սաստիկ մրրկաց ծովու հզօր է Տէր ի բարձունս։ [4] Եբր. յայտնեաց

գունկն՝ ինքն ոչ լսիցէ, կամ որ ստեղծ
10 զակն՝ ինքն ոչ տեսանիցէ։ Որ խրատէ զազգինս՝ որպէս մէկ ոչ յանդիմանեսցէ,
11 որ ուսուցանէ մարդոյ գիտութիւն Տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան՝ զի են
ընդունայն։
12 Երանի՛ մարդոյ զոր խրատես դու, Տէր, եւ յօրինաց քոց ուսուցանես դու նմա։
13 [5]Ցածուցանես դու նմա զաւուրս" չարութեան, մինչեւ փորեսցի խորխորատ մեղաւորի։ Ոչ մերժէ Տէր զժողովուրդ
14 իւր, եւ զժառանգութիւն իւր ոչ առնէ
15 անտես։ Մինչեւ դարձցին իրաւունք յարդարութիւն, ընկալցին զնա ամենեքեան
16 քանի այք ուղիղ են սրտիւք։ Ո՞ յարիցէ ընդ իս ի վերայ չարաց, կամ ո՞ [6]հաւասարիասցէ ինձ ի վերայ" այնոցիկ որ զործեն
17 զանօրէնութիւն։ Եթէ ոչ Տեառն օգնական էր ինձ, փոքր մի եւս բնակեալ
18 էր անձն իմ ի գժոխս։ Եթէ ասէի թէ Ահա սասանեցան ոտք իմ, ողորմութիւնք քո, Տէր, օգնէր ինձ։ Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ միխիթարութիւնք քո ուրախ առնէր զանձն իմ։
20 Մի՛ հաւասարեսցի՞ քեզ աթոռ անօրէնութեան, ո պատճառէ վիճաստակս ընդ
21 դէմ հրամանի։ Որսացան զանձն արդարոյ, եւ զարիւն անմեղի պատասուր առ-
22 նէին։ Եղեւ Տէր ապաւէն իմ, Աստուած
23 օգնական յուսոյ իմոյ։ Հատուսցէ նոցա Տէր ըստ անօրէնութեան նոցա, եւ ըստ
չարութեան նոցա կործանեսցէ [7]զնոսա Տէր Աստուած մեր։

ՍԱՂՄՈՍ ՂԴ (ՂԵ)

[1]Օրհնութիւն գովութեան Դաւթի։"

1 Եկայք գնծացուք ի Տէր, ազազակեսցուք առ Աստուած փրկիչ մեր։ Կանխեսցուք առաջի նորա խոստովանութեամբ, սաղմոսիւք ազազակեսցուք
3 առ նա։ Աստուած մեծ է Տէր, թագաւոր մեծ ի վերայ ամենայն [8]երկրի։ Ի ձեռն նորա են [9]ամենայն տիեզերք" երկրի, եւ բարձրութիւնք լերանց նորա են։
5 Նորա է ծով եւ նա արար զնա, եւ զցամաք ձեռք նորա ստեղծին։ Եկայք երկիր պագցուք նմա, [10]անկցուք եւ լացցուք" առաջի Տեառն արարչին մերոյ։
7 Նա ինքն է [1]Տէր Աստուած մեր, մեք

[5] Եբր. Հանդուցանես զնա յաւուրցն [6] Եբր. կացցէ վասն իմ հակառակ [7] Եբր. զնոսա, կործանեսցէ զնոսա [8] Եբր. աստուածոց [9] Եբր. խորք [10] Եբր. եւ անկցուք. ծունր դիցուք

ժողովուրդք ձեռին նորա , եւ իւրն ա-
բթոմի նորա ։
8 Այսօր եթէ ձայնի նորա լսիցէք ,
մի խստացուցանէք զսիրտս ձեր որպէս
ի Դառնութիւնն, յաւուրն փորձութեան
9 յանապատին, Ուր փորձեցին զիս հարքն
ձեր , քննեցին զիս եւ տեսին զգործս
10 իմ ։ Զքառասուն ամ [1]ձանձացայ ընդ
ազգին ընդ այնմիկ" եւ ասացի , Միշտ
մոլորեալ են սրտիւք . եւ նոքա ոչ ծա-
11 նեան զճանապարհս իմ ։ Որպէս երդուայ
ի բարկութեան իմում , թէ Մտցեն ի
հանգիստս իմ ։

ՍԱՂՄՈՍ ՂԵ (ՂԶ)

[2]Սաղմոս Դաւթի . ի ժամանակի զի տա-
ճարն չինեցաւ ։"

1 Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր . օրհ-
2 նեցէք զՏէր ամենայն երկիր ։ Օրհնե-
ցէք զՏէր եւ օրհնեցէք զանուն նորա ,
աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկու-
3 թիւն նորա ։ Պատմեցէք ի հեթանոս
զփառս նորա , յամենայն ժողովուրդս
4 զքաջագործս նորա ։ Մեծ է Տէր եւ օրհ-
նեալ է յոյժ , ահարկու է նա ի վերայ
5 ամենայն [3]կռոց . Ամենայն կուռք հե-
թանոսաց դեւք" են , այլ Տէր երկինս
6 արար ։ [4]Խոստովանութիւն եւ վայել-
չութիւն է առաջի նորա , [5]սրբութիւն
եւ մեծվայելչութիւն ի սրբութեան նո-
7 րա ։ Մատուսջէք Տեառն , տոհմք ազանց ,
մատուսջէք Տեառն զփառս եւ զպատիւ ։
8 Մատուսջէք Տեառն զփառս անուան նո-
րա . առէք պատարագս եւ մտէք ի սրահս
9 նորա . երկիր պագէք Տեառն [6]ի պատիւ
սրբութեան նորա . եւ խռովեսցի յերե-
10 սաց նորա ամենայն երկիր ։ Ասացէք ի
հեթանոսս թէ Տէր թագաւորեաց , հաս
տատեաց զաշխարհն զի մի սասանեսցի ,
եւ դատեսցէ զժողովուրդս [2]իւր ուղղու-
11 թեամբ ։ Ուրախ եղիցին երկինքն եւ
ցնծասցէ երկիր , զուարճասցի ծով լիու-
12 թեամբ իւրով . ցնծասցին դաշտք եւ ամենայն
որ է ի նոսա . յայնժամ ցնծասցին ամե-
13 նայն ծառք անտառի Յերեսաց Տեառն
զի գայ , եւ գայ նա ի դատել զերկիր
դատի զտիեզերս իրաւամբք , եւ զժողո-
վուրդս [3]ամենայն ճշմարտութեամբ իւրով։

[1] ՆԲԳ· սաղատացայ յազգէն յայնմանէ [2] ՅՆԲԳ· պ-ւ-ո-ե [3] ՆԲԳ· դից· (5) Ամենայն դիք հեթանոսաց բնդունայն [4] ՆԲԳ· Փառք [5] ՆԲԳ· զօրութիւն [6] ՆԲԳ· ի վայելչութիւն

ՍԱՂՄՈՍ ՂԶ (ՂԷ)

[2]Սաղմոս Դաւթի . ի ժամանակի զի եր-
կիրն հաստատեցաւ ։"

1 Տէր թագաւորեաց , ցնծասցէ երկիր ,
2 ուրախ եղիցին կղզիք բազումք ։ Ամպ
եւ մէգ չուրջ են զնովաւ , յիրաւունս եւ
յարդարութիւն ուղղեալ է աթոռ նորա ։
3 Հուր առաջի նորա գնասցէ , եւ այրեսցէ
չուրջ զթշնամիս նորա ։ Երեւեցան փայ-
լատակունք նորա աշխարհի , հաւս եւ
5 սասանեցաւ երկիր ։ Լերինք որպէս մոմ
հալեսցին յերեսաց Տեառն , յերեսաց
6 Տեառն ամենայն երկրի ։ Պատմեսցեն
երկինք զարդարութիւն նորա , եւ տեսցեն
7 ամենայն ժողովուրդք զփառս նորա ։ Ա-
մաչեսցեն ամենեքեան որք երկիր պա-
գանեն կռոց , եւ որք պարծին ի պրո-
չեալս իւրեանց . երկիր պագցեն նմա
ամենայն [7]հրեշտակք նորա"։
8 Լուաւ եւ ուրախ եղեւ Սիոն , եւ
ցնծացան դստերք Յուդայ վասն իրա-
9 նանց քոց , Տէր ։ Զի գու բարձրեալ
ես ի վերայ ամենայն երկրի , յոյժ բարձ-
րացար ի վերայ ամենայն [8]կռոց ։
10 Որք սիրէք զՏէր՝ ատեցէք զչարու-
թիւն . պահէ Տէր զանձինս սրբոց իւ-
րոց , ի ձեռաց մեղաւորի փրկեսցէ զնո-
11 սա ։ Լոյս ծագեաց արդարոց , ուղղոց
12 սրտիւք եղեւ ուրախութիւն։ Ուրախ ե-
ղերուք , արդարք , ի Տէր , եւ խոստովան
եղերուք յիշատակի սրբութեան նորա ։

ՍԱՂՄՈՍ ՂԷ (ՂԸ)

Սաղմոս [2]Դաւթի ։

1 Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր , զի
սքանչելիս արար . փրկեաց զնա աջ իւր
2 եւ բազուկ սուրբ իւր ։ Եցոյց Տէր զփրկու-
թիւն իւր , առաջի ազգաց յայտնեաց
3 զարդարութիւն իւր ։ Յիշեաց գողորմու-
թիւն իւր [9]Յակոբայ, զճշմարտութիւնն"
իւր ի վերայ տանն Իսրայելի . եւ տեսին
4 ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աս-
տուծոյ մերոյ ։ Աղաղակեցէք առ Տէր,
ամենայն երկիր , օրհնեցէք, ցնծացէք եւ
5 սաղմոսասացէք ։ Սաղմոս ասացէք Աս-
տուծոյ մերում օրհնութեամբ , օրհնու-
6 թեամբ եւ ի ձայն սաղմոսաց ։ Ի ձայն
օրհնութեան կռածոյ փողոյ , օրհնու-
թեամբ , ցնծութեամբ եւ ի ձայն եղջեր

[7] ՆԲԳ· դիք [8] ՆԲԳ· դից [9] ՆԲԳ· և զճշմարտութիւն

փողոյ, ազազակեցէք առաջի Թագաւո-
7 րին, Տեառն։ Ասորւոյն ծով լրիւ իւ-
րով, ահիկերք եւ ամենայն լնութիւնք
8 նորա. Եւ գնաք ծածուկ հարցին ի միա-
9 սին ձեռամբ, լերինք ցնծասցեն Առա-
ջի Տեառն, զի գայ եւ հատեալ է
Տէր ի դատել զերկիր. դատի զաշխարհս
արդարութեամբ, եւ զժողովուրդս իւր
ուղղութեամբ։

ՍԱՂՄՈՍ ՂԵ (ՂԹ)

[1]Սաղմոս Դաւթի։

1 Տէր թագաւորեաց, [2]բարկացան ժողո-
վուրդք. որ նստի ի քերովբէս, սա-
2 ռանեցաւ երկիր։ Տէր ի Սիոն մնծ է,
եւ բարձր է ի վերոյ ամենայն ժողովրդոց։
3 Խոստովան եղիցին անուանդ քում մնծի,
4 զի ահաւոր եւ սուրբ է։ Եւ պատիւ
թագաւորի վիրաւնս սիրէ. դու պատ-
րաստեցեր ուղղութիւն, դիրաւունս
եւ արդարութիւն Յակոբայ դու ա-
5 րարեր։ Բարձր արարէք զՏէր Աստուած
մեր, երկիր պագէք պատուանդանի ո-
6 տից նորա, զի սուրբ է։ Մովսէս եւ Ա-
հարոն երիսպետք նորա, Սամուէլ ընդ
այնոսիկ որ կարդան զանուն նորա. կար-
7 դային առ Տէր եւ նա լսէր նոցա, Եւ
ի սիւն ամպոյ խօսէր ընդ նոսա. պա-
հէին զվկայութիւնս նորա եւ զրամանս
8 զոր ետ նոցա։ Տէր, Աստուած մեր,
դու լսէիր նոցա. Աստուած, դու քաւիչ
լինէիր նոցա, վրէժխնդիր ի վերայ ամե-
9 նայն դործոց նոցա։ Բարձր արարէք
զՏէր, Աստուած մեր, երկիր պագէք ի
լեառն սուրբ նորա, զի սուրբ է Տէր
Աստուած մեր։

ՍԱՂՄՈՍ Ղ (Ճ)

1 Սաղմոս խոստովանութեան [1]Դաւթի։

2 Աղազակեցէք առ Տէր, ամենայն կո-
3 կիր, Ծառայեցէք Տեառն ուրախու-
թեամբ. մտէք առաջի նորա գնծու-
թեամբ, ծանեալք զի նա է Տէր Աս-
տուած մեր. նա արար զմեզ եւ ոչ մեք
էաք, մեք ժողովուրդք եւ խաշն արօ-
4 տի նորա։ Մտէք ընդ դրունս նորա խոս-
տովանութեամբ, եւ օրհնութեամբ ի
յարկս նորա. խոստովան եղերուք Տեառն,
5 եւ օրհնեցէք զանուն նորա։ Քաղցր է
Տէր, յաւիտեան է ողորմութիւն նո-
րա. ազգէ մինչեւ յազգ է ճշմարտու-
թիւն նորա։

ՍԱՂՄՈՍ Ճ (ՃՁ)

Սաղմոս Դաւթի։

1 Յաղթութիւն եւ յիրաւունս օրհնեցից
2 զքեզ, Տէր. սաղմոս ասացից. Եւ ի
միտ առից, ճանապարհ [3]ամրիծ մինչեւ
եկեսցէ՞ առ իս. զի գնայի ես յամրծուա-
3 թիւն սրտի իմոյ ի մէջ տան իմոյ։ Ոչ
եղի առաջի աչաց իմոց իրս անիրաւու-
թեան, ոչք առնէին զանբաւութիւն՝ ա-
4 տեցի, ոչ մերձեցաւ առ իս։ Որ թիւրն էր
սրտիւ՝ խոստրեալ չինէն. անզգամին՝
5 ես [4]ինչ ոչ գոյի առնէի։ Որ խօսէր զգաղ
զընկերէ իւրմէ, զնա բայէ ի բաց հա-
լածէի. որ [5]ամբարտաւան էր աչօք եւ
ագահ սրտիւ, ընդ նմա եւ հաց ոչ ու-
6 տէի՞։ Աչք իմ ի հաւատացեալս երկրի,
զի նստցին ընդ ես. որ գնայր ի
ճանապարհ ամրիծ, նա պաշտէր զիս։
7 Ոչ բնակէր ի մէջ տան իմոյ՝ որ առնէր
գամբարտաւանութիւն, որ խօսէր զա-
նիրաւութիւն՝ չէր յաջողեալ նմա ա-
8 ռաջի աչաց իմոց։ Ընդ առաւօտս սպա-
նանէի զամենայն մեղաւորս երկրի, զի
առաւակեցից ի քաղաքի Տեառն զամենա-
սեան ոչք գործեն զանօրէնութիւն։

ՍԱՂՄՈՍ ՃԺ (ՃԾ)

1 Աղօթք ումեք, իրրեւ ձանձրացայ եւ
առաջի Տեառն սիրեսցէ զինդրուածս
իւր։

2 Տէր, լուր աղօթից իմոց, ապազակ իմ
3 առ քեզ եկեսցէ։ Մի դարձուցաներ զե-
րեսս քո յինէն յաւուր նեղութեան ի-
մոյ. խոնարհեցո առ իս զունկն քո, յո-
րում աւուր կարգամ առ քեզ՝ վազվա-
4 զակի լուր ինձ։ Սպառեցան որպէս ծուխ
աւուրք իմ, եւ ոսկերք իմ որպէս խոր-
5 չոցան։ Հարաւ որպէս խոտ եւ յա-
մաքեցաւ սիրտ իմ, մոռացայ ուտել զհաց
6 իմ։ Ի ձայնէ հեծութեան իմոյ, կցկցաւ
7 ոսկր իմ ի մարմնի իմ։ Նմանեցայ ես
հաւալասն յանապատի. եղէ ես որպէս
8 բու յաւերակի։ Տքնեցայ եւ եղէ ես որ-
9 պէս ճնճղուկ միայն ի տանիս։ Նախատե-
ցին զիս թշնամիք իմ զօրանալով, եւ
10 [6]զովիչք իմ [7]ինեւ երդնուին։ Զմոխիր որ-

[1] 8եբ. գոլոխ [2] եբ. գոչացին

[3] եբ. ամրիծ. ե՞րբ եկեսցես [4] եբ. բարձր էր աչօք
և ամբարտաւան սրտիւ, ոչ Հանդուրժէի նմա
[5] եբ. որ յաստեցեալ են ինձ, անիծանեն զիս

պէս զնոց կերայ, եւ գրմպկիկն իմ արբ-
11 տասուօք խառնեցի՝ Յերեսաց բարկու-
թեան սրամտութեան քո, դի զու բարձ-
12 րացուցեր եւ խոնարհեցուցեր զիս։ Ա-
ւուրք իմ որպէս հովանի անցին, եւ ես
որպէս խոտ ցամաքեցայ։
13 Դու, Տէր, յաւիտեան կաս, եւ յի-
14 շատակ քո ազգէ մինչեւ յազգ։ Դու
յարուցեալ գթասցես ի վերայ Սիոնի,
ժամանակ գթալոյ նորա, հասեալ է ժամ։
15 Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նո-
16 րա, եւ ի հող նորա գթասցին։ Երկի-
ղին հեթանոսք զանուանել քումմէ, եւ
ամենայն թագաւորք երկրի ի փառսդ
17 քոյ։ Շինէ Տէր զՍիոն, եւ երեւեսցի
18 փառօք իւրովք ի նմա։ Հայեցաւ նա
յաղօթս խոնարհացդ, եւ ոչ արհամար-
19 հեաց զխնդրուածս նոցա։ Գրեսցի այս
յազգ յազգ, ժողովուրդ [1]զոր ստացեալ
20 է՝ օրհնեսցէ զՏէր։ Հայեցաւ նա ի բար-
ձանց ի սրբութենէ իւրմէ. Տէր յերկնից
21 յերկիր հայեցաւ, լսել զհեծութիւնն կա-
պելոց, եւ արձակել զորդիս մահապար-
22 ատ, պատմել ի Սիոն զանուն Տեառն,
եւ զօրհնութիւնս նորա յերուսաղէմ,
23 ժողովել ժողովրդոց ի միասին, եւ թա-
24 գաւորաց ծառայել Տեառն։ [2]Պատաս-
խանի ետ նմա ի ճանապարհի զօրու-
թեան իւրոյ, զնուազութիւն աւուրց
25 իմոց ասաց ինձ, Եւ՞ մի հանիր զիս ի
կէս աւուրց իմոց. զի ազգէ յազգ են
26 ամք քո։ Ի սկզբանէ, Տէր, զերկիրս
երկրի հաստատեցեր, եւ գործք ձեռաց
27 քոց երկինք են։ Նոքա անցանեն, եւ
դու կաս եւ միասս յաւիտեան. ամենա-
քեան որպէս զհանդս մաշեսցին, որպէս
վերարկուս փոխեսցես զնոսա եւ փո-
28 խեսցին։ Բայց դու նոյն իսկ ես, եւ
29 ամք քո ոչ անցանիցեն։ Որդիք ծառայից
քոց [3]յիւրեկսցեն ի նմա, եւ զաւակի
նոցա յաւիտեան յաջողեսցի՚։

ՍԱՂՄՈՍ ՃԲ (ՃԳ)

Ասղմոս Դաւթի։

1 Օրհնեա, անձն իմ, զՏէր, եւ ամենայն
2 [4]ոսկերք իմ զանուն սուրբ նորա։ Օրհ-
նեա, անձն իմ, զՏէր, եւ մի մոռաս-
3 նար զամենայն տուրս նորա։ Ո քաւէ
զմեղս քո, բժշկէ զամենայն հիւանդու-
4 թիս քո։ Ո փրկէ յապականութենէ
կեանս քո, պսակէ զքեզ ողորմու-
5 թիւամբ եւ գթութեամբ։ Ո լնու ի բա-
րութիւնէ [5]զգանկութիւն քո, նորոգեաս
զի որպէս արծուոյ մանկութիւն քո։
6 Առնէ ողորմութիւնս Տէր, եւ իրա-
7 ւունս ամենայն զրկելոց։ Եցոյց Տէր
զճանապարհս իւր Մովսիսի, եւ որդ-
8 ւոցն Իսրայէլի զկամս իւր։ Գթած, ո-
ղորմած է Տէր, երկայնամիտ եւ բա-
9 զումողորմ։ Ոչ ի սպառ բարկանայ Տէր,
10 եւ ոչ յաւիտեան պահէ ոխս։ Ոչ ըստ
մեզս մեր արար մեզ, եւ ոչ ըստ անօ-
11 րէնութեան մերում հատոյց մեզ։ Այլ
որպէս բարձր են երկինք յերկրէ, այն-
պէս զօրացոյց Տէր զողորմութիւն իւր
12 ի վերայ երկիւղածաց իւրոց։ Որչափ հեռի
են արեւելք յարեւմտից, այնպէս հեռի
արար ի մէնջ զանօրէնութիւնս մեր։
13 Որպէս գթայ հայր ի վերայ որդւոց իւ-
րոց, այնպէս գթասցի Տէր յերկիւղածս
14 իւր։ Զի նա գիտաց զաստղծուածս մեր,
15 եւ յիշեաց թէ հող եմք։ Մարդոյ որ-
պէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծա-
16 ղիկ վայրի այնպէս ծաղկի։ Շնչէ ի նմա
հոգի՝ եւ ոչ է, եւ ոչ ևս երեւի տե-
17 ղի նորա։ Բայց ողորմութիւն Տեառն
յաւիտենից յաւիտենից ի վերայ երկիւ-
ղածաց իւրոց, եւ արդարութիւն նորա
18 յորդւոց մինչեւ յորդիս։ Ոյք պահեն
զսխտս նորա, յիշեն զպատուիրանս նո-
19 րա եւ առնեն զնա։ Տէր յերկինս պատ-
րաստեաց զաթոռս իւր, արքայութիւն
20 նորաամենեցուն տիրէ։ Օրհնեցէք զՏէր,
ամենայն հրեշտակք նորա, հզօրք զօ-
րութեամբ՝ ոյք առնէք զբանս նորա, ի լսել
21 ձայնի պատգամաց նորա։ Օրհնեցէք
զՏէր ամենայն զօրութիւնք նորա, պաշ-
տօնեայք եւ սպարօղք կամաց նորա։
22 Օրհնեցէք զՏէր, ամենայն գործք նորա,
ընդ ամենայն տիրա[6]պետութիւն նո-
րա. օրհնեա, անձն իմ, զՏէր։

ՍԱՂՄՈՍ ՃԴ (ՃԹ)

[7]*Ասղմոս Դաւթի. ի վերայ աչխարհա-
գործ արարածոց։*՚

1 Օրհնեա, անձն իմ, զՏէր. Տէր Աս-
տուած իմ, մեծ եղեր յոյժ. [7]խոստո-
վանութիւն եւ մեծվայելչութիւն զգես-

[1] Եբէր. որ լինելոց [2]Եբէր. Տառապեցոյց ի ճանա-
պարհի զզօրութիւն իմ, նուազեցոյց զաւուրս
իմ։ (25) Ասացի, Աստուած իմ, [3]Եբէր.
բնակեսցեն, եւ զաւակ նոցա առաջի քո հաս-
տատեսցի [4]Եբէր. Ներքոյք

[5] Կամ, զծերութիւն [6]Յբէր. պետութ [7]Եբէր. փառս

2 ցար. Արկար զլոյս որպէս զհանդ, ձգե-
3 ցեր զերկինս որպէս խորան, եւ արկեր
ի վերայ Ջուրց զվերնայարկս նորա. ո
դնէ յամպս զդնացս իւր, եւ չրջի նաւ վերայ
4 թեւոց հողմոց։ Ո արար զհրեշտակս իւր
հոգիս, եւ զպաշտօնեայս իւր ի հուր
5 կիզելոյ։ Հաստատեաց զերկիր ի վերայ
հաստատութեան իւրոյ, զի մի սասա-
6 նեսցի յաւիտեան։ Խորք որպէս զդեստ
վերարկու է նորա, ի վերայ լերանցն կաց-
7 ցեն Ջուրք։ Ի սաստէ քումմէ փախե-
ցեն, եւ ի ձայնէ որոտալոյ քումմէ սար-
8 սիցեն։ Ելանեն լեռնանան եւ իջանեն
դաշտանան, ի տեղի յոր հաստատեցեր
9 զնոսա։ Սահման եդեր՝ եւ ոչ անցանիցեն,
եւ ոչ եւս դառնան ի ծածկել զերկիր։
10 Առաքեցեր զաղբիւրսդ ի ձորսդ, ի
11 մէջ լերանց գնասցեն Ջուրք, Արբու-
ցանել զամենայն դազանս վայրի. յա-
12 զեսցին ցիռք ի ծարաւս իւրեանց։ Անդ
[1]թռչունք երկնից լսցին զիւրեանց, եւ ի մի-
ջոց [2]վիմաց տացեն գձայնս իւրեանց։
13 Արբուցանէ զլերինս ի չանմատանաց իւ-
րոց, ի պտղոց գործոց իւրոց լցցի եր-
14 կիր։ Բուսուցեր զխոտ անասնոց, զդա-
լարի ի ծառայութիւն մարդկան. Հանիր
15 զհաց յերկրէ. Գինի ուրախ [3]առնէ, եւզ
զուարթի, եւ հաց հաստատէ զսիրտ մարդոյ։
16 Յագեսցին ծառքն Տեառն, եւ մայրքն
17 Լիբանանու զորս դու անկեցեր։ Անդ
թռչունք երկնից ձագս հանցեն, եւ [3]յուն
18 սրագլխ ապաւէն է նոցա։ Լերինք
բարձունք են եղջերուաց, եւ վէմք ա-
պաւէն նապաստակաց։
19 Արարեր զլուսին վասն ժամանակի,
արեգական ծանեաւ զժամ մտանելոյ իւ-
20 րոյ։ Արարեր զխաւար եւ եղեւ գիշեր,
ի նմա գնան ամենայն գազանք անտա-
21 ռի։ Կորիւնք առիւծուց մռնչեն եւ
յափշտակեն, եւ խնդրեն յԱստուծոյ կեր-
22 րակուր իւրեանց։ Ի ծագել արեւու
ժողովին, եւ ի մսրխս իւրեանց դադա-
23 րեն։ Ելանէ մարդ ի գործս իւր, եւ ի
վաստակս ձեռաց իւրոց մինչեւ յերեկոյ։
24 Որպէս զի՛ մեծ են գործք քո, Տէր,
զամենայն ինչ իմաստութեամբ արարեր,
եւ լցաւ երկիր ստեղծուածովք քովք։
25 Այս ծով մեծ եւ անդորր. ի նմա կենդանք
որոց աչ գոյ թիւ, գազանք մեծա-
26 մեծք եւ մանուկք։ Ի նմա եւ նաւք

[1] Ոչխ. ոստոց [2] Ոչխ. առնէ զձիրս մարդոյ, եւզ առնէ զերեսս [3] Ոչխ. արագլխ տուն են մայրք

գնան, վիշապն զոր ստեղծեր խաղալ
27 նմա։ Ամենեքեան քեզ սպասեն, եւ
դու տաս զկերակուր նոցա ի ժամու։
28 Տաս դու նոցա եւ կերակրին, բանայ
զձեռն քո, եւ կերակրես զամենեսեան
29 կամաւք քովք։ Դարձուցանես զերեսս քո
ի նոցանէ՝ եւ խռովին. հանես զոգի ի
նոցանէ՝ պակասին եւ ի հող գառնան։
30 Առաքես զոգի քո եւ ստեղծանին զնոսա,
եւ նորոգես զերեսս երկրի։
31 Եղիցին փառք Տեառն յաւիտեան,
32 Տէր ուրախ եղիցի յարարածս իւր։ Ո
հայի յերկիր եւ տայ դողալ սմա, մեր-
33 ձի ի լերինս եւ ծխեսցին։ Օրհնեցից զՏէր
ի կենդանս իմ, սաղմոս ասացից Աստու-
34 ծոյ իմոյ մինչեւ եմ եւ ես։ [4]Քաղցր եղիցի
նմա օրհնութիւն իմ, եւ ես ուրախ
35 եղէց ի Տէր։ Պակասեսցին մեղաւորք
յերկրէ, եւ ամպարիշտք մի՛ եւս գոցին
ի նմա։ Օրհնեա, անձն իմ, զՏէր։ Ալէ-
լուիա։

ՍԱՂՄՈՍ ՃԴ (ՃԵ)

1 Խոստովան եղերուք Տեառն եւ կար-
գայեք զանուն նորա, պատմեցէք ի հե-
2 թանոսս զգործս նորա։ Օրհնեցէք եւ
ասացեք նմա, պատմեցէք զա-
3 մենայն սքանչելիս նորա. Եւ գովեսցա-
ցեք զանուն սուրբ նորա. ուրախ եղի-
ցին սիրտք այնոցիկ որք խնդրեն զՏէր։
4 Խնդրեցէք զՏէր եւ [5]հզօրք եղերուք՛, եւ
խնդրեցէք զերեսս նորա յամենայն ժամ։
5 Յիշեցէք զսքանչելիս նորա զոր արար,
զարուեստս եւ զիրաւունս բերանոյ նո-
6 րա։ Զաւակք Աբրահամեան՝ ծառայք նո-
ցա, որդիք Յակոբայ՝ ընտրեալք նորա։
7 Նա ինքն է Տէր Աստուած մեր, յամե-
նայն երկրի են իրաւունք նորա։
8 Յիշեաց յաւիտենից զուխտ իւր, եւ
պատուիրեաց հազարս ազգաց։
9 զոր [6]ամ։ Զուխտն զոր եդ ընդ Աբրա-
համու, եւ զերդումն իւր ընդ Իսահա-
10 կայ։ Հաստատեաց աս Յակոբ զնրա-
ման իւր, եւ աս Իսրայէլ զուխտ իւր
11 յաւիտենից. Ասէ, [7]Ձեզ տայ զերկիրն
Քանանու, զվիճակ ժառանգութեան Ձե-
12 րոյ. Չի էին նոքա թուով սակաւ,
13 նուազք եւ պանդխտեալք ի նմա. Անցին
նոքա ազգէ յազգ, ի թագաւորութենէ
14 ի ժողովուրդ յայլ։ Ոչ եթող մարդկան

[4] Կամ, Քաղցրասցի զնմանէ խորհուրդ [5] Ոչխ. զգօրութիւն նորա [6] Ոչխ. ազգ [7] Ոչխ. քեզ

մեզանչել նոցա, կշտամբեաց զՄոգաս-
15 տրա վասն նոցա. Մի՛ մերձենայք, ա-
սէ, յօձնելս իմ, եւ ի մարգարէս իմ մի՛
մեզանչէք։
16 Կոչեաց առ յերկիր նոցա, զամենայն
17 զօրաբաժին հացի երկիւ։ Առաքեաց ա-
ոաջի նոցա այր, ի ծառայ ծախն վա-
18 ճառեալ Յովսէփ։ Խոնարհ արարին ի
կապանս զոտս նորա, եւ անց ընդ եր-
19 կաթ անձն նորա։ Մինչեւ եկեալ բան
նորա, եւ բան Տեառն փորձեաց զնա։
20 Առաքեաց թագաւորն եւ ելոյծ զնա,
21 իշխան ժողովրդեան եմոյ զնա։ Կացոյց
զնա տէր առն իւրոյ, իշխան ի վերայ
22 ամենայն առացուածոց իւրոց, Որպէս
զիշխանս նոցա որպէս զինքն, եւ զծեր
նոցա՝ խրատուիս արասցէ։
23 Եւմուտ Իսրայէլ յեգիպտոս, Յակոբ
24 պանդխտեաց յերկիր Քամայ։ Աճեցոյց
զժողովուրդ իւր յոյժ, եւ զօրացոյց զնոսա
25 քան զթշնամիս իւր։ Դարձոյց զսիրտս
նոցա՝ ատել զժողովուրդ իւր, եւ իւնել
26 զել զծառայս իւր։ Առաքեաց զՄովսէս
ծառայ իւր, եւ զԱհարոն ընտրեալ իւր։
27 Եդ նոցա զբան նշանաց իւրոց, եւ զա-
րուեստս իւր յերկիր Քամայ։
28 Առաքեաց խաւար եւ խաւարեցոյց
զնոսա, [1]մի պատուասցեն զբան նորա։
29 Դարձոյց յարիւն զգետս նոցա, եւ սպան
30 զամենայն ձկունս նոցա։ Եւածաւ յերկիր
նոցա գորս, ի չանմարանս թագաւորաց
31 նոցա։ Ասաց՝ եւ եկն չանճանճ եւ մժիւն
32 ընդ ամենայն սահմանս նոցա։ Դարձոյց
զանձրեւս նոցա ի կարկուտ, եւ հուր
33 յերկիր նոցա բորբոքեցաւ։ Եհար զայգիս
եւ զթզիսենիս նոցա, եւ փշրեաց զամենայն
34 ծառս սահմանաց նոցա։ Ասաց՝ եւ եկն
մարախ եւ խառնիճ զի ոչ գոյր նոցա թիւ։
35 Եկեր զամենայն խոտ երկրի նոցա, եւ
սպառեաց զամենայն պտուղ անդաստանաց
36 նոցա։ Եհար զամենայն անդրանիկս եգիպտա-
ցւոց, զսկիզբն ամենայն վաստակոց նոցա։
37 Եհան զնոսա ոսկւով եւ արծաթով, եւ
38 ոչ գոյր յազգի նոցա հիւանդ։ Ուրախ
եղեւ եգիպտոս ընդ ելանել նոցա, զի
անկաւ ահ Տեառն ի վերայ նոցա։
39 Սփռեաց ամպ հովանի առնել նոցա
ի տաւէ, եւ հուր լոյս գիշերի նոցա ի գի-
40 շեր։ Խնդրեցին եւ եկն լորամարդի,
41 եւ հացիւ երկնից լցոյց զնոսա։ Եհար
գվէմն եւ բղխեցին ջուրք, եւ գնացին
42 գետք ընդ անջրդիս։ Զիշեաց զբան իւր
սուրբ, որ ընդ Աբրահամու ծառայի իւ-
43 րում։ Եհան զժողովուրդ իւր ցնծու-
թեամբ, եւ զընտրեալս իւր ուրախու-
44 թեամբ։ Եւ ետ նոցա զդաշտս հեթանո-
սաց, ի վաստակս ժողովրդոց ժառան-
45 գեցցեն զնոսա։ Զի պահեսցեն զվկայու-
թիւնս նորա, եւ զօրէնս նորա խնդրեսցեն։[2]

ՍԱՂՄՈՍ ՃԵ (ՃԲ)

1 Ալէլուիա։ Խոստովան եղերուք Տեառն
զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմու-
2 թիւն նորա։ Ո՞ խօսեսցի զզօրութիւնս
Տեառն, լսելի արասցէ զամենայն օրհ-
3 նութիւն նորա։ Երանի՛ այգ պահեն
զիրաւունս, եւ առնեն զարդարութիւն
յամենայն ժամ։
4 Զիշեա [3]զմեզ, Տէր, ընդ հաճոյս ժո-
ղովրդեան քո, եւ այց սուրա [4]մեզ ի
5 փրկութիւնդ քում։ Տեսցուք մեք զբարե-
րութիւն ընտրելոց քոց, ուրախ եղիցուք
մեք յուրախութիւն ազգի քո, եւ գո-
վեսցուք մեք ի ժառանգութիւնդ քում։
6 Մեղաք մեք ընդ հարսն մեր, անօրի-
7 նեցաք եւ յանցաք։ Հարքն մեր յեգի-
պտոս ոչ իմացան զբանս ողորմութիւնս քո, եւ
ոչ յիշեցին զբազմութիւնս քո, բարկացան զբեզ յանցանսն իւրեանց
8 ընդ ծով կարմիր։ Փրկեաց զնոսա վասն
անուան իւրոյ, զի ծանիցեն զզօրու-
9 թիւնս նորա։ Սաստեաց ի ծով կար-
միր՝ եւ յամաքեցաւ. առաջնորդեաց
նոցա ընդ անդունդս որպէս ընդ անա-
10 պատս։ Կեցոյց զնոսա ի ձեռաց ատելեաց
նոցա, եւ փրկեաց զնոսա ի ձեռաց
11 թշնամեաց նոցա։ Ծածկեաց ծով զնեղիչս
նոցա, եւ մի ի նոցանէ ոչ ապրեցաւ։
12 Հաւատացին ի բան նորա, եւ օրհնեցին
զօրհնութիւնս նորա։
13 Վաղվաղեցին եւ մոռացան զգործս
նորա, եւ ոչ անասցին խորհրդոց նորա։
14 Յանկացան զցանկութիւնս յանապատի,
15 եւ փորձեցին զԱստուած յանդիմի։ Եւ
նոցա զխնդրուածս նոցա, եւ առաքեաց
16 [5]յիրութիւն յանձինս նոցա։ [6]Բարկացու-
ցին զՄովսէս ի բանակի, եւ զԱհարան՝
17 սուրբ Տեառն։ Բացաւ երկիր եւ կլոսկ
զԴաթան, եւ ծածկեաց զբանական զԱբի-
18 րոնի։ Հուր վառեցաւ ի ժողովս նո-

[1] Եբր. եւ ոչ

[2] Եբր-յեթէ յաւելու, Ալէլուիա։ [3] Եբր. զիս Եբր. ինձ [4] Եբր. զփրկութիւն [5] Եբր. Նախանձեցան ընդ Մովսէս եւ ընդ Ահարոն

19 ցա, եւ բոց մաչեաց զմեզաւսրս։ Արարին
զորմն ի Քորեր, եւ երկիր պապին պատ-
20 կերի. Եւ վոխեցին Զիսաս իւրեանց ի
21 նմանութիւն արմտ խոտակերի։ Մոռա-
ցան զԱստուած կենդարար իւրեանց,
որ արար զմիծամիծս իւր յերկիրսս,
22 Զաքանչելիս իւր յերկիր Քամայ, եւ զսո
23 իւր ի վիրայ Կարմիր ծովուն։ Ասաց սա-
տանիկ զնոսա, եթէ ոչ Մովսէս բնտ-
րեալ կայր առաջի նորա. դարձաւ առ
Տէր եւ անցոյց զբարկութիւնն նորա
24 զի մի ատեսանիցին նոքա։ Անարգեցին
զերկիրն ցանկալի, եւ ոչ հաւատացին
25 բանի նորա։ Տրտնջեցին ի բանակս իւր-
26 եանց, եւ ոչ լուան ձայնի Տեառն։ Համ-
բարձ զձեռն իւր ի վերայ նոցա, հար-
27 կանել զնոսա յանապատի։ Զբեւեցուլ
զաւակ նոցա ընդ հեթանոսս, ցրեւեցուլ
զաւակ նոցա ընդ գաւառս։
28 Պղծեցան նոքա ի Բեզբեղովր, կերան
29 [1]զզոհեալ եւ զմեռելոսն[2]։ Բարկացուցին
զնա ի գործս իւրեանց, եւ յաճախեաց ի
30 վերայ նոցա բնկուծն։ Ապա եկաց ի մէջ
Փենեհէս, քաւեաց եւ պատճառ մահ.
31 Համարեցաւ նմա յարդարութիւն ազգէ
յազգ մինչեւ յաւիտեան։
32 Բարկացուցին զնա ի ջուրսն Հակա-
ռակութեան, [2]չարչարեցաւ Մովսէս
33 վասն նոցա. Զի դառնացուցին զոգի
34 նորա, մրմնջեաց չբմտիւք իւրովք։ Եւ
ոչ սատակեցին զազգսն զոր ասաց Տէր
35 Տէր։ Խառնակեցան ընդ հեթանոսս եւ
36 ուսան զգործս նոցա. Պատարկեցին կռոց
նոցա, եւ եղեւ նոցա ի գայթակղութիւն։
37 Զոհեցին զորդիսս եւ զդստերս իւրեանց
38 դիւոց, եւ հեղին զարիւն անիրաւ, Զարիւն
ուսուերաց եւ դստերաց իւրեանց, զոր
զոհեցին կռոցն Քանանու. չարախնայեաց
39 երկիր յարիւնէ նոցա։ Եւ [3]պղծեցաւ ի
գործսն նոցա, մի՛ պոռնկեցան ի գործս
իւրեանց։
40 Բարկացաւ սրտմտութեամբ Տէր ի վե-
րայ ժողովրդեան իւրոյ, եւ գարշեցաւ
41 զժառանգութենէն իւր յոյժ. Մատնեաց
զնոսա ի ձեռս հեթանոսաց, տիրեցին
42 նոցա ատելիք իւրեանց։ Եւ [4]չնամիք
իւրեանց նեղեցին զնոսա, եւ խոնարհ
43 եղեն ի ներքոյ ձեռաց նոցա։ Բազում
անգամ փրկեաց զնոսա, եւ նոքա զտա-
նողութիւն գնա ի խորհուրդս իւրեանց,
եւ կորացան յանօրէնութենէն իւրեանց։
44 Հայեցաւ Տէր ի նեղութիւնս նոցա,
45 ի լսել ձայնի աղօթից նոցա։ Յիշեաց
զտէսս իւր եւ զղջացաւ ըստ բազում
46 ողորմութեան իւրում. Եւ զնոսա ի
գթութիւնս առնոյր ամենայն գերչաց
նոցա։
47 Փրկեա զմեզ, Տէր Աստուած մեր,
եւ ժողովեա զմեզ ի հեթանոսաց. խոս-
տովան եղիցուք անուան քում սրբոյ,
եւ պարծեցուք յօրհնութիւնս քս։
48 Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի յա-
ւիտեանս յաւիտենից. եւ ասասցէ ամե-
նայն ժողովուրդն, եղիցի, [5]եղիցի։

ՍԱՂՄՈՍ ՃԹ. (ՃԾ)

[5]Ալէլուիա։

1 Խոստովան եղերուք Տեառն, զի քաղցր
է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։
2 Ասասցեն փրկեալք Տեառն, զորս փրկե-
3 նաց ի ձեռաց թշնամեացն. Յամենայն
գաւառաց ժողովեաց զնոսա, յարեւելից
եւ յարեւմտից, ի հիւսիսոյ եւ ի ծովէ։
4 Մոլորեցան նոքա յանապատի յանջրդի
ճանապարհի, եւ քաղաք բնակութեան
5 ոչ գտին։ Քաղցեան եւ ծարաւեցան,
եւ անձինք նոցա ի նոսին նուաղեցան։
6 Ակաղակեցին առ Տէր ի նեղութեան
իւրեանց, ի վշտաց նոցա փրկեաց զնոսա։
7 Յաջնորդեաց նոցա ի ճանապարհ ու-
ղիղ, գի երթիցեն ի քաղաք բնակու-
թեան իւրեանց։
8 Խոստովան եղիցին Տեառն ողորմու-
թեանց նորա, սքանչելեաց նորա՝ յոր-
9 դիս մարդկան։ Զի յագեցոյց զան-
ձինս քաղցեալս, եւ զանձինս կարօտ-
եալս լի արար բարութեամբ։
10 Այլ նստեալքն ի խաւարի եւ ի ստուերս
մահու, կապեալ էին չաղքատութեան
11 երկաթոյ։ Զի դառնացուցին
զբանն Աստուծոյ, եւ զխորհուրդս Բարձ-
12 րեւոյն [6]բարկացուցին։ Խոնարհ եղեն ի
գլուխ սիրտք նոցա, տկարացան եւ ոչ
13 ոք էր որ օգնէր նոցա։ Աղաղակեցին
առ Տէր ի նեղութեան իւրեանց, ի վշտ-
14 ացս նոցա նմա գործս։ Փրկեաց զնոսա

---

[1] Եբբ. զզոհեալս մեռելոսացս [2] Եբբ. չար եղեւ Մովսէսի [3] Եբբ. պղծեցան ի գործս իւրեանց, եւ [4] Եբբ. Ալէլուիա [5] Ցնծացեալ [6] Եբբ. աբհամարհեցին

ի խաւարէ եւ ի ստուերաց մահու, եւ խզեաց կապանս նոցա։
15 Խոստովան եղիցին Տեառն զողորմութիւնս նորա, եւ զքաջութիւնս նորա
16 յորդիս մարդկան։ Զի փշրեաց դրունս պղնձիս, եւ զնիգս երկաթիս խորտակեաց։
17 [1]Օգնեաց նոցա ի ճանապարհի անօրէնութեան իւրեանց, զի՝ վասն մեղաց
18 իւրեանց խոնարհ եղեն յոյժ։ Ամենայն կերակրոյ զարհեցաւ սիրտք նոցա, եւ մերձ
19 եցան մինչեւ ի դրունս մահու։ Աղաղակեցին առ Տէր ի նեղութեան իւրեանց, ի վշտաց նոցա ապրեցոյց զնոսա։
20 Առաքեաց զբան իւր եւ բժշկեաց զնոսա, եւ փրկեաց զնոսա յապականութենէ
21 իւրեանց։ Խոստովան եղիցին Տեառն ողորմութեանց նորա, եւ զքաջութիւնս նո-
22 րա՝ յորդիս մարդկան։ Մատուսցեն նմա պատարագ օրհնութեան, եւ պատմեսցեն զգործս նորա գնդութեամբ։ Որք իջանէին ի ծով նաւովք, եւ առնէին
24 զգործս ի ջուրս բազումս։ Նոքա տեսին զգործս Տեառն, եւ զքաջութիւնս նորա
25 ի խորս անդնդոց։ Ասաց՝ եւ յարեաւ հողմ եւ մրրիկ, եւ յարձրացան ալիք
26 նորա։ Ելանէին յերկինս եւ իջանէին յանդունդս, եւ անձինք նոցա [2]յանձինս
27 իւրեանց՝ մաշեցան։ Խուվեցան առաջ նկան որպէս արբեալք, եւ ամենայն
28 իմաստութիւն նոցա ընկաւ։ Աղաղակեցին առ Տէր ի նեղութեան իւրեանց,
29 ի վշտաց նոցա կեցոյց զնոսա։ Յարձոյց զմրրիկն [3]յօդս, եւ զադարեցոյց ալիք նո-
30 րա։ Ուրախ եղեն զի դադարեցոյն, եւ առաջնորդեաց նոցա ի նաւահանգիստ կամաց իւրեանց։
31 Խոստովան եղիցին Տեառն զողորմութեանց նորա, եւ զքաջութիւնս նորա՝
32 յորդիս մարդկան։ Բարձր արասցին զնա ի ժողովս ժողովրդոց, եւ յաթոռս ծերոց օրհնեսցեն զնա։
33 Դարձոյց զգետս ի ցամաք, եւ զվնասս
34 ջուրց յերկիր ծարաւուտս։ Արար զերկիրն պտղաբեր յազտաղտուկս, վասն
35 չարութեան բնակչաց նորա։ Արար զանապատն ի ճահիճս ջուրց, եւ զերկիրն
36 ծարաւուտս ի գնացս ջուրց։ Բնակեցոյց ի նմա քաղցեալս, եւ չինեցին քաղաք
37 բնակութեան իւրեանց։ Վարեցին արտս եւ տնկեցին այգիս, եւ արարին պտուղ
38 արմտեաց իւրեանց։ Օրհնեաց զնոսա եւ բազմացան յոյժ, եւ անասունք նոցա ոչ
39 նուազեցան։ Նուազեցան նոքա եւ չարչարեցան, ի նեղութենէ չարեաց եւ ի
40 վշտաց։ Եկն անարգութիւն ի վերայ իշխանաց նոցա, մոլորեցոյց զնոսա յա-
41 նապատի եւ ոչ ի ճանապարհի։ Օգնեաց անանկին յաջորդութենան, եւ առաջնո-
42 դեաց որպէս խաչին տղղի նոցա։ Տեսցեն ուղիղք եւ ուրախ եղիցին, եւ ա-
43 մենայն անօրէն խցցէ զբերան իւր։ Ո՞վ է իմաստուն որ պահեսցէ զայս, եւ ի միա ասցէ զողորմութիւնս Տեառն։

ՍԱՂՄՈՍ ՃԺ (ՃԾ)

1 Օրհնութիւն Սաղմոսաց Դաւթի։
2 Պատրաստ է սիրտ իմ, Աստուած, [4]պատրաստ է սիրտ իմ օրհնել եւ սաղ-
3 մոս ասել քեզ՝ փառաւ իմով։ Զարթիր, [5]փառք իմ, զարթիր սաղմոսիւք եւ օրհնութեամբ, եւ՝ ես զարթեայց
4 առաւօտուս։ Խոստովան եղէց քեզ ի մէջ ազգաց, Տէր, եւ սաղմոս ասացից
5 քեզ յազգս։ Մեծ եղեւ մինչեւ յերկինս ողորմութիւն քո, մինչեւ յամպս ճշմար-
6 տութիւն քո։ Բարձրացիր ես քո յերկինս, Աստուած, եւ յամենայն երկրի են
7 փառք քո։ Որպէս փրկական սիրելիք քո, կեցո աջով քով եւ լուր մեզ։
8 Աստուած խօսեցաւ ի սրբութենէ իւրմէ, բարձր եղէց, բաժանեցայց զՍիւքէմ եւ զհովիտն Յարկայ չա-
9 փկից. Իմ է Գաղաադ եւ իմ է Մանասէ. Եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ.
10 Յուդա [6]թագաւոր իմ. Մոաբ աւա-
11 զան [7]յատոյ իմոյ. յԵդովմէ ուղղեցից զգնացս իմ, եւ ինձ այլազգիք հնազանդ եղեն։
11 Ո՞ տարցէ զիս ի քաղաք ամուր, կամ ո՞ առաջնորդեսցէ ինձ մինչեւ յԵդովմէ։
12 Եթէ ոչ դու, Աստուած, որ մերժեցեր զմեզ, եւ ոչ ելիր, Աստուած, ընդ զօրս
13 մեր։ Տուր մեզ օգնութիւն ի նեղութենէ, զի սուտ է փրկութիւն մարդոյ։
14 Աստուծով արասցուք զօրութիւն, եւ նա յամօթ արասցէ զթշնամիս մեր։

---

[1] Նիւթ. Ցիմարք ի ճանապարհի անօրէնութեան իւրեանց, եւ [2] Նիւթ. ի չարիս [3] Նիւթ. ի հանդարտութիւն

[4] Նիւթ. օրհնեցից եւ սաղմոս ասացից [5] Նիւթ. տաիդ եւ քնար. [6] Նիւթ. օրէնադիր [7] Նիւթ. լուացման

ՍԱՂՄՈՍ ՃԾ (ճփ)

1 [1]Ի կատարած. Մատթա Դաւթի։

2 Աստուած օրհնութեան խնդ, մի լռեր,
ի բերան մեղաւորի, բերան նենգաւորի
բացաւ ի վերայ իմ. խօսեցան ընդ
3 լեզուաւ նենգաւորաւ. եւ բանիւք ատե-
լութեան պատերազմեցին ընդ
4 իս ի տարապարտուց։ Փոխանակ սիրոյ
իմոյ մատնէին զիս, այլ ես յաղօթս կայի։
5 Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարեաց,
ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ։
6 Կացո ի վերայ նորա մեղաւոր, Սա-
7 տանայ կացցէ ընդ աջմէ նորա։ Ի դա-
տաստանի իւրմէ ելցէ դատապարտեալ,
8 եւ աղօթք նորա ի մեղս դարձցին։ Եղիցին աւուրք նորա նուազ, եւ զայլոց
9 ուրիշն նորա՝ զան այլ ատեղի։ Եղիցին որդիք նորա որբ եւ կին նորա այրի.
10 Սահեսցին փախստեսցին, որդիք նորա մուրացք եղիցին, եւ ելցեն ի քնակու-
11 թենէ իւրեանց։ [2]Քննեսցէ փոխատու զամենայն ինչս նորա, յափշտակեսցեն
12 օտարք զվաստակս նորա։ Մի գոյր ոք օգնական նմա, եւ մի՛ ոք ողորմեսցի ի
13 վերայ որբոց նորա։ Եղիցին որդիք նո-
րա ի սատակումն, եւ յաղգէ ջնջեսցի
14 անուն նորա։ Յիշեսցին մեղք հօր նորա առաջի Տեառն, եւ մեղք մօր նորա մի՛
15 ջնջեսցին. Եւ եղիցին առաջի Տեառն յամենայն ժամ. սատակեսցի յերկրէ յի-
16 շատակ նոցա. Փոխանակ զի ոչ յիշեաց առնել ողորմութիւն. հալածեաց գայր աղքատ եւ գտանակ, սպանանել զայն
17 որ խոնարհ է սրտիւ։ Սիրեաց զանէծս՝ եւ գայցէ նմա. ոչ կամեցաւ զօրհնու-
18 թիւն, հեռի եղիցի ի նմանէ։ Զգեցաւ զանէծս որպէս հանդերձ, մտցէ որպէս
ջուր ի փոր նորա, որպէս ձէթ ընդ
19 ոսկերս նորա։ Եղիցի նմա որպէս հան-
դերձ զի ագանի, որպէս գօտի որ ածի
20 հանապազ ընդ մէջ։ Այս գործ է այնո-
ցիկ որ չարախօս կային զինէն առ Տէր,
եւ որք խօսէին չար զանձնէ իմմէ։
21 Այլ դու, Տէր, Տէր, արա ընդ իս ըստ ա-
նուան քումմ, զի քաղցր է ողորմութիւն
22 քո, եւ փրկեա զիս։ Զի աղքատ եւ անանկ
եմ ես. սիրտ իմ խռովեցաւ ի փորի ի-
23 մում. Եւ ես որպէս սուտեր ի խուսա-
փել [3]իմում պակասեցայ, եւ թօթափե-
24 ցայ որպէս մարախ։ Ծունկք իմ տկա-
րացան ի պահոց, եւ մարմին իմ [4]այլա-
25 նացաւ ձիւղոյ։ Եղէ ես նախատինս նո-
ցա, տեսին զիս եւ չարժեկին զլուխս
26 իւրեանց։ Օգնեա ինձ, Տէր Աստուած
իմ, եւ փրկեա զիս ըստ ողորմութեան
27 քումմ։ Ծանիցեն զի ձեռն քո այս է,
28 եւ դու, Տէր, արարեր զայս։ Նորա
անիծանեն եւ դու օրհնեացես. դիք յա-
րուցեալ են ի վերայ իմ՝ ամօթ կրեացեն,
այլ ծառայ քո ուրախ եղիցի [3]ի քեզ։
29 Զգեցցին զամօթ որ չարախօս կային
զանձնէ իմմէ, եւ արկցին որպէս կըրկ-
30 նոց զամօթ իւրեանց զիւրեանմբք։ Այլ
ես խոստովան եղէց առ Տէր յոյժ բե-
րանաւ իմով, ի մէջ բազմաց օրհնեսցիմ
31 զնմանէ։ Զի եկաց նա ընդ աջմէ անանկին, փրկել զիս յայնոցանէ որք դատա-
ձին զանձն իմ։

ՍԱՂՄՈՍ ՃԻ (ճԺ)

[3]Ի կատարած. Մատթա Դաւթի։

1 Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ աջմէ
իմմէ, մինչեւ եղիցեմ զթշնամիս քո պա-
2 տուհան ոտից քոց։ Գաւազան զո-
րութեան առաքեսցէ քեզ Տէր ի Սիոնէ,
եւ տիրեսցես դու ի մէջ թշնամեաց քոց։
3 [5]Ընդ քեզ է սկիզբն աւուրց զօրութեան,
ի վայելչութիւնս սրբոց քոց յարգանդէ
յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ։"
4 Երդուաւ Տէր եւ ոչ եւս զղջասցի, թէ
Դու ես քահանայ յաւիտեան ըստ կար-
5 գին Մելքիսեդեկի։ Եւ Տէր ընդ աջմէ
քումմէ, խորտակեսցէ յաւուր [6]բար-
6 կութեան զթագաւորս։ Դատի զհեթա-
նոսս եւ բազում առնէ զնուաստացս, եւ
խորտակեսցէ զգլուխս բազմայ երկրի։
7 Ջուխս ի ճանապարհի [7]արբուսցէ, վասն
այնորիկ եւ բարձր արասցէ զգլուխս։

ՍԱՂՄՈՍ ՃԻ (ճԺԱ)

Ալէլուիա։

1 Խոստովան եղէց քեզ, Տէր, բոլորով
սրտիւ իմով ի խորհուրդս ուղղոց, ի
2 ժողովուրդս։ Մեծ են գործք Տեառն,
եւ քննեալ են [8]յամենայնի կամք նորա։
3 Խոստովանութիւն" եւ վայելչութիւն

[1] ՆԵԲԸ. Ա՛ռ գլուխ երաժշտացն [2] ՆԵԲԸ. Գրաւեսցէ
[3] ՅՆԵԲԸ. գ-ի--ե

[4] ՆԵԲԸ. Հաշեցաւ ի պարարտութենէ [5] ՆԵԲԸ. Ժո-
ղովուրդ քո նուիրեալ լասւոյ զօրութեանդ, ի վայելչութիւն սրբութեան. յարգանդէ յայգուէ քեզ ցօղ երիտասարդութեան քո։ [6] ՆԵԲԸ. բարկութիւն նորա [7] ՆԵԲԸ. արբեսցէ [8] ՆԵԲԸ. յամենեցունց որ հաճին ընդ այնոսիկ։ (3) Փառք

են գործք նորա, արդարութիւն նորա
4 մնայ յաւիտեան յաւիտենից։ Յիշա-
տակ արար սքանչելեացն իւրոց [1]ողորմ.
5 ողորմած ողջ է Տէր։ Կերակուր տայ
երկիւղածաց իւրոց. յիշեսցէ յաւիտենից
6 զուխտ իւր։ Զզօրութիւն գործոց իւրոց
պատմեաց ժողովրդեան իւրում, տալ
7 նոցա զժառանգութիւն հեթանոսաց. Եւ
գործք ձեռաց նորա արդարութիւն եւ
իրաւունք են. հաւատարիմ են յա-
8 ւիտենական պատուիրանք նորա, Հաստա-
տեալ են յաւիտեան յաւիտենից, ա-
րարեալ են ճշմարտութեամբ եւ ուղղու-
9 թեամբ։ Փրկութիւն առաքեաց Տէր ժո-
ղովրդեան իւրում, պատուիրեաց յա-
ւիտենից զուխտ իւր. սուրբ եւ անուն
10 է անուն նորա։ Սկիզբն ղպծութիւան
երկիւղ Տեառն, խելառութիւն բարի
ամենեցուն որ առնեն զնա, եւ օրհնու-
թիւն նորա մնայ յաւիտեան յաւիտենից։

ՍԱՂՄՈՍ ՃԻԱ (ՃԻԲ)
Ալէլուիա։

1 Երանելի է այր որ երկնչի ի Տեառնէ,
2 զպատուիրանս նորա նա կամի յոյժ։ Հզօր
եղիցի յերկրի զաւակ նորա, եւ ազգ
3 ուղղոց օրհնեսցի։ Փառք եւ մեծութիւն
են ի տան նորա, արդարութիւն նորա
4 մնայ յաւիտեան յաւիտենից։ Ծագեաց
ի խաւարի լոյս ուղղոց, ողորմած գթած
5 եւ արդար է Տէր։ Բարւոյր այր ողորմի
եւ տայ փոխ, յօրինէ զբան իւր ի դա-
6 տաստան. Զի յաւիտեան նա մի սա-
սանեսցի, յիշատակ յաւիտենից եղիցի
7 արդարն. Ի համբաւէ չարէ նա մի երկի-
ցէ. պատրաստ է սիրտ նորա յուսալ առ
8 [2]Աստուած։ Հաստատեալ է սիրտ նորա
եւ նա մի երկիցէ, մինչեւ տեսցէ ի
9 թշնամիս իւր։ Սփռեաց եւ ետ աղքա-
տաց. արդարութիւն նորա մնայ յաւի-
տեան յաւիտենից, եւ եղջիւր նորա
10 բարձր եղիցի փառօք։ Մեղաւորն տես-
ցէ եւ բարկասցի, զատամունս իւր
կրճտեսցէ եւ հալեսցի, եւ ցանկութիւն
մեղաւորաց կորիցէ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԲ (ՃԻԳ)
Ալէլուիա։

1 Օրհնեցէք, [3]մանկունք, զՏէր, եւ՝ օրհ-
2 նեցէք զանուն Տեառն։ Եղիցի անուն

[1] ՅԲբբ. պատ-
մութ [2] ՅԲբբ. Տէր [3] ՅԲբբ. ծառայք
Տեառն,

Տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչեւ
3 յաւիտեան։ Յարեւելից մինչեւ ի մուտս
4 արեւուս օրհնեալ է անուն Տեառն։ Բարձր
է ի վերայ ամենայն ազգաց Տէր, եւ
5 [4]յերկինս են փառք նորա։ Ո՞վ է որպէս
Տէր Աստուած մեր, ի բարձունսն բնա-
6 կեալ, [5]եւ զխոնարհս տեսանէ՞ յերկինս
7 եւ յերկրի։ Յարուցանէ զաղքատս յերկ-
րէ, եւ բարձր առնէ զտառապեալս յաղ-
8 բեւոյ։ Նստուցանել զնոսա իշխանաց ընդ
9 իշխանս ժողովրդեան իւրոյ։ Բնակիւ-
դուցանէ զամուրն ի տան ուրախութիւն, որպէս մայր որդւովք ընկերեալ։[6]

ՍԱՂՄՈՍ ՃԻԳ (ՃԻԴ)
[1]Ալէլուիա։

1 Յելանելն Իսրայէլի յեգիպտոսէ, տանն
Յակոբայ ի ժողովրդենէ այլազգեաց,
2 եղեւ Հրէաստան սրբութիւն նորա, եւ
3 Իսրայէլ իշխանութիւն նորա։ Ովք ե-
տես եւ փախեաւ, եւ Յորդանան անդ-
րէն դարձաւ։ Լերինք ցնծացին որպէս
խոյք, եւ բլուրք որպէս դառինք մաքենայ։
5 Զի՞ է քեզ, ծով, [7]զի՞ տեսեր եւ՞ փախեար, կամ դու Յորդանան՝ դի դար-
6 ձար անդրէն. Լերինք, ցնծացէք որպէս
խոյք, եւ բլուրք՝ որպէս դառինք մաքե-
7 նայ։ Յերեսաց Տեառն սասանեցաւ եր-
8 կիր, յերեսաց Աստուծոյ Յակոբայ։ Ո
դարձոյդ զվէմն ի վտակս ջուրց, եւ
զապառաժն յաղբերակունս։

(ՃԻԵ)

1 Մի՛ մեզ, Տէր, մի՛ մեզ, այլ անուան
քում տուր փառս վասն ողորմութեան
2 եւ ճշմարտութեան քո։ Մի՛ երբեք ա-
սասցեն հեթանոսք, թէ Ո՞ր է Աստուած
3 նոցա։ Աստուած մեր յերկինս [1]եւ յերկ-
րի՛. զամենայն զոր ինչ կամեցաւ եւ
արար։
4 Կուռք նեթանոսաց ոսկի եւ արծաթի են,
5 ձեռագործ են արդեաց մարդկան։ Բե-
րան ունին՝ եւ ոչ խօսին, աչս ունին՝
6 եւ ոչ տեսանեն, Ականջս ունին՝ եւ ոչ
լսեն, ունչս ունին՝ եւ ոչ հոտոտեն,
7 Ձեռս ունին՝ եւ ոչ չօշափեն, ոտս ու-
նին՝ եւ ոչ գնան. եւ ոչ ձայն բերբառ
8 ի կոկորդս նոցա։ Նման նոցա եղիցին
ոյք արարին զնոսա, ամենեքեան ոյք
յուսացեալ են ի նոսա։

[4] ՅԲբբ. ի վեր քան զերկինս [5] ՅԲբբ. Որ խոնարհի տես-
տանել զոր ինչ [6] ՅԲբբ-ից յոթ-, Ալէլուիա։
[7] ՅԲբբ. զի

9 [1]Տուն Իսրայելի յուսացաւ ի Տէր, օգ-
10 նական ընդունելի է նոցա ։ Տուն Ահարո-
նի յուսացաւ ի Տէր, օգնական ընդունելի
11 է՝ նոցա ։ Երկիւղածք Տեառն յուսացան
ի Տէր. օգնական եւ պրկիչ է նոցա ։
12 Ծիչեաց զմեզ Տէր եւ օրհնեսցէ զմեզ.
օրհնեսցէ Տէր զտունն Իսրայելի. օրհնեսցէ
13 Տէր զտունն Ահարոնի ։ Օրհնեսցէ Տէր
զերկիւղածս իւր, զփոքրկունս եւ զմե-
14 ծամեծս ։ Յաւելցէ ի ձեզ Տէր, ի ձեզ
15 եւ յորդիս ձեր ։ Օրհնեալ էք դուք ի
Տեառնէ, որ արար զերկինս եւ զերկիր ։
16 Երկինք երկնից Տեառն են, եւ զեր-
17 կիր եա՝ որդւոց մարդկան ։ Ոչ յիմէ մեռ-
եալք օրհնեսցեն զքեզ, Տէր, եւ ոչ ամե-
18 նեքեան որ իջանեն ի գժոխս ։ Այլ կեն-
դանիքս օրհնեսցուք զՏէր, յայսմ հետէ
մինչեւ յաւիտեան ։[2]

ՍԱՂՄՈՍ ՃԻԹ (ՃԻԶ)

[3]Ալէլուիա ։

1 Սիրեցի զի լսիցէ Տէր զձայն աղօթից
2 իմոց. Զի խոնարհեցոյց զունկն իւր առ
իս, եւ ես յաւուրս իմ կարդասցի առ նա ։
3 Շրջեցան զինեւ երկունք մահու, եւ
վիշաք դժոխոց գտին զիս. գնեալութիւն
4 եւ զանձկութիւն գտի. Եւ զանուն
Տեառն կարդացի. ո՛ Տէր, փրկեա զանձն
5 իմ. Ողորմած եւ արդար է Տէր Աս-
6 տուած մեր. Ողորմի եւ պահէ [4]զաղայս
Տէր, ես խոնարհ եղէ եւ Տէր կեցոյց
7 զիս ։ Դարձ, անձն իմ, ի հանդիստ քո, զի
8 Տէր օգնեաց քեզ ։ Փրկեաց զանձն իմ
ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց,
9 եւ զոտս իմ ի գայթակղութենէ ։ [5]Հաճոյ
եղէց՝ առաջի Տեառն յերկրին կենդանեաց։

[3]ՍԱՂՄՈՍ ՃԻԹ

Ալէլուիա ։՝

10 Հաւատացի զոր եւ խօսեցայ, եւ ես
11 խոնարհ եղէ յոյժ ։ Ես ասացի ի զար-
մանալ իմում, Ամենայն մարդ սուտ է ։
12 Զի՞նչ տացից տիրոջ Տեառն, ընդ
13 ամենայնի զոր եւ ես լինիմ ։ Բաժակ
փրկութեան ընկալայց, եւ զանուն
14 Տեառն կարդացից ։ Զաղօթս իմ Տեառն
տացից առաջի ամենայն ժողովրդեան նո-
15 ցա ։ Պատուական է առաջի Տեառն մահ
16 սրբոց իւրոց ։ Ո՛ Տէր, ես ծառայ քո
եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քո. Հա-
17 տար կապանս իմ ։ Քեզ մատուսցիմ պա-
տարագ օրհնութեան, եւ զանուն Տեառն
18 կարդացից ։ Զաղօթս իմ Տեառն տացից
առաջի ամենայն ժողովրդեան նորա,
19 ի գաւիթս տանն Տեառն, եւ ի մէջ քո,
Երուսաղէմ։[2]

ՍԱՂՄՈՍ ՃԻԹ (ՃԻԶ)

[3]Ալէլուիա ։

1 Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք, գովե-
2 ցէք զնա ամենայն ժողովուրդք. Զօրացաւ
ողորմութիւն նորա ի վերայ մեր, եւ ճըշ-
մարտութիւն Տեառն յաւիտեան։[2]

ՍԱՂՄՈՍ ՃԻԿ (ՃԻՔ)

[3]Ալէլուիա ։

1 Խոստովան եղերուք Տեառն, զի բարի
է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա։
2 Ասասցէ տունն Իսրայելի՝ [3]զի բարի է,՝՝
զի յաւիտեան է ողորմութիւն նորա ։
3 Ասասցէ տունն Ահարոնի՝ [3]զի բարի է,՝՝
զի յաւիտեան է ողորմութիւն նորա ։
4 Ասասցեն երկիւղածք Տեառն՝ [3]զի բարի
է,՝՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա ։
5 Ի նեղութեան խնդում ես առ Տէր կար-
6 գացի, եւ լուաւ ինձ ընդարձակ ։ Տէր է
իմ օգնական եւ ես ոչ երկիւղիմ. զի՞
7 արասցէ ինձ մարդ ։ Տէր է իմ օգնական,
8 եւ ես տեսից ի թշնամիս իմ։ Բարի է
9 յուսալ ի Տէր քան յուսալ ի մարդիկ։ Բարի
10 է յուսալ ի Տէր քան յուսալ յիշխանս։ Ա-
մենայն ազինք չրջեցան զինեւ, եւ ա-
11 նուամբ Տեառն յաղթեցի նոցա ։ Շրջե-
լով չրջեցան զինեւ, եւ պաչարեցին զիս
ի միասին, եւ անուամբ Տեառն վանեցի
12 զնոսա ։ Շուրջ եղեն զինեւ որպէս մե-
զաք, վառեցան բորբոքեցան որպէս
փուշք ի հուր, եւ անուամբ Տեառն
13 մերժեցի զնոսա ։ Ի մերժելն դղրդեցայ
եւ եղէ մերձ ի զլորել, եւ Տէր ընկա-
14 լաւ զիս ։ Զօրութիւն իմ եւ օրհնու-
թիւն իմ Տէր, եւ եղեւ ինձ ի փրկու-
15 թիւն ։ Ձայն ցնծութեան եւ փրկութեան
ի յարկս արդարոց. աջ Տեառն արար զո-
16 րութիւն. Աջ Տեառն բարձր [6]արար զիս,
17 եւ՝՝ աջ Տեառն արար զօրութիւն ։ Ոչ
մեռայց, այլ կեցից եւ պատմեցից զգործս
18 Տեառն ։ Խրատելով խրատեաց զիս Տէր,
եւ ի մահ ոչ մատնեաց։

---

[1]Եբր. Իսրայէլ, յուսա ի Տէր. Նա է օգնութիւն եւ ապար նոցա ։ (10) Տուն Ահարոնի, յուսացարուք ի Տէր. Նա է օգնութիւն եւ ապար
[2]Եբրայեցին յաւելու՝ Ալէլուիա։ [3]Եբր. պակաս
[4]Եբր. զմիամիտս [5]Եբր. Ես գնացից
[6]Եբր. է,

19 Բացէք ինձ դրունս արդարութեան՝
ի մէջ ընդ այն, եւ խոստովան ե-
20 ղէց Տեառն։ Ա՛յս դուռն Տեառն է, եւ
21 արդարք մտանեն ընդ սա։ Խոստովան
եղէց քեզ, Տէր, զի լուար ինձ, եւ ե-
22 ղեր ինձ ի փրկութիւն։ Վէմն զոր ա-
նարգեցին չինօղքն, նա եղեւ գլուխ
23 անկեան։ Ի Տեառնէ եղեւ այս, եւ է
24 սքանչելի առ մեզ աչաց մերոց։ Ա՛յսօր է
զոր արար Տէր, եկայք ցնծասցուք եւ
25 ուրախ եղիցուք ի սմա։ Ո՛ Տէր, փրկեա,
ո՛ Տէր, առաջնորդեա։
26 Օրհնեալ որ գալոցդ ես յանուն Տեառն,
27 եւ օրհնեցաք [1]զքեզ ի տանէ Տեառն։ [2]Տէր
Աստուած մեր երեւեցաւ մեզ, արարէք
տօնս ուրախութեան կանխաւ՝ մինչեւ
28 յանկիւնս՝ սեզանոյ։ Աստուած իմ ես
դու, եւ խոստովան եղէց քեզ. Աստուած
իմ ես, դու եւ բարձր արարից զքեզ։
29 [3]Խոստովան եղէց քեզ, Տէր, զի լուար
ինձ, եւ եղեր ինձ ի փրկութիւն։՝ Խոս-
տովան եղերուք Տեառն, զի բարի է,
զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

ՍԱՂՄՈՍ ՃԺԷ (ճժփ)

[3]Ալէլուիա։

1 Երանեալ են ամբիծք ի ճանապարհի,
2 [3]եւ որք գնան յօրէնս Տեառն։ Երանի որք
[4]քննեն զվկայութիւնս նորա, բոլորով
3 սրտիւ խնդրեսցեն զնա։ [5]Ոչ
թէ որ՝ գործեն զանօրէնութիւն, ի ճա-
4 նապարհս նորա գնացին։ Դու պա-
տուիրեցեր զպատուիրանս քո, ի պահել
5 ինձ յոյժ։ Օ՛չ թէ յօդևցեալ էին ինձ ճա-
նապարհք իմ, պահել ինձ զարդարու-
6 թիւնս քո։ Յայնժամ ես ոչ ամաչէի ի
7 զգուշանալ ինձ ի պատուիրանս քո։ Խոս-
տովան եղէց քեզ, Տէր, յուղղութիւն
սրտի խոյ, որպէս ուսայց զիրաւունս
8 արդարութեան քո։ Զիրաւունս քո պա-
հեցի, մի՛ թողուր զիս մինչեւ ի սպառ։

9 Ի՞ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհն
10 իւր, այլ ի պահել զբանս քո։ Բոլորով
սրտիւ խնդրեցի զքեզ, մի՛ մերժեր
11 զիս ի պատուիրանաց քոց։ Ի սրտի խորհ-
թաքուցի զբանս քո, որպէս զի մի՛ մեղայց
12 քեզ։ Օրհնեալ ես դու, Տէր, ուսո ինձ զար-

13 դարութիւնս քո։ Շրթամբք իմովք պատ-
մեցից զամենայն իրաւունս բերանոյ քո։
14 Ի ճանապարհս վկայութեանց քոց զուար-
ճացայ, որպէս յամենայն ի մեծութիւնս։
15 Ի պատուիրանս քո հոգայցի, եւ զպուչա-
16 ցայ ի ճանապարհս քո։ [6]Զիրաւունս քո
խօսեցայ, եւ ոչ մոռացայ՝ զբանս քո։

17 Հատո ծառայի քումմ, զի կեցից եւ պա-
18 հեցից զբանս քո։ Զաբխո զաչս իմ, եւ
նայեցայց ի սքանչելիս օրինացդ քոց։
19 Պանդխտեամ ես ես յերկրի, մի՛ թաքու-
20 ցանիր յինէն զպատուիրանս քո։ [7]Փա-
փաքեաց անձն իմ ի ցանկալ ինձ յի-
21 րաւունս քո յամենայն ժամ։ Սաստկեր
ամբարտաւանից, անիծեալ այք խոտորու-
22 ցան ի պատուիրանաց քոց։ Ի բաց արա
յինէն զնախատինս եւ զարհամարհանս,
23 զի զվկայութիւնս քո խնդրեցի։ Քանզի
նստան իշխանք եւ չարախօսէին զինէն,
այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո։
24 Զի վկայութիւնք քո [8]խօսք իմ էին,
եւ խորհուրդք իմ արդարութիւնք քո՝։

25 Մերձեցաւ անձն իմ ի հող, Տէր, կեցո
26 զիս ըստ բանի քումմ։ Զճանապարհն իմ
պատմեցի քեզ եւ լուար ինձ, ուսո ինձ
27 զարդարութիւնս քո։ Ի ճանապարհս [9]ար-
դարութեանց քոց խոհասցուն զպատ
28 եւ քննեցից զսքանչելիս քո։ Տքնեցաւ
անձն իմ առ ի ձանձրանալ, հաստատեա
29 զիս ի բանս քո։ Զճանապարհն [10]սուտց
ի բաց արա յինէն, եւ յօրէնս քո ողոր-
30 մեա՝ ինձ։ Զճանապարհն ճշմարտու-
թեան քո ընտրեցի, եւ զիրաւունս քո
31 ես ոչ մոռացայ։ Մերձեցայ ես ի վկայու-
թիւնս քո, Տէր, մի՛ յամօթ առներ զիս։
32 Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթ-
ացայ, զի անպատր արարեր սրտի իմոյ։

33 Օրէնադիր արա զիս, Տէր, ի ճանապարհս
իրաւանց քոց, եւ խնդրեցից զնա յամե-
34 նայն ժամ։ Իմաստուն արա զիս, եւ
[11]քննեցից զօրէնս քո՝, եւ պահեցից զնա
35 բոլորով սրտիւ իմով։ Առաջնորդեա ինձ
ի շաւիղս պատուիրանաց քոց, զի ընդ
36 նոսա հաճեցայ։ Խոնարհեցո զսիրտ իմ ի

[1] Եբբ. զձեզ [2] Եբբ. Աստուած է Տէր մեր, և լոյս ետ մեզ. կապեցէք զոչն կարովք մինչեւ յեղջերս [3] ՑՀբբ. պակաս [4] Եբբ. պահեն [5] Եբբ. Նա եւ ոչ [6] Եբբ. Յիրաւունս քո զուարճացայ. և ոչ մոռացայց [7] Եբբ. Նուազեցաւ [8] Եբբ. բերկրութիւն իմ էին, որք խորհրդոյ իմոց [9] Եբբ. պատուիրանաց [10] Եբբ. սուտ ի բաց արա յինէն, եւ զօրէնս քո պարգեւեա [11] Եբբ. զուարճացայց օրինաց քոց

վկայութիւնս քո , եւ մի՛ յազահութիւն ։
37 Դարձո զաչս իմ , զի մի՛ տեսից զնանրուա-
38 թիւն , ի ճանապարհս քո կեցո զիս ։ Հաս-
տատեա ծառայի քումդ զբան քո՝ յեր-
39 կեւզ քո ։ Հան յինէն զնախատինս [1]զոր եւ
կարծեցի՛" , զի դատաստանք քո քաղցր
40 են ։ Ահա ցանկացայ պատուիրանաց քոց ,
յարդարութիւնդ քումդ կեցո զիս ։

41 Եկեսցէ ի վերայ իմ ողորմութիւնդ քո ,
Տէր , եւ փրկութիւնդ քո ըստ բանի քումդ ։
42 Տայ պատասխանի ոյք նախատեն զիս
բանիւք , զի ես ի բանս քո յուսացայ ։
43 Մի՛ իբրեւցայ առնես իրերանոյ իմմէ զբան
ճշմարտութեան մինչեւ յոյժ , զի յիրա-
44 ւունս քո յուսացայ ։ Պահեցի[2]զօրէնս քո
յամենայն ժամ , յաւիտեան եւ յաւի-
45 տեան յաւիտենից ։ Գնայի ես յանդար-
րուս , զի զպատուիրանս քո խնդրեցի ։
46 Խօսէի զվկայութիւնս քո առաջի թա-
47 գաւորաց , եւ ոչ ամաչէի ։ [2]Մարհէի ի
48 պատուիրանս քո զոր սիրեցի ։ Ամբարձի
զձեռս իմ ի պատուիրանս քո զոր սիրե-
ցի , եւ խորհէի յարդարութեան քումդ ։

49 Բիչնա զբան ծառայի քո , յոր եւ յուսա-
50 դուցեր զիս ։ Սա մխիթարեսցէ զիս ի
խոնարհութեան իմում , զի բան քո կե-
51 ցոյց զիս ։ Ամբարտաւանք անիրաւեցան
յիս յոյժ , այլ յօրինաց քոց ես ոչ խոտո-
52 րեցայ ։ Բիչնեցի զիրաւունս քո յաւիտե-
53 նից , Տէր , եւ մխիթարեցայ ։ Տրտմութիւն
կալաւ զիս ի մեղաւորաց , ոյք լքոյին
54 զօրէնս քո ։ [3]Գովելի են ինձ իրաւունք՛ քո ,
55 ի տեղւոջ պանդխտութեան իմոյ ։ Բիչնեցի
ի գիշերի զանուն քո , Տէր , եւ պահեցի
56 զօրէնս քո ։ Սա եղեւ [4]ինձ ճանապարհ ի
կեանս , զի զարդարութիւնս՛ քո խնդրեցի ։

57 Բաժին իմ ես դու , Տէր , ասացի պահել
58 ինձ զօրէնս քո ։ Աղաչեցի զերեսս քո
բոլորով սրտիւ իմով , ողորմեա ինձ ըստ
59 բանի քումդ ։ Խորհեցայ ի ճանապարհս իմ ,
եւ դարձուցի զոտս իմ ի վկայութիւնս
60 քո ։ [5]Պատրաստեցայ եւ ոչ խռովեցայ՛" , զի
61 պահեցի զպատուիրանս քո ։ Տուընք [6]մե-
ղայ պատեցան զինեւ , այլ զօրէնս քո ես
62 ոչ մոռացայ ։ Ի մէջ գիշերի յարուցեալ խոստա-
ւան լինել առ քեզ , վասն իրաւանց սր-
63 արդութեան քո ։ Հաղորդ էի ես ամենայն

[1] ԵԲԲ· յոմէ երկնչիմ [2] ԵԲԲ· Երկրկի [3] ԵԲԲ· Երդ
եղեն ինձ կանոնք [4] ԵԲԲ· ինձ· զի զպատուիրանս
[5] ԵԲԲ· Փութացայ եւ ոչ յամեցի [6] ԵԲԲ· մեղաւորաց

երկիւղածաց քոց , որոց պահեալ է զպա-
64 տուիրանս քո ։ Ողորմութեամբ Տեառն լի
եղեւ երկիր , զարդարութիւնս քո ուսոյնձ ։

65 Քաղցրութիւն արարեր ընդ ծառայի
66 քումդ , Տէր , ըստ բանի քումդ ։ Զքաղցրու-
թիւն , զիմաստ եւ զգիտութիւն ուսո ինձ ,
զի ի պատուիրանս քո ես հաւատացի ։
67 Մինչչեւ խոնարհեալ էի ես մեղայ , վասն
այսորիկ զբանս քո պահեցի յոյժ ։
68 Քաղցր ես դու , Տէր , եւ քաղցրութեամբ
69 քումդ ուսո ինձ զարդարութիւնս քո ։ Բազ-
մացան յիս անիրաւութիւնք ամբարտա-
ւանից , այլ ես բոլորով սրտիւ իմով
70 [7]քննեցի զպատուիրանս քո ։ Մածաւ որ-
պէս [8]կաթին սիրտ նոցա , այլ ես [9]զօրէնս
71 քո խօսեցայ՛" ։ Բարի է ինձ՝ զի խոնարհ
արարեր զիս , որպէս ուսցայց զարդարու-
72 թիւնս քո ։ Բարի են ինձ օրէնք բերանոյ
քո , քան զհազարս ոսկւոյ եւ արծաթոյ ։

73 Ձեռք քո արարին եւ ստեղծին զիս , ի-
մաստուն արա զիս եւ ուսայց զպատուի-
74 րանս քո ։ Երկիւղածք քո տեսցին զիս եւ
ուրախ եղիցին , զի ես ի բանս քո յուսա-
75 ցայ ։ Ծանեայ , Տէր , զի արդարութեամբ
են դատաստանք քո ։ Յիրաւի խոնարհե-
76 ցուցեր զիս ։ Եղիցի ողորմութիւն քո ի
մխիթարել զիս ըստ բանի քումդ [10]ծա-
77 ռայիդ քում ։ Եկեսցեն յիս զթութիւնք քո եւ
78 կեցից , զի օրէնք քո [11]խօսք իմ էին ։ Ամա-
չեսցին ամբարտաւանք որ ի սուտս ապար-
ատուց անիրաւեցան յիս , այլ ես հոգայցյ
79 ի պատուիրանս քո ։ [12]Խրատեսցին զիս՛"
երկիւղածք քո , եւ ոյք ճանաչեն զվկայու-
80 թիւնս քո ։ Եղիցի սիրտ իմ ամփոփ յար-
դարութեան քումդ , զի մի՛ ամաչեցից ։

81 Կարօտացաւ անձն իմ ի փրկութիւնս
82 քո , զի ես ի բանս քո յուսացայ ։ [13]Սպա-
սեցին աչք իմ բանի քումդ , ասացի՝ Երբ
83 մխիթարեսցես զիս ։ Եղէ ես որպէս սիկ
[14]ի պարսղի , զի զարդարութիւնս քո ես ոչ
84 մոռացայ ։ Քանի՞ [15]են աւուրք ծառայի
քո , եւ երբ արասցես ինձ իրաւունս ի հա-
85 լածչաց իմոց ։ [15]Պատմեցին ինձ անօրէնք
զխորհուրդս , այլ ոչ որպէս օրէնս քո ։՝
86 Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են ,

[7] ԵԲԲ· պահեցից [8] ԵԲԲ· ճարպ [9] ԵԲԲ· զաւար-
ճացայ յօրէնս քո [10] ԵԲԲ· առ ծառայ [11] ԵԲԲ·
բերկրութիւն [12] ԵԲԲ· Դարձցին առ իս [13] ԵԲԲ·
Նուաղեցան [14] ԵԲԲ· ի ծուխ [15] ԵԲԲ· Փորեցին ինձ
ամբարտաւանք փոսս, որ չեն ըստ օրինաց քոց։

ի նանիր հալածեցին զիս , օգնեա ինձ ,
87 Փոքր մի եւս եւ կորուսանէին զիս յերկ-
րի , այլ ես ոչ թողի զպատուիրանս քո ։
88 Ըստ ողորմութեան քումն կեաց զիս , եւ
պահեցից զվկայութիւնս բերանոյ քո ։

89 Յաւիտեան , Տէր , բան քո կայ յերկինս ։
90 Ազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն քո .
91 հաստատեցեր զերկիր , եւ կայ ։ [1]Հրամանիւ
քումբ մնայ օրս՝ , զի ամենայն ծառայք
92 քո են ։ Եթէ ոչ օրէնք քո [2]խօսք իմ էին
զիս , կանխաւ եւս արգիւք կորուսեալ էի
93 ի խոնարհութեան իմում։ Յաւիտեան ոչ
մոռացայց [3]զարդարութիւնս քո , զի նո-
94 քօք կեցուցեր զիս ։ Քո եմ ես եւ կեաց
զիս , զի [3]զարդարութիւնս քո խնդրեցի ։
95 Ինձ սպասեցին մեղաւորք ի կորուսանել
զիս, զի զվկայութիւնս քո ես ի միտ առի ։
96 Ամենայն կատարածի տեսի զվախճան ,
յոյժ անզորս էին ինձ պատուիրանք քո ։

97 Ո՛րպէս սիրեցի զօրէնս քո , զօրհնաբազ
98 [4]խօսք իմ էին ։ Քան զիմաստս իմ իմաս-
տուն [5]արարեր զիս ի պատուիրանս՝ քո ,
99 զի յաւիտեան իմ էին ։ Քան զամենայն
ուսուցիչս իմ իմաստուն եղէ , զի վկայ-
100 ութիւնք քո [4]խօսք իմ էին ։ Քան զծեր
իմաստուն եղէ , զի զպատուիրանս քո
101 [6]քննեցի ։ Ամենայն ճանապարհաց չա-
րաց արգիլի զոտս իմ , որպէս զի պա-
102 հեցից զբանս քո ։ Ճիրաւանց քոց ես ոչ
խոտորեցայ , զի դու օրէնսդէտ արա-
103 րեր զիս ։ Որպէս զի՛ քաղցր են ի բեր-
նի իմ բանք քո. քան զմեղր բերանոյ ի-
104 մոյ ։ Ի պատուիրանաց քոց իմացեալ
եմ զի ամենայն ճանապարհս չարաց ,
[7]զի դու օրէնսդէտ արարեր զիս ։՝

105 Ճրագ ես բանք քո ոտից իմոց , եւ լոյս ես
106 շաւղաց իմոց ։ Երդուայ եւ հաստա-
տեցի , զի պահեցից զամենայն իրաւունս
107 արդարութեան քո ։ Խոնարհ եղէ մինչ-
եւ յոյժ . Տէր , կեցո զիս ըստ բանի
108 քումն։ Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեաց ,
Տէր , եւ զիրաւունս քո ուսո ինձ .
109 Անձն իմ [8]ի ձեռս քո՝ յամենայն ժամ ,
110 եւ զօրէնս քո ես ոչ մոռացայ ։ Եդին
ինձ մեղս որթ որոգայթ , ի պատուիրա-

111 նաց քոց եւ ոչ մոլորեցայ ։ Ժառանգեցի
զվկայութիւնս քո յաւիտեան, զի ցնծու-
112 թիւն է սրտի իմոյ ։ Ածարկեցուցի
զսիրտ իմ առնել զարդարութիւնս քո
[9]վասն հատուցման՝ ։

113 [10]Զանօրէնս ատեցի , եւ զօրէնս քո սի-
114 րեցի։ Օգնական եւ փրկիչ իմ ես դու , եւ
115 ես ի բանս քո յուսացայ ։ Ի բաց եկերուք
յինէն , չարք , եւ [11]քննեցից զպատուի-
116 րանս Աստուծոյ իմոյ ։ Օգնեա ինձ ըստ
բանի քումբ եւ կեաց զիս , եւ մի յամօթ
117 առներ զիս ի յուսոյ իմմէ ։ Օգնեա ինձ եւ
ապրեցո զիս , եւ խորհեցայց յիրաւունս
118 քո յաւիտեան ժամ։ Անարգեցեր զամե-
նեսեան որ ապստամբ եղեն յարդարու-
թեանց քոց , զի անիրաւութեամբ էին
119 խորհուրդք նոցա։ [12]Ցանցատրոս համարեա-
ցայ՝ զամենայն մեղաւորս երկրի , վասն
այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։ [13]Բե-
հեհսեա ընդ երկեաղ քո զմարմին իմ ,
զի՝ ի դատաստանաց քոց երկեայ յոյժ ։

121 Արարի իրաւունս եւ արդարութիւն ,
մի՛ մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց ։
122 Ընկալ զծառայս քո ի բարի , զի մի՛
123 ամբարտաւանք զրպեհասցին զիս։ [14]Աչք
անձին աչք իմ վրկութեան քումբ , Տէր ,
124 եւ բանից արդարութեան քո ։ Արա ընդ
ծառայի քումբ բան ողորմութեան
քումբ , զարդարութիւնս քո ուսո ինձ ։
125 Ծառայ քո եմ ես, խրատուն տուր զիս, եւ
126 ծանեայց զվկայութիւնս քո ։ Ժամ է
յառնել Տեառն. խափանեցին զօրէնս քո։
127 Վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս
քո քան զոսկի եւ զտպազիոն ։
128 Ամենայն պատուիրանք քո ուղղեցան
ինձ , զի ատեցի ես զճանապարհս չարաց ։

129 Սքանչելի են վկայութիւնք քո , վասն
այսորիկ [15]սիրեաց զնոսա անձն իմ ։
130 Յայտնութիւն բանից քոց լուսաւորէ եւ
131 իմաստուն առնէ զտղայս ։ Զբերան իմ
բացի եւ առի զհոգի , ի պատուիրանս քո
132 փափաքեայց անձն իմ ։ Նայեա առ իս եւ
ողորմեա ինձ , բան իրաւունս սիրողաց
133 անուան քումբ ։ Զճանապարհս իմ ուղիղ
արա ինձ ըստ բանի քումբ , եւ մի՛ տիրեսցեն
134 ցնոսա ամենայն մեղք ։ Փրկեա զիս ի

[1] Ելբ. Ըստ հրամանի քումբ մնան այսօր [2] Ելբ. բերկրութիւն [3] Ելբ. զպատուիրանս [4] Ելբ. խորհուրդ [5] Կամ, արարին զիս պատուիրանք [6] Ելբ. պահեցի [7] Ելբ. դ-ւ-ե [8] Ելբ. ի ձեռն իմում [9] Ելբ. ի սպառ [10] Ելբ. Զերկմիտս [11] Ելբ. պահեցից [12] Ելբ. Կղկղանս համարեցայ [13] Ելբ. Սոսկացաւ յահէ քումմէ մարմին իմ եւ ես [14] Ելբ. Նուաղեցան [15] Ելբ. պահեաց

զպատաւթիւնէ մարդկան , եւ պահեցից
զպատուիրանս քո ։ Երեւեսցո վերնա
քո ի ծառայս քո , եւ ուս զիս զարդա-
րութիւնս քո ։ Վտակք ջուրց իջին յա-
չեայ իմոյ , զի ոչ պահեցին զօրէնս քո ։

Արդար ես դու , Տէր , եւ ուղիղ են դա-
տաստանք քո ։ Պատուիրեցեր զարդա-
րութիւն վկայութեանց քոց , եւ ճշմա-
րիտ են յոյժ ։ Մաշեաց զիս նախանձ [1]քո ,
զի մոռացան զբանս քո թշնամիք իմ ։
Ընտրեալ են բանք քո յոյժ , եւ ծառայ քո
սիրեաց զսա ։ Մանուկ եմ ես եւ արհա-
մարհեալ , եւ զարդարութիւնս քո ես ոչ
մոռացայ ։ Արդարութիւն քո արդարու-
թիւն յաւիտենից , եւ օրէնք քո ճշմարիտ
են ։ Նեղութիւնք եւ վիշտք գտին զիս ,
եւ պատուիրանք քո [2]խօսք իմ էին ։ Ար-
դարութեամբ են վկայութիւնք քո յա-
ւիտեան . իմաստուն արա եւ կեցո զիս ։

Կարպայի աո քեզ բոլորով սրտիւ իմով ,
լուր ինձ , Տէր , զի զարդարութիւնս քո
ինդրեցից ։ Ակնկալեցի աո քեզ եւ փրկեա
զիս , եւ պահեցից զվկայութիւնս քո ։
Կանխեցի տարաժամս՝ ազաղակեցի ,
եւ ես ի բանս քո յուսացայ ։ Կանխեցին
աչք իմ առաւօտուց , [3]ի խօսել ինձ
զբանս քո ։ Ձայնի իմում լուր , Տէր , ըստ
ողորմութեան քում . Տէր , յիրաւունս
քո կեցո զիս ։ [4]Մերձեցուցին զիս հալա-
ծիչք իմ զանօրէնութիւն , զի՝ յօրինաց
քոց հեռի եղեն ։ Մերձ ես դու , Տէր , եւ
ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են ։
Ի սկզբանէ ծանեայ ի վկայութեանց քոց ,
զի յաւիտեան հաստատեցեր զնոսա ։

Տես զխոնարհութիւն իմ եւ փրկեա զիս ,
զի զօրէնս քո ես ոչ մոռացայ ։ Դատեա
զդատաստանս իմ եւ փրկեա զիս , եւ ըստ
բանի քում կեցո զիս ։ Հեռի է ի մեղա-
ւորաց փրկութիւն , զի զիրաւունս քո
ոչ պահեցին ։ Գթութիւնք քո բազում
են , Տէր , եւ ըստ իրաւանց քոց կեցո զիս ։
Բազումք են որ հալածեն եւ նեղեն զիս ,
ի վկայութեանց քոց ես ոչ խոտորեցայ ։
Հայէի յանապատնս եւ մաշէի , զի զպա-
տուիրանս քո ոչ պահեցին ։ Տես զի զպա-
տուիրանս քո սիրեցի . Տէր , ողորմու-
թեամբ քո կեցո զիս ։ Սկիզբն բանից
քոց ճշմարտութիւն է , յաւիտեան են
ամենայն իրաւունք արդարութեան քո ։

Իշխանք հալածեցին զիս ինանիր , եւ ի
բանից քոց երկեաւ սիրտ իմ ։ Ցնծացայ
ես ի բանս քո , որպէս այն որ գտանէ ա-
ւար բազում ։ Զմեղս ատեցի եւ անար-
գեցի , եւ զօրէնս քո սիրեցի ։ Եւթն ան-
գամ յաւուր օրհնեցից զքեզ , վասն իրա-
նց արդարութեան քոյ ։ Խաղաղութիւն
բազում է այնոցիկ որ սիրեն զօրէնս քո ,
եւ ոչ գոյ ի նոսա գայթակղութիւն ։
Սպասեցի փրկութեան քում , Տէր , եւ
զպատուիրանս քո [5]սիրեցի ։ Պահեաց
անձն իմ զվկայութիւնս քո , եւ սիր-
եաց զնոսա յոյժ ։ Պահեցի զպատուի-
րանս եւ զվկայութիւնս քո , զի ամե-
նայն ճանապարհք իմ առաջի քո են ։

Մերձեսցին թնդրուածք իմ առաջի քո ,
Տէր . ըստ բանի քում իմաստուն արա
զիս ։ Մտցեն աղօթք իմ առաջի քո , Տէր .
եւ բանիւ քով փրկեա զիս ։ Բղխեսցեն
շրթունք իմ զօրհնութիւնս քո , յորժամ
ուսուցանես ինձ զարդարութիւնս քո ։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո , զի ամե-
նայն պատուիրանք քո արդարութեամբ
են ։ Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս ,
զի զպատուիրանս քո ընտրեցի ։ Ցան-
կացայ փրկութեան քում , Տէր , եւ օրէնք
քո [2]խօսք իմ էին ։ Կեսցէ անձն իմ , եւ
օրհնեսցէ զքեզ , եւ իրաւունք քո օգ-
նեսցեն ինձ ։ Մոլորեցայ ես որպէս ոչ-
խար կորուսեալ , խնդրեա զծառայ քո ,
զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԹ (ՃԺ)

Օրհնութիւնք աստիճանաց ։

1 Ի նեղութեան իմում ես աս Տէր կար-
2 գայի , եւ լուաւ ինձ Տէր , փրկեա զանձն
իմ ի շրթանց նենգաւորաց եւ ի լեզուէ

3 չարէ ։ Զի՞ տացի քեզ կամ զինչ յաւելցի ,
4 լեզու նենգաւոր ։ [6]Որպէս նետք հզօրի ,
զի սրեալ են կայծակամբք կաղնեաց ։
5 Վայ է ինձ՝ զի [7]ընդ երկար՝ եղեւ պան-
դխտութիւն իմ , բնակեցի ես ի վրանս
6 կեդարու ։ Բազում անգամ բնակեաց
անձն իմ ընդ այնոսիկ ոյք ատէին

[1] Եբր. իմ [2] Եբր. բերկրութիւն [3] Եբր. ի խորհել [4] Եբր. Մերձեցան որ զհետ երթային անօրէնութեան ,
[5] Եբր. արարի [6] ՑՃԺբր. գոլոխ [7] Եբր. ի Մոսոք

7 զողջոյն։ Ես էի խաղաղարար. յորժամ
խօսէի՝ մարտնչէին ընդ իս։

ՍԱՂՄՈՍ ՃԻ (ՃԻԱ)

Օրհնութիւնք աստիճանաց

1 Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի
2 եկեսցէ ինձ օգնութիւն։ Օգնութիւն
ինձ ի Տեառնէ եկեսցէ, որ արար զեր-
3 կինս եւ զերկիր։ Մի՛ [1]տար ի սասա-
նութիւն զոտն քո, եւ մի՛ ննջեսցէ
4 պահապան քո։ Ո՛րպէս ոչ ննջէ եւ ոչ
ի քուն երթայ պահապանն Իսրայելի։
5 [2]Տէր պահեսցէ զքեզ, եւ Տէր ընկալցի
6 աջոյ ձեռամբ իւրով։ Արեգակն ի տուէ
քեզ մի՛ մեղիցէ, եւ մի՛ լուսին ի գի-
7 շերի։ Տէր պահեսցէ զքեզ յամենայն
8 չարէ, պահեսցէ Տէր զանձն քո։ Տէր
պահեսցէ զմուտս եւ զել քո յայսմ հետէ
մինչեւ յաւիտեան։

ՍԱՂՄՈՍ ՃԻԱ (ՃԻԲ)

Օրհնութիւնք աստիճանաց [3]։

1 Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս, Ի տուն
2 Տեառն երթիցուք մեք։ Հասեալ կային
ոտք մեր առ դրունս քո, Երուսաղէմ։
3 [4]Երուսաղէմ շինեալ քաղաք, եւ ընա-
4 կութիւն իւր չուրջ զնովաւ։ Անդ ելին
ազգք, ազգք Տեառն, վկայութիւնք Իս-
րայելի, խոստովան լինել անուան Տեառն։
5 Անդ արկեալ են աթոռք դատաստանի,
6 [5]աթոռս արկեալ ի տան Դաւթի։ Հարց-
էք զողջունել զերուսաղէմի, եւ դչի-
7 նութիւնք՝ ոյք սիրէք զնա։ Եղիցի խա-
ղաղութիւն [6]ի զօրութեան քում, եւ չի-
8 նութիւն յայտարակս յամուրս քո։ Վասն
եղբարց եւ ընկերաց իմոց խօսեցայ
9 զխաղաղութիւն վասն քո. Եւ վասն
տան Տեառն Աստուծոյ մերոյ խնդրե-
ցաք զբարութիւն քեզ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԲ (ՃԻԳ)

Օրհնութիւնք աստիճանաց։

1 Ա՛ռ քեզ, Տէր, համբարձի զաչս իմ,
2 որ բնակեալդ ես ի յերկինս։ Որպէս
աչք ծառայից ի ձեռս տերանց իւրեանց,
որպէս աչք աղախնոյ ի ձեռս տիկնոջ
իւրոյ, այնպէս են աչք մեր առ քեզ,
Տէր Աստուած մեր, մինչեւ ողորմեսցիս
3 ի վերայ մեր։ Ողորմեաց մեզ, Տէր,
ողորմեաց մեզ, զի բազում լցաք ար-
4 համարհանօք։ Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք [7]որ նախատէին
զմեզ՝, եւ արհամարհանօք ամբարտաւանից։

ՍԱՂՄՈՍ ՃԻԳ (ՃԻԴ)

Օրհնութիւնք աստիճանաց [3]։

1 Եթէ ոչ Տէր էր առ մեզ, ասասցէ Իս-
2 րայէլ, եթէ ոչ Տէր էր առ մեզ, ընդ
3 յառնել մարդկան ի վերայ մեր, կենդան-
ոյն կամէին կլանել զմեզ, ի բարկանալ
սրտմտութեամբ նոցա ի վերայ մեր.
4 Ապա եւ ջուրք ուրեմն ընկլուզանէին
զմեզ, ընդ ուղիս անցին անձինք մեր.
5 Անցին անձինք մեր ընդ ջուրս անդա-
6 րաս։ Օրհնեալ է Տէր, որ ոչ ետ զմեզ
7 յոյս ատամանց նոցա։ Անձինք մեր
ապրեցան որպէս ճնճղուկ յորոգայթէ
որսողաց. որոգայթք նոցա փչրեցան, եւ
8 մեք ապրեցաք։ Օգնութիւն է մեզ յա-
նուանէ Տեառն, որ արար զերկինս եւ
զերկիր։

ՍԱՂՄՈՍ ՃԻՊ (ՃԻԵ)

Օրհնութիւնք աստիճանաց։

1 Որ յուսայ ի Տէր որպէս լեառն Սիոն,
[8]մի՛ սասանեսցի յաւիտեան՝ որ բնակեալն
2 է յերուսաղէմ։ Լերինք՝ չուրջ են զնո-
վաւ, Տէր չուրջ է զժողովրդեամբ իւ-
րով յայսմ հետէ մինչեւ յաւիտեան։
3 Ոչ թողու Տէր զգաւազան մեղաւորաց
ի վիճակս արդարոց, [9]եւ արդարք մի՛
ձգեսցեն զձեռս իւրեանց յանօրէնութ-
4 իւն։ Բարի առնէ Տէր բարեաց, եւ
5 այնոցիկ ոյք ուղիղ են սրտիւք։ Իսկ
զմիւրեալսն [10]ի յափշտակութիւն, տանի
զնոսա Տէր ընդ այնոսիկ ոյք գործեն
զանօրէնութիւն։ Խաղաղութիւն ի վե-
րայ Իսրայէլի։

---

[1] ԵԲԲ. տացէ [2] ԵԲԲ. Տէր պահապան քո. Տէր
հովանի քո ընդ աջմէ քումմէ։ [3] ԵԲԲ-ԵԶԷ-
ՅՈՒԼ-Ե, Դաւթի [4] ԵԲԲ. Երուսաղէմ շինեալ
որպէս քաղաք, որ ամիփսիեալ է յինքեան միա-
համան։ [5] ԵԲԲ. աթոռք տանն Դաւթի։ (6)
Ընդրեցէք զողջոյն Երուսաղէմի. խաղաղ եղի-
ցին ոյք սիրեն զքեզ [6] ԵԲԲ. ի պարիսպս քո,
անդորրութիւն յապարանս

[7] ԵԲԲ. բարեկեցաց [8] ԵԲԲ. մի՛ սասանեսցի. յա-
ւիտեան կացցէ մնասցէ։ (2) Երուսաղէմ, լերինք
[9] ԵԲԲ. զի [10] ԵԲԲ. ի խոտորել իւրեանց

ՍԱՂՄՈՍ ՃԻԵ (ՃԻԶ)

Օրհնութիւնք տաւիճանաց։

1 Ի դարձուցանել Տէառն զգերութիւնն
Սիանի, եղաք [1]մեք մխիթարեալք»։
2 Ցայնժամ լցան բերանք մեր ծիծաղութեամբ,
եւ լեզուք մեր ցնծութեամբ. յայնժամ
ասացին ի հեթանոսս, Մեծ արար Տէր
3 առնել ընդ նոսա։ Մեծ արար Տէր
գառնել իւր ընդ մեզ, եւ մեք եղաք
4 բերկրեալք։ Դարձո, Տէր, զգերութիւնս
5 մեր որպէս զուղիս ի հարաւոյ։ Որք ար-
բիւին արտասուօք՝ ցնծութեամբ հնձեսցեն։
6 Երթայով երթային եւ լային որք
բարձեալ սաղիքն զսերմանիս իւրեանց,
դալով եկեսցեն եւ ցնծասցեն, որք առ-
եալ բերիցեն զորայս իւրեանց։

ՍԱՂՄՈՍ ՃԻԶ (ՃԻԷ)

Օրհնութիւնք [2]տաւիճանաց։

1 Եթէ ոչ Տէր չինէ զտուն, ի նանիր վաս-
տակին չինօղք նորա. եթէ ոչ Տէր պա-
հէ զքաղաք, ընդունայն արթնին պահա-
2 պանք նորա։ Ի նանիր է ձեզ յառնիլն
կանխաւ. [3]արդ արիք՝ մինչչեւ էք ննջե-
ցեալ, եւ ոչք ուտէք զհաց ցաւոց, ի
ժամանակի որպէս տացի՝ քուն սիրե-
3 լեաց իւրոց։ Ժառանգութիւն Տեառն որ-
դիք են, [4]որոյ վարձք իւր են, այն է
4 պտուղ որովայնի իւրոյ՝։ Որպէս նետք
ի ձեռս հզօրի, այնպէս են որդիքն [5]յո-
5 ղովուիոց։ Երանի՛ որ լիով [6]զգանկու-
թիւն իւր ի նոցանէն. մի՛ ամաչեցին՝
յորժամ խօսեսցին թշնամիքն նոցա ընդ
նոսա առ դրանն։

ՍԱՂՄՈՍ ՃԻԷ (ՃԻԸ)

Օրհնութիւնք տաւիճանաց։

1 Եթէ առանց Տեառն զքաղաքն ի Տեառ-
նէ, եւ զնան ի ճանապարհս նորա։
2 Զվաստակս ձեռաց քոց կերիցես, երանի
3 է քեզ, եւ բարի [7]եղիցի։ Կին քո որ-
պէս [8]այգի վայելուչ՝ յանկիւնս տան քո,
որդիք քո որպէս նորատունկ ձիթենւոյ
4 չուրջ զսեղանով քով։ Այսպէս օրհնեսցի

[1] ՆԲԳ. որպէս որ տեսանէն զերազ [2] ՆԲԳ. առ
տիճանաց Սաղմանի [3] ՆԲԳ. Հանգչել անագան,
ուտել՝ հաց ցաւոց, զի նա տայ [4] ՆԲԳ. վարձք
նորա պտուղ՝ որովայնի [5] ՆԲԳ. երիտասար-
դութեան [6] ՆԲԳ. զկապարճ [7] ՆԲԳ. եղիցի
քեզ [8] ՆԲԳ. զորթ պտղաբեր

այրինայն մարդ որ երկնչի ի Տեառնէ։
5 Օրհնեսցէ զքեզ Տէր ի Սիոնէ, եւ տես-
ցես զտուր զերուսաղէմ զա-
6 մենայն աւուրս կենաց քոց. Տեսցես
զու զորդիս որդւոց քոց։ Խաղաղութիւն
ի վերայ Իսրայէլի։

ՍԱՂՄՈՍ ՃԻԸ (ՃԻԹ)

Օրհնութիւնք տաւիճանաց։

1 Բազում անգամ մարտեան զիս ի
մանկութենէ իմմէ, ասասցէ Իսրայէլ.
2 բազում անգամ մարտեան զիս ի
մանկութենէ իմմէ, եւ զիս ոչ յաղթե-
3 ցին։ [9]Ձթիկունս իմ հարին մեզաւորք,
զիս երկար արարին զանօրէնութիւնս»
4 իւրեանց։ Տէր արդար է, խորտակէ
5 [10]զպարանս մեղաւորաց։ Ամաչեսցին եւ յետս
դարձցին ամենեքեան որք ատեան զՍիոն։
6 Եղիցին նոքա որպէս խոտ տանեաց, որ
7 մինչչեւ ի լուսն եկեալ՝ չորացաւ. Ուս-
տի ոչ լիով զրուսն իւր հնձօղն, եւ ոչ
8 զկիրկս իւր՝ որ զոյսին ժողովէր։ Ոչ
ասացին ամենեքեան որք անցանէին առ
նոքօք, թէ Օրհնութիւն Տեառն ընդ
ձեզ, եւ օրհնեցաք զձեզ յանուանէ
Տեառն։

ՍԱՂՄՈՍ ՃԻՓ (ՃԼ)

1 *Օրհնութիւնք տաւիճանաց։*

2 Ի խորոց կարպատի առ քեզ, Տէր. Տէր,
լուր ձայնի իմում. եղիցին ականջք քո
3 ի լսել զձայն ազօթից իմոց։ Թէ զանօ-
րէնութիւնս իմ քննես, Տէր, Տէր, իսկ
4 ո՞ կարէ կալ առաջի քո։ Զի ի քէն է
քաւութիւն. [11]վասն անուան քո համ-
5 բերի, Տէր։ Համբեր անձն իմ բանի
6 քում, յուսացաւ անձն իմ ի Տէր։ Ի
7 պահէ առաւօտու մինչչեւ յերեկոյ, ի
պահէ առաւօտու յուսացաւ» Իսրայէլ ի
Տէր. ի Տեառնէ է ողորմութիւն, եւ
8 բազում ի նմանէ է փրկութիւն. Եւ նա
փրկէ զԻսրայէլ յամենայն [12]նեղութեանց
նորա։

[9] ՆԲԳ. Երեսաղեմի [10] ՆԲԳ. Ի վերայ թիկանց
իմոց հերկեցին հերկողք։ ընդ երկար արարին
զակօս [11] ՆԲԳ. զտոհմանս [12] ՆԲԳ. վասն որոյ
երկիցեն ի քէն։ (5) Համբերի Տեառն, համբեր
անձն իմ, եւ բանի նորա յուսացայ։ (6) Անձն
իմ սպասէ Տեառն, ազատ քան պահապանք
առաւօտու, պահապանք առաւօտու։ (7) Յու-
սացաւ [13] ՆԲԳ. անօրէնութեանց

ՍԱՂՄՈՍ ՃԼ (ՃԼԱ)

Օրհնութիւնք աստիճանաց [1]։

1 Տէր, ոչ բարձրացաւ սիրտ իմ, եւ ոչ
պրծան աչք իմ. ոչ գնացի ես [2]ընդ
մեծամեծս, եւ ոչ ընդ այնոսիկ որ աքան-
2 *չելի եղեն քան զիս։ Բայց ես էի խոնար-*
հեցայ ես՝ որպէս մանուկ հատուցեալ ի
ստինէ մօր իւրոյ, [3]եւ զարձ նորա անդ-
րէն ի նոյն. այլ ես էի հատուցեալ ար-
գելք զանձն իմ, այսպէս եղիցի հա-
3 *տուցումն անձին իմոյ։ Յուսացաւ՝ Իս-*
րայէլ ի Տէր յայսմհետէ մինչեւ յաւի-
տեան։

ՍԱՂՄՈՍ ՃԼԱ (ՃԼԲ)

Օրհնութիւնք աստիճանաց։

1 Յիշեա, Տէր, զԴաւիթ, եւ զամենայն
2 [4]հեզութիւն նորա։ Որպէս երդուաւ
Տեառն, եւ ուխտեաց եզ [5]Աստուծոյ Յա-
3 *կոբայ. Թէ ոչ մտից ի յարկս տան ի-*
մոյ, թէ ելից յանկոզինս մահճայ իմոյ,
4 *Թէ տայց քունս աչաց իմոց, կամ նինջ*
արտեւանանց [6]իմոց, կամ հանգիստ ի-
5 *րանաց իմոց, Մինչեւ գտից ատեղի յար-*
6 *կի Տեառն Աստուծոյ Յակոբայ։" Ահա*
լուաք զնմանէ յԵփրաթա, եւ գտաք
7 *զնա ի դաշտս մայրեաց։ Մատուցք ի յարկս*
նորա, երկիր պագցուք ի տեղւոջ ուր
8 *կացին են ոտք նորա։ Արի, Տէր, ի*
հանգիստ քո, դու եւ տապանակ կտակի
9 *[7]սրբութեան քո։ Երիցունք քո զգեցցին*
զարդարութիւն, եւ սուրբք քո ցնծա-
10 *լով ցնծասցեն։ Վասն Դաւիթ [8]սրկելոյ*
քո, մի դարձուցաներ զերեսս [9]քո յո-
11 *ձեղոյ քումմէ։" Երդուաւ Տէր Դաւիթ*
ճշմարտութեամբ եւ ոչ առեաց նմա,
ի պտղոյ որովայնէ քումմէ նստուցից
12 *յաթոռ քո։ Թէ պահեսցեն որդիք քո*
զօրէնս իմ, եւ զվկայութիւնս իմ զոր
ուսուցից նոցա, որդիք նոցա նստցին
13 *յաթոռ քո։ Ընտրեաց Տէր ընդ Սիոն, եւ ընտրեաց*
14 *զնակիզ ի նմա. Սա է հանգիստ*
իմ յաւիտեանս յաւիտենից, ի սմա բնա-
15 *կեցայց զի հաճեցայ ընդ սա։ Զորս սո-*
րա օրհնելով օրհնեցից, եւ զաղքատս
16 *սորա լցուցից հացիւ։ Երիցանց սորա*
զգեցուցից զփրկութիւն, եւ սուրբք սո-
17 *րա ցնծալով ցնծասցեն։ Անդ ծագեցից*
զեղջեւր ի Դաւիթ, պատրաստ արարից
18 *զճրագ օծելոյ իմոյ։ Թշնամեաց նորա*
զգեցուցից զամօթ, այլ ի վերայ նորա
ծաղկեսցի [10]սրբութիւն իմ"։

ՍԱՂՄՈՍ ՃԼԲ (ՃԼԴ)

Օրհնութիւնք աստիճանաց [1]։

1 Զի բարի կամ զի վայելուչ, զի ընա-
2 կեն եղբարք ի միասին։ Որպէս եւզ զի
իջանէ ի գլուխ եւ ի մորուսն Ահարոնի,
ի մորուսն իջանէ ի գրասղաս զգես-
3 *տու նորա։ Որպէս յօդ զի յօդէ ի Հեր-*
մոնէ ի վերայ լերին Սիոնի. անդ պատ-
րաստեաց Տէր զօրհնութիւն, եւ զկեանս
յաւիտենից։

ՍԱՂՄՈՍ ՃԼԴ (ՃԼԴ)

Օրհնութիւնք աստիճանաց։

1 Ասա օրհնեցէք, ամենայն ծառայք
Տեառն, զՏէր, ո կայք ի տան Տեառն
[11]եւ ի գաւիթս Աստուծոյ մերոյ," ի գի-
2 *շերի։ Համբարձէք զձեռս ձեր ի սրբու-*
3 *թիւն, եւ օրհնեցէք զՏէր։ Օրհնեսցէ*
զքեզ Տէր ի Սիոնէ, որ արար զերկինս
եւ զերկիր։

ՍԱՂՄՈՍ ՃԼԴ (ՃԼԵ)

Ալէլուիա։

1 Օրհնեցէք զանուն Տեառն, օրհնեցէք,
2 *ծառայք Տեառն, [11]զՏէր. Ո կայք ի տան*
Տեառն, ի գաւիթս տան Աստուծոյ մերոյ։
3 *Օրհնեցէք զՏէր, զի բարի է Տէր. սաղմոս*
ասացէք անուան նորա՝ զի քաղցր է։
4 *ԶՅակոբ ընտրեաց իւր Տէր, եւ զԻս-*
5 *րայէլ ժառանգութիւն իւր։ Ես ծանեայ*
զի մեծ է Տէր, եւ Տէր մեծ է քան զա-
6 *մենայն [12]կուռս։ Զամենայն զոր ինչ*
կամեցաւ՝ եւ արար Տէր յերկինս եւ
7 *յերկրի, ի ծով եւ յամենայն խորս։ Հանէ*
զամպս ի ծագաց երկրէ, զփայլատա-
կունս իւր յանձրեւս արար, եւ հանէ
զհողմս ի չտեմարանաց իւրոց։
8 *Ո եհար զամենայն անդրանիկս եգիպ-*

[1] ԵՔԳ. յաւելուն յաւելեալ, Դաւիթ [2] ԵՔԳ. ի մեծամեծս եւ ի սքանչելիս քան զիս։ (2) Բայց եթէ ցածուցի եւ լռեցուցի զանձն իմ [3] ԵՔԳ. որպէս մանուկ հատուցեալ ի ստինէ անձն իմ ընդ իս։ (3) Յուսաց. [4] ԵՔԳ. Նեղութիւն [5] ԵՔԳ. Հզօրին [6] ԵՔԳ. իմոց, (5) Մինչեւ գտից տեղի Տեառն, յարկս Հզօրին Յակոբայ։ [7] ԵՔԳ. զօրութեան [8] ԵՔԳ. ծառայի [9] ԵՔԳ. օծելոյ քո [10] ԵՔԳ. պսակ նորա [11] ՅԵՔԳ. գաւիթս [12] ԵՔԳ. գիս

տացուց՝ ի մարդոյ մինչեւ յանասունն։
9 Առաքեաց զնչանս եւ զարուեստս իւր
ի մէջ քո, եզիպտոս, ի փարաւոն եւ
10 յամենայն զօրս իւր։ Ո ահար զազգս
բազումս, եւ սպան զմեծաւորս հզօրս,
11 Զմենռվն թագաւոր Ամորհացւոց. զԱկ
թագաւոր Բասանու, եւ զամենայն թա-
12 գաւորութիւնս Քանանացւոց. Եւ զկե-
կիր նոցա ի ժառանգութիւն, ժառան-
գութիւն Իսրայէլի ժողովրդեան իւրոյ։
13 Տէր, անուն քո յաւիտեան. Տէր, յի-
14 շատակ քո ազգէ մինչեւ յազգ։ Դատի
Տէր զժողովուրդս իւր, եւ ի ծառայս
իւր մխիթարի։
15 Կուռք հեթանոսաց արծաթ եւ ոսկի
են, ձեռագործք են որդւոց մարդկան.
16 Բերան զոյ՝ եւ ոչ խօսին, աչք են՝ եւ
17 ոչ տեսանեն. Ականջք են՝ եւ ոչ լսեն, եւ
18 ոչ զոյ չունիչ ի բերանս նոցա։ Նման նոցա
եղիցին որք արարին զնոսա, եւ ամե-
19 նեքեան որք յուսացեալ են ի նոսա։ Տուն
Իսրայէլի, օրհնեցէք զՏէր. տուն Ահա-
20 րոնի, օրհնեցէք զՏէր. Տուն Ղեւեայ,
օրհնեցէք զՏէր. երկիւղածք Տեառն,
21 օրհնեցէք զՏէր։ Օրհնեալ Տէր ի Սիո-
նէ, որ բնակեալն է յԵրուսաղէմ։ Ա-
լէլուիա։

ՍԱՂՄՈՍ ՃԼԵ (ՃԼԶ)

1 Խոստովան եղերուք Տեառն, զի բարի
2 է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա։ Խոս-
տովան եղերուք Աստուծոյն աստուածոց,
3 զի յաւիտեան է ողորմութիւն նորա։ Խոստովան
եղերուք Տեառն տերանց, զի յաւիտեան
է ողորմութիւն նորա։
4 Արար զսքանչելիս մեծամեծս միայն,
5 զի յաւիտեան է ողորմութիւն նորա։ Զերկինս
արար իմաստութեամբ իւրով, զի յա-
6 ւիտեան է ողորմութիւն նորա։ Հաստատեաց
զերկիր ի վերայ ջուրց, զի յաւիտեան
7 է ողորմութիւն նորա։ Արար զլուսաւորս մե-
ծամեծս [1]միայն, զի յաւիտեան է ողորմ-
8 նորա։ Զարեգակն արար իշխանական
տուընջեան, զի յաւիտեան է ողորմ-
9 նորա. Զլուսին եւ զաստեղս՝ իշխանա-
կան զիշերոյ, զի յաւիտեան է ողորմ-
10 նորա։ Եհար զերկիրն եգիպտացւոց
անդրանկօք իւրովք հանդերձ, զի յա-
11 ւիտեան է ողորմութիւն նորա. Եւ եհան զնո-
րայել ի մէջ նոցա, զի յաւիտեան է
12 ողորմութիւն նորա. Ի ձեռն բարձր եւ ի բա-
զուկ իւր հզօր, զի յաւիտեան է ողորմ-
13 նորա։ Եհարձ զծովն [2]Ա՛ձեծ եւ բաժանեաց
զկարկուս մասունս, զի յաւիտեան է ո-
14 ղորմութիւն նորա. Եւ անցոյց զԻսրայէլ ընդ
մէջ նորա, զի յաւիտեան է ողորմ նո-
15 րա։ Լնկղմեաց զփարաւոն եւ զզօրս
իւր ի ծովն Կարմիր, զի յաւիտեան է ո-
16 ղորմութիւն նորա։ Եհան զժողովուրդ իւր յա-
նապատ, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։
17 Եհար զմեծաւորս մեծամեծս, զի յա-
18 ւիտեան է ողորմութիւն նորա։ Եւ սպան զմե-
ծաւորս հզօրս, զի յաւիտեան է ողորմ
19 նորա. Զսեհոնն թագաւոր Ամորհացւոց, զի յաւիտեան է ողորմութիւն նորա.
20 ԶՈգ թագաւոր Բասանու, զի յաւի-
21 տեան է ողորմութիւն նորա. Եւ զերկիր նո-
ցա ի ժառանգութիւն, զի յաւիտեան է
22 ողորմութիւն նորա. Ժառանգութիւն Իսրա-
յէլի ծառայի իւրոյ, զի յաւիտեան է ո-
23 ղորմութիւն նորա։ Ցիշեաց զմեզ Տէր ի խո-
նարհութեան մերում, զի յաւիտեան է
24 ողորմութիւն նորա։ Եւ փրկեաց զմեզ ի ձե-
ռաց թշնամեաց մերոց, զի յաւիտեան
25 է ողորմութիւն նորա։ Ո տայ կերակուր ա-
մենայն կենդանեաց, զի յաւիտեան է
26 ողորմութիւն նորա։ Խոստովան եղերուք Աս-
տուծոյ երկնաւորի, զի յաւիտեան է ո-
ղորմութիւն նորա։

ՍԱՂՄՈՍ ՃԼԶ (ՃԼԷ)

[1]Սաղմոս Դաւթի. ի ձեռն Երեմիայի. անչափ յերկայնացուցին։

1 Ա՛ռ գետս Բաբելացւոց՝ անդ նստաէաք, եւ
լայաք որպէս յիշեցաք մեք անդ զՍիոն։
2 Ի մէջ ուռենեաց նոցա կախեցաք [3]զկտակա-
3 րանս մեր։ Անդ հարցանէին զերիվք մեր
զրանս օրհնութեան, զերիվարք մեր
սոխակին զմեզ եւ ասէին, Օրհնեցէք
4 մեզ յօրհնութենէն Սիոնի։ Իսկ զիարդ
օրհնեսցուք զօրհնութիւնս Տեառն յեր-
5 կիր օտար։ Եթէ մոռացայց զքեզ, Ե-
6 րուսաղէմ, մոռասցի զիս աջ իմ։ Կցեսցի
լեզու իմ ի քիմս իմ՝ թէ ոչ յիշեցից
զքեզ, թէ ոչ նախ նուագիցից զքեզ,
Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան ի-
7 մոյ։ Ցիշեա, Տէր, զորդիսն Եդովմայ՝
յաւուրսն Երուսաղէմի, որք ասէին,
Բակեցէք, քակեցէք, մինչեւ ի հիմն հա-
սուցէք։

[1] ՅԵբր. պոռնիկ

[2] ՅԵբր. Կարմիր [3] ՅԵբր. զքնարս [4] ՅԵբր. բարձ-
բացուցից զՆերուսաղէմ ի վեր քան զկե-

8 Դուստր Բաբելացւոց թշուառական,
երանի՛ որ հատուցանէ դնաւուցումն քո զոր
9 դու մեզ հատուցեր. Երանի՛ որ կալցի
զմանկունս քո եւ ենդր ղքարի։

ՍԱՂՄՈՍ ՃԼԵ (ՃԼԸ)

Սաղմոս Դաւթի։

1 Խոստովան եղէց քեզ, Տէր, լայրովք
սրտիւ իմով. առաջի հրեշտակաց սաղ-
2 մոս ասացից քեզ։ [1]Ձի լուար զբանս
բերանոյ իմոյ," երկիր պաղիջ ի առաջ
սուրբ քո, եւ խոստովան եղէց անուան
քում վասն ողորմութիւնն եւ ճշմար-
տութիւնն քո. մեծ արարեր [2]յայտնա-
3 նի դանուն սուրբ քո"։ Ցորում աւուր
կարդամ առ քեզ վազվազակի լսեր ինձ,
եւ բազում արասցես զօրութիւնս յանձն
4 իմ։ Խոստովան եղիցին առ քեզ ամե-
նայն թագաւորք երկրի, զի լսեան զբանս
5 բերանոյ քո. Եւ օրհնեսցեն զճանա-
պարհս քո. մեծ են փառք Տեառն։
6 Բարձր է Տէր, զխոնարհս տեսանէ,
7 զբարձունս ի հեռաստանէ ճանաչէ։ Թէ
գնացից ես ի մէջ նեղութեանց, կեն-
դանացես զիս. ի բարկութենէ թշնամ-
ւոյն ձգեցեր զձեռն քո, եւ փրկեաց
8 զիս աջ քո։ Եւ Տէր [3]հատուսցէ ընդ
իմ. Տէր, ողորմութիւն քո յաւիտեան.
զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԸ (ՃԼԹ)

[4]*Ի կատարած. Սաղմոս Դաւթի։*

1 Տէր, փորձեցեր զիս եւ ծանեար զիս։
2 Դու ծանեար զնստել իմ եւ զյառնել
իմ. ի միտ առեր զխորհուրդս իմ ի հե-
3 ռուստանէ։ Զչափիդ իմ եւ զպիճակս
իմ դու քննեցեր. եւ զամենայն ճանա-
4 պարհս իմ յաւաչադոյն տեսեր. Ձի ոչ
գոյ [5]նենգութիւն ի լեզուի իմում. ահա
5 դու, Տէր, [6]ծանեար Զյետին իմ եւ զա-
ռաջին իմ, գու ստեղծեր զիս" եւ եդ
6 զիս զձեռն քո ի վերայ իմ։ Սքանչելի
[7]եղեւ դիտութիւնն քո յինէն, զօրացաւ"
եւ ոչ հանդարտեմ սմա։
7 Ծո՞ երթայց ես յոգւոյ քումմէ, կամ
8 յերեսաց քոց ես յո՞ փախեայց։ Թէ եկա-

[1] Ցնբբ. պատ [2] Ցնբբ. զան զամենայն անուն քո զքան քո [3] Ցնբբ. կատարեսցէ [4] Ցնբբ. Առ գլուխ երաժշտին [5] Ցնբբ. բան [6] Ցնբբ. ծանեար զայս ամենայն (5) Ցետոյ եւ յաւաչեայ պաշտ-
բեցեր զիս, [7] Ցնբբ. գիտութիւն վասն իմ։ բարձր է

նեմ յերկինս՝ դու անդ ես. թէ իջանեմ ի
9 գժոխս՝ եւ անդր մօտ ես. Թէ ասիցեմ զթեւս
[8]իմ ընդ առաւօտս, եւ բնակեցայց յե-
10 զերս՝ ծովու, Սակայն եւ անդ ձեռն քո
առաջնորդեսցէ ինձ, եւ աջ քո բնակա-
11 ցի զիս։ Ասացի, Թաւալ ասիցեն ար-
դեւք ծածկեաց զիս, [9]կամ գիշեր փո-
խանակ լուսոյ փաթկութեան իմոյ"։
12 Թաւալն՝ ի քէն ոչ խաւարանայ, եւ գի-
շերն որպէս աւուր լուսաւոր ելցի, եւ
13 [10]խաւար նորա որպէս զլոյս նորա"։ Դու
ստացար զերիկամունս իմ, եւ [11]ընկա-
14 լար զիս յորովայնի՛ մօր իմոյ։ Խոստո-
վան եղէց քեզ, Տէր, զի [12]ահիզ եւ սքան-
չելի ես՛՛. սքանչելի են գործք քո, եւ
15 անձն իմ գիտացյ յոյժ։ Ոչ թաքաւա-
ւակր իմ ի քէն զոր արարեր ի ծածուկ,
[13]եւ կար զօրութեան իմոյ ընդ ստորինս"
16 երկրի։ Ձանգործս իմ տեսին աչք քո,
եւ ի գիրս քո ամենեքեան գրեցան. [14]ի
տուէ մոլորեցան, եւ ոչ ոք էր որ ա-
ռաջնորդէր նոցա"։
17 Ինձ յոյժ մեծարուս եղեն [15]բարեկամք
քո, Աստուած. եւ յոյժ զօրացան [16]իշ-
18 խանք նոցա։ Թուեցի զնոսա, եւ քան
զաւազ բազմացան. զարթեայ եւ սրդ
19 ընդ քեզ եմ։ Թէ սպանանես զմեզա-
տորս, Աստուած. արք արեան, ի բաց
20 եղերուք յինէն։ [17]Ի հակառակութիւն եւ
ի նախանձ, առգեն ի նանիր զքաղաքս
21 քո։" Ո՞չ զատելիս քո, Տէր, ատեցի,
եւ ի վերայ թշնամեաց քոց մաշեցայ։
22 Ատելութիւն կատարեալ ատեցի զնո-
23 սա, եւ եղեն ինձ ի թշնամիս։ Փորձեա
զիս, Աստուած, եւ ծանիր զսիրտ իմ,
24 քննեա զիս եւ ծանիր զչափիդ իմ, եւ
տես թէ իցեն անօրէնութիւնք ի ճանա-
պարհս իմ, եւ առաջնորդեա ինձ ի ճա-
նապարհս [1]քո յաւիտենից։

ՍԱՂՄՈՍ ՃԼԹ (ՃԽ)

1 [1]*Ի կատարած. Սաղմոս Դաւթի։*

2 Սպրեցո զիս, Տէր, ի մարդոյ չարէ,
3 յառնէ անիրաւէ փրկեա զիս։ Խորհե-

[8] Ցնբբ. առաւօտս, և բնակեցայց ի ծագս [9] Ցնբբ. եւ գիշեր՝ լոյս շուրջ զինեւ [10] Ցնբբ. որպէս խաւար՝ նմանապէս լոյս [11] Ցնբբ. անկար զիս յորովայնի [12] Ցնբբ. սքանչելապէս արարեալ։
[13] Ցնբբ. յորժամ նկարեցեալ էայս [14] Ցնբբ. ոչ կազմելոյ էին ի ժամանակին եւ չգոյր ոչ մին ի նոցանէ [15] Կամ, խորհուրդք [16] Կամ, թիւք
[17] Ցնբբ. Որ խօսին չարիս զքէն, խրխտան ի նանիր ընդդէմ քո։

ցան զանօրէնութիւն ի սիրտս իւրեանց, զօր առնէին պատրաստեցան ի պատահ-
4 րանս։ Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի, եւ խոնք խիժ ի նեղքոյ շրթանց
5 նոցա։[1] Պահեա զիս, Տէր, ի ձեռաց մեղաւորի, եւ ի մարդոյ չարէ փրկեա զիս.
6 խորհեցան խափանել զգնացս իմ։ Թաքուցին ամբարտաւանք որոգայթ ինձ. լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց, չարչ դչաւղօք իմովք եդին ինձ զգայմանագուծ-
7 թիւն։[1] Ասացի [2]Տէր Աստուած իմ ես դու. ունկն դիր, Տէր, ձայնի ազօթից իմոց։
8 Տէր, Տէր զօրութիւն փրկութեան իմոց, հովանի զլուոյ իմոյ յաւուր պա-
9 տերազմի։ Մի մատներ զիս, Տէր, ի ցանկութիւն [3]մեղաւորաց զգր խորհեցան վասն իմ, մի ընդ վայր հարկանիցեն զիս", զի մի երբեք բարձրացցին, [4]եւ խորհուրդք նոցա մի կատարեսցին.
10 վախճան կատարածի նոցա" վաստակ չրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա։
11 [5]Արկցես ի վերայ նոցա կայծակունս հրոյ, եւ կործանեսցես զնոսա. ի տա-
12 ռապանաց մի կարասցեն կալ" Մարդոյ լեզուանուց մի յաջողեսցի ի վերայ երկրի, գայր մեղաւոր չարիք իւր որ-
13 սացեն ի կորուստ։ Ծանեայ զի առնես, Տէր, զատաստան ազքատի, եւ իրաւունս անդանիկ։ Արդարք զոհասցին զանուանդ քումմէ. բնակեսցին ուղիղք առաջի երեսաց քոց։

ՍԱՂՄՈՍ ՃԽ (ՃԽԱ)

Սաղմոս Դաւթի։

1 Տէր, կարգացի առ քեզ, [6]եւ լաւ լիցի", նայեաց ի ձայն աղօթից իմոց ի կարգ
2 իմում առ քեզ։ Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո, Տէր, համբարձումն ձեռաց իմոց պատարագ ե-
3 րեկոյի։ Դիր, Տէր, պահապան բերանոյ իմոյ, եւ գուռն ամուր շրթանց իմոց, Չի մի խոտորեսցի սիրտ իմ բանս չարութեան, ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս որ գործեն զանօրէնութիւն. ոչ եզէց կցորդ ընտրեւ-
5 լեաց նոցա։ Խրատեսցէ զիս [7]արդարն ողորմութեամբ" ակն յանդիման արասցէ զիս, եւ [8]մեղաւորի մի օծցէ զգլուխ իմ, եւ աղօթք իմ ընդ կամաց նորա"։
6 Ընկղման միտք առ վիմին դատաւորք նոցա. լսեցին զբանս իմ, զի քաղցրացան։
7 են։ [9]Որպէս ի մանրութիւն հողոյ զի ակեսցէ է ի վերայ երկրի՝ ցրուեցան
8 ոսկերք նոցա մերձ ի գժոխս" Աս քեզ, Տէր, Տէր, են աչք իմ, ի քեզ յուսացայ, մի հանիր զհոգի կենդ։ Պահեա զիս յորոգայթէ որ թաքուցան ինձ, ի պատրանաց ոտն գործեն զանօրէ-
10 նութիւն։ Անկցին ի ցանցս [10]նորա մեղաւորք, միայն եմ ես" մինչեւ անցից։

ՍԱՂՄՈՍ ՃԽԱ (ՃԽԲ)

1 Իմաստութիւն Դաւթի. աղօթք, ի ժամանակի զի էր նա յայրի անդ։
2 Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի, ձայնիւ իմով զՏէր աղաչեցի։ Սփռեցից առաջի Տեառն զաղօթս իմ, եւ զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից։
4 Ի նուաղել կենդ հոգւոյ իմոյ, գուռ, Տէր, ծանեաւ զչարեզս իմ, ի ճանապարհ յոր եւ գնայի՝ թաքուցան ինձ որոգայթ։
5 [11]Հայեի յաջմէ եւ տեսանէի, եւ ոչ ոք էր որ ճանաչէր զիս. կորեաւ կենդ փախուստ իմ", եւ ոչ ոք էր որ խնդրէր
6 զանձն իմ։ Աղաղակեցի առ քեզ, Տէր, եւ ասացի, Դու ես յոյս եւ բաժին իմ
7 յերկրին կենդանեաց։ Նայեաց, Տէր, յաղօթս իմ, զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո զիս ի հալածչաց իմոց, զի հզօր
8 եղեն քան զիս։ Տէր, հան ի բանտէ զանձն իմ, զոհանամ զանուանդ քումմէ. ինձ սպասեն արդարք [12]քո մինչեւ" հատուսցես ինձ.

ՍԱՂՄՈՍ ՃԽԳ (ՃԽԴ)

Սաղմոս Դաւթի, [13]ի ժամանակի զի հալածեաց զնա Աբիսողոմ որդի նորա։

1 Տէր, լաւ ազօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ

---

[1] ԵԲԲ. հանգիստ։ [2] ԵԲԲ. Տեառն, [3] ԵԲԲ. մեղաւորի, մի՛ յաջողեր զխորհուրդ նորա [4] ԵԲԲ. Հանգիստ։ (10) Իսկ զլեզուս որոց պաշարեն զիս, [5] ԵԲԲ. Կայծակունք հրոյ իջցեն ի վերայ նոցա. արկցին ի հուր, յանդունդս խոռ, զի մի՛ յարիցեն։ [6] ԵԲԲ. փութեա առ իս [7] ԵԲԲ. արդարն, ողորմութիւն է։ [8] ԵԲԲ. զլեզու է. մի՛ մերժեացէ զայն գլուխ իմ. Դու եւ կացից յաղօթս ի չարիս նոցա [9] ԵԲԲ. Որպէս որ հերկէն եւ որ պատառէն յերկրի, ցրուեալ են ոսկերք մեր ի բերան դերեզմանի, [10] ԵԲԲ. իւրեանց մեղաւորք համօրէն [11] ԵԲԲ. Հայեայց յաջ եւ տես, ոչ ոք է որ ճանաչէ զիս. կորեաւ կենդ ապաւէն [12] ԵԲԲ. քոնզի [13] ՅԻԲ. գ-ի-ե

քով. լսէ ինձ արդարութեամբ քով։
2 Եւ մի՛ մտանիր ի դատաստան ընդ ծառայի քո, զի ոչ արդարանայ առաջի քո
3 ամենայն մարդ։ Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ. եւ նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։ Զանձրացաւ ինձ հոգի իմ, եւ սիրտ իմ խռովեցաւ
5 ինս։ Ծիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն ի գործս քո. յարատ
6 ածս ձեռաց քոց խորհեցայ։ Համբարձի առ քեզ զձեռս իմ. անձն իմ որպէս զերկիր ծարաւի է առ քեզ։[1]
7 Վաղվաղակի լսէ ինձ, Տէր, զի նուազեաց յիս հոգի իմ. մի՛ դարձուցանես զերեսս քո յիս, նմանիցեմ այ-
8 նոցիկ որ իջանեն ի գուբ։ Լսելի արա ինձ առաւօտուց զողորմութիւնս քո, զի ես ի քեզ, Տէր, յուսացայ. ցոյց ինձ ճանապարհ յոր գնացից, զի առ քեզ, Տէր,
9 համբարձի զանձն իմ։ Փրկեա զիս ի թշնամեաց իմոց, Տէր, զի զքեզ ապա-
10 ւէն ինձ արարի։ Ուսո ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ. Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ու-
11 ղիղ։ Վասն անուան քո, Տէր, կեցուսցես զիս. արդարութեամբ քով հանցես
12 ի նեղութենէ զանձն իմ. Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ. կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԴ (ՃԽԴ)

Սաղմոս Դաւթի. [2]առ Գողիաթ։"

1 Օրհնեալ Տէր [3]Աստուած իմ, որ ուսոյց զձեռս իմ ի պատերազմ, եւ զմատունս
2 իմ ի ճակատամարտս։ Ողորմութիւն իմ եւ ապաւէն իմ, օդնական իմ եւ փրկիչ իմ. ապաւէն իմ, եւ ես յուսացայ ի նա. ո հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ։
3 Տէր, ո՞ է մարդ զի յայտնեցար նմա, կամ որդի մարդոյ՝ [4]զի համարիս ինչ
4 զնա։ Մարդ նմանութեան նմանեցաւ, եւ աւուրք նորա որպէս հովանի անցին։
5 Տէր, խոնարհեցո զերկինս եւ էջ, 6 մերձեաց ի լերինս՝ եւ ծխեցին։ Փայլատակեա զվայրատակուածս քո եւ խռովեա զնոսա, առաքեա զնետս քո եւ
7 ցրուեա զնոսա։ Առաքեա զձեռն քո ի բարձանց եւ փրկեա զիս ի չուրց բազմաց, եւ ի ձեռաց որդւոց օտարաց։
8 Որոց բերանք իւրեանց խօսեցան զնանրութիւն, եւ աջ նոցա աջ է մեղաց։
9 Աստուած, յօրհնութիւն նոր օրհնեսցից քեզ, տաւնագեաւ սաղմոսարա-
10 նաւ սաղմոս ասացից քեզ։ Ո տացէ զփրկութիւն թագաւորաց [2]մերոց, որ փրկեցեր իսկ զԴաւիթ ծառայ իւր ի
11 սրոյ չարէ։ Փրկեա զիս եւ ապրեսցո ի ձեռաց որդւոց օտարաց, որոց բերանք իւրեանց խօսեցան զնանրութիւն, եւ
12 աջ նոցա աջ է մեղաց։ [5]Որոց ուսաներք իւրեանց" որպէս նորաստեղիս հաստատեալ են իմանկութենէ իւրեանց, դստերք
[6]նոցա զարդարեալ եւ պատճեալ" ի
13 նմանութիւն տաճարի. Շտեմարանք նոցա լի են եւ բղխեն ի միմեանս, խաչինք նոցա բազմածինք են եւ բազ-
14 մանան ի գնացս իւրեանց. Անդեակք նոցա" պարարտք են. ոչ գոյ խրամատութիւն գանկոյ նոցա, եւ ոչ ազաղակ
15 ի հրապարակս [7]նոցա։ Արդ երանեցին" ժողովրդեան որոյ այս այսպէս է. նա՝ երանի՛ ժողովրդեան որոյ Տէր Աստուած է նոցա։

ՍԱՂՄՈՍ ՃԽԶ (ՃԽԵ)

Օրհնութիւն Դաւթի։

1 Բարձր առնեմ զքեզ, Աստուած իմ եւ թագաւոր իմ, եւ օրհնեմ զանուն քո յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից։
2 Զօրհնութիւն յամենայն աւուր օրհնեցից քեզ, եւ գովեցից զանուն քո յաւիտեան եւ յաւի-
3 տեանս յաւիտենից։ Մեծ է Տէր եւ օրհնեալ է յոյժ, եւ մեծութեան նորա ոչ
4 գոյ չափ։ Ազգք եւ ազգք գովեսցեն զգործս քո, եւ զզօրութիւնս քո պատ-
5 մեսցեն։ Զմեծ վայելչութիւն փառաց սրբութեան քո [2]խօսեսցին, եւ զգործս քո
6 չքմիս քո [8]պատմեսցեն։ Զզօրութիւն սքի քո ասասցեն, եւ զմեծութիւնս քո
7 [9]պատմեսցեն։ Զվիշտաւակ բազումք քաղցրութեան քո բղխեսցեն, եւ արդարու-
8 թեամբ քով յնծասցեն։ Գթած եւ ողոր-

[1] ՆԵՔ՝ Հեղեն յա-ել-ս, Հանգիստ։ [2] ՅՆԵՔ՝ պա-ե-ե
[3] ՆԵՔ՝ Վ,ԵՄ

[4] ՆԵՔ՝ Զի ուսաերք մեր [5] ՆԵՔ՝ մեր իբրեւ զանկիւնս քանդակեալս [6] ՆԵՔ՝ մեր լի են, տան արգիւնս ապգի ապգի. խաշինք մեր ծնանին հազարս, ծնանին բեւրս յանգս մեր։ (14) Արջառք մեր [7] ՆԵՔ՝ մեր։ (15) Արդ երանի՛ [8] ՆԵՔ՝ խորհեցայց կո՛, խօսեցայց [9] ՆԵՔ՝ պատմեցից

մած է Տէր , երկայնամիտ եւ բազում-
9 *ողորմ : Բաղցր է Տէր առ ամենեսեան ,*
եւ ողորմութիւն նորա ի վերայ ամենայն
10 *արարածոց իւրոց : Խոստովան լիցին առ*
քեզ, Տէր, ամենայն գործք քո, եւ սուրբք
11 *քո օրհնեսցեն զքեզ : Զփառս արքայու-*
թեան քո առասցեն , եւ զզօրութիւնս
12 *քո պատմեսցեն . [1]ճանաչել որդւոց*
մարդկան զզօրութիւնս քո , եւ զփառս
մեծավայելչութեան արքայութեան քո :
13 *Արքայութիւն քո արքայութիւն ամե-*
նայն յաւիտենից , եւ տէրութիւն քո
ազգէ մինչեւ յազգ : [2]Հաւատարիմ է
Տէր յամենայն իւրում բանս իւր , եւ սրբոյր
է յամենայն ի գործս իւր :"
14 *Հաստատէ Տէր զամենայն գայթակ-*
ղեալս, եւ կանգնէ զամենայն գլորեալս :
15 *Աչք ամենեցուն ի քեզ յուսան , եւ դու*
տաս կերակուր նոցա ի ժամու . տաս դու
16 *նոցա եւ կերակրիս : Բանաս զձեռն քո, եւ*
լցուցանես [3]զամենեսեան քաղցրու-
17 *թիամբ կամաց քոյիւ : Արդար է Տէր*
յամենայն ճանապարհս իւր , եւ [4]սուրբ
է յամենայն ի գործս իւր :
18 *Մերձ է Տէր առ ամենեսեան որ կարդան*
առ նա , առ ամենեսեան որ կարդան առ
19 *նա ճշմարտութիւնամբ : Զկամս երկիւ-*
ղածից իւրոց առնէ Տէր , ալօթիւք նո-
20 *ցա լսէ եւ կեցուցանէ զնոսա : Պահէ*
Տէր զամենեսեան որք սիրեն զնա , եւ
զամենայն մեղաւորս սատակէ Տէր :
21 *Զօրհնութիւնս Տեառն խօսեսցի բերան*
իմ. օրհնեսցէ ամենայն կենդանիք զա-
նունն սուրբ նորա յաւիտեան , եւ յաւի-
տեանս յաւիտենից :

ՍԱՂՄՈՍ ՃԽԸ (ՃԽԶ)

1 *Ալէլուիա . [2]Անգեայ եւ Զաքարեայ :"*

2 Օրհնեա , անձն իմ , զՏէր . օրհնեցից
զՏէր ի կեանս իմ , սաղմոս ասացից
3 *Աստուծոյ իմոյ մինչեւ եմ եւս : Մի յու-*
սայք յիշխանս՝ յորդիս մարդկան , զի ոչ
4 *գոյ փրկութիւն ի նոսա : Ելցէ հոգի ի*
նոցանէ՝ եւ դարձցին անդրէն ի հող , եւ
յայնմ աւուր կորիցեն ամենայն խոր-
5 *հուրդք նոցա : Երանի ում Տէր Աստուած*
Յակոբայ օգնական է նմա , եւ յոյս նո-
6 *րա ի Տէր Աստուած է : Որ արար զեր-*
կինս եւ զերկիրս , զծով եւ զամենայն
որ է ի նոսա . ս պահէ զճշմարտութիւնս

[1] ԵՔԲ. Տալ ճանաչել զամենայն կենդանի [2] ՅՔԲ. դ-ի-ե [3] ԵՔԲ. ՚ԼԲԲ. ողորմած

7 *յաւիտեան , եւ առնէ իրաւունս զրկե-*
լոց . տայ հաց քաղցելոց , եւ արձակէ
8 *կապեալս Տէր : Տէր բանայ զաչս կու-*
րաց , եւ կանգնէ զլլուրեալս Տէր . Տէր
9 *սիրէ զարդարս : Տէր պահէ զպան-*
դուխտս . զորս եւ զայրիս ընդունի
Տէր , եւ զճանապարհս մեղաւորաց
10 *կորուսանէ : Թագաւորեսցէ Տէր յաւի-*
տեան , Աստուած քո , Սիոն , ազգէ
մինչեւ յազգ : Ալէլուիա :

ՍԱՂՄՈՍ ՃԽԶ (ՃԽԷ)

[2]*Ալէլուիա . Անգեայ եւ Զաքարեայ :"*

1 Օրհնեցէք զՏէր , զի բարի [5]են սաղ-
մոսք Աստուծոյ մերում . քաղցր եւ
2 *գիպի" օրհնութիւն : Շինէ զերուսաղէմ*
Տէր , եւ զգերեալսն Իսրայելի ժողովէ :
3 *Բժշկէ զրեւեալս սիրտս , եւ պատէ զա-*
4 *մենայն վէրս նոցա : Ո թուէ զբազմու-*
թիւն աստեղաց , եւ զամենեսեան զնո-
5 *սա յանուանէ կոչէ : Մեծ է Տէր մեր*
եւ մեծ է զօրութիւն նորա , իմաստու-
6 *թիան նորա ոչ գոյ բաւ : [6]Ընդունի զհեզս*
Տէր , եւ խոնարհ առնէ զամբարտաւանս
7 *մինչեւ յերկիր : Օրհնեցէք զՏէր խոս-*
տովանութեամբ , սաղմոս ասացէք Նմա
8 *օրհնութեամբ : Զգիսոյդ զերկինս ամ-*
պովք , պատրաստ արար զանձրեւս իւր
յերկիր , բուսոյդ զխոտ ի լերինս , [7]զգա-
9 *լարի ի ծառայութիւն մարդկան :" Այն*
որ տայ անասնոց զկերակուր իւրեանց ,
ձագուց ագռաւուց՝ որ կարդան առ նա :
10 *Ոչ թէ ընդ զօրութիւնս ձիոյ կամիցաւ*
Տէր , եւ ոչ ընդ երանս սրնգի սակաւ հա-
11 *ճեցաւ : Այլ հաճեցաւ Տէր ընդ երկիւղածս*
իւր , եւ ընդ յուսոյիկ ողորմութիւն նորա :

[7]ՍԱՂՄՈՍ ՃԽԷ"

[2]*Ալէլուիա . Անգեայ եւ Զաքարեայ :"*

12 Գովեա , Երուսաղէմ , զՏէր . եւ օրհնեա
13 *զԱստուած քո , Սիոն : Զի զօրացոյց*
զնիգս դրանց քոց , եւ օրհնեաց զորդիս
14 *քո ի քեզ : Ո եդ զսահմանս քո ի խա-*
ղաղութիւն , պարարտութեամբ ցորե-
15 *նոյ լցոյց զքեզ : Առաքէ զբան իւր յեր-*
կիր , վազվազ ընթանայ պատգամք նո-
16 *րա : Տնէ զձիւն որպէս գաստ , եւ զմէգ*
17 *որպէս փոշի ցանեաց : Արկանէ զսառն*
որպէս պատառս , առաջի ցրտոյ նորա

[5] ԵՔԲ. Է սաղմոսաբէ Աստուածոյ մերում. զի քաղցր և վայելուչ է [6] ԵՔԲ. Կանգնէ [7] ՅՔԲ. Տէ-ե ՀՆՈՑԵՒ-ՒՒ-Ն ՒՒ- 7, Սաղմ Ի ։

18 ո՞ կարէ կալ ։ Առաքէ զբան իւր եւ հալէ զնոսա, չնչեցոյն հողմով եւ զնասցուն
19 չուրք ։ Պատմէ զբան իւր Յակոբայ, զարդարութիւնս եւ զիրաւունս Իսրա-
20 յէլի ։ Ոչ այսպէս արար ամենայն ազգաց Տէր, եւ զդատաստանս [1]իւր ոչ յայտնեաց նոցա ։"

ՍԱՂՄՈՍ ՃԽԷ

Ալէլուիա. [2]Անգեայ եւ Զաքարեայ ։"

1 Օրհնեցէք զՏէր յերկնից, օրհնեցէք
2 զնա [3]ի բարձանց ։ Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա, օրհնեցէք
3 զնա ամենայն զօրութիւնք նորա ։ Օրհնեցէք զնա արեգակն եւ լուսին, օրհնեցէք զնա ամենայն աստեղք [4]եւ լոյս ։
4 Օրհնեցէք զնա երկինք երկնից, եւ չուրք
5 որ ի վերոյ քան զերկինս ։ Օրհնեցէք զանուն Տեառն, զի նա ասաց եւ եղեն, հրամայեաց եւ հաստատեցան ։
6 Կարգեաց զնոսա յաւիտեան յաւիտեան ։
7 Ներ, սահման եդ եւ ոչ անցանիցեն ։ Օրհնեցէք զՏէր յերկրէ վիշապք, եւ ա-
8 մենայն խորք, Հուր եւ կարկտա, ձիւն եւ սառն, հողմ եւ մրրիկ որ առնէք
9 զբան նորա, Լերինք եւ ամենայն բլուրք, ծառք պտղաբերք եւ ամենայն մայրք,
10 Գազանք եւ ամենայն անասունք, սողունք
11 եւ ամենայն թռչունք թեւաւորք, թա-
գաւորք երկրի եւ զօրք իւրեանց, իշխանք եւ ամենայն դատաւորք երկրի,
12 Երիտասարդք եւ կուսանք, ծերք եւ
13 տղայք. Օրհնեցէք զանուն Տեառն. բարձրացաւ անուն նորա միայն, խոս-
տովանութիւն նմա յերկինս եւ յերկրի ։
14 Բարձր առնէ Տէր զեղջիւր ժողովրդեան իւրոյ, օրհնութիւն ամենայն սրբոց նորա, յորդւոցն Իսրայէլի, ժողովրդոյ որ մերձ է առ [5]Տէր ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԹ

Ալէլուիա ։

1 Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր, օրհ-
2 նութիւն նմա յեկեղեցիս սրբոց ։ Ուրախ եղիցի Իսրայէլ յԱրարիչ իւր, որդիք Սիոնի ցնծասցին ի Թագաւորն իւրեանց։
3 Օրհնեսցեն զանուն նորա օրհնութեամբ, առաքսխլեւ եւ օրհնութեամբ ոտիսա
4 սասցեն նմա։ Զանի Տէր ընդ ժողովրդ իւր, եւ բարձր առնէ զնեզս իմիրհութեան։

5 Պարծեսցին սուրբքն փառօք, եւ
6 ցնծասցեն ի հանգիստս իւրեանց. Եւ բարձր արասցեն զԱստուած բերանովք իւրեանց. սուրբ երկայրիք են ի ձեռս
7 նոցա, Առնուլ հատուցումն ի հեթանոսաց, ի յանդիմանութիւն ամենայն ժո-
8 ղովրդոց, Կապել զթագաւորս նոցա կապանօք, զզօրաւորս նոցա ձեռակա-
9 պօք երկաթիօք, Առնել ի նոսա զգատաստանն գրեալ. փառք այս են ամենայն սրբոց [6]նորա ։

ՍԱՂՄՈՍ ՃՆ

Ալէլուիա ։

1 Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան նո-
րա, օրհնեցէք զնա ի հաստատութեան
2 զօրութեան նորա ։ Օրհնեցէք զնա ի զօրութեան նորա, օրհնեցէք զնա [7]ի
3 բազում մեծութեան նորա ։ Օրհնեցէք զնա ի ձայն [8]օրհնութեան, օրհնեցէք
զնա [9]սաղմոսիւք եւ օրհնութեամբ ։
4 Օրհնեցէք զնա [10]ցնծութեամբ, զուեցէք
5 զնա [11]ուրախութեամբ ։ Օրհնեցէք զնա
[12]ի բանս քաղցունս, օրհնեցէք զնա ի բարբառ լսելի. օրհնեցէք զնա ի ձայն
6 գոհութեան ։ Ամենայն հոգիք, օրհնեցէք զՏէր ։"

[2]Այս Սաղմոս ինքնագիր Դաւթի արտագոյ թուոց. ի ժամանակի զի ել նա նահատակ ընդդէմ Գողիաթայ, առակի Սաւուղի ։

1 Փոքր էի ես յեղբարս իմ, եւ կրտսեր
ի տան հօր իմոյ. արածէի զխաչինս հօր
2 իմոյ ։ Ձեռք իմ արարին սաղմոսարան, եւ մատունք իմ կազմեցին գործի օրհ-
3 նութեան ։ Իսկ արդ ո՞ պատմեսցէ վայս Տեառն իմում. ինքն Տէր ամենայնի
4 լսելոյ զամենայն ։ Որ առաքեաց զհրեշտակ իւր եւ ամրարձ զիս ի հօտէ հաս-
չանց հօր իմոյ, եւ օծ զիս յօծումն իւ-
5 ղոյ իւրոյ ։ Եղբարք իմ գեղեցիկք եւ մեծամեծք, եւ ոչ հաճեցաւ ընդ նոսա
6 Տէր ։ Ելի ես ընդ առաջ այլազգւոյն, եւ
7 նզովեցի զկուռս նորա ։ Հանի զաստերն ի նմանէ եւ հատի զլեզուս նորին, եւ
բարձի զնախասինս յորդւոցն Իսրայէլի։"

---

[1] Եբբ. նորա ոչ ծանեան նոքա ։ Ալէլուիա ։ [2] Եբբ. գ-ի-ե [3] Եբբ. ի բարձունս [4] Եբբ. լուսոյ [5] Եբբ. նա, Ալէլուիա ։

[6] Եբբ. նորա։ Ալէլուիա ։ [7] Եբբ. ըստ բազում [8] Եբբ. փողոյ [9] Եբբ. ի տաւիղ և ի քնար [10] Եբբ. թմբկաւ եւ պարուք [11] Եբբ. տատաղեաւ եւ արնգաւ [12] Եբբ. ի բարբառ ծնծղայից։ օրհնեցէք զնա ծնծղայիւք ցնծութեան։ (6) Օրհնեցէք զՏէր ամենայն շնչաւորք։ Ալէլուիա ։

ԳԼՈՒԽՔ ԱՌԱՋՆՈՅ ԲԱՆԻ ԱՌԱԿԱՑՆ

	Գլ.	Համ.
Զքանդական մասն հոգւոյ ուղղելով ի մեզ յորդորել զմտնկանսն ի փոյթ աստուածային ուսման՝ ցանկալի խաստմամբք. որոյ սկիզբն աչեզմանն՝ երկնչելն յԱստուծոյ, և ազօթիւք եւ բարի գործովք պաշտել զնա զուշտեամբ։	Ա.	1
Զցասմնականն ի մեզ ուղղելով պատուիրն լսել խրատու ծնողաց, եւ մի՛ կցորդել ագահութեան եւ պիղծ սպանողաց կամ տիրապատն Հրէից։	Ա.	10
Գովելով զխոնարհութիւն և զԻրիստոս ցանկալի առնէ, եւ զՏեառնէն արդարութեան բացերես. և բամբասել զանմտութիւն անհնազանդից, որոց սպառնայ Աստուած չլսել նոցա յօր նեղութեան աստանկնան մեհանն։	Ա.	20
Թէ անկեղծ եւ ծածուկ աստւածութեամբք, և մեծաւ չանիւ ընդունի զՔուբը Հոգին գիտութեան իմաստութեան, որով սպրի ի չար չաւազաց. ընդ որ կամակոր ախտագրուժք իջանեն յատակս գժոխոց, վրիպեալք իբարեաց կենդանի երկրին՝ զոր քաղցունքն ժառանգեն։	Բ.	1
Կրկին կենաց խոստմամբք յորդորել ի մարդասիրութիւն՝ ողորմութեամբ, և յաստուածսիրութիւն՝ հաւատով, և յուսով համբերել ի վիշտս, եւ մի՛ հպարտանալ. եւ երկիւղիւ Աստուծոյ սպրել յոչ եւ յահեակ գայթակղութենց։	Գ.	1
Խրատ տայ պատուել զԱստուած ի ձեռն քահանայից խոստմանն առատ լինելոյ, եւ ի փորձանս նեղութենց կամ ի տուայտութիւնս մի՛ լինել յուսահատ, զի այսոք փարձ գտան ընտրեալքն աժենայն։	Գ.	
Երանէ զիմաստունն որ եգիտ զԲրիստոս, որ է Աստուծոյ իմաստութիւն, և կեանք կախեալ զփայտէ, եւ նոյն փայտ կենաց մարմնովն. և վատահ առնէ զիմաստունն՝ նման գոլ Աստուծոյ, որ իմաստութեամբն եւ հանճարովն Արդւովն եւ Հոգւովն արար զարարածս։	Գ.	13
Ընդհատուցանէ պահել զիմաստութիւն ի կեանս եւ ի խաղաղութիւն, ի գնացս, ի նստել եւ ի ննջել։	Գ.	21
Զյապազել զարարիս եւ չնիւթել ցչարիս, եւ չլինել դատապարտ անիծից՝ որ յօրէնսն, կամ ընդդէմ Աստուծոյ ամբարտաւանել։	Գ.	27
Օրինագրէ մանկանց անսալ խրատուն Աստուծոյ Հօր, օրինակ տալով զինքն. ատանալ ասէ զիմաստութիւն, եւ ընդգրկել ի նմանէ եւ պահել։	Դ.	1
Երկնաւոր կենացն խոստմամբ ի բարեգործութեանց ուղեւորել զմտնկունս. եւ խոստանալ խրատել յանօրէնն զրկոցց խաւարային գնացից։	Դ.	10
Ազգեւ ի ասէ զՔրիստոն խմաստից, և զպահելն զնա՝ եւ նովաւ զսմենայն զգայութիւնսն՝ կեանս եւ բժշկութիւն, վասն որոյ եւ աղօթէ Աստուածով յաջողել։	Դ.	20
Զցանկականն ի մեզ ուղղելով զգուշացուցանէ եւ ի հպելոյ եւ ի գործելոյ ընդ բազս և ընդ հերձուածողս. եւ մի՛ փոխ առնլով փակել ընդ վաշխիւք այլ իւրով կենաւն զվանալ, եւ ուսմամբ եւ գործիք չատանալ. ապա թէ ոչ՝ Աստուծոյ մատնելով կրկին մահու սպառնայ։	Ե.	1
Աստուած չլինել վազվազկոտ յերաշխաւորութիւն, և թէ լինի՝ փութալ և փութացուցանել ի հատուցումն պարտուցն. եւ ի սոյն նշանակէ զգուշանալ հովուաց եւ առաջնորդաց ժողովրդոց։	Զ.	1
Նկարագրէ իզործս արդարութիւն զարթուցանէ զլոյսն. իսկ առ ի միտս՝ զմրջիւնն առ գործնականն՝ և զմեղուն առ տեսականն տայ օրինակ. զի ի կրկին ազքատութենց զերծանիցի։	Զ.	6
Խրատ առ զգնաւորսն նենգութեամբ, այս է զպղպանօղս. և նուիրագ չարի գոլոչ քն են նոր եւ աշխարհասէր հարկաց. անիրաւ վկայ, նախ սուտ վկայն, և ապա հերձուածողքն որ խռովեցուցին զեկեղեցի։	Զ.	12
Յերկար պատուիրանաւ զգուշացուցանէ ի շնութենէ։	Զ.	20
Ազաչելով խրատէ զմարդիկ խմաստնանալ. եւ թէ զինչպիսի բանս խօսի խմաստութիւն ինքն վասն ինքեան, եւ զի բնակէ նա ի խորհուրդս արքոց։	Ը.	3
Զի ստացական մարմնովն սրար սկիզբն փրկութեան մերոյ իմաստութիւնն՝ յառաջ քան զամենայն ի Հօրէ ծնեալն, որով ամենայնիք եղեն։	Ը.	22
Դարձեալ վասն մարդեղութեան Բանին որ չինեաց իւր տաճար զմարմինն. յորում էջ և եկաց եւ թողոյս էնդին, եւ վասն զենմանն Յիսուսի ի խաչին, եւ կռվման պատասխանի Հրէից եւ անպդամ հեթանոսաց։	Ը.	1
Թէ վիշտք եւ անարգանք հետեւի ի քարոզողաց բանին Աստուծոյ, եւ զի զգուշանալ պիտոյ է ի հերետիկոսաց. և վասն չան կնոջ, որ այլազբանի է ժողովս կատապաշտից, որ ատիպկին ուբանալ ի Քրիստոսէ, որասլով զԹ ոյլն ի կորուստ դժոխոց, ուստի զգուշացուցանէ զարիան։	Ի.	7

ԱՌԱԿՔ ՍՈՂՈՄՈՆԻ

ՈՐԴՒՈՅ ԴԱՒԹԻ ԹԱԳԱՒՈՐԻ ԻՍՐԱՅԵԼԻ

ԳԼՈՒԽ Ա

2 Ա ՆԱՆԶԵԼ զխրատս իմաստութեան եւ
զվարս, իմանալ զբանս հանճարոյ,
3 Ընդունել ¹զպարծուածս բանից, ի միտս
առնուլ զարդարութիւն ճշմարիտ, եւ
4 ուղղել զիրաւունս". Զի ասացէ անմեղայ
զխորագիտութիւն, մանկանց ազայոյ
5 զմիտս եւ զհանճար. Որոց իրրեւ լուիցէ
իմաստունն՝ իմաստանալոյն լինի, իսկ որ
հանճարեղն իցէ ²զառաչնորդութիւն
6 ասացի, ի միտս ածէ զառակս եւ
զբանս խորինս, զճառս իմաստնոց եւ
7 զառակս նոցա։ Սկիզբն իմաստութեան
երկեղ Տեառն, ³հանճար բարի ամենեցունն որ առնեն զնա. պատուոն լարի առ Աստուած՝ սկիզբն զգօնութեան," զիմաստութիւն եւ զխրատ ամպարիշտք անգոնեն։

8 Լուր, որդեակ, խրատու հօր քո, եւ
9 մի՛ մերժեր զօրէնս մօր քո. Զի պսակ
շնորհաց ընկալցի գլուխ քո, եւ մանեակ ոսկի ⁴ի պարանոցի քում։

10 Որդեակ, մի՛ խաբեացին զքեզ արք ամպարիշտք, եւ մի՛ անտրմեցիս՝ եթէ
11 կոչեսցին զքեզ եւ ասիցեն, Եկ ընդ մեզ՝ կցորդ լեր արեան, ծածկեսցուք
յերկրի զայր արդար ի տարապարտուց.
12 կլլցուք զնա կենդանւոյն իբրեւ զժոխք, եւ ⁵բարձցուք զյիշատակս նորա յերկրէ".
13 Եւ զտառացուածս նորա զպէսպէս բմբռնեսցուք, լցցուք զտունս մեր ա-
14 ւարաւ. Զվիճակ քո արկ ընդ մեզ, քսակ հասարակաց առասցուք ամենեքեան, ³դանձարան ի միասին եղիցի մեզ"
15 Որդեակ, մի՛ երթար ճանապարհ ընդ նոսա, խոտորեա զոտն քո ի չաւղոյց
16 նոցա։ Զի ոտք նոցա ի չարիս ընթա-

¹ ՆԲէր. զկրթութիւն եւ զիրաւունս եւ զուղղութիւն ²ՆԲէր. զգօնութիւն ³ՆԲէր. պահուե ⁴ՆԲէր. եղիցի ի պարանոցի ⁵ՆԲէր. ողջոյն՝ իբրեւ զբոս ի քաղաքի։

նան, եւ երագունք են ի հեղուլ զա-
17 րիւն. Զի ⁵ոչ եթէ" տարապարտուց ձգեն
18 զարծիս ⁶թռչնոց. Զի նոքին իսկ ⁷որ
ոսոխանալոն հալածել են" զանձին անձանց իւրեանց զչարիս. ⁸կործանումն
19 արանց անօրինաց չար է։ Այս" ճանապարհք են ամենեցուն որ ⁹գործեն զանօրէնս, զի սպարչտութեամբն զանձինս իւրեանց սատակեն։"

20 Իմաստութիւն յերկս ճանապարհաց
¹⁰գովի, եւ ի հրապարակս համարձակու-
21 թիւն լսելի. Եւ ի գլուխս պարսպաց քարոզի, եւ առ դրունս հզօրաց յաճախէ, եւ ի դրունս քաղաքաց համար-
22 ձակեալ խօսի։ Ցորքան ժամանակս անմեղք լցեն զնա արկարութեան, մի՛ ամաչեցեն. իսկ անմիտք ցանկացօղք
թշնամանաց՝ ամպարչեալք ատեցին զիմաստութիւն, եւ զատապարտք եղեն
23 յանդիմանութեանց։ Ա՛հաւասիկ առաչի առնեմ ձեզ զնոգւոյ իմոյ զպատգամս",
24 ուստերից զբանս իմ ձեզ։ Քանզի կոչէի, եւ ոչ լսէիք. յերկարէի ¹¹զբանս
25 իմ, եւ ոչ անսայիք. Այլ ապաքէն առնէիք զխորհուրդս իմ, եւ յանդիմանութեանց
26 իմոց ոչ անսայիք։ Այսուհետեւ ես ծիծաղեցայց զկորստեամբ ձերով, եւ
ոսոխար եղէց՝ յորժամ գայցէ ¹²ձեզ նե-
27 զուժիւն եւ պաչարումն"։ Եւ յորժամ հասանիցէ ձեզ յանկարծակի խռովութիւն, եւ կործանումն ի նմանութիւն
մրրկի գայցէ. կամ յորժամ հասանիցէ

⁶ՆԲէր. ակն յանդիման ամենայն թռչնոց ⁷ՆԲէր. արեան իւրեանց դարանին, ⁸ՆԲէր.(19)Այսպէս ⁹ՆԲէր. ագահեն զագահութիւն. զանձն տեառն իւրոց կայցեն։ ¹⁰ՆԲէր. գոչէ. ի հրապարակս տայ զձայն իւր։ (21) Ի գլուխս փողոցաց ազաղակէ, ի մուտս դրանց, ի քաղաքի զբանս իւր խօսի։ (22)Մինչեւ ցե՞րբ, անմիտք, սիրիցէք զանմտութիւն, եւ որ ծաղրն առնեն՝ զուարճացին ծաղուս, եւ յիմարք ատեցին զգիտութիւն։ (23) Դարձարուք ի յանդիմանութիւն իմ. ահաւասիկ հեղից ի վերայ ձեր զՀոգի իմ ¹¹ՆԲէր.զձեռս ¹²ՆԲէր. կրկեզ ձեր

28 ձեզ սատակումն. Իցէ զի կարդայցէք առ իս, եւ ես ոչ լսեցեմ ձեզ. խնդրեսջին զիս ՙչարք, եւ ոչ գտանիցին. Զի 30 ատեցին զիմաստութիւնն, եւ զերկիւղ Տեառն ոչ ինդրեցին. Եւ ոչ կամէին անսալ խորհրդոց իմոց, եւ արհամար. 31 հեցին զյանդիմանութիւնս իմ։ Այսուհետեւ կերիցին զպտուղս ճանապարհից իւրեանց, եւ ²իւրեանց ամպարչտու- 32 թիւնքն յագեսցին։ Փոխանակ զի զըրկէին զազգս՝ կոտորեցին, եւ կչսամբութիւնն զամպարիշտս սատակեսցէ։" 33 Իսկ որ լինձ լսէ՝ բնակեսցէ յուսով, եւ ³դադարեսցէ անհրկիւղ յամենայն չարութենէ"։

Գլ. Ը

1 Որդեակ, եթէ ընկալեալ զպատգամս պատուիրանի իմոյ ծածկեսցես յանձին 2 քումմ, լսելիք իմաստութեան ունկն քո. եւ առակեսցես զսիրտ քո ի հանճար, ՙեւ աւանդեսցես զնա որպէս քումմ 3 ի խրատ։" Զի եթէ զիմաստութիւն կոչեսցես ի քեզ, եւ հանճարոյ տացես զձայն քո, եւ եթէ խնդրեսցես զնա իբրեւ զարծաթ ընտիր, եւ իբրեւ զգանձս 5 քննեսցես զնա, Յայնժամ ի միտ առցես զերկիւղ Տեառն, եւ զգիտութիւն Աստուծոյ գտցես։ Զի Տէր տայ զիմաստութիւն, եւ ⁴ակնարկ նորա զգիտութիւն եւ հանճար։ Եւ գանձէ ուղղոց զփրկութիւն, ⁵վերակացու լինի գնացից 8 նոցա", Պահել զճանապարհս իրաւանց, եւ զճանապարհս երկիւղածից իւրոց 9 ամրացուսցէ։ Յայնժամ ի միտ առցես զարդարութիւն եւ զիրաւունս, եւ ՙուղիս զեսցես զամենայն չարէ բարութեան։ 10 Զի եթէ եկեսցէ իմաստութիւն ի միտս քո, եւ գհանճար անձին քումմ 11 բարի համարեսցես լինել, ⁶Պարտուղք բարեաց ղզուշասցին զքեզ՝ եւ միթք 12 սուրբ պահեսցին" զքեզ։ Զի տալեսցուսցեն զքեզ ի ճանապարհէ չարէ, եւ յառնէ որ խօսիցի եւ ոչ ինչ հաւատարիմս։ 13 Ո՛ն որոց թողեալ իցէ զճանապարհս ուղիղս՝ գնալ ի ճանապարհս խաւարին, 14 Որ ուրախ լինիցին ընդ չարիս, եւ խնդայցեն ընդ խոտորումն չարութեան. 15 Որոց թիւր իցեն ճանապարհք իւրեանց, 16 եւ կամակոր չաւիղք նոցա, Հանել առնել զքեզ ՙյաւիղ ճանապարհէ, եւ օտարացուցանել յարդար խորհրդոց. որդեակ իմ, մի՛ հասցեն քեզ խորհուրդք 17 չարք, Որոց թողեալ իցէ զուսումն մանկութեան", եւ մոռացեալ զսիրան աստուածդիզէն. Զի եղ մերձ ի մահ զառն իւր, եւ ¹մօտ ի գժոխս" ընդ երկրա- 19 ծինս զչաւիղս իւր։ Ամենեքեան որ գնան ընդ նմ՝ ոչ գարձցին, ¹այլ եւ ի զղջումն եւս եկեսցեն." եւ ոչ ժամանեսցեն ի ճանապարհս ⁸ուղիղս, եւ ոչ հասցեն ի տուրկանս կենդանութեան։ 20 Զի եթէ գնացեալ էր ի ճանապարհս լարիս, գտանիցէ արդեւք զչաւիղս սրգարութեան զրկբինս։ Քաղցրացեալք՝ եղիցին բնակիչք երկրի, անմնաք մնասցեն ի նմա։" Զի ուղիղք բնակեսցեն յերկրի, եւ անարատք մնասցեն ի նմա, 22 ⁹ճանապարհք ամպարչտաց" կորիցեն յերկրէ, եւ անօրէնք մերժեսցին ի նմանէ։

Գլ. Գ

1 Որդեակ, զօրէնս իմ մի՛ մոռանար, եւ 2 զպատուիրանս իմ պահեսցես ի սրտի քումմ, Զի ընդերկարութիւն կենաց եւ ամք կենդանութեան եւ խաղաղութիւն յաւել- 3 ցին քեզ։ Ողորմութիւն եւ հաւատք ի քէն մի՛ պակասեցին. արկ զնոսա ընդ պարանոց քո, եւ գրեա զնոսա յընդարձակութիւն սրտի քո. Եւ գտցես չնորհս, եւ ¹⁰խորհեաց գրարիս առաջի Տեառն" եւ մարդկան։

5 Լեր յուսացեալ ի Տէր յամենայն սրտէ քումմէ, եւ յիմաստութիւնդ քո մի՛ 6 հպարտանար։ Յամենայն ճանապարհս քո ծանիր զնա, զի ուղիղ արասցէ զճանապարհս քո, ¹եւ ոսն քո մի՛ գայթակղեսցի։" Մի՛ լինիր իմաստուն յաչս անձին քո, այլ երկիր ի Տեառնէ եւ խոտորեսցես զամենայն չարութենէ։ Ապա 8 լիցի առողջութիւն գոտեաց քումմ, եւ յիմաստութիւնդ քո մի՛ 9 պարսան ոսկերաց քոց։ Պատուեա զՏէր

[1] ՆԵԲբ. գ-ի-ոբ [2] ՆԵԲբ. ի խորհրդոց իւրեանց յագեսցին։ (32) Զի խոտորումն անմտից սատակեսցէ զնոսա, եւ անհոգութիւն յիմարաց կորուսցէ զնոսա։ [3] ՆԵԲբ. եղիցի զերծ յերկիւղէ չարեաց [4] ՆԵԲբ. ի բերանոյ [5] ՆԵԲբ. վասն որոց գնան ամբծութեամբ [6] ՆԵԲբ. Զգօնութիւն զղուշասցի զքեզ եւ հանճար պահեսցէ

[7] ՆԵԲբ. ի կնոջէ օտարէ, յօտարէ՝ որ ամբոխ զբանս իւր։ (17) Որոյ թողեալ իցէ զընկեր մանկութեան իւրոյ [8] ՆԵԲբ. կենաց։ (20) Զի գնասցես զճանապարհս բարեաց, եւ պահեսցես զչաւիղս արդարոց։ [9] ՆԵԲբ. Ի ամպարիշտք [10] ՆԵԲբ. Հանճար բարի յաչս Աստուծոյ

[1]ի քոց արդար վաստակոց, եւ հան նմա պատուղ ի քոց արդարութենան արմատոյ."
10 Զի լսցեն չահմարանք քո լիութեամբ [2]ցորենոյ, եւ վինեաւ հնձանք քո առատանալ նեւ բղխեացն։
11 Որդեակ, մի՛ լքանիր ի խրատուս Տեառն, եւ մի՛ լուծանիր յանդիմանեալ
12 ի նմանէ։ Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ, [3]սանձէ զամենայն որդի զոր ընդունի"։
13 Երանելի է այր որ եկիա զիմաստութիւն, եւ մարկանացու՝ որ հասեա զհանճար։
14 Զի լաւ է վաճառն զայն գառանել՝ քան զգանձս ոսկւոյ եւ արծաթոյ։
15 Պատուականագոյն է քան զականս պատուականս, [4]եւ ոչ ինչ է չար որ հակառակ կացցէ նմա. յայնմի է ամենեցուն որ մերձին ի նա, եւ ամենայն ինչ որ պատուական է՝ չարժէ զնա"։
16 Զի երկայն աւուրք [2]եւ ամք կենաց" յաջմէ իւրմէ, եւ յահեկէ իւրմէ փառք եւ մեծութիւն։ [2]Ի բերանոյ նորա լսիցէ արդարութիւն, զօրէնս եւ զողորմութիւն ի լեզուի իւրում կրէ։" Ճանապարհք նորա ճանապարհք բարեաց, եւ ամենայն շաւիղք նորա խաղաղութեամբ։
18 Փայտ կենաց է ամենեցուն որ պատրաստիցին ընա, եւ որ կենան ընա [5]իրրեւ
19 ի Տէր հաստատութեամբ։ Աստուած" իմաստութեամբ հիմունս արկ երկրի, պատրաստեաց զերկինս խորհրդով. Հանճարով իւրով զանդունդս պատուանեաց, եւ ամպք հոսեցին զանձրեւ։
21 Որդեակ, մի՛ [6]լուծանիցես. պահեա զխորհուրդս իմ" եւ զիմաստութիւն,
22 Զի կեցցէ անձն քո, եւ չնորհք իցեն ի վերոյ պարանոցի քո. [2]նղիցի բժշկութիւն մարմնոյ քումմ, եւ գարման ոսկերաց քոց։" Զի զնաացես յուսով խաղաղութեան յամենայն ճանապարհս քո,
24 եւ ոտն քո մի՛ գայթակղեսցի։ Զի եթէ նստիցես՝ աներկնչիզ իցես, եւ եթէ
25 ննջեացես՝ քաղցր իցէ քնոյն քումմ։ Ոչ երկնչիցիս ի զարհուրանոյ ի վերայ հասելոց եւ յարշաւանաց ամպարշտաց ի վերայ
26 գայ եկելոց։ Զի Տէր եղիցի [7]ի վերայ ամենայն ճանապարհաց քոց", եւ հաստատեսցէ զոտն քո՝ դի մի գայթակղիցիս։

27 Մի՛ յապաղեր բարի առնել կարօտեալոյ, յորժամ ձեռնհաս իցես օգնել նմա։
28 Մի՛ [8]ասիցես թէ երթ եւ եկեսջիր, եւ վաղիւ տայ, [9]դի կարող եւս իցես բարի առնել. քանզդի ոչ գիտես զինչ վաղիւն ծնանիցի քեզ"։ Մի՛ նեխեր բարեկամի քումմ չարիս՝ որ յուսեալ եւ յուսացեալ իցէ ի քեզ։ Մի՛ թշնամանասէր լինիր մարդոյ ի ստատպարտուց, [10]զի
31 մի՛ չար ինչ գործիցէ քեզ։ Մի՛ ստացեար նախատինս յարանց չարաց, եւ մի՛ նախանձիր ընդ ճանապարհս նոցա։"
32 Քանզի պիղծ է առաջի Տեառն ամենայն անօրէնն, եւ ընդ [11]արդարս ոչ հաղորդի"։
33 Անէծք Տեառն ի տունս ամպարշտաց, 34 յարկք արդարոց օրհնին։ [12]Տէր ամբարտաւանիս հակառակ կայ, ասէ" չնորհս
35 խոնարհաց։ Զփառս իմաստունք ժառանգեսցեն, իսկ [13]ամպարիշտք բարձրացեալն զանարգանս"։

Գլ. Ի

1 Լուարուք, մանկունք, զիմաստս հօր, եւ անասայէք ճանաչել զիմաստութիւն.
2 Զի [14]պարգեւս բարեաց պարգեւեցից"
3 ձեզ. զօրէնս իմ մի՛ թողուք. Զի որպէս եղեալ եմ [15]եւ ես հպատակ հօր իմոյ,
4 եւ սիրեցեալ" յաչս մօր իմոյ, [16]որք ուսուցանէին զիս եւ ասէին", Հաստատեսցի բան [17]մեր ի սրտի քումմ. պահեա զպատուիրանս իմ եւ կեաց։ Ստացիր զիմաստութիւն, ստացիր զհանճար, եւ մի՛ մոռանար, [2]եւ մի՛ արհամարհեր զպատգամս բերանոյ իմոյ," եւ մի՛ խոտորիր ի բանից չրիանց իմոց։ Մի՛ թողուր զնա, եւ պատսպարեսցէ զքեզ.
7 սիրեա զնա, եւ պահեսցէ զքեզ։ Սկիզբն գիտութեան՝ ստացիր զիմաստութիւն, եւ յամենայն [18]ճանապարհս քո ստացիր
8 զհանճար։ [19]Շուրջ փակեա զնովաւ", եւ բարձրացուսցէ զքեզ. [20]մեծարեա զնա՝
9 զի զիրկս արկցէ զքեզ։" Զի տայէ գլխոյ

[1] ԵՒբր. ի գոյից քոց եւ յերեսաց մտից քոց.
[2] ՕՒԵբր. պ-կ-ե [3] ԵՒբր. որպէս հայր յանկս առնու զորդի [4] ԵՒբր. եւ ամենայն հաճոյք քո ոչ հաւասարեսցին նմա [5] ԵՒբր. երանելիք են։ (19) Տէր [6] ԵՒբր. հեռասցին սոքա յաչաց քոց. պահեա զգիտութիւն [7] ԵՒբր. վստահութիւն քո
[8] ԵՒբր. ասիցես ցընկեր քո, [9] ԵՒբր. մինչ է քո [10] ԵՒբր. եթէ չար ինչ չիցէ գործեալ քեզ (31) Մի՛ նախանձիր ընդ այր բռնաւոր, եւ մի՛ ընտրեսցես զամենայն ճանապարհս նորա։ [11] ԵՒբր. ուղիղս ընդ երեսս նորա [12] ԵՒբր. Ապաքէն զերս ծաղր առնիցեն՝ ծաղր առնէ, իսկ տայ [13] ԵՒբր բարձրանալն յիմարաց անարգութիւն է [14] ԵՒբր. խրատ բարի տամ [15] ԵՒբր. Որ իմոյ, սիրելի եւ միամոր [16] ԵՒբր. Ուսուցանէր նա զիս եւ ասէր, [17] ԵՒբր. իմ [18] ԵՒբր. ստացուածս [19] ԵՒբր. Մեծարեա զնա [20] ԵՒբր. փառաւորեսցէ զքեզ. եթէ գիրկս արկցես նմա։

քում պակ չնորհաց. եւ պահապան
փափկութեան վերակացու լիցի քեզ։
10 Լուր, որդեակ, եւ ընկալ զբանս իմ,
եւ բազմասցին ամք կենաց քոց. [1]եւ
յաճախեսցին ճանապարհք կենաց քոց՝
11 Զճանապարհս իմաստութեան ուսուցա-
նեմ քեզ, խելամուտ առնեմ զքեզ ու-
12 ղիղ չուղաց։ Զի եթէ գնացեալ ոչ խա-
փանիցին գնացք քո, եւ եթէ ընթա-
13 նայցես՝ ոչ [2]վաստակեսցես։ Բուռն հար
զկրառուսէ իմմէ՝ եւ մի՛ թողուցուս,
այլ պահեա զնա անձին քում ի կեանս։
14 Ի ճանապարհս ամպարշտաց մի՛ եր-
թայցես, եւ մի՛ նախանձիցիս ընդ ճա-
15 նապարհս անօրինաց. Եւ ի անզգոյ ուր
բնակիցեն՝ ընդ այն մի՛ անցանիցես,
խոտորեա ի նոցանէ, եւ խորշեաց ան-
16 տի։ Զի ոչ ննջեն, եթէ ոչ չար գործի-
ցեն. բարձեալ է քուն նոցա [3]եւ ոչ
17 ննջեն՝՝. Որք ուտեն զկերակուրս ամ-
պարշտութեան, եւ զինեաւ անօրէնու-
18 թեան արբենան։ Ճանապարհք արդա-
րոց իբրեւ զլոյս ծագեն, առաջնորդեն
եւ լուսաւորեն, մինչեւ տիւն լուսաւո-
19 րեսցէ։ Ճանապարհք ամպարշտաց խա-
ւարինք, եւ ոչ գիտեն զիարդ գայթակղին։
20 Որդեակ, իմոյ իմաստութեան անսա,
21 եւ իմոց բանից մատո զունկն քո. [4]Զի
մի՛ պակասեսցին ազդուք քո՝՝. պահեա
22 զնասա ի սրտի քումմ. Գանդի կեանք են
որոց գտանեն զնոսա, եւ ամենայն մսեղ-
23 ոյ՝ բժշկութիւն։ Ամենայն պահպանու-
թեամբ պահեա զսիրտ քո, զի ի նոցա-
24 նէ են ելք կենաց։ Ի բաց արա ի քէն
զբերան կամակոր, եւ զշրթունս անի-
25 րաս մերժեա իքէն։ Աչք քո ուղիղ
հայեսցին, եւ արտեւանունք քո արդար
26 ակնարկեսցեն։ Զչաւիղս ուղիղս արասց-
ես ոտից քոց, եւ զճանապարհս քո
27 ուղղեսցես։ Մի՛ խոտորիցիս յաջ եւ մի՛
յահեակ, զարձո զոտն քո ի ճանապար-
հէ չարէ։ [1]Զի զճանապարհս որ յաջմէ
են՝ գիտէ Աստուած, թեւր են ճանա-
պարհք՝ որ ի ձախմէ են. այլ ինքն ուղիղ
արասցէ զչաւիղս քո, եւ զճանապարհս
քո խաղաղութեամբ յառաջեցուսցէ։՝՝

Գլ. Ե

1 Որդեակ, իմոյ իմաստութեան անսա,
2 եւ իմոց բանից մատո զունկն քո, Զի
պահեսցես [5]զխորհուրդս բարւոյց. զի-
մաստութիւն չրթանց իմոց պատուի-
3 րեսի քեզ. մի՛ հայիր ընդ կին չար՝՝. Զի
մեղր կաթէ ի շրթանց կնոջ պոռնկի,
[6]որ առ ժամանակ մի պարարէ զբիմս
2 քո՝՝, Բայց յետոյ դառնագոյն եւս դառնի
քան զլեղի, եւ սրեալ առաւել քան
5 զսուր երկսայրի։ [7]Վասն զի ոտք անղգա-
մի իմոյ անցանեն զմերձաւորս նորա մա-
հու հանդերձ ի գժոխս, եւ հետք նորա
6 չեն հաստատուն։ Զի ի ճանապարհս կե-
նաց ոչ գնան, գնացք են ճանապարհք
7 նորա՝ եւ ոչ յայտնիք՝՝։ Արդ, որդեակ,
լուր ինձ, եւ մի՛ ապախտ առներ զբանս
8 իմ։ Հեռի արա ի նմանէ զճանապարհս
քո, եւ մի՛ մերձենար ի դրունս տան
9 նորա։ Զի մի՛ մատնեսցես օտարաց
[8]զկեանս քո, եւ [9]զտարապատածս քո ա-
10 նողորմից։ Զի մի՛ լցցին օտարք ի զո-
րութենէ քումմէ, եւ մի՛ վաստակք քո
11 ի տունս այլոց մատնիցին։ Եւ զղջաս-
ցիս յետոյ՝ յորժամ մաշիցին անդամք
12 մարմնոյ քո. Եւ ասասցես թէ Զիարդ
ատեցի զվարդ, եւ ի յանդիմանութենէ
13 խոտորեցաւ սիրտ իմ։ Ոչ լսէի ձայնի
խրատատուի իմոյ, եւ ուսուցչի իմոյ ոչ
14 մատուցանէի զականջ իմ։ Սակաւիկ մնաց
եւս եւ եղեալ էի ի մէջ ամենայն չա-
րեաց, ի մէջ ներկեալոյ եւ ժողովրդեան։
15 Արբ ջուր ի քոց ամանոց, եւ ի քոյ
16 ջրհորոյ աղբերաց։[10] Բղխեսցեն քեզ ջուրք
քո ի քումմէ աղբերէ, եւ ի քո հրապա-
17 րակս գնասցեն ջուրք քո՝՝։ Եղիցին քեզ
միայնոյ լինել, եւ մի՛ ոք օտար հա-
18 ղորդեսցէ քեզ։ Աղբերք ջոյ քո եւ
զիջի [11]քեզ առանձինն՝՝, եւ ուրախ լի-
19 նիջիր ընդ կնոջ մանկութեան քո։ Եղն
սիրոյ եւ [12]յաւանակ գոց չնորհաց խօսեսցի
ընդ քեզ, եւ ի քո իմաստութիւն համա-
լեսցի եւ ընդ քեզ եղիցի յամենայն ժամ.
զի եթէ՝՝ վնորա սիրովն գայցես՝ [13]բաղ-
20 մապատիկ եղիցես՝՝։ Մի՛ յաճախեր առ
օտարս, եւ մի՛ փարիր ի գիրկս՝ որ ոչ

[1] 6ԱԲԲ. գոլոխ [2] ԱԲԲ. գայթակղեսցիս [3] ԱԲԲ. եթէ ոչ կորուսցեն զոք [4] ԱԲԲ. Մի՛ հեռասցին յաչաց քոց

[5] ԱԲԲ. զգօնութիւն, և զխոհեմութեան զգուշացին չրթունք քո [6] ԱԲԲ. եւ կակուղ են քան զձէթ քիմք նորա [7] ԱԲԲ. Որ նորա իջանեն ի մահ, ի գժոխս հետք նորա ժամանեն։(6)Զի մի՛ կշռեսցես զճանապարհ կենաց, չեն հաստատուն ճանա-պարհք նորա եւ չիցես կարող դիտել զնոսա [8] ԱԲԲ. զփառս [9] ԱԲԲ. զամն [10] ԱԲԲ. Հոսեսցեն, կամ, հոսեսցեն՞ քո արտաքս, զլեռ վտակք ջուրց ի հրապարակս։ [11] ԱԲԲ. օրհնեալ [12] ԱԲԲ. այծեամն շնորհաց, որոյ նորա յագեցուսցեն զքեզ յամենայն ժամ [13] ԱԲԲ. Հանապազ

21 քո իցեն։ Զի առաջի աչաց [1]Աստուծոյ
են ճանապարհք առն, եւ յամենայն չա-
22 փիս նորա զվակէ։ Անօրէնութիւնք որ-
սան զայր, եւ ի առաւնս մեզաց իւրոց
23 չաղի իւրաքանչիւր ոք։ Մեռանի նա
[2]ընդ անխրատս" վասն անխրատութեան,
եւ ի բազմութենէ [3]կենաց իւրոց գրկե-
ցաւ, եւ կորեաւ վասն անզգամութեան"։

Գլ. Զ

1 Որդեակ, եթէ լինիցիս երաշխաւոր բա-
րեկամի քումմ, մանեցեկր զանձն քո
2 [4]թշնամւոյ. Զի որոգայթ բռնեն են առն
չրթունք իւր, եւ ըմբռնի բանիւ բե-
3 րանոյ իւրոյ։ Արդ արա, որդեակ, զոր
ինչ ես պատուիրեմ քեզ՝ եւ կեացես,
զի անկար լիցես [2]չարաց վասն" բա-
րեկամի քո. [5]արդ պնդեա եւ մի՛ լքա-
նիր, յորգորեա եւ զարթեկամին զոր ա-
4 ռեր յերաշխի"։ Մի՛ տար քունս աչաց,
5 եւ մի՛ նինջ արտեւանաց քոց. Զի ապ-
րիցես որպէս վայծեամն ի հաղրից, եւ
իբրեւ դնաւ ի ծուղակաց։

6 Երթ առ մրջինն, ո՛վ վատ, եւ նա-
խանձեաց ընդ ճանապարհս նորա, եւ
7 լեր իմաստնագոյն [2]եւս քան զնա"։ Զի
նորա ոչ զոյ [6]հողագործութիւն եւ ոչ
8 հարկադիր, եւ ոչ ընդ տերամբք է, Եւ
պատրաստէ ամարանի զկերակուր, եւ
բազում հաւրթս զնէ ի հունձս։ [2]Կամ
երթ առ մեղուն եւ ուսիր զիմդ զոր-
ծօն է, եւ գործ նորա օրպէս պարկեշ-
տութեամբ գործի. զորոյ զվաստակն
թագաւորք եւ անանկք ի բժշկութիւն
մաուցանեն. ցանկալի է ամենեցուն
եւ մեծարոյ. զի թէպէտ եւ տկար է
զօրութեամբ, սակայն զիմաստս
9 [7]թիւն" եւ յարկեալ։" Մինչեւ գ՞երբ
յորսայանալ կաս, ո՛վ վատ, կամ ե՞րբ ի
10 քնոյ զարթիցես։ Փոքր մի ննջիցես,
[2]փոքր մի նոտիցիս," փոքր մի ներբե-
ցիս, փոքր մի հանդուցանիցես զձեռն
11 քո ի վերայ լանջից [7]քոյ, Ապա այնուհ-
հետեւ հասանիցէ ի վերայ քո իբրեւ
[2]զչար ուղեւոր անանկութիւն, եւ կա-
րօտութիւն իբրեւ [8]զմէկ սուրհանդակ։
Ապա եթէ անպանդամ լինիցիս, հատա-
նիցէ իբրեւ զալքեւր ամուն քո, եւ
կարօտութիւն իբրեւ այր մի չար ինք-
նահաստատ լինիցի։"

12 Այր անօրէն եւ անզգամ դնայ զճանա-
13 պարհս թերս. Քանզի նոյն ինքն ակ-
նարկէ ակամբ, եւ նչանակէ ոտամբ,
եւ ուսուցանէ նչանացի մատամբք։
14 Սիրտ խոտորեալ նիւթէ դչարիս. յամե-
նայն ժամանակի [9]այնպիսին խռովու-
15 թիւնս առնէ քաղաքի"։ Եւ վասն այնորիկ
յանկարծակի հասցէ նմա կորուստ իւր,
հաչուեսցի եւ մաչուսն առանց բժշկութեան։
16 [10]Զի ինդայ ընդ ամենայն զոր ատեայ
Տէր, եւ խորտակի վասն պղծութեան
17 անձին իւրոյ." Աչք թշնամանողի, լե-
զու անիրաւ, ձեռք որ հեղուն զարիւն
18 արդար, Սիրտ որ նիւթէ զխորհուրդս
չարս, եւ ոտք որ փութան գործել զչա-
19 րիս՝ [2]սատակեսցին։ Բորբոքէ զստուե-
ղութիւն վկայ անիրաւ, եւ արկանէ զրգռու-
թիւն ի մէջ եղբարց։

20 Որդեակ, պահեա զօրէնս հօր քո, եւ
21 մի՛ մերժեր զխրատս մօր քո։ Ընկալ զնո-
սա յանձին [2]եւ ի գլուխ" քո հանապազ,
եւ արկ իբրեւ զմանեակ ի պարանոց քո։
22 Ցօրժամ գնասցես՝ [11]ընդ քեզ տարջիր,
եւ ընդ քեզ եղիցի." յօրժամ ննջիցես՝
պահեսցէ զքեզ, եւ յօրժամ յառնիցես՝
23 խօսասիցի իցէ քեզ։ Զի ճրագ է պա-
տուիրան [12]օրինացն, լոյս" եւ ճանապարհ
կենաց՝ յանդիմանութիւն եւ խրատ,
24 Պահել զքեզ [13]յառնականէն կնոջէ, եւ ի
25 չարախօսութենէ" օտար լեզուի։ Որ-
դեակ, մի՛ յաղթեսցէ քեզ ցանկութիւն
գեղոյ, [2]եւ մի՛ ըմբռնեսցիս աչօք քովք,"
եւ մի՛ յարիչատակիցիս արտեւանամբք
26 նորա։ Զի [14]դինք կնոջ պատնէի՝ որչափ"
նկատակի մինչ հասցէ. քանզի կին չար՝
զարանց պատուականաց զհոգիս որսայ։
27 Ծրարիցէ՞ ոք հուր ի գոգ, եւ զհանդերձն
28 ոչ այրիցէ. Կամ գնայցէ՞ ոք ի վերայ
կայծականց հրոյ, եւ զոտս իւր ոչ խար-
29 չիցէ։ Նոյնպէս եւ որ մտանէ առ առ-
նակին՝ [2]առանց պատժի ոչ լիցի, եւ"
ոչ արդարասցի ամենայն որ մերձենայ
30 առ նա։ [15]Ոչ ինչ են գարմանք եթէ
ըմբռնեսցի ոք ի գողութեան." գողա-

---

[1] ԵԲԲ. Տեառն [2] ՅԲԲ. գ-ի-ա-ե [3] ԵԲԲ. անմտութեան
իւրոյ մոլորեցի [4] ՅԲԲ. օտարի [5] ՅԲԲ. երդ, խո-
նարհեաց, աղաչեա զբարեկամ քո [6] ԵԲԲ. իշխան
[7] ՅԲԲ. քոց ի ննջել [8] ԵԲԲ. զայր սպառազէն։

[9] ՅԲԲ. Հնարի չարիս, յարուցանէ կռիւս [10] ՅԲԲ.
Վեց են զոր ատեայ Տէր, եւ եւթն՝ գարշելիք
անձինն նորա. [11] ՅԲԲ. առաջնորդեսցէ քեզ [12] ՅԲԲ.
եւ օրէնք՝ լոյս, [13] ՅԲԲ. ի կնոջէ չարէ, եւ ի
փաղաքշանաց [14] ՅԲԲ. յաղագս կնոջ պոռնկի՝
Լութոէ հարր [15] ՅԲԲ. Ոչ քամահեն զգող որ

նայ դի լցուսցէ զանձն իւր քաղ-
31 ցեալ. Ապա եթէ ընկճեսցի, եւ ինչպա-
տիկ առաջեսցի, եւ գամենայն ինչս իւր
32 [1]տուեալ՝ ապրեցուցանէ զանձն՝; Իսկ
որ չնայ [2]առ պակասութեան մտաց՝,
33 կորուսանէ անձին իւրում սահման. Ցաւս
եւ անարգանս կրէ, եւ նախատինք նո-
34 րա մի՛ կորիցին յաւիտեան: Լի է նա-
խանձու սրամտութիւն առն նորա, եւ
35 ոչ խնայեսցէ յաւուր [3]դատաստանի. Ոչ
փոխանակեսցէ եւ ոչ ընդ միոյ իրիք
փրկանաց գթհնամտութիւն, եւ ոչ վճա-
րիցի՝ բազում կաչառօք:

Գլ. Է

1 Որդեակ, պահեա զբանս իմ, եւ զպա-
տուիրանս իմ ծածկեա յանձին քումմ:
[4]Որդեակ, պատուեա զՏէր եւ զօրաւ-
ցիր, եւ բաց ի նմանէ յայլ ումիքէ մի՛
2 երկնչիր: Որդեակ,՝ պահեա զպատուի-
րանս իմ եւ կեցցես, եւ զբանս իմ իբ-
3 րեւ զբիւր աչաց: Ծեւռ զնոսա ընդ մա-
տունս քո, եւ գրեա յընդարձակութիւն
4 սրտի քո: Ասա գիմաստութիւն քոյր
քեզ լինել, եւ գնանձար ազա քեզ ծա-
5 նօթ, Զի պահեսցէ զքեզ ի կնոջէ օ-
տարէ [4]եւ ի չարէ՝, յորժամ բանիւք զքեզ
6 ի պատրանս արկանիցէ: Ի պատուհանից
տան [5]իւրոյ ի հրապարակս կարկառեալ,
7 Զոր տեսանիցէ՝ յանմիտ մանկանց,
8 զպակասամիտն յերիտասարդսն, Որ
անցանիցէ ընդ հրապարակս առ անկեամբ
9 գնայից տան նորա, Եւ խօսիցի ընդ
խաւար երեկոյին, յորժամ դադարեալ ի
10 մթոյ զիշերոյն լոյսն. Եւ կինն ընդ ա-
ռաջ լինի նմա պոռնկութեան կերպա-
րանօք, [6]որ յիմարեցուցանէ զմիտս ե-
11 րիտասարդացն՝ Սրաբրեալ՝՝ եւ սակաւ-
տեալ, ի տան ոչ դադարեն ոտք նորա.
12 Զի ժամանակ ինչ արտաքոյ յածի, եւ
ժամանակ ինչ ի հրապարակս առ ամե-
13 նայն անկեան դարանակալ լինի: Ապա
բռնեն հարեալ համբուրեալ զնա, եւ
14 լրբենի երեսօք ասէ ցնա, [7]Ուխտք խա-
զաղութեան են ինձ, այսօր հատուցա-
15 նեմ [8]զաղօթս իմ. Ասին իրի իսկ կրի
ընդ առաջ քո. ցանկացեալ երեսաց քոյ՝
16 գտի զքեզ: Երիզապատ սենեկօք զգա-
հոյս իմ, պատառատիր Եգիպտացւովք
17 զարգարեցի. Փրքմամբ պատրաստեցի
զանկողինս իմ, եւ գասեն իմ կինամո-
18 մով մինչեւ յառաւօտն, եկ եւ խաղաս-
19 ցուք ցանկութեամբ. Զի ոչ է այր իմ ի
տան, այլ զնացեալ է ճանապարհ հեռի,
20 Զքսակն արծաթոյ ի ձեռին իւրում ա-
ռեալ, յետ լուսնում առաջի թէ ուրեք
21 դայցէ ի տուն իւր: Եւ ողորկեցոյց զնա
բազում բանիւք, եւ խնդրիւք չրթանց
22 իւրոց վարանեաց զնա: Եւ նա զնաց
զկնի նորա [9]յիմարեալ՝ իբրեւ զարջառ
ի սպանումն, եւ իբրեւ [10]զչուն առաջի,
23 Կամ իբրեւ զեղջերու հարեալ նետիւ
ընդ լերդակզմն՝՝. եւ փութայ իբրեւ
զհաւ ի ծօղակս, եւ ոչ գիտէ եթէ վասն
անձին կորուստան ընթանայ:
24 Արդ, որդեակ, լուր ինձ, եւ անսա
25 բանից բերանոյ իմոյ: Մի՛ խոտորեսցի
սիրտ քո ի ճանապարհս նորա, եւ մի՛ մո-
26 լորեսցիս ի շաւիղս նորա: Զի գրաղումս
տապաստ արկեալ է նորա խոցոտելով,
եւ [11]անթիւ են՝՝ սպանեալք ի նմանէ:
27 Ճանապարհք գժոխոյ են տուն նորա,
որ իջուցանեն ի չարիմաստան մտոյս:

Գլ. Ը

1 [12]Ոչ այսորիկ գուշ գիմաստութիւն
քարոզեսցես, զի հանճար ձայնատուս լիցի
2 քեզ: Քաղաքացի ի վերայ լերանց զլխաւորագոյ
3 է, եւ ի մէջ չաւղաց հաստել կայ. Եւ
առ գրունս հզօրաց սպասէ, եւ ի մուտս
4 օրհնի՝՝ Զձեզ ազաչեմ, ով մարդիկ, եւ
յաչխեմ զբարբառ իմ որդւոց մարդկան:
5 Իմացարուք, [13]անմիտք, զխորագիտու-
թիւն. եւ [14]անխորատք, դիք ի սիրտս
6 ձեր: Ունկն դիք ինձ, զի զպարկեշտս
բարբառիմ, եւ բդխեմ ի շրթանց իմոց
7 զուղղութիւնս: Զի զճշմարտութիւն
խոկասցէ կոկորդ իմ, եւ պիղծ են ա-
8 ռաջի իմ շրթունք սուտք: Արդարու-
թեամբ են ամենայն պատգամք բերա-
նոյ իմոյ, եւ ոչ ինչ գոյ ի նոսա ծռու-

---

[1] ՆԲԳ. տացէ [2] ՆԲԳ. պակասէ մտաց [3] ՆԲԳ. վրէժ-
խնդրութեան. (35) Ոչ առնուցու ակն եւ ոչ
միոյ իրիք փրկանաց, եւ ոչ հաճեսցի [4] ՅԲԳ.
գ-ւ-ռ-ե [5] ՆԲԳ. իմոյ՝ ընդ վանդակ իմ հայեցայ,
(7) Եւ տեսի [6] ՆԲԳ. նենգաւ որ սրտիւ. (11)
Սրաբրեալ [7] ՆԲԳ. Զոհք [8] ՆԲԳ. զուխտ

[9] ՆԲԳ. վազվզակի [10] ՆԲԳ. գասեն ի պատուհաս
յիմարի, (23) Մինչեւ խոցեսցէ նետ զլեարդ նորա
[11] ՆԲԳ. Հզոր էին [12] ՆԲԳ. Ո՞չ ապաքէն իմաստու-
թիւն աղաղակէ, և հանճար ձայնատուս լինի, (2)
Ի գլուխս բարձանց առ ճանապարհաս, և ի մէջ
շաւղաց հաստել կայ. (3) Առ գրունս ի բերան
քաղաքաց, ի մուտս գրանց գոչէ, [13] ՆԲԳ.
ագէտք [14] ՆԲԳ. անմիտք

17 ռանիցի իմաստունն ընդ անմտին։ Եւ ատեցի ես զկեանս իմ. զի չար էր ինձ արարածն, որ արարեալ էր ի ներքոյ

[1] Եբբ. ասկենաս եւ հարճս [2] Կամ, աշխատութիւն
[3] Եբբ. զգիմարութիւն [4] Եբբ. զի՞նչ ոմ-ոք մարդ որ գոյ զկեա թագաւորին, բայց զոր ինչ արարեալն իցէ արդէն [5] Եբբ. իմաստնացայ առաւել. եւ [6] Եբբ. դա-ն-ե

արեգական. զի ամենայն ինչ ունայնու-
18 թիւն է եւ [2]յօժարութիւն ոգւոյ։ Եւ ատեցի ես զամենայն վաստակս իմ զոր ջանացայ ընդ արեգականս, զի թողում
19 եմ զնա մարդոյ՝ որ լինելոց է յետ իմ։ Եւ ո՞վ գիտէ իմաստուն լինելոյ թէ անմիտ, եւ կամ իշխելո՞ց իցէ ամենայն վաստակոցն իմոց զոր ես վաստակեցի, եւ յորս իմաստացայ ընդ արեգականս. սակայն եւ այս ունայնութիւն է։
20 Եւ դարձայ ես հրաժարեալ սրտիւ իմով յամենայն վաստակոցն իմոց զոր
21 վաստակեցի ընդ արեգականս։ Զի է մարդ՝ զի վաստակ նորա իմաստութեամբ եւ գիտութեամբ եւ արութեամբ. եւ մարդ՝ որ ոչ ինչ վաստակեաց ի նմա՝ տայցէ նմա մասն նորա. սակայն եւ այս ընդունայնութիւն է եւ չարութիւն մեծ։
22 Զի՞ լինի մարդոյն յամենայն վաստակս իւր, եւ [7]ի յօժարութեան սրտի իւրոյ՝ յորում ինքն ջանայ ի ներքոյ արեգա-
23 կան։ Զի ամենայն աւուրք նորա՝ գաւոյ, եւ սրամտութիւնն՝ պրօսանք իւր, եւ գիշերի ոչ հնչէ սիրտ նորա. սակայն
24 եւ այս ընդունայնութիւն է։ Եւ ոչ գոյ բարի ինչ մարդոյ, բայց զոր ուսէն եւ ըմպէն. եւ եղոյց անձին իւրում բարիս ի վաստակս իւր. սակայն եւ զայն տեսի զի ի ձեռանէ Աստուծոյ
25 է։ Քանզի ո՞վ իցէ որ ուսցէ եւ ըմ-
26 պիցէ [8]առանց նորա"։ Զի մարդոյ բարւոյ՝ առաջի երեսաց իւրոց եա զիմաստութիւն եւ զգիտութիւն եւ զուրախութիւն, եւ մեղանչականին եա զպատուհաս յաճախել եւ ժողովել եւ տալ բարւոյն առաջի երեսաց Աստուծոյ. սակայն եւ այն ունայնութիւն է եւ [2]յօժարութիւն ոգւոյ։

Գլ. Գ

1 Ամենեցուն ժամանակ է, եւ ժամ ա-
2 մենայն իրաց ի ներքոյ երկնից. ժամանակ ծնանելոյ, եւ ժամանակ մեռանելոյ. ժամանակ անկանելոյ, եւ ժամա-
3 նակ խլելոյ զանկեալն. ժամանակ սպանանելոյ, եւ ժամանակ բժշկելոյ. ժամանակ քակելոյ, եւ ժամանակ չինե-
4 լոյ. ժամանակ լալոյ, եւ ժամանակ ծիծաղելոյ. ժամանակ կոծելոյ, եւ ժամանակ կաքաւելոյ. ժամանակ ձգելոյ
5 քարինս, եւ ժամանակ ժողովելոյ քա-

[7] Եբբ. ի տանջանս [8] Կամ, քան զիս

բինս. ժամանակ զիրկս արկանելոյ, եւ ժամանակ հեռանալոյ ի գիրկս արկա-
6 նելոյ. ժամանակ խնդրելոյ, եւ ժամա-նակ կորուսանելոյ. ժամանակ պա-հելոյ, եւ ժամանակ արտաքս հանելոյ.
7 ժամանակ պատառելոյ, եւ ժամանակ կարկատելոյ. ժամանակ լռելոյ, եւ ժա-
8 մանակ խօսելոյ. ժամանակ սիրելոյ, եւ ժամանակ ատելոյ. ժամանակ պատե-րազմի, եւ ժամանակ խաղաղութեան։
9 Արդ զինչ առաւելութիւն է այնմ
10 որ առնէ որով [1]նքն ջանայ։ Տեսի ես զամենայն զբաղումն զոր ետ Աս-տուած որդւոց մարդկան՝ զբաղիլ
11 ի նմա։ Ամենայն [2]զինչ զոր գործեաց՝ բա-րի է ի ժամանակի իւրում. նա՝ եւ զա-մենայն յաւիտեանս ետ ի սիրտս նոցա. [1]զի մի՛" գտցէ մարդ զարարածն զոր ա-
12 րար Աստուած ի սկզբանէ մինչ ցկա-տարած։ Գիտացի զի ոչ գոյ բարի ի նոսա՝ եթէ ոչ ուրախ լինել, եւ գոր-
13 ծել բարիս ի կեանս իւրում։ [2]Քանզի ա-մենայն մարդ՝ որ ուտիցէ եւ ըմպիցէ եւ տեսանիցէ բարի յամենայն վաստակս
14 իւր, այն պարգեւ Աստուծոյ է։ Գի-տացի զի զամենայն զոր արար Աս-տուած՝ այն կայ յաւիտեան. ի նոսա ոչ [2]զինչ յաւելուլ, եւ ի նոցանէ ոչ ինչ գոյ պա-կասեցուցանել. եւ արար Աստուած, զի
15 երկիցեն յերեսաց նորա։ Որ [2]զինչ եղեւն՝ այն առ կայ, եւ որ [2]զինչ լինելոցն էր՝ առ եղեւ. եւ Աստուած խնդրեսցէ [3]զհալածեալսն։
16 Դարձեալ տեսի ի ներքոյ արեգական տեղի զաստատութեանն՝ եւ անդ [4]ամպա-րիչտ. եւ տեղի արդարոյ՝ եւ անդ բա-
17 րեպաշտ"։ Եւ ասացի ես ի սրտի իմում, [5]թէ Զարդարն եւ զամպարիշտն գտցէ Աստուած. զի [5]ժամանակ է ամենայն իրաց, եւ ի վերայ ամենայն արարածոց
18 ժամ եւ ժամանակ" անդ։ Ասացի ես ի սրտի իմում [6]վասն խօսից" որդւոց մարդ-կան՝ եթէ [7]գտցէ զնոսա Աստուած, եւ զի ցուցցէ եթէ նոքա անասունք են։
19 Սակայն [8]եւ ի վեր՛ նոցա" պատահար է որդւոց մարդկան, եւ պատահար է ա-նասնոց, եւ պատահար յամենեսեան ի նոսա. որպէս մահ սորա՝ նոյնպէս եւ մահ նորա եւ չունչ է յամենեսեան. եւ զինչ առաւելութիւն եղեւ մարդոյ քան զանասնոյ. եւ ոչ [2]զինչ. զի ամենայն [2]զինչ
20 ընդունայն է։ Ամենայն ի մի տեղի եր-թայ. ամենայն եղեւ ի հողոյ, եւ ամե-
21 նայն դառնայ ի հող։ Եւ ո՞վ գիտէ զո-գիս որդւոց մարդկան եթէ ելանեն ի վեր, եւ զչունչ անասնոյ՝ եթէ իջանէ
22 ի խոնարհ յերկիր։ Եւ տեսի զի ոչ գոյ բարի, բայց թէ ուրախ լիցի մարդ յա-րտարածս իւր, զի այն է բաժին նորա. զի ո՞վ ածիցէ զնա առնանել զայն [2]զինչ որ յետ նորա լինիցի։

Գլ. Փ

1 Դարձայ եւ տեսի ես զամենայն [9]զբաղ-աւելութիւնս որ լինին ընդ արեգակամբ, եւ ահա արտասուք [10]զբաղաւելոցն, եւ ոչ ոք էր որ մխիթարէր զնոսա. եւ ի ձեռս [11]զբաղաւոցս նոցա բռնութիւնք"։
2 Եւ գովեցի ես զամենայն մեռեալսն որք յառաջագոյն մեռան, քան զկենդանիսն՝
3 որ ցայժմ կենդանի իցեն։ Եւ քան զնո-սա զերկոսին լաւ այն է՝ որ չէ եւս իցէ լեալ, որ ոչ տեսէ զամենայն արա-րածն չար՝ որ արարաւ ի ներքոյ արե-
4 գական։ Եւ տեսի ես զամենայն վաս-տակս եւ զամենայն [12]արուեստիս արա-րածոյն". զի նախանձ ասէ ի մերձաւորէ իւրմէ. սակայն եւ այն ունայնութիւն
5 է եւ [13]յօժարութիւն ոգւոյ։ Անզգամն [14]բռնեն ձեռք զբազկաց իւրոց, եւ ե-
6 կեր" զմարմինս իւր։ Լաւ է բռնեն մի հանդստութեամբ քան զլեռնիսն երկուց բռնեալ՝ ջանալով եւ [15]յօժարութեամբ ոգւոյ։
7 Դարձեալ ես եւ տեսի ընդունայնու-
8 թիւն ի ներքոյ արեգական։ [8]Զի մի է, եւ ոչ կրկին. եւ որպի եւ եղբայր ոչ գոյ նորա. եւ ոչ է վախճան ամե-նայն վաստակոց նորա. եւ սակայն ակն նորա ոչ յագի մեծութեամբ. եւ արդ ո՞ւմ ջանամ ես, եւ զլանամ զանձն իմ ի բարութենէ. զի եւ այն ընդունայնութիւն է եւ զբազումն չար։

---

[1] Եբբ. բայց եւ այնպէս ոչ [2] Եբբ. Նա եւ [3] Կամ, զանցեալն [4] Եբբ. ամպարշտութիւն, և տեղի արդարութեան՝ եւ անդ ամպարշտութիւն [5] Եբբ. գոյ ժամանակ ամենայն դիտաւորութեան եւ ամենայն գործոյ [6] Եբբ. յաղագս [7] Եբբ. Փորձեացէ [8] Եբբ. պ-ի-ո-ե

[9] Եբբ. զրկանս [10] Եբբ. զրկելոց [11] Եբբ. զրկողաց այժ, իսկ ոչ ոք էր որ մխիթարեր զնոսա։ [12] Եբբ. ճարտարութիւն արարուածոյ [13] Կամ, աշխատութիւն [14] Եբբ. ամփոփէ զբազուկս իւր եւ ուտէ [15] Կամ, աշխատութեամբ

9 Լաւ են երկու քան մի, որով դոն
10 վարձք բարի ի վաստակ նոցա։ Զի եթէ կործիցէ մին՝ կանգնեսցէ զնա ընկեր իւր. եւ վայ միայնոյ յորժամ կործիցէ, եւ ոչ գոյցէ մեւս՝ որ յարուցա-
11 նիցէ զնա։ Զի եթէ ննջիցեն երկուք՝ ջեռուցանիցեն զմիմեանս, եւ մին զիարդ
12 ջեռնուցցէ։ Եւ եթէ բռնասցի [1]մին՝ երկուքն կացցեն ընդդէմ նորա. եւ ածա-
սան երեքկին՝ ոչ վազվազակի խզեսցի։
13 Լաւ է մանուկ աղքատ եւ խոհական՝ քան զթագաւոր ծեր եւ անմիտ, որ ոչ
14 [2]իմացաւ տալ եւս „եթէ“ ի սանէ կապանաց երանիցէ թագաւորել. նա ի թագաւորութեան իւրում եղեւ ազքատ։
15 Տեսի ես զամենայն կենդանիս որ գնան ի ներքոյ արեգական, հանդերձ երիտասարդաւն երկրորդաւ որ յարիցէ փոխա-
16 նակ նորա։ Ոչ գոյ [3]կատարումն ամենայն ժողովրդոցն, ամենեցուն որք եղեն յառաջ քան զնոսա. նա եւ յետինքն ոչ լինիցին ուրախ ի վերայ նորա. զի եւ այն ինքն ունայնութիւն է
17 եւ [4]չօքաբութիւն ոգւոյ։ Զգուշացիր ոտն քոյ [5]որով երթայ-
18 ցես ի տունն Աստուծոյ. Եւ մերձ լեր ի լսել, [6]քանզի պատուական է քան զպատարս անզգամաց՝ զոն քո՝“, զի ոչ եթէ գիտասկ [7]առնելոյ բարիս“։

Գ.Լ. Ե

1 Մի՛ վուխտ բերանով քով, եւ մի՛ վազվազեսցէ սիրտ քո հանել բանս առաջի Աստուծոյ, զի Աստուած յերկինս է եւ դու յերկրի. վասն այնորիկ եղիցին բանք քո սակաւք։ Զի հասանէ եղերազ ի բազմութենէ [8]իրձութենէ, եւ ձայն անզգամի ի բազմութենէ բանից։
3 Եւ որպէս ինչ ես ուխտիցես դու Աստուծոյ, մի՛ յամիցես հատուցանել զնա. զի ոչ [9]են կամք ի ձեռս անզգամաց“.
4 զոր որչափ ուխտիցես՝ հատո. Զի լաւ է քեզ չուխտել, քան ուխտել եւ ոչ
5 հատուցանել։ Մի՛ տար զբերան քո առ ի յանցուցանելոյ զմարմին քո. եւ մի՛ ասեր առաջի [10]Աստուծոյ թէ Անգիտաւ-

[1] ՆԲէր. որ [2] ՆԲէր. գիտէ խրատել եւս (14) Զի սա
[3] ՆԲէր. վախճան [4] Կամ՝ աշխատութիւն [5] Կամ՝ յորժամ [6] ՆԲէր. քան մատուցանել զքոհ անգամաց [7] ՆԲէր. թէ առնեն չարիս [8] ՆԲէր. զբազմանց [9] ՆԲէր. Համճի ընդ անգամն [10] ՆԲէր. հրեշտակի

թիւն է. զի մի բարկասցի Աստուած ի բարբառ քո, եւ ապականեսցէ զգործս
6 ձեռաց քոց։ Վասն զի ըստ յաճախութեան երազոց է եւ ընդունայնութիւն բանից բազմաց. սակայն դու երկի՛ր Աս-
7 տուծոյ։ Եթէ [11]զգլուխ պատուիրանն եւ զյաւիտենականութիւնն իրաւանց եւ արդարութեան տեսանիցես յերկրի, մի՛ զարմանայցես ի վերայ իրացն. զի [12]բարձր ի վերայ բարձու պահէ, եւ բարձունք ի վերայ նոցա, եւ յաճախութիւն հո-
8 գւոյ։ Ի վերայ ամենայնի՛ է թագաւոր ի վերայ անդոյն գործելոյ. եւ լիկիր դու հաւատարիմ յամենայնի ի ծանր յաւիտենականսն։“
9 Որ սիրէ գործաւ՝ ոչ յագենայ արծաթով, եւ [13]որ սիրեաց ի բազմութեան իւրում զարդիւնս. քանզի եւ այն ունայնութիւն է։ Ի բազմութեան արգա-
10 նայնութիւն է։ Ի բազմութեան արգարութեան յագեցան սրք ուտէին զնա. եւ պի՞նչ արութիւն է նմա առ ի նմանել, զի ակիւքն տեսանելոյ՝ այլք իր
11 են։“ Քաղցր քունն է աշխատաւորի՝ եթէ սակաւ եւ եթէ չատ կերիցէ. եւ որ յաղին մնծանալով՝ չէ նմա համարձակ ի քունն մատանել։
12 Է [14]խրատ մի“ զոր տեսի ի ներքոյ արեգական. մնծութիւն պահեալ ուսիք
13 առ ի նմանէ չարոյ իւրում. Եւ կորիցէ մնծութիւնն նորա՝ [15]եւ նա“ ի զբազմանն չարի [15]է. ծնաւ որդի՝ եւ ոչ գոյ ի ձե-
14 ռին նորա եւ ոչ ինչ։ Որպէս եկ յորովայնէ մօր իւրոյ մերկ, դառնայ երթալ՝ որպէս եւ եկեալն էր, եւ ոչ ինչ առցէ ի վաստակոյ իւրմէ, եթէ երթիցէ ի ձե-
15 ռին իւրում։ Նա եւ այն խակ ախտ չար է, զի որպէս եկն՝ նոյնպէս եւ երթիցէ. եւ պի՞նչ օգուտ լիցէ նմա ի վաստակոյ ան-
16 տի զոր չանայ նա հողոյ։ Զի [16]ամենայն աւուրք նորա խաւար եւ սուգ“, եւ ի բազում պատմութեան եւ ի հիւան-
17 դութեան եւ ի բարկութեան։ Արդ ա-

[11] ՆԲէր. զգլխանս [12] ՆԲէր. բարձրն քան զբարձր հայի, եւ գոյ Բարձրագոյն քան զնոսա. (8) Եւ չայեկանութիւն երկրի յամենեսեան նայն. թագաւորն իսկ յանդգ պաշտի [13] ՆԲէր. ոչ որ սիրէ զմնծութիւն՝ արդեամբք. եւ այն ունայնութիւն է։ (10) Ի յաճախել բարեաց՝ յաճախեն եւ որ ուտեն զնոսա. և պի՞նչ չահ տերանց նոցա, եթէ ոչ տեսանել աչօք իւրեանց։ [14] ՆԲէր. պատչար [15] ՆԲէր. զամենայն աւուրս իւր ի խաւարի կերաւ

սասիկ զոր տեսի եմ՝ բարի [1]է ուտելն եւ ըմպել, եւ տեսանել զբարութիւն յամենայն վաստակս իւր՝ զոր չանայցէ ընդ արեգակամբ ի թիւս աւուրց կենաց իւրոց զոր ետ նմա Աստուած. զի այն
18 *է բաժին նորա։ Զանազի ամենայն մարդ՝ որում ետ նմա Աստուած մնծութիւն եւ ինչս, եւ իշխան արար զնա ուտել ի նոցանէ, եւ առնուլ զբաժին իւր եւ ուրախ լինել ի վաստակս իւր, այն պար-*
19 *գեւ Աստուծոյ է։ Զի բազում աւուրս յիշեսցէ կենաց իւրոց. զի Աստուած [2]զբօսացուցանէ զնա՝ յուրախութեան սրտի իւրոյ։*

Գլ. Զ

1 Է չարութիւն զոր տեսի ի տնէնջոյ ա-
նեզական, եւ բազում է յոյժ ի վերայ
2 *մարդոյ։ Այր մի որում ետ Աստուած մնծութիւն եւ ինչս եւ փառս, եւ ոչ ինչ պակաս իցէ անձին իւրում յամենայնիւ որում ցանկանայցէ. եւ ոչ առնիցէ զնա Աստուած իշխան ուտել ի նմանէ, զի այր օտար կերիցէ զնա. եւ այն ընդունայնութիւն է եւ սիրտ չար։*
3 *Եթէ ծնցի այր [3]հարիւր, եւ ամս բազումս կեցցէ, եւ եւս բազում եղիցին աւուրք ամաց նորա, եւ անձն նորա ոչ յագեսցի ի բարեաց անաի, եւ գերեզման եւս ոչ գայցի նմա, ես ասացի [4]լաւ է քան զնա վիժածն. Զի ունայնութեամբ եկն եւ խաւարաւ գնաց, եւ*
5 *ի խաւարի անուն նորա ծածկեսցի. Բանզի զարեւ ոչ եսես, եւ ոչ գիտաց, [5]զինչ*
6 *է հանգիստ սորա քան զնորա՞։ Եւ եթէ եկաց նա զհազար ամաց [6]կեա, եւ զբարութիւն ինչ ոչ եսես, միթէ ո՞չ երթայցէ ամենայն ի մի տեղի։*
7 *Ամենայն ջան մարդոյ ի բերան իւր, եւ*
8 *սակայն անձն նորա ոչ յագեսցի։ Զի՞նչ առաւելութիւն է իմաստնոյն քան զանմտէն, [8]քանզի անանկն գիտէ երթալ ա-*
9 *ռաջի կենաց իւրոց՞։ Լաւ է տեսիլ աչաց քան [7]զընացուկան ոգւոյ. սակայն եւ այն ունայնութիւն է եւ [8]յօժարութիւն ոգւոյ։*
10 *Որ ինչ եղեւն՝ անա անուն կոչեցեալ է նմա. եւ յայտնի [9]եղեւ որպիսի ինչ՝*

է մարդ, եւ ոչ կարէ պատել ընդ Հզօ-
11 *րին քան զնա։ Զի են բազում բանք՝ որ յաճախեն զընդունայնութիւնս. զի՞նչ առաւելութիւն է մարդոյ։*

Գլ. Է

1 Զի ո՞ գիտէ զինչ բարի է մարդոյ ի
կեանս իւրում ի թիւս աւուրց կենաց ընդունայնութեան նորա, եւ արար զայն ի ստուերի. զի ո՞վ է որ պատմեսցէ մարդոյն՝ զինչ լինելոց է գինի նորա
2 *ընդ արեգակամբ։ Բարի է անուն բարի քան զեղ բարի, եւ օր մահուան քան զօր ծննդեան իւրոյ։*
3 *Բարի է երթալ ի տուն սգոյ՝ քան երթալ ի տուն արբեցութեան, վասն զի այն է կատարած ամենայն մարդոյ. եւ որ կենդանի է [10]տացէ բա-*
4 *րութիւն ի սիրտ իւր՝։ Լաւ է սրտմտութիւն քան զծաղր, զի [11]չարութեամբ*
5 *երեսաց զուարթանայի սիրտ։ Սիրտ իմաստնոյ ի տան սգոյ, եւ սիրտ անմտի ի տան ուրախութեան։*
6 *Լաւ է լսել զպատուհաս իմաստնոյ, քան*
7 *լսել մարդոյ զերգս անմտաց. Զի որպէս ձայն փշոյ ի ներքոյ կաթսայի՝ այնպէս ծաղր անմտաց. սակայն եւ այն ընդունայ-*
8 *նութիւն է։ [12]Զբպարտութիւն ծփեցուցանէ զիմաստունս եւ կորուսանէ զսիրտ*
9 *պղնուութեան նորա։՝ Բարի է կատարած բանիւ՝ քան զսկիզբն իւրեանց. բարի է երկայնամիտ՝ քան զհպարտս-*
10 *ցեալն ոգւով։ Մի փութար յոգի քո բարկանալ, զի բարկութիւն ի ծոց անզգամաց հանգիցէ։ Մի ասիցես Զինչ եղեւ, զի աւուրքն առաջինք բարի եւ զնն քան զայսոսիկ. զի ոչ իմաստու-*
թեամբ հարցիր վասն այսպիսիկ։
12 *Բարի է իմաստութիւն ընդ ժառանգութեան, եւ [13]յաւելուած որոց տեսանին*
13 *զարեգակն. Զի [14]ընդ հալանեաւ նորա իմաստութիւն է իբրեւ զհովանի արծաթոյ. եւ՝ առաւելութիւն գիտութեան իմաստութեան կենդանացուսցէ պարն որ [15]առ ի նմանէ՝։*
14 *Տես զգործս Աստուծոյ, զի ո՞վ է այն որ*

---

[1] ԵԲԲ. է եւ գեղեցիկ [2] ԵԲԲ. տայ պատասխանի [3] Իմ Հարեւր թղթս [4] ԵԲԲ. Հանգիստ է սմա քան Նմա [5] ԵԲԲ. երկիցս [6] ԵԲԲ. զի՞նչ ստասպելցին որ գիտէ գնալ ի մէջ կենդանեաց [7] ԵԲԲ. գնալ [8] Կամ, աշխատութիւն [9] ԵԲԲ. է ի է

[10] ԵԲԲ. գիցէ ի սրտի իւրում [11] ԵԲԲ. տրտմութեամբ [12] ԵԲԲ. Քանզի զրկանք լիմարեցուցանեն զիմաստունն, եւ կորուսանեն զսիրտ կաշառք։ [13] ԵԲԲ. ազնուագոյն [14] ԵԲԲ. ապաւէն է իմաստութիւն, ապաւէն է արծաթի. իսկ [15] ԵԲԲ. տէրն է նորա

կարօղ լինիցի զարդարել՝ զոր Աստուածն
15 խանգարիցէ ։ Ցաւօք յարուածեան կեց-
ցէր ի բարիս , եւ տես յաւուր չարու-
թեան . [1]տես , սակայն նմին միաբան
զգոն արար Աստուած վասն խօսից , զի՞
մի՛ զայէ մարդ վկնի իւր եւ մի՛ ինչ ։
16 Զամենայն ինչ տեսի յաւուրս ունայ-
նութեան իմոյ . է արդար կորուսեալ
յարդարութեան իւրում , եւ է ամպա-
րիշտ՝ որ կայ չարութեամբ իւրով ։
17 Մի՛ կարի արդար լինիր , եւ մի՛ ճար-
տարեր առաւել , [2]զի մի՛ թմրեսցիս՞ ։
18 Մի՛ ամպարշտեր կարի , եւ մի՛ լինիր
19 [3]խելա՝ զի մի՞ ապրեսցի ժամս մեռցես ։ Բա-
րի է եթէ [4]ի կոգմն այսորիկ լինիցիս ,
սակայն եւ յայսմիկ մի՛ պղծել՞ գձեռն
քո . զի որ երկնչի Աստուծոյ՝ անցցէ
զնդ ամենայն ։
20 Իմաստութիւն օգնեսցէ իմաստնոյն
քան զտասան իշխան որ լինին ի քաղաքի ։
21 Զի մարդ ոչ գոյ արդար ի վերայ երկ-
րի՝ որ գործէ զարիս , եւ ոչ մեղանի-
22 չիցէ ։ Սակայն զամենայն բանս զոր խօ-
սեցին [5]ամպարիշտք՝ մի՛ դնիր ի սրտի
քումի . զի մի՛ լուիցես զոմ անէծս ի ծա-
ռայէ քումմէ՝ որ զքեզ անիծանիցէ ։
23 Զի բազում անգամ [6]չարահաւնեցոյն զնդ
քեզ , եւ ի նուաստս բազումս չարչարիս-
ցէ զսիրտ քո . ոսկայն եւ գու՛ մի՛ ա-
24 նիծանիր այլոց ։՞ Զայս ամենայն փորձե-
ցի ես իմաստութեամբ , եւ ասացի՝ Բա-
իմաստնացայ . եւ նա հեռացաւ յինէն ։
25 [7]Հեռացոյն քան որպէս էրն ։՞ եւ զխո-
րութիւնն խորոց ո՞վ կարասցէ գիտել ։
26 Շուրջ եկի ես եւ սիրտ իմ ճանաչել ,
նա եւ խորհել եւ խնդրել զիմաստու-
թիւն եւ զհանճար , եւ գիտել [8]զամ-
պարշտի զուրախութիւնն եւ զլկհանս եւ
27 զծփանս . եւ գտի ես զնա , եւ ասեմ ,
թէ Դառն է քան զմահ կնաւն հան-
գերձ . որ է որս եւ թակարդ սրտի նո-
րա , եւ կապանք ի ձեռս՞ նորա . բա-
րին առաջի երեսաց Աստուծոյ զերծցի
ի նմանէ , եւ որ մեղաւորն է՝ բռնանա-
28 յցի ի նմա ։ Ահա զայս [9]առնայն գտի ,
ասէ Եկեղեսիաստէս . [9]մի մերձ գտանել
29 խորհուրդս , Զոր խնդրեաց՞ անձն իմ ,
եւ ոչ գտի . այր մի ի հազարաց գտի ,
30 բայց կին՝ առնեւրէն ոչ ։ Ահա այդ զայս
գտի , զի արար Աստուած զմարդն ու-
ղիղ , եւ նոքա խնդրեցին [10]զխորհուրդս
չարութեան՞ ։

Գլ. Ը

1 Ո՞վ [11]գիտէ զիմաստունն՞ , եւ ո՞վ գիտէ
զմեկնութիւն բանից ։ Իմաստութիւն
առն՝ լուսաւոր առնէ զերեսս իւր , եւ
[12]որ ժպիրն է երեսօք իւրովք՞ առնի
2 լիցի ։ Ես՝ բերանոյ՞ թագաւորի գդոյչ լեր , եւ
3 ի բան երդման Աստուծոյ ։ Մի՛ վազվա-
զիցես յերեսաց նորա գնալ , եւ մի՛
կայցես ի բանի չարի . զի զամենայն զոր
4 ինչ կամիցի՝ արասցէ ։ [13]Իրաւ գիտացա-
ւոր իշխանութեամբ խօսի՞ , եւ ո՞վ կա-
5 րէ ասել ցնա թէ Զինչ գործեցեր ։ Որ
պահէ զպատուիրան՝ ոչ գիտասցէ զբան
չարութեան . եւ [14]ժամանակ իրաւանց՞
6 ճանաչէ սիրտ իմաստնոյ ։ Զի ամենայն
[15]իրաց ժամանակ է եւ իրաւունք , զի
[16]տպաւորութիւն մարդոյ բազում է ի վերայ
7 նորա ։ Քանզի ոչ գիտէ գինչ լինելոց է .
զի որպէս ինչ լինելոց իցէ՝ ո՞վ պատ-
մեսցէ նմա ։
8 Ոչ է մարդ իշխան ոգւոյ՝ արգելուլ
զոգի , եւ ոչ գոյ իշխանութիւն [17]ի օրա
յաւուր մահուան . եւ ոչ [17]գոյ հրաչատ-
կութիւն յաւուր՞ պատերազմի , եւ ոչ
ապրեցուցանէ ամպարշտութիւն [18]զմեր-
9 ձաւորս իւր ։ Զամենայն զայս տեսի , եւ
եաւս զսիրտ իմ յամենայն արարածս որ
արարեալ են ի ներքոյ արեգական . [19]ո-
րում միանգամ իշխան եղեւ մարդն ի
10 վերայ մարդոյ չարչարել զնա՞ ։ Եւ ապա
տեսի ես ամպարիշտս մուծեալս ի գե-
րեզմանս . եւ ի սրբոց անտի գնացին ,

---

[1] ՆԲԳ. Նա եւ զայս հակառակ այնմ արար Աստուած, վասն այնորիկ [2]ՆԲԳ. ընդէ՞ր կործանեցցես [3]ՆԲԳ. անդրամ ընդէ՞ր [4]ՆԲԳ. բուռն հարցես զմիոյն, եւ ի միւսմէն մի՛ ի բաց կալցես [5]ՃՆԲԳ. գ-լ-ե [6]ՆԲԳ. գիտէ սիրտ քո եթէ դու եւս անիծեր զայլս ։ [7]ՆԲԳ. Հեռին թէ զինչ իցէ , [8]ՆԲԳ. գամպարշտու թիւն անգգամութեան, եւ զանմտութիւն յիմարից . (27) Եւ գտի ես դառն քան զմահ կին , որպ վարմ եւ թակարդ սիրտ նորա, կապանք ձեռք

[9] ՆԲԳ. մի առ մի համարեալ գտանել զՀաշիւն, (29) Զոր տակաւին խնդրէ [10]ՆԲԳ. բազում հնարս [11]ՆԲԳ. իցէ իբրեւ զիմաստունն [12]ՆԲԳ. ժպրհութիւն երեսաց նորա փոխեսցի (2) Բամ, բերանոյ [13]ՆԲԳ. Զի բան թագաւորի իշխան է [14]ՆԲԳ. զժամանակ եւ զիրաւունս [15]ՆԲԳ. կամաց [16]ՆԲԳ. եգեռն [17]ՆԲԳ. արձակումն ի [18]ՆԲԳ. զատացիչս [19]ՆԲԳ. գոյ ժամանակ զի իշխէ մարդ ի վերայ մարդոյ՝ չարոյ իւրում

եւ [1]ասէ ասին ի քաղաքին, զի՝ այնպէս արարին. սակայն եւ այն ընդունայնութիւն է։
11 [2]Զի ոչ գոյ ընդդէմ դառնալ յայնոյանէ որ վազվազակի գործն զչար, վասն այնորիկ համարձակեցան՝ սիրաք որդւոց մարդկան յանձինս իւրեանց գոր-
12 ծել զչար։ [3]Որ մեղաւն արար զչարիս, յայտնեսցէ եւ ի վաղնջուց. քանզի գիտեմ եւ ես զինչ է բարին երկիւղածից Աստուծոյ, զի երկնչիցին նոքա՝ յերես
13 սոյ նորա։ Եւ ոչ ինչ գոյ բարի ամպարչտի, եւ ոչ յերկարեսցէ աւուրս՝ իբրեւ [4]ընդ հովանեաւ նորա որ՝ ոչ է երկիւղած յերեսաց Աստուծոյ։
14 Գոյ ընդունայնութիւն որ եղեալ է ի վերայ երկրի. զի են արդարք՝ որոց ժամանեն առ նոսա գործք ամպարչտից, եւ են ամպարիշտք զի հասանեն նոցա իբրեւ զգործս արդարոց. եւ ասացի ես թէ Սակայն եւ այն ընդունայնութիւն
15 է։ Եւ գովեցի ես զուրախութիւն, զի ոչ է բարի մարդկան ի ներքոյ արեգական, բայց յուտել եւ յըմպել եւ յուրախ լինել. եւ այն երթայ ընդ նմա ի չանալ նմա զաւուրս կենաց իւրոց, որչափ եւ նմա Աստուած ի ներքոյ արեգական։
16 [5]Որ միանգամ՝ եւու զսիրտ իմ գիտել զիմաստութիւն, եւ տեսանել զգրաւորութիւն որ արարեալ է ի վերայ երկրի. (զի ի տուէ եւ ի դիշերի քուն չայչ նո-
17 ցա ոչ է տեսանել.) Եւ տեսի ես զամենայն արարածս Աստուծոյ, զի ոչ կարեսցէ մարդ գտանել զարարածն արարեալ ի ներքոյ արեգական. զոր միանգամ չանացի մարդ խնգրել՝ եւ ոչ գտայ. քանզի որչափ ասացէ իմաստունն գիտել՝ ոչ կարասցէ գտանել։

Գլ. Թ

1 Զի զամենայն զայս եւու ի սիրտ իմ, [6]եւ սիրտ իմ եւտես՝ զայս ամենայն. արդէն արդարքն եւ իմաստունքն, եւ գործք նոցա ի ձեռս Աստուծոյ. [7]բայց զի գաղր եւ զատելութիւն ոչ գիտէ մարդն. ամենայն ինչ առաջի երեսաց
2 [8]նորա է։ Եւ ունայնութիւն է յամենայնի. պատահար է՝ յարդարն եւ յամպարիշտն, ի բարին եւ ի չարն, ի սրբութիւն եւ ի պղծութիւն, որ մատուցանէ պատարագ՝ եւ որ ոչն մատուցանէ. որպէս որ բարին է՝ եւ որպէս որ մեղանչէն, որպէս որ երդնուն՝ եւ որպէս որ յերդմանէն
3 երկուղեալ է։ Այս է որ չարն է յամենայնի՝ որ արարեալն է ընդ արեգական, զի պատահար [9]է յամենայնի. քանզի սիրտ որդւոց մարդկան լի եղեւ չարութեամբ, եւ [10]գրգռութիւն ի սիրտս նոցա ի կենդանութեան իւրեանց, եւ
4 [11]դէպի նոցա՝ առ մեռեալսն. Քանզի ո՞վ են՝ որ հաւատարին առ ամենայն կենդանիս. գոյ յոյս մէկ շուն որ կենդանի է՝
5 լաւ է քան զառեւծ մեռեալ։ Քանզի որ կենդանիքն են՝ գիտեն նոքա թէ մեռանելոց են. եւ մեռեալքն ոչ են գիտակ եւ ոչ իմիք. եւ ոչ եւս գոն նոցա
6 վարձք՝ զի մոռացաւ յիշատակ նոցա. Եւ սէր իսկ նոցա եւ ատելութիւն նոցա եւ նախանձ նոցա անա կորեաւ, եւ բաժին իսկ ոչ գոյ նոցա յաւիտեանս յամենայնի յայսմիկ՝ որ արարեալ են ընդ արեգականս։
7 Եկ կեր ուրախութեամբ զնաց քո, եւ արբ սրտիւ դուարձացելով զգինի քո. զի արդէն իսկ հաճեցաւ Աստուած ի գործս
8 քո։ Ծամենայն ժամ եղիցին ձորձք քո սպիտակ, եւ եւղ ի դլխոյ քումմէ մի
9 պակասեսցէ։ Եւ տես կեանս ընդ կնոջ քո՝ զոր սիրեցեր զամենայն աւուրս կենաց ընդունայնութեան քո, որ տուեալ է քեզ ընդ արեգականէ[12]մինչեւ յաւուրս վախճանի՝ քո. զի այն է բաժին քո ի կեանս քո, եւ ի վաստակս զոր վաստակես ի
10 ներքոյ արեգականս Ձամենայն ինչ որ ինչ գտցէ ձեռն քո գործել, որչափ ի կարի քումմ իցէ՝ գործեսջիր. զի ոչ գործ եւ խորհուրդ եւ գիտութիւն եւ իմաստութիւն եղիցին ի գժոխս յոր գուն երթայցեն եւս։
11 Դարձայ եւ տեսի ի ներքոյ արեգական, զի ոչ թեթեւացաւ են ընթացք, եւ ոչ զօրաւորաց պատերազմ, եւ ոչ իմաստնոց հաց, եւ ոչ հանճարեղաց մեծութիւն, եւ ոչ գիտնոց չնորհք. զի ժա-

---

[1] ԵԲԲ. Մեռացօնք եղեն նոցա ի քաղաքին յորում [2] ԵԲԲ. Զի ոչ առնի վճիռ գործոց չարաց վաղվազակի, վասն այնորիկ լի են [3] ԵԲԲ. Եթէ ի մեղաւորն առնիցէ չարիս հարիւրիցս եւ յերկարեսցի եւս նմա, գիտեմ ես ապաքէն եթէ լիցի բարի երկիւղածից Աստուծոյ որ երկնչիցին [4] ԵԲԲ. սուսեր, զի [5] ԵԲԲ. Ցորմէհետէ [6] ԵԲԲ. ի քննել [7] ԵԲԲ. Նա եւ

[8] ԵԲԲ. Նոցա է։ (2) Ամենայն, որպէս ամենեցուն, պատահար մի է, [9] ԵԲԲ. մի է [10] ԵԲԲ. անմտութիւն [11] Կամ յեւս այնորիկ [12] ԵԲԲ. յամենայն աւուրս ընդունայնութեան

մանակ եւ պատահար պատահէ ամենեւ-
12 ցուն նոցա : Քանզի ոչ իսկ զիւրաց մարդն
գիմանակ իւր , որպէս ձկունք որսա-
գնակք ցանցիւք չարիօք , եւ որպէս
թռչունք որսացեալք ի ծուղակս , նոյն-
պէս հարկանին յորոգայթս որդիք մարդ-
կան ի ժամանակի չարի՝ յորժամ հասա-
նիցէ ի վերայ նոցա յանկարծակի :
13 Սակայն եւ զայս իմասատուիքն
անտի իներքոյ արեգական , եւ մնծ մտ ի
14 ինձ : Քաղաք փոքր՝ եւ իցեն ի նմա այր
սակաւք , եւ գայցէ ի վերայ նորա թա-
գաւոր մնծ եւ պատիցէ զնա , եւ չինիցէ ի վերայ նորա պատնէշս մնծամնծս :
15 Եւ գտցի ի նմա այր մի տնանկ եւ ի-
մաստուն եւ ապրեսցուցանիցէ նա զքա-
ղաքն իմաստութեամբ իւրով , եւ մարդ
16 ոչ յիշեաց գայրն զայն տնանկ : Եւ ա-
սացի ես , Բարի է իմաստութիւն քան
զզօրութիւն . [4]եւ իմաստութիւն տնանկին արհամարհեալ է , եւ բանք նորա
ոչ լինին լսելի :
17 Բանք իմաստնոց մեղմով լսին քան
զազաղակ [5]իշխանաց անզգամութեամբ՝ :
18 Բարի է իմաստութիւն քան զանօթս պա-
տերազմի , եւ յանցաւոր մի կորուսանէ
[2]զօրութիւնս բազումս :

Գլ. Ժ

1 Ճանճք մեռեալք զազրացուցանեն զիւղս
անուշս . [3]պատուական է սակաւիկ
ինչ յիմաստութենէ , քան զմնծ փառս
2 անմտութեամբ՝ : Սիրտ իմաստնոյ յաջա-
կողմ իւր , եւ սիրտ անմտի ի ձախա-
3 կողմ իւր : [4]Քանզի եւ ի ճանապարհի
յորժամ գնայցէ անմտին , սիրտ նորա
պակասացի , եւ [5]զոր ինչ խորհի՝ ամե-
4 նայն անմտութիւն՝ է : Եթէ հոգի իշ-
խանին ելցէ ի վերայ քո՝ մի թողուր
զանկի քո . զի ազդուծին դարձուցանէ
զմեզս մնծամնծս :
5 Է չարութիւն զոր տեսի ի ներքոյ ա-
րեգական , որ իրրեւ [6]յակամայ կամս՝
6 եւ յերեսաց իշխանին : Տուաւ անմտին
ի բարձրութիւնս մնծամնծս , եւ մնծա-
7 տունք ի խոնարհութեան նստցին : Տե-
սի ես զծառայս հեծեալս ի ձիս , եւ իշ-

[1] Իմ՝ թէպետեւ [2] Եբր. իշխանի ի մէջ անզգամ-
մամբ [2] Եբր. բարութիւնս [3] Եբր. պատ-
ւական իմաստութիւն սակաւ՝ զպատուականն իմաս-
տութեամբ եւ փառաւոր [4] Եբր. Նա [5] Եբր. ասէ
յամենեսեան թէ անմիտ [6] Եբր. վրիպակաւ

խանս՝ զի գնային իրրեւ զծառայս յերկրի :
8 Որ փորէ խորխորատ՝ ի նմին անկցի ,
եւ որ քակէ զցանգ՝ հարցէ զնա օձ :
9 Եւ որ բառնայ քարինս՝ նոքիմբք չար-
չարիսցի , եւ որ պատառէ փայտ՝ նովին
ճգնեսցի : [7]Եթէ անկցի եւս երկաթն՝ եւ
նա արամիացոյց զերեսս իւր . եւ զօրաւ-
մբիւք զօրացուցանիցէ , եւ է առաւելու-
թիւն քաջ իմաստութեանն :"
11 Եթէ հարցէ օձ [8]ի թովել , ոչ ինչ է ա-
12 ռաւելութիւն թովչին : Բանք բերանոյ
իմաստնոյ՝ չնորհք , եւ չրմունք անմտի
13 ընկղմին զնա : Սկիզբն բանից բերանոյ
նորա՝ անմտութիւն , եւ վախճան նորա՝
14 ծուի չարութեան : Եւ որ անմտին է
յաճախել զբանս . ոչ գիտէ մարդ զինչ
եղիցի է , եւ զինչ լինելոց է [9]զի
15 գինի նորա՝ ո՞վ պատմեսցէ նմա : Ջան
անմտին չարչարեսցէ զնա , որ ոչ գի-
տայ երթալ ի քաղաք :
16 Վա՛յ քեզ , [10]քաղաք , որոյ թագաւոր
քո մանուկ է , եւ իշխանք քո ընդ ա-
17 ռաւօտս ուտեն : Երանի քեզ , երկիր ,
որոյ թագաւոր քո որդի ազատի է , եւ
իշխանք քո ի ժամու ուտեն [11]զօրու-
թեամբ՝ եւ ոչ ամաչեսցին" :
18 Ի վատութեան խոնարհեսցին հեծա-
նագութիւնք , եւ ի պատարկութեան
19 ձնեսցէ կաթեսցէ տունն . ի ծաղր առնեն
զնոց , եւ գինի [12]եւ եւզ ուրախ առ-
նեն զկենդանիս . եւ արծաթոյ լսիցէ
ամենայն ինչ" :
20 Սակայն եւ ի մտի քում մի՛ անիծա-
ներ թագաւորի , եւ ի չտեսանելս սե-
նեկաց քոց մի՛ անիծանիր մնծի . զի
թռչունք երկնից հասուցանեն զբարբառ
քո , եւ որոյ թեւք են՝ պատմեն զբան քո :

Գլ. ԺԱ

1 Ա՛ռաքեա զնաց քո ի վերայ երեսաց
ջրոց , զի ի բազմութենէ աւուրց [9]քոց
2 գտցես զնա : Տուր բաժին եւթանց , այլ
եւ ութից , վասն զի ոչ գիտես զինչ
3 լինիցի չար ի վերայ երկրի : Թէ լցցին
ամպք անձրեւով՝ ի վերայ երկրի հե-
զուն . եւ եթէ անկցի փայտն ի հարաւ

[7] Եբր. Եթէ բթասցի երկաթն և նա ոչ թէքեսցէ զսայր նորա , ինքն սատկացուսցէ զոյժ , եւ ի-
մաստութեան է առաւելութիւն ուղղելոյ :
[8] Եբր. մինչեւ թովեսցէ իցէ [9] Յեբր. գ-ից-ե
[10] Եբր. երկիր [11] Եբր. ի զօրութիւն եւ ոչ յար-
բեցութիւն [12] Եբր. ուրախ առնէ գկեանս,
եւ արծաթ տացէ պատասխանի ամենեցուն

եւ կամ ի կողմն հիւսիսոյ , ուր անկցի փայտն անդ կացցէ ։
4 Որ խարէ զնոսա՝ ոչ սերմանէ, եւ որ
5 հայի ընդ ամպս՝ ոչ հնձեսցէ ։ [1]Որովք ոչ է հնար պիտել՝ զինչ է ճանապարհ հոգւոյ , [2]իւրիւս զոսկերս յարգանդի յղեայ , նոյնպէս ոչ գիտասցես դու զգործս Աստուծոյ զոր ինչ առնիցէ նա զամե-
6 նայն ։ Ընդ առաւօտս սերմանեսցես զսերմն քո , եւ ընդ երեկոյս մի լքցէն ձեռք քո . զի ոչ գիտես՝ ո՛ր պատահնիցի , այս՝ թէ այն , կամ թէ երկոքեան
7 ի միասին բարի իսկ է ։ Քաղցր է լոյս , եւ բարի աչաց անասանել զարեգական .
8 Զի թէ ամս բազումս կեցցէ մարդ , եւ յամենայն ի նոսա ուրախ լինիցի , եւ յիշեսցէ նա զաւուրս խաւարի , զի բազում իցեն . ամենայն ինչ որ գալոցն է ընդունայնութիւն է ։
9 Ուրախ լեր , երիտասարդ , ի մանկութեան քում , եւ զուարճացուսցէ զքեզ սիրտ քո յաւուրս [3]մանկութեան քո . եւ գնա դու ի ճանապարհս սրտի քո [4]ամրիթ , եւ ի տեսիլ աչաց քոց. եւ գիտասցես թէ վասն այսր ամենայնի անցէ
10 զքեզ Աստուած ի դատաստան ։ Եւ իրաց սրա [5]զարտմութիւն ի սրտէ քում մէկ , եւ անցո զչարութիւն ի մարմնոյ քումմէկ . զի մանկութիւն եւ [6]անմտութիւն ընդունայնութիւն է ։

Գլ. ԺԲ

1 Եւ յիշեա զաւուրսն քո յաւուրս [3]մանկութեան քո , մինչեւ հասանել իցն աւուրք չարութեան , եւ հասցեն ամք՝ յորս առասցես , Ոչ են կամք իմ
2 ի գոսա ։ Մինչեւ խաւարեալ իցէ արեգակն եւ լոյս եւ լուսին եւ աստեղք , եւ դարձցին ամպք զկնի անձրեւոյ .
3 Յաւուր յորում չարժեսցին պահապանք աանն , եւ թիւրեսցին արք զօրութեան , եւ դադարեսցին ազօրիք զի նուազե-

[1] ՆԲԷ. Զոր օրինակ ոչ գիտես դու [2] ՆԲԷ. որպէս եւ [3] ՆԲԷ. երիտասարդութեան [4] ՅԲԷ. պաղատ [5] ՆԲԷ. զարտմութիւն [6] ՆԲԷ. արութիւն

ցան , եւ խաւարեսցին որք տեսանեն
4 ընդ [7]ծակս . Եւ փակեսցին զդրունս՝ ի հրապարակս ի ակարութենէ ձայնի աղօրեայն , եւ յարիցեն ի ձայն հաւուն , եւ նիհան լիցին ամենայն դստերք երգոյ . [8]Եւ ի բարձունս հայեսցին՝ , եւ ապչութիւն ի ճանապարհին . եւ ծաղկեսցի նշին , եւ թանձրասցի մարախն , եւ [9]սարսածեսցի կապարն . զի գնաց մարդ ի տուն իւր յաւիտենից , եւ չուրջ եղեն
6 կոծօղք ի հրապարակս ։ Մինչչեւ կործանեսցէ իցէ լար արծաթոյն , եւ խորտակեսցէ մանեակ ոսկեայն , եւ մանրեսցէ սափորն յաղբիւրն , եւ ընկրկեսցէ անիւն
7 ի գուբն ։ Եւ գարձցի հողն յերկիր որպէս եւ էրն , եւ հոգին դարձցի առ Աստուած որ ետ զնա ։
8 Ունայնութիւն ունայնութեանց , ասաց ժողովողն , ամենայն ինչ ընդունայնոյն է ։ Եւ աւելի քան զի եղեւ ժողովողն իմաստուն . զի ուսուցանէր ժողովրդեանն զգիտութիւն . եւ [10]ունկն
10 քննէ զպարզ առակաց՝ ։ Գոյժ խնդրեաց ժողովողն գտանել զբանս կամաց , եւ գրել զգիրս ուղղութեան բանից ճշմարտութեան ։
11 Բանք իմաստնոյ իբրեւ գեխման [4]եւ զանոյ , եւ իբրեւ լեւեռք հարեալք [11]ի
12 մուրհակաց աստուն ի հովուէ միոջէ ։ Եւ [12]աւելորդ ի նոցանէ , որդեակ իմ , զգոյշ լեր ի սահմանսդ՝ զիրս բազումս ոչ գոյ վախճան . եւ վարժ բազում՝ աշխատութիւն է մարմնոյ ։
13 Եւ վախճան բանիս , զամենայն ինչ լուր , յԱստուծոյ երկիր , եւ զպատուիրանս նորա պահեա . զի այս է մարդն
14 ամենեւին ։ Զի զամենայն արարածս ածցէ Աստուած ի դատաստան , [13]յամենայնի անտես արարիչդն՝ , եթէ բարի եւ եթէ չար ։

[7] ՆԲԷ. պատուհանս. (4) Եւ փակեսցին դրունք [8] ՆԲԷ. Նա եւ երկիցեն ի բարձանց [9] ՆԲԷ. խափանեսցի [10] ՆԲԷ. կշռեաց եւ խնդրեաց եւ յօրինեաց առակս բազումս [11] ՆԲԷ. յաւազոյ ժողովոց [12] ՆԲԷ. մանաւանդ ի նոցանէ , որդեակ իմ, խրատեսջիր. յօրինելոյ [13] ՆԲԷ. ի վերայ ամենայն ծածկելոյց

ԵՐԳ ԵՐԳՈՑ

[1]ՈՐ Է

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆՑ

ԱՍԱՑԵԱԼ ՍՈՂՈՄՈՆԻ ԱՐՔԱՅԻ ԻՍՐԱՅԵԼԻ"

ԳԼՈՒԽ Ա

[2]Հաբան ասէ,"

1 ԶԱՄԲՈՒՐԵՑԱՑՔ դիս ի հարուածելոյ ընտանոյ իւրոյ. գի բարի [3]են
2 ատինք" քո քան զգինի, եւ հոտ իւղոյ քոց [4]քան զամենայն խառնիկս. եւզ ա-
նոյշ հեղեալ է" անուն քո, վասն այսո-
3 րիկ օրիորդք սիրեցին զքեզ. [5]եւ ձգե-
ցին զքեզ. դնեա հատոյ իւղոյ քոց
ընթացարք մեք": [2]Օբէդբդան պատմէ
հաբան վասն ֆեսային՝ ըր ինչ ընդ-
հեաց նմա," Տարաւ դիս արքայ ի սենե-
եակ իւր: [2]Հաբէնն պատմեալ օբէդբ-
դան, եա նոքա ասեն," Ցնծասցուք եւ
ուրախ լիցուք ի քեզ, [6]եւ սիրեսցուք
զատինս" քո քան զգինի: [2]Օբէդբդն հա-
բինն քաքաւէն ընդունան ֆեսային," Ուղ-
ղութիւն սիրեաց զքեզ:
4 [2]Հաբան ասէ," Սեաւ եմ ես եւ գեղեցիկ,
դստերք երուսաղեմի, իբրեւ զվրանս կե-
դարու, եւ իբրեւ զխորանն Սողոմանի:
5 Մի՛ հայիք ընդ իս, զի ես սեւացեալ
թխացայ, քանզի խեթիւ հայեցաւ ընդ իս
արեգակն. որդիք մօր իմոյ մարտեան
ընդ իս, եւ եդին զիս պահապան այ-
գեստանի. զի գայդին իմ ոչ պահեցի:
6 [2]Հաբան ֆեսային ասէ," Պատմեա ինձ
զոր սիրեաց անձն իմ. ո՞ւր հովուես,
ո՞ւր հանգուցանես ի միջօրէի. դուցէ
լինիցիմ իբրեւ գընկեցեալն յերամակս
ընկերաց քոց:
7 [2]Փեսայն ցհաբանն ասէ," եթէ ոչ ծանիցես
զանձն քո, գեղեցիկդ ի կանայս, ել դու
գնեա գարչապարացն հօտից, եւ արածեա
8 զուլս քո ի վրանս հովուաց: Երիվարացն
իմոց ի կառան Փարաւոնի նմանեցուցի
9 զքեզ, մերձաւորդ իմ: [2]Օբէդբդն ցհաբան
ասէն," [7]Քանզի գեղեցկացան ծնօտք քո
իբրեւ զատատրակի", պարանոց քո իբրեւ
10 զմանեակս: [8]Նմանութիւն ոսկւոյ ա-
րասցուք քեզ՝ հանդերձ կիտուածովք
11 [9]արծաթոյ, Մինչեւ արքայ ի գիրկս իւր
ընկալցի զքեզ: Հաբանն ցէբ անձն եա
ցֆեսային ասէ, Նարդոս" իմ եա գնոտ
12 իւր. Մրոր սատչիկն է [10]եղբօրորդին իմ
ինձ," ի մէջ ստեանց իմոց հանդիցէ:
13 Ողկոյզ նռնոյ է [11]եղբօրորդին իմ ինձ,
14 ի մէջ այգեստանեացն ենգադդայ. [2]Փե-
սայն ցհաբանն ասէ," Ահաւադիկ կաս
գեղեցիկ, մերձաւոր իմ, ահաւադիկ
կաս գեղեցիկ. աչք քո աղաւնիք:
15 [2]Հաբան ցֆեսային ասէ," Ահաւադիկ կաս
բարենչան, [11]եղբօրորդեակ իմ, այլ
եւ գեղեցիկ. [12]առ գահոյս" մեր հո-
16 վանաւոր: Գերանք տանց մերոց մայրք,
դարանաւանդք մեր նոճք:

ԳԼ. Բ

[2]Փեսայն ցէբ անձնն եա ցհաբանն ասէ,"

1 Ես ծաղիկ [13]դաշտաց, շուշան հովտաց:
2 Իբրեւ շուշան ի մէջ փշոց, այնպէս
մերձաւորդ իմ ի մէջ դստերաց:
3 [2]Հաբանն ցֆեսային ասէ," Իբրեւ խնձորի ի
փայտս անտառի, այնպէս [11]եղբօրորդին
իմ ի մէջ ուստերաց. ընդ հովանեաւ նորա
ցանկացայ նստել՝ եւ նստայ, եւ պտուղ
նորա քաղցր է [14]ի կոկորդի իմում: Ցֆե-
սէրդան հաբանն ասէ, Մուծէք" զիս ի

---

[1]ԵԲՐ. Սողոմանի [2]ՅԵԲՐ. պակաս [3]ԵԲՐ. է սէր
[4]ԵԲՐ. անոյշ է, եւզ հեղեալ [5]ԵԲՐ. Զգեա զիս,
զհետ քո ընթացարք [6]ԵԲՐ. յիշեցուք զսէր

[7]ԵԲՐ. Գեղեցիկ են ծլտք քո զարդուք [8]ԵԲՐ.
Զարդս [9]ԵԲՐ. արծաթոյ: (11) Մինչ արքայ
էր ի գահոյս իւր, նարդոս [10]ԵԲՐ. սիրելին իմ
ինձ, ի գիշերի [11]ԵԲՐ. սիրելին [12]ԵԲՐ. գահոյք
[13]ԵԲՐ. Սարոնի եմ, [14]ԵԲՐ. ի քիմս իմ: (4) եմոյծ

տուն զինուոյ , [1]կարգեցէք ի վերայ իմ
5 զսէր . Հաստատեցէք զիս իւղով . կուտեցէք յիս ինձեր . զի խանդակաթ՝ եմ
6 ես սիրով : Ձախ ներա լինդ գլխով իմով, եւ աջ ներա պատեսցէ զինեւ :
7 [2]Հաբաննն ցբէնբրդան ասէ," Երդմնեցուցա-նեմ զձեզ, դստերք Երուսաղեմի , [3]ի զօ-րութիւնս եւ յուժգնութիւնս անդաս-տանի . եթէ յառնիցէք զարթուսցիք" զսէրն մինչեւ կամեսցի :
8 [3]Լոա՜ ընդն ֆէնայէն ես ասէ ," Ձայն [4]եղբօրորդւոյ իմոյ . ահաւասիկ սա եկն, վազելով ի վերայ լերանցն՝ խայտալով ի
9 վերայ բլրոյ : Նման է [5]եղբօրորդին իմ այծեմանն կամ որթուոյ եղանդ [2]ի վերայ լերանց Բեթէկայ : Հաբաննն նչան պա-ցբէնբրդան ֆէնայէն , ես ասէ ," Ահա-ւասիկ սա եկաց յայնկոյս արմանն մերոյ, կարկառեալ ընդ պատուհանսն, հայեցեալ
10 ընդ վանդակապատսն : Պատասխանի սայ [5]եղբօրորդին իմ ինձ՝ եւ ասէ, Արի ես, մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, [6]աղաւնի
11 իմ՝". Զի ահա ձմեռն անց, անձրեւք անց-
12 սին եւ գնացեալ մեկնեցան . Ծաղիկք երեւեցան յերկրի մերում , ժամանակ հնձոց յառաւնեցոյ , ձայն տատրակի լսելի
13 եղեւ յերկրի մերում . Թզենի արձակեալ զթզղոջ իւր , որթք մեր ծաղկեալք եառն գնոսա իւրեանց . արի ես, մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, [2]աղաւնի իմ ," եւ ես գու :
14 Աղաւնեակ իմ ընդ հովանեաւ վիմիդ առ պատուարաւ պարսպիդ , երեւեցո ինձ զերեսս քո , եւ լսելի արա ինձ զբարբառ քո . զի բարբառ քո քաղցր է եւ անսիլ քո գեղեցիկ :
15 [2]Ցբէնբրդան ֆէնայն ասէ ցնա." Կալարուք մեզ աղուեսունս փոքունս զապականելս այգեաց, զի այգիք մեր ծաղկեալ են :
16 [2]Հաբաննն ասէ ցնա." [5]Եղբօրորդին իմ ինձ եւ ես նմա, որ հովուէն ի մէջ շուշանաց :
17 [7]Մինչեւ սիւն լուսաւորեսցէ եւ ստուերքն չարժեսցին Դարձիր" նմանեաց դու, [8]եղբօրորդի իմ, այծեմանն կամ որթուոյ եղանդ ի վերայ լերանց [9]խնկարերաց :

[1] ԵԲԲ. գրոշ Նորա ի վերայ իմ սէր. (5) Հաստատեցէք զիս շօթիւք, զարուցուցէք զիս խնձորով, զի նուազեալ է [2] ՅԵԲԲ. գոլոթ [3] ԵԲԲ. այծեմամբք կամ եղամբք անդաստանի, մի՛ յառնել եւ մի՛ զարթուցանել [4] ԵԲԲ. սիրելւոյ [5] ԵԲԲ. սիրելին [6] ԵԲԲ. և ես [7] ԵԲԲ. Մինչեւ շնչեալ տուրընչեան, և փախուցեալ ստուերաց, դարձիր [8] ԵԲԲ. սիրելիդ [9] ԵԲԲ. Բեթերայ

Գլ . Գ

1 Յանկողնի իմում ի զիշերի խնդրեցի զոր սիրեաց անձն իմ, խնդրեցի զնա՝ եւ ոչ գտի . [2]կոչեցի՝ եւ ոչ եառ ինձ
2 ձայն." Յարեայց եւ չրջեցայց ընդ քաղաքն , ընդ փողոս եւ ընդ հրապարակս, եւ խնդրեցից զոր սիրեաց անձն իմ . խնդրեցի զնա՝ եւ ոչ գտի . [2]կոչեցի զնա՝
3 եւ ոչ եառ ինձ ձայն." Գտին զիս պահապանքն որ չրջէին ընդ քաղաքն : [2]Հաբաննն ցպահապանան ասէ," Միթէ զոր
4 սիրեաց անձն իմ տեսէ՞ք : Իրրեւ սակաւ մի անցի ընտ նոսա , գտի զոր սիրեաց անձն իմ : [2]Գրեաւ ցֆէնայն ասէ," կալայ զնա , եւ ոչ թողի զնա , մինչեւ տարայց զնա ի տուն մօր իմոյ , եւ ի սենեակ յղացկոյն զիս :
5 [2]Ցբէնբրդան երդմնէցոյցանեմ զձեզ, դստերք Երուսաղեմի [10]ի զօրութիւնս եւ ի հաստատութիւնս" ապարակի, եթէ յառնիցէք՝ զարթուսցիք զսէրն մինչեւ կամեսցի :
6 [2]Ֆէնայն վառն հաբաննն ասէ," Ո՞վ է սա որ ելեալ գայ յանապատէ՝ իրրեւ զծուխ ծառացեալ բարձրացեալ. զմուռս եւ կնդրուկ յամենայն փոչւոյ իւզագործ-
7 ծաց : [2]Օբէնբրդն սասցին ղայս ինչ." Ահա զահոյզ Սողոմոնի . վաթսուն սպառազինք չուրջ զնովաւ ի քաջացն Իս-
8 րայելի . Ամենեքեան սուսերաւորք հմուտք պատերազմի , այր իւրաքանչիւր սուր յազդր յարհատաց գիշերոյ : Գահաւորակ արար իւր արքայ Սողոմոն ի փայտից Լիբանանու . Զսիւնս նորա գործեաց արծաթիա , զկոնք նորա ոսկի, եւ [11]զձնգուն նորա ծիրանի , [12]զմէջ նորա ականակալ տարածեալ զսէրն" ի դստե-
11 րացն Երուսաղեմի : Ելէք եւ հայեցարուք , դստերք Սիոնի , յարքայ Սողոմոն ի պսակն որով պսակեաց զնա մայր իւր յաւուր փեսայութեան իւրոյ , եւ յաւուր ուրախութեան սրտի իւրոյ :

Գլ . Դ

[2]Ֆէնայն ցհաբաննն ասէ ,"

1 Ա՜հաւադիկ կաս գեղեցիկ , մերձաւոր իմ, ահաւադիկ կաս գեղեցիկ , աչք քո աղաւնիք [13]բաց ի լուսթինդ քումմէ".

[10] ԵԲԲ. այծեմամբք կամ եղամբք [11] ԵԲԲ. զքաղմոց [12] ԵԲԲ. մէջ նորա նկարակերպ գործեալ սիրով [13] ԵԲԲ. ընդ քողով քով

վարսք քո իբրեւ զերամակս այծից
2որք երեւեցան ի Գաղաատէ։ Ատա-
մունք քո իբրեւ զերամակս կարկոյ
որք ելանեն ի լուացեալ. ամենեքեան
երկուորիք են, եւ անորդի ոչ գոյ ի
3նոսա։ Իբրեւ զթել սրգան են շրմունք
քո, եւ խօսք քո դիզկերիկք. իբրեւ
[2]զկիսիւ նռան են այտք քո՝ [3]բաց ի
4լռութենէդ քումմէ՞. Իբրեւ զաշտապարին
Դաւթի պարանոց քո՝ որ չինեալն է [4]ի
Թալպիոթի. հազար վահան կախեալ են
զնմանէ, [5]եւ ամենայն նետք սպառա-
5զինաց՞։ Երկու ստինք քո իբրեւ զեր-
կուս ուլս երկուորիս այծեմանի, որք
6արածին ի մէջ շուշանաց, [6]Մինչեւ ահեղ
հովազիցի, եւ սաւառնչքն չարժեսցին՞,
գնացից ես ինձէն ի լեռն զմնեղնեայ
7եւ ի բլուրն կնդրկի։ Ամենեւին գե-
ղեցիկ ես, մերձաւոր իմ, եւ արատ
ինչ ոչ գոյ ի քեզ։
8 Ելի ի Լիբանանէ, հարսն, ելի այսր ի
Լիբանանէ. ելիցես [7]եւ անցցես ի
գլխոյ հաւատոյ՞ ի կատարէ Ամանեայ
եւ Հերմոնի, ի մասեաց առիւծուց, եւ
9ի լերանց ընձուաց։ Սրտակեցեր զսիրտ
զմեզ, քոյր մեր հարսն, սրտակեցեր սա-
բարիր զմեզ միով ակամբ քով, եւ միով
10քառամանեկաւ պարանոցի քո։ [8]Քան-
գի գեղեցկացան ստինք քո, քոյր իմ
հարսն, քանգի գեղեցկացան ստինք քո
ի գինւոյ՞, եւ հոտ հանդերձից քոց քան
11զամենայն խառնիկս։ Մեղր կաթիցեն
ցանունս շրմունք քո, [9]քոյր իմ՞ հարսն,
մեղր եւ կաթն ի ներքոյ լեզուի քո,
եւ հոտ հանդերձից քոց իբրեւ զհոտ
12[10]Լիբանանի։ Պարտէզ փակեալ, քոյր իմ
հարսն, [11]աղբեւր փակեալ եւ աղբիւր
13կնքեալ։ [12]Պատգամատունքն քո
դրախտ նռնենեաց՝ հանդերձ պտղովք
[13]մրգաբերաց. [14]կիպրոս հանդերձ նար-
14դոսիւ. Նարդոս եւ քրքում, խոսնկին.
ղէղն եւ կինամոմոն, հանդերձ ամե-
նայն ծառոք [15]Լիբանանու. զմուռս եւ
հալուէ, հանդերձ ամենայն գլխաւոր
15խնկոք։ Աղբեւր բուրաստանաց եւ աւեր
ջրոյ կենդանւոյ՝ բղխեալ ի Լիբանանէ։
16Արի, հով սիսի, եւ ելի, հարաւ, շնչեա
ի պարտէզ իմ, եւ բուրեսցին խոսնկք
[16]իմ։ [9]Հարսն ալտէ ի իջցէ ի պարտէզ իւր՞
իջցէ [17]պղպեղարդի իմ ի պարտէզ իւր,
եւ կերիցէ զպտուղս [18]ծառոց իւրոց՞։

Գլ. Ե

[9]Փեսայն ցնծրանն ասէ,՞

1 Ա՛ամ ի պարտէզ իմ, քոյր իմ հարսն,
կիսիցի զմուռս իմ հանդերձ խնկովք ի-
մովք. կերայ [19]զնոյ իմ մեղս իմով,
սրբի զղինի իմ կաթամբ իմով։ Կերայք,
մերձաւորք իմ, եւ արբէք, եւ արբե-
ցարուք, [20]պղպեղարդիք իմ՞։
2 Ես հնջեմ, եւ սիրտ իմ արիժան կայ։
[9]Հարսն ձայն ձեմոյին բախել դրուանն.՞
Զայն [21]պղպեղարդեայ իմոյ բախէ ի դրանն։
[9]Փեսայն ասէ.՞ Բաց ինձ, քոյր իմ, մեր-
ձաւորք իմ, ազաւնի իմ, կատարեալ իմ.
զի գլուխ իմ լցաւ ցօղով, եւ վարսք
3իմ ի չափից գիշերոյ։ [9]Հարսն ասէ զայս
ինչ՞ Մերկացայ զպատմուճանէն իմ, զիա՞րդ
ապականեցիմ զնա. լուացի զոտս իմ, զիա՞րդ
ալանզայցուցից զնոսա։
4 [17]Պղպեղարդին իմ ձգեաց զձեռն իւր
ընդ պատուհանն, եւ որովայն իմ խռո-
5վեցաւ ի նա։ Յարեայ ես ի բանալ [21]պղ-
պեղարդեայ իմոյ. ձեռք իմ կաթիցեցին
զմուռս, եւ մատունք իմ զմուռս լցեալս
6ի վերայ ձեռաց փականացին։ Բացի ես
[21]պղպեղարդեայ իմոյ. [17]պղպեղարդին իմ [22]անց,
եւ ապի իմ ել ընդ բանի նորա։ Խնդրեցի
զնա՝ եւ ոչ գտի, կոչեցի զնա՝ եւ ոչ
7ետ ինձ ձայն։ Գտին զիս պատապանքն
որ շրջեւին ի քաղաքին, հարին եւ վի-
րաւորեցին զիս. հանին զինէն զպատն իմ
8պատապանք պարսպացն։ Երդմնեցուա-
ցանեմ զձեզ, դստերք Երուսաղեմի, [9]ի
զօրութիւնս եւ ի հաստատութիւնս ա-
գարակի,՞ եթէ զտանիցէք [23]զպղպեղար-
դին իմ՝ պատմեսջիք նմա, եթէ խանա-
պակալ եմ ես ի սէր քո։
9 [9]Գոյանէր ընտրեալն քո պատճառանէ պար-
պոյն հարցանէն զնա՞ասէ,՞ Զինչ [24]է եզերո-
զրկին քո քան զեզերոզրկեաց՞, զիպղեղարդիկ ի

[1]ԵՐԳ. ի լեռնէն Գաղաադու [2]ԵՐԳ. գկոտոր
[3]ԵՐԳ.ընդ քողով քով [4]Աչեխդ՝ ի զինանոց [5]ԵՐԳ.
ամենեքին սպառք զօրաւորաց [6]ԵՐԳ. Մինչեւ
շնչեալ սուրբնչեան, եւ փախուցեալ սաւերաց
[7]ԵՐԳ.Հայեսցիս ի կատարէ Ամանայ, [8]ԵՐԳ.Քանի՛
գեղեցիկ է սէր քո, քոյր իմ հարսն, քանի՛
քաղցր է սէր քո քան գգինի [9]ՅԻ.ԵՐԳ. պակաս
[10]ԵՐԳ. Լիբանանու [11]կամ. ազբեւր [12]ԵՐԳ.
Սահղունք [13]ԵՐԳ.քաղցրութիւնս [14]կամ, նաճ
[15]ԵՐԳ. կնդրկի

[16]ԵՐԳ. Նորա [17]ԵՐԳ. սիրելին [18]ԵՐԳ. Նորա
քաղցունս [19]ԵՐԳ. զխորհս [20]ԵՐԳ. սիրելիք
[21]ԵՐԳ. սիրելւոյ [22]ԵՐԳ. մեկնեցաւ, անց [23]ԵՐԳ.
զսիրելին [24]ԵՐԳ. առաւելութիւն սիրելւոյ
քո քան զսիրելւոյ

կանայս , զի՞նչ [1]է եղբօրորդին քո յեղբօրորդեայ՞ , զի այդպէս երդմնեցուցեր զմեզ ։
10 [2]Հաբաան նշան տայ ընդ ձեռն ձեր եւ ասէ .՝ [3]Եղբօրորդին իմ սպիտակ է եւ կարմիր՝ ընտրեալ ի բիւրուց ։
11 Գլուխ նորա յոսկւոյ [4]կատարեայ , վարսք նորա [5]հատոյք սեաւ իբրեւ զագ-
12 անաւ . Աչք նորա իբրեւ աղաւնիս ի վերայ [6]լիութեան ջրոց , լուացեալ կաթամբ , նստեալ ի վերայ ջրոց լրութեան՛ .
13 Ծնօտք նորա իբրեւ զտապտս խնկոյ բուրեն զանուշահոտութիւն խադոցեայ . շրթունք նորա չուչանք՝ բղխեն զմուռս
14 լիութեան . Ձեռք նորա [7]ոսկիք ճախարակեայք՛ լցեալ ակամբք Թարսեայ . որովայն նորա տախտակ վղոսկրեայ աւ-
15 կանակապ յակինթոյ չափիպայ . Սրունք նորա սիւնք մարմարիտք հաստատեալք ի վերայ ոսկի խարսխոյ . տեսիլ նորա որպէս զընտիր եղեւնափայտից Լի-
16 բանանու ։ [8]Լսկերդ նորա լի քաղցրութեամբ , եւ ամենեւին ցանկալի ։ Այն է [3]եղբօրորդին իմ , եւ այն է մերձաւոր իմ , դստերք երուսաղէմի ։
17 [2]Հարցանէն դոքեր՝ ո՛ւր անց եղբօրդէ նորա . այնինքն է՝ հաբաանն.՝ Ց՛ գնաց [3]եղբօրորդին քո , զեղեցիկդ ի կանայս , յո՛ր կողմն դիտաց [3]եղբօրորդին քո , եւ խնդրեսցուք եւ մեք զնա ընդ քեզ ։

Գլ. Զ

[2]Պատասխանի տայ հաբաան եւ ասէ ,՝

4 [3]Եղբօրորդին իմ էջ ի պարտէզ իւր ի տաչաս խնկոյ , հովուել ի լուբաստանս
2 եւ ժողովել չուչանս ։ Ես [9]եղբօրորդւոյ իմոյ եւ [3]եղբօրորդին իմ ինձ , որ հովուէն ի մէջ չուչանաց ։
3 [2]Փեսան ցհաբաան ասէ ,՝ Բարեկեան ես , մերձաւոր իմ , իբրեւ [10]զհամութիւն , զեղեցիկ իբրեւ զերուսաղէմ , [11]զարմանալի
4 յօրինեալ՝՝ ։ Դարձո զաչս քո յինէն , զանազի զի դոքա սրարեցուցին զիս . վարսք քո իբրեւ զերամակս այծից որք երեւեցան
5 ի Գաղաադէ ։ Ատամունք քո իբրեւ զերամակս կտրելոց որք ելանեն ի լուալեաց . ամենեքին երկուորիք են , եւ անծնունդ
6 ոչ գոյ ի նոսա ։ [2]Իբրեւ դմակ կարմիր շրթունք քո , եւ խօսք քո՝ գեղեցիկք.՝ իբրեւ [12]զկեղեւ նռան այտք քո՝ [13]բաց ի լռութենէդ քումմէ՝՝ ։
7 Վանդակն են թագուհիք եւ ութսուն հարճք , եւ օրիորդք որոց ոչ գոյ թիւ ։
8 Մի է աղաւնի իմ , կատարեալ իմ . մի է մօր իւրոյ , ընտրեալ ծնողի իւրոյ . տեսին զնա դստերք եւ երանեցին նմա , թագուհիքն եւ հարճք գովեցին զնա ։
9 [2]Դո՞ւք էք ընդառաջ փեսին ցհաբաան , ե՞ք երանեցին նմա .՝ Ո՞վ է սա որ ե՞ւ բեւեալս է իբրեւ զառաւօտ , գեղեցիկ իբրեւ զլուսին , ընտիր իբրեւ զարեգակն , [11]զարմանալի յօրինեալ՝՝ ։
10 [2]Փեսան ցհաբաան ասէ ,՝ Ի պարտէզս ընկուզենւոյ իջի հայել յարդիւնս վտակացն , տեսանել թէ ծաղկեալ իցէ որթ , [2]թէ ծաղկեալ իցէ նռն,՝՝ թէ ծաղկեալ իցեն
11 նռնենիք ։ [2]Հաբաան ցփեսան ասէ , Անդ տայց զառիս իմ քեզ ,՝՝ ոչ ծանեաւ անձն իմ . եղ զիս իբրեւ զկառան Ամմինադաբայ ։
12 [2]Դո՞ւք էք ընդառաջ փեսին ցհաբաան ասէն ,՝՝ Վարձիր ,[14] Սամնայիդ , գարձիր , գարձիր եւ տեսցուք զքեզ ի քեզ ։
[2]Ձդո՞ւք էք ընդառաջ փեսին զչոյս ընդ ասէ ,՝՝ Ձինչ տեսանիցէք ի Սամնայիդ՝ որ դիմեալ գայ իբրեւ զդունդս բանակաց։

Գլ. Է

15 [15]Քանզի զեղեցկացան դնացք քո կօշկօք , դուստր [16]Նադաբայ . ձեւ բարձից քոց նման է ուլանց յեւսկոց գործոյ
2 ճարտարի ։ Պորտ քո թմկոյկ ճախարակեայ՝ անպակաս ի գինւոյ խառնեւոյ . որովայն քո՝ իբրեւ զչեղջ ցորենոյ
3 փակեալ չուչանաւ . Երիկունք քո՝ իբրեւ երկուս ուլս երկուորիս այծենան .
4 Պարանոց քո՝ իբրեւ աչատարակ վղոսկրեայ . աչք քո՝ իբրեւ զծովակն Եսեբոնի ի դրունս [17]դստերաց բազմաց՝՝ . ռնգունք քո իբրեւ զաչատարակն Լիբանանու , որ դիտէ հանդիպ Դամասկոսի ։ Գլուխ քո ի վերայ քո իբրեւ զԿարմեղոս . հիւսք գլխոյ քո իբրեւ զծի-

---

[1] ԵԲԲ. առաւելութիւն սիրելոյ քոյսն զսիրելւոյ
[2] ՁԵԲԲ. դ-ասէ [3] ԵԲԲ. սիրելին [4] ԵԲԲ. սրբոյ
[5] ԵԲԲ. ցիր եւ ցան [6] ԵԲԲ. Հոսանաց ջրոց, լուացեալ կաթամբ, ընդ եզերաւ վայելչութեամբ
[7] ԵԲԲ. օղք ոսկւոյ [8] ԵԲԲ. Բիմք [9] ԵԲԲ. սիրելւոյ
[10] ԵԲԲ. զ[10]երսա [11] ԵԲԲ. ահեղ իբրեւ զգունդ դրօշակաց

[12] ԵԲԲ. գկռատ [13] ԵԲԲ. ընդ քողովդ քով [14] ԵԲԲ. յեղէն յոռելը , դարձիր , [15] ԵԲԲ. Քանի՛
[16] Ն յԱբդն՝ իշխանի [17] ԵԲԲ. Բաթբաբբիմայ

բանի, [1]իբրեւ զմարտաւոր՝ թագ ի գլուխ
6 յաղթողէս»։ Քանի՛ զեղեցկացար եւ քանի՛ քաղցրացար, սէր ի վաւխտութեան
7 քոմ։ Նմանեցաւ [2]հնձոմիին քո հասանելոյ, եւ տունք քո սղկուզայ։
8 Ասացի՝ Բարձ ելից յարմանեն, լուսն հարից [3]զլարձրութեանց նորա. եւ եւ զկոյն տունք քո իբրեւ զողկոյզս որմոյ, եւ հոտ մազաց քոց իբրեւ զխնձոր։
9 [4]Կոկորդ քո իբրեւ զգինի աղնիւ, [5]Հաբանն է քեմ գոբերացն եւ ընտանեացն ասէ,» երթեալ վհետ [6]եղբօրորդւոյ իմոյ յանդամանել [7]բաւականանալ չրթամբք իմովք եւ ատամամբք»։
10 Ես [6]եղբօրորդւոյ իմոյ, եւ առ իս [8]դարձ
11 նորա։ Եկ, [9]եղբօրորդի իմ, ելցուք յագարակ, ագցուք ի չէնս [5]եւ ի պարտէզս»,
12 կանխեսցուք յայգիս։ Տեսցուք թէ ծաղկեալ իցէ որթ, թէ ծաղկեալ իցէ նռոճ, թէ ծաղկեալ իցէ նռնենի, անդ տացից [10]զտունս
13 իմ քեզ։ Մանդրագորգք եւսեն զհոտ իւր բանից, եւ առ դուռս մեր ամենայն մրգաբերք, զնոր առ հնով, զոր [5]ես ինձ մեծի իմ» պահեցի քեզ, [9]եղբօրորդի իմ։

Գլ. Ը

1 Ո՛վ տայր քեզ, [11]եղբօրորդի իմ,» գիւել զտունս մօր իմոյ. գտեալ զքեզ արտաքոյ՝ համբուրեցից զքեզ, եւ ոչ անդ
2 կոնեսցին զիս։ Առեալ ածից զքեզ ի տուն մօր իմոյ, [12]եւ ի անկեակ յզայցելոյն» զիս. արբուցից քեզ ի գինւոյ իւրաքաղցրոյ, յօշարակէ նռնենեաց իմոց։
3 Ձախ նորա ընդ գլխով իմով, եւ աջ նորա պատեսցէ զինեւ։
4 Երդմնեցուցից զձեզ, դստերք Երուսաղեմի, [13]ի զօրութիւնս եւ ի հաստատութիւնս ազարակի, եմէ յառնիցէք զարթուսջիք» զսէրն մինչեւ կամեսցի։
5 [5]Դարեբդն ես ընթանայր ասեն,» Ո՞վ է սա որ ելեալ գայ [14]սպիտակացեալ, յենու գայ յեղբօրորդի՝ իւր։ [5]Փեսայն ցնորանն ասէ,» ի ներքոյ խնձորոյն զարթուցի զքեզ. անդ երկնեաց զքեզ մայր քո, անդ երկնեաց որ ծնաւն զքեզ։
6 Դիր զիս իբրեւ զնիք ի սրտի քում,

[1]ԵԲԲ. թագաւոր Հարեալ ի գիսակաց [2]ԵԲԲ. Հասակ [3]ԵԲԲ. զբաւոց [4]ԵԲԲ. Բիմք [5]ՅԻԲ. պսակ [6]ԵԲԲ. սիրելոյ [7]ԵԲԲ. որ տայն խօսել շրթանց որոց ննջեն [8]ԵԲԲ. ցանկութիւն [9]ԵԲԲ. սիրելի [10]ԵԲԲ. զսէր [11]ԵԲԲ. իբրեւ զեղբայրք [12]ԵԲԲ. ուսուցանէր, Ո՛, ուսուցանէիր [13]ԵԲԲ. մի՛ յարուցանել եւ մի՛ զարթուցանել [14]ԵԲԲ. յանապատէ յեկեալ ի սիրելին

եւ իբրեւ [15]զմատանի ի վերայ բազկի քո, զի բուռն է իբրեւ զմահ սէր, եւ խիստ՝ իբրեւ զդժոխս նախանձ. ծիւխք նորա իբրեւ զծիւխս բոցոյ հրոյ։
7 Ջուրք բազումք ոչ կարասցեն զսէր չիջուցանել, եւ գետք ոչ արգելցեն զնա. եմէ տացէ այր զամենայն զկեանս իւր ընդ սիրոյ, անգամանելովանգամանացեն զնա։
8 Քոյր մեր փոքրիկ եւ տունք ոչ գոյ նորա. զի՞նչ արասցուք քոյր մերում յաւուր
9 յորում [16]պատմեսցի նմա», եմէ պարիսպ իցէ՝ չինեսցուք ի վերայ նորա մանարձանս արծաթիս, եմէ դուռն իցէ՝ յօրինեսցուք ի նմա տախտակս եղեւնափայտեայս։
10 [5]Հաբանն նմաբչիկէ ես ասէ,» Ես եմ պարիսպ եւ տունք իմ իբրեւ զաչտարակս, ես էի յաչս նորա՝ որպէս որ գտանիցէ զխաղաղութիւն։
11 Այգի եղեւ Սողոմանի ի Բեհզմաւն. եւ զայգին իւր ցպահապանան. բնդրէ այր իւրաքանչիւր ընդ պտղոյ նորա հազարս արծաթոյ։
12 Այգի իմ ինձ առաջի իմ. [17]հազարքն Սողոմանի», եւ երկերիւրք պահապանացդ որ պահեն զպտուղ նորա։
13 [5]Հաբանն ասէ,» Որ նստիցէ ի պարտէզս՝ [18]այլք անտան քեզ. լսելի արա ինձ զրարբառ քո։
14 Փախիր, [9]եղբօրորդի իմ, եւ նմանեսցայ այծեմանն, կամ որթուց եղանց ի վերայ լերանց խնկաբերաց։

[19]Օրիորդքն եւ թագուհիքն ասեն,

Գլխ. Զ

1 Գնացի զի մարմին զբօսասցուցանիմ զմանկութիւնն, բարձրացուսցէ ի չտեմարանս իւր. թագաւոր մեր ի գահոյս մեր. իբրեւ արմաւ ոսկեզէն զմռասցիկ
2 լցցին տաշտք մեր։ Դարձցի թագաւորն
3 անգրէն ի մանկութիւնն։ Սիրելին ի սեհնակս մեր. երգեսցուք զսէրն։ Փեսայն ասէ, Ես իակ եմ ի սաղմոսարանին. երգեցիկ ընդ ընկերս իմ. երգեսցուք եւ ուրախ
5 լիցուք։ Հաբանն ես գոբերէն ես օրէնսդրէն ասեն, Թագաւոր սիրելի, թէպէտ եւ ծածկեցաք ի տեսլենէ, աչք մեր յանաւորք։
6 Տէր արար զքեզ, հաստատեաց զքեզ, պատրաստեաց զքեզ յարգանդի, գեղեցիկ ի կանայս. մայր քո ծնցի մարմին անտխտիզ։ Առնդին յայլմէ տեսչութենէ, զի այսպէս ունէր։»

[15]ԵԲԲ. զկնիք [16]ԵԲԲ. խօսեացն զնմանէ [17]ԵԲԲ. Հաղարք, քեզ, Սողոմն [18]ԵԲԲ. ընկերք [19]ՅԻԲ յայսմանէն պսակեն այս համարէ։

ԳԼՈՒԽՔ ԳՐՈՑ ԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

	Գլ.	Համ.
Ամբաստանութիւն զԱբայելէ, եւ գուշակութիւն վշտացն որ նոցա հասանելոց էին. Հրաժեշտ ի պատարագաց, և խրատ վարուց առաքինութեան:	Ա.	1
Մարգարէութիւն զեկեղեցւոյ եւ խաղաղութեանն որ լինելոց էր:	Բ.	1
Ամբաստանութիւն զԱբայելէ, և մարգարէութիւն պաշարման քաղաքին:	Բ.	5
Ամբաստանութիւն փափկութեան կանանց նոցա, եւ ամբարտաւանութեան:	Գ.	16
Տարագրութիւն ԻսրայելՒ՝ այգւոյն օրինակաւ:	Ե.	1
Բամբասեք զիշխանս Իսրայելի ագահութեամբ եւ արբեցութեամբ, եւ յառաջագոյն զդատաստանէ վաւերածոյն. եւ ապառնայ այնոցիկ որ զսուտ մարգարէս՝ առաւել քան զմարգարէս ընդունէին:	Ե.	8
Չկայանել թշնամացն գուշակ:	Ե.	26
Տեսանէ Եսայի զանկլէն, որով սրբեցան նորա շրթունքն:	Զ.	1
Զօրաժողով լինին արքային Ասորւոց եւ Իսրայելացւոց ի վերայ Երուսաղեմի. եւ մարգարէանայ Եսայի վասն ի կուսէն ծննդեանն Քրիստոսի, զոր տայ Նշան մերձաւոր փրկութեանն Երուսաղեմի, թէ մինչեւ ծնցի Քրիստոս. իսկ որդւովն Եսայեայ զփութով գերելն Սամարեայ, եւ զգերութիւնն Յուդայ. և առաւել գերեցան:	Է.	1
Մարգարէութիւն վասն այնոցիկ՝ որ ի Քրիստոս էին հաւատալոց, եւ ամբաստանութիւն Քրիստոսատեաց խակութեանն Հրէից եւ ապառնաւիք:	Թ.	1
Վասն բռնութեան եւ ամբարտաւանութեան, եւ կորստեան Ասորեստանեայն:	Ժ.	5
Վասն այնոցիկ որ ի Քրիստոս էին հաւատալոց եւ վասն կորստեանն Սենեքերիմայ:	Ժ.	20
Վասն ի տունն Յեսսեայ ծննդեանն Քրիստոսի, եւ վասն նորին հաւատացելոցն հեղութեան:	ԺԱ.	1
Սատակումն Բաբելացւոցն:	ԺԲ.	1
Հակառակ այլազգեացն մարգարէանայ:	ԺԳ.	29
Կորուստ Մովաբացւոյն:	ԺԵ.	1
ԶՔրիստոսէ մարգարէութիւն, և ի դէմն Մովաբու կործանումն Սատանայի:	ԺԶ.	5
Կորուստ Դամասկոսի, եւ Իսրայէլի վիշտք եւ փրկութիւն:	ԺԷ.	1
Կորուստ Եգիպտացւոց, եւ սատակումն ամպարշտութեան նոցա, և առակաւ ի հեթանոսս որ հաւատալոց էին ի Քրիստոս:	ԺԹ.	1
Հրաման առնու Եսայի մերկ եւ բոկ գնալ ի նշանակ գերութեան Եգիպտացւոց եւ Լիբովպացւոց:	Ի.	2
Չգուժարել Մարացն ի վերայ Բաբելացւոցն գուշակէ:	ԻԱ.	1
Կորուստ Եդովմայեցւոյն եւ Արաբացւոց, եւ վերջին պաշարումն Երուսաղեմի զոր պաշարեցաւ ի Նաբուքոդոնոսորայ. եւ կանխատեսութիւն առ Սամնաս հանդերձապահ վասն նորին կորստեան: Հանդերձապահքն որ էին պահապանք տաճարին՝ ի քահանայիցն էին:	ԻԱ.	11
Կորուստ Տիբոսի, եւ յետոյ փրկութիւն, եւ առակաւ՝ զեկեղեցւոյ:	ԻԳ.	1
Ի վիշտս Հրէից նկարէ զվերջին տագնապն աշխարհի, եւ զՔրիստոս գեհենին. և վասն կորստեան Բաբելացւոց՝ զսքանչութիւն Աստուծոյ ի մարգարէին, եւ վասն ի Քրիստոս հաւատացելոց մարգարէութիւն. եւ վասն յարութեան մեռելոց:	ԻԴ.	1
Ի դէմն Բաբելացւոց ասէ զկորստեան Սատանայի. և առ Իսրայէլ պատուիրէ զերութեան, եւ փոզմաւեպիք դարձին, յորժամ աւերի Բաբէլ եւ արդելցի անցանել ընդ Եփրատ. ապա եւ զԻսրայէլ ամբաստանութիւն, յորում ի պատուհասիս խօսելոյ ընդ նոսա օտար լեզուօք Բաղդէացւոցն՝ վասն հրեղէն լեզուացն մարգարէութեան:	ԻԵ.	1
Յառաջելոցն յԱսորեստանեայս զՔրիստոս ցուցանէ յայս եւ հինն հաստատուն, եւ խրատ եւս՝ զի թէ եւ տանջեսիք՝ մի՛ յուսայ ի անօրէս. յայտնէ թէ զերելոց է Երուսաղէմ. և ի սատակումն Բաբելացւոյն նկարէ զՍանդերձեալ գալստեան. մեղադրէ լիմարելոցն, եւ զուշակէ վմուտն Տէրն անոսիկ:	ԻԶ.	14
Ի փրկութիւնն Երուսաղէմի որ ի Սենեքերիմայ՝ նկարէ զմեծ փրկութիւն ի Քրիստոս հաւատացելոցն:	ԻԹ.	17
Պատուհասել Իսրայէլ, զի եթարթ յԱստուծոյ զյոյսն և յԵգիպտացին ապաստան եղեւ, կանխաւ գուշակին նմա չարիք եւ յետոյ շինութիւն. մարգարէանայ ի Նմին եւ վասն եկեղեցւոյ եւ Հանդերձեալ աւուրն:	Լ.	1
Ի դէմ եկեղեցւոյ վասն դարձին հեթանոսաց ի Քրիստոս, եւ վասն աւերածոյն եւ շինելոյն Երուսաղէմի:	ԼԱ.	9
Աղօթք վասն սատակման Ասորեստանեացն, եւ փրկութեանն որ Քրիստոսիւ լինելոց էր:	ԼԲ.	2
Վասն դարձին Հրէից եւ հաւատացելոցն եկեղեցւոյ, եւ թէ խղճն		

	Գլ.	Համ.
Հրէից գերութեամբ՝ վասն մեղացն էր, և հեթանոսաց օրինաց մեղաց՝ որոց խոստանայ վիճակութիւն	ԼԹ.	20
Պատմութեամբ՝ զՅարութիւն Ասորեաց եւ զնիզովմայ, և զանէծնն Համադերձեալ աւուրն. եւ ըստ Հանէլոյ՝ զաւերն Հրէից, եւ զվինութիւն եկեղեցւոյ	ԼԹ.	1
Սեռնեքերիմայ և Նէբեկեայ պատմութիւն	Լ.	1
Ընդ աւետիս գարձին մարգարէութիւն վասն Յովհաննու Կարապետին, եւ վասն այնոցիկ որ ի Քրիստոս էին հաւատացեալք	Խ.	1
Ի հաւատ գարձին Հրէից եւ գալըստեանցն Տեառն, զԱստուծոյ զօրութիւնն ցուցանէ. եւ ամբաստան լինի զհակապաշտութենէն Իսրայէլի, եւ յիշատակէ զերախտիսն որ առ ժողովուրդն	Խ.	9
Ի յաղթութիւնն Հրէից մարգարէանայ վասն եկեղեցական հաստատութեան եւ կռոցն տկարութեան	ԽԱ.	15
Վասն Քրիստոսի մարգարէութիւն, եւ վասն հաւատացելոց ի նա. և ստ կայ այն՝ թէ ի խաւարէ լոյս ծագեաց	ԽԲ.	1
Նախատէ զԻսրայէլ վասն մեղաց, եւ թէ վասն ստունգանելոյ եկին հասին նոցա չարիք	ԽԲ.	17
Առաջնով փրկութեամբքն որ յԵգիպտոս եւ ի ծովն՝ վասն հանէ եւ զառ ի Բազդեացոյն, եւ վասն Քրիստոսիւ փրկութեանս, եւ զի առանց զոհից փրկեաց, եւ չպահանջէ զոհիւք պաշտօն. եւ վասն ի Քրիստոս հաւատացելոց	ԽԳ.	1
Յանդիմանութիւն կռոցն տկարութեան, և ընծայութիւն Աստուծոյ զօրութեանն, որ ցրէ զղձութիւնս եւ հաստատէ զմարգարէութիւնս, եւ կոչէ զԿիւրոս. եւ զի Աստուած է Քրիստոս՝ յոր նորոգին կռոցքն, և զի նմա կրկնի ամենայն ծունր, որ եւ կոչէ յապաշխարութիւն	ԽԴ.	6
Կործանս Բաբելացւոցն, եւ յանդիմանութիւն Հրէից խաւարութեան. եւ գիւրութենէ մարգարէութիւն, յորում վասն Քրիստոսի, զի յարգանդէ կուսեացս Յիսուս, որ և լոյս հեթանոսաց. եւ ետ զնիկունս ի հարուածս	ԽԷ.	1
Մարգարէութիւն վասն Քրիստոսի, եւ միխիթարութիւն Երուսաղէմի, որ լիսպէս կատարի յեկեղեցի	ԽԱ.	4
Վասն առաքելոցն, եւ վասն Քրիստոսի մարգարէութիւն	ԽԲ.	7
Վասն Քրիստոսի զարմանագործութեանցն, եւ չարչարանացն և յարութեանն, և յաճախութեան հաւատացելոցն ի նա	ԽԲ.	13
Վասն եկեղեցւոյ, եւ վասն Քրիստոսի իշխելոյն հեթանոսաց. ամբաստանութիւն կռապաշտութեանն Հրէից. Հրաժեշտ ի պահոց նոցա, և այլոց ընդունելի պահոց օրինակ. ամբաստանութիւնն հեթանոսաց եւ խորհրդոց նոցա, եւ պատուհաս՝ որ ձգի եւ ի հանդերձեալսն, եւ աւետիք լուսաւորելոցն ի Քրիստոս	ԽԲ.	1
Վասն իջանելոյ Սուրբ Հոգւոյն ի Քրիստոս, եւ բժշկութեանցն որ Հոգւոյ եւ մարմնոյ լինելոց էին ի նմանէ. եւ վասն առաքելոցն եւ հաւատացելոց պսակելոց ի Քրիստոս. եւ վասն առաջին եւ երկրորդ գալստեանն	ԿԱ.	1
Նկարագրէն՝ զՅարութեան եգիպտոսի գործն, եւ ըստ Հանելոյ՝ զպարսպարանն եւ յերկինս զհամբարձեալն Քրիստոսի մարգարէանայ	ԿԳ.	1
Գոհութիւն Տեառն որ հնծան եհար. եւ ի մարգարէէն իբրեւ ի ժողովրդենէն խոստովանութիւն և աղերս, եւ ի Տեառնէ յանդիմանութիւն անհաւանութեան նոցա. եւ ի նոյն ընդունելութիւն հաւատացելոց, թէ Գոյ այնոցիկ. եւ ամբաստանութիւն զՀրէիցն կռապաշտութենէ, եւ սպառնալիք	ԿԳ.	7
Վասն առ ի Հրէից հաւատացելոց ի Քրիստոս ճիրն օրհնութեան, զի վասն նորա ոչ կործան ամենայն Հրեայք, եւ ամբաստանութիւն զանհաւատիցն	ԿԵ.	8
Խրատ հեզութեան ի փառս Աստուծոյ, եւ բօթ Բաբելոնի, եւ աւետիք Երուսաղեմի եւ գալստեանցն Տեառն, եւ վասն հանդերձեալ կենացն	ԿԶ.	5

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ
ԵՍԱՅԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Տեսիլ Եսայեայ որդւոյ Ամովսայ, զոր եահս ի վերայ Հրէաստանի եւ ի վերայ Երուսաղէմի՝ ի թագաւորու-
թեանն Ոզիայ եւ Յովաթամայ եւ Ա-
քազու եւ Եզեկիայ, որ թագաւորեցին
Հրէաստանի ։
2 Լուր, երկինք, եւ ունկն դիր, երկիր, զի
Տէր խօսեցաւ. Որդիս [1]ծնայ եւ բարձ-
րացուցի, եւ նոքա զիս անարգեցին ։
3 Ծանեաւ եզն զտիրացիչ իւր, եւ էշ
զմսուր տեառն իւրոյ. եւ Իսրայէլ զիս
ոչ ծանեաւ, եւ ժողովուրդ իմ զիս ի
միտ ոչ առ ։
4 Վայ ազգին մեղաւորի. ժողովուրդ
որ լի է մեղօք, սերմն ժանտ, որդիք
անօրէնք. թողին զՏէր եւ բարկացու-
ցին զՍուրբն Իսրայէլի. օտարացան եւ
5 յետս կացին ։ [2]Ձի՞ եւս յաւելուք վէրս
յանօրէնութիւնս՝ Ամենայն գլուխ ի
ցաւս, եւ ամենայն սիրտ ի տրտմու-
6 թիւն ։ Եառից մինչեւ ցգլուխ չիք ինձ
առողջութիւն. [3]ոչ վէրք, [3]ոչ այտուն,
[4]ոչ հարուածք խղխղիծալք, չիք սպի-
գանի ի վերայ դնել, ոչ ձէթ եւ ոչ պա-
7 ատնս ։ Երկիր ձեր աւերակ, քաղաքք
ձեր հրձիգք. զաչխարհն ձեր առաջի ձեր
օտարք [5]կերիցեն, աւերիալ եւ կործան-
8 եալ յազգաց օտարաց ։ Լքեալ [5]ժողովի
դուստր Սիոնի իբրեւ զտաղաւար յայգ-
ւոջ, եւ իբրեւ զհովանի մրգապահաց ի
մէջ ախտենեաց, եւ իբրեւ զքաղաք պա-
9 շարեալ ։ Եւ եթէ ոչ Տեառն զօրու-
թեանց թողեալ էր մեզ զաւակ՝ իբրեւ
զՍոդոմ լինէաք, եւ Գոմորայ նմանեաք։
10 Լուարուք զբան Տեառն, իշխանք Սո-
դոմացւոց, ունկն դիք օրինաց Աստու-

11 ծոյ, ժողովուրդք Գոմորացւոց ։ Զի՞ կայ
իմ եւ յաճախելոյ զոհիցդ ձերոց, ասէ
Տէր. յագեալ եմ ողջակիզօք խոյոց ձե-
րոց, եւ զճարպս գառանց եւ զարիւն
12 ցլուց եւ նոխազաց ոչ կամիմ. [6]Եւ ոչ
[7]ձէ՝ գայցէք յանդիման լինել ինձ, ո՞վ
իսկ խնդրեաց զայդ ի ձեռաց ձերոց,
13 կոխել զդաւիթս իմ։ Մի՛ [7]յաճախէք.
եթէ մատուցանիցէք ինձ նաչիհ՝ զուր
է, եւ՝ խունկք ձեր պիղծ են ինձ. զղլուխս ամսոց ձերոց եւ զշաբաթս եւ
զօրն մեծ ոչ առնում յանձն. [8]զպահս
14 եւ զդադարութիւնս եւ՝ Զամսագլուխս
ձեր եւ զտօնս ձերատեաց անձն իմ.
[9]յագեալ եմ ձեւք, ոչ եւս ներեցից
15 մեղաց ձերոց՝։ Ցորժամ համբառնայցէք
զձեռս ձեր՝ դարձուցից զերեսս իմ ի
ձէնջ, եւ եթէ յաճախիցէք յաղօթս՝ ոչ
լուայց ձեզ. զի ձեռք ձեր լի են արեամբ,
16 Լուացարուք, սրբեցարուք, ընկեցէք
զչարիս ձեր յանձանց ձերոց առաջի ա-
չեաց իմոց. դադարեցէք ի չարեաց ձե-
17 րոց. Ուսարուք զբարիս գործել. խնդրե-
ցէք զիրաւունս, փրկեցէք զզրկեալն,
դատ արարէք որբոյն, եւ տուք իրա-
ւունս այրւոյն ։
18 Եւ եկայք խօսեսցուք ընդ միմեանս,
ասէ Տէր. եւ եթէ իցեն մեղք ձեր իբ-
րեւ [10]զձանձախարիսի՝ իբրեւ զձիւն սպի-
տակ արարից. եւ եթէ իցեն իբրեւ զոր-
դան կարմիր՝ իբրեւ զաար սուրբ արա-
19 րից ։ Եւ եթէ ախորժեսջիք եւ լուիջիք
20 ինձ՝ զբարութիւնս երկրի կերիջիք. Ա-
պա թէ [11]ոչ կամիցիք լսել ինձ՝, սուր
կերիցէ զձեզ. քանզի բերան Տեառն խօ-
սեցաւ զայս ։
21 Զիարդ եղեւ պոռնիկ՝ քաղաքն հա-
ւատարիմ [3]Սիոն, լի հաւատովք՝ յո-

[1] ԵԲԲ. մուեցի [2] ԵԲԲ. Ընդէ՞ր հարկանիջիք այլ եւս որ յաւելուք յապստամբութիւնն [3] ՅԱԲ. պ-ի-ա [4] ԵԲԲ. ուտեն [5] ԵԲԲ. թողեալ է [6] ԵԲԲ. Ցորժամ [7] ԵԲԲ. յաճախէք մատուցանել ընծայս ունայնութեան. [8] ԵԲԲ. անօրէնութիւն է և տօնն, [9] ԵԲԲ. եղեն ինձ բեռն, վաստակեալ եմ ի կրելոյ [10] ԵԲԲ. զկրկին կարմիր [11] ԵԲԲ. հեռասիջիք եւ ապստամբ լինիջիք

բան արդարութիւն հանգուցեալ էր, եւ
22 *արդ սպանօղք նն։ Արծաթ [1]ձեր անփոյթ, վաճառականք ձեր խառնեն ջուր*
23 *ընդ գինի. Իշխանք ձեր՝ ապստամբք գազակիցք են գողոց, սիրեն պկաոաս, [2]վրիժագործք. որոց իրաւանս ոչ առնեն, եւ դատաստանք այրեաց ոչ [3]գան։*
24 *Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր, Տէր զօրութեանց, Հզօրն Իսրայելի. [4]Ա՛խ ձեզ, հզօրքդ Իսրայելի, զի ոչ եւս [5]դադարեսցէ բարկութիւն իմ ի հակառակորդսդ իմոց, եւ դատաստանաւք դատեսցայց*
25 *զիս[6]նմա իմ՝։ Եւ արկից զձեռն իմ ի վերայ քո. եւ [7]ածից քեզ՝ զառանդն ի սրբութիւն ապստամբացդ, եւ դատաւորս կորուսից՝. եւ բարձից ի քէն զամենայն [8]անօրէնս, եւ զամենայն ամ-*
26 *բարտաւանս իմանարհեցուցից՝։ Եւ կացուցից ի վերայ քո զաստւորս իբրեւ զառաջինն, եւ զխորհրդականս քո որպէս ի սկզբանէն. եւ ապա կոչեսցիս դու քաղաք արդարութեան՝ [9]մայր քա-*
27 *ղաքաց հաւատարիմ Սիոն։ Զի իրաւամբք եւ արդարութեամբ փրկեսցի պետութիւն նորա եւ ողորմութեամբ՝։ Եւ խորտակեսցին անօրէնք եւ մեղաւորք ի միասին. եւ որք թողին զՏէր՝ [10]վախճանեսցին ի միասին։ Բանդի արդ ամաչեսցին*
29 *ի կուռս իբրեւանց ընդ որս ինքեանք հաճեալ էին, եւ զգեցցին զամօթ ի պրօչեալս իբրեանց զոյս ինքեանքն արաբրին, եւ ամաչեսցին ի պարտէզս իւ-*
30 *րեանց որոց ցանկացան։ Զի եղիցին՝ իբրեւ զընկոյզն տերեւամած, եւ իբ-*
31 *րեւ զպրաստ որոյ ոչ գուցէ ջուր։ Եւ եղիցի [11]զօրութիւն նորա՝ իբրեւ զծծած վկոյ, եւ գործք [12]նորա իբրեւ զկայծակունս հրոյ. եւ այրեսցին [13]անօրէնք եւ մեզաւորք՝ ի միասին, եւ ոչ ոք էցէ որ չիջուցանիցէ։*

Գլ. Բ

1 Բանն որ եղեւ առ Եսայի որդի Ամոսայ ի վերայ Հրէաստանի եւ ի վերայ Երուսաղեմի։

2 Եւ եղիցի յաւուրս յետինս [11]յայտնի լեառն Տեառն, եւ տուն Աստուծոյ՝ ի վերայ գլխոյ լերանց, եւ բարձրասցի ի վերայ բլրոց, եւ [12]եկեսցեն ի նա ամենայն հեթանոսք։ Եւ երթիցեն ժողովուրդք բազումք, եւ ասասցեն, Եկայք եւ ելցուք ի լեառն Տեառն, ի տուն Աստուծոյ Յակոբայ, եւ պատմեսցէ մեզ զճանապարհս իւր, եւ գնասցուք ընդ
3 նա. զի ի Սիոնէ ելցեն օրէնք, եւ բան Տեառն յԵրուսաղեմէ. Եւ դատեսցի ի մէջ հեթանոսաց, եւ յանդիմանեսցէ զժողովուրդս բազումս. եւ ձուլեսցեն զսուսերս իւրեանց ի խոփս, եւ զսուինս իւրեանց ի մանգաղս. ոչ ամենեւին ազգ յազգի վերայ սուր, եւ ոչ եւս ուսանիցին
5 սալ պատերազմ։ Եւ արդ, դու տուն Յակոբայ, եկայք
6 երթիցուք ի լոյս Տեառն. [14]Քանզի եթող նա զժողովուրդ իւր զտունն Յակոբայ. զի լցաւ իրրեւ զառաջինն ազգարտ նոցա համաձայնք իբրեւ զայլազգիսդ, եւ որդիք բազումք այլազգիք ծնան նոցա։
7 Լցաւ ազգարտ նոցա ոսկւով եւ արծաթով, եւ ոչ էր թիւ գանձուց նոցա. լցաւ երկիր նոցա երիվարօք, եւ ոչ էր
8 թիւ կառաց նոցա. Լցաւ երկիր նոցա պարսկեւօք, գործոց ձեռաց իւրեանց երկիր պագին որոց պարարին մատունք
9 նոցա. Խոնարհեցաւ մարդ, եւ յերկիր կործանեցաւ այր. եւ ոչ [15]ներեսցիս նո-
10 ցա։ Եւ արդ երթայք մտէք ընդ վիմօք, եւ թաքերուք յերկրի յերեսաց ահի Տեառն, եւ ի փառաց զօրութեան
[16]նորա. յորժամ յարիցէ վանել զերկիր։
11 Զի աչք Տեառն բարձունք են, եւ մարդ տառապեալ՝. եւ խոնարհեսցի բարձրութիւն մարդկան, եւ բարձրասցի Տէր
12 միայն յաւուր յայնմիկ։ Զի օր Տեառն զօրութեանց ի վերայ ամենայն հպարտից եւ ամբարտաւանից, եւ ի վերայ

---

[1] ՆԵԲՐ. քո եղեւ ի կղկղանս, գինի քո խառնեալ է ջրով. (23) Իշխանք քո [2] ՆԵԲՐ. զհետ երթան վարձուց [3] ՆԵԲՐ. Վա՛յ, թնդրեցից քեզ ի հակառակորդսդ իմոց, և առից վրէժ ի թշնամեաց իմոց [4] ՆԵԲՐ. զանեցից իբրեւ ածառաւ զկղկղանսքո [5] ՆԵԲՐ. անուգ քո [6] ՆԵԲՐ. ասան Հաւատարիմ. (27) Սիոն իրաւամբք փրկեսցի, եւ դարձեալք նորա արդարութեամբ. [7] ՆԵԲՐ. սպառեսցին. (29) Քանզի յամօթի լիցին ընդ բեւեկնիս որոց ցանկացայք, եւ ամաչեսջիք ընդ պարտէզս զորս ընտրեցեալ. (30) Զի եղիջիք [8] ՆԵԲՐ. զօրաւորն [9] ՆԵԲՐ. նորա [10] ՆԵԲՐ. երկաբեան

[11] ՆԵԲՐ. Հաստատեալ եղիցի լեառն տան Տեառն [12] ՆԵԲՐ. գիմեսցեն իբրեւ զհեղեղ [13] ՆԵԲՐ. շաւիղս նորա [14] ՆԵԲՐ. Քանզի թողեր զժողովուրդ քո, զտունն Յակոբայ. զի լցան խոթորուկ արեւելից, և հմայեն իբրեւ զՊղշտացիս, և յորդիս օտարաց եառան ձեռս. [15] ՆԵԲՐ. ներեսցես [16] ՆԵԲՐ. նորա. (11) Աչք ամբարտաւանութեան մարդոյ կորացին

ամենայն բարձրացելոց [1]եւ վերացելոց",
13 եւ խոնարհեցոյն. Եւ ի վերայ ամենայն
մայրից Լիբանանու բարձրացելոց եւ վե-
րացելոց, եւ ի վերայ ամենայն ծառոց
14 կաղնեաց Բասանու, եւ ի վերայ ամե-
նայն լերանց բարձանց, եւ ի վերայ ամե-
15 նայն բլրոց բարձրացելոց, եւ ի վերայ
ամենայն աչառարակաց բարձրացելոց,
եւ ի վերայ ամենայն պարսպաց [2]բարձ-
16 րացելոց, Եւ ի վերայ ամենայն նաւուց
[3]Ծովու, եւ ի վերայ ամենայն հանդիսի
17 գեղեցկութեան [4]նաւուց: Եւ խոնարհեսցի
[5]ամենայն մարդ", եւ անկցի հպարտու-
թիւն մարդկան, եւ բարձրասցի Տէր միայն
18 յաւուրն յայնմիկ: [6]Եւ զձեռագործս իւրեանց
19 զամենայն ապրցին [7]ածաւացեան" յայրս եւ
ի ծերպս վիմաց եւ ի սորս երկրի, յերեսաց
ահի Տեառն եւ ի փառաց զօրութեան
նորա, յոյժ յարիլ վանել վերկիր:
20 [8]Զի յաւուր յայնմիկ հանցէ" մարդ
զդարչնելիս իւր զարծաթիղենիս եւ զա-
կեղէնս' զոր արարին երկիր պագանել'
21 [9]ննոտեացն եւ չղջիկանաց, Մտանել
ի ծակս [10]վիմի հաստատանաց" եւ ի
ծերպս վիմաց, յերեսաց ահի Տեառն եւ
ի փառաց զօրութեան նորա, յոյժ յար
22 յարիլ վանել վերկիր: [11]Լուծ ձեզ" ի
մարդոյն յոյսդ զոր չունիս յանդունս նո-
րա. զի ընդ [12]ո՞ւմ ումեք" համարեսցին նա:

Գլ. Գ

1 [13]Ա՛հաւասիկ Տէր, Տէր զօրութեանց
բարձեալ ի Հրէաստանէ եւ յերուսաղեմէ
[14]զայր հզոր եւ զկին զօրաւոր", զզօրու-
2 թիւն հացի եւ զզօրութիւն ջրոյ, Զհզայն
եւ [1]զզօրաւորն եւ" զայր պատերազմող,
եւ զդատաւոր եւ զմարգարէ եւ [15]զքննիչ
3 եւ զծեր, Եւ զդիւանապետ, եւ [16]զօքանչելին
խորհրդական", եւ զհմաստասէն ճարտարա-
4 պետ, եւ զհանճարեղն [17]զունկնդիր: Եւ
կացուցից ի վերայ նոցա մանկունս իշ-
խանս, եւ [18]խաւսեսցին նոցա:
5 Եւ անկցի ժողովուրդն՝ այր ընդ այր, եւ այր
ընդ ընկերի իւր բռնաւ, ընդհարցի մանուկն
ընդ ծերոյն եւ անարգն ընդ պատուականա-

6 նին: Զի բռնան հարկանիցէ այր զեղբօրէ
իւրմէ [1]կամ զընտանւոյ հօր իւրոյ, եւ
ասիցէ, Հանդերձ դու քո, լիր մեր իշ-
խան, եւ [17]կերակուր մեր ընդ քեզ" լի-
7 ցի: Տայցէ պատասխանի յաւուրն յայն-
միկ եւ ասասցէ, Ոչ եղէց իշխան, զի
ոչ զոյ ի տան իմում հաց եւ ոչ հան-
դերձ, եւ ոչ եղէց իշխան ժողովրդեանս
8 այսմիկ: Զի [18]լքաւ Երուսաղէմ, եւ
Հրէաստան կործանեցաւ. [19]եւ լեզուք
նոցա անօրէնութիւնք ի Տեառնէ ա-
պրատամիկեին: Վասն որոյ խոնարհեցան
վտառք նոցա, եւ ամօթ երեսաց նոցա
ծածկեաց զնոսա," եւ զմիոց իւրեանց
իբրեւ զՍոդոմայեացն պատմեցին եւ
չայտ արարին. վայ անձանց նոցա՝ զի
10 [20]խորհեցան խորհուրդ չար առանձինն, Եւ
ասեն, Կապեսցուք զարդարն՝ զի դժպի
եղիցի մեզ. այսուհետեւ" զապրիսնս զոր-
11 ծոց իւրեանց կերիցին: Վայ անօրինին,
[21]չարիք բան զործոց ձեռաց իւրոց անց-
12 ցին ընդ նա: Ժողովուրդ իմ, հարիա-
նանք ձեր [22]ճաւրաղ տանին զձեզ, եւ
պահանջօղք" տիրեն ձեզ. Ժողովուրդ
իմ, որ երանեցուք ձեզ՝ խաբեն զձեզ, եւ
զչաւիղս ոտից ձերոց խռովեցուցանեն:
13 [23]Այլ արդ հասցէ Տէր ի դատաստան,
եւ կացուցէ յաւանին ժողովուրդ իւր:
14 Ինքնին Տէր ի պատ եկեսցէ ընդ ծերս
ժողովրդեան իւրոյ եւ ընդ իշխանս նո-
ցա. զուք [1]զի՞ հրկէզ արարէք զայգի
իմ, եւ յափշտակութիւնն անանկին է ի
15 տունս ձեր: Եւ զի՞ ջրկէք զժողովուրդ
իմ, եւ զերեսս անանկաց լի առնէք ա-
մօթով, ասէ Տէր՝ Տէր զօրութեանց:
16 Այսպէս ասէ Տէր. Փոխանակ զի հպար-
տացան դստերք Սիոնի, եւ գնացին ի
բարձր պարանոց, յօնօք ակնարկէին,
եւ ի գնացս իւրեանց քարչէին զտատ-
րոսս իւրեանց, եւ ոտիւքն կաքաւէին,
17 [24]Եւ խոնարհեսցուսցէ Աստուած զիշխանս
դստերս Սիոնի, եւ մերկասցէ Տէր զպարզ

[1] 3ԵԲբ· պոխոե [2]ԵԲբ· ամրացելոց [3]ԵԲբ· Թար-
սըսի [4]ԵԲբ· բարձրութիւն մարդոյ [5]ԵԲբ· Եւ
կուռք պատապուռ ջնջեսցին· (19) Եւ մտցեն
[6]ԵԲբ· Յաւուր յոյնմիկ ընկեսցէ [7]ԵԲբ· խրտոց
[8]ԵԲբ· քարանց [9]ԼԲբ· Ի բաց կացէք [10]ԵԲբ
ինձ իմիք [11]ԼԲբ· Զի ահաւասիկ [12]ԼԲբ· զզօ-
րութիւն եւ զզօրութիւն, [13]ԼԲբ· վիզ [14]ԵԲբ·
զպատերազմն եւ զհոգեհրդական [15]ԵԲբ·
հարցուկ [16]ԵԲբ· փոքրկունք

[17]ԵԲբ· աւերակս այս ընդ ձեռամբ քով [18]ԵԲբ·
սատանեցաւ [19]ԼԲբ· վասն զի լեզուք նոցա և
գործք նոցա հակառակ են Տեառն ի զայրացու-
ցանել զաչս փառաց նորա: (9) Տեսիլ երեսաց
նոցա վկայէ ի նոսա· [20]ԼԲբ· գործեցին իւր-
եանց չարիս: (10) Ասացէք ցարդարն թէ բար-
ւոք է, զի [21]ԵԲբ· չար է, զի [22]ԵԲբ· մանկունք,
եւ կանայք [23]ԼԲբ· Եւ Տէր ի դատաստան,
եւ եկաց ի դատել ժողովրդս· [24]ԼԲբ· Եւ
Հարցէ Տէր կնոտութեամբ գդագաթունս դստե-
րաց Սիոնի, եւ մերկասցէ Տէր զամօթ նոցա:

18 Նոցա՝" Յաւուր յայնմիկ հանցէ Տէր զփառս հանդերձից նոցա եւ զպատմուճանս
19 ճաճս նոցա, եւ զխիւս եւ զծամակալս
20 եւ զպատակակալս եւ զմահիկս, եւ զզարդ երիասց նոցա եւ զպաճուճանս զարդու
փառաց նոցա, եւ զբօշկս եւ զպատրանջանս եւ զմեհենադգս եւ զղինիս,
21 եւ զմատանիս եւ զկշտասպանակս նոցա,
2 զղիպակս եւ զձեռնասակս. Զկապաճիրանն եւ զմիջնաճիրանին, զաւանին ար-
23 կանելի եւ զերեւելի լակտացին, Զբեհեզն եւ զերկրագոյն եւ զկարմիր չզա-
չաւանն եւ զճամկուսարն եւ զսակնճա-
24 մուկն եւ զսակէսաւսն։ Եւ եղիցի փո
խանակ հոտոյն անուշիկ՝ փոչի, եւ փո-
խանակ կամարացն՝ չուան գոտի, եւ փո-
խանակ ոսկի զարդու գլխոյն՝ կնատա-
խիւն, վասն գործոց քոց, եւ փոխանակ
25 ոսկեհուռն գիպակին՝ քուրձ զգեցցիս։ Եւ
1որպէս քո գեղեցիկ զօր սիրես՝ սրով մնասցի,
26 եւ իշխանք ձեր սրով անկցին. Եւ թչուա-
ռացին եւ սուգ զգեցցին ոսպատաք զար-
զուց ձերոց, եւ մնասջիր միայն եւ յերկիր
կործանեսջիր"։

Գլ. Դ

1 Եւ բռնան հարկանիցեն եւթն կին զառ-
նէ միոջէ[2] եւ ասիցեն, Հաց՝ զմեր կե-
րիցուք, եւ հանդերձ՝ զմեր զգեցցուք,
բայց միայն անուն քո կոչեսցի ի վերայ
մեր. բարձ ի մէնջ զնախատինս մեր։
2 Յաւուր յայնմիկ 3ծագեսցէ Աստուած
խոնարհութիւք փառօք իւրովք յերկիր,
բարձրացուցանել եւ փառաւոր առնել
3 զմնացորդս" Իսրայէլի։ Եւ մնացորդքն
Սիոնի, եւ մնացորդքն Երուսաղեմի
սուրբ կոչեսցին՝ ամենեքեան որ գրե-
4 ցան յերուսաղէմ ի կեանս, 4Զի լուա-
ցէ Տէր զաղան ուսաերաց եւ գաս-
պաց Սիոնի եւ զերուսաղեմի, եւ զա-
րիւնն՝ ի բաց սրբեսցէ ի միջոյ նորա
հոգւով գատաստանաց եւ հոգւով այր-
5 ման։ Եւ 5եկեսցէ, եւ եղիցի ամենայն
տեղի լերին Սիոնի եւ ամենայն որ չուրջ

1 ԵԲԲ. Աբք քո իսուր անկցին և զօրաւորք քո ի պա-
տերազմի։ (26) Եւ գրուանք նորա ողբասցեն, եւ
ամայացեալ նստցին ի գետնի 2 ԵԲԲ. եօթն յոե-
լեաս, յաւուր յայնմիկ 3 ԵԲԲ. եղիցի շառաւիղ Տեառն
ի վայելչութիւն և ի փառս, եւ պտուղ երկրին
ի պարծանս եւ ի պատիւ մնացորդացն 4 ԵԲԲ.
Զորժամ լուացէ Տէր զաղտն գաւեթաց Սիոնի,
և զարիւնն Երուսաղեմի 5 ԵԲԲ. արասցէ Տէր ի
վերայ ամենայն տեղեաց բնակութեան լերինն
Սիոնի, եւ ի վերայ գումարութեան նորա

զնովաւ լսցէ" հովանի ամպոյ ի տուէ, եւ
լրիւս զծուխ եւ զլոյս հրոյ բորբոքելոյ
ի գիշերի, 6 ամենայն փառաց ծածկոցի,
6 եւ եղիցի հովանի ի տօթոյ, եւ յարկ ծած-
կութեան ի խաւսս թնդել" եւ յանձրեւոյ։

Գլ. Ե

1 7Երգեցից սիրելոյ այգւոյ իմոյ զերգս
սիրելւոյ նորա. Այգի եղեւ սիրելւոյն
յանկեան", ի տեղւոջ պարարաւթեան։
2 8Ցանգով վակեցի, ձողարարձ գարդա-
կեցի, եւ անկեցի արմի սորեկ. աչաս-
տակ չինեցի" ի միջի նորա, եւ գուբ հնծան
9փորեցի ի նմա. եւ մնացի" զի բերցէ
խաղող, եւ երես 10փուչ։
3 Եւ այժմ, արք Ցուդայ եւ բնակիչք
Երուսաղեմի, գատ արարէք ընդ իս եւ
4 ընդ այգի իմ։ Զի՞նչ ինչ առնել էր այգ-
ւոյ իմոյ, եւ ես ոչ արարի նմա. մնացի
5 զի բերցէ խաղող՝ եւ երես 10փուչ։ Եւ
արդ ես ինձէն պատմեցից զինչ արա-
րից ընդ այգի իմ. քակեցից զցանգ նո-
րա, եւ եղիցի յաւիւսակուխիւն. կոր-
ծանեցից զպարիսպս նորա, եւ եղիցի
6 ի կոխումն։ Եւ թողից 11զայգի իմ", եւ
մի՛ յատցի եւ մի՛ բրնացի, եւ բուսցի ի
նմա փուշ 12իրրեւ ի խոպանի". եւ պա-
տուէր տաց ամպոց իմոյ՝ զի մի՛ տե-
7 ղասցին յայգի իմ։ Զի այգի Տեառն զօ-
րութեանց՝ տունն Իսրայէլի է, եւ մարգն
Ցուդայ՝ նորատունկ սիրելի. 13մնացի զի
արասցէ իրաւունս, եւ արար անիրա-
ւութիւն, եւ ոչ արդարութիւն՝ այլ ա-
ղաղակ։
8 Վայ այնոցիկ որ յաւելն տուն ի տուն,
եւ ագարակ առ ագարակ միրձեցուս-
ցեն, 14զի զընկերին հանիցեն". միթէ
9 միայն բնակեսցէ իւրեք յերկրի։ Նա ա-
ւանիկ ազգ եղեւ 15յականջս Տեառն զօ-
րութեանց այդ ամենայն". զի եթէ ե-
զիցին տունք բազումք, ոսկայն յաւեր

6 ԵԲԲ. զի ի վերայ ամենայն փառաց եղիցի ծած-
կոյթ։ (6) Եւ եղիցի տաղաւար ի հովանի զաիւ
ի տօթոյ, եւ յապաւէն եւ ի ծածկութիւն՝ ի
մրրկէ 7 ԵԲԲ. Երգեցից այգ սիրելւոյ իմում-
զերգ սիրելւոյ իմոյ, զայգւոյ նորա. Այգի եղեւ
սիրելւոյ իմոյ ի բլրի ուրեք 8 ԵԲԲ. Հաս խրամ
զնովաւ, հան ի քաց զքարինս նորա, և անկաց
որմի բնտիր, և աշտարակ չինեաց 9 ԵԲԲ. փոր-
եաց ի նմա եւ մնայր 10 ԵԲԲ. խաղող վայրի
11 ԵԲԲ. զնա խոպանացեալ 12 ԵԲԲ. եւ տատասկ
13 ԵԲԲ. եւ մնաց 14 ԵԲԲ. մինչեւ չմնայց տեղի
15 ԵԲԲ. յականջս իմ ի Տեառնէ զօրութեանց

գարձցին . եւ եթէ մնծամնծք եւ գե-
զեցիկք իցեն , ոչ օք իցէ որ բնակիցէ
10 ի նոսա : Զի ուր գործիցեն սասն լուծք
հզանց , հզիցի անդ սոփոր մի . եւ որ
սերմանիցէ [1]արդաս վեց՝ , ժողովեսցէ
11 [2]գրիւս երիս՝ : Վայ այնոցիկ ոյք յառնն-
ընդ առաւօտս եւ զհետ լինին ցբուցն ,
որ երեկոնան ի նմին . զի զինին խակ
12 անդէն զնոսին այրէ : Փողովք եւ թմբիկս
եւ քնարաւ եւ երգովք զկինին ըմպեն ,
եւ ի գործս Տեառն ոչ հայեին , եւ զգործս
13 ձեռաց նորա ոչ ուսնուն ի միա : Այսուհետեւ
հասեւ ի գերութիւն մատնեցաւ ժողո-
վուրդ իմ , վասն ոչ ճանաչելոյ նոցա
զՏէր , եւ [3]բազում եղեն պիակունք նո-
ցա վասն սովոյ հացի եւ ծարաւոյ ջրոյ ,
14 եւ՝ լայնեցին զհոսիք զանձինս իւ-
րեանց , եւ բացին զբերանս իւրեանց՝
՝զի մի՛ գտարեսցին . եւ իջցեն փա-
ռաւորք եւ մնծամնծք եւ մնծաւտունք եւ
ժանտագործք նոցա՝ , եւ զուարճացեալքն
15 ի նմա : Եւ խոնարհեսցի մարդ , եւ ա-
նարգեսցի այր . եւ աչք ամբարտաւանք
16 խոնարհեսցին . եւ բարձրասցի Տէր զո-
րութիւնս իրաւամբք , եւ Աստուած
վառաւորեսցի արդարութիւնս :
17 Եւ արածեսցին [5]յափշտակեալքն իրրեւ
զուխք , եւ զաւերակս մնայեալսցն գա-
ռինք՝ կերիցեն :
18 Վայ այնոցիկ ոյք ձգեն զմեզս իւ-
րեանց իրրեւ [6]երկայն պարանս , եւ
իրրեւ փոկով լծոյ երնջոյ՝ զանօրէնու-
19 թիւնս : Ոյք ասեն թէ վաղվաղակի մեր-
ձենսցի զոր աւնկոցն իցէ՝ զի տեսցուք
եւ եկեսցէ խորհուրդ Սրբոյն Իսրայելի՝
20 զի գիտասցուք : Վայ այնոցիկ ոյք ա-
սիցին զչարն բարի , եւ զբարին չար .
ոյք գնիցեն զլոյսն խաւար , եւ գխա-
ւարն լոյս . ոյք գնիցեն զդառն քաղցր ,
21 եւ զքաղցրն գառն : Վայ այնոցիկ որ
զանձինս առ իմաստունս ունիցին , եւ
յաչս անձանց իւրեանց խորհրդականք :
22 [7]Վայ հզօրացդ ձերոց որ ըմպելն զգի-
նին , եւ իշխանացդ որ խառնեն զդքին՝ :
23 Որ արդարացուցանեն զամպարիշտն վասն

[1]ՆԵԲ. քոռ. [2]Կամ. արդաս [3]ՆԵԲ. փառաւորք նորա
եղեն սովամահ , և ամբոխ նորա ցամաքեցաւ ի
ծարաւոյ ։(14)Վասն որոյ [4]ՆԵԲ. անհնարինս, եւ
իջցեն փառք նորա եւ ամբոխ նորա և աղաղակ
նորա [5]ՆԵԲ. գառինք բան օրինի (կամ՝ յա-
բոտս), և զաւերակս պարարտաց օտարք [6]ՆԵԲ.
ուռայնութեան [7]ՆԵԲ.Վա՛յ որ հզօրքն են լըմպել
գինի, եւ արք զօրութեան ի խառնել ցգի.

24 կաչառոց , եւ զիրաւունս գողանան զար-
գարոյն : Վասն այնորիկ՝ որպէս վառի
եղէգն ի կայծականց հրոյ , [8]այնպէս ա-
րեսցին՝ իբրեւ ի բորբոքեալ լոցոյ . եւ արմատ
նոցա իրրեւ զփտիլ եղիցի , եւ ծաղիկ
նոցա իրրեւ զվազիլ եւ լանիցէ . զի ոչ կա-
մեցան զօրէնս Տեառն զօրութեանց ,
այլ եւ [9]զբանսեցին եւս զբանս Սրբոյն
25 Իսրայելի : Եւ բարկացաւ սրտմտութիւն
Տեառն զօրութեանց ի վերայ ժողովըր-
դեան իւրոյ , եւ արկ զձեռն իւր ի վե-
րայ նոցա եւ սասանեցաց զնոսա, [10]բար-
կացաւ ի վերայ լերանցն՝ , եւ եղեն դիա-
կունք նոցա իրրեւ ապր զձանապարհս .
ի վերայ այսր ամենայնի ոչ դարձաւ
սրտմտութիւն նորա , այլ տակաւին ձեռն
իւր բարձրացեալ է :
26 Այսուհետեւ ամբարձցէ նշան յազգս
հեռաւորս , եւ [11]ածցէ զնոսա՝ ի ծագաց
երկրի . եւ անա վազվազակի արագ
ընթասցին , եւ [12]նեղեսս հասանիցեն :
27 Ոչ քաղցիցեն եւ ոչ վհատակեսցին , եւ
ոչ նիրհեսցին եւ ոչ ննջեսցին , եւ ոչ
լուծցին զգեստս ի մէջոյ իւրեանց , եւ
28 ոչ հատցին իրացք կօշկաց նոցա : Որոց
նետք իւրեանց սրեալ են , եւ ազեղունք
լարեալք . սմբակք երիվարաց նոցա իւ-
րեւ զվէմ հաստատուն համարեցան , ա-
29 նիւք կառաց նոցա իրրեւ զմրրիկ : [13]Դի-
մացն իրրեւ զառիւծունս , եւ հասցեն՝
իրրեւ զկորիւնս առիւծուց , զոչեսցեն
եւ յարձակեսցին եւ հատցեն գազանա-
բար , եւ ոչ օք իցէ որ փրկիցէ զնոսա :
30 Ակտակ արասցեն վասն նոցա յաւուր
յայնմիկ իրրեւ զձայն ծովու ամբոխե-
լոյ ալեաց . [14]հայեսցին յերկինս ի վեր
եւ յերկիր ի խաւարն , եւ անա խաւար
խռովութիւնս ի տարակուսանս նոցա՝ :

ԳԼ . Զ

1 Եւ եղեւ յամին յորում մեռաւ Ոզիա
արքայ , տեսի զՏէր նստեալ յաթոռ
բարձրութեան եւ վերացեալ . եւ լի էր
2 տունն [15]փառօք նորա : Եւ սերովբէք կա-
յին [16]չուրջ զնովաւ՝ . վեց թեւք միոյ եւ

[8]ՆԵԲ. եւ խար ապառեսցի [9]ՆԵԲ. անարգեցին
[10]ՆԵԲ. եւ սասանեցան լերինք [11]ՆԵԲ. չչեսցէ
նոցա [12]ՆԵԲ. Մռնչիւն նոցա իրրեւ զառիւ-
ծու , եւ մռնչեսցեն [13]ՆԵԲ. և ի հայել ուրուք
լերկիր՝ անդ խաւար, անձկութիւն , եւ լոյս
նեմացեալ լերկրի նոցա [14]ՆԵԲ. քզանցիւք
[15]ՆԵԲ. ի վերուստ նորա

վեց թեւք միոյ · երկուքն ծածկէին զերեսս իւրեանց , եւ երկուքն ծածկէին զոտս իւրեանց , եւ երկուքն թռուցանէ։
3 Աղաղակէին միւսանդի եւ ասէին , Սուրբ, սուրբ , սուրբ՝ Տէր զօրութեանց , լի է
4 ամենայն երկիր փառօք նորա եւ վիրայսա դրանն ի ձայնէն զոր ագաղակէին , եւ տունն լինէր ծխով ։ եւ ասեմ , Վայ է ինձ , [1]ես այր ապտակեալ զիարդ կամ հիացեալ”. զի մարդ եմ՝ եւ պիղծ չրթունս ունիմ , եւ ի մէջ պղծաչուրթին ժողովրդեան լնակիաց եմ ես . [2]եւ զՏէր զօրութեանց տեսի աչօք
6 իմովք ։ եւ առաքեցաւ առ իս մի ի սերովբէից անտի, եւ ի ձեռին իւրում ունէր կայծակն, զոր առեալ ունելիօք ի սեղանոյ
7 անտի , Երեր մերձեցոյց ի բերան իմ , եւ ասէ , Ահաւասիկ մերձեցաւ այդ ի չրթունս քո , եւ հանցէ զանօրէնութիւնս քո . եւ զմեղս քո սրբեսցէ ի քէն ։
8 Եւ լուայ զբարբառ Տեառն որ ասէր, Զո՞ առաքեցից եւ կամ ո՞վ երթիցէ [3]առ այն ժողովուրդ”՝ ։ եւ ասեմ,
9 Ահաւասիկ ես , առաքեա զիս ։ եւ ասէ , Երթ եւ ասա ցժողովուրդն յայն , Լսելով լուիջիք եւ մի՛ իմասջիք , եւ տեսանելով տեսջիք եւ մի՛ գիտասջիք ։
10 [4]Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանդ այդորիկ , եւ ականջօք իւրեանց ծանրունս լուան , եւ զաչս իւրեանց կափուցին”, զի մի՛ երբեք տեսանիցեն աչօք , եւ լուիցեն ականջօք , եւ իմասցին սրտիւք , եւ դառնայցեն եւ
11 բժշկեսից զնոսա ։ Եւ ասեմ , Մինչեւ ե՞րբ, Տէր ։ Եւ ասէ , Մինչեւ աւերեսցին քաղաքք ի բնակչաց , եւ տունք առ ի չգոյէ մարդկան , եւ հիասցէ երկիրդ
12 աւերակ ։ [5]Եւ յետ այնորիկ յերկարեսցէ Աստուած մարդկան , եւ բազմասցին
13 հիացեալքն յերկրի ։ Սակայն եւ ի նմա մնասցէ տասանորդ. եւ այն եւս դարձի եւ կերիցի, իբրեւ դրեւեկնի եւ իբրեւ զկաղնի որոյ մնայցէ բունն ի հատանել նորա, այսպէս զաւակն սուրբ բուն նորա է ։

իբրեւ զրեւեկնի եւ իբրեւ զկաղնի թօթափելոյ յիւրաքանչիւր սաստկեալ զաւակն սուրբ արձանաթիւն նորա ։”

ԳԼ · Է

1 Եւ եղեւ յաւուրս Աքազու Յովաթամայ , որդւոյ Ողիայ , թագաւորին Հրէաստանի , եկ Ռասիմ արքայ Ասորւոց , եւ Փակէէ որդի Ռոմմելեայ արքայի Իսրայելի ի վերայ Երուսաղեմի , սակ ընդ նմա պատերազմ. եւ ոչ կարացին
2 [6]պատերազել ընդ նա”։ Այդ եղեւ ի տուն Դաւթի եւ ասեն , Միաբանեցաւ Ասորի ընդ Եփրեմայ , եւ զարհուրեցաւ անձն նորա եւ անձն ժողովրդեան նորա , զոր օրինակ չարժիցի յանտառի ծառ մի ի
3 հողմոյ ։ Եւ ասէ Տէր ցԵսայի , Եկ ընդ առաջ Աքազու , դու եւ [7]մնացեալ որդին քո Յասուբ , հանդիպեա աւազանին վերին՝ ճանապարհի պարարակին թափ-
4 չի . Եւ առասցես ցնա , Զգոյշ լիր, հանդարտեա , եւ մի՛ երկնչիր , եւ մի՛ զարհաւրիցիր անձն քո յերկուց փայտից խանձոզային ծխելոց , [8]զի յորժամ հասանիցէ բարկութիւն սրտմտութեան իմոյ , գարձեալ բժշկեցից ։ Եւ որդին
5 Ասորւոց եւ որդին Ռոմմելեայ” Չի խորհեան խորհուրդ չար , [9]Եփրեմ եւ որ-
6 դին Ռոմմելեայ զքէն եւ ասեն, Ելցուք ի Հրէաստան , [10]խօսեսցուք ընդ նոսա , գարձուսցուք զնոսա” առ մեզ, եւ կացուսցուք նոցա թագաւոր զորդին Տա-
7 բեղայ . Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Մի՛ կայցէ խորհուրդն այն, եւ մի՛ եղիցի . Այլ զլուխ Ասորւոյ Դամասկոս, եւ զլուխ Դամասկոսի Ռասիմ . եւ այլ եւս վեմ տասն եւ հինգ ամ , եւ տապ [11]պատկասցէ թագաւորութիւնն Եփրեմայ ի
9 ժողովրդենէ անտի”։ Եւ զլուխ Եփրեմայ [12]Սամարիան , եւ զլուխ [13]Սամարիայի որդին Ռոմմելեայ . եւ եթէ ոչ հաւատայէք , [14]եւ ոչ ի միտ առնուցուք”։
10 Եւ յաւել Տէր խօսել ընդ Աքազու եւ
11 ասէ , [14]Խնդրեա դու քեզ նշան ի Տեառնէ

---

[1] Ես. զի կորեայ [2] Ես. քանզի զՔագաւորն
[3] Ես. վասն մեր [4] Ես. Թանձրացաւ զսիրտ ժողովրդեանդ այդորիկ, եւ ծանրացաւ զականջս նոցա , եւ կափո զաչս նոցա , [5] Ես. Եւ հեռացուսցէ Տէր զմարդն , եւ բազմասցի ամայութիւն ի մէջ երկրի · (13) Սակայն եւ ի նմա մնասցէ տասանորդ. եւ այն եւս դարձի եւ կերիցի, իբրեւ դրեւեկնի եւ իբրեւ զկաղնի որոյ մնայցէ բունն ի հատանել նորա, այսպէս զաւակն սուրբ բուն նորա է ։

[6] Ես. կռուել ընդ նմա [7] Ես. Ակար Յասուբ , որդի քո, ի ծայր ջրմղի աւազանին վերոյ, ի
[8] Ես ի սաստիկ բարկութենէն Ռասիմայ և Ասորւոյ, եւ որդւոյն Ռոմմելեայ։ [9] Ես. Ասորի, եփրեմ
[10] Ես. եւ բռնադատեսցուք զնա , եւ խորտակեսցուք զնա [11] Ես. դադարեսցի Եփրեմ ի լինելոյ ժողովուրդ [12] Ա.ՅԻՆ· Սամարիա ,
[13] Ա.ՅԻՆ· Սամարեայ [14] Ես. ոչ եղիջիք յապահովս

Աստուծոյ քումմէ ի խորութեան կամ
12 ի բարձրութեան ։ Եւ ասէ Աքազ , Ոչ
13 խնդրեցից եւ ոչ փորձեցից զՏէր ։ Եւ
ասէ , Արդ լուարուք , տունդ Դաւթի .
Թէ՞ ինչ թուիլի ձեզ աչսհատուցանել մարդկան , [1]եւ զիա՞րդ
հատուցանէք աչսհատութիւն Տեառն՞ ։
14 Վասն այդորիկ տացէ ձեզ Տէր ինքնին
նշան . Ահա կոյս յղասցի եւ ծնցի որդի,
եւ կոչեսցին զանուն նորա Էմմանուէլ ։
15 Եւզ եւ մեղր կերիցէ . [2]մինչչեւ ինչ իցէ
ծանուցեալ նորա կամ ախորժեալ յառաջագոյն զչարսն թիւն, ընտրեսցէ զբարին ։
16 Վասն այնորիկ մինչչեւ ծանուցեալ իցէ
մանկանն զբարի կամ զչար, անայգեսցէ
զչարն եւ ընտրեսցէ զբարին . եւ մնասցէ
երկիրդ յորմէ՞ դուզ կասկածեա՞ս յերեսաց
17 երկուց թագաւորացն ։ Այլ ածցէ Աստուած ի վերայ քո եւ ի վերայ ժողովրդեան քո եւ ի վերայ տան հօր քո
աւուրս՝ որ չեւ եւս են եկեալ , յորմէ
օրէ [3]հնան Եփրեմ ի Հրէաստանէ զար18 քայն՞ Ասորեստանեայց ։ Եւ եղիցի
յաւուր յայնմիկ չարժեսցէ Տէր զճանճիւնն՝ [4]որ սիրեսցէ՞ յայնկոյս գետոյն
Եգիպտացւոց , եւ զձիաստանն՝ որ է
19 յերկրին Ասորեստանեայց ։ Եւ եկեսցեն
ամենեքեան , եւ հանգիցեն ի ձորս երկրիդ եւ ի ծերպս վիմաց եւ յայրս , եւ
յամենայն փշալարս եւ յամենայն փայտս ։
20 Յաւուր յայնմիկ գերծցէ Տէր [5]սրովն մեծաւ եւ արբեցելով, որ է յայնկոյս գետոյն
թագաւորին Ասորեստանեայց՞ , զգլուխ
եւ զմազ ոտից , եւ զմօրուսն սրբեսցէ ։
21 Եւ եղիցի յաւուր յայնմիկ բուծցէ մարդ
երինջ մի յարջաւոց եւ մաքիս երկուս .
22 Եւ եղիցի ի բազմութենէ կաթինն՝ կերիցէ եւզ . զի եւզ եւ մեղր կերիցէ ա
23 մենայն որ մնացեալ իցէ յերկրին ։ Եւ
եղիցի յաւուր յայնմիկ , եղիցի ամենայն
տեղի ուր իցէ հազար որթ՝ հազար կշռոյ
սկեղ . խոպանասցի եւ ի փուշ գարձցի .
24 Նետովք եւ ազեղնաւորք մտանիցեն
անդր . զի խոպանացեալ եւ փշալեր եւ
25 զիցի ամենայն երկիր . [6]Եւ ամենայն
լեառն որոշագիր ականարեկ լիցի . եւ
մի հասցէ անդր երկիւղ , զի եղիցի ի
խոպանէն եւ ի փշոյ՝ յարօտ գառին եւ
ի կոխան եզին ։՞

Գլ . Ը

1 Եւ ասէ ցիս Տէր , Առ դու քեզ տումս
մի *նոր մեծ , եւ գրեսցես ի նմա գրչաւ
ման ճարտարի , [7]Արագարագ զուարճասարկանել՝ եւ վազվազակի գապտուռ ժողովել .
2 քանզի հաստեալ է՞ ։ Եւ վկայս [8]կացուսցես ինձ զիս զուրիա քահանայ եւ զՈւրիա
քահանայ եւ զԶաքարիա որդի Բարաք
3 քեայ ։ Եւ մերձեցայ առ կինն իմ մարգարէ , եւ յղացաւ եւ ծնաւ որդի . եւ
ասէ ցիս Տէր , Կոչեսա զանուն նորա՝
[7]Արագարագ կապաեաղիր՝ եւ վազվա
4 զակի ուար հարկանիցիր ։՞ Քանզի մինչչեւ ծանուցեալ իցէ մանկանն կոչել
զհայր կամ զմայր , [9]առցէ զղօրութիւն
Դամասկոսի եւ զուար Սամարեայ՞
յանդիման թագաւորին Ասորեստանեայց ։
5 Եւ յաւել եւս խօսել ընդ իս Տէր եւ
6 ասէ , Փոխանակ զի ոչ ախորժեաց ժողովուրդդ այդ զՋուրն Սելովայ որ գնայ
խաղաղ , այլ [10]կամեցան առնել իւրեանց
թագաւոր զՌասիմ եւ զորդին Ռոմ7 մղայ՞ , Վասն այդորիկ ահաւադիկ ածցէ
Տէր ի վերայ [11]ձեր զՋուր Գետոյն զհզօրն
եւ զլարդ՝ զարքայն Ասորեստանի եւ
զփառս նորա . եւ եկեսցէ հասցէ յամենայն ձորս [12]ձեր , եւ ճեմեսցի ի վերայ
8 պարսպաց ձերոց ։ Եւ հանցէ յերկիրդ
Հրէաստանէ զայր որ կարօղ իցէ ամբառնալ զգլուխ իւր , եւ զլօրաւորսն որ
կարիցէ գործել ինչ . եւ եղիցի բանակ
նորա լնուլ զայնաւթիւն երկրիդ քո ։
9 Ընդ մեզ Աստուա՞ զիատացէք, հեթա-

---

[1] ԵՔԲ. զի աչսհատութիւն հատուցանէք Աստուծոյ իմում [2] ԵՔԲ. մինչեւ գիատացէ անարգել զչարն եւ ընտրել զբարին ։ (16) Զի մինչչեւ ծանուցանել մանկանն անարգել զչարն եւ ընտրել զբարին, թողցի երկիրն յորոյ [3] ԵՔԲ. մեկնեցաւ Եփրեմ ի Հրէաստանէ, այսինքն՝ զարքայն [4] ԵՔԲ. որ է [5] ԵՔԲ. ածելեաւն վարձկանաւ , թագաւորաւն Ասորեստանեայց որ յայնկոյս Գետոյն

[6] ԵՔԲ. Եւ ամենայն լերինք որ բրին բրչաւ՝ մի՛ երթիցէք անդր առ երկիւղի փշոյ եւ խոպանի , եւ եղիցին յարօտ եղին եւ ի կոխան ոչխարաց ։ [7] ԵՔԲ. Մահեր շալալ հաշ պազ [8] ԵՔԲ. կացուցի [9] ԵՔԲ. տարցի զօրութիւնն Դամասկոսի եւ աւարն Սամարեայ [10] ԵՔԲ. Հաճեցան ընդ Ռասիմ եւ ընդ որդին Ռոմելիայ [11] ԵՔԲ. նոցա [12] ԵՔԲ. նորա, եւ գիասցէ ի վերայ ամենայն ափանց Նորա։ (8) Եւ անցցէ ընդ Յուդա , ողողեսցէ եւ անցցէ , մինչեւ ի պարանոց անդր հասցէ . եւ եղիցի տարածութիւն թեւուց նորա լրութիւն յայնութեան երկրի քո, ով Էմմանուէլ ։ (9) Յնծացէք, հեթանոսք, և պարտեցարուք , եւ լուարուք ամենեքին ի հեռաստանէ երկրի ։ պնդեցէք զմէջս, այլ ի պարտութիւն մնասեսջիք. պնդեցէք զմէջս ,

նոսք, եւ պարահեցարուք. լսելի արա-
րէք մինչեւ ի ծագս երկրի, տղօրմացեալքդ
պարահեցարուք. զի Իմ է եւ դար-
ձեալ զօրանայցէք," զարձեալ ի պար-
10 տուէիւն մանանոյիք: Եւ զի՞ր խորհուրդ
եւ խորհիցիք՝ ցրուեցոյ Տէր, եւ զի՞ր
բան եւ խօսիցիք՝ մի՛ հաստատեսցի ձեզ.
11 քանզի ընդ մեզ [1]Տէր Աստուած է: [2]Այս-
պէս ասէ Տէր տու ամենայն որ զօրու-
թիան ձեռին նորա ընդդէմ դամանն բուս
դնացիդ ճանապարհն ժողովրդեանս այ-
12 սորիկ, եւ ասէն՝ Իէ ոչ երիկք խօսիք-
ցին խաստութիւն. զի ամենայն զոր ինչ
խօսի ժողովուրդս այդ՝ խաստութիւն է.
եւ յերկիւղ նոցա մի՛ երկնչիցիք, եւ մի՛
13 խռովիսիք:" ԶՏէր զօրութիանդ դնդին
սուրբ արասիք, եւ նա եղիցի ձեզ
յերկիւղ, [3]եւ նիրէ ի նա յուսացեալ լ-
14 ցիս, եզիցի քեզ ի սրբութիւն. եւ ոտն
քո զքարի ոչ հարկանիցի, եւ զայիակ-
զութիւն քեզ ոչ պատահեսցէ. բայց տուն
Յակորու յորոգայթ եւ ի ծորձս դա-
15 րանակալաց երուսաղեմի: Վասն այնու-
րիկ ակարասցին ինձմ բաղուածք, անկ-
ցին եւ խորտակեսցին, եւ մերձենայցին ի
պաշարումն մարդիկ որ ի չինութիանն
16 իցեն: Յայնմ ժամանակի յայտնեսցին
17 որ կնքելցեն զօրէնս. Զի մի՛ ոք ուսա-
նելի եւ ասիցէ, Կացից մեացից Աս-
տուծոյ" որ զարձոյց զերեսս իւր ի տուս-
նէն Յակորու, եւ եղէց յուսացեալ ի
18 նա: Ահաւասիկ ես եւ մանկունք իմ
զոր ետս ինձ [4]Աստուած. եւ եղիցին
նշանք եւ արուեստք ի վերայ տանն
Իսրայելի" ի Տաբաւոթի Տեառնէ որ
բնակեալ է ի լերին Սիոնի:
19 Եւ նիրէ ասիցեն ցձեզ, Հնդրեցէք
զվհուկս եւ զգիտնակոչս եւ զզրահասս

[1]Յիբբ. պ-ւ-ռ [2]Եբբ. Քանզի այսպէս ասէ Տէր
ցիս զօրութեամբ ձեռին. եւ խրատեաց զիս ի
գնալոյ զճանապարհ ժողովրդեանս այսորիկ, եւ
ասէ, (12) Մի՛ ասէք դուն ամենայնի որում
ասէ ժողովուրդս այս դուն. եւ զերկեղ նորա
մի՛ երկիցէք, եւ մի՛ զարհուրեսջիք: [3]Եբբ. և
նա ինքն սէ ձեր. (14) Եւ նա եղիցի ի սրբու-
թիւն. սակայն ի քար գայթակղութեան եւ ի
վէմ գայրման երկոցունց տանց Իսրայելի, ի
հաղր և յորոգայթ բնակչացն Երուսաղեմի: (15)
Եւ գայթասցին ի նմա բազումք, եւ անկցին, եւ
խորտակեսցին, եւ եղիցին թակարդասցատ եւ
ըմբռնեսցին: (16) Հաստատեա վկայութիւն և
կնքեա օրէնս ընդ աշակերտս իմ. (17) Աբդ ես
կացից մեացից Տեառն [4]Եբբ. Տէր, ի նշանս և
յարուեստս Իսրայելի,

եւ զորովմնդակոչս, [5]ոչ իրրեւ զազգ
ոք որ՝ յԱստուծոյ իւրմէ խնդրիցէ. գինչ
խնդրիցեն վասն կենդանեաց ի մեռելոց
20 տանս. [6]Զի զօրէնս յոդնականութիւն
եւս. զի ասիցեն թէ ոչ իրրեւ զրանս
զայս, վասն որոյ չիք կաշառս տալ
21 վասն նորա եւ սկսցէ ի վերայ ձեր սով
խաստութեամբ. եւ եզիցի իրրեւ քաղ-
ցիցէք՝ արամնոյիք, եւ հանդիսոյիք գին-
խանն եւ գաչխարն". եւ ամբարձցին
22 զաչս իւրեանց յերկինս ի վեր, եւ հա-
յեսցին յերկիր ի խոնարհ, եւ ահա կա-
ծութիւն եւ տաղտապանք եւ խաւար,
նեղութիւն եւ անձկութիւն, [7]եւ մուխ.
զի ոչ ոք կարիցէ տեսանել. եւ որ իցէ
ի նեղութեանն՝ մի՛ նուաղեսցէ մինչեւ
ի ժամանակն":

Գլ. Թ

1 [8]Հասցա նախ զայդ արբ, վազվազակի
հնա արա. երկիր Զաբուզոնի եւ երկիր
Նեփթաղիմի՝ ճանապարհն ծովու. եւ
այլք որ բնակեալ էք գծովիզերդ, եւ
յայն կոյս Յորգանանու. Գալիլեա հե-
թանոսաց, կողմանք Հրէաստանի" ժո-
2 ղովուրդ որ գնայր ընդ խաւար՝ հասս
լոյս մեծ, եւ որ բնակեալ [9]էք յաչխարհի
եւ ի սուերս մահու՝ լոյս ծագեսցէ
3 ձեզ: Զմեծ մասն ժողովրդեանդ զոր
իմ՝ուցիր յուրախութիւն քո, եւ ուրախ
եղիցին" առաջի քո՝ որպէս ուրախ լինի-
ցին ի հունձս, եւ [10]որպէս որ յաժա-
4 նիցեն զաւար. Զի [11]վերացաւ ի նո-
ցանէ լուծն որ կայր ի վերայ, եւ գա-
ւազանն որ ի վերայ պարանոցի նոցա.
դի զպատազան պահանջողացն մերժեաց"

[5]Եբբ. ասասջիք, Ո՞չ ապաքէն ժողովուրդն [6]Եբբ.
Հարցցեն օրինաց և վկայութեան. եթէ չասիցեն
բան բանիս բուս այսմիկ, չիք նոցա լոյս: (21)Եւ
անցցէ խոշոր-դրնջեղ այնենեղալ և քաղցեալ, և
եղիցի իր բեւ քաղցիցեն, և բարկասցին, և հայ-
հոյեսցեն զԹագաւոր իւրեանց եւ զԱստուած
իւրեանց [7]Եբբ. եւ մթով վարեսցին [8]Եբբ.
Այլ ոչ եղիցի աղջամուղջ, որպէս եղեւ ի նե-
զութեան նորա բուս առաջնոյ ժամանակին յա-
ռաջագել նորա զերկիրն Զաբուզոնի եւ զերկիրն
Նեփթաղիմայ, եւ ի վախճանի փարաւրեսցէ
զճանապարհ ծովուն, յայնկոյս Յորդանանու,
Գալիլեա հեթանոսաց: [9]Եբբ. են յերկրին
սուերաց մահու՝ լոյս ծագեաց նոցա: (3)Բազ-
մացուցեր զազգն, մեծ արարեր զուրախութիւն
նորա. ուրախ եղեւ [10]Եբբ. որպէս ցնծացեն
[11]Եբբ. զլուծ ծանրութեան նորա, եւ զգաւա-
զանն թիկանց նորա, զցուպ հարկահանաց որ
ի նմա՝ խրատակեցեր

5 որպէս եւ յառաջն Մադիամու. [1]Զի զամենայն պատմուճան եւ զհանդերձ մոլորմամբ՝ առ գանաք առաջի Տեառն։ Այլ նոքա կամիլին թէ հրձիզ լինել էին։"

6 Զի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւնն իւր եղեւ ի վերայ ուսոց իւրոց. եւ անուն կոչեցաւ նմա՝ [2]Հրնչուտակ մնծի խորհրդոյ," Սքանչելի, Խորհրդակից, Աստուած Հզօր, [3]Իշխան, Հայր հանդերձելոյ աշխարհին։ 7 եւ ես ածից զիշխանութիւնն ի վերայ իշխանացս նորա, եւ առողջութիւն նմա. մնծ է իշխանութիւնն" նորա, եւ խաղաղութիւնն նորա չիք սահման յաթոռն Դաւթի [4]նստից, եւ զարքայութիւն նորա յաղոդեսցէ, եւ զօրացուսցէ" զնա իրաւամբ եւ արդարութեամբ, յայսմ հետէ եւ յաւիտեանս ժամանակաց։ Նախանձ Տեառն զօրութիւնոյ արասցէ զայս։

8 [5]Մահ արձակեաց Տէր ի վերայ Յակոբայ, 9 եկն եհաս ի վերայ Իսրայէլի եւ ծանիցեն ամենայն ժողովուրդն Եփրեմեան եւ որ նստիքն ի Սամարիա, որ հպարտաբերեամբեւ ամբարտաւանութեամբ սրտից 10 խօսեցան եւ ասեն, Աղիւսք անկան, այլ [6]եկայք վէմս տաշեսցուք. զմայրս եւ զսենեսիայս հարցուք, եւ չինեսցուք։ 11 Եւ կործանեսցէ Աստուած զյարուցեալսն ի վերայ լերին Սիոնի, եւ զթշնամիս Յուդայ յրուեսցէ. 12 ԶԱսորեսնան" յելից արեւու, եւ [7]զՅոյնս ի մտից արեւու. ոչք ուտէին զԻսրայէլ բերանոպիր ամենայն բերանով։ Ի վերայ այսր ամենայնի ոչ դարձաւ բարկութիւն նորա, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է։

13 Եւ ժողովուրդն ոչ դարձաւ [8]մինչեւ վիրաւորեցաւ", եւ զՏէր զօրութիւնոյ

14 ոչ խնդրեցին։ Եւ բարձ Տէր յԻսրայէլէ զգլուխն եւ զվերջն, [9]զմնծն եւ զփոքր" 15 ի միում աւուր. (Զծերն եւ զակնառուն՝ այն առաջն է, եւ զմարգարէն որ զանօրէնութիւնն ուսուցանէր՝ այն վերջն է։) 16 Եւ եղիցի որ երանիկդն ժողովրդեանս այսմիկ՝ [10]մոլորեալք եւ մոլորեցուցանիցին. որպէս զի կլանիցին զգուսա"։ 17 Վասն այսորիկ ի վերայ երիտասարդաց նոցա ոչ եղիցի ուրախ [11]Աստուած, եւ որբոց նոցա եւ այրեաց մի՛ ողորմեսցի, զի ամենեքին անօրէնք են եւ չարք, եւ ամենայն բերան խօսի զանիրաւութիւն։ Ի վերայ այսր ամենայնի ոչ դարձաւ բարկութիւնն, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է։

18 Եւ վառեսցի իբրեւ զնօսր անօրէնութիւն, եւ [12]իբրեւ զսէգ չորացեալ այրեսցի ի հրոյ". եւ վարեսցի յանտառս մայրեաց. եւ չուրջ զամենայն բլրովք 19 նոցա հուր ճարակեսցի։ Վասն սրամբասութեան բարկութեան Տեառն հրձիզ լեսցի երկիրն [2]ամենայն, եւ եղիցի ժողովուրդն այրեցեալ իբրեւ ի հրոյ. այր 20 եղբօր իւրում մի՛ ողորմեսցի։ Այլ խոտորեսցի յաջակողմն իւր առ քաղցի, եւ կերիցէ զձախակողմն իւր, եւ մի՛ յագեսցի մարդ ուտելով զմարմինս բազկաց իւրոց. Զի կերիցէ Մանասէ զԵփրեմ, եւ Եփրեմ զՄանասէ, եւ ի միասին պաշարեսցին զՅուդա։ Ի վերայ այսր ամենայնի ոչ դարձաւ բարկութիւն նորա, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է։

Գլ. Ժ

1 [13]Վայ այնոցիկ որ [13]գրեն զչարիս, գրեն 2 լով գրեն զչարիս իւրեանց. Խոտորեն" զդատաստանս աղքատաց, եւ զիրաւունս անանկաց ժողովրդեան իմոյ [14]յափշտակեն. զի լինիցի նոցա այրին իւրեանց 3 կոլիքն, եւ որբն յաւար։ Եւ զի՞նչ [15]գործեսցեն յաւուրն այցելութեան. [16]զի նեզութիւն ձեր" ի հեռաստանէ եկեսցէ. եւ առ ո՞ փախստեայ անկանիցիք յօգնականութիւն, եւ ո՞ր թողուսցէք

---

[1] ԵԲԲ. Զի ամենայն պատուհասինութիւն պատերազմողաց աղմկաւ և հանդերձ թաթաւեալ յարեանն եղիցի յայրուածն, ի ճարակ հրոյ։ [2] ԵԲԲ. դ-ի-ե [3] ԵԲԲ. Հայր յաւիտենականութեան, Իշխան խաղաղութեան։ (7) Մեծութեան իշխանութեան [4] ԵԲԲ. եւ յարքայութեան նորա. Հաստատել զնա և զօրացուցանել [5] ԵԲԲ. Պատուհասի [6] ԵԲԲ. մեք վիմաք տաշելովք շինեսցուք. մոլորի զնիք Տուտան, այլ փոխեսցուք յեղեւնափայտս։ (11) Սակայն յարուսցէ Տէր ի վերայ նորա զՀակառակորդս Ռասինայ եւ զթշնամիս նորա զրգռեսցէ։ (12) Արամ [7] ԵԲԲ. Փղշտացիք [8] ԵԲԲ. առ որ Տարկանէն զնա

[9] ԵԲԲ. զոսա արմատնեւսն և զկնիւն [10] ԵԲԲ. մոլորեցուցանիցեն, և որ երանիկն՝ կլանիցին [11] ԵԲԲ. Տէր [12] ԵԲԲ. զսէգ և զփուշ այրեսցէ. [13] ԵԲԲ. սահմանեն սահմանս անօրէնութեան, եւ գպրաց որ գրեն չարիս. (2) Խոտորել [14] ԵԲԲ. յափշտակել [15] ԵԲԲ. գործիցէք [16] ԵԲԲ. եւ ի նեզութեան որ

զփառան ձեր. [1]Եթէ ոչ մատնեսցի ի
4 զերութիւն", եւ ի ներքոյ սպանելոցն
մտանիցեն։ Ի վերայ այսր ամենայնի ոչ
զարձաւ բարկութիւն նորա, այլ առա-
5 կաւին ձեռն իւր բարձրացեալ է։
Վայ Աստրեսաանեւսն, դաւազան բար-
կութեան [2]եւ սրամտութեան իմոյ ի
6 ձեռս նոցա. Զի զբարկութիւն իմ յղալ
անօրէն արձակեցից, եւ իմոյս վրդով-
մանն կարգեցից առնել զաւար եւ
զյափշտակութիւն, կոխան առնել զբա-
7 զաքս եւ զնել զնոսա ի փոչի" Իսկ նա
ոչ այսպէս ած գմտաւ, եւ ոչ այսպէս
համարեսցաւ յանձին, այլ զարձոյց զմիտս
8 իւր սատակել զազգս ոչ սակաւս։ [3]Եւ
եթէ ասիցեն ցնա, Դու միա՞ն իցես
9 իշխան։ Աասցէ, Ո՞չ տալ զայիարն
որ ի վեր է քան զերաքեղն, եւ զԲա-
զանէ ուր աչառական չկինգաս. տալ եւ
զԱրաբիա, եւ զԴամասկոս եւ զԱսամա-
10 րիա։ Որպէս գնոսաղն տալ ձեռամբ ի-
մով, նոյնպէս տուից եւ զամենայն իշ-
խանութիւնս։ Ողբացէք, զրօչակեալք, որ
11 յերուսաղէմ եւ ի Սամարիա. Զի" զոր
օրինակ արարի ընդ Սամարիա եւ ընդ
ձեռագործս իւր, նոյնպէս արարից ընդ
12 Երուսաղէմ եւ ընդ կուռս իւր։ Եւ և-
զիցի յորժամ կատարեսցէ Տէր առնել
զամենայն ինչ ի լերին Սիոնի եւ յե-
րուսաղէմ, ածցէ եւ ի վերայ մնծա-
մտին բարկութիւն, ի վերայ իչխանին
Ասրեսաանեայց եւ ի վերայ հպարտաց-
13 եալ փառաց աչաց նորա։ Զանգի ասաց
[4]Զօրութեամբ իմով արարից, եւ
իմաստութեամբ խորհրդոց իմոց բար-
ձից" զսահմանս ազգաց, եւ [5]տուից
աւար զզօրութիւնս նոցա. [6]չարժեցից
14 զքաղաքս բնակեալս. Հասից ի վերայ
ամենայն տիեզերաց ձեռամբ իմով
իբրեւ ի վերայ բունոյ, եւ բարձից իւ-
րեւ զձուս մեացեալս. եւ ոչ ոք իցէ որ
ասլրիցէ չինչն, եւ ոչ որ ընդդէմ գաս-
նայցէ ինձ, եւ բանայցէ զբերան իւր եւ
15 ճիկ հանիցէ։ Այսպէս ասէ Տէր. Միթէ
վերանայցէ՞ փայտատ առանց փայտա-
հարի, կամ բարձրանայցէ՞ սղոց առանց
ուրաք ձգելոյ. նոյնպէս մի գաւազան
ոք կամ զփայտ ինչ առնուցու. Նա եւ
16 ոչ այնպէս։ Այլ առաքեսցէ Տէր զօրու-
թեանց ի պատիւ քո անարգանս, եւ ի
վառս քո հուր վառեալ բորբոքեսցին"
17 Եւ եղիցի Լոյսն Իսրայելի ի հուր. եւ
[7]սրբեսցէ գնա հրով բորբոքիով, եւ
18 կերիցէ իրրեւ զխոտ զանատան։ Ցա-
ւուր յայնմիկ չէզոյն լերինք եւ լուրք
եւ անտառք, եւ կերիցէ ի հնչոյ մին-
չեւ ի մարմին. եւ եղիցի ապրեալն իւ-
րեւ զայն որ սպրեալն լցէ ի բորբոք-
19 եալ բոցոյ" Եւ մեացեալքն ի նոցանէ
թուով եղիցին, եւ մանուկ տղայ
գրեսցէ զնոսա։
20 Եւ եղիցի յաւուր յայնմիկ ոչ եւս
յաւելցին մեացորդքն Իսրայելի եւ ապ-
րեալքն Յակոբայ, [8]եւ ոչ եւս ապաս-
տան լինիցին" ի գրկիչսն իւրեանոյ, այլ
եղիցին ապաստան [9]Աստուած ի Սուրբն
21 Իսրայելի ճշմարտութեամբ։ [10]Եւ եղիցին
մեացեալքն Յակոբայ Աստուած զօ-
22 րացեալ" Եւ եթէ եղիցի ժողովուրդն
Իսրայելի իրրեւ զաւազ ծովու, սակաւ
23 ինչ մեացորդք մեսցին ի նոցանէ. Զի
լան մի հակիրճ եւ համառօտ արդարու-
թեամբ, զլանն համառօտ արասցէ Տէր
զօրութեանց ընդ ամենայն տիեզերս։

---

[1] Եբր. Առանց իմ կորացին ի ներքոյ գերեաց
[2] Եբր. իմոյ, և ցուպ իմ ձեռս նորա սրտմտութիւն իմ
(6) Յազգ անօրէն արձակեցից զնա. եւ ընդդէմ
ժողովրդեան բարկութեան իմոյ հրամայեցից
նմա՝ հարկանել աւար եւ կապել կապուտս,
եւ առնել զնա կոխան ոտից իրրեւ գկաւ գռե-
հաց։ [3] Եբր. Քանզի ասէ, Ո՞չ իշխանք իմ
համօրէն թագաւորք են։ (9) Ո՞չ ապաքէն իրրեւ
զՔարքամիս է Քաղանէ. ո՞չ իրրեւ զԱրփաթ՝
Եմաթ, ո՞չ ապաքէն իրրեւ զԴամասկոս՝ Սա-
մարիա։ (10) Զոր օրինակ եգիտ ձեռն իմ զթա-
գաւորութիւնս սնոտեացց, եւ դրօշեալք նոցա
առաւել քան զերուսաղէմին եւ զՍամարեացին։
(11) Ո՞չ [4] Եբր. Ձեռն իմոյ արարի և իմաստու-
թեամբ իմով. զի իմաստուն եմ բանիւ [5] Եբր.
առի [6] Եբր. եւ նուաճեցի որպէս հզօր զբնակ-
եալս. (14) Եւ եգիտ իբրեւ զբոյն ձեռն իմ
զմեծութիւն ապզաց, եւ որպէս որ ժողովիցէ
զձուս մեացեալս՝ զամենայն երկիր ժողովեցի,
եւ ոչ էր որ շարժէր զթեւ եւ բանայր զբերան
և ճիկ հանէր։ (15) Միթէ ճոխանայցէ՞ փայտատ
ի վերայ փայտահարի, կամ բարձրանայցէ՞ սղոց
ի վերայ որոյ շարժէն զնա. որպէս եթէ գաւա-
զան շարժեր զոր բարձրացուցանէն զնա, որպէս
եթէ հպարտանայր ցուպ թէ չիցէ փայտ։ (16)
վասն որոյ առաքեսցէ Տէր՝ Տէր զօրութեանց ի
պարարտս նորա ծխելութիւն, եւ ընդ փառաւ
նորա վառեսցէ հրդեհ որպէս հրդեհ հրոյ։
[7] Եբր. Սուրբն նորա՝ի բաց, եւ այրեսցէ եւ կե-
րիցէ գխուչ նորա եւ զեղջ նորա ի միում ա-
ւուր։ (18) Եւ գփառս անտառի նորա և պտղո-
ւրեր երկրի նորա ի չնչոյ մինչեւ ի մարմին սպա-
ռեսցէ. եւ եղիցի իբրեւ զՀիւանդ (Լատ. դրօ-
չակիր) նաւաղեալ։ [8] Եբր. սպաստան լինել
[9] Եբր. ի՞ Տէր [10] Եբր. Մնացորդն, մնացորդ Յա-
կոբայ դարձցի յԱստուած հզօր։

24 Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր՝ Տէր զօրութեանց. Մի՛ երկնչիր, ժողովուրդ իմ որ բնակեալ ես ի Սիոն՝ յԱսորեաստանեայց. [1]զի նիթ՝ հարկանիցէ զքեզ գաւազանաւ, [2]քանզի ես ածեմ ի վերայ քո զնահատածան, ճանապարհն եգիպտացւոց. 25 զճանապարհն եգիպտացւոց. Զի փոքր մի եւս ևս զադարեցից բարկութիւնն, բայց սրտմտութիւնս իմ [3]ի վերայ խորհրդոց՝ 26 նոցա։ Եւ յարուցանէ Տէր [4]Աստուած ի վերայ նոցա զնարուածս ըստ հարուածոցն Մադիամու [5]ի ռեզին չարչարանաց. եւ սրտմտութիւնն նորա ըստ ճանապարհի ծովուն որ ելիցին եգիպտացւոց՝՝, 27 եւ եղիցի յաւուր յայնմիկ բարձցի [6]երկեւզ նորա ի քէն,՝՝ եւ լուծ նորա ի պարանոցէ քումմէ, եւ խորտակեսցի լուծն [7]յուսոց ձերոց։

28 Քանզի հասցէ ի քաղաքն Անդէ, եւ անցցէ ի Մակեդով, եւ՝՝ ի Մաբմաս 29 պիղծ զկազմած իւր։ [8]Եւ անցցէ բնդ ձորս, եւ հասցէ ի վերայ Գաբաւնացւոց. ահ առցէ զՀաւսա զքաղաքն Սաւուղի. փախիցէ դուսար Գաղիմայ։ 30 Ձանջնա ձայնիւ քով. լուր լիցի ի Լախս, 31 լուր լիցի յԱնաթովթի. Զարհուրեսցի Մակբենա, եւ որ բնակեալ են ի Գերիմ. 32 Միթիմարեսցի այսօր ազանել ի ճանապարհին. միթիմարեսցէ ձեռամբ լեառնն դստեր Սիոնի, եւ բլուրքն որ յԵրուսաղէմ։՝՝ 33 Զի ահաւասիկ Տէր՝ Տէր զօրութեանց [9]խռովեցուսցէ զփառաւորեսցն զօրութեամբ՝՝. եւ բարձրացեալքն ամբարտաւանութեամբ խորտակեսցին 34 եւ խոնարհեսցին։ [10]Եւ անկցին բարձունքն սրով, եւ Լիբանան բարձամբք իւրովք կործանեսցի։՝՝

Գլ. ԺԱ

1 Եւ ելցէ գաւազան յարմատոյն Ջեսսեայ, եւ կոկղ [11]ծաղիկ յարմատոյ 2 անտի։ Եւ հանգիցէ ի վերայ նորա Հոգի [12]Աստուծոյ, Հոգի իմաստութեան եւ հանճարոյ, Հոգի խորհրդոյ եւ զօրութեան, Հոգի գիտութեան եւ աստուածապաշտութեան. 3 եւ [13]լցցէ զնա Հոգի երկիւղի Աստուծոյ՝՝. ոչ ի կարծ զատեսցի, 4 եւ ոչ բան խօսից յանդիմանեսցէ։ Այլ արասցէ իրաւունս անտնկին, եւ յանդիմանեսցէ [14]զիտնարս երկրի. եւ հարցէ զերկիր [15]բանիւ բերանոյ իւրոյ, եւ հոգւով շրթանց իւրոց սատակեսցէ զամբարիշտս։ 5 Եւ եղիցի արդարութիւն ածեալ բնդ մէջ իւր, եւ ճշմարտութիւն 6 թեամբ պատեալ զկողս իւր։ Եւ ճանաչեսցէ գայլ ընդ գառին, եւ ինձ առ ուլոյ մակաղեսցի, եւ որթ եւ ցուլ եւ առեւծ ի միասին ճարակեսցին, եւ մանուկ նետ մատոյ ածցէ զնոսա։ 7 Եղն եւ արջ ի միասին ճարակեսցին, եւ որդեակք նոցա իսուն չրկնսցին, եւ առեւծ իբրեւ զեզն յարդ կերիցէ։ 8 Եւ մանուկ մատոյ [16]ի ծակ իժից, եւ ի բոյն կոճղանց իժից արկցէ զձեռն իւր[17]. 9 Եւ ոչ մեղիցեն եւ ոչ [18]կարասցեն հարկանել զոք ի լերին՝՝ սրբութեան խոց. զի լցցաւ երկիր [1]ամենայն գիտութեամբ Տեառն իբրեւ զկնարս [1]բազումս որ ծածկեն 10 զծովս։ Եւ եղիցի յաւուր յայնմիկ արմատն Ջեսսեայ, եւ որ կանգնելոցն է՝ [19]իշխան հեթանոսաց, ի նա հեթանոսք յուսասցին. եւ եղիցի հանգիստ նորա 11 պատուական։ Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ յաւելցէ Տէր [20]յուսգանել զձեռն իւր, նախանձելիս առնել՝՝ զմնացորդս ժողովրդեան իւրոյ՝ որ մնացեալ իցեն յԱսորեստանեայց եւ յԵգիպտացւոց եւ [21]ի Բաբելացւոց եւ յԵղամացւոց եւ յԵզդամացւոց եւ [22]յելիցն արեւուս եւ յԱրաբացւոց՝՝ եւ ի կղզեայ ծովու։ 12 Եւ բարձրացուսցէ նշան ի հեթանոսս, եւ ժողովեսցէ [23]զկորուսեալսն Իսրայելի, եւ

---

[1] 3ԵԲՐ. գ-լ-ե-ա [2] ԵԲՐ. եւ զգուշ իւր վերա-
ցուսցէ ի վերայ քո ըստ օրինակին որ յԵգիպտոս
[3] ԵԲՐ. ի կարծանումն [4] ԵԲՐ. զօրութեանց [5] ԵԲՐ.
ի վիմին Որեբայ. եւ զգաւազանն իւր ի վերայ
ծովուն, եւ վերացուսցէ զնա ըստ օրինակին որ
յԵգիպտոս [6] ԵԲՐ. բեռն նորա յուսոյ քումմէ
[7] ԵԲՐ. առ պարարտութեան։
(28) Եկն Աբեաթ, անց ի Մագբան, [8] ԵԲՐ.
Անցին բնդ անցս, ագան ի Գաբա. երկեաւ
Հառմա, Գաբաայն Սաւուղայ փախեաւ։ (30)
Բարձ զձայն քո, դուստր Գաղիմայ, լսեցո ի
Լախս, հէք Անաթովթի։ (31) Հեռացաւ Մադմենան, բնակիչք Գեբիմայ ամասարեցին ի փախուստ։ (32) Տակաւին այսօր ի նոբ գոյ տալնաւ։ շարժեսցէ զձեռն իւր ի լեառնն դստեր Սիոնի, ի բլուրն Երուսաղեմի։ [9] ԵԲՐ. Հատցէ զոստան սաստիւ, [10] ԵԲՐ. Եւ հատցէ զմիաւուտս անտառին երկաթով, եւ Լիբանան ի ձեռն Հզօրին անկցի։

[11] ԵԲՐ. շառաւիղ [12] ԵԲՐ. Տեառն [13] ԵԲՐ. բուրեսցէ եւ կիւրեւ Տեառն [14] ԵԲՐ. ուղղութեամբ վասն զրկելոց [15] ԵԲՐ. զաւազանաւ [16] ԵԲՐ. խազացէ ի ծակ [17] ԵԲՐ-ԵՐԷՆ յ-ե-լ-ս, Հատուցեալն խաւենէ [18] ԵԲՐ. ապականանացեն յամենայն լերին [19] ԵԲՐ. ի նշան [20] ԵԲՐ. ձգել զձեռն իւր առնուլ [21] ԵԲՐ. ի Պաթուրացւոց [22] ԵԲՐ. ի Սենաարայ եւ յԵմադայ [23] ԵԲՐ. զաքսորեալսն

զգրուեսան Յուդայ ժողովեսցէ ի չո-
13 րից անկեանց երկրի։ Եւ բարձցի նա-
խանձն Եփրեմի, եւ թշնամիքն Յուդայ
կորիցեն. Եփրեմ ոչ նախանձեսցի զնոյ
Յուդայ՝ եւ Յուդա ոչ նախանձեսցի զնոյ
14 Եփրեմայ։ Եւ թռիցեն [1]նոքա այլազ-
գեաց", ածցին ասար միանգամայն [2]զնա-
վակոզին եւ զարեւելեայսն եւ զե-
դոմացիսն", արկցեն զձեռս իւրեանց
[3]նախ ի Մովաբ. եւ որդիքն Ամմոնայ
15 յառաջադոյն հնազանդեսցին։ Եւ [4]կործա-
նէ Տէր զծովն Եգիպտացւոց, եւ արկցէ
զձեռն իւր ի վերայ գետոյն հոլով
սաստկութեամբ, եւ հարցէ զնա թռչու-
ձորն. զի համարձակ լիցի մնալ նմա
16 [5]եւ ազելսն", եւ եղիցի [6]անդ մնացե-
լոց ժողովրդեան իմոյ որ կենդիցեսցի.
եւ եղիցի Իսրայէլ որպէս" յաւուրն յո-
րում ել երկրէն Եգիպտացւոց։

ԳԼ. ԺԲ

1 Եւ ասացես յաւուրն յայնմիկ, Օրհնե-
ցից զքեզ, Տէր, զի բարկացար ինձ,
[7]եւ դարձուցեր զսրտմտութիւն քո
2 յինէն, եւ ողորմեցար ինձ", Ահաւասիկ
Աստուած իմ, փրկիչ իմ [8]Տէր, եւ"
յուսացեալ եղէց ի նա՝ եւ ոչ երկնչեցց.
զի [9]փառք իմ եւ օրհնութիւն իմ [10]Տէր,
3 եւ եղեւ ինձ ի փրկութիւն։ Եւ
առէք ջուր ուրախութեամբ յաղբերացն
4 փրկութեան։ Եւ [11]ասացես յաւուրն
յայնմիկ, Օրհնեցէք զՏէր, հնչեցէք դա-
նուն նորա, պատմեցէք ի հեթանոսս
[12]զգիտուածոցդ, յիշեցէք զի բարձրացաւ
5 անուն նորա։ Օրհնեցէք զանուն Տեառն
զի մեծամեծս արար, պատմեցէք զայս՝
6 ամենայն երկրի։ Ցնծացէք եւ ուրախ
լերուք բնակիչք Սիոնի, զի բարձրա-
ցաւ Սուրբն Իսրայէլի ի մէջ [13]նորա։

ԳԼ. ԺԳ

1 Տեսիլ Բաբելացւոց, զոր եսաս Եսայի
որդի Ամոսայ։
2 Ի վերայ լերինն պայտականի տուէք

[1]ԼԲԵ. յաւս Փղշտացւոց յարեւմտեաս կոյս [2]ԼԲԵ. զարեւելեայսն [3]ԼԲԵ. յԵդովմ եւ [4]ԼԲԵ. գամաքեցուսցէ Տէր զկռնս ծովեն [5]ԼԲԵ. կոչկոր [6]ԼԲԵ. մնացելոց ժողովրդեան նորա որ մնացեն՝ անց ընդ Ասուր, որպէս եղեւ Իսրայէլի [7]ԼԲԵ. դարձուա սրտմտութիւն քո յինէն, և մխիթարեցեր զիս [8]ՅԼԲԵ. գՅՀՈՎ [9]ԼԲԵ. զփառս [10]ԼԲԵ. ԵՀովայ Տէր է [11]ԼԲԵ. ասասջիր [12]ԼԲԵ. զգործս [13]ԼԲԵ. քո

նշան, բարձրացուցէք զբարբառ ձեր ի վերայ նոցա. [14]մի՛ երկնչիք, կոչեցէք ձեռամբ. բացէք, իշխանք, եւ ես տայց
3 հրաման։ Նաւիլիալք են եւ ես ածից զնոսա. զիմիսկ զան ակաւք յաղեցուսցանեմ զսրտմտութիւնն իմ. [15]ինքան՝ զան
4 մխանգամայն, եւ թշնամանեն։" Ձայն ազգաց բազմաց ի վերայ լերանց՝ ի նմանութիւն ազգաց բազմաց, ձայն թագաւորաց եւ ազանց միահամուռ ժողովելոց. Տէր զօրութեանց հրաման առ
5 ազգսն սպառազինաց, Գալ յերկրէ հեռաւորութենէ ի ծագաց [16]հմանից երկնից. հասեալ է Տէր իւրովք սպառազինօք սատակել զամենայն աշխարհս։
6 Ողբացէք, զի մերձ է օր Տեառն, եւ ին-
7 կաւն [17]յԱստուծոյ հասեալ է։ Վասն այսորիկ ամենայն ձեռք լքցին, եւ ամենայն
8 [18]անձն մարդոյ դողասցի։ Խռովեսցին հրեշտակք, եւ" երկունք կալցին զնոսա իբրեւ զիանայս ծննդականս. [19]փախցին այր ընդ ընկերն՝ եւ զայրասցին, եւ զդէմս իւրեանց ի բոցոյզդն պարձուսցեն"։
9 Զի անաւասիկ օր Տեառն հասեալ է անհնարին ի բարկութեամբ՝ սպասկատեմբ եւ սրտմտութեամբ, առնել [18]զաշխարհս անապատ, եւ զմեղա-
10 որս սատակել ի նմանէ։ Զի աստղք երկնից՝ [19]Հայկիւն հանդերձ եւ ամենայն զարդուն երկնից" լոյս մի՛ տացեն, եւ խաւարեսցի արեգակն ի ծագել իւրում,
11 եւ լուսին մի՛ տացէ զլոյս իւր։ [20]Եւ հրաման տայց ընդ ամենայն աշխարհս դչարիս, եւ ամպարշտաց զմեղս իւրեանց". եւ կործանեցից զպարտուածսն դանօրինաց, եւ զրպարտութիւն ամ-
12 բարշտաւանից խոնարհեցուցից։ [21]Ես եւ զիկին մնացեալքն պատուականաց առաւել քան զոսկի անտուր, եւ մարդն պատուական եղիցի քան զանանս պատուա-

[14]ԼԲԵ. շարժեցէք զձեռն, զի երթիցեն ի դրունս իշխանաց։(3)Ես ետու հրաման նուիրելոց իմոց, կոչեցի եւս զիգօրս իմ վասն բարկութեան իմոյ, զորս ինդան ընդ բարձրութիւն իմ։ [15]ԼԲԵ. յԱմենականէն [16]ԼԲԵ. սիրա մարդոյ Հայեսցի.(8) Զարհուրեսցին նորա, նեղութիւն եւ անձկութիւն տիրեսցեն նոցա, [17]ԼԲԵ. պչնուցու այր ընդ ընկեր իւր։ երեսք լոցոյ երեսք նոցա [18]ԼԲԵ. զերկիր [19]ԼԲԵ. եւ աստեղատունք նոցա [20]ԼԲԵ. Եւ այց սպարդից սրեզբարց վասն չարեաց, եւ ամպարշտաց վասն մեղաց նոցա [21]ԼԲԵ. Աբարձց զմարդիկ չքնաղ քան զոսկի սուրբ, եւ պա-

13 կանս Սավփերայ։ Զի երկինք գայրասցին՝ եւ երկիր սասանեսցի ի հիմանց իւրոց՝ վասն սրամտութեան բարկութեան Տեառն զօրութեանց, յաւուր յորում հասեալ իցէ սրամտութիւն նորա։
14 Եւ եղիցին [1]մնացեալքն իբրեւ զայծեամն փախուցեալ, եւ իբրեւ զոչխար մոլորեալ, եւ ոչ ոք իցէ որ ժողովիցէ. դի մարդն անզրէն ի ժողովուրդ իւր դարձցի, եւ այր իւրաքանչիւր երկիր իւր
15 հալածեսցի։ Զի որ ըմբռնեսցի՝ [2]ի սարաւութիւն մատնեսցի, եւ ժողովեալքն՝
16 ի սուր անկցին։ Եւ զորդիս նոցա առաջի նոցա սատակեսցեն, եւ զտունս նոցա աւար հարկանիցեն, եւ զկանայս նոցա խայտառակեսցեն։
17 Ահաւասիկ յարուցանեմ ի վերայ [3]Ելամ զՄարս՝ որ ոչ ինչ համարին զարծաթ
18 եւ [4]զոսկի։ Զաղեղունս երիտասարդաց խորտակեսցեն, եւ որդւոցն ձերոց՝ մի՛ ողորմեսցին, եւ ի մանկունս [1]ձեր ոչ
19 ինայեսցէ աչն նոցա։ Եւ եղիցի Բաբելոն, որ [5]փառաւորն կոչի ի թագաւորէն՝ Քաղդէացւոց, որպէս կործանեաց
20 Աստուած զՍոդոմ եւ զԳոմոր։ Եւ ոչ բնակեսցի յաւիտեանս ժամանակաց, եւ [6]մի՛ մայնն ի նա յազգս բազումս՝, եւ մի՛ եւս անցցեն ընդ նա Արաբացիք,
21 եւ հովիւք մի՛ հանգիցեն ի նմա։ Այլ անդ հանգիցեն գազանք վայրենիք, եւ լցցին տունք նոցա [7]ազազակաւ. եւ անդ հանգիցեն հմայարուք, եւ անդ դեւք
22 կաքաւեսցեն, Եւ յուշկապարիկք [8]յնաւկեսցեն ի նմա, եւ ազնիք ձագս հանցեն յապարանս նորա։ Վազվազակի հասեալ եւ գայ, եւ ոչ անազանեսցի։՝ եւ աւուրք նորա մի՛ երկարեսցին։

Գլ. ԺԴ

1 [9]Եւ ողորմեսցի Տէր Յակովբայ, եւ ընտրեսցէ միւսանգամ զԻսրայէլ. եւ [10]հանգիցեն յերկրի իւրեանց, եւ յաւելցի պանդխտեան [11]ի տունն Յակոբայ։
2 Ընկալցին զնոսա հեթանոսք, եւ ածցեն ի տեղիս իւրեանց եւ [12]ժառանգեսցեն, եւ բազմացին յերկրին Աստուծոյ՝ ի ծառայս եւ յաղախնայս. եւ եղիցին գերիք գերեվարք նոցա, եւ անկցին ի ծառայութիւն որ տիրէին նոցա։
3 Եւ եղիցի յաւուր յայնմիկ, հանգուսցէ զքեզ Տէր ի ցաւոց եւ ի սրամտութենէ քումմէ, եւ ի ծառայութենէ խստութեան որ ծառայեցեր նոցա,
4 եւ առցես զոգբս զայս ի վերայ թագաւորին Բաբելացւոց, եւ ասասցես [1]յաւուր յայնմիկ՝ Զիարդ դադարեալ կայ պահանջօղն, հանգ-
5 եաւ [13]ածգնապաղն։ Զի խորտակեաց Տէր [14]զգաւազան մեղաւորացն՝ զգաւազան իշխանացն.
6 Ածահարկաց զազգն սրամտութեամբ, անհնարին հարուածովք բարկութեամբ
7 յանհնարս։ Հանգեաւ յուսով՝ երկիր ամենայն, եւ զոսկէ ուրախութեամբ։ Եւ
8 նայն, եւ զոչխ ուրախութեամբ։ Եւ [15]փայտքն Լիբանանու՝ ասեն, թէ Յարմէ հետէ դու դադարեցեր՝ ոչ ելին ի մեզ փայտահարք։
9 տահարք։ Դժոխք ինքնքեաս [16]դառնացան ի պատահել քեզ. յանկնեցան միանգամայն հակառակն ամենայն որ լեալ էին իշխանք երկրի, որ յարուցին՝ յաթոռոց իւրեանց երկրի, որ յարուցին՝ յաթոռոց իւրեանց
10 եանց զամենայն թագաւորս ազգաց։ Ամենեքեան պատասխանի տացեն քեզ եւ ասասցեն, Եւ դու իրրեւ զմեզ ըմբռնեցար, եւ ընդ մեզ համարեցար։ Իջին ի դժոխս վասն քո, եւ լատում ուրախութիւնն քո. ի ներքոյ քո մեցս տապտեսցեն, եւ ի վերայ քո որդն յարկցի։ [17]Զիարդ անկար յերկինից Արուսեակն որ ընդ առաւօտն ծագէր. անկար յերկիր, խորտակեցաւ՝ որ առաքէր առ ա-
13 զգեայս ասես՝ Դու ասէիր ի մտի քում, Ելից յերկինս, ի վերոյ քան զաստեղս [18]երկնից արիից՝ զաթոռ իմ. նստայց ի

տուական քան զոսկին Ոփփրայ։ (13) վասն որոյ ես սպասեցից ցերկինս. [1] ՅԵբբ. դ-ի-ւ-ե [2] ՅԵբբ. խոցեայի, եւ զսրս ունիցին՝ [3] ՅԵբբ. Նոցա [4] ՅԵբբ. ոչ Համճին ընդ ոսկի։ (18) Աղեղունք նոցա զերիտասարդս խոցոտեացեն, եւ պտղոյ որովայնի [5] ՅԵբբ. փառն է թագաւորութեանց, պարծանք [6] ՅԵբբ. ոչ բնակեսցի ազգ յազգ [7] ՅԵբբ. անասնովք առնացեալովք [8] ՅԵբբ. Ճիչ բարձեն յապարանս նորա, եւ վիշապք ի տաճարս փափկութեան։ Ժամանակ նորա հասեալ կայ [9] ՅԵբբ. Զի [10] ՅԵբբ. Հանգուսցէ զնոսա [11] ՅԵբբ. ի նոսա, եւ յաւելցին ի տունն [12] ՅԵբբ. ժառանգեսցէ զնոսա տունն Իսրայէլի յերկրին Տեառն [13] ՅԵբբ. Հարկահանն [14] ՅԵբբ. գգուպ ամպարշտացն, գգաւազան իշխանացն. (6) Որ հարկանէրն զազգս սրամտութեամբ, Հարուածով անդադար, իշխէր բարկութեամբ ազգս, հալածանս կրէ անարգել։ (7) Հանգեաւ, ոգի առ [15] ՅԵբբ. եղեւնափայտք [16] ՅԵբբ. դղրդեցան վասն քո, յերկանչէն ընդ առաջ գալոյսեան քո. զարթոյց ի վերայ քո զՀոգիսն, զամենայն իշխանս երկրի. յարոյց [17] ՅԵբբ. Զի՞ արդ անկար յերկնից, Արուսեակդ, որդի առաւօտուն. կործանեցար յերկիր որ ճնոխանայիր ի վերայ ազգաց։ [18] ՅԵբբ. Աստուծոյ բարձրացուցից

լերինն [1]բարձու, ի վերայ լերանց բար-
14 ձանց" հիւսիսոյ. Ելից ի վեր քան զամպս,
15 եղէց նմանօղ Բարձրելոյն: Արդ անա-
ւաղիկ ի գժոխս իջցես [2]ու ի հիմունս
16 երկրի": Արք տեսանիցին զքեզ՝ զար-
մասցին ի վերայ քո ու ասասցեն, Այս
աջն այր է որ գայրացուցանէր զերկիր,
17 չարժէր զթագաւորս. Որ առնէր զա-
մենայն տիեզերս աւերակ, ու քակէր
զքաղաքս նոցա. զերիսայ զերիվարձ ոչ
18 արար: Ամենայն թագաւորք ազգաց
ննջեցին պատուով՝ այր իւրաքանչիւր
19 ի տան իւրում. Եւ դու [3]անկցիս ի վե-
րայ լերանց իրրեւ զմեռեալ, զարչելի
ի մէջ բազում վիրաւոր կոտորելոց սրով՝
իջելոց ի գժոխս. իրրեւ զձորձս արհամար
20 թաթաւեալ որ ոչ իցէ սուրբ. Նոյնպէս
ու դու ոչ արժանասիս", զի զապականեցեր
զերկիր [4]իմ, ու զժողովուրդ [4]իմ կո-
տորեցեր. մի՛ ինասցէ յաւիտեանս ժա-
21 մանակաց զաւակ [5]չարաց: Պատրաստեա
զորկիս քո ի" սպանուածն վասն մեղաց
հարց իւրեանց. զի մի՛ յարիցեն ու ժա-
ռանգեսցեն զերկիր, ու լցցեն զերկիր
22 [6]պատերազմօք: Յարիցայց ի վերայ նո-
ցա, ասէ Տէր Սաբաւթի, ու կորուս-
ցից [7]զանուն նոցա ու զզաւակ ու զազգ:
23 Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Սրարից
զԲաբելացն աւերակ, զի լնակեսցեն ի
նմա ոզնիք. ու ելիցի յօչինչ, ու ա-
րարից զնա խորխորատս ապականի:
24 Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Զոր օրինակ ասացի" այնպէս եղիցի,
ու որպէս խորհեալ եմ՝ այն կացցէ.
25 Աստանկել զԱսորեստանեայս յերկրի
իմում ու ի վերայ լերանց իմոց ու եղի-
ցին ի կոխումն. ու բարձցի "ի ձէնջ
լուծ նոցա, ու գոռոզութիւն նոցա ի
26 պարանոցէ ձերմէ" վերասցի: Այս խոր-
հուրդ է զոր խորհեցաւ Տէր ի վերայ
ամենայն տիեզերաց. ու այս ձեռն
բարձրացեալ ի վերայ ամենայն ազգաց:
27 Զի զոր [9]առաքն Աստուած" խորհեցաւ,
ո՞վ իցէ որ զայն ցրիցէ. ու զբարձրացեալ
ձեռն նորա՝ ո՞վ իցէ որ զարձուցանիցէ:
28 Յամին յորում մեռաւ Ահքազ արքայ,
եղեւ պատգամս այս [10]ի վերայ այլազգեաց:"

29 Մի՛ ուրախ լինիք, ամենայն այլազգիք, իմէ խորտակեցաւ լուծ հարիանոցն ձերոյ. զի ի զաւակէ օձին ելցեն
30 ծնունդք իժից, ու ի նոցա ծնունդս ելցեն օձք իմեւաւորք: Եւ բուծցին [11]աղքատք նոքա, ու տկար մարդիկ" ի խաղաղութեան բնակեսցին. ու [12]սատակեսցէ ի սովոյ զաւակ քո, ու զնացորդս
31 քո սատակեսցէ: [13]Ազաչէք, զուռնք քաղաքայ. ձայնս արկցին, քաղաքք խառնեսցէք, ամենայն այլազգիք. ծուխս ել ի
32 հիւսիսոյ, ու ոչ ուրն գասնիցին" Ու զի՞նչ առցին պատասխանի [14]իմ պատուիրակք ազգաց. զի Տէր հաստատեաց զհիմունս
Սիովնի, ու [15]նովաւ փրկեսցին խնամարկք ժողովրդեանն":

ԳԼ. ԺԵ

1 Պատգամ ի վերայ Մովաբացւոց:
[16]Գիշերի սատակեցաւ Մովաբացին,
գիշերի կործանեցաւ պարիսպ Մովաբա-
20 իմարդկանէ լցցին[11]ուրախութեամբ. Պա-
կասեաց՝՝ անօրէնն, եւ կորեսցէ ամբար-
տաւանն. եւ սատակեցան [12]անօրէնք ի
21 չարիս, Եւ ոյք առնեն մեղանչել մարդ-
կան բանիւք. [9]ամենայն յանգիմանչացն
ի դրունս դնէին զգայթագուժութիւն, եւ
խոտորէին անիրաւութեամբ զիրաւունս։
22 Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր [13]ի
վերայ տանն Յակոբայ զոր ընտրեացն
Աբրահամէ. ոչ այժմ ինչ ամաչեսցէ Յա-
կոբ, եւ ոչ այժմ զերեսս այլագու-
23 նեսցէ Իսրայէլ՝՝. Այլ յորժամ տեսցեն
որդիք նորա զգործս իմ, վասն իմ սուրբ
արասցեն զանուն իմ, եւ սուրբ արաս-
ցեն զՄուրբն Յակոբայ, եւ երկիցեն
24 յԱստուծոյն Իսրայելի։ Եւ ծանիցեն մո-
լորեալք հոգւով զիմաստութիւն, եւ
տրանջօղք ուսցին [14]զհնազանդութիւն,
եւ լեզուք թոթովախօսք ուսցին խօ-
սել զխաղաղութիւն՝՝

Գլ. Ա.

1 Ա՛յսպէս ասէ Տէր. Վայ ձեզ, որդիք ա-
պստամբք, զի խորհեցարուք խորհուրդ
եւ ոչ իմով Հոգւով, յաւելուլ մեզս ի վերայ
2 մեղաց. Որ գնայիք իջանել յերկիրն Ե-
գիպտացւոց, եւ զիս ոչ հարցանէիք,
զտանել օգնականութիւն ի Փարաւոնէ,
3 եւ թիկունս առնել զնգիպտացիան։ Եւ
եղիցին ձեզ թիկունք Փարաւոն յամօթ,
եւ յուսացեալդ յԵգիպտացիան նախա-
4 տինս. Զի են յերկրին Տայանու իշխանք
5 [15]հրեշտակք չարք. Զուր չտանան առ ժո-
ղովուրդն՝՝ որ ոչ լինիցի զոցա չահ յօգ-
նականութիւն. ոչ յօգուտ, այլ յամօթ
եւ ի նախատինս։
6 [16]Տեսիլ չորքոտանեացդ [17]յանապատի. ի
նեղութեան եւ յանձկութեան՝՝. առեւծ
եւ կորիւն առիւծու, եւ ի նոցանէն իմք
եւ կորիւնք իմից թռչունք, որ բարձ-
նալ բերեն իշոց զգանձս իւրեանց, եւ
լցնալ ուղտուց զմնծութիւն իւրեանց.

---

[1]Ներք. Որովհետեւ մերձ [2]Ներք. և երկեղ նոցա յինէն է պատուէր ուսուցեալ ի մարդկանէ
[3]Ներք. առնել ընդ ժողովրդեանդ ընդ այդմիկ իրս զարմանալիս եւ զքանդելիս, եւ կորիցէ իմաստութիւն իմաստնոց նորա, եւ խորհուրդ խորհրդականաց նոցա թաքիցէ. [4]Ներք-յեղեն յաւե-
ը–, ի Տեառնէ [5]Ներք. զմեզ. (16) Ո՛վ կամակորութեան ձերում միթէ իբրեւ գկաւ համարեսցի բրուտ. [6]Ներք. եղեւ խելամուտ
[7]Ներք. Ո՞չ [8]Ներք. զարտ պտղաբեր, եւ արտ պտղաբեր [9]Ներք. պ-ոյ-ոց [10]Ներք. մուրացիկք

[11]Ներք. ուրախութեամբ ի Սուրբն Իսրայելի. (20) Զի պակասեաց [12]Ներք. անօրէնք որ հակեն
[13]Ներք. որ փրկեացն զԱբրահամ՝՝ ի վերայ տանն Յակոբայ. Ոչ եւս ամաչեսցէ Յակոբ, և այ եւս երեսս նորա այլագունեսցին [14]Ներք. զգիտութիւն
[15]Ներք. նորա եւ հրեշտակք նորա հասին ի նմանէս։ (5) Ամենեքեան յամօթ եղեն վասն ժողովրդեանն
[16]Կամ, Բեռն [17]Ներք. Հարաւայ, յերկիրն նեղութեան եւ անձկութեան

առ ազգ մի՝ որ ոչինչ օգուտ լինիցի նոցա յօդնականութիւն, [1]այլ յամօթ եւ
7 ի նախատինս։ Եղիսաացիքն որ զուր եւ տարապարտ օգնեցին ձեզ, [2]պատմեա նոցա եթէ ի զուր է այդ միխ-
8 թարութիւն ձեր։ Արդ նիստ եւ զրեա ի տախտակի եւ ի գիրս, զի եղիցի այդ յաւուր իւրում եւ ի ժամանակս յաւի-
9 տենից, թէ՝ Ժողովուրդ անհնազան [3]է, եւ որդիք սուտք. [4]եւ ոչ կամեցան
10 լսել զօրէնս [5]Աստուծոյ։ Որք ասէին ցմարգարէսն, թէ Մի՛ պատմէք մեզ. այլ խօսեցարուք ընդ մեզ եւ պատմի-
11 ցէք մեզ այլ մոլորութիւնս. Եւ զարձուցէք զմեզ ի ճանապարհէդ յայդմանէ, եւ ի բաց արարէք ի մէնջ զչար իդդ զայդ.
եւ հանէք ի մէնջ զօրէնս Աստուծոյ Իս-
12 րայելի։՝ վասն այսորիկ այսպէս ասէ [1]Տէր՝ Սուրբն Իսրայելի, Փոխանակ զի անարգեցէք զոր զրանող զայգոսիկ, եւ յուսացարուք ի ստութիւն [6]անոտի, եւ
13 զի տրանջեցէք՝ եւ յուսացարուք ի բանդ յայդ՝։ վասն այսորիկ եղիցին ձեզ մեղքդ այդոքիկ իբրեւ [7]զպարիսպ կործանեալ առժամայն ամուր քաղաքի առելոյ՝, ո-
րում յանկարծակի հասանիցէ կործա-
14 նումն։ Եւ կործանումն նորա եղիցի իբրեւ զբեկումն խեցեկէն անօթոյ բրտի՝ մանր խորտակելոյ, զի մի ոք գտանիցէ
ի նմանէ որով հուր բառնայցէ՝ կամ ո-
րով մարթիցէ առնուլ ածուխ մի ջուր
15 Զի այսպէս ասէ Տէր Տէր՝ Սուրբն Իսրայելի, [8]Զարժամ դարձցիս եւ յոդոց հանիցիս, յանժամ կեցցես, եւ գիտասցես թէ ուր իցես. զի յաւուցեալ էիր
զու ի անոտին, անոտի եղեւ եւ՝ զո-
րութիւնն ձեր. եւ ոչ կամէիք լսել.
16 Այլ ասէիք, [9]Երիվարօք մերովք՝ վա-

[1]Յետ. գլուխ [2]Եբբ. վասն այսորիկ կոչեցի նմա, Ամբարտաւան որ նստի։ (8)Արդ մուտ, գրեա զայս ի տախտակի առաջի նոցա, եւ դրոշմեա ի գիր, զի եղիցի ի վերջնում աւուր ի վկայութիւն յաւիտենից։ (9) Զի [3]Եբբ. է նա [4]Եբբ. որդիք որ [5]Եբբ. Տեառն։ (10) Որք ասէին ցտեսանողսն՝ Մի՛ տեսանէք, և ցհայեցողսն՝ Մի՛ հայիք վասն մեր ուղիղս. խօսեցարուր մեզ ողջախոհս, տեսէք պատրանս. (11) Թեռս կացէք ի ճանապարհէդ, խոտորեցարուք ի շաւղէդ, բարձէք յերեսաց մերոց զՍուրբն Իսրայէլի։
[6]Եբբ. եւ ի թիւրութիւն, եւ յնչարուք յայն
[7]Եբբ. զկռամատ որ անկանելոց է՝ ուռուցեալ ի պարսպի բարձուս [8]Եբբ. Ի դառնալ եւ ի հանգչել՝ կեցջիք. ի հանդարտութեան եւ յա-
պաւինութեան եղիցի [9]Եբբ. Ոչ, երիվարօք

խիցուք. վասն այսորիկ փախստականք լինիցիք. եւ ասէիք, Երագ երիվարօք
[1]մերովք վախիցուք. վասն այսորիկ հրապագունք [1]քան զձեզ՝ եղիցին որ հա-
17 լածենն զձեզ։ Զի ի միոջէ բարբառոյ հազարք վախիցին, եւ ի բարբառոյ հնգից բազումք վախիցին. մինչեւ
մնասջիք իբրեւ զձող ցցեալ ի վերայ լերին, եւ իբրեւ զկոթող կանգնեալ ի
18 վերայ բլրոյ։ Եւ զարձեալ կանխեսցէ [10]Աստուած զթալ ի ձեզ, եւ վասն այսորիկ բարձրասցի ողորմել ձեզ. զի
[11]գաստաւոր Տէր Աստուած մեր է՝, եւ-
րանի ամենեցունց որք սպասեն նմա։
19 Զի ժողովուրդ [1]սուրբ ի Սիոն, բնակեսցէ [12]եւ երուսաղէմ յալով ելաց՝ եթէ Ողորմեաց ինձ՝։՝ ողորմեսցի քեզ՝
ձայնի աղաղակի քումմ, [13]իբրեւ եաես՝
20 եւ լուաւ քեզ՝։ Եւ տացէ քեզ Տէր հաց նեղութեան եւ ջուր կարօտանաց, եւ
ոչ եւս [14]մերձեսցին ի քեզ որ մոլորեցուցանէին զքեզ, զի աչք քո տեսցեն
21 ի մոլորեցուցիչն՝ քո. Եւ ականջք քո լսեցեն բանս [15]զնետ մոլորեցուցչացն քոց. որք ասէին՝ եթէ Այս է ճանա-
պարհ, եւ գնասջուք ընդ սա, կամ թէ
22 յաջ կամ թէ յահեակ։ Եւ զարշելեսցես զկուռսն զարծաթապատս եւ զոս-
կիապատս, մանրեսցես զնոսա եւ հո-
սեսցես իբրեւ զչքոր գաչտանաց, եւ
23 իբրեւ զաղբ մերժեսցես զնոսա՝։ Ցայնժամ եղիցի անձրեւ սերմանեաց երկրին քումմ, եւ հաց արգեանց երկրի քո եւ
ղիցի չաղուղ եւ ի պարար. եւ ճարա-
կեսցին խաչինք քո յաւուր յայնմիկ ի
տեղւոջ պարարատութեան եւ յանդորրու.
24 [16]Զուարակք ձեր եւ եղինք՝ որ զործեն զերկիր՝ կերիցին [17]յարդ խառնեալ ընդ
25 զարիւ, հոսեալ ի կալոյ՝։ Եւ եղիցին ի վերայ ամենայն լերանց բարձանց եւ

[10]Եբբ. Տէր [11]Եբբ. Աստուած գատաստանի է Տէր [12]Եբբ. Յերուսաղէմ. լալով մի՛ լացցես. ողորմելով [13]Եբբ. ի լսել զայն, տայցէ քեզ պատասխանի [14]Եբբ. Հեռացին ուսուցիչք քո, և աչք քո տեսցեն զուսուցիչս [15]Եբբ. ի թիկանց քոց որ ասէ, Այս ճանապարհ, գնացէք բնդ սա, յորժամ յաջ կամ յահեակ խոտորիցիք. (22)Եւ պղծեսցես զձածկոյթս կուռց քոց արծաթեղինաց, եւ զպարդս ձուլածոյից քոց ասկեղինաց. և ընկենուցես զնոսա իբր զկապերաս դաշտանի. Իլ արտաքս, ասացես ցիւրաքանչիւրն. [16]Եբբ. Եւ եղինք եւ էշք [17]Եբբ. Ճարակ ընտիր, սրբեալ թիակ եւ հեծանոցաւ

ի վերայ ամենայն բլրոց բարձրանդակաց՝ [1]ջուր բղխեալ՝, յաւուր յայնմիկ յորժամ կործիցեն բազումք եւ կարծանեսցին աշ-
26 տարակք։ Եւ եղիցի լոյսն լուսնի իբրեւ զլոյս արեգական, եւ լոյսն արեգական եւիննապատիկ եղիցի՝ իբրեւ զլոյս աւուրցն եւթանց, յաւուր յորում բժըշկեսցէ Տէր զվիրաւորութիւն ժողովրդեան իւրոյ, եւ զդաւս վիրացն [2]քոց բժշկեսցէ։
27 Ահաւասիկ անուն Տեառն գայ [3]յամայր աման՝ յետ բազում ժամանակաց՝, վառեալ բարկութեամբ եւ [4]յի փառաց. բանք չրթանց նորա եւ բանք բերանոյ նորա լի բարկութեամբ. եւ բարկու-
28 թիւն սրտմտութեան՝ նորա իբրեւ դնուր կերիցէ. Եւ հոգի նորա իբրեւ գլուր ձորալիր պարանոցամած յորդեսցէ. [5]եւ բաժանեսցի խռովեցուցանել զազգս վանն անոտի մոլորութեանն. եւ հալածեսցէ դնոսա մոլորութիւնն, եւ հասցէ նոցա
29 յանդիման նոցին։ Միթէ հանապաղ պարտ իցէ ձեզ ուրախութեամբ մտաննել ի սրբութիւնս իմ, յաւիտենից ժամ տօնիւք եւ ուրախութեամբ եւ փողովք մտանել ի լեառն Տեառն՝ առ
30 Աստուած Սուրբն Իսրայելի։ Եւ լսելի արասցէ՝ զփառս բարբառոյ իւրոյ, եւ [6]զսրտմտութիւն բազկի իւրոյ ցուցցէ բարկութեամբ՝ եւ սրտմտութեամբ եւ բոցով որ ուտիցէ. [7]եւ ապատիկ բարկութեամբ հրացանից, եւ ջրով եւ կարկտիւ մեհանգամայն հոսելով բռնութեամբ՝։
31 Զի ի բարբառոյ Տեառն ընկճեսցին Ասորեստանեայք, հարուածովքն զոր հար-
32 կանիցէ զնոսա։ Եւ [8]եկեսցէ նմա չուրջ յօդնականաց իւրոյ՝ յոր կոյժ եւ յուսացեալ իցէ. ի նոքա փողովք եւ թմբկաւ եւ պէսպէս պատերազմաւ փոխ-փոխ մարտիցին ընդ նմա, եւ դու ոչ յաոաջադոյն քան զաւուրսն պահան-
33 ջեսցիս։ Իսկ արդ եւ քնդ պատրաստեալ իցէ թագաւորել, ի վերայ ձորոյն խորոյ փայտ զիզեալ, հուր եւ փայտակոյտ բազում վառեալ. սրտմտութիւն Տեառն իբրեւ զձոր լիծմտով բորբոքեալ՝։

ԳԼ. Լ.Ա

1 Վա՛յ ոյք իջանեն յեգիպտոս վասն օգնականութեան. [9]որ ի հեծեալս՝ եւ ի կառս յուսացեալ իցեն՝ թէ բազումք են, եւ [10]բազմութիւն երիվարաց՝ յոյժ. եւ ոչ էին յուսացեալ ի Սուրբն Իսրայելի,
2 եւ [11]զԱստուած ոչ խնդրեցին։ Եւ նա իմաստուն էր՝ եւ ածէր [12]ի վերայ նոցա չարիս. եւ բան նորա ոչ անարգեսցի՝. եւ յարիցէ ի վերայ տանց մարդոց չարաց, եւ ի վերայ [13]անոտի յուսոյն նոցա.
3 Զայր եղիպտացի՝ եւ ոչ Աստուած, ի մարմինս երիվարաց՝ եւ ոչ դոյր օգնականութիւն՝. այլ Տէր արկցէ ի վերայ նոցա զձեռն իւր, եւ տապաննեսցին օգնականքն, եւ կործանեսցին օգնեալքն ի նոցանէն. եւ առ հասարակ ամենե-
4 քեան սատակեսցին։ Զի այսպէս ասաց ցիս Տէր, թէ Զոր օրինակ գոչեսցէ առիւծ եւ կորիւն առիւծու [14]յոր յոր հասանիցէ, կոչեսցէ ի վերայ եւ լցցէ զվերինս բարբառով իւրով, եւ ի պարտութիւն մատնեսցին, եւ ի սատկութենէ սրբտմտութեան նորա հալեսցին՝, այնպէս իջցէ Տէր զօրութեանց [15]ի լեառն Սիոն,
5 եւ ի վերայ լերանց՝ զորա։ Իբրեւ զվճռոյ չունս [16]թռուցեալս, այնպէս հովանի լիցի Տէր զօրութեանց ի վերայ Երուսաղեմի. ի թիկունս իջցէ, օգնեսցէ եւ վրկեսցէ եւ կեսցուսցէ։
6 Դարձարուք [17]ոյք խորհիք խորհուրդս

---

[1] ՆԲԲ. գեաք գնացից ջուրց [2] ՆԲԲ. նորա [3] ՆԲԲ. ի հեռաստանէ [4] ՆԲԲ. սատկութեամբ բոցոյ. չրթունք նորա լի բարկութեամբ, եւ լեզու [5] ՆԲԲ. մաղել զազգս մաղիւ ունայնութեան, եւ եղիցի սանձ մոլորութեան ի կզակս ժողովրդոց։ (29) Երգ եղիցի ձեզ իբրեւ ի դիչերի խմբելոյ սուն, եւ ուրախութեամբ սրտի որպէս որ դնայցէ սրնգաւ մտանել ի լեառն Տեառն առ Վէմն Իսրայելի։ (30) Եւ լսելի արասցէ Տէր [6] ՆԲԲ. զհարուած [7] ՆԲԲ. հեղեղաւ, մրրկաւ և բարիւ կարկտի [8] ՆԲԲ. եղիցի ամենայն հարուած գաւազանին սահմանելոյ զոր անցցէ Տէր ի վերայ նորա, թմբկաւ եւ քնարաւ. եւ մարտիւ

սատկութեան մարտիցէ ընդ նմա։ (33) Զի պատրաստեալ է ի վաղուց Տոփեթի եւ պատրաստեալ է վասն թագաւորին. խորեաց, ընդարձակեաց. շեղջ նորա հուր եւ փայտ բազում, շունչ Տեառն որպէս հեղեղ ծծմբոյ բորբոքելոյ ինման։ [9] ՆԲԲ. եւ յերիվարս յհեծեալ [10] ՆԲԲ. ի հեծեալս զի հզօրք են [11] ՆԲԲ. զՏէր [12] ՆԲԲ. չարիս, եւ զբան իւր ոչ դարձուսցէ [13] ՆԲԲ. օգնութեանն որոց գործեն զանօրէնութիւն։ (3) Եւ եղիպտացիք մարգիկ են եւ ոչ Աստուած, եւ երիվարք նոցա մարմին եւ ոչ հոգի [14] ՆԲԲ. յորս իւր, զոր ժողովեսցէ ի վերայ նորա լրութիւն հովուաց, ի բարբառոյ նոցա ոչ խռովեսցի, եւ յամբոխէ նոցա ոչ խռնարհեսցի [15] ՆԲԲ. ի պատերազմ ի լեառն Սիոն, եւ ի վերայ բլրոյ [16] ՆԲԲ. որ ծածկեն զաչս իւրեանց [17] ՆԲԲ. առ Ս.ն յորմէ յետս կացեք չսրաչար

խորհիս եւ զանօրէնս", որպիք Իսրայելի։
7 Զի յաւուր յայնմիկ բարձցեն [1]մարդիկ զձեռագործս իւրեանց" զարծաթեղէնս եւ զոսկեղէնս՝ զոր արարին ձեռք նոցա
8 ի մեզս։ Եւ անկցի Ասորեստանեայն, ոչ սրով առն, եւ ոչ սուր մարդոյ կերիցէ զնա. եւ ի փախուստ գարձցի՝ [2]ոչ յերեսաց սուսերի, եւ երիտասարդք նո-
9 քա [3]ի պարտաւճիւն մատնեսցին։ Եւ եղիցին վիմարգելք իբրեւ զորմարգելս. եւ ի պարտաւճիւն մատնեսցին, եւ որ փախիցէն՝ ըմբռնեսցի։ Այսպէս ասէ Տէր. Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն, եւ ընտանեակք իցեն նորա յԵրուսաղէմ։"

Գլ. ԼԲ

1 "Զի առաւասիկ թագաւոր արդար" թագաւորեսցէ, եւ իշխանք իրաւամբք սի-
2 րեսցեն։ Եւ եղիցի մարդն [5]որ թաքուցանիցէ զբանս իւր, թաքիցէ իրրեւ ի ջուրցն առատութենէ. եւ եղիցի Սիոն իբրեւ զվէմ յորկալ փառաւոր ի ծա-
3 րաւատ երկրի։ Եւ ոչ եւս եղիցին յուսացեալ ի մարդիկ, այլ տացին զա-
4 կանջս առ ի լսել։ Եւ սիրտք տկարաց անասցեն ի լսել". եւ լեզուք թմբովք՝ արագ արագ ուսցին խօսել [6]զիարգա-
5 զութիւն։ Եւ ոչ եւս առասցին ցչիմարն լինել նոցա իշխան. եւ ոչ եւս առասցին պաչտօնեայք քո՝ թէ Լուռ լեր"
6 Քանզի չիմարն չիմարութիւն խօսեսցի, եւ սիրտ նորա զնանրութիւն խորհեսցի. կատարել զանօրէնութիւն, եւ խօսել առ [7]Աստուած զմոլորութիւն. ցրուել զանձինս քաղցեալս, եւ զանձինս ծա-
7 րաւեալս՝ ունայնս արձակել։ Զի խորհուրդք չարայց" անօրէնս խորհին ապա-

[1] ՆԲԳ. այր իւրաքանչիւր գկուռս [2] ՆԲԳ. պահաւ
[3] ՆԲԳ. եղիցին հարկատու։ (9) Եւ յամրութիւն իւր առ երկիւղի անցցէ, և երկիցեն ի դրօշէ իչխանք նոցա, ասէ Տէր, որոյ հուր նորա ի Սիոն, և հնոց նորա յԵրուսաղէմ։ [4] ՆԲԳ. Ահաւասիկ թագաւոր արդարութեամբ [5] ՆԲԳ. իբրեւ թարսոց ի հողմոյ, և պատսպարան ի հեղեղէ. որպէս գնացք ջուց յերաշտ, որպէս հովանի վիմի մեծի ի ծարաւատ երկրի։ (3) Եւ ոչ լլացին աչք որոց տեսանեն, և ականջք լսողաց անասցեն։ (4) Եւ սիրտ փութացելոց խելամուտ լիցի գիտութեան [6] ՆԲԳ. յատակս։ (5) Եւ ոչ եւս կոչեսցի ժանան ազնուաբարոյ, եւ մադհնի՝ առատասլ առատաձեռն։ [7] ՆԲԳ. Տէր զանազգամութիւն, զրկել զանձինս քաղցեալս եւ զըմպելի ծարաւելոյն տացէ սպառել։ (7) Եւ խորհուրդք ագահաց չար են,

կանել զխոնարհս բանիւք անիրաւութեամբ, [8] եւ ցրուել զբանս անանկաց ի
8 դատաստանի. Իսկ ուղիղք իմաստուն խորհեցան, եւ խորհուրդն այն կայ՝ մնայ։
9 Կանայք մնծատունք," արիք եւ լսեցէք ձայնի իմոյ. եւ [9]դուստերք, կասկածանօք լուարուք զբանս իմ։
10 Յաւ լիցին ձեզ աւուրքն տարեկանաց ցաւովք եւ կասկածանօք." Նուաղեցան կալմք, [2]դադարեցին սերմանք եւ այլ
11 ոչ եւս եկեսցին։ Զարհուրեցարուք, բարեկեցիկք. տրամեցարուք, յանձնապատանդք. մերկացարուք, կողոպտեք
12 ցարուք, քրձազգածք եղերուք։ Կոծեցարուք ի վերայ սանանց վասն անզոյն ցանկալեաց եւ վասն այգեացն բերոց։
13 Յերկրի ժողովրդեան իմոյ փուչ եւ խոտ բուսցի եւ յամենայն [10]ապարանից ուրախութիւն բարձցի. քաղաքիդ մնծա-
14 կլոյ ապարանք լքեալք. Ամնծութիւն քաղաքիդ լքցին եւ զառնս ցանկալիս. եւ եղիցին աւանք քո" այրք յաւիտենից, ուրախութիւն ցաւուց եւ ճարակք
15 հօտից։ Մինչեւ եկեսցէ ի վերայ [11]ձեր Հոգի ի բարձանց. եւ եղիցի անապատն [12]ի Քեռմէլ, եւ [12]Քեռմէլ յանտառ համա-
16 րեսցի. Եւ հանգիցին իրաւունք յանապատի. եւ արդարութիւն ի [12]Քեռմէլ
17 բնակեսցէ։ Եւ եղիցին գործք արդարութեան [13]իաղաղութեամբ. եւ կալցի արդարութիւն զհանգիստ. եւ յուսացեալքն
18 եղիցին" մինչեւ յաւիտեան։ Եւ բնակեսցէ ժողովուրդ իմ [14]ի քաղաքին խաղաղութեան, եւ բնակեսցէ յուսով, եւ
19 հանգիցին մնծութեամբ. Այլ կարկտաւ եթէ իջանիցէ, ոչ ի ձեր վերայ եկեսցէ. եւ եղիցին որ բնակեալ իցեն յանտառին, յանդաս իրրեւ զայնտառիկ ոյք

[8] ՆԲԳ. մինչ կարօտեալն խօսի իրաւամբք։ (8) Իսկ որ առատաձեռն է՝ առատս խորհի, եւ կայ մնայ յառատաձեռնութեան։
(9) Կանայք բարեկեցիկք, [9] ՆԲԳ. դստերք յանձնապատանք, լուարուք զբանս իմ։ (10) Աւուրս քան զտարի խռովեսջիք, կանայք յանձնապատանք. քանզի [10] ՆԲԳ. տունս ուրախութեանց քո. զքաղին ցնծացելոյ։ (14) Զի ապարանք լքեալ են, քաղաքն բազմամարդ թողեալ է, բարձրաւանդակն և դիտանոց լիցին [11] ՆԲԳ. մեր [12] Այսինքն՝ արտ պտղաբեր [13] ՆԲԳ. խաղաղութիւն, և արդիւնքն արդարութեան հանգիստ և վստահութիւն [14] ՆԲԳ. ի բնակութեան խաղաղութեան և ի խորանս վստահութեան, և ի հանգստեան հանդարտութեան։ (19) Եւ կարկտաւ իջցէ ի վերայ

20 *իցեն ի գալստի. երանի որ սերմանիցեն՝ ընդ ամենայն ջրով ուր եղն եւ էշ կոխիցեն.*

ԳԼ. Լ Գ

1 [1]*Վա՛յ այնոցիկ որ թշուառացուցանեն զձեզ, բայց զձեզ ոչ ոք կարէ թշուառացուցանել. եւ որ արհամարհէն՝ ոչ զձեզ արհամարհէ. զի մատնեսցեն ի պարտութիւն որ զձեզն արհամարհեն. եւ իբրեւ ղցեց ի վերայ ձորձոց՝ այնպէս մատնեսցեն ի պարտութիւն։՝*

2 *Տէր, ողորմեաց մեզ՝ զի ի քեզ յուսացաք. [2]եղեւ զաւակ անհաւատիցն ի կորուստ, այլ մեր փրկութիւն ի քէն է ի*

3 *ժամանակի նեղութեան։ Ազան բարբառոյ ահի քո յիմարեցան ժողովուրդք, եւ յերկիւղէ՛՛ քումմէ ցրուեցան հեթանոսք։*

4 [3]*Եւ արդ ժողովեսցի կապուտան ձեր մեծի եւ փոքու, որպէս ոք զի ժողովեսցէ զմարախ իրեւ ի գրոյ, այնպէս*

5 *այսպէս առնիցեն ղձեզ։ Սուրբ է Տէր Աստուած մեր որ բնակեալն է ի բարձունս. լցաւ Սիոն իրաւամբք եւ արդարութեամբ։ Օրինօք մատնեսցին, եւ*

6 *զանձուք եղիցի փրկութիւնն մեր. եւ հաս իմաստութիւն եւ հանճար եւ աստուածպաշտութիւն Տեառն. այս են գանձք արդարութեան։*

7 *Անհաւատիկ յանէդ ձերմէ երկիւղն, յորոց երկնչէիքն՝ երկիւղն ի ձէնջ. հրեշտակս արձակեսցեն որ յայտնեն զառնապէս՝ եւ խնդրեսցեն զխաղաղութիւն.*

8 *Զի հատան ճանապարհք նոցա. հանդարտեաց աշն հեթանոսաց, եւ բարձաւ ուխտն որ ընդ նոսա, եւ մի՛ եւս հա-*

9 *մարիցիք զնոսա ի մարդիկ։ Սուգ առ եւ ակարացաւ՛՛ երկիր. յամօթ եղեւ Լիբանան, [4]ի գալստ մարգագետին համաբերեցաւ Սարոն. յայտնի եղեւ Գալիլեա՛՛*

10 *եւ կարմիզոս։ Արդ յարեայց, ասէ Տէր. արդ փառաւորեցայց, արդ բարձրացայց.*

11 [5]*Արդ տեսջիք, արդ յամօթ լինիք. ընդունայն լիցի զօրութիւն ոգւոց ձերոց,*

12 *եւ հուր կերիցէ զձեզ։ Եւ եղիցին հեթանոսք խարչեալք իբրեւ պիտուչ յա-*

13 *զարակի՝ այրեցեալ եւ ընկեցեալ։՛՛ Լսեցեն հեռաւորք զոր արարի, ծանիցեն*

14 *մերձաւորք զզօրութիւն իմ։ [6]Մերժեցան ի Սիոնէ՛՛ անօրէնք, զողումն կալցի զամպարիշտս։ Իսկ արդ ո՞ [7]պատմեսցէ ձեզ եթէ հուր լոլոքեալ կայ, կամ ո՞ պատմեսցէ ձեզ զտեղւոյն՛՛ յա-*

15 *ւիտենից։ Որ գնայ արդարութեամբ, խօսի զուղիղ [8]ճանապարհէ, ատեայ զանօրէնութիւնն եւ զանիրաւութիւնն, թօթափէ զձեռս իւր ի կաշառից, ծանրացուցանէ զականջս առ ի չլսելոյ զդատաստան արեան, խնոս զաչս իւր զի*

16 *մի՛ տեսցէ զանիրաւութիւն։ Նա բնակեսցէ ի բարձր այրի վիմի հաստատանոյ. հաց տայի նմա՝ եւ ջուր նորա հաւա-*

17 *տարիմ։ [9]Զմեծատեսիլ փառաց տեսջիք. եւ աչք ձեր տեսցեն զերկիրն ի հեռաւոր,*

18 *եւ անձինք ձեր խոկասցեն յերկեւղ Տեառն։ Ո՞ւր են դպիրքն, ո՞ւր են իրաստուքն, ո՞ւր է որ ունի զհամար պահակաց զմեծի եւ զփոքու՝ ժողո-*

19 *վրդեանն, [10]Ընդ որում ոչ ինչ խորհեցաւ. զի չէր տեղեակ ծանրաձայնին վասն չլսելոյ. ժողովուրդ յոտացեալ, եւ ոչ*

անտաւալն, խռնարհելով խռնարհեցի բազաքն. (20) *Երանի ձեզ որ սերմանէքդ* [1]Եբր. *Վա՛յ որ աւերեաղ, եւ դու չես աւերեալ. որ կողոպտեսդ, եւ զքեզ ոչ կողոպտեցին. ի դադարել քո ի յաւերելոյ՝ աւերեսցիս, ի վախճանել քո ի կողոպտելոյ՝ կողոպտեսցեն զքեզ.*

[2]Եբր. *լեր բազուկ նոցա ընդ առաւօտս. և փրկութիւն մեր՝ ի ժամանակի նեղութեան.* (3) *Ի ձայնէ ամբոխի խաւսափեցան ժողովուրդք, ի բարձրանալոյ* [3]Եբր. *Եւ ժողովեսցի կապուտան ձեր որպէս ժողովի թրթուր. վազվզեսցեն առ նոա որպէս վազվզեն մարախք.* (5) *Բարձրեալ է Տէր, զի բնակեալ է ի բարձունս. լիից զՍիոն իրաւամբ եւ արդարութեամբ.* (6) *Եւ եղիցի հաստատութիւն ի ժամանակս քո. զօրութիւն փրկութեան իմաստութիւն եւ հանճար. երկեաղ Տեառն այն է գանձ նորա.*

(7) *Ահա հզօրք նոցա գոչեն արտաքոյ. հրեշտակք խաղաղութեան լան դառնապէս.* (8) *Ա-*

մայեցան ճանապարհք նոցա. դադարեաց որ անցանէն ընդ ուղին. դրժեաց ուխտին, խոտեաց զքաղաքս. եւ ոչինչ համարեցաւ զմարդ. (9) *Սուգ առ, նուազեցաւ*

[4]Եբր. *գօսացեալ է. եղեւ Սարոն իբրեւ զԱրապա (անապատ). եւ թօթափեցան Բասան* [5]Եբր. *Յղասցիք խոր, ծնիցիք խոզան. չունչ ձեր իբրեւ հուր կերիցէ զձեզ.* (12) *Եւ եղիցին ժողովուրդք յայրեաց բուոյ, փուշք հաւեալք, այրեսցին ի կրակի.* [6]Եբր. *Երկեան ի Սիոն* [7]Եբր. *բնակեսցէ ի ժնջ ի հուր որ ուտէ. ո՞ բնակեսցէ ի ժնջ ի հրդեհի* [8]Եբր. *պոյոռ* [9]Եբր. *Զթագաւորն ի գեղեցկութեան իւրում տեսցեն աչք քո. տեսցեն զերկիրն ի հեռաւոր.* (18) *Սիրտ քո խոկասցի զերկեւղ. ո՞ւր է դպիր, ո՞ւր է որ կշռէն, ո՞ւր է որ գրէ զսաչտարակս.* (19) *Զժողովուրդն բուռն մի՛ տեսցես, ժողովուրդ խոր շրթամբք ի լսել. խուժադուժ լեզուաւ*

20 գոյ լսողին ի մէտ առնուլ։ Ա՛հաւասիկ
Սիոն քաղաք փրկութեան մերոյ. աչք ձեր
տեսցեն զԵրուսաղէմ քաղաք մնծացեալ,
խորանք որ ոչ չարժեսցին՝. եւ մի՛ չար-
ժեսցին ցիւք խորանի նորա յաւիտեանս
ժամանակաց, եւ մի՛ խզեսցին ապաւան-
21 դակք նորա։ Զի [1]անուն Տեառն մնծ է ի
ձեզ. ձեզ լիցի տեղին յորում գնաքն եւ
ջրագարձք լայնք եւ ընդարձակք. ոչ
երթիցես ընդ այն ճանապարհ, եւ մի՛
գնասցեն նաւք քո վարելք. զի Աստուած
իմ մնծ է, եւ ոչ արասցէ զանց զինեւ։
22 Տէր հայր մեր՝, Տէր դատաւոր մեր, Տէր
[2]իշխան մեր, Տէր թագաւոր մեր, [3]Տէր
23 փրկիչ մեր՝ եւ՝ նա փրկեսցէ զմեզ։ Ի՛նձ-
ցան պարանք քո՝ զի ոչ հանգարտեցին,
նոյնպէս եւ կայմն խոնարհեցաւ՝ եւ ոչ
պարզեսցէ զառագաստն, եւ ոչ արձա-
կեսցէ զնչանն մինչեւ մասնեսցի ի կո-
24 րուստ։ Ա՛յսուհետեւ բազում կաղք ա-
ւար առնուցուն, եւ մի՛ ասասցեն [4]Ե՛ս
Վատակեցաք. ժողովուրդն որ բնակ-
եալ իցէ ինոսա, զի [5]ողան մեզք նոցա։՝

ԳԼ. ԼԴ

1 [6]Ա՛ստերուք, հեթանոսք, եւ լուարուք.
ունկն դիք, [7]իշխանք. լուիցէ երկիր եւ
[8]որ ի նմա՝, տիեզերք եւ ժողովուրդք
2 ի նմա։ Զի սրտմտութիւն Տեառն ի վե-
րայ ամենայն ազգաց, եւ բարկութիւն
ի վերայ ամենայն [9]զօրուց նոցա. սա-
տակել զնոսա եւ մատնել զնոսա ի սպա-
3 նումն։ Եւ վիրաւորք նոցա պիտապատ
անկցին, եւ ելցէ [10]հոտ նոցա, եւ թաց-
4 ցին՝ լերինք յարիւնէ նոցա։ Եւ հալեսց-
ին ամենայն զօրութիւնք երկնից, եւ
գալարեսցին երկինք իբրեւ զմաղաղաթի,
եւ ամենայն աստեղք թօթափեսցին իբ-
րեւ զտերեւ յորթոյ եւ որպէս անկանի
5 տերեւ ի թզենւոյ։ Զի արբեցաւ սուր
իմ յերկինս. արդ ի վերայ Եդոմացւոց
ասցի ինչ, եւ ի վերայ կորստական
6 ժողովրդեանն գատաստանաւք։ Սուր
Տեառն լցաւ արեամբ, [11]ուռուցաւ ճար-
պով պաւանց եւ ճարպով ցլուց եւ՝
խոյոց. զի զոհ Տեառն է ի Բոսոր, եւ
սպանդ մնծ յերկրին Եդոմացւոց։
7 Եւ ընկճեսցին [12]մնծամնծք ընդ նոսա՝
եւ խոյք եւ ցուլք՝. եւ արբեսցի եր-
կիրն յարենէ նոցա, եւ հող նոցա ի
8 ճարպոյ նոցա [13]լցցի։ Զի օր գատաս-
տանի՝ Տեառն է, եւ տարեկան հատուց-
9 ման [14]գատաստանի Սիոնի։ Եւ գարձ-
ցին ձորք նորա ի ձիւթ, եւ երկիր նո-
րա ի ծծումբ. եւ եղիցի երկիր նորա
10 իբրեւ զձիւթ վառեալ՝ Ի տուէ եւ [15]ի
գիշերի, եւ մի՛ չիջցի յաւիտեանս ժա-
մանակաց. եւ՝ բարձրասցի ծուխ նորա
ի վեր, [16]եւ աւերեսցի յազգս ազգաց.
եւ ի բազում ժամանակս աւերեսցի,
եւ՝ ոչ ոք իցէ որ անցանիցէ ընդ նա։
11 [17]Եւ բնակեսցեն ինոսա թռչունք եւ ոզ-
նիք եւ ցինք եւ ագռաւք. եւ անկցին
ի նոսա լարաթաժինք աւերակի, եւ յուշ-
12 կապարիկք բնակեսցեն ի նոսա։ Եւ եղի-
ցին իշխանք նորա իբրեւ չեղեալք, եւ
թագաւորք նորա եւ մնծամնծք եղիցին
13 ի կորուստ։ Եւ բուսցի ի քաղաքս նորա
եւ յամուրս վայտ փշաքար. եւ եղիցի
բնակութիւն հմբարեայ եւ հանգիստ
14 չայլամանց։ Եւ պատահեսցեն գեւք
յուշկապարիկս, եւ տայցեն ձայն մի-
մեանց. անդ հանգիցեն յուշկապարիկք,

առանց իմնալոյ։ (20) Հայեսջիր ի Սիոն, քա-
ղաքն տօնից տարեկանաց մերոց. աչք քո տես-
ցեն զԵրուսաղէմ, զբնակութիւն հանգստեան.
խորան որ ոչ չարժի [1]ԵԲԲ. անդ փա-
ռաւորեան Տէր եղիցի մեզ տեղի գետոց,
վտակաց տարածելոյ երկուստեք. մի՛ գնասցէ
ընդ նա նաւակ թիակաց, եւ նաւ մեծ մի՛
անցցէ ընդ նա։ (22) Զի [2]ԵԲԲ. օրէնսդիր
[3]ՅԵԲԲ. պա՜տ [4]ԵԲԲ. Կարկեցան պարանք քո,
ոչ կարացին ունել ուժիղ զկայմ իւրեանց,
ոչ կարացին պարել զաւազաման, յայնժամ
բաժանեցաւ աւար բազում. կաղք առին կո-
ղոպուտ։ (24) Եւ մի՛ ասիցէ բնակիչն, Հիւան-
դացայ. ժողովուրդն որ բնակէ անդ՝ արձա-
կեսցի յանօրէնութենէ։ [5]ԵԲԲ. ապինք [6]ԵԲԲ.
լուսիւն նորա [7]ԵԲԲ. զօրաց [8]ԵԲԲ. ի
դիսականց նոցա հոտ նոցա, եւ հալեսցին
[9]ԵԲԲ. պարարտացան ի ճարպոյ, յարենէ գառանց
եւ նոխազաց, ի ճարպոյ երիկամանց [10]ԵԲԲ.
միեղջերուք ընդ նոսա, և զգառրակք ընդ ցլուց
[11]ԵԲԲ. պարարտացաւ։ (8) Զի օր վրէժխնդրութեան
[12]ԵԲԲ. կատուք [13]ԵԲԲ. ի գիշերի մի՛ չիջցի. յաւիտ-
եանս ժամանակաց [14]ԵԲԲ. աւերեսցի
ազգաց յազգս. յաւիտեան յաւիտենից [15]ԵԲԲ.
Եւ ժառանգեսցեն զնա հաւալուկն և ոզնիք, և
քաջհնաւ եւ ագռաւ բնակեսցեն ի նմա. եւ
տարածեսցէ ի վերայ նորա լար ամայութեան
եւ կշիռս դատարկութեան։ (12) Պատուականք
նորա չիցեն անդ որ ի թագաւորութիւն կոչես-
ցին. եւ ամենայն իշխանք նորա եղիցին չոչինչ։
(13) Եւ բուսցին յապարանս նորա փուշք,
եղինճ եւ եկեղ յամուրս նորա. և եղիցի բնա-
կութիւն վիշապաց, գաւիթ դատերաց չայլա-
մանց։ (14) Եւ պատահեսցեն բոբոնիք կղզ. և
քաղ առ ընկեր իւր գոչեսցէ. եւ անդ յուշկա-

15 զի գային իւրեանց հանգիստ. Անդ եհան
ձագս ոզնի, եւ անոյց երկիր զձագս
նորա զգուչութեամբ. անդ պատահեցին
միմեանց եղջերուք, եւ աւարն զերեսս
16 իւրեանց. Թուռ անցին, եւ մի ի նո-
ցանէ ոչ վրիպեաց. ընկեր զընկեր ոչ
խնդրեցին. զի Տէր հրամայեաց նոցա,
17 եւ ոգի նորա ժողովեաց զնոսա." Եւ
նոյն վիճակեցոյց զնոսա. եւ ձեռն նորա
բաժանեաց նոցա [1]ճարակ՝ յաւիտեան
ժամանակաց. Յառնեղեսցին ազգայ
յազգս, եւ [2]հանգիցեն ի նմա։

ԳԼ. ԼԵ

1 [3]Ուրախ լեր, անապատ ծարաւի՛. ցնծասցէ
անապատն եւ ծաղկեսցէ իբրեւ վշո-
2 շան։ Եւ [4]ծաղկեսցէ եւ ցնծասցէ անա-
պատն Յորդանանու, եւ" փառքն Լի-
բանանու տացի նմա եւ պատիւն Կար-
մղոյ, [5]եւ Ժողովուրդքն իմ տեսցէ" զփառս
Տեառն եւ զպարծանսն Աստուծոյ
մերոյ։
3 [6]Զօրացարուք, ձեռք լքեալք եւ ծունկք
4 կիզուցեալք. Սխրիմարեցարուք, կարճա-
միտք սրտիւք՛". զօրացարուք եւ մի՛
երկնչիք. ահաւասիկ Աստուած [7]մեր
հատուցանէ պատասխան եւ հատուսցէ",
5 ինքնին եկեսցէ եւ փրկեսցէ զձեզ։ Յայն-
ժամ աչք կուրաց բացցին եւ ականջք
6 խլոց լուիցեն։ Յայնժամ վազեսցէ կաղն
իբրեւ զեղջերու, եւ [8]պարզ լիցի լե-
զու ծանրախօսաց". զի ջուր լղմեաց
յանապատի, եւ գետ ի ծարաւուտս
7 երկրի։ Եւ եղիցի անջուրն յազարիս, եւ
[9]ապրեալ ջուրց ի ծարաւուտս երկրի.
անդ եղիցի ուրախութիւն հաւուց եւ
մակաղատեղք խաչանց. անդ մարգա-
8 գետինք եւ խաղք. Անդ եղիցի ճանա-
պարհ մաքրեալ, եւ ճանապարհն սուրբ
կոչեսցի, եւ մի՛ անցցէ ընդ նա պիղծ,
եւ մի՛ եղիցի անդ ճանապարհ պղծոց.
այլ ցրուեալքն գնասցեն ընդ նա եւ մի՛
9 մոլորեսցին։" Մի՛ եղիցի անդ առիւծ,
եւ մի ի գազանաց չարաց ընդ այն մի՛
անցանիցէ, եւ մի՛ ամենեւին գտցի ի
նմա. այլ ընդ նա գնասցեն [10]փրկեալքն
10 եւ ժողովեալքն վասն Տեառն։ Դարձ-
ցին" եւ եկեսցեն ի Սիոն ցնծութեամբ,
եւ ուրախութիւն յաւիտենից ի վերայ
գլխոյ նոցա. [11]զի ի վերայ գլխոյ նոցա
օրհնութիւն եւ" ցնծութիւն, եւ ուրա-
խութիւն հասցէ նոցա. [12]մերժեցան
ցաւք եւ արտմութիւնք" եւ հնձու-
թիւնք։

ԳԼ. ԼԶ

1 Եւ եղեւ ի չորեքտասաներորդի ամի
թագաւորութեան Եզեկիայ, էլ Սեն-
քերիմ արքայ Ասորեստանեայց ի վերայ
ամուր քաղաքացն Հրէաստանի, եւ առ
2 զնոսա։ Եւ առաքեաց արքայն Ասորես-
տանեայց զԻաւիսակէ ի Ղաքիսայ յԵրու-
սաղէմ առ արքայն Եզեկիա զօրօք բազ-
մօք. եւ եկն եկաց ի վերայ ջրմղի վեր-
նոյ աւազանին ի ճանապարհի ագարա-
3 կին թափչաց։ Եւ ելին առ նա Եղիա-
կիմ Քեղկեայ որ հազարապետն էր, եւ
Սոբնիաս՝ դպրավարակաց գպիր, եւ Ցո-
վաք Ասափայ՝ յիշատակաց գպիր։
4 Եւ ասէ ցնոսա Ռափակէ, [11]երթայք
ասացէք ցեզեկիա, Այսպէս ասէ [13]մեծ,
արքայն Ասորեստանեայց. [14]Ո՞ յոյսս ա-
5 նաւ իցես. Մի՛թէ խորհրդով կամ բա-
նիւք չրմանց պատերազմ վճարիցի՞."
իսկ արդ յո՞ յոյսս ունիցես զի ոչ
6 հնազանդիս ինձ։ Ահաւասիկ յոյսացեալ
ես ի ցուռն եղեգնեայ ի Յաղիպտոս
պատառոյ։ (8) Եւ եղիցի անդ պողոտայ եւ ճա-
նապարհ, և ճանապարհ սրբութեան կոչեսցի.
մի՛ անցցէ ընդ նա պիղծ, և այն եղիցի վասն նոցա,
որ գնային ընդ նա, յիմարք իսկ մի մոլորեսցին։
10 [10]Եբր. փրկեալք. (10) Եւ ազատեալքն Տեառն դարձցին [11]ՅԵբր. գ-լ-ա [12]Եբր. մերժեա-
ցին ցաւք [13]Եբր. արքայն մեծ, [14]Եբր. Զի՞նչ
իցէ յոյսն յո՛ յուսացեալ իցես։ (5) Ասացեր,
խորհուրդ և զօրութիւն է՛ս ի պատերազմ.
բանք չրմանց եւթիւ են

պարիկ հանգիցէ եւ գտցէ իւր դադար։ (15)
Անդր բոյնս դիցէ քարը, եւ ածցէ ձուս. եւ
թխեսցէ եւ տածեսցէ ընդ հովանեաւ իւրով,
եւ ժողովեսցին ուրուրք, իւրաքանչիւր ընդ
ընկերի իւրում։ (16) Խնդրեցէք ի գիրս Տեառն,
և ընթերցարուք. մին ի նոցանէ ոչ պակասեսցէ,
եւ ոչ մին ցանկասցի ընկերին. զի բերան նորա
հրամայեաց, եւ Ոգի Նորա ժողովեսցէ զնոսա։
1 Եբր. լարիւք 2Եբր. բնակեսցեն 3Եբր.
Ուրախ եղիցի անապատ եւ անջրդին 4Եբր.
ծաղկելով՝ ծաղկեսցէ, եւ ցնծասցէ ուրախու-
թեամբ եւ երգովք. 6Եբր. եւ Սարդն.
նորա տեսցեն 6Եբր. Զօրացուցէք զձեռս
լքեալս, եւ զծունկս կիզուցեալս զտասատուե-
ցէք. (4) Ասացէք կարճամտաց սրտիւք 7Եբր.
ձեր եկեսցէ վրիժս, հատուցմամբ Աստուծոյ։
8Եբր. առասցէ գովութիւնս լեզու համր 9Եբր.
անջրդին՝ յաղբերս ջուրց. ի բնակութեան վի-
շապաց որ է դադար նորա՝ գաւիթ եղեգան և

Փարաւոն արքայն Եգիպտացւոց, [1]եւ
ամենեքեան՝ որ յեւսայական են ի նա։
7 Իսկ եթէ ասիցէք, եթէ ի Տէր Աստուած մեր յեւսայական եմք, ո՞չ տապալէն նա է [2]վասն որոյ՝ քակեաց Եզեկիա զբարձունս եւ զսեղանս [3]նոցա, եւ պատուիրէ նա Հրէաստանի եւ Երուսաղեմի, ասացէք՝ "նորա սեղանոյն" միայն
8 երկիր պագանել։ Այլ արդ [5]եկայք խառնեցարուք՝ ընդ տեառն իմում արքային Ասորեստանեայց, եւ տաց [6]ձեզ երկուս հազարս երիվարաց, եթէ [7]կարիցէք տալ
9 հնծեալս ի վերայ նոցա։ Եւ զիա՞րդ [7]կարիցէք ի դիմի հարկանել միում ումեք ՚յախտարնակատաց ծառայից տեառն
10 իմոյ, որք յեւսայականէ էք յԵգիպտոս ի հնծեալս եւ յերիվարս նոցա՚։ Իսկ արդ [10]մեք առանց Տեառն եկեալ [11]իցեմք երկիրս յայս առ ընդ դմա պատերազմ. Տէր ասաց ցիս, Ել յերկիրն յայն, եւ ապականեա զնա։
11 Եւ ասէն ցնա Եղիակիմ եւ Սոբնիաս եւ Ցովաք, Աւսեաց ընդ ծառայս քո Ասորերէն, զի լսեմք, եւ մի՛ խօսիր ընդ մեզ Հրեարէն [10]եւ ընդէ՞ր խօսիցիս՝ յականջս մարդկանս որ [10]անկեալ կան
12 զպարսպաւս։ Ասէ ցնոսա Ռափսակ, Միթէ առ աէ՞րն ձեր կամ առ ձե՞զ առաքեաց զիս տէր իմ խօսել զբանս զայսոսիկ, ո՞չ տապալէն առ մարդիկդ որ նստին ի վերայ պարսպիդ, [12]զի մի՛ ուտիցեն զաղբ եւ ըմպիցեն՚ զմէզս իւրեանց ձեզ հանդերձ։
13 Ցառն եկաց Ռափսակ եւ ազաղակեաց ի ձայն մեծ Հրեարէն՝ եւ ասէ, Լուարուք զպատգամս մեծաւորին մեծի արքային
14 Ասորեստանեայց. Այսպէս ասէ արքայ. Մի՛ պատրեսցէ զձեզ Եզեկիա [13]բանիւք՝
15 որովք՚ ոչ կարէ փրկել զձեզ, եւ մի՛ [16]խաբեսցէ զձեզ Եզեկիա՝ թէ Աստուած փրկեսցէ զձեզ՚, եւ ոչ մատնիցի քաղաքս
16 ի ձեռս թագաւորին Ասորեստանեայց։ Մի՛ անսայք Եզեկիայ. [15]այսպէս ասէ արքայն

[1]Ա։բբ. ամենեցուն [2]Ա։բբ. զորոյ [3]Ա։բբ. նորա
[4]Ա։բբ. սեղանոյս այսորիկ [5]Ա։բբ. խառնեցաք, Ա՛մ. Հաշտեսայ [6]Ա։բբ. քեզ [7]Ա։բբ. կարիցես
[8]Ա։բբ. ի կռսակալաց [9]Ա։բբ. իմոյ փոքունց, որ յեւսացեալդ են յԵգիպտոս վասն կառաց եւ հեծելոց նորա։ [10]Ա։բբ. պ՚ոռնէ [11]Ա։բբ. իցեմ
[12]Ա։բբ. ուտել զաղբ եւ ըմպել [13]Ա։բբ. զի
[14]Ա։բբ. յուսացուսցէ զձեզ Եզեկիա ի Տէր եւ ասիցէ, Փրկելով փրկեսցէ զձեզ Տէր, [15]Ա։բբ. զի այսպէս

Ասորեստանեայց. [16]Եթէ կամիցիք գործել զնա, եկայք՚ եւէք առ իս. եւ կերիջիք իւրաքանչիւր զայգի իւր եւ զթզենիս, եւ արբիջիք ջուր ի ջրհորոց
17 ձերոց, մինչեւ եկից եւ առից զձեզ յերկիրն որ իրրեւ զերկիրս ձեր է, երկիր ցորենոյ եւ գինւոյ, հացաէս եւ
18 տնկատէս։ Մի՛ խաբեսցէ զձեզ Եզեկիա՝ եւ ասացէ թէ [17]Աստուած փրկէ զձեզ՚. միթէ փրկեցի՞ն աստուածք ազգացն զիւրաքանչիւր երկիր ի ձեռաց արքային Ասորեստանեայց։ Ա՞ր է աստուած Եմաթացւոց եւ Արփադացւոց, եւ ո՞ր է աստուած [18]քաղաքին Սեփարուայիմ՚. միթէ կարացի՞ն փրկել զՍամարիա ի ձեռաց
20 իմոց։ Ա՞ր յաստուածոց ամենայն ազգացն այնոցիկ կարաց փրկել զերկիր իւր ի ձեռաց իմոց, զի [19]եւ ձեր Աստուածդ՚ փրկեսցէ զերուսաղէմ ի ձեռաց իմոց։
21 Լռեա եղեն եւ ոչինչ նոցա պատասխանի, զան հրամանի թագաւորին
22 չէր պատասխանել։ Եւ եմուտ Եղիակիմ Քեղկիայ որ հազարապետն էր, եւ Սոբնիաս հրովարտակագիր գրիչ, եւ Ցովաք Ասափայ յիշատակագիր գրիչ առ Եզեկիա՝ զոձս պատառեալ, եւ պատմեցին նմա զբանս Ռափսակայ։

Գլ. Լ.

1 Եւ եղեւ իբրեւ լուաւ Եզեկիա արքայ, պատառեաց զպատմուճան իւր եւ զքուրձ
2 զգեցաւ, եւ ել ի տունն Տեառն։ Եւ առաքեաց զԵղիակիմ զհազարապետն եւ զՍոբնիաս հրովարտակագիր գրիչ եւ զծերս ի քահանայից տանէ քրձապատս առ
3 Եսայի մարգարէ որդի Ամովսայ։ Եւ ասեն ցնա, Այսպէս ասէ Եզեկիա. Այսօր է օր նեղութեան եւ նախատանաց եւ կշտամբութեան [10]եւ յարկս թեան՚, յորում աւուր հասեալ են երկունք ծննդա-
4 կանի՝ եւ ոչ կարէ ծնանել։ [20]Լսեցէ Տէր Աստուած քո զբանս Ռափսակայ, զոր առաքեաց արքայն Ասորեստանեայց տէրն նորա՝ նախատել զԱստուած կենդանի, եւ [21]նախատել բանիւք զոր լուաւ Տէր Աստուած քո. եւ արդ [22]ընկալեսցես ի Տեառնէ Աստուծոյ քումմէ՚
5 զբան զայս։ Եւ եկին

[16]Ա։բբ. Արաբէք ընդ իս օրհնութիւն, Ա՛մ. խաղաղութիւն եւ [17]Ա։բբ Եհովայ փրկեսցէ զձեզ [18]Ա։բբ. Սեփարուիմայ [19]Ա։բբ Եհովայ [20]Ա։բբ. Աներեւոյթիցէ [21]Ա։բբ. յանդիմանեաց [22]Ա։բբ. կացցես յաղօթս

ծառայքն Եզեկիայ արքայի առ Եսայի։
6 Եւ ասէ ցնոսա Եսայի, Ձայս ասասջիք
ցտէրն ձեր. Այսպէս ասէ Տէր. Ոչ եր-
կիցես ի բանիցն զոր լուար, որովք նա-
խասանցին զիս հրեչտակք արքային Ա-
7 սորեստանեայց։ Ահաւասիկ արկանեմ
ես ի նա ոգի [1]խռովութեան, եւ լսե-
ցէ համբաւ՝ դարձցի յաշխարհ իւր, եւ
*անկցի ի սուր յերկրի իւրում։
8 Եւ դարձեալ անդրէն Ռափսակայ ե-
հաս առ արքայն Ասորեստանեայց, զի
պաշարեալ էր զՂաբնան, [2]եւ լուաւ թէ
արքայն Ասորեստանեայց չուեաց ի Ղա-
9 քիսայ։ Եւ [3]նէ Թարակ արքայ Եթով-
պացոց պաշարել գնա, եւ գարձաւ
անդրէն։ Եւ՝ առաքեաց հրեչտակս առ
10 Եզեկիա եւ ասէ, Այսպէս ասացէք ցե-
զեկիա արքայ Հրէաստանի. Մի՛ խա-
բեսցէ զքեզ Աստուած յոր դու յուսաց-
եալ ես, եւ ասիցէ՝ թէ Ոչ մատնեսցի
Երուսաղէմ ի ձեռս արքային Ասորես-
11 տանեայց։ Արդ տես դու չիցէ՞ լուեալ զո
զոր ինչ արարին թագաւորք Ասորես-
տանեայց ընդ ամենայն երկիր, ա՛րկէս
աստակեցին զնոսա. իսկ արդ դու ազ
12 բելո՞յ իցես։ Միթէ ազգեցուցի՞ն աս-
տուածք ազգացն զայնոսիկ զորս կո-
րուսին հարքն իմ, զԳովզան եւ զՀա-
ռան եւ [4]զՀասիլէմ, որ են յերկրին
13 Եմաթայ՞։ Ո՞ւր են թագաւորք Եմա-
թացն եւ Արփադայ, եւ ո՞ւր են թա-
գաւորք քաղաքին Սեփարուիմ, Անայ
14 եւ ԵՒեայ։ Եւ առ Եզեկիա զնդակա-
սակն ի ձեռաց հրեչտակացն, ընթեր-
ցաւ եւ եհատ ի տուն Տեառն, եւ տա-
15 րածեաց առաջի Տեառն։ Եւ եկաց յա-
16 ղօթս Եզեկիա առ Տէր եւ ասէ. Տէր
Սաբաւովթ, Աստուած Իսրայէլի, որ
նստիս ի քերովբէս, դու ես Աստուած
միայն ամենայն թագաւորութեանց սրեւ-
զերայ, դու արարեր զերկինս եւ՝ զեր-
17 կիր։ Ունկնարձո՛ց, Տէր, զունկն քո եւ
լուր. բաց, Տէր, զաչս քո. նայեաց,
[5]Տէր, լուր, Տէր, եւ տես՝ զպատգամս
զոր առաքեաց Սենեքերիմ արքայ Աս
րեստանեայց նախատել զԱստուած կեն-
18 դանի։ Եւ արդարեւ սուրերգին թագա-

[1] Յ։ԹԲ։. գ–լ–ե։ [2]ԹԲ։. կործանեցից զնա [3]ԹԲ։. զի
[3] ԹԲ։. լուաւ զի՛պարակայ արքայէ Եթովպացւոց
զի ասէին թէ ել՝ սոլ պատերազմ ընդ քեզ։
Իբրեւ լուաւ [4]ԹԲ։.զՀռեսեփ եւ զերդիան Եդե-
մայ որ ի Թելասար [5]ԹԲ։. եւ լուր զամենայն

սորեստանի զաչխարհս ամենայն
19 եւ զերկիր նոցա, եւ հրձիգ արարին
զկուռս նոցա. քանզի չէին աստուածք,
այլ ձեռագործք մարդկան, փայտեզէնք
եւ քարեզէնք, եւ կորուսին զնոսա։
20 Բայց արդ, Տէր Աստուած մեր, ապրեցո
զմեզ ի ձեռաց նորա. զի ծանիցեն ա-
մենայն թագաւորութիւնք երկրի՝ թէ
դու միայն ես [6]Աստուած։
21 Եւ [7]առաքեաւ Եսայի որդի Ամոզ-
սայ առ Եզեկիա՝ եւ ասէ ցնա, Այսպէս
ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Լուայ
ազօթիցն զոր աղաչեցեր առ իս՝ վասն
Սենեքերիմայ արքային Ասորեստանե-
22 նայց. Արդ այս բան է զոր խօսեցաւ
վասն նորա [6]Աստուած. Անզոմնեաց ար-
համարհեաց զքեզ՝ կոյս դուստր Սիոնի.
զքեզ չարժեաց ի վերայ քո՝ դուստր
23 Երուսաղէմի։ Զո՞ նախատեցեր եւ
[8]զրգռեցեր, եւ առ ո՞ բարձրացուցեր
զբարբառ քո, եւ [9]ոչ ամբարձեր զաչս
24 քո ի բարձունս ի Սուրբն Իսրայէլի։ [10]Զի՞
ի ձեռն հրեչտակաց նախատեցեր զՏէր.
դու ասեիր թէ Բազմութեամբ կառաց
իմոց ելի ի բարձրութիւն լերանց, եւ
ի ծագս Լիբանանու. եւ կոտորեցի
զբարձրութիւն մայրեաց նորա, եւ զգե-
ցեցկութիւն նոցին նորա, եւ մտի ի
25 բարձրութիւն [9]կուսանց անտառին. Եւ
արկի կամուրջ, եւ աւերեցի զջուրսն
26 եւ զամենայն ժողովս ջուրցն՝՝ Զիցէ՞
լուեալ քո զոր յառաջագոյն արարի ես
յաւուրսն առաջնոց զոր կարգեցի, եւ
այժմ յայտնեցի [10]աւերել զհեթանոսս յա-
27 մեծս իբրեանց, եւ զպնակիչս քաղա-
քաց յիւրաքանչիւր ամրոցաց. Թոզի ի
ձեռաց եւ ցամաքեցան, եւ եղեն իբ-
րեւ զխոտ ցամաքեալ ի վերայ տանս-
28 եաց եւ իբրեւ զսէզ չորացեալ՝՝ Արդ
զկայս հանդստեան քո, եւ զել եւ զմուտ
29 ճանապարհաց քոց ես ինձէն գիտեմ։ Եւ

[6] ԹԲ։. Տէր [7]ԹԲ։. առաքեաց [8]ԹԲ։. Հայհոյե-
ցեր [9]ԹԲ։. ծագաց նորա, յանտառս Կարմե-
լոսի նորա։ (25) Եւ փորեցի եւ արբի ջուրս. և
ցամաքեցուցի թաթիւք ոտից իմոց զամենայն
գետս ամրացեալս, Եւ՛, Եգիպտոսի։ [10]ԹԲ։. զի
զարձուսցես յամայութիւն ի կոյսս աւերակաց
զքաղաքս ամրացեալս։ (27) Եւ բնակիչք նոցա
կարճեցեալք ձեռաւք, զարհուրեցան եւ յամօթ
եղեն, և եղեն իբրեւ զխոտ վայրի, եւ իբրեւ
զդեղ դալար, իբրեւ զխոտ տանեաց, Հարեալ
ի խորշակէ մինչչեւ հասեալ։

սրամասելիեն քո զոր սրամասիցեն, եւ
[1]պահասելիեն քո եկ ասացի՛ իմ. եւ
արկից վարագոյն ի ցասուկ քո, եւ դան-
դաճասցից ի կղակս քո. եւ դարձուցից
զքեզ ընդ նոյն ճանապարհն ընդ որ եր և-
30 կիր։ Այլ քեզ այս եղիցի նշան. կերիջ-
ցես այս ամ [2]զսերմանեալսդ, եւ յամն
եւս կերիցես [3]զինայորդան, եւ յամին
երրորդում սերմանեսջիք եւ հնձեսջիք,
անկեսջիք այգիս եւ կերիջիք զպտուղ
31 նորա։ Եւ եղիցին մնացորդքն Հրէաս
տանի արձակել արմատս ի խոնարհ, եւ
32 տալ պտուղ ի վեր։ Զի յերուսաղէմ ել-
ցիցեն մնացեալք, եւ ի լերին Սիոնի
ապրեալք. զի նախանձ Տեառն զօրու-
33 թիանց արար զայս։ Վասն այսորիկ
այսպէս ասէ Տէր ի վերայ թագաւորին
Ասորեստանեայց. Մի՛ մտցէ նա ի քա-
զաքս յայս, եւ մի՛ նետս արկցէ ի վե-
րայ գորա, եւ մի՛ փակեսցէ զդա վա-
հանօք, եւ մի՛ պաշարեսցէ զդա պատնի-
34 չօք. Այլ ճանապարհն ընդ որ եկն՝ ընդ
նոյն դարձցի, եւ ի քաղաքդ յայդ մի՛
35 [4]մտցէ։ Այսպէս ասէ Տէր.՝՝ Վերակացու-
եղէց քաղաքիդ այդմիկ ապրեցուցանել
զդա, վասն իմ եւ վասն Դաւթի ծա-
ռայի իմոյ։
36 Եւ եկն հրեշտակ Տեառն, եւ սատա-
կեաց ի բանակի անտի Ասորեստանեայցն
հարիւր ութսուն եւ հինգ հազար. եւ
յարեան ընդ առաւօտն՝ զմին ամե-
37 նայն մարմինն մեռեալ։ Եւ դարձաւ
անդրէն՝ գնաց Սենեքերիմ ապրան Ա-
սորեստանեայց, եւ բնակեաց ի Նինուէ։
38 Եւ մինչդեռ երկիր պագանէր ի տան
իւրում Նասրաքայ կռոց իւրոյ, Ադրամե-
լէք եւ Սարասար որդիք նորա սպանին
զնա սրով, եւ ինքեանք գնացին փախս-
տական [5]ի Հայս. եւ Խալաւորեաց Ա-
սորդան որդի նորա ընդ նորա։

ԳԼ. ԼԸ

1 Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ հի-
ւանդացաւ Եզեկեայ մինչեւ ի մահ. եւ
եկն առ նա Եսայի որդի Ամովսայ[6] եւ
ասէ ցնա, Այսպէս ասէ Տէր. Հրամայ
տուր վասն տան քո, զի մեռանիս եւ
2 ոչ կեաս։ Եւ դարձոյց Եզեկիա զերեսս
3 իւր յապառ անդր, յաղօթս [7]եկաց, եւ ասէ,
Ո՛ Տէր, յիշեա զիս, Տէր.՝՝ զի գնացի
առաջի քո արդարութեամբ եւ ճշմա-
րիտ սրտիւ, եւ գործեցի առաջի քո ա-
րարի։ Եւ եղեւ եզեկիա լալագին մեծ։
4 Եւ եղեւ բան Տեառն առ Եսայի եւ
5 ասէ, երթ եւ ասա ցեզեկիա, Այսպէս
ասէ Տէր Աստուած Դաւթի հօր քո.
Լուայ աղօթից քոց, եւ տե-
սի զարտասուս քո. ահաւադիկ յաւե-
լումի ի ժամանակս քո ամս հինգտասա-
6 սան. Եւ ի ձեռաց արքային Ասորես-
տանեայց ապրեցուցից զքեզ եւ զքա-
ղաքդ զայդ, եւ վերակացու եղէց քա-
7 ղաքիդ այդմիկ։ Եւ այս քեզ նշան ի
Տեառնէ, թէ առնիցէ [8]Աստուած զբանդ
8 զայդ զոր խօսեցաւ. Ահա սղիկ ևս զար-
ձուցանեմ զստուերս աստիճանացդ, [9]ընդ
որ իջեալ է չոգդ, զտասն աստիճանսդ
ասեն քո. եւ դարձոյց զչոգդ զտաս-
նեքեւմբք աստիճանօքդ։ Եւ եկն չոգն
զտասնեքեւմբք աստիճանօքդ ընդ որ ի-
ջեալ էր աստիճանսն։՝՝
9 [10]Աղօթք եզեկեայ արքայի Հրէաստա-
նեայ ի ժամանակի յորում հիւանդա-
ցաւ, եւ յարեաւ ի հիւանդութենէ իւրմէ։
10 Ես ասացի, [11]Ի վերանալ աւուրց ի-
մոց գնացից ի դրունս գժոխոց, մնդից
11 զինացորդս ամաց իմոց։ Ասացի Ոչ
ես տեսից [12]զերկրութիւնն Աստուծոյ ի
վերայ երկրի, եւ ոչ ես տեսից զմարդն
12 բնակչօք իւրովք։ Պակասեցաւ ես յազ-
գատոհմէ իմմէ. իմովք զինացորդս կե-
նաց իմոց. եկեալ եւ գնացեալ զինէն որ-
պէս որ քակէ զառագաստ կանգնակ.
եղեւ ողի իմ առ զինէն իրրեւ ոստայն
13 ոստոտաց մնրձ ի հատանել։ Ցաւուր
յայնմիկ մանկացայ մինչեւ յառաւօտ.
իրրեւ զառիւծ այնպէս խորտակեաց զա-
մենայն ոսկերս իմ, զի ի տուընջենէ մին-

[1] ԵՔԲ. անգ ասելդ քո եւ յականջս [2] ԵՔԲ. զինքնակաս [3] ԵՔԲ. զինքնակաց ինքնակաց
[4] ԵՔԲ. մտցե, ասէ Տէր (35) Եւ [5] ԵՔԲ. յերկիրն Աբա-
թագոյ [6] ԵՔԲ ՅԱՆԵԼԸ, մարգարէ

[7] ԵՔԲ. եկաց առ Տէր, (3) Եւ ասէ, Աղաչեմ, Տէր, յիշեա
[8] ԵՔԲ. Տէր [9] ԵՔԲ. որ իջեալ է ընդ աստիճանան Աբա-
զու՝ ի չոգն տան աստիճանօք յետս. և գարձաւ
չոգն տան աստիճանօք յետս ընդ աստիճանան ընդ
որս իջեալ էր։ [10] ԵՔԲ. Գիր [11] ԵՔԲ. Ի հանգարտաս-
թեան [12] ԵՔԲ. զՏէր, զՏէր յերկրին կենդանեաց
և ոչ եւս հայեցայց ի մարդն ընդ բնակիչս աշխարհի
(Կամ, հանգստեան)։ (12) Բնակութիւն իմ փակե-
ցաւ, և տարաւ յինէն իբրեւ զտաղաւար հովուաց.
անկանէի իբրեւ ոստայն զկեանս իմ. յառէջ
անտի հատանէ զիս. ի տուէ մինչեւ ի գիշեր
սպառեսցես զիս։ (13) Ակն կալայ մինչեւ յա-
ռաւօտ, իբրեւ զառիւծ այնպէս խորտակեր
զամենայն ոսկերս իմ. ի տուընջենէ մինչեւ ի

14 չեւ ի դիչեր մանկեցայ՝ իբրեւ զծի-
ծան՝ այնպէս ճչեցի, եւ իբրեւ զա-
ղաւնի՝ այնպէս մնչեցի. ես նուաղե-
ցին աչք իմ ի հայելոյ ի բարձունս երկ-
նից առ Տէր որ փրկեացն զիս, եւ վա-
15 բատեցոյց զյաւս անձին իմոյ. Եւ ինքն
կարդեաց զամենայն ամս իմ ի դառնու-
16 թիւն անձին իմոյ. Տէր, վասն այսո-
րիկ պատմեցաւ քեզ, եւ զարհուրեցի
17 զնոցին իմ, միսիթարեցայ՝ եւ կեցի. Ա-
հաւասիկ ի խաղաղութիւն դարձաւ դառ-
նութիւն իմ. փրկեցեր զանձն իմ զի մի
կորեացի, եւ ընկեցեր յետոյ իմ զամե-
18 նայն զմեղս իմ. Զի ոչ թէ որ ի գժոխս
են՝ խոստովան առնիցին առ քեզ, եւ
ոչ մեռեալք օրհնեացեն զքեզ, եւ ոչ
յուսացին յողորմութիւնս քո՝ այլ ի-
19 նձանէն ի դուբ. Այլ կենդանիք օրհնես-
ցեն զքեզ՝ որպէս եւ ես օր, այսուհետեւ
մանկունս ծնեայց՝ որ պատմեացեն զար-
դարութիւն քո, Տէր փրկութեան իմոյ.
20 Եւ ոչ զադարեցից օրհնել զքեզ սաղ-
մոսարանաւ զամենայն աւուրս կենաց ի-
մոց յանկիման տաճարիդ Աստուծոյ:
21 Եւ ասէ Եսայի ցեղկիա, Առ զաւ զա-
ղանիս թզոյ, մանրեա եւ դիր ի վէ-
22 րայ վիրիդ՝ եւ ողջասցի: Եւ ասէ, Այս
եղիցի նշան եթէ ելից ի տունն Աս-
տուծոյ:

Գլ. Լթ

1 Ի ժամանակին յայնմիկ առաքեաց Մա-
րոդաք Բաղդան որդի Բաղդանայ՝ ար-
քայ Բաբելացւոց, [1]դրչուռակս հրաւա-
կոչ՝ եւ պատարագս եղեկեայ. քանզի լուաւ թէ հիւանդացաւ [2]մերձ ի մահ՝
2 եւ յարեաւ: Եւ ուրախ եղեւ եզեկիա
ի նոսա, եւ ետուն գոյս գաւնոյ գան-
ձուց եւ զինկաց եւ զիւղոց եւ զոսկ-
ւոյ եւ զարծաթոյ, եւ զամենայն տունս
անօթոյ գանձուս, եւ զամենայն ինչ որ
էր ի գանձս իւր. եւ ոչ ինչ էր զոր ոչ
ետուն նոսա եզեկիա ի տան իւրում,
եւ յամենայն իշխանութեան իւրում:
3 Եւ եկն Եսայի մարգարէ առ արքայն Ե-
զեկիա եւ ասէ ցնա, Զինչ ասեն արքդ
այդոքիկ, եւ ուստի՞ եկեալ են առ քեզ:
Եւ ասէ եզեկիա, Յերկրէ հեռաստանէ
4 եկին առ իս ի Բաբելոնէ: Եւ ասէ Ե-
սայի, Զինչ տեսին ի տան քումմ: Եւ
ասէ եզեկիա, Զամենայն ինչ որ ի տան
իմում էր՝ տեսին, եւ ոչ ինչ էր ի տան
իմում զոր ոչ տեսին. այլ եւ զգանձս
5 նուա զիմ: Եւ ասէ ցնա Եսայի, Արդ լսեր
6 զպատգամս Տեառն զորս խնդեաց. Ահա
եկեսցեն աւուրք, եւ առնուսցեն զա-
մենայն ինչ որ ի տան քումմ է, եւ զոր
ինչ միանգամ ժողովեցին հարքն քո
մինչեւ ցայսօր. տարցին ի Բաբելոն,
եւ մի ինչ առնիցի [3]մնացեալ. այլ
7 ասաց Աստուած, թէ՝ Եւ յորդւոց քոց
որ ելանիցեն ի քէն՝ զորս ածին ծնանի-
ցիս, տարցին եւ արասցին ներքինիս ի
8 տան թագաւորին Բաբելացւոց: Եւ ա-
սէ եզեկիա ցեսայի, Բարի է բանդ Տեառն
զոր [4]խոսեցար. եղիցի՝ արդարութիւն
եւ խաղաղութիւն յաւուրս իմ:

Գլ. Ի

1 Մխիթարիցէք, միսիթարեցէք զժողո-
վուրդ իմ, ասէ [5]Աստուած քահանայքդ՝.
2 Խօսեցարուք ի սիրտ Երուսաղեմի եւ
[6]միսիթարեցէք զդա, զի լի եղեւ տառա-
պանօք. թողեալ լիցին՝ դմա մեղք իւր,
զի ընկալաւ ի ձեռանէ Տեառն կրկին
զհատուցումն մեղաց իւրոց:

գիչեր սպառեացես զիս: (14) Իբրեւ կկառնկ, իբրեւ զծիծառն որ ճչէ՝ այնպէս ճչեի, իբրեւ զաղաւնի՝ այնպէս մնչէի. Նուաղեցան աչք իմ ի հայելոյ ի բարձունս. Տէր, տագնապ է ինձ, պաշտպան լեր ինձ: (15) Զի՞նչ խօսեցայց. ինքն ասաց ցիս եւ արար. գնացից մեղմով զամենայն ամս իմ առ դառնութեան անձին իմոյ. (16) Տէր, սորօք կեան մարդիկ, եւ յամենեսին ի սոսա են կեանք հոգւոյ իմոյ, ապա բժշկեա զիս եւ ապրեսցո զիս: (17) Ահա փոխանակ խաղաղութեան դառնութիւն ինձ, դառնութիւն. եւ դու փրկեցեր զանձն իմ ի դրոյ կորստեան, զի ընկեցեր յետոյ իմ զամենայն զմեղս իմ (18) Զի ոչ դժոխք խոստովան առնիցին առ քեզ եւ ոչ մահ օրհնեացէ զքեզ, ոչ յուսացին ոչք իջեալքն ի դուբ ի ճշմարտութիւն քո: (19) Որ կենդանի է, որ կենդանի է՝ նա օրհնեացէ զքեզ, որպէս ես այսօր. Հայր պատմեացէ որդւոց զճշմարտութենէ քումմէ: (20) Տէր փրկութիւն իմ. եւ սաղմոսարանաւ իմով սաղմոսասցուք զամենայն աւուրս կենաց մերոց ի տան Տեառն:

(21) Եւ ասացեալ էր Եսայի, Առցեն պատառիս թզոյ, եւ մանրեալ դիցեն ի վէրսյ վիրին, եւ ողջասցի: (22) Եւ ասացեալ էր եզեկիա, Զի՞նչ եղիցի նշան եթէ ելից ի տունն Տեառն:

---

[1] Եբբ. թուղթս [2] Յոյն. պոռնկ [3] Եբբ. մնացեալ, ասէ Տէր: [4] Եբբ. խոսեցար. եւ ասէ, Զի եղիցի [5] Եբբ. Աստուած ձեր [6] Եբբ. սաղմոսակեցէք առ նա թէ լցաւ ժամանակութիւն նորա, զի թողաւ

3 Զայն յարբառոյ յանապատի. Պատրաստա
արարէք զճանապարհն Տեառն, եւ ուղիս
4 [1]արարէք կենդանւոյ Աստուծոյ մերոյ: Ամե-
նայն ձոր լցցին, եւ ամենայն լերինք եւ
բլուրք խոնարհեսցին. եւ եղիցին ամենայն
ժժաւարինք ի դիւրին, եւ առապարքն ի
5 պաչտս: Եւ երեւեսցին փառքն Տեառն,
եւ անսցէ ամենայն մարմին [2]փրկու-
թիւն Աստուծոյ. զի Տէր" խօսեցաւ:
6 Ձայն ասէ, Գոչեա. եւ ասեմ, Զինչ
գոչեցից: Գոլջիր, ամենայն մարմին
խոտ է, եւ ամենայն փառք մարդոյ իբ-
7 րեւ զծաղիկ խոտոյ: Յամաքեցաւ խոտն,
եւ թօթափեցաւ ծաղիկ նորա, զի սուր
Տեառն հնչեաց ի նա. արդարեւ խոտ է
8 ժողովուրդս այս: Յամաքեցաւ խոտն,
եւ թօթափեցաւ ծաղիկն. եւ բան [3]Տեառն
մնայ յաւիտեան:
9 Եւ ի վերայ լերինդ բարձու, աւետա-
րանիչդ Սիոնի. բարձրացո զօրութեամբ
զբարբառ քո, աւետարանիչդ Երուսա-
ղեմի. [4]բարձրացուցէք, մի երկնչիք".
ասա ցքաղաքսդ Յուդայ, Անտեսանիկ
10 Աստուած ձեր. Անտեսանիկ Տէր Տէր գայ
զօրութեամբ եւ բազուկն տէրութեամբ
իւրով. ահաւասիկ վարձք իւր ընդ իւր,
11 եւ գործք առաջի նորա: Իբրեւ հովիւ
մի հովուեսցէ զխաշինս իւր, եւ բազ-
կաւ իւրով ժողովեսցէ զդասինս, եւ ի
ծոց իւր կրկնացէ զնոսա, եւ [5]մխիթար
լիցի յղեացն":
12 Ո՞ չափեաց ափով իւրով զջուրս, եւ
զերկինս թզաւ, եւ զերկիր ամենայն
քաւ. ո՞ կշռեաց զլերինս կշռով, եւ
13 [6]զպաչտս կշռորօք: Ո՞ [7]գիտաց զհոգի
Տեառն, եւ ո՞ եղեւ նմա խորհրդակից՝
14 եթէ խելամուտս արասցէ զնա. Կամ ընդ
ո՞ւմ խորհեցաւ, եւ արար զնա խելա-
մուտ, [8]կամ ո՞ եդեալ նմա զդատաստան
եւ զճանապարհ խաւսուածն, կամ ո՞
եւ նմա զիմս յաւանգսդոյն՝ եւ հատու-
15 ցանիցէ նմա: Եթէ" ամենայն հեթա-
նոսք իբրեւ զկաթիլ մի ի գոլէ են, եւ
իբրեւ [9]զմէջս մի ի կշռոյ համարեցան,
եւ իբրեւ չիմք ի տրտիտ համարեսա-
16 ցին": Եթէ Լիբանան չէ բաւական յայ-
րուն, եւ ամենայն չորքոտանիք չեն
17 բաւական յողջակէզս. Եւ ամենայն հե-
թանոսք ոչինչ [*են], եւ յոչինչ" համա-
րեցան նմա:
18 Այր ո՞ւմ նմանեցուցէք [10]զՏէր, եւ ո-
րո՞ւմ նմանութիւն նմանեցուցէք վնա:
19 [11]Միթէ պատկե՞ր կոփեաց վնա հիւն,
կամ ոսկերիչ ձուլեաց ոսկի եւ պատեաց
վնա ոսկւով, ի նմանութիւն պատկերի
20 կերտուածոյ վնա: Չփայտ անփուտ
ընտրեաց հիւն, եւ իմաստութեամբ
հնարս խնդրէ՝ զիւրդ կանդնեսցէ վնա
21 զի մի չարժեսցի:" Ո՞չ լսէք եւ ո՞չ ի-
մանայք, եւ ո՞չ պատմեցաւ ձեզ ի սկիզ-
բանէ. ո՞չ գիտացէք [12]մէ՛ ի հաստատեալ
22 զհիմունս երկրի: Որ ուներ զծիր" երկ-
րի, եւ բնակիչք նորա իբրեւ զմարախս.
որ կանդնեաց զերկինս իբրեւ զկամար,
եւ ձգեաց իբրեւ զվրան [13]եւ հաստա-
23 տեաց զերկիր" բնակել ի նմա: Որ տայ
զիշխանս չգոյից [14]իշխանել խիւն եւ զեր-
24 կիր իբրեւ զոչինչ արար: Զի ոչ սեր-
մանեալքն եւ ոչ անկեալքն, եւ ոչ հաս-
տատեալ յերկրի արմատ նոցա", չնչեաց
ի նոսա եւ դատաքեցան. եւ փոխարկի
25 իբրեւ զխոտ սուղ վնասս: Արդ ո՞ւմ
նմանեցուցէք վնա եւ զուգեցայց, ասէ
26 Սուրբն [15]Իսրայէլի: Համարձէք իբար-
ձունս զաչս ձեր, եւ տեսէք՝ ո՞ հաս-
տատեաց զայս ամենայն, ո՞ հանէ զզարդ
նոցա, եւ զամենեսեան յանուանէ կոչէ
բազում վառօք եւ առատակերտիւք զօ-
րութեան. եւ մի [16]ինչ ոչ ծածկեցաւ ի քէն
27 Մի՞ ասիցես, Յակոբ, եւ զինչ" խօսե-
ցար, Իսրայէլ, թէ Ծածկեցաւն ճանա-
պարհք իմ [16]յԱստուծոյ, եւ Աստուած իմ

---

[1] ԵԲԲ. արարէք յամայութեան [2] ԵԲԲ. միանդամայն. զի բերան Տեառն [3] ԵԲԲ. Աստուծոյ մերոյ [4] ԵԲԲ. բարձրացու, մի՛ երկնչիր [5] ԵԲԲ. զանհասս վարեսցէ մէջղով [6] ԵԲԲ. զբլուրս [7] ԵԲԲ. քննեաց գՀոգին [8] ԵԲԲ. եւ ուսոյց նմա զճանապարհս դատաստանի, եւ ուսոյց նմա զգիտութիւն, եւ զճանգամանս հանճարոյ եւ նմա զիմաստ (15) Ահա

[9] ԵԲԲ. զմանր փոշի կշռոյ համարեցան. ահա զկղզիս իբրեւ զմշուշ վերացուսցէ [10] ԵԲԲ. են առաջի նորա, պակաս քան զչէնչ և ունայնութիւն [11] ԵԲԲ. զԱստուած [12] ԵԲԲ Պատկեր կոփեաց հիւսն, եւ ոսկերիչ պատեաց զայն ոսկւով, եւ չղեծս արծաթիս յօրինեաց: (20) Որ ագքատն է առնել այպակս, ընտրէ փայտ անփուտ, խնդրէ նմա ձեռագէտ ճարտար, պատրաստել դրօշեալ որ ոչ շարժեսցի: [13] ԵԲԲ. ի հաստատութենէ երկրի: (22) Նա է որ նստի ի ծիր [14] ՅԵԲԲ. գ-ւ-ո-ե [15] ԵԲԲ. գդատաստանս երկրի առնէ ուղիղս: (24) Մինչչեւ անկեալ լիցէ նոցա, և մինչչեւ սերմանեալ լիցէ, և մինչչեւ ձգեալ արմատս յերկրի բուն նոցա [16] ԵԲԲ. պակասեցեր: (27) Ընդէ՞ր ասացեր, Յակոբ, և [16] ԵԲԲ. ի Տեառնէ

28 երարձ դիրաւունս իմ, [1]եւ մնկնեցան. նա եւ այժմ ո՞չ ծանեար, եթէ չէր յուենալ, Աստուած յաւիտենական, Աստուած" որ հաստատեաց զծագս երկրի, ոչ քաղցիցէ եւ ոչ վաստակիցի, եւ չիք քննութիւն իմաստութեան նո-
29 ա։ Տայ [2]քաղցելոյ զօրութիւն եւ ան-
30 ցատաց զարամատիւն։ Բաղցիցին երիտասարդք, եւ վաստակեսցին մանկունք",
31 եւ ընտիրք անզօրք եղիցին։ Բայց որ սպասին Տեառն՝ նորոգեսցին զօրութիւնս, նորափետուր զարդարեսցին իբրեւ զարծուիս, ընթացցին եւ մի՛ վաստակեսցին, գնասցեն եւ մի՛ [3]քաղցիցին։

ԿԼ. ԽԱ

1 [4]Նորոգեցարուք առ իս կղզիք. զի իշխանք նորոգեսցին զօրութիւնս, մերձենասցին խօսեսցին միանգամայն, եւ
2 ապա զիրաւունս պատմեսցին" Ո՞զարթոյց յարեւելից զարդարութիւն, եւ կոչեաց զնա [5]ղհետ իւր. երթիցէ եւ տացէ հաստուցումն յանպիտան հեթանոսաց. զարհատեսցուսցէ զթագաւորս, եւ ասցէ հողոյ զսուրս նոցա, եւ իբրեւ պիսիս
3 մերժեսցէ զնեաս նոցա։ Եւ արասցէ զնաս վախճանականս, եւ անցցէ խուզաղանիւմբ ոչնաւարհոն ոտիւ իւրոյ,
4 Արդ ասիցէ՞ք իմ ոչ դայցէ. ո՞ տգիտայ՝ եւ որար զայս ամենայն, կոչեսցէ զնա՝ որ կոչէրն յաղգային առաջնոյ։" Ես Տէր առաջին, եւ ես նոյն եմ առ յապա։
5 Տեսին [6]զիս հեթանոսք" եւ երկիան. եւ ապականին [7]ամենայն ծագք երկրի. մեր-
6 ձեցան եւ եկին ի միասին. [8]եղին ի մաի իւրաքանչիւր ընդ ընկերի եւ ընդ ե-
7 բօր օգնական լինել. եւ ասիցեն, Քաջալերեսջէ հիւսն զդարբին, կռել կռիել, ուռն հարկանել. եւ ասիցէ, Նպատ բարի եղեւ ինձ. եւ բեւեռեցին զնոսա բեւեռօք, եւ դիցեն ի դեսպի, եւ ոչ չար-
8 ժեսցին" Բայց դու, Իսրայել ծառայ իմ, Յակոբ՝ զոր ընտրեցի, զաւակդ Աբ-
9 րահամու՝ զոր սիրեցի, [9]որում օգնական եղէ ի ծագից երկրի, եւ ի պնտից նորա կոչեցի զքեզ, եւ ասացի" Իմ Ծառայ իմ ես դու եւ ընտրեցի զքեզ, եւ
10 ոչ մոռի զքեզ։ Մի երկնչիր, զի ընդ քեզ եմ. մի [10]խարիր, զի ես եմ Աստուած քո, որ զօրացուցի զքեզ եւ օգնեցի քեզ, եւ զպատչեայս քեզ աջով արդարութեան
11 իմով։ Անաւորիկ ամաչեսցեն եւ պատկառեսցին ամենայն հակառակորդք քո, եւ եղիցին նոքա իբրեւ զչեղեալս, եւ կորիցեն ամենայն դատապարտք քո։
12 Խնդրեսցես զնոսա, եւ ոչ գտցես զմարդն որ ի չնամանեցին զքեզ. եւ եղիցին իբ-
13 րեւ զչեղեալս [11]պատերազմողքն քո։ Զի ես եմ Տէր Աստուած քո, որ ունիմ զաջոյ ձեռանէ քումմէ, որ ասեմ ցքեզ՝ մի՛ Մի երկնչիր, ես օգնեցից քեզ։ Մի
14 երկնչիր, որդիդ Յակոբեան, գածաժո Իսրայելեան. ես օգնեցի քեզ, ասէ [12]Աստուած, որ փրկիչդն է զքեզ՝ Սուրբն
15 Իսրայելի։ Ահաւասիկ արարիչ զքեզ իբրեւ դանիւս նորս սղոցաձեւ կամնասայլից. կասեսցես զլերինս եւ մանրեսցես զլերսրս, եւ արասցես զնոսա իբրեւ զփո-
16 ղս. Եւ հասեսցես[13]. հողմք ասցին զնոսա եւ մրրիկք ցրուեսցին. քոյդ դու ուրախ լիցիս ի Տէր՝ [14]ի Սրբութիւնս Իսրայելի։
17 [15]Եւ գնծասցին անանկք" եւ կարօտեալք որ խնդրէին ջուր եւ ոչ գտանէին, եւ լեզուք նոցա ի ծարաւոյ ցամաքէին, ես Տէր [7]Աստուած լուայց նոցա, Աստուած
18 Իսրայելի, եւ ոչ մոռիցի զնոսա։ Այլ բացից վտակս ի վերայ լերանցդ, եւ ի մէջ գաչտից աղբերս. սարարիցի դանդաստան ի ճահիճս ջուրց, եւ զերկիրն ծարաւուստ

---

[1]ԵԲԲ. Ա՞չ ծանեար, կամ ո՞չ լուար, Աստուած յաւիտենական Տէր, [2]ԵԲԲ. վաստակեալ զօրութիւն, և որպ չիք այժ՝ յաճախէ զօրութիւն (30) Վաստակեսցին մանկունք եւ խոնջեսցին [3]ԵԲԲ. խոնջեսցին [4]ԵԲԲ. Լո եսցեն առաջի իմ կղզիք, եւ ազգք նորոգեսցեն զզօրութիւն. մատիցեն, յայնժամ խօսեսցին, ի միասին ի դատաստան մատիցուք։ [5]ԵԲԲ. յոտս իւր. եւ առաջի նորա զնեհանոս, եւ թագաւորաց եւ տիրել, եւ իբրեւ գփոշի առաջի սրոյ նորա, իբրեւ խուխ հոսեալ առաջի սպեղան նորա. (3) Հալածեաց զնոսա, և անց խաղաղութեամբ ընդ ճանապարհ յոր չէր մտեալ ոտիւք իւրովք։(4)Ո՞ գործեաց և արար զայս. որ կոչէն զազգս ի սկզբանէ։ [6]ԵԲԲ. կղզիք [7]ԵԲԲ. պահե [8]ԵԲԲ. Ա՛յր ընկերի իւրում եղեւ օգնական, եւ ցեղայր իւր ասէ, Քաջալերեաց։ (7) Եւ քաջալերեաց դարբին զոսկերիչ, որ հարկանէն ուռամբ՝ զայն որ կռէ կոփէ. ասէ՝ Բարւոք է այս ի կցել եւ պնդեաց զնա բեւեռօք զի մի՛ շարժեսցի։ [9]ԵԲԲ. Որ կալայ զքեզ ի ծագաց երկրի, եւ յեզերաց նոցա կոչեցի զքեզ, եւ ասացի քեզ, [10]ԵԲԲ. զարհուրիր [11]ԵԲԲ.ԼԽԵ. յաբեղս, իբրեւ սպառեալս [12]ԵԲԲ. Տէր [13]ԵԲԲ.ԼԽԵ. գնոսա [14]ԵԲԲ. ի Սաբրն [15]ԵԲԲ. Տնանկք

19 ի վտակս։ [1]Եւ լցին զերկիրն զմայրն եւ զսօսանին, զմուրտն եւ զձնձն եւ զսօսն, զսարդն եւ զսարդոյն
20 եւ զկազամախն, զդին եւ զփայտն խա-
ղոյ։" Զի տեսցեն եւ գիտասցին եւ ծանի-
ցին եւ խմասցին ի միասին՝ իմէ ձեռն
Տեառն արար զայս ամենայն, եւ Սուրբն
Իսրայելի հաստատեաց։
21 [2]Մերձեալ են իրաւունք ձեր, ասէ Տէր
Աստուած. մերձեալ են իրաւունք ձեր",
22 ասէ Թագաւորն Յակոբայ։ [3]Մերձե-
ցին եւ պատմեցին [4]ձեզ որ ինչ անցք
անցանելոյ իցեն. [5]եւ կամ" զառաջինսն
ևիմէ գինչ էին՝ առացէք. ի մտի դիցուք,
եւ գիտասցուք [6]զինչ առաջին եւ զինչ
23 առ յետս։ Աւասիկ մեզ, պատմեցէք
մեզ" որ ինչ ի վախճանի լինիցի, եւ գի-
տասցուք, եմէ աստուածք իցէք. բարի
արարէք, չար արարէք, զի [7]տեսցուք
24 միանգամայն եւ զարմացցուք՝ թէ ուստի՛
իցէք գուք եւ ուստի՛ գործած ձեր. զի
25 չերկրէ սիրտս ընտրեցին զձեզ։ Բայց ես
զարմացից զհեթանոսացին եւ զարեւել-
եանն. կոչեսցին յանուն իմ, եկեսցեն իշ-
խանք. եւ իբրեւ զկաւ բրտի զոր բրտան
26 կոխէ՝ այնպէս կոխիցիք։ Ո՞ պատմեսցէ
զայն՝ որ ի սկզբանէն է", զի գիտասցուք.
եւ զեւս յառաջագոյնն, եւ ասասցուք իմէ
ճշմարիտ է. չիք որ [8]ասէ յառաջագոյն",
27 եւ ոչ որ լսէ զբանս ձեր։ [9]Սկիզբն ա-
բարիոյ զԱիոն, եւ զերուսաղէմ մխի-
28 խարեցից ի ճանապարհի. Զի ի հեթանո-
սաց աւազիկ ոչ ոք է, եւ ի կողոպուտս
ոչ ոք է որ պատմէ. եւ եմէ հարցից
եւս զնոսա իմէ Ուստի՛ էք, ոչ տացին
29 [10]ինձ պատասխանի։ Զի բնդունայն են
որ առնեն զձեզ, եւ անօգուտ են որ առեղ-
ծանեն զձեզ։"

Գլ. խԲ

1 [10]Յակոբ ծառայ իմ, օգնական ազգիդ
նմա, [11]Իսրայէլ ընտրեալ իմ զոր ընկա-
լաւ անձն իմ. եւս զմիքի իմ ի վերայ
նորա, եւ իրաւունս հեթանոսաց հան-
2 դէ։ Մի՛ ազաղակեսցէ եւ մի՛ վիճեսցի,
եւ մի՛ որ լսիցէ զրաւոցդոյ զրաբբառ
3 նորա։ Զնզէկն չախչախեալ մի՛ բեկցէ,
եւ զպատրոյկն ատկայծեալ մի՛ չիջու-
ցէ, այլ հանցէ ի ճշմարտութիւն զիրա-
4 ւունս։ [11]Ծագեսցէ, եւ մի՛ խորտակեսցի,
մինչեւ դիցէ յերկրի զդատաստան, եւ՝
[12]յանուն նորա հեթանոսք" յուսասցին։
5 Այսպէս ասէ Տէր Աստուած՝ որ արար
զերկինս եւ կանգնեաց զնա, որ հաս-
տատեաց զերկիրս եւ որ ինձանա, որ եւս
չունիչ մարդկան որ ի վերայ նորա, ոգի
6 ամենեցուն որ կոխին զնա։ Ես Տէր Աս-
տուած կոչեցի զքեզ արդարութեամբ,
կալայ զձեռն ձեւանաւք քովմէ եւ զօրաց-
ուցի զքեզ, եւ եւս զքեզ յաւետ ազ-
7 գին՝ եւ ի լոյս հեթանոսաց, Բանալ զաչս
կուրաց, հանել զկապեալս ի բանտէ եւ
ի տանէ կապանաց որ նստուին ի խաւա-
8 րի։ Ես [13]Տէր Աստուած", այս է անուն
իմ, զփառս իմ այլում ոչ տայ, եւ ոչ
9 [14]զքաջութիւնս իմ դրօշկից։ Որ ինչ ի
սկզբանէն էր, այն եկն նմա, եւ զնորս
ես պատմեցից ձեզ. եւ մինչչեւ պատ-
10 մեալ [15]ցուցաւ ձեզ։ Օրհնեցէք զՏէր
յօրհնութիւն նոր, [16]զի իշխանութիւն
նորա ի բարձունս փառաւորի, եւ անուն
նորա՝ ի ծագաց երկրի, ոչք իջանեն ի
ծով [17]նաւօք, կղզիք եւ բնակիչք նոցա։
11 [18]Եւ բարձ եղիցի անապատն եւ աւանք
նորա՝ բանակք եւ բնակիչք Կեդարու".
ուրախ եղիցին բնակիչք Վիմին, ի գլխոց
12 լերանց գոչեսցեն, Տացեն փառս [19]Աս-
տուծոյ, եւ զքաջութիւն նորա կղզիք"

---

18ՆԲԳ. ցորչափ մերձ է։ 19ՆԲԳ. նա ողորմեացի նմա

8 Մաղթէ զանօրէնութիւնս ձեր։ Զի ոչ
ևն խորհուրդք իմ իւրեւս զխորհուրդս
ձեր, եւ ոչ ճանապարհք իմ իւրեւս զճա-
9 նապարհս ձեր՝ ասէ Տէր։ Այլ որպէս
հեռի են երկինք յերկրէ, այնպէս հեռի
են ճանապարհք իմ ի ճանապարհաց
ձերոց, եւ խորհուրդք իմ ի խորհրդոց
10 ձերոց։ Զոր օրինակ եթէ իջանիցէ
անձրեւ կամ ձիւն յերկնից, եւ անդրէն
ոչ դառնայ մինչեւ արբուսցէ զերկիրս,
ծնցի եւ բղխեսցէ, եւ տացէ սերմն սեր-
11 մանողի եւ հաց ի կերակուր, Այնպէս
եղիցի բանն իմ որ ելանէ ի բերանոյ
իմմէ. մի՛ զարձցի դատարկ՝ մինչեւ կա-
տարեսցէ զոր ինչ կամիցիմ. եւ [1]յա-
ջողից զճանապարհս քո, եւ զճանա-
12 պարհս իմ պահեսցես"։ Զի ուրախու-
[2]թեամբ ելիջիք, եւ [3]ցնծութեամբ ուա-
ռնիջիք". զի լերինք եւ բլուրք կայա-
ռեսցեն [3]ընդունել զձեզ" ուրախու-
թեամբ, եւ ամենայն ծառք անտառի
13 ծափս հարցեն [4]սաստկով իւրեանց"։ Եւ
փոխանակ ցրղուդն նոճ բուսցի, եւ
փոխանակ գծնկին մուրտ ելցէ. եւ
եղիցի Տեառն յանուն եւ ի նշան յաւի-
տենից, եւ մի՛ սակաւասցէ։

Գլ. ԾԶ

1 Այսպէս ասէ Տէր. Զգոյշ կացէք իրա-
ւանց եւ գործեցէք զարդարութիւն,
զի եկեալ հասեալ է փրկութիւն իմ,
2 եւ յայտնելոց է ողորմութիւն իմ։ Ե-
րանի առն որ առնիցէ զայն, եւ մարդ-
ոյ որ կայցէ ի նմին, եւ պահիցէ
զշաբաթս իմ եւ ոչ պղծիցէ, եւ
պահիցէ զձեռս իւր յառնելոյ զանի-
3 րաւութիւն։ Մի՛ ասասցէ օտարազգին
որ եկեալ լինիցէ ի Տէր, ելիէ Մեր-
ժելով մերժեսցէ զիս Տէր ի ժողովրդե-
նէ իւրմէ. եւ մի՛ ասասցէ ներքինին՝
4 թէ ես եմ փայտ չոր։ Այսպէս ասէ Տէր
ցներքինիսն որ պահիցեն [5]զպատգա-
նութիւնս իմ, եւ ընտրեսցեն զոր կա-
5 միմ, եւ կայցեն յուխտին իմում. Տայ
նոցա ի տան իմում, եւ ընդ պարսպաւ
իմով տեղի [6]անուանի, առաւել քան
զուստերաց եւ զդստերաց, եւ անուն
յաւիտենական տացէ նոցա՝ եւ մի՛ պա-
6 կասեսցէ։ Եւ զայլազգիսն որ եկեալ

[1] ԵԲԲ. յաջողեսցի յո առաքեցիս զնա [2] ԵԲԲ. խաղաղութեամբ վարիջիք [3] ԵԲԲ. առաջի ձեր [4] ՑԵԲԲ. գ-ի-ե [5] ԵԲԲ. զկտակս [6] ԵԲԲ. և անուն

յեկեալ լինին ի Տէր՝ ծառայել նմա եւ
սիրել զանուն նորա, լինել նմա ի ծա-
ռայս՝ եւ յաղանդայս, եւ" զամենեսեան
որք պահիցեն զշաբաթս իմ եւ ոչ պղծի-
7 ցեն, եւ կայցեն յուխտին իմում. Տա-
րայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ,
եւ ուրախ արարից զնոսա ի տան ա-
ղօթից իմոց. ողջակէզք նոցա եւ պա-
տարագք նոցա ընդունելի եղիցին ի վե-
րայ սեղանոյ իմոյ. զի տունն իմ տունն
ազօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց։
8 Այսպէս Տէր [7]Տէր, որ ժողովէ զգլուխ
եւս Իսրայէլի, [8]եմէ ժողովելոցդ ի
9 վերայ նորա ժողովս Ամենայն դադա-
նաց անասնոյ. եկայք կերայք ամե-
10 նայն գազանք անտառի։ Տեսէք զի կու-
րացան ամենեքեան, եւ" ոչ գիտեն զնան-
ձառ. ամենեքեան իրրեւ չունէք համրա-
ցեալք որ ոչ կարէցեն հաչել. կերազա-
նան յանկոզինս իւրեանց, սիրեն զներր-
11 հել։ Իրրեւ չունէք լիրբք եղեն յանձինս
իւրեանց որ ոչ գիտեն դադարել. եւ
են [9]չարք՝ եւ" ոչ ճանաչեն զնանձառ.
ամենեքեան [10]ըստ իւրաքանչիւր ճանա-
12 պարհաց իւրեանց զնացին" եկայք առ-
ցուք գինի, եւ [11]գինեհարեսցուք արբե-
ցութեամբ, եւ եղիցի այնպիսի օրն մեզ
զոն" մեծ առաւել քան։

Գլ. ԾԷ

1 [12]Տեսէք զիարդ կորեաւ" արդարն, եւ
չիք ոք որ անասայ սրտիւ. եւ արք ար-
դարք բառնան, եւ ոչ ոք [13]հայի. զի"
յերեսաց անիրաւութեան բառնայ ար-
2 դար։ [14]Եղիցի խաղաղութեամբ գերեզ-
3 ման նորա, զի բարձաւ ի միջոյ" Բայց
դուք մատիք յառաջ, որդիք [15]անօրէնք,
որդիք պոռնկարարիք, որդիք չնութեան.
4 [16]ի՞ւր սիրեցարուք, կամ յո՞յր վերայ
բացէք զբերանս ձեր, կամ առ ո՞ր ա-
ձակնցէք զլեզուս ձեր. ո՞չ դուք որդիք

[7] ԵԲԲ. ԵՀովայ [8] ԵԲԲ ժողովեցից եւս ի վերայ ժողովելոց նորա։
(9) Ամենայն գազանք վայրի, եկայք ուտել ամենայն երէց անասուն։ (10) Դէպ նորա կոյրք. ամենեքեան նոքա [9] ԵԲԲ. Հովիւք որ [10] ԵԲԲ. ի ճանապարհ իւրեանց դէմ եդին երթալ, այր ի կողմանս իւր իծագացիւրոց, և ասէն, [11] ԵԲԲ. արբցուք գգի. այսպէս եղիցի եւ օրն վազուն։ [12] ԵԲԲ. Կորեաւ [13] ԵԲԲ. անձ զմտաւ ելնէ [14] ԵԲԲ. Մտցէ խաղաղութեամբ. Հանգիցեն յանկողինս իւրեանց, որ գնան առաջի նորա ուղղութեամբ։ [15] ԵԲԲ. վէմի [16] ԵԲԲ. Յո՞ր վերայ

[1]կորսեան էք, զաւակ անօրէնութ-
5 ենան. Որ անկեալ ազաչէիք զկուռս
ձեր ի ներքոյ անասաստախիտ ծառոց,
զոհէիք զորդիս ձեր ի խորադորս ի մէջ
դլխոց վիմաց, եւ ի կողմանս ձորոյն։
6 Այն է բաժին քո եւ նայն վիճակ քո".
Նոցա հեղեր նուէրս, եւ նոցին մատու-
ցեր զոհս. ի վերայ [2]այսր ամենայնի
7 ո՞չ բարկանայցեմ, ասէ Տէր"։ Ի լերինն
մեծի եւ բարձու [3]անդ է անկողին" քո,
8 եւ անդր ելեր զոհել զոհս։ Եւ յետոյ
դրանգեայ զրանց քոյ հաստատեալեր
պիշատակս քո. [4]կարծէիր՝ եթէ չինէն
ի բաց կայցես՝ եւ չլի ինչ զտանիցես։
Լայնեցեր զանկողինս քո, եւ տարա-
ծեցեր զրեզ առ նոքօք. սիրեցեր զնա-
9 նանիս քո, Եւ բազմացուցեր զպոր-
նկութիւնս քո առ նոսա. եւ զբազում
ի հեռաւորաց արարեր քեզ, եւ տուա-
քեցեր զհրեչտակս արտաքոյ սահմանոյ
10 քոյ։ Նկուն եղեր եւ լծկեր ի դժոխս.
աչխատեցար ի բազում ճանապարհո-
դութիւնս քո, եւ ոչ ասէիր թէ Սրբ
հանգիստ է, զի զայն առ ուժի զորձէիր.
վասն այնորիկ ոչ հնազանդեցար լիձ։"
11 Ցուժմ՝ զանգիտացեալ զարհուրեցար,
զի սուտեր լինձ եւ ոչ յիշեցեր զիս, եւ
[5]ոչ ածեր զմտաւ եւ ոչ եղեր ի սրտի
քումմ. եւ ես տեսի զքեզ եւ անտես
արարի. ես այն եմ որ յաւիտենից
եմ"՝, եւ զու չինէն ոչ զանգիտեցեր։
12 Սրբ ես պատմեցից զարդարութիւնն [6]քո
եւ գչարիսն" քո, որք ոչ օգնեսցեն քեզ։
13 Ցորժամ ազաղակիցես, [7]եւ ոչ ապրե-
ցուսցեն զքեզ ի նեղութենէ քումմէ".
զի զամենեսեան զնոսա հողիք [8]առցեն
եւ մրրիկք բաժանեացեն". Եւ որ յիմն
յուսացեալ են՝ առասցեն զերկիր, եւ
ժառանգեացեն զլեառն սրբութեան ի-
14 մոյ. Եւ ասացեն, [9]Հարցեալ առաջի
Տեառն զճանապարհս, եւ" ի բաց արա-
բէք զխոչ եւ զխուիմ ի ճանապարհէ ժո-
15 ղովրդեան իմոյ։ Այսպէս ասէ Բարձ-
րեալն՝ որ ի բարձունս յարկեալ է յա-
ւիտեան, [10]Սուրբն ի մէջ սրբոց. որոյ
անունն բարձրեալ է եւ ի սուրբս հան-
գուցեալ, որ տայ երկայնամտութիւնն տա-
րակուսելոյ, եւ կեանս այնոցիկ՝ որ
16 մաչեալ են սրտիւք. Եւ ոչ յաւիտեան
բնդրեցից վրէժս ի ձէնջ, եւ ոչ ցանգ
բարկացայց ձեզ. զի հոգի չինէն ելեալ,
17 եւ զամենայն չունչ ես արարի։ Վասն
մեղաց առ սակաւ մի տրամեցուցի զնա,
հարի զնա՝ եւ դարձուցի զերեսս իմ ի
նմանէ, եւ տրամեցաւ եւ գնաց թաթ-
ծեալ առաջի իմ զճանապարհս իւր։
18 Զճանապարհս սրտի նորա տեսի, եւ
բժշկեցի զնա. մխիթարեցի զնա, եւ
եւս նմա մխիթարութիւն ճշմարտու-
19 թեան, եւ ազատ որպէս նորա։ Հաստա-
տեցի զսուտս". խաղաղութիւն ի վե-
րայ խաղաղութեան՝ հեռաւորաց եւ մեր-
ձաւորաց, ասէ Տէր, եւ ես բժշկեցից
20 զնոսա։ Այլ անօրէնք իբրեւ զծով ծփեա-
ցեալն, [11]եւ հանդիստ մի գացեն. եւ կո-
րիւնք ջուր նորա ի կոխումն եւ ի կաւ"։
21 Ոչ գոյ խաղաղութիւն ամպարշտաց,
ասէ [12]Տէր։

Գլ. ԾՐ

1 Գոչեա զօրութեամբ եւ մի խնայեսար,
բարձրացո իբրեւ զփողոյ զրարբառ քո,

---

[1]Եբէր. անօրէնութեան էք, զաւակ սուտութեան։(5) Որ ջերանիք ի բեւեկնիս ի ներքոյ ամենայն անտառախիտ ծառոյ. զեղնուք զմանկունս ի խորադորս ընդ փոսարոյք վիմաց։ (6) Ցողերկս հեղեցուտին բաժին քո, նորա, նորա են վիճակ քո
[2]Եբէր. այսոցիկ համբերի՞ց։ [3]Եբէր. եղեր զանկողին [4]Եբէր. լինէն մերկացար եւ եղեր. լայնեցեր զանկողինն քո, եւ եդիր ուխտ ընդ նոսա. սիրեցեր զանկողինն նոցա ուր եւ տեսեր. (9) Մատեար առաքաւորն իւղով. բազմացուցեր զօծանելիս քո, եւ առաքեցեր դեսպեչտակս քո մինչեւ ի հեռաստան, եւ խոնարհեցուցեր զքեզ մինչեւ ի դժոխս։ (10) Ի բազմութեան ճանապարհաց քոց աչխատեցեր. ոչ ասացեր, Զիք յոյս. գտեր զկեանս ձեռաց քոց, վասն այնորիկ ոչ նուաղեցար։ [5]Եբէր. ոչ եդիր ի սրտի քումմ. մինչեւ ոչ լաեմ ի վաղուց [6]Եբէր. քո եւ զգործս [7]Եբէր. ապրեցուսցեն զքեզ զորս ժողովեցեր

[8]Եբէր. բարձցեն, բարձցէ ասնչունութիւն [9]Եբէր. Հարմեցեք, Հարմեցեք զ Հորդեցեք ճանապարհ, [10]Եբէր. եւ Սուրբ է անուն նորա. Ի բարձունս եւ ի սրբութեան բնակիմ, այլ եմ ընդ բեկելոյն եւ խոնարհին ոգւով կենդանացուցանել զոգին խոնարհաց, եւ կենդանացուցանել զսիրտ բեկելոց։ (16) Զի ոչ յաւիտեան մարտեայց, եւ ոչ միշտ ի սպառ ցասեայց, զի ոգիք յերեսաց իմոց նուաղէին, և շունչք զորս արարի. (17) Վասն անօրէնութեան ագահութեան նորա բարկացայ, եւ հարի զնա թաքուցեալ, եւ բարկացայ, եւ գնաց ապստամբն զճանապարհ սրտի իւրոյ։ (18) Տեսի զճանապարհս նորա, եւ բժշկեցից զնա, եւ առաջնորդեցից նմա. եւ մխիթարեցից զնա և զգաւառս նորա։ (19) Ես հաստեմ պատուղ շրթանց [11]Եբէր. որ հանդչել ոչ կարէ, եւ արձակեն ջուրք նորա տիղմ եւ կաւ [12]Եբէր. Աստուած իմ

պատմեա ժողովրդեան իմում զմեղս նոցա, եւ առնն Յակոբայ զանօրէնութիւնս
2 Իսրայէլի նոցա։ Զիա օր ըստ օրէ խնդրեն, եւ ճանաչել զճանապարհս իմ ցանկան, իբրեւ ժողովրդեան որ զարդարութիւն գործեալ իցէ, եւ զիրաւունս Աստուծոյ իւրոյ չիցէ թողեալ. արդ եկեալ խնդրեն զիրաւունս արդարութեան.
3 կամօքն մերձենալ առ Աստուած. Եւ ասեն, Ընդէ՞ պահեցաք մեք՝ եւ դու ոչ տեսեր, խոնարհեցուցաք զանձինս մեր՝ եւ դու ոչ գիտացեր։ Զի յաւուրս պահոց ձերոց գտանին կամք ձեր կատարեալ, եւ կսկծեցուցանէք զամենեսեան որ ընդ ձեռամբ ձերով են։ Ի հակառակութիւնս եւ ի կռիւս պահէք, եւ[1] կռփէք զանաւազն. խակ զինչ պիտոյ է ինձ այնպիսւոյ աւուր պահք. դալ բազոքել ձեր առ իս, եւ ինձ ոչ լսել
5 ձեզ, Ոչ զայսպիսի պահս ընտրեցի, եւ ոչ զօրն՝ յորում կարկամեցուցանէ մարդ զանձն իւր. [2]զի եթէ կռացուսցես իբրեւ զանաւազն զպարանոց քո, եւ քաւթ եւ մոխիր ի ներքոյ ատրճանիցես, սակայն եւ ոչ զայն կոչեցի պահս եւ օր ընդունելի. ոչ զայսպիսի պահս ընտրեցի՝ ասէ Տէր։ Այլ լոյծ կինդիան ան
6 հրաւութեան, քակել զխարդախութիւն բանութեան վաճառաց քոց, արձակել զնեղեալս թազաւիամբ, եւ զամենայն մուրհակս անիրաւութեան
7 պատառել։" Բրդիա քաղցելոց զհաց քո, եւ զաղքատս անյարկս տար ի տուն քո. եթէ տեսանիցես զմերկն՝ զգեցուցանիցիր, եւ [3]յընտանեաց զաւակի քո
8 զանձն մի արկանիցես"։ Յայնժամ ծաւալեսցի կանուխ լոյս քո, եւ բժշկութիւնքեզ վազվազակի հասցէ, եւ գնասցէ առաջի քո արդարութիւն քո, եւ փառքն [4]Աստուծոյ զքեւ վակեսցին։
9 Յայնժամ կարդասցես, եւ [5]Աստուած լսիցէ քեզ. եւ մինչդեռ խօսիցիս, ասասցէ թէ Աստուածիկ հասեալ կամ, եւ եթէ մերժեցես զոտ ի քէն [6]կինդիան եւ զձեռնարկութիւնն եւ զբանս ապանջման"։
10 Եւ տացես քաղցելոյ զհաց քո սրտի մտաք, եւ զանձինս կատեսեալս յագեցուսցես, յայնժամ ծագեսցէ ի խաւարի լոյս քո, եւ խաւարն քո իբրեւ զմիջօրեայ. Եւ [7]եղիցի Աստուած քո ընդ
11 քեզ յամենայն ժամ, եւ լցցի ըստ ցանկութեան անձն քո, եւ ոսկերք քո պայծառիսցին, եւ եղիցին" իբրեւ զպարտէզ ջրոյ, եւ իբրեւ զաղբեր ուռ
12 ի՝ զոր ոչ պակասեսցէ։ Եւ [8]չինեսցին աւերակք քո յաւիտենից, եւ եղիցին հիմունք քո մշանջենաւորք, ապագայ յազգս" կանգնեսջիր, եւ կոչեսջիր Խզտմակարկատ ցանկոյց, [9]եւ զընդմիջինս
13 չարիզս նոցա զադարեցուսցես"։ Եթէ զարձուսցես[10] զոտն քո՝ չանկել զկամս քո յաւուրն սրբութեան[11], եւ կոչեսցես զշաբաթն փափակս նաւթիւսա Աստուծոյ եւ փառաւորեալս, եւ [12]ոչ փոխեսցես զան քո ի գործ, եւ ոչ խօսեսցիս բան ինչ բարկութեան բերանով
14 քով, եւ եղիցես յաւազանել ի Տէր։ Եւ տարցի զքեզ ի բարութիւնս երկրին, եւ չամրեսցէ" քեզ ժառանգութիւն Յակոբայ հօր քո. զի բերան Տեառն խօսացաւ զայս։

ԳԼ. ԾԹ

1 Ահիւ ոչ իցէ կարօղ ձեռն Տեառն փրկել, կամ ծանրացոյց ինչ զունկն իւր
2 զի մի՛ լսիցէ։ Այլ մեղքն ձեր որոշեն ի մէջ ձեր եւ ի մէջ Աստուծոյ. եւ վասն անօրէնութեանց ձերոց դարձոյց զերեսս
3 իւր ի ձէնջ՝ զի մի՛ [13]ողորմեսցի։ Զի ձեռք ձեր պղծեալ են արեամբ, եւ մատունք ձեր ի մեղս. չրմունք ձեր խօսեցան զանօրէնութիւն, եւ լեզուք ձեր խո-

---

[1] Եբր. Հանել կռուիս անիրաւութեան. մի՛ պահէք որպէս այսօր, լսելի առնել ի բարձունս զբարբառ ձեր։ (5) Միթէ այսպիսի՞ իցեն պահք զոր ես ընտրեցի, օրն [2] Եբր. միթէ ի կորացուցանել իբրեւ զկնճուխ զգլուխ իւր եւ տարածել քուրձ եւ մոխիր. միթէ զայս կոչես պահ եւ օր ընդունելի Տեառն։ (6) Ոչ ապաքէն այս են պահք զոր ես ընտրեցի. քակտել զկապանս անօրէնութեան, լոյծ ծանրաբեռնութեան, եւ արձակել զբեկեալս ազատս, եւ զամենայն լուծ խորտակեա։ [3] Եբր. ի մարմնոյ քումմէ մի՛ թաքուցաներ զքեզ [4] Եբր. Տեառն [5] Եբր. Տէր

[6] Եբր. զլուծ և ձգել զմտան և խօսել զանզգամութիւն [7] Եբր. առաջնորդեսցէ քեզ Տէր յամենայն ժամ, և յագեցուսցէ հերաշտի զանձն քո, եւ զոսկերս քո պարարեսցէ, եւ եղիցիս [8] Եբր. շինեսցեն որ ի քէն զաւերակս ի վաղուց, զհիմունս ազգաց յազգս [9] Եբր. որ զարձուցանէ զշաբիզս ի քնակութիւն [10] Եբր. յետևէն յօրէնս, ի շաբաթէ [11] Եբր. յօրէնս յօրէնս, իմոյ [12] Եբր. փառաւորեսցես զնա չգնալ զճանապարհս քո, չկատարել զկամս քո, եւ չխօսել բանս ունայնութեան, (14) Յայնժամ ուրախ եղիցիս ի Տէր, եւ տացց քեզ հեծանել ի վերայ բարձանց երկրի, եւ չամբեցից [13] Եբր. լուիցէ

4 կան զանիրաւութիւն։ Ձիք ոք որ խօսի
զարդարութիւն, եւ ոչ դէմ իրաւունք
ճչմարտութեան. յուսացեալ են ի անու-
սիս, եւ խօսին զանայնութիւն. զի
յղանան զցաւս, եւ ծնանին զանօրէ-
5 նութիւն։ Զձուս քարերից [1]ծակեցին,
եւ զոսոհայն սարդից անկանին. [2]եւ որ
կամիցի ուտել ի նոցանէն, ծակեաց լաց՝
6 եւ նգիտ ջուր, եւ ի նմին քարի՞։ Ոս-
տայնք նոցա ոչ ձորձնացին, եւ ոչ զգեցցին
ի գործոց ձեռաց իւրեանց. քանզի գործք
նոցա գործք անօրէնութեան են, եւ
գործք անիրաւութեան ի ձեռս նոցա։
7 Ոտք նոցա ի չարիս ընթանան, վազվա-
զին հեզուել արիւն անպարտ. խոր-
հուրդք նոցա խորհուրդք անզգամաց.
բնկուժն եւ [3]չուառութիւն ի ճանա-
8 պարհս նոցա. եւ զճանապարհն խաղա-
ղութեան ոչ ծանեան, եւ ոչ դէմ իրա-
ւունք ի ճանապարհս նոցա. զի չարիգք
նոցա ընդ որ գնան՝ խոտորնակք են,
9 [3]եւ ոչ ծանեան զխաղաղութիւն՞։ Վասն
այնորիկ հեռացան [4]ի նոցանէ իրաւունք,
եւ մի՛ հասցէ առ նոսա արդարու-
թիւն. մինչդեռ ակն ունէիք լուսոյ՝ եղեւ
նոցա խաւար, եւ մինչդեռ սպասէիք նմա,
10 ընդ մուխ չրջնցան. Շօշափեսցին՞ զդրմն
իբրեւ կոյրք, եւ իբրեւ զաչացուս [5]խար-
խափեսցին, եւ պլորեսցին՞ ի միջօրէի
իբրեւ ի հասարակ գիչերի, եւ իբրեւ
օրհասականք [6]ընդ ողիս չանայցին,
11 եւ իբրեւ զարջս եւ իբրեւ զազաւնիս
առ հասարակ սահեսցին՞. կացաք
մնացաք իրաւանց՝ եւ ոչ էր, փրկու-
12 թեան՝ եւ հեռացաւ ի մէնջ։ Զի բա-
զում են անօրէնութիւնք մեր առաջի
քո, եւ մեղք մեր հակառակ կացին մեզ.
զի անօրէնութիւնք մեր ի մեզ են, եւ
զանիրաւութիւնս մեր՝ մեք մեղէն դի-
13 տեմք։ Ամպարչտեցաք եւ ստեցաք
Տեառն, եւ զարձաք յետս յաստուածոյ
մերմէ. խօսեցաք զանիրաւութիւն՝ եւ
հնտտեցաք. յղացաք եւ որոճացաք ի
սիրտս մեր զբանս անիրաւութեան։
14 Ցետս [7]հարաք զիրաւունս՞, եւ արդա-
րութիւն հեռացաւ ի մէնջ. զի [8]սպա-
ռեցաւ ի ճանապարհաց նոցա ճչմար-
տութիւն, եւ ընդ ու զղորդն ոչ կարա-
ցին գնալ, եւ արդարութիւն բարձաւ
15 ի նոցանէ. Մերժեցին զսիրտս իւրեանց
յմանալոյ՞։ Եւ տես Տէր՝ եւ ոչ հաճե-
16 ցաւ, զի ոչ գոյին իրաւունք։ Հայեցաւ՝
եւ ոչ գոյր մարդ. [9]եւ տես՝ եւ ոչ գոյր
որ օգնական լինէր. եւ հատոյց նոցա
բազկաւ իւրով, եւ ըստ ողորմութեան
17 իւրում հաստատեաց՞։ Եւ զգեցաւ իրա-
ւեւ զրահս զարդարութիւն, եւ եդ ի
գլուխ իւրում զսաղաւարտ զփրկու-
թիւն, եւ արկաւ զիրեւս հանգերձ [10]եւ
պատմուճան վրէժխնդրութեան՝ հատու-
18 ցանել զհատուցումն. Եւ նախատինս
հակառակորդաց եւ՞ կղզեաց հատուցանէ
19 զհատուցումն։ Եւ երկիւղն յարեւմտից
յանուանէ Տեառն, եւ յարեւելս [11]իփա-
ռաւորեալ անուանէ՞ նորա. զի եկեսցէ
իբրեւ զգետ [12]բռնութեամբ բարկու-
թիւն ի Տեառնէ, հասցէ սրամտու-
20 թեամբ։ Եւ եկեսցէ ի Սիոն փրկիչ,
եւ դարձուսցէ զամպարչտութիւնս Յա-
21 կոբայ՞, ասէ Տէր։ Եւ այս նոցա որ յի-
նէն ուխտ, ասէ Տէր. Հոգին իմ որ է
ի քեզ եւ բանք զոր ետու ի բերան քո՝
մի պակասեցին ի բերանոյ քումմէ եւ
ի բերանոյ զաւակի քո. եւ ի բերանոյ
զաւակէ զաւակի քո, ասէ Տէր, յայսմ-
հետէ մինչեւ յաւիտեան։

Գլ. Կ

1 [13]Լուսաւորեաց, լուսաւորեաց, Երու-
սաղէմ՞, զի հասեալ է լոյս քո, եւ
փառք Տեառն ի վերայ քո [14]ծագեցին։
2 Զի ահա խաւար ծածկեաց զերկիր, եւ

---

[1] ԵԲԲ. Թխեն [2] ԵԲԲ. որ ուտէն ի ձուոց նոցա՝ մեռցի, եւ իրրեւ խորտակեսցի, ելցէ իժ [3] ԵԲԲ. ամենայն որ կոխէ ի նոսա՝ ոչ ծանեաւ զխաղաղութիւն [4] ԵԲԲ. ի մէնջ իրաւունք, և ոչ հասանէ առ մեզ արդարութիւն. ակն ունեաք լուսոյ, և ահա խաւար, պայծառութեան՝ ընդ մուխ չրջնցաք։ (10) Շօշափեցաք [5] ԵԲԲ. խարխափեցաք. գլորեցաք [6] ԵԲԲ. ի մէջ պարարելոց։ (11)

Մռնչեմք իրրեւ զարջս, եւ իրրեւ զաղաւնիս մնչելով մնչեմք

[7] ԵԲԲ. Հարան իրաւունք [8] ԵԲԲ. զթեցաւ ի հրապարակի ճչմարտութիւն, եւ ուղղութիւն ոչ կարաց մտանել։ (15) Եւ ճչմարտութիւն պակասեաց, եւ որ ի բաց կայ ի չարութենէ՝ կողոպտի [9] ԵԲԲ. զարմացաւ զի չգոյր բարեխօս, եւ օգնեաց նմա բազուկ իւր, եւ արդարութիւն նորա՝ նա եղեւ նմա զօրավիգն [10] ԵԲԲ. պատմուճան վրէժխնդրութեան, եւ ագաւ իրրեւ վերարկու զնախանձ. (18) Իրրեւ ի հատուցումն. իրրեւ փոխարէն՝ հատուսցէ, բարկութիւն հակառակորդաց իւրոց, հատուցումն թշնամեաց իւրոց. [11] ԵԲԲ. ի փառաց [12] ԵԲԲ. թշնամին, Հոգի Տեառն կանգնեսցէ դրօշ ընդդէմ նորա։ (20) Եւ եկեսցէ ի Սիոն Փրկիչ, եւ առ դարձեալս յանօրէնութենէ ի Յակոբ,

[13] ԵԲԲ. Արի, լուսաւորեաց [14] ԵԲԲ. ծագեցին

մառախուղ զհեթանոս. բայց ի քեզ Տէր յայտնեսցի, եւ փառք նորա ի քեզ
3 երեւեսցին։ Եւ գնասցեն [1]ի ազգս բազումս ի լոյս քո, եւ [2]հեթանոսք ի ծագել լուսոյ
4 քո։ Համարձակ չուրջ զքեզ դարձ քո, եւ [3]տես ժողովեալ առ քեզ զամենայն մանկունս քո. զի՝ եկին հասին ի հեռաստանէ որդիք քո, եւ գաստիք քո
5 [4]ի վերայ ուսոց նոցա բարձեալ բերիցեն։ Յայնժամ տեսցես եւ [5]երկիցես եւ զարհուրեսցիս ի սրտի քումմէ. զի փոխեսցի ի քեզ մեծութիւն ծովու եւ
6 աղազաց եւ ժողովրդոց։ Եկեսցեն ի քեզ երամակք ուղտից, եւ ծածկեսցեն զքեզ ուղտերամակքն՝ Մագիամու եւ Գեփայ. ամենեքեան ի Սաբայ եկեսցեն, բերել ոսկի եւ կնդրուկ [6]եւ ականս պատուականս՝, եւ զփրկութիւնս Տեառն աւգնեալ աւետիս
7 Եւ ամենայն խաչինքն Կեդարու ժողովեսցին առ քեզ, եւ խոյքն Նաբէոթ ի քեզ [7]ածցին եւ՝ մատուսցին ընդունելի պատարագ ի վերայ սեղանոյ իմոյ, եւ
8 [8]տուն աղօթից իմոց փառաւորեսցի՝։
8 Ո՞վ են սոքա որ իբրեւ զամպս թռուցեալ են, եւ իբրեւ զաղաւնիս
9 [9]ձագախառն երամովին դան առ իս։
9 Ինձ՝ ակն ունին կղզիք եւ նաւք Թարսիս յառաջագոյն՝ ածել զորդիս քո ի հեռաստանէ. [10]զարծաթն եւ զոսկի՝ ընդ իւրեանս՝ վասն անուան
11 [11]Տեառն սրբոյն՝, եւ վասն Սրբոյն Իսրայէլի [12]փառաւորելոյ։ Եւ չինեսցեն օրդիք այլազգեաց զպարիսպս քո, եւ թագաւորք նոցա ընծայեսցին քեզ. զի վասն բարկութիւնս իմոյ հարի զքեզ, եւ վասն ողորմութիւնս իմոյ սիրեցի
11 զքեզ։ Եւ բացցին դրունք քո հանապազ զորդ ի տուէ եւ ի գիշերի, եւ մի՛ փակեսցին, կրել ի քեզ զզօրութիւն ազգաց եւ թագաւորք նոցա
12 առ քեզ։ Զի ազգք եւ [13]թագաւորք որ

[1] ՆԲԳ. հեթանոսք [2] ՆԲԳ. թագաւորք [3] ՆԲԳ. տես, ամենեքեան ժողովին գան առ քեզ. [4] ՆԲԳ ի գիրկս անանցին [5] ՆԲԳ. եւ երկիցէ եւ ընդարձակեսցի սիրտ քո. զի փոխեսցի ի քեզ յորդութիւն ծովու, զորութիւն ազգաց եկեսցէ առ քեզ։(6)Ծածկեսցեն զքեզ երամակք ուղտից, անդրանիկքն Մադիամու [6] ՆԲԳ. պետք [7] ՆԲԳ. ծառայեսցեն քեզ. [8] ՆԲԳ. զտուն փառաց իմոց փառաւորեցից [9] ՆԲԳ. ի վանդակս իւրեանց։ (9) Զի ինձ [10] ՆԲԳ. արծաթն իւրեանց եւ ոսկի իւրեանց [11] ՆԲԳ. Տեառն Աստուծոյ քո [12] ՆԲԳ. զի փառաւորեաց զքեզ [13] ՆԲԳ. թագաւորութիւնք

քեզ ոչ ծառայիցեն՝ կորիցեն, եւ ազգք
13 աւերելով աւերեսցին։ Եւ փառք Լիբանանոյ առ քեզ եկեսցեն, սոսիւն եւ սօսիւ եւ նոճով եւ ժայրիւ՝ առ հասարակ փառաւորս առնել զտեղի սրբութեան իմոյ, եւ զտեղի ոտից իմոց փա-
14 ռաւորեցից։ Եւ եկեսցեն առ քեզ զարհուրելով որդիք նեղչացն քոց [6]եւ զայրացուչքն՝, եւ երկիր սրակցին հետոց ոտից քոց՝ ամենեքեան որ [14]զարհուրեցուցանէիք զքեզ. եւ կոչեսջիր՝ քաղաք
15 Տեառն Սիոն Սրբոյն Իսրայէլի. [15]վասն զի եղեր դու լքեալ եւ ատեցեալ, եւ ոչ ոք էր որ [16]օդնէր քեզ. եւ արարից զքեզ յաւերտական հանդերձ՝,
16 զնծութիւն ազգաց յաղագս քեզ։ Եւ դիեցես զկաթն հեթանոսաց. եւ [17]զմեծութիւն թագաւորաց կերիցես՝. եւ ծանիցես թէ
17 ես եմ Տէր, որ ապրեցուցանեմ եւ փրկեմ զքեզ [18]Աստուած Իսրայէլի՝։ Եւ փոխանակ պղնձոյն՝ բերից քեզ ոսկի, եւ փոխանակ երկաթոյն բերից քեզ արծաթ, եւ փոխանակ փայտի բերից քեզ պղինձ, եւ փոխանակ քարի տաց քեզ
երկաթ. եւ տաց զիշխանս քո ի խաղաղութիւն եւ [19]գայլայլուս քո յարդա-
18 րութիւն։ Եւ ոչ եւս լսիցի անիրաւութիւն յերկրի քումմէ, եւ ոչ բնկալմն եւ թշուառութիւն ի սահմանս քո. այլ կոչեսցին փրկութիւն պարիսպք քո, եւ
19 դրունք քո ցնծութիւն։ Եւ ոչ եւս եղիցի քեզ արեգակն ի լոյս տուրնջեան, եւ ոչ ծագումն լուսնի տացէ քեզ լոյս ի գիշերի. այլ եղիցի քեզ Տէր լոյս յաւիտենական, եւ փառք քո [20]Աստուած։
20 Ոչ մտցէ քեզ արեգակն, եւ լուսին ի քէն՝ մի՛ պակասեսցէ. զի եղիցի քեզ Տէր լոյս յաւիտենական. եւ կատարեսցին աւուրք սգոյ քո։ Եւ ժողովուրդ
21 քո ամենեքեան արդար, եւ յաւիտեան ժառանգեսցեն զերկիրն, [21]պահել զնորատունկ դործոց ձեռաց իւրեանց ի փառս՝։
22 Սակաւաւորն հազարաւոր եղիցի, եւ

[14] ՆԲԳ. անարգէին զքեզ. և կոչեսցեն զքեզ [15] ՆԲԳ. Փոխանակ [16] ՆԲԳ. անցանէր ընդ քեզ և արարից զքեզ ի փառաւորութիւն յաւիտենից [17] ՆԲԳ. զսահինս թագաւորաց դիեսցես [18] ՆԲԳ. Հզօրն Յակոբայ [19] ՆԲԳ. զՏարկահանս [20] ՆԲԳ. Աստուած քո։(20)Ել եւս մտցէ արեգակն քո, եւ լուսին քո [21] ՆԲԳ. տունկն զոր անկեցի, գործ ձեռաց իմոց, ի փառաւորել զիս։

կրտսերն յազգ մնծ . [1]զի ես Տէր ընդ ժա-
մանակս ժամանակս ժողովեցից զնոսա"։

Գլ. ԿԱ

1 Հողմ [2]Տեառն ի վերայ իմ, վասն որոյ
եւ օծ իսկ [3]զիս, աւետարանել աղ-
քատաց առաքեաց զիս, բժշկել զբեկ-
եալս սրտիւք, քարոզել գերեաց զթո-
2 ղութիւն եւ [4]կուրաց տեսանել", կոչել
ամ Տեառն ընդունելի եւ օր հատուցման
Աստուծոյ մերոյ, մխիթարել զամենայն
3 սգաւորս , [5]Տալ սգաւորաց Սիոնի փառս ,
փոխանակ մխրոյն՝ օծումն ուրախու-
թեան, եւ սգաւորացն հանդերձ փառաց՝
փոխանակ ողոյն" վհատութեան , եւ
կոչեցան նոքա [6]ազգք արդարութեան՝
4 տունկ Տեառն ի փառս : Եւ չինեցան
զաւերակսն յաւիտենից , եւ գյառաջա-
գոյն աւերեալսն կանգնեցան , եւ նորո-
գեցան զքաղաքս աւերեալս ազգաց
5 մինչեւ յազգս : Եւ եկեսցեն օտարա-
ծինք , հովիւք խաչանց քոց , եւ այ-
լազգիք մաճակալք եւ այգեգործք քո :
6 Բայց դուք՝ քահանայք Տեառն կոչես-
ջիք , պաշտօնեայք Աստուծոյ մերոյ
անուանեսջիք , զզօրութիւն ազգաց կե-
րիջիք , եւ մինծութեամբ նոցա աքանչելի
7 լինիջիք : Փոխանակ ամօթոյ ձերոյ՝
կրկին ուրախութիւն , եւ փոխանակ ա-
նարգանաց [7]ձերոյ՝ ցնծութիւն , եւ ապա
զերկիրն յերկրորդում ժառանգեսցեն ,
եւ ուրախութիւն յաւիտենից ի վերայ
8 գլխոց նոցա : Զի ես եմ Տէր որ սիրեմ զար-
գարութիւն , եւ ատեամ զյափշտակու-
թիւնս [8]յանիրաւութենէ . եւ տացց զվաս-
տակս նոցա [9]արդարոց , եւ ուխտ յաւի-
9 տենից ուխտեցից ընդ նոսա : Եւ ծանիցի
ի մէջ ազգաց զաւակ նոցա , եւ ծնունդք
նոցա ի մէջ ժողովրդոց . ամենեքեան որ
տեսանիցեն՝ ճանաչիցեն զնոսա թէ սոքա
են զաւակ օրհնեալ [10]յԱստուծոյ :
10 Ուրախութեամբ ուրախ [11]եղիցին ի
Տէր . ցնծասցէ անձն իմ [12]ի Տէր , զի
զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան եւ
[13]պատմուճան ուրախութեան", իբրեւ
փեսայի եդ ինձ պսակ , եւ իբրեւ հարսն
11 զարդու զարդարեաց զիս : Եւ իբրեւ
երկիր որ ածեցուցանէ զծադիկս իւր ,
եւ իբրեւ զպարտէզ որ բուսուցանէ
զսերմանիս իւր . այնպէս ծագեսցէ [14]Տէր
զարդարութիւն իւր եւ զյաղթութիւն"
առաջի ամենայն ազգաց :

Գլ. ԿԲ

1 Վասն Սիոնի ոչ լռեցից , եւ վասն Ե-
րուսաղեմի ոչ [15]դադարեցից . մինչեւ ծա-
գեսցէ իրրեւ ջոյս արդարութիւն նո-
ցա , եւ փրկութիւն նորա իրրեւ ջահոյ
2 վառեսցի : Եւ տեսցեն հեթանոսք զարդա-
րութիւն քո , եւ ամենայն թագաւորք
զփառս քո . եւ կոչեսցի քեզ անուն նոր ,
3 զոր [16]Տէր անուանեսցէ : Եւ եղիցես պսակ
վայելչութեան ի ձեռն Տեառն , եւ թագ
արքայութեան ի ձեռն Աստուծոյ քո .
4 Եւ ոչ եւս կոչեսցին լքեալ , եւ երկիրն քո
ոչ եւս կոչեսցի Աւերակ . զի քեզ [17]ա-
նուն կոչեսցին կամք իմ , եւ երկրին
քում չինութիւն բնակութեան". զի հա-
ճեսցի Տէր ընդ քեզ , եւ երկիրն քո
5 [18]խնդեսցի ի բնակութիւն : Զոր օրինակ
բնակէ" երիտասարդ ընդ կուսի՝ այն-
պէս [19]բնակեսցեն որդիք քո ի քեզ". եւ
եղիցի՝ զոր օրինակ ուրախ լինի փեսայ
առ հարսին , այնպէս ուրախ լիցի [20]Տէր
ի քեզ :
6 Ի վերայ պարսպացն քոց , Երուսա-
ղէմ , պահապանս կացուցի . զօրն ողջ-
նոյն եւ զգիշերն [21]ամենայն , որ մինչեւ
7 յանդ մի գադարեսցեն յիշել զՏէր : Զի
ոչ գոյ նման ձեզ , եթէ ուղղեսցէ եւ
արասցէ զերուսաղէմ ի պարծանս ի վե-
8 րայ երկրի : Երդուաւ Տէր յաջ

---

1 ՆԲբ. ես , Տէր, ի ժամանակի իւրում փութա-
ցուցից զայս 2 ՆԲբ. Տեառն ԵՀովայի 3 ՆԲբ.
զիս Տէր 4 ՆԲբ. կապելոց արձակուիմ ի բանտէ
5 ՆԲբ. Պնել սգաւորաց Սիոնի, տալ նոցա փառս
փոխանակ մխրոյ , օծումն ուրախութեան
փոխանակ սգոյ , հանդերձ գովեստեան փո-
խանակ 6 ՆԲբ. Բեւեկնիք 7 ՆԲբ. ցնծու-
թիւն ի մասին իւրեանց . վասն այնորիկ յերկ-
րին իւրեանց կրկին ժառանգեսցեն, ուրախու-
թիւն յաւիտենից եղիցի նոցա 8 ՆԲբ. ընդ
անիրաւութեան, կամ, ողջակիզի 9 ՆԲբ. ճշմար-
տութեամբ 10 ՆԲբ. ի Տեառնէ

11 ՆԲբ. եղէց 12 ՆԲբ. յԱստուած իմ 13 ՆԲբ.
արկ զինեւ պատմուճան արդարութեան 14 ՆԲբ.
Տէր ԵՀովայ զարդարութիւն եւ զգովեստիւն
15 ՆԲբ. Հանգեսայց 16 ՆԲբ. բերան Տեառն 17 ՆԲբ.
կոչեսցի Հաճութիւն իմ ի նմա , եւ երկրին
քում՝ Ամուսնացեալ 18 ՆԲբ. եղիցի ամուս-
նացեալ : (5) Զոր օրինակ ամուսնանայ 19 ՆԲբ.
ամուսնացին որդիք քո ընդ քեզ 20 ՆԲբ. Ա-
ստուած քո 21 ՆԲբ. ողջոյն երբեք մի՛ լռեսցեն ,
որ յիշեցք զՏէր՝ մի՛ յիցի լռութիւն ձեզ։(7)Եւ
մի՛ տայցէք լռութիւն նմա, մինչեւ հաստատեսց-
է , եւ մինչեւ դիցէ զերուսաղէմ ի գովես-
թիւն յերկրի : (8) Երդուաւ Տէր յաջ

իւր եւ ի զօրութիւն բազկի իւրոյ, եւ
մէկ ոչ մատչ զցօրեան քո [1]եւ ղկեղա-
կուր ի ձեռս՝ թշնամեաց քոց, եւ ոչ
արիցեն որդիք օտարաց զդինի քո յո-
9 րում դուն վաստակեցեր։ Այլ որ ամ-
փոփեցինն կերիցեն զնա՝ եւ օրհնեսցեն
զՏէր, եւ որ ժողովեցինն զնա՝ արիցեն
ի սրահս սրբութեանց իմոց։
10 [2]Երթայք մտէք ընդ դրունս իմ, կազ-
մեցէք զճանապարհն, հորդեցէք պչա-
ւիղս. գործեցէք ճանապարհ ժողովրդեան
իմոյ, եւ գթարկիս ի ճանապարհէ անդ-
ա՛ն՝ ի բաց բնկեցէք. ասէք նչան ի հե-
11 թանոս։ Զի ահաւասիկ Տէր լսելի արար
մինչեւ ի ծագս երկրի. ասացէք դստեր
Սիոնի. Ահաւասիկ Փրկիչ քո հասեալ
գայ եւ ունի զվարձս իւր ընդ իւր. եւ
12 գործ իւր առաջի երեսաց իւրոց։ Եւ
կոչեսցէ զնա ժողովուրդ սուրբ՝ փրկեալ
ի Տեառնէ, եւ դու կոչեսցիս խնդրեալ
քաղաք եւ ոչ լքեալ։

Գլ. ԿԳ

1 [3]Ով այս ոմն է որ գիմեալ գայ յեդովմ,
կարմրութիւն ձորձոյ իւրոյ ի նա-
ռոյս, [4]զեղեցիկ պատմուճանաւ եւ
բազուն զօրութեամբ։ Ես խօսիմ զար-
դարութիւն եւ իրաւունս փրկութեան։
2 Վասն ընչ կարմիր են ձորձք քո, եւ
հանդերձք իբրեւ հնձանաւորի, [5]լիոյ
հնձանի կոխելոյ։
3 Հնձան հարի միայն, եւ ի հեթանոսաց
ոչ ոք էր ընդ իս. կոխեցի զնոսա սրտմ-
տութեամբ[5] եւ ճմլեցի զնոսա բար-
կութեամբ [6]եւ իջոյց կերիկս՝, եւ զա-
4 նունդն հանդերձս իմ խոտեցի. Զի
[7]հասեալ էր ի վերայ նոցա օր հատուց-
ման, եւ ամ փրկութեանց՝, եկեալ հա-
5 տեալ։ Եւ հայեցայ՝ եւ ոչ ոք էր որ օգ-
նէր, [8]զմտաւ ածի՝, եւ ոչ ոք էր որ ի

[1] Եբէր. ի կերակուր [2] Եբէր. Անցէք, անցէք ընդ դրունս. Հարթեցէք զճանապարհ ժողովրդեանն, Հարթեցէք, Հարթեցէք զշաւիղս, գթարինս [3] Եբէր. զարդարեալ պատմուճանաւ իւրով, փութացեալ յաճախութեամբ զօրութեան իւրոյ.
Ես որ խօսիմ արդարութեամբ՝ մեծ ի փրկել
[4] Յերէր. գոլոսե [5] Եբէրայեցէն յոտնէ, իմոյ, [6] Եբէր. իմով, և ցայտեցաւ յարենէ նոցա ի վերայ զգեստուց իմոց [7] Եբէր. օր վրէժխնդրութեան էր ի սրտի իմում, եւ ամ փրկելոց իմոց [8] Եբէր. եւ զարմացայ

[9] Եբէր. եւ փրկութիւն եղեւ ինձ բազուկ իմ, եւ սրտմտութիւն իմ եղեւ ինձ ձեռնտու։ (6) Եւ կոխեցի զժողովուրդս բարկութեամբ իմով. եւ արբեցուցի [10] Եբէր. զարիւն նոցա [11] Եբէր. զժողովութիւնս Տեառն ըստ ամենայնի [12] Եբէր. եւ ըստ յաճախութեան երախտեաց առ տունն Իսրայելի, զոր հատոյց նոցա [13] Եբէր. Արդարեւ ժողովուրդ իմ են նոքա, որդիք որ ոչ ստեն, եւ եղեւ նոցա փրկիչ։ (9) Յամենայն նեղութեան նոցա՝ նեղութիւն նմա, եւ հրեշտակ երեսաց նորա [14] Եբէր. զմոսէս, զժողովուրդ նորա. Ո՞ր է որ եհան զնոսա ի ծովէ, հովիւն [15] Եբէր. եւ դնաց բազկի փառաց իւրոց յաջմէ Մովսեսի, ճեղքեաց [16] Եբէր. անապատ, ոչ գլորեցան։ (14) Որպէս գրաստ ի հովիտ իջանէ, (Ակի Տեառն հանդոյց զնոսա,) [17] Եբէր. Հայեաց

ռաց քոց . ո՞ր է նախանձ քո եւ զօրութիւնն . [1]ո՞ր է՞ բազում ողորմածութիւն քո մեծութեան [2]քո , որով նկուէիր
16 մեզ՝ : Զի դու ես մեր Հայր . դի Աբրահամ ոչ գիտաց զմեզ , եւ Իսրայէլ ոչ ծանեաւ զմեզ . այլ դու , Տէր , Հայր մեր ,
[3]փրկեա զմեզ , դի ի սկզբանէ անուն
17 քո է ի վերայ մեր՝ : Ձմէ՞ մոլորեցուցեր զմեզ , Տէր , ի ճանապարհաց քոց . խստացուցեր զսիրտս մեր չերկնչել ի քէն.
դարձ վասն ծառայից քոց , դարձ վասն
18 ազգաց ժառանգութեան քո : [4]Գուցէ ոչ ժառանգեցին զքեզ սրբութեանդ.
հակառակորդք մեր նեղեցին զմեզ , եւ՝
19 կոխեցին զարբանեակն քո : Եղեալ իրրեւ զառաջինն՝ յորժամ ոչն տիրէիր մեզ,
եւ ոչ կոչեցեալ էր անուն քո ի վերայ
մեր :

Գլ . ԿԴ

1 [5]Եթէ բացցես զերկինս՝ զոզուման կալցի ի քէն զլերինս , եւ հալեսցին իրրեւ
2 զմոմ առաջի հրոյ . եւ այրեսցէ հուր զհակառակորդս քո , եւ յայտնի լիցի
անուն քո ընդդիմակացս քոց , եւ յե-
3 լեսց քոց հնչմանաք խռովեսցին Յորժամ առնիցես վառաւորութիւնս՝ զո-
4 զումն կալցի ի քէն զլերինս : Ցառ իսկ նից ոչ լուաք , եւ ոչ աչք մեր տեսին
այլ Աստուած բաց ի քէն . եւ գործս
քո զոր արասցես այնոցիկ որ սպան ու-
5 նին ողորմութեան քումմ : Զի ընդ առաջ լիցի այնոցիկ որք առնին զիրաւունս , եւ զճանապարհս քո յիշեսցեն .
արդ ահա դու բարկացար եւ մեք մե-
6 զաք , վասն այնորիկ մոլորեցաք՝ : Եւ եղեալ իրրեւ զպիղծս ամենեքեան , իրրեւ զհանգերձս ապականիալ ամենայն
արդարութիւնս մեր . եւ թօթափեցաք իրրեւ զտերեւս ամենեքին [6]մեք վասն անօրէնութեանց մերոց , հոզմք մերմե-
7 ցին զմեզ՝ : Եւ ոչ ոք իցէ որ կարգայցէ զանուն քո , [7]եւ ոչ որ յիշիցէ առնասցան առնել զքեզ՝ . դի դարձուցեր
զերեսս քո ի մէնջ , եւ [8]մատնեցեր զմեզ
8 վասն մեղաց մերոց : Եւ արդ , Տէր , Հայր մեր դու ես . մեք կաւ , եւ դու
Ստեղծիչ մեր , եւ գործք ձեռաց քոց
9 ամենեքեան մեք . Մի բարկանար մեզ Տէր , յոյժ , եւ մի՛ [9]ի յաւիտեան յիշեր
զմեզս մեր. եւ արդ հայեաց , Տէր , զի ժո-
10 ղովուրդ քո [10]ամենայն Եւ քաղաք սրբութեան քո Սիան եղեւ աւերակ . իրրեւ
զանապատ եղեւ Երուսաղէմ , յանէծս
11 մատնեցաւ . Տունն սրբութեան մերոյ , եւ փառքն զոր օրհնեցին հարքն մեր՝
եղեն՝ հրձիգ , եւ ամենայն փառաւո-
12 րութիւն մեր կործանեցաւ : Եւ ի վերայ ամենայնի այսորիկ անսա՞ս , Տէր ,
եւ լռեցեր եւ խոնա՞րհ արարեր զմեզ
մինչեւ յոյժ :

Գլ . ԿԵ

1 [11]Յայնմի եղէ այնոցիկ՝ որ զինէն ոչ հարցանէին , գտայ այնոցիկ որ զիս ոչ
ինդրէին . ասացի՝ Աւասիկ [12]եմ , ցազգն
2 յայն որ զանուն իմ ոչ կարդացին : Զօր հանապազ ձեռեցի զձեռն իմ առ ժողո-
վուրդն անհնազան՝ եւ հակառակող՝ , որ
գնային զճանապարհն որ ոչ էր բարւոք ,
3 այլ զնեա [13]մեղացն իւրեանց : Ժողովուրդս այս որ բարկացուցանէր զիս ա-
ռաջի իմ հանապազ . զոնէին ի պար-
տէզս իւրեանց , եւ արկանէին խունկս
[14]յաղիւս սեպս իւրեանց դիւացն՝որք չէին
4 ի յիշատակս իւրեանց : Եւ՝ յայրս կոզմանանալ ննջէին [15]վասն երազ տեսանելոյ՝ . որք ուտէին զխոզինդն եւ զար-
պանակ [15]զոհիցն , եւ ամենայն անօրէն
5 նոցա պղծեալ էին՝ . Որք ասէին՝ Ի քոյ

---

[1] Յ Ել. գ՝ 6 [2] Ել. քո առ իս արգելաւ [3] Ել. Փրկիչ մեր ի յաւիտենից անուն քո [4] Ել. Առ փոքր մի ժառանգեաց զնա ժողովուրդ քո սուրբ . հակառակորդք մեր [5] Ել. Եցէ թէ ճեղքէիր զերկինս, իջանէիր, յերեսաց քոց լերինք սասանեցան : (2) Ըստ այրելոյ հրոյ զխռիւս , հրոյ՝ որ եռացուցանէ զջուր , ի յայտնել զանուն քո թշնամեաց քոց . յերեսաց քոց ազգք զարհուրեցցին : (3) Ի գործել քո զարմանալիս որոմ՝ ոչ սկն ունէաք , իջեր , յերեսաց քոց լերինք սասանեցան : (4) Զի ի յաւիտենից ոչ լուան, եւ ոչ գիտացին ականջօք . սկն ոչ եհես Աստուած բաց ի քէն, որ գործէ ջուսուխ որոց սպասէն նմա : (5) Օգնես որոմ ուրախն է , եւ առնէ զարդարութիւն, ի ճանապարհս քո յիշէ զքեզ՝ ահա բարկացար , զի մեղաք . յամաքեցաք ի նոսա , եւ փրկեացուք :

[6] Ել. մեք. և անօրէնութիւնք մեր իրրեւ զհողմ վարեցին զմեզ [7] Ել. որ զարթուցեալ բուռն հարցէ զքէն [8] Ել. Հաչեցեր [9] Ել. Համապազ [10] Ել. ամենեքին մեք. (10) Գաղաքք սրբութեան քո եղեն անապատ. Սիան անապատ եղեւ , երուսաղէմ աւերակ . (11) Տունն սրբութեան մերոյ եւ փառաց մերոյ ուր գովեցին զքեզ հարք մեր՝ եղեւ [11] Ել. Խնդրեցայ յայնցանէ [12] Ել. եմ, աւասիկ եմ [13] Ել. խորհրդոց [14] Ել. յաղիւսեայս : (4) Որ նստէին ի գերեզմանս, եւ [15] Ել. պղծութեան յաղմանս իւրեանց

կաց յինէն, մի՛ մերձենար յիս զի սուրբ
[1]եմ։ Այս է ծուխ բարկութեան իմոյ՝
յորում հնար րորբոքեալ է զամենայն ա-
6 ւուրս։ Ահաւասիկ գրեալ է առաջի իմ.
ոչ լռեցից՝ մինչեւ [2]հատուցից ի ծոց
7 նոցա [3]զմեղս նոցա եւ զմեղս հարց
նոցա՝ ի միասին, ասէ Տէր, որք արա-
կանէին խունկս ի վերայ լերանց, եւ ի
վերայ բլրոց ուր նախատէին զիս.
հատուցից զզործս նոցա [4]յառաջագոյն
8 ի ծոց նոցա։
Այսպէս ասէ Տէր. Զոր օրինակ եթէ
գտանիցի [5]ճիւ ի մէջ ողկու գոյ՝, եւ ա-
սիցեն, Մի՛ ապականեր զդա՝ զի օրհ-
նութիւն [6]Տեառն գոյ ի դմա. այնպէս
արարից վասն ծառայից իմոց, [7]վասն
9 որոյ ոչ կորուսից զամենեսեան։ Եւ հա-
նից զզաւակ Յակոբայ եւ Յուդայ, եւ
ժառանգեսցեն զլեառն սրբութեան ի-
մոյ՝, եւ ժառանգեսցեն ընտրեալք իմ,
10 եւ ծառայք իմ բնակեսցեն ի նմա։ Եւ
[8]եղիցին յանտառին մակաղատեղ հօ-
ւսոյ՝, եւ ձորն Աքովրայ հանգիստ
անդէզոց ժողովրդեան իմոյ որ խնդրե-
11 ցինն զիս։ Այլ դուք որ [9]զիս եւ
մոռացարուք զլեառն սրբութեան ի-
մոյ, եւ կազմէիք [10]պիտոյ սեղանի եւ
12 խառնէիք խառնելիս [11]բախտից. Ես համա-
նեցից զձեզ ի սուր, եւ ամենեքեան
[12]կոտորեսջիք. զի կոչեցի զձեզ՝ եւ ոչ
լուարուք. խօսեցայ՝ եւ առանդամանե-
ցէք, եւ արարէք չար առաջի իմ, եւ
13 զոր ոչ կամէի՝ ընտրեցէք։ Վասն այ-
սորիկ այսպէս ասէ [13]Տէր. Ահաւասիկ
որ ծառայիցն ինձ՝ կերիցին, եւ դուք
քաղցիջիք. ահաւասիկ որ ծառայիցն
ինձ՝ արբցին, եւ դուք ծարաւեսջիք.
ահաւասիկ որ ծառայիցն ինձ՝ ուրախ
14 լիցին, եւ դուք ամաչեսջիք. Ահաւասիկ
որ ծառայիցն ինձ՝ ցնծասցին ուրախու-
թեամբ սրտից, եւ դուք աղաղակես-
ջիք առ ցաւս սրտից ձերոց, եւ առ
15 ընկճումն ոգւոց ձերոց ողբասջիք։ Զի

[1]Եբր. եմ քան զքեզ [2]Եբր. հատուցից, եւ հա-
տուցից [3]Եբր. Զմեղս ձեր եւ զմեղս հարցն
ձերոց [4]Եբր. զառաջինս [5]Եբր. քաղցու յող
կուզի [6]Յեբր. պ-վ-ոթ [7]Եբր. զի մի կորուսից
զամենեսեան։ (9) Եւ յարուցից զաւակ ի Յա-
կոբայ, և ի Յուդայէ՝ որ ժառանգեսցէ զլերինս
իմ [8]Եբր. եղիցի Սարոն մակաղատեղ խաչանց
[9]Եբր. զՏէր [10]Եբր. Փագայ (Բախտին) [11]Եբր.
Ձակատագրին [12]Եբր. կոտաղիք ի խողխողումն
[13]Եբր. Ադոնայի Տէր

զոզջիք զանուն ձեր [14]ի յագուրդ ընտ-
րելոց իմոց, եւ զձեզ [15]Տէր սատակես-
ցէ. եւ ծառայիցն [16]իմոյ կոչեսցի ա-
նուն նոր՝, Որ օրհնեսցի ի վերայ երկ-
րի, [17]զի օրհնեսցին զԱստուած՝ ճշմա-
րիտ. եւ որ երդնուցանն ի վերայ երկ-
րի՝ երդնուցին յԱստուած ճշմարիտ. զի
[18]մոռացան զնեղութիւնս առաջինս, եւ
ոչ եւս անկցի ի սիրտս նոցա։ Զի ե-
զիցին երկինք՝ նոր եւ երկիր նոր, եւ
ոչ եւս յիշեսցին զառաջինսն. եւ ոչ եւս
18 անկցի ի սիրտս նոցա. [18]Այլ ուրախու-
թիւն եւ ցնծութիւն գտցեն ի նմա, զոր
ես հաստատեցից՝. զի ահաւասիկ ես
առնեմ զԵրուսաղէմ ցնծութիւն, եւ
19 զժողովուրդ [19]իմ ուրախութիւն։ Եւ
ցնծացայց ի վերայ Երուսաղեմի, եւ ու-
րախ եղէց ի վերայ ժողովրդեան իմոյ,
եւ ոչ եւս լսելի՛ ի նմա ձայն լալոյ եւ
20 ձայն դուժի։ Եւ մի՛ լիցի անդ տարա-
ժամ աւուրց, եւ ծեր՝ որոյ ոչ լցեալ
զժամանակս իւր. զի [20]եղիցի կրտսեր
որդին՝ հարիւրեմեան, եւ որ հարիւրե-
մեանն մնասցի՝ մեզաւոր եւ անիծեալ
21 կոչեսցի՝։ Շինեսցեն տունս եւ բնակեսցեն,
տնկեսցեն այգիս՝ եւ ի-
22 քանք կերիցեն զպտուղ նոցա։ Եւ մի՛
եւս նոքա չշինեսցեն՝ եւ այլք բնակես-
ցեն, եւ նոքա անկեսցեն՝ եւ այլք կե-
րիցեն. ըստ աւուրց փայտին կենաց եւ
զիցին աւուրք ժողովրդեան իմոյ, [21]գործք
23 ձեռաց նոցա հնասցին։ Եւ ընտրեալք իմ
մի՛՝ եւս վաստակեսցին ընդունայն, եւ
ոչ եւս ծնանիցին որպիս յանկծս, զի
զաւակ օրհնեալ են [22]յԱստուծոյ՝ եւ
24 ծնունդք նոցա ընդ նոսա։ Եւ եղիցի՝
մինչչեւ կարդացեալ լցէ նոքա՝ [23]ես
լուայց նոցա, եւ մինչդեռ խօսիցին, ա-
25 նայից՝ թէ Զինչ խնդրէք՝։ Գայրի ժա-
մանակի գայլք եւ զառինք ի միասին
ճարակեսցին, եւ առիւծ իբրեւ զեզն

[14]Եբր. յերդումն [15]Եբր. իբրոց կոչեսցէ այլ անուն
[16]Եբր. օրհնեցի յԱստուած [17]Եբր. ի մոռացօնս
եղեն նեղութիւնք առաջինք եւ ծածկեցան
յաչաց իմոց։ (17) Զի ահաւասիկ ես առնեմ
երկինս [18]Եբր. վասն այսորիկ ուրախ լերուք
եւ ցնծացէք հանապազ բդ. որ ես առնեմ
[19]Եբր. նորա [20]Եբր. մեռցի մանուկն որդի
հարիւրեմեան, եւ մեզաւորն որդի հարիւրեմ-
եան՝ անիծեալ լիցի [21]Եբր. եւ գործս ձե-
ռաց իւրեանց հնացուսցեն ընտրեալք իմ։(23)Մի՛
[22]Եբր. Տեառն [23]Եբր. ասց պատասխանի,
եւ մինչդեռ խօսիցին, լուայց

յարդ կերիցէ, եւ օձ գետոզ իբրեւ զհաց կերիցէ. մի՛ մեղիցեն եւ մի՛ վնասեսցեն ի լերին սրբութեան իմոյ, ասէ Տէր։

Գլ. ԿԶ

1 Այսպէս ասէ Տէր. Երկինք աթոռ իմ են, եւ երկիր պատուանդան ոտից իմոց. որպիսի՞ տուն չինիցէք ինձ, ասէ Տէր, կամ որպիսի՞ ինչ իցէ այն տեղի
2 հանգստեան իմոյ. Զի զայս ամենայն ձեռն իմ արար, եւ [1]իմ է՝ ամենայն, ասէ Տէր. եւ ես յո՞ հայեցայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս, եւ որ դողայ ի բանից իմոց։
3 Բայց [2]անօրէնն որ մատուցանէ ինձ եղն պատարագ՝ այնպէս է, որպէս թէ հարկանիցէ ոք զկատուին մարդոյ. եւ որ մատուցանէ զոչխար պատարագ՝ այնպէս է, որպէս թէ զշուն ոք մորթիցէ. եւ որ մատուցանէ ոք նաչին՝ այնպէս է, որպէս թէ հեղուցու ոք զարիւն խոզի. եւ որ տայցէ զխնկաբուխն ի խունկս յիշատակաց՝ այնպէս է, որպէս զհայհոյիչն. եւ ինքեանք ընտրեցին զճանապարհս իւրեանց, եւ զգարշելիս իւրեանց դոր անձինք իւրեանց
4 ախորժեցին։ Եւ ես ասեմ ի ձեռն [3]զխաբէութիւնս նոցա, եւ [4]բան մեղաց նոցա հատուցից նոցա՝. զի կոչեցի զնոսա՝ եւ ոչ լուան ինձ, խօսեցայ՝ եւ ոչ անսացին. եւ արարին չար առաջի իմ, եւ զոր ոչն կամէի ընտրեցին։
5 Լուարուք զպատգամս Տեառն որ դողայք ի բանից նորա. [5]խօսեցարուք, եղբարք մեր, ընդ առելիս ձեր եւ ընդ գարշեցուցիչս. զի անուն Տեառն փառաւորեսցի՛, եւ երեւեսցի յուրախութիւնն ձերում. եւ նոքա ամաչեսցեն։
6 Ձայն բարբառոյ ի քաղաքէ, ձայն ի տաճարէ, ձայն Տեառն որ հատուցանէ
7 զհատուցումն [6]հակառակորդաց։ Մինչչեւ իցէ յղւոյն ծնեալ՝, եւ մինչչեւ հասեալ իցէն ցաւք երկանց, [2]ապրեւ-
8 ցաւ եւ՝ ծնաւ արու։ Ո՞ լուաւ, ո՞ եւ տես այսպիսի ինչ, եթէ երկինաց երկիր ի միում աւուր, եւ ծնաւ աղգ միաղոյն միանդամայն. զի երկնեաց Սիան եւ ծնաւ
9 զմանկունս իւր։ Ես [7]հատու քիզ զայսպէս զայդ, եւ դու ոչ յիշեցեր զիս, ասէ Տէր. ո՞չ ապաքէն զամուլն եւ զծնողականն
10 ես արարի՛, ասէ Աստուած քո։ Ուրախ [8]լեր, Երուսաղէմ, եւ ժողովեցարուք առնել ուրախ զդմա՛. ամենեքեան որք սիրէք զդա, խնդացէք եւ ուրախ լերուք ի միասին որ նստիք ի սուգ վասն դո-
11 րա. Զի դիմիցէք եւ յագիցիք ի սեանց մխիթարութեան դորա, եւ կչռատպինդ վայելիցէք [9]ի զարսանէ փառաց դորա։
12 Զի այսպէս ասէ Տէր. Ահաւասիկ ես դարձուցանեմ ի դոսա իբրեւ զգետ զխաղաղութիւն, եւ իբրեւ զհեղեղատ յորդեալ՝ զփառս հեթանոսաց. [10]զմանկունս դոցա ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերիցեն, եւ ի վերայ ծնգաց իւրեանց
13 դգուիցեն՛։ Որպէս մայր զմանուկ իւր [11]դգուիցէ, այնպէս դգուեցից՛ զձեզ.
14 եւ յերուսաղէմ միխիթարեսջիք։ Եւ տեսջիք եւ խնդասցին սիրտք ձեր, եւ ոսկերք ձեր իբրեւ զդալարի զուարճասցին. եւ ծանիցի ձեռն Տեառն երկիւղածից իւրոց, եւ սպառնասցի [12]անհա-
15 ւատիցն։ Զի ահաւասիկ Տէր իբրեւ զհուր եկեսցէ, եւ կառք նորա իբրեւ զմրրիկ. հատուցանել սրտմտութեամբ
[13]զհատուցումն իւր, եւ բոցով հրոյ [14]զար-
16 համարհանս իւր։ Զի ի հուր [15]Տեառն դատեսցի երկիր ամենայն, եւ ի սուր նորա ամենայն մարմին.՝ բազումք եւ
17 ղիցին վիրաւորք ի Տեառնէ։
Որ սրբին եւ մաքրին ի պարտէզս [16]եւ ի սրահս իբրեւ՛, որ ուտեն միս խոզենի եւ զպարչելիան եւ զմուկնն, ի միասին սատակեսցին նոքա, ասէ Տէր։
18 Եւ ես զգործս նոցա եւ զխորհուրդս նոցա գիտեմ. գամ ժողովել զամենայն ազգս եւ զլեզուս. եկեսցեն եւ տեսցեն

---

1 Ելք. եղեւ այս 2 3Ելք. գոլոյ 3 Կամ, զաղեաս 4 Ելք. զերկեւղ նոցա ածից ի նոսա
5 Ելք. ասացին եղբարք ձեր որ ատեան զձեզ, որ մերժեն զձեզ վասն անուան իմոյ, Փառաւորեսցի Տէր 6 Ելք. հակառակորդաց իւրոց։
(7) Մինչչեւ յերկունս լեալ՝ ծնաւ

7 Ելք. որ տամ երկնել, ո՞չ տայց ծնանել, ասէ Տէր. եւ որ տամ ծնանել, փակիցե՞մ ընդ-
8 Ելք. լերուք ընդ Երուսաղեմի, եւ ցնծացէք ի նմա 9 Ելք. ի պայծառութենէ 10 Ելք. դիեսջիք, ի վերայ գրկաց բարձջիք, եւ ի վերայ ծնգաց գգուեսջիք 11 Ելք. մխիթարիցէ, այնպէս մխիթարեցից 12 Ելք. թշնամեաց իւրոց 13 Ելք. զբարկութիւն 14 Ելք. զպատնէշիս 15 Ելք. Տէր դատեսցի, եւ ի սուր՝ զամենայն մարմին, եւ 16 Ելք. զկնի միոյն որ ի միջի

19 զփառս իմ, եւ թողից ի վերայ նոցա նշան, եւ առաքիցից ի նոցանէ փրկեալս
յազգս, ի Թարսիս եւ ի Փուզ եւ ի Ղուդ
[1]եւ ի Մոսոք՝ եւ ի Թոբէլ, եւ [2]Յելլադա
եւ ի կղզիս հեռաւորս որոց չիցէ լուեալ
զանուն իմ, եւ ոչ տեսեալ զփառս
իմ. եւ պատմեսցեն զփառս իմ [3]եւ զա-
20 նուն իմ՝՝ ի մէջ ազգաց։ Եւ ածցեն
[4]զեղբարս [5]քրիստոնեայ՝՝ յամենայն ազգաց
պատարագ Տեառն, [6]հնձեալս կառօք՝
հանդերձ պալարակապ երիվարօք հովա-
նոցօք ի սուրբ քաղաքն Երուսաղէմ՝՝, ասէ Տէր, որպէս մատուցին [7]որդիքն Իսրայէլի զպատարագս [8]իւրեանց
21 [9]ազամոսիւք ի տան Տեառն։ Եւ՝՝ ի նո-
ցանէ առից ինձ ի քահանայս եւ ի Ղևե-
22 տացիս, ասէ Տէր։ Զոր օրինակ երկինք
նոր եւ երկիր նոր, զոր ես առնեմ կալ
առաջի իմ, ասէ Տէր, նոյնպէս կացցէ
23 զաւակն ձեր[10]։ Եւ եղիցի՝ ամիս յամսոյ
եւ շաբաթ ի շաբաթէ՝ եկեսցէ ամենայն
մարմին երկիր պագանել առաջի իմ [11]յն-
24 րուսաղէմ, ասէ Տէր Ամենակալ՝՝։ Եւ
ելցեն եւ տեսցեն [12]զդակեսս մարդկան
առ իս յանցուցելոց, զի որդն նոցա ոչ
վախճանեսցի, եւ հուր նոցա ոչ չիջ-
ցի, եւ եղիցին [13]ի տեսիլ ամենայն մարմնոյ։

---

[1] ԵԲԲ. յաղեղնաւորս [2] ԵԲԲ. ի Յաւան [3] ՅԵԲԲ. գ-ի-ո-ե [4] ԵԲԲ. զամենայն եղբարս ձեր [5] ԼԲԲ. յերիվարս եւ ի կառս եւ ի լկտիս եւ ի ջորիս եւ ի գրաստս երագունս ի լեառն սրբութեան իմոյ յԵրուսաղէմ

[6] ԵԲԲ. յամենից տուրբս ի տան Տեառն։ (21) Նա եւ [7] ԼԲԲ-յելին յա-ե-լ-ա-, եւ անուն ձեր [8] ԵԲԲ. ասէ Տէր [9] ԼԲԲ. զդիակունս [10] ՅԼԲԲ. ի գաբչանս

ԳԼՈՒԽՔ ԵՐԵՄԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

	Գլ.	Համ.
Սկիզբն մարգարէութեան Երեմեայ, եւ կանխասացութիւն լինելոց չարեացն Իսրայելի ի Նաբուքոդոնոսորայ։	Ա.	1
Յանդիմանութիւն կռապաշտութեանն Իսրայելի, եւ յիշատակ Աստուծոյ երախտեացն ի նոսա, եւ չարեացն զոր կրեցին. վասն զի ապաստան եղեն յԵգիպտացիան, կռոց նոցա ակարութեան յանդիմանութիւն, եւ Իսրայէլացւոցն մարգարէիւ լինելոյ ամբաստանութիւն։	Բ.	4
ՅԻսրայէլէ ամբաստանութիւն, եւ հաժմտութիւն Իսրայելի եւ Յուդայ անօրէնութեանցն, յորում յաճախագոյն գտանի քան զնա Յուդա. եւ կանխասացութիւն գերութեանց Իսրայելի՝ եթէ դառնայցէ յԱստուած. եւ ի մարգարէին իբրեւ ի ժողովրդենէն խոտովանութիւն։	Գ.	6
Վասն ելանելոյ Խաբէլացւոցն, եւ սուգ մարգարէին ի վերայ ցրման մերձ. եալ աւերածոյն. եւ Նորին իսկ աւերածոյն նկարագիր. ամբաստանութիւն ժողովրդենէն, զի ոչ ունէին զոք արգար՝ ցածուցանել զբարկութիւնն Աստուծոյ, եւ պոռնկութեանց նոցա յանդիմանութիւն։	Դ.	1
Թէ մինչեւ ի հիմն քակելոց է Երուսաղէմ ի Նաբուքոդոնոսորայ, և ելանելն Խաբելացւոցն. եւ ամբաստանութիւն կյանգգնութենէն Իսրայէլի։	Ե.	10
Զի չանացին լսել մարգարէին. եւ ամբաստանութիւն սուտ մարգարէիցն, որ խաբէին զժողովուրդն. զի Երեմիա ասէր՝ Պատերազմ յառնելոց է, եւ նոքա ասէին՝ թէ Ոչ, այլ խաղաղութիւն լինելոց է։	Ե.	20
Հրաժեշտ ի պատուիրագաց, եւ ելանել Խաբելացւոցն, եւ անդարձ մտից Հրէիցն յանդիմանութիւն։	Զ.	16
Խրատ զՅուդա գառնալ ի լաւութիւն, եւ ապաւնոյ՝ թէ ոչ դառնայցեն՝ զնոյն կրել զոր Իսրայէլ կրեաց. եւ արգելուլ զերեմիա յառնելոյ աղօթս վասն նոցա։	Է.	1
Հրաժեշտ ի զոհիցն, եւ ամբաստանութիւն չանացութեան նոցա, եւ մարգարէին լինելոյ դիւաց. եւ կանխասացութիւն գերեզմանի լինելոյ նոցա տեղւոյ կռոցն, և թողեալ եւս արժանի չլինել կոտորելոցն։ Դարձեալ վասն երից թշնամեաց եւ սգոյ մարգարէին ի վերայ չարեաց նոցա։	Է.	21
Ամբաստանութիւն զՀրէիցն իբրեւ զանթիւ փուտից սրտիւք, եւ խրատ առ ի չկռապաշտել. եւ սուգ իրրեւ ի ժողովրդենէն ի վերայ չարեացն հանդերձելոց, եւ ամբաստանութիւն Յաստուծոյ։	Թ.	23
Խրատ Իսրայելի ունկնդիր լինելոյ Աստուծոյ, եւ ամբաստանութիւն զհոգոց նոցա եւ զնոցանէ, եւ գուշակութիւն չարեացն հանդերձելոց. և արգելուլ դարձեալ զերեմիա յառնելոյ աղօթս վասն նոցա։	ԺԱ.	1
Ողբալ մարգարէն նենգեալ ի Հրէիցն յԱնաթովթի. եւ յառաջագոյն ասէ, թէ վասն այնորիկ լինելոց է նոցա սատակումն։	ԺԱ.	18
Չառնիգածն Հրամանն առնու Երեմիա թաղել և թաքուցանել, և յառաջագոյն գուշակէ թէ լցջիք և արբեսջիք չարեօք. և վասն երաշտութեան կանխաւ գուշակէ. և արգելուլ զմարգարէն յաղօթս առնելոյ վասն նոցա, և հրաժարէ Աստուած յողջակիզացն նոցա և ի պահոց. և պատնոյ սուտ մարգարէիցն չարիս. քանզի ասէին թէ Զեն հատանելոց վիշտք ժողովրդեանն։	ԺԳ.	1
Ժողովուրդն աղաչէ զԱստուած. և նա ասէ չլսել նոցա թէեւ Մովսէս և Սամուէլ բարեխօս լինիցին. այլ տալ զնոսա ի սուր, ի սով, ի ժահ և ի գերութիւն և ի պատառումն չանց։	ԺԴ.	19
Երեմիա աղօթս առնէ կրել նոցա պատիժ որ զնոսա նախատեցին. և նա (Տէր) ասէ ցնա, Եթէ հանցես զպատուականն յանարժանէ՝ իբրեւ զբերան իմ լիցիս։	ԺԵ.	10
Հրամայեն առնուլ չամուսնանալ Երեմիա, ոչ սուգ առնուլ, և ոչ յընթերս որ վասն մեռելոց լինիցի՝ հաղորդել Իսրայէլացւոցն։	ԺԶ.	1
Վասն Աստուածպղծի։	ԺԶ.	16
Վասն Քրիստոսի մարգարէութիւն։	ԺԶ.	19
Զբանս այնոցիկ որ չՀաւատային Նմա՝ թուէ մարգարէն, և լուտանի զնոսա։	ԺԷ.	14
Պատուէր տալ Հրէից պահել զշաբաթն։	ԺԷ.	19
Ի տուն բրտին առաքի մարգարէն։	ԺԸ.	1
Եթէ վճիռ տաց, ասէ Աստուած, ի վերայ թագաւորութեան բառնալ, և եթէ դառնայցեն՝ չբարձից. և եթէ վճիռ տաց ի վերայ ազգի և թագաւորութեան չլինել, և եթէ առնիցեն զչարիս՝ զղջացայց և ես ի վերայ բարեացն զոր խոստացայ առնել նոցա։ Այս գլուխ ի դէպ է Հրէից, յորմէ ասիցեն թէ Աստուած բարիս խոստացաւ նոցա. զի ապստամբեցին ի Տեառնէ		

	Գլ.	Համ.
մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, անձամբ անձանձ իւրեանց եղիցին պատճառ չարեաց որ հասին նոցա։	ԺԸ.	7
Որ ի նմանէն գովութիւնք Երկիր՝ ասէ մարգարէն, եւ յուսայ ընծայ, դի չարիս վախճանակ բարեաց հատուցին։	ԺԹ.	13
Հրաման առնու Երեմիա դնալ կաւեղէն առնուլ, եւ վկայել զչարեաց ժողովրդեանն. և թե կամեսցի ոչազ նոցա, եւ ասել՝ թէ Այսպէս խորտակեցի Երուսաղէմ, ենմուտ ի Պաւթողոյ յանձուկ արգել. եւ եւ մարգարէական Պաշխողոյ գչարիսն որ հասանելոց էին նմա։ Սրատուչ լինի մարգարէն բամբասանացն, եւ լուսայ վասն նոցա. եւ անիծանէ զօր ծննդեան իւրոյ։	ԺՔ.	1
Առաքէ Սեդեկիա արքայ ուսանել զԵրեմիայէ՝ թէ անցանիցէ՞ զնովաւ Նաբուքոդոնոսոր. եւ նա ասէ, թէ Աստուած ասէ պատերազմ ընդ Հրեայս և ընդ Սեդեկիայ արքայի. բայց եթէ կամեսցի ժողովուրդ համբ ձեռս տալ ի Նաբուքոդոնոսոր, ապրեցուսցէ զանձն իւր. և թագաւորն չկորնչիցի եթէ հեաւնայցէ ի չարեացն իւրոց, և Աստուծոյ հրամանացն անսալ կամիցի. և թէ չառնուցու յանձն կորիցէ։	ԻԱ.	1
Ընդդէմ Յովակիմայ եւ Յեքոնեայ, եւ այլոց հովուացն։	ԻԲ.	10
Մարգարէութիւն զՏճառնէ, եւ զառաջ մարգարէից ամբաստանութիւն։	ԻԳ.	5
Դիւրութիւն Յուդայ մարգարէանայ, հեշտութիւնս Մեսիոյ ժողովրդեանն Երուսաղէմի՝ հանդերձ Սեդեկիայ չարիս՝ թզղին օրինակաւ։	ԻԴ.	1
Մարգարէանայ զելանելն Նաբուքոդոնոսորայ եւ ամենայն հեթանոսաց կորուսս գաւշակէ բաժակաւն։	ԻԵ.	1
Ցառաջագոյն ասէ կարճասան Երուսաղեմի, եւ ըմպանի Երեմիա ի քահանայիցն, եւ ղերծանի ի վտանգէն։	ԻԶ.	32
Հրաման առնու մարգարէն արկանել անուր ի պարանոց իւր, եւ ասել զհրեշտական սլաքագեացն, Պատմեցեալ թագաւորին ձերոյ լինել հնազանդ Նաբուքոդոնոսորայ քանզի մահ պատանայ Աստուած այնոցիկ որ ոչ հնազանդին նմա. զնոսն թարաւ տայ եւ Սեդեկիայ եւ ժողովրդեանն եւ քահանայիցն։ Իսկ սուտ մարգարէ Անանիա՝ հակառակ Երեմիայի մարգարէի, Պատաք քահանայութեանն, ասէ, այսրէն դառնայոց են, եւ Յեքոնիա որդի Յովակիմայ՝ եղբօրորդի Սեդեկիայ. եւ խորտակեաց զանուր մարգարէին. առաքի զնոյն հետեւ Երեմիա մահ գուշակել նմա ի նմին տարւոջ որ եւ եղեւ իսկ։	ԻԷ.	1
Զարիս սուտ մարգարէիցն որ ի Բաբելոն էին մարգարէանայ յառաջագոյն, եւ ժողովրդեանն ընդ երկար ժամանակս գերութիւնն։ բայց ասկայն թէ լինելոց է դարձ ի Տճառնէ. եւ ընդ այն բարկանայր Սամեա, եւ սատակեր քահանային, թէ ընդէ՞ր ոչ արգելու զներեմիա յայնպիսի մարգարէութենէ. եւ վասն այնորիկ սպառնայ Աստուած նմա կորուսս։	ԻԹ.	1
Ապա եւ պատգամ մխիթարութիւն Իսրայէլի գուշակէ, և ժամանակն յոր ելանելոց էին ի Բաբելոնէ, այն էր պատերն, որ եւ լեզու իակ է գտանել։ Եվէ ի տօնի բազպրյակերացն եկին, ապա աւրնեմն յայս յանդիմանին Հրեայքն սուտաք. զի սրսում յայսմ վայրի բարութիւն գրեալ է լինել նոցա, տակաւին ակն ունին, եւ այն անց եւ կատարեցաւ։	Լ.	1
Վասն մանկացն որ ի Հերովդէէ կոտորելոց էին։	ԼԱ.	15
Վասն նորոյ ուխտիս մարգարէութիւն, եւ որ յայսմ վայրի շինութիւն գրեալ է քաղաքին՝ այնմ տուկաւին ակն ունին Հրեայքն, և այն վախճան առ յորժամ ելինն ի Բաբելոնէ։	ԼԱ.	21
Հրաման առնու Երեմիա գնել զգաբարկն Հօրեդրօրն իւրոյ. գնեաց և ասէ, Պաղաստս մատանեգաւ եւ հրամայեա գնել զգաբարկ։ Իսկ Աստուած ասէ ցնա, Զարիք որ հասին վասն մեղաց ժողովրդեանդ են. բայց եդիցէ ժամանակ յորմէ դարձեալ բնակեսցէ քաղաքդ։	ԼԲ.	1
Կանխաւ գուշակէ Սեդեկիայ թէ ըմբռնելոց է, և պատուհասէ զայնոսիկ որք զծառայն ազատեցին, և դարձեալ արկին ի ծառայութիւն, եւ սպառնայ թէ մեծամեծ չարիք հասանելոց են նոցա. վասն այնորիկ հրաման տայ որդւոցն Յովնադաբայ ըմպել գինի, եւ նոքա չըմպէին յանձին։	ԼԴ.	1
Հրամայեն առնու Երեմիա գրել զոր ինչ մարգարէանայ ի վերայ Իսրայէլի. զի գոնէ յայնժամ երկնչիցեն, յորմէ լսիցեն թէ չարիք ի վերայ հասանելոց են նոցա. Եւ նա պատուիրեաց Բարուքայ գրել. գրեաց և ընթերցաւ առաջի Երեմիայ. իրրեւ լսեան իշխանքն՝ պատմեցին Յովակիմայ արքայի, եւ նա առ գրիչն, կարեաց եւ այրեաց։ Հրամայեաց առ Երեմիա այլ գիր զնոյն օրինակ գրել, եւ մարգարէանայ թագաւորին չարիս վասն յանդգնութեանն։	ԼՉ.	1

	Գլ.	Համ.
Մարգարէանայ դարձեալ թէ առնլոց է Երուսաղէմ. ուներն զներեմիա եւ արկանեն ի բանտ. Հանեն անտի եւ ածեն մխանդամ առ Սեդեկիա, եւ ասէ ցնա՝ թէ Առնլոց է քաղաքս. եւ աղաչէ մխանդամ անդրէն ի բանտ չհրամայել. առին զնա իշխանքն եւ արկին ի գուբ տղմոյն. եւ հան զնա անտի Աբդամելէք։ Կոչեցաւ դարձեալ ի լմա դաւորէն, և գուշակէ նմա փրկութիւն՝ եթէ կամօք ելցէ առ թշնամիսն. ապա թէ ոչ՝ սատակումն քաղաքին, եւ նմա մեծամեծ չարիք հասցեն, իբրեւ չառ յանձն ելանել, եկն խուժադուժ Քաղդեացին եւ առ զքաղաքն Սեդեկիաւ հանդերձ. եւ երեմիայի դիւրութիւն տարերն իշխանքն Նաբուքոդոնոսորայ, զի այնպէս ունէին հրաման։	Լէ.	1
Աբդամելէքոյ խոստանայ փրկութիւն, եւ ինքն առ կամակարութիւն ի դահճապետէն՝ երթալ ուր և կամիցի. գայ առ Դոդոդիա՝ զոր կացոյց իշխան Յուդորդացն Հրէաստանի. ժողովեցան առ նա եւ Հրեայքն ցրուեալք։ Սպանանէ Իսմայէլ զԴոդոդիա, և զայլս ոմանս, եւ առնու զժողովուրդն եւ երթայ յաշխարհն Ամմնացւոց։	Լթ.	15
Իբրեւ զայն եառնս Յովնան մի յիշխանացն՝ որ էր մտերիմ բարեկամ Դոդոդեայ, ի վերայ չոգաւ, և փախըստական լինէր ուրեք միայն առնմիք Իսմայէլ. ա՛ռ զժողովուրդն իւր Յովնան եւ դարձաւ։ Ազաչեցաւ Երեմիա ի Յովնանանց՝ աղօթս մատուցանել վասն նոցա առ Աստուած. մատոյց աղօթս, և խրատ եառնոցա չերթալ յԵգիպտոս. Մահ սպառնայ, ասէ, Աստուած՝ թէ ոք անդր պանդխտ երթիցէ. եւ չանաստին։ Իբրեւ եկին մինչեւ ի Տափնաս՝ պատուէր եառ նոցա ոչ կատպաշտել. իբրեւ ընդ հակառակս ելանէին՝ գուշակ նոցա սատակումն մեծ լինել, եւ թագաւորին Եգիպտացւոց։	ԽԱ.	11
Չկորուստ Եգիպտացւոցն յառաջագոյն գուշակ, եւ զայլազգեացն եւ զՄովաբացւոց եւ զԱմմնացւոց եւ զնեզովմայեցւոց։	ԽԶ.	1
Չկորուստ Քամաքսի եւ զնեղամոյ յառաջագոյն ասէ եւ զնաբեղացւոցն, եւ զեղս Հրէից։	ԽԹ.	23
Եւ թէ զիարդ առաւ Երուսաղէմ, և զի յանարդութենէ ի պատիւ եկն Յովակիմ, որ կամաքն եառ ձեռս ի Նաբուքոդոնոսոր մարքն Հանդերձ։	ՃԲ.	1
Ողբքն Երեմիայի	Ա.	1

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ
ԵՐԵՄԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 ԲԱՆՔԱՄ [1]Աստուծոյ, որ եղեւ
ի վերայ՝ Երեմիայի Քեղկեայ, ի
քահանայից անտի՝ որ [1]բնակեալ էր՝ յԱ-
2նաթովթ յերկրին Բենիամինի. Առ որ ե-
ղեւ բան Տեառն յաւուրս Յովսեայ որդ-
ւոյ Ամմոնայ արքայի Հրէաստանի, յե-
րեքտասաներորդի ամի թագաւորու-
3թեան նորա։ Եւ եղեւ յաւուրս Յոյա-
կիմայ որդւոյ Յովսեայ արքայի Հրէաս-
տանի, մինչեւ ի վախճան մինաստանե-
րորդի ամին Սեդեկեայ որդւոյ Յովսեայ
արքայի Յուդայ՝ ցգերութիւնն Երու-
սաղեմի, յամսեանն հինգերորդի։
4 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ա-
5ռէ, Մինչչեւ սահմնակալ էր զքեզ յո-
րովայնի՝ գիտեմ զքեզ, եւ մինչչեւ ե-
լանել էիր յարգանդէ՝ սրբեցի զքեզ, մար-
գարէ ի հեթանոսս եդի զքեզ։ Եւ ա-
6սեմ, [2]Ո՛ր նոգ Տէր՝ Տէր, ահաւասիկ
խօսել իսկ ոչ գիտեմ, զի մանուկ եմ
7ես։ Եւ ասէ ցիս Տէր, Մի ասեր եթէ
մանուկ եմ ես. զի առ ամենեսեան առ
որս առաքեցից զքեզ՝ երթիցես. եւ ըստ
ամենայնի զոր միանգամ պատուիրեցից
8քեզ՝ խօսեցիս։ Մի երկնչիցես յերեսաց
նոցա. զի ընդ քեզ եմ իւրկել զքեզ,
ասէ Տէր։
9 Եւ ձգեաց Տէր զձեռն իւր առ իս եւ
մերձեցոյց ի բերան իմ, եւ ասէ ցիս,
10 Ահա եդու զբանս իմ ի բերան քո. Ա-
հա կացուցի զքեզ այսօր ի վերայ ազ-
գաց եւ թագաւորութեանց խլել եւ
րբել, կորուսանել եւ յաւակել, չինել
եւ տնկել։
11 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
Զինչ տեսանես, Երեմիա։ Եւ ասեմ,
12 Գաւազան [3]ընդուզի տեսանեմ ես։ Եւ
ասէ ցիս Տէր, Բարւոք տեսանես. զի

[1] ՅԲԲէ. պ-ի-ե-ի [2] ՆԲէ. Ա՛, ա՛, Ագոնայի [3] ՆԲէ. Նշենւոյ

զարթուցեալ եմ ես ի բանս իմ առնել
զնոսա։
13 Եւ եղեւ բան Տեառն առ իս երկրի-
նդամ եւ ասէ, Զինչ տեսանես։ Եւ
ասեմ, Կաթսայ յեռանդան տեսանեմ ես,
14 եւ երեսք նորա յերեսաց հիւսիսոյ։ Եւ
ասէ ցիս Տէր, Յերեսաց հիւսիսոյ յոր-
ըգեցին չարիք ի վերայ բնակչաց երկ-
15 րի։ Զի ահաւասիկ ես [4]միախառնեմ կո-
չեցից զամենայն թագաւորութիւնս՝
թագաւորութեանց ի հիւսիսոյ երկրէ,
ասէ Տէր. եկեսցեն եւ արկցեն զիւրա-
քանչիւր աթոռ ի վերայ մտից դրանցն
Երուսաղեմի, եւ ի վերայ ամենայն
պարսպաց նորա չուրջանակի, եւ ի վե-
րայ ամենայն քաղաքաց Հրէաստանի։
16 Եւ խօսեցայց դատաստանաւ ընդ նոսա
վասն ամենայն չարեաց իւրեանց. զի
թողին զիս եւ զոհացին աստուածոց օ-
տարաց, եւ երկիր պագին գործոց ձե-
ռաց իւրեանց։
17 Եւ դու արդեաւ զմէջ քո, արի եւ ա-
սա նոցա զամենայն զոր միանգամ պա-
տուիրեմ քեզ. մի երկնչիցես յերեսաց
նոցա, [5]եւ մի զանդիմիցես առաջի նո-
ցա, զի ընդ քեզ եմ ես ի փրկել զքեզ,
18 ասէ Տէր։ Բայց ես ահաւադիկ եդի զքեզ
այսօր իբրեւ զբազաք ամուր եւ իբրեւ
զսիւն երկաթի եւ իբրեւ զպարիսպ
պղնձի [6]ամուր՝ ամենայն թագաւորաց
Հրէաստանի եւ իշխանաց նորա եւ քա-
հանայից նորա եւ ժողովրդեան երկրին։
19 Եւ մարտիցին ընդ քեզ եւ քեզ ինչ ոչ
կարասցեն առնանել, զի ես ընդ քեզ
եմ ի փրկել զքեզ, ասէ Տէր։

ԳԼ. Բ

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,

[4] ՆԲէ. կոչեցից զամենայն առհմս [5] ՆԲէ. զի մի, յամօթ արարից զքեզ առաջի նոցա [6] ՆԲէ. ի վերայ ամենայն երկրի։

երի եւ [1]ընթերցիր յականջս արդեանն՝
2 երեսաւոյ եւ ասասցես, Այսպէս ա-
սէ Տէր. Յիշեցի զքեզ եւ զդուխ ման-
կութեան քո, եւ զսէր [2]հասարսման քո
3 ի զալն քեզ զհետ Սրբոյն Իսրայէլի. Ա-
սէ Տէր՝ Սուրբն Իսրայէլի, Տեառն է՝
սկիզբն արմտեաց նորա. առինքեան
որ ուտեն զնա՝ զղջասցին, չարիք հաս-
ցեն ի վերայ նոցա, ասէ Տէր։
4 Լուարուք զբան Տեառն, տունդ Յա-
կոբայ եւ ամենայն սպդ տանդ Իսրա-
5 յելի. Այսպէս ասէ Տէր. Զինչ վնաս
գտին յիս հարքն ձեր զի հեռացան յի-
նէն, եւ գնացին զետս անոռանաց, եւ մո-
6 ռի եղեն. Եւ ոչ ասացին՝ Ո՞ւր է Տէր
որ եհան զմեզ յերկրէն եգիպտացւոց,
եւ առաջնորդեաց մեզ յանապատին,
յանբաւ եւ յանկոխ եւ յանջուր եւ յան-
պատուղ երկրին եւ ի մտուերս մահու,
յերկիր՝ ընդ որ ոչ անց մարդ, եւ ոչ
7 բնակեաց ի նմա որդի մարդոյ. Եւ [3]առ-
բառ զմեզ ի Քերմէլ՝ ուտել զպտուղ
նորա եւ զբարութիւնս։ Եւ մտիք եւ
պղծեցէք զերկիրն իմ, եւ զժառան-
8 գութիւն իմ եպիք ի պղծութիւն։ Եւ
քահանայքն ոչ ասացին՝ Ո՞ւր է Տէր.
եւ վերակացուք օրինաց իմոց ոչ ծա-
նեան զիս, եւ հովիւքն ամպարշտեցան
յիս. եւ մարգարէքն մարգալիանային
Բահաղու, եւ զկնի անչահիցն երթա-
9 յին։ Վասն այնորիկ տակաւին դատե-
ցայց ընդ ձեզ, ասէ Տէր, եւ ընդ որ-
10 դիս որդոց ձերոց դատեցայց։ Արդ ան-
ցէք ընդ կղզիս Քիտիմացւոց եւ տե-
սէք, եւ ի Կեդար առաքեցէք եւ խե-
լամտաց եղերուք յոյժ, եւ տեսէք եթէ
11 եղեւ այսպիսի բան. Եթէ փոխեցին
ազգքն զաստուածս իւրեանց, եւ նորա
ոչ են Աստուածք. եւ ժողովուրդ իմ
փոխեաց զՓառս իւր, [4]ուսաւ ոչ օգտե-
12 ցին։ Յիմարեցարո՛ երկինք, վասն այ-
սորիկ եւ [5]սոսկացարո յոյժ, ասէ Տէր.
13 Զի երկուս չարիս գործեաց ժողովուրդ
իմ. զիս խոպան զաղբիւրս ջրոյ կենդան-
ւոյ, եւ փորեցին իւրեանց վազս, զաւերս
ծակոտս՝ որք ոչ կարիցեն ունել ջուր։
14 Մի թէ ծառայ իցէ Իսրայէլ, կամ [6]տարա՞ծ
15 Յակոբ՝ զի ելեւ յաւար. Ի վերայ նո-
ցա գոչեցին առիւծք, եւ հառչն զձայնս
իւրեանց, որ արարին զերկիրս նորա ա-
ւերակ. եւ քաղաքք նորա կործանե-
16 ցան առ ի չգոյէ բնակչաց. Եւ որդիքն
Մեմփեացւոց եւ Տափնացւոց [7]ծանեան
17 զքեզ եւ այպանեցին։ Ո՞չ ապաքէն
խողոպն զիս արար քեզ զայդ, ասէ
Տէր՝ Առաւած քո, ի ժամանակի ածե-
18 լոյն զքեզ ընդ ճանապարհն։ Եւ արդ
զինչ կայ քո եւ ճանապարհին եգիպ-
տացւոց՝ ըմպել քեզ զջուր [8]Գեհոնի,
եւ զինչ կայ քո եւ ճանապարհին Ա-
սորեստանեայց՝ ըմպել [9]զջուրն գետոց։
19 Խրատեսցէ զքեզ ապստամբութիւնդ քո,
եւ չարիք՝ քո կշտամբեսցին զքեզ. եւ
ծանիցես եւ տեսցես, թէ չար եւ դառն
է քեզ խողոպն [10]զիս, ասէ Տէր Աս-
տուած քո. եւ ոչ հաճեցայ ընդ քեզ,
20 ասէ Տէր Աստուած քո՝։ Զի յաւիտենից
խորտակեցեր զլուծն քո, եւ խզեցեր
զոլ զկապանս քո. եւ ասացեր՝ թէ Ոչ
ծառայեցից, այլ գնայից ի վերայ ամե-
նայն բլրոյ բարձանց, եւ ի ներքոյ ա-
մենայն հովանաւոր ծառոյ, եւ անդ
21 չոայլեցայր ի պոռնկութիւն։ Եւ ես
անկեայ զքեզ որպէս պազարեր ամենա-
ւրէն ճշմարիտ. զինչո՞ւ դարձար լինիր ի
22 դառնութիւն, որպէս օտարացեալ։ Եթէ
լուացից բարակաւ, եւ յաճախեսցես
քեզ ածաո, սակայն ծրդեալ կաս յա-
նիրաւութիւնս քո առաջի իմ, ասէ Տէր
23 Տէր։ Զինչո՞ւ ասիցես թէ Ոչ պղծեցայ,
եւ զետս Բահաղու ոչ գնացի. տես զճա-
նապարհս քո [11]ի գիտեզմանս, եւ ծա-
24 նիր զինչ գործեցեր։ Ընդ երեկոյս ձայն
լայոյ նորա զուժեաց ի ճանապարհս իւր.
յաճախեաց ի ջուրս անապատի. ըստ
ցանկութեան անձին իւրոյ այսպէսկ լի-
նէր. մատնեցաւ, եւ՝ ո՞ գարձուսցէ

[1] Եբր. գոչեա յականջս [2] Եբր. խօսման քո ի գալն քո զհետ իմ յանապատին, յերկրին ոչ սերմանելոյ։ (3) Սրբութիւն էր Իսրայէլ Տեառն, [3] Եբր. առեալ զձեզ յերկիր պաղարեր [4] Եբր. յանօգուտս։ (12) Յիմարեցարո՛ք, [5] Եբր. սակաւցարո՛ք, խռովեցարո՛ք

[6] Եբր. ընդ ածի՞ն [7] Եբր. խորտակեցին զկառափն քո։ (17) Ո՞չ ապաքէն զայս արարեր քեզ ի թողուլն քո զՏէր [8] Եբր. Սիովր [9] Եբր. զՆեղոս։ (19) Խրատեսցէ զքեզ չարութիւն քո, եւ անհաւատարմութիւնք [10] Եբր. զՏէր Աստուած քո, եւ զի չիք երկեղ իմ ի քեզ ասէ Ադոնայի Տէր զորութեանց [11] Եբր. ի հոտին, և ծանիր զինչ գործեցեր, անդրեւաւ արագագնաց որ խոտորէ զճանապարհս իւր։ (24) Իշավայրի ուսեալ յանապատի ըստ ցանկութեան անձին իւրոյ ծծէ զՀողին, ի ցանկութենէ իւրմէ

զնա. ամենևքեան որ ի՛նդրկեն զնա՝ ոչ աչխատասցին. ի՛ ատատապան նորա
25 զայնն զնա։ [2]Խարտ զսրտ քո ի խոտ ճանապարհէ՛, եւ զկոկորդ քո ի ծարաւոյ. եւ [3]նա ասէ Կարօղ եմ. քանզի սիրէր զօտարսահս՝ եւ երթայր զնոսա նոցա՛։
26 Որպէս ամաչեցի զող յորժամ բռնանի՛, այնպէս ամաչեցան որդիքն Իսրաէլի՛ ինքեանք եւ թագաւորք իւրեանց եւ իշխանք իւրեանց, քահանայք իւ-
27 րեանց եւ մարգարէք իւրեանց։ Ցվայտան առասպին թէ Հայր իմ ես դու, եւ քարին՝ թէ Դու ծնար զիս. եւ դարձուցին ցիս զթիկունս եւ ոչ զերեսս իւրեանց. եւ ի ժամանակի չարեացն իւրեանց ասասցեն, Արի եւ փրկեա զմեզ։
28 Եւ ո՞ւր են աստուածքն քո զոր արարեր քեզ. յարիցեն [4]եւ փրկեսցեն՝ զքեզ ի ժամանակի չարեաց քոց. զի ըստ թուոյ քաղաքացն քոց էին քեզ աստուածքն քո, Ցուդա, [5]եւ ըստ թուոյ անցից Երուսաղեմի դնէիր Բահաղաւ։
29 Արդ ընդէ՞ր [6]խօսիք ընդ իս. զի ամենեքեան դուք ամպարշտեցայք, եւ՝ ամենեքեան դուք անօրինեցայք ցիս,
30 ասէ Տէր։ Զուր հարի զորդիան ձեր, եւ խրատս [7]դուք ոչ ընկալարուք. սուր՝ եկեր զմարգարէսն ձեր, իբրեւ առեւծ
[8]աատակէր, եւ ոչ վայնուրեցարուք։
31 Լուարուք զպատգամ Տեառն. այսպէս ասէ Տէր՝. մինչ անապատ եղէ [9]ամոդ Իսրայէլի, կամ աւեր երկիր խոպանացեալ. զի՛ ասաց ժողովուրդ իմ, Անուրունչք չրչկացուք եւ առ քեզ ոչ ե-
32 կեսցուք։ Միթէ մոռացի՞ կոյս զդարդ իւր, եւ հարսն զպանչակս կամար իւր. բայց ժողովուրդ իմ մոռացաւ զիս զա-
33 ւուրս անթիւս։ [10]Զի՞նչ եւս բարի հնարեսցիս ի ճանապարհս քո խնդրել զնաչառութիւն. եւ ոչ այդպէս, այլ եւ զառ իսկ անզգամեացար սպդնել՝ զճանապարհս
34 քո։ Եւ ի ձեռս քո գտաւ արիւն անձանց անմեղաց անմեղաց. ոչ ի վիհս գտի զնոսա, այլ առ [11]ամենայն կաղ-
35 նեօք՝։ Եւ ասացեր թէ Անմեղ եմ, գարձի սրտմտութիւն նորա յինէն. ահա ատեմ եւ դատեցայց ընդ քեզ, զի ա-
36 սացեր թէ Ոչ մեղայ։ [12]Զի արհամարհեցեր յոյժ կրկնել՝ զճանապարհս քո. եւ յԵգիպտոսէ ամաչեսցիս՝ որպէս ա-
37 մաչեցեր յԱսորեստանեայսն. Զի եւ անտի եւս ձեռս ի գլուխ ելցես. զի մերժեաց Տէր զյոյսն քո, եւ ոչ եւս աջողեսցիս ինձա։

Գլ. Գ

1 [13]Եթէ արձակեսցէ այր զկին իւր, եւ դնասցէ ի նմանէ եւ լինիցի առն այլոյ, եթէ դառնալով գարձցի՞ անդրէն ի նոյն. ո՞չ ապաքէն պղծելով պղծիցի՞
[14]կինն այն. եւ դու պոռնկեցար ընդ նոմանիս բազումս, այլ գարձ առ իս, ա-
2 սէ Տէր։ Ամրարձ զաչս քո [15]յուզղուածքին եւ տես. ո՞ւր ոչ խոմաւեցար. ի ճանապարհս քո նստար դու նոցա իբրեւ [16]ազգաւ միայնացեալ թափուր՞. եւ պղծեցեր զերկիրդ պոռնկութիւնմբ
3 քով եւ չարեօք քովք։ [17]Եւ ատացար հովիւս լսացուս ի գայթակղութիւն քեզ.՝ երեսք կնոջ պոռնկի եղեն քո, անաս-
4 ւօրեցար առ ամենեսեան։ [18]Ոչ իբրեւ պատն կոչեցեր զիս հայր եւ իշխան
5 կուսութեան քո։ Միթէ յաւիտեան կայցէ, կամ ի սպառ պահեսցի՞. ահա խօսեցար եւ արարեր զայդ ամենայն չարիս եւ զօրացար։
6 Եւ ասէ ցիս Տէր յաւուրս Յովսեայ արքայի, Տեսի՞ զինչ գործեաց [19]դնաացիկն Իսրայէլի՞. գնաց առանձինն ի վերայ ամենայն լերանց բարձանց՝ եւ ի ներքոյ ամենայն անասառախիտ ծառոյ,
7 եւ անդ պոռնկեցաւ։ Եւ ասացի յետ [20]այնչափ պոռնկութեան նորա՞, Դարձ առ իս, եւ ոչ դարձաւ. եւ եղեւ զգո-

---

1 ՆԵԲ. յամենան 2ՆԵԲ. Արգել զոտն քո ի մերկութենէ 3ՆԵԲ. ասացեր, Զիր յոյս. ոչ բնաւ, զի սիրեցի զօտարսահս, եւ զնոսա երթ ասց
4 ՆԵԲ. եթէ կարօղ իցեն փրկել 5ՅՈՒՆ. գ-ի-ո-ե
8 ՆԵԲ. վիճիք ընդ իս. 7ՆԵԲ. ոչ ընկալան. սուր ձեր 8ՆԵԲ. որ ատատակէ։

(31) Ով ազգ, լուարուք զպատգամ Տեառն
9 ՆԵԲ. Իսրայելի կամ երկիր ազջամղձին. ընդէ՞ր
10 ՆԵԲ. Զի՞ է զի բարեաց զճանապարհս քո խնդրել սեր. վասն այնորիկ եւ կանանց իսկ չարաց ուսուցեր

11 Ա–Հ, ամենեսեան սատ 12 ՆԵԲ. Զի՞ յոյժ յոյժ փոխել 13 ՆԵԲ. Ասեն, եթէ 14 ՆԵԲ. երկիրն
15 ՆԵԲ. ի վեր 16 ՆԵԲ. Արաբացի յանապատի
17 ՆԵԲ. վ-ասանորոյ արգելան անձրեւք, եւ անձրեւ անապան ոչ եղեւ. իսկ 18 ՆԵԲ. Ո՞չ ապաքէն այսուհետեւ կոչեցեաս զիս, Հայր իմ. առաջնորդ մանկութեան իմոյ ես դու.(5)Միթէ ի յաւիտեան բարկանայցէ՞, կամ ի սպառ պահեսցէ՞ 19 ՆԵԲ. ապստամբն Իսրայէլ 20 ՆԵԲ. առնելոյ նորա զայս ամենայն

փութիւն նորա ուխտադրուժն Յուդա։
8 Եւ տեսի թէ յամենայնի որովք չնացաւ
[1]բնակիչն Իսրայելի՝ ըմրունեցաւ", ար-
ձակեցի զնա, եւ եառ նմա թուղթ
ապահարզանի ի ձեռս նորա. եւ ոչ զար-
հուրեցաւ ուխտադրուժն Յուդա քոյր
նորա, այլ գնաց եւ պոռնկեցաւ եւ նա։
9 Եւ եղեւ [2]յոչինչ պոռնկութիւն նորա. եւ"
չազախեր զերկիրն, զի չհայր ընդ
10 քարի եւ ընդ փայտի։ Եւ ի վերայ այսր
ամենայնի ոչ դարձաւ առ իս ուխտա-
դրուժ քոյր նորա Յուդա յամենայն սրտէ
11 իւրմէ, այլ ստութեամբ, ասէ Տէր։ Եւ
ասէ ցիս Տէր, Արդարացոյց զանձն իւր
ապստամբութիւնն Իսրայելի առ ու-
12 ուազանցութեամբն Յուդայ։ Արդ երթ
եւ ընթերցիր զպատգամս զայսոսիկ ի
կողմանս հիւսիսոյ, եւ ասասցես, Դարձ
առ իս, [3]բնակիչդ Իսրայելի", ասէ Տէր,
եւ ոչ հաստատեցից զերեսս իմ ի վերայ
ձեր, զի ողորմած եմ ես, ասէ Տէր,
եւ ոչ պահեցից ձեզ յիս յաւիտեան։
13 Բայց ծանիր զանիրաւութիւնս քո, զի
ի Տէր Աստուած քո ամպարշտեցար. եւ
տարածեցեր զճանապարհս քո օտարաց
ի ներքոյ ամենայն անտառախիտ ծա-
ռոց, եւ ձայնի իմում ոչ լսեար, ասէ
14 Տէր։ Դարձարուք առ իս, որովք հե-
ռացեալք, ասէ Տէր, զի ես տիրեցի
ձեզ. եւ առից զձեզ մի ի քաղաքէ եւ
երկուս յազգէ, եւ տարայց զձեզ ի Սիոն.
15 Եւ տացի ձեզ հովիւս ըստ սրտի իմում.
եւ հովուեալով հովուեսցեն զձեզ իմաս-
16 տութեամբ[4]։ Եւ եղիցի եթէ բազմա-
նայցեք եւ աճիցեք ի վերայ երկրի յա-
ւուրսն յայնոսիկ, ասէ Տէր, ոչ եւս ա-
սիցեն՝ Տապանակ կտակարանաց [5]Սրբոյն
Իսրայելի", եւ ոչ անկցի ի սիրտ, եւ ոչ
[6]անուանեսցի ի նմա". եւ ոչ եւս լրընդ-
17 րեսցի, եւ ոչ գործեսցի։ Ի ժամանակին
յայնմիկ կոչեսցեն զԵրուսաղէմ աթոռ
Տեառն. եւ ժողովեսցին ամենայն ազգք
յանուն Տեառն Երուսաղէմ. եւ ոչ եւս
գնասցեն զնետ խորհրդոց սրտից իւ-
18 րեանց չարաց։ Յաւուրսն յայնոսիկ [7]ժո-
ղովեսցին տունն Իսրայելի առ տունն
Յուդայ". եւ եկեսցեն ի միասին [8]ի հիւս-
իսոյ եւ յամենայն գաւառաց" յերկիրն
19 յորում ժառանգեցուցի զնոսա։ Եւ
ես ասէի, [9]Եղիցի, Տէր։ Զի" կարգեցից
զքեզ յորդիս, եւ տացի քեզ զերկիրն
ընտիր, ժառանգութիւն անուանի [10]Աս-
տուածոյ ամենակալի" ազգաց. եւ ասա-
ցի թէ Հայր կոչեսցես զիս, եւ ոչ եւս
20 դառնայցես յինէն։ Բայց որպէս անդրա-
նէ կին դաւաճան իւր, այնպէս անդրա-
նեաց զիս տունդ Իսրայելի, ասէ Տէր։
21 Ձայն [11]ի չլեռանց գուժեաց՝ լալոյ եւ
պաղատանաց որդւոցն Իսրայելի. զի
անիրաւեցան ի ճանապարհս իւրեանց
եւ մոռացան [12]զԱստուած Սաբրն" իւ-
րեանց։
22 Դարձարուք, [13]որդիք, դարձք", եւ ես
բժշկեցից [14]զբեկումն ձեր. եւ ասացին,
Ահասիկ [15]կամք, զի դու ես Տէր Աս-
23 տուած մեր։ Արդարեւ [16]սուտ իսկ էին
լերինք եւ զօրութիւնք բարձանց". բայց
ի ձեռն Տեառն Աստուծոյ մերոյ է փրկու-
24 թիւն Իսրայելի։ Եւ ամօթ մաչեաց զվաս-
տակս հարցն մերոց ի մանկութենէ [17]իւ-
րեանց, զխաշինս նոցա եւ զանդեսս,
եւ զուսաներս եւ զդստերս իւրեանց։
25 Ննջեցաք ամօթով մերով, եւ ծածկե-
ցին զմեզ անարգանք մեր. քանզի ա-
նաչի Աստուծոյ մերոյ մեղաք մեք եւ
հարքն մեր ի մանկութենէ մերմէ մինչեւ
ցայսօր. եւ ոչ լսեաք ձայնի Տեառն Աս-
տուծոյ մերոյ։

Գլ. Դ

1 Եթէ [18]դարձցի առ իս Իսրայէլ, ասէ
Տէր, դարձցի. եւ եթէ ընկեցեալ զգար-
շելիս իւր ի բերանոյ իւրմէ՝ վասն Աս-
տուծոյ Երուսաղէմի, եւ յերկնից իմոց
2 երկիցէ, Եւ երդնուցու" թէ կենդանի է
Տէր ճշմարտութեամբ եւ իրաւամբք
եւ արդարութեամբ, օրհնեսցին նովաւ
3 ազգք եւ նովաւ զովեսցին։ Զի այս-
պէս ասէ Տէր ցարտ Յուդայ եւ ցերու-
կիւղ Երուսաղէմի, Հերկեցէք ձեզ

---

[1] ՆԵՔ. ապստամբն Իսրայէլ [2] ՆԵՔ. առ ցոփու-
թեան պոռնկութեան իւրոյ [3] ՆԵՔ. ապստամբեալ
Իսրայէլ [4] ՆԵՔ. յերեսս յո-ելս, եւ Հանճարով
[5] ՆԵՔ. Տեառն [6] ՆԵՔ. յիշեսցեն զնա [7] ՆԵՔ.
երթիցէ տունն Յուդայ ընդ տանն Իսրայելի
[8] ՆԵՔ. յերկրէն հիւսիսոյ

[9] ՆԵՔ. Զիա՞րդ [10] ՆԵՔ. ի վէմ [11] ՆԵՔ. ի վերայ
բլրոց [12] ՆԵՔ. զՏէր զԱստուած [13] ՆԵՔ. որ-
դիք ապստամբք [14] ՆԵՔ. զապստամբութիւն
[15] ՆԵՔ. գամք առ քեզ [16] ՆԵՔ. ընդունայն է ի
բլրոց օգնո-ին, ամբոխ՝ ի լերանց [17] ՆԵՔ.
մերմէ [18] ՆԵՔ. դառնայցդ իցես, Իսրայէլ,
դարձ առ իս, եւ եթէ ընկեցես զգարշելիս
քո յերեսաց իմոց, մի՛ մոլորեսցիս։ (2) Եւ
երդնուցուս

հերկս, եւ մի՛ սերմանէք ի վերայ փշոց։
4 Թլփատեցարուք [1]Աստուծոյ ձերում՝, եւ թլփատեցէք զանթլփատութիւն սրտից ձերոց, արք Յուդայ եւ բնակիչք Երուսաղէմի. գուցէ ելանիցէ իբրեւ զհուր սրտմտութիւն իմ, բորբոքեալ, եւ ոչ ոք իցէ որ չիջուցանիցէ յերեսաց չար գործոց ձերոց։
5 Պոյժ առէք ի Հրէաստան, լուր լիցի յԵրուսաղէմ, եւ առացէք՝ փող հարէք ի վերայ երկրին, զաղաղակ յարձակեցէք, ասէք, ժողովեցարուք եւ մտցուք ի քաղաքս պարսպաւորս։ [2]Առէք փախերուք՝ ի Սիան, փութայարուք, մի կայք. զի ածից ես չարիս ի հիւսիսոյ եւ բեկումն մեծ։ 7 Եւ առիւծ ի մօրուց իւրմէ՝ [3]սատակիչ ազգաց՝ ելեալ է եւ ել ի տեղւոյնէ իւրմէ՝ առնել զերկիր քո աւերակ. եւ քաղաքք քո քակտեսցին առ ի չղոյէ բնակչաց։ 8 Վասն այսորիկ քրձազգած եղերուք, կսկիծացարուք, ճչեցէք. զի ոչ դարձաւ սրտմտութիւն Տեառն ի մէնջ։ 9 Եւ եղիցի յաւուր յայնմիկ, ասէ Տէր, կորիցէ սիրտ թագաւորին եւ սիրտ իշխանացն. քահանայքն յիմարեսցին եւ մարգարէքն զարմացին։
10 Եւ ասեմ, Ո՛ Տէր Տէր, խաբելով ոչ խաբեն ընդ սոսա զժողովուրդս զայն եւ զԵրուսաղէմ. զի սասկայ թէ խաղաղութիւն եղիցի ձեզ, եւ [4]հասանիցէ սուր մինչեւ ցանձինս նոցա։
11 Ի ժամանակին յայնմիկ ասասցին ցժողովուրդ զայդ եւ ցԵրուսաղէմ, Այս [5]մոլորութեան յանապատի. ճանապարհ՝ դստեր ժողովրդեան իմոյ՝ ոչ ի մաքրութիւն։ 12 Եւ ոչ ի սրբութիւն։ Ոգի լրութեան ինոցանէ եկեսցէ ինձ. այսուհետեւ ես խօսեցայց ընդ նոսա պատասխանիս իմով։
13 Ահա իբրեւ զամպ ելցէ եւ իբրեւ զմրրիկ կառք նորա, արագագոյն քան զարծուս երիվարք նորա. վայ մեզ, 14 զի չուառացաք։ Լուա ի չարեաց զերիս քո, Երուսաղէմ, զի ապրեսցիս. մինչեւ ցե՞րբ գանիցին ի քեզ խորհուրդք 15 [6]ցաւոց քոց՝։ Զի ձայն գուժկանի ի Դանայ, եւ [7]լուեալն ցաւք՝ ի լեռնէ Եփրեմ։ 16 Բերի՛ւ Ցուչ արարէք ազգաց. ահաւասիկ հնչեցուսցեն [8]Երուսաղէմ, պատմեցէք՝ եւ լուիցի։ 17 Իբրեւ պահապանք ագարակի չուրջ պատեցան զնովաւ, զի [9]անփոյթ արարեր զիս՝, ասէ Տէր։ Ձանապարհս քո եւ գնացք քո արարին քեզ զայդ առնելոյն. այդ իսկ է չարութիւն քո եւ դառնութիւն, զի հասաւ ի սրտի քումմէ։
19 Որովայն իմ, որովայն իմ ցաւէ, [10]եւ ճայեակիւքս՝ սրտի իմոյ հնձէ. սիրտ իմ զկնի, [11]եւ անձն իմ ոչ դադարեսցէ՝. զի ձայն փողոյ լուար, անձն իմ, զգոյժ պատերազմի [12]եւ զչուառութեան՝։
20 Բեկումն ի վերայ [13]բեկման, յոզաք բարձէք՝, զի չուառացաւ ամենայն երկիր. յանկարծակի [14]չուառացաւ խորանն, եւ քակտեցան փեղկք խորանիս իմոյ՝։ Մինչեւ ե՞րբ տեսանիցեմ [15]փախուստ առականս, լսիցեմ զձայն փողոյ։ Զի [16]իշխանք ժողովրդեան իմոյ՝ գիս ոչ ծանեան. զի որդիք անմիտք են, եւ ոչ հանճարեղք. իմաստունք են ի չար գործել, եւ զբարի ինչ առնել ոչ գիտացին։
23 Հայեցայ յերկիր, եւ ահա խափուր, եւ ոչ ինչ դոյր. եւ յերկինս՝ եւ ոչ էր լոյս նոցա։ 24 Տեսի զլերինս, եւ կային յերիր, եւ զամենայն բլուրս խռովեալս. 25 Հայեցայ, եւ ահա ոչ դոյր մարդ. եւ ամենայն թռչունք երկնից [17]սարսեցին։ 26 Տեսի, եւ ահա աւերակ էր Կարմեղոս՝, եւ ամենայն քաղաքք նորա [18]հրթիռք բնաց Տեառն, եւ յերեսաց բարկութեան սրտմտութեան նորա ապականեցան։
27 Այսպէս ասէ Տէր, Աւերեսցի երկիր 28 ամենայն, եւ վախճան ոչ արարից։ Ի վերայ այսր ամենայնի սուգ առցէ երկիր եւ խաւարեսցին երկինք ի վերուստ. զի խօսեցայ եւ ոչ զղջացայց, դիմեցի՛ 29 եւ ոչ դարձայց ի նմանէ։ Ի ձայնէ հնծկողաց եւ ի զրկալիր ազեղանց խուսանայ [18]ամենայն աշխարհն ամենայն, եւ սորեցին յայրս,» եւ թաքեան յանտառս, եւ ե-

---

[1] ՆԲԲ. Տեառն [2] ՆԲԲ. Առէք նշան [3] ՆԲԲ. և ապականիչ ազգաց [4] ՆԲԲ. եհաս [5] ՆԲԲ. սատիկ իբարձանց յանապատի ընդ ճանապարհ [6] ՆԲԲ. չարեաց քոց [7] ՆԲԲ. որոյ տայն լսել չարիս

[8] ՆԲԲ. պատմեցէք զԵրուսաղեմ [9] ՆԲԲ. ապստամբեցաւ յինէն [10] ՆԲԲ. չտեմնարան [11] ՆԲԲ. ոչ լռեցից [12] ՅԲԲ. դոլոռ [13] ՆԲԲ. բեկման գուժի [14] ՆԲԲ. աւերեցան խորանք իմ, վազվազակի վարագոյրք իմ [15] ՆԲԲ. դրօշս [16] ՆԲԲ. յիմար է ժողովրդիդ իմ [17] ՆԲԲ. փախուցեալ էին, (23) Տեսի, եւ անապատ լեալ էր երկիրն պղտատու [18] ՆԲԲ. քաղաքն ամենայն

լեն ի քարանձաւս , ամենայն քաղաքք
30 լքան եւ ոչ լինակէր ի նոսա մարդ ։ Եւ
ասէ , Ովսաւանայ , զի՞ գործեացիս .
եթէ կարմիր զգեցեալ , եւ զարդու ոսկ-
ւով զարդարեալ , եւ ամասցես ծարիր
յաչս քո , ի տուր են զարդարանքն քո .
միթէ նկուղ հանանիքն քո , եւ ինդրեն
31 զանձն քո ։ Զի զձայն իբրեւ զերկանց[1] անդ-
րանկածնի լուայ պէնճամինան քո . ձայն
սաստիկ Սիանի մեզկացի , եւ լքեալ զձեռս
իւր ," ասէ , " զի պատասխանի անձն
իմ ի վերայ սպանելոցն ։

Գլ. Ե

1 Ընթացարուք յայսկոյս յայնկոյս ընդ
ճանապարհս Երուսաղեմի , եւ տեսէք եւ
ծանեարուք եւ խնդրեցէք ի հրապարակս
նորա , եթէ գտանիցէք այր մի որ առ-
նիցէ իրաւունս եւ խնդրիցէ [2]հաւատս .
2 եւ եղէց նոցա քաւիչ , ասէ Տէր ։ Ե-
թէ" ասիցեն կենդանի է Տէր , թէպէտ
եւ սուտ իսկ երդնու ցուն ։
3 Տէր , [3]աչք քո ի հաւատս" . տանջեցեր
զնոսա , եւ նոցա ոչ ցաւեցաւ . վախճա-
նեցեր զնոսա , եւ ոչ կամեցան ընդուն-
նել զկրթութիւն . կարծրացուցին զերեսս իւ-
րեանց քան զվէմ , եւ ոչ կամեցան դառ-
4 նալ ։ Եւ ես ասացի , [4]Միթէ սպրծաք
իցեն , վասն այնորիկ" ոչ կարացին ի-
մանալ զճանապարհն Տեառն եւ զիրա-
5 ւունս Աստուծոյ[5] . Երթայց առ հա-
րուստսն եւ խօսեցայց ընդ նոսա , իմ
նոքա գիտացին զճանապարհ Տեառն եւ
զիրաւունս Աստուծոյ[5] . եւ նոքա աւա-
նիկ առ հասարակ խորտակեցին լուծն ,
6 եւ խզեցին զամիտեա ։ Վասն այնորիկ
հնար զնոսա առիւծ յանտառէ , եւ գայլ
[6]մինչեւ ի տունս նոցա" առատակաց գնա-
ա . զարմեաւ ինձ ի վերայ քաղաքաց
նոցա , եւ ամենեքեան որ ելանիցեն ի
նոցանէ՝ առնիցին գէշ . զի յաճախեցին
զամարաչաւելիւնս իւրեանց , զօրացան
յաւազաւամբելիւնս իւրեանց ։
7 Որո՞վք այսուքիւք հաչասցայց ընդ քեզ .
որդիքն քո ինդրին զիս , եւ երդնուին ի

չաստուածսն . յագեցուցի զնոսա՝ եւ չնա-
յին , եւ ի պառնկանոցս օթևևանս առ-
8 նէին ։ Զիք [7]մաուակաճանձք եղեն" , իւ-
րաքանչիւր ի կին ընկերի իւրոյ վրնջէին ։
9 Միթէ ի վերայ այսր ամենայնի ոչ առ-
նիցեմ այցելութիւն , ասէ Տէր , կամ յազ-
գէ այսպիսւոյ ոչ ինդրիցէ վրէժ անձն իմ ։
10 Ելէք ի մարակոցս նորա եւ կոտծա-
նեցէք . բայց վախճան մի առնիցէք .
[8]խոզէք զհիմունս նորա՝ զի Տեառն են" ։
11 Զի արհամարհելով արհամարհեցին զիս
տունն Իսրայէլի եւ տունն Յուդայ , ա-
12 սէ Տէր . Սատկեցին Տեառն իբրեւ ոչ
ասեն՝ Ոչ ինչ է այդ . եւ ոչ եկիցեն ի
վերայ մեր չարիք , եւ զսուր եւ զսով
13 ոչ անցցուք ։ Մարգարէքն [9]մեր էքն ի
հողմ , եւ բան Տեառն ոչ գոյր ի նոսա .
այնպէս եղիցի նոցա ։
14 Վասն այգորիկ այսպէս ասէ Տէր Աս-
տուած Ամենակալ . Փոխանակ զի լսո-
ւեցայք զբանիդ գայդ , ահաւասիկ ես ե-
տու զբան իմ ի բերան քո՝ հաւր , եւ
զժողովուրդդ գայդ՝ վայոյ , եւ կերիցէ
15 զնոսա ։ Զի ահաւասիկ ես ածից ի վե-
րայ ձեր ազգ ի հեռաստանէ , տունդ Իս-
րայելի , ասէ Տէր , ազգ որ [10]առաջին ,
ազգ որ յաւիտենից , ազգ որոյ ոչ լսի-
ցես զլեզուս նորա , եւ ոչ խնամայցես
16 զլսոցս նորա ։ Կապարճք նորա իբրեւ
զկերակմանս բաց են . ամենեքեան զօրա-
17 որք ։ Եւ կերիցեն զնաւսն ձեր եւ զհաց
[11]եւ կերիցեն զուսաւերս ձեր եւ զդստերս" ,
եւ կերիցեն զոչխար եւ զարջառ ձեր ,
եւ կերիցեն զայգիս եւ զթզենիս ձեր եւ
զձիթենիս . եւ [9]կասեցցեն զամուր ա-
մուր քաղաքս ձեր յոր դուքն պանծա-
18 ցեալ էք՝ սրով սատակեացին ։ Եւ ես
զիրդի յաւուր յայնմիկ , ասէ Տէր [9]Աս-
տուած քո" , ոչ արարիմ զձեզ ի վախ-
19 ճան ։ Եւ եղիցի յորժամ ասիցէք՝ Վասն
էր արար Տէր Աստուած մեր մեզ զայս
ամենայն . ասիցես ցնոսա , Փոխանակ զի
թողէք զիս եւ ծառայեցէք աստուածոց
օտարաց յերկրի ձերում , նոյնպէս ծառա-
յեսջիք օտարաց յերկրի՝ որ ոչ ձեր իցէ ։
20 Պատմեցէք զայդ ի տուն Յակոբայ ,
եւ լսելի լիցի ի տուն Յուդայ , եւ ա-
21 սացէք , Լսեարուք զայս , ժողովուրդ յի-

---

[1] Ներ. ծննդականի լուծ , դանձկութիւն ան դրբանկածնի , զձայն գաւեր Սիոնի որ հա-ուաչէ , և բացեալ զձեռս իւր՝ սուր ։ [2] Ներ. զձշմարտութիւն , և խնայեցից քաղաքին ։ (2) Եւ եթէ [3] Ներ. աչ ապաքէն աչք քո ի ճշմար-տութիւն [4] Ներ. Միգուցէ ապրած են նոքա յիմարք են , զի [5] Ներ. տեառնէն յաստուծոյ , իբրեւ զնոցա [6] Ներ. անտապատի , կամ , երեկոյին [7] Ներ. առ բացեալ ի առաւօտս [8] Ներ. բար-ձէք զպարիսպս նորա , զի չեն Տեառն [9] Ներ. գոլոյ [10] Ներ. Հոգի [11] Ներ. որ ուտելոց էին ուստերք քո եւ գստերք քո

մար եւ անմիտ, որոյ աչք են եւ ոչ
22 տեսանին, եւ ականջք՝ եւ ոչ լսեն։ Եմ
ի յիրէն ոչ երկնչիք, ասէ Տէր, կամ
յերեսաց իմոց ոչ սասկիք. որ կար-
ծեցի զառապ ոտնման ծովու, հրամա-
յաբանական՝ եւ ոչ անցանել զնովաս.
խռովեցան՝ եւ ոչ կարացեն նանել, զա-
23 լեացն ալիք նորա՝ եւ ոչ անցանեն զնո-
վաս։ Եւ ժողովրդեանս այսորիկ եղեւ
սիրտ անհնազանդ եւ անդառնան. խիս-
24 բեցան՝ եւ անցին զնացին. եւ ոչ ա-
սացին ի սիրտ իւրեանց, Երկիցուք ի
Տեառնէ Աստուծոյ մերմէ, որ տայ մեզ
անձրեւ վաղանս եւ [1]ձմերայն, զաս
ժամանակի լրումեան հնձոյ,
25 եւ պահեսցէ զմեզ՝։ Անօրէնութիւնք [2]մեր
վրիպեցուցին [3]զայն, եւ մեզք [2]մեր մեր-
26 ժեցին զբարութիւնս [4]ի մէնջ։ Զի գտան
ի մէջ ժողովրդեան իմոյ ամպարիշտք,
[5]եւ որոգայթս իբրեւ զվարս հաւա-
ռոյ կանդնեցին ապականել զմարդիկ,
27 եւ բմբռնէին իբրեւ զորոգայթս ան-
կեալս՝ լի խնդութիւն, այնպէս լի են տունք
նոցա նենգութեամբ. վասն այսորիկ
28 սատակեցան մեծացան. Վիրացան եւ
պարարեցան, եւ անցին զառանիւք [6]ի-
մովք ի չարութիւն՝։ զատաստան ար-
դար ոչ դատեցան, զիրաւունս որբոյն
ոչ իրաւացուցին, [7]եւ զդատաստան
29 այրեացն՝ ոչ դատեցան։ Մի՞թէ ի վերայ
այսր ամենայնի ոչ տանիցեմ այցելու-
թիւն, ասէ Տէր, կամ յազգէ այնպիսւ
30 ոչ ինդրիցէ վրէժ անձն իմ։ [8]Յիս-
մարսութիւնք եւ սիրտ իրք եղեն ի վե-
31 րայ երկրի. Մարգարէք սուտ մարգա-
րէանան, եւ քահանայք [9]ծափս հարկա-
նեն նոքա՝, եւ ժողովուրդ իմ սիրեաց
զայն. եւ զինչ գործիցէք ասւ յապայ։

ԳԼ. Զ

4 [10]Զօրացարուք, որդիք Բենիամինի, [11]ի մէջ
Երուսաղեմի. փող հարէք ի Թեկուէ,
եւ ի վերայ Բեթաքարմայ տաէք նշան.
զի չարիք կարկառեալ գան ի հիւսիսոյ,
2 եւ բեկումն [12]մեծ եկեսցէ՝ Գեղեցկին
եւ փափկացելոն [13]եւ բարձցի բարձ-
3 րաթիւն քո, զուսաւ՝ Սիոնի։ Եկեսցեն
ի նա հովիւք եւ խաշինք իւրեանց, եւ
կանգնեսցեն չուրջ զնովաս պատանս
իւրեանց, եւ հովուեսցեն իւրաքանչիւր
4 [14]ձեռամբ։ Պատրաստեցարուք ի վերայ
նորա ի պատերազմ, արիք եւ եկայք ի
վերայ նորա ի միջօրէի. վայ մեզ, զի սիւն
կործանեաց, եւ [15]հասին մեզ ստուերք
5 երեկոսւոյ։ Արիք եւ եկայք գիշերի, եւ
6 ապականեսցուք [16]զհիմունս նորա։ Զի
այսպէս ասէ Տէր զօրութեանց, Զար-
դեցէք [17]զիայատակեալս նորա, արիկք ի
վերայ ներսաղեմի զօր. զի նա է քա-
ղաք ամենեւին ստուտ՝, ընտրեալն ի
7 մէջ նորա։ Զար օրինակ [18]գրատապտեանէ
զուր զկուր իւր, այնպէս եւ նա [18]գրատա-
պտեանէ զչարիս իւր. ամպարշտու-
թիւն եւ չարութիւն լսեցի ի միջի նո-
ա, յանդիման [19]իւր հանապազ. ցաւոք
8 եւ տանջանօք՝ Սրասեսցիս, Երուսա-
ղէմ, զուցէ երբեք վերացի անձն իմ ի
քէն, զուցէ երբեք արարից զքեզ անա-
պատ երկիր՝ ուր ոչ ոք երբեք բնակեսցէ։
9 Զի այսպէս ասէ Տէր զօրութեանց.
[20]կիսեցէք, կիսեցէք, ճոտքաղ արարէք՝
զմնացորդսդ Իսրայելի, [21]եւ անդրէն
կրկնեսջիք՝ որպէս կիսօղ չոհ իւր։
10 Ընդ ո՞ւմ խօսեցայց, եւ ո՞ւմ եւ
դից վկայութիւն, եւ լուիցեն. ահա-
ւադիկ անթլփատ են ականջք նոցա, եւ
ոչ կարեն լսել. ահա բան Տեառն եղեւ
նոցա ի նախատինս, եւ ոչ եւս սիրա-
11 ժեացեն զնա։ [22]Եւ ես զբարկութիւն իմ
լցի եւ այգեվի, եւ ոչ վախճանեցի զնո-
սա՝. հեղից ի վերայ ավազոյ արուա-
քուստ, եւ ի ժողովս երիտասարդաց ի
միասին. զի այր եւ կին առ հասարակ
բմբռնեսցին, ծեր՝ հանդերձ կատարե-
12 լոյն աւուրբք [23]ընկերեսցին։ Եւ բմբռնես-
ցին տունք նոցա ի ձեռս օտարաց, անդք
եւ կանայք նոցա ի միասին. զի ձգեցից

---

[1] ՆԲԳ. զանազան ի ժամանակի իւրում. զեւ թեն-
բորդս կարգեալս Հնձոց պահեցէ մեզ [2] ՆԲԳ.
ձեր [3] ՆԲԳ. զայնոսիկ [4] ՆԲԳ. ի ձէնջ [5] ՆԲԳ.
որ զարանին իբր կ՚հաւաս կծկել, լարել որո-
գայթս ըմբռնել զմարդիկ (27) Արդեա վճռակ
[6] ՆԲԳ. չարաց [7] ՆԲԳ. եւ յայոզեցան. եւ զդա
տաստան անանկին [8] ՆԲԳ. Չարմանք [9] ՆԲԳ.
իշխեն ի ձեռն նոցա [10] ՆԲԳ. Փախերուք [11] ՆԲԳ.
ի միջոյ

[12] ՆԲԳ. մեծ. [13] ՆԲԳ. նմանեցուցի զդուստր [14] ՆԲԳ.
պիւռ տեղի [15] ՆԲԳ. ձգեցան [16] ՆԲԳ. զապարանս
[17] ՆԲԳ. զծառատունկս նորա, եւ ածէք վերստա-
զեմս պատնէշ. զի նա է քաղաք պղծու-
թեան, եւ Համակ [18] ՆԲԳ. բխեցուցանէ
[19] ՆԲԳ. իմ հանապազ ցաւք եւ հարուածք։
[20] ՆԲԳ. Կիսելով կիսեցեն իբրեւ զայգի [21] ՆԲԳ.
դարձս գձեռն քո [22] ՆԲԳ. Եւ բարկութեամբ
Տեառն լի եմ, քանզեալ եմ ի համբերելոյ
[23] ՆԲԳ. գալոտ

զձեռն իմ ի վերայ բնակչաց երկրին այ-
13 նորիկ, ասէ Տէր։ Զի ի փոքունդ նո-
ցա մինչեւ ցհծծամեծս՝ ամենեքեան
[1]կատարեցին զանօրէնութիւնս, ի քա-
հանայէ մինչեւ ի սուտ մարգարէ՝ ամե-
14 նեքեան արարին սուտ իւրեանց։ Եւ բժշկին
զհարուածս զաւեր ժողովրդեան իմոյ
[2]ընդ արհամարհանս՝, եւ ասէին՝ Խա-
ղաղութիւն, խաղաղութիւն. եւ ոչ է
15 խաղաղութիւն։ Յամօթ եղեն զի [3]պա-
կասեցան. եւ ոչ որպէս ամաչեցեալք
ամաչեցին, եւ զանարգանս իւրեանց ոչ
առին ի միտ. վասն այնորիկ անկցին [4]ի
կործանուածսն իւրեանց՝, եւ ի ժամանա-
կի այցելութեան իւրեանց սասանեա-
ցին, ասէ Տէր։
16 Այսպէս ասէ Տէր. Կացէք ի ճանա-
պարհս եւ դիտեցէք, եւ հարցէք ցյա-
ւիտենական շաւղաց [5]Տեառն. եւ տե-
սէք ո՞ր է ճանապարհ լաւի, եւ գնա-
ջիք ընդ նա, եւ գտջիք [6]արքութիւն
անձանց ձերոց. եւասացին՝ Ո՛չ երթի-
17 ցուք։ Եւ կացուցի ի վերայ ձեր դէտս,
լուարուք բարբառոյ փողոյն. եւ ասեն, Ո՛չ
18 լուիցուք։ Վասն այնորիկ [7]լուան ազգք,
19 եւ որ հաւաքեն զհօտս՝ իւնոսա։ Լուր,
երկիր, ահաւադիկ ես ածից ի վերայ
ժողովրդեանդ այդորիկ չարիս [8]ըստ
պտղոյ ապաստութեանն իւրեանց՝, զի
բանից իմոց ոչ անաացին եւ զօրէնս իմ
20 մերժեցին։ Ընդէ՞ր է այդ զի [9]ծուրս ինձ
խունկս՝ ի Սաբայ, եւ կինամոմն յերկ-
րէ հեռաստանէ. ողջակէզքն ձեր չեն
ընդունելի, եւ զոհք ձեր ինձ ոչ քաղց-
21 րացան։ Վասն այդորիկ այսպէս ասէ
Տէր. Ահաւադիկ ես տայ [10]ի վերայ ժո-
ղովրդեանդ այդորիկ ախտ, եւ ախտասց-
ցին՝ ի նմին հարք եւ որդիք ի միասին,
գրացին եւ ընկեր իւր կորիցին։
22 Այսպէս ասէ Տէր. Ահաւադիկ զօր
գայ ի հիւսիսոյ, [11]ազգ մեծ. եւ թագաւորք
բազումք զարթիցին՝ ի ծագաց երկրէ,
23 Աղեղնաւորք եւ ասպազորք, ազգ ժպիրն
եւ անողորմ. ձայն նորա իբրեւ զձայն
ծովու յարուցեալ. [12]կառօք եւ երիվա-
րօք ճակատեսցեն, եւ յառաւսցի իբրեւ
դէտ՝ թագաւորեալ ի վերայ քո, դուստր
Սիոնի։
24 Լուաք զլուր նորա. եւ լքան ձեռք
մեր, նեղութիւնք կալան զմեզ իբրեւ
25 երկունք ծննդականի։ Մի՛ ելանէք յանգս,
եւ ընդ ճանապարհս մի՛ գնայք. զի սուր
26 թշնամւոյ [13]չուրջ պատեալ է՝։ Դուստր
ժողովրդեան իմոյ, քուրձ զգեցիր. մո-
խիր ապրածեա, առ զսուգ [14]սիրելւոյ,
եւ կոծեաց կոծ սղոտի. զի յանկարծակի
եկեսցէ թշնաւսութիւն ի վերայ մեր։
27 [15]Փորձիչ եաւս զքեզ ժողովրդոյ պա-
շարելոյ, եւ գիտասջիր ի փորձել զնա
28 զճանապարհս գոգաւ Սաւենեքեան անհնա-
զանդք՝ գնան կամակորութեամբ. իբ-
րեւ զպղինձ եւ զերկաթ՝ ամենեքեան
29 ապականեալք։ Պակասեցին փուքք ի
հրոյ, պակասեաց կապար. զուր աշ-
խատի արծաթագործն, [16]եւ նորա չա-
30 րիքն ոչ հալեցան՝։ Արծաթ խոտան կո-
չեցէք զնոսա, զի խոտեաց զնոսա Տէր։
[5]Լուարուք զպատգամս Տեառն, ամե-
նայն Հրէաստան։՝

Գլ. Ե

1 Պատգամն որ եղեւ առ Երեմիա ի Տեառ-
2 նէ՝ եւ ասէ, Կաց ի դրան տանն Տեառն
եւ [17]ընդերկրիր անդ զբանս զայս, եւ ա-
սասցես, Լուարուք զբան Տեառն, ա-
մենայն Հրէաստան որք մտանէք ընդ
դրունսդ ընդ այդորիկ երկիր պագանել
3 Տեառն։ Այսպէս ասէ Տէր զօրութեանց՝
Աստուած Իսրայելի. Ուղիղ արարէք
զճանապարհս ձեր եւ զդիտացս, եւ բնա-
4 կեսցուք զձեզ ի անզւօղս յայսմիկ։ Եւ
մի՛ յանձնապատասան լինիք ի բանս ստե-
ւութեան, [5]զի տաճարն ոչ օգնեսցեն ձեզ՝
որ տան՝ Տաճար Տեառն, տաճար Տեառն,
5 տաճար Տեառն է։ Եթէ ուղղելով ուղ-
դիցէք զճանապարհս ձեր եւ զդիտացս,
եւ եթէ առնելով առնիցէք իրաւունս ի
6 մէջ տան եւ ընկերի իւրոյ, Եւ զկին եւ
զորբն եւ զայրին ոչ յաղթահարիցէք,

---

[1] ԵԲԲ. զՀետ եղեն ազահութեան, և ի մարգարէ մինչեւ ի քահանայ [2] ԵԲԲ. Հարեւանցի [3] ԵԲԲ. արարին գարշելութիւն [4] ԵԲԲ. ի մէջ անկեցք [5] ՅԱԲԲ. պակաս [6] ԵԲԲ. Հանգիստ [7] ԵԲԲ. լուարուք, ազգք, եւ ծաներ՛ուք, ժողովք, որ [8] ԵԲԲ. զպտուղ խորհրդոց նոցա [9] ԵԲԲ. եկեսցէ ինձ խունկ [10] ԵԲԲ. ժողովրդեանդ այդմիկ գլորեսցին, եւ գլորեսցին [11] ԵԲԲ. եւ ազգ մեծ զարթիցէ

[12] ԵԲԲ. Հեծեալք ի նիւս երիվարաց, կազմեալք իբրեւ այր [13] ԵԲԲ. երկեւղ շուրջանակի [14] ԵԲԲ. միամորդ [15] ԵԲԲ. Պատուար եաւս զքեզ ժողովրդեան իմում և ամրութիւն, եւ գիտասցես եւ փորձեսցես զճանապարհս դոցա։ (28) Ամենեքեան նոքա ապստամբ կամակոր. գնան քաոսութեամբ [16] ԵԲԲ. զի չարք ոչ կորզեցան [17] ԵԲԲ. քարոզեա

եւ արիւն անպարտ ոչ հեղուցու՛ք ի տեղւոջդ յայդմիկ , եւ զհետ աստուածոց օ-
7 տարաց ոչ երթիցէք չարի ձերում, ինձա կեցուցից զձեզ ի տեղւոջդ յայդմիկ , յերկրի զոր եառ հարցն ձերոց յա-
8 ւիտենից մինչեւ յաւիտեան ։ Ասա ՚ի՛ զուք յանձնառաւատան ի-
9 ջէք ի բանս սուտիկան , ուստի ոչինչ օգտիցէք ։ Եւ գողանայցէք եւ սպանա-
նիցէք եւ շնայցէք եւ երդնուցուք սուտ, եւ արկանիցէք խունկս Բահաղու , եւ
երթիցէք զհետ աստուածոց օտարաց՝ զորս ոչ գիտիցէք ,
10 ասաց , ուստի եւ չար լինիցի ձեզ՚՝ , Եւ դայցէք կայցէք առաջի իմ ի տանս յայսմիկ՝ յորոյ վե-
րայ կոչեցեալ է անուն իմ. եւ ասիցէք , ՚Մերժեցաք յառնելոյ՚՝ զամենայն զար-
11 ձելիան գործսդիկ ։ Միթէ այրս աւազակա՞ց եղեւ տունդ ՚իմ՝ , յորոյ վերայ կո-
չեցեալ է անուն իմ, այդր առաջի ձեր .
12 եւ ես ահաւասիկ տեսի , ասէ Տէր ՚Զի չոգայք՚՝ ի տեղին իմ ի Սիլով , ուր բնա-
կեցուցի զանուն իմ անդ զառաջինն . եւ տեսէք զինչ արարի բնդ նա յերե-
սաց չարեաց ժողովրդեան իմոյ Իսրայելի ։
13 Եւ արդ փոխանակ դի արարէք զայդ ամենայն գործս , ասէ Տէր , եւ խօսեցայ
ընդ ձեզ ընդ առաւօտս ՚խօսելով՝ եւ ոչ լուարուք ինձ , կոչեցի զձեզ՝ եւ ոչ
14 եառուք ինձ պատասխանի , Եւ արարից ընդ տունդ ընդ այգ յորոյ վերայ կոչե-
ցեալ է անուն իմ , յոր դուք յուսացարուք , եւ ընդ տեղիդ զոր եառ ձեզ
եւ հարցն ձերոց , որպէս արարի ընդ
15 Սիլով . Եւ ընկեցից զձեզ յերեսաց իմոց , որպէս ընկեցի զեղբարս ձեր՝ զա-
մենայն զաւակն Եփրեմեան ։
16 Եւ դու մի կար յաղօթս ի վերայ ժո-
ղովրդեանդ այդորիկ , եւ մի խնդրիր ի վերայ զոցա աղօթս՝ եւ խնդրուած ,
եւ մի աղաչեր , եւ մի անկանիր առաջի իմ վասն
17 գոցա . զի ոչ լսեմ քեզ ։ Եթէ ոչ տե-
սանես զինչ գործեն գոքա ի քաղաքս Յուդայ եւ ի ճանապարհս Երուսաղեմի ։
18 Որդիքն նոցա փայտ քաղեն , եւ հարքն նոցա հրատս արկանեն , եւ կանայք նո-
ցա հայս հարկանեն , սունկ կարկան-
դակս ՚6զօրս երկնից . եւ նուի-
րեն նուէրս աստուածոց օտարաց , զի
19 բարկացուցանիցեն զիս ։ Միթէ զի՞ս բար-
կացուցանիցեն , ասէ Տէր , եւ ո՞չ զան-
ձինս , զի ամաչեցուն երեսք նոցա ։
20 Վասն այսորիկ այսպէս ասէ ՚7Տէր . Ա-
հա զբարկութիւն եւ զսրտմտութիւն իմ
հեղից ի վերայ տեղւոյդ այդորիկ , ի վե-
րայ մարդոյ եւ անասնոյ , եւ ի վերայ
փայտի պտղակի , եւ ի վերայ արդեանց
երկրի , բորբոքեսցի եւ ոչ չիջցի ։
21 Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աս-
տուած Իսրայելի . Զպղպակիզս ձեր ժո-
ղովիցէք հանդերձ պանիր ձերով , եւ
22 կերայք միս . Զի ոչ խօսեցայ ընդ հարան
ձեր , եւ ոչ պատուէր եառ նոցա յա-
ւուրն յորում հանի զնոսա յերկրէն Ե-
գիպտացւոց՝ վասն բանի ողջակիզաց եւ
23 զոհից ։ Այլ զայս բան պատուիրեցի նո-
ցա եւ ասեմ , Լուարուք ձայնի իմում ,
եւ ես եղէց ձեզ ՚Աստուած , եւ դուք
եղիջիք ինձ ի ժողովուրդ , եւ գնասջիք
յամենայն ճանապարհս իմ զոր պատուի-
24 րեցի ձեզ , զի բարի լինիցի ձեզ ։ Եւ ոչ
լուան ինձ , եւ ոչ անուագ ունկն նոցա ։
այլ գնացին ըստ ՚խորհրդոց արտից իւ-
րեանց չարաց . եւ եղեն յետս եւ ոչ յա-
25 ռաջ ։ Յօրէ յորմէ ելին հարքն ՚9նոցա
յերկրէն Եգիպտացւոց մինչեւ յայսօր ,
եւ արդ առաքեցի առ ձեզ զամենայն
ծառայս իմ զմարգարէս ի տուէ . ընդ
26 առաւօտս ՚10առաքեալ։ Եւ ոչ լուան ինձ ,
եւ ոչ անուագ ունկն նոցա . եւ խոտա-
նեցուցին զպարանոցս ՚11իւրեանց՝ առաւել
քան զհարց՚՝ իւրեանց ։
27 Եւ ասացես զնոսա զբանս զայս , եւ
ոչ լուիցեն քեզ . եւ կոչեսցես զնոսա՝
28 եւ ոչ ունկնդրեսցեն քեզ պատասխանի ։ Եւ
ասասցես առ նոսա , Այս ազգ է որ ոչ
լուան ձայնի Տեառն Աստուծոյ իւրեանց,
եւ ոչ ընկալան զկրթութիւն . ՚12սպառեալ
հատաւ , եւ բարձաւ ճշմարտութիւնն՚՝
ի բերանոյ նոցա ։
29 Կտրեա զհերս քո եւ ի բաց ընկեա ,
եւ առ զողբս ՚13ի չիմ ունս . զի խոտեաց
Տէր եւ մերժեաց զազգն ՚14որ առնէր
30 զայս՚՝ ։ Զի արարին որդիքն Յուդայ չար
առաջի իմ , ասէ Տէր . կարկեցին զգծա-
չելիան իւրեանց ի տանն յորոյ կոչեցեալ

---

[1] ՅԱԲԲ. պակաս [2] ԵԲԲ. Զերծաք առնել [3] ՅԲԲ. այդ [4] ՅԲԲ. Ասլ երթալ [5] ՅԲԲ. յառնելով [6] ՅԲԲ. տիկնոջն

[7] ՅԲԲ. Տէր ՅՀովայ [8] ՅԲԲ. խորհրդոց, զսո կամաց կորուածոյ [9] ՅԲԲ. ձեր [10] ՅԲԲ. յարուցեալ եւ առաքեալ [11] ՅԲԲ. իւրեանց. արարին չար առաւել քան զհարս [12] ՅԲԲ. կորեաւ ճշմարտութիւնն եւ հատաւ [13] ՅԲԲ. ի բարձունս [14] ՅԲԲ. ընդ որում ցասուցեալ էր

էր անուն իմ ի վերայ նորա՝ պղծել զնա։
31 Եւ չխնայեին բազում Տափեթայ, որ է ի
ձոր որդւոյն Ենոմայ, այրել զուսաներս
եւ զդստերս իւրեանց ի հուր. զոր ոչ
հրամայեցի նոցա, եւ ոչ զմտաւ ածի ի
32 սրտի իմում։ Վասն այնորիկ ահա ա-
ւուրք եկեսցեն, ասէ Տէր, եւ ոչ ևս
ասասցին Բազում Տափեթայ", եւ Ձոր
որդւոյն Ենոմայ, այլ Ձոր կոտորելոյ,
եւ թաղեսցին ի Տափեթի առ ի տեղ-
33 եոյն չքաւելոյ։ Եւ եղիցին դիակունք
ժողովրդեանդ այդորիկ ի կերակուր
թռչնոց երկնից եւ գազանաց երկրի,
34 եւ ոչ ոք լիցէ որ հալածիցէ։ Եւ բարձից
ի քաղաքացն Յուդայ եւ յանցիցն երու-
սաղէմ զձայն խրախճանութեան եւ զձայն
ցնծացելոյ, զձայն հարսին եւ զձայն
փեսայի, զի յանապատ եղիցի երկիրն։

ԳԼ. Ը

1 Ի ժամանակին յայնմիկ, ասէ Տէր, հան-
ցեն զոսկերս թագաւորացն Յուդայ եւ
զոսկերս իշխանաց նոցա, եւ զոսկերս
քահանայիցն եւ զոսկերս մարգարէից, եւ
զոսկերս բնակչացն Երուսաղէմ՝ ի գե-
2 բեզմանաց իւրեանց, եւ [2]տարածցուս-
ցեն յարեւս եւ ընդ լուսնով եւ [3]ընդ
ամենայն սեռակրաց, եւ" սիրեցին
զնոսա զօրութեանց երկնից զոր սիրեցին՝
եւ որոց ծառայեցին, եւ որոց դիմեան
գնացին, եւ յորս ապաստան լինէին, եւ
երկիր պագանէին նոցա. ոչ [4]կոծեսցին
եւ ոչ լայցեն, այլ ի նչաւակ եղիցին"
3 ի վերայ երեսաց երկրի. [5]Չի սիրովժե-
ցին զնահ եւ ոչ դիմեան. եւ զնա-
ցորդս" որ մնացեալ իցեն յազգէ անտի
չարէ, ընդ ամենայն տեղիս մնացելոցն
ուր եւ մերժեցից զնոսա անդր՝ ասէ Տէր
զօրութեանց։
4 Եւ ասասցես ցնոսա, Այսպէս ասէ
Տէր. Միթէ որ գլորին՝ ոչ յառնիցէ.
կամ որ խոտորին՝ ոչ եւս դառնայցէ։
5 Արդ ընդէ՞ր խոտորեցաւ ժողովուրդդ
այդ երուսաղէմ՝ խոտորումն մշտիւն.
[6]եւ պնդեցան կամօք իւրեանց", եւ ոչ
6 կամեցան դառնալ։ Ունկն [7]դիւք եւ լուա-
րուք, ոչ այդպէս խօսին", եւ ոչ ոք
մարդ որ դղջանայ ի չարիսն իւրոց, եւ
ասէ՝ Ընդէ՞ր արծեցի. [8]կատեաց ըն-
թացօղն չրնթացից իւրոց՝ իբրեւ ձի
ընդ փրփուր մտանել ի խնդիր իւրում"։
7 Արդ [9]արահետն յերկինս ծանեաւ ժամա-
նակ իւր, տատրակ [10]եւ ծիծառն ժողովեալք
վայրի պահեցին զժամանակս մտից իւ-
րեանց, եւ ժողովուրդ իմ ոչ ծանեաւ
8 դիրաւունս Տեառն։ Զիարդ ասիցէք՝ թէ
իմաստունք եմք, եւ օրէնք [11]Աստուծոյ
են ի մեզ. վասն այդորիկ զուր եղեւ
9 տուա վիճակին զպրացն"։ Յամօթ եղեն
իմաստունքն, զարհուրեցան եւ սար-
սեցան, դի զդան Տեառն անարգեցին.
10 զինչ իմաստութիւն իցէ ի նոսա։ Վասն
այնորիկ տաց զկանայսն նոցա այլոց, եւ
զագարակս նոցա օտար ժառանգաց. զի
ի փոքրէ մինչեւ ի մեծամեծս նոցա՝ ա-
մենայն ոք ագահէ զագահութիւն. ի մար-
գարէէ մինչեւ գքահանայն՝ ամենայն ոք
11 առնէ անկարգութիւն։ Եւ բժշկէին զվէ-
րումն զասեր ժողովրդեան իմոյ [12]ընդ ար-
համարհանս". եւ ասէին Խաղաղութիւն,
խաղաղութիւն. եւ ոչ գոյր խաղաղութիւն։
12 Ամաչեցա՞ն զի արարին զպղծութիւն.
սակայն եւ այնպէս ոչ ամաչեցին ամօթով,
եւ զգաստակառոյս ոչ առին ի միտ. վասն
այնորիկ անկցին ընդ անկեալսն, ի ժա-
մանակի այցելութեան [13]իւրեանց եւ
13 տիրապետին", ասէ Տէր։ Եւ [14]ժողովեսցին
զարդիւնս իւրեանց", ասէ Տէր. չիք
խաղող յայգիս նոցա, եւ ոչ թուզ
ի թզենիս նոցա, եւ տերեւն [15]թօմ տիւս-
ցաս. եւտու նոցա՝ եւ անց զնաքօք"։
14 Արդ մեք զի՞ նստիցեմք. այլ ժողո-
վեցարուք՝ եւ մտցուք ի քաղաքս
ամուրս, եւ [16]անդր անկցուք. զի Տէր Աս-
տուած մեր բնկէց" զմեզ, եւ արբոյց
մեզ ջուր դառնութեան, զի մեղաք[17]ա-
15 նաչի նորա։ Ժողովեցաք ի խաղաղու-
թիւն", եւ ոչ գոյր բարութիւն. ժամա-
նակի բժշկութեան՝ եւ ահա տագնապ։

---

[1] ՆԲԳ. Տափեթ [2] ՆԲԳ. տարածեսցեն գնոսա
[3] ՅՇԲԳ. դ-կ-ե-ե [4] ՆԲԳ. ժողովեսցին եւ ոչ
թաղեսցին, այլ եղիցին յաղբ [5] ՆԲԳ. Եւ ընդ-
րեսցի մահ քան զկեանս ամենայն մնացորդաց
[6] ՆԲԳ. ըմբռնեցան ի խաբս [7] ՆԲԳ. եղէ և լուայ,
ոչ խօսին ուղիղ

[8] ՆԲԳ. ամենայն որ դարձաւ ի գնացս իւր, իբրեւ
զձի որ արշաւէ ի պատերազմ [9] ՆԲԳ. ա-
րագիլ [10] ՆԲԳ. եւ խորդ եւ ծիծառն պահեցին
զժամանակ գալստեան [11] ՆԲԳ. Տեառն են ի մեզ.
արդարեւ աւասիկ ի սուտ թիւն գործէ եղէգն
ստութեան դպրաց [12] ՆԲԳ. Տարեւանդի [13] ՆԲԳ.
իւրեանց գլորեսցին [14] ՆԲԳ. ընդելով ընդեղից
գնոսա [15] ՆԲԳ. թաղշամեսցի, եւ զոր եւտու
նոցա, անցցէ ի նոցանէ [16] ՆԲԳ. անդէն լռես-
ցուք. զի Տէր Աստուած մեր լռեցոյց [17] ՆԲԳ.
Տեառն։ (15) Ա՛ն կալցք խաղաղութեան

16 Ի դանայ [1]լսելոյք զձայն երաժտութեան՝ երկիւղալոյ նորա. ի ձայնէ խրխնջելոյ հնձելոյ նորա չարժեցաւ երկիր ամենայն. եկեսցէ եւ կերիցէ զերկիր լրիւ իւրով, զքաղաքս եւ զբնակիչս նորա։
17 Քանզի ես առաքիչ արձակեմ ի ձեզ օձս կատաղիչս, յորս ոչ մատնիցին թովչութիւնք, եւ հարկանիցեն զձեզ, ասէ Տէր։
18 [2]Ընդ յանդիմանական գաւս արարից ձեզոյ
19 տարակուսելոց.՚՚ Ահա ձայն գաւժի դասուց ժողովրդեան իմոյ յերկրէ հեռաստանէ. Միթէ Տէր ոչ գայցէ ի Սիոն, կամ Թագաւոր անդ ոչ իցէ։ Ընդէր բարկացուցին զիս զրօչկովք իւրեանց եւ անառակք օտարոտովք։
20 Անցին հունձք, անց ամառն, եւ մեք ոչ փրկեցաք։
21 Ի վերայ բնկման դստեր ժողովրդեան իմոյ խորտակեցայ, խաւարեցայ [3]տարակուսանօք. յազթանարկին զիս երկիւղք
22 իրրեւ ծննդականի՚՚։ Միթէ դեղ ոչ գտցէ ի Գաղաադ, կամ բժիշկ ոչ կայցէ անդ. ընդէ՞ր ոչ եղեւ բժշկութիւն դստեր ժողովրդեան իմոյ։

Գ.Լ. Թ

1 Ո՛ տայր ղլուխ իմ ջուր, եւ դուխս իմ ազբիւրս արտասուաց, եւ լայի [4]զմահ զոհեալ զժողովրդոյս զայս՚՚ զնոսա եւ զգիշեր հնոյ զվիրաւորեալս զդստեր ժողովրդեան իմոյ։
2 Ո՛ տայր լինիմ յանապատի [5]դոյզն օթեւանս՚՚, եւ թողուլ զժողովուրդ իմ եւ գնայլ ի գացանէ. զի ամենեքեան չնան առնասարակ ժողովք արհամարհողաց։ Եւ լարկցին զլեզուս իւրեանց իրրեւ [6]զաղեղն. ստութիւնք՝ եւ ոչ հաւատք՚՚ զօրացան ի վերայ երկրի. զի ի չարեաց ի չարիս ելին, եւ զիս ոչ ծանեան, ասէ Տէր։ Իւրաքանչիւր զինուկերէք իւրմէ զդոյզ լերուք, եւ յամենայն եղբայր խարելով խաբէ, եւ ամենայն բարեկամ նենգութեամբ գնայ։ Իւրաքանչիւր զբարեկամ իւր [7]այսպիսին, եւ ճշմարտութիւն ոչ խօսին. սւսան լեզուք նոցա խօսել ստութիւն,

[1] ՆԲԳ. լաւ եղեւ վրնջիւն [2] ՆԲԳ. Սի՛ւ սփոփէի ի վերայ ցաւոց, որք իմ նուազեցան յիս։ [3] ՆԲԳ. տպշութիւն կայաւ դիս [4] ՅԱԻ. զԱԼԱ [5] ՆԲ. օթեւան ուղեւորաց [6] ՆԲԳ. զաղեղն ի ստութիւն, եւ ոչ վասն ճշմարտութեան, [7] Կամ, պատրէ

8 զրկեցին, եւ ոչ զապարեցին ժողովրդեան իմոյ վասն իմ։
6 Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց. Ահաւասիկ ես ջնասցիմ զնոսա, եւ փորձեցից զնոսա. զի՞ արարից [9]յերեսաց չարութեան՚՚ դստեր ժողովրդեան իմոյ։ [10]Նաղթաւոր խոցոտիչ լեզուք նոցա նենգութիւն, եւ՚՚ բան բերանոյ նորա ընդ ընկերի իւրում խօսի զխաղաղութիւն, եւ ի սրտի իւրում
9 [11]անկի զինամութիւն՚՚։ Միթէ ի վերայ այսոցիկ ոչ արարից այցելութիւն, ասէ Տէր, կամ յազգէ այսպիսւոյ ոչ լնկերասցէ վրէժ անձն իմ։
10 [12]Կոծ առէք ի վերայ լերանց, եւ ձայնս ի վերայ լերոյ անապատի. ազատեցէք, քանզի սրկասեցին առ ի չգոյէ մարդկան անցաւորաց, եւ ոչ լուան զձայնս ստացուածոց՚՚. ի թռչնոց երկնից մինչեւ ցանասունս [13]չմարեցան եւ՚՚ գնացին։ Եւ տայց զերուսաղէմ [14]ի կոյտս եւ ի բնակութիւն վիշապաց, եւ զքաղաքս Յուդայ եղից յաւերականոց
12 թիւն՝ առ ի չգոյէ բնակչաց։ Ո՞վ է այր իմաստուն՝ եւ ի միտ առցէ զայս, եւ առ ոմի բան բերանոյ [15]Տեառն, պատմեսցէ մեզ թէ վասն է՛ր կորեաւ երկիր, [16]լքաւ իրրեւ զանապատ առ ի չգոյէ
13 անցաւորաց։ Եւ ասէ դիս Տէր, վասն թողուին զօրէնս իմ զոր եդի առաջի նոցա, եւ ոչ լուան ձայնի
14 իմում[17]. Եւ գնացին զնոյն հաճոյից սրտից իւրեանց [18]չարաց, եւ զնոսա կռոցն՚՚ զոր ցուցին նոցա հարքն նոցա։
15 Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի. Ահաւասիկ ես ջամբեմ ժողովրդեանդ այդմիկ [19]վաղանգ, եւ արբուցանեմ զնոսա
16 ջուր գառնութեան։ Եւ ցրուեցից զնոսա ընդ ազգս զորս ոչ գիտացին զնոքա

[8] ՆԲԳ. վաստակեցան ի գործել զանօրէնութիւնս (6) Նիւթ քո ի մէջ նենգութեան, առ նենգութեան [9] ՆԲԳ. վասն [10] ՆԲԳ. Նետ մահացու լեզու նոցա, խօսի զննդութիւն. [11] ՆԲԳ. գնէ գաս [12] ՆԲԳ. վասն լերանց առից ողբ եւ կոծ, եւ վասն արօտից անապատի՝ աշխար, զի այրեցան մինչեւ չանցանել մարդոյ, եւ ոչ լսի բարբառ խաշանց [13] ՆԲԳ. խոյս տուեալ [14] ՆԲԳ. ի կոյտս [15] ՆԲԳ. Աստուծոյ [16] ՆԲԳ. այրեցաւ [17] ՆԲԳ-յԵԼ-Լ-, եւ ոչ գնացին ի նոսա [18] ՆԲԳ. եւ զկեռ Բաղհամոյ [19] ՆԲԳ. աւշնդը

եւ ոչ հարքն իւրեանց. եւ արձակեսից ի վերայ դոցա սուր, մինչեւ սատակեցից զդոսա [1]նովաւ։
17 Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Զմտաւ ածէք, եւ կոչեցէք զձայնարկուս եւ եկեսցեն, եւ առ իմաստունն կանայս ա-
18 ռաքեցէք, եւ [2]ճչեսցեն, եւ սրիսկեսցեն եւ առցեն ողբս ի վերայ [3]ձեր. եւ իջուցեն աչք [3]ձեր արտասուս, եւ
19 արտեւանունք [3]ձեր բղխեսցեն ջուր։ Զի ձայն ողբոյ զուժեաց ի Սիոնէ, Զիարդ թշուառացաք, ամաչեցաք յոյժ, զի լքաք զերկիր եւ [4]ընկեցաք զնակուխիշնս
20 մեր։ Լուարուք, կանայք, զբանս Տեառն [1]Աստուծոյ, եւ ընկալցին ականջք ձեր զբանս բերանոյ նորա. եւ ուսուսջէք դստերաց ձերոց ճայնս, եւ կին՝
21 ընկերի իւրում ողբս. Զի ել մահ ընդ պատուհանս [3]ձեր, եւ եմուտ [5]յերկիր ձեր՝, ջնջել զաղայս արտաքուստ եւ
22 զերիտասարդս ի հրապարակաց։ [6]Այսպէս ասէ Տէր. Եղիցին դիակունք մարդկան [7]նչաւակ ընդ երեսս դաչտաց [8]երկրի ձերոյ, եւ իբրեւ զխոտ՝ զնի հնձող զի. եւ ոչ ոք լցէ որ ժողովիցէ։
23 Այսպէս ասէ Տէր. Մի պարծեսցի իմաստունն յիմաստութիւն իւր, եւ մի պարծեսցի հզօրն ի զօրութիւն իւր, եւ մի պարծեսցի մեծն ի մեծութիւն իւր.
24 Այլ յայն պարծեսցի որ պարծելոյն իմանալ եւ ճանաչել զիս, թէ ես եմ Տէր, որ առնեմ զիրաւունս եւ զողորմութիւն, եւ զարդարութիւն ի վերայ երկրի. եւ ի նոսին են կամք իմ,
25 ասէ Տէր։ Ահա աւուրք եկեսցեն, ասէ Տէր, եւ արարից այլ ի վերայ ամենայն թլփատելոց յանթլփատութեան իւրեանց,
26 բնակիլ, ի վերայ Եդիպտոսի եւ ի վերայ Բաղդայ եւ ի վերայ Եգովմայ եւ ի վերայ որդւոցն Ամմոնայ եւ ի վերայ որդւոցն Մովաբու, եւ ի վերայ ամենայն յապաւելոցն զերեսօք բնակչաց անապատի. զի ամենայն ազգք անթլփատ են մարմնով, եւ ամենայն տունն Իսրայելի անթլփատ են սրտիւք իւրեանց։

ԳԼ. Ժ

1 Լուարուք զբանիդ զոր խօսեցաւ Տէր ի վերայ ձեր, տունդ Իսրայելի։
2 Այսպէս ասէ Տէր. Ըստ ճանապարհաց հեթանոսաց մի՛ ուսանիք, եւ ի նշանաց երկնից մի՛ զարհուրիք. զի [9]նոքա երկնից
3 չին յերեսաց նոցա։ Զի [1]ամենայն օրէնք հեթանոսաց սնոտիք են, վասն յանապատէ հատանել, գործք ձեռաց հիւսանից[10].
4 Ոսկի արծաթով եւ ոսկւով զարդարեալք, ուսամբք եւ բեւեռօք հաստատեցին զնոսա՝ զի ոչ չարժեսցին. [11]Արծաթ ճախարակեայ, արծաթ ի գործ արկեալ ի Թարշիշ, եւ ոսկի ոկեալ ի Մեմփեմայ. եւ ձեռն ոսկերչի գործեաց գարծ ճարտարապետաց. կապուտակ եւ ծիրանի զգեցուցանեն նոցա. եւ ոչ գնասցեն, այլ բառնալով բարձցին. եւ ոչ քայլ մի ոտին փախեսցեն, եւ ոչ ինքեանք ի կրեսլիան ամբարձցին.” մի՛ երկնչիք ի նոցանէ, զի ոչ չար առնեն, բարի իսկ ոչ գոյ ի նոսա։
6 Զիա՛ր ոք իրրեւ զքեզ, Տէր. մեծ ես, 7 եւ մեծ է անուն քո զօրութեամբ։ Ո՞ ոչ երկիւղ ի քէն, Թագաւոր ազգաց. զի քեզ իսկ վայելէ. զի յամենայն իմաստունս հեթանոսաց եւ յամենայն [12]թագաւորս նոցա գոլ է իրրեւ զքեզ։
8 Եւ միանգամայն [13]այրեսցին, եւ սատա-
9 կեսցին սիրտք անստեաց. Զի փայտ են, եւ արծաթ [1]ընտիր՝ եկեալ ի Թարշիշ, եւ ոսկի ի Սովփեմայ, գործ ճարտարապետաց [1]ամենայն, եւ ձեռաց ոսկերչաց. կապուտակ եւ ծիրանի հանդերձն նո-
10 ցա, գործ իմաստնոց ամենայն։ Այլ Տէր Աստուած ճշմարիտ է, Աստուած կենդանի, եւ Թագաւոր յաւիտենական. ի սրտմտութենէ նորա չարժեսցի երկիր, եւ ոչ հանդուրժեսցին ազգք բարկութեան նորա։ Եւ այսպէս ասասջիք
11 ցնոսա. Աստուածք որ զերկինս եւ զերկիր ոչ արարին՝ կորիցեն յերկրէ, եւ ի
12 ներքոյ երկնից այսոցիկ։ Տէր է որ արար զերկիր զօրութեամբ իւրով, եւ կանգնեաց զտիեզերս իմաստութեամբ

[1] ՅԵբբ. պ-ւ-ո՛ [2] Եբբ. եկեսցեն [3] Եբբ. մեր [4] Եբբ. ընկեցին [5] Եբբ. յապաւսնս մեր [6] Եբբ. Խօսեաց, այսպէս [7] Եբբ. իբրեւ զաղբ [8] Եբբ. եւ իբրեւ զոլոյ

[9] Եբբ. հեթանոսք [10] Եբբ. յաւելու, տապարաւ [11] Եբբ. Իբրեւ զարմանելիք կանգուն են նոքա, եւ ոչ խօսին. այլ բառնալով բարձցին, զի ոչ կարեն գնալ. [12] Եբբ. թագաւորութիւնս [13] Եբբ. յիմարեցան եւ անմտութեամբ գործեցին. ուսումն սնոտեաց փայտ իսկ է, (9) Արծաթ ծեծեալ

իւրով , եւ խորշրդով իւրով ձգեաց զեր-
13 կինս . Եւ ի տալոյ զձայն իւր՝ ընծ լսա-
մուխիւն յուրցն յերկինս . հանէ զամպս
ի ծագաց երկրէ , եւ զփայլատակումս
իւր յանձրեւս արար , հանէ զնոզմս
14 յչտեմարանաց իւրոց : Յիմարեցաւ ա-
մենայն մարդ ի գիտութենէ. ամօթ եղեն
ամենայն ոսկերչէք զրօշկովք իւրեանց .
զի սուտ ձուլեցին , եւ չիք չունչ ի նո-
15 սա : Սնոտի են եւ գործք խաղտու-
թեան . ի ժամանակի այցելութեան իւ-
16 րեանց կորիցեն : Այլ ոչ այնպիսի ինչ
է Բաժինն Յակոբայ. զի որ ամենայն զա-
մենայն՝ նա է [1]բաժին նորա՝ , եւ Իս-
րայէլ գաւազան ժառանգութեան նո-
րա . Տէր զօրութեանց անուն է նորա :
17 Ժողովիա [2]ի բացատա զկօրութիւն՝
18 քո , բնակեալդ ի մէջ [3]ընարելոց . Զի այս-
պէս ասէ Տէր . Ահաւասիկ ես քարկըն-
զոհանեմ զնակիչս երկրիդ այսմիկ [4]նե-
զութեամբ , եւ նեղեցից զնոսա զի մի
19 գտցեն : [5]Վայ ի վերայ բեկման [6]քո , զի
ցաւագին են հարուածք [7]քո . եւ ասեմ ,
Արդարեւ այդ խակ են վէրք իմ , եւ [8]ե-
20 հաս յիս : Խորանն իմ չուառացաւ , կո-
րեաւ , եւ ամենայն խարանափեղկք իմ
քակեցան . որդիք իմ եւ խաչինք իմ
ոչ ուրեք են , եւ ոչ եւս գոյ տեղի խո-
րանել իմոյ , եւ ոչ տեղի խորանափեղ-
21 կաց իմոց : Զի հովիւքն անմտացան ,
եւ զՏէր ոչ խնդրեցին . վասն այնորիկ
ոչ իմացան , եւ ամենայն [9]արօտականքն ,
22 եւ՝ ցրուեցան : Ձայն զուժի [10]եկեսցէ ,
եւ շարժումն մեծ յերկրէ հիւսիսոյ ,
կարգել զքաղաքս Յուդայ յայտնութե-
լիւն եւ ի զաղար [11]չայլամանց :
23 Գիտեմ , Տէր , զի ոչ մարդոյ է ճա-
նապարհ իւր . եւ ոչ [12]այր գնասցէ եւ
24 յաջողեսցէ զճանապարհս՝ իւր : Խրա-
տեա [13]զմեզ , Տէր , բայց իրաւունք , եւ
մի՛ ցսոմամբ . զի մի՛ սակաւացուս ա-
25 յսացես [13]զմեզ : Հեղ զբարկութիւն քո
ի վերայ հեթանոսացդ որ ոչ գիտեն զքեզ ,
եւ ի վերայ ազգաց որ զանուն քո

ոչ կարդացին . զի կերան զՅակոբ եւ
սպառեցին զնա , եւ վախճանեցին զնա ,
եւ [14]զաւրաւս նորա աւերեցին :

ԳԼ . ԺԱ

1 Բանն որ եղեւ առ Երեմիա ի Տեառնէ եւ
2 ասէ , Լուարուք զբան ուխտիս այսո-
րիկ , եւ խօսեցարուք ընդ արդ Յու-
3 դայ եւ ընդ բնակիչս Երուսաղեմի . Եւ
ասացես ցնոսա , Այսպէս ասէ Տէր Աս-
տուած Իսրայէլի . Անիծեալ լիցի մարդն
որ ոչ լսիցէ բանից ուխտիս այսորիկ ,
4 Զոր պատուիրեցի հարցն ձերոց , յա-
ւուր յորում հանի զնոսա յերկրէն Ե-
գիպտացւոց՝ ի հնոցէ երկաթեայ . եւ ա-
սեմ , Լուարուք ձայնի իմում , եւ ա-
րարէք բոլ ամենայնի զոր ինչ պա-
տուիրեմ ձեզ , եւ եղիջիք ինձ ի ժո-
ղովուրդ , եւ ես եղէց ձեզ Աստուած ,
5 Եւ հաստատեցից զերդումն իմ զոր եր-
դուայ հարցն ձերոց , տալ նոցա վեր-
կիրն որ բղխէ զմեղր եւ զկաթն , որպէս
եւ այսօր : Պատասխանի ետու եւ ա-
սեմ , Այո , Տէր , եղիցի :
6 Եւ ասէ ցիս Տէր , [15]Ընթերցիր զամենայն
զբանս զայդոսիկ ի քաղաքս Յուդայ
եւ [16]արտաքոյ Երուսաղեմի , եւ ասասցես ,
Լուարուք զպատգամ ուխտիդ այդորիկ ,
7 եւ արարէք զդոսա . Զի վկայութեամբ
եկի վկայութիւն հարցն ձերոց՝ յաւուրն
հանելոյ իմոյ զնոսա յերկրէն Եգիպ-
տացւոց մինչեւ ցայսօր . կանխեալ ընդ
առաւօտս եւ գնել վկայութիւն եւ ասել ,
8 Լուարուք ձայնի իմում . Եւ ոչ լուան ,
եւ խոտորեցուցին զականջս իւրեանց ,
եւ գնացին այր ըստ յօժարութեան սրտից
իւրեանց ի չարիս . եւ ածից ի վերայ
նոցա զամենայն բանս ուխտիս այսորիկ
զոր պատուիրեցի նոցա առնել եւ ոչ
9 արարին : Եւ ասէ ցիս Տէր , Գտաւ [17]հնձիւն
յարդս Յուդայ եւ ի բնակիչս Երուսա-
10 ղեմ . Դարձան յանխրատութիւնս հարցն
իւրեանց առաջնոց , որք ոչ կամեցան
լսել բանից իմոց . եւ ահաւադիկ եր-
թան զհետ աստուածոց օտարաց ծա-
ռայել նոցա . եւ ցրեցին տունն Իսրա-
յէլի եւ տունն Յուդայ զուխտն իմ , զոր
ուխտեցի ընդ հարս նոցա :
11 Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր . Ա-
հաւասիկ ես ածից ի վերայ զոցա չա-

[1] ՅԵՔԵ. ժողովուրդ [2] ՅԵՔԵ. յերկրէ վճռաւաս [3] ՅԵՔԵ. ամբաստեանց [4] ՅԵՔԵ. ըղձս նուագ [5] ՅԵՔԵ. Վա՛յ ինձ [6] ՅԵՔԵ. ինձ [7] ՅԵՔԵ. իմ [8] ՅԵՔԵ. տարապոյծ պիտի (20) [9] տրանն իմ կործանեցաւ , և ամենայն ապաւանդակք իմ քակեցան , որդիք իմ հանան լինին եւ ոչ գան. չիք որ կանգնիցէ այսուհետեւ վրան իմ՝ եւ զետեղեսցէ վար-գագոյս իմ՝ [9] ՅԵՔԵ. արօտականք նոցա [10] ՅԵՔԵ. ահա գայ [11] ՅԵՔԵ. վիշապաց [12] ՅԵՔԵ. առն որ գնայ՝ ուղղել զգնացս [13] ՅԵՔԵ. զիս

[14] Կամ, զրնակութիւն [15] ՅԵՔԵ. Կարդաջ [16] Կամ, ի հրապարակս [17] Կամ, գաւաճանութիւն

րիս , յորոց ոչ կարասցին ելանել . եւ ազատակեսցին առ իս, եւ ոչ լուսցի նո-
42 ցա ։ Եւ գնասցին քաղաքք Յուդայ եւ բնակիչք Երուսաղեմի , եւ ազատակեսցին առ գիան իւրեանց որոց արկանէին
43 խունկս , եւ վրկելով ոչ վրկեսցին գնասա ի ժամանակի չարեաց իւրեանց ։ Զի ըստ թուոյ քաղաքացն քոց էին գիքն
քո , Յուդա , եւ ըստ թուոյ անցից Երուսաղեմի կարդեցէք բագինս [1]եւ սեզանս ամօթոյ ," արկանել խունկս Բա-
44 հաղու ։ Եւ գու մի կար յաղօթս վասն ժողովրդեանդ այսորիկ , եւ մի ազաչեր վասն գոցա խնդրուածովք եւ պա-
պասիր . զի ոչ լսեմ ի ժամանակի յորում կարդասցին առ իս , ի ժամանակի
45 չարեաց իւրեանց ։ [2]Զի ընդ սրկիլն սասեմ՝ զի ի ներքս ի տաճարին իմում արար զարչիլիս . միթէ ապօրէք եւ միս նուիրեալ անցուցանիցին ի քէն ղչարիս քո , կամ իմ
46 այնուհանօր ապրիցիս ։" Զիմնեն զեզեցիկ վարսաւոր տնօրհամբ[3] կոչեալ Տէր գանաան քո . [4]ի ձայնէ խրխնաւթեան նոցա՝ մեծ է նեգսմխիւն ի վերայ քո ,
47 անպիտանացան ոսաք քո ։ Եւ Տէր Աստուած՝ զօրութեանց որ անկեալ զրեզ՝ խօսեցաւ ի վերայ քո չարիս փոխանակ
չարեաց տանն Իսրայէլի , եւ տանն Յուդայ . զի արարին անձամբ անձանց ի բարկացուցանել զիս , չարկանել նոցա
48 խունկս Բահաղու ։ Տէր [5]ծանուս ինձ եւ ծանեալց . յայն-
49 ժամ տեսի՝ զպօրձս նոցա ։ Ես իրիս զգասն [6]անմիսել վարեալ ի սպանդ , ոչ պիտակի իմ կինէն խորհեցան խորհուրդ
չար եւ տանն , [7]Նկայք արկցուք փայտ ի հաց նորա", եւ ջնջեսցուք գնա յերկրէն կենդանեաց , եւ անուն նորա մի-
20 եւս յիշեսցի ։ Տէր զօրութեանց , որ ընարես զիրաւունս , եւ քննես զերիկամունս եւ զսիրտս , տեսից առ ի քէն
զվրէժխնդրութիւնն առ նոսա. զի քեզ յայտնեցի զիրաւունս իմ ։

21 Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր ի վերայ արանցն Անաթովթայ որ խնդրեն զանձն քո , եւ ասեն՝ Մի մարգարէասնար [8]վասն մեր", ապա թէ ոչ՝ մեռա-
22 նիս ի ձեռաց մերոց ։ Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց . Ահա ասեմ եւ այց արարից ի վերայ նոցա . երիտասարդք նոցա սրով մեռցին , եւ
ուստերք եւ դստերք նոցա սովով վախ-
23 ճանեսցին . Եւ մնացորդք ոչ եղիցին նոցա . զի ածից չարիս ի վերայ գնակչացն Անաթովթայ յամի այցելութեան նոցա ։

ԳԼ . ԺԲ

1 Արդար ես դու , Տէր , [9]եւ մատուցից առաջի քո ազգա" . բայց խօսեցայց զիրաւունս[10]. զի է ղի ճանապարհք ամպարշտաց յաջողակ են , եւ երջանկացան ամենեքեան որ արհամարհեն զար-
2 համարհանս ։ Տնկեցեր զնոսա եւ արմատացան , [11]ծնան որպիս" եւ արարին պտուղ . մերձ ես դու , Տէր , ի բերանս
3 նոցա , եւ հեռի յերիկամանց նոցա ։ Եւ դու , Տէր , գիտես զիս , տեսեր զիս՝ եւ փորձեցեր զսիրտ իմ առաջի քո . [12]Ժողովեա գնոսա իբրեւ զոչխար ի սպան-
4 սումն ։ Մինչեւ կնքոյ սուգ ունիցի երկիր , եւ խոտ ամենայն վայրի չսաղարթասցի . ի չարեաց բնակչաց երկրին սպանանեցան անասունք եւ թռչունք . զի ասացին թէ Ոչ տեսցէ [13]Աստուած զվաճառսարկս մեր ։

5 Ապա քո ընդ հետեւանս՝ եւ լքուսցին զքեզ , զիաձով կազմիկս երիվարօք". իսկ արգ յերկիրս խաղաղութեան յուսացեալ ես , զի զարծիցես ի վերանալ Յորդանան գե-
6 տոյ ։ Քանզի եւ եղբարքն քո եւ տունն հօր քո , եւ նոքա պատկերն քեզ , եւ նոքին աղաղակեցին զկնի քո , կատեսցես ի վերայ քո . մի հաւատար նոցա [14]զի խօսեցին զքէն չարութիւն ։"

7 Լքի զտուն իմ , թողի զժառանգութիւն իմ , տուի զսիրելին անձին իմոյ
8 ի ձեռս թշնամանաց իւրոց ։ Եղեւ ժա-

---

[1]Եբբ. ամօթոյ, սեզանս [2]Եբբ. Զի՞ կայ սիրելոյ իմոյ եւ տան իմոյ, զի արար գարշելիս ընդ բազումս . եւ միս սրբութեան անց զքեզ , զի ընդ չարիս քո այնպէս ուրախ եղեր։ [3]Եբբ.-Եբեն յ--ելը--, պտղոյն [4]Եբբ. ի ձայն բարբառոյ մեծի եկոյց հուր ի վերայ նորա . բեկան ոսկր նորա ։ (17) Եւ Տէր [5]Եբբ. ծանոյց ինձ եւ ծանեայ. յայնժամ ցուցեր [6]Եբբ. զգօն [7]Եբբ. Կործանեսցուք զծառն հանդերձ պտղով իւրով

[8]Եբբ. յանուն Տեառն [9]Եբբ. յորժամ գատեցայց ընդ քեզ [10]Եբբ.-Եբեն յ--ելը--, առ քեզ [11]Եբբ. ածխեցին [12]Եբբ. զատո [13]Եբբ. զվախճան մեր ։

(5) Զի դու ընդ հետեւական ընթացար եւ աշխատ արարին զքեզ զիարդ մարտիցես ընդ հեծեալս [14]Եբբ. եթէ խօսեցին զքէն բարութիւն

անդամ[1]ութիւն իմ ինձ լրեւս առեալ [1]յանապատի. Եւ ի վերայ իմ զբարեաս
9 իւր, վասն այնորիկ առնոյր վնաս։ Մի՛թէ [2]որչ լսոնե՞ս" իւր ժառանգութիւն
իմ ինձ, [3]կամ անդր" չուրչ վնասուս. չրչիւ-
ցարուք ժողովեցէք զամենայն դազանս
անապատի, եւ եկեսցեն ուտել վնաս։
10 Հովիւք բազումք ապականեցին զայգի
իմ, եղծին զբաժին իմ. արարին զվի-
ճակն իմ ցանկալի յանապատ անկեալ։
11 [4]Եգաւ յապականութիւն կատարեան.
վասն իմ ապականեցաւ ապականու-
թեամբ ամենայն երկիր," զի ոչ ոք մարդ
12 որ դնէ ի սրտի։ Ընդ ամենայն ելս ա-
նապատի [5]անցին թշուառացեալք". զի
սուր Տեառն կերկեսցէ ի ծագաց մինչեւ
ի ծագս երկրի, եւ ոչ ոք խաղաղու-
13 թիւն ամենայն մարմնոյ։ [6]Յարեան սերմանեցէք, եւ փուշ հնձեսջիք. եւ վի-
ճակքն ձեր ոչ եղիցին ձեզ յօգուտ. յա-
մօթ լերուք ի պտղոց ձերոց՝ ի նա-
խատանաց առաջի Տեառն։"
14 Զի այսպէս ասէ Տէր վասն ամենայն
դրացելոցդ չարաց որ մերձենան ի ժա-
ռանգութիւնն իմ, զոր յաչխեցի ժո-
ղովրդեան իմում Իսրայէլի. Ահաւասիկ
ես կորուսից զնոսա յերկրէն նոցա,
եւ զտունն Յուդայ հանից ի մէջ նո-
15 ցա։ Եւ եղիցի յետ հանելոյն զնոսա՝
դարձայց եւ ողորմեցայց նոցա. եւ դնա-
կեցուցից զնոսա իւրաքանչիւր ի ժա-
ռանգութեան իւրում, եւ իւրաքան-
16 չիւր յերկրի նոցա։ Եւ եղիցի եթէ ու-
սանիցեն զճանապարհս ժո-
ղովրդեան իմոյ, երդնուլ յանուն իմ՝ կենդանի է Տէր, որպէս ուսուցին զժո-
ղովուրդ իմ երդնուլ ի Բահաղ, եւ չի-
17 նեսցին ի մէջ ժողովրդեան իմոյ։ Եւ
եթէ ոչ [7]դանեսցեն, չինչ ելցէ զազգն
զայն, եւ բարձից կորուստիւք, ասէ Տէր։

ԳԼ. ԺԴ

1 Այսպէս ասէ ցիս Տէր. Գնա եւ ստա-

[1] Ել։ անառաք [2] Ել։ թէ՞ւն գիշատիչ նկարէ՞ն
[3] Ել։ Թէ՞ւն գիշատի՞չ [4] Ել։ Եղեն զնա յա-
մայութիւն. ազացու ի վերայ իմ ամենայն
հող. ամենայնիւ է ամենայն երկիր. [5] Ել։
եկեն աւարառուք [6] Ել։ Աերմանեցին ցորեան,
եւ փուշ հնձեցին. աշխատ եղեն, եւ չեղեւ
նոցա յօգուտ. յամօթ լերուք ընդ արդիւնս
ձեր վասն բարկութեան սրտմտութեան Տեառն։
[7] Ել։ լուիցեն

[8] Ել։ զօսի, ՚ւյողնե՝ Ե է Ներ՚ւ [9] Ել։ Ժողո-
վուրդս այս [10] Ել։ պ-ի-ե

գիր քեզ [8]ախաճանելի կաւոյ, եւ ած
զմիջով քով. եւ ընդ ջուր մի՛ անցանի-
2 ցես։ Եւ առայց ախաճանելի ըստ բա-
3 նին Տեառն, եւ ածի զմիջով խոռվ։ Եւ
եղեւ բան Տեառն առ իս երկրին անդամ,
4 եւ ասէ, Աւա զախաճանելիդ, զոր առա-
ցար, ի միջոց քուոմիդ, եւ արի գնա յամ-
ենայնի եփրատաւ, եւ խաքուսցես զդա անդ ի
5 ծակ վիմի։ Եւ չոգայ եւ խնդրեալ գնա
յեփրատ, որպէս պատուիրեաց ինձ Տէր։
6 Եւ եղեւ յետ բազում աւուրց ասէ ցիս
Տէր, Արի գնա յամենայնի եփրատաւ, եւ առցես
անտի զախաճանելին զոր հրամայեցի քեզ
7 անդ թաքուցանել եւ գնացեալ ես եփրատ
գետաւ, փորեցի եւ առի զախաճանելին
ի տեղւոջէն ուր թաղեցի գնա անդ. եւ
ահա ապականեալ էր ախաճանելին, եւ
8 ահա չէր ինչ լմիք պիտանացու։ Եւ
9 եղեւ բան Տեառն առ իս՝ եւ ասէ, Այս-
պէս ասէ Տէր. Այսպէս ապականեցից
զհպարտութիւն Յուդայ եւ զհպարտու-
10 թիւն Երուսաղեմի։ [9]Ձքաղաքն եւ զժո-
ղովուրդն իմ՝" չար՝ որք ոչ կամին լսել
բանից իմոց, որք գնան ըստ յօժարու-
թիւն սրտից իւրեանց չարաց, եւ եր-
թան զնա առնուածոց օտարաց ծառա-
յել նոցա եւ երկիր պագանել, եղի-
ցին իբրեւ զախաճանելիդ զայդ՝ որ ոչ
11 լմիք է պիտանացու։ Զի զոր օրինակ
մածանի ախաճանելի զմիջով մարդոյ,
նոյնպէս մածուցի զինեւս զամենայն
առնդ Իսրայէլի, եւ զամենայն առնդ
Յուդայ, ասէ Տէր, լինել ինձ ժողո-
վուրդ անուանի եւ ի պարծանս եւ ի
գովեստ. եւ ոչ անասցին ինձ։
12 Եւ առասցես ժողովրդեանդ զբանս-
դամդ զայդ. Այսպէս ասէ Տէր Աստուած
Իսրայէլի. Ամենայն սիկ գինւոյ լցցի.
եւ եղիցի եթէ ասիցեն ցքեզ, Միթէ
չգիտեմք գիտելով, եթէ ամենայն
13 սիկ գինւոյ լցցի։ Եւ առասցես ցնոսա,
Այսպէս ասէ Տէր. Ահա ես լնումա զա-
մենայն բնակիչս երկրիդ այդորիկ, եւ
զիշխաւորս [10]որպիս Դաւթի որ նստին
յաթոռ նորա, եւ զքահանայս եւ զմար-
գարէսն, [10]եւ զՅուդա" եւ զամենայն
բնակիչս Երուսաղեմի սրտից գինւոյ։
14 Եւ ցրուեցից զդոսա՝ զայր եւ զորդիսայր
իւր, զնայր եւ զորդիս իւրեանց ի միա-
նին, ասէ Տէր. ոչ զխղայցայ եւ ոչ

[8] Ել։ զօսի, ՚ւյողնե՝ Ե է Ներ՚ւ [9] Ել։ Ժողո-
վուրդս այս [10] Ել։ պ-ի-ե

խնայեցից, եւ ոչ ողորմեսցայց ապականել զդոսա։
15 Լուարուք եւ ունկնդիր լերուք, եւ
16 մի հպարտանայք զի Տէր խօսեցաւ։ Տուք Տեառն Աստուծոյ ձերում փառս, մինչչեւ խաւարեալ եւ գայթակղեալ ոտից ձերոց ի վերայ խաւարին լերանց, ակն ունիցիք լուսոյ, եւ [1]անդ առնելոք մա-
17 հու, եւ գնիցէք ի խաւարի"։ Եւ եթէ ոչ լսիցէք նմա, գաղտագողի [2]լայցին անձինք ձեր յերեսաց իշխանութեանց, եւ արտասուալից իցէք արտասուօք. եւ իջուսցին աչք ձեր արտասուս, զի խոտակեսցէ հօտն Տեառն։
18 Ասացէք ցթագաւորն եւ ցտիկա-
տրան", թէ Կորացարուք եւ նստարուք, զի անկաւ ի գլխոց ձերոց պսակ փա-
19 ռաց ձերոց։ Փակեսցան քաղաքք որ ընդ հարաւակողմն, եւ ոչ ոք էր որ բա-
նայր. գերեցաւ Յուդա [3]գլխաճանեալ գերութիւն, զկատարեալն հատուցմանց։
20 Ամբարձ զաչս քո, Երուսաղէմ, եւ տես զարձակեալսն" ի հիւսիսոյ. ուր է հօտն որ տուաւ ցքեզ, խայտիկք փառաց քոց։
21 Զինչ ասացես պատասխանի ի ժամանակի յորում [4]պահանջիցեն ի քէն". զու իսկ ուսուցեր զնոսա ուսումն՝ սիրել ի վերայ քո. ո՞չ անա երկունք ունիցին
22 զքեզ իբրեւ կնոջ ծննդականի։ Եւ եթէ ասիցես ի սրտի քումմ, թէ Ընդէր պատահեաց ինձ այս. վասն բազմութեան անիրաւութեան քո՝ յայտնեցաւ ետուստ քո խայտառակեալ զկրկունս
23 քո։ Եթէ փոխեսցէ [5]Հնդիկ զմորթ իւր եւ ինձ զիսոյտուգս իւր, եւ գուք կարող լինիցիք գործել զբարիս՝ ուսեալք
24 զչարիս։ Եւ ցրուեցից զնոսա իբրեւ
25 զխոռիս հողմահարծեալ յանապատի։ Այդ է վիճակ քո եւ մասն՝ [6]չհաւանեցեր ձեզ ինձ". զի մոռացար զիս եւ յուսացար ի
26 սուտիւնս։ Եւ ես մերկասից զվեստուստ քո, եւ արկից զգլխով քո եւ վերնօք, եւ
27 երեւեսցին անարգանք քո. [7]շնութիւն եւ վրնջիւն քո, եւ օտարանային յինէն պոռնկութեամբ քով, ի բազմից եւ յանդս տեսի զգարշելիս քս։ Վայ քեզ, երուսաղէմ, զի ոչ սրբեսցիս զկնի իմ. մինչեւ ցե՞րբ իցէ քեզ այդ։"

Գլ. ԺԴ

1 Եւ եղեւ բան Տեառն առ երեմիա վասն
2 երաչտութեան անձրեւիս։ Սգա՛ Հրէաստան, եւ դրունք նորա թաւիտեալ եղեն. խաւարեցան ի վերայ երկրի՝ եւ ազա-
3 զակն երուսաղէմի բարձրացաւ։ Եւ մեծամեծք նորա առաքեցին զերիտասարդս իւրեանց ջրոյ. եկին ի չրհորս, եւ ոչ գտին ջուր, դարձուցին անօթս զամանս իւրեանց. ամաչեցին, յամօթ եղեն եւ
4 ծածկեցին զգլուխս իւրեանց։ [8]Եւ գոյժ երկրին պակասեաց", զի ոչ գոյր անձրեւ ի վերայ երկրի, յամօթ եղեն մշակք,
5 ծածկեցին զգլուխս իւրեանց։ Եղիկք ի վայրի ծնան, եւ խոզին զծնունդս, զի
6 ոչ գոյր բանջար։ Եւ ցխոք [9]ի պաշտս ծծկեցին զօդս իբրեւ վիշապս, եւ սոսկացին աչք իւրեանց, զի ոչ գոյր խոտ։
7 Եթէ մեզք մեր հակառակ կացին մեզ, գու, Տէր, արա վասն անուանդ քո. զի բազում են մեղք մեր առաջի քո. քեզ
8 մեղաք։ Ակնկալութիւնդ Իսրայելի, [10]Տէր, փրկեա զմեզ" ի ժամանակի չարեաց, ընդէր եղեր իբրեւ զպանդուխտ յերկրի, կամ իբրեւ [11]զընակ երկրի" որ
9 պատեայգ յօթևանս։ Միթէ լցեալ իբրեւ զմարդ [12]որ ննջէ", կամ իբրեւ զայր որ ոչ կարէ ապրեցուցանել. եւ գու ի միջի մերում ես, Տէր, եւ անուն քո կոչեցեալ է ի վերայ մեր. մի մոռանար զմեզ։
10 Այսպէս ասէ Տէր ժողովրդեանդ այդմիկ. Այսպէս սիրեցին չարժել զոտս իւրեանց եւ ոչ հանգչեցան. եւ [13]Աստուած ոչ հաճեցաւ ընդ նոսա. արդ յիշեսցէ զանիրաւութիւնս նոցա, եւ այց արասցէ
11 ցկ մեղաց նոցա։ Եւ ասէ ցիս Տէր, Մի կար յաղօթս վասն ժողովրդեանն այ-

---

[1] ԵԲԲ. Նա գարձուցէ զայն ի ստուեր մահու, գարձուցէ յաղջամուղջ [2] ԵԲԲ. լացցեն անձինք իմ լերեսաց հպարտութեան նոցա. եւ արտասուեսցի արտասուեսցեն եւ իջուսցեն աչք իմ արտասուս. զի վաստակի եղեւ հօտն Տեառն։ (18) Ա ա ցիս ազատարն և ցդչխոյն [3] ԵԲԲ. ազգ բռնաւորաց, գերեցաւ Համօրէն։ (20) Ամբարձէք զաչս ձեր և տեսէք զոր գոյն [4] ԵԲԲ. այց արասցէ քեզ [5] ԵԲԲ. եթովպացին [6] ԵԲԲ. սահմանեալ քեզ չինէն, ասէ Տէր

[7] ԵԲԲ. Չշնութիւն քո եւ զվրնջիւն քո, չկատարութիւն պոռնկութեան քո, զպղծութիւնն զոր գործեիր ի վերայ բլրոց և գաշտից տեսի. վայ քեզ, երուսաղէմ, մինչեւ ո՞չ սրբեսցիս. մինչեւ ցե՞րբ։ [8] ԵԲԲ. Վասն խորխորելոյ հողոյն [9] ԵԲԲ. կացին ի տեղիս բարձունս, [10] ԵԲԲ. Փրկիչ նորա [11] ԵԲԲ. զճանապարհորդ [12] ԵԲԲ. ապշեալ [13] ԵԲԲ. Տէր

12 Նորիկ իրարիս ։ Զի ԹԷ պահապին , ոչ
լուսոյ խնկրուածոյ նոցա. եւ եԹէ մա-
տուցին ողջակէզս եւ զոհս՝ ոչ համնեցայց
ընդ այն . զի սրով եւ սովով եւ մա-
13 հուամբ սպառեցից զնոսա ։ Եւ ասեմ ,
Ով , որ նա՛ Տէր Տէր , անա մարգա-
րէքն ասեն նոցա՝ ԹԷ Ոչ տեսջիք զսուր ,
եւ սով ոչ եղիցի ի միջի ձերում , զի
[1]ճշմարտութիմբն եւ խաղաղութիմբն տա-
ցի ի վերայ երկրի , եւ՝ ի տեղւոջդ յայդ-
14 միկ ։ Եւ ասէ ցիս Տէր , Սուտ մարգա-
րէանան մարգարէքն յանուն իմ . ոչ ա-
ռաքեցի զնոսա , եւ ոչ պատուիրեցի
նոցա , եւ ոչ խօսեցայ ընդ նոսա . զի
տեսիլս սուտս , եւ ըզձութիմբնս եւ
հմայս , եւ [2]վհատս սրտից իւրեանց մար-
15 գարէանան նոքա ձեզ ։ Վասն այսորիկ
այսպէս ասէ Տէր ի վերայ մարգարէիցն ,
որ մարգարէանան յանուն իմ , եւ ես
ոչ առաքեցի զնոսա [3]եւ ոչ պատուի-
րեցի նոցա՝ , որ ասեն ԹԷ Սուր եւ սով ոչ
եղիցի յերկրիս յայսմիկ . [4]յախտ ծերական
մահու , եւ՝ ի սուր եւ ի սով սպառեսցին
16 մարգարէքն այնոքիկ . Եւ ժողովուրդն
որոց նոքայն մարգարէանան , եղիցին
ընկեցեալք յանցս երուսաղեմի՝ յերեսաց
սրոյ եւ սովոյ , եւ ոչ ոք լիցի որ Ժաղիցէ
զնոսա , ինքեանք եւ կանայք իւրեանց
եւ ուստիրք եւ դստիրք նոցա . եւ
հեղից ի վերայ նոցա զչարիս իւրեանց ։
17 Եւ ասասցես զնոսա զայս բան . [5]Ի-
ջուցէք ընդ աչս ձեր՝ արտասուս ի տուէ
եւ ի զիչերի , եւ մի պակասիցին . զի
բեկմամբ մեծաւ բեկաւ կոյս դստեր
ժողովրդեան իմոյ , եւ ցաւագին հարուա-
18 ծովք յոյժ ։ ԵԹէ ելից ի դաշտ՝ անա
վիրաւորք սրոյ , եւ եԹէ մտից ի քա-
ղաք՝ անա ցաւք սովոյ . զի մարգարէ եւ
քահանայ զնոսային յերկիր զոր ոչ գիտէին ։
19 ՄիԹէ խոտելով խոտեցե՞ր զՅուդա ,
[6]կամ վերանալով վերացա՞ր անձն քո ,
ընդէ՞ր հարեր զմեզ , եւ ոչ զոյ մեր
բժշկութիմբն . ակն կալաք խաղաղու-
թեան , եւ ոչ գոյր բարութիմբն , ժա-
մանակի բժշկութեան , եւ անա խռո-
20 վութիմբն ։ Ծանեաք , Տէր , զմեղս մեր
եւ զանիրաւութիմբնս հարց մերոց . զի
21 մեղաք առաջի քո ։ [6]Դադարեա վասն
անուանդ քո , մի կորուսաներ զաթոռ
փառացդ քոյ . յիչեա , մի ցրիր զուխտն
22 քո որ ընդ մեզ ։ ՄիԹէ իցէ՞ ի կուռս
հեթանոսաց՝ որ տեղատուէ , կամ ԹԷ եր-
կինք սայցեն [7]դրութիմբն իւրեանց . ո՞չ
ապաքէն դու ես նայն Տէր Աստուած
մեր , եւ սիսկայդուք քեզ , զի դու ա-
րարեր զայս ամենայն ։

Գլ . ԺԵ

1 Եւ ասէ ցիս Տէր , ԵԹէ կայցեն Մով-
սէս եւ Սամուէլ առաջի երեսաց իմոց ,
ոչ եղիցի անձն իմ ընդ [8]նոսա . ի բաց
արձակեա զժողովուրդդ զայդ յերեսաց
2 իմոց , եւ ելցեն ։ Եւ եղիցի եԹէ ասիցեն
ցքեզ , Ո՞վ ելցուք , ասասցես ցնո-
սա , Այսպէս ասէ Տէր . Որք ի մահ՝ ի
մահ , եւ որք ի սուր՝ ի սուր , եւ որք
ի սով՝ ի սով , եւ որք ի գերութիմբն՝ ի
3 գերութիմբն ։ Եւ խնդրեցից ի նոցանէ
վրէժս չորիք օրինակօք՝ ասէ Տէր . զսուր
ի սպանանել , եւ զչունս ի պատառել ,
եւ զվռչունս երկնից եւ զգազանս երկ-
4 րի՝ յուտել եւ յապականել ։ Եւ մատ-
նեցից զնոսա ի վտանգ ամենայն թա-
գաւորութեանց երկրի , վասն Մանասէի
որդւոյ Եզեկեայ թագաւորին Յուդայ ,
եւ վասն ամենայնի զոր արար յերու-
5 սաղէմ ։ Ո՞ խնայեսցէ ի քեզ , Երուսա-
ղէմ , կամ ո՞ սրտմտեսցի ի վերայ քո ,
կամ ո՞ դարձցի հարցանել զխաղաղու-
6 թենէ քումմէ ։ Զի դու զարձար յինէն ,
ասէ Տէր , եւ յետս [9]երթիցես . եւ ձգե-
ցից զձեռն իմ ի վերայ քո , եւ սպա-
կանեցից զքեզ . [10]եւ ոչ եւս անասցից
7 նոցա՝ ։ Եւ ցրուեցից զնոսա [11]ի սիթեւս ,
ի դրունս ժողովրդեան իմոյ անզաւա-
կեցան . զի կորուսի զժողովուրդ իմ
վասն չարեաց իւրեանց , եւ՝ ոչ
8 դարձան ։ Բազմացան զինեւս այրիք
նոցա քան զաւազ ծովու . ածի ի վե-
րայ նոցա եւ ի վերայ մօրն [12]զերիտա-
սարդս , Թշնամութիմբնէ ի միջօրէի ար-
կի զնովսւս . եկն՝ յանկարծակի զողումն
9 եւ տագնապ ։ [13]Ոչնայնպացաւ եւԹնա-
ծինն , ձանձրացաւ անձն նորա՝ . եւմուտ

[1] ԵԲԲ· խաղաղութիմբն ճշմարտութեան տաց ձեզ [2] ԵԲԲ· զպատրանս [3] ՑԻԲԲ· պատուիրեցի նոցա [4] ԵԲԲ· ի ծերոք [5] ԵԲԲ· Իջուսցեն աչք իմ [6] ԵԲԲ· Մի՛ խոտեր զԵզ

[7] ԵԲԲ· գյորդութիմբն [8] ԵԲԲ· ժողովրդեանդ ընդ այդմիկ [9] ԵԲԲ· կացեր [10] ԵԲԲ· վատակեալ եմ յողորմելոյ [11] ԵԲԲ· հեծանոցաւ ի դրունս երկրի· անպատակեցից, կորուսից զժողովուրդ իմ. ի ճանապարհս իւրեանց [12] ԵԲԲ· երիտասարդի զապականիչն ի միջօրէի . արկի զնովսւս [13] ԵԲԲ· Նեաղեցաւ եւԹնածինն, աւանդեաց զհոգի իւր

նմա արեւ զմիջօրէիւ, եղեւ յամօթ եւ ի նախատինս. զննացորդս նոցա տայ ի սուր առաջի թշնամեաց նոցա, ասէ Տէր։
10 Վայ ինձ, մայր իմ, [1]իբրեւ զոք ոք ծնար զիս, այր՝ դատափետակ եւ ձգձգեալ ի դատաստան յամենայն երկրի. ոչ [2]պարտիմ ինչ, եւ ոչ պարտի ոք ինչ ինձ. եւ զօրութիւն իմ պա-
11 կասեաց յանիծանելեաց իմոց։ Եղիցի, Տէր, եւ յաչողեսցի նոցա ի բարութիւնս. եթէ ոչ կացի առաջի քո, ի ժամանակի չարեաց նոցա, եւ ի ժամանակի նեղութեան նոցա ի բարեխնդրեմ
12 թշնամւոյ։ Իցէ՞ թէ ճանաչիցի երկաթ. եւ քաղաքորմ պղինձ զօրութիւն քո.
13 Եւ զգանձս քո տայց օտարաց ի վրկանս՝ վասն ամենայն մեղաց քոց յամենայն
14 սահմանս քո։ Եւ ծառայեցուցից զքեզ թշնամեաց քոց յերկրի զոր ոչ գիտիցես. զի հուր վառեալ է ի սրտմտութենէ իմմէ, ի վերայ ձեր բորբոքեսցի։
15 Դու գիտես, Տէր. յիշեա զիս, [3]Տէր. այց արա ինձ. [4]անպատառ արա զիս՝ ի հալածչաց իմոց, [5]եւ մի՛ յերկարեր վասն իմ՝. ծանիր՝ արչաւի առի վասն քո [6]նախատինս յարհամարհողաց բանից քոց։
16 Վախճանեան գտանեմ, եւ եղիցի՝ բան քո ինձ յուրախութիւն եւ ի ցնծութիւն սրտի իմոյ. զի կոչեցեալ է անուն քո ի վերայ իմ, Տէր Աստուած Սաւովթայ։
17 Ոչ նստայ յաւանդի այպանողաց, [7]այլ սարսեցի՝ յերեսաց ձեռին քո՝ առանձին
18 նստէի, զի [8]լցայց դառնութեամբ։ Ընդէ՞ր որ տրտմեցուցանին զիս՝ զօրաւորք, եւ վէրք իմ սաստիկք, ուստե՞ր բժշկեցայց. լինելով եղեւ ինձ իբրեւ

[1] Եբր. ծնար զիս իբրեւ զայր [2] Եբր. եառու արծաթի ի վաշխի, եւ ոչ այլք եառուն ինձ արծաթի ի վաշխի, եւ ամենեքեան անիծանեն զիս։ (11) Աւե Տէր, Արդարեւ ապրեցուցից զքեզ ի բարութիւնս, արդարեւ արարից զի թշնամին ապերս արկցէ քեզ ի ժամանակի չարեաց եւ ի ժամանակի նեղութեան։ (12) Միթէ կարէցէ՞ խորտակել երկաթ զերկաթ ի հիւսիսոյ եւ զպղինձ. (13) Զառացուածս քո եւ զգանձս քո տաց ի յափշտակութիւն, ոչ ի գինս [3] Եբր. պոլոե [4] Եբր. և հան զվրէժ իմ [5] Եբր. մի՛ յերկայնմտութեան ցասման քո բարձցես զիս [6] Եբր. նախատինս։ (16) Գտան բանք քո, և կերայ զնոսա և եղեւ [7] Եբր. և ոչ ուրախ եղէ։ [8] Եբր. դառնութեամբ լցեր զիս։ (18) Ընդէ՞ր եղեւ ցաւ իմ մշտնջենաւոր. եւ վէրք իմ անբոյժ, առանց բժշկութեան. լինելո՞վ լինիցիս ինձ իբրեւ սուտ, ջուր

զջուր ցուրտ՝ յորում ոչ դոյ հաւատ։
19 Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր. Եթէ դարձցիս այսրէն՝ պատապարեցից զքեզ, եւ առաջի երեսաց իմոց կացցես. եւ եթէ հանցես զպատուականն յանարդէ, իբրեւ զբերան իմ եղիցես. [3]եւ եթէ՝ դարձցին նոքա առ քեզ, եւ
20 ոչ եւս դու դարձցիս առ նոսա։ Տայց զքեզ ժողովրդեանդ այդմիկ ի պարիսպ պղնձի ամուր. մարտիցին ընդ քեզ, եւ ոչ կարիցեն սանանել. զի ընդ քեզ եմ
21 ապրեցուցանել եւ փրկել, ասէ Տէր։ Եւ զերծուցից զքեզ ի ձեռաց չարաց, եւ փրկեցից զքեզ ի ձեռաց ժանտաց, [3]ասէ Տէր Աստուած Իսրայելի։՝

Գլ. ԺԶ

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս ասելով,
2 Եւ դու մի՛ առնուցուս քեզ կին, եւ մի՛ ծնցին քեզ ուստերք եւ դստերք ի
3 անդունդ յայդմիկ։ Զի այսպէս ասէ Տէր վասն ուստերաց եւ դստերաց որ ծնանիցին ի անդունդ յայդմիկ, եւ վասն մարդ նոցա որ ծնանին զնոսա, եւ վասն հարց նոցա որ ծնանին զնոսա յերկրիդ
4 յայդմիկ. Ծիւրեսալ ախտիւ մեռցին, մի՛ կոծեսցին եւ մի՛ թաղեսցին, [9]այլ խայտառակ՝ եղիցին ընդ երեսս երկրի. սրով անկցին եւ սովով սպառեսցին. եւ եղիցին դիակունք նոցա ի կերակուր թռչնոց երկնից եւ գազանաց երկրի։
5 Այսպէս ասէ Տէր. Ցաչխարումն նոցա մի՛ մտանիցես, եւ ի կոծ նոցա մի՛ երթիցես, եւ սուգ ի վերայ նոցա մի՛ առնուցուս. զի ի բաց արարի զխաղաղութիւն իմ ի ժողովրդենէն յայնմանէ, ասէ Տէր, եւ զողորմութիւնս եւ զգթու-
6 թիւնս։ Եւ մեռանիցին մեծամեծք եւ փոքունք յերկրին յայնմիկ. մի՛ կոծեսցին եւ մի՛ ցաւեսցին եւ մի՛ խզեսցին
7 եւ մի՛ լացցին եւ մի՛ թաղեսցին։ Եւ մի՛ բեկցի հաց սգոյ նոցա ի մխիթարութիւն ի վերայ մեռելոյ, եւ մի՛ արբուսցին բաժակ մխիթարութեան ի վերայ
8 հօր եւ մօր իւրոց։ Ի տուն ըմպելեաց մի՛ մտանիցես նստել ընդ նոսա՝ ուտել
9 եւ ըմպել։ Զի այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայելի. Ահա ես ապիկ ես խափանեցից ի տեղւոյդ այդմանէ առաջի աչաց ձերոց, եւ ի ձեր իսկ աւուրս, զձայն ցնծութեան եւ զձայն

[9] Եբր. յաղբ

ուրախասիրեան, զձայն վնասուի եւ զձայն
10 հարսին։ Եւ եղիցի յորժամ պատմեսցես ժողովրդեանն այնմիկ զամենայն պատգամսդ զայդոսիկ, եւ ասասցին ցքեզ, Ընդէ՞ր խօսեցաւ Տէր ի վերայ մեր զայդ ամենայն չարիս մեծամեծս. զի՞նչ անիրաւութիւն է ի մեզ, կամ ո՞ր մեղք զոր մեպաք առաջի Տեառն
11 Աստուծոյ մերոյ. Եւ ասասցես ցնոսա, Փոխանակ զի թողին զիս հարքն ձեր, ասէ Տէր, եւ գնացին զհետ աստուածոց օտարաց, եւ ծառայեցին նոցա եւ երկիր պագին նոցա, եւ զիս թողին եւ
12 զօրէնս իմ ոչ պահեցին։ Եւ դուք անդգամեցայք առնել առաւել քան զհարսն ձեր. եւ ահաւասիկ դուք երթայք իւրաքանչիւր զհետ հաճոյից սրտից ձե-
13 րոց չարաց առ ի չլսել ինձ։ Եւ ընկեցից զձեզ յերկիրդ յայդմանէ յերկիր՝ զոր ոչ գիտացէք դուք եւ հարքն ձեր, եւ ծառայիցէք անդ աստուածոց օտարաց ի տուէ եւ ի պիշերի, [1]եւ ոչ արասցին՝ ձեզ ողորմութիւն։
14 Վասն այսորիկ ահա աւուրք գան, ասէ Տէր, եւ ոչ եւս ասասցին՝ կենդանի է Տէր որ հան զորդիսն Իսրա-
15 յէլի յերկրէն Եղիպտացւոց. Այլ թէ՝ կենդանի է Տէր որ հան զորդիսն Իսրայէլի յերկրէն հիւսիսոյ, եւ յամենայն աշխարհսն ուր եւ սիրժեցան անդր. եւ [2]դադասցուսցէ զնոսա անդրէն յերկիրն իւրեանց զոր [3]եամ հարցն նոցա։
16 Ահաւասիկ ես առաքեմ ձկնորսս բազումս, ասէ Տէր, եւ որսասցին զնոսա. եւ յետ այնորիկ առաքիցեմ որսորդս բազումս, եւ որսասցեն զնոսա ի վերայ ամենայն լերանց եւ ի վերայ ամենայն բլրոց եւ ի ծակուց վիմաց։
17 Զի աչք իմ ի վերայ ամենայն ճանապարհաց նոցա, եւ ոչ թաքեան յերեսաց իմոց, եւ ոչ ծածկեցան անիրաւութիւնք նոցա առաջի աչաց իմոց։
18 Եւ հատուցից նոցա նախ կրկին զանիրաւութիւնս նոցա, եւ զմեղս նոցա որովք պղծեցին զերկիր իմ մեռելոտութիւք գարշելեացն իւրեանց, եւ անօրէնութեամբք նոցա, որովք լցին զժառանգութիւն իմ։
19 Տէր, զօրութիւն իմ եւ օգնութիւն իմ եւ ապաւէն իմ յաւուր չարեաց. առ

[1] ԵԲԲ. զի ոչ արարից [2] ԵԲԲ. պատապարեցից [3] ԵԲԲ. եառ

քեզ հեթանոսք եկեսցեն ի ծագաց երկրի եւ ասասցեն, [4]Որպէս սուտ ժառանգեցին հարքն մեր կուռս," եւ ոչ գոյր օգուտ ի նոսունէ։
20 Եթէ առնիցէ՞ մարդ անձամբ անձին աստուածս՝ եւ նոքա չեն աստուածք։
21 Վասն այնորիկ ահաւասիկ ես ցուցից նոցա ի ժամանակի յայսմիկ զձեռն իմ, ծանուցից նոցա եւ զզօրութիւն իմ. եւ գիտասցեն՝ թէ անուն իմ Տէր է։

Գլ. Ժէ

1 Մեղք Յուդայ գրեալ են գրչաւ երկաթիաւ, ապամանդեայ եղիգամբ. մածեալ է ի տախտակս սրտից նոցա, եւ
2 յեղջիւրս սեղանոց [5]ձերոց. [6]Ի ժամանակի յորում՝" յիշեսցին որդիք նոցա զսեղանս իւրեանց, եւ զանասաս իւրեանց ի վերայ ծառոյ վարսաւորաց եւ
3 ի վերայ բլրոց բարձանց, [7]եւ ի վերայ լերանց" վայրի, զզօրութիւն քո եւ զամենայն գանձս քո բաշխեցից յաւարի, զբարձունս քո մեղաւք յամենայն
4 սահմանս քո։ Եւ լքչիր եւ նիւսն լիչիր ի ժառանգութենէ քումմէ զոր ետու քեզ. եւ [8]հանից զքեզ ի ձեռս" թշնամեացդ քոց յերկիր զոր ոչ գիտիցես. զի հուր [9]վառեալ է ի սրտմտութեան իմում, մինչեւ յաւիտեան բորբոքեսցի։
5 Այսպէս ասէ Տէր. Անիծեալ լիցի մարդ որ յուսացէ զյոյս իւր ի մարդ, եւ առասցէ զբազուկ մարմնոյ զինուորութեան նորա, եւ ազատամիտիցէ ի Տեառնէ սիրտ
6 նորա։ Եւ եղիցի իբրեւ զմիշա վայրի յանապատի, եւ մի՛ տեսցէ յորժամ գայցէ բարութիւն. եւ բնակեսցէ յապառաւսիս անապատի, յերկիր ազահատուկ՝
7 ուր ոչ երթիք բնակիչն։ Օրհնեալ լիցի մարդն որ յուսացաւ ի Տէր, եւ եղիցի
8 Տէր յոյս նորա։ Եւ եղիցի իբրեւ զծառ զուարճացեալ ի գնացս ջուրց. եւ ընդ գնացս ջուրց ձգեսցուցէ զարմատս իւր, եւ մի՛ երկիցէ յորժամ հասանիցէ ամօթ. եւ եղիցի [10]տերեւն նորա անտառացեալ չուրջ զնովաւ". յամէ երաշտութեան մի՛ երկիցէ, եւ մի՛ կասեսցէ ի տալոյ զպտուղ։

[4] ԵԲԲ. Արդարեւ ստութիւն ժառանգեցին հարքն մեր. ունայնութիւն, [5] Կամ, նոցա [6] ԵԲԲ. Որպէս զի [7] ԵԲԲ. Լեառն իմ [8] ԵԲԲ. ծառայեցուցից զքեզ [9] ԵԲԲ. վառեցեր [10] ԵԲԲ. տերեւ նորա դալար

9 [1]Խորին է սիրտ քան զամենայն եւ
10 [3]մարդ է՞, եւ ո՛վ ծանիցէ զնա։ Ես Տէր
քննեմ զսիրտս եւ փորձեմ զերիկա-
մունս, տալ իւրաքանչիւր ըստ ճանա-
պարհաց իւրոց եւ ըստ պտղոյ գործոց
11 իւրոց։ [3]Ձայն սարսր կաքաւ, ժողովեաց
զոր ոչ իւր ծնեալ՝՛ որ ժողովէ զմե-
ծութիւն առանց իրաւանց, ի կէս ա-
ւուրց իւրոց թողցէ զնա, եւ ի վախ-
12 ճանի իւրում եղիցի անզգամ։ Աթոռ
փառաց բարձրացեալ ի սկզբանէ տեղի
13 սրբութեան մերոց։ Ակնկալութիւն Իս-
րայէլի, Տէր, ամենեքեան որ թողին
զքեզ՝ ամաչեցան. հեռացեալքն՝ յերկ-
րի գրեցին, զի թողին զՏէր զաղբեր
ջրոյ կենաց։
14 Բժշկեա զիս, Տէր, եւ բժշկեցայց,
փրկեա զիս, [5]Տէր, եւ փրկեցայց. զի
15 պարծանք իմ գու ես։ Ահաւանիկ նոքա
ասեն ցիս. Ո՞ւր է բան Տեառն, եկեսց-
16 ցէ արդ։ Բայց ես ոչ [6]ձանձրացայց գալ՝՛
զհետ քո. եւ աւուր [7]մարդոյ ոչ ցան-
կացայ, դու իակ գիտես. որ ինչ ելանէ
ընդ չրմունս իմ, առաջի երեսաց քոց
17 է։ Մի՛ լինիր ինձ [8]յոտնատրճիճն. յանց-
18 եա դու յիս՝՛ յաւուր չարի։ Յամօթ լիցին
հալածիչքն իմ, եւ մի՛ ես ամաչեցից. զարհուրեցին նոքա, եւ մի՛ ես
զարհուրեցայց. ած ի վերայ նոցա օր
չար, կրկին բեկմամբ բեկ զնոսա։
19 Այսպէս ասէ ցիս Տէր. Երթ կաց ի
դրունս [9]ժողովրդեան քո՝՛ ընդ որ մտա-
նեն եւ ելանեն թագաւորքն Յուդայ,
20 եւ յամենայն դրունս Երուսաղեմի. Եւ
ասասցես ցնոսա, Լուարուք զպատգամս
Տեառն, թագաւորք Յուդայ եւ ամե-
նայն Հրէաստան, եւ ամենայն բնա-
կիչք Երուսաղեմի որ մտանէք ընդ
21 դրունսդ ընդ այդոսիկ։ Այսպէս ասէ
Տէր. Զգոյշ լերուք անձանց ձերոց, եւ
մի՛ բառնայք բեռինս յաւուր չարա-
22 թուց, եւ մի՛ [10]եղանէք ընդ դրունս Ե-
րուսաղեմի. Եւ մի՛ հանէք բեռինս ի
տանց ձերոց յաւուր չարաթուց. եւ զա-
մենայն գործ մի՛ գործէք, եւ սրբեցէք
զօրն չարաթուց՝՛ որպէս պատուիրեցի
23 հարցն ձերոց։ Եւ ոչ լուան, եւ ոչ խո-
նարհեցուցին զունկն իւրեանց. եւ
խստացուցին զպարանոցս իւրեանց [5]ա-
ռնուլ զխրատս իւրեանց,՛՛ առ ի
24 չլսելոյ ինձ եւ ընդունելոյ զխրատս։ Եւ
եղիցի եթէ լսելով լսիցէք ինձ, ասէ
Տէր, չբերել բեռն ընդ դրունս քաղա-
քիս այսորիկ յաւուր չարաթուց, եւ
սրբել զօրն չարաթուց, չգործել ինձ
25 զամենայն գործ, Եւ մտցեն ընդ դրունս
քաղաքիդ այդորիկ թագաւորք եւ իշ-
խանք, որ նստիցին յաթոռն Դաւթի.
եւ ելանիցեն ի կառս եւ ձիերիվար իւ-
րեանց, եւ իշխանք նոցա՝ արք Յու-
դայ եւ բնակիչք Երուսաղեմի. եւ բնա-
26 կեսցի քաղաքդ այդ յաւիտեան։ Եւ ե-
կեսցեն ի քաղաքսն Յուդայ չուրջա-
նակի՝ յերուսաղէմ, եւ ի Բենիամինէ
եւ ի դաշտականաց եւ ի լեռնակողմանց
եւ ի կողմանց հարաւոյ՝ բերել ողջա-
կէզ եւ [11]խունկ՝ եւ մատնա՛՛ եւ կընդ-
րուկ, մատուցանելով օրհնութիւն ի
27 տան Տեառն։ Ապա թէ ոչ լուիցէք ինձ
սրբել զօրն չարաթուց, չառնել բե-
ռինս եւ մտանել ընդ դրունս Երուսա-
զեմի յաւուր չարաթուց, վառեցից հուր
ի դրունս նորա, եւ կերիցէ [12]չուրջ զե-
րուսաղեմա՛՛, եւ մի՛ չիջցի։

ԳԼ. ԺԴ

1 Բանն որ եղեւ առ Երեմիա ի Տեառ-
2 նէ, եւ ասէ, Արի էջ ի տուն բրտին,
3 եւ անդ լուիցես զբանս իմ։ Իջի ի տուն
բրտին, եւ ահա նա գործէր ի վերայ
4 [13]սիմաց։ Եւ անկաւ՛՛ ամանն մի զոր ինքն
գործէր ի կաւոյն՝ [14]ի ձեռաց նորա. եւ
դարձեալ սրաւ զնա այլ աման, որպէս
5 հաճոյ եղեւ աւաչին նորա առնել։ Եւ
6 եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ, Ե-
թէ [15]զրեւս զերծուած զայդ ոչ կարիցեմ
առնել զձեզ, տունդ Իսրայէլի, ասէ
Տէր. ահաւադիկ իբրեւ զկաւդ ի ձեռս
բրտիդ, այդպէս էք ի ձեռս իմ, տունդ
7 Իսրայէլի։ Եթէ [15]վասն խօսեցայց ի
վերայ ազգի կամ թագաւորութեան,
բառնալ զնոսա եւ քակել եւ կորուս-
8 անել, Եւ դարձցի ազգն այն ի չա-
րութեանց իւրեանց զոր խօսեցայ ի վերայ

---

[1] ԵԲԲ. Անարգ [2] ԵԲԲ. Նենգաւոր [3] ԵԲԲ. Որ-
պէս կաքաւ որ ժողովէ զոր չէ իւր ծնեալ, այն-
պէս [4] ԵԲԲ-ՅԵՑՆ յա-ԻԼԼ-, յինէն [5] ԵԲԲ.
պ-ԻՅ-ԱՔ [6] ԵԲԲ. խուսեցի ի լինելոյ հովիւ [7] ԵԲԲ.
անձկութեան [8] ԵԲԲ. յարհասիրս, դու ես
ապաւէն իմ [9] ԵԲԲ. որդւոց ժողովրդեան [10] ԵԲԲ.
մուծանէք

[11] ԵԲԲ. զոհ եւ ընծայ հայի [12] ԵԲԲ. զապարանս
Երուսաղեմի [13] ԵԲԲ. վիմաց երկուց (գրգան),
(4) եւ եղծաւ [14] ԵԲԲ. ի ձեռս [15] ԵԲԲ. երբեք

նոցա , զղջացայց եւ ես ի վերայ չա-
9 րեացն զոր խորհեցայ առնել նոցա ։ Եւ
եթէ [1]խօսեցայց ազգի եւ թա-
10 գաւորի [2]հան՝ չինել եւ անկել , եւ ա-
բրասցին չարիս առաջի իմ , չլսել բար-
բառոյ իմոյ , զղջացայց եւ ես ի վերայ
չարեացն զոր խօսեցայ առնել նոցա ։
11 Եւ արդ խօսեաց ընդ այրս Յուդայ
եւ ընդ բնակիչսդ Երուսաղեմի , եւ ա-
սասցես , Այսպէս ասէ Տէր . Ահաւադիկ
ես նիւթեմ ի վերայ ձեր չարիս , եւ
խորհիմ ի վերայ ձեր խորհուրդ . այլ
դարձցի իւրաքանչիւր ոք [3]ի ճանապար-
հէ իւրմէ չարէ , եւ ուղիղ արարէք
12 զդիւացս ձեր եւ զճանապարհս ձեր ։ Եւ
ասեն , [4]Քաչասցուք , զինա ասպատամ-
բութեանց մերոց գնասցուք , եւ իւրա-
քանչիւր ոք զնճդուս սրտի իւրոյ չարի
արասցուք ։
13 Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր .
Արդ աղէ հարցէք ընդ ազգս , ո՞վ ոք
լուաւ այնպիսի արհաւիրս զոր արար
14 յոյժ կոյսդ Իսրայէլի ։ Մինչ [5]պակա-
սեսցին առնիք ի վիմէ , կամ ձիւն ի Լի-
բանանէ , կամ թէ դադարեսցին ջուրք
բնութիւնոյ ի սառակութենէ հոսմոյ ,
15 Զի մոռացաւ զիս ժողովուրդ իմ , [6]առ-
թապարտուց արկին խունկս . եւ սկան-
դալսցին ի ճանապարհս իւրեանց ի վի-
ճակս յաւիտենից , երանել ի չաւիղս , ուր
16 ոչ իցէ ճանապարհ գնալոյ , կարգել զեր-
կիր նոցա յաւգականութիւն եւ ի չչիւն
յաւիտենից . ամենեքեան որ անցանիցեն ընդ
այն՝ զարմասցին , եւ չարժեսցին զդլուխս
17 իւրեանց ։ Իբրեւ հողմ տապալեսցեն
ցրուեսցից զնոսա առաջի թշնամւոյց իւ-
րեանց , [7]ի պարանոցս եւ ոչ երեսս ,
ցուցից նոցա զօր՝ կորստեան իւրեանց ։
18 Եւ ասացին , Եկայք խորհուրդ խոր-
հուրդ ի վերայ Երեմիայի . զի ոչ կորն-
չին օրէնք ի քահանայէ , եւ խորհուրդ
յիմաստնոց , եւ բան ի մարգարէէ . եկայք
եւ հարցուք զնա լեզուաւ , եւ ոչ լուիցուք զամենայն բանս նորա ։
19 Լսե՛ր լիցի , Տէր , եւ անսա բարբա-
20 ռոյ [8]իրաւանց իմոց՝ , իցէ՞ թէ հատու-
ցանիցի չար փոխանակ բարւոյ . զի [9]խոր-
հեցան ի միասին բանս զանձնէ իմմէ ,
եւ զասունսնս իւրեանց [10]թաքուցին՝ .
յուշ լիցի քեզ ի կայն իմում առաջի
քո , խօսել վասն նոցա բարեխիւն ,
դարձուցանել զբարկութիւնն քո ի նո-
21 ցանէ ։ Վասն այնորիկ աւար զորդիս նո-
ցա ի սով , եւ [11]ժողովեա զնոսա ի ձեռս
սրոյ , եղիցին կանայք նոցա անորդիք
եւ այրիք , եւ արք նոցա եղիցին կո-
տորեալք մահուամբ , եւ երիտասարդք
նոցա անկեալք սրով ի պատերազմի ։
22 Եղիցի գոյժ ի տունս նոցա . զի ածիցես
ի վերայ նոցա յանկարծակի աւազակս .
զի [12]բանս ի գործ սարսրին՝ առնել զնա ,
23 եւ սրոգայիս թաքուցին [13]ինձ։ Եւ գու ,
Տէր , գիտացեր զամենայն խորհուրդս
նոցա զինէն ի մահ . մի՛ քաւեսցես զա-
նիրաւութիւնս նոցա , եւ զմեղս նոցա
յերկնից քոց մի՛ ջնջեսցես . [14]եղիցի հե-
ւանոցդ իւրեանց նոցա՝ առաջի քո . ի ժա-
մանակի սրտմտութեան քո արա ի նոսա ։

ԳԼ. ԻԹ

1 [12]Յայնժամ ասէ ցիս՝ Տէր , Երթ ասացիր
քեզ կուժ մի սանդեակ ի կաւոյ , եւ
ածցես ի ծերոց ժողովրդեանն եւ ի ծե-
2 րոց քահանայիցն . Եւ ելցես [13]ի վերիզ-
մանս որդւոցն Նոցա , որ է առաջի մտից
դրանն Բարսիդեայ , եւ ընթերցցես՝ անդ
զամենայն զբանս զոր խօսեցայց ընդ
3 քեզ . Եւ ասասցես ցնոսա , Լուարուք
զբանս Տեառն , Թագաւորք Յուդայ
եւ [14]արք Երուսաղեմի եւ՝ բնակիչք ե-
րուսաղեմի . այսպէս ասէ Տէր զօրու-
թեանց Աստուած Իսրայէլի . Ահաւա-
դիկ ես ածից ի վերայ տեղւոյդ այդո-
րիկ չարիս . որպէս զի ամենայնի որ
4 լսիցէ՝ հնչեսցին ականջք իւր . Փոխա-
նակ զի թողին զիս , եւ օտարացուցին
զտեղիս զայս յինէն . եւ արկանէին ի
սմա խունկս աստուածոց օտարաց , զորս
ոչ գիտէին ինքեանք եւ հարք իւրեանց ,
եւ թագաւորքն Յուդայ . եւ լցին զտե-

---

[1] Ելիզ. երբեք [2] Ելիզ. Զիք յոյս [3] Ելիզ. պա-
կասեցէ՞ ի վիմէ վայրի ձիւն Լիբանանու, կամ
թէ յամենեսցի՞ն ջուրք օտարք զուրք որ
հոսին [4] Ելիզ. սնոտեաց արկին խունկս եւ
եւտուն նոցա սահել ի ճանապարհս իւրեանց, ի
շաւիղս հինս, գնալ ընդ ճանապարհս անկոխս
[5] Ելիզ. զքամակ և ոչ զերեսս ցուցից նոցա յաւուր
[6] Կամ. որոց գաւառական կան ինձ [7] Ելիզ. փոխ-
ցին փոս անձին իմում [8] Ելիզ. մատնեա [9] Ելիզ.
փորեցին փոս [10] Ելիզ. ուրց իմոց [11] Ելիզ.
կործանեսցին [12] Ելիզ. Այսպէս ասէ [13] Ելիզ.
ի ձորն որդւոյն Ենովմայ, որ ի մուտս դրան
Խարսիդայ (խեցեաց), եւ քարոզեսցես [14] Ցելիզ.
գ-ի-ե

5 դիս զոյս արեամբ անմեղաց. Եւ չհնա-
զին բաղձնս Բահաղայ, այրել զորդիս
իւրեանց հրով, ողջակէզս Բահաղայ.
զոր ոչ պատուիրեցի եւ ոչ խօսեցայ,
6 եւ ոչ ածի զմտաւ ի սրտի իմում՝ վասն
այդորիկ ահա աւուրք գան, ասէ Տէր,
եւ ոչ եւս կոչեսցի անուն անդրադդ այ-
դօրիկ [1]Գէհոմայ եւ գերեզման" որպէսզի
7 ննովմայ, այլ Ջար կոտորածի. Եւ խա-
փանեցից զիսորհուրդն Յուդայ եւ զխոր-
հուրդն Երուսաղեմի ի տեղւոջն յայս-
միկ. եւ արկից զնոսա տապատա սրով
առաջի թշնամեաց իւրեանց, եւ ի ձեռս
իմոցդրողաց անձանց նոցա. եւ տայց զկիա-
կունս նոցա ի կերակուր թռչնոց երկ-
8 նից եւ գազանաց երկրի. Եւ կարկե-
ցից զքաղաքն զայն յայտականութիւն
եւ ի չչիւն. ամենայն որ անցանէ ընդ
նա՝ [2]արամասցի, եւ չչիսցէ ի վերայ ա-
9 մենայն հարուածոց նորա. Եւ [3]կերից-
ցին զմարմինս ուստերաց եւ զմարմինս
դստերաց իւրեանց, եւ իւրաքանչիւր
զմարմին ընկերի [4]իւրոյ՝ ի նեղութեան
եւ ի պաշարման զոր պաշարեսցին զնո-
սա թշնամիք իւրեանց եւ որք խնդրէին
զանձինս նոցա.
10 Եւ խորտակեսցես զկուժն առաջի ա-
11 նցանց որ երթիցեն ընդ քեզ. Եւ ա-
սասցես ցնոսա, Այսպէս ասէ [5]դիս Տէր
զօրութիւնց. Այսպէս խորտակեցից
զժողովուրդդ զայդ եւ զքաղաքդ, որ-
պէս խորտակի սման խեցեղէն, որ ոչ
կարիցէ միւսանգամ բժշկել. Եւ ի Տա-
փեթ թազեսցին առ ի չգոյէ անդի թա-
12 զեայ. Այսպէս արարից անզդոյդ այդ-
միկ, ասէ Տէր, եւ բնակչացդ որ ի դմա.
13 տալ զքաղաքդ զայդ [6]ի զգուաւնի. Եւ
եղիցին տունք երուսաղեմի եւ տունք
թագաւորացն Յուդայ իբրեւ զտեղի
[7]ապականելոյ, վասն պղծութեանց զոր ա-
րարին յամենայն տունս" յորս արկա-
նէին խունկս ի վերայ ամենայ լուսնի՝
ամենայն զօրութեանց երկնից, եւ նուի-
14 րեին նուէրս աստուածոց օտարաց. Եւ
ելից Երեմիա ի [8]գուռնէն Տափեթայ,
ուր առաքեաց զնա Տէր անդ մարգարէ-
նալ. եւ եկաց [9]ի սրահն տանն Տեառն, եւ
15 ասէ ցամենայն ժողովուրդն, Այսպէս ասէ

Տէր զօրութեանց, Աստուած Իսրայելի.
Ահաւասիկ ես ածեմ ի վերայ քաղաքիդ
այդորիկ եւ ի վերայ ամենայն քաղաքաց
դորա եւ ուանաց զամենայն չարիս զոր
խօսեցայ ի վերայ դորա, զի խստացուցին
զպարանոցս իւրեանց չլսել բանից իմոց.

Գլ. Ի

1 Եւ լուաւ Պաշքովր որդի Եմմերայ քա-
հանայ, եւ ինքն էր հրամանատար եւ
իշխան առանն Տեառն, յերեմիայէ ի մար-
2 գարէանալն զբանս զայսոսիկ. Եւ եհար
Պաշքովր զԵրեմիա մարգարէ, եւ [9]արգել
զնա ի վիրնագրանն, որ էր ի դրանն
Բենիամինի, ի վերնատունն" որ էր ի
3 տան Տեառն. Եւ եղեւ ի վաղիւ անդր,
եհան Պաշքովր զԵրեմիա [10]ի վիրնա-
գրանէ անտի. եւ ասէ ցնա Երեմիա,
Ոչ Պաշքովր կոչեաց զանուն քո Տէր,
4 այլ [11]Գիւրի Թափսահական". Զի այսպէս
ասէ Տէր. Ահաւասիկ ես տայ զքեզ [12]ի
գնութիւն հանգերձ ամենայն բարե-
կամօք քովք", եւ անկցին ի սուր թշնա-
մեաց իւրեանց, եւ աչք քո տեսցեն.
5 եւ զքեզ" եւ զամենայն ազնիւ Յու-
դայ տայց ի ձեռս թագաւորին Բաբե-
լացւոց, եւ գերեսցեն զնոսա ի Բաբե-
ղան, եւ կոտորեսցեն զնոսա սրով. Եւ
տայ զամենայն զօրութիւնս քաղաքիդ
այդորիկ եւ զամենայն վաստակս դորա,
եւ զամենայն պատիւ դորա, եւ զամե-
նայն գանձս [13]թագաւորիդ Յուդայ տայ
ի ձեռս թշնամեաց իւրեանց. եւ յափշ-
տակեսցեն եւ առցեն զնոսա եւ տար-
6 ցեն ի Բաբելոն. Եւ դու, Պաշքովր, եւ
ամենայն բնակիչք տան քո, երթիջիք
գերի ի Բաբելոն, երթիցես եւ անդ մեռա-
նիցիս, եւ անդ թաղեսցիս, դու եւ ա-
մենայն բարեկամք քո, որոց մարգա-
բեցացեր ստութիւն.
7 Ասացեր դիս, Տէր, եւ խաբեցայ,
յաղթահարեցեր եւ զօրացար. եղէ ի
կատակարան, զօր ամենայն [14]անի ի դլուխ
8 այսօրանեալ. Զի դառնութեամբ բանից
իմոց արարից այսմ զարհամարհու-
թիւն", եւ ի չուտութիւնէ բազոք բար-

[1] ՆԷԲ. Տափեթ եւ ձոր [2] ՆԷԲ. ապշեսցի [3] ՆԷԲ. տայց նոցա ուտել [4] ՆԷԲ. իւրոյ կերիցէ [5] ՆԷԲ. պահ [6] ՆԷԲ. իբրեւ զՏափեթ [7] ՆԷԲ. Տափեթայ պղծոյ, վասն ամենայն տանց [8] ՆԷԲ. ի գաւթի [9] ՆԷԲ. արկ զնա ի կածեղս ի վերնադրանն Բենիամինի [10] ՆԷԲ. ի կոճեղսց [11] ՆԷԲ. Երկեղ ամենայն ուստեք [12] ՆԷԲ. յերկիւղ քեզ եւ ամենայն բարեկամաց քոց [13] ՆԷԲ. Թագաւորաց [14] ՆԷԲ. ամենեքեան նոքա ոչխն առնեն գիս. (8) Զի քանիցս անգամ եւ խօսիմ, աղաղակեմ ի բռնութենէ

ձիոյ. զի եղեւ ինձ բան Տեառն ի նա-
խատինս եւ ի կատականս զօրհնաւ-
9 պաղ։ Եւ ասացի, Ոչ [1]անուանեցից
զանուն Տեառն", եւ ոչ ևս խօսեցայց
յանուն նորա. եւ եղեւ ի սրտի ի-
մում իբրեւ զնուր վառեալ, բորբոքեալ
ընդ ոսկերս իմ. եւ լքայ [2]յամենայն
կողմանից," եւ ոչ կարէի հանդուրժել։
10 Զի լուայ զպարտաւանս բազմաց, [3]չուրջ
զինեւ սխալուանս ժողովելոյ. թէ Ա-
րիւք եւ յայտեսք ի վերայ նորա ամե-
նայն սրք բարեկամք զորս. հնարեցա-
րուք նմա հնարս", թերեւս խաբեսցի
եւ յաղթեսցուք նմա, եւ լնդրեսցուք
11 զվրէժ մեր ի նմանէ։ Եւ Տէր ընդ ինձ
էր իբրեւ [4]զպատերազմօղ, եւ զօրացու-
ցանէր. վասն այնորիկ հալածիչքն, եւ
խոնարհ գնարս ոչ կարէին. յամօթ եւ
զնն յոյժ, զի ոչ լինչ յաջացան". անար-
գանք նոցա յաւիտենից մի՛ մոռասցին։
12 Եւ Տէր զօրութիւնս, որ կչռես զիրա-
ւունս եւ քննես զսիրտս եւ զերիկա-
մունս, տեսից զի տեսից զվրէժխնդրու-
թիւն ի վերայ նոցա. զի առ քեզ յայտ-
13 նեցի զպատերազմ իմ։ Օրհնեցէք զՏէր, գո-
վեցէք զնա, զի փրկեաց զանձն անանց-
կի ի ձեռաց չարաց։
14 Անիծեալ լիցի օրն յորում ծնայ, եւ
օրն յորում ծնաւ զիս մայր իմ՝ մի՛ ե-
15 ղիցի [5]ուխտապրութիւնն։ Անիծեալ լիցի
մարդն որ եաւ աւետիս հօր իմոյ, եւ
ասէ՝ թէ Ծնաւ քեզ արու մանուկ, եւ
16 ուրախութիւնս ուրախ առնէր զնա։ Եւ
եղիցի մարդն այն իբրեւ զքաղաքս զոր
կործանեաց Տէր առանց թիւնամք, եւ ոչ
զղջացաւ. լուիցէ գոյժ ընդ առաւօտս
եւ աղաղակ ի միջօրեայ ժամանակի։
17 Զի ոչ սպան զիս անդէն յարգանդի,
եւ լինէր լինձ մայրն իմ գերեզման, եւ
18 [6]արգանդ յղութիւնն" յաւիտենից։ Ընդ-
է՞ր է լինձ այս զի ելի յարգանդէ առ-
առնել զցաւս եւ զվատառակս, եւ վախ-
ճանիցին առ[ի]մամ աւուրք իմ։

Գլ. ԻԱ

1 Բանն որ եղեւ առ Երեմիա ի Տեառնէ,
յորժամ առաքեաց առ նա Սեդեկիա
զՊաշքովր որդի Մեղքեայ եւ զՍոփո-
նիա որդի Մասեայ զքահանայ, եւ ա-
2 ղէ, Հարց վասն մեր զՏէր, զի Նաբու-
քոդոնոսոր արքայ Բաբելացւոց նեաս ի
վերայ մեր. թերեւս արասցէ Տէր ի վե-
րայ մեր ըստ ամենայն իւրոցն սքան-
չելեացն, եւ դարձուսցէ ի մէնջ։
3 Եւ ասէ ցնոսա Երեմիա, Այսպէս ա-
4 սացէք ցՍեդեկիա. Այսպէս ասէ Տէր
Աստուած Իսրայէլի. Ահաւադիկ ես
դարձուցանեմ զզէնս ձեր ի պատերազ-
մի, զոր ունիք ի ձեռս ձեր, որով դուք
պատերազմիք ընդ արքային Բաբելացւոց,
եւ ընդ Քաղդէացիս որք պաշարե-
ցին զձեզ արտաքոյ պարսպացդ. եւ ժո-
ղովեցից զնոսա ի մէջ քաղաքիդ այ-
5 դորիկ։ Եւ տաց պատերազմ ես իսկ ընդ
ձեզ վերացեալ ձեռամբ եւ բարձրա-
ցեալ բազկաւ, սրտմտութեամբ եւ բար-
6 կութեամբ եւ մեծաւ ցասմամբ. Եւ հա-
րիւց զառնեան բնակիչս քաղաքիդ այ-
դորիկ՝ զմարդ եւ զանասունս՝ մեծաւ
7 մահտւամբ, եւ մեռցին։ Եւ յետ այնո-
րիկ, այսպէս ասէ Տէր, մատնեցից զՍե-
դեկիա արքայ Յուդայ եւ զծառայս իւր
եւ զժողովուրդ՝ որ մնացեալ իցէ ի քա-
ղաքիդ յայսմիկ ի մահտանէ եւ ի սրոյ
եւ ի սովոյ՝ ի ձեռս Նաբուքոդոնոսորայ
արքայի Բաբելացւոց, եւ ի ձեռս թշնա-
մեաց իւրեանց, եւ ի ձեռս որ խնդրէին
զանձինս զոցա, եւ կոտորեսցին զոքա
ի բերան սրոյ. եւ ոչ [7]խնայեցից ի զո-
քա, եւ ոչ [8]ողորմեցայց զոքա, եւ ոչ
[9]գթայայց ի զոսա։
8 Եւ ցժողովուրդն առասցես, Այսպէս
ասէ Տէր. Ահաւադիկ ես եղի առաջի ե-
րեսաց ձերոց զճանապարհ կենաց եւ
9 զճանապարհ մահու։ Որ նստցի ի քա-
ղաքիդ յայսմիկ՝ սրով եւ սովով եւ մա-
հու մեռցի. եւ որ ելցէ կացցէ առաջի
Քաղդէացւոցն, որոց պաշարեալն է զձեզ՝
կեցցէ, [10]անձն իւր ինքեան պարզեւ լիցի
10 եւ կեցցէ"։ Զի հաստատեցի զերեսս իմ
ի վերայ քաղաքիդ այդորիկ ի չարիս, եւ
ոչ ի բարիս, ասէ Տէր. ի ձեռս թագաւո-

---

[1] ՆԲԳ. յիշեցից զնա [2] ՆԲԳ. ի համբերելոյ [3] ՆԲԳ. երկեւզ ամենայն ուստեք։ Զոբաթխօսեցէք եւ չարաբանեսցուք զնա, Ամենայն ոչ խաղաղու-
թեան իմոյ, որ դիտէր զգլորումն իմ [4] ՆԲԳ. զՏէր աշեղ. վասն այնորիկ որ հալածեն զնա՝
գլորեսցին, եւ մի՛ կարասցեն առնուլ. յամօթ
եղիցին յոյժ, զի ոչ իմաստութեամբ գնացին
[5] ՆԲԳ. օրհնեալ [6] ՆԲԳ. արգանդ նորա յղու-
թիւն

[7] ՆԲԳ. խնայեցէ [8] ՆԲԳ. ողորմեացի [9] ՆԲԳ.
գթասցի [10] ՆԲԳ. եւ անձն նորա եղիցի իբրեւ
զաւար

րին Բաբելացւոց մատնեսցի , եւ այրեսցէ զքա հրով։
11 Տուն արքային Յուդայ եւ տունդ Դաւթի , լուարուք զպատգամ Տեառն . այս-
12 պէս ասէ Տէր . Դատաստանս ընդ առաւօտս պատրաստեա , եւ [1]իրաւացուցէք իրաւունս ," փրկեցէք զկեալչատակեալն ի ձեռաց զրկողին իւրոյ , զի մի՛ բորբոքեսցի իբրեւ զհուր բարկութիւն իմ . վառեսցի , եւ ոչ ոք իցէ որ չիջուցանիցէ յերեսաց անիրաւութեան գործոց ձերոց ։ Ահա ապիկ ես ի վերայ քո՛
13 որ բնակեալդ ես ի ծործորս գաչտաստանս [2]Իւրոսի , ասէ Տէր . որք ասէիք՝ Ո՞ զարհուրեցուցէ զմեզ , կամ ո՞ մատա-
14 նիցէ ի բնակութիւնս մեր ։ Եւ արարից այլգործութիւն ի վերայ ձեր բաս [3]չարութեան գործոցդ" ձերոց , ասէ Տէր , եւ վառեցից զհուր յանտառս նորա եւ կլուիցէ չուրջ զնովաւ զամենայն ։

ԳԼ . ԻԲ

1 Այսպէս ասէ Տէր . Երթ եւ էջ ի տուն թագաւորին Յուդայ , եւ խօսեսցիս անդ
2 զբանդ զայդ , եւ ասասցես , Լուր զպատգամս Տեառն , թագաւորդ Յուդայ , որ նստիս յաթոռ Դաւթի , դու եւ ծառայք քո եւ ժողովուրդ քո , որ մտանեն ընդ
3 դրունսդ ընդ այդոսիկ ։ Այսպէս ասէ Տէր . Արարէք իրաւունս եւ արդարութիւն , փրկեցէք զկեալչատակեալն ի ձեռաց զրկողին իւրոյ , զպանդուխտն եւ զորբն եւ զայրին մի՛ բանաղատէք եւ մի՛ [4]ամպարշտէք , եւ արիւն անպարտ
4 մի՛ հեղուցէք ի տեղւոջդ յայսմիկ ։ Զի թէ առնելով առնիցէք զբանդ զայդ , մտցեն ընդ դրունս տանդ այդորիկ թագաւորք որ նստիցին յաթոռ Դաւթի , եւ նստիցին ի կառս եւ յերիվարս , ինքն եւ
5 ծառայք իւր եւ ժողովուրդ իւր ։ Ապա թէ ոչ առնիցէք զբանդ զայդոսիկ , յանձն իմ երդուայ , ասէ Տէր , զի յա-
6 վերակ հղիցի տունդ այդ ։ Զի այսպէս ասէ Տէր ի վերայ տան թագաւորիդ Յուդայ . Գաղաատ դու ես ինձ , գլուխ Լիբանանու . եթէ ոչ եղիցի զքեզ յաւե-
7 րակ եւ ի քաղաքս չընակեսցես ։ Եւ հանից ի վերայ քո սատակիչս , զայր եւ զսպառազէն իւր , եւ կոտորեսցեն զընտիր ընտիր մայրից քոց , եւ արկցեն ի հուր ։
8 Եւ անցցեն ազգք բազումք ընդ մէջ քաղաքիդ այդորիկ , եւ ասասցեն իւրաքանչիւր ընկերք իւր , Ընդէ՞ր արար
9 Տէր այդպէս զայդ քաղաքիդ մեծի ։ Եւ ասասցեն , Փոխանակ զի թողին զուխտ Տեառն Աստուծոյ իւրեանց , եւ երկիր պագին աստուածոց օտարաց , եւ ծառայեցին նոցա ։
10 Մի՛ լայք զմեռեալն եւ մի՛ ողբայք զնա . այլ լացէք լալով ի վերայ այնորիկ որ ելանիցէ , [5]եւ այլ ոչ դառնայցէ , եւ ոչ տեսցէ զերկիր ազգի իւրոյ ։
11 Զի այսպէս ասէ Տէր ի վերայ Սեդեկնայ որդւոյ Յովսիայ[6] , որ թագաւորեաց փոխանակ Յովսիայ հօր իւրոյ . որ եւ ի տեղւոջէդ յայդմանէ , եւ ոչ եւս
12 դարձցի անդրէն . Զի ի տեղւոջ յորում գերեցան զնա՝ անդ մեռցի , եւ զերկիրդ զայդ ոչ եւս տեսցէ ։
13 Ո՛հ , որ չինէ զտունն իւր՝ եւ ոչ արդարութեամբ , եւ զվերնայարկս իւր՝ եւ ոչ իրաւամբք . եւ ի մերձաւորէ իւմէ գործն նմա գործ ձրի , եւ զվարձս նո-
14 ցա ոչ հատուցանէ նմա ։ [7]Զի չինեցից քեզ" տուն պատչաճօղ , վերնատուն հովանոց յօրինեալ պատուհանիւք , տախտակամած ի մայրից , ծեփեալ նաե-
15 թիւ ։ Միթէ թագաւորեսցես զի [8]զայրացար ի մայրակերտս հօր քո . մի՛ կերիցին եւ մի՛ արբցին , զի գերութիւնս եւ զարդարութիւն ոչ
16 ծանեան , եւ ոչ արարին իրաւունս անանկին , եւ զպարտաւն ոչ իրաւացուցին . ո՞չ այն իսկ է չճանաչելն զիս , ասէ
17 Տէր ։ Ահաւադիկ ոչ իսկ են քո աչք , եւ սիրտ քո ոչ է ի բարութիւն , այլ՝ յարատեւութիւն եւ ի հեղուլ զարիւն անպարտ , եւ յանիրաւութիւն եւ յառնել [9]ոպանութիւն ։
18 Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր ի վերայ Յովակիմայ որդւոյ Յովսեայ արքայի Յուդայ . Զայրդ զայդ մի՛ կոծեսցեն , եւ մի՛ ասասցեն՝ Վայ , վայ , եղ-

[1] ՃԱՐ. զ-ի-ա-ե [2] ՅԱՐ. ի-ի-ի [3] ՅԱՐ. պղծոյ գործոց [4] ՅԱՐ. յափշտակէք

[5] ՅԱՐ. զի [6] ՅԵՐԵՍԵՑԻՔ յ-ա-ե-ա-ա , արքայի Յուդայ [7] ՅԱՐ. Որ ասէ, Շինեցից ինձ [8] ՅԱՐ. պնդեալ ես զՏէր եղեւնափայտի . մինչ հայր քո ոչ կերաւ եւ արբ եւ արար արդարութիւն եւ իրաւունս, յայնժամ բարի եղեւ նմա . (16) Արար իրաւունս ազքատին եւ անանկի, յայնժամ բարի եղեւ . ոչ սպազքէն այս է գիտել զիս , ասէ Տէր ։ (17) Այլ ոչ են աչք քո եւ սիրտ քո, եթէ ոչ [9] ՅԱՐ. բռնութիւն

բայր, վայ, վայ, [1]ազբայր. մի՛ կոծեսցին եւ սասցին՝ վայ, վայ, Տէր, վայ, վայ[2]սիրե-
19 լի՛ ։ Զի ազաւնին իչոյ թռչեսցի, [3]նախայ
ընկեսցի արտաքոյ գրանց Երուսաղէմի ։
20 Եւ ի Լիբանան եւ գոչեսո, եւ ի Բա-
սան տալիր զձայն քո. ազաղակ բարձ
[4]յանկոյս ծովուն՝՝, զի խորտակեցան ի
21 միասին ամենայն հոմանիք քո ։ Խօսե-
ցայ ընդ քեզ [5]ի սխալին քում, եւ ա-
սացեր թէ Ոչ լուայց քեզ. այդ է ճա-
նապարհ քո ի մանկութենէ քումմէ, զի
22 ոչ լուար բարբառոյ իմոյ ։ Զամենայն
հովիւս քո հոգմբ արածեսցեն, եւ ա-
մենայն հոմանիք քո ի գերութիւն գնասց-
ցեն. զի յայնժամ ամաչեսցես եւ անար-
23 գեսցիս [6]յամենայն սիրելեացդ՝՝ քոց ։ Բնա-
կեալդ ի Լիբանան, [7]ամբացեալդ ի մէջ
մայրից, հնձեձեսցես ի հասանել քեզ
ցաւոց եւ երկանց ի ցորեկ ծննդականի ։
24 Կենդանի եմ ես, ասէ Տէր, եթէ լինե-
լով լինիցի Ցեքոնիա որպէ Յովակիմայ
արքայի Յուդայ՝ կնիք յաջոյ ձեռին ի-
25 մոյ, եւ ասալ կորզեցից զքեզ, եւ
մատնեցից զքեզ ի ձեռս խնդրողաց ան-
ձին քո, եւ ի ձեռս այնոցիկ յորոց զար-
հուրեալ յերեսաց նոցա, եւ ի ձեռս նա-
բուքոդոնոսորայ արքայի Բաբելացւոց,
26 եւ ի ձեռս Քազդէացւոց. եւ ընկեցից
զքեզ եւ զմայր քո [8]յերկիր օսար՝ յոր
27 ոչ իշկայ՝՝, եւ անդ մեռջիք ։ Եւ յերկիրս
յոր [9]ուխտադիր լինիցին ոգւովք իւ-
րեանց՝՝ դառնալ այսրէն, մի՛ դարձցին.
28 [10]Զի անկաւ լինքն եւ վաւաշ իւր, եւ
եղեւ տարապիր բերանն արհամարհանալ.
Թէ՛ամենայն անարգեցաւ այրն Ցեքոնիա
իբրեւ զաման մի անպիտան, անկաւ
29 յերկիր զոր ոչ գիտէր՝՝ ։ Երկիր, երկիր,
30 երկիր, լուր զպատգամս Տեառն ։ Այս-
պէս ասէ Տէր. Գրեա զայրդ զայդ այր
[11]տարագիր. զի մի՛ աճեսցէ յաւուրս
իւր, եւ մի՛ աճեսցէ՝՝ ի զաւակէ գորա

[1]ՆԲԲ. քոյր [2]ՆԲԲ. փառաց Նորա [3]ՆԲԲ քարշեալ [4]ՆԲԲ. յԱբարիմայ [5]ՆԲԲ. ի յաջողութեան [6]ՆԲԲ. վասն ամենայն չարեաց [7]ՆԲԲ. որ ունիս բոյնս [8]ՆԲԲ. որ ծնաւ զքեզ՝ յերկիր օտար յորում ոչ ծնայք [9]ՆԲԲ. ցանկան [10]ՆԲԲ. Մինչ անօթի անարգ բեկեալ իցէ այրս այս Ցեքոնիա, կամ ամա՞ն յորում չիք հաճութիւն. ընդէր ընկեցան նա եւ զաւակ նորա եւ եղեն վտարանդի յերկիր զոր ոչ գիտէին ։ [11]ՆԲԲ. անզաւակ, այր որ ոչ յաջողեսցի յաւուրս իւր. զի մի՛ յաջողեսցի

այր, որ նստիցի յաթոռն Դաւթի [12]իշ-
խան ասնն Յուդայ՝՝։

ԳԼ. ԻԹ

1 [13]Ո՛ հովիւք՝՝ որ կորուսանէն եւ ցրուեցին
2 գխաչինս արօտի [14]քո, ասէ Տէր ։ Վասն
այդորիկ այսպէս ասէ Տէր Աստուած
Իսրայելի ի վերայ հովուացդ որ հովուեն
զժողովուրդ իմ. դուք ցրուեցէք զխօս-
չինս իմ, եւ մերժեցէք զնոսա, եւ ոչ
[15]յանձանձեցէք գնոսա. արդ ահաւասիկ
ես խնդրեցից զվրէժս ի ձէնջ՝՝ բոս չա-
3 րութեան գնացից ձերոց, ասէ Տէր. Եւ
ես [16]ընկալայց զնացորդս ժողովրդեան
իմոյ՝՝ յամենայն երկրէ ուր մերժեցի զնո-
սա անդր, եւ [17]հաստատեցից զնոսա յա-
րօտս իւրեանց, աճեսցեն եւ բազմասցին ։
4 Եւ յարուցից [18] հովիւս որ հովուեսցեն նո-
ցա, եւ ոչ եւս երկիցին, եւ ոչ եւս զար-
հուրեսցին, եւ ոչ լիցին անաիս, ասէ Տէր։
5 Ահա աւուրք գան, ասէ Տէր, եւ յա-
րուցից Դաւթի Ծագումն արդարու-
թեան. եւ թագաւորեսցէ թագաւոր,
եւ [19]լի միտ սասցէ՝՝, եւ արասցէ իրաւունս
6 եւ արդարութիւն ի վերայ երկրի ։ Յա-
ւուրս նորա փրկեսցի Յուդա, եւ Իս-
րայէլ բնակեսցէ [20]յատուկ. եւ այս է ա-
նունն նորա զոր [21]կոչեսցէ նմա Տէր՝ Յով-
սեդեկ ի մայրաքէս՝՝ արդարութիւն մեր ։
7 Վասն այդորիկ ահա աւուրք գան, ա-
սէ Տէր, եւ ոչ եւս ասասցին՝ եթէ
կենդանի է Տէր, որ հան [22]զաւնին Իս-
8 րայէլի յերկրէն Եգիպտացւոց. Այլ թէ
կենդանի է Տէր՝ որ հան [23]զամենայն
զաւակ՝՝ Իսրայէլի յերկրէն հիւսիսոյ,
եւ յամենայն աշխարհսն ուր մերժեաց
զնոսա անդր. եւ [24]պատասարեցույց զնո-
9 սա անդրէն յերկիր՝՝ իւրեանց ։ Ի վերայ
մարգարէից բեկաւ սիրտ իմ յիս, չար-
ժեցան ամենայն ոսկերք իմ. եւ եղէ
իբրեւ զայր մի ազձամաւոյ, եւ իբրեւ
զայր մի չարալլուկ ի գինւոյ, յերե-
սաց Տեառն, եւ յերեսաց [25]սրբութեան
10 Թեան փառաց՝՝ նորա ։ Զի լցաւ երկիր

[12]ՆԲԲ. եւ իչեսցէ այլ եւս ի Յուդա [13]ՆԲԲ. Վա՛յ հովուաց [14]ՆԲԲ. իմոյ [15]ՆԲԲ. այլ արարէք նոցա. արդ աւասիկ ես այլ արարից ձեզ [16]ՆԲԲ. ժողովեցից զնացորդս խաշանց իմոց [17]ՆԲԲ. դարձուցից [18]ՆԲԲ.յեսէ. ի վերայ նոցա [19]ՆԲԲ. վարեսցի իմաստութեամբ [20]ՆԲԲ. յապահովս [21]ՆԲԲ. կոչեսցեն, Տէր [22]ՆԲԲ. զորդիսն [23]ՆԲԲ. եւ ած զզաւակ սանն [24]ՆԲԲ. բնակեսցեն յերկրին [25]ՆԲԲ. բանից արքութեան

չնացողօք, զի յերկնայ երդման սուգ առ երկիր, ցամաքեան արօտք անա-
պատի, եւ եղեն ընթացք նոցա ի չա-
րութիւն, եւ ուժգնութիւն նոցա ոչ
11 [1]այնպէս։ Զի մարգարէ եւ քահանայ պղծեցան, եւ ի տան իմում գտի զչա-
12 րիս նոցա, ասէ Տէր։ Վասն այնորիկ եղիցի ճանապարհն նոցա նոյնն ի գայ-
թակղութիւն ի միջի, գայթակղեսցին եւ կործանեսցին ի նմին. զի ածից ի վերայ նոցա չարիս յամի այցելութեան իւրեանց, ասէ Տէր։
13 Եւ ի մարգարէսն Շամրնի տեսի անօ-
րէնութիւն. զի մարգարէացան ի ձեռն Բահաղու, եւ մոլորեցուցին զժողովուրդ
14 իմ զիսրայէլ։ Եւ ի մարգարէսն Երու-
սաղեմի տեսի սոսկալիս. զի շնային եւ երթային ղհետ ստութեանց, եւ օգնա-
կան լինէին ձեռաց չարաց, առ ի չդառ-
նալոյ իւրաքանչիւր ումեք ի ճանապար-
հէ իւրմէ չարէ. եղեն ինձ ամենեքին իբրեւ զՍոդոմ, եւ բնակիչք նորա իբ-
15 րեւ զԳոմոր։ Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց ի վերայ մարգարէիցն. Ահաւասիկ ես չամբեկից զոցա [2]դաւս, եւ արբուցից զոցա չուր դառնութեան. զի ի մարգարէիցն Երուսաղեմի եկ պղծութիւն ընդ ամենայն երկիր։
16 Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Մի լսէք բանից մարգարէիցն որ մարգա-
րէանան ձեզ. զի զրարանեն զոքա ձեզ, զտեսիլն սրտից իւրեանց խօսին, եւ ոչ
17 ի բերանոյ Տեառն։ Ասեն ասացամբեզ-
ցոյն ի բանէն Տեառն, թէ [3]խաղաղու-
թիւն եղիցի ձեզ. եւ [3]ամենեցուն որ գնան ըստ կամայ իւրեանց, եւ" ամե-
նայնի որ գնայ ըստ մոլորութեան սրտի իւրոյ, ասեն, Ոչ եկեսցէ ի վերայ քո
18 չար։ Զի ո՞վ եկաց [4]ի հաստատութեան Տեառն, եւ նայեսցի եւ լուա զբան նո-
րա. ո՞վ ունկն եդ բանի [5]իմում եւ լուաւ։
19 Ահաւասիկ չարժումն ի Տեառնէ, եւ բարկութիւն մրրկեալ չարժմամբ եկեսցէ
20 ի վերայ ամպարշտացս։ [3]Եկեսցէ եւ" մի զարձցի սրտմտութիւն Տեառն, մինչեւ արասցէ եւ հաստատեսցէ զկամարու-
թիւն սրտի [6]նորա. յետին ժամանակս
21 [7]իմասցին զայն իմանալով։ Ոչ առա-
քեայ զմարգարէսն, եւ նոքա ընթանա-
յին. ոչ խօսեցայ ընդ նոսա, եւ նոքա
22 մարգարէանային։ Եթէ կայեալ էր [4]ի հաստատութեան իմում, եւ լուսցեալ էր զբանս իմ ժողովրդեան իմում, եւ դարձուցեալ էր զնոսա ի ճանապարհացն իւրեանց չարաց, եւ ի գործոց նոցա չարաց։
23 Աստուած մերձաւոր եմ ես, ասէ
24 Տէր, եւ ոչ Աստուած հեռաւոր։ Եթէ թաքցէ՞ մարդ ի թաքստեան, եւ ես ոչ տեսից զնա, ասէ Տէր. միթէ զեր-
կինս եւ զերկիր ես ոչ լնացուցանեմ, ասէ
25 Տէր։ Լուայ զինչ խօսին մարգարէքն՝ որ մարգարէանային յանուն իմ սուտ՝
26 եւ ասէին, Երազ յերազեցաւ ինձ։ Մին-
չեւ յե՞րբ լինիցի ի սրտի մարգարէից որ մարգարէանան ստութիւն. եւ ի մար-
գարէանալ [8]զկամս սրտից իւրեանց,
27 [9]որ՝հին" մոռանալ ժողովրդեան իմոյ [9]զօ-
րէնս իմ երազովք իւրեանց, զոր սպառ-
մէին իւրաքանչիւր ընկերի իւրում, զոր օրինակ մոռացան հարքն զոցա զա-
28 նուն իմ ի ձեռն Բահաղու։ Մարգարէն յորում երազն իցէ՝ պատմեսցէ զերազն իւր, եւ յորում բանն իմ իցէ՝ պատ-
մեսցէ զբանն իմ ճշմարտութեամբ. զինչ
29 է յարդ առ ցորենաւ, ասէ Տէր։ Ո՞չ ա-
սպաքէն բանք իմ իբրեւ զհուր են, ասէ Տէր, եւ իբրեւ զմուրճ որ հատանէ
30 զվէմ։ Վասն այդորիկ ահա ես ի վերայ մարգարէիցդ, ասէ Տէր, որք գողանան զբանս իմ իւրաքանչիւր յընկերէ իւր-
31 մէ։ Ահաւասիկ ես ի վերայ մարգա-
րէիցդ, ասէ Տէր, որք [10]մերժեն զմար-
գարէս իւրեանց, եւ ներհանեն զնիրհս
32 իւրեանց"։ Ահաւասիկ ես ի վերայ մարգարէիցդ որ մարգարէանան հա-
րուած ստութեան, ասէ Տէր, եւ պատ-
մեն զայն, եւ մոլորեցուցանեն զժո-
ղովուրդն իմ ստութեամբ իւրեանց եւ մոլորութեամբ իւրեանց. եւ ես ոչ ա-
ռաքեցի զնոսա, եւ ոչ պատուիրեցի նոցա. եւ օգտութիւն ինչ ոչ օգտես-
ցեն ժողովրդեանդ այդմիկ, ասէ Տէր։
33 Եւ եթէ հարցանիցէ զքեզ ժողովուրդդ այդ, կամ մարգարէ կամ քահանայ, եւ ասասցէ, Զինչ է [11]տառապ Տեառն. եւ ասասցես ցնոսա, [12]Դուք էք տառապն. եւ

[1] ԵԲԲ. է ուղիղ [2] ԵԲԲ. աւշինդր [3] ՅԵԲԲ. պակաս
[4] ԵԲԲ. ի խորհրդեան [5] ԵԲԲ. նորա [6] ԵԲԲ. իւրոյ
[7] ԵԲԲ. իմասջիք

[8] ՆԵԲԲ. զնենգութիւն սրտից իւրեանց, (27) ՅորՀին տալ [9] ԵԲԲ. զանուն [10] ԵԲԲ. վարեն զկեղծս իւրեանց եւ ասեն, Նա ասէ [11] Կամ, պատգամ, կամ, բեռն [12] ԵԲԲ. Զի՞նչ պատգամ. եւ թողից

34 կործանեցից՝ զձիղ, ասէ Տէր, եւ մարզարէ եւ քահանայ եւ ժողովուրդ՝ որ
ասիցեն [1]Առաջ Տեառն, խնդրեցից զերիվ
ի մարդոյն յայնմանէ եւ ի տանէ նորա։
35 [2]Զի՛ ոչ նոյնպէս՝՝ ասիցէք իւրաքան-
չիւր ընկերի իւր եւ իւրաքանչիւր ընդ-
բայր իւր՝ թէ Զի՞նչ պատասխանի ա-
36 րար Տէր, եւ զի՞նչ խօսեցաւ Տէր։ Եւ
[1]առաջ Տեառն մի՛ եւս անուանէք, զի
[1]առաջ Տեառն եղիցի մարդոյ բանն նո-
րա. եւ [3]դարձուցանիցէք զբանս Ա-
աստուծոյ կենդանւոյ՝ Տեառն զօրութեանց
37 Աստուծոյ մերոյ։ Այլ այդպէս ասասջիք
ցմարգարէն, Զի՞նչ արար քեզ պատաս-
խանի Տէր, եւ զի՞նչ խօսեցաւ Տէր։
38 Եթէ [1]առաջ Տեառն ասիցէք, վասն այ-
գորիկ այսպէս ասէ Տէր. Փոխանակ զի
ասացէք զբանդ՝ [1]առաջ Տեառն, եւ ես
առաքեցի առ ձեզ՝ ասել, Մի՛ ասիցէք
39 [1]առաջ Տեառն, վասն այդորիկ ահա-
սասիկ ես [4]առից զձեզ առիւ՝՝, եւ կոր-
ծանեցից զձեզ եւ զքաղաքդ զոր ետու
ձեզ եւ հարցն ձերոյ յերեսաց իմոյ.
40 Եւ տայ ի վերայ ձեր նախատինս յա-
ւիտենից, եւ անարգանս յաւիտենից՝
որ ոչ մոռացցին։

Գլ. ԻԻ

1 Եւ եղեալ ինձ Տէր երկուս կողովս թզոյ,
որ կային առաջի տաճարին Տեառն.
յետ զերկոցուն Նաբուքոդոնոսորայ ար-
քային Բաբելացւոց զՅեքոնիա որդի
Յովակիմայ արքայի Յուդայ, եւ զիշ-
խանս Յուդայ, եւ [5]զարուեստագէտսն
եւ զկապանաւորակապսն եւ զմնծամնծա՝՝
յերուսաղեմէ, եւ տարաւ զնոսա ի Բա-
2 բելն։ Կողով մի յոյժ քաղցր թզոյ՝ իբ-
րեւ զկանխահաս թզոյ, եւ կողովն երկ-
րորդ՝ ժանտահամ թզոյ, որ ոչ ուտիցի
3 ի ժանտութենէ իւրմէ։ Եւ ասէ ցիս Տէր,
Զի՞նչ տեսանես, Երեմիա. եւ ասեմ,
Թուզ, թուզ քաղցր եւ առաւել քաղցր.
եւ թուզ ժանտ եւ առաւել ժանտ, որ
ոչ ուտիցի ի ժանտութենէ իւրմէ։
4 Եւ եղեւ բան Տեառն առ [6]Երեմիա,
եւ ասէ, Այսպէս ասէ Տէր Աստուած
5 Իսրայելի. Իբրեւ զկողով քաղցր, այս-
պէս ծանեայց զգերեալսդ Յուդայ, զոր
առաքեցի ի տեղւոջէդ յայսմանէ յեր-
6 կիրն Քաղդէացւոց յիւրաքանչիւր.
հասատատեցից զաչս իմ ի վերայ նոցա ի
բարութիւն, եւ [7]դարձուսցից զնոսա
ի սոյն երկիր. եւ չինեցից զնոսա եւ
ոչ քակեցից, եւ անկուսցից զնոսա եւ ոչ
7 խլեցից։ Եւ տայց նոցա սիրտ ճանաչել
զիս՝ թէ ես եմ Տէր, եւ եղիցին ինձ ի
ժողովուրդ, եւ ես եղէց նոցա Աս-
տուած. զի դարձցին առ իս յամենայն
8 սրտէ իւրեանց։ Եւ իբրեւ զՍեդեկիա ժան-
տ՝՝ զոր ոչ ուտի ի ժանտութենէ իւրմէ, այս-
պէս ասէ Տէր, այդպէս մատնեցից զՍե-
դեկիա արքայ Յուդայ, եւ զմնծամնծա
նորա, եւ զնեցաւորդս Երուսաղեմի,
զնեցաւորդս երկրիդ այդորիկ, եւ զգնա-
9 կեալսն յերկիրսս։ Եւ տայց զդոսա [8]ի
չրուէին ընդ ամենայն թագաւորութիւնս
երկրի, եւ ի նախատինս եւ յառակ եւ
յառակութիւն եւ յանէծս յամենայն տե-
10 զիս ուր մերժեցից զդոսա անդր։ Եւ
առաքեցից ի դոսա սուր եւ սով եւ մահ,
մինչեւ պակասեցին յերկրէդ զոր ե-
տու դոցա եւ հարց իւրեանց։

Գլ. ԻԵ

1 Բանն որ եղեւ առ Երեմիա վասն Ժո-
զովրդեանն Յուդայ, յամին չորրորդի
Յովակիմայ որդւոյ Յովսեայ արքայի
Յուդայ, այն ամ առաջին էր Նաբու-
քոդոնոսորայ արքային Բաբելացւոց,
2 Զբանն զոր խօսեցաւ Երեմիա մարգա-
րէ առ ամենայն ժողովուրդն Յուդայ,
եւ առ բնակիչս Երուսաղեմի, եւ ասէ,
3 Յերկրորդաւաներորդէ ամէ Յովսեայ որդ-
ւոյ Ամովնայ արքայի Յուդայ մինչեւ
ցայսօր՝ այս քառասներեք ամք, զի ե-
ղեւ բան Տեառն առ իս, եւ խօսեցայ
ընդ ձեզ կանխեալ ընդ առաւօտս եւ ա-
4 սէի, եւ ոչ լուարուք։ Եւ առաքեցի
առ ձեզ զծառայս իմ զմարգարէս ընդ
առաւօտս արձակեալ, եւ ոչ լուարուք,
եւ ոչ անսացէք ականջօք ձերովք լսել։
5 Ասէի, Դարձարուք իւրաքանչիւր ի ճա-
նապարհէ իւրմէ չարէ, եւ ի գործոց
ձերոց չարաց. եւ բնակեսջիք յերկրիդ
զոր ետու ձեզ եւ հարց ձերոց յաւի-
6 տենից մինչեւ ցյաւիտեան. Եւ մի՛ եր-
թայք զհետ աստուածոց օտարաց՝ ծա-
ռայել նոցա եւ երկիր պագանել, եւ
մի՛ բարկացուսցանէք զիս գործովք ձեռաց

[1] Կամ, Պատգամ, կամ, Բեռն [2] Եբր. Այսպէս [3] Եբր. եղծէք [4] Եբր. մոռացայց զձեզ մոռա-
նալով [5] Եբր. զհնձան եւ զդարբին [6] Եբր. ի [7] Եբր. ածից [8] Եբր. ի ցրուումն, ի թշուառութիւն

7 ձերոց չարչարել զձեզ ։ Եւ ոչ լուարուք
ինձ, ասէ Տէր, զի բարկացուցանիցէք զիս
գործովք ձեռաց ձերոց չարչարել զձեզ ։
8 Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր զօ-
բաւթեանց. Զի ոչ հաւատացէք բանից
9 իմոց, Ահաւասիկ ես առաքեմ, եւ ա-
ռից զամենայն ազգս հիւսիսոյ, ասէ
Տէր, եւ զնաբուքոդոնոսար արքայ Բա-
բելացւոց զծառայ իմ, եւ ածից զնոսա
ի վերայ երկրիդ այդորիկ եւ ի վերայ
բնակչաց գորա, եւ ի վերայ ամենայն
ազգաց որ չուրջ զդովաս. եւ աւերեա-
ցից զդոսա, եւ առց զդոսա [1]յապակա-
նութիւն եւ ի չչիւն եւ ի նախատինս"
10 յաւիտենից ։ Եւ կորուսից ի գոյանէ
զձայն ուրախութեան եւ զձայն ցնծու-
թեան, եւ զձայն փեսայի եւ զձայն հար-
սին, զձայն երկանի եւ զլոյս ճրագի ։
11 Եւ եղիցի ամենայն երկիրդ այդ յաւե-
րակ եւ յապականութիւն, եւ ծառա-
յեսցեն [2]ազգսդայն այնոցիկ եւ" արքա-
յին Բաբելացւոց զեւթանասուն աւ ։
12 Եւ ի կատարել ամացն եւթանասնից՝
լնդրեցից զվրէժս ի թագաւորէն Բա-
բելացւոց եւ յազգէն յայնմանէ, ասէ
Տէր, բաս անօրէնութեանց նոցա, եւ
յերկրէն Քաղդէացւոց. եւ եղից [3]զնա-
13 սս յապականութիւն յաւիտենական ։ Եւ
ածից ի վերայ ամենայն երկրին այնո-
րիկ զամենայն բանս իմ զոր խօսեցայ
վասն նորա՝ ըստ ամենայն գրելոցս ի
գիրս յայսմիկ, զոր մարգարէացաւ Ե-
14 րեմիա ի վերայ ամենայն ազգաց. Զի
[4]ծառայեցին ի մէջ նոցա. քանզի եւ
նոքա" ազգք բազումք եւ թագաւորու-
թիւնք մեծամեծք [5]են, եւ հատուցից
նոցա ըստ անօրէնութեանն նոցա, եւ
ըստ գործոց ձեռաց նոցա ։
15 Զի այսպէս ասէ ցիս Տէր Աստուած
Իսրայէլի. Առ զբաժակ գինւոյս [6]անա-
պակիս այսորիկ ի ձեռաց իմոց, եւ ար-
բուսցես զդա ամենայն ազգաց առ որս
16 առաքեմ զքեզ. Արբցեն, եւ [7]քամևա-
ցեն, եւ մոլեսցին յերեսաց սրոյն, զոր
17 ես առաքեցից ի մէջ դոցա ։ Եւ առի
զբաժակն ի ձեռանէ Տեառն, եւ ար-
բուցի ամենայն ազգաց առ որս առա-
18 քեաց զիս Տէր. Երուսաղէմի եւ քա-
զաքացն Ցուդայ, եւ թագաւորաց նո-
ցա եւ իշխանաց նոցա, դնել զնոսա
յաւերակ եւ յանապատ եւ ի չչիւն եւ
19 յանէծս ըստ աւուրս ըստ այսմիկ. Եւ
Փարաւոնի արքայի Եգիպտացւոց, եւ
ծառայից նորա եւ մեծամեծաց նորա,
20 եւ ամենայն ազգի նորա, Եւ ամենայն
խառնիճաղանճ զօրաց նորա. եւ ամե-
նայն թագաւորաց [8]կղզեայն, եւ ամե-
նայն թագաւորաց երկրին այլազգեաց՝
Ասկաղոնի եւ Գազայ եւ Ակկարոնի,
21 եւ մնացորդացն Ազովտայ, Եւ Եդոմայ
եւ Մովաբացւոցն եւ որդւոցն Ամո-
22 նայ, Եւ ամենայն թագաւորացն Տիւ-
րոսի, եւ ամենայն թագաւորացն Սի-
դովնացւոց, եւ թագաւորաց կղզեայն
23 որ յայն կոյս ծովուն. Եւ Դեդանայ, եւ
Թեմանայ, եւ Բովկայ, եւ ամենայն
24 յապաւէնացն վերնաօք. Եւ ամենայն
թագաւորացն Սրաբացւոց, եւ ամենայն
թագաւորաց խառնադանճից՝ օթագայե-
25 նոյն յանապատին. Եւ ամենայն թա-
գաւորացն Զամբրեայ, եւ ամենայն թա-
գաւորացն Եղամայ, եւ ամենայն թա-
26 գաւորացն Պարսից. Եւ ամենայն թա-
գաւորացն հիւսիսոյ [9]այեւելից, միր-
ձաւորաց եւ հեռաւորաց իւրաքանչիւր
առ եղբօր իւրում, եւ ամենայն թագա-
ւորաց երկրի, որ ի վերայ երեսաց երկ-
րի. եւ թագաւորն Սիսակ արբցէ յետ
27 ամենեցուն ։ Եւ ասասցես ցնոսա, Այս-
պէս ասէ Տէր ամենակալ Աստուած Իս-
րայէլի. Արբէք եւ արբեցարուք, [10]ի-
մարեցարուք, եւ կործանեցարուք եւ
մի՛ կանգնեսջիք յերեսաց սրոյն զոր ես
28 առաքիցիմ ի մէջ ձեր ։ Եւ եղիցի յոր-
ժամ ոչ կամիցին ընդունել զբաժակն ի
ձեռանէ քումմէ ըմպել, ասասցես ցնո-
սա, Այսպէս ասէ Տէր զօրութեանց.
29 Ըմպելով արբջիք. Զի ահա ի քաղաքէն՝
յորում կոչեցեալ է անուն իմ ի նմա,
արարիդ սկիզբն չարչարելոյ, եւ դուք
արբելով արբցի՞ք. ոչ արբիջիք. Զի
սուր կոչեցից ես ի վերայ ամենեցուն որ
բնակեալ են յերկրի, ասէ Տէր զօրու-
30 թեանց ։ Եւ դու մարգարէացիս ի վե-
րայ նոցա զամենայն զբանս զայս-
սոսիկ, եւ ասասցես ցնոսա, Տէր [10]ի
բարձանց ի սրբութենէ իւրմէ տացէ

---

1 Եբր. յապչութիւն եւ ի չչիւն եւ յաւերժութիւն
2 Եբր. ազգքն այնորիկ 3 Եբր. զնա 4 Եբր. և զնոսա ծառայեցուցեն 5 Յ Եբր. գոլոսք
6 Եբր. ցասմանս 7 Եբր. խառվեսցին
8 Եբր. երկրին Հռոս 9 Եբր. եւ փսխեցէք 10 Եբր. ի բարձանց գոռասցէ, եւ ի բնակութենէ սրբութեան իւրոյ տացէ զձայն իւր. գոռալով

հրաման, տացէ զձայն իւր, զբան հրամանի ի անդս ոչխ իւրմէ. եւ նոքա իրրեւ կիսօդք տացեն պատասխանի ի վերայ ամենայն բնակչաց երկրի, իմէ ահն
31 ասասկուստն ի կողմանէ երկրին. Զի դատաստան Տեառն է ի մէջ ազգաց, եւ դատեսցի ինքն զամենայն մարմին. եւ ամպարիշտք առանն՝ ի սուր, ասէ Տէր։
32 Այսպէս ասէ Տէր զօրութիւնաց. Ահա հասուցիկ չարիք դան յազգէ ի վերայ ազգի, եւ մրրիկ մեծ ելցէ ի ծագաց
33 երկրէ։ Եւ եղիցին վիրաւորք ի Տեառնէ յաւուր [1]Տեառն՝ ի կողմանէ մինչեւ ցկողմն երկրին. մի՛ կոծեսցին եւ մի՛ ժողովեսցին[2], ընդ երեսս գաչսին իրրեւ զպղր ընկեսցին։
34 Դուժեցէք, հովիւք, եւ աղաղակեցէք, եւ [3]կոծեցարուք, խոչք մաքեաց՝. դի կատարեցան աւուրք ձեր ի սպանումն եւ ի ցրումն ձեր. կործանիսջիք
35 իրրեւ [4]խոչք ընտիրք։ Եւ կորիցէ փախուստ ի հովուաց, եւ փրկութիւն ի
36 [5]խոչոյն մաքեաց՝։ Ձայն դուժի հովուաց, եւ ազաղակ [5]խոչոյն մաքեաց՝. դի սպա-
37 ռնաց Տէր զարօտս նոցա։ Եւ [6]դադարեցէք զնդակսխիւն՝ խաղաղութիւնն յերեսաց բարկութեան սրտմտութեան
38 Տեառն։ [7]Թողն իրրեւ առիւծ զմորի իւր, [8]եւ եղեւ երկիր նոցա յանապատ՝ յերեսաց բարկութեան սրտմտութեան սրոյն մնծի, եւ յերեսաց բարկութեան սրտմտութեան նորա։

ԳԼ. Իզ

1 Ի սկզբան թագաւորութեան Յովսկիմայ որդւոյ Յովսեայ արքայի Յուդայ՝ եղեւ բանս այս ի Տեառնէ, եւ ասէ,
2 Այսպէս ասէ Տէր. Կաց [9]ի սրահի տանն Տեառն, եւ մարգարէացիս ամենայն տանն՝ Յուդայ ոյք դայցին երկիր պա-

---

գոռասցէ ի վերայ արօտի իւրոյ, իրրեւ ի գոչիւն կոխողաց տացէ պատասխանի ամենայն բնակչաց երկրի։ (31) Եկն աղաղակ մինչեւ ի ծագս երկրի. զի դատաստան Տեառն է ընդ ազգս, վարեսցէ նա դատ ընդ ամենայն մարմնոյ, եւ զամբարիշտս մատնեսցէ
[1]ՆԵԲՐ. յայնմիկ [2]ՆԵԲՐ.ՅԵՒԼԼ, եւ մի՛ թաղեսցին [3]ՆԵԲՐ. ընդ հեխ. թաւալեսջիք, ընտիրք խաչին [4]ՆԵԲՐ. անօմք [5]ՆԵԲՐ. պատառականացեալ խաչին [6]ՆԵԲՐ.լռեցէք բնակութիւնք [7]ՆԵԲՐ. եմոզ [8]ՆԵԲՐ. զի [9]ՆԵԲՐ. ի գաւթի տանն Տեառն, եւ խօսեսցիս առ ամենայն քաղաքս

դանել ի տանն Տեառն՝ զամենայն բանս զոր [10]կարգեցի առ քեզ մարգարէանալ՝ նոցա. մի՛ նահանջեսս մինչ ի բանիցդ։
3 Թերեւս լսիցեն եւ դարձցին իւրաքանչիւր ի ճանապարհէ իւրմէ չարէ, եւ մեղմացայց ես ի չարեացն զոր խորհիմ ես առնել նոցա վասն չարութեան
4 դնացից նոցա։ Եւ ասասցես ցնոսա, Այսպէս ասէ Տէր. եթէ ոչ լսիցէք ինձ գնալ յօրէնս իմ զոր եառու յանդիման
5 ձեր, լսել բանից ծառայից իմոց մարգարէից՝ զոր ես առաքեցի առ ձեզ կանխաւ. եւ առաքեցի, եւ ոչ լսարուք.
6 Եւ արարից զտունդ զայդ իրրեւ զԱիղոմի, եւ զքաղաքս զայս տացս յանէծս ամենայն ազգաց երկրի։
7 Եւ լսեան քահանայքն եւ [11]առաջնորդքն եւ ամենայն ժողովուրդն ի խօսել Երեմիայի զբանս զայսոսիկ ի տանն
8 Տեառն։ Եւ եղեւ ի դադարել Երեմիայի ի խօսելոյն՝ ըստ ամենայնի զոր հրամայեաց նմա Տէր խօսել առ ամենայն ժողովուրդն, կալան զնա քահանայքն եւ [11]առաջնորդքն մարգարէքն եւ ամենայն ժողովուրդն, եւ ասեն, Մահու մեռցիս.
9 Զի՞ մարգարէացար յանուն Տեառն եւ ասացեր՝ թէ Իրրեւ զԱիղոմի եղիցի տունս այս, եւ քաղաքս աւերեսցի ի բնակչաց. եւ կուտեցաւ ժողովուրդն ի վերայ Երեմիայի ի տան Տեառն։ Եւ լսեան իշխանքն Յուդայ զբանս զայսոսիկ, եւ ելին ի տանէ թագաւորին ի տունն Տեառն, եւ նստան առաջի դրան Տեառն
11 նորոյ։ Եւ ասեն քահանայքն եւ [11]առաջնորդքն մարգարէքն իշխանացն եւ ամենայն ժողովրդեան, Դատաստան մահու է առնդ այսմիկ, զի մարգարէացաւ զքաղաքէս զայսմանէ, որպէս ականջօք լսեսջիք։
12 Եւ ասէ Երեմիա ամենեսեան իշխանացն եւ ամենայն ժողովրդեան, Տէր առաքեաց զիս մարգարէանալ ի վերայ տանդ այդորիկ եւ ի վերայ քաղաքիս զամենայն
13 նայն բանս զոր լսեսարուք։ Եւ արդ ուղղեցէք զճանապարհս ձեր եւ զդործս ձեր, եւ լսարուք ձայնի Տեառն Աստուծոյ ձերոյ, եւ մեղմասցի Տէր ի չարեացն զոր խօսեցաւ ի վերայ ձեր։
14 Եւ ես առասիկ կամ ի ձեռս ձեր, արարէք

---

[10]ՆԵԲՐ. պատուիրեցի քեզ խօսել [11]ՑԱՆՁ. դ-ւ-ս-ե

ընդ իս որպէս եւ [1]ձեզ օգուտ եւ լաւ
15 իցէ"։ Բայց դիտելով դիտասջիք, զի
մէկ սպանանէք դուք զիս, արիւն ան-
պարտ արկանէք ի վերայ ձեր եւ ի վե-
րայ քաղաքիս այսորիկ եւ ի վերայ բնակ-
չաց սորա. զի ճշմարտութեամբ առա-
քեաց զիս Տէր առ ձեզ, խօսել յականջս
ձեր զամենայն բանս զայսոսիկ։
16 Եւ ասեն իշխանքն եւ ամենայն ժո-
ղովուրդն ցքահանայս եւ ցմարգա-
րէսն, Ոչ է դատաստան մահու այդորիկ, զի յանուն Տեառն Աստուծոյ[2]
17 խօսեցաւ առ մեզ։ Ոմանք կային արք
ի ծերոց երկրին, եւ ասեն ցամենայն ժո-
18 ղովս ժողովրդոցն, Միքիէ Մորաստացի
մարգարէանայր յաւուրս Եզեկիայ արա-
քայի Յուդայ. խօսեցաւ ընդ ամենայն
ժողովրդեանն Յուդայ եւ ասէ, Այսպէս
ասէ Տէր զօրութեանց. Սիան իբրեւ
դաշտակ արօրագիր լինի, եւ Երու-
սաղէմ իբրեւ [3]դհիւզ մրգաստանաց, եւ
լեառն տանդ եղիցի իբրեւ գանատա
19 մայրուց"։ Միթէ սպանանելով սպան զնա
Եզեկիա արքայ Յուդայ եւ ամենայն
Հրէաստան. ո՞չ ապաքէն զահի [4]հարան ի
Տեառնէ, եւ խնդրեցին յերեսաց Տեառն.
եւ դարձաւ Տէր յամենայն չարեացն
զոր խօսեցաւ ի վերայ նոցա. եւ մեք
արարած չարիս մեծամեծս յանձինս մեր։
20 Եւ այր մի մարգարէանայր յանուն
Տեառն, Ուրիա որդի Սամեայ ի Կարիաթ-
արիմայ. եւ մարգարէացաւ ի վերայ
քաղաքիս այսորիկ, եւ ի վերայ երկրիս
այսորիկ ըստ ամենայն բանից Երեմիա-
21 յի։ Եւ լուաւ արքայ Յովակիմ, եւ ա-
մենայն զօրաւորք իւր եւ ամենայն իշ-
խանք զամենայն բանս նորա, եւ [5]խնդրէին
սպանանել զնա. եւ լուաւ Ուրիա, եր-
կնաւ եւ վախեաւ եւ գնաց յերկիրն Ե-
22 գիպտացւոց։ Եւ առաքեաց արքայ Յո-
վակիմ արս յԵգիպտոս. զԵղնաթան որ-
դի Աքովբորայ եւ արս ընդ նմա յԵ-
23 գիպտոս. Եւ հանին զնա անտի եւ ա-
ծին առ արքայն Յովակիմ, եւ սպան զնա
սրով, եւ ընկէց ի չիրիմ որդւոց ժո-
24 ղովրդեան իւրոյ։ Բայց ձեռն Աքիկա-
մայ որդւոյ Սափանայ էր ընդ Երեմիա-

[1] Ներ. լաւ եւ ուղիղ իցէ յաչս ձեր [2] Ներ. յեղէն յ--ել-- , մերոյ [3] Ներ. զկոյտս աւե-
րակաց, եւ լեառն տանդ եղիցի իբրեւ զբարձ-
րաւանդակ անտառի [4] Ներ. Հարաւ նա
ի Տեառնէ և եկաց յաղօթս առաջի [5] Ներ.
խնդրեաց արքայ

յի, զի մի մատնեսցի ի ձեռս ժողովր-
դեանն սպանանել զնա։

Գլ. Լէ

1 Ի սկզբան թագաւորութեանն Յովակի-
մայ որդւոյ Յովսեայ արքայի Յուդայ
եղեւ բանս այս առ Երեմիա ի Տեառնէ,
2 եւ ասէ, Այսպէս ասէ Տէր ցիս. Այս
դու քեզ կապանս եւ անուրս, եւ արկ
3 ընդ պարանոց քո. Եւ առաքեսցես զայն
առ թագաւորն Եդովմայեցւոց, եւ առ
թագաւորն Մովաբացւոց, եւ առ թա-
գաւոր որդւոցն Ամմոնայ, եւ առ թա-
գաւորն Տիւրոսի, եւ առ թագաւորն
Սիդոնացւոց, ի ձեռն հրեչտակաց նոցա
որ գան յԵրուսաղէմ առ Սեդեկիա ար-
4 քայ Յուդայ. Եւ պատուիրեսցես նոցա
ասել ցտեարս իւրեանց, Այսպէս ասէ
Տէր զօրութեանց Աստուած Իսրայելի.
5 Այսպէս ասասջիք ցտեարսն ձեր. Ես
արարի զերկիր եւ զմարդիկ եւ զանաս-
նսն, եւ որ ինչ ի վերայ երեսաց երկ-
րի զօրութեամբ խոյով մեծաւ եւ բազ-
կաւ խոյով բարձու. եւ ասաց զնա ում
6 եւ կամ իցէ տալցի աչաց իմոց։ Եւ արդ
ես եմ որ ետու զամենայն [6]երկիր ի
ձեռս Նաբուքոդոնոսորայ արքային Բա-
բելացւոց ծառայի իմոյ, նա եւ զգա-
զանս անասնոյն [7]ի գործ արկանել, եւ"
7 ետու նմա ի ծառայութիւն։ Եւ ծառա-
յեսցեն նմա ամենայն ազգք, եւ որդ-
ւոյ նորա եւ որդւոյ որդւոյ նորա, մին-
չեւ եկեսցէ ժամանակ [8]բարկութեան
երկրի նորա, եւ ծառայեսցեն նմա"
ազգ բազումք եւ թագաւորք մեծա-
8 մեծք։ Եւ եղիցի՝ ազգ եւ թագաւո-
րութիւն որ ոչ ծառայեսցեն Նաբուքո-
դոնոսորայ արքայի Բաբելացւոց, եւ
որք մինդամ ոչ մուծցեն զպարանոցս
իւրեանց ընդ լծոյ արքային Բաբելաց-
ւոց, սրով եւ սովիւ եւ մահաւամբ ա-
րարից այցելութիւն ի վերայ ազգին այ-
նորիկ ասէ Տէր, մինչեւ [9]ասատկեսցին
ի ձեռաց" նորա։
9 Եւ դուք մի՛ լսէք մարգարէից ձերոց
եւ ըղձութիւնս ձերոց եւ երազոց ձե-
րոց եւ կիսոից ձերոց եւ [7]հաւա-
հմայից ձերոց եւ" կախարդաց ձերոց,
որք ասեն ձեզ մէկ ոչ հարկիցէք

[6] Ներ. երկիրս զայսոսիկ [7] Ներ. գ-ո-ւ [8] Ներ.
երկրի նորա. եւ արասցեն զնա ծառայ [9] Ներ.
ասատկել ինձ զնոսա ի ձեռն

10 արքային Բաբելացւոց. Զի սուտ մար-
դարէանան զձեզ՝ առ ի հեռացու-
ցանելոց զձեզ յերկրէդ ձերմէ, եւ կորու-
11 ցիս զձեզ եւ կորիջիք։ Եւ ազգ որ մա-
ծանիցէ զոլարանոց իւր ընդ լծոյ ար-
քային Բաբելացւոց, եւ կացցէ նմա ի
հարկի՝ մողիս զնա յերկրի իւրում, ա-
սէ Տէր, եւ գործասցէ զնա եւ լինակասցէ
ի նմա։
12 Եւ առ Սեդեկիա արքայ Յուդայ խօ-
սեցայ ըստ ամենայն բանիցս այսոցիկ,
եւ ասեմ, Մուծէք զոլարանոցս ձեր ընդ
լծոյ արքային Բաբելացւոց, եւ ծառա-
յեցէք նմա եւ ազգի նորա, եւ կեցջիք։
13 Եւ ընդէ՞ր մեռանիք, դու եւ ժողովուրդ
քո, սրով եւ սովով եւ մահուամբ, որ-
պէս եւ խօսեցաւ Տէր առ ազգ, որ ոչ
14 ծառայիցէ արքային Բաբելացւոց։ Մի՛
լսէք բանից մարգարէիցն որ ասեն ձեզ՝
ՔԷ [1]Մի՛ հարկիք՝ արքային Բաբելաց-
ւոց. զուր մարգարէանան նոքա ձեզ։
15 Զի ոչ առաքեցի զնոսա, ասէ Տէր, եւ
նոքա մարգարէանան յանուն իմ սուտ
առ ի կորուսանելոյ զձեզ. եւ կորիջէք
դուք եւ մարգարէքդ, որ մարգարէա-
նան ձեզ [2]ստարասարտուց առաքեամբ։՝
16 Եւ ցքահանայս եւ ցամենայն ժողո-
վուրդն՝ [3]զոր խօսեցայ առաջեւ՝՝ Այս-
պէս ասէ Տէր. Մի՛ լսէք բանից մար-
գարէիցն որ մարգարէանան ձեզ եւ ա-
սեն, Ահա սպաս տան Տհառն դարձցի
ի Բաբելոնէ այժմ ընդ հուպ. [4]զուր մար-
գարէանան ձեզ, եւ ես ոչ առաքեցի
17 զնոսա՝՝։ Մի՛ լսէք նոցա, այլ ծառայե-
ցէք արքային Բաբելացւոց՝ եւ կեցջիք.
եւ ընդէ՞ր լինիցի քաղաքդ աւերակ։
18 Եթէ մարգարէք իցեն եւ իցէ բան Տհառն
առ նոսա, [5]նկուցցեն եւ յանդիման լի-
ցին ինձ. զի այսպէս ասէ Տէր. Եւ
մնացեալ սպասն զոր ոչ առ արքայն
Բաբելացւոց՝ յորժամ գերեաց զՅեքո-
նիա յԵրուսաղէմէ, ի Բաբելոն գերիս-
ցէ, ասէ Տէր զօրութեանց, Այլ վասն
չերիմալոյ սպասուցն մնացելոց ի տան
Տհառն եւ ի տան թագաւորին Յուդայ
19 յԵրուսաղէմէ ի Բաբելոն, Այսպէս՝՝ ասէ

[1] ՆԲԲ. Ոչ լինիցիք ծառայք [2] ՅԱՒԲ. պատեհ
[3] ՆԲԲ. խօսեցայ եւ ասեմ [4] ՆԲԲ. զի զուր
մարգարէանան ձեզ [5] ՆԲԲ. աղաչեցին զՏէր
զօրութեանց, զի մի՛ երթիցեն սպասք մնաց-
եալք ի տան Տհառն, եւ ի տան թագաւո-
րին Յուդայ, եւ յԵրուսաղէմ՝՝ ի Բաբելոն։
(19) Զի այսպէս

Տէր զօրութեանց վասն սեանցն եւ վասն
ծովեզն եւ վասն մեքենովթիցն եւ մնա-
ցորդաց սպասուցն՝ որ մնացին ի քա-
20 ղաքիդ յայդմիկ, Զոր ոչ առ Նաբու քո-
դոնոսոր արքայ Բաբելացւոց ի գերին
իւրում զՅեքոնիա որդի Յովակիմայ ար-
քայի Յուդայ յԵրուսաղէմէ ի Բաբել-
լոն, եւ զամենայն ազատսն Յուդայ
21 եւ զերուսաղէմի, Այսպէս ասէ Տէր
զօրութեանց Աստուած Իսրայէլի վասն
սպասուցն մնացելոց ի տան Տհառն, եւ
ի տան թագաւորին Յուդայ եւ յԵրու-
22 սաղէմ. Ի Բաբելոն երթիցեն, եւ անդ
եղիցին մինչեւ յօրն յորում այց արա-
րից նոցա, [2]այսպէս ասէ Տէր. Հանից
զնոսա եւ դարձուցից ի տեղիս յայդ։

ԳԼ. ԻԸ

1 Եւ եղեւ յամին յայնմիկ ի սկզբան թա-
գաւորութեանն Սեդեկիայ արքայի Յու-
դայ, յամին չորրորդի՝ յամսեանն հին-
գերորդի, ասէ ցիս Անանիա որդի Ա-
զովրայ [2]սուտ մարգարէ ի Գաբաւոնէ,
ի տան Տհառն առաջի քահանայիցն եւ
2 ամենայն ժողովրդեանն[6], Այսպէս ասէ
Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի.
[7]Թօրտակեսցի լուծ՝՝ արքային Բաբելաց-
3 ւոց. [8]Եւ ետ այլ եւս երկուց ամաց՝՝ ա-
ւուրց, եւ ես դարձուցից ի տեղիս յայդ
զամենայն սպաս տանն Տհառն, զոր
միանգամ առ Նաբուքոդոնոսոր արքայ
Բաբելացւոց ի տեղւոջէդ յայդմանէ, եւ
4 տարաւ ի Բաբելոն. Եւ զՅեքոնիա որ-
դի Յովակիմայ արքայի Յուդայ, եւ զա-
մենայն գերեալսն Հրէաստանի որք
մտին ի Բաբելոն, դարձուցից ես ի տե-
ղիս յայս, ասէ Տէր, [2]եւ զՅեքոնիա եւ
զգերեալսն Յուդայ՝՝ զի խորտակե-
ցից զլուծ արքային Բաբելացւոց։
5 Եւ ասէ Երեմիա մարգարէ ցԱնանիա
[2]սուտ մարգարէ՝ առաջի քահանայիցն
եւ առաջի ամենայն ժողովրդեանն որ
6 կային ի տան Տհառն, [9]Այդպարեւ այդ-
պէս արասցէ Տէր, հաստատեսցէ զբան
քո զոր մարգարէացար, դարձուցանել
զսպաս [10]տանդ այդորիկ՝՝ եւ զամենայն
7 գերին ի Բաբելոնէ ի տեղիս յայս։ Բայց

[6] ՆԲԲ-ՅԵՒԷ. եւ ասէ [7] ՆԲԲ. Թօրտա-
կեցի զլուծ [8] ՆԲԲ. Մինչեւ յերկուս ամս
[9] ՆԲԲ. Եւ ասէ Երեմիա մարգարէ, Ամէն. [10] ՆԲԲ.
տանն Տհառն

[1]լուարուք զպատգամս Տեառն՝ զոր ես
ասեմ յականջս ձեր եւ յականջս ամե-
8նայն ժողովրդեանդ ։ Մարգարէք որ ե-
ղեն յառաջ քան զիս եւ զքեզ՝ յաւե-
տենից , եւ մարգարէացան ի վերայ բա-
զում աշխարհաց եւ մեծամեծ թագա-
ւորութեանց , ի պատերազմ եւ ի չարիս
9եւ ի մահ . Մարգարէ որ մարգարէա-
նայ խաղաղութիւն, եւ լիցի բան մար-
գարէին , ծանիցին զմարգարէն զոր ա-
ռաքեաց նոցա Տէր հաւատարմութեամբ։
10 Եւ առ Անանիա մարգարէ առաջի ա-
մենայն ժողովրդեանն զանուրան ի պա-
րանոցէ երեմեայ մարգարէի եւ խոր-
11տակեաց ։ Եւ ասէ Անանիա առաջի ա-
մենայն ժողովրդեանն, Այսպէս ասէ Տէր.
Այդպէս խորտակեցից զլուծ Նաբուքո-
դոնոսորայ արքայի Բաբելացւոց [2]յետ
երկուց ամաց՝ աւուրց ի պարանոցէ ա-
մենայն ազգաց ։ Եւ գնաց Երեմիա մար-
գարէ զճանապարհս իւր ։
12 Եւ եղեւ բան Տեառն առ Երեմիա
յետ խորտակելոյն Անանեայ մարգարէի
զանուրան ի պարանոցէ Երեմեայ մարգա-
13րէի , եւ ասէ , Երթ խօսեայ ընդ Ա-
նանեայ եւ առասպես, Այսպէս ասէ Տէր .
Անուրս փայտեղէնս խորտակեցեր , եւ
արարից ընդ այնր անուրս երկաթիս ։
14 Զի այսպէս ասէ Տէր զօրութեանց Աս-
տուած Իսրայելի . Լուծ երկաթի եդի ի
վերայ պարանոցի ամենայն ազգացդ այ-
գոյիկ՝ հարկել Նաբուքոդոնոսորայ ար-
քային Բաբելացւոց , եւ ծառայեսցեն
նմա . նոյնիւ զդազանս անասնոյն ե-
տու նմա ։
15 Եւ ասէ Երեմիա մարգարէ ցԱնանիա
մարգարէ , Արդ լուր , Անանիա , ոչ ա-
ռաքեաց զքեզ Տէր , եւ դու ի զուր յու-
սացուցեր զժողովուրդդ զայդ ի նանի-
16րութիւնս ։ Վասն այդորիկ այսպէս ա-
սէ Տէր . Ահա ես արձակեցից զքեզ յե-
րեսաց երկրիդ , եւ ի սմին տարւոջ մեռ-
կիր դու , զի խոտորումն խօսեցար ի
17 Տեառնէ ։ Եւ մեռաւ Անանիա մարգա-
րէ յամին յայնմիկ , յամսեանն եւթնե-
րորդի ։

Գլ . Իթ

1 Եւ այս բանք են թղթոյն զոր առաք-
եաց Երեմիա մարգարէ յԵրուսաղեմէ
առ [3]ծերս գերութեանն եւ առ քա-
հանայս եւ առ [4]սուտ մարգարէսն ,
Թուղթ ի Բաբելոն առ գերին՝ եւ
առ ամենայն ժողովուրդն զոր գերեաց
Նաբուքոդոնոսոր յԵրուսաղեմէ ի Բա-
2բելոն , Յետ [5]տանելոյ Եկեքոնեայ ար-
քայի եւ սիկնոյն եւ ներքինեայ եւ
իշխանաց Յուդայ [6]յԵրուսաղեմէ , եւ ա-
մենայն ազատաց եւ արուեստագիտաց
եւ կալանաւորականաց՝ յԵրուսաղեմէ .
3 ի ձեռն Եղասեայ որդւոյ Սափանայ , եւ
Գամարեայ որդւոյ Քեղկեայ , զորս ա-
ռաքեաց Սեդեկիա արքայ առ Նաբու-
քոդոնոսոր արքայ Բաբելացւոց ի Բա-
բելոն , եւ ասէ ,
4 Այսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Աս-
տուած Իսրայելի վասն գերութեանդ որ
գերեցաւ յԵրուսաղեմէ ի Բաբելոն .
5 Տունս չինեցէք եւ բնակեցէք , դրախտս
անկեցէք եւ կերայք զպտուղս նոցա ,
6 Առէք կանայս եւ եղիցին ուստերք եւ
դստերք , եւ առէք կանայս ուստերաց
ձերոց եւ զդստերս ձեր տուք արանց ,
եւ ծնցին ուստերս եւ դստերս , եւ բազ-
7մասջիք այդր եւ մի նուազեսջիք ։ Եւ
[7]կեցջիք խաղաղութեամբ յերկրիդ՝ յոր
գերեցի զձեզ այդր , եւ աղօթս արա-
րէք [8]ի վերայ դոցա՝ առ Տէր . զի ի դո-
րա խաղաղութեանն եղիցի եւ ձեզ խա-
8ղաղութիւն ։ Զի այսպէս ասէ Տէր զօ-
րութեանց՝ Աստուած Իսրայելի . . Մի
հրապուրեսցեն զձեզ [9]սուտ մարգարէքդ
ձեր որ ի մէջ ձերում են , եւ գուշակա-
ւումքդ ձեր . եւ մի անսայք երազոց
9ձերոց զոր դուք [10]տեսանէք . Զի սուտ
մարգարէանան դոքա ձեզ յանուն իմ ,
10 եւ ես ոչ առաքեցի , ասէ Տէր ։ Զի այս-
պէս ասէ Տէր . Յորժամ մերձ լցի Բա-
բելոնի ինուել եւթանասուն ամ , այց ա-
րարից ձեզ . եւ հաստատեցից ի վերայ
ձեր զբանս իմ զբարիս , դարձուցանել
11 զձեզ ի տեղիս յայս ։ Զի ես գիտեմ զխոր-
հուրդս զոր խորհիմ [9]ես խորհեցայց՝ ի
վերայ ձեր , ասէ Տէր , խորհուրդ խա-
ղաղութեան եւ ոչ չարութեան , տալ
12 ձեզ [11]յետ այդորիկ՝ յոյս . Եւ կարդաս-
ջիք առ իս , եւ երթիջիք եւ յաղօթս

[1] ՆԲԳ· լուր զպատգամս զայս [2] ՆԲԳ· մինչեւ յերկուս ամս
[3] ՆԲԳ· մնացորդս ծերոց [4] ՆԲԳ· մարգարէսն
[5] ՆԲԳ· ելանելոյ [6] ՆԲԳ· եւ Երուսաղեմի եւ հիւսաց եւ դարբնաց [7] ՆԲԳ· խնդրեցէք զխաղաղութիւն քաղաքիդ [8] ՆԲԳ· վասն նորա
[9] ՆԲԳ· գ-է-ս [10] ՆԲԳ· տայք տեսանել [11] ՆԲԳ· կատարած եւ

13 կացցիք առ իս, եւ ես լուայց ձեզ։ Եւ
խնդրեսջիք զիս եւ գտցիք. զի խնդրե-
14 ցէք զիս յամենայն սրտէ ձերմէ. Եւ
[1]երեւեցայց ձեզ, ասէ Տէր, եւ դար-
ձուցից զգերութիւնն ձեր, եւ ժողովե-
ցից զձեզ յամենայն ազգաց եւ յամե-
նայն տեղեաց ուր ցրուեցի զձեզ անդր,
ասէ Տէր. եւ դարձուցից զձեզ ի տե-
15 ղիդ ուստի գերեցի զձեզ այսր. Զի ա-
սացէք՝ Թէ կացոյց Տէր ի մեզ մարգա-
րէս ի Բաբելոն։
16 Զի այսպէս ասէ Տէր ցմարաւորդ որ
նստի յաթոռ Դաւթի, եւ ցամենայն
ժողովուրդդ որ բնակեալ է ի քաղաքիդ
յայդմիկ, եղբարք ձեր որ ոչ ելին ընդ ձեզ
17 ի գերութիւնն, Այսպէս ասէ Տէր զօրու-
թեանց. Առաքեմիկ ես առաջեւ ի նո-
սա սով եւ սուր եւ մահ, եւ արարից
զդոսա իբրեւ զթուզ ժանտ [2]ուսարիմ
որ ոչ ուտիցի ի ժանտութենէ իւրմէ։
18 Եւ հալածեցից զնոսա սրով եւ սովով
եւ մահուամբ, եւ տացից զնոսա [3]ի չար-
ժուելն ամենայն թագաւորութեանց երկ-
րի, ի նզովս եւ [4]յապականութիւնն եւ
ի չչիւն եւ ի նախատինս ի մէջ ամենայն
19 ազգաց ուր ցրուեցից զնոսա անդր. Փո-
խանակ զի ոչ լուան բանիցս իմոց, ա-
սէ Տէր. զի առաքեցի առ նոսա զծա-
ռայս իմ զմարգարէս կանխելով եւ ա-
ռաքելով, եւ ոչ լուարուք, ասէ Տէր։
20 Եւ դուք լուարուք զբան Տեառն, ա-
մենայն գերիդ, զոր առաքեցի յերուսա-
21 զեմէ ի Բաբելոն։ Այսպէս ասէ Տէր
զօրութեանց՝ Աստուած Իսրայելի, ի վե-
րայ Աքիաբայ որդւոյ Ուզկիայ, եւ ի
վերայ Սեդեկիայ որդւոյ Մաասայ՝ որ
մարգարէացան ձեզ յանուն իմ զսուր.
Առաքեմիկ ես տայ զնոսա ի ձեռս Նա-
բուքոդոնոսորայ արքային Բաբելացւոց,
եւ սատակեսցէ զնոսա առաջի աչաց
22 ձերոց։ Եւ առցին ի նոցանէն անէծս ի
մէջ ամենայն գերութեանն Յուդայ որ
է ի Բաբելոն, եւ ասասցին, Արասցէ
զքեզ Տէր՝ որպէս արար Սեդեկիայ եւ
Աքիաբայ, զորս տապակեաց արքայն
23 Բաբելացւոց ի հուր։ Վասն զի գործե-
ցին գանօրէնութիւնս յԻսրայէլի, եւ
շնային ընդ կանայս քաղաքացոց իւ-
րեանց. եւ խօսէին պատգամս յանուն
իմ սուտ, զոր ոչ հրամայեցի նոցա. եւ
ես ինձէն իրագէտ եւ վկայ եմ, ասէ
Տէր։
24 Եւ ցՍամաիա Եղեմացի ասացեալ,
25 Այսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Աստուած
Իսրայելի. Փոխանակ զի առաքեցեր զոս
յանուն [5]իմ ի Սոփոնիա որդի Մաասեայ քահանայի եւ առ ա-
26 մենայն քահանայսն ասել, Թէ Տէր եդ
զքեզ քահանայ փոխանակ Յովիդայեայ
քահանային, լինել վերակացու ի տան
Տեառն ամենայն մարդոյ [7]որ մարգա-
րէանայ, եւ ի վերայ ամենայնի որ պատ-
մէ ըզձոմիկն. եւ ասացես զնոսա յար-
27 գելան ի վերնագրանն". Եւ արդ ընդէր
ոչ արարեր պատուհաս Երեմիայի Անա-
28 թովիտացւոյ՝ որ մարգարէանայ ձեզ. Զի
առաքեաց առ մեզ ի Բաբելոն եւ ա-
սէ, Թէ Հեռի է ժամանակն. չինեցէք
տունս եւ բնակեցէք, անկեցէք դրախտս
29 եւ կերայք զպտուղս նոցա։ Եւ ընթեր-
ցաւ Սոփոնիա քահանայ զձոմիկն յա-
30 կանջս Երեմիայի մարգարէի։ Եւ եղեւ
31 բան Տեառն առ Երեմիա, եւ ասէ, Ա-
ռաքեա առ ամենայն գերին եւ ասասց-
ես, Այսպէս ասէ Տէր ի վերայ Սա-
մեայ Եղեմացւոյ. Փոխանակ զի մար-
գարէացաւ ձեզ Սամեա, եւ ես ոչ ա-
ռաքեցի զնա, եւ յուսացոյց զձեզ ի
32 նանրութիւն, Վասն այսորիկ այսպէս
ասէ Տէր. Անտեսիկ ես արարից հան-
պէս ի վերայ Սամեայ Եղեմացւոյ եւ ի
վերայ ազգի գորա. եւ ոչ եղիցի գորա
մարդ ոք՝ որ նստիցի ի մէջ [8]ձերում
տեսանել զբարութիւն զոր ես արարից
[9]ձեզ, ասէ Տէր. զի խոտորումն խօսե-
ցար ի Տեառնէ։

Գլ. Լ

1 Բանն որ եղեւ առ Երեմիա ի Տեառնէ՝
2 ասել, Այսպէս ասէ Տէր Աստուած Իս-
րայելի. Գրեա զոս քեզ զամենայն զբանս
3 զոր խօսեալ քեզ հրամայեմ՝ ի մատեանի։ Զի
անա աւուրք գան, ասէ Տէր, եւ գար-
ձուցից զգերութիւն ժողովրդեան իմոյ

[1] ՆԲԳ. գտայց նմա ընդ ժանտի յապշտութիւն
[2] Նոսուրիմ, բան ՆԲԳ-ականին,
[3] Կամ, յարհաւիրս
[4] ՆԲԳ. յանարգութիւն
[5] ՆԲԳ. քո
[6] Ոմանք պակասեն
[7] ՆԲԳ. մանկանեղոյ, որ կերպարանի ի մարդաբէ, եւ ասացես զնոսա ի կոճեղս եւ յանուր
[8] ՆԲԳ. ժողովրդեանս այսորիկ
[9] ՆԲԳ. ժողովրդեան իմում

Իսրայելի եւ զՅուդայ , ասէ Տէր . եւ
դարձուցից զդոսա յերկիրդ զոր ետու
հարցն նոցա , եւ սիրեսցին դմա ։
4 Եւ այս բանք են զոր խօսեցաւ Տէր
5 ի վերայ Իսրայելի եւ Յուդայ . Այսպէս
ասէ Տէր . Ձայն սո՛ւղության լուաք , եւ զձայն
սոսկ գուժի , յորմէ զդողայցեն մէկք . եւ
վիրաւորիւն եւ խաղաղութիւն ոչ իցէ՝ ։
6 Հարցէք եւ տեսէք, եթէ ծնա՞ւ արեւք
արու . զի տեսի զամենայն այր եւ ձեռք
իւր ի վերայ սիջոյ իւրոյ իբրեւ ծնանո-
կանի , եւ դարձան երեսքամենայն ի
դոյն գալկան ։ Վա՛յ , զի մեծ է օրն այն,
եւ չիք այնպիսի . եւ անհնարին նեղու-
թիւամբ է ժամանակն Յակոբայ , եւ
8 ապրեսցի ի նմանէ ։ Եւ եղիցի յաւուր
յայնմիկ , ասէ Տէր զօրութիւանց , խոր-
տակեցից [2]զլուծն ի պարանոցէ նոցա ,
եւ զկապանս նոցա խզեցից , եւ ոչ եւս
9 կայցեն նոքա ի հարկի օտարաց՝ . Այլ
հարկեսցին Տեառն Աստուծոյ իւրեանց .
եւ [3]զԴաւիթ արքայ իւրեանց՝ յարու-
10 ցից նոցա ։ Բայց դու մի՛ երկնչիր , ծա-
ռայ իմ Յակոբ , ասէ Տէր , եւ մի՛ զար-
հուրեսցիս , Իսրայէլ . զի ահա՛ւասիկ ես
փրկեցից զքեզ ի հեռաստանէ , եւ զզա-
ւակ քո յերկրէ գերութեան նոցա . եւ
դարձցի Յակոբ եւ դադարեսցէ , եւ
բարեկեցիկ լիցի , եւ ոչ ոք իցէ որ զար-
11 հուրեցուսցէ ։ Զի ընդ քեզ եմ ես , ա-
սէ Տէր , ի փրկել զքեզ . զի արարից
նուազութիւն ի մէջ ազգաց՝ յորս ցրուե-
ցի զքեզ անդր , եւ քեզ ոչ արարից
վաճան . եւ խրատուցից զքեզ իրա-
ւամբք , եւ քաւելով ոչ քաւեցից զքեզ ։
12 Այսպէս ասէ Տէր . [4]Սաստկացուցի զքեւ-
կուքն՝՝ քո , եւ ցաւագին են հարուածք
13 քո ։ Ոչ ոք է որ գտանի զդատաստանս
[5]քո . ի ցաւս քո բժշկեցար , եւ օգուտ
14 ոչ եղեւ՝՝ քեզ ։ Ամենայն բարեկամք քո
մոռացան զքեզ , եւ ոչ հարցանիցեն
զքէն . զի զնարուածս թշնամւոյ հարի
զքեզ՝ խրատս սաստիկ . վասն [6]ամենայն
անիրաւութեանց քոց , բազմացան մեղք
15 քո ։ Ձի՞ գոչես ի վերայ ընկճման քո .

[7]ոչկայն ոչ արարից քեզ վախճան .՝՝
յուշն են ցաւք քո . վասն բազմութեան
անօրէնութեան քո , սաստկացան մեղք
16 քո , արարի քեզ զայդ ։ Վասն այդորիկ
ամենեքեան որ ուտէին զքեզ՝ կերիցեն .
եւ ամենայն թշնամիք քո [8]կերիցեն
զմարմինս իւրեանց . վասն բազում ա-
նիրաւութեանց քոց որ յաճախեցին . եւ
մեղք քո արարին քեզ զայդ եւ եղի-
ցին ապականիչք քո յապականութիւն ,
եւ զամենայն աւարառուս քո տաց յա-
17 ւար ։ Զի ածից զբժշկութիւն քո՝՝ ի ցա-
ւացն վիրաց քոց , եւ բժշկեցից զքեզ ,
ասէ Տէր . զի [9]Յրուեալ կոչեցար , Սիոն,
եւ դուն է որս ձեր . զի որ խնդրիցէ ոչ
գտանիցէ զնա՝՝ ։
18 Այսպէս ասէ Տէր . Ահաւասիկ ես
դարձուցից զգերութիւն յարկացն
Յակոբայ , եւ [10]գերութեանն նորա ո-
ղորմեցայց . եւ չինեսցի քաղաքն [11]ի
յարձրութեան իւրում՝՝ , եւ տաճարն
19 ըստ իրաւանց իւրոց կանգնեսցի ։ Եւ ել-
ցեն ի գոյանէ երգիչք եւ ձայն խաղա-
կաց , եւ բազմացուցից զգոսա , եւ մի՛
նուազեսցին . [12]տարածեցից զգոսա , եւ
20 մի՛ [13]նուազեսցին ։ Եւ մանիցեն գոքա
իբրեւ զառաջինն , եւ վիայութիւնք գո-
ցա կանգնեն կայցեն առաջի աչաց իմ-
մոյ՝՝ . եւ հանդէս արարից ի վերայ նեղ-
21 չեաց գոցա . Եւ [14]եղիցին բռնադիրք
քան զնոսա ի վերայ նոցա , եւ իշխան
գոցա ի գոյանէ ելցէ . եւ ժողովեցից
զգոսա , եւ գարձցին՝՝ առ իս . զի ո՞վ է
այն որ նա զսիրտ իւր գանեալ առ [15]Տէր ,
22 ասէ Տէր ։ Եւ եղիջիք ինձ ի ժողովուրդ ,
եւ ես եղէց ձեզ յԱստուած ։
23 [16]Զի բարկութիւն Տեառն ել գատաստ,
[17]եւ բարկութիւն սրտիկալ . ի վերայ
24 ամպարշտաց եկեսցէ՝՝ ։ Եւ մի՛ գարձցի

[1] ԵՒԲ. լուաք, երկեաղ է եւ՝ խաղաղութիւն [2] ԵՒԲ. զլուծ նորա ի պարանոցէ քումմէ, եւ զկապանս քո խզեցից, եւ ոչ եւս ծառայեցուսցեն զնա օտարք [3] ԵՒԲ. Դաւիթի արքայի իւրեանց զոր [4] ԵՒԲ. Անչոյս է բեկումն [5] ԵՒԲ. քո ի պատել՝ եւ գարման բժշկութեան չիք [6] ԵՒԲ. յաճախութեան [7] ՅԱԲ. պ-ւոսե [8] ԵՒԲ. ամենեքին նոքա երթիցեն ի գերութիւն. եւ եղիցին որ յափշտակենն զքեզ ի յափշտակութիւն, եւ զամենեսին որ կողոպտեն զքեզ՝ տաց ի կողոպուտս . (17) Զի ածից քեզ բժշկութիւն [9] ԵՒԲ. Վատարդիւ կոչեցին զքեզ, Ա՛յս այն Սիոն է, ասեն , չիք որ խնդրէ զնա [10] ԵՒԲ. բնակութեանց [11] ԵՒԲ. ի վերայ աւերակաց իւրոց [12] ԵՒԲ. մեծարեցից [13] ԵՒԲ. անարգեսցին ։ (20) Եւ եղիցին որդիք նոցա իբրեւ զառաջինն , եւ ժողով նոցա առաջի իմ հաստատեսցի [14] ԵՒԲ. եղիցի գլխաւոր նոցա ի նմանէ, եւ իշխան նոցա ի միջոյ նորա ելցէ, եւ մերձեցուցից զնա, եւ մատիցէ [15] ԵՒԲ. իս [16] ԵՒԲ. Ահա [17] ԵՒԲ. բարկութիւն որ գերփէ. ի վերայ գլխոյ ամբարշտաց արձակեսցի

բարկութիւն սրտմտութեան Տեառն, մինչեւ արասցէ եւ կատարեսցէ դիւժադութիւն սրտի իւրոյ, ի վախճանի աւուրց ծանիցիք զայն։

ԳԼ. ԼԱ

1 Ի ժամանակի յայնմիկ ասէ Տէր, եւ եղէց յԱստուած ազգիս Իսրայէլի, եւ 2 դուքա եղիցին ինձ ի ժողովուրդ։ Այսպէս ասէ Տէր. [1]Գտին ասպ յանապատի անդ, ասատակելովքն հանդերձ սուսերաւ. երթայք, մի՛ ասատակէք զԻսրայէլ՝։ Բայց ի բայ Տէր երեւեցաւ [2]նմա. սէր յաւիտենական սիրեցի զքեզ, վասն այնորիկ ձգեցի զքեզ ի ողորմութիւն։ 4 Դարձեալ չինեցից զքեզ եւ չինեցջիր, կոյսդ Իսրայէլի. դարձեալ առցես զմշտուկդ, եւ ելցես ընդ ժողովս խաղալկայս։ 5 Դարձեալ անկանիցիր այգիս ի լերինն Սամարիայ, [3]անկանիցիք տունկս, եւ օրհնեսցիք՝։ Զի հասեալ է օր կոչման հրաւիրակի ի լերինն Եփրեմի. Արիք եւ ելցուք ի Սիոն առ Տէր Աստուած մեր։ 7 Այսպէս ասէ Տէր. [4]Ցնծութիւն առնել Յակոբայ, ուրախ լինուք եւ զուարճացէք ի վերայ գլխոց՝ ազգացդ. լսելի արարէք, օրհնեցէք եւ ասացէք. [5]փրկեաց Տէր զժողովուրդ իւր՝, զնիացորդս Իսրայէլի։ 8 Ահաւասիկ ես ածից զնոսա յերկրէ հիւսիսոյ, եւ ժողովեցից զնոսա ի ծագաց երկրի [6]ի միոյն պահս. եւ ծնցին որդիս ի բազմութիւն յայժ՝. ի միջի նոցա կոյրն, կաղն, յղին եւ ծնեալն, միասամուռ ժողովուրդ մեծ, դարձցին այսր։ 9 Լալով [7]եկին, եւ մխիթարութեամբ ածից զնոսա՝ հանդուցանել ի վերայ ջուրց վտակաց ընդ ճանապարհ ուղիղ, եւ մի՛ մոլորեսցին ինձմէ. զի եղէ Իսրայէլի ի հայր, եւ Եփրեմ անդրանիկ իմ է։ 10 Լուարուք զպատգամ Տեառն, ազգք, եւ պատմիցէք ի կղզիս հեռաւորս, եւ ասացէք. Որ հասանգն զԻսրայէլ՝ ժողովեսցէ զնա. եւ պահեսցէ զնա իբրեւ 11 հուարածականն զհօտ իւր. Զի փրկեաց Տէր զՅակոբ, եւ ապրեցոյց զնա ի ձեռաց 12 բռնաւորացն նորա։ Եկեսցեն եւ ուրախ լիցին եւ ցնծասցեն ի լերին Սիոնի. եւ կենացին ի բարութիւնս Տեառն՝ յերկիր ցորենոյ եւ գինւոյ եւ [8]արգասեաց եւ խաչանց, արջառոյ եւ ոչխարի. եւ եղիցին անձինք նոցա իբրեւ [9]զծառ պտղաբ 13 լից՝, եւ ոչ եւս քաղցիցեն։ Յայնժամ ցնծասցեն կոյսք ի ժողովս [10]երիտասարդաց, եւ ծերք խնդասցեն՝. եւ դարձուցից զսուգ նոցա ի խնդութիւն, եւ [11]ուրախ արարից զնոսա ի սրտմտութենէ 14 իւրեանց։ Զմայլեցուցից եւ արբուցից զանձինս քահանայից պղտոյն Դեւհայ՝, եւ ժողովուրդ իմ լցցի իմովք բարութեամբ, ասէ Տէր։

15 Այսպէս ասէ Տէր. Ձայն ի Հռամայ լսելի եղեւ՝ ողբումն եւ յաղումն եւ զուժումն. Ռաքէլ լայր զորկս իւր, եւ ոչ կամէր մխիթարել ի վերայ որդւոց իւրոց, զի ոչ գոյին։ 16 Այսպէս ասէ Տէր. Դադարեսցէ անձն քո ի լալոյ, եւ աչք քո յարտասուաց. զի ունի վարձք զործոց քոց, ասէ Տէր, եւ դարձցին յերկիր թշնամեաց. 17 Եւ եղիցի յոյս վախճանի քո, ասէ Տէր, [12]զի նորոգեսցին որդիք քոց՝ ի սահմանս նոցա։ Լսելով լսայ զողբումն Եփրեմի. Յրատեցեր զիս, Տէր, եւ խրատեցայ [6]եւ ոչ ուսայ՝ իբրեւ զձուլ տրմուղ. դարձո զիս եւ դարձայց, 19 զի դու ես Տէր Աստուած իմ։ [13]Եւ յետ դիտութեան՝ իմոյ ապաշաւեցի, եւ յետ իմանալոյն իմոյ յոգւոյ հանեցի [14]ի վերայ աւազս ամօթոյն իմոյ. եւ ցուցի քեզ թէ առի նախատինս՝ ի մանկութենէ իմմէ։ 20 [15]Եւ թէ՝ որդի սիրելի՞ իցէ իմ Եփրեմ, մանո՞ւկ զրպտանց, փոխանակ զի բանք իմ են ինձա, յիշելով յիշեցից զնա միւսանգամ. վասն այնորիկ [16]միաբանացայ յաղագս նորա՝, ողորմելով ողորմեցայց նմա, ասէ Տէր։

21 [17]Մատիր անձամբ անձին արա զու քեզ, Սիոն, պատուհաս. ընկենս զսիրտ քո ի ճիւղունս, զնա զճանապարհն՝. դարձիր,

---

[1] ՆԵԲ. Եգիտ Ջորհս յանապատի անդ ժողովուրդն ապրեալ ի սրոյ, յորժամ երթայր հանգչել Իսրայէլ [2] ՆԵԲ. ինձ [3] ՆԵԲ. տնկեսցեն տունկս եւ օրհնեսցեն (վայելեսցեն) [4] ՆԵԲ. երգեցէք ի Յակոբ ուրախութեամբ, ուրախ լերուք ի վերայ գլխոյ [5] ՆԵԲ. փրկեա, Տէր, զժողովուրդ քո [6] ՅՆԵԲ. պոռոե [7] ՆԵԲ. գայցեն

[8] ՆԵԲ. ձիթոյ [9] ՆԵԲ. զգրաթս ջրոյրի [10] ՆԵԲ. եւ երիտասարդք եւ ծերք միանգամայն [11] ՆԵԲ. մխիթարեցից զնոսա ի սրտմտութենէ իւրեանց. (14) Եւ զմայլեցուցից զանձինս քահանայից պարարտութեամբ [12] ՆԵԲ. եւ զարձցին որդիք քո [13] ՆԵԲ. Արդարեւ յետ դառնալոյ [14] ՆԵԲ. յոմանք եղէ եւ պատկառեցայ, զի տարայ նախատանս [15] ՆԵԲ. Միթէ [16] ՆԵԲ. գալարին ողիք իմ [17] ՆԵԲ. Կանգնեա քեզ կոթողս, արա քեզ սիւնս բարձունս, զիր զսիրտ քո յարահետ անդր, ճանապարհ զոր գնացեր

կոյտ Իսրայելի, զարձիր անդրէն ի քա-
22 ղաքս քո [1]սազանել։ Մինչեւ յերբ թա-
փառիցիս, դուստր [2]անարգանալ. զի հաս-
տատեաց Տէր [3]զփրկութիւն ի ձեռա-
տունկն նոր. փրկութեամբ չրջեսցին
23 մարդիկ"։ Այսպէս ասէ Տէր զօրութեանց՝
Աստուած Իսրայելի. զարձեալ ասասա-
ցեն զբանս զայս յերկրին Յուդայ եւ ի
քաղաքսնորա, յորժամ զարձուցից զգե-
րութիւնս նոցա, [4]օրհնեալ է Տէր յար-
24 դար եւ ի սուրբ լերին իւրում։ Եւ բնա-
կիչքն Հրէաստանի ամենայն քաղաքքն
իւրեանց եւ գործաւորքն՝ յզփսացին
25 հօտիւքն։" Զի արբուցի զամենայն անձն
ծարաւի, եւ զամենայն անձն քաղցեալ
26 լցուցի. վասն այնորիկ զարթեայ եւ
տեսի, եւ քունն իմ քաղցրացաւ ինձ։
27 Ահա աւուրք գան, ասէ Տէր, եւ սերմա-
նեցից զտունն Իսրայելի, եւ զտունն
Յուդայ ի զաւակ մարդկան եւ ի զա-
28 ւակ անասնոյ։ Եւ եղիցի զոր օրինակ
զարթուցեալ էի ի վերայ նոցա ի խլել
եւ ի կործանել, ի քակել եւ ի կորուա-
նանել եւ ի չարչարել, նոյնպէս զար-
թեայց ի վերայ նոցա ի շինել եւ ի տնկել,
29 ասէ Տէր։ Յաւուրսն յայնոսիկ մի՛ եւս
ասիցեն թէ Հարքն ադոխ կերան, եւ
30 որդւոց ատամունք առան. Այլ իւրա-
քանչիւր ի մեզս իւր մեռցի. ամենայն
մարդ որ ուտիցէ զադոխն՝ նորին ա-
տամունքն առցին։
31 Ահաւասիկ աւուրք գան, ասէ Տէր,
եւ ուխտեցից տանդ Իսրայելի եւ տանդ
32 Յուդայ ուխտ նոր, ոչ ըստ ուխտին զոր
ուխտեցի ընդ հարս նոցա՝ յաւուր յո-
րում առի զձեռանէ նոցա հանել զնոսա
յերկրէն Եգիպտացւոց. զի նոքա ոչ կա-
ցին յուխտին իմում, եւ ես անփոյթ ա-
33 րարի զնոցանէ, ասէ Տէր. Այլ այս է
ուխտն զոր ուխտեցից տանդ Իսրայելի
յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր. Տայց
զօրէնս իմ ի միտս նոցա, եւ ի սիրտս նո-
ցա գրեցից զնոսա. եւ եղէց նոցա յԱս-
տուած, եւ նոքա եղիցին ինձ ի ժողո-
34 վուրդ։ Եւ մի՛ եւս ուսուցանիցեն իւ-
րաքանչիւր զընկեր իւր, եւ իւրաքան-
չիւր զեղբայր իւր ասել թէ Ծանիր զՏէր.
զի ամենեքեան ծանիցեն զիս ի փոքր-
կանց նոցա մինչեւ ի մեծամեծս, ասէ
Տէր. զի քաւիչ եղէց անիրաւութեանց
նոցա, եւ զմեղս նոցա ոչ եւս յիշեցից։
35 Այսպէս ասէ Տէր, որ ետ զարեգակն ի
լոյս տուընչեան, [5]հաստատութեամբ,
զլուսին եւ զաստեղս ի լոյս գիշերոյ,
եւ ադոտակ ի ծովս, եւ զովքն ալիք
նորա"՝ Տէր ամենակալ անուն է նորա.
36 եթէ դադարեսցին օրէնքս այս յերեսաց
իմոց, ասէ Տէր, ապա եւ ազգն Իսրա-
յելի դադարեսցէ ի լինելոյ յազգ առաջի
37 աչաց իմոց զամենայն աւուրս։ Այսպէս
ասէ Տէր. Եթէ [6]վերասցին երկինք ի
բարձունս, ու եթէ [7]խոնարհեսցին յա-
տակք երկրի ի խոնարհ, ես [8]ոչ խոտե-
ցից զամենայն ազգդ Իսրայելի, ասէ
Տէր, վասն ամենայնի զոր արարին։
38 Ահա աւուրք գան, ասէ Տէր, եւ չի-
նեսցի [9]քաղաք Տեառն յաչտարակէ ան-
տի Անանեայելի մինչեւ ի դուռն Անդ-
39 կանին։ Եւ ելցէ տակաւին [10]կապած,
եւ չափ նորա յանդիման նորա մինչեւ
ցբլուրն Գարեբայ. եւ բոլորիցի չուրց-
40 ջանակի [11]յընտիր ընտիր վիմաց"։ Եւ ա-
մենայն ձորն [12]փաքադիմայ եւ մոխրոցն,
եւ ամենայն [13]Սարեհովմէն, մինչեւ ի
ձորն կեդրոնի, մինչեւ ցանկիւն դրան
Ասպաստանացն արեւելից, սրբութիւն
Տեառն. եւ մի՛ եւս խլեսցին, եւ մի՛
եւս քակեսցին մինչեւ յաւիտեան։

ԳԼ. ԼԲ

1 Բանն որ եղեւ ի Տեառնէ առ Երեմիա,
յաւին աստանդորդի Սեդեկեայ արքայի
Յուդայ. այն ամ ութաստանդորդ էր
Նաբուքոդոնոսորայ [1]արքայի Բաբելաց-
2 ւոց"։ Եւ յայնժամ զոր արքային Բա-
բելացւոց պաշարեալ զերուսաղէմ. եւ
Երեմիա մարգարէ կայր ի կաղանս [14]ի
սրահն բանտին՝ որ էր յարքունիս Յու-
3 դայորդւոյն Յուդայ, Զոր արգելոյն զնա ար-
քայ Սեդեկիա, եւ ասէ, Վնգէր դու
մարգարէանաս եւ ասես, Այսպէս ասէ
Տէր. Ահաւադիկ ես տամ զքաղաքդ

[1] Նեբ. յայսոսիկ [2]Նեբ. խուսորեալ [3]Նեբ. նոր ինչ յերկրի. կին մարդ շուրջ եկեսցէ զա-
րսեմբ [4]Նեբ. Օրհնեսցէ զքեզ Տէր, բնակու-
թիւն արդարութեան, լեա՛ռն սրբութեան։
(24) Եւ բնակեսցեն ի նմա Յուդա եւ ամենայն
քաղաքք նորա ի միասին, հողագործք եւ որ
շրջին հօտիւք։

[5] Նեբ. զկարգս գիշերոյ եւ աստեղաց ի
լոյս գիշերոյ, որ ասատեմ ծովս յորժամ գոռան
ալիք նորա, կամ, խռովեմ զծով եւ գոչեցուս-
նեմ զալիս նորա [6]Նեբ. չափեսցին [7]Նեբ. գինեա-
ցին [8]Յեբ. պատառ [9]Նեբ. քաղաքն վասն [10]Նեբ.
ծիր չափոյ [11]Նեբ. մինչեւ ի Գոամի [12]Նեբ. գիա-
կանց [13]Նեբ. արտօրսին [14]Նեբ. ի գաւթի

զայդ ի՛ձեռս Յազաւորին Բաբելացւոց,
4 եւ առցէ զդա. Եւ Սեդեկիա արքայ
Յուդայ մի՛ ապրեսցի ի ձեռաց Քաղ-
դէացւոցն. զի մատնելով մատնեսցի ի
ձեռս Յազաւորին Բաբելացւոց, եւ խօ-
սեսցի բերան ի բերան ընդ նմա, եւ աչք
5 զդրա զաչս նորա տեսցեն. Եւ ի Բա-
բելոն մտցէ Սեդեկիա, եւ անդ նստցի
մինչեւ այց արարիդ դմա, ասէ Տէր.
զի՞ մարանչիք ընդ Քաղդէացիան ուսաի
ոչինչ յաջողիցիք։

6 [1]Եւ եղեւ բան Տեառն առ Երեմիա՝
7 եւ ասէ, Ահաւադիկ Անամայէլ որդի
Սեդումայ հօրեղբօր քո գայ առ քեզ
եւ ասէ, Առացիր դու քեզ գագարակն
իմ, որ է յԱնաթովթ, զի քեզ իսկ է
անկ ըստ մերձաւորութեան առնուլ ի
8 ստացուած։ Եւ եկն առ իս Անամայէլ
որդի Սեդումայ հօրեղբօր իմոյ՝ ըստ բա-
նի Տեառն [2]ի սրահ բանտին եւ ասէ ցիս,
Առացիր զագարակն իմ որ է յԱնաթովթի
յերկրին Բենիամինի, զի քեզ պարտ է
ստանալ զժառանգութիւնն, եւ դու
իսկ [3]երիցագոյն ես՝. Եւ գիտացի՛ թէ
9 բան Տեառն է։ Եւ ստացայ զագարակն
յԱնամայելայ որդւոյ հօրեղբօր իմոյ, որ
է յԱնաթովթ. եւ կշռեցի նմա արծաթ
10 եւքն սիկղ եւ տասն արծաթոյ. Եւ
գրեցի մուրհակս եւ կնքեցի, եւ կա-
ցուցի վկայս, եւ կշռեցի զարծաթն ի
11 կշիռս։ Եւ առի զմուրհակ ստացուա-
ծոյն զկնքեալն՝ ըստ հրամանի եւ ըստ
12 իրաւանց, եւ զարձակն. Եւ տուի զմուր-
հակ ստացուածոյն ցԲարուք որդի Ներ-
հայ որդւոյ Մաասայ առաջի Անամայե-
լի որդւոյ հօրեղբօր իմոյ, եւ առաջի
[4]այնոցիկ որ կային անդ. եւ գրեցի՝՝
ի մուրհակի ստացուածոյն, առաջի ա-
մենայն Հրէից, որ նստէին [5]ի սրահի բան-
13 տին։ Եւ պատուիրեցի Բարուքայ ա-
14 ռաջի նոցա եւ ասեմ, Այսպէս ասէ Տէր
ամենակալ Աստուած Իսրայելի. Առ
զմուրհակդ զայդ՝ զմուրհակ ստացուա-
ծոյ զկնքեալն, եւ զմուրհակն արձակ,
եւ զկնիս ի խեցեղէն ամանի, զի կաց-
15 ցէ աւուրս բազումս։ Զի այսպէս ասէ
Տէր ամենակալ Աստուած Իսրայելի.
Դարձեալ ստացին տունս եւ ագարակս
եւ այգիս յերկրիդ յայդմիկ։

16 Եւ կացի յաղօթս առ Տէր, յետ տա-
լոյն զմուրհակ ստացուածոյն ցԲարուք
17 որդի Ներհայ, եւ ասեմ, Որ նագ Տէր
Տէր, դու արարեր զերկինս եւ զերկիր
զօրութեամբ քո մեծաւ եւ բազկաւ քով
բարձու. զի ոչինչ է բան որ [6]ծածկիցի
18 ի քէն. Առնես զողորմութիւն ի հազար
գալ, եւ հատուցանես զմեղս հարց ի
ծոց որդւոց իւրեանց յետ նոցա. Աս-
տուած մեծ եւ հզօր, Տէր զօրութեանց
19 անուն նորա. Մեծդ խորհրդովք եւ զօ-
րաւոր գործովք, [6]Աչունակալ մեծանունդ
Տէր.՝ աչք քո բաց են յամենայն ճա-
նապարհս որդւոց մարդկան, տալ ի-
րաքանչիւր ըստ ճանապարհի իւրում
20 եւ ըստ պտղոյ գնացից իւրեանց։ Որ
արարեր նշանս եւ արուեստս յերկրին Ե-
գիպտացւոց մինչեւ ցայսօր, ի մէջ Իս-
րայելի, եւ [7]ի մէջ ծննդոց երկրի՝, եւ
արարեր քեզ անուն իբրեւ յաւուր յայս-
21 միկ. Եւ հաներ զժողովուրդ քո զԻս-
րայէլ յերկրէն Եգիպտացւոց նշանօք եւ
արուեստիւք, հզօր ձեռամբ եւ բարձր
22 բազկաւ, եւ մեծամեծ տեսլեամբք։ Եւ
ետուր նոցա զերկիրս զայս զոր երդուար
հարցն նոցա՝ տալ նոցա զերկիր որ բղխէ
23 զկաթն եւ զմեղր. Եւ մտին եւ ժա-
ռանգեցին զնա. եւ ոչ լուան ձայնի
քումդ, եւ ըստ հրամանաց քոց ոչ գնա-
ցին, ըստ ամենայնի զոր պատուիրեցեր
նոցա առնել, եւ ոչ արարին. եւ [8]արա-
րին պատահել իբրեւանց ամենայն չա-
24 րեացս այսոցիկ։ Եւ արդ տես հասեալ
է զոր՝՝ ի քաղաքս առնուլ զսա, եւ
մատնեցաւ քաղաքս ի ձեռս Քաղդէա-
ցւոցն որ տան ընդ սմա պատերազմ յե-
րեսաց սրոյ եւ սովոյ եւ մահու. որ-
պէս եւ խօսեցար նոյնպէս եւ եղեւ, զոր
25 զուտ իսկ տեսանես։ Եւ դու, [9]Տէր, ա-
սես ցիս, Ստացիր քեզ ագարակ արծա-
թով. եւ [10]գրեցի մուրհակ եւ կնքեցի,
եւ կացուցի վկայս՝՝. Եւ քաղաքս մատ-
նեցաւ ի ձեռս Քաղդէացւոցն։

26 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
27 Ահա ես Տէր Աստուած ամենայն մար-
մնոց. միթէ [11]ինձաքէ՞ ամենայն բան
28 յինէն։ Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր.

---

[1] Եբէր. Եւ ասէ Երեմիա, Եղեւ բան Տեառն առ իս
[2] Եբէր. ի գաւթի [3] Եբէր. մերձաւոր ես, գնեսջիր քեզ
[4] Եբէր. վկայիցն գրելոց
[5] Կ–ա, գժառաջասցի [6] Եբէր. պ–ւ–ե [7] Եբէր. ի մարդիկ [8] Եբէր. արարեր պատահել նոցա զամենայն չարիս զայսոսիկ։ (24) Ահա պատնէշք, եկին [9] Եբէր. Տէր Աստուած [10] Եբէր. կացու վկայս [11] Կ–ա, գժառաջասցի՞

[1]Մասանիայով մասնիացի քաղաքդ՝ ի ձեռս Բաղդէացւոցն, եւ ի ձեռս Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացւոց, եւ
29 առցէ զդա։ Եւ սկսցեն Բաղդէացիքն պատերազմիլ ընդ քաղաքիդ, եւ այրեսցեն զդա հրով. եւ հրձիգ [2]արասցեն զառունս յորս արկանէին խունկս ի վիրայ աստեղացն օտարաց վասն որ սատուածոց օտարաց վանն զիս զառ-
30 նացուցանելոյ. [3]Որդիքն Իսրայելի եւ որդիքն Յուդայ միայն զործէին զչարիս առաջի աչաց իմոց ի մանկութենէ իւրեանց. [4]բայց որդիքն Իսրայելի՝ բար-
կացուցին զիս գործովք ձեռաց իւրեանց,
31 ասէ Տէր։ [5]Ի բարկութիւն եւ ի սրտմտութիւն էր ինձ քաղաքդ այդ, յորմէ օրէ չինեցին զդա մինչեւ ցայսօր, չնչել
32 զդա յերեսաց իմոց, վասն ամենայն չարեաց որդւոցն Իսրայելի եւ որդւոցն Յուդայ՝ զոր արարին ի գառնացուցանել զիս, ինքեանք եւ թագաւորք իւրեանց եւ մծամեծք իւրեանց, եւ քահանայք իւրեանց եւ մարգարէք իւրեանց, արք
33 Յուդայ եւ բնակիչք Երուսաղեմի։ Դարձուցին յիս զթիկունս եւ ոչ զերեսս. եւ ուսուցի զնոսա ընդ առաւօտս. ուսուցի, եւ ոչ անսացին ընդունել զկրթութիւն.
34 Եւ եդին զպղծութիւնս իւրեանց ի տան՝
35 յորոյ վերայ կոչեցեալ է անուն [6]իմ եւ ապղծեալեան իւրեանց՝ չինեցին բազմունս Բահաղու ի ձոր որդւոցն Ենոմայ, մատուցանել զուսաներս եւ զդստերս իւրեանց Մոզոքայ, զոր ոչ պատուիրեցի նոցա, եւ ոչ անկաւ ի սիրտ իմ առնել նոցա զպղծութիւնն զայն առ ի յանցուցանելոյ զՅուդա։
36 Եւ արդ այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայելի վասն քաղաքիդ այդորիկ՝ զորմէ [7]դուք ասացեր՝ թէ Մատնեցաւ ի ձեռս Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացւոց, ի սուր եւ ի սով եւ [8]ի վերուխիւն.
37 Ահա ես ժողովեցից զնոսա յամենայն երկրէ, ուր ցրուեցի զնոսա անդր բարկութեամբ եւ սրտմտութեամբ իմով, եւ ցասմամբ մեծաւ. եւ գարձուցից զնոսա ի տեղիս յայս եւ նստուցից զնո-
38 սա [9]յուսով. Եւ եղիցին ինձ ի ժողովուրդ, եւ ես եղէց նոցա Աստուած.
39 Եւ տացու նոցա սիրտ [10]այլ եւ ճանապարհ մի՝ երկնչել յինէն զամենայն աւուրս ի բարութիւն իւրեանց եւ որդւոց իւրեանց
40 յետ նոցա։ Եւ ուխտեցից նոցա ուխտ յաւիտենական, զոր ոչ դարձուցից յետս, առնել նոցա բարի. եւ զերկիւղ իմ տացու ի սիրտս նոցա առ ի չադաւամբելոյ նո-
41 ցա յինէն։ [11]Եւ այլ սրարիչ՝ բարի առնել նոցա, եւ անկեցից զնոսա յերկրիս յայսմիկ [12]հաւատովք ամենայն սրտիւ
42 իմով եւ ամենայն անձամբ իմով։ Զի այսպէս ասէ Տէր. Որպէս ածի ի վերայ ժողովրդեանդ այդորիկ զամենայն չարիս մեծամեծս, նոյնպէս ածից ի վերայ դո-
43 ցա [13]բարիս, զոր խօսեցայ ի վերայ դոցա։ Եւ առասցին միւսանգամ ագարակս յերկրիդ յայդմիկ, զորմէ [14]դուք ասացեր՝ թէ Աւերակ է ի մարդոյ եւ յանասնոյ, եւ մատնեցան ի ձեռս Քաղդէացւոցն։
44 Եւ առասցին ագարակս արծաթոյ, եւ գրեսցեն մատեանս եւ կնքեսցեն, եւ կացուսցեն վկայս յերկրին Բենիամինի եւ չուրջ զներուսաղեմաւ, եւ ի քաղաքս Յուդայ եւ ի քաղաքս լերինն, եւ ի քաղաքս [15]Սեփելայ եւ ի քաղաքս [16]Նագեբայ. զի գարձուցից զգերութիւնս նոցա, ասէ Տէր։

ԳԼ. ԼԴ

1 Եւ եղեւ բան Տեառն առ Երեմիա երկրորդ անգամ, եւ նա կայր տակաւին
2 կապեալ [17]ի սրահն բանտին, եւ ասէ. Այսպէս ասէ Տէր՝ որ արար [18]զերկիրդ եւ՝ առեղծ զդա՝ կանգնել զդա, Տէր անուն
3 է նորա. Կարգա առ իս, եւ տաց քեզ պատասխանի, եւ պատմեցից քեզ մեծամեծս եւ զօրաւորս՝ զոր ոչ գիտեցեր
4 Զի այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայելի վասն տանց քաղաքիդ այդորիկ, եւ վասն ապարանից արքային Յուդայ՝ քակելոց ի մանարձանս եւ [19]ի մարտկոցս,
5 Եկեալոցն՝ մարտնչել ընդ Քաղդէացիս, եւ լնուլ զնոսա դիակամբք մարդկան, զորս հարի բարկութեամբ իմով եւ սրտմտութեամբ իմով, եւ գարձուցի զերեսս իմ [20]ի նոցանէ վասն ամենայն չարու-

---

[1]ԵԲԲ. Ահա ես տաց զքաղաքս զայս [2]ԵԲԲ. արասցեն զդա եւ [3]ԵԲԲ. Զի որդիքն [4]ԵԲԲ. զի որդիքն Իսրայելի հանապազ [5]ԵԲԲ.Բանզի ի բարկութիւն [6]ԵԲԲ. իմ՝ ի պղծել զնա.(35)Եւ [7]ԵԲԲ. դուք ասէք [8]ԵԲԲ. ի մահ [9]ԵԲԲ.յապահովս [10]ԵԲԲ. մի [11]ԵԲԲ.Եւ ուրախ եղէց ի նոսա [12]ԵԲԲ. ճշմարտութեամբ [13]ԵԲԲ. զամենայն բարիս [14]ԵԲԲ. դուք ասէք [15]Ա.ՅՒՆԴ՝ գաշտին [16]Ա.ՅՒՆԴ՝ Հարաւոյ [17]ԵԲԲ. ի գաւթի [18]ԵԲԲ. զդա, Տէր, որ [19]ԵԲԲ. ի մարտկոցս եւ ի սուր, (5) Որ գան [20]ԵԲԲ. ի քաղաքէդ

6 [1]Ահանց նոցա ։ Ահաւասիկ ես ածից
[1]զսպիտն ի բժշկութիւն", եւ բժշկեցից
զնոսա , եւ յայտնեցից նոցա [2]զՆչխիւն
7 խաղաղութեան եւ զճշմարտս" ։ Եւ դար-
ձուցից զգերութիւնն Յուդայ եւ զգե-
րութիւնն Երուսաղեմի , եւ չինեցից
8 զնոսա իբրեւ զառաջինն ։ Եւ սրբեցից
զնոսա յամենայն անիրաւութենանց իւ-
րեանց զոր անիրաւեցան յիս , եւ ոչ եւս
լիչեցից զմեղս նոցա զոր մեղան առ իս
9 եւ ապստամբեցան յինէն ։ Եւ եղիցի ինձ
[3]յուրախութիւն եւ յօրհնութիւն" եւ ի
մեծարանս առաջի ամենայն ժողովրդոց
երկրի , որք լսիցեն զամենայն բարու-
թիւնս զոր ես արարից դոցա . եւ եր-
կիցեն եւ [4]դանդաղեսցին ի վերայ ամենայն
բարութեանցն , եւ ի վերայ ամենայն
խաղաղութեանցն զոր ես արարից [5]դոցա ։
10 Այսպէս ասէ Տէր. Դարձեալ լսիցի ի
տեղւոջդ յայդմիկ զորմէ դուքդ ասէք
թէ Աւերակ է ի մարդոյ եւ յանասնոյ , ի
քաղաքս Յուդայ եւ [6]արտաքոյ Երուսա-
ղեմի յաւերակեալ՝ առ ի չգոյէ մարդկան եւ
առ ի չգոյէ բնակչաց եւ առ ի չգոյէ անաս-
11 նոյ , Ձայն ուրախութեան եւ ձայն ցնծու-
թեան , ձայն փեսայի եւ ձայն հարսին ,
[7]որք ասիցեն՝ , Գոհացարուք զՏեառնէ
ամենակալէ զի քաղցր է , զի յաւի-
տեան է ողորմ նորա . [8]բերցեն պատա-
րագս օրհնութեան ի տունն Տեառն . զի
դարձուցից զգերութիւն երկրիդ այդո-
12 րիկ՝ ըստ առաջնոյն , ասէ Տէր ։ Այս-
պէս ասէ Տէր զօրութեանց . Դարձեալ
եղիցին յաւերակ տեղւոջդ առ ի չգոյէ
մարդոյ եւ անասնոյ , եւ յամենայն քա-
ղաքս դորա՝ վանք հովուաց եւ մակա-
13 դատեղք խաչանց , ի քաղաքս լեռնա-
կանս եւ ի քաղաքս [9]Սեփելայ եւ ի քա-
ղաքս [10]Նագեբայ , եւ յերկրին Բենիա-
մինի եւ շուրջ զերուսաղեմաւ եւ ի քա-
ղաքս Յուդայ , դարձեալ անցանիցեն
խաչինք ընդ ձեռն [11]մատղի, ասէ Տէր ։
14 Ահա աւուրք գան , ասէ Տէր , եւ հաս-
ուսցեն զբանս իմ բարի զոր խօսե-
ցայ ի վերայ տանն Իսրայէլի , եւ ի վե-
15 րայ տանդ Յուդայ։ Յաւուրսն յայնոսիկ
եւ ի ժամանակին յայնմիկ ծագեցից
Դաւթի ծագումն արդարութեան , որ
առնիցէ իրաւունս եւ արդարութիւն
16 յերկրի ։ Յաւուրսն յայնոսիկ փրկեսցի
Յուդա, եւ Երուսաղէմ բնակեսցէ [12]յու-
սով . եւ այս է անուն՝ զոր կոչեսցէ"
17 նմա , Տէր արդարութիւն մեր ։ Զի այս-
պէս ասէ Տէր . Մի պակասեսցէ Դաւ-
թի այր , որ նստիցի յաթոռ տանն Իս-
18 րայէլի . Եւ քահանայիցն Ղեւտացւոց՝
մի պակասեսցէ այր յերեսաց իմոյ՝ մատ-
ուցանել ողջակէզս եւ գոհել գոհս , եւ
[12]արկանել խունկս" զամենայն աւուրս ։
19 Եւ եղեւ բան Տեառն առ Երեմիա
20 մարգարէ եւ ասէ , Այսպէս ասէ Տէր .
Եթէ խափանիցէք զուխտ իմ զտուընջեան եւ զուխտ իմ զգիշերոյ , զի մի՛
լինիցի տիւ եւ գիշեր ի ժամանակի իւ-
21 րեանց , Ապա եւ ուխտն իմ որ ընդ Դաւ-
թի ծառայի իմոյ է՝ խափանեսցի , չլի-
նել նմա որդի որ թագաւորեսցէ յա-
թոռ նորա , եւ քահանայիցն Ղեւտ-
22 ացւոց պաշտօնէից իմոց ։ Զոր օրի-
նակ ոչ թուին զօրութիւնք երկնից , եւ
ոչ չափի աւազ ծովու , նոյնպէս բազ-
մացուցից զզաւակն Դաւթի ծառայի իմոյ , եւ զՂեւտացիսն պաշտօնեայս իմ ։
23 Եւ եղեւ բան Տեառն առ Երեմիա
24 եւ ասէ , Ո՞չ անասնես զինչ խօսի ժո-
ղովուրդդ եւ ասեն , եթէ Զաղգս զեր-
կուս զոր ընտրեաց Տէր՝ մերժեաց զնո-
սա . եւ զժողովուրդն իմ զայրացուցա-
նեն չլինել միւսանգամ յազգ առաջի
25 նոցա ։ Այսպէս ասէ Տէր . եթէ [13]զուխտ
իմ զտուընջեան եւ զգիշերոյ եւ զերկ-
նից եւ զերկրի հաստատութեամբ ոչ
26 կարգեցի ," Ապա եւ զզաւակն Յակո-
բայ եւ զԴաւթի ծառայի իմոյ անար-
գեցից , չառնուլ ի զաւակէ նորա իշխան
ի վերայ զաւակին Աբրահամու եւ Իսա-
հակայ եւ Յակոբայ . զի դարձուցից
զդարձ նոցա եւ զմասցայց ի նոսա ։

ԳԼ . Լ՚Ի

1 Բանն որ եղեւ առ Երեմիա [14]ի Տեառ-
նէ ։ Եւ" Նաբուքոդոնոսոր արքայ Բա-
բելացւոց եւ ամենայն զօրականն , եւ
ամենայն երկիր որ ընդ իշխանութեամբ
ձեռին նորա , եւ ամենայն ազգք

---

[1] ԵԲԸ. Նմա ապեղանիս և դեղս [2] ԵԲԸ. յաճախութիւն խաղաղութեան եւ ճշմարտութեան [3] ԵԲԸ. յանուն ուրախութեան, ի գովեստիւն [4] ԵԲԸ. գոզայցեն [5] ԵԲԸ. Նմա (երկրին) [6] ԵԲԸ. ի փոզոս [7] ԵԲԸ. Ձայն որոց ասեն [8] ԵԲԸ. որոց բերեն [9] Ա. յԵխն՝ դաշտականս [10] Ա. յԵխն՝ Հարաւս

[11] ԵԲԸ. յապահովս . եւ այս է անուն որ կոչեսցի [12] ԵԲԸ. մատուցանել պատարագս [13] ԵԲԸ. չէ իմ ուխտս եղեալ ասուընջեան եւ գիշերոյ, եւ ոչ կանոնս երկնից եւ երկրի [14] ԵԲԸ. ի Տեառնէ, յորժամ

մարանչէին ընդ Երուսաղեմի , եւ ընդ
ամենայն քաղաքսն Ցուդայ , եւ ասէ ,
2 Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայելի.
Երթ առ Աեդեկիա արքայ Ցուդայ , եւ
առասցես ցնա , Այսպէս ասէ Տէր . Մատ-
նելով մատնեսցի քաղաքդ այդ ի ձեռս
արքային Բաբելացւոց , [1]եւ առցէ զդա,"
3 եւ այրեսցէ դրա հրով . Եւ դու ոչ ապ-
րեսցիս ի ձեռաց նորա , այլ ըմբռնելով
ըմբռնեսցիս, եւ ի ձեռս նորա մատնեսցիս,
եւ աչք քո զաչս [2]նորա տեսցեն, եւ բերան
ի բերան խօսեսցիս ընդ նմա , եւ ի Բա-
4 բելոն երթիցես : Այլ լուր զպատգամս
Տեառն, Սեդեկիա արքայ Ցուդայ. այսպէս
5 ասէ Տէր վասն քո . Ոչ մեռցիս սրով , Այլ
խաղաղութեամբ մեռանիցիս. եւ որպէս
[3]յայրին զհարսն քո զմազաւորսն առաջինս"
որ եղեն յառաջքան զքեզ, նոյնպէս յայցեն
եւ զքեզ, Թէ վայ, վայ, տէր, եւ կոծեսցին
զքեզ. զի մեծամեծս" խօսեցայ, ասէ Տէր:
6 Եւ խօսեցաւ Երեմիա մարգարէ առ
Սեդեկիա արքայ Ցուդայ զամենայն
7 զբանս զայսոսիկ յԵրուսաղէմ : Եւ զօր
թագաւորին Բաբելացւոց մարանչէր ընդ
Երուսաղեմի եւ ընդ ամենայն քաղաքսն
Ցուդայ ընդ մնացեալսն, ընդ Ղաքիսայ եւ
ընդ Ազեկայ , զի նոքա մնացեալ էին ի
քաղաքացն Ցուդայ քաղաքք ամուրք :
8 Բանն որ եղեւ առ Երեմիա ի Տեառ-
նէ, յետ կատարելոյ Սեդեկեայ արքայի
զուխան ընդ ամենայն ժողովրդեանն
որ յԵրուսաղէմ, կոչել նոցա թողութիւն,
9 Արձակել իւրաքանչիւր ումեք զծառայ
իւր , եւ իւրաքանչիւր զաղախին իւր,
Եբրայեցին եւ զկին Եբրայեցի՝ ազատս .
եւ մի՛ ծառայել առն յադդէ Ցուդայ եղբօր
10 իւրում: Եւ [5]դարձան ամենայն մեծամեծք
եւ ամենայն ժողովուրդն որ մտեալ էին
յուխտ՝ արձակել իւրաքանչիւր զծառայ
իւր , եւ իւրաքանչիւր զաղախին իւր՝
[4]զայր Եբրայեցի եւ զկին Եբրայեցի" ա-
զատս , եւ ոչ եւս ծառայել նոցա . լուան
11 եւ արձակեցին . Եւ յետոյ դարձան , եւ
դարձուցին անդրէն զծառայս եւ զա-
ղախնայս՝ զորս արձակեցին ազատս , եւ
կալան զնոսա ի ծառայս եւ յաղախնայս :
12 Եւ եղեւ բան Տեառն առ Երեմիա ի
13 Տեառնէ , եւ ասէ , Այսպէս ասէ Տէր
Աստուած Իսրայելի . Ես եղի ուխտ ընդ
հարսն ձեր՝ յաւուր յորում փրկեցի զնո-
սա յերկրէն Եգիպտացւոց, ի տանէ ծա-
14 ռայութեան , եւ ասեմ , Թէ յորժամ վեց
ամ լցցի, արձակեսցես զեղբայրն քո զԵբ-
րայեցի որ վաճառեսցի քեզ, եւ գործեսցէ
քեզ զվեց ամ, եւ արձակեսցես զնա ազատ
ի քէն. եւ ոչ լուան ինձ հարքն ձեր, եւ
15 ոչ խոնարհեցուցին զունկն իւրեանց : Եւ
[6]դարձան այսօր առնել զհաճոյս առաջի
աչաց իմոց , կոչել իւրաքանչիւր թո-
ղութիւն ընկերի իւրում . եւ [7]կատա-
րեցին զուխտն առաջի իմ ի տանն յորոյ
16 վերայ կոչեալ է անուն իմ : Եւ չդիցէք
եւ պղծեցէք զանուն իմ, [8]դառնալ իւրա-
քանչիւր ի ծառայ իւր, եւ իւրաքանչիւր
յաղախին իւր, զորս արձակեցէք ազատս
ոգւոց ձերոց". եւ գարձուցէք զնոսա
լինել ձեզ ի ծառայս եւ յաղախնայս :
17 Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր . Դուք
ոչ լուարուք ինձ կոչել արձակուրդ իւ-
րաքանչիւր եղբօր իւրում, եւ իւրա-
քանչիւր մերձաւորի իւրում. ահաւա-
սիկ ես կոչեցից ձեզ արձակուրդ , ասէ
Տէր , ի սուր եւ ի սով եւ ի մահ . եւ
տայց զձեզ ի ցրուումն ընդ ամենայն թա-
18 գաւորութիւնս երկրի : Եւ տայց զարդ
որ անցին զուխտիւ իմով, եւ ոչ կացին ի
բանս ուխտի իմոյ զոր արարին առաջի
իմ , զորմն զոր կտրեցին եւ անցին ընդ
19 մէջ յոչուաձոյն նորա , Զիչխանս Ցու-
դայ եւ զիչխանս Երուսաղեմի , եւ զներ-
քինիս եւ զքահանայս , եւ զամենայն
ժողովուրդ երկրին, որ անցին ընդ մէջ
20 յոչուաձոյ որմուն , Տայց զնոսա ի ձեռս
թշնամեաց նոցա եւ ի ձեռս խնդրողաց
անձանց նոցա , եւ [9]արկից դիակունս"
նոցա կերակուր թռչնոց երկնից եւ գա-
21 զանաց երկրի : Եւ զԱեդեկիա արքայ
Հրէաստանի եւ զիչխանս նորա տայց ի
ձեռս թշնամեաց իւրեանց , եւ ի ձեռս
խնդրողաց անձանց նոցա , եւ ի ձեռս
զօրաց արքային Բաբելացւոց, որ [10]ելեալ
22 հասեալ են ի վերայ նոցա": Ահաւասիկ
ես հրամայեմ տայց , ասէ Տէր , եւ դար-
ձուցից զնոսա այդրէն ի քաղաքդ . մար-

---

[1]Եբր. պ-ւ-ռ [2]Եբր. արքային Բաբելացւոց
[3]Եբր. ծխեցին խունկս Հարցն քոց Թագաւորաց առաջնոց [4]Եբր. ծխեցին եւ քեզ, եւ կոծեսցին զքեզ, Վա՛յ, վա՛յ, տէր. զի զբանն ես
[5]Եբր. անասցին

[6]Եբր. դարձայք [7]Եբր. կատարեցէք [8]Եբր. դարձուցանել իւրաքանչիւր զծառայ իւր եւ իւրաքանչիւր զաղախին իւր զորս արձակեցէք յուպետ յուկամ [9]Եբր. եզիցին դիակունք
[10]Եբր. եւ ի ձէնջ

տիցեն ընդ դմա եւ առցեն զդա, եւ այրեացեն զդա հրով. եւ զքաղաքան Յուդայ առց յանապատ ի բնակչայ իւրեանց։

Գլ. Լ

1 Բանն որ եղեւ առ Երեմիա ի Տեառնէ յաւուրս Յովակիմայ որդւոյ Յովսեայ
2 արքայի Յուդայ, եւ ասէ, Երթ ի տունն Ռաքաբիմայ, եւ [1]կոչեա զնոսա՝, եւ ածցես ի տուն Տեառն ի մի ի սրահից ան-
3 մի, եւ արբուսցես նոցա գինի։ Եւ ածի զՅեռքոնիա որդի Երեմեայ որդւոյ Քաբասենեայ, եւ զեղբարս նորա եւ զամենայն որդիս նորա, եւ զամենայն տունն
4 Ռաքաբիմայ. [2]Ածի ի տուն Տեառն, ի դահլիճ որդւոյն Անանայ որդւոյ Դոդոզեայ առն Աստուծոյ, որ էր մերձ ի տուն իշխանացն, ի վերայ ասպարանիցին Մաասեայ՝ որդւոյ Սելեմեայ վաստապա-
5 հի։ Եւ եդի առաջի որդւոցն Ռաքաբիմայ [3]տաման մի՝ լի գինւով եւ բաժակս. եւ ասեմ ցնոսա, Արբէք գինի այսի։
6 Եւ ասեն, Ոչ արբցուք գինի. զի Յովնադաբ որդի Ռեքաբայ հայր մեր պատուիրեաց մեզ եւ ասէ, Մի ըմպիցէք գինի դուք եւ որդիքն ձեր միհետէ ցյա-
7 ւիտեան. Եւ մի չինիցէք տուն, եւ մի սերմանիցէք սերմանս, եւ մի տնկէք այգիս՝. այլ ի վրանս բնակիցէք զամենայն աւուրս ձեր, զի կայցէք աւուրս բազումս յերկրի յորում չբՂիցիք դուք
8 ի դմա։ Եւ լուաք բարբառոյ Յովնադաբայ որդւոյ Ռեքաբայ հօր մերոյ՝ ըստ ամենայնի զոր պատուիրեաց մեզ չըմսլել գինի զամենայն աւուրս մեր, մեք եւ կանայք մեր եւ ուստերք եւ դստերք
9 մեր. Եւ ոչ չինել տուն եւ ոչ բնակիլ ի նոսա. եւ այդիք եւ անդք եւ
10 սերմանիք ոչ եղեն մեզ. Եւ բնակեցաք վրանօք, եւ լուաք եւ արարաք ըստ ամենայնի, զոր պատուիրեաց մեզ Յով-
11 նադաբ հայր մեր։ Եւ եղեւ իբրեւ եկ Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց յերկիրս յայս, ասացաք, Ելցուք եւ մտցուք յԵրուսաղէմ, յերեսաց զօրուն Քաղդէացւոց, եւ յերեսաց զօրուն Ասորեստանեայց, եւ [4]բնակեցաք անդ՝։
12 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ա-
13 ամէ, Այսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի. Երթ եւ ասա ցարս Յուդայ եւ ցբնակիչս Երուսաղէմի, Ո՞չ առնուցուք խրատ լսել բանից իմոց,
14 ասէ Տէր։ [6]Կացին իրանի որդիքն՝ Յովնադաբայ որդւոյ Ռեքաբայ զոր պատուիրեաց որդւոց իւրոց՝ չըմսլել գինի, եւ ոչ արբին մինչեւ ցայսօր, զի լուան պատուիրանի հօրն իւրեանց. եւ ես խօսեցայ ընդ ձեզ կանխաւս, եւ ոչ լուաք
15 րուք ինձ։ Եւ առաքեցի առ ձեզ զամենայն ծառայս իմ մարգարէս կանխակաս եւ առաքեալ, քամ, Դարձարուք իւրաքանչիւր ի ճանապարհէ իւրմէ չարէ, եւ լաւագոյնս արարէք գիւս ձեր. եւ մի երթայք զհետ աստուածոց օտարաց ծառայել նոցա, եւ բնակիցէք յերկիրի զոր ետու ձեզ եւ հարցն ձերոց. եւ ոչ խոնարհեցուցէք զունկն ձեր, եւ
16 ոչ լուարուք ինձ։ Եւ կացուցին որդիքն Յովնադաբայ որդւոյ Ռեքաբայ զպատուէր հօրն իւրեանց զոր պատուիրեաց նոցա, եւ ժողովուրդդ այդ ոչ լուան
17 ինձ։ Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի. Ահաւադիկ ես ածից ի վերայ Յուդայ եւ ի վերայ ամենայն բնակչաց Երուսաղէմի զամենայն չարիս զոր խօսեցայ ի վերայ նոցա. վասնզի խօսեցայ առ նոսա, եւ ոչ լուան, կոչեցի զնոսա, եւ ոչ
18 ետուն ինձ պատասխանի։
Եւ առ տուն Ռեքաբայ ասաց Երեմիա, Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի. Փոխանակ զի [7]լուան որդիքն Յովնադաբայ որդւոյ Ռեքաբայ պատուիրանի հօր իւրեանց, եւ պահեցին՝ զամենայն հրամանս նորա, առնել բոլ ամենայնի զոր պատուիրեաց
19 [8]նոցա հայրն իւրեանց՝, վասն այսորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի. Մի պակասեսցէ այր յորդւոցն Յովնադաբայ որդւոյ Ռեքաբայ կանգնիման կալ առաջի իմ զամենայն աւուրս [9]երկրիդ։

Գլ. ԼԶ

1 Եւ յամին չորրորդի Յովակիմայ որդւոյ Յովսեայ արքայի Յուդայ, եղեւ
2 բան Տեառն առ իս, եւ ասէ, Առ դու

---

[1] Եբր. խօսեաց առ նոսա [2] Եբր. եւ ածի զնոսա
[3] Եբր. ամանս [4] Եբր.-նեցին յ-Ելս, եւ մի՛ եղիցին ձեզ [5] Եբր. բնակեցաք յԵրուսաղէմ
[6] Եբր. Հաստատեցաւ բանն [7] Եբր. լուարուք պատուիրանի Յովնադաբայ հօր ձերոյ, եւ պահեցէք [8] Եբր. ձեզ [9] Յեբր. գ-ւ-ե

քեզ քարաէս մատնելի, եւ զրնա ի նմա զամենայն զրանս զոր հրամայեաց Տէր քեզ ի վերայ Իսրայէլի եւ ի վերայ Յուդայ եւ ի վերայ ամենայն ազգաց՝ յօրէ յօրէ իսօսեցայ ես ընդ քեզ, յաւուրսն Յովսիայ արքայի Յուդայ եւ մինչեւ
3 ցայսօր. Թերեւս լսելոյն առնիցեն Յուդայ զամենայն չարիս զոր խորհեալ եմ ես առնել նոցա. զի դարձցին իւրաքանչիւր ի ճանապարհէ իւրմէ չարէ, եւ քաւիչ եղէց անօրէնութեանց նոցա եւ մեղաց նոցա։

4 Եւ կոչեաց Երեմիա զԲարուք որդի Ներիայ, եւ գրեաց Բարուք ի բերանոյ Երեմիայի զամենայն զրանս Տեառն զոր հրամայեաց նմա՝ ի քարտիսի մատենին։
5 Եւ պատուիրեաց Երեմիա Բարուքայ եւ ասէ, Ես ի կալանս եմ, եւ ոչ
6 կարեմ մտանել ի տունն Տեառն. Եւ դու մտեալ եւ ընթերցցիս ի մատենէդ, զոր գրեցեր ի բերանոյ իմոյ, զրանս Տեառն յականջս ժողովրդեանն ի տան Տեառն յաւուր պահոց, եւ յականջս ամենայն Յուդայ որ մտանեն ի քաղաքաց իւրեանց՝ ընթերցցիս։
7 Թերեւս անկցի գութ ի սիրտ նոցա առաջի Տեառն, եւ դարձցին իւրաքանչիւր ի ճանապարհաց իւրեանց չարաց. զի մեծ է սրտմտութիւն եւ բարկութիւն Տեառն, զոր խօսեցաւ Տէր ի վերայ ժողովրդեանդ
8 այդորիկ։ Եւ արար Բարուք որպէս Ներիայ բան ամենայնի զոր պատուիրեաց նմա Երեմիա մարգարէ, ընթերցանել ի մատենէն զպատգամս Տեառն ի տան Տեառն։
9 Եւ եղեւ յամին հինգերորդի Յովսիկիմայ որդւոյ Յովսիայ արքայի Յուդայ՝ յամսեանն իններորդի, ժողովեցաւ ի պահս առաջի Տեառն ամենայն ժողովուրդն Երուսաղէմի, եւ ամենայն ժողովուրդն որ գայր ի քաղաքացն Յուդայ յԵրուսաղէմ, [1]եւ առնէն Յուդայ՝
10 Եւ ընթերցաւ Բարուք ի մատենէն զբանս Երեմիայի ի տան Տեառն, [2]ի սրահին Գամարիայ որդւոյ Սափանեայ գրագրապետի, [3]ի մուտս նորոյ զրանն տան Տեառն՝ յականջս ամենայն ժողովրդեանն։
11 Եւ իբրեւ լուաւ Միքիա որդի Գամարիայ որդւոյ Սափանեայ զամենայն պատգամս Տեառն ի մատենէ անտի,
12 էջ ի տուն թագաւորին ի վիւռն գրագրապետին. եւ անդ նստէին ամենայն իշխանքն, Եղիսամա գրագրապետ, եւ Դալիա որդի Սամէի, եւ Եղնաթան որդի Աքոբորայ, եւ Գամարիա որդի Սափանեայ, եւ Սեդեկիա որդի Անանեայ,
13 եւ ամենայն իշխանքն։ Եւ պատմեաց նոցա Միքիա զամենայն զրանս զոր լուաւ կրկնեալ Բարուքայ ի մատենէ անտի յականջս ժողովրդեանն։
14 Եւ առաքեցին ամենայն իշխանքն առ Բարուք զՅուդի որդի Նաթանեայ որդւոյ Սեդոմեայ որդւոյ Քուսեայ, եւ ասեն, Զմատեանն զոր ընթեռնուիր յականջս ժողովրդեանն, առ ի ձեռս քո եւ եկ այսր. եւ առ Բարուք որդի Ներիայ զմատեանն ի ձեռս իւր, եւ էջ առ
15 նոսա. Եւ ասեն ցնա, Ազէ, դարձեալ ընթերցիր յականջս մեր. եւ ընթերցաւ
16 Բարուք յականջս նոցա։ Եւ եղեւ իբրեւ լուան զամենայն զպատգամսն, [4]խորհեցան իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում՝, եւ ասեն ցԲարուք, Պատմելով պատմեսցուք արքային զամենայն
17 զրանդ զայդոսիկ։ Հարցին ցԲարուք եւ ասեն, Ազէ, պատմեա մեզ, [5]ուստե՞ զրեցեր զամենայն զրանդ զայդոսիկ, [6]յո՞ր բերանոյ՝։ Եւ ասէ ցնոսա Բարուք, [7]Ի բերանոյ Երեմիայի. Նա՝ պատմեսցէ ինձ զամենայն զրանս զայսոսիկ,
19 եւ ես գրեցի ի մատենիս սեւակաւ։ Եւ ասեն իշխանքն ցԲարուք, Երթ թաքիր դու եւ Երեմիա, եւ մի ոք գիտասցէ թէ ուր իցէք։
20 Եւ մտին առ արքայ ի սրահ անգր. եւ զմատեանն եւս պահել ի տան Եղիսամայ գրագրապետի, եւ պատմեցին
21 արքայի զամենայն զրանսն։ Եւ առաքեաց արքայն զՅուդի առնուլ զմատեանն. եւ առ զայն ի տանէ Եղիսամայ գրագրապետի, եւ ընթերցաւ Յուդի յականջս թագաւորին եւ յականջս ամենայն իշխանացն որ կային չուրջ զթա-
22 գաւորեանն։ Եւ թագաւորն նստէր ի ձմերատանն յամսեանն իններորդի, եւ
23 կրակարան հրոյ առաջի նորա։ Եւ եղեւ իբրեւ ընթերցաւ Յուդի երիս էջս կամ չորս, կարեայ զայն զմիջնաւ գրագրապետին, եւ ընկէց ի կրակն որ կայր ի վերայ կրակարանին, մինչեւ սպառեցաւ

[1] ՅԱՇԴ. գ-յոթ [2] ՅԱՇԴ. ի գիւանին [3] ՅԱՇԴ. ի գաւթին վերնում, ի մուտս
[4] ՅԱՇԴ. Հայեցան ահիւ իւրաքանչիւր ընդ ընկեր իւր [5] ՅԱՇԴ. գիարդ [6] ՅԱՇԴ. ի բերանոյ նորա [7] ՅԱՇԴ. Նա ի բերանոյ

ամենայն քարաէն ի հուր կրակարանին։
24 Եւ ոչ [1]ինդրեցին, եւ ոչ պատահեցին զգաստութեանն իւրեանց Թագաւորն եւ ամենայն ծառայք իւր որք լուան զա-
25 մենայն զրանն զայնոսիկ։ Եւ Եղնաթան եւ Դաղեա եւ Գամարիա եղին ի մոխ արքայի՝ կայրել զքարաէան, եւ ոչ
26 անսաց նոցա։ Եւ հրամայեաց նա արքայ Յերամիելի որդւոյ արքայի, եւ Սաւրեայ որդւոյ Եսրիելի, եւ Սեղեմիայ որդւոյ Աբդիելի, ածնել զԲարուք գրագրպետ եւ զԵրեմիա մարգարէ. եւ [2]Նոքա չոգան թաքեան"։
27 Եւ եղեւ բան Տեառն առ Երեմիա յետ այրելոյ Թագաւորին զքարաէան եւ զամենայն բանս զոր գրեաց Բարուք ի
28 բերանոյ Երեմիայի, եւ ասէ, Դարձեալ առ դու այլ քարաէս, եւ գրեա ի նմա զամենայն զրանն զառաջինս, որ էին յառաջնում քարաիսին, զոր այրեաց
29 Յովակիմ արքայ Յուդայ։ Եւ ցՅովակիմ արքայ Յուդայ ասացես, Այսպէս ասէ Տէր. Դու այրեցեր զմատեանն զայն եւ ասացեր, Թէ Ընդէր գրեցեր ի նմա եւ ասացեր, Մատնելով մատչէ արքայն Բաբելացւոց, եւ ջնջեսցէ զերկիրդ ոչդէ, պակաս արասցէ ի գմանէ զմարդ եւ զանասունն։
30 Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր ի վերայ Յովակիմայ արքայի Յուդայ. Մի ինասցէ նորա որ նստցի յաթոռն Դաւթի, եւ դիակունք նորա եղիցին անկեալ ի տուէ ի օրէի, եւ ցրտի ի
31 ցուրտ. Եւ այց արարից ի վերայ նորա, եւ ի վերայ ազգի նորա, եւ ի վերայ ծառայից նորա՝ ըստ անօրէնութեանց նորա. եւ ածից ի վերայ նոցա եւ ի վերայ բնակչաց Երուսաղէմի եւ ի վերայ [3]երկրիդ Յուդայ զամենայն չարիս զոր խօսեայ ի վերայ դոցա, եւ ոչ լուան։
32 Եւ առ Երեմիա այլ քարաէս, եւ տայ գԲարուք որդի Ներեայ գգրագրպետ, եւ գրեաց ի նմա ի բերանոյ Երեմիայի զամենայն բանս մատենին զոր այրեաց Յովակիմ արքայ Յուդայ ի կրակի. եւ այլ եւս բանք յաւելան ի նոյն առաւել քան զայնս։

ԳԼ. ԼԱ

1 Եւ Թագաւորեաց Սեդեկիա որդի Յով-

[1] ԵԲԲ. երկեան [2] ԵԲԲ. Թաքոյց զնոսա Տէր [3] ԵԲԲ. առն

սեայ փոխանակ Յեքոնեայ որդւոյ Յովակիմայ, զոր Թագաւորեցոյց Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց՝ [4]Թա-
2 գաւորել ի վերայ Յուդայ։ Եւ ոչ լուաւ նա, եւ ծառայք իւր եւ ժողովուրդ երկրին զբանս Տեառն զոր խօսեցաւ ի ձեռն
3 Երեմիայի մարգարէի։ Եւ առաքեաց արքայ Սեդեկիա զՅովաքազ գորդի Սելեմեայ, եւ զՍոփոնիա որդի Մաասեայ զքահանայ առ Երեմիա մարգարէ եւ ասէ. Կաց դու յաղօթս ի վերայ մեր առ
4 Տէր Աստուած մեր։ Եւ Երեմիա [5]անց ընդ մէջ ամբոխին եւ նոքա, եւ ոչ արկին զնա ի բանտ"։ Եւ զօրն Փարաւոնի ել յերկրէն Եգիպտացւոց, եւ լուան Քաղդէացիքն որոց պաշարեալ էր զԲրուսաղէմ զլուր նոցա, եւ նոքա եղին յերուսաղէմ։
5 Եւ եղեւ բան Տեառն առ Երեմիա
6 մարգարէ, եւ ասէ, Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Այսպէս ասասջիք գարքային Յուդայ որ առաքեացն զձեզ առ իս խնդրել զիս. Ահա զօրն Փարաւոնի որ ել ձեզ յօգնականութիւն՝ դարձ-
7 ցի անդրէն յԵգիպտոս. Եւ Քաղդէացիքն դարձցին այսրէն, եւ մարտիցեն ընդ քաղաքիս ընդ այսմիկ, եւ առցեն զսա, եւ այրեսցեն զսա հրով։ Այսպէս ասէ Տէր. Մի՛ կարծէք յանձինս ձեր թէ երթին գնացին Քաղդէացիքն ի մէնջ.
9 չեն Թափելոց ի ձէնջ. Թէպէտ եւ զամենայն զօրն Քաղդէացւոց որ մարտնչէին ընդ ձեզ՝ կոտորիցէք, խոցքն որ մնայցեն ի նոցանէ՝ յիւրաքանչիւր տեղւոջէ յարիցեն եւ այրեսցեն հրով զքաղաքդ։
10 Եւ եղեւ իբրեւ մերժեցաւ զօր Քաղդէացւոցն յերուսաղէմ, յերեսաց զո-
11 բայն Փարաւոնի, ել Երեմիա յերուսաղեմէ երթալ յերկիրն Բենիամինի, [6]գնել
12 անդ" բաժին ի մէջ ժողովրդեանն. Եւ եկն եհաս ի դուռն Բենիամինի. եւ անդ էր [7]այր մի առ ուսմ մատեալ էր նորա, անուն Առարէ" որդի Սեղեմիայ, որդւոյ Անանեայ. կալաւ զԵրեմիա մարգարէ եւ ասէ, Առ Քաղդէացիսն փա-
13 խուցեալ երթաս։ Եւ ասէ Երեմիա, Սուտ ասես, չերթամ փախուցեալ առ Քաղդէացիսն. եւ ոչ անսաց նմա, եւ

[4] ԵԲԲ. յերկրին [5] ԵԲԲ. մտանէր եւ ելանէր ի մէջ ժողովրդեանն, եւ ոչ էր արկեալ զնա ի տուն բանտին [6] ԵԲԲ. առնուլ անտի [7] ԵԲԲ. ոստիկան մի անուն Յերիա

կալաւ [1]Սարու զԵրեմիա, եւ աճ առ
14 իշխանան։ Եւ զայրացան իշխանքն ի վերայ Երեմիայի, զան հարին եւ նետուն զնա ի տուն բանտի, յապարանս Յովնաթանու զպատսպարի. քանզի զնորա ապարանան արարին բանտ։
15 [2]Եկն Երեմիա ի տուն գրոյն [3]յԱչերիտոլիմն, եւ նստաւ անդ Երեմիա զա-
16 ւուրս բազումս։ Առաքեաց արքայ Սեդեկիա եւ կոչեաց զնա. եւ երդարց զնա թագաւորն ի ծածուկ, եւ ասէ ցնա, Եթէ իցէ[4] ինչ պատգամ ի Տեառնէ։ Եւ ասէ Երեմիա, Այո, է. եւ ասէ, ի ձեռս թագաւորին Բաբե-
17 լացւոց մատնեսցիս։ Եւ ասէ Երեմիա ցթագաւորն Սեդեկիա, Զինչ մեղայ քեզ եւ ծառայից քոց եւ ժողովրդեանն,
18 զի [4]տաս դու" զիս ի տուն բանտին. Եւ ո՞ր են մարգարէքն ձեր որ մարգարէանային եւ ասէին՝ Թէ Ոչ է գալոց արքայն Բաբելացւոց ի վերայ ձեր յեր-
19 կիրս յայս։ Եւ արդ լուր, աղաչեմ, տէր իմ արքայ, անկցի ողորմ իմ առաջի քո. եւ [5]ընդէր զարձուցանես" զիս ի տուն Յովնաթանայ գրագրաց, եւ անդ
20 մեռանիցեմ։ Հրամայեաց եւս արքայ Սեդեկիա, եւ [6]արկին զնա ի տուն բանտի". եւ տային նմա աւուրըն նկանակ մի հաց արտաքուստ ի հացարարացն, մինչեւ հատաւ ամենեւին հաց ի քաղաքէն. եւ նստաւ Երեմիա [7]ի սրահի բանտին։

ԳԼ. ԼԸ

1 Եւ լուաւ Սափատիա որդի Մատթանայ, եւ Գոդոլիա որդի Պաշքովրայ, եւ Յովքաղ որդի Սեդեմիայ, եւ Պաշքովր որդի Մելքիայ, զբանս Երեմիայի, զոր խօսէր առ ամենայն ժողովուրդն,
2 եւ ասէր, Այսպէս ասէ Տէր. Որ նստի ի քաղաքիս յայսմիկ՝ մեռցի սրով եւ սովով եւ մահտամբ. եւ որ ելանէ առ Քաղդէացիսն՝ կեցցէ, եւ եղիցի նմա
3 անձն իւր ի դիւաս, եւ կեցցէ։ Զի այսպէս ասէ Տէր. Մատնելով մատնեսցի քաղաքդ ի ձեռս զօրու թագաւորին
4 Բաբելացւոց, եւ առցէ զսա։ Եւ ասեն իշխանքն ցթագաւորն. Սպանցի

[1]ՅԵՐԻ. Յերիա [2]ՅԵՐԻ. Իրդեւ եկն [3]ՅԵՐԻ. եւ ի խուցսն [4]ՅԵՐԻ. Եւտաք [5]ՅԵՐԻ. մի՛ դարձուցաներ [6]ՅԵՐԻ. եդին զնա ի գաւթի բանտին [7]ՅԵՐԻ. ի գաւթի

այդն այն. զի այնու լուծանէ նա զձեռս արանց պատերազմողաց մնացորդաց քաղաքիս այսորիկ, եւ զձեռս ամենայն ժողովրդեանդ, խօսել ընդ դոսա բան բանիդ այդոցիկ, զի այդն այն ոչ՝ օգուտ եւ խաղաղութեան բանս խօսի ընդ
5 ժողովրդեանն" այլ չարի։ Եւ ասէ արքայ Սեդեկիա, Ահաւադիկ կայ ի ձեռս ձեր. քանզի ոչ ինչ [8]էր ձեռնհաս առ
6 նոսա" եւ ոչ լուիք։ Եւ առին զԵրեմիա, եւ ընկեցին զնա ի գուբն Մեղքեայ որդւոյ թագաւորին, որ էր [9]ի սրահի բանտին. եւ իջուցին զԵրեմիա պարանօք ի գուբն. եւ ի գուբն անդ չուր ոչ էր, այլ լոկ տիւմ. եւ կայր Երեմիա ի տիւմին։
7 Եւ լուաւ Աբդեմելէք Եթէովպացի՝ այր ներքինի, եւ ինքն էր յապարանս թագաւորին, Թէ արկին զՆերեմիա ի գուբն. եւ արքայ նստէր առ դրան Բե-
8 նիամինի. Եւ ել առ նա Աբդեմելէք յապարանից թագաւորին, եւ խօսեցաւ
9 ընդ թագաւորին եւ ասէ, Տէր արքայ, չարիս գործեցին արքն այնոքիկ ըստ ամենայնի զոր արարին Երեմիայի մարգարէի. զի արկին զնա ի գուբն, եւ մեռանի ինքեան,[10] չարիս գործեցեր ասացանելով զայրն Աստուծոյ," յերեսաց առվոյս այսորիկ, զի ոչ դաւանի հաց ի քա-
10 ղաքիս։ Եւ հրամայեաց թագաւորն Աբդեմելէքայ Եթէովպացւոյ եւ ասէ, Առ դու ընդ քեզ ասասի արս երեսուն, եւ հանէք զմարգարէն ի գուբէ անտի, զի մի՛
11 մեռցի։ Եւ առ Աբդեմելէք զարան ընդ իւր, եւ եկն յապարանս թագաւորին ի պեսանավոր տուն գանձին. առ անտի կապերս հինս եւ [11]պատռեալս հինս", եւ
12 ընկէց զայն առ Երեմիա ի գուբն[12]. Եւ ասէ Աբդեմելէք Եթէովպացի ցԵրեմիա. Դիր զձին կապերսդ եւ վրուրդդ ընդ անթովք ձեռաց քոց ի ներքոյ պարա-
13 նոցդ. եւ արար Երեմիա այնպէս։ Եւ ձգեցին զնա պարանօքն, եւ հանին զնա ի գրոյ անտի. եւ նստաւ Երեմիա [7]ի սրահի բանտին։
14 Եւ առաքեաց արքայ Սեդեկիա, եւ կոչեաց առ ինքն [13]զմարգարէն ի տուն Աստուածային", որ էր ի տան Տեառն.

[8]ՅԵՐԻ. է ի խնդիր խաղաղութեան ժողովրդեանդ այդորիկ [9]ՅԵՐԻ. է ձեռնհաս արքայ առ ձեզ [10]ՅԵՐԻ. պոռնիկ [11]ՅԵՐԻ. կապերս պատառատուն [12]ՅԵՐԻ. յաւելուած պարանօք [13]ՅԵՐԻ. զԵրեմիա մարգարէ յերրորդ մուտն

և ասէ ցնա արքայն , Հարցանեմ ինչ
ցքեզ բան , մի ի ցէ ինչ թաքուցանիս
15 ցես յինէն զբանն : Եւ ասէ Երեմիա
ցթագաւորն , Եթէ պատմեցից քեզ , ոչ
սպաքէն մահու սպանանիցես զիս , եւ
եթէ աւց ինչ քեզ խրատ , ոչ անսաս
16 ինձ : Եւ երդուաւ նմա արքայ Սեդե-
կիա գաղտ , եւ ասէ , Կենդանի է Տէր
որ արար ի մեզ զչունչս զայս , ինչ ի ցէ
սպանից զքեզ , կամ ինչ ի ցէ մատնեցից
ի ձեռս արանցն , որ խնդրեն զանձն քո :
17 Եւ ասէ ցնա Երեմիա , Այսպէս ասէ Տէր
զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի . Ե-
թէ ելանելով ելցես առ [1]զօրավարս արք-
քային Բաբելացւոց , կեցցէ անձն քո ,
եւ քաղաքս ոչ այրեսցի հրով , եւ կեց-
18 ցես դու եւ տուն քո : Ապա թէ ոչ ել-
ցես առ իշխանս արքային Բաբելացւոց ,
մատնեսցի քաղաքս ի ձեռս Քաղդէացւոց ,
եւ այրեսցեն զնա հրով , եւ դու ոչ ապ-
19 րեսցիս ի ձեռաց նոցա : Եւ ասէ Սե-
դեկիա արքայ ցԵրեմիա , [2]Իմ բանք ինչ
են ընդ Հրեայն փախստականս առ
Քաղդէացիսն , դուցէ տացեն զիս ի ձեռս
20 նոցա , եւ ձաղիցեն զիս : Եւ ասէ Երե-
միա , Ոչ մատնեսցեն զքեզ . բայց լուր
զբանս Տեառն զոր ես խօսիմ ընդ քեզ ,
եւ լաւ լիցի քեզ եւ կեցցէ անձն քո :
21 Ապա թէ ոչ կամիցիս ելանել , այս բան
22 է զոր եցոյց ինձ Տէր . Ահաւադիկ ա-
մենայն կանայք որ մնացեալ են ի տան
թագաւորիդ Յուդայ , հանցին առ իշ-
խանս արքային Բաբելացւոց . եւ նորա
ասիցեն , Խաբեցին զքեզ եւ յաղթեցին
քեզ արք խաղաղարարք , [3]եւ արիացան
ի գայթակղութիւն զոտս քո , եւ դարձ-
23 ցին ի քէն՝ : Եւ զամենայն կանայս քո
եւ զորդիս քո հանցեն առ Քաղդէա-
ցիսն , եւ դու ոչ ապրեսցիս ի ձեռաց
նորա . զի ի ձեռս թագաւորին Բաբե-
լացւոց ըմբռնեսցիս , եւ քաղաքս այ-
24 րեսցի հրով : Եւ ասէ ցնա թագաւորն ,
[4]Այր դու՝ , մի՛ ոք իմասցի զինչ ի բանից
25 այսոցի յայդցանէ , [5]գուցէ մեռանիցիս : Եւ
եթէ լսիցեն իշխանքն եթէ խօսեցայ
ընդ քեզ , եւ գայցեն առ քեզ եւ ասիցեն , Պատմեա մեզ , զինչ խօսեցար ընդ
արքային , մի թաքուցաներ ի մէնջ եւ
ոչ սպանցուք զքեզ . եւ կամ թէ զինչ
26 խօսեցար ընդ քեզ արքայ . Ասասցես
ցնոսա , Սրկի գոհեմ առաջի արքային զի
մի դարձուսցէ զիս անդրէն ի տուն Յով-
27 նաթանայ մեռանել լինիմ անդ : Եւ եկին
ամենայն իշխանքն առ Երեմիա , եւ հար-
ցին ցնա . եւ պատմեաց նոցա զամե-
նայն բանսն զոր պատուիրեաց նմա թա-
գաւորն , եւ լռեցին ի նմանէ զի ոչ եղ
28 ի վեր բանն : Եւ նստաւ Երեմիա [6]ի
սրահի բանտին , մինչեւ ի ժամանակն
յորում առաւն Երուսաղէմ :

Գլ. Լթ

1 Եւ եղեւ յորժամ առաւ Երուսաղէմ
յամին իննեւտասներորդի Սեդեկիայ արքայի
Յուդայ յամսեանն տասներորդի , եկն
Նաբուքոդոնոսոր արքայ Բաբե-
2 լացւոց , ինքն եւ ամենայն զօրք իւր
յԵրուսաղէմ , եւ պաշարեցին զնա : Եւ
յամին միտասաներորդի Սեդեկիայ՝ յամ-
սեանն չորրորդի՝ որ օր էին էր ամսոյն ,
3 պատառեցաւ [7]քաղաքն . Եւ մտին ա-
մենայն զօրավարք՝ արքային Բաբելաց-
ւոց , եւ նստան ի դրանն միջնում , Ներ-
գէղ Սարասար , [8]Սամագարտա , Նաբու-
Սարսեքիմ , Ռափսարիս , Ներգէղ Սա-
րասար , Ռաբմագ՝ , եւ ամենայն այլ
եւս իշխանք արքային Բաբելացւոց :
4 Եւ եղեւ իբրեւ տեսին զնոսա Սեդե-
կիա արքայ Յուդայ , եւ ամենայն արք
պատերազմողք , փախեան եւ ելին գի-
շերի ի քաղաքէ անտի ընդ ճանապարհ
բուրաստանին արքունի , ընդ դուռնն
որ էր ի մէջ [9]պարսպացն . եւ ելին ընդ
5 ճանապարհ [10]Արաբայ : Եւ զնա եղեն
նոցա զօրք Քաղդէացւոցն , եւ հասին
Սեդեկիայ [11]յԱրաբովթ Երիքովայ , կա-
լան զնա եւ ածին առ Նաբուքոդոնո-
սոր արքայ Բաբելացւոց ի Ռեբղաթա
յերկիրն Եմաթայ , եւ խօսեցաւ ընդ նմա
6 պատաստանաւք : Եւ սպան արքայն Բա-
բելացւոց զորդիսն Սեդեկիայ ի Ռեբ-
զաթա առաջի նորա . եւ զամենայն ա-
զատան Յուդայ կատարեաց արքայն Բա-
7 բելացւոց : Եւ զաչսն Սեդեկիայ կուր-
բացոյց , եւ կապեաց զնա պղնձի չղթա-

[1] Եբէ. իշխանս [2] Եբէ. Ես երկնչիմ ի Հրեից որ անկեալ են [3] Եբէ. իբրեւ ընկղմեցան ոտք քո ի տիղմ դարձան յետս [4] Յեբէ. պ-ոխ [5] Եբէ. եւ մի՛

[6] Եբէ. ի գաւթի [7] Իմ, պարիսպ քաղաքին. (3) Եւ մտին ամենայն իշխանք [8] Լուք ԲՆ-ՏԲՆ, Սամեգարնաբաս, Սարսեքիմ, Ռափսարիս, Ներգեղսարասար, Ռաբմագ (մեգպետ) [9] Եբէ. երկուց պարսպացն [10] Ա յԵրիքովն՝ դաշտին [11] Ա յԵրիքովն՝ ի դաշտան

8 յիւք տանել զնա ի Բաբելոն, եւ զտուն
թագաւորին եւ զտունս ժողովրդեանն
այրեցին Քաղդէացիքն հրով, եւ զպա-
9 րիսպն Երուսաղէմի քակեցին, եւ զնուա-
ցորդս ժողովրդեանն որ մնացին ի քա-
ղաքին, եւ զանկեալսն որ անկան ի
նա, եւ զբնիկքորան ժողովրդեանն որ
մնացին, խաղացոյց Նաբուզարդան դահ-
10 ճապետ ի Բաբելոն, եւ յալքատաց ժո-
ղովրդեանն, որոց ոչ մնաց գոյր, եթող
Նաբուզարդան դահճապետ անդրէն յերկ-
րին Ցուդայ, եւ նա նոցա այգիս եւ
ջրարբիս յաւուր յայնմիկ։
11 Եւ նա պատուիրանաւ Նաբուքոդո-
նոսոր արքայ Բաբելացւոց զԵրեմիա ի
ձեռս Նաբուզարդանայ դահճապետին
12 եւ ասէ, Առ զդա եւ աչն ած ի վերայ
դորա, եւ մի՛ ինչ արասցես դմա չար.
այլ զոր ինչ ասացէ քեզ՝ արասցես
13 դմա։ Եւ առաքեցին Նաբուզարդան
դահճապետ եւ Նաբուսազարան ներքի-
նապետ, եւ Նէրգէղսարասար, Րաբ-
մագ, եւ ամենայն մեծամեծք արքային
14 Բաբելացւոց, եւ առին զԵրեմիա ի
բանտէ անտի, եւ հատուն ցԳոդողիա
որդի Աքիկամայ՝ որդւոյ Սափանայ, [1]եւ
հանին՝՝ զնա ի տունն, եւ անդ նստէր
ի մէջ ժողովրդեան։
15 Եւ առ Երեմիա եղեւ բան Տեառն
մինչ էր ի նեղութեան [2]ի սրահի բան-
16 տին, եւ ասէ, Երթ եւ ասա ցԱբդեմելէք
Եթէովպացի, Այսպէս ասէ Տէր զօրու-
թեանց՝ Աստուած Իսրայէլի. Ահա ածիմ
եւ զբանն իմ ի վերայ քաղաքիդ
այդորիկ ի չարիս եւ ոչ ի բարիս. եւ ե-
դիցի առաջի աչաց քոց յաւուր յայն-
17 միկ։ Եւ զքեզ փրկեցից յաւուր յայն-
միկ, ասէ Տէր, եւ ոչ տացի զքեզ ի ձեռս
արանցն յորոց դու երկնչիս յերեսաց
18 նոցա։ Զի ապրեցուցանելով ապրեցու-
ցից զքեզ, եւ ի սուր մի՛ անկցիս, եւ
եղիցի քեզ անձն քո ի զիւտս. զի յու-
սացար յիս, ասէ Տէր։

Գլ. խ

1 Բանն որ եղեւ ի վերայ Երեմիայի ի
Տեառնէ՝ յետ արձակելոյն զնա Նաբու-
զարդանայ դահճապետի ի Ռամա. քանզի առին զնա կապեալ ձեռակապօք ի
միջոյ ամենայն գերութեանն Երու-
սաղէմի եւ Ցուդայ, զոր խաղացուցին ի
2 Բաբելոն։ Առ զնա դահճապետն, եւ ասէ
ցնա, Տէր Աստուած քո բարբառեցաւ
չարիսդ զայդ ի վերայ տեղւոյս այս-
3 րիկ. եւ ած եւ արար Տէր որպէս եւ
խօսեցաւ. զի մեղայք Տեառն եւ ոչ
լուայք ձայնի նորա, եւ եղեւ ընդ ձեզ
4 բանդ այդ։ Եւ արդ ահա այժմ լուծի
զքեզ այսօր ի ձեռակապացդ որ էին ի
ձեռս քո. եթէ բարւոք թուի առաջի
քո գալ ընդ իս ի Բաբելոն՝ եկ, եւ ածից
ի վերայ քո աչն. եւ եթէ չար թուի
յաչս քո գալ ընդ իս ի Բաբելոն, դա-
դարեա ասացն. ահա ամենայն երկիրս
առաջի քո է ի բարիս, ուր հաճոյ է քեզ
5 երթալ՝ անդր երթիցես։ Եւ [3]մինչդեռ
առնեմ, երթ յով եւ համիս. եւ՝՝ զար-
ձիր առ Գոդողիա որդի Աքիկամայ որդ-
ւոյ Սափանայ, զոր կացոյց արքայն
Բաբելացւոց ի վերայ [4]երկրիդ Հրէաս-
տանի, եւ բնակեսցես ընդ նմա ի մէջ
ժողովրդեանն. ապա թէ ոչ, ըստ ա-
մենայն հաճութեան աչաց քոց երթա-
լոյ՝ երթիցես. եւ ետ նմա պահճապետն
նպարակս եւ պարգեւս, եւ արձակեաց։
6 Եւ եկն Երեմիա առ Գոդողիա որդի Ա-
քիկամայ ի Մասփա, եւ նստաւ անդ
ի մէջ ժողովրդեան երկրին մնացելոց։
7 Եւ լուան ամենայն զօրաւարք զօրաց
որ էին ի դաշտ՝ ինքեանք եւ զօրք իւ-
րեանց, թէ կացոյց արքայն Բաբելացւոց զԳոդողիա որդի Աքիկամայ ի վե-
րայ երկրին, եւ յանձն արար նմա զարս
եւ զկանայս եւ [5]ժողովուրդ բաղում՝՝
եւ յաղքատաց ժողովրդեան երկրին զոր
8 ոչ խաղացոյց ի Բաբելոն։ Եկին առ
Գոդողիա ի Մասփա, Իսմայէլ որդի
Նաթանայ եւ Յովնան եւ Յովնաթան
որդիք Կարէի, եւ Սարեա որդի Թանա-
քումեթայ, եւ որդիք Ովփերի որդւոյ Նե-
տոփատացւոյ, եւ Յեզոնիա որդի Մաքա-
թայ, ինքեանք եւ արք որ ընդ նոսա։
9 Եւ երդուաւ նոցա Գոդողիա որդի Ա-
քիկամայ որդւոյ Սափանայ, եւ արանցն
որ ընդ նոսա, եւ ասէ, Մի՛ երկնչիք
[6]յերկսայց ծառայիցն՝՝ Քաղդէացւոց, այլ
բնակեցէք յերկրիս, եւ հարկեցարուք
արքային Բաբելացւոց, եւ բարի եղիցի
10 ձեզ։ Եւ ես ահաւասիկ նստիմ ի Մաս-

[1] ԵՒՔ. Հանել [2] ԵՒՔ. ի գաւթի

[3] ԵՒՔ. մինչչեւ դարձեալ նորա այսբէն, [4] ԵՒՔ. քաղաքացդ [5] ՆՐՔ. զմանկունս [6] ՆՐՔ. ի ծառայութենէ

վա, կալ ընդդէմ Քաղդէացւոցն որ եւ
լանիցեն ի վերայ մեր. եւ դուք ժողո-
վեցէք դղիւղ եւ դիմիցէ, եւ ժողովեսցէ զ
[1]յամանս ձեր. եւ ընտիկեսջիք ի քաղաքս
11 ձեր զորս կալայք [2]քաչուբնամբ։ Եւ
ամենայն Հրեայք որ էին յերկրին Մո-
վաբացւոց, եւ ի մէջ որդւոցն Ամո-
նայ, եւ որք յԵդովմ, եւ որք յամենայն
երկրի, լուան եթէ թող արքայն Բա-
բելացւոց մնացորդս ի Հրէաստանի, եւ
կացոյց նոցա վերակացու զԳոդողիա
որդի Աքիկամայ որդւոյ Սափանայ,
12 Դարձան անդրէն ամենայն Հրեայք յա-
մենայն տեղեացն ուր գրուեցան անդր,
եւ եկին յերկիրն Ցուդայ առ Գոդողիա
ի Մասիփա, եւ ժողովեցին գինի եւ
միրգ բազում յոյժ։
13 Եւ Յովնան որդի Կարէի եւ ամենայն
զօրավարք զօրացն որ էին ի բացի ե-
14 կին առ Գոդողիա ի Մասիփա, Եւ ա-
սեն ցնա, Զայն գիտեմ զի Բաալիս
թագաւոր որդւոցն Ամմոնայ արձակեաց
[3]առ Իսմայէլ՝ որդի Նաթանայ սպանա-
նել զքեզ. եւ ոչ հաւատաց նոցա Գո-
15 դողիա որդի Աքիկամայ։ Եւ Յովնան
որդի Կարէի՝ ասէ գաղտ ցԳոդողիա ի
Մասիփա, Երթայց սպանից զԻսմայէլ
որդի Նաթանայ, եւ մի ոք գիտասցէ.
զուցէ երթիւք սպանանիցէ զքեզ, եւ
ցրուեսցին Հրեայք որ ժողովեալ են առ
քեզ, եւ կորնչիցին մնացորդք Ցուդայ։
16 Եւ ասէ Գոդողիա որդի Աքիկամայ ցՅով-
նան որդի Կարէի, Մի արասցես բան
բանիդ այդորիկ, զի սուտ խօսիցար դու
զԻսմայէլ։

Գլ. ԽԱ.

1 Եւ եղեւ յամսեանն եւթներորդի եկն
Իսմայէլ որդի Նաթանայ, որդւոյ Ելի-
սամայ յազգէ թագաւորին, եւ [4]Ծառայք
թագաւորին, եւ տասն այր ընդ նմա
առ Գոդողիա որդի Աքիկամայ ի Մաս-
փա, եւ կերան հաց ի միասին ի Մաս-
2 փա։ Եւ յարուաւ Իսմայէլ որդի Նաթա-
նայ, եւ տասնեքին արքն որ ընդ նմա,
եւ եհար զԳոդողիա որդի Աքիկամայ
որդւոյ Սափանայ սրով, եւ սպան զնա,
զոր կացուցեալ էր արքային Բաբելաց-
3 ւոց ի վերայ երկրին. Եւ զամենայն
Հրեայսն որ էին ընդ Գոդողիայ ի Մաս-

[1] ՆԲէր. եւ դիք յամանս [2] ՁՆԲէր. դոխոէ [3] ՆԲէր. զԻսմայէլ [4] ՆԲէր. մեծամեծք

փա, եւ զամենայն Քաղդէացիսն որ
անդ գտան զարս պատերազմօղս, կո-
տորեաց Իսմայէլ։
4 Եւ եղեւ յերկրորդում աւուր սպանա-
նելոյ անդ զԳոդողիա, եւ ոչ ոք գիտէր,
5 Եկին արք ի Սիւքեմայ եւ ի Սաղեմայ եւ
ի Շամրնէ, արք ութսուն, վերծեալ զմօ-
րուս եւ պատառեալ զհանդերձս [5]կոծե-
լով, եւ մաննա՝ եւ ընդրուկ ի ձեռս նոցա
6 առնել ի տունն Տեառն։ Եւ ել Իսմայէլ
որդի Նաթանայ ընդ առաջ նոցա ի Մաս-
փայ, երթալով երթայր եւ լայր. եւ
եղեւ իբրեւ մերձեցաւ ի նոսա՝ ասէ ցնո-
սա, Մտէք առ Գոդողիա որդի Աքիկա-
7 մայ։ Եւ եղեւ իբրեւ մտին ի մէջ քա-
ղաքին, կոտորեաց զնոսա Իսմայէլ որ-
դի Նաթանայ ի մէջ քաղաքին, եւ ա-
մաց ի ջրհոր՝ ինքն եւ արքն որ ընդ
8 նմա։ Եւ արք ասան գտան անդ, եւ
ասեն ցԻսմայէլ, Մի սպանաներ զմեզ,
զի գտեալ մեզ գանձք ի բացի, ցորեան եւ
գարի, ձէթ եւ եւղ. եւ զանց արար
եւ ոչ սպան զնոսա ի մէջ եղբարց իւ-
9 րեանց։ Եւ ջրհորն յոր ամաց Իսմայէլ
զամենայն մարմինս արանցն զոր կոտո-
րեաց վասն Գոդողիայ, [6]ջրհոր մեծ էր՝
զոր արար արքայ Ասա յերեսաց Բաա-
սայ արքայի Իսրայէլի. զայն ելից Իս-
10 մայէլ որդի Նաթանայ վիրաւորօք։ Եւ
դարձոյց Իսմայէլ զամենայն ժողովուրդն
որ մնացեալ էր ի Մասփա, եւ զդստերս
թագաւորին հանդերձ ամենայն անձնք
ժողովրդեանն որ էին ի Մասփա,
զորս յանձն արարեալ էր Նաբուզար-
դանայ դահճապետի Գոդողիայ որդւոյ
Աքիկամայ. եւ [7]հանեսեալ Իսմայէլ որ-
դի Նաթանայ ընդ առաւօտս՝, եւ գնաց
յայն կողմն առ որդիսն Ամմոնայ։
11 Եւ լուաւ Յովնան որդի Կարէի եւ
ամենայն զօրավարք զօրացն որ ընդ նմա
էին, զամենայն չարիսն զոր գործեաց
12 Իսմայէլ որդի Նաթանայ. Ժողովեցին
զամենայն զօրականն իւրեանց, եւ խա-
զացին երթալ տալ պատերազմ ընդ Իս-
մայէլի որդւոյ Նաթանայ. եւ գտին զնա
ի վերայ ջուրցն բազմաց որ էին ի Գա-
13 բաւոն։ Եւ եղեւ իբրեւ տեսին ամե-
նայն ժողովուրդն որ էին ընդ Իսմայե-
լի՝ զՅովնան որդի Կարէի եւ զամենայն

[5] ՆԲէր. եւ ցաեալ, եւ ընծայ հացի [6] ՆԲէր. էր ջրհորն [7] ՆԲէր. գերեաց զնոսա Իսմայէլ որդի Նաթանայ

զօրավարս զօրացն որ էին ընդ նմա՝ ու-
14 բախ եղեն։ Եւ պարձան *առ նոսա՝ ա-
մենայն ժողովուրդն զոր զիրեաց Իս-
մայէլ ի Մասփայ, եւ եկին առ Յովհան
15 որդի Կարէհ։ Բայց Իսմայէլ որդի Նաթա-
նայ ապրեցաւ ի պատերազմէն ի
Յովհանայ, եւ անկաւ առ որդիան Ա-
16 մնայ։ Եւ առ Յովհան որդի Կարէհ,
եւ ամենայն զօրավարք զօրացն որ էին
ընդ նմա, զամենայն մնացորդս ժո-
ղովրդեանն զոր թափեաց յԻսմայէլէ
յորժամ Նաթանայ ի Մասփայ, յետ
սպանանելոյն զԳոդոլիա որդի Աքիկա-
մայ զարս հզօրս պատերազմօղս, եւ
զիանայս եւ [1]զարս եւ զնուքինիս, զոր
17 առ յերկրէն Դարաւնայեայց, եւ [2]գնաց.
եւ նստան յերկրին Բեթղեհեմի՝ երթալ մտանել
18 յերկիրն Եգիպտացւոց՝ Յերեսաց Քաղ-
դէացւոցն, քանզի զանի հարան յիսւ-
մայ նոցա. զի սպան Իսմայէլ զԳոդո-
լիա որդի Աքիկամայ, զոր կացոյց պա-
քսէն Բաբելացւոց ի վերայ երկրին։

Գլ. ԽԲ

1 Եւ մատեան ամենայն զօրավարք զօ-
բայն, եւ Յովհան որդի Կարէհ, եւ Ազ-
զանիա որդի Հոսէի, եւ ամենայն ժո-
ղովուրդն ի փոքուէ մինչեւ ցմեծամեծս,
2 Եւ ասեն ցերեմիա մարգարէ, Անկայ
գութ մեր առաջի երեսաց քոց, եւ կաց
յաղօթս վասն մեր առ Տէր Աստուած
քո վասն մնացորդացս այսոցիկ. զի
մնացաք սակաւք ի բազմայ, որպէս քո
3 աչք տեսանեն զմեզ. Եւ պատմեսցէ
մեզ Տէր Աստուած քո զճանապարհն ընդ
որ գնացուք, եւ զբանն զոր արաս-
4 ցուք։ Եւ ասէ ցնոսա երեմիա մարգա-
րէ, Լուայ. ահաւադիկ ես կացից յաղօթս
առ Տէր Աստուած ձեր վասն բանից ձե-
րոց, եւ եղիցի զոր [3]ինչ բան պատաս-
խանի ասցէ Տէր՝ պատմեցից ձեզ. եւ
5 ոչ թաքուցից ի ձենջ բան մի։ Եւ նա-
քա ասեն ցերեմիա, Եղիցի մեզ Տէր ի
վկայ արդար եւ հաւատարիմ, եթէ ոչ
ըստ ամենայն բանի զոր առաքեսցէ
զքեզ Տէր Աստուած քո առ մեզ՝ այս-
6 պէս արասցուք, եթէ՛ բարի եւ եթէ՛
չար, ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ զոր
առ որ առաքեմք զքեզ՝ լուիցուք, զի

բարի եղիցի մեզ, [3]եւ լուիցուք ձայնի
Տեառն Աստուծոյ մերոյ։
7 Եւ եղեւ յետ աւուրց տասանց, եւ
8 եղեւ բան Տեառն առ Երեմիա. Եւ կո-
չեաց զՅովհան որդի Կարէհ, եւ զամե-
նայն զօրավարս զօրացն որ էին ընդ
նմա, եւ զամենայն ժողովուրդն ի փո-
9 քուէ մինչեւ ցմեծամեծան, Եւ ասէ
ցնոսա, Այսպէս ասէ Տէր Աստուած Իս-
րայէլի, առ որ առաքեցէք զիս առաջ
10 նել զթիւնս աւազի նորա. Եթէ նստու-
լով նստիցիք յերկրիս յայսմիկ, չինեցից
զձեզ եւ ոչ քակեցից, տնկեցից զձեզ
եւ ոչ խլեցից, զի մեղմացեալ եմ ի չա-
11 րեաց զոր առաջի առնել ձեզ։ Մի երկն-
չիք յերեսաց արքային Բաբելացւոց
յորմէ զարհուրեալ էիք յերեսաց նորա.
մի՛ երկնչիք ի նմանէ, ասէ Տէր. զի
ընդ ձեզ եմ ես ի փրկել զձեզ, եւ ապ-
12 րեցուցանել ի ձեռաց նորա. Եւ արկից
զձեզ գութ, եւ [4]ողորմեսցայց ձեզ, եւ
13 դարձուցից՝ զձեզ յերկիր ձեր։ Եւ եթէ
ասիցէք, Ոչ նստացուք յերկրիս յայսմիկ,
եւ ոչ լուիցուք ձայնի Տեառն Աստուա-
14 ծոյ մերոյ, Այլ երթիցուք յերկիրն Ե-
գիպտացւոց, [5]եւ ոչ սատցուք պատե-
րազմ, եւ զձայն փողոյ ոչ լուիցուք,
եւ հացիւ ոչ քաղցիցուք, եւ անդ բնա-
15 կեացուք. Եւ արդ վասն այդորիկ լուա-
րուք զբանս Տեառն, մնացորդք
Հրէաստանի։ Այսպէս ասէ Տէր զօրու-
թեանց՝ Աստուած Իսրայէլի. եթէ դուք
տալով տացէք զերեսս ձեր մտանել յԵ-
16 գիպտոս եւ անդ բնակիլ, Եւ եղիցի
սուր յորմէ երկնչէիք՝ անդ գտցէ զձեզ
յերկրին Եգիպտացւոց, եւ սով յորմէ
կասկածէիք՝ անդ հասցէ ձեզ յերկրին
17 Եգիպտացւոց, եւ անդ մեռանիցիք։ Եւ
եղիցի ամենայն արք որք դէմ եղեն մտա-
նել յերկիրն Եգիպտացւոց բնակիլ անդ,
սրով եւ սովով եւ մահտարմ սատա-
կեսցին, եւ ոչ ոք եղիցի ի նոցանէ ապ-
րեալ ի չարեացն զոր ես ածից ի վերայ
18 նոցա։ Զի այսպէս ասէ Տէր զօրութեանց՝
Աստուած Իսրայէլի. Որպէս կաթեաց
սրամտութիւն բարկութեան իմոյ ի վե-
րայ բնակչաց Երուսաղեմի, նոյնպէս
կաթեսցէ սրամտութիւն իմ ի վերայ
ձեր ի մտանելն ձեր յԵգիպտոս. եւ ե-
ղիցիք [6]յանապատ եւ վատարանդիք՝ եւ

*Յ[եբր.] գ-ա-ե [1]Եբր. զմանկունս [2]Եբր. գնացին և նստան ի վանս Քիմհամայ
[3]Եբր. եթէ [4]Եբր. ողորմեսցի ձեզ և դարձուսցէ [5]Եբր. ուր [6]Եբր. ի գարշանս եւ ի զարմանս

ի նզովս եւ ի նախատինս, եւ մի՛ եւս
19 տեսանիցէք զանդիս դայս, [1]Զորմէ խօսեցաւ Տէր ի վերայ ձեր, եւ ի վերայ մնացորդացն Յուդայ՝ թէ Մի՛ մտանիցէք յԵգիպտոս. լայդ այժմ՝ գիտութեամբ գիտասջիք, զի զվկայութիւն գնեմ
20 ձեզ այսօր։ Զի չարիս գործեցէք յանձինս ձեր, մի առաքեցէք զիս առ Տէր Աստուած ձեր, եւ ասացէք, Ցաղօթս կաց վասն մեր առ Տէր Աստուած մեր, եւ ըստ ամենայնի զոր ինչ խօսեսցի ընդ քեզ Տէր Աստուած մեր, նոյնպէս
21 պատմեա մեզ, եւ արասցուք։ Եւ պատմեցի ձեզ այսօր, եւ ոչ լսեսջիք ձայնի Տեառն Աստուծոյ ձերոյ, զոր առա-
22 քեացն առ ձեզ։ Եւ արդ գիտասջիք, եթէ սրով եւ սովով եւ մահաբեր առաքեսջիք ի տեղւոջն յորում զաք կամիք մտանել բնակել անդ։

Գլ. ԽԴ

1 Եւ եղեւ իբրեւ դադարեաց Երեմիա ի խօսելոյ ընդ ամենայն ժողովրդեանն զամենայն բանս Տեառն Աստուծոյ նոցա, զոր առաքեաց Տէր Աստուած նոցա առ
2 [2]նոսա, եւ ասէն Ազարիա որդի Ովսէի, եւ Յովհան որդի Կարէի, եւ ամենայն արք սնդրտաւանք՝ ցԵրեմիա, Սուտ խօսիս դու, ոչ առաքեաց զքեզ Տէր Աստուած մեր առ մեզ՝ ասել, թէ Մի՛ մտանէք յԵգիպտոս բնակել անդ.
3 Այլ Բարուք որդի Ներիայ զրդռէ զքեզ ընդ մեզ, զի տացես զմեզ ի ձեռս Քաղդէացւոց կոտորել եւ տանել զմեզ գերի
4 ի Բաբելոն։ Եւ ոչ լսեան Յովհան որդի Կարէի եւ ամենայն զօրավարք զօրացն եւ ամենայն ժողովուրդն ձայնի Տեառն՝
5 բնակիլ յերկրին Յուդայ։ Եւ առ Յովհան որդի Կարէի եւ ամենայն զօրավարք զօրացն զամենայն մնացորդս Յուդայ որ դարձեալ էին յամենայն ազգսն ուր գրուեալ էին անդր, բնակիլ յերկ-
6 րին Յուդայ, Զարս եւ զկանայս եւ զմանկան, եւ զդստերս թագաւորին, եւ զանձինս որ մնացեալ էին ի Նաբուզարդանայ զահեմապետէ առ Գոդոլիայ որդւոյ Աքիկամայ որդւոյ Սափանայ, եւ զԵրեմիա մարգարէ եւ զԲարուք որդի
7 Ներիայ, Եւ գնացին յերկիրն Եգիպտացւոց, վասն չլսելոյ ձայնի Տեառն. եւ հասան ի Տափնաս։

8 Եւ եղեւ բան Տեառն առ Երեմիա ի
9 Տափնաս, եւ ասէ, Առ զոտս քեզ քարինս մեծամեծս, եւ թաղեա զնոսա [3]յատակատպանն թաղաւանն՝ի մուտս պարանոցին Փարաւանի ի Տափնաս ա-
10 նօք արանցդ Յուդայ, եւ ասասցես ցնոսա, Այսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Աստուած Իսրայելի. Ահաւասիկ ես առաքեմ եւ առնեմ զՆաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց զծառայ իմ, եւ [4]արկցէ գահոյս իւր՝ի վերայ քարանցդ այդոցիկ զորս ծածկեցի. եւ [5]տացէ զվէ-
11 ման իւր՝ի վերայ դոցա. Եւ մտցէ հարցէ զերկիրդ Եգիպտացւոց, զոր ի մահ՝ ի մահ, եւ զոր ի գերութիւն՝ ի գերութիւն, եւ զոր ի սուր՝ ի սուր։
12 Եւ [6]արկցէ հուր ի տունս աստուածոց նոցա եւ այրեսցէ զնոսա, եւ տարցի գերի. եւ [7]զգեցցէ զերկիրդ Եգիպտացւոց՝ որպէս [8]զգենուլ հովիւ զհանդերձս իւր. եւ ելցէ այսր խաղաղութեամբ։
13 Եւ խորտակեսցէ զսիւնս Արեգ քաղաքի որ է յերկրի Եգիպտացւոց, եւ զտունս աստուածոց Եգիպտացւոց կիզցէ հրով։

Գլ. ԽԴ

1 Բանն Տեառն որ եղեւ առ Երեմիա ի վերայ ամենայն Հրէից որ բնակեալ էին յերկրին Եգիպտացւոց, եւ որք նստէին ի Մագդովլ եւ ի Տափնաս եւ ի Մեմփիս եւ յերկրին Պաթուրէս, եւ
2 ասէ, Այսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Աստուած Իսրայելի. Դուք ինքնին իսկ տեսէք զամենայն չարիս զոր ածի ի վերայ Երուսաղէմ, եւ ի վերայ ամենայն քաղաքացն Հրէաստանի, եւ ահա կան
3 աւերակ այսօր ի բնակչաց, Յերեսաց չարեաց իւրեանց զոր արարին ի դառնացուցանել զիս. զի գնացին խունկս արկանել եւ պաշտել զաստուածս օտարս, զոր ոչ [9]գիտէիք դուք եւ՝ հարքն
4 ձեր։ Եւ առաքեցի առ ձեզ զամենայն ծառայս իմ զմարգարէս ընդ առաւօտս առաւօտս, եւ ասէի, Մի՛ գործէք զբրս
5 պղծութեանդ այգորիկ զոր ատեմ։ Եւ ոչ լսեան ինձ, եւ ոչ խոնարհեցուցին

[1] Եբր. Խօսեցաւ Տէր ի վերայ ձեր, մնացորդք Յուդայ, «Մի՛ մտանիցէք յԵգիպտոս։ [2] Եբր. Նոսա, զամենայն բանս զայսոսիկ [3] Եբր. յայգիատապանն ի կաւէ [4] Եբր. արկից զաթոռ նորա [5] Եբր. հարցէ զթորան իւր զարքունի [6] Եբր. արկից [7] Եբր. ագանիցի [8] Եբր. ագանի [9] Եբր. գիտէին նոքա, ոչ գոք և ոչ

զունկն իւրեանց զառնալ ի չարեաց
իւրեանց, չարկանել խունկս առաւա-
6 ծոյ օտարաց։ Եւ կամեաց բարկու-
թիւն սրամտութեան իմոյ, եւ բորբո-
քեցաւ [1]ի գրունս Յուդայ եւ արտաքոյ
Երուսաղեմի, եւ եղեն յաւեր եւ յանա-
7 պատ որպէս եւ այսօր։ Եւ ասէ տէր
Սաբաւովթ՝ Աստուած Իսրա-
յելի. Ընդէր առնէք զոյք չարիս մե-
ծամեծս յանձինս ձեր, առառակել վնաս
զայր եւ զկին եւ զմանուկ ածղիսայ ի
միջոյ Յուդայ, առ ի չմնալոյ ումեք ի
8 ձէնջ՝ Դառնայուցանել զիս գործովք
ձեռաց ձերոց, արկանել խունկս աս-
տուածոց օտարաց յերկրիդ Եգիպտացւոց, յոր գոյք մտէք բնակել այդր, զի
առառակիցք եւ լինիցիք յանէծս եւ ի
նախատինս ընդ ամենայն ազգս երկ-
9 րի. [2]Առ ի չմոռանալոյ ձեզ՞ զչարիս
հարցն ձերոց, եւ զչարիս թագաւորացն
Յուդայ, եւ զչարիս կանանց նոցա, եւ
զչարիս ձեր, եւ զչարիս կանանց ձե-
րոց, զոր արարին յերկրին Յուդայ եւ
10 [3]արտաքոյ Երուսաղեմի։ Եւ ոչ դադա-
րեցին մինչեւ ցայսօր, եւ ոչ երկնան,
եւ ոչ կայլին յօրէնս իմ եւ ի հրամանս
զոր եաւ առաջի երեսաց ձերոց, եւ
11 առաջի երեսաց հարցն ձերոց։ Վասն
այնորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց՝
Աստուած Իսրայէլի. Ահաւասիկ ես հաս-
տատեմ զերեսս իմ ի վերայ ձեր ի չա-
12 րիս, առառակել զամենայն Յուդա։ Եւ
[4]առցեն զնիւսորդս Յուդայ որ զէմ եղեն
մտանել յերկիրս Եգիպտացւոց բնակել
անտ, [5]կորուսանիցեն զամենայն նիւսորդս
որ են յԵգիպտոս՞, եւ անկցին ի սուր, եւ
սատակեսցին սովով, ի փոքուէ մինչեւ
ցմեծամեծս սրով եւ սովով մեռանիցին, եւ եղիցին ի նզովս եւ ի կորուստ
13 եւ յանէծս եւ ի նախատինս։ Եւ այց
այսորիկ ի վերայ նոցա որ նստին յերկ-
րիդ Եգիպտացւոց, որպէս այսր այց
Երուսաղեմի սրով եւ սովով եւ մա-
14 հաւմբ։ Եւ ոչ ոք ապրեսցի ի մնացորդսդոյդ Յուդայ, որ գնացեալ են յերկիրդ
Եգիպտացւոց՝ գառնալ յերկիրն Յուդայ
որում ակն ունէին յանձին իւրեանց
զառնալ բնակել անդ. եւ մի դարձցին,
բայց միայն ապրեալքն։
15 Եւ պատասխանի եառն Երեմիայի
ամենայն արք որք գիտէին թէ սրիա-
նեն խունկս կանայք իւրեանց աստուա-
ծոց օտարաց, եւ ամենայն կանայք որք
կային անդ ժողովք մեծամեծք, եւ
ամենայն ժողովրդին որ բնակեալն էին
յերկրին Եգիպտացւոց ի Պաթուրէս, եւ
16 ասեն, Բանիւդ զոր խօսեցար առ մեզ
17 յանուն Տեառն՝ ոչ լսելեաւք. Ձի առնե-
լով արասցուք զամենայն բանս որ ելանէ
ի բերանոյ մերմէ, արկանել խունկս
տիկնոջն երկնից եւ նուիրել նմա
նուէրս, որպէս արարաք մեք եւ հարքն
մեր եւ թագաւորքն մեր եւ իշխանքն
մեր՝ ի քաղաքս Յուդայ եւ [3]արտաքոյ
Երուսաղեմի, եւ էաք հացալիցք եւ
փափկացեալք, եւ չար ինչ ոչ տեսա-
18 եալ։ Եւ իւրեւ զադարեցաք յարկա-
նելոյ խունկս տիկնոջն երկնից եւ նուի-
րելոյ նմա նուէրս, նուազեցաք յամե-
նայնի, եւ սրով եւ սովով սատակե-
19 ցաք։ Եւ զի մեք արկաք խունկս տիկ-
նոջն երկնից, եւ նուիրեցաք նմա
նուէրս, միթէ առանց արանց մերոց ա-
րարաք նմա հասեւոյս եւ կարկանդակս,
եւ նուիրեցաք նմա նուէրս։
20 Եւ պատասխանի Երեմիա ամենայն
ղօրաւորացն ժողովրդեանն հանդերձ
կանամբքն, եւ ամենայն ժողովրդեանն
որ եառն նմա զայն բանս պատասխանի,
21 եւ ասէ, Ո՞չ ապաքէն զխունկսն զոր
արկանէիք ի քաղաքսն Յուդայ եւ [3]ար-
տաքոյ Երուսաղեմի դուք եւ հարք ձեր
եւ թագաւորքն ձեր եւ իշխանքն ձեր
եւ ժողովուրդ երկրին, յիշեաց Տէր, եւ
22 անկաւ ի սիրտ նորա։ Եւ ոչ կարաց
Տէր համբերել յերեսաց չարեաց իրաց
ձերոց, եւ գարշելեացն զոր առնէիք.
եւ եղեւ երկիրն ձեր յաւերակ եւ յա-
նապատ եւ ի նզովս առ ի չգոյէ բնակ-
23 չաց որպէս այսօր. Վասն զի գոյա որոց
խունկս արկանէիքդ եւ որովք մեղան-
չէք Տեառն, եւ ոչ լսէք ձայնի Տեառն,
եւ ըստ օրինաց նորա եւ ըստ վկայու-
թեանց եւ ըստ հրամանաց նորա ոչ
գնայք. վասն այնորիկ գտին զձեզ չա-
րիքդ այդոքիկ որպէս եւ այսօրդ։
24 Եւ ասէ Երեմիա ցամենայն ժողովուրդն
եւ ցամենայն կանայսն, Լուարուք զպատ-
գամ Տեառն ամենայն Յուդա որ էք

---

[1] Եբէր. ի քաղաքս Յուդայ և ի հրապարակս [2] Եբէր. Մինչ մոռացարո՞ւք [3] Եբէր. ի հրապարակս
[4] Եբէր. առից [5] Եբէր. եւ սատակեսցին ամենեքին յերկրին Եգիպտացւոց

25 յերկրիս Եգիպտացւոց. Այսպէս ասէ
Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի.
Դուք եւ կանայք ձեր խօսեցարուք բե-
րանովք ձերովք, եւ ձեռօք ձերովք
վճարեցէք. ասէք, Անշուշտ արասցուք
զդաւանութիւնն մեր զոր դաւանեցաք՝
արկանել խունկս սիրելոյն երկնից, եւ
նուիրել նուէրս. եւ կալով կացէք ի
դաւանութիւնն ձերում, եւ առնելով
26 արարէք զուխտս ձեր։ վասն այդորիկ
լուարուք զպատգամ Տեառն ամենայն
Ծուզա որ բնակեալդ էք յերկրին Եգիպ-
տացւոց. Ահաւասիկ երդուայ յանձն
իմ մեծ, ասէ Տէր [1]Աստուած, եթէ կո-
չեսցի եւս անուն իմ ի բերանս ամե-
նայն առն Ծուզայ, ասել թէ կենդանի
է [2]Տէր, յամենայն երկրիս Եգիպտացւոց։
27 Զի ահաւասիկ ես զարթուցեալ եմ ի
վերայ գոցա չարչարել զդոսա, եւ ոչ
առնել բարի. եւ սատակեսցին ամենայն
արք Ծուզայ որ բնակեալ են յերկրին
Եգիպտացւոց սրով եւ սովով, մինչեւ
28 նուազեսցին. Եւ ապրեալքն ի սրոյ
դարձցին յերկրէս Եգիպտացւոց յերկիրն
Ծուզայ՝ արք սակաւք թուով. եւ ծա-
նիցեն ամենայն մնացորդքն Ծուզայ որ
բնակեալ են յերկրին Եգիպտացւոց, թէ
29 ո՛ր բան կայ, իմ թէ նոցա։ Եւ այս
ձեզ նշանակ, ասէ Տէր, եթէ արարից
ձեզ այգ ի տեղւոջդ յայսմիկ. զի գի-
տասջիք եթէ կատարի կայցեն բանք իմ
30 ի վերայ ձեր ի չարիս։ Այսպէս ասէ
Տէր. Ահաւասիկ ես տայ զՓարաւոն
Ափահռ արքայ Եգիպտացւոց ի ձեռս
թշնամւոյ իւրոյ, եւ ի ձեռս խնդրողաց
անձին իւրոյ. որպէս եառ զՍեդեկիա
[3]արքայ ի ձեռս Նաբուքոդոնոսորայ ար-
քայի Բաբելացւոց թշնամւոյ իւրոյ, եւ
խնդրողի անձին նորա։

Գլ. խե

1 Բանն զոր խօսեցաւ Երեմիա մարգարէ
առ Բարուք որդի Ներեայ, յորժամ
գրեաց զբանս զայսոսիկ ի մատեանի ի
բերանոյ Երեմիայի, յամին չորրորդի
Յովակիմայ որդւոյ Յովսեայ արքայի
2 Յուդայ. Այսպէս ասէ Տէր Աստուած
3 Իսրայէլի ի վերայ քո, Բարուք. Որ ա-
սացեր թէ վա՛յ ինձ, վա՛յ ինձ, զի յաւել
Տէր աշխատութիւն ի վերայ ցաւոց ի-

[1] Ցեբր. գ-ի-ե [2] Եբր. Տէր ԵՀՎայ [3] Եբր. արքայ Յուդայ

մոց. [4]Հընչեցի հեծութեամբք, եւ հան-
4 պիստ ոչ գտի։ Այսպէս ասասցես ցնա,
այսպէս ասէ Տէր. Ահա զոր ես չինեցի,
ես ինձէն քակեցից. եւ զոր ես տնկեցի,
ես ինձէն խլեցից՝ զամենայն երկիրն
5 գայն։ Եւ դու խնդրես քեզ մեծամեծս.
մի՛ խնդրեր. զի ահա ես ածից չարիս
ի վերայ ամենայն մարմնոյ, ասէ Տէր,
եւ տայ քեզ զանձն քո ի դիւաս յամե-
նայն տեղեաջ ուր եւ երթայցես անդր։

Գլ. խզ

1 [1]Ի վերայ Եգիպտոսի՝ Բանն Տեառն որ
եղեւ առ Երեմիա մարգարէ ի վերայ
2 [5]ամենայն ազգացն, Եղիպտացւոց՝, ի վե-
րայ զօրացն Փարաւոնի Նեքաւովայ
արքայի Եգիպտացւոց, որ էր առ Եփ-
րատ գետով ի Բարքամիս, զոր եհար
Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց,
յամին չորրորդի Յովակիմայ որդւոյ Յով-
սեայ արքայի Հրէաստանի։
3 Առէք [6]զէն եւ վահանս, մատերուք ի
4 պատերազմ. կապմեցէք զերիվարս, հե-
ծարուք ոստառազէնք, դիք զսաղաւարտս,
առէք յառաջ զդիզարդունս, զզեցարուք
5 զդրահս ձերովակաղ զինչէ. զոր աւադիկ
զարհուրեալ լինն են, եւ չհաս լննդէմ
չարժին. զի զօրաւորք նոցա հարան. ի
փախուստ կացին. եւ ոչ [7]դարձին ի
դացանէ պատերազմն չուրջանակի՝, ասէ
6 Տէր։ Մի՛ փախիցէ թնթեւն, եւ մի՛ ապ-
րեսցի հզօրն. ի կողմանս հիւսիսոյ առ
Եփրատ գետով սկարայան, կործանե-
7 ցան։ Ո՞վ է սա որ իբրեւ զգետ յարու-
ցեալ է, իբրեւ զգետս [8]կուտակեալս
8 ջուր զջուրըք. Ջուրքն Եղիպտացւոց՝
իբրեւ զգետ ելանէ, եւ իբրեւ զգետ
խռովին ջուրք նորա. եւ ասէ, Ելից եւ
ծածկեցից զերկիր, կորուսից զքաղաքն
9 եւ զբնակիչս նորա։ [9]Հեծեալք յերի-
վարս, կազմեցէք կառս՝. ելէք, պատե-
րազմօգք եթէովպացւոց, եւ Լիբէացիք
վառեալք զինու, եւ Լիւդացիք, ելէք
10 լարեցէք զաղեղունս։ Զի օրն այն Տեառն
Աստուծոյ [10]մերոյ՝ օր վրէժխնդրութեան
է, առնուլ վրէժ ի թշնամեաց իւրոց. եւ

[4] Եբր. աչխատ եղէ [5] Եբր. ազգաց. (2) Եգիպ-
տացւոց [6] Եբր. առպար [7] Եբր. Դարձեան
չհաս. երկեաղ ամենայն ուստեք [8] Եբր. խռո-
վեսցին ջուրք նորա. (8) Եգիպտաս [9] Եբր. Արիք,
երիվարք. զրահս, կառք [10] Եբր. զո-
րութեանց

կերիցէ սուր եւ յոպնոցի, եւ արբնոցի յարենէ նոցա. զի զոհ Տեառն զօրութ-
11 եանց է յերկրէն հիւսիսոյ ի վերայ գնաց Եփրատայ։ Ել ի Գազաապ, եւ առ դեղ ոտանի՝ [2]կատի գաւառին՝ եգիպտացւոց. ի զուր յաճախեցեր զբժկութիւնս
12 քո, եւ օգուտ չիք ուստեք քեզ։ Լուան [3]զգոյժ քո ազգք, եւ աղաղակաւ քով լի եղեւ երկիր. զի [4]պատերազմօղ սա պատերազմողի ակառացաւ՝, եւ անկան երկոքեան ի միասին։
13 Բանն զոր խօսեցաւ Տէր ի ձեռն Երեմիայի մարգարէի ի գալ Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացւոց, հարկանել զերկիրն եգիպտացւոց։
14 Գոյժ արարէք յեգիպտոս, եւ հնչեցէք ի Մակդով, եւ պատուէր առէք ի Մեմփիս, [5]ազդ արարէք ի Տափնաս՝, թէ Արի եւ պատրաստեաց, զի սուր
15 [6]զուռս քո։ Ի փախուստ դարձաւ ցուլն քո ընտիր, ոչ միաց՝ զի Տէր էջոյց զնա։
16 Եւ յաւելմուխիւնն սակաւացաւ, եւ անկան՝ իւրաքանչիւր առ ընկերի իւրում, եւ ասեն, Արիք եւ դարձցուք առ իւրաքանչիւր ժողովուրդ մեր, եւ յիւրաքանչիւր աշխարհ իւր՝ յերեսաց [7]Յունաց
17 կան սրոյն։ Կոչեցէք զանուն փարաւոնի արքային եգիպտացւոց՝ Սաուվն
18 եւ Երեր եւ Մովիզ։՝ Կենդանի եմ ես, ասէ [8]Տէր, որոյ Թագաւոր՝ զօրութիւնոյ անուն է նորա. զի իրրեւ զԹաբոր ի լերինն, եւ իրրեւ զկար-
19 միղոս ի ծովու եկեսցէ։ Հանդերձ դիւրութիւնս սպա քեզ, բնակեալ դուստր եգիպտացւոց. զի Մեմփիս յապականեսցի եւ [9]կոչեսցի նոմա վայ՝ առ ի չգոյէ բնակչաց նորա։
20 Երինջ գարգարելի դիզեցիկ՝ եգիպտոս. [10]Նաա հասաւ ի հիւսիսոյ՝ եկն ի
21 վերայ նորա՝, եւ վարձկանք նորա ի նմա իրրեւ եզինք պարարակք, զի եւ նոքա ի փախուստ դարձան առ հասա-

[1]Եբր. յերկրին [2]Եբր. կոյս գաւառ [3]Եբր. զանարգանս [4]Եբր. հզօրն ի վերայ հզօրի գլորեցաւ [5]Եբր. եւ ի Տափնաս, ազդ արարէք [6]Եբր. շուրջ զբեւ։ (15) Ընդէ՞ր առ պալեցան զօրաւորք քո, ոչ կացին յոկոսառանի, զի Տէր ընկէց զնոսա։ (16) Գթեցոյց զրազմեն. անկան եւս [7]Եբր. սրոյ աւերչին։ (17) Կոչեցին անդ զփարաւոն արքայ Եգիպտացւոց՝ Ալմոկ, որ անցոյց զժամանակն առհմանեալ։ [8]Եբր. Թագաւորն որոյ Տէր [9]Եբր. աւերակ՝ [10]Եբր. այլ կորուստ ի հիւսիսոյ գայ, գայ

բակ, եւ ոչ հանդարտեցին. զի օր կորուսեան եկն ի վերայ նոցա, եւ ժամու-
22 նակ վրէժխնդրութեան։ Ձայն նորա իրրեւ զօձի [11]ար չչիջէ, զի ընդ աւազ գնացեալն՝. առպարաւորք եկեսցեն ի վրայ նորա իրրեւ զփայտահարս. [12]Հարէք
23 զանտառս նորա, ասէ Տէր [13]Աստուած, զորոյ ոչ ոք առնուցու գչափ. զի բազմացան առաւել քան զմարախ, եւ ոչ է
24 նոցա թիւ։ Ամօթ եղեւ դստերն Եգիպտացւոց, մատնեցաւ ի ձեռս հիւսի-
25 սային զօրացն։ Ասէ Տէր զօրաբեանց՝ Ասաուած Իսրայէլի, Ահաւասիկ ես խընդրեցից զվրէժ յԱմմոնայ [14]որդւոյ Նորա՝, ի Փարաւոնէ եւ յեգիպտացւոց, եւ ի դից նոցա եւ ի թագաւորաց նորա, եւ
26 ի Փարաւոնէ եւ ի յուսացիչսդ ի նա։ Եւ մատնեցից զնոսա ի ձեռս խնդրողաց անձանց նոցա, եւ ի ձեռս Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացւոց, եւ ի ձեռս ծառայից նորա. եւ յետ այնորիկ բնակեսցի իրրեւ զառաջինն, ասէ Տէր։
27 Բայց դու մի երկնչիցիս, ծառայ իմ Յակոբ, եւ մի զարհուրիցիս, Իսրայէլ. զի ահաւասիկ ես զերծուցանեմ զքեզ ի հեռաստանէ, եւ զզաւակ քո ի գերութիւնէ նոցա. եւ դարձցի Յակոբ եւ դադարեսցէ եւ հնչեսցէ, եւ ոչ ոք լցէ որ
28 լկեսցէ զնա։ Եւ դու մի երկնչիր. ծառայ իմ Յակոբ, ասէ Տէր, զի ես ընդ քեզ եմ. [15]Եթէ արարից վախճան ամենայն ազգաց՝ ուր գրուեցի զքեզ անդր, այլ քեզ ոչ արարից վախճան. եւ խրատուիցիս զքեզ յիւրաւունս, եւ [16]քաւելով ոչ քաւեցից՝ զքեզ։

Գլ. խէ

1 [17]Ի վերայ այլազգեաց՝ Բանն Տեառն որ եղեւ առ Երեմիա մարգարէ ի վերայ [16]այլազգեաց, մինչեւ հարեալ էր
2 Փարաւոնի զԳազա։ Այսպէս ասէ Տէր. Ահաւասիկ ջուրք ելանեն ի հիւսիսոյ, եւ եղիցին հեղեղատաք յորդոմանել, եւ ողողեսցեն վերկիրն լրիւ իւրով, զքաղաքն եւ զբնակիչս նորա. բողոք բարձցեն մարդիկ եւ աղաղակեսցեն ամե-
3 նայն բնակիչք երկրին՝ ի ձայնէ [17]աստպառակի նորա, ի վնասուց ոսից՝ նորա

[11]Եբր. եղէ, զի զօրութեամբ եկեսցեն [12]Եբր. Հարցեն [13]Եբր. պատ [14]Եբր. Նոմոցաց [15]Եբր. ԵՒ ոչ ի սպառ անպարտ արձակեցից [16]Եբր. Փղշտացւոց, այսպէս և այլոբ [17]Եբր. ամբոխաց երիվարաց

եւ ի չաչկոյ կառաց նորա եւ ի չառաչելոյ անուանն նորա , ոչ դարձաւն հարք առ որդիս իւրեանց ի լքանել ձեռ-
4 ոայ իւրեանց , Ցաւուրն յորում գայցէ կորուսանել զամենեսեան զպղտիան , [1]եւ կորուսից՝ ընդ նոսա եւ զմսպան , զամենեսեան միաբերան օդնականութիւնն նոցա .
[2]եւ առաւելեալ Տէր զպղտիսն զմեռա-
5 ցորս [3]կղզեացն եւ զիամարաց՝ , Հասցէ կնդրուիլն ի վերայ Գազայ . կոծանեցաւ Աշկաղոն , [4]եւ մնացորդքն ենակիմ ,
6 ով ։ Մինչեւ յե՞րբ կոտորեսցես , սուրդ՝ Տեառն , մինչեւ յե՞րբ ոչ դադարիցես . դարձիր ի պատանեա քո , դադարեա եւ
7 վերացիր ։ Զիա՞րդ դադարիցէ , զի Տէր հրամայեաց [5]զնա ի վերայ՝ Ասկաղոնի եւ ի վերայ ծովեզերեայցն [6]մնացելոց զարձնուլ՝ ։

Գլ. ԽԷ

1 Ի վերայ Մովաբու այսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Ա՜ստուած Իսրայելի. Վա՛յ ի վերայ Նաբաւայ , զի կորեաւ . յամօթ եղեւ , տուաւ Կարիաթիմ . յամօթ եղեւ Մասգաթ , ի պարտութիւն մատնե-
2 ցաւ ։ Եւ ոչ եւս իցէն պարծանք Մովաբու յԵսեբոն . խորհեցան ի վերայ նորա չարիս , եկայք հարցուք զնա յազգէ , եւ [7]լռեցով լռեսցէ՝ , զնի քո չկենա-
3 ցի [8]նաւր ։ Ձի գոյժ գոչմոզաց յԼիսվինայիմայ , սաստկութիւն եւ բեկումն մեծ .
4 Բնկաւ Մովաբ . [9]գոյժ տուք ի Սեղովր .
5 զի լցաւ Ադովր լալովք . ելցէ լալով ընդ ճանապարհն Աւռովնայիմայ . տագ-
6 նապ եւ գոյժ բեկման լուայ ։՝ Փախարուք եւ ապրեցուցէք զանձինս ձեր , եւ
7 եղիջիք իբրեւ [10]զդիր յանապատի Բանզի յուսացեալ էիր [11]յամուրս քո , եկեսցեն նեղութիւնք՝ եւ գու ըմբռնեսցիս , եւ ելցէ Քամովս ի գերութիւն , քուրմք նորա եւ իշխանք նորա միանգամայն ։
8 Հասցէ սաստկութիւն ի վերայ ամենայն քաղաքաց , եւ մի քաղաք մի ապրեսցի , եւ կորիցէ [12]ընակիչ եւ սատակեսցի դաշտականն , [13]այսպէս ասէ Տէր .
9 Տուք նշանակ Մովաբու . զի առչորեալ առչորեսցի՝ , եւ ամենայն քաղաքք նորա յանապատ եղիցին առ ի չգոյէ
10 ընակչաց ։ Անիծեալ լիցի որ գործէ զգործ Տեառն հեղգութեամբ , եւ անիծեալ լիցի որ [14]վերացուսցէ զսուր իւր յարենէ
[15]նորա ։
11 Հանգուցեալ էր ի մանկութենէ իւրմէ Մովաբ , եւ [16]յուսացեալ էր իմաստութեան , եւ չէրթասիեալ ամանէ յամանոյ , եւ ոչ երթեալ ի գերութիւն . վասն այնորիկ կայր համ նորա ի նմին , եւ հոտ նորա ոչ պակասեաց ։
12 Վասն այնորիկ ահա աւուրք գան , ասէ Տէր , եւ առաքեցից նմա [17]կորացուցիչս եւ կորացուսցեն՝ զնա , եւ զանօթս նորա մանրեսցեն , եւ զամանս նորա փչրեսցեն ։
13 զնո ։ Եւ ամաչեսցէ Մովաբ ի Քամոսայ , որպէս ամաչեաց աւուն Իսրայելի
14 ի բնակելոյ յուսոյն իւրեանց ։ Զիա՞րդ ասիցէք թէ Հզօրք եմք եւ արք զօրաւորք ի պատերազմի ։ Կորիւնք Մովաբ եւ
15 քաղաք նորա , եւ ընտիր ընտիր երիտասարդք նորա անկան ի սպանումն , ասէ Արքայ՝ որոյ Տէր զօրութեանց անուն է
16 նորա ։ Մերձ է ի հասանել օր Մովաբու ,
17 եւ չարիք նորա արագին գայ . [18]Ախտացեալք զնա չուրջանակի՝ , ամենեքեան ոյք գիտէք զանուն նորա՝ ասացէք , Զիա՞րդ խորտակեցաւ յուսն [19]զհզկիկ ,
18 գաւազանն մեծարանաց ։ Էջ ի վատաց եւ նիստ [20]ի զիջի , հանդակալ գուաբդ Դեբոնայ , զի [21]կորեաւ Մովաբ , եհաս
19 ապականիչ աւերոցաց քոց՝ ։ Կաց յանցս ճանապարհաց եւ հայեաց՝ որ նստիդ Արոյեր , եւ հարց ցփախստականս եւ ցապրեալս , եւ ասասջիր , Զինչ գործեցաւ ։
20 Ցամօթ եղեւ Մովաբ , զի խորտակեցաւ . ճչեսա եւ աղաղակեսա եւ գոյժ
21 տուր յԱռնովն՝ թէ Կորեաւ Մովաբ ։ Եւ պատասխանք հասեալ գան յերկրին [22]Միսաւվայ , ի Քիղոնն եւ Ցասսա եւ ի Մով-

---

[1]ԵԲԲ. Խորտակել [2]ԵԲԲ. զի [3]ԵԲԲ. կղզեացն Կափթորայ [4]ԼՀ. Մնացորդք զաշտին նոցա. մինչեւ յե՞րբ ցտեսցիս ։ (6) Սուրդ [5]ԵԲԲ. Նմա. ի վերայ [6]ԵԲԲ. անդ կացոյց զնա [7]ԵԲԲ. գու , Մադմէն, լռեցես . [8]ԵԲԲ. աւուր [9]ԵԲԲ. լսելի արարին զաղաղակ փոքունք նորա ։ (5) Զի ընդ զառ ի վեր Լուհիթայ ելցեն լալով մեծաւ , զի ընդ զառ ի վայրն Աւռանայիմայ թշնամիքն լուան գոչիւն կոտորածի ։ [10]ԵԲԲ. զմիշավայրի [11]ԵԲԲ. ի գործս եւ ի գանձս քո ,

[12]ԵԲԲ. Հովիան [13]ԵԲԲ. որպէս ասաց Տէր։(9)Տուք թեւս Մովաբու , զի թռչել թռիցէ [14]ԼՀ. արգելցու [15]ՅԵՒՈՒ. պակաս [16]ԵԲԲ. դադարեալ ի մրուրս [17]ԵԲԲ. փոխիչս, եւ փոխեսցեն [18]ԵԲԲ Ազգացէք զնա ամենեքեան որ չուրջ եք զնովաւ, եւ [19]ԵԲԲ. զօրութեան [20]ԵԲԲ. յԵբրաւթ [21]ԵԲԲ. կործանիչն Մովաբու եւ ի վերայ քո, աւերեաց զամուրս քո [22]Ա. յՍիոն՝ դաշտականի

22 վաթ, եւ ի Դեբան եւ ի Նոբաւ, եւ ի
23 առնն Դեզաթեմայ, եւ ի Կարիաթեմ
եւ ի տունն Գամուկայ, եւ ի տունն Մա-
24 ռեմայ, եւ ի Կարիաւոմ եւ ի Բոսոր,
եւ յամենայն քաղաքս երկրիկ Մովաբ.
25 բայ ի հեռաւորս եւ ի մերձաւորս։ Եւ որ-
սամկեաւ եղջեւրն Մովաբու, եւ [1]յանդգ-
նութիւն նորա խոյտակեաց, ասէ Տէր։
26 Արբուցուցէք զնա, զի ի վերայ Տեառն
մեծաբանեաց. [2]ծափ զծափի հարցէ Մո-
վաբ", եւ եղիցի ի կատականս եւ ինքն։
27 Զի ո՞չ [3]եղէ ի ծաղր ինչ էր քեզ Իսրա-
յէլ եւ ի գողոնս գտան, յորժամ մարան-
28 չէիր ընդ նմա. Նուաղ գնացեալս։ Թո-
ղին զքաղաքս եւ բնակեցան" ի քարա-
ծերպս, բնակիչք Մովաբու. [4]եղեն իբ-
րեւ զաղաւնիս բունեալք ի քարածերպս,
ի բերանս սորոց։
29 Լուաք զհպարտութիւնն Մովաբու, զի
հպարտացաւ յոյժ բարձրութիւնն նորա
եւ հպարտութիւնն իւր եւ ամբարտաւա-
նութիւնն իւր, եւ բարձրացաւ սիրտ
30 նորա։ Եւ ես ծանեայ [5]զդոյծս նորա.
ո՞չ ապաքէն ըստ կարի նորա իցեն յա-
զուկք նորա. այլ նա ոչ այնպէս արար"։
31 Վասն այնորիկ ձիչ [6]բարձէք ի վերայ
Մովաբու, գուժեցէք" յամենայն կողմանց
Մովաբու, ի վերայ արանց [7]վայելոց, ի-
32 անլոց, մրելոց, եւ մրմնջեցէք"։ Իբրեւ
զլալիւնն Յազերայ լացցուք զքեզ, այ-
գիդ Սաբամայ, բարուձակք քո ձգեցան
ընդ ծով, [8]քաղաքք Յազերայ հասին.
ի վերայ մրդոց քոց եւ ի վերայ կխոց
33 քոց եհաս սաստակումն։ Մաշեցաւ ու-
րախութիւնն եւ ցնծութիւնն [9]ի Կարմե-
ղոյ եւ յերկրէն Մովաբացւոց. [10]պինի էր
ի հնձանս քո. ընդ առաւօտս ոչ կոխես-
ցին, եւ ընդ երեկս ոչ հանին զձայն"
34 հնձանահարացն։ Յաղաղակէն յԵսեբոնայ
մինչեւ յԵղեւղէ եւ մինչեւ յՅասաս, [11]քա-
զաքք նոցա," ետուն զձայնս իւրեանց, ի
Սեղովրայ մինչեւ յՈրոնկայիմ, [12]եւ գոյժ
35 ի Սաղեայ". զի եւ ջուրն Նեմբրիմայ ի
վաթ, ասէ Տէր, որ ելանէր ի բարկիս եւ
արկանէր խոտնկս աստուածոց [13]օտարաց։
36 Վասն այնորիկ սիրտ իմ ի վերայ Մո-
վաբու իբրեւ զփող դայնեայք. սիրտ իմ ի
վերայ արանց [14]աւուրմամբքն իսկզոց" իբրեւ
զինչիւն փողոյ. վասն այնորիկ զոր ինչ
37 սահացան" կորիւս [15]ի մարդկանէ։ Ա-
մենայն պլուխք [16]ընդ ամենայն տեզիս"
պերծցին, եւ ամենայն մօրուք խզեա-
ցին, [17]եւ ամենայն ձեռք կածեցին", եւ
ամենայն հասակք քրձազգածք եղիցին։
38 Եւ յամենայն տանիս Մովաբայ եւ ի հրա-
պարակս նորա ամենեւեին կոծ. զի խոր-
տակեցի զՄովաբ իբրեւ զաման, որ ոչ
39 իմիք իցէ պիտանացու, ասէ Տէր։ Զիարդ
փոփոխեցաւ. ողբս ասէք. զիարդ դար-
ձոյց զթիկունս [18]իւր, ամաչեալ եւ եղեւ
ի ծաղր եւ ի քէնս ամենեցուն որ չուրջ
40 զնովաւ։ Զի այսպէս ասէ Տէր. Ահա
սպիկ իբրեւ զարծուի դիմեցէ, եւ
ատաձեայց զձեռս իւր ի վերայ Մովա-
41 բու։ Առաւ կարեաւոլմ, եւ ըմբռնե-
ցան ամուրք նորա, եւ եղիցի սիրտ զօ-
րաւորացն Մովաբայ յաւուր յայնմիկ
42 իբրեւ զսիրտ կանանց ցերկունս։ Եւ կո-
րիցէ Մովաբ [19]ի բազմութենէ, զի ի վե-
43 րայ Տեառն մեծաբանեաց։ Վիհ, եւ ահ,
եւ որոգայթ ի վերայ քո որ բնակեալդ
44 ես [17]ի Մովաբ։ Եւ որ փախիցէ յերեսաց
ահին՝ անկցի ի վիհն, եւ որ ելանիցէ ի
վիհ անտի՝ ըմբռնեսցի յորոգայթին. զի
ածից զամենայն ի վերայ Մովաբու յա-
մին յոյժ հանդէպ արարից նմա, ասէ
45 Տէր։ Եւ յարկան նեղուեալք հասին փա-
խուցեալք [18]յորոգայթէն. զի հուր ել յե-
սեբոնայ, եւ բոց ի քաղաքէն Սեհոնայ,
եւ եկեր [19]զկիւխանս Մովաբայ, եւ գլխեաց
46 զորդիսն Ամմոնայ։ Վայ քեզ, Մովաբ,
[20]կորեսեր ժողովուրդն" Քամոսայ. զի
առան ուսուցիք [21]նորա եւ դստերք [20]նորա
47 ի գերութիւն։ Եւ դարձուցից զգերու-
թիւնն Մովաբու յաւուրսյետինս, ասէ Տէր.
Մինչեւ ցայս վայր են դատաստանք
Մովաբու։

[1] ՆԵԲ. բազուկ [2] ԵԲԲ. Թաւալեսցի Մովաբ ի փսխանսի իւրում [3] ՆԵԲ. ի ծաղր ինչ էր քեզ Իսրայէլ, եւ ընդ գողս գտաւ, զի յորժամ խօսէիր զնմանէ, շարժէիր զգլուխ։ (28) [4] Ողբեր զքաղաքս եւ բնակեցեք [5] ՆԵԲ. եղերուք [6] ՆԵԲ. գրարկութիւն նորա, այլ ընդունայն է. ի զուր են պարծանք նորա [6] ՆԵԲ. բարձից ի վերայ Մովաբու, գուժեցից [7] ՆԵԲ. ևիրհարեալ սուգ առցի [8] ՆԵԲ. մինչեւ ի ծով [9] Այլ ինչն՝ յարտեն պաղատասէ [10] ՆԵԲ. եւ զգինին ի հնձանաց դադարեցուցի. մի՛ կոխեսցի ցնծութեամբ, մի՛ լիցի ձայն [11] ՅԵԲ. պ-ւոսխ [12] ՆԵԲ. իբրեւ զերինջ երեմեան [13] ՆԵԲ. իւրոց [14] ՆԵԲ. ի վերայ ամենայն ձեռաց եղիցին կարածք [15] ՆԵԲ. իւր Մովաբ [16] ՆԵԲ. ի լինելոյ ազգ [17] ՆԵԲ. ի Մովաբ, ասէ Տէր [18] ՆԵԲ. առանց զօրութեան [19] ՆԵԲ. զծագս Մովաբայ, եւ զգագաթունս որդւոց աղաղակի [20] ՆԵԲ. կորեաւ ժողովուրդն [21] ՆԵԲ. քո

ԳԼ. ԼԹ

1 Ի վերայ որպուհն Ամմոնայ, այսպէս
ասէ Տէր. Միթէ որդիք ոչ լցեն Իսրա-
յէլի, կամ [1]յանձանձիչ ոչ լցէ նորա.
ընդէր ամփոփեաց Մելքոմ՝ զԳադ. եւ
ժողովուրդ սորա ի քաղաքս նորա լնա-
2 կէ։ Վասն այդորիկ անա աւուրք գան,
ասէ Տէր, եւ լուր արարից յԱրաբովթ
որդւոյն Ամմոնայ զպատ [2]քաղաքացն.
եւ եղիցի յանասլատ եւ ի կորուստ, եւ
[3]բաղինք նորա հրով այրեսցին, եւ
առցէ Իսրայէլ զիշխանութիւն իւր՝,
ասէ Տէր։
3 Գուժեա, Եսեբոն, զի կորեաւ Գհ.
բաղաք բարձէք, գոռերք Ռաբայ,
քրձազգածք եղերուք [4]եւ մոլեցարուք՝,
սուգ առէք եւ յայսկոյս յայնկոյս ընթա-
ցարուք զպանկովք. զի Մելքոմ ի գերու-
թիւն երթիցէ, քուրմք նորա եւ իշխանք
4 ի միասին։ Զի՞ գնծայցես [5]ի խորանս քո,
Զհփ, եւ ի գաչտս քո՝, դուստր ժպրնու-
թեան, որ յուսացեալ էիր ի գանձս քո
5 եւ ասէիր, Ո՞ գայցէ ի վերայ իմ։ Ա-
հաւասիկ ես ածից ի վերայ քո երկիւղ,
ասէ Տէր զօրութեանց, յամենայն կող-
մանց չուրջ զքեզ բնակիլոցդ. եւ ցրուեա-
ջիք յիւրաքանչիւր կողմ, եւ ոչ ոք լցէ
6 որ ժողովիցէ զվտահականան։ Եւ յետ
այնորիկ զարձուցից զգերութիւնն որդ-
ւոցն Ամմոնայ, ասէ Տէր։
7 Ի վերայ Եդովմայ այսպէս ասէ Տէր
զօրութեանց. Ո՞չ եւս դոյ իմաստու-
թիւն ի Թեման. կորիաւ խորհուրդ ի
հանճարեղացդ. դնաց իմաստութիւնն նո-
8 ցա։ [6]Խարեցաւ տեզի նորա. ծանրա-
ցուցէք ի նասել, բնակիչք Դեդանայ, զի
զժուարինս արար. ածի ի վերայ նորա
ժամանակ՝ յորում այց արարից նմա։
9 [7]Զի կիմոզք հասին ի վերայ քո, եւ ոչ
Թողցեն ի քեզ մնացորդս. իբրեւ գողք
գիշերոյ զիցն զձեռս իւրեանց ի վերայ
10 նոցա։ Զի ես կործանեցի՝ զնսաւ, եւ
յայտնեցի զծածուկս նորա, եւ թաքչել
ոչ կարասցէ. կորեաւ զաւակ նորա [8]ի
11 ձեռանէ եղբօր եւ դրացւոյ իւրոյ. Եւ
չիք մնալ որդին քուրմ իմ կեցցէ, եւ
12 այրիք նոցա յիս յուսացան՝։ Զի այսպէս
ասէ Տէր. Ահա որոց ոչ էր օրէնք ըմպել
զբաժակն՝ արբեն ըմպելով, եւ դու ար-
գարանալով արգարանայցե՞ս. ոչ այդպա-
13 բասցիս, այլ ըմպելով արբցես։ Զի յանձն
իմ երդուայ, ասէ Տէր, թէ յաւրակա-
նութիւն եւ ի նախատինս եւ յանապատ
եւ յանէծս [9]եղիցիս ի մէջ բաժնի նո-
ա՝, եւ ամենայն քաղաքք նորա եղի-
ցին աւերակք յաւիտեան։
14 Լուր լուայ ի Տեառնէ, եւ հրէշտակս
յաղգս ազգս արձակեսյ. ժողովեցա-
րուք եւ հասէք ի վերայ նորա. արիք
15 ելէք ի պատերազմ. Զի ահաւասիկ ես
փոքր [10]մեսս ես եւ սակ՝ զքեզ ի մէջ
ազգաց, արհամարհեալ ի մէջ մարդկան։
16 [11]Այսպանութիւնն քո հասոյց քեզ զայդ.
լրութիւնն սրտի քո սրար գքեզ ծա-
կամուտս վիմայ, եւ առ գդօրութիւնն
բարձրացեալ բլրոյն քո՝. զի եթէ բարձ-
բացուսցես իբրեւ զարծու ի զբոյն քո,
17 եւ անտի իջուսցից զքեզ, ասէ Տէր։ Եւ
եղիցի Եդովմ յանապատ, եւ ամենայն
որ անցանիցէ ընդ նա՝ զարմացի, եւ
չչհսցէ ի վերայ ամենայն հարուածոց
18 նորա. Որպէս կործանեցաւ Սոդոմ եւ
Գոմոր եւ [12]բնակիչք նորա, ասէ Տէր.
եւ մի նասցի ի նմա մարդ, եւ մի բնա-
19 կեսցէ ի նմա որդի մարդոյ։ Ահաւասիկ
իբրեւ զառիւծ ելցէ [13]ի միջոյ Յորդանա-
նոս ի տեղին Եթհմմա՝. զի վազվազակի
հալածական արարից [14]զնոսա ի նմանէ.
եւ ո՞վ է ընտրեալ [15]ի նմա, եւ այց ա-
րարից նմա՝, կամ ո՞վ ընդդէմ դառնայ-
ցէ ինձ, կամ ո՞վ իցէ այն հովիւ որ ընդ-
20 դէմ կայցէ երեսաց իմոց։ Վասն այդո-
րիկ լուարուք զխորհուրդ Տեառն զոր

---

[1] Եբր. ժառանգ ոչ լցէ նորա. ընդէ՞ր Մելքոմ ժառանգեաց [2] Եբր. պատերազմի [3] Եբր. դառերք (գեղք) նորա հրով այրեսցին, և ժառանգեսցէ Իսրայէլ զերս ժառանգեցին զնա [4] Եբր. պ-ո-ո-ք [5] Եբր. ի հովիտս քո. հովիտ քո ողողեալ է [6] Եբր. Փախերուք, դարձէք, բնակեցարուք ի խոր, բնակիչք Դեդանայ. զի զկորուստ նաւատոյ ածի ի վերայ նորա՝ ի ժամանակի [7] Եբր. եթէ կիմոզք գային ի վերայ քո, ոչ Թողուին ճիւս. եթէ գողք գիշերի գային, ո՞չ առնուին զբաւականն իւրեանց.

(10) Զի ես խայտառակեցի [8] Եբր՝ և եղբայր նորա եւ գրացի նորա եւ ոչ գոյ։ (11) Թող զորբս քո, եւ ես կեցուցից, և այրիք քո յիս յուսացին։ [9] Եբր. եղիցի Բոսրա [10] Եբր. արարից [11] Երկեւղ քո, լրութիւն սրտի քո խաբեցին զքեզ, ով որ բնակեսդ ի ծագս վիմաց. կցես ի բլուրս բարձունս [12] Եբր. մերձաւորք [13] Եբր. ի յորդութենէ Յորդանանու ի բնակութիւն ամրութեան [14] Եբր. զնա [15] Եբր. կացուցից զնա ի վերայ նորա. զի ո՞վ ոք է իբրեւ դիս

խորհեցաւ ի վերայ Եղովմայեցւոց, եւ
զխորհուրդ նորա զոր խորհեցաւ ի վե-
րայ բնակչաց Թեմանայ. [1]եթէ ոչ հար-
ցին յեաթանս կոյսունն, քակաւումն նոցա"։ ի
21 ձայնէ կործանման նոցա չարժեսցաւ եր-
կիր. [2]գոյժ քո հնաս ի ծով Կարմիր, եւ
22 լսելի եղեւ ալաղակ քո"։ Ահաւասիկ
իբրեւ զարծուի վերասցի, եւ պատցի
եւ տարածեսցէ զթեւս իւր ի վերայ
Բոսրայ. եւ եղիցի սիրտ զօրաւորացն
Եդովմայ յաւուր յայնմիկ իբրեւ զսիրտ
կանանց յիւրումնս։
23 Ի վերայ Դամասկոսի։ Յամօթ եղեւ
Եմաթ եւ Արփադ, զի լուր չարեաց
լուան, յիմարեցան. [3]ի ծովուն զոյ-
24 բացան՝ եւ հանդչել ոչ կարացեն"։ Լքաւ
Դամասկոս, դարձաւ ի փախուստ [4]եւ
կործանեցաւ". զղուշն կալաւ զնա, եւ
երկունք ձեպեցին զնա իբրեւ զծննդա-
25 կանի։ [5]Եւ զիա՞րդ է, զի ոչ թողցէ
զքաղաքն իմ, զաւանն զոր սիրեցի"։
26 Վասն այսորիկ անկցին երիտասարդք
[6]ի հրապարակս քս", եւ ամենայն արք
պատերազմօղք կործանեսցին յաւուր
27 յայնմիկ, ասէ Տէր զօրութեանց։ Եւ
վառեցից հուր ի պարիսպն Դամասկո-
սի, եւ կերիցէ [7]զհրապարակս որդւոցն
Ադերայ"։
28 Ի վերայ Կեդարու, [8]ի վերայ արքայից
հանդրուանին", զոր հնար Նաբուքոդո-
նոսոր արքայ Բաբելացւոց, այսպէս ա-
սէ Տէր. Արիք, ելէք ի վերայ Կեդարու,
29 եւ հարէք զորդիսն [9]Կեդեմայ. Զխորանս
նոցա եւ զխաշինս նոցա առցեն, [10]զհան-
դերձս նոցա եւ զամենայն կահ եւ զկա-
բասի նոցա, եւ զուզահրամանս նոցա
առցեն իւրեանց. եւ [11]կոչեցէք ի վերայ
30 նոցա կուռաստ չոր [12]ամենակի Փահերուբ,
[12]սասակիկ. խոյսեցէք ի նահել, բնա-
կիչք [13]հանդրուանիդ, ասէ Տէր. զի խոր-
հուրդ խորհեցաւ ի վերայ ձեր Նաբու-
քոդոնոսոր արքայ Բաբելացւոց, խոր-
հեցաւ ի վերայ քո խորհուրդ։
31 [14]Արի, ել" ի վերայ ազգին զադարկոյ
որ նստի ի հանդստեան, ասէ Տէր, ո-
րոյ ոչ գրաւնք եւ ոչ նիգք, առանձինն
32 բնակեալք։ Եւ եղիցին ուղտերամակք
նոցա յաւար, եւ բազմութիւն խաշանց
նոցա ի կորուստ. եւ հոսեցից ընդ ա-
մենայն հողմս զյապաւեալսն առ երե-
սօք, եւ յամենայն կողմանց նոցա ածից
33 նոցա կործանումն, ասէ Տէր։ Եւ ե-
սիցի [15]հանգրուանն բնակութիւն ջայլա-
մանց", եւ անապատ մինչեւ յաւիտեան.
եւ մի՛ բնակեսցէ ի նմա մարդ, եւ մի՛
նստցի ի նմա որպէս հոլածնի։
34 [4]Ի վերայ Եղամայ։" Բանն Տեառն որ
եղեւ առ Երեմիա մարգարէ վասն Եղա-
մայ ի սկզբան թագաւորութեանն Սե-
35 դեկիայ արքայի Յուդայ, եւ ասէ, Այս-
պէս ասէ Տէր զօրութեանց [16]Ահաւադ
Խորտիկ. Ահաւասիկ խորտակեցաւ
աղեղն Եղամայ, իշխանութիւնն բռնա-
36 զօրութեան" նոցա։ Եւ ածից ի վերայ
Եղամայ չորս հողմս ի չորից կողմանց
երկնից, եւ գրեսցից զնոսա ընդ ամենայն
հողմս ընդ այնոսիկ. եւ ոչ իցէ ազգ յոր
ոչ հասանիցեն թափառականքն Եղամայ։
37 Եւ զարհուրեցուս ցից զնոսա առաջի թշնա-
մեաց նոցա որք խնդրէին զանձինս նո-
ցա. եւ ածից ի վերայ [17]նոցա ըսա բար-
կութեան" սրտմտութեան իմոյ, ասէ
Տէր. եւ արձակեցից զսուր [4]իմ զկնի
38 նոցա մինչեւ սպառեսցէ զնոսա։ Արկից
զաթոռ իմ յԵղամ, եւ կորուսից անտի
զթագաւորս եւ զմեծամեծս, ասէ Տէր։
39 Եւ եղիցի յաւուրս յետինս զարձուցից
զգերութիւնն Եղամայ, ասէ Տէր։ [4]Ի
սկզբան թագաւորութեան Սեդեկեայ
արքայի եղեւ բանս այս ի վերայ Ե-
ղամայ"

ԳԼ. Ծ

4 [4]Ի վերայ Բաբելացւոց։" Բանն զոր խո-
սեցաւ Տէր ի վերայ Բաբելոնի՝ առ եր-
կիրն Քաղդէացւոց ի ձեռն Երեմիայ մար-
2 գարէի։ Պատմեցէք յազգս, եւ լուա-

---

[1] ԵԲԲ. եթէ ոչ վանեսցեն զնոսա փոքունք հօտին, եթէ ոչ աւերեսցի ի վերայ նոցա բնակութիւն նոցա [2]ԵԲԲ. գո՛յժ, ի ծով կարմիր լսելի եղեւ ձայն նորա [3]ԵԲԲ. ի ծովեզ տագնապ, հանգչել ոչ կարացէ [4]ՅԵԲԲ. պ-ւոսբ [5]ԵԲԲ. Զիա՞րդ ոչ թողացէ քաղաքն գովութեան, աւան ուրախութեան իմոյ [6]ԵԲԲ. նորա ի հրապարակս նորա [7]ԵԲԲ. զապարանս Բենադադայ [8]ԵԲԲ. եւ ի վերայ թագաւորութեանն Հասորայ. [9]Ա,ՅԲՌ՝ արեւելից [10]ԵԲԲ. զվարագոյրս [11]ԵԲԲ. կոչեսցեն [12]ԵԲԲ. Խոյս առաք վաղվաղակի [13]ԵԲԲ. Հասորայ

[14]ԵԲԲ. Արիք, ելէք [15]ԵԲԲ. Հասոր բնակութիւն վիշապաց [16]ԵԲԲ. Ահաւադիկ եւ խորտակեմ զաղեղն Եղամայ, զսկիզբն զօրութեան [17]ԵԲԲ. նոցա ըսբիս, զբարկութիւն

բարէք, նչան կանդնեցէք, լսելի արա-
բէք. մի՛ ծածկիցէք, ասասջիք, Աստ Բա-
բելոն, յամօթ եղեւ Բէլ, [1]վատուկքն
աներկիւղք, մահանայա՛ Մերովդաք,
յամօթ եղեն կուռք նորա, [2]անչիցին
3 զարչելիք նորա։ Զի ել ի վերայ նորա
ազգ ի հիւսիսոյ, նա դիցէ զերկիրս նորա
յաւալանատիւն, եւ ոչ ոք իցէ որ բնա-
կիցէ ի նմա ի մարդոյ մինչեւ անասուն,
զի խախտեցան եւ գնացին։
4 Յաւուրն յայնմիկ եւ ի ժամանա-
կին յայնմիկ, ասէ Տէր, եկեսցեն որ-
դիքն Իսրայելի, ինքեանք եւ որդիքն
Յուդայ ի միասին, չոլխացին եւ լալով
գայցեն [3]առ Տէր՝ Աստուած իւրեանց
5 խնդրեսցեն. Մինչեւ ի Սիոն հարցցեն
ի ճանապարհէ, [4]այսր դիմեսցեն, եւ և-
կեսցեն եւ ասասխանեսցին ի Տէր. դի
ուխտ յաւիտենից է, եւ ոչ մոռասցին՝։
6 Իբրեւ զոչխարս կորուսեալս եղեւ ժո-
ղովուրդ իմ, հովիւք նոցա [5]մոլորեցուցին
զնոսա, ի վերայ լերանց մոլորեցուցին
զնոսա. ի լեռնէ ի բլուր գնացին, մո-
7 ռասյան զմակաղատեղս իւրեանց։ Ամե-
նեքեան որ գտանէին [6]առասկէին զնո-
սա. թշնամիք նոցա ասացին՝ [7]Մի՛ նե-
ղեսցուք նոցա՝, վասնզի զի մեղան
Տեառն, [8]արօտք արդարութեան է, եւ
Տեառն որ ժողովեաց զնախն նոցա։
8 Օտարացարուք՝ ի մէջ Բաբելոնի. եւ
յերկրէ Քաղդէացւոց ելէք, եւ եղե-
ւսք իբրեւ գնոխազս առաջի խաչանց։
9 Զի ահաւասիկ ես յարուցից եւ ածից
ի վերայ Բաբելացւոց ժողովս ազգաց
մեծամեծաց յերկրէ հիւսիսոյ, եւ ճա-
կատեսցին զնովաւ. եւ անտի ըմբռնես-
ցի, իբրեւ նետ իմաստուն զաւերազ-
10 մոզի՝ որ ոչ դարձցի ունայն։ Եւ եղիցի
երկիրն Քաղդէացւոց յաւար, եւ ամենայն
աւարառուքն նորա յագեսցին, ասէ Տէր.
11 Զի ուրախ լինիք եւ պարծիք
[9]յաւշասակել զժառանգութիւն իմ՝,
զի խայտայիք իբրեւ զուարակս ի վե-

րայ դալարոյ, եւ [10]ոդոլիք իբրեւ զցուլս՝,
12 Յամօթ եղեւ մայրն ձեր յոյժ, [11]մայրն
որ ի ծնանելն էր. ահաւադիկ վախ-
ճան՝ ազգաց՝ աւեր, անջուր եւ անա-
13 պատ։ Ի բարկութենէ Տեառն մի՛ բնա-
կեսցի, այլ եղիցի յաւալանատիւն ամե-
նայն հարուածոց նորա։ Ձա-
կատեցարուք չուրջ զԲաբելոնիս, ամե-
նայն ազեղնաւորք, ձիգ դիք ի նա, եւ
մի՛ խնայէք ի նետս ձեր, զի Տեառն մե-
15 ղաւ։ Աղաղակեցէք չուրջ զնովաւ, ետ
զձեռս իւր. անկան [12]մահարա-
ձանք, եւ կործանեցան պարիսպք նո-
րա, զի վրէժխնդրութիւն [13]Աստուծոյ
է. խնդրեցէք վրէժս ի դմանէ, որպէս
16 արարն՝ արարէք դմա։ Սատակեցէք
[14]զսուսակ ի Բաբելոնէ, որ առնուցու
մանդաղ ի ժամանակի հնձոց. յերեսաց
[15]Յունական սրոյն իւրաքանչիւր ի ժո-
ղովուրդ իւր դարձցին, եւ իւրաքան-
չիւր յերկիր իւր փախչիցին։
17 Ոչխարք մոլորեալ Իսրայէլ, առեալք
[16]մերժեցին զնա. նախ եկեր զնա թա-
գաւորն Ասորեստանեայց, եւ յետոյ զոս-
18 կերս [17]Նոբու սրքայն Բաբելացւոց։ Վասն
այդորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց՝
Աստուած Իսրայելի. Ահաւասիկ ես
խնդրեսցիմ վրէժ յարքայն Բաբելացւոց
եւ յերկրէ նորա, որպէս խնդրեցի վրէժ
19 յարքայն Ասորեստանեայց, եւ [18]պատա-
պարեցուցից զԻսրայէլ անդրէն ի ճա-
կատս իւր, եւ արածեսցի ի կարմելոս
եւ ի Բասան, եւ ի լերինն Եփրեմի եւ ի
Գաղաազ յագեսցին անձինք նոցա։
20 Յաւուրն յայնմիկ եւ ի ժամանակին
յայնմիկ, ասէ Տէր, [19]խնդրեսցին զա-
նեպրաւութիւնն Իսրայելի, եւ ոչ եւս
իցէ, եւ զմեղս՝ Յուդայ եւ ոչ գտանի-
ցին. զի [20]քաւիչ եղէց անիրաւութեանց
21 նոցա ի վերայ երկրի։ Ել գտանութեամբ
ի վերայ նորա, եւ ի բնակչաց նորա

---

[1] ՆԷԲ. բեկաւ [2] ՆԷԲ. բեկան [3] ՆԷԲ. եւ զՏէր [4] ՆԷԲ. անդր երեսս նոցա. եկայք եւ յաւելցարուք ի Տէր յաւիտենական, որ ոչ տացի ի մոռացօնս [5] ՆԷԲ. մոլորեցուցին [6] ՆԷԲ. ուտէին [7] ՆԷԲ. Ոչ է մեզ մեղ [8] ՆԷԲ. բնակութեան արդարութեան, եւ Յուսոյն Հարց իւրեանց, Տեառն։ (8) Ելէք տուք [9] ՆԷԲ. ո՛վ յափշտակիչք ժառանգութեան իմոյ

[10] ՆԷԲ. վրնջէիք իբրեւ զերիվարս [11] ՆԷԲ. պատկառեցաւ որ ծնաւն զձեզ. ահաւադիկ յետինն [12] ՆԷԲ. հիմունք նորա [13] ՆԷԲ. Տեառն [14] ՆԷԲ. զսերմանահան [15] ՆԷԲ. ուտերիչ [16] ՆԷԲ. հալածեցին [17] ՆԷԲ. Նոբու խորատակեաց [18] ՆԷԲ. ածից [19] ՆԷԲ. խնդրեսցի անիրաւութիւնն Իսրայելի և ոչ եւս իցէ, եւ մեղքն [20] ՆԷԲ. Ներեցից նոցա զորս թողի մնացորդս։ (21) Ել ի վերայ երկրին Պատամբութեան եւ ի վերայ

ինդրեսջիր վրէժս , սուր եւ ասլակա-
նութիւն զինի նորա", ասէ Տէր , եւ ա-
րասջիր ըստ ամենայնի զոր պատուի-
22 րեցի քեզ : Ձայն պատերազմի [1]յերկրին
23 Բաղդէացւոց", եւ բեկումն մեծ : Զի՛նչ
խորտակեցաւ եւ մանրեցաւ ամե-
նայն երկիր , դի՛նչ եղեւ Բաբելոն
24 յապականութիւն ի մէջ ազգաց : [2]Որո-
ձակեցին ի վերայ քո , եւ ըմբռնեցաւ ,
Բաբելոն , եւ ոչ իմացար" : գտար եւ
ըմբռնեցար , դի Տեառն ընդդէմ գոր-
25 ծար : Երայ Տէր զգանձս իւր , եւ եհան
զանօթս բարկութեան իւրոյ . դի գործ
[3]Տեառն զօրութեանց է յերկրին Բաղ-
26 դէացւոց : [4]Եկէ՛ն հասին նմա ժամանակք
իւր" , բացէք զչտեմարանս նորա , [5]որո-
նեցէք զնա իբրեւ զգաւազ" , եւ սատակեցէք
27 զնա . մի՛ մնասցեն նորա մնացորդք : [6]Որ-
մաքեցուցէք զամենայն պատուղս" նորա ,
եւ իջցեն ի սպանումն . վա՛յ նոցա , դի եկն
օր նոցա եւ ժամանակ վրէժխնդրութեան
28 նոցա : Ձայն փախուցելոց եւ ապրելոց
յերկրէն Բաբելացւոց , պատմել ի Սիոն
զվրէժխնդրութիւն Տեառն Աստուծոյ
մերոյ , զվրէժխնդրութիւն տաճարի իւրոյ :
29 Պատուէր տուք յաղեղնաւորաց՝ [7]ընդ
բանակեցարուք զդովսա չարչիանակի ,
դի մի՛ ոք իցէ որ ապրիցի ի գմանէ . հա-
տուցէք գմա ըստ գործոց իւրոց , ըստ
ամենայնի զոր արար՝ արարէք գմա . դի
Տեառն ընդդէմ գործաւ , Աստուծոյ՝
30 Սրտին Իսրայէլի : Վասն այնորիկ անկ-
ցին երիտասարդք նորա ի հրապարակս
նորա , եւ ամենայն արք պատերազմողք
նորա անկեալ դադիցին յաւուր յայնմիկ ,
31 ասէ Տէր : Ահաւասիկ ես ի վերայ քո ,
ասէ Տէր զօրութեանց , ի վերայ հպար-
ծիդ . դի հասեալ է օր քո եւ ժամանակ
32 վրէժխնդրութեան քո : Եւ [8]տկարասց-
ցի հպարտութիւն քո" եւ կործանեսցի ,
եւ ոչ ոք իցէ որ յարուցանիցէ զնա . եւ
վառեսցից հուր [9]յանտառս նորա , եւ կե-
րիցէ չորիդ զնովաւ զամենայն :
33 Այսպէս ասէ Տէր զօրութեանց . Բռնա-

քնակչացն Աքքելութեան . աւերեա եւ կարգա
նզովս գհետ նոցա [1]ԵԲԸ. յերկրին [2]ԵԲԸ.
Լաբեցի քեզ որոգայթ եւ ըմբռնեցար, Բաբե-
լոն, եւ ոչ իմացար [3]ԵԲԸ. Ագռաւչաց Տեառն
[4]ԵԲԸ. Եկայք առ նա ի ծագաց [5]ԵԲԸ. ընկե-
ցէք իբրեւ զչղջս [6]ԵԲԸ. Կորուսէք զամե-
նայն զաւարակս [7]ԵԲԸ. զԼըբեսցի Հպարտն
1 Եւ եղեւ յամին երեսներորդի, յամսեանն չորրորդի, որ օր հինգ էր ամսոյն, եւ էի ես ի մէջ գերեալ[2]ն առ գետն Քոբար գետոյ, եւ բացան երկինք, եւ տեսի [3]տեսիլ Աստուծոյ։ Որ օր հինգ էր ամսոյն, այն ամ հինգերորդ էր վերայ թագաւորութեան Յոակիմայ արքայի, 3 եւ եղեւ բան Տեառն առ Եզեկիէլ քահանայ՝ որդի Բուզեայ, յերկրին Քաղդէացւոց ի վերայ Քոբար գետոյ. եւ անդ եղեւ ի վերայ [2]իմ ձեռն Տեառն։ 4 Եւ տեսի եւ ահա [3]հողմ վերացեալ՝ գայր ի հիւսիսոյ, ամպ մեծ [4]ի շուրջանակի նորա՝, եւ հուր փայլատակէր ի նմանէ. եւ ոյժ չուրջ զնովաւ, եւ ի մէջ նորա իբրեւ զտեսիլ բազմագունի ականց՝ [4]եւ ճառագայթք[5]նմա՝։ Եւ ի մէջ նորա կերպարանք չորից կենդանեաց, եւ այս տեսիլ նոցա. 6 կերպարանք մարդոյ ի վերայ նոցա։ Եւ չորք դէմք միոյ, եւ չորք թեւք միոյ 7 միոյ ի նոցանէ։ Եւ բարձք նոցա բարձք ուղղորդք, [1]եւ ոտք նոցա թեւաւորք էին,՝ եւ կճղակք նոցա իբրեւ ոտից արձուց. եւ կայծակունք թօթափէին ի նոցանէ իբրեւ ի փայլատականց պղինձոյ. 8 [1]եւ թեւք իւրեանց երագունք էին՝ Եւ ձեռն մարդոյ ի ներքոյ թեւոց նոցա ի չորեսին կողմանս նոցա. եւ երեսք նոցա եւ թեւք՝ չորեցունց։ Ընդ միմեանս թեւակցէին խառնեալ. եւ դէմքս իւրեանց ի գնալն յետս ընդդէմ ոչ դառնային, իւրաքանչիւր հանդէպ երեսաց իւրեանց գնային, 10 երեսաց երեսաց՝ [5]կերպարանք մարդոյ եւ [5]կերպարանք առիւծու յաջմէ չորեցունց, եւ [6]կերպարանք եզին եւ կերպարանք արծուոյ ի ձախմէ՝՝ չորեցունց, եւ այս [5]կերպարանք նոցա. եւ թեւք նոցա տարածեալ ի վերուստ [1]չորեցունց. իւրաքանչիւր երկու երկու խառնեալ ընդ միմեանս, եւ երկու երկու ծածկէին ի վերուստ զմարմինս իւրեանց։ 12 Եւ իւրաքանչիւր հանդէպ երեսաց իւրեանց գնային. յոր կողմն դիմէր հոգին՝ գնային, եւ յետս ընդդէմ 13 ոչ դառնային ի գնացս իւրեանց։ Եւ [7]ի մէջ կենդանեացն՝ տեսիլ՝՝ իբրեւ զկայծակնոյ հրոյ բորբոքելոյ, եւ իբրեւ զտեսիլ ջահաբաց խառնելոց ի մէջ [8]կենդանեացն, եւ լոյս հրոյ. եւ ի հրոյ անտի 14 փայլատակունք հատանէին։ Եւ [9]կենդանիքն երագս ընթանային, եւ թևթևուս՝՝ դառնային ի նմանութիւն [10]արիւզական։ 15 Եւ տեսանէի[11] եւ ահա սիւն անիւ մի յերկրի [12]ղեկս դազանացն չորեցունց՝՝։ 16 Եւ կերպարանք անուացն եւ արար նոցա՝ իբրեւ զտեսիլ սականց Թարսի. եւ [13]կերպարանք չորեցունց՝՝ եւ տեսիլ նոցա եւ գործուած իւրեանց՝ որպէս թէ չրջիցի անիւ ի մէջ անուոյ։ 17 Ի չորեսին կողմանս իւրեանց գնային, եւ յետս ընդդէմ ոչ դառնային ի թիւս 18 կոնս իւրեանց. [14]Եւ բարձունք էին, Հայէի ընդ նոսա եւ տեսանէի զի՝՝ լի էին աչօք թիկունք նոցա չուրջ զչորեքումբս։ 19 Եւ ի գնալ [8]դազանացն՝ գնային եւ անիւքն ընդ նոսա, եւ ի վերանալ [8]դազանացն յերկրէ՝ վերանային եւ

[1]Յ‌Ե‌բէ. պ‌ո‌լ‌ո‌ռ ‌Ե‌բէ. տեսիլ ‌Ե‌բէ. Նորա [3]‌Ե‌բէ. մրրիկ հողմոյ [4]‌Ե‌բէ. ի միջոյ հրոյն [5]‌Ե‌բէ. երեսք

[6]‌Ե‌բէ. երեսք եզին ի ձախմէ չորեցունց, և երեսք արծուոյ՝ [7]‌Ե‌բէ. կերպարանք կենդանեացն, տեսիլ նոցա [8]‌Ե‌բէ. կենդանեացն [9]‌Ե‌բէ. կենդանիքն ընթանային և [10]‌Ե‌բէ. փայլական [11]‌Ե‌բէ‌յ‌եչէն յ‌ա‌ե‌լ‌ա, կենդանիս, [12]‌Ե‌բէ. առ ընթեր կենդանեացն բան չորեցունց երեսաց նորա [13]‌Ե‌բէ. նմանութիւն մի՝ չորեցունց նոցա, [14]‌Ե‌բէ. Եւ չրջանակ նոցա բարձր եւ ահաւոր, եւ

20 անիւքն ։ Ընդ որ կոչեմ զիմէր [1]ասին
եւ հոգին՝ երթային զագանքն՝ եւ ա-
նիւքն ընդ նոսին վերանային . զի ոգի
21 [2]կենդանի զոյր յանիւսն ։ ի գնալն նո-
ցա գնային , եւ ի կալն նոցա զանդի
առնուին , եւ ի վերանալ նոցա յերկրէ՝
եւ անիւքն ընդ նոսին վերանային . զի
22 ոգի [2]կենդանի զոյր յանիւսն ։ Եւ նման-
նութիւն [3]հաստատութեան ի վերայ գլխոյ
[2]զազանացն իբրեւ զտեսիլ սպան [4]վա-
ռի՝ տարածեալ ի վերայ [5]գլխոյ նոցա
23 ի վերուստ ։ Եւ ի ներքոյ հաստատու-
թեանն գլուխք իւրեանց տարածեալ սա-
ւառնէին ընդ միմեանս . [6]եւ իւրաքան-
չիւր երկու երկու ծածկէին զմարմինս
24 իւրեանց՝ ։ Եւ լսէի զձայն գլխոց նոցա
[7]ի սաւառնիլն իրեւ զձայն ջուրց բազ-
մաց , եւ իբրեւ զձայն [8]Ամենակալ
զգայի . եւ՝ ի գնալն իւրեանց՝ ձայն
պատերազմաց իբրեւ զձայն բանակի . եւ
ի կալն իւրեանց՝ [9]հանդչէին գլուխք՝ իւր-
25 եանց ։ Եւ ահա բարբառ ի վերուստ
քան զհաստատութիւնն որ էր ի վերայ
գլխոյ նոցա՝ ի կալն իւրեանց , [10]եւ յամ-
26 բառնալն՝ գլխոց իւրեանց ։ Եւ ի վերոյ
քան զհաստատութիւնն որ ի վերայ
գլխոյ նոցա , իբրեւ զտեսիլ սպան չա-
փիզայ , նմանութիւն աթոռոյ [10]ի վերայ
նորա , եւ ի վերայ աթոռոյն՝ նմանու-
27 թիւն կերպարանաց [11]մարդոյ ։ Եւ տե-
սանէի իբրեւ զտեսիլ սպան բազմագու-
նի , իբրեւ զտեսիլ հրոյ ի ներքոյ քան
զնա չուրջանակի . միջնովք չափ ի վեր՝
նմանութիւն արեգական , եւ միջնովք
չափ ի խոնարհ՝ նմանութիւն հրոյ . եւ
լոյսն՝ որ չուրջ զնովաւ՝ բաղ ունէր .
28 Իբրեւ տեսիլ աղեղանդ որ ձգի յամսոյ
յաւուրս անձրեւոյ , [12]եւ այսպէս տես-
զին տեսիլ լուսոյ՝ չուրջ զնովաւ ։ Այս
տեսիլ՝ նմանութիւն փառացն Տեառն .
իբրեւ տեսի՝ անկայ ի վերայ երեսաց ի
մոց , եւ լուայ բարբառ որ խօսէր ընդ իս ։

ԳԼ . Բ

1 Եւ ասէր , Որդի մարդոյ , կաց ի վե-
րայ ոտից քոց եւ խօսեցայց ընդ քեզ ։
2 Եւ եկն ի վերայ իմ Հոգի , [13]վերացոյց
զիս եւ կանգնեաց կացոյց՝ ի վերայ ո-
տից իմոց . եւ լսէի զի խօսէր ինձ ընդ
3 իս . Եւ ասէր , Որդի մարդոյ , ես ա-
ռաքեցից զքեզ առ [14]դառնացուցիչ տունդ
Իսրայելի , որք դառնացուցին զիս՝ ին-
քեանք եւ հարք իւրեանց , անարգեցին
4 զիս մինչեւ ցայսօր ։ Որդիք եղջերիք
եւ խստասիրտք են առ որս առաքեմն
զքեզ , եւ ասասցես ցնոսա , Այսպէս
5 ասէ Տէր Տէր . եթէ իցէ լսելիցեն [15]կամ
սարսեսցեն՝ , զի տուն դառնացողացն են .
եւ [7]կամ գնասցէ՝ ծանիցեն թէ մարգարէ
ես գոյ ի մէջ նոցա ։
6 Եւ դու , որդի մարդոյ , մի երկնչիցես
ի նոցանէ , եւ մի զանգիտիցես [16]յե-
լեսաց նոցա . զի զայրանալով զայրաց-
ցեն եւ չարիցին ի վերայ քո , զի՝ ի մէջ
կարճաց բնակեալ ես դու . մի երկնչիցես
ի բանից նոցա եւ յերեսաց նոցա
մի զանգիտիցես , զի տուն դառնացո-
7 ղաց են ։ Եւ խօսեսցիս ընդ նոսա զբանս
զայսոսիկ . եթէ իցէ լսելիցեն [15]կամ սար-
սեսցեն՝ , զի տուն դառնացողաց են ։
8 Եւ դու , որդի մարդոյ , լուր բանից
զոր խօսիմ ընդ քեզ , մի լինիր դառնա-
յօղ իբրեւ զտուն դառնացողաց . բաց
զբերան քո եւ կեր զոր ջամբեցից քեզ ։
9 Տեսի , եւ ահա ձեռն ձգեալ առ իս , եւ
ի նմա մատեան մի գրոց . եւ պարզեաց
զնա առաջի իմ . եւ էր գրեալ ի նմա
ներքոյ եւ արտաքոյ՝ ողբս եւ ձայնս
եւ վայս ։

ԳԼ . Գ

1 Եւ ասէ ցիս , Որդի մարդոյ , զոր ինչ
գտանիս ի գիմ՝ կեր . կեր մանր զմա-
տեանդ զայդ , եւ գնա եւ խօսեսցայ ընդ
2 որդիսն Իսրայելի ։ [17]Եբաց զբերան իմ ,

---

[1] ՆԵՔ. ոգին, երթային եւ նոքա. անդր ուր գիմէր ոգին [2]ՆԵՔ. կենդանեացն [3]ՆԵՔ. տարածումեան էրկնից, (Նմանօրէն ի պսակս։) [4]ՆԵՔ. վանի՝ ահեղ . [5]ՆԵՔ. գլխոց [6]ՆԵՔ. իւրաքանչիւրումն երկու՝ ի ծածկել ի միում կողմանէ , և իւրաքանչիւրումն երկու՝ ի ծածկել ի միում կողմանէ զմարմինս իւրեանց [7]ՅՆԵՔ. պակաս [8]ՆԵՔ. Ամենակալի [9]ՆԵՔ. Հանդուցանէին գլխեաս [10]ՆԵՔ. եւ ի վերայ նմանութեան աթոռոյն [11]ՆԵՔ. մարդոյ՝ ի վերոյ նորա ի վերուստ ։ (27) Եւ տեսի իբրեւ զանն բազմագունն , իբրեւ զտեսիլ հրոյ ի ներքոյ չուրջանակի ի տեսլենէ միջոյ նորա եւ ի վեր . եւ ի տեսլենէ միջոյ նորա եւ ի խոնարհ՝ տեսի իբրեւ զտեսիլ հրոյ, եւ պայծառութիւն [12]ՆԵՔ. այսպէս տեսիլ պայծառութեանն

[13]ՆԵՔ. իբրեւ խօսէր ընդ իս. և կանգնեաց զիս [14]ՆԵՔ. որդիսն Իսրայելի, յորժ ապստամբ , որ ապստամբեցան լինէն [15]ՆԵՔ. եւ եթէ ի բաց կացցեն [16]ՆԵՔ. ի բանից նոցա, զի փուշք և տատասկք են ընդ քեզ, եւ [17]ՆԵՔ. Եւ բացի

3 եւ ՚Ցամբեաց զմատեանն . եւ ասէ ցիս , Որդի մարդոյ, [1]լիրան զոր կերիցէ, եւ որովայն զո լցցի ի մատենէ այսր որ առաւ զքեզ ։ կերայ՚ զայն , եւ եղեւ ի բերանի իմում իբրեւ զբաղցրութիւն մեղուի ։
4 Եւ ասէ ցիս , Որդի մարդոյ , գնա դէ եւ մուտ ի տունն Իսրայէլի , եւ խօսեսջիս առ նոսա զբանս եսայեայ իմ ։ Զի ոչ եմէ առ ժողովուրդ խորհուրդ ծանրալեզու առաքեսցիս առ տունն Իսրա-
6 յելի . Եւ ոչ առ ժողովուրդս բազումս [2]այլազգիս կամ այլալեզուս , եւ ոչ առ՚ թանձրալեզուս զորոց ոչ լսիցես զբանս նոցա . զի թէ առ այնպիսիսն առաքէի զքեզ , սակայն եւ նոքա լսէին քեզ ։
7 Այլ տունն Իսրայելի ոչ հաւանին լսել քեզ , քանզի ոչ կամին լսել ինձ . զի ամենայն տունն Իսրայելի [3]հակառակօրք
8 եւ խստասիրտք են ։ Եւ անաւասիկ ա-տրի զդէմս քո հասուսուն տալ՚ի եւ բնաւ նոցա . եւ [4]դյաղմուխիւն քո զօ-րացուցից առաջի հակառակութեանն նո-
9 ցա . Եւ եղիցի յամենայն ժամ հասուսուն տունն իրրեւ զվէմ յազմուխիւն՚ քո. մի՛ երկնչիր ի նոցանէ , եւ մի՛ զանդի-տիցես յերեսաց նոցա . զի տունն դառ նաղոզագ են ։
10 Եւ ասէ ցիս Տէր , Որդի մարդոյ , զա-մենայն զբանս զոր խօսեցայ ընդ քեզ , լուր ականջովք քովք , եւ գիր ի սրտի
11 քում . Եւ երթ մուտ ի մէջ գերութեանն , առ որդիս ժողովրդեան քո , խօսեսցիս ընդ նոսա եւ ասացես , Այսպէս ասէ Տէր Տէր . եթէ լսիցեն եւ [5]ան-ասցեն ։
12 Եւ վերացոյց զիս Ոգի, եւ լուայ զկնի իմ ձայն չարժման մեծի, [6]որ ասէին,՚ Օրհնեալ են փառք Տեառն ի տեղւոջէ
13 իւրմէ . Եւ [7]ահա՛ ձայն թեւուց զգա-նային՚ առաւանելոց ընդ միմեանս եւ ձայն անուացն զնոտ նոցա , եւ ձայն [8]չարժ-
14 ման ։ Եւ Հոգի Տեառն՚ վերացոյց զիս եւ բարձրացոյց , եւ երթայի [9]դառնացեալ ի տրտմել հոգւոյն իմոյ՚, եւ ձեռն Տեառն եղեւ ի վերայ իմ զօրութեամբ .
15 Եւ [10]մտի վերամբարձի մէջ գերութեանն, եւ չրջեցայ առ բնակիչսն Քորաբ գնալ՝ որ էին անդ . եւ նստայ անդ աւուրս եւթն զարմացեալ՚ ի մէջ նոցա ։
16 Եւ եղեւ յետ եւթն աւուրն , եղեւ բան
17 Տեառն առ իս , եւ ասէ , Որդի մարդոյ , պէտ կացուցի զքեզ տանդ Իսրայելի . եւ լսիցես յինէն զբանս , եւ [11]սպառ-
18 նացես նոցա իրրեւ՚ յինէն ։ Յորժամ ասիցեմ ցանօրէնն թէ Մահու մեռանիս-ցիս , եւ դու ոչ զգուշացուցանիցես նմա , եւ ոչ խօսեսցիս զգուշանալ անօրինին [6]եւ գանալ՚ ի ճանապարհէ իւրոց չա-րաց եւ կեալ , անօրէնն այն յանօրէ-նութեան իւրում մեռցի , եւ զարիւն
19 նորա ի ձեռաց քոց խնդրեցից ։ Իսկ եթէ դու զգուշացուցանիցես անօրինին , եւ նա ոչ գարձցի յանօրինութենէ իւրմէ եւ ի ճանապարհէ իւրմէ[12], անօրէնն այն յանօրինութեան իւրում մեռցի ,
20 եւ դու զանձն քո ապրեցուսցես ։ Եւ յորժամ դարձցի արդարն յարդարու-թենէ իւրոյ եւ արասցէ յանդգնս , ար-կից [13]առնջանս զգլխով՚ նորա , ինքն մեռցի . [14]քանզի ոչ եմէ՚ յիշեսցին ար-դարութիւնք նորա զոր արար . բայց [6]քանզի դու ոչ զգուշացուցեր նմա ,՚ զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից ։
21 Այլ եթէ դու զգուշացուցանիցես զար-դարն զի մի՛ մեղիցէ արդարն[15], կենդ կեցցէ , զի դու զգուշացուցեր նմա . եւ դու զանձն քո ապրեցուսցես ։
22 Եւ եղեւ ի վերայ իմում ձեռն Տեառն , եւ ասէ ցիս, Արի եւ ել դու ի գաշտ անդր ,
23 եւ անդ խօսեցայց ընդ քեզ ։ Յարեայ եւ ելի ի գաշտ անդր . եւ անա [6]կայր անդ փառքն Տեառն , իրրեւ [6]զտես-սիլն եւ՚ զվիսան զոր տեսի առ ափն Քորաբ գետոյ . եւ անկայ ի վերայ ե-
24 րեսաց իմոց ։ Եւ եկն ի վերայ իմ Հոգի , եւ կացոյց զիս ի վերայ ոտից իմոց . եւ խօսեցաւ ընդ իս եւ ասէ , Մուտ եւ
25 արգելիր ի մէջ տան քո ։ Եւ դու , որդի

---

[1] Եբբ. Ցամբեա զորովայնի քումմ, եւ լից զաղիս քո մատենիւդ այգուելկ զոր տամ քեզ։ Եւ կերայ
[2] Եբբ. խորհուրդս, եւ [3] Եբբ. ժպրկ երեսօք [4] Եբբ. զձակատ քո հասուսուն ընդդէմ ճակատուց նոցա . (9) Իբրեւ զադամանդ հասուսուն քան զվէմ սրսրի զճակատ [5] Եբբ. եթէ ի բաց կացցեն [6] Եբբ. դարձ [7] Եբբ. ձայն թնդոց կենդանեացն [8] Եբբ. շարժան մեծի (14) Եւ Հոգին [9] Եբբ. դառնացեալ ի տապղ հագւոյ իմոյ

[10] Եբբ. եկի առ գերութիւնն ի Թելաբիպ առ որս բնակէին առ Քորաբ գետով, եւ նստայ առ որս նստէին անդ, եւ նստայ անդ աւուրս եւթն զարմացեալ [11] Եբբ. զգուշացուցես զնոսա [12] Եբբ. չարէ [13] Եբբ. գայթակղութիւն առաջի [14] Եբբ. զի ոչ զգուշացուցեր զնա, ի մեղս իւր մեռցի, եւ ոչ [15] Եբբ. չեչէն չ-եալ, եւ նա ոչ մեղիցէ

մարդոյ, ահաւադիկ տուեալ են ի վերայ քո կապանք, եւ կապեսցեն զքեզ նո-
26 քօք. եւ ոչ ելցես [1]ի միջոյ նոցա։ Եւ զլեզու քո կապեցից ի քիմս քո, եւ ե-
ղիջիր դու համր. եւ ոչ եղիցիս դու նո-
ցա իբրեւ զայր մի յանդիմանիչ, զի տուն
27 դառնացողաց են։ Եւ յորժամ խօսիցիմ ընդ քեզ, բայլից զբերան քո, եւ ասասցես ցնոսա, Այսպէս ասէ Ադոնայի Տէր [2]Տէր. Որ լսելոցն իցէ՝ լսիցէ, եւ որ արհամարհելոցն իցէ՝ արհամարհեսցէ. քանզի տուն դառնացողաց են։

Գլ. Դ

1 Եւ դու, որդի մարդոյ, առ դու քեզ աղիւս մի, եւ դիցես զնա առաջի երե-
սաց քոց. եւ նկարեսցես ի նմա զքա-
2 ղաքն Երուսաղէմ։ Եւ տացես չուրջ զնովաւ պաշարումն, եւ չինեսցես չուրջ զնովաւ մարտկոցս, եւ պատեսցես չուրջ զնովաւ պատնէշ, եւ տացես չուրջ զնովաւ բանակս, եւ ածցես չուրջ զնովաւ
3 նետաձիգս։ Եւ առցես դու քեզ տապակ երկաթի, եւ կանգնեսցես զնա իբրեւ զպատ երկաթի ընդ քեզ եւ ընդ քա-
ղաքն. եւ պատրաստեսցես զերեսս քո ի վերայ նորա, եւ եղիջի ի պաշարումն, եւ պաշարեսցես զնա. զի այն նշանակ
4 է [3]որդւոցն Իսրայելի։ Եւ դու ննջեսցես ի ձախակողմն քո, եւ դիցես զանիրաւութիւնս տանն Իսրայելի ի վերայ զորա. քանի թուոյ աւուրց զոր ննջեսցես ի վերայ զորա [4]հարիւր եւ յիսուն
5 օր. եւ առցես՝ զանիրաւութիւնս նո-
ցա։ Եւ ես տուի քեզ [5]զերկուս անիրաւութիւնս նոցա ի թիւ աւուրց՝ հարիւր՝ եւ ինսուն օր. եւ [4]առցես զա-
6 նիրաւութիւնս տանն Իսրայելի։ Եւ լուացանդակեսցես [6]ի միասին զամենայն՝, եւ դարձեալ ննջեսցես յաջակողմն քո, եւ [4]առցես զանիրաւութիւն տանն Յու-
7 դայ զքառասուն օր. զի օր ընդ տարւոյ եդի քեզ։ Եւ ի պաշարումն Երու-
սաղէմի [7]պատրաստեսցես զերեսս քո, եւ զօրացուսցես զբազուկս քո՝, եւ
8 մարգարէասցիս ի վերայ նորա։ Եւ ես ահա տուի ի վերայ քո կապանս, եւ մի փոխեսցես կողմն ի կողմանէ մինչեւ

կատարեսցին աւուրք պատճառին քո։
9 Եւ դու առ քեզ ցորեան եւ գարի, ոսպն եւ ոլոռն եւ կորեակ եւ հաճար, եւ արկցես [8]զայն յաման մի խեցեղէն. եւ արասցես դու զայն՝ քեզ հաց. եւ ըստ թուոյ աւուրցն զոր ննջեսցես դու ի կողմն քո՝ [9]տարեւր եւ ինսուն օր կե-
10 րիցես զայն։ Եւ ջուրկերակուրն քո կերիցես կշռով, քսան սիկղ յաւուր, ժամէ
11 ի ժամ կերիջիր անտի. Եւ ջուր չափով արբիջիր, զվեցերորդ մասն գորակի միոյ՝
12 ժամէ ի ժամ արբիջիր։ Եւ նման գարեղէն արկեալ կերիցես անտի. յաղբ մարդոյ եփեսջիր զայն առաջի երեսաց նո-
13 ցա։ Եւ [10]ասասցես, Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայելի՝. Այսպէս կերիցեն որդիքն Իսրայելի զհաց իւրեանց պղծու-
թեամբ ի մէջ ազգաց ուր ցրուեցից զնո-
14 սա անդր։ Եւ ասէի, Ւրաւ լիցի, Տէր [11]Աստուած Իսրայելի, եթէ պղծեալ իցէ երբեք անձն իմ ի պղծութիւնս՝, եւ մեռելոտի եւ գազանաբեկ ոչ երբեք կե-
րայ ի ծննդենէ իմմէ մինչեւ զայժմ, եւ ոչ եմուտ ի բերան իմ աներեսայն միս
15 պիղծ։ Եւ ասէ ցիս, Ահա ետու քեզ քակոր արջառոյ փոխանակ աղբոյն մարդոյ, եւ նովաւ արասցես զհաց քո։
16 Եւ ասէ ցիս Տէր, Որդի մարդոյ, ահաւադիկ ես բեկանեմ զնաստատութիւն հացի յերուսաղէմ, եւ կերիցեն հաց կշռով եւ կարօտութեամբ, եւ ջուր չա-
17 փով եւ կարօտութեամբ արբցեն։ Զի եղիցին կարօտեալք ի հացէ եւ ի ջրոյ. եւ [12]ապականեսցի մարդ եւ եղբայր իւր, եւ հալեսցին յանիրաւութիւնս իւրեանց։

Գլ. Ե

1 Եւ դու, որդի մարդոյ, ա՛ռ քեզ սուր յետնաստուր, [13]ուր քան զսրիչ՝ վարսակիրացիոյ. տաշեսցես զայն քեզ, եւ ածցես զայն զոլիով քով եւ զմօ-
ռուօք. եւ առցես կշիռս եւ [14]կշռեսցես
2 զնոսա։ Զչորրորդ՝ մասն հրով այրեսցես ի մէջ քաղաքին, ըստ լրումեան աւուրցն պաշարման. եւ [15]զչորրորդ մասն կոտորեսցես սրով չուրջ զնո-
ւա. եւ [16]զչորրորդ մասն հոսեսցես հողմոյ,

[1] ԵԲԲ. ի մէջ [2] ՅԵԲԲ. պակաս [3] ՅԵԲԲ. տանն
[4] ԵԲԲ. կրեսցես [5] ՅԵԲԲ. զամս անիրաւութեան նոցա ի թիւ աւուրց՝ երեք հարեւր [6] ՅԵԲ. զսոսա [7] ՅԵԲ. հաստատեսցես զերեսս քո, եւ բազուկք քո մերկացեալք

[8] ՅԵԲ. զնոսա յաման մի, եւ արասցես դու զնոսա
[9] ՅԵԲ. երեք հարեւր [10] ՅԵԲ. ասէ Տէր [11] ՅԵԲ. Եհովայ, աՀա անձն իմ չէ պղծեալ [12] ՅԵԲ. ապականեսցի [13] ՅԵԲ. արբիւ [14] ՅԵԲ. բաժանեսցես զնոսա։ (2) Զչորրորդ [15] ՅԵԲ. առցես զչորրորդ [16] ՅԵԲ. զչորրորդ

3 եւ սուր արձակեցից զվնիհնոցայ եւ առցես
անտի սակաւ լինչ թուով, եւ ծրարեսցես
4 ի մէկնոցի քում։ Եւ զարձեալ առցես
անտի եւ ընկեսցես իմէջ հրոյ, եւ այրեսցես
զնոսա ի հուր, եւ անտի ելցէ հուր
[1]եւ առասցես՝՝ ամենայն տանն Իսրայէլի։
5 Այսպէս ասէ Ադոնայի Տէր. Այս այն
երուսաղէմ է զոր եդի ի մէջ հեթանո-
սաց զդա, եւ որ չուրջ զդովաւ զա-
6 ւառք։ [2]Զի փոխեցին զիրաւունս իմ ընդ
անիրաւութեանն հեթանոսաց, եւ զօ-
րէնս իմ ընդ օրէնս աշխարհացն՝՝ որ
չուրջ էին զնովաւ. զի զիրաւունս իմ
մերժեցին, եւ յօրէնս իմ ոչ գնացին։
7 Վասն այսորիկ այսպէս ասէ Ադոնայի
Տէր. Փոխանակ զի [3]պատառեցաք ձեր
յազգացդ են՝՝ որ չուրջ են զձեզ, եւ
յօրէնս իմ ոչ գնացէք, եւ զիրաւունս
իմ ոչ արարէք, այլ եւ ոչ ըստ իրա-
ւանցն հեթանոսացդ՝ որ չուրջ են զձեզ՝
8 արարէք, վասն այսորիկ այսպէս ասէ
Ադոնայի Տէր. Ահաւասիկ ես ի վերայ
քո, եւ արարից ի միջի քում դատաս-
9 ան առաջի ազգացդ։ Եւ արարից ընդ
քեզ՝ զոր ոչ երբեք արարի, եւ ոչ այլ
եւս նմին նման արարից ըստ ամենայն
10 պղծութիւնացն քոց։ Վասն այնորիկ
հարք կերիցեն զորդիս ի միջի քում, եւ
որդիք կերիցեն զհարս. եւ արարից ի
քեզ դատաստան, եւ ցրուեսցից զամե-
նայն մնացորդս քո ընդ ամենայն հովմս։
11 Վասն այդորիկ կենդանի եմ ես, ասէ
Ադոնայի Տէր, փոխանակ զի զսրբու-
թիւնս իմ պղծեցեր ամենայն պարշ-
լիօքն քովք, եւ ամենայն պղծալից
պաշտամամիքն քովք, եւ ես մերժեցից
զքեզ, եւ ոչ խնայեսցէ ի քեզ ակն իմ,
12 եւ ոչ ողորմեսցայց քեզ։ [4]Զորիր մասն
քո մահու սպառեսցի, եւ [5]չորիր մասն
քո՝՝ սովով վախճանեսցի ի միջի քում. եւ
[6]չորիր մասն քո չուրջ զքեզ ի սուր
անկցի, եւ [7]զչորիր մասն քո ընդ ամե-
նայն հոգմս ցրուեցից, եւ սուր արձա-
13 կեցից զկնի նոցա։ Եւ կատարեսցի
սրտմտութիւն [8]բարկութեան իմոյ՝՝ ի
վերայ նոցա, եւ միխիթարեցայց. եւ
ծանիցին զի ես Տէր խօսեցայ նախան-
ձու իմով՝ ի կատարել զնոսա զբարկու-
14 թիւն իմ ի վերայ նոցա։ Եւ եդից զքեզ
յանապատ եւ ի նախատինս հեթանո-
սաց որ չուրջ զքեզ իցեն՝ [9]եւ զդիտեսցեն
քո չուրջ զքեզ՝՝ առաջի ամենայն ան-
15 ցաւորաց ճանապարհի։ Եւ եղիցես հե-
ծեծեալ եւ եղկելի, ծաղր եւ երեւոյթ
ի մէջ ազգացն որ չուրջ զքեզ իցեն,
յառնել ինձ ի քեզ դատաստան բարկու-
թեամբ եւ սրտմտութեամբ եւ վրէժ-
խնդրութեամբ դատաստան. ես Տէր խօ-
16 սեցայ։ Ի յարձակել ինձ զչարաչար գնետս
[10]իմ սովոյ ի վերայ նոցա, եւ եղիցին ի
սատակումն. արձակեցից զայս [11]ի վե-
րայ նոցա՝՝, եւ սով գումարեցից ի վե-
րայ ձեր, եւ [8]խորտակեցից զհաստա-
17 տութիւն հացի [1]քո։ Եւ առաքեցից ի
վերայ [9]քո սով եւ գազանս չարս, եւ
[10]պատժեցից զքեզ. եւ մահ եւ արիւն
անցցեն ի քեզ, եւ սուր չուրջ զքեզ
առնեմ, զի ես Տէր խօսեցայ։

Գլ. Զ

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
2 Որդի մարդոյ, հաստատեա զերեսս քո
ի վերայ լերանցդ Իսրայէլի, մարգա-
3 րեա ի վերայ դոցա, եւ ասասցես, Լե-
րինք Իսրայէլի, լուարուք զպատգամս
Ադոնայի Տեառն. այսպէս ասէ Ադո-
նայի Տէր լերինս եւ բլուրս եւ յձորս
եւ ցդաշտս. Ահաւասիկ ես ածեմ ի վե-
րայ ձեր սուր, եւ [11]ապականեսցին բար-
[1]ձունք՝՝ ձեր. Եւ կործանեսցին սեղանք
ձեր, եւ խորտակեսցին մնեհանք ձեր.
եւ տապաստ արկից զվիրաւորս ձեր ա-
5 ռաջի կռոց ձերոց։ Եւ դի թաւալ կա-
ցուցից զորդիսդ Իսրայէլի առաջի պատ-
կերաց իւրեանց. եւ ցրուեցից զոս-
կերս ձեր չուրջ զսեղանովք ձերովք։
6 Ցամենայն բնակութիւնս ձերս քա-
ղաքք աւերեսցին, եւ բարձունք ա-
պականեսցին, զի չնչեսցին եւ պակա-
սեսցին սեղանք ձեր, եւ խորտակեսցին
եւ դադարեսցին կուռք ձեր, եւ բարձ-
ցին մնեհանք ձեր, եւ չնչեսցին գործք
7 ձեռաց ձերոց. Եւ անկցին վիրաւորք ի
միջի ձերում, եւ ծանիցիք թէ ես եմ
Տէր։

---

[1] 3ԵԲՐ. գլուխ [2] ՆԵԲՐ. Եւ փոխեաց զիրաւունս իմ յանիրաւութիւն քան զհեթանոսս, եւ զօրէնս իմ քան զաշխարհն [3] ՆԵԲՐ. ապստամբ եղերուք քան զազգս [4] ՆԵԲՐ. երիր [5] ՆԵԲՐ. զերիր [6] ՆԵԲՐ. իմ, եւ հանգուցից զբարկութիւն իմ

[7] ՆԵԲՐ. ի սատակումն ձեր [8] ՆԵԲՐ. խորտակեցից ձեզ [9] ՆԵԲՐ. ձեր [10] ՆԵԲՐ. անզաւակեսցեն [11] ՆԵԲՐ. ապականեցից զբաձունս

8 Եւ Մովսէս ի ձէնջ ապրեալս ի սրոյ ի մէջ ազգաց ի վարատման ձերում ի մէջ
9 աշխարհաց ։ Եւ յիշեցին զիս ապրեալքն ձեր ի մէջ ազգաց ուր գերեցան ի նոսա . [1]զի երդուայ ես՝՝ սրտի նոցա չնաց-
գելոյ եւ ապստամբելոյ յինէն , եւ աչաց նոցա պոռնկացելոց զհետ [2]զնոցիցին իւրեանց , եւ կոծեսցին յերեսս իւրեանց , վասն չարեացն զոր արարին յամենայն
գարշելիսն իւրեանց [3]եւ յամենայն ի
10 գիտուս իւրեանց՝՝ : Եւ ծանիցեն թէ ես եմ Տէր , եւ ոչ ի զուր ինչ խօսեցայ առնել ընդ նոսա զայս ամենայն չարիս ։
11 Այսպէս ասէ Ադոնայի Տէր . Ծափս հար ձեռամբ , եւ զոփիս ոտիւր , եւ ասասցես, Վա՛յ վա՛յ ի վերայ [4]գարշելեացն եւ
չարեաց՝՝ ամենի իսրայէլի , զի սրով եւ
12 մահուամբ եւ սովով անկցին : Հեռաւորն մահու վախճանեսցի , եւ մերձաւորն սրով անկցի , եւ մնացեալն եւ պաշարեալն սովով սատակեսցին , եւ կա-
տարիցից զբարկութիւն իմ ի վերայ նո-
13 ցա ։ Եւ [5]ծանիցեն թէ ես եմ Տէր , յորժամ անկցին վիրաւորքն [6]ձեր ի մէջ կռոցն [6]ձերոց , չուրջ զսեզամունսն [6]ձեր-
բոլք , ի վերայ ամենայն լերին բարձանց եւ յամենայն գլուխս լերանց , եւ ի ներքոյ ամենայն վարսաւոր ծառոց , եւ ի ներքոյ ամենայն ամուր կաղնեաց՝ ուր
արկանէին խունկ ամենայն կուռս իւ-
14 րեանց ։ Եւ ձգեցից զձեռն իմ ի վերայ նոցա , եւ եղից զերկիրն յաւերակութիւն եւ ի սատակումն յանապատսն
Դերբեթայ յամենայն բնակութեանն նո-
ցա . եւ ծանիցիք թէ ես եմ Տէր ։

Գլ. Է

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ ,
2 Եւ դու , որդի մարդոյ , [3]ասասցես , Այսպէս ասէ Ադոնայի Տէր երկրիւղ իսրայելացւոց . Վախճան հասեալ է , հա-
սեալ է վախճան ի վերայ չորեցունց
3 կողմանց երկրիւղ ։ Ահաւադիկ հասեալ է ի վերայ քո վախճան, եւ առաքեցից ես զբարկութիւն իմ, եւ դատեցայց զքեզ
ըստ ճանապարհաց քոց , եւ հատուցից քեզ
4 ըստ ամենայն գարշելեացն քոց ։ Եւ ոչ խնայեսցէ աչն իմ ի քեզ եւ ոչ ողորմեցայց . զի ըստ դնացից քոց հատուց-

ցից քեզ , եւ գարշելիքն քո ի մէջի քումդ եղիցին , եւ ծանիցես թէ ես եմ Տէր ։
5 Քանզի այսպէս ասէ Տէր Տէր. Չարիք մի , անհաւասիկ չարիք մի հասեալ են ։
6 Եհաս վախճան՝ . գալեաւ ի վերայ քո ,
7 [8]անհաւադիկ հասեալ է ։ Զմբաղ՝՝ ի վերայ քո , որ բնակեալք ես յերկրիւղ . հասեալ է ժամանակ , մերձեցաւ [9]օր, եւ
8 ոչ ազմկաւ եւ ոչ երկաւիւք՝՝ : Այլ այժմ ի մօտոյ հեղից զբարկութիւն իմ ի վերայ քո , եւ կատարեցից ի քեզ զբերա-
մասութիւն իմ . եւ դատեցայց զքեզ ըստ ճանապարհաց քոց , եւ տայց ի վերայ քո զամենայն պղծութիւնս [10]պաշտամանց
9 քոց՝՝ : Եւ մի՛ խնայեսցէ աչն իմ ի քեզ եւ ոչ եւս ողորմեցայց . զի ըստ ճանապարհաց քոց հատուցից քեզ , եւ գարշելիքդ քո ի մէջի քումդ եղիցին . եւ ծա-
նիցիս թէ ես եմ Տէր որ [11]տարկանեմ
10 զքեզ ։ Անհաւասիկ օր Տեառն , անհ հասեալ է վախճան . ելեր զմիւսոյն՝՝ , ծագեցաւ գաւազանն . [12]յարեաւ ամ-
11 բարտաւանութիւնն : Եւ խորտակեցաւ զհատատաւութիւն անօրինին , ոչ ազմկաւ եւ ոչ վաւմով. ոչ են ի միտս իւրեանց՝՝ ,
12 եւ ոչ գիշեսցէ զիւրեանսն : Հասեալ է ժամանակ , անհ եկն օր . սատցօղն մի՛ խնդասցէ , եւ որ վաճառէն՝ մի՛ ող-
բասցի . զի բարկութիւն է յամենայն
13 բազմութեան նորա : Զի որ [13]ստահայն՝ ի վաճառականն՝՝ անդր այլ մի՛ դարձցի , [14]եւ ոչ եւս է կեալ ի կենդանութեան նոցա՝՝ . զի անօրէնն ի վերայ ամենայն
բազմութեան նորա ոչ դարձցի , եւ մարդ
15 [15]յաչս կենաց իւրոց մի՛ հաստատեսցի :
14 Փող [16]հարէք եւ ընտրեցէք՝՝ զամենայն . եւ ոչ ոք իցէ որ երթայցէ ի պատերազմ, զի բարկութիւն[17] ի վերայ բազ-
15 մութեան նորա : Պատերազմ սրոյ արտաքուստ , եւ սով եւ մահ ի ներքուստ . եւ որ ի բացի իցէ՝ սրով վախճանեսցի , եւ որ ի քաղաքի իցէ՝ սովով եւ

[1] ԵՔԲ. յորժամ ասաց բնականել [2] ԼԲ. կռոց
[3] ՅԵՔԲ. պատուէ [4] ԵՔԲ. ամենայն գարշելեացն չարաց [5] ԵՔԲ. ծանիցիք [6] ԵՔԲ. նոցա

[7] ԵՔԲ. յաւելեալ , եհաս վախճան [8] ԵՔԲ. ահա եկն (7) եկն վճիռ . կամ, կարգ [9] ԵՔԲ. օր սաղկի, եւ ոչ դնծութիւն լերանց [10] ԵՔԲ. քո [11] ԵՔԲ. հարկանեմ (10) Անհաւասիկ օրն . ահա հասեալ է. եկն վճիռ (կամ, կարգ) [12] ԵՔԲ. բողոքեցաւ ամբարտաւանութիւնն : (11) Բռնութիւն յարեաւ ի գաւազան անօրէնութեան . չիք ի նոցանէ , եւ ոչ ի բազմութենէ նոցա , եւ ոչ յընչից նոցա [13] ԵՔԲ. վաճառէն՝ ի վաճառել
[14] ԵՔԲ. թէպէտ եւ իցեն տակաւին ի կենդանիս [15] ԵՔԲ. յանօրէնութեան [16] ԵՔԲ. Հարին եւ կազմեցին [17] ԵՒԲ-յԵՉՆ յաւելու , իմ

16 մահուամբ վախճանեսցին, եւ ապրեսցին
որք ապրիլոց լցին ի նոցանէ, եւ եղիցին ի վերայ լերանցդ իբրեւ զաղաւնիս
[1]անձանձրոյթ մնչել. զամենեսեան կռնորսիցդ՝ զիւրաքանչիւր" ըստ յանցա-
17 նաւթեան իւրում, Ամենայն ձեռք լքցին, եւ ամենայն [2]երանք գարչասցին խոնա-
18 ւութեամբ", Սփածցին քեզ, եւ ծածկեսցեն զնոսա ցնորք. յամենայն երեսս
ամօթ, եւ յամենայն գլուխս կնգուղ-
19 թիւն։ Արծաթ նոցա անկեալ կայցէ ի հրապարակս, եւ ոսկի նոցա արհամարհեսցի. արծաթ նոցա եւ ոսկի նոցա ոչ կարասցէ փրկել զնոսա յաւուր բար-
կութեան Տեառն. եւ անձինք նոցա մի յագեսցին, եւ որովայնք նոցա մի լցցին.
զի [3]տանջանք եղեն" անիրաւութեան
20 նոցա։ Զընաիր ընտիր [4]զարգուցն եղեն ի հպարտութիւն, եւ պատկերս գարչե-
լեաց պաշտամանցն իւրեանց արարին
21 ի նոցանէ. վասն այնորիկ տաց զայն
22 նոցա ի պղծութիւն. եւ մատնեցից զայն ի ձեռս օտարաց յափշտակել [5]զնոսա,
եւ ժանտագործաց երկրի յաւար, եւ
23 պղծեսցեն [6]զնոսա։ Եւ դարձուցից զերեսս իմ ի նոցանէ, եւ պղծեսցեն [7]զայ-
ցելութիւնս իմ, եւ մտցեն ի նոսա
անիսաւր. եւ պղծեսցեն զնոսա"։
24 [8]Եւ արասցեն խառնակութիւն". զի լցցաւ երկիր ի դատաստանաց [9]արեանց նոցա,
եւ քաղաքք լի եղեն" անօրէնութեամբք։
25 Եւ ածից զչարս ազգաց եւ ժառանգեսցեն զտունս նոցա, եւ կործանեցից զամբարտաւանութիւն բռնութեանց նոցա,
26 եւ պղծեսցին սրբութիւնք նոցա։ Եւ կեսցէ [10]քաւութիւն, եւ խնդրեսցին
զխաղաղութիւն, եւ ոչ գտանիցի։ Վայ
ի վայի վերայ եղիցի, եւ գոյժ ի գոյժի.
խնդրեսցին տեսիլք ի մարգարէից, եւ
օրէնք [11]գիրիւք ի քահանայէ, եւ խորհուրդք ի ծերոց, [5]եւ ոչ գտանիցին"
27 Թագաւորն սգասցի, եւ իշխանն զգեցցի զապականութիւն, եւ ձեռք ժողովրդեան երկրին լքցին. ըստ ճանապարհաց նոցա արարից նոցա, եւ ըստ
գատաստանաց նոցա տացից զրկիժ ի նոցանէն, եւ ծանիցեն թէ ես եմ Տէր։

ԳԼ. Ը

1 Եւ եղեւ յամին վեցերորդի յամսեանն
[12]հինգերորդի, որ օր հինգ էր ամսոյն,
ես նստէի ի տան իմում, եւ ծերքն Յուդայ նստէին առաջի իմ. եւ եղեւ ի վերայ իմ անդ ձեռն Ադոնայի Տեառն,
2 Եւ տեսանէի, եւ ահա նմանութիւն
[13]առն, ի միջոյն եւ ի խանարհ՝ հուր, եւ
ի միջոյն եւ ի վեր՝ իբրեւ զտեսիլ օպոյ,
3 իբրեւ զգոյն" բազմագունի ականին։ Եւ
ձգեաց նմանութիւնն ձեռին եւ արկ զգլխոյ իմոյ զկամ ցլեայ իմոյ. եւ վերացոյց զիս
Ոգի ընդ երկիրս եւ ընդ երկինս, եւ տարաւ զիս յերուսաղէմ ի տեսլեանն Աստուծոյ, եւ [5]կացոյց զիս" ի նախասրտեան
դրանն ներքնոյ որ հայէ ընդ հիւսիսի,
ուր էր արձան պատկերի նախանձու
4 [14]ստացողին։ Եւ անդ էին փառք Աստուծոյ Իսրայէլի, ըստ տեսլեանն զոր
տեսի ի դաշտի անդ։
5 Եւ ասէ ցիս, Որդի մարդոյ, հայեաց
աչօք քովք ի կողմն հիւսիսոյ։ Համբարձի զաչս իմ ի կողմն հիւսիսոյ, եւ
ահա ի հիւսիսոյ կողմանէ [15]ի վերայ զրան
սեղանոյն կայր պատկերն նախանձու ի
մուտս զրանն [5]որ հայէր ընդ արեւելս"։
6 Եւ ասէ ցիս, Որդի մարդոյ, տեսանե՞ս
զինչ գործեն գոքա աստ, անօրէնութիւն [16]մեծ առնդ Իսրայէլի, հեռանալ ի սրբութենանց իմոց. դարձեալ՝ եւս մեծամեծս քան զայս տեսցես անօրէնութիւնս։
7 Եւ եմոյծ զիս առաջի զրոց [17]սրահին,
8 եւ տեսի, եւ ահա ծակ մի յորմին։ Եւ
ասէ ցիս, Որդի մարդոյ, բրեա զորմդ.
եւ բրեցի զորմն, եւ ահա դուռն մի։
9 Եւ ասէ ցիս, [18]Որդի մարդոյ, մուտ տես
զանօրէնութիւնսդ եւ զչարիսդ" զոր
10 գործեն գոքա այդր։ Մտի եւ տեսի, եւ
ահա ամենայն նմանութիւն սողոյ եւ
անասնոյ, անասո գարչելոց. եւ տեսի
զամենայն կուռս տանն Իսրայէլի նկա-
11 րեալ [19]չուրջ զնոքօք"։ Եւ եւթանասուն

[1] ԵԲԲ. Հովոյց. ամենեքին նոքա մնչեն՝ իւրաքանչիւր [2] ԵԲԲ. ծուխ եղիցի իբրեւ զկուր [3] ԵԲԲ. գայթակղութիւն եղեւ [4] ԵԲԲ. զարգուց նորա [5] ՅԵԲԲ. գ-ՅՈ-ՈՒ [6] ԵԲԲ. զայն [7] ԵԲԲ. զգաղտնիս իմ, եւ մտցեն անդր բանաւորք, եւ պղծեսցեն զայն [8] ԵԲԲ. Արա զչղթայն [9] ԵԲԲ. արեան, եւ քաղաքն լի եղեւ [10] ԵԲԲ. կործանումն [11] ԵԲԲ. կորիցեն

[12] ԵԲԲ. վեցերորդի [13] ԵԲԲ. իբրեւ տեսլեան հրոյ. ի տեսլենէ միջոց նորա եւ ի խնամարհ՝ հուր. եւ ի միջոց նորա եւ ի վեր՝ իբրեւ զտեսիլ պայծառութեան, իբրեւ [14] ԵԲԲ. որ նախանձեցուցանէ. [15] ԵԲԲ. տա [16] ԵԲԲ. մեծ գործէ [17] ԵԲԲ. գաւթին [18] ԵԲԲ. Մուտ տես զանհնարինն պղծութիւնան [19] ԵԲԲ. յորմն շուրջանակի

այր ի ծերոց անտի տանն Իսրայելի, եւ Ցեղոնիա որպի Սափանայ ի մէջ նոցա՝ կայր առաջի նոցա. եւ իւրաքանչիւր բուրուառ ի ձեռին իւրում, եւ ծուխ խնկոյն ելանէր զիմանէր իրրեւ զամպ։
12 Եւ ասէ ցիս Տէր, Որպի մարդոյ, տեսանե՞ս զինչ ծերք տանդ Իսրայելի զործեն այդր ընդ խաւար, իւրաքանչիւր ի ծածուկ [1]ի սենեկի իւրում. զի ասեն,
13 Եհոզ Տէր, եւ ոչ հայի յերկիր։" Եւ ասէ ցիս, Դարձեալ՝ եւս մեծամեծ [2]առնօրէնութիւնս տեսցես՝ զոր գործեն գո-
14 քա։ Եւ եմայծ զիս առաջի դրան տանն Տեառն, որ հայէր ընդ հիւսիսի. եւ ահա նստէին անդ կանայք եւ ողբային
15 զԹամուզ։ Եւ ասէ ցիս, Տեսանե՞ս զայդ, որպի մարդոյ. դարձեալ՝ եւս մեծամեծ [2]գործս քան զայդ տեսանիցես։
16 Եւ եմոյծ զիս ի ներքին [3]սրահ տանն Տեառն, եւ ահա՝ ի վերայ դրանց տաճարին Տեառն ընդ սեղանն եւ ընդ վանդակն՝ իրրեւ արք քսանևհինգ, որոց գլխկունս ի տաճարն Տեառն դարձուցեալ էր, եւ զերեսս ընդ արեւելս, եւ երկիր
17 պագանէին [5]արեգական։ Եւ ասէ ցիս, Տեսե՞ր զայդ, որպի մարդոյ. միթէ վիճք ինչ իցէ [6]անօրէնութիւնն տանդ Իսրայելի՞ զոր գործեն աստ, զի լցին զերկիրս անօրէնութեամբք, եւ դարձան ի բարկացուցանել զիս. եւ ահա ձկանն [7]զբազուկ որթոյն ընդ արհամարհանս՞,
18 Եւ ես արարից ընդ նոսա բարկութեամբ, եւ ոչ խնայեսցէ ակն իմ, եւ ոչ ողորմեցայց նոցա. եւ ազաղակեսցեն յականջս իմ մեծաձայն, եւ ոչ լուայց նոցա։

Գլ. Թ

1 Եւ ազաղակեաց յականջս իմ մեծաձայն եւ ասէ, Մերձեալ է վրէժխնդրութիւն քաղաքիդ. եւ իւրաքանչիւր ոք զգործի սատակման ի ձեռին իւրում ու-
2 նէր։ Եւ ահա արք վեց գային ընդ ճանապարհն բարձու դրանն՝ որ հայի ընդ հիւսիսի, եւ իւրաքանչիւր [8]տապար ի ձեռին իւրում. եւ այր մի ի մէջ նոցա

զգեցեալ պաղնեւոր, եւ [9]կամար ականատակաց յականց չափիղայ" ընդ մէջ իւր. եւ մտին կացին առաջի պղնձի սեզա-
3 նոյն։ Եւ փառքն Աստուծոյ Իսրայելի վերացան ի քերովբէիցն [10]յորդ որ ի մէջ տաճարին". եւ կոչեաց զայրն որ զգեցեալ էր զպաղնեւորն, եւ ունէր [11]գիա-
4 մարն ընդ մէջ իւր. Եւ ասէ ցնա Տէր, Անց ընդ մէջ քաղաքիդ Երուսաղեմի, եւ դիր նշան ի ճակատ արանցդ որ հեծնն եւ յոգւոց հանեն ի վերայ [12]անօրէ-
5 նութեանցն զործելոց ի մէջ դորա։ Եւ ցնոսա ասէ՝ ինձ լուա ի լուա, Գնացէք զհետ նորա ի քաղաքն, եւ կոտորեցէք. եւ մի խնայեսցեն աչք ձեր, եւ մի [13]ողորմեսջիք մի՛ք Ծերոյն եւ տղայոյն, կուսին եւ երիտասարդին", եւ զկանայս կոտորեսջիք ի սատակումն, բայց յորոյ վերայ նշանն իցէ մի մերձենայցէք. եւ սկիզբն՝ ի սրբութենէ իմոց արասջիք։ Եւ սկսան յարանց ծերոց որ էին [14]ի ներքս ի տա-
7 ճարին"։ Եւ ասէ ցնոսա, Պղծեցէք զտունդ, եւ լցէք [15]զտունդ զիւրաքանչիւր, եւ ելէք։ Եւ ելեալ կոտորեցին զքաղաքն։
8 Եւ եղեւ ի կոտորելն զնոսա՝ [16]հայեցայ եւ ահա", եւ անկայ ի վերայ երեսաց իմոց, աղաղակեցի եւ ասեմ, Վայ ինձ, Տէր Աստուած Տէր, Ջնջե՞ս դու զաւգիկ զնացորդսդ [17]տանդ Իսրայելի, ի հեղուլ զբարկութիւնն քո ի վերայ Երուսաղե-
9 մի։ Եւ ասէ ցիս, Անիրաւութիւն տանդ Իսրայելի եւ Յուդայ մեծացաւ յոյժ յոյժ, [18]զի լցաւ երկիրդ ժողովրդովք բազմօք", եւ քաղաքդ լի եղեւ [17]անօ-
րէնութեամբ եւ" պղծութեամբ. զի ասացին եկէք եմոյծ Տէր զերկիրն, եւ ոչ
10 եւս հայի Տէր։ Եւ արդ ոչ խնայեսցէ ակն իմ, եւ ոչ ողորմեցայց, այլ ըստ ճանապարհաց նոցա տացի ի գլուխս նոցա։
11 Եւ ահա այրն որ զգեցեալ էր զպաղնեւորն, եւ ունէր [11]զիամարն ընդ մէջ իւր, պատասխանի եառ եւ ասէ, Արարի որպէս եւ հրամայեցեր ինձ։

---

[1] ԵԲԲ. ի սենեկի իւրում՝ պատկերաց. զի ասեն՝ Ոչ տեսանէ զմեզ Տէր. եհոզ Տէր զերկիր։ [2] ԵԲԲ. պղծութիւնս [3] ԵԲԲ. գաւթի [4] ԵԲԲ. առ դրան տաճարին Տեառն ընդ սրահն եւ ընդ սեղանն [5] ԵԲԲ. յարեւելս կոյս արեգական [6] ԵԲԲ. տանդ Յուդայ առնել զպղծութիւնան [7] ԵԲԲ. զդասն ընդ քիթ իւրեանց [8] ԵԲԲ. զանօթ կոտրտեան իւրոյ

[9] ԵԲԲ. կազմար դպրի [10] ԵԲԲ. յորոց վերայ էին ի սեամն տանն [11] ԵԲԲ. զկողմանսն [12] ԵԲԲ. ամենայն պղծութեանցն [13] ԵԲԲ. ողորմեսջիք։ (6) Զձեր, զերիտասարդ եւ զկոյս եւ զմանկան [14] ԵԲԲ. առաջի տանն [15] ԵԲԲ. զդաւթեան [16] ԵԲԲ. եւ ծնայի ես [17] ԵԲԲ. պ-ութ [18] ԵԲԲ. եւ լցաւ երկիրդ արեամբ

ԳԼ. Ժ

1 Եւ տեսանէի, եւ ահա ի վերայ հաստատուածիանն որ էր ի վերայ գլխոյ քերովբէիցն իբրեւ գվէմ շափիղայ ականի, եւ ի վերայ նոցա նմանութիւն աթո-
2 ռոյ։ Եւ ասէ ցայրն որ զգեցեալն էր զպատմուճանին, Մուտ ի մէջ անուացդ ի ներքոյ քերովբէիցդ, եւ լից զապուռս քո կայծակամբք հրոյ ի մէջոյ քերովբէիցդ, եւ ցանեա ի վերայ քաղաքին.
3 եւ եմուտ առաջի իմ։ Եւ քերովբէքն կային ընդ աջմէ տաճարին ի մտանել նորին, եւ ամպն լիոյ զարան ներքին։
4 Եւ փառքն Տեառն վերացան ի քերովբէիցն անտի ի՝ջօդն որ ի տաճարին՝. եւ տաճարն լի եղեւ ամպով, եւ ՝՞սրահն
5 լի եղեւ լուսով փառացն Տեառն։ Եւ ձայն թեւոց քերովբէիցն լսելի լինէր մինչեւ ի ՝՞սրահն արտաքին իբրեւ զձայն Աս-
6 տուծոյ ՝Սպագեա՛ որ խօսէր։ Եւ եղեւ մինչդեռ տայր պատուէր առնն որ զգեցեալ էր զպատմուճանին ՝՞սուրբ, եւ ասէր, Ա՛ռ հուր ի մէջոյ անուացդ ի միջոյ քերովբէիցդ. եւ եմուտ եւ եկաց ի
7 մէջ անուացն։ Եւ ձգեաց քերով մի զձեռն իւր ի մէջոյ քերովբէիցն ի մէջ հրոյն որ էր ի մէջ քերովբէիցն, առ եւ եհան ի ձեռս նորա որ զգեցեալ էր զպատ-
8 մուճանին ՝՞սուրբ. առ եւ ել անտի։ ՝՞Հայէի ընդ քերովբէսն, եւ տեսանէի՛՞ նմանութիւն ձեռաց մարդոյ ի ներքոյ թեւոց նոցա։
9 Տեսանէի, եւ ահա անիւք չորք կային մերձ առ քերովբէսն, մի մի անիւ զհետ միոյ միոյ քերովբէի. եւ տեսիլ անուացն իբրեւ զտեսիլ ականի կարկե-
10 հանի։ Եւ տեսիլ նոցա ՝՞եւ նմանութիւնն՞ չորեցունց՝ որպէս զի իցէ ՝՞տա-
11 ւանիլ անիւ ի մէջ անուոյ։ Եւ ի գնալն իւրեանց՝ ի չորեսին կողմանս իւրեանց գնային, եւ յետս ընդդէմ ոչ դառնային՝ զի յոր կողմն հայէր մի առաջն, զհետ նորա երթային եւ յետս ընդդէմ
12 ոչ դառնային։ Եւ ամենայն մարմինք իւրեանց եւ՞՞ ձեռք եւ թեւք նոցա եւ անիւք լի էին աչօք՝ չուրջ զչորեքեանցն

13 անուովք նոցա։ Եւ անուացն անուն՝ կոչեցաւ ՝՞Փսղգեղ, իմով իսկ լսե-
14 լով։ Եւ չորք դէմք միոյ. դէմք միոյն՝ դէմք քերովբէի, եւ դէմք երկրորդին՝ դէմք մարդոյ, եւ դէմք երրորդին՝ դէմք առիւծու, եւ դէմք չորրորդին՝ դէմք
15 արծուոյ։ Եւ վերացան քերովբէքն։ Այս ան ՝՞պատուէ զոր տեսի ի վերայ Քո-
16 բար գետոյ։ Եւ ի գնալ քերովբէիցն՝ գնային եւ անիւքն զհետ նոցա. եւ յամբառանալ քերովբէիցն զթեւս իւրեանց ի վերանալն յերկրէ՝ ոչ դառնային յետս
17 անիւքն. քանզի զհետ նոցա էին։ Ի կայն նոցա՝ կայաբէին, եւ յամբառանալ նոցա՝ ընդ նոսին վերանային. զի ոգի ՝՞կենդանութեան էր ի նոսա։
18 Եւ ելին փառքն Տեառն ՝՞ի մէնաւոյ տաճարին, եւ նստաւ ի վերայ քերով-
19 բէիցն։ Եւ ամբարձին քերովբէքն զթեւս իւրեանց, եւ վերացան յերկրէ առաջի իմ. յելանելն նոցա եւ անիւքն զհետ նոցա, եւ կացին առաջի դրանդեայ դրան տանն Տեառն որ հայէր ընդ արեւելս, եւ փառքն Աստուծոյ Իսրայելի ի վերայ
20 նոցա։ Այս այն կենդանի է զոր տեսի ի ներքոյ Աստուծոյ Իսրայելի վերայ Քոբար գետոյ, եւ գիտացի թէ այն քերովբէք
21 են։ Չորք չորք դէմք միոյ միոյ, եւ ՝՞՞ւթեւք միոյ միոյ, եւ նմանութիւն ձե-
22 ռաց մարդոյ ի ներքոյ թեւոց նոցա։ Եւ նմանութիւն երեսաց ՝՞՞նոցա. այս դէմք են զոր տեսի ի ներքոյ փառացն Աստուծոյ Իսրայելի՞՞ ի վերայ Քոբար գետոյ, գտեսիլ նոցա եւ գնացք. զի ըստ իւրաքանչիւր դիմաց գնային։

ԳԼ. ԺԱ

1 Եւ առեալ զիս Հոգի, եւ ած զիս յանդիման դրան տանն Տեառն որ հայէր ընդ արեւելս. եւ ահա առաջի դրան ՝՞սրահին արք իբրեւ քսան եւ հինգ, եւ տեսի ի մէջ նոցա զԵզեքիա զորդի Յազերայ եւ զՓալատիա Բանեայ՝ զառաջնորդս ժողովրդեանն։
2 Եւ ասէ ցիս ՝՞Տէր, Որդի մարդոյ, այս արք են որ խորհին անօրէն, եւ տան խրատս չար ի քաղաքիդ

---

1 ԵԲԲ. զգաւթին 2 ՝ԵԲԲ. ի սեամն անդր տանն 3 ԵԲԲ. գաւթին 4 Ա.յԷՆ՝Ա.ՄԵՆԱԿԱՅԻ 5 ՝ԵԲԲ. գաւթին 6 ՝ԵԲԲ. Եւ երեւեցաւ ի մէջ քերովբէիցն 7 ՝ԵԲԲ. նմանութիւն մի 8 ՝ԵԲԲ. յաջելոյ, թիկունք իւրեանց եւ

9 Ա.յԷՆ՝՝ յեղյեղուկ 10 ՝ԵԲԲ. կենդանի 11 ՝ՀԱՀ, կենդանեացն 12 ՝ԵԲԲ. ի վերոյ քան զսեամն 13 ՝ԵԲԲ. չորք 14 ՝ԵԲԲ. այնոցիկ էր նմանութիւն երեսացն զոր տեսի

3 յայդմիկ, եւ ասեն, Ոչ [1]ևթէ նո-
րոգ ինչ չինեալ են տունքս, այլ՝ սա է
4 կախեալ եւ մեք միս։ Վասն այդորիկ
մարգարեաց ի վերայ նոցա, մարգարեայ,
5 որդի մարդոյ։ Եւ ենաս ի վերայ իմ՝ ա-
ղի Տեառն եւ ասէ ցիս, Այսպէս ասէ [2]Ա-
դոնայի Տէր. Այդպէս ասացէք, տունդ
Իսրայելի, եւ զխորհուրդ ոգւոց ձերոց
6 ես գիտեմ։ Յառախնեցէք զդիակունս ձեր
ի քաղաքիդ յայդմիկ, եւ լցէք զճանա-
7 պարհս դորա վիրաւորօք։ Վասն այդորիկ
այսպէս ասէ Ադոնայի Տէր. Զդիակունս
ձեր զոր [3]կոտորէիք ի միջի դորա, նո-
քա միսն են, եւ կաթսայն դա է. եւ
8 զձեզ հանից ի միջոյ դորա։ Ի սրոյ
երկնչէիք, սուր ածից ի վերայ ձեր, ա-
9 սէ Ադոնայի Տէր։ Եւ հանից զձեզ ի
միջոյ դորա, եւ մատնեցից զձեզ ի ձեռս
օտարաց, եւ արարից ի ձեզ դատաս-
10 տան. Ի սուր անկանիջիք ի սուր. եւ ի վե-
րայ [4]ձերանց Իսրայելի դատեցայց զձեզ,
11 եւ ծանիջիք թէ ես եմ Տէր։ Եւ դա չիցէ
ձեզ կաթսայ, եւ դուք չլինիջիք ի դմա
միս. ի վերայ [5]ձերանցն Իսրայելի դա-
12 տեցայց զձեզ, եւ դիտասջիք թէ ես եմ
Տէր. զի [6]ըստ արդարութեանց իմոց՝
դուք ոչ գնացէք, եւ զիրաւունս իմ
դուք ոչ արարէք. այլ ըստ կրօնից ազ-
գացն որ չուրջ զձեզ էին՝ արարէք։
13 Եւ եղեւ մինչդեռ մարգարէանայի՛
մեռաւ Փաղտիա որդի Բանեայ. անկայ
ի վերայ երեսաց իմոց, եւ ի ձայն մեծ
աղաղակեցի, եւ ասեմ, Վայ ինձ, վայ
14 ինձ, Ադոնայի Տէր, զի ի կատարած
հասուցեր զմնացորդս Իսրայելի։ Եւ ե-
15 ղեւ բան Տեառն առ իս եւ ասէ. Որդի
մարդոյ, եղբարք [7]քո եւ արք դերու-
թեան քո եւ ամենայն տունդ Իսրա-
յելի հասեալ են ի վախման՝, որոց ա-
սացին բնակիչքն Երուսաղեմի, Ի բաց
մերժեցարուք ի Տեառնէ, զի մեզ տուեալ
է ժառանգութիւն։
16 Վասն այնորիկ ասա, Այսպէս ասէ
Ադոնայի Տէր, Թէ մերժեցից զնոսա
յաղգս, եւ ցրուեցից զնոսա ընդ ամե-
նայն երկիր. եւ եղէց նոցա փոքր մի
ի սրբութիւն ի գաւառսն յոր մատնիցին
17 ի նոսա։ Վասն այնորիկ ասա, Այսպէս
ասէ Ադոնայի Տէր. Եւ ընկալայց [7]զնոսա
յաղգացն, եւ ժողովեցից [7]զնոսա ի գա-
ւառացն ուր [8]ցրուեցից զնոսա՝ ի նոսա,
18 եւ տայց [9]նոցա զերկիրն Իսրայելի։ Եւ
մտցեն անդր, եւ բարձցեն զամենայն
դարչելիս նորա, եւ զամենայն [10]զանօրէ-
19 նութիւնս նորա ի նմանէ։ Եւ տայց նոցա
սիրտ [11]այլ, եւ ոգի նոր պարգեւեցից
նոցա՝. եւ հանից զսիրտն քարեղէն ի
մարմնոց նոցա, եւ տայց նոցա սիրտ
20 մարմնեղէն. Չի ըստ հրամանաց իմոց
գնասցեն, եւ զիրաւունս իմ պահեսցեն, եւ
արասցեն զնոսա. եւ եղիցին ինձ ի ժողո-
21 վուրդ, եւ ես եղէց նոցա Աստուած։ [12]Եւ
ըստ գարչելեաց սրտից նոցա եւ ըստ անօ-
րէնութեանցն նոցա զոր արարին՝ եւ՝ ըստ
ճանապարհացն յոր գնային՝ հատուցից
ի գլուխս նոցա, ասէ Ադոնայի Տէր։
22 Եւ ամբարձին քերովբէքն զթեւս իւ-
րեանց, եւ անիւքն զնոտ նոցա, եւ
փառքն Աստուծոյ Իսրայելի ի վերայ
23 [13]նոցա։ Եւ ամբարձան փառքն Տեառն
ի միջոյ քաղաքին, եւ կացին ի վերայ
լերինն որ էր [14]յանդիման քաղաքին։
24 Եւ վերացոյց զիս Ոգի, եւ ած յեր-
կիրն Քաղդէացւոց ի մէջ գերութեանն՝
տեսլեամբ Հոգւովն Աստուծոյ. եւ [15]յա-
25 րեալ ի տեսլենէ անտի՝՝ զոր տեսի։ Եւ
խօսեցայ առ գերութեանն զամենայն
բանս Տեառն զոր ետոյց ինձ։

ԻԼ. ԺԲ

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
2 Որդի մարդոյ, ի մէջ [16]անօրէնութեանց
նոցա՝՝ բնակեալ ես դու, որ աչս ունին
տեսանելոյ՝ եւ ոչ տեսանեն, եւ ականջս
լսելոյ՝ եւ ոչ լսեն. զի տուն դառնացո-
3 ղաց են։ Եւ դու, որդի մարդոյ, արա
դու քեզ [17]հանդերձ գերութեան, եւ վա-
րեսայ ի գերութիւն [18]ցաւոտս առաջի
նոցա, եւ գերեսջիր ի տեղւոջէ քումմէ
յայլ տեղի առաջի դոցա, [19]զի տեսցեն.
4 քանզի տուն դառնացողաց են։ Եւ [20]մեր-
կասցիս զհանգերձս քո՝ իբրեւ զհան-
գերձ գերութեան առաջի աչաց նոցա.

[1] ևթէ. է մեռ. չինեացուք տունս. [2] Ոչ. գ-ի-ս-ե
[3] Ոչ. դնէիք [4] Ոչ. առմմանացն [5] Ոչ. յօրէնս
իմ [6] Ոչ. քո, եղբարք քո, արք մերձաւորք
քո եւ ամենայն տունդ Իսրայելի համօրէն

[7] Ոչ. զձեզ [8] Ոչ. ցրուեալ էք [9] Ոչ. ձեզ
[10] Ոչ. զպղծութիւնս [11] Ոչ. մի, և ոգի նոր եդից
ի ներքս ձեր [12] Ոչ. Իսկ որոց սիրտք գնան ըստ
գարշելեաց իւրեանց և ըստ պղծութեանց իւր-
եանց [13] Ոչ. նոցա ի վերուստ [14] Ոչ. յարեւ-
ելից [15] Ոչ. վերացաւ լինէն տեսիլն [16] Ոչ.
տանն ապստամբաց [17] Ոչ. կազմած [18] Ոչ.
ցերեկ [19] Ոչ. թերեւս [20] Ոչ. Հանգիս զկազ-
մած քո զցերեկ իբրեւ զկազմած

եւ դու ելցես ընդ երեկոյս առաջի նո-
5 ցա , որպէս ելանիցէ գերի ։ Առաջի ա-
չաց նոցա ծակեա դու քեզ որմ , եւ ել-
6 ցես ընդ այն . Առաջի նոցա [1]կորակոր
գնասցես , դաստաղոզի ելանելցես՝ . ձորձ
զդլխով պատիցես , եւ մի տեսանիցես
զերկիրն . զի նշանակ եամ զքեզ առանն
Իսրայելի ։

7 Եւ արարի այնպէս բան ամենայնի
զոր պատուիրեալ էին Տէր , եւ [2]արկայ
հանդերձ դերսելեան զաւուրս՝ . եւ ել-
տրեցի ընդ երեկոյս զորմն ձեռամբ իմով ,
[3]եւ երթայի զաղտագողի կորակոր ա-
8 ռաջի նոցա՝ ։ Եւ եղեւ բան Տեառն ընդ
9 առաւօտն ի վերայ իմ եւ ասէ , Որդի
մարդոյ , ոչ ասացին զքեզ տունդ Ի-
սրայելի՝ տուն դառնացողացդ , մի՞ զինչ
10 է զոր դործեսդ ։ Եւ արդ ասա ցնոսա ,
Այսպէս ասէ Տէր [4]Տէր ցկշխանդ եւ
ցառաջնորդս Երուսաղեմի՝ եւ ցամե-
նայն տունդ Իսրայելի որ են ի մէջ [5]դո-
11 ցա՝ թէ ես նշանակ արարիք ի միջի
դորա՝ . որպէս արարիդ՝ այդպէս եղիցի
[6]ձմա , զի ի պանդխտութիւն եւ ի գե-
12 րութիւն երթիցեն ։ Եւ իշխանն ի մէջ
նոցա [7]կորակոր գնասցէ , պատաղոզի
չրկնասցի՝ , զորմն հատեալ ելցէ , զերեսս
ծածկեալ գնասցէ , եւ մի տեսցէ զեր-
13 կիրդ ։ Եւ արկից զդանց իմ զնովաս ,
եւ պատեսցի ուռկանաւ [8]ի պաչարումն .
եւ ածից զնա ի Բաբելոն յերկիրդ Քաղ-
դեացւոց , եւ զդա մի՞ տեսցէ , եւ այդր
14 վախճանեսցի ։ Եւ զամենայն օգնականս
նորա որ չուրջ զնովաս իցեն եւ զա-
մենայն [9]պաշտպանս նորա ընդ ամենայն
հոդմս ցրուեցից , եւ սուր զկնի նոցա
15 արձակեցից ։ Եւ ծանիցեն թէ ես եամ
Տէր , ի ցրուելն ինձ զնոսա ընդ ազգս ,
16 եւ ցանել զնոսա ընդ զաւառս ։ Եւ մո-
ղից ի նոցանէ արս թուով՝ ի սովոյ եւ
ի սրոյ եւ ի մահտանէ . զի պատմեսցեն
զամենայն անօրէնութիւնս նոցա ի մէջ
ազգացն յորս մտանիցեն անդր , եւ ծա-
նիցեն թէ ես եամ Տէր ։
17 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ ,
18 Որդի մարդոյ , զհաց քո [10]կարօտու-
թեամբ կերիջիր , եւ զջուր քո տանջա-
19 նօք եւ նեղութեամբ արբջիր . Եւ ասասցես ցժողովուրդ երկրին , Այսպէս ասէ
Տ֊ն Տէր ցերուսաղեմի երկրին Իսրայելի . Զհաց իւրեանց կա-
րօտութեամբ կերիցեն , եւ զջուր իւ-
րեանց [11]ասլականութեամբ արբցեն . զի
ասլականեսցի երկիր լրիւ իւրով , ի
յամպարշաւութեան են ամենայն բնա-
20 կիչք նորա ։ Եւ քաղաքք նոցա բնակեալք
աւերեսցին , եւ երկիր նոցա յապակա-
նութիւն եղիցի , եւ ծանիջիք թէ ես
եամ Տէր ։
21 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ ,
22 Որդի մարդոյ , զինչ է ձեզ առակդ այդ
յերկրիդ Իսրայելացւոց դոյ ասեն , Հե-
ռի են աւուրքն , եւ կորեան տեսիլք
23 ամենայն ։ Վասն այդորիկ ասա ցնոսա ,
Այսպէս ասէ Տ֊ն Տէր . Դարձու-
ցից զառակդ զայդ , եւ մի՞ եւս ասաս-
ցեն առնդ Իսրայելի զառակդ զայդ . զի
խօսեսցիս առ նոսա , թէ Հասեալ են
աւուրք եւ պատգամք ամենայն տես-
24 լեանց ։ Զի ոչ եւս եղիցի ամենայն տե-
սիլ սուտ , եւ որ խօսիցի ըղձութեամբ
չնորհուկս ի մէջ որդւոցն Իսրայելի ։
25 Քանզի ես Տէր խօսեցայ զբանս իմ , խօ-
սեցայ եւ արարից , եւ ոչ եւս [12]յերկա-
րեցից . զի յաւուրս ձեր , տուն դառնա-
յողաց , խօսեցայ զբանն , եւ արարից
ասէ Տ֊ն Տէր ։
26 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ ,
27 Որդի մարդոյ , ահաւադիկ տունդ Ի-
սրայելի՝ [13]տուն դառնացողաց՝ ասեն , Տե-
սիդ զոր տեսանէ դա՝ յաւուրս բազումս ,
եւ ի ժամանակս հեռաւորս լինելոց է
28 այդ զոր դայդ մարգարէանայ ։ Վասն
այդորիկ ասա ցնոսա , Այսպէս ասէ Տ֊
դնայի Տէր . Ոչ եւս յերկարեսցին ա-
մենայն բանք իմ զոր խօսեցայց , այլ զոր
խօսեցայց՝ արարից , ասէ Տ֊դնայի Տէր ։

Գլ . ԺԳ

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ ,
2 Որդի մարդոյ , մարգարեանա ի վերայ մար-
գարէից Իսրայելի որ մարգարէանան
անդ , եւ ասասցես ցմարգարէսդ որ մար-
գարէանան ի սրտից իւրեանց . [13]մար-
գարէանայցես եւ ասասցես ցնոսա .՝՝

[1] ՆԵԲ· բարձցես յոտս, ի խաւարի հանցես [2] ՆԵԲ· զկազմած իմ Հանի իբրեւ զկազմած գերու-
թեան զգերեկ [3] ՆԵԲ· ի խաւարի հանի, բարձի
յոտս առաջի նոցա [4] ՆԵԲ· Եհովայ· պատգամն այս առ իշխանն որ յԵրուսաղէմ
[5] ՆԵԲ· գոցա ։ (11) Ասա, Ես նշանակ եմ ի միջի
ձերում [6] ՆԵԲ· նոցա [7] ՆԵԲ· կրեսցէ բեռն յոտս
ի խաւարի [8] ՆԵԲ· իմավ [9] ՆԵԲ· գունդս զօրաց

[10] ՆԵԲ· դողութեամբ [11] ՆԵԲ· զարմացմամբ
[12] ՆԵԲ· յերկարեսցի [13] 3ՆԵԲ· գ֊ւ֊ե

3 Լուարուք զպատգամս Տեառն։ Այսպէս
ասէ Ադոնայի Տէր. Վայ [1]դուք որ մար-
գարէանանդ ի սրտից իւրեանց՝, որ եր-
թան զհետ ոգւոց իւրեանց, եւ սմա-
4 նեւքն ոչ տեսանին։ Իրրեւ ագռնակք
յաւերակս էին մարգարէք քո, Իսրայէլ.
5 [2]Եւ ոչ կայքն ի հաստատութեան, եւ
ժողովեցին հօտս ի վերայ տանդ Իսրա-
յէլի, եւ ոչ հաստատեցան ոյք իսօսէին
6 յանուն Տեառն։ Որ տեսանէին՝ գաուռ-
թիւն, եւ պատմէին գրգռութիւն սնոտ-
ի. որք ասէին, Այսպէս ասէ Տէր. եւ
ես Տէր ոչ առաքեցի զնոսա. եւ [3]սկսան
7 յարուցանել բանս՝։ Ո՞չ ապաքէն տե-
սիլս սուտս տեսէք, եւ գրգռութիւնս
սնոտիս պատմէիք, եւ ասէիք, Այսպէս
8 ասէ Տէր. եւ ես Տէր ոչ իսօսեցայ։ Վասն
այդորիկ [4]սաս, Այսպէս ասէ Ադոնայի
Տէր. Փոխանակ զի բանք ձեր սուտ են,
եւ գրգռութիւնք ձեր սնոտիք, վասն այ-
նորիկ ես ի վերայ ձեր, ասէ Ադոնայի
9 Տէր. Եւ ձգեցից զձեռն իմ ի վերայ մար-
գարէիցն որ տեսանէին սուտ զիտիս եւ
իսօսէին սնոտիս. ի խրատու ժողովրդեան
իմոյ մի՛ կացցեն, եւ մի՛ ի դիւրս տանն
Իսրայէլի գրեսցին, եւ յերկիրն Իսրա-
յէլի մի՛ մտցեն. եւ ծանիցեն զի ես եմ
10 Ադոնայի Տէր։ Փոխանակ զի մոլորե-
ցուցանէին զժողովուրդ իմ, եւ ասէին,
Խաղաղութիւն, խաղաղութիւն. եւ ոչ
գոյր խաղաղութիւն. եւ ինքն չինէր
11 որմ, եւ նոքա [5]ծեփէին, դի փլցի՝. Ա-
սա ցնոսա որ [6]ծեփէինն, զի Անդղա-
մութիւն է այդ, քանզի փլանելոյ է.
եկեսցէ անձրեւ եւ ողողեսցէ, եւ տայ
քարինս ամբաքարաց ի պահանգս նոցա,
եւ կործանեսցին. հողմ յարիցէ, եւ
12 տապալեսցէ՝։ Եւ ահա կործանեցաւ որմն.
եւ ո՞չ [7]ասացին ցձեզ, զի Ո՞ւր է
13 ծեփն ձեր զոր ծեփեցէքն։ Զի այսպէս
ասէ Ադոնայի Տէր. Արձակեցից [8]հողմս
որ բառնայցէ՝ սրտմտութեամբ իմով,
եւ եկեսցէ անձրեւ ողողանել բարկու-
թեամբ իմով, եւ [9]զվէմս ամբաքարացն
ածից ցաւամամբ ի վերայ նորա ի վախ-
14 ճան՝։ Եւ յատակեցից զորմն զոր ծե-
փէիք, եւ կործանեսցի. եւ բնկեցից զնա
յերկիր, եւ յայտնեսցին հիմունք նորա,
եւ անկցի եւ [10]վախճանեսցի յանգիման-
նութեամբ՝. եւ գիտասջիք զի ես եմ
15 Տէր։ Եւ կատարեցից զսրտմտութիւն
իմ ի վերայ որմին, եւ ի վերայ ծեփո-
ղաց նորա, [11]եւ կործանեսցի՝. եւ ասա-
ցից ցձեզ՝ զի Զիք ուրեք որմ, եւ ոչ
16 ծեփօղք նորա, Մարգարէքն Իսրայէլի՝
որ մարգարէանային ի վերայ Երուսա-
ղեմի, եւ տեսանէին նմա խաղաղու-
թիւն, եւ ոչ գոյր խաղաղութիւն, ա-
սէ Ադոնայի Տէր։

17 Եւ դու, որդի մարդոյ, հաստատեա
զերեսս քո ի վերայ գաւերաց ժողովրդե-
ցեան քո, որ մարգարէանային ի սրտից
իւրեանց. մարգարեաց ի վերայ նոցա,
18 Եւ ասասցես, Այսպէս ասէ Ադոնայի
Տէր. Վայ այնոցիկ որ կարեն կարկա-
ուն դրաբձկնեարդ ի ներքոյ ամենայն
արմկան ձեռին, եւ առնեն գլխակիրս
գլխոյ ամենայն հասակաց՝ [12]թիւրել զան-
ձինս. դի թիւրեցան անձինք ժողովուր-
դեան իմոյ, եւ ապրեցուցանէին զան-
19 ձինս. Եւ բամբասէին զիս՝ առաջի ժո-
ղովրդեան իմոյ վասն ափոյ միոյ գար-
ւոյ եւ կտորոյ միոյ հացի, սպանանել
զանձինս որ ոչ էին մահապարտք, եւ
ապրեցուցանել զանձինս որոց ոչ էր
պարտ կեալ, ի բարբառելն ձեր յականջս
ժողովրդեանն, որ սիրէ զբարբառ
20 նանրութեան. վասն այսորիկ այսպէս
ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես ի վերայ
բարձկներոյդ ձերոյ, [13]յոր դուք ժողո-
վէիք զանձինս, եւ պատառեցից զայդ՝
ի բազկաց ձերոց. եւ առաքեցից զան-
ձինս զոր դուքն [14]թիւրէիք ի ցրումն՝։
21 Եւ պատառեցից զգլխակիրսն ձեր, եւ
ապրեցուցից զժողովուրդ իմ ի ձե-
ռաց ձերոց, եւ ոչ եւս եղիցին ի ձեռս
ձեր [15]ի ժողովս. եւ ծանիջիք զի ես եմ
22 Տէր. Փոխանակ զի [16]խոտորէիք զսիրտ
արդարոյն անիրաւութեամբ՝, եւ իմ ոչ

[1] ՆԲԲ. մարգարէիցդ անզգամաց [2] ՆԲԲ. Ոչ եկէք ի խրամատս, և ոչ ածէք ցանկ զտամբն Իսրայէլի, կալ ի մարտի յաւուրն Տեառն։ (6) Տեսանէին, [3] ՆԲԲ. յաւուցանեն ի հաստատութիւն բանիցն [4] ՅԲԲ. պակաս [5] ՆԲԲ. ծեփէին զայն բոով [6] ՆԲԲ ծեփէինն բոով թէ Փլանելոց է. եկեսցէ անձրեւ որ ողողէ, և դուք, քարինք կարկաւոյ, անկջիք. և տապալեսցէ զնա հողմ մրրկի [7] ՆԲԲ. հողմն մրրկի [8] ՆԲԲ. վէմ կարկաւոյ ցաւամամբ ի սպառումն [9] ՆԲԲ. սպառեսջիք ի միջի նորա [10] ՆԲԲ. որսալ անձինս. միթէ որսացարո՞ք զանձինս ժողովրդեան իմոյ, և ապրեցուցէ՞ք զանձինս ձեր, (19) Եւ անարգեցէք զիս [11] ՆԲԲ. որով որսայիք անդ անձինս ի թռիչս. և պատառեցից զնոսա [12] ՆԲԲ. որսայիք ի թռիչս [13] ՆԲԲ. յորս [14] ՆԲԲ. տխրեցուցանէիք զսիրտ արդարոյն սուտ զիտեամբ

էր [1]թիւրեալ զնա, եւ զօրացուցանէիք զձեռս անօրինին՝ չդառնալ [2]ամենեւին ի
23 ճանապարհէն իւրմէ, եւ՝ ի ճանա-
պարհաց իւրոց չդալոց եւ կեալ։ Վասն
այնորիկ զսատեփեանն մի՛ եւս տեսա-
նիցէք, եւ զգաճեփեանս այլ մի՛ եւս զգ-
ճանայցէք. եւ ապրեցուցից զժողովուրդ
իմ ի ձեռաց ձերոց. եւ ծանիցիք թէ
ես եմ Տէր։

Գլ. ԺԴ

1 Եւ եկին առ իս արք ի ծերոցն Իսրա-
2 յելի, եւ նստան առաջի իմ։ Եւ եղեւ
3 բան Տեառն առ իս եւ ասէ, Որդի մար-
դոյ, արք այսոքիկ [3]եղին զխորհուրդս՝ իւրեանց ի սիրտս իւրեանց, եւ [4]գտանդ-
ջանս անիրաւութեանց իւրեանց եղին
առաջի երեսաց իւրեանց. թէ իմ՞ ամե-
նայն զոյգս պատասխանի։ Վասն
4 այնորիկ խօսեաց ընդ դոսա եւ ասաց-
ցես, Այսպէս ասէ Աստուած Տէր. Այր
որ այր ի տանէդ Իսրայելի, որ դիցէ
[5]զխորհուրդս իւր ի սրտի իւրում, եւ
[4]գտանդջանս անիրաւութեան իւրոյ կար-
գեսցէ առաջի աչաց իւրոց, եւ եկեսցէ
առ մարգարէ՝ [2]հարցանել նովաւ զինէն,՝՝
ես Տէր պատասխանի ասց նմա զբազ-
5 [6]մութիւն զոր ի մտի ունիցի. Զի մի՛ խո-
տորեցուսցեն զտունդ Իսրայելի զբաց ո-
տարացելոց սրտից իւրեանց յինէն ի
գնացս իւրեանց՝՝։
6 Վասն այնորիկ ասա տանդ Իսրայելի,
Այսպէս ասէ Տէր Տէր [2]Աստուած.
Դարձայք եւ դարձարուք [7]ի գնացից
ձերոց, եւ յամենայն ամպարշտութեանց
ձերոց, եւ դարձուսէք զերեսս ձեր [2]առ
7 իս՝՝։ Զանգի այր որ այր ի տանէդ Իս-
րայելի եւ յեկաց [8]եւ սպանգիտացոյ Իս-
րայելի՝՝ որ օտարասցի յինէն եւ դիցէ
[5]զխորհուրդս իւր ի սրտի իւրում, եւ
[4]գտանջանս անիրաւութեան իւրոյ կար-
գեսցէ առաջի երեսաց իւրոց, եւ եկեսց-
ցէ առ մարգարէ հարցանել նովաւ զիս,
ես Տէր պատասխանի ասց նմա [9]ըստ
8 այնմ զոր ի մտին ունիցի՝՝. Եւ հատաս-

տեցից զերեսս իմ ի վերայ մարդոյն այ-
նորիկ. եղիցի զնա ի նշան եւ [10]յաւակա-
նութիւն, եւ բարձից զնա ի միջոց ժո-
ղովրդեան իմոյ, եւ ծանիցիք զի ես եմ
Տէր։
9 Եւ մարգարէ ոք [11]թէ խաբեացի եւ
խօսեացի բան ինչ, ես Տէր մոլորեցուցի
զմարգարէն գայն. եւ ձգեցից զձեռն իմ
ի վերայ նորա, եւ սատակեցից զնա ի
10 միջոց ժողովրդեան իմոյ Իսրայելի։ Եւ
լինիցին դանիրաւութիւնն իւրեանց ըստ
անիրաւութեան հարցողին, նոյնպէս եւ
11 անիրաւութիւն մարգարէին եղիցի. Զի
մի՛ եւս մոլորեսցի տունն Իսրայելի յի-
նէն, եւ զի մի՛ եւս պղծեսցին յամե-
նայն յանցանս իւրեանց. եւ եղիցին ինձ
ի ժողովուրդ, եւ ես եղէց նոցա Աս-
տուած, ասէ Ադոնայի Տէր։
12 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
13 Որդի մարդոյ, երկիր մի որ յանցանիցէ
ինչ ինձ յանցանս, եւ ձգեցից զձեռն
իմ ի վերայ նորա, եւ խորտակեցից
զհաստատութիւն հացի նորա, եւ ար-
ձակեցից ի վերայ նորա սով, եւ բար-
ձից ի նմանէ զմարդ եւ զանա-
14 սուն։ Եւ եթէ իցեն արքն այն երիքին ի միջի
նորա, Նոյ եւ Յոբ եւ Դանիէլ, նո-
քա արդարութեամբն իւրեանց [12]ապ-
րեսցին, ասէ Ադոնայի Տէր։
15 Եւ եթէ գազանս չարս ածից ի վե-
րայ երկրին եւ [13]սատակեցից զնա, եւ
եղիցի յապականութիւն, մինչեւ անց
ոչ լինիցի ընդ նա յերեսաց գազանաց,
16 [14]Եւ այն արք՝ ի միջի նորա իցեն, կեն-
դանի եմ ես, ասէ Ադոնայի Տէր, եթէ
իցէ ուստերք նոցա եւ դստերք ապրեսց-
ցին. այլ [15]ինքեանք ապրեսցին, եւ եր-
կիրն եղիցի ի սատակումն։
17 Եւ եթէ սուր ածից յերկիրն յայն,
եւ ասացից սրոյն անցանել ընդ երկիրն,
եւ բարձից ի նմանէ զմարդ եւ զանա-
18 սուն, Եւ արքն այն երիքեան ի միջի
նորա իցեն, կենդանի եմ ես, ասէ
Ադոնայի Տէր, ոչ ապրեցուսցեն զուս-
տերս եւ զդստերս, բայց եթէ ինքեանք
միայն ապրեսցին։
19 Եւ եթէ մահ առաքեցից յերկիրն
յայն, եւ հեղից զսրտմտութիւն իմ ի

---

[1] Եբր. ախթեցուցեալ [2] Յեբր. պ-ո-ւ-ծ [3] Եբր. կանգնեցին զկուռս [4] Եբր. զպատճակղութիւն [5] Եբր. զկուռս [6] Եբր. բազմութեան կռոց նորա։ (5) Զի կալայց զտունդ Իսրայելի ի սրտի իւրում, այնու զի օտարացան յինէն կռովք իւրեանց համօրէն [7] Եբր. ի կռոց [8] Եբր. ի պանդխտելոց յԻսրայէլի [9] Եբր. ինձէն

[10] Եբր. յատակ [11] Եբր. մոլորեացի [12] Եբր. ապրեցուսցեն զանձինս իւրեանց [13] Եբր. անզաւակեացեն [14] Եբր. Երեքին արքն այնոքիկ [15] Եբր. ինքեանք միայն

վերայ նորա արեամբ՝ սատակել ի նմանէ
20 զմարդ եւ զանասուն, եւ նոյ եւ Դա-
նիէլ եւ Ցոբ ի միջի նորա իցեն, կեն-
դանի եմ ես, ասէ Աստուած Տէր, եթէ
իցէ ուստերք եւ դստերք նոցա ինասա-
ցեն, այլ նոքա արդարութեամբ իւր-
եանց զանձինս իւրեանց ապրեցուցցեն։
21 Այսպէս ասէ Աստուած Տէր. Եւ եթէ
զչորեսին իսկ զանիշարին *վրէժս ար-
ձակեցից, զսուր եւ զսով եւ զգազանս
չարս եւ զմահ ի վերայ երուսաղեմի՝
սատակել ի նմանէ զմարդ եւ զանասուն,
22 [1]Մինչդորդն ապրեալքն ի նմա հանցին
զուստերս եւ զդստերս իւրեանց, ահաւա-
սիկ ընդ նոսա՝ ելցին առ ձեզ, եւ տեսջիք
զճանապարհս նոցա եւ [2]զվարսն։րդս նոցա,
եւ զդէմայեղք՝ ի վերայ չարեացն զոր
ածի ի վերայ երուսաղեմի, զամենայն զչա-
23 րիսն զոր ածի ի վերայ նորա։ Եւ մխի-
թարեսցին զձեզ, դի տեսանիջէք զճա-
նապարհս նոցա եւ [3]զվարսն։րդս նոցա,
եւ ի մէտ առնուցուք եթէ ոչ տարա-
պարտուց արարի զամենայն զոր ինչ
արարի [4]ընդ նոսա՝, ասէ Աստուած Տէր։

ԳԼ. ԺԵ

[5]Վասն վայատի որթոյն։՝

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
2 Որդի մարդոյ, զինչ լինիցի փայտ որ-
թոյն յամենայն [6]փայտից ոստոց որ են՝
3 ի փայտս անտառի։ Միթէ առնուցո՞ւն
ի նմանէ փայտ մի՝ առնել գործի ինչ,
կամ առնուցո՞ւն ի նմանէ ցից մի կա-
4 խել զնմանէ անօթ ինչ։ Բայց զի ի հրոյ
ձախտ առեալ է. զի [7]ամ ի յամէ զյօտ՝
նորա ձախէ հուր, եւ [8]պակասէ ի սպառ՝,
միթէ պիտանացո՞ւ ինչ իցէ ի գործ.
5 [9]Թէպէտ եւ նոյնպէս ողջոյն հաստանիցի՝,
չէ ինչ պիտոյ ի գործ. [10]բայց թէ հրոյ
ճարակ լինիցի ի սպառ, եւ ոչ ինչ ա-
6 մենեւին՝ պիտանացու ի գործ։ Վասն
այնորիկ, այսպէս ասէ Աստուած Տէր.
Որպէս զփայտ որթոյն ի փայտս
անտառի եւոր ճարակ հրոյ, այնպէս
7 տաց զբնակիչսդ երուսաղեմի։ Եւ հաս-
տատեցից զերեսս իմ ի վերայ նոցա, ի
հրոյ ելցեն, եւ հուր կերիցէ զնոսա. եւ
ծանիցեն թէ ես եմ Տէր՝ ի հաստատել
8 [11]զձեզ զերեսս իմ ի վերայ նոցա։ Եւ տաց
զերկիրն յաւպականութիւն, վոհանակ
զի անկան ընդ յանցանօք, ասէ Աստ-
ուած Տէր։

ԳԼ. ԺԶ

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
2 Որդի մարդոյ, զիր վկայութիւն երու-
3 սաղեմի զանօրէնութեանց նորա. Եւ
ասասցես, Այսպէս ասէ Աստուած Տէր
ցերուսաղէմ. Արմատ քո եւ ծնունդ
քո յերկրէն Քանանացւոց, եւ հայր քո
4 Ամովրհացի եւ մայր քո Քետացի։ Եւ
ծնունդն քո՝ յորում աւուր ծնար, ոչ
ոք եհար զպորտ քո, [5]եւ ոչ պնդեցին
զտղին քո։՝ եւ [6]ջրով ոչ լուացար ի
[11]փրկութիւն, եւ աղիւ ոչ յաղեցար, եւ
5 ի խանձարուրս ոչ պատեցար։ Եւ ոչ
խնայեաց ի քեզ [12]ակն իմ, եւ ոչ արարի
քեզ զինչ մի յայսմ ամենայնէ զգուշա-
նալ, թէ գուցէ անցանիցէ ինչ ընդ քեզ.
եւ՝ ընկեցեալ դնէիր ընդ երեսս դաշ-
տին [13]վասն խոտորնակ մատց քոց՝ յա-
6 ւուրն յորում ծնար։ Անցի առ քեւ, եւ
տեսի արեամբ թաթաւեալ, եւ առացի
[14]ցքեզ, կենդանասջիր յարենէ քումմէ,
7 եւ կեանք քո յարենէ. Բազմասջիր,
քանզի իբրեւ զդոյս ագարակի ետուս՝
զքեզ. եւ բազմացար եւ մեծացար,
եւ եկիր մեր դու [15]ի քաղաքս քա-
զաքաց՝. սոխինք անկան քո, եւ մազք
արձակեցան, եւ դու էիր մերկ, խոյ-
ստառակ։
8 Եւ եկի հասի ի վերայ քո, եւ տեսի
զքեզ, զի հասեալ էր ժամանակ քո, [16]եւ
ժամանակ խախտողաց քոց՝. տարածեցի
զվեսս իմ ի վերայ քո, եւ ծածկեցի
վկայատուակութիւնս քո. եւ երդուայ
քեզ երդումն, եւ յուխտ մտի ընդ քեզ,
ասէ Աստուած Տէր, եւ եղեր ինձ։
9 Եւ լուացի զքեզ ջուրբ, եւ սրբեցի զքեզ
յարենէ քումմէ, եւ օծի զքեզ իւղով.

---

*ԵԲԲ. վրէժս իմ 1ԵԲԲ. Եւ ահա կացցեն ի նմա ապրեալք որ ելանեն, ուստերք և դստերք, ահա նոքա 2ԵԲԲ. զգործս նոցա, եւ վերջիք արեսջիք 3ԵԲԲ. զգործս 4ԵԲԲ. ի նմա 5ՅԵԲԲ. պ-ւ-ոթ 6ԵԲԲ. փայտից. ուռ է 7ԵԲԲ. զերկոսին ծայրս 8ԵԲԲ. մէջ նորա սպառ ի 9ԵԲԲ. Ի լինել իսկ նորա ողջ 10ԵԲԲ. միթէ յորժամ հրոյ ճարակ լինիցի եւ այրեսցի, իցէ՞ տակաւին

11ԵԲԲ. սրբութիւն 12ԵԲԲ. ակն՝ առնել քեզ ինչ մի յայսցանէ արգահատել քեզ, եւ դու 13ԵԲԲ. գարշելութեամբ անձին քո 14ԵԲԲ. ցքեզ յարեան քումմ, կեաց. տացի քամ յարեան քումմ, կեաց. (7) Բիւրաւոր իբրեւ զդոյս ագարակի արարի 15ԵԲԲ. ի յարդ եւ ի զարդ
16ԵԲԲ. ժամանակ սիրոյ

10 Եւ զգեցուցի զքեզ պէսպէս, եւ ա-
գուցի քեզ [1]զերկնագոյն, եւ ածի ընդ
մէջ քո բեհեզ, եւ արկի զքեւ մանուս.
11 Եւ զարդարեցի զքեզ զարդու, եւ եդի
ապարանջանս ի ձեռս քո, եւ քաոս-
12 մանեակ ի պարանոց քո. Եդի [2]քեզ
զինգ", եւ գորչապահանգս յականջս
քո, եւ պսակ պարծանաց ի գլուխ քո:
13 Եւ զարդարեցար ի զարդ ոսկւոյ եւ
արծաթոյ, եւ հանդերձ քո բեհեզ եւ
զառնաւուխտ եւ ճաճանչաւուխտ. եւ
կերարնաչիհ եւ եւզ եւ մեղր, եւ եղեր
գեղեցիկ յոյժ յոյժ, եւ [3]զրգեցար ի
14 զրգանս թագաւորութեան": Եւ ել ա-
նուն զեզեցկութեան քո ընդ [4]ամենայն
ազգս, զի էր կատարեալ վայելչութիւն
գեղոյ քո զոր յօրինեցի ի վերայ քո,
ասէ Ադոնայի Տէր:
15 Եւ դու զեղապանծ եղեր ի զեզ քո,
եւ պոռնկեցար [5]ի հռամնիան քո. եւ
տարածեցեր զպոռնկութիւն քո առ ա-
մենայն [6]անցաւորս, որոց ոչ լինէր այն-
16 պիսի ինչ": Եւ առեր ի հանդերձիցն
քոց եւ արարեր քեզ [7]կուռս կարկա-
ուտնս", եւ պոռնկեցար ընդ նոսա. [8]Եւ
մի մտցես անդր, զի ոչ էին եւ ոչ լի-
17 ցին": Եւ առեր զսպաս պարծանացն
քոց յոսկւոյն իմոյ եւ յարծաթոյն զոր
ետուր քեզ, եւ արարեր քեզ պատկերս
արուականս. եւ պոռնկեցար ընդ նոսա.
18 Եւ առեր զհանդերձն [9]զեզեցիկ քո" եւ
արկեր զնոքօք, եւ զեւզան իմ եւ
զխունկան եդիր առաջի երեսաց նոցա.
19 Եւ զհացն իմ զոր ետուր քեզ՝ եւ զնա-
չինն եւ զեւզ եւ զմեղր զոր ջամբեցի
քեզ՝ եդիր առաջի երեսաց նոցա ի հոտ
անուշից. եւ եղեւ [10]այնպէս", ասէ
20 Ադոնայի Տէր, Եւ առեր զուստերան
քո եւ զդստերս զոր ինձ ծնար՝ եւ զո-
հեցեր նոցա [11]ի սատակումն: Իրրեւ
զպոռնկութիւնս քո
21 թիւնն, Եւ զեներ զորդիան իմ, եւ
22 [12]արարեր զնոսա հնոցա Ընդոցա: Եւ այն
անհնարին եղեւ քան զամենայն պոռնը-

[1] ՇԲԲ. գոշիկս ի թեհուէ [2] ՇԲԲ. գինդս իբրեւ
քո [3] ՇԲԲ. հասեր ի թագաւորութիւն [4] ՇԲԲ.
գալաթ [5] ՇԲԲ. վասն համբաւոյ [6] ՇԲԲ. ան
ցորդ. Նորա լինէր [7] ՇԲԲ. բարձաւնս երփն
երփն [8] ՇԲԲ. ոչ եղեւ եւ ոչ լինի այդպէս
[9] ՇԲԲ. նկարակերտ [10] ՇԲԲ. ի կերակուր [11] ՇԲԲ.
զպոռնկութիւնս քո [12] ՇԲԲ. եւտուր զնոսա եւ
անցուցեր զնոսա ընդ հուր վասն նոցա: (22) Եւ
յամենայն պղծութիւնս և ի պոռնկութիւնս քո

կութիւնս եւ պղծութիւնս քո. եւ" ոչ
յիշեցեր զաւուրս աղայութեան քո, ի
ժամանակի յորում էիր մերկ եւ խայ-
աառակեալ եւ թաթաւեալ յարեան
23 քում, [1]ուստի կենդանացայն:" Եւ եղեւ
յետ ամենայն չարեացն քոց (վայ, վայ
24 քեզ, ասէ Ադոնայի Տէր), Շինեցեր
դու քեզ տուն պոռնկութեան, եւ ա-
րարեր քեզ բազխիս յամենայն հրապա-
25 րակս քո: Եւ ի գլուխ ամենայն ճա-
նապարհաց քոց չինեցեր [13]պոռնկոցս
քո, եւ ապականեցեր զգեղ երեսաց
քոց, եւ լայնեցար ամենայն անցաւորաց
ճանապարհի եւ յաճախեցեր զպոռնկու-
26 թիւնս քո: Եւ պոռնկեցար ընդ որդիան
եգիպտացւոց՝ սահմանակիցս քո ընդ մե-
ծանդամս, եւ բազմապատիկ պոռնկեցար,
27 զի դիս բարկացուսցես: Սրդ ես ձգեցից
զձեռն իմ ի վերայ քո եւ բարձից [14]զիրա-
ւունս քո, եւ մատնեցից զքեզ ի ձեռս
ատելեաց քոց՝ դստերացս այլազգեացն, որք
[15]թիւրեցին զքեզ ի ճանապարհէ քումմէ":
28 [1]Ամպարչանեցար եւ" պոռնկեցար ընդ
որդիան Ասորեստանեայց, [16]սակայն եւ
այնպէս ոչ յագեցար. յաճախեցեր ի
պոռնկութիւնս քո", սակայն եւ այն-
29 պէս ոչ յագեցար: [17]Յաճախեցեր զաչինս
ընդ երկիրն Քանանու եւ Քալդէացւոց",
30 Համայն եւ այնպէս ոչ յագեցար: [18]Զինչ
արարից ընդ դաւերս քո", ասէ Ադո-
նայի Տէր, յետ գործելոյ քո գայդ ամե-
նայն գործս կնոջ [19]պոռնկի. զի պոռնկե-
ցար բազմապատիկ ընդ դաւերսն քո":
31 Եւ չինեցեր զպոռնկոցս ի գլուխ ամե-
նայն ճանապարհաց, եւ կոթողս կոթո-
ղէիր յամենայն հրապարակս. եւ ոչ
եղեր իբրեւ զկին մի [20]պոռնիկ որ ժո-
32 ղովէ զկասկինս. Զի ամենայն կին պոռ-
նիկ նմանողք քո, որ չնայեցէ ընդ արամբ
խորթ, ոչ առնու զանձս յառնէ իւրմէ՝
33 եւ տայ վարձս հռամնեանց իւրոց, Ամե-
նայն պոռնիկք կապչեն առնուն ան-
ձանց իւրեանց", եւ դու տայիր վարձս

[13] ՇԲԲ. զարձրաւանդակ [14] Ւմ զկերակուր,
կամ, զառատիկ [15] ՇԲԲ. ամաչեն ի ճանա-
պարհէ քումմէ լկտւոյ [16] ՇԲԲ. զի չէր քո
յագեալ, եւ պոռնկեցար ընդ նոսա [17] ՇԲԲ.
Եւ յաճախեցեր զպոռնկութիւն քո յերկրէն
Քանանու ի Քաղդէացիս [18] ՇԲԲ Զինչ գոհա-
րացեալ է սիրտ քո [19] ՇԲԲ. պոռնկի լկտւոյ
[20] ՇԲԲ. պոռնիկ՝ անարգեալ գկապչիս: (32) Որ
չնայեցէ, այ փոխանակ առն իւրոյ ընդունի զօ-
տարս: (33) Ամենայն պոռնկաց տան կապչիս

[1]սեղեխաց քոց, եւ ուղղիձէիր զնոսա դալ առ քեզ յամենայն կողմանց ի
34 պոռնկութիւնս քո։ Եւ եղեւ քեզ իսառնիկի քան զամենայն կանանց ի պոռնկութեան քումի, [2]եւ յետ քո ոչ պոռնկեցան. դի նուքա կապչես առնուն յարանց, եւ դու տայիր վարձս սեղխաց, եւ" եղեւ քեզ այն ի խոտորնակի։
35 Վասն այդորիկ, պոռնիկ, լուր զբանի
36 գաստս Տեառն. Այսպէս ասէ Աղոնայի Տէր. Փոխանակ դի հեղեր արկեր զդրդիձ քո, եւ [3]յայտնեցաւ ամօթ պոռնկութեան քո առաջի համանուաց քոց, եւ յամենայն [4]խորհուրդս անօրէնութեանց" քոց, եւ յարիւնս որդւոց քոց զորս
37 տայիր նոցա, վասն այնորիկ ահաւասիկ ես ժողովեցից [5]ի վերայ քո" զամենայն հոմանիս քո, զոր դու խառնակէիր, եւ [5]յարուցից ի վերայ քո" զամենայն սիրելիս եւ զատելիս քո, եւ ժողովեցից պատուից զնոսա չուրջ զքեզ, եւ յայտնեցից [6]զչարիս քո առաջի նոցա, եւ տեսցեն զամենայն խայտառակութիւնս քո։ Եւ խնդրեցից ի քէն
38 զվրէժ չնացելոյ եւ արիւնահեղի, [5]եւ եղից զքեզ յարիւն քո," եւ եղից զքեզ յարիւն սրտմտութեան եւ նախանձու։
39 Եւ մատնեցից զքեզ ի ձեռս նոցա, եւ կործանեսցեն զպոռնկոցս քո, եւ քակեսցեն զկոթող քո, եւ մերկասցեն ի քէն զհանգերձս քո, եւ առցեն զպատակ պարծանաց քոց, եւ թողցեն զքեզ մերկ
40 խայտառակիա. Եւ ածցեն ի վերայ քո ամբոխ, եւ քարկոծեսցեն զքեզ վիմօք, եւ կոտորեսցեն զքեզ սրով իւրեանց.
41 Եւ այրեսցեն զաւանս քո հրով, եւ առնեսցեն ի քեզ վրէժխնդրութիւն առաջի կանանց բազմաց. եւ դարձուցից զքեզ ի պոռնկութենէ քումմէ, եւ վարձս ոչ
42 եւս տացես նոցա։ Եւ [7]արձակեցից զսրամտութիւն իմ ի վերայ քո, եւ բարձցի նախանձն իմ ի քէն. եւ հանդ-
43 եայց, եւ ոչ եւս [8]հոգացայց։ Փոխանակ դի ոչ յիշեցեր զօր տղայութեան քո, եւ ատամնուցանէիր զիս ի վերայ ամենայնի այդորիկ, եւ ես ահաւասիկ ըստ ճանապարհացն քոց ետուս ի գլուխ

[1]ԵԲԲ. ամենայն սեղխաց [2]ԵԲԲ. զի զկնի քո ոչ ոք եկն ի պոռնկել. եւ ի տալ քո վարձս, մինչ ոչ տուեալ լինէին քեզ վարձք, [3]ԵԲԲ. յայտնեցաւ [4]ԵԲԲ. կուռս պղծութեանց [5]ԵԲԲ. զ-ի-ա-ե [6]ԵԲԲ. զմերկութիւն [7]ԵԲԲ. Հանգուցից [8]ԵԲԲ. ցասեայց

քո, ասէ Աղոնայի Տէր. եւ [9]այնպէս արարեր" ամպարշտութիւնս ի վերայ ամենայն անօրէնութեանց քոց։
44 Այս ամենայն է զոր սրմնջէին զքէն առակօք եւ ասէին, եթէ Որպէս մայրն՝ նոյնպէս եւ դուստրն։ Արդ դուստր մօրն դու ես, որ մերժեաց զայր իւր եւ զորդիս իւր, եւ քոյր փերցն քոց որք մերժեցին զարս իւրեանց եւ զորդիս իւրեանց. մայր ձեր Քետացի, եւ հայր
46 ձեր Ամաւրհացի. Եւ քոյր [10]ձեր երէց՝ Շամրին, ինքն եւ դստերք իւր որ բնակեալ է ի ձախմէ քումմէ. եւ քոյր քո կրտսեր՝ որ բնակեալ է ընդ աջմէ քումմէ՝
47 Սոդոմ եւ դստերք իւր։ Ակայն եւ ոչ ըստ ճանապարհացդ նոցա գնացեր, եւ ոչ ըստ անօրէնութեանց նոցա արարեր, [11]զի վաղվաղ մի" առաւել դատ քան զնոսա
48 յամենայն ճանապարհս քո։ Կենդանի եմ ես, ասէ Աղոնայի Տէր, եթէ ա-
49 րար [9]ինչ աւելի" Սոդոմ քոյրն քո՝ ինքն եւ դստերք իւր, [12]քան զոր" արարեր դու եւ դստերք քո։ Բայց այս էր ա-
նօրէնութիւն Սոդոմայ քեռ քո. ամբարտաւանութիւն, [13]ի լիութենան հացի եւ յդխութեան դինոյ՝ փափկանայր ինքն եւ դստերք իւր. այնու առաւել էր ինքն եւ դստերք իւր", եւ ձեռն չտկբատան եւ ի անանկն ոչ կարկառէին։
50 Մեծամտէին եւ գործէին զանօրէնութիւն առաջի իմ. իրրեւ զայն տեսի՝
51 բարձի զնոսա։ Նա եւ Շամրին զկէս յանցանացդ քոց ոչ յանցաւ. եւ յաճախեցեր զանօրէնութիւնս քո առաւել քան զնոսա, եւ արդարացուցեր զքոյրս քո յամենայն անօրէնութիւնս քո զոր
52 արարեր։ Եւ արդ ընկալ [14]զամօթդ քո որ ասպականեցեր զքոյրն քո՝ անօրէնութիւնքդ զոր անօրինեցար առաւել քան զնոսա, եւ արդարացուցեր զնոսա յոյժ" քան զքեզ. եւ արդ յամօթ լեր եւ կրեա զամօթդ ի յարդարացու-
53 յանիկ զքոյրն [15]քո քան զքեզ։ Եւ դարձուցից զդարձուածս նոցա, զդարձուածս" Սոդոմայ եւ զդստերաց իւրոց,

[9]ԵԲԲ. մի՛ առնիցես [10]ԵԲԲ. քո [11]ԵԲԲ. որպէս թէ դոյզն ինչ էր. [12]ԵԲԲ. որպէս [13]ԵԲԲ. յագուրդ հացի, և անհոգութիւն հանգստեան եղեն նմա և դստերաց նորա [14]ԵԲԲ. զամօթ քո որ դատապարտեցեր զքոյրն քո ի մեղս քո, որով գործեցեր պղծութիւնս քան զնոսա. Նոքա արդարացան [15]ԵԲԲ. քո։ (53) Եւ դարձուցից զգերութիւն նոցա, զգերութիւն

եւ [1]դարձուցից զդարձուածս՝ Շամրիի
եւ զդաստարաց նորա, եւ [2]դարձուցից
54 զդարձուածս քո՝ ի միջի նորա. Զի
ընկալցիս [3]դասնչանս քո, եւ անար-
գեսցիս՝ յամենայնէ զոր արարեր ի
55 [4]բարկացուցանել զիս։ Եւ քոյր՝ քո
Սոդոմ եւ դաստիւք իւր անդրէն հաս-
տատեսցին որպէս եւ էիեն ի սկզբան է,
եւ Շամրիի եւ դաստիւք իւր հաստա-
տեսցին անդրէն որպէս եւ էիեն ի
56 սկզբան է, եւ դու եւ դաստիւք քո հաս-
տատեսջիք ի նոյն՝ որպէս եւ էիք ի
56 սկզբան է։ Եւ [5]ոչ էր Սոդոմ քոյր
քո համբաւ իբերան քո յաւուրս հպար-
57 տութեան քո. Մինչչեւ յայտնեալ էին
չարիքն քո որպէս այժմ, նախատ եղեր
դստերացն Ասորւոց, եւ ամենեցունց որ
չուրջ գնովաւ էին, [6]դստերք պղծող-
58 եաց, եւ պատեալ չուրջ զքեզ։ Արդ
կրեա զամպարտուեստիւնս քո եւ զա-
նօրէնութիւնս քո, ասէ Տէր։
59 Զի այսպէս ասէ Ադոնայի Տէր. Եւ ա-
րարից ընդ քեզ՝ որպէս արարեր, որպէս
անարգեցեր [7]զոյն աւրհնոյն՝ անցանել
60 զուխտիւ [8]իմով։ Եւ յիշեցից զուխտն
իմ որ ընդ քեզն էր յաւուրս տղայու-
թեան քո, եւ կանգնեցից [8]ինձ ուխտ
61 յաւիտենական. Եւ յիշեսցես զճանա-
պարհսն քո եւ [9]անարգեսցիս, յորժամ
գնասւ ածիցես՝ զքոյրսն քո զերիցունսն
հանդերձ կրտսերօքն, եւ տայ զնոսա
62 քեզ [10]ի փոխն, եւ ոչ ի դաշնաւորս. Եւ
կանգնեցից ես զուխտ իմ որ ընդ քեզ,
63 եւ ծանիցես թէ ես եմ Տէր. Զի յիշես-
ցես եւ ամաչեսցես, եւ մի՛ եւս լիցի
քեզ բանալ զբերան քո առաջի անար-
գանաց քոց, ի քաւել ինձ զամենայն
գործս քո զոր զործեցեր, ասէ Ադո-
նայի Տէր։

Գլ. ԻԷ

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
2 Որդի մարդոյ, պատմեա [11]պատմուխիւն,

[1]ՆԲԲ. զգերութիւն [2]ՆԲԲ. զգերութիւն գեր-
եաց քոց [3]ՆԲԲ. զամօթ քո եւ ամչեսցես
[4]ՆԲԲ. մխիթարել քո զնոսա։ (54) Եւ քոյր
[5]ՑՆԲԲ. պատ [6]ՆԲԲ. դստերաց Փղշտացւոց
որ անարգէն զքեզ չուրջանակի [7]ՆԲԲ.
զերդումն [8]ՆԲԲ. քեզ [9]ՆԲԲ. ամչեսցես
յորժամ ընկալցիս [10]ՆԲԲ. ի դստերս [11]ՆԲԲ.
առակս

եւ խօսեաց առակ առ տունդ Իսրայելի,
3 Եւ ասասցես, Այսպէս ասէ Ադոնայի
Տէր. Արծուի մեծ՝ մեծաթեւ երկայնա-
տարած [12]լիամազիլ որ խարհնցաւ մատա-
նել ի Լիբանան, եւ առ գրնարի ընտիր
4 մայրիսն. Եւ եհան զմատաղատունկն՝
եւ տարաւ երկիրն [13]Քանանացւոց, եւ
անկաւց զնա [14]ի պարսպաւոր քաղաքին՝
5 Եւ առ ի սերմանէ երկրին, եւ [15]դանեաց
ընդ երես դաչտին տունկ մանրա-
տունկ, ընդ առատաւ ինեամբ ջրոյ՝ երեւելի
6 առնել կարպեաց՝ զնա. (Եւ բուսաւ եւ
եղեւ յորթ [16]ակար եւ փոքր տեսու-
թեամբ՝,) յերեւել ուստոյ իրոյ ի նմա,
եւ արմատք նորա ի ներքոյ նորա էին եւ
եղեւ յորթ [5]մեծ, եւ հանդ [17]ոզիոյզս,
եւ արձակեաց զբարեւնակս իւր։
7 Եւ երեւեցաւ այլ արծուի մեծ, մե-
ծաթեւ [18]բազմամազիլ, եւ ահա որթն
այս [19]պատեալ է զնովաւ, եւ արմատք
սորա ի նմա, եւ ուստք նորա ի ներքոյ
նորա. եւ առաքեաց արբուցանել զնա
8 հանդերձ բուսով անկոյ նորա. Ի զեղե-
ցիկ դաչտին ընդ բազում ջրով պարա-
րեսցի,՝ արձակել չառաւիղս եւ բերել
9 պատղս եւ լինել յորթ մեծ։ Վասն այ-
սորիկ ասա, Այսպէս ասէ Ադոնայի
Տէր. Եթէ իցէ այոզեսցի՞. ոչ ապարէն
[20]արմատս փափկութիւնն նորա եւ պտուղ
նորա նեխեսցին, եւ՝ չորասցին ամե-
նայն չառաւիղք նորա, եւ ոչ բազկաւ
մեծաւ՝ եւ ոչ ազգաւ բազմաւ բուսն
հարկանել եւ խլել զնա յարմատոց իւ-
10 րոց։ Եւ արդ [21]պարարեսցի՞, մի՞ չայո-
զեսցի՞. ոչ ապաքէն ընդ մերձենալ հող-
մոյ խորչակի [22]ցամաքեսցի հանդերձ բու-
սովն եւ չառաւիղօք իւրովք՝։
11 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,

[12]ՆԲԲ. ի անօսր թեւօք, երփն երփն գունովք,
եկն ի Լիբանան, եւ առ գկաւսար եղեւեղնի,
(4)Զգլուխ մատաղ ոստոց նորա խլեաց [13]ՑԱմ,
վաճառականաց [14]ՆԲԲ. ի քաղաքին վաճա-
ռականաց [15]ՆԲԲ. եդ զնա յանդի սերմանե-
ացդ. տարաւ առ ջուրս բազումս, իբրեւ գուռի
անկեաց [16]ՆԲԲ. ուռաճեայ, խոնարհ հասա-
կաւ [17]ՆԲԲ. ոստս [18]ՆԲԲ. բազմափետուր
[19]ՆԲԲ. խոնարհեցուցանէր գարմատս իւր առ նա,
եւ արձակէր զոստս իւր ի նմա, արբուցանել գնա
յածուց անկոյն իւրոյ։ (8) Ի բարւոք դաշտին
առ ջուրս բազումս անկեցաւ [20]ՆԲԲ. զար-
մատս նորա խլեսցէ, եւ զպտուղ նորա քաղեսջ
զի գօսասցի. [21]ՆԲԲ. անկեցաւ, միթէ
չայոզեսցի՞ [22]ՆԲԲ. ցամաքելով ցամաքեսցի,
չածուս բուսոյն իւրոյ ցամաքեսցի

12 [1]Որդի մարդոյ, ասա ցտունդ Իսրայե-
լի՝ տուն՝ դառնացողաց, Ո՞չ դիտէք զինչ
է [2]այդ զոր ասացիք. յորժամ ևկեսցէ՝
թագաւորն Բաբելացւոց յերուսաղէմ,
[3]առցէ զթագաւոր նորա եւ [4]զիշխանս,
տարցի՝ զնոսա առ ինքն ի Բաբելոն։
13 Եւ [5]առցէ ի զաւակէ թագաւորութեանն,
եւ [8]դիցէ ընդ նմա ուխտ, եւ [7]անցուս-
ցէ ընդ նզովս՝, եւ զիշխանս երկրին
14 [5]առցէ, լինել ի թագաւորութիւն տկար,
ամենևին ոչ բարձրանալ, պահել զուխտ
15 նորա եւ կալ ի նմին։ [8]Եւ ապստամ-
բեսցի՝ ի նմանէ առաքել հրեչտակս յԵ-
գիպտոս, տալ նմա երիվարս եւ զօրս
բազումս. եթէ իցէ աջողեսցի՞, եթէ ի-
ցէ ապրեսցի՞ որ առնէն [9]իրս հակա-
ռակս՝, եւ անցանէ զուխտ. եթէ
16 իցէ ապրեսցի՞։ կենդանի եմ ես, ասէ
Աստուած Տէր, եթէ ոչ ի տեղւոջ [10]յո-
րում թագաւորն՝ թագաւորեցոյց զնա,
[11]որ անարգեաց զուլան իմ եւ անց զուխտ
իմ որ՝ ընդ նմա ի մէջ Բաբե-
17 լոնի վախճանեսցի։ Եւ ոչ զօրութեամբ
մեծաւ, եւ ոչ դնդաւ բազմաւ [12]տացէ
ընդ նմա պատերազմ Փարաւոն, պատ-
նէչս եւ նետահարս չինեսցէ՝ սատա-
18 կել զանձինս բազմաց. Զի անարգեաց
զերդումն, եւ անց զուխտ. եւ ահա
[13]ետուր ի ձեռս նորա, եւ արարի՝ զայս
ամենայն ընդ նմա, միթէ ապրեսցի՞։
19 Վասն այսորիկ ասա, Այսպէս ասէ
Աստուած Տէր. կենդանի եմ ես, [14]ասէ
Աստուած Տէր,՝ եթէ ոչ ըստ ուխտին
իմում զորով անց եւ ըստ երդմանն ի-
մոյ զոր անարգեաց՝ հասուցից ի գլուխ
20 նորա։ Եւ սփռեցից ի վերայ նորա զվարս
իմ, եւ բռնեսցի [15]ընդ պաշարմամբ ի-
մով՝. եւ ածից զնա ի Բաբելոն, եւ անդ
դատեցայց ընդ նմա ըստ անիրաւու-
թեան նորա զոր անիրաւեցաւ առ իս։
21 Եւ [16]ըստ ամենայն խուռնափանաց նորա,
յամենայն պատերազմունս՝ նորա արով

[1]ԼԷԲ. Ասա ցտունդ [2]ԼԷԲ. այդ, ասա, Ահա եկն
[3]ԼԷԲ. եւ առ [4]ԼԷԲ. զիշխանն նորա, և տարաւ
[5]ԼԷԲ. առ [6]ԼԷԲ. եդ [7]ԼԷԲ. տրկ զնա ընդ
երդմամբ [8]ԼԷԲ. Այլ ապստամբեցաւ [9]ԼԷԲ.
զայս [10]ԼԷԲ. թագաւորին որ [11]ԼԷԲ. զորոյ
անարգեաց զերդուման. եւ զորոյ անց ուխտին
[12]ԼԷԲ. եղիսի ընդ նմա Փարաւոն ի պատերազմի,
ի կանգնել պատնէչս, եւ ի չինել նետահարս
[13]ԼԷԲ. տուեալ էր նա ձեռն իւր, եւ արար
[14]ՅԵՐ.-Ա-ՒԵ [15]ԼԷԲ. ի թակարդի իմում [16]ԼԷԲ.
յամենայն փախստեայք նորա, յամենայն վաշտս

անկցին, եւ [17]զմնացորդս նորա ընդ ա-
մենայն հողմս ցրուեցից՝. եւ ծանիջիք
զի ես Տէր խօսեցայ։
22 [14]Վասն այնորիկ՝ այսպէս ասէ Աստ-
ուած Տէր. Եւ առից ես [18]յրնտիր ընտիր
մայրիէ բարձրանդակին, եւ տացս ի
գլխոյ չառաւիղացն նորա ի սիրտս նո-
ցա. փչանիցի՝ եւ անկանիցի ի լերինն
23 [19]բարձր, Եւ կախեցից զնա զբարձրա-
գեալ լռնէն Իսրայելի. անկանիցի՝ եւ
ոստս արձակեսցէ եւ պտուղ բերցէ, եւ
եղիցի ի մայր մեծ. եւ հանգիցեն ընդ
նովաւ ամենայն [20]գազանք եւ ամենայն
հաւք, թռչունք՝ ընդ հովանեաւ նորա
զազարեսցեն. [14]եւ բարեւնակք նորա ի
24 նմին հաստատեսցին։՝ Եւ ծանիցեն ա-
մենայն փայտք զայտի թէ ես եմ Տէր,
որ խոնարհեցուցանեմ զփայտ բարձրա-
գեալ, եւ բարձրացուցանեմ զփայտ խո-
նարհեալ, չամաքեցուցանեմ զփայտ
զալար, եւ զալարեցուցանեմ զփայտ
զօսացեալ. ես Տէր խօսեցայ՝ եւ արա-
րից։

ԳԼ. ԺԸ

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
2 Որդի մարդոյ, զինչ է ձեզ առակդ այդ՝
[21]ի մէջ որդւոցդ՝ Իսրայելի զոր ասեն,
թէ Հարք ագռս կերան, եւ որդւոց ա-
3 տամունք առան։ կենդանի եմ ես, ա-
սէ Աստուած Տէր, եթէ լինիցի առակդ
4 այդ որ ասի ի մէջ Իսրայելի։ Զի ամե-
նայն անձինք՝ իմ են, որպէս անձն հօր՝
նոյնպէս եւ անձն [22]որդւոյ. անձն որ մե-
5 ղիցէ՝ նոյն եւ մեռցի։ Այլ մարդն որ
արդար իցէ, եւ առնիցէ դիրաւունս եւ
6 գթարդարութիւն, ի վերայ լերանց [14]զո-
հեալ ոչ ուտիցէ, եւ զաչս իւր ի կուռս
տանն Իսրայելի ոչ արձակիցէ, եւ զկին
ընկերի իւրոյ ոչ ապականիցէ, եւ ի կին
7 իւր ապարահ ոչ մերձենայցէ, եւ մար-
դոյ[к]բուռն ոչ լինիցի, զգրաւ պարտա-
պանի դարձուցանիցէ, յափշտակութիւն
ոչ յափշտակիցէ, զհաց իւր տացէ քաղ-
8 ցելոյ եւ զմերկն զգեցուցանիցէ, Զար-

[17]ԼԷԲ.[ՀՆացորդք ընդ ամենայն հողմս ցրուեցին
[18]ԼԷԲ. ի բարձրաւանդակէ եղեւնին բարձու եւ
անկեցից. Եւ հատից ի գլխոյ մատաղ ոստոց
նորա զմատուցագոյնն, [19]ԼԷԲ. բարձու եւ
վերացելոյ. (23) Ի լերին անդ բարձու Իսրայելի
անկեցից զնա, [20]ԼԷԲ. Հաւք, ամենայն
թռչունք [21]ԼԷԲ.յԵրկրիդ [22]ԼԷԲ. որդւոյ՝ իմ է

ծաթի իւր ի վարձու ոչ տացէ, եւ տո-
կոսիւք անդրէն ոչ պահանջիցէ, յանի-
րաւութենէ զձեռս իւր դարձուցանիցէ,
դատաստան արդար առնիցէ ընդ այր եւ
9 ընդ ընկեր իւր, Ըստ հրամանաց իմոց
գնայցէ, զիրաւունս իմ պահիցէ [1]եւ
առնիցէ զնոսա՝, արդար է նա՝ կէլով
կեցցէ, ասէ Աստուածայն Տէր։
10 Եւ եթէ ծնանիցի որդի խաոնաւգնաց,
11 արիւնահեղ, եւ առնիցէ [2]զմեղս. Ի ճա-
նապարհս հօրն իւրոյ արդարոյ՝ ոչ գնաց,
եւ՝ ի վերայ լերանց եկեր [3]զոհնակ, եւ
12 զկին ընկերի իւրոյ պղծեաց, Եւ զաղ-
քատն եւ զանանկն յաղքատարեաց,
եւ յափշտակութիւն յափշտակեաց, եւ
զգրաւ ոչ դարձոյց, եւ ի պաշտօն պիղ
զաչս իւր արձակեալ անօրէնութիւն
13 գործեաց, Զարծաթի իւր ի վարձու ետ,
եւ վաշխիւ եւ տոկոսիւք [4]պահանջեաց.
Նա մի կեցցէ որ զայն ամենայն անօ-
րէնութիւնս արար, մահու մեռցի, եւ
արիւն նորա ի վերայ նորին եղիցի։
14 Եւ եթէ ծնանիցի որդի, եւ տեսա-
նիցէ զամենայն մեղս հօր իւրոյ զոր
գործեաց, եւ երկիցէ՝ եւ ոչ արասցէ
15 զնոյնս. Ի վերայ լերանց [3]զոհնակ ոչ ե-
կեր, եւ զաչս իւր [5]ի խորհուրդս տանն
Իսրայէլի ոչ արձակեաց, եւ զկին ըն-
16 կերի իւրոյ ոչ ապականեաց, Եւ զմարդ
ոք ոչ յաղքատարեաց, եւ զգրաւ ոչ
գրաւեաց, եւ յափշտակութիւն ոչ յա-
փըշտակեաց, զնաց իւր նա քաղցելոց
17 եւ զմերկն զգեցոյց, Եւ յանիրաւութե-
նէ դարձոյց զձեռս իւր, վաշխս եւ տո-
կոսիս ոչ առ, [6]արդարութիւն գործեաց,
եւ ըստ հրամանաց իմոց գնաց. Նա մի՛
վախճանեսցի յանիրաւութիւնս հօր ի-
18 րոյ, այլ կէլով կեցցէ։ Հայր նորա նո-
րա [7]մէկ նեղելով նեղիցէ, եւ յափշտա-
կէլով յափշտակիցէ զնէղայր իւր, նա-
կառակութեան գործս՝ գործեաց ի մէջ
ժողովրդեան [8]իմոյ, մեռցի յանիրաւու-
թեան իւրում։
19 Եւ ասէք մէկ Զի՞ է պէ ոչ կրնաս ա-
նիրաւութիւն հօրն՝ որդեդոյն։ Զի որդին

[9]ողորմութիւն եւ արդարութիւն արար,
զամենայն օրէնս իմ պահեաց եւ արար
20 զնոսա, կէլով կեցցէ։ Անձն որ մեղի-
ցէ, նոյն եւ մեռցի. եւ որդի չնօր մեղս
մի՛ առցէ, եւ մի՛ հայր առցէ զանիրա-
ւութիւնս որդւոյ իւրոյ. արդարութիւն
արդարոյն ի վերայ նորին եղիցի, եւ
անօրէնութիւն անօրինին ի վերայ նո-
21 րին եղիցի։ Եւ անօրէնն եթէ դարձցի
յամենայն անօրէնութենէն իւրոյ զոր
արար, եւ պահիցէ զամենայն պատուի-
րանս իմ, եւ արասցէ արդարութիւն
եւ [3]ողորմութիւն, կէլով կեցցէ, եւ մի՛
22 մեռանիցի։ Ամենայն յանցանք նորա զոր
գործեալ էցէ [10]եւ ամենայն անիրաւու-
թիւնք նորա զոր անիրաւեալ էցէ մի՛
յիշեսցին՝, այլ արդարութեամբ իւրով
23 զոր արար՝ կեցցէ։ Միթէ կամելով կա-
միցի՞մ գմահ մեզաւորին ասէ Տէր Տէր՝
որպէս զդառնալ նորա ի չար ճանապար-
24 հէ եւ կեալ։ Եւ ի դառնալ արդարոյն
յարդարութենէ իւրմէ, եւ առնել զա-
նիրաւութիւն, ըստ ամենայն անօրէ-
նութեանց՝ զոր առնիցէ [11]անօրէնն. ա-
մենայն արդարութիւնք նորա զոր ա-
րար՝ մի՛ յիշեսցին. ի յանցանսն իւր յոր
անկաւ, եւ ի մեղս իւր զոր մեզաւ՝ ի
նոսին մեռցի։
25 Եւ ասէք մէկ Ոչ [12]աչող է ճանապարհ
Տեառն. արդ լուարուք, տունդ Իսրա-
յէլի, միթէ ի՞մ ճանապարհ չիցէ [12]աչող.
ո՞չ ապաքէն ձեր ճանապարհք չեն [12]ա-
26 չող։ Ի դառնալ արդարոյն յարդարու-
թենէ իւրմէ՝ եւ առնել զանիրաւութիւն,
մեռցի [13]յանօրէնութեանն զոր գործեաց՝։
27 Եւ ի դառնալ անօրինին յանօրէնութենէ
իւրմէ զոր արար, եւ առնիցէ իրաւունս
եւ արդարութիւն, ինքն զանձն իւր
28 ապրեցոյց. Զի տեսեալ եւ դարձաւ յա-
մենայն ամպարշտութենէն իւրոյ զոր
արար. կէլով կեցցէ եւ մի՛ մեռցի։
29 Եւ ասեն տունդ Իսրայէլի, Ոչ ուղիղ
է ճանապարհ Տեառն. միթէ ի՞մ ճանա-
պարհ չիցէ ուղիղ, տունդ Իսրայէլի.
ո՞չ ապաքէն ձեր ճանապարհք չեն ու-
30 ղիղ։ Վասն այսորիկ զիւրաքանչիւր ոք
ըստ իւրում ճանապարհի դատեցայց,
տունդ Իսրայէլի, ասէ Աստուածայն Տէր.
դարձայք եւ դարձարուք յամենայն ամ-

[1] Եբէ. առնել զճշմարտութիւն [2] Եբէ. զմի ինչ
յայցանէ. (11) Այլ ինքն եթէ նա ոչ արար
զայս ամենայն, այլ [3] Եբէ. պոշոռ [4] Եբէ.
պահանջաց. միթէ կեցցէ՞ [5] Եբէ. ի կուռս
[6] Եբէ. զարդարութիւնս իմ [7] Եբէ. որ նեղելով
նեղեաց, և յափշտակելով յափշտակեաց զեղ-
բայր իւր, և զոր չէն բաղի՝ [8] Եբէ. իւրոյ

[9] Եբէ. իրաւունս [10] Եբէ. մի՛ յիշեսցին նմա [11] Եբէ.
ասօրէնն, կեցցէ՞ [12] Եբէ. Ուղիղ [13] Եբէ. ի նոսին,
յանօրէնութեան իւրում զոր գործեաց մեռցի

պաշտութեանց ձերոց, եւ ոչ լինիցի
31 ձեզ [1]ի տանջանս անիրաւութեան։ Լուա-
կեցէք յանձանց ձերոց զամենայն ամ-
պարշտութիւնս ձեր զոր ամպարշտա-
ցայք [2]յիս, եւ արարէք ձեզ սիրտ նոր,
եւ ոգի նոր. [2]եւ արարէք զամենայն
զպատուիրանս իմ." եւ ընդէր մեռա-
32 նիք, տունդ Իսրայելի, [2]ասէ Տէր։" Զի ոչ
կամիմ զմահ [3]մեռուցելոյն, ասէ Ա-
դոնայի Տէր, [2]այլ զի դարձցի ի ճան-
ապարհս իւրոց չարաց, եւ կեցուսցէ
զանձն իւր։" արդ հայք գարձարուք,
եւ կեցէք։

ԳԼ. ԺԹ

[2]Ողբք ի վերայ իշխանին Իսրայելի։"

1 Եւ դու, [2]որդի մարդոյ," ողբա առ ի
2 վերայ [4]իշխանին Իսրայելի, եւ առաս-
ցես, Զի՞ է [5]դի եղեւ մայր քո" ի մէջ
առիւծուց, [2]կորիւնդ ի մէջ առիւծուց
3 բազմացոյց զկորիւնս իւր։ Եւ [6]զարգա-
ցաւ կորիւն մի ի կորիւնից նորա", եւ
առիւծացաւ, եւ ուսաւ յափշտակել
զյափշտակութիւն, եւ եղեւ մարդա-
4 խանձ։ Լուան վնասիք ազգք, [7]ըմբռնե-
ցին զնա յապականութիւնն". եւ տարան
զնա գայլ ի բերան յերկիրն Եգիպտաց-
5 ւոց։ Եւ առես դի անջատեցաւ ի նմա-
նէ եւ կորեաւ յոյս նորա, եւ նա մեւս
եւս այլ կորիւն ի կորիւնից իւրոց ա-
6 ռիւծացոյց։ Եւ չրջէր ի մէջ առիւծուց։
առիւծացաւ, եւ ուսաւ յափշտակել
յափշտակութիւն, եւ եղեւ մարդախանձ։
7 [8]Աւրացոյց յանդգնութեամբ իւրով. զքա-
զաքս" կործանէր, եւ զերկիրն լրիւ իւ-
րով ապականէր ի ձայնէ բարբառոյ
8 իւրոյ։ Եւ յարուան ի վերայ նորա ազգք
չիւրաքանչիւր աչխարհաց չուրչնակի,
եւ պատեցին զնա [9]ի ծակաղաւթ յապա-
9 կանութիւն"։ Գայլ ի բերան հարին,
եւ տարան դայտագրիս առ արքային
Բաբելացւոց, եւ արկին զնա ի բանտ.
զի մի՛ եւս լսելի բարբառ նորա ի
վերայ լերանցն Իսրայելի։

10 Մայր քո իբրեւ զորթ, եւ [10]իբրեւ զծա-
ղիկ նռնենեաց" անկեալ ի գնացս ջուրց,
լոյս նորա եւ պտուղ նորա եղեւ ի ջուրց
11 բազմաց։ Եւ [11]եղեւ նորա գաւազան
զօրութեան ի վերայ ազգին" իշխանաց,
եւ բարձրացաւ [12]մեծութեամբ ի մէջ
տարածանաց, եւ [13]տեսա զմեծութիւն
12 իւր" ի բազմութեան ուռոց իւրոց։ Եւ
բեկաւ ի բարկութեան եւ յերկիր կոր-
ծանեցաւ, եւ հոգմ խորշակի ցամաքե-
ցոյց [14]զչառաւիղս նորա. խնդրեցաւ ի
նմանէ վրէժ, եւ ցամաքեցաւ գաւա-
զան" զօրութեան նորա, եւ հուր մա-
13 շեաց զնա։ Եւ արդ անկեալն զնա յա-
14 նապատի յերկրի անջրդի։ Եւ ել հուր
[15]յընտիր ընտիր գաւազանաց նորա, եւ
եկեր զնա. եւ ոչ գոյր ի նմա գաւա-
զան զօրութեան. ազգ յառակս ողբոց"
եւ յողբս եղիցի։

ԳԼ. Ի

[2]Առ ծերս տանն Իսրայելի։"

1 Եւ եղեւ յամին եւթներորդի, յամ-
սեանն հինգերորդի որ օր տասն էր ամ-
սոյն, եկին արք ի ծերոց [2]տանն Իսրա-
յելի հարցանել ի Տեառնէ, եւ նստան
առաջի իմ։
2 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
3 Որդի մարդոյ, խօսեաց ընդ ծերսդ [2]տանդ
Իսրայելի եւ առասցես ցդոսա, Այսպէս
ասէ Ադոնայի Տէր. Եթէ հարցանե՞լ
գայք դուք առ իս. կենդանի եմ ես ե-
թէ տայ ինչ ձեզ պատասխանի, ասէ
4 Ադոնայի Տէր։ [16]Եթէ իցէ խնդրեցի՞ց
զվրէժ նոցա", որդի մարդոյ. զմեղաց
հարց դոցա զիր դոցա վկայութիւն,
5 Եւ առասցես ցդոսա, Այսպէս ասէ [17]Տէր
Աստուած. Յօրէ յորմէհետէ ցանկացայ
ես տանդ Իսրայելի, եւ ծանուցայ" զա-
ւակի տանդ Յակովբայ, եւ ծանուցայ
նոցա յերկրին եգիպտացւոց, [18]ձեռն ե-
առ" նոցա եւ ասեմ, Ես եմ Տէր Աս-

---

[1]Եբր. անիրաւութիւնն գայթակղութիւն [2]Եբր. պոռնկ [3]Եբր. մեռեալն [4]Եբր. իշխանացն [5]Եբր. մայր քո. մատակ առիւծ է որ ննջէ [6]Եբր. անոյշ զվին ի կորեանց իւրոց [7]Եբր. ըմբռնեցաւ յորոգայթի նոցա [8]Եբր. Եւ ծանեաւ զպալատեան (կամ, զայրիս) նոցա, եւ զքաղաքս նոցա [9]Եբր. ի թակարդօք. ըմբռնեցաւ յորոգայթի նոցա [10]Եբր. ըստ նմանութեան (կամ, յարեան) քո [11]Եբր. եղեւ նորա չառաւիղք զօրութեան ի գաւազանս [12]Հասակ նորա [13]Եբր. երեւեցաւ ի բարձրութեան իւրում [14]Եբր. զպտուղ նորա, խորտակեցան և ցամաքեցան չառաւիղք [15]Եբր. ի չառաւիղէ ոստոց նորա եւ կեբաւ զպտուղ նորա. և ոչ գոյր ի նմա չառաւիղ զօրութեան, ի գաւազան իշխանի։ Ողբ է այն [16]Եբր. Մինթէ դատեսցի՞ն զնոսա. մինթէ դատեսցի՞ն [17]Եբր. Տէր ԵՀովայ. Յօրէ յորմէհետէ ընտրեցի զիսրայէլ, եւ ամբարձի զձեռս իմ [18]Եբր. եւ ամբարձի զձեռն իմ

6 առաւ ձեր. Ցաւատր յայնմիկ [1]ձեռն եւ-
առեալ նոցա" հանել զնոսա յերկրէն Եգիպ-
տացւոց, յերկիրն զոր պատրաստեցի
նոցա, երկիր որ բղխէ զկաթն եւ զմեղր,
7 [2]քաղցր քան զամենայն երկիր"։ Եւ ա-
սացի ցնոսա, Իւրաքանչիւր ոք զգար-
չելիս իւր յաչաց իւրոց ի բաց ընկեց-
ջէ, եւ [3]ի գնացան Եգիպտացւոց մի՛
պղծիք. ես եմ Տէր Աստուած ձեր։
8 Եւ ապստամբեցան յինէն, եւ ոչ կա-
մեցան լսել ինձ. իւրաքանչիւր ոք զգար-
չելիս իւր յաչաց իւրոց ոչ ընկէց ի բաց,
եւ [4]զնացան Եգիպտացւոց ոչ թողին,
եւ ասացի հեղուլ զբարկութիւնս իմ ի
վերայ նոցա, կատարել զբարկութիւնս
9 իմ ի նոսա ի մէջ Եգիպտացւոցն։ Բայց
արարի, զի անուն իմ սրբեսցի յազգսն
որոց ի մէջ էին նոքա, յորս ծանուցայ նոցա ա-
ռաջի նոցա, հանել զնոսա յերկրէն Ե-
գիպտացւոց։
10 Եւ հանի զնոսա յերկրէն Եգիպտաց-
11 ւոց, եւ ածի զնոսա յանապատն. Եւ
տուի նոցա զշրջմանս իմ, եւ զիրաւունս իմ ցուցի նոցա, զոր առնիցէ
12 մարդ, եւ կեցցէ ի նոսա։ Եւ զշաբաթս իմ տուի նոցա լինել նշանակ ընդ իս եւ
ընդ նոսա, ճանաչել նոցա թէ ես եմ Տէր
որ սրբեմ զնոսա։ [5]Եւ ասացի ցտունն
Իսրայելի յանապատն անդ՝ թէ Ի շրջ-
մանս իմ գնացէք, եւ ոչ գնացին. եւ
Զիրաւունս իմ պահեցէք, առնել զնոսա,
զոր թէ առնիցէ մարդ՝ կեցցէ նոքօք։"
13 Եւ դառնացուցին զիս տունն Իսրա-
յելի յանապատն. ըստ հրամանաց իմոց
ոչ գնացին, եւ զիրաւունս իմ մերժե-
ցին, զոր թէ առնիցէ մարդ՝ կեցցէ նո-
քօք, եւ զշաբաթս իմ պղծեցին յոյժ.
եւ ասացի հեղուլ զբարկութիւնս իմ
14 յանապատն սատակել զնոսա։ Եւ ա-
րարի, զի անուն իմ ամենեւին մի՛ պղծե-
ցի առաջի ազգացն յորոց հանի զնոսա
15 յանդիման նոցա։ Եւ ես համբարձի զձեռս
իմ ի վերայ նոցա յանապատն, [5]հանօ-
րէն չտանել զնոսա յերկիրն զոր տուի
նոցա, երկիր որ բղխէ զկաթն եւ մեղր,
16 [2]քաղցր քան զամենայն երկիր"։ Փոխա-
նակ զի զիրաւունս իմ մերժեցին, եւ
ըստ հրամանաց իմոց ոչ գնացին, եւ
զշաբաթս իմ պղծեցին, [6]եւ զնոսա խոր-
17 հրդոյց սրտից իւրեանց գնացին"։ Եւ
խնայեաց ի նոսա աչն իմ ջնջել զնոսա.
եւ ոչ արարի զնոսա ի վախճան յանա-
պատին։
18 Եւ ասացի [7]ցնոսա յանապատին, Ըստ
կրօնից հարցն ձերոց մի՛ գնայք, եւ զի-
րաւունս նոցա մի՛ պահէք, եւ [8]ի գնացս
նոցա մի՛ խառնակիք եւ" մի՛ պղծիք.
19 Ես եմ Տէր Աստուած ձեր. ըստ հրա-
մանաց իմոց գնացէք, եւ զիրաւունս իմ
20 պահեցէք եւ արարէք զնոսա. Եւ զշա-
բաթս իմ սրբեցէք, եւ եղիցի նշանակ
ընդ իս եւ ընդ ձեզ, ճանաչել ձեզ թէ
ես եմ Տէր Աստուած ձեր։
21 Դառնացուցին զիս եւ որդիք նոցա,
ըստ հրամանաց իմոց ոչ գնացին, եւ
իրաւանց իմոց ոչ զգուշացան առնել
զնոսա, զոր թէ առնիցէ մարդ՝ կեցցէ
նոքօք, եւ զշաբաթս իմ պղծէին. եւ
ասացի հեղուլ զբարկութիւնս իմ ի վե-
րայ նոցա, յանապատին կատարել զբար-
22 կութիւնս իմ ի վերայ նոցա։ Եւ զար-
ձուցի զձեռն իմ ի նոցանէ, եւ արարի,
զի անուն իմ ամենեւին մի՛ պղծեսցի
առաջի ազգացն, յորոց հանի զնոսա յան-
դիման նոցա։
23 Եւ ես ամբարձի զձեռն իմ ի վերայ
նոցա յանապատի անդ, ցրուել զնոսա
ընդ ազգս, եւ ցանել զնոսա ընդ պա-
24 տառս. Փոխանակ զի զիրաւունս իմ ոչ
արարին, եւ զշրջմանս իմ մերժեցին,
եւ զշաբաթս իմ պղծեցին, եւ զհետ
[9]խորհրդոյց հարցն իւրեանց էին աչք նո-
25 ցա։ Եւ ես տուի նոցա հրամանս ան-
բարիս, եւ իրաւունս, որովք ոչ կեց-
26 ցին։ Եւ պղծեցի զնոսա ի պատարագս
իւրեանց, [10]ընդ անցանել ինձ ընդ ա-
մենայն" որ բանայ զարգանդ, զի սա-
տակեցից զնոսա, եւ ծանիցին եթէ ես
եմ Տէր։
27 Վասն այսորիկ խօսեաց ընդ տանդ
Իսրայելի, որդի մարդոյ, եւ ասասցես
ցդոսա, Այսպէս ասէ Ադոնայի Տէր.
Մինչեւ ցայսչափ բարկացուցին զիս
հարքն ձեր յանցանօքն իւրեանց զոր
28 յանցեան առ իս։ Եւ տարայ զնոսա յեր-
կիրն յոր ամբարձի զձեռն իմ տալ նոցա

[1] Եբէ. զձեռն իմ ամբարձի ի նոսա [2] Եբէ. փառաք է նա ամենայն երկրի [3] Եբէ. ի կուռսն [4] Եբէ. զկուռս [5] Ցեբէ. դոյսոյն [6] Եբէ. զի զհետ կուռց դնայ սիրտ նոցա [7] Եբէ. ցորդիս նոցա [8] Եբէ. ի կուռս նոցա [9] Եբէ. կուռց [10] Եբէ. թողուլ նոցա անցուցանել ընդ հուր զամենայն

զնա. եւ տեսին անդ զամենայն բլուր բարձր եւ զամենայն ծառ վարսաւոր, եւ զոհեցին անդ[1] զիւրն իւրեանց, եւ կարգեցին անդ զոհս պատարագաց իւրեանց՝, եւ արկին զխունկս անուշահոտութեան իւրեանց,
29 եւ նուիրեցին անդ զնուէրս իւրեանց։ Եւ ասացի ցնոսա, Ձի՞նչ[2] է արբանեայդ այդ յոր դուք մտանէք. եւ կոչեցին զանուն նորա Աբեանա՛՝ մինչեւ ցայսօր ժամանակի։
30 Ւ[3]ան այնուհետեւ ասա ցաուտն Իսրայելի, Այսպէս ասէ [3]Տէր Աստուած. Եթէ չանօրէնութիւն՝ հարցն ձերոց գործիք, եւ զնա գարշելեացն նոցա պոռնկիք,
31 Եւ ի պատուս պատարագացն ձերոց եւ [4]ընծայս որդւոցն ձերոց, եւ ի ջաուսցանել որդւոցն ձերոց՝ ածել զոգոյով. գործիք չամենայն խորհուրդս՝ ձեր մինչեւ ցայսօր ժամանակի, եւ ես ապացո՞մ ձեզ պատասխանի, տունդ Իսրայելի. կենդանի եմ ես, ասէ Ադոնայի Տէր,
32 եթէ տաց ձեզ պատասխանի։ Եւ եթէ անկցի յոգիս ձեր այդ, ոչ լիցի որպէս դուք ասէք, եթէ Եղիցուք մեք իբրեւ զհեթանոսս եւ իբրեւ զազգս երկրի
33 պաշտել զփայտս եւ զքարինս։ [5]Վասն այդորիկ՝ կենդանի եմ ես, ասէ Ադոնայի Տէր, եթէ ոչ հզօր ձեռամբ եւ բարձրացեալ բազկաւ եւ հեղեալ ցասմամբ թափաւորեցից ի վերայ ձեր։ Եւ
34 հանից զձեզ յազգաց, եւ ընկալայց զձեզ յաշխարհաց ուր ցրուեալ իցէք ի նոսա, հզօր ձեռամբ եւ բարձրացեալ բազկաւ եւ հեղեալ ցասմամբ եւ թափաւորեցից զձեզ,
35 եւ հանից զձեզ յանապատ ազգացն, եւ դատ եղից անդ
36 ընդ ձեզ դէմ յանդիման։ Զոր օրինակ եղի դատ ընդ հարսն ձեր յանապատի անդ [6]յորժամ հանի զնոսա յերկրէն՝ եւ դիպաւորեցից, այնպէս դատեցայց ընդ
37 ձեզ, ասէ [7]Տէր Տէր Աստուած՝։ Եւ անցուցից զձեզ ընդ ցպով [8]իմով, եւ մտից զձեզ ընդ [7]թուով ուխտի իմոյ՝։
38 Եւ որոշեցից ի ձէնջ զանօրէնսն եւ [9]զապստամբս. զի ի բնակութենէ՝ նոցա հանից զնոսա, եւ յերկիրն Իսրա-

[1]Եբէ. զզոհս իւրեանց, և մատուցին անդ զպատարագս իւրեանց զայրացուցիչս [2]Եբէ. են բարձունքդ յոր գնայիդ անդր. եւ կոչեցաւ անուն նորա Ւարձունք [3]Եբէ. Տէր Եհովայ, դուք ի ճանապարհս [4]Եբէ. յանցուցանել զընդիս ձեր ընդ հուր, պղծիք յամենայն կուռս [5]Եբէ. պ-ե-ս [6]Եբէ. յերկրին [7]Եբէ. Տէր Եհովայ [8]Եբէ. կապանօք ուխտի [9]Եբէ. զապստամբս յիս. յերկրէն պանդխտութեան

յելի ոչ մտցին, եւ ծանիջիք թէ ես եմ Տէր Աստուած։
39 Եւ դուք, տունդ Իսրայելի, այսպէս ասէ Տէր [9]Տէր Աստուած. Նախ ի բաց ընկեցէք զիւրաքանչիւր զկնացս իւր, եւ ապա թէ լսիցէք՝ ինձ, եւ զանուն իմ սուրբ ոչ պղծիցէք պատարագօք
40 ձերովք եւ [10]գնացիւք ձերովք։ Ձի ի վերայ լերին սրբոյ իմոյ, ի վերայ լերին բարձու Իսրայելի, ասէ Տէր Տէր, անդ ծառայեսցին ինձ ամենայն տունդ [11]Իսրայելի ի սպաս, եւ անդ ընկալայց, եւ անդ այդ սրարից ընծայից ձերոց՝, եւ զպտուղս երախայրեաց ձերոց յա-
41 մենայն սրբութիւնս ձեր։ Ի հոտ անուշից ընկալայց[12], հանիլ զձեզ ի ժողովրդոց, եւ ընդունիլ զձեզ յաշխարհաց ուր ցրուեալն էիք ի նոսա. եւ սուրբ եղէց
42 ի ձեզ յանդիման ժողովրդոց։ Եւ ծանիջիք թէ ես եմ Տէր ի տանիլ զձեզ յերկիրն Իսրայելի, յերկիրն յոր ամբարձի
43 զձեռն իմ տալ զնա հարցն ձերոց։ Եւ յիշեսջիք անդ զճանապարհս ձեր, եւ զգնացս ձեր որովք պղծեցայք ի նոսա. եւ [13]կոծեսջիք զերեսս ձեր ի վերայ՝ ա-
44 մենայն անիրաւութեանց ձերոց զոր ա-րարէք։ Եւ ծանիջիք թէ ես եմ Տէր, [14]առնել ձեզ զայն այնպէս. զի մի՛ ա-նուն իմ պղծեսցի՝ ըստ ճանապարհաց ձերոց չարաց եւ ըստ ապականեալ գնա-ցից [15]ձերոց, ասէ Ադոնայի Տէր։
45 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
46 Որդի մարդոյ, հաստատեա զերեսս քո [16]ի Թեման, եւ հայեաց [17]ի Դադովն. եւ մարգարեաց ի վերայ անտառի [18]իչխանին
47 Նագեբայ՝. Եւ ասասցես ցանտառն [19]Նագեբայ, լուր զպատգամս Տեառն, այսպէս ասէ Տէր Տէր [5]Աստուած. Ահա-ւասիկ ես հարից զքէն հուր, եւ կերիցէ ի քեզ զամենայն փայտ զալար եւ զամենայն փայտ չոր, եւ ոչ չիջցի բոցն բորբոքեալ, եւ այրեսցին ինմա ամենայն դէմք [20]յարեւելից մինչեւ ի հիւսիսի։

[9]Եբէ. Եհովայ, երթայք, պաշտեսցէ իւրաքանչիւր զկուռս իւր այսուհետեւ, զի ոչ լսէք [10]Եբէ. կռովք [11]Եբէ. Իսրայելի, ամենեքին յերկրին. անդ ընկալայց զնոսա, անդ խնդրեցից զընծայս ձեր [12]Եբէ այ-ե-լե-, զձեզ [13]Եբէ. տատակիլ ինքնիքիք յաչս ձեր վասն չարանել իմ ընդ ձեզ վասն անուանն իմոյ, և ոչ [14]Եբէ. ձերոց, տունդ Իսրայելի [15]Ա յենդն՝ ի Հարաւ [16]Եբէ. ի Տարոմ, այենդն՝ ի Հարաւ. [17]Եբէ. դաշտին Հարաւոյ [18]Ա յենդն՝ Հարաւոյ [19]Եբէ. ի Հարաւոյ

48 Եւ ծանիցէ ամենայն մարմին, եթէ ես
49 Տէր վառեցի զնա եւ ոչ չիջցի։ Եւ ա-
սեմ, Քաւ լիցի, Տէր Տէր. Նոքա ասեն
ցիս, Ո՞չ ապաքէն առակ է այդ որ ասէդ։

Կ Ի. Ի Ա

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
2 [1]Վասն այդորիկ մարդարեաց, որդի մար-
դոյ, եւ՝ հառաչեա զկնիսս քո ի վե-
րայ երուսաղեմի. եւ հայեաց ի սրբու-
թիւնս [2]նոցա, եւ մարգարէացիս ի վե-
3 րայ երկրին Իսրայելի, Եւ ասասցես
ցերկիրն Իսրայելի, Այսպէս ասէ Տէր
[2]Տէր Աստուած՝. Ահաւասիկ ես ի վերայ
քո, եւ սերկասցից զվազակաւոն իմ ի
պատենից իւրոց, եւ սասակեցից ի մի-
ջոյ քումմէ [3]զանիրաւն եւ զանօրէնն։
4 Փոխանակ զի սասակեցից ի քէն [3]զանի-
րաւն եւ զանօրէնն, վասն այնորիկ ելցէ
վազակաւոն իմ ի պատենից իւրոց ի
վերայ ամենայն մարմնոյ՝ [4]յարեւելից
5 մինչեւ ի հիւսիսոյ։ Եւ ծանիցէ ամե-
նայն մարմին թէ ես Տէր սերկացի զվա-
զակաւոն իմ ի պատենից իւրոց, եւ անդ-
6 րէն ոչ եւս դարձցի։ Եւ դու, որդի մար-
դոյ, հեծեծեսջիր բեկեալ միջօվ քով,
եւ հեծեծեսջիր ցաւովք յանդիմանութեամբ։
7 Եւ եղիցի թէ ասիցեն ցքեզ, վասն էր
հեծես, ասասցես, Ձի բօթ լուայ, եւ գա-
լոց է. եւ բեկցին ամենայն սիրտք, եւ
ամենայն ձեռք լքցին, եւ ցամաքեսցի
ամենայն [5]մարմին եւ ամենայն չունչ,
եւ ամենայն երանք ապականեսցին գի-
շերամբ՝. ահաւասիկ գայ եւ եղիցի,
ասէ [6]Տէր Տէր Աստուած՝։
8 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
9 Որդի մարդոյ, մարգարեաց եւ ասասց-
ես, Այսպէս ասէ [2]Ադոնայի Տէր. Եւ
ասասցես, Սուր, սուր [7]սրեալ եւ զայ-
10 րացեր. Ձի սպանցես զսպանումն՝ սրեաց,
ջինջ լեր, պատրաստեալ ի հաչումն, կո-
տորեա, արհամարհեա. որպեսզի իմ, յա-
11 պաւեա զամենայն ծառ։ Եւ ետ զնա ի
պատրաստ, ունկալ ձեռին իւրում. սրեցաւ,
պատրաստ է սուրն տալ՝ ի ձեռս կո-

12 տորչի։ Զայն առ, ձիչ բարձ, որդի մար-
դոյ. զի ակն ենասա այն ի վերայ ժողո-
վրդեան իմոյ, եւ ի վերայ իշխանացն
Իսրայելի. [8]պանդխտեալք եղիցին, քան-
զի ենասա սուրն՝ ի վերայ ժողովրդեան
իմոյ. վասն այնորիկ [9]ծափս հար ձե-
13 ռամբ քով, զի սրգատացաւ։ Եւ զի՞նչ
է, ասլերիցի՞ ազգն. ոչ եղիցի՞, ասէ Տէր
14 Տէր։ Եւ դու, որդի մարդոյ, մարգա-
րեաց, ծափս հար ձեռամբ. [10]կրկնեսցի
զսուրն, զի երրորդ սուրն վիրաւորեաց
է. սուր վիրաւորոյն սասակացնել է,
15 եւ զարհուրեցուսցէ զնոսա. Ձի բեկցին
սիրտք իւրեանց, բազմասցին ակարա-
ցեալք յամենայն դրունս նոցա, զի մաա-
նեցան ի սպանումն սրոյ. զեղեցկացաւ
ի փայլիւն, պիտանի եղեւ ի սպանու-
16 մն։ Շրջեաց, յածեաց, սրեաց յաջմէ եւ յա-
17 հեկ. զի ուր քո երեսք զարթիցեն՝, Եւ
ես անդ ծափս հարից եւ [11]կայլեցից
եւ սրձակեցից զբարկութիւն՝ իմ. ես Տէր
խօսեցայ։
18 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
19 Եւ դու, որդի մարդոյ, պատրաստեա
դու քեզ երկուս ճանապարհս, մտանել
սրոյ արքային Բաբելացւոց, զի ի միով
չէ ասլասրէհ ելցեն [12]երկու առաջք. եւ
ձեռն պատրաստիւ ի գլուխ ճանապարհի
քաղաքին. ի սկզբան ճանապարհին կար-
20 դեսցես։ Եւ դու պատրաստեա եւ յար-
դարեա՝ ճանապարհ մտանել սրոյն ընդ
Բաբովհ որդւոցն Ամմոնայ եւ ի վերայ
Հրէաստանի, ի վերայ Երուսաղեմի [13]ի
մէջ նորա՝։
21 Ձի [14]հեկեացէ կացցէ՝ արքայն Բաբե-
լացւոց [15]ի վերայ հինն՝ ճանապարհին, ի
գլուխ երկուց ճանապարհացն, հմայս
հմայել, գաւազանս ընկենուլ, հարցումն
հարցանել ի դրօչկոյց, լերդահայս լի-

[1] ՆԵԲ. Որդի մարդոյ [2] ՅԱՒԵՒ. պոռաբ [3] ՆԵԲ. զարդարն
[4] ՆԵԲ. ի հարաւոյ [5] ՆԵԲ. ոգի, և ամենայն ծունկ
դարձցի ի ջուր [6] ՆԵԲ. Տէր ՅԵՀովայ [7] ՆԵԲ.
սրեցաւ, սրբեցաւ իսկ։ (10) Ի խողխողել խող-
խողումն սրեցաւ, զի եղիցի ջինջ սրբեցաւ.
լիցո՞ւք ուրախ. գաւազան որդւոյ իմոյ անարգէ
զամենայն փայտ։ (11) Եւ ետ զնա ի սրբել ունկալ
ի ձեռին. այս սուր սրեալ, եւ նոյն սրբեալ է,
տալ զնա

[8] ՆԵԲ. երկեաղ վասն սրոյն եղիցի [9] ՆԵԲ. Հար
յազգր քո։ (13) Ձի գոյ փորձ. և զի՞նչ լիներ,
եթէ անարգիչ գաւազանն չգոյր [10] ՆԵԲ. եւ
կրկնեսցի սուրն երրորդ, սուր սպանելոցն. այս է
սուր սպանելոյն մեծի որ եմուտ առ նոսա։
(15) Ձի բեկցի սիրտ, եւ բազմասցին խոչք,
յամենայն դրունս նոցա ետու զերկեաղ սրոյն,
բաբէ՛, պատրաստ ի փայլել, սրեցաւ ի խող-
խողել։ (16) Ամփոփեա զքեզ, դարձիր յաջ,
պատրաստեա զքեզ, դարձիր յահեակ. յո՛ եւ
դիմեսցեն երեսք յո [11] ՆԵԲ. Հանգուցից զզա-
սումն [12] ՆԵԲ. երկոքին նոքա. ընտրեա տեղի,
ի գլուխ ճանապարհի քաղաքին ընտրեա։ (20)
Ցարդարեա [13] ՆԵԲ ամրացելոյ [14] ՆԵԲ. եկաց
[15] ՆԵԲ. յանցս

22 նել։ Ընդ այմէ իւրմէ ելին նմա հմայքն
ի վերայ Երուսաղէմի, սրկանել [1]պատա-
նէչ, բնրանալիր գոչել, լարձրացուցա-
նել զձայն ազազակի. սրկանել [1]խից ի
վերայ պրանց նորա, եւ սրկանել հող
23 եւ չլինել ննտակալս։ [2]Եւ նա նոցա այն-
պէս խուխլի՝ որպէս հմայիչ ոք հմայս
առնչի նոցա, եւ եւթնևլուրջիչ նոցա
եւթնևլուրջս, եւ ինքն յուշ արասցէ զա-
24 նիրաւութիւնս նոցա յիշել"։ Վասն այ-
նորիկ այսպէս ասէ [3]Տէր Տէր Աստուած".
Փոխանակ զի յուշ արարէք զանիրաւու-
թիւնս ձեր, ի յայտնել ամպարշտու-
թեանցն ձերոց, յերեւել մեղացն ձերոց՝
յամենայն [4]ամպարշտութիւնս ձեր եւ ի"
գնացս ձեր, փոխանակ զի զուք ինքն-
նին յիշեցուցէք՝ [5]ի նոսին սատակիս-
25 ջիք"։ Եւ դու, պիղծ եւ անօրէն իշխանիչ
Իսրայելի, որոյ եկեալ է օր [6]վախճանի
26 ի ժամանակի անիրաւութեան[7], Այսպէս
ասէ Տէր Տէր. Ի քաց առ ի քէն զխոյլդ
եւ հան զպսակդ, զի այդ ոչ այպէս
վճարեսցի. խոնարհեցուցէր զբարձրա-
ցեալն, եւ բարձրացուցեր զխոնարհն.
27 Արդ [8]անիրաւութիւն յանիրաւութեանց
վերայ" եղից զնա. եւ այդ ոչ այպէս
եղիցի, մինչեւ եկեսցէ [9]որում անկն է,
եւ տացս ի ձեռս նորա"։
28 Եւ դու, որդի մարդոյ, մարգարեսայ
եւ ասասցես, Այսպէս ասէ [8]Տէր Տէր
Աստուած" ցորդիսն Ամմոնայ, եւ վասն
նախատանացն նոցա, եւ ասասցես.
Սուր՝ սուր [10]հանեալ ի սպանուման, մեր-
29 կացեալ ի վախճան։ Զարթիր զի փայ-
լեսցես տեսլեամբ նանրութեան, եւ ի
հմայել հմայս սուտութեան, մատանել զնա
քեզ, ի պարանոցս վիրաւորացն անօրի-
նացն, որոց եկեալ հասեալ է օր վախ-
ճանի ի ժամանակի անիրաւութեան։
30 Դարձ անդրէն, մի՛ ասէն լուծանիր ի
տեղոջ յորում ծնեալդ ես. անդրէն
31 յերկրին քումմ" դատեցայց զքեզ. Եւ
հեղից ի վերայ քո զբարկութիւն իմ. հրով
բարկութեան իմոյ փչեցից ի քեզ, եւ
մատնեցից զքեզ ի ձեռս արանց [11]բար-
բարոսաց՝ որ գործեն զապականութիւն"։
32 Եւ եղիցես կերակուր հրոյ, եւ արիւն
քո եղիցի ի մէջ երկրի [4]քո, եւ յիշա-
տակ քո մի՛ գոյցի. զի ես Տէր խօսեցայ։

ԳԼ. ԻԲ

[4]Ահա որդիքն Իսրայելի։"

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
2 Եւ դու, որդի մարդոյ, [12]եթէ դատիցես,
դատաստիր" զքաղաքն արեանց, եւ ծա-
տառակեսցես զամենայն գանօրէնու-
3 թիւնս նորա, Եւ ասասցես, Այսպէս
ասէ [3]Տէր Տէր Աստուած". Ո՛վ քաղաք,
որ հեղուս զարիւն ի միջի իւրում, [13]ի
հասանել ժամանակի իւրոյ. եւ խորհի
խորհուրդ գանձանէ՝ պղծել գանձն իւր
[4]յարիւնս նոցա։ Զուր հեղեր, [14]մինչեւ
յար, եւ ի խորհուրդն քո զոր խորհե-
յար" պղծեցար, եւ մերձեցուցեր զա-
ւուրս քո, եւ [14]ածեր զժամանակ ամաց
քոց". վասն այնորիկ տուու զքեզ ի նա-
խատինս ազգաց, եւ յայգն ամենայն
5 աշխարհաց։ Որ մօտ ի քեզ էին եւ հե-
ռի լքէն՝ այպանեսցեն [15]զքեզ եւ ասաս-
ցեն, [14]Է Անուանիդ ի պղծութիւն մատ-
նեցար. քանզի յաճախեցեր յանօրէնու-
6 թիւնս"։ Ահաւասիկ առաջնորդք տանդ
Իսրայելի՝ իւրաքանչիւր [16]ընդ մերձա-
ւորս ազգի իւրմանց խառնակէին ի քեզ,
7 զի հեղցեն արիւն"։ Չհայր եւ զմայր
անարգէին ի քեզ, եւ ընդ եկին եւ ընդ
պանդխտին անիրաւութեամբ գնային ի
քեզ, զորքն եւ զայրին բռնապատէին ի
8 քեզ։ [17]Զսրբութիւնս իմ արհամարհէին
9 եւ զշաբաթս իմ պղծէին ի քեզ։ Արք
աւազակք" կային ի միջի քումմ զի հե-
ղուցուն [4]ի քեզ արիւն. եւ ի վերայ լե-

---

[1] ՆԵԲ. խոյս [2] ՆԵԲ Եւ եղիցի նոցա իբրեւ հմայու-
թիւն մնոտի յաչս նոցա, որոց երդեալ էր
երդմունս նոցա. իսկ նա յիշեցուցէ զանօրէ-
նութիւնն զի ըմբռնեսցին [3] ՆԵԲ. Տէր ԵՀՈ-
ՎԱ [4] ՑՆԵԲ. պ-ի-ո-ւ [5] ՆԵԲ. ըմբռնեսջիք
ձեռամբ [6] ՆԵԲ. նորա [7] ՆԵԲ-յԵԶԵԿԻԷԼ յՕԵԼԸ-
վախճան [8] ՆԵԲ. հիմն ի վեր, հիմն ի վեր,
հիմն ի վեր [9] ՆԵԲ. որոյ են իրաւունք, եւ տուց
զայն նմա [10] ՆԵԲ. մերկացեալ է ի սպանուման,
արբեալ է ի սպառուման, փոխանակ փայլական.
(29) Մինչ տեսանեն քեզ անուխս, եւ հմայեն
քեզ հմայս սուտութեան, ածել զքեզ ի պա-
րանոցս ամպարշտաց սպանանելեաց, որոց օրն
հասեալ է, վախճան ժամանակի անօրինու-
թեան, (30) Դարձուցէ՞ զնա ի պատեան իւր. ի

տեղոջ ուր արարար, յերկրին ծննդեան քո
[11] ՆԵԲ. բարբարոսաց, ճարտարաց ապականու-
թեան [12] ՆԵԲ. ո՞չ դատեսցիս, ո՞չ դատեսցիս
[13] ՆԵԲ. զի եկեսցէ ժամանակ նորա, և առնէ կուռս
պղծել զանձն իւր։ (4) Յարեան քումմ զոր
հեղեր յանցեար, եւ ի կուռս քո զոր արարեր՝
[14] ՆԵԲ. եկեր մինչեւ յամ քո [15] ՆԵԲ. զքեզ,
վատանունդ, լիզ ազգիս [16] ՆԵԲ. ըստ բազկի
իւրում եղեւ ի քեզ ի հեղուլ զարիւն [17] ՆԵԲ.
Զսրբութիւնս իմ արհամարհէիր, եւ զշա-
բաթս իմ պղծէիր։ (9) Արք բանսարկուք

բանց զՀՀէին ի քեզ, եւ գործս անսուրբս
10 գործէին ի միջի քումն: Զամօթ ոչ յայտնէին ի քեզ, եւ պղծութեամբ զկա-
11 տանն լկէին ի քեզ: Եւ իւրաքանչիւր զկնի ընկերի իւրոյ պղծէին, եւ իւրա-
քանչիւր զնու իւր պղծէին ամպարշտութեամբ, եւ իւրաքանչիւր զքոյր իւր,
12 զդուստր հօր իւրոյ լկէին ի քեզ: Կա-
չառս առնուին ի միջի քումն զի հեղուցուն արիւն, վաշխս եւ տոկոսիս [1]առնուին ի միջի քումն. եւ ածից կատարեալ զվախման չարեաց քոց ըստ բանութեան քումն, քանզի՞ մոռացար զիս,
13 ասէ Տէր Տէր: Ահաւասիկ հարից ծափ զծափիւ ի վերայ [2]գործոյն քոց զոր արարեր, եւ ի վերայ արեանցն գործելոց
14 ի միջի քումն: [3]Ե՞ն եթէ ժուժկալեսցի սիրտ քո, եթէ զօրասցին՞ ձեռք քո յաւուրսն յորս ես արարիչ ընդ քեզ.
15 ես Տէր խօսեցայ, եւ արարից: Եւ ցրուեցից զքեզ ընդ ազգս, եւ ցանեցից զքեզ ընդ գաւառս, եւ [4]պակասեցից պղծու-
16 թիւն քո ի քէն: Եւ ժառանգեցից՞ ի քեզ յանպիծն ազգացն, եւ ծանիցիք թէ ես եմ Տէր:
17 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
18 Որդի մարդոյ, աւասիկ եղեն լինձ տունդ Իսրայելի [5]խառնակեալ, որպէս խառնակեալ լցէ պղինձ եւ երկաթ եւ ա-
նապ եւ կապար եւ արծաթ ի հալոցի:
19 Վասն այնորիկ ասա,՞ Այսպէս ասէ Տէր Տէր. Փոխանակ զի եղերուք դուք ա-
մենեքեան [6]ի մի խառնակութիւն, վասն այնորիկ ես ընկալայց՞ զձեզ ի մէջ Ե-
20 րուսաղէմի: Որպէս [7]ընդունիցի ոք զարծաթ եւ զպղինձ, զերկաթ եւ զկապար՞ ի մէջ հալոցի՝ փչել ի նա հուր եւ ձուլել, նոյնպէս [8]ընկալայց զձեզ բարկութեամբ իմով եւ [9]հաւաքեցից եւ ձու-
21 լեցից զձեզ: Եւ փչեցից ի ձեզ՞ հրով բարկութեամբ իմով. եւ ձուլեսջիք ի
22 մէջ նորա: Զոր օրինակ ձուլեսցի արծաթ ի մէջ բովոյ, այսպէս ձուլեսջիք ի միջի դորա, եւ ծանիցիք թէ ես Տէր հեղի զսրտմտութիւն իմ ի վերայ ձեր:
23 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
24 Որդի մարդոյ, ասա ցդա, Դու այն երկիր ես որ [10]ոչ մաքրես՞, եւ ոչ եկն անձրեւ ի վերայ քո յաւուր բարկութեան.
25 [11]Որոյ իշխանք իւր ի միջի իւրում իբրեւ զառիւծունս գոչէին յափշտակել զյափշտականութիւնս, ուտէին զանձինս անանկաց բռնութեամբ, եւ մատուն սպասիս անիրաւութեամբ, եւ բազմա-
26 ցան այրիք ի միջի քումն՞ Եւ քահանայք նորա անարգէին զօրէնս իմ եւ պղծէին սրբութիւնս իմ. եւ զառիւծն ի պղծոյն ոչ ընտրէին, եւ զպատուականն յանպատակ անաք ոչ զատուցանէին. եւ ի չաբաթս իմոց ծածկէին զաչս իւրեանց, եւ
[12]պղծեալ իմ պղծէին՞ ի միջի նոցա:
27 Իշխանք նորա ի միջի նորա որպէս գայլք յափշտակել, յափշտակել յափշտակութիւնս, հեղուլ զարիւն, կորուսանել զանձինս, զի ագահութիւն յոյժ սատա-
28 կին: Եւ մարգարէք նորա [13]սր ծեփէին զնոսա անկեալն, որք՞ անսանէին մեռս, ըզձանային նոցա սատկութիւն եւ ասէին, Այսպէս ասէ Ադոնայի Տէր, եւ
29 Տեառն չէր խօսեալ. [14]Ժողովուրդք երկրին սատակիցս անիրաւութեամբ, եւ յափշտակէին յափշտակութիւն. զազքատս եւ զտնանկն բռնա-
30 գատէին, ընդ պանդխտին իրաւամբք ոչ գնային: Եւ խնդրեցի ի նոցանէ այր մի որ [15]ուղիղ գնայցէ, եւ կայցէ առաջի իմ մատղաչիւր ի ժամանակի բարկութեան՞ զի մի ջնջեցից զնա, եւ ոչ
31 գտի: Եւ հեղի ի վերայ նոցա զսրտմտութիւն իմ. հրով բարկութեան իմոյ [16]կատարել ի նոսա՞. ըստ ճանապարհաց նոցա եատու ի գլուխս նոցա, ասէ Տէր Տէր:

ԳԼ. ԻԳ

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
2 Որդի մարդոյ, կանայք երկու էին,

[1] Նբգ. առեր, եւ զրկեիր զընկերս քո բռնութեամբ, եւ [2] Նբգ. զրկանաց [3] Նբգ. Միթէ ժուժկալեսցի՞ սիրտ քո, միթէ զօրասցե՞ն [4] Նբգ. պակասեցուցից զպղծութիւն քո ի քէն, (16) Եւ պղծեսցես [5] Նբգ. ի կղկղանս, ամենեքին օձաք, պղինձ եւ անագ եւ երկաթ եւ կապար ի հնոցի, կղկղանք արծաթոյ եղեն: (19) Վասն այնորիկ [6] Նբգ. ի կղկղանս, վասն այնորիկ ահա ես ժողովեցից [7] Նբգ. ժողովիցէ [8] Նբգ. ժողովեցից [9] Նբգ. հեղուլ զբովս եւ ձուլեցից զձեզ, (21) Եւ հաւաքեցից զձեզ

[10] Նբգ. չես սրբեալ [11] Նբգ. Թաւամճանութիւն մնրգաբերից նորա ի միջի նորա. իբրեւ զառիւծ որ մռնչէ, յափշտակել զյափշտակութիւն. ուտեն զանձինս, ձոխութիւն եւ փառս ընկալան. զայրս նորա բազմացուցին ի միջի նորա: [13] Նբգ. պղծեցայ [14] Նբգ. Ծեփէին զնոսա կաւով զի [15] Կամ, մատղաչիւրդ [16] Նբգ. ածից ցանկ եւ կացցէ ի բրամատոյն աւազի իմ փոխանակ երկրին, [17] Նբգ. սպառեցի զնոսա

3 զաներք միոյ մօր. Եւ պռանկեցան յե-
զիպտաս, ի մանկութիւնն [1]իւրում.
անդ անկան ստինք իւրեանց, անդ ար-
4 կան ի կուսութենէ իւրեանց"։ Անուն
գաղթին երկուս Ոողա, եւ քոյր նորա
Աողիբա. եւ եղեն ինձ եւ ծնան ուս-
տեր եւ դստեր, եւ անուն նոցա՝ ա-
նունն Շամրին Աողա, եւ Երուսաղեմի՛
Աողիբա։

5 Եւ պռանկեցաւ Աողան յինէն, եւ
արձակեաց զաչս իւր ետեւ հմանանայ
իւրոց, յԱսորիստանեայն որ մերձ էին
6 առ նա, Զկեցեալ հիրս եւ կարմիրս,
յիշանաս եւ ի զօրագլուխս, յեղիտա-
սպրս, յընտրեալս յամենեսեան, ի սպա-
7 ռազէնս ի հեծեալս յերիվարս։ Եւ տա-
րածեաց զպռանկութիւնն առ նոսա, առ
ամենայն ընտրեալս որպիսին Ասորեստա-
նեայց, եւ առ ամենեսին զորոց չոգաւ
զինն, ամենայն [2]խորհրդովք իւրովք, եւ"
8 պղծեցաւ։ Եւ զպռանկութիւնն իւր յերիվրէն
Եգիպտացւոց ոչ եթող. զի ընդ [3]նոսա
պղծէր ի մանկութենէ իւրմէ, եւ նոքա
արիւն զնա ի կուսութենէ", եւ հեղին
ի վերայ նորա զպռանկութիւնս իւրեանց։
9 Վասն այսորիկ մատնեցի զնա ի ձեռս
հմանանայ իւրոց, ի ձեռս որդւոցն Ա-
սորիստանեայց զորոց զինա երկայր։
10 Նոքա յայտնեցին զծածկաւորութիւնն
նորա, զուսանիս եւ զդստերս նորա ա-
ռին, եւ զնա սրով սպանին. եւ եղեւ
[4]խօսք կանանց, եւ խնդրեցին վրէժ ի
նմանէ ի զաներս իւր"։

11 Եւ եւս քոյր նորա Աողիբա, եւ ա-
ւաւել զանցոյց զաչարձակութիւնն ա-
պականութիւնն իւրոյ քան զնորայն, եւ
զպռանկութիւնն իւր քան զպռանկութիւնն
12 քոյր իւրոյ։ Զի չոգաւ զինա որդւոցն
Ասորեստանեայց, իշխանաց եւ զօրա-
վարաց՝ օր մերձ էին առ նա, զգեցեալ
[5]հանդերձս ծիրանիս ամենաւականս,
սպառազինս հեծելոց յերիվարս, երի-
13 տասարդս ընտրելոց ամենեցուն։ Եւ
անսի զի պղծեցաւ, մի ճանապարհ էր
14 երկոցունց։ Եւ յաւել ի պռանկութիւնս
իւր. եւ եւս արս նկարեալս յորմս

պատկերս Քաղդէացւոց նկարեալս [6]գըր-
15 չաւ ի նկարս, Ածեալ պէսպէս" կա-
մարս ընդ մէջ իւրեանց, եւ խայտս ներ-
կեալս ի գլուխս իւրեանց. [7]երփն երփն
հագուստեղս յամենեցունց", ի նմանու-
թիւն որդւոցն Բաբելացւոց, յերկրէն
16 Քաղդէացւոց՝ յաչխարհին [8]իւրեանց. Եւ
ակն եդ նոցա հայեցուածովք աչաց իւ-
րոց, եւ առաքեաց հրեշտակս առ նոսա
17 յերկիրն Քաղդէացւոց։ Եւ եկին առ նա
որդիքն Բաբելացւոց յանկողինս [9]օթի,
եւ պղծեցին զնա ի պռանկութիւնս իւ-
րեանց. եւ պղծեցաւ ընդ նոսա, եւ յափ-
18 րացաւ անձն նորա ի նոցանէ։ Եւ յայտ-
նեաց զպռանկութիւնն իւր, եւ առակեաց
զամօթ իւր։ Եւ վերկեցաւ անձն իմ ի
նմանէ, որպէս եւ մերկեցաւ անձն իմ
19 ի քոյրէ նորայ։ Եւ [10]յաճախեցոյց զպռանը-
կութիւնն քո՝ յիշեցուցանել զաւուրս
մանկութեան քո յորս պռանկէիրն յե-
20 գիպտոս. Եւ արձակեցեր զաչս քո առ
Քաղդէացիսն՝ յիշանագամս եւ ի ձիանա-
21 գամս։ Եւ այդ արարից անօրէնութեան"
մանկութեան քո [11]զոր գործէիրն յերկ-
րին Եգիպտացւոց յօմիսանաս քո, ուր
անկան ստինք քո եւ լուծաւ կուսու-
թիւն" քո։

22 Վասն այսորիկ, Աողիբա, այսպէս ա-
սէ Տէր Տէր. Ահաւադիկ ես յարուցից
ի վերայ քո զնմանիսն յորոց յափրա-
յաւ անձն քո, եւ ածից զպատկերս զնա-
23 ա զքեզ, Զորդիսն Բաբելացւոց եւ
զամենայն Քաղդէացիսն, զՓակուդ եւ
զՍուէ եւ զԿուէ, եւ զամենայն որդիսն
Ասորեստանեայց ընդ նոսա, զերիտա-
սարդս ընտրեալս, զիշխանս, զգօրավարս,
[12]զպատուազէնս՝ զանուանիս զհեծեալս"
24 յերիվարս։ Ամենեքին եկեսցեն ի վերայ
քո [13]ի հիւսիսոյ. կառք եւ անիւք ազ-
գաց բազմութեան, ասպատարտուրք
եւ վահանաւորք, [14]եւ արկցեն չուրջ
զքեզ պահ. եւ տաց առաջի երեսաց

[1] ՆԲԳ. իւրեանց պռանկեցան. անդ ճմլեցան ստինք նոցա, եւ անդ շօշափեցին զպռանկութիւն կուսութեան նոցա [2] ՆԲԳ. կամաւք նոցա [3] ՆԲԳ. նմա ննջէին ի մանկութենէ նորա. եւ նոքա շօշափեցին զպռանկութիւն կուսութեան նորա [4] ՆԲԳ. առակ ի կանայս, եւ արարին դատաստանս ի նմա [5] ՈՅ ՆԲԳ. պոլոռ

[6] ՆԲԳ. նօթիւ, (15) Ածեալ [7] ՆԲԳ. տեսլեամբ իշխանաց ամենեքին նոքա [8] ՆԲԳ. ծննդեան իւրեանց [9] ՆԲԳ. սիրոյ [10] ՆԲԳ. յաճախեաց զպռանկութիւնս իւր, յիշել զաւուրս մանկութեան իւրոյ յորս պռանկեցաւ յԵգիպտոս (20) Եւ հարաւ համանեաց նոցա, որոց մարմին՝ մարմին իշոց, և զորութիւն ձիոց զորութիւն նոցա (21) Եւ այդ արարեր պղծութեան [11] ՆԲԳ. ի շօշափել Եգիպտացւոց զպռանկութիւն քո, վասն ստեանց մանկութեան [12] ՆԲԳ. ամենեքին նոքա անուանիք՝ հեծեալք [13] ՆԲԳ. զհիւսիս [14] ՆԲԳ. եւ ասպարատուրք

նոցա զաւաստանս , եւ [1]ինդրեսցին ի քէն վրէժս" զաւաստանօք իւրեանց ։
25 Եւ ասաց ցնահանձ իմ ի փիզ , եւ ա-
րասցին ընդ քեզ բան բարկութեան [2]սրամաւթեան իմոյ". եւ զունչս եւ
զականջս քո կարեսցին , եւ վնասցորդս
քո սրով կատարեսցին , եւ զաւասերս քո
եւ զդստերս քո առցին , եւ վնասցորդս
26 քո հրով սատակեսցին . Եւ մերկասցին
ի քէն զհանդերձս քո , եւ առցին զզարդ
27 պարծանսն քոյ ։ Եւ *զարձուցից զամ-
պարչաւթիւնս քո ի քէն , եւ զպատ-
նէրկութիւնս քո զոր յերկրին եգիպտացւոց,
եւ ոչ ամբառնայցես զաչս քո [3]ի նա ,
եւ ոչ եւս յիշեսցես զեգիպտոս ։
28 Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր Տէր .
Ահաւադիկ ես մատնեցից զքեզ ի ձեռս
ատելեաց քոց՝ յորոց յամրացաւ անձն
29 քո ի նոցանէն ։ Եւ գնասցին ընդ քեզ
ատելութեամբ , եւ առցին զամենայն
վաստակս [4]քո եւ գերկս քո. եւ եղիցես"
մերկ եւ խայտառակեալ , եւ յայտնեսցի
ամօթ պոռնկութեան քո , եւ ամպարշ-
30 տութիւնն քո եւ պոռնկութիւն քո ։ Ա-
րարից քեզ գայդ ի պոռնկեն քում
գնեալ ազգայ , ուր պղծէիր [5]ի խորհուրդս
31 նոցա ։ Զճանապարհս քեւս քո գնայիր ,
եւ տայ գրաժամ նորա ի ձեռս քո ։
32 Այսպէս ասէ Տէր Տէր . Զբաժամն քեւս
քո արբցես, գխորն եւ գլայն , եւ եղիցես ի ծաղր եւ ի կատականս , [6]յամա-
33 րեալ կատարել զարբեցութիւնն , եւ լցցես
լքմամբ , գրաժամն ապականութեան ,
34 գրաժամն" քեւս քո Շամրիի ։ Արբցես
եւ քամեսցես . եւ [7]գներս քո խզեսցես",
եւ զաւիներս քո կոտրեսցես . [8]եւ զաւնս
քո եւ զամաղլուխս քո զարձուցից ի
քէն." զի ես խօսեցայ՝ ասէ Աստուած
35 Տէր ։ Վասն այսորիկ այսպէս ասէ Ա-
ստուած Տէր . Փոխանակ զի մոռացար
գիս , եւ ընկեցեր գիս զկնի մարմնոյ
քո , եւ դու բնակել զամպարշտութիւնս
քո եւ զպոռնկութիւնս քո ։
36 Եւ ասէ ցիս Տէր , Որդի մարդոյ , ե-
թէ գատեսցին զքեզ [9]եւ զոհոլիբայ,
եւ պատմեսցես նոցա զանօրէնութիւնս
37 իւրեանց ։ Զի շնացան՝ եւ արիւն է ի
ձեռս նոցա , եւ [10]ի խորհուրդս նո-
ցա" շնացին , եւ զորդիս իւրեանց զոր
38 ինձ ծնան՝ անէլին գրացով[11] ։ Մինչ ցայն-
չափ եւս արարին ինձ , զի զսրբութիւնս
իմ պղծէլին ի նմին աւուր , եւ գշա-
39 բաթան իմ ապականէլին ։ Ի գոհել նոցա
զորդիս իւրեանց կացն իւրեանց , եւ
մտանէլին ի նմին աւուր ի սրբութիւնս
իմ եւ պղծէլին զնոսա , եւ այսպէս առ-
40 նէլին ի մէջ տան իմոյ ։ Զի եւ արանց
եկելոց ի հեռաստանէ , առ որս հրէշ-
տակս ապաքէլիր , խակ եւ խակ լսելոյ
գային՝ ի բաղանիս մտանէլիր , ի ծարիր
եւ ի մրգոյր չալարէլիր , եւ զարդարէլիր
41 զարդու . Եւ նստէլիր ի գահոյս զարդա-
բեալս , եւ սեղան յօրինեալ գնէլիր ա-
ռաջի , եւ զխունկս իմ եւ զեւղան [12]առ-
42 նէլիր եւ ուրախ լինէլիր ընդ նոսա ։ Եւ
ի ձայն արուհատականաց նուագէլին".
եւ առ այն արամբք՝ այլ եւս բազմու-
թիւնս արանց գլինէմոյց [13]եկելոց յա-
նապատէ տայիր" ապարանսն ի ձեռս
նոցա եւ պսակ պարծանսն ի գլուխս
43 նոցա ։ Եւ ասացի [14]ցէ՛ մի՛ չնասցի ընդ
նոսա զգործ պոռնկութեան , եւ նա
44 պոռնկէր" ։ Եւ մատանէին առ նա՝ որպէս
մատանիցին առ կին պոռնիկ , նոյնպէս
մատանէին առ Ոոզան եւ առ Ոոզիբայն՝
45 [15]գործել զանօրէնութիւնն ։ Եւ արք ար-
դարք էին նոքա , եւ" ինդրեսցին գրէժս
ի նոցանէ , գրէժս չնացողաց եւ գրէժս
սպանան . զի չնացօղք էին , եւ արիւն ի
ձեռս նոցա ։
46 Զի այսպէս ասէ Տէր Տէր . [16]Այ ի գե-
բայ զոր , եւ արկ" գնոքօք խառնութիւն
47 եւ յափշտակութիւն ։ Եւ քարաձիգ [17]լեր
ի նոսա քարամբք զօրաց , եւ խողոտեսա
գնոսա սրովք նոցա . ուստերք նոցա եւ
դստերք կոտորիսցին", եւ զտունս նոցա
48 հրձիգ արասցին ։ Եւ *զարձուցից զամ-
պարչաւթիւնս յերկրէ , եւ խրատեսցին

---

[1] ՆԷԲ. գատեսցին գքեզ [2] ՆԷԲ. պոռնկութեան [3] ՆԷԲ. դադարեցուցից [3] ՆԷԲ. ի նոսա [4] ՆԷԲ. քո, եւ թողցեն գքեզ [5] ՆԷԲ. ի կուռս [6] ՆԷԲ. Բ-ՃԼ ԺԸՃ ի տանել. (33) Արբեցութեամբ եւ ցաւօք լցցիս . բաժակաւ ապշութեան եւ ամայութեան , բաժակաւ [7] ՆԷԲ. գկեցին լինելոցս [8] ՆԷԲ. ի կուռս իւրեանց [9] ՆԷԲ-յեչէլ յահէլա , ի կերակուր նոցա [10] ՆԷԲ. դնէիր ի վերայ նորա (42) Եւ էր ձայն բազմութեան որ ուրախ լինէր ընդ նմա [11] ՆԷԲ. ածելոց յանապատէ, տային [12] ՆԷԲ. զարուհաւելոյն շնութեամբք . Արդ պոռնկեսցի՞ն եւ ընդ սմա [13] ՆԷԲ. կանայս պիղծս (45) Եւ արք արդարք, նոքա [14] ՆԷԲ Ածից ի վերայ նոցա զօրս եւ արկից [15] ՆԷԲ. յիցի զօրն ի նոսա քարամբք եւ խողոտեսցեն գնոսա սրովք իւրեանց . զուստերս նոցա եւ զդստերս նոցա կոտորեցեն

աստիճանին կանայք, եւ մի՛ եւս արասցեն
49 բան ամպարշտութեան [1]նոցա։ Եւ տա-
ցի ամպարշտութիւն ձեր ի վերայ ձեր,
եւ [2]բան մեղաց խորհրդոց՝ ձերոց ըն-
կալջիք, եւ ծանիջիք թէ ես եմ Տէր Տէր։

ԳԼ. ԻԴ

4 Եւ եղեւ բան Տեառն առ իս յամին ին-
ներորդի, յամսեանն տասներորդի, որ
2 օր ասան էր ամսոյն, եւ ասէ, Որդի
մարդոյ, դրեա դու քեզ [3]զինչան աւուրն
յորմէհետէ՝ եհաս արքային Բաբելացա-
3 ւոց ի վերայ [4]Երուսաղեմի։ Ըօրէ
յայնմանէ՝ առակեսցես ասոնն դառնայո-
ղաց դառակս զայս, եւ ասասցես ցնո-
սա, Այսպէս ասէ Տէր Տէր. Կառո զկաթ-
սայդ, կառո, եւ արկցես ի դմա ջուր։
4 Եւ դիցես զանդամաթիւդ, զամենայն
յօչուած դեղեցիկ, զազդր եւ զերի.
5 [5]քանցեալ յոսկերաց, Առեալ յընտիր
ընտիր անասնոց, եւ զոսկերան ի ներ-
քոյ կաթսային այրեսջիք. եռաց, զե-
զաւ, քակ եռաց, եփեցան՝ ոսկերքն ի
միջի նորա։
6 Վասն այնորիկ այսպէս ասէ Ադոնայի
Տէր. Ո՛վ քաղաք արեանց, կաթսայ լի
ժանգով, եւ ժանգն ի նմանէ ոչ պար-
զեալ. անդամ անդամ [6]նման ի նմա-
նէ՝, եւ վիճակ ոչ անկաւ ի վերայ նո-
7 րա. Զի արիւն նորա ի միջի նորա է.
ի սալաքարի վերայ [7]եդի զնա, եւ ոչ հե-
ղի՝ զնա յերկիր ծածկել զնա հողով։
8 Մինչեւ եւղէ սրամտութիւն իմ ի վրէժ-
խնդրութիւն պանանջել զվրէժս, եւեռ
զարիւն նորա ի վերայ ապաքարին դի մի՛
9 ծածկեսցի։ Վասն այդորիկ այսպէս ասէ
Ադոնայի Տէր. Վա՛յ քաղաք արեանց.
10 եւ ես [8]զփայտն յաճախեցից, Եւ զհանա-
ձողն բազմացուցից. եւ հուր բորբո-
քեցից զի միսն հալեսցի եւ սպղտնակն
11 նուազեսցի՝ եւ ոսկերքն փխրեսցին. Եւ
[9]կացցէ ի վերայ կայծականց իւրոց.
բորբոքեցաւ զի վառեսցի, ջեռցի եւ

պղինձ նորա հալեսցի, եւ ի միջի նորա
պղծութիւն նորա.՝ եւ պակասեսցի
12 ժանգ նորա. [10]Եւ նուազեսցի ժանգ նո-
րա, եւ մի՛ եղիցէ՝ ի միջոյ նորա բազում
ժանգ նորա, [11]եւ յամօթ լիցի ժանգ նո-
13 րա պղծութեամբ արդանակին. Փոխա-
նակ զի պղծէիր դու, եւ ոչ սրբեացիս
ի պղծութենէ քումմէ. եւ զինչ իցէ ե-
թէ ոչ սրբեսցի տակաւին, մինչեւ կա-
14 տարեցից զսրտմտութիւն իմ ի նմա՝։ Ես
Տէր խօսեցայ. եւ եկեսցէ, եւ արարից
եւ ոչ խորչեցայց, եւ ոչ ողորմեցայց,
եւ ոչ [12]մխիթարեցայց. այլ ըստ ճանա-
պարհաց քոց եւ ըստ գնայից քոց [13]դա-
տեցայց զքեզ՝, ասէ Ադոնայի Տէր։
15 [14]Վասն այդորիկ ես դատեցայց զքեզ ըստ
արեանց քոց, եւ ըստ խորհրդոց քոց
դատեցայց զքեզ, պիղծդ եւ անուանա-
րկ, որ յաճախեցեր ի դառնութիւնս՝։
16 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
17 Որդի մարդոյ, Ահաւասիկ ես բառնամ
ի քէն զցանկալին աչաց քոց [15]պատա-
րաղամաւ, եւ ոչ կոծեսցիս եւ ոչ լայ-
ցես, եւ ոչ եւանիցէ արտօսր ի քէն։
18 [16]Զի հեծութիւն արեան միջոյ է, եւ ոչ
հիւսցին զէսք քո, եւ կօշիկք
քո այղրէն յոտս քո. եւ մի՛ մխիթա-
րեսցիս ի չրթանց նոցա՝, եւ զհաց ա-
նուց մի՛ կերիցես։
18 Եւ խօսեցայ ընդ ժողովրդեանն ընդ
առաւօտս, [17]որպէս հրամայեաց ինձ Տէր,՝
եւ մեռաւ կինն իմ յերեկորեայ, եւ ա-
րարի ընդ առաւօտն որպէս հրամայեցաւ
19 ինձ։ Եւ ասէ ցիս ժողովուրդն, Ո՞չ պատ-
մես մեզ զինչ է այդ զոր գործեաղ։
20 Եւ ասեմ ցնոսա, Բան Տեառն եղեւ
21 առ իս եւ ասէ, Ասա ցտունդ Իսրայե-
լի, Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւադիկ
ես պղծելոյ զսրբութիւնս իմ, զհպար-
տութիւն զօրութեան ձերոյ, զցանկա-
լիս աչաց ձերոց, եւ յոտս խնայեանն ան-
ձինք ձեր. ուստերքն ձեր եւ դստերք

---

[1] ՆԲԷ. ձերսմ [2] ՆԲԷ. զմեղս կռոց [3] ՆԲԷ. զա
նուն աւուրն, զնոյն իսկ օրն. [4] ՆԲԷ. Երու-
զեմի, զնոյն իսկ օրն (3) Եւ [5] ՆԲԷ. լից ընտիր
ընտիր ոսկերօք, (5) Առեալ զընտիրս խաշանցն, եւ
այրեսցես զոսկերան ի ներքոյ. եռացո զնա քաջ,
եւ եփեսցին [6] ՆԲԷ. Հան [7] ՆԲԷ. Եդ զնա, և ոչ
հեղ [8] ՆԲԷ. զխարոյկն յաճախեցից։ (10) Բազ-
մացո զհանձոն, բորբոքեա զՀուր, զի միսն
հալեսցի. Համեմեա համեմօք [9] ՆԲԷ. կացո ի վե-
րայ կայծականց զկամաւոյն, զի վառեսցի. Ջեռցի
պղինձ նորա, և հալեսցի պղծութիւնն որ ինմա

[10] ՆԲԷ. Նեղութեամբք տատապեցոյց, եւ ոչ եղ
[11] ՆԲԷ. Հրով ժանգ նորա։ (13) Ի պղծութեան
քումմ գոյ լկտութիւն, զի ես սրբեցի զքեզ, եւ
դու ոչ սրբեցար. ի պղծութենէ քումմէ մի՛
եւս սրբեսցիս, մինչեւ Հանդուցից զսրտմտու-
թիւն իմ ի քեզ [12] ՆԲԷ. զղջացայց [13] ՆԲԷ.
դատեցիս [14] ՅԲԷ. գ-ի-ա [15] ՆԲԷ.
Հարուածով [16] ՆԲԷ. Չեծեծիր լուսթեամբ.
մի՛ առնիցես կոծ մեռելոց, առ զսպարօշ քո
զղչխով քով, արկ զՀողութափս քո յոտս քո,
մի՛ պատեսցես զշրթունս քո

ձեր որ ի ձէնջ մնացեալ են՝ ի սուր անկ-
22 ցին, ու արաւիք նոքունչէս որպէս ես
արարի. [1]ի բերանոց նոցա մի՛ մխիթա-
րեսիք", եւ գնաց արանց ոչ ուսուցէք,
23 եւ [2]վարսք ձեր ի վերայ գլխոց ձերոց,
եւ կօշիկք ձեր յոտս ձեր. ոչ կոծիցիք
եւ ոչ լայցէք, եւ հաչեսջիք յանիրաւ-
ութիւնս ձեր, եւ [3]ոչ մխիթարեսցէ
24 իւրաքանչիւր որ գեղբայր իւր"։ Եւ ես
դիցի ձեզ եզեկիէլ ի նշան. բաւ ամե-
նայնի զոր ինչ արար, առնիցէք. յոր-
ժամ հասանիցէ այդ եւ ծանիջիք թէ
25 ես եմ Աստուած Տէր։
Եւ դու, որդի մարդոյ, ոչ ապաքէն
յաւուր յայնմիկ յորժամ բարձից ի նո-
ցանէ զզօրութիւն նոցա եւ [4]զնպաս-
տութիւն պատճառս նոցա, եւ զյան-
կալին ոչաց նոցա եւ զնպաստիւն
անձանց նոցա, զտաճարս եւ զդստերս
26 նոցա, Յաւուր յայնմիկ գայցէ ապրեալն
27 առ քեզ՝ տալ գոյժ յականջս քո։ Յա-
ւուր յայնմիկ բացցի բերան քո առ ապ-
րեալն, խօսեացիս եւ մի՛ եւս համրաս-
ցիս. եւ եղիցիս նոցա ի նշան, եւ ծա-
նիցեն եթէ ես եմ Տէր։

ԳԼ. ԻԵ

[5]Ի վերայ որդւոցն Ամմոնայ"

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
2 Որդի մարդոյ, հաստատեա զերեսս քո
ի վերայ որդւոցն Ամմոնայ եւ մարգա-
3 րեաց ի վերայ նոցա. եւ ասասցես ցոր-
դիսն Ամմոնայ, Լուարուք զպատգամս
Աստուծոյ Տեառն. այսպէս ասէ Աստ-
ուծոյ Տէրն. Փոխանակ զի ասացեր
զերազք ի վերայ սրբութեանց իմոց որ
պղծեցան, եւ ի վերայ երկրին Իսրայելի
որ ապականեցաւ, եւ ի վերայ տանն Յու-
4 դայ որ գնաց ի գերութիւն, վասն այնո-
րիկ անաւադիկ ես մատանեմ զձեզ որդւոցն
[6]կեդեմայ ի ժառանգութիւն, եւ [7]բնա-
կիցեն մեզօրն" իւրեանց ի քեզ, եւ
կանգնեսցեն զխորանս իւրեանց ի քեզ.
նոքա կերիցեն զպտուղ քո, եւ նոքա
5 արբցեն [8]զպարարտութիւն քո։ Եւ տաց
զքաղաքն Ամմոնացւոց" յարօտս ուղ-
տաց, եւ զորդիսն Ամմոնայ յարօտս

[1] Եբր. զչրթունս մի՛ պատեսչիք [2] Եբր. ապարոշք
[3] Եբր. Հեծեծիցէք այլ ընդ եղերս իւրեանց [4] Եբր.
զպարծանութիւն [5] ՅԵբր. գոյժ [6] Ա. յԵբրէն՝
արեւելից [7] Եբր. դիցեն զբնակութիւնս [8] Եբր
զկաթն քո։ (5) Եւ տաց զՔաբաթ

հօտից, եւ ծանիցիք թէ ես եմ Տէր։
6 Զի այսպէս ասէ Տէր Տէր. Փոխանակ
զի կայծկեցեր դու ձեռամբ քով, եւ դո-
փեցեր ոտամբ քով, եւ ուրախ [9]եղեր
անձամբ քով ի վերայ երկրին Իսրայէ-
7 լի, վասն այնորիկ ահաւադիկ ես ձգե-
ցից զձեռն իմ ի վերայ քո, եւ տաց
զքեզ ի յափշտակութիւն ի մէջ ազգաց,
եւ սատակեցից զքեզ ի ժողովրդոց, եւ
կորուսից զքեզ ի գաւառաց կորստեամբ,
եւ ծանիցես թէ ես եմ Տէր։
8 [5]Ի վերայ Մովաբու" Այսպէս ասէ
Աստուծոյ Տէր. Փոխանակ զի ասացին
Մովաբ եւ Սէիր, թէ Ահա որպէս ա-
մենայն ազգք են՝ նոքունչէս եւ տունն
9 [5]Իսրայէլի եւ" Ըստ այ, վասն այդորիկ
ահաւադիկ ես [10]քակեցից զթիկունս Մո-
վաբու ի բարձունդակաց քաղաքաց
իւրոց, զբնաիր բնակիր երկրին՝ զտուն
Բեթեայ եւ զԱսիմովթայ, ի վերոյ քան
զպարսիր քաղաքին առ ծովեզերին,
10 Զորդիսն կեդեմայ ի վերայ" որդւոցն Ա-
մմոնայ, եւ տաս նմա ի ժառանգութիւն.
զի մի՛ եղիցի յիշատակ որդւոցն Ամմո-
11 նայ ի մէջ ազգաց։ Եւ ի Մովաբայ վրէժ
խնդրեսցից, եւ ծանիցեն թէ ես եմ Տէր։
12 [5]Ի վերայ Եդոմայ" Այսպէս ասէ Ա-
դոնայի Տէր. Փոխանակ զի խնդրեաց
վրէժ Եդոմ ի տանէն Յուդայ, եւ [11]ո-
խակալ եղեն եւ պատանդեցին վրէժս",
13 վասն այդորիկ այսպէս ասէ Աստուծոյ
Տէր. Զկեցից զձեռն իմ ի վերայ Եդոմ-
մայ, եւ սատակեցից ի նմանէ զմարդ
եւ զանասունն, եւ եղից զնա անա-
պատ. [12]եւ հալածեալք ի Թեմանայ"
14 անկցին ի սուր։ Եւ խնդրեցից վրէժս
յԵդոմմայ ի ձեռն ժողովրդեան իմոյ Իս-
րայէլի, եւ արասցին ընդ Եդոմ ըստ
բարկութեան սրտմտութեան իմոյ. եւ
ծանիցեն զվրէժխնդրութիւն իմ, ասէ
Աստուծոյ Տէր։
15 [5]Ի վերայ Փղշտացւոցն։ Վասն այդո-
րիկ" այսպէս ասէ Աստուծոյ Տէր. Փո-
խանակ զի ոխակալ եղեն [13]այլազգիքն,
եւ յարուցին վրէժինդրութիւն սրտի

[9] Եբր. եղեր յամենայն անարգանս քո [10] Եբր.
բացից զթիկունսՄովաբու, ի քաղաքաց, ի քա-
ղաքաց որ ի ծագս նորա, գվայելչութիւնն
երկրին՝ զԲեթ եսիմովթ, զԲեեզրամն և գԿարիաթեմ,
(10) Առ որդիսն Արեւելից, ընդդէմ [11] Եբր.
յանգանելով յանցեան յառնուլ վրէժ ի նոցանէ
[12] Եբր. ի Թեմանայ. և մինչեւ ի Դեդան [13] Ին.
Փղշտացիք, այլոց ի նէրէոյ

մաօք յոանհարութիւն՝ սատակել մին-
16 չեւ յաւիտեան , վասն այնորիկ այսպէս
ասէ Ադոնայի Տէր . Ահաւադիկ ես
ձգելոյիկ զձեռն իմ ի վերայ ազգացդ ,
եւ սատակեցից [1]զկրետացիսդ , եւ կո-
17 րուսից զմնացորդս ծովեզերեայցդ . Եւ
ինդրեցից ի նոցանէ վրէժս մեծամեծս
կշտամբութեամբ եւ բարկութեամբ , եւ
ծանիցեն թէ ես եմ Ադոնայի Տէր , ի
պահանջել զվրէժխնդրութիւն իմ ի նո-
ցանէ ։

Գլ . ԻԶ

[2]Ի վերայ Ծուրայ ։՚՚

1 Եւ եղեւ յամին մեւսասաներորդի որ օր
մի էր ամսոյն , եղեւ բան Տեառն առ
2 իս եւ ասէ , Որդի մարդոյ , փոխանակ
զի ասհնար եղեւ Ծուր ի վերայ Երու-
սաղեմի , եւ ասէ , վայ վայ , զի րեկաւ
[3]կորեաւ , աւա իս զարձցին աղգքին , ո-
3 րովհետեւ լըն աւերեցաւ՚՚, վասն այ-
սորիկ այսպէս ասէ Ադոնայի Տէր . Ա-
հաւադիկ ես ի վերայ քո , Ծուր , եւ
հանից ի վերայ քո ազգս բազումս , որ-
4 պէս ելանէ ծովդ ալեօք իւրովք ։ Եւ
կործանեսցեն զպարիսպս Ծուրայ , եւ
կործանեսցեն զաչտարակս նորա . եւ
հոսեցից զհող նորա ի նմանէ , եւ արա-
5 րից զնա յատառաժ . Եւ ձգանք ուռ-
կանաց եղիցին ի մէջ ծովուն , զի ես
խօսեցայ , ասէ Տէր Տէր . եւ եղիցի յա-
6 ւար ազգացն . Եւ գաւերք նորա ի գաշ-
տի սրով սպանցին , եւ ծանիցեն զի ես
եմ Տէր ։

7 Զի այսպէս ասէ Ադոնայի Տէր . Ա-
հաւադիկ ես ածից ի վերայ քո , Ծուր ,
զնաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց
ի հիւսիսոյ , որ է արքայ այրգայից . կա-
ոօք եւ երիվարօք , զօնդագունդ հե-
8 ծելովք ազգաց բազմաց յոյժ ։ Նա զդաւերս
քո ի դաշտին սրով կոտորեսցէ , եւ զքեւ
չուրջ պահ պիցէ , եւ փոս փորեսցէ , եւ
[4]պատնէշ կանգնեսցէ եւ ամրութիւն
9 զինուց . Եւ զգեղարդունս իւր յանդի-
ման քո կանգնեսցէ , եւ զպարիսպ քո՚՚
եւ զաչտարակս կործանեսցէ սրով իւ-
10 րով ։ Եւ ի բազմութենէ հեծելոց նորա
ծածկեսցէ զքեզ փոչի նոցա , ի ձայնէ
հեծելոց եւ յանուց կառաց նոցա չար-
ժեսցին պարիսպք քո ի մտանելն նորա
ի դրունս քո , որպէս որ մտանիցէ [5]ի
11 դաչտէ ի քաղաք՚՚։ Սմբակօք երիվարաց
իւրեանց կսխեսցեն զհրապարակս քո ,
եւ զաղդ քո սրով կոտորեսցէ , եւ
զհաստատութիւն զօրութեան քո յերկիր
12 կործանեսցէ ։ Եւ աւար առցէ զզօրու-
թիւնս քո , եւ կողոպտեսցէ զինչս քո , եւ
կործանեսցէ զպարիսպս քո , եւ զգան-
կալի ապարանս քո տապալեսցէ , եւ
զքարինս եւ զփայտս եւ զհողն ի ծովն
13 ամաոցէ ։ Եւ [6]քակտեսցէ զբազմութիւն
արուեստականաց քոց , եւ ձայն երգոց
14 ոչ եւս լսիցի ի քեզ ։ Եւ արարից զքեզ
յատառաժ , եւ եղիցիս ի ձգանս ուռ-
կանաց . եւ ոչ եւս չշինեսցիս , զի ես
խօսեցայ , ասէ Ադոնայի Տէր ։

15 Զի այսպէս ասէ Տէր Տէր ցԾուր . Ո՞չ
ասլաքէն ի ձայնէ կործանման քո , ի
հնձելոյ վիրաւորաց քոց , ի մերկանա-
լոյ սրոյ ի միջի քումի , չարժեսցին կղզիք
16 [7]քո ։ Եւ իջցեն յաթոռոց իւրեանց ամե-
նայն իշխանք [8]ագգացդ ծովուդ , եւ վե-
րացուսցեն զխոյրս իւրեանց ի գլխոց՚՚
իւրեանց , եւ զպէսպէս հանդերձս իւրեանց
մերկասցին , [9]տագնապելով տագնա-
պեսցին . յերկիր կործանեսցին , եւ զար-
հուրեսցին ի կորստեան իւրեանց , եւ
17 յոգւոց հանցեն՚՚ ի վերայ քո . Ողբս առ-
ցեն ի վերայ քո եւ ասասցեն , Զիարդ
կորեար , քակտեցար ի մէջ ծովու , քա-
ղաքդ հռչակաւոր , որ եղեր զօրացեալ ի
մէջ ծովու՝ դու եւ՝ բնակիչ քո , որ
զարհուրեցուցանէիր զամենայն բնակիչս
18 [9]քո . Եւ՚՚ երկիցեն կղզիք յօրէ կործան-
ման քո , եւ խռովեսցին կղզիք ծովուդ
ի քերքելոյն քումմէ ։

19 Զի այսպէս ասէ Տէր Տէր . Զօրժամ
տաց զքեզ քաղաքդ աւերակ՝ իբրեւ
զքաղաքս որ բնաւ չիցեն բնակեալ , ի
հանել բնձ ի վերայ քո զանդունդն , եւ
20 ծածկեսցեն զքեզ ջուրք բազումք . Եւ
իջուցից զքեզ առ իջեալսն ի խորխո-
րատ , առ ժողովն յաւիտենից , եւ բնա-

---

[1] ՅԵբր. զՔերեթիս [2] ՅԵբր. պ–ւ–ռ [3] ՅԵբր. կորեաւ գուռն ազգաց. աւա իս դարձաւ. ես լցայց, նա կործանեցաւ [4] ՅԵբր. կանգնեսցէ ընդդէմ քո ասպար. (9) Եւ զկազմած մեքե-նայից իւրոց դիցէ ընդդէմ պարսպաց քոց,

[5] ՅԵբր. իբրեւ զմուտ քաղաքի խրամատելոյ [6] ՅԵբր. դադարեցուցից [7] ՅԵբր. ծովուդ, և հանգչին զպատմուճանս [8] ՅԵբր. զգեցցին զերկեզ, նստցին ի գետնի, և զարհուրեսցին հանապազ, և զարմացին [9] ՅԵբր. նորա ։ (18) Արդ

կեցուցից զքեզ ի խորս երկրի, [1]իբրեւ զաւերական՝ յաւիտենից, ընդ իջեալսն [2]յաւիտենից ի խորխորատ. զի մի՛ եւս բնակեսցիս, [3]եւ մի՛ կանդնեսցիս յերկիր կենդանոցս. ի կարուստ մատնեցից զքեզ՝, եւ ոչ եւս իցես. եւ խնդրեսցիս, եւ ոչ գտանիցիս յաւիտեան՝։

Գլ. ԻԷ

[2]Ողբք ի վերայ Ծուրայ։՝

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
2 Որդի մարդոյ, ողբս առ ի վերայ Ծու-
3 րայ. Եւ ասասցես ցԾուր, Որ բնակեալդ
ես ի մուտս ծովուդ՝ վաճառաւոչահ ազ-
գաց ի կղզեաց բազմաց, այսպէս ասէ
4 Տէր [5]Տէր ցԾուր. Դու ասէիր, Ես գար-
դարեցի զիս ի գարդ գեղոյ իմոյ՝ ի սիրտ
ծովուս Բէէղիմայ, որպիսքն զարդարեցին
5 զքեզ. Մայրք իմ Սանիր լեռնէ չինեցան քեզ
պահանգք, եւ տախտակք նոճիք ի Լի-
բանանէ առան՝ առնել քեզ կայմս և-
6 զեւնափայտեայս. ի Բասանէ արարին
զգեակս նաւացդ քոց, եւ զմեհենանս քո
չինեցին ի փղոսկրէից, ապարանս ան-
տառախիտս ի կղզեաց Քիտիմացւոց՝։
7 Բեհեզ ընդ դիպակի գործեցեալ քեզ ի
պաստառս յԵգիպտոսէ՝ արկանելիք քեզ
ի փառս, եւ հանդերձ ծիրանի եւ կա-
պուտակ ի կղզեացն յԵղիմացւոց եղեն
8 ի զարդ պաճուճանաց քոց։ Եւ իչխանք
քո բնակիչք Սիդոնացւոց. եւ եղեն
Արադացիք՝ նաւավարք քո. եւ իմաս-
տունք քո, Ծուր, որ եղեն ի քեզ, նա-
9 ւա եղեն քեզ նաւապետք։ Եւ ծերքն
[6]մատենադէտք եւ իմաստունք նորա՝

[1]Եբէր. յաւերակս [2]Յեբէր. ո-ի-ե [3]Եբէր. յայնժամ հաստատեցից փառս յերկրին կեն-դանեաց։ (21) Արարից զքեզ յերկեւղ
[4]Եբէրայեցն յո-հ-լ-ո-, ասէ Տէր Եհովայ [5]Եբէր Եհովայ, Ծուր, դու ասէիր, Ես եմ կատա-րեալ գեղեցկութեան։ (4) Ի սիրտ ծովու են սահմանք քո. չինողք քո գործեցին կատարեալ զգեղ քո։ (5) Մայրիւք ի Սանիր լեռնէ չինեցին զամենայն տախտակամածս քո. նոճի ի Լիբա-նանէ բերին առնել կայմս ի վերայ քո։ (6) Ի կաղնեաց Բասանու արարին զթիակս քո. զքա-ղցոցս քո արարին ի փղոսկրէ, դրուագելոյ ի տօսախէ ի կղզեաց Կիտացւոց։ (7) Ի բեհեզոյ ասեղնագործից եգիպտոսի եղեւ առագաստ քո, լինել քեզ ի նշան. ի կապուտակէ և ի ծիրանւոյ ի կղզեաց Եղիսայ եղեւ ծածկոց քո։ (8) Բնակիչք Սիդոնի և Արուադայ եղեն [6]Եբէր. Գեբալայ

որ էին ի քեզ, նոքա [7]գօրացուցանէին զխորհուրդս՝ քո. եւ ամենայն նաւք ծո-վուն եւ նաւավարք նոցա եղեն [8]քեզ
10 երթալ յարեւմտեան արեւմտից՝ Լիդա-ցիք եւ Լիբէացիք՝ բիլկունք զօրու-թեան քո՝ արք բնաւորք պատերազ-մօղք, որ կախեցին զվահանս եւ զսա-դաւարս իւրեանց ի քեզ, եւ նոքա
11 փառաւորեցին զքեզ։ Որդիքն Արուա-դացւոց [9]զօրութեամբք իւրեանց՝ զպա-րսպօքդ քովք պատեալ կային, եւ [10]պա-հէին դաչտարակս քո. զկապարճս՝ իւ-եանց կախեցին չուրջանակի ի պարիսպս քո, եւ նոքա իսկ բովանդակեցին զգե-ղեցկութիւն քո։
12 [11]Կարթագինացիք վաճառականք քո ի բազմութենէ ամենայն զօրութեան քո, զարծաթ եւ զսիկի եւ զպղինձ եւ՝ զեր-կաթ եւ զանագ եւ զկապար եւ տուն ի
13 վաճառս քո. [12]Յոնիք եւ ամենայն որ չուրջ զնովաւ՝ էին մարդավաճառք քո, եւ անօթս պղնձիս եւտուն ի վաճառս
14 քո։ Եւ ի տունէ Թորգոմայ ձիովք եւ հնձելովք եւ ջորւովք լցին զվաճառս
15 քո։ Որդիք [13]Հռոդացւոց վաճառականք քո. [14]յաճախեցին ի կղզեաց զվաճառս քո ժանեօք փղոսկրէիք, եւ երփնեւ-
16 կաւն մարդիկ տայիր ի գին։ Եւ վա-ճառք քո բազմացեալք յարհամարհէիք քումմէ, յԱմենայ ստացին, եւ երփն երփն նարօտուց ի Թորչչայ. եւ Հռո-մովք եւ կարքեդոնք լցին զվաճառս քո։
17 Հրէաստան եւ որդիքն՝ Իսրայէլի վա-ճառականք քո [15]ցորենով եւ խնկովք եւ կասիա եւ ընտիր ընտիր՝ մեղու եւ իւղով եւ ոստամբ լցին զգաղհամագ-
18 խեայ վաճառագ քոց։ Դամասկոս վա-ճառականք քո, [16]եւ բազմաղխի եւ ի

[7]Եբէր. նորոգիչք խորտակման [8]Եբէր. ի քեզ առնել զտուրեւառս։ (10) Պարսք և Ղուդացիք և Փուդացիք եղեն [9]Եբէր. բնդ զօրս քո [10]Եբէր. Գամադացիք (ո՛չ, քաջք) յաչտարակս քո եղէն, զսպարս [11]Եբէր. Թարսիս վաճառական քո, ի բազմութենէ ամենայն վաճառաց, զարծաթ, [12]Եբէր. Յաւան, Թուբաղ և Մոսոք, նոքին [13]Եբէր. Դեդանայ [14]Եբէր. տուրեւառս կղզեաց բազմաց ի ձեռս քո. ժանիս փղոյ և եբենոս բերէին քեզ ի հարկ, (ո՛չ, ի վաճառ)։ (16) Արամ վաճառական քոտառ յաճախութեան ձեռագործաց քոց. կար-կեհան, ծիրանի, և երփն երփն նարօտուց, և բեհեզ և կորագիոն և յակինթ տային փոխանակ վաճառաց քոց։ (17) Հրէաստան եւ երկիրն [15]Եբէր. ցորենով Մինիթայ և քաքարաւ, և [16]Եբէր. առ յաճախութեան ձեռագործաց քոց ի բազ-մութենէ ամենայն մեծութեան,

բազում զօրութիւնէ քումմէ, զինի ի
19 ՓՂեդրոնացայ եւ ասի ի Միքիանայ. Դան
եւ Յաւան ի Մէովդենայ բերէին քեզ
պինի ի վաճառս քո. յԱսեղայ երկաթ
գործեալ անթիւս պատանւոյս ի վաճառս
20 քո. Դեդանացիք վաճառականք քո ա-
ձէին կառս ընտիրս ՚ի նոյն ՚ի հանդերձ՝"
21 Արաբացիք եւ ամենայն իշխանք կեդա-
րու, նոքա վաճառականք ընդ ձեռամբ
քով՝ ՚ուղտս եւ խոյս եւ ՚ոչխարս վա-
22 ճառէին ի քեզ. Սաբա եւ Հռեգմա, եւ
նոքա վաճառականք քո, ՚եւզս անուշ
չունս եւ" ամանս պատուականս եւ ոս-
23 կի հասոն ի վաճառս քո. Խառան եւ
՚Քանան եւ Դադան, եւ նոքա վաճա-
ռականք քո, Սարա եւ Ասուր եւ Քազ-
24 ման վաճառականք քո, Որք բերէին քեզ
վաճառս ընդ Մարդիմ եւ ընդ Գադիմ,
հիր եւ կարմիր եւ կապուտակ եւ երիմ
երիմ նարօտուց եւ դանձս ընտիրս
25 վանդակեալս չուանօք. ի նաւս նոցին՝
որովք էր վաճառն քո, նաւք ի բազ-
մութիւն վաճառաց քոց, եւ ի յանա-
խութիւնէ ագիատամպի քո, լցար ծանր
26 բացար յոյժ ՚ի սիրտ ծովու ի ջուրս
բազումս վարիցին զքեզ նաւ ամարք քո.
հոգի հարաւոյ խորտակեաց զքեզ ի սիրտ
27 ծովու ՚ի եւ զօրութիւն քո, եւ վարձք
քո եւ խառնաղանջիւն քոյ, եւ նաւա-
վարք քո եւ նաւասլաւք քո, եւ իսոր-
հրդականք քո եւ խառնաղանջք խառ-
նաղանջից քոյ", եւ ամենայն արք պա-
տերազմողք քո որ ի քեզ, եւ ամենայն
ժողովք որ ի միջի քում՝ անկցին ի սիրտ
28 ծովու յաւուր կործանման քո ՚ի ձայ-

գինեաւ Հեղրոնայ եւ ապխակ ասաւ ՚ի (19) Վէ-
դան եւ Յաւան փոխանակ վաճառաց քոց տային
ապրանս՝ երկաթ գործեալ, կասիա եւ խունկե-
ղէգն էինի հրապարակի քում. (20) Դեդան վաճա-
ռական քո ի հանդերձանս պատուականս վան
կառաց ՚ի (1) ԵԲՐ. դառինս (2) ԵԲՐ. նոխազս (3) ԵԲՐ.
ազդ ի ազգ ի համեմունս ընտիրս, եւ ազգի ազգի
(4) ԵԲՐ. Քանանէ եւ Եգեմ, վաճառականք Սաբայ,
Ասուր, Քաղմադ վաճառականք քո. (24) Նոքա
առնէին տուրեւառս ընտիր ընտիր վաճառաց,
հանդերձիւք ի կապուտակէ գործ նկարագործ,
յարկեղս ի դանձիս, վանդակեալս չուանօր
և յօրինեալս ի նոճւոյ ի վաճառս քո. (25) Նաւք
Թարսիս կարաւանք քո ի վաճառ քո. և լցար
և ժեծացար յոյժ ի սիրտ ծովու. (26) Ի ջուրս
բազումս ածին զքեզ նաւավարք քո. հողմն ա-
րեւելից եբեկ զքեզ ի սիրտ ծովուց. (27) Մե-
ծութիւն քո և վաճառք քո, տուրեւառ քո,
նաւապետք քո և նաւավարք, նորոգիչք խոր-
տակմանն նաւաց քոց, և՝ միջնորդք վաճառաց քոց

նէ բարբառոյ ՚քո նաւավարք քո եր-
29 կիւղիւ զարհուրեսցին", եւ իջցեն ի նա-
ւաց իւրեանց ամենայն ՚նաւավարք քո
եւ նաւամուտք քո առաջնորդք նա-
30 ւաց յամն ծովուն կացցեն. եւ ազա-
դակեսցեն ի վերայ քո, եւ փոխեսցեն
զձայնս իւրեանց." դուժեսցեն դառնա-
պէս, հող ի գլուխ լիցին, ընդ մոխիր
31 թաւալեսցին. Գերծցեն զգլուխս՝ ի
կնդուլիսն, եւ քրձապատած լիցին, եւ
լացցեն ի վերայ քո դառնագեալ սրտիւք,
32 կոծ դառնութեան ՚ Ազգն որդիք նո-
ցա ի վերայ քո, ողբս ազգին եւ ող-
բասցին", Ո՞վ էր իրրեւ զՏիւր որ լռեաց
33 դատարեաց ի մէջ ծովուն ՚ Որչափ ինչ
գային քեզ վարձս ի ծովէ ազգի, լցու-
ցեր զազգս ի բազմութիւնէ քումմէ," եւ
յողխամաղխէ վաճառաց քոց մեծացու-
34 ցեր ՚զամենայն թագաւորս երկրի. Արդ
բեկար ի ծովու" ի խորս ջուրց, վա-
ճառք քո եւ ամենայն ժողովք քո ի
միջի քումն անկան ՚ ամենայն նաւավարք
35 քո". Ամենայն բնակիչք կղզեաց սրտմե-
ցան ի վերայ քո, եւ թագաւորք նոցա
զարհուրելով զարհուրեցան ՚ եւ հեգին
արտասուս վերնօք իւրեանց ի վերայ
36 քո". վաճառականք ազգաց չչեցին ի
վերայ քո. ՚ի կորուստ մատնեցար", եւ
այլ ոչ եւս իցես յաւիտեան ՚ասէ Տէր
Աստուած":

ԳԼ. ԻԸ

՚ի վերայ իշխանին Ծուրայ՝"

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
2 Եւ դու որդի մարդոյ, ասա դիշխանդ
Ծուրայ, Այսպէս ասէ Տէր Տէր. Փո-
խանակ զի հպարտացաւ սիրտ քո, եւ
ասացեր՝ ԲՀ Աստուած եմ ես, եւ զընա-
կութիւն Աստուծոյ բնակեցի ի սիրտ ծո-
ւոյ. մարդ ես դու՝ եւ ոչ Աստուած,

՚ԵԲՐ. Նաւապետաց քոց զարհուրեսցին սրտաւ-
ձանք (կամ, ալիք) ՚ԵԲՐ. որ վերեն թիակօք,
նաւավարք, ամենայն նաւապետք ծովու ի
ցամաքի կացցեն. (30) Եւ ըստի արտացեն զքէն
զարբրաւ իւրեանց, և ՚ԵԲՐ. յեչէն չո-ԼՇ-,
վան քո ՚ԵԲՐ. Եւ ողբս առցեն ի վերայ
քո ի թախծութեան իւրեանց, և ողբասցեն
վասն քո ՚ԵԲՐ. Յելանել վաճառաց քոց ի
ծովուց՝ յագեցուցեր զազգս բազումս, ի յար-
ճախութենէ մեծութեան քո ՚ԵԲՐ. զթա-
գաւորս երկրի. (34) Ի ժամանակի բեկման ի
ծովուց ՚ՅԵԲՐ. պ-Լ-ՈՒ- ՚ԵԲՐ. խառվե-
ցան երեսօք ՚ԵԲՐ. եղեր սոսկումն

եւ եառուր զսիրտ քո իրրեւ զսիրտն Աս-
3 տուծոյ ։ [1]Միթէ իմաստնագո՞յն իցես քան
զԴանիէլ . կամ իմաստո՞ւնք իրաւեցին
4 զքեզ հանճարովն իւրեանց . Միթէ ի-
մաստութեամբ քով կամ իւրհրդով՝ ա-
րարեր դու քեզ զօրութիւն , եւ ոսկ-
5 ւար ոսկի եւ արծաթ ի գանձս քո . [2]կամ
բազմութեամբ իմաստութեան քո եւ
վաճառաց՝ յաճախեցեր զզօրութիւն քո,
եւ բարձրացաւ սիրտ քո զօրութեանդն
6 քով ։ Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր
Տէր . Վասն զի եառուր զսիրտ քո իրրեւ
7 զսիրտն Աստուծոյ , Փոխանակ այնորիկ
ահաւադիկ ես ածից ի վերայ քո օտարս
ժանտագործս յազգաց , եւ բարձեսցին
զսուր իւրեանց [2]ի քեզ, եւ՝ ի վերայ գե-
ղոյ իմաստութեան քո , եւ [3]տարածես-
8 ցեն զգեղ քո ի կորուստ . Եւ կործա-
նեսցեն՝ զքեզ , եւ մեռանիցիս մահու
9 վիրաւորաց ի սիրտ ծովու ։ Միթէ ա-
սելով ասիցե՞ս, Աստուած եմ ես, առաջի
վիրագործն քոյ . բայց դու մարդ ես, եւ
10 ոչ Աստուած . Եւ ի բազմութեան վի-
րաւորաց քոյ մեռանիցիս՝ անթլփատից
մեռանիցիս ի ձեռաց օտարաց , զի ես
խօսեցայ , ասէ Ադոնայի Տէր ։
11 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ ,
12 Որդի մարդոյ , ողբա առ ի վերայ իշխա-
նին Ծուրայ , եւ ասասցես ցնա , Այս-
պէս ասէ Տէր Տէր . Դու ես կնիք [5]նմա-
նութեան ի խմաստութեամբ, եւ պսակ
13 գեղեցկութեան . ի զրգանս դրախտին
Աստուծոյ եղեր , եւ զանհնարն ականս
պատուականս ի քեզ կապեցեր . զսար-
դիոնն եւ զտոպազիոն եւ [6]զդմրուխտ եւ
զկարկեհան եւ զյասպիսն , զսապփիրոս եւ զյասպիսն ,
[2]զարծաթ եւ զոսկի ," եւ զդոճագոյնն ,
զակատն , [2]զմանգիսին , զոսկեքարն ,
զբիւրեղն , զեղնգնաքարն . եւ [7]ոսկւով
լցուցեր զգանձս քո , եւ զչտեսմարանս
քո ի քեզ ," յօրէ յորմէ հաստատեցար
14 [8]եւ հանգերձեցար Ընդ օծելոյ քերովբ-
բէին ," առու զքեզ . ի լեառն սուրբ
Աստուծոյ եղեր . ի մէջ հրեղէն [9]վիմացն
15 եղեր անարատ յաւուրսն՝ քո , յօրէ
յորմէ հաստատեցար դու , մինչեւ գտան
16 անիրաւութիւնք ի քեզ ։ Ի բազմութենէ
վաճառաց քոց լցեր զչտեսմարանս քո ա-
նիրաւութեամբ, [10]մեղար եւ վիրաւորե-
ցար . ի լեռնէն Աստուծոյ իջոյց զքեզ
քերովբն՝ վարագուր , ի միջոյ հրեղէն
17 վիմացն ։ Բարձրացաւ սիրտ քո ի գե-
ղեցկութեան քում , [11]եւ ապականեցաւ
հանճար քո հանդերձ գեղոյն քո . վասն
բազմութեան մեղաց քոց թնկեցի՝ զքեզ
ի վերկիր . յանդիման թագաւորաց եառ
18 զքեզ ի խայտառակութիւն ։ Վասն բազ-
մութեան մեղաց քոց ի խարգախութեան
վաճառաց քոց՝ պղծեցեր զսրբութիւնս
քո . եւ հանից հուր ի միջոյ քումէ, եւ
նոյն կերիցէ զքեզ , եւ տայց զքեզ ի
մոխիր [12]յերկրին քումէ՝ առաջի ամենայն
19 տեսողացն քոց ։ Եւ ամենեքեան որ ճա-
նաչիցեն զքեզ ի մէջ ազգաց՝ [13]տրտմեա-
ցին վասն քո , զի եղեր ի կորուստ՝ , եւ
ոչ եւս իցես յաւիտեան ։
20 [3]Ի վերայ Ծայդոնեա՝ " եղեւ բան
21 Տեառն առ իս եւ ասէ , Որդի մարդոյ ,
հաստատեա զերեսս քո ի վերայ Ծայ-
դոնեա , եւ մարգարեեաց ի վերայ նորա .
22 Եւ ասասցես , Այսպէս ասէ Ադոնայի
Տէր . Ահաւասիկ ես ի վերայ քո , Ծայ-
դոն , եւ փառաւորիցայց ես ի քեզ . եւ
[14]ծանիցես թէ ես եմ Տէր՝ յառնել
ինձ [15]ի քեզ դատաստանս , եւ սուրբ ե-
23 զէից ես [16]ի քեզ ։ Եւ առաքեցից [18]ի վերայ
քո" մահ , եւ արիւն ի հրապարակս [17]քո .
Եւ անկցին վիրաւորք ի միջի [17]քում ,
սպասեալքն չուրջ [18]զքեզ սրովք , եւ ծա-
24 նիցեն թէ ես եմ Տէր ։ Եւ ոչ եւս ե-
ղիցի տանն Իսրայելի խոչ դառնութեան ,
եւ փուշ ցաւոց յամենեցունց որ չուր-
ջանակի անարգեցին զնոսա . եւ ծանիր-
ցեն թէ ես եմ Ադոնայի Տէր ։
25 Այսպէս ասէ Ադոնայի Տէր . [19]Եւ ժո-
ղովեցից" զտունն Իսրայելի յազգաց ուր
ցրուեցան անտր , եւ սուրբ եղէց ի նո-
սա առաջի ազգաց [2]եւ ժողովրդոց" . եւ

[1]ԵԲԲ. Ահա իմաստուն ես դու քան զԴանիէլ. քնաւ ոչ ծածկեցան ի քէն գաղտնիք. (4) Ի-մաստութեամբ քով և հանճարով քով [2]ԵԲԲ. պաշար [3]ԵԲԲ. ապականեսցեն զվայել չութիւն քո. (8) Ի խորխորատ իջուսցեն [4]ԵԲԲ. Աստուած ի ձեռս պատնողաց քոց. (10) Զմահ [5]Կամ, յրութեան [6]ԵԲԲ. և զսդամանդ և զյակինթ [7]ԵԲԲ. զընդեսխ և զոսկի. գործ թմբկաց քոց և սրնգաց քոց ի քեզ. [8]ԵԲԲ. Հանդերձեցաւ. (14)Դու քերովբ օծեալ որ ծածկէիր, եւ [9]ԵԲԲ. վիմացն չորէիր. (15)Եղեր անարատ ի ճանապարհս [10]ԵԲԲ. և մեղար. վասնորոյ և ես մերժեցի զքեզ իբրեւ պիղծ իլեռնէն Աստուծոյ, և կորուսի զքեզ քերովբ [11]ԵԲԲ. կորուսեր զիմաստութիւն քովասն գեղոյդ քոյ. [12]ԵԲԲ. յերկրի [13]ԵԲԲ. պարմայցին վասն քո. եղեր ի սոսկումն [14]ԵԲԲ. ծանիցեն [15]ԵԲԲ. ի նմա [16]ԵԲԲ. ի նա [17]ԵԲԲ. նորա [18]ԵԲԲ. զնովաւ. [19]ԵԲԲ. Ի ժողովել ինձ

բնակեսցեն յերկրին իւրեանց զոր ետու-
26 ծատային իմոյ Յակորա. Եւ բնա-
կեսցեն ի նմա [1]յուսով. չինեսցեն տունս
եւ տնկեսցեն այգիս, եւ բնակեսցեն [1]յու-
սով, յորժամ արարից դատաստան յա-
մենեսեան որ չարչանակի անարգեցին
զնոսա. եւ ծանիցեն թէ ես եմ Տէր
Աստուած նոցա [2]եւ Աստուած հարց
նոցա"։

Գլ. ԻԹ

*[2]Ի վերայ Եգիպտոսի եւ Փարաւոնի
արքային Եգիպտացւոց։"*

1 Յամին տասներորդի, յամսեանն տաս-
նևերորդի, որ օր [3]մի էր ամսոյն, եղեւ բան
2 Տեառն առ իս եւ ասէ. Որդի մարդոյ,
հառաջեաս զերեսս քո ի վերայ Փարա-
ւոնի արքային Եգիպտացւոց, մար-
գարեաց ի վերայ նորա եւ ի վերայ ա-
3 մենայն Եգիպտոսի. Խօսեաց եւ ասասց-
ես, Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւա-
սիկ ես ի վերայ քո, Փարաւոն արք-
այ Եգիպտացւոց, վիշապդ մեծ՝ որ
[4]նստիս ի մէջ գետոց, որ ասես թէ իմ
4 են գետքս եւ ես արարի զսոսա"։ Եւ
ես արկից սանդաստանդ ի կղակս քո,
եւ մաձուղիչ զկուներս գետոյդ ի թեւս
քո, եւ հանից [5]ի մէջոյ քո ամէն ղգետոյդ
քո", եւ ամենայն ձկունք գետոյդ կցես-
5 ցին ի թեւս քո. Եւ [6]կործանեցից զքեզ
արագ արագ," եւ զամենայն ձկունս
գետոյդ քո. ընդ երեսս դաշտին անկա-
նիցիս, եւ ոչ ժողովիսցիս, եւ ոչ եւս
հաւաքեսցիս. զի զազանաց երկրի եւ
թռչնոց երկնից տուի զքեզ ի կերակուր։
6 Եւ ծանիցեն ամենայն բնակիչքդ Եգիպ-
տացւոց թէ ես եմ Տէր, փոխանակ դի
եղեն գաւազան եղեգնեայ տանդ Իսրա-
7 յելի. Եւ յորժամ [7]յենուին ի քեզ՝ ելա-
նէիր ընդ ձեռս նոցա, եւ յորժամ բռնն
հարկանէր զքէն ամենայն ձեռն", եւ
յորժամ յենուին ի քեզ՝ խորտակէիր
եւ [8]բեկանէիր զամենայն մէջս նոցա։
8 Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր Տէր.
Ահաւադիկ ես ածեմ ի վերայ քո սուր,
եւ կորուսից ի քէն զմարդ եւ զանա-
9 սուն։ Եւ եղիցի երկիրդ Եգիպտացւոց
ի կորուստ եւ յաւերակ, եւ ծանիցեն
թէ ես եմ Տէր. փոխանակ դի [9]ասէիր՝
թէ Գետքս իմ են, եւ ես արարի զսոսա"։
10 Վասն այդորիկ ահաւասիկ ես ի վերայ քո
եւ ի վերայ [2]ամենայն գետոցդ քոց, եւ
տաց զերկիրդ Եգիպտացւոց յաւերակ եւ
ի սուր եւ ի կորուստ, ի Մակդովղայ եւ
ի Սուհնայ մինչեւ ի սահմանս Եթէով-
11 պացւոց։ Եւ մի անցցէ բնդ նա ոտն
մարդոյ, եւ հզղակ անասնոյ մի գնասց-
ցէ բնդ նա, եւ մի բնակեսցէ ամս քա-
12 ռասուն։ Եւ տաց զերկիրն [10]նորա ի կո-
րուստ" ի մէջ աւերակ երկրին, եւ քա-
ղաքք նորա ի մէջ աւերեալ քաղաքաց
եղիցին յապականութիւն ամս քառա-
սուն. եւ ցրուեցից զԵգիպտոս ի մէջ
ազգաց, եւ հոսեցից զնոսա բնդ գա-
ւառս։
13 Զի այսպէս ասէ Տէր Տէր. Ցեւս ա-
մաց քառասնից ժողովեցից զԵգիպտա-
14 ցիս յազգաց ուր ցրուեցան ի նոսա. Եւ
դարձուցից զգերութիւն Եգիպտացւոցն,
եւ բնակեցուցից զնոսա յերկրին Պա-
թուրէս՝ յերկրին ուսոյ սուան. եւ ե-
ղիցի անդ իշխանութիւն մի [11]տառապեալ
15 քան զամենայն իշխանութիւնս. եւ ե-
ղիցի" իշխարհացոյն, եւ մի եւս բարձ-
րասցի ի վերայ ազգաց, եւ սակաւա-
ւորս արարից զնոսա, զի մի [12]բազմաց-
16 ցին ի մէջ ազգաց։ Եւ մի եւս եղիցին
տանն Իսրայելի [13]յոյս յիշատակի անօրէ-
նութեան՝ երբեմն դնեսա արտից" նոցա,
եւ ծանիցեն թէ ես եմ Ադոնայի Տէր։
17 Եւ եղեւ ի քսանեւորդի եւ յեւթներորդի
ամին, որ օր մի էր ամսոյն առաջնոյ,
18 եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ. Որ-
դի մարդոյ, Նաբուքոդոնոսոր արքայ
Բաբելացւոց աշխատեցոյց զզօրս իւր աշ-
խատութեամբ մեծաւ ի վերայ Ծուրայ.
ամենայն գլուխք կնդացեալք եւ ամե-
նայն ուսք դերծեալք. եւ վարձք նմա
եւ զօրաց նորա ոչ եղեն առ ի Ծուրայ
ծառայութեանն՝ զոր ծառայեցին [2]ինձ ի
19 նմա։ Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր

---

[1] Եբր. յապահովս [2] Յ Եբր. պահոս [3] Եբր. երկոտասան [4] Եբր. Նստի ի մէջ գետոց իւրոց, որ ասէ, Իմ է գետս իմ, և ես արարի զնոսա [5] Եբր. զքէզ ի մէջոյ գետոց քոց [6] Եբր. ընկեցից զքեզ յանապատ, զքեզ [7] Եբր. բռնն հարկանէին զքէն, բեկանէիր և հերձնուիր զմեկն նոցա ողնայն [8] Եբր. ընդարմացուցանէիր [9] Եբր. ասաց, Իմ է գետս և ես արարի [10] Եբր. Եգիպտացւոց յամայութիւն [11] Եբր. խոնարհ (15)-ման զիշխանութիւնս [12] Եբր. սիրեսցեն [13] Եբր. իյոյս, յուշարար անօրէնութեան երբեմն նոցա գկնի

Տէր. Ահաւասիկ ես առ Նաբուքոդոնոսոր արքայի Բաբելացւոց զերկիրն Եգիպտացւոց, եւ առնէ զբազմութիւնն նորա, եւ աւարեսցէ զաւար նորա, եւ կողոպտեսցէ զկողոպուտ նորա, եւ եղիցի վարձ զօրաց նորա։ Փախանակ հարկին յորում ծառայեցոյց [1]ինձ ի Ծորը", եառ նմա զերկիրն Եգիպտացւոց ընդ ամենայնի զոր պատրին ինձ. այսպէս 21 ասէ Տէր Տէր. Յաւուր յայնմիկ [2]ծաղեսցէ եղջիւր ամենայն" առնն Իսրայէլի, եւ քեզ առ բերան բաց ի մէջ նոցա, եւ ծանիցեն թէ ես եմ Տէր։

Ի. Լ

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ, 2 Որդի մարդոյ, մարգարեանա եւ ասասցես, Այսպէս ասէ Ադոնայի Տէր. [3]Տէր, 3 Ո՜հ, ո՜հ, օր. Զի մերձէ [4]օր Տեառն, օր 4 մրիպ. հասանել է վախճան ազգաց։ Եւ եկեսցէ սուր ի վերայ Եգիպտացւոց, եւ եղիցի խռովութիւն ի կազմանս եթէոպացւոց [5]եւ անկցին վիրաւորք" յԵգիպտոս. եւ առցեն զբազմութիւնն նորա, եւ աւերակսցին հիմունք նորա։ 5 [6]Պարսիկք եւ Կրետացիք եւ Լիբացիք եւ Լիբէացիք", եւ ամենայն խառնաժողովքն, եւ [7]յորդւոց ուխտին իմոյ ի նմա" սրով կոտորեսցին։

6 Այսպէս ասէ [3]Ադոնայի Տէր. Կործանեսցին մկանք Եգիպտացւոց, եւ իջցէ հպարտութիւնն զօրութեան նորա, ի Մակդովղայ մինչեւ ցՍուէնէ սրով անկ- 7 ցին ի նմա, ասէ Ադոնայի Տէր. Եւ աւերիսցին ի մէջ ապականեալ աշխարհաց, եւ քաղաքք [8]նոցա ի մէջ քաղաքաց աւերելոց. Եւ ծանիցեն թէ ես եմ Տէր, յորժամ արկից հուր ի վերայ Եգիպտացւոցն, եւ խորտակեսցին ամեն- 9 նայն օգնականք նորա։ Յաւուր յայնմիկ ելցեն հրեշտակք յերեսաց իմոց [9]տագնապաբար՝ ապականել զնոտաւ յոյսն եթէոպացւոց", եւ եղիցի խռովութիւն ի նոսա [10]յաւուրն Եգիպտացւոց, քանզի ահաւասիկ հասանէ է։

10 Այսպէս ասէ Տէր Տէր. Եւ կորուսից զբազմութիւնն Եգիպտացւոցն ի ձեռն Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացւոց, 11 եւ [11]Զնա եւ զազգ" նորա ընդ նմա ահաւասիկ զօրագոյնք յազգաց, առաքեսցին կործանել զերկիրն, եւ թափեսցեն զսուրս իւրեանց ի վերայ Եգիպտոսի, եւ լցցի 12 երկիրն վիրաւորօք։ Եւ առց գետս նոցա յանապատ, եւ մատնեսցէ զերկիրն ի ձեռս չարաց, եւ կորուսից զերկիրն լրիւ իրովք ձեռօք այլազգեաց, զի ես Տէր խօսեցայ։

13 Այսպէս ասէ Տէր Տէր. Եւ կորուսից զդարչնելիսն, եւ զադարեսցուսից [12]զմեծամեծս ի Մեմփեացւոց, եւ [13]զիշխանս յերկրէն Եգիպտացւոց, եւ ոչ եւս լինիցին", եւ արկից ահ ի վերայ երկրին Եգիպտացւոց։ Եւ կորուսից [14]զերկիրն Պաթուրէս," եւ արկից հուր ի Ցոանեա, եւ [15]դատեցից զԴիոսպո- 15 լսացւոց։ Եւ հեղից զբարկութիւնն իմ ի վերայ Սայնայ, զօրութեանն Եգիպտացւոց, եւ կորուսից զբազմութիւնն 16 [16]Մեմփեացւոց։ Եւ առց հուր յԵգիպտոս, եւ խռովութեամբ խռովեսցի Սայն, եւ եղիցի [17]քաղաքն Դիոսպոլսացւոց յերկրի- 17 ծումն, եւ բզիկեսցին չորք" Երիասարդք Արեգ քաղաքի եւ Բուբաստայ անկցին սրով, եւ [18]կանայք նոցա ի գե- 18 րութիւն վարեսցին։ Եւ խաւարեսցի աւուրն ի Տափնաս, ի փշրել ինձ անդ զգաւազան իշխանութեան Եգիպտացւոցն. եւ կորիցէ անդ հպարտութիւն զօրութեան նորա, եւ զնոյն՝ մէգ ծածկեսցէ. եւ գաւառք նորա ի գերութիւն վարես- 19 ցին։ Եւ արարից զատաստանս յԵգիպտոս, եւ ծանիցեն թէ ես եմ Տէր։

20 Եւ եղեւ ի մեսասաներորդի ամի անդ, յամսեանն առաջնում, որ օր եւթն էր ամսոյն, եղեւ բան Տեառն առ իս եւ 21 ասէ, Որդի մարդոյ, զբազուկս Փարաւոնի արքային Եգիպտացւոց խորտակեցի, եւ ահա ոչ եւս պատեսցի ի բժշկութիւն, եւ ոչ տացին ի վերայ նորա գեղք, կամ թէ զօրանայցէ առնուլ 22 սուր ի ձեռին։ Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես ի վերայ

---

[1] ԵՔԲ. ի նմա [2] ԵՔԲ. բուսուցից զեղջեւրն [3] ԵՔԲ. գ-ւ-ե [4] ԵՔԲ. օր, և մերձ է օր [5] ԵՔԲ. յանկանել վիրաւորաց [6] ԵՔԲ. Եթէովպացիք և Փուտացիք և Լուդացիք [7] ԵՔԲ. Քուբացիք (Ա. Նուբիացիք) և որդիք երկրի ուխտին ընդ նոսա [8] ԵՔԲ. նորա եղիցին [9] ԵՔԲ. Նաւօք տագնապել զեթէովպացիս որ են յապահովի [10] ԵՔԲ. որպէս յաւուրն

[11] ԵՔԲ. Նա և ազգ [12] ԵՔԲ. զկուռս [13] ԵՔԲ. իշխան յերկրէն Եգիպտացւոց ոչ եւս լինիցի [14] ԵՔԲ. զՊաթուրէս [15] ԵՔԲ. ի Նովկ [16] ԵՔԲ. Նովայ [17] ԵՔԲ. Նովայ յերգիծումն և Մեմփիս տագնապեսցի ի տաւընչեան [18] ՅՔԲ. գ-ւ-ե, այլ ե՛ս՝ քնակիչք

Փարաւոնի արքային Եգիպտացւոց, եւ
խորտակեցից զբազուկս [1]նորա հզօր,
զնահարգատաս եւ զաճառապատս", եւ
23 ընկեցից զսուրն ի ձեռանէ նորա. Եւ
ցրուեցից զԵգիպտոս ընդ ազգս, եւ տո-
24 սեցից զնոսա ընդ դաւառս: Եւ զօրա-
ցուցից զբազուկս արքային Բաբելաց-
ւոց, եւ տայ զսուր իմ ի ձեռս նորա.
եւ [2]ածցէ զայն ի վերայ երկրին Եգիպ-
տացւոց, եւ աւարեսցէ զաւար նորա,
25 եւ կողոպտեսցէ զկապուտ" նորա: Եւ
զօրացուցից զբազուկս արքային Բաբե-
լացւոց, եւ բազուկքն Փարաւոնի լքցին.
եւ ծանիցեն թէ ես եմ Տէր, ի տալ ինձ
զսուրն իմ ի ձեռս արքային Բաբելաց-
ւոց, եւ [3]ձգեցից զնա ի վերայ երկրին
26 Եգիպտացւոց: Եւ ցրուեցից զԵգիպտոս
ընդ ազգս, եւ տոսեցից զնոսա ընդ դա-
ւառս, եւ ծանիցեն [4]ամենայն Եգիպ-
տացիքն" թէ ես եմ Տէր:

ԳԼ. ԼԱ

1 Եւ եղեւ յամին մեռանելոցդ, յամ-
սեանն երրորդի, որ օր մի էր ամսոյն,
2 եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ, Որ-
դի մարդոյ, ասա ցարքայն Եգիպտաց-
ւոց ցփարաւոն եւ ցզօրս իւր, Ո՞ւմ
նմանեցուցեր զքեզ ի տպաւորմիանալ
3 քում: Ահաւանիկ Ասուր լերենւ նոմ մի
ի Լիբանան գեղեցիկ չառաւիղօք եւ խիտ
ոստովք եւ բարձր մնծութեամբ, [5]ի
4 մէջ ամպոց" եղեւ գլուխ նորա. Ջուր
սնոյց զնա, անդունդք բարձրացուցին
զնա. [6]եւ գետս նորա աճ" չուրջ
զտնկովք իւրովք, եւ [7]զանտառաւիտս
իւր արձակեաց ընդ ամենայն փայտս
5 դաշտին: Վասն այնորիկ բարձրացաւ
մնծութիւն նորա քան զամենայն ծառս
դաշտին, եւ տարածեցան ոստք նորա,
եւ բարձրացան չառաւիղք նորա ի ջուրց
6 բազմաց ի տարածանել իւրում: Ի չա-
ւաւիղս նորա բնակեցին ամենայն թռըչ-
չունք երկնից, եւ ի ներքոյ ոստոցն նո-
րա ծնան ամենայն գազանք գաշտի, եւ
ընդ հովանեաւ նորա բնակեցին ամե-
7 նայն բազմութիւնք ազգաց: Եւ եղեւ
գեղեցիկ բարձրութեամբ իւրով՝ վասն
երկայնութեան ոստոց իւրոց, զի եղեն
8 արմատք նորա ի ջուրս բազումս: [8]Սարդն
եւ սարդն եւ նոճ ի դրախտին Աստու-
ծոյ՝ ոչ հաւասարեցին չառաւիղաց նո-
րա, մայրքն եւ սօսոյք ոչ՝ նմանեցին
ոստոց նորա. ամենայն փայտ ի դրախ-
տին Աստուծոյ ոչ նմանեցին նմա գե-
9 ղեցկութեամբ. [9]վասն անտառախիտ
ոստոց" նորա, եւ նախանձեցան ընդ
նմա ամենայն ծառք դրախտին փափ-
կութեան Աստուծոյ:
10 Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր Տէր.
Փոխանակ զի մեծացար մեծութեամբ,
եւ [10]հասին ծայրքդ ի մէջ ամպոց, եւ տես
11 զնշանաւորութիւն քո. Եւ մատնեցի զքեզ
ի ձեռս իշխանին ազգաց, եւ արարիցէ
12 զնա ի կորուստ" Եւ հանին զնա, եւ տա-
տակեցին զնա օտարք ժանտագործք
յազգաց, եւ տապալեցին զնա· ի վերայ
լերանց եւ յամենայն ձորս անկան ոստք
նորա, եւ խորտակեցաւ ստեղն նորա
ընդ ամենայն գաշտս երկրի. եւ իջին
ի հովանւոյ նորա ամենայն ազգք ա-
13 զանց, եւ յատակեցին զնա: [11]Եւ ի գլո-
րին" նորա՝ հանգիստ եղեւ ամենայն
թռչնոց երկնից, եւ ի ստեղն նորա հա-
14 սին ամենայն գազանք վայրի: Զի մի՛
եւս հպարտասցին ի մնծութիւն իւրեանց
ամենայն փայտք չրասունք, եւ ոչ ար-
ձակեսցեն զծայրս իւրեանց [12]ընդ ամպս",
եւ մի կացցեն ի հպարտութիւն իւր-
եանց իրրեւ զնա որ ըմպիցէ ջուր. ա-
մենեքեան ի մահ մատնեցան ի խորս երկ-
րի՝ ի մէջ որդւոց մարդկան իջելոց ի
15 խորխորատ: Այսպէս ասէ Տէր Տէր.
Յաւուր յորում էջ ի գժոխս" [13]սուգ ա-
րին ի վերայ նորա անդունդք". Եւ ար-
գելի զգետս նորա, եւ [14]խլեց ալիք ջուրց
բազմաց, եւ սխրեցաւ ի վերայ նորա
Լիբանան", եւ ամենայն ծառք դաշտի
16 լքան վասն նորա: Ի ձայնէ կործանե-

---

[1] ՆԵԲԲ. նորա, զՀզօրն և զբեկեալն [2] ՆԵԲԲ. բեկից զբազուկս Փարաւոնի, և ազաղակեսցէ զազաղակ վիրաւորի առաջի [3] ՅԵԲԲ. Ձգեսցէ [4] ՅՕԵԲԲ. գ-ի-ո-ւ [5] Կամ, ի թաւուառս [6] ՆԵԲԲ. գետք նորա գնան [7] ՆԵԲԲ. զՁրտանցս

[8] ՅԵԲԲ. Եղեւ ինք ոչ ծածկեցին զնա ի դրախտին Աստուծոյ, մայրքդ ոչ նմանեցին ոստոց նորա, և սօսիք ոչ եղեն իբրեւ զչառաւիղս նորա, ոչ [9] ՅԵԲԲ. Գեղեցկացոյց զնա անտառախիտ ոստովք [10] ՅԵԲԲ. Եւ զկատար իւր ի մէջ ամպոց (Կամ, ի թաւուառս) և բարձրացաւ սիրտ նորա ի բարձրութեան իւրում, (11) Եւ ես մատնեցի զնա ի ձեռս հզօրին ազգաց. առնելով արասցէ նմա ըստ ամենայնի ըստ անօրինութեան նորա ընկեցի զնա: [11] ՆԵԲԲ. Ի վերայ թօթափելոց [12] Կամ, ի թաւուառս [13] ՆԵԲԲ. Եւտու ոուգ առնուլ. ծածկեցի վասն նորա զանդունդս [14] ՆԵԲԲ. խցան զնորա բազումք, և տխրեցուցի վասն նորա զԼիբանան

ման նորա [1]դղրդեցան ազգք՝, յորժամ լչլուցի զնա ի գժոխս ընդ լչկալսն ի գուբ. եւ [2]մխիթարեցին զնա ի սանդարամետան ամենայն ծառք վափկութեան, եւ՝ ընտիր ընտիր պտղեցիկքն
17 *Լիբանանոս որ էին ջրարբիք։ [3]Քանզի նոքա լչին ընդ նմա վիրաւորեալ սրոյ ի գժոխս. եւ զաւակք նորա որ բնակեալ էին ընդ հովանեաւ նորա, չընդմիջել կենաց իւրեանց սատակեցան։՝*
18 *Ո՞ւմ նմանեցար [4]զօրութեամբ եւ՝ փառօք եւ մեծութեամբ՝ ի ծառս [5]վարկութեան. էջ եւ զիչիր հանդերձ ծառովք փարկութեան քո՝ ի խորս երկրի, ի մէջ անթլփատից [6]ննջեցելոց ընդ վիրաւորս սրոյ. սոյնպէս Փարաւոն եւ ամենայն բազմութիւն զօրութեան իւրոյ, ասէ Տէր Տէր։*

ԳԼ. ԼԲ

1 Եւ եղեւ յամին երկոտասաներորդի, յամսեանն երկոտասաներորդի, որ օր մի էր ամսոյն, եղեւ բան Տեառն առ իս եւ
2 ասէ, Որդի մարդոյ, ողբա առ ի վերայ Փարաւոնի արքային Եգիպտացւոց եւ ասասցես ցնա, [7]Առիւծացար ի մէջ ազգաց, եւ նմանեցար վիշապի՝ ի մէջ ծովու, եւ ոգորէիր ընդ գետս քո, եւ առ ամբակ պղտորէիր զջուրսն, եւ առաջ
3 թուր կոխան առնէիր զգետս [8]քո։ Այսպէս ասէ Տէր Տէր. Պատսպից զքեզ թակարդօք իմովք ժողովրդովք զօրաց բազմաց, եւ [9]հանից զքեզ կարթիւ ի
4 մով։ Տախտապարեցից զքեզ ի վիրայ երկրի, [10]եւ լցից քեզ դաշտք՝. եւ ի չուսից ի վերայ քո զամենայն թռչունս երկնից, եւ յագեցուսից ի քէն զամենայն
5 գազանս երկրի։ Եւ տայց զմարմինս քո ի վիրայ լերանց, եւ լցուսից զձորս [11]յարտնէ քումմէ. Եւ արբեսցի երկիր յապաւառէ քումմէ՝ ի բազմութեան քո ի վերայ լերանց, զձորս լցից՝՝
7 ի քէն։ Եւ պատրուակեցից զերկինս ի չէչանել քում, եւ խաւարեցուցից զաստեղս նորա. զարեգակն ամպով ծածկեցից, եւ լուսին մի տայէ զլոյս իւր։
8 Եւ զամենայն լուսաւորս [12]խաւարեցուցից ի վերայ քո, եւ տայց խաւար ի վերայ քո, եւ տայց խաւար ի վե-
9 րայ [13]քո, ասէ Տէր Տէր։ Եւ զայրացուցից զսիրտս ազգաց բազմաց, ի ժամանակի իրրեւ [14]հանից զգերութիւնն քո
10 ընդ ազգս յերկիր զոր ոչ գիտեցես։ Եւ ապշեցուսին ի վերայ քո ազգք բազումք՝, եւ թագաւորք նոցա զարհուրիցուսին [15]զարհուրանսցին, ի թռչել սրոյ իմոյ առաջի երեսաց նոցա ակն ունել կործանման իւրեանց յօրէ՝ կործանման քո։
11 Զի այսպէս ասէ Տէր Տէր. Սուր արքային Բաբելացւոց եկեսցէ ի վերայ [16]քո
12 Հանդերձ սրոյ սկայից, եւ կործանեցից զզօրութիւն քո. եկեսցեն ամենայն՝՝ ժանտագործք ազգաց, եւ կորուսցեն զնպաստութիւն Եգիպտացւոց, եւ խոր-
13 տակեսցի ամենայն զօրութիւն նորա։ Եւ կորուսից զամենայն անասունս նորա ի չուրց բազմաց, եւ [17]մի պղտորեսցէ զնա՝՝ ոտն մարդոյ, եւ կճղակ անասնոյ մի
14 կոխեսցէ [18]զնա։ Եւ ապա գազարեսցին չուրք նոցա, եւ գնաց նոցա նման իւ-
15 ղոյ զնասցեն՝՝, ասէ Աստուած Տէր։ Ցորժամ տայց զերկիրսն ի կորուստ, եւ աւերեսցի երկիրն լրիւ իւրով, յորժամ [19]ցրուեցից զամենայն բնակիչսն ի նմա նէ՝՝, եւ ծանիցեն [illegible] եես եմ Տէր։
16 Ողբք են, եւ ողբասցեն զնա, եւ դստերք ազգաց ողբասցեն զնա. ի վերայ Եգիպտոսի եւ ի վերայ ամենայն զօրութեան նորա ողբասցեն զնա, ասէ Տէր Տէր։
17 Եւ եղեւ յամին երկոտասաներորդի, [illegible]յամսեանն առաջնում՝՝, որ օր հնգետասան էր ամսոյն, եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,

---

[1]ՆԲԳ. դղրդեցուցի զազգս [2]ՆԲԳ. մխիթարեցան ի սանդարամետան ամենայն ծառք Եդեմայ, [3]ՆԲԳ. Սոքա եւս ընդ նմա իջին ի դժոխս առ սրա անկեալ էին սրով և բազուկ քո նորա եւս որ բնակեալ էին ընդ հովանեաւ նորա ի մէջ ազգաց, [4]Յ ՆԲԳ. գոյ-ո-ե [5]ՆԲԳ. Եդեմայ. իչլուացին հանդերձ ծառովք Եդեմայ [6]ՆԲԳ. ննջեցեալս [7]ՆԲԳ. Կորեան առիւծու ի մէջ ազգաց նմանեցար. և դու ես իբրեւ զվիշապ [8]ՆԲԳ. նոցա [9]ՆԲԳ. Հանցեն [10]ՆԲԳ. ընդ երեսս դաշտի սրկից զքեզ [11]ՆԲԳ. բարձամբք քովն(6)Եւ ոռոգեցից զերկիրն ուր լողասն՝ յարտնէ քումմէ զլերինս, և ձորք լցին

[12]ՆԲԳ. լուսոյ յերկինս՝ խաւարեցուցից [13]ՆԲԳ-յեցէն յո-ե-ը-, երկրի [14]ՆԲԳ. ածից զհո-ր-բեկման քո ընդ ազգս՝ յերկիրս զոր ոչ գիտիցեսն (10) Եւ ապշեցուցից վասն քո զազգս բազումս [15]ՆԲԳ. զարհուրեսցին վասն քո, ի շաղայուանել զսուր իմ առաջի երեսաց նոցա, և դողացին հանապազ այր իւրաքանչիւր յանձին իւրում յաւուր [16]ՆԲԳ.քո ·(12)Որով ակսից տապաստարկից զամբոխ քո, ամենեքին [17]ՆԲԳ. մի՝ եւս պղտորեցէ զնոսա (14) Յայժամ արարից չինչ զչուրս նոցա, և զգետս նոցա նման իւղոյ գնացուցից [19]ՆԲԳ. Հարից զամենայն բնակիչս նորա

18 Որդի մարդոյ, ողբս առ ի վերայ զօրութեանն Եգիպտոսի, եւ [1]իջուսցեն զդստերս նորա աղքի՛ զինեալս ի խորս
19 երկրի՝ Առ իջեալսն ի խորխորատ՝ ի ջուրց վայելչութեան, էջ ննջեա՛ ընդ
20 անթլփատս ի մէջ վիրաւորաց. Սրով անկցին ընդ նմա, եւ զապարեսցէ ա-
21 մենայն զօրութիւն նորա։ Եւ ասասցեն ցքեղ սակաւք, եկ էջ ի խորս խորինս, զի քան զմեզ լաւ էիր գու. էջ եւ դադարեա ընդ անթլփատս ի մէջ վիրաւո-
րաց՛՛ սրոյ։
22 Անդ Ասուր եւ ամենայն ժողովք նո-
23 րա, [2]ամենեքին վիրաւորք՛՛. Անդ տուաւ գերեզման նորա ի խորս խորխորատին, եւ եղեւ ժողովք նորա չուրջ զչիրմօք նորա. [3]ամենայն վիրաւորք անկան սրով, որ արարին զգերեզմանս իւրեանց յաւուրս կենդանութեան իւրեանց, եւ եղեն ժողովք չուրջ զգերեզմանօք նորա։՛՛ ամենեքին [4]վիրաւորք անկեալք ի սրոյ, որ եջեն զահ [3]իւրեանց ի վերայ երկրին կենդանութեան։
24 Անդ Եղամ, եւ ամենայն զօրութիւն նորա չուրջ զգերեզմանաւ նորա. ամենեքին վիրաւորք անկեալք ի սրոյ՝ իջին անթլփատք ի խորս երկրի, որ եջեն զահ [5]իւրեանց յերկրին կենդանութեան, եւ ընկալան [5]զամօթս իւրեանց ընդ
25 իջեալսն ի խորխորատ ի մէջ վիրաւո-
26 րաց։ Անդ տուան՛՛ Մոսոք եւ Թոբէլ, եւ ամենայն զօրութիւնք [6]նոցա չուրջ զգերեզմանաւ նորա. ամենայն վիրաւորք նորա՛՛ ամենեքեան անթլփատք
վիրաւորք անկեալք ի սրոյ, որ եջեն զահ իւրեանց ի վերայ երկրին կենդա-
27 նութեան։ Եւ ոչ ննջեցին ընդ հակայն անկեալսն [7]յաւիտենից, որ իջին ի դժոխս պատերազմօղ զինուքն իւրեանց, եւ [8]եդան անօրէնութիւնք նոցա ի վերայ ոսկերաց իւրեանց. զի զարհուրեցուցին զնոսայս ի կենդանութեան իւրեանց։
28 Եւ դու ի մէջ անթլփատից խորտակեսցիս, եւ ննջեսցես ի մէջ վիրաւորացն սրոյ։
29 Անդ Եդովմ եւ թագաւորք իւր եւ ամենայն իշխանք նորա, որ [9]եդան զզօրութիւն իւրեանց ի հարուածս սրոյ. եւ նոքա ընդ վիրաւորս ննջեցին՛՛ ընդ իջեալսն ի խորխորատ։
30 Անդ ամենայն իշխանք հիւսիսոյ, եւ [10]ամենեքեան նոքա զօրավարք Ասորեստանեա՛՛, իջեալք վիրաւորք հանդերձ ամօթիւն զօրութեան իւրեանց. ամօթա-
լից ննջեցին անթլփատք ընդ վիրաւորս սուսերայ, եւ տարան [11]զամենայնս իւրեանց ընդ իջեալսն ի խորխորատ։
31 Զնոսա տեսցէ Փարաւոն եւ մխիթարեսցի ի վերայ ամենայն զօրութեան [12]նոցա. վիրաւորք Փարաւոնի ի սրոյ, եւ ամենայն զօրութիւն նորա՛՛, ասէ Տէր
32 Տէր։ Զի [13]եա զահ իւր՛՛ յերկրին կենդանութեան, եւ ննջեսցէ ի մէջ անթլփատից [14]վիրաւորելոց սրով, Փարաւոն եւ ամենայն բազմութիւն իւր [3]ընդ նմին՛՛, ասէ Տէր Տէր։

Գլ. ԼԲ

[3]Առ որդիան Յակովբայ։՛՛

1 Եւ եղեւ յամի տասն առ իս եւ ասէ,
2 Որդի մարդոյ, խոսեաց ընդ որդիս ժողովրդեան քո, եւ ասասցես ցնոսա, Երկիր մի՝ յոյժ վիրայ ածխեմ ես սուր,
եւ առնուցուն ազգք երկրին այր մի յինքն
3 նանց, եւ կացուցանիցեն զնա զէտ, Եւ տեսանիցէ սուր եկեալ յերկիրն, եւ փող հարկանիցէ եւ ազդ առնիցէ ժողովրդեան. Եւ լսելով լսիցէ զձայն փողոյն

---

[1]ՆԲԳ. իջո՛ զնա և զդստերս ազգաց փառաւորաց ի խորս երկրի՝ առ իջեալսն ի խորխորատ։ (19) Ի՞նչ իւիք գեղեցիկ իցես. էջ և ննջեա ընդ անթլփատս։ (20) Ի մէջ սպանելոց սրոյ անկցին. մատնեցաւ նա սրոյ. քարշեցէք զնա և զամբոխ նորա։ (21) Խօսեսցին նմա հզօրք ակայից ի միջոյ սանդարամետից, հանդերձ օգնականօք նորա. իջին ննջեցին անթլփատք, սպանեալք [2]ՆԲԳ. չուրջ զնովաւ գերեզմանք նորա. ամենեքին սպանեալք՛՛ անկեալք սրոյ [3]ՆԲԳ. պակասէ

[4]Իմա՝ սպանեալք, ասի և Նբգ. [5]ՆԲԳ. զնախատինս իւրեանց ընդ իջեալսն ի խորխորատ։ (25) Ի մէջ սպանելոց արկին անկողին նմա և ամենայն բազմութեան նորա. չուրջ զնովաւ գերեզմանք նորա. ամենեքին նոքա անթլփատք, սպանեալք սրոյ, թէպէտ եւ տուաւ ահ նոցա յերկրին կենդանութեան, սակայն ընկալան զնախատինս իւրեանց ընդ իջեալսն ի գուբ, ի մէջ սպանելոց եդաւ։ (26) Անդ [6]ՆԲԳ. նորա, չուրջ զնովաւ գերեզմանք նորա.

[7]ՆԲԳ. յանթլփատից [8]ՆԲԳ. եդին զսուսերս իւրեանց ընդ գլխովք իւրեանց. սակայն եղեն [9]ՆԲԳ. եդան զօրութեամբ իւրեանց ընդ սպանեալս սրոյ, ընդ անթլփատս ննջեցին և [10]ՆԲԳ. ամենայն Սիդոնացիք [11]Կամ, զնախատինս [12]ՆԲԳ. իւրոյ. Փարաւոն և ամենայն զօրք նորա, սպանեալք սրոյ [13]ՆԲԳ. եւս զահ իմ (կամ, նորա) [14]ՆԲԳ. ընդ սպանեալս

եւ ոչ զգուշասցի, եւ հասանիցէ սուրն
եւ ըմբռնիցէ զնա, արիւն նորա ի գլուխ
5 նորին եղիցի։ Զի զձայն լուաւ զփող-
ոյն եւ ոչ զգուշացաւ, արիւն նորա ի
վերայ նորին եղիցի. եւ նա՝ զի զգու-
6 շացոյց, զանձն իւր ապրեցոյց։ Եւ ե-
թէ տեսանիցէ գէտն զսուրն եկեալ, եւ
ոչ նշանակիցէ փողով, եւ ազգն ոչ զգու-
շանայցէ, եւ եկեալ սուրն ըմբռնիցէ ի
նոցանէ անձն մի, նա վասն անօրէնու-
թեան իւրոյ ըմբռնեցաւ, եւ զարիւն
նորա ի ձեռաց գիտին խնդրեցից։
7 Եւ դու, որդի մարդոյ, դէտ եառ զքեզ տանգ Իսրայէլի, եւ լուիցես բա-
նից բերանոյ իմոյ, եւ զգուշացուսցես
8 զնոսա իբրեւ յինէն ծանել ինձ ցմեղա-
սորն թէ Մահու մեռանիցիս, եւ դու
ոչ խօսիցիս զգուշացուցանել զամպա-
րիշտն ի ճանապարհէ իւրմէ, ինքն ա-
նօրէնն յանօրէնութեան իւրում մեռցի,
եւ զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրե-
9 ցից։ Ապա թէ դու յառաջագոյն պատ-
մեացես ամպարշտին զճանապարհն իւր՝
դառնալ նմա ի նմանէ, եւ ոչ դարձցի
ի ճանապարհէ իւրմէ, ինքն յամպարշտու-
թեան իւրում մեռցի, եւ դու զանձն
քո ապրեցուսցես։
10 Եւ դու, որդի մարդոյ, ասա ցտունդ
Իսրայէլի, Այսպէս խօսեցարուք եւ ա-
սացէք, [1]Նման Մոլորութիւնք՝ մեր եւ
անօրէնութիւնք մեր ի մեզ են, եւ մեք
ի նոսին մաշիմք, եւ զիա՞րդ ապրես-
11 ցուք։ Ասա ցնոսա, Կենդանի եմ ես,
ասէ Ադոնայի Տէր, ոչ կամիմ զմահ ամ-
պարշտին, որպէս զդառնալ ամպարշտին
ի չար ճանապարհէ իւրմէ եւ կեալ. դառ-
նալով դարձարուք ի ճանապարհաց ձե-
րոց չարաց, եւ ընդէ՞ր մեռանիք, տունդ
Իսրայէլի։
12 Եւ դու, որդի մարդոյ, ասա ցորդիս
ժողովրդեան քո, Արդարութիւն ար-
դարոյն ոչ փրկեսցէ զնա՝ յաւուր յորում
մոլորեսցի, եւ անօրէնութիւն անօրի-
նին ոչ [2]չարչարեսցէ զնա՝ յաւուր յո-
րում դառնայցէ յամենայն անօրէնու-
թենէ՝ իւրմէ. եւ արդարն ոչ կարասցէ
13 ապրել յաւուր մեղաց իւրոց։ Ծանել
ինձ ցարդարն՝ թէ կենդանի կեցցես, եւ նա
յուսացեալ յարդարութիւն իւր՝ առնիցէ
անօրէնութիւն, ամենայն արդարու-
թիւնք նորա մի յիշեսցին, այլ անօրէ-
նութեամբն իւրով զոր արարէ՝ նովքին
14 մեռցի։ Եւ յասել ինձ ցամպարիշտն թէ
Մահու մեռցիս, եւ դարձցի ի մեղաց
իւրոց, եւ արասցէ իրաւունս եւ ար-
15 դարութիւն, եւ զգրաւ պարտատանն
իւրոց ասցէ, եւ զյափշտակս թիւնն
դարձուցանիցէ, ի հրամանս կենդա-
նեացէ՝ չառնել զանիրաւութիւն, կենդա-
16 նացէ, եւ մի՛ մեռցի. Ամենայն մեղք իւր
զոր մեղաւ՝ մի՛ յիշեսցին. զի իրաւունս
եւ արդարութիւն արար, [3]նոքիմիք կեցցէ։
17 Եւ ասէն որդիք ժողովրդեան քո. Ոչ
ուղիղ է ճանապարհ Տեառն. նա՝ նոցա
18 ճանապարհն ոչ է ուղիղ։ Ի դառնալ ար-
դարոյն յարդարութենէ իւրմէ եւ առնել
19 անիրաւութիւնս՝ նոքիմիք մեռցի։ Եւ
ի դառնալ մեղաւորին յանօրէնութենէ
իւրմէ եւ առնել իրաւունս եւ արդա-
20 րութիւն, նոքիմիք կեցցէ։ Եւ [5]ա՛յս է
զոր ասացէք՝ թէ Ոչ ուղիղ է ճանա-
պարհ Տեառն. զի բարքանչիւր ոք ըստ
ճանապարհաց ձերոց դատիցայց զձեզ,
տունդ Իսրայէլի։
21 Եւ եղեւ յամին երկոտասաներորդի,
ի տասներորդ ամսեանն, որ օր հինգ էր
ամսոյն գերութեան մերոյ, հնաւ առ իս
ոմն զերծեալ յերուսաղէմէ, եւ ասէ,
22 Առաւ քաղաքն։ Եւ ձեռն Տեառն եղեալ
ի վերայ իմ յերեկորեանն մինչչեւ եկեալ
էր [6]նորա, եւ երաց զբերան իմ [7]մինչ-
չեւ եկեալ էր՝ ընդ առաւօտն. եւ բա-
նալ բերանոյ իմոյ՝ ոչ եւս ամխոփեցաւ
անդրէն։
23 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
24 Որդի մարդոյ, բնակիչք աւերակաց
երկրին Իսրայէլի ասեն, Մի մարդ էր
Աբրահամ, եւ կալաւ զերկիրն. եւ արդ
մեք բազումք եմք, եւ մեզ տուեալ է
երկիրն ի ժառանգութիւն, [8]ոչ ժառան-
25 գիցեմք զնա՝՝ վասն այնորիկ ասա ցնո-
սա, Այսպէս ասէ Ադոնայի Տէր. Որով-
հետեւ ի վերայ արեանն ուտէք, եւ զաչս
ձեր արձակեցէք ի կուռս, եւ արիւն հե-
դուք, եւ կամիք զերկիրն ժառանգել։
26 [9]Եղիցի զա ձեզ ի սուր, զի՝՝ արարէք
պղծութիւնս, իւրաքանչիւր զկին ըն-
կերի իւրոյ պղծէիք. եւ արդ այդո՞ւ
27 ժառանգիցէք զերկիրն։ Վասն այնորիկ

[1] Եբէր. Ամպարշտութիւնք [2] Եբէր. սացէ նմա գլորել յաւուր յորում դառնայցէ յանօրէնութենէ
[3] Եբէր. կելով [4] Եբէր. մեռանելով [5] Եբէր. ասէքն [6] Եբէր. զերծելոյն [7] Եբէր. մինչեւ կէն առ իս [8] Ցնոսա պակաս [9] Եբէր. Ասացէք ապստամբ իսուր ձեր,

ասա ցնոսա, Այսպէս ասէ Տէր Տէր. կենդանի եմ ես [1]Տէր, եթէ ոչ որ յաւերական իցեն որոյ անկցին, եւ որ ընդ երեսս գաչտին իցեն՝ գազանաց [2]անասպաի տացին՝ ի կերակուր, եւ որ ընդ պարսպաքն եւ յայրս իցեն՝ մահաւ [3]կո-
28 տորեցիք. Եւ տաց զերկիրն յաւերակ եւ յապականութիւն, եւ կորիցէ հպարտութիւնն զօրութեան նորա. եւ աւերեսցին լերինք Իսրայէլի, զի մի ոք ի-
29 ցէ որ գնացէ ընդ նոսա։ Եւ ծանիցին եթէ ես եմ Տէր, [4]ես արարիչ զերկիր նոցա աւերակ, եւ աւերեսցի՝ վասն ամենայն պարշտեացս իւրեանց զոր արարին։

30 Եւ դու, որդի մարդոյ, որդիք ժողովրդեան քո չոչին քովմնչեն զքէն առ պարսպաքն եւ ի դրունս տպարանիցն, եւ ասեն մի ընդ միմեանս այր ընդդէմ իւր, ժողովեսցուք երթիցուք լսիցուք զպատ-
31 գամն որ ելեալ ի Տեառնէ։ Եւ արդ գան առ քեզ որպէս [5]ժողովեալք ի ժողովուրդ, եւ նստին առաջի քո՝ ժողովուրդն իմ լսել դրանս քո, եւ ոչ առնեն զնոսա. զի [6]առատութիւն է ի բերանս նոցա, եւ զնոսա պղծութիւնն իւրեանց
32 գնան սիրտք իւրեանց։ Եւ դու լինիցես՝ նոցա լերկու զձայն երգոյ քաղցրաբարբառ յօրինելոյ, եւ [7]լսիցեն զբանս քո եւ ոչ առասցեն՝։ Եւ յորժամ գայցէ, (առասցեն, թէ Ահաւասիկ եկաս,) ծանիցեն թէ մարգարէ գոյ ի մէջ նոցա։

ԳԼ. ԼԴ

[1]Առ հովիւսն Իսրայէլի։՝

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
2 Որդի մարդոյ, մարգարեաց ի վերայ հովուացդ Իսրայէլի, մարգարեաց եւ ասասցես ցհովիւսդ, այսպէս ասէ Տէր Տէր. [8]Ո՛ հովիւք՝ Իսրայէլի. միթէ հովիւք զանձինս արածեն. ո՞չ հովիւք
3 պիտի արածեն Արդ ասաւիկ զկաթինդ ուտէք, եւ զաւրդ ապօնիք, զպարարեան

զհօտս, եւ զխաչինս [1]իմ ոչ արածէք։
4 Զակաթացեալն ոչ զօրացուցէք, եւ զհիւանդացեալն ոչ բժշկեցէք, [1]զչարչարեալն ոչ յանձանձեցէք,՝ եւ զբեկեալն ոչ պատեցէք, զմոլորեալն ոչ դարձուցէք, եւ զկորուսեալն ոչ խնդրեցէք. [9]զհասասահարուեան աշխատ արարէք՝։
5 Եւ ցրուեցան խաչինք իմ, քանզի ոչ գոյին նոցա հովիւք. եւ եղեն կերակուր գազանաց անապատի, եւ ցրուեցան։
6 Եւ մոլորեցան խաչինք իմ ընդ ամենայն լերինս եւ ընդ ամենայն բլուրս բարձունս, եւ ընդ ամենայն երեսս երկրի ցրուեցան խաչինք իմ. եւ ոչ ոք էր որ խնդրէր, եւ ոչ այն որ գարձուցանէր։

7 Վասն այնորիկ, հովիւք, լսեարուք
8 զպատգամս Տեառն. Կենդանի եմ ես ասէ Ադոնայն Տէր [1]Տէր, եթէ ոչ փոխանակ զի եղեն խաչինք իմ յաւար, եւ մատնեցան խաչինք իմ ի կերակուր գազանաց անապատի, վասն զի ոչ գոյին հովիւք, եւ ոչ խնդրեցին հովիւք զխաչինս իմ, եւ լուծին հովիւքն զանձինս իւրեանց, եւ զխաչինս իմ ոչ արածէին.
9 Փոխանակ այնորիկ լսեարուք, հովիւք,
10 զպատգամս Տեառն. Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես ի վերայ հովուացդ, եւ պահանջեցից զխաչինս իմ ի ձեռաց դոցա, եւ դադարեցուցից զդոսա յարածելոյ զխաչինս իմ, եւ ոչ եւս արածեսցեն [10]զնոսա. եւ փրկեցից զխաչինս իմ [11]ի ձեռաց դոցա, եւ ոչ եւս եղիցին դոցա ի կերակուր։

11 Զի այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւադիկ ես ինքնին խնդրեցից զխաչինս իմ,
12 եւ այց արարից դոցա։ Զօր օրինակ խնդրիցէ հովիւ զհօտ իւր՝ յաւուր յորում իցէ [1]մէգ եւ մառախուղ՝ ի մէջ խաչանց իւրոց, վասնեզոց, այնպէս խնդրեցից զխաչինս իմ, եւ ժողովեցից զնոսա յամենայն տեղեացս ուր ցրուեցան ի նոսա յաւուր միգի եւ մառախ-
13 ղի։ Եւ հանից զնոսա յազգաց, եւ ժողովեցից զնոսա ի դաւառաց, եւ առից զնոսա յերկիրն իւրեանց, եւ արածեցից զնոսա ի վերայ լերանց Իսրայէլի եւ ի ձորս եւ յամենայն բնակու-
14 թիւնս երկրին. Ցարօտս փափկութեան

[1] ՁԵբր. պահ [2]Եբր. տաց [3]Եբր. ժեռանիցին [4]Եբր. յաձնել ինձ զերկիրն յաւեր և յանապատ [5]Եբր. գոյ ժողովուրդն, եւ նստին առաջի քո որպէս [6]Եբր. յօժարութիւն է ի բերան նոցա, իսկ ինքեանք գնան զհետ ցանկութեան սրտից իւրեանց։ (32) Եւ դու ես [7]Եբր. լսեն զբանս քո եւ ոչ առնեն [8]Եբր. Վայ հովուացդ

[9]Եբր. եւ բառնութեամբ իշխեցէք նոցա եւ անագորոնութեամբ [10]Եբր. Հովիւք զանձինս իւրեանց [11]Եբր. ի բերանոյ

արածեցից [1]զնոսա ի լերինն բարձուս Իսրայէլի՝, եւ անդ եղիցին մակաղատեղք նոցա, [2]անդ գադարեսցեն եւ անդ հանգիցին ի գրդուվխան՝ բարուվխանց եւ յարօտս պարարտուվխան արածեսցին ի վերայ լերանցն Իսրայէլի։ 15 Ես արածեցից զխաչինս իմ, եւ ես հանգուցից զնոսա, [3]եւ ծանիցին՝ մէկ ես եմ Տէր։ Այսպէս՝ ասէ Տէր Տէր. Զկորուսեալն խնդրեցից եւ զմոլորեալն դարձուցից, զբեկեալն պատեցից եւ զվատեալն զօրացուցից, զդէրն եւ զհզօրն [4]պահեցից, եւ արածեցից զնոսա իրաւամբք։

17 Եւ դուք, խաչինք իմ, այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես [5]ոչխար առ ոչխար դատեցայց, եւ խոյ ընդ խոյ՝։ 18 Զիցէ՞ ձեզ բաւական զհնդեցիլ արօտն [3]յառաջագոյն արածել, այլ եւ զմնացեալ ճարակն ի ձէնջ առ ոտն կոտորէիք, եւ զջուրն յատակ ըմպէիք, եւ 19 զմնացեալն առ ոտն պղտարէիք։ Եւ խաչինք իմ զկոխան ոտից ձերոց ճարաս կէին, եւ զջուրն պղտորեալ ի կճղակաց ձերոց ըմպէին։

20 Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Տէր[6]. Ահաւադիկ ես դատեցայց ի մէջ հարուստ 21 եւ անաւադ ոչխարաց. Փոխանակ զի կողամբք եւ ուսովք ձերովք զրմբգէիք, [3]եւ ոգորէիք՝ եւ եղջերովք ձերովք խեթկէիք զամենայն անաւազն, եւ ի բաց մերժէիք զնոսա, մինչեւ ցրուեսցան խաչինք իմ, եւ ոչ եւս լինիցին ի յափշտակու- 23 թիւն, դատեցայց [7]խոյ առ խոյ՝։ Եւ կացուցից ի վերայ նոցա Հովիւ մի՝ զծառայ իմ զԴաւիթ, եւ նա հովուեսցէ զնոսա, 24 սա, նա եղիցի նոցա հովիւ։ Եւ ես Տէր եղէց նոցա յԱստուած, եւ Դաւիթ ծառայ իմ իշխան ի մէջ նոցա. ես Տէր 25 խօսեցայ։ Եւ եղից ընդ [8]Դաւիթ ուխտ խաղաղութեան, եւ ապականից զդազանս չարս յերկրէ, եւ բնակեսցեն յանապատին [9]յուսով, եւ ննջեսցեն յանտառս։ 26 Եւ տաց նոցա չուրջ զբերամբ

[1] ՆԲԷ. զնոսա, եւ ի լերինն բարձունս Իսրայէլի եղիցի արօտ նոցա [2] ՆԲԷ. յարօտս [3] ՅՈ. պ-ԼՈՒ [4] ՆԲԷ. կորուսից [5] ՆԲԷ. դատեցայց ի մէջ ոչխարի և ոչխարի, խոյոց եւ նոխազաց [6] ՆԲԷՅԵՁԷՆ յՈ-ԻԷ-, զնոսա [7] ՆԲԷ. ի մէջ ոչխարի եւ ոչխարի [8] ՆԲԷ. Նոսա [9] ՆԲԷ. յապահովս

բամով օրհնութիւն, եւ տաց [10]ձեզ անձրեւ՝, եւ եղիցին անձրեւք օրհնութեան։ 27 Եւ ծառք ագարակի տայցեն զպտուղս իւրեանց, եւ երկիր տայցէ զզօրութիւն իւր, եւ բնակեսցեն յերկրի իւրեանց [9]յուսով խաղաղութեանց՝։ Եւ ծանիցին մէկ ես եմ Տէր ի խորտակել լծէ զլուծ պարանոցի նոցա, եւ փրկեսցէ զնոսա 28 ի ձեռաց ծառայեցուցչաց իւրեանց, եւ ոչ եւս եղիցին յաւար ի մէջ ազգաց, եւ գազանք երկրի մի՛ եւս կերիցեն զնոսա. եւ բնակեսցեն [9]յուսով, եւ ոչ ոք 29 իցէ որ զարհուրեցուցանիցէ զնոսա։ Եւ կանգնեցից նոցա առուն [11]խաղաղութեան, եւ ոչ եւս վատնցին ի սովոյ ի վերայ երկրի, եւ նախատինս յաղգաց 30 ոչ եւս կրեսցեն։ Եւ ծանիցին մէկ ես Տէր Աստուած նոցա ընդ նոսա եմ, եւ նոքա ժողովուրդ իմ՝ առնն Իսրայէլի, ասէ Տէր Տէր։

31 Եւ դուք, խաչինք իմ, ոչխարք արօտի իմոյ, մարդիկ էք, եւ ես Տէր Աստուած ձեր, ասէ Տէր Տէր։

ԳԼ. Լ Ե

[3]Ի վերայ Եդոմայեցւոցն՝։

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ, 2 Որդի մարդոյ, դարձո զերեսս քո ի վերայ լերինդ Սէիրայ, եւ մարգարեաց ի 3 վերայ դորա, եւ ասասցես դմա, Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես ի վերայ քո, լեառնդ Սէիր, եւ ձգեցից զձեռն իմ ի քեզ, եւ տաց զքեզ յանապատ՝ եւ 4 աւերեսցիս. Եւ զքաղաքս քո յաւեր դարձուցից, եւ եղիցիս աւերակ, եւ ծանիցիս մէկ ես եմ Տէր։

5 Փոխանակ զի եղեր ի թշնամութիւն յաւիտենից, եւ [12]դարանակալ նստէիր նենգութեամբ տանն Իսրայէլի, ի ձեռն թշնամանաց սրոյ ի ժամանակի նեղութեան՝, ի ժամանակի անիրաւութեան 6 յետին վախճանի, Վասն այնորիկ կենդանի եմ ես, ասէ Տէր Տէր, [13]մէկ ոչ յարիւն մեղար՝, եւ արիւն հալածեսցէ զքեզ, [14]եւ զարիւնն զոր առեցեր՝ նոյն՝ 7 արիւն հալածեսցէ զքեզ։ Եւ տաց զլեառնդ Սէիր յաւերակ եւ յանապատ, եւ կո-

[10] ՆԲԷ. անձրեւս ի ժամանակի իւրում [11] ՆԲԷ. անուանի [12] ՆԲԷ. մատնեցեր զորդիսն Իսրայէլի ի սուր սուսերի ի ժամանակի նեղութեան նոցա [13] ՆԲԷ. զի արարից զքեզ յարիւն [14] ՆԲԷ. այնու զի ոչ առեցեր զարիւն՝

բուսից ի դմանէ [1]զմարդ եւ զանասուն.
8 Եւ յայսմ գլխիկնս վիրաւորօք քովք՝
զբլուրս քո եւ զձորս քո, եւ յամենայն
[2]դաշտս քո վիրաւորեալք ի սրոյ անկ-
9 ցին ի քեզ։ Ճաւիրակ յաւիտենից հոսիցէ
զքեզ. եւ քաղաքք քո ոչ եւս չինեսցին,
եւ ծանիցեն [3]թէ ես եմ Տէր։
10 Փոխանակ ասելոյն՝ թէ երկու ազգքն
եւ երկու աշխարհք իմ հղիցին, եւ ժա-
ռանգիցիմ զնոսա, (եւ Տէր անդ էր.)
11 վասն այնորիկ կենդանի եմ ես, ասէ
Տէր Տէր. եւ արարից ընդ քեզ ըստ
[4]ինամութեան քումմէ, եւ ըստ նախան-
ձուն քումմէ զոր արարեր առիւ զնոսա,
եւ ծանուցայց [5]քեզ յորժամ դատեցայց
12 զքեզ. Եւ ծանիցես թէ ես եմ Տէր.
լուայ զձայն հայհոյութեանց քոց զի ա-
սէիր, թէ լերինք Իսրայելի աւերակք՝
13 մեզ տուեալ են ի կերակուր. Եւ մե-
ծարանեցեր ի վերայ իմ բերանովք քովք,
եւ հնչեցէք առ իս զբանս ձեր, եւ ես
լուայ։
14 Այսպէս ասէ Տէր Տէր. Ցուրախութիւն
ամենայն երկրի՝ արարից զքեզ յաւերակ։
15 Փոխանակ զի ոանձնաւ եղեր ժառանգու-
թեան տանն Իսրայելի՝ զի ապականե-
16 ցաւ, Նոյնպէս արարից զքեզ, եւ եղի-
ցիս աւերակ, լեառնդ Սէիր, եւ ամե-
նայն [6]Իդովմա սաստակեսցի՝, եւ ծանի-
ցեն թէ ես եմ Տէր [7]Աստուած նոցա՝։

Գլ. ԼԶ

[8]ի վերայ լերանցն Իսրայելի։՝

1 Եւ դու, որդի մարդոյ, մարգարեաց ի
վերայ լերանցն Իսրայելի, եւ ասասցես
ցլերինսն Իսրայելի, Լուարուք զսաս-
2 գամս Տեառն. Այսպէս ասէ Տէր Տէր.
Փոխանակ զի ասաց թշնամին ի վերայ
ձեր, Վաչ վաչ, [9]աւերակք յաւիտենից
3 ի ժառանգութիւն եղեն մեզ, Վասն այ-
դորիկ մարգարեաց եւ ասասցես, Այս-
պէս ասէ Տէր Տէր. Փոխանակ զի [10]հե-
ղէք յանարգութիւն ամենայն ազգաց որ
չուրջ զձեզ են, եւ վատարանդի եղէք
ազգաց բազմաց,՝ խօսք լեզուաց եւ
4 նախատինք ազգաց, Վասն այդորիկ,

[1] Ելք. զոր անցանէն և գառնայն. [2] Ելք. հեղեղատս
[3] Ելք. ի նոսա [4] Ելք. եղովմ [5] Ելք. պահ-ս
[6] Ելք. բարձունք [7] Ելք. աւերեցին եւ կլին զձեզ
չուլքանակի, լինել ձեզ ժառանգութիւն
ինացորդաց ազգաց, եւ

լերինք Իսրայելի, լուարուք զպատգամս
Աստուծոյ Տեառն. այսպէս ասէ Տէր
Տէր ցլերինսն եւ ցբլուրս եւ ցձորս
եւ ցձորս եւ ցաւերակս ապականեալս
եւ ցգաղաքս լքեալս՝ որ եղեն յաւար եւ
5 կոխոտմն մնացելոց ազգացդ որ չուրջ
զձեզ են. Վասն այդորիկ այսպէս ասէ
Տէր Տէր. Եթէ ոչ հրով բարկութեան
իմոյ խօսեցայց ի վերայ այլոց ազգացն,
եւ ի վերայ ամենայն Եդոմացւոցն,
զի արարին զերկիրն իմ իւրեանց ի վտա-
րանդի. [8]ոանձնարութեամբ անարգելոյն
զանձինս ապականել աւարաւ՝։
6 Վասն այնորիկ մարգարեաց ի վերայ
երկրին Իսրայելի, եւ ասասցես ցլերինս
եւ ցբլուրս եւ ցձորս եւ ցգաշտս, Այս-
պէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես նա-
խանձու իմով եւ բարկութեամբ խօսե-
ցայ, փոխանակ կրելոյն ձերոյ նախա-
7 տինս ի հեթանոսսն։ Վասն այնորիկ
այսպէս ասէ Աստուծոյ Տէր. Ամբարձի
զձեռն իմ ի վերայ ազգացդ որ չուրջ
զձեզ են, Նոքա ընկալցին զամար-
8 գանս իւրեանց։ Բայց [9]դուք, լերինդ
Իսրայելի, զմասղող եւ զպտղիւնս կե-
րիցէ ժողովուրդ իմ Իսրայէլ, զի ակն
9 ունին գառնալոյ։ Ահաւասիկ ես հայե-
ցայց ի ձեզ, եւ արկանիցիք ի գործ, եւ
10 սերմանիցիք՝. Եւ բազմացուցից ի ձեզ
մարդիկ, համօրէն զտունն Իսրայելի
ի սպառ. եւ բնակեսցին քաղաքք, եւ
11 աւերակք չինեսցին։ Եւ բազմացուցից
ի ձեզ զմարդ եւ զանասուն, բազմաս-
ցին եւ աճեսցեն, եւ բնակեցուցից զձեզ
որպէս ի սկզբանէն, եւ բարի արարից
ձեզ [10]որպէս եւ յառաջագոյն՝, եւ ծանի-
12 ջիք թէ ես եմ Տէր։ Եւ [11]տիրեցուցից
ձեզ՝ մարդիկ զժողովուրդն իմ Իսրա-
յէլ. եւ ժառանգեսցին զձեզ, եւ եղիջիք
նոցա ի բնակութիւն, եւ ոչ եւս [12]կին-
ցիք անզաւակ ի նոցանէն՝։
13 Այսպէս ասէ Տէր Տէր. Փոխանակ զի
ասացին ցքեզ՝ թէ երկիր մարդաւար ես

[8] Ելք. ուրախութեամբ ամենայն սրտի, արհա-
մարհանօք անձին վասն մասնելոյ զնա յաւար
[9] Ելք. դուք, լերինք Իսրայելի, զբարեւնակս ձեր
արձակիցէք, և զպտուղս ձեր բերիցէք ժողովր-
դեան իմում Իսրայելի. զի մերձ են գալ. (9)Զի
ահաւասիկ ես առ ձեզ եմ, եւ ի ձեզ դար-
ձայց, եւ մշակեսջիք եւ սերմանեսջիք [10]Ելք.
առաւել քան զառաջինն [11]Ելք. գնացուցից
ի վերայ ձեր [12]Ելք. յաւելուցուք անզաւա-
կեցուցանել զնոսա

դու, եւ [1]անզաւակ յազգէ քումմէ" եւ-
14 ցկր, վասն այսորիկ ոչ եւս լինիցիս
մարգապար, եւ զազգդ քո անզաւակ ոչ
15 եւս արասցես, ասէ Տէր Տէր։ Եւ [2]ա-
նարգանք ազգոց ի ձեզ ոչ եւս լինի-
ցին", եւ նախատինս ի ժողովրդոց այլ
ոչ եւս կրեսցես, եւ [3]ազգդ քո այլ ոչ
եւս [4]անզաւակեսցի, ասէ Տէր Տէր։
16 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
17 Որդի մարդոյ, առնդ Իսրայէլի բնա-
կեցին յերկրին իւրեանց, եւ պղծեցին
զնա ճանապարհօք իւրեանց եւ [5]կռովք
իւրեանց եւ պղծութեամբք" իւրեանց.
բոտ պղծութեան սպարահի եղեւ ճա-
18 նապարհ դոցա առաջի իմ։ Եւ հեղի
զսրտմտութիւն իմ ի վերայ դոցա վասն
արեանն զոր հեղին յերկրին, եւ կռովք
19 իւրեանց պղծեցին զնա. Եւ ցրուեցի
զդոսա ընդ ազգս, եւ [6]հոսեցի զդոսա"
ընդ գաւառս. ըստ ճանապարհաց դո-
ցա, եւ բոտ [7]մեղաց իւրեանց դատեցայ
20 զդոսա։ Եւ մտին յազգս, եւ ուր մտինն՝
եւ անդ պղծեցին զանուն իմ սուրբ,
յասելն զնոսա թէ ժողովուրդ Տեառն
21 են զոքա, եւ յերկրէն նորա ելին։ Եւ
խնայեցի [8]ի դոսա վասն անուան իմոյ
սրբոյ", զոր պղծեցին առնդ Իսրայէլի
ի մէջ ազգացդ յոր մտին ի նոսա։
22 Վասն այդորիկ ասա դառնդ Իսրա-
յէլի, Այսպէս ասէ Տէր Տէր. ոչ [9]ձեզ
ինչ առնեմ", առնդ Իսրայէլի, այլ վասն
անուան իմոյ սրբոյ զոր պղծեցէք ի մէջ
23 ազգացդ յորս մտէք ի դոսա։ Եւ սրբե-
ցից զանուն իմ մեծ որ պղծեցաւ ի մէջ
ազգացդ՝ զոր դուք պղծեցէք ի մէջ դո-
ցա. Եւ ծանիցեն ազգքդ եթէ ես եմ
Տէր, ասէ Ադոնայի Տէր, ի սրբելն ի-
24 մում ի ձեզ յանդիման դոցա։ Եւ առից
զձեզ ի հեթանոսաց, եւ ժողովեցից
զձեզ յամենայն ազգաց, եւ տարայց
25 զձեզ յերկիրն ձեր։ Եւ ցանեցից ի վե-
րայ ձեր ջուր սուրբ, եւ սրբեսջիք.
յամենայն պղծութեանց ձերոց, եւ յա-
26 մենայն կռոց ձերոց սրբեցից զձեզ. Եւ
տայ ձեզ սիրտ նոր, եւ ոգի նոր [10]նո-
րոգեցից ի ձեզ, եւ հանից զսիրտն քա-
րեղէն ի մարմնոց ձերոց, եւ տայ ձեզ
27 սիրտ մարմնեղէն. Եւ զՈգի իմ տայ
ձեզ, եւ արարից՝ զի յարգարութիւնս
իմ գնասջիք, եւ գիրաւունս իմ պահի-
28 ցէք եւ առնիցէք գնոսա. Եւ բնակիցէք
յերկրին զոր ետու հարցն ձերոց, եւ
դուք եղիջիք ինձ ի ժողովուրդ եւ ես
29 եղէց ձեզ յԱստուած։ Եւ զերծուցից
զձեզ յամենայն պղծութեանց ձերոց, եւ
կոչեցից զդորեան եւ բազմացուցից զնա,
30 եւ ոչ ածից ի վերայ ձեր սով։ Եւ բազ-
մացուցից զպտուղ ծառոյ, եւ զարգիւնս
անդոյ, զի մի եւս ընդունիցիք զնա-
31 խատինս սովոյ ի մէջ ազգաց։ Եւ յիշես-
ջիք զճանապարհսն ձեր չարս եւ զգնացս
ձեր զանլաւս, եւ ատելագործիք [11]յե-
րեսաց անօրէնութեանցն ձերոց եւ [12]ի
32 գարշելեացն ձերոց։ Ոչ վասն ձեր ինչ
առնեմ զայս, ասէ Տէր Տէր, այլ յայտնի
լիցի ձեզ. ամաչեցէք եւ պատկառեցէք
ի ճանապարհաց ձերոց, տունդ Իսրայէլի։
33 Այսպէս ասէ Տէր Տէր. Ցաւուր յո-
րում սրբեցից զձեզ յամենայն անօրէ-
նութեանց ձերոց, եւ չինեսցին աւե-
34 րակք, եւ բնակեցուցից զքաղաքս. Եւ
երկիրն ապականեալ՝ գործեսցի, փոխա-
նակ զի ապականեցաւ յանդիման ամե-
35 նայն անցաւորաց։ Եւ ասասցեն, եր-
կիրն ապականեալ եղեւ իբրեւ զպար-
տէզ [13]փափկութեան, եւ քաղաքքն ա-
ւերակք, ապականեալք եւ քանդեալք՝
36 ամրացեալք նստան։ Եւ ծանիցեն ազգք
որ միանգամ չուրջ զձեզ մնացեալք ի-
ցեն, թէ ես եմ Տէր, որ չինեցի զա-
ւերեալսն, եւ հաստատեցի զապակա-
նեալսն, ես Տէր խօսեցայ, եւ արարից։
37 Այսպէս ասէ Տէր Տէր. [14]Զայս եւս
այց արարից տանզ" Իսրայէլի առնել
դոցա, բազմացուցից զմարդիկ դոցա
38 իբրեւ զիաչխս։ Իբրեւ զոչխարս սուրբս,
իբրեւ զոչխարս Երուսազեմի ի տօնս
իւրեանց, այնպէս եղիցին քաղաքքն
աւերեալք՝ լի խաչամբք մարդկան, եւ
ծանիցեն թէ ես եմ Տէր։

ԳԼ. ԼԷ

[15]Վասն Ցարութեան։"

1 Եւ եղեւ ի վերայ իմ ձեռն Տեառն, եւ
հան զիս Հոգւովն Տեառն, եւ եդ զիս

---

[1] ԵԲԲ. անզաւակեցուիչ ազգաց քոց [2] ԵԲԲ. ոչ եւս տաց լսել ի քեզ զանարգանս ազգաց [3] ԵԲԲ. զազգդ [4] ԵԲԲ. անզաւակեսցես [5] ԵԲԲ. գործովք [6] ԵԲԲ. Հոսեցան [7] ԵԲԲ. գործոց [8] ԵԲԲ. անուան իմում սրբոյ [9] ԵԲԲ. վասն ձեր առնեմ զայս [10] ԵԲԲ. տաց

[11] ԵԲԲ. յերեսաց ձերոց վասն [12] ԵԲԲ. վասն գարշելեացն [13] ԵԲԲ. եդեմայ [14] ԵԲԲ. Վասն այսր եւս խնդրեցայց ի տանէդ [15] ՅԵԲԲ. գլուխ

ի մէջ դաչտին, եւ այն լի էր ոսկերօք
2 մարդկան. Եւ չրջեցոյց զիս չուրջ զոսկերօքն, եւ ահա բազում յոյժ էին ի վերայ երեսաց դաչտին, եւ ցամաքեալք յոյժ։
3 Եւ ասէ ցիս, Որդի մարդոյ, իցէ՞ թէ կենդանի լինիցին ոսկերք այդոքիկ. եւ
4 ասեմ, Տէր Տէր, դու գիտես զայդ։ Եւ ասէ ցիս, [1]Որպի մարդոյ," մարգարեաց ի վերայ ոսկերացդ այդոցիկ եւ ասասցես ցդոսա, Ոսկերք ցամաքեալք, լսա-
5 րուք զպատգամն Տեառն. Այսպէս ասէ Տէր Տէր ցոսկերսդ յայդոսիկ. Ահաւասիկ ես ածից ի վերայ ձեր չունչ [2]կեն-
6 դանի. Եւ տայ ի ձեզ ջիղս, եւ ածից ի վերայ ձեր մարմինս, եւ ձգեցից ի վերայ ձեր մորթ, եւ տայ զոգի [1]իմ ի ձեզ, եւ լինիջիք կենդանի, եւ ծանիջիք թէ ես եմ Տէր։
7 Եւ մարգարէացայ որպէս եւ հրամայեաւ ինձ Տէր։ Եւ եղեւ բարբառ ի մարգարէանալն իմում, եւ ահա չարժումն. եւ մերձեցաւ ոսկր առ ոսկր առ իւրա-
8 քանչիւր յօդս։ Եւ տեսի եւ ահա [3]ջիղք եւ մարմինք պատէին, եւ ձգէր ի վերայ նոցա մորթ[4], եւ չունչ ոչ դոյր ի
9 նոսա։ Եւ ասէ ցիս, Մարգարեաց, որդի մարդոյ, մարգարեաց [5]ի վերայ չնչոյն", եւ ասասցես ցչունչն, Այսպէս ասէ Տէր Տէր. Եկ, չունչ, ի չորից հողմոց, եւ փչեա ի մեռեալս յայսոսիկ եւ կեցցին։
10 Եւ մարգարէացայ որպէս եւ հրամայեաւ ինձ Տէր. եւ եմուտ ի նոսա չունչն, եւ եղեն կենդանի. եւ կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրեանց, ժողովուրդ բազում յոյժ յոյժ։
11 Եւ խօսեցաւ ընդ իս Տէր եւ ասէ, Որդի մարդոյ, ոսկերքդ այդոքիկ՝ ամենայն տունդ Իսրայելի է. եւ դոքա ասեն, Չորացան ոսկերք մեր, հատաւ
12 յոյս մեր եւ մեռաք։ Վասն այդորիկ մարգարեաց եւ ասասցես ցդոսա, Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւադիկ ես բացից զգերեզմանս ձեր, եւ հանից զձեզ ի գերեզմանաց ձերոց, ժողովուրդ իմ, եւ տարայց զձեզ յերկիրն Իսրայելի։
13 Եւ ծանիջիք եթէ ես եմ Տէր, ի բանալ ինձ զգերեզմանս ձեր եւ հանել զձեզ ի գերեզմանաց ձերոց, ժողովուրդ իմ,
14 Եւ տաց զոգի իմ ի ձեզ, եւ լինիջիք կենդանի. եւ[6]եղից զձեզ յերկրին ձերում, եւ ծանիջիք թէ ես եմ Տէր. եւ խօսեցայ եւ արարի, ասէ Տէր [1]Տէր։
15 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
16 Եւ դու որդի մարդոյ, առ դու քեզ գաւազան մի, եւ գրեա ի նմա զՅուդա եւ զորդիսն Իսրայելի զմերձաւորս նորա. եւ առցես քեզ գաւազան երկրորդ, եւ գրեսցես ի նմա զՅովսէփ, զգաւազանն Եփրեմի, եւ զամենայն որդիսն
17 Իսրայելի զաւելեալսն ի նոսա. Եւ կցեսցես զնոսա ընդ միմեանս [1]կապեայ՝ լինել ի գաւազան մի, եւ եղիցի ի ձեռին
18 [7]քում։ Եւ եղիցի յորժամ ասասցեն ցքեզ որդիք ժողովրդեան քո, Ո՞չ պատմես
19 մեզ զինչ է այդ իքեզ, Ասասցես ցնոսա, Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես առից [8]զազգդ Յովսեփու որ է ի ձեռին Եփրեմայ, եւ զազգդ Իսրայելի զմերձաւորս գորա, եւ [9]տաց զդոսա յազգն Յուդայ, եւ եղիցին" ի մի գաւազան.
20 Եւ եղիցին մի ի ձեռին [10]Յուդայ։ Եւ ե-
21 ղիցին գաւազանքդ յորս դու գրեցեր՝ ի ձեռին քում առաջի նոցա։ Եւ ասասցես ցնոսա, Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւադիկ ես առնում զազգն Իսրայելի ի միջոյ ազգացդ յորս մտին ի նոսա, եւ ժողովեցից զդոսա յամենայն ազգաց որ չուրջ զդոքօք են, եւ տարայց զդոսա
22 յերկիրն [11]Իսրայելի. Եւ տաց" զդոսա յազգ մի յերկրին [1]իմում ի լերինսն Իսրայելի, եւ մի իշխան եղիցի ի վերայ ամենեցուն դոցա ի թագաւոր. եւ ոչ եւս եղիցին յերկուս ազգս, եւ ոչ եւս բաժանեսցին յերկուս թագաւորութիւնս
23 [12]Զի մի՛ եւս պղծեսցին ի կուռս իւրեանց եւ ի գարշելիս իւրեանց եւ յամենայն ամպարշտութիւնս իւրեանց. եւ փրկեցից զդոսա յամենայն [13]անօրէնութեանց դոցա զոր" մեղան ի նոսա, եւ սրբեցից զդոսա, եւ եղիցին ինձ ի ժողովուրդ,
24 եւ ես եղէց դոցա Աստուած։ Եւ ծառայ իմ Դաւիթ՝ [14]իշխան ի մէջ" դոցա, եւ մի հովիւ եղիցի ամենեցուն դոցա. [12]զի ըստ հրամանաց իմոց գնասցեն, եւ

---

[1] ՅԵբէ. պահաբ [2] Եբէ. եւ կենդանասջիք [3] Եբէ. ջիղք ի վերայ նոցա [4] Եբէ. աէբ-ըէբ-ըէլ-, ի վերուստ [5] Եբէ. առ չունչն

[6] Եբէ. Հանդուրէից [7] Եբէ. քում մի։ [8] Եբէ. զգաւազանդ [9] Եբէ. եդից զնոսա ընդ նմա, ընդ գաւազանին Յուդայ, եւ արարից զնոսա [10] Եբէ. իմում [11] Եբէ. իւրեանց։ (22) Եւ արարից [12] Եբէ. Եւ [13] Եբէ. բնակութեանց (կամ, ուխտազանցութեանց) նոցա յորս [14] Եբէ. թագաւոր ի վերայ

զիրաւունս իմ պահեսցեն եւ արասցեն
25 զնոսա ։ Եւ բնակեսցեն յերկրին իւրեանց
զոր ետու ես ծառայի իմում Յակոբայ
ուր բնակեցին հարք [1]իւրեանց . եւ բնա-
կեսցեն դոքա ինձ , եւ որդիք դոցա
եւ որդիք որդւոց դոցա մինչեւ յաւի-
տեան . եւ Դաւիթ ծառայ իմ եղիցի իշ-
26 խան դոցա յաւիտեան ։ Եւ եղիցի դոցա
ուխտ խաղաղութեան , ուխտ յաւիտե-
նական եղիցի ընդ դոսա . եւ [*]տայց դո-
սա" եւ բազմացուցից զդոսա , եւ եղիցի
զաքրութիւնս իմ ի մէջ դոցա յաւիտ-
27 եան ։ Եւ եղիցի [2]բնակութիւն իմ ի դո-
սա , եւ եղէց դոցա յԱստուած , եւ դո-
28 քա եղիցին ինձ ի ժողովուրդ ։ Եւ ծանիե-
ցեն ազգք թէ ես եմ Տէր որ [3]սրբեցի
զդոսա" , իւրինել սրբութեանց իմոց ի
միջի դոցա յաւիտեան ։

ԳԼ . ԼԸ

Ի վերայ Գովգայ եւ Մագովգայ ։"

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ ,
2 Որդի մարդոյ , հառաջեա զերեսս քո
ի վերայ Գովգայ , երկրին Մագովգայ ,
իշխանին [5]Ռովսիսովքայ եւ Թոբելայ ,
3 եւ մարգարեա ի վերայ նորա , Եւ ա-
սասցես [4]ցնա , Այսպէս ասէ Տէր Տէր .
Ահաւասիկ ես ի վերայ քո , [6]իշխանդ
4 Ռովսիսովքայ եւ Թոբելայ . Եւ պա-
չարեցից" զքեզ , եւ արկից զանդանա-
ւանդ ի կզակս քո , եւ [7]ժողովեցից զքեզ
եւ զամենայն զօրութիւնս քո , զհե-
ծեալս եւ զերիվարս , զվառեալս եւ
զսպառազէնս ազգաց բազմաց , վահա-
նաւորս եւ սաղաւարտաւորս եւ սուսե-
5 րաւորս . Եւ ամենեքեան սոքա ընդ նո-
սա , Պարսիկք եւ Եթէովպացիք . [8]Լի-
բէացիք եւ Լիպացիք" , ամենեքեան սա-
6 զաւարտակք եւ վահանաւորք . Գոմեր
եւ ամենեքեան որ չուրջ են զնովաւ , եւ
տունն Թորգոմայ ի ծագացն հիւսիսոյ ,
եւ ամենեքեան որ չուրջ զնովաւ , եւ
ազգք բազումք ընդ քեզ ։
7 Պատրաստեա , պատրաստեա զանձն
քո , դու եւ ամենայն ժողովք որ ժողովեալ
են ընդ քեզ , եւ եղիցես [9]ինձ յառա-
8 ջապահ ։ Ցետ աւուրց բազմաց [10]պատ-
րաստեսցի , ի վախճան ժամանակաց և-
կեսցէ եւ հասցէ" յերկիրն յապահով ի
սրոյ . ժողովեալ յազգաց բազմաց [11]յեր-
կիրն Իսրայելի , որ եղեւ աւերակ հա-
մօրէն , եւ նոքա յազգաց ժողովեալ՝ եւ
բնակեալ խաղաղութեամբ" ամենեքեան ։
9 Եւ ելցես իբրեւ [12]զուռնդրեւ , եւ հասցես
իբրեւ զամպ եւ ծածկեսցես զերկիրն . եւ
եղիցես դու եւ ամենայն ազգք բազումք՝
որ չուրջ զքեզ իցեն ընդ քեզ ։
10 Այսպէս ասէ Տէր Տէր . Եւ եղիցի յա-
ւուր յայնմիկ անկանիցին բանք ի սիրտ
11 քո , եւ խորհեսցիս խորհուրդս չարս . Եւ
ասասցես , Ելից ի վերայ յապահով երկ-
րին , հասից ի վերայ հանդարտեցողն
յանհոգութեան , բնակելոցն ի խաղա-
ղութեան , ամենեցունց որ բնակեալ են
յերկրին , որոց ոչ պարիսպք եւ ոչ նիգք
12 եւ ոչ դրունք , Աւարել զաւար , կողոպ-
տել զկապուտ նոցա , արկանել զձեռն
[13]իմ ի վերայ երկրին աւերելոյ եւ բնա-
կելոյ , եւ ի վերայ ազգին ժողովելոյ
յազգաց բազմաց , ստացեալոց ինչս եւ
[14]գաստակերտս , բնակելոց ի սիրտ երկ-
13 րի ։ Սաբա եւ Դեդան եւ վաճառականք
[15]կարքեդոնացւոց եւ ամենայն աւանք"
նորա ասիցեն ցքեզ , Ցառ յաւար սր-
չաւեալ գաս . ժողովեցեր զժողովս քո
[16]առնուլ զարծաթ եւ զոսկի , վարել ի
կերուածին զստացուածս" եւ կողոպտել
զկապուտ մեծ ։
14 Վասն այնորիկ մարգարեաց , որդի
մարդոյ , եւ ասասցես ցԳովգ , Այսպէս ասէ
Տէր Տէր . Ո՞չ ապաքէն յաւուր յայնմիկ
յորում բնակեսցէ ժողովուրդ իմ Իսրա-
15 յէլ խաղաղութեամբ՝ [17]զարթիցես , եւ
եկեսցես ի տեղւոջէ քումմէ ի ծագաց
հիւսիսոյ , դու եւ բազում ազգք ընդ
քեզ հեծեալ երիվարս , ամենեքեան ընդ
16 գունդս բազումս զօրաց բազմաց ։ Եւ
ելանիցես ի վերայ ժողովրդեան իմոյ Իս-
րայէլի՝ իբրեւ զամպ ծածկեալ զերկիրն .
ի յետին ժամանակի եղիցի այն . եւ ա-
ծից զքեզ յերկիր իմ , զի ծանիցեն ազ-

[1] Ա։Բէր. Ձեր ։ Ա։Բէր. եգիպ զդոսա [2] Ա։Բէր. խորան [3] Ա։Բէր. սրբեմ զՒսրայէլ [4] Ա։Բէր. գ-ն-ո-ե [5] Ա։Բէր Ռովսայ, Մոսովքայ [6] Ա։Բէր. Խոփգ, իշխան Ռոշայ, Մոսովքայ , և Թոբելայ . (4) Եւ դարձուցից [7] Ա։Բէր. Հանից — [8] Ա։Բէր. Փուտացիք [9] Ա։Բէր. նոցա

[10] Ա։Բէր. եղիցի քեզ Հանդէս. ի վախճան ժամանակաց եկեսցես [11] Ա։Բէր. ի լերինն Իսրայելի , որ էին աւերակ համօրէն, և ապատեալք յազգաց բնակեցեն յապահովս [12] Ա։Բէր. զմրրիկ [13] Ա։Բէր. քո [14] Ա։Բէր. խաշինս [15] Ա։Բէր. Թարսոն եւ ամենայն կորիւնք առիւծուց [16] Ա։Բէր. կապտել կապո՞ւտ, բառնալ զարծաթ և զոսկի, առնուլ խաշինս եւ վաճառս [17] Ա։Բէր. գիտասցես

ամենայն ազգք, ի լինել ինձ սուրբ ի մէջ քում առաջի նոցա, Գովզ։
17 Այսպէս ասէ Տէր Տէր ցԳովզ. Դո՞ւ ես
վասն որոյ խօսեցայ յաւուրսն առաջնոյ
ի ձեռն ծառայիցն իմոց մարգարէիցն Իս-
րայելի[1] յաւուրսն յայնոսիկ եւ յամսն,
18 ածել զքեզ ի վերայ նոցա։ Եւ եղիցի
յաւուր յայնմիկ յորում եկեսցէ Գովզ ի
վերայ երկրիգ Իսրայելի, ասէ Տէր Տէր,
ելցէ սրտմտութիւն իմ բարկութեամբ.
19 Եւ ի նախանձ իմ՝ հրով բարկութեան ի-
մոյ խօսեցայ, եթէ ոչ՝ յաւուր յայնմիկ
եղիցի չարժումն մեծ ի վերայ երկրին
20 Իսրայելի։ Եւ խռովեսցին յերեսաց իմոց
ձկունք ծովու եւ թռչունք երկնից եւ
գազանք գաշտաց, եւ ամենայն սողունք
երկրի, եւ ամենայն մարդիկ որ ի վե-
րայ երեսաց երկրի. լերինք պատառեսցին, եւ [2]ձորք տապալեսցին, եւ ամե-
նայն պարիսպք երկրին կործանեսցին։
21 Եւ կոչեցից [3]զահ սրոյ ի վերայ նորա՝
ասէ Տէր Տէր. սուր առն ի վերայ եղ-
22 բօր իւրոյ լինիցի։ Եւ զատեցայց զնա
արեամբ եւ մահու, եւ հեղեղօք անձ-
րեւաց եւ վիմօք կարկտի եւ հուր եւ
ծծումբ տեղացից ի վերայ նորա, եւ ի
վերայ [4]ամենեցունն որ ընդ նմա իցեն՝
եւ ի վերայ ազգաց բազմաց որ ընդ նմա
23 Եւ մեծացայց եւ սուրբ եղէց, [5]եւ փա-
ռաւորեցայց՝ եւ ծանուցայց առաջի
ազգաց բազմաց, եւ ծանիցեն թէ ես եմ
Տէր։

Գլ. Լթ

1 Եւ դու, որդի մարդոյ, մարգարեաց ի
վերայ Գովգայ եւ առասցես, Այսպէս
ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես ի վերայ
քո, Գովգ՝ իշխանդ [6]Ռովամիսովքայ եւ
2 Թոբելայ. Եւ ժողովեցից՝ զքեզ եւ ա-
ռաջնորդեցից քեզ, եւ հանից զքեզ ի
ծագաց հիւսիսոյ, եւ ածից զքեզ ի վե-
3 րայ լերանցն Իսրայելի։ Եւ [7]կոտրեսից
զաղեղն քո ի ձախմէ ձեռանէ քումմէ,
եւ զնետս քո յայմէ ձեռանէ [8]քումմէ,
4 եւ կործանեցից զքեզ ի վերայ լերանցն
Իսրայելի, եւ՝ անկանիցես դու եւ ա-
մենքին որ զքեւ իցեն, եւ ազգքն որ ընդ
քեզ [9]իցեն՝ մատնեսցին ի կերակուր հա-
ւուց եւ ամենայն թռչնոց," եւ ամենայն
գազանաց անապատի տուու զքեզ ի կե-
5 րակուր. Ընդ երեսս գաշտին անկցիս,
6 զի ես խօսեցայ, ասէ Տէր Տէր։ Եւ ա-
ռաքեցից հուր ի վերայ Մագովգայ, եւ
[10]բնակեսցին կղզիք՝ ի խաղաղութեան,
7 եւ ծանիցեն թէ ես եմ Տէր։ Եւ ա-
նուն իմ սուրբ ծանիցի ի մէջ ժողո-
վրդեան իմոյ Իսրայելի, եւ մի՛ եւս
պղծեսցի անուն իմ սուրբ. եւ ծանիս-
ցեն [5]ամենայն ազգք երկրի թէ ես եմ
8 Տէր, Սուրբն Իսրայելի։ Ահաւասիկ հա-
սեալ է, եւ [5]ծանիցես թէ" լինիցի, ա-
սէ Տէր Տէր. այս է օրն զորմէ խօսե-
9 ցայ։ Եւ ելցեն բնակիչք քաղաքաց Իս-
րայելի, [11]եւ այրեսցեն զզէնս, զնիզա-
կաբեկս, զասպարաբեկս, զնետս, զբեկորս
ազեղանց, զաիզաբատնս, զսրընդակոթս, եւ
այրեսցեն իւրեանց այրելիս եւթն ամի։
10 Եւ մի՛ առցեն փայտ ի վայրաց, եւ մի՛ հատ-
ցեն փայտ յանտառաց, այլ զզէնսն այ-
րեսցեն ի կրակի. եւ առցեն յաւարի
զաւարառուս իւրեանց, եւ կողոպտեսս-
ցեն զկողոպտիչս իւրեանց, ասէ Տէր
Տէր։
11 Եւ եղիցի յաւուր յայնմիկ տաց Գով-
գայ տեղի [12]անուանի գերեզման յԻսրա-
յելի, զկիրիմ եհիլոցն ի կողմանց ծո-
վուն, եւ չինեսցեն չուրջ զափամբք
ձորոյն" եւ թաղեսցեն անդ զԳովգ եւ
զամենայն ժողովս նորա, եւ [13]կոչեսցի
12 Գեհ գերեզման" Գովգայ։ Եւ թաղեսցեն
զնոսա տունն Իսրայելի, զի սրբեսցէ
13 երկիրն, զեւթն ամիս։ Եւ թաղեսցեն
զնոսա ամենայն ժողովուրդք երկրին.
եւ եղիցի նոցա անուանի օրն յորում
14 փառաւորեցայց, ասէ Տէր Տէր։ Եւ արս
նմին իրի զսամարեացիսն երթալ չրջել ընդ
երկիրն, եւ [14]թաղել զմնացորդս ի վերայ
երեսաց երկրին [15]եւ սրբել զնա յետ եւթն
15 ամաց։ Եւ խնդրեսցէ ամենայն որ" ան-
ցանիցէ ընդ երկիրն, եւ յորժամ տես-
անիցէ ոսկր մարդոյ՝ չինեսցէ առ նո-

---

[1] ՆԵբր. ասելոյ, որ մարգարէանային [2] ՆԵբր. բարձունք [3] ՆԵբր. ի վերայ նորա, յամենայն լերինս իմ, սուր [4] ՆԵբր. զնգից նորա [5] ՅՆԵբր. պատ-ե [6] ՆԵբր. Ռովայ, Մոսոքայ եւ Թոբելայ ։(2)Եւ դարձուցից [7] ՆԵբր. Հանից [8] ՆԵբր. քումմէ ընկեցից։ (4)Ի վերայ լերանցն Իսրայելի

[9] ՆԵբր. իցեն. գիշակեր թռչնոյ ամենայն ազգի [10] ՆԵբր. բնակեսցէ ի կղզիս [11] ՆԵբր. եւ Հուր հարցեն եւ [12] ՆԵբր. անդ ի գերեզման յԻսրայելի, զձորն անցաւորաց յարեւելս ծովուն. եւ արգելցէ զանցաւորսն, [13] ՆԵբր. կոչեսցեն զնա Ձոր բազմութեան [14] ՆԵբր. թաղել Հանդերձ անցաւորաք [15] ՆԵբր. սրբել զնա .. յետ եւթն ամաց քաւեսցեն։ (15) Ար

վաւ նչանակ ինչ, մինչեւ թաղեսցեն զայն որք թաղենն [1]ի Գեհ ի գերեզմա-
16 նին" Գովզայ։ Զի եւ անուն քաղաքին [2]Գերեզմանն կոչեսցի, եւ արբեսցի երկիրն։
17 Եւ դու, որդի մարդոյ, այսպէս ասէ Տէր Տէր. Առա ցամենայն հաւս թռչունս եւ ցամենայն գազանս դաշտի, ժողո-
վեցարուք եւ եկայք, ժողովեցարուք յամենայն կողմանց երկրի ի զենուումն իմ զոր ես գենի ձեզ՝ զենուումն մեծ ի վե-
րայ լերանցն Իսրայելի, կերայք միս եւ
18 արբէք արիւն. կերայք զմիս հակաիյ, եւ արբէք զարիւն իշխանաց երկրին, զիսոյս եւ [3]զղուարակս եւ զնոխրապս. զի
զուարակք պարարեալք են" ամենեւ-
19 քեան։ Եւ կերիջիք ճարպ ցյաղ, եւ արբջիք արիւն ցարբենալ ի զենուածս ի-
20 մոյ զոր գենի ձեզ։ Եւ յագեսջիք ի սե-
զանոյ իմմէ, ի հեծելոյ եւ յերիվարաց, ի սպայից, եւ յամենայն արանց պատե-
21 րազմողաց, ասէ Տէր Տէր։ Եւ տայց զփառս իմ [4]ի ձեզ, եւ տեսցեն ամենայն ազգք զդատաստանն իմ զոր արարի,
եւ զձեռն իմ զոր ածի ի վերայ նոցա։
22 Եւ ծանիցեն տունն Իսրայելի՝ թէ ես եմ Տէր Աստուած նոցա, յօրէ յայնմանէ եւ
23 առ յաւպայ։ Եւ ծանիցեն ամենայն ազգք, թէ վասն մեղաց իւրեանց գերեցան տունն Իսրայելի, փոխանակ զի սնար-
գեցին զիս, [5]դարձուցի զերեսս իմ ի նոս-
ցանէ, եւ մատնեցի զնոսա ի ձեռս թշնա-
մեաց իւրեանց, եւ անկան ամենեքեան
24 ի սուր։ Վասն պղծութեան նոցա եւ ա-
նօրէնութեանց նոցա արարի նոցա զայն,
եւ [6]դարձան երեսք" իմ ի նոցանէ։
25 Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր Տէր. Արդ դարձուցից զգերութիւնն Յակո-
բայ, եւ ողորմեցայց [7]տանն Իսրայելի,
եւ նախանձեցայց վասն անուան ի-
26 մոյ սրտոյ։ Եւ ընկալցին զանարգանս իւրեանց եւ զանիրաւութիւնն զոր ա-
նիրաւեցան[7], ի բնակեցուցանել զնոսա յերկրին իւրեանց խաղաղութեամբ, եւ
27 ոչ ոք իցէ որ զարհուրեցուցանիցէ։ Ի դարձուցանել զնոսա զնոսա յաղգաց, եւ ժողովել զնոսա ի դաւառաց [8]հնեմա-
սաց, եւ սուրբ եղէց ի նոսա առաջի
28 [9]ազգաց։ Եւ ծանիցեն թէ ես եմ Տէր Աստուած նոցա, [10]յերեւել զնոսա ի
մէջ ազգաց". եւ ժողովեցից զնոսա յեր-
կիրն իւրեանց, եւ ոչ եւս թողից ի նո-
29 ցանէ ուրեք։ Եւ ոչ եւս [11]դարձուցից զերեսս իմ ի նոցանէ, [12]վասն զի եղէց
զհոգի իմ ի վերայ տանն Իսրայելի, ասէ Տէր Տէր։

Գլ. Խ

[13]Վասն չինուածոյ Տաճարին։"

1 Եւ եղեւ ի քսաներորդի եւ հինգերոր-
դի ամի գերութեան մերոյ, յամսեանն առաջնում որ օր[14]մեաւասան էր ամսոյն,
ի չորեքտասաներորդի ամի առնոյ քա-
ղաքին, յաւուր յայնմիկ եղեւ ի վերայ
2 իմ ձեռն [15]Տեառն, եւ ած զիս ի տես-
լեան Աստուծոյ յերկիրն Իսրայելի, եւ
եղ զիս ի վերայ լերին մեծ բարձու յոյժ.
եւ ի վերայ նորա իբրեւ դչինուած քա-
3 ղաքի [16]դէմ յանդիման"։ Եւ տարաւ զիս ի նմանս, եւ ահա այր մի, եւ տեսիլ
նորա իբրեւ զտեսիլ փայլուն պղնձոյ,
եւ ի ձեռին նորա էր լար չինողաց եւ
ձող չափոյ, եւ ինքն կայր [17]ի վերայ
4 դրանն"։ Եւ ասէ ցիս այրն, [18]Տեսեր, որ-
դի" մարդոյ, արդ հայեաց աչօք քովք,
եւ լուր ականջօք քովք, եւ հասատա-
սեա ի մտի քում զամենայն զոր ես
ցուցից քեզ. զի վասն ցուցանելոյ քեզ
[19]ելի այսր, եւ ցուցցես զամենայն զոր
դուք տեսանեա՝ տանն Իսրայելի։
5 Եւ ահա չուրջ զտաճարաւն [20]փողոց,
եւ ի ձեռին առնն ձող չափոյ ի վեց
[21]կանգնոյ եւ թզաւ. եւ չափեաց զլայ-
նութիւնն պարսպային հաւասար ձողոյն,
եւ բարձրութիւնն նորա հաւասար ձողոյն։
6 Եւ եհաս ընդ դուռնն որ հայէր ընդ
արեւելս՝ [22]զելեալն սանդիանօք, եւ չա-
փեաց զկոզակսն վեց վեց զկամարօք
զրանն հաւասար ձողոյն. եւ զերկայ-
նութիւն կոզակին հաւասար ձողոյն, եւ
զլայնութիւն նորին հաւասար ձողոյն. եւ
կամար ի մէջ կոզակացն ի վեց կանգ-

---

[1] ՆԲԲ. ի Զորն բազմութեան [2] ՆԲԲ. Համոնա, այլեւս՝ բազմութիւն [3] ՆԲԲ. զգառինս եւ զնոխազս, զեզարակս, պարարեալք Բասանու
[4] ՆԲԲ. յագցո [5] ՆԲԲ. եւ թաքուցի զերեսս [6] ՆԲԲ. թաքուցի զերեսս [7] ՆԲԲ. ամենայն տանն Իսրայէլ [8] ՆԲԲ. թշնամեաց իւրեանց
[9] ՆԲԲ. ազգաց բազմաց [10] ՆԲԲ. ի խախտել իմ զնոսա յազգս [11] ՆԲԲ. թաքուցից զի հեղի զհոգի [12] ՆԲԲ. տան [13] ՆԲԲ. գ-ի-ե [14] ՆԲԲ. տասն [15] ՆԲԲ. Տեառն, եւ տարաւ զիս անդր Որդի [16] ՆԲԲ. առ դրանն [17] ՆԲԲ. ածար [18] ՆԲԲ. պարիսպ արտաքուստ [19] ՆԲԲ. կանգնոյ · լ-ե-ո-ն կանգնաւ [20] ՆԲԲ. եւ ել յատաճկանս նորա, եւ չափեաց զեամ դրանն հաւասար ձողոյ ի լայնութիւն, եւ [21] ՆԲԲ. կանգնոյ · լ-ե-ո-ն կանգնաւ [22] ՆԲԲ. եւ ել յատաճկանս նորա, եւ չափեաց զեամ դրանն հաւասար ձողոյ ի լայնութիւն, եւ

7 նոյ։ Եւ կոզակն երկրորդ հաւասար ձո-
ղոյն ի լայնութիւն, եւ հաւասար ձո-
ղոյն յերկայնութիւն, եւ կամարն ի հինգ
8 կանգնոյ։ Եւ կոզակն երրորդ հաւասար
ձողոյն յերկայնութիւն, եւ հաւասար ձո-
ղոյն ի լայնութիւն, եւ կամար պրանն
9 մերձ ի կոնք դրանն յութ կանգնոյ. Եւ
կամարք յերկուց կանգնոց, եւ կամարք
10 ներքին դրանն։ Եւ կոզակք դրանն դէմ
յանդիման միմեանց՝ երեք աստի եւ ե-
րեք անտի. եւ չափ մի էր երեցուն, եւ
չափ մի [1]կամարացն՝ աստի եւ անտի։
11 Եւ չափեաց զլայնութիւն մուխ դրանն
ի ասան կանգնոյ, եւ զերկայնութիւն
12 դրանն յերեքտասան կանգնոյ։ Եւ [2]ի մի
կանգուն բովանդակեալ դէմ յանդիման
կոզակացն՝ ի մի կանգուն սահմանեալ
յայս կոյս յայն կոյս, եւ կոզակքն՝ աս-
13 տի եւ անտի ի վեց վեց կանգնոյ։ Եւ
չափեաց զդուռնն [3]ի պարսպէ կոզակին
մինչեւ յորմ կոզակին՝, ի լայնութիւն
քսան եւ հինգ կանգուն. [4]եւ այն էր
14 դուռն ի դրան վերայ։ Եւ զմիջոց կա-
մարի դրանն եւ զկոզակս նորին ի վաթ-
15 սուն կանգնոյ չուրջ դպրատրն. Եւ զմի-
ջոց սրահին արտաքնոյ եւ զմիջոց կա-
մարի դրանն ներքնոյ՝ ի յիսուն կանգ-
16 նոյ։ Եւ պատուհանք ծածուկ էին ի կո-
զակն, եւ ի կամարսն ներքուստ դրան
սրահին չուրջ չրջանակաւ. նոյնպէս եւ
կամարացն, եւ պատուհանք չուրջ ներ-
քոյ եւ արտաքոյ, եւ ի վերայ կամա-

զվեց եւս սեամն հաւասար ձողոյ ի լայնու-
թիւն։ (7) Եւ սենեակքն իւրաքանչիւր հաւա-
սար ձողոյ յերկայնութիւն եւ հաւասար ձողոյ
ի լայնութիւն, և անդրպատ սենեկացն ի հինգ
կանգնոյ եւ սեամ գրանն որ առ սրահի գրան ի
ներքուստ հաւասար ձողոյ։ (8) Եւ չափեաց զքրահ
գրանն ի ներքուստ հաւասար ձողոյ. (9) Եւ
չափեաց զքրահ գրանն կանգնոյն ութ, և գրան
գիք նորա յերկուց կանգնոց. եւ սրահ գրանն եր
ի ներքուստ։ (10) Եւ սենեակք գրանն որ ընդ
արեւելս՝ [1]ԵՒՔ. գրանգեացն [2]ԵՒՔ. սահ-
մանն առաջի սենեկացն կանգուն մի ասպէ, եւ
կանգուն մի սահման անտի. եւ սենեակքն
[3]ԵՒՔ. ի տանեաց մինչ սենեկին մինչեւ ի տանին
միւսոյ սենեկին [4]ԵՒՔ. գուռն յանդիման
գրան։ (14) Եւ արար գգրանգիս ի վաթսուն
կանգնոյ, եւ մինչեւ ի գրանգիս գաւթին որ
չուրջ գգրամբն. (15) Եւ յերեսաց գրանն ար-
տաքնոյ մինչեւ յերեսս սրահի գրանն ներքնոյ
յիսուն կանգուն։ (16) Եւ պատուհանք վան-
դակապատք ի սենեակսն եւ ի գրանգիս նոցա
ի ներքուստ գրանն չուրջ չրջանակաւ, նոյն-
պէս եւ ի սրահն, եւ պատուհանք ի ներքուստ

րացն արմաւենիք աստի եւ անտի։
17 Եւ տարաւ զիս ի ներքին սրահն. եւ
ահա դահլիճք եւ սիւնք չրջանակօք՝
չուրջ զսրահիւքն յօրինեալք. երեսուն
դահլիճք ի մէջ սեանցն չրջանակաց։
18 Եւ սիւնք դէմ յանդիման գրանցն ըստ
երկայնութեան գրանցն, եւ սիւնք չրջա-
19 նակաւ ի ներքոյ։ Եւ չափեաց զլայնու-
թիւն սրահին ի միջոցէ գրանն արտաք-
նոյ մինչեւ ցմիջոց գրանն ներքնոյ որ
հայէր ընդ արեւելս՝ հարեւր կանգուն։
20 Եւ տարաւ զիս ի կողմն հիւսիսոյ, եւ
ահա դուռն մի որ հայէր ընդ հիւսի-
սի սրահին արտաքնոյ. եւ չափեաց զնա
21 յերկայնութիւն եւ ի լայնութիւն, եւ
զկոզակս նորա աստի եւ անտի, եւ զկա-
մարն եւ զկոնքն եւ զարմաւենիս. եւ
եղեւ ըստ չափոյ գրանն որ հայէր ընդ
արեւելս՝, յիսուն կանգուն երկայնու-
թիւն եւ քսան եւ հինգ կանգուն ի լայ-
22 նութիւն։ Եւ պատուհանք նորա եւ
[5]կամարք եւ արմաւենիք ըստ՝ գրանն
որ հայէր ընդ արեւելս. եւ ընդ եւթն
աստիճանս ելանէին ի նա, եւ [6]էր կա-
23 մարակաւ ի ներքոյ։ Եւ դուռն ներքին
սրահին հայէր ընդ դուռն հիւսիսոյ՝
ըստ օրինակի գրանն որ հայէր ընդ ա-
րեւելս. եւ չափեաց զսրահն՝ գրանէ ի
գուռն՝ հարեւր կանգուն։
24 Եւ տարաւ զիս ընդ կողմն հարաւոյ,
եւ ահա դուռն մի որ հայէր ընդ հա-
րաւ. եւ չափեաց [7]զնա եւ զկոզակս
նորա եւ զկոնքս եւ զկամարս՝ ըստ նմին
25 չափոյ։ Եւ պատուհանք նորա եւ [8]կա-
մարք չուրջանակաւ՝ ըստ օրինակի պա-

չուրջ չուրջանակաւ, եւ ի վերայ գրանգեացն
արմաւենիք։
(17) Եւ եմոյծ զիս ի գաւթին արտաքին. եւ
ահա գահլիճք եւ քարայատակ չուրջանակի
վան գաւթին. գահլիճք երեսուն ի քարայա-
տակին։ (18) Եւ քարայատակն որ առ գրանն՝
էր յանդիման երկայնութեան գրանցն, քա-
րայատակն որ ի խոնարհ։ (19) Եւ չափեաց զլայ-
նութիւն յերեաց խոնարհագոյն գրանն ցերեսս
գաւթին ներքնոյ արտաքուստ, հարեւր կան-
գուն ընդ արեւելս եւ ընդ հիւսիսի։ (20) Եւ
չափեաց գերկայնութիւն եւ զլայնութիւն
գրանն որոյ երեք ի հիւսիսակողմն ի գաւթին
արտաքնում։ (21) Եւ սենեակք նորա երեք
աստի եւ երեք անտի. եւ գրանգիք նորա եւ
սրահք նորա էին ըստ չափոյ գրանն առաջնոյ
[5] ԵՒՔ. սրահք նորա և արմաւենիք նորա ըստ չափոյ
[6] ԵՒՔ. սրահքն էին առաջի նոցա։ (23) Եւ գուռն
գաւթին ներքնոյ էր յանդիման գրանն հիւսի-
սոյ և արեւելից, եւ չափեաց [7] ԵՒՔ. զգրանգիս
նորա եւ զրահս նորա [8] ԵՒՔ. սրահք նորա

տուհանիցն [1]եւ կամարացն առաջնոյն",
յիսուն կանգուն յերկայնութիւնն եւ քա-
26 ւան եւ հինգ կանգուն ի լայնութիւնն : Եւ
եւթն սանդուղք ի նմա , եւ [2]կամարք
ի ներքս", եւ արմաւենիք ասի ի եւ ան-
տի ի վերայ [3]կոնքացն :
27 Եւ դուռն ներքոյ հանդէպ դրան արա-
հին որ հայէր ընդ հարաւ , եւ չափեաց
զարահն դրանէ ի դուռն ի լայնութիւնն
28 հարեւր կանգուն ի կողմն հարաւոյ : Եւ
տարաւ զիս ի սրահն ներքին դրանն որ
հայէր ընդ կողմն" հարաւոյ. եւ չա-
փեաց զդուռնն որ ընդ հարաւ բան նմին
29 չափոյ : Եւ [4]զկողմակն եւ զկամարս եւ
զկոնքս նոյնպէս չափոյ . եւ պատուհանք
նորա եւ կամարք չուրջ չրջանակաւ ,
յիսուն կանգուն յերկայնութիւնն եւ քա-
30 ւան եւ հինգ ի լայնութիւն : Եւ չուրջ գնո-
վաւ կամարք՝ յիսուն կանգուն յերկայ-
նութիւնն եւ քաւան" եւ հինգ ի լայնու-
31 թիւն : Եւ [5]կամարք յարտաքնում սրա-
հին , եւ արմաւենիք ի կամարսն , եւ
32 եւթն սանդուղք ելանելիք նորա : Եւ
տարաւ զիս ի դուռնն որ հայէր ընդ ճա-
նապարհ արեւելից , եւ չափեաց զնա
33 ըստ առաջնոյն չափոյն. Զկողմակն եւ զկա-
մարսն եւ զկոնքսն՝ ըստ նմին չափոյ .
եւ պատուհանք ի նմա , եւ կամարք
չուրջանակի", յիսուն կանգուն յերկայ-
նութիւն եւ քաւան եւ հինգ ի լայնու-
34 թիւն : [6]Եւ կամարք ի ներքնում սրա-
հին , եւ արմաւենիք ի վերայ կամա-

[1] ԵԲԲ. այնոցիկ [2]ԵԲԲ. սրահք նորա առաջի նոցա
[3] ԵԲԲ. դրանդեացն նորա։
(27) Եւ դուռն գաւթին ներքնոյ հայէր ընդ
հարաւ, և չափեաց դրան ի դուռն ընդ հարաւ
կանգունս հարեւր։(28)Եւ եմոյծ զիս ի գաւիթն
ներքին ընդ դուռնն [4]ԵԲԲ. սենեակք նորա եւ
դրանդիք նորա և սրահք նորա ըստ նմին չափոյ,
և պատուհանք նորա և սրահք նորա չուրջ չուր-
ջանակաւ ի յիսուն կանգնոյ յերկայնութիւն
եւ ի քսան եւ հինգ կանգնոյ ի լայնութիւն ։
(30) Եւ սրահք նորա չուրջ չուրջանակաւ քսան
եւ հինգ կանգուն յերկայնութիւն , [5]ԵԲԲ.
սրահք նորա ի գաւիթ անդր արտաքին եւ ար-
մաւենիք ի դրանդիս նորա, եւ աստիճան ուր՝
աստիճանք նորա ։ (32) Եւ եմոյծ զիս ի գաւիթ
անդր ներքին ընդ արեւելս. և չափեաց զդուռնն
ընդ նմին չափոյ ։ (33) Եւ սենեակք նորա եւ
դրանդիք նորա եւ սրահք նորա ըստ նմին չա-
փոյ, եւ պատուհանք նմա եւ սրահից նորա
չուրջ չուրջանակաւ [6]ԵԲԲ.Եւ սրահք նորա ի
գաւիթ անդր արտաքին եւ արմաւենիք ի
դրանդիս նորա աստի եւ անտի եւ աստիճանք
ուր՝ աստիճանք նորա ։

րացն աստի եւ անտի , եւ եւթն սան-
դուղք ի նմա ։"
35 Եւ տարաւ զիս ի դուռնն որ ընդ հիւ-
սիսի , եւ չափեաց բան նմին չափոյ ,
36 [7]Զկողմակն եւ զկամարսն եւ զկոնքս ,
եւ պատուհանք ի նմա չուրջանակի , եւ
կամարք" յիսուն կանգուն յերկայնու-
թիւն եւ քսան եւ հինգ կանգուն ի լայ-
37 նութիւն : [8]Եւ կամարք արտաքոյ դրանն,
եւ արմաւենիք կամարացն ասի եւ
անտի , եւ ութ սանդուղք ի նմա ։
38 Եւ դահլիճք նորա եւ լայնութիւնք
նորա եւ կամարք նորա հանդէպ երկ-
րորդ դրանն՝ ուր լուանային զողջա-
39 կէզն : Եւ ի կամարի" դրանն երկու
սեղանք յայսկոյս , եւ երկու սեղանք
յայնկոյս , դի զենուցուն ի նմա զողջա-
կէզն եւ զվասն մեղացն եւ զվասն անց-
40 պիտութեանն : [9]Եւ ընդ հարաւակողմն
խոդովակի ողջակիզացն ի մուտս դրանն
որ հայէր ընդ հիւսիսի՝ երկու սեղանք
որ հայէր ընդ արեւելս . եւ ի հարաւա-
կողմ կուսէ երկրորդի դրանն՝ հանդէպ
41 կամարաց դրանն երկու սեղանք : Եւ
ընդ արեւելս ութ սեղանք . չորք սե-
ղանք յայսկոյս , եւ չորք սեղանք յայն-
կոյս , հանդէպ հարաւոյ դրանն . եւ անդ
զենուցուն զգոհան եւ զողջակէզսն, յան-
պիտան ութից սեղանոց ողջակիզացն"
42 Եւ չորք սեղանք ողջակիզացն քարե-
դինք կոփածոյք , կանգնաւ եւ կիսով
յերկայնութիւն , եւ կանգնաւ եւ կիսով
ի լայնութիւն , եւ կանգնաւ[10]եւ կիսով"
ի բարձրութիւն . եւ ի վերայ նոցա դի-
ցեն զդործն որով զենուցուն անդ զող-
43 ջակէզսն եւ զգոհսն : Եւ ծնօտս ուղ-
կեանս քանդակադործս ունիցին ի ներ-
քոյս չուրջանակի . եւ ի վերայ [11]սե-
պանոյն յարկ՝ առ ի ծածկել յանձրեւոյ
եւ յերաչտութենէ ։

[7] ԵԲԲ. Սենեակք նորա, դրանդիք նորա եւ սրահք
նորա, և պատուհանք նմա չուրջ չուրջանակաւ
[8] ԵԲԲ.Եւ դրանդիք նորա ի գաւիթ անդր արտաքին
եւ արմաւենիք ի դրանդիս նորա աստի եւ անտի, եւ աստիճանք ուր՝ աստիճանք նորա ։
(38) Եւ էր դահլիճ և մուտ նորա ի դրանդիս
դրանցն. անդ լուանային զողջակէզսն ։ (39) Եւ
ի սրահի [9]ԵԲԲ. Եւ յարտաքին կողման որ
ելանէ ի մուտս դրանն որ հայի ընդ հիւսիսի՝
սեղանք երկու , եւ ի միւսում կողման որ առ
ընթեր սրահի դրանն՝ սեղանք երկու ։(41)Չորք
սեղանք աստի և չորք սեղանք անտի ի կողմանէ
դրանն, ութ սեղանք, յորս զենուին ։ [10]ՅԵԲԲ.
պակաս [11]ԵԲԲ. սեղանոցն վմիս զոհին ։

41 Եւ տարաւ զիս ի սրահն ներքին, եւ
ահա երկու պատուդամք ի ներքոյ սրա-
հին, մի ընդ հարաւոյ դրանն որ հայէր
ընդ հիւսիսի եւ հանէր ընդ հարաւ. եւ
մի ընդ հիւսիսոյ դրանն որ հայէր ընդ
45 հարաւ եւ հանէր ընդ հիւսիսի։ Եւ ա-
սէ ցիս, Այս պատուդամ՝ որ հայի ընդ
կողմանս հարաւոյ՝ քահանայիցն եղիցի
որ պահեն զպահապանութիւնս տանն։
46 Եւ [1]պատուդամն որ հայի ընդ հիւսիսի՝
քահանայիցն եղիցի որ պահեն զպահ-
պանութիւնս սեղանոյն. նոքա են որդիք
Սադովկայ՝ որ մերձենան ի Ղեւտացւոց
47 առաքել պաշտել զՏէր։ Եւ չափեաց
[2]զսրահն յերկայնութիւն հարեւր կան-
գուն, եւ ի լայնութիւն հարեւր կան-
գուն, զչորեսին կողմանս նորա, եւ սե-
զան յանդիման տաճարին։
48 Եւ տարաւ զիս [3]ի կոնք տաճարին,
եւ չափեաց [4]զլայնութիւն կոնքին՝ ի
մէնջէ կողմանէ հինգ կանգուն, եւ ի
միւս ամէ կողմանէ հինգ կանգուն, եւ
[5]զլայնութիւն մտին՝ չորեքտասան կան-
գուն. եւ զկոյակս ուսոց դրան կնքին
յայսկոյս յայնկոյս՝ երիս երիս կանգնաս։
49 Եւ զերարձրութիւն կնքին՝ քսան կան-
գուն, եւ զլայնութիւն նորին՝ մնտա-
սան կանգուն. եւ ընդ տասն աստիճան
ելանէին ի նա, եւ սիւնք երկու [6]էին
առաք՝ անաւ։

Գլ. ԽԱ

1 Եւ տարաւ զիս ի տաճարն, զոյց չա-
փեաց [7]զկամարն՝ վեց կանգուն զլայ-
նութիւն ի միոջէ կողմանէ, եւ վեց
կանգուն [8]զերկայնութիւն կամարին ի
2 միւս ամէ կողմանէ՝։ Եւ զլայնութիւն դրանն
տասն կանգնաս, եւ [9]զկոյակս կոճոց՝
դրանն յայսկոյս յայնկոյս հինգ հինգ կան-
գուն. եւ չափեաց զերկայնութիւն նո-
րա քառասուն կանգուն, եւ զլայնու-
թիւն նորա քսան կանգուն։
3 Եւ եմուտ [10]ի ներքին սրահն, եւ չա-
փեաց զկամար մտին երկուս կան-
գունս, եւ զմուտն վեց կանգուն, եւ
զկոյակս կոճոց մտիցն յայսկոյս յայն-
կոյս եւթն եւթն կանգուն։
4 Եւ չափեաց զերկայնութիւն դրանն՝
քառասուն կանգուն, եւ զլայնութիւնն
քսան կանգուն՝ առաջի տաճարին. եւ
ասէ ցիս, Այս է սրբութիւն սրբու-
թեանցն։
5 Եւ չափեաց զտրմ տաճարին ի վեց
կանգնոյ, եւ զլայնութիւն կողման
տանն ի չորից կանգնոց չուրջ չրջա-
նակաւ։
6 Եւ ի կողմանէ ի կողմն երեսուն եւ երիս
կանգունս կրկին. եւ անջրպետք ի մէջ
որմոյ տաճարին չուրջ զկողմամբքն. զի լինիցի այնոցիկ որք
անկանիցին փնտրօք հակել, եւ ամենևե-
րին մի մերձենայցեն յորմ տաճարին։
7 Եւ զլայնութիւն կողմանց վերին դրանն,
ըստ առանցին կողմանց յորմոցն առ ի
վերին կողմն չուրջ զտաճարն. զի ըն-
դարձակութիւն լինիցի տանն ի վերուստ
եւ ի ներքուստ, որոյ ելանիցին ի վեր-
նայարկան, եւ ի միջնայարկացն յերրորդ
8 յարկան։ Եւ ձեղուան տանն բարձրու-
թիւն չուրջ չրջանակաւ զանջրպետօք
կողմանցն՝ հաւասար ձողոյն ի վեց կանգ-
9 նոյ անջրպետ մի։ Եւ լայնութիւն որ-

(44) Եւ արտաքոյ դրանն ներքինոյ դահլիճք
երգչաց ի զաւթի անդ ներքինում որ առընթեր
դրանն հիւսիսոյ, եւ երեսք նոցա ի հարաւ.
մին առընթեր դրանն արեւելից, երեսք նորա
ի հիւսիսակողմն։(45)Եւ ասէ ցիս, Այս դահլիճ

[1] ՆԵԲԲ. դահլիճն [2] ՆԵԲԲ. դզաւթին [3] ՆԵԲԲ. ի
սրահն [4] ՆԵԲԲ. զդրանդիս սրահին [5] ՆԵԲԲ.
լայնութիւն դրանն երեք կանգուն առաի,
եւ երեք կանգուն անտի։ (49) Զերկայ-
նութիւն սրահին [6] ՆԵԲԲ. առ դրանդիան էին
մին առաի եւ մեւսն [7] ՆԵԲԲ. զդրանդիան
[8] ՆԵԲԲ. լայնութիւն ի միւսմէ կողմանէ, այն է լայ-
նութիւն խորանին [9] ՆԵԲԲ. զկողմանս

[10] ՆԵԲԲ. ի ներքս, և չափեաց զդրանդիս մտին երկուս
կանգունս, եւ զմուտն վեց կանգուն, եւ լայ-
նութիւն մտին եւթն կանգուն։

(4) Եւ չափեաց զերկայնութիւն նորա քսան
կանգուն, և զլայնութիւնն քսան կանգուն ըստ
առաջոյ տաճարին. և ասէ ցիս, Այս է սրբու-
թիւն սրբութեանցն։

(5) Եւ չափեաց զտրմ տանն կանգնոնս
վեց եւ զլայնութիւն սենեկաց որ չուրջ
զտամբն կանգնոնս չորս։

(6) Եւ սենեակքն էին մի գմիով երեք կարգ,
եւ թեւով երեսուն, եւ պահանգք նոցա մտա-
նէին յորմն տանն որ էր վասն սենեկացն չուրջանա-
կաւ, յենուլ ի նոսա, բայց ոչ յենուին յորմն
տանն։ (7) Եւ սենեակքն լայնէին եւ չուրջ
պատէրն զտանն ըստ ելանելոյ ի վեր ի վեր, պա-
տէրն իսկ զտանն քան ելանելոյ ի վեր ի վեր չուրջ
զտամբն, վասն այնորիկ լայնէր շինուածն ի վե-
րուստ, եւ այսպէս ի խանարհագոյն յոլնէր ի-
նէր ելանել ի վերինն ի միջնոյ անտի։ (8) Եւ
տեսի զբարձրութիւն տանն չուրջ չուրջանա-
կաւ. հիմունք սենեկացն ձող մի բովանդակ,
այսինքն վեց կանգուն մեծ։ (9) Լայնութիւն

մոյ արտաքին կողմանն ի հինգ կանգ-
10 նոյ ։ Եւ առանցք ի մէջ կողմանց սանն
եւ ի մէջ պատչպամայն ի լայնութիւն
քան կանգուն , եւ չրջանակաւ չրջա-
11 նակք սանն ։ Եւ դուրք պատչպամայն՝
յատանցս դրան միոյ որ ընդ հիւսիսի ,
եւ դուռն մի ընդ հարաւ . եւ լայնու-
թիւն անդր ոյն ընդարձակութեան վանն
լուսոյ առանցիցն՝ հինգ կանգուն ի լայ-
12 նութիւն չուրջանակի ։ Եւ անդրակամ
ընդդէմ առանցիցն ի ծովակողմ ճանա-
պարհին՝ յերկայնութիւն եւ լանասուն
կանգուն , եւ լայնութիւն որմոյն ան-
ջրպետի հինգ կանգուն , եւ երկայնու-
13 թիւն նորին հինսուն կանգուն ։ Եւ չա-
փեաց սանդի տանն յերկայնութիւն հա-
րեւր կանգուն . եւ խորչքն եւ անդր-
պետք եւ որմք նոցա՝ յերկայնութիւն
14 հարեւր կանգուն ։ Եւ լայնութիւն ա-
ռաջի տանն , եւ խորչքն յանդիման նո-
15 րին՝ հարեւր կանգուն ։ Եւ չափեաց զեր-
կայնութիւն անդրպետին ընդդէմ խոր-
չիցն ի մխկանդ սանն . եւ զխորչն աս-
տի եւ անտի հարեւր կանգուն յերկայ-
16 նութիւն ։ Եւ տաճարն արտաքին եւ
անկիւնքն եւ կամարքն եւ յարկքն եւ
պատուհանքն վանդակապատքն , լու-
սանցոյցք չուրջ դերեզմամբք վանն հա-
յկոյ . եւ առանն , եւ որ վնովաւ յարկքն
առ հասարակ չուրջ չրջանակաւ տախ-

մատակամած ի յատակացն մինչեւ ի պա-
տուհանան . եւ պատուհանք բացեալք
17 երեսքկին առ ի հայել , որպէս եւ ի ներ-
քոյ կողմանն մինչեւ յարտաքինն ։ Եւ
ի վերայ ամենայն սանն չուրջ չրջա-
նակաւ , եւ ի վերայ ամենայն սանն
18 չուրջանակի ներքոյ եւ արտաքոյ ," փե-
տրոյր քանդակեալ եւ արմաւենիք . եւ
արմաւենի մի ի մէջ քերովբէիցն , եւ
[1]երկու քերովբէքն հանդէպ միմեանց" .
19 Միոյ քերովբէին դէմքն մարդոյ՝ ի մեր-
ջէ կողմանէ արմաւենւոյն , եւ դէմք
առիւծու՝ ի միւսմէ կողմանէ արմաւեն-
ւոյն . եւ այսպէս քանդակեալ էր ամե-
20 նայն տաճարն չուրջանակի ։ Յատակաց
մինչեւ պատուհանքն երկրորդ եւ արմա-
21 ւենիք [2]քանդակեալք ։ Եւ սրբութիւնն
եւ տաճարն [3]դռնացեալ եւ քառակուսի
22 եւ դէմ յանդիման սրբութեանցն տես-
իլ իբրեւ նմանութիւն փայտեղէն սե-
զանոյ" , երեք կանգուն ի բարձրութիւն ,
եւ երկու կանգուն յերկայնութիւն ,
[3]եւ երկու կանգուն ի լայնութիւն . եւ
եղջիւրք ի նմա . եւ յատակքն նորա եւ
որմք" փայտեղէնք . եւ ասէ ցիս , Այս է
23 սեղան երեսաց Տեառն ։ [4]Եւ երկու մուտք
տաճարին . եւ երկու մուտք սրբու-
24 թեանցն . երկոցունց չրջանակաւ մախի՝
երկու մուտք միոյ , եւ երկու մուտք
25 միւսոյ դրանն . Եւ քանդակագործք ի
վերայ նոցա , եւ ի վերայ մախոյ տաճարին
քերովբէք եւ արմաւենիք քանդակեալք
ըստ քանդակի սրբութեանցն . եւ փայ-
տակերտ աղիւս դէմ յանդիման կամարին
արտաքուստ կողմանէ . եւ պատուհանք

որմոյ սենեկացն արտաքոյ ի հինգ կանգնոյ , եւ
որ միացեալն է՝ տեղին էր սենեկացն ի ներ-
քուստ (10) Եւ ի մէջ դահլճիցն լայնութիւն
էր քսան կանգուն չուրջ չուրջանակաւ տանն ,
(11) Եւ դրունք դահլճիցն հայեցին ի միացեալ
տեղին , դուռն մի ի հիւսիսոյ , դուռն մի ի
հարաւոյ . եւ լայնութիւն տեղւոյն միացելոյ ի
հինգ կանգնոյ չուրջ չուրջանակաւ ։

(12) Եւ շինուածն որ առաջի բացատին
յարեւմուտս կոյս ի լայնութիւն եւթանասուն
կանգնոյ , եւ որմն շինուածոյն ի հինգ կանգ-
նոյ ի լայնութիւն չուրջանակաւ , եւ երկայ-
նութիւն նորա հինսուն կանգնոյ (13)Եւ չափ-
եաց զտունն . երկայնութիւն հարեւր կանգնոյ
եւ բացատն եւ շինուածն եւ որմք նորա յեր-
կայնութիւն հարեւր կանգուն (14) Եւ լայնու-
թիւն երեսաց տանն եւ բացատին յարեւելս
կոյս՝ հարեւր կանգուն ։

(15) Եւ չափեաց զերկայնութիւն շինուածոյն
առաջի բացատին որ յետուստ կողմանէ նորա ,
եւ զշեմսիլիս նորա ատի եւ անտի հարեւր
կանգուն , եւ զտաճարն ի ներքուստ եւ զսրահն
դաւթին ։ (16) Զսեմսն եւ զպատուհանսն
վանդակապատս եւ զշեմսիլիս շուրջանակի յե-
րեսին ի նոսա յանդիման սեմոցն՝ տախտակա-

մածս շուրջ շուրջանակաւ ի յատակացն մինչեւ
ի պատուհանսն . և զպատուհանսն փակեալս .
(17) Զառ ի վերուստ դրանն մինչեւ ի տունն
ներքին եւ արտաքին եւ զամենայն որմն շուրջ
շուրջանակաւ ի ներքոյ եւ արտաքոյ ըստ իւ-
րաքանչիւր չափոյ ։ [1]Եբր. երեսք երկու
միոյ միոյ քերովբէի ։ [2]Եբր. քանդակեալք ,
նոյնպէս եւ որմն տաճարին ։ (21) Դրանդիք տա-
ճարին չորեքկուսիք , և տեսիլ երեսաց սրբու-
թեանն ըստ տեսլեան պատչէին ։

(22) Սեղանն փայտեղէն ։ [3]Եբր. և անկիւնք
ի նմանէ եւ երկայնութիւն նորա եւ ծնօտք
նորա ։ [4]Եբր. Եւ դրունքն տաճարին և սրբու-
թեանն երկու . (24) Եւ երկու փեղկք դրանցն ,
եւ փեղկքն ծալեալք յերկուս , երկու փեղկ
միոյ դրանն , եւ երկու փեղկ միւսոյն ։ (25) Եւ
քանդակագործք ի վերայ նոցա , ի վերայ դրանց
տաճարին , քերովբէք եւ արմաւենիք , իբրեւ
քանդակեալք յորմունս . եւ ահանդուզ փայ-

26 ծածուկք : Եւ չափեաց յայսկոյս յայնկոյս դարպաս կամարին , եւ զկողմանս տանն խառնեալ ընդ միմեանս :՚՚

Գլ. խԲ

1 Եւ եհան զիս [1]ի սրահն արտաքին ընդ արեւելս դէմ յանդիման պատին հիւսիսոյ , եւ տարաւ զիս ի ներքս . եւ ահա պատչգամք հինգ՝ առանցիւք եւ խորչիւք ընդ կողմ հիւսիսոյ, Հարեւր կանգունն յերկայնութիւն եւ լիսուն կանգունն ի լայնութիւն . Նկարակիւք ըստ օրինակի դրան սրահին ներքնոյ , եւ ըստ օրինակի չրջանակաւ սահանց սրահին արտաքնոյ . դէմ ընդ դէմ կարգեալ եւ 4 ընքսրահան : Եւ դէմ ընդ դէմ պատչգամացն գնացք ի տան կանգնոյ լայնութիւն , եւ հարեւր կանգուն յերկայնութիւն . եւ ներքսագոյն կողմ ճանապարհին՚՚ կանգուն մի , եւ դրունք նոցա ընդ 5 հիւսիսոյ : [2]Եւ գնացք ի վերնատունն նոյնպէս , զի խառնեալ էին սիւնքն չրջանակաւ ի ներքուստ մինչեւ ի վեր . եւ անչրպետն նոյնպէս , եւ սիւնքն չրջանակօք , եւ անչրպետք եւ մոյթք 6 քանզի երիքսրահանք էին : Եւ սիւնք ոչ գոյին իրրեւ զսիւնս պատչգամացն . վասն այնորիկ առանցք էին ի ներքոյ կողմանէն , եւ ի միջնայարկացն ի վեր 7 նոյ կողմանէ յիսուն : Եւ լոյս արտաքուստ , որպէս եւ պատչգամք սրահին

տեղէն առաջի սրահին արտաքուստ : (26) Եւ պատուհանք վանդակապատք եւ արմաւենիք էին ստէպ եւ անտի ի կողմանս սրահին , եւ ի սենեակս տանն եւ ի սանդուղսն : [1]Եբբ. ի գաւթին արտաքին ընդ ճանապարհն որ ի հիւսիս , եւ եմոյծ զիս ի դահլիճն որ յանդիման բացատին եւ յանդիման շինուածոյն որ ընդ կողմ հիւսիսոյ: (2) Յանդիման դրանն հիւսիսոյ երկայնութիւն հարեւր կանգուն եւ լայնութիւն յիսուն կանգուն : ( ) Յանդիման քսան կանգնոյն որ ի գաւթին ներքնում, եւ յանդիման քարայատակին , որ յարտաքնում գաւթին ճեմելիք առ ճեմելիս երկկին : (4) Եւ յանդիման դահլճիցն գնացք ի տան կանգնոյ ի լայնութիւն ինքբուստ, ճանապարհ [2]Եբբ.Եւ դահլիճքն վերինք էին կարճագոյն, զի ճեմելիքն ի նոցունց, ի խանարհագոյն եւ ի միջին սենեկաց շինուածոյն, առնուին վայրս . (6) Զի էին երեք կարգեան , եւ սիւնք ոչ գոյին նոցա , իրրեւ զսիւնս սրահիցն , վասն այնորիկ ի գետնոյ , ի խառարհագոյն յարկաց եւ ի միջնոց , տակաւ անձկանացին : (7) Եւ որմն որ էր արտաքոյ , առ երի դահլճիցն ի գաւթի անդր արտաքին ,

արտաքնոյ որ հայրն դէմ յանդիման պատչգամացն՝ որ ընդ հիւսիսոյ՝ յերկայ- 8 նութիւն յիսուն կանգնոյն : Քանզի երկայնութիւն պատչգամացն որ հայէին ի սրահն արտաքին՝ էր ի յիսուն կանգնոյ, եւ նոքա էին դէմ յանդիման միմեանց , 9 ընդ ամենայն հարեւր կանգնոյն : Եւ դրունք պատչգամացն որ ընդ մուտս արեւելից՝ վասն մտանելոց ընդ նոսա 10 յարտաքին սրահէ անտի , Ըստ լուսամտին առաջին գնացին որ ընդ կողմն հարաւոյ՝ դէմ յանդիման հարաւոյ , եւ ընդդէմ անչրպետացն եւ հանդէպ խորչիցն : Եւ պատչգամքն եւ գնացքն հան- 11 դէպ նոցուն ըստ չափոյ պատչգամացն ճանապարհին՝ որ ընդ հիւսիսի , եւ ըստ երկայնութեան նոցա եւ ըստ լայնութեան նոցա եւ ըստ ելից նոցա , եւ ըստ չրջանակաց նոցին , եւ ըստ լուսանցուցանց . Եւ ըստ մտից պատչգամացն՝ որ 12 ընդ հիւսիս , ըստ մտից պատչգամացն որ ընդ հարաւ . եւ ըստ մտից առաջին գնացիցն առ ի ղէզան տալոյ անչրպետութեան ձողոյն , եւ հանդէպ արեւելից գնալ ընդ նոսա :

13 Եւ ասէ ցիս , Պատչգամքդ որ են ընդ հիւսիսի , եւ պատչգամքդ որ են ընդ հարաւ՝ հանդէպ բացատացն , դոքա են պատչգամք սրբութեանն ուր ուտեն քահանայքն որոքն Սադովկայ մերձաւորք Տեառն զսրբութիւն սրբութեանցն՚՚ , եւ անդ դիցեն զսրբութիւն սրբութեանցն , եւ զզոհսն եւ զվասն մեղացն եւ զվասն անգիտութեանն . քանզի սուրբ

յանդիման դահլճիցն էր ի յիսուն կանգնոյ յերկայնութիւն : (8) Զի երկայնութիւն դահլճիցն գաւթին արտաքնոյ էր ի յիսուն կանգնոյ , եւ ահա յանդիման տաճարին հարեւր կանգուն : (9) Եւ ի ներքուստ դահլճիցն այնոցիկ, առ ի մտանելոյ ի նոսա ի գաւթէն արտաքնոյ , էր մուտ յարեւելից : (10) Ի լայնութեան որմոյ գաւթին, ընդ արեւելս, յանդիման բացատին, եւ յանդիման շինուածոյն՝ դահլիճք : (11) Եւ էր ճանապարհ առաջի նոցա ըստ տեսլեան ճանապարհի դահլճիցն ընդ կողմն հիւսիսոյ ըստ երկայնութեան նոցա, նոյնպէս եւ լայնութիւն նոցա . եւ ամենայն ելք նոցա , եւ ըստ օրինակի նոցա եւ ըստ մտից նոցա : (12) Այսպէս և մուտս դահլճիցն որ ընդ հարաւ , մուտ ի գլուխ ճանապարհին, ճանապարհ առաջի որմոյն, ճանապարհ ուղղորդ ընդ արեւելս ի գալն առ նոսա :

(13) Եւ ասէ ցիս, Դահլիճքդ որ են ընդ հիւսիսի, եւ դահլիճքդ որ են ընդ հարաւ՝ հանդէպ բացատին, դոքա են դահլիճք սրբութեանն ուր ուտեն քահանայքն որ մերձենան առ Տէր

14 է տեղին։ [1]Եւ մի՛ ոք մտանիցէ անդր բաց ի քահանայիցն. եւ ոչ ելանիցեն ի սրբութիւնէ անտի ի սրտին արտաքին. զի յամենայն ժամանակի որ մերձենան՝ սուրբ կացցեն. եւ մի՛ մատչիցին ի պատմուճանս իւրեանց որով պաշտիցեն, քանզի սուրբ է այն"։ եւ զկնգին այլ հանդերձ յարժամ մերձենայցեն ի ժողովուրդն։

15 Եւ կատարեցաւ չափ տաճարին ներքնոյ. եւ եհան զիս ընդ ճանապարհ գրանն որ հայէր ընդ արեւելս, եւ չափեաց [2]զհեւ տանն չուրջանակի ըստ չորից։
16 նուաճոյ։ Եւ եկն ակաց առ հարաւային գրանն որ հայէր ընդ արեւելս, եւ չա-
17 փեաց հինգ հարիւր չափով ձողոյն։ Եւ զարձաւ ի կողմ հիւսիսոյ, եւ չափեաց հանդէպ հիւսիսոյ հինգ հարիւր չափով
18 ձողոյն։ Եւ զարձաւ ի ծովակողմն, եւ չափեաց հանդէպ ծովուն հինգ հարիւր
19 չափով ձողոյն։ Եւ զարձաւ ի կողմն հարաւոյ, եւ չափեաց հանդէպ հարա-
20 ւոյ հինգ հարիւր չափով ձողոյն։ Եւ զփողոցս նորա չորիցանակի ի չորեքին կողմանան նուիրն չափով. եւ չորինեայ զնա եւ զփողոցս նորա չորիցանակի՝ ի հինգ հարիւր կանգնոյ հանդէպ արեւելից, եւ ի հինգ հարիւր կանգնոյ զլայնութիւնն՝ անջրպետել ի մէջ սրբութեանն, եւ ի մէջ պարսպացն չորինուածոյ տաճարին։"

Գլ. ԽԳ

1 Եւ ած զիս [3]ի դուռնն որ հայէր ընդ
2 արեւելս, եւ եհան զիս ընդ այն։ Եւ ահա փառքն Աստուծոյ Իսրայէլի գային ընդ ճանապարհն արեւելից, եւ ձայն [4]բանակին իւրոց զձայն կրկնակոյ" բազմաց. եւ երկիրն լուսաւորեցաւ [5]ի նմանութիւն լուսաւորուց ի փառացն չուր-
3 ջանակի"։ Եւ ասպիրն զոր տեսանէի, էր ըստ տեսլեանն զոր տեսանէի [6]ի ժամանակի իւրում մտանէի օծանել զքահանաքն. եւ տեսիլ կառացն զոր տեսի, էր" ըստ տեսլեանն զոր տեսի ի վերայ Քորաբ գետոյ. եւ անկայ ի վերայ եւ բնաց իմոց։
4 Եւ փառքն Տեառն մտին ի տաճարն ընդ ճանապարհ գրանն՝ որ հայէր ընդ
5 արեւելս։ Եւ համբարձ զիս Հոգին, եւ տարաւ զիս [7]ի սրտին ներքին. եւ ահա լի էր փառօք Տեառն տաճարն։
6 [8]Եւ կայի անդ, եւ ահա՝ ձայն ի տաճարէ անտի որ խօսէր ընդ իս. եւ այր
7 մի կայր մօտ առ իս. Եւ ասէ ցիս, Որդի մարդոյ, [9]տեսի՛ր զտեղի՛ ամենայն իմ ի մէջ եւ [10]զտեղի հետոց ոտից իմոց, որովք բնակեացէ անուն իմ ի մէջ տանն՝ Իսրայէլի յաւիտեան, եւ մի՛ եւս պղծեսցեն տունն Իսրայէլի զանուն իմ սուրբ՝ ինքեանք եւ [11]առաջնորդք իւրեանց պոռնկութիւնքն իւրեանց եւ [12]սպանու-
8 թիւնքն իշխանացն որ ի մէջ նոցա. ի տնկել ինձ զգրանդս իմ ի մէջ գրանդից նոցա, եւ զսեամս իմ առ սեամս նոցա. եւ արկին զպարիսպս նեղել՛ ընդ իս եւ ընդ նոսա, եւ պղծեցին զանուն իմ սուրբ անօրէնութեամբ իւրեանց զոր առնէին. եւ խորտակեցի զնոսա բար-
9 կութեամբ իմով [13]եւ սպանմամբ"։ Թո՛ղեսցեն արդ մերժեսցեն զպոռնկութիւնս իւրեանց, եւ [14]զսպանութիւնս իշխանաց նոցա նոցա՛ յինէն, եւ բնակեցայց ի մէջ նոցա յաւիտեան։
10 Եւ դու, որդի մարդոյ, ցոյց տանդ Իսրայէլի զտաճարդ, եւ [15]դադարեսցեն ի մեղաց իւրեանց, զտեսիլ զորա եւ
11 զձեւ եւ զյօրինուած. Եւ նոքա ընկալցին զտանջանս իւրեանց վասն ամե-

---

[1] ՆԲԷ. Ի մտանել անդր քահանայիցն՝ մի՛ ելանիցեն ի սրբութենէ անտի ի գաւիթն արտաքին. այլ անդ թողցեն զհանդերձս պաշտամանն իւրեանց, քանզի սուրբ են։ [2] ՆԲԷ. զնա չուրջանակի։ (16) Չափեաց զկողմն արեւելից ձողով չափոյն հինգ հարիւր ձող չուրջանակի։ (17) Չափեաց զկողմն հիւսիսոյ հինգ հարիւր ձող ըստ ձողոյ չափոյն չուրջանակի։ (18) Չափեաց զկողմն հարաւոյ հինգ հարիւր ձող ըստ ձողոյ չափոյն։ (19) Եւ դարձաւ ի կողմն արեւմտից, եւ չափեաց ձողով չափոյն հինգ հարիւր ձող։ (20) Չափեաց զայն ի չորեցունց կողմանց. պարիսպն նմա չորչանակաւ չուրջանակի, երկայնութիւն՝ հինգ հարիւր, եւ լայնութիւն հինգ հարիւր, անջրպետել ի մէջ սրբոյն եւ անսրբոյ։ [3] ՆԲԷ. ի դուռնն, դուռն [4] ՆԲԷ. նորա իբրեւ զձայն ջուրց

[5] ՆԲԷ. ի փառաց նորա [6] ՆԲԷ. ի գալ իմում կործանել զքաղաքն. և տեսիլքն էին [7] ՆԲԷ. ի գաւիթն [8] ՆԲԷ. Եւ լսէայ [9] ՆԲԷ. այս է տեղի [10] ՆԲԷ. տեղի հետոց ոտից իմոց, ուր բնակեցայց անդ ի մէջ որդւոցն [11] ՆԲԷ. թագաւորք [12] ՆԲԷ. դիակամբք թագաւորաց իւրեանց ի բարձունս իւրեանց։ (8) Ի դնել նոցա զսեամս իւրեանց առ սեամս իմոց, և գդրանդս իւրեանց առ դրանդեաց իմոց. եւ որմն միայն էր [13] ՆԲԷ. գոլոխ [14] ՆԲԷ. զդիակունս թագաւորաց իւրեանց [15] ՆԲԷ. ամաչեսցեն յանօրէնութեանց իւրեանց, եւ չափեսցեն զօրինակն։ (11) Եւ եթէ ամաչեսցեն

նայնի զոր արարին։ Եւ նկարեսցես զտունդ եւ զպատրաստութիւնդ իւր՝, եւ զկիր եւ զմուտ դորա եւ [1]զկահ, եւ զամենայն հրամանս դորա եւ զամենայն օրէնս եւ զիրաւունս դորա յուսցես նոցա, եւ գրեսցես առաջի նոցա. եւ պահեսցին զամենայն [2]իրաւունս եւ զհրամանս իմ՝, եւ արասցեն զնոսա։ [3]Եւ նկարագիր 12 տանն ի վերայ գլխոյ լերինն, եւ ամենայն սահմանք նորա չուրջանակի, սրբութիւն սրբութեանց են. այս օրէն է տաճարին։ 13 Եւ այս չափ [4]սեղանոյն. կանգուն մի ի կանգնոյ, եւ կանգուն մի եւ ուղղուկ գոգած խորութեան նորա՝. եւ կանգուն մի լայնութիւն, եւ սպակ չուրջ զծնօթիւք նորա չուրջանակի թզաւ մի. եւ 14 այս բարձրութիւն [5]սեղանոյն ի խորութենէ սկզբան վորոշածոյն մինչեւ ի մեծ քաւութիւնն, կանգունք երկուք ի ներքոտա՝, եւ ի լայնութիւն կանգուն մի. եւ [6]ի փոքր քաւութենէն մինչեւ ի մեծ քաւութիւնն՝ կանգունք չորք, եւ ի 15 լայնութիւն կանգուն մի. Եւ [7]բուն ի չորից կանգնոց, եւ [8]ի բնէն ի վեր եղջ- 16 իւրն՝ կանգուն մի։ Եւ բուն յերկոտասան կանգնոյ՝ առ երկոտասան կանգուն ի լայնութիւն, չորեքկուսի ի չո- 17 բսին կողմանս իւր։ Եւ [9]քաւութիւնն չորեքտասան կանգուն յերկայնութիւն, եւ չորեքտասան կանգուն ի լայնութիւն, [10]հաւասարակ ի չորեցունց կողմանց. եւ ծնօթքն պատուածոյք չուրջանակի պատեալ գնոսա ի կէս կանգնոյ, եւ բոլորակն նորա՝ չուրջանակի կանգուն մի, եւ աստիճանքն նորա ընդ արեւելս։ 18 Եւ ասէ ցիս [11]Տէր, Որդի մարդոյ, այսպէս ասէ Տէր Տէր. Այս հրամանք են սեղանոյն յաւուր գործուածոյ իւրոյ. մատուցանել ի վերայ նորա ողջակէզս, եւ [12]հեղուլ առ նովաւ արիւն։ 19 Եւ տացես քահանայիցն Ղեւտացւոց որք ի զաւակէ Սադովկայ [13]մերձենացին առ իս, ասէ Տէր Տէր, պաշտել զիս, 20 զուարակ մի յանդրէայ վասն մեղաց։ Եւ [14]առցեն յարենէ նորա, եւ [15]դիցեն ի վերայ չորեցունց եղջերայ սեղանոյն, եւ ի վերայ չորեցունց անկեանց [16]քաւութեանն, եւ չուրջ զյատակսն, եւ ցա- 21 նեսցեն եւ քաւեսցեն։ Եւ առցեն՝ զզուարակն զվասն մեղացն, եւ այրեսցի ի զատեալ տեղւոջ տաճարին՝ ար- 22 տաքոյ սրբութեանցն։ Եւ յաւուրն երկրորդի [17]առցեն նոխազս երկուս յայծեաց անարատից՝ վասն մեղաց, եւ քաւեսցեն զսեղանն՝ որպէս քաւեցին զուարակաւն։ 23 Եւ յետ վախճանելոյ[18] զքաւութիւնն, [19]մատուսցեն զուարակ յարջառոց անա- 24 րատ, եւ խոյ ի հօտից անարատ։ Եւ [20]մատուսցեն առաջի Տեառն, եւ ցանեսցեն ի վերայ նոցա քահանայքն աղ, եւ հան- 25 ցեն զնոսա յողջակէզս Տեառն։ Զեւթն օր [21]արասցեն նոխազ մի վասն մեղաց հանապազ, եւ զուարակ մի յարջառոյ, եւ խոյ մի ի հօտից անարատ արասցեն։ 26 Զեւթն օր քաւեսցեն զսեղանն եւ սրբեսցեն զնա, եւ կատարեսցեն զձեռս 27 իւրեանց։ Եւ վախճանեսցեն զաւուրսն, եւ եղիցի յօրէն ութերորդէ եւ անդր՝ արասցին քահանայքն ի վերայ սեղա- նոյն զողջակէզս ձեր, եւ [22]զվասն փրկու- թեան ձերոյ՝, եւ ընկալայց զձեզ, ասէ Տէր Տէր։

Գլ. ԽԴ

1 Եւ դարձոյց զիս ընդ ճանապարհն ար- տաքին դրան սրբութեանցն՝ որ հայէր 2 յարեւելս, եւ այն էր փակեալ։ Եւ ասէ ցիս Տէր, Այդ դուռն փակեալ կացցէ եւ մի բացցի, եւ մի ոք անցցէ ընդ դա, զի Տէր Աստուած Իսրայելի [23]մտցէ 3 ընդ դա, եւ եղիցի փակեալ։ Քանզի առաջնորդ իշխանն նա նստցի ի դմա ուտել հաց առաջի Տեառն, ընդ ճանա- պարհ [24]կամարի դրանն մտցէ, եւ ընդ նոյն ճանապարհն ելցէ։

յայծենայնէ զոր արարին, զձեւ տանն եւ զյօրինուած նորա [1]ԵԲէ. զամենայն ձեւս նորա [2]ԵԲէ. ձեւս նորա եւ զամենայն հրամանս նորա [3]ԵԲէ. Այս է [4]ԵԲէ. սեղանոյն՝ ի կանգունս. (կանգուն մի՝ կանգուն եւ ուղղուկ) եւ գոգ՝ կանգուն մի [5]ԵԲէ. սեղանոյն. (14) Եւ ի խորութենէնէ գետնոյն մինչեւ ի խոնարհագոյն շրջանակն կանգունք երկու. [6]ԵԲէ. ի շրջանակէն փոքուէ մինչեւ ի շրջանակն մեծ [7]ԵԲէ. զսհանոյն [8]ԵԲէ. ի զսհանոցէ անտի եւ ի վեր եղջեւրք չորք. (16) Եւ զսհանոցն յերկոտասան կանգնոյ յերկայնութիւն [9]ԵԲէ. շրջանակն [10]ԵԲէ. եւ սահմանն չուրջ զնովաւ ի կէս կանգնոյ, եւ գոգն [11]ՑԵԲէ. պղծեաւ [12]ԵԲէ. սրսկել [13]ԵԲէ. մերձեցելոց [14]ԵԲէ. առցես [15]ԵԲէ. դիցես [16]ԵԲէ. շրջանակին, եւ ի վերայ սահմանին չուրջանակի, եւ սրբեսցես զնա, եւ քաւեսցես զնա։ (21) Եւ առցես [17]ԵԲէ. մատուսցես նոխազ յայծեաց անարատ [18]ԵԲէ՝ՅԵԲԷՆ յաւելու. քո [19]ԵԲէ. մատուսցես [20]ԵԲէ. մատուսցես զնոսա [21]ԵԲէ. արասցես [22]ԵԲէ. զքաւաղականս ձեր [23]ԵԲէ. եմուտ [24]ԵԲէ. սրահի

4 Եւ տարաւ զիս ընդ ճանապարհն զոր ընդ հիւսիսի յանդիման տաճարին. եւ տեսանէի եւ ահա վտառօք Տեառն լի էր տունն Տեառն, եւ անկայ ի վե-
5 րայ երեսաց իմոց։ Եւ ասէ ցիս Տէր, Որդի մարդոյ, դիր ի սրտի քումմ, եւ տես աչօք քովք, եւ լուր ականջօք քովք զամենայն ինչ զոր ես ընդ քեզ [1]խօսեցայց, ըստ ամենայն հրամանաց տանդ Տեառն եւ ըստ ամենայն իրաւանց դորա. եւ կարգեսցես ի սրտի քումմ զմուտ տանդ ըստ ամենայն ելից դորա
6 եւ ըստ ամենայն սրբութեանցն։ Եւ տասցես ցտունդ Իսրայելի՝ տուն դառնացողաց, Այսպէս ասէ Տէր Տէր. Շատ լիցի ձեզ առ ամենայն անօրէնութեամբք
7 ձերովք, տունդ Իսրայելի, Մուծանել ձեզ զորդիս այլազգիս՝ անթլփատս սրտիւ եւ անթլփատս մարմնով լինել ի սրբութիւնս իմ, եւ պղծել զնոսա, ի մատուցանել ձեզ զհացդ իմ ճարպով եւ արեամբ, եւ անցանէք զուխտիւ իմով ամենայն անօրէնութեամբք ձերովք։
8 Եւ ոչ պահեցէք զպահպանութիւնս սրբութեանց իմոց, եւ կարգեցէք զնոսա պահել զպահպանութիւնս սրբու-
9 թեան սրբութեանց [2]իմոց։ Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Աստուած՝. Ամենայն որդի օտարածին՝ անթլփատ սրտիւ եւ անթլփատ մարմնով՝ մի մտցէ ի սրբութիւնս իմ յամենայն որդւոց այլազգեացն որ իցեն [3]ի տանդ Իսրա-
10 յէլ։ Այլ եւ Ղեւտացիքն որք հեռացան յինէն ի մոլորել [4]զոզովրդեանն, որ մոլորեցան յինէն զետ [5]կուռրսդոյն իրեանց, եւ ընկալցին ըստ անօրէնութեանց
11 իւրեանց։ Եւ եղիցին ի սրբութիւնս իմ պաշտօնեայք, բարապանք դրանց տանդ, եւ սպասաւորք տաճարիդ. նոքա զեննուցուն զողջակէզս եւ զզոհս ժողովրդեանն, եւ նոքա կացցեն առաջի ժողովրդեանն՝ լինել նոցա ի սպասա-
12 ւորս։ Փոխանակ զի էին նոքա սպասաւորք առաջի կռոցն նոցա, եւ եղեն տանն Իսրայելի [6]այն ի տանջանս՝ անիրաւութեան. վասն այնորիկ ամբարձի զձեռն իմ ի վերայ նոցա, ասէ Տէր Աստուած, եւ ընկալցին ըստ անօրէնութեան իւր-
13 եանց. Եւ մի մերձեսցին առ իս քահանայանալ ինձ, եւ մի հասցեն յամենայն սրբութիւնս [7]որդւոցն Իսրայելի, եւ մի յամենայն սրբութիւն սրբութեանց իմոց՝. եւ ընկալցին զանարգանս իրեանց [8]մոլորութեամբն զոր մոլորեցան։
14 Եւ կարգեսցեն՝ զնոսա պահել զպահպանութիւնս տանն՝ յամենայն ի գործս նորա, եւ յամենայն ինչ զոր գործեսցեն անդ։
15 Եւ քահանայքն Ղեւտացիք՝ որդիքն Սադովկայ՝ որք պահեցին զպահպանութիւնս սրբութեանց իմոց ի մոլորել տանն Իսրայելի յինէն, նոքա մերձեսցին առ իս պաշտել զիս. եւ կացցեն առաջի երեսաց իմոց՝ մատուցանել ինձ [9]զոնս եւ՝ ճարպ եւ արիւն, ասէ Տէր
16 Աստուած։ Նոքա մտցեն ի սրբութիւնս իմ, եւ նոքա մերձեսցին ի սեղան իմ պաշտել զիս, եւ պահեսցեն զպահպա-
17 նութիւնս իմ։ Եւ եղիցի ի մտանելն նոցա ընդ դուռն [10]սրահին ներքնոյ, զգեցցին զպատմուճանս կտաւիս. եւ մի զգենուցուն ասուիս ի պաշտամանն իրեանց [11]ի պրանէ ներքին սրահին՝։
18 Եւ խոյրս կտաւիս ունիցին ի գլուխս իրեանց եւ անդրաւարտիս կտաւիս ցիրանս իրեանց, եւ [12]ոչ զգենուցուն
19 քրտնեալիւն՝։ Եւ ցելանելն իրեանց [13]յարտաքին սրահն՝ առ ժողովուրդն՝ մերկասցեն զպատմուճանս իրեանց ո-րով պաշտեցեալն. եւ զգեցցեն զնոսա ի սենեակն սրբութեանց, եւ զգեցցեն այլ պատմուճանս. եւ մի սրբեսցեն զժողո-
20 վուրդն պատմուճանօք իրեանց։ Եւ զգլուխս իրեանց մի գերծցեն, եւ զվարսս իրեանց մի [14]անօսլայսուսցեն, ծածկելով ծածկեսցեն՝ զգլուխս իր-
21 եանց։ Եւ գինի մի արբցեն ամենայն քահանայքն ի մտանելն իրեանց ի ներ-
22 քին [15]սրահն։ Եւ զայրի եւ զհանեալ մի առնուցուն իրեանց ի կանայս, այլ զկոյս ի սաւակէ տանն Իսրայելի, եւ այրի մէկ իսկ ի քահանայէ մնացեալ՝
23 առցեն։ Եւ զժողովուրդն իմ ուսուս-

---

[1] Ե՛բէ. խօսիմ [2] Ե՛բէ. իմոց ըստ ձեզ։ (9) Այսպէս ասէ Տէր Եհովայ [3] Ե՛բէ. ի մէջ [4] Ե՛բէ. Իսրայելի [5] Ե՛բէ. կռոց [6] Ե՛բէ. ի գայթակղութիւն

[7] Ե՛բէ. իմ, ի սրբութիւնս սրբութեանց [8] Ե՛բէ. և զպղծութիւնս իրեանց զոր արարին։ (14) Սակայն կարգեցից [9] Ե՛բէ. գ-ո-ե [10] Ե՛բէ. գաւթին [11] Ե՛բէ. ի դրունս գաւթին ներքնոյ եւ ի ներքս [12] Ե՛բէ. որ ածգեն ինչ ի քրտինս [13] Ե՛բէ. ի գաւիթն արտաքին [14] Ե՛բէ. աբձակեսցեն, փոքրեալ փոքրեսցեն [15] Ե՛բէ. գաւիթն

ցեն ընտրել ի մէջ սրբոյն եւ պղծոյն, եւ ի մէջ անաբասեին եւ արատաւորին։
24 Եւ ի վերայ դատաստանի [1]արիան նոքա կացցեն քննել. [2]զարկարուեստիւնս իմ արդարացուսցեն, եւ զիրաւունս իմ իւրաւացուսցեն", եւ զօրէնս իմ եւ զնշանս իմ յամենայն տօնս պահեսցեն,
25 եւ զշաբաթս իմ սրբեսցեն։ Եւ ի դի մարդոյ մի մօտին պղծել. բայց թէ ի հօր կամ ի մօր եւ յուսաներս եւ ի դստերս, եւս յիղբօր եւ ի քրոջ՝ որ առն չիցէ
26 տուեալ՝ պղծեսցին։ Եւ վատ սրբելոյն
27 նորա՝ եւթն օր թուեսցէ իւր։ Եւ յորում աւուր մտանիցէ ի սրբուհիսն [3]սրահին ներքինոյ պաշտել ի սրբութիւնն՝ մատուսցէ [4]քաւութիւն, ասէ Տէր Աստուած։ Եւ ոչ" եղիցի նոցա ժառանգութիւն, ես եմ նոցա ժառանգութիւն. եւ կալուածք մի տացին նոցա ի մէջ որդւոցն Իսրայէլի, ես եմ
29 նոցա [5]ժառանգութիւն։ Եւ զզոհսն եւ զվանս մեղացն եւ զվանս անպիտանութեանն՝ նոքա կերիցեն, եւ ամենայն նուէրք Իսրայէլի՝ նոցա լիցին։
30 Պտուղ ամենայնի եւ անպրանիկք ամենեցուն եւ երախայրիք յամենայն պտղոյ ձերոյ՝ քահանայիցն եղիցի. եւ զառաջին մուռ արդանոյ ձերոց տայջիք քահանայիցն՝ դնել օրհնութիւն ի վերայ տանդ
31 ձերոյ։ Ամենայն զմնացելոսի եւ զզազանաբեկ ի թռչնոյ եւ յանասնոյ՝ մի կերիցեն քահանայքն։

Գլ. խե

1 Եւ ի վիճակել ձեզ զերկիրն ի ժառանգութիւն՝ զատուսջիք պտուղ Տեառն սուրբ յերկրէն՝ քսան եւ հինգ հազար յերկայնութիւն եւ տասն հազար ի լայնութիւն՝ նուիրեալ եղիցի յամենայն
2 սահմանս նորա չուրջանակի։ Եւ եղիցի յայնմանէ ի սրբութիւնն՝ հինգ հարեւր առ հինգ հարեւր չորեքկուսի չուրջանակի. եւ յիտուն կանգուն [6]բացատացն
3 չուրջանակի։ Եւ յայսմ չափոյ չափեսցի քսան եւ հինգ հազար յերկայնութիւն եւ տասն հազար ի լայնութիւն, եւ ի նմա եղիցի սրբութիւն սրբութեանցն.
4 Նուիրեալ յերկրէն եղիցի քահանայիցն որ պաշտիցեն ի սրբութեանն, այնոցիկ որ մերձենան պաշտել զՏէր. եւ եղիցի նոցա տեղի [7]մի զատեալ ի տուն սրբու-
5 թեան իբրեւանց՝ Քսան" եւ հինգ հազար յերկայնութիւն եւ տասն հազար ի լայնութիւն եւ Ղեւտացւոյն որ պաշտեն ի տաճարին՝ եղիցի [8]ի կալուածս քաղաքի ի բնակութիւն։ Ըստ բնակութեան"
6 քաղաքի տացեսւ՝ հինգ հազար ի լայնութիւն, եւ քսան եւ հինգ հազար յերկայնութիւն [9]ըստ երախայրեաց սրբութեանցն՝ յամենայն տանէն Իսրայէլի եւ
7 ղիցի։ Եւ առաջնորդին յայնմանէ եւ անտի յերախայրիս սրբոյն ի նիստ քաղաքին յանդիման երախայրեաց սրբութեանցն, ընդդէմ բնակութեան քաղաքին ընդ կողմ ծովու. եւ ի ծովէն ընդ արեւելս. եւ երկայնութիւն ըստ միոյ վիճակաց ի սահմանացն որ ընդ ծովակողմն, եւ լայնութիւն ըստ սահմանաց
8 երկրին որ ընդ արեւելս։ Եւ" եղիցի նմա ի կալուածս ի մէջ Իսրայէլի. եւ ոչ եւս բռնսն լիցին իշխանք [10]որդւոցն Իսրայէլի" ժողովրդեան իմում, եւ զերկիրն [11]վիճակեալ ժառանգեսցեն տունն" Իսրայէլի ըստ ազգս իւրեանց։
9 Այսպէս ասէ Տէր Տէր. Շատ լիցի ձեզ, իշխանքդ Իսրայէլի. սուդ ի բաց ածէք զաւերածութիւն եւ զչուսաւորութիւն, իրաւունս եւ արդարութիւն արարէք, ի բաց մերժեցէք զբռնաւորութիւն ի ժողովրդենէ իմմէ, ասէ Տէր
10 Աստուած։ Կշիռք արդար եւ [12]չափ արդար եւ [13]կապիճ արդար եղիցի [14]չափոյ
11 ձերոյ։ Եւ կապիճ նոյն լիցի տալոյ եւ առնլոյ. տասներորդն գրուի եղիցի կապիճ, եւ տասներորդ գրուի կապիճն՝

---

[1] ՅԵբբ. պահաբ [2] ՅԵբբ. ըստ իրաւանց իմոց զատեացին զնոսա [3] ՅԵբբ. գաւթին [4] ՅԵբբ. զվանս մեղացն, ասէ Տէր ԵՅովա։ (28) Եւ այս [5] ՅԵբբ. կալուած [6] ՅԵբբ. արուարձանն

[7] ՅԵբբ. վանս տան, եւ սրբութիւն՝ վանս սրբութեան։
(5) Եւ քսան [8] ՅԵբբ. ի կալուածս, ե քսան անհնակք։ (6) Եւ ի կալուած [9] ՅԵբբ. առընթեր երախայրեաց սրբութեանն. այս եղիցի ամենայն տանն Իսրայելի։ (7) Ակ վանս իշխանին, ասէ և անտի յերախայրիս սրբութեանն և ի կալուած քաղաքին, յանդիման երախայրեաց սրբութեանն, և յանդիման կալուածոյ քաղաքին, ի ծագաց արեւմտից յարեւմուտս, եւ ի ծագաց արեւելից յարեւելս կոյս և երկայնութիւն ըստ միոյ բաժնից ի սահմանէ անտի արեւմտից մինչեւ ի սահման անդր արեւելից։ (8) Ի վերկրին [10] ՅԵբբ. իմ [11] ՅԵբբ. տացեն ցառնեն [12] ՅԵբբ. արդուս [13] ՅԵբբ. մար [14] ՅԵբբ. ձեզ։ (11) Արդուս եւ մար եղիցեն ովին չափով մանն տարցի զտասներորդն

կշիռ ըստ դրամին եւ ըստ արդուին
12 եղիցի ։ Եւ կշռին՝ քան զանգ , եւ քան սիկղ եւ քան եւ հինգ սիկղ , եւ՝ի քան եւ ի հինգ սկզբէ՝ եղիցի ձեզ մնալ մի ։
13 Եւ այս [2]պատուէր իցէ զոր զաւանիցիք. զվեցերորդ չափոյն ի գրաէ ցորենոյ , եւ զվեցերորդ արդաւի ի քորէ գարւոյ ։
14 Եւ հրաման ձիթոյ , քանաւ մի լուզոյ , տասներորդ ասիպոյն , զի տասն քանասն
15 է ասիպ մի ։ Եւ ոչխար մի ի տասն ոչխարէ՝ նուէրք յամենայն ազգայն Իսրայելի ի զոհս եւ յողջակէզս քաւութեան եւ փրկութեան ձերոյ՝՝, ասէ Տէր
16 Աստուած ։ Եւ ամենայն ժողովուրդ երկրիդ տացէ զերախայրեան [3]ցառաջնորդս Իսրայելի ։
17 Եւ՝ի ձեռն առաջնորդին՝՝ եղիցին ողջակէզքն եւ զոհքն եւ [5]սպանդքն՝ ի սոնս եւ յամասպլուխս եւ ի չարաթս յամենայն տոնս տանց Իսրայելի նա մատուսցէ զվան մեղացն եւ զընծան եւ զողջակէզսն եւ [6]զվան փրկութեանն՝ քաւել զաւանդ՝՝ Իսրայելի ։
18 Այսպէս ասէ Տէր Աստուած . Յառաջնում ամսեանն որ օր մի իցէ ամսոյն՝ առնուցուս զուարակ մի յանդուց անա-
19 րատ՝ քաւել զպղծութիւնն ։ Եւ առցէ քահանայն յարենէ քաւութեանն , եւ ցանեսցէ ի վերայ սեմոց տանն եւ ի վերայ չորեցունց անկեանց [7]սառարին եւ ի վերայ՝՝ սեղանոյն, եւ ի վերայ սե-
20 մոց դրանն [8]ներքնի սրահին ։ Եւ այսպէս արասցէ որ օր եւթն իցէ ամսոյն, յամենայն յանդիպս յանցաւորէ եւ ի սղայոց քաւել՝՝ զաւանն ։
21 Եւ յամսեանն առաջնում՝ որ օր չորեքտասան իցէ ամսոյն, եղիցի ձեզ տօնն պա-
22 սեք , զեւթն որ բազարջ կերիջիք ։ Եւ արասցէ [9]առաջնորդն յաւուրն յոյնմիկ վան իւր [10]եւ վան ամենայն ժողովրդեան երկրին զուարակ
23 մի յարջառոց վան մեղաց ։ Եւ զեւթն օր տօնին արասցէ ողջակէզս Տեառն , եւթն զուարակ եւ եւթն խոյ անարատ՝ աւուր աւուր՝ զեւթն օր . եւ վան մեղաց նոխազ մի յայծեաց աւուր աւուր .
24 [11]Եւ զոհ եւ նուէրն զործեալ ըստ զուարակին , եւ հաց զործեալ ըստ խոյին ,
25 եւ քսեստ մի եւզ ըստ հացին ։ Եւ յամսեանն երրորդի՝ որ օր հինգետասան իցէ ամսոյն , արասցէն ոմն ըստ օրինակի եւթանց աւուրց , որպէս վան մեղացն եւ վան ողջակիզացն, եւ ըստ նուէրոյն եւ ըստ ձիթոյն ։՝՝

Գլ . ԽԶ

1 Այսպէս ասէ Տէր Աստուած . Դուռն [12]որ ի ներքնում սրահին՝՝ հայի ընդ արեւելս՝ եղիցի փակեալ զվեց աւուրն արդոյս , եւ յաւուրն չաբաթու բացցի ,
2 եւ յաւուրն ամսագլխոյն բացցի ։ Եւ մացէ [13]առաջնորդն ընդ ճանապարհ կամարի դրանն արտաքնոյ , եւ կայցէ ի վերայ սեմոց դրանն . եւ արասցեն վան նորա ողջակէզս քահանայքն , եւ զվրկութեանցն վան՝՝ նորա . եւ երկիր պագցէ ի վերայ սեմոց դրանն, եւ ելցէ . եւ դուռն մի՛ փակեսցի մինչեւ ցերեկոյ։
3 Եւ երկիր պագանիցէ ժողովուրդ երկրին առաջի մտից դրանն յաւուր չաբաթուց եւ յամսագլուխս՝ առաջի Տեառն։
4 Եւ [14]զողջակէզն զոր մատուսցէ Տեառն առաջնորդն յաւուր չաբաթուց՝՝ վից ո-
5 րոջ անարատ եւ խոյ մի անարատ . Եւ [15]մանանս եփեալ առ խոյն եւ առ որոջն եւ զոհս եւ տուրս ըստ ձեռին նորա ,

---

քոռի, արդուն եւս զատուներորդն քոռի · ըստ քոռին եղիցի չափ նոցա։ (12)Եւ սիկղն [1]ՆԵբէ· հնգետասան սիկղ [2]ՆԵբէ· նուէրք զոր նուիրիցէք . ի քոռէ ցորենոյ զվեցերորդ մասն արդուի, եւ ի քոռէ գարւոյ զվեցերորդ մասն արդուի ։ (14) Եւ կանոն ձիթոյ. ի մարէ ձիթոյ զտասներորդն մարդն մարի առ քոռ . ի խոմերէ, որ է տասն մար, զի տասն մոր է խոմեր մի · (15) Եւ որոջ մի ի խաշանց յերկերիւրոց ի ջրարբեաց Իսրայէլի ի նուէր եւ յողջակէզ և ի խաղաղականս առ ի քաւելոյ զնոսա [3]ՆԵբէ· ցիշխանն [4]ՆԵբէ· ի վերայ իշխանին [5]ՆԵբէ· նուէր հեղմանն [6]ՆԵբէ· զխաղաղականն ի քաւել վան տանն [7]ՆԵբէ· շրջանակի [8]ՆԵբէ· գաւթին ներքնոյ։ (20) Եւ այսպէս արասցես յեւթներորդումն ամսոյն վան առն մոլորելոյ եւ տխմարի, և քաւեսջիք

[9]ՆԵբէ· իշխանն [10]ՆԵբէ· պաճաճ [11]ՆԵբէ· Եւ ընծայ հացի արդու մի առ զուարակ, եւ արդու մի առ խոյ արասցէ. եւ հիմէն մի ձէթ առ արդու ։ (25) ի հնգետասաներորդումն՝ ամսոյն եւթներորդի ի տոնին արասցէ նոյնպէս աւուրս եւթն իբրեւ զվան մեղացն, իբրեւ զողջակէզն, եւ իբրեւ զընծայն հացի եւ իբրեւ զձէթն ։
[12]ՆԵբէ· գաւթին ներքնոյ որ [13]ՆԵբէ· իշխանն ընդ ճանապարհ սրահի դրանն արտաքուստ , եւ կացցէ առ սեմն դրանն . եւ արասցեն քահանայքն զողջակէզ նորա, եւ գխաղաղականս
[14]ՆԵբէ· զողջակէզն զոր մատուսցէ Տեառն իշխանն յաւուր չաբաթու եղիցի [15]ՆԵբէ· ընծայ հացի արդու մի առ խոյն եւ առ որոջն ընծայ հացի որչափ բաւական իցէ ձեռն նորա, եւ եւզ հիմէն մի առ արդու

6 եւ քսեստ իւղոյ ըստ հայկին՝։ Եւ յա-
ւուրն ամսամտից զուարակ մի՝ [1]որդի
պտուակամօր՝ անարատ. եւ վեց որոջքն
7 եւ խոյն անարատ եղիցին։ Եւ [2]նաչխի
ըստ զուարակին եւ նաչխի եւ մաննա
ըստ խոյին եւ ըստ որոջացն, որպէս եւ
պատրաստեսցի ի ձեռս իւր, եւ եւզ
8 ըստ նաչխոյն։ Եւ ի մտանել առաչնոր-
դին՝ ընդ ճանապարհ կամարի դրանն
մտցէ, եւ ընդ նոյն ճանապարհ դրանն՝
9 ելցէ։ Եւ յորժամ մտանիցէ ժողովուրդ
երկրին առաչի Տեառն ի տօնս, որ
մտանիցէ ընդ ճանապարհ դրանն հիւ-
սիսոյ երկիր պագանել, ելցէ ընդ ճա-
նապարհ դրանն հարաւոյ. եւ որ մտա-
նիցէ ընդ ճանապարհ դրանն հարաւոյ՝
ելցէ ընդ ճանապարհ դրանն հիւսիսոյ.
եւ մի՛ դարձցի ընդ ճանապարհ դրանն
ընդ որ եմուտ, այլ ուղղորդ ընդ նոյն
10 ելցէ։ Եւ [3]առաչնորդն ի մէջ նոցա՝ ի
մտանելն նոցա ընդ նոսին մտցէ, եւ
ընդ ելանելն նոցա՝ ընդ նոսին ելցէ։
11 Եւ ի տօնս եւ ի ժողովս՝ եղիցի
մաննա եփեալ ըստ զուարակին, եւ
մաննա ըստ խոյին, եւ ըստ որոջացն,
որպէս պատրաստեսցի ի ձեռս նորա եւ
12 քսեստ մի իւղոյ ըստ հայկին։ Ապա թէ
առնիցէ առաչնորդն զխոստովանութիւնս
ողջակէզս եւ զխաղաղ փրկութեան
Տեառն, բացցէ իւր զդրունսն որ հայի
ընդ արեւելս, եւ արասցէ զողջակէզսն
իւր եւ զխաղ փրկութեանն, ըստ օրի-
նակին որպէս եւ առնիցէ յաւուր շա-
բաթոյն. եւ ելցէ, եւ փակեսցէ
զդրունսն յետ ելանելոյն նորա։
13 Եւ բուծ մի տարեւոր անարատ ա-
րասցէ յողջակէզ Տեառն, հանապազօր
14 այգուն այգուն արասցէ զայն. Եւ մաննա
ընդ նմին այգուն այգուն՝ զվեցերորդ
մասն չափոյն, եւ երրորդ մասն քսեստի
եւղ խառնեալ ի նաչխին մաննա Տեառն՝
15 հրաման յաւիտենական. Հանապազ մա-
տուցանիցին զդառնն եւ զմաննայն,
եւ զեւզն արասցէ" այգուն այգուն ողջակէզ հանապազորդ։
16 Այսպէս ասէ Տէր Տէր. Եթէ տացէ
[5]առաչնորդն պարգեւ միում յորդւոց
իւրոց ի ժառանգութիւնէ իւրմէ, եղիցի
այն որդւոց նորա ի կալուածս ժառան-
17 գութեան։ Եւ եթէ տացէ պարգեւ ի
ժառանգութենէ իւրմէ միում ի ծառայից
իւրոց, եղիցի նմա այն մինչեւ ցտարին
թողութեան, եւ ապա դարձցի անդրէն
առ [6]առաչնորդն. բայց ժառանգութիւն
18 որդւոց նորա՝ նոցին եղիցի։ Եւ մի՛ առցէ
առաչնորդն ի ժառանգութենէ ժողո-
վրդոյն իւրոց բանաստատել զնոսա.
այլ յիւրմէ կալուածոց եւ յիւրմէ ժա-
ռանգութենէ ժառանգեսցէ" որդւոց
իւրոց, զի մի՛ ցրուեսցի ժողովուրդն
իմ իւրաքանչիւր [7]յինակութենէ։
19 Եւ տարաւ զիս ընդ ճանապարհ [8]դրանն
հարաւոյ ի պատգամ՝" սրբութեանց
քահանայիցն՝ որ հայէր ընդ հիւսիսի,
20 եւ ահա անդ տեղի [9]դատեալ. Եւ ասէ
ցիս, Այս է տեղի յորում եփիցեն քա-
հանայքն զվասն անգիտութեանն եւ
զվասն մեղացն. անդ եփեսցեն [10]եւ
զմաննայն, առնելովն մի՛ ելանել ի
սրահն" պատաքին սրբել զժողովուրդն։
21 Եւ ահաւասիկ զիս [11]ի սրահն պատաքին, եւ
չորիցկոյզ զիս ընդ չորս [12]կողմանս սրա-
հին. Եւ ահա գաւիթ առ գաւիթս ընդ
22 չորս կողմանս սրահին։ Գաւիթին փոքու-

---

[1] Եբր. յարջառոց [2] Եբր. մատուսցէ ընծայ հացի արդու մի առ զուարակ, եւ արդու մի առ խոյ եւ վասն գառանց որչափ բաւական իցէ ձեռն նորա, եւ եւզ հիմէն մի առ արդու։
(8) Եւ ի մտանել իշխանին՝ ընդ ճանապարհ սրահի դրանն մտցէ, եւ ընդ նոյն ճանապարհ
[3] Եբր. իշխանն [4] Եբր. յաւուրս տարեկանաց ընծայի հացի եղիցէ արդու մի առ զուարակ և արդու մի առ խոյ, եւ վասն գառանց որչափ բաւական իցէ ձեռն նորա, եւ եւզ հիմէն մի առ արդու։
(12) Եւ եթէ մատուսցէ իշխանն ողջակէզ կամաւոր, կամ զոհ խաղաղական Տեառն՝ բացցեն նմա զդրունսն որ հայի ընդ արեւելս, և արասցէ զողջակէզ իւր եւ զխաղաղականս իւր, որպէս առնէ յաւուրն շաբաթու, և ելցէ, եւ փակեսցեն զդրունսն յետ ելանելոյ նորա։
(13) Եւ գառն մի տարեւոր անարատ արասցես ողջակէզ օր ըստ օրէ Տեառն. այգուն այ-
գուն արասցես զայն։ (14) Եւ հացի ընծայ արասցես ընդ նմա այգուն այգուն, զվեցերորդ մասն արդուի, եւ զերրորդ մասն հինէն եւզ խառնել ի նաչխին. հացի ընծայ է այն Տեառն օրէն յաւիտենական՝ մշտնջենաւոր։ (15) Եւ արասցեն զդառնն եւ զընծայն հացի և զեւզն
[5] Եբր. իշխանն [6] Եբր. իշխանն, զի ժառանգութիւնն նորա որդւոց նորա եղիցի։ (18) Եւ մի՛ առնուցուս իշխանն ի ժառանգութենէ ժողովրդեանն զրկել զնոսա ի կալուածոց իւրեանց. ի կալուածոց իւրոց տացէ ժառանգութիւն [7] Եբր. ի կալուածոյ իւրմէ [8] Եբր. որ ի թիւկանց դրանն ի դահլիճս [9] Եբր. յետուստ յարեւմուտս կոյս [10] Եբր. զընծայն հացի, զի մի՛ հանցեն ի գաւիթն [11] Եբր. ի գաւիթն [12] Եբր. անկիւնս գաւթին, եւ ահա գաւիթ յանկեան գաւթի, գաւիթ յանկեան գաւթի։ (22) Ի բոլոր անկիւնս գաւթին՝

քառասուն կանգուն երկայնութիւն եւ երեսուն կանգուն լայնութիւն, մի չափ
23 էր չորեցունց՝։ Եւ պատչգամք չուրջանակի գչորեքսումքք, եւ խոնակերացք չինեալք ի ներքոյ պատչգամացն չուրջ-
24 ջանակի։ Եւ ասէ ցիս, Այս տունք են խոհակերաց՝ ուր հասուցանիցեն պաշտօնեայքն տանն զզենլիս ժողովրդեանն։

Գլ. խէ

1 Եւ եմոյծ զիս առաջի դրան տաճարին, եւ ահա ելանէր ջուր ի ներքոյ [1]վարագուրացն տաճարին ընդ արեւելս, զի երեսք տաճարին հայէին ընդ արեւելս. եւ ջուրն հոսէր յաջմէ կողմանէ [2]տաճարին հիւսիսոյ ի սեզանն կոյս՝։ Եւ
2 եհան զիս ընդ ճանապարհ դրանն հիւսիսոյ, եւ չրջեցոյց զիս ընդ ճանապարհ զրանն արտաքնոյ առ դրամբն արտաքնոյ՝ որ հայէր ընդ արեւելս. եւ ահա ջուրն հոսէր յաջմէ կողմանէ։
3 [3]Եւ իբրեւ գնաց առն դէմ յանդիման, եւ չափ ի ձեռին իւրում. եւ չափեաց հազար՝ չափովն, եւ անց ընդ ջուրն՝
4 ջուր յորդութեան. Եւ չափեաց հազար՝ չափովն, եւ անց ընդ ջուրն, եւ հարկանէր ջուրն մինչեւ գերանսն. եւ չափեաց հազար՝ չափովն, եւ անց ընդ ջուրն, եւ հարկանէր ջուրն մինչեւ ցգօտին.
5 Եւ չափեաց հազար՝ չափովն զուխսն, եւ ոչ կարէր՝ անցանել, զի յորդեաց ջուրն իբրեւ գյորձանս հզհզաց ընդ որ ոչ ոք անցանիցէ։
6 Եւ ասէ ցիս, Տեսե՞ր որդի մարդոյ. եւ գարձոյց զիս եւ տարաւ յափն գետոյն։
7 Եւ ի չրջելն անդ իմում, եւ ահա յափն գետոյն ծառատունկ բազում յոյժ յայսկոյս
8 յայնկոյս։ Եւ ասէ ցիս. Ջուրս այս որ ելանէ իկոզմ [4]Պարիկասյոց ընդ արեւելս, եւ իջանէ յԱրաբիա, եւ գայ մինչեւ ցծով իջուրց ելից, եւ բժշկեսցէ զջուրս՝։
9 Եւ եղիցի ամենայն չունչ [5]անասնոց ի բոլ թզկոց, յամենայնի յորոց վերայ եկեսցէ գետն՝ կենդանի լիցի. եւ եղիցի անդ ձուկն բազում յոյժ, զի հասեալ անդր ջրոյս այսորիկ՝ բժշկեսցէ. եւ կեն-
10 դանասցի յորոյ վերայ հասցէ գետն [6]եւ կեցցէ՝։ Եւ կացցեն ի նմա [7]որսորդք յենգադեայ մինչեւ ցենգադիմ. ձգանք ուռկանաց առանձինն եղիցին, եւ ձկունք նորա [8]իբրեւ զձկունս ծովուն մեծի,
11 եւ բազմութիւն բազում յոյժ. [9]Բայց նորա եւ ի գարձս նորին, եւ ի համբառնալ՝ նորին մի՛ սրբեսցին, այլ յաղ
12 մասնեսցին։ Եւ առ գետովն ելցէ զամիսն յայսկոյս յայնկոյս՝ ամենայն ծառ ուտելի, եւ մի՛ [10]հնասցի չուրջ գնովաւ՝, եւ մի՛ պակասեսցի պտուղ նորա, [11]եւ զպաշարութիւն իւր յառաջագոյն արձակեսցէ՝. զի ջուրք նորա ի սրբութենից ելանիցեն. եւ եղիցի պտուղ նոցա ի կերակուր, եւ [12]ելք նոցա ի բժշկութիւն։
13 Այսպէս ասէ Տէր Աստուած. Այս են սահմանք [6]ժառանգութեան երկրին, զոր ժառանգեսուցանիցեն երկոտասան ազգացն [13]որդւոցն Իսրայելի յաւելուած
14 վիճակաց՝։ Եւ ժառանգեսցեն զնա իւրաքանչիւր որ՝ որպէս եւ եղբայրն իւր, յոր ամբարձի զձեռն իմ տալ հարցն [14]նոցա. եւ անկցի երկիրն այն ձեզ ի վի-
15 ճակ ժառանգութեան։ Եւ այս են սահմանք երկրին. Որ ընդ կոյս հիւսիսոյ, ի ծովէն մեծէ, [15]որ իջանէ եւ մեկնէ ի
16 մուտս Եզդադայ Եւ Եմաթայ եւ Բերոթայ, Սաբարսիմայ՝ ի մէջ սահմանացն Դամասկոսի, եւ ի մէջ սահմանացն Եմաթայ, [16]բնակութիւնք Աւենանայ որ
17 են ի սահմանս Աբրանացւոյն։ Այս են սահմանք ի ծովէն ի հանդրուանէ Աւենանայ՝ սահմանք Դամասկոսի. եւ ընդ կոյսն հիւսիսոյ դուռ հիւսիսոյ, եւ սահմանքն Եմաթայ՝ սահմանք հիւսիսոյ,

---

գաւիթք կցեալք՝ քառասուն կանգուն յերկայնութիւն եւ երեսուն ի լայնութիւն՝ մի չափ չորեքցունց յանկիւնան [1]Եբր. սեմոց [2]Եբր. ի ներքոյ տանն ի հարաւոյ սեզանոյն [3]Եբր. Այրն յորոյ ձեռն էր չափ՝ եւ ընդ արեւելս, և չափեաց հապար կանգուն, եւ անցոյց զիս ընդ ջուրն, ջուրն բրինձ ի գարշապարս· (4) Եւ չափեաց հազար եւս, և անցոյց զիս ընդ ջուրն, ջուրն մինչեւ ի ծունկս. չափեաւս հազար եւս, և անցոյց զիս, ջուրքն մինչեւ ի մէջս. (5)Կարձեալ չափեաց հազար, եղեւ գետ այնպիսի մինչեւ չկարել ինձ
[4]Եբր. արեւելից և իջանէ ի գետն եւ մտանէ ի ծովս· յելանէն ի ծովս բժշկին ջուրքն

[5]Եբր. անասնոյ որ սողայ, ամենայն արեգ ուր եւ երթան գետն, [6]Եբր.պակաս [7]Եբր.ձկնորսք [8]Եբր. ազգի ազգի եղիցին, իբրեւ [9]Եբր. Մօրուտք նորա և ճահիճք [10]Եբր. թառամեսցի տերեւ նորա [11]Եբր. յամիսս իւր տացէ երախայրիս [12]Եբր. տերեւք [13]Եբր. Իսրայելի· Յովսեփայ են կրկին չափք [14]Եբր. ձերոց [15]Եբր. ընդ ճանապարհ եթէդոնայ ի մուտս Սեդադայ (16)Եմաթի, Բերոթա, Սիբրայիմայ [16]Եբր. Աւերակաթի իբրոն· (17) Եւ սահմանն եղիցի ի ծովէ մինչեւ Հասար Ենան, սահմանք Դամասկոսի, և ընդ կոյսն հիւսիսոյ ի հիւսիս՝ սահմանք Եմա-

18 Դէմ յանդիման՝ արեւելից ի մէջ Աբա-
նայն եւ ի մէջ Դամասկոսի, ի մէջ
Գաղաադացւոյն եւ ի մէջ երկրին Իսրա-
յելի, [1]Յորդանան մինչեւ ընդ ծովակողմ
արեւելից ընդ արմատ ասասանն՝. այս ընդ
19 արեւելս՝ եւ ընդ հարաւ, առ հարա-
ւով [2]ի Թեմանայ եւ յարմաւաստանէ
մինչեւ ի ջուրն Մարիբովթի Կադէս՝ որ
ձգի ի ծովն մեծ. այս բաժին հարաւա-
20 յին, եւ առ հարաւակ՝ եւ [3]սոյն բաժին
ծովեզն մեծի, որ որուչէ՝ մինչեւ նան-
ղէպ մտից Եմաթայ, [4]մինչեւ ի մատա
նորին. այս ինքն են ընդ ծովակողմն
Եմաթայ՝՝,
21 Եւ բաժանեցէք զերկիրն զայն [5]նո-
22 ցա, եւ՝՝ ազգացն Իսրայելի. Արկցէք
զնա ի վիճակս, ձեզ եւ եկելոցն, պան-
դրխատացն որ ի միջի ձերում, որք ծնան
որդիս ի միջի ձերում. եւ եղիցին ձեզ
իբրեւ այրէնածինք ի մէջ որդւոցն Իս-
րայելի, եղիցին ընդ ձեզ, [6]կերիցեն
ժառանգութեամբ՝՝ ի մէջ ազգացդ Իս-
23 րայելի. Եւ [7]եղիցին յազգ պանդխատաց
ի մէջ պանդխատաց՝ որ լինին ի ձեզ՝՝, ասէ
տէր Աստուած։

Գլ. ԽԷ

1 Եւ այս են [8]անհամանք ցեղիցն. ի սկզ-
բանէ կողմանն հիւսիսոյ ըստ կողման
ճանապարհին, որ գառանէ ընդ մուտս
Եմաթու հանդրուանին Ասենանու. սահ-
ման Դամասկոսի առ հիւսիսով ըստ կող-
ման բնակութեանն Եմաթայ. եւ եղի-
ցի նոցա՝՝ արեւելակողմ մինչեւ [9]ի ծո-
2 վակողմ՝ Դանայ բաժին մի. Եւ ի սահ-
մանայ անտի Դանայ յարեւելակողմ
մինչեւ ի ծովակողմ՝ Ասերայ բաժին մի.
3 Եւ ի սահմանացն Ասերայ յարեւելից
կուսէ մինչեւ ցծովակողմ՝ Նեփիմաղի-
4 մայ բաժին մի. Եւ ի սահմանացն Նեփ-

Թաղիմայ յարեւելից կուսէ մինչեւ ցծո-
5 *վակողմ՝ Մանասէի բաժին մի. Եւ ի*
սահմանացն Մանասէի յարեւելից կուսէ
մինչեւ ցծովակողմ՝ Եփրեմի բաժին մի.
6 Եւ ի սահմանացն Եփրեմի յարեւելից
կուսէ մինչեւ ի ծովակողմ՝ Ռուբինի
7 բաժին մի. Եւ ի սահմանացն Ռուբինի
յարեւելից կուսէ մինչեւ ցծովակողմ՝
8 Գուդայի բաժին մի. Եւ ի սահմանացն
Գուդայի յարեւելից կողմանէ մինչեւ
ցծովակողմ՝ եղիցի [10]պատուղ նուիրացդ
քոյոց եւ հինգ հազար չերկայնութիւն
եւ տասն հազար ի լայնութիւն՝՝ իբրեւ
զմի ի վիճակաց ի կողմանցն արեւելից
մինչեւ ցծովակողմն. եւ եղիցի [11]սուրբ
9 ի մէջ նոցա. Պատուղ զոր նուիրիցեն՝՝
Տեառն, չերկայնութիւն քոյոց եւ հինգ
հազար եւ ի լայնութիւն տասն հազար.
10 [12]Եղիցի պատուղ՝՝ սրբութեանց քահանա-
յիցն, ընդ [13]հարաւակողմն՝ չերկայնու-
թիւն քոյոց եւ հինգ հազար, եւ ընդ
ծովակողմն՝ ի լայնութիւն տասն հազար,
եւ ընդ արեւելս՝ ի լայնութիւն տասն
հազար, եւ ընդ [14]հիւսիսակողմն՝ չեր-
կայնութիւն քոյոց եւ հինգ հազար. եւ
եղիցի [15]սահման սրբութեանցն ի միջի
11 նոցա՝՝ քահանայիցն սրբեցելոց, որդւոցն
Սադովկայ, որք [16]պահեն զպահպանու-
թիւնս տանն Տեառն՝՝, որք ոչ մոլորե-
ցան ի մոլորութիւն որդւոցն Իսրայելի՝
12 որպէս մոլորեցան Ղեւտացիքն։ Եւ ե-
ղիցի նոցա [17]պատուղ տուեալ ի պատու՝՝
երկրին սրբութիւն սրբութեանցն, ի
13 սահմանաց Ղեւտացւոցն։
Եւ Ղեւտացւոցն որ [18]զհետ սահմա-
նաց՝՝ քահանայիցն՝ իղէ չերկայնութիւն
քոյոց եւ հինգ հազար, եւ ի լայնու-
14 թիւն տասն [19]հազար. Ոչ վաճառեսցի ի
նոցանէն, եւ ոչ չափեսցի, եւ ոչ առցի
առաջին արդեանց՝՝ երկրին. զի սրբու-
15 թիւն Տեառն է։
Բայց հինգ հազարն աւելորդ լայնու-

թայ. այս է կողմն հիւսիսոյ։ (18) Եւ կողմն
[1]ԵԲԲ. Յորդանան եղիցի. ի սահմանէն ցծովն ա-
րեւելից չափեսջիք [2]ԵԲԲ ի Թամարայ մինչեւ ի
ջուրն Հակառակութեան ի Կադէս, մինչեւ ի
հեղեզատն [3]ԵԲԲ. կողմն արեւմտեան՝ ծովն մեծ
ի սահմանէն [4]ԵԲԲ. այս է կողմն արեւմտից
[5]ԵԲԲ. Ձեզ, [6]ԵԲԲ. ժառանգորդք [7]ԵԲԲ.
եղիցի իցեղին յորում պանդխատացի պանդուխտն
ընդ նմա [8]ԵԲԲ. անուանք ցեղիցն։ Ի ծա
գաց հիւսիսոյ առ ճանապարհաւն Եթղոնոյ
լեմաթի կոյս՝ մինչեւ լԱսար-ենան, սահման
Դամասկոսի ի հիւսիսակողմն առ երի եմաթայ.
եւ եղիցի նմա [9]կամ, յարեւմուտս, ուղիղ
ի Ներւոյ

[10]ԵԲԲ. Նուէրն զոր նուիրիցէք քոյոց եւ հինգ հա-
զար յեղ ի լայնութիւն եւ երկայնութիւն [11]ԵԲԲ.
սրբութիւն ի մէջ նորա։ (9) Նուէրն զոր նուիրիցէք
[12]ԵԲԲ. Եւ այս եղիցի նուէր [13]ԵԲԲ. հիւսիսա-
կողմն [14]ԵԲԲ. հարաւակողմն [15]ԵԲԲ. սրբու-
թիւն Տեառն ի միջի նորա։ [16]ԵԲԲ. պահեցին
զպահպանութիւն իմ [17]ԵԲԲ. նուէր ի նուիրաց
[18]ԵԲԲ առ սահմանաւ [19]ԵԲԲ. հազար. ամե-
նայն երկայնութիւն քոյոց եւ հինգ հազար, և
լայնութիւն տասն հազար։ (14) Եւ ոչ վաճա-
ռեսցեն ի նմանէ, եւ ոչ փոխեսցին, եւ ոչ դար-
ձուսցեն յայլ զերաբայրի

թեամբ առ քսան եւ հինգ հազարին,
[1]պատուար արտաքոյ քաղաքին լինելոյ՝
ի բնակութիւն եւ յարձակավայրս նո-
րին. եւ եղիցի քաղաքն ի միջի նորա ։
16 Եւ այս է չափ նորա. ի կողմանէ հիւ-
սիսոյ՝ չորք հազար եւ հինգ հարեւր,
եւ ի կողմանէ հարաւոյ՝ չորք հազար եւ
հինգ հարեւր, եւ ի կողմանէ արեւելից՝
չորք հազար եւ հինգ հարեւր, եւ ի կող-
մանէ ծովուն՝ չորք հազար եւ հինգ հա-
17 րեւր ։ Եւ եղիցի բաւական քաղաքին բնդ
հիւսիսոյ՝ երկերիւր եւ յիսուն, եւ բնդ
հարաւ՝ երկերիւր եւ յիսուն, եւ բնդ
արեւելս՝ երկերիւր եւ յիսուն, եւ բնդ
18 ծով՝ երկերիւր եւ յիսուն ։ Եւ աւելորդ
երկայնութեանն մերձ առ [2]հրաբուրիւսիոք
սրբութեանցն աւան հազար բնդ արե-
ւելս, եւ տան հազար բնդ ծով. եւ
[3]եղիցին երախայրիք ի սրբութեանն". եւ
եղիցին արդիւնք նորա ի հաց գործաւորի
19 քաղաքին. եւ գործաւորք քաղաքին զոր-
ծեսցեն զնա յամենայն ցեղից Իսրայելի։
20 Եւ ամենայն [4]պատուար քսան եւ հինգ
հազար՝ առ քսան եւ հինգ հազար. չո-
րեքկուսի [5]զատանիլիք զպատուար սրբու-
թեանն ի բնակութենէ" քաղաքին ։
21 Եւ աւելորդն [6]նորին՝ գլխաւորին եւ
ղեցի. եւ անտի ի պատուար սրբութեանն,
եւ ի նիստ քաղաքին յանդիման նորին,
քսան եւ հինգ հազար յերկայնութիւնն"
մինչեւ ի սահմանս արեւելից կողմանն,
եւ ի ծովակողմ դէմ յանդիման [7]նմին,
քսան եւ հինգ հազար" մինչեւ ի սահ-
մանս ծովակողմանն մերձ [8]առ վիճակ
գլխաւորին ։ Եւ եղիցի պատուար" սրբու-
թեանցն եւ սրբութիւնն տաճարին ի մէջ
22 նորա ։ Եւ [9]ի ժառանգութենէ Ղեւտաց-
ւոցն, եւ ի բնակութենէ քաղաքին՝
մէջոցն գլխաւորացն ղեցւոյ. եւ" ի մէջ
սահմանացն Յուդայ, եւ ի մէջ սահմա-
նացն Բենիամինի՝ [10]գլխաւորին եղիցի ։
23 Եւ աւելորդ ցեղիցն՝ ի կողմանցն ա-
րեւելից մինչեւ ցծովակողմ՝ Բենիամի-
24 նի բաժին մի ։ Եւ ի սահմանացն Բե-
նիամինի՝ ի կողմանցն արեւելից մին-
չեւ ի ծովակողմ՝ Շմաւոնի բաժին մի ։
25 Եւ ի սահմանացն Շմաւոնի ի կողմանցն
արեւելից մինչեւ ի ծովակողմ՝ Իսա-
26 քարայ բաժին մի ։ Եւ ի սահմանացն Ի-
սաքարայ՝ ի կողմանցն արեւելից մին-
չեւ ի ծովակողմ՝ Զաբուղոնի բաժին
27 մի ։ Եւ ի սահմանացն Զաբուղոնի ի
կողմանցն արեւելից մինչեւ ի ծովա-
28 կողմ՝ Գադայ բաժին մի ։ Եւ ի սահմա-
նացն Գադայ մինչեւ դհարաւ եղիցի
սահմանք նորա, [11]ի Թեմանայ եւ ի Ջրոցն
Ռաբովթ Կադէս՝ ժառանգութիւն մի
29 մինչեւ ցծովն" մնծ ։ Այս երկիր է զոր
բաժանիցէք վիճակաւ ազգացն Իսրա-
յելի, եւ այս բաժինք նոցա, ասէ Տէր
Աստուած ։
30 Եւ այս հայմուտք քաղաքին. բնդ կողմ
հիւսիսոյ չորք հազար եւ հինգ հարեւր
31 չափովն ։ Եւ դրունք քաղաքին ըստ ա-
նունս ազգացն Իսրայելի. դրունք ե-
րիք բնդ կողմ հիւսիսոյ. դուռն մի Ռու-
բենի եւ դուռն մի Գադայ եւ դուռն
32 մի Դանայ ։ Եւ բնդ կողմ արեւելից
չորք հազարք եւ հինգ հարեւր չափովն,
եւ դրունք երիք. դուռն մի Յովսեփայ
եւ դուռն մի Բենիամինի եւ դուռն մի
33 Դանայ ։ Եւ բնդ կողմ հարաւոյ չորք
հազարք եւ հինգ հարեւր չափովն, եւ
դրունք երիք. դուռն մի Շմաւոնի եւ
դուռն մի Իսաքարայ եւ դուռն մի Զա-
34 բուղոնի ։ Եւ բնդ կողմն ծովու չորք
հազար եւ հինգ հարեւր չափովն, եւ
դրունք երիք. դուռն մի Գադայ եւ
դուռն մի Ասերայ եւ դուռն մի Նեփ-
35 թաղիմայ ։ Շուրջ չրջանակաւ՝ ութ հա-
տասն հազար. եւ անուն քաղաքին
[12]յորմէհետէ լինիցի, Անդ Տէր եղիցի ա-
նուն նորա"։

[1] Եբէ. անսուրբ եղիցի վասն քաղաքին [2] Եբէ. Նուիրեալ [3] Եբէ. եղիցի մերձ առ նուէր սրբութեանն [4] Եբէ. Նուէր [5] Եբէ. Նուիրեսցիք զնուէր սրբութեանն բնդ կայուածով [6] Եբէ. գլխ-ե [7] Եբէ. վասն իշխանին ասաի եւ անտի նուիրին սրբութեան եւ կայուածոյ քաղաքին, յանդիման հնգից եւ քսանից հազարացն նուիրին [8] Եբէ. ի բաժինն՝ վասն իշխանին եղիցի ։ Եւ եղիցի նուէր [9] Եբէ. ի կայուածոյ Ղեւտացւոցն, եւ ի կայուածոյ քաղաքին որ է ի մէջ այնր որ իշխանին է, [10] Եբէ. իշխանին [11] Եբէ. ի Թամարայ մինչեւ ի ջուրն Հակառակութեան ի Կադէս, մինչեւ ի հեղեղատն որ կ՚ելանէ ի ծով անդր [12] Եբէ. յորէ անտի եղիցի՝ ենովայ Շամմա պատգամ Տէր անդ։

ԳԼՈՒԽՔ ԴԱՆԻԵԼԻ ՄԱՐԳԱՐԷԻ

	Գլ.	Համ.
Մարգարէանայ նախ վասն Նաւուքոդոնոսորայ, փրկէ զպարսատեալ սրդարն, եւ մանաւանդ զանօրէն ծերան։	ԺԳ.	1
Ընտրին Դանիէլեանք եւ առնին յանձն ներբինապետին, եւ ուտեն ունդս. եւ ի ժամանակի իբրեւ կացին առաջի թագաւորին՝ երեւեցան գտան գեղեցկագոյն քան զամենեսին։	Ա.	1
Տեառնէ երազ Նաբուքոդոնոսոր. եւ իբրեւ ի վարանս մտին եւ չկարէին գիտել մոգքն զերազն և զմեկնութիւնն, հրամայէ կոտորել զնոսա եւ ի տապանակի կացին և Դանիէլեանք, եւ ապրեցոյց զնոսա Աստուած. բանկի յայտնեացԴանիէլի զգիտութիւն երազոյն։	Բ.	1
Մատանէ Դանիէլ եւ ասէ թագաւորին զերազն եւ զմեկնութիւն նորա։ Իակ վէմն որ հատաւ առանց ձեռին՝ Քրիստոս է, զի առանց սմանութեան ծնաւ ի կուսէն։	Բ.	24
Կանգնեաց զպատկերն Նաբուքոդոնոսոր, եւ հրամայէ ամենեցուն երկիր պագանել. և վերիս մանկունսն արկանէ ի հնոց, վասն զի ոչ պագին երկիր պատկերին. իբրեւ որ չուրջ զհնոցսն էին սատակեցան, եւ նորա ապրեցան եւ օրհնէին զԱստուած. կոչաց զնոսա՝ եւս կենդանիս եւ զարմացաւ, եւ փառաւոր սրբոյ զԱստուած. եւ զնոսա իշխանութեամբն Հրէից պատուեաց. եւ հրաման ետ՝ թէ որ հայհոյէ զԱստուած՝ մեռանի։	Գ.	1
Տեառնէ այլ երազ Նաբուքոդոնոսոր, եւ ի տարակուսի է միւսանգամ. ասէ իմաստունսն Բաբելացւոց, եւ ոչ գիտացին. մեկնէ զերազն Դանիէլ. եւ խրատ թագաւորին՝ զնօրէնութիւնն իւր ողորմութեամբ քաւել. եւ յետ բազում ժամանակաց եղ ի գլուխ երազն, եւ օրհնեաց զԱստուած Նաբուքոդոնոսոր։	Դ.	1
Ի մտանել սուրբ սպասուցն ի հրամանէ Բաղտասարայ սրբոյն որդւոյ Նաբուքոդոնոսորայ, մինչդեռ ըմպէին նորօք կոչնականքն, եղ թմբի ձեռին եւ գրեաց յորմն. իբրեւ զայն եւս տարակուսէին ճանաչել իմաստունքն Բաբելացւոց, եկն Դանիէլ, ճանեաւ զգիրն եւ մեկնեաց. գգեցաւ ծիրանիս, եւ արկին մանեակ ոսկի ի պարանոցի նորա. և քարոզ կարդացաւ՝ լինել երրորդ իշխան թագաւորութեան նորա։	Ե.	1
Թագաւորեաց Դարեհ Մար, եւ կացոյց իշխան զԴանիէլ. բանադատէր թագաւորն ի նախարարացն հաստատել հրաման, զի եթէ իշխեսցէ ոք խնդրել խնդրուածս յԱստուծոյ կամ ի մարդոյ, բայց միայն յարքայէ մինչեւ ցերեսուն օր՝ անկցի ի գուբն առիւծոց։ Իբրեւ այնպէս կարգէր, ապաւէին Դանիէլի մինչդեռ կայր յաղօթս, եւ չարաչաւսէին. կուտէին ի վերայ թագաւորին, եւ սիրեցին զնա արկանել ի գուբ, եւ արկ. եւ կանխեաց եկն եգիտ զնա կենդանի, եհան զնա ի գբոյն. և գչարաչաւսն կանխմբք հանդերձ մատնեաց ի ատամս առիւծուցն. եւ հրաման ետ երկնչել յԱստուծոյ։	Ե.	31
Տեառնէ գեսեխիլ գազանացն. առիւծոքն՝ զթագաւորութիւնն Բաբելացւոց, արջուքն՝ զՄարաց եւ զՊարսից, ընձուն՝ զՄակեդոնացւոցն, եւ չորրորդիւն՝ զՀռոմայեցւոցն։ Մարգարէանայ վասն Քրիստոսի եւ վասն Նեռինն եւ Անտիքրիստ սմմարչտի. զի նոյ է եզջերն փոքրիկ որ բնկեց զերիան՝ որ յառաջ քան զնա էին։	Է.	2
Մարգարէանայ թէ գիարդ Աղեքսանդրոս Մակեդոնացի քակեաց զթագաւորութիւնն Պարսից. յոյ՝ զթագաւորսն Պարսից ասէ, եւ քոշ՝ զԱղեքսանդրոս Մակեդոնացի. Աստ կան եւ թանաւսն եւ ծերքորդքն։	Ը.	2
Իակ վերջին տեսիլն՝ աբ զՀարաւայինն տիկնոջէն ասէ՝ ի Մակաբայեցւոց գիրն գտանի. յորում եւ վասն Նեռինն եւ կատարածի։	Ժ.	1
Ջրել կործանէ, գվիշապն սպանանէ, և ի գուբն արկանի եւ ապրէ. եւ որք պատճառք արկանելոյն նորա եղեն՝ արկան ի գուբն եւ ծախեցան յառիւծուցն։	ԺԴ.	2

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ
ԴԱՆԻԵԼԻ

[1]ԳԼՈՒԽ Ա.Գ

1 Ի ԹԷ էր այր մի բնակեալ ի Բաբելոն, եւ անուն նորա Յովակիմ։
2 Եւ առ իւր կին՝ անուն Շուշան, դուստր Քեղկեայ, դեղեցիկ յոյժ եւ երկիւղած
3 ի Տեառնէ։ Եւ ծնօղք նորա արդարք, եւ ուսուցին զդուստրն իւրեանց ըստ
4 օրինացն Մովսիսի։ Եւ էր Յովակիմ մեծատուն յոյժ. եւ էր նորա բուրաստան մերձ յապարանս իւր. եւ առ նա ժողովէին Հրեայք, վասն փառաւորագոյն էր
5 քան զամենեսեան։ Եւ երկուքեան երկու ծերք ի ժողովրդենէ անտի՝ դատաւորք տարւոյն այնմիկ, զորոյ խօսեցաւ Տէր, եթէ ել անօրէնութիւն ի Բաբելոնէ ի ծերոցն դատաւորաց, որ հա-
6 մարէին առաջնորդել ժողովրդեանն։ Եւ նոքա հանապազորդէին ի տունն Յովակիմայ, եւ գային առ նոսա ամենեքեան ի դատաստան։ Եւ լինէր իբրեւ
7 ժողովուրդն մեկնէր զհասարակ աւուրքն՝ մտանէր Շուշան եւ զգնայր ի բուրաս-
8 տանի առն իւրոյ։ Եւ տեսանէին զնա երկոքին ծերքն հանապազ՝ զի մտանէր
9 եւ զգնայր, եւ ցանկացան նմա։ Եւ զարձուցին զմիտս իւրեանց, եւ խոտորեցուցին զաչս իւրեանց՝ չհայել յերկինս
10 եւ չյիշել զարդար դատաստանն։ Եւ էին երկոքեան հարեալ ի նմա, եւ չպատ-
11 մէին միմեանց զցաւս իւրեանց, Զի պատկառէին պատմել զցանկութիւնն իւրեանց. քանզի կամէին լինել ընդ
12 նմա։ Եւ ապաւէին նմա աւուր հանա-
13 պազ տեսանել զնա։ Եւ ասեն ցմիմեանս, երթիգուք ի տուն, զի ճաշոյ
14 ժամ է։ Եւ ելին եւ մեկնեցան ի միմեանց. եւ զարձեալ անդրէն եկին միւսանգամ առ միմեանս։ Եւ հարցեալ միմեանց զպատճառսն, խոստովան եղեն զցանկութիւնն իւրեանց. ապա եղեն ժամադիրք

[1] Այս ԺԳ. ԹԼԵ դլուխ չկիրսկանին

միմեանց՝ թէ երբ կարասցեն զնա միայն
15 գտանել։ Եւ եղեւ ի պատահին նոցա նմա ի դիպող աւուր, եկին եմուտ երթեալն որպէս յերէկն եւ յեռանդն՝ երկու միայն
16 աղջկամբք, եւ ցանկացաւ լուանալ ի բուրաստանի անդ. քանզի տօթ էր. Եւ
17 չէր ոք անդ, բայց միայն երկու ծերքն թաքուցեալք՝ որ ապաւէին նմա։ Եւ ասէ ցաղջկունսն, Երթայք բերէք ինձ
18 իւղ եւ օճառ, եւ զդուռս բուրաստանիս փակեցէք, զի լուացայց։ Եւ արարին որպէս ասաց նոցա. փակեցին զդուռս բուրաստանին, եւ ելին ի կողմանէ դրանցն՝ բերել զոր ինչ հրամայեաց նո-
19 ցա. եւ ոչ տեսին զծերսն, քանզի թաքուցեալ էին։ Եւ եղեւ իբրեւ ելին աղջկունքն, յարեան երկու ծերքն եւ
20 դիմեցին ի վերայ նորա եւ ասեն, Ահա դուռք բուրաստանիս փակեալ են, եւ չիք ոք որ տեսանէ զմեզ, եւ մեք ցանկացեալ եմք քեզ. վասն որոյ եւ քո-
21 հաւանեալ մեզ՝ լեր ընդ մեզ։ Ապա թէ ոչ, վկայեմք զքէն, եթէ ոմն պատանի էր ընդ քեզ, եւ վասն այնորիկ արձա-
22 կեցեր զաղջկունսն ի քէն։ Ծուեաց եւ հան Շուշան եւ ասէ, Տաղտապ է ինձ յամենայն կողմանց. եթէ զայդ գործ գործեցից՝ մահ է ինձ, եւ եթէ ոչ գործեցից՝
23 չեմ ապրելոց ի ձեռաց ձերոց։ Բայց լաւ է ինձ չգործել զայդ, եւ անկանիլ ի ձեռս ձեր, քան թէ մեղայց առաջի Տեառն։
24 Եւ ազաղակեաց ի ձայն մեծ Շուշան. ազաղակեցին եւ երկոքեան ծերքն կից
25 նմին։ Եւ ընթացաւ մին երաց զդուռս
26 բուրաստանին։ Իբրեւ լուան զձայն ճչոյն ի բուրաստանի անդ ընտանիքն՝ անկան ընդ կողմն դրանն ի ներքս, տեսանել թէ գինչ իցէ ընդ նա անցեալ իցեն։
27 Եւ իբրեւ սասցին ծերքն զդառն իբանց՝ զամօթն հարան ծնօղքն յոյժ, զի ոչ երբեք այնպիսի բանք սասցան
28 զՇուշանայ։ Եւ եղեւ ի վաղիւ անդր

իրրեւ եկն ժողովուրդն առ այն Նորա
Յովակիմ, եկին եւ երկոքին ծերքն անօ-
րէն մուտ զՇուսանայ՝ սպանանել զնա ։
29 Եւ ասեն առաջի ժողովրդեանն , Զգե-
ցէք զՇուսանայ զդուստերէ Քղկիայ , որ
30 է կին Յովակիմայ ։ Եւ նոքա յղեցին .
եւ եկն նա, եւ ծնողք իւր եւ որդիք
31 իւր եւ ամենայն ազգականք նորա ։ Եւ
Շուսան էր փափուկ յոյժ եւ գեղեցիկ
32 տեսլեամբ ։ Եւ անօրէնքն հրամայեցին
հոլանի առնել զնա , քանզի աքղեայ
33 էր , զի յգոյն գեղով նորա ։ Եւ իւրքն
լային , եւ ամենեքեան որ ճանաչէին զնա ։
34 Յարեան երկոքին ծերքն ի մէջ ժո-
ղովրդեանն , եւ եդին գլեռս իւրեանց
35 ի վերայ գլխոյ նորա ։ Եւ նա լայով հա-
յեցաւ յերկինս , քանզի էր սիրտ նորա
36 յուսացեալ ի Տէր ։ Ասեն ծերքն երկո-
քեան , Մինչդեռ մեք միայն զզնայաք
ի մէջ բուրաստանին , եմուտ դա անդր
երկու աղկամբք , եւ փակեաց զդուրս
37 բուրաստանին , եւ արձակեաց զաղջի-
կունան ։ Եկն առ նա պատանի մի որ էր
38 Թաքուցեալ , եւ անկաւ ընդ նմա ։ Եւ
մեք էաք յանկիւնի բուրաստանին , իւ-
րեւ տեսաք զանօրէնութիւնն՝ ընթա-
ցաք առ դոսա , եւ տեսաք զլինելն դո-
39 ցա ընդ միմեանս ։ Չկա՛ ոչ կալացաք
ունել , քանզի բուն էր քան զմեզ , եւ
եւաց զդուրան եւ փախաւ արտաքս ։
40 Զդա զոր բռնեցարդ՝ հարցաք մե՛ զի
էր պատանին , եւ ոչ կամեցաւ պատ-
41 մել մեզ , զայդ վկայեմք ։ Եւ հաւատաց
նոցա ատեանն իրրեւ ծերոց ժողովրդեան
եւ դատաւորաց , եւ դատեցան զնա
42 մեռանել ։ Աղաղակեաց ի ձայն բարձր
Շուսան եւ ասէ , Աստուած յաւիտե-
նական ծածկագէտ , որ գիտես զամե-
43 նայն յառաջ քան զլինել նոցա . Դու
գիտես զի սուտ վկայեն զինէն . եւ ա-
հա մեռանիմ որ ոչ ինչ գործեցի՝ զոր
44 գոքայդ անօրինեն զինէն ։ Եւ լուաւ
Տէր ձայնի նորա . եւ մինչդեռ առնէին
45 զնա կրուանել , Յարոյց Աստուած
զՀոգին Սուրբ ի վերայ մանկան միոյ
46 տղայոյ որում անուն էր Դանիէլ ։ Եւ
աղաղակեաց ի ձայն բարձր , եւ ասէ ,
47 Անպարտ եմ ես յարենէ դորա ։ Եւ դար-
ձաւ ամենայն ժողովուրդն առ նա , եւ
ասեն , Զի՞նչ է բանդ այդ զոր դուդ լա-
48 սեցար ։ Եւ նա եկաց ի մէջ նոցա եւ
ասէ , Այդպէս անմիտք էք, որդիք Իս-
րայելի . ոչ քննեցէք եւ ոչ յիրաւանց
վերայ հասէք . եւ դատապարտեցէք
49 զդուստդ Իսրայելի ։ Դարձայք անդրէն
յատեան . քանզի սուտ վկայեցին դոքա
50 զնմանէ ։ Եւ դարձաւ ժողովուրդն վազ-
վազակի . եւ ասեն ցնա ծերքն , Եկ նիստ
ի միջի մերում , եւ պատմեա մեզ . զի
51 քեզ ետ Աստուած զկրկնութիւն ։ Եւ
ասէ ցնոսա Դանիէլ , Մեկնեցէք զդոսա
ի միմեանց ի բաց եւ քննեսցուք զդո-
52 սա ։ Իրրեւ մեկնեցան ի միմեանց , կո-
չեաց զմին ի նոցանէ եւ ասէ ցնա , Ա՛յ
հնացեալ աւուրբք չարութեան , այժմ
անա եկին հասին մեղք քո՛ զոր գոր-
53 ծէիր յառաջագոյն ։ Զի դատէիր զդա-
տաստանս անիրաւութեամբ , զանմեզս
դատապարտէիր , եւ զվճռատակարս ար-
ձակէիր . ուր Աստուծոյ ասացեալ էր՝
Թէ Զանմեղն եւ զարդարն մի սպանա-
54 նիցես ։ Բայց արդ եթէ տեսեր զդոսա ,
ընդ որո՞վ ծառով հասեր առ դոսա՝ մինչ
խօսէին ընդ միմեանս ։ Եւ նա ասէ , Ընդ
55 հերձաւն ։ Ասէ Դանիէլ , Բարւոք ստե-
ցեր ի գլխին գլուխդ . ահաւասիկ հրեշ-
տակի Աստուծոյ առեալ հրաման , հերձ-
56 զէ զքեզ ընդ մէջ ։ Եւ ի բաց մերժեաց
զնա . հրամայեաց ածել զմեւսն , եւ ա-
սէ ցնա , Չաւակ Քանանու , եւ ոչ Յու-
դայ , գեղ դորա պաարեաց զքեզ , եւ ցան-
57 կութիւն չքնկաց զսիրտ քո ։ Այդպէս
առնէիք զդստերս Իսրայելի , եւ նոքա
առ երկիւղի մերձենային առ ձեզ . այլ
եւ ոչ դուստրդ Յուդայ կալաւ չանձին
58 զանօրէնութիւնս ձեր ։ Բայց այդ աղէ
ասա , ընդ որո՞վ ծառով հասեր առ դո-
սա մինչդեռ խօսէին ընդ միմեանս ։ Եւ
59 նա ասէ , Ընդ սղոցաւն ։ Ասէ ցնա Դա-
նիէլ , Բարւոք ստեցեր եւ դու ի քոյին
գլուխ , զի կայ աւասիկ հրեշտակ Աս-
տուծոյ սուսեր մերկ ի ձեռին՝ սղոցել
զքեզ ընդ մէջ , զի սատակեսցէ զքեզ ։
60 Եւ աղաղակեաց ամենայն ժողովուրդն
ի ձայն մեծ , եւ օրհնեցին զԱստուած
61 որ ապրեցուցանէ զյուսացեալս իւր ։ Եւ
յարեան ի վերայ երկուց ծերոցն . քան-
զի յանդիմանեաց զնոսա Դանիէլ ի նո-
ցին բերանոց սուտ վկայս . եւ արարին
ընդ նոսա՝ որպէս եւ եդին չարութիւն
62 նայն Մովսիսի ։ Եւ սպանին զնոսա . եւ
ապրեցաւ արիւն արդար յաւուր յայն-
63 միկ ։ Իսկ Քղկիա եւ կին նորա օրհ-

նեցին զԱստուած վասն գտերն իւրեանց Շուչանայ՝ հանգերձ Յովակիմա
արամբ նորա, եւ ամենայն ազգականօք նորա. զի ոչ գտան իրք գարշե-
64 լիան ինձա։ Եւ Դանիէլ եղեւ մեծ առաջի ժողովրդեանն յօրէ յայնմանէ եւ
անդր։"

ԳԼՈՒԽ Ա

[1]Տեսիլ երկրորդ։"

1 Յամին երրորդի թագաւորութեանն Յովակիմայ արքայի Յուդայ, եկն Նաբու-
քոդոնոսոր արքայ Բաբելացւոց յԵրու-
2 սաղէմ, եւ պաշարեաց զնա։ Եւ ետ Տէր ի ձեռս նորա զՅովակիմ արքայ
Յուդայ, եւ ի մասին սպասուց տանն Աստուծոյ, եւ տարաւ զայն յերկիրն Սենաար
ի տունն աստուծոյ իւրոյ, եւ զսպասեսմոյծ ի տուն գանձի աստուծոյ իւրոյ։
3 Եւ ասէ թագաւորն ցԱսփանէզ
ներքինապետ իւր՝ ածել յորդւոց
[1]գերութեանն Իսրայէլի եւ ի զա-
ւակէ թագաւորութեանն եւ [2]ի պար-
4 կեաց Մանկունս անարատս, գեղե-
ցիկս երեսօք, եւ խելամուտս ամենայն
իմաստութեան եւ հմուտս գիտութեան,
մտաւարժս հանճարով եւ զօրաւորս,
կալ ի տաճարին առաջի թագաւորին.
եւ ուսուցանել նոցա գպրութիւն եւ
5 զլեզու Քաղդէացւոց։ Եւ կարգեաց նո-
ցա թագաւորն ռոճիկս օր ըստ օրէ ի
սեղանոյ արքայի, եւ ի գինւոյ զոր ինքն
ըմպէր, սնուցանել զնոսա ամս երիս,
եւ ապա կացուցանել առաջի թագաւո-
6 րին։ Եւ էին ի նոսա յորդւոցն Յուդայ՝
Դանիէլ եւ Անանիա եւ Միսայէլ եւ Ա-
7 զարիա։ Եւ եդ նոցա ներքինապետն
անուանս. Դանիէլի՝ Բաղտասար, եւ
Անանիայի՝ Սեդրաք, եւ Միսայելի՝ Մի-
սաք, եւ Ազարեայ՝ Աբեդնագով։
8 Եւ եդ Դանիէլ ի մտի իւրում [3]չճա-
չակել ի սեղանոյ թագաւորին եւ ոչ ի
գինւոյ ըմպելոյ նորա, եւ աղաչեաց
9 զներքինապետն զի մի՝ [4]ճաշակեսցէ։ Եւ
ետ Աստուած զԴանիէլ ի չնորհս եւ յո-
գորմութիւն առաջի ներքինապետին։
10 Եւ ասէ ներքինապետն ցԴանիէլ, Եր-
կնչիմ ես ի տեառնէ իմմէ արքայէ, որ
կարգեաց ձեզ զկերակուրս ձեր եւ զըմ-

[1]Ե՛բր. գլուխ [2]Ե՛բր. յիշխանաց [3]Ե՛բր. չպղծել զանձն [4]Ե՛բր. պղծեսցէ զանձն նորա

պելի. զուգէ տեսանիցէ զերեսս ձեր
տրտմագոյնս քան զայլոց մանկանց հա-
սակակցաց ձերոց, եւ առնիցէք զիս
11 պատասխանի առ թագաւորին։ Եւ ասէ Դա-
նիէլ [5]ցՄելզասագ, զոր կացուցեալն էր
ներքինապետն ի վերայ Դանիէլի եւ Ա-
12 նանեայ եւ Միսայելի եւ Ազարեայ, Ա-
զէ, փորձեա զծառայս քո աւուրս տասն,
եւ տացեն մեզ ունդս, եւ կերիցուք,
13 եւ ջուր արբցուք. Եւ երեւեսցին ա-
սացի քո [6]դէմք մեր, եւ [6]դէմք ման-
կանցդ՝ որ ուտեն զսեղան թագաւորին.
եւ որպէս տեսանիցես՝ արասցիր ընդ
14 ծառայս քո։ Եւ անսաց նոցա, եւ փոր-
15 ձեաց զնոսա աւուրս տասն։ Եւ յետ
կատարելոյ աւուրցն տասանց, երեւե-
ցան երեսք նոցա նմա լաւք, եւ [7]հզօրք
մարմնով քան զամենայն մանկունսն որ
16 ուտէին զսեղան թագաւորին։ Եւ առ-
նոյր [8]Ամելասագ զընդիմիս նոցա եւ զգի-
նի ըմպելոյ նոցա, եւ տայր ունդս
[9]չորեցունց մանկանցն։
17 Եւ նա նոցա՝ Աստուած իմաստու-
թիւն եւ հանճար յամենայն գպրութիւնս
եւ իմաստութիւնս. եւ Դանիէլ խելա-
մուտ էր ամենայն տեսլեան եւ երա-
18 զոյ։ Եւ յետ կատարածի աւուրցն հրա-
ման եհան թագաւորն ածել զնոսա, եւ
ած զնոսա ներքինապետն առաջի Նա-
19 բուքոդոնոսորայ։ Եւ խօսեցաւ ընդ նո-
սա արքայն, եւ ոչ գտան յամենայնի
նման Դանիէլի եւ Անանեայ եւ Միսա-
յելի եւ Ազարեայ. եւ կային առաջի
20 թագաւորին։ Եւ յամենայն բանս իմաս-
տութեան եւ գիտութիւնս զոր ինդրէր
ի նոցանէ թագաւորն՝ գտանէր զնոսա
տասնապատիկ առաւել քան զամենայն
գէտս եւ զմոգս որ էին ի թագաւորու-
21 թեան նորա։ Եւ եղեւ Դանիէլ մինչեւ
[10]յամս կիւրոսի արքայի։

ԳԼ. Բ

[1]Տեսիլ երրորդ։"

1 Յամին երկրորդի թագաւորութեան իւ-
րոյ, եհաս երազ Նաբուքոդոնոսոր, եւ
յիմարեցաւ ոգի նորա, եւ քուն հատաւ
2 ի նմանէ։ Եւ ասէ թագաւորն, կոչե-

[5]Ի՛նչ բն-ից ցԱմելզասար, այնպէս՝ ցվերակացուն [6]Ե՛բր. երեսք [7]Ե՛բր. գերք [8]Ի՛նչ բնագիրն Ամելսար [9]Ե՛բր.նոցա։ (17) Եւ մանկացս այսոցիկ չորեցունց եւ [10]Ե՛բր. յամն առաջին

ցէք զգէստ եւ զմոգս եւ զկախարդս եւ զքաղդեայս՝ պատմել թագաւորին զերազ իւր, եւ եկին կացին առաջի թագաւորին։
3 Եւ ասէ ցնոսա թագաւորն, Երազ տեսի, եւ յիմարեցաւ ոգի իմ իմանալ զերազն։
4 Խօսեցան քազդեայքն ընդ թագաւորին Ասորերէն. Արքայ, յաւիտեան կեաց. ասա դու զերազն ծառայից քոց, եւ զմեկնութիւն նորա աստուցուք։ 5 Պատասխանի ետ արքայն եւ ասէ ցքաղդեայսն. Բանն վերացաւ յինէն. արդ եթէ ոչ ցուցանիցէք ինձ զերազն եւ զմեկնութիւն նորա՝ ի կորուստ լինիցիք, եւ տունք ձեր 6 [2]յաւար լինիցին։ Ապա թէ զերազն եւ զմեկնութիւն նորա ցուցանիցէք ինձ, պարգեւս եւ տուրս բազումս եւ պատիւս առնուցուք յինէն. բայց միայն զերազն եւ զմեկնութիւն նորա պատմեցէք ինձ։ 7 Պատասխանի ետուն կրկին անգամ, եւ ասեն, Ասասցէ տէրքայ զերազն ծառայից իւրոց, եւ զմեկնութիւն 8 նորա պատմեսցուք։ Պատասխանի ետ արքայ եւ ասէ, Ճշմարիտ գիտեմ եթէ ժամավաճառ լինիք, զի տեսէք թէ 9 բանն վերացաւ յինէն։ Արդ եթէ զերազն ոչ պատմիցէք ինձ, [3]գիտեմ զի բան սուտ եւ վհատութեան միաբան նեալ էք ասել առաջի իմ մինչեւ ժամանակն անցցէ. ասացէք ինձ զերազն իմ, եւ գիտացից եթէ եւ զմեկնութիւն 10 նորա պատմիցէք ինձ։ Պատասխանի ետուն մխիթարեալ քազդեայքն առաջի թագաւորին եւ ասեն, Ոչ գոյ մարդ ի վերայ երկրի՝ որ զբան թագաւորին կարող է ցուցանել. զի ամենայն թագաւոր մեծ եւ իշխան՝ բան զայդպիսի ոչ հարցանէ ցգէտ եւ ցմոգ եւ ցքաղդեայ. 11 Զի բանն զոր արքայ հարցանէ՝ ծանր է, եւ այլ ոք չիք որ պատմիցէ զայդ առաջի արքայի, բայց եթէ դիցն որոց ոչ է բնակութիւն ի մէջ [4]մարմնոյն մահկանացու։

12 Յայնժամ թագաւորն բարկութեամբ եւ սրտմտութեամբ բազմաւ ասաց կոտորել զամենայն իմաստունս Բաբելացւոց։ 13 Եւ հրամանն ել, եւ իմաստունքն կոտորէին. եւ խնդրէին զԴանիէլ եւ 14 զրաբեկամս նորա սպանանել։ Յայնժամ Դանիէլ խօսեցաւ խորհուրդ եւ իրաւ ընդ Արիովքայ գահճապետի արքային որ եկեալ էր կոտորել զ[5]մաստունս Բա- 15 բելացւոց, իշխան թագաւորին. Վասն ո՞ր եղ հրամանդ այդ [6]խիստ յերեսաց արքայի. եւ յայտ- 16 նեաց գրանն Արիովք Դանիէլի։ Եւ Դանիէլ եմուտ եւ ազաչեաց զարքայն, զի տացէ նմա ժամ, եւ զմեկնութիւն նո- 17 րա պատմեսցէ թագաւորին։ Եւ եմուտ Դանիէլ ի տունն իւր, եւ Անանեայ եւ Ազարեայ եւ Միսայէլ բարեկամաց իւրոց եղոյզ զբանն։ 18 Եւ խնդրէին զթութիւն յԱստուծոյ երկնից[7], զի մի կորիցէ Դանիէլ եւ բարեկամք իւր ընդ այլ իմաստունս Բաբելացւոց։

19 Յայնժամ Դանիէլի ի անսիման գիշերոյ յայտնեցաւ խորհուրդն. եւ օրհնեաց զԱստուած երկնից Դանիէլ. եւ ասէ, Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտենից եւ մինչեւ յաւիտեանս. զի իմաստութիւն [8]եւ հանճար՝ եւ զօրութիւն՝ նո- 21 ցա է. Եւ նա փոփոխէ զժամանակս եւ զժամս, կացուցանէ զթագաւորս եւ փոփոխէ, տայ իմաստութիւն իմաստնոց 22 եւ խորհուրդ խորհրդականաց. Ինքն յայտնէ զխորինս եւ զզաղտնիս, գիտէ որ կայ ի խաւարի եւ լոյս ընդ նմա։ 23 Ձքէն, Աստուած հարցն մերոց, գոհանամ եւ օրհնեմ, զի իմաստութիւն եւ զօրութիւն ետուր ինձ, եւ ծանուցեր ինձ որ ինչ ազօթիւք ինդրեցաք մեք ի քէն, եւ պատիւ թագաւորին ցուցեր [9]ինձ։

24 Եւ եմուտ Դանիէլ առ Արիովք զոր կացուցեալ էր թագաւորին կորուսանել զիմաստունս Բաբելացւոց, եւ ասէ ցնա, Զիմաստունս Բաբելացւոց մի կոտորեր. բայց զիս տար առաջի թագաւորին, եւ ես պատմեցից զմեկնութիւնն թագաւո- 25 րին։ Յայնժամ Արիովք փութապէս տարաւ զԴանիէլ առաջի թագաւորին, եւ ասէ ցնա, Գտի այր մի յորդւոց գերութեանն Հրէաստանի, որ զմեկնութիւնն 26 պատմեսցէ արքայի։ Պատասխանի ետ թագաւորն եւ ասէ ցԴանիէլ՝ որում անուն էր Բաղտասար, եթէ կարո՞ղ իցես պատմել ինձ զերազն զոր տեսի, եւ զմեկնութիւնն նորա։

[1] Կամ, Արամերէն [2] Ածութիւն, յաւերժ [3] Ածո. մի վճիռ է գործոջ գիտեմ [4] Ածո. պղծոյ [5] Ածո. մոգ. (15) Պատասխանի ետ եւ ասէ ցԱրիովք, ցիշխան թագաւորին [6] Ածո. սրագ [7] Ածութիւն յաւելու, վասն գաղտնեացն այնոցիկ [8] Ածո, մեզ

27 Պատասխանի եւ Դանիէլ առաջի թա-
գաւորին եւ ասէ , Զխորհուրդ պայ-
ղոր արքայ հարցանէ , ոչ է իմաստնոց
եւ մոգուց եւ գիտից եւ ըղձից պատ-
28 մել առաջի արքայի . Այլ կայ Աստուած
յերկինս որ յայտնէ զխորհուրդս , եւ
ցոյց Նաբուքոդոնոսորայ արքայի որ ինչ
լինելոց է յաւուրս յետինս : Երազն եւ
տեսիլ գլխոյ քո յանկողնի քում , այս
29 է . Արքայ , խորհուրդք քո մտայոյզ առ-
նէին զքեզ յանկողնի քում , թէ զինչ
լինելոց է յետ այսորիկ . եւ յայտնիչն
խորհրդոց ցոյց քեզ զինչ լինելոց է :
30 Եւ ինձ ոչ առ իմաստութեան ինչ որ
իցէ յիս քան զամենայն կենդանիս յայտ-
նեցաւ խորհուրդն , այլ վասն ցուցա-
նելոյ արքային զմեկնութիւնն , զի ծա-
նիցես զխորհուրդս սրտի քո :
31 Դու , արքայ , տեսանէիր , եւ ահա
պատկեր մի , մեծ պատկեր , եւ երեսք
նորա եւ տեսիլ նորա ահագին յոյժ , եւ
կայր առաջի քո . ահաւոր էր յոյժ պատ-
32 կերն : Որոյ գլուխն ոսկւոյ սրտոյ , [1]ձեռքն
եւ" լանջքն եւ բազուկք իւր արծա-
թիք , մէջք նորա եւ բարձք պղնձիք ,
33 Եւ սրունքն երկաթիք , եւ ոտքն՝ կէսն
34 յերկաթոյ եւ կէսն ի խեցւոյ : Հայեիր
մինչեւ հատաւ վէմ առանց ձեռին , եւ
եհար զպատկերն ի վերայ երկաթեղէնն
եւ խեցեղէնն ոտիցն , եւ մանրեաց զնո-
35 սա ի սպառ : Յայնժամ առ հասարակ
մանրեցան խեցին եւ երկաթ , պղինձն
եւ արծաթ եւ ոսկին , եւ եղեն իբրեւ
զփոշի կալոյ ամարայնոյ . եւ առ զնոսա
սաստկութիւն հողմոյ , եւ տեղի ոչ
գտանէր նոցա . եւ վէմն որ եհար զպատ-
36 կերն՝ եղեւ լեառն մեծ , եւ ելից զա-
մենայն երկիր : Այս է երազն , եւ զմեկ-
նութիւնն նորա ասասցուք առաջի ար-
քայի :
37 Դու ես , արքայ , արքայից արքայ ,
որում Աստուած երկնից թագաւորու-
38 թիւն [2]հզօր եւ պատուական" եւ . Եւ
ընդ ամենայն տեղիս ուր բնակեալ են
որդիք մարդկան , զգազանս վայրի եւ
զթռչունս երկնից [1]ու զձկունս ծովու"
եւ ի ձեռս քո , եւ կացոյց զքեզ տէր
39 ամենայնի . դու ես գլուխն ոսկի : Եւ
զկնի քո յարիցէ այլ թագաւորութիւն
խոնարհագոյն քան զքեզ . եւ թագաւո-
րութիւնն երրորդ , որ է պղինձն , որ
40 բնակէ ամենայն երկրի : Եւ թագաւո-
րութիւնն չորրորդ , հզօր իբրեւ զերկաթ ,
զոր օրինակ երկաթ մանրէ եւ մտէ զա-
մենայն , նոյնպէս մանրեսցէ եւ մտցես
41 ցէ զամենայն : Եւ զի տեսանէիր զոտսն
եւ զմատունսն , կէս կոշտն յերկաթոյ ,
եւ կէս կոշտն ի խեցւոյ , թագաւո-
րութիւնն բաժանեալ լիցի , եւ [3]յար-
մատոյ երկաթոյն եղիցի ի նմա , զոր
օրինակ տեսանէիր զերկաթն ընդ խեցին
42 խառնեալ : Եւ մատունք ոտիցն՝ կոշտն
մի յերկաթոյ , եւ կոշտն մի ի խեցւոյ , մի
կոշտն թագաւորութեանն հզօր կայցէ ,
43 եւ ի նմանէ եղիցի ջախջախան . Զի տե-
սանէիր զերկաթն ընդ խեցին խառնեալ ,
եղիցին խառն ի զաւակէ մարդկան , եւ
ի միմեանս ոչ յարիցեն , զոր օրինակ ոչ
խառնի երկաթ ընդ խեցի :
44 Եւ յաւուրս թագաւորացն այնոցիկ
յարուսցէ Աստուած երկնից թագաւորու-
թիւն որ յաւիտեանս ոչ եղծանիցի , եւ
թագաւորութիւնն նորա ազգի այլում ոչ
մնասցէ . մանրեսցէ եւ հոսեսցէ զամենայն
թագաւորութիւնս , եւ ինքն կացցէ յա-
45 ւիտեանս : Որպէս տեսանէիր՝ զի ի լեռ-
նէն հատաւ վէմն առանց ձեռին , եւ
մանրեաց զխեցին եւ զերկաթ , զպղինձն
եւ զարծաթ եւ զոսկի , Աստուած մեծ
ցոյց արքայի որ ինչ լինելոց է առ յա-
սա , եւ ճշմարիտ է երազն , եւ հաւա-
տարիմ մեկնութիւն նորա :
46 Յայնժամ արքայն Նաբուքոդոնոսոր
անկաւ ի վերայ երեսաց իւրոց , եւ եր-
կիր եպազ Դանիէլի , եւ զոհս եւ խունկս
անուշութեան հրամայեաց մատուցանել
47 նմա : Պատասխանի եւ թագաւորն եւ
ասէ ցԴանիէլ , Արդարեւ Աստուածն
ձեր՝ նա է Աստուած աստուածոց եւ Տէր
[1]տերանց եւ Թագաւոր" թագաւորաց ,
որ յայտնէ զխորհուրդս , զի յայտնել
48 կարացեր զխորհուրդդ զայդ : Եւ մեծա-
ցոյց թագաւորն զԴանիէլ , եւ պարգեւս
մեծամեծս եւ բազումս ետ նմա . եւ
կացոյց զնա ի վերայ աշխարհին Բաբե-
լացւոց , եւ իշխան նախարարաց ի վե-
րայ ամենայն իմաստնոցն Բաբելացւոց :
49 Եւ Դանիէլ խնդրեաց յարքայէ , եւ կա-
ցոյց ի վերայ գործոց աշխարհին Բաբե-
լացւոց՝ զՍեդրաք , զՄիսաք եւ զԱբեդ-
նագով . եւ Դանիէլ էր ի դրան արքային :

[1] 3Աբամ. պակաս [2] Աբամ. եւ զօրութիւն եւ իշխանութիւն եւ փառս
[3] Աբամ. ի պնդութենէ

Գլ. Գ

[1]Տեսիլ չորրորդ։

1 [2]Յամին ութտասաներորդի Նաբուքոդ-
ոնոսորայ արքայի՝ արար պատկեր ոսկի,
բարձրութիւն նորա վաթսուն կանգուն,
եւ լայնութիւն նորա կանգուն վեց. եւ
կանգնեաց զնա ի դաշտին Դէկերայ յաչ-
2 խարհին Բաբելացւոց։ Եւ արձակեաց
ժողովել զկուսակալս եւ զղօրավարս եւ
զղօրագլուխս եւ զպետս եւ [3]զդռնապուրս
եւ զգործակալս՝ եւ զամենայնիւ[4]իշխանս աչ-
խարհաց՝ գալ ի նաւակատիս պատկերին
զոր կանգնեաց արքայն Նաբուքոդոնո-
3 սոր։ Եւ ժողովեցան կուսակալք, զօրա-
վարք եւ զօրագլուխք, պետք եւ [5]դռնա-
պուրք, մեծամեծք, գործակալք՝ եւ ամե-
նայն իշխանք աչխարհաց, գալ ի նաւա-
կատիս պատկերին զոր կանգնեաց արքայն
Նաբուքոդոնոսոր. եւ կային առաջի
պատկերին զոր կանգնեաց արքայն Նա-
բուքոդոնոսոր։

4 Եւ քարոզ կարգայր զօրութեամբ եւ
ասէր, Ձեզ ասի, ազգք եւ ազինք եւ
5 լեզուք. Յորժամ լսիցէք զձայն փողոյ,
սրնգի, քնարի եւ քնարի եւ տաւղի եւ
ղեղակոյ միաբանութեան, եւ զամենայն
ազգայ արուեստականաց, անկանիջիք
եւ երկիր պագանիջիք պատկերին[6] զոր
6 կանգնեաց Նաբուքոդոնոսոր արքայ։ Եւ
որ ոչ անկեալ երկիր պագանիցէ՝ ի նմին
ժամու ընկեսցի ի հնոցն հրոյն բորբո-
7 քելոյ։ Եւ եղեւ իբրեւ լուան ազգքն
զձայն փողոյն՝ զրնդին, զտաւղի եւ
զնուագարանաց, եւ զամենայն ազգայ
արուեստականաց, անկանէին ամենայն
ազգքն եւ ազինք եւ լեզուք, եւ եր-
կիր պագանէին պատկերին ոսկւոյ զոր
կանգնեաց արքայն Նաբուքոդոնոսոր։
8 Յայնժամ մատեան արք Քաղդէացիք
եւ եղեն չարախօս զՀրէից առ Նաբու-
9 քոդոնոսորայ. Եւ ասեն, Արքայ, յա-
10 ւիտեան կեաց. Դու հրաման եւուբ ա-
մենայն մարդոյ որ լսիցէ զձայն փողոյ,
զսրնգի եւ զքնարի եւ զտաւղի եւ
զնուագարանաց, եւ զամենայն ազգայ
11 արուեստականաց[6]. Եւ որ ոչ անկեալ եր-
կիր պագանիցէ պատկերին ոսկւոյ,
12 անկցի ի հնոց հրոյն բորբոքելոյ։ Արդ են
առ արք Հրեայք, զորս կացուցեր ի վե-
րայ գործոց աշխարհիս Բաբելացւոց,
Սեդրաք, Միսաք եւ Աբեդնագով, որ
ոչ հնազանդեցան հրամանի քումմ, ար-
քայ, եւ զդիս քո ոչ պաշտեն, եւ պատ-
կերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ
պագանեն։
13 Յայնժամ Նաբուքոդոնոսոր սրամտու-
թեամբ եւ բարկութեամբ հրամայեաց
ածել զՍեդրաք, զՄիսաք եւ զԱբեդնա-
14 գով. եւ ածին առաջի թագաւորին։ Պա-
տասխանի եւ Նաբուքոդոնոսոր եւ ասէ
ցնոսա, Թէ արդարեւ, Սեդրաք, Մի-
սաք եւ Աբեդնագով, զդիս իմ ոչ պաշ-
տիցէք, եւ պատկերին ոսկւոյ զոր կանգ-
15 նեայ երկիր ոչ պագանիցէք։ Բայց արդ
եթէ պատրաստ լինիցիք, զի յորժամ
լսիցէք զձայն փողոյ, սրնգի եւ թմբկի
եւ քնարի, եւ զմիաբանութիւն ամե-
նայն ազգայ արուեստականաց, անկա-
նիցիք եւ երկիր պագանիցէք պատկե-
րին զոր արարի. ապա թէ ոչ պագա-
նիցէք երկիր, ի նմին ժամու անկանի-
ցիք ի հնոց հրոյն բորբոքելոյ. եւ ո՞վ է
Աստուած որ փրկէ զձեզ ի ձեռաց իմոց։
16 Պատասխանի եւուն Սեդրաք, Մի-
սաք եւ Աբեդնագով, եւ ասեն ցարքայ
Նաբուքոդոնոսոր, Ոչ ինչ է պիտոյ վասն
բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի.
17 [7]Զի է մեր Աստուած յերկինս՝ զոր մեքն
պաշտեմք, կարող է փրկել զմեզ ի հնոցէ
հրոյդ բորբոքելոյ, եւ ի ձեռաց քոց, ար-
18 քայ, ապրեցուցանել զմեզ։ Ապա թէ
ոչ, այս ինչ յայտնի լիցի քեզ, արքայ,
զի զդիս քո մեք ոչ պաշտեմք, եւ պատ-
կերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ
պագանեմք։
19 Յայնժամ Նաբուքոդոնոսոր լի եղեւ
սրամտութեամբ, եւ դէմն երեսաց նորա
չրջեցաւ ի վերայ Սեդրաքայ, Միսաքայ
եւ Աբեդնագովի, եւ ասէ, [8]Չհատուցէք
զհնոցն եւթնապատիկ, զի մինչեւ ի վախ-
20 ճան այրեսցին։ Եւ արք հինգ, զօրաւորք
զօրութեամբ, կապեսցեն՝ զՍեդրաք,

---

[2]3Աւրմ. պակասէ [2]Աւրմ. Նաբուքոդոնոսոր արքայ [3]Աւրմ. զգանձապետս, եւ զքաջ-հրդեհականս եւ զօրենագետս [4]Աւրմ. գանձապետք, քաջհրդեհականք եւ օրենագէտք [5]Աւրմբէրճն յոյելըս՝ ոսկւոյ

[6]Աւրմբէրճն յոյելըս՝ անկցի եւ երկիր պագանիցէ պատկերին ոսկւոյ [7]Աւրմ. Ահա Աստուած [8]Աւրմ. Չհատուցանել զհնոցն եւթնապատիկ առաւել քան զոր սովոր էին չհատուցանել՝ (20) Եւ արանց զօրաւորաց որ ի զօրս իւր՝ հրամանաւ կապել

զմիսաք եւ զԱրիզնագով՝ արկանել ի հնոց
21 հրոյն բորբոքելոյ։ Յայնժամ արքն այ-
նոքիկ կապեցան պատմուճանօք եւ վար-
տուօք, արաւախուրակօք եւ զանկապա-
նօք իւրեանց, եւ ընկեցան ի մէջ հնոյն
22 հրոյն բորբոքելոյ։ Զի հրամանն թագա-
ւորին սաստկանայր, եւ հնոցն բորբոքէր
23 [1]եւ[/1] [1]մինչպատիկ առաւել յոյժ[/1]՝։ Եւ երիքեան
նոքա՝ Սեդրաք, Միսաք եւ Աբեդնա-
գով, անկան ի մէջ [2]հնոցին կապեալք։
24 [3]Զհնային ի մէջ հրոյն, օրհնէին
25 եւ գովէին զՏէր Աստուած։ Յարեաւ
Ազարիա եւ կաց յաւօթս այսպէս. եւ-
բաց զբերան իւր ի մէջ հրոյն եւ ասէ,
26 Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մե-
րոց, գովեալ եւ փառաւորեալ է անուն
27 քո յաւիտեանս. Զի արդար ես յամե-
նայնի զոր ածեր ի վերայ մեր, եւ ա-
մենայն գործք քո ճշմարիտ են. եւ ուղ-
ղիղ են ճանապարհք քո, եւ ամենայն
28 դատաստանք քո ճշմարտութիւն։ Եւ ի-
րաւունս ճշմարտութիւն արարեր ըստ
ամենայնի, զոր արարեր մեզ եւ քաղա-
քին սրբոյ հարցն մերոց Երուսաղէմի.
29 Զի ճշմարտութեամբ եւ յիրաւի ածեր
զայս ամենայն վասն մեղաց մերոց. զի
մեղաք եւ անօրինեցաք յաստատէ լի-
նելն ի քէն, եւ առաւել մեղաք յամե-
30 նայնի։ Եւ պատուիրանաց քոց ոչ ան-
սացաք. ոչ պահեցաք եւ ոչ արարաք
որպէս պատուիրեցեր մեզ՝ զի բարի լի-
31 նիցի մեզ։ Եւ զամենայն զոր ածեր ի
վերայ մեր եւ զամենայն զոր արարեր
32 մեզ՝ արդար դատաստանաւ արարեր։ Եւ
մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց մե-
րոց՝ անօրինից, խստաց եւ ապստամ-
բողաց, եւ թագաւորի անիրաւի եւ չարի
33 քան զամենայն երկիր։ Եւ արդ ոչ դոյ
մեզ բանալ զբերան մեր, զի ամօթ եւ
նախատինք եղաք ծառայից քոց պաշ-
34 տօնէից։ Այլ մի մատներ զմեզ ի սպառ
վասն անուան քո, եւ մի ջերմ զուխտ
քո, եւ մի ի բացէ առներ զողորմու-
35 թիւնս քո ի մէնջ։ Վասն Աբրահամու
սիրելւոյ քո եւ վասն Իսահակայ ծա-
ռայի քո եւ վասն Իսրայէլի սրբոյ քո,
36 Որոց խօսեցար բազմացուցանել զզա-
ւակ նոցա իբրեւ զաստեղս երկնից, եւ
37 իբրեւ զաւազ առ ափն ծովու։ Եւ արդ,
Տէր, նուազեցաք քան զամենայն ազգս,
եւ եմք տառապեալք յամենայն երկրի
38 այսօր վասն մեղաց մերոց։ Եւ ոչ դոյ
ի ժամանակի յայսմիկ իշխան, մարգարէ
եւ առաջնորդ, ոչ ողջակէզք եւ ոչ զոհք
եւ ոչ պատարագք եւ ոչ խունկք, եւ
ոչ տեղի տալոյ երախայրիս առաջի քո,
39 եւ գտանել ողորմութիւն։ Այլ ան-
ձամիբք բեկելովք եւ հոգւովք առաք-
40 պանայ ընդունելի լիցաք՝ իբրեւ զող-
ջակէզս խոյոց եւ զուարակաց եւ իբ-
րեւ զբիւրաւորս գառանց պարարտաց,
այնպէս եղիցի պատարագս մեր այսօր
առաջի քո՝ լինել կատարեալ զկնի քո,
41 զի չիք ամօթ յուսացելոցս ի քեզ։ Եւ
արդ զամբ զնետ քո ամենայն սրտիւք
մերովք, եւ երկնչիմք մեք ի քէն, եւ
42 խնդրեմք զերեսս քո։ Մի յամօթ առ-
ներ զմեզ, այլ արա ընդ մեզ ըստ հե-
զութեան քում եւ ըստ բազում ողոր-
43 մութեան քում։ Եւ փրկեա զմեզ վասն
սքանչելեացդ քոց, եւ տուր փառս ա-
44 նուան քում, Տէր։ Եւ յամօթ լիցին ա-
մենեքեան ոյք ցուցանեն չարիս ծառա-
յից քոց, եւ ամաչեսցեն յամենայն բռնու-
թեան իւրեանց, եւ զօրութիւն նոցա
45 խորտակեսցի։ Եւ ծանիցեն զի դու ես
Տէր Աստուած միայն, եւ փառաւորեալ
ի վերայ ամենայն սիեզերաց։
46 Եւ ոչ զգաստէին, որք արկին զնոսա, սպա-
սաւորքն թագաւորին՝ իւրովքեւոյ զհնոյն
նաւթիւ եւ ձիւթով եւ վշոյ եւ որթով։
47 Եւ ելանէր զբազայր բոյն ի վերոյ քան
48 զհնոյն ի քառասուն եւ չինն կանգուն. Եւ
չրջէր պատէր չուրջ զհնոցաւն, եւ այրէր
ղորս գտանէր ի Քաղդէացւոց անտի։
49 Եւ հրեշտակ Աստուծոյ էջ եկաց ընդ
Ազարիան ի հնոցի անդ, եւ թօթափեաց
50 զբոց հրոյն ի հնոցէ անտի։ Եւ արար ի
մէջ հնոցին իբրեւ զհով որ ցօղակին
չնչիցէ. եւ ոչ մերձնայր ամենեւին
հուրն ի նոսա, ոչ տրամեցուցանէր եւ
51 ոչ նեղէր զնոսա։ Յայնժամ երիքեան
իբրեւ ի միոչէ բերանոյ օրհնէին եւ գո-
վէին եւ փառաւոր առնէին զԱստուած
ի մէջ հնոցին, եւ ասէին,
52 Օրհնեալ ես դու Տէր Աստուած հարցն
մերոց, գովեալ եւ առաւել բարձրացեալ
յաւիտեանս. եւ օրհնեալ է անուն սուրբ
փառաց քոց, գովեալ եւ առաւել բարձ-
53 րացեալ յաւիտեան։ Օրհնեալ ես ի տա-

---

[1] Աշխ. յոյժ. զարան զայնոսիկ որոց բարձեալ էր զՍեդրաք, զՄիսաք եւ զԱբեդնագով՝ սպան բոց հրոյն [2] Աշխ. հնոցի հրոյն բորբոքելոյ
[3] Ասէ Փիլ. է համարն 90 պսակ է բնաբերն։

ճարի փառաց սրբութեան քո, զովեալ
եւ առաւել բարձրացեալ յաւիտեան։
54 Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ արքայու-
թեան քո, զովեալ եւ առաւել բարձ-
55 րացեալ յաւիտեան։ Օրհնեալ ես որ հա-
յիս յանդունդս, եւ նստիս ի քերովբէս,
զովեալ եւ առաւել բարձրացեալ յաւի-
56 տեան։ Օրհնեալ ես որ նայիս ի հաս-
տատութիւն երկնից, զովեալ եւ ա-
57 ռաւել բարձրացեալ յաւիտեան։ Օրհ-
նեցէք, ամենայն գործք Տեառն, զՏէր,
օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յա-
58 ւիտեան։ Օրհնեցէք, երկինք, զՏէր, օրհ-
նեցէք եւ բարձր արարէք զնա յա-
59 ւիտեան։ Օրհնեցէք, հրեշտակք Տեառն,
զՏէր, օրհնեցէք եւ բարձր արարէք զնա
60 յաւիտեան։ Օրհնեցէք, ջուրք ամենայն
որ ի վերոյ քան զերկինս, զՏէր, օրհ-
նեցէք եւ բարձր արարէք զնա յաւի-
61 տեան։ Օրհնեցէք, ամենայն զօրութիւնք
Տեառն, զՏէր, օրհնեցէք եւ բարձր ա-
62 րարէք զնա յաւիտեան։ Օրհնեցէք, արեւ
եւ լուսին, զՏէր, օրհնեցէք եւ բարձր
63 արարէք զնա յաւիտեան։ Օրհնեցէք, ա-
մենայն աստեղք երկնից, զՏէր, օրհ-
նեցէք եւ բարձր արարէք զնա յաւի-
64 տեան։ Օրհնեցէք, ամենայն անձրեւք եւ
ցօղք, զՏէր, օրհնեցէք եւ բարձր արա-
65 րէք զնա յաւիտեան։ Օրհնեցէք, ամե-
նայն հողմք, զՏէր, օրհնեցէք եւ բարձր
66 արարէք զնա յաւիտեան։ Օրհնեցէք, հուր
եւ ամառ, զՏէր, օրհնեցէք եւ բարձր ա-
67 րարէք զնա յաւիտեան։ Օրհնեցէք, ցուրտ
եւ ամառն, զՏէր, օրհնեցէք եւ բարձր
68 արարէք զնա յաւիտեան։ Օրհնեցէք, ե-
լեամն եւ ձիւն, զՏէր, օրհնեցէք եւ
69 բարձր արարէք զնա յաւիտեան։ Օրհ-
նեցէք, տիւք եւ գիշերք, զՏէր, օրհնե-
ցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան։
70 Օրհնեցէք, լոյս եւ խաւար, զՏէր, օրհ-
նեցէք եւ բարձր արարէք զնա յաւի-
71 տեան, Օրհնեցէք, ամպք եւ փայլատա-
կունք, զՏէր, օրհնեցէք եւ բարձր ա-
72 րարէք զնա յաւիտեան։ Օրհնեսցէ եր-
կիր զՏէր, օրհնեսցէ եւ բարձր արա-
73 ցէ զնա յաւիտեան։ Օրհնեցէք, լերինք
եւ բարձունք, զՏէր, օրհնեցէք եւ բարձր
74 արարէք զնա յաւիտեան։ Օրհնեցէք, ա-
մենայն բոյս երկրի, զՏէր, օրհնեցէք
75 եւ բարձր արարէք զնա յաւիտեան։ Օրհ-
նեցէք, աղբեւրք, զՏէր, օրհնեցէք եւ
76 բարձր արարէք զնա յաւիտեան։ Օրհ-
նեցէք, ծով եւ գետք, զՏէր, օրհնեցէք
77 եւ բարձր արարէք զնա յաւիտեան։ Օրհ-
նեցէք, կէտք եւ ամենայն կայտառք որ
ի ջուրս, զՏէր, օրհնեցէք եւ բարձր ա-
78 րարէք զնա յաւիտեան։ Օրհնեցէք, թըռ-
չունք երկնից, զՏէր, օրհնեցէք եւ բարձր
79 արարէք զնա յաւիտեան։ Օրհնեցէք, ա-
մենայն գազանք եւ անասունք, զՏէր,
օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յա-
80 ւիտեան։ Օրհնեցէք, որդիք մարդկան,
զՏէր, օրհնեցէք եւ բարձր արարէք զնա
81 յաւիտեան։ Օրհնեսցէ Իսրայէլ զՏէր,
օրհնեսցէ եւ բարձր արասցէ զնա յա-
82 ւիտեան։ Օրհնեցէք, քահանայք, զՏէր,
օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յա-
83 ւիտեան։ Օրհնեցէք, ծառայք Տեառն,
զՏէր, օրհնեցէք եւ բարձր արարէք զնա
84 յաւիտեան։ Օրհնեցէք, հոգիք եւ չունչք
արդարոց, զՏէր, օրհնեցէք եւ բարձր
85 արարէք զնա յաւիտեան։ Օրհնեցէք,
սուրբք եւ խոնարհք սրտիւք, զՏէր, օրհ-
նեցէք եւ բարձր արարէք զնա յաւի-
86 տեան։ Օրհնեցէք, Անանիա, Ազարիա եւ
Միսայէլ, զՏէր, օրհնեցէք եւ բարձր ա-
87 րարէք զնա յաւիտեան. Զի փրկեաց
զմեզ ի դժոխոց, եւ ի ձեռաց մահու ապ-
88 րեցոյց զմեզ. Եւ փրկեաց զմեզ ի հնոցէս,
եւ ի միջոյ բորբոքեալ բոցոյս, եւ ի միջոյ
89 հրոյս փրկեաց զմեզ։ Գոհացարուք
զՏեառնէ, զի քաղցր է, զի յաւիտեան
90 է ողորմ նորա։ Օրհնեցէք, ամենայն
պաշտօնեայք Տեառն, զԱստուածն աս-
տուծոց, օրհնեցէք եւ գոհացարուք, զի
յաւիտեան է ողորմ նորա։"

91 [1]Եւ Նաբուքոդոնոսոր իբրեւ լուաւ
զօրհնութիւնս նոցա" զարմացաւ. յա-
րեաւ աւազնասաւ եւ ասէ ցմեծամեծս
իւր, Ո՞չ արս երիս կապեալս արկաք ի
մէջ հրոյն. եւ ասեն ցթագաւորն, Այո,
92 [2]արդար ասես," արքայ։ Եւ ասէ թա-
գաւորն, Այլ ես տեսանեմ արս չորս ար-
ձակս, եւ գնան ի մէջ հրոյն, եւ ապա-
կանութիւն ինչ ոչ գոյ ի նոսա. եւ տե-
սիլ չորրորդին նման է որդւոյ [3]Աստու-
93 ծոյ։ Յայնժամ մատեաւ Նաբուքոդոնո-
սոր ի գուռն հնոցին հրոյն բորբոքելոյ,
եւ ասէ, Սեդրաք, Միսաք եւ Աբեդ-
նագով, ծառայք Աստուծոյ բարձրելոյ,
ելէք եւ եկայք։ Եւ ելին Սեդրաք, Մի-
94 սաք եւ Աբեդնագով ի միջոյ հրոյն։ Եւ

[1] Աւրա, Յայնժամ Նաբուքոդոնոսոր արքայ
[2] ՅԱւրա. պոխոէ [3] Աւրա, աստուածոց

ժողովեան նախարարքն եւ կուսակալք
եւ զօրավարքն եւ զօրաւորք թագաւո-
րին, եւ տեսանէին զարան մի ոչ ա-
րեւոց հուր ի մարմինս նոցա, եւ հար
գլխոյ նոցա ոչ խանձասցաւ, եւ վար-
տիք նոցա ոչ այլագունեցան, եւ հոտ
հրոյ ոչ գոյր ի նոսա։
95 [1]Եւ երկիր եւրոպ թագաւորն ասացի
նոցա Տեառն։" Եւ պատասխանի ետ
Նաբուքոդոնոսոր եւ ասէ, Օրհնեալ է
Աստուած Սեդրաքայ, Միսաքայ եւ Ա-
բեդնագովի, որ առաքեաց զհրեշտակ
իւր եւ փրկեաց զծառայս իւր, զի յու-
սացան ի նա, եւ զբան թագաւորին ա-
նարգեցին, եւ մատնեցին զմարմինս
իւրեանց ի հուր, զի մի պաշտեսցեն եւ
մի երկիր պագանիցեն ամենայն աս-
տուածոց, բայց միայն Աստուծոյ իւր-
96 ենից։ Եւ արդ ես տամ հրաման. ա-
մենայն ազգք եւ ազինք եւ լեզուք,
որ խօսիցին հայհոյութիւն զԱստուծոյ
Սեդրաքայ, Միսաքայ եւ զԱբեդնագո-
վի՝ ի կորուստ մատնեսցին, եւ տունք
նոցա [2]ի յափշտակութիւն. զի ոչ գոյ
97 այլ աստուած՝ որ կարող իցէ այնպէս
փրկել։ Յայնժամ թագաւորն առաւել
չքնաղացոյց զԱզդրաք, զՄիսաք եւ զԱ-
բեդնագով յերկրին Բաբելացւոց, [1]եւ
բարձրացոյց զնոսա, եւ աղաչեաց լինել
նոցա իշխան ամենայն Հրէից որ էին
98 ի թագաւորութեան նորա։"
Նաբուքոդոնոսոր արքայ, առ ամե-
նայն ազգս եւ լեզուս որ բնակեալ են
յամենայն երկրի, խաղաղութիւն բազ-
99 մացի ձեզ։ Զնչանս եւ զարուեստս
զոր արար ընդ իս Բարձրեալն՝ հաճոյ
100 թուեցաւ առնլի իմ պատմել ձեզ, Թէ
որպէս [3]մեծամեծք եւ զօրաւորք են"
արքայ թիւն նորա արքայութիւն յա-
ւիտենից, եւ իշխանութիւն նորա ազ-
գաց յազգս։

Գլ. Դ

[1]Տեսիլ հինգերորդ։"

1 Ես Նաբուքոդոնոսոր ուրախ էի ի տան
2 իմում եւ զուարճացեալ[4]. Երազ տեսի
եւ զարհուրեցայ զնա, եւ խռովեցայ
յանկողնի իմում, եւ տեսիլ գլխոյ իմոյ
3 տապնատեսոյ զիս։ Եւ առաւ հրաման
ինձն ածել առաջի իմ զամենայն իմաս-
տունս Բաբելացւոց, զի գնկնութիւն
4 երազոյն ցուցցեն ինձ։ Եւ մտին առաջի
իմ գէտք եւ մոգք եւ իւլիք եւ քաղ-
դեայք, եւ զերազն առաջի առաջի
նոցա, եւ գմեկնութիւն նորա ոչ ցու-
5 ցին ինձ. Մինչեւ եկն Դանիէլ որում
անուն էր Բաղտասար՝ ըստ անուան աս-
տուծոյ իմոյ, զի հոգի [5]սուրբ Աստու-
6 ծոյ գոյ ի նմա. Յոր եւ առաջի իմ է,
Բաղտասար իշխան, զիտեա զոր ես ա-
սի. զիտեմ եթէ հոգի սուրբ Աստու-
ծոյ" գոյ ի քեզ, եւ ամենայն խորհուրդք
ոչ [6]ծածկին ի քէն". արդ լուր զոր ա-
սել երազոյն իմոյ զոր ասի, եւ գմեկ-
նութիւն նորա առաջես ինձ։
7 [7]Տեսանէի յանկողնի իմում", եւ ա-
հա ծառ մի ի մէջ երկրի, եւ բարձրու-
8 թիւն նորա բազում յոյժ։ Մեծացաւ
ծառն եւ զօրացաւ, եւ բարձրութիւն նո-
րա հասս մինչեւ յերկինս, եւ [8]լայնու-
թիւն նորա ի ծագս ամենայն երկրի։
9 Տերեւս նորա գեղեցիկ, եւ պտուղ նո-
րա բազում, եւ կերակուր ամենայնի ի
նմա. ի ներքոյ նորա բնակեալ էին գա-
զանք վայրի, եւ յոտս նորա հանգուս-
ցեալ էին թռչունք երկնից, եւ ի նմանէ
կերակրէր ամենայն մարմին։
10 Տեսանէի ի տեսլեան [9]գլխոյ յան-
կողնի իմում, եւ ահա [10]զտաւրմուն եւ
11 սուրբ իջանէր յերկնից, եւ բարբառէր
զօրութեամբ եւ ասէր այսպէս. Հատէք
զծառդ եւ քշտեցէք զոտս զորա, թօ-
թափեցէք զտերեւս զորա, եւ զպտուղս
զորա ցրուեցէք. [11]չարժեսցին գազանքդ
ի ներքոյ զորա, եւ թռչունքդ յոտոց
12 զորա։ Բայց զկառուածս արմատոյ զորա
թողէք յերկրի, երկաթապատ եւ պղնձա-
պատ ի գալար վայրի, եւ ի ցօղոյ երկ-
նից հանպիտէ, եւ ընդ գազանս անա-
պատի բաժին զորա, եւ ի խոտ երկրի.
13 Սիրտ նորա ի մարդկանէ փոխեսցի, եւ
սիրտ գազանաց տայցի նմա, եւ եւթն

[1] ՅԱրամ. պատասխան [2] Ա. Արամ. յաղբեւս [3] Ա. Արամ. մեծամեծք են նշանք նորա, եւ զօրաւորք են սքանչելիք նորա. [4] Արամերէն յաւելու, յարքունիս իմ

[5] Ա. Արամ. աստուածոց սրբոց գոյ ի նմա. եւ զերազն առաջի նորա պատմեցի. (6) Բաղտասար, (Բաղտասասար ըստ Բաբելին) իշխան մոգուց, գիտեմ եթէ հոգի աստուածոց սրբոց [6] Արամ. նեղեն զքեզ [7] Ա. Արամ. Եւ տեսիլք գլխոյ իմոյ յանկողնի իմում սորա էին. տեսանէի [8] Արամ. տեսիլ [9] Ա. Արամ. գլխոյ իմոյ [10] Ա. յոխին, պահապան, կամ, հրեշտակ [11] Ա. Արամ. փախիցեն

ժամանակք փոխեսցին ի վերայ նորա։
14 [1]Մինչեւ[1] եւ զաւրութիւնոյ է բանս, եւ պատգամ սրբոյ է հարցաւածս. մի՛ ծանիցին կենդանիք եթէ սիրէ Բարձրեալն թագաւորութեան մարդկան, եւ ումեմ կամի տացէ զնա. եւ զարհամարհն ի մարդկանէ յարուցանէ ի վերայ նորա։
15 Այս է երազն զոր տեսի ես Նաբուքոդոնոսոր արքայ. եւ դու, Բաղտասար, ասա ինձ զմեկնութիւնն նորա. զի առաքինայ իմաստունք թագաւորութեան իմոյ ոչ կարացին ցուցանել ինձ զմեկնութիւնն նորա. այլ դու, Դանիէլ, կարող ես, զի հոգի [2]սուրբ Աստուծոյ գոյ ի քեզ։
16 Յայնժամ Դանիէլ որում անուն էր Բաղտասար՝ հիացաւ իբրեւ ժամ մի, եւ խորհուրդք նորա խռովեցուցանէին զնա. Պատասխանի եւ թագաւորն եւ ասէ ցնա, Բաղտասար, երազն եւ մեկնութիւն նորա մի սոսկանայցուսցին զքեզ։ Եւ պատասխանի Բաղտասար եւ ասէ, Տէր, երազն առնեսցէ քոց, եւ մեկ-
17 նութիւն նորա թշնամեաց քոց։ Ծառն զոր տեսանէիր մեծացեալ եւ զօրացեալ, որոյ բարձրութիւնն հասանէր յերկինս եւ [3]յայնութիւն նորա յամե-
18 նայն երկիր, եւ տերեւ նորա գեղեցիկ եւ պտուղ նորա բազում, եւ կերակուր ամենայնի ի նմա, ի նմանէ նորա բնակեալ էին գազանք անապատի, եւ յոտս նորա հանգուցեալ թռչունք երկնից,
19 Դու ես, արքայ, զի մեծացար եւ զօրացար, եւ մեծութիւն քո բարձրացաւ, հասաւ մինչեւ յերկինս, եւ տէրութիւն
20 քո ի ծագս ամենայն երկրի։ Եւ զի տեսանէիր, արքայ, զի [4]զուարթնոցն եւ սուրբ իջանէր յերկնից եւ ասէր, Կտրեցէք զծառ եւ ապականեցէք զդա, բայց զաւազուիլ արմատոյ դորա թողէք յերկրի, երկաթապատ եւ պղնձապատ ի գալար վայրի, եւ ի ցօղոյ երկնից հանցիւղիցի, եւ ընդ գազանս անապատի բաժին նորա, մինչեւ եւթն ժամանակք
21 փոխեսցին ի վերայ նորա. Այս է մեկնութիւն նորա, արքայ. եւ [5]պատասխանք Բարձրելոյն հասեալ ի վերայ տեառն իմոյ արքայի. Եւ զքեզ հալածեսցեն ի մարդկանէ, եւ ընդ գազանս անապատի եղիցի բնակութիւն քո, եւ խոտ իբրեւ
22 արջառոյ չամբեսցեն քեզ, եւ ի ցօղոյ երկնից [6]հանգիցես, եւ եւթն ժամանակք փոխեսցին ի վերայ քո, մինչեւ ծանիցես թէ սիրէ Բարձրեալն թագաւորութիւն մարդկան՝ եւ ումեմ կամի՝
23 տացէ զնա։ Եւ զի ասաց՝ թէ թողէք ձկառաւիլ արմատոյ ծառոյն, թագաւորութիւնն քո քեզ ունիս՝ մինչեւ ծանիցես [7]զիշխանութիւն երկնաւորին»։
24 Վասն այդորիկ, արքայ, խրատ իմ հաճոյ թուիսցի քեզ, եւ զմեղս քո [8]ողորմութեամբ քաւեսջիր», եւ զանօրէնութիւնս քո՝ գթովք տնանկաց, թերեւս [9]երկայնամիտ լիցի ի վերայ յանցանաց քոց Աստուած»։
25 Այս ամենայն եկն եհաս ի վերայ Նա-
26 բուքոդոնոսորայ արքայի։ Ցետ երկուտասան ամաց, մինչդեռ ի վերայ սաճարի թագաւորութեան իւրոյ ճեմէր ի
27 Բաբելոն, խօսել սկսաւ թագաւորն եւ ասէ, Ո՞չ այս այն մեծ Բաբելոն է զոր ես չինեցի ի տուն թագաւորութեան հաստատութեամբ զօրութեան իմոյ ի
28 պատիւ վաստից իմոց։ Եւ մինչդեռ բանքն ի բերան էին թագաւորին, ձայն եղեւ յերկինից եւ ասէ, Քեզ ասեմ, Նաբուքոդոնոսոր արքայ, թագաւորութիւն
29 քո անցեալ է ի քէն. Եւ ի մարդկանէ հալածեսցին զքեզ, եւ ընդ գազանս անապատի բնակութիւն քո, եւ խոտ իբրեւ արջառոյ չամբեսցեն քեզ, եւ եւթն ժամանակք փոխեսցին ի վերայ քո, մինչեւ ծանիցես թէ սիրէ Բարձրեալն թագաւորութիւն մարդկան՝ եւ ումեմ կամի՝
30 տացէ զնա։ Ի նմին ժամու բանն կատարեցաւ ի վերայ Նաբուքոդոնոսորայ. եւ ի մարդկանէ հալածեցաւ, եւ խոտ իբրեւ արջառ ուտէր, եւ ի ցօղոյ երկնից մարմին նորա նեղիւր, մինչեւ վարսք նորա իբրեւ [10]զարիւծուց մեծացան, եւ եղունգունք նորա իբրեւ զմանչոց։
31 Եւ յետ կատարածի աւուրցն, ես Նաբուքոդոնոսոր զաչս իմ յերկինս համբարձի, եւ միտք իմ առ իս դարձան. եւ զԲարձրեալն օրհնեցի, եւ զկենդանին յաւիտենից գովեցի եւ փառաւորեցի. զի իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտենական, եւ տէրութիւն

---

[1] Աբեմ. վճռով պահապանաց [2] Աբեմ. աստուածոց սրբոց [3] Աբեմ. տեսիլ [4] Ա. յԵբդ. պահապան, Կամ, հրեշտակ [5] Աբեմ. վճիռ

[6] Աբեմ. ներկանիցիս [7] Աբեմ. եթէ տիրէն երկինք [8] Աբեմ. արդարութեամբ քաւեսջիր, Կամ ի քաց արա [9] Աբեմ. յերկարեսցի խաղաղութիւն քո [10] Աբեմ. զարծուեաց

32 Նորա ագռաց յազգս ։ Եւ ամենայն բնակիչք երկրի իբրեւ զոչինչ համարեցան . ըստ կամաց իւրոց ամենէ ի զօրութիւնս երկնից , եւ ի բնակութիւնս երկրի . եւ չիք որ ընդդէմ դառնայցէ ձեռին նորա ,
33 եւ ասիցէ՝ Մէ Ինչ գործեցեր ։ Ի նմին ժամանակի միտք իմ առ իս դարձան , եւ [1]ի պատիւ թագաւորութեան իմոյ եկի . եւ կերպարանք՝ իմ առ իս գարձան , եւ իշխանք իմ եւ մեծամեծք իմ խնդրեցին զիս , եւ անդրէն ի թագաւորութիւնս իմ հաստատեցայ , եւ մեծութիւն առաւել յաւելաւ ինձ ։
34 Արդ ես Նաբուքոդոնոսոր օրհնեմ եւ առաւել բարձրացուցանեմ եւ փառաւորեմ զԱփքայն երկնից , զի ամենայն գործք նորա ճշմարիտ են , եւ չարիքդ նորա իրաւունք , եւ զամենեսեան որք գնան ամբարտաւանութեամբ՝ կարող է խոնարհեցուցանել ։

Գլ . Ե

1 Բաղտասար արքայ արար ընթերցս մեծամեծաց իւրոց հազար առն . եւ [2]ըստ
2 հազարացն նոյնպէս եւ՝ գինի ։ Եւ իբրեւ ընդ գինիս եմուտ Բազտասար , հրամայեաց բերել զսպասս արծաթիոյ եւ զոսկւոյ , զոր եհան Նաբուքոդոնոսոր հայր նորա ի տաճարէն որ յԵրուսաղէմ , զի արբցեն նոքօք թագաւորն եւ մեծամեծք իւր , եւ հարճք եւ կանայք
3 իւր ։ Եւ բերին զսպասան զոսկեզէնս [3]եւ զարծաթեզէնս՝ , զոր բերեալ էր ի տաճարէն Աստուծոյ՝ որ էր յԵրուսաղէմ. եւ ըմպէին նոքօք թագաւորն եւ մեծամեծք իւր , եւ հարճք նորա եւ կա-
4 նայք ։ Ըմպէին գինի , եւ օրհնէին զաստուածս զոսկեզէնս եւ զարծաթեզէնս եւ զպղինձս եւ զերկաթիս եւ զփայտեզէնս եւ զքարեզէնս . [3]եւ զԱստուածն յաւիտենից ոչ օրհնեցին , որ ունէր իշխանութիւն ոգւոց նոցա ։՝
5 Ի նմին ժամու եկին մատունք ձեռին մարդոյ , եւ գրէին հանդէպ [4]կնդին ի վերայ բեւեղոյ որմոյ տաճարի թագաւորին . եւ թագաւորն տեսանէր զմատն
6 ձեռինն որ գրէր ։ Յայնժամ հատան գոյնք թագաւորին , եւ խորհուրդ նորա խռովէին գնա , եւ յօղք մէջք նորա լուծանէին , եւ ծունկք նորա զմիմեանս
7 բաղխէին ։ Եւ աղաղակեաց թագաւորն զօրութեամբ՝ տալ զմոգս եւ զքաղդէացս եւ զդէս . [5]եւ ասէ ցիմաստունս Բաբելացւոց , Որ զբնիկ գրոցդ զգիրդ զայդ , եւ զմեկնութիւնն գործս ցուցանէ ինձ , ծիրանիս զգեցցի , եւ մանեակ ոսկի ի պարանոց իւր , եւ երրորդ ի թագաւորութեան իմում տի-
8 րեսցէ ։ Եւ մտանէին ամենայն իմաստունք թագաւորին եւ ոչ կարէին զգիրն ընթեռնուլ , եւ ոչ զմեկնութիւնն
9 նորա ցուցանել թագաւորին ։ Եւ արքայ Բաղտասար խռովեցաւ , եւ գոյն երեսաց նորա չրջեցաւ . խռովեցան եւ մեծամեծք նորա ընդ նմա ։
10 Եւ եմուտ սիկինն ի տաճարն [6]իբրաքութեան , եւ ասէ , Արքայ , յաւիտեան կեաց . մի խռովեցուսցէն զքեզ խորհուրդք քո , եւ գոյն երեսաց քոց մի
11 եղծցի . Զի է այր մի ի թագաւորութեան քում , յորում ոգի հոգւոյ [7]սուրբ Աստուծոյ՝ . եւ յաւուրս հօր քո՝ [8]զօրութիւնք եւ իմաստութիւնք՝ գտանէին ի նմա . եւ արքայ Նաբուքոդոնոսոր հայր քո իշխան կացոյց զնա ի վերայ գիտաց եւ մոգուց եւ քաղդէից
12 եւ ըզդէից ։ Զի ոգի առաւել զոյ ի նմա եւ իմաստութիւն եւ հանճար , մեկնել զբազս եւ պատմել զառակս եւ լուծանել դիրս կապեալս , Դանիէլ . եւ արքայ՝ Բաղտասար անուն եդ նմա . արդ կոչեցի , եւ զմեկնութիւնն գործ պատմէ ։
13 Յայնժամ անկն ի նեղութս զԴանիէլ առաջի թագաւորին . եւ ասէ թագաւորն ցԴանիէլ , Դո՞ւ ես Դանիէլ յորդւոց գերութեանն Հրէաստանի , զոր ած
14 [9]Նաբուքոդոնոսոր հայր իմ՝ . Լուայ զքէն մէ հոգի [10]Աստուծոյ է ի քեզ , եւ [11]զօրութիւն եւ հանճար եւ ի-
15 մաստութիւն առաւել գտաւ ի քեզ։ Եւ արդ աւասիկ [12]մտին առաջի իմ իմաստունք եւ [3]մոգք եւ՝ իզձք , զի զգիրդ զայդ ընթեռնուցեն եւ զմեկնութիւնն

[1] Աշխ. ի փառս թագաւորութեան իմոյ վայելչութիւն իմ եւ պայծառութիւն [2] Աշխ. առաջի հազարացն արք [3] Աշխ. պակաս [4] Աշխ. աշտանակին

[5] Աշխ. ետ պատասխանի թագաւորն եւ [8] Աշխ. խրախուեցան ըստ բանից թագաւորին եւ մեծամեծաց նորա . ետ պատասխանի սիկինն [7] Աշխ. աստուածոց արդոց ի նմա [8] Աշխ. լոյս եւ հանճար եւ իմաստութիւն ըստ իմաստութեան աստուածոց [9] Աշխ. արքայ հայր իմ ի Հրէից [10] Աշխ. աստուածոց [11] Աշխ. լոյս [12] Աշխ. ածան

դոքա ցուցցեն ինձ, եւ ոչ կարացին
16 պատմել [1]ինձ։ Եւ ես լուայ զքէն՝ իմ
կարօղ ես մեկնել [2]մեկնութիւնս. եւ
արդ եթէ կարիցես զդիրդ ընթեռնուլ
եւ զմեկնութիւն զոքա ցուցանել ինձ,
ծիրանիս զգեցցիս, եւ մանեակ ոսկի ի
պարանոցի քումմ, եւ երրորդ ի թագա-
ւորութեան իմում տիրեսցես։
17 Եւ ասէ Դանիէլ առաջի թագաւորին,
Պարգեւք քո քեզ լիցին, եւ զպատիւ
[3]ան քո՝ այլում տուր. լայց զդիրդ
ես [4]ընթերցայց եւ զմեկնութիւն դոքա
18 ցուցից [5]քեզ։ Արքայ, Աստուած Բար-
ձրեալ՝ զթագաւորութիւն եւ զմեծութիւն
իւրեն եւ զպատիւ եւ զփառս ետ Նա-
19 բուքոդոնոսորայ հօր քումմ. Եւ ի մե-
ծութենէն զոր ետ նմա՝ ամենայն ազգք
եւ ազինք եւ լեզուք զարհուրեալ զո-
զային յերեսաց նորա. զորս կամէր՝
[7]հարկանէր, զորս կամէր՝ սպանանէր՝,
եւ զորս կամէր ինքն բարձրացուցանէր,
եւ զորս կամէր ինքն խոնարհեցուցա-
20 նէր։ Եւ յորժամ բարձրացաւ սիրտ
նորա եւ ոգի նորա զօրացաւ յամբար-
տաւանել, անկաւ յաթոռոյ թագաւո-
րութեան իւրոյ, եւ պատիւն բարձաւ
21 ի նմանէն. Եւ ի մարդկանէ հալածեցաւ,
եւ սիրտ ընդ գազանս տուաւ նմա, եւ
ընդ ցիւս բնակութիւն նորա, եւ խոտ
իբրեւ արջառոյ չամբէին նմա, եւ ի
գազոյ երկնից մարմին նորա ներկաւ.
մինչեւ ծանեաւ թէ տիրէ Աստուած
Բարձրեալն թագաւորութեան մարդկան,
22 եւ ում կամի՝ տացէ զնա։ Եւ արդ
դու, որդի նորա Բաղտասար, ոչ խո-
նարհեցուցեր զսիրտ քո [8]առաջի Աս-
տուծոյ՝ ուստի զայդ ամենայն գիտէիր՝.
23 Եւ ընդդէմ [9]Աստուծոյ երկնից հպար-
տացար, եւ զսպաս տան նորա բերին
առաջի քո, եւ դու եւ մեծամեծք քո,
հարճք քո եւ կանայք քո ըմպէին նո-
քօք գինի. եւ գովեցեր զոսկեզէնս
եւ զարծաթեզէնս եւ զպղնձիս եւ զեր-
կաթիս եւ զփայտեզէնս եւ զքարեզէնս,
որ ոչ տեսանեն եւ ոչ լսեն եւ ոչ իմա-
նան, օրհնեցեր, եւ զԱստուած՝ որոյ
չունէ քո ի ձեռին նորա է եւ ամենայն
ճանապարհք քո, զնա ոչ փառաւորե-
24 ցեր։ Վասն այսորիկ յերեսաց նորա ա-
ռաքեցաւ թաթ ձեռինն եւ զդիրդ զայդ
25 գրեաց։ Եւ այս ինչ է գիրդ որ գրեալ
26 է. [10]Մանէ, Թեկէզ, Փարէս՝։ Եւ այս է
մեկնութիւն բանիդ. Մանէ, չափեաց
Աստուած զթագաւորութիւնն քո եւ
27 վախճանեաց զնա։ Թեկէզ, [11]կշռեցաւ ի
28 կշռոս եւ [12]գտաւ պակասեալ։ Փարէս,
բաժանեցաւ թագաւորութիւնդ քո եւ
առաւ Մարաց եւ Պարսից։
29 Եւ հրամայեաց Բաղտասար եւ զգե-
ցուցին նմա ծիրանիս, եւ մանեակ ոսկի
ի պարանոցի նորա, եւ քարոզ կար-
դային առաջի նորա լինել իշխան երրորդ
ի թագաւորութեան նորա։
30 Եւ ի նմին գիշերի սպանաւ Բաղտաս-
31 սար արքայ Քաղդէացւոց։ Եւ Դարեհ
[13]արքայ առ զթագաւորութիւնն, որ
էր ամաց [14]վաթսուն եւ երկուց։

Գլ. Զ

1 Եւ հաճոյ թուեցաւ առաջի Դարեհի,
եւ կացոյց ի վերայ թագաւորութեանն
նախարարս հարեւր եւ քսան, զի իցեն
2 յամենայն թագաւորութեան նորա. Եւ
ի վերայ նոցա երիս հրամանատարս,
եւ մի ի նոցանէ էր Դանիէլ, [15]առ նո-
ցա նախարարացն հրաման, զի արքայ
3 աչխատ ինչ մի՛ լիցի՝։ Եւ Դանիէլ ա-
ռաւել էր քան [16]զնոսա, զի հոգի ա-
ռաւել գոյր ի նմա. եւ թագաւորն [17]կա-
ցոյց զնա ի վերայ ամենայն արքայու-
թեան իւրոյ։
4 Եւ հրամանատարքն եւ նախարարքն
[18]նախանձէին, եւ՝ խնդրէին պատճառս
զԴանիէլէ[18]. եւ ամենեւեին պատճառս եւ
յանցանս [3]եւ բաղբաղայս՝ ոչ գտանէին
5 զնմանէ, քանզի հաւատարիմ [19]էր։ Եւ
ասեն հրամանատարքն՝, Զգայանեմք ուս-

---

[1] Աբամ. զմեկնութիւն բանին [2] Աբամ. և լուծել զդժուարինս [3] ՅԱբամ. պղծութ [4] Աբամ. ընթերցայց արքայի [5] Աբամ. նմա [6] Աբամ. մեկնութիւնս, եւ լուծանել առեղծուածս. [7] Աբամ. սպանանէր, և զորս կամէր՝ ապրեցուցանէր [8] Աբամ. մինչ գիտէիր զայս ամենայն [9] Աբամ. Տեառն

[10] Աբամ. Մանէ, Մանէ, Թեկէզ ու Փարսին [11] Աբամ. կշռեցար [12] Աբամ. գտար [13] Աբամ. Մար [14] Աբամ. իբրեւ վաթսուն [15] Աբամ. որոց նախարարքն տացեն համար, զի մի՛ ինչ կրեսցէ արքայ [16] Աբամ. զհրամանատարս եւ զնախարան, [17] Աբամ. խորհէր կացուցանել [18] Աբամ. յոխերէն յոխերս, յիրս թագաւորութեանն [19] Աբամ. էր, եւ ամենեւեին սխալ ինչ կամ յանցուած ոչ գտանէին ի նմա։ (5) Յայնժամ արքն այնոքիկ ասեն

ասէք պատճառս զԴանիէլէ, բայց եթէ
յօրէնս Աստուծոյ իւրոյ։
6 Յայնժամ հրամանատարքն եւ նախա-
րարքն կացին առաջի թագաւորին, եւ
ասեն ցնա, Դարեհ արքայ, յաւիտեան
7 կեաց։ Խորհուրդ արարին ամենիքեան
որ են ի թագաւորութեան քումմ, զո-
րաւարք եւ նախարարք, իշխանք եւ
կուսակալք, հաստատել արգելոյն հաս-
տատութեամբ, եւ դատաստանել ոխա
մի. զի եթէ իննդրեսցէ ոք իննդրուածս
յամենայն աստուծոյ կամ ի մարդոյ
մինչեւ յաւուրս երեսուն՝ բայ ի քէն,
8 արքայ, անկցի ի գուբ առիւծուց։ Արդ
հաստատեա, արքայ, զխրատն, եւ
գրեա գիր զի մի՛ եղծանիցի հրամանն
9 Մարաց եւ Պարսից։ Յայնժամ Դարեհ
արքայ պատուէր ետ գրել գհրամանն։
10 Եւ Դանիէլ իբրեւ գիտաց թէ կար-
գեցաւ հրամանն, եմուտ ի տունն իւր,
եւ պատուհանք բաց էին նմա ի վեր-
նատունն իւր ընդդէմ Երուսաղէմի. եւ
երիս ժամս յաւուր դնէր ծունր եւ կայր
յաղօթս, եւ գոհանայր առաջի Աստու-
ծոյ իւրոյ, որպէս առնէր յառաջագոյն։
11 Յայնժամ արքն այնոքիկ դիտեցին եւ
գտին զԴանիէլ զի կայր յաղօթս եւ
12 աղաչէր զԱստուած իւր։ Մատեան եւ
ասեն ցթագաւորն, Արքայ, ոչ ոխտ
մի կարգեցեր, զի ամենայն մարդ որ
խնդրիցէ խնդրուածս յամենայն աստու-
ծոյ կամ ի մարդոյ մինչեւ յաւուրս ե-
րեսուն, բայ եթէ ի քէն արքայէ,
անկցի ի գուբ առիւծուց։ Եւ ասէ ար-
քայ, Ճշմարիտ է բանդ, գհրամանն Մա-
13 րաց եւ զՊարսից չէ օրէն չրջել։ Յայն-
ժամ պատասխանի ետուն արքայի եւ
ասեն, Դանիէլ որ յորդւոց գերութեանն
Հրէաստանի, ոչ հնազանդեցաւ հրա-
մանի քումմ, արքայ, եւ երիս ժամս
իննդրէ իննդրուածս յԱստուծոյ իւրմէ։
14 Յայնժամ թագաւորն իրրեւ լուաւ
զբանն՝ տրտմեցաւ յոյժ, եւ վասն Դա-
նիէլի ջանայր վրկել զնա, եւ մինչեւ
15 ցերեկս ջանացաւ փրկել զնա։ Յայն-
ժամ արքն այնոքիկ ասեն ցթագա-
ւորն, Գիտասջիր, արքայ, զի հրամանի
Մարաց եւ Պարսից եւ ամենայն ոխա
մի եւ հաստատութեան զոր արքայ
16 հաստատիցէ, ոչ է օրէն չրջել։ Յայնժամ
հրամայեաց թագաւորն եւ ածին զԴա-
նիէլ, եւ արկին զնա ի գուբն առիւ-
ծուց. եւ ասէ արքայն ցԴանիէլ, Ա-
ստուածն զոր դուն պաշտես յաճախ, նա
17 փրկեսցէ զքեզ։ Եւ բերին վէմ մի եւ
եդին ի վերայ գրոյն, եւ կնքեաց թա-
գաւորն մատանեաւ իւրով, եւ մա-
տանիւօք մեծամեծացն, զի մի՛ այլ ազգ
ինչ իրք չրջեսցին վասն Դանիէլի։
18 Եւ գնաց թագաւորն ի տունն իւր, եւ
ննջեաց առանց ընթրեաց, եւ խորտիկ
ոչ մատեցին առաջի նորա, եւ քուն հա-
տաւ ի նմանէ։ Եւ երկից Աստուած
զբերանս առիւծուցն, եւ ոչ լկեցին
զԴանիէլ։
19 Յայնժամ յարեաւ արքայն ընդ առա-
ւօտս լուսով, եւ փութով եկն ի գուբն
20 առիւծուց։ Եւ իրրեւ մերձեցաւ ի
գուբն՝ աղաղակեաց ի ձայն մեծ եւ
ասէ, Դանիէլ, ծառայ Աստուծոյ կեն-
դանւոյ, Աստուածն քո զոր դու յաճախ
պաշտէիր, եթէ կարաց փրկել զքեզ ի
21 բերանոյ առիւծուցդ։ Եւ ասէ Դանիէլ
ցարքայ, Արքայ, յաւիտեան կեաց.
22 Աստուած իմ առաքեաց զհրեշտակ իւր
եւ եկրից զբերանս առիւծուցս, եւ ոչ
ապականեցին զիս. զի առաջի նորա
ուղղութիւն գտաւ իմ, եւ առաջի քո,
23 արքայ, վնաս ինչ ոչ արարի։ Յայնժամ
թագաւորն զուարճացաւ յանձն իւր,
եւ հրամայեաց հանել զԴանիէլ ի գուբ
անտի. հանաւ Դանիէլ ի գուբ անտի,
եւ ամենեւին ապականութիւն ոչ գտաւ
ի նմա, զի հաւատաց յԱստուած իւր։
24 Եւ հրամայեաց թագաւորն, եւ ածին
զարսն չարախօսս զԴանիէլէ, եւ ընկե-
ցան ի գուբն առիւծուց, ինքեանք եւ
որդիք իւրեանց եւ կանայք նոցա. եւ

---

1 Աբօ. խառնեցան զթագաւորսն եւ ասեն ցնա այսպէս. 2 Աբօ. ամենայն հրամանատարք թա-
գաւորութեանն 3 Աբօ. կարգել վճիռ
4 Աբօ. զվճիռն, և արկ ձեռնագիր հրովարտակին զի մի՛ եղծանիցի բան Մարաց եւ Պարսից օրի-
նաց որ է առանց փոփոխելոյ։ (9) Վասն այսո-
րիկ Դարեհ արքայ արկ ձեռնագիր հրովարտակին
եւ վճռոյն։ 5 Աբօ. արկաւ ձեռնագիր հրո-
վարտակին 6 Աբօ. ժողովեցան 7 Աբօ.
Յայնժամ մատեան և խօսեցան առաջի արքային
զվճռոյ թագաւորին. Ո՞չ ապաքէն արկեր ձեռ-
նագիր վճռոյն 8 Աբօ. չհամարի ինչ զքեզ,
արքայ, եւ ոչ զվճիռն որում արկեր ձեռնագիր,
այլ երից յաւուրն առնէ զխնդրուածս իւր

9 Աբօ. խառնեցան զթագաւորսն եւ ասեն 10 Աբօ.
վճռոյ 11 Աբ. վարձակ 12 Աբօ. պ-ե-ե
13 Աբօ. աղաղակեաց արքայ առ Դանիէլ ի ձայն
թախծութեան

չեւ էին յատակս գբոյն հատեալ՝ մինչեւ սիրեցին նոցա առեւծքն , եւ զամենայն ոսկերս նոցա մանրեցին ։
25 Յայնժամ Դարեհ արքայ գրեաց առ ամենայն ազգս եւ ազինս եւ լեզուս , որ բնակեալ էին յամենայն երկրի . Խա-
26 զաղութիւն ձեզ բազմասցի . Ելս[1] հրամանս այս բնդ ամենայն իշխանութիւն թագաւորութեան իմոյ , զի երկնչիցին եւ զուարձանան յերեսաց Աստուծոյն Դանիէլի . զի նա է Աստուած կենդանի , եւ կայ յաւիտեան , եւ արքայութիւն նորա ոչ եղծանի , եւ
27 տէրութիւն նորա մինչեւ ցվախճան ։ Օգնական լինի եւ փրկէ , եւ առնէ նշանս յերկինս եւ յերկրի , որ փրկեաց զԴանիէլ ի բերանոյ առիւծուցն ։
28 Եւ Դանիէլի աջողէր ի թագաւորութեան Դարեհի եւ Կիւրոսի Պարսկի ։

Գլ . Ե

1 Յամին առաջնոմբորդի Բազտասարայ արքայի [1]Բաղդէացւոց՝ ելոյզ եւս Դանիէլ , եւ տեսիլ գլխոյ նորա յանկողնի
2 իւրում . եւ գիրս [2]գրեաց , ես Դանիէլ տեսանէի՝ ի տեսլեան գիշերոյ , եւ ահա չորք հողմք երկնից բախէին զծով մեծ
3 Եւ չորք գազանք մեծամեծք ելանէին ի ծովէ անտի՝ այլակերպք ի միմեանց ։
4 Առաջինն՝ իբրեւ [3]զմատակ առեւծ թեւաւոր՝ , եւ թեւք նորա իբրեւ արծուոյ . հայէի մինչեւ թափեցան թեւք նորա եւ [4]չնչկայաւ յերկրէ . եւ կեաց իբրեւ ի վերայ ոտից մարդոյ՝ , եւ սիրտ մարդոյ տուաւ նմա ։
5 Եւ ահա երկրորդ գազանն նման արջոյ , եւ կեաց ի կողմն մի . եւ կողք երեք ի բերան նորա , ի մէջ ժանեայ նորա . եւ այսպէս ասէին ցնա . Արի կեր զմարմինս բազմազ ։
6 Եւ զկնի նորա հայէի , եւ ահա այլ գազան իբրեւ զինձ . եւ չորք թեւք թռչնոյ ի վերայ նորա , եւ չորք գլուխք գազանին , եւ իշխանութիւն տուաւ նմա ։
7 [5]Եւ զկնի նորա հայէի՝ եւ ահա գազան չորրորդ՝ ահեղ եւ զարմանալի

եւ հզօր առաւել , եւ ժանիք նորա [6]երկաթիք . ուտէր եւ մանրէր , եւ զմնացորդսն առ ոտն կոտորէր . եւ ինքն առաւել այլակերպ քան զամենայն գազանսն որ յառաջ քան զնա , եւ եղջերք
8 տասն ի նմա ։ Պչուցեալ հայէի ընդ եղջիւրս նորա , եւ ահա այլ եղջիւր փոքրիկ ելանէր ի մէջ նոցա , եւ երեք եղջիւրք յառաջնոցն ի բաց խլէին յերեսաց նորա , եւ ահա աչք իբրեւ զաչս մարդոյ յեղջիւրն յայնմիկ , եւ բերան որ խօսէր զմեծամեծս ։
9 Տեսանէի մինչեւ աթոռք անկանէին , եւ Հինաւուրցն նստէր . հանդերձ նորա սպիտակ իբրեւ զձիւն , եւ հեր գլխոյ նորա իբրեւ զասր սուրբ , աթոռ նորա իբրեւ զրոց հրոյ , անիւք նորա իբրեւ
10 զհուր բորբոքեալ . Գետ հրոյ յորդեալ ելանէր առաջի նորա . հազարք հազարաց սպասէին ցնա , եւ բեւր բիւրուց կային առաջի նորա . առեան նստաւ
11 եւ դպրութիւնք բացան։ Տեսանէի յայնժամ ի բարբառոյ մեծամեծ բանիցն զոր եղջիւրն այն խօսէր , [7]մինչեւ բարձաւ գազանն եւ կորեաւ . եւ մարմին նորա՝
12 տուաւ յայրումն հրոյ ։ Եւ այլոց գազանացն իշխանութիւն [8]փոխեցաւ , եւ երկայնութիւն կենաց տուաւ նոցա մինչեւ
13 ի ժամանակս եւ ի ժամանակս ։ Տեսանէի ի տեսլեան գիշերոյ , եւ ահա ընդ ամպս երկնից իբրեւ Որդի մարդոյ գայր , եւ հասանէր մինչեւ ի Հինաւուրցն , եւ մատուցան առաջի նորա ։ Եւ նմա տուաւ իշ-
14 խանութիւն եւ պատիւ եւ արքայութիւն . եւ ամենայն ազգք եւ ազինք եւ լեզուք նմա ծառայեսցեն , եւ իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտենական որ ոչ անցանէ , եւ թագաւորութիւն նորա ոչ եղծանիցի ։
15 Սոսկացաւ մարմին իմ յանձին իմում . ես Դանիէլ , եւ տեսիլ գլխոյ իմոյ խո-
16 ռովեցոյց զիս ։ Եւ մատակայ առ մի ոմն յորոց կային անդ , եւ զճշմարտութիւն ինդրէի ուսանել վասն ամենայնի այնորիկ . եւ ասաց ինձ զճշմարտութիւնն , եւ զմեկնութիւն բանիցն ասացս ինձ ։
17 Այս պատանք [9]մեծամեծք՝ չորք թագաւորութիւնք յարիցեն ի վերայ երկրի ,

[1] Աքմ. Նշանս եւ արուեստս [2] Աքմ. Բանբեկեալացոյց [3] Աքմ. գրեաց , գլուխ բանիցն ասէ ։ (2) Պատասխանի ես Դանիէլ եւ ասէ . Տեսանէի [3] Աքմ. զառեւծ [4] Աքմ. բարձ բացաւ յերկրէ , եւ եկաց իբրեւ մարդ ի վերայ ոտից իւրոց [5] Աքմ. Յետ այնորիկ տեսանէի ի տեսլեան գիշերոյ

[6] Աքմ. մեծամեծք երկաթիք [7] Աքմ. տեսանէի մինչեւ սպանաւ գազանն , եւ կորեաւ մարմին նորա , եւ [8] Աքմ. բարձաւ [9] Աքմ. մեծամեծք որ են չորք ,

18 բարձրին. Եւ՝ առնն զթագաւորու-
թիւնն սուրբք Բարձրելոյն, եւ կալցին
[1]զնա մինչեւ յաւիտեան յաւիտենից։
19 Եւ զինէլի ճշմարտիւ վասն գազանին
չորրորդի, զի առաւել այլակերպ էր
քան զամենայն գազանն եւ ահագին
յոյժ, եւ ժանիք նորա երկաթիք, եւ
մատիքք նորա պղնձիք. ուտէր եւ ման-
րէր եւ զմնացորդսն առ ոտն կոտորէր.
20 Եւ վասն եղջերացն տասանից որ ի
գլուխ նորա, եւ վասն միւսոյն որ ե-
լանէր եւ [2]վերինն ի բաց թափէր, ո-
րոյ՝ աչք էին եւ բերան որ խօսէր
զմեծամիտս, եւ տեսիլ նորա առաւել
21 էր քան զայլսն։ Տեսանէի, եւ եղ-
ջերին այն տայր պատերազմ ընդ սուրբս,
22 եւ զօրանայր ի վերայ նոցա, Մինչեւ
եկն Հինաւուրցն, եւ [3]նա իրաւունս՝
արարն Բարձրելոյն. ժամանակ եհաս,
եւ զարքայութիւնն սուրբք բմբռնեցին։
23 Եւ ասէ, Գազանն չորրորդ՝ թագաւո-
րութիւն չորրորդ կայցէ յերկրի, որ
[4]առաւել իցէ քան զամենայն թագաւո-
րութիւնս, եւ կերիցէ զամենայն եր-
24 կիր, եւ կոխիցէ եւ հարցէ զնա։ Եւ
տասն [5]եղջերք նորա՝ տասն թագա-
ւորք յարիցեն. եւ զկնի նոցա յարիցէ
այլ, որ [6]առաւել իցէ չարեօք քան զա-
մենայն առաջինսն՝, եւ երիս թագա-
25 ւորս խոնարհեցուսցէ. Եւ բանս [7]առ
Բարձրեալն՝ խօսիցի, եւ զսուրբս Բար-
ձրելոյն [8]մոլորեցուսցէ, եւ կարծեսցէ
զժամանակս եւ զօրէնս փոփոխել. եւ
տացի ի ձեռս նորա մինչեւ ի ժամանակ,
եւ ի ժամանակս, եւ ի կէս ժամանակ.
26 կաց։ Աստեան նստցի. զիշխանութիւն
նորա փոխեսցեն յապականել եւ ի կո-
27 րուսանել մինչեւ ի սպառ։ Եւ թագա-
ւորութիւն եւ իշխանութիւն եւ մե-
ծութիւն [9]թագաւորաց որ ի ներքոյ ա-
մենայն երկնից՝ տուաւ՝՝ սրբոց Բարձ-
րելոյն. եւ արքայութիւն նորա արքա-
յութիւն յաւիտենական, եւ ամենայն
իշխանութիւնք նմա ծառայեսցեն, եւ
հնազանդեսցին։
28 Մինչեւ գոյա վայր է վախճան բանիս
ես Դանիէլ, եւ խորհուրդք իմ յոյժ
խռովեցուցանէին զիս, եւ գոյն երե-
սաց իմոյ չրջկեցաւ, եւ զբանն ի սրտի
իմում պահէի։

Գլ. Ը

1 Յամին երրորդի թագաւորութեանն
Բաղտասարայ արքային, տեսիլ երեւեցաւ
2 [10]ինձ՝ ես Դանիէլ յետ տեսլեանն առաջնոյ,
էի ի Շուշ յապարանն՝ որ է յերկրին
Եղամայ, եւ [11]կայի ի վերայ Ուբատայ՝։
3 Ամբարձի զաչս իմ եւ տեսի, եւ ա-
հա խոյ մի կայր հանդէպ [12]Ուբատայ,
եւ եղջերք նորա՝ բարձունք. եւ մին
բարձրագոյն էր քան զմիւսն, եւ որ
4 բարձր էր՝ յետոյ ելանէր։ Տեսանէի
զխոյն, զի ազօրէր ընդ [13]ծով եւ ընդ
հիւսիսի եւ ընդ հարաւ. եւ ամենայն
գազանք ոչ կային առաջի նորա, եւ
չէր որ ապրէր ի ձեռաց նորա. եւ առ-
նէր ըստ կամաց իւրոց եւ մեծանայր։
5 Եւ ես միտ դնէի եւ ահա քօչ մի
այծեաց գայր յարեւմտից ընդ երեսս
[14]երկրի, եւ ներկիր ոչ մերձենայր. եւ
քօչին եղջեր մի [15]էր ի մէջ աչացն նորա.
6 Եւ եհաս մինչեւ ի խոյն [16]եղջերաւոր,
զոր տեսանէի զի կայր հանդիպ Ուբա-
գայ՝՝. եւ յարձակեցաւ ի վերայ նորա
7 զօրութեամբ ուժոյ իւրոյ։ Եւ տեսա-
նէի զնա հասեալ մինչեւ ցխոյն. զայ-
րացաւ եւ եհար զխոյն, եւ խորտակ-
եաց զերկուսին եղջերս նորա, եւ ոչ
գոյր զօրութիւն խոյին ունել զդէմ նո-
րա. արկ զնա յերկիր եւ ոտիւք իւրոց
կոխան արար զնա. եւ ոչ ոք էր որ
8 թափէր զխոյն ի ձեռաց քօչին։ Եւ քօչն
այծեաց մեծացաւ մեծութիւն յոյժ. եւ
ի զօրանալ նորա խորտակեցաւ եղջեր
նորա մեծ. եւ ելին այլ չորք [17]եղջերք
ի ներքոյ՝՝ նորա ընդ չորս հողմս երկ-

չորք թագաւորք են որ յարիցեն յերկրէ։ (18)
Եւ [1]Աքս. զնա մինչեւ յաւիտեան եւ
[2]Աքս. երիցն առաջի նորա ի բաց թափէին. եւ
վասն եղջերն որոյ [3]Աքս. տուան իրաւունք
[4]Աքս. պյակերպ [5]Աքս. եղջերք՝ ի թագա-
ւորութենէ անտի [6]Աքս. պյակերպ իցէ
յառաջնոցն [7]Աքս. հակառակ Բարձրելոյն
[8]Աքս. ջնջեսցէ [9]Աքս. թագաւորութեանց
որ ի ներքոյ ամենայն երկնից՝ տուաւ ժողո-
վրդեան

[10]ՅԷՔ. ինձ Դանիէլի յետ տեսլեանն առաջնոյ։
(2) Եւ տեսանէի ի տեսլեանն, եւ եղեւ ի
տեսանել իմում, եւ ես էի ի մայրաքաղաքին
Շուշ (ՅՄ, Շուշան) [11]ՅԷՔ. տեսանէի ի
տեսլեանն եւ կայի ի վերայ գետոյն Ուղայ
[12]Ա. յԱՆԴ՝ գետոյն. եւ էին նորա եղջերք
երիս, եղջերք [13]Ա. յԱՆԴ, արեւմտեան
[14]ՅԷՔ. ամենայն երկրի [15]ՅԷՔ. էր նշանաւոր
[16]ՅԷՔ. որ ունէր եղջերս երկուս, զոր տեսանէի
զի կայր հանդէպ գետոյն [17]ՅԷՔ. եղջերք նշա-
նաւորք փոխանակ

9 նից ։ Եւ ի միոջէ ի նոցանէ ել եղջեր
մի [1]հզօր , եւ մնծացաւ առաւել ընդ
10 [2]հիւսիսի . Եւ առ զօրութիւն եւ՝ բարձ-
րացաւ մինչեւ ի զօրութիւնս երկնից, եւ
ընկէց յերկիր ի զօրութենէ երկնից եւ
11 յատամնացոյց , եւ կոխեաց զնոսա . Մին-
չեւ [3]զօրաւարն վրկեսցէ զզերութիւնն.
եւ նուաճ պատարագք խռովեցան . եւ
եղեւ եւ յաջողեցաւ նմա , եւ արդու-
12 թիւնն աւերեսցի ։ Եւ առան ի վերայ
պատարագին մեղք՝ , եւ անկաւ յեր-
կիր արգասութիւնն . եւ արար եւ յա-
13 ջողեցաւ ։ Եւ լուայ ի միոջէ սրբոց որ
խօսէր . եւ ասէր սուրբ մի [4]ցՓկեալ-
մանին որ խօսէր, Մինչեւ ցի՞րդ ան-
սիկն այդ կատցէ. պատարագք բարձ-
եալք , եւ մեղքդ աւերածի առեալք ,
եւ սրբութիւնդ եւ զօրութիւն կոխես-
14 ցի ։ Եւ ասէ ցնա , Մինչեւ յերեկոյ եւ
ի վաղորդին , աւուրս երկուս հազարս
եւ երկք հարիւր՝ . եւ սրբեսցի սրբու-
թիւնն ։
15 Եւ եղեւ իբրեւ տեսի ես Դանիէլ
զտեսիլն , եւ խնդրէի խելամուտ լինել ,
եւ ահա առաջի իմ նկաց իբրեւ զտես-
16 սիլ մարդոյ ։ Եւ լուայ բարբառ մար-
դոյ ի միջոյ Ուբայ, եւ կոչեաց եւ ասէ,
17 Գաբրիէլ , իմացո զմա զտեսիլդ ։ Եւ
եկն նկաց ուր նոքա կային . եւ ի գան
նորա՝ յիմարեցայ եւ անկայ ի վերայ
երեսաց իմոց . եւ ասէ ցիս , Ի միտ առ,
որդի մարդոյ , դի [5]տակաւին ի ժամա-
18 նակ՝ վախճանի է տեսիլդ ։ Եւ մինչ-
դեռ խօսէր նա ընդ իս , յիմարեցայ եւ
անկայ ի վերայ երեսաց իմոց յերկիր .
եւ բռնեաց նմա դինէն , եւ կացոյց ի
19 վերայ ոտից իմոց . Եւ ասէ ցիս , Ահա-
տասիկ ես յուցից քեզ որ ինչ լինելոյ
է ի վախճանի [6]ի վերայ երկրի . քանզի

տակաւին ի ժամանակս է վախճանին՝ ։
20 Խոյն զոր տեսանէիր [7]հզկերաւոր՝ թա-
21 գաւորն Պարսից եւ Մարաց է՝ ։ Եւ քօշն
այծեաց՝ թագաւորն Յունաց է եւ եղ-
ջերն մեծ որ էր ի մէջ աչաց նորա ,
22 նոյն ինքն է թագաւորն առաջին ։ Եւ
[8]ի խորտակելն նորա զնա որով էին այլ
եղջերքն , չորք թագաւորք յազգէ նո-
րա յարիցեն , եւ ոչ իբրեանց զօրու-
23 թեամբ՝ ։ Եւ յետ թագաւորութեան
նոցա եւ ի կատարել մեղաց նոցա , յա-
րիցէ թագաւոր , ժպիրն երեսաք , [9]յա-
24 ռակս , խորհրդական . Եւ հզօր զօրու-
թիւն նորա , եւ զքանդելիսն ապակա-
նեսցէ՝ . եւ յաջողեսցի եւ արասցէ , եւ
ապականեսցէ զհզօրս , եւ ժողովուրդն
25 սուրբ . Եւ [10]լուծ անդոյ՝ նորա յաջո-
ղեսցի եւ նենգութիւն ի ձեռս նորա ,
եւ ի սրտի իւրում մեծամտեսցի . եւ
[11]նենգութեամբ ապականեսցէ զբազումս ,
եւ [12]ի կորստեան բազմաց կացցէ , եւ
26 իբրեւ զձուա ի ձեռին մանրեսցէ՝ ։ Եւ
տեսիլն երեկոյին եւ առաւօտին որ ա-
սացաւ՝ ճշմարիտ է , եւ դու կնքեա
զտեսիլդ , դի յաւուրս բազումս է ։
27 Եւ ես Դանիէլ նուաղեցայ եւ [13]խօթացայ ,
եւ յարեայ եւ գործեցի զգործ արքու-
նի , եւ զարմացեալ էի ընդ տեսիլն .
եւ ոչ ոք էր որ իմացացանէր ։

Գլ. Թ

1 Յամին առաջնոյդ Դարեհի որդւոյ
[14]Աքսաւերայ ի զաւակէ Մարաց, որ թա-
գաւորեաց ի թագաւորութեանն Քաղ-
2 դէացւոց , [15]Ես Դանիէլ խելամուտ եղէ
ի պրոց թուոյ ամացն [16]որ եղեւ բան
Տեառն առ Երեմիա մարգարէ , ի կա-
տարումն աւերածոյն Երուսաղեմի յամս
եւթանասուն ։
3 Եւ դարձուցի զերեսս իմ առ Տէր

[1] ՆԵԲԲ. փոքր [2] ՆԵԲԲ. Հարաւ, եւ ընդ արեւելս , եւ ընդ երկիրն փառաւոր ։ (10) Եւ [3] ՆԵԲԲ. ի Զօրավարն մեծացաւ, եւ ի նմանէ բարձաւ մշտնջենաւոր պատարագն եւ կործանեցաւ տեղի սրբութեան նորա ։ (12) Եւ զօրութիւն տուաւ ընդդէմ մշտնջենաւոր պատարագին (կամ, զնա ամպարշտութեան տուաւ զօրութիւն ընդդէմ մշտնջենաւոր պատարագին) [4] ՆԵԲԲ. ցնա , Մինչեւ ցի՞րդ եղիցի տեսիլն վասն մշտնջենաւոր պատարագին եւ ամպարշտութեանն որ կործանէ, և կոխան լինելոյ սրբոյ զօրութեանն և զօրացն ։ (14) Եւ ասէ ցիս. Մինչեւ յերեկոյ և ի վաղորդայն հազարս երկուց եւ երեքհարիւրից [5] ՆԵԲԲ. վասն ժամանակի [6] ՆԵԲԲ. բայ կութեան, զի վասն ժամանակի սահմանելոյ է տեսիլն

[7] ՆԵԲԲ. որ ունէր եղջերս երկուս՝ թագաւորքն Պարսից եւ Մարաց են [8] ՆԵԲԲ. որ խորտակեցաւն , և չորքն որ յարեան փոխանակ նորա, չորք թագաւորութիւնք յարիցեն յազգէն յայնմանէ , այլ ոչ քան զօրութեան նորա [9] ՆԵԲԲ. եւ որ խելամուտ իցէ գաղտնեաց. (24) Եւ պնդեսցի զօրութիւն նորա , այլ ոչ զօրութեամբ իւրով , եւ ապականեսցէ սքանչելապէս [10] ՆԵԲԲ. յաղագս հանճարոյ [11] ՆԵԲԲ. ի յանգորութեան [12] ՆԵԲԲ. Հակառակ Իշխանին իշխանաց կացցէ , եւ առանց ձեռին մանրեսցի [13] ՆԵԲԲ-ՅԵՒՆ յոնելաս , աւուրս [14] ՆԵԲԲ. Ասուերոսի [15] ՆԵԲԲ. Յաւագնեալ ամի թագաւորելոյ նորա եւս [16] ՆԵԲԲ. զորոց

Աստուած իմ՝ խնդրիւ աղօթիւք եւ
խնդրուածովք, պահօք եւ խորգով[1].
4 կայի յաղօթս առ Տէր [2]Աստուած,
դաւանեայ՝ եւ ասեմ, Տէր Աստուած՝
մեծդ եւ սքանչելի, որ պահես ուխտ
եւ ողորմութիւն սիրելեաց քոց, որոց
5 պահեն զպատուիրանս քո. Մեղաք, ա-
նօրինեցաք, անիրաւեցաք եւ ապստամ-
բեցաք եւ խոտորեցաք ի պատուիրա-
6 նաց քոց եւ յիրաւանց քոց. Եւ ոչ
լուաք ծառայից քոց մարգարէիցն որք
խօսեցան յանուն քո առ թագաւորս
մեր եւ առ իշխանս մեր եւ առ հայր
մեր, եւ առ ամենայն ժողովուրդս
7 երկրին։ Քո, Տէր, արդարութիւն, եւ
մեր ամօթ երեսաց իբրեւ յաւուր յայս-
միկ, առն Յուդայ եւ բնակչաց Երու-
սաղէմի, եւ ամենայն Իսրայէլի մեր-
ձաւորաց եւ հեռաւորաց յամենայն երկրի
ուր գրուեցեր զնոսա անդր վասն անա-
հնազանդութեան իւրեանց՝ զոր անհնա-
8 զանդեցան քեզ։ Տէր, մեզ ամօթ ե-
րեսաց մերոց, եւ թագաւորաց մերոյ
եւ իշխանաց մերոյ, եւ հարցն մերոյ
9 որք մեղաք[3]. Եւ Տեառն Աստուծոյ մե-
րոյ զթութիւնք եւ քաւութիւնք. զի
10 ապստամբեցաք ի Տեառնէ, եւ ոչ լուաք
ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ՝ գնալ
յօրէնս նորա զոր ետ առաջի մեր ի
11 ձեռն ծառայից իւրոց մարգարէից։ Եւ
ամենայն Իսրայէլ անցին զօրինօք քովք,
եւ խոտորեցան զի մի՛ լուիցեն ձայնի
քումդ. եւ եկին ի վերայ մեր անէծք եւ
երդումն՝ գրեալ յօրէնս Մովսիսի ծա-
12 ռայի [4]քո, Տէր". զի մեղաք նմա. Եւ
հաստատեաց զբանս իւր զոր խօսեցաւ
ի վերայ մեր եւ ի վերայ դատաւորաց
մերոց որ դատէին զմեզ՝ ածել ի վերայ
մեր չարիս մեծամեծս, որ ոչ եղեն
ինչերքոյ ամենայն երկնից՝ ըստ այնմ
13 որ եղեն յԵրուսաղէմ։ Որպէս եւ գրեալ
է յօրէնսն Մովսիսի, այն ամենայն չա-
րիք եկին ի վերայ մեր, եւ ոչ աղա-
չեցաք զերեսս Տեառն Աստուծոյ մերոյ՝
դառնալ յանիրաւութեանց [5]հարցն մե-
ծոց, եւ խելամուտ լինել ամենայն
14 ճշմարտութեան քումմէ։ Եւ զարթեաւ
Տէր Աստուած մեր ի վերայ չարեացն
մերոց, եւ ած զնոսա ի վերայ մեր. զի
արդար է Տէր Աստուած մեր ի վե-
րայ ամենայն գործոց իւրոց զոր արար
[5]ընդ մեզ", զի ոչ լուաք ձայնի նորա։
15 Եւ արդ, Տէր Աստուած մեր, որ հաներ
զժողովուրդ քո յերկրէն Եգիպտացւոց
հզօր ձեռամբ, եւ արարեր քեզ անուն
որպէս եւ յաւուր յայսմիկ, մեղաք եւ
16 անօրինեցաք։ Տէր, ամենայն ողորմու-
թեամբ քով դարձցի սրտմտութիւն քո,
եւ բարձցի բարկութիւն քո ի քաղաքէ
քումմէ Երուսաղէմ, ի լեռնէ սրբոյ
քո. զի [6]մեղաք, եւ առ անօրինու-
թեան մերում եւ" հարցն մերոց՝ Երու-
սաղէմ եւ ամենայն ժողովուրդ քո ե-
ղեւ ի նախատինս ամենեցուն որ չուրջ
17 զմեզ են։ Եւ արդ լուր, [5]Տէր Աս-
տուած մեր, աղօթից ծառայի քո եւ
խնդրուածոց, եւ երեւեցո զերեսս քո
վասն [7]քո ի սրբութիւնն" որ աւերեցաւ
18 [8]Ունարհեցո, Աստուած իմ, զունկն քո
եւ լուր ինձ. բաց զաչս քո եւ տես
զապականութիւն մեր, եւ զքաղաքին
քո յորոյ վերայ կոչեցեալ է անուն քո.
զի ոչ առ արդարութեանց մերոց ար-
կանեմք զպուխս մեր առաջի քո, այլ
19 վասն բազում զթութեան քո։ Տէր,
լուր, Տէր, քաւեա, Տէր, [8]անսա, Տէր",
մի՛ յամեր վասն քո, Աստուած իմ, զի
անուն քո կոչեցեալ է ի վերայ քաղա-
քին [9]քո։
20 Եւ մինչդեռ ես խօսէի եւ յաղօթս
կայի, եւ խոստովան լինէի զմեղս իմ
եւ զմեղս ժողովրդեանն Իսրայէլի, եւ
արկանէի զպուխս առաջի Տեառն Աս-
21 տուծոյ իմոյ վասն լերինն [10]սրբոյ, եւ
մինչդեռ խօսէի յաղօթսն, եւ ահա
այրն Գաբրիէլ, զոր տեսանէի յառաջ-
նում տեսլեանն, [11]թռուցեալ եւ" մեր-
ձեցաւ առ իս, իբրեւ ի ժամ երեկորին
22 պատարագին, եւ խելամուտ արար զիս,
եւ խօսեցաւ ընդ իս եւ ասէ, Դանիէլ,
այժմ [12]եկի խելամուտ առնել զքեզ",
23 ի սկզբան աղօթից քոց ել պատգամ, եւ
ես եկի պատմել քեզ. զի այր ցանկա-
լի ես դու. արդ ած զմտաւ զբանդ,
24 եւ ի միտ առ զտեսիլդ։ Եւբ[ա]ն[ա]սան

---

[1] ՆԵԲ. ՅԵԼԼՈ. եւ մխիթար [2] ՆԵԲ. Աստուած իմ, եւ խոստովան եղէ [3] ՆԵԲ. ՅԵԼԼՈ. քեզ [4] ՆԵԲ. Աստուծոյ [5] ՅՆԵԲ. պակաս

[6] ՆԵԲ. վասն մեղաց մերոց և վասն անօրէնութեանց [7] ՆԵԲ. Տեառն՝ ի վերայ սրբութեանն [8] ՆԵԲ. անսա, եւ արա [9] ՆԵԲ. քո եւ ի վերայ ժողովրդեան քո [10] ՆԵԲ. սրբոյ Աստուծոյ իմոյ [11] ՆԵԲ. անդէն թռուցեալ [12] ՆԵԲ. սկիզբ խելամուտ առնել զքեզ իմաստութեան

եւ ինքնորդք [1]համաուսեցան ի վերայ
Ժողովրդեան քո եւ ի վերայ քաղաքին սրբոյ, ի վախճանել մեղաց, եւ ի
կնքել անօրէնութեանց, [2]եւ ի ջնջել
անիրաւութեանց," եւ ի քաւել ամպա-
րշտութեանց, եւ ի զալ յաւիտենական
արդարութեանն, եւ ի կնքել տեսլեան
եւ մարգարէի, եւ յօծանել [3]սրբութեան
23 սրութեանցն": Եւ գիտասցես եւ խե-
լամուտ լիցիս յելից բանին [4]տալ պա-
տասխանի" եւ ի չինելն Երուսաղէմի
մինչեւ ցՕծեանն առաջնորդ՝ եւ ինք-
նորդք եւ ին, եւ եւ ինքնորդ վախճան
եւ երկու գործցին եւ չինեսցին հրա-
պարակքն եւ պարիսպք [5]եւ նորոգեսս-
26 ցին ժամանակք": Եւ յետ վախճան եւ
երկուց եւ ինքնորդաց [6]բարձցի Օծու-
թիւնն, եւ իրաւունք ոչ իցեն ի նմա.
եւ քաղաքն եւ սրբութիւնն ապակա-
նեսցին առաջնորդաւն հանդերձ որ
գայցէ, եւ ջնջեսցին հեղեղաւ. եւ
մինչեւ ի վախճան պատերազմին հա-
մաուսելոց կարզեսցէ զասլականութիւն,
եւ զօրացուսցէ զուխտ բազմաց. եւ ի
նորդ մի եւ կէս եւ ինքնորդի, դա-
դարեցուսցէ զսնդանս եւ զպատարագս.
եւ մինչեւ ի ծայրս անկեանն ապականու-
թիւն. եւ մինչեւ ցվախճան եւ յաւարտուսել
կարզեսցէ ի վերայ ապականութեանն",
27 Եւ զօրացուսցէ զուխտ բազմաց եւ ին-
նորդ մի, եւ կէս եւ ինքնորդի բարձցին
զոհք եւ նուէրք. եւ ի վերայ [7]տաճարին
պղծութիւն աւերածոյն կացցէ, եւ մին-
չեւ ի վախճան ժամանակի կատարած
տացի" ի վերայ աւերածին։

Գլ. ժ

[2]Տեսիլ վեցերորդ։"

1 Յամին երրորդի Կիւրոսի արքայի Պար-
սից՝ բանն յայտնեցաւ Դանիելի որոյ ա-
նունն կոչեցաւ Բաղտասար. եւ ճշմա-
րիտ է բանն, եւ [8]զօրութիւնն մեծ եւ
2 հանճար տուաւ նմա ի տեսլեանն", Յա-

[1] ՆԵԲ. վճռեցան [2] 3ՆԵԲ. պատասխ [3] ՆԵԲ. գլուխը սրբոց [4] ՆԵԲ. ի նորոգել [5] ՆԵԲ. ի ետ դութեան ժամանակի իսկ [6] ՆԵԲ. Համանիցի Օծեալն եւ ոչ վասն իւր. եւ զքաղաքն եւ զսրբութիւնն ապականեսցէ ժողովուրդ իշխանին որ գալոց է, եւ վախճան նորա եղիցի հեղեղաւ, եւ մինչեւ ի վախճան պատերազմին սահմանեալ են աւերմունք [7] ՆԵԲ. աշտարակին, (կամ, թեւոյ) ապականութեանցն իցէ աւերիչն, եւ մինչեւ ի սպառ. եւ սահմանեալն հեղցի [8] ՆԵԲ. ճիգն մեծ էր, եւ թէլամուտ եղեւ բանին եւ ի միտ առ զտեսիլն

ւորան յայնոսիկ ես Դանիէլ էի ի սուգ
3 երից եւթներորդաց աւուրց. Հաց ցան-
կութեան ոչ կերայ, եւ միս եւ գինի ոչ
եմուտ ի բերան իմ, եւ իւղով ոչ օծայ,
մինչեւ ի կատարել երից եւթներորդաց
աւուրց։

4 Յաւուրն քսաներորդի եւ չորրորդի
ամսեանն առաջինոյ՝ կայի ես առ ափն
գետոյն մեծի որ է Տիգրիս (Դկղաթ)։
5 Ամբարձի զաչս իմ, եւ ահա այր մի
զգեցեալ [9]փառս, եւ ընդ մէջ իւր ա-
6 ծեալ կամար յոսկւոյն Ոփազայ. Եւ
մարմին նորա [10]ծովագոյն, եւ երեսք նո-
րա լուրեւ զտեսիլ փայլական, եւ աչք
նորա լուրեւ ճառագայթք հրոյ, բազուկք
եւ բարձք նորա լուրեւ զտեսիլ փայլուն
պղնձոյ, եւ բարբառ բանից նորա լու-
7 րեւ զբարբառ զօրուս։ Եւ տեսի ես Դա-
նիէլ միայն զտեսլին, եւ արքն որ ընդ
իս էին՝ ոչ տեսին զտեսիլն, այլ ահ մեծ
անկաւ ի վերայ նոցա, եւ փախեան
8 [11]զարհուրելոք։ Եւ ես միայն մնացի, եւ
տեսի զտեսիլն զայն մեծ. եւ ոչ մնաց
յիս զօրութիւն, եւ փառք իմ յապակա-
նութիւն դարձան, եւ չհանդարտեցի
9 զօրութեանն։ Եւ լուայ զբարբառ բա-
նից նորա. եւ ի լսելն իմում զբարբառ
բանից նորա՝ կայի հիացեալ, եւ երեսք
իմ յերկիր խոնարհեալ։
10 Եւ ահա ձեռն ձգեալ առ իս՝ կանգ-
նեաց զիս ի ծունգս իմ եւ ի թաթս ձե-
11 ռաց իմոց. Եւ ասէ ցիս, Դանիէլ, այր
ցանկալի, խելամուտ լեր բանիցս զոր
խօսեցայց ընդ քեզ, եւ կաց ի կայի
քումմ, զի այժմ առաքեցայ առ քեզ.
եւ ի խօսել նորա ընդ իս զբանս զայս՝
12 յոտն կացի դողութեամբ։ Եւ ասէ ցիս,
Մի երկնչիր, Դանիէլ, զի յօրէ յորմէ ե-
տուր զսիրտ քո խելամուտ լինել, եւ
վշտանալ առաջի Աստուծոյ քո, լսելի
եղեն բանք քո, եւ ես եկի ընդ բանից
13 քոց։ Եւ իշխան թագաւորութեանն
Պարսից կայր հակառակ ինձ զքսան եւ
զմի օր. եւ ահա Միքայէլ, մի յառա-
ջին իշխանացն, եկն օգնել ինձ. եւ [12]մո-
զի գնա անդ ընդ իշխանի թագաւո-
14 րութեանն" Պարսից. Եւ եկի խելամուտ
առնել զքեզ որչափ ինչ անցք անցա-
նելոց իցեն ընդ ժողովուրդ քո յաւուրս

[9] ՆԵԲ. բեհեզ [10] ՆԵԲ. իբրեւ զքիւրեղ [11] ՆԵԲ. զի թաքիցեն [12] ՆԵԲ. ես մնացի ընդ թագաւորան

15 յետինս . զի [1]տեսիլդ յաւուրս է ։ Եւ ի
խօսելն նորա ընդ իս ըստ բանիցս այ-
սոցիկ՝ անկայ ի վերայ երեսաց իմոց
յերկիր , եւ կայի հիացեալ ։
16 Եւ ահա իբրեւ ի նմանութիւն որդ-
ւոյ մարդոյ մերձեցաւ ի շրթունս իմ .
բայի զբերան իմ եւ խօսեցայ , եւ ա-
սեմ ցային որ կայր յանդիման ինձ , Տէր ,
յերեւելդ քո ինձ՝ խռովեցաւ փոր իմ յիս ,
17 եւ ոչ գոյ յիս զօրութիւն ։ Եւ զիա՞րդ
կարիցէ ծառայ [2]քո , տէր ,՚՚ խօսել ընդ
տեառն իմում . եւ ոչ եւս է յիս զօրու-
18 թիւն կալոյ , եւ չունչ ոչ մնայ յիս ։ Եւ
յաւել եւս մերձենալ յիս իբրեւ զանսիլ
19 մարդոյ , եւ զօրացոյց զիս . Եւ ասէ ,
Մի երկնչիր , այր ցանկալի , խաղա-
ղութիւն ընդ քեզ , զօրացիր եւ քաջ
լեր . եւ ի խօսել նորա ընդ իս՝ զօրա-
ցայ եւ ասեմ , Խօսեսցի տէր , զի զօ-
20 րացուցեր զիս ։ Եւ ասէ , Եթէ գիտի-
ցե՞ս վասն էր եկի առ քեզ . եւ արդ
դառնամ անդրէն տալ պատերազմ ընդ
իշխանին Պարսից . եւ ես երթայի , եւ
21 իշխանն Ճունաց գայր ։ Բայց պատմե-
ցից քեզ զինչ կարգեալ է ի գիրս ճըշ-
մարտութեան . եւ ոչ ոք է ինձ օգնական
այսոցիկ , բայց Միքայէլ իշխանն ձեր ։

Գլ . ԺԱ

1 Եւ ես յառաջնում ամին [3]կիւրոսի կայի
ի հաստատութեան եւ ի զօրութեան ՚՚ ։
2 Եւ արդ պատմեցից քեզ զճշմարտու-
թիւնն . Ահա երիք թագաւորք յարիցեն
յերկիրդ Պարսից , եւ չորրորդն մեծաս-
ցի մեծութիւն մեծ քան զամենեսեան .
եւ յետ զօրանալոյ նորա ի մեծութեան
իւրում , [4]յարիցէ ի վերայ թագաւորու-
թեանն՚՚ Ճունաց ։
3 Եւ յարիցէ թագաւոր հզօր , եւ տիրեսցէ
աշխարհամբ բազում , եւ արասցէ ըստ
4 կամս իւր . Եւ իբրեւ յարիցէ՝ թագաւո-
րութիւն նորա փշրեսցի , եւ բաժանեսցի
ի չորս հողմս երկնից . եւ ոչ [5]ըստ վախ-
ճանի՚՚ նորա , եւ ոչ ըստ աշխարհանն նորա
զոր տիրեաց . զի իւնայն թագաւորու-
թիւն նորա , եւ այլոց՝ թող զնոցայն ։
5 Եւ զօրացցի թագաւորն հարաւոյ , եւ
մի յիշխանացն զօրացցի ի վերայ նորա ,
6 եւ [6]ազգակից աշխարհին մեծ ։ Եւ յետ
[7]ամաց իւրեանց խառնակեսցին՚՚ ընդ
միմեանս . եւ դուստր արքային հարաւ-
ոյ մտցէ առ արքայն հիւսիսոյ՝ առնել
դաշինս ընդ նմա . եւ ոչ հանգարտեսցէ
զօրութիւնն բազկին , եւ ոչ կացցէ [8]զա-
ւակ նորա . եւ մատնեսցի ինքն եւ ա-
ծելիքն իւր , եւ [9]օրիորդն եւ որ զօրա-
ցուսանէր զնա ի ժամանակին ։
7 Եւ յարիցէ [10]ի ծագկէ արմատոյ նորա
ի վերայ պատրաստութեան իւրոյ՚՚ , եւ
եկեսցէ առ զօրութիւնն . եւ մտցէ ի
հաստատութիւնս թագաւորութեանն
հիւսիսոյ , եւ արասցէ ընդ նոսա , եւ
8 զօրասցի ։ Եւ զաստուածս նոցա [11]կոր-
ծանեսցէ հանգերձ ձուլածոյիւք նոցա ,
եւ զամենայն սպասս ցանկալիս նոցա՝
զոսկւոյ եւ զարծաթոյ զերի առնել բե-
րիցէ յեգիպտոս , եւ ինքն [11]հաստատես-
9 ցի քան զթագաւորն հիւսիսոյ . Եւ մտցէ
ի թագաւորութիւն արքային հարաւոյ ,
եւ դարձցի անդրէն յերկիր իւր ։
10 Եւ որդիք [12]նորա ժողովեսցեն ամբոխ
զօրաց բազմաց . եւ մտցէ գիմեալ , եւ
հեզհզասեսցէ եւ անցցէ , եւ [13]դարձեսցէ ,
եւ զրգռեսցի մինչեւ ի զօրութիւնն՚՚ նորա ։
11 Եւ գազանասցի թագաւորն հարաւոյ ,
եւ ելցէ եւ տացէ պատերազմ ընդ թա-
գաւորին հիւսիսոյ . [14]եւ զօմարեսցէ զօր
բազում , եւ մատնեսցի [15]զօրն ի ձեռս
12 նորա ։ Եւ առցէ զամբոխն , եւ բարձ-
րասցի սիրտ նորա . եւ կործանեսցէ
13 զիւրաքանչս , եւ ոչ զօրասցի ։ Եւ դարձ-
ցի արքայն հիւսիսոյ , եւ ածցէ զօր բա-
զում քան զառաջինն . եւ ի վախճանի
[16]ժամանակաց եկեսցէ մտանել զօրու-
14 մեծաւ եւ բազում [17]տառացուածովք ։ Եւ
ի ժամանակին յայնոսիկ բազումք յա-
րիցեն ի վերայ թագաւորին հարաւոյ .
եւ որդիք [18]մնացելոց ժողովրդեան քո
բարձրասցին ի հաստատել զտեսիլն , եւ

---

[1] Ելբ. տեսիլդ տակաւին [2] Ելբ. տեառն իմոյ
[3] Ելբ. Դարեհի Մարի կայի ի հաստատել եւ ի զօրացուցանել զնա [4] Ելբ. յարուսցէ զանազգեան ի վերայ թագաւորութեանն [5] Ելբ. ի յաջորդս
[6] Ելբ. ազիեսցէ , եւ տերութիւն նորա [7] Ելբ. ամաց եղիցին դաշնակից [8] Ելբ. նա եւ բազուկ [9] Ելբ. որ ծնաւն զնա [10] Ելբ. մին յոստոց աճեսի արմատոյ նորա փոխանակ նորա [11] Ելբ. զկոթ [12] Ելբ. Հաստատեսցի զամն ինչ առաւել [13] Ելբ. նորա տացեն պատերազմ , եւ [13] Ելբ. գարձեալ տացէ պատերազմ մինչեւ յամրութիւն [14] Ելբ. եւ նա [15] Ելբ. ամբոխն [16] Ելբ. ամաց [17] Ելբ. պատրաստութեամբ [18] Ելբ. յափշտակչաց

15 սկարասցին ։ Եւ մոցէ թագաւորն [1]հարեալ , եւ կուտեսցէ հող , եւ առցէ զքաղաքս ամուրս . եւ բազուկք արքային հարաւոյ ոչ հաստատեսցին . եւ [2]յարիցեն ընտրեալք նորա , եւ ոչ իցէ
16 զօրութիւն կալոյ ։ Եւ [3]արասցէ ի մտաննելն իւրում առ նա զկամս իւր , եւ ոչ ոք իցէ որ ունելոյի զդէմ նորա . եւ կացցէ յերկրին [4]Սարիմայ , եւ վախճա-
17 նեսցի ի ձեռս նորա ։ Եւ դիցէ զերեսս իւր մտանել [5]զօրութեամբ իւրով յամենայն թագաւորութիւնս նորա , եւ զամենայն ուղղութիւնս առնիցէ ընդ նմա՝՝ . եւ զդուստր կանանց ատցէ նմա յատկանութիւն , եւ մի [6]յարթասցի ,
18 եւ մի եղիցի նա նորա ։ Եւ դարձուսցէ զերեսս իւր ի կղզիս , եւ առցէ զրազումս . եւ [7]այրեսցէ զիշխանն որ նախատինսն զնոսա , եւ զնախատինս նո-
19 ցա դարձուսցէ յերեսս նոցա ։ Եւ դարձցի զօրութեամբ յերկիր իւր՝՝ , եւ սկասցի եւ անկցի , եւ ոչ գտանիցի ։
20 [8]Եւ յարիցէ յարմատոյ նորա տունկ թագաւորութեան ի վերայ պատրաստութեան նորա , եւ բռնագատիցէ առնել չուք թագաւորութեան . եւ յաւուրսն յայնոսիկ խորտակեսցի , եւ ոչ երեսօք
21 եւ ոչ պատերազմաւ ։ Կացցէ ի վերայ պատրաստութեան իւրոյ , զի արհամարհեցաւ , եւ ոչ ետուն նմա փառս թագաւորութեան . եւ եկեսցէ յայղուութեամբ , եւ բռնագատեսցի թագաւո-
22 րութեանցն պայմակղութեամբք ։ Եւ բազուկք այնր որ հեղեղատիցին , եւ հեղեղատեսցին յերեսաց նորա . եւ խոր-
23 տակեսցի եւ առաջնորդ ուխտին ։ Եւ այնոցիկ որ խառնիցին ի նա՝ արասցէ նենգութիւն . եւ ելցէ եւ զօրասցի ի
24 վերայ նոցա սակաւ ազգաւ ։ Եւ յայղութեամբ բազում աչխարհաց եկեսցէ՝՝ եւ արասցէ զոր ոչ արարին հարք նորա , եւ ոչ հարք հարց նորա . եւ զաւար եւ զկապուտ եւ զստացուածս բաչխեսցէ նոցա , եւ ի վերայ [9]Եղիպտացւոց խորհուրդ խորհեսցի մինչեւ ի ժամանակ։
25 Եւ զարթիցէ զօրութիւն նորա , եւ սիրտ նորա ի վերայ թագաւորին հարաւոյ զօրութեամբ մեծաւ . եւ թագաւորն հարաւոյ խրթեսցէ պատերազմ զօրաւ մեծաւ եւ հզօրաւ յոյժ , եւ ոչ [10]հանդարտեսցէ. զի
26 խորհեսցին ի վերայ նորա խորհուրդս . Եւ [11]կերիցեն որ ինչ նմա անկիցէ , եւ խորտակեսցեն զնա , եւ զղօրան այրեսցեն՝՝ , եւ
27 անկցին վիրաւորք բազումք ։ Եւ երկոցունց թագաւորացն սիրտք իւրեանց ի չարութեան . եւ ի միում սեղանի սուտ խօսեսցին , եւ մի յաջողեսցի . զի [12]վախ-
28 ճանն ի ժամանակս է՝՝ ։ Եւ դարձցի յերկիր իւր մեծութեամբ բազմաւ , եւ սիրտ նորա ի վերայ ուխտի սրբոյ . եւ արասցէ եւ դարձցի յերկիր իւր ։
29 [13]Ի ժամանակի դարձցի , եւ եկեսցէ ի վերայ հարաւոյ , եւ ոչ եղիցի իբրեւ
30 զառաջինն վերջինն ։ Եւ մոցեն ի նա [14]բանակք Կիտացւոց , եւ խռնարհեսցի եւ դարձցի եւ բարկասցի ի վերայ ուխտին սրբոյ , եւ արասցէ , եւ դարձցի եւ [15]գուսմարեսցի ի վերայ այնոցիկ որք թողին
31 զուխան սուրբ ։ Եւ [16]յարիցեն զաւակք ի նմանէ՝՝ , եւ պղծիցեն զսրբութիւնն [17]բռնութեամբ . եւ փոխեսցեն զհանապազորդութիւնն , եւ տացեն պղծութիւն
32 ապականութեան ։ Եւ ապականիչք ուխտին ածցեն ի վերայ իւրեանց զգայթակղութիւն՝՝ . եւ ժողովուրդ որ ճանաչէ զԱստուած իւր՝ զօրասցին եւ ա-
33 րասցեն ։ Եւ հանճարեղք ժողովրդեանն

---

[1] ՆԲԲ. հիւսիսոյ [2] ՆԲԲ. ոչ ժողովուրդ ընտրելոց [3] ՆԲԲ. որ գայն ի վերայ նորա՝ արասցէ [4] Ա. «ՏԵՒՆ» փառաց [5] ՆԲԲ. զօրութեամբ ամենայն թագաւորութեան իւրոյ, եւ ուղիղք ընդ նմա, եւ վճարեսցէ [6] ՆԲԲ. կացցէ [7] ՆԲԲ. դադարեցուսցէ իշխան մի զնախատինս նորա, նա եւ զնախատինս նորա դարձուսցէ ի նա ։ (19) Եւ դարձուսցէ զերեսս իւր յամրութիւնս երկրին իւրոյ [8] ՆԲԲ. Եւ կացցէ փոխանակ նորա այլ որ անցուցանէն հարկահան ի շուք թագաւորութեան , եւ յաւուրս ինչ խորտակեսցի , այլ ոչ բարկութեամբ եւ ոչ պատերազմաւ ։

(21) Եւ յարիցէ փոխանակ նորա անարգ որ , եւ ոչ տացեն նմա փառս թագաւորութեան , եւ եկեսցէ նա հանդարտութեամբ եւ կալցի զթագաւորութիւնն ողջանոք ։ (22) Եւ բազկօք հեղեղաւի հեղեղսցին յերեսաց նորա եւ խորտակեսցին , եւ իշխան ուխտին եւս ։ (23) Եւ

յեսո մտանելոյ յաւետ ընդ նմա՝ արասցէ նենգութիւն . եւ ելցէ եւ զօրասցի սակաւ ազգաւ ։ (24) Ի հանդարտութեան մտցէ նա յերկիր պարարտ , [9] ՆԲԲ. ամրութեանց [10] ՆԲԲ. կացցէ [11] ՆԲԲ. որ ուտեն զհամադամս նորա՝ խորտակեսցեն զնա, եւ զօրք նորա հեղեղսցին [12] ՆԲԲ. տակաւին վախճանն է վասն ժամանակի սահմանելոյ [13] ՆԲԲ. Ի ժամանակին սահմանելոյ [14] ՆԲԲ. Նաւք [15] ՆԲԲ. դիցէ զաւշ իւր [16] ՆԲԲ. բազուկք բան նմանէ կանգնեսցին [17] ՆԲԲ. զամրութիւնն, և բարձցեն զչշհն հանապազորդ, եւ դիցեն զապականիչ պղծութիւնն ։ (32) Եւ զուխտադրուժսն մոլորեցուսցէ ողջանօք

[1]բազում խմբք խնդամուտ եղիցին". եւ
ականատեսին սրով եւ հրով, եւ գերու-
թեամբ
34 եւ յափշտակութեամբ զաւուրս : եւ ի
տկարանալ նոցա՝ օգնականութիւն ինչ
սակաւ գոյն, եւ յաւելցին ի նոսա
35 բազումք [2]գայթակղեսցին ի նոսա
ճարեզային տկարասցին ի փորձել զնո-
սա եւ [3]ընտրել, եւ յայտնել մինչեւ ի
վախճան ժամանակի . վի տակաւին [4]ժա-
36 մանակ է : եւ արասցէ բան կամայ իւ-
րոց եւ բարձրասցի ի վերայ ամենայն աստուա-
ծոյ, եւ ի վերայ Աստուածոյն աստուա-
ծոց խօսեսցի [5]ամբարտաւանս . եւ յա-
ջողեսցի մինչեւ վախճանեսցի բարկու-
թիւն, քանզի [6]ի վախճան լինելոց է" :
37 եւ ի վերայ աստուածոց հարց իւրոց
զմաւս [7]ածցէ, եւ" վասն ցանկութեան
կանանց, եւ զամենայն դիս զմաւս ոչ
ածցէ, եւ ի վերայ ամենայնի հպարա-
38 տասցի . եւ [8]զԱստուած հզօր ի տեղ-
ւոյէ իւրմէ" փառաւորեսցէ, եւ զաս-
տուած զոր ոչ ծանեան հարք նորա՝
փառաւորեսցէ ոսկւով եւ արծաթով
եւ ակամբք պատուականօք եւ ցան-
39 կալիօք : եւ [9]անցցէ յամուրս վախստա-
կանաց ըստ աստուածոյ" օտարի, եւ յա-
ճախեսցէ [10]փառս . եւ հնազանդեցուսցէ
նմա" զբազումս, եւ զերկիրն բաժա-
նեսցէ ի պարգեւ :
40 եւ ի ժամանակի վախճանի ոգորեսցի
ընդ [11]արքային հարաւոյ . եւ գոլաժողով
լիցի" ի վերայ նորա արքայն հիւսիսոյ,
կառօք եւ հեծելովք եւ նաւօք բազմօք,
եւ մտցէ [12]յերկիրն եւ խորտակեսցէ"
41 եւ անցցէ . եւ մտցէ յերկիրն [13]Սա-
բայիմ, եւ բազումք [14]տկարասցին . եւ
սոքա իցեն որ ազատիցին ի ձեռաց նո-
րա, Եդոմ եւ Մովաբ, եւ իշխանու-
42 թիւն որդւոցն Ամմոնայ : եւ ձգեսցէ
զձեռն իւր [15]յերկիրն . եւ երկիրն Եգիպ-
43 տացւոց ոչ եղիցի ի փրկութիւն . եւ
տիրեսցէ ի վերայ [16]գաղանեաց ոսկւոյ
եւ արծաթոյ, եւ ի վերայ ամենայն ցան-
կալեացն [17]Եգիպտացւոց եւ Լիբէացւոց,
44 եւ Եթէովպացւոց յամուրս նոցա : եւ
տայսա հաւրաւք եւ տապնապք ճեպես-
ցեն զնա յարեւելից, եւ ի հիւսիսոյ եւ
կեսցէ սրտմտութեամբ յաղմամբ մեծաց
45 կանել զբազումս : եւ հարցէ գիսարան
իւր յենիզանն, ի մէջ ծովուցն ի լեառն
Սուրային սուրբ, եւ եկեսցէ մինչեւ ի
կողմն մի նորա . եւ ոչ ոք իցէ որ փըր-
կիցէ զնա :"

Գլ. ԺԲ

1 Եւ ի ժամանակին յայնմիկ յարիցէ Մի-
քայէլ իշխան մեծ, որ կայ ի վերայ որդւոց
ժողովրդեան քո . եւ եղիցի ժամանակ
նեղութեան, [18]նեղութիւն՝ որպիսի ոչ
եղեւ յորմէ հետէ եղեւ ազգ ի վերայ երկրի
մինչեւ ի ժամանակն յայն. եւ ի ժամանա-
կին յայնմիկ ապրեսցի ժողովուրդ քո,
ամենայն որ գտցի գրեալ ի գպրութեան:
2 Եւ բազումք ի ննջեցելոց ի հող երկրի՝
յարիցեն, ոմանք ի կեանսն յաւիտենա-
կանս, եւ ոմանք ի նախատինս եւ յա-
3 ւիտենական : Եւ իմաստունք
ծագեսցեն իբրեւ զլուսաւորութիւն ի
հաստատութեան, եւ [19]բազումք յար-
դարոց՝ իբրեւ զաստեղս յաւիտեան՝
եւ եւս :
4 Եւ դու, Դանիէլ, փակեա զբանսդ,
եւ կնքեա զդիրդ՝ մինչեւ ի ժամանակ
վախճանի, մինչեւ ուսցին բազումք,
եւ բազմացի գիտութիւն :
5 Եւ տեսի ես Դանիէլ, եւ ահա [20]եր-
կու կային յայսկոյս եւ յայնկոյս գե-
6 տոյն : Եւ ասէն ցայրն որ զդիցեալն էր
[21]զբազէնն, եւ կայր ի վերայ ջուրց գե-
տոյն, մինչեւ ցերբ իցէ վախճան սքան-
7 չելացդ [18]զոր ասացեր" : Եւ լուայ յաս-
նէն որ զդիցեալն էր [21]զբազէնն եւ կայր

---

[1]ԵԲԲ. խնդամուտ արասցեն զբազումս [2]ԵԲԲ. ողբանոք [3]ԵԲԲ. սրբել եւ սպիտակացուցանել [4]ԵԲԲ. վասն ժամանակի ատմանելոյ [5]ԵԲԲ. ահագինս [6]ԵԲԲ. որ ատմանեալն է՝ կատարեսցի [7]ԵԲԲ. ոչ ածցէ, եւ ոչ [8]ԵԲԲ. զաստուածն ամրութեանց ի տեղւոջ իւրում [9]ԵԲԲ. վճարեսցէ գործ ի բերդս ամուրս ընդ աստուածոյն [10]ԵԲԲ. փառս որոց ճանաչեն զնա, եւ հնազանդեցուսցէ նոցա [11]ԵԲԲ. նմա արքայն հարաւոյ . եւ եկեսցէ իբրեւ վմբրիկ [12]ԵԲԲ. յերկիրս և ողողեսցէ [13]Ա.յոխ՝ փառաց [14]Կամ, գլորեսցին [15]ԵԲԲ. յերկիրսն

[16]ԵԲԲ. գանձուց [17]ԵԲԲ. Եգիպտացւոց. եւ Լիբեացիք եւ Եթէովպացիք զկնի հետոց նորա, (44)եւ ապա համբաւք տագնապեցուսցեն զնա յարեւելից եւ ի հիւսիսոյ . եւ նա ելցէ սրամբ տարածել եւ բազմաց սպանանել եւ ջնջել զբազումս, (45)եւ հարցէ գիսարանս արքունեաց իւրոց ի մէջ ծովուց եւ ի լերին փառաց սրբութեան (կամ, ի մէջ ծովուց, ի լերին փառաց սրբութեան), սակայն հասցէ ի վախճան իւր, եւ ոչ ոք իցէ որ օգնիցէ նմա : [18]Յեր. պ-ի-ե-ւ
[19]ԵԲԲ. որ արդարացուցանեն զբազումս՝ փայլեսցեն
[20]ԵԲԲ. երկու այլք [21]Ա.յոխ՝ զբեհեզն

ի վերայ Յուրց գետոյն, ամբարձ զաչ իւր եւ զձախ իւր յերկինս, եւ երդուաւ ի կենդանին յաւիտենից, մէկ ի ժամանակ, եւ ի ժամանակս, եւ ի կէս ժամանակի, եւ ի կատարել ցրման [1]Ձեռին ժողովրդեանն սրբոցելոյ [2]"Ծանիցին զայս" ամենայն։

8 Եւ ես լուայ, եւ ոչ ասի ի միտ. եւ ասեմ, Տէր, զինչ է վախճան այդոցիկ։
9 Եւ ասէ, Երթ, Դանիէլ, զի արգիլեալ եւ կնքեալ են բանքս մինչեւ ցժամա-
10 նակ վախճանի։ [3]Ընտրեսցին եւ սպիտակասցին եւ փորձեսցին "եւ սրբեսցին" բազումք, եւ անօրինեսցին անօրէնք, եւ ոչ [4]առնուցուն ի միտ ամենարիչք". եւ իմաստունք իմասցին։
11 [6]Ի ժամանակէ փոփոխմանն յաճախութեան, եւ տացի պղծութիւնն աւերածին աւուրս հազար երկերիւր երեսուն
12 եւ հինգ. Եւ երանի" որ համբերեսցէ եւ հասցէ յաւուրս հազար երիւք հարիւր
13 երեսուն եւ հինգ։ Եւ [7]դու երկ հանդիր, զի տակաւին են աւուրք եւ ժամք ի կատարումն վախճանի, եւ հանդիցես. եւ յարիցես ի ժամանակի" քոում ի վախճանի աւուրց։

[8]ԳԼ. ԺԲ

65 Եւ թագաւորն Ասորեստէս յաւելաւ առ հարս իւր, եւ անւն կիւրոս Պարսից զթա-
1 գաւորս թիւն նորա։ Եւ Դանիէլ էր կենդանդ կցորդ թագաւորին, եւ փառաւոր քան զամենայն բարեկամս նորա։
2 Եւ էին կուռք մի Բաբելացւոց անուն Բէլ. եւ ելանէր նմա ոռճիկ աւուր միոջ նաչիր երիոտասան արդաւ, եւ քառասուն ոչխար, եւ գինի վեց մար։ Եւ
3 թագաւորն պաչտէր զնա, եւ երթայր հանապազ երկիր պագանէր նմա։ Բայց Դանիէլ պագանէր երկիր Աստուծոյ իւրում. եւ ասէ ցնա թագաւորն, Դու ընդ
4 ինչ ոչ երկիր պագանես Բելայ։ Եւ նա ասէ, Զանազի ոչ պաչտեմ զկուռս ձեռագործս, այլ զԱստուած կենդանի՝ զա-

---

[1] Ա.ԽԲ.Ք՝ զօրութեան [2] ՆԲԲ. կատարեսցի այս [3] ՆԲԲ. Սրբեսցին [4] ՑՆԲԲ. գ-ւոյծ [5] ՆԲԲ. առնուցու ի միտ եւ ոչ մի ամպարիշտ [6] ՆԲԲ. Ես ի ժամանակէ անտի բառնալոյ մշտնջենաւոր զօհին եւ դնելոյ պղծութեան աւերածին՝ աւուրք հազար երկերիւր եւ ինսնսուն (12) [7] ՆԲԲ. դու երթ ի վախճան, զի հանգիցես, եւ կացցես ի վիճակի [8] Ա.ԽԲ.Ք. ՓԼՈՒԽ պոյոսե յՆԲԲայոնէն։

բարիչն երկնի եւ երկրի, որ ունի իշ-
5 խանութիւն ամենայն մարմնոյ։ Եւ ասէ ցնա թագաւորն, Իսկ Բէլ ոչ թուի քեզ մէկ իսկ Աստուած կենդանի. եթէ ոչ տեսանիցես՝ զչափ ուտէ եւ ըմպէ հա-
6 նապազ։ Եւ ասէ Դանիէլ ծիծաղելով, Մի խաբիր, արքայ, զի զա է ի ներքոյ կաւեայ, եւ արտաքոյ պղնձի. ոչ կերակալ զորա երբեք եւ ոչ արբեալ։
7 Եւ բարկացեալ թագաւորն՝ կոչեաց զքուրմսն նորա, եւ ասէ ցնոսա թագաւորն, Եթէ ոչ ասիցէք ինձ, ով ուտէ զսեղանն զայն, մահու մեռանիցիք.
8 Այլ եթէ յայտ առնիցէք՝ թէ զայն ամենայն Բէլ ուտէ, մեռանիցի Դանիէլ՝ զի հայհոյեաց զԲէլ։ Եւ ասէ Դանիէլ ցթագաւորն, Եղիցի ըստ բանի քումմ։
9 Եւ էին քուրմք Բելայ եւթանասուն, մայր զկանայս եւ զմանկտի։ Եւ եկն թագաւորն Դանիէլիւ հանդերձ ի տունն
10 Բելայ։ Եւ ասեն քուրմք Բելայ, Ահաւասիկ մեք արտաքս ելցուք. եւ դու, արքայ, զիր առաջի դորա զկերակուրդ, եւ զգինիդ՝ խառնեալ զկնի. եւ փակեա զդուրսդ եւ կնքեա մատանեաւ
11 քով։ Եւ եկեալ ընդ առաւօտս, եթէ ոչ գայի այդ ամենայն կերեալ ի Բելայ, մեռցուք մեք. ապա թէ ոչ՝ Դանիէլ որ
12 աւուա խօսեցաւ զմեզ։ Եւ նոքա վստահ էին, զի արարեալ էին ընդ սեղանովն մուտս անյայտ, եւ ընդ այն մտանէին
13 հանապազ եւ ուտէին զայն։ Եւ եղեւ իբրեւ ելին արտաքս, եւ թագաւորն եդ զկերակուրսն առաջի Բելայ։ Եւ հրամայ նա Դանիէլ իւրում մանկտւոյ, եւ բերին մոխիր, եւ ցանեցին ընդ ամենայն մեհենին առաջի թագաւորին միայնոյ. եւ ելեալ արտաքս՝ փակեցին զդուռնն, եւ կնքեցին մատանեաւ թա-
14 գաւորին եւ գնացին։ Եւ քուրմքն մտին գիշերի ըստ սովորութեան իւրեանց՝ կանամբք եւ որդւովք իւրեանց, կերան զամենայն եւ արբին, եւ ոչ ինչ թո-
15 ղին։ Եւ կանխեաց թագաւորն ընդ առաւօտն Դանիէլիւ հանդերձ. եւ ասէ,
16 Ո՞ղջ են կնիքդ, Դանիէլ։ Եւ նա ասէ,
17 Ողջ են, արքայ։ Եւ եղեւ ընդ բանալ զրանցն՝ հայեցաւ թագաւորն ի սեղանն, ի ձայն մեծ աղաղակեաց եւ ասէ, Մեծ ես, Բէլ, եւ ոչ գոյ նենգութիւն ի
18 քեզ եւ ոչ մի։ Եւ ծիծաղեցաւ Դանիէլ, եւ կալաւ զթագաւորն զի մի մտցէ ի

ներքս, եւ ասէ, Ազէ հայեաց ընդ յա-
19 տակագ, եւ տես այր է հետագ այգ։ Եւ
ասէ թագաւորն, Տեսանեմ հետ արանց,
20 կանանգ եւ մանկտւոց։ Ծայնժամ բար-
կացեալ թագաւորն կալաւ զքուրման
եւ զկանայս եւ զորդիս նոցա. եւ զու-
ցին նմա զդաղանի զուարն՝ ընդ որ մաս-
21 նէին եւ ծախէին զանդան։ Եւ կոտո-
րեաց զնոսա թագաւորն, եւ զԻէլ եա
ի ձեռս Դանիէլի, եւ կործանեաց զնա
եւ զմեհեան նորա։
22 Եւ էր վիշապ մի մեծ, եւ պաշտէին
23 զնա Բաբելացիքն։ Եւ ասէ թագաւորն
ցԴանիէլ, Միթէ եւ զդմանէ՞ ասիցես
թէ պղնձի է. ահաւադիկ կենդանի է,
ուտէ եւ ըմպէ. եւ ոչ կարես ասել թէ
չիցէ դա Աստուած կենդանի. արդ ակ
24 պաց դմա երկիր։ Եւ ասէ ցնա Դանիէլ,
ես Տեառն Աստուծոյ իմոմ երկիր պա-
զանեմ, զի նա է Աստուած կենդանի։
25 Բայց դու, արքայ, տուր ինձ իշխա-
նութիւն, եւ սպանից զվիշապդ առանց
սրոյ եւ գաւազանի։ Եւ ասէ թագաւորն՝
26 Տուեալ քեզ։ Եւ առ Դանիէլ եւդ, ձիւթ
եւ ճարպ եւ մազ, եւ եփեաց ի միասին
եւ արար դնդակս, եւ եհար ի բերան
վիշապին. եւ իբրեւ կերաւ՝ պայթեաց
վիշապն. եւ ասէ, Տեսէք զպաշտա-
27 մունդ ձեր։ Եւ եղեւ իբրեւ լուան
Բաբելացիքն՝ բարկացան յոյժ, եւ կուռ-
տեցան ի վերայ թագաւորին, եւ ասեն,
Հրեայ եղեւ թագաւորն, զԻէլ կործա-
նեաց, եւ զվիշապն սպան, զքուրման
28 կոտորեաց։ Եւ իբրեւ եկին, ասեն ցթա-
գաւորն, Տուր մեզ ի ձեռս զԴանիէլ.
ապա թէ ոչ՝ սպանանեմք զքեզ եւ զտունն
29 քո։ Եւ իբրեւ ետես թագաւորն եթէ
կարի տագնապեն զնա, հարկաւ ի ձեռս
30 նա նոցա զԴանիէլ։ Եւ նոքա արկին զնա
ի գուբն առիւծոց, եւ անդ էր զվեց
31 օր։ Եւ էին ի գբին եւթն առիւծք, եւ
տային նոցա հանապազ երկուս մարդս
եւ երկուս պատուճակս. քայց յայն-
ժամ ոչ ինչ արկին նոցա, զի վազվա-
32 զակի կերիցեն զԴանիէլ։ Եւ էր Ամբա-
կում մարգարէ ի Հրէաստանի. եւ եփ-
եաց թան, եւ բրդեաց հաց ի կոբ,
եւ երթայր յանդ՝ տանել մշակաց իւրոց։
33 Եւ ասէ հրեշտակ Տեառն ցԱմբակում,
Տար զճաշդ զոր առնես՝ ի Բաբելոն
34 Դանիէլի՝ ի գուբն առիւծոց։ Եւ ասէ
Ամբակում, Տէր, զԲաբելոն իմ չիք
տեսեալ, եւ զգուբն ոչ գիտեմ ուր իցէ։
35 Եւ բուռն եհար հրեշտակն զգագաթա-
նէ նորա, եւ կալաւ զվարսից զլխոյ
նորա, եւ եդ զնա ի Բաբելոն ի վերայ
գբոյն սաստկութեամբ հոգւոյ իւրոյ։
36 Եւ ազաղակեաց Ամբակում եւ ասէ,
Դանիէլ, Դանիէլ, արի առ զճաշդ զոր
37 առաքեաց քեզ Աստուած։ Եւ ասէ
Դանիէլ, Յիշեցեր զիս, Աստուած, եւ
38 ոչ ընդ վայր հարեր զսիրելիս քո։ Եւ
յարեաւ Դանիէլ եւ եկեր. եւ հրեշտակն
Աստուծոյ տարաւ զԱմբակում նոյնժամ-
39 այն անգրէն ի տեղի իւր։ Եւ թագա-
ւորն ակն յաւուրն եւթներորդի աչխա-
րել զԴանիէլ. եւ իբրեւ եկն ի բերան
գբոյն եւ հայեցաւ, եւ ետես զի նստէր
Դանիէլ, ազազակեաց ի ձայն մեծ եւ
40 ասէ, Մեծ ես, Տէր Աստուած Դանիէլի,
41 եւ չիք այլ ոք բաց ի քէն։ Եւ առ
զնա ի վեր. եւ զվնասակարս կորս-
տեան նորա արկն ի գուբն, եւ դէզ դէզ
պատառեցան նոյնժամայն առաջի նորա։

ԳԼՈՒԽՔ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՄԱՐԳԱՐԷԻՑՆ

	Գլ.	Համ.
ԳԼՈՒԽՔ ՈՎՍԷԻ ՄԱՐԳԱՐԷԻՑ		
Հրամայէր առնուլ կին պոռնիկ, եւ զորդիսն որ ծնանիցին՝ անուանել Ցեզրայէլ, եւ Ոչ ժողովրդ իմ է Զողորմեալ։	Ա.	1
Պատուհասէ զժողովուրդն վասն պոռնկութեան, եւ կանխաւ գուշակէ զկորուստն, եւ դիւրութիւնս ինչ յետ կորստեանն։ Իսկ ուխտեցիցն Նոցա ուխտ՝ Հանդերձ գազանօք անապատի, եւ խօսեցայց զքեզ ինձ հաւատովք՝ մարթի ի հաւատացեալսն Քրիստոսի առնուլ։	Բ.	1
Հրաման առնու առնել կին շուն, այնու զաւերն Հրէաստանի յայտնէ։	Գ.	1
Պատուհասէ զժողովուրդն եւ զքահանայսն վասն բազում եւ մեծամեծ մեղաց։ բամբասէ զնոսա յարբեցութիւնն եւ ի շնութիւնն եւ ի ցասումն։	Դ.	1
Պատուհասէ զի բարձին յԱստուծոյ գոյդս, եւ յԱսորեստանեայսն ապաստան եղեն, եւ յԵգիպտացիսն պանծային։ եւ կանխաւ գուշակէ նոցա զպատիժս։	Ե.	8
Ասէ թէ պատերազմաւ ճոխացաւ եփրեմ, եւ չարկանէ յօգուտ զաղօղութիւն։	Է.	13
Յուցանէ Աստուած զիւր քնամն առ Իսրայէլացիս, և զնոցա ապաքսուորութիւնն առ Նա։ եւ կանխաւ գուշակէ նոցա զվիշտս։	ԺԱ.	1
ԳԼՈՒԽՔ ՅՈՎԵԼԱՅ ՄԱՐԳԱՐԷԻՑ		
Զպէսպէս պտղոց նշանակէ, զերկրին ասէ, և խրատ տայ հաշտեցուցանել զԱստուած։	Ա.	2
Զելս Ասորեստանեայն գուշակէ, և յետ այնորիկ դիւրութիւն ինչ մարգարէանայ։	Բ.	1
Զդէպս լերզուացնոր Առաքելովքն լինելոց էր գուշակէ։ մարգարէանայ եւ զկորուստ ազգացն՝ որ եղեւ յետ ելիցն ի Բաբելոնէ առ Չորաբաբելիս։ Կայ եւ այլաբանութիւն ինչ ի տեղւոջս յայսմիկ։ այլաբանութիւնն ասի՝ յորժամ զայլ ինչ ասիցէ և զայլ ինչ նշանակէ։	Բ.	28
ԳԼՈՒԽՔ ԱՄՈՎՍԱՅ ՄԱՐԳԱՐԷԻՑ		
Զանօրէնութիւնս Դամասկոսի, զԳազայ, զՏիւրոսի, զԵդովմայեցւոց, զԱմմնացւոց, զՄովաբացւոց, զՅուդայ, զԻսրայէլի համարի. եւ յառաջագոյն ասէ զպատիժսն որ ի ըստ միոջէ պատահելոց էին նոցա։	Ա.	2
Զերաքսիսն որ եղեն յԱստուծոյ՝ թուէ, և զնոցա կարճմտութիւնն և զարհամարհութիւնն և զվարուածսն որ պատահեցին նոցա։	Գ.	2
Զկանայս Սամարեայ յարբեցութիւն և յափշտակութիւն բամբասէ, եւ յառաջագոյն գուշակէ զսովսն եւ զքանելոյն վասն չդառնալոյ նոցա, զի բազում հարուածովք հարան, եւ չէղեն պիտանիք։	Դ.	1
Պատուհասէ զԻսրայէլ զի ընդ յանդիմանիչս իւրեանց դժկամակ լինէին, և խրատէ դառնալ առ Աստուած։ Սպառնայ և անհաւատիցն թէ չարիք հասանելոց են նոցա, քանզի զնոցանէ ասէ՝ թէ վայ որ ցանկան աւուր Տեառն։ Իսկ ոմանք զայն ի հանդերձեալ դատաստանն առնին. որպէս այժմ իսկ ասեն բազումք յանհաւատից թէ Ձիք դատաստան։	Ե.	1
Հրաժեշտ ի տունից Նոցա, ի զոհից եւ ի պաղատանաց. ասաղ աստուածոյն Ռեմփայ՝ զԼռնոս կոչէ. քանզի հեթանոսք աստուածոյն իւրեանց Կռանեայ ասեն թէ ասաղ է յերկինս։ Մինթէ զնուազն կամ զ՞ոչս մատուցէք ինձ զքառասուն ամ։ քանզի ոչ թէ ոմանք մատուցանէք, այլ միայն իշխանն՝ յորժամ կանգնեցաւ խորանն. բայց աստ զամենայն ժողովրդենէն ասէ, եւ բամբասէ զնոսա յանչափ փափկութիւն, եւ յառաջագոյն գուշակէ զվիշտս։	Ե.	21
Մարաքեայն եւ դատաստանաւ և ազատմանտիւ՝ զկոտորուածն նոցա մարգարէանայ։ Եւ զգացոյց զոյն Ամմաեայ թադաւորին. բանադատէ զմարգարէն եւ հալածէ. իսկ նա եւ նմա մարգարէանայ չարիս եւ ժողովրդեանն։	Է.	1
Տեառնէ գործի հաւորսաց, եւ այնու զրմբռնելն նոցա նշանակէ։	Ը.	1
Զանօրէնութիւնս եւ զամպարշտութիւնս համարի, եւ զկանդերձելոց չարեացն որ հասանելոց են նոցա՝ գուշակէ։ Մտցէ արեգակն ի միջօրէի, զարչաւրանացն ժամանակէն Քրիստոսի նշանակէ, եւ զհաւատացելոցն ի նա։		
ԳԼՈՒԽՔ ԱԲԴԻՈՒ ՄԱՐԳԱՐԷԻՑ		
Զպատժոցն Եդովմայեցւոց զոր կրելոց էին՝ յառաջագոյն գուշակէ, վասն յառնելոյ նոցա ի վերայ Իսրայէլացւոցն ընդ այլ թշնամեացն եղելոյ։		

	Գլ.	Համ.

ԳԼՈՒԽՔ ՅՈՎՆԱՆՈՒ ՄԱՐԳԱՐԷԻ

Ծաղկանալ մարգարէութիւն, եւ փախուստ ի Թարսիս, եւ մրրկել ծովուն, եւ ի ձկանէն կլանել, և կթրաւանդն ի նաւէն ընկենուլ. եւ ապաշխարութիւն Նինուէացւոցն եւ փրկութիւն, եւ ածել դդմենւոյն եւ կորնչել։

ԳԼՈՒԽՔ ՄԻԽԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

Չհանդերձեալ աւերն Սամարեայ և զիրուսաղէմի յառաջագոյն գուշակ. եւ զպատճառան յաւելու. յարէ ի նոյն եւ զելեն նոցա ի Բաբելոնէ։ Ա. 2

Պատուհասք եւ ամբաստանութիւնք գիշխանաց ժողովրդեանն, և զքահանայից եւ զսուտ մարգարէից։ Գ. 1

Չհեղեցուոյ՝ որ հաւատալոց էր ի Տէր մեր, եւ վասն Նորոց Կտակարանաց. քանզի առաջին օրէնքն ի Սինայէ տուան, եւ սա ի Սիոնէ. եւ վասն խոր խաղաղութեանն։ Գ. 1

Չարիքն որ միւսանգամ հասանելոց էին Հրէից՝ յառաջագոյն գուշակէ։ Գ. 8

Վասն մարմնաւոր ծննդեանն Քրիստոսի, եւ հաւատացելոց ի նա. եւ եղիցին ասէ մեռցորդքն Յակոբայ, զորս Պաւղոս առաքեալ ասէ՝ թէ Մնացորդքն ապրեսցին։ Ե. 2

Դատաստան Տեառն ընդ ժողովրդեան իւրոյ, եւ համար երախտեաց Նորա, եւ հրաժեշտ ի զհինից։ Ողբայր մարգարէն զի նաւաղեացն արք արիք եւ արդարք. եւ մօտ ի կատարածն՝ յետ պատուհասելոյն եւ սպառնալոյն վիշտս մեծամեծս՝ եւ դիւրութիւնս գուշակէ Իսրայէլի։ Զ. 1

ԳԼՈՒԽՔ ՆԱՀՈՒՄԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

Վասն Ասուածոյ զօրութեանն ճառէ։ Ա. 2

Վասն Ասաքելոցն գուշակէ, յաւելու եւ զելս Բաբելացւոցն ի վերայ Նինուէացւոցն. ասէ եւ զզօրութիւն քաղաքին եւ զմեծութիւն մինչեւ գերեալ էր։ Ա. 15

ԳԼՈՒԽՔ ԱՄԲԱԿՈՒՄԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

Չանիրաւութիւն ժողովրդեանն ճառէ, վասն որոյ եւ զելս Քաղդէացւոցն գուշակէ։ Ա. 2

Վասն Հրէից անհաւատութեանն, եւ մերոյ հաւատոցն ի Քրիստոս կայ ասա. մարգարէանայ և զկարուսա Բաբելացւոցն. եւ Արդարն իմ ի հաւատոց կեցցէ ասա կայ։ Բայց մեծ մասն մարգարէիս վասն անիրաւութեան ժողովրդեանն եւ յափշտակութեան եւ խաբէութեան եւ նենգութեան։ Բ. 1

Կայ եւ յաղօթն Ամբակումայ մարգարէութիւն վասն Քրիստոսի։ Գ. 2

ԳԼՈՒԽՔ ՍՈՓՈՆԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

Սպառնալ մեծամեծ սպառնալիս Հրէից, և խրատել դառնալ առ Աստուած։ Ա. 2

Ըստ ճառին սպառնալ Աովսաքացւոց և Ամմնացւոց. յաւելու եւ զնինուէացւոցն կորուստն, եւ առակաւ՝ գկործանումն Աստանայի։ Բ. 4

Վասն դարձի այնոցիկ՝ որ ի Քրիստոս էին հաւատալոց, խօսի։ Գ. 14

ԳԼՈՒԽՔ ԱՆԳԷԻ ՄԱՐԳԱՐԷԻ

ԵՒս յետ ելիցն ի Բաբելոնէ մարգարէանայ, եւ պատուհասէ զԻսրայելացիսն. զի վիրաւանց տանց փոյթ յանձին ունէին շինելոյ, եւ զտաճարին շինուածոյ անփոյթ առնէին։ Սպառնայ նոցա վասն այնորիկ սրով։ Խրատէ մխել ի գործս տաճարին. եւ Գաղթեալ միւսանգամ շարժեցից զերկինս՝ զոր ի Հերբրայեցւոց լմ զինին ասէ Պաւղոս՝ ատա կայ։

ԳԼՈՒԽՔ ԶԱԽԱՐԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

Եւ սա յետ ելիցն ի Բաբելոնէ մարգարէանայ. եւ յիշեցուցանէ նոցա զվեղս Հարցն իւրեանց եւ զտանջանս զոր կրեցին, եւ խրատէ մի՛ ի նմին կալ։ Յաղուէել հրեշտակին զԱսաուած վասն Երուսաղէմի՝ մարգարէանայ դիւրութիւնս քաղաքին մարգարէս, եւ չարիս ազգաց որք ծառայեցուցին զնոսա։ Բայց եղջերքն՝ լծագուրծութիւնքն են որ յարեան ի վերայ Հրէից, Ասորեստանեայք, Բաբելացիք, Բանանացիք եւ Յոյնք. իսկ սրեղն ասա սակրագործն առնելոյն է. քանզի որ ինչ սրի՝ անօրանայ։ Ա. 2

Վասն հաւատալոյն ի Քրիստոս. տեսանէ եւ զՅեսու Յովսեդեկեայ եւ զաշտանակն ոսկի. երկուս որդիս պարարտութեան՝ զքահանայն եւ զթագաւորն կոչէ։ Բ. 1

Յայնժամ տեսանէ զգերանդին. քանզի այն ինչ եկեալ էին ի գերութենէ՝ վիճէին ընդ միմեանս վասն վիճակաց և բամնից։ Չի մի՛ զմիմեանս զրկիցեն՝ ցուցանէ նոցա զգերան. դն անիծից, գկշիռն կապարեայ. պատիժք անիրաւաց եւ անօրինաց են. եւ վասն չորից կառացն։ Ե. 1

Հրամայի առնուլ ոսկի և գործել պսակ քահանային. իսկ զի Ահաւասիկ

	Գլ.	Հմր.
այր եւ արեւելք անուն նորա՝ ի Բրիատոս առնուն ոմանք, եւ մարդի առնուլ։	Զ.	9
Մնացեալ Հրեայքն պահէին վասն գերութեանն. հարցանեն ատ և ասեն, Հաստատեցաւ արքունիքն, այսինքն՝ ամենայն պաշտօնն, և տաճարին առաջին վայելչութիւնն, թէ տակաւին ի տրտմութեա՞ն իցեմք. եւ պա՞րտ իցէ տակաւին տրտմել եւ սուգ առնուլ։ Ոչ այնու ինչ պարտ է, առ, հաշտեցուցանել զԱստուած, այլ իրաւունս առնելով, զարդարութիւն գործելով, եւ չպահելով ախտ ընդ ընկերին, եւ ողորմելով տնանկին. քանզի զայս ասէ պատուիրեցի զառաջինն, եւ ոչ լուան ինձ, եւ գրուեցի զնոսա։	Է.	1
Զառաջին լիութիւնն մարգարէանայ Սրուսաղէմի, և խրատէ զինչ պարտ է գործել, եւ որպէս հաճոյ լինել։	Ը.	3
Վասն այնոցիկ որ ի Բրիսատոս դառնալոց էին։	Ը.	20
Հակառակ Դամասկոսի, Սիդոնի, Գազայ, Ակկարոնի, Ասկաղոնի։	Թ.	1
Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի, ահա թագաւոր քո գայ, որ վասն Բրիսատոսի է ատացեալ, ատ կայ։	Թ.	9
Հովուացն Իսրայէլի սպառնայ, և ժողովրդեանն՝ դիւրութեան աւետիս տայ, եւ զայտնութեանն՝ որ առ Մակաբայեցւովքն եղեւ. ատ կայ		

	Գլ.	Հմր.
եւ զոյգն երեսուն արծաթոյն։	ԺԱ.	4
Զանտիքրայ ամպարշտի գործոն գուշակէ։	ԺԱ.	15
Վասն չարչարանացն Բրիսատոսի, եւ հանդերձեալ դատաստանին։	ԺՒ.	1
Հարից զհովիւն եւ ցրուեացին խաչինքն՝ ատ կայ, զոր յինքն եւ յԱռաքեալսն է առ Բրիսատոս։	ԺԳ.	7
Վասն ուսուցն յորում խաչեցաւ Բրիսատոս։	ԺԴ.	5

ԳԼՈՒԽՔ ՄԱՂԱՔԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

Ես սա յետ եկին ի Բաբելոնէ մարգարէանայ։ Սակս պատուհասակ մարգարէս վասն պատարագացն զոր մատուցանէին. որպէս թէ ոչ մատուցանէին քահանայքն. զոգոյս՝ քամնհանօք ընդ արհամարհանս մատուցանէին զպաշտօն պատարագացն. եւ եղծանէին պակասունէին զօրինացն ու ղղութիւն։

Պատուհասակ վասն կնահանութեան։	Ա.	2
Վասն Բրիսատոսի գալստեանն. իսկ թէ հրեշտակ կոչէ զնա, ընդ այն մի՛ ինչ պարմանար. զի եւ այլուր հրեշտակ մեծի խորհրդոյ ասէ զնա։ Բայց ոմանք ոչ զԲրիսատոսէ, այլ զնզրէ ասեն ասացեալ։	Բ.	13
Զայս զԲրիսատոսէ ասէ, թէ մինչեւ եկեալ օր Տեառն, զհանդերձեալ դատաստանէն ասէ։	Գ.	1
	Դ.	5

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ
ՈՎՍԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Բան Տեառն որ եղեւ առ Ովսէէ որդի
2 Բերեայ, յաւուրս Ոզիայ եւ Յովաթամու եւ Աքազու եւ Եզեկեայ թագաւորաց Յուդայ, եւ յաւուրս Յերոբովամայ որդւոյ Յովասայ թագաւորին Իսրայելի։
2 Սկիզբն բանից Տեառն առ Ովսէէ։ Եւ ասէ Տէր ցՈվսէէ, Դնա առ դու քեզ կին պոռնկութեան, եւ որդիս պոռնկութեան. զի պոռնկելով՝ պոռնկեսցի երկիր ի Տեառնէ։
3 Եւ չորաւ եւ առ զԳոմեր՝ զդուստր Դաբղայիմայ. եւ յղացաւ եւ ծնաւ նմա
4 որդի։ Եւ ասէ ցնա Տէր, Կոչեա զանուն նորա Յեզրայէլ. քանզի սակաւիկ մնաց եւս խնդրելոյ զարիւնն Յեզրայելի ի տանէն Յեհուայ, եւ դադարեցուցից զԻշտաւորութիւն տանն Իսրայելի։
5 Եւ եղիցի յաւուր յայնմիկ խորտակեցից զաղեղն Իսրայելի ի ծորձորն Յեզրայելի։
6 Յղացաւ միւսանգամ եւ ծնաւ դուստր. եւ ասէ ցնա, Կոչեա զանուն նորա Ջողորմեալ. զի ոչ եւս յաւելից ողորմել տանն Իսրայելի, ³այլ ընդդէմ կայից
7 նոցա հակառակութեամբ։ Բայց որդւոցն՝ Յուդայ ողորմեցայց, եւ փրկեցից զնոսա Տերամբ Աստուծով իւրեանց. եւ ոչ փրկեցից զնոսա աղեղամբ եւ ոչ սրով եւ ոչ պատերազմաւ, ⁴ոչ կառօք՝
8 եւ ոչ երիվարօք եւ ոչ հնձկօք։ Եւ մնկնեալ ի տանէ զՋողորմեալն. յղաց-
9 եալ յղացաւ եւ ծնաւ որդի։ Եւ ասէ, Կոչեա զանուն նորա Ոչ Ժողովուրդ իմ. զի դուք չէք Ժողովուրդ իմ, եւ
10 Ես ոչ ⁵ինչ եմ ձեր։ Եւ էր՝ թիւ որդւոցն Իսրայելի իբրեւ զաւազ ծովու անչափ եւ անթիւ. եւ եղիցի ի տեղւոջ յորում ասացաւ Ոչ Ժողովուրդ իմ դուք, անդ կոչեսցին նոքա Որդիք Աստուծոյ կենդանւոյ։
11 Եւ Ժողովեսցին որդիքն Յուդայ եւ որդիքն Իսրայելի ի միասին, եւ դիցեն իւրեանց ⁶իշխանութիւն մի. եւ ելցեն յերկրէ անտի, զի մեծ է օրն Յեզրայելի։

ԳԼ. Բ

1 Ասացէք ⁶ցեղբայր ձեր Ժողովուրդ իմ,
2 եւ ⁷ցքոյրն ձեր՝ Ողորմեալ. Դատեցարուք ընդ մօր ձերում, դատեցարուք, զի նա ոչ է իմ կին, եւ ես ոչ եմ այր նորա. եւ ⁸բարձից զպոռնկութիւնն նորա յերեսաց իմոց, եւ զշնութիւնն նո-
3 րա՝ ի միջոյ սաւանից իւրոց։ ⁹Զի առարից զնա մերկ, եւ կացուսցից զնա ըստ աւուրց ծննդեան իւրոյ. եւ եղից զնա իբրեւ զանապատ, եւ կարկեցից զնա իբրեւ զերկիր անջուր, եւ սպա-
4 նից զնա ի ծարաւոյ։ Եւ որդւոց նորա ոչ ողորմեցայց, զի որդիք պոռնկու-
5 թեան են։ Զի պոռնկեալ պոռնկեցաւ մայր նոցա, եւ յաւթիւ ¹⁰արար որ ծնաւն զնոսա. զի ասաց, Երթայց զհետ համանեաց իմոց, որք տայցեն ինձ զհաց իմ եւ զջուր եւ ¹¹զհանդերձ եւ զկտաւ իմ եւ զկինի իմ եւ զձէթ իմ եւ զամ-
6 նայն ինչ որ պիտոյ է ինձ՝։ Վասն այնորիկ ես փակեցից զճանապարհն նորա ¹²պատնիշօք, եւ առականեցից զճանապարհս նորա, եւ՝ զչարիսն իւր մի՛
7 գտցէ։ Եւ ընթացցի զհետ համանեաց իւրոց, եւ մի՛ հասցէ նոցա. խնդրեսցէ

---

¹Յերբ. պակաս ²Երբ.Բեհերեայ ³Երբ. պոռնկեցաւ ⁴Երբ. թէ ներելով ներեցից նոցա (կամ, բառնալով բարձից զնոսա)։(7)Ոչ յցտանն ⁵Երբ. եղէք ձեզ Ամոռաե։ (10) Սակայն եղիցի

⁵Երբ. գլուխ ⁶Երբ. ցեղարս ⁷Երբ. ցքոյրս ⁸Երբ. բարձցէ զպոռնկութիւն իւր յերեսաց իւրոց, եւ զշնութիւն իւր ⁹Երբ. Զի մի՛ ¹⁰Երբ. եղեւ ¹¹Երբ. զաւր իմ եւ զկտաւ իմ, զձէթ իմ եւ զրմպելիս իմ ¹²Երբ. փշովք, եւ պատեցից զնա որմովք, զի

զնոսա, եւ մի՛ գայէ զնոսա. եւ ա-
սացէ, Երթայց եւ զարձայց առ այրն
իմ առաջին, զի յայնժամ բարի էր ինձ
8 քան արդ։ Եւ նա ոչ գիտաց թէ ես
ետուն նմա զցորեանն եւ զգինին եւ
զձէթն, եւ բազմացուցի նմա [1]արծաթ.
եւ նա արար արծաթիզէնս, եւ ոսկե-
9 զէնս յաճախեաց Բահազու՝։ Վասն այ-
նորիկ [2]զարձուցից եւ առից զցորեանն
իմ ի ժամանակի իւրում, եւ զգինին
իմ [3]եւ զձէթն ի ժամանակի իւրեանց,
եւ զերծից ի նմանէ զնանգերձ՝ իմ
եւ զկտաւ իմ, զի մի՛ ծածկեսցէ զծա-
10 նկանս իւր։ Եւ արդ յայտնեցից զպըզ-
ծուխթիւն նորա առաջի հոմանեաց իւ-
րոց. եւ ոչ ոք հանիցէ զնա ի ձեռաց
11 իմոց։ Եւ զարձուցից զամենայն բարե-
կենդանութիւնս նորա եւ զտօնս նորա
եւ զամսագլուխս նորա եւ զշաբաթս
նորա, եւ զամենայն [4]վաճառս նորա։
12 Եւ ապականեցից զայգիս նորա եւ
զթզենիս նորա, զոր միանգամ ասաց՝
Թէ կապէնք իմ են այս զոր ետուն ինձ
հոմանիքն իմ. եւ եղից զայն [5]ի վկա-
յութիւն. եւ կերիցին զայն գազանք ա-
նապատի [6]եւ թռչունք երկնից եւ սո-
13 զունք երկրի՝։ Եւ ինդրեցից ի նմանէ
վրէժ զաւուրսն Բահազիմայ յորս զո-
հէր նոցա. գնէր զինդս, եւ արկանէր
զքառամանեակս իւր, եւ երթայր զհետ
հոմանեաց իւրոց, եւ զիս մոռացեալ
էր, ասէ Տէր։
14 Վասն այնորիկ ահաւասիկ ես ստե-
ւերիցից զնա, եւ [7]կարկեցից զնա իբրեւ
զանապատ՝։ եւ խօսեցայց ի սիրտ նո-
15 րա։ Եւ տաց նմա [8]զստացուածս իւր
անտի, եւ զձորձորն Աքովրայ՝ [9]յանդ
զմիտս նորա. եւ խոնարհեսցի անդ՝
ըստ աւուրց տղայութեան իւրոց, եւ
ըստ աւուրց ելանելոյ նորա յերկրէն
16 եգիպտացւոց։ Եւ եղիցի յաւուր յայն-
միկ, ասէ Տէր, կոչեսցէ զիս Այր իմ,
17 եւ ոչ կոչեսցէ զիս [10]Բահազիմ։ Եւ բար-
ձից զանուանս Բահազիմայ ի բերանոյ
նորա, եւ մի՛ եւս յիշեսցին անուանք
18 նոցա։ Եւ եղից [11]նոցա ուխտ յաւուր
յայնմիկ հանգերձ գազանօք անապատի
եւ թռչնովք երկնից եւ սողնօք երկրի.
եւ զաղեղն եւ զսուսեր եւ զճակատա-
մարտ խորտակեցից յերկրէ, եւ բնակե-
19 ցուցից [12]զքեզ յաւար՝։ Եւ խօսեցայց
զքեզ ինձ յաւիտեան, եւ խօսեցայց
զքեզ ինձ արդարութեամբ եւ իրաւամբք
20 եւ ողորմութեամբ եւ զթութեամբք. Եւ
խօսեցայց զքեզ ինձ [13]հաւատովք, եւ
21 ծանիցես զՏէր։ Եւ եղիցի յաւուր յայն-
միկ, ասէ Տէր, [14]լուայց ես երկնից, եւ
22 երկինք լուիցեն երկրի, եւ երկիր լուի-
ցէ՝ ցորենոյ եւ գինւոյ եւ ձիթոյ, եւ
23 նոքա [15]լուիցեն Յեզրայելի. Եւ սերմա-
նեցից զնա ինձ ի վերայ երկրի. եւ
ողորմեցայց չողորմելոյն, եւ ասացից
24 ցոչ ժողովուրդ իմ, ժողովուրդ իմ ես
դու. եւ նա ասասցէ, Տէր Աստուած
իմ ես դու։

Գլ. Գ

1 Եւ ասէ ցիս Տէր. Դարձեալ երթ դու
եւ սիրեա կին մի որ [16]սիրիցէ զչարու-
թիւն՝ եւ իցէ չանդ, որպէս սիրեաց
Աստուած զորդին Իսրայելի, եւ նոքա
հայէին յաստուածս օտարս, եւ սիրէին
2 կտաւս չամչեղէնս։ Եւ վարձեցայ ես
ինձ [17]հնգետասան արծաթով եւ քառի միով
3 գաբեայ եւ մարու միով գինւոյ՝. Եւ
ասեմ ցնա, Աւուրս բազումս նստցես
դու ինձ եւ ոչ եւս պոռնկեսցիս, եւ
ոչ եւս եղիցես առն [18]այլումի։
4 Զի աւուրս բազումս նստցին որդիքն
Իսրայելի առանց թագաւորի եւ առանց
իշխանի եւ առանց պատարագաց եւ ա-
ռանց [19]սեղանոյ եւ առանց քահանայու-
5 թիան եւ առանց յայտնութեանց՝։ Եւ
յետ այնորիկ դարձցին որդիքն Իսրա-
յելի, եւ խնդրեսցին զՏէր Աստուած
իւրեանց, եւ զԴաւիթ արքայ իւրեանց.
եւ զօրասցին ի Տէր եւ ի բարութիւնս
նորա յաւուրս կատարածի։

Գլ. Դ

1 Լուարուք զբան Տեառն, որպիք Իսրա-

---

[1] ՆԵԲ. արծաթի եւ ոսկի, ըստ արաբին Բահազ [2] ՆԵԲ. դարձայց [3] ՆԵԲ. ի ժամանակին սահմանելոյ, եւ զերծից զասր [4] ՆԵԲ. տարեկանս [5] ՆԵԲ. յանտառս [6] ՆԵԲ. պ-ւ-ռ-ւ [7] ՆԵԲ. տարայց զնա յանապատ [8] ՆԵԲ. զայգի [9] ՆԵԲ. ի դաւառ յաւսոյ. եւ երգեսցէ երգս [10] Ա. յ-ն-ն՝ տէր իմ [11] ՆԵԲ. վասն նոցա [12] ՆԵԲ. զնասս յապահովս [13] ՆԵԲ. ճշմարտութեամբ [14] ՆԵԲ. տաց պատասխանի. տաց պատասխանի երկնից. եւ նոքա տացեն պատասխանի երկրի, (22) Եւ երկիր տացէ պատասխանի [15] ՆԵԲ. տացեն պատասխանի [16] ՆԵԲ. սիրեցի յԸնկերէն [17] ՆԵԲ. զնա հնգետասան արծաթով և քառի միով և կիսոյ գաբեայ [18] ՆԵԲ. այլում, եւ ես նոյնպէս առ քեզ [19] ՆԵԲ. կառց եւ եփոդ եւ առանց թերափիմի

յելի, զի գաւառական Տեառն է ընդ
ինակիչս երկրի, գի ոչ գոյ ճչմարտու-
թիւն, եւ ոչ ողորմութիւն, եւ ոչ գի-
2 տութիւն Աստուծոյ ի վերայ երկրի. Ա-
նէծք եւ ստութիւն եւ սպանութիւն
եւ գողութիւն եւ չնութիւն [1]հեղեալ ի
վերայ երկրի՝, եւ արիւն ընդ արիւնս
3 խառնին։ Վասն այնորիկ սուգ առցէ
երկիր, եւ նուազեսցի ամենայն [2]բնակ-
չօք իւրովք, եւ գազանօք անասնոյ,
եւ սողնովք երկրի՝, եւ թռչնովք երկ-
նից. եւ ձկունք ծովու պակասեսցին։
4 [3]Զի ոչ ոք իցէ որ դատիցի, եւ ոչ այն որ
յանդիմանիցէ։ [4]Քանզ ժողովուրդ իմ իբրեւ
5 զքահանայն հակառակօղ։ Եւ տկարասցին
ի տուէ, եւ տկարասցի եւ մարգարէն ընդ
քեզ. գիշերոյ նմանեցուցի զմայրն քո։
6 Նմանեցաւ ժողովուրդ իմ այնմիկ՝
յորում ոչ գոյր գիտութիւն՝՝. զի դու
զգիտութիւն մերժեցեր, մերժեցից եւ ես
զքեզ, զի մի՛ եւս քահանայացիս ինձ.
եւ մոռացար գօրէնս Աստուծոյ քո,
7 մոռացայց եւ ես զորդիսն քո։ Ըստ
բազմութեան իւրեանց՝ նոյնպէս եւ մե-
ղան ինձ. զփառս նոցա յանարգութիւն
8 հասուցից։ [5]Զմեղս ժողովրդեան իմոյ
կերիցեն, եւ անիրաւութեամբք իւր-
9 եանց առցեն՝՝ զանձինս իւրեանց։ Եւ
եղիցի որպէս ժողովուրդն՝ նոյնպէս եւ
քահանայն. եւ խնդրեցից վրէժ ի նմա-
նէ, ըստ ճանապարհաց նորա եւ ըստ
10 խորհրդոց նորա հատուցից նմա։ Կերիցեն,
եւ մի՛ յագեսցին. [6]պոռնկեցան, եւ
մի՛ յաջողեսցին. զի զՏէր թողին,
անխորհուրդ լինել ի պոռնկութիւնն։
11 Եւ գգինի եւ զարբեցութիւնն ընկալաւ
12 սիրտ ժողովրդեան իմոյ։ Ի քուհայս հար-
ցանէին, եւ զաւազանօք նորա պատ-
մէին նմա.՝՝ այսուհետեւ պոռնկութեան մո-
լորեցան, եւ պոռնկեցան յԱստուծոյ
13 իւրեանց։ Ի գլուխս լերանց զոհէին եւ
ի վերայ բլրոց [7]զննային, ի նեղքոյ
կաղնեաց եւ կաղամախոյ եւ վարսա-
ւորի ծառոց, զի հաճոյ թուէր հովանին.
վասն այնորիկ պոռնկացին դստերք
14 ձեր, եւ չնացին հարսունք ձեր։ Եւ
ոչ արարից այց դստերաց ձերոց յոր-
ժամ պոռնկացին, եւ հարսանց ձերոց՝
յորժամ չնացին. զի նոքա ընդ պոռ-
նիկս թախտաւէին եւ ընդ նուիրեալն
զոհէին, եւ ժողովուրդն [8]քո որ ոչ ի-
մանայր գայն՝ խառնակեր ընդ պոռնիկս։
15 Բայց դու, Իսրայէլ, մի՛ այդպէս լինիր,
եւ Յուդա,՝՝ մի՛ մտանէք ի Գաղգաղա,
եւ մի՛ ելանէք ի տուն Աւէնայ, եւ մի՛
երդնուցուք ի Տէր կենդանի։ Զի իբրեւ
*երինջ լծընկէց եղեւ Իսրայէլ. արդ
արածեսցէ զնոսա Տէր իբրեւ զգառն
17 յանդորրու։ Հաղորդ կոյց Եփրեմ, [9]եղ
անձին իւրում գայթակղութիւն. ցան-
կացան կոյսն Քանանացւոց, ամենեքե-
ան սիրեցին զգինի, թողէք նմա։
18 Պոռնկեցան պոռնկութեամբ, սիրեցին
զանարգութիւն ի հպարտութենէ նորա։
19 Մրրիկ հողմոյ չնչեսցէ ի թեւս նորա,
եւ ամաչեսցեն ի սեղանոց՝՝ իւրեանց։

Գլ. Ե

1 Լուարուք զայս, քահանայք, եւ ան-
սացէք, տունդ Իսրայելի. եւ տուն
թագաւորիդ, ունկնդիր լերուք. քանզի
ընդ ձեզ է դատաստան. զի որոգայթ
եղերուք [10]դիտանոցին, եւ իբրեւ զվարմ
2 ձգեալ [11]ի գլուխ դահաւանդի, Զոր որ-
սորդք յորս հատատեցին. Եւ եմ խրա-
3 տիչ ձեր՝՝։ Ես ծանեայ զԵփրեմ, եւ
Իսրայէլ ոչ է ի բացեայ կրնէն. քանզի
այժմ պոռնկեցաւ Եփրեմ, եւ պղծեցաւ
4 Իսրայէլ։ Ոչ տացեն զխորհուրդս իւր-
եանց դառնալ առ Աստուած իւրեանց.
զի ոգի պոռնկութեան է ի նոսա, եւ
5 զՏէր ոչ ծանեան։ Եւ խոնարհեսցի
հպարտութիւն Իսրայելի յերեսս նորա.

---

[1] Եբր. բազմացան [2] Եբր. որ բնակէն ի նմա, գազանօք անապատի [3] Եբր Ա,Հ [4] Եբր. զի ժողովուրդ քո իբրեւ զհակառակողս է ընդ քահանային։ (5) Արդ դու գլորեսցիս ի տուէ. եւ գլորեսցի մարգարէն ընդ քեզ ի գիշերի, եւ ես ընդհեղից զմայրն քո։

(6) Ընդհեղեալ ժողովուրդ իմ առ ի չգոյէ գիտութեան [5] Եբր. Զվասն մեղացն ժողովրդեան իմոյ ուտեն, եւ ի վերայ անօրէնութեան նոցա դնեն [6] Եբր. պոռնկեցին, և մի՛ բազմացին, զի զՏէր թողին զի մի՛ զգուշացին։

(11) Պոռնկութիւն եւ գինի եւ քացոյց առ նուն զսիրտ։ (12) Ժողովուրդ իմ հարցանէ զփայտ իւր, և գաւազան նորա պատմէ նմա. զի

[7] Եբր. խաւնկս արկանէին [8] Եբր. որ ոչ իմանայ՝ կործանեսցի։ (15) Եթէ դու շնասցես, Իսրայէլ, մի՛ լիցի յանցաւոր Յուդա. *Եբր. երինջ կամակոր [9] Եբր. Թող զնա։ (18) Եղեան խնջոյք նոցա, պոռնկեցան պոռնկութեամբ. սիրեցին, տէր ընդէր այսր. ամօթ իշխանաց նորա։ (19) Կապեսցէ ոգի զնա ի թեւս իւր, եւ ամաչեսցեն ի զոհից [10] Եբր. ի Մասփա [11] Եբր. ի Թափոր։ (2) Եւ մոլորեալք յաճախեցին զգենումն, Թէպէտեւ ես էի խրատու ամենեցուն նոցա

եւ Իսրայէլ եւ Եփրեմ [1]ակարասցին յանօրէնութիւնս իւրեանց, [2]ակարասցի
6 եւ Յուդա ընդ նոսա։ [3]Յարձիք եւ պատարագօք՝ երթիցին խնդրել զՏէր,
եւ մի՛ գտցին զնա, զի խոյս եա ի նո-
7 ցանէ. Զի զՏէր թողին, քանզի որդիք օտարք ծնան նոցա. արդ այժմ կերիցէ զնոսա [4]նեւիլ եւ զվիճակս՝ նոցա։
8 Փող հարէք [5]ի վերայ լերանց, գոչեցէք ի վերայ բարձանց. քարող կարգացէք
ի տուն Ովսէի, թէ Յիմարեցաւ Բենիա-
9 մին, եւ Եփրեմ՝ եղեւ յայտնութիւն յաւուրս յանդիմանութեան. ի մէջ ազգաց Իսրայէլի ցուցի [6]զհաւատարմութիւնս։
10 Եղեն իշխանք Յուդայ՝ որպէս որ փոխեսեն զսահմանս. ի վերայ նոցա հեղից իրրեւ զջուր [7]զասպատակ
11 իմ։ Չրկեաց Եփրեմ զոսոխ իւր, եւ կոխեաց զիրաւունս. զի սկսաւ երթալ
12 զհետ մնոտեաց։ Եւ ես իբրեւ զիտով եղէց Եփրեմի, եւ իբրեւ զխոցմունս՝
13 տանն Յուդայ։ Եաես Եփրեմ զախտ իւր, եւ Յուդա զդաւս իւր, եւ գնաց Եփրեմ առ Ասորեստանեայս, եւ առաքեաց հրեշտակս առ արքայն Յարիմայ.
եւ նա ոչ կարաց փրկել զձեզ, եւ ոչ
14 հանգուցանել զձեզ ի ցաւոց։ Զի ես եմ իբրեւ [8]գյովազ ի վերայ Եփրեմի, եւ
իբրեւ [9]զառիւծ ի վերայ տանն Յուդայ. եւ յարձակեցայց եւ յափշտակեցից գնոսա. առից՝ եւ ոչ ոք իցէ որ փրկիցէ։
15 Գնացից եւ դարձայց ի տեղի իմ, մինչեւ [10]ապականեսցին, եւ խնդրեսցեն զերեսս իմ. ի նեղութիւնսն իւրեանց կանխեսցեն առ իս։

Գլ. Զ

1 [11]Եւ ասասցեն, Դարձցուք եւ երթիցուք առ Տէր Աստուած մեր՝, զի նա
եհար զմեզ, եւ նոյն բժշկեսցէ. վիրաս-
2 ւորեաց, եւ պատեսցէ զմեզ. Եւ ողջացուսցէ զմեզ յետ երկուց աւուրց,
եւ յաւուրն երրորդի [12]յարիցուք եւ
3 կեցցուք առաջի նորա. Եւ ծանիցուք եւ գնասցուք ճանաչել զՏէր իրրեւ զառաւօտս պատրաստական [13]պատրաստ գնա՝՝, եւ եկեսցէ մեզ իրրեւ [14]զանձրեւ
կանուխ եւ զանապան յերկրի՝՝։
4 Զինչ արարից ընդ քեզ, Եփրեմ, [15]եւ կամ զինչ անցուցից՝՝ ընդ քեզ, Յուդա. զի ողորմութիւն ձեր իրրեւ զամպ
վաղորդեան, եւ իրրեւ զցօղ առաւօ-
5 տու որ սնացանէ։ Վասն այնորիկ [16]հնձեցի զմարգարէս ձեր՝՝, եւ կոտորեցի զնոսա բանիւ բերանոյ իմոյ. եւ իրաւունք քո իբրեւ զլոյս ծագեսցին։ Զի
6 ողորմութիւն կամիմ, եւ ոչ զպատարագ, եւ զգիտութիւն Աստուծոյ՝ քան
7 զողջակէզս։ Եւ նոքա եղեն իբրեւ [17]զմարդ օր՝՝ որ անցանէ զսխտիւ.
8 անդ [18]սրհամարհեցաք զիս Գաղաադ, Քաղաք որ առնէ մնոտիս, եւ խռովէ զջուրս։
9 Եւ զօրութիւնն քո իբրեւ զառն աւազակի. խաբուցին քահանայք զճանապարհ. սպանին զԱիկիմ՝՝, զի գանօրէնս
10 նմին գործեցին։ Ի տանն Իսրայէլի տեսի զարհաւիրս. անդ պոռնկեցաւ Եփրեմ, եւ պղծեցաւ Իսրայէլ. [19]Եւ
Յուդա սկիզբն արար կիսոց՝՝, ի դառնացանել ինձ զգերութիւնն ժողովրդեան իմոյ։

Գլ. Է

1 Ի բժշկել ինձ զԻսրայէլ եւ [20]յայտնեցին չարիքն Եփրեմայ եւ չարիքն Շամրնի,
զի արարին ստութիւն. գող մտանէ առ
նա, եւ աւազակ մերկացուսցէ ի ճա-
2 նապարհս նորա։ [21]Չի մրմնջեսցեն ի միասին, որպէս մրմնջեն ի սիրտս իրեանց՝՝ զամենայն չարիս նոցա յիշեցի. արդ պաշարեցին զնոսա խորհուրդք նոցա, յանդիման երեսաց իմոց եղեն։
3 Չարեօք իւրեանց ուրախ արարին զթա-

---

[1] ՆԷԲ. գլուխսին [2] ՆԷԲ. գլուխսի [3] ՆԷԲ. Խաչամբք եւ արջառովք իւրեանց [4] ՆԷԲ. ամխ՝ Հանդերձ վիճակօք [5] ՆԷԲ. ի Գաբաա, չեփոր՝ ի Ռամա. գոչեցէք ի Բեթաւան, ակնի քո, Բենիամին։ (9) Եփրեմ [6] ՆԷԲ. զՀաստատութիւն [7] ՆԷԲ. զցասումն իմ։ (11) Չրկեցաւ Եփրեմ, բեկաւ դատաստանաւ, կամեցաւ, չուբաւ զհետ հրամանի։ (12) Եւ ես եղէց իրրեւ ցեց Եփրեմայ, եւ իրրեւ
զերդ [8] ՆԷԲ. զառիւծ [9] ՆԷԲ. զկորիւն առիւծու ի վերայ տանն Յուդայ. եա, ես պատառեցից եւ երթայց, տարայց [10] ՆԷԲ. ապաշաւեսցեն [11] ՆԷԲ. Նկայք և դարձցուք առ Տէր

[12] ՆԷԲ. յարուսցէ զմեզ [13] ՆԷԲ. է ելք նորա
[14] ՆԷԲ. զանձրեւ, իբրեւ զանագան որ առաջ զերկիր [15] ՆԷԲ. զի՞նչ արարից [16] ՆԷԲ. կոփեցի մարգարէիւք [17] Ուր, զԱդամ [18] ՆԷԲ. անօրինեցան ինձ։ (8) Գաղաադ՝ քաղաք որոց գործեն զանօրէնութիւն, շաղախեալ արեամբ։ (9) Եւ որպէս դարանի առն գունդ աւազակաց, ընդ քուրմ քահանայից սպանանեն առ ճանապարհս Սիքեմայ [19] ՆԷԲ. Ինձ եւս, Յուդա, առնմանեալ է հունձ [20] ՆԷԲ. յայտնեցան
[21] ՆԷԲ. Եւ ոչ խորհին ի սիրտս իւրեանց թէ ես

գաւարն, եւ առաքեսցէ զնոսա ի զիչխանս։ Ամենեքին չնայեսցէք, իբրեւ զհրոմիր վաւելով [1]յիմել, բորբոքեալ ի բոցոյ եւ ի զանգուածոյ ճարպոյ մինոյ։ [5] չեւ խոյանայցի նոյն։ Աւուրք թագաւորաց ձերոց, որոնս իշխանք գայրանալ ի գինւոյ, եւ ձեղկին գինոս իւրեանց ընդ ժանտագոյնս։ Զի բորբոքեցան իբրեւ զհնոց սիրտք նոցա յանկածանել զնոսա. զգիչերն ամենայն քնով յագեցաւ Եփրեմ. եղեւ առաւօտ, եւ [7] բորբոքեցան՝ իբրեւ զրոց հրոյ։ Ամենեքին ջհնան իբրեւ [2]զհնոց վառեալ, եւ հուր եկեր՝ զդատաւորս նոցա. ամենայն թագաւորք նոցա անկան, եւ ոչ ոք էր ի նոցանէ որ կարդայր առ իս։ [8] Եփրեմ ընդ ժողովուրդս խառնակէր, եւ եղեւ Եփրեմ նման չդարձուցեալ։ [9] կերան օտարք զզօրութիւն նորա, եւ նա ոչ դիտաց. ծաղկեցին ալիք նորա, [10] եւ նա ոչ զգաց։ Եւ [3]խոնարհեսցի հրպարտութիւնն Իսրայէլի յերեսս նորա. եւ ոչ դարձան առ Տէր Աստուած իւրեանց, եւ ոչ խնդրեցին զնա յամենայնի [11] յայսմիկ։ Եւ էր Եփրեմ իբրեւ գաղաւնի անմիտ՝ որոյ ոչ լցէ սիրտ. յեգիպտոս իրախուսէին, եւ առ Ասորեստանեայս գնացին։ [12] Ուր եւ՝ երթայցեն՝ արկից ի վերայ նոցա զվարս իմ, եւ իբրեւ զթռչունս երկնից իջուցից զնոսա. եւ խրատեցից զնոսա [5]համբաւ ընդունելոյ նեղութեան՝ նոցա։

[13] Վայ նոցա, զի վազեցին զինեւ. եւ եղուկ են, զի ամպարշտեցան յիս. ես փրկեցի զնոսա եւ նոքա բամբասեցին [14] զիս սուտ. Եւ ոչ ազաղակեցին առ իս սիրտք նոցա, այլ ողբային յանկողինս իւրեանց. եւ ի վերայ ցորենոյ եւ գինւոյ [15] [6]ցասին. խրատեցան զինեւ։ Եւ ես՝ զօրացուցի զբազուկս նոցա, եւ ի վերայ [16] իմ խորհեցան [7]չարութիւն։ Խարձան յոյնիչ. եւ եղեն իբրեւ զպղերն չարեալ՝. անկցին ի սուր իշխանք նոցա, վասն անիրաւութեան խաւսութեան լեզուի իւրեանց. զի այս [8]անզգամութիւն նոցա յերկրին Եգիպտացւոց։

ԳԼ. Ը

[1] [9]Ի ծոց նոցա իբրեւ զերկիր, եւ՝ իբրեւ զարծուի ի վերայ տանն Տեառն, փոխանակ զի անցին զուխտիւ իմով, եւ [2] յօրէնս իմ ամպարշտեցան։ Առ իս աղաղակեսցեն, Աստուած, ծանեաք [10]զքեզ։ [3] Զի Իսրայէլ զարձաւ ի բարեաց. հալածեսցին զթշնամի։ Անձամբս թագաւորեցին, եւ ոչ ինեւ. ախրեսցին, եւ ոչ ցուցին ինձ. զարծաթ իւրեանց եւ զոսկի առարին իւրեանց կուռս, զի սատակեսցին։ [5] Մերժաւակաս զորքին՝՝ քո, Շամրին. բարկացաւ սրտմտութիւն իմ ի վերայ նոցա. մինչեւ երբ՞ ոչ կարասցեն [11]սրբել յիւրաքիւ [6] յիւր։ Եւ՝՝ զայն հիւսն զործեաց, եւ ոչ Աստուած. քանզի [12]մոլորեցուցիչ է՝՝ որքն քո, Շամրին։ Զի [13]խորչակահար սերմանեցին, եւ կործանումն նոցա ընկալցի զայն՝՝. որպէս նոցա ոչ արասցէ զօրութիւն խրատ. թէ եւ առնիցէ՝ զայն [8] օտարք կերիցեն։ Ընկղմեցաւ Իսրայէլ. արդ այժմ եղեւ ի մէջ ազգաց իբրեւ [9] զանօթ անպիտան։ Զի դնացին առ [14]Ասորեստանեայս. զուարթացաւ առանձին կամ Եփրեմ, սիրեաց վկայասս։ Վասն այնորիկ մատնեսցին ի մէջ ազգաց. բայց այժմ ընկալայց զնոսա, եւ դադարեսցեն փոքր մի յօծանելոյ թագաւորս եւ իշխանս։ [11] Զի յաճախեաց Եփ-

---

[1] ՆԲԲ. ի հացարարէ. դադարեսցի ի բորբոքելոյ ի թրիլ զպանգուանձն մինչեւ ի խմորել նորա։ (5) Ցաւուր թագաւորին մերոյ խօթացան (ՀՄ, եւտուն խօթանալ) իշխանք տապով ի գինւոյ, ձգեաց գձեռն իւր ընդ կատակիչս։ (6) Զի կազմեցին զսիրտ իւրեանց իբրեւ զթնուր ի դադանել իւրեանց. գգիչերն ամենայն ի քուն էր որ եփէրն նոցա. ընդ առաւօտն բորբոքեցաւ [2] ՆԲԲ. գինոներս, և կերան [3] ՆԲԲ. խոնարհեցաւ, ՀՄ. վկայեաց [4] ՀՄ. Յորժամ [5] ՆԲԲ. որպէս համբաւեցաւ ի ժողովս [6] ՆԲԲ. խմբեցան. յետս կացին յինէն։ (15) Թէպէտեւ ես խրատեցի զնոսա,

[7] ՆԲԲ. չարութիւն (ՀՄ, համարեցան ինձ ի չարութիւն)։ (16) Դառնան, ոչ առ Բարձրեան. եղեն իբրեւ զաղեղն նենգութեան [8] ՆԲԲ. եղիցի նախատինք [9] ՆԲԲ. Դէզ գփողն ի բերան քո. ՊՇՆՓՒ [10] ՆԲԲ. գքեզ. առ Իսրայէլ։ (3) Իսրայէլ մերժեաց զբարին. թշնամի հալածեսցէ գնա։ (4) Թագաւորեցուցին նոքա, եւ ոչ ինեւ. կարգեցին իշխան, և ոչ գիտացի. արծաթով իւրեանց և ոսկւով իւրեանց արարին իւրեանց կուռս. զի սատակեսցին։

(5) Մերժեցաւ որթ [11] ՆԲԲ. սրբել։ (6) Ինանգի յԻսրայէլէ եւ այս. [12] ՆԲԲ. եղիցի խախչախալ [13] ՆԲԲ. Հողմն սերմանեցին, եւ մրրիկ հնձեսցեն [14] ՆԲԲ. Ասորեստանեայս իբրեւ զցուռն մեներանան առանձին. Եփրեմ կալաւ տարփանս ի վարձու։ (10) Թէ եւ կայցին վարձու յազգաց, արդ ժողովեցից զնոսա. եւ կրեսցեն փիշտ սակաւիկ մի ի բեռանէ թագաւորին իշխանաց։ (11) Զի յա-

բեմ սեզանս. եւ եղեն նմա ի մեղս
12 սեզանքն սրեկնակաք։ Գրեցից ի վերայ
նոցա բազմաթիւն, եւ կրօնք նորա
13 յօտարոտիս համարեցան։ Սեղանքն սի-
րելեացք. զի թէպէտ եւ զոհեսցեն զոհս
եւ ուտիցեն զմսի, Տէր ոչ ընկալցի
զայն". արդ յիշեսցէ զանիրաւութիւնս
նոցա, եւ զանօրէնութեանց նոցա վրէժ
խնդրեսցէ. նոքա յԵգիպտոս դարձան
[1]եւ ի մէջ Ասորեստանեայց պղծութիւնս
14 կերիցեն"։ Զի մոռացաւ Իսրայէլ զԱ-
րարիչ իւր, եւ չինեցին մեհեանս, եւ
յաճախեաց Յուդա քաղաքս պարսպա-
ւորս. եւ առաքեցից հուր ի քաղաքս
նորա, եւ կերիցէ [2]զհիմունս նոցա"։

ԳԼ. Թ

1 Մի՛ խնդար, Իսրայէլ, եւ մի՛ ուրախ
լիներ որպէս ժողովուրդք երկրի. զի
պոռնկեցար յԱստուծոյն քումմէ, սիրե-
ցեր դկաչառս ի վերայ ամենայն կա-
2 լոց ցորենոյ։ Կալք եւ հնձանք զնոսա
ոչ [3]ծանիցեն, եւ [4]գինի ատեաց նոցա։
3 Ոչ բնակեսցեն յերկրի Տեառն. [5]դար-
կեսցէ Եփրեմ յԵգիպտոս, եւ ի մէջ Ա-
4 սորեստանեայց պիղծս կերիցեն։ Ոչ
նուիրեցին Տեառն գինի, եւ ոչ քաղց-
բացուցին նմա. զոհք նոցա իբրեւ զհաց
ադոյ եղիցի նոցա, ամենեքեան որ ուտիցեն
ի նմանէ՝ պղծեսցին. զի հացն իւրեանց
անձանց իւրեանց լիցի, եւ մի՛ մտցէ ի
5 տունն Տեառն։ Զինչ գործիցէք յաւուրս
տարեկանի եւ յաւուրս ատենի Տեառն։
6 Վասն այնորիկ անա գնացին [6]ի թըշ-
ուառութիւն Եգիպտոսէ. եւ ընկալցի
զնոսա Մեմփիս, եւ թաղեսցէ զնոսա
Մաքմաս. զարծաթ նոցա կոստեսա"
ժառանգեսցէ, եւ ի տարկս նոցա փուշ
7 բուսցի։ Հասեալ են աւուրք վրէժխընդ-
րութեան քո, հասեալ են աւուրք հա-
տուցման քո. [7]եւ չարչարեսցի Իսրայէլ
իբրեւ զմարգարէ յիմարեալ, իբրեւ զայր
մի սգաւորի. ի բազմութենէ անիրաւ-
ութեանց քոյ յաճախեաց մոլորութիւն։
8 Դէտ է Եփրեմ ընդ Աստուծոյ, մարգարէ
որոգայթ գայթակղութեան յամենայն
ճանապարհս նորա. մոլորութիւն ի տան
9 Աստուծոյ անդեկցին։ Սպականեցան ըստ
աւուրցն բարձանց". յիշեսցէ զանօրէ-
նութիւնս նոցա, եւ վրէժ խնդրեսցէ
մեզայ նոցա։
10 Իբրեւ զխաղող յանապատի գտի զԻս-
րայէլ, եւ իբրեւ [8]զպիտակ ի լզենւոջ
վաղահասուկ տեսի զհայրս [9]նոցա. նոքա
մտին ի Բեղփեղոր, եւ [10]օտարացան
յամօթ իւրեանց. եւ եղեն զարշելիքն
11 իբրեւ զսիրեցեալս։ Եփրեմ իբրեւ զհաւ
թռուսա. եւ փառք նոցա ի տակոսեաց
12 եւ յերկանց եւ յղութեանց"։ Թէպէտ
եւ մնասցեն զորդիս իւրեանց, [11]անդա-
ւակեսցին ի մարդկանէ. քանզի վայ է
13 [12]նոցա՝ մարմին իմ ի նոցանէ։ ԶԵփրեմ
որպէս տեսի՝ յորս կացուցին յանդիման
զորդիս իւրեանց. եւ սկսաւ Եփրեմ
14 հանել ի խոցոտումն զորդիս իւր"։ Տուր
նոցա, Տէր. զինչ տացես նոցա. տուր
նոցա արգանդ անորդի եւ ստինս
15 դամաքեալս։ Ամենայն չարիք նոցա ի
Գաղգաղա. զի անդ ատեցի զնոսա.
վասն չարութիւն գնացից նոցա ի
տանէ իմմէ մերժեցից զնոսա, եւ ոչ
եւս յաւելից սիրել զնոսա. ամենայն
16 իշխանք նոցա ապստամբք։ [13]Ախտացան
արմատք Եփրեմայ, չորացան" եւ պը-
տուղ ոչ եւս տացեն. զի թէպէտ եւ
ծնցին՝ անզաւակեցից զցանկալիս որո-
վայնից նոցա։
17 Մերժեսցէ զնոսա [14]Աստուած, զի ոչ
լուան նմա. եւ եղիցին մոլորականք ի
մէջ ազգաց։

---

[1]Եբր. պակաս [2]Եբր. զապարանս նորա [3]Եբր. կերակրեն [4]Կամ, խաղմուզն [5]Եբր. դարձցի [6]Եբր. ի թշուառութենէ. Եգիպտոս ժողովեսցէ զնոսա. եւ թաղեսցէ զնոսա Մեմփիս. զցան. կալիս արծաթոյ նոցա եղիճ [7]Եբր. Իսրայէլ գիտասցէ. յիմարեցաւ մարգարէն, մի՛ գնեցեալ այրն հոգեւոր վասն բազմութեան անիրաւութեան քո եւ վասն յաճախութեան տեսլութեան։ (8) Դէտ ակն ունի Եփրեմ յԱստուած իմ. մարգարէն՝ որոգայթ որսորդի յամենայն ճանապարհս իւր, պատճառ հակառակութեան ի տան Աստուծոյ իւրոյ։ (9) Զաւառածան, սպականեցան ըստ աւուրցն Գաբաայի [8]Եբր. զպտուղ [9]Եբր. ձեր [10]Եբր. նուիրեցին զանձին ամօթոյ, և եղեն գարշելիք իրբեւ զըղձերեցին։ (11) Սակ Եփրեմ՝ իբրեւ զհաւ թռեաւ փառք նորա յերկանց, յարգանդէ եւ ի յղութենէ [11]Եբր. անզաւակեցից զնոսա [12]Եբր. նոցա ի գաւել իմում ինոցանէ։ (13) Եփրեմ, որպէս տեսի ի Տիւր, անկեալ էր ի չէն տեղւոջ. բայց Եփրեմ հանցէ զորդիս իւր սպանողին
[13]Եբր. Հարաւ Եփրեմ, չորացաւ արմատ նոցա
[14]Եբր. Աստուած իմ

ԳԼ. Ժ

1 Ա.յսր տաչտաւար [1]պտղալից Իսրայէլ՝. բան բազմութեան պտղոյ իւրոց յաճախեաց սեղանս, ըստ [2]պարարուութեան երկրի իւրեանց կանգնեցին արձան 2 ս։ Բաժանեցին զսիրտս իւրեանց, արդ ապականեացին. նա կործանեացէ զսեղանս նոցա, զխղանս նոցա, [3]չտաւատացին արձանք 3 նոցա՝՝ Քանզի այժմ ասացեն, Ոչ գոյ մեր թագաւոր, զի ի Տեառնէ ոչ երկնաք. այլ թագաւոր մեզ պի՞ առնիցէ։ 4 [3]Եթէ բանս խօսեացեր, պատճառք ստուբեան են. ուխտեացէ ուխտ. եւ բուսցին իրրեւ զսէզ իրաւունք ի կորդ ագարակի. որթոնն տանն Ռէվայ։ Եւ զիցին պանդուխտք՝՝ բնակիչք Շամրնի. 5 զի սուգ առ ժողովուրդ նորա ի վերայ նորա. եւ [4]որպէս զանձնացուցին զնա, ոսնձար լիցին՝՝ ի վերայ փառաց նորա. 6 զի զերեզման ի նմանէ։ [5]Եւ զնա յԱսորեստանեայս կապիտս տարցին պատարագ արքային Յարիմայ. կաչառօք ընկալցի զնփրեմ.՝՝ ամաչեսցէ Իսրայէլ 7 ի խորհուրդս իւր։ [6]Մերժեաց Շամրին զթագաւոր իւր՝ իրրեւ զփսիս յերեսաց՝՝ 8 ջրոյ։ Եւ բարձցին մեհեանքն Ռէվայ՝ մեղքն Իսրայելի. փուշ եւ տատասկ բուսցի ի սեղանս նոցա. եւ ասասցեն լերանց՝ թէ Անկերուք ի վերայ մեր, եւ ցլուրս՝ թէ Ծածկեցէք զմեզ։

9 [7]Յորմէհետէ բարձուն՝՝ են՝ մեղաւ՝՝ Իսրայէլ. անդ առին զսկիզբն, եւ մի՛ հասցէ նոցա [8]ի բարձունս. պատերազմ՝՝ եկն ի վրայ որդւոցն անօրէնութեանց՝ ևրատել՝՝ 10 զնոսա, եւ ժողովեսցին ի վերայ նոցա ազգք՝ [9]խրատել զնոսա՝՝ ի վերայ երկուց 11 անիրաւութեանց նոցա։ Եփրեմ երինջ կերիմ՝ սիրել զհակառակութիւն. բայց ես հասից ի վերայ գեղոյ պարանոցի նորա. եկից ի վերայ Եփրեմայ, եւ անվոյտ արարից զՅուդայ. եւ զօրասցի ի վերայ նորա՝՝ Յակոբ։

12 Սերմանեցէք ձեզ յարդարութիւն, եւ հնձեցէք [10]պտուղ կենաց. լուսաւոր արարէք ձեզ գլոյս գիտութեան. խնդրեցէք զՏէր՝ մինչեւ եկեսցէ ձեզ արդարութիւնս։ 13 Զմէ՞ խլխլեցէք զամպարչտութիւն, եւ զանօրէնութիւնս նորա զրգեցէք՝՝, եւ կերայք պտուղ ստութեան. զի յուսացար [11]ի կառս քո, 14 ի բազմութիւն զօրութեան քո։ Եւ յարիցէ [12]կորուստ ի վերայ ժողովրդեան՝՝ քո, եւ ամենայն պարսպաւորք քո կործանեսցին. [13]իրրեւ իչխան Սաղմանա ի տանէն Բերոթովազայ յաւուր պատերազմին, զմայր առ որդիս հարին, 15 նոյնպէս արասցին ձեզ, տունդ Իսրայելի, յերեսաց չարեաց ձերոց. ընկեցան ընդ առաւօտս, ընկեցաւ՝՝ թագաւորն Իսրայելի։

ԳԼ. ԺԱ

1 [14]Քանզի տղայ էր Իսրայէլ, եւ ես սիրեցի զնա, եւ յԵգիպտոսէ կոչեցի զորդի իմ։ 2 [15]Որպէս կոչեցի զնոսա՝ նոյնպէս մերժեցան յերեսաց իմոց՝՝. նոքա Բահաղիմայ զոհէին եւ պատկերաց խաւսկո 3 արկանէին։ Եւ ես [16]խոսիանցի զնփրեմ՝՝, եւ ընկալայ զնա ի վերայ բազկաց իմոց. եւ ոչ գիտացին թէ բժշկեմ զնոսա։ 4 [17]Յապականութենէ մարդկան ձգեցի զնոսա, կապանօք [18]սիրոյ իմոյ. եւ եղէ նոցա որպէս որ ածխէ օրհ ապաւակ ի ծնօտս նորա. հայեցայց ի նա՝ եւ յաղ-

---

[1] ԵԲԲ. է Իսրայէլ, որ բերէ գիւր պտուղ [2] ԵԲԲ. գեղեցկութեան երկրի իւրոյ գեղեցկացոյց արձանս։ (2) Պատիր է սիրտ նոցա, արդ յանցաւոր լիցին. նա կործանեսցէ զսեղանս նոցա, աւերեսցէ զկոթողս նոցա։ [3] ԵԲԲ. Ասսին անտիս երդուեալ ստէպ յաւխտ ուխտս. եւ բուսցին իրրեւ զդառնիճ իրաւունք յակօս ագարակի։ (5) Յաղագս որթուցն Բեթաւանայ երկիցեն [4] ԵԲԲ. քուրմք նորա սարսին [5] ԵԲԲ Նա եւս յԱսորեստանեայս տարցի՝ պատարագ արքային Յարեբայ. յամօթ լիցի Եփրեմ, և [6] ԵԲԲ Հատաւ Շամրին, թագաւոր նորա որպէս փրփուր յերեսս [7] ԵԲԲ. Յաւուրց անտի Գաբաայ մեղաւ, [8] ԵԲԲ. պատերազմ ընդդէմ որդւոցն անիրաւութեան ի Գաբաա։ (10) Ի ցանկալ իմում խրատեցից [9] ԵԲԲ. ի կապել նոցա ընդ երկուս անիրաւութիւնսն իւրեանց։ (11) Եփրեմ երինջ կիրթ, և սիրէ կոխատել ցորեան, այլ ես անցուցի լուծ ի գեղ պարանոցի նորա. արարից գնփրեմ անդրուազ, հերկս հարցէ Յուդա, տապեսցէ նմա [10] ԵԲԲ. յողորմութիւն, հարէք ձեզ հերկս, զի ժամանակ է խնդրելոյ զՏէր, մինչեւ եկեսցէ եւ ուսուսցէ (ՀՄ, տեղասցէ) ձեզ զարդարութիւն։ (13) Հերկեցէք զամպարշտութիւն, հնձեցէք զանիրաւութիւն [11] ԵԲԲ. ի ճանապարհս [12] ԵԲԲ. աղմուկ ի ժողովուրդս [13] ԵԲԲ. որպէս կործանեաց Սաղման զԲեթարբեղ յաւուր պատերազմին. մայր ընդ որդւոց հարաւ զգեանի. (15) Նոյնպէս արասցէ ձեզ Բեթէլ վասն մեծի չարութեան ձերոյ. այգուն ի սպառ հասցի [14] Կամ, Յորժամ [15] ԵԲԲ. Կոչեցին առ նոսա, այլ նորա մեկնեցան յերեսաց նոցա [16] ԵԲԲ. ուսուցի Եփրեմայ գնալ [17] ԵԲԲ. Զուանօք [18] ԵԲԲ. սիրոյ. եւ եղէ նոցա որպէս որ բառնայ զլուծ ի պարանոցէ նոցա և կե-

5 թեցից նմա ։ Բնակեաց Եփրեմ յԵգիպ-
տոս՝, եւ Ասորեստանեայն՝ թագաւոր
6 նմա. զի ոչ կամեցան դառնալ ։ [1]Եւ
ակարացաւ սրով ի քաղաքս իւր, եւ
պաշարեաց ի ձեռս նորա, եւ կերիցեն
7 ի խորհրդոց իւրեանց ։ Եւ ժողովուրդ
նորա կախեալ կայցէ պրնակութենէ
նորա. եւ Աստուած ի վերայ պատուա-
կանաց նորա բարկացի, եւ մի՛ բարձ-
8 բացուսցէ զնոսա ։ Զի՞նչ անցուցից քեզ
Եփրեմ. այլ պաշտպան լինիցիմ
քեզ, Իսրայէլ. զի՞նչ անցուցից քեզ.
եղից զքեզ իբրեւ զԱդամա եւ իբրեւ
զՍեբոյիմ. գարձաւ սիրտ իմ ի նոյն,
9 յուզեցան ինամք՝ իմ ։ Ոչ արաս-
ցից բան բարկութեան սրտմտութեան
իմոյ, եւ ոչ [2]թողից ջնջել զԵփրեմ.
զի Աստուած եմ ես, եւ ոչ մարդ. ի
միջի ձերում Սուրբ, եւ ոչ մտից [*]ի
10 քաղաքս. Այլ գնիցէ Տեառն [3]գնացիցի.
իբրեւ առիծ մռնչեսցէ, [4]զի ինքն
մռնչեսցէ, եւ յիմարեցուսցէ զորդիս
11 յուրց ։ Թռիցեն [*]եկեսցեն՝ իբրեւ գնաս-
կեղեն՝ յԵգիպտոսէ, եւ իբրեւ գոսո-
նակ յերկրէն Ասորեստանեայց. եւ պատսպա-
րեցուցից զնոսա ի տունս իւրեանց, ասէ
12 Տէր ։ Պաչարեաց զիս տուէթեամբ Եփ-
րեմ, եւ ամպարչատութեամբ տունն
[5]Իսրայելի եւ Յուդայ, արդ ծանեաւ
զնոսա Աստուած, եւ ժողովուրդ սուրբ
կոչեսցի Աստուծոյ՝։

ԳԼ. ԺԲ

1 [6]Այլ Եփրեմ այս չար՝, գնետ հովիւ
խորչակի. զօրհանուսցազ գնաներս ինքն
եւ գնոսոխս չաճախանց. եզ ուխտ ընդ
Ասորեստանեայս, եւ հուղ յԵգիպտոս
2 տանէր ։ Եւ պատասան Տեառն ընդ
Յուդայ, եւ ինդրել վրէժ ի Յակոբայ
ըստ ճանապարհաց նորա, եւ ըստ գը-
3 նացից նորա հատուսցէ նմա ։ Յարգանդի
[7]խարեաց զեղբայր իւր, եւ յաչխատու-
թիւնս իւր զօրացաւ առ Աստուած՝։
4 Եւ ժուժկալեաց ընդ հրեշտակին եւ
զօրացաւ. [8]լացին եւ ինդրեցին զիս, եւ
ի տան իմում գտին զիս. անդ պատ-
5 մեցաւ նոցա. Եւ Տէր Աստուած ամե-
6 նակալ եղիցի յիշատակ նոցա՝։ Եւ դու
յԱստուած քո գարձցիս, ողորմութիւն
եւ իրաւունս պահեսցես, եւ [9]սերձես-
ցիս առ Տէր՝ Աստուած քո յամենայն
7 ժամ ։ [10]Կչիռ անիրաւութեան ի ձեռս
[11]Բանանուս, եւ սիրեաց չաղթահարել ։
8 Եւ ասաց Եփրեմ, [12]Մեծացայ, գտի
հանգիստ անձին իմոյ. ամենայն վաս-
տակք նորա մի՛ գտցին նմա, գի վանն
9 անօրէնութեանց յանցեաւ ։ Բայց ես
Տէր Աստուած քո որ հանի զքեզ՝ յերկ-
րէն եգիպտացւոց, դարձեալ բնակե-
ցուցից զքեզ ի խորանս՝ ըստ աւուրցն
10 տանիլ. Եւ խօսեցայ ընդ մարգարէսն
եւ ես տեսիլս չաճախեցի, եւ ի ձեռն
11 մարգարէից [13]նահանեցայց ։ Եթէ ոչ Գա-
դաադ էր, սպա սուտ էին ի Գաղգա-
դա իչխանքն որ զոհէին. եւ սեզանք
նոցա իբրեւ զկրայս ի կորզ՝ ագարակի ։
12 Եւ [14]գնաց Յակոբ ի գաչան Ասորւոց,
եւ ծառայեաց Իսրայէլ վասն կնոջ,
13 եւ [15]ի ձեռն կնոջ զգուչացաւ՝։ Եւ ի
ձեռն մարգարէին եհան Տէր զԻսրայէլ
յերկրէն եգիպտացւոց, եւ մարգարէին
14 պահեցաւ ։ Բարկացոյց [16]զիս Իսրայէլ
եւ զայրացոյց՝, եւ արիւն նորա ի վերայ
նորա հեղցի. գնախատինս նորա հա-
տուսցէ նմա Տէր ։

բակրեցի գնոսա քաղցրութեամբ ։ (5) Մի՛
գարձցի յերկրէն Եգիպտացւոց [1]ԼԷբ. Եւ
չազուսցէ սուր ի քաղաքս նորա, եւ ծախեսցէ
զնիգս նորա. և կերիցէ գնոսա վասն խորհրդոց
նոցա ։ (7) Եւ ժողովուրդ իմ յոժար է յհետս կալ
յինէն. թէեւ առ Բարթրատն կոչեն գնոսա, —
ՀՃՆՆորա ոչ կամին բարձրացուցանել ։ (8)
Զիա՞րդ տացց զքեզ, Եփրեմ. մատնեցից զքեզ,
Իսրայէլ. զիա՞րդ արարից զքեզ իբրեւ զԱդմա,
եդից զքեզ իբրեւ զՍեբոյիմ. դարձաւ սիրտ
իմ յինս. նոմանք յետ գտանի գտանի ։ [2]ԼԷբ. դար
ձայց ՝Կ–Ր, բարկութեամբ ։ [3]ԼԷբ. գնացցեն
[4]ԼԷբ. յորժամ մռնչեսցէ՝ եկեսցեն խուճապատ
սրդիւ յարեւմտից (ՀՐ ի ծովէ) ։ (11) Եկեսցեն
խուճապատ ։ [5]ԼԷբ. Իսրայելի. ասկայն Յուդա
տակաւին տիրէ ընդ Աստուծոյ, եւ ի սուրբս
հաւատարիմ է ։ [6]ԼԷբ. Եփրեմ ճարակի
հողմ

[7]ԼԷբ. կալաւ զդարչապարէ եղբօրն, եւ ի զորու-
թեան իւրում մարտեաւ (ՀՄ ժուժկալեաց) ընդ
Աստուծոյ ։ [8]ԼԷբ. ելաց եւ մատեաւ յաղերս. ի
ԲԵԹԷլ եգիտ գնա, և անդ խօսեցաւ ընդ մեզ նա։
(5) Այսինքն Տէր Աստուած զորութեանց, Եհովայ
յիշատակ նորա ։ [9]ԼԷբ. ակն կացեսս առ ։ [10]ԼԷբ.
Վաճառական է, կշիռք ։ [11]ԼԷբ. Նորա ։ [12]ԼԷբ.
Արդարեւ մեծացայ, գտի ինձ զօրութիւն. յա-
ւիտենն վաստակս իմ ոչ գտցեն յիս անիրա-
ւութիւն որ մեղս իցեն ։ (9) Այլ ես Տէր Ա-
ստուած քո եմ անդադարին ։ [13]ԼԷբ. վարեցայ նմա-
նութեամբ ։ (11) Արդարեւ Գաղաադ անիրաւ
է. ապարէն ունայնութիւն են ի Գաղգաղ
զոհէին արջառս, և սեզանք նոցա իբրեւ կոյտք
յակոս ։ [14]ԼԷբ. փախեաւ ։ [15]ԼԷբ. վասն կնոջ
պահ կալաւ ։ [16]ԼԷբ. Եփրեմ գառնութեամբ
վախճաւ

ԳԼ. ԺԹ

1 [1]Ըստ բանին եփրեմայ իրաւունս այս
նա Աստուծոյ Իսրայէլի, եւ եղ զայն ի
2 Բահաղու՝ եւ մեռաւ։ Եւ արդ զարձ-
եալ յաւելին ի մեղանչել, եւ ստորին
իւրեանց ձուլածոյս յարձակեալ իւրեանց,
[2]ի նմանութիւն պատկերի կռոց, գործ
ճարտարաց՝ նուիրել նոցա. եւ նոքա
ասեն, Զոհեցէք մարդիկ, զի պատաս-
3 ցին որթք՝։ Վասն այնորիկ եղիցին իբ-
րեւ զամպ առաւօտու, եւ իբրեւ գդօղ
վազորդացոյ որ անցանէ, եւ իբրեւ
զփոշի հոսեալ ի կալոց, եւ իբրեւ
4 ծխոյ [3]ի պատուհանից։ Ես եմ Տէր
Աստուած քո որ հաստատեալ զեր-
կինս եւ հաստատեալ զերկիր, որոյ
ձեռք հաստատեցին զամենայն զօրս
երկնից, եւ ոչ ցուցի քեզ երթալ զնաս
նոցա, եւ ես հանի զքեզ յերկրէն
Եղիպտացւոց՝. եւ Աստուած բաց յինէն
ոչ ծանիցես, եւ Փրկիչ՝ ոչ գոյ բաց
5 յինէն։ Ես [4]հովուէի քեզ յանապատի
6 յանչէն երկրի՝։ Ըստ արօտի նոցա յա-
գեցան եւ զմայլեցան, եւ հպարտացան
սրտիւք իւրեանց. վասն այնորիկ մո-
7 ռացան զիս։ Եւ ես եղէց նոցա իբրեւ
[5]կոտորած, եւ իբրեւ զինձ ի ճանապար-
8 հին [6]Ասորեաստանեայց։ Պատահեցից նո-
ցա իբրեւ արջ [7]զաղցեալ, եւ պատա-
ռեսցից զառագաստ սրտից նոցա, եւ
[8]կերիցեն զնոսա կրիւնք անասնոյ՝,
եւ գազանք վայրի կեղեքեսցին զնոսա։
9 [9]Յապականութենան քումն, Իսրայէլ, ո՛վ
10 քեզ որ օգնիցէ քեզ։՝ Ո՞ւր է թագա-
ւորն քո, նա փրկեսցէ զքեզ յամենայն
քաղաքս քո, [10]իրաւ արասցէ քեզ՝, զորմէ
ասացեր թէ Տուր ինձ թագաւոր եւ
11 իշխան։ Եւս քեզ թագաւոր բարկու-
թեամբ իմով, եւ կործանեցի սրտմտու-
12 թեամբ իմով։ Ծրար անիրաւութեանց
եփրեմ, ծածկեալ կան մեղքն նորա։
13 Երկունք իրրեւ ծննդականի հասցեն
նմա. դա է [11]որդին ոչ իմաստուն, վասն
այնորիկ այժմիկ չկարացէ հանդարտել
14 ի՝ բեկման որդւոց։ Ի ձեռաց գժոխոց
ապրեցուցից զնոսա, եւ ի մահուանէ
փրկեցից զնոսա. ո՛ւր է [12]յաղթութիւն
քո, մահ. ո՛ւր է [13]խայթոց քո, գժոխք,
[14]միթէ սրտութիւն ծածկեալ է յաչաց իմոց։
15 [15]Բանդի նա ի մէջ եղբարց զատուսցէ՝,
ածցէ ի վերայ նորա Տէր հողմ խորչա-
կի յանապատէ, եւ ցամաքեցուսցէ զն-
բակս նորա, եւ աւերեսցէ գգանձս ա-
նոթոց նորա, եւ աւերեսցէ գպատիւս
նորա, [16]սա ցամաքեցուսցէ զերկիրն նորա
եւ զամենայն անօթս նորա ցանկալիս՝։

ԳԼ. ԺԴ

1 Ապականեսցի Շամրին, զի բնդդէմ
գարձաւ Աստուծոյ իւրոյ. ի սուր անկ-
ցին, եւ անդպիացք նոցա գբարի հար-
2 ցին, եւ յղիք նոցա պատճեսցին։ Դարձ,
Իսրայէլ, առ Տէր Աստուած քո, զի
3 ակարացար յանօրէնութիւնս քո։ Առէք
ընդ ձեզ բանս, եւ դարձարուք առ Տէր
[17]Աստուած ձեր՝, եւ ասացէք ցնա,
[18]Կարող ես թողուլ զմեզս մեր, զի մի՛
առնուցուք անիրաւութիւն, այլ ընդու-
նիցիք զարբա՝, եւ հատուսցուք զպար-
տուզ շրթանց մերոց [17]եւ վայելեսցին
4 ի բարութիւնս սիրաք ձեր։ Ասորես-
տանեայն ոչ փրկէ զմեզ, եւ յերիվարս
ոչ հեծցուք. եւ մի՛ ես ասասցուք
Աստուած մեր վէպառպրծս մեր. զի
որ [19]ի քեզ է ողորմեսցի որդւոյ։
5 Բժշկեցից զդնութիւնս նոցա, եւ
սիրեցից զնոսա համօրէն՝. զի դարձաւ
6 բարկութիւն իմ ի նոցանէ։ Եղէց իբ-
րեւ զդօղ Իսրայելի, եւ ծաղկեսցէ իբ-
րեւ զշուշան, եւ արձակեսցէ զարմատս
7 իւր իբրեւ զԼիբանոս. Արձակեսցին
ոստք նորա, եւ եղիցի իբրեւ զձիթենի
[20]պտղաւորից. եւ բուրեսցէ հոտ նորա

---

[1] Ես. Որժամ խօսէր Եփրեմ՝ դողումն էր. բարձ-
րացաւ նա ի մէջ Իսրայելի. այլ մեղաւ Բա-
հաղիւ, [2] Ես. ըստ հանճարոյ իւրեանց
կուռս, համակ գործ ճարտարաց. ասեն նորա
զոհացանէք. Արդ զոհեն՝ համբուրեսցեն զորթս
[3] Ես. ի ծխանէ։ (4) Այլ ես Տէր Աստուած քո
եմ անգամին յերկրէն Եգիպտացւոց [4] Ես.
ծանեայ զքեզ յանապատի, յերկրի պապակեալ
[5] Կամ, գառեւծ [6] Ես. դարանեցայր [7] Ես. սրգե-
կոտոր [8] Ես. ծախեցից զնոսա անդ որպէս
առիւծ [9] Ես. Ապականեցար, Իսրայէլ, այլ
միա է օգնութիւն քո (կամ, զի հակառակ եղեր
ինձ՝ օգնականի քոմ՝)։ [10] Ես. եւ ո՞ւր դա-
տաւորք քո

[11] Ես. որդի որ չէ իմաստուն, գի ի ժամանակին
ոչ կայր ի տեղւոջ [12] Ես. ժանտ, կամ, սրա-
ծութիւն [13] Ես. աւերումն [14] Ես. ապաշխա-
րութիւն եւ ընկալ գրարին [15] Ես. Թէ պէտեւ աճեսցէ նա ի մէջ եղբարց [16] Ես.
կապտեսցէ նա զգանձս ամենայն անօթոց ցան-
կալեացս [17] Յես. գ-ից [18] Ես. Բարձ զամենայն
անիրաւութիւն եւ ընկալ գբարին [19] Ես.
որպէս է՝ գտանէ ողորմութիւն ի քեզ։ (5) Ես-
ցից զապստամբութիւն նոցա, սիրեցից զնոսա
կամակար [20] Ես. վայելչութիւն նորա

8 իբրեւ [1]զկնպրըկի՝ Դարձցին եւ նատցին ընդ յարկաւ նորա, կեցցեն եւ հաս-
ատանասցին ցորենով. եւ ծաղկեսցէ"
իբրեւ զոսիի. յիշատակ նորա իբրեւ
9 զգինի Լիբանանու հոլիցի՝ Եփրեմայ՝ Զի՞
եւս կայ նորա եւ կամք, ես [2]խնայա-

[1] Ելբ. զվիբռնան։ (8) Դարձցին որ նստինն ընդ
հովանեաւ նորա. կեցցեն իբրեւ ցորեան, եւ
ծաղկեսցին [2] Ելբ. լուսոյ զենդրուածս նորա

հեցուցի զնա, եւ ես զօրացուցից զնա.
ես իբրեւ սայդի պալասայծ", յինէն
պտուղ պտուղ ի քեզ։
10 Ո՞վ է իմաստուն, եւ իմասցի զայս,
հանճարեղ՝ եւ ծանիցէ զայս. զի ուղիղ
են ճանապարհք Տեառն, եւ արդարք
գնասցեն ընդ նոսա, եւ ամպարիշտք
տկարասցին ի նոսա։

եւ հայեցայ ի նա. ես իբրեւ զգի դալար եմ

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ

ՅՈՎԵԼԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 ՈՂՈՍՄ Տեառն որ եղեւ առ Յովէլ
2 որդի Բաթուէլի՝ լուարուք զայս, ձերք, եւ ունկն դիք, ամենայն բնակիչք երկրի. եթէ եղեալ է այսպիսի ինչ յաւուրս ձեր, կամ յաւուրս հարցն ձերոյ։
3 Պատմեցէք զայս որդւոց ձերոց, եւ որդիք ձեր որդւոց իւրեանց, եւ որդիք նոցա յազգ
4 յազգ։ Զմնացորդս [1]թրթրոյ եկեր մարախն, եւ զմնացորդս մարախոյ եկեր ջրաեակ, եւ զմնացորդս ջրաեկի եկեր [2]ներեալ։
5 Սթափեցարուք, արբեալք ի գինւոյ, եւ լացէք եւ սգացարուք, ամենեքեան որ ըմպէք զգինի ցաբբենալ. զի բարձաւ ի բերանոյ ձերմէ ուրախութիւն
6 եւ խնդութիւն։ Զի ազգ մի ել յերկիր իմ հզօր եւ անթիւ. ատամունք նորա ատամունք առիւծու, եւ ժանիք նորա
7 կորեան առիւծու։ Ածար զորթ իմ յապականութիւն, եւ զթզենիս իմ ի խոտակումն. յոզկոյզ յոզեաց եւ ընկէց զնա, եւ լննեցոյց զուռս նորա։
8 Ողբա [3]առ իս իբրեւ զկարան քրձազգած ի վերայ առն իւրոյ ամուսնոյ։ Բարձան զոհ եւ սպանդք՝ ի տանէ Տեառն. սուգ առէք, քահանայք՝ պաշտօնեայք
10 [4]սեզանոյ, Զի թշուառացան գաշտք. սուգ առցէ երկիր, զի թշուառացաւ գարեան, յամաքեցաւ գինի, նուազեալ
11 ձէթ։ [5]Ողբացէք, մշակք, սաւղուաւծովք՝ ի վերայ ցորենոյ եւ գարւոյ. զի
12 կորեան կումք յագարակէ. Յամաքեցաւ որթ, նուազեալ թուզ եւ նուռն եւ արմաւ եւ խնձոր, եւ ամենայն փայտ ագարակի զօսացաւ. զի [6]յամօթ արարին զուարթութիւն որդիք՝ մարդկան։
13 Ջրձազգածք եղերուք, կածեցարուք, քահանայք. սուգ առէք, պաշտօնեայք սեզանոյ. մտէք ննջեցէք խորտով, պաշտօնեայք [7]Աստուծոյ. զի պակասեցին ի տանէ Աստուծոյ ձերոյ [8]զոհք եւ
14 սպանդք՝։ Սրբեցէք պահս, քարոզեցէք պաղատանս. ժողովեցէք զծերս, ամենայն բնակիչք երկրիդ, ի տունն Աստուծոյ ձերոյ, եւ աղաղակեցէք առ [9]Տէր սրտի
15 մտօք։ Վայ ինձ, վայ ինձ, վայ ինձ՝ յաւուր յայնմիկ. զի մերձ է օր Տեառն. իբրեւ [10]թշուառութիւն իմն թշուառութենէ հաս-
16 ցէ։ Առաջի աչաց ձերոց պակասեցան կերակուրք՝ ի տանէ Աստուծոյ ձերոյ,
17 ուրախութիւն եւ խնդութիւն։ Խայտացին երինջք ի մսուրս իւրեանց. ապահանեցան՝ գանձք, տապալեցան չտեմարանք, զի խորշակահար եղեւ ցորեան,
18 [11]Զինչ համբարեցից ի նոսա. լացին՝ դաստակք անգոյց, զի ոչ գոյր նոցա աբօտ, եւ հօտք խաչանց սատակեցան։
19 Առ քեզ, Տէր, աղաղակեցից, զի հուր սատակեաց [12]զգեղեցկութիւն անապատի, եւ բոց ծախեաց զամենայն փայտս
20 ագարակի։ Եւ երէ վայրի ի քեզ հայեցաս. զի ցամաքեան վտակք ջուրց, եւ հուր եկեր [12]զգեղեցկութիւն անապատի։

ԳԼ. Բ

1 Փող հարէք ի Սիոն, քարոզ կարդացէք ի լերին սրբութեան իմոյ. [13]Յոդովեսցին ամենայն բնակիչք երկրի. զի հասեալ
2 է օր Տեառն, զի մերձ է։ Օր խաւարի եւ մրկի։ օր ամպոյ եւ մառախղոյ. իբրեւ առաւօտ տարածեսցի ի վերայ լեռանց. զօր բազում եւ հզօր, նման նմա

---

[1] ԵՒԲ. խառնճի [2] ԵՒԲ. գրուիճ. (5) Սթափեցարուք, արբեալք, եւ լացէք, սգացարուք ամենեքեան որ ըմպէք գինի, վասն քաղցիւ. զի հատաւ ի բերանոյ ձերմէ [3] ԵՒԲ. իբրեւ կոյս քրձազգած ի վերայ առն մանկութեան իւրոյ։ (9) Խարձան զոհ եւ նուէր [4] ԵՒԲ. Տեառն [5] ԵՒԲ. Յամօթ լերուք, մշակք. ողբացէք, այգեգործք, [6] ԵՒԲ. ցամաքեցաւ ուրախութիւն որդւոց

[7] ԵՒԲ. Աստուծոյ իմոյ [8] ԵՒԲ. զոհ եւ նուէր [9] ԵՒԲ. Տէր։ (15) Վայ [10] ԵՒԲ. աւերումն Ամենակալէն։ (16) Ո՞չ ապաքէն պակասեաց կերակուր առաջի աչաց մերոց՝ ի տանէ Աստուծոյ մերոյ ուրախութիւն եւ խնդութիւն։ (17) Փառեցան սերմունք ընդ կոշտիւք իւրեանց, ամայացան [11] ԵՒԲ. Զի՞ արդ հնձէ երէ վայրի. մոլորեցան [12] ԵՒԲ. զարօտս [13] ԵՒԲ. զարհուրեցին

ոչ եղեւ յաւիտենից, եւ զհետ նորա ոչ
եւս յաւելցի լինել ազգաց մինչեւ յազգս։
3 Աւասիկ նորա հուր ծախիչ, եւ վերջ նո-
րա բոց բորբոքեալ. իբրեւ զպրախա
[1]փափկութեան երկիրդ առաջի նորա,
եւ զկնի նորա դաշտ ապականութեան,
եւ ապրեալ ոչ իցէ ի նմանէն։
4 Իբրեւ զտեսիլ երիվարաց տեսիլ նորա.
5 իբրեւ զհնձեալս արշաւեացնեն եւ իբրեւ
զձաշիւն կառաց ի վերայ ոլխոց լերանց
առաստաւկեացն, իբրեւ զձայն բոցոյ հրոյ
որ ուտիցէ զեղէգն, իբրեւ զօր բազում
եւ հզօր պատրաստեալ ի պատերազմ։
6 Յերեսաց նորա [2]խորտակեացին ազգք,
եւ ամենայն դէմք իբրեւ զայրեցեալ պա-
7 տան։ Իբրեւ զխոյանս յարձակեացին,
եւ իբրեւ զարս պատերազմողս ելցեն ի
վերայ պարսպաց. իւրաքանչիւր վիւր
ճանապարհ գնասցէ, եւ մի խոտորեա-
8 ցին ի չաւղաց իւրեանց. Այր [3]ընկերս
եւ յընկերէ իւրմէ մի զատցի. ծանրա-
ցեալք վիրաւք իւրեանց գնասցեն,
եւ նետիւք իւրեանց անկցին եւ մի
9 վախճանեսցին՝։ Հասցեն ի վերայ քա-
ղաքին, եւ ընթացցեն ի վերայ պարս-
պաց. ելցեն յապարանս, եւ մտցեն ընդ
10 պատուհանս իբրեւ զգող։ Յերեսաց
նոցա խռովեսցի երկիր, եւ երկինք
չարժեսցին. արեգակն եւ լուսին խա-
ւարեսցին, եւ աստեղք ծածկեսցին զլոյս
11 իւրեանց։ Եւ Տէր տացէ զձայն իւր ա-
ռաջի երեսաց զօրութեան իւրոյ. զի
բազում է յոյժ բանակ նորա, [4]եւ հզօր
գործ պատերազմաց՝ նորա. զի մեծ է
օր Տեառն, մեծ եւ երեւելի յոյժ. եւ
ո՞վ իցէ նմա բաւական։
12 Եւ արդ ասէ Տէր [5]Աստուած ձեր՝,
Դարձարուք առ իս յամենայն սրտէ ձեր-
13 մէ, պահօք եւ լալով եւ կոծելով։ Պա-
տառեցէք զսիրտս ձեր, եւ մի՛ զհան-
գերձս, եւ դարձարուք առ Տէր Ա-
ստուած ձեր. զի ողորմած եւ գթած է,
երկայնամիտ եւ բազմամեղմոր, եւ զղջա-
14 նայ ի վերայ չարեաց։ Ո՞ գիտէ եթէ
դարձցի եւ ապաչաւեսցէ, եւ [6]թողցէ
զկնի իւր օրհնութիւն, եւ զոհս եւ
սպանդ Տեառն Աստուծոյ մերոյ՝։
15 Փող հարէք ի Սիոն, սրբեցէք պահս,
16 քարոզեցէք պաղատանս. Ժողովեցէք,
զժողովուրդս, սրբեցէք զեկեղեցի,
ընտրեցէք զծերս, ժողովեցէք զաղայս
սանդղացս. ելցէ փեսայ ի սենեկէ իւրմէ,
17 եւ հարսն յառագաստէ։ Ընդ սասիճանս եւ
ընդ սեղանն լացցեն քահանայք եւ պաշ-
տօնեայք Տեառն, եւ ասասցեն, Խնայեա,
Տէր, ի ժողովուրդս քո, եւ մի՛ տար
զժառանգութիւն քո ի նախատինս՝ տիրել
ի վերայ նորա տզգաց. զի մի՛ ասասցեն
ի հեթանոսս՝ [7]Ո՞ւր է Աստուած նոցա։
18 Եւ նախանձեսցաւ Տէր վասն երկրի
իւրոյ, եւ խնայեսցէ ի ժողովուրդ իւր։
19 Եւ պատասխանի նա Տէր ժողովրդեան
իւրում եւ ասէ, Ահաւասիկ ես առաքեմ
ի ձեզ ցորեան եւ գինի եւ զեւղ, եւ
լցուիք ի նոցանէն. եւ ոչ եւս տաց զձեզ
20 ի նախատինս ազգաց։ Եւ զհիւսիսայինն
հալածեցից ի ձէնջ, եւ մերժեցից զնա
յերկիր [8]անջուր. եւ ապականեցից զա-
ռաջ նորա ի ծովն առաջին, եւ զվերջ՝
նորա ի ծովն վերջին. եւ ելցէ չարաւ
նորա, եւ բարձցէ հոտ նորա. զի մե-
21 ծացան գործք նորա։ Ցաջալերեաց, նո-
կիր, խնդա եւ ուրախ լեր, զի մեծա-
22 ցոյց Տէր զառնել իւր ընդ քեզ։ Ցաջա-
լերեաց, երէ վայրի, զի զալարացան
գաշտք անապատի. զի ծառ եա զպտուղ
իւր, որպէս եւ թզենի եաուն զպտու-
23 ղիւն իւրեանց։ Որդիք Սիոնի, ցնծա-
ցէք եւ ուրախ լերուք ի Տէր Աստուած
ձեր. զի [9]եա ձեզ Տէր կերակուր ար-
դարութեան՝. եւ առցէ ձեզ անձ-
րեւ կանուխ եւ անցգան [10]իբրեւ զա-
24 ռաջինն՝։ Եւ լցցին կալք ցորենով, եւ
25 զեղցին հնծանք գինւով եւ իւղով։ Եւ
հատուցից ձեզ վոխանակ ամացն յորս
եկեր մարախն եւ ջրեւակն եւ [10]թրթուրն,
զօր իմ մեծ զոր առաքեցի ի վերայ ձեր.
26 Եւ ուտիցէք կերիւիք, եւ յագեսջիք, եւ
օրհնեսջիք զանուն Տեառն Աստուա-
ծոյ ձերոյ որ արար ընդ ձեզ սքանչե-
լիս. եւ մի՛ եւս ամաչեսցէ ժողովուրդ
27 իմ յաւիտեան։ Եւ ծանիջիք իմ ի մէջ
Իսրայէլի եմ ես. եւ ես Տէր Աստուած
ձեր, եւ չիք օք բաց յինէն. եւ ոչ ա-
մաչեսցէ ժողովուրդ իմ յաւիտեան։

---

[1] ԵԲԲ. եդեմայ [2] ԵԲԲ. տագնապեացին [3] ԵԲԲ. զընկեր իւր մի՛ ատիպեսցէ, իւրաքանչիւր զճա-
նապարհ իւր գնասցէ. թէպէտեւ անկցին ի
վերայ պինուց, մի՛ խոտորակեացին [4] ԵԲԲ. զի
հզօր է որ առնէ զբան [5] ՅԵԲԲ. պետ
[6] ԵԲԲ. զոհ եւ նուէր Տեառն Աստուծոյ մերում

[7] ԵԲԲ. անջուր եւ ամպի. առաջ նորա ի ծովն
արեւելից, եւ վերջ [8] ԵԲԲ. տայ ձեզ չափով
զվաղուքն [9] Կամ, յառաջնումն [10] ԵԲԲ.
գրուիճն եւ խաւնիճն

28 Եւ եղիցի յետ այսորիկ հեղից [1]յոգւոյ իմմէ՝ ի վերայ ամենայն մարմնոյ. եւ մարգարէասցին ուստերք ձեր եւ դստերք ձեր. եւ ծերք ձեր երազս երազասցեն, եւ երիտասարդք ձեր տեսիլս տես-
29 ցեն։ Եւ ի վերայ ծառայից իմոց, եւ ի վերայ աղախնաց իմոց յաւուրսն յայնոսիկ հեղից [1]յոգւոյ իմմէ, եւ մարգա-
30 րեսցին։ Եւ տայց նշանս յերկինս ի վեր եւ յերկիր ի խոնարհ՝ արիւն եւ հուր
31 եւ մրրիկ ծխոյ։ Արեգակն դարձցի ի խաւար եւ լուսին յարիւն, մինչչեւ եկեալ իցէ օր Տեառն մեծն եւ երեւելին։
32 Եւ եղիցի ամենայն որ կարգասցէ զանունն Տեառն՝ կեցցէ. զի ի լեառն Սիոն եւ յԵրուսաղէմ եղիցի ապրեալ, որպէս եւ ասաց Տէր, եւ [2]աւետարանեալ զորս Տէր կոչեսցէ աւա ինքն։

Գլ. Գ

1 **Զի** ահաւասիկ ես յաւուրսն յայնոսիկ, եւ ի ժամանակին յայնմիկ՝ յորում դարձուցից զգերութիւնն Հրէաստանի եւ
2 զերուսաղէմի, Եւ ժողովեցից զամենայն ազգս, եւ իջուցից զնոսա ի ձորն [3]Յովսափատայ. եւ դատեցայց զնոսա անդ, վասն ժողովրդեան իմոյ եւ ժառանգութեան իմոյ Իսրայէլի, որ ցրուեցան ընդ ամենայն ազգս, եւ զերկիրս իմ բաժանեցին.
3 Եւ ի վերայ ժողովրդեան իմոյ վիճակս արկանէին, եւ նաւն զպատանեակս կապչնս պոռնկայ, եւ զաղջկունս վաճառէին ընդ գինւոյ եւ
4 ըմպէին։ Եւ [4]դուք եւս տակաւին ինձ՝ Ծուր եւ Ծայդան եւ ամենայն [5]գաւառք հեթանոսաց՝ մթերք հատուցանիցէք ինձ, [6]կամ ոչնս պատհիցէք՝ ինձ, վաղվաղակի տադնապաւ հատուցից զհատուցումն ձեր ի գլուխս
5 ձեր։ Փոխանակ զի զարծաթն իմ եւ զոսկին առէք, եւ զընտիր [7]ընտիր եւ զգեղեցիկ անօթսն՝ տարայք ի մեհեանս
6 ձեր, Եւ զորդիսն Յուդայ եւ զորդիսն Երուսաղէմի վաճառեցէք որդւոցն Յունաց, զի մերժիցէք զնոսա ի սահմանաց
7 իւրեանց. Արդ ես [8]կանգնեցից զնոսա ի տեղւոջէ ուր վաճառեցէք զնոսա անդր, եւ հատուցից զհատուցումն ձեր ի գլուխս
8 ձեր. Եւ մատնեցից զուստերս ձեր եւ զդստերս ձեր ի ձեռս որդւոցն Յուդայ, եւ վաճառեսցեն զնոսա [9]ի գերութիւն յազգ հեռաւոր բայական. զի Տէր խօսեցաւ։
9 Քարոզ կարդացէք զայդ յազգս. Ժամ տուք մարտի, զարթուսցէք զպատերազմողս. Ժողովեսցարուք եւ ելէք ամենայն
10 արք պատերազմողք։ Կոտորեցէք զխոփս ձեր ի սուսերս, եւ զգերանգս ձեր ի վազդունս. ասէր իրաւունսսցէ Հզօր
11 եմ ես։ Ժողովեցարուք եւ մուտք, ազգք ամենայն չուրջանակի, անդր դումարեսցարուք. [10]Հանդարտ պատերազմօղ եկիցէ՞։
12 Յարթիցեն եւ ելցեն [11]ամենայն ազգք ի ձորն Յովսափատայ, զի անդ նստայց դատել զամենայն ազգս չուրջանակի։
13 Արկէք մանգաղ, զի հասեալ են կութք. մուտք կոխեցէք, զի լցեալ է հնձան եւ զեղուն դուրք. զի բազմացան չարիք
14 նոցա։ [12]Զայնք հնչեցին՞ ի Ձորն դատաստանի. զի մերձ է օր Տեառն ի Ձորն
15 դատաստանի։ Արեգակն եւ լուսին խաւարեսցին, եւ աստեղք ծածկեսցին զլոյս
16 իւրեանց։ Եւ Տէր ի Սիոնէ գոչեսցէ, եւ յերուսաղէմէ տայցէ զձայն իւր, եւ չարժեսցին երկինք եւ երկիր։ [13]Այլ Տէր
17 իւրոցն ապրեցուսցէ ի ժողովուրդ իւր եւ զօրացցէ զորդիսն Իսրայէլի։ Եւ ծանիջիք թէ ես եմ Տէր Աստուած [14]որ բնակեալ եմ ի Սիոն լերինն սրբութեան իմոյ. եւ եղիցի Երուսաղէմ սուրբ, եւ այլազգիք այլ ոչ եւս անցցեն ընդ նա։
19 Եւ եղիցի յաւուր յայնմիկ բղխեսցեն լերինք [15]գաղցրութիւն, եւ բլուրք յորկեսցին զկամն, եւ ամենայն [16]աղբիւրք Յուդայ բղխեսցեն ջուրս. եւ աղբիւր ի տանէ Տեառն ելցէ, եւ արբուսցէ զձորն
20 [17]վիճակաց։ Եգիպտոս յապականութիւն եղիցի, եւ Եդոմ՝ ի գաչտ ապականութեան յանիրաւութեանց որդւոցն Յուդայ. փոխանակ զի հեղին արիւն ար-
21 գար [18]ի մէջ իւրեանց՞։ Եւ այլ Հրէաստան յաւիտեան բնակեսցէ, եւ Երուսաղէմ
22 ազգաց յազգս։ Եւ [19]յանդրեցից զարիւն նոցա, եւ ոչ արարից անպարա՞. եւ Տէր բնակեսցէ ի Սիոն։

---

[1] ԵԲԲ. զՀոգի իմ [2] ԵԲԲ. ի մէջ մնացորդաց
[3] Այլ՝ Ձոր, դատաստանի Տեառն [4] ԵԲԲ. զի՞ կայ իմ եւ ձեր [5] ԵԲԲ. սահմանք Փղշտացւոց
[6] ԵԲԲ. եթէ հատուցանիցէք հատուցումն [7] ԵԲԲ. ընտիրս իմ [8] ԵԲԲ. զարթուցից
[9] ԵԲԲ. Սաբայեցւոց, զզօրաւորս քո [10] ԵԲԲ. անդր իջոյ, Տէր, [11] Յ ԵԲԲ. պ-ւ-ոք Ա.մբո՛ք, ամբո՛ք [12] ԵԲԲ. [13] ԵԲԲ. Եւ Տէր ապաւէն ժողովրդեան իւրոյ, եւ ամրութիւն որդւոցն [14] ԵԲԲ. յԵ-ե-ն յ-ե-ս-ա-, ձեր [15] ԵԲԲ. զբաղցու
[16] ԵԲԲ. Ձորք [17] ԵԲԲ. Սատիմ [18] ԵԲԲ. յերկրին նոցա [19] Կամ, սրբեցից զարիւն նոցա, զոր չէր իմ սրբեալ

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ
ԱՄՈՎՍԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 ՈՒ ԱՏԳԱՄՔ Ամովսայ որ եղեն յԱկ-
կարիմ՝ Թեկուայ, զոր եսիս ի
վերայ [2]Երուսաղեմի յաւուրս Ոզիայ ար-
քայի Հրէաստանի, եւ յաւուրս Յերո-
բոամայ որդւոյ Յովասայ արքայի Իս-
րայէլի, երկուք ամօք յառաջ քան զկոտ-
2նաչարժն։ եւ ասէ,

Տէր ի Սիովնէ բարբառեցաւ, եւ
յերուսաղեմէ ետ զձայն իւր. եւ սուգ
առին արօտք հօտից, եւ յամաքեցան
բարձունք Կարմէղոսի։
3 [3]Եւ ասէ Տէր, Ի վերայ երից անօրէ-
նութեանցն Դամասկեայ, եւ ի վերայ
չորից՝ ոչ [4]դարձայց ի նմանէ. փոխա-
նակ զի կոխեին զյղիս Գաղաադացւոց
4 սղոցօք՝ երկաթեօք։ Եւ առաքեցից
հուր ի տունն Ազայելի, եւ կերիցէ [5]զՆի-
5 մունս որդւոյն Ադերայ՝։ Եւ խորտակե-
ցից զնիզս Դամասկեայ, եւ սատակե-
ցից զընակիչս դաչտացն Ովնայ, եւ [6]կո-
տորեցից զազգն յարանց Խաանտու, եւ
կերեսցի ընտիր՝ ժողովուրդն Ասորւոց,
ասէ Տէր։
6 Այսպէս ասէ Տէր. Ի վերայ երից ամ-
պարշտութեանցն Գազայ, եւ ի վերայ
չորից՝ ոչ [7]դարձայց ի նոցանէն. փո-
խանակ զի գերեցին զգերութիւն Սո-
7 զոմանի արկելով՝ յԵդովմ։ Եւ առաքե-
ցից հուր ի վերայ պարսպացն Գազայ,
8 եւ կերիցէ [8]զՆիմունս նորա։ Եւ սատա-
կեցից զընակիչս յԱզովտայ, եւ [9]բարձ-
ցի ազգն՝ յԱսկաղոնէ. եւ ածից զձեռն

[1] ՆԲՂ. Բանք Ամովսայ որ ի հովուաց [2]ԵԲՂ. Խոյակի [3]ԵԲՂ. Այսպէս [4]ՆԲՂ. դարձուցից զՀՀ-
ՆՈՐԱ, քանզի կատարին զԳաղատագ կամ: Նաասյլիւք [5]ՆԲՂ. զապարանս Ինենադադայ
[6]ՆԲՂ. զոր ունին զգաւազան ի տունէն Եդեմայ։ եւ գերեացի ի Կիր [7]ԵԲՂ. գարձուցից զՀՀ-
ՆՈՐԱ, քանզի գերեցին զգերութիւն ի սպառ մատնել [8]ՆԲՂ. զապարանս [9]ՆԲՂ. զոր
ունին զգաւազան

իմ ի վերայ Ակկարոնի, եւ կորիցեն մնաց-
ցորդք [10]այլազգեացն, ասէ Տէր Տէր։
9 Այսպէս ասէ Տէր. Ի վերայ երից ամ-
պարշտութեանցն Ծուրայ, եւ ի վերայ
չորից՝ ոչ [11]դարձայց ի նմանէ. փոխա-
նակ զի արգելին զգերութիւնն Սողոմո-
նի՝ յԵդովմ, եւ ոչ յիշեցին զուխտ եղ-
10 բարց։ Եւ առաքեցից հուր ի վերայ
պարսպացն Ծուրայ, եւ կերիցէ [8]զՆի-
մունս նորա։
11 Այսպէս ասէ Տէր. Ի վերայ երից ամ-
պարշտութեանցն Եդովմայ, եւ ի վերայ
չորից՝ ոչ [12]դարձայց ի նոցանէ. փո-
խանակ զի հալածեաց սրով զեղբայր
իւր, եւ ապականեաց զեղբայր յերկրի.
եւ յամիչտակեաց ի վիշտութիւն զսուս-
կումն իւր, եւ պյանպինութիւն իւր պա-
12 հեաց ի հակառակութիւն՝։ Եւ առաքե-
ցից հուր ի Թեման, եւ կերիցէ [13]հուր
զՆիմունս պարսպաց Նորա՝։
13 Այսպէս ասէ Տէր. Ի վերայ երից ամ-
պարշտութեանց որդւոցն Ամմոնայ, եւ
ի վերայ չորից՝ ոչ [14]դարձայց ի նոցանէ՝.
փոխանակ զի հերձուին զյղիս Գաղաա-
դացւոց, զի ընդարձակեսցեն զսահմանս
14 իւրեանց։ Բորբոքեցից հուր ի վերայ
պարսպացն Ռաբայ, եւ կերիցէ [8]զՆի-
մունս նորա ազաղակաւ յաւուր պա-
տերազմի, [15]եւ չարժեսցի յաւուր վախ-
15 ճանի իւրոյ։ Եւ գնասցին ի գերութիւն
թագաւորք նոցա, քուրմք նոցա եւ իշ-
խանք նոցա՝ ի միասին, ասէ Տէր։

[10]ԵԲՂ. Փղշտացւոցն [11]ԵԲՂ. դարձուցից զՀՀ-
ՆՈՐԱ, քանզի մատնեցին ի սպառ զգերու-
թիւնն [12]ԵԲՂ. դարձուցից զՀՀՆՈՐԱ, քանզի հալածեաց սրով զեղբայր իւր, եւ եղծ
զղջրմութիւն իւր, եւ պատառեաց ի սպառ
զբարկութիւն իւր, եւ զցասումն իւր պահ-
եաց յաւիտեան [13]ԵԲՂ. զապարանս Նոսրայ
[14]ՆԲՂ. դարձուցից զՀՀՆՈՐԱ [15]ԵԲՂ. փոխորկաւ
յաւուր մրրկի։ (15) Եւ գնասցէ ի գերութիւն
Մեղքոմ (կամ, թագաւոր նոցա), ինքն եւ իշ-
խանք նորա

ԳԼ. Բ

1 Ա՚յսպէս ասէ Տէր. Ի վերայ երից ամ-
պարչտութեանցն Մովաբու, եւ ի վերայ
չորիցն՝ ոչ [1]դարձայց ի նմանէն", փոխա-
նակ զի այրեցին զոսկերս [2]թագաւորին
2 եդոմայեցւոց ի մոխիր։ Առաքեցից
հուր ի վերայ Մովաբու, եւ կերիցէ հուր
[3]զՔրիմնես քաղաքայ նորա. եւ մեռցի ի
սակարաւթեան Մովաբ", ազազակաւ եւ
3 ձայնիւ փողոյ. Եւ սատակեցից զգա-
տաւար ՚ի նմանէ, եւ զամենայն իշխանս
նորա կատարեցից ընդ նմին, ասէ Տէր։
4 Ա՚յսպէս ասէ Տէր. Ի վերայ երից ամ-
պարչտութեանց որպէսզի Յուդայ, եւ ի
վերայ չորիցն՝ ոչ [1]դարձայց ի նմանէն",
փոխանակ զի մերժեցին օրէնս Տեառն
եւ զհրամանս նորա ոչ պահեցին, եւ
մոլորեցուցին զնոսա [5]մնասեօք իւրեանց
զոր արարին," զորոց զհետ գնացին հարքն
5 նոցա։ Եւ առաքեցից հուր ի վերայ
Հրէաստանի, եւ կերիցէ [6]զՔրիմնես ե-
րուսաղէմ։
6 Ա՚յսպէս ասէ Տէր. Ի վերայ երից ամ-
պարչտութեանցն Իսրայէլի, եւ ի վե-
րայ չորիցն՝ ոչ [1]դարձայց ի նմանէ", փո-
խանակ զի վաճառեցին զարդարն ար-
7 ծաթոյ, եւ զանանկն ընդ կօշկայ. Որ
[7]կոխեն զհող երկրի. եւ կտիրն զղջութիս
աղքատաց", եւ զճանապարհս խոնարհ-
հաց թիւրեն. եւ հայր եւ որդի առ մի
[8]բոզ մտանեն, զի պղծեացեն զանուն
8 Աստուծոյ իւրեանց։ Եւ զհարձս իւր-
եանց առապատս ձգէին ընդ ինքեանս
եւ ընդ սեղանն", եւ զգինի զրպարտու-
թեանց ըմպէին ի տան աստուծոյ իւր-
9 եանց։ Բայց ես բարձի զՄովաբհացին
յերեսաց նոցա, որոյ բարձրութիւն իւր
բարձրութիւն մայրի, եւ հզօր էր իրրեւ
զկաղնի. եւ բարձի զպտուղ նորա ի վե-
րուստ եւ զարմատս նորա ի ներքուստ։
10 Եւ ես հանի զձեզ յերկրէն Եգիպտացւոց, եւ չրջեցուցի զձեզ յանապատ աս-
քառասուն՝ ժառանգեցուցանել զերկիրն
11 Ամովրհացւոց։ Եւ ասի յորդւոց ձերոց
ի մարգարէս, եւ յերիտասարդաց ձերոց
յուխտս որս. միթէ ո՞չ էիցէ այպէս, որդիք
12 Իսրայէլի, ասէ Տէր։ Եւ արբուցանէիք
ուխտաւորացն [9]իմոյ գինի, եւ մար-
գարէիցն պատուիրէիք զի մի մար-
13 գարէացնէն։ [10]Ա՚սան այգորիկ ահաւասիկ
ես հոլովիցս ցանեմ ի ներքոյ ձեր՝ զոր
14 օրինակ հոլովի" սայլ լի օրանաւ։ Եւ կո-
րիցէ փախուստ յընթացողէն, եւ որ զօ-
րաւորն իցէ մի զօրացի ի զորութեան
իւրում, եւ [11]պատերազմողն մի ապրե-
15 ցուսցէ զանձն իւր, Եւ ոպեմնաւորն
մի կարասցէ ունել զկէմ, եւ որ արագն
իցէ ոտիւք՝ մի ապրեսցի, եւ հեծեալն
16 մի ապրեցուսցէ զանձն իւր, Եւ [12]մի
պոզի սիրտ իւր ի զօրութիւն. մերկն
հալածեսցի" յաւուր յայնմիկ, ասէ Տէր։

ԳԼ. Գ

1 Լ՚սարուք զպատգամս զայս զոր խօ-
սեցաւ Տէր ի վերայ ձեր, [13]տունդ Իսրա-
յելի, ի վերայ ամենայն ազգացդ զորս
2 հանի յերկրէն [14]Եգիպտացւոց Բայց զձեզ"
բնաւրեցի յամենայն ազգաց երկրի. վասն
այնորիկ ի ձէնջ խնդրեցից զվրէժ ամե-
3 նայն չարեաց ձերոց։ Թէ գնասցեն ա-
մենեւեքեան երկու ի միասին, մի՞ ոչ ճա-
4 նապհեցին զմիմեանս։ Եթէ զոչիցէ առիւծ
[15]յանտառի, եւ ոչ իցէ որս այսրեակ
նորա". եթէ տացցէ կորիւն առիւծու
զձայն իւր ի մայրեաց իւրմէ, եւ ոչ ինչ
5 իցէ յափշտակեալ նորա։ Եթէ անկա-
նիցի՞ թռչուն [16]ի երկիր առանց որսոր-
դի. եթէ ճայթիցէ՞ որոգայթ ի վերայ
6 երկրի՞ եւ ոչ ինչ իցէ ըմրռնեալ։ Եթէ
հարկանիցի՞ փող ի քաղաքի, եւ ազգն
ոչ խռովեսցի. եթէ իցէ՞ն չարիք ի քա-
7 ղաքի եւ Տեառն չիցէ արարեալ։ Վասն
այնորիկ ոչ արասցէ Տէր Աստուած իրս
ինչ, եթէ ոչ յայտնեսցէ [17]զիւրասն ծա-
8 ռայից իւրոց մարգարէից։ Առիւծ զո-
չիցէ, եւ ո՞վ իցէ որ ոչ սարսիցէ. Տէր

---

[1] ՆԲԲ. դարձուցից զչէնս նորա [2] ՆԲԲ. թագաւորին [3] ՆԲԲ. զաւազանաս Կարիովդայ, եւ մեռցի Մովաբ ազգաւս [4] ՆԲԲ. ի միջոյ նորա [5] ՆԲԲ. անօրէնս իւրեանց [6] ՆԲԲ. զաւազանաս [7] ՆԲԲ. ցանկան հողոյ երկրին ի գլուխ աղքատաց, (Կամ կոխան առնեն գլուխ աղքատաց ընդ հող երկրի) [8] ՆԲԲ. կին մնանեն, զի պղծեացեն զանուն սրբութեան իմոյ։ (8) Եւ ի վերայ ձորձոց գրաւելոց ի կողին լինէին առ աւենայն սեղանոյ

[9] ՆԲԲ. գ-կ-ս [10] ՆԲԲ. Ահա ես ընկճեմ զձեզ սր էդդ, որպէս ընկճէ (Կամ, Ահա ես ընկճիմ ընդ ձեզ որպէս ընկճի) [11] ՆԲԲ. Հզորն [12] ՆԲԲ. սր ժիրն է սրտիւ իւրով ի հզորս՝ փախիցէ մերկ [13] ՆԲԲ. որդիք [14] ՆԲԲ. Եգիպտացւոց, եւ ասեմ, (2) Զձեզ միայն [15] ՆԲԲ. յանտառի եւ ոչ իցէ նորա որս [16] ՆԲԲ. յորոգայթ յերկրի, եթէ չիցէ նմա յարեալ թակարդ. միթէ յառնայցի՞ որոգայթ յերկրէ, [17] ՆԲԲ. զգաղտնիս իւր

Աստուած խօսեցաւ, եւ ով իցէ որ ոչ մարգարէասցի։

9 *Պատմեցէք ի գաւառս Ասորեստանեայց եւ ի գաւառս երկրին Եգիպտացւոց, եւ ասացէք, ժողովեցարուք ի լեառն Շամրին, եւ տեսէք սքանչելիս բազումս ի մէջ նորա, եւ զբռնութիւնս*
10 *ի մէջ նորա։ Եւ ոչ [3]ծանեաւ զլինելոց նմին իւր, ասէ Տէր, որ գանձէին անօրէնութիւնս եւ [4]թշուառութիւնս ի գաւառս իւրեանց։ Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր Աստուած [5]ցՏիւրոս. Երկիրդ որ չուրջ զբեւ է՝ աւերեսցի, եւ խորտակեսցի ի քէն ամենայն զօրութիւնքո, եւ յափշտակեսցին [6]գաւառք քո։*
12 *Զի այսպէս ասէ Տէր. Զոր օրինակ թէ կարասցէ թափել հովիւ ի բերանոյ առիւծու աքեացս երկուս կամ ըմբակ մի ունկան, այնպէս զերծցին որդիքն Իսրայելի որ բնակեալ են ի Սամարիա, [7]դէմ յանդիման ազգին եւ ի մէջ Դամասկացւոց։*
13 *Քահանայք, լուարուք՝ եւ վկայութիւն դիք առնդ Յակովբայ, ասէ Տէր*
14 *[8]ամենակալ։ Զի յաւուր յայտնիկ յօրժամ խնդրեցից զվրէժ ամպարշտութիւնացն Իսրայելի ի նմանէ, առից վրէժ եւ զսեղանսն Բեթելայ, եւ փչրեսցին եղջիւրք*
15 *սեղանոյն եւ անկցին յերկիր։ Եւ խորտակեցից զապարանս [9]թեւաւորս ի վերայ ամարաստան ապարանիցն՝՝, եւ ապականեսցին ապարանքն փղոսկրեայք, եւ բազում եւ այլ ապարանք անկցին, ասէ Տէր։*

Գլ. Դ

1 *Լուարուք, [10]զայն Տիեառն՝՝, երինջք Բասանու, որ էք ի լերինս Շամրնի որ զրկէք զաղքատս եւ առոնս հարկանէք զանանկն, որ ասէք ցտիարս ձեր, Մա-*
2 *տուցէք մեզ զինի զի արբցուք։ Երդնու[11]Տէր իսրբութիւնս իւր, եթէ Ահա աւուրք եկեսցեն ի վերայ ձեր, եւ [12]առցեն զձեզ զինուք, եւ զդուստր ընդ ձեզդ են սրկցեն*
3 *ի սանս չեռուցեալս, եւ ելանիցէք մերկք՝ միմեանց դէմ ընդդէմ, եւ անկանիցիք ի [4]լերինն Ռեմմանայ՝՝, ասէ Տէր։ Մտէք ի Բեթէլ եւ ամպարշտեցայք, եւ ի Գազգազա յաճախեցէք ամպարշտել. եւ մատուսէք զզոհս ձեր ընդ առաւօտս, եւ*
5 *յերիր աւուր զասասանորդս ձեր։ [13]Ընթեռնուին օրէնս արտաքոյ, եւ կոչէին խոստովանութիւնս. պատմեցէք թէ զայս սիրեցին որդիքն Իսրայելի, ասէ Տէր՝՝։*
6 *Եւ ես արկի զձեզ [14]ցաւ առաստանց յամենայն քաղաքս ձեր, եւ կարօտութիւն հացի յամենայն տեղիս ձեր. եւ ոչ դար-*
7 *ձարուք առ իս, ասէ Տէր։ Եւ արգելի ի ձէնջ զանձրեւ երիւք ամսովք յառաջ քան զկոլմս. ի մի քաղաք տեղացի, եւ ի մեւս քաղաք ոչ տեղացի. [15]մի վիճակ թացից, եւ ի միւսն յորում ոչ տե-*
8 *զացից ցամաքեցայ։ Եւ ժողովեցին՝՝ երկու եւ երիք քաղաք ի մի քաղաք ըմպել ջուր, եւ [16]մի յագեցին՝՝. եւ ոչ*
9 *դարձարուք առ իս, ասէ Տէր։ Հարի զձեզ տապով եւ [17]արկի զձեւք դալուկն. եւ յաճախեցէք ի պարտէզս ձեր եւ յայգիս եւ ի թզենիս ձեր եւ ի ձիթենիս, եւ ակեր թրթուր՝՝. սակայն եւ այնպէս ոչ*
10 *դարձարուք առ իս, ասէ Տէր։ Առաքեցի ի վերայ ձեր մահ [18]ի ճանապարհին Եգիպտացւոց, եւ կոտորեցի սրով զերիսատարտս ձեր հանդերձ գիւրութեամբ երիվարաց ձերոց, եւ [19]ծախեցի զբանակս ձեր հրով յարկութեան իմով՝՝. սա-*
11 *կայն եւ այնպէս ոչ դարձարուք առ իս, ասէ Տէր։ Կործանեցի զձեզ՝ որպէս կործանեաց Աստուած զՍոդոմ եւ զԳոմոր, եւ եղերուք իբրեւ զխանձող զերծեալ ի հրոյ. սակայն եւ այնպէս ոչ դարձա-*
12 *րուք առ իս, ասէ Տէր։ Վասն այնորիկ այսպէս արարից քեզ, Իսրայէլ. բայց*

---

[1]ՆԵՐ. յապարանս Ազովտայ, և յապարանս [2]ՆԵՐ. ի լերինն Շամրնի, եւ տեսէք ամենուկ բազում [3]ՆԵՐ. գիտացին առնել ուղղութիւն [4]ՆԵՐ. յափշտակութիւն յապարանս [5]ՆԵՐ. Թշնամին եղեցի չուրջ զերկրաւ. [6]ՆԵՐ. ապարանք [7]ՆԵՐ. յանկման բազմոցի և ի գահոյս պատառուածիւրս։ (13)Լուարուք [8]ՆԵՐ. ՆՀովայ Աստուած զօրութեանց [9]ՆԵՐ. ձերոցս Հանդերձ ամպարաստան ապարանիւք [10]ՆԵՐ. զբանս զայս [11]ՆԵՐ. Տէր ՆՀովայ՝ [12]ՆԵՐ. բարձցէ զձեզ կարթիւք, եւ զմնացորդս ձեր կարթիւք ձկանց։ (3)Եւ ելանիցէք ընդ խրամատս իւրաքանչիւր յանդիման իւր, և անկանիցիք յամրոյն [13]ՆԵՐ. Եւ մատուսէք ի խմորոյ զգոհութեանն, և կոչեցէք զկամաւն և քարոզեցէք. զի այսպէս սիրեցէք, որդիք Իսրայելի, ասէ Տէր ՆՀովայ [14]ՆԵՐ. սրբութիւն [15]ՆԵՐ. ի մի վիճակ տեղոյ եւ մեւսն ուր ոչ տեղայ՝ ցամաքեցաւ։ (8)Եւ ժողովեցան [16]ՆԵՐ. ոչ յագեցան [17]ՆԵՐ. գայկաւ. զբազմութիւն պարտիզաց ձերոց եւ այգեաց ձերոց և թզենեաց ձերոց և ձիթենեաց ձերոց եկեր խաւնիծ [18]Կամ, ճանապարհաւ [19]ՆԵՐ. Հանի զՀոտ բանակաց ձերոց յանգուանս ձեր

զի այսպէս առնելոց եմ քեզ՝ [1]պատրաստեա կալզալ զԱստուն Տէառն Աս-
13 տուծոյ քո Իսրայէլի։ Զի ահաւասիկ ես եմ՝ որ հաստատեմ զերկինս եւ հաս-
տատեմ զերկիր, եւ պատմէ ի մէջ մարդկան զօծեալ իւր, առնէ առաւօտ եւ մէգ, եւ ելանէ՝" ի վերայ բարձանց երկրի. [2]Տէր Ամենակալ՝" անուն է նորա։

Դ. Ե

4 Ա՛ւարուք զբանս զայս՝ զոր ես [3]առից
2 ի վերայ ձեր ողբս։ Անկաւ առնդ Իս-
րայէլի," եւ ոչ եւս յաւելուցու յառնել
կոյս Իսրայէլի. կոփածանեցաւ յերկրի
լերամ, եւ չիք ոք որ կանգնիցէ զնա։
3 Քանզի այսպէս ասէ Տէր [4]Տէր. Ի քաղաքէ
յորմէ ելանէին հազարք՝ մնացէ հարիւր,
եւ յորմէ ելանէին հարիւր՝ մնացէ տասն
4 տանդ Իսրայէլի։ Քանզի այսպէս ասէ
Տէր առ տունդ Իսրայէլի. Խնդրեցէք
5 զիս եւ կեացջիք. Եւ մի՛ խնդրէք զԲէթ-
էլ, եւ ի Գաղգաղա մի՛ մտանէք, եւ
ի Զրհոդն երդման մի՛ ելանէք. զի Գաղ-
գաղա գերելով գերեսցի, եւ Բեթէլ եւ-
6 ղիցի իբրեւ զչեզնակալ։ Խնդրեցէք զՏէր
եւ կեացջիք. զի մի՛ բորբոքեսցի իբրեւ
զհուր [5]տունն Յովսեփայ եւ կերիցէ
զնա, եւ ոչ ոք իցէ որ չիջուցանիցէ
7 [6]տանդ Իսրայէլի։ Որ առնէ ի բարձունս
իրաւունս, եւ արդարութիւն եդ յերկ-
8 րի. Որ առնէ զամմնայն եւ նորոգէ",
եւ դարձուցանէ յայդ զստուերս մահու,
եւ զթիւ ի դիշեր մթացուցանէ. որ կո-
չէ զջուրս ծովու եւ հեղու ի վերայ եր-
կասց երկրի. [7]Տէր ամենակալ անուն
9 է նորա. Որ բաշխէ զբեկումն ի վերայ
զօրութիւնն, եւ ածէ զմշուշաւորութիւն
ի վերայ ամրոցաց"։
10 Ատելին ի դրունս պանդխմանիչս,
եւ [7]զբանս սուրբս" պիղծս արարին։
11 Վասն այնորիկ փոխանակ զի կոփիցիք
զաղքատս եւ կաշառս [8]ընդունաւ առ-
նուիք ի նոցանէն, ապարանս զարգա-
րեալս չինեսջիք, եւ մի՛ բնակեսջիք ի
նոսա, այգիս ցանկալիս անկեսջիք, եւ
12 զգինի նոցա մի՛ արբջիք։ Զի գիտացի ես
զբազում ամպարշաւութիւնս ձեր, եւ սաս-
տիկ են մեղք ձեր. առ ոսն կոխիկք զար-
գարն առնլով փոխանակս, եւ խոտորու-
13 ցուցանիկք զաղքատն ի դրունս։ Վասն
այնորիկ որ խմաստունն է՝ ի ժամանա-
կին յայնմիկ լռեսցէ, զի ժամանակն չար
14 է։ Խնդրեցէք զբարի եւ մի՛ զչար, զի
կեցջիք, եւ եղիցի ընդ ձեզ Տէր Աս-
տուած [9]ամենակալ, զոր օրինակ ասաս-
15 ցէք՝" Թէ Աստուած զչարիս, եւ սիրես-
ցաք" զբարիս. Հաստատեցէք գիւրաւունս
[10]ի դրունս ձեր, զի ողորմեսցի Տէր Աս-
տուած" մնացորդաց Յովսեփայ։
16 Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր [2]Աս-
տուած ամենակալ". Ցամմնայն հրապա-
րակս կոծ. եւ յամմնայն ճանապարհս
առասցի Վա՛յ, վա՛յ, [11]կոչեսցի մշակ ի սուգ
17 եւ ի կոծ եւ ի ձայնարկուս. Եւ յամե-
նայն ճանապարհս" կոծ, քանզի անցից
ընդ մէջ քո, ասէ Տէր։
18 Վա՛յ որ ցանկան աւուրն Տեառն. զի՞
կայ ձեր եւ աւուր Տեառն, եւ նա խա-
19 ւար է, եւ ոչ լոյս։ Զոր օրինակ թէ
փախիցէ մարդ յերեսաց առիւծու, եւ
պատահեսցէ նմա արջ, եւ փախուսցու
ի տուն, եւ յեցուսցէ զձեռս իւր յորմն,
20 եւ հարկանիցէ զնա օձ. Մի՞ ապաքէն
խաւար է օր Տեառն, եւ ոչ լոյս, ազ-
ջամղձին, եւ ոչ գոյ ի նմա ճաճանչ։
21 Ատեցի, մերժեցէ զտօնս ձեր, եւ ի
22 տարեկանս ձեր ոչ հոտոտեցայց։ Զի
թէ մատուցանիցէք զողջակէզս եւ զպրես
ձեր՝ ոչ ընկալայց, եւ [12]յերեւելիս փրկու-
23 թեանց" ձերոց ես ոչ հայեցայց։ Ի բաց
արա քենէն զձայն երգոյ քոյ, եւ զնուագս
24 սրնգոյ քոյ ես ոչ լուայց։ Եւ յորկոս-
ցին իբրեւ զջուր իրաւունք, եւ արդա-
25 րութիւն իբրեւ զհեղեղ անհուն։ Մի՞թէ
սպանդ եւ զոհս մատուցէք ինձ յանա-

[1] ՆԵԲ. պատրաստեա զքեզ ընդ առաջ Աստուծոյ քո, Իսրայէլ։ (13) Զի ահաւասիկ որ հաստատեացն զլերինս եւ արար զհողմ, եւ յայտ առնէ մարդոյ զինչ է խորհուրդ նորա, եւ որ առնէ զառաւօտս ի խաւար, եւ գնա [2] ՆԵԲ. Եհովայ Աստուած զօրութեանց [3] ՆԵԲ. բառնամ ի վերայ ձեր յողբ, տունդ Իսրայէլի։ (2) Անկաւ [4] ՆԵԲ. Եհովայ [5] ՆԵԲ. ի տանն [6] ՆԵԲ. ի Բեթէլ։ (7) Որ շրջէք զդատաստան ի դառնութիւն, եւ զարդարութիւն ընկենուք յերկիր։ (8) Խնդրեցէք զոր արարն զԱղամաստեղն եւ զՀպակ [9] ՆԵԲ. Եհովայ է անուն նորա. (9) Որ հոզացուցանէ զաւերումն ի վերայ հզօրին, եւ աւերումն հասցէ յամրոցն

[7] ՆԵԲ. զբոս խօսին արդար՝ [8] ՆԵԲ. ցորենոյ [9] ՆԵԲ. զորութեանց, զոր օրինակ ասացէք։ (15) Ատեցէք զչարիս, եւ սիրեցէք [10] ՆԵԲ. ի դրան. Իցէ թէ ողորմեսցի Տէր զորութեանց [11] ՆԵԲ. կոչեցեն զմշակ ի սուգ եւ զձայնարկուս ի կոծ։ (17) Եւ յամենայն այգիս եղիցի [12] ՆԵԲ. ի խաղաղականս պարարտից

պատի անդ զքառասուն ամ, տունդ Իս-
26 րայելի. Եւ առէք [1]զիւղտանն Մոզբայ, եւ զառաջ առաւածոյն ձերոյ զՀոմ-
վայ, զպատկերս նոցա զոր արարէք
27 ձեզ։ Եւ փոխեցից զձեզ՝ անդր քան զԴամասկոս, ասէ Տէր, Աստուած [2]ա-
մենակալ անուն է նորա։

ԳԼ. Զ

1 Վա՛յ [3]որ անզոհանին զԱիւն, եւ յուսա-
ցեալ իցեն ի լեառն Շամրնի. կիսեցին
զիշխանութիւնս ազգաց, եւ մարին ի
2 Նոսա՝ տունդ Իսրայելի։ Անցէք՝ տա-
մինեքին ի Քաղանէ եւ առէք. եւ անց-
ջէք անտի ի մեծն Եմաթ [4]Հասրայ, եւ
իջէք ի Գէթ այլազգեաց, [5]զօրաւորս
քան զամենայն քաղաքսն զայնոսիկ, եւ
իբր՝ իցեն մեծ սահմանք նոցա քան
3 զսահմանս ձեր։ Որ [6]գայգդ յօր չարեայ,
որ մերձենայդդ հաստանել ի չարաիմս
4 աստիճանից՝։ Որ ննջէիդդ ի գահոյս
փղոսկրեայս, եւ փափկանայք յանկողինս
ձեր, եւ ուտէք ոչխս ի հօտից եւ որիս
5 զիսեզիկս յանդուց. Որ կայիմս հարկա-
նէք ընդդէմ սրնգոյ. [7]զոյս իրրեւ
հաստատունս համարեցայք, եւ ոչ ան-
6 ցաւորս. Եւ ըմպէք գաւրգիով՝ գինի,
եւ անոյշ լուգալ օծանիք. եւ ոչ ցաւէ
7 ձեզ վասն ընկճմանն Յովսեփեա։ Վասն
այնորիկ արդ ի գերութիւն վարեսցին
[8]յիշխանսն իննեւ բռնաւորաց, եւ հատցի
8 խնդիրն երիվարացն Եփրեմայ։ Զի եր-
դուաւ Տէր՝ յանձն իւր, ասէ Տէր Աս-
տուած զօրութեանց՝ [9]թէ Պարչկացս ցից
զամենայն հպարտութիւնս Յակոբայ, եւ
զայլարանս նորա ատեցից՝, եւ բարձից
9 զքաղաքս նորա ամենայն բնակչօք։ Եւ
եղիցի եթէ մնասցեն տասն այր ի տան

10 միում, եւ մեռանիցին. [10]եւ մնացորդքն
ասնուացուն զընտանիս իւրեանց, եւ ի-
ջանեն հանել զոսկերս նոցա ի տանէ
անտի. եւ ասասցեն ցայնոսիկ որք կայ-
ցեն ասացի տանն, եթէ Այլ [11]ինչ՝ մնաց
11 այդր առ քեզ։ Եւ նա ասասցէ թէ Ոչ.
եւ [11]մի՛ ասասցէ թէ Լուռ լեր. [12]վասն
այնորիկ է զի ոչ անուանէին՝ զանուն
12 Տեառն։ Զի ահաւասիկ Տէր հրամայեաց
ասացէ, եւ հարցէ զմիձ ապարանսն կոր-
ծանմամբ, եւ զվիորբ ապարանս պա-
տառմամբ։

13 Իբրէ՝ թէ արշաւիցեն երիվարք ընդ
վէմս, կամ [13]հանդարտիցեն ի մէջ մա-
տակաց՝. զի խոտորիցէք զիրաւունս [14]ի
ցասումն եւ զպտուղ արդարութեան [15]ի
14 դառնութիւն, Եւ՝ ուրախ լինիք յոչինչ
բանս, այլ ասէիք եթէ Ո՛չ զօրութեամբ
15 մերով եղեն ինչ եղջիւրք։ Վասն այ-
գորիկ ահաւադիկ ես յարուցից ի վերայ
ձեր, տունդ Իսրայելի, ասէ Տէր Աս-
տուած զօրութեանց, ազգ մի՝ որ նե-
ղիցին զձեզ [16]զի մի՛ ևս մասնիցէք յե-
մաթ, եւ մինչեւ ի հեղեգան արե-
մտից՝։

ԳԼ. Է

1 Այսպէս եցոյց ինձ Տէր [17]Տէր, եւ ահա
ծնունդ մարախոյ գայր ընդ առաւօտս,
2 եւ ահա ջորւակ մի Դաւիթ սպրծայ։ Եւ
եղիցի եթէ վախճանեացէ ուտել՝ զիւոտ
երկրին. եւ ասեմ, [18]Տէր Տէր՝, իմայեա.
քանզի ո՞վ իցէ որ կանգնեսցէ զՅակոբ,
3 զի սակաւաւոր է։ Ապաչաւեաց Տէր
ի վերայ այդորիկ. Եւ այդ եւս մի՛ լի-
ցի, ասէ Տէր։

4 Այսպէս եցոյց ինձ Տէր Տէր, եւ ահա
կոչեաց դատաստան հրով Տէր Տէր. եւ
եկեր զխորս բազումս, եւ եկեր զվի-
5 ճակն։ Եւ ասեմ, Տէր Տէր, դադարեցո
զայդ. քանզի ո՞վ է որ յարուցանէ զՅա-
6 կոբ, զի սակաւաւոր է։ Ապաչաւեաց

[1] ՆԲԳ. զՄիքքաւէմ (այբ-էն՝ գեղարնաս) Մոզբայ, և զՔիւն պատկերաց ձերոց, զաստղն աստուածոց ձերոց, զոր արարէք վասն ձեր։ (27) Եւ ես վարեցից զձեզ ի գերութիւն [2] ՆԲԳ. զօրութեանց [3] ՆԲԳ. որոց ի Հանգստեան են ի Սիոն եւ յապահովս ի լերինն Շամրնի, նշանաւորացն իշխանաց ազգաց, եւ գայ առ նոսա [4] ՆԲԳ. պաճաճ [5] ՆԲԳ. միթէ լա՞ւ իցեն քան զթագաւորութիւնս զայսոսիկ. միթէ [6] ՆԲԳ. հեռացուցանէք գօրն չարեաց, եւ տայք մերձենալ սահուդ անիրաւութեան [7] ՆԲԳ. իբրեւ զԻաւիթի հնարէք ձեզ նուագարանս երգոց, (6) Եւ ըմպէք բաժակաւ [8] ՆԲԳ. ի գլուխ գերելոցն, եւ կարճեսցի խրախճութիւն բազմելոցն ի գահոյս։ (8) Երդուաւ Տէր Նէովայ [9] ՆԲԳ. Պարչիմ եւս զՀպարտութիւնն Յակոբայ, եւ առեալ զպարանս նորա

[10] ՆԲԳ. Եւ բարձեալ գնա հօրեղբայր նորա կամ որ այրէն գնա՝ հանել զոսկերսն ի տունէն, եւ ասասցէ գնա որ ի տանն իցէ, եթէ Այլ ոք [11] ՆԲԳ. նա [12] ՆԲԳ. զի չէ ի դէպ յիշել [13] ՆԲԳ. հերկիցի անդ եզամբք [14] ՆԲԳ. ի դառնութիւն [15] ՆԲԳ. յաւիտեան, (14) Ո՛վ որ [16] ՆԲԳ. ի մեծ եմաթայ մինչեւ ի հեղեգան անապատի [17] ՆԲԳ. Նէովայ, եւ ահա արար մարախ ի սկզբան բուսանելոյ խոտոյն վերջնոյ. եւ ահա խոտ վերջին յետ հնձոց թագաւորին։ (2) Եւ եղեւ յետ ճարակելոյ ի սպառ [18] ՆԲԳ. Տէր Նէովայ, այլոեւ այլոյս։

Տէր ի վերայ այդօրիկ, եւ այդ եւս մի՛ լիցի՝ ասէ Տէր Տէր։
7 Այսպէս եղեալ էին [1]Տէր Տէր. եւ ահա այր մի կայր ի վերայ ապամանգեայ պարսպի՛, եւ ի ձեռին իւրում [2]ապա-
8 մանդ։ եւ ասէ ցիս Տէր, Զի՞նչ տեսանես Ամովս. եւ ասեմ, [2]Ապամանդ. եւ ասէ ցիս Տէր, Ահա ասիկ ես հաստատեցից [2]ապամանդ ի մէջ ժողովրդեան իմոյ Իսրայէլի, եւ ոչ եւս յաւելից [3]անց-
9 ցուցանել վնասս։ եւ ապականեսցին բարձունք կռատակուիցեան, եւ մնեհանք՝ Իսրայէլի աւերեսցին. եւ յարուցայ ի վերայ տանն Ջերոբաամայ սրով։
10 Եւ առաքեաց Ամասիա քահանայ Բեթէլայ առ Ջերոբաամ արքայ Իսրայէլի, եւ ասէ, Ժողովս կռուէ ի վերայ քո Ամովս ի մէջ տանս Իսրայէլի, եւ երկիրս ոչ կարէ հանդուրժել ամենայն բանից
11 նորա. Զի այսպէս ասէ Ամովս. Ջերոբաամ սրով վախճանեսցի, եւ Իսրայէլ վերկոյզ վերեսցի յերկրէ իւրմէ։
12 Եւ ասէ Ամասիա ցԱմովս, Տեսանող, տար տեզի, գնա յերկիրն Հրէաստանի. անդ կեաց եւ անդէն մարգարէասջիր.
13 ի Բեթէլ մի՛ եւս յաւելուցես մարգարէանալ, զի սրբութիւն թագաւորի է եւ տունն թագաւորութեան։
14 Պատասխանի եւս Ամովս եւ ասէ ցԱմասիա, Ես ոչ մարգարէ էի եւ ոչ որդի մարգարէի, այլ հովիւ [4]էի, եւ [5]քուէ՛
15 քաղէի. Եւ առ զիս Տէր ի հօտից, եւ ասէ ցիս Տէր, Գնա գուշեւ մարգարեաց ի վերայ ժողովրդեան իմոմ Իսրայէլի։
16 Եւ արդ լուր զպատգամս Տեառն. Դու ասես, Մի՛ մարգարէանար ի վերայ Իսրայէլի, եւ մի՛ [6]ժողովս ժողովեր՛ ի վե-
17 րայ տանն [6]Ջակոբայ։ Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր. Կին քո ի քաղաքիդ պոռնկեսցի, եւ ուստերք քո եւ դստերք քո ի սուր անկցին, եւ երկիրդ քո յարարաժին բաժանեսցի, եւ դու յերկրի պղծումն վախճանեսցես, եւ Իսրայէլ գերեսցի յերկրէ իւրմէ։

Գլ. Ը

1 Այսպէս եղեալ էին Տէր Տէր. եւ ահա

[1] ԵԲԲ. եւ ահա Տէր կայր ի վերայ որմոյ անագի (փոքրիկ սրճաղաց) [2] ԵԲԲ. Անագ [3] ԵԲԲ. զանց առնել զնոքօք։ (9) Եւ բարձունք Իսահակայ եղիցին յաւերակ, և սրբութիւնք [4] ԵԲԲ. Էի սրճաղաց, մոլաթուզ [5] ԵԲԲ. խոսիր բանս [6] ԵԲԲ. Իսահակայ

2 գործի հաւրսաց՝։ Եւ ասէ, Զի՞նչ տեսանես, Ամովս. եւ ասեմ, [7]Գործի հաւրսաց՝. եւ ասէ ցիս Տէր, Հասեալ է վախճան ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայէլի, եւ ոչ եւս յաւելից [8]անցուցա-
3 նել զնովսա։ Եւ սպրասցեն յարկք տաճարին յաւուր յայնմիկ, ասէ Տէր՝. բազումք անկանելոցին, եւ յամենայն տե-
4 պս [9]արկից լռութիւն՝։ Լուարուք զայս՝ որ [10]նեղէիք զանանկն լինել աուաւօտս,
5 եւ պրկէիք զպզքաաս յերեկոյեայ՝. Եւ ասէիք, Ե՞րբ անցցէ [11]ամիսս, եւ չանեսցուք՝, եւ չպատիա՞ եւ բացցուք [12]զգանձս, եւ առնել [13]պչուի փոքր, եւ մեծացուցանել [14]պկչիս, եւ առնել կշիռս սուս-
6 իեան, Առանալ արծաթով զպզքաաս, եւ զանանկն ի գնոյ կօշկաց, եւ [15]յամենայն ի վաճառս մեր չահեսցուք՝։
7 Երդնու Տէր ի վերայ հպարտութեան Յակոբայ, մի՛ [16]ոչ մոռասցին ի սպառ
8 ամենայն գործք ձեր՝։ Եւ ի վերայ այդորիկ [17]խռովեսցի երկիր,՝ սուգ առցեն ամենայն բնակիչք նորա. եւ ելցէ իբրեւ գետ [18]վախճան նորա, եւ իջցէ՝ իբրեւ
9 գետն Եգիպտացւոց։ Եւ եղիցի յաւուր յայնմիկ, ասէ Տէր Տէր, [19]մտցէ արեւ պահն ի միջօրէի, եւ խաւարեսցի յերկ-
10 րի լոյս ի տուէ՝։ Եւ դարձուցից ի սուգ զտօնս ձեր, եւ զամենայն երգս ձեր յողս, եւ ածից ի վերայ ամենայն հասակաց քուրձ, եւ ի վերայ ամենայն գլխոց կնգուխիւն. եւ արարից նմա իբրեւ սուգ [20]սիրելւոյ, եւ զորոց ընդ նմանէն իցեն՝ իբրեւ օր ցաւոց՝։
11 Ահա աւուրք գան, ասէ Տէր Տէր, եւ առաքեցից սով յերկիր. ոչ սով հացի եւ ոչ ծարաւ ջրոյ, այլ սով լսելոյ զբանն
12 Տեառն։ Եւ [21]խռովեսցին ջուրք՝ ի ծովէ մինչեւ ի ծով, եւ ի հիւսիսոյ մինչեւ

[7] ԵԲԲ. կողով պտղոյ հասկոյ [8] ԵԲԲ. զանց առնել գնոքօք։ (3) Եւ եղիցին յողս երգք տաճարին յաւուր յայնմիկ, ասէ Տէր Եհովայ [9] ԵԲԲ. արկցին լռեցեալն [10] ԵԲԲ. կլանէիք զանանկն, եւ զրկէիք զպզքաաս երկրի [11] ԵԲԲ. ամսագլուխ, եւ վաճառեսցուք արմտիս [12] ԵԲԲ. զգոռնան [13] ԵԲԲ. զարգուն [14] ԵԲԲ. զմիկդ [15] ԵԲԲ. զխոտանն ցորենոյն վաճառեսցուք [16] ԵԲԲ. Ոչ մոռացայց ի սպառ զամենայն գործս նոցա [17] ԵԲԲ. ո՞չ շարժեսցի երկիր, եւ [18] ԵԲԲ. Եբլէբն գուվանդակ, եւ տարցի ի բաց եւ ընկղցի [19] ԵԲԲ. առց մտանել արեգական ի միջօրէի, եւ խաւարեցուցից զերկիր ի պայծառութեան տուընջեան [20] ԵԲԲ. միամօրոյ, եւ վախճան նորա իբրեւ օր դառնութեան [21] ԵԲԲ. մերթեսցին

յարեւելս. ընթասցին ինդրել զրանն
13 Տեառն, եւ մի գայցեն։ Յաւուր յայնմիկ [1]նեղեսցին կոյսք գեղեցիկք եւ երի-
14 տասարդք ի ծարաւոյ, Ոյք երդնուին ի [2]քաւ ուխտին Շամրնի, եւ ասէին, Կեն-
դանի է աստուած քո, Դան, եւ Կեն-
դանի է [3]աստուած քո, Բեերսաբէէ՞. եւ
կործանեսցին եւ մի՛ եւս կանգնեսցին։

Գլ. Թ

1 Տեսի զՏէր գի կայր ի վերայ սեղանոյ,
եւ ասէ, Բաղխա [4]զսեղանդ, եւ չար-
ժեսցին դրանդիք, եւ կտրեա սրիկ ի
գլուխս ամենեցուն. եւ զմնացորդս նո-
ցա սրով կոտորեցից, եւ մի ապրեսցէ
ի նոցանէն փախուցեալն, եւ մի՛ զերծցի
2 ի նոցանէ զերծեալն։ Գի եթէ ծածկեա-
ցին ի գժոխս, անտի ձեռն իմ կորգես-
ցէ զնոսա. եւ եթէ ելանիցեն յերկինս,
3 եւ անտի իջուսից զնոսա։ Եւ եթէ թա-
քիցին ի բարձունս Կարմղայ, եւ անտի
յուզեցից եւ առից զնոսա. եւ եթէ ըն-
կեսցին յաչսց իմոց ի խորս ծովու, եւ
անդ հրամայեցից վիշապին խայթել զնո-
4 սա. Եւ եթէ գնայցեն ի գերութիւն ա-
ռաջի թշնամեաց իւրեանց, եւ անդ
հրամայեցից սրոյ, եւ սատակեսցէ զնո-
սա. եւ հաստատեցից ի վերայ նոցա
զաչս իմ ի չարութիւն եւ ոչ ի բարու-
թիւն։
5 Եւ Տէր [5]Աստուած ամենակալ՞ որ մեր-
ձենայ յերկիր եւ [6]չարժէ զնա՞, եւ սուգ
առցեն ամենայն բնակիչք նորա. եւ ելցէ
իբրեւ զգետ [7]վխճան նորա, եւ իջցէ՞
6 իբրեւ զգետն Եգիպտացւոց։ Որ չինէ
յերկինս [8]զհամբառնալ իւր, եւ զաւե-
տիս իւր՞ յերկիր հաստատէ. որ կոչէ
զջուրս ծովու եւ հեղու զնա ի վերայ
երեսաց երկրի. [9]Տէր ամենակալ անուն
է՞ նորա։
7 Ո՞չ սպարէն իբրեւ զորդիս Եթէով-

պացւոց էք դուք ինձ, որդիք Իսրա-
յելի, ասէ Տէր. ոչ զԻսրայէլ հանի յերկ-
րէն Եգիպտացւոց, եւ [10]զայլազգիս՝ ի
8 Փաստից, եւ զԱսորիս՝ ի Բոխորայ՞։ Ա-
հաւասիկ աչք [11]Տեառն ի վերայ թագա-
ւորութեանդ մեղաւորացդ, եւ բարձից
զնա յերեսաց երկրի. սակայն ի սպառ
ոչ ջնջեցից զտունն Յակոբայ, ասէ Տէր։
9 Զի ահաւասիկ ես հրամայեմ տամ, եւ
[12]ցրուեցից զտունն Իսրայելի, զոր օրինակ հոսի՞
հոսեալ, եւ մի՛ անկցի մանրուած նորա
10 յերկիր։ Սրով վախճանեսցին ամենայն
մեղաւորք ժողովրդեան իմոյ. որք ա-
սէին, Ոչ մերձեսցին եւ ոչ հասցեն ի
վերայ մեր չարիք։
11 Յաւուր յայնմիկ կանգնեցից զխորանն
Դաւթի զանկեալն, եւ կանգնեցից զկոր-
ծանեալս նորա. եւ զյատակեալս նորա
վերստին կանգնեցից, եւ չինեցից զնա
12 ըստ աւուրցն յաւիտենից, Որպէս զի
[13]ինդրեսցեն զիս մնացորդք մարդկան,
եւ ամենայն ազգք՞ յորոց վերայ կոչե-
ցեալ է անուն իմ, ասէ Տէր՝ որ առնէ
13 զայս։ Ահա աւուրք գան, ասէ Տէր,
եւ [14]հասցեն կալք կալոց, եւ խայծեսցի
խաղող ի հարաւակոյս, եւ բղխեսցեն լե-
ռինք գքաղցրութիւն, եւ ամենայն բո-
14 լորք անտառաձորք եղիցին՞։ Եւ դար-
ձուցից զգերութիւն ժողովրդեան իմոյ
Իսրայելի, եւ չինեսցեն զքաղաքս ա-
պականեալս եւ բնակեսցեն. եւ անկեա-
ցեն այգիս, եւ արբցեն զգինի նոցա.
արասցեն պարտէզս, եւ կերիցեն զպտուղ
15 նոցա։ Եւ անկեցից զնոսա յերկրի իւր-
եանց. եւ մի՛ եւս մերժեսցին յերկրէ
իւրեանց, զոր ետու ես նոցա, ասէ Տէր
Աստուած [15]ամենակալ։

---

[1] ՆԵԲԵ. նաւաղեսցին [2] ՆԵԲԵ. յանցանս [3] ՆԵԲԵ. ճանապարհն Բեերսաբեայ [4] ՆԵԲԵ. զխոյակդ [5] ՆԵԲԵ. Եհովայ զօրութեանց է [6] ՆԵԲԵ. տայ նմա հալել [7] ՆԵԲԵ. Էվէր բովս նգակ, և ընկղմեսցի [8] ՆԵԲԵ. զվէրնայարկս իւր, և զկամար նորա [9] ՆԵԲԵ. Եհովայ է՞ անուն [10] ՆԵԲԵ. զՓղշտացիս՝ ի Կափթորայ, եւ զԱսորիս՝ ի Կիրայ [11] ՆԵԲԵ. Տեառն Եհովայի [12] ՆԵԲԵ. հոսեցից յամենայն ազգս զտունդ Իսրայելի, զոր օրինակ հոսի ցորեան [13] ՆԵԲԵ. ժառանգեսցեն զընտացորդն Եդովմայ եւ զամենայն ազգս [14] ՆԵԲԵ. հասցէ որ հերկէն՝ առ որ հնձէ, եւ որ հարկանէ հնձան՝ առ սերմանահան, եւ կաթեցուսցեն լերինք գքաղցր, եւ ամենայն բլուրք հալեսցին [15] ՆԵԲԵ. քո

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ
Աբդիու

1 ՏԵՍԻԼ Աբդիու՝ Այսպէս ասէ Տէր
[1]ցեղոցմ. Լուր լուայ ի Տհառնէ,
եւ պաշարումն առաքեցաւ՝ ի հեթա-
նոսս. Արիք եւ յարիցուք ի վերայ
2 նորա ի պատերազմ: Ահա սակաւա-
ւոր նուաւ զքեզ յազգս, եւ անարգ-
3 եալ ես գու յոյժ: Հպարտութիւնն
սրտի քո [2]բարձրացոյց զքեզ լինա-
կել ի ծակս վիմաց. բարձրացուցանել
զինակութիւնն իւր, եւ ասել՝ ի սրտի
4 իւրում, Ո՞վ իջուսցէ զիս յերկիր: Եթէ
բարձրասցիս իբրեւ զարծուի, եւ եթէ
ի մէջ աստեղաց գիցես զբոյն քո, եւ
5 անտի իջուցից զքեզ, ասէ Տէր: Եթէ
գողոց մտեալ էր առ քեզ կամ աւազա-
կաց գիշերոյ, [3]ուր եւ էր զօդէիր՞, եւ
ո՞չ արկիք գողանային բաւական իւր-
անից. եւ եթէ կիմողք մտեալ էին ի
քեզ, եւ ո՞չ եթէ ճիւ մի ոչ իմսուին:
6 Զիարդ քննեցաւ Եսաւ, եւ ըմբռնեցան
7 ծածուկք նորա: Մինչեւ ի սահմանս
առաքեցին զքեզ ամենայն արք ուխտի
քո, [4]դարձան ընդդէմ քո,՝՝ զօրացան ի
վերայ քո արք խաղաղութեան քո,
[5]վարանեցին զքեզ՝՝. ոչ գոյր իմաստու-
8 թիւն ի նմա, Ցաւուր յայնմիկ, ասէ
Տէր, կորուսից զիմաստութիւն յերկ-
րէն Եդովմայ, եւ զհանճար ի լեռնէն
9 Եսաւայ: Եւ սարսեցան պատերազմողք
[6]քո որ ի Թեմանայ՝. զի բարձցի մարդ
10 ի լեռնէն [7]Եսաւայ՝ վասն սպանման
եւ անպատուութեան եղբօրն՝ Յակոբայ
ծածկեսցէ զքեզ ամօթ, եւ ջնջեսցիս

11 յաւիտեան: Յօրէ յորմէ կացեր [8]հակա-
ռակ, յաւուրն գերելոյ այլազգեանց զօ-
րութիւնն նորա, եւ օտարք մտին ընդ
դրունս նորա, եւ ի վերայ Երուսաղեմի
վիճակս արկանէիր, եւ [9]դուք էիք՝՝
12 իբրեւ զմի ի նոցանէն: Եւ [10]մի՛ տեսցես
զաւեր եղբօրն քո յաւուրն օտարաց,
եւ մի՛ ոանհար լիցիս՝՝ որպէսզի Յուդայ
յաւուրս կորստեան նոցա, եւ [11]մի՛ մե-
13 ծարանեսցես յաւուր նեղութեան, եւ մի՛
մտանիցես ընդ դրունս ժողովրդոց յա-
ւուր գայթից նոցա. եւ մի՛ տեսցես զժո-
ղովս նոցա յաւուր սատակման նոցա,
եւ մի՛ ի վերայ հարկանիցիս զօրութեան
14 նոցա յաւուր կորստեան նոցա: Եւ մի՛
առնուցուս զկիրճս նոցա՝՝ սատակել
զպարսիսեան ի նոցանէ, եւ [12]մի՛ պաշա-
րեսցես՝՝ զվախստեայսն նոցա յաւուր նե-
15 ղութեան նոցա: Զի մերձ է օր Տեառն
ի վերայ ամենայն ազգաց. զոր օրինակ
արարեր գու՝ եղիցի քեզ, եւ հատու-
16 ցումն քո հատուսցի ի գլուխ քո: Զի
զոր օրինակ արբեր ի վերայ լերին սրբու-
թեան իմոյ, արբցեն ամենայն ազգք
[13]զինի. արբցեն եւ կիջցին՝՝, եւ եղիցին
իբրեւ չեզուածք:
17 Բայց [14]ի լեռնի Սիոն եղիցի փրկու-
թիւն, եւ եղիցի սրբութիւն. եւ ժա-
ռանգեսցեն տունն Յակոբայ զժառան-
18 գիչս՝՝ իւրեանց: Եւ եղիցի տունն Յա-
կոբայ հուր, եւ տունն Յովսեփու բոց,

---

[1] ՚ԵԲՐ. Եհովայ գնդովքայ. Լուր լուաք ի Տհառնէ, եւ հրեշտակ առաքեցաւ: [2] ՚ԵԲՐ. Խաբեայ զքեզ, որ բնակեագ ի ծակս վիմաց. բարձր է բնակութիւն նորա եւ ասէ
[3] ՚ԵԲՐ. (գիա՞րդ լեկար.) [4] ՚ԵԲՐ. Խաբեցին զքեզ,
[5] ՚ԵԲՐ. ոչ տարէն գհաց քո՝ գնեն որդացիք ընդ քեզ
[6] ՚ԵԲՐ. քո, Թեման [7] ՚ԵԲՐ. Եսաւայ՝ ոպանմամբ, (10) Վասն անիրաւութեանն որ եղեւ եղբօր քումմ

[8] ՚ԵԲՐ. ի հանդիպոյ [9] ՚ԵԲՐ. գու էիր [10] ՚ԵԲՐ. չէր արժան քեզ հայել յաւուր եղբօր քո, յաւուր օտարութեան նորա, եւ ոանհար լինել
[11] ՚ԵԲՐ. մեծարանել յաւուր նեղութեան նոցա, (13) Մտանել ընդ դրունս ժողովրդեան իմոյ յաւուր վշտաց նոցա, եւ հայել ի չարիս նոցա յաւուր թշուառութեան նոցա, եւ ոչ արկանել ձեռն ի ստացուածս նոցա յաւուր տառապանաց նոցա: (14) Եւ ոչ կալ ի կիրճս [12] ՚ԵԲՐ. մատնել [13] ՚ԵԲՐ. հանապազ. արբցեն եւ կլցեն [14] ՚ԵԲՐ. ի լերին Սիոնի եղիցին ապրեալք, եւ եղիցի սրբութիւն. եւ ժառանգեսցեն տունն Յակոբայ զկալուածս

և տունն Եսաւայ եղէգն· վասն սոցին
գնովաւ և կերպին ինա, և մի՛ մնաս-
ցէ [1]կրակարեր տանն Եսաւայ. զի Տէր
19 խօսեցաւ։ Եւ Ժառանգեսցին [2]Նագեբաս-
ցիք զլեառն Եսաւայ, և [3]Անկեալքդ
գայլագլխա՛. և Ժառանգեսցին [4]զկատն
Եփրեմայ, և զպաչտն Շամրնի և [5]զԲն-
20 նեամին և զԳազաատացին։ Եւ սե-
ռութեան սկիզբն այն իցէ որդւոցն Իս-
րայելի, երկիր Քանանացւոց՝՝ մինչեւ ի
Սարփաթ, և գերուխիւնն Երուսաղե-
մի [6]մինչեւ յԵփրաթա. և՝՝ Ժառանգես-
21 ցեն զքաղաքս [7]Նագեբայ։ Եւ ելցեն
[8]ապրեալք ի լեռնէ Սիոնի տնտուլ վրէժ
ի լեռնէն Եսաւայ, և եղիցի Տեառն
արքայութիւն՝՝։

[1] ՆԲԳ· մնացորդ [2] Ա յԵԶԿ՝ Հարաւային [3] Ա յԵԶԿ՝ գաշտայինք՝ զՓղշտացիս [4] ՆԲԳ· զգաշան [5] ՆԲԳ· Ինհիամին՝ զԳազատաց։ (20) Եւ գերութիւն զօրացս այսոցիկ որդւոցն Իսրայելի զՔանանացւոցն [6] ԵԲԳ· որ ի Սեփարաթ [7] Ա յԵԶԿ՝ Հարաւոյ [8] ՆԲԳ· փրկիչք ի լեառն Սիոն՝ գտանել զլեառնն Եսաւայ· եւ արքայութիւնն եղիցի Տեառն

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ

ՅՈՎՆԱՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ եղեւ բան Տեառն առ Յովնան
2 որդի Ամաթեայ, եւ ասէ, Արի եւ
գնա ի Նինուէ քաղաք մեծ, եւ քարո-
զեա՛յիր [1]անդ, զի ել ազազակ չարու-
3 թեան նորա առ իս։ Եւ յարուցաւ Յով-
նան փախչել ի Թարսիս յերեսաց Տեառն.
էջ ի Յոպպէ եւ եգիտ նաւ որ երթայր ի
Թարսիս, եւ զինս եւ եմուտ ի նա նաւել
ընդ նոսա ի Թարսիս յերեսաց Տեառն։
4 Եւ Տէր յարոյց [2]հողմ ի ծովուն եւ ե-
ղեւ մրրիկ մեծ ի ծովուն, եւ նաւն ի
5 վտանգի կայր ի խորտակել։ Եւ երկեան
նաւավարքն [3]երկեւղ մեծ, եւ աղաղա-
կէին առ իւրաքանչիւր աստուածս՝ իւր.
եւ ընկեցին զկարասին որ էր ի նաւին
ի ծով անդր, զի թեթեւացուսցեն յինք-
եանց. եւ Յովնան իջեալ ի խորչ մի
6 նաւին՝ ննջէր եւ խորոյր։ Մատեաւ
առ նա նաւապետն, եւ ասէ, Զի՞նչ է
այդ՝ զի խորոտ, արի կարդա [4]զՏէր
Աստուած քո. թերեւս ապրեսցուցէ՛
զմեզ Աստուած, եւ մի՛ կորիցուք։
7 Եւ ասեն իւրաքանչիւր ընկեր իւր,
եկայք արկցուք վիճակս, եւ գիտասց-
ուք, վասն ո՞ր են չարիքս այս ի վե-
րայ մեր։ Արկին վիճակս, եւ ել վիճակն
8 Յովնանու։ Եւ ասեն ցնա, Պատմեա
մեզ, վասն է՞ր են չարիքս այս մեզ.
զի՞նչ արուեստ է քո, ուստե՞ր գաս [5]կամ
յո՞ երկիր՝՝, յորմէ՞ այխարհէ եւ կամ
9 յորմէ՞ ժողովրդենէ։ Ասէ ցնոսա, [6]Ծա-
ռայ Տեառն՝՝ եմ ես, եւ զՏէր Աստուած
երկնից պաշտեմ որ արար զծով եւ զցա-

10 մաք։ Եւ երկեան արքն երկեւղ մեծ,
եւ ասեն ցնա, Զի՞նչ գործեցեր զայդ.
զի գիտացին իմն յերեսաց Տեառն փա-
խուցեալ էր, քանզի պատմեաց նոցա.
11 Եւ ասեն ցնա, Զի՞նչ արասցուք քեզ,
եւ դադարեսցէ ծովս ի մէնջ. զի ծովն
առաւել եւս խռովեալ էր [5]եւ յարու-
12 ցանէր մրրիկ ի վերայ նոցա՝՝։ Եւ ասէ
ցնոսա Յովնան, Առէք ընկեցէք զիս ի
ծովդ, եւ դադարեսցէ ի ձէնջ ծովդ. զի
գիտեմ ես եմէ վասն իմ է մրրիկս այս
մեծ ի վերայ ձեր։
13 Եւ ջանային արքն դարձուցանել զնաւն
ի ցամաք, եւ ոչ կարէին, զի ծովն եւս
քան զեւս խռովէր եւ աճեալ էր
14 վերայ նոցա։ Աղաղակեցին առ Տէր եւ
ասեն, Քաւ լիցի՛, Տէր, մի՛ կորիցուք
վասն անձին առնս այսորիկ, եւ մի՛ ա-
ծեր ի վերայ մեր արիւն արդար, զի
դու, Տէր, որպէս կամեցար եւ արա-
15 րեր։ Եւ առին զՅովնան եւ ընկեցին ի
ծովն, եւ դադարեաց ծովն ի խռովու-
16 թենէ իւրմէ։ Եւ երկեան արքն երկեւղ
մեծ ի Տեառնէ, զնեցին զոհս Տեառն եւ
ուխտեցին ուխտս։

ԳԼ. Բ

1 Եւ հրամայեաց Տէր կիտին մեծի կա-
նել զՅովնան, եւ էր Յովնան ի փոր կի-
2 տին երիս աւուրս եւ երիս գիշերս։ Եւ
եկաց Յովնան յաղօթս առ Տէր Աստուած[7]
3 ի փորոյ կիտին, եւ ասէ, Ի նեղու-
թեան իմում աղաղակեցի առ Տէր [8]Աս-
տուած իմ՝՝, եւ լուաւ ինձ. յորովայնէ
դժոխոց [8]աղաղակի իմում՝ լուր, Տէր,՝՝
4 ձայնի իմում։ Ընկեցեր զիս ի խորս սրտիդ

[1] ՆԷԲ. ի վերայ նորա [2] ՆԷԲ. հողմ մեծ [3] ՆԷԲ. եւ իւրաքանչիւր աղաղակէր առ աստուած
[4] ՆԷԲ. զԱստուած քո, թերեւս յիշեսցէ [5] ՑՆԷԲ. պակաս [6] ՆԷԲ. Եբրայեցի
[7] ՆԷԲ. ՚ի ՅՈՆԱ ՚ԻՆ ՔՐԻՍՏՈՍ, ԻՐ ԼՈՒԱՐ [8] ՆԷԲ. աղաղակեցի

ծովու, եւ դնաք պաշարեցին զիս. ա-
մենայն զբօսանք քո եւ ալիք քո ան-
5 ցին ի վերայ իմ։ Եւ ասացի՝ Թէ Մեր-
ժեցայ [1]յաչաց քոց. արդ իցէ՞ Թէ՞ յա-
6 ւելից հայել ի տաճար սուրբ քո։ Հե-
զան զինեւ ջուրք մինչեւ յոգիս, ան-
դունդք անհնարինք պաշարեցին [2]զիս.
եղմուտ գլուխ իմ ընդ փասպաս լերանց։
7 Ի վի՛ երկիր, որոյ նիզք իւր ազիք յա-
ւիտենից. ելցեն յապականութենէ կեանք
8 իմ։ Ա՛ո քեզ, Տէր Աստուած իմ, ի
նուաղել հոգւոյ իմոյ կարդացի՛, զՏէր
յիշեցի, եւ եկեսցեն [3]աղօթք իմ ի տա-
9 ճար սուրբ քո։ Որ պահէին զունայնու-
թիւն եւ զսուտութիւն՝ զողորմութիւնս
10 իւրեանց թողին։ Այլ ես ի ձայն օրհ-
նութեան [4]եւ խոստովանութեան՛ մա-
տուցից քեզ պատարագ, զոր [5]ուխտե-
ցի, եւ հատուցից փրկութեան Տեառն՛։
11 Եւ հրամայեցաւ ի Տեառնէ վիշապ
ձկանն, եւ եթող զնա ի ցամաք։

Գլ. Գ

1 Եւ եղեւ բան Տեառն առ Յովնան երկ-
2 րորդ անգամ եւ ասէ, Արի գնա ի Նի-
նուէ քաղաք մեծ, եւ քարոզեսջիր ի
նմա զամ զոր [6]առաջին քարոզութեանն զոր
3 խօսեցայ՛ առ քեզ։ Յարեաւ Յովնան
եւ գնաց ի Նինուէ, որպէս խօսեցաւ
տէր նմա Տէր. եւ Նինուէ էր քաղաք
մեծ Աստուծոյ, իրրեւ գնաց երից ա-
4 ւուրց ճանապարհի։ Եւ սկսաւ Յովնան
մտանել ի քաղաքն իրրեւ աւուր միոյ
գնաց ճանապարհի, քարոզեաց եւ ասէ,
Այլ եւս [7]երկիր աւուրք, եւ Նինուէ կոր-
ծանեսցի։
5 Եւ հաւատացին արք Նինուէացիք յԱս-
տուած, եւ քարոզեցին պահս եւ քուրձ
զգեցան ի մեծամեծաց մինչեւ փոքրուն-
6 իւրեանց։ Եհաս բանն առ թագաւորն
Նինուէացւոց. յարեաւ յաթոռոյ իւրմէ
եւ մերկացաւ զպատմուճան իւր, զգե-
ցաւ քուրձ եւ նստաւ ի վերայ մոխրոյ։
7 Եւ քարոզեցաւ եւ պատմեցաւ ի Նի-
նուէ՝ ի թագաւորէն եւ ի մեծամեծաց
իւրոց, Թէ Մարդ եւ անասուն, խաշն
եւ արջառ, մի՛ ինչ ճաշակեսցեն եւ
մի՛ ճարակեսցին եւ մի՛ ջուր արբցեն։
8 Եւ [8]զգեցան քուրձ մարդ եւ անասուն,
եւ [9]աղաղակեցին առ Աստուած սրտի
մտօք, եւ դարձան՝ յիւրաքանչիւր ճա-
նապարհաց իւրեանց չարաց եւ յանօ-
9 րէնութենէ որ ի ձեռս իւրեանց. Եւ
ասեն, Ո՛ պիտ, ապաշաւեսցէ Աս-
տուած եւ դարձցի ի բարկութենէ սրտմ-
10 տութեան իւրոյ, եւ մի՛ կորիցուք։ Եւ
եահս Աստուած զգործս նոցա՝ զի դար-
ձան իւրաքանչիւր ի ճանապարհաց իւր-
եանց չարաց, եւ զղջացաւ Աստուած
ի վերայ չարեացն զոր խօսեցաւ առնել
նոցա, եւ ոչ արար։

Գլ. Դ

1 Եւ տրտմեցաւ Յովնան տրտմութիւն
2 մեծ եւ խռովեցաւ. Եւ եկաց յաղօթս
առ Տէր [4]Աստուած, եւ ասէ, Ո՛վ Տէր,
ո՞չ այս այն բանք են իմ մինչ էի ան-
կեան յերկրին իմում. վասն այնորիկ ա-
ճապարեցի փախչել ի Թարսիս, զի գի-
տէի Թէ ողորմած ես դու եւ գթած,
երկայնամիտ եւ բազումողորմ, եւ զղջա-
3 նաս ի վերայ չարեաց։ Եւ արդ, Տէր
[4]Տէր, առ զոգի իմ յինէն, զի լաւ է ինձ
4 մեռանել՝ քան Թէ իցեմ կենդանի։ Եւ
ասէ Տէր ցՅովնան, [10]Թէ Արդարեւ յոյժ
արտմեալ իցես՞։
5 Եւ ել Յովնան ի քաղաքէ անտի, եւ
նստաւ [11]յանդիման քաղաքին, եւ արար
իւր հովանի, եւ նստաւ ընդ հովանեաւն,
մինչեւ տեսանիցէ Թէ դինչ լինիցի քա-
6 ղաքին։ Եւ հրամայեաց Տէր [12]Աստուած
դդմինեւոյն, եւ ել ի վերայ գլխոյն Յով-
նանու՝ լինել նմա հովանի ի վերայ գլխոյ
նորա, զովայուցանել զնա ի տառապա-
նաց իւրոց. եւ ուրախ եղեւ Յովնան ի
վերայ դդմինեւոյն ուրախութիւն մեծ։
7 Եւ հրամայեաց Աստուած որդանն՝
առաւօտուն ի վաղիւ անդր, եհար զդըդ-
8 մինին, եւ յամաքեցաւ։ Եւ եղեւ ի ծա-
գել արեւուն հրամայեաց Աստուած հող-

---

[1] ԵՔԲ. յերեսաց աչաց քոց. սակայն [2] ԵՔԲ. զիս, զինինք պատեցան գլխով իմով (7) Ի փասպաս լերանց իջի. երկիր նգաք իւրովք չուրջ զինեւ յաւիտեան. իսկ դու Հաներ ի գբոյ զկեանս իմ՝ Տէր Աստուած իմ։ (8) Ի նուաղել հոգւոյ իմոյ յիս [3] ԵՔԲ. առ քեզ աղօթք [4] ՅԵՔԲ. պ-յ-ե [5] ԵՔԲ. ուխտեցիս՝ Հատուցից. Տեառն է փրկութիւն [6] ԵՔԲ. քարոզութեանն զոր խօսիմ՝ [7] ԵՔԲ. քառասուն

[8] ԵՔԲ. զգեցին [9] ԵՔԲ. աղաղակեցեն առ Աստուած ուժգին եւ դարձցին [10] Կամ, Լա՞ի իցէ բարկանալ քեզ [11] ԵՔԲ. յարեւելից [12] ԵՔԲ. Տէր Աստուած

մոյ խորչակի տապախառնի, եւ անկաւ արեւն ղվխովիւ Յովնանու, եւ կայր ի տարակուսի եւ քաղէին ոգիք նորա, եւ ասէր, Լաւ էր ինձ մեռանիլ քան զայս կեանս իմ։

9 Եւ ասէ [1]Տէր Աստուած ցՅովնան, [2]Թէ Արդարեւ յոյժ սրտմնալ իցես՞ ի վերայ դդմենոյն։ Եւ ասէ, [3]Յոյժ սրտմնալ եմ՞ մինչեւ ցմահ։

10 Եւ ասէ Տէր, Դու խնայեցեր ի դդմենին յոր ոչ եկեր ինչ աչխատաս, եւ ոչ սնուցեր զնա, որ պիշերի ել, եւ մեւս

11 պիշերի կորեաւ. Ես ո՞չ խնայեցից ի Նինուէ քաղաք մեծ, յորում բնակեալ են աւելի քան զերկոտասան բեւր մարդիկ, որ ոչ ծանեան զալ եւ զահեակ իւրեանց, եւ անասունն բազում։

[1] Ցիչբ. պ-ի-ռ-ե քեզ

[2] Կամ, Լա՞ւ իցէ բարկանալ

[3] Կամ, Բարւոք է ինձ բարկանալ

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ

ՄԻՔԻԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Ե՛Ւ եղեւ բան Տեառն առ Միքիէ Մորասացի՛ յաւուրս Յովաթամայ եւ Աքազու եւ Եզեկիայ՝ թագաւորաց Յուդայ, զոր եսաս ի վերայ Շամրին եւ ի վերայ Երուսաղէմի։

2 Լուարուք, ժողովուրդք ամենայն, եւ ունկն դիւրէք երկիր եւ ամենայն բնակիչք նորա. եւ եղիցի Տէր Աստուած ի մէջ ձերում ի վկայութիւն, Տէր ի սուրբ տեղւոջէ իւրմէ։ 3 Զի ահաւասիկ ելանէ[1] ի տեղւոջէ իւրմէ, իջցէ եւ [2]հասցէ ի վերայ բարձանց երկրի։ Եւ [3]չարժեսցին լերինք ի ներքոյ նորա, եւ ձորք [4]հալեսցին իբրեւ զմոմ առաջի հրոյ, եւ իբրեւ զջուր հոսեալ ընդ զառիվայր։ 5 Վասն ամենայնի անցից Յակոբու է այն ամենայն, եւ վասն մեղաց տանն Իսրայելի. իսկ արդ ո՞վ է ամենայնիւն Յակոբայ, մի՞ ոչ Շամրին. եւ ո՞վ [5]է մեզք տանն Յուդայ, եթէ ոչ Երուսաղէմ։ 6 Եւ եղից զՇամրին [6]իբրեւ զտապատար մրտապահաց պտղոց[7]", եւ ի տունկ այգւոյ, եւ կործանեցից ի խորխորատ զվէմս նորա, եւ զհիմունս նորա մերկասցուցից։ 7 Եւ զամենայն պատկերս նորա կոտորեսցին, եւ զամենայն [7]արձանս նորա այրեսցին հրով. եւ զամենայն կուռս նորա արարից յապականութիւն. զի ի կապիտաց պոռնկութեան ժողովեաց, եւ [8]ի կապիտաց պոռնկութեան ամիսխեսցի։

8 Վասն այնորիկ կոծեսցի եւ ողբասցի, եւ գնասցի մերկ եւ բոկ. եւ արարից

[1] ՆԲԳ՝ այլեւայլն յ–Ելս– ։ Տէր [2]ՆԲԳ· կոխեսցէ [3]ՆԲԳ· Հալեսցին [4]ՆԲԳ· պատառեսցին [5]ՆԲԳ· են բարձունք [6]ՆԲԳ· ի չեղջ անդոյ [7]ՆԲԳ· կապկանս [8]ՆԲԳ· ի կապկանս պոռնկութեան դարձցին ։

(8) Վասն այնորիկ կոծեսցից եւ ողբասցից, եւ գնասցից մերկ եւ բոկ. եւ արարից կոծ իբրեւ զվիշապաց, եւ սուգ իբրեւ 9 զդստերաց [9]Համարեսց։ Զի սաստկացան հարուածք նորա. քանզի հասին մինչեւ ի Յուդա, եւ մերձեցան մինչեւ ի պրտունս ժողովրդեան իմոյ եւ յերու- 10 սաղէմ։ [10]Ով ի Գէթայ էք՝ մի՛ մեծաբանէք, եւ որ յԱկկարիմէ էք՝ մի՛ նորոպէք ի տանէ զկատակութիւն. հող ի գլուխ լերուք ի վերայ կատակութեանց 11 ձերոց։ Բնակեալն բարեխառնութեամբ ո՛չ ել ի քաղաքաց իւրոց. բնակիչք Սենաարայ, կոծ առէք ի վերայ տանն որ մերձ է առ նա. բարձայ ի ձէնջ զհարուածս ցաւոց։ 12 Ո՛վ արար սկիզբն բարեաց բնակելոյն ի մէջ ցաւոց". զի իջին չարիք ի Տեառ- 13 նէ ի վերայ դրանցն Երուսաղէմի։ [11]Շահեցիւն կառաց եւ դրնգիւն երիվարաց", բնակիչդ Լաքիսայ, նա է [12]սաւթորդ մեղաց դստեր Սիոնի. զի ի քեզ գտան 14 անաթարչութիւնք Իսրայելի։ Վասն այնորիկ [13]սայլ արձակեսցս մինչեւ ի Ժառանգութիւն Գեթայ, զառունս տունս- աիս, ի նանիր եղեն" թագաւորացն Իս- 15 րայելի. [14]Մինչեւ ի ժառանգիչս զո ածցեն բնակիչքդ Լաքիսայ Ժառանգութեամբ". մինչեւ յԱդոլամ հասցէ [15]փառք 16 դստերն Սիոնի"։ Գերծիր եւ կտրեա ի վերայ փափուկ որդւոցն քոց, լայնեա զվազումն քո իբրեւ զարծուոյ, զի գերեցան ի քէն։

[9] ՆԲԳ· Ջայլեմանց [10]ՆԲԳ· Մի՛ պատմէք ի Գէթ, յայով մի՛ յայք. ի Բեթ ափրա (այլեւայլն ի տան փոշւոյ) թաւալեսջիք ընդ փոշի։ (11) Անց, բնակիչդ Սափիրայ (այլեւայլն գեղեցկութեան), մերկ ամօթալից. ոչ ել արտաքս բնակիչն Սաանանայ. կոծ Բեթ եսելայ առնու ի ձէնջ զօթեւան իւր։ (12) Քանզի ցաւեաց բնակչին Մարովթայ (այլեւայլն դառնութեան) վասն բարւոյն [11]ՆԲԳ· Լծեա երիվար արագ ի կառս [12]ՆԲԳ· սկիզբն [13]ՆԲԳ· տացես վարձանս Մորեսեթ-գեթայ· տունք Աքզիբայ (այլեւայլն նանրութեան) սահեցեն [14]ՆԲԳ· Ածից քեզ տակաւին ժառանգ, բնակիչդ Մարեսայ [15]ՆԲԳ· փառքն Իսրայելի

ԳԼ. Բ

1 [1]Եզեն խորհել զվատսական՝, եւ գործեն
զչարիս յանկողինս իւրեանց, եւ ընդ
այգ ընդ լոյսն զնոյն կատարէին. զի
[2]ոչ ամպարձին զձեռս իւրեանց առ Ա-
2 ռուած՝։ Յանկոյսին անդոյ, եւ յափըշ-
տակէին, [3]գործս եւ զառնիս բռնատա-
ւէին, յափշտակէին՝ զայր եւ զառն
նորա, զայր եւ զժառանգսն իւրեան նորա։
3 Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր, Ա-
հաւասիկ ես խորհիմ ի վերայ ազգիդ
այդորիկ չարիս՝ ուստի ոչ համրառնայ-
ջիք զպարանոցս ձեր, եւ ոչ գնայջիք
4 կանգուն, զի ժամանակն չար է։ Յաւ-
ուր յայնմիկ [4]առից ի վերայ ձեր ա-
ռակ. ողբասցին ողբս ձայնիւ, եւ ա-
սասցին, [5]Ի չուառաւելեամբ [6]չուառա-
ցաք. [5]զման ժողովրդեան իմոյ լարով
չափիցաս, եւ ոչ ոք էր որ արգելոյր
զնա զարձուցանել. անդք մեր բաժա-
5 նեցան՝։ Վասն այնորիկ ոչ ոք լցէ որ
արկանիցէ լարարաժին ի վիճակ յեկե-
ղեցւոջ Տեառն։
6 [6]Մի՛ լայք արտասուօք, եւ մի՛ ար-
տասուեսցին ի վերայ այդորիկ. զի ոչ
7 մերժեսցէ զնախատինս։ Ար ասաց՝ Իմ
Տուն Իսրայելի բարկացոյց զոգի Տեառն,
եթէ այս գնացք նորա իցեն, ոչ են բար-
ւոք բանք նորա ընդ նմա, եւ ոչ ու-
ղիղ գնացեալ է առաջի իմ ժողովրդ
8 իմ՝։ Ի [7]չնամարհիւն հակառակեցաւ
ընդդէմ խաղաղութեան իւրոյ. զմարմի
նորա մորթեսցեն բառնալ զայս, զպա-
9 հումն պատերազմի։ Վասն այնորիկ ա-
ռաջնորդք ժողովրդեան իմոյ անկցին ի
մանց փափկութեանց իւրեանց. վասն

[1]ԵՓԲ. Վա՛յ որոց խորհին զանօրէնութիւն [2]ԵՓԲ. է զօրութիւն ի ձեռս նոցա [3]ԵՓԲ. եւ տանց՝ եւ բռնագատէին. Հարստահարէին [4]ԵՓԲ. առցեն [5]ԵՓԲ. զման ժողովրդեան իմոյ փոխեաց, զի՞րդ եհան յինէն. յետս կացեալքն (կամ, փոխանակ դարձուցանելոյ յետս) բաժանեաց զանդս մեր [6]ԵՓԲ. Ասէն. Մի՛ մարգարէանայք որոց մարգարէանան. մի՛ մարգարէացին նոցա, զի ոչ բարձցին նախատինք։ (7) Ով որ կոչիւդ տան Յակոբայ, միթէ կարճեցա՞ւ ոգի Տեառն. այսոքի՞ գործք նորա. բանք իմ չիցե՞ն բարւոք որոց գնան ուղիղ։ (8) Եւ յերեկէ (կամ, ի վաղուց) ժողովուրդ իմ յարեաւ յինել թշնամի. ի հանդերձէ անտի մերկանայք գվերարկուն յորոց անցանեն յապահովս, դարձեալք ի պատերազմէ։ (9) Զկանայս ժողովրդեան իմոյ վարէք արտաքս ի տանէ

չարութեան գնացից իւրեանց մերժեցան. մերձեցարուք ի լերինն յաւիտեան, 10 ասէ Տէր։ Գոհ կաց եւ գնա, զի ոչ գոյ քեզ այդր հանգիստ. վասն պղծութեան ապականեցայք ապականութեամբ, հատածեցայք առանց ուրուք հալածելոյ։ 11 Այս սուտ յարեաւ, կամիցայ ի քեզ գինի եւ արբեցութիւն, եւ եղիցի ի կաթուածոյ անտի՝ ժողովրդեանս այսմիկ։ 12 Ժողովելով [7]ժողովեսցի Յակոբ ամենեքումբք հանդերձ, եւ ընդունելով ընկալցի զմնացորդս Իսրայելի. եւ ի միասին արարից զդարձ նոցա. իբրեւ ոչխարք ի նեզութեան՝, իբրեւ հօտ ի մէջ մակազատեղի իւրեանց. [8]վարեսցին 13 ի մարդկանէ բազ խրատ. Զի՝ առաջի երեսաց նոցա, խրամատեսցին եւ անցին բազ դուռն, եւ ելին բազ նմա. եւ եւ թագաւորն առաջի երեսաց նոցա, եւ Տէր առաջնորդեսցէ նոցա։

ԳԼ. Գ

1 Եւ [9]ասացէ, Լուարուք իշխանք տանն
Յակոբայ, եւ մնացորդք՝ տանն Իսրա-
2 յելի. Ո՞չ ձեր է գիտել զիրաւունս. Որ
ատելագործ զչարիս, եւ խնդրէք զչարիս.
գերծանէք զմորթի նոցա ի նոցանէ, եւ
զմսուրինս նոցա յսակեցաց իւրեանց։
3 [10]Զոր օրինակ՝ կերան զմսուրինս ժողո-
վըրդեան իմոյ, եւ զմորթի նոցա մոր-
թեցին ի նոցանէն, եւ զոսկերս նոցա
փշրեցին, եւ յօշեցին զմսուրինս նոցա
իբրեւ ի կաթսայս, եւ զմիս նոցա իբ-
4 րեւ ի պատուտն, [11]Նոյնպէս աղաղակես-
ցեն առ Տէր, եւ ոչ լուիցէ նոցա, եւ
դարձուսցէ զերեսս իւր ի նոցանէն ի
ժամանակին յայնմիկ, փոխանակ զի
[12]չարչարեցին զնոսա ի գործս՝ իւրեանց։
5 Այսպէս ասէ Տէր ի վերայ մարգա-

փափկութեան նոցա. ի մանկտոյ նոցա բառնայք զփառս իմ յաւիտեան։ (10) Յոտն կացէք եւ երթայք, զի այս չէ տեղի հանգստեան. վասն զի անսուրբ է, ապականեսցէ, եւ ապականութեամբ մեծաւ։ (11) Եթէ ոք զհետ երթայ հողմոյ եւ ունայնութեան, եւ խօսեսցի սուտ, Ես ասէ՝ Մարգարէացայց քեզ վասն դինւոյ եւ ցբեզոյ. նա եղիցի մարգարէ [7]ԵՓԲ. ժողովեցից, Յակոբ. բովանդակ զքեզ, գաւժարելով գոմարեցիցի գմնացորդսն Իսրայելի. ի միասին եդից զնոսա իբրեւ զխաչինս Բոսրայ [8]ԵՓԲ. եղիցի աղմուկ առ ի մարդկանէ։ (13) Եւ որ խրամատէն [9]ԵՓԲ. ասեմ, Արդ լուարուք, գլխաւորք Յակոբայ, եւ իշխանք [10]ԵՓԲ. Եւ որ [11]ԵՓԲ. Այնժամ [12]ԵՓԲ. վատթարացուցին զգործս

լէիցն՝ որ մոլորեցուցանեն զժողովուրդ իմ, որ խածանեն առատմսուրք իւրեանց, եւ քարոզեն նմա պատերազմ՝ եւ ոչ տուաւ՝ ի բերան նոցա, եւ յարուցեալ ի վերայ նորա պատերազմ՝ վասն այնորիկ գիշեր լիցի ձեզ ի տեսլենէ, եւ նեհմացի ձեզ յղձումենէ. մտցէ արեգակն ի վերայ մարգարէիցն, եւ խաւարասցի ի վերայ նոցա տիւ։ Եւ ամաչեսցին երազատեսքն, եւ ծաղր կացցեն խղձքն, եւ [2]բամբասեսցեն զնոսա ամենեքեան. զի ոչ ոք իցէ որ լսիցէ նոցա՝։ Բայց ես լցայ Հոգւով զօրութեամբ Տեառն, դատաստանաւ եւ զօրութեամբ, պատմել Յակոբու զամպարշտութիւնս նորա, եւ Իսրայելի՝ զմեղս նորա։

Լուարուք զայս, առաջնորդք տանդ Յակոբայ եւ [3]մնացորդք տանդ Իսրայելի, որ անարգէք զիրաւունս, եւ թիւրէք զամենայն ուղղորդս, Որ չինէք զՍիոն արեամբ, եւ զերուսաղէմ անիրաւութեամբ։ Առաջնորդք նորա կաշառօք դատէին, եւ քահանայք նորա վարձուք տային պատասխանի, եւ մարգարէք նորա արծաթով պատմէին զրգծութիւնս, եւ ի Տէր ապաստան լինէին եւ ասէին, Ո՞չ ապաքէն Տէր ընդ մեզ է, եւ ոչ եկեսցէ ի վերայ մեր չարիք։ Վասն այդորիկ ի ձեր սակս Սիոն արօրագիր լիցի, եւ Երուսաղէմ՝ [4]իրրեւ զտապաւար մրգապահաց՝, եւ լեառն տաճարին՝ յանտառ մայրեաց։

Գլ. Դ

Եւ եղիցի յաւուրս [5]յետինս յայտնի լեառն Տեառն, պատրաստեալ՝ ի գլուխս լերանց, եւ բարձրասցի ի վերայ բլրոց, եւ փութասցին ի նա ժողովուրդք [6]բազումք. Եւ երթիցեն ազգք բազումք եւ ասիցեն, եկայք ելցուք ի լեառն Տեառն եւ ի տունն Աստուծոյ Յակոբայ, եւ [7]ցուցցեն մեզ զճանապարհս նորա՝ եւ գնասցուք ի շաւիղս նորա. զի ի Սիոնէ ելցեն օրէնք, եւ բան Տեառն յԵրուսաղէմ. Եւ դատիցի ի մէջ ժողովրդոց բազմաց, եւ յանդիմանեսցէ զազգս հզօրս մինչեւ ցհեռաւորս. եւ կոտորեսցեն զսուսերս իւրեանց ի խոփս, եւ զգեղարդունս իւրեանց ի մանգաղս. ոչ եւս առցէ ազգ յազգի վերայ սուր, եւ ոչ եւս ուսանիցին պատերազմել։ Եւ հանգիցէ իւրաքանչիւր ոք ընդ որթով իւրով եւ ընդ թզենեաւ իւրով, եւ ոչ ոք իցէ որ զարհուրեցուցանիցէ. զի բերան Տեառն ամենակալի խօսեցաւ զայս։ [8]Եթէ ամենայն ժողովուրդք գնասցեն իւրաքանչիւր [9]ի ճանապարհս իւրեանց, այլ մեք գնասցուք յանուն Տեառն Աստուծոյ մերոյ յաւիտեանս եւ առ յապայ։

Յաւուր յայնմիկ, ասէ Տէր, ժողովեցից [10]զմանրակաղն, եւ զհեռացեալն ընկալայց, եւ զոր [11]մերժեցին. Եւ արարից [12]զնեկեալն ի զաւակ, եւ զմանրեալն՝ յազգ հզօր. եւ թագաւորեսցէ Տէր ի վերայ նոցա ի լերինն Սիոնի յայսմհետէ մինչեւ յաւիտեան։ Եւ դու, աչառակ հօտի, [13]մթին դուստր՝ Սիոնի, ի վերայ քո եկեսցէ եւ մտցէ առաջին իշխանութիւն թագաւորութեան [14]ի Բաբելոնէ դստեր Երուսաղէմի։

Եւ արդ ընդէ՞ր [15]ծանեալ զչար՝. մի՞թէ թագաւոր ո՞չ գոյր քո, կամ թէ խորհուրդն քո կորեաւ, զի սաստկացան երկունք քո իբրեւ զծննդականի։ Երկնեա եւ [16]զօրացիր, եւ մերձեաց՝, դուստր Սիոնի, իբրեւ զծննդական. զի այժմ ելցես ի քաղաքէ, եւ [17]բնակեցուցից զքեզ՝ ի դաշտի, եւ հասցես մինչեւ ի Բաբելոն. [18]եւ անտի փրկեսցէ զքեզ՝ եւ անտի ապրեցուսցէ զքեզ Տէր [19]Աստուած քո՝ ի ձեռաց թշնամեաց քոց։ Եւ արդ ժողովեցան ի վերայ քո ազգք բազումք, որք ասէին, [19]եկայք ոտնահար լիցուք՝, եւ տեսցին աչք մեր ի վերայ Սիոնի։ Եւ նոքա ոչ գիտացին զմտրմտուրդ Տեառն, եւ ոչ ի միտ առին զկամս նորա. զի ժողովեաց զնոսա իբրեւ զօրան ի կալ։ Կանգնեաց եւ կաս զնոսա, դուստր Սիոնի, զի զեղջերս քո արարից երկաթիս, եւ զկճղակս քո պղնձիս,

---

[1] ԵԲԲ. խաղաղութիւն, եւ որոյ չէր տուեալ [2] ԵԲԲ. ծածկեսցեն զչրմտունս իւրեանց տիեզերական, զի չէք պատասխանի Աստուծոյ [3] ԵԲԲ. իշխանք [4] ԵԲԲ. եղիցի կայտ աւերակաց [5] ԵԲԲ. յետինս, եղիցի լեառն տան Տեառն հաստատեալ [6] ԵԲԲ. իբրեւ զհեղեղ [7] ԵԲԲ. ցուցցէ մեզ զճանապարհս իւր [8] ԵԲԲ. Զի [9] ԵԲԲ. յանուն աստուածոյն [10] ԵԲԲ. զկաղն [11] ԵԲԲ. չարչարեցի [12] ԵԲԲ. զկաղն ի մնացորդ, եւ զհեռացեալն [13] ԵԲԲ. բլուր դստեր [14] ՅԵՐ. դէմ-ռ [15] ԵԲԲ. բառնաս զաղաղակ [16] ԵԲԲ. հեծեծեա [17] ԵԲԲ. բնակեսցես [18] ԵԲԲ. անդ փրկեսցիս, [19] ԵԲԲ. Ղեծեսցի

եւ մանրեսցես զժողովուրդս բազումս, եւ [1]վշրեսցես նոքօք զաղգս. եւ մատուսցես Տեառն զպատմելիսն նոցա, եւ զղօրութիւնն նոցա Տեառն՝ ամենայն երկրի։

ԳԼ. Ե

1 Եւ [2]պաշարեսցի դուստրն գանգոյ՝, զի նեղութիւն կարգեսցեն վերայ [3]Հր. դատաղանաւ հարցին զՅնդուտս [4]ազգապետ Իսրայելի։
2 Եւ դու, Բեթղեհեմ [5]տուն Եփրաթայ՝, սակաւատոր իցես լինել ի հազարաւորս Յուդայ, ի քէն ելցէ լինել ինձ լինել իշխան Իսրայելի, եւ ելք նորա [6]ի սկզբանէ
3 աւուրց աշխարհի՝։ Վասն այնորիկ տացէ զնոսա մինչեւ ի ժամանակ [7]ծննդականին. ծնցի՝, եւ մնացորդք եղբարց նորա գարձցին առ որդիսն Իսրայելի։
4 Եւ կացցէ, եւ [8]տեսցէ եւ հովուեսցէ հօտի իւրոյ զօրութեամբ Տեառն, եւ ի փառս անուան Տեառն Աստուծոյ իւրեանց հաստատեսցին՝. զի այժմ մեծասցի մինչեւ ի ծագս երկրի։ Եւ եղիցի
5 [9]նմա խաղաղութիւն. յորժամ եւ կեսցէ Ասորեստանեայն յերկիր [10]ձեր, եւ յորժամ հասցէ յաչխարհս ձեր, յարուսցէ՝ ի վերայ նորա եւթն հովիւս եւ ութ
6 վարիչ մարդկան։ Եւ [11]հովուեսցեն զԱսորեստանեայն՝ սրով, եւ զերկիրն Ներբրովթայ [12]ի պատանիչն իւրում. եւ փրկեսցէ զնիզ՝ յԱսորեստանեայն՝ յորժամ եկեսցէ յերկիր [13]ձեր, եւ յորժամ հասցէ ի վերայ սահմանաց ձերոց՝։
7 Եւ եղիցի մնացորդն Յակոբայ ի հեթանոսս, ի մէջ ազգաց բազմաց՝ իբրեւ զցօղ անկեալ ի Տեառնէ, եւ իբրեւ կաթիլ ի վերայ սիզոյ, [14]որպէս զի մի՛ Յոզովիսայի եւ մի՛ մի, եւ մի՛ մնասցէ
8 ի մէջ՝ որդւոց մարդկան։ Եւ եղիցին մնացորդքն Յակոբայ ի հեթանոսս, ի մէջ ազգաց բազմաց իբրեւ առիւծ ի մէջ խաչին յանտառի, եւ իբրեւ զկոթիւն առիւծու ի մէջ հօտից խաչանց. զոր օրինակ յորժամ անցանել գառաւ ցանիցէ եւ յափշտակիցէ, եւ ոչ ոք իցէ
9 որ [15]փախիցէ։ Բարձրասցի ձեռն քո ի վերայ նեղչաց քոց, եւ ամենայն [16]թշնամիք քո առատակեսցին։
10 Եւ եղիցի յաւուր յայնմիկ, ասէ Տէր, առատակեցից զերիվարս քո ի մէջոյ քումմէ, եւ կորուսից զկառս քո։
11 Եւ առատակեցից զքաղաքս երկրի քո, եւ բարձից զամենայն ամուրս քո. եւ բարձից զամենայն կախարդութիւնս քո ի ձեռաց քոց, եւ հարբուկք ոչ եղիցին ի քէզ։
12 Եւ ջնջեցից զպրօշնակս քո եւ զարձանս քո ի մէջոյ քումմէ, եւ ոչ եւս երկիր
13 պագցես գործոց ձեռաց քոց։ Եւ կոտրեցից [17]զանտառսդ ի մէջոյ քումմէ, եւ
14 ապականեցից զքաղաքս քո։ Եւ արարից բարկութեամբ եւ սրտմտութեամբ վրէժխնդրութիւն ի մէջ ազգաց, փոխանակ զի ոչ լուան։

ԳԼ. Զ

1 [18]Լուարուք զայս զոր ասաց Տէր. Արի եւ դատեայ [19]ընդ լերինս՝, եւ լսցեն
2 լուխկն ձայնի քումի. Լուարուք, [20]լսուք, զդատաստան Տեառն, եւ ձայք եւ հիմունք՝ երկրի. զի դատաստան է Տեառն ընդ ժողովրդեան իւրում, եւ ընդ Իսրայելի յանդիմանեսցի։
3 Ժողովուրդ իմ, զի՞ արարի քեզ, [21]կամ ի՞ տրտմեցուցի զքեզ, կամ ի՞ նեղեցի
4 զքեզ. առ ինձ պատասխանի։ Փոխանակ զի հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց, եւ ի տանէ ծառայութեան փրկեցի զքեզ, եւ առաքեցի առաջի քո զՄովսէս եւ զԱհարոն եւ զՄարիամ։
5 Ժողովուրդ իմ, յիշեա զինչ խորհեցաւ վասն քո Բաղակ խագաւոր Մովաբացւոց, եւ զինչ եւս նմա պատասխանի Բաղաամ որդի Բէովրայ, [22]ի վիճակացն մինչեւ ցԳաղգաղ. զի [23]ծանիցի արդարութիւն՝ Տեառն։
6 Ի՞ կանխեցից առ Տէր, [24]ապաչխարեցայց յԱստուած իմ՝ բարձրեալ. եթէ

---

[1] ՆԵԲԳ. Նուիրեցից Տեառն զշահս նոցա եւ զօրութիւն նոցա առ Տէր [2] ՆԵԲԳ. գունդ կազմեա, դուստր գնդի [3] ՆԵԲԳ. մեր [4] ՆԵԲԳ. դատաւորն [5] ՆԵԲԳ. Եփրաթա, [6] ՆԵԲԳ. ի վաղուց անտի յաւուրց յաւիտենից [7] ՆԵԲԳ. ծնանելոյ ծննդականին [8] ՆԵԲԳ. Հովուեսցէ ի զօրութեան Տեառն եւ ի մեծվայելչութեան անուան Տեառն Աստուծոյ իւրոյ, եւ բնակեսցեն նոքա [9] ՆԵԲԳ. Նա [10] ՆԵԲԳ. մեր, եւ յորժամ կոխեսցէ յապարանս մեր, եւ յարուսցուք [11] ՆԵԲԳ. ապականեսցեն զերկիր Ասորեստանեայն [12] ՆԵԲԳ. ի մուտս իւր. եւ նա փրկեսցէ զնիզ [13] ՆԵԲԳ. մեր. եւ յորժամ կոխեսցէ ի սահմանս մեր [14] ՆԵԲԳ. որ ոչ սպասեսցեն, եւ ոչ կայ մնայ

[15] Տես Ելից ԼԴ. 13։ [16] Իմ՝ առաջի լերանց [17] ՆԵԲԳ. լերինք, զդատաստան Տեառն, եւ հիմունք զօրութեան [18] ՅՆԳԲ. գոհ-ո [19] ՆԵԲԳ. յիւր- զիւր եղիր ի Սառիմայ [20] ՆԵԲԳ. գիտացեք զարդարութիւն [21] ՆԵԲԳ. խնարհեցոյց առ Աստուած

կանխեցի՞ց առ նա ողջակիզօք եւ որ-
7 թավք տարեւորօք . եթէ իցէ՞ ընկալցի՞
Տէր ընդ հազարաւորս խոյոց , կամ ընդ
բիւրաւորս [1]նոխազաց պարարտաց՞. եթէ
տա՞ց զանդրանիկս իմ վասն ամպարշտու-
թեանց[2] , եւ պտուղ մարմնոյ իմոյ վասն
մեղաց անձին իմոյ ։
8 Պատմեցաւ քեզ , ո՛վ մարդ , զի՞նչ է
բարի . կամ զի՞նչ ինդրէ ի քէն Տէր ,
բայց առնել զիրաւունս , եւ սիրել զո-
ղորմութիւն , եւ [3]պատրաստ լինել եր-
թալոյ զկնի Տեառն Աստուծոյ քո՞՝ ։
9 Ձայն Տեառն ի վերայ քաղաքի կո-
չեսցի , եւ [4]ապրեցուսցէ վերկիւզածս
անուան նորա ։ Լսեր , ազգ , ո՞ հան-
10 դերձեսցէ զքաղաք , եթէ ոչ հուր , եւ
տուն անօրինի որ զանձէ զգանձս անօ-
րէնս , եւ հայհոյութեամբ անիրաւու-
11 թեան ։ Եւ իցէ՞ թէ արդարասցի կըշ-
ռովք անօրէնն , եւ պայուսակաւ կշռոց
12 նենգութեան . Ուստի զատունս իւրանց
լցին ամպարշտութեամբ՞՝ . եւ բնակիչք
նորա խօսեցան անիրաւութիւն , եւ լե-
զուք նոցա մնծամտանցին ի բերանս
13 իւրեանց ։ Եւ ես [5]հարի զքեզ տապաս-
14 նութեամբ՞՝ վասն մեղաց քոց ։ Դու
կերիցես եւ մի՛ յագեսջիր , եւ [6]մերմկի
զքեզ , եւ բռնանասցիս եւ մի՛ ապրես-
ցիս . եւ որ միանգամ տապրնսցին՝ ի սուր
15 մատնեսցին՞ ։ Դու սերմանեսցես , եւ մի՛
հնձեսցես , դու կթեսցես ձէթ , եւ մի՛
օծցիս իւղով , եւ գինի՝ եւ մի՛ արբցես
16 գինի ։ [7]Եւ ապականեսցին անօրէնք ժո-
ղովրդեան իմոյ՞՝ , եւ ամենայն գործք
տանն Աքաաբայ . եւ գնայէք ըստ
խորհրդոց նոցա . զի մատնեցից զձեզ
յապականութիւն , եւ զբնակիչս քո ի
չչիւն , եւ զնախատինս [8]ժողովրդոց
ընկալջիք ։

ԳԼ . Է

1 Վա՛յ ինձ , զի եղէ իբրեւ զհասկաքաղ
ի հունձս , եւ իբրեւ զճառաքաղ ի կութս .
եւ ոչ գոյր [9]ողկոյզ յառաջին բերոյն
2 ուսաի ուտէի ։ Վայ անձին իմում , զի
կորեաւ՞ երկիւղած յերկրէ , եւ ոչ գոյ
ուղիղ ի մէջ մարդկան . ամենեքին
[10]արեամբ գաղին՞՝ , իւրաքանչիւր զըն-
3 կեր իւր [11]ներկելով նեղեն՞՝ ։ Չձեռս իւ-
րանց պատրաստին ի չար . իշխանն
խնդրէ , եւ [12]դատաւորն խօսի բանս
խաղաղութեան ըստ ցանկութեան ան-
4 ձին իւրոյ . Եւ հանիցէ զբարութիւնն նո-
ցա իբրեւ զցեց՝ որ ուռէ եւ չրջի ի
վերայ կանոնի յաւուր այցելութեան .
վայ վայ , վրէժխնդրութիւնք քո եկին
5 հասին՞՝ , արդ եղիցին լալիք նոցա ։ Մի՛
հաւատայք սիրելւոց , եւ մի՛ յաւուրս
[13]յիշատակ . եւ յանկողնակէզ քումմէ
6 զգոյշ լեր պատմել ինչ նմա ։ Զի որդի
անարգէ զհայր , եւ դուստր յարիցէ ի
վերայ մօր իւրոյ , նուռ ի վերայ սկես-
րի իւրոյ , եւ թշնամիք առն՝ ընտանիք
իւր ։
7 Այլ ես Տեառն ակն կալայց , սպասե-
ցից Աստուծոյ փրկչի իմոյ , եւ լուիցէ
8 ինձ [14]Տէր Աստուած իմ ։ Մի՛ ուրախար
լինիր ինձ , թշնամի իմ , զի պլսրեցայ ,
միւսանգամ կանգնեցայց . զի թէ նստայց
9 ի խաւարի՝ Տէր է իմ լոյս ։ Բարկու-
թիւն Տեառն համբերիցեմ , զի մեզայ
նմա , մինչեւ արդարացուսցէ զդատաս-
տան իմ , եւ արասցէ ինձ իրաւունս ,
եւ հանիցէ զիս ի լոյս , եւ տեսից զար-
10 դարութիւն նորա ։ Եւ տեսցէ թշնամին
իմ , եւ ծածկեսցէ զնա ամօթ , որ ասէր
ցիս՝ Ո՞ր է Տէր Աստուած քո. աչք իմ
տեսցեն ի նա . արդ եղիցի կոխան իբ-
րեւ զկաւ ի ճանապարհի ։
11 [15]Օր ծեփոյ ազիւսոյ , եւ ջնջումն քո
եղիցի օրն այն . մերժեսցէ զիրաւունս
12 քո օրն այն ։ Եւ քաղաքք քո եկեսցեն

---

[1] Ել. հեզեզաց իւղոյ [2] Բէ. յաւելեալ յաւելս , իմոց [3] Բէ իսնարհեցուցանել զանձն գնալ ընդ Աստուծոյ քումմ [4] Բէ. այլ իմաստուն տեսցէ զանուն քո . յուսարութ գաւազանի , եւ որում հանդերձէն զնա ։ (10) Տակաւին կայցէ՞ ի տան ամպարշտի գանձ ամպարշտութեան , եւ արդեւ պակաս որ պիղծ է ։ (11) Եղիցի՞ն ինձ սուրբ կշիռք անիրաւութեան , եւ պայուսակ կշռոց նենգութեան . (12) Որոյ մեծատունք լի են յափշտակութեամբ [5] Բէ. Հարից զքեզ խօսութեամբ , ապականեցից զքեզ [6] Բէ. քաղց քո ի փորի քում. եւ ըմբռնեսցես , այլ մի՛ ապ բեցուսցես , եւ զոր ապրեցուցերդ՝ մատնեցից սրոյ [7] Բէ. Զի պահին օրէնք Ամրեայ [8] Բէ. ժողովրդեան իմոյ

[9] Բէ. ողկոյզ յաւել. երախայրեաց ցանկացաւ անձն իմ ։ (2) Կարեաւ [10] Բէ. դարանին արեան [11] Բէ. որայ որդ այլեաւ [12] Բէ. որ դատաւորն՝ վասն հատուցման , եւ որ մեծն է՝ խօսի ըստ ցանկութեան անձին իւրոյ . այսպէս թէ բերէն զայն ։ (4) Աշնուազդինն նոցա իբրեւ գփուշ . և ուղիղն՝ քան զցանգ փշոցն . յաւուր դիտաց քոց՝ այցելութիւն քո եկն [13] Կամ , ի մտերիմս [14] Բէ. պ-ասե [15] Բէ. Յաւուր շինութեան պարսպոյ քոց , յաւուր յայնմիկ հեռասցին օրէնք ։ (12) Յաւուր յայնմիկ եկեսցեն առ քեզ

ի պաշարումն եւ յաւար Ասորեստանեայց. եւ քաղաքք քո ամուրք՝ ի բաժինս, ի Մուրայ՝ մինչեւ ցԳետան, եւ ի ծովէ մինչեւ ի ծով, եւ ի լեռնէ մինչեւ
13 չեւ ցլեառն։ Եւ եղիցի երկիրն յապականութիւն հանդերձ բնակչօքն իւրովք
14 ի պտղոյ գործոց նոցա։ Արածեա զժողովուրդ քո գաւազանաւ քով զհաւաչինս՝ ժառանգութեան քո, որ բնակեալ են առանձինն յանտառի ի մէջ կարմելայ, արածեսցին ի Բասան, եւ ի Դաղաադ ըստ
15 աւուրցն յաւիտենից։ Ըստ աւուրց ելիցն քոց յերկրէն Եգիպտացւոց ցուցից նոցա
16 սքանչելիս։ Տեսցեն հեթանոսք եւ ամաչեսցեն յամենայն զօրութենէ իւրեանց. դիցեն զձեռս ի վերայ բերանոց իւրեանց, եւ ականջք նոցա խլասցին։

17 Լիզեսցեն զհող իբրեւ [2]օձք որ սողին ընդ երկիր, խռովեսցին ի պաշարման իւրեանց, եւ՝՝ ի Տեառնէ Աստուծոյ մերմէ զարհուրեսցին, եւ երկիցեն ի քէն։
18 Ո՞վ է Աստուած իբրեւ զքեզ որ բառնայ զանօրէնութիւնս, եւ զանց առնէ զանիրաւութեամբք մնացորդաց [3]երկրի ժառանգութեան իւրոյ, [4]եւ ոչ ունի ի վիայութիւն՝՝ զբարկութիւն իւր, զի
19 կամեսցի ողորմութեան է։ Դարձցի եւ զթասցի ի մեզ, [5]եւ ընկղմեսցէ զմեղս մեր. եւ ընկեսցէ՝՝ ի խորս ծովու զա-
20 մենայն զանօրէնութիւնս [6]մեր։ Տացէ՝՝ ճշմարտութիւն Յակոբայ, ողորմութիւն՝ Աբրահամու, [7]որպէս երդուաւ՝՝ հարցն մերոց ըստ աւուրցն առաջնոց։

յԱսորեստանէ անտի, եւ ի քաղաքաց ամրացելոց (ւ–ր, յԵգիպտոսէ) եւ յամրութենէ, (ւ–ր, յԵգիպտոսէ)

[1]Եբր. քով. խաչինք

[2]Եբր. զօձ, իբրեւ զվեռունս դողայեն ի թաքստենէ իւրեանց. [3]8Եբր. պ–ւ–ե [4]Եբր. ոչ պահէ յաւիտեան [5]Եբր. նուաճեսցէ զմեղս մեր. եւ ընկեսցես [6]Եբր. նոցա։ (20) Տացես

[7]Եբր. զոր երդուար

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ

ՆԱՀՈՒՄԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1[1] ԱՌԱՔ Նինուէի՝ Գիրք տեսլեան Նաւումայ Եղկեսացւոյ՝
2 Աստուած նախանձոտ եւ վրէժխնդիր Տէր. վրէժխնդիր է Տէր [2]բարկութեամբ. եւ խնդրէ Տէր վրէժ ի հակառակորդաց իւրոց, եւ [3]բառնայ ինքն զիւ չնամիս իւր՝՝։
3 Տէր երկայնամիտ, եւ մեծ է զօրութիւն նորա, եւ արդարացուցանելով ոչ [4]արդարացուցանէ Տէր. վախճանաւ եւ չարժմամբ է ճանապարհ նորա, հովմ երիվար նորա՝՝, եւ ամպք փոշի ոտից
4 նորա՝ Սաստէ ծովու, եւ ցամաքեցուցանէ զնա, եւ զամենայն գետս սուերէ. նուազեաց Բասանացին եւ Կարմելոս, եւ [5]ամենայն ծաղիկք Լիբանանու պա-
5 կասեցին՝ Լերինք չարժեցան ի նմանէ, եւ բլուրք սասանեցան. խախտեցաւ երկիր յերեսաց նորա, եւ [6]տաւօրէն ամե-
6 նայն բնակիչք նորա՝՝։ Առաջի բարկութեան նորա ո՞ հանդարտեսցէ, եւ ո՞ կայցէ ընդդէմ բարկութեան սրտմտութեան նորա. սրտմտութիւն նորա [7]հալէ ի վիխանութիւնս՝՝, եւ վէմք խորտակեցան ի նմանէ՝
7 Բաղցր է Տէր [8]որոց սպասին նմա՝՝ յաւուր նեղութեան, եւ ճանաչէ [9]զերս-
8 կիւղածս իւր՝ Եւ հեղեղաւ ճանապարհաց արասցէ վախման յարուցիչոյ ի վերայ՝՝, եւ զիչնամիս նորա խաւար
9 հալածեսցէ՝ Զի՞նչ խորհիք զՏեառնէ. կատարած ինքն արասցէ. եւ ոչ [10]խընդրեսցէ կրկին զնոյն վրէժխնդրութիւն ի
10 նեղութեան՝ Զի մինչեւ ի հին իւրեանց խոպանասցին. իբրեւ զգեղձ պատեալ կիրիցի, եւ՝՝ իբրեւ գեղէցն լի
11 երաչտութեամբ՝՝՝ Ի քէն [11]ելցէ խորհուրդ զՏեառնէ, չարիս խորհել հակառակու-
12 թեամբ՝՝՝ Այսպէս ասէ Տէր. [12]Ի վերայ իչխանաց չուրց բազմայ՝ այնպէս գաւառասցին, եւ յուր քո ոչ եւս լուիցի՝՝՝,
13 Եւ արդ խորտակեցից [13]զգաւազան նորա
14 ի քէն, եւ պկապանս քո խզեցից՝ Եւ պատուիրեսցէ վասն քո Տէր, եւ ոչ եւս սերմանեսցի յանուանէ քումմէ. ի տանէ Աստուծոյ քո ջնջեցից զդրօշեալս, եւ զձուլածոյսն արարից ի դե-
15 րեզման [14]քեզ՝ Զի ահա երագ են՝՝ ի վերայ լերանց ոտք աւետարանչին, եւ որ պատմէ զիրաւունսն. տօնեա պօ՛տս քո, Յուդա, հատո զուխտս քո. զի ոչ եւս [15]յաւելցին անցանել ի հնոմեալ. վախճանեցաւ, մաչեցաւ եւ բարձաւ՝՝՝։

ԳԼ. Բ

1 [16]Բանդի եւ որ փչէ ընդ երեսս քո, եւ ապրեցուսցանէ ինեղութենէ՝՝. պահեա

---

[1] ՅԲէր. Պատգամ [2] ՅԲէր. եւ տէր բարկութեան [3] ՅԲէր. քինախնդիր թշնամեաց իւրոց [4] ՅԲէր. արդարացուցանէ զանցաւորն. մերկաւ եւ փոթորկաւ է ճանապարհ Տեառն [5] ՅԲէր. պաշաւ [6] ՅԲէր. աշխարհ եւ ամենայն բնակիչք որ ի նմա [7] ՅԲէր. հեղուլ իբրեւ զհուր [8] ՅԲէր. զորութիւն [9] ՅԲէր. զերս սպասիչին ի նա՝ (8) Սակայն հեղեղաւ յորդելով աւերեսցէ ի սպաս զտեղի նորա

[10] ՅԲէր. յարիցէ միւսանգամ նեղութիւն՝ (10) Զի թէպէտեւ իցեն պատատեալ իբրեւ փուշ, եւ իբրեւ արբեալ ըմպելեօք իւրեանց, ծախեսցին [11] ՅԲէր. եւ որ խորհի չարիս զՏեառնէ, խորհրդական անօրէն [12] ՅԲէր. Թէպէտեւ իցեն հզօրք եւ բազումք, բեկցին յանցանել նորա. նեղել նեղեցի զքեզ, այլ եւս ոչ նեղեցից զքեզ [13] ՅԲէր. զլուծ [14] ՅԲէր. քեզ, զի արհամարհեալ եղեր՝ (15) Ահա [15] ՅԲէր. յաւելցի անցանել ընդ քեզ անօրէն. խորտակեցաւ ի սպառ [16] ՅԲէր. Որ խորտակէն՝ եւ ընդդէմ երեսաց քոց պահեա զամրութիւն

զճանապարհ, պնդեա զմէջ, զօրացիր
2 զօրութեամբ յոյժ։ Զի դարձոյց Տէր
[1]զնպարտութիւնն Յակովբայ իբրեւ
[1]զնպարտութիւնն Իսրայէլի. զի թօթա-
փիչքն թօթափեցին զնոսա, եւ զուռս
3 նորա ապականեցին. [2]Զվէնն զօրու-
թեան նորա ի մարգկանէ, զարս հզօրս
որ խազային ընդ հրոյ. կրասանակք կա-
ապ նոցա՝ յաւուր պատրաստութեան
4 նորա. [3]Կառինացին հնծեալք ի ճանա-
պարհս, եւ խաւնեցին ի հրապարակս՝.
տեսիլ նոցա իբրեւ զչամբարայս հրոյ,
եւ իբրեւ զփայլակն յայսկոյս եւ յայն-
կոյս ընթանան։
5 [4]Յիշեցին մեծամեծք նորա, եւ փախիչ-
քեն լուծէ, եւ կասեցին ի ճանա-
պարհս իւրեանց. եւ փութացին ի
պարիսպս, եւ պատրաստեցին զառա-
6 ջաւանս իւրեանց։ Դրունք քաղաքայ՝
բացան, եւ կործանեցան պալատունք։
7 Եւ [5]ստացուածք յայանեցան. [6]ինքն ե-
լանէր, եւ նաժիշտք իւր առաջի գային,
իբրեւ զաղաւնիս ի սրտից իւրեանց
8 մեչէին։ Եւ Նինուէ իբրեւ զջուրս
աւազանի. եւ նոքա փախանի ի քէն,
եւ ոչ կալան զանդի՝, եւ ոչ ոք էր որ
9 դայէր։ [6]Յափշտակիչն զարծաթ, յա-
փշտակիչն ոսկի, եւ ոչ գոյր չափ
զարդու նորա, ծանրացան քան զամե-
10 նայն սպասս նորա ցանկալիքն։ Թօթա-
փումն եւ ձգտումն՝ եւ սոսկումն սրտի
եւ լքումն ծնգաց, եւ երկունք ի վերայ
ամենայն մէջոյ, եւ երեսք ամենեցունն
[7]իբրեւ զայրեցած պատանի՝։
11 Ո՞ւր են մայրիք առիւծուցն եւ [8]որսք
կորեանց նոցա, ուր չոգաւ առիւծն

[1] ԵԲԴ. զվայելչութիւն [2] ԵԲԴ. Վասն հզօրաց նորա կարմրացաւ, արք զօրութեան զգեցան ծիրանի. ի հուր պղպատիկ կառք [3] ԵԲԴ. և նիզակք շողացեն։ (4) Ի փողոցս կատաղեսցին կառք. ի հրապարակս հարցին ընդ միմեանս [4] ԵԲԴ. Յիշեցէ զՏէրս իւր. դլորեսցին նորա ի գնալն իւրեանց, փութացին ի պարիսպ նորա, և պատրաստեսցի պատսպարան։ (6) Դրունք դետոց [5] ԵԲԴ. սահմանեալ է, վարեցաւ ի գերութիւն, տարաւ ի վեր, և նաժիշտք նորա մեչեն ի բար. քառ աղաւնեաց բաղեսեալ զկուրծս իւրեանց։ (8) Եւ Նինուէ իբրեւ զուռաւան ջրոյ էր ի վաղուց անտի. և նոքա փախչին, կացէք, կացէք, գոչեն [6] ԵԲԴ. Յափշտակեցէք զարծաթ, յափշտակեցէք զոսկի, զի անթիւ են գարդք, և առատութիւն ամենայն սպասուց ցանկալեացս։ (10) Դատարկ. կացաւ և ունայնացաւ և ամայացաւ. [7] ԵԲԴ. այլագունեցան [8] ԵԲԴ. արօտ կորեանց նոցա, ուր չոքէին առիւծն, առիւծն մտաւակ

մտանել՝, կորիւն առիւծուն, եւ ոչ ոք
12 էր որ դարձուցանէր։ Առիւծ որսա-
ցաւ բաւական կորեանց իւրոց, եւ
հզացաւ կորեանց իւրոց, եւ ելից զմա-
րիս իւր որսով, եւ դինակալութիւն իւր
13 յափշտակութեամբ։ Ահաւասիկ ես ի
վերայ քո, ասէ Տէր ամենակալ, եւ այ-
րեցից ծխով [9]զպատմութիւնն քո՝, եւ
կկերիցէ սուր զառիւծս քո. եւ բարձից
յերկրէ զորս քո, եւ ոչ ևս լուիցին
[10]զորձք քո՝։

ԳԼ. Գ

1 Ո՛ քաղաք արեանց, ամենեւին սուտ,
լի անիրաւութեամբ, [11]որոյ զննեսցի
2 որսք՝։ Ձայն հարուածոց, ձայն չարժ-
մանն անուոյ, [12]չայիւն կառաց, չահա-
3 ւակիւն հնծեալոց, փայլիւն զինուս, Շո-
ղալ սուսերի, լծաւալպղոր խազալ վի-
րաւորաց, եւ ոչ գոյր չափ ազգաց նո-
րա. եւ տկարացին ի մարմինս իւրեանց՝
4 ի բազում պոռնկութիւնէ։ Պոռնիկ գե-
ղապատճ, գլուխ կախարդաց՝, որ վա-
ճառէր զազգս ի պոռնկութիւնս իւրում,
5 եւ զտոհմս կախարդանօք իւրովք։ Ահա-
ւասիկ ես ի վերայ քո, ասէ Տէր [13]Ա-
ռաւած ամենակալ. եւ յայտնեցից զին-
առսա քո, եւ արկից զերեսաց քումք.
եւ ցուցից ազգաց զամօթ քո, եւ թա-
6 զաւորութեանց զանարգանս քո։ Եւ
ընկեցից ի վերայ քո զպղծութիւնս [13]եւ
զաղտեղութիւնս քո՝, եւ արարից զքեզ
7 [14]խայտառակ։ Եւ եղիցի ամենայն որ
տեսանիցէ զքեզ՝ [15]ինձանիցէ եւ ա-
սացէ, Եղեւ գոյ՝։ Նինուէ, ո՞վ
իմ որ հնծեալ վասն [16]քո. ուստի՞ խընդ-
բասցուք քեզ մխիթարութիւն։
8 [17]Պատրաստեա բաժին, կազմեա ջնար,
ի ճակատ Ամմինայ. որ բնակեալ է՝ ի

[9] ԵԲԴ. զկառս նորա [10] ԵԲԴ. բարբառոք պատ-
գամաւորաց քոց [11] ԵԲԴ. ուր ոչ պակասէ որս
[12] ԵԲԴ. եւ դընդիւն երիվարաց, և չափիւն կառաց։
(3) Հեծեալն ամբառնայ զսուրն որ փայլէ, եւ
զնիզակն որ շողայ, եւ լինին բազմութիւն վի-
րաւորաց, եւ յաճախութիւն անկելոց, եւ
չիք վախճան դիականց, թաւալգոյր խազան ի
վերայ սպանելոց։ (4) Վասն յաճախութեանց
պոռնկութեան պոռնկին, որ էր դեղապատճ
յոյժ եւ տէր կախարդութեանց [13] ՅԵՐԵՄ.
պ-ւ-ռ [14] ԵԲԴ. խայտառակ, եւ եդից զքեզ
տեսիլ նշաւակի [15] ԵԲԴ. խոյս տացէ ի քէն
եւ առասցէ, Աւերեցաւ [16] ԵԲԴ. նորա [17] ԵԲԴ.
Մխիթ լա՞ւ իցես դու քան զՆով-ամոն, որ
բնակեալ էր

մէջ գետոց, եւ ջուրք չուրջ զնավաւ. որոյ [1]սկիզբն ծով, եւ ջուրք սարիսպ
9 նորա։ Եթէ՝ վասցիք եւ եգիպտոս զօրութիւն նորա, եւ չիք [2]չափ վախճանն նորա։" եւ Լիբէացիք եղեն օգնական
10 կանք [3]նորա։ Սակայն եւ նա յապրողնալ գերի գնայէ, եւ զաղայս նորա զքարի հարցեն [4]ի սկզբան ճանապարհաց նորա", եւ ի վերայ ամենայն պատուականաց նորա վիճակս արկանիցեն, եւ ամենայն մեծամեծք նորա ձեռակապովք
11 կապեսցին։ Եւ դու սրբեսցիս եւ [5]լիմարեսցիս, եւ խնդրեսցես քեզ ոանկայ
12 ի թշնամեաց։ Եւ ամենայն ամուրք քո իբրեւ [6]զդիտակ թզոյ", որ թէ չարժեսցին՝
13 անկցեն ի բերան ուտելեաց։ Ահա ազգք քո իբրեւ զկանայս են ի քեզ. թշնամեաց քոց բացցին բանալով դրունք երկրին քո, եւ կերիցէ հուր զնիգս քո։
14 Լից քեզ ջուր պաշարման, եւ սընկեա զամուրս քո. մուտ ի կաւ եւ կոխեա [7]ընդ յարկի, եւ պնդեա քան զպլիս".
15 Անդ կերիցէ զքեզ հուր, եւ սատակիսցէ զքեզ սուր. եւ կերիցէ զքեզ իբրեւ [8]զմարախ, եւ ծանրասցի իբրեւ
16 զՂորնակ"։ Բազմացուցեր զվաճառս քո իբրեւ զաստեղս երկնից. պիմեայ ջորւ-
17 եակ, եւ թռեաւ. [9]Մազայ իբրեւ զգրուխճ. եւ խառնիճաղանջն քո իբրեւ զմարախ" մածեալ զցանգով յաւուր ցրտոյ. ծագեաց արեւ եւ [10]խաղաց, եւ ոչ ծանեաւ զտեղի իւր. վայ նոցա։
18 Ներհեցին հովիւք քո. թագաւորն Ասորեստանեայց կոտորեաց զզօրս քո, չուեաց ազգ քո ի լերինս, եւ ոչ ոք էր
19 որ մնայր։ Թարախեցան վէրք քո, եւ չիք բժշկութիւն բեկման քումն". ամենեքին որ լուան զդոյժ քո՝ ծափս հարցեն ի վերայ քո. քանզի յո՞ր վերայ ոչ չոգաւ չարութիւն քո հանապազ։

---

[1] Եբէր. խրամ էր [2] Եբէր. չափ. Փուդացիք [3] Եբէր. քո [4] Եբէր. յանկիւնս ամենայն ճանապարհաց [5] Եբէր. թաքիցես [6] Եբէր. զթզենիս երախայրեօք [7] Եբէր. ի շաղախ, եւ զօրացո զաղիւսանոցն

[8] Եբէր. զՂորնակ. բազմացիր իբրեւ զՂորնակ, բազմացիր իբրեւ զմարախ [9] Եբէր. Թագակիրք քո իբրեւ զմարախ, եւ իշխանք քո իբրեւ զեաւմլս մարախոյ [10] Եբէր. խաղացին եւ ոչ ծանեաւ տեղի նոցա (18) Նիրհեցին հովիւք քո, արքայդ Ասորեստանի, անկեալ դնին մեծամեծք քո. ցրուեցաւ ժողովուրդ քո ի լերինս, եւ ոչ ոք է որ ժողովէ զնոսա։ (19) Զի՞ք դարման բեկման քո, սաստից բժշկութեան են վէրք քո

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ
ԱՄԲԱԿՈՒՄԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 [1]Ա ՌԱՋ դոր եհաս Ամբակում մար-
2 գարէ՝ Մինչեւ յո՞ր, Տէր, աղա-
ղակիցեմ, եւ ոչ լսիցես, գոչիցեմ առ
3 քեզ դրկեալ, եւ ոչ փրկիցես։ Ընդէ՞ր
ցուցեր ինձ [2]այխաստութիւնս եւ վաս-
տակս, տեսանել զիշտաստութիւն եւ
զամպարիշտութիւն. առաջի իմ եկեալ
դատաստան, եւ առնոյր դատաստան կա-
4 չառս"։ վասն այնորիկ ցրուեցան օրէնք,
եւ իրաւունք ի զուարս ոչ ելանեն, զի
ամպարիշտն յազթահարէ զարդարն.
վասն այնորիկ ելանէր դատաստանն
թիւր։
5 [3]Տեսէք, արհամարհոտք", եւ հայե-
ցարուք, եւ զարմացարուք զարմանս, [4]եւ
եղծարուք." զի գործ մի գործեմ ես յա-
ւուրս ձեր, որում ոչ հաւատայցէք՝ թէ-
6 պէտ եւ ոք պատմեսցէ ձեզ։ Զի ահա
ես զարթուցանեմ զՔաղդէացիս, զազգ
դառն եւ զերագ, որ գնայ ընդ լայնու-
թիւն երկրի՝ ժառանգել զիւորանս որ ոչ
7 իւր են։ Ահեղ եւ երեւելի, եւ դատաս-
տան նորա յանձնէ իւրմէ [5]նզիցի, եւ
8 առած" իւր յինքենէ ելցէ։ Վաղեսցեն
առաւել քան զինձս երիվարք նոցա,
[6]երագունք քան զգայլս Արաբացւոց.
ասպատակեսցեն ոսպատազինք նորա, եւ"
դիմեսցեն ի հեռաստանէ. եւ սլասցեն
իբրեւ զարծուիս յօժարութեամբ ի վե-
9 րայ կերակրոյ։ [7]Կատարած ամպարշտաց
հասցէ՝ զարձելոցն ընդդէմ երեսաց նո-
ցա." կուտեսցէ զդերի իբրեւ զաւազ։
10 Եւ [8]ինքն ընդ թագաւորս փափկաս-
ցի", եւ բանաւորք խաղալիկք նորա.
եւ ինքն ընդ ամենայն ամուրս խազա-
լով խազասցէ, եւ կուտեսցէ հողակոյտս,
11 եւ կալցի գնա։ Ցայնժամ փոխեսցին
միաք նորա, [9]անցցէ եւ հանճասցէ." Այս
զօրութիւն Աստուածոյ իմոյ է։
12 Ո՞չ ապաքէն դու ես ի սկզբանէ Տէր
Աստուած [10]մեր, եւ" մի մեռցուք.
Տէր, ի դատաստան եդիր զնա. [11]եւ
առեղծեր զիս յանդիմանել զխազ նո-
13 րա"։ Սուրբ է ակն քո ի տեսանելոյ
զչարիս, եւ հայել [12]յաչխատութիւնս ոչ
կարասցես. զմէ՞ հայեցար յարհամար-
հոտս եւ առնդգանեցեր ի կլանել ամ-
14 պարշտ զարդարն[13]. Եւ առնիցես զմարդիկ իբրեւ զձկունս ծովու, եւ իբրեւ զսողունս որոց ոչ գոյ առաջնորդ։
15 [14]Զվանճանն կարթիւ կորզեաց, եւ
ձգեաց զնա ցանցիւ իւրով, եւ ժողո-
վեաց զնա ուռկանօք իւրովք. վասն
այնորիկ ուրախ եղիցի եւ ցնծասցէ [15]սիրտ
16 նորա". Եւ վասն նորին զոհեսցէ ուռ-
կանին իւրում, եւ խունկս ծխեսցէ
ցանցին իւրում. զի նոքօք պարարեաց
գբաժին իւր, եւ կերակուր իւր ընտիր։
17 Վասն այնորիկ սրտեսցէ՞ զցանցն իւր
եւ միշտ կոտորել զազգս ո՞չ խնայեսցէ։

ԳԼ. Բ

1 Ի պահու իմում կացից, եւ եղից ի վե-
րայ վիմի. եւ դիտեցից տեսանել զինչ
խօսիցի ընդ իս, եւ զինչ [15]տացէ պա-
տասխանի յանդիմանութեան իմում։
2 Պատասխանի ետ ինձ Տէր եւ ասէ,
Գրեա զտեսիլդ զայդ յայտնապէս ի տախ-
տակս, զի որ ընթեռնուն՝ համարձակ
3 ընթեռնուցու։ Զի տակաւին տեսիլդ ի

---

[1] ԵԲԲ. Պատգամն, կամ, Տեսիլն [2] ԵԲԲ. զանօրէ-
նութիւն, եւ ետուր տեսանել թշուառութիւն,
զի չափշտակութիւն եւ բռնութիւն առաջի
իմ է. եւ առնի դատ, եւ յառնէ կռիւ [3] ԵԲԲ. Տեսէք
յազգս [4] ՅԵԲԲ. զոհեսք [5] ԵԲԲ. եւ մեծու-
թիւն [6] ԵԲԲ. եւ ըսպրագինք քան զգայլս
երեկորին. եւ հեծեալք նորա արշաւեսցեն, եւ
այրուձին [7] ԵԲԲ. Ամենեցուն ի չափշտակութիւն
եկեսցեն. զէմք երեսաց նոցա յառաջ կայս, եւ

[8] ԵԲԲ. ծաղր առնիցէ զթագաւորս [9] ԵԲԲ.
եւ խրոխտասցի եւ մեղիցէ, ասէին, [10] ԵԲԲ. իմ,
Սուրբ իմ. [11] ԵԲԲ. Վէմ, ի յանդիմանել
Հաստատեցեր զնա [12] կամ, յանիրաւու-
թիւնս [13] ԵԲԲ-յԵԶԼ. քան զնա
[14] ԵԲԲ. Զամենայն [15] ԵԲԲ. տաց

ժամանակս է, եւ [1]ծագեսցէ ի սպառ, եւ ոչ յունայնութեան. թայց՝ եթէ անագանեսցէ, հարիւր նմա. զի [2]որ զալոցն է եկեսցէ եւ ոչ անագանեսցէ.
4 Եւ եթէ երկիւղեսցի ոք, ոչ հաճեսցի ընդ նա անձն իմ. զի արդարն ի հա-
5 ւատոց կեցցէ։ Այլ կարծօղն եւ արհամարհօղն՝ այր ամբարտաւան է՝ եւ ոչ ինչ վճարեսցէ՝. որ ընդարձակեաց իբրեւ զդժոխս զանձն իւր, եւ անյագ եւ դեւ իրրեւ զմահ. եւ ժողովեսցէ առ ինքն զամենայն հեթանոսս, եւ զազգս
6 ամենայն յինքն ամփոփեսցէ։ Ո՞չ ապաքէն զայս ամենայն առակ զնմանէ առակեսցեն, եւ զնա արկցեն յկրպ եւ ասասցեն, Վայ որ յաճախէ անձին իւրում որ ոչ իւր էցէ, մինչեւ յո՞րր, եւ ծանրացուցանէ [3]զանաւր իւր ծանրու-
7 թեամբ։ Զի՝ յանկարծակի յարիցեն կեւրիչք [4]նորա, եւ զարթիցեն դաւաճանք [4]նորա. եւ եղիցես նոցա յափշտակու-
8 թիւն։ Զի դու կողոպտեցեր զազգս բազումս, եւ զքեզ կողոպտեսցեն ամենայն հնացորդք ժողովրդոց՝ վասն արեանդ մարգկան, եւ ամպարշտութեան երկրի եւ քաղաքի եւ ամենայն բնակչաց նորա։
9 Վայ որ ագահէ զագահութիւն չար տան իւրոյ, դնել ի բարձունս զբոյն իւր,
10 [5]կորզել ի ձեռաց չարաց՝։ Խորհեցար ամօթի տան քո, [6]սպառեսցեր զազգս
11 բազումս, եւ յանցեաւ անձն քո։ Զի քար [7]ի հիմանէ ապազակեսցէ, եւ սրդն ի փայտէ պոչեսցէ զայդ՝։
12 Վայ որ չինէ զքաղաք արեամբ, եւ պատրաստէ զքաղաք անիրաւութեամբ։
13 Ո՞չ այդ ամենայն ի Տեառնէ ամենակալէ է. եւ [8]պակասեսցին ժողովուրդք բազումք ի հրոյ, եւ ազգք բազումք նուաւ-
14 զեցան՝։ Զի լցցի երկիր գիտութեամբ փառաց Տեառն իրրեւ զջուրս [9]բազումս որ ծածկեն զծովս։
15 Վայ որ [10]արբուցանէ ընկերի իւրում հրապոյրս պղտորս, եւ արբուցանէ, զի
16 հայեսցի յայրս նոցա։ Զյագուրդ անարգանաց ի փառաց՝ արբ եւ դու, չարժեաց եւ դողա. պտյտեսցի զքեզ բաժակ աջոյ Տեառն, եւ ժողովեցաւ՝ ա-
17 նարգութիւն ի վերայ փառաց քոց։ Զի ամպարշտութիւն Լիբանանայ ծածկեսցէ զքեզ եւ [11]չոչաստութիւն գազանացդ զարհուրեցուսցէ զքեզ՝ վասն արեանդ մարգկան եւ ամպարշտութեան երկրի եւ քաղաքի եւ ամենայն բնակչաց նորա։
18 Զի՞նչ օգուտ է [12]դրօչեալ՝ զի գրօչեցին զնա, ստեղծին զնա ձուլածոյ, եւ յուսացեալ ստա՝. զի յուսացաւ որ ստեղծն ի ստեղծուածն իւր առնել իւր կուռս
19 [13]անօգուտս։ Վայ որ ասէ ցփայտ, Սթափեաց, եւ գարթիր [14]եւ ցքարն՝ թէ Բարձրացիր, եւ նա է երեւցի առ աչօք. եւ՝ նա է կռած արծաթոյ եւ ոսկւոյ, եւ ամենեւին չունչ ոչ գոյ [15]ի նո-
20 սա։ Այլ Տէր ի տաճարի սրբութեան իւրոյ, [16]եւ երկիցէ՝ յերեսաց նորա ամենայն երկիր։

ԳԼ. Գ

1 Ա.ղօթք Աւրակումայ մարգարէի [17]երգով։
2 Տէր, զլուր քո լուայ եւ երկեայ. Տէր, [18]հայեցայ ի գործս քո եւ զարհուրեցայ. ի մէջ երկուց պազանաց ծանիցիս, ի մերձենալ ամացն յայտնեսցիս, ի հասանել ժամանակին երեւեսցիս. ի խոռվել անձին իմոյ՝ ի բարկութեան զորմութիւնն յիշեսցես։
3 Աստուած ի Թեմանայ [19]եկեսցէ, եւ Սուրբն ի հովանաւոր եւ յանտառախիտ լեռնէ՝։ Հանգիստ։ Ծածկեցին զերկինս փառք նորա, օրհնութեամբ նորա լի

---

[1] ՆԲԳ. փութայ ի վախճան, և ոչ ստեսցէ. [2] ՆԲԳ. գալով գայցէ եւ ոչ անագանեսցէ. (4) Ահա հպարտացաւ, չէ ուղիղ անձն նորա ի նմա, այլ արդարն ի հաւատոյ իւրոյ կեցցէ։ (5) Մանաւանդ զի գինի վէղծուցանէ. այր ամբարտաւան ոչ կայ հանգարտ [3] ԵԲԳ. գրաւ, (կամ, կաւ թանձր) ի վերայ իւր։ (7) Ո՞չ ապաքէն [4] ԲԳ. քո [5] ՆԲԳ. կորզել զանձն ի ձեռաց չարի [6] ԵԲԳ. սպառեալ [7] ՆԲԳ. յորմոյ ապազակեսցէ, եւ գերան ի փայտէ տացէ պատասխանի [8] ԲԳ. աշխատեղն ժողովրդք վասն հրոյ, և ազգք ի զուր վաստակեցան [9] ՆԲԳ. պակաս

[10] ՆԲԳ. արբեցուցանես զրնկեր քո, եւ յաւելուս վշտի կամ զարկուածին քո, և արբեցուցանես զայլ հայել ի մերկութիւնս նոցա։ (16) Յագեցար յանարգանաց քան ի փառաց. արբ եւ դու, եւ մերկացիր. դարձցի առ քեզ բաժակ աջոյ Տեառն, եւ [11] ՆԲԳ. յափշտակութիւն [12] ՆԲԳ. դրօշեալք զոր դրօշեաց Ճարտարն, ձուլածոյն եւ որ ուսուցանէ առուեստն [13] ՆԲԳ. հասարս [14] ՆԲԳ. ցքարն համր. Նա՞ ուսուսցէ. ահա [15] ՆԲԳ. ի նմա [16] ՆԲԳ. լուռ լեր [17] ՆԲԳ. ի վերայ Շիկիոնոթի, կամ, նուագի [18] ՆԲԳ. զգործ քո ի մէջ ամաց կենդանացո. ի մէջ ամաց արա ծանօթ. [19] ՆԲԳ. եկն, և Սուրբն ի լեռնէն Փառանու

4 եղեւ երկիր ։ [1]Ճառագայթք նորա իբրեւ
ղլոյս եղիցին , եւ եղջերք ի ձեռին նո-
ա . եւ հաստատեաց զսէր սաստիկ զօ-
5 րութիւն իւրոյ ։ Առաջի երեսաց նորա
դնասցէ բան , եւ ելցէ ի դաշտս դինի
6 Նորա ։ Եկաց , եւ չարժեցաւ երկիր , հա-
յեցաւ , եւ հալեցան ազգք. լերինք խոր-
տակեցան բռնութեամբ , եւ բլուրք յա-
ւիտենականք հալեցան . գգնացս նորա
յաւիտենական փոխանակ աչխատու-
7 թեանց տեսի ։ Որանք՝ եմէ՛ովպացւոց,
զարհուրեցան եւ իսրանք երկրին Մա-
8 դիամու ։ Միթէ գետոց բարկացար՞ Տէր,
կամ սրամտութիւն քո ի վերայ գետո՞ց,
կամ [2]ասպատակ քո ի վերայ ծովո՞ց ,
դի ելցես յերիվարս քո , եւ [3]հեծելու-
9 թիւն քո փրկութիւն է ։ Լարելով յա-
րեսցես զաղեղն քո ի վերայ իչխանու-
թեան , ասէ Տէր . գետոց պատառեցաւ
10 երկիր ։ Տեսցեն զքեզ ազգք, եւ երկ-
նեսցին . որ ցանես դնուրս գնացիչ՛ .
եւտուն անդունդք գձայնս իւրեանց ,
[4]զարձրութիւն սաստկութեան իւրեանց ։
11 Բարձաւ արեգակն , եւ լուսին եկաց ի
կարգի իւրում . գնացին նետք քո ի
լոյս՛ , ի փայլիւն փայլատականց զինուց
12 քոց ։ Սպառնալիօք [5]նուաղեցուցեր զեր-
կիր , եւ բարկութեամբ զիջուսցես՛
13 զազգս ։ Ելեր ի փրկութիւն ժողովրդե-
անն քո [6]փրկել զօծեալս քո . արկեր
զդլխով անօրինաց մահ . զարմուցեր
կիսասյան մինչեւ յոյարանոցս ի սպառ ։
14 Հանդիստ ։ Որտակեցեր գաւազանօք նոցա
զգլուխ զօրաւորաց նոցա , մրրկեցան ի ցրուել
զիս. ցնծութիւն նոցա էբրեւ յուտել զանանկն
ի ծածուկ ։ (15) Գնացեր ի ծովս երիվարօք
քովք, ի կուտակս ջուրց բազմաց . (16) Լուայ
եւ գարհուրեցաւ որովայն իմ, ի ձայնէն բաբա-
խեցին շրթունք իմ. եմուտ փտութիւն յոսկերս
իմ, եւ սարսափեցայ ի կոյր իմում, զի հանգ-
եայց յաւուր նեղութեան՝ յորժամ ելցէ ազ-
ժողովուրդն , որ յարձակելոցն է գնդիւք իւ-
րովք

(17) Թէպէտ եւ թզենի ոչ ծագկեսցի, եւ ոչ

---

[1] Ուբբ. Եւ պայծառութիւն նորա իբրեւ ղլոյս էր, ճառագայթք ի ձեռանէ նորա . եւ անդ էր ծածկոյթ զօրութեան նորա ։ (5) Առաջի երե-
սաց նորա երթայր սրածութիւն , եւ ելանէին կայծակունք յոտից նորա ։ (6) Եկաց եւ չափեաց զերկիր , հայեցաւ եւ դողացոյց զազգս , եւ փշրեցան լերինք յաւիտենականք, կորացան բլուրք մշտնջենականք . ճանապարհք նորա յաւիտենից են ։ (7) Ի տառապանս տեսի զնորանս [2]Ուբբ. բարկութիւն [3]Ուբբ. յանդրուարս քո փրկութեան ։ (9) Մերկա-
նալով մերկացաւ աղեղն քո , երդմունք առ ցեղս էին բան հաւատարիմ։ Հանգիստ ։ Գե-
տով պատառեցեր զերկիր ։ (10) Տեսին զքեզ լերինք, դողացին. հեղեղ ջուրց անց [4]Ուբբ բարձրացոյց զձեռս իւր ի վեր . (11) Արեգակն եւ լուսին կացին ի կարգի իւրեանց. ի լոյս նետից քոց գնացին [5]Ուբբ. շրջեցար յերկրի, և բարկութեամբ կոխեցեր

[6] Ուբբ. ի փրկութիւն օծելոյ քո (ի՛մ, ընդ օծելոյ քո) ճմլեցեր գլուխ ի տանէ անօրինին, մերկա-
ցուցեալ զհիմունս մինչեւ ցպարանոցն ։ Հան-
գիստ ։ (14) Որտակեցեր գաւազանօք նոցա զգլուխ զօրաւորաց նոցա , մրրկեցան ի ցրուել զիս. ցնծութիւն նոցա էբրեւ յուտել զանանկն ի ծածուկ ։ (15) Գնացեր ի ծովս երիվարօք քովք, ի կուտակս ջուրց բազմաց . (16) Լուայ եւ գարհուրեցաւ որովայն իմ, ի ձայնէն բաբա-
խեցին շրթունք իմ. եմուտ փտութիւն յոսկերս իմ, եւ սարսափեցայ ի կոյր իմում, զի հանգ-
եայց յաւուր նեղութեան՝ յորժամ ելցէ ազ-
ժողովուրդն , որ յարձակելոցն է գնդիւք իւ-
րովք

(17) Թէպէտ եւ թզենի ոչ ծագկեսցի, եւ ոչ

[7] Ուբբ. Եհովայ [8] Ուբբ. իբրեւ զեղանց. եւ ի վերայ բարձանց իմոց տացէ ինձ կոխել։ Առ գլուխ երաժշտացն . ի նուագարանս իմ

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ
ՍՈՓՈՆԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 ԲԱՆ Տեառն որ եղեւ առ Սոփոնիա որդի Քուսեայ, որդւոյ Դոդդեայ որդւոյ Ամարեայ, որդւոյ Եզեկեայ, յաւուրս Յովսեայ որդւոյ Ամովնեայ արքայի Յուդայ։
2 [1]Պակասեցուլ պակասեցից ամենայն յերեսաց երկրի, ասէ Տէր։ Պակասեցից մարդ եւ անասուն, պակասեցուցից թռչունս երկնից եւ ձկունս ծովու, եւ տկարասցին ամպարիշտք, եւ բարձից զանօրէնս՝ յե-
4 րեսաց երկրի, ասէ Տէր։ Եւ ձգեցից զձեռն իմ ի վերայ Յուդայ, եւ ի վերայ ամենայն բնակչաց Երուսաղէմի. եւ բարձից ի տեղւոյդ յայդմանէ [2]զանուն Բահաղու, եւ զանուն քրմացն հանդերձ քահանայիւքն,
5 Որ երկիր պագանեն ի տանիս զօրուց երկնից. եւ որք [3]երդնուին յա-
6 նուն Տեառն՝ արքային իւրեանց՝, Եւ որք խոտորէին ի Տեառնէ, եւ որք ոչ խնդրէին զՏէր, եւ որք ոչ ի Տեառն կոչմն էին։
7 [4]Երկնչուք յերեսաց Տեառն Աստուծոյ. զի մերձ է օր Տեառն. զի պատրաստեաց Տէր զղոհս իւր, եւ հրաւիր-
8 եաց զկոչնականս իւր։ Եւ եղիցի յաւուր զոհի Տեառն՝ խնդրեցից զվրէժ իշխանաց եւ ի տանէ թագաւորին, եւ յամենայնէ որ զգեցեալ են զհանդերձս
9 օտարս։ Եւ խնդրեցից վրէժ [5]յայնոսիկ յամենեցունց առասպէլ դրանդեացն՝ յաւուր յայնմիկ, որք լնուն զտուն [6]Տեառն Աստուծոյ՝ իւրեանց ամպարիշ-
10 տութեամբ եւ նենգութեամբ։ Եւ եղիցի յաւուր յայնմիկ, ասէ Տէր, Ձայն աղաղակի ի դրանէ [7]ձուոցտելոցն, եւ զոյժ [8]յերկրորդ դրանէն՝, եւ բեկումն մեծ ի
11 բլրոց։ Ողբացէք, բնակիչք [9]կոտորելոց. զի նմանեցաւ՝ ամենայն ժողովուրդդ [10]Քանանացւոց. սատակեցան ամենեքեան որ [11]հպարտացեալ էին արծաթով՝։
12 Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ քննեցից զերուսաղէմ ճրագօք, եւ խնդրեցից վրէժ յարանցն որ[12]արհամարհեցին զպահպանութիւնս՝ իւրեանց. որ ասէին ի սիրտս իւրեանց, Ոչ բարի ինչ առնէ Տէր,
13 եւ ոչ չար։ Եւ եղիցի զօրութիւն նոցա ի յափշտակութիւն, եւ տունք նոցա յապականութիւն. չինեսցեն տունս, եւ մի՛ բնակեսցեն ի նոսա, տնկեսցեն այգիս, եւ մի՛ արբցեն զղինի նոցա։
14 Զի մերձ է օր Տեառն մեծն, մերձ է եւ արագ յոյժ. ձայն աւուր [13]Տեառն խիստ եւ դառն, կարդեալ զօրաւոր՝։
15 Օր բարկութեան օրն այն, օր նեղութեան եւ վտանգի, օր թշուառութեան եւ ապականութեան, օր խաւարի եւ
16 մրոյ, օր ամպոյ եւ մառախղոյ. Օր փողոյ եւ ազաղակի ի վերայ ամուր քաղաքաց, եւ ի վերայ անկեանց բար-
17 ձանց։ Եւ նեղեցից զմարդիկ, եւ գնասցեն իբրեւ զկոյրս. զի Տեառն մեղան, եւ [14]սուին զանուն նորա ի վերայ մնոտեաց, որք ոչ ինչ կարացին օգնել նոցա. եւ հեղցէ զարիւն՝ նոցա իբրեւ զհող, եւ [15]զմարմինս նոցա իբրեւ զաղբ։
18 Արծաթ նոցա եւ ոսկի մի՛ կարասցեն փրկել զնոսա յաւուր բարկութեան Տեառն, եւ հրոյ նախանձու նորա մաչեսցի ամենայն երկիր. զի վախճան [16]եւ սաստնապ՝ արասցէ ի վերայ ամենայն բնակչաց երկրի։

---

[1] ԵԲԲ. Կորուսանելով կորուսից զամենայն յերեսաց երկրի, ասէ Տէր։ (3) Կորուսից զմարդ և զանասուն, կորուսից զթռչունս երկնից, և զձկունս ծովու, և զպատճառսն հանդերձ ամպարշտօք, և բարձից զմարդ [2]ԵԲԲ. զպնացորդն [3]ԵԲԲ. երկիր պագեալ երդնուին ի Տէր եւ երդնուին յաւրքայն իւրեանց, Լմ, ի Մեղքոմ [4]ԵԲԲ. Լուռ լեր [5]ԵԲԲ. յամենեցունց որ վազէին ըստ սհամս [6]ԵԲԲ. տեառնից [7]ԵԲԲ. Զհանց [8]ԵԲԲ. ի Մասենայ, այլեւս՝ յերկրորդն [9]ԵԲԲ. Մաքթեան, զի կորեաւ [10]Կամ, վաճառական [11]ԵԲԲ. բերէին արծաթ [12]ԵԲԲ. նաեէին ի վերայ մրոյն [13]ԵԲԲ. Տեառն. դառնապէս գոչեսցէ անդ հզօրն [14]ԵԲԲ. հեղցի արիւն [15]ԵԲԲ. մարմին [16]ԵԲԲ. տագնապաւ

ԳԼ. Բ

1 [1]Ժողովեցարուք եւ խնդրեցէք, ազգք
2 անխրատք, Մինչչեւ եղեալ իցէք իբրեւ
զծաղիկ անցաւոր, մինչչեւ եկեալ իցէ օր
բարկութեան՝ սրամտութեան Տեառն։
3 Խնդրեցէք զՏէր, ամենայն խոնարհք
[2]երկրի. իրաւունս արարէք եւ զարգա-
րութիւն խնդրեցէք, եւ տուք պատաս-
խանի նոցա. դի՝ ծածկեսջիք յաւուր
4 բարկութեան Տեառն։ Զի Գաղա յա-
փըշտակեալ լիցի, եւ Ասկաղոն յապա-
կանութիւն, եւ Ազովտոս ի միջօրէի
կործանեսցի, եւ Ակկարոն յարմատոյ
5 խլեսցի։ Վայ որ բնակեալդ էք [3]ի վի-
ճակս ծովու՝, բնակիչք [4]Կրետացւոց.
պատգամ Տեառն ի վերայ ձեր, Քանան,
երկիրդ այլազգեաց. եւ կորուսից [5]զձեզ
6 ի բնակութենէ։ Եւ եղիցի [6]կրետ ճա-
7 րակ հօտից եւ գոմք խաչանոյ։ Եւ եղիցի
[6]վիճակ ծովուն՝ մնացորդաց տանն Ցու-
դայ, եւ ի նոսա ճարակեսցին. եւ ի
տունս Ասկաղոնայ առ օթ պպարևս-
ցեն [7]յերեսաց որդւոցն Ցուդայ՝. դի ել-
եալ է նոցա յայց Տէր Աստուած իւր-
եանց, եւ դարձոյց զգերութիւն նոցա։
8 Լուայ զնախատինս Մովաբու եւ
զկսկիծս որդւոցն Ամմոնայ, որով նա-
խատէին զժողովուրդ իմ, եւ մեծաբա-
9 նէին ի վերայ սահմանաց [8]իմոց։ Վասն
այնորիկ կենդանի եմ ես, ասէ Տէր զօ-
րութեանց՝ Աստուած Իսրայէլի, դի Մո-
վաբ իբրեւ զԱդոմ եղիցի, եւ որդիքն
Ամմոնայ իբրեւ զԳոմոր. [9]եւ Դամասկոս
լքեալ իբրեւ դշխոյ կալոյ՝ եւ տալա-
կանեալ յաւիտեան. մնացորդք ժողո-
վըրդեան իմոյ յափշտակեսցեն զնոսա,
եւ մնացորդք ազգի իմոյ ժառանգեսցեն
10 զնոսա։ Եւ այն նոցա փոխանակ հպար-
տութեան նոցա, դի նախատեցին
եւ մեծաբանեցին [10]ի վերայ Տեառն
11 ամենակալի։ Երևեսցի Տէր ի վերայ
նոցա, եւ՝ սատակեսցէ զամենայն
աստուածս [11]ազգաց. եւ երկիր պաղ-
ծոյն նմա իբրաքանչիւր ի տեղւոջէ
իւրմանէ՝ ամենայն կղզիք ազգաց։
12 Եւ դուք, Եթէովպացիք, հարեալք սու-
13 սերի իմոյ էք. Եւ [12]ձգեսցէ զձեռն իմ
ի վերայ հիւսիսոյ, եւ սատակեսցէ զԱս-
սորեստանեայն, եւ եղիցի՝ զԵնինուէ յա-
պականութիւն, անջրդի իբրեւ զանա-
14 պատ. Եւ արածեսցին ի միջի նորա
հօտք եւ ամենայն գազանք [13]երկրի, եւ
գեղնատուծք եւ ոզնիք ի յարկս նորա
բնակեսցին, եւ գազանք գոչեսցեն ի
նկուղս նորա, եւ ագռաւք ի դրունս
նորա. քանզի իբրեւ զմայր է բարձ-
15 րութիւն նորա։ Այս քաղաք վրիժա-
դրօք բնակեալ յուսով՝, որ ասէր ի սրտի
իւրում, Ես եմ, եւ ոչ ևս ոք իցէ յետ իմ.
դիաթրոց եղեւ յաւերականութիւն եւ ճարակ
գազանաց. ամենայն որ անցանիցէ ընդ
նա՝ չչեսցէ եւ չարժեսցէ [14]զգլուխ իւր։

ԳԼ. Գ

1 [15]Ով երևելիդ փրկեալ քաղաք ա-
2 զաւնի՝։ Ոչ լուաւ ձայնի, եւ ոչ ընկա-
լաւ դիտաց. ի Տէր ոչ յուսացաւ, եւ
3 առ Աստուած իւր ոչ մերձեցաւ։ Իշ-
խանք նորա [16]իբրեւ առիւծունք գոչես-
ցեն՝ եւ դատաւորք նորա իբրեւ զգայլս
[17]Արաբացւոց՝ որ ոչ թողուն ինչ ի վա-
4 ղիւ։ Մարգարէք նորա [18]այսակիրք, արս
համարձուք՝. քահանայք նորա պղծեն
զսրբութիւնս, եւ անպարչանն յօրէնս։
5 Այլ Տէր արդար է ի միջի նորա. եւ ոչ
արասցէ անիրաւութիւն. [19]ընդ առաւօտս
կանխաւ տացէ զիրաւունս իմ ի լոյս,
եւ ոչ թաքիցէ. եւ ոչ ծանիցէ զանիս-
6 րաւութիւն ի պահանջել, եւ ոչ ի սպառ

---

[1] Եբր. Ժողովեցէք զձեզ, և ժողովեցարուք, (կամ, Քննեցէք զձեզ, քննեցէք) ազգ անամօթ. (2) Մինչչեւ ծնեալ վճռոյն, մինչչեւ անցեալ աւուրն իբրեւ զմղեղ, մինչչեւ եկեալ ի վերայ ձեր բարկութեան սրամտութեան Տեառն, մինչչեւ եկեալ ի վերայ ձեր աւուրն [2] Եբր. երկրի որ առնէք գիրաւունս նորա. խնդրեցէք զարդարութիւն, խնդրեցէք զխոնարհութիւն, թերեւս [3] Այսինքն՝ ի ծովեզերս [4] Եբր. Քերեթիմ, տես Ա Թագ. Ի. 7։ [5] Եբր. զքեզ [6] Եբր. ծովեզրն [7] Եբր. գոյութ [8] Եբր. նոցա [9] Եբր. վայր եղնճոյ, եւ բուռ աղի [10] Եբր. ի վերայ ժողովրդեան Տեառն զօրութեանց։ (11) Ահեղ է Տէր ի վերայ նոցա, զի [11] Եբր. երկրի [12] Եբր. ձգեսցէ զձեռն իւր ի վերայ հիւսիսոյ, և սատակեսցէ զԱսորեստանեայն, և դիցէ [13] Եբր. ազգաց. Հաւալուսն և ոզնի ի խոյակս նորա ագցին. բարբառ նոցա հնչեսցէ ընդ պատուհանս, տաբուտն ի ռեամն, զի եղևնափայտս նորա մերկասցի։ (15) Այս է քաղաք ցնծալից որ բնակէր յապահովս [14] Եբր. զձեռն [15] Եբր. Վա՛յ ապստամբ և պիղծ, քաղաք հարստահարութեան [16] Եբր. ի միջի նորա առիւծունք որ մնձնձեն [17] Եբր. երեկորին [18] Եբր. անապարձք, այր ընդդէմ եան [19] Եբր. առաւօտ յառաւօտ հանէ ի լոյս զիրաւունս իւր, և ոչ կասեսցէ. իսկ անիրաւն ոչ գիտէ զամօթ։ (6) Ասատակեցի զազգս. աշտա-

զանիրաւութիւն. ապականութեամբ կործանեցէք զամբարտաւանս. ապականացան անկիւնք նոցա, ասէին՝ զձա-
նապարհս նոցա, ամենևին մի՛ եւս դնայ
ընդ նոսա. պակասեցին քաղաքք
7 նոցա առ ի չգոյէ բնակչաց։ [1]Ասացի թէ
երկերեսք չինէն, եւ ընկալարուք զխրատս,
եւ ոչ սասակնոչիք չիրեսաց նորա ըստ
ամենայնի որչափ ինչ ասից վրէժ ի
նմանէ. պատրաստանա կանխել ընդ ա-
ռաւօտս, ապականեցան ամենայն ճիւք
8 նորա։ Վասն այդորիկ սպասեա ինձ,
ասէ Տէր, յաւուր յարուներան իմոյ ի
վկայութիւն. զի դատաստանք իմ ի վե-
րայ ազգաց՝ յըմբռնել զթագաւորս՝, ի
հեղուլ ի վերայ նոցա զբարկութիւն իմ,
զամենայն բարկութիւն սրտմտութեան
իմոյ, զի հրով նախանձու իմոյ սպանցի
ամենայն երկիր։
9 Զի յայնժամ դարձուցից ի վերայ ժո-
ղովրդոց լեզու [2]յազգս նոցա՝, ի կար-
դալ ամենեցուն զանուն Տեառն, ի ծա-
10 ռայել նոցա նմա ընդ միով լծով. [3]ի
դեռոյն ելիցեն պատգամաւորք ընկալայք զնոսա
ընդ յրուանդան,՝՝ մատուցանիցին ինձ
11 պատարագս։ Յաւուր յայնմիկ ոչ ամա-
չեսցես յամենայն գործոց քոց, որովք
ամպարշտեցար առ իս. զի յայնժամ դեր-
ծից ի քէն [4]զչարութիւն ամբարտաւա-
նութեան քո, եւ ոչ եւս յաւելցես մե-
ծարանել ի վերայ լերին սրբութեան
12 իմոյ։ Թողից քեզ ժողովուրդ հեզ եւ
խոնարհ, եւ [5]երկիցին յանուանէ՝՝ Տեառն։
13 Մնացորդք Իսրայելի ոչ արասցին անի-

րաւութիւն, եւ ոչ խօսիցին սնոտիս,
եւ ոչ գտցի ի բերան նոցա լեզու նենգ-
գաւոր. զի նոքա արածեսցին եւ մա-
կաղեսցին, եւ ոչ ոք իցէ որ զարհու-
րեցուսանիցէ զնոսա։
14 Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի,
[6]եւ քարոզեա, Երուսաղէմ՝՝. ուրախ լեր
եւ զուարճացիր յամենայն սրտէ քումմէ,
15 դուստր Երուսաղէմի։ [7]Զի հանեալ է քէն
Տէր չուրջ զանիրաւութիւնս. փրկեաց
զքեզ Տէր ի ձեռաց թշնամեաց քոց՝՝. Թա-
գաւոր Իսրայէլի Տէր ի միջի քումն, եւ
ոչ եւս տեսցես զչարիս։
16 Ի ժամանակին յայնմիկ [8]ասէ Տէր
ցերուսաղէմ, Քաջալերեսցես՝՝ Սիոն, մի՛
17 լքցին ձեռք քո։ Տէր [9]Աստուած ի քեզ
է հզօրն, եւ փրկեսցէ զքեզ. ածցէ ի
վերայ քո ուրախութիւն, եւնորոգեսցէ
զքեզ սիրով իւրով. եւ ուրախ լիցի ի
քեզ զուարճութեամբ իբրեւ յաւուր
18 տօնի. Եւ ժողովեցից զմանրեալսն քո.
19 վայ որ նախատիցէ զնա։ Ահաւասիկ
ես առնեմ վասն քո ի ժամանակին յայ-
միկ. եւ փրկեցից զծնչեալն՝՝, եւ զմերժ-
եալն ընկալայց, եւ արարից զնոսա ի
պարծանս, եւ անուանիս ընդ ամենայն
20 [10]երկիր։ Եւ ամաչեսցին ի ժամանակին
յայնմիկ՝ յորժամ բարի արարից ձեզ, եւ
ի ժամանակի յորժամ ընկալայց՝՝ զձեզ.
զի տաց զձեզ անուանիս եւ ի պարծանս
ընդ ամենայն ազգս երկրի, ի դարձու-
ցանել զդերութիւնն ձեր առաջի
ձեր, ասէ Տէր։

---

[1] Եբր. Ասացի, Թէ Աստուածն երկիցես չինէն, ընկալցես զխրատ, եւ ոչ կործանեսցի բնակութիւն նորա ըստ ամենայնի զոր սահմանեալ էր իմ վասն նորա. այլ նոքա չարեան ընդ առաւօտս, ապականեցին զամենայն գործս իւրեանց։ (8) [2] Վասն այսորիկ սպասեցէք ինձ, ասէ Տէր, մինչեւ ցօրն յառնելոյ իմոյ յորս. զի վճիռ իմ է ժողովել զազգս, գումարել զթագաւորս [3] Եբր. Այնկոյս կողման գետոյն Եթովպացւոց աղաչաւորք իմ, դուստր ցրուելոց իմոց [4] Եբր. զորս պարծին ի վերայ [5] Եբր. յուսացին յանուն

[6] Եբր. խրախոյս բարձ, Իսրայէլ [7] Եբր. Հեռացոյց ի քէն Տէր զդատաստանս քո, վանեաց զթշնամին [8] Եբր. ասացի ցերուսաղէմ, Մի՛ երկնչիր, [9] Եբր. Աստուած քո ի միջի քումն. Հզօր է, նա փրկեացէ. ցնծացէ ի վերայ քո ուրախութեամբ, լռեսցէ, (կամ, Թողցէ) վասն սիրոյ իւրոյ, ուրախ լիցի ի քեզ խնդութեամբ. (18) Զի ախտաբեր վասն տարեկանաց ժողովեցից, որ ի քէնդ էին. քեռն էին ի վերայ նոցա նախատինք, (19) Ահա ես սպառեցից զորս նեղեն զքեզ ի ժամանակին յայնմիկ, եւ փրկեցից զոր կաղացան [10] Եբր. երկիր ամօթոյ իւրեանց։ (20) Ի ժամանակին յայնմիկ ածից զձեզ, եւ ի ժամանակին ժողովեցից

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ

ԱՆԳԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 ՅԱՄԻՆ երկրորդի Դարեհի արքայի, յամսեանն վեցերորդի, որ օր մի էր ամսոյն, եղեւ բան Տեառն ի ձեռն Անգէի մարգարէի [1]եւ ասէ, Հոսանաց ընդ Զորաբաբելի որդւոյ Սաղաթիէլի յազգէ Յուդայ, եւ ընդ Յեհոսուայ որդւոյ Յովսեդեկեայ քահանայի մեծի, եւ ա-
2 մենայն, Այսպէս ասէ Տէր ամենակալ". Ժողովուրդդ այդ առին, ոչ է հասեալ [2]ժամանակ չինելոյ զտունն Տեառն։
3 Եւ եղեւ բան Տեառն ի ձեռն Անգէի մարգարէի՝ եւ ասէ,
4 Եթէ ձե՞զ միայն իցէ ժամանակ բնակել ի տունս գմբեթեանս, եւ տունդ իմ
5 աւեր կայ։ Եւ արդ այսպէս ասէ Տէր [3]ամենակալ. Կարգեսցէք զսիրտս ձեր ի
6 ճանապարհս ձեր։ Վարէիք բազում եւ ժողովէիք սակաւ, ուտէիք եւ ոչ յագէիք, ըմպէիք եւ ոչ լինէր ի յագուրդ, զգենուիք եւ ոչ ջեռնուիք նոքօք, եւ որ գվարձս իւր ժողովէր՝ ի տոպրակ ծակոտեալս ժողովէր։
7 Այսպէս ասէ Տէր ամենակալ. Դիք
8 զսիրտս ձեր ի ճանապարհս ձեր։ Ելէք ի լեառն, հարէք փայտ եւ շինեցէք զտունդ. եւ հաճեսցայց զովաւ եւ փա-
9 ռաւորեցայց, ասէ Տէր։ Հայեցարուք ի բազում, եւ եղեւ սակաւ. եւ դուք ի ներքս ի տունս կրեցէք, եւ ես արտաքս փչեցի զայն. [4]վասն այդորիկ այսպէս ասէ Տէր ամենակալ. Փոխանակ զի տունդ իմ՝՝ աւեր է, եւ դուք ճեպեալ էք յիւրաքանչիւր տուն իւր։
10 Վասն այդորիկ [5]երկինք կալցին զանձրեւ քո՝՝, եւ երկիր արգելցէ զպտուղս իւր։ Եւ ածից [6]սուր ի վերայ երկրի՝՝, եւ ի վերայ ցորենոյ եւ ի վերայ գինւոյ եւ ի վերայ իւղոյ, եւ ի վերայ ամենայն բուսոյ երկրի եւ ի վերայ մարդկան եւ ի վերայ անասնոյ, եւ ի վերայ
12 ամենայն վաստակոյ ձեռաց։ Եւ լուաւ Զորաբաբէլ որդի Սաղաթիէլի [7]յազգէ Յուդայ՝՝, եւ Յեհոսուա Յովսեդեկեայ քահանայ մեծ, եւ ամենայն մնացորդք ժողովրդեանն ձայնի Տեառն Աստուծոյ իւրեանց, եւ զպատգամս Անգէի մարգարէի, որպէս առաքեաց զնա Տէր Աստուած նոցա [7]առ նոսա՝՝. եւ երկեաւ
13 ժողովուրդն յերեսաց Տեառն։ Եւ ասէ Անգէոս հրեշտակն [8]Տեառն ցժողովուրդն՝՝, Ես ընդ ձեզ եմ, ասէ Տէր։
14 Եւ զարթոյց Տէր զոգի Զորաբաբելի որդւոյ Սաղաթիելի [9]յազգէ Յուդայ, եւ զոգի Յեհոսուայ Յովսեդեկեայ քահանայի մեծի, եւ զոգի ամենայն մնացորդաց ժողովրդեանն. եւ մտանէին եւ գործէին զգործ ի տան Տեառն ամենակալի Աստուծոյ իւրեանց, ի քսան եւ ի չորս[10] ամսոյն վեցերորդի, յամին երկրորդի Դարեհի արքայի։

ԳԼ. Բ

1 Յամսեանն եւթներորդի, որ օր քսան եւ մի էր ամսոյն, խօսեցաւ Տէր ի ձեռն
2 Անգէի մարգարէի, եւ ասէ, Ասա ցԶորաբաբէլ որդի Սաղաթիելի [11]յազգէ Յուդայ, եւ ցՅեհոսուա Յովսեդեկեայ քահանայ մեծ, եւ ցամենայն մնացորդս ժողովրդեանն։
3 Ո՞վր ի ձէնջ տեսեալ իցէ զտունս զայս

---

[1] ԵԷր. առ Զորաբաբէլ որդի Սաղաթիելի, իշխան Յուդայ, եւ առ Յեհոսուա Յովսեդեկեայ քահանայ մեծ, եւ ասէ. (2) Այսպէս ասէ Տէր զօրութեանց, եւ ասէ [2] ԵԷր. ժամանակն, ժամանակ [3] ԵԷր. զօրութեանց, ուրեմն և այլոյ [4] ԵԷր. վասն է՞ր, ասէ Տէր զօրութեանց, վասն տան իմոյ որ

[5] ԵԷր. ի վերայ ձեր փակեսցին երկինք ի ցօղոյ [6] ԵԷր. երաշտութիւն ի վերայ երկրի, եւ ի վերայ լերանց [7] ԵԷր. պղծեաց [8] ԵԷր. Տեառն ի պատգամաւորութեան Տեառն ցժողովուրդն եւ ասէ [9] ԵԷր. իշխանի [10] ԵԷր. չորեքտասն յԵլուլ, աւուր [11] ԵԷր. ցիշխան

ի փառաւորութեան իւրում զառաջինն, եւ ո՛րպէս արդ տեսանէք զդա՝ որպէս զոչ-
4 ինչ առաջի ձեր։ Եւ արդ զօրացիր դու, Զորաբաբէլ, ասէ Տէր, եւ զօրացիր, Յեսու Յովսեդեկեայ քահանայ մեծ, եւ զօրացի ամենայն ժողովուրդ երկրիդ, ասէ Տէր, եւ գործեցէք զի
5 ես ընդ ձեզ եմ, ասէ Տէր ամենակալ։ Եւ բանն զոր ուխտեցի ընդ ձեզ՝ յելանելն յերկրէն Եգիպտացւոց, եւ Հոգին իմ որ կայ ի միջի ձերում. քաջալերեա-
6 ցարուք։ Զի այսպէս ասէ Տէր ամենակալ. [1]Դարձեալ միւսանգամ՝ չարժեցից զերկինս եւ զերկիր, եւ զծով եւ զցա-
7 մաք։ Եւ միանգամայն չարժեցից զամենայն ազգս. եւ եկեսցէ ընտիր ընտիր ընչից ամենայն ազգաց, եւ լցուցից զաւնդ զայդ փառօք, ասէ Տէր ամե-
8 նակալ։ Իմ է արծաթ եւ իմ է ոսկի, ասէ Տէր ամենակալ։ Զի մեծ եղիցին փառք սանդ այդորիկ վերջինդ քան զառաջինն, ասէ Տէր ամենակալ. եւ ի տեղւոջդ յայսմիկ տաց խաղաղութիւն, ասէ Տէր ամենակալ. [2]եւ խաղաղութիւն ոյդւոյ, փրկութիւն ամենայնի՝ որ գործիցէ չարութանիկ զառաջարդ զայդ։"
10 Ի քսաներորդի եւ չորրորդի՝ հինեւ-
տորդի ամսեանն, յամի երկրորդի Դա-
րեհի, եղեւ բան Տեառն առ Անդէ մար-
11 գարէ, եւ ասէ, Այսպէս ասէ Տէր ամե-
նակալ. [3]Հարց օրէնս ի քահանայիցդ
12 եւ ասասցես, Եթէ առնուցու մարդ միս
սուրբ ի գլուխակ հանդերձի իւրոյ, եւ
մերձեսցի [4]ձորձք իւր" ի հաց կամ ի
ճան կամ ի գինի կամ ելեւ, կամ յամե-
նայն կերակուրս, իցէ՞ թէ սրբեսցի։
Պատասխանի եառն քահանայքն եւ ա-
13 սեն, Ոչ։ Եւ ասէ Անդէոս, Թէ մերձե-
նայցէ սիզծն [2]կամ անասուրքն" ողով
յամենայն ինչ յայնոսիկաց՝ իցէ՞ թէ
պղծեսցի։ Պատասխանի եառն քահա-
14 նայքն եւ ասեն, Պղծի։ Պատասխանի
եւ Անդէոս եւ ասէ,

Նոյնպէս եւ ժողովուրդս այս, նոյն-

պէս եւ ազգս այս առաջի իմ, ասէ Տէր. նոյնպէս եւ ամենայն գործք ձե-
ռաց նոցա, որ ինչ մերձենայցէ անդր՝ պղծեսցի, [2]վասն առիցն իւրեանց ա-
ռաւօտեան. եւ մոմիքեսցին յերեսաց չարեացն իւրեանց, եւ առէիք ի դրունս
15 զյանդիմանիչն։" Եւ արդ դիք ի սիրտ ձեր յօրէ յայսմանէ եւ յառաջ. մինչչեւ
եդեալ քար ի քարի վերայ տաճարիդ
16 Տեառն [2]ո՞վ էիք". Ցոյժամ արկանէիք
յամենան ձեր քսան քոռ գարւոյ, եւ լի-
նէր տասն քոռ գարւոյ. եւ մուծանէիք
ի հնծանս ձեր հանել յիսուն մար, եւ
17 լինէր քսան։ Հարի զձեզ անպտղու-
թեամբ եւ խորչակաւ եւ կարկտիւ. եւ
զամենայն գործս ձեռաց ձերոց, եւ ոչ
18 դարձարուք առ իս, ասէ Տէր։ Կարգե-
ցէք զսիրտս ձեր յօրէ յայսմանէ եւ
անդր. ի քսաներորդի եւ չորրորդի ին-
ներորդի ամսեանգ, եւ յօրէ յայդմանէ
յորում անկաւ հիմն տաճարիդ Տեառն,
19 դիք ի սիրտս ձեր. [5]իցէ թէ յայտնեսցի
ինչ ի վերայ կալոյ եւ յորթ, եւ ի
թզենի եւ ի նռնենի, եւ ի փայտ ի-
զոյ որ պտուղ ոչ տայնի". յօրէ յայս-
մանէ օրհնեցից։
20 Եւ եղեւ բան Տեառն կրկին անգամ
առ Անդէ մարգարէ, ի քսան եւ ի չորս
21 ամսեան, եւ ասէ, Ասա ցԶորաբաբէլ
[6]Սաղաթիելի յազգէ Ցուդայ, Դարձեալ
միւսանգամ՝ չարժեմ զերկինս եւ զեր-
22 կիր, [2]զծով եւ զցամաք," Եւ կործանե-
ցից զաթոռս [7]թագաւորաց, եւ սատա-
կեցից զզօրութիւնս աղգաց [7]թագաւո-
րաց, եւ կործանեցից զկառս եւ [8]զհնծ-
եալս, եւ իջցեն" երիվարք եւ հնծեալք
նոցա՝ իւրաքանչիւր սրով [9]առ եղբայր
23 իւր"։ Յաւուր յայնմիկ, ասէ Տէր ամե-
նակալ, առից զքեզ, Զորաբաբէլ Սա-
ադաթիելի, ծառայ [10]իմ, եւ եդից զքեզ
իբրեւ զկնիք. զի ընդ քեզ հաճեցայ,
ասէ Տէր ամենակալ։

---

[1] Եբր. Փոքր մեւս եւս եւ [2] Եբր. պոռնէ [3] Եբր. Ընդ, Հարց [4] Եբր. քղանցիւ իւրով

[5] Եբր. Իցէ՞ տակաւին սերմն ի շտեմարանի. եւ դեռ որթ եւ թզենի եւ նռնենի եւ ձիթենի պտուղ ոչ եառեն [6] Եբր. ցերեքան Ցուդայ, Ես [7] Եբր. թագաւորութեանց [8] Եբր. զկեռնեալս նորա, եւ անկցին [9] Եբր. եղբօր իւրոյ [10] Եբր. իմ, ասէ Տէր

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ
ՋԱՓԱՐԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Յամսեանն ութերորդի՝ յամի երկրորդի Դարեհի արքայի, եղեւ բան Տեառն առ Զաքարիա մարգարէ որդի Բարաքեայ, որդւոյ Աղդովայ, եւ ասէ,
2 Բարկացաւ Տէր ի վերայ հարցն ձերոց
3 բարկութիւն մեծ։ Եւ ասասցես ցոսա, Այսպէս ասէ Տէր զօրութեանց, եւ դարձայց առ ձեզ, ասէ Տէր զօրու-
4 թեանց։ Եւ մի՛ լինիք իբրեւ զհարս ձեր, [2]զորս պատուհասէին՝ մարգարէքն առաջինք, եւ ասէին, Այսպէս ասէ Տէր ամենակալ. Դարձարուք յամենայն ճա-նապարհաց ձերոց չարաց, եւ ի գործոց ձերոց չարաց. եւ ոչ լսեան, եւ ոչ ան-
5 սացին լսել ինձ, ասէ Տէր։ Հարքն ձեր ո՞ր են, եւ մարգարէքն միթէ յաւիտ-
6 եան կեցին։ Բայց [3]զբանս իմ եւ զօրէնս իմ զոր ես պատուիրեմ Հոգւով իմով ծառայից իմոց մարգարէից որ յամենեցուն հարցն ձերոց։ Պատաս-խանի եւ ասեն, Որպէս կարգեաց Տէր ամենակալ առնել[4] ըստ ճա-նապարհաց մերոց եւ ըստ գործոց մե-րոց, նոյնպէս եւ արար մեզ։
7 Ի քսանեւերորդի եւ չորրորդի՝ մեսա-նեւրդ ամենայն, որ է ինքն [5]Արաց, յերկրորդ ամի Դարեհի, եղեւ բան Տեառն առ Զաքարիա մարգարէ Բա-
8 րաքեայ որդւոյ Աղդովայ, եւ ասէ, Տեսի ի տեսլեան գիշերոյ, եւ ահա այր մի հեծեալ յաչխէտ ձի, եւ կայր ի մէջ [6]երկուց սմառատախիտ լերանցն՝, եւ ղինի նորա ձիք աչխէտք եւ սպիտակք եւ
9 սպիտակք։ Եւ ասեմ, Զի՞նչ են դոքա, Տէր. եւ ասէ ցիս հրեշտակն՝ որ խօսէր
1 յիս, Ես ցուցից քեզ զինչ են դոքա։
10 Պատասխանի եւ այրն որ կայր ի մէջ [7]լերանցն՝ եւ ասէ ցիս՝, Դոքա են զորս
11 առաքեաց Տէր չրջել ընդ երկիր։ Պա-տասխանի եւ նոքա հրեշտակին Տեառն՝ որ կայր ի մէջ [8]լերանցն, եւ ասեն, Շրջեցաք ընդ ամենայն երկիր, եւ ահա ամենայն երկիր բնակեալ եւ դադար-
12 եալ է։ Պատասխանի եւ [9]հրեշտակն եւ ասէ, Տէր ամենակալ, մինչեւ ցի՞րդ ոչ ողորմեսցիս ի վերայ Երուսաղեմի եւ քա-ղաքացն Յուդայ, [10]զորս անտես արարեր
13 այս եւիթանասներորդ՝ ամ։ Եւ պատաս-խանի եւ Տէր [11]ամենակալ հրեշտակին, որ խօսէր ցիս՝ բանս բարեաց եւ բանս
14 մխիթարութեան։ Եւ ասէ ցիս հրեշտակն որ խօսէր ցիս, Աղաղակեա եւ ասա, Այսպէս ասէ Տէր ամենակալ. Նա-խանձեցայ վասն Երուսաղեմի եւ վասն
15 Սիոնի նախանձ մեծ. Եւ բարկութեամբ մեծաւ բարկացեալ եմ ի վերայ ազգացն որ [12]միանդամայն հարան ի վերայ նոցա. փոխանակ զի ես սակաւիկ ինչ բարկա-ցեալ էի ի վերայ նոցա, եւ նոքա միան-
16 դամայն հարան ի վերա՛յ ի չարիս։ Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր. Դարձայց առ Երուսաղէմ գթութեամբ, եւ տունն իմ վերաշէն [13]չինեսցի, ասէ Տէր ամե-նակալ. եւ չափ ձգեսցի միւսանգամ ի
17 վերայ Երուսաղեմի։ [14]Եւ ասէ ցիս հրեշ-տակն որ խօսէր ցիս.՝՝ աղաղակեա եւ ասա, Այսպէս ասէ Տէր ամենակալ. Դարձեալ պիղծին [15]քաղաքք բարու-թեամբ, եւ ողորմեսցի Տէր Սիոնի, եւ հաճեսցի միւսանգամ ընդ Երուսաղէմ՝՝։

---

[1] ՅԲԲ. զօրութեանց, այսպէս և այլուր [2] ՅԲԲ. առ որս գոչէին [3] ՅԲԲ. բանք իմ եւ օրէնք իմ զորս պատուիրեալ էր իմ ծառայից իմոց մար-գարէից՝ ո՞չ ապաքէն ժամանեցին հարցն ձերոց. իսկ նոքա դարձան [4] ՅԲԲ. յաւելեն յաւելու, մեզ [5] ՅԲԲ. Սեբաղի [6] ՅԲԲ. մրտենեացս որ ի ձորի անդ [7] ՅԲԲ. մրտենեացն եւ ասէ [8] ՅԲԲ. մրտենեացն [9] ՅԲԲ. հրեշտակն Տեառն [10] ՅԲԲ. որոց բարկա-ցար զայս եւիթանասուն [11] ՅԲԲ. պա՛տ-ուհասէին [12] ՅԲԲ. որ են ի Հանգստեան, զի ես ասկաւիկ ինչ բարկացեալ էի, եւ նոքա օգնական եղեն [13] ՅԲԲ. չինեսցի ի նմա [14] ՅԲԲ. Դարձեալ [15] ՅԲԲ. քաղաքք իմ բարու-թեամբ, և մխիթարեսցէ Տէր միւսանգամ զՍիոն, եւ ընտրեսցէ միւսանգամ զԵրուսաղէմ

18 Եւ ամբարձի զաչս իմ եւ տեսի, եւ
19 ահա չորք եղջեւրք։ Եւ ասեմ ցհրեշ-
տակն որ խօսէր ինձ, Զի՞նչ են այդ-
քիկ, [1]ասէր։ Եւ ասէ ցիս, Այդ եղջեւրք
են որ ցրուեցին զՅուդա եւ զԻսրայէլ[2],
20 Եւ ետուն ինձ Տէր չորս հիւսուն։
21 Եւ ասեմ, Իսկ դուքա զի՞նչ գան գոր-
ծել. եւ ասէ ցիս, Այդ եղջեւրք են որ
ցրուեցին զՅուդա [3]եւ զԻսրայէլ խոր-
տակեցին, եւ ոչ ոք ի նոցանէ ամբարձ
զլլուխ իւր. եւ եկին սոքա սրել զնոսա
ի ձեռս նոցա, զչորս եղջեւրս՝ զազգս
յարուցեալս եղջեւր ի վերայ երկրի
Տեառն՝՝ ցրուել զնա։

Գլ. Բ

1 Եւ ամբարձի զաչս իմ եւ տեսի, եւ
ահա այր, եւ ի ձեռին իւրում ունէր
2 լար երկրաչափ։ Եւ ասեմ ցնա, Ո՞վ
երթաս։ Եւ ասէ ցիս, Չափել զերու-
սաղէմ, եւ տեսանել թէ որչափ է լայ-
նութիւն նորա եւ որչափ երկայնու-
3 թիւն։ Եւ ահա հրեշտակն որ խօսէր
ինձ՝ [4]ելանէր ասեալ կայր՝՝. եւ այլ հրեշ-
4 տակ ելանէր ընդ առաջ նորա։ Եւ ասէ
ցնա, Ընթա եւ խօսեայ ընդ երիտա-
սարդին ընդ այսմիկ եւ ասասցես,
[5]Պատշաճիւ չինեսցի՝՝ երուսաղէմ ի
բազմութենէ մարդոյ եւ անասնոյ ի մէջ
5 նորա։ Եւ ես եղէց [6]նմա պարիսպ հրե-
ղէն չուրջանակի, եւ ի փառս [7]բնակիւ-
սայց ի մէջ նորա։
6 Ո՛, ո՛, փախերուք յերկրէ հիւսիսոյ,
ասէ Տէր, զի [8]ի չորից հողմոց երկնից
7 ժողովեցից զձեզ, ասէ Տէր. Ի Սիոն
փրկեալ ապրեսարուք, բնակիչք՝՝ դստերն
8 Բաբելոնի։ Զի այսպէս ասէ Տէր ամե-
նակալ. Զփառաց զկնի արձակեաց զիս
յազգսն՝ որ կողոպտեցին զձեզ. զի որ
մերձենայ ի ձեզ՝ որպէս որ [9]ընդհար-
9 կանիցի ընդ բիբ ականի իւրոյ՝՝։ Զի ա-
հաւասիկ ես [10]ածից զձեռն իմ ի վերայ
նոցա, եւ եղիցին յաւար [11]ծառայեցու-
ցիչքն նոցա՝՝. եւ ծանիցիք թէ Տէր ա-
10 մենակալ առաքեաց զիս։ Ցնծա եւ ու-
րախ լեր, դուստր Սիոնի. զի ահա ես
եկից եւ բնակեցայց ի մէջի քումդ, ասէ
11 Տէր։ Եւ [12]ապաւինեսցին ազգք բազումք
ի Տէր յաւուր յայնմիկ, եւ եղիցին [13]նմա
ժողովուրդ, եւ բնակեսցին՝՝ ի մէջի քումդ.
եւ ծանիցես թէ Տէր առաքեալ առաք-
12 եաց զիս առ քեզ։ Եւ ժառանգեսցէ
Տէր զՅուդա զբաժին իւր յերկրին
սրբութեան, եւ [14]հաճեսցի մեծանգամ
13 ընդ Երուսաղէմ. Եւ երկիցէ ամենայն
մարմին յերեսաց Տեառն, զի զարթուց-
եալ է յամպոց սրբոց իւրոց՝՝։

Գլ. Գ

1 Եւ եցոյց ինձ Տէր զՅեսուա քահանայ
մեծ, զի կայր առաջի հրեշտակին Տեառն.
եւ Սատանայ կայր ընդ աջմէ նորա հա-
2 կառակել ընդ նմա։ Եւ ասէ Տէր ցՍա-
տանայ, Սաստեսցէ քեզ Տէր, Սա-
տանայ, եւ սաստեսցէ Տէր ի քեզ՝ որ
ընտրեացն զերուսաղէմ. ո՞չ ապաքէն դա
առաքիկ իբրեւ զխանձող մի զերծեալ
ի հրոյ։
3 Եւ Յեսուա էր զգեցեալ հանդերձս
ազտեղս, եւ կայր առաջի հրեշտակին
4 [1]Տեառն։ Պատասխանի ետ եւ ասէ
ցայնոսիկ որ կային առաջի նորա, ի
բաց արարէք զհանդերձս ազտեղիս ի
նմանէ. եւ ասէ ցնա, Ահա բարձի ի քէն զանօրէնութիւնս քո. եւ [15]ազու-
5 ցէք զմա պաղնաւոր. Եւ դիք՝՝ խոյր
սուրբ ի գլուխ գոյս. եւ եդին խոյր
սուրբ ի գլուխ նորա, եւ զգեցուցին նմա
հանդերձս. եւ հրեշտակ Տեառն կայր։
6 Եւ զնէր վկայութիւն հրեշտակն
7 Տեառն ընդ Յեսուայ եւ ասէր, Այսպէս
ասէ Տէր ամենակալ. Եթէ ի ճանա-
պարհս իմ գնասցես, եւ զպահանս իմ
պահեսցես, դու պատեսցիս զտուն իմ.
եւ [1]եթէ պահեսցես զսրահս իմ, եւ տաց
քեզ [16]որ չկիցին ի մէջ գոյս որ կանդ
8 առաւիկ՝՝։ Բայց լուր, Յեսուա քահանայ

---

[1] ՅԵբէ. պատուէր [2] Ներբողեցէք յաբելոս, և զերուսաղէմ [3] ՅԵբէ. զնոսին [4] Ելանէր յաբելոս [5] Ներբողեցէ զերուսաղէմ [6] ՅԵբէ. նմա, ասէ Տէր. [7] ՅԵբէ. եղէց [8] ՅԵբէ. ըստ չորից հողմոց երկնից ցրուեցի զձեզ, ասէ Տէր, (7) Ազէ Սիոն, զերծո զքեզ, որ բնակիսդ ընդ [9] ՅԵբէ. մերձենայցէ ընդ բիբ ական նորա [10] ՅԵբէ. շարժեցից [11] ՅԵբէ. ծառայից իւրեանց [12] Ներբողեցէ. յաբելոս [13] ՅԵբէ. ինձ ի ժողովուրդ, եւ ես բնակեցայց [14] ՅԵբէ. ընտրեսցէ միւսանգամ զերուսաղէմ։ (13) Լռեա լեր, ամենայն մարմին, առաջի Տեառն, զի զարթուցեալ է ի բնակութենէ սրբութեան իւրոյ։ [15] ՅԵբէ. ազուցից քեզ հանդերձ պատուական։ (5) Եւ ասացի զի դիցեն [16] Կամ, առաջնորդս ի մէջոյ գոյս որ կանդ

մեծ, զու եւ մերձաւորք քո որ նստինդ առաջի քո. զի արք [1]կիւսանմայք՝ են, զի անաւաւիկ ես ածեմ զծառայ
9 իմ [2]զԾագուսն։ Զի զվէմն զոր ետու առաջի երեսաց Յեսուայ, ի վերայ վիմին եւթին աչք են. անաւաւիկ ես [3]փորեցից խորխորատ, ասէ Տէր ա-մենակալ, եւ չոչափեցից զամենայն ա-նօրէնութիւն երկրին այնորիկ յաւուր
10 միում՝։ Յաւուր յայնմիկ, ասէ Տէր ամենակալ, կոչեսջիք ամենեքեան զընկեր իւր ընդ որթով եւ ընդ թզենեաւ։

Գլ. Թ

1 Եւ դարձաւ հրեշտակն որ խօսէր ընձ, եւ զարթոյց զիս՝ զոր օրինակ յորժամ
2 զարթնուցանեն այր ի քնոյ իւրմէ։ Եւ ասէ ցիս, Զի՞նչ տեսանես զու. եւ ասեմ, Տեսանեմ ահա աչառնակ ոսկի ձոյլ, եւ գունդ ի վերայ նորա. եւ եւթն ճրագ ի վերայ նորա, եւ եւթն ընթանք
3 ճրագացն որ ի վերայ նորա. Եւ [4]երկու ձիթենիք ի վերայ նորա, մի ընդ աջմէ գնդին, եւ մի ընդ ահնիկ։
4 Հարցի, եւ ասեմ ցհրեշտակն որ խօսէր
5 ցիս, Զի՞նչ են այդոքիկ, տէր։ Պատասխանի ետ հրեշտակն որ խօսէր ցիս՝ եւ ասէ ցիս, Ո՞չ գիտես զինչ են այդոքիկ.
6 եւ ասեմ, Ոչ, տէր։ Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցիս, Այս բան Տեառն է առ Զորաբաբէլ. ասէ, Ոչ զօրու-թեամբ [5]մեծաւ եւ ոչ ուժգնութեամբ, այլ Հոգւով իմով, ասէ Տէր ամենակալ։
7 Ո՞վ ես զու, լեառն [6]մեծ կանգնեալ առաջի Զորաբաբէլի, եւ հանից զվէմն ժառանգութեանն գնաւասարութիւնն չնորհաց չնորհել՝ նմա։
8 Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ,
9 Ձեռք Զորաբաբէլի հիմն արկին տանդ այդմիկ, եւ ձեռք նորա կանգնեսցեն զքա. եւ ծանիցես՝ թէ Տէր ամենակալ
10 առաքեաց զիս առ [7]քեզ։ Քանզի ով է որ անդամանեաց [8]զաւուրս փոքունս, եւ խնդայցեն զվէմն անագ-

[1] Եբբ. նշանաց [2] Եբբ. զՇաւաւիղ [3] Եբբ. բացից զբացուած նորա, ասէ Տէր զօրութեանց, եւ բարձից զանօրէնութիւն երկրին ի միում աւուր
[4] Եբբ. ձիթենիք երկուք առ նմին. մի ընդ աջմէ գնդին [5] Եբբ. պատուոյ [6] Եբբ. մեծ, առաջի Զորաբաբելի. Եղէսթ ի դաշտ. Նա հանիցէ զվէմն գլխաւոր, աղաղակաւ, շնորհս, շնորհս [7] Եբբ. ձեզ [8] Եբբ. զօրն փոքունց. և խնդայցեն

նայ ի ձեռին Զորաբաբելի. [9]այս են եւթն աչքն որ հային՝ ընդ ամենայն երկիր։
11 Պատասխանի ետու եւ ասեմ ցնա, Իսկ զի՞նչ են երկու ձիթենիքն որ կան ընդ աջմէ եւ ընդ ահնկէ աչառնակին։
12 Եւ հարցի կրկին եւ ասեմ ցնա, Զի՞նչ են երկու ատաք ձիթենեացն [10]որ ի ձեռս երկուց ծրագարկութեացն ոսկեաց՝ արկա-նելոց եւ ի վեր հանելոց զճաշակսն
13 ոսկիս։ Եւ ասէ ցիս՝, Ո՞չ գիտես զի՞նչ են այգոքիկ. եւ ասեմ, Ոչ, տէր։ Եւ ասէ
14 ցիս, Դոքա են [11]որդիք պարարտութեան՝ որ կան առաջի Տեառն ամենայն երկրի։

Գլ. Ժ

1 Եւ դարձայ ամբարձի զաչս իմ եւ տեսի,
2 եւ ահա [12]գերանդի թռուցեալ։ Եւ ասէ ցիս, Զի՞նչ տեսանես. եւ ասեմ, [12]Գե-րանդի թռուցեալ տեսանեմ ես, քսան կանգուն յերկայնութիւն, եւ տասն
3 կանգուն ի լայնութիւն։ Եւ ասէ ցիս, Այդ են անէծք որ ելանեն ի վերայ երե-սաց ամենայն երկրի. զի ամենայն [13]գո-ղոյ վրէժ մահու չափ զոլաւ խնդրեսցի, եւ ամենայն ստերդմանն վրէժ մահու-
4 չափ զոլաւ խնդրեսցի՝։ Եւ հանից զգա, ասէ Տէր ամենակալ, եւ մտցէ ի տունս գողոց, եւ ի տունս որ երդնուցանն սուտ յանուն իմ, եւ քնակեսցէ ի մէջ տան նորա, եւ վախճանեսցէ զնա, եւ զփայտ նորա եւ զքարինս նորա։
5 Եւ ել հրեշտակն որ խօսէր ընձ, եւ ասէ ցիս, Հայեաց աչօք քովք եւ տես զայն որ ելանէ. եւ ասեմ, Զի՞նչ է։
6 Եւ ասէ ցիս, Այդ է [14]չափ որ ելանէ. եւ ասէ, Այդ է [15]անիրաւութիւն նոցա
7 ընդ ամենայն երկիր։ Եւ ահա [16]կշիռ մի կապարեայ ամբարձեալ, եւ կին մի նստէր
8 ի մէջ [17]չափոյն։ Եւ ասէ, Այդ է անի-րաւութիւն. եւ ընկէց զնա ի մէջ [17]չա-փոյն եւ ընկէց զվէմն կապարեայ ի բե-
9 րան նորա։ Եւ ամբարձի զաչս իմ եւ տեսի, եւ ահա երկու կանայք ելանէին,

[9] Եբբ. եւթանեքեան այնոքիկ, սորա են աչք Տեառն որ յածին [10] Եբբ. առընթեր երկուց բերանոցն (՚ամ, խողովակացն) ոսկեաց որ հեղուն յինքեանց զսակին (այ-ինչ՝ զձէթն ոսկեգոյն)։ (13) Եւ խօսեցաւ առ իս եւ ասէ
[11] Եբբ. երկու որդիք ձիթոյ, այ-ինչ՝ երկու օծեալք [12] Եբբ. մագաղաթ [13] Եբբ. գող սպանցի ըստ էջոյ այսր կողման, եւ ամենայն երգնուող սպանցի ըստ էջոյ այնր կողման [14] Եբբ. արդուհի
[15] Եբբ. ախն, այ-ինչ՝ նմանութիւն [16] Եբբ. քան-քար [17] Եբբ. արդուհին

եւ հողմ ի թեւս նոցա. եւ էին թեւք նոցա իրրեւ զթեւս [1]յոպոպոյ. եւ ամբարձին [2]զչամն ընդ երկիր եւ ընդ երկինս։ Եւ ասեմ ցհրեշտակն որ խօսէր ընդ ինձ՝ Ո՞ւր տանին նոքա [3]զչամն։ Եւ ասէ ցիս, Ո՛չ տանին նոքա [3]զչամն, եւ ասէ ցիս, Շինել նմա տուն յերկրին [3]Բաբելացւոց, եւ պատրաստել. եւ դիցեն զնա անդ՝ ի վերայ պատրաստութեան իւրոյ։

Գլ. Զ

1 Դարձեալ ամբարձի զաչս իմ եւ տեսանէի, եւ ահա չորք կառք ելանէին ի միջոյ երկուց լերանց, եւ լերինքն էին
2 լերինք պղնձիք։ Ի կառն առաջինում ձիք աշխէտք, եւ ի կառն երկրորդում ձիք սեւք, Եւ ի կառն երրորդում ձիք
3 սպիտակք, եւ ի կառն չորրորդում ձիք
4 [4]պէսպէս պիտակք։ Պատասխանի եւ ասեմ ցհրեշտակն որ խօսէր ցիս, Զինչ
5 են այդոքիկ, տէր։ Պատասխանի եւ հրեշտակն որ խօսէր ցիս՝ եւ ասէ, Դուքա են չորք [5]հողմք երկնից, որ ելանեն կալ՝ առաջի Տեառն ամենայն երկրի։ Յորում էին ձիքն սեւք, ելանէին
6 ընդ երկիր հիւսիսոյ, եւ սպիտակքն ելանէին զհետ նոցա, եւ [6]աչխէտքն ելանէին ընդ երկիր հարաւոյ. Եւ [7]պիտակքն ելանէին հայէին չրջել ընդ ամենայն երկիր. եւ ասէ, Գնացէք եւ չրջեցարուք ընդ երկիր. եւ չրջեցան ընդ երկիր։
8 Եւ աղաղակեաց եւ ասէ ցիս, Ահա որ ելանեն ընդ երկիր հիւսիսոյ, հանգուցին [8]զբարկութիւն իմ յերկրին հիւսիսոյ։
9 Եւ եղեւ բան Տեառն առ իս, եւ ա-
10 սէ, Առ դու ինձ ի գերութենէ անտի՝ [9]յիշխանաց եւ ի պիտանեաց նորա եւ ի գիտնոց նորա՝, եւ մտցես յաւուր յայնմիկ ի տուն Յովսիայ որդւոյ Սոփոնիայ՝
11 որ եկեալ է ի Բաբելոնէ։ Եւ առցես ոսկի եւ արծաթ, եւ արասցես պսակս, եւ դիցես ի գլուխ Յեսուայ
12 Յովսեդեկիայ քահանայի մեծի. Եւ ասասցես ցնա, Այսպէս ասէ Տէր ամենակալ. Ահա [10]այր՝ եւ Ծագումն՝ անուն նորա, եւ ի ներքոյ իւրմէ ծագեսցէ. եւ
13 չինեսցէ [11]զտաճարն Տեառն։ Եւ նա առցէ զքաջութիւն՝՝ նստցի եւ տիրեսցէ ի վերայ աթոռոյ իւրոյ. եւ եղիցի քահանայ [12]ընդ աջմէ նորա՝՝, եւ խորհուրդ խաղաղութեան եղիցի ի մէջ երկոցունց։
14 Եւ պսակդ եղիցի [13]այնոցիկ՝ որ անկն ընդեն. եւ պիտանեսցի նորա, եւ որոց ճանաչելն զնա, եւ ի չնորհս որդւոյ Սո-
15 փոնեայ եւ յերգս ատն՝՝ Տեառն։ Եւ հեռաւորք ի նացանէ եկեսցեն եւ չինեսցեն [14]զտաճարն Տեառն. եւ ծանիցիք թէ Տէր ամենակալ առաքեաց զիս առ ձեզ. եւ եղիցի, եթէ լսելով լուիցէք ձայնի Տեառն Աստուծոյ ձերոյ։

Գլ. Է

1 Եւ եղեւ յամին չորրորդի Դարեհի արքայի, եղեւ բան Տեառն առ Զաքարիա, որ
2 էր չորք էին ամսոյն ինեներորդի, որ է Բասգեւ։ Եւ առաքեաց [15]ի Բեթելայ Սարասար եւ Արեսատ՝ թաղաւորք եւ արք
3 իւրեանց՝՝ ազաչել զՏէր, Եւ ասել ցքահանայսն որ էին ի տանն Տեառն ամենակալի եւ ցմարգարէսն, [16]եթէ Մո՞ւտ այդր յամսեանն հինգերորդի սրբութիւն. քանզի առնէին զայն զամս բազումս՝՝։
4 Եւ եղեւ բան Տեառն զօրութեանց առ
5 իս, եւ ասէ, Խօսեաց ընդ ամենայն ժողովրդեան երկրիդ եւ ընդ քահանայս՝ եւ ասասցես, [17]Եթէ պահիցէք եւ կոծիցէք ի հինգերորդս կամ յեւթներորդս ամսոց. ահա եւթանասուն ամ. միթէ
6 պա՞ն պահեցէք ինձ. Եւ եթէ ուտէք եւ ըմպէք, ո՞չ ապաքէն դուք ուտէք
7 եւ ըմպէք՝՝։ Ո՞չ այս բանք են զոր խօսեցաւ Տէր ի ձեռն մարգարէիցն իւրոց առաջնոց՝ մինչդեռ չէն էր Երուսաղէմ եւ ի բարւոքեան, եւ քաղաքք նորա չուրջանակի եւ [18]լեռնայինքն եւ դաշտայինքն բնակեալ էին։

---

[1] ՆԵԲԲ. արագիլ [2] ՆԵԲԲ. զարդուն [3] ՆԵԲԲ. Սենաարայ. եւ Հաստատեսցի, եւ դիցի տնդր ի վերայ խարսխի [4] ՆԵԲԲ. պիտակ գորշագոյնք [5] ՆԵԲԲ. ոգիք երկնից որ ելանեն ի կալոյ [6] ՆԵԲԲ. պիտակքն [7] ՆԵԲԲ. գորշագոյնքն ելանէին եւ կամէին երթալ չրջել ընդ [8] ՆԵԲԲ. զոգի [9] ՆԵԲԲ. ի Հեդդայ, ի Տուբիայ եւ ի Յեդայեայ. [10] ՆԵԲԲ. այրն որոյ Շառաւիղ է

[11] ՆԵԲԲ. զտաճարն Տեառն։ (13) Եւ նա չինեսցէ զտաճարն Տեառն, եւ նա տարցի զպատիւ, և [12] ՆԵԲԲ. ի վերայ աթոռոյ իւրոյ [13] ՆԵԲԲ. Հեղեմայ, և Տուբիայ, եւ Յեդայեայ, եւ Քենայ որդւոյ Սոփոնեայ, ի յիշատակ ի տաճարին [14] ՆԵԲԲ. ի տաճարին [15] ՆԵԲԲ. Բեթել զԱսարասար եւ զԼնեգեմմելէք եւ զարս նոցա [16] ՆԵԲԲ. Միթէ լսցեն Տ յամենայն հինգերորդի, զատուցեալ, զոր օրինակ առնէի յայնչափ ամաց հետէ [17] ՆԵԲԲ. Յորժամ պահէիք եւ առնուիք սուգ ի հինգերորդս եւ յեւթներորդս ամսոց զայս եւթանասուն ամ, միթէ վասն ի՞մ պահէիք։ (6) Եւ յորժամ ուտէիք եւ ըմպէիք, ո՞չ ապաքէն ուտէիք վասն ձեր եւ ըմպէիք վասն ձեր [18] ՆԵԲԲ. Հարաւայինքն

8 Եւ եղեւ բան Տեառն առ Զաքարիա՝
9 եւ ասէ, Այսպէս ասէ Տէր ամենակալ. Դատաստան արդար դատեցարուք, եւ ողորմութիւն եւ գթութիւն արարէք
10 իւրաքանչիւր եղբօր իւրոյ. Այրին եւ որբն եւ գաղանդուխտն եւ դանանկն մի՛ յաղխատարէք, եւ ոխս չարիս այր ընկերի իւրում մի՛ սք կալցի ի սիրտ իւր։
11 Եւ ոչ հաւանեցան անսալ. այլ ետուն գթիկունս ՚իւրեանց ի չմտարութիւն՚՚, եւ ծանրացուցին զականջս իւրեանց առ ի
12 չլսել. Եւ զսիրտս իւրեանց [2]կարդեցին անհնազանդս՚՚, առ ի չլսելոյ օրինաց [3]իմոց եւ բանից զոր առաքեաց Տէր ամենակալ Հոգւով իւրով ի ձեռն մարգարէիցն առաջնոց. եւ եղեւ բարկութիւն մեծ ի Տեառնէ ամենակալէ։
13 Եւ ՚եղիցի զոր օրինակ խօսեցան՝ եւ՚՚ ոչ լուան նմա, նոյնպէս աղաղակեցայն, եւ ոչ [5]լուիցէ նոցա՚՚, ասէ Տէր ամենակալ։
14 Եւ [6]հանից զնոսա ընդ ամենայն ազգս զորս ոչ գիտիցին, եւ երկիրդ ապականեսցի ղինի նոցա, զի ոչ ոք էցէ որ երթիցէ, եւ դառնայցէ. եւ երկիրն ցնծիցէ յապականութիւն՚՚։

Գլ. Ը

1 Եւ եղեւ բան Տեառն ամենակալի առ իս, եւ ասէ, Այսպէս ասէ Տէր ամենակալ. Նախանձեցայ [3]վասն Երուսաղեմի եւ՚՚ վասն Սիոնի նախանձ մեծ, եւ բարկութեամբ մեծաւ նախանձեցայ
3 վասն նորա։ Այսպէս ասէ Տէր. Դարձայց ի Սիոն եւ բնակեցայց ի մէջ Երուսաղեմի. եւ կոչեսցի Երուսաղէմ քաղաք ճշմարիտ, եւ լեառն Տեառն ամենակալի Լեառն սուրբ։
4 Այսպէս ասէ Տէր ամենակալ. Դարձեալ նստցին ծերք եւ պառաւունք ի հրապարակս Երուսաղեմի, իւրաքանչիւր ցուպ ի ձեռին իւրում ի բազմութենէ աւուրց. Եւ հրապարակք քաղաքին լցցին պատանեկօք եւ աղջկամբք որ խաղայցեն ի հրապարակս նորա։
6 Այսպէս ասէ Տէր ամենակալ. Եթէ [7]տկարանայցէ ինչ առաջի՚՚ մեծայորդոյ ժողովրդեանդ այդորիկ յաւուրսն յայնոսիկ, միթէ եւ [8]առաջի իմ տկարանայցէ՚՚, ասէ Տէր ամենակալ։
7 Այսպէս ասէ Տէր ամենակալ. Ահա ես փրկեմ զժողովուրդ իմ յերկրէ արեւելից եւ յերկրէ արեւմտից. Եւ ածից զնոսա եւ բնակեցուցից ի մէջ Երուսաղեմի, եւ եղիցին ինձ ժողովուրդ, եւ ես եղէց նոցա Աստուած ճշմարտութեամբ եւ արդարութեամբ։
9 Այսպէս ասէ Տէր ամենակալ. Զօրացարուք ձեռք ձեր որ լսէքդ յաւուրս յայսոսիկ զբանս գայս ի բերանոյ մարգարէիցն, յորժ յորմէ արկէք հիմն տան Տեառն ամենակալի, եւ տաճարս յորմէ
10 հետէ չինեցաւ։ Զի յառաջ քան զաւուրսն զայնոսիկ՝ վարձք մարդկան ոչ էին [3]յօգուտ, եւ վարձք անասնոց [4]ոչ էին [3]յարդի, եւ ելոյզ եւ մտոյզ ոչ էր խաղաղութիւն ինձդուխինէ. [9]եւ առաքեցից՚՚ զամենայն մարդիկ իւրաքանչիւր
11 առ ընկեր իւր։ Եւ արդ ոչ ըստ աւուրցն առաջնոց առնեմ ես մնացորդաց ժողովրդեանդ այդորիկ, ասէ Տէր ամենակալ։
12 Այլ [10]ցուցից խաղաղութիւն՚՚. այգի տայցէ զպտուղ իւր, եւ երկիր տացէ զարմահս իւր, եւ երկինք տացեն զցօղ իւրեանց, եւ ժառանգեցուցից մնացորդաց ժողովրդեան իմոյ զայն ամենայն։
13 Եւ եղիցի որպէս էիքն յանէծս ի մէջ ազգաց տունդ Յուդայ եւ տունդ Իսրայելի, նոյնպէս ապրեցուցից զձեզ, եւ եղիջիք յօրհնութիւն. քաջալերեցարուք
14 եւ զօրացին ձեռք ձեր։ Զի այսպէս ասէ Տէր ամենակալ. Որպէս խորհեցայ չարչարել զձեզ՝ ի բարկացուցանել զիս հարցն ձերոց, ասէ Տէր ամենակալ, եւ
15 ոչ զղջացայ, նոյնպէս [11]սլաւարաստեալ եւ խորհեալ եմ յաւուրս յայսոսիկ բարի առնել Երուսաղեմի եւ տանդ Յուդայ. քաջալերեցարուք։
16 Այս բանք են զոր առնիցէք. Խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, եւ դատաստան խաղաղութեան եւ արդար
17 դատեցարուք ի դրունս ձեր. Եւ իւրաքանչիւր չար ընկերի իւրում մի՛ խորհիք ի սիրտս ձեր, եւ զերդումն սուտ մի՛ սիրէք. զի զայն ամենայն ատեցի, ասէ Տէր ամենակալ։

---

[1] ՚՚Եբր. ի հետեւ։ [2] Եբր. արաբերն ապստամբեցաւ [3] ՅԵբր. պ-ի-ւ [4] Եբր. եզեւ զի որպէս նա կոչեաց, եւ նոքա [5] Եբր. լուայց [6] Եբր. ցրուեցի զնոսա մրրկաւ ընդ ամենայն ազգս զորս ոչ գիտէին. և երկիրդ ամայացաւ յետ նոցա առ ի չգոյէ անցելոց եւ դարձելոց. սյապես արաբերն ամայի զերկիրն ցանկալի [7] Եբր. զարմանալի իցէ յաչս

[8] Եբր. յաչս իմ իցէ զարմանալի [9] Եբր. զի յարուցեալ էր իմ [10] Եբր. եղիցի սերմն խաղաղութեան [11] Եբր. դարձայ

18 Եւ եղեւ յան Տեառն ամենակալի առ
19 իս՝ եւ ասէ, Այսպէս ասէ Տէր ամենա-
կալ. Պահքն չորրորդք եւ պահքն հին-
գերորդք, պահքն եւթներորդք եւ պահքն
տասներորդք՝ եղիցին տանդ Յուդայ ի
խնդութիւն եւ յուրախութիւն եւ ի տօնս
բարեաց. [1]եւ ուրախ լինիք," եւ
զճշմարտութիւն եւ զխաղաղութիւն
սիրեցէք։
20 Այսպէս ասէ Տէր ամենակալ. Դար-
ձեալ եկեսցեն ժողովուրդք [1]բազումք
21 եւ բնակիչք քաղաքաց բազմաց. Եւ
ժողովեսցին բնակիչք միոյ ի մեւս քա-
ղաք, եւ ասասցեն՝ [2]երթիցուք աղա-
չել զերեսս Տեառն, եւ խնդրել [3]զերեսս
Աստուծոյ ամենակալի". երթայց եւ ես.
22 Եւ եկեսցեն ժողովուրդք բազումք
[4]խնդրել զերեսս Տեառն ամենակալի յե-
րուսաղէմ, եւ հաչտեցուցանել" զերեսս
23 Տեառն։ Այսպէս ասէ Տէր ամենակալ.
Ցաւուրսն յայնոսիկ, բուռն հարկանիք-
ցեն արք տասն յամենայն լեզուաց աղ-
գաց, բուռն հարկանիցեն զդրօշակիչ
առն Հրէի եւ ասասցեն, Երթիցուք
մեք ընդ [5]քեզ, զի լուաք թէ Աստուած
ընդ [5]քեզ է։

Գլ. Թ

1 [6]Ածած բանի Տեառն յերկիր Սեպրաք,
եւ ի Դամասկոս զոհ նորա. զի Տէր տե-
սանէ զմարդիկ, եւ զամենայն ազգս Իս-
2 րայելի։ Եւ յեմաթ ի սահմանս նորա,
Տիւրոս եւ Սիդոն, զի արհամարհեցին"
յոյժ։
3 Եւ չինեաց Տիւրոս ամուրս իւր. եւ
դանձեաց զարծաթ իբրեւ զհող, եւ
4 զոսկի իբրեւ զկաւ ճանապարհաց։ Վասն
այնորիկ Տէր [7]ժառանգեսցէ զնա, եւ
ամաօցէ ի ծով զզօրութիւն նորա". եւ
նա հրով ծախեսցի։
5 Տեսցէ Ասկաղոն, եւ երկիցէ, եւ Գա-
զա՝ մորմոքեսցի յոյժ, եւ Ակկարոն՝ զի
յամօթ եղեւ [8]ի վերայ յանցանաց իւ-
րոց", եւ կորիցէ թագաւոր ի Գազայ,
6 եւ Ասկաղոն մի բնակեսցի։ Եւ բնա-
կեսցեն [9]այլազգիք յԱզովոտոս, եւ քա-
7 կեցից զնաւարուեստիւն այլազգեաց. Եւ
բարձից զարիւն նոցա ի բերանոյ նոցա,
եւ զպարչկիս նոցա ի միջոյ ատամանց
նոցա. եւ [10]մնացեն եւ նոքա" Աստու-
ծոյ մերում, եւ եղիցին իբրեւ զհազա-
րապետս ի մէջ Յուդայ, եւ Ակկարոն
իբրեւ զԵբեւսացին։
8 Եւ [11]կացուցից տան իմոյ պաշտպան՝
առ ի չանցանելոյ եւ չդառնալոյ", եւ
մի՛ եւս եկեսցէ ի վերայ նոցա որ հա-
լածեսցէ զնոսա. զի այժմ տեսի աչօք
իմովք։
9 Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի.
[12]քարոզեա, դուստր Երուսաղեմի. ահա
Թագաւոր քո գայ առ քեզ, արդար եւ
փրկիչ, նոյն հեզ, եւ հեծեալ ի վերայ
10 իշոյ եւ յօրանակի նորոյ։ Եւ [13]սատա-
կեսցէ զկառս յԵփրեմայ եւ զերիվարս
յերուսաղեմէ, եւ խորտակեսցի աղեղն
[14]պատերազմօղ, եւ բազմութիւն եւ խա-
զաղութիւն յազգաց". եւ տիրեսցէ Ջրոց
ի ծովէ մինչեւ ի ծով, եւ ի գետոց մին-
11 չեւ ի ծագս երկրի։ Եւ զու արեամբ
ուխտի քո արձակեցեր" զկապեալս քո
12 յանջրդի գբոյ։ Եւ [15]նաջիք յամուրս
կապեալք ժողովրդեանդ. եւ փոխանակ
միոյ աւուր պանդխտութեան քո" կրկին
13 հատուցից քեզ։ Զի լարեցից [16]զքեզ
ինձ, Յուդա," իբրեւ զաղեղն, լցից եւ
զԵփրեմ. եւ զարթուցից զորդիս քո,
Սիոն, ի վերայ որդւոցն Յունաց, եւ
[17]չօչափեցից զքեզ իբրեւ զսուսեր [1]պո-
14 զոտիկի պատերազմողի։ Եւ Տէր [18]եւ-
րիցի վերակացու" նոցա, եւ ելցէ իբ-
րեւ զփայլակն նետ նորա. եւ Տէր [19]Տէր
ամենակալ" փող հարցէ, եւ գնասցէ
15 [20]չարժմամբ սպառնալեաց իւրոց." Տէր

---

[1] Յերբ. պոռոտ [2] Երբ. Երթալով երթիցուք [3] Երբ. զՏէր զօրութեանց [4] Երբ. եւ ազգք հզօրք խնդրել զՏէր զօրութեանց յԵրուսաղէմ, եւ աղաչել [5] Երբ. ձեզ [6] Երբ. Պատգամ բանի Տեառն վասն երկրին Հադրաբայ, եւ Դամասկոս տեղի հանգստեան նորա, զի առ Տէր աչք մարդոյ եւ ամենայն ազգաց Իսրայելի (1՝մ, աչք Տեառն ի վերայ մարդոյ եւ ամենայն ազգաց Իսրայելի), (2) Եւ եմեմ եւս սահմանակից նորա, այլ եւ Տիւրոս եւ Սիդոն, թէպետեւ խմաստուն են [7] Կամ, վանեսցէ զնա, եւ կարցէ զզօրութիւն նորա որ ի ծովս

[8] Երբ. ի յուսոյ իւրմէ [9] Երբ. պոռնկորդիք [10] Երբ. մնացորդն՝ այն եւս եղիցի [11] Երբ. բանակեցայց զառաջ իմով ի զօրուէն որ անցանէ եւ դառնայ [12] Երբ. ցնծա [13] Երբ. սատակեցից [14] Երբ. պատերազմի, եւ խօսեսցի խաղաղութիւն ազգաց, եւ իշխանութիւն նորա ի ծովէ մինչեւ ի ծով, եւ ի գետոյն ի ծագս երկրի։ (11) Իսկ զնա քո, արեամբ ուխտի քո արձակեցի՛ զկապեալս քո, զի այսօր ազդ առնեմ զի [16] Երբ. ինձ զՅուդա [17] Երբ. արարից [18] Երբ. երեւեսցի ի վերայ [19] Երբ. Եհովայ [20] Երբ. մրրկօք հարաւոյ

ամենակալ պաշտպանեսցէ նոցա, եւ ապատեսցեն զնոսա, եւ [1]թաղեսցեն զնոսա քարամբք պատուականաց. եւ արքեցեն զարիւն նոցա իբրեւ զջրինի, եւ
16 լցցեն զասպարս իբրեւ զսեղանն". Եւ երկեսցէ զնոսա Տէր Աստուած նոցա յաւուր յայնմիկ՝ իբրեւ զոչխարս վժոզովուրդ իւր. զի [2]քարինք սուրբ թա-
17 ւալին յերկրի նորա. Զի որ ինչ բարին իցէ՝ նորա է, եւ որ ինչ լաւն՝ նորին. ցրուեան երիտասարդաց, եւ զինի անուշարար կուսից։"

Գլ. Ժ

1 "Ընդրեցէք ի Տեառնէ անձրեւ ըստ ժամանակաց [3]գկանուխս եւ զանագան. Տէր արար զզարմանալիս, եւ զանձրեւ ձմեռայնոյ տացէ նոցա, իւրաքանչիւր խոտ
2 յանդի։ Զի հարցուկք բարբառեցան աչխատութիւնս", եւ ըղձապատուէմք տեսիլս սուտս եւ երազս սուտս խօսէին, եւ ի զուր մխիթարէին. վասն այնորիկ [4]ցամաքեցան իբրեւ խաչինք, եւ չարաչեցան, զի ոչ գոյր բժշկութիւն",
3 ի վերայ հովուաց բարկացաւ սրամտութիւն իմ, եւ ի վերայ [5]գառանց այցեւթիւն արարից. եւ այց արասցէ Տէր
[6]Աստուած ամենակալ խաչին իւրոյ սանն Ծուզայ, եւ յարգարեսցէ զնոսա իւր իբրեւ զերիվար զեղեցիկ պատերազմի։
4 [7]Ես ի նմանէ ելեւտաց, եւ ի նմանէ յարդարեաց, եւ ի նմանէ աղեղն իւր բարձրութեամբ. եւ ի նմանէ ելցէ ամենայն
5 որ հալածիցէ ի նոյն։ Եւ եղիցին իբրեւ զպատերազմօղք՝ որ կոխիցեն զիւաւ ի ճանապարհս պատերազմի", եւ ճակա-

տեսցին, զի Տէր ընդ նոսա է, եւ ա-
6 մաչեսցեն հնծեալք յերիվարս։ Եւ զօրացուցից զտունն Յուդայ, եւ զտունն Յովսեփայ ապրեցուցից, եւ բնակեցուցից զնոսա, զի [8]սիրեցի զնոսա". եւ եղիցին որպէս թէ չիցեմ դարձեալ ի նոցանէ. զի ես եմ Տէր Աստուած նոցա,
7 եւ լուայց նոցա։ Եւ [9]եղիցին իբրեւ զպատերազմօղն Եփրեմի", եւ խնդասցէ սիրտ նոցա իբրեւ ի գինւոյ. եւ որդիք նոցա տեսցեն եւ ուրախ լիցին, եւ
8 ցնծասցեն սիրտք նոցա ի Տէր։ Ազդ առից նոցա եւ ընկալայց զնոսա, զի ապրեցուցի զնոսա, եւ բազմասցին որ-
9 պէս էին բազումք։ Եւ սերմանեցից զնոսա ընդ ազգս, եւ որ հեռաւորքն լցեն՝ յիշեսցեն զիս, [10]անուանցեն
10 զորդիս՝ իւրեանց եւ դարձցին։ Եւ դարձուցից զնոսա յերկրէն Եգիպտացւոց, եւ յԱսորեստանեայց ընկալայց զնոսա, եւ ի Գաղաազ եւ ի Լիբանան մուծից զնոսա. եւ ոչ [11]պակասեսցէ ի նո-
11 ցանէ եւ ոչ մի։ Եւ անցցեն ընդ ծովն անձուկ, եւ հարցեն" զալիս ծովուն, եւ ցամաքեսցին ամենայն խորք գետոց. եւ բարձցի ամենայն հպարտութիւն Ասորեստանեայց, եւ իշխանու-
12 թիւն Եգիպտացւոց քակեսցի։ Եւ զօրացուցից զնոսա ի Տէր [6]Աստուած նոցա", եւ յանուն նորա [12]պարծեսցին, ասէ Տէր։

Գլ. ԺԱ

1 Բաց զդրունս քո, Լիբանան, եւ կե-
2 րիցէ հուր զմայրս քո։ Ողբասցեն սաղսյք, զի մայրք գլորեցան, զի [6]մեծապէս մեծամեծք չուառացան. ողբայէք, կաղնիք Բասանու, զի քակեցաւ անառն անկանելոյ։ Ձայն ողբալոյ հովուաց, զի թշուառացաւ մեծութիւն
3 նոցա. ձայն գոչելոյ առիւծուց, զի թշուառացաւ բարձրութիւն Յորդանանու։
4 Այսպէս ասէ Տէր [13]ամենակալ. Արա-
5 ծեա զխաչինս կոտորածի, Զոր սսաց գողքն [14]կոտորէին. եւ" վաճառէին զնո-

[1] ԵԲբ. կոխեսցեն ի վերայ պատաքարաց, եւ արքեցեն, եւ աղաղակեսցեն իբրեւ զարբեցեալ, եւ լցցին իբրեւ տաշտ, իբրեւ զանկիւնս սեղանոյ.
[2] ԵԲբ. էբէ– զքարինս պատկի բարձրացցին ի վերայ երկրի նորա. (17) Զի քանի՞ մեծ է բարութիւն նորա, եւ քանի՞ն մեծ գեղեցկութիւն նորա. ցորեան վերիմաստասիրս, եւ զինի անուշարար գկուսանս զբարձացուսցէ։ [3]ԵԲբ. զանագան. Տէր է որ առնէ զփայլատակունս, եւ տացէ նոցա անձրեւ տեղատարափ, իւրաքանչիւր խոտոյ յանդի։ (2) Զի թերափք խօսեցան զսուտ այնուհետեւ [4]ԵԲբ. չուեցին իբրեւ խաշինս. տապնապեցան զի ոչ գոյր հովիւ [5]ԵԲբ. նոխազաց [6]ԵՅբ. պուճուճ [7]ԵԲբ. Անկիւն, (ՅՀ, իշխան) ինմանէ, բեւեռ (ՅՀ, գլխաւորն)ի նմանէ, աղեղն պատերազմի ինմանէ. ի նմանէ ելցէ ամենայն զօրավար միանգամայն։ (5) Եւ եղիցին իբրեւ զՀզօր առնել կոխան իբրեւ զկաւ գաւհոյ ի պատերազմի

[8] ԵԲբ. ողորմեցայ նոցա [9]ԵԲբ. եղիցի իբրեւ զՀզօր Եփրեմ [10]ԵԲբ. եւ կեցցեն ընդ որդիս [11]ԵԲբ. գացի նոցա գեղ։ (11) Եւ անցցէ նա ընդ ծով անձկութեան (ՅՀ, անձկութեամբ) եւ հարցէ [12]ԵԲբ. շրջեսցին [13]ԵԲբ.Աստուած իմ [14]ԵԲբ. կոտորէին, եւ ոչ յանցանէին. եւ որ.

սա, ասէին, Օրհնեալ Տէր՝ եւ մեծա-
ցաք. եւ հովուաց նոցա ոչինչ ցաւէր
6 վասն նոցա։ [1]Վասն այնորիկ՝ ոչ եւս
խնայեցից ի վերայ բնակչաց երկրիդ,
ասէ Տէր. եւ ահաւադիկ ես մատնեցից
զմարդիկ իւրաքանչիւր ի ձեռս ընկերի
իւրոյ եւ ի ձեռս թագաւորի իւրոյ, եւ
հարցեն[2]. եւ ոչ փրկեցից ի ձեռաց նոցա։
7 Եւ [3]հովուեցից խաչինն կոտորելոյ յերկ-
բին Քանանացւոց։ Եւ առից ինձ եր-
կուս գաւազանս. զմին կոչեցից Գե-
ղեցկութիւն, եւ զերկրորդն կոչեցից
8 Վիճակ, եւ արածեցից զխաչինսն։ Եւ
բարձից՝ զերիս հովիւսն ի միում ամ-
սեան, [4]եւ ծանրասցի անձն իմ ի վե-
րայ նոցա. քանզի եւ անձինք նոցա
9 գոչէին ի վերայ իմ՝։ Եւ ասեմ, Ոչ հո-
վուեցից ձեզ. որ մեռանելոցն է՝ մեռա-
ցի, եւ որ սատակելոցն է՝ սատակեա-
ցի. եւ մնացեալքն կերիցեն իւրաքան-
10 չիւր զմարմինս ընկերի իւրոյ։ Եւ առի
զգաւազանն իմ զԳեղեցիկ, եւ [5]ընկեցի
զնա՝ զրկել զուխտ իմ զոր եդի առ ամե-
11 նայն ժողովուրդս։ Եւ [6]զրկացի յաւուր
յայնմիկ, եւ ծանիցեն Քանանացիքն
զիաչինս պահեսսի իմոյ, զի բան
Տեառն է՝։
12 Եւ ասացի ցնոսա, Թէ բարւոք Թուի
յաչս ձեր՝ տուք զվարձս իմ. սակս Թէ
ոչ՝ զրոյց արարէք. եւ կշռեցին զվարձս
13 իմ երեսուն արծաթի։ Եւ ասէ ցիս Տէր,
Արկ դու զայդ [7]ի բովս, եւ քննեսս Թէ
փորձ իցէ, որպէս ես գտայ փորձ վասն
նոցա՝։ Եւ առի զերեսուն արծաթին,
14 եւ արկի ի տունն Տեառն [8]ի բովս։ Եւ
ընկեցի զգաւազանն երկրորդ՝ զվիճակն,
զրկել զուխտ իմ՝ ի մէջ Ցուդայ եւ ի մէջ
Իսրայէլի։
15 Եւ ասէ ցիս Տէր, Դարձեալ առ զա-

[1] ՆԲէր. Զի [2] ՆԲ-եբէնէ-յ-ե-ե-ը-, զերկիրն [3] ՆԲէր. Հովուեցից խաչինն որ ի զննուէ է, արդարեւ տառապելոյն խաչանց. Եւ առի ինձ երկուս գաւազանս, զմին կոչեցի Գեղեցկութիւն, եւ զերկրորդն կոչեցի Կապանս, և արածեցի զխաչինսն։ (8) Եւ բարձի [4] ՆԲէր. զի տաղտկացաւ անձն իմ ի նոցանէ, և անձն նոցա եւս գարշեցաւ յիմնէն [5] ՆԲէր. բեկի [6] ՆԲէր. ցրեցաւ յաւուր յայնմիկ, եւ ծանեան այսպէս նեղեալքն ի խաչանց որ Ճեան էին, եթէ բան Տեառն է այս [7] ՆԲէր. առ բրտին (ՅՀ, ի գանձն) գին պատուական որ հատուա վասն իմ ի նոցանէ [8] ՆԲէր. առ բրտին (ՅՀ, ի գանձն), (14) Եւ բեկի զգաւազանն երկրորդ՝ զկապանս ցրել զեղբայրութիւնն որ

քեզ գործի [9] հովուութեան հովուի տգի-
16 տի. Զի ահաւասիկ ես յարուցանեմ
հովիւ [9] տգէտ ի վերայ երկրի. զվրա-
տեալն ոչ յանձնձիցէ, եւ զցրուեալն
ոչ խնդրիցէ, եւ զվհկեալն ոչ բժշկեա-
ցէ, եւ զողջն ոչ պարմանեսցէ. եւ զմիս
ընտրեալսն կերիցէ, եւ զոտս նոցա
17 փշրեսցէ։ [10] Ո՛վ աւարապարաւորօք, որ
ընդ վայր հարէք՝ զխաչինս. սուր ի
բազուկ նորա եւ յաչն իւր ակոյ. բա-
զուկ նորա գօսանալով գօսասցի, եւ
աչն իւր ակոյ՝ կուրանալով կուրասցի։

Գլ. ԺԲ

1 [11] Ածած բանի Տեառն ի վերայ Իսրա-
յէլի։ Ասէ Տէր՝ որ ձգեաց զերկինս եւ
արկ հիմունս երկրի, եւ հաստատէ զոգի
2 մարդոյ ի նմա, Ահաւասիկ ես դնեմ զԵ-
րուսաղէմ [12] իբրեւ զսեամս չարժունս՝
ամենայն ժողովրդոց որ չուրջ զնովաւ
իցեն, եւ ի Հրէաստանի [13] եղիցի պաշա-
3 րումն՝ Երուսաղեմի։ Եւ եղիցի յաւուր
յայնմիկ՝ եդից զԵրուսաղէմ [14] իբրեւ զքար
մի կոխան՝ ամենայն հեթանոսաց. ա-
մենայն որ [15] կոխելոցէ զնա՝ կատակելով
կատակեսցէ, եւ ժողովեսցին՝ ի վերայ
4 նորա ամենայն ազգք երկրի։ Յաւուր
յայնմիկ, ասէ Տէր [9] ամենակալ, հարից
զամենայն երիվար տագնապաւ, եւ զհե-
ծեալ նորա յխմարութեան. եւ ի վերայ
տանց Ցուդայ բացից զաչս իմ, եւ զա-
մենայն երիվարս ազգաց հարից կու-
5 րութեամբ։ Եւ ասացին հազարապետք
Ցուդայ ի սիրտս իւրեանց, [16] Զտցուք
մեք զբնակիչս՝ Երուսաղեմի ի ձեռն
Տեառն ամենակալի Աստուծոյ նոցա։
6 Յաւուր յայնմիկ եդից զնաղարապետսն
Ցուդայ իբրեւ զխանձաղս հրոյ ի մէջ
փայտից, եւ իբրեւ զջահս հրոյ ի
մէջ եղեգան, եւ կերիցեն յաջմէ եւ
յահեկ զամենայն ժողովուրդս չուրջա-
նակի. եւ դարձեալ բնակեսցէ Երու-
7 սաղէմ [17] առանձինն յԵրուսաղէմ։ Եւ
սաղմ [18] զկարկան Ցուդայ որ-
պէս եւ ի սկզբանէն՝. զի մի՛ մեծաբա-
նեսցին պարծանք տանն Դաւթի, եւ

[9] ՆԲէր. պահաե [10] ՆԲէր. Վա՛յ տարապարա հո-
վաւի, որ ընդ վայր հարկանէ [11] ՆԲէր. Պատգամ
[12] ՆԲէր. բաժակ թմրութեան [13] ՆԲէր. եւս եղիցի
ի պաշարման [14] ՆԲէր. քար ծանրութեան
[15] ՆԲէր. ատանձնեսցէ զնա՝ խորտակելով խորտա-
կեսցի. եթէ ժողովեսցին եւս [16] ՆԲէր. Զօրու-
թիւն իմ, բնակիչք [17] ՆԲէր. ի տեղւոջ իւրում
[18] ՆԲէր. նախ զկարկան Ցուդայ

Տարարութիւն բնակչաց Երուսաղեմի
8 ի վերայ տանն Ծուղայ։ Եւ եղիցի յաւուր յայնմիկ պաշտպանեսցէ Տէր ամենայն բնակչաց Երուսաղեմի. եւ եղիցի որ տկարն իցէ ի նոսա յաւուր յայնմիկ իբրեւ զԴաւիթ, եւ տունն Դաւիթ իբրեւ [1]զաստուածն Աստուծոյ՝, իբրեւ զհրեշտակ
9 Տեառն առաջի նոցա։ Եւ եղիցի յաւուր յայնմիկ խնդրեցից բառնալ զամենայն
10 ազգս եկեալս ի վերայ Երուսաղեմի։ Եւ հեղից ի վերայ տանն Դաւիթ եւ ի վերայ բնակչաց Երուսաղեմի հոգի շնորհաց եւ [3]դթութեան. եւ հայեսցին առ իս յոր խոցեցին, եւ կոծեսցին ի վերայ նորա կոծ իբրեւ ի վերայ [3]սիրելւոյ, եւ աշխարհեսցին աչխար իբրեւ ի վերայ
11 անդրանկան։ Յաւուր յայնմիկ սաստկասցի կոծ յԵրուսաղէմ իբրեւ զկոծ
12 [4]Նաննինեայ կոտորելոց ի պաչտի՝։ Եւ կոծեսցի երկիր ըստ ազգս ազգաց առանձինն. ազգ տանն Դաւթի առանձինն, եւ կանայք նոցա առանձինն, ազգ տանն Նաթանայ առանձինն, եւ
13 կանայք նոցա առանձինն, Ազգ տանն Ղեւեայ առանձինն, եւ կանայք նոցա առանձինն, ազգ տանն [5]Շմաւոնի առանձինն, եւ կանայք նոցա առանձինն,
14 Ամենայն ազգք մնացեալք առանձինն, եւ կանայք նոցա առանձինն։

Գլ. ԺԳ

1 Յաւուր յայնմիկ եղիցի [6]ամենայն աւազ՝ բացեալ տանն Դաւթի՝ ի փոփո-
2 խումն եւ՝ ի սրսկումն՝։ Եւ եղիցի յաւուր յայնմիկ [8]բարձցէ Տէր՝ զանուանս կռոց յերկրէ, եւ ոչ եւս եղիցի յիշատակ նոցա. եւ զառաւ մարգարէսն եւ
3 զայս պիղծս բարձից յերկրէ։ Եւ եւ եղիցի թէ մարգարէանայցէ ոք տակաւին, եւ ասասցեն ցնա հայր եւ մայր իւր որ ծնան զնա, Մի կեցցիր, զի առաւ խօսեցար յանուն Տեառն. եւ [9]խոփանեսցեն զնա հայր եւ մայր նորա որ
4 ծնան զնա՝ [10]ի մարգարէանալոյն։ Եւ եղիցի յաւուր յայնմիկ ամաչեսցեն մարգարէքն կիւրաքանչիւր տեսլենէ ի մար-

գարէանալն իւրեանց, եւ [11]ղղեցցին վիզս մազեղէնս՝ փոխանակ զի սուտ-
5 ցին՝։ Եւ ասասցէ, Ոչիմ ես մարգարէ, այլ այր հողագործ եմ ես, եւ մարդ
6 [12]ծնաւ զիս ի մանկութենէ իմմէ։ Եւ [13]ասացից ցնա, Զիւնչ են վէրքդ այդոքիկ ի մէջ ձեռաց քոց. եւ ասասցէ, Զորս վիրաւորեցայ ի տան [14]սիրելւոյ իմոյ՝։
7 Զարթիր, սուր, ի վերայ Հովուի իմոյ, եւ ի վերայ առն բնկերի [15]նորա, ասէ Տէր ամենակալ. [16]հարիջ զՀովիւն եւ ցրուեսցին խաչինքն, եւ դարձուցից զձեռն իմ ի վերայ [17]հովուաց։ Եւ
8 եղիցի յաւուր յայնմիկ՝, ասէ Տէր, երկու մասունք ի նմա սատակեսցին եւ պակասեսցին, եւ երրորդն մնացէ ի
9 նմա։ Եւ անցուցից զերրորդ մասն ընդ հուր, եւ [18]ջեռուցից զնոսա որպէս ջեռնու՝ արծաթ. եւ փորձեցից զնոսա որպէս փորձի ոսկի. նա կարդասցէ զանուն իմ, եւ ես լուայց նմա. եւ ասացից, Ժողովուրդ իմ է սա. եւ նա ասասցէ, [19]Տէր Աստուած իմ ես դու՝։

Գլ. ԺԴ

1 Ահա [20]աւուրք Տեառն եկեսցեն՝, եւ բա-
2 ժանեսցի աւարն քո [21]ի քեզ. Եւ ժողովեսցէ՝ զամենայն ազգս ի վերայ Երուսաղեմի ի պատերազմ, եւ առցի քաղաքն, եւ յափշտակեսցին տունք, եւ պղծեսցին կանայք, եւ ելցէ կէս քաղաքին ի գերութիւն. եւ մնացորդք ժողովրդեան իմոյ մի սատակեսցին ի
3 քաղաքէ անտի։ Եւ ելցէ Տէր եւ տացէ պատերազմ ընդ ազգսն ընդ այնոսիկ. իբրեւ յաւուր ճակատու իւրոյ յաւուր
4 պատերազմի. Եւ կացցեն ոտք նորա յաւուր յայնմիկ ի վերայ լերինն Զիթենեաց՝ հանդէպ Երուսաղեմի յարեւելից. եւ պատառեսցի լեառնն Զիթենեաց՝ կէսն նորա յարեւելս եւ կէսն նորա [22]ի ծով, վիհ մեծ յոյժ. եւ խոնարհեսցի կէս լերինն առ հիւսիսի, եւ կէս
5 նորա առ հարաւ։ Եւ [23]խցցի ձոր լերանց իմոց, եւ՝ կցեսցի ձոր լերանցն մին-

---

[1] ՆԲԲ. զԱստուած [2] ՆԲԲ. աղօթից (ՆՀ, պաղատանաց) [3] ՆԲԲ. միամօրոյ [4] ՆԲԲ Ադադ Ռեմմոնի ի դաշտին Մակեդովոյ [5] ՆԲԲ. Սեմէեայ [6] ՆԲԲ. աղբեւր [7] ՆԲԲ. եւ բնակչաց Երուսաղեմի վասն մեղաց եւ վասն պղծութեան [8] ՆԲԲ. ասէ Տէր զօրութեանց, բարձից [9] ՆԲԲ. խոցեսցեն [10] ՆԲԲ. ի մարգարէանալն [11] ՆԲԲ. ոչ զգեցցին կրկնոցս մազեղէնս ի խաբեբայ [12] ՆԲԲ. ստացաւ [13] ՆԲԲ. ասասցեն [14] ՆԲԲ. սիրելեաց իմոց [15] ՆԲԲ. իմոյ [16] ՆԲԲ. Հար [17] ՆԲԲ. փոքունց, (8) Եւ եղիցի յամենայն երկրի [18] ՆԲԲ. զնեցից զնոսա որպէս զտի [19] ՆԲԲ. Աստուած իմ է Տէր [20] ՆԲԲ. գայ օր Տեառն [21] ՆԲԲ. ի միջի քումմ. (2) Քանզի ժողովեցից [22] Ա–մ, յարեւմուտս [23] ՆԲԲ. դուք փախիջիք ի ձոր լերանց, զի

չեւ [1]ցԱսայել. եւ խղճի զոր օրինակ
խայա՝՝ յերկնից չարժմանն՝ յաւուրս
Ոզիայ արքայի Յուդայ. եւ եկեսցէ
հասցէ Տէր Աստուած իմ եւ ամենայն
6 սուրբք ընդ [2]նմա։ Եւ եղիցի յաւուր
յայնմիկ՝ ոչ եղիցի [3]լոյս. եւ ցուրտ եւ
7 պարղ՝ եղիցի օր մի։ Եւ՝՝ օրն այն
յայտնի Տեառն, ոչ տիւ իցէ եւ ոչ գի-
8 շեր, եւ ընդ երեկս եղիցի լոյս։ Յա-
ւուր յայնմիկ բղխեսցէ ջուր կենդանի
[4]յերուսաղէմ, կէս նորա ի ծովն [5]ա-
ռաջին, եւ կէս նորա ի ծովն [6]որ յե-
տոյ՝՝. զամառն եւ զգարունն նոյնպէս
9 եղիցի։ Եւ եղիցի Տէր թագաւոր ի վե-
րայ ամենայն երկրի. յաւուր յայնմիկ
եղիցի Տէր մի, եւ անուն նորա մի,
10 [7]Պատել զամենայն երկիր, դաշտապատն՝
ի Գարայ՝՝ մինչեւ ցՌեմոն ընդ կողմն
հարաւոյ երուսաղեմի. եւ [8]Հոտամ ի
տեղւոջ իւրում կացցէ՝՝ ի դրանէն
Բենիամինի մինչեւ ի տեղի դրանն Ա-
ռաջնոյ, մինչեւ ի դուռն Անկեանցն.
եւ [9]մինչեւ ցաչտարակն Անամայելի՝՝
11 մինչեւ ի հնձանս թագաւորին։ Եւ
բնակեսցեն ի նմա, եւ նզովք ոչ եւս
լիցին. եւ բնակեսցէ Երուսաղէմ [10]յուսով
12 Եւ այս իցէ հարուածք զոր հարցէ
Տէր զազգս ամենայն որ զօրաժողով
եղեն ի վերայ Երուսաղեմի. հալեսցին
մարմինք նոցա՝ մինչդեռ կայցեն ի վե-
րայ ոտից իւրեանց, եւ ծորեսցին աչք
նոցա ի կապճայ իւրեանց, եւ լեզուք
13 նոցա հալեսցին ի բերանս իւրեանց։ Եւ
եղիցի յաւուր յայնմիկ ահ մեծ ի Տեառնէ
ի վերայ նոցա. եւ բռնեսցեն հարկանիցեն
իւրաքանչիւր զձեռանէ ընկերի իւրոյ, եւ
11 [11]խառնեսցէ զձեռն իւր ընդ ձեռն՝՝ ընկերի
14 իւրոյ։ Եւ Յուդա ճակատեսցի յԵրուսա-
ղէմ, եւ ժողովեսցէ զզօրութիւն ամենայն
ազգաց չուրջանակի, ոսկի եւ արծաթ
15 եւ հանդերձ բազում յոյժ։ Եւ այս իցէ
հարուածք ձիոց եւ ջորւոց եւ ուղտուց
եւ իշոց, եւ ամենայն անասնոց որ իցեն
ի բանակին յայնոսիկ ըստ նմին հարուա-
16 ծոց։ Եւ եղիցի որ միանգամ մնասցեն
յամենայն ազգաց եկելոցն ի վերայ Ե-
րուսաղեմի, ելանիցեն ամ յամէ երկիր
պագանել Թագաւորին Տեառն [12]Աստու-
ծոյ ամենակալի՝՝, եւ առնել զտօն տա-
17 գաւարահարացն։ Եւ եղիցի որ միան-
գամ ոչ ելանիցէ յամենայն ազգաց երկ-
րի յերուսաղէմ, երկիր պագանել Թա-
գաւորին Տեառն [13]Աստուծոյ ամենակալի՝՝,
18 ոչ եղիցի ի վերայ նոցա անձրեւ։ Եւ
եթէ ազգն Եգիպտացւոց ոչ ելանիցէ եւ
գայցէ, [14]եւ ի վերայ նոցա եղիցին՝՝
հարուածքն, զոր հարցէ Տէր զամենայն
ազգն որ ոչ ելանիցեն առնել զտօն
19 տաղաւարահարացն։ Նոյն եղիցի [15]ի մեղս
Եգիպտացւոցն, եւ [16]ի մեղս ամենայն
ազգաց, որ ոչ ելանիցեն առնել զտօն
տաղաւարահարացն։
20 Յաւուր յայնմիկ ի սանձս ձիոցն իցէ
Սրբութիւն Տեառն։ Եւ եղիցին սանք ի
սան Տեառն՝ իբրեւ զսաչաս առաջի սե-
21 ղանին։ Եւ եղիցի ամենայն սան որ յԵրու-
սաղէմ եւ որ ի Յուդա՝ նուիրեալ Տեառն
ամենակալի. եւ եկեսցեն ամենեքեան որ
մատուցանիցեն պատարագ՝՝ առնուցուն
ինոցանէ եւ եփեսցեն նոքօք. եւ ոչ եւս
եղիցի Քանանացի ի տան Տեառն ամե-
նակալի յաւուր յայնմիկ։

---

[1] ԵԲԲ. ցԱսայել. և փախչիցէ զոր օրինակ փախչաք
[2] ԵԲԲ. քեզ [3] ԵԲԲ. լոյսն պայծառ կամ աղօտ (կամ, լոյս, այլ ցուրտ եւ պարզ)։ (7) եւ եղիցի [4] ԵԲԲ. յԵրուսաղեմ [5] Ա. յԱրեւելից [6] Ա. յարեւմտից [7] ԵԲԲ. Պարսպել ամենայն երկիր ի դաշտ ի Գաբաայ [8] ԵԲԲ. բարձրացի եւ [9] ԵԲԲ. յաշտարակէն Անանայելի [10] ԵԲԲ. յապահովս

[11] ԵԲԲ. բարձի ձեռն նորա ընդդէմ ձեռին [12] ԵԲԲ. զօրութեանց [13] ԵԲԲ. զօրութեանց՝ [14] ԵԲԲ. (որոյ չիք անձրեւ), եղիցին [15] Կամ, ի պատուհաս

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ

ՄԱՂԱՓԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 [1]Ա՛ռաջ բանի Տեառն ի վերայ Իս-
րայելի ի ձեռն հրեչտակի իւրոյ՝
2 Դիք ի սիրտս ձեր. սիրեցի՛ զձեզ, ասէ
Տէր. եւ ասացէք՝ Ի՞նչ սիրեցեր զմեզ՝
Ոչ եղբայր էր Եսաւ Յակոբայ, ասէ
3 Տէր, եւ սիրեցի զՅակոբ, Եւ զԵսաւ
ատեցի, եւ [2]կարդեցի զսահմանս նո-
րա յապականութիւն՝ եւ զժառան-
գութիւն նորա [3]ի յայրս անապատի՛՝՝՝

[1]մարդն որ կարօղ իցէ, եւ կայցէ ի խաչին նորա արձ, եւ ուխտ իւր յանձին իւրում", եւ մատուցանիցէ Տեառն զարատասարն. զի Թագաւոր [2]յաղթօղ եմ ես, ասէ Տէր ամենակալ, եւ անուն իմ [3]երեւելի ի մէջ ազգաց։

ԳԼ. Բ

1 Եւ արդ այս պատուէր է իմ առ ձեզ,
2 քահանայդդ։ Եթէ ոչ լսիցէք եւ ոչ դնիցէք ի սրտի ձերում, առ փառս անուան իմում, ասէ Տէր ամենակալ, առաքեցից ի վերայ ձեր անէծս, եւ անիծից զօրհնութիւնս ձեր, եւ նզովեցից զնա, [4]եւ ցրուեցից զօրհնութիւնս ձեր. եւ մի՛ եղիցի ի միջի ձերում," զի զուք ոչ եղիք ի սրտի ձերում։
3 Ահաւասիկ ես [5]որոչեցից ձեզ թեկն", եւ ցանեցից զաղտաւանն ընդ երեսս ձեր, զապտաւանն տօնից ձերոց, եւ
4 [6]բարձիցի զձեզ նմանաւ"։ Եւ ծանիջիք եթէ ես առաքեցի առ ձեզ զպատուէրդ զայդ՝ լինել ուխտի իմոյ առ Ղեւտացիսն, ասէ Տէր ամենակալ։ Ուխտն իմ
5 որ ընդ նմա՝ կենաց եւ խաղաղութեան. ես նառ նմա երկեւդ՝ երկնչել յինէն,
6 եւ յիրեսաց անուան իմոյ խորչել։ Օրէնք ճշմարտութեան էին ի բերան նորա, եւ անիրաւութիւն ոչ գտաւ ի շրթունս նորա. խաղաղութեամբ եւ ուղղութեամբ գնաց ընդ իս, եւ զբազումս
7 դարձոյց յանիրաւութենէ։ Զի շրթունք քահանային զգուշասցին գիտութեան, եւ օրէնս խնդրեսցեն ի բերանոյ նորա. զի հրեշտակ Տեառն ամենակալի է։
8 Իսկ դուք խոտորեցարուք ի ճանապարհէ, եւ [7]ակարացուցէք զբազումս օրինօքն", եւ ապականեցէք զուխտն
9 Ղեւեայ, ասէ Տէր ամենակալ։ Եւ ես եւս զձեզ արհամարհեալս եւ լքեալս ընդ ամենայն ազգս, փոխանակ զի ոչ պահեցէք զճանապարհս իմ. այլ ակն ունիք [8]օրինօքն։
10 Ո՞չ ապաքէն մի հայր է ամենեցուն [9]ձեր. ոչ մի Աստուած հաստատեաց [10]զձեզ. զի՞ է զի թողէք" իւրաքանչիւր

[1]ԵԲԲ. այլ նենգաւոր յորոյ լեալ ի հօտին իւրում արձ, գիցէ ուխտ [2]ԵԲԲ. Մեծ [3]ԵԲԲ. ահեղ է [4]ՅԵԲԲ. գոլոսե [5]ԵԲԲ. ապականեցից ձեզ զաներին [6]ԵԲԲ. նա տարցի զձեզ ընդ իւր [7]ԵԲԲ. գայթակղեցուցէք զբազումս յօրէնս [8]ԵԲԲ. յօրէնս [9]ԵԲԲ. մեր [10]ԵԲԲ. զմեզ. զի՞ է զի թողէք

զեղբայր իւր, պղծել զուխտ հարցն
11 [11]Ձերոց։ Լքաւ Յուդա," գարշելիք գործեցաւ յիսրայէլի եւ յերուսաղէմ. զի պղծեաց Յուդա զսրբութիւնս Տեառն [12]յոր սիրեացն" զոր սիրեացն, եւ
12 [12]հարաւ յատուածս օտարս"։ Սատակեսցէ Տէր զմարդն որ առնիցէ զայն, [13]մինչեւ նկուն լիցի ի յարկացն Յակոբայ, եւ ի մատուցանելեացն պատարագ, եւ ի մատուցանելեացն պատա-
13 րագ" Տեառն ամենակալի։ Եւ [14]զոր եւս առէք՝ առնէիք. ծածկեցէք արտասուօք զսեղան իմ, եւ լալով եւ քքովք յաչխատութենանց. եթէ արժանն ինչ իցէ միւսանգամ հայել ի պատարագս ձեր, եւ կամ առնուլ ընդունելութիւն" ի ձեռաց
14 ձերոց։ Եւ ասացէք, Բայ ընդէ՞ր. զի Տէր եղ ուխտ իմ մէջ քո, եւ ի մէջ կնոջ մանկութեան քո [15]զոր թողեր". եւ նա էր
15 ամուսին եւ կին ուխտի քո։ Եւ [16]ոչ այլ ոք արար, եւ հատոր ոգւոյ նորա է. եւ ասացէք՝ թէ Զի՞նչ այլ ինչ խնդրէ Աստուած՝ եթէ ոչ զաւակ." զգուշացարուք յոգիս ձեր, եւ [17]ոչինչ մանկու-
16 թեան քո մի՛ թողուր։ Բայց եթէ առ ատել արձակեսցես, ասէ Տէր Աստուած Իսրայէլի, ծածկեսցէ ամպասրչատութիւն զնորհուրդս քո", ասէ Տէր ամենակալ. զգոյշ լերուք յոգիս ձեր, եւ մի [18]թողուցուք։
17 Որ բարկացուցանէք զԱստուած" բանիւք ձերովք, եւ ասէք՝ Ի՞ւ [19]բարկացուցաք զնա. յասելն ձեր թէ Ամենայն որ զչար գործէ՝ բարւոք թուի առաջի Տեառն, եւ ընդ այն իսկ հաճեալ նա. [20]եւ Ո՞ւր է Աստուած արդարութեան։

[11]ԵԲԲ. մերոց։ (11) Նենգեցաւ Յուդա, եւ [12]ԵԲԲ. այր եղեւ գտաւ աստուածոյ օտարի [13]ԵԲԲ. ի յարկացն Յակոբայ, զոր հակէն և զոր տային պատասխանի եւ զոր մատուցանէն պատարագ [14]ԵԲԲ. զայս միւսանգամ արարէք. ծածկեցէք արտասուօք զսեղան Տեառն, լալով և քքովք, առ ի չհայելոյ միւսանգամ ի պատարագն, եւ յառնուլ հաճոյս [15]ԵԲԲ. ընդ որում գնացեր նենգաւ [16]ԵԲԲ. Ո՞չ ապաքէն արար մի, եւ առատութիւն ոգւոյ նմա. եւ ընդէ՞ր մի՝ ինդրէ զաւակ Աստուծոյ. ապա [17]ԵԲԲ. ընդ կնոջ մանկութեան քո մի՛ գնար նենգաւ։ (16) Զի ատեմ զարձակեն, ասէ Տէր Աստուած Իսրայէլի, եւ զոր ծածկէն զգրկանս հանդերձիւ իւրով [18]ԵԲԲ. գնայցէք նենգաւ։
(17) Որ աշխատ առնէք զՏէր [19]ԵԲԲ. աշխատ արարաք [20]ԵԲԲ. կամ,

ԳԼ. Գ

1 Ա.նա ես առաքեմ զհրեշտակ իմ, եւ [1]ուսցէ զճանապարհն իմ՝" առաջի իմ. եւ յանկարծակի եկեսցէ ի տաճար իւր Տէր զոր դուքն խնդրէք, [2]եւ հրեշտակն ուխտի զոր դուք կամիք. ահաւադիկ
2 գայ, ասէ Տէր ամենակալ։ Եւ ո՞վ ժուժկալեսցէ աւուր մտի նորա, եւ կամ ո՞ հանդարտեսցէ յայտնութեան նորա. զի նա մտցէ իբրեւ զրոյ հալոցի,
3 եւ իբրեւ զօճառ լուանալոցս։ Եւ նստցի [3]ձուլել եւ սրբել իբրեւ զարծաթ եւ իբրեւ զոսկի. եւ սրբեսցէ զորդիս Ղեւեայ, եւ հալեսցէ" զնոսա իբրեւ զոսկի եւ իբրեւ զարծաթ. եւ եղիցին Տեառն [4]մատուցանել պատարագս ար-
4 դարութեամբ։ Եւ հաճոյ եղիցի Տեառն պատարագն Ցուդայ եւ Երուսաղեմի, որպէս յաւուրսն յաւիտենից եւ որպէս
5 յամսն առաջինս։ Եւ հասից ի վերայ ձեր դատաստանաւ. եւ եղէց վկայ աբաղ ի վերայ կախարդաց եւ [5]կանանց չնացելոց, եւ ի վերայ այնոցիկ ոյք երդնուցանն [6]յանուն իմ" ստութեամբ, եւ որ հատանիցեն զվարձս վարձկանի, եւ որ յազթահարիցեն զայրիս եւ կոփիցեն զորբս, եւ որ խոտորիցեն զիրաւունս պանդխտին, եւ որ ոչ երկնչին
6 ցիս չինէն, ասէ Տէր ամենակալ։ Զի ես եմ [7]Տէր Աստուած ձեր, եւ" ոչ
7 փոխիմ. եւ դուք, որպիք [8]Յակոբու, ոչ կացէք ի բաց ի մեզայ" հարցն ձերոց, խուսափեցէք յօրինաց իմոց, եւ ոչ պահեցէք զնոսա. դարձարուք առ իս, եւ ես դառնամ առ ձեզ, ասէ Տէր ամենակալ. եւ ասացէք, Ի՞նչ դարձցուք։
8 [9]Իցէ՞ թէ իսրիցէ" մարդ զԱստուած. զի դուք [10]խաբեցէք զիս, եւ ասացէք՝ Ի՞նչ [11]խաբեցաք զքեզ. զի տասանորդք
9 եւ պատուզք առ ձեզ են. Եւ չարանիւ-
10 լով չարանիէք՝ եւ խաբէք զիս։ Տարին կատարեցաւ, եւ զարդիւնս ամենայն ի

չառ հալանա ձեր ժողովիցէք. եւ եղիցի յս փչտակուքիւն տանց ձերոց. դարձարուք՝ այդպիսի, ասէ Տէր ամենակալ. եթէ ոչ բացից ձեզ զպատուհանս երկնից, եւ զեղից ձեզ զօրհնութիւն [12]իմ
11 մինչեւ ի չառանալ։ Եւ զդուշացայց կերակրոյ ձերոյ, եւ ոչ ապականեցից" զպտուղ երկրի ձերոյ, եւ մի՛ վատեսցէ որթ ձեր յայգւոջ, ասէ Տէր ամենակալ։
12 Եւ երանիացեն ձեզ ամենայն ազգք. զի եղիցիք դուք ինձ երկիր [13]կամաց, ասէ
13 Տէր ամենակալ։ Ծանրացուցէք ինձ զբանս ձեր, ասէ Տէր. եւ ասացէք՝ Ի՞նչ
14 բամբասեցաք զքեզ։ Զի ասէիք թէ Զուր է [14]ամենայն որ ծառայէ" Աստուծոյ. եւ ի՞նչ աւելի է զի պահեցաք զպահպանութիւնս նորա, եւ զի գնացաք պաղատանօք առաջի Տեառն ամենա-
15 կալի։ Եւ արդ մեք երանիեմք [15]այլոց, եւ բարեչէն են ամենեքին որ գործեն զանօրէնութիւն, եւ [16]ընդդէմ գան Աստուծոյ եւ կեցին։
16 Զայս տրանջեցին"երկիւղածքն Տեառն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում. եւ անսաց Տէր, եւ լուաւ եւ [17]գրեաց գիր յիշատակի առաջի երկիւղածաց Տեառն,
17 եւ որոց սարսեն յանուանէ" նորա։ Եւ եղիցին ինձ, ասէ Տէր ամենակալ, յաւուր յորում ես արարիւ [18]փրկութիւն, եւ փայփայեցից զնոսա՝ որպէս փայփայէ հայր զորդի [19]զրարւոք ծառայեսն" նմա։ Եւ դարձջիք եւ տեսջիք ի մէջ արդարոյն եւ ի մէջ անօրինին, եւ ի մէջ ծառայելոյն Աստուծոյ՝ եւ ի մէջ չծառայելոյն։

ԳԼ. Դ

1 Զի ահա եկեսցէ օր [20]Տեառն լորձոք եւ իբրեւ զնոց, եւ այրեսցէ զնոսա, եւ եղիցին ամենայն այլազգիք, եւ

---

1 ՆԵԲ. պատրաստեսցէ ճանապարհ 2 ԻՄՆ՝ այսինքն 3 ՆԵԲ. իբրեւ զոր ձուլէն եւ սրբէ զարծաթ, և սրբեսցէ զորդիս Ղեւեայ, եւ զտեսցէ 4 ՆԵԲ. որ մատուցանեն 5 ՆԵԲ. ի վերայ 6 ՆԵԲ. գ-ՓՈՒ-ԵՒ 7 ՆԵԲ ԵՀՈՎԱ, 8 ՆԵԲ. Յակոբու, ոչ սպառեցարուք։ (7) Յաւուրց անտի 9 ՆԵԲ. Մինթէ կողոպտիցէ՞ 10 ՆԵԲ. կողոպտեցէք 11 ՆԵԲ. կողոպտեցաք զքեզ։ Տասանորդօք եւ ընծայիւք։ (9) Անիծիւք անիծեալ էք դուք, եւ կողոպտէք զիս, ազգդ համօրէն։ (10) Տարեայք զամենայն տասանորդս ի տուն գանձին, եւ եղիցի պաշար ի տան իմում, եւ փորձեցէք զիս 12 ՆԵԲ. մինչեւ չլինելոյ տեղի։ (11) Եւ յանդիմանեցից վասն ձեր զոր ուսէն, եւ ոչ ապականեսցէ 13 ՆԵԲ. Համբուից 14 ՆԵԲ. ծառայել 15 ՆԵԲ. ամբարտաւանից 16 ՆԵԲ. փորձեցին եւս զԱստուած եւ կեցին։ (16) Յայնժամ խօսեցան 17 ՆԵԲ. գրեցաւ գիր յիշատակի առաջի նորա վասն երկիւղածաց Տեառն, եւ որոց զնաւս ածեն զանուն 18 ՆԵԲ. գանձ ականական 19 ՆԵԲ. որ ծառայէ 20 ՆԵԲ. բորբոքեալ իբրեւ զՀնոց, եւ եղիցին ամենայն ամբարտաւանք եւ ամենեքին որ գործեն զա-

ամենեքեան որ գործեն զանօրէնութիւն եղէգն, եւ վառեսցի զնոքօք օրն որ գալոց է", ասէ Տէր ամենակալ, եւ մի 2 մնասցէ նոցա արմատ եւ մի՛ ուրուք: Եւ ծագեսցէ ձեզ երկիւղածից անուանն իմոյ արեգակն արդարութեան, եւ բժշկութիւն ի թեւս նորա. եւ ելջիք եւ խայտասջիք իբրեւ որթք [1]արձակեալք 3 ի կապոյ": Եւ կոխեսջիք զանօրէնս, եւ եղիցին մոխիր ի ներքոյ ոտից ձերոց յաւուրն [2]զոր ես արարիմ, ասէ Տէր 4 ամենակալ": Յիշեցէք զօրէնսն Մովսիսի

նօրէնութիւն՝ յարդ. եւ օրն որ գալոց է, այրեսցէ զնոսա [1]ԵՔԲ. ի գոմն [2]ԵՔԲ. յաւուրմ ես գործեցից, ասէ Տէր զօրութեանց

ծառայի իմոյ, որպէս պատուիրեցի նմա ի Խորէբ[3], զամենայն զհրամանս եւ զիրաւունս:

5 Եւ ահա ես առաքեմ առ ձեզ զԵղիա [4]Թեզբացի, մինչչեւ եկեսցէ իցէ օր 6 Տեառն [5]մեծ եւ երեւելի. Որ պատրաստեսցէ զսիրտս հօր առ որդի, եւ զսիրտս առն առ ընկեր իւր", գուցէ եկեալ հարկանիցեմ զերկիր [6]միանգամայն:

[3]ԵՔԲ. յԵՒԼԲ, վասն ամենայն Իսրայէլի [4]ԵՔԲ. մարգարէ [5]ԵՔԲ. մեծն եւ ահեղ (6) Եւ նա դարձուսցէ զսիրտ հարց յորդիս, և զսիրտ որդւոց ի հարս նոցա [6]ԵՔԲ. նզովիւք

ՎԱԽՃԱՆ ՀՆՈՑ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՔ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծ Ն Ո Ւ Ն Դ Ք

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծ Ն Ո Ւ Ն Դ Ք

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ Ա Հ Ը

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԻՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

—

1895

ԳԼՈՒԽՔ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Էմ.
Վասն մոգուցն.	Բ.	1
Վասն կոտորածի մանկանցն.	Բ.	16
Վասն յառաջընթաց քարոզութեանն Յովհաննու Մկրտչին.	Գ.	1
Վասն վարդապետութեան փրկչին.	Դ.	23
Վասն երանութեանն.	Ե.	2
Վասն բորոտին.	Ը.	1
Վասն հարիւրապետին.	Ը.	5
Վասն զրքանչին Պետրոսի.	Ը.	14
Վասն բժշկութեան ամենայն ցաւոց.	Ը.	16
Վասն՝ որ ոչ ետ հրաման երթալ գկնի.	Ը.	19
Վասն սաստելոյն ի վերայ ջրոցն.	Ը.	23
Վասն դիւահարացն.	Ը.	28
Վասն անդամալուծին.	Թ.	1
Վասն Մատթէի.	Թ.	9
Վասն դստեր ժողովրդապետին.	Թ.	18
Վասն տեառատեսին.	Թ.	20
Վասն երկուց կուրացն.	Թ.	27
Վասն խլին և համր դիւահարին.	Թ.	32
Վասն Առաքելոցն իշխանութեան.	Ժ.	1
Վասն առաքելոցն ի Յովհաննէ.	ԺԱ.	2
Վասն՝ որոյ ձեռն գօսացեալ էր.	ԺԲ.	10
Վասն կոյր և խուլ դիւահարին.	ԺԲ.	22
Վասն՝ որ խնդրէին նշանս.	ԺԲ.	38
Վասն առակացն.	ԺԳ.	1
Վասն Յովհաննու, և Հերովդէի.	ԺԴ.	1
Վասն հինգ հացիցն.	ԺԴ.	15
Վասն երթալոյն ի վերայ ծովուն.	ԺԴ.	22
Վասն անցելոցն զպատուիրանսն Աստուծոյ.	ԺԵ.	1
Վասն կնոջն Փանանացւոյ.	ԺԵ.	21
Վասն բժշկելոյ զժողովուրդն.	ԺԵ.	29
Վասն եւթն հացիցն.	ԺԵ.	32
Վասն խմորոյ փարիսեցւոցն.	ԺԶ.	6
Վասն՝ որ ի կեսարիա Հարցմանն.	ԺԶ.	13
Վասն այլակերպութեանն Տեառն.	ԺԷ.	1
Վասն լուսնահարին.	ԺԷ.	14
Վասն խնդրելոյ զերկդրամեանն.	ԺԷ.	23
Վասն հարցանելոյ՝ թէ ո՞ է ի միջ մեծ.	ԺԸ.	1
Վասն առակի հարեւր ոչխարին.	ԺԸ.	12
Վասն թողլոյն զբեւր տաղանդն.	ԺԸ.	23
Վասն հարցանելոյն թէ արժա՞ն է արձակել առն զկին.	ԺԹ.	1
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս.	ԺԹ.	16
Վասն վարձկանութեան մշակացն.	Ի.	1
Վասն որդւոցն Զեբեդեայ.	Ի.	20
Վասն երկուց կուրացն.	Ի.	29
Վասն իշուն և յովանակին.	ԻԱ.	1
Վասն կուրացն և կաղացն.	ԻԱ.	14
Վասն չորանալոյ թզենւոյն.	ԻԱ.	18
Վասն հարցանելոյ զՏէրն քահանայապետիցն և ծերոց.	ԻԱ.	23
Վասն երկուց որդւոցն առակաց.	ԻԱ.	28
Վասն այգեւոյն առակին.	ԻԱ.	33
Վասն կոչեցելոց ի հարսանիսն.	ԻԲ.	1
Վասն դահեկանին, որով փորձեցին զՏէրն.	ԻԲ.	15
Վասն սադուկեցւոցն.	ԻԲ.	23
Վասն օրինականացն.	ԻԲ.	34
Վասն Տեառն հարցանելոյն զփարիսեցիսն.	ԻԲ.	41
Վասն վայ տալոյ դպրացն, և փարիսեցւոցն.	ԻԳ.	13
Վասն կատարածի	ԻԴ.	3
Վասն աւուրն և ժամուն.	ԻԴ.	36
Վասն տասն կուսանացն.	ԻԵ.	1
Վասն ղտաղանդսն տալոյ.	ԻԵ.	14
Վասն գալստեանն Տեառն.	ԻԵ.	31
Վասն օծանելոյ զՏէրն իւղով.	ԻԶ.	6
Վասն պատրաստելոյ զպասեքն.	ԻԶ.	17
Վասն օրինաւոր խորհրդոյն.	ԻԶ.	26
Վասն մատնութեանն Տեառն.	ԻԶ.	47
Վասն ուրացութեանն Պետրոսի.	ԻԶ.	69
Վասն Յուդայի զղջմանն.	ԻԷ.	3
Վասն խնդրելոյ զՏէրունական մարմինն.	ԻԷ.	57
Վասն իւղաբեր կանանցն.	ԻԸ.	1

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի
որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու։
2 Աբրահամ ծնաւ զԻսահակ. Իսահակ
ծնաւ զՅակովբ. Յակովբ ծնաւ զՅու-
3 դա եւ զեղբարս նորա. Յուդա ծնաւ
զՓարէս եւ զԶարա ի Թամարայ. Փա-
րէս ծնաւ զԵզրովմ. Եզրովմ ծնաւ
4 զԱրամ. Արամ ծնաւ զԱմմինադաբ. Ա-
մմինադաբ ծնաւ զՆաասոն. Նաասոն
5 ծնաւ զՍալմոն. Սալմոն ծնաւ զԲո-
ոս ի Հռաքաբայ. Բոոս ծնաւ զՈբէդ
6 ի Հռութայ. Ովբէդ ծնաւ զՅեսսէ.
Յեսսէ ծնաւ զԴաւիթ արքայ. [1]Դաւիթ
ծնաւ զՍողոմոն ի կնոջէն Ուրիայ.
7 Սողոմոն ծնաւ զՐոբովամ. Րոբովամ
ծնաւ զԱբիա. Աբիա ծնաւ [2]զԱսաֆ.
8 Ասաֆ՝ ծնաւ զՅովսաֆաթ. Յովսա-
փատ ծնաւ զՅովրամ. Յովրամ ծնաւ
9 զՈզիա. Ոզիա ծնաւ զՅովաթամ. Յո-
վաթամ ծնաւ զԱքազ. Աքազ ծնաւ
10 զԵզեկիա. Եզեկիա ծնաւ զՄանասէ.
Մանասէ ծնաւ [3]զԱմմոս. Ամոս՝ եր-
11 նաւ զՅովսիա. Յովսիա ծնաւ զՅեքո-
նիա եւ զեղբարս նորա առ փոխու-
12 թիւնն Բաբելացւոց. Յետ փոխու-
թեան Բաբելացւոց ծնաւ Յեքոնիա
զԱտաթիէլ. Սատաթիէլ ծնաւ զՋո-
13 բաբաբէլ. Զօրաբաբէլ ծնաւ զԱբիուդ.
Աբիուդ ծնաւ զԵղիակիմ. Եղիակիմ
14 ծնաւ զԱզովր. Ազովր ծնաւ զՍադովկ.
Սադովկ ծնաւ զԱքին. Աքին ծնաւ
15 զԵղիուդ. Եղիուդ ծնաւ զԵղիազար.
Եղիազար ծնաւ զՄատթան. Մատթան
16 ծնաւ զՅակովբ. Յակովբ ծնաւ զՅով-
սէփ զայրն Մարիամայ [4]որում խոստց-
եալ զՄարիամ կոյս՝ յորմէ ծնաւ Յի-
17 սուս, որ անուանեցաւ Քրիստոս։ Այլ
ամենայն ազգք յԱբրահամէ մինչեւ
ի Դաւիթ՝ ազգք չորեքտասանք. եւ
ի Դաւթէ մինչեւ ի գերութիւնն Բա-
բելացւոց՝ ազգք չորեքտասանք. եւ
ի գերութենէն Բաբելացւոց մինչեւ
ի Քրիստոս՝ ազգք չորեքտասանք։
18 Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր
այսպէս. խոստացեալ զնայր նորա Մարիամ
Յովսեփու, մինչեւ եկեալ առ միմեանս՝
19 գտաւ յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ։ Եւ
Յովսէփ այր նորա, քանզի արդար էր
եւ ոչ կամէր առանձին զնա, խորհեցաւ
20 լռելեայն արձակել զնա։ Եւ մինչդեռ
նա զայս ածէր զմտաւ, անդ հրեշտակ
Տեառն ի տեսլեան երեւեցաւ նմա եւ
ասէ, Յովսէփ, որդի Դաւթի, մի եր-
կնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին
քո. քանզի որ ի նմանէ ծնեալ է՝
21 ի Հոգւոյն Սրբոյ է։ Ծնցի որդի, եւ
կոչեսցես զանուն նորա Յիսուս, զի
նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղս
22 իւրեանց։ Այլ այս ամենայն եղեւ զի
լցցի որ ասացաւն ի Տեառնէ [5]ի ձեռն
23 Եսայեայ մարգարէի՝. Ահա կոյս յղաց-
ցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զա-
նուն նորա Էմմանուէլ, որ մեկնի
24 նի՝ Ընդ մեզ Աստուած։ Եւ զարթու-
եալ Յովսէփ ի քնոյ անտի, արար
որպէս հրամայեաց նմա հրեշտակն
25 Տեառն, եւ առ զկինն զկին իւր։ Եւ
ոչ գիտէր զնա, մինչեւ ծնաւ զորդին
իւր զանդրանիկ, եւ կոչեաց զանուն
նորա Յիսուս։

ԳԼ. Բ

1 Եւ ի ծնանիլն Յիսուսի ի Բեթղեհեմ
Հրէաստանի յաւուրս Հերովդի ար-
քայի, ահա մոգք յարեւելից եկին Ե-
2 րուսաղէմ, եւ ասեն, Ո՞ւր է որ ծնաւ
արքայն Հրէից. զի տեսաք զաստղն
նորա յարեւելս, եւ եկաք երկիր պա-
3 գանել նմա։ Եւ լուեալ արքայ
Հերովդէս, խռովեցաւ, եւ ամենայն
4 Երուսաղէմ ընդ նմա։ Եւ ժողովեալ

[1] Ոմանք, Դաւիթ արքայ
[2] Ոմանք զԱսա. Ասա
[3] Ոմանք, զԱմմոն, Ամմոն
[4] Ի գոսին պակաս
[5] Բազումք, ի ձեռն մարգարէին

զամենայն զքահանայապետս եւ զգրիբս ժողովրդեանն՝ հարցանէր ի նոցանէ
5 թէ ո՛ւր ծնանիցի Քրիստոս։ Եւ նոքա ասեն ցնա, ի Բեթղեհեմ Հրէաստանի. զի այսպէս գրեալ է ի ձեռն
6 մարգարէին. Եւ դու, Բեթղեհեմ, երկիր Յուդայ, ոչինչ կրտսեր ես յիշխանս Յուդայ. ի քէն ելցէ ինձ իշխան,
որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ։ Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, եւ ստուգեաց ի նոցանէ
8 զժամանակ աստեղն երեւելոյ. Եւ արձակեալ զնոսա ի Բեթղեհեմ, ասէ, Գնացէք, ստուգեցէք վասն մանկանն,
եւ յորժամ գտանիցէք, ազդ արասջիք ինձ, զի եւ ես եկեալ երկիր պագից
9 նմա։ Եւ նոքա իբրեւ լսեան ի թագաւորէն, գնացին. եւ ահա աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց
նոցա, մինչեւ եկեալ եկաց ի վերոյ
10 ուր էր մանուկն։ Իբրեւ տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն
11 մեծ։ Եւ իբրեւ մտին ի տունն, տեսին զմանուկն հանդերձ Մարեմամ մաւրն իւրով, եւ անկեալ երկիր պագանէին նմա. եւ բացեալ զգանձս իւրեանց մատուցին նմա պատարագս՝
12 ոսկի եւ կնդրուկ եւ զմուռս։ Եւ հրաման առեալ ի տեսլեան չգառնալ անդրէն առ Հերովդէս՝ ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց։
13 Եւ իբրեւ գնացին նոքա անտի, ահա հրեշտակ Տեառն երեւէր ի տեսլեան Յովսեփու եւ ասէր, Արի, առ զմանուկդ եւ զմայր իւր, եւ փախիր յԵգիպտոս, եւ անդ լինիջիր յորժամ ասացից քեզ. զի մանկիկն [1]կ՚ Հե-
14 րովդէս կորուսանել զմանուկդ։ Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ զմայր իւր գիշերի, եւ գնաց յԵգիպտոս, եւ
անդ էր մինչեւ ցվախճան Հերովդի.
15 Զի լցցի ասացեալն ի Տեառնէ ի ձեռն մարգարէին որ ասէ, ՅԵգիպտոսէ [2]կոչեցից զորդի իմ։
16 Յայնժամ իբրեւ տեսաւ Հերովդէս թէ խաբեալ ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. եւ առաքեաց կոտորեալ զամենայն մանկունս որ էին ի Բեթղեհեմ
եւ յամենայն սահմանս նորա յերկեմնից եւ ի խոնարհ՝ ըստ ժամանակին
17 զոր ստուգեաց ի մոգուցն։ Յայնժամ կատարեցաւ ասացեալն ի ձեռն Երե-
18 միայ մարգարէի որ ասէ, Ձայն գուժեաց ի Հռամա, ողբումն եւ թաւումն եւ աշխարումն յոյժ. Հռաքէլ լայր զորդիս իւր, եւ ոչ կամէր մխիթարել,
19 զի ոչ էին։ Եւ ի վախճանելն Հերովդի՝ ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան
20 երեւէր Յովսեփայ յԵգիպտոս, եւ ասէր, Արի, առ զմանուկդ եւ զմայր իւր, եւ գնա յերկիրն Իսրայէլի, զի մեռան որ խնդրէին զանձն մանկանդ։
21 Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ զմայր նորա, եւ եկն յերկիրն Ի-
22 սրայէլի։ Եւ իբրեւ լուաւ եթէ Արքեղայոս թագաւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդի հօր իւրոյ, երկեաւ երթալ անդր. եւ հրաման առեալ ի տեսլեան՝ գնաց ի կողմանս Գալիլեացւոց։
23 Եւ եկեալ բնակեցաւ ի քաղաքին որ կոչէր Նազարէթ, զի լցցի բան մարգարէիցն թէ Նազովրեցի կոչեսցի։

Գլ. Գ

1 Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս մկրտիչ քարոզել յանապատին Հրէաս-
2 տանի, եւ ասել, Ապաշխարեցէք, զի
3 մերձեալ է արքայութիւն երկնից. Զի սա է վասն որոյ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ ասէ, Ձայն բարբառոյ յանապատի. Պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, եւ ուղիղ
4 արարէք զշաւիղս նորա։ Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ ի մազեայ ուղտոյ, եւ զօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, եւ կերակուր նորա էր մարախ եւ
5 մեղր վայրենի։ Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղեմացիք եւ ամենայն Հրէաստան եւ ամենայն կողմն
6 Յորդանանու, եւ մկրտէին ի նմանէ ի Յորդանան [3]գետ, եւ խոստովան լինէին զմեղս իւրեանց։ Եւ տեսեալ զբազումս ի սադուկեցւոցն եւ ի փարիսեցւոց եկեալս ի մկրտութիւնն նո-
7 րա, ասէ ցնոսա, Ծնունդք իմից, ո՞ ցոյց ձեզ փախչել ի բարկութենէն որ
8 գալոցն է։ Արարէք այսուհետեւ պը-
9 տուղ արժանի ապաշխարութեան. Եւ մի՛ համարիցիք ասել յանձինս թէ

---

[1] Յոյն. լինելոց է [2] Յոյն. կոչեցի [3] Յոյն. գետի

Ունիմք մեք հայր զԱբրահամ. ասեմ ձեզ, զի կարող է Աստուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս
10 Աբրահամու։ Զի ահաւասիկ տապար առ արմատն ծառոց դնի. ամենայն ծառ որ ոչ առնիցէ զպտուղ բարի՝ հատանի եւ
11 ի հուր արկանի։ Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն, բայց որ ինձ իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս, եւ ես չեմ բաւական բառնալ զկօշիկս նորա. նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ
12 եւ ի հուր. Որոյ հնձանոցն ի ձեռին իւրում, եւ սրբեսցէ զկալ իւր, եւ ժողովեսցէ զցորեանն ի չանմարանս իւր, եւ զգարդն այրեսցէ անշէջ հրով։
13 Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլիէ ի Յորդանան առ Յովհաննէս մկրտել
14 ի նմանէ։ Եւ Յովհաննէս արգելու զնա եւ ասէ, Ինձ պիտոյ է ի քէն մկրտել, 15 եւ դու առ իս գաս։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա, Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն. եւ ապա թոյլ
16 ետ նմա։ Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ի ջրոյ անտի, եւ ահա բացան նմա երկինք, եւ եւ տես զՀոգին Աստուծոյ զի իջանէր իբրեւ զաղաւնի եւ գայր ի վերայ նո-
17 ր։ Եւ ահա ձայն յերկնից որ ասէր, Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ։

Գլ. Դ

1 Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ
2 ի Հոգւոյն՝ փորձել ի Սատանայէ. Եւ պահեալ զքառասուն ամս եւ զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ։
3 Եւ մատուցեալ փորձիչն ասէ ցնա, Եթէ Որդի ես Աստուծոյ, ասա զի
4 քարինքս այսոքիկ հաց լինիցին։ Նա պատասխանի ետ եւ ասէ, Գրեալ է թէ Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ։
5 Յայնժամ առեալ սատանայ զնա ի քաղաքն սուրբ, եւ կացուցանէ զնա ի վերայ այսրահարկի տաճարին,
6 Եւ ասէ ցնա, Եթէ Որդի ես Աստուծոյ, արկ զքեզ ատեան ի վայր, զի գրեալ է թէ Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, եւ ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, զի մի՛ երբեք
7 հարցես զքարի քոում քո։ Ասէ ցնա [1]զսատանայ Յիսուս, Գրեալ՝ է թէ Ոչ փորձեսցես զՏէր Աստուած քո։
8 Դարձեալ առնու սատանայ զնա ի լեառն մի բարձր յոյժ, եւ ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս
9 երկնից աչխարհի եւ զփառս նոցա, Եւ ասէ ցնա, Զայս ամենայն քեզ տացից, եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ։
10 Յայնժամ ասէ ցնա Յիսուս, Երթ յետս իմ, Սատանայ, զի գրեալ է, Տեառն Աստուծոյ քումի երկիր պագցես եւ զնա
11 միայն պաշտեսցես։ Ապա եթող զնա Սատանայ, եւ ահա հրեշտակք մատեան եւ պաշտէին զնա։
12 ԲԲ. Եւ իբրեւ լուաւ Յիսուս եթէ Յովհաննէս մատնեցաւ, մեկնեցաւ
13 զնաց ի Գալիլիա. Եւ թողեալ զնազարէթ՝ եկն բնակեցաւ ի Կափառնաւում ի ծովեզերին, ի սահմանս Զաբուղոնի եւ Նեփթաղիմայ. Զի լցցի բանն որ ասացաւ ի ձեռն Եսայեայ
15 մարգարէի. Երկիր Զաբուղոնի եւ երկիր Նեփթաղիմայ, ճանապարհ ծովու յայնկոյս Յորդանանու, Գալիլիա
16 Հեթանոսաց. Ժողովուրդ որ նստէր ի խաւարի՝ եանց լոյս մեծ. եւ որոց նստէին յաչխարհին եւ ի սահմանս մա-
17 հու՝ լոյս ծագեաց նոցա։ Յայնմ հետէ սկսաւ քարոզել Յիսուս եւ ասել, Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից։
18 Մինչդեռ զննայր Յիսուս ընդ եզր ծովուն Գալիլեացւոց, եանց երկուս եղբարս, զՍիմովն զկոչեցեալն Պետրոս եւ զԱնդրէաս եղբայր նորա, արկեալ ուսկան ի ծով, քանզի ձկնորք էին։
19 Եւ ասէ ցնոսա, Եկայք զկնի իմ, եւ
20 արարից զձեզ որսորդս մարդկան։ Եւ նոցա թողեալ վաղվաղակի զպորթիսն՝
21 զնացին զնա նորա։ Եւ մատուցեալ անտի յառաջ՝ եանց այլ երկուս եղբարս, զՅակովբոս Զերեդեայ եւ զՅովհաննէս զեղբայր նորա, ի նաւի Զերեդեայ հանգերձ հարցն իւրեանց, մինչ կարկէին զուսկանս իւրեանց,
22 եւ կոչեաց զնոսա։ Նոցա թողեալ վազվազակի զնաւն եւ զհայր իւրեանց, զնացին զնա նորա։
23 Եւ չրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն

---

[1]Բազմ. Յիսուս, Դարձեալ գրեալ

Գալիլեացւոց, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա եւ քարոզէր զաւետարանն արքայութեան, եւ բժշկէր զամենայն հիւանդութիւնս եւ զամենայն
24 ախտս ի ժողովրդեանն։ Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասորւոց, եւ մատուցին առ նա զամենայն հիւանդս որ նեղեալ էին ի պէսպէս ցաւս եւ ի տանջանս, եւ դիւահարս եւ
25 լուսնոտս եւ զանդամալոյծս, եւ բժշկեաց զնոսա։ Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք ի Գալիլէայ եւ ի Դեկապոլեայ եւ Երուսաղեմէ եւ ի Հրէաստանէ եւ յայնկոյս Յորդանանու։ [1]Եւ բժշկեաց զնոսա"։

Գլ. Ե

1 ԲԳ. Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. եւ իբրեւ նստաւ անդ, մատե-
2 ան առ նա աշակերտք նորա. Եւ բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա եւ ասէր,
3 Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից։ Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։
5 Երանի հեզից, զի նոքա ժառանգեսցեն զերկիր։ Երանի որ քաղցեալ եւ
6 ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին։ Երանի ողորմածաց,
8 զի նոքա ողորմութիւն գտցեն։ Երանի սրտից որ սուրբ են սրտիւք, զի
9 նոքա զԱստուած տեսցեն։ Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աս-
10 տուծոյ կոչեսցին։ Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի
11 նոցա է արքայութիւն երկնից։ Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ եւ հալածեսցեն, եւ ասիցեն զամենայն
12 բան չար զձենջ սուտ վասն իմ. Ցնծացէք եւ ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին։
13 Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն անհամի, ի՞նչ յարիցի. ոչ իմիք ազդիցէ այնուհետեւ, բայց եթէ ընկենուլ արտաքս եւ կոխան լինել ի մարդկանէ։
14 Դուք էք լոյս աշխարհի։ ոչ կարէ քաղաք թաքչել որ ի վերայ լերին կայցէ։
15 Եւ ոչ լուցանեն հրաղ եւ դնեն ընդ պրոտանաւ, այլ ի վերայ աշտանակի, եւ լոյս տայ ամենեցուն որ ի տանն
16 իցեն։ Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է։
17 ԲԳ. Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ
18 եկի լուծանել, այլ լնուլ։ Ամէն ասեմ ձեզ, Մինչեւ անցցեն երկինքն եւ երկիր, յոտն մի [2]որ նչանակեաց մի է" ոչ անցցէ յօրէնսէն եւ ի մարգարէից մին-
19 չեւ ամենայն եղիցի։ Որ որ լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունից եւ ուսուսցէ այնպէս զմարդիկ՝ փոքր կոչեսցի յարքայութեան երկնից. իսկ որ արասցէ եւ ուսուսցէ՝
20 նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից։ Քանզի ասեմ ձեզ, զի եթէ ոչ առաւելցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն եւ զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից։
21 Լուարուք զի ասացաւ առաջնոցն թէ՝ Մի՛ սպանանիր. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի։
22 Այլ ես ասեմ ձեզ եթէ, Ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց՝ պարտաւոր լիցի դատաստանի. եւ որ ասիցէ ցեղբայր իւր Յիմար՝ պարտաւոր լիցի տանին. եւ որ ասիցէ ցեղբայր իւր Մոռաս՝ պարտաւոր
23 լիցի ի գեհեն հրոյն։ Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ, եւ անդ յիշեսցես եթէ եղբայր քո
24 ունիցի ինչ խնդիր զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն, եւ երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, եւ ապա եկեալ մատուսցիր զպատարագն
25 քո։ Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղվաղոյն, մինչ դեռ իցես ընդ նմա ի ճանապարհի. զուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի. եւ դատաւորն՝
26 դահճի, եւ արկանիցէ ի բանտ։ Ամէն ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի մինչեւ հատուցանիցես զկնի՛ն նաքարակիսն։
27 Լուարուք զի ասացաւ, Մի՛ չնար։
28 Բայց ես ասեմ ձեզ թէ, Ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա՝ անդէն չնացաւ ընդ նմա ի սրտի

[1] ի ցուն պակաս

[2] ցոյն, կամ նչանակեաց մի

29 իբրեւ՝ եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա եւ ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի անդամոց քոց կորիցէ, եւ մի՛ ամենայն
30 մարմինդ քո անկանիցի ի գեհեն: Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա եւ ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի անդամոց քոց կորիցէ, եւ մի՛ ամենայն մարմինդ քո
31 արկանիցի ի գեհեն: Ասացաւ եթէ, Որ արձակիցէ զկին իւր՝ տացէ
32 նմա զարձակմանն. Բայց ես ասեմ ձեզ եթէ, Ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան՝ նա տայ նմա չնալ, եւ որ զարձակեալն առնէ՝ չնայ:
33 Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջնոցն, Մի՛ երդնուցուս սուտ, բայց
34 հատուսցես Տեառն զերդմունս քո: Այլ ես ասեմ ձեզ, Ամենեւին մի՛ երդնուլ, մի՛ յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ,
35 եւ մի՛ յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա, եւ մի՛ յԵրուսաղէմ՝ զի
36 քաղաք է մեծի Արքային. Եւ մի՛ ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի
37 սպիտակ առնել կամ թուխ: Այլ եղիցի ձեր բան՝ Այո՛ այո, եւ, Ոչն ոչ. զի աւելին քան զայն ի չարէն է:
38 Լուարուք զի ասացաւ, Ակն ընդ
39 ական եւ ատամն ընդ ատաման: Այլ ես ասեմ ձեզ, Մի՛ կալ հակառակ չարին. այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ
40 ծնօտ քո, դարձո նմա եւ զմեւսն: Եւ որ կամիցի ոք դատել եւ առնուլ զշապիկս քո՝ թող ի նա եւ զպահկն քո:
41 Եւ որ ստարապարտակ վարիցէ զքեզ մղոն մի՝ երթ ընդ նմա եւ երկուս:
42 Որում խնդրէ ի քէն՝ տուր. եւ որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս:
43 Լուարուք ապաքէն զի ասացաւ, Սիրեսցես զընկեր քո, եւ ատեսցես
44 զթշնամին քո: Այլ ես ասեմ ձեզ, Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց, եւ ագօթս արարէք ի վերայ անոցիկ որ լկինն զձեզ եւ հալածեն.
45 Զի եղիջիք որպէս Հօր ձերոյ որ յերկինսն է. զի զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց եւ բարեաց, եւ անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց:
46 Եւթէ՝ Զի եթէ սիրիցէք զանոսիկ որ սիրենն զձեզ՝ զի՞նչ վարձք իցէ. ո՞չ ապաքէն եւ մաքսաւորք զնոյն
47 գործեն: Եւ եթէ ասցէք միայն ողջոյն [1]բարեկամաց ձերոց, զի՞նչ աւելի առնէք. ո՞չ ապաքէն [2]մաքսաւորք [3]եւ
48 մեզաւորք զնոյն գործեն: Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս եւ Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է:

Գլ. Զ

1 ԲԵ. Զգոյշ լերուք ողորմութեան ձերոյ մի՛ առնել առաջի մարդկան, որպէս թէ ի ցոյց ինչ նոցա, զուցէ եւ վարձս ոչ ընդունիցիք ի Հօրէն
2 ձերմէ որ յերկինսն է: Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի՛ հարկաներ փող առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն ի ժողովուրդս եւ ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ, Այն
3 իսկ են վարձք նոցա: Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ
4 ձախ քո զինչ գործէ աջ քո. Որպէս զի եղիցի ողորմութիւն քո ի ծածուկ, եւ Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս:
5 Եւ յորժամ յաղօթս կայցես, մի՛ լինիցիս որպէս կեղծաւորքն, զի սիրեն ի ժողովուրդս եւ յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի երեւեսցին մարդկան. ամէն ասեմ ձեզ,
6 Այն իսկ են վարձք նոցա: Այլ դու յորժամ կայցես յաղօթս, մուտ ի սենեակ քո, եւ փակեա դղուրս քո, եւ կաց յաղօթս առ Հայր քո ի ծածուկ, եւ Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝
7 հատուսցէ քեզ յայտնապէս: Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ չատախօս լինիք իբրեւ զհեթանոսսն. զի համարին եթէ ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին:
8 Արդ մի՛ նմանիցէք նոցա. զի գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչչեւ ձեր խնդրեսէք ինչ իցէ ի նմա-
9 նէ: Եւ արդ այսպէս կացէք դուք յաղօթս.

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի
10 անուն քո. Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս՝ եւ

---

[1] Բ–ղ–ա–կ, եղբարց
[2] Ո՛հ–ն–ք, հեթանոսք
[3] Ի ց–ա–նէ գ–լ–ա–ե

41 յերկրի. Զհաց մեր հանապազորդ տուր
42 մեզ այսօր. Եւ թող մեզ զպարտիս
մեր, որպէս եւ մեք թողումք մերոց
43 պարտապանաց. Եւ մի՛ տանիր զմեզ
ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չա-
րէն. զի քո է արքայութիւնն եւ զո-
րութիւնն եւ փառք յաւիտեանս. ամէն։
44 Զի եթէ թողուցուք մարդկան զյան-
ցանս նոցա, թողցէ եւ ձեզ Հայրն
45 ձեր երկնաւոր. Ապա թէ ոչ թողու-
ցուք մարդկան զյանցանս նոցա, եւ
ոչ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս
ձեր։
46 Եւ յորժամ պահիցէք, մի՛ լինիք
իբրեւ զկեղծաւորսն տրտմակք, որ
ապականեն զերեսս իւրեանց, որպէս
զի երեւեսցին մարդկան թէ պահիցեն.
ամէն ասեմ ձեզ, Այն իսկ են վարձ
47 նոցա։ Այլ դու յորժամ պահիցես, օծ
48 զգլուխ քո եւ լուա զերեսս քո, Զի
մի՛ երեւեսցիս մարդկան իբրեւ պահ-
ող, այլ՝ Հօրն քումմէ ի ծածուկ. Եւ
Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հա-
տուսցէ [1]քեզ։
49 Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի,
ուր ցեց եւ ուտիճ ապականեն, եւ
ուր գողք պական հատանեն եւ գող-
50 նան։ Այլ գանձեցէք ձեզ գանձս յեր-
կինս, ուր ոչ ցեց եւ ոչ ուտիճ ապա-
կանեն, եւ ոչ գողք պական հատանեն
51 եւ գողանան. Զի ուր գանձք ձեր են՝
անդ եւ սիրտք ձեր եղիցին։
52 ԺԳ. Ճրագ մարմնոյ ակն է. եթէ
ակն քո առատ է, ամենայն մարմինդ
53 լուսաւոր եղիցի։ Ապա եթէ ակն քո
չար է, ամենայն մարմինդ խաւարին
եղիցի. իսկ արդ եթէ լոյսդ որ ի քեզ
է՝ խաւար է, խաւարն ո՞րչափ եւս։
54 Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառա-
յել. կա՛մ զմին ատելի եւ զմիւսն սի-
րելի, կա՛մ զմին մեծարելի եւ զմիւսն
արհամարհելի. ոչ կարէք Աստուծոյ
55 ծառայել եւ մամոնային։ Վասն այսորիկ
ասեմ ձեզ, Մի՛ հոգայք վասն ոչխաց
ձերոց՝ զինչ ուտիցէք կամ զինչ բմ-
պիցէք. եւ մի՛՝ վասն մարմնոյ ձերոյ՝
թէ զինչ ապանիցիք. ո՞չ ապաքէն սպի
առաւել է քան զկերակուր, եւ մարմ-
56 ին՝ քան զհանդերձ։ Հայեցարուք ի
թռչունս երկնից, զի ոչ վարեն եւ ոչ
հնձեն եւ ոչ ժողովեն ի չտեմարանս,
եւ Հայրն ձեր երկնաւոր կերակրէ
57 զնոսա. ո՞չ ապաքէն դուք առաւել էք
քան զնոսա։ Իսկ արդ ո՞ ի ձէնջ առ
հոգալ իւրում յաւելուլ կարիցէ ի հա-
58 սակ իւր կանգնուն մի։ Եւ վասն հանդ-
երձի զի՞ հոգայք. հայեցարուք ի շուշ-
սանն վայրենի, ո՛րպէս աճէ. ոչ ջանայ
59 եւ ոչ նիւթէ։ Ասեմ ձեզ, զի եւ ոչ
Սողոմովն յամենայն ի փառս իւրում
60 զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ. Իսկ
եթէ զխոտն ի վայրի որ այսօր է եւ
վաղիւ ի հնոց արկանի, Աստուած այն-
պէս զգեցուցանէ, ո՞րչափ եւս առաւել
61 զձեզ, իմաստասէր։ Մի՛ այսուհե-
տեւ հոգայցէք եւ ասիցէք, Զի՞նչ կե-
րիցուք կամ զի՞նչ արբցուք կամ զի՞նչ
62 զգեցցուք. Զի զայդ ամենայն հեթա-
նոսք խնդրեն. քանզի գիտէ Հայրն
ձեր երկնաւոր թէ պիտոյ է ձեզ այդ
63 ամենայն։ Խնդրեցէք նախ զարքայու-
թիւնն Աստուծոյ եւ զարդարութիւն
նորա, եւ այդ ամենայն յաւելցի ձեզ։
64 Մի՛ այսուհետեւ հոգայցէք վասն վաղ-
ուն, զի վաղիւն վասն իւր հոգասցի.
չատ է աւուրն չար իւր։

Գլ. Է

1 ԹԷ. Մի՛ դատիք, զի մի՛ դատիս-
2 ցիք. Զի որով դատաստանաւ դատիք՝
դատիցիք եւ. եւ որով չափով չափիք՝
3 չափեսցի ձեզ։ Զի՞ տեսանես զչիզ
յականն եղբօր քո, եւ ի քումդ ական
4 զգերանդ ոչ տեսանես։ Կամ զիա՞րդ
ասես ցեղբայր քո, Թող հանից զչիզ
յականէ քումմէ. եւ ահաւասիկ ի
5 քումդ ականդ գերան կայ։ Կեղծաւոր,
հան նախ զգերանդ յականէ քումմէ,
եւ ապա հայեսցիս հանել զչիզն յա-
կանէ եղբօր քո։
6 Մի՛ տայք զսրբութիւնն շանց, եւ
մի՛ արկանիք զմարգարիտս ձեր առաջ
ի խոզից, զի մի՛ առ ոտն կոխիցեն
զնոսա, եւ դարձեալ երկիծուցանիցեն
զձեզ։
7 Խնդրեցէք, եւ տայի ձեզ. հայցէ-
ցէք, եւ գայջիք. բախեցէք, եւ բացցի
8 ձեզ. Զի ամենայն որ խնդրէ՝ առնու,
եւ որ հայցէ՝ գտանէ, եւ որ բախէ՝
9 բացցի նմա։ Ո՞ իցէ ի ձէնջ մարդ որ
խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր

[1] Ոմն., քեզ յայտնապէս

40 տայցէ նմա. Եւ կամ խնդրիցէ ձուկն,
41 մի՞թէ օձ տայցէ նմա։ Արդ եթէ դուք
որ չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս
տալ որդւոց ձերոց, ո՞րչափ եւս ա-
ռաւել Հայրն ձեր որ յերկինս է՝ տա-
ցէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա։
12 Զամենայն զոր միանգամ կամիջիք
իմէ արասցին ձեզ մարդիկ, այնպէս
եւ դուք արարէք նոցա, զի այս իսկ
են օրէնքն եւ մարգարէքն։
13 Մտէք ընդ նեղ դուռն, [1]քանի՛ ըն-
դարձակ է դուռնն եւ համարձակ ճա-
նապարհն որ տանի ի կորուստ, եւ
բազումք են որ մտանեն ընդ նա։
14 [1]Քանի՛ անձուկ է դուռնն եւ նեղ ճա-
նապարհն որ տանի ի կեանս, եւ սա-
կաւք են որ գտանեն զնա։
15 Զգոյշ լերուք ի սուտ մարգարէիցն
որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխա-
րաց, եւ ի ներքոյ են գայլք յափշտա-
16 կողք։ Ի պտղոց նոցա ծանիջիք զնոսա.
միթէ քաղիցեն ի փշոց խաղող, կամ
17 ի տատասկէ խնձոր. Այսպէս ամենայն
ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, եւ
18 ծառ չար՝ պտուղ չար առնէ։ Ոչ կարէ
ծառ բարի պտուղ չար առնել, եւ ոչ
19 ծառ չար պտուղ բարի առնել։ Ամե-
նայն ծառ որ ոչ առնէ պտուղ բարի՝
20 հատանի եւ ի հուր արկանի։ Ապա ի
պտղոց նոցա ծանիջիք զնոսա։
21 Ոչ ամենայն որ ասէ ցիս, Տէր, Տէր,
մտցէ յարքայութիւն երկնից, այլ՝ որ
առնէ կամս Հօր իմոյ որ յերկինս է։
22 Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայն-
միկ, Տէր, Տէր, ո՞չ յանուն քո մար-
գարէացաք, եւ յանուն քո դեւս հա-
նաք, եւ յանուն քո զօրութիւնս բա-
23 զումս արարաք։ Եւ յայնժամ ասացից
ցնոսա եթէ, Ոչ երբէք գիտէի զձեզ.
ի բաց կացէք յինէն [2]ամենեքեան՝ ոյք
գործէիք զանօրէնութիւն։
24 Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ
եւ առնէ զոսա՝ նմանեցուցից զայն ի-
մաստնոյ որ շինեաց զտուն իւր ի վէ-
25 մայ վիմի. Իջին անձրեւք եւ խաղային
գետք, շնչեցին հողմք եւ բախեցին
զտունն, եւ ոչ կործանեցաւ, քանզի
26 ի վերայ վիմի հաստատեալ էր։ Եւ ա-
մենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ
եւ ոչ առնէ զոսա՝ նմանեցուցից առն
27 յիմարի որ շինեաց զտուն իւր ի վերայ
աւազոյ. Իջին անձրեւք, յարեան
գետք, շնչեցին հողմք, հարին զտունն,
եւ անկաւ. եւ էր կործանումն նորա
մեծ յոյժ։
28 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս
[2]զամենայն զբանս զայսոսիկ, զարմա-
նային ժողովուրդքն ընդ վարդապե-
29 տութիւնն նորա. Զի իբրեւ իշխանու-
թեամբ [3]ուսուցանէր, եւ ոչ՝ որպէս
գրիչքն նոցա։

ԳԼ. Ը

1 Այլ իբրեւ էջ ի լեռնէ անտի, գնացին
2 զկնի նորա ժողովուրդք բազումք։ Եւ
ահա մատուցեալ բորոտ մի երկիր պա-
գանէր նմա եւ ասէր, Տէր, եթէ կա-
3 միս, կարող ես զիս սրբել։ Զգեաց
զձեռն իւր եւ հասոյց ի նա Յիսուս
եւ ասէ, Կամիմ, սրբեաց. եւ վաղվա-
զակի սրբեցաւ ի նմանէ բորոտու-
4 թիւնն։ Եւ ասէ ցնա Յիսուս, Զգոյշ
լեր, մի՛ ումեք ասիցես, այլ երթ ցոյց
զանձն քո քահանային, եւ մատո
զպատարագն զոր հրամայեաց Մովսէս
ի վկայութիւն նոցա։
5 Եւ մտեալ ի Կափառնայում, մատե-
ան առ նա հարիւրապետ մի, աղաչէր
6 զնա, եւ ասէր, Տէր, մանուկ իմ
անկեալ կայ ի տան անդամալոյծ՝ չա-
7 րաչար տանջեալ։ Ասէ ցնա Յիսուս,
8 Ես եկիմ եւ բժշկեցից զնա։ Պատաս-
խանի ետ հարիւրապետն եւ ասէ,
Տէր, չեմ բաւական եթէ ընդ տարկա-
իմով մտցես. այլ ասա բանիւ, եւ
9 բժշկեսցի մանուկն իմ։ Քանզի եւ ես
այր մի եմ ընդ իշխանութեամբ, ու-
նիմ ընդ իմեւ զինուորս. ասեմ ասա,
երթ, եւ երթայ. եւ այլում թէ, եկ,
եւ գայ. եւ ծառայի իմում թէ, Արա
10 գայս, եւ առնէ։ Իբրեւ լուաւ Յիսուս,
զարմացաւ, եւ ասէ գայնոսիկ որ
զհետեւ երթային, Ամէն ասեմ ձեզ,
եւ ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս
11 գտի երբեք։ Բայց ասեմ ձեզ զի բա-
զումք յարեւելից եւ յարեւմտից ե-
կեսցեն եւ բազմեսցին ընդ Աբրահամու
եւ ընդ Սահակայ եւ ընդ Յակովբայ
12 յարքայութիւնն երկնից. Եւ որդիքն

[1]Ոմանք, քանզի [2]Ի բազմս պակաս [3]Յոյն, ուսուցանէր զնոսա

արքայութեան երկին ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճել
13 առամանց։ Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն, երթ, եւ որպէս հաւատացեր՝ եղիցի քեզ. եւ ողջացաւ մա-
14 նուկն նորա [1]յաւուր յայնմիկ։ Եւ եկեալ Յիսուս ի տուն Պետրոսի, եւ տես զի զոքանչ նորա անկեալ զնէր
15 տապտղեալ. կալաւ զձեռանէ նորա, եւ եթող զնա ջերմին. յոտն եկաց եւ պաշտէր [2]զնա։
16 Իրրեւ եղեւ երեկոյ, մատուցին առ նա դիւահարս բազումս, եւ հան զոգիսն բանիւ, եւ զամենայն հի-
17 ւանդսն բժշկեաց. Զի լցցի բանն որ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի, Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց եւ զցաւս մեր կրեաց։
18 Գլ. Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս զբուռն, հրամայեաց երթալ
19 յայնկոյս։ Եւ մատուցեալ գրիչ մի ասէ ցնա, Վարդապետ, եկից եւ ես
20 զկնի քո, յոր վայր եւ երթիցես։ Ասէ ցնա Յիսուս, Աղուեսունք որջք ունին, եւ թռչնոց երկնից՝ բունք, այլ Որդի մարդոյ ոչ զոյ ուր զիցէ գլուխ իւր։
21 Եւ մի ոմն յաշակերտաց նորա ասէ ցնա, Տէր, տուր ինձ հրաման պի եր-
22 թայց նախ թաղեցից զհայր իմ։ Ասէ ցնա Յիսուս, Եկ զկնի իմ, եւ թոյլ տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց։
23 Եւ իրրեւ եմուտ ի նաւն, զնացին
24 զկնի նորա աշակերտքն նորա. Եւ ահա չարժումն մեծ եղեւ ի ծովուն մինչ նաւին ծածկել յալեացն անտի,
25 եւ ինքն ննջէր։ Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա եւ ասեն, Տէր,
26 փրկեա զմեզ զի կորնչիմք։ Եւ ասէ ցնոսա, Ընդէր վատասիրտ էք, սակաւահաւատք. յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոցն եւ ծովուն, եւ ե-
27 ղեւ խաղաղութիւն մեծ։ Եւ մարդիկն զարմացան, եւ ասէին, Որպիսի՛ օք իցէ սա, զի եւ հողմք եւ ծով հնազանդին սմա։
28 Եւ իրրեւ անց յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու, ելեալք ի գերեզմա-
նացն, չարաչարք յոյժ, որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանա-
29 պարհն։ Եւ ահա աղաղակեցին եւ ասեն, Զի՞ կայ մեր եւ քո, Յիսուս, Որդի Աստուծոյ, եկիր սաւրաժամ
30 առնուլ զմեզ։ Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից արօտական։
31 Եւ դեւքն աղաչէին զնա եւ ասէին, Եթէ հանես զմեզ ասա, հրամայեա մեզ երթալ յերամակ խոզից։
32 Եւ ասէ ցնոսա, Երթայք. եւ նոքա եկեալ գնացին յերամակն խոզից. եւ ահա ամենայն երամակն ի զարէ
33 անտի ի ծով, եւ մեռան ի ջուրսն։ Եւ խոզապահքն փախեան, եւ երթեալ ի քաղաքն պատմեցին զամենայն, եւ
34 զիրս դիւահարացն։ Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի. իրրեւ տեսին զնա, աղաչեցին զի գնասցէ ի սահմանաց նոցա։

Գլ. Թ

1 Եւ մտեալ ի նաւ անց յայնկոյս եւ
2 եկն ի քաղաք իւր։ Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի որ զնէր ի մահիճս. եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն,
3 [3]Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս,
4 Հայհոյէ դա։ Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա, Ընդէր խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր.
5 Զի՞նչ դիւրին է. ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել՝ Արի եւ շրջ-
6 ջեայ։ Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս, (յայնժամ ասէ ցանդամալոյծն,) Արի, առ զմահիճս քո եւ
7 երթ ի տուն քո։ Եւ յարուցեալ գնաց
8 ի տուն իւր։ Իրրեւ սակաւն ժողովուրդքն, զարմացան եւ փառաւորեցին զԱստուած, զտուեալն այնպիսի իշխանութիւն մարդկան։
9 ԳԹ. Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ եւտես այր մի զի նստէր ի մաքսատունի, Մատթէոս անուն, եւ ասէ ցնա, Եկ զկնի իմ. եւ յարուցեալ գնաց
10 զկնի նորա։ Եւ եղեւ իրրեւ բազմեալ

---

[1] Ցայն, ի ժամն
[2] Իմն, զնոսա

[3] Բաղձ, խոզից բազմաց
[4] Ցայն, փաղաքեաց, որդեակ, Թողեալ

էր նա ի ամէն, եւ անա բազում մաքսաւորք եւ մեղաւորք եկեալ եւ բազմեալ էին ընդ Յիսուսի եւ ընդ աչա-
11 կերսն նորա։ Իրրեւ տեսին փարիսեցիքն, ասեն ցաչակերսան նորա, Ընդէր ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս
12 ուտէ վարդապետն ձեր։ Իսկ Յիսուս իրրեւ լուաւ, ասէ ցնոսա, Ոչ է պիտոյ բժիշկ կարողաց, այլ հիւանդաց։
13 Երթայք, ուսարուք զինչ է, Զոգորմութիւն կամիմ եւ ոչ զպատ. զի ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս։
14 Յայնժամ մատեան առ նա աչակերտքն Յովհաննու եւ ասեն, Ընդէր
15 մեք եւ փարիսեցիքն պահեմք յաճախ, եւ քո աչակերտքդ ոչ պահեն։ Ասէ ցնոսա Յիսուս, Միթէ մարմ ինչ իցէ մանկանց առագաստի առ պատուել, մինչ փեսայն ընդ նոսա իցէ. այլ եկեսցեն աւուրք, յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն, եւ ապա պահեսցեն։
16 Ոչ ոք արկանէ կտաւեղ անթափ ի վերայ հնացեալ ձորձոյ. զի առնու լանէ [2]զլուծիչն նորա ի հանգերձէն,
17 եւ եւս չար պատառումն լինի։ Եւ ոչ արկանեն զինի նոր ի սիկս հինս. ապա թէ ոչ՝ սիկքն պատառին եւ զինին հեղուս, եւ սիկքն կորնչին. այլ արկանեն զզինի նոր ի սիկս նորս, եւ երկոքին պահին։
18 ԳԳ. Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, անա իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա եւ ասէր, Դուստր իմ արդ եւս վախճանեցաւ, այլ եկեալ դիպես զձեռն քո ի վերայ նորա, եւ
19 կեցցէ։ Յարեաւ Յիսուս եւ գնայր ընդ նորա աչակերտաքն հանդերձ։
20 Եւ անա կին մի տեառանս երկոտասանամեայ մատուցեալ յետոյ՝ մերձեցաւ ի պրոչակ հանդերձի նորա.
21 քանզի ասէր ի մտի իւրում, Թէ միայն մերձենամ ի հանդերձս նորա, փրկիմ։
22 Իսկ Յիսուս իրրեւ դարձաւ եւ եանս գնա, ասէ, Քաջալերեաց, դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ. եւ փրկեցաւ կինն ի ժամուն յայնմանէ։
23 Իրրեւ եկն Յիսուս ի տուն իշխանին, եւ եանս զփողարան եւ ամբոխ յոյժ,
24 Ասէ ցնոսա, Ի բաց գնացէք, զի ոչ եմէ մեռեալ է աղջիկդ, այլ ննջէ. եւ
25 ծաղր առնէին զնա։ Եւ իրրեւ ել ամբոխն ի բաց, եմուտ, կարաւ զձեռանէ
26 նորա, եւ յարեաւ աղջիկն։ Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն
27 ընդ այն։ ԳԳ. Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, գնեան եկեն նորա կոյրք երկու, ազաղակէին եւ ասէին, Ողորմեաց
28 մեզ, Որդի Դաւիթ։ Եւ իրրեւ եկն ի տուն, մատեան առ նա կոյրքն. եւ ասէ ցնոսա Յիսուս, Հաւատայք եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն
29 ցնա, Այո, Տէր։ Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա, եւ ասէ, Ըստ հաւատոց
30 ձերոց եղիցի ձեզ։ Եւ բացան աչք նոցա. եւ սաստեաց նոցա Յիսուս եւ ասէ, Զգոյշ կայէք, մի՛ ոք գիտասցէ։
31 Եւ նորա եկեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն։
32 Եւ գնացեալքն նոցա այսուքս, անա մատուցին առ նա այր մի համր դիւա-
33 հար։ Եւ հալանել դիւին՝ խօսեցաւ համրն. եւ զարմացան ժողովուրդքն եւ ասեն թէ, Եւ ոչ երբեք երեւեցաւ
34 այսպիսի ինչ յԻսրայէլի։ Իսկ փարիսեցիքն ասէին թէ, Իշխանաւն դիւաց հանէ զդեւս։
35 ԳԵ. Եւ չրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս եւ ընդ գեղս, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա, եւ քարոզէր զաւետարանն արքայութեան, եւ բժշկէր զամենայն ախտս եւ զամենայն հի-
36 անդուխիւնս ի ժողովրդենէն։ Եւ տեսեալ զժողովուրդն՝ գթացաւ ինոսա, զի էին աչխատեալք եւ ցրուեալք իրրեւ զոչխարս որոց ոչ իցէ հովիւ։
37 Յայնժամ ցաչակերտս իւր, Հունդ
38 բազում են, եւ մշակք սակաւ. Արդ աղաչեցէք զՏէր հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս իւր։

ԳԼ. Ժ

1 Եւ կոչեցեալ զտասն ընդն վերկոտասանեանն ազակերտաց իւր՝ ետ նոցա իշխանութիւն սրտոց սրբոց հանել զնոսա, եւ բժշկել զամենայն ցաւս եւ
2 զամենայն հիւանդութիւնս։ Եւ տասփեղոյն երկոտասանեից էին անուանք սրտոցիկ. առաջին Սիմովն, որում անուանեալն Պետրոս, եւ Անդրէաս եղբայր

[1]Ոմն, զմեզատրս յապաշխարութիւն
[2]կամ, լուծիչն

3 Նորա, Յակովբոս Զեբեդեայ եւ Յով-
հաննէս եղբայր նորա, Փիլիպպոս եւ
Բարթողոմէոս, Թովմաս եւ Մատթէոս
մաքսաւոր, Յակոբոս Ալփեայ եւ Դէ-
4 բէոս որ անուանեցաւն Թադէոս, Սի-
մոնէ Կանանացի եւ Յուդա Իսկարիով-
5 տացի, որ եւ մատնեացն զնա։ Զնոսա
երկոտասանեսին առաքեաց Յիսուս,
պատուիրեաց նոցա եւ ասէ, Ի ճանա-
պարհ հեթանոսաց մի՛ երթայցէք, եւ
6 ի քաղաք Սամարացւոց մի՛ մտանիցէք,
Այլ երթայք առաւել առ ոչխարան կո-
7 րուսեալ տանն Իսրայելի։ Եւ երբեմն
երթայցէք, քարոզեցէք եւ ասացէք
թէ, Մերձեալ է արքայութիւն երկ-
8 նից։ Ջհիւանդս բժշկեցէք, [1]զբորոտս
արկեցէք, զկեսս հանէք, զերի առէք եւ
9 ձրի տուք։ Մի՛ սահապար ոսկի, եւ
մի՛ արծաթ, եւ մի՛ պղինձ ի գօտիս
10 ձեր, Մի՛ պարկ ի ճանապարհ, եւ մի՛
երկուս հանդերձս, մի՛ կօշիկս, մի՛
ցուպ, զի արժանի է մշակն կերակրոյ
11 իւրում։ Յոր քաղաք մտանիցէք կամ
ի գեղ, հարցանիցէք թէ ո՞ է ի նմա
արժանի, եւ անդ լինիջիք մինչեւ ե-
12 լանիցէք անտի։ Եւ երբեմն մտանիցէք
ի տունն, ողջոյն տացէք նմա [2]եւ ա-
13 սացէք, Ողջոյն տանս այսմիկ։ Եթէ
իցէ տունն արժանի, եկեսցէ ողջոյնն
ձեր ի վերայ նորա. ապա թէ ոչ իցէ
արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձ-
14 ցի։ Եւ որ ոչ ընկալցի զձեզ եւ ոչ
լսէ բանից ձերոց, երթեալ երթիջիք
ի տանէն կամ ի քաղաքէն յայնմանէ,
թօթափեսջիք զփոշին ոտից ձերոց։
15 Ամէն ասեմ ձեզ, Դիւրագոյն լիցի
երկրին Սոդոմացւոց եւ Գոմորացւոց
յաւուրն դատաստանի, քան քաղաքին
այնմիկ։

16 Գ.Ձ. Ահաւասիկ ես առաքեմ զձեզ
իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց. եղե-
րուք այսուհետեւ խորագէտք իբրեւ
օձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս։
17 Զգոյչ լինիջիք ի մարդկանէ, զի մատ-
նեսցեն զձեզ յատեանս, եւ ի ժողո-
վուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ.
18 Եւ առաջի դատաւորաց եւ թագա-
ւորաց տարիցին զձեզ վասն իմ ի վր-
19 կայութիւն նոցա եւ հեթանոսաց։ Այլ
յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայ-
ցէք թէ որպէս կամ զինչ խօսիցիք.
զի տացի ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ
20 խօսիցիք։ Զի ոչ եթէ դուք իցէք որ
խօսիցիք, այլ՝ Հոգին Հօր ձերոյ որ
21 խօսիցի ի ձեզ։ Մատնեսցէ եղբայր
զեղբայր ի մահ, եւ հայր՝ զորդի. եւ
յարիցեն որդիք ի վերայ հարց եւ սպա-
22 նանիցեն զնոսա։ Եւ եղիջիք ատե-
լեալք յամենեցունց վասն անուան իմոյ.
իսկ որ հաստատեսցէ ի սպառ՝ նա կեցցէ։
23 Եւ յորժամ հալածիցեն զձեզ ի քաղա-
քիս յայսմիկ, փախիջիք յայլ. [2]եւ եթէ
յայնմանէ հալածիցեն զձեզ, փախիջիք
ի միւսն։ Ամէն ասեմ ձեզ, ոչ սպա-
ռեսջիք զքաղաքս Իսրայելի մինչեւ
24 եկեսցէ Որդի մարդոյ։ Ոչ է աշակերտ
առաւել քան զվարդապետ իւր, եւ ոչ
25 ծառայ քան զտէր իւր։ Շատ իցէ ա-
շակերտին եթէ եղիցի իբրեւ զվար-
դապետ իւր, եւ ծառային՝ իբրեւ զտէր
իւր. եթէ զտանուտէրն Բէեղզեբուղ
կոչեցին, ո՛րչափ եւս առաւել զընտա-
26 նիս նորա։ Մի՛ այսուհետեւ երկնչիջիք
ի նոցանէ, զի ոչինչ է ի ծածուկ որ
ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծա-
27 նիցի։ Զոր ասեմ ձեզ ի խաւարի՝ ա-
սացէք ի լոյս. եւ զոր լսէք յունկանջ՝
28 քարոզեցէք ի վերայ տանիցաց։ Եւ
մի՛ երկնչիջիք յայնոցանէ որ սպանանեն
զմարմին եւ զոգի ոչ կարեն սպանա-
նել. այլ երկեսցուք զուք առաւել
յայնմանէ որ կարող է զոգի եւ զմար-
29 մին կորուսանել ի գեհենի։ Ո՞չ սպա-
ռիչն երկու ճնճղուկք դանդի միով
վաճառին, եւ մի ի նոցանէ յերկիր ոչ
30 անկցի առանց Հօր ձերոյ։ Այլ ձեր եւ
ամենայն իսկ հար գլխոյ թուեալ է։
31 Եւ արդ մի՛ երկնչիջիք, զի լաւ էք
32 քան զբազումս ճնճղուկս։ Ամենայն որ
խոստովանեսցի յիս առաջի մարդկան,
խոստովանեցայց եւ ես զնմանէ առաջի
33 Հօր իմոյ որ յերկինսն է։ Եւ որ ա-
րասցի զիս առաջի մարդկան, ուրա-
ցայց եւ ես զնա առաջի Հօր իմոյ որ
34 յերկինսն է։ Մի՛ համարիք եթէ եկի
արկանել խաղաղութիւն յերկիր. ոչ
եկի արկանել խաղաղութիւն, այլ
35 սուր. Քանզի եկի բաժակել զայր ի հօրէ
իւրմէ, եւ զդուստր ի մօրէ իւրմէ,
36 եւ զհարսն ի սկեսրէ իւրմէ. Եւ թշնա-

[1] Ոմանք, զմեռեալս յարուցէք, զբորոտս

[2] Յոմանս պակաս

37 Միք առն՝ ընտանիք իւր։ Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի. եւ որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ
38 ինձ արժանի։ Եւ որ ոչ առնու զխաչ իւր եւ գայ զկնի իմ՝ չէ ինձ արժա-
39 նի։ Որ գտանէ զանձն իւր՝ կորուսցէ զնա. եւ որ կորոյս զանձն իւր վասն
40 իմ՝ գտցէ զնա։ Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, եւ որ զիս ընդունի՝ ընդուն-
41 նի զառաքիչն իմ։ Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝ վարձս մարգարէի առցէ. եւ որ ընդունի զարդար յանուն արդարոյ՝ վարձս արդարոյ
42 առցէ։ Եւ որ արբուսցէ միում ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրա միայն՝ յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր։

ԳԼ. ԺԱ

1 Գէ. Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զպատուէր երկոտասանից աշակերտացն իւրոց, գնաց անտի քարոզել եւ ուսուցանել ի քաղաքս նոցա։
2 Իսկ Յովհաննէս իբրեւ լուաւ ի բանտին զգործս Քրիստոսի, առաքեաց [1]ի ձեռն աշակերտաց իւրոց,
3 Եւ ասէ ցնա, Դո՞ւ ես որ գալոցն ես, 4 եթէ այլում ակն կալցուք։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա, Գնացէք պատմեցէք Յովհաննու զոր
5 լուայք եւ տեսէք. Կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք սրբին, եւ խուլք լսեն, եւ մեռեալք յառնեն, եւ աղքատք
6 աւետարանին։ Եւ երանեալ է որ ոչ գայթակղեսցի յիս։
7 Եւ իբրեւ նոքա գնացին, սկսաւ Յիսուս ասել զժողովուրդսն Յովհաննէ, Զի՞նչ երկք տեսանել յանապատին. 8 եղէ՞ն չարժուն ի հովտից։ Այլ զի՞նչ երկք տեսանել. մարդ ի հանդերձս փափկութեան զարդարեալ. անաւանիկ որ զվաստակոսն զկեցեալ են ի տունս
9 թագաւորաց են։ Այլ զի՞նչ երկք տեսանել. մարգարէ՞. այո, ասեմ ձեզ,
10 եւ առաւել եւս քան զմարգարէ։ Զի նա է վասն որոյ գրեալն է. Ահա ես առաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց, որ պատրաստասցէ զճանա-

11 պարհս քո առաջի քո։ Ամէն ասեմ ձեզ, Չէ յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ. բայց փոքրիկն յարքայութեան երկնից՝
12 մեծ է քան զնա։ Բայց յաւուրցն Յովհաննու Մկրտչի մինչեւ ցայժմ արքայութիւնն երկնից բռնապատի, եւ
13 բռնաւորք յափշտակեն զնա։ Զանազի մինչեւ ցՅովհաննէս մարգարէքն եւ
14 Յովհաննէս մարգարէացան. Եւ եթէ կամիք ընդունել, նա է Եղիա որ գա-
15 լոցն է։ Որ ունկնդիր ականջս լսելոյ՝
16 լուիցէ։ Ո՞ւմ նմանեցուցից զազգս գայս. նման է մանկտւոց որ նստեալք ի հրապարակս, կարդայցեն զընկերս
17 իւրեանց, Եւ ասիցեն, Փող հարաք ձեզ եւ ոչ կարաւեցէք, ողբացաք ձեզ
18 եւ ոչ կոծեցարուք։ Եկն Յովհաննէս, ոչ ուտէր եւ ոչ ըմպէր, եւ ասեն,
19 Դեւ գոյ ի նմա։ Եկն Որդի մարդոյ, ուտէ եւ ըմպէ, եւ ասեն, Ահա այր կերող եւ արբեցող, բարեկամ մաքսաւորաց եւ մեղաւորաց. եւ արդա-
20 րացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց։ Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն յորս եղեն բազում զօրութիւնք նորա
21 եւ ոչ ապաշխարեցին. Վա՛յ քեզ, Քուրազին, վա՛յ քեզ, Բեթսայիդա. զի եթէ ի Տիւրոս եւ ի Սիդովն եղեալ էին զօրութիւնքն որ ի ձեզ եղեն, վաղուց եւս արդէք խորտով եւ մոխրով ա-
22 պաշխարեալ էր։ Բայց ասեմ ձեզ, Դիւրագոյն լիցի երկրին Տիւրոսի եւ Սիդովնի յաւուրն դատաստանի քան
23 ձեզ։ Եւ դու, Կափառնայում, [2]մի՛ մինչեւ յերկինս բարձրացիս, այլ՝ մինչեւ ի դժոխս իջցես. զի եթէ ի Սոդոմ եղեալ էին զօրութիւնքն որ ի քեզ եղեն, ապաքէն կայր եւս մինչ-
24 եւ ցայսօր։ Բայց ասեմ ձեզ եթէ, Երկրին Սոդոմայեցւոց դիւրագոյն լիցի յաւուրն դատաստանի քան քեզ։
25 Գլ. Յայնմ ժամանակի պատասխանի եւ Յիսուս եւ ասէ, Գոհանամ զքէն, Հայր, Տէր երկնի եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի պիտանոց,
26 եւ յայտնեցեր տղայոց։ Այո, Հայր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո։
27 Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ. եւ ոչ ոք ճանաչէ զՈրդի եթէ ոչ Հայր,

[1] Ոմանք, զերկուս յաշակերտաց

[2] Ոմանք, որ մինչեւ յերկինս բարձրացեալ ես,

եւ ոչ գՀայր ոք ճանաչէ եթէ ոչ Որդի, եւ ում Որդին կամիցի յայտնել։
28 Եկայք առ իս, ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից
29 զձեզ։ Առէք գուծ իմ ի ձեզ, եւ ուսարուք յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ, եւ գտջիք հանգիստ անձանց
30 ձերոց։ Զի լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ՝ փոքրագի։

ԳԼ. ԺԲ

1 ԳԲ. Յայնժամ գնաց Յիսուս ընդ սերտորայն նոցա ի չաբաթու, եւ աշակերտքն նորա քաղցեան եւ սկսան
2 հասկ կորզել եւ ուտել։ Փարիսեցիքն իբրեւ տեսին, ասեն ցնա, Ահաւասիկ աշակերտքն քո գործեն զոր ոչ է արժան գործել ի չաբաթու։ Եւ նա ասէ
3 ցնոսա, Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր գոր արար Դաւիթ, յորժամ քաղցեաւն,
4 եւ որ ընդ նմանն էին. Զիա՛րդ եմուտ ի տունն Աստուծոյ եւ եկեր զհաց առաջաւորութեանն, զոր ոչ էր օրէն նմա ուտել, եւ ոչ՝ որոց ընդ նմանն
5 էին, բայց միայն քահանայից։ Կամ ոչ ի՞նչ ընթերցեալ յօրէնս, զի ի չաբաթս քահանայքն ի տաճարին զգծանն
6 զչաբաթին եւ անմեղք են։ Բայց ասեմ ձեզ, զի մեծ քան զտաճարն է աստ։
7 Եւ եթէ գիտէիք զինչ է Ողորմութիւն կամիմ եւ ոչ զզոհ, ապա ոչ դատապարտէիք զանբասխանս։
8 Զի տէր է չաբաթու Որդին մարդոյ։
9 Եւ գնացեալ անտի Յիսուս՝ եկն ի ժո-
10 ղովուրդն նոցա։ Եւ անդ էր այր մի որոյ ձեռն իւր գօտացեալ էր. հարցին զնա եւ ասեն եթէ, Պա՞րտ իցէ ի չաբաթու բժշկել, զի չարախօսեսցեն
11 զնմանէ։ Եւ նա ասէ ցնոսա, Ո՞վ է ի ձէնջ մարդ որոյ իցէ ոչխար մի, եւ անկանիցի այն ի խորխորատ ի չաբաթու, միթէ ո՞չ ունիցի եւ յարուցա-
12 նիցէ զնա։ Իսկ արդ ո՛րչափ եւս առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է ի չաբաթու բարիս
13 գործել։ Յայնժամ ասէ ցայրն, Զգեա զձեռն քո, եւ նա ձգեաց եւ եղեւ ողջ
14 իբրեւ զմեւսն։ Իսկ փարիսեցիքն եկեալ արտաքս խորհուրդ առին զնմանէ թէ ո՛րպէս կարասցեն զնա
15 Եւ Յիսուս իբրեւ գիտաց, մեկնեցաւ անտի. եւ գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք, եւ բժշկեաց
16 զամենեսեան։ Եւ սաստկաց նոցա զի
17 մի՛ յայտնեսցեն զնմանէ ումեք։ Զի լցցի որ ասացաւն ի ձեռն Եսայեայ
18 մարգարէի, Ահա մանուկ իմ զոր ընտրեցի, եւ սիրելի իմ ընդ որ հաճեցաւ անձն իմ. եդից զհոգի իմ ի վերայ նորա, եւ իրաւունս հեթանոսաց պատ-
19 մեսցէ։ Ոչ հակառակեսցի եւ ոչ աղաղակեսցէ, եւ ոչ ոք լուիցէ ի հրապարակս զբաւրաւ նորա։ Զեղէգն
20 ջախջախեալ ոչ վշրեսցէ, եւ զպատրոյկն ծուխայեալ ոչ չիջուսցէ, մինչեւ հանցէ ի յաղթութիւն զդատաս-
21 տանն. Եւ յանուն նորա հեթանոսք յուսասցին։
22 ԳԳ. Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր եւ համր, եւ բժշկեաց զնա, որպէս զի համրն եւ կոյրն
23 խօսիցի եւ տեսանիցէ։ Զարմացան ամենայն ժողովուրդքն եւ ասէին, Միթէ սա՞ իցէ [1]Քրիստոսն որդի Դաւ-
24 թի՞։ Բայց փարիսեցիքն իբրեւ լուան, ասեն, Ոչ իւիք հանէ զա զդեւս, եթէ ոչ Բէեղզեբուղաս իշխանաւն դիւացն։
25 Իբրեւ գիտաց Յիսուս վնտռտրդս նոցա, ասէ ցնոսա, Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր աւերի. եւ ամենայն քաղաք կամ տուն
26 բաժանեալ յանձն իւր՝ ոչ կայցէ։ Եւ եթէ Սատանայ զՍատանայ հանէ, յանձն իւր բաժանեցաւ. որպէս կայցէ
27 կայցէ թագաւորութիւն նորա։ Եւ եթէ ես Բէեղզեբուղաս հանեմ զդեւս, որդիքն ձեր ի՞ւ հանիցեն. վասն այնորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք։
28 Ապա եթէ Հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս, ուրեմն հասեալ է ի վերայ
29 ձեր արքայութիւն Աստուծոյ։ Կամ զիա՞րդ կարէ ոք մտանել ի տուն հզօրի եւ զպարծանս նորա յափշտակել, եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն, եւ ապա
30 զտունն նորա յափշտակիցէ։ Որ ոչ ընդ իս է՝ հակառակ իմ է, եւ որ ոչ
31 ժողովէ ընդ իս՝ ցրուէ։ Վասն այսորիկ ասեմ ձեզ, Ամենայն մեղք եւ հայհոյութիւնք թողցին մարդկան. բայց զՀոգւոյն հայհոյութիւնն մի՛ թողցի[2]։

---

[1] Քրիստոս, որդին Դաւթի
[2] Մատթ. յաւելած, մարդկան

32 Եւ որ ոք ասիցէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա, բայց որ զՀոգւոյն Սրբոյ ասիցէ՝ մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհի եւ մի՛ ի հանդերձեալսն
33 լուծանի։ Կա՛մ արարէք զծառն բարի եւ պտուղ նորա բարի, կա՛մ արարէք զծառն չար եւ պտուղ նորա չար. քանզի ի պտղոյ անտի ծառն ճանաչի։
34 Ծնունդք իմիք, զի՞րդ կարիցէք բարիս խօսել որ չարքդ էք. քանզի ի
35 յաւելս սրտիդ խօսի բերան։ Մարդ բարի ի բարի գանձուց [1]սրտի իւրոյ՝ հանէ զբարիս. եւ մարդ չար ի չար գանձուց [1]սրտի իւրոյ՝ հանէ զչարիս։
36 Բայց ասեմ ձեզ թէ, Ընդ ամենայն պատարիկ բանի զոր խօսիցին մարդիկ՝ տացեն համար յաւուրն դատաստանի։
37 Զի ի բանից քոց արդարասցիս, եւ ի բանից քոց պարտաւորեսցիս։
38 Դ. Յանդիման պատասխանի եւսն նմա ոմանք ի դպրացն եւ ի փարիսեցւոց եւ ասեն, Վարդապետ, կամիմք
39 նշան ինչ տեսանել ի քէն։ Նա պատասխանի եւ ասէ ցնոսա, Ազգ չար եւ չնագող նշան խնդրէ. եւ նշան մի՛ տացի նմա, բայց նշանն Յովնանու
40 մարգարէի։ Զի որպէս էր Յովնան ի փոր կիտին վերիս աւուրս եւ վերիս գիշերս, նոյնպէս եղիցի եւ Որդի մարդոյ ի սիրտ երկրի վերիս աւուրս եւ վե-
41 րիս գիշերս։ Արք Նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ եւ դատապարտեսցեն զսա, զի ապաշխարութեանն Յովնանու. եւ արդ աւասիկ մեծ քան զՅովնան է
42 աստ։ Դէմոնն հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ եւ դատապարտեսցէ զսա. զի եկն ի ծագս երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի, եւ ահա մեծ քան զՍողոմոն է
43 աստ։ Այլ յորժամ ոգին պիղծ երանէ ի մարդոյ, չրջի ընդ անջրդին տեղիս,
44 խնդրէ հանգիստ եւ ոչ գտանէ. Յայնժամ ասէ, Դարձայց ի տունն իմ ուստի եկի. եւ եկեալ գտանէ զնա պարա-
45 պարտ, մաքրեալ եւ յարդարեալ։ Յայնժամ երթայ եւ առնու ընդ իւր եւթն այլ ոգիս չարագոյնս քան զինքն, եւ մտեալ բնակէ անդ. եւ լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն. այնպէս եղիցի եւ ազգիս այսմիկ չարի։
46 Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն խօսէր, ահա մայր նորա եւ եղբարք նորա կային արտաքոյ եւ խնդրէին խօսել
47 ընդ նմա։ Եւ ասէ ումն ցնա, Ահա մայր քո եւ եղբարք քո կան արտա-
48 քոյ եւ խնդրեն խօսել ընդ քեզ։ Նա պատասխանի եւ ասէ ցնոսա, եւ ասէ, Ո՞վ է իմ մայր, կամ
49 ո՞վ են իմ եղբարք։ Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտսն ասէ, Ահաւասիկ
50 մայր իմ եւ եղբարք իմ։ Զի որ առնիցէ զկամս Հօր իմոյ որ յերկինս է՝ նա է իմ եղբայր եւ քոյր եւ մայր։

ԳԼ. ԺԳ

1 Դէ. Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս
2 ի տանէն՝ նստաւ առ ծովեզերսն։ Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչեւ մտանել նմա ի նաւն եւ նստել. եւ ամենայն ժողովուրդն
3 կայր առ ծովեզերսն. Եւ խօսէր ընդ նոսա բազումս առակօք եւ ասէր,
4 Ահա ել սերմանահան սերմանել. եւ ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ, եւ [2]եկն թռչունն
5 երկինից եւ եկեր զնա։ Եւ այլն անկաւ յապառաժի ուր ոչ գոյր հող բազում, եւ վաղվաղակի բուսաւ առ ի
6 չգոյէ հողոյ երկրին. Ի ծագել արեւուս տապացաւ, եւ զի ոչ գոյին արմատք, չորացաւ։ Եւ այլն անկաւ
7 ի մէջ փշոց, եւ ելին փուշքն եւ հեղ-
8 ձուկին զնա։ Եւ այլն անկաւ յերկիր բարի, եւ տայր պտուղ էր որ հարիւրապատիկ, եւ էր որ վաթսնապատիկ, եւ
9 էր որ երեսնապատիկ։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լսիցէ։
10 Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա, Ընդէ՞ր առակօք խօսիս ընդ նո-
11 սա։ Նա պատասխանի եւ ասէ ցնոսա, Քանզի ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան երկնից,
12 եւ նոցա չէ տուեալ։ Զի որ ունիցէ՝ տացի նմա եւ յաւելցի, եւ որ ոչն ունիցէ՝ եւ զոր ունիցին բարձցի ինձմա-
13 նէ։ Վասն այնորիկ առակօք խօսիմ ընդ նոսա, զի անաւանն եւ ոչ տեսանեն. եւ լսեն եւ ոչ լսեն եւ ոչ առնուն ի միտ. Եւ կատարի առ նոսա

[1] Որմէ, իւրոց

[2] Բազմ, ակն թռչունք եւ կերան զնոսա

մարգարէութիւնն եսայեայ որ ասէ, Լսելով լուիցիք, եւ մի՛ իմասցիք, եւ տեսանելով տեսցիք, եւ մի՛ տեսցիք։
15 Զի խաւարացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, եւ ականջօք իբրեւ ծանր լուան, եւ զաչս իւրեանց կապուցին, զի մի՛ երբեք տեսցեն աչօք եւ ականջօք լուիցեն եւ սրտիւք իմասցին եւ դարձցին, եւ բժշկեցից
16 զնոսա։ Բայց ձեր երանի է աչացդ զի տեսանեն, եւ ականջաց ձերոց՝ զի
17 լսեն։ Ամէն ասեմ ձեզ, զի բազումք մարգարէք եւ արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ՝ եւ ոչ տեսին, եւ լսել զոր լսէքդ՝ եւ ոչ լսեան։ Եւ
18 արդ լուարուք դուք զառակ սերմանացն։ Յամենայնի որ լսէ զբանն
19 արքայութեան եւ ոչ առնու ի միտ, գայ չարն եւ յափշտակէ զսերմանեալն ի սիրտ նորա. այն է որ առ ճանա-
20 պարհաւն սերմանեցաւ։ Եւ որ յապառաժսն սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն, եւ վազվազակի ընդու-
21 իցեալ զնա։ Բայց քանզի ոչ ունի արմատս յինքեան այլ առ ժամանակ մի է, ի լինել նեղութեան եւ հալածանաց վասն բանին՝ վազվա-
22 զակի գայթակղի։ Իսկ որ ի մէջ փշոյն սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն, եւ հոգք աշխարհիս եւ պատրանք մեծութեան հեղձուցանեն զբանն,
23 եւ լինի անպտուղ։ Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն եւ ի միտ առնու, եւ սաց զպտուղ, է որ հարիւր, եւ է որ վաթսուն, եւ է որ երեսուն։
24 ԴՁ. Այլ առակ արկ առ նոսա եւ ասէ, Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի
25 յագարակի իւրում։ Եւ ի քուն լինել մարդկան՝ եկն թշնամի նորա եւ ցանեաց ի վերայ որոմն ի մէջ ցորենոյն,
26 եւ գնաց։ Եւ իբրեւ բուսաւ խոտն եւ արար պտուղ, ապա երեւեցաւ եւ
27 որոմնն։ Մատուցեալ ծառայք առնուսեանն առն գնա, Տէր, ոչ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում,
28 արդ ուստի՞ ունիցի զորոմնն։ Եւ նա ասէ գնոսա, Այր թշնամի արար զայն. ասեն գնա ծառայքն, Կամիս զի եր-
29 թիցուք քաղեսցուք զայն ի բաց։ Եւ նա ասէ գնոսա, Մի՛, գուցէ մինչ քաղիցէք
30 զորոմնն, եւ զցորեանն ընդ նմին ի բաց խլիցէք։ Թոյլ առաք երկոցունց աճել ի միասին մինչեւ ի հունձս, եւ ի ժամանակի հնձոյ ասացից ցհնձողսն, Քաղեցէք նախ զորոմնդ եւ կապեցէք զայդ ի խրձունս առ ի յայրել, եւ զցորեանն ժողովեցէք ի չանմաբանս իմ։
31 Այլ առակ արկ առ նոսա եւ ասէ, Նման է արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ՝ սեր-
32 մանեաց յագարակի իւրում։ Որ փոքր է քան զամենայն սերմանիս, եւ յորժամ աճիցէ, մեծ է քան զամենայն բանջարս, եւ լինի ծառ մինչեւ զալ թռչնոց երկնից եւ հանգչել յոտոս նորա։
33 Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ, Նման է արքայութիւն երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ՝ թագոյց ի պրիւս երիս ալեւր մինչեւ ամենայն խմորեցաւ։
34 Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովրդեան, եւ առանց
35 առակի ոչինչ խօսէր ընդ նոսա. Զի լցցի ասացեալն ի մարգարէէն, Բացից առակօք զբերան իմ, բղխեցից զծած-
36 կեալսն ի սկզբանէ աշխարհի։ Դէ. Յայնժամ թողեալ Յիսուս զժողովրդեանն՝ եկն ի տուն. մատեան առ նա աշակերտքն նորա եւ ասեն, Մեկնեա մեզ զառակ որոմանցն ագարակի։
37 Նա պատասխանի եւ ասէ ցնոսա, Որ սերմանէ զբարին՝ է Որդի
38 մարդոյ. Եւ ագարակն աշխարհս է. սերմն բարի նոքա են որ որդիքն արքայութեան են, իսկ որոմնն որդիք
39 չարին են. Եւ թշնամին որ վարեաց զայն՝ Սատանայ է, եւ հունձքն կատարած աշխարհիս է, եւ հնձողքն
40 հրեշտակք են։ Որպէս ժողովի որոմնն եւ ի հուր այրի, այնպէս եղիցի ի կա-
41 տարած աշխարհիս. Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս իւր, եւ ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւնս, եւ զգործակ ան-
42 զործութիւն։ Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ
43 եւ կրճել ատամանց։ Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն յարքայութեան [1]հերկնից. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

---

[1] Յոյն. Հօր իւրեանց

44 Դարձեալ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ թաղեցի. եւ ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն
45 զոր ունի, եւ գնէ զագարակն զայն։ Դարձեալ նման է արքայութիւն
46 երկնից առն վաճառականի որ խնդրէ զէ մարգարիտս զեղեցիկս. եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր,
47 եւ գնեաց զայն [1]մարգարիտ։ Դարձեալ նման է արքայութիւն
48 երկնից ուռկանի արկելոյ ի ծով եւ զամենայն ազգաց ժողովելոյ. Զոր լրեալ լցաւ, հանեալ ի ցամաք եւ նստեալ՝ ժողովեցին զբարի բարին յամանս, եւ
49 զխոտանն ի բաց ընկեցին։ Այնպէս եւ լիցի ի կատարած աշխարհիս. ելցեն հրեշտակք եւ մեկնեսցեն զչարս ի
50 միջոց արդարոց, եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց։
51 Ասէ ցնոսա Յիսուս, Իմացարո՞ւք զայս ամենայն. ասեն ցնա, Այո, Տէր։
52 Եւ նա ասէ ցնոսա, Վասն այսորիկ ամենայն գրիչ աշակերտեալ արքայութեան երկնից նման է առն տանուտեառն, որ հանէ ի գանձէ իւրմէ զնոր եւ զհին։
53 ԵԿ. Եւ եղեւ իրրեւ կատարեաց Յիսուս զառակս զայսոսիկ, փոխեցաւ
54 անտի. Եւ եկեալ ի գաւառ իւր՝ ուսուցանէր զնոսա ի ժողովրդեանն նոցա, մինչեւ զարմանալ նոցա եւ ասել, Սմա ուստի՞ իցէ այս իմաստութիւնն
55 եւ զօրութիւնք։ Ո՞չ սա է հիւսեանն որդի. ո՞չ մայր սորա կոչի Մարիամ, եւ եղբարք սորա՝ Յակովբոս եւ [2]Յով-
56 սէս եւ Սիմոնն եւ Յուդա. Եւ քոյր սորա ո՞չ ամենեքեան առ մեզ են. արդ
57 ուստի՞ է սմա այս ամենայն։ Եւ զայթակղէին ի նա. եւ Յիսուս ասէ ցնոսա, Զի մարգարէ անարգ եթէ ոչ յիւրում գաւառի եւ յիւրում տան։
58 Եւ ոչ արար անդ զօրութիւնս բազումս վասն անհաւատութեան նոցա։

ԳԼ. ԺԴ

1 ԵՒ. Յայնմ ժամանակի լուաւ Հե-

[1] Ի Յ-ՆԴ պ-ե-է [2] Ոմանք, Յովսէփ

բովէս չորրորդապետ զլուր Յիսուսի.
2 Եւ ասէ ցծառայս իւր, Նա է Յովհաննէս մկրտիչ. նա յարեաւ ի մեռելոց, եւ վասն այնորիկ զօրութիւնք լինին նմանս։
3 Քանզի Հերովդէս կալաւ զՅովհաննէս, կապեաց զնա եւ եդ ի բանտի վասն Հերովդիայ, կնոջ Փիլիպպոսի
4 եղբօր նորա։ Զի ասէր ցնա Յովհաննէս, Զի արժան քեզ ունել զկանայս զնա։
5 եւ կամէր զնա սպանանել, բայց երկնչէր ի ժողովրդենէ անտի, քանզի իբրեւ
6 զմարգարէ ունէին զնա։ Եւ իրրեւ եղեն ծնունդք Հերովդի, կատաւեաց դուստր Հերովդիայ ի մէջ բազմականչին. եւ հաճոյ եղեւ Հերովդի։
7 Ուստի եւ երդմամբ խոստացաւ տալ
8 նմա զինչ եւ խնդրեսցէ։ Եւ նա յառաջագոյն խրատեալ ի մօրէ իւրմէ, Տուր ինձ, ասէ, այսր ի վերայ սկահիդ
9 զգլուխն Յովհաննու մկրտչի։ Եւ տրամեցաւ թագաւորն. բայց վասն երդմանցն եւ բարձակիցացն հրամայեաց
10 տալ նմա։ Եւ առաքեաց զգլխատեաց
11 զՅովհաննէս ի բանտի։ Եւ բերաւ զգլուխ նորա սկահիդ եւ տուաւ աղջկանն,
12 եւ տարաւ առ մայր իւր։ Եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ բարձին զմարմինն եւ թաղեցին, եւ եկեալ պատմեցին Յիսուսի։
13 ԵԳ. Եւ իրրեւ լուաւ Յիսուս, գնաց անտի նաւու յանապատ տեղի առանձին. իրրեւ լուան ժողովուրդքն, գնացին զհետ նորա հետի ի քաղաքաց
14 անտի։ Եւ իրրեւ [3]ել, եւս ժողովուրդ բազում, պճղացաւ ի նոսա եւ բժշկեաց զհիւանդս նոցա։
15 Իրրեւ ընդ երեկս եղեւ, մատեան առ նա աշակերտքն եւ ասեն, Տեղիս անապատ է եւ օրս սաստիկ անցեալ է, արձակեա զժողովուրդս, զի երթիցեն չուրջ ի չէնսն, գնեսցեն ի բանջ կե-
16 րակուրս։ Եւ ասէ Յիսուս, Ոչինչ պիտոյ է դոցա երթալ, դուք տուք
17 գոցա ուտել։ Եւ նոքա ասեն ցնա, Ոչինչ ունիմք աստ՝ բայց հինգ նկա-
18 նակ եւ երկուս ձկունս։ Եւ ասէ
19 ցնոսա, Բերէք այսր զայն։ Եւ հրամայեալ բազմեցուցանել զժողովուրդսն ի վերայ խոտոյ. եւ առեալ զհինգ

[3] Ոմանք, եւ Յիսուս

նկանակն եւ զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց եւ երեկ, եւ ետ ցաչակերտան զնկանակսն, եւ աշակերտքն՝
20 Ժողովրդոցն։ Կերան ամենեքեան եւ յագեցան, եւ բարձին զոր ինչ մնացեալ կո-
21 տորցն երկոտասան սակաւի լի։ Եւ որք կերանն՝ էին արք իբրեւ հինգ հազար, թող կանայս եւ զմանկտի։
22 ԵԴ. Եւ [1]ոտիկեաց վազվազակի զաչակերտսն մտանել ի նաւ եւ յառաջել յայնկոյս, մինչ ինքն զժողովուրդսն
23 արձակիցէ։ Եւ իբրեւ արձակեաց զժողովուրդսն, ել ի լեառն առանձինն կալ յաղօթս, եւ իբրեւ ընդ երեկս եղեւ,
24 անդ էր միայն։ Եւ նաւն [2]մեկնեալ էր ի յամաքէն բազում ասպարիսօք՝ ծփեալ յալեացն. քանզի ընդդէմ էր
25 հողմն։ Եւ ի չորրորդում պահու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս գնալով
26 ի վերայ ծովուն։ Իբրեւ տեսին զնա աշակերտքն զի գնայր ի վերայ ծովուն, խռովեցան, եւ ասեն թէ՝ Առաչօք ինչ
27 իցէ. եւ առ ահին ազաղակեցին։ Եւ վազվազակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս եւ ասէ. Քաջալերեցարուք, ես
28 եմ, մի երկնչիք։ Պատասխանի ետ նմա Պետրոս եւ ասէ. Տէր, եթէ դու ես, հրամայեա ինձ գալ առ քեզ ի վերայ
29 ջրոցս։ Եւ նա ասէ, Եկ։ Եւ իջեալ ի նաւէն Պետրոս՝ գնաց ի վերայ [3]ջուրցն,
30 եւ եկն առ Յիսուս։ Եւ տեսեալ զհողմն սաստիկ երկեաւ, եւ իբրեւ սկսաւ ընկղմել, աղաղակեաց եւ ասէ,
31 Տէր, փրկեա զիս։ Եւ վազվազակի Յիսուս ձգեաց զձեռն իւր, կալաւ զնա եւ ասէ, Ի՛ւրահատուա, ընդէ՞ր երկ-
32 մտեցեր։ Եւ իբրեւ եկին ի նաւն, հանգաւ
33 զգաստացաւ հողմն։ Եւ որ ի նաւին էին՝ մատեան, երկիր պագին նմա եւ ասեն, Արդարեւ Որդի Աստուծոյ ես դու։
34 Եւ անցեալ եկին ի ցամաք ի Գեննեսաս-
35 րէմ։ Եւ իբրեւ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ, առաքեցին ընդ ամենայն գաւառն, եւ ածին առ նա զա-
36 մենայն հիւանդս. Եւ աղաչէին զնա, զի զմի միայն ի քղանցս հանդերձի նորա մերձենացին. եւ որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան։

Գլ. ԺԵ

1 ԵՒ. Յայնժամ մատեան առ Յիսուս որ յԵրուսաղեմէ փարիսեցիքն եւ գր-
2 պիրք, եւ ասեն, Ընդէ՞ր աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն. զի ոչ լուանան զձեռս յորժամ հաց
3 ուտեն։ Եւ պատասխանի ետ եւ ասէ ցնոսա, Իսկ դուք ընդէ՞ր անցանէք զպատուիրանսն Աստուծոյ վասն ձե-
4 րոյ աւանդութեանն։ Զի Աստուած [4]ասաց, Պատուեա զհայր քո եւ զմայր.
5 Եւ, Որ բամբասէ զհայր կամ զմայր՝
6 մահու վախճանեսցի։ Եւ դուք ասէք, Որ ասիցէ հայր իւր կամ հայր իւր թէ Պատարագ է զոր ինչն օգտիցիս,
եւ ոչ պատուիցէ զհայր իւր [5]եւ զմայր իւր՝. եւ խոտեաք զպատն Աստուծոյ
7 վասն ձերոյ աւանդութեանն։ Կեղծաւորք, բարւոք մարգարէացաւ ի վերայ
8 ձեր Եսայի, եւ ասէ, Ժողովուրդս այս [6]շրթամբք պատուէ զիս, եւ սիրտ
իւրեանց հեռացեալ մեկնած է ինէն.
9 Զուր պաշտեն զիս, ուսուցանեն վարդապետութիւնս՝ զմարդկան պատուիրեալս։
10 Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդսն՝ ասէ ցնոսա, Լուարուք եւ ի միտ ա-
11 ռէք. Ոչ որ ինչ մտանէ ընդ բերանն՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ։
12 Յայնժամ մատուցեալ աշակերտացն նորա՝ ասեն ցնա, Գիտե՞ս, զի փարիսեցիքն իբրեւ լուան զբանն, գայ-
13 [7]լակոծեցին։ Նա պատասխանի ետ նոցա եւ ասէ, Ամենայն տունկ զոր ոչ անկեաց Հայր իմ երկնաւոր՝ խլեսցի։
14 Թոյլ տուք զնոսա. [8]կոյրք են կուրաց առաջնորդք՝. կոյր կուրի յորժամ առաջնորդէ, [8]սկսցէ եւ՝ երկոքինն ի խոր-
15 խորատն անկանին։ Պատասխանի ետ նմա Պետրոս եւ ասէ, Մեկնեա մեզ
16 զառակս զայս։ Ասէ Յիսուս, Տակաւին
17 եւ գո՞ւք անմիտք էք. Եւ ո՞չ իմանայք եթէ ամենայն որ մտանէ ի բերան՝ յորովայն երթայ եւ արտաքս ելանէ։

[1] Ոմանք, ստիպեաց Յիսուս
[2] Բազումք, էր ի մէջ ծովուն՝
[3] Ոմանք, ջուրցն, գալ
[4] Ոմանք, պատուիրեաց եւ ասէ
[5] Յոմանս պակասէ
[6] Ոմանք, մերձ է առ իս բերանով իւրով, եւ շրթամբք
[7] Ոմանք, են առաջնորդք կոյրք
[8] Ի բազումս պակասէ

18 Իսկ որ երանէ ի բերանոյ՝ ի սրտէ անտի
19 գայ, եւ այն պղծէ զմարդ։ Զի ի սրտէ
եւանէն խորհուրդք չարք, սպանու-
թիւնք, չնութիւնք, պոռնկութիւնք,
գողութիւնք, սուտ վկայութիւնք,
20 հայհոյութիւնք։ Այս ամենայն է որ
պղծէ զմարդ, այլ անլուայ ձեռօք ու-
տել ոչ պղծէ զմարդ։
21 ԵՋ. Եւ ելեալ անտի Յիսուսի գնաց
22 ի կողմանս Տիւրոսի եւ Սիդովնի։ Եւ
ահա կին մի Քանանացի ի սահմանաց
անտի նոցա ելեալ՝ աղաղակէր եւ
ասէր, Ողորմեաց ինձ, Տէր, որդի
Դաւթի, դուստր իմ չարաչար այսա-
23 հարի։ Եւ նա ոչ եաւ նմա պատասխա-
նի. եւ մատուցեալ աշակերտքն նորա՝
աղաչէին զնա եւ ասէին, Արձակեա
24 զնա զի ապաղակէ զետ մեր։ Նա պա-
տասխանի եաւ եւ ասէ, Ոչ ուրուք ա-
ռաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորու-
25 սեալս տանն Իսրայելի։ Եւ նա մա-
տուցեալ երկիր պագանէր նմա եւ ա-
26 սէր, Տէր, օգնեա ինձ։ Պատասխանի
ետ նմա եւ ասէ, Ոչ է բարւոք առնուլ
27 զհաց մանկանց եւ արկանել շանց։ Եւ
նա ասէ, Այո, Տէր, քանզի եւ շունք
կերակրին ի փշրանաց անկելոց ի սե-
28 ղանոյ տեառն իւրեանց։ Յայնժամ
պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ,
Ով կին դու, մեծ են հաւատք քո, եւ
ղիցի քեզ որպէս եւ կամիս. եւ բժըշ-
կեցաւ դուստր նորա ի նմին ժամու։
29 ԵԹ. Եւ գնացեալ անտի Յիսուսի,
եկն ի ծովեզրն Գալիլեացւոց, եւ ելեալ
30 ի լեառն նստէր անդ։ Մատեան առ նա
ժողովուրդք բազումք որ ունէին ընդ
իւրեանս կաղս, կոյրս, համրս, մաս-
կողմանիս եւ այլս բազումս. եւ բռ-
նկեցին զնոսա առ ոտս [1]նորա, եւ բժըշ-
31 կեաց զնոսա. Մինչեւ զարմանալ ժո-
ղովրդոցն որ տեսանէին, զի համրք
խօսէին, կաղք գնային, մաքսոլմանիք
բժշկէին, կոյրք տեսանէին. եւ փա-
ռաւոր առնէին զԱստուած Իսրայելի։
32 Եւ կոչեցեալ առ ինքն Յիսուսի զա-
շակերտսն ասէ, Գթամ ի ժողովրդի,
զի արդ երիք աւուրք են զի կան առ
իս, եւ ոչ ունին ինչ ուտելոյն. եւ
արձակել զդոսա նօթիս չկամիմ, զուցէ
33 նքթիցեն ճանապարհին։ Ասեն նմա
աշակերտքն, Իսկ արդ մուր յանապա-
տի աստ ուստի՝ իցէ այնչափ հաց՝ մին
յագեցուցանել զայսչափ ժողովուրդ։
34 Եւ ասէ ցնոսա Յիսուս, Քանի՞ նկա-
նակ ունիք. եւ նոքա ասեն, Եւթն
35 եւ սակաւ ձկունս։ Եւ հրամայեաց
ժողովրդեանն բազմել ի վերայ գետնոյ։
36 Եւ առեալ զեւթն նկանակն եւ զձո-
կունսն՝ գոհացաւ եւ եւեկ եւ եաս զա-
չակերտսն, եւ նոքա՝ ժողովրդեանն։
37 Կերան ամենեքեան եւ յագեցան. եւ
բարձին զնշխարս կոտորոցն եւթն
զամբիւղ լի։ Եւ որք կերանն՝ էին
[2]իրրեւ արք չորք հազարք, Թող կիս-
39 նայս եւ զմանկիսն։ Իրրեւ արձակեաց
զժողովուրդսն, ել ինաւ եւ եկն ի
սահմանս Մագդաղեայ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ մատուցեալ փարիսեցիքն եւ սա-
դուկեցիք, փորձելով խնդրէին ի նմա-
2 նէ նշան յերկնից ցուցանել նոցա։ Նա
պատասխանի ետ եւ ասէ ցնոսա,[3]
3 Ազդ չար եւ չնացող նշան խնդրէ, եւ
նշան մի՛ տացի նմա, բայց նշանն
Յովնանու մարգարէի. եւ եթող զնո-
սա եւ գնաց։
5 Գնացին եւ աշակերտքն յայնկոյս,
6 եւ մոռացան առնուլ հաց։ Ասէ ցնոսա
Յիսուս, Տեսէք եւ զգույշ լերուք ի
խմորոյ սադուկեցւոցն եւ փարիսեց-
7 ւոց։ Նոքա խորհէին ընդ միմեանս
8 եւ ասէին թէ Հաց ոչ բարձաք։ Գիտաց
Յիսուս եւ ասէ. Զի՞ խորհիք ի միտս
ձեր, Թերահաւատք, եթէ հաց ոչ ու-
9 նիք։ Տակաւին չիմանա՞ք եւ ո՞չ յիշէք
զհինգ նկանակն ի հինգ հազարսն, եւ
10 քանի՞ սակաւի բարձէք. Եւ ո՞չ զեւթն
նկանակն ի չորս հազարսն, եւ քանի՞
11 զամբիւղս բարձէք։ Արդ զիա՞րդ ոչ ի-
մանայք եթէ ոչ վասն հացի ասացի
ձեզ զդոյշ լինել ի խմորոյ փարիսե-
12 ցւոցն եւ սադուկեցւոց։ Յայնժամ
ի միտս առին, եթէ ոչ ասաց զդուշ
չանալ [4]ի խմորոյ, այլ՝ յաղանդոյ

[1]Որում, Յիսուսի [2]Յոմանս պակասի

[3]Բազումք չտեսեալ, Յորժամ երեկոյ լինի, ասէք թէ Ջեր լինելոց է, քանզի կարմրացան երկինք. (3) Եւ ընդ այգ՝ Այսօր ձմեռն, քանզի կարմրացան խոժոռեցան երկինք. զերեսս երկնից գիտէք քննել, եւ զնշանս ժամանակաց չկարէք։
[4]Որում, ի խմորոյ հացի

վարիսեցւոցն եւ սադուկեցւոց։
13 Զկ. Եւ եղեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպոսի կեսարացւոյ՝ հարցանէր զաշակերտան եւ ասէր, Զո՞ ոք ասեն մարդիկն լի՛նել Որդի մարդոյ։
14 Եւ նոքա ասեն, Ոմանք զՅովհաննէս մկրտիչ, եւ այլք՝ զԵղիա, եւ կէսք՝ զերեմիա կամ զմի ոք ի մարգարէիցն։
15 Ասէ ցնոսա, Իսկ դուք զո՞ ոք ասէք
16 զինէն լի՛նել։ Պատասխանի եւ Սիմոն Պետրոս եւ ասէ, Դու ես Քրիս-
17 տոս, Որդի Աստուծոյ կենդանւոյ։ Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնա, Երանի քեզ, Սիմովն, որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց
18 քեզ, այլ՝ Հայր իմ որ յերկինս է։ Եւ ես քեզ ասեմ, զի Դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, եւ դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահա-
19 րեսցեն։ Եւ տայ քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակեսցես յերկրի՝
20 եղիցի արձակեալ յերկինս։ Յայնժամ պատուիրեաց աշակերտացն, զի մի՛ ումեք ասասցեն լի՛նել նա է [1]Քրիստոս։
21 Յայնմ հետէ սկսաւ Յիսուս յուցանել աշակերտացն լի՛նել պարտ է նմա երթալ Երուսաղէմ, եւ բազում չարչարանս կրել ի քահանայապետէ եւ ի գրոց եւ ի ծերոց [2]ժողովրդեանն
22 եւ սպանանել, եւ յերրորդ աւուր յառնել։ Եւ առեալ զնա Պետրոս՝ սկսաւ կազել ընդ նմա եւ ասել, Տէր, մի՛ եղիցի քեզ այդ։
23 Եւ նա դարձեալ ի Պետրոս՝ ասէ, Երթ իմոյ իմ, Սատանայ, զայրակղութիւն իմ ես. զի ոչ խորհիս զԱստուծոյն, այլ՝ զմարդկան։
24 Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտան իւր, Եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրացցի զանձն եւ առցէ զխաչ իւր եւ
25 եկեսցէ զկնի իմ։ Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա. եւ որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝
26 գտցէ զնա։ Զի՞նչ օգտիցի մարդ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի եւ զանձն իւր տուժեսցի. կամ զի՞նչ տացէ մարդ
27 փրկանս ընդ անձին իւրոյ։ Զի գայցէ Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ հան-

դերձ հրեշտակօք իւրովք, եւ յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործոց
28 իւր։ Ամէն ասեմ ձեզ, զի իցեն ոմանք ի սոցանէ որք աստ կան, որք ոչ ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով։

Գլ. ԺԷ

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս զեղբայր նորա, եւ հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձին։
2 Եւ այլակերպեցաւ առաջի նոցա, եւ լուսաւորեցան երեսք նորա իբրեւ զարեգական, եւ հանդերձք նորա եղեն
3 սպիտակ իբրեւ զլոյս։ Եւ ահա երեւեցան նոցա Մովսէս եւ Եղիա որ խո-
4 սէին ընդ նմա։ Պատասխանի եւ Պետրոս եւ ասէ ցՅիսուս, Տէր, բարւոք է մեզ աստ լինել. եթէ կամիս, արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ եւ մի
5 Մովսիսի եւ մի Եղիայի։ Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղեւ ի վերայ նոցա. ձայն եղեւ յամպոյն եւ ասէ, Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, զմա լուարուք։
6 Իբրեւ լուան աշակերտքն, անկան ի վերայ երեսաց իւրեանց եւ երկեան
7 յոյժ։ Եւ մատուցեալ Յիսուս բռնեն ետար զնոսացանէ եւ ասէ, Յոտն կացէք
8 եւ մի՛ երկնչիք։ Ամպարձին զաչս իւրեանց եւ ոչ զոք տեսին՝ բայց միայն զՅիսուս։
9 Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա Յիսուս եւ ասէ, Մի՛ ումեք ասիցէք զտեսիլդ, մինչեւ
10 Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ։ Հարցին զնա աշակերտքն եւ ասեն, Զիա՞րդ գրիքն ասեն եթէ Եղիայի նախ պարտ
11 է գալ։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա, Եղիա գայ եւ հաստա-
12 տեսցէ զամենեսեան։ Այլ ասեմ ձեզ, զի Եղիա եկեալ իսկ է. եւ ոչ ծանեան զնա, այլ արարին ընդ նա զոր ինչ կամեցան, նոյնպէս եւ Որդի մարդոյ
13 չարչարելոց է ի նոցանէ։ Յայնժամ ի միտ առին աշակերտքն թէ վասն Յովհաննու մկրտչի ասաց ցնոսա։
14 ԺԶ. Եւ իբրեւ եկին ի ժողովուրդն, մատեաւ այր մի, ի ծունր իջանէր եւ ասէր, Տէր, ողորմեաց որդւոյ իմոմ,

[1] Որում։ Յիսուս Քրիստոս [2] Ի բազմաց պակաս

դի լուանոտի եւ չարաչար հիւանդա-
նայ, բազում անգամ անկանի ի հուր
15 եւ [1]ի ջուր։ Եւ մատուցի զնա
աշակերտացն քոց, եւ ոչ կարացին
16 բժշկել։ Պատասխանի ես Յիսուս եւ
ասէ, Ով ազգ անհաւատ եւ խեր,
մինչեւ ե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչեւ
ե՞րբ անհանգիստ ձեզ։ [2]Բեր զնա առ իս։
17 Եւ սաստեաց ի նա Յիսուս, եւ ել
ի նմանէ դեւն, եւ բժշկեցաւ մանուկն
18 ի ժամէն յայնմանէ։ Յայնժամ մատեան
աշակերտքն առանձինն եւ ասեն ցՅի-
սուս, Մի՛ք ընդէ՞ր ոչ կարացաք հանել
19 զնա։ Եւ նա ասէ ցնոսա, Վասն խե-
ղահաւատութեան ձերոյ. ամէն ասեմ
ձեզ, եթէ ունիցիք հաւատս քան զհատ
մանանխոյ, ասացէ՛ք լերինս այսմիկ,
փոխեաց ասի անդր, եւ փոխեսցի.
20 եւ ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ։ Բայց
այս ազգ ոչ ելանէ, եթէ ոչ ազօթիւք
եւ պահովք։
21 ԶԳ. Եւ մինչդեռ չրջէին նոքա ի Գա-
լիլեա, ասէ ցնոսա Յիսուս, Մատնելոց
22 է Որդի մարդոյ ի ձեռս մարդկան, եւ
սպանցեն զնա, եւ յերրորդ աւուր յա-
րիցէ։ Եւ արամիացան յոյժ։
23 Իրրեւ եկին նոքա ի Կափառնայում,
մատեան որք զերկդրամիանն պահան-
ջէին առ Պետրոս, եւ ասեն, Վարդա-
պետն ձեր ո՞չ տայ զերկդրամիանն։ Եւ
24 ասէ, Այո։ Եւ իրրեւ եմուտ ի տուն,
յառաջեաց քան զնա Յիսուս եւ ասէ,
Զիա՞րդ թուի քեզ, Սիմովն, Թագա-
ւորք [3]զոգւոց յումմէ առնուն զհարկս
կամ զդաւան, յորդւոցն իւրեանց՝ թէ
25 յօտարաց։ Եւ իրրեւ ասաց թէ Յօտա-
րաց, ասէ ցնա Յիսուս, Ապա ուրեմն
26 ազատ են որդիքն։ Բայց զի մի՛ գայ-
թակղեցուսցուք զնոսա, երթ ի ծով
եւ ընկեա կարթ, եւ զառաջին ձուկնն
որ ելանիցէ՛ առ եւ բաց զբերան նորա,
եւ գտանիցես սաւեր. եւ զայն առեալ
տացես նոցա ընդ իմ եւ ընդ քո։

ԳԼ. ԺԸ

1 Յայնմ աւուր մատեան աշակերտքն
առ Յիսուս եւ ասեն, Ո՞վ իցէ ի մէնջ
2 մեծ յարքայութեան երկնից։ Եւ կոչ-

[1]Բազում անգամ
[2]Ցնա, ածէք [3]Ցնա, երկրի

եաց առ ինքն Յիսուս մանուկ մի,
3 կացոյց զնա ի մէջ նոցա, եւ ասէ,
Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ դարձջիք
եւ լինիջիք իբրեւ զմանկան, ոչ մատ-
4 նիցէք յարքայութիւնն երկնից։ Արդ
որ խոնարհեցուցանիցէ զանձն իւրեւ
զմանուկս զայս՝ նա է մեծ յարքայու-
5 թեան երկնից։ Եւ որ զոր ընկալցի
մանուկ մի այսպիսի յանուն իմ՝ զիս
6 ընդունի։ Եւ որ զոր գայթակղեցուցէ
զմի ի փոքրիկանցս յայսցանէ զիս հա-
ւատացելոյ՝ լաւ է նմա եթէ կախիցի
երկան իշոյ ընդ պարանոց նորա, եւ
7 ընկղմիցի ի խորս ծովու։ Վա՛յ աչ-
խարհի ի գայթակղութեանց. հարկ է
գայ գայթակղութիւնս, բայց վա՛յ մար-
դոյն այնմիկ որով ձեռն գայթ գայ-
8 թակղութիւն։ Եթէ ձեռն քո կամ ոտն
գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա
եւ ընկեա ի քէն. լաւ իցէ քեզ միա-
ձեռանի կամ կաղ մատանել ի կեանս,
քան երկուս ձեռս եւ երկուս ոտս
ունել, եւ անկանել ի հուրն յաւիտե-
9 նական։ Եւ եթէ աչն քո գայթակղե-
ցուցանէ զքեզ, խլեա զնա եւ ընկեա
ի քէն. լաւ իցէ քեզ միականի մատանել
ի կեանս, քան երկուս աչս ունել եւ
անկանել ի գեհեն հրոյն։
10 ԶԴ. Զգոյշ լերուք, մի՛ արհամարհի-
ցէք զմի ի փոքրիկանցս յայսցանէ. ասեմ
ձեզ, զի հրեշտակք նոցա յերկինս հա-
նապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ
11 որ յերկինս է։ Զի եկն Որդի մարդոյ
կեցուցանել զկորուսեալն։
12 Զիա՞րդ թուի ձեզ. եթէ լինիցի
մարդոյ հարիւր ոչխար եւ մոլորիցի
մի ի նոցանէ, ո՞չ թողուցու զինիսունն
եւ զինն ոչխարն ի լերինս, եւ երթիւ
13 գի խնդրիցէ զմոլորեալն։ Եւ եթէ լի-
նիցի գտանել զնա, ամէն ասեմ ձեզ,
զի ուրախ լինի ի վերայ նորա առա-
ւել քան ի վերայ իննսունն եւ իննից-
14 որ չիցեն մոլորեալ։ Այսպէս ոչ են
կամք առաջի Հօր [5]իմոյ որ յերկինս
է, եթէ կորիցէ մի ի փոքրիկանցս յայս-
ցանէ։
15 Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ
յանդիմանեա զնա, յորժամ դու եւ նա
միայն իցէք. եթէ լուիցէ քեզ, չահե-
16 ցար զեղբայրն քո։ Ապա թէ ոչ լուիցէ

[4]Ի ցաւն գ-ւ-ե [5]Որում, ձերոյ

քեզ, առ ընդ քեզ մեւս եւս կամ եր-
կուս, զի ի բերանոյ երկուց եւ երից
վկայից հաստատեսցի ամենայն բան։
17 Իսկ եթէ եւ նոցա ոչ լսիցէ, ասասցիր
[1]եկեղեցւոյ. ապա թէ եւ եկեղեցւոյն
ոչ լսիցէ, եղիցի քեզ իբրեւ զհեթա-
նոսն եւ զմաքսաւոր։
18 Ամէն ասեմ ձեզ, Զոր կապիցէք
յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, եւ
զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի ար-
19 ձակեալ յերկինս։ Դարձեալ ասեմ ձեզ,
եթէ երկու ի ձէնջ միաբանիցեն յերկրի
վասն ամենայն իրաց, զինչ եւ խընդ-
րեսցեն՝ եղիցի նոցա ի Հօրէ իմմէ որ
20 յերկինսն է։ Զի ուր իցեն երկու կամ
երիք ժողովեալ յանուն իմ, անդ եմ
ես ի մէջ նոցա։
21 Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս
եւ ասէ, Տէր, քանի՞ցս անգամ իմ
մեղիցէ ինձ եղբայր իմ եւ թողից նմա,
22 մինչեւ յե՞ւթն անգամ։ Ասէ ցնա Յի-
սուս, Ոչ ասեմ քեզ իմ մինչեւ յեւթն
անգամ, այլ մինչեւ յեւթանասնակին
23 եւթն։ Վասն այսորիկ նմանեցաւ ար-
քայութիւն երկնից առն թագաւորի
որ կամեցաւ համար առնուլ ի մէջ ծա-
24 ռայից իւրոց։ Եւ իրրեւ սկսաւ առ-
նուլ, մատուցաւ առ նա պարտապան
25 մի բեւր դահեկանաց։ Իրրեւ ոչ ունէր
հատուցանել, հրամայեաց տէր նորա
ծախել զնա եւ զկին նորա եւ զորդիս եւ զամենայն որ ինչ եւ ու-
26 նիցի, եւ հատուցանել։ Եւ անկեալ
ծառայն երկիր պագանէր նմա եւ ասէր,
[2]Երկայնամիտ լեր առ իս, եւ զամե-
27 նայն հատուցից քեզ։ Գթացեալ տէր
ծառային այնորիկ արձակեաց զնա,
28 եւ զփոխն եթող նմա։ Եւ ելեալ ծա-
ռայն այն եգիտ զմի ի ծառայակցաց
իւրոց որ պարտէր նմա հարեւր պա-
հնկան, եւ կալեալ զնա խեղդէր եւ
29 ասէր, Հատո ինձ զոր պարտիս։ Արդ
անկեալ ծառայակիցն առ ոտս նորա,
աղաչէր զնա եւ ասէր, Երկայնամիտ
30 լեր առ իս, եւ [3]հատուցից քեզ։ Եւ նա
ոչ կամէր, այլ չոգաւ, արկ զնա ի
բանտ մինչեւ հատուսցէ զպարտսն։
31 Իրրեւ տեսին ծառայակիցքն նորա որ
ինչ եղեւն՝ տրտմեցան յոյժ, եւ եկեալ
յայտնին տեառն իւրեանց զամենայն որ
32 ինչ եղեւն։ Յայնժամ կոչեաց զնա
տէրն իւր եւ ասէ, Ծառայ չար, զա-
մենայն զպարտսն թողի քեզ, վասն զի
33 աղաչեցեր զիս։ Իսկ արդ ոչ էր պարտ
եւ քեզ ողորմել ծառայակցին քում,
34 որպէս եւ ես քեզ ողորմեցայ։ Եւ բար-
կացեալ տէրն նորա՝ մատնեաց զնա
դահճից, մինչեւ հատուսցէ զամենայն
35 զպարտսն։ Նոյնպէս եւ Հայր իմ որ
յերկինսն է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թո-
ղուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում
ի սրտից ձերոց զյանցանս նոցա։

ԳԼ. ԺԹ

1 ՁԵ. Եւ եղեւ իրրեւ կատարեաց Յի-
սուս զբանս զայսոսիկ, փոխեցաւ ի
Գալիլէէ եւ եկն ի սահմանս Հրէաս-
2 տանի յայնկոյս Յորդանանու։ Եւ զբ-
նացին զնա նորա ժողովուրդք բա-
3 զումք, եւ բժշկեաց զնոսա անդ։ Եւ
մատուցեալ առ նա փարիսեցիքն փար-
ձակին զնա, եւ ասէին եթէ արժանի
իցէ ումեք արձակել զկին իւր ըստ
4 ամենայն պատուճառ։ Պատասխանի նա
նոցա եւ ասէ, Ձիւղէ՞ ընթերցեալ ձեր
թէ՝ որ հաստատեացն ի սկզբանէ՝ արու
5 եւ էգ արար զնոսա, եւ ասէ, Վասն
այսորիկ թողցէ այր զհայր եւ զմայր
եւ երթիցէ զնոսա կնոջ իւրոյ, եւ ե-
6 զիցին երկոքեան ի մարմին մի։ Ապա
ուրեմն ոչ են երկու, այլ՝ մի մարմին.
արդ զոր Աստուած զուգեաց՝ մարդ
7 մի՛ մեկնեսցէ։ Ասեն ցնա, Իսկ Մով-
սէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ տալ
8 թուղթ մեկնելոյ եւ արձակել։ Ասէ
ցնոսա, Մովսէս վասն խստասրտու-
թեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել
զկանայս ձեր, այլ ի սկզբանէ ոչ եղեւ
9 այնպէս։ Բայց ասեմ ձեզ, զի Ամենայն
որ արձակէ զկին իւր, եւ ոչ վասն
պոռնկութեան, եւ առնիցէ այլ՝ շնայ.
10 եւ որ զարձակեալն առնէ՝ շնայ։ Ասեն
ցնա աշակերտքն իւր, եթէ այսպէս
11 է պատճառ մարդոյ ընդ կնոջ, լաւ է
չառնուլ։ Եւ նա ասէ
ցնոսա, Ոչ ամենեքեան զբաւական են
12 այդմ բանի, այլ որոց տուեալ է։ Զի են
ներքինիք որ յորովայնէ մօր իւրեանց

[1] Յոյն, եկեղեցւոյն
[2] Ոմանք, Տէր, երկայնամիտ

[3] Ոմանք, զամենայն հատուցից

ծնան այնպէս. եւ են ներքինիք որ
ի մարդկանէ եղեն ներքինիք. եւ են
ներքինիք որ զանձինս իւրեանց ա-
րարին ներքինիս վասն արքայու[1]թեան
երկնից. որ կարող է տանել՝ տարցի։
13 Յայնժամ մատուցան առ նա մանկունք,
զի ձեռն դիցէ ի վերայ նոցա եւ ա-
ղօթս արասցէ. եւ աշակերտքն նզով
14 սաստէին նոցա։ Իսկ Յիսուս, Թոյլ
տուք մանկունսդ եւ մի՛ արգելուք
զդոսա գալ առ իս, զի այպիսեացդ է
15 արքայու[1]թիւն երկնից։ Եւ եդեալ ձեռս
ի վերայ նոցա՝ գնաց անտի։
16 ՋԹ. Եւ ահա մատուցեալ ոմն առ
նա՝ ասէ, Վարդապետ բարի, զի՞նչ բա-
րի գործեցից զի ընդունիցիմ զկեանն
17 յաւիտենական։ Եւ նա ասէ ցնա,
Ձի՞ [2]հարցանես զիս զբարւոյ, մի է
բարի՞. եթէ կամիս [2]ի կեանն յաւի-
տենական մտանել՝, պահեա զպատ-
18 ուիրանսն։ Ասէ ցնա, Ձո՞ր. ասէ
ցնա Յիսուս, ՁՄի՛ սպանանիցես, եւ
19 Մի՛ չնար, եւ Մի՛ գողանար, Եւ Մի՛
սուտ վկայեր, Պատուեա զհայր քո եւ
զմայր, եւ Սիրեսցես զընկեր քո իբրեւ
20 զանձն քո։ Ասէ ցնա պատանին, Զայդ
ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ.
21 արդ ի՞ ինչ պակաս իցեմ։ Ասէ ցնա
Յիսուս, Եթէ կամիս կատարեալ լինել,
երթ վաճառեա զինչս քո եւ տուր
աղքատաց. եւ ունիցիս զանձս յեր-
22 կինս, եւ եկ զկնի իմ։ Իբրեւ լուաւ
պատանին զբանն, գնաց արամեալ, զի
23 ունէր ստացուածս բազումս։ Ասէ Յի-
սուս ցաշակերտսն, Ամէն ասեմ ձեզ
զի գժուարաւ մտցէ մեծատուն յար-
24 քայու[1]թիւն երկնից։ Դարձեալ ասեմ
ձեզ, Դիւրին է մալխոյ մտանել ընդ
ծակ ասղան, քան մեծատան յար-
25 քայու[1]թիւն Աստուծոյ մտանել։ Իբրեւ
լուան աշակերտքն, զարմացան յոյժ
եւ ասեն, Իսկ ո՞ կարիցէ ապրել։
26 Հայեցաւ ի նոսա Յիսուս եւ ասէ, Ա-
յս ի մարդկանէ այդ անկար է, այլ ա-
ստուածոյ՝ ամենայն ինչ զօրաւոր։
27 Յայնժամ պատասխանի Պետրոս
եւ ասէ ցնա, Ահաւասիկ մեք թողաք
զամենայն եւ եկաք զկնի քո, արդ
28 զի՞նչ լինիցի մեզ։ Ասէ ցնոսա Յիսուս,
Ամէն ասեմ ձեզ զի դուք որ եկիք
զկնի իմ, [3]ի միւսանգամ ծագումնեան՝,
յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ
փառաց իւրոց, նստջիք եւ դուք յեր-
կոտասան աթոռս՝ դատել զերկոտասան
29 ազգն Իսրայելի։ Եւ ամենայն որ ո-
ք եթող զտուն կամ զեղբարս կամ զքոյր
կամ զհայր կամ զմայր կամ զկին կամ
զորդիս կամ զագարակս վասն ա-
նուան իմոյ՝ հարիւրապատիկ առցէ, եւ
զկեանսն յաւիտենականս ժառանգեսց-
30 ցէ։ Բազումք եղիցին առաջինք ե-
տինք, եւ յետինք՝ առաջինք։

Գլ. Ի

1 Ձ[4]անդի նման է արքայու[1]թիւն երկնից
առն տանուտեառն, որ ել ընդ առա-
ւօտս ի վարձու առնել մշակս յայգի
2 իւր։ Եւ արկ վարձս մշակացն առաւօտն
դահեկան, եւ առաքեաց զնոսա յայգի
3 իւր։ Եւ ելեալ վերըորդ ժամու՝ եահս
այլս զի կային դատարկք ի հրապա-
4 րակս։ Ասէ եւ ցնոսա, Երթայք եւ
դուք յայգի իմ, եւ որ ինչ արժան
5 իցէ՝ տացից ձեզ։ Գնացին եւ նոքա. եւ
դարձեալ ելեալ զվից ժամու եւ զինն
6 ժամու՝ արար նոյնպէս։ Եւ զմեա-
սաներորդ ժամու ելեալ եգիտ այլս
զի կային դատարկք. ասէ եւ ցնոսա,
Ընդէ՞ր կայք աստ զօրս ցկերկ գա-
7 տարկք։ Ասեն ցնա, Ձի ոչ ոք կալաւ
զմեզ ի վարձու. ասէ ցնոսա, Երթայք
եւ դուք յայգին, եւ որ ինչ արժան է՝
8 առնուցուք։ Եւ իրրեւ երեկոյ եղեւ,
ասէ տէր այգւոյն ցգաւազապետ իւր,
կոչեա զմշակսն եւ տուր նոցա վարձս՝
սկսեալ ի յետնոցն մինչեւ ցառաջինսն։
9 Իրրեւ եկին որք զմեսանասներորդ ժա-
10 մուն՝ առին մէն մի դահեկան։ Եկեալ
եւ առաջինքն՝ համարէին թէ աւելի
առնուցուն, եւ առին մէն մի դահե-
11 կան եւ նոքա։ Իրրեւ առին, արտանջէ-
ին զտանուտեառնէն եւ ասէին թէ
12 Դարձ յետինքս մի ժամ զործեցին,
եւ հաւասարակորպս մեզ արարեր զդոսա,
որ զծանրութիւնն աւուրն բարձաք եւ
13 զոտիմ։ Նա պատասխանի եւ մեսի ի
նոցանէ եւ ասէ, Ընկեր, չգրկեմ
զքեզ, ո՞չ դահեկանի մերմէ սակ արկեր

---

[1] Որ՛՛՛, ասես զիս բարի, չիք ոք բարի բայց
մի, Աստուած [2] Յ՛՛՛, ի կեանս մտանել [3] Յ՛՛՛, ի վերստին ծննդեան

14 ընդ իս. Աւ զքոյդ եւ երթ, եթէ
կամիմ յետնոցս տալ՝ որպէս եւ քեզ։
15 Եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմոս
առնել զինչ եւ կամիմ. կամ թէ ակն
16 քո չա՞ր է, զի ես առատ եմ։ Այսպէս
եղիցին յետինք առաջինք, եւ առա-
ջինք՝ յետինք. զի բազումք են կոչե-
եալք, եւ սակաւք են ընտրեալք։
17 Զի. Իբրեւ ելանէր Յիսուս յերուսա-
ղէմ, առ [1]զերկոտասանսն առանձինն,
18 եւ ի ճանապարհին ասէ ցնոսա, Ահա
ասեմ եւ ելանեմք յերուսաղէմ, եւ Որդի
մարդոյ մատնեսցի քահանայապետին
եւ գպրաց, եւ դատապարտեսցեն զնա
19 ի մահ. Եւ մատնեսցեն զնա հեթանո-
սաց՝ այպանել եւ հարկանել եւ ի խաչ
հանել, եւ յերիր աւուր յարիցէ։
20 Յայնժամ մատեաւ առ նա մայր
որդւոցն Զերեդեայ որդւովք իւրովք
հանդերձ, երկիր պագանէր եւ խնդրէր
21 ինչ ի նմանէ։ Եւ նա ասէ ցնա, Զի՞նչ
կամիս. ասէ ցնա, Ասա պի նոցայն
սոքա երկու որդիքս իմ, մի ընդ աջմէ
քումմէ եւ մի ընդ ահեկէ, յարքայու-
22 թեան քումմ։ Պատասխանի նա Յիսուս
եւ ասէ, Ոչ գիտէք զինչ խնդրէք.
կարէ՞ք ըմպել զբաժակն զոր ես ըմ-
պելոց եմ. [2]կամ զմկրտութիւնն զոր
ես մկրտելոց եմ՝ մկրտել." ասեն ցնա,
23 կարող եմք։ Ասէ ցնոսա [2]Յիսուս,
Զբաժակն իմ ըմպիցէք, [2]եւ զմկրտու-
թիւնն զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիս-
ջիք," բայց [3]նստուցանել ընդ աջմէ
եւ ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ, այլ
24 որոց [4]տուեալ է ի Հօրէ իմմէ։ Եւ
լուեալ տասանցն՝ բարկացան ի վերայ
25 երկուցն եղբարց։ Յիսուս կոչեաց զնո-
սա առ ինքն եւ ասէ, Գիտէք զի իշ-
խանք ազգաց տիրեն նոցա, եւ մեծա-
26 մեծքն իշխեն նոցա։ Ոչ այնպէս իցէ
եւ ի ձերում միջի. այլ որ կամիցի
ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշ-
27 տօնեայ. Եւ որ կամիցի ի ձէնջ առա-
28 ջին լինել՝ եղիցի ձեր ծառայ։ Որպէս
Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ,
այլ պաշտել, եւ տալ զանձն իւր
փրկանս վասն բազմաց։
29 ԵԿ. Եւ յելանելն նոցա յերիքովէ,
զնացին զետ նորա ժողովուրդք բա-
30 զումք։ Եւ ահա կոյրք երկու նստէին
առ ճանապարհաւն. իբրեւ լուան թէ
Յիսուս անցանէ, աղաղակեցին եւ
ասեն, Ողորմեաց մեզ, [5]Յիսուս, Որդի
31 Դաւթի։ Եւ ամբոխն սաստեաց նոցա
զի լռեսցեն. եւ նոքա եւս առաւել ա-
ղաղակէին եւ ասէին, Տէր, ողորմեաց
32 մեզ, Որդի Դաւթի։ Զատեղի առ Յի-
սուս, կոչեաց զնոսա եւ ասէ, Զի՞նչ
33 կամիք զի արարից ձեզ։ Ասեն ցնա,
34 Տէր, զի բացցին աչք մեր։ Եւ գթա-
ցեալ Յիսուս մերձեցաւ յաչս նոցա,
եւ վաղվաղակի տեսին եւ գնացին
զետ նորա։

ԳԼ. ԻԱ

1 Իբրեւ մօտ եղեն յերուսաղէմ եւ եկին
ի Բեթփագէ մերձ ի լեառն Ձիթենեաց,
յայնժամ Յիսուս արձակեաց երկուս
2 յաչակերտացն իւրոց։ Եւ ասէ ցնոսա,
Երթայք ի գիւղ որ առաջի ձեր է, եւ
անդէն գտանիցէք էշ կապեալ եւ յա-
ւանակ ընդ նմին. լուծէք, ածէք ինձ։
3 Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջիք
եթէ Տեառն իւրեանց պիտոյ են. եւ
4 վաղվաղակի առաքեսցէ զնոսա։ Բայց
այս ամենայն եղեւ զի լցցի բան մար-
5 գարէին որ ասէ, Ասացէք զտեր Սի-
ոնի, Ահա թագաւոր քո պայ քեզ հեզ,
եւ հեծեալ յէշ եւ յաւանակի իշոյ։
6 Գնացին աչակերտքն, եւ արարին որ-
7 պէս հրամայեաց նոցա Յիսուս։ Եւ
ածին զէշն եւ զլաւանակն, եւ արկին
զնոքօք [6]ձորձս. եւ նստաւ ի վերայ
8 նոցա։ Եւ բազում ժողովուրդք տա-
բածեցին զհանդերձս իւրեանց ի ճա-
նապարհին, եւ այլք հատանէին ոստս
ի ծառոց եւ տարածանէին ի ճանա-
9 պարհին։ Եւ ժողովուրդքն որ առաջին
եւ զկնի երթային՝ աղաղակէին եւ ա-
սէին, [7]Օրհնութիւն Որդւոյ Դաւթի,
օրհնեալ որ գայ յանուն Տեառն. [7]Օրհ-
նութիւն ի բարձունս։
10 Եւ ի մտանելն նորա յերուսաղէմ,
դղրդեցաւ քաղաքն ամենայն, եւ ասէ,
11 Ո՞վ իցէ սա։ Եւ ժողովուրդքն ասեն,
Սա է մարգարէն Յիսուս որ ի Նազա-
րեթէ Գալիլեացւոց։

---

[1] Բ–ղ–մ, զերկոտասան աշակերտսն
[2] Յ–ն–ա–ս–ե–ւ [3] Յ–ն–ն, նստել
[4] Յ–ա–ն, պատրաստեալ [5] Բ–ղ–մ, Տէր
[6] Ո–ձ–ւ, զձորձս իւրեանց [7] Յ–ն–ն, Ովսաննա

12 Եւ եմուտ Յիսուս [1]ի տաճարն եւ
եհան արտաքս զամենեսեան որ վաճա-
ռէին եւ գնէին ի տաճարի անդ. եւ
զսեղանս հատաւճառացն կործանեաց
13 եւ զաթոռս ազաւնավաճառացն. Եւ
ասէ ցնոսա, Գրեալ է, Տուն իմ տուն
ազօթից կոչեցի, եւ դուք արարէք
զդա այրս աւազակաց։
14 Եւ մատեան առ նա կոյրք եւ կաղք
15 ի տաճարին, եւ բժշկեաց զնոսա։ Իրրեւ
տեսին քահանայապետքն եւ գպիրք
զքաջութիւնսն զոր արար, եւ զմանկտին
որ աղաղակէին ի տաճարին եւ ասէին,
[2]Օրհնութիւն Որդւոյ Դաւթի, բար-
16 կացան. Եւ ասեն ցնա, Լսե՞ս զինչ
ասեն դոքա. ասէ ցնոսա Յիսուս, Այո,
չիցէ ընթերցեալ ձեր թէ ի բերանոց
տղայոց եւ ծծնդեանցաց կատարեցեր
17 զօրհնութիւն։ Եւ թողեալ զնոսա ել
արտաքոյ քաղաքին ի Բեթանիա, եւ
անդ ազաւ։
18 ԷԹ. Եւ այսուցն իրրեւ դարձաւ անդ-
19 րէն ի քաղաքն, քաղցեաւ։ Եւ տեսեալ թզենի մի ի վերայ ճանապարհին՝ եկն ի նա, եւ ոչինչ եգիտ ի նմա, բայց միայն տերեւս. եւ ասէ ցնա, Մի՛ այսուհետեւ ի քէն պտուղ եղիցի յաւիտեան. եւ ան ժամայն չորացաւ
20 թզենին։ Իրրեւ տեսին աշակերտքն, զարմացան եւ ասեն թէ, Զիա՞րդ վաղ-
21 վաղակի ցամաքեցաւ թզենին։ Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնոսա, Ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցէք հաւատս եւ ոչ երկմտիցէք, ոչ միայն զթզենեացդ առնիցէք, այլ թէպէտ եւ լերինդ ասիցէք, Բարձիր եւ անկիր
22 ի ծով, եղիցի։ Եւ զամենայն ինչ զոր եւ խնդրիցէք յաղօթս հաւատով՝ առնուցուք։
23 Եւ իրրեւ եկն ի տաճարն, մատեան առ նա, մինչդեռ ուսուցանէր, քահանայապետքն եւ ծերք ժողովրդեանն եւ ասեն, Որո՞վ իշխանութիւնսդ առնես զայդ, եւ ո՞վ ետ քեզ զիշխանութիւնս
24 թիւնդ զայդ։ Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնոսա, Հարցից եւ ես զձեզ բան մի, զոր թէ ասիցէք ինձ, եւ ես ձեզ ասացից որո՛վ իշխանութիւնս
25 առնեմ զայս։ Մկրտութիւնն Յովհան-

նու ուստե՞ր էր, յերկնի՞ց թէ ի մարդկանէ. եւ նոքա խորհէին [3]ընդ մի-
26 մեանս՝ եւ ասէին, եթէ ասեմք, Յերկնից, ասէ ցմեզ, Իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. եւ եթէ ասեմք, ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովրդենէն, զի ամենեքին զՅովհաննէս իրրեւ
27 զմարգարէ ունէին։ Պատասխանի եւ ասեն Յիսուսի եւ ասեն, Ոչ գիտեմք. ասէ ցնոսա եւ նա, Եւ ոչ ես ասեմ ձեզ որով իշխանութեամբ առնեմ զայս։
28 Բայց զի՞նչ կարծէ ձեզ. առն միոջ էին երկու որդիք, եւ մատուցեալ առաջինն ասէ, Որդեակ, երթ այսօր,
29 գործեա յայգւոջ։ Նա պատասխանի եւ ասէ, [4]Երթամ, աէր. եւ ոչ
30 չորաւ։ Մատեաւ եւ առ միւսն, եւ ասէ նոյնպէս. Նա պատասխանի եւ ասէ, [5]Ոչ կամիմ. բայց յետոյ զղջացաւ
31 ցայն եւ չորաւ յայգին։ Որդւո՞ց երկոցունց արար զկամս հօրն. ասեն, [6]Յետինն. ասէ ցնոսա Յիսուս, Ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք եւ պոռնիկք յառաջանան քան զձեզ յարքա-
32 յութիւն Աստուծոյ։ Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան, եւ ոչ հաւատացէք նմա. եւ մաքսաւորք եւ պոռնիկք հաւատացին նմա, եւ զայն տեսեալ ոչ ապաշխարէք
33 ապաշխարէք ետքէն՝ հաւատալ նմա։
ԼԳ. Այլ առակ լուարուք. Այր մի էր տանուտէր որ տնկեաց այգի եւ ցանդակ պատեաց զնա, եւ փորեաց ի նմա հնձան եւ շինեաց աշտարակ. եւ ետ զնա գործակս, եւ գնաց ի տար-
34 տաշխարհ։ Իրրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ
35 գործակսն՝ առնուլ զպտուղս նորա։ Եւ կալեալ գործակսն զծառայս նորա, զոմն առին, զոմն սպանին, զոմն քար-
36 կոծեցին։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն, եւ
37 արարին նոցա նոյնպէս։ Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր, եւ ասէ, Թերեւս ամաչեսցեն յորդւոյ տեսի
38 լումն։ Իսկ գործակսն իրրեւ տեսին զորդին, ասեն ընդ միմս, Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա եւ կալցուք

---

[1] Որ՝ն՛, ի տաճարն Աստուծոյ
[2] Յ՝ն՛, Ովսաննա [3] կ՝ն՛, ընդ միմս
[4] Բ՝ը՛, Ոչ կամիմ բայց յետոյ զղջացաւ եւ չորաւ
[5] Բ՝ը՛, Երթամ, աէր. եւ ոչ չորաւ
[6] Բ՝ը՛, Առաջինն

39 զժառանգութիւն սորա։ Եւ առեալ
հանդերձ զնա արտաքոյ քան զայգին եւ
40 սպանին։ Արդ յորժամ եկեսցէ տէր
այգւոյն, ի՞նչ արասցէ մշակացն այ-
41 նոցիկ։ Ասեն ցնա, Զչարսն չարաւ
կորուսցէ, եւ զայգին տացէ այլոց
մշակաց, որք տացեն նմա զպտուղս
42 ի ժամու իւրեանց։ Ասէ ցնոսա Յի-
սուս, Ձիցէ՞ երբեք ընթերցեալ ձեր
ի գիրս, Զվէմն զոր անարգեցին շի-
նողքն, նա եղեւ գլուխ անկեան. ի
Տեառնէ եղեւ այս, եւ է սքանչելի
43 յաչս մեր։ Վասն այսորիկ ասեմ ձեզ,
զի բարձցի ի ձէնջ արքայութիւնն Ա-
ստուծոյ, եւ տացի ազգի որ առնիցէ
44 զպտուղս նորա։ Եւ որ անկցի ի վերայ
վիմիս այսորիկ՝ փշրեսցի, եւ յոյր ո-
45 րոյ անկցի՝ հոսեսցէ զնա։ Իրրեւ լսեան
քահանայապետքն եւ դպիրք՝ եւ փա-
րիսեցիք զառակս նորա, գիտացին թէ
46 վասն նոցա ասաց։ Եւ խնդրէին զնա
ունել, բայց երկեան ի ժողովրդոցն,
քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա։

Գլ. ԻԲ

1 Եւ. Պարձեալ պատասխանի ետ Յի-
2 սուս եւ ասէ ցնոսա առակօք. Նմա-
նեցաւ արքայութիւն երկնից առն թա-
գաւորի որ արար հարսանիս որդւոյ
3 իւրում։ Եւ առաքեաց զծառայս իւր
կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս, եւ
4 ոչ կամեցան գալ։ Դարձեալ առաքեաց
այլ ծառայս եւ ասէ, Ասացէք հրաւի-
րելոցն, Ահաւասիկ զճաշ իմ պատրաս-
տեցի, զուարակք իմ եւ պարարակք
զենեալ են, եւ ամենայն ինչ պատ-
5 րաստ է. եկայք ի հարսանիս։ Եւ
նոքա յուշացեալ գնացին, ոմն՝ յայգի
6 րակ իւր, եւ ոմն՝ ի վաճառ իւր. Եւ
այլք կալան զծառայս նորա, խնա-
7 մանեցին եւ սպանին։ Իսկ թագաւորն
իրրեւ լուաւ, բարկացաւ, եւ առաք-
եաց զզօրս իւր եւ սատակեաց զսպա-
նողսն զայնոսիկ, եւ զքաղաքն նոցա
8 այրեաց։ Յայնժամ ասէ ցծառայս իւր,
Հարսանիքն պատրաստ են, եւ հրա-
9 ւիրեալքն չէին արժանի։ Արդ երթայք
յանցս ճանապարհաց, եւ զորս միան-
գամ գտանիցէք՝ կոչեցէք ի հարսա-
10 նիս։ Եւ ելեալ ծառայքն ի ճանա-
պարհս՝ ժողովեցին զամենեսեան զոր
եւ գտին, զչարս եւ զբարիս, եւ լցան
11 հարսանիքն բազմականօք։ Եւ մտեալ
թագաւորն հայել զբազմականօքն՝ եւ
տես անդ այր մի որ ոչ էր զգեցեալ
12 հանդերձ հարսանեաց։ Եւ ասէ ցնա,
Ընկեր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ու-
նէիր հանդերձ հարսանեաց. եւ նա
13 պապանձեցաւ։ Յայնժամ ասէ թագա-
ւորն ցսպասաւորսն, կապեցէք զզորա
զոտս եւ զձեռս, եւ հանէք զնա ի խա-
ւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ
14 կրճել ատամանց. Զի բազումք են կո-
չեցեալք, եւ սակաւք՝ ընտրեալք։
15 Եւ. Յայնժամ գնացեալ փարիսեցիքն՝
առին խորհուրդ զնմանէ թէ որպէս
16 զնիցեն նմա որոգայթ բանիւք։ Եւ
առաքեն առ նա զաշակերտս իւրեանց
Հերովդիանոսօքն հանդերձ, եւ ասեն,
Վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես,
եւ զճանապարհն Աստուծոյ ճշմար-
տութեամբ ուսուցանես, եւ ոչ է քեզ
փոյթ զումիք, եւ ոչ հայիս յերեսս
17 մարդոյ։ Արդ ասա մեզ, զիա՞րդ թուի
քեզ, սա՞տ է հարկս տալ կայսեր թէ
18 ոչ։ Գիտաց Յիսուս զխորամանգուե-
ստիւնն նոցա եւ ասէ, Ձի՞ փորձէք
19 զիս, կեղծաւորք. Ցուցէք ինձ դրա-
հեկան հարկին. եւ նոքա մատուցին
20 նմա դահեկան մի։ Եւ ասէ ցնոսա,
21 Ո՞ր է պատկերս այս կամ գիր։ Ասեն,
Կայսեր. յայնժամ ասէ ցնոսա, Եր-
թայք, տուք զկայսերն կայսեր, եւ
22 զԱստուծոյն՝ Աստուծոյ։ Իրրեւ լուան,
զարմացան, եւ թողին զնա եւ գնացին։
23 Յայնմ աւուր մատեան առ նա սա-
դուկեցիքն որ ասէին թէ Չիք յարու-
24 թիւն. հարցին զնա, եւ ասեն, Վար-
դապետ, Մովսէս ասաց, Եթէ ոք մեռցի
անորդի, արասցէ զկին նորա եղբայր
իւր, եւ յարուսցէ զաւակ եղբօր իւ-
25 րում։ Էին առ մեզ եղբարք եւթն. ա-
ռաջինն արար կին եւ մեռաւ. եւ զի
ոչ ունէր զաւակ, եթող զկինն իւր
26 եղբօր իւրում. Նոյնպէս եւ երկրորդն
եւ երրորդն մինչեւ ցեւթներորդն։
27 Յետ ամենեցուն մեռաւ եւ կինն։
28 Արդ ի յարութեանն որո՞ց եւթանցն
եղիցի նա կին, զի ամենեքին կալան
29 զնա կին։ Պատասխանի ետ նոցա Յի-
սուս եւ ասէ, Մոլորեալք, ոչ գիտէք

---

¹ի ց--ձէ գ-ւ-ւ

զգիրս եւ ոչ զզօրութիւն Աստուծոյ։
30 Զի ի յարուԹեան ոչ կանայս առնեն
եւ ոչ արանց լինին, այլ են իբրեւ
31 զհրեշտակս [1]յերկինս։ Բայց վասն յա-
րուԹեան մեռելոց չիցէ՞ ընթերցեալ
32 զասացեալն ձեզ յԱստուծոյ, Ես եմ
Աստուած Աբրահամու, Աստուած Ի-
սահակայ եւ Աստուած Յակոբայ. եւ
չէ Աստուած [2]Աստուած մեռելոց, այլ
33 կենդանեաց։ Իբրեւ լուան ժողո-
վուրդքն, զարմանային ընդ վարդա-
պետութիւնն նորա։
34 Իսկ փարիսեցիքն իբրեւ լուան եթէ
պապանձեցոյց զսադուկեցիսն, ժողո-
35 վեցան ի միասին. Եւ հարց մի ոմն
[3]ի նոցանէ զնա փորձելով, եւ ասէ,
36 Վարդապետ, ո՞ր պատուիրան է մեծ
37 յօրէնս։ Եւ Յիսուս ասէ ցնա, Սի-
րեսցես զՏէր Աստուած քո յամենայն
սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ
38 քումմէ, եւ յամենայն մտաց քոց։ Այս
39 է մեծն եւ առաջին պատուիրան։ Եւ
երկրորդն՝ նման ամին, Սիրեսցես զըն-
40 կեր քո իբրեւ զանձն քո։ Յայս եր-
կուս պատուիրանս ամենայն օրէնք
եւ մարգարէք կախեալ կան։
41 Եւ ի ժողովել փարիսեցւոցն եհարց
42 զնոսա Յիսուս եւ ասէ, Զի՞րդ ինչ
ձեզ վասն Քրիստոսի. ո՞յր որդի է։
43 Առեն ցնա, Դաւթի։ Ասէ ցնոսա Յի-
սուս, Իսկ զի՞րդ Դաւիթ Հոգւովն
44 կոչէ զնա Տէր, եւ ասէ, Ասաց Տէր
ցՏէր իմ, Նիստ ընդ աջմէ իմմէ մինչեւ
եդից զթշնամիս քո պատուանդան ո-
45 տից քոց։ Իսկ եթէ Դաւիթ զնա Տէր
46 կոչէ, զի՞րդ որդի նորա իցէ։ Եւ ոչ
ոք կարէր տալ նմա պատասխանի բան
մի, եւ ոչ իշխէր ոք յայնմ օրէ հար-
ցանել զնա եւ ոչինչ։

ԳԼ. ԻԳ

1 ԵՋ. Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ
ժողովուրդսն եւ ընդ աշակերտսն իւր,
2 եւ ասէ, Յաթոռն Մովսիսի նստան
3 գրիչքն եւ փարիսեցիքն. Զամենայն
ինչ զոր ասիցեն [4]ձեզ՝ արարէք եւ պա-
հեցէք, բայց ըստ գործոցն նոցա մի՛
4 առնէք, զի ասեն եւ ոչ առնեն։ Կապեն
բեռինս ծանունս եւ դժուարակիրս,
եւ զնեն ի վերայ ուսոց մարդկան, եւ
մատամբ իւրեանց ոչ կամին չարժել
5 զնոսա։ Եւ զամենայն գործս իւ-
րեանց առնեն ի ցոյց մարդկան. լայնեն
զպրասպանակս իւրեանց, եւ երկայնեն
6 զքղանցս հանդերձից իւրեանց։ Սիրեն
զյատակաջատն յընթրիս, եւ զնախա-
թոռս ի ժողովուրդս, եւ զողջոյնս ի
7 հրապարակս, Եւ կոչել ի մարդկանէ
8 Ռաբբի, Ռաբբի։ Բայց դուք մի՛ [5]զոր
կոչէք վարդապետ՝, զի մի է ձեր [6]Ու-
սուցիչ. եւ ամենեքին դուք եղբարք
9 էք։ Եւ Հայր մի՛ կոչէք ձեզ յերկրի,
զի ձեր մի է Հայր որ յերկինսն է։
10 Եւ մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի Ու-
11 սուցիչ ձեր [7]Քրիստոս է՝։ Եւ մեծն
12 ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր։ Որ
բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի,
եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձ-
րասցի։
13 Վա՛յ ձեզ գպրաց եւ փարիսեցւոց
կեղծաւորաց, զի փակէք զարքայու-
թիւն երկնից առաջի մարդկան. դուք
ոչ մտանէք, եւ որոց մտանելն՝ չտայք
[8]մտանել։
15 Վա՛յ ձեզ գպրաց եւ փարիսեցւոց
կեղծաւորաց, զի շրջիք ընդ ծով եւ
ընդ ցամաք առնել հաւատս մի. եւ
յորժամ լինիցի, առնէք զնա որդի գե-
16 հենի կրկին քան զձեզ։ Վա՛յ ձեզ,
առաջնորդք կոյրք, զի ասէք, Որ երդ-
նու ի տաճարն՝ չէ ինչ, բայց որ երդ-
նու յոսկին որ ի տաճարին է՝ արժան
17 է։ Մոլոռք եւ կոյրք, զի՞նչ մեծ է,
ոսկի՞ն եթէ տաճարն որ սրբէ զոսկին
18 եւ որ երդնու ի սեղանն՝ չէ ինչ, բայց
որ երդնու ի պատարագն որ ի վերայ
19 նորա է՝ արժան է։ Յիմարք եւ կոյրք,
զի՞նչ մեծ է, պատարագն՝ եթէ սեղանն
20 որ սրբէ զպատարագն։ Իսկ արդ որ
երդուաւ ի սեղանն՝ երդնու ի նա եւ
21 յամենայն որ ի վերայ նորա է. Եւ որ
երդուաւ ի տաճարն՝ երդնու ի նա եւ
22 ի բնակիչն նորա. Եւ որ երդուաւ

---

[1] Ոմանք, Աստուծոյ [2] Յոմանս գրեալ
[3] Բազումք, ի նոցանէ օրինական
[4] Ոմանք, ձեզ պահել

[5] Յոմանս, կոչիցիք Ռաբբի
[6] Ոմանք, Ուսուցիչ, Քրիստոս
[7] Բազումք, մի է, Քրիստոս
[8] Ոմանք չեն ելեալ, (14) Վա՛յ ձեզ գպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց, զի ուտէք զտունս այրեաց, պատճառանաք երկարէք զաղթս, վասն որոյ առնիլ դատաստան ընդունիջիք։

յերկինս՝ երդնու յաթոռն Աստուծոյ եւ
23 յայն որ նստին ի վերայ նորա ։ Վա՛յ
ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց , զի տասանորդէք դանդաղս
եւ դամբի եւ զչուանն , եւ լքողէք
զծանր ծանր օրինացն , զդատաստան
եւ զողորմութիւն եւ զհաւատս ։ զայս
արժան էր առնել եւ զայն չլքուլ ։
24 Առաջնորդք կոյրք , որ զմժղուկս քա-
25 մէք եւ զուղտս կլանէք ։ Վա՛յ ձեզ
դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց ,
զի սրբէք զարտաքին զբաժակին եւ
զկաւառակին , եւ ի ներքոյ լի են յա-
փշտակութենէ եւ անխառնութենէ ։
26 Փարիսեցի կոյր , սրբեա նախ զներքինն
բաժակին եւ զկաւառակին , զի լինիցի
27 եւ արտաքինն նոցա սուրբ ։ Վա՛յ ձեզ
դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց ,
զի նման էք գերեզմանաց բանլոց , որ
արտաքոյ երեւին գեղեցիկք , եւ ի ներ-
քոյ լի են ոսկերօք մեռելոց եւ ամե-
28 նայն պղծութենէ ։ Նոյնպէս եւ դուք
արտաքոյ երեւիք մարդկան արդարք ,
եւ ի ներքոյ լի էք կեղծաւորութենէ
29 եւ անօրէնութենէ ։ Վա՛յ ձեզ դպրաց
եւ փարիսեցւոց կեղծաւորաց , զի շի-
նէք զգերիս մարգարէից եւ զարդա-
30 րէք զգերեզմանս արդարոց ։ Եւ ասէք ,
եթէ էաք յաւուրս հարցն մերոց , ոչ
31 հաղորդէաք արեան մարգարէիցն ։ Ապա
ուրեմն վկայէք դանձանց , եթէ որդիք
էք այնոցիկ որ կոտորէին զմարգա-
32 րէսն ։ Եւ դուք լցէք զչափ հարցն ձե-
33 րոյ ։ Օձք , ծնունդք խիժից , գի՞րդ
փախնուցուք ի դատաստանէ գեհենին ։
34 Վասն այդորիկ ահաւասիկ ես առաքեմ
առ ձեզ մարգարէս եւ իմաստունս եւ
դպիրս , եւ ի նոցանէ սպանանիցէք եւ
ի խաչ հանիցէք , եւ ի նոցանէ տան-
ջիցէք ի ժողովուրդս ձեր , եւ հալա-
35 ծիցէք ի քաղաքէ ի քաղաք ։ Որպէս զի
եկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն
արդար հեղեալ երկրի , յարենէն Աբելի
արդարոյ մինչեւ զարիւնն Զաքարիայ
որդւոյ Բարաքիայ զոր սպանէք ընդ
36 միջ տաճարին եւ սեղանոյ ։ Ամէն ա-
սեմ ձեզ , եկեսցէ այն ամենայն ի վե-
րայ ազգիս այսորիկ ։
37 Երուսաղէմ , Երուսաղէմ , որ [1]կոտո-
րէր զմարգարէսն եւ քարկոծ [2]առնէր
զառաքեալսն [3]առ նա ,՝ քանի՛ցս ան-
դամ կամեցայ ժողովել զմանկունս քո ,
զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր
38 ընդ թեւովք , եւ ոչ կամիցարուք ։ Ահա
թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ ։
39 Բայց ասեմ ձեզ թէ ոչ եւս տեսանիք
զիս յայսմ հետէ , մինչեւ ասիցէք ,
Օրհնեալ եկեալ յանուն Տեառն ։

Գլ· ԻԴ

1 ԵՒ· Եւ եկեալ արտաքս Յիսուս ի
տաճարէն՝ գնայր · եւ մատեան աշա-
կերտքն ցուցանել նմա զշինուածս
2 տաճարին ։ Եւ նա պատասխանի ետ
եւ ասէ ցնոսա , Տեսանէ՛ք զայդ ամե-
նայն , ամէն ասեմ ձեզ , ոչ մնասցէ
այդր քար ի քարի վերայ որ ոչ քակ-
3 տեսցի ։ Եւ մինչդեռ նստէր ի լերինն
Ձիթենեաց , մատեան առ նա աշա-
կերտքն առանձինն եւ ասեն , Ասա
մեզ , ե՞րբ լինիցի այդ , եւ կամ զի՞նչ
նշան իցէ քոյոյ գալստեանն եւ վախ-
4 ճանի աշխարհիս ։ Պատասխանի եւ
Յիսուս եւ ասէ ցնոսա , Զգուշ լերուք ,
5 դուցէ ոք զձեզ խաբիցէ · Զի բազումք
գայցեն յանուն իմ եւ ասիցեն թէ Ես
եմ Քրիստոսն , եւ զբազումս մոլորե-
6 ցուցանիցեն ։ Լսելոց էք պատերազ-
մունս եւ համբաւս պատերազմաց ·
զգուշ լերուք , մի՛ խռովիջիք , զի
պարտ է լինել այնմ ամենայնի , այլ
7 չեւ է կատարած ։ Յարիցի ազգ յազգի
վերայ , եւ թագաւորութիւն ի թա-
գաւորութեան , եւ եղիցին սովք եւ
սրածութիւնք եւ սաստանութիւնք ի
8 տեղիս տեղիս ։ Սակայն եւ այն ամե-
9 նայն սկիզբն է երկանց ։ Յայնժամ
մատնեսցեն զձեզ ի նեղութիւն , եւ
սպանանիցեն զձեզ , եւ եղիջիք ատե-
ցեալք յամենայն ազգաց վասն անուան
10 իմոյ ։ Եւ յայնժամ գայթակղեսցին
բազումք , եւ զիրարիս մատնեսցեն
11 եւ ատեսցեն զիրարիս ։ Եւ բազում
սուտ մարգարէք յարիցեն եւ զբա-
12 զումս մոլորեցուսցեն ։ Եւ վասն բազ-
մանալոյ անօրէնութեանն՝ յամաքեսցի
13 սէր բազմաց ։ Բայց որ համբերեսցէ
14 ի սպառ՝ նա կեցցէ ։ Եւ քարոզեսցի
աւետարանս արքայութեան ընդ ամե-

[1]կամ, կոտորէիր [2]կամ, առնէիր [3]Յոյն, առ քեզ

նայն տիեզերս ի վկայութիւն ամենեցուն հեթանոսաց, եւ ապա եկեսցէ կատարած։
15 Արդ յորժամ տեսանիցէք զպղծութիւնն աւերածոյն, որ ասացեալն է ի Ձեռն Դանիելի մարգարէի, զի կայցէ ի տեղւոջն սրբութեան· (որ ընթեռնու16 նոյն ի միտ առցէ·) Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախչիցեն ի լերինս։
17 Եւ որ ի տանիս կայցէ՝ մի՛ իջցէ առնուլ զինչ ի տանէ իւրմէ· Եւ որ յանդի իցէ՝ մի՛ դարձցի յետս առնուլ զհանդերս
19 իւր։ Բայց վա՛յ իցէ յղեալսն եւ սնեալսն յայնժամ նեղութիւնն մեծ, որպիսի՛ ոչ եղեւ ի սկզբանէ արարածոց աշխարհի
22 մինչեւ ցայժմ, եւ ոչ այլ լիցի։ Եւ եթէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր ամենայն մարմին· բայց վասն ընտրելոցն կարճեսցին աւուրքն
23 այնոքիկ։ Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ, Ահաւասիկ աստ է Քրիստոսն կամ
24 անդ, մի՛ հաւատայցէք։ Զի յարիցեն սուտ քրիստոսք եւ սուտ մարգարէք, եւ տացեն նշանս մեծամեծս եւ արուեստս, մինչեւ մոլորեցուցանել, թէ
25 հնար ինչ իցէ, եւ զրնտրեալսն։ Ահա
26 յառաջագոյն ասացի ձեզ։ Ապա եթէ ասիցեն ձեզ, Ահաւասիկ յանապատի է, մի ելանիցէք, եւ թէ՝ Ահա ի տաս
27 մարանս է, մի՛ հաւատայցէք։ Զի որպէս փայլակն որ ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ յարեւմուտս, այնպէս
28 եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ։ Զի ուր գէշն իցէ՝ անդր ժողովեսցին արծուիք։
29 Վազվազակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ արեգակն խաւարեսցի, եւ լուսին ոչ տացէ զլոյս իւր, եւ աստեղք անկցին յերկինից, եւ զօրու30 թիւնք երկնից չարժեսցին։ Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս, եւ յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի, եւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զո31 րութեամբ եւ փառօք բազմօք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաձայն, եւ ժողովեսցեն զընտրեալսն նորա ի չորից հողմոց, ի ծայրից երկնից մին32 չեւ ի ծագս նոցա։ Ի թզենւոյ առակ ուսարուք զառակն։ Զի յորժամ նորա ոստքն կակղասցին եւ տերեւն ցցուի33 ցի, գիտէք թէ մերձ է ամառն։ Նոյնպէս եւ դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասջիք թէ մերձ է ի դուրս,
34 Ամէն ասեմ ձեզ եթէ ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի։
35 Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անցցեն։
36 Բայց վասն աւուրն այնորիկ եւ ժամուս ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք երկնից, [1]եւ ոչ Որդի,՝՝ բայց միայն
37 [2]Հայր։ Այլ որպէս աւուրքն Նոյի, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մար38 դոյ։ Զի որպէս էին յաւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն, ուտէին եւ ըմպէին, կանայս առնէին եւ արանց լինէին, մինչեւ յօրն յորում եմուտ Նոյ
39 ի տապանն, եւ ոչ գիտացին մինչեւ եկն ջրհեղեղն եւ եւարձ զամենեսին, այնպէս եղիցի եւ գալուստն Որդւոյ
40 մարդոյ։ Յայնժամ երկու եսցեն արու41 թեան, մին առնուցու եւ մեւսն թողուցու։ Եւ երկու եղջերն ի մի երկանս, մին առնուցու եւ մեւսն
42 թողուցու։ Արթուն կայէք, զի ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ։
43 Զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում պահու գող գայ, հսկէր եւ ոչ տայր տան հատանել զտան
44 իւրոյ։ Վասն այսորիկ եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ ակն ունիցիք, գայ Որդի մարդոյ։
45 Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ եւ իմաստուն զոր կացոյց տէր իւր ի վերայ ծառայից իւրոց տալ նոցա կերա46 կուր ի ժամու։ Երանի է ծառային այնմիկ զոր եկեալ տէրն գտանիցէ
47 արարեալ այնպէս։ Ամէն ասեմ ձեզ, զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կա48 ցուսցէ զնա։ Ապա թէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում, Տէր իմ յամէ
49 զգայ։ Եւ սկսանիցի հարկանել գծառայակիցս իւր, ուտիցէ եւ ըմպիցէ
50 ընդ արբեցոցս։ Գայցէ տէր ծառային այնորիկ յաւուր յորում ոչ ակն ունի, եւ ի ժամու յորում ոչ գիտիցէ։
51 Եւ կտրեսցէ զնա ընդ մէջ, եւ զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ։ Անդ եւ դիցի լալ եւ կրճել ատամանց։

---

[1] Յհ. ԺԴ. ԻԸ. [2] Ոմանք, Հայր իմ

Գլ. ԻԵ

4 Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ
2 ջահսերս իւրեանց ելին ընդ առաջ փեսային [1]եւ հարսին՝: Էինսն ի նո-
3 ցանէ յիմարք էին, եւ հինսն խոհա-
4 տունք: Յիմարքն առին ջահսերսն, եւ ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին: Իսկ
5 խոհատունքն առին ձէթ ամանսիք ընդ ջահսերս իւրեանց: Եւ ի յապ-
6 շել փեսային՝ նիրհեցին ամենեքեան եւ ի քուն մտին: Եւ ի մէջ գիշերի եղեւ բար-
7 բառ, Ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նորա: Յայնժամ յարեան ամե-
8 նայն կուսանքն եւ կազմեցին զջահսերս իւրեանց: Ասեն յիմարքն ցխոհատունսն, Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի
9 ահա չիջանին լապտերքս մեր: Պա-տասխանի եւեթ խոհատունքն եւ ա-սեն, Գուցէ ոչ իցէ մեզ եւ ձեզ բա-
10 ւական, այլ երթայք ի վաճառականս եւ գնեսջիք ձեզ: Իրրեւ նոքա գնացին գնել, եկն փեսայն, եւ պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն, եւ փա-
11 կեցաւ դուռնն: Յետոյ գան եւ այլ կուսանքն եւ ասեն, Տէր, Տէր, բաց
12 մեզ: Նա պատասխանի եւ ասէ, Ամէն ասեմ ձեզ թէ Ոչ գիտեմ զձեզ:
13 Արթուն կացէք զի ոչ գիտէք զօրն եւ ոչ [2]զժամն:

14 Որպէս այր մի գնացեալ ի տարաշ-խարհ, կոչեաց զծառայս իւր եւ ետ
15 նոցա զինչս իւր. Ումեմնէ ետ հինգ քանքար, եւ ումեմնէ երկուս, եւ ու-մեմնէ մի. իւրաքանչիւր ըստ իւրում
16 կարի, եւ գնաց: Զոգաւ վազվազակի որ առ զինսն, գործեաց նոքօք եւ շա-
17 հեցաւ այլ եւս հինգ: Նոյնպէս եւ որ զերկուսն՝ շահեցաւ այլ եւս երկուս:
18 Եւ որ զմինն առ՝ գնաց, փորեաց զերկիր, եւ թաքոյց զարծաթ տեառն իւրոյ:
19 Յետ բազում ժամանակի գայ տէր ծա-ռայիցն այնոցիկ եւ առնէ հաշիս
20 ի մէջ նոցա: Եւ մատուցեալ որ զհինգ քանքարսն առ՝ մատոյց այլ եւս հինգ քանքար, եւ ասէ, Տէր, հինգ քան-քար ետուր ինձ, արդ ահաւասիկ հինգ այլ եւս քանքար ի վերայ շահեցայ:

21 Ասէ ցնա տէրն իւր, Ազնիւ, ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուկ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յու-
22 րախութիւն տեառն քո: Մատուցեալ եւ որոյ զերկուս քանքարսն առեալ էր, եւ ասէ, Տէր, երկուս քանքարս ետուր ինձ, ահաւասիկ երկուս եւս այլ քանքարս զոր ի վերայ շահեցայ:
23 Ասէ ցնա տէրն իւր, Ազնիւ, ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուկ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յու-
24 րախութիւն տեառն քո: Մատուցեալ եւ որոյ զմի քանքարսն առեալ էր, եւ ասէ, Տէր, գիտէի զի այր մի խիստ ես, հնձես զոր ոչ սերմանեցեր, եւ
25 ժողովես ուստի ոչ սփռեցեր. Երկեայ, գնացի եւ թաքուցի զքանքարսն քո յերկրի. արդ ահաւասիկ քոդ ցքեզ:
26 Պատասխանի եւ տէրն եւ ասէ ցնա, Ծառայ չար եւ վատ, գիտէիր եթէ հնձեմ ուստի ոչ սերմանեցի, եւ ժո-
27 ղովեմ ուստի ոչ սփռեցի. Պարտ էր քեզ արկանել զարծաթիդ իմ ի սեղա-նաւորս, եւ եկեալ ես տոկոսեօք պա-
28 հանջէի զինն: Արդ առէք ի գմանէ զքանքարսդ, եւ տուք այնմ որ ունիցի
29 զտասն քանքարն: Զի ամենայնի որ ունիցի՝ տացի եւ յաւելցի, եւ որ ոչն ունիցի՝ եւ զոր ունիցին բարձցի ի նմա-
30 նէ: Եւ զծառայդ անպիտան հանէք ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց:

31 Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրովք եւ ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փա-
32 ռաց իւրոց: Եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք, եւ մեկնեսցէ զնոսա ի միմեանց, որպէս հովիւ զի
33 մեկնէ զոչխս յայծեաց. Եւ կացուսցէ զոչխսն ընդ աջմէ իւրմէ, եւ զայծեան՝
34 ի ձախմէ: Յայնժամ ասասցէ Թագա-ւորն ցայնոսիկ որ ընդ աջմէնն իցեն, Եկայք, օրհնեալք Հօր իմոյ, ժառան-գեցէք զպատրաստեալ ձեզ զարքայու-
35 թիւնն ի սկզբանէ աշխարհի: Զի քաղ-ցայ, եւ ետուք ինձ ուտել. ծարա-ւեցի, եւ արբուցէք ինձ. օտար էի,
36 եւ ժողովեցէք զիս. Մերկ՝ եւ զգեցու-ցէք զիս. հիւանդ էի, եւ տեսէք զիս.
37 ի բանտի էի, եւ եկիք առ իս: Յայնժամ

---

[1] Ի ք-ղ-ւ գ-ւ-ւ-ւ

[2] Որ-ն-ւ, զժամն յորում գայցէ Որդի մարդոյ

պատասխանի տացեն նմա արդարքն եւ ասասցեն, Տէր, ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ, եւ կերակրեցաք. կամ ծա-
38 րաւի՝ եւ արբուցաք. ե՞րբ տեսաք զքեզ օտար, եւ ժողովեցաք, կամ մերկ՝ եւ
39 զգեցուցաք. ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ
40 կամ ի բանտի, եւ եկաք առ քեզ. Պա-տասխանի տացէ Թագաւորն եւ ասասցէ ցնոսա, Ամէն ասեմ ձեզ, Որովհե-տեւ արարէք միում յեղբարցս այսոցիկ
41 փոքրկանց՝ ինձ արարէք. Յայնժամ ասասցէ եւ ցայնոսիկ որ ընդ ահեկէն իցեն, Երթայք յինէն, անիծեալք, ի հուրն յաւիտենական, որ պատրաս-տեալ է Սատանայի եւ հրեշտակաց նո-
42 րա. Զի քաղցայ, եւ ոչ ետուք ինձ ուտել. ծարաւեցի, եւ ոչ արբուցէք
43 զիս. Օտար էի, եւ ոչ ժողովեցէք զիս, մերկ էի, եւ ոչ զգեցուցէք զիս, հի-ւանդ եւ ի բանտի՝ եւ ոչ տեսէք զիս.
44 Յայնժամ պատասխանի տացեն եւ նո-քա եւ ասասցեն, Տէր, ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ կամ ծարաւի կամ օտար կամ մերկ կամ հիւանդ կամ ի բանտի,
45 եւ ոչ պաշտեցաք զքեզ. Յայնժամ պա-տասխանի տացէ նոցա եւ ասասցէ, Ամէն ասեմ ձեզ, Որովհետեւ ոչ արա-րէք միում ի փոքրկանցս յայսցանէ, եւ ոչ ինձ արարէք.
46 Եւ երթիցեն նոքա ի տանջանս յա-ւիտենականս, եւ արդարքն՝ ի կեանսն յաւիտենականս.

ԳԼ. ԻԶ

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, ասէ ցա-
2 շակերտան իւր, Գիտէք զի յետ եր-կուց աւուրց զատիկ լինի, եւ Որդի մարդոյ մատնի ի խաչ ելանել. ՎԶ
3 Յայնժամ ժողովեցան քահանայա-պետքն եւ գիրք եւ ծերք ժողովրդե-անն ի սրահ քահանայապետին որում-
4 անուն էր Կայիափա. Եւ արարին խոր-հուրդ զի նենգութեամբ կալցին զՅի-
5 սուս եւ սպանցեն. Բայց ասէին թէ Մի՛ ի տօնի առ, գի մի՛ խռովութիւն լինիցի ի ժողովրդեանն.
6 Իբրեւ եկն Յիսուս ի Բեթանիա ի
7 տուն Սիմոնի բորոտի, Մատեաւ առ նա կին մի որ ունէր շիշ իւղոյ ծան-րագնի, եւ թափեաց ի գլուխ նորա ի
8 բազմականին. Իրրեւ տեսին աշա-կերտքն, բարկացան եւ ասեն, Ընդէ՞ր
9 է կորուսած այդ իւղոյդ. Զի մարթ էր վաճառել զդա ւիճաղանի եւ տալ աղքա-
10 տաց. Գիտաց Յիսուս եւ ասէ ցնոսա, Զի՞ աչխատ առնէք զկինդ, գործ մի-
11 բարի գործեաց դա ցիս. Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, բայց զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք.
12 Արկանելով զորա զիւղդ ի մարմին իմ՝
13 առ ի թաղելոյ զիս նչանակեաց. Բայց ամէն ասեմ ձեզ, զի ուր եւ քարոզեա-ցի աւետարանս այս ընդ ամենայն աշ-խարհ, խօսեսցի եւ զոր արար դա ի յիչատակ դորա.
14 Յայնժամ գնաց մի յերկոտասանիցն անուանեալ Յուդա Իսկարիովտացի առ
15 քահանայապետսն, եւ ասէ, Զի՞նչ կա-միք տալ ինձ, եւ ես մատնեցից զնա ձեզ. եւ նոքա կչռեցին նմա երեսուն
16 արծաթիս. Եւ յայնմ հետէ իսկզբնէ պա-րապ գի մատնեցէ զնա նոցա.
17 Եւ յառաջնումն աւուր բազմակե-րացն մատուան աչակերտքն առ Յիսուս եւ ասեն, Ո՞ւր կամիս զի պատրաս-
18 տեսցուք քեզ ուտել զպատիկն. Եւ նա ասէ ցնոսա, Երթայք ի քաղաքն առ այս անուն եւ ասացէք ցնա, Վարդա-պետ ասէ, ժամանակ իմ մերձեալ է, առ քեզ առնեմ զպատիկն աչակերտօք
19 հանդերձ. Եւ արարին աչակերտքն որպէս հրամայեաց նոցա Յիսուս, եւ պատրաստեցին զպատիկն.
20 Եւ իրրեւ երեկոյ եղեւ, կայր բազ-մեալ ընդ երկոտասան աչակերտան.
21 Եւ մինչդեռ ուտէին նոքա, ասէ, Ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ մատնե-
22 լոց է զիս. Եւ տրտմեցան յոյժ, սկսան ասել ցնա իւրաքանչիւր ոք ի նոցանէ,
23 Միթէ ե՞ս իցեմ, Տէր. Նա պատաս-խանի եւ ասէ, Որ մխեաց ընդ իս զձեռն իւր ի սկուտաւակն՝ նա մատնե-
24 լոց է զիս. Որդի մարդոյ երթայ, որպէս եւ գրեալ է վասն նորա, բայց վա՛յ մարդոյն այնմիկ որով Որդի մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա թէ չէր ծնեալ
25 մարդն այն. Պատասխանի եւ Յուդա որ մատնելոյն էր զնա եւ ասէ, Միթէ ե՞ս իցեմ, վարդապետ. ասէ ցնա, Դու ասացեր.

---

1 Կամ, խոստացան

26 Եւ մինչդեռ ուտէին նոքա, առ Յիսուս հաց, օրհնեաց եւ եբեկ, եւ եառ աշակերտացն եւ ասէ, Առէք, կերայք,
27 այս է մարմին իմ։ Եւ առեալ բաժակ գոհացաւ, եառ նոցա եւ ասէ, Արբէք
28 ի դմանէ ամենեքին. Զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց
29 հեղու ի թողութիւն մեղաց։ Բայց ասեմ ձեզ, Ոչ եւս արբից յայսմ հետէ ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն յայն, յորժամ արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան Հօր իմոյ։
30 Եւ օրհնեցին, եւ ելին ի լեառն Ձիթենեաց։
31 Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս, Ամենեքին դուք պայթակղիջիք զիս յայսմ գիշերի. զի գրեալ է թէ Հարից զհովիւն եւ ցրուեսցին ոչխարք հօտին։
32 Եւ յետ յառնելոյն իմոյ յառաջեցից զձեզ ի Գալիլեա։
33 Պատասխանի եառ Պետրոս եւ ասէ ցնա, Թէպէտ եւ ամենեքեան պայթակղեսցին ի քէն, սակայն ես ոչ պայթակղեցայց։
34 Ասէ ցնա Յիսուս, Ամէն ասեմ քեզ զի յայսմ գիշերի մինչչեւ հաւն խօսեսցի
35 երիս, երիցս ուրասցիս զիս։ Ասէ ցնա Պետրոս, Թէ եւ մեռանիլ հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց։ Նոյնպէս եւ ամենեքեան աշակերտքն ասէին։
36 Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա ի դեղ մի որում անուն էր Գեթսեմանէ, եւ ասէ ցնոսա, Նստարուք այստ, մինչեւ
37 չեւ երթայց կացից յաղօթս։ Եւ առեալ ընդ իւր զՊետրոս եւ զերկուս որդիսն Զերեդեայ՝ սկսաւ տրտմել եւ հոգալ։
38 Յայնժամ ասէ ցնոսա, Տրտում է ոգի իմ մինչեւ ի մահ, կացէք աստ եւ սկեզբ
39 գէք ընդ իս։ Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի, անկաւ ի վերայ երեսաց իւրոց, կայ յաղօթս եւ ասէ, Հայր իմ, եթէ հնար է, անցցէ բաժակս այս ինձէն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս
40 դու։ Գայ առ աշակերտսն, եւ գտանէ զնոսա ի քուն, եւ ասէ ցՊետրոս, Այդպէս ո՞չ կարացէք մի ժամ արթուն կալ
41 ընդ իս։ Արթուն կացէք եւ աղօթս արարէք զի մի՛ անկանիցիք ի փորձութիւն. Հոգին յօժար է, բայց մարմինս
42 տկար։ Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ, եւ կայ յաղօթս Յիսուս եւ ասէ, Հայր իմ, եթէ [1]հնար լիցէ՝ անցանել

[1] Յ-ԺԱ, չիցէ հնար

յինէն բաժակս այսմիկ, [2]ապա թէ ոչ՝
43 արիւիւ զայս՝, եկեալն կամք քո։ Եւ եկեալ միւսանգամ եգիտ զնոսա ի քուն, զի էին աչք իւրեանց ծանրացեալք։
44 Եւ թողեալ զնոսա եւ գնաց, կայ յաղօթս երրորդ անգամ, եւ զարձեալ զնոյն բան
45 ասաց։ Յայնժամ գայ առ աշակերտսն եւ ասէ ցնոսա, Ննջիցէք այսուհետեւ եւ հանգիարուք, զի ահա հասեալ է ժամ, եւ Որդի մարդոյ մատնի ի ձեռս մեղաւորաց։
46 Արիք, երթիցուք աստի, զի ահաւասիկ հնաս որ մատնելոցն է զիս։
47 Եւ մինչդեռ նա դեռ խօսէր, ահա Յուդա, մի յերկոտասանիցն եկն, եւ ընդ նմա ամբոխ բազում սրովք եւ բրօք ի քահանայապետացն եւ ի ծերոց
48 ժողովրդեանն։ Եւ որ մատնելոցն էր զնա՝ եառ նոցա նշան եւ ասէ, Ընդ որում համբուրեցից՝ նա է, զնա ունիցէք։
49 Եւ վաղվաղակի մատուցեալ առ Յիսուս՝ ասէ, Ողջ կաց, վարդապետ.
50 եւ համբուրեաց զնա։ Եւ Յիսուս ասէ ցնա, Ընկեր, ուստի որոյ եկիր. յայնժամ մատուցեալ արկին ձեռս ի
51 Յիսուս եւ կալան զնա։ Եւ ահա մի ումն յայնցանէ որ էին ընդ Յիսուսի՝ ձգեաց զձեռն եւ հան զսուր իւր եւ հար զծառայ քահանայապետին, եւ
52 ի բաց հան զականջն նորա։ Յայնժամ ասէ ցնա Յիսուս, Դարձո զսուր քո ի տեղի իւր, զի ամենեքեան որ սուր
53 առնուցուն՝ սրով անկանիցին։ Թէ համարիցիս թէ ո՞չ կարիցեմ աղաչել զՀայր իմ, եւ հասուցանիցէ ինձ այժմ այսր աւելի քան զլեգէոնաւոր զունդս
54 հրեշտակաց։ Այլ զիա՞րդ լցուցուն գիրք թէ այսպէս պարտ է լինել։
55 Յայնժամ ասաց Յիսուս ցամբոխն, Իբրեւ ի վերայ աւազակի՞ ելիք սուսերօք եւ բրօք ունել զիս. հանապազ առ ձեզ ի տաճարին նստէի եւ ուսուցանէի, եւ ոչ կալայք զիս։
56 Այլ այս ամենայն եղեւ զի լցցին գիրք մարգարէիցն։ Յայնժամ աշակերտքն ամենեքին թողին զնա եւ փախան։
57 Իսկ նոցա կալեալ զՅիսուս՝ ածին առ Կայիափա քահանայապետ, ուր դպիրքն
58 եւ ծերք ժողովեալ էին։ Եւ Պետրոս զհետ նորա երթայր բացագոյն մինչեւ

[2] Յ-ԺԱ, եթէ ոչ արբից զսա

ի սրահ քահանայապետին, եւ մտեալ
ի ներքս՝ նստէր ընդ սպասաւորան աւ-
59 առնել զկատարածն։ Իսկ քահանայա-
պետքն եւ ամենայն ատեանն խնդրէ-
ին սուտ վկայութիւն ընդ Յիսուսի, զի
60 սպանցեն զնա. Եւ ոչ գտանէին ի բազ-
մաց սուտ վկայիցն մատուցելոց. յետոյ
61 մատուցեալ երկուս սուտ վկայք, Ասէին
թէ Սա ասէր, Կարող եմ քակել զտա-
ճարն Աստուծոյ, եւ զերկրս սուրբ
62 չինել։ Եւ յարուցեալ քահանայապետն
ասէ ցնա, Զոտո՞ւ ինչ պատասխանի,
63 զի՞նչ զոքա ամբաստանեն զքէն։ Եւ
Յիսուս լռեա կայր։ Պատասխանի նա
քահանայապետն եւ ասէ ցնա, Երդմնե-
ցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի,
զի ասասցես մեզ՝ թէ դո՞ւ ես Քրիս-
34 տոս Որդի Աստուծոյ։ Ասէ ցնա Յի-
սուս, Դու ասացեր. բայց ասեմ ձեզ,
Ցայսմ հետէ անտանիցէք զՈրդի մարդոյ
նստեալ ընդ աջմէ Զօրութեանն եւ
65 եկեալ ընդ ամպս երկնից։ Յայնժամ
քահանայապետն պատառեաց զհան-
դերձս իւր, եւ ասէ, Հայհոյեաց, զի՞
եւս պիտոյ են մեզ վկայք, անա արդ
66 լուայք զհայհոյութիւնն զորա. Զի՞նչ
հաճոյ է ձեզ. Նոքա պատասխանի ե-
67 տուն եւ ասեն, Մահապարտ է։ Յայն-
ժամ թքին ընդ երեսս նորա եւ կոփե-
ցին զնա, եւ ոմանք ապտակեցին, եւ
68 ասեն, Մարգարեաց մեզ, Քրիստոսդ,
ո՞վ է որ եհար զքեզ։
69 Իսկ Պետրոս նստէր արտաքոյ ի
դահլիճն. մատեաւ առ նա աղախին մի
եւ ասէ, Եւ դու ընդ Յիսուսի Գալիլ-
70 եացւոյ էիր։ Նա ուրացաւ առաջի ա-
մենեցուն եւ ասէ թէ Ոչ գիտեմ զինչ
71 խօսիս։ Եւ իրրեւ ել նա արտաքս
քան զդուռնն, եւեթ զնա այլ կին մի,
եւ ասէ ցայնոսիկ որ անդն կային, Եւ
72 սա ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էր։ Եւ
դարձեալ ուրացաւ երդմամբ թէ Ոչ գի-
73 տեմ զայրն։ Եւ յետ սակաւ մի եկե-
տուցեալ որք կային անդ՝ ասեն ցՊետ-
րոս, Արդարեւ եւ դու ի նոցանէ ես,
քանզի եւ խօսք քո յայտ առնեն զքեզ։
74 Յայնժամ սկսաւ նզովել եւ երդնուլ
թէ Ոչ գիտեմ զայրն. եւ իսկոյն հաւ
75 խօսեցաւ։ Եւ յիշեաց Պետրոս զբանն
Յիսուսի զոր ասաց թէ Մինչչեւ հաւս
խօսեալ իցէ, երիցս ուրասցիս զիս,
եւ ելեալ արտաքս՝ լայաց դառնապէս։

Գլ. ԻԷ

1 Իրրեւ այդ եղեւ, խորհուրդ արարին
ամենայն քահանայապետքն եւ ծերք
ժողովրդեանն վասն Յիսուսի սպանա-
2 նել զնա։ Կապեցին զնա եւ տարին
զնա, եւ հասուն ի ձեռս Պիղատոսի դատաւորի։
3 Յայնժամ տեսեալ Յուդայի որ մատ-
նեացն զնա թէ պարտաւորեցաւ, զղջա-
ցաւ եւ դարձոյց [1]զարծաթին առ քա-
հանայապետսն եւ ծերս ժողովրդեանն՝
4 եւ ասէ, Մեղայ զի մատնեցի զարիւն
արդար. եւ նոքա ասեն, Մեզ չէ վտիճ,
5 զոր գիտես։ Եւ ընկէց զարծաթին ի
տաճարին եւ գնաց, եւ չոգաւ խեղ-
6 գեցաւ։ Իսկ քահանայապետքն առեալ
զարծաթին ասեն, Ոչ է արժան ընդունել զայդ ի կորբանն, քանզի գինք
7 արեան են։ Խորհուրդ արարեալ, գնե-
ցին անտու զպարարին բրտի ի դերեզ-
8 ման օտարաց։ Վասն այսորիկ կոչեցաւ
պարարին այն Արարակ արեան մինչեւ
9 յայսօր։ Յայնժամ լցաւ որ ասացաւն
ի ձեռն [2]Երեմիայի մարգարէի, եւ ա-
ռին զերեսուն արծաթին զգինս վա-
ճառելոյն, զոր արկին յորդւոցն Իս-
10 րայելի, եւ ետուն գնա յպարարին
բրտի, որպէս հրամայեաց ինձ Տէր։
11 Եւ Յիսուս եկաց առաջի դատա-
ւորին. եհարց զնա դատաւորն եւ ասէ,
Դո՞ւ ես թագաւորն Հրէից. եւ Յիսուս
12 ասէ, Դու ասես։ Եւ ի չարախօսին
նորա ի քահանայապետէն եւ ի ծերոց,
13 ոչինչ ետ պատասխանի։ Յայնժամ
ասէ ցնա Պիղատոս, Ոչ լսես որչափ
14 զոքա հակառակ քո վկայեն։ Եւ ոչ ետ
նմա պատասխանի եւ ոչ բան մի, մին-
չեւ զարմանալ դատաւորին յոյժ։
15 Բայց ըստ տօնի սովոր էր դատա-
ւորն արձակել ժողովրդեանն կապեալ
16 մի զոր կամէին։ Ունէին յայնժամ
կապեալ մի նշանաւոր, որում անուն
17 էր [3]Յեսու Բարաբբա։ Իրրեւ ժողո-
վեցան, ասէ ցնոսա Պիղատոս, Զո՞
կամիք [4]յերկուց առաի ձեզ արձակեցից
ձեզ, զՅեսու Բարաբբա՞ եթէ զՅիսուս
18 զանուանեալն Քրիստոս։ Գիտէր զի-

---

[1] Զգին, զերեսուն արծաթին առ քահանայապետսն եւ ծերս
[2] Զաքար պրոֆ. [3] Ի Բարաբբա պրոֆ.
[4] Որո՞ւն, զի արձակեցից ձեզ, զՅեսու Բարաբբա՞

տէր թէ առ նախանձու մատնեցին զնա։
19 Եւ մինչ նստէր յատենին, առաքեաց
առ նա կինն իւր եւ ասէ, Ձկայ ինչ քո
եւ արդարոյն այնորիկ, զի բազում
անգք անցին ընդ իս այսօր յանուրջս
20 վասն նորա։ Իսկ քահանայապետքն
եւ ծերք հաւանեցուցին զժողովուրդն,
21 զի խնդրիցեն զԲարաբբաս, եւ զՅի-
սուս կորուսցեն։ Պատասխանի ետ
դատաւորն եւ ասէ ցնոսա, Զո՞ կամիք
զի արձակեցից ձեզ յերկուց առի. եւ
22 նոքա ասեն, զԲարաբբաս։ Ասէ ցնոսա
Պիղատոս, Իսկ զի՞ արարից զՅիսուս
23 զանուանեալն Քրիստոս։ Ասեն ամե-
նեքեան, Խաչեսցի. եւ նա ասէ, Զի՞նչ
չար արար. եւ նոքա առաւել եւս ա-
24 զաղակէին եւ ասէին, Խաչեսցի։ Եւ
տեսեալ Պիղատոսի թէ ոչինչ օգնէ,
այլ առաւել խռովութիւն լինի, առեալ
ջուր լուաց զձեռս առաջի ժողովրդե-
անն եւ ասէ, Բառնալ եմ ես յարենէ
արդարոյդ այդորիկ. դուք դիտասջիք։
25 Պատասխանի ետ ամենայն ժողովուրդն
եւ ասէ, Արիւն դորա ի վերայ մեր եւ
26 ի վերայ որդւոց մերոց։ Յայնժամ ար-
ձակեաց նոցա զԲարաբբաս, եւ զՅիսուս
գան հարեալ՝ եա ի ձեռս զի խաչեսցի։
27 Յայնժամ զինուորք դատաւորին ա-
ռին զՅիսուս յատարանս, եւ ժողովե-
ցին ի վերայ նորա զամենայն գունդն.
28 Մերկացին զնա, եւ արկին զնորա
29 քղամիդ կարմիր։ Եւ բոլորեալ պսակ
ի փշոյ եդին ի գլուխ նորա, եւ եղէգն
յաջոյ ձեռին նորա. ի ծունր իջեալ ա-
ռաջի նորա՝ կատակէին եւ ասէին,
30 Ողջ եր, թագաւոր Հրէից։ Եւ թքեալ
ի նա՝ առնուն զեղէգն եւ ծեծէին
31 զգլուխ նորա։ Եւ յորժամ ձաղեցին
զնա, մերկացուցին զնմանէ զքղամիդն
եւ ազուցին նմա զիւր հանդերձն, եւ
տարան զնա ի խաչ հանել։
32 Եւ ելեալ արտաքս գտին այր մի
Կիւրենացի անուն Սիմոն, զնա կալան
33 պահակ զի բարձցէ զխաչն նորա։ Եւ
եկեալ ի տեղին անուանեալ Գողգոթա,
34 որ է տեղի կառափելոյ, եւտուն նմա
ըմպել զինի ընդ լեղի խառնեալ. եւ
իբրեւ ճաչակեաց, ոչ կամէր ըմպել։
35 Եւ հանեալ զնա ի խաչ՝ բաժանեցին
զհանդերձս նորա վիճակաւ. [1]զի լցի

[1]Ցոհան. գլ. ։ի.

բանն որ ասացաւ ի մարգարէէն, Բա-
ժանեցին զհանդերձս իմ յիւրեանս,
ի վերայ պատուճանի իմոյ վիճակ
36 արկանէին։ Եւ նստեալ պահէին զնա։
37 Եւ եդին ի վերայ գլխոյ նորա գրեալ
զՁեսս նորա, թէ Այս է Յիսուս, թա-
38 գաւորն Հրէից։ Յայնժամ հանին ընդ
նմա ի խաչ երկուս աւազակս, մի
յաջմէ նորա եւ մի յահեկէ։
39 Եւ որ անցանէին՝ հայհոյէին զնա,
40 շարժէին զգլուխս իւրեանց, եւ ասէին,
Վա՜հ, որ քակէիր զաւանդն եւ զերիս
աւուրս չինէիր զնա, ապրեցո զքեզ-
թէ Որդի ես Աստուծոյ, էջ ի խաչէդ։
41 Նոյնպէս եւ քահանայապետքն ձաղէին
հանդերձ գպրօքն եւ ծերովք եւ ասէին,
42 Զայլս ապրեցոյց, զինքն ոչ կարէ ապ-
րեցուցանել. եթէ թագաւոր է Իսրա-
յելի, իջցէ այժմ ի խաչէդ, եւ հաւա-
43 ատացուք դմա. եթէ յուսացաւ յԱստ-
ուած, փրկեսցէ այժմ զդա, եթէ կամի
զդա. քանզի ասաց եթէ Աստուծոյ
44 Որդի եմ։ Զնոյն եւ աւազակքն որ
խաչեալ էին ընդ նմա՝ նախատէին զնա։
45 Եւ ի վեց ժամէ աւուրն խաւար ե-
ղեւ ի վերայ ամենայն երկրի մինչեւ
46 ցինն ժամ։ Եւ ցինն ժամուն գոչեաց
Յիսուս ի ձայն մեծ եւ ասէ, Էլի, Էլի,
լամա սաբաքթանի. այսինքն է, Աս-
տուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թո-
47 ղեր զիս։ Ոմանք յայնցանէ որ անդր
կային՝ իբրեւ լուան, ասէին, Զեղիա
48 կարդայ զդա։ Եւ վազվազակի ընթա-
ցաւ մի ոմն ի նոցանէ, առ սպունգ մի
քացախով, հարեալ յեղեգան՝ եա ըմպել
49 նմա։ Եւ կէսքն ասէին, Թող, տեսցուք
եթէ գայ Եղիա փրկել զդա։
50 Եւ Յիսուս զարձեալ աղաղակեաց
ի ձայն մեծ եւ արձակեաց զոգին։
51 Եւ ահա վարագոյր տաճարին ցեղաւ
երկուս ի վերուստ մինչեւ ի վայր, եւ
երկիր չարժեցաւ, եւ վիմք պատռեաւ-
52 ցան։ Եւ գերեզմանք բացան եւ բա-
զում մարմինք ննջեցելոց սրբոց յար-
53 եան։ Եւ ելեալ ի գերեզմանաց յետ
յարութեանն նորա, մտին ի քաղաքն
սուրբ եւ երեւեցան բազմաց։
54 Իսկ հարիւրապետն եւ որ ընդ նմա
պահէին զՅիսուս՝ իբրեւ տեսին զչար-
ժումնն եւ զեղեալսն, երկեան յոյժ եւ
ասեն, Արդարեւ Աստուծոյ Որդի էր
սա։

55 Էին անդ կանայք բազումք, կային
ի հեռաստանէ եւ հայէին, որք եկին
ընդ Յիսուսի ի Գալիլէէ պաշտել զնա.
56 Յորս էր Մարիամ Մագդաղենացի, եւ
Մարիամ՝ Յակովբայ եւ Յովսեայ մայր,
եւ մայր որդւոցն Զեբեդեայ։
57 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի
մեծատուն յԱրիմաթեայ որում անուն
էր Յովսէփ, որ եւ աշակերտեցաւ իսկ
58 Յիսուսի։ Սա մատուցեալ առ Պիղա-
տոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի.
յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ
59 զմարմինն։ Եւ առեալ զմարմինն Յով-
60 սէփ՝ պատեաց սուրբ կտաւովք, Եւ եդ
ի նոր գերեզմանի զոր փորեաց ի վիմի.
եւ թաւալեցուցեալ կափարիչ ղրան
61 գերեզմանին վէմ մի մեծ՝ գնաց։ Անդ
էր Մարիամ Մագդաղենացի եւ մեւս
Մարիամն, նստէին հանդէպ գերեզ-
մանին։
62 Եւ ի վաղիւ անդր որ է յետ ուրբա-
թուն, ժողովեցան քահանայապետքն
63 եւ փարիսեցիքն առ Պիղատոս, Եւ ա-
սեն, Տէր, յիշեցաք զի մոլորեցուցիչն
այն ասէր մինչ կենդանին էր, թէ Յետ
64 երից աւուրց յառնեմ. Արդ հրամայեա
զգուշանալ գերեզմանին մինչեւ ցերիս
աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն ի-
ւերի՝ գողանայցեն զնա, եւ ասիցեն
ժողովրդեանն թէ Յարեաւ ի մեռելոց.
եւ լինիցի յետին մոլորութիւնն չար
65 քան զառաջինն։ Ասէ ցնոսա Պիղատոս,
Ունիք զզօրականն, երթայք, զգուշա-
66 ցարուք որպէս եւ գիտէք։ Եւ նոքա
երթեալ զգուշացան գերեզմանին, եւ
կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն։

ԳԼ· ԻԸ

1 Եւ յերեկոյի չաբաթուն յորում լու-
սանայր միաշաբաթին, եկն Մարիամ
Մագդաղենացի եւ մեւս Մարիամն տես-
2 անել զգերեզմանն։ Եւ ահա չարժումն
մեծ եղեւ, զի հրեշտակ Տեառն իջեալ
յերկնից մատուցեալ ի բաց թաւալե-
ցոյց զվէմն ի դրաց անտի, եւ նստէր
3 ի վերայ նորա. Եւ էր տեսիլ նորա
իբրեւ զփայլակն, եւ հանդերձ նորա
4 սպիտակ իբրեւ զձիւն։ Եւ յահէ անտի
նորա խռովեցան պահապանքն, եւ եղեն
5 իբրեւ զմեռեալս։ Պատասխանի եւ
հրեշտակն եւ ասէ ցկանայսն, Մի՛ եր-
կնչիք դուք, գիտեմ զի զՅիսուս զխա-
6 չեալն խնդրէք. Չէ աստ, քանզի
յարեաւ, որպէս ասացն. եկայք, տե-
7 սէք զտեղին ուր [1]կայր։ Եւ վաղվա-
զակի երթայք, ասացէք աշակերտացն
նորա թէ [2]Յարեաւ. եւ ահա յառա-
ջանայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տես-
8 անիցէք զնա. ահա ասացի ձեզ։ Եւ
եւեալ վաղվաղակի ի գերեզմանէ անտի
ահիւ եւ խնդութեամբ բազմաւ՝ ընթ-
ացան պատմել աշակերտացն։
9 Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս
եւ ասէ, Ո՛ղջ էք. եւ նոքա մատու-
ցեալ կալան զոտս նորա եւ երկիր պա-
10 զին նմա։ Յայնժամ ասէ ցնոսա Յի-
սուս, Մի՛ երկնչիք, երթայք, ասացէք
եղբարցն իմոց զի երթիցեն ի Գալիլեա
եւ անդ տեսցեն զիս։
11 Իբրեւ նոքա գնացին, ահա ոմանք
ի զօրականացն եկին ի քաղաքն, եւ
պատմեցին քահանայապետին զամե-
12 նայն որ ինչ եղեւն։ Եւ նոքա ժողով-
եալ հանդերձ ծերովքն, խորհուրդ առ-
եալ՝ արծաթ յոյժ ետուն զօրականացն,
13 Եւ ասեն, Ասասջիք եթէ Աշակերտքն
նորա եկեալ գիշերի գողացան զնա,
14 մինչ մեք ի քուն էաք։ Եւ եթէ լուր
լիցի այդ առ դատաւորն, մեք հաճես-
ցուք զնա եւ զձեզ անհոգս արասցուք։
15 Եւ նոցա առեալ զարծաթն, արարին
որպէս ուսանին. եւել համբաւս այս
ի Հրէից մինչեւ ցայսօր։
16 Իսկ մետասան աշակերտքն գնացին
ի Գալիլեա ի լեառնն՝ ուր ժամադիր
17 եղեւ նոցա Յիսուս։ Իբրեւ տեսին զնա,
երկիր պագին նմա, եւ ոմանք յեր-
18 կուացան։ Եւ մատուցեալ Յիսուս խօ-
սեցաւ ընդ նոսա եւ ասէ, Տուաւ ինձ
ամենայն իշխանութիւն յերկինս եւ
յերկրի. [3]որպէս առաքեաց զիս Հայր,
19 եւ ես առաքեմ զձեզ։" Գնացէք այսու-
հետեւ, աշակերտեցէք զամենայն հե-
թանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր
20 եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ։ Ուսու-
ցէք նոցա պահել զամենայն որ ինչ
պատուիրեցի ձեզ. եւ ահաւասիկ ես
ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ
ի կատարած աշխարհի։

---

[1]Բազմ. կայր Տէրն [3]ի Յունէն պոլոե
[2]Բազմ. Յարեաւ ի մեռելոց

ԳԼՈՒԽՔ ՄԱՐԿՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Էմր.
Վասն դիւահարին.	Ա.	23
Վասն Պետրոսի զրքանչին.	Ա.	29
Վասն բժշկութեան պէսպէս հիւանդութեանց.	Ա.	32
Վասն բորոտին.	Ա.	40
Վասն անդամալուծին.	Բ.	3
Վասն Ղեւեայ մաքսաւորի.	Բ.	14
Վասն գօսացեալ ձեռինն.	Գ.	1
Վասն առաքելոցն ընտրութեան.	Գ.	13
Վասն սերմնեացն առակի.	Դ.	2
Վասն սաստեալ ջուրցն.	Դ.	35
Վասն լեգէոնացն.	Ե.	1
Վասն դստեր ժողովրդապետին.	Ե.	21
Վասն տեառատեսին.	Ե.	25
Վասն համարոյ առաքելոցն.	Զ.	7
Վասն Յովհաննու, եւ Հերովդէի.	Զ.	14
Վասն հինգ հացին եւ երկուց ձկանցն.	Զ.	35
Վասն ի վերոյ ծովուն գնալոյ.	Զ.	47
Վասն անցանելոյն զպատուիրանաւն.	Է.	5
Վասն Ասորւոյ կնոջն փիւնիկեցւոյ.	Է.	24
Վասն համրոն եւ խլին.	Է.	31
Վասն եւթն հացին.	Ը.	1
Վասն խմորոյ փարիսեցւոցն.	Ը.	16
Վասն կուրին.	Ը.	22
Վասն հարցանելոյն ի կեսարիա.	Ը.	27
Վասն պայլակերպութեանն Տեառն.	Թ.	1
Վասն լուսնահարին.	Թ.	16
Վասն խորհելոյն թէ ո՞վ իցէ մեծ.	Թ.	32
Վասն հարցանելոյն թէ պա՞րտ է արձակել զկին.	Ժ.	1
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս.	Ժ.	17
Վասն որդւոցն Զեբեդեայ.	Ժ.	35
Վասն Բարտիմէոսի.	Ժ.	46
Վասն յաւանակին.	ԺԱ.	1
Վասն չորանալոյ թզենւոյն.	ԺԱ.	12
Վասն անյիշաչարութեան.	ԺԱ.	25
Վասն հարցանելոյ քահանայապետին զՏէրն.	ԺԱ.	27
Վասն այգւոյն.	ԺԲ.	1
Վասն հարցանելոյ զդահեկանէն.	ԺԲ.	13
Վասն սադուկեցւոցն.	ԺԲ.	18
Վասն դպրացն.	ԺԲ.	28
Վասն Տեառն հարցանելոյն զփարիսեցիսն.	ԺԲ.	35
Վասն երկու լումայիցն.	ԺԲ.	41
Վասն կատարածին.	ԺԳ.	3
Վասն ուրուբն եւ ժամուն.	ԺԳ.	32
Վասն օծանելոյ կնոջն զՏէրն իւղով.	ԺԴ.	3
Վասն զատկին.	ԺԴ.	12
Վասն մատնութեանն մարգարէացնալոյ.	ԺԴ.	18
Վասն Պետրոսի ուրացութեանն.	ԺԴ.	66
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն.	ԺԵ.	42
Վասն իւղարեր կանանցն.	ԺԶ.	1

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիս-
2 տոսի, Որդւոյ Աստուծոյ։ Որպէս եւ
գրեալ է ի մարգարէս, Ահաւասիկ ես
առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ
հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի
3 քո։ Ձայն բարբառոյ յանապատի, Պատ-
րաստ արարէք զճանապարհ Տեառն,
եւ ուղիղս արարէք զշաւիղս նորա։
4 Եւ եղեւ զի Յովհաննէս մկրտէր յա-
նապատի, եւ քարոզէր մկրտութիւն
ապաշխարութեան ի թողութիւն մե-
5 ղաց։ Եւ երթայր առ նա ամենայն աշ-
խարհն Հրէաստանի եւ Երուսաղեմա-
ցիք ամենեքեան, եւ մկրտէին ի նմա-
նէ ի Յորդանան գետ՝ խոստովանեալ
6 զմեղս իւրեանց։ Եւ էր Յովհաննէս
զգեցեալ ատեւ ուղտոյ, եւ գօտի մաշ-
կեղէն ընդ մէջ իւր. եւ կերակուր նո-
7 րա մարախ եւ մեղր վայրենի։ Քարո-
զէր եւ ասէր, Գայ զօրագոյնն քան
զիս զկնի իմ, որում չեմ բաւական
խոնարհել լուծանել զքրացս կօշկաց
8 նորա։ Ես մկրտեցի զձեզ ջրով, եւ նա
մկրտեսցէ զձեզ Հոգւով Սրբով։
9 Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ եկն
Յիսուս ի Նազարեթէ Գալիլեացւոց,
եւ մկրտեցաւ ի Յորդանան
10 նան։ Եւ նոյնժամայն ընդ վերանալ
ի ջրոցն տեսս ցկիալ զերկինս, եւ
զՀոգին [1]Աստուծոյ իբրեւ զաղաւնի
11 զի իջանէր ի վերայ նորա։ Ձայն եղեւ
յերկնից եւ ասէ, Դու ես Որդի իմ սի-
12 րելի, ընդ քեզ հաճեցայ։ Եւ նոյնժա-
13 մայն Հոգին հանէ զնա յանապատ։ Եւ
էր նա անդ զաւուրս քառասուն փոր-
ձեալ ի Սատանայէ, եւ էր ընդ գազանս.
եւ հրեշտակք պաշտէին զնա։
14 Բճ. Եւ յետ մատնելոյն Յովհաննու
եկն Յիսուս ի Գալիլեա. քարոզէր զա-
15 ւետարանն Աստուծոյ, Եւ ասէր թէ
կատարեալ է ժամանակ, եւ հասեալ է
արքայութիւնն Աստուծոյ, ապաչխա-
րեցէք եւ հաւատացէք յաւետարանն։
16 Իբրեւ անցանէր առ ծովեզերբն Գա-
լիլեացւոց, տեսս զՍիմովն եւ զԱնդրէ-
աս զեղբայր Սիմովնի, զի արկեալ էր
նոցա ուռկանս ի ծով, քանզի ձկնորսք
17 էին. Եւ ասէ ցնոսա Յիսուս, Եկայք
զկնի իմ եւ արարից զձեզ լինել որ-
18 սորդս մարդկան։ Եւ վաղվաղակի թող-
եալ զուռկանսն՝ զնացին զհետ նորա։
19 Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յա-
ռաջ՝ տեսս զՅակովբոս Զեբեդեայ եւ
զՅովհաննէս զեղբայր նորա, եւ զնոսա
ի նաւին մինչ կազմէին զուռկանս։
20 Եւ կոչեաց [2]զնոսա, եւ վաղվաղակի՝
թողեալ զհայրն իւրեանց զԶեբեդէոս
ի նաւին վարձկանօքն հանդերձ, զնա-
ցին զհետ նորա։
21 Բգ. Եւ մտանեն ի Կափառնայում,
եւ իսկ եւ իսկ ի շաբաթն մտեալ ի
22 ժողովուրդն՝ ուսուցանէր զնոսա։ Եւ
զարմանային ընդ վարդապետութիւն
նորա, զի ուսուցանէր զնոսա իբրեւ
իշխանութիւնս ունի, եւ ոչ՝ որպէս դպիրքն։
23 Եւ էր ի ժողովրդեանն նորա այր մի,
յորում այս պիղծ դայր ի նմա. որ ա-
24 զաղակեաց եւ ասէ, Թոյլ տուր, զի՞
կայ մեր եւ քո, Յիսուս Նազովրեցի,
եկիր կորուսանել զմեզ. գիտեմ զքեզ,
25 ով ես, Սուրբդ Աստուծոյ։ Սաստեաց
ի նա Յիսուս եւ ասէ, Կարկեաց եւ էլ
26 ի դմանէ։ Եւ զարկոյց զնա այն պիղծ,
եւ աղաղակեաց ի ձայն մեծ եւ էլ ի
27 նմանէ։ Եւ զարմացան ամենեքին, մին-
չեւ հծծել ընդ միմեանս եւ ասել, Զի՞նչ
է այս նոր վարդապետութիւնս, զի
իշխանութեամբ եւ այսոց պղծոց սաս-
28 ա՛կ, եւ հնազանդին սմա։ Եւ էլ լուր
նորա ընդ ամենայն կողմն Գալիլեա-
ցւոց։
29 Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդե-

[1] Ի Յ-ՈՆ գ-ԼՈՒԽ

[2] Յ-ՎԴ-ՓԻ, զնոսա վաղվաղակի, եւ

նէն՝ եկն ի տուն Սիմովնի եւ Անդրէայ Յակովբայ եւ Յովհաննու հանդերձ։
30 Եւ զոքանչ Սիմովնի դնէր ջերմացեալ, եւ վաղվաղակի ասեն ցնա վասն նորա։
31 Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ ձեռանէ նորա. եւ եթող զնա տենդն, եւ սպասէր զնոսա։
32 Եւ իրրեւ երեկոյ եղեւ ի մտանել արեգականն, բերէին առ նա զամենայն հիւանդս եւ զդիւահարս. Եւ էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունսն.
33 Եւ բժշկեաց բազում հիւանդս ի սէգս ախտից, եւ դեւս բազումս եհան. եւ ոչ տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա. [1]Թէ Քրիստոսն է՞։
35 ԲԹ. Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ել եւ գնաց յանապատ տեղի,
36 եւ անդ կայր յաղօթս։ Եւ գնաց զհետ նորա Սիմովն եւ որ ընդ նմա՛ն էին։
37 Եւ իրրեւ գտին զնա, ասեն ցնա Թէ
38 Ամենեքեան խնդրեն զքեզ։ Եւ ասէ ցնոսա, Եկայք երթիցուք եւ յայլ մօտաւոր գեղաքաղաքն, զի եւ անդ քարոզեցից, զի յայս իսկ նկատ եմ։ Եւ
39 քարոզէր ի ժողովուրդս նոցա ընդ ամենայն Գալիլեացիս, եւ դեւս հանէր։
40 Գայ առ նա բորոտ մի, աղաչէր, ի ծունր իջանէր եւ ասէր, Տէր, եթէ
41 կամիս, կարող ես զիս սրբել։ Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց զձեռն, մերձեցաւ ի նա եւ ասէ ցնա, Կամիմ, սրբեաց։
42 Եւ իրրեւ ասացն ցնա, վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւնն,
43 եւ սրբեցաւ։ Եւ սաստեալ նմա՝ եհան զնա արտաքս վաղվաղակի, եւ ասէ
44 ցնա, Զդոյչ լեր, մի՛ ումեք ինչ ասիցես. այլ երթ, ցոյց զքեզ քահանային, եւ մատո վասն սրբութեան քո պատարագ, զոր հրամայեաց Մովսէս ի վկայութիւն նոցա։ Եւ նա ելեալ սկսաւ
45 քարոզել յոյժ եւ հռչակ հարկանել զբանն, մինչ ոչ եւս կարող լինել նմա յայտնապէս ի քաղաք մտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիս էր. եւ գային առ նա յամենայն կողմանց։

ԳԼ. Բ

1 ԲԵ. Եւ մտեալ դարձեալ ի Կափառնայում յետ աւուրց, լուր եղեւ եթէ
2 ի տան է. եւ ժողովեցան բազումք, մինչեւ տեղի եւս ոչ լինել եւ ոչ առ
3 դրանն. եւ խօսէր նոցա զբանն։ Եւ գային առ նա, բերէին անդամալոյծ մի
4 բարձեալ ի չորից։ Եւ իրրեւ ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին զյարկն ուր էր Յիսուս, եւ բացեալ զառաստաղն՝ իջուցին զմահ-
5 ճիճան յորում կայր անդամալոյծն։ Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն, Որդեակ, թողեալ լինին քեզ մեղք քո։
6 Եւ էին ոմանք ի գրոց անտի որ անդ նստէին. եւ խոր-
7 հէին ի սիրտս իւրեանց, Զի՞նչ է այս որ խօսի սա զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ մի Աստ-
8 ուած։ Եւ գիտաց Յիսուս յոգի իւր թէ այնպէս խորհին ի սիրտս իւրեանց, եւ ասէ, Զի՞ խորհիք զայդ ի սիրտս
9 ձեր։ Զի՞նչ դիւրին է, ասել ցանդամալոյծն՝ Թողեալ լինին քեզ մեղք քո, եթէ՝ ասել, Արի, առ զմահիճս քո եւ
10 երթ [2]ի տուն քո՞։ Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ ի վերայ երկրի թողուլ զմեղս, (ասէ
11 ցանդամալոյծն,) Քեզ ասեմ, Արի, առ
12 զմահիճս քո եւ երթ ի տուն քո։ Եւ յարեաւ, եւ վաղվաղակի առեալ զմահիճն, ել առաջի ամենեցուն, մինչեւ զարմանալ ամենեցուն, եւ փառաւորեն զԱստուած եւ ասել Թէ Այսպիսի ինչ երբեք ոչ տեսաք։
13 ԲԶ. Եւ ել դարձեալ ի ծովեղրն, եւ ամենայն ժողովուրդն գայր առ նա.
14 եւ ուսուցանէր զնոսա։ Եւ մինչդեռ անցանէր, տեսս զՂեւի Ալփեայ զի նստէր ի մաքսաւորութեան, եւ ասէ ցնա, Ելի զկնի իմ. եւ յարուցեալ գնաց
15 զկնի նորա։ Եւ եղեւ ի բազմիլն նորա ի տան նորա, եւ բազում մաքսաւորք եւ մեղաւորք բազմեալ էին ընդ Յիսուսի եւ ընդ աշակերտան նորա. քանզի էին բազումք որ երթային զհետ նորա։
16 Իսկ գպիրքն եւ փարիսեցիք իրրեւ տեսին Թէ ուտէ ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս, ասեն ցաշակերտան նորա, Զի՞ է զի ընդ մեղաւորս եւ ընդ մաք-
17 սաւորս ուտէ [1]եւ ըմպէ՞։ Իրրեւ լուաւ Յիսուս, ասէ ցնոսա, Ոչինչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց. եւ ոչ

[1]Յոմանս պակաս

[2]ի բազում պակաս

եկի կոչել զարդարս , այլ՝ զմեղաւորս ։
18 Եւ էին աշակերտքն Յովհաննու եւ
[1]փարիսեցիքն ի պահս . գան եւ ասեն
ցնա , Ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու
եւ [2]փարիսեցիքն պահեն , եւ քո աշա-
19 կերտքդ ոչ պահեն ։ Եւ ասէ ցնոսա Յի-
սուս , Միթէ մա՞րթ ինչ իցէ որպէս
առաջատի , մինչ ընդ նոսա իցէ փե-
սայն , պահել . ցորքան ընդ իւրեանս
ունիցին զփեսայն , ոչ է մարթ պահել ։
20 Այլ եկեսցեն աւուրք , յորժամ վերաս-
ցի ի նոցանէ փեսայն , եւ ապա պա-
21 հեսցեն յաւուրն յայնմիկ ։ Ոչ ոք կա-
պերտ [3]նոր անթափ արկանէ ի վերայ
հնացեալ ձորձոյ . ապա թէ ոչ՝ առնու
լրութեամբն իւրով նորն ի հնոյ անտի ,
22 եւ չար եւս պատառումն լինի ։ Եւ ոչ
ոք արկանէ զգինի նոր ի տիկս հինս .
ապա թէ ոչ՝ պայթուցանէ [4]զգինին
զտիկսն , զգինին հեղու եւ տիկքն կո-
րընչին . այլ զգինի նոր ի տիկս նորս
արկանելի է ։
23 Բ. Եւ եղեւ նմա ի չաբաթու անց-
ցանել ընդ արտորայս , եւ աշակերտքն
ի դնալն իւրեանց սկսան հասկ կորղել
24 եւ ուտել ։ Եւ փարիսեցիքն ասեն ցնա ,
Տես , զի՞նչ գործեն աշակերտքն քո
25 ի չաբաթուս , զոր չէ արժան ։ Եւ ասէ
ցնոսա Յիսուս , Ո՞չ երբեք իցէ ըն-
թերցեալ ձեր զոր արարն Դաւիթ , յոր-
ժամ սղտոյն եղեւ , եւ քաղցեաւ նա
26 եւ որ ընդ նմայն էին ։ Զի՞նչպէս եմուտ
ի տունն Աստուծոյ առ Աբիաթարաւ
քահանայապետիւ , եւ զնացան զառա-
ջաւորութեան եկեր , եւ եւս եւ այնո-
ցիկ որ ընդ նմայն էին , զոր ոչ էր օրէն
27 ուտել , բայց միայն քահանայիցն ։ Եւ
ասէ ցնոսա , Շաբաթ վասն մարդոյ
եղեւ , եւ ոչ մարդ վասն շաբա-
28 թու ։ Ապա ուրեմն տէր է Որդի մար-
դոյ եւ շաբաթու ։

ԳԼ. Գ

1 Եւ եմուտ միւսանգամ ի ժողովուրդն ,
եւ էր անդ այր մի որոյ ձեռն դասա-
2 ցեալ էր ։ Եւ սպասէին նմա եթէ լմբըշ-
կեսցէ զնա ի չաբաթուն , զի չարա-
3 խօսեսցեն զնմանէ ։ Եւ ասէ ցայրն որոյ
ձեռնն դասացեալ էր , Արի , անդ ի մէջ ։
4 Եւ ասէ ցնոսա , Զի՞նչ արժան է ի չա-
բաթու , բարի՞ ինչ գործել եթէ չար
առնել , ոգի մի ապրեցուցանել՝ եթէ
5 կորուսանել . եւ նոքա լռեցին ։ Եւ հա-
յեցեալ Յիսուսի զնոքօք լի ցասմամբ ,
տրտմեալ վասն կուրութեան սրտից
նոցա՝ ասէ ցայրն , Զգեա զձեռն քո .
եւ նա ձգեաց , եւ ողջացաւ ձեռն նորա ։
6 Գկ. Եւ ելեալ արտաքս վաղվաղակի
փարիսեցիքն Հերովդիանոսօքն հան-
դերձ , խորհուրդ առնէին վասն նորա
թէ զիարդ կորուսցեն զնա ։
7 Իսկ Յիսուս աշակերտօքն իւրովք
գնաց ի ծովեզերն . եւ բազում ժողո-
վուրդ ի Գալիլեացւոց երթային զհետ
8 նորա , եւ ի Հրէաստանէ , եւ [5]Յերու-
սաղեմէ եւ յայնկոյս Յորդանանու եւ
որք ի Տիւրոսէ եւ ի Սիդովնէ , բազում
ժողովուրդ իբրեւ լսէին սրչաւ ինչ
9 առնէր՝ գային առ նա ։ Եւ ասէ ցաշա-
կերտսն իւր զի նաւակ մի պատրաս-
տական կացէ նմա վասն ամբոխին ,
10 զի մի՛ նեղեսցեն զնա ։ Բանզի զբաս-
զումս բժշկեաց . մինչեւ զալ խռնել
զնովաւ , զի մերձենային առ նա որք
11 ունէին ախտս ինչ ։ Եւ այսք սկզբնք
յորժամ տեսանէին զնա , անկանէին ա-
ռաջի նորա , աղաղակէին եւ ասէին թէ
12 Դու ես Որդին Աստուծոյ . եւ նա յոյժ
սաստէր նոցա , զի մի՛ յայտնի առնի-
ցեն զնա ։
13 Գբ. Ելանէ ի լեառնն եւ կոչէ առ ինքն
զորս ինքն կամեցաւ , եւ չոգան առ
14 նա ։ Եւ արար երկոտասանս զի լցեն
զնովաւ , եւ զի առաքեսցէ զնոսա քա-
15 րոզել , Եւ ունել իշխանութիւն բժըշ-
16 կելոյ զցաւս եւ հանելոյ զդեւս ։ Եւ
17 եդ անուն Սիմովնի՝ Պետրոս , Եւ Յա-
կովբու Զեբեդեայ եւ Յովհաննու եղ-
բօրն Յակովբայ՝ եդ նոցա անուանս
Բանեռեղէս , որ է Որդիք որոտման .
18 Եւ զԱնդրէաս , եւ զՓիլիպպոս , եւ
զԲարթողոմէոս , եւ զՄատթէոս զմաք-
սաւորն , եւ զԹովմաս , եւ զՅակովբոս
Ալփեայ , եւ զԹադէոս , եւ զՍիմովն
19 Կանանացի , Եւ զՅուդա Իսկարիով-
տացի , որ եւ մատնեացն զնա ։
20 Գգ. Գան ի տուն , եւ դայ միւսանգամ

[1]Ոմն. փարիսեցւոցն [2]Ոմն. փարիսեց-
ւոցն , այլ՝ աշակերտք փարիսեցւոցն
[3]Ի Յոանէն պակաս , որպէս եւ յամենայն ի Հայ . ձե-
ռագրաց [4]Ոմն. զգինին նոր
[5]Ըստ ոմն. Յերուսաղեմէ եւ Յեղոմայ

ընդ նոսա ժողովուրդն, մինչ զի եւ
21 հաց եւս ոչ ժամանել ուտել նոցա։ Եւ
իբրեւ լուան որ իւրքն էին՝ ելին ունել
զնա, զի համարէին թէ մոլեգնեալ իցէ։
22 Եւ գպիրքն որ յԵրուսաղեմէ իջեալ
էին՝ ասէին թէ Բէեղզեբուղ գոյ ի դմա,
եւ իշխանաւ դիւացն հանէ զդեւս։
23 Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն՝ առակօք
խօսէր ընդ նոսա, Զիա՞րդ կարէ Սա-
24 տանայ զՍատանայ հանել։ Եւ արդ
եթէ թագաւորութիւն յանձն իւր բա-
ժանեսցի, ոչ կարէ կալ թագաւորու-
25 թիւնն այն։ Եւ եթէ տուն յանձն իւր
26 բաժանեսցի, ոչ կարէ կալ տունն։ Եւ
եթէ Սատանայ ի վերայ անձին իւրոյ
յարեաւ եւ բաժանեալ իցէ, ոչ կարէ
27 կալ, այլ վախճանեալ է։ Այլ ոչ ոք
կարէ զկարասի հզօրի, մտեալ ի տունն
նորա, աւար հարկանել, եթէ ոչ նախ
զհզօրն կապիցէ, եւ ապա զտունն նորա
28 աւար հարկանիցէ։ Ամէն ասեմ ձեզ
զի Ամենայն թողի որդւոց մարդկան
մեղք եւ հայհոյութիւնք, որչափ եւ
29 հայհոյեսցեն. Բայց որ հայհոյեսցէ զՀո-
գին Սուրբ, ոչ ունիցի թողութիւն
յաւիտեան, այլ պարտապան լիցի յա-
30 ւիտենից մեղացն. Զի ասէին թէ Ա՛յս
պիղծ գոյ ի նմա։
31 ԳԴ. Գան եղբարքն եւ մայր նորա, եւ
արտաքոյ կացեալ՝ յղկեցին եւ կոչէին
32 զնա։ Եւ անդ ժողովուրդն չուրջ զնո-
ւաւ նստէր. եւ իբրեւ ասացին ցնա,
Ահաւասիկ մայր քո եւ եղբարք քո կան
33 արտաքոյ եւ ինդրեն զքեզ, Պատաս-
խանի ետ նոցա եւ ասէ, Ո՞վ է իմ
34 մայր կամ եղբարք։ Հայեցեալ չուրջ
զիւրեւս [1]յաչակերտան զի նստէին՝, եւ
ասէ, Ահաւասիկ մայր իմ եւ եղբարք
35 իմ. Զի որ առնիցէ զկամս Աստուծոյ՝
նա է իմ եղբայր եւ քոյր եւ մայր։

ԳԼ. Դ

1 ԳԵ. Դարձեալ սկսաւ ուսուցանել
առ ծովեզերբն, եւ խմբեցան զնովաւ
ժողովուրդք բազումք, մինչեւ ի նաւ
մտանել նմա եւ նստել ի ծովուն, եւ ա-
մենայն ժողովուրդն ծովեզերբն զգա-
2 մաքն ունէին։ Եւ ուսուցանէր զնոսա
առակօք բազում ինչ, եւ ասէր նոցա
3 ի վարդապետութեան իւրում, Լսէք.
ահաւասիկ ել սերմանող սերմանել։
4 Եւ եղեւ ի սերմանելն, ոմն անկաւ առ
ճանապարհաւ, եւ [2]եկն թռչունն եւ
5 եկեր զնա՝։ Եւ այլն անկաւ յապառա-
ժի, ուր ոչ գոյր հող բազում. եւ վաղ-
վաղակի բուսաւ, քանզի ոչ գոյր հիւթ
6 երկրին. Եւ յորժամ ծագեաց արեւ,
ջեռաւ, եւ զի ոչ գոյին արմատք, չա-
7 մաքեցաւ։ Եւ այլն անկաւ ի մէջ փշոց.
ելին փուշքն եւ հեղձուցին զնա, եւ
8 պտուղ ոչ ետ։ Եւ այլն անկաւ յեր-
կիր բարւոք, եւ ելեալ աճեցեալ տայր
պտուղ, եւ բերէր ընդ միոյ երեսուն
եւ ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ
9 հարեւր։ Եւ ասէր, Որ ունիցի ականջս
լսելոյ՝ լուիցէ։
10 ԳԶ. Եւ իբրեւ եղեւ առանձինն, հար-
ցին զնա որ զտասնովքն էին աչակեր-
11 տաքն հանդերձ զառականն։ Եւ ասէ զնո-
սա, Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս
արքայութեան Աստուծոյ, բայց նոցա
որ արտաքինքն են՝ ամենայն ինչ ա-
12 ռակօք լինի, Զի տեսանելով տեսցեն
եւ մի՛ տեսցեն, եւ լսելով լուիցեն եւ
մի՛ խմասցին, զի մի՛ երբեք դարձցին
13 եւ թողի նոցա։ Եւ ասէ զնոսա, Ո՞չ
գիտէք զառակս զայս, եւ զիա՞րդ զա-
14 մենայն առակսն գիտիցէք։ Որ սեր-
15 մանէն՝ զբանն սերմանէ։ Եւ նոքա են
որ առ ճանապարհաւն՝ ուր բանն սեր-
մանի, եւ յորժամ լսեն զնա, գայ Սա-
տանայ եւ հանէ զբանն սերմանեալ ի
16 սիրտս նոցա։ Եւ նոքա են որ յապա-
ռաժին սերմանեցան, որք յորժամ լսի-
ցեն զբանն, վազվազակի ինդուրեամբ
17 ընդունին. Եւ զի ոչ ունին արմատս
յանձինս, այլ առ ժամանակ մի են,
ապա ի հասանել նեղութեան կամ հա-
լածման վասն բանին՝ վազվազակի գայ-
18 թակղին։ Իսկ որ ի մէջ փշոյն սեր-
մանեցան՝ նոքա են, որ իբրեւ զբանն
19 լսեն, Եւ հոգք աշխարհիս եւ պատ-
րանք [3]մեծութեան մտանեն եւ հեղ-
ձուցանեն զբանն եւ անպտուղ լինի։
20 Եւ նոքա են որ յերկիրն բարւոք սեր-
մանեցան, որք լսեն զբանն եւ ընդու-
նին եւ տան պտուղ, ընդ միոյ երե-

[1] Բառ-ար՛, յորս նստէին

[2] ի Ց-ՆԴ, ար՛՝ եկին թռչունք եւ կերան զնա. այլ՝ եկին թռչունք երկնից եւ կերան զնա
[3] Բառ-ար՛, մեծութեան եւ ցանկութիւնք այլոց իրաց

սուն եւ ընդ միոյ վաթսուն եւ ընդ
միոյ հարեւր ։
21 Գէ. Եւ ասէ ցնոսա , Միթէ գա՞յ ճրագ
զի ընդ գրուանաւ դնիցի կամ ընդ
մահճաք . ո՞չ ապաքէն ի վերայ աչտա-
22 նակի դնիցի ։ Զի չէ ինչ ի ծածուկ որ
թէ ոչ յայտնեսցի , եւ ոչ եղեւ ինչ
23 գաղտնի՝ եթէ ոչ ի յայտ գայցէ ։ Եթէ
24 ոք ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ ։ Եւ
ասէ ցնոսա , Տեսէք զինչ լսէք , եւ
յաւելցի ձեզ որոց լսէք . որով չափով
25 չափէք , նովին չափեսցի ձեզ ։ Որ ոք
ունիցի՝ տացի նմա . եւ որ ոչն ունիցի,
եւ զոր ունին՝ բարձցի ի նմանէ ։
26 Դկ. Եւ ասէր , Այսպէս է արքայու-
թիւն Աստուծոյ , որպէս զի այր մի ար-
27 կանիցէ սերմանիս յերկիր . Եւ ննջիցէ
եւ յառնիցէ գշայդ եւ գշերեկ , եւ սեր-
մանիքն բուսանիցին եւ աճիցեն . եւ
28 նա ոչ դիտէ Թէ երկիրն ինքնին բերէ
զպտուղ . նախ զխոտն եւ ապա զհասկն,
եւ ապա զցորեանն առաք ի հասկին ։
29 Այլ յորժամ տայցէ զպտուղն , վաղվա-
գակի առաքի մանգաղ , զի հասեալ են
30 հունձք ։ Եւ ասէր , Ո՞ւմ նմանեցուս-
ցուք զարքայութիւնն Աստուծոյ , կամ
որո՞վ առակաւ առակեսցուք զնա ։
31 Որպէս հատն մանանխոյ որ յորժամ
սերմանիցի յերկիր , փոքրագոյն է քան
զամենայն սերմանիս որ են յերկիր ,
32 Եւ յորժամ սերմանիցի , բուսանի եւ
լինի մեծ քան զամենայն բանջար , եւ
արձակէ ոստս մեծամեծս , մինչեւ բա-
ւական լինել ընդ հովանեաւ նորա
33 թռչնոց երկնից բնակել ։ Եւ այնպիսի
առակօք խօսէր ընդ նոսա զբանն , որ-
34 պէս կարող լինէին լսել . Եւ առանց
առակի ոչինչ խօսէր ընդ նոսա , բայց
առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր
զամենայն ։
35 Դե. Եւ ասէ ցնոսա յաւուրն յայնմիկ
իբրեւ ընդ երեկս լինէր , Եկայք անց-
36 ցուք յայն կողմն ։ Թողուն զժողո-
վուրդն , եւ առնուն զնա նաւսն հան-
պերճ , եւ զայլ եւս նաւսն որ էին ընդ
37 նմա ։ Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ , եւ
զալիսն ի նաւն զեղոյր , մինչ դրեթէ
38 լի իսկ լինել ։ Եւ ինքն ննջէր ի խելս
նաւին ի վերայ բարձի . զարթուցանէին
զնա եւ ասէին , Վարդապետ , ոչի՞նչ է
39 քեզ փոյթ , զի կորնչիմք աւասիկ ։ Եւ
զարթուցեալ սաստեաց հողմոյն եւ ծո-
վուն , ասէ , Դադարեա , կարկեաց . եւ
զադարեաց հողմն եւ եղեւ խաղաղու-
40 թիւն մեծ ։ Եւ ասէ ցնոսա , Ընդէ՞ր
այդպէս վաւասիրաք էք , չե՞ւ եւս ու-
նիք հաւատս . եւ երկեան երկեւղ մեծ
եւ ասէին ցմիմեանս , Ո՞ւր արդեւք
իցէ սա , զի եւ հողմ եւ ծով հնազան-
դին սմա ։

ԳԼ. Ե

1 Եւ եկն յայնկոյս ծովուն՝ յաշխարհն
2 [1]Գերգեսացւոց ։ Եւ ընդ ելանելն նորա
ի նաւէ անտի , պատահեաց նմա այր մի
ի դերեզմանացն զոր ունէր այս սիրտ .
3 Որոյ եւ բնակութիւն իւր իսկ ի դե-
րեզմանս էր . եւ ոչ չղթայիւք ոք եւս
4 կարէր կապել զնա , վասն բազում ան-
գամ ոտնակապօք եւ չղթայիւք կա-
պելոյ եւ խզելոյ ի նմանէ զչղթայսն ,
եւ զոտնակապսն խորտակելոյ . եւ ոչ
5 ոք կարէր պարտել զնա . Քանզի հա-
նապազ գշայդ եւ գշերեկ ի գերեզմանս
եւ ի լերինս աղաղակէր , եւ կոծէր
6 զանձն իւր քարամբք ։ Իբրեւ տեսս զՅի-
սուս ի հեռաստանէ , ընթացաւ եւ եր-
7 կիր եպագ նմա ։ Աղաղակեաց ի ձայն
մեծ եւ ասէ , Զի՞ կայ իմ եւ քո , Յի-
սուս , Որդի Աստուծոյ բարձրելոյ ,
երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած , մի՛
8 տանջեր զիս ։ Քանզի ասէր ցնա ,Ել ,
9 այդ պիղծ , ի մարդոյ այսի ։ Եւ հար-
ցանէր ցնա Թէ Զի՞նչ անուն է քո .
եւ ասէ ցնա , Լէգէովն անուն է իմ ,
10 քանզի բազումք եմք ։ Եւ աղաչէին զնա
յոյժ , զի մի՛ առաքեսցէ զնոսա արտաքս
11 քան զաշխարհն ։ Եւ անդ էր առ լե-
րամբն երամակ մի խոզից արօտական
12 մեծ ։ Աղաչեցին զնա ամենայն դեւքն
եւ ասեն , Առաքեա զմեզ ի խոզսն , զի
13 մտցուք ի նոսա ։ Եւ հրամայեաց նոցա .
եւ իբրեւ ելին այնքան պիղծք , մտին
ի խոզսն , եւ դիմեաց երամակն ի գարէ
անտի ի ծովն . էին իբրեւ երկու հա-
14 զարք , եւ հեղձնուին ի ծովուն ։ Եւ
խոզարածքն փախեան եւ պատմեցին
ի քաղաքին եւ յագարակս . եւ ելին տես-
15 անել զինչ իցէ որ գործեցաւն ։ Գան
առ Յիսուս , եւ տեսանեն զդիւահարն
զի նստէր զգեցեալ եւ զգաստացեալ ,

[1]Ոմանք , Գադարացւոց

որ ունէր զլէգէոնին, եւ զահի հարան։
16 Եւ պատմեցին նոցա որոց տեսեալն էր, թէ զի՛նչ եղեւ այսահարին եւ
17 զի՛նչ վասն խոզիցն։ Եւ սկսան աղա-
18 չել զնա գնալ ի սահմանաց նոցա։ Եւ իբրեւ եմուտ նա ի նաւն, աղաչէր
19 զնա դիւահարն զի ընդ նմա իցէ։ Եւ Յիսուս ոչ ետ նմա [1]թող, այլ ասէ ցնա, Երթ ի տուն քո առ ընտանիս քո, եւ պատմեա նոցա որ [2]ինչ միանգամ Տէր
20 արար քեզ եւ ողորմեցաւ քեզ։ Եւ չորաւ եւ սկսաւ քարոզել ի Դեկա-պոլին զոր ինչ արար նմա Յիսուս, եւ ամենեքին զարմանային։
21 ԴԳ. Եւ իբրեւ անց Յիսուս [1]միւս-անգամ յայն կողմն, ժողովեցաւ առ
22 նա ժողովուրդ բազում, եւ էր առ ծովեզերբն։ Եւ ահա մի ի ժողովրդա-պետացն դայր, որում անուն էր Յայ-
23 րոս, եւ իբրեւ եահս զնա անկաւ առ ոտս նորա. Աղաչէր զնա յոյժ եւ ա-սէր թէ Դուստր [2]նորա մերձ է ի մահ, զի եկեալ [3]դնիցէ նմա ձեռն, որպէս
24 զի ապրեսցի եւ կեցցէ։ Եւ գնաց ընդ նմա. երթայր եւ ժողովուրդ բազում զհետ նորա եւ նեղէին զնա։
25 Եւ կին մի էր ի տեառտեսութեան
26 արեան զերկոտասան ամ. Եւ յոյժ վչտացեալ ի բազում բժշկաց, եւ ծա-խեալ զինչս իւր զամենայն եւ չէր ինչ օգտեալ, այլ եւս առաւել դայրացեալ։
27 Իբրեւ լուաւ զՅիսուսէ, եկն ի մէջ ամբոխին յետոյ եւ բուռն եհար զհան-
28 գերձէ նորա. Քանզի խորհէր ի մտի թէ միայն մերձեցայց ի հանդերձս նո-
29 րա, փրկեցայց։ Եւ վաղվաղակի ցա-մաքեցաւ աղբեւր արեան նորա. եւ զիտաց ի մարմին իւր թէ բժշկեցաւ
30 ի տանջանացն։ Եւ անդէն վաղվաղակի զիտաց Յիսուս յանձն իւր զզօրու-թիւնն որ ել ի նմանէ, դարձաւ յամ-բոխն եւ ասէ, Ո՞վ մերձեցաւ ի հան-
31 գերձս իմ։ Եւ ասեն ցնա աշակերտքն, Տեսանես զի ամբոխդ նեղէ զքեզ, եւ ասես թէ Ո՞վ մերձեցաւ ի հանգերձս
32 իմ։ Եւ չուրջ հայէր տեսանել [4]զնա զայն արար։
33 Եւ կինն զարհուրեալ եւ դողացեալ [4]վասն որոյ դաղտն արար", քանզի զիտէր զի՛նչ եղեւ նմա, եկն
34 անկաւ առաջի նորա, եւ ասաց զա-մենայն իրսն ստուգութեամբ։ Եւ Յի-սուս ասէ ցնա, Դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն
35 եւ եղիջիր ողջ ի տանջանաց քոց։
ԴԴ. Մինչդեռ նա զայն խօսէր, գան
36 ոմանք ի տանէ ժողովրդապետին եւ ասեն թէ Դուստրն քո մեռաւ, զի՞ եւս աչխատ առնես զվարդապետդ։ Իսկ
37 Յիսուս իբրեւ լուաւ զբանն ասացեալ, ասէ ցժողովրդապետն, Մի՛ երկնչիր,
38 բայց միայն հաւատա։ Եւ ոչ դոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս զեղ-
39 բայրն Յակովբայ։ Գայ ի տուն ժողո-վրդապետին, եւ տեսանէ ամբոխ յոյժ
40 եւ լալականս եւ աղաղակ յոյժ։ Եւ մտեալ ի ներքս ասէ ցնոսա, Զի՞ խռով-եալ էք եւ լայք, մանուկն ոչ է մեռ-եալ, այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա.
եւ նորա հանեալ արտաքս զամենես-եան, առնու ընդ իւր զհայր մանկանն եւ զմայր եւ զնոսա որ ընդ նմայն էին, եւ մտանէ ուր զնէր մանուկն։
41 Եւ կալեալ զձեռանէ մանկանն՝ ասէ ցնա, Տալիթա, կո՛ւմի. որ թարգմա-
42 նի, Աղջիկ դու, քեզ ասեմ, արի։ Եւ վազվազակի յարեաւ աղջիկն եւ զնայր, քանզի էր ամաց իբրեւ երկոտասանից. եւ զարմացան մեծաւ զարմանալեօք։
43 Եւ պատուէր տայր նոցա յոյժ, զի մի՛ ոք զիտասցէ զայն. եւ ասաց տալ նմա ուտել։

ԳԼ. Զ

1 ԴԵ. Եւ ել անտի եկն ի դաւառ իւր.
եւ երթային զհետ նորա աշակերտքն
2 իւր։ Եւ եղեւ ի չաբաթուն սկսաւ ուսուցանել ի ժողովրդեանն. եւ բա-զումք իբրեւ լսէին, զարմանային [4]ընդ վարդապետութիւն նորա" եւ ասէին, Ուստի՞ է սմա այս, կամ զի՞նչ է ի-մաստութիւնս որ տուեալ է սմա, զի
3 զօրութիւնք այսպիսիք ի ձեռաց նորա լինիցին։ Ո՞չ սա է [5]մանուկ հիւսնն եւ որդին" Մարեմայ, եղբայր Յակով-բայ եւ Յովսեայ եւ Յուդայի եւ Սի-մոնի, եւ չիցե՞ն քոյք դորա աստ

[1]Բազմ., միւսանգամ նաւաւ
[2]Յոյն., իմ [3]Յոյն., դնիցես
[4]Ի բազմս պակաս
[5]Բազմ., հիւսնն, որդին

4 առ մեզ . եւ գայթակղէին ի նա : Եւ
ասէ ցնոսա Յիսուս , Ոչ է մարգարէ
անարգ , բայց եթէ ի գաւառի իւրում
եւ յազգատոհմի եւ ի տան իւրում :
5 Եւ ոչ կարէր անդ եւ ոչ մի ինչ զո-
րութիւն առնել , բայց սակաւ հիւան-
6 դաց ձեռն եդեալ բժշկէր զնոսա : Եւ
զարմանայր վասն անհաւատութեան
նոցա :

ԴԶ. Եւ չրջէր չուրջ զգաւառսն եւ
7 ուսուցանէր : Եւ կոչեաց առ ինքն
զերկոտասանսն , եւ սկսաւ առաքել
զնոսա երկուս երկուս , եւ տայր նո-
ցա իշխանութիւն ի վերայ այսոց պղծ-
8 ոց : Եւ պատուիրեաց նոցա զի մի՛
ինչ բարձցեն ի ճանապարհ , բայց միայն
գաւազան . մի՛ պարկ , մի՛ հաց , մի՛
9 պղինձ ի գօտիս . Այլ ապանել հողա-
մաթս , եւ , Մի՛ զգենուցուք , ասէ ,
10 երկուս պարեզօտս : Եւ ասէր ցնոսա ,
Որ տուն մտանիցէք , անդէն օթևանս
11 կալջիք մինչեւ ելանիցէք անտի : Եւ
որ ոչ ընկալցին զձեզ եւ ոչ լսիցեն
ձեզ , յորժամ ելանիցէք անտի , թօթա-
փեսջիք զփոշի ոտից ձերոց ի վկայու-
թիւն նոցա :
12 Եւ ելեալ քարոզէին զի ապաչխա-
13 րեսցեն : Եւ զեւս բազումս հանէին ,
եւ օծանէին իւղով զբազումս հիւանդս
եւ բժշկէին զնոսա :

14 ԴԷ. Եւ լուաւ արքայ Հերովդէս ,
քանզի յայտնի եղեւ անուն նորա , եւ
ասէր թէ Յովհաննէս մկրտիչ յարեաւ
ի մեռելոց , եւ վասն այնորիկ զօրու-
15 թիւնք լինին նովաւ : Այլք ասէին թէ
Եղիա է , իսկ այլքն՝ թէ Մարգարէ է ,
կամ թէ իբրեւ զմի ի մարգարէից :
16 Իբրեւ լուաւ Հերովդէս , ասէ , Զորոյ
ես զղլուխն հատի զՅովհաննու , սա է
նա , յարեաւ ի մեռելոց :
17 Զի ինքն Հերովդէս առաքեաց կա-
լաւ զՅովհաննէս , եւ կապեաց զնա եւ
եդ ի բանտի վասն Հերովդիայ կնոջ
Փիլիպպոսի եղբօր նորա , զի նա կին
18 արար զնա : Քանզի ասէր Յովհաննէս
ցՀերովդէս թէ Ոչ է օրէն քեզ ունել
19 զկին եղբօր քո : Եւ Հերովդիա ոխա-
ցեալ էր ընդ նմա , եւ կամէր սպանա-
20 նել զնա եւ ոչ կարէր : Զի Հերովդէս
երկնչէր ի Յովհաննէ , քանզի գիտէր
զնա այր արդար եւ սուրբ , եւ սպա-
սէր նմա , եւ լուեալ ինքեան՝ բազում
ինչ առնէր , եւ քաղցրութեամբ լսէր
21 նմա : Իբրեւ օր մի լինէր պարապոյ ,
յորժամ ընթրիս տայր Հերովդէս յա-
ւուր ծննդոց իւրոց նախարարաց իւրոց
եւ հազարապետաց եւ մեծամեծաց Գա-
22 լիլեացւոց . Եւ ի մտանել դստերն Հե-
րովդիայ եւ ի կաքաւել , հաճոյ եղեւ
Հերովդի եւ բազմականացն . ասէ թա-
գաւորն ցաղջիկն , Խնդրեա յինէն զոր
23 ինչ կամիս , եւ տաց քեզ : Եւ երդ-
ուաւ նմա [1]բազում անգամ՝ , թէ Զոր
ինչ եւ խնդրեսցես դու յինէն տաց
քեզ , մինչեւ ցկէս թագաւորութեան
24 իմոյ : Նա ելեալ ասէ ցմայր իւր , Զի՞նչ
խնդրեցից . եւ նա ասէ , Զգլուխն Յով-
25 հաննու մկրտչի : Եւ մտեալ անդրէն
վերնանակի առ թագաւորն՝ ասէ , Կա-
միմ զի այժմ տացես ինձ վազվազակի
ի վերայ սկահեզ զգլուխն Յովհաննու
26 մկրտչի : Եւ արամեցաւ յոյժ թագա-
ւորն , այլ վասն երդմանցն եւ կոչնա-
կանացն ոչ կամեցաւ անարգել զնա :
27 Եւ առաքեաց վազվազակի թագաւորն
դահիճ , եւ հրամայեաց բերել զգլուխն
նորա . եւ չոգաւ պատեաց զնա ի բան-
28 սն , եւ երեր զգլուխն նորա սկահեզ
եւ ետ ցաղջիկն , եւ աղջիկն ետուր
29 ետ մօր իւրում : Իբրեւ լսեցին աշա-
կերտքն նորա , եկին , բարձին զմարմ-
ինն նորա եւ եդին ի դերեզմանի :

30 ԵԿ. Ժողովեցան առաքեալքն առ Յի-
սուս , եւ պատմեցին նմա զամենայն
ինչ զոր արարին եւ զոր ուսուցին :
31 Եւ ասէ ցնոսա Յիսուս , Եկայք զուք
առանձինն յանապատ տեղի , եւ հան-
գիջիք սակաւ մի , զի էին բազումք
որ երթային եւ գային , եւ հաց ան-
32 դամ չժամանէին ուտել : Եւ գնացին
նաւու յանապատ տեղի առանձինն :
33 Եւ [2]տեսին զնոսա զի երթային , եւ
[3]ղազային բազումք . եւ հետի յամենայն
քաղաքաց խուռն ընթանային անդր ,
34 եւ [4]մերձեցան առ նոսա՝ : Եւ ելեալ
եահս ամբոխ բազում եւ գթացաւ ի
նոսա , զի էին իբրեւ ոչխարք որոց
ոչ էին հովիւ . եւ սկսաւ ուսուցանել
զնոսա յոյժ :
35 Եւ իբրեւ բազում ժամ եղեւ , մա-

---

[1] Ի բազմս պակաս
[2] Ոմանք , ետես ամբոխն
[3] Բազմս , ծանեան
[4] Բազմս , յառաջ քան զնոսա

տուցեալ աչակերտքն ասէին, Տեղիս անապատ է. մինչդեռ աւուր կայ,
36 Արձակեա զժողովուրդդ, զի երթեալ չուրջ յագարակս եւ ի գեղս դնեսցեն իւրեանց [1]զինչ ուտիցեն՝, զի աստ ու-
37 տել ինչ ոչ ունին: Նա պատասխանի եւ ասէ ցնոսա, Դուք տուք դոցա ուտել. ասեն ցնա, Երթիցուք գնեսցո՞ւք երկերիւր դահեկանի հաց, եւ
38 տացուք դոցա ուտել: Ասէ ցնոսա, Քանի՞ նկանակ ունիք, երթայք տեսէք. իբրեւ դիտացին, ասեն ցնա,
39 Հինգ՝ եւ երկուս ձկունս: Եւ հրամայեաց նոցա բաղմել երախանս երա-
40 նանս ի վերայ դալար խոտոյ: Եւ բազմեցան դասք դասք՝ ուր հարեւր եւ
41 ուր յիսուն: Եւ առեալ զհինգ նկանակն եւ զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց, մանրեաց զնկանսն եւ եդ յաչակերտսն զի արկցեն նոցա, եւ զերկուս ձկունսն բաշխեաց
42 ամենեցուն: [2]Կերան եւ յագեցան.
43 Եւ բարձին զնշխարսն երկոտասան սա-
44 կաւի լի, եւ ի ձկանց անտի: Եւ էին որք կերանն իբրեւ արք հինգ հազար:
45 ԵԲ. Եւ նոյնժամայն ձեռնեաց զաչակերտսն մտանել ի նաւ, եւ յառաջագոյն քան զնա երթալ յայնկոյս ի Բեթսայիդա, մինչ ինքն զժողովուրդսն
46 արձակիցէ: Եւ հրաժարեալ ի նոցանէ
47 եւ ի լեառն կալ յաղօթս: Եւ իբրեւ եթեկոյ եղեւ, էր նաւն ի մէջ ծովուն,
48 եւ ինքն ի ցամաքի: Եւ ետես զնոսա հոգմակոծեալս ի վարելն, զի էր հողմն ընդդէմ նոցա. եւ զչորրորդ պահու պիչերոյն գայ առ նոսա գնալով ի վերայ ծովուն, եւ կամէր զանց առնել
49 առ նոքօք: Նոքա իբրեւ տեսին զինքն զնալ ի վերայ ծովուն, համարեցան թէ առաչօք ինչ լինիցի, եւ զաղաղակ
50 բարձին: Քանզի ամենեքեան տեսին զնա եւ խռովեցան. եւ նա անդէն խաղաղակի խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ, Քաջալերեցարուք, ես եմ, մի՛ եր-
51 կնչիք: Եւ ել ի նաւն առ նոսա, եւ դադարեաց հողմն. եւ առաւել եւս յիմարեալ էին ի միտս իւրեանց եւ զարմա-
52 նային յոյժ: Քանզի եւ ի վերայ հացին ոչ իմացան, զի էր սիրտ նոցա թըմբր-
53 եալ: Եւ իբրեւ անցին յայնկոյս, ե-
54 կին յերկիրն [3]Գեննեսարէթ: Եւ իբրեւ ելին ի նաւէ անտի, իսկ եւ իսկ ծանան զնա արք տեղւոյն այնորիկ: Եւ
55 ընթացեալ այսր անդր ընդ ամենայն գաւառն, սկսան մահճօք բերել զիւանդս, ուր լսէին թէ անդ իցէ: Եւ
56 ուր եւ մտանէր ի գեղս կամ ի քաղաքս կամ յագարակս, ի հրապարակս զնէին զախտաժէտս, եւ աղաչէին զնա զի զոնէ ի քղանցս հանդերձից նորա մերձենայցեն. եւ որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան:

ԳԼ. Է

1 ԵԳ. Եւ ժողովեցան առ նա փարիսեցիքն եւ ոմանք ի դպրացն որ եկեալ
2 էին յԵրուսաղեմէ: Եւ տեսեալ զոմանս յաչակերտաց անտի, զի խառնակ ձեռօք, այսինքն է անլուայ, ուտէին հաց,
3 բամբասեցին. Զի փարիսեցիքն եւ ամենայն Հրեայք եթէ ոչ բոնաւիր լուանան զձեռս, հաց ոչ ուտեն. քանզի
4 ունին զաւանդութիւն ծերոցն. Եւ ի հրապարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ մկրտիցին, ոչ ուտեն. եւ այլ ինչ բազում է զոր ընկալան ունել, մկրտութիւնս բաժակաց եւ սատմանաց եւ
5 պղնձեաց եւ մահճաց: Ապա հարցանեն զնա փարիսեցիքն եւ դպիրք թէ Ընդէ՞ր աչակերտքն քո ոչ գնան ըստ աւանդութեան ծերոցն, այլ խառնակ
6 ձեռօք հաց ուտեն: Նա պատասխանի եւ ասէ ցնոսա թէ Բարւոք մարգարէացաւ Եսայի վասն ձեր կեղծաւորաց, որպէս ասաց, Ժողովուրդս այս շրթամբք մեծարէ զիս, եւ սիրտք
7 նոցա հեռացեալ ի բացեայ են յինէն. Զուր պաշտեն զիս, ուսուցանեն վարդապետութիւնս զմարդկան պատուիր-
8 եալս: Թողեալ զպատուիրանն Աստուծոյ, ունիք զմարդկան աւանդութիւն[4]:
9 Եւ ասէ ցնոսա, Բարւոք խոտէք զպատուիրանն Աստուծոյ, զի զձեր աւան-
10 դութիւնն հաստատիցէք: Զի Մովսէս ասէ, Պատուեա զհայր քո եւ զմայր. եւ Որ չարախօսեսցէ զհօրէ կամ զմօրէ՝
11 մահու վախճանեսցի: Եւ դուք ասէք,

[1] Ոմանք, հաց
[2] Յոյն, կերան ամենեքին
[3] Ր-ղմ, Գեննեսարէթ, եւ զետեղեցին զնաւն
[4] Ոմանք յաւելուն, մկրտութիւնս սատմանաց եւ բաժակաց եւ այլոց սոցին նմանեաց առնէք բազումս

եթէ ասիցէ ոք ցհայր կամ ցմայր, կորբան, որ է պատարագ, զոր կինէն
12 օգտեսցիս · Եւ ոչ եւս տայք թոյլ նմա
13 առնել ինչ հօրն կամ մօր ։ Եւ անարդեք զբանն Աստուծոյ ձերով աւանդութեամբն, զոր աւանդեցէք, եւ բազում ինչ այլ որ այսմ նման է՝ առնէք ։
14 Եւ կոչեալ առ ինքն զամենայն ժողովուրդն՝ ասէ ցնոսա, Լուարուք ինձ
15 ամենեքեան եւ ի միտ առէք ։ Ոչինչ արտաքուստ ի մարդ մտեալ եթէ կարիցէ պղծել զնա, այլ որ ելանէ ի նմա-
16 նէ՝ այն է որ պղծէ զմարդն ։ Որ ունի-
17 ցի ականջս լսելոյ՝ լուիցէ ։ ԵԴ· Եւ իբրեւ եմուտ ի տուն յամբոխէ անտի, հարցանէին զնա աշա-
18 կերտքն վասն առակին ։ Եւ ասէ ցնոսա, Այդպէս եւ դուք անիմիտ էք · ո՞չ իմանայք եթէ ամենայն որ արտաքուստ ի ներքս մտանէ ի մարդ՝ ոչ
19 կարէ զնա պղծել · Զի ոչ եթէ ի սիրտ նորա մտանէ, այլ յորովայն, եւ արտաքս ելանէ, եւ սրբէ զամենայն կե-
20 րակուրն ։ Եւ ասէր թէ Որ ինչ ի
21 մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ ։ Զի ի ներքուստ ի սրտէ մարդկան խոր-
հուրդք չարութեան ելանեն, շնու-
22 թիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սպանութիւնք, շահութիւնք, չարութիւնք, նենգութիւնք, զինջութիւնք, չարակնութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգա-
23 մութիւն ։ Այս ամենայն չարիք ի ներքուստ ելանեն եւ պղծեն զմարդ ։
24 Եւ անտի յարուցեալ եկն ի սահմանս Տիւրոսի եւ Սիդովնի, եւ մտեալ ի տուն ոչ ումեք կամէր յայտնել, եւ
25 ոչ կարաց ծածկել ։ Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ, եկն անկաւ առաջի նո-
26 րա ։ Եւ կինն էր հեթանոս, Փիւնիկ Ասորի յազգէ · եւ աղաչէր զնա զի
27 դիւն հանցէ ի դստերէ նորա ։ Եւ Յիսուս ասէ ցնա, Թոյլ տուր նախ յագեցին մանկունք, զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել
28 շանց ։ Նա պատասխանի ետ եւ ասէ, Տէր, եւ շունք ի փշրանաց սեղանոյ
29 մանկանցն կերակրին ։ Եւ ասէ ցնա, Վասն այդր բանի երթ, էլ դեւն ի
30 դստերէ քումմէ ։ Գնաց ի տուն իւր եւ եկիւտ եղեալ զդեւն, եւ զդուստրն
զի անկեալ դնէր ի մահիճս ։
31 ԵԵ· Եւ եղեալ միւսանգամ ի սահմանացն Տիւրոսի եւ Սիդովնի, եւ եկն
ի ծովեզրն Գալիլեացւոց ի մէջ սահ-
32 մանացն ի Դեկապողիս ։ Եւ բերին առաջի նորա խուլ մի եւ համր, եւ աղաչէին զի ձեռն դիցէ ի վերայ նորա ։
33 Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս նորա եւ եթուք անդր · եւ կպաւ
34 զլեզուէ նորա, Հայեցաւ յերկինս · յոգւոց եհան եւ ասէ, Եփփաթա, որ է
35 բացիր ։ Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա, եւ լուծան կապանք լեզուի
36 նորա եւ խօսէր ուղիղ ։ Եւ պատուիրեաց նոցա զի մի՛ ումեք ասիցեն · եւ որչափ նա պատուիրէր նոցա, նոքա
37 եւս առաւել քարոզէին · Եւ եւս քան զեւս զարմանային եւ ասէին, Զամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ եւ համրից խօսել ։

ԳԼ· Ը

1 ԵԶ· Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժողովուրդ բազում էր, եւ ինչ ոչ ունէին ուտել · կոչեաց զաշակերտսն իւր
2 եւ ասէ ցնոսա, Գիաւ ես ի վերայ ժողովրդեանդ, զի արդ երեք աւուրք են մինչ առ իս են, եւ ոչ ունին զինչ
3 ուտիցեն · Եւ եթէ արձակեմ զդոսա նոքին ի տունս իւրեանց, նքմիցեն ի ճանապարհի · զի ոմանք ի դոցանէ
4 ի հեռաստանէ եկեալ են ։ Պատասխանի ետուն նմա աշակերտքն նորա, Ուստի՞ կարես յագեցուցանել զդոսա հացիւ յանապատի աստ ։ Եւ հարցանէր
5 զնոսա, Քանի՞ նկանակ հաց ունիք ·
6 եւ նոքա ասեն, Եւթն ։ Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի վերայ երկրի · եւ առեալ զեւթն նկանակն՝ գոհացաւ, եբեկ եւ տայր գաշակերտսն զի արկցեն · եւ արկին առաջի ժողո-
7 վրդեանն ։ Եւ ձկունս սակաւ ունէին, եւ զայն եւս օրհնեալ եւ հրամայեաց
8 արկանել ։ Կերան եւ յագեցան · եւ բարձին զնշխարս կոտորոյն եւթն
9 զամբիւղ ։ Եւ էին որ կերանն՝ իբրեւ չորք հազարք, եւ արձակեաց զնոսա ։
10 ԵԷ· Եւ նոյն ժամայն մտեալ ի նաւ

13-ԽԱ, կարիցէ ոք

հանդերձ աչակերտացն՝ եկն ի կողմանս
41 [1]Դալմանուենայ։ Եկին փարիսեցիքն
եւ սկսան վիճել ընդ նմա, եւ խնդրէ-
ին ի նմանէ նշան յերկնից փորձելով
42 զնա։ Եւ զայրացաւ յոգի իւր եւ ասէ,
Ձի՞ է ազգս այս նշան խնդրէ. ամէն
ասեմ ձեզ թէ տացի նշան ազգիս այս-
43 միկ։ Եթող զնոսա, դարձեալ եմուտ
ինաւ եւ գնաց յայնկոյս։
44 Եւ մոռացան հաց բառնալ, բայց
միայն մի նկանակ ունէին ընդ իւր-
45 եանս ի նաւին։ Եւ պատուիրէր նոցա
եւ ասէր, [2]Զգոյչ եղերուք՝ ի խմորոյ
անտի փարիսեցւոց եւ ի խմորոյ [3]Հե-
46 րովդիանոսայ։ Եւ խորհէին ընդ մի-
մեանս եւ ասէին թէ Զի հաց ոչ ու-
47 նիմք։ Գիտաց Յիսուս եւ ասէ ցնոսա,
Ձի՞ խորհիք [4]ի սիրտս ձեր, թերահա-
ւատք՝, թէ հաց ոչ ունիք. տակաւին
ո՞չ իմանայք եւ ո՞չ յիշէք. ապչուս-
48 թիւն ունի զսիրտս ձեր. Աչք դոն
եւ ո՞չ տեսանէք, ականջք են եւ ո՞չ
լսէք, [5]եւ ո՞չ իմանայք տակաւին՝, եւ
49 ո՞չ յիշէք։ Յորժամ զհինգ նկանակն
ի հինգ հազարսն, եւ քանի՞ սակաւի
բարձէք զկոտորոյն լի. եւ ասեն ցնա,
50 Երկոտասան։ Եւ յորժամ զեօթն նկա-
նակն ի չորս հազարսն, քանի՞ զամբիւղ
լի բարձէք զկոտորոյն. եւ նոքա ասեն,
51 Եւթն։ Եւ ասէ ցնոսա, Իսկ դիւ՞րդ
ոչ իմանայք։
52 Գան ի Բեթսայիդա, եւ ածեն առ նմա
նորա կոյր մի, եւ աղաչէին զնա զի
53 մերձեսցի ի նա։ Եւ առեալ զձեռանէ
կուրին՝ հանն արտաքոյ չինին, եթուք
յաչս նորա եւ ձեռն եդ ի վերայ նորա։
եւ հարցանէր ցնա թէ տեսանիցէ՞ դինչ։
54 [6]Բացաւ, եւ ասէր, Տեսանեմ զմար-
55 դիկս զի չրչին իբրեւ զծառս։ Դար-
ձեալ եդ ձեռս ի վերայ աչաց նորա,
[7]եւցաց, եւ տեսանէր. ողջացաւ, եւ
56 տեսանէր համարձակ զամենայն։ Ար-
ձակեաց զնա ի տուն իւր եւ ասէ,
Ի չինդ մի՛ մտանիցես, [8]այլ երթ ի տուն
քո. եւ յորժամ ի չինն մտանիցես, մի՛
ումեք ասիցես ի չինին։՝

27 Զև. Եւ ել Յիսուս աչակերտօքն
հանդերձ ի չինս կեսարեայ Փիլիպ-
պեայ, եւ ի ճանապարհին հարցանէր
ցաչակերտսն եւ ասէր, Զո՞ ուստեք
28 ասեն զինէն մարդիկն թէ իցեմ։ Նոքա
ետուն պատասխանի եւ ասեն, ԶՅով-
հաննէս մկրտիչ, եւ այլք՝ Զեղիա, եւ
այլք՝ Զմի ոք ի մարգարէից անտի։
29 Ասէ ցնոսա, Իսկ դուք զո՞ ուստեք
ասէք զինէն թէ իցեմ. պատասխանի
ետ Պետրոս եւ ասէ ցնա, Դու ես
30 Քրիստոն։ Եւ սաստեաց ինոսա զի
մի՛ ումեք ասիցեն զնմանէ։
31 Եւ սկսաւ ուսուցանել զնոսա թէ
պարտ է Որդւոյ մարդոյ բազում չար-
չարանս ընդունել, եւ անարգել յե-
րիցանց եւ ի քահանայապետից եւ
ի դպրաց, եւ մեռանել եւ յերիր աւուր
32 յառնել։ Եւ համարձակ զբանն խօսե-
ցաւ. եւ առեալ զնա մեկուսի Պետ-
33 րոսի՝ սկսաւ սաստել նմա։ Եւ նա
դարձաւ ետես զաչակերտսն, սաստեաց
Պետրոսի եւ ասէ, Երթ յետս իմ, Սա-
տանայ, զի ոչ խորհիս դու զԱստուա-
ծոյն, այլ զմարդկանս։
34 Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն
աչակերտօքն հանդերձ՝ ասէ ցնոսա,
Եթէ ոք կամի զալ զկնի իմ, ուրացցի
զանձն իւր եւ բարձցէ զխաչ իւր եւ
35 կեսցէ զկնի իմ։ Զի որ կամիցի ապ-
րեցուցանել զանձն իւր՝ կորուսցէ զնա.
եւ որ կորուսցէ զանձն իւր վասն ա-
36 ւետարանին՝ ապրեցուսցէ զնա։ Զի՞նչ
օգուտ է մարդոյ եթէ զաշխարհ ամե-
նայն չահեսցի, եւ զանձն իւր տու-
37 ժեսցի. [9]Փանդի զի՞նչ տացէ մարդ
38 փոխանակ անձին իւրոյ։ Զի որ ոք
ամօթ համարեսցի զիս եւ զբանս իմ
ի հնացող եւ ի մեղաւոր ազգիս յայս-
միկ, եւ Որդի մարդոյ յամօթ արասցէ
զնա, յորժամ եկեսցէ փառօք Հօր իւրոյ
39 [10]եւ հրեշտակաց սրբոց՝։ Եւ ասէ ցնո-
սա, Ամէն ասեմ ձեզ, զի են ոմանք
ի սոցանէ որ աստ կան, որք մի՛ ճա-
չակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զար-
քայութիւն Աստուծոյ եկեալ զօրու-
թեամբ։

---

[1] Յ-ին, Դալմանուեթեայ
[2] Բ-ալ-մ, Տեսէք, զգոյշ եղերուք
[3] Բ-ալ-մ, Հերովդէ
[4] ի Բ-ալ-մ պ-ի-ս-ե
[5] ի Յ-ին պ-ի-ս-ե
[6] Յ-ին, Հայեցաւ
[7] Բ-ալ-մ, եւս Հայել
[8] Բ-ալ-մ, և մի՛ ումեք ասիցես ի չինին

[9] Ր-հն-ի, կամ
[10] Յ-ին, Հանդերձ հրեշտակօք սրբովք

ԳԼ. Թ

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս, եւ հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձին, եւ յայլակերպս
2 եղեւ առաջի նոցա։ Եւ ձորձք նորա եղեն փայլուն սպիտակ [1]յոյժ, որպէս թաիիչք երկրի ոչ կարեն այնպէս սպի-
3 տակայուցանել։ Եւ երեւեցաւ նոցա Եղիա Մովսիսիւ հանդերձ, եւ խօսէին
4 ընդ Յիսուսի։ Պատասխանի եւ Պետրոս եւ ասէ ցՅիսուս, Ռաբբի, բարւոք է մեզ առ լինել. եւ արասցուք երիս տաղաւարս, մի՝ քեզ, եւ մի՝ Մովսիսի,
5 եւ մի՝ Եղիայի. Ոչ գիտէր զինչ
6 խօսէր, զի զարհուրեալ էին։ Եւ եղեւ ամպ մի հովանի ի վերայ նոցա, ձայն եղեւ յամպոյ անտի եւ ասէ, Դա է
7 որդի իմ սիրելի, դմա լուարուք։ Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր՝ ոչ եւս զոք ուրեք տեսին, բայց միայն
8 զՅիսուս ընդ իւրեանս։ Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա զի մի՛ ումեք պատմեսցեն զոր տեսին, բայց յորժամ Որդի մարդոյ
9 ի մեռելոց յարիցէ։ Եւ նոքա զբանն ի մտի ունէին, եւ խնդրէին ընդ միմեանս թէ զի՞նչ իցէ ի մեռելոցն յառ-
10 նել։ Հարցին զնա եւ ասեն, Զի՞նչ է այն զոր դպիրքն ասեն եթէ Նախ եւ-
11 զիայի պարտ է գալ։ Նա պատասխանի եւ ասէ ցնոսա եւ ասէ, Եղիա նախ եկեալ յարդարեսցէ զամենայն. իսկ զիա՞րդ գրեալ է զՈրդւոյ մարդոյ, զի բազում
12 ինչ չարչարեսցի եւ անգոնեսցի։ Այլ ես ասեմ ձեզ եթէ Եղիա եկն, եւ ա-
բարին ընդ նա զինչ եւ կամեցան, որ-
պէս եւ գրեալ է վասն նորա։
13 ՁԹ. Եւ եկեալ առ աշակերտսն, տեսին
ամբոխ չուրջ զնոքօք, եւ զդպիրսն՝ զի
14 վիճէին ընդ նոսա։ Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն իբրեւ տեսին
զնա, զարմացան, եւ ընդ առաջ ըն-
15 թացեալ ողջոյն տային նմա։ Եւ հարց ցնոսա թէ Զի՞նչ վիճէիք ընդ նոսա։
16 Պատասխանի եւ մի ումն ի ժողովրդենէն եւ ասէ, Վարդապետ, ածի զորդի
17 իմ առ քեզ, զոր ունի այս համր. Եւ
ուր հասանէ, զարկուցանէ զնա. եւ փրփրէ եւ կրճտէ զատամունս իւր եւ ցամաքի. եւ ասացի ցաշակերտսն քո
զի հանցեն, եւ ոչ կարացին հանել զնա։
18 Պատասխանի ետ նոցա եւ ասէ, Ո՛վ ազգ անհաւատ, մինչեւ ցի՞ր իցեմ ընդ ձեզ, մինչեւ ցի՞ր անասցեմ ձեզ.
19 ածէք զնա առ իս։ Եւ ածին զնա առ նա. իբրեւ տեսին զնա այն, վարդա-
զակի չարժէցաւ զնա, եւ անկեալ յեր-
20 կիր թաւալէր եւ փրփրեայր։ Եհարց հայր նորա եւ ասէ, Քանի՞ ժամանակք են յորմէ հետէ այդ եղեւ դմա.
21 եւ նա ասէ, Ի մանկութենէ։ Բազում անգամ ի հուր արկանէ եւ ի ջուր զի
կորուսցէ զդա. արդ եթէ կարող ինչ
ես, օգնեա մեզ, Տէր, գթացեալ ի վե-
22 րայ մեր։ Եւ Յիսուս ասէ ցնա, [2]Ասա-
ցեր թէ կարող ես", ամենայն ինչ հնա-
23 րաւոր է այնմ, որ հաւատայն։ Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր մանկանն եւ ասէ, [3]Հաւատամ, օգնեա
24 անհաւատութեանս իմում։ Իբրեւ ետես Յիսուս եթէ կուտէ ժողովուրդն
ի վերայ, սաստեաց այսոյն պղծոյ եւ
ասէ, Համրդ եւ խուլ այս, ես ասեմ
քեզ հրամայեմ, ել ի դմանէ, եւ այլեւս
25 մի՛ մտանիցես ի դա։ Եւ աղաղակեաց եւ յոյժ լլկեաց զնա եւ ել. եւ եղեւ
[4]սպատանեակն իբրեւ զմեռեալ, մինչեւ
26 բազմայ իսկ ասել թէ Մեռաւ։ Եւ Յիսուս կալաւ զձեռանէ նորա, յարոյց
27 զնա, եւ կանգնեցաւ։ Եւ իբրեւ եմուտ նա ի տունն, աշակերտքն առանձինն
հարցին զնա, Մեք ընդէ՞ր ոչ կարա-
28 ցաք հանել զնա։ Եւ ասէ ցնոսա, Այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք
եւ աղօթիւք։
29 ՁԹ. Եւ անտի եկեալ անցանէին առ Գալիլեացւովք, եւ ոչ կամէր եթէ ոք
30 գիտասցէ։ Քանզի ուսուցանէր զաշա-
կերտսն իւր եւ ասէր ցնոսա թէ Որդի
մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդկան,
եւ սպանցեն զնա, եւ իբրեւ սպանցի,
31 յերիր աւուր յառնէ։ Եւ նոքա ոչ գի-
տէին զբանն, եւ երկնչէին հարցանել
ցնա։
32 Եկն ի Կափառնայում, եւ իբրեւ ե-
մուտ ի տունն, հարցանէր զնոսա, Զի՞նչ

[1] Ոմն., յոյժ իբրեւ զթիւն

[2] Ի յոն., ոմն., եթէ կարող ես հաւատալ. Այլ՝ Եթէ կարող ես

[3] Ոմն., Հաւատամ, Տէր, [4] Ի յոն. պոյոե

վիճէիք զճանապարհայն ընդ միմեանս։
33 Եւ նոքա լուռ լինէին, քանզի ընդ
միմեանս վիճէին ի ճանապարհին թէ
34 ո՛վ մեծ իցէ։ Եւ իբրեւ նստաւ, կո-
չեաց զերկոտասանսն եւ ասէ ցնոսա,
Եթէ ոք կամի առաջին լինել, եղիցի
ամենեցուն կրտսեր եւ ամենեցուն
35 պաշտօնեայ։ Եւ առեալ մանուկ մի
կացոյց ի մէջ նոցա. եւ ընկալեալ զնա
36 ի գիրկս իւր՝ ասէ ցնոսա, Որ միան-
գամ յայսպիսի մանկտւոյ ընկալցի յա-
նունն իմ, զիս ընդունի. եւ որ զիս
ընդունիցի, ոչ զիս ընդունի, այլ՝ զայն
37 որ առաքեացն զիս։ Պատասխանի ետ
նմա Յովհաննէս եւ ասէ, Վարդապետ,
տեսաք զոմն զի յանունն քո դեւս հա-
նէր եւ զմեր կնի ոչ չրջէր, եւ ար-
38 գելաք զնա։ Եւ նա ասէ, Մի՛ արգե-
լուք զնա, զի ոչ ոք է որ առնէ զօ-
րութիւնս յանունն իմ, եւ կարիցէ հայ-
39 հոյել զիս*։ Զի որ ոչն է ընդ [1]մեզ հա-
40 կառակ՝ ի [2]մեր կոյս է։ Եւ որ ոք ար-
բուսցէ ձեզ ջուր բաժակաւ [3]յանունս
յայս՝ թէ դուք Քրիստոսի էք, ամէն
ասեմ ձեզ, մի՛ կորուսցէ վարձս իւր։
41 Եւ որ ոք գայթակղեցուսցէ զմի ի փո-
քրկանացս որ հաւատան յիս, լաւ էր
նմա առաւել եթէ արկեալ էր ընդ պա-
րանոց նորա երկան իշոյ, եւ ընկեց-
42 եալ ի ծով։ Եւ եթէ գայթակղեցուսցէ
զքեզ ձեռն քո, հատ ընկեա ի քէն.
զի լաւ իցէ քեզ խեղ մտանել ի կեանսն
[4]յաւիտենից, քան երկուս ձեռս ունել
եւ երթալ ի գեհեն ի հուրն անչէջ,[5]
43 Եւ եթէ ոտն քո գայթակղեցուսցէ
զքեզ, հատ ընկեա զնա ի քէն. լաւ
իցէ քեզ կաղ մտանել ի կեանսն [4]յա-
ւիտենից, քան երկուս ոտս ունել եւ
46 անկանել ի [6]գեհեն։[7] Եւ եթէ ակն քո
գայթակղեցուսցէ զքեզ, հան զնա ի
բաց. լաւ իցէ քեզ միով ակամբ մտա-
նել յարքայութիւնն Աստուծոյ, քան
երկուս աչս ունել եւ անկանել ի գե-
47 հեն. Ուր որդն նոցա ոչ մեռանի եւ
48 հուրն ոչ չիջանի։ Զի ամենայն [8]ինչ
49 հրով յաղեսցի[9]։ Բարւոք է աղ. եւ
եթէ աղն անհամեսցի, ի՞ւ համեմեսցի.
արդ զուք կալարուք յանձինս ձեր
աղն, եւ խաղաղութիւն արարէք ընդ
միմեանս։

ԳԼ. Ժ

1 ՁԴ. Եւ անտի յարուցեալ գայ ի սահ-
մանս Հրէաստանի յայնկոյս Յորդա-
նանու. եւ երթայր դարձեալ խռնեալ
ժողովուրդն առ նա, եւ որպէս սովոր
էր, միւսանգամ ուսուցանէր զնոսա։
2 Իսկ փարիսեցիքն մատուցեալ փոր-
ձելով հարցանէին զնա եւ ասէին, Եթէ
Արժա՞ն իցէ առն զկին իւր արձակել։
3 Նա պատասխանի ետ նոցա եւ ասէ,
4 Զի՞նչ պատուիրեաց ձեզ Մովսէս։ Եւ
նոքա ասեն, Մովսէս հրամայն ետ գիր
5 մեկնելոյ գրել եւ արձակել։ Պատաս-
խանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա,
Վասն խստասրտութեան ձերոյ գրեաց
6 ձեզ զպատուիրանն զայն. Այլ ի սկզբա-
նէ արարածոց արու եւ էգ արար
7 զնոսա Աստուած, եւ ասէ, Վասն այ-
սորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր,
8 եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, Եւ ե-
ղիցին երկուքն ի մարմին մի, եւ այ-
նուհետեւ ոչ են երկու, այլ՝ մարմին
9 մի։ Արդ զոր Աստուած զուգեաց,
10 մարդ մի՛ մեկնեսցէ։ Եւ ի տան դար-
ձեալ աշակերտքն զնոյն հարցին ցնա։
11 Եւ ասէ ցնոսա, Եթէ այր արձակեսցէ
12 զկին իւր եւ արասցէ այլ, շնայ։ Եւ
կին եթէ ելցէ յառնէ իւրմէ եւ եղիցի
առն այլում, շնայ։
13 ԶԵ. Եւ մատուցանէին առ նա ման-
կտի, զի ձեռն դիցէ նոցա. իսկ աշա-
կերտքն սաստէին այնոցիկ որ մատու-
14 ցանէինն։ Իբրեւ ետես Յիսուս, բար-
կացեալ սաստեաց նոցա եւ ասէ, Թոյլ
տուք մանկտւոյդ գալ առ իս, եւ մի՛
արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է
15 արքայութիւն Աստուծոյ։ Ամէն ասեմ
ձեզ, Որ ոչ ընկալցի զարքայութիւն
Աստուծոյ իբրեւ զմանուկ՝ ոչ մտցէ
16 ի նա։ Եւ առեալ զնոսա ի գիրկս՝ ձեռն
եդ ի վերայ եւ օրհնեաց զնոսա։

---

[1]Ոմանք, ձեզ
[2]Ոմանք, ձեր
[3]Ոմանք, յանունն իմ
[4]Ի Յունին պակաս
[5]Բազումք յօրինակս, 43 Ուր որդն նոցա ոչ մեռանի, և հուրն ոչ չիջանի։
[6]Ոմանք, գեհենն ի հուրն անչէջ
[7]Բազումք յօրինակս, 45 Ուր որդն նոցա ոչ մեռանի, և հուրն ոչ չիջանի։
*Բազումք յօրինակս, վաղվաղակի
[8]Յունն, ոք
[9]Ոմանք յօրինակս, և ամենայն զոհ աղիւ յաղեսցի

47 Եւ ընդ ելանելն նորա անտի ի ճա-
նապարհ, առաւասիկ ոմն մեծատուն
ընթացեալ ի ծունր իջանէր, հարցա-
նէր ցնա եւ ասէր, Վարդապետ լարի,
զի՞նչ արարից զի կեանսն յաւիտե-
48 նական ժառանգեցից։ Եւ Յիսուս
ասէ ցնա, Զի՞ ասես զիս բարի. չիք
49 ոք բարի բայց մի Աստուած։ Զպատ-
ուիրանս գիտես. Մի՛ չնար, Մի՛ սպա-
նաներ, Մի՛ գողանար, Մի՛ սուտ
վկայեր,[1] Պատուեա զհայր քո եւ զմայր։
20 Նա պատասխանի ետ եւ ասէ ցնա,
Վարդապետ, զայդ ամենայն արարի
ի մանկութենէ իմմէ, [2]արդ զի՞նչ եւս
21 պակաս իցեմ։ Եւ Յիսուս հայեցեալ
ի նա՝ սիրեաց զնա, եւ ասէ ցնա, Մի
ինչ պակասէ ի քէն. երթ կամիս կա-
տարեալ լինել, երթ, զոր ինչ ունիս
վաճառեա եւ տուր ազքատաց, եւ ու-
նիցիս գանձս յերկինս. եւ առ զխաչն
22 եւ եկ զկնի իմ։ Եւ նա խժռեալ
ընդ բանն՝ գնաց տրտում, զի ունէր
23 ինչս բազումս։ Եւ հայեցեալ յայսկոյս
յայնկոյս Յիսուս՝ ասէ ցաշակերտան,
Զի՛րդ դժուարին է որ զինչսդ ունին,
24 մտանել յարքայութիւն Աստուծոյ։ Եւ
աշակերտքն զարմացեալ էին ի վերայ
բանիցն նորա. իսկ Յիսուս դարձեալ
պատասխանի ետ նոցա եւ ասէ, Որ-
դեակք, [3]ո՛րչափ դժուարին է յուսա-
ցելոյ զինչս մտանել յարքայութիւն
25 Աստուծոյ։ Դիւրին է մալեայ ընդ ծակ
ասղան անցանել, քան մեծատան յար-
26 քայութիւն Աստուծոյ մտանել։ Եւ
նոքա առաւել եւս զարմանային եւ ա-
սէին ընդ միմեանս, Իսկ ո՞վ կարաս-
27 ցէ ապրել։ Հայեցեալ ընդ նոսա Յի-
սուս ասէ, Առ ի մարդկանէ այդ ան-
հնարին է, այլ ոչ առ յԱստուծոյ[3]։
28 ԶԶ. Սկսաւ ասել ցնա Պետրոս, Ա-
հաւասիկ մեք թողաք զամենայն եւ
29 եկաք զկնի քո։ Պատասխանի ետ Յի-
սուս եւ ասէ, Ամէն ասեմ ձեզ, Ոչ
ոք է որ եթող զտուն կամ զեղբարս
կամ զքոյր կամ զհայր կամ զմայր
կամ [4]զորդիս կամ զագարակս վասն
30 իմ [5]կամ վասն աւետարանին, եթէ ոչ
առնուցու հարիւրապատիկ այժմ յայսմ
ժամանակի տունս եւ եղբարս եւ քոյր
եւ մայր եւ որդիս եւ ագարակս հա-
լածանօք հանդերձ, եւ յաչխարհին որ
գալոց է՝ զկեանսն յաւիտենականս։
31 Զի բազումք եղիցին առաջինք՝ յե-
տինք, եւ յետինք՝ առաջինք։
32 Եւ էին ի ճանապարհի մինչդեռ ե-
լանէին յԵրուսաղէմ. եւ երթայր Յի-
սուս առաջի քան զնոսա, եւ զարմա-
ցեալ էին որ զհետեւն երթային եւ եր-
կնչէին։
ԶԷ. Եւ առեալ միւսանգամ զերկո-
տասանսն առանձինն, սկսաւ ասել
նոցա զինչ անցք անցանելոց իցէն ընդ
33 նա. Թէ Ահաւասիկ ելանեմք յԵրու-
սաղէմ, եւ Որդի մարդոյ մատնեսցի
քահանայապետիցն եւ գպրաց, եւ դա-
տեսցին զնա ի մահ, եւ մատնեսցեն
34 զնա հեթանոսաց. Եւ կատակեսցեն
զնովաւ, եւ հարկանիցեն զնա, եւ
թքանիցեն ի նա եւ սպանցեն, եւ յե-
րիր աւուր յարիցէ։
35 Եւ երթային առ նովաւ Յակովբոս
եւ Յովհաննէս որդիքն Զեբեդեայ, եւ
ասեն ցնա, Վարդապետ, կամիմք զի
զոր ինչ խնդրեսցուք ի քէն՝ արասցես
36 մեզ։ Եւ նա ասէ ցնոսա, Զի՞նչ կա-
37 միք լինիցի զի արարիցէ ձեզ։ Եւ նոքա
ասեն ցնա, Տուր մեզ զի նստցուք մի
յաջմէ քումմէ եւ մի յահեկէ ի փառսն
38 քումմ։ Պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ ցնոսա, Ոչ գիտէք զինչ խնդրէք.
կարէ՞ք ըմպել զբաժակն զոր ես ըմ-
պելոց եմ, կամ զմկրտութիւնն մկրտել
39 զոր ես մկրտելոցն եմ։ Եւ նոքա ա-
սեն ցնա, Կարեմք. եւ Յիսուս ասէ
ցնոսա, Զբաժակն զոր ես ըմպելոց
եմ՝ ըմպիցէք, եւ զմկրտութիւնն զոր
40 ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք. Այլ նըս-
տուցանել ընդ աջմէ իմմէ եւ ընդ ա-
հեկէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց պատ-
41 րաստեալ իցէ։ Եւ լուեալ զայն տա-
սանցն՝ սկսան բարկանալ Յակովբայ
42 եւ Յովհաննու։ Եւ Յիսուս կոչեաց
զնոսա առ ինքն, եւ ասէ ցնոսա, Գի-
տէք զի որ յանուանն իշխանքն են հե-
թանոսաց՝ տիրեն նոցա. եւ մեծամեծք
43 նոցա իշխեն նոցա։ Ոչ նոյնպէս իցէ
եւ ի ձերում միջի. այլ որ կամիցի
ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօ-
44 նեայ. Եւ որ կամիցի ի ձէնջ առաջին

---

[1] Բ–ղ–ժ յ–ե–ը–ե, Մի՛ զրկեր,
[2] Ի Բ–ղ–ժ պ–ե–ե
[3] Բ–ղ–ժ յ–ե–ը–ե, զի ամենայն ինչ հնարաւոր է առ ի յԱստուծոյ
[4] Ո՞ահե, զկին կամ զորդիս [5] Բ–ղ–ժ, և

45 լինել՝ եղիցի ամենեցուն ծառայ։ Քանզի եւ Որդի մարդոյ ոչ եկն առնուլ պաշտօն, այլ պաշտել եւ տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց։
46 ԷԿ. Եւ գան յԵրիքով. եւ ընդ ելա-նելն նորա յԵրիքովէ աշակերտաքն եւ բազում ժողովրդովք, որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ
47 յանցս ճանապարհի։ Իբրեւ լուաւ թէ Յիսուս Նազովրեցի է, սկսաւ աղա-ղակել եւ ասել, Որդի Դաւթի, Յի-
48 սուս, ողորմեաց ինձ։ Եւ սաստէին նմա բազումք զի լռեսցէ. եւ նա ա-ռաւել եւս աղաղակէր, Որդի Դաւթի,
49 ողորմեաց ինձ։ Ձոեղի առ Յիսուս եւ հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն եւ ասեն ցնա, Քաջալերեաց, արի,
50 կոչէ զքեզ։ Եւ նորա ընկեցեալ զձորձս
51 իւր՝ յարեաւ եկն առ Յիսուս։ Պատաս-խանի ետ նմա Յիսուս եւ ասէ, Զի՞նչ կամիս թէ արարից քեզ. ասէ ցնա
52 կոյրն, Ռաբբունի, զի բացայց։ Եւ Յիսուս ասէ ցնա, Երթ, հաւատք քո կեցուցին զքեզ. եւ վաղվաղակի բա-ցաւ, եւ երթայր զհետ նորա ի ճա-նապարհին։

ԳԼ. ԺԱ

1 Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ, ի Բեթփագէ եւ ի Բեթանիա, մօտ ի լեառն Ձիթենեաց, առաքէ երկուս յա-
2 շակերտաց անտի, եւ ասէ ցնոսա, Երթայք դուք ի գիղդ որ ընդդէմ ձեր կայ. եւ նոյնժամայն իբրեւ մտանէք ի նա, գտանիցէք յաւանակ մի կապ-եալ, յորոյ վերայ ոչ ոք ի մարդկանէ
3 նստաւ. լուծէք զնա եւ ածէք։ Եւ եթէ ոք ասասցէ ձեզ եթէ Ձի՞ լուծանէք զյաւանակդ, ասասջիք եթէ Տեառն իւրում պիտոյ է. եւ վաղվաղակի ա-
4 ռաքեսցէ զնա այսր։ Ձոգան եւ գտին զյաւանակն կապեալ առ դուրս ար-տաքոյ ի փողոցի անդ, եւ լուծին զնա։
5 Եւ ոմանք յորոց անդն կային՝ ասեն ցնոսա, Ձի՞ գործէք զի լուծանէք
6 զյաւանակդ։ Եւ նոքա ասեն ցնոսա որպէս ասացն Յիսուս. եւ թոյլ ետուն
7 նոցա։ Ածեն զյաւանակն առ Յիսուս, եւ արկանեն ի վերայ նորա հանդերձս,
8 եւ նստաւ ի վերայ նորա։ Եւ բա-զումք զհանդերձս իւրեանց տարածա-նէին ի վերայ ճանապարհին, եւ այլք ոմանք ի ծառոց հատանէին եւ արկա-
9 նէին զճանապարհսն։ Եւ որ առա-ջին եւ զկնի երթային՝ աղաղակէին եւ ասէին, Ովսաննա [1]բարձրելոյն, օրհ-
10 նեալ որ գայդ յանուն Տեառն. Օրհ-նեալ թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի. [2]խաղաղութիւն յեր-կինս եւ փառք՝ ի բարձունսն։
11 Եւ եմուտ Յիսուս յԵրուսաղէմ, ի տաճարն, եւ հայեցաւ չուրջ զամենե-քումբք. եւ զի էր երեկոյացեալ ժամն, ել ի Բեթանիա երկոտասանիւքն հան-դերձ։
12 ԷԲ. Եւ ի վաղիւ անդր մինչդեռ ե-
13 լանէին ի Բեթանիայ, քաղցեաւ։ Եւ հետես թզենի մի ի բացուստ տերեւա-լից. եւ եկն թէ գտանիցէ ինչ ի նմա. եւ իբրեւ եկն ի նա, ոչինչ եգիտ բայց միայն տերեւ, զի ոչ իակ էր ժամանակ
14 թզոյ։ Պատասխանի ետ եւ ասէ ցնա, Մի՛ եւս ոք յաւիտեան ի քէն պտուղ կերիցէ. եւ լսէին աշակերտքն նորա։
15 Գան յԵրուսաղէմ. եւ մտեալ ի տա-ճարն՝ սկսաւ հանել զվաճառականսն եւ զղնդոզս որ էին ի տաճարին. եւ զսեղանս հատաւճառացն գրուեաց, եւ զաթոռս աղաւնեվաճառացն կոր-
16 ծանեաց. Եւ ոչ թողոյր եթէ ոք ա-նօթ ինչ անցուցանիցէ ընդ տաճարն։
17 Եւ ուսուցանէր եւ ասէր ցնոսա, [3]Գրեալ է՞, թէ Տուն իմ տուն աղօ-թից կոչեսցի ամենայն հեթանոսաց, եւ դուք արարէք զդա այրս աւազա-
18 կաց։ Լուան քահանայապետքն եւ դպիրք, եւ խնդրէին թէ ո՛րպէս կո-րուսցեն զնա, քանզի երկնչէին ի նմանէ. զի ամենայն ժողովուրդն զարմացեալ
19 էր ընդ ուսմանն նորա։ Եւ իբրեւ ե-րեկոյ լինէր, արտաքոյ քան զքաղաքն [4]ելանէին։
20 Եւ մինչդեռ այգուցն առնոտաւ ան-ցանէին, տեսին զթզենին ցամաքեալ
21 յարմատոց։ Յիշեաց Պետրոս եւ ասէ ցնա, Ռաբբի, ահաւասիկ թզենին զոր
22 անիծեր՝ ցամաքեցաւ։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա, [5]Եթէ ու-

---

[1] Ի բաղմ. պատճ.
[2] Բաղմ., Ովսաննա
[3] Բաղմ., Զի՞ գրեալ
[4] Բաղմ., ելանէր
[5] Բաղմ., Եղիցին ձեր հաւատք յԱստուած։

23 Նիցիք զնաւատան Աստուծոյ,՝՝ Ամէն
ասեմ ձեզ, Որ ոք ասիցէ լերինս այս-
միկ, Բարձիր եւ անկիր ի ծով, եւ ոչ
երկմտիցէ ի սրտի իւրում, այլ հաւա-
տայցէ թէ զոր ասէն լինի, եղիցի նմա
24 զոր ինչ եւ ասիցէ։ Վասն այսորիկ
ասեմ ձեզ, Ամենայն ինչ վասն որոյ
աղօթս արարեալ խնդրիցէք, եւ հա-
ւատայցէք թէ առնուցուք, եղիցի ձեզ։
25 Եւ յորժամ յաղօթս կայիցէք, թո՛ղու-
ցուք եթէ ունիցիք ինչ զումեքէ. զի
եւ Հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ
26 ձեզ զյանցանս ձեր։ Զի եթէ դուք ոչ
թո՛ղուցուք, եւ ոչ Հայրն ձեր որ յեր-
կինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր։
27 ԷԳ. Գան միւսանգամ յԵրուսաղէմ,
եւ մինչդեռ ի տաճարի անդ զգնայր,
գան առ նա քահանայապետքն եւ
28 գպիրք եւ ծերք։ Եւ ասեն ցնա, Որո՞վ
իշխանութեամբ առնես զայդ, եւ ո՞վ
29 ետ քեզ զիշխանութիւնդ զայդ։ Պա-
տասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնոսա,
Հարցից եւ ես զձեզ բան մի, տուք
ինձ պատասխանի. եւ ես ասացից ձեզ
որով իշխանութեամբ առնեմ զայս։
30 Մկրտութիւնն Յովհաննու յերկնի՞ց էր
թէ ի մարդկանէ, տուք ինձ պատաս-
31 խանի։ Խորհէին ընդ միմեանս եւ ա-
սէին, Եթէ ասեմք եթէ Յերկնից, ասէ
ցմեզ, Իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա.
32 Այլ եթէ ասեմք, Ի մարդկանէ, [1]եր-
կընչիմք ի ժողովրդենէն, զի ամենեքեան
զիաէին զՅովհաննէս թէ մարգա-
33 րէ էր։ Պատասխանի եւտուն եւ ա-
սեն ցՅիսուս, Չգիտեմք. եւ Յիսուս
ետ նոցա պատասխանի եւ ասէ, Եւ
ոչ ես ասեմ ձեզ որով իշխանութեամբ
առնեմ զայս։

ԳԼ. ԺԲ

1 Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք
[2]եւ ասել՝՝, Այր մի անկեաց այգի եւ
աճ չուրջ զնովաւ ցանդ, եւ գուբ
հնձան փորեաց եւ չինեաց աշտարակ,
եւ ետ զնա ցմշակս եւ գնաց ի տար-
2 աշխարհ։ Եւ առաքեաց առ մշակսն ի
ժամանակի ծառայ մի, զի ի մշակաց
3 անտի առցէ ի պտղոյ այգւոյն։ Եւ նո-
ցա կալեալ՝ զան հարին զնա եւ ար-

4 ձակեցին ունայն։ Դարձեալ առաքեաց
առ նոսա այլ ծառայ, եւ զնա կա-
ռափնատեցին եւ արձակեցին անարգ-
5 եալ։ Եւ դարձեալ այլ առաքեաց, եւ
զնա սպանին. եւ զբազումս այլս զո-
մանս հարկանէին եւ զոմանս սպանա-
6 նէին։ Ասա որպէս մի էր իւր սիրելի,
զնա առաքեաց առ նոսա յետոյ, եւ
ասէ, Թերեւս ամաչեսցեն յորդւոյ տա-
7 ւի իմմէ։ Իսկ մշակքն իրրեւ տեսին
զնա թէ գայ, ասեն ցմիմեանս, Սա է
ժառանգն, եկայք սպանցուք զսա, եւ
8 մեր լիցի ժառանգութիւնն։ Եւ կալեալ
զնա սպանին եւ հանին արտա-
9 քոյ այգւոյն։ Արդ զի՞նչ արասցէ տէր
այգւոյն. եկեսցէ եւ կորուսցէ զմի-
չականս, եւ տացէ զայգին ի ձեռս այ-
10 լոց։ Եւ ո՞չ զգիրն զայն իցէ ընթեր-
ցեալ ձեր, թէ Զվէմն զոր անարգեցին
շինողքն, նա եղեւ գլուխ անկեան.
11 ի Տեառնէ եղեւ այս, եւ է սքանչելի
յաչս մեր։
12 Եւ խնդրէին զնա ունել, եւ երկեան
ի ժողովրդենէ անտի, զի գիտացին թէ
առ նոսա ասաց զառակն. եւ թողին
զնա եւ գնացին։
13 Եւ առաքեն առ նա զոմանս ի փա-
րիսեցւոց անտի եւ ի Հերովդիանոսից,
14 զի զնա որսացեն բանիւ։ Եւ նոքա
եկեալ [3]հարցանէին զնա նենգութեամբ
եւ՝՝ ասէին, Վարպապետ, գիտեմք զի
ճշմարիտ ես, եւ ոչինչ փոյթ է քեզ
զումեքէ. զի ոչ հայիս յերեսս մարդ-
կան, այլ ճշմարտութեամբ զճանա-
պարհն Աստուծոյ ուսուցանես. [3]արդ
ասա մեզ,՝՝ արժա՞ն է հարկ տալ կայ-
սեր եթէ ոչ. տացո՞ւք, թէ ոչ ասա-
15 ցուք։ Եւ Յիսուս գիտացեալ զկեղծա-
ւորութիւնն նոցա, ասէ ցնոսա, Զի՞
փորձէք զիս, [3]կեղծաւորք. բերէք ինձ
16 դահեկան մի զի տեսից։ Եւ նոքա բե-
րին. եւ ասէ ցնոսա, Ո՞յր է պատկերս
այս կամ գիր. եւ նոքա ասեն ցնա,
17 կայսեր։ Պատասխանի եւ Յիսուս եւ
ասէ ցնոսա, [4]Երթայք, տուք զկայսերն
կայսեր, եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ.
եւ զարմացան ընդ նա։
18 ԷԴ. Գան առ նա սադուկեցիքն որ
ասեն թէ Չիք յարութիւն. հարցա-
19 նէին զնա եւ ասէին, Վարդապետ,

[1] Բազումք, երկնչէին [2] Ի ցառն պակաս [3] Ի բազումս պակաս [4] Ի ցառն պակաս

Մովսէս գրեաց մեզ եթէ ուրուք եղբայր մեռանիցի եւ թողուցու կին եւ որդի ոչ թողուցու, զի առցէ եղբայր նորա զկինն նորա, եւ յարուսցէ զսերմ եղբաւր իւրում։ Արդ եղբարք եւքն էին ։ա՝ առ մեզ". առաջինն առ կին եւ մեռաւ, եւ ոչ եթող զաւակ։ Եւ երկրորդն առ զնոյն եւ մեռաւ, եւ ոչ նա եթող զաւակ. նոյնպէս եւ երրորդն առ զնոյն։ Եւ եւթնեքեան իսկ՝ եւ ոչ թողին զաւակ. յետ ամենեցուն մեռաւ եւ կինն։ Արդ ի յարուածեանն յորժամ յառնիցեն, ո՞յր ի նոցանէ լինի կինն. զի եւթնեքեան կալան զնա կին։ Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնոսա, Ո՞չ վասն այդորիկ իսկ մոլորեալ էք, զի ոչ գիտէք զԳիրս եւ ոչ զզօրութիւնն Աստուծոյ։ Զի յորժամ ի մեռելոց յարիցեն, ոչ արք կանայս առնուն, եւ ոչ կանայք արանց լինին, այլ իբրեւ զհրեշտակս իցեն որ յերկինսն են։ Այլ վասն յարուածեան մեռելոց զի յառնին, ո՞չ իցէ ընթերցեալ ձեր ի գիրսն Մովսիսի ի մորենւոջն, որպէս ասաց ցնա Աստուած, ես եմ, ասէ, Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակովբայ։ Եւ ոչ է Աստուած մեռելոց, այլ կենդանեաց. եւ արդ դուք յոյժ մոլորեալ էք։

Եւ մատուցեալ մի ոմն ի գրչացն՝ լսեր նոցա մինչ վիճէինն, իրբեւ եհաս թէ բարւոք եւ նոցա զպատասխանին, եհարց զնա [2]եւ ասէ՝", Ո՞ր պատուիրան է [3]առաջին։ Եւ Յիսուս ասէ ցնա, Առաջին քան զամենայն՝ Լուր, Իսրայէլ, Տէր Աստուած մեր Տէր մի է. եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ, եւ յամենայն մտաց քոց, եւ յամենայն զօրութենէ քումմէ. այս է առաջին պատուիրան։ Եւ երկրորդն նման սմին, Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո. մեծ քան զսոսա այլ պատուիրան ոչ գոյ։ Եւ ասէ ցնա գրիչն, Բարւոք է, վարդապետ, ճշմարտութեամբ ասացեր թէ մի է Աստուած, եւ ոչ գոյ այլ բաց ի նմանէ.

[1]ի բազմաց պակաս
[2]ի ցածն պակաս
[3]Բազմ., առաջին քան զամենայն

33 Եւ սիրելն զնա յամենայն սրտէ[4] եւ յամենայն զօրութենէ եւ յամենայն մտաց, եւ սիրելն զընկերն իբրեւ զանձն, առաւել է [5]քան զողջակէզս եւ զզոհս։ Եւ տեսեալ Յիսուսի թէ իմաստութեամբ ետ պատասխանին՝ ասէ ցնա, Ջեռ հեռի յարքայութենէն Աստուծոյ. եւ ոչ եւս ոք իշխէր ինչ հարցանել ցնա։

35 Եւ։ Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ, մինչ ուսուցանէր ի տաճարին, Զիա՞րդ ասեն դպիրքն թէ Քրիստոս որդի Դաւթի է։ Եւ ինքն Դաւիթ Հոգւովն Սրբով ասէ, Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ եդից զթշնամիս քո սպառուանդան ոտից քոց։ Արդ եթէ ինքն իսկ Դաւիթ ցնա Տէր կոչէ, զիա՞րդ իցէ որդի նորա. եւ բազում ժողովուրդ լսէր նմա քաղցրութեամբ։

38 Եւ [6]ասէր ուսուցանելով" ի վարդապետութեան իւրում, Զգոյշ լերուք ի գրչաց անտի, որ կամին ի հանդերձս երեւելիս չրջել, [7]զնախասղջոյնս խրնդրել ի հրապարակս, եւ զնախաթոռս ի ժողովուրդս, եւ զգահապետս ի հրճիւրս։ Որ ուտեն զտունս այրեաց, պատճառանօք յերկարեալ զաղօթս, զի առցեն եւս պատասխանս ընկալցին։

41 Կայր Յիսուս ընդդէմ դանձանակին, տեսանէր թէ զի՞րդ ժողովուրդն արկանէր զպղինձ ի դանձանակն. եւ բազումք մեծատունք արկին բազում ինչ։ 42 Եկն այրի մի եւ արկ երկուս լումայս, 43 որ է նախարակիտ մի։ Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտան իւր ասէ ցնոսա, Ամէն ասեմ ձեզ, զի այրին այն տառապեալ չատ արկ քան զամենեսեան 44 որ արկին ի դանձանակն։ Քանզի ամենեքին յաւելորդից իւրեանց արկին, այլ նա ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր արկ գոյիւ չափ զկեանս իւր։

Գլ. ԺԳ

1 ԵՋ. Եւ յելանելն նորա ի տաճարէ անտի, ասէ ցնա մի յաշակերտաց նորա, վարդապետ, տես որպիսի՛ են քարինքս, եւ որպիսի՛ չինուածք։ Պա-

[4]Ոմանք յաւելուն, եւ յամենայն անձնէ
[5]Ցայն, քան զամենայն
[6]Բազմ., ասէր ցնոսա [7]Ցայն, զողջոյնս

տասխանի եւ նմա Յիսուս եւ ասէ, Տեսանե՞ս զայդ [1]մեծինայն չինուածս. [2]ամէն ասեմ ձեզ եթէ՝ Ոչ թողցի այդր քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի։
3 Եւ մինչ նստէր նա ի լերինն Ձիթենեաց յանդիման տաճարին, հարցանէին ցնա առանձինն Պետրոս եւ Յակովբոս
4 եւ Յովհաննէս եւ Անդրէաս, Ասա մեզ երբ լինիցի այդ, եւ ո՞րն է նշան է յորժամ կատարելոց իցէ այդ ամենայն։
5 Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնոսա, Զգոյ կացէք, մի՛ ոք զձեզ խաբեսցէ։ Զի բազումք եկեսցեն յանուն իմ, եւ ասիցեն թէ Ես եմ [2]Քրիստոսն,
7 եւ զբազումս մոլորեցուսցեն։ Այլ յորժամ լսիցէք պատերազմունս եւ համբաւս պատերազմաց, մի՛ խռովիցիք, զի պարտ է լինել, բայց չէ է կատարածն։ Զի յարիցէ ազգ յազգի վերայ, եւ թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ, եւ եղիցին չարժմունք ի տեղիս տեղիս, սովք [3]եւ սրածութիւնք" [4]եւ խռովութիւնք"։ այլ այն
9 ամենայն սկիզբն է երկանց։ [5]Եւ զձեզ իսկ մատնեսցեն յատեանս, եւ ի ժողովրդոց տանջիցիք, եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց կայցէք վասն իմ ի վկայութիւն նոցա, [6]եւ ա-
10 մենայն հեթանոսաց. Բայց նախ պարտ
11 է աւետարանիս քարոզել"։ Այլ յորժամ տանիցին զձեզ մատնել, մի՛ յառաջագոյն հոգայցէք, եւ մի՛ զմտաւ ածիցէք թէ ի՞նչ խօսիցիք. այլ որ ինչ տացի ձեզ ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցիք. զի ոչ դուք էք որ խօսի-
12 ցիքն, այլ՝ Հոգին Սուրբ։ Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, եւ հայր՝ զորդի. եւ յարիցեն որդիք ի վերայ հարց
13 եւ սպանանիցեն զնոսա։ Եւ եղիջիք ատելեաւք յամենեցունց վասն անուան իմոյ, այլ որ համբերեսցէն ի սպառ՝ նա կեցցէ։
14 Եւ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածին[7], զի կայցէ ի տեղւոջ ուր չիցէ արժան, (որ ընթեռնուն ի միտ առցէ,) յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝
15 փախիցեն ի լերինս. Եւ որ ի վերայ տանեացն իցէ՝ մի՛ իջցէ ի տուն, եւ մի՛ մտցէ բառնալ ինչ ի տանէ իւրմէ.
16 Եւ որ յագարակին իցէ՝ մի՛ դարձցի
17 յետս առնուլ զձորձս իւր։ Բայց վա՛յ իցէ յդեայս եւ սնտուաց յաւուրսն
18 յայնոսիկ։ Ցաղօթս կացէք զի մի՛ ձմե-
19 րանի լինիցի այն։ Եղիցին աւուրքն այնորիկ նեղութեանց, որպիսի ոչ եղեն երբեք այնպիսիք ի սկզբանէ արարածոց մինչեւ ցայժմ, եւ մի՛ այլ
20 լիցի։ Եւ եթէ ոչ էր կարճեալ [8]Աստուծոյ զաւուրսն զայնոսիկ [2]վասն րնտրելոց իւրոց", ոչ ապրէր ամենայն մարմին. այլ վասն ընտրելոցն զորս ընտրեաց՝ կարճեաց զաւուրսն զայնոսիկ։
21 Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ եթէ Ահաւասիկ է Քրիստոս կամ Ահանիկ,
22 մի՛ հաւատայցէք։ Զի յարիցեն սուտ քրիստոսք եւ սուտ մարգարէք, եւ տացեն նշանս եւ արուեստս առ ի մոլորեցուցանելոյ, եթէ հնար լինի իցէ,
23 եւ զընտրեալսն։ Բայց դուք զգոյ եւ զերուք, ահաւասիկ յառաջագոյն ասացի ձեզ զամենայն։
24 Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղու-
25 թեանն այնորիկ արեգակն խաւարեսցի եւ լուսին ոչ տացէ զլոյս իւր։ Եւ աստեղք յերկնից թօթափեսցին, եւ
26 զօրութիւնք յերկինս չարժեսցին։ Եւ յայնժամ տեսցեն զմարդոյ եկեալ ամպովք եւ զօրութեամբ եւ փառօք
27 բազմօք։ Եւ յայնժամ առաքեսցէ զհրեշտակս իւր, եւ ժողովեսցէ զընտրեալս իւր ի չորից հողմոց, ի ծագաց երկրի
28 մինչեւ ի ծագս երկնից։ Բայց դուք ի թզենւոյ առեք ուսջիք զառակն. յորժամ տակաւ ոստքն նորա կակղանայցեն եւ տերեւ արձակիցի նմա,
29 գիտէք թէ մերձ է ամառն. Նոյնպէս եւ դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ մերձ
30 է առ դուրս։ Ամէն ասեմ ձեզ թէ Ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամե-
31 նայն եղիցի։ Երկինքն եւ երկիր անց-
32 ցին, եւ բանք իմ ոչ անցանիցեն։ Այլ վասն աւուրն այնորիկ եւ ժամուս ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս եւ

[1] Յն. մեծամեծ
[2] Ի բազմս պակաս
[3] Ի Յունս պակաս
[4] Յոմանս պակաս
[5] Բազմադ, Զգոյշ լերուք անձանց, զի
[6] Յն. Եւ նախ յամենայն հեթանոսս պարտ է աւետարանիս քարոզել
[7] Որոյ յաւելուն, որ ասացեալն է ի ձեռն Դանիէլի մարգարէի

[8] Բազմադ, Տեառնն

33 ոչ Որդի, բայց միայն Հայր։ Զդոյչ եւ
զերուք, սկեցէք եւ կացէք յաղօթս, զի
34 ոչ գիտէք երբ ժամանակն լիցի։ Որպէս
այր մի գնացեալ ի տարաշխարհ՝ թո-
ղուցու զտունն իւր, եւ տայցէ ծառա-
յից իւրոց իշխանութիւն, եւ իւրա-
քանչիւր գործ իւր, եւ դռնապանին
պատուիրէր տայցէ, զի արթուն լինիցի։
35 Արդ արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ
աւր տանն գայցէ, իւրիկնոր՞ւ, եթէ
ի մէջ գիշերի, եթէ ի հաւախօսի, եթէ
36 ընդ առաւօտս։ Գուցէ եկեալ յանկար-
37 ծակի՝ գտանիցէ զձեզ ի քուն։ Բայց
զոր ձեզդ ասեմ՝ ամենեցուն ասեմ,
Արթուն կացէք։

ԳԼ. ԺԴ

1 ԷԷ. Եւ էր զատիկն եւ բաղարջակերք
յետ երկուց աւուրց, խնդրէին քահա-
նայապետքն եւ դպիրք եթէ զի՛նդ
գնա նենդաւ կալեալ սպանանիցեն։
2 Բայց ասէին թէ Մի՛ ի տօնի առա, զի
մի՛ խռովութիւն լինիցի ի ժողովր-
դեանն։
3 Եւ մինչ էր ի Բեթանիա ի տան Սի-
մոնի բորոտի բազմեալ, եկն կին մի
որ ունէր չիւ իւղոյ նարդեան ազնուի
մեծագնոյ, եւ բեկեալ զչիւն՝ եհել ի
4 վերայ գլխոյ նորա։ [1]Եւ աչակերտքն՝
ղչարէին եւ ասէին, Ընդէ՞ր եղեւ կո-
5 րուստ իւղոյդ այդորիկ. Մարթ էր
զայդ եւղ վաճառել աւելի քան երեք
հարիւր դահեկանի, եւ տալ տղքա-
6 տաց. եւ զայրանային նմա յոյժ։ Եւ
Յիսուս ասէ ցնոսա, Թոյլ տուք զնա,
զի՞ աչխատա առնէք, զի գործ մի բարի
7 գործեաց գա յիս։ Յամենայն ժամ զդ-
քաոս ընդ ձեզ ունիք, եւ յորժամ
կամիք, կարող էք առնել նոցա բարիս.
այլ զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ
8 ունիք։ Գա զոր ունէրդ՝ արար. յա-
ռաջագոյն խնկեաց զմարմին իմ ի նչան
9 պատանաց։ Ամէն ասեմ ձեզ, ուր եւ
քարոզեսցի աւետարանս այս ընդ ա-
մենայն աչխարհ, եւ զոր արար դա՝
խօսեսցի վասն յիչատակի դորին։
10 Եւ Յուդա Իսկարիովթացի, մի յեր-
կոտասանից անտի, գնաց առ քահա-
նայապետան զի մատնեսցէ զնա նոցա։
11 Նոքա իբրեւ լուան, խնդացին, եւ խոս-
տացան տալ նմա արծաթ. եւ խնդրէր
թէ զի՛նդ պարագոյղ մատնեսցէ զնա։
12 Եւ յառաջնում աւուր բաղարջակեր-
քացն յորժամ զզատիկն զենուին, ա-
սեն ցնա աչակերտքն, Ո՞ւր կամիս,
երթիցուք պատրաստեսցուք զի կերի-
13 ցես զզատիկն։ Եւ առաքէ երկուս յա-
չակերտաց անտի եւ ասէ ցնոսա, Եր-
թայք ի քաղաք, եւ իբրեւ մատնիցէք
ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր մի
որ սափոր ջրոյ յոյս ունիցի, երթայք
14 զնմա նորա։ Եւ յոր տունն մտանիցէ,
ասացէք ցտանուտէրն, Վարդապետ
ասէ, Ո՞ւր են իջեւանքն ուր աչա-
15 կերտացս ուսիցեմ զզատիկն։ Եւ նա
ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զար-
դարեալ, անդ պատրաստեսջիք մեզ։
16 Եւ գնացին պատրաստել աչակերտքն
նորա. եկին ի քաղաքն եւ գտին որ-
պէս ասացն նոցա, եւ պատրաստեցին
զզատիկն։
17 Եւ իրրեւ երեկոյ եղեւ, դայ երկո-
18 տասանեանքն հանդերձ։ Եւ իբրեւ բազ-
մեցան եւ գնա ուտէին, ասէ Յիսուս,
Ամէն ասեմ ձեզ զի մի ոմն ի ձէնջ
մատնելոց է զիս, որ ուտէ իսկ ընդ իս։
19 Եւ նոքա սկսան տրտմել եւ ասել մի
ըստ միոջէ, Միթէ՞ ես իցեմ, եւ մեւն՝
20 Միթէ՞ ես իցեմ։ Նա պատասխանի ետ
եւ ասէ ցնոսա, Մի յերկոտասանից
այսի որ միեսաց ընդ իս ի սկաւառակդ։
21 Այլ Որդի մարդոյ երթայ որպէս եւ
գրեալ է վասն նորա, բայց վա՛յ իցէ
մարդոյն այնմիկ՝ որով Որդի մար-
դոյ մատնեսցի. լաւ էր նմա թէ չէր
իսկ ծնեալ մարդն այն։
22 Եւ մինչդեռ ուտէին, առեալ Յիսու-
սի հաց՝ օրհնեաց եւ բեկեալ,ետ նոցա եւ
23 ասէ, [2]Առէք այդ է մարմին իմ։ Եւ
առեալ բաժակ՝ գոհացաւ եւետ նոցա,
24 եւ արբին ի նմանէ ամենեքեան։ Եւ
ասէ ցնոսա, Այս է արիւն իմ նորոյ
ուխտի, որ վասն բազմաց հեզու։
25 Ամէն ասեմ ձեզ թէ ոչ եւս յաւելից
ըմպել ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն,
յորժամ արբից զնա նոր յարքայութեան
Աստուծոյ։
26 Եւ գոհացեալ ելին ի լեառն Ձիթե-
նեաց։ ՎԶ

[1]Բառ-ար՛, Եւ էին ոմանք որ

[2]Ոմն՛, Առէք, կերէք

27 Եւ ասէ ցնոսա Յիսուս , Ամենեքեան
գայթակղեալ էք յինէն յայսմ գիշերի .
զի գրեալ է թէ՝ Հարից զհովիւն , եւ
28 ոչխարքն ցրուեսցին : Այլ յետ յարու-
թեան իմոյ յառաջագոյն երթայց զան
29 զձեզ ի Գալիլեա : Պատասխանի ետ
Պետրոս եւ ասէ ցնա , Թէպէտ եւ ա-
մենեքեան գայթակղեսցին , այլ ես ոչ :
30 Եւ ասէ ցնա Յիսուս , Ամէն ասեմ քեզ
թէ դու իսկ յայսմ գիշերի մինչչեւ
[1]հաւու իսկեալ իցէ՝ երիցս ուրասցիս
31 զիս : Իսկ Պետրոս առաւել եւս պնդէր
եւ ասէր , Եթէ մեռանել եւս հասա-
նիցէ ընդ քեզ , զքեզ ոչ ուրասցայց .
նոյնպէս եւ ամենեքեան ասէին :
32 Գան ի դաշն որում անուն էր Գեթ-
սեմանի , եւ ասէ ցաշակերտան , Նստա-
րուք աստ , մինչեւ ես յաղօթս կացից :
33 Եւ առնու ընդ իւր զՊետրոս եւ զՅա-
կովբոս եւ զՅովհաննէս , եւ սկսաւ
34 աթերել եւ հոգալ : Յայնժամ ասէ ցնո-
սա , Տրտում է անձն իմ մինչեւ ի մահ ,
35 մնացէք աստ եւ արթուն կացէք : Եւ
մատուցեալ սակաւիկ մի յառաջ , անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր .
եւ կայր յաղօթս , զի եթէ հնար լինէ
36 է , անցցէ ի նմանէ ժամն : Եւ ասէ ,
Աբբա Հայր , ամենայն ինչ քեզ հնա-
րաւոր է , անցո զբաժակս զայս յինէն .
բայց ոչ որպէս ես կամիմ , այլ որպէս
37 դու կամիս : Եւ գայ դառնէ զնոսա
զի ննջէին , եւ ասէ ցՊետրոս , Սիմոնէ ,
ննջե՞ս . ո՞չ կարացեր ժամ մի արթուն
38 կալ : Արթուն կացէք եւ յաղօթս կա-
ցէք , զի մի՛ մտջիք ի փորձութիւն .
ոգիս յօժար է , բայց մարմինս ակար :
39 Եւ դարձեալ չոգաւ եկաց յաղօթս , եւ
40 զնոյն բանս ասաց : Դարձաւ մէւսանա-
կամ անգրէն եւ եկիս զնոսա ի քուն .
քանզի էին աչք նոցա ծանրացեալ ,
եւ ոչ գիտէին թէ զինչ պատասխանի
41 տային նմա : Գայ երրորդ անգամ եւ
ասէ ցնոսա , Ննջեցէք այսուհետեւս եւ
հանգիարուք , [2]զի հասեալ է վախճան՝ .
եկն ժամ եւ ահա մատնի Որդի մար-
42 դոյ ի ձեռս մեղաւորաց : Ոտն արիք ,
գնասցուք , զի ահաւասիկ մերձեցաւ
որ մատնելոցն է զիս :
43 Եւ մինչչեւ նա դարձ խօսէր , դայ
Յուդա [3]Իսկարիովթացի , մի յերկոտա-
նասնից անտի , եւ ընդ նմա ամբոխ
սուսերօք եւ բրօք ի քահանայապետէն
44 եւ ի դպրաց եւ ի ծերոց : Տուեալ էր
նշան մատնչին եւ ասէր , Ընդ որում
ես համբուրեցից՝ նա է . կալէք զնա
45 եւ տարէք զգուշութեամբ : Եւ մա-
տուցեալ վազվազակի ասէ ցնա , Ռաբ-
46 բի , Ռաբբի , եւ համբուրեաց զնա : Եւ
նոքա արկին ի նա ձեռս եւ կալան զնա :
47 Եւ մի ոմն յայնցանէ որ զնովաւն կա-
յին՝ ձգեալ սուր , եւ եհար զծառայ
քահանայապետին , եւ ի բաց եհան
48 զականկն նորա : Պատասխանի ետ Յի-
սուս եւ ասէ ցնոսա , Իբրեւ ի վերայ
աւազակի՞ ելէք սուսերօք եւ բրօք ու-
49 նել զիս : Հանապազ առ ձեզ էի եւ
ուսուցանէի ի տաճարին , եւ ոչ կա-
լարուք զիս . այլ զի լցցին գիրք մար-
50 գարէիցն : Յայնժամ թողին զնա աշա-
51 կերտքն ամենեքեան եւ փախեան : Եւ
ոմն երիտասարդ գնաց երթայր նորա՝
արկեալ զիւրեւ կտաւ մի ի մերկութ .
52 ունէին զնա երիտասարդքն . Եւ նորա
թողեալ զկտաւն՝ փախեաւ մերկ ի նո-
ցանէ :
53 Եւ տարան զՅիսուս առ քահանա-
յապետն [3]Կայիափա եւ գային ընդ նմա
ամենայն քահանայապետքն եւ զգիրք
54 եւ ծերք : Եւ Պետրոս երթայր ի հե-
ռաստանէ գնաց նորա մինչեւ ի ներքս
իսկ ի գաւիթ քահանայապետին , եւ
նստէր ընդ սպասաւորսն եւ ջնեռոյր
55 առ լուսովն : Իսկ քահանայապետքն
եւ ամենայն ատեանն խնդրէին հա-
կառակ Յիսուսի վկայութիւն ինչ ,
զի սպանանիցեն զնա , եւ ոչ գտա-
56 նէին : Զի բազումք սուտ վկայութիւն
վկայէին զնմանէ , եւ նման միմեանց ոչ
57 էին վկայութիւնքն : Այլք յարուցեալ
վկայէին սուտ զնմանէ եւ ասէին , թէ
58 Մեք լուաք ի գմանէ զի ասէր , Ես քա-
կեցից զտաճարդ զայդ ձեռագործ , եւ
զերիս աւուրս չինեցից այլ , առանց
59 ձեռագործի : Սակայն եւ այնպէս չէր
60 նման վկայութիւնն նոցա : Ապա յա-
րուցեալ քահանայապետն ի մէջ հար-
ցանէր զՅիսուս եւ ասէր , Ոչ ինչ
տաս պատասխանի , զինչ դոքա զքէն
61 վկայեն : Եւ նա լուռ եւեթ կայր եւ
չտայր ինչ պատասխանի : Դարձեալ

[1]Բազմ. հաւու երկիցս [2]Գլխ. բաւական է [3]Ի բազմ. պակաս

քահանայապետն հարցանէր զնա կրկին անգամ եւ ասէր, Դո՞ւ ես Քրիստոս
62 Որդի [1]Աստուծոյ օրհնելոյն։ [2]Պատասխանի եւ Յիսուս ասէ ցնա, Դու ասացեր թէ ես եմ՝. բայց տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ Զօրութեան, եւ եկեալ ընդ ամպս երկ-
63 նից։ Եւ քահանայապետն պատառեաց [3]վաղվաղակի զպատմուճանս իւր եւ ասէ, Զի՞նչ եւս պիտոյ են մեզ վկայք։
64 Ահա [4]լուայք աստուածութիւնն ի բերանոյ դորա՝, զի՞րդ թուի ձեզ. Եւ ամենեքեան դատապարտեցին զնա
65 թէ մահապարտ է։ Եւ ոմանք սկսան թքանել ընդ երեսս նորա, ձորձ զգլխով արկանել, կոփել եւ ասել, Մարգարեաց [3]մեզ, Քրիստոսդ, ո՞վ է այն որ եհարն զքեզ՝. եւ սպասաւորքն ապտակս հանէին նմա։
66 Եւ Պետրոս մինչդեռ էր ի խոնարհ ի գաւթին, գայ աղախին մի քահանայապետին, եւ տեսանէ զնա զի ջեռ-
67 նոյր. հայեցաւ ընդ նա եւ ասէ, Եւ դու ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էիր։
68 Նա ուրացաւ եւ ասէ, Ոչ ճանաչեմ եւ ոչ դիտեմ զինչ դուդ ասես. եւ իբրեւ ել յարտաքին գաւիթն, եւ հաւ
69 խօսեցաւ։ Դարձեալ ետես զնա աղախինն, եւ սկսաւ ասել ցայնոսիկ որ չուրջն կային թէ Եւ սա ի նոցանէ է.
70 Եւ նա դարձեալ ուրացաւ։ Եւ յետ սակաւ միոյ դարձեալ որ չուրջն կային՝ ասեն ցՊետրոս, Արդարեւ եւ դու ի նոցանէ ես, քանզի Գալիլեացի ես, եւ
71 խօսքդ իսկ քո նման են։ Եւ նա սկսաւ նզովել եւ երդնուլ եւ ասել թէ Ոչ
72 դիտեմ զայրն զորմէ դուքդ ասէք։ Եւ նոյնժամայն կրկին հաւ խօսեցաւ. եւ յիշեաց Պետրոս զբանն զոր ասաց ցնա Յիսուս թէ Ջեւ իցէ հաւուս երկիցս խօսեալ, զի դու երիցս ուրացցիս զիս, եւ սկսաւ լալ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ արարեալ քահանայապետիցն հանդերձ ծերովքն եւ դպրօք եւ ամենայն ատեանն, կապեցին զՅիսուս եւ
2 տարան մատնեցին Պիղատոսի։ Եւ հարց զնա Պիղատոս եւ ասէ, Դո՞ւ ես Թագաւորն Հրէից. Նա պատասխանի
3 եւ նմա եւ ասէ, Դու ասես։ Եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն [3]եւ նա ոչինչ տայր պատաս-
4 խանի՝։ Իսկ Պիղատոս դարձեալ հարցանէր զնա, Ոչի՞նչ տաս պատասխանի, տես քանի՛ ամբաստանեն զքէն։
5 Եւ Յիսուս այնուհետեւ ոչինչ ետ պատասխանի, մինչեւ զարմանալ յոյժ Պիղատոսի։
6 Բայց ըստ տօնի արձակէր նոցա զմի ոք զկապեալ, զոր ինքեանք խնդրէին։
7 Եւ էր որում անուն էր Բարաբբա՝ կապեալ ընդ խռովիչսն, որոց ի խռո-
8 վելն՝ այր մի սպանեալ էր։ Ի ձայն բարձր սկսաւ աղաղակել ամբոխն եւ խնդրել [5]որպէս սովոր էր, զի արձա-
9 կեսցէ նոցա զԲարաբբայն՝։ Պատասխանի եւ Պիղատոս եւ ասէ ցնոսա, Կամի՞ք զի արձակեցից ձեզ զարքայն
10 Հրէից։ Քանզի գիտէր թէ առ նախանձու մատնեցին զնա քահանայապետքն։
11 Որք եւ զամբոխն հաւանեցուցին, զի
12 արձակեսցէ նոցա զԲարաբբայն։ Դարձեալ պատասխանի եւ Պիղատոս եւ ասէ ցնոսա, Իսկ զի՞նչ կամիք թէ ա-
13 րարից զարքայն Հրէից։ Եւ նորա դարձեալ աղաղակէին [3]յուզեալք ի քահա-
14 նայապետիցն՝, ի խաչ հան զդա։ Ասէ ցնոսա Պիղատոս, Զի՞նչ լինչ չար արարեալ իցէ զորա. եւ նոքա առաւել եւս աղաղակէին եւ ասէին, ի խաչ հան
15 զդա։ Իսկ Պիղատոս իբրեւ զմիտս կատեցաւ հաճել զամբոխին, արձակեաց նոցա զԲարաբբայն, եւ զՅիսուս գան հարեալ ետ ի ձեռս զի ի խաչ ելանիցէ։
16 Եւ զինուորքն տարան զնա ի ներքս ի գաւիթն ուր [6]հրապարակն էր. եւ կոչեն միանդամայն զամենայն զգունդն,
17 եւ զգեցուցանեն նմա [3]քղամիդ կարմիր եւ՝ ծիրանիս, եւ եդին ի գլուխ նո-
18 ցա սպակ արարեալ ի փշոց։ Եւ սկսան ողջոյն տալ նմա եւ ասել, Ողջ եր,
19 արքայդ Հրէից։ Եւ ծեծէին գլխովին եղեգամբ, եւ թքանէին ընդ երեսս, եւ ի ծունր իջեալ երկիր պագանէին
20 նմա։ Եւ իբրեւ կատակեցին զնա,

---

[1] Յ-ոհան պակաս
[2] Բազմահ, եւ Յիսուս ասէ, Ես եմ
[3] Ի բազմահ պակաս
[4] Բազմահ, լուայք զհայհոյութիւնն
[5] Յ-ոյն, որպէս միշտ առնէր նոցա
[6] Յ-ոյն, ապարանք, տե՛ս Մատթ. ԻԷ. 27։

մերկացուցին [1]զքղամիդն եւ՝ զծիրանի-
նիս եւ զպեցուցին նմա զիւր հանդե-
րձս, եւ ածին արտաքս զի խաչ
հանցեն զնա։
21 Եւ ունէին պահակ ոմն Սիմոնի Կիւրե-
նացի, որ ընդ այն անցանէր՝ եկեալ
յագարակէ, զհայրն Ալեքսանդրի եւ
Ռուփայ, զի բարձցէ զխաչափայտն նո-
22 րա։ Եւ ածեն զնա ի Գողգոթա, տեղի
մի որ թարգմանի Տեղի կառափելոյ։
23 Եւ տային նմա զինի զմռսեալ, եւ նա
24 ոչ առ։ Եւ հանին զնա ի խաչ, եւ բա-
ժանեցին զհանդերձս նորա, արկեալ
վիճակս ի վերայ թէ ո զինչ առնուցու։
25 Էր ժամ երրորդ եւ հանին զնա ի խաչ։
26 Եւ էր գիր վնասու նորա գրեալ թէ
27 Թագաւոր է Հրէից։ Եւ ընդ նմա հա-
նին ի խաչ երկուս աւազակս, մի ընդ
28 աջմէ եւ մի ընդ անկէ նորա։ Եւ լցաւ
գիրն որ ասէ թէ Ընդ անօրէնս հա-
29 մարեցաւ։ Եւ որք անցանէին՝ հայհո-
յէին զնա շարժեալ զգլուխս իւրեանց
եւ ասէին, Վահ, որ քակէիր զտա-
30 ճարն եւ զերիս աւուրս չինէիր։ Ապ-
31 րեցո զանձն քո եւ էջ ի խաչէդ։ Նոյն-
պէս եւ քահանայապետիցն այսն ա-
րարեալ ընդ միմեանս հանդերձ դպրօքն՝
ասէին, Զայլս ապրեցոյց, զանձն ոչ
32 կարէ ապրեցուցանել։ Քրիստոս, ար-
քայդ Իսրայելի, իջցէ այժմ ի խաչէ
այտի, զի տեսցուք եւ հաւատասցուք
դմա։ Եւ որ ընդ նմա ի խաչն եւեալ
էին՝ նախատէին զնա։
33 Եւ իբրեւ վեց ժամ եղեւ, խաւար
կալաւ զամենայն երկիր մինչեւ ցինն
34 ժամ։ Եւ յիններորդ ժամուն աղաղա-
կեաց Յիսուս ի ձայն մեծ եւ ասէ, [2]Էլի,
Էլի՞, լ՞ամա սաբաքթանի. որ թարգ-
մանի, Աստուած իմ, Աստուած իմ,
35 ընդէ՞ր թողեր զիս։ Եւ ոմանք ի նո-
ցանէ որ չուրջն կային զնովաւ՝ իբրեւ
36 լուան, ասէին թէ զեղիա կարդայ։ Եւ
ընթացեալ մի ոմն՝ եւ լիից սպունգ մի
քացախով, եւ հարեալ յեղէգան՝ տայր
ըմպել նմա, եւ ասէ, Թոյլ տուր տես-
ցուք, գա՞յ եղիա իջուցանել զդա։
37 Եւ Յիսուս արձակեաց ձայն մեծ եւ
38 եհան զոգի։ Եւ վարագոյր տաճարին
պատառեցաւ յերկուս ի վերուստ մին-
39 չեւ ի խոնարհ։ Եւ տեսեալ հարիւրա-

պետին որ կայր անդ թէ աղաղակեաց
եւ եհան զոգի, ասէ, Արդարեւ այս
40 այս Որդի Աստուծոյ էր։ Էին եւ կա-
նայք որ հայէին ի հեռաստանէ, յոր-
էր Մարիամ Մագդաղենացի եւ Մա-
րիամ Յակոբեայ փոքրկան եւ Յովսեայ
41 մայրն եւ Սողովմէ. Որք յորժամ էին
ի Գալիլեա, զնա չրջէին նորա եւ պաշ-
տէին զնա. եւ այլ բազում կանայք որ
ընդ նմա իսկ ելեալ էին յերուսաղէմ։
42 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, քանզի ուր-
43 բաթ էր որ ի չաբաթին մտանէր, եկեալ
Յովսէփ որ յԱրիմաթեայն էր, այր
պարկեշտ նախարար, որ եւ ինքն իսկ
անն ունէր արքայութեանն Աստուծոյ,
համարձակեցաւ եւ մուտ առ Պիղատոս,
44 եւ խնդրեաց զմարմինն Յիսուսի։ Եւ
Պիղատոս զարմացաւ թէ այնչափ վաղ
մեռաւ. եւ կոչեցեալ առ ինքն զհարիւ-
րապետն՝ եհարց զնա եւ ասէ թէ Ար-
45 դարեւ այնչափ վա՞ղ մեռաւ։ Եւ իբրեւ
ստուգեաց ի հարիւրապետէ անտի,
46 շնորհեաց զմարմինն Յովսեփայ։ Եւ
Յովսէփ գնեաց կտաւ, եւ իջուցեալ
զնա՝ պատեաց կտաւովն եւ եդ ի գե-
րեզմանի զոր էր փորեալ ի վիմէ. եւ
թաւալեցոյց վէմ մի ի դուռն դերեզ-
47 մանին։ Իսկ Մարիամ Մագդաղենացի
եւ Մարիամ Յակոբեայ եւ Յովսեայ
տեսին զտեղին ուր եդաւ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ իբրեւ անց չաբաթն, Մարիամ
Մագդաղենացի եւ Մարիամ Յակոբեայ
եւ Սողովմէ չոգան պատրաստեցին
2 խունկս, զի եկեսցեն օծցեն զնա։ Եւ
ընդ առաւօտս միաշաբաթուն գան ի
3 գերեզմանն ընդ արեւագալն։ Եւ ասէին
ցմիմեանս, Ո՞վ թաւալեցուսցէ մեզ
4 զվէմն ի դրաց գերեզմանին. (Եւ հայե-
ցեալ տեսին զի թաւալեցուցեալ էր
զվէմն ի գերեզմանէն.) քանզի էր մեծ
5 յոյժ։ Եւ մտեալ ի ներքս ի գերեզմանն՝
տեսին երիտասարդ մի զի նստէր ընդ
աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան
6 սպիտակ, եւ զարհուրեցան։ Եւ նա
ասէ ցնոսա, Մի՛ երկնչիք. զՅիսուս
խնդրէք զՆազովրեցի զխաչեալսն,
յարեաւ, չէ աստ, անաւադիկ տեղին
7 ուր եդին զնա։ Այլ երթայք, ասացէք
ցաշակերտս նորա եւ ցՊետրոս, եթէ

[1] ի բազմս պակասէ [2] Ելոի, ելոի

ահա յառաջագոյն երթայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա, որ-
8 պէս ասացն ձեզ։ Եւ իբրեւ լուան, եւ-
լին եւ փախեան ի գերեզմանէն, քանզի դահի հարեալ էին. եւ ոչ ումեք ինչ ասացին, զի երկնչէին։
9 [1]Յարուցեալ Յիսուս առաւօտուն [2]ա-
ռաջին միաշաբաթուն՝ երեւեցաւ Մա-
րիամու Մագդաղենացւոյ, յորմէ հան-
10 եալ էր զեւթն դեւն։ Եւ նա երթեալ պատմեաց այնոցիկ որ ընդ նմայն էին,
11 մինչդեռ սգային եւ լային։ Նոքա իբ-
րեւ լուան թէ կենդանի է եւ երեւե-
ցաւ նմա, ոչ հաւատացին։
12 Յետոյ երեւեցաւ այլով [3]կերպարա-
13 նաւ որք երթային յանդաստան։ Նոքա չոգան պատմեցին այլոց, եւ ոչ նոցա հաւատացին։
14 Յետոյ մինչդեռ բազմեալ էին մեծա-
նաքն, երեւեցաւ նոցա եւ թշնամանե-
եաց զանհաւատութիւնն նոցա եւ զխըս-
տասրտութիւն. [4]զի որ երեւեցաւ նո-
ցա յարուցեալ ի մեռելոց, եւ նոքա ոչ հաւատացին՝։
15 Եւ ասէ ցնոսա, երթայք յաշխարհ ա-
մենայն, եւ քարոզեցէք զաւետարանն
16 ամենայն արարածոց։ Որ հաւատայ եւ մկրտիցի՝ կեցցէ, եւ որ ոչն հաւատայ՝
17 դատապարտեսցի։ Նշանք այնոցիկ որ հաւատանն՝ երթիցեն զհետ, այսուրիկ. յանունն իմ դեւս հանցեն, լեզուս խո-
18 սեսցին, ի ձեռս իւրեանց օձս բարձ-
ցեն, եւ եթէ մահացու ինչ զեղ արբ-
ցեն, նոցա ինչ ոչ վնասեսցէ. ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն, եւ [5]բժշկեսցեն։
19 Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա համբարձաւ յերկինս, եւ
20 նստաւ ընդ աջմէ Հօր։ Եւ նոքա ել-
եալ քարոզէին ընդ ամենայն երկիր Տեառն գործակցութեամբ, եւ զբանն հաստատէին ամենայն նշանօք որ եր-
թային զհետ նոցա։

---

[1]Ա-ոթ գնչ- է ի-ոթ-ոթ ելեայն պ-ոթ յամն-
է Յն յե-ոէր-ց
[2]Յն, յառաջնումն շաբաթուն
[3]Յն, կերպարանաւ երկուց ի նոցանէ

[4]Յն, զի որոց տեսինն զնա յարուցեալ՝ ոչ հաւատացին
[5]Յն, բժշկեսցին

ԳԼՈՒԽՔ ՂՈՒԿԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Էմր.
Վասն աշխարհագրին.	Բ.	1
Վասն բացօթեայ Տովուացն.	Բ.	8
Վասն Ալիէոպիսի.	Բ.	25
Վասն մարգարէին Աննայի.	Բ.	36
Վասն լինելոյ բանին Աստուծոյ առ Յովհաննէս.	Գ.	2
Վասն որոց Տարցանէին զՅովհաննէս.	Դ.	10
Վասն փորձութեանց փրկչին.	Դ.	2
Վասն որ ունէր զԵոգին դիւական.	Դ.	33
Վասն ղեքանչին Պետրոսի.	Դ.	38
Վասն որոց բժշկէին ի պէսպէս հիւանդութեանց.	Դ.	41
Վասն որոյ ձկանցն.	Ե.	4
Վասն բորոտին.	Ե.	12
Վասն անդամալուծին.	Ե.	17
Վասն Ղեւեայ մաքսաւորին.	Ե.	27
Վասն գօսացեալ ձեռինն.	Ջ.	6
Վասն առաքելոցն Տամարոյ.	Ջ.	13
Վասն երանութեանցն.	Ջ.	20
Վասն Տարիւրապետին.	Ի.	2
Վասն որդւոյ պլրւոյն.	Ի.	12
Վասն որոց առաքեցանն ի Յովհաննէ.	Ի.	19
Վասն օծանելոյ զՏէրն.	Ի.	38
Վասն առակի սերմնացանին.	Ր.	5
Վասն սաստելոյ Ջուրցն.	Ր.	24
Վասն որ ունէր զլէգէոնն.	Ր.	27
Վասն դստեր ժողովրդապետին.	Ր.	41
Վասն տեառատես կնոջն.	Ր.	43
Վասն առաքելոյ զերկոտասանսն.	Թ.	2
Վասն հինգ Տացիցն և երկու ձկանցն.	Թ.	13
Վասն ցաշակերտսն Տարցանելոյ.	Թ.	18
Վասն պայծառութեանն Յիսուսի.	Թ.	29
Վասն լուանալոյ ոտից.	Թ.	38
Վասն խորհելոյն թէ ո՛վ մեծ իցէ.	Թ.	46
Վասն չտալոյն հրաման զկնի երթալ.	Թ.	57
Վասն երեւեցուցանելոյ զեւթանասնսն.	Ժ.	1
Վասն Տարցանելոյ օրինականին.	Ժ.	25
Վասն անկելոյն ի ձեռս աւազակաց.	Ժ.	30
Վասն Մարիամու և Մարթայի.	Ժ.	38
Վասն յաղօթս կալոյն.	ԺԱ.	1
Վասն խուլ դիւին.	ԺԱ.	14
Վասն որ կինն ձայն եբարձ ի ժողովրդեանն.	ԺԱ.	27
Վասն նշան խնդրելոյն.	ԺԱ.	29
Վասն որ փարիսեցին կոչեաց զՏէրն.	ԺԱ.	37
Վասն վայ տալոյ օրինականացն.	ԺԱ.	46
Վասն խմորոյ փարիսեցւոցն.	ԺԲ.	1
Վասն բաժանելոյ զինչսն ընդ եղբօրն.	ԺԲ.	13

	Գլ.	Էմր.
Վասն պաղատելոյ անդադ մեծատանն.	ԺԲ.	16
Վասն Կապիլեացւոցն և որոց ի Ցեղսամ, և վասն թզենւոյն.	ԺԳ.	1
Վասն կարկամեալ կնոջն այսահարի.	ԺԳ.	11
Վասն առակացն.	ԺԳ.	19
Վասն Թէ սակա՛ւք իցեն որ ապրեցոց իցեն.	ԺԳ.	23
Վասն որք ասացին ցՅիսուս զՀերովդէ.	ԺԳ.	31
Վասն որ չրգողեալ էր.	ԺԴ.	2
Վասն որք սիրեն զնախագահսն.	ԺԴ.	7
Վասն կոչելոյն յընթրիսն.	ԺԴ.	12
Վասն շինելոյ աշտարակին.	ԺԴ.	28
Վասն Տարեւք ոչխարացն.	ԺԵ.	4
Վասն գնացելոյն յաշխարհ Հեռի անառակին.	ԺԵ.	11
Վասն անիրաւ տնտեսին.	ԺԶ.	1
Վասն մեծատանն և Ղազարու.	ԺԶ.	19
Վասն տասն բորոտացն.	ԺԷ.	12
Վասն անիրաւ դատաւորին.	ԺԸ.	2
Վասն փարիսեցւոյն և մաքսաւորին.	ԺԸ.	10
Վասն Տարցանելոյ մեծատանն զՅիսուս.	ԺԸ.	18
Վասն կուրին.	ԺԸ.	35
Վասն Զակքէոսի.	ԺԹ.	2
Վասն գնալոյ առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ.	ԺԹ.	12
Վասն առնլոյ զտասն մնասն.	ԺԹ.	13
Վասն յաւանակին.	ԺԹ.	30
Վասն Տարցանելոյ քահանայիցն զՏէր.	Ի.	1
Վասն առակի այգւոյն.	Ի.	9
Վասն դահեկանին.	Ի.	23
Վասն սադուկեցւոցն.	Ի.	27
Վասն Թէ զի՛րդ է որդի Դաւթի Քրիստոս.	Ի.	41
Վասն երկու լումայի պլրւոյն.	ԻԱ.	2
Վասն Տարցման կատարածին.	ԻԱ.	7
Վասն զատկին.	ԻԲ.	2
Վասն վիճելոյն Թէ ո՛վ մեծ իցէ.	ԻԲ.	24
Վասն խնդրելոյն Պատանւոյ.	ԻԲ.	31
Վասն նախատանաց Հերովդի զՏէրն.	ԻԳ.	11
Վասն կոծելոյ կանանցն.	ԻԳ.	27
Վասն ապաշխարելոյ աւազակին.	ԻԳ.	40
Վասն խնդրելոյ զկերակրունական մարմնին.	ԻԳ.	52
Վասն Նղէովպեանցն.	ԻԴ.	13
Վասն Համբառնալոյն Տեառն.	ԻԴ.	51

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 Քանզի բազումք յօժարեցին վերատին
կարգել պատմութիւն վասն իրացն
2 հաստատելոց ի մեզ, Որպէս աւանդե-
ցին մեզ որ ի սկզբանէ ականատեսք
3 եւ սպասաւորք եղեն բանին, կամ ե-
ղեւ եւ ինձ, որ ի սկզբանէ դնեմ եր-
թեալ էի ամենայնի ճշմարտութեամբ,
կարգաւ գրել քեզ, քաջդ Թէոփիլէ,
4 Զի ծանիցես զբանիցն որոց աչակեր-
տեցար՝ զճշմարտութիւնն։
5 Եւ եղեւ յաւուրս Հերովդէ արքայի
Հրէաստանի, քահանայ ոմն անուն
Զաքարիա ի դասակարգէ Աբիայ, եւ
կին նորա ի դստերաց Ահարոնի, եւ
6 անուն նորա Եղիսաբեթ։ Եւ էին ա-
զարք երկոքին առաջի Աստուծոյ, գնա-
յին յամենայն պատուիրանս եւ յիրա-
7 ւունս Տեառն անարատաք։ Եւ ոչ զոյր
նոցա որդեակ, քանզի Եղիսաբեթ ա-
մուլ էր, եւ երկոքեան անցեալ էին
զաւուրսն իւրեանց։
8 Եւ եղեւ ի քահանայանալն նորա
ըստ կարգի աւուրցն հասանելոց առաջի
9 Աստուծոյ, Ըստ օրինի քահանայու-
թեանն հնոյ նմա խաղնկ արկանել՝
10 մտանել ի տաճարն Տեառն։ Եւ ամե-
նայն բազմութիւն ժողովրդեանն կա-
յին յարօթս արտաքոյ ի ժամու խնկոցին։
11 Եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն,
զի կայր ընդ աջմէ սեղանոյ խնկոցին։
12 Եւ խռովեցաւ Զաքարիա, իբրեւ ե-
տես, եւ անկաւ ահ ի վերայ նորա։
13 Ասէ ցնա հրեշտակն [1]Տեառն, Մի՛ եր-
կնչիր, Զաքարիա, զի լսելի եղեն ա-
ղօթք քո, եւ կին քո Եղիսաբեթ ծնցի
քեզ որդի, եւ կոչեսցես զանուն նորա
14 Յովհաննէս։ Եւ եղիցի քեզ ուրախու-
թիւն եւ ցնծութիւն, եւ բազումք ի
15 ծննդեան նորա խնդասցին։ Զի եղիցի
մեծ առաջի Տեառն, եւ գինի եւ օղի
մի՛ արբցէ, եւ Հոգւով Սրբով լցցի
16 անդստին յորովայնէ մօր իւրոյ։ Եւ
զբազումս յորդւոցն Իսրայէլի դար-
17 ձուսցէ ի Տէր Աստուած իւրեանց։ Եւ
ինքն եկեսցէ առաջի նորա [2]Հոգւով
զօրութեամբ Եղիայի, դարձուցանել
զսիրտս հարց յորդիս, եւ զանհնազանս
յիմաստութիւն արդարոց, պատրաս-
18 տել Տեառն ժողովուրդ կազմեալ։ Եւ
ասէ Զաքարիա ցհրեշտակն, Եւ ի՞նչ
գիտացից զայդ։ զի ես ծեր եմ, եւ կին
19 իմ անցեալ զաւուրսք իւրովք։ Պատաս-
խանի եւ հրեշտակն եւ ասէ ցնա, Ես
եմ Գաբրիէլ որ կայմ առաջի Աստու-
ծոյ, եւ առաքեցայ խօսել ընդ քեզ եւ
20 աւետարանել քեզ զայդ։ Եւ ահա ե-
զիցես համր, եւ մի՛ կարասցես խօսել
մինչեւ ցօրն յորում այդ լինիցի. փո-
խանակ զի ոչ հաւատացեր բանից ի-
մոց, որք լցցին ի ժամանակի իւրեանց։
21 Եւ ժողովուրդն ակն ունէր Զաքա-
րիայ, եւ զարմանային ընդ յամենն նո-
22 րա ի տաճարին։ Եւ իբրեւ եկ, ոչ կա-
րէր խօսել ընդ նոսա. եւ իմացան եթէ
տեսիլ ետես ի տաճարին. եւ նա նշա-
նացի խօսէր ընդ նոսա եւ կայր պա-
23 սանձեալ։ Եւ եղեւ իբրեւ լցան ա-
ւուրքն պաշտամանն նորա, գնաց ի տունն
24 իւր։ Եւ յետ աւուրցն այնոցիկ յղա-
ցաւ Եղիսաբեթ, կին նորա, եւ թա-
քուցանէր զանձն ամիսս հինգ, եւ ա-
25 սէր, Զինչ գործ գործեաց ընդ իս Տէր
յաւուրս յորս հայեցաւ յիս բառնալ
զնախատինս իմ ի մարդկանէ։
26 Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ
Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ ի քա-
ղաք մի Գալիլեացւոց, որում անուն
27 էր Նազարէթ, Առ կոյս խօսեցեալ առն,
որում անուն էր Յովսէփ, ի տանէ
Դաւթի. եւ անուն կուսին Մարիամ։
28 Եւ եկեալ առ նա ասէ, Ուրախ լեր,
29 բերկրեալդ, Տէր ընդ քեզ։ Եւ նա

[1] ի ցուցն պակաս

[2] ցոյն, Հոգւով և

ընդ բանան խառվեցաւ, եւ խորհէր ընդ միտս իւր որպիսի՛ ինչ իցէ ողջոյնս
30 այս։ Եւ ասէ ցնա հրեշտակն, Մի երկնչիր, Մարիամ, զի գտեր չնորհս
31 յԱստուծոյ։ Եւ անա յղասցիր եւ ծնցես որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յի-
32 սուս։ Նա եղիցի մեծ, եւ Որդի Բարձրելոյ կոչեսցի, եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր նորա։
33 եւ թագաւորեսցէ ի վերայ տանն Յակովբայ ի յաւիտեանս, եւ թագաւո-
34 րութեան նորա վախճան մի՛ լիցի։ Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն, Զիա՞րդ լիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ։
35 Պատասխանի եւս հրեշտակն եւ ասէ ցնա, Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո։ քանզի եւ որ ծնանելոցն
36 է ի քէն՝ սուրբ է, եւ Որդի Աստուծոյ կոչեսցի։ Եւ անա Եղիսաբեթ ազգական քո, եւ նա յղի է ի ծերութեան իւրում. եւ այս վեցերորդ ամիս է նո-
37 րա որ ամուլն կոչեցեալ էր. Զի ոչ տկարասցի առ յԱստուծոյ ամենայն
38 բան։ Եւ ասէ Մարիամ, Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ բան բանի քում. եւ գնաց ի նմանէ հրեշտակն։

39 Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ՝ գնաց ի լեռնակողմն փութ ի քաղաքն Յուդայ։ Եւ եմուտ ի տունն
40 Զաքարիայ եւ ետես զողջոյն Եղիսաբեթի։
41 Եւ եղեւ իբրեւ լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսաբեթ, խթացաւ մանուկն յորովայնի նորա. եւ լցաւ Եղիսաբեթ
42 Հոգւով Սրբով. Եւ ի ձայն բարձր աղաղակեաց եւ ասէ, Օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է պտուղ որո-
43 վայնի քո։ Եւ ուստի՞ է ինձ այս, զի
44 եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս։ Զի ահաւասիկ իբրեւ եղեւ ձայն ողջունի քո յականջս իմ, խթացաւ յնծալով մա-
45 նուկս յորովայնի իմում։ Եւ երանի որ հաւատացեալ եղիր եղիցի կատարումն
46 ասացելոցս նմա ի Տեառնէ։ Եւ ասէ Մարիամ, Մեծացուսցէ անձն իմ զՏէր.
47 Եւ ցնծացաւ հոգի իմ յԱստուած փրկիչ
48 իմ։ Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. զի ահա յայսմ հետէ
49 երանեսցեն ինձ ամենայն ազգք։ Զի արար ինձ մեծամեծս Հզօրն, եւ սուրբ
50 է անուն նորա։ Եւ ողորմութիւն նո-
րա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց։
51 Արար զօրութիւն բազկաւ իւրով, ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից
52 իւրեանց։ Քակեաց զՀզօրս յաթոռոց, եւ բարձրացոյց զխոնարհս։
53 Զքաղցեալսն լցոյց բարութեամբ, եւ զմեծատունսն արձակեաց ունայնս։
54 Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում՝ յիշել զողորմութիւնս։
55 Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամու եւ զաւակի նորա յաւիտեան։
56 Եկաց Մարիամ առ նմա իբրեւ ամիսս երիս, եւ գարձաւ ի տունն իւր։

57 Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք
58 ծնանելոյ, եւ ծնաւ որդի։ Եւ լուան որ չուրջ զնովաւ էին եւ ազգատոհմ նորա, զի մեծ արար Տէր զողորմութիւնն իւր ընդ նմա. եւ ինդային ընդ նմա։

59 Եւ եղեւ յաւուրն ութերորդի եկին թլփատել զմանուկն, եւ կոչէին զնա
60 յանուն հօր իւրոյ Զաքարիա։ Պատասխանի եւս մայր նորա եւ ասէ, Ոչ,
61 այլ կոչեսցի Յովհաննէս։ Եւ ասեն ցնա, Քանզի ոչ ոք է յազգի քումմէ, որոյ կոչի
62 անուն Յովհաննէս։ Ակնարկէին հօրն նորա թէ զի՛նչ կամիցի կոչել զնա։
63 Եւ խնդրեաց տախտակ, գրեաց եւ ասէ, Յովհաննէս է անուն դորա. եւ զար-
64 մացան ամենեքեան։ Եւ բացաւ բերան նորա վաղվաղակի եւ լեզու նորա, եւ
65 խօսէր եւ օրհնէր զԱստուած։ Եւ եղեւ ահ ի վերայ ամենեցուն որ լսէին զայս եւ որ չուրջ բնակեալն էին զնոքօք. եւ ընդ ամենայն լեռնակողմինն Հրէաստանի պատմէին ամենայն բանքս
66 այսոքիկ։ Եւ եդին ամենեքեան որ լսէին ի սիրտս իւրեանց, եւ ասէին, Զի՞նչ լինիցի մանուկս այս. եւ ձեռն Տեառն էր ընդ նմա։

67 Եւ Զաքարիա հայր նորա լցաւ Հոգւով Սրբով, մարգարէացաւ եւ ասէ,
68 Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, զի յայց եւ մեզ, եւ արար փրկութիւն
69 ժողովրդեան իւրում։ Եւ յարոյց եղջիւր փրկութեան մեզ ի տանէ Դաւթի
70 ծառայի իւրոյ։ Որպէս խօսեցաւ բերանով սրբոց որ յաւիտենից մարգա-
71 րէից նորա էին. Փրկութիւն ի թշնամեաց մերոց, եւ ի ձեռաց ամենայն
72 ատելեաց մերոց. Առնել ողորմութիւն ընդ հարս մեր, եւ յիշել զուխտն իւր

73 սուրբ։ Ջերդումն զոր երդուաւ Աբ-
74 րահամու հօր մերում՝ տալ մեզ, Ա-
ռանց երկիւղի, ի ձեռաց թշնամեաց
75 [1]մերոց փրկեալս, պաշտել զնա արդա-
թեամբ եւ արդարութեամբ առաջի նո-
ր զամենայն աւուրս կենաց մերոյ։
76 Եւ դու, մանուկ, մարգարէ Բարձրե-
լոյ կոչեսցիր. դի երթիցես առաջի ե-
րեսաց Տեառն պատրաստել զճանա-
77 պարհս նորա, Տալ դիտութիւն փրկու-
թեան ժողովրդեան նորա ի թողու-
78 թիւն մեղաց նոցա։ Վասն գթութեանց
ողորմութեան Աստուծոյ մերոյ, որով
այց [2]արասցէ մեզ Արեգակն ի բարձանց,
79 Երեւել որոց ի խաւարի եւ ի սատերս
մահու նստեին, ուղղել զոտս մեր ի
ճանապարհս խաղաղութեան։
80 Եւ մանուկն աճէր եւ զօրանայր
հոգւով, եւ էր յանապատս մինչեւ յօր
երեւելոյ նորա Իսրայէլի։

Գլ. Բ

1 Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ
ել հրաման յԱւգոստոս կայսերէ աշ-
խարհագիր առնել ընդ ամենայն աին-
2 զերս։ Այս առաջին աշխարհագիր ե-
ղեւ ի պատառորութեան Սաւրուց կիւ-
3 րենեայ։ Եւ երթային ամենեքեան
մտանել յաշխարհագիր յիւրաքանչիւր
4 քաղաքի։ Ել եւ Յովսէփ ի Գալիլէէ ի
քաղաքէ Նազարեթէ ի Հրէաստան, ի
քաղաք Դաւթի որ կոչի Բեթղեհեմ,
վասն լինելոյ նորա ի տանէ եւ յազգէ
5 Դաւթի, Մտանել յաշխարհագիր Մա-
րիամ հանդերձ զոր խոսեալն էր նմա,
6 եւ էր յղի։ Եւ եղեւ ի հասանելն նոցա
անդր, լցան աւուրքն ծնանելոյ նորա։
7 Եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, եւ
պատեաց ի խանձարուրս եւ եդ զնա
ի մսուր. դի ոչ զոյր նոցա տեղի յի-
ջեւանին։
8 Եւ հովիւք էին ի տեղւոջն յայնմիկ
բացօթեայզք, որք պահէին զպահպա-
նութիւնս գիշերոյ հօտից իւրեանց։
9 Եւ հրեշտակ Տեառն երեւեցաւ նոցա,
եւ փառք Տեառն ծագեցին առ նոսա,
10 եւ երկեան երկեւք մեծ։ Եւ ասէ ցնո-
սա հրեշտակն, Մի՛ երկնչիք, զի ա-
հաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախու-
թիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողո-
11 վրդեանն։ Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ,
որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի։
12 Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք մա-
նուկ պատեալ ի խանձարուրս եւ եղ-
13 եալ ի մսուր։ Եւ յանկարծակի եղեւ
ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմու-
թիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին
14 զԱստուած եւ ասէին, Փառք ի բար-
ձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղա-
15 ղութիւն, ի մարդիկ հաճութիւն։ Եւ
եղեւ իբրեւ վերացան ի նոցանէ հրեշ-
տակքն յերկինս, ասէն ցմիմեանս հո-
վիւքն, Եկայք երթիցուք մինչեւ ցԲեթ-
ղեհեմ, եւ տեսցուք զինչ է բանս այս
16 որ եղեւ, զոր Տէր եցոյց մեզ։ Եւ ե-
կին փութանակի, եւ գտին զՄարիամ
եւ զՅովսէփ եւ զմանուկն եղեալ ի
17 մսուր։ Եւ ծանեան վասն բանին որ
18 ասացաւ նոցա զմանկանէն. Եւ ամե-
նեքին որ լսէին՝ զարմանային վասն
բանիցն զոր խոսեցան ընդ նոսա հո-
19 վիւքն։ Եւ Մարիամ զամենայն զբանս
զայսոսիկ պահէր եւ խելամուտ լինէր
20 ի սրտի իւրում։ Եւ զարձան հովիւքն,
փառաւոր առնէին եւ օրհնէին զԱս-
տուած վասն ամենայնի զոր լսեան եւ
տեսին, որպէս պատմեցաւ նոցա։
21 Եւ իբրեւ լցան աւուրք ութ թլփա-
տել [3]զնա, եւ կոչեցաւ անուն նորա
Յիսուս որ կոչեցեալ էր ի հրեշտակէն,
մինչչեւ յղացեալ էր [4]զնա յորովայնի։
22 Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան
[5]նոցա ըստ օրինացն Մովսիսի, ածին
զնա յԵրուսաղէմ յանդիման առնել
23 Տեառն, Որպէս եւ գրեալ է յօրէնս
Տեառն, թէ Ամենայն արու որ բանայ
24 զարգանդ՝ սուրբ Տեառն կոչեսցի։ Եւ
տալ պատարագս ըստ ասացելոյն յօ-
րէնս Տեառն, զոյգս տատրակաց կամ
25 երկուս ձագս աղաւնեաց։ Եւ ահա էր
այր մի յԵրուսաղէմ, որոյ անուն էր
Սիմէովն, եւ էր այրն այն արդար եւ
երկիւղած, եւ ակն ունէր մխիթա-
րութեանն Իսրայէլի. եւ Հոգի Սուրբ
26 էր ի նմա։ Եւ էր նորա հրաման առ-
եալ ի Հոգւոյն Սրբոյ մի՛ տեսանել
զմահ, մինչեւ տեսցէ զՕծեալն Տեառն։
27 Եւ ակն Հոգւովն ի տաճարն. եւ իբրեւ

---

[1]Յ-ձեռն պ-լ-ս-ք
[2]Ո-ռն-ւ, արար
[3]Ո-ռն-ւ, զմանուկն
[4]Յ-ն-ն, նա
[5]Ո-ռն-ւ, նորա.

ածին ծնողքն զմանուկն Յիսուս առնել նոցա ըստ սովորութեան օրինացն
28 ի վերայ նորա, եւ նա առ ընկալաւ զնա ի գիրկս իւր, եւ օրհնեաց զԱս-
29 տուած եւ ասէ, Արդ արձակես զծառայ քո, Տէր, ըստ բանի քում ի խա-
30 դաղութիւն. Զի տեսին աչք իմ զփրկու-
31 թիւն քո, Զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց:
32 Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց, եւ փառս
33 ժողովրդեան քումմ Իսրայէլի: Եւ էին [1]հայրն եւ մայր նորա զարմացեալ ի
34 վերայ բանիցն որ խօսէին զնմանէ: Եւ օրհնեաց զնոսա Սիմէովն, եւ ասէ
ցՄարիամ մայր նորա, Ահա սա կայ ի
գլորումն եւ ի կանգնումն բազմաց ի
մէջ Իսրայելի եւ ի նշան հակառակու-
35 թեան: Եւ ընդ քո իսկ անձն անցցէ
սուր, զի յայտնեսցին ի բազում սրտից
խորհուրդք:
36 Եւ անդ էր Աննա մարգարէ դուստր
Փանուէլի յազգէ Ասերայ. սա ինքն
անցեալ էր զաւուրբք բազմօք՝ կեցեալ
ընդ առն ամս եւթն ի կուսութենէ
37 իւրմէ: Եւ էր այրի ամաց իբրեւ ութսուն եւ չորից, որ ոչ մեկնէր ի սա-
ճարէն, այլ պահօք եւ ազօթիւք պաշ-
38 տէր զգայդ եւ զգիրեկ: Եւ սա ի նմին
ժամու յարուցեալ պոհանայր զՏեառնէ,
եւ խօսէր զնմանէ ընդ ամենեսին որ
ակն ունէին [2]փրկութեանն Երուսա-
զեմի՝:
39 Եւ իբրեւ կատարեցին զամենայն
ըստ օրինացն Տեառն, դարձան անդրէն
ի Գալիլեա ի քաղաքն իւրեանց Նա-
40 զարէթ: Եւ մանուկն աճէր եւ զօրանայր լի իմաստութեամբ, եւ չնորհք
Աստուծոյ էին ի վերայ նորա:
41 Եւ երթային ծնողքն նորա ամի ամի
42 յԵրուսաղէմ ի տօն զատկին: Եւ իբրեւ
եղեն նորա ամաց երկոսասան, յելանել
նոցա յԵրուսաղէմ ըստ սովորութեան
43 տօնին, Եւ կատարել զաւուրսն եւ
դառնալ անդրէն, մնաց Յիսուս մա-
նուկն յԵրուսաղէմ. եւ ոչ գիտացին
44 [3]ծնողքն նորա: կարծէին զնմանէ թէ
ընդ ուղեկիցսն իցէ. եկին իբրեւ աւուր միոյ ճանապարհ եւ խնդրէին զնա
45 ընդ [4]զգացիսն եւ ընդ ծանօթս: Եւ

[1] Ոմանք, Յովսէփ [4] Յայլս, ազգականան
[2] Բազումք, փրկութեան Երուսաղէմ
[3] Ոմանք, Յովսէփ և մայր

իբրեւ ոչ գտին, դարձան անդրէն յե-
46 րուսաղէմ խնդրել զնա: Եւ եղեւ յետ
երից աւուրց գտին զնա ի տաճարին,
զի նստէր ընդ վարդապետան, լսէր ի
47 նոցանէ եւ հարցանէր զնոսա: Զարմանային ամենեքեան որ լսէին ի նմա-
նէ՝ ընդ իմաստութիւնն եւ ընդ պա-
48 տասխանիս նորա: Եւ իբրեւ տեսին
զնա, սքանչացան. եւ ասէ ցնա մայրն
իւր, Որդեակ, զի՞նչ գործ գործեցեր
դու ընդ մեզ. ահաւասիկ հայր քո եւ
49 ես տառապեաք, խնդրեաք զքեզ: Եւ
ասէ ցնոսա, Զի՞ խնդրէիք զիս, ո՞չ
գիտէիք եթէ ի տան Հօր իմոյ պարտ
50 է ինձ լինել: Եւ նոքա ոչ իմացան
51 զբանն զոր խօսեցաւ ընդ նոսա: Եւ
էջ ընդ նոսա եւ գնաց ի Նազարէթ,
եւ էր նոցա հնազանդ. եւ մայր նորա
պահէր զամենայն զբանսն ի սրտի իւ-
րում:
52 Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ եւ հասակաւ եւ չնորհօք Աս-
տուծոյ եւ ի մարդկանէ:

ԳԼ. Գ

1 Ի հնգետասաներորդի ամի տէրութեանն Տիբերեայ կայսեր, ի դատաւորութեան Հրէաստանի Պիղատոսի
Պոնտացւոյ, եւ ի չորրորդպետութեան Գալիլեացւոց Հերովդի, եւ ի Փիլիպոսի եղբօր նորա չորրորդպետութեան
Իտուրացւոց եւ Տրաքոնացւոց աչխարհին, եւ ի չորրորդպետութեան Լիւ-
2 սանեայ Աբիլենացւոց, Եւ ի քահանայապետութեան Աննայի եւ Կայիափայ,
եղեւ բան Աստուծոյ ի վերայ Յովհաննու որդւոյ Զաքարիայ յանապատի
3 անդ: Եւ եկն յամենայն կողմն Յորդանանու քարոզել մկրտութիւն ա-
պաչխարութեան ի թողութիւն մեղաց,
4 Որպէս եւ գրեալ է ի գիրս պատգամաց Եսայեայ մարգարէի, Ձայն բարբառոյ յանապատի, Պատրաստ արարէք
զճանապարհ Տեառն, եւ ուղիղ արա-
5 րէք զշաւիղս նորա: Ամենայն ձորք լցցին, եւ ամենայն լերինք եւ բլուրք
խոնարհեսցին, եւ եղիցին դժուարինքն ի դիւրինս, եւ տատապարքն ի
6 հարթ ճանապարհս. Եւ տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ:
7 Եւ ասէր ցժողովուրդսն ելեալս մկըր-

տել ի նմանէ, Ծնունդք իժից, ո՞ ցոյց
ձեզ փախչել ի բարկութենէն որ գալոց
8 է: Արարէք այսուհետեւ պտուղս ար-
ժանս ապաշխարութեան. եւ մի՛
սկսանիցիք [1]ասել ի մէջ Ունիմք հայր
զԱբրահամ. զայս ասեմ ձեզ, եթէ կա-
րող է Աստուած ի քարանցս յայսցանէ
9 յարուցանել որդիս Աբրահամու: Բայց
ահաւասիկ տապար առ արմին ծառոց
կայ. ամենայն ծառ որ ոչ առնէ պըտ-
ուղ բարւոք՝ հատանի եւ ի հուր ար-
10 կանի: Հարցանէին զնա ժողովուրդքն
եւ ասէին, Իսկ արդ զի՞նչ գործեսո-
11 ցուք: Պատասխանի եւ ասէ ցնո-
սա, Որ իցէն երկու հանդերձ՝ տացէ
դմին որում ոչն գուցէ. եւ որ կայ-
12 ցէ կերակուր՝ նոյնպէս արասցէ: Եկին
եւ մաքսաւորք մկրտել, եւ ասեն ցնա,
13 Վարդապետ, զի՞նչ գործեսցուք: Եւ
նա ասէ ցնոսա, Մի՛ ինչ աւելի քան
14 զհրամայեալն ձեզ առնիցէք: Հարցա-
նէին զնա եւ զինուորքն եւ ասէին,
Եւ մեք զի՞նչ գործեսցուք. ասէ ցնո-
սա, Մի՛ զոք խօսիցէք եւ մի՛ զոր
զրպարտիցէք, չատ լիցին ձեզ թոշակքն
ձեր:
15 Մինչ ակն ունէր ժողովուրդն եւ
խորհէին ամենեքեան ի սիրտս իւրեանց
վասն Յովհաննու, Միթէ նա իցէ Քրիս-
16 տոս, Պատասխանի [2]եւ ամենեցուն
եւ ասէ, Ես մկրտեմ զձեզ ջրով, բայց
գայ զօրագոյն քան զիս, զորոյ չեմ բա-
ւական բառնալ զկօշիկս, նա մկրտես-
17 ցէ զձեզ Հոգւով Սրբով եւ հրով, Որոյ
հեծանոցն ի ձեռին իւրում սրբել զկալ
իւր, եւ ժողովել զցորեանն ի չանա-
րանս իւր, եւ զարդն այրեսցէ անշէջ
18 հրով: Բազում եւ այլ ինչ միխիթարու-
թեամբ աւետարանէր ժողովրդեանն:
19 Բայց Հերովդէս չորրորդապետս յան-
դիմանալ ի նմանէ վասն Հերովդիայ,
[3]կնոջ եղբօր իւրոյ, եւ վասն ամենայն
չարեացն զոր գործեաց Հերովդէս,
20 Յաւել եւ զայն եւս ի վերայ ամենայնի,
եւ եղ ի բանտի զՅովհաննէս:
21 Եւ եղեւ ի մկրտել ամենայն ժողո-
վրդեանն եւ ընդ Յիսուսի մկրտելն
22 եւ կալ յաղօթս, բանալ երկնից, Եւ
իջանել Հոգւոյն Սրբոյ մարմնաւոր
տեսլեամբ իբրեւ զաղաւնի ի վերայ նո-
ա. եւ ձայն յերկնից որ ասէր,
Դու ես Որդի իմ սիրելի, ընդ քեզ
հաճեցայ:
23 Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ
երեսնից սկսեալ, [4]որոց որպէս եւ կար-
ծէր, որդի Յովսեփայ, [5]որ Յակով-
բայն," որ Հեղեայն, որ Մաաթեայն,
24 Որ Ղեւեայն, որ Մելքեայն, որ Յան-
25 նեայն, որ Յովսեփայն, Որ Մաաթեայն,
որ Ամովսայն, որ Նաւումայն, որ Ես-
26 լեայն, որ Նաղգեայն, Որ Մահաթայն,
որ Մաաթեայն, որ Սեմեայն, որ
27 [6]Յովսեքեայն, որ Յովդայն, Որ Յով-
նանայն, որ Բեսայն, որ Զօրաբաբե-
28 լին, որ Սաղաթիելին, որ Ներայն, Որ
Մելքեայն, որ Ադդեայն, որ Կովսա-
մայն, որ Երմոդագայն, որ Երայն,
29 Որ Յեսուայն, որ Եղիազարայն, որ
Յովրամայն, որ Մաաթայն, որ Ղեւ-
30 եայն, Որ Սիմէոնին, որ Յուդայն,
որ Յովսեփայն, որ Յովնամայն, որ
31 Եղիակիմայն, Որ Մելքեայն, որ Մեն-
նայն, որ Մատաթայն, որ Նաթա-
32 նայն, որ Դաւթին, Որ Յեսսեայն, որ
Ովբեդայն, որ Բոոսայն, որ Սաղմով-
33 նայն, որ Նաասոնին, Որ Ամինադա-
բայն, որ Արամայն, [7]որ Ազմեայն, որ
Առնեայն," որ Եսրովմայն, որ Փարե-
34 սին, որ Յուդային, Որ Յակովբայն,
որ Իսահակայն, որ Աբրահամուն, որ
35 Թարային, որ Նաքովրայն, Որ Սե-
րուգայն, որ Ռագաւայն, որ Փաղե-
36 կայն, որ Եբերայն, որ Սաղային, Որ
Կայնանայն, որ Արփաքսադայն, որ
37 Սեմայն, որ Նոյին, որ Ղամեքայն, Որ
Մաթուսաղային, որ Ենովքայն, որ
Յարեդին, որ Մաղաղիելին, որ Կայ-
38 նանայն, Որ Ենոսայն, որ Սեթայն,
որ Ադամայն, որ Աստուծոյն:

Գլ. Դ

1 Եւ Յիսուս լի Հոգւով Սրբով դարձաւ
ի Յորդանանէ, եւ վարէր Հոգւովն յա-
2 նապատ, Աւուրս քառասուն փորձեալ
ի Սատանայէ. եւ ոչ եկեր եւ ոչ արբ
յաւուրսն յայնոսիկ. եւ ի կատարելն
նոցա քաղցեաւ:

---

[1]Յն. ասել յանձին
[2]Ի Յն. եւ Յովհաննէս
[3]Որում, որպէս եւ ոմանք ի Հայ. օրինակս, կնոջ Փիլիպպոսի,
[4]Յն. և էր,
[5]Ի Յն. պակաս
[6]Որում, Յովսեփայն
[7]Ի Բազմա պակաս

3 Եւ ասէ ցնա Սատանայ, Եթէ Որդի
ես Աստուծոյ, ասա քարիդ այդմիկ դի
4 հաց լիցի։ Պատասխանի եւ նմա Յի-
սուս եւ ասէ, Գրեալ է եթէ Ոչ հացիւ
միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բա-
նիւ Աստուծոյ։
5 Եւ հանեալ [1]զնա ի լեառն մի բարձր՝
եցոյց նմա զամենայն թագաւորու-
թիւնս աշխարհի ի վայրկեան ժամա-
6 նակի։ Եւ ասէ ցնա Սատանայ, Քեզ
տաց զայս ամենայն իշխանութիւն եւ
զփառս սոցա, զի ինձ տուեալ է, եւ
7 ումի կամիմ՝ տամ զսա։ Արդ դու եթէ
անկեալ երկիր պագանիցես առաջի իմ,
8 քեզ եղիցի ամենայն։ Պատասխանի եւ
նմա Յիսուս եւ [2]ասէ, Գրեալ է, Ե-
կիր պագցես Տեառն Աստուծոյ քումմ,
եւ զնա միայն պաշտեսցես։
9 Եւ ած զնա յԵրուսաղէմ, եւ կացոյց
ի վերայ աշտարակի տաճարին, եւ ասէ
ցնա, Եթէ Որդի ես Աստուծոյ, արկ
10 զքեզ ասի ի վայր. Զի գրեալ է եթէ
Հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ
11 վասն քո պահել զքեզ. Զի ի վերայ
ձեռաց բարձցեն զքեզ, մի երբեք հար-
12 ցես զքարի զոտն քո։ Պատասխանի
եւ նմա Յիսուս եւ ասէ, Ասացեալ է
թէ Ոչ փորձեսցես զՏէր Աստուած քո։
13 Եւ կատարեալ զամենայն փորձու-
թիւնս Սատանայի՝ իբաց եկաց ի նմա-
նէ առ ժամանակ մի։
14 ԲԿ. Եւ դարձաւ Յիսուս զօրու-
թեամբ Հոգւոյն ի Գալիլեա. եւ ել
համբաւ գնմանէ ընդ ամենայն կող-
15 մանս գաւառին։ Եւ նա ուսուցանէր
ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յա-
մենեցունց։
16 Եւ եկն ի Նազարէթ ուր սնեալն էր.
եւ եմուտ ըստ սովորութեան իւրում
17 յաւուր շաբաթու [3]ի ժողովուրդն։ Եւ
եառն նմա գիրս զԵսայեայ մարգա-
րէի. եւ յարեաւ ընթեռնուլ, եւ իբրեւ
եբաց զգիրսն՝, եգիտ զայն տեղի յո-
18 րում գրեալն էր, Հոգի Տեառն ի վե-
րայ իմ, վասն որոյ եւ օծ իսկ զիս,
աւետարանել աղքատաց առաքեաց զիս,
19 բժշկել զրեկեալս սրտիւ, Քարոզել գեր-

[1]Ոմանք, զնա Սատանայ
[2]Ոմանք, ասէ, ելեր յետս իմ, Սատանայ, զի
[3]Յոմն, ի ժողովուրդն, և յարեաւ ընթեռնուլ.
(17) Եւ եառն նմա գիրս զԵսայեայ մարգա-
րէի, և իբրեւ եբաց

եաց գերեզմանին եւ կուրաց տեսա-
նել, արձակել զվիրաւորս ի թողու-
թիւն, քարոզել դարեկան Տեառն ըն-
20 դունելի։ Եւ խրեալ զգիրսն՝ եա ցսպաս-
տաւնեայն, եւ նստաւ. եւ ամենեցունց
որ ի ժողովրդեանն էին աչք ի նա հա-
21 յէին։ Եւ սկսաւ ասել ցնոսա, Այսօր
22 լցան գիրքս այս յականջս ձեր։ Եւ ա-
մենեքին վկայէին նմա, եւ զարմա-
նային ընդ բանս չնորհացն որ ելանէին
ի բերանոյ նորա, եւ ասէին, Ո՞չ սա է
23 որդին Յովսեփայ։ Եւ ասէ ցնոսա, Ա-
պաքէն ասիցէք առ իս զառակս զայս,
Բժիշկ, բժշկեա զանձն քո. որչափ
լուաք զոր արարեր ի Կափառնայում՝
24 արա եւ աստ ի քում գաւառի։ Եւ ասէ,
Ամէն ասեմ ձեզ թէ Չէ մարգարէ ըն-
25 դունելի ի քաղաքի իւրում։ Արդարեւ
ասեմ ձեզ, զի բազում այրիք էին յա-
ւուրս Եղիայի ի մէջ Իսրայելի, յորժամ
փակեցաւն երկինք զերիս ամս եւ զվեց
ամիս, եւ եղեւ սով մեծ ընդ ամենայն
26 երկիր։ Եւ ոչ առ մի ի նոցանէ առա-
քեցաւ Եղիա, բայց միայն ի Սարեփթա
27 Սիդովնացւոց առ կին մի այրի։ Եւ
բազում բորոտք էին յիսրայելի առ Ե-
լիսէի մարգարէին. եւ ոչ ոք ի նո-
ցանէ սրբեցաւ, բայց միայն Նեեման
28 Ասորի։ Եւ լցան ամենեքին բարկու-
թեամբ ի ժողովրդեանն, իբրեւ լսէին
29 զայս. Եւ յարուցեալ հանին զնա ար-
տաքոյ քաղաքին, եւ ածին զնա մինչեւ
յարեւանս լերինն յորոյ վերայ քաղաքն
նոցա չինեալ էր՝ պահավէժ առնել զնա։
30 Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա՝ գնայր։
31 ԲԲ. Եւ էջ ի Կափառնայում ի քա-
ղաքն Գալիլեացւոց, եւ ուսուցանէր
32 զնոսա ի շաբաթին։ Եւ զարմանային
ընդ վարդապետութիւնն նորա, զի իշ-
33 խանութեամբ էր բան նորա։ Եւ էր
ի ժողովրդեանն այր մի զոր ունէր ոգի
դիւի պղծոյ, եւ աղաղակեաց ի ձայն
34 մեծ, Ասէ, Թուլայո, զի՞ կայ մեր եւ
քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորու-
սանել զմեզ. դիտեմք զքեզ ով ես,
35 Սուրբ Աստուծոյ։ Սաստեաց ի նա Յի-
սուս եւ ասէ, Պապանձեաց եւ ել ի
գմանէ. զգետնեաց զնա զետն ի միջի
անդ եւ ել ի նմանէ, եւ ոչինչ վնաս-
36 եաց նմա։ Եւ եղեն զարմանալիք ի
վերայ ամենեցունն, խօսէին ընդ մի-
մեանս եւ ասէին, Ձի՞նչ է բանս այս,

զի իշխանութեամբ եւ զօրութեամբ
37 սաստէ այսոց պղծոց, եւ ելանեն։ Եւ
երթայր հռչակ գնմանէ ընդ ամենայն
տեղիս չուրջ զպատառաւն։
38 Եւ յարուցեալ ի ժողովրդենէ անտի՝
39 եմուտ ի տունն Սիմովնի։ Զոքանչ Սի-
մովնի տապնապէր ջերմամբ մնծաւ.
40 եւ աղաչեցին զնա վասն նորա։ Եկաց
առ նմա, սաստեաց ջերմանն, եւ ե-
թող զնա. եւ վաղվաղակի յարեաւ եւ
պաշտէր զնոսա։
41 Եւ ընդ արեւուն մտանել, ամենե-
քին որոց էին հիւանդք ի պէսպէս
ցաւս՝ բերէին զնոսա առ նա. եւ նա
իւրաքանչիւր ումեք ի նոցանէ գնէր
42 ձեռս եւ բժշկէր զնոսա։ Ելանէին եւ
դեւք ի բազմաց, աղաղակէին եւ ա-
սէին եթէ Դու ես Որդի Աստուծոյ. եւ
նա սաստէր եւ ոչ տայր նոցա թոյլ խօ-
սել, զի գիտէին զնա թէ Քրիստոս է։
43 ԲԳ. Եւ իբրեւ տիւ եղեւ, ել գնաց
յանապատ տեղի, եւ ժողովուրդքն
խնդրէին զնա. եկին մինչեւ առ նա
եւ արգելուին զնա, զի մի՛ գնասցէ ի
44 նոցանէ։ Եւ նա ասէ ցնոսա, Եւ այլոց
քաղաքաց պարտ է ինձ աւետարանել
զարքայութիւնն Աստուծոյ, զի յայն
45 իսկ առաքեցայ։ Եւ քարոզէր ի ժողո-
վուրդսն Գալիլեացւոց։

ԳԼ. Ե

1 Եւ եղեւ ի խնդրել զնովաւ ժողովրդեանն եւ լսել զբանն Աստուծոյ, եւ
ինքն կայր առ ծովակին Գինեսաբե-
2 թայ։ Եւ եւս երկուս նաւս զի կային
առ ծովակին, եւ ձկնորսքն ելեալ ի
3 նոցանէ՝ լուանային զդարձան։ Ել նա
ի մի նաւուցն որ էր Սիմովնի, եւ ա-
ղաչեաց զնա սակաւիկ մի տանել ի
ներքս ի ցամաքէն. նստաւ եւ ուսու-
ցանէր ի նաւէ անտի զժողովուրդսն։
4 Եւ իբրեւ լռեաց ի խօսիցն, ասէ
ցՍիմովն, Իջուցցո ի խորն, եւ արկէք
5 զգործիս ձեր յորս։ Պատասխանի եւ
Սիմովն եւ ասէ ցնա, Վարդապետ,
զամենայն գիշերս աշխատ եղեալք եւ
ոչինչ կալաք. բայց վասն քո բանիդ
6 արկցուք զգործիսս։ Զայս իբրեւ արա-
բին, փակեցին ի ներքս բազմութիւն
ձկանց յոյժ, մինչեւ պարսպատէին ուռ-
7 կանք նոցա։ Եւ ակնարկէին որսակա-
ցացն ի միւս նաւն՝ գալ օգնել նոցա.
եւ եկին, եւ լցան երկոքին նաւքն
8 մինչեւ մերձ յընկղմիլ նոցա։ Իբրեւ
եառն Սիմովն Պետրոս, անկաւ առ
ծունկս Յիսուսի եւ ասէ, Ի բաց գնա
յինէն, Տէր, զի այր մեղաւոր եմ ես։
9 Քանզի ահ պատեաց զնա եւ զամե-
նեսեան որ ընդ նմայն էին՝ վասն որ-
10 սոյ ձկանցն զոր ըմբռնեցին, Նոյնպէս
եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս զորդիսն Զեբեդեայ, որ էին որսակիցք
Սիմովնի. եւ ասէ ցՍիմովն Յիսուս,
Մի՛ երկնչիր, յայսմ հետէ զմարդիկ որ-
11 սայցես ի կեանս։ Եւ հանեալ զնաւն
ի ցամաք՝ թողին զամենայն եւ գնացին
զհետ նորա։
12 ԲԴ. Եւ եղեւ ի հասանելն նորա ի
մի ի քաղաքացն, ահա այր մի լի բո-
րոտութեամբ իբրեւ տեսս զՅիսուս,
անկեալ ի վերայ երեսաց աղաչեաց զնա
եւ ասէ, Տէր, եթէ կամիս, կարող ես
13 զիս սրբել։ Զգեաց զձեռն իւր, հասոյց
ի նա եւ ասէ, Կամիմ, սրբեաց. եւ
վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտու-
14 թիւնն։ Եւ նա պատուիրեաց նմա մի՛
ումեք ասել, այլ թէ Երթ ցոյց զանձն
քո քահանային, եւ մատո պատարագ
վասն սրբութեան քո, որպէս եւ հրա-
մայեաց Մովսէս ի վկայութիւն նոցա։
15 Եւ յորդէր առաւել բանն գնմանէ. եւ
ժողովէին ժողովուրդք բազումք լսել
եւ բժշկել ի հիւանդութենէ իւրեանց։
16 Եւ նա խոյս տայր յանապատ տեղիս
եւ կայր յաղօթս։
17 ԲԵ. Եւ եղեւ ի միում աւուրց եւ
ինքն ուսուցանէր, եւ փարիսեցիքն
եւ օրինացն վարդապետք նստէին, որ
ժողովեալ էին յամենայն քաղաքաց
Գալիլեացւոց եւ Հրէաստանի եւ Ե-
րուսաղեմի. եւ զօրութիւն Տեառն էր
18 ի բժշկել զնոսա։ Եւ ահա արք բերէին
մահճօք զայր մի որ էր անդամալոյծ,
եւ խնդրէին զնա մուծանել ի ներքս
19 եւ դնել առաջի նորա։ Եւ իբրեւ ոչ
գտանէին թէ ընդ որ մուծանիցեն զնա
ի ներքս վասն ամբոխին, ելին ի տա-
նիս եւ ի ցուցին կախեցին զնա, եւ
իջուցին մահճովքն հանդերձ ի մէջ ա-
20 ռաջի Յիսուսի։ Եւ տեսեալ զհաւատսն
նոցա՝ ասէ ցնա, Այր դու, թողեալ
21 լիցին քեզ մեղք քո։ Սկսան խորհել
դպիրքն եւ փարիսեցիք, եւ ասեն,

Ո՞ է սա որ խօսի զհայհոյութիւնս, ո՞վ
կարէ թողուլ զմեղս բայց միայն Աս-
22 տուած։ Իրրեւ գիտաց Յիսուս զխոր-
հուրդսն նոցա, պատասխանի եւ ասէ
23 ցնոսա, Ձի՞ խորհիք ի սիրտս ձեր։
Ձի՞նչ դիւրագոյն է, ասել Թողեալ լի-
ցին քեզ մեղք քո, եթէ ասել, Արի եւ
24 գնա։ Այլ զի գիտասջիք եթէ իշխա-
նութիւն ունի Որդի մարդոյ երկրի
թողուլ զմեղս, (ասէ ցանդամալուծն,)
ձեզ ասեմ, Արի, առ զմահիճս քո եւ
25 երթ ի տուն քո։ Եւ առժամայն յա-
րուցեալ առաջի ամենեցուն, առ զիւ-
րեւ յորոյ վերայ անկեալն դնէր, գնաց
26 ի տուն իւր, եւ փառաւոր առնէր զԱս-
տուած։ Զարմանք կալան զամենես-
սին, եւ փառաւոր առնէին զԱստուած.
լի եղեն ահիւ, եւ ասեն եթէ Տեսաք
այսօր նոր նչան։

27 ԳՋ. Եւ յետ այնորիկ ել անտի եւ
ետես մաքսաւոր մի որում անուն էր
Ղեւի, զի նստէր ի մաքսաւորութեան.
28 եւ ասէ ցնա, Ե՛կ դիմի իմ։ Եւ Թող-
եալ զամենայն՝ յարեաւ գնաց զկնի նո-
29 ցա։ Եւ արար ընդունելութիւն մեծ
նմա Ղեւի ի տան իւրում. եւ էր ժո-
ղովուրդ բազում մաքսաւորաց եւ այ-
30 լոց որ էին բազմեալ ընդ նոսա։ Եւ
տրտնջէին փարիսեցիքն եւ դպիրքն
նոցա [1]զնոսին եւ ասէին, Ընդէ՞ր ընդ մաքսաւորս
եւ ընդ մեղաւորս ուտէք եւ ըմպէք։
31 Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնո-
սա, Ոչինչ են պիտոյ բժիշկք ողջոյ,
32 այլ հիւանդաց։ Ոչ եկի կոչել զար-
դարս, այլ զմեղաւորս յապաշխարու-
թիւն։

33 Եւ նոքա ասեն ցնա, Ընդէ՞ր աշա-
կերտքն Յովհաննու պահեն սակս եւ
խնդրուածս առնեն, նոյնպէս եւ փա-
րիսեցւոցն, եւ քոյքդ ուտեն եւ ըմ-
34 պեն։ Եւ նա ասէ ցնոսա, Միթէ կա-
րո՞ղ էք մանկանց առագաստի, մինչ-
եւ նա ընդ նոսա իցէ, հրաման ոչ պա-
35 հել։ Եկեսցեն աւուրք յորժամ բարձցի
ի նոցանէ փեսայն, ապա պահեսցեն
36 յաւուրսն յայնոսիկ։ Ասաց եւ առակ
մի առ նոսա թէ Ոչ ոք արկանէ ի նոր
հանդերձէ ի վերայ հնացեալ ձորձոյ.
ապա թէ ոչ եւ զնորն պատառէ, եւ

[1] Ի ցոսին գլուխ

ընդ հնոյն չհիաբանի կապերան որ ի
37 նորոյն։ Եւ ոչ ոք արկանէ զինի նոր
ի տիկս հինս. ապա թէ ոչ պայթու-
ցանէ զինին նոր զտիկսն հինս, ինքն
38 հեղու եւ տիկքն կորնչին։ Այլ զինի
նոր ի տիկս նորս արկանելի է, եւ եր-
39 կոքին պահին։ Եւ ոչ ոք ըմպէ զհինն
[2]եւ կամիցի զնորն, քանզի ասէ թէ
Հինն քաղցրագոյն է։

Գլ. Զ

1 ԵՆ. Եւ եղեւ ի չաբաթու [3]յերկրորդ-
եում առաջնոյն՝ անցանելնմա ընդ ար-
տորայսն, եւ աշակերտքն նորա կոր-
ղէին հասկ, շփէին ընդ ափ եւ ուտէին։
2 Եւ ոմանք ի փարիսեցւոցն ասեն ցնո-
սա, Ձի՞նչ գործէք որ չէ օրէն ի չա-
3 բաթու։ Պատասխանի եւ նոցա Յի-
սուս եւ ասէ, Զիցէ՞ ընթերցեալ ձեր
զոր արարն Դաւիթ, յորժամ քաղ-
եաւն ինքն եւ որ ընդ նմանն էին։
4 Զիա՛րդ եմուտ նա ի տունն Աստուծոյ,
եւ զհացն զառաջաւորութեան եկեր
եւ ետ այնոցիկ որ ընդ նմանն էին.
զոր ոչ էր օրէն ուրեք ուտել, բայց
5 միայն [4]քահանայապետին։ Եւ ասէ
ցնոսա, Տէր է Որդի մարդոյ եւ չա-
բաթու։

6 Եւ եղեւ ի միւսում չաբաթուն մտա-
նել նմա ի ժողովուրդն եւ ուսուց-
ցանել. եւ էր անդ այր մի եւ ձեռն
7 իւր աջ գօսացեալ էր։ Եւ սպասէին
նմա գրիչքն եւ փարիսեցիք թէ ի չա-
բաթուն բժշկիցէ՞, զի գտանիցեն չա-
8 բաթօսութիւն գնմանէ։ Եւ նա գիտէր
զխորհուրդս նոցա. ասէ ցայրն որոյ
ձեռն գօսացեալ էր, Արի, անց ի մէջ.
9 եւ նա յարուցեալ եկաց։ Ասէ ցնոսա
Յիսուս, Հարցից ինչ զձեզ, Ձի՞նչ ար-
ժան է ի չաբաթու, բարի՞ ինչ առնել
եթէ չար գործել, զոր մի ապրեցու-
10 ցանել՞ թէ կորուսանել։ Եւ հայեցեալ
չուրջ զամենեսեան մի՝ [5]ցայրդին՝ ասէ
ցնա, Ձգեա զձեռն քո. եւ նա ձգեաց,
եւ հաստատեցաւ ձեռն նորա [3]իբրեւ
11 զմեւսն։ Նորա լցան յիմարութեամբ,

[2] Ոմանք, և վաղվաղակի
[3] Յոմանս գլուխ
[4] Յոմն, քահանայիցն. տես Մատթ. ԻԲ. 4, Մարկ. Բ. 26
[5] Ի բազմս գլուխ

եւ խօսէին ընդ միմեանս թէ զինչ առ-
նիցեն Յիսուսի։
12 գԿ. Եւ եկեալ ընդ աւուրսն ընդ
այնոսիկ ել ի լեառն կալ յաղօթս, եւ
հաներ զղիչերն ի զլուխ յաղօթիցն Ա-
13 *տուծոյ։ Եւ իբրեւ այգ եղեւ, կոչեաց*
զաշակերտան իւր, եւ ընտրեաց ի նո-
ցանէ երկոտասանս, զորս եւ առաք-
14 *եալս անուանեաց։ ԶՍիմովն զոր եւ*
Պետրոսն անուանեաց, եւ զԱնդրէաս
զեղբայր նորին, եւ զՅակովբոս, եւ
զՅովհաննէս, եւ զՓիլիպպոս, եւ զԲար-
15 *թողոմէոս, եւ զՄատթէոս, եւ զԹով-*
մաս, եւ զՅակովբոս Աղփեայ, եւ զՍի-
16 *մոնն զկոչեցեալն Նախանձայոյզ, եւ*
զՅուդա Յակովբայ, եւ զՅուդա Ի-
կարիովտացի, որ եղեւ իսկ մատնիչ։
17 Եւ իջեալ նոքօք հանդերձ ի տեղի մի
տափարակ, եւ ժողով աշակերտացն
նորա եւ բազմութիւն ցոյժ ժողովրդ-
դեանն յամենայն Հրէաստանէ, եւ Ե-
րուսաղեմէ [1]եւ յայնմ կողմանէ՝, եւ
ի ծովեզերէն Տիւրոսի եւ Սիդովնի ։
18 *Որ եկին լսել ի նմանէ եւ բժշկել ի հի-*
ւանդութենէ իւրեանց ։ Եւ նեղեալքն
19 *չարոց պղծոց բժշկէին։ Եւ ամենայն*
ժողովուրդն ձգտէր մերձենալ ի նա,
զի զօրութիւն [2]բղխում ելանէր ի նմա-
նէ եւ բժշկէր զամենեսեան։
20 Եւ նա ամբարձ զաչս իւր յաշա-
կերտան իւր եւ ասէ, Երանի ապքա-
տացդ [1]հոգւով, զի ձեր է արքայու-
21 *թիւնն Աստուծոյ։ Երանի որ քաղցեալ*
[3]ձեն այժմ, զի յագեսցին՝. երանի որ
22 *[4]լան այժմ, զի ծիծաղեսցին՝։ Երանի*
է ձեզ չարժամ ատիցեն զձեզ մարդիկ,
եւ չարժամ որոշիցեն զձեզ եւ նախա-
տիցեն, եւ հանիցեն անուն չար զձէնջ
23 *վասն Որգւոյ մարդոյ։ Ուրախ լիջիք*
յաւուր յայնմիկ եւ ցնծասջիք, զի ահա
վարձք ձեր բազում են յերկինս. քանզի
ոչինչափ առնէին մարգարէիցն
24 *հարք իւրեանց. Բայց վայ ձեզ մեծա-*
մանեաց, զի ընկալայք զմխիթարու-
25 *թիւն ձեր։ վայ ձեզ որ յագեալ էք*
այժմ, զի քաղցիցէք. վայ ձեզ որ ծի-
ծաղիքդ այժմ, զի սգայցէք, եւ լայցէք։
26 *վայ ձեզ յորժամ բարի ասիցեն զձէնջ*
[5]ամենայն մարդիկ, զի այպէս առ-
նէին սուտ մարգարէիցն հարք նոցա։
27 Այլ ձեզ ասեմ որ լսէքդ, Սիրեցէք
զթշնամիս ձեր, բարի արարէք առ-
28 *լեաց ձերոց։ Օրհնեցէք զանիծիչս ձեր,*
աղօթս արարէք ի վերայ նեղչաց ձե-
29 *րոց։ Որ հարկանէ զծնօտ քո, մատո*
նմա եւ զմեւսն. եւ որ հանէ ի քէն
զբաճկոն քո, մի՛ արգելուր ի նմանէ
30 եւ [6]զչապիկս։ Ամենայնի որ խնդրէ ի
քէն՝ տուր, եւ զոր ինչ հանէ ոք ի քէն՝
31 *մի՛ պահանջեր։ Եւ որպէս կամիք թէ*
արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արաս-
32 *ջիք եւ դուք նոցա։ Եւ եթէ սիրէք*
զսուք զսիրելիս ձեր, զի՞նչ չնորհ է
ձեր, զի եւ մեղաւորք սիրեն զսիրելիս
33 *իւրեանց։ Եւ եթէ բարի առնէք բա-*
րեարարս ձերոց, ո՞ր չնորհ է ձեր, զի
34 եւ մեղաւորք զնոյն գործեն։ Եւ եթէ
տայք փոխ այնոսիկ յորոց ակն ունի-
ջիք առնուլ, ո՞ր չնորհ է ձեր, քանզի
եւ մեղաւորք մեղաւորաց փոխ տան,
35 *զի առցեն անդրէն զկշիռն։ Բայց սի-*
րեցէք զթշնամիս ձեր, եւ բարի արա-
րէք [7]առեւլեաց ձերոց՝. եւ տուք փոխ՝
ոտաւ ոչ ակն ունելիք առնուլ. եւ
եղիցին վարձք ձեր բազում, եւ եղի-
ջիք որդիք Բարձրելոյ. զի նա քաղցր
է ի վերայ չարաց եւ ապաշնորհաց։
36 Եղերուր գիմած, որպէս եւ Հայրն
37 ձեր գիմած է։ Մի՛ դատիք եւ ոչ դա-
տիցիք. մի՛ պատժէք եւ ոչ պատժիցիք,
38 *արձակեցէք եւ արձակիցիք։ Տուք եւ*
տացի ձեզ. չափ բարւոք, թաթաղուն,
չարժուն, վերուն տացին ի գոգս ձեր.
նովին չափով որով չափէք՝ չափեսցի
ձեզ։
39 Առաց եւ առակ մի առնոսա, Միթէ
կարիցէ կոյր կուրի առաջնորդել, ո՞չ
ապաքէն երկոքեան ի խորխորատ ան-
40 *կանիցին։ Ոչ է աշակերտ լաւ քան*
զվարդապետ իւր. ամենայն կատար-
եալն եղիցի իբրեւ զվարդապետ իւր։
41 Զի՛ տեսանես զչիլ յականն եղբօր քո,
եւ ի քումմ ականն զգերանդ ոչ նկամ-
42 *րես։ Կամ զիա՞րդ կարես ասել ցեղ-*
բայր քո, Եղբայր, թող հանից զչիլդ
յականէ քումմէ, եւ դու ի քումմ ականն
զգերանդ ոչ տեսանես. կեղծաւոր,

[1] ի Բազում դրօք
[2] ի Ցառն դրօք
[3] Բազում, իցէք այժմ, զի յագեսջիք, որպէս և օրինակ ի Հայերէն
[4] Ցառն, լայք այժմ, զի ծիծաղեսջիք
[5] Ցառաջս դրօք
[6] Ցառն, զշապիկ քո

հան նախ զդերանդ յականէ քումմէ, եւ ապա հայեսցիր հանել զիւղ յականէ
43 եղբօր քո: Զի ոչ է ծառ բարի որ առնէ պտուղ չար, եւ ոչ դարձեալ ծառ
44 չար՝ որ առնէ պտուղ բարի: Զի իւրաքանչիւր ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի. զի ոչ ելից ի փշոց քաղեն թուպ,
45 եւ ոչ ի մորենւոյ կթեն խաղող: Մարդ բարի ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի, եւ մարդ չար [1]ի չարէն բղխէ զչար. քանզի ի յաւելուածոյ սրտին խօսի բերան նորա:
46 Զի՞ կոչէք զիս Տէր, Տէր, եւ զոր ասեմն ոչ առնէք: Ամենայն որ գայ առ իս, եւ լսէ զբանս իմ եւ առնէ զնոսա, ցուցից ձեզ
48 ումի նման է: Նման է առն որ չինիցէ տուն, որ փորեաց եւ խորհաց, եւ եդ հիմն ի վէմի. ի յառնել հեղեղաց բաղխեաց գետ զտունն, եւ ոչ կարաց չարժել զնա. զի հաստատեալ էր հիմնին
49 ի վերայ վիմի: Իսկ որ լսէ զբանս իմ եւ ոչ առնէ, նման է առն, որ չինիցէ տուն ի վերայ հողոյ առանց հիմանց. զոր բաղխեաց գետ, եւ վայրվարապիր անկաւ, եւ եղեւ կործանումն տանն այնորիկ մեծ:

Գլ. է

1 ԳԲ. Եւ իբրեւ կատարեաց զամենայն բանս իւր ի լսելիս ժողովրդեանն,
2 եմուտ ի Կափառնայում: Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր ի մահանալ, որ էր
3 նմա պատուական: Իբրեւ լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերսն ի Հրէից, ազաչել զնա զի եկեալ ապրեցուսցէ
4 զծառայն նորա: Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ ազաչէին զնա առեպ եւ ասէին
5 թէ Արժանի է որում զնորս զայս առնես: Զի սիրէ զազգս մեր, եւ զժո-
6 ղովրդեանդն նա չինեաց մեզ: Եւ Յիսուս գնաց ընդ նոսա. իբրեւ այնուհետեւ կարի հեռի էր ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս, եւ ասէ
7 ցնա, Տէր, մի՛ ինչ ախատ լինիր, զի չեմ բաւական եթէ ընդ տարկաւ իմով
8 մտանիցես. վասն որոյ եւ ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ գալոյ. այլ ասա բանիւ, եւ բժշկեսցի մանուկս
9 իմ: Քանզի եւ ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինեւ զինուորս, եւ ասեմ ասա, երթ, եւ երթայ. եւ այլում թէ եկ, եւ գայ. եւ ծառայի իմում թէ Արա զայս, եւ առնէ: Եւ իբրեւ լուաւ զայս Յիսուս, զարմացաւ, դարձաւ առ ժողովուրդն որ երթայրն գնա նորա եւ ասէ,
10 [2]Ամէն ասեմ ձեզ թէ եւ ոչ յԻսրայէլի այսչափ հաւատս գտի: Եւ գարձան անդրէն պատգամաւորքն ի տուն, եւ գտին զծառայն հիւանդ բժշկեալ:
11 ԳԳ. Եւ եղեւ ի վաղիւն երթայր ի քաղաքն մի որում անուն էր Նային. երթայրն ընդ նմա եւ [3]աչակերտքն նո-
12 րա՝ եւ ժողովուրդք բազում: Իբրեւ մերձ եղեւ ի դուռն քաղաքին, եւ անա ելանէր մեռեալ մի որդի միամօր մօր իւրոյ, եւ նա էր այրի. եւ ժողովուրդ
13 բազում քաղաքին էր ընդ նմա: Իբրեւ եսես զնա Տէր, գթացաւ ի նա եւ
14 ասէ, Մի՛ լար: Եւ մատուցեալ մերձեցաւ ի գազազան. եւ որք բարձեալն առնէին՝ զանգի առին. եւ ասէ, Պա-
15 տանի դու, քեզ ասեմ, արի: Կանգնեցաւ եւ նստաւ մեռեալն եւ սկսաւ
16 խօսել. եւ ետ զնա մօրն իւր: Եւ ահ կալաւ զամենեսեան, եւ փառաւորէին զԱստուած եւ ասէին թէ Մարգարէ ոմն մեծ յարուցեալ է ի մէջ մե-
17 ծոցդ, եւ թէ Այց արար Աստուած ժողովրդեան իւրում [2]ի բարութիւն: Եւ ել պրպտութիւն այս ընդ ամենայն Հրէաստան վասն նորա, եւ ընդ ամենայն կողմանս աշխարհին:
18 Եւ պատմեցին Յովհաննու ազակերքն իւր վասն ամենայնի այսորիկ:
19 Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտացն իւրոց Յովհաննէս, առաքեաց [4]առ Տէր՝ եւ ասէ, Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալ-
20 գուք: Եւ եկեալ արքն առ նա՝ ասեն, Յովհաննէս մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ եւ ասէ, Դո՞ւ ես որ գալոցն
21 ես, եթէ այլում ակն կացուք: Եւ ի նմին ժամու բժշկեաց զբազումս ի հիւանդութեանց եւ ի հարուածոց եւ յայտուց չարաց, եւ կուրաց [3]բազմաց
22 շնորհեաց տեսանել: Պատասխանի ետ

[1] Ոմանք, ի չար գանձուց սրտի իւրոյ

[2] ի բարեացս պարտ

[3] Ոմանք, յաշակերտաց նորա ոչ սակաւք

[4] Ոմանք, առ Յիսուս

[1]նոցա եւ ասէ , երթայք պատմեցէք Յովհաննու զոր տեսէդ եւ լուայք , զի կոյրք տեսանեն , եւ կաղք գնան , բորոտք սրբին , խուլք լսեն , մեռեալք
23 յառնեն , աղքատք աւետարանին . Եւ երանի իցէ որ ոչ գայթակղիցի յիս ։
24 Եւ իբրեւ գնացին հրեշտակքն Յովհաննու , սկսաւ խօսել ընդ ժողովուրդսն վասն Յովհաննու , Զի՞նչ ելէք յանապատն տեսանել , եղէ՞ն չար-
25 ժուն ի հողմոյ ։ Այլ զի՞նչ ելէք տեսանել , մա՞յր ի հանդերձս փափկութեան զարդարեալ . ահաւասիկ որք ի հանդերձս երեւելիս եւ ի փափկութեան
26 են՝ յարքունիս են ։ Այլ զի՞նչ ելէք տեսանել . մարգարէ՞ . այո , ասեմ ձեզ,
27 առաւել եւս քան զմարգարէ ։ Զի սա է վասն որոյ գրեալն է թէ , Ահա առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո , որ յարդարեսցէ զճանապարհս քո առաջի քո։
28 [2]Ամէն ասեմ ձեզ , Մեծ ի ծնունդս կանանց մարգարէ քան զՅովհաննէս ոչ ոք է , բայց փոքրիկն յարքայութեան
Աստուծոյ մեծ է քան զնա ։
29 Եւ ամենայն ժողովուրդն իբրեւ լուաւ եւ մաքսաւորքն , արդարացուցին զԱստուած , զի մկրտեցան ի մկրբ-
30 տութիւնն Յովհաննու ։ Իսկ փարիսեցիքն եւ օրինականքն զխորհուրդն Աստուծոյ անարդեցին յանձինս իւրեանց , զի ոչ մկրտեցան ի նմանէ ։
31 [3]Արդ ո՞ւմ նմանեսցուք զմարդիկ ազգիս այսորիկ , եւ ո՞ւմ իցեն նմա-
32 նողք ։ Նման են մանկտւոյ որ ի հրապարակս նստին , կարդայցեն զմիմեանս եւ ասիցեն , Փող հարաք ձեզ եւ ոչ կաքաւեցէք . ողբացաք եւ ոչ
33 լացէք ։ Եկն Յովհաննէս մկրտիչ , [4]ոչ ուտէր եւ ոչ ըմպէր՝ , եւ ասէիք , Դեւ
34 դոյ ի նմա ։ Եկն Որդի մարդոյ , ուտէ եւ ըմպէ , եւ ասէք , Ահա այր կերող եւ արբեցող , բարեկամ մաքսաւորաց
35 եւ մեղաւորաց ։ Եւ արդարացաւ իմաստութիւն [5]յորդւոց իւրոյ ։
36 ԳԴ· Աղաչէր զնա ոմն ի փարիսեցւոցն զի կերիցէ ճաշ ընդ նմա . եւ
մտեալ ի տուն փարիսեցւոյն՝ բազմե-
37 ցաւ ։ Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր . իբրեւ գիտաց թէ բազմեալ է ի տան փարիսեցւոյն , բերեալ չիւ մի
38 իւղոյ աղնուի , կայր յետոյ առ ոտս նորա , լայր , եւ արտասուօքն սկսաւ թանալ զոտս նորա , եւ հերով գլխոյ իւրոյ չնչէր . եւ համբուրէր զոտս նո-
39 րա եւ օծանէր իւղովն ։ Եւ տեսեալ փարիսեցւոյն որ կոչեաց զնա՝ ասէր ընդ միտս իւր , Սա թէ մարգարէ ոք էր , ապա գիտէր թէ ով եւ որպիսի ոք կին մերձենայ ի սա . զի մեղաւոր
40 է ։ Պատասխանի նա Յիսուս եւ ասէ ցնա , Սիմոնէ , ունիմ ինչ ասել քեզ . եւ նա ասէ , Ասա , վարդապետ . եւ
41 ասէ , Երկու պարտապանք էին ուրուն փոխատուի . մինն պարտէր հինգ հարիւր դահեկան , եւ մեւսն՝ յիսուն ։
42 Եւ իբրեւ ոչ գոյր նոցա հատուցանել , երկոցունց չնորհեաց . արդ ասա , ո՞վ
43 առաւել սիրեսցէ զնա ։ Ասէ Սիմոնէ , Ինձ այսպէս թուի եթէ որում զբա-
զումն չնորհեաց . եւ նա ասէ ցնա ,
44 Ուղիղ դատեցար ։ Եւ դարձեալ ի կինն կոչեմն , ասէ ցՍիմոնէ , Տեսանե՞ս զայս կին , մտի ի տուն քո , ջուր ոտից իմոց ոչ եառուր . իսկ սա արտասուօք իբ-
րոլոր եթողեալ զոտս իմ , եւ [6]հերով իւրով՝
45 չնչեաց ։ Համբոյր մի զոս ոչ եառուր ինձ , սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ , ոչ դադարեալ ի համբուրելոյ զոտս
46 իմ ։ Իւղով գլխոյս իմ ոչ օծեր , սա
47 իւղով անուչիւ [7]օծ ։ Վասն որոյ ասեմ քեզ , Թողեալ լիցին սմա մեղք իւր բազումք , զի յոյժ սիրեաց . զի որում չաւ թողուցու՝ չաւ սիրէ , եւ որում
48 սակաւ՝ սակաւ ։ Եւ ասէ ցնա , Թողեալ
49 լիցին քեզ մեղք քո ։ Եւ սկսան որ բազմեալն էին ընդ նմա՝ ասել ընդ միտս իւրեանց , Ո՛վ է սա որ զմեղս թողու ։
50 Եւ նա ասէ ցկինն , Հաւատք քո կեցուցին զքեզ , երթ ի խաղաղութիւն ։

ԳԼ· Ը

1 ԳԵ· Եւ եղեւ յետ այսորիկ եւ ինքն չրջէր ընդ քաղաքս եւ ընդ գեղս , քա-
րոզէր եւ աւետարանէր զարքայութիւն

---

[1]Ոմանք , Նոցա Յիսուս
[2]Ոմանք , Զի
[3]Ոմանք , Եւ ասէ Տէր , Արդ
[4]Ոմանք , որպես և օրինակ ի Հայ ., ոչ ուտէր հաց և ոչ ըմպէր գինի
[5]Բազումք , յամենայն որդւոց
[6]Ոմանք , Հերով գլխոյ իւրոյ
[7]Բազումք , օծ զոտս իմ

Աստուծոյ, եւ երկոսեանքն ընդ նմա։
2 Եւ կանայք ոմանք որ բժշկեալ էին
չարաց եւ ի հիւանդութեանց.
Մարիամ որ կոչէր Magdաղենացի,
3 յորմէ եւթն դեւն ելեալ էր։ Եւ Յո-
վհաննա կին Քուզայ հազարապետին Հե-
րովդի, եւ Շուշան եւ այլք բազումք,
որք պաշտէին [1]զնա յրկնից իւրեանց։
4 Եւ ի ժողովել բազում ժողովրդոց,
եւ ըստ քաղաքաց քաղաքաց եկելոցն
5 առ նա, ասէ առակաւ, Ել սերմանա-
ցան սերմանել զսերմանիս իւր. եւ ի
սերմանելն իւրում էր որ անկաւ առ
ճանապարհաւ եւ եղեւ կոխան, եւ
6 թռչունք երկնից կերան զնա։ Եւ այլն
անկաւ յապառաժի. եւ ընդ բուսա-
7 նելն՝ չորացաւ առ ի չգոյէ հիւթոյ։ Եւ
այլն անկաւ ի մէջ փշոց, եւ ընդ նմին
8 բուսեալ փշոցն՝ հեղձուցին զնա։ Եւ
այլն անկաւ յերկիր բարի [2]եւ պա-
բարա՛, եւ բուսեալ՝ արար պտուղ հա-
րիւրապատիկ. զայս իրրեւ խօսեցաւ,
ասէ, Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ։
9 Հարցանէին զնա աշակերտքն Ք[3]
10 Զի՞նչ իցէ առակն։ Եւ նա ասէ, Ձեզ
տուեալ է գիտել զխորհուրդս արքա-
յութեան Աստուծոյ, բայց այլոցն ա-
ռակօք. զի տեսցեն եւ մի՛ տեսցեն,
լուիցեն եւ մի՛ իմացցեն։
11 Բայց առակն այս ինչ է. Սերմն բանն
12 Աստուծոյ է։ Եւ որք առ ճանապար-
հաւն՝ այնոքիկ են որ լսեն, եւ ապա
գայ Սատանայ հանէ զբանն ի սրտից
նոցա, զի մի՛ հաւատասցեն եւ ապ-
13 րեսցին։ Եւ որք յապառաժին, որք
յորժամ լսիցեն, ընդունին զբանն, եւ արմատս ոչ ունիցին.
որք առ ժամանակ մի հաւատան, եւ
ի ժամանակի փորձութեան հեռանան։
14 Իսկ որ ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա են,
որ իրրեւ լսեն [2]զբանն, եւ ի հոգս եւ
ի մեծութիւն եւ ի ցանկութիւն աշ-
խարհիս զբաղեալ, հնձձնուն եւ ան-
15 պտուղ լինին։ Իսկ որ յերկիրն պա-
բարա, որոց բարւոք եւ զուարթալին
սրտիւ լուեալ զբանն՝ ընդունին, եւ
տան պտուղ համբերութեամբ։
16 Ոչ ոք լուցանէ ճրագ, եւ ի ծածու-
ցանէ ընդ կարասեաւ կամ դնէ ընդ
մահճօք. այլ ի վերայ աշտանակի դնէ,
17 զի որ մտանեն՝ զլոյս տեսցեն։ Զի՛ք
ինչ ծածուկ որ ոչ յայտ լիցի. եւ ոչ
գաղտնի՝ որ ոչ ծանիցի եւ եկեսցէ ի
18 յայտ։ Տեսէք այսուհետեւ զիարդ լսէք.
զի որ ունիցէ տացի նմա, եւ որ ոչն
ունիցէ, եւ զոր կարծէն [4]է ունիցէ՝
բարձցի ի նմանէ։
19 Եկին առ նա մայրն եւ եղբարք իւր,
եւ ոչ կարէին հասանել ի նա վասն
20 բազմութեանն։ Ազդ եղեւ նմա եւ ա-
սեն, Մայր քո եւ եղբարք քո կան
արտաքոյ եւ կամին զքեզ տեսանել։
21 Եւ [3]ասէ ցնոսա, Մայր իմ եւ եղբարք
իմ սոքա են, որ զբանն Աստուծոյ
լսեն եւ առնեն։
22 Գ. Եւ եղեւ ի միում աւուրց ինքն
եւ ի նաւ եւ աշակերտքն նորա, եւ
ասէ ցնոսա, Եկայք, անցցուք յայնկոյս
23 ծովակիս, եւ գնացին։ Եւ մինչդեռ
նաւէին, ի քուն եմուտ. եւ էջ մրրիկ
հողմոյ ի ծովակն եւ ուռնոյր, եւ տագ-
24 նապէին։ Մատուցեալ զարթուցին զնա
եւ ասեն, Վարդապետ, վարդապետ,
կորնչիմք աւասիկ. եւ նա յարուցեալ
սաստեաց հողմոյն եւ խաւարութեան
ջրոցն, եւ դադարեցին, եւ եղեւ
25 խաղաղութիւն։ Ասէ ցնոսա, Ո՞ւր են
հաւատք ձեր. եւ զահի հարեալ զար-
մացան եւ ասէին ցմիմեանս, Ո՞վ ար-
գեւք իցէ սա, զի եւ հողմոց եւ ջրոց
հրամայ տայ, եւ հնազանդին սմա։
26 Եւ նաւեցին իջին յաշխարհն [4]Գեր-
գեսացւոց, որ է յայնկոյս հանդէպ Գա-
27 լիլեայ։ Եւ ընդ ելանելն նորա ի ցա-
մաք, պատահեաց այր մի ի քաղաքէն,
յորում էին դեւք. եւ բազում ժամա-
նակս չէր հանդերձ զգեցեալ եւ ոչ ի
28 տան բնակեալ, այլ ի գերեզմանս։ Եւ
տեսեալ զՅիսուս, աղաղակեաց եւ ան-
կաւ առաջի նորա, եւ ասէ մեծաձայն,
Զի՞ կայ իմ եւ քո, Յիսուս, Որդի Աս-
տուծոյ բարձրելոյ, աղաչեմ զքեզ, մի՛
29 տանջեր զիս։ Պանդի հրամայ տայր
այսոյն պղծոյ ելանել ի մարդոյ անտի.
զի բազում ժամանակս յափշտակեալ
էր զնա, եւ կապէր ի չղթայս, եւ պա-
հէր յերկաթս, եւ խզէր զկապանսն,
30 եւ վարէր ի դիւէն յանապատս։ Եհարց
զնա Յիսուս եւ ասէ, Զի՞նչ անուն է

---

[1] Որ՚ն՝ զնոսա
[2] Ի բ-ը-ն պ-ի-ե
[3] Ի բ-ը-ն, նա պատասխանի եւ ասէ
[4] Որ՚ն՝ Գադարացւոց

քեզ։ Եւ նա ասէ, Լէզէոնէ. պի զեւք
31 բաղումք մտեալ էին ի նա։ Եւ ազա-
չէին զնա պի մի՛ հրամայն տացէ նոցա
32 երթալ յանդունդս։ Եւ էր անդ հրա-
մակ մի խոզից բազմաց արօտականի ի
լերինն, եւ աղաչեցին զնա զի հրամայն
տացէ նոցա մտանել ի նոսա. եւ հրա-
33 մայեաց նոցա։ Եւ ելեալ զեւքն յառ-
նէն մարդն ի խոզեանն, եւ պիտեաց ե-
րամակն ի գահէ անտի ի ծովակն եւ
34 հնձաւ։ Իրրեւ տեսին խոզարածքն
զիրան որ եղեն՝ վախեան, եւ պատ-
35 մեցին ի քաղաքին եւ յագարակսն։ Եւ
իրրեւ ելին տեսանել զգործեան, եւ եկին
առ Յիսուս, եւ գտին զայրն՝ ուստի
զեւքն ելեալ էին, զգեցեալ եւ զգաս-
տացեալ նստեր առ ոտն Յիսուսի, եւ
36 երկեան։ Պատմեցին նոցա որպ տես-
անէն էր թէ զիարդ փրկեցաւ դիւա-
37 հարն։ Եւ աղաչէր զնա ամենայն բազ-
մութիւնն չուրջ զկողմանսքն [1]Գերա-
զնացուց՝ զնալ [2]ի սահմանացն նոցա՝,
քանզի ահիւ մեծաւ տագնապէին. եւ
նա մտեալ ի նաւ՝ դարձաւ անդրէն։
38 Աղաչէր զնա այրն ուստի զեւքն ելեալ
էին՝ չրջլոյ ընդ նմա. արձակեաց [3]զնա
39 եւ ասէ, Դարձ ի տուն քո եւ պատ-
մեա զոր միանգամ արար քեզ Աս-
տուած. գնաց ի քաղաքն եւ քարոզէր
զոր ինչ արար նմա Յիսուս։
40 Եւ իրրեւ դարձաւ անդրէն Յիսուս,
ընկալաւ զնա ժողովուրդն, քանզի ա-
41 մենեքեան ակն ունէին նմա։ Եւ ահա
եկն այր մի որում անուն էր Յայրոս,
եւ նա էր իշխան ժողովրդեանն, ան-
կեալ առ ոտն Յիսուսի՝ աղաչէր զնա
42 մտանել ի տուն նորա. Զի դուստր
միամօր էր նորա ամաց իրրեւ երկո-
տասանից, եւ էր մերձ ի մահ. եւ ընդ
երթալն նորա ժողովուրդքն նեղէին
զնա։
43 Եւ կին մի էր ի տեառնասուքեան
արեան յամաց երկոտասանից, [4]որում
ոչ էր լինալ հնար յումեքէ բժշկել։
44 Մատուցեալ յետուց մերձեցաւ ի զգեստս
հանդերձի նորա. եւ նոյնժամայն ե-
45 կաց բղխումն արեան նորա։ Եւ ասէ
Յիսուս, Ո՞վ է որ մերձեցաւն յիս.
իրրեւ ամենեքեան ուրանային, ասէ
Պետրոս եւ որ ընդ նմա էին, Վար-
գապետ, ժողովուրդքդ պնդեն եւ նե-
46 ղեն [5]զքեզ։ Եւ ասէ Յիսուս, Ոմն մեր-
ձեցաւ յիս, քանզի գիտացի եթէ զո-
47 րութիւն ել յինէն։ Իրրեւ ետես կինն
եթէ ոչ ծածկեցաւ [6]ի նմանէ, եկն դո-
ղալով եւ անկաւ առաջի նորա, թէ
վասն որոյ իրաց մերձեցաւ ի նա՝ պատ-
մեաց առաջի ամենայն ժողովրդեանն,
եւ թէ որպէս բժշկեցաւ առժամայն։
48 Եւ ասէ, Քաջալերեաց, դուստր, հա-
ւատք քո կեցուցին զքեզ, երթ ի խա-
զաղութիւն։
49 Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն ի
տանէ ժողովրդապետին եւ ասէ ցնա,
Մեռաւ դուստրն քո, մի՛ ինչ աչխատ
50 առներ [7]զդա։ Իսկ Յիսուս իրրեւ լուաւ,
պատասխանի եա նմա եւ ասէ, Մի՛
երկնչիր, միայն հաւատա, եւ կեցցէ։
51 Եւ մտեալ ի տունն՝ ոչ զոք եթող մտա-
նել, բայց միայն զՊետրոս եւ զՅա-
կովբոս եւ զՅովհաննէս եւ զհայր ման-
52 կանն եւ զմայր նորա։ Լային ամենե-
քեան եւ կոծէին զնա. եւ նա ասէ,
Մի՛ լայք, զի չէ մեռեալ, այլ ննջէ։
53 Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի գի-
54 տէին թէ մեռաւ։ Եւ նորա հանեալ
55 զամենեսեան արտաքս, կալաւ զձեռանէ
նորա, բարբառեցաւ եւ ասէ, Արի,
56 կաց, մանուկ զուս։ Եւ դարձաւ ոգի
նորա, եւ կանգնեցաւ վարվարակի.
57 եւ հրամայեաց տալ նմա ուտել։ Եւ
զարմացան ծնողքն նորա. եւ նա պատ-
ուիրէր մի՛ ումեք ասել որ ինչ եղեւն։

Գլ. Թ

1 Գէ. Եւ կոչեցեալ [8]զերկոտասան ա-
ռաքեալսն՝, ետ նոցա զօրութիւն եւ
իշխանութիւն ի վերայ ամենայն դի-
2 ւաց, եւ բժշկել զհիւանդութիւնս։ Եւ
առաքեաց զնոսա քարոզել զարքայու-
թիւնն Աստուծոյ եւ բժշկել զախտա-
3 ժեսս։ Եւ ասէ ցնոսա, Մի՛ ինչ բաս-

[1]Ոմանք, Գադարացւոց
[2]Յոյն, ի նոցանէ
[3]Ոմանք, զնա Յիսուս
[4]Բազումք, որ ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր. որում
[5]Ոմանք, զքեզ, և դու ասես եթէ Ո՞վ մերձեցաւ յիս
[6]Ի Յունէն պոլոս
[7]Բազումք, զվարդապետդ
[8]Ոմանք, զերկոտասանան, այլք՝ զերկոտասան աշակերտս իւր

Նայք ի ճանապարհ, մի՛ զաւազան եւ
մի՛ մախաղ, մի՛ հաց եւ մի՛ արծաթ,
4 մի՛ երկուս հանդերձս ունիցիք։ Եւ
յոր տուն մտանիցէք, անդ ապչիք եւ
5 անտի գնայցէք։ Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ, զփոշի ոտից ձերոց թօթափեցէք ի վկայութիւն նոցա։ Եւ
6 եկեալ չքէնին [1]ընդ քաղաքս եւ՝ ընդ գեղս, աւետարանիչն եւ բժշկէին ընդ
7 ամենայն տեղիս։ Լուաւ Հերովդէս չորրորդապետ զղործեան ամենայն, եւ զարմանայր
8 վասն ասելոյն յամենից եթէ Յովհաննէս յարեաւ ի մեռելոց, եւ յամենից՝ թէ Եղիա յայտնեցաւ, եւ յայլոց՝ թէ Մար-
9 գարէ ոմն յառաջնոցն յարեաւ։ Ասէ Հերովդէս, ԶՅովհաննէս ես գլխատեցի, իսկ սա ո՞վ իցէ զորմէ այսպիսիս իրս լսեմ. եւ խնդրէր տեսանել զնա։
10 Դարձեան առաքեալքն եւ պատմեցին նմա զամենայն զոր արարին. եւ առեալ զնոսա՝ խուսեցաւ առանձինն ի տեղի անապատ քաղաքի մերոյ, որում
11 անուն էր Բեթսայիդա։ Եւ ժողովուրդքն իրեւ գիտացին, գնացին զհետ նորա. եւ ընկալեալ զնոսա՝ խօսէր ընդ նոսա վասն արքայութեանն Աստուծոյ, եւ որոց պէտք էին բժշկութեան՝ բժշկէր։
12 Եւ օրն սկսաւ տարաժամել. մատեան երկոտասանքն եւ ասեն ցնա, Արձակեա զժողովուրդսդ, զի երթեալ չուրջ ի գեղսն եւ յագարակս, հանդիցեն եւ գտցեն կերակուր, զի աստ
13 յանապատի տեղւոջ եմք։ Ասէ ցնոսա, Դուք տուք զոգա ուտել. եւ նոքա ասեն, Ոչ զոյ մեր աւելի քան զհինգ նկանակ՝ եւ զկերակուս ձկունս, բայց եթէ երթիցուք գնեսցուք բաւական
14 ժողովրդեանդ կերակուր։ Քանզի էին արք իրրեւ հինգ հազար։ Ասէ ցաշակերտս կերացուսցէք զոգաս զաս-
15 սա՝ յիսուն յիսուն։ Եւ արարին այնպէս, եւ բազմեցուցին զամենեսեան։
16 Եւ առեալ զհինգ նկանակն եւ զկերակուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց եւ եբեկ եւ տայր ցաշակերտսն՝ ար-
17 կանել ժողովրդեանն։ Կերան եւ յագեցան ամենեքեան, եւ բարձին զնշխարս կոտորացն երկոտասան սակաւիս։
18 Եւ եղեւ ի կալն նորա յաղօթս առանձինն, էին ընդ նմա եւ աշակերտքն նորա. հարց զնոսա եւ ասէ, Զո՞ր ասեն զիս ժողովուրդքն թէ
19 իցեմ։ Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն, ԶՅովհաննէս մկրտիչ. եւ այլք՝ Զեղիա. իսկ այլք թէ Մարգարէ ոք
20 յառաջնոցն յարեաւ։ Ասէ ցնոսա, Իսկ դուք զո՞ր ասէք զիս թէ իցեմ. պատասխանի եւ Պետրոս եւ ասէ,
21 Զքրիստոս Աստուծոյ։ Նա սաստեաց ի նոսա, եւ պատուիրեաց մի՛ ումիք
22 ասել զայն։ Եւ ասէ թէ Պարտ է Որդւոյ մարդոյ բազում չարչարել եւ անարհել ի քահանայապետից եւ ի ծերոց եւ ի դպրաց, եւ սպանանել եւ յերիր
23 աւուր յառնել։ Եւ ասէր առ ամենեսին, Եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրացսցի զանձն եւ առցէ զխաչ իւր հա-
24 նապազ եւ եկեսցէ զնմա իմ։ Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, եւ որ կորուսցէ զանձն
25 իւր վասն իմ՝ կեցուսցէ զնա։ Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ [2]զաշխարհ չահեսցի, եւ զանձն իւր կորուսցէ կամ
26 տուժեսցի։ Զի որ ամօթ համարեսցի զիս եւ զբանս իմ, զնա եւ Որդի մարդոյ յամօթ արասցէ յորժամ գայցէ փառօք իւրով եւ Հօր եւ հրեշտակաց
27 սրբոց։ Բայց արդարեւ ասեմ ձեզ եթէ են ոմանք ի դոցանէ որ այդր կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զարքայութիւնն Աստուծոյ։
28 Եւ եղեւ յետ այսց բանիցդ իրրեւ աւուրք ութ, առեալ զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս՝ ել ի լեառն
29 կալ յաղօթս։ Եւ ի կալն նմա յաղօթս՝ եղեւ տեսիլ երեսաց նորա այլակերպ, եւ փոխեցաւ հանդերձ նորա եւ եղեւ
30 սպիտակ փայլուն։ Եւ ահա արք երկու խօսէին ընդ նմա, որ էին Մովսէս եւ
31 Եղիա, Երեւեալ փառօք, եւ ասէին զկիրճն նորա զոր կատարելոց էր յԵրուսաղէմ։ Իսկ Պետրոս եւ որ ընդ
32 նմայն էին՝ ծանրացեալք էին քնով, զարթեան եւ տեսին զփառսն նորա եւ զերկուս արսն որ կային առ նմա։ Եւ ե-
33 ղեւ ի մեկնելն նոցա ի նմանէ, ասէ Պետրոս ցՅիսուս, Վարպետ, բարւոք է

[1] Ի բազումս պակասէ

[2] Յոյն, զաշխարհ ամենայն

մեզ ասա լինել, եւ արասցուք երիս տապաւարս, մի քեզ եւ մի Մովսիսի եւ մի Եղիայի, եւ ոչ գիտէր զինչ խօ-
34 սէր։ Եւ իբրեւ զայս ասաց, եկն ամպ եւ հովանի եղեւ ի վերայ նոցա. եւ երկնեան ի մառանելն նոցա ընդ ամպովն։
35 Ձայն եղեւ յամպէն եւ ասէ, Դա է Որդի իմ [1]ընտրեալ, դմա լուարուք։
36 Եւ ընդ լինել բարբառոյն՝ գտաւ Յիսուս միայն. եւ ինքեանք լռեցին, եւ ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ եւ ոչինչ յորոց տեսին։
37 ԳԹ. Եւ եղեւ ի վազիւն միոջ իջանելն նոցա ի լեռնէ անտի, ընդ առաջ
38 եղեւ նմա ժողովուրդ բազում։ Եւ ահա այր մի ի ժողովրդենէ անտի աղաղակեաց եւ ասէ, Վարդապետ, աղաչեմ զքեզ, հայեաց յորդի իմ, զի միամօր է
39 ինձ։ Եւ ահա այս հարկանի ի նմա, եւ յանկարծ գոչէ. եւ զարկուցանէ զնա եւ թաւալեցուցանէ զնա եւ փրփրեցուցանէ, եւ հազիւ մեկնի ի նմանէ՝
40 խորտակեալ զնա. եւ աղաչեցի զաչակերտսն քո զի հանցեն զնա, եւ ոչ
41 կարացին։ Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ, Ով ազգ անհաւատ եւ խեւբ, մինչեւ կո՞րս եղէց ընդ ձեզ եւ անասցեմ
42 ցձեզ. մատո այսր զորդին քո։ Եւ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա գետն
43 եւ չարժլեաց։ Սաստեաց Յիսուս ասոյն պղծոյ, եւ բժշկեաց զմանուկն
44 եւ ետ զնա հայրն իւր։ Եւ զարմանային ամենեքեան ի վերայ մեծամեծացն Աստուծոյ։

Եւ ի զարմանալն ամենեցուն ի վերայ ամենայնի զոր առնէր, ասէ ցաչակերտսն իւր, Դիք դուք ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ, զի Որդի մարդոյ
45 մատնելոց է ի ձեռս մարդկան։ Եւ նոքա ոչ գիտէին զբանն, եւ էր ծածկեալ ի նոցանէ զի մի՛ գիտասցեն. եւ երկնչէին հարցանել զնա վասն բանին այնորիկ։
46 Եմուտ խորհուրդ ի նոսա թէ ո՛ ար-
47 դեօք մեծ իցէ ի նոցանէ։ Յիսուս իրեւ ծանեաւ գիտակցութիւն սրտից նոցա, առ մանուկ մի, կացոյց ի մէջ նոցա
48 առ իւր, Եւ ասէ ցնոսա, Որ ոք ընկալցի զմանուկս զայս յանունն իմ՝ զիս ընկալուն է, եւ որ զիս ընկալուն է՝ ընկալ զառաքիչն իմ. զի որ փոքրիկն է յամենեսեան ի ձեզ՝ նա եղիցի մեծ։
49 ԴԿ. Պատասխանի եւ Յովհաննէս եւ ասէ, Վարդապետ, տեսաք զոմն որ յանունն քո գեւս հանէր, եւ արգե-
50 լաք զնա, զի ոչ չրջի ընդ մեզ։ Ասէ ցնոսա Յիսուս, Մի՛ արգելուք զնա, զի որ ոչն է [2]ձեր խչնամի՝ ի [2]ձեր կողմն է։
51 Եւ եղեւ ի կատարել աւուրց վերանալոյ նորա, եւ ինքն զերեսս հաս-
52 տատեաց երթալ յԵրուսաղէմ։ Եւ առաքեաց հրեշտակս առաջի երեսաց իւրոց. եւ իրրեւ չոգան, մտին ի գեղ մի Սամարացւոց՝ պատրաստել ինչ նմա։
53 Եւ ոչ ընկալան զնա, զի դէմ եղեալ
54 էր նորա երթալ յԵրուսաղէմ։ Իրրեւ տեսին աշակերտքն, Յակոբոս եւ Յովհաննէս, ասեն, Տէր, կամի՞ս զի ասացուք, եւ իջցէ հուր յերկնից եւ
55 սատակեսցէ [3]զնոսա։ Դարձեալ սաստեաց [4]ի նոսա եւ ասէ, Ոչ գիտէք
56 որոյ հոգւոյ էք դուք. Զի Որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել, այլ՝ կեցուցանել. եւ գնացին
57 յայլ գեղ։ Եւ մինչդեռ երթային ճանապարհի, ասէ ոմն ցնա, Եկից
58 զկնի քո յոր վայր եւ երթիցես։ Ասէ ցնա Յիսուս, Աղուէսունք որջք ունին, եւ թռչնոց երկնից՝ զպարք, եւ Որդւոյ մարդոյ ոչ գոյ ուր զիցէ զգլուխ։
59 Ասէ ցմիւս եւս, Եկ զկնի իմ. եւ նա ասէ, Տէր, հրամայ տուր ինձ եր-
60 թալ նախ թաղել զհայր իմ։ Ասէ ցնա Յիսուս, Թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց, եւ գու երթ պատմեա զարքայութիւնն Աստուծոյ։
61 Ասէ եւ այլ ոմն, Եկից զկնի քո, Տէր, բայց նախ հրամայ տուր ինձ
62 հրաժարել ի տանէ իմմէ։ Ասէ ցնա Յիսուս, Ոչ ոք արկանէ ձեռն զմաճով եւ հայիցի յետս, եմէ յաջողեալ իցէ արքայութեան Աստուծոյ։

ԳԼ. Ժ

1 ԴԴ. Յետ այսորիկ երեւեցոյց Տէր եւ այլ եւս [5]եւթանասունս եւ երկուս՝.

[1] Որմն՝, սիրելի

[2] Որմն՝, մեր
[3] Որմն՝, զնոսա, որպէս արար եղիա
[4] Որմն՝, ի նոսա։ (56) Եւ գնացին յայլ գեղ
[5] Բազմ՝, եւթանասունս

և առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր յամենայն քաղաքս և ի
2 տեղիս ուր ինքն երթայր էր։ Եւ ասէ ցնոսա, Հունձք բազումք են և մշակք սակաւ. արդ աղաչեցէք զՏէր հնձոց,
3 զի հանդէ մշակս ի հունձս իւր։ Երթայք, ահա առաքեմ զձեզ իբրեւ զոգս
4 ի մէջ գայլոց։ Մի՛ բառնայք քսակ, մի՛ մախաղ, մի՛ կօշիկս, և ի ճանա-
5 պարհի ումեք ողջոյն մի՛ տայցէք։ Ըստ որում մտանիցէք, նախ ասասջիք ի-
6 ղոջոյն տանս այսմիկ. Եւ եթէ իցէ անդ որդի ողջունի, հանդիցի ի վերայ նորա ողջոյնն ձեր. ապա թէ ոչ՝ ի ձեզ
7 դարձցի։ Եւ ի նմին տան ապանիջիք, ուտիջիք և ըմպիջիք ի նոցանէ. զի արժանի է մշակն վարձու իւրոյ. մի՛
8 փոխիցիք տանէ ի տուն։ Ըստ քաղաք մտանիցիք եւ ընդունիցին զձեզ, ու-
9 տիջիք զինչ առաջի դնիցեն ձեզ. Եւ բժշկեսջիք որ ի նմա հիւանդք իցեն, եւ ասասջիք նոցա, Մերձեալ է ի ձե-
10 րայ ձեր արքայութիւն Աստուծոյ։ Իսկ յոր քաղաք մտանիցէք եւ ոչ ընդու-
11 նիցին զձեզ, ելցէք ի հրապարակս նորա, ասասջիք, Եւ զփոշիս որ կռնեալ է ի քաղաքէ ձերմէ յոտս մեր՝ թօթափեսցուք ի ձեզ. բայց զայս դիտասջիք զի մերձեալ է արքայու-
12 թիւն Աստուծոյ[1]։ Ասեմ ձեզ, զի Սոդոմացւոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայնմիկ քան քաղաքին այնմիկ։
13 Վա՛յ քեզ, Քորազին. վա՛յ քեզ, Բեթսայիդա. զի եթէ ի Տիւրոս եւ ի Սիդովն եղեալ էին զօրութիւնքն որ եղեն ի ձեզ՝ վաղուց եւս արդեւք ի խորտ
14 եւ ի մոխիր նստեալ ապաշխարեալ էր։ Բայց Տիւրոսի եւ Սիդովնի ընդարձակագոյն լիցի ի դատաստանի քան ձեզ։
15 Եւ դու, Կափառնայում, որ մինչեւ յերկինս բարձրացեալ ես, մինչեւ ի
16 դժոխս իջցես։ Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, եւ որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ. եւ որ զիս անարգէ՝ զառաքիչն իմ անարգէ։ [2]եւ որ ինձ լսէ՝ լսէ այնմիկ որ
17 զիս առաքեաց։" Դարձան [3]եւ[3] աստուածն եւ երկուքն" ընդ-
18 դիմեաց եւ ասեն, Տէր, եւ դեւք հնազանդին մեզ յանուն քո։ Եւ ասէ ցնոսա, Տեսանէի զՍատանայ անկեալ
19 յերկնից իբրեւ զփայլակն։ Ահա տուի ձեզ իշխանութիւն կոխել զօձս եւ զկարիճս եւ զամենայն զօրութիւն թըշնամւոյն, եւ ձեզ ոչինչ մեղանչիցեն։
20 Բայց ընդ այն մի՛ խնդայք եթէ այսք հնազանդին ձեզ. այլ խնդացէք զի անուանք ձեր գրեալ են յերկինս։
21 Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս Հոգւովն [4]Սրբով եւ ասէ, Գոհանամ զքէն, Հայր, Տէր երկնից եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի
22 գիտնոց, եւ յայտնեցեր զայս տղայոց. այո, Հայր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո։ Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ. եւ ոչ ոք գիտէ թէ ով է Որդի, եթէ ոչ՝ Հայր. եւ ո՛ է Հայր, եթէ ոչ՝ Որդի, եւ ումի կամիցի Որդին յայտնել։
23 Եւ դարձեալ առանձինն առ աչակերտսն ասէ, Երանի աչաց որ տեսա-
24 նիցին զոր տեսանէք։ Ասեմ ձեզ, զի բազումք մարգարէք եւ թագաւորք կամեցան տեսանել զոր դուք տեսանէք, եւ ոչ տեսին. եւ լսել զոր լսէք, եւ ոչ լսան։
25 Եւ ահա յարեաւ ոմն օրինական, փորձէր զնա եւ ասէր, Վարդապետ, զի՞նչ գործեցից զի կեանսն յա-
26 ւիտենականս ժառանգեցից։ Եւ նա ասէ ցնա, Յօրէնս զի՞նչ գրեալ է, որ-
27 պէս ընթեռնուս։ Նա պատասխանի եւ ասէ, Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն անձնէ քումմէ եւ յամենայն զօրութենէ քումմէ եւ յամենայն մտաց քոց, եւ
28 զրնկեր քո իբրեւ զանձն քո։ Եւ ասէ ցնա, Ուղիղ եսուր զպատասխանիդ,
29 գայդ արա եւ կեցցես։ Նա իբրեւ կամեցաւ զանձն արդարացուցանել, ասէ
30 ցՅիսուս, Եւ ո՞վ է իմ բնակեր։ Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ, Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով, եւ անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացին զնա եւ վէրս ի վերայ եդին,
31 թողին կիսամահ եւ գնացին։ Դէպ եւ զի քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ, եւ տեսեալ զնա՝ զանց ա-
32 րար։ Նոյնպէս եւ Ղեւտացի մի եկեալ

[1] Որից է Յոյն և է Հայ օրինակաց խոնարհ, ի վերայ ձեր
[2] Ի ձեռագրս գտանի
[3] Բուն է, եւթանասունքն
[4] Գործ գտանի

ընդ նմին տեղի՝ եաես եւ դանց ա-
33 բար։ Ամամարացի ումն ճանապարհորդեալ եկն ընդ նոյն առ նովաւ, եւ
34 տեսեալ ինա ողորմացաւ։ Եւ մատուցեալ պատեաց վէրս նորա, արկեալ ի վերայ ձէթ եւ գինի. եւ եդեալ ի վերայ դրաստուս իւրոյ՝ ած ինա ի պանդոկի
35 մի, եւ դար հանեալ ինա։ Եւ ի վաղիւ անդր իբրեւ եքանէր անաի, հանեալ եւ ցպանդոկապետն երկուս դահեկանս եւ ասէ, Դարմանս տար դմա, եւ զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ։ Այդ ո՞
36 յերեսցունց ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն ի ձեռս աւազակացն։
37 Եւ նա ասէ, Որ արար ողորմութիւնն ի վերայ նորա։ Ասէ ցնա Յիսուս, Երթ եւ դու արա նոյնպէս։
38 Եւ եղեւ ի գնալն նոցա, եւ ինքն եմուտ ի գիւղ մի. եւ կին ումն անուն Մարթա ընկալաւ զնա ի տան իւրում։
39 Եւ նորա էր քոյր մի, որում անուն էր Մարիամ, որ եւ ինքն նստաւ առ ոտն
40 Տեառն եւ լսէր զբանս նորա։ Եւ Մարթա զբաղեալ էր ի բազում սպասու, ինքն հանաւ առ նմա եւ ասէ, Տէր, ոչի՞նչ է փոյթ քեզ, զի քոյրդ իմ միայն եմ զոզ ինա ի սպասու. արդ ասա դմա
41 զի օգնեսցէ ինձ։ Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ, Մարթա, Մարթա, դու հոգաս եւ զբազում իւիք զբազեալ ես,
42 Բայց [1]ասա սակաւ՞ ինչ պիտոյ է. Մարիամ մանն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի ի սմանէ։

ԳԼ. ԺԱ.

4 ԳԶ. Եւ եղեւ ի տեղւոջ ուրեք կայ
յաղօթս. եւ իբրեւ պատարեաց, ասէ ցնա ումն յաչակերտացն իւրոց, Տէր, ուսո մեզ յաղօթս կալ, որպէս եւ Յով-
2 հաննէս ուսոյց աշակերտացն իւրոց։ Ասէ ցնոսա, Յորժամ կայցէք յաղօթս, ասացէք, Հայր [2]մեր, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն [3]քո։
3 Զհաց մեր հանապազորդ տուր մեզ
4 [4]ցօրիսաօրէն։ Եւ թող մեզ զմեղս մեր, զի եւ մեք թողումք ամենայնի որ

[1]Բաղմ., մի
[2]Որմն., մեր որ յերկինս
[3]Որմն., քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի
[4]Յոյն., օրըստօրէ

պարտիցի մեզ. եւ մի՛ տանիր զմեզ
5 ի փորձութիւն[5]։ Եւ ասէ ցնոսա, Ո՞վ է ի ձէնջ որոյ իցէ բարեկամ, եւ երթայցէ առ նա ի մէջ գիշերի եւ ասիցէ ցնա, Բարեկամ,
6 տուր ինձ փոխ երիս նկանակս։ Զի բարեկամ իմ ելեալ առ իս յուղեւոյ, եւ
7 ոչինչ ունիմ զինել առաջի նորա։ Եւ նա ի ներքուստ տայցէ պատասխանի եւ ասիցէ, Մի՛ աչխատ առներ զիս, զի դուրգն փակեալ են, եւ մանկունքս ընդ ինեւ կան յանկողնի, ոչ կարեմ
8 յանձնել եւ տալ քեզ։ Ասեմ ձեզ, եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա վասն բարեկամութեանն, սակայն վասն ժուժ-
9 կեանն յարուցեալ տայցէ նմա զինչ եւ պիտոյ իցէ։ Եւ ես ասեմ ձեզ, Խնդրեցէք եւ տացի ձեզ, հայցեցէք եւ գտջիք,
10 բախեցէք եւ բացցի ձեզ։ Զի ամենայն որ խնդրէ՝ առնու, եւ որ հայցէ՝ գտանէ,
11 եւ որ բախէ՝ բացցի նմա։ Ցո՞ որ ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկանն օձ տացէ նմա։
12 Եւ կամ խնդրիցէ ձու, միթէ կարի՞ճ
13 տացէ նմա։ Իսկ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, ո՛րչափ եւս առաւել Հայր ձեր յերկնից տացէ [6]բարիս այնոցիկ, որ խնդրեն ի նմանէ։
14 Դէ. Եւ հանէր դեւ մի համր, եւ եղեւ յելանել դիւին խօսեցաւ համրն,
եւ զարմացան ամենայն ժողովուրդքն։
15 Եւ ոմանք ի նոցանէ ասեն, Բէելզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ զա
16 դեւս։ Եւ այլք փորձելին եւ նշան
17 յերկնից խնդրէին ի նմանէ։ Իսկ նորա գիտացեալ զմտորհուրդս նոցա, ասէ ցնոսա, Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, եւ տուն
18 բաժանեալ յանձն՝ կործանի։ Ապա եթէ եւ Սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա. զի ասէք զինէն եթէ Բէելզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ զա դեւս։
19 Եթէ ես Բէելզեբուղաւ հանեմ դեւս, որդիքն ձեր ի՞ւ հանիցեն. վասն այդորիկ նոքին եղիցին ձեր դատաւորք։
20 Իսկ եթէ մատամբ Աստուծոյ հանեմ դեւս, ապա հասեալ է ի վերայ ձեր

[5]Որմն յունէլն., այլ փրկեա զմեզ ի չարէ
[6]Բաղմ., Հոգի Սուրբ

21 արքայութիւն Աստուծոյ ։ Յայժմ
հղօր վառեալ՝ պահիցէ զաւն իւր, ի
22 խաղաղութեան են իւնչ նորա ։ Բայց
ւեմ հղօրագոյն քան զնա ի վերայ ել-
ևալ յաղիսացէ նմա, զոպատարկու-
թիւնն նորա հանել յոր յուսացեալ էր,
23 եւ զաւար նորա բաչխեսցէ ։ Ուր ոչ է
ընդ իս՝ հակառակ իմ է, եւ որ ոչ ժո-
ղովէ ընդ իս՝ ցրուէ ։
24 Յայժմ այսն պիղծ երանիցէ ի մար-
դոյ, չրիի ընդ անջրդին անցանէ, ինդրէ
հանդիստս, եւ իրրեւ ոչ գտանէ, ասէ,
Դարձայց անդրէն ի տունն իմ ուստի
25 ելի ։ Եւ գայ գտանէ մաքրեալ եւ յար-
26 դարեալ ։ Յայնժամ երթայ եւ առնու
եւթն այլ այս, չար եւս քան զինքն,
եւ մտանէ բնակէ անդ ։ Եւ լինի յե-
տինն մարդոյն այնորիկ չար քան զա-
ռաջինն ։
27 Եւ եղեւ մինչդեռ խօսէր զայս, ձայն
եբարձ կին մի ի ժողովրդենէ անտի
եւ ասէ, երանի է որովայնին որ կրե-
ացն զբեզ, եւ ստինքն որ զիեցուս-
28 ցին զբեզ ։ Եւ նա ասէ, Նա երանի
այնոցիկ է, որ լսեն զբանն Աստուծոյ
եւ պահիցեն ։
29 Եւ ի դիզանել ի վերայ նորա ժողո-
վրդոցն՝ սկսաւ ասել, Ազգս այս [1]ազգ
չար է, նչան խնդրէ, եւ նչան չիրկ-
նից ոչ տացի սմա՝ բայց նչանն [2]Յովնա-
30 նու ։ Զի որպէս եղեւ Յովնան նչան
Նինուէացւոց, նոյնպէս եղիցի եւ Որդի
31 մարդոյ ազգիս այսմիկ ։ Դչխոյն հա-
րաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ այս
ազգիս այսորիկ եւ դատապարտեսցէ
զսա, զի եկն ի ծագաց երկրի լսել զի-
մաստութիւնն Սողոմոնի ։ Եւ անա
32 աւելի քան զՍողոմոնէ է աստ ։ Արք
Նինուէացիք յարիցեն ի դատաստանի
ընդ ազգիս ընդ այսմիկ եւ դատապար-
տեսցեն զսա, զի ապաշխարեցին ի քա-
րոզութիւնն Յովնանու ։ Եւ անա ա-
ւելի քան զՅովնան է աստ ։
33 Եկ ։ Ոչ ուրուք լուցեալ ճրագ դնէ
ի թաքստեան[3], այլ ի վերայ աչտանա-
կի, զի որ մտանիցեն՝ լոյս տեսանիցեն ։
34 Ճրագ մարմնոյ ակն է ։ յայժմ ակնն
առատ է, ամենայն մարմինն լուսաւոր
եղիցի ։ եւ երբ ակն չար է, եւ մար-
35 մինն խաւարին եղիցի ։ Արդ զգաջ լեր,
զի լոյսդ որ ի քեզ է՝ խաւար իցէ ։
36 Եթէ մարմինդ քո ամենայն լուսաւոր
է եւ չիտիցէ մասն ինչ խաւարին, եւ
պիցի լուսաւոր ամենայն ։ որպէս յայ-
ժամ ճրագն նչուլիւք լուսաւորեսցէ
զբեզ ։
37 Եւ մինչդեռ խօսէր զայս, աղաչէր
զնա ոմն փարիսեցի զի ճաչ կերիցէ
առ նմա ։ եւ նա մտեալ բազմեցաւ ։
38 Իրրեւ եհաս փարիսեցին, զարմացաւ,
զի նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան
39 ճաչ ։ Ասէ ցնա Տէր, Այժմ դուք, փա-
րիսեցիք, զարտաքինն բաժակին եւ
զպնակին սրբէք, եւ ներքինն ձեր լի է
յափշտակութենէ եւ չարութենէ ։
40 Անմիտք, ո՞չ ապաքէն որ զարտաքինն
41 արար՝ եւ զներքինն նոյն արար ։ Բայց
ազ [4]զարժանն իսկ՝ առք ողորմու-
թիւն, եւ անա ամենայն սուրբ է ձեր ։
42 Այլ վա՛յ ձեզ փարիսեցւոց, զի տասա-
նորդք զանանսխս եւ զխնդկնա եւ
զամենայն բանջար, եւ անցանէք զի-
րաւարտիք եւ զսիրոմբ Աստուծոյ ։ զայս
արժան էր առնել եւ զայնոսս ոչ ան-
43 ցանել ։ վա՛յ ձեզ փարիսեցւոց, զի սի-
րէք զբարձրագահս ի ժողովուրդս եւ
44 [5]դնախասղոյնս ի հրապարակս ։ Վա՛յ
[6]ձեզ, զի էք դուք իրրեւ դդերեզմանս
անյայտս, եւ մարդիկ զնան ի վերայ
45 եւ ոչ գիտեն ։ Պատասխանի եւ ումն
յօրինակացանցն եւ ասէ ցնա, Վարդա-
պետ, զայդ բանս ասելով եւ զմեզ
46 [7]խչնամանես ։ Եւ նա ասէ, Եւ ձեզ վա՛յ
օրինակացանցդ, զի բառնայք մարդկան
բեռինս զժուարակիրս, եւ դուք մա-
տամբ միով ի բեռինան ոչ մերձենայք ։
47 Վա՛յ ձեզ, զի չինէք զչիրիմս մարգա-
րէիցն, եւ հարքն ձեր սպանին զնոսա ։
48 Ապա ուրեմն [7]վկայէք եթէ կամակիցք
էք՝ գործոց հարցն ձերոց ։ զի նոքա
կոտորեցին զնոսա, եւ դուք զգերեզ-
49 մանս նոցա չինէք ։ Վասն այնորիկ ի-
մաստութիւնն Աստուծոյ ասաց, Ա-
ռաքեցից ի նոսա մարգարէս եւ առա-
քեալս, եւ ի նոցանէ սպանանիցեն եւ
50 հալածիցեն ։ Զի խնդրեսցի արիւն ա-

[1] Յոմանս պակաս
[2] Ոմանք, Յովնանու մարգարէի, որպես և ոմանք ի հնդկերէն օրինակս
[3] Բազմօք յառելսան, և ոչ ընդ գրուանաս
[4] Յոմանս, զորս ի ներքս են ևս, զոր ունիքն՝
[5] Յոմանս, գողջոյնս
[6] Ոմանք, ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց
[7] Ոմանք, վկայէք և համակիցք

մինայն մարգարէից հնգհալ ի սկզբանէ
51 աշխարհի՝ յաղկէ յայգմանէ, Յարե-
նէն Աբելի մինչեւ ցարիւնն Զաքարեայ
կորուսելոյ ընդ սեղանն եւ ընդ տա-
ճարն. այո, ասեմ ձեզ, խնդրեսցի
52 յազգէդ յայգմանէ։ Վայ ձեզ օրինա-
կանացդ, զի թաքուցանէք զվարձս
գիտութեանն. դուք ոչ մտանէք, եւ
որ մտանելոցն են՝ արգելուք։
53 [1]Եւ ի խօսելն զայս ամենայն առ նո-
սա՝ առաջի ամենայն ժողովրդեանն, զա-
մօթի հարկանէին. եւ սկսան դիմիլքն
եւ վարիսեցիք զչարել եւ զրպտել ընդ
54 նմա վասն բազում իրաց. Եւ սպասել
որսալ ինչ բանս ի բերանոյ նորա, [2]զի
չարաբօսեսցեն զնմանէ։՚՚

ԳԼ. ԺԲ

1 Որովք ի կուտել բիւրաւորաց ժողո-
վրդեանն մինչեւ կոխել զմիմեանս,
սկսաւ ասել ցաշակերտան իւր. Նախ
զգոյ լերուք անձանց ի խմորոյ վա-
րիսեցոցն, որ է կեղծաւորութիւն։
2 Զի ոչինչ է ի ծածուկ որ ոչ յայտնեսցի,
3 եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի։ Վասն զի
զոր ինչ ասիցէք ի խաւարի՝ լսելի լիցի
ի լոյս. եւ զոր յունկանէն խօսեցա-
րուք ի չանմարանս՝ քարոզեսցի ի վերայ
4 տանիւաց։ Բայց ձեզ ասեմ սիրելեաց
իմոց, Մի՛ զարհուրիցէք յայնցանէ որ
սպանանեն զմարմին, եւ յետ այնորիկ
5 աւելի ինչ ոչ ունիցին առնել. Այլ
ցուցից ձեզ յումէ երկնչիցիք. երկնչի-
ջիք յայնմանէ որ յետ սպանանելոյ ունի
իշխանութիւն արկանել ի գեհեն. այո,
6 ասեմ ձեզ, յայնմանէ երկնչիջիք։ Ո՞չ
սպաքէն հինգ [3]ձագ երկուց դանդաղ
վաճառի, եւ մի ի նոցանէ ոչ է մոռա-
7 ցեալ առաջի Աստուծոյ։ Այլ ձեր եւ
ամենայն իսկ հեր գլխոյ հնուեալ է.
մի՛ երկնչիջիք, զի քան զբազում ձագս
8 բաւ էք դուք։ Ասեմ ձեզ զի Ամենայն
որ խոստովանեսցի յիս առաջի մարդ-
կան, եւ Որդի մարդոյ խոստովանեսցի
զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ։
9 Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան՝
ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աս-
10 տուծոյ։ Եւ ամենայն որ ասէ բան

ղՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ
զՀոգին Սուրբ հայհոյիցէ՝ մի՛ թողցի
11 նմա։ Այլ յորժամ առնիցին զձեզ ի
ժողովուրդս եւ ի պետութիւնս եւ յիշ-
խանութիւնս, մի՛ հոգայցէք որպէս
[4]եւ զի՛նչ պատասխանի տայցէք կամ
12 զի՛նչ ասիցէք։ Զի Հոգին Սուրբ ու-
սուցցէ ձեզ ի նմին ժամու զինչ պարտ
իցէ խօսել։
13 Եւ. Ասէ ումն ի ժողովրդենէն ցնա,
Վարդապետ, ասա ցեղբայր իմ բաժա-
14 նել ընդ իս զժառանգութիւնն։ Եւ նա
ասէ ցնա, Այր դու, ո՞ կացոյց զիս
պատուար կամ բաժանարար ի վերայ
15 ձեր։ Եւ ասէ ցնոսա, Տեսէք եւ զգոյշ
լերուք [5]յամենայն ագահութենէ՚՚, զի
ոչ եթէ ի մխելից ընչից ուրուք իցեն
16 կեանք նորա։ Խօսեցաւ առ նոսա ա-
ռակ մի եւ ասէ, Առն ուրումն մեծա-
17 տան հասուն անդք առհասկանս. Եւ
խորհէր ի միտս իւր եւ ասէր, Զի՛
գործեցից, զի ոչ գոյ տեղի ուր ժողո-
18 վեցից զարդիւնս իմ։ Եւ ասէ, [6]Գիտեմ
զինչ՚՚ արարից. քակեցից զչանմարանս
իմ, եւ եւս մեծամեծս չինեցից, եւ
անդր ժողովեցից զդորեան եւ զամե-
19 նայն բարութիւնս իմ։ Եւ ասացից
ցանձն իմ, Անձն, ունիս բազում բա-
րութիւնս համարեալ ամաց բազմաց.
հանգիր, կեր, արբ եւ ուրախ լեր։
20 Ասէ ցնա Աստուած, Անմիտ, յայսմ
գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջի-
ցեն, իսկ զոր պատրաստեցեր՝ ո՞ւմ
21 լինիցի։ Նոյնպէս եւ որ դանձէ անձին,
եւ ոչ յԱստուած մեծանայցէ։
22 Ասէ ցաշակերտան իւր, Վասն այ-
դորիկ ասեմ ձեզ, Մի՛ հոգայք ընդ
ուրուդ թէ զի՛նչ ուտիցէք, եւ մի՛ ընդ
23 մարմնոյ թէ զի՛նչ զգենուցուք։ Զի
ոգի առաւել է քան զկերակուր, եւ
24 մարմին՝ քան զհանդերձ։ Հայեցարուք
ընդ ագռաւս, զի ոչ սերմանեն եւ ոչ
հնձեն, որոց ոչ գոն չանմարանք եւ
ոչ համբարանոցք, եւ Աստուած կե-
րակրէ զնոսա. ո՛րչափ եւս առաւել
25 զձեզ որ լաւ էք քան զթռչունս։ Ո՞վ
ի ձէնջ առ հոգալ կարիցէ յաւելուլ ի
26 հասակ իւր կանգուն մի։ Իսկ արդ
եթէ ի փոքուն չէք բաւական, վասն

---

[1] Ղ՚ամ., Յելանել նորա արտաքս
[2] Յունարէն պոլոք [3] Ձնձղուկ. տես Մատթ. ժ. 29։
[4] Յոյնն, կամ
[5] Ղ՚ամ., յագահութենէ [6] Յոյնն, Զայս

27 այլացն ղի՞ հոգայցէք։ Հայեցարուք բնդ
չուշանն, ո՛րպէս աճէ. ոչ ջանայ եւ
ոչ նիւթէ. ասեմ ձեզ, Եւ ոչ Սողո-
մոնի յամենայն ի փառսն իւր զգեցաւ
28 իբրեւ զմի ի նոցանէ։ Իսկ եթէ զխոտն
որ այսօր ի բացի է եւ վաղիւ ի հնոց
արկանելի Աստուած այնպէս զգեցու-
ցանէ, ո՛րչափ եւս առաւել զձեզ, ի՛ա-
29 նահաւատք։ Եւ դուք մի՛ խնդրէք
զի՛նչ ուտիցէք կամ զի՛նչ ըմպիցէք,
30 եւ մի՛ զրազնուք. Զի զայն ամենայն
հեթանոսք աշխարհի խնդրեն. այլ ձեր
Հայր գիտէ զի պիտոյ է այն ամենայն։
31 Բայց խնդրեցէք զարքայութիւնն Աս-
տուծոյ, եւ [1]այն յաւելցի ձեզ։
32 ԵԳ. Մի՛ երկնչիր, հօտ փոքրիկ,
զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զար-
33 քայութիւն։ Վաճառեցէք զինչս ձեր
եւ տուք ողորմութիւն. եւ արարէք
ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ
անպակաս յերկինս. ուր ոչ գող մեր-
34 ձենայ եւ ոչ ցեց ապականէ։ Զի ուր
գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եւ-
35 զիցին։ Եղիցին գօտիք ձեր պնդեալ
36 ընդ մէջս, եւ ճրագունք լուսեալք։ Եւ
դուք նմանողք մարդկան որ ակն ու-
նիցին տեառն իւրեանց ի՛ երբ գա-
նայցէ ի հարսանեաց. զի յորժամ գայցէ
եւ բախիցէ, վաղվաղակի բանայցեն
37 նմա։ Երանի իցէ ծառայիցն այնոցիկ
զորս եկեալ տէրն գտցէ արիւնս.
ամէն ասեմ ձեզ, զի գօտի ընդ մէջ
ածցէ եւ բազմեցուսցէ զնոսա, եւ ան-
38 ցեալ պաշտիցէ զնոսա։ Եւ եթէ երկ-
րորդ կամ երրորդ պահու եկեսցէ եւ
գտցէ այնպէս, երանելի են ծառայքն
39 այնոքիկ։ Բայց զայն գիտասջիք, եթէ
գիտէր տանուտէրն յորում ժամու գող
գայ, [2]չտայր թող ակն հատանել ի
40 տան իւրում։ Եւ դուք եղերուք պատ-
րաստ, զի յորում ժամու ոչ կարծիք-
ցէք, գայ Որդի մարդոյ։
41 [3]Ասէ Պետրոս, Տէր, առ մե՞զ առա-
ջեր զառակս զայդ թէ առ ամենեսեան
42 Եւ ասէ Տէր, Ո՞վ իցէ հաւատարիմ
անտես եւ իմաստուն, զոր կացուցց տէր
իւր ի վերայ զերդաստանի իւրոյ տալ
43 ի ժամու վկերակուրս։ Երանի իցէ
ծառային այնմիկ զոր եկեալ տէր իւր
44 գտանիցէ արարեալ այնպէս։ Արդարեւ
ասեմ ձեզ զի ի վերայ ամենայն ինչից
45 իւրոց կացուսցէ զնա։ Ապա թէ ասիցէ
ծառայն այն ի սրտի իւրում, Յամի-
ձէր իմ ի գալ. եւ սկսանիցի հարկա-
նել զծառայսն եւ զաղախնայսն, ուտել
46 եւ ըմպել եւ արբենալ, Եկեսցէ տէր
ծառային այնորիկ յաւուր յորում ակն
ոչ ունիցի, եւ ի ժամու յորում ոչ գի-
տիցէ. բնդ մէջ կտրեսցէ զնա, եւ
զբաժան նորա ընդ անհաւատս դիցէ։
47 Եւ ծառայ որ գիտիցէ զկամս տեառն
իւրոյ եւ [4]ոչ պատրաստիցէ՝ ըստ կա-
48 մաց նորա՝ արժցէ գան բազումս։ Եւ
որ ոչն գիտիցէ եւ արժանի գանի ինչ
գործիցէ, արժցէ գան սակաւս. ամե-
նայնի որում չատ տուաւ, չատ խնդ-
րեսցի ի նմանէ, եւ որում բազում ա-
նձնգեցաւ, առաւել եւս պահանջեսց-
ին ի նմանէ։
49 ԵԳ. Հուր եկի արկանել յերկիր.
եւ զի՞նչ կամիմ, թէ արդէն իսկ բոր-
50 բոքէր։ Եւ մկրտութիւն մի ունիմ
մկրտել, եւ զի՞արդ փութամ մինչեւ
51 կատարեսցի։ Համարիք եթէ խաղա-
ղութի՞ւն եկի տալ յերկիր. ոչ, ասեմ
52 ձեզ, այլ բաժին։ Զի եղիցին յայսմ
հետէ հինգ ի տան միում բաժանեալք,
երիքն՝ յերկուց, եւ երկուքն՝ յերից։
53 Բաժանեսցի հայր յորդւոյ, եւ որդի՝
ի հօրէ, մայր՝ ի դստերէ եւ դուստր՝
ի մօրէ, սկեսուր՝ ի հարսնէ, եւ հարսն՝
ի սկեսրէ իւրմէ։
54 Ասաց եւ զժողովուրդսն, Յորժամ
տեսանիցէք ամպ ծագեալ յարեւմտից,
իսկոյն ասէք թէ Անձրեւ գայ, եւ լինի
55 այնպէս. Եւ յորժամ հարաւ չնչեալ,
ասէք թէ Խորշակ լինի, եւ լինի այն-
56 պէս։ Կեղծաւորք, զերեսս երկնի եւ
երկրի գիտէք փորձել, իսկ զժամա-
57 նակս զայս ո՞րպէս ոչ փորձէք։ Ընդէ՞ր
եւ յանձանց իսկ ոչ ընտրէք զարժանն
58 Յորժամ երթայցես ընդ ոսոխի քում
առ իշխան, ի ճանապարհի տուր վտա-
չիւն զերծանել ի նմանէ. զի գուցէ
քարշիցէ զքեզ առ դատաւորն, եւ դա-
տաւորն մատնիցէ զդահճի, եւ դահիճն
59 արկանիցէ ի բանտ։ Ասեմ քեզ, ոչ ե-
լանիցես անտի մինչեւ հատուցանիցես
զկտրիճն վերջին։

---

[1] Ոմանք, այն ամենայն
[2] Բազումք, Հսկէր և չտայր [3] Ոմանք, Ասէ ցնա

[4] Բազումք, չիցէ պատրաստեալ և ոչ արարեալ

Գլ. ԺԳ

1 Եկին ոմանք ի նմին ժամանակի եւ պատմեցին նմա վասն Գալիլեացւոցն, որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ
2 զոհս նոցա։ Պատասխանի եաս եւ ասէ ցնոսա, Համարի՞ք եթէ այն Գալիլեացիք եղեն մեղաւորք քան զամենայն
3 Գալիլեացիս, զի զայնպիսի անցս կրեցին։ Ոչ, ասեմ ձեզ. այլ եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքեան նոյնպէս կո-
4 րընչիջիք։ Կամ նոքա ուժտասանքն որոց վերայ աշտարակն անկաւ ի Սելոամ եւ սպան զնոսա, համարի՞ք եթէ նոքա պարտապանք եղեն քան
5 զամենայն մարդիկ որ բնակեալ են յԵրուսաղէմ։ Ոչ, ասեմ ձեզ. այլ եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքեան նոյնպէս կորնչիջիք։
6 Ասաց եւ զառակս զայս. Թզենի մի էր ուրումն անկեալ յայգւոջ իւրում, եւ եկն խնդրել պտուղ ի նմանէ եւ ոչ
7 եգիտ։ Ասէ տայզկործն, Ահա երեք ամք են յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի թզենւոջդ եւ ոչ գտանեմ. արդ կրա-
8 բեա զդա, ընդէ՞ր եւ զերկիրըս խափանէ։ Նա պատասխանի եաս եւ ասէ, Տէր, թող զդա այս ամ եւս, մինչեւ
9 չուրջ զգովաւ բրեցից եւ արկից պարէ, Թերեւս արասցէ պտուղ. ապա թէ ոչ՝ յամէ եւս հատցես զդա։
10 ԵԵ. Եւ ուսուցանէր ի միում ի ժո-
11 ղովրդեանցդայն ի շաբաթս։ Եւ ահա կին մի զոր ունէր ոգի հիւանդութեան ամս ուժտասան, եւ էր կարկամեալ,
12 եւ ոչ կարէր ամենեւին ի վեր հայել։ Եւ տեսեալ զնա Յիսուսի՝ կոչեաց առ
13 ինքն եւ ասէ ցնա, Կին դու, արձա-
14 կեալ ես ի հիւանդութենէդ քումմէ։ Եւ եդ ի վերայ նորա ձեռն, եւ առժամայն ուղղեցաւ եւ փառաւոր առնէր զԱս-
15 տուած։ Պատասխանի եաս ժողովրդապետն ցասուցեալ թէ բնդէր ի շաբաթս բժշկեաց Յիսուս, եւ ասէ ցժողովուրդն, Վեց օր է յորս արժան է
գործել, յայնս եկայք բժշկեցարուք, եւ մի՛ յաւուր շաբաթու։ Պատասխանի եաս նմա Տէր եւ ասէ, Կեղծաւորք, իւրաքանչիւր ոք ի ձէնջ ի շաբաթու ոչ արձակէ զեզն իւր կամ զէշ
16 ի մսրոյ եւ տանի տայ ջուր։ Իսկ այս՝ դուստր Աբրահամու էր, զոր կապեաց Սատանայ ահաւասիկ ութտասան ամ, ոչ էր արժան արձակել ի կապանաց
17 անտի ի շաբաթու։ Եւ զայս իրրեւ ասաց, յամօթ լինէին ամենեքին որ հակառակն կային նմա. եւ ամենայն ժողովուրդն ուրախ լինէր ի վերայ ամենայն փառաւորութեանցն որ գործէին ի նմանէ։
18 Եւ ասէր, Ո՞ւմ նման է արքայութիւն Աստուծոյ, եւ որո՞ւմ նմանուցից զնա։
19 Նման է հատու մանանխոյ, զոր առեալ մարդոյ արկ ի պարտէզ իւր. աճեաց եւ եղեւ ծառ, եւ թռչունք երկնից բնակեալ էին յոստս նորա։
20 Եւ դարձեալ ասէ, Ո՞ւմ նմանեցուցից զարքայութիւն Աստուծոյ։
21 Նման է խմորոյ զոր առեալ կնոջ թաքոյց յալեր երից պրուատ, մինչեւ խմորեցաւ ամենայն։
22 ԵԶ. Եւ չրջէր ընդ քաղաքս եւ ընդ գեղս, ուսուցանէր. եւ ճանապարհ
23 արարեալ յերուսաղէմ, Ասէ ոմն ցնա, Տէր, եթէ սակաւք իցեն որ ապրելոց
24 իցեն. եւ նա ասէ ցնոսա, Ջանացարուք մտանել ընդ դուռն նեղ. ասեմ ձեզ զի բազումք խնդրեսցեն մտանել
25 եւ ոչ կարասցեն։ Յորմէ հետէ մտցէ տանուտէրն եւ փակեսցէ զդուռնն, եւ սկսանիցիք կալ արտաքոյ եւ բախել զդուռնն եւ ասել, Տէր, Տէր, բաց մեզ. եւ պատասխանի տուեալ ասիցէ
26 ձեզ, Ոչ գիտեմ զձեզ ուստի էք։ Յայնժամ սկսանիցիք ասել, Կերաք առաջի քո եւ արբաք, եւ ի հրապարակս մեր
27 ուսուցեր։ Եւ ասիցէ, Ասեմ ձեզ, Ոչ գիտեմ զձեզ ուստի էք. ի բաց կացէք յինէն ամենայն ինչակրդ անիրաւութեամբ։
28 Եւ լինի անդ լալ եւ կրճել ատամանց, յորժամ տեսանիցէք զԱբրահամ եւ զԻսահակ եւ զՅակովբ եւ զամենայն մարգարէս յարքայութիւնն Աստուծոյ, եւ զձեզ հանեալ արտաքս։
29 Եւ եկեսցեն յարեւելից եւ յարեւմտից եւ ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ, եւ բազմասցին յարքայութիւնն Աստուծոյ։ Եւ
30 ահա իցեն յետինք՝ որ եղիցին առաջինք, եւ իցեն առաջինք՝ որ լինիցին յետինք։

ՂՒԿԱՍ, ծառ. ՃԾ

31 Ի նմին աւուր մատեան ոմանք վա-
րիսեցիք եւ ասեն ցնա, Ել եւ գնա
ասա, զի Հերովդէս կամի սպանանել
32 զքեզ։ Եւ ասէ ցնոսա, Երթայք ասա-
ցէք ազուեսուն այնմիկ, Ահաւասիկ
հանեմ դեւս, եւ բժշկութիւնս կա-
տարեմ այսօր եւ վաղիւ, եւ յերրո-
33 րորդի կատարիմ։ Բայց պարտ է այսօր
եւ վաղիւ եւ ի միւսում աւուր գնալ։
զի ոչ է մարթ մարգարէի կորնչել ար-
34 տաքոյ քան զԵրուսաղէմ։ Երուսաղէմ,
Երուսաղէմ, որ կատարէիր զմարգա-
րէս եւ քարկոծ առնէիր զառաքեալսն
առ քեզ, քանի՛ցս անգամ կամեցայ
ժողովել զորդիս քո, որպէս հաւ զձագս
իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք։
35 Ահա թողեալ լիցի ձեզ տունդ [1]ձեր։
բայց ասեմ ձեզ, եթէ Ոչ եւս տեսանիք-
ցէք զիս, մինչեւ ասիցէք, Օրհնեալ
եկեալն յանուն Տեառն։

ԳԼ. ԺԴ

1 Եւ Եւ եղեւ ի մտանելն նորա ի տուն
ուրուքն իշխանացն փարիսեցւոց ի չա-
բաթու ուտել հաց, եւ նոքա սպասէին
2 նմա։ Եւ ահա այր ոմն էր անդ ջրգող-
3 եալ առաջի նորա։ Պատասխանի եւ
Յիսուս եւ ասէ ցօրինաւորսն եւ ցիշա-
րիսեցիսս, եթէ Արժա՞ն իցէ ի չաբաթու
4 բժշկել։ Եւ նոքա լուեալ եղեն։ եւ բռնա-
հարեալ զնմանէ բժշկեաց զնա եւ ար-
5 ձակեաց։ Եւ ասէ ցնոսա, Ո՞յր ուրուք
ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի ի ջրհոր,
եւ ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր
6 չաբաթու։ Եւ ոչ կարացին տալ նմա
պատասխանի առ այն։
7 Ասաց եւ առ կոչնականսն առակ մի,
հայեցեալ թէ զիա՛րդ բարձնուին ի-
8 նէքեան, ասէ ցնոսա, Յորժամ կոչիցէ
ոք զքեզ ի հարսանիս [2]կամ ի կոչումն",
մի՛ բազմիցիս յառաջին բարձին։ գուցէ
պատուականագոյն եւս քան զքեզ իցէ
9 կոչեցեալ ի նմանէ։ Եւ եկեալ որ զքեզն
եւ զնա կոչեաց՝ ասիցէ ցքեզ, Տուր
սմա տեղի։ եւ ապա սկսանիցիս ա-
10 մօթով զգետին տեղին ունել։ Այլ յոր-
ժամ կոչիցիս, երթիցիր բազմեսցիր ի
յետին տեղւոջ, զի յորժամ գայցէ որ
կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ, Բարեկամ,
ի վեր մատիր։ յայնժամ եղիցին քեզ
11 փառք առաջի բարձակցացն քոց։ Զի
ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝
խոնարհեսցի։ եւ որ խոնարհեցուցանէ
զանձն՝ բարձրասցի։
12 Ասէ եւ ցկոչնեցեալն, Յորժամ առ-
նիցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր
զբարեկամս քո, եւ մի՛ զեղբարս քո,
եւ մի՛ զազգականս քո, եւ մի՛ [3]զդրա-
ցիս քո եւ մի՛ զմեծամեծս". զի մի՛ եւ
նոքա փոխարէն կոչեսցեն զքեզ, եւ լի-
13 նիցի քեզ հատուցումն։ Այլ յորժամ առ-
նիցես ընդունելութիւն, կոչեա զաղ-
քատս եւ զխեղս, զկաղս եւ զկոյրս։
14 Եւ երանելի լինիցիս։ զի ոչ ունին
փոխարէն հատուցանելոյ քեզ, եւ հա-
տուսցի քեզ փոխարէն ի յարութիւնն
15 արդարոց։ Իրրեւ լուաւ զայս ումն ի
բազմականացն, ասէ ցնա, Երանի որ
կերիցէ հաց յարքայութեան Աստուծոյ։
16 Եւ նա ասէ ցնա, Այր ումն զործեաց
17 [4]ընթրիս եւ հրաւիրեաց զբազումս։ Եւ
առաքեաց զծառայ իւր ի ժամու ընթր-
եացն կոչել զհրաւիրեալսն թէ եկայք,
զի ահաւասիկ պատրաստ է ամենայն
18 ինչ։ Եւ սկսան մի բոլ միով ամե-
նեքեան հրաժարել։ առաջինն ասէ, Ա-
գարակ գնեցի, եւ հարկ է ելանել տե-
սանել զնա. ազաչեմ զքեզ, կալ զիս
19 հրաժարեալ։ Եւ միւսն ասէ, Լուծս
հինգ եզանց գնեցի եւ երթեմ փորձել
զնոսա. ազաչեմ զքեզ, կալ զիս հրա-
20 ժարեալ։ Եւ միւսն ասէ, Կին ածի, եւ
21 վասն այնորիկ ոչ կարեմ գալ։ Եւ եկեալ
ծառայն պատմեաց զայն տեառն իւրում։
յայնժամ բարկացեալ տանուտէրն՝ ասէ
ցծառայն իւր, Ել զվազվազակի ի հրա-
պարակս եւ ի փողոցս քաղաքիդ, եւ
զազքատս եւ զխեղս եւ զկաղս եւ
22 զկոյրս մոյծ այսր։ Եւ ասէ ծառայն,
Տէր, եղեւ զոր հրամայեցեր եւ կայ
23 եւս տեղի։ Եւ ասէ տէրն ցծառայն,
Ել ի ճանապարհս եւ ի ցանկս, եւ արա
24 այսր մատանել, զի լցցի տունս իմ։ Ա-
սեմ ձեզ, զի Ոչ ոք յայնոցանէ կոչեցելոց
ճաշակեսցէ ընթրեացս իմոց։
25 Զկ։ Եւ երթային ընդ նմա ժողո-
վուրդք բազումք։ դարձաւ եւ ասէ
26 ցնոսա, Եթէ ոք գայ առ իս, եւ ոչ

---

[1] Որդւոց, ձեր աւերակ [2] ի Յունն պակասէ

[3] Յունն, դրացիս քո մեծատունս
[4] Յունն, ընթրիս մեծ

ատեայ զնայր իւր եւ գնայր եւ զկին
եւ զորդիս եւ զեղբարս եւ զդրօս, նա՝
եւ զանձն եւս իւր, ոչ կարէ իմ աշա-
27 կերտ լինել։ Զի որ ոչ բառնայ զխաչ
իւր եւ գայ զկնի իմ՝ ոչ կարէ իմ ա-
28 շակերտ լինել։ Ո՞վ ոք ի ձէնջ կամիցի
չինել աշտարակ, եւ ոչ նախ նստեալ
համարիցի զծախսն, եթէ ունիցի՛ բա-
29 ւական ի կատարումն. Զի գուցէ իրրեւ
արկանիցէ հիմն եւ ոչ կարիցէ կատա-
րել, ամենեքին որ տեսանիցեն, սկսա-
30 նիցին ծաղր առնել զնա, եւ ասել թէ
Այս այր սկսաւ չինել, եւ ոչ կարաց
31 կատարել։ Կամ ո՞ր թագաւոր երթեալ
տայցէ պատերազմ ընդ այլում թագա-
ւորի, եւ ոչ նստեալ նախ խորհիցի,
եթէ կարո՛ղ իցէ տասն հազարաւ զդէմ
ունել զայնորիկ որ գայցէ ի վերայ նո-
32 րա քսան հազարաւ։ Այլապէ թէ ոչ,
մինչդեռ հեռացդն իցէ, հրեչտակու-
թիւն առաքեալ ապաչեսցէ ի խաղա-
33 ղութիւն։ Արդ այսպէս ամենայն ոք
ի ձէնջ որ ոչ հրաժարեսցէ յամենայն
ընչից իւրոց, ոչ կարէ իմ աշակերտ
34 լինել։ Բարւոք է աղ. ապա թէ աղն
35 անհամանայ, ի՞ւ համեմեսցի։ Ոչ յերկիր
եւ ոչ յաղբ է պիտանացու, այլ ընկե-
նուլ զնա արտաքս։ Որ ունիցի ականջս
լսելոյ՝ լուիցէ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ էին մերձ առ նա ամենայն մաք-
սաւորք եւ մեղաւորք լսել ի նմանէ։
2 Տրանջէին փարիսեցիքն եւ գպիրք եւ
ասէին, Ընդէ՞ր սա զմեղաւորս ընդու-
նի եւ ուտէ ընդ նոսա։
3 Ասաց առ նոսա զառակս զայս.
4 Ո՞վ ոք իցէ ի ձէնջ մարդ որոյ իցէ
հարիւր ոչխար, եւ կորուսանիցէ զմի
ի նոցանէ, ոչ թողուցու զինսունն եւ
զինն յանապատի, եւ երթայցէ զնետ
կորուսելոյն, մինչեւ գտանիցէ զնա։
5 Եւ իրրեւ գտանէ, դնէ զնա ի վերայ
6 ուսոց իւրոց խնդալով, եւ երթայ ի
տունն, կոչէ զբարեկամս եւ զդրացիս,
եւ ասէ ցնոսա, Ուրախ եղերուք ընդ
իս, զի գտի զոչխարս իմ զկորուսեալ։
7 Ասեմ ձեզ, զի Այսպէս է ուրախու-
թիւն յերկինս վասն միոյ մեղաւորի
որ ապաչաւիցէ՝ քան վասն իննսուն
եւ հինն արդարոց որոց չիցէ պիտոյ ա-
8 պաչաւութիւն։ Կամ ո՞վ իցէ կին,
որոյ իցեն դրամք տասն. եւ եթէ կո-
րուսանիցէ դրամ մի, ո՞չ լուցանիցէ
ճրագ եւ ածիցէ աւել ի տան, եւ խընդ-
9 րիցէ տեղ, մինչեւ գտանիցէ։ Եւ
իրրեւ գտանէ, կոչէ զբարեկամս եւ
զդրացիս եւ ասէ, Ուրախ լերուք ընդ
իս, զի գտի զդրամն իմ զոր կորուսի։
10 Այնպէս, ասեմ ձեզ, ուրախութիւն
եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ
ի վերայ միոյ մեղաւորի որ ապաչաս-
իցէ։
11 Եւ ասէ, Առն միոյ էին երկու որ-
12 դիք. Ասէ կրտսերն ի նոցանէ հօրն,
Հայր, տուր ինձ բաժին, որ անկա-
նի յընչիցդ. եւ նա բաժանեաց նոցա
13 զկեանսն։ Եւ յետ ոչ բազում աւուրց
ժողովեալ զամենայն կրտսեր որդեն՝
գնաց յաշխարհ հեռի. եւ անդ վատ-
նեաց զինչս իւր, զի կեայր անառա-
14 կութիւնս։ Եւ իրրեւ սպառեաց զա-
մենայն, եղեւ սով սաստիկ յաշխարհին
յայնմիկ, եւ սկսաւ ինքն չքաւորել։
15 Եւ գնացեալ յարեցաւ ի միոյ ոմն ի քա-
ղաքացւոց աշխարհին այնորիկ. եւ
յղեաց գնա յագարակ իւր արածել խոզս։
16 Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր եղ-
ջերկն զոր խոզքն ուտէին, եւ ոչ ոք
17 տայր նմա։ Եւ եկեալ ի միտս իւր՝ ասէ,
Քանի՛ վարձկանք իցեն ի տան հօր իմոյ
հացակից, եւ ես սաստ սովամահ կո-
18 րընչիմ։ Յարուցեալ գնացից առ հայր
իմ եւ ասացից ցնա, Հայր, մեղայ յեր-
19 կինս եւ առաջի քո, եւ ոչ եւս եմ
արժանի կոչել որդի քո, արա զիս իբ-
20 րեւ զմի ի վարձկանաց քոց։ Եւ յա-
րուցեալ եկն առ հայր իւր. եւ մինչ-
դեռ հեռագոյն էր, տեսեալ զնա հայրն
եւ գթացաւ. յարեաւ եւ ընթացաւ
ընդ առաջ, անկաւ զպարանոցսն նո-
21 րա, եւ համբուրեաց զնա։ Եւ ասէ
ցնա որդին, Հայր, մեղայ յերկինս եւ
առաջի քո, ոչ եւս եմ արժանի կոչել
22 որդի քո։ Ասէ հայրն ցծառայս իւր,
[1]Վաղվաղակի հանէք զպատմուճանն
առաջինն եւ ագուցէք նմա, եւ տուք
զմատանին ի ձեռս նորա, եւ կօշիկս
23 յոտս նորա. Եւ ածէք զեզն պարարակ,
զնէք, կերիցուք եւ ուրախ լիցուք.
24 Զի այս որդի իմ մեռեալ էր եւ եկեաց,

[1] Յունաց պոյուկ

կորուսեալ էր եւ գտաւ . եւ սկսան
25 ուրախ լինել : Եւ էր երէց որդի նորա
յագարակի . եւ մինչդեռ գայր եւ մերձ
եղեւ ի տունն , լուաւ զձայն երգոց եւ
26 զպարուց . Եւ կոչեցեալ առ ինքն զմի
ի ծառայիցն՝ հարցանէր թէ զի՞նչ իցէ
27 այն : Եւ նա ասէ ցնա , Զի եղբայր քո
եկեալ է , եւ եղեն հայր քո զեզն սա-
բարակ , զի ողջամբ ընկալաւ զնա :
28 Բարկացաւ եւ ոչ կամէր մտանել , եւ
հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա :
29 Պատասխանի ետ եւ ասէ ցհայրն , Այս-
քանի ամբ են , զի ծառայեմ քեզ , եւ
երբեք զպատուիրանաւ քով ոչ անցի .
ուլ մի երբեք ոչ ետուր ինձ զի ուրախ
30 եղէց ընդ բարեկամս իմ : Յարմամ եկն
որդիդ քո այդ որ եկեր զկեանս քո ընդ
պոռնիկս , զներ զմա զեզն պարարակ :
31 Եւ ասէ ցնա , Որդեակ , դու հանապազ
ընդ իս ես , եւ ամենայն որ ինչ իմ է
32 քո է . Այլ ուրախ լինել եւ խնդալ
պարտ էր , զի եղբայր քո այս մեռեալ
էր եւ եկեաց , կորուսեալ՝ եւ գտաւ :

ԳԼ· ԺԶ

1 ԶՐ· Եւ ասէ առ աշակերտան , Այր մի
էր մեծատուն , որոյ էր տնտես . եւ
եղեւ գնմանէ ամբաստանութիւն , որ-
2 պէս թէ վատնիցէ զինչս նորա : Կոչեաց
եւ ասէ ցնա , Զի՞նչ է այս զոր լսեմ
զքէն . տուր զհամար տնտեսութեան
քո , զի ոչ եւս կարես լինել տնտես :
3 Ասէ ընդ միտս իւր տնտեսն , Զի՞նչ
գործեցից , զի տէր իմ հանէ զտնտե-
սութիւնս . զործել ոչ կարեմ , մուրա-
4 նալ ամաչեմ : Գիտեմ զինչ արարից ,
զի յորժամ ի բաց լինիցիմ ի տնտեսու-
թենէս , ընկալցին զիս ի տունս իւր-
5 եանց : Եւ կոչեցեալ առ ինքն զմի ըստ
միոջէ ի պարտապանաց տեառն իւրոյ ,
ասէ ցառաջինն , Քանի՞ լինչ պարտիս
6 տեառն իմում : Եւ նա ասէ , Հարեւր
մար ձիթոյ . ասէ ցնա , Կա զգիր քո ,
եւ նիստ գրեա վաղվաղակի յիսուն :
7 Յարձեալ ասէ ցմեւսն , Դու քանի՞ լինչ
պարտիս . եւ նա ասէ , Հարեւր քոռ
ցորենոյ . եւ ասէ ցնա , Կա զգիր քո ,
8 եւ նիստ գրեա ութսուն : Եւ գովեաց
տէրն զտնտեսն անիրաւութեան , զի
իմաստութեամբ արար . զի որդիք աշ-
խարհիս այսորիկ իմաստնագոյն են քան
9 զորդիս լուսոյ յազգս իւրեանց : Եւ ես
ձեզ ասեմ , Արարէք ձեզ բարեկամս
ի մամոնայէ անիրաւութեան . զի յոր-
ժամ պակասիցէ այն , ընկալցին զձեզ
10 ի յաւիտեան յաւիտենական : Որ ի փո-
քուն հաւատարիմ է՝ եւ ի բազմին հա-
ւատարիմ է , եւ որ ի փոքուն անիրաւ
11 է՝ եւ ի բազմին անիրաւ է : Իսկ արդ
եթէ յանիրաւ մամոնային չեղէք հա-
ւատարիմք , զճշմարիտն ձեզ ո՞ հաւա-
12 տասցէ : Եւ եթէ յօտարին չեղէք հա-
13 ւատարիմք , զձերն ո՞ տացէ ձեզ : Ոչ
ոք ծառայ կարէ երկուց տերանց ծա-
ռայել , զի [1]կամ զմին ատիցէ , եւ
զմիւսն սիրիցէ . կա՛մ զմին մեծարիցէ ,
եւ զմիւսն արհամարհիցէ . ոչ կարէք
Աստուծոյ ծառայել եւ մամոնայի :
14 Իրրեւ լսէին զայս ամենայն փարի-
սեցիքն , քանզի արծաթասէրք էին ,
15 անպոռնկէին զնա : Եւ ասէ ցնոսա , Դուք
էք որ արդարացուցանէք զանձինս ա-
ռաջի մարդկան , սակայն Աստուած գի-
տէ զսիրտս ձեր . զի որ առաջի մարդ-
կան բարձր է՝ պիղծ է առաջի Աստուա-
16 ծոյ : Օրէնքն եւ մարգարէքն մինչեւ
ցՅովհաննէս . յայնմ հետէ արքայու-
թիւն Աստուծոյ աւետարանի , եւ ա-
17 մենայն ոք զնա բռնաբարէ : Դիւրին
իցէ երկնից եւ երկրի անցանել , քան
յօրինացն միոյ նչանախեցի անկանել :
18 Ամենայն որ արձակէ զկին իւր եւ առնէ
այլ՝ շնայ . եւ որ զարձակեալն առնէ՝
շնայ :
19 Այր ոմն էր մեծատուն , եւ ագանէր
բեհեզս եւ ծիրանիս եւ ուրախ լինէր
20 հանապազ առատապէս : Եւ աղքատ ոմն
անուն Ղազարոս անկեալ գնէր առ
21 դրան նորա վիրաւորեալ , Եւ ցանկայր
լնուլ զորովայն իւր ի փշրանացն որ
անկանէին ի սեղանոյ մեծատանն . այլ
եւ շունք եւս գային եւ լիզուին զվէրս
22 նորա : Եւ եղեւ մեռանել աղքատին ,
եւ տանել հրեշտակաց զնա ի գոգն Ա-
բրահամու . մեռաւ եւ մեծատունն եւ
23 թաղեցաւ : Եւ ի գժոխեան ամրարձ զաչս
իւր մինչ ի տանջանսն էր . եւ տես զԱ-
բրահամ ի հեռուստանէ , եւ զՂազարոս
24 ի գոգ նորա [2]հանգուցեալ : Եւ նա ա-
ղաղակեաց եւ ասէ , Հայր Աբրահամ ,
ողորմեաց ինձ , եւ առաքեա զՂազարոս ,

---

[1] Յոյն , կա՛մ

[2] Ի բազում պատ

զի թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր, եւ զովացուսցէ զլեզու իմ, զի պատա-
25 կիմ ի տապոյ սմանի։ Եւ ասէ ցնա Աբրահամ, Որդեակ, յիշեա զի ընկալար անդէն զբարիս քո ի կեանսն քումմ, եւ Ղազարոս նոյնպէս զչարչարանս. արդ
26 սա ասա մխիթարի, եւ դու այդր պատ-
պակիս։ Եւ ի վերայ այսր ամենայնի միհ մեծ է ընդ մեզ եւ ընդ ձեզ. եթէ կամիցին ասալ առ ձեզ անցանել, ոչ
27 կարեն, եւ ոչ այսի ոք առ մեզ անցանել։ Եւ ասէ, Արդ աղաչեմ զքեզ, հայր, զի արձակեսցես զդա ի տունն
28 հօր իմոյ, Են իմ անդ եղբարք հինգ, որպէս զի տացէ նոցա վկայութիւն, զի մի՛ եւ նոքա գայցեն յայս տեղի տանջանաց։ Եւ ասէ Աբրահամ, Ունին
29 զՄովսէս եւ զմարգարէսն, նոցա լսի-
30 ցեն։ Եւ նա ասէ, Ոչ, հայր Աբրահամ, բայց եթէ ի մեռելոց ոք երթիցէ առ
31 նոսա, եւ ապաշխարեսցեն։ Եւ ասէ ցնա, Եթէ Մովսէսի եւ մարգարէիցն ոչ լսեն, եւ ոչ եթէ ի մեռելոց ոք յառնիցէ, հաւանեսցին։

Գլ. ԺԷ

1 ԶԳ. Ասաց եւ առ աշակերտսն իւր, Ոչ է մարթ չգալ գայթակղութեանց, բայց վա՛յ այնմիկ է յոր ձեռն գայցէ։
2 Լաւ էր նմա թէ վէմ երկանաքար կախէր պարանոցէ նորա եւ անկանէր ի ծով, քան թէ գայթակղեցուցանէ զմի
3 ոք ի փոքրկանցս յայսցանէ։ Զգոյչ կացէք անձանց. եթէ [1]մեղիցէ եղբայր քո, սաստեա նմա. եւ եթէ ապաշխարիցէ,
4 թող նմա։ Եւ եթէ եւթն անգամ մեղիցէ քեզ, եւ եւթն անգամ դարձցի ի քեզ եւ ասիցէ, Ապաշխարեմ, թողցես նմա։
5 Եւ ասեն առաքեալքն ցՏէր, Յաւել
6 մեզ հաւատս։ Եւ ասէ Տէր, Եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ, եւ ասիցէք թթենւոյս այսմիկ, Խլեաց եւ տնկեաց ի ծովու, եւ հնազանդեսցի ձեզ։
7 Իսկ ո՞վ ոք ի ձէնջ, որ ունիցի ծառայ հողագործ կամ հովիւ, որ իրրեւ մտանիցէ յագարակէ, ասիցէ ցնա վաղ-
8 վաղակի, թէ Անց բազմեաց. Այլ ո՞չ ասիցէ ցնա թէ Պատրաստեա զինչ ընթրելոց իցեմ, եւ գօտի ածեալ պաշտեա զիս, մինչեւ կերայց եւ արբից, եւ
9 ապա կերիցես եւ արբցես դու։ Միթէ չնո՞րհ ինչ ունիցի ծառային այնմիկ, 10 զի արար զամենայն հրամանսն.[2] Նոյնպէս եւ դուք յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասացէք թէ Ծառայք անպիտանք եմք, զոր պարտաւքն առնել արարաք։
11 Եւ եղեւ մինչ երթայր նա յերուսաղէմ, եւ ինքն անցանէր ընդ մէջ
12 Սամարիայ եւ Գալիլեացւոց։ Եւ մինչդեռ մտանէր ի գեղ ուրեմն, պատահեցան նմա տասն այր բորոտ որք կա-
13 ցին ի հեռաստանէ. Բարձին զձայնս եւ ասեն, Յիսուս վարպետ, ողորմեաց մեզ։ Եւ իրրեւ տեսս զնոսա, ասէ ցնոսա, Երթայք, ցուցէք զանձինս քահանայիցն. եւ եղեւ իրրեւ գնացին,
15 [3]առժամայն սրբեցան։ Մի ումն ի նոցանէ իրրեւ տեսս թէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն, ի ձայն մեծ փառաւոր
16 առնէր զԱստուած. Անկաւ ի վերայ երեսաց իւրոց առ ոտս նորա, եւ գոհանայր զնմանէ. եւ ինքն էր Սամա-
17 րացի։ Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ, Ո՞չ տասն սոքա սրբեցան, իսկ
18 արդ ինուանքն ո՞ւր են, Զի ոչ գտան դառնալ տալ փառս Աստուծոյ, բայց
19 միայն այլազգիս այս։ Եւ ասէ ցնա, Արի գնա, զի հաւատք քո կեցուցին զքեզ։
20 ԶԳ. Իրրեւ հարցաւ ի փարիսեցւոցն թէ ե՞րբ գայցէ արքայութիւնն Աստուծոյ. պատասխանի եւ նոցա եւ ասէ, Ոչ գայ արքայութիւնն Աստու-
21 ծոյ խտրանօք. Եւ չասիցեն թէ Ահաւասիկ աստ է կամ Անդ, զի ահա արքայութիւն Աստուծոյ ինքեանք ի ձեզ է։
22 Ասաց եւ առ աշակերտսն, Եկեսցեն աւուրք ցանկանալոյ ձեզ մի յաւուրցն Որդւոյ մարդոյ տեսանել, եւ ոչ տես-
23 անիցէք։ Եւ եթէ ասիցեն ձեզ եթէ Ահաւասիկ է կամ Անդ, մի՛ երթայցէք
24 զհետ։ Զի որպէս փայլակն փայլատակեալ ի ներքոյ երկնից ընդ երկինիս ծագիցէ, նոյնպէս եւ Որդի մարդոյ
25 յաւուրն իւրում։ Բայց նախ պարտ է

[1]Որթ, մեղիցէ քեզ

[2]Որթ յունարէն, ոչ կարծեմ։
[3]Ի ցառէն պակաս

նմա բազումս չարչարել եւ խոտել յաղ-
26 դէս յայսմանէ։ Եւ որպէս եղեւ յա-
ւուրսն Նոյի, նոյնպէս եղիցի եւ յա-
27 ւուրս Որդւոյ մարդոյ։ Ուտէին, լմ-
պէին, կանայս առնէին եւ արանց լի-
նէին, մինչեւ յօրն յորում եմուտ Նոյ
ի տապանն, եւ եկն Ջրհեղեղն եւ կո-
28 րոյս զամենեսեան։ Նոյնպէս եւ որպէս
յաւուրսն Ղովտայ եղեւ, ուտէին, լմ-
պէին, գնէին, վաճառէին, անկէին,
29 չինէին. Եւ յորում աւուր էլ Ղովտ
ի Սոդոմայ, տեղաց հուր եւ ծծումբ
30 յերկնից եւ կորոյս զամենեսեան։ Ըստ
նմին օրինակի եղիցի եւ յաւուրն յա-
31 րում Որդի մարդոյ յայտնելոց է։ Յայնմ
աւուր որ կայցէ ի տանիս եւ կարասի
իւր ի տան, մի՛ իջցէ առնուլ զայն.
եւ որ յանդի իցէ, նոյնպէս մի՛ դարձցի
32 յետս։ Յիշեցէք զկինն Ղովտայ։ (33) Որ
խնդրիցէ զանձն իւր ապրեցուցանել՝
կորուսցէ զնա. եւ որ կորուսցէ՝ ապ-
34 րեցուսցէ զնա։ Ասեմ ձեզ, Յայնմ գի-
շերի թէ եղիցին երկուս ի մի մահիճ,
35 մին առցի եւ մեւսն թողցի։ Եւ երկ
եղիցին երկու աղալ ի միասին, մին
առցի եւ մեւսն թողցի. եւ երկ իցեն
երկու յանդի, մին առցի եւ մեւսն
36 թողցի։ Պատասխանի ետուն եւ ասեն
37 ցնա, Ո՞, Տէր։ Եւ նա ասէ ցնոսա,
Ուր մարմինն է, անդր եւ արծուիք
ժողովեսցին։

Գլ. ԺԸ

1 Զե. Ասաց եւ առակ մի նոցա առ այն
թէ պարտ է յամենայն ժամ կալ նոցա
2 յաղօթս եւ մի՛ ձանձրանալ։ Ասէ, Դա-
տաւոր մի էր ի քաղաքի ուրեմն, յԱս-
տուծոյ ոչ երկնչէր եւ ի մարդկանէ ոչ
3 ամաչէր։ Եւ այրի մի էր ի նմին քա-
ղաքի, գայր առ նա եւ ասէր, Դատ
4 արա ինձ յոսոխէ իմմէ։ Եւ ոչ կամէր
ի բազում ժամանակս. յետ այնորիկ
ասէ ի մտի իւրում, եթէ եւ յԱստուա-
ծոյ ոչ երկնչիմ, եւ ի մարդկանէ ոչ
5 ամաչեմ, Գոնէ վասն աչխատ առնելոյ
զիս այրւոյն՝ արարից նմա դատ զի մի՛
6 ի սպառ եկեալ թախանձիցէ զիս։ Եւ
ասէ Տէր, Լուարուք զինչ դատաւորն
7 անիրաւութեան ասէր։ Իսկ Աստուած
ո՞չ առնիցէ վրէժխնդրութիւն [1]ծառա-

[1]ցոյն, ընտրելոց

յից իւրոց որ աղաղակեն առ նա ի տուէ
եւ ի գիշերի, եւ երկայնամիտ միայն
8 լինիցի առ նոսա։ Այո, ասեմ ձեզ զի
արասցէ վրէժխնդրութիւն նոցա վա-
ղվաղակի. իսկ Որդի մարդոյ եկեալ՝
զտանիցէ արդեօք հաւատս յերկրի։
9 Ասաց եւ առ ոմանս զանազանեալս
յանձինս թէ արդարք իցեն եւ խոտո-
10 ցին զրազումս, զառակս զայս. Մարդ
երկու ելին ի տաճարն կալ յաղօթս, մին
փարիսեցի եւ մեւսն մաքսաւոր։
11 Փարիսեցին կայր [2]մենաւ եւ զայս ա-
նանձինն աղօթս մատուցանէր, Աստ-
ուած [2]իմ, գոհանամ գքէն, զի ոչ եմ
իբրեւ զայլս ի մարդկանէ, յափշտա-
կողս եւ զանիրաւս եւ զշունս կամ իբ-
12 րեւ զայս մաքսաւոր։ Ամէն պահեմ եր-
կիցս ի չաբաթու, եւ տամ տասանորդս
13 յամենայն ստացուածոց իմոց։ Եւ մաք-
սաւորն կայր մեկուսի, եւ ոչ կամէր
եւ ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ,
այլ կոծէր զկուրծս իւր եւ ասէր, Աստ-
14 ուած, քաւեա զիս զմեզաւորս։ Ասեմ
ձեզ, Էջ սա արդարացեալ ի տուն իւր
քան զնա. զի ամենայն որ բարձրա-
ցուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի. եւ
որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձ-
բացի։
15 ԶԶ. Մատուցանէին առ նա եւ ման-
կտի զի մերձենայցէ ի նոսա. իբրեւ
տեսին աշակերտքն, սաստէին նոցա։
16 Իսկ Յիսուս կոչեցեալ զնոսա առ ինքն՝
ասէ, Թոյլ տուք մանկաւոյդ գալ առ
իս, եւ մի՛ արգելուք զդոսա, զի այդ-
պիսեացդ է արքայու[3]թիւն Աստուծոյ։
17 Ամէն ասեմ ձեզ, Որ ոչ ընդունիցի
զարքայութիւն Աստուծոյ իբրեւ ման-
նուկ, ոչ մտցէ ի նա։
18 Եւ եհարց զնա ոմն իշխան եւ ասէ,
Վարդապետ բարի, զի՞նչ գործեցից,
զի կենդանի յաւիտենականս ժառան-
19 գիցէ։ Ասէ ցնա Յիսուս, Ձի՞ ասես
զիս բարի. չէ ոք բարի բայց մի Աս-
20 տուած։ Զպատուիրանս գիտես. Մի՛
չնար, Մի՛ սպանաներ, Մի՛ գողանար,
Մի՛ սուտ վկայեր, Պատուեա՛ զհայր
21 քո եւ զմայր։ Եւ նա ասէ, Զայդ ա-
մենայն պահեցի ի մանկութենէ իմմէ։
22 Իբրեւ լուաւ զայն Յիսուս, ասէ ցնա,
Մեւս ևս պակաս է քեզ. զամենայն

[2]ի ցոանէն պակաս

ինչ զոր ունիս վաճառեա եւ տուր աղ-
քատաց, եւ ունիցիս դանձս յերկինս,
23 եւ ել ե՛կ հետեւ իմ։ Նա իբրեւ լուաւ զայս,
տրտմեցաւ, քանզի էր մեծատուն յոյժ։
24 Իբրեւ եանս զնա Յիսուս տրտմեալ,
ասէ, Ո՛րպէս դժուարաւ, որ ինչս ու-
նիցին, մտանիցեն յարքայութիւնն Ա-
25 ստուծոյ։ Դիւրագոյն իցէ մալխայ ընդ
ծակ ասղան անցանել, քան մեծատուն
26 յարքայութիւնն Աստուծոյ մտանել։ Եւ
որ լուանն՝ ասէին, եւ ո՞ կարիցէ ապ-
27 րել։ Եւ նա ասէ, Անհնարինք առ ի
մարդկանէ հնարաւորք են յԱստուծոյ։
28 Եւ ասէ Պետրոս, Ահաւասիկ մեք թո-
ղաք զամենայն ինչ զմեր, եւ եկաք
29 զհետ քո։ Եւ նա ասէ ցնոսա, Ամէն ա-
սեմ ձեզ եթէ ոչ ոք է որ եթող զտուն,
կամ զնոսա, կամ զեղբարս, կամ զկին,
կամ զորդիս վասն արքայութեան Ա-
30 ստուծոյ, եթէ ոչ առնուցու բազմա-
պատիկ ի ժամանակի յայսմիկ, եւ յաշ-
խարհին որ գալոցն է՝ զկեանսն յաւի-
տենականս ժառանգեսցէ։
31 Եւ առեալ զերկոտասանսն առանձ-
ինն՝ ասէ ցնոսա, Ահաւասիկ նշանակեմք
յերուսաղէմ, եւ կատարեսցին ամե-
նայն գրեալքն մարգարէիւք վասն Որ-
32 դւոյ մարդոյ։ Զի մատնեսցի հեթա-
33 նոսաց, եւ [1]կատակեսցի։ Եւ հարկա-
նիցեն եւ սպանանիցեն զնա, եւ յերիր
34 աւուր յարիցէ։ Եւ նոքա ոչինչ իմա-
ցան յայնցանէ, այլ էր բանն ծածկեալ
ի նոցանէ, եւ ոչ գիտէին զասացեալսն։
35 Զե։ Եւ եղեւ ի մօտենալ նորա յԵրի-
քով, կոյր ումն նստէր առ ճանապար-
36 հան մուրացիկ։ Իբրեւ լուաւ զանց-
անել ժողովրդեանն, հարցանէր թէ
37 Զի՞նչ իցէ այն։ Եւ պատմեցին նմա
38 թէ Յիսուս Նազովրեցի անցանէ։ Ազա-
ղակեաց եւ ասէ, Յիսուս, Որդի Դաւ-
39 թի, ողորմեաց ինձ։ Եւ որ առաջին
երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ։
եւ նա եւս առաւել աղաղակէր, Որդի
40 Դաւթի, ողորմեաց ինձ։ Ձտեղի առ
Յիսուս, եւ հրամայեաց ածել զնա առ
իւր։ եւ իբրեւ մերձ եղեւ առ նա, ե-
41 հարց զնա եւ ասէ, Զի՞նչ կամիս զոր
զի արարից քեզ։ Եւ նա ասէ, Տէր,
42 զի բացցին աչք իմ եւ տեսից։ Եւ Ի-
սուս ասէ ցնա, Հայեաց, հաւատք քո
43 կեցուցին զքեզ։ Եւ առժամայն եահս
եւ երթայր զհետ նորա եւ փառաւոր
առնէր զԱստուած։ եւ ամենայն ժո-
ղովրդեանն տեսեալ՝ տայր օրհնութիւն
Աստուծոյ։

ԳԼ։ ԺԹ

1 Եւ մտեալ չրջէր ընդ Երիքով։ (2) Եւ
ահա այր մի անուն կոչեցեալ Զակ-
քէոս, եւ նա էր մաքսապետ եւ ինքն
3 մեծատուն։ Եւ խնդրէր տեսանել եթէ
ով իցէ Յիսուս, եւ ոչ կարէր ի բազ-
4 մութենէն, զի կարճ էր հասակաւ։ Եւ
ընթացեալ յառաջ՝ ել ի ժանտաթզենին
զի տեսանիցէ զնա։ քանզի ընդ այն
5 իսկ անցանելոց էր։ Իբրեւ եկն ի տե-
ղին, հայեցաւ ի վեր Յիսուս եւ ասէ
ցնա, Զակքէ, վաւրիա էջ այտի, զի
այսօր ի տան քում արժան է ինձ ա-
6 զանել։ Փութացաւ եւ էջ եւ ընկալաւ
7 զնա։ Եւ որ տեսանէին՝ Իբրեւ տեսին
ամենեքին, տրտնջէին եւ ասէին թէ
Առ այն մեղաւորի եհտաս լուծանել։
8 Եկն եկաց Զակքէոս եւ ասէ ցՏէր,
Տէր, ահա զկէս ընչից իմոց տաց աղ-
քատաց, եւ եթէ զոք զրկեցի, հատուս
9 ցից չորեքկին։ Եւ ասէ ցնա Յիսուս,
Այսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ.
10 քանզի եւ սա որդի Աբրահամու է։ Զի
եկն Որդի մարդոյ խնդրել եւ կեցու-
ցանել զկորուսեալսն։
11 Եւ մինչդեռ նոքա զայն լսէին, յաւել
առակ մի եւ ասէ վասն մերձենալոյ
նորա յերուսաղէմ, եւ համարելոյ նո-
ցա եթէ առժամայն յայտնելոց է ար-
12 քայութիւն Աստուծոյ։ Ասէ, Այր ումն
աղնուական գնաց յաշխարհ հեռի առ-
նուլ իւր թագաւորութիւն եւ դառնալ։
13 Եւ կոչեցեալ [2]զծառայս իւր՝ ետ նոցա
տասն մնաս, եւ ասէ ցնոսա, Ծարգե-
14 ցէք զայդ մինչեւ եկից։ Եւ քաղաքա-
ցիքն նորա ատէին զնա, առաքեցին
հրեչտակս զկնի նորա, եւ ասեն թէ
Ոչ կամիմք թագաւորել զմա ի վերայ
15 մեր։ Եւ եղեւ գառնալ նմա առեալ
զթագաւորութիւնն, եւ կոչեցաւ զծա-
ռայսն որոց տուեալ էր զարծաթն, զի
16 գիտասցէ թէ ո՛ զինչ չահեցաւ։ Եկն
առաջինն եւ ասէ, Տէր, մնասն քո

[1] Ց-ՅՒՆ, կատակեսցի, և նախատեսցի և թքանիցի

[2] Ց-ՅՒՆ, զտասն ծառայս

17 տաան ինաս արար ։ Եւ ասէ ցնա ,
Սիմէ՛ն , Ծառայ բարի , զի ի փոքուց հա-
ւատարիմ եղեր , լիջիր իշխանութիւն
18 ունել ի վերայ տասն քաղաքի ։ Եկն
երկրորդն եւ ասէ , Մնաան քո արար
19 հինգ ինաս ։ Ասէ եւ ցնա , Եւ դու լիջիր
20 ի վերայ հինգ քաղաքաց ։ Եկն մեւսն
եւ ասէ , Տէր , ահա ինաան քո զոր ու-
21 նէի ծրարեալ ի վարչամակի . Երկնչէի
ի քէն , զի այր ստամբակ ես . բառնաս
զոր ոչ եդիր , եւ հնձես զոր ոչ սերմ-
22 մանեցեր ։ Եւ ասէ ցնա , Ի բերանոյ
քումմէ դատեցայց զքեզ , ծառայ [1]ան-
հաւատ . գիտէիր թէ ես այր մի ստամ-
բակ եմ , բառնամ զոր ոչ եդի , հնձեմ
23 ուր ոչ սերմանեցի . Եւ ընդէ՞ր ոչ ե-
տուր զարծաթին իմ ի սեղանաւորս , եւ
24 եկեալ ես տոկոսօք պահանջէի ։ Եւ
ասէ ցպատաւորսն , Առէք ի գմանէ
զմնասն , եւ տարայք տուք այնմ որ
25 ունիցի զտասն մնաան ։ (Եւ ասեն ցնա,
26 Տէր , ունի տասն մնաս ։) Ասեմ ձեզ
եթէ Ամենայնի որ ունիցի՝ տացի . եւ
յայնմանէ որ ոչն ունիցի , եւ զոր ու-
27 նիցի՝ բարձցի ի նմանէ ։ Բայց զթշնա-
միսն իմ զայնոսիկ որ ոչն կամէին զիս
թագաւորել ի վերայ նոցա , ածէք այր
28 եւ սպանէք առաջի իմ ։ Եւ յորում
ձայս ասաց , գնաց յառաջ երանել յե-
րուսաղէմ ։
29 Եղ . Եւ եղեւ իբրեւ մերձեցաւ ի Բեթ-
փագէ եւ ի Բեթանիա մօտ ի լեառնն
որ կոչի Զիթենեաց , առաքեաց երկուս
30 յաշակերտացն իւրոց եւ ասէ , Երթայք
գուք ի գեղն որ հանդէպ մերս կայ . յոր
իբրեւ մտանէք , գտանիցէք յաւանակ
կապեալ , յորում ոք ի մարդկանէ եր-
բէք ոչ նստաւ . լուծէք զնա եւ ածէք ։
31 Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ թէ Ընդ-
է՞ր լուծանէք , այսպէս ասասջիք ցնա
32 թէ Տեառն իւրում պիտոյ է ։ Իբրեւ
չոգան որ առաքեցանն , գտին որպէս
33 ասացն ցնոսա , [2]կայր յաւանակն ։ Եւ
մինչդեռ լուծանէին զյաւանակն , ասեն
տէարքն նորա ցնոսա , Ընդ՞ է՞ր լուծանէք
34 զյաւանակ ։ Եւ նոքա ասեն , Տեառն
35 իւրում պիտոյ է ։ Եւ ածին զնա առ
Յիսուս , եւ արկին զնոսիկ հանդերձս
36 եւ հնձուցին զՅիսուս ։ Եւ մինչդեռ
երթայր , զհանդերձս իւրեանց տարած-
37 ծանէին զճանապարհաւն ։ Եւ իբրեւ
այն մերձ եղեւ ի զառ ի վայր լե-
րինն Զիթենեաց , սկսաւ ամենայն
բազմութիւն աշակերտացն ուրախա-
բեալ օրհնել զԱստուած ի ձայն մեծ
վասն ամենայն եղելոց զօրու թեանցն
38 զոր տեսին . Եւ ասէին , Օրհնեալ որ
գայ թագաւորդ յանուն Տեառն , խա-
զաղութիւն յերկինս եւ փառք ի բար-
39 ձունս ։ Եւ ոմանք ի փարիսեցւոցն
յամբոխէ անտի ասեն ցնա , Վարդա-
40 պետ , սաստեա աշակերտացդ քոց ։ Պա-
տասխանի եւ ասէ , Ասեմ ձեզ զի
եթէ դոքա լռեսցեն , քարինքդ աղա-
ղակեսցեն ։
41 Եւ իբրեւ մերձեցաւ , տեսեալ զքա-
ղաքն՝ եւայ ի վերայ նորա , եւ ասէ ,
42 Եթէ դիտէիր դու դոնէ յաւուրս յայս-
միկ զխաղաղութիւնն քո . բայց այժմ
43 ծածկեցաւ [3]յերեսաց քոց ։ Զի եկեսցեն
աւուրք ի վերայ քո , եւ պատեսցեն
զքեզ թշնամիք քո պատնէշ , եւ պա-
շարեսցեն զքեզ , եւ նեղեսցեն զքեզ
44 յամենայն կողմանց . Եւ յատակեսցեն
զքեզ եւ զորդիս քո ի քեզ . եւ ոչ թո-
ղուցուն քար ի քարի վերայ յամենայ-
նի ի քեզ , փոխանակ զի ոչ ծանեար
զժամանակ այցելութեան քո ։
45 Եւ մտեալ ի տաճարն սկսաւ հանել
[4]զաղաւնեվաճառսն եւ զգնողս , եւ
46 ցնոսին հաւատաճառացն ցրուեաց՝ ։
Եւ ասէ ցնոսա , Գրեալ է , Եւ եղիցի
տուն իմ տուն աղօթից , եւ դուք ա-
47 րարէք զդա այրս աւազակաց ։ Եւ ու-
սուցանէր գնոսա հանապազ ի տաճա-
րին . իսկ քահանայապետքն եւ գպիրք
եւ զլխաւորք ժողովրդեանն խնդրէին
48 զնա կորուսանել , Եւ ոչ գտանէին թէ
զինչ արասցեն , զի ժողովուրդն ամե-
նայն կախեալ կային զնմանէ ի լսել ։

Գլ· Ի

1 Եր· Եւ եղեւ ի միում աւուրցն յայս-
ցանէ , մինչդեռ ուսուցանէր զժողո-
վուրդն ի տաճարի անդ եւ աւետարա-
նէր , հասին ի վերայ քահանայապետքն
2 եւ գպիրք ծերովքն հանդերձ , Եւ ասեն
ցնա , Ասա մեզ , որո՞վ իշխանութեամբ

[1] Յ-ԺՀ , չար
[2] Ի Բ-ԶՀ-Ն գ-Լ-Ե
[3] Յ-ԺՀ , յաչաց
[4] Բ-ԶՀ-Դ , զվաճառողսն · Է-Ի ոչ՝ զվաճառողսն և զգնողս

գործես դու զայդ, կամ ո՞վ է որ ես
3 քեզ զայդ իշխանութիւն։ Պատասխա-
նի ես եւ ասէ ցնոսա, Հարցից եւ ես
4 ցձեզ բան մի, եւ ասացէք ինձ. Մկըր-
տութիւնն Յովհաննու յերկնի՞ց էր եթէ
5 ի մարդկանէ։ Եւ նոքա խորհեցան ի
6 միտս իւրեանց եւ ասեն, եթէ ասեմք,
Յերկնից, ասէ, Իսկ ընդէ՞ր ոչ հաւա-
ացէք նմա. եւ եթէ ասեմք, Ի մարդ-
կանէ, ամենայն ժողովուրդն քարկոծ
7 առնեն զմեզ. զի հաստատեալ է ի միտս
զՅովհաննէ, թէ մարգարէ է։ Եւ պա-
ատասխանի եւսն չգիտել թէ ուստի
8 իցէ։ Եւ Յիսուս ասէ ցնոսա, Եւ ոչ
ես ասեմ ձեզ որով իշխանութեամբ
առնեմ զայս։

9 ԷԳ. Սկսաւ ասել առ ժողովուրդն
զառակս զայս. Այր ոմն տնկեաց այգի,
եւ ետ զնա մշակաց. եւ ինքն գնաց
10 ճանապարհ ժամանակս բազումս։ Եւ
ի ժամու առաքեաց առ մշակսն ծառայ,
զի ի պտղոյ այգւոյն տացեն նմա. եւ
մշակքն զան հարին զնա, եւ արձա-
11 կեցին ունայն։ Եւ յաւել մեւս եւս
ծառայ յղել. նոքա եւ զնա եւս զան
հարին, անարգեցին եւ առաքեցին ու-
12 նայն։ Եւ յաւել զերրորդն առաքել.
նոքա եւ զնա վիրաւորեցին եւ հանին
13 արտաքս։ Ասէ տէր այգւոյն, Ջի՞նչ
արարից. առաքեցից զորդի իմ սիրելի,
14 թերեւս ի տեսանէ պատկառեացեն։ Իր-
բեւ տեսին զնա մշակքն, խորհեցան
ընդ միմեանս եւ ասեն, Սա է ժա-
ռանգն, սպանցուք զսա, զի մեր լինի-
15 ցի ժառանգութիւնն։ Եւ հանին զնա
արտաքս քան զայգին եւ սպանին. արդ
զի՞նչ արասցէ ընդ նոսա տէր այգւոյն.
16 Ո՞չ ապաքէն գայցէ եւ կորուսանիցէ
զմշակսն զայնոսիկ եւ ատցէ զայգին
ալոց։ Իբրեւ լուան՝ ասեն, Քաւ, մի՛
17 լիցի։ Եւ նա հայեցեալ ընդ նոսա՝ ասէ,
Իսկ զի՞նչ իցէ այն որ գրեալն է եթէ
վէմն զոր անարգեցին շինողքն՝ նա ե-
18 ղեւ գլուխ անկեան։ Ամենայն որ ընդ-
հարցի ընդ վէմս ընդ այս՝ խորտակեա-
ցի, եւ յորոյ վերայ անկցի՝ հոսեսցէ
19 զնա։ Եւ խնդրէին գալերգն եւ քահա-
նայապետք արկանել ի նա ձեռս ի նմին
ժամու, եւ երկեան ի ժողովրդենէն,
զի գիտացին թէ առ նոսա ասաց զա-
ռակն զայն։

20 ԷԴ. Եւ ապա սպասեցին, եւ առա-
քեցին դաւաճանս կեղծաւորեալս զան-
ձինս առ արդարս ունել, զի ըմբռնեա-
ցեն զնա բանիւք, առ ի մատնել զնա
պետութեան եւ իշխանութեան դատա-
21 աւորին։ Հարցին զնա եւ ասեն, Վար-
դապետ, գիտեմք եթէ ուղիղ խօսիս
եւ ուսուցանես, եւ ոչ առնուս ակն,
այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աս-
22 տուծոյ ուսուցանես. Արժա՞ն է մեզ
23 կայսեր հարկս տալ թէ ոչ։ Եւ նայե-
ցեալ ընդ խորամանկութիւնն նոցա՝
24 ասէ [1]ցնոսա, Ցուցէք՝ ինձ զդահեկանն.
[2]Եւ նոքա ցուցին. եւ ասէ, Ջո՞յր
պատկեր եւ գրիր ունի. պատասխանի
25 եւսն եւ ասեն, Ջկայսեր։ Եւ նա
ասէ ցնոսա, Արդ երթայք տուք զկայ-
սերն կայսեր, եւ զԱստուծոյն՝ Աստու-
26 ծոյ։ Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բա-
նիւք առաջի ժողովրդեանն. եւ զար-
մացեալ ընդ պատասխանին նորա՝
լռեցին։

27 ԷԵ. Մատուցեալ ոմանք ի սադու-
կեցւոցն, որք հակառակէին չլինել յա-
28 րութեան, հարցին զնա Եւ ասեն,
Վարդապետ, Մովսէս գրեաց մեզ, եթէ
սուրբ եղբայր մեռանիցի, որոյ իցէ
կին, եւ նա անորդի [3]իցէ, զի առնուս-
ցու եղբայր նորա զկինն, եւ յարուսցէ
29 զառակ եղբօր իւրում։ Արդ եւթն եղ-
բարք էին. եւ առաջնոյն առեալ կին՝
30 մեռաւ անորդի։ Եւ զնա եւ երկրորդն,
31 մեռաւ եւ նա անորդի։ Եւ զնա եւ
երրորդն, նոյնպէս եւ եւթանեքեան, եւ
32 ոչ թողին [4]որդիս։ Մեռաւ՝ եւ կինն։
33 Արդ ի յարութեան ո՛ւմ ի նոցանէ լի-
նիցի կինն. զի եւթանեքեան կալան զնա
34 կին։ Պատասխանի եւ նոցա Յիսուս
եւ ասէ, Որդիք աշխարհիս այսորիկ
35 կանայս առնեն եւ արանց լինին. Իսկ
որ արժանի լինիցին այնմ աշխարհի
հասանել եւ յարութեանն որ ի մե-
ռելոց՝ ոչ կանայս առնեն եւ ոչ արանց
36 լինին։ Քանզի եւ ոչ մեռանել եւս կա-
րեն, զի հաւասար հրեշտակաց են, եւ
որդիք Աստուծոյ, քանզի յարութեան
37 որդիք են։ Այլ զի յառնեն մեռեալք,
եւ Մովսէս դուշակեաց ի մորենւոջն,

---

[1]Ոմանք, ցնոսա, Զի՞ փորձէք զիս. ցուցէք
[2]Ոմանս պակասէ
[3]Ոմանք, իցէ ի մեռանելն
[4]Ինչպահ, որդիս և մեռան։ (32) Ցետ ամենե-
ցուն մեռաւ

որպէս ասէ զՏեառնէ [1]Աստուծոյ Աբրահամու եւ [1]զԱստուծոյ Իսահակայ եւ
38 [1]զԱստուծոյ Յակովբայ ։ Եւ Աստուած չէ մեռելոց , այլ կենդանեաց , վասն ա-
39 մենեքեան նմա կենդանի են ։ Պատասխանի եւս ումանք ի դպրացն եւ ասեն , Վարդապետ , բարւոք ասացեր ։
40 Եւ ոչ եւս ոք իշխէր հարցանել զնա եւ ոչինչ ։
41 Եւ ասէ ցնոսա , Զիա՞րդ ասեն զՔրիստոսէ թէ որդի է Դաւթի ։
42 Զի ինքն Դաւիթ ասէ ի գիրս Սաղմոսաց , Ասաց Տէր ցՏէր իմ , Նիստ ընդ
43 աջմէ իմմէ , Մինչեւ եղից զթշնամիս
44 քո սպատուանդան ոտից քոց ։ Իսկ արդ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ , զիա՞րդ որդի նորա իցէ ։
45 Եւ լուա ի լուաւ ամենայն ժողովրդեանն
46 ասէ ցաշակերտան , Զգոյչ լերուք ի դպրացն , որ կամին պատմուճանօք չրջել , եւ սիրեն ողջոյնս ի հրապարակս , եւ զնախաթոռս ի ժողովարան ,
47 եւ զբարձրելոցս յընթրիս ։ Որ ուտեն զտունս այրեաց , եւ պատճառանօք յերկարեն զաղօթս ։ Նոքա ընկալցին աւելի դատաստան ։

ԳԼ ։ ԻԱ

1 Եւ հայեցեալ եհաս զմեծատունսն որ արկանէին զոսկւրս իւրեանց ի գան-
2 ձանակն ։ Եհաս եւ զկին մն այրի աղքատ , որ արկ անդր երկուս լումայս ։
3 Եւ ասէ , Արդարեւ ասեմ ձեզ , զի այրին այն աղքատ աւելի արկ քան զա-
4 մենեսեան ։ Ամենեքեան նոքա ի մեծուց իւրեանց արկին յընծայսն [2]Աստուծոյ , բայց նա ի կարօտութենէ իւրմէ զամենայն զկեանս իւր զոր ունէր՝ արկ ։
5 Եւ զի ասէր ումանց զսահմարէն թէ գեղեցիկ վիմօք եւ [3]աշտարակօք զար-
6 զարեալ է , ասէ , Զայդ ամենայն զոր տեսանէք , եկեսցեն աւուրք յորս ոչ թողցի այդր քար ի քարի վերայ որ
7 ոչ քակտեսցի ։ Հարցին զնա եւ ասեն , Վարդապետ , ե՞րբ լինիցի այդ , եւ զի՞նչ
8 նշան իցէ յորժամ այդ լինելոց իցէ ։ Եւ նա ասէ , Զգոյչ կացէք , մի՛ խաբիցիք . զի բազումք գայցեն յանուն իմ , եւ ասիցեն թէ ես եմ , եւ մերձեցաւ ժա-
9 մանակ . մի՛ երթայցէք զկնի նոցա ։ Եւ յորժամ լսիցէք պատերազմունս եւ խռովութիւնս , մի՛ զարհուրիցիք . զի պարտ է նախ այնմ լինել , այլ ոչ առ-
10 ժամայն կատարած ։ Յայնժամ ասէ ցնոսա , Յարիցէ ազգ յազգի վերայ եւ թագաւորութիւն ի թագաւորութենէն
11 վերայ ։ Եւ չարժմունք [4]մեծամեծք . եւ ի տեղիս տեղիս սովք՝՝ եւ սրածութիւնք եղիցին . արհաւիրք եւ նշանք
12 մեծամեծք յերկնից ։ Բայց յառաջ քան զայս ամենայն մխեսցեն զձեռս իւրեանց ի ձեզ եւ հալածեսցեն , մատնեսցեն ի ժողովուրդս եւ ի բանտս , եւ տանիցին առաջի պատուարաց եւ թա-
13 գաւորաց վասն անուան իմոյ ։ Եւ վի-
14 նիցի ձեզ այն ի վկայութիւն ։ Արդ դիք ի սիրտս ձեր , մի՛ յառաջագոյն կրթիլ
15 տալոյ պատասխանի ։ Զի ես տաց ձեզ բերան եւ իմաստութիւն , որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պա-
16 տասխանի ամենայն հակառակորդքն ձեր ։ Մատնեսջիք եւ ի ծնողաց եւ յեղբարց եւ յազգականաց եւ ի բարեկա-
17 մաց , եւ սպանանիցեն ի ձէնջ . եւ ե-
18 ղիջիք ատելեաւք յամենեցունց վասն անուան իմոյ ։ Եւ մազ մի ի գլխոյ ձեր-
19 մէ ոչ կորիցէ ։ Եւ համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր ։
20 Այլ յորժամ տեսանիցէք չուրջ պատեալ զօրօք զերուսաղէմ , յայնժամ գիտասջիք թէ մերձ է աւեր նորա ։
21 Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս , եւ որ ի միջի նորա իցեն՝ խուսեսցեն , եւ որ ի գաւառսն
22 իցեն՝ մի՛ մացեն ի նա ։ Զի աւուրք վրէժխնդրութեան են այնոքիկ առ ի
23 կատարելոյ ամենայն գրելոց ։ Բայց վա՛յ իցէ յղեացս եւ սնունդս յաւուրսն յայնոսիկ . զի եղիցի սաղնապ մեծ ի վերայ երկրի , եւ բարկութիւն՝ ժողո-
24 վրդեանն այնմիկ ։ Եւ անկցին ի սուր սուսերի , եւ գերեսցին յամենայն հեթանոսս . եւ երուսաղէմ եղիցի կոխան ազգաց , մինչեւ կատարեսցին ժամա-
25 նակք հեթանոսաց ։ Եւ եղիցին նշանք յարեգական եւ ի լուսին եւ յաստեղս , եւ յերկրի տագնապ հեթանոսաց՝ յահիւ բարբառոյ [5]ծովու եւ [6]խռովու-

[1] Յոյն , Աստուած
[2] Յոմանս պատ
[3] Յոյն Նուիրօք
[4] Որում , մեծամեծք ի տեղիս տեղիս , և սովք
[5] Ի Յոանն պատ
[6] Յոյն , ալեաց

26 թեան, Ցկանելոյ ոգւոց մարդկան յեր-
կիւղ եւ ի կարծեաց եկելոց ի վերայ
տիեզերաց. զի զօրութիւնք երկնից
27 չարժեսցին։ Եւ յայնժամ տեսցեն զՈր-
դի մարդոյ եկեալ ամպովք զօրութեամբ
28 եւ փառաւք բազմօք։ Եւ յորժամ սկսա-
նիցի այս լինել, ամբարձջիք եւ բարձ-
բացուսջիք զլուխս ձեր, զի մերձ է
վրկութիւն ձեր։
29 Եւ ասաց առակ մի նոցա. Տեսէք
30 զթզենիդ եւ զամենայն ծառ. Յորժամ
[1]ցուցանիցեն զպտուղ իւրեանց", տես-
անէք եւ ի նոցանէ ճանաչէջք եթէ
31 մերձ է ամառն։ Նոյնպէս եւ դուք
յորժամ տեսանիցէք զայս ամենայն
եղեալ, վիտասջիք թէ մերձ է արքա-
32 յութիւն Աստուծոյ։ Ամէն ասեմ ձեզ
թէ ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս
33 ամենայն եղիցի։ Երկինք եւ երկիր անց-
34 ցին, եւ բանք իմ ոչ անցանիցեն։ Զգոյշ
լերուք անձանց, դուցէ ծանրանայցեն
սիրտք ձեր չուայտութեամբ եւ արբե-
ցութեամբ եւ հոգովք աշխարհակա-
նօք, եւ յանկարծակի հասանիցէ ի վե-
35 րայ ձեր օրն այն. Զի իբրեւ զորո-
գայթ հասանիցէ ի վերայ ամենեցուն
որ բնակեալ են ընդ ամենայն երեսս
36 երկրի։ Արթուն կացէք այսուհետեւ,
յամենայն ժամ ազօթս արարէք, զի
արժանի լինիջիք զևրդեալ յայնմ ա-
մենայնէ որ լինելոց է, եւ կալ առա-
ջի Որդւոյ մարդոյ։
37 Եւ ի տուէ ի տաճարին ուսուցա-
նէր, եւ զգիչերս ելեալ ազանէր ի լե-
38 րինն որ կոչէր Ձիթենեաց։ Եւ ամե-
նայն ժողովուրդն կանխէր ընդ առա-
ւօտս առնա ի տաճարն լսել ի նմանէ։

Վ.Ջ

ԳԼ. ԻԲ

1 Մերձեցաւ տօն բազարջակերացն որ
2 կոչէր Պասքա. Եւ խնդրէին քահա-
նայապետքն եւ գպիրք թէ ո՛րպէս
սպանանիցեն զնա, բայց երկնչէին ի
ժողովրդենէ անտի։
3 Ապա եմուտ Սատանայ ի Յուդա ի
կոչեցեալն Իսկարիովտացի, որ էր ի
4 թուոյ երկոտասանիցն։ Ջոգաւ եւ
լաւն ընդ քահանայապետսն եւ ընդ
գպիրս եւ ընդ իշխանս ժողովրդեանն,
5 զի մատնեսցէ զնա նոցա։ Եւ խնգա-
ցին եւ խոստացան տալ նմա արծաթ։
6 Եւ յանձն առ եւ խնդրէր պարապ
մատնել զնա նոցա՝ մինչեւ յամբոխ-
իչն։
7 Եկն օր բազարջակերացն, յորում
8 օրէն էր զենուլ զպասքն։ Եւ առա-
քեաց զՊետրոս եւ զՅովհաննէս եւ ա-
սէ, Երթայք պատրաստեցէք մեզ զպաս-
9 սքն զի կերիցուք։ Եւ նոքա ասեն,
10 Ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք։ Եւ
ասէ ցնոսա, Ահա իբրեւ մտանիցէք ի
քաղաքն, պատահեսցէ ձեզ այր մի
բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զհետ
11 նորա ի տունն յոր մտանիցէ. Եւ ա-
սասջիք ցտանուտէր տանն, Վարդա-
պետ ասէ քեզ, Ո՞ւր են վանքն [2]իմ,
յորում զպասքն ուտիցեմ աչակեր-
12 տօքս հանդերձ։ Եւ նա ցուցցէ ձեզ
վերնատուն մի մեծ զարդարեալ, [3]եւ
13 անդ պատրաստեսջիք։ Եւ գնացեալ
գտին որպէս եւ ասացն նոցա, եւ
պատրաստեցին զպասքն։
14 Եւ իբրեւ ժամ եղեւ, բազմեցաւ,
եւ երկոտասան առաքեալքն ընդ նմա։
15 Եւ ասէ ցնոսա, Ցանկալեաւ ցանկա-
ցայ զայս պասք ուտել ընդ ձեզ, մինչ-
16 չեւ չարչարեալ իցեմ։ Բայց ասեմ ձեզ
թէ ոչ եւս կերայց ի սմանէ, մինչեւ լցցի
17 յարքայութեան Աստուծոյ։ Եւ ընկա-
լեալ բաժակ՝ գոհացաւ եւ ասէ, Առէք
18 զայդ եւ բաժանեցէք ի ձեզ։ Ասեմ ձեզ
թէ յայսմ հետէ ոչ արբից ի բերոյ որ-
թոյ, մինչեւ եկեսցէ արքայութիւնն
Աստուծոյ։
19 Եւ առեալ հաց՝ գոհացաւ, երեկ եւ
եա նոցա եւ ասէ, Այս է մարմին իմ,
[4]որ վասն բազմաց տուեալ"։ զայս ա-
20 րարէք առ իմոյ յիշատակի։ Նոյնպէս
եւ զբաժակն յետ ընթրեացն առ եւ
ասէ, Այս բաժակ է նոր ուխտ իմով
արեամբ վասն ձեր հեղելոյ։
21 Բայց աւասիկ ձեռն մատնչի իմոյ
22 ընդ իս ի սեղանս։ Եւ Որդի մարդոյ
ըստ սահմանելոյն երթայ, բայց վայ
մարդոյն այնմիկ որով ձեռն մատնեսցի։
23 Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս,
թէ ո՛վ է ի նոցանէ որ զայն գործելոց
իցէ։

---

[1]Բազմ. բազբողեսցին

[2]Յունաս. պտուղ [4]ի բազմաս, որ վասն ձեր
[3]ի բազմաս պտուղ տուեալ. յայլ՝ պտուղ

24 Եւ եղեւ հակառակութիւն ի մէջ նոցա թէ ո՛վ ի նոցանէ համարիցի մեծ։
25 Եւ նա ասէ ցնոսա, Թագաւորք ազգաց տիրեն նոցա, եւ որ իշխեն նոցա՝ բարերարք կոչին։ Այլ դուք ոչ այնպէս, այլ որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրեւ կրտսեր, եւ առաջնորդն՝ իբրեւ ծառայ։
27 Ո՞վ է մեծ, քան զնստեալն ի սեղանի, եթէ ոչ նստեալն։ Բայց ես եմ ի միջի ձերում իբրեւ ծառայ։
28 Եւ դուք էք որ ընդ իս կացիք ընդ իս ի փորձութիւնս իմ։
29 Եւ ես ուխտեմ ձեզ, որպէս եւ Հայր իմ ուխտեաց ինձ, զարքայութիւն։
30 Ձի ուտիցէք եւ ըմպիցէք ի սեղան իմ յարքայութեան իմում, եւ նստիցիք [1]յերկոտասան աթոռս՝ դատել զերկոտասան ազգն Իսրայելի։
31 Եւ ասէ Տէր, Սիմովն, Սիմովն, ահա Սատանայ խնդրեաց զձեզ խարրատալ իբրեւ զցորեան։
32 Այլ ես ապաչեցի վասն քո զի մի՛ պակասեսցին հաւատք քո։ եւ դու երբեմն դարձեալ եւ հաստատեսցես զեղբարս քո։
33 Եւ նա ասէ ցնա, Տէր, ընդ քեզ պատրաստ եմ ե՛ւ ի բանտ ե՛ւ ի մահ երթալ։
34 Եւ նա ասէ ցնա, Ասեմ քեզ, Պետրէ, չիցէ այսօր հաւու խօսեալ՝ մինչեւ երիցս ուրասցիս զիս չգիտել։
35 Եւ ասէ ցնոսա, Յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի եւ մախաղի եւ կօշկաց, միթէ կարօտացա՞ք իմիք։
36 Եւ նոքա ասեն, Եւ ոչ իմիք։ ապա ասէ, Այլ այժմ որ ունիցի քսակ՝ բարձցէ, նոյնպէս եւ մախաղ։ եւ որ ոչն ունիցի՝ վաճառեսցէ զձորձս իւր
37 եւ գնեսցէ իւր սուսեր։ Բայց ասեմ ձեզ, զի այս եւս որ գրեալ է՝ պարտ է զի կատարեսցի յիս թէ Ընդ անօրէնս համարեցաւ։ զի որ վասն իմ ինչ է՝ վճարեալ է։
38 Եւ նոքա ասեն, Տէր, ահաւասիկ են սուր երկու սուրք։ Եւ նա ասէ ցնոսա, Բաւական են։
39 Եւ ելեալ գնաց ըստ սովորութեանն ի լեռն Ձիթենեաց։ գնացին զհետ նորա եւ աշակերտքն։
40 Իբրեւ եհաս ի տեղին, ասէ ցնոսա, Յաղօթս կացէք
41 չմտանել ի փորձութիւն։ Եւ ինքն մեկնեցաւ ի նոցանէ իբրեւ քարկոծիւ մի,
42 եւ ծունր, կայր յաղօթս, Եւ ասէր,

Հայր, եթէ կամիս, անցո զբաժակս դայս յինէն։ բայց ոչ իմ կամք, այլ
43 քոյդ լիցին։ Եւ երեւեցաւ նմա հրեշտակ յերկնից եւ զօրացուցանէր զնա։
44 Եւ էր ի տագնապի, եւ մատակարարաբար [2]աղօթս եւս կայր յաղօթս։ Եւ հոսէին ի նմանէ քրտունք իբրեւ կաթիլս արեան [3]ոլորեան հիզեալ յերկիր։
45 Եւ յարուցեալ յաղօթից՝ եկն առ աշակերտան, եգիտ զնոսա ի քուն ի տրտմութենէն։
46 Եւ ասէ ցնոսա, Ձի՞ նիջէք։ արիք, կացէք յաղօթս՝ զի մի՛ մատնիցէք ի փորձութիւն։
47 Եւ մինչդեռ խօսէր, ահաւասիկ ամբոխ, եւ որ կոչէրն Յուդա, մի յերկոտասանիցն, առաջնորդէր նոցա։ [4]Իրեւ մերձեցաւ առ Յիսուս, համբուրեաց զնա։
48 Եւ Յիսուս ասէ ցնա՝ Յուդա, համբուրեա՞լ մատնես զմարդոյ։
49 Իբրեւ տեսին որ գնոսաւն էին որ ինչ եղեւն, ասեն ցնա, Տէր, հարցո՞ւք զնոսա սրով։
50 Եւ հար մի ոմն ի նոցանէ զքահանայապետին ծառայ, եւ ի բաց եհան զականջն նորա։
51 Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ, Թոյլ տուք մինչեւ ցայդ վայր։ Եւ մատուցեալ յունկն՝ բժշկեաց զնա։
52 Եւ ասէ ցհիւսիսոյն ի վերայ նորա, զքահանայապետսն եւ զիշխանս տաճարին եւ զծերսն, իբրեւ ի վերայ աւազակի՞ ելէք սուսերօք
53 եւ բրօք։ Հանապազ ընդ ձեզ էի ի տաճարին, եւ ոչ ձգեցէք ձեռս յիս։ այլ այս է ձեր ժամ եւ իշխանութիւն խաւարի։
54 Եւ կալեալ զնա՝ տարին եւ մուծին ի տունն քահանայապետին։ եւ Պետրոս երթայր զկնի նորա հեռագոյն։
55 Իրեւ լուսին կրակ ի մէջ դաւթին եւ նստան չուրջ, նստաւ եւ Պետրոս ի
56 մէջ նոցա։ Եւ տես զնա աղախին ոմն զի նստէր առ լոյսն, հայեցաւ ընդ նա եւ ասէ, Եւ սա ընդ նոսա էր որ ընդ
57 նմայն էին։ Իսկ Պետրոս ուրացաւ եւ
58 ասէ, Ոչ գիտեմ զնա, կին դու։ Եւ յետ սակաւ մի՛ոյ այլ ոմն տեսս զնա եւ ասէ, Եւ դու ի նոցանէ ես։ եւ

---

[1] Բազմ. յաթոռս

[2] ի ցաւէն գալոյ

[3] Ցայն, և մերձեցաւ առ Յիսուս համբուրել զնա

[4] ի բազմս գալոյ

Պետրոս ասէ, Այր դու, չեմ ի նոցա-
59 նէ։ Եւ իբրեւ ժամ մի անց ի վերայ,
այլ ումն վիճէր եւ ասէր, Ստոյգ եւ
սա ընդ նմա էր, քանզի Գալիլեացի է։
60 Ասէ Պետրոս, Այր դու, չգիտեմ զինչ
խօսիգ. եւ առժամայն մինչդեռ նա
61 դեռ ասէր, խօսեցաւ հաւ։ Դարձաւ
Տէր եւ հայեցաւ ի Պետրոս. եւ յիշեաց
Պետրոս զբանն Տեառն զոր ասաց ցնա,
Մինչչեւ հաւուս խօսեալ իցէ, [1]երիցս
62 ուրասցիս [2]զիս։ Եւ ելեալ ար-
տաքս՝ եկաց դառնապէս։
63 Եւ արքն, որ պահէին զնա, այպն
64 առնէին զնովաւ եւ հարկանէին։ Ծած-
կէին զերեսս նորա [2]եւ տանջէին", եւ
հարցանէին ցնա եւ ասէին, Մարգար-
65 եաց, ո՞վ է որ եհարն զքեզ։ Եւ այլ
բազում ինչ հայհոյութիւնս խօսէին
ի նա։
66 Եւ իբրեւ այգ եղեւ, ժողովեցաւ
ծերակոյտ ժողովրդեանն, քահանայա-
պետքն եւ գպիրքն, եւ հանին զնա
67 ի ատեանն իւրեանց եւ ասեն, Եթէ
դու ես Քրիստոսն, ասա մեզ։ Ասէ
ցնոսա, Եթէ ասացից ձեզ, սակայն ոչ
68 հաւատայք. Եւ եթէ հարցից ինչ զձեզ,
չտայք ինձ պատասխանի կամ արձա-
69 կիցէք։ Բայց յայսմ հետէ նստցի Որդի
մարդոյ ընդ աջմէ զօրութեանն Աս-
70 ուածոյ։ Եւ ասեն ամենեքեան, Ուրեմն դու ես Որդի՞ն Աստուծոյ. Եւ նա
ասէ ցնոսա, Դուք ասէք թէ ես եմ։
71 Եւ նոքա ասեն, Ջի՞նչ եւս պիտոյ է
մեզ վկայութիւն, զի մեքեն իսկ լուաք
ի բերանոյ դորա։

ԳԼ. ԻԳ

1 Եւ յարուցեալ ամենայն բազմութիւնն
2 նոցա, ածին զնա առ Պիղատոս։ Եւ
սկսան չարախօս լինել զնմանէ եւ ա-
սել, Զտաք զսա զի թիւրէր զազգս
մեր, եւ արգելոյր ի տալոյ հարկս կայ-
սեր, եւ ասէր զանձնէ եթէ Քրիստոսն
3 իւրէ թագաւոր։ Իսկ Պիղատոս եհարց
զնա եւ ասէ, Դո՞ւ ես թագաւորն
Հրէից. Նա պատասխանի ետ նմա եւ
4 ասէ, Դու ասացեր։ Ասէ Պիղատոս
զքահանայապետսն եւ զժողովուրդսն,
Զգտանիմ ինչ վնաս յայսմիկ։
5 Եւ նոքա աղեղին եւ ասէին եթէ խռովէ
զժողովուրդս, ուսուցանէ ընդ ամե-
նայն Հրէաստան՝ սկսեալ ի Գալիլէէ
6 մինչեւ ցայսր։ Իսկ Պիղատոս իբրեւ
լուաւ զԳալիլէէ, եհարց եթէ Գալիլ-
7 եացի՞ իցէ այրն։ Եւ իբրեւ գիտաց թէ
յիշխանութենէ Հերովդի է, ետ տանել
զնա առ Հերովդէս. քանզի եւ նա յե-
8 րուսաղէմ էր յաւուրսն յայնոսիկ։ Եւ
Հերովդէս իբրեւ ետես զՅիսուս, ու-
րախ եղեւ յոյժ, զի ցանկայր ի բազում
ժամանակաց տեսանել զնա. քանզի
լսէր բազում անգամ զնմանէ, եւ ակն
ունէր նչան ինչ լինել տեսանել ի նմա-
9 նէ։ Հարցանէր զնա բանիւք բազմօք.
եւ նա ոչինչ ետ նմա պատասխանի։
10 Կային քահանայապետքն եւ գպիրք եւ
11 պնդապետնս չարախօսէին զնմանէ։ Ա-
համարհեաց զնա եւ Հերովդէս հանգերձ
իւրովք զօրականօքն, եւ այպն արար-
եալ՝ արկ զնովաւ հանգերձս սպիտակս,
եւ ետ տանել անդրէն առ Պիղատոս։
12 Եւ եղեն բարեկամք Պիղատոս եւ Հե-
րովդէս յաւուր յայնմիկ, քանզի յա-
ռաջ թշնամիք էին միմեանց։
13 Կոչեաց Պիղատոս զքահանայապետսն
14 եւ զիշխանս եւ զժողովուրդն, Եւ ասէ
ցնոսա, Ածէք մատուցէք ինձ զայս
զայս իբրեւ զխոտորեցուցիչ ժողովր-
դեանն. եւ ահաւասիկ առաջի ձեր դա-
տեցայ, եւ ինձս ինչ ոչ գտի յառնս յայս-
միկ՝ զորոց դուք չարախօսէք զդմա-
15 նէ։ Այլ եւ ոչ Հերովդէս, քանզի [3]ետու
տանել զդա առ նա". եւ արդ ոչինչ մա-
16 հու արժանի է գործեալ դորա. Ուրա-
17 տեցից զդա եւ արձակեցից։ Զի հարկ
էր մի մի ըստ ամենի արձակել նոցա։
18 Եւ նոքա ազաղակէին ամենայն բազ-
մութեամբն եւ ասէին, Բարձ զդա եւ
19 արձակեա մեզ զԲարաբբա. Որ էր վասն
խռովութեան իրիք եղելոյ ի քաղաքին
20 եւ սպանութեան մտեալ ի բանտ։ Դար-
ձեալ Պիղատոս սկսաւ խօսել, քանզի
21 կամէր արձակել զՅիսուս։ Եւ նոքա
անդրէն ազաղակէին եւ ասէին, [4]Ի խաչ
22 հան" զդա։ Եւ նա [5]երիցս ասէ ցնոսա,
Զի՞նչ չար արար սա. ոչինչ վնաս
մահու գտի ի սմա, խրատեցից զսա

[1]Ոմն., այսօր երիցս [2]Ի բազում պատուս

[3]Ոմն., առաքեցի զձեզ առ նա, այլ՝ առաք-
քեաց զնա առ մեզ
[4]Բազում., Ի խաչ հան, ի խաչ հան
[5]Յոյն., երրորդ անգամ

23 եւ արձակեցից։ Եւ նորա ատեցէն մեծաձայն եւ խնդրէին զնա ի խաչ հանել, եւ զօրանային բարբառք նոցա եւ
24 քահանայապետիցն։ Եւ Պիղատոս հաւանեցաւ առնել զպայծառածս նոցա։
25 Արձակեաց նոցա [1]զբարարբայն՝ զոր վասն խռովութեան եւ սպանութեան արկեալ էր ի բանտ, զոր եւ խնդրէին իսկ, եւ զՅիսուս մատնեաց կամաց նոցա։
26 Իրրեւ տարին գնացին զնա, բռնեցին զումն Սիմոնէ Կիւրենացի որ գայր յանդէ, եդին ի վերայ նորա զխաչն բե-
27 րել զկնի Յիսուսի։ Եւ երթայր զնոտ նորա բազմութիւն ժողովրդեանն եւ կանանց որ կոծէին եւ աշխարէին զնա։
28 Դարձաւ Յիսուս եւ ասէ ցնոսա, Դստերք Երուսաղէմի, մի՛ լայք ի վերայ իմ, այլ լացէք ի վերայ անձանց
29 եւ ի վերայ որդւոց ձերոց։ Զի եկեսցեն աւուրք, յորս ասիցեն թէ երանի ամլոց եւ որովայնից որ ոչ ծնան, եւ
30 ստեանց՝ որ ոչ կերուսցին։ Յայնժամ սկսանիցին ասել լերանց թէ Անկեր-ուք ի վերայ մեր, եւ բլրոց՝ թէ
31 Ծածկեցէք զմեզ։ Զի եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զինչ լինիցի։
32 Անդէն եւ այլ երկուս, չարագործս,
33 սպանանել ընդ նմա։ Իրրեւ չորան ի տեղին կոչեցեալ Գագաթն, անդ հանին զնա ի խաչ, եւ զչարագործսն, զոմն ընդ աջմէ եւ զոմն ընդ ձախմէ
34 [2]խաչեցին։ Եւ Յիսուս ասէ, Հայր, թող զոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն։ Եւ ի բաժանել զհանդերձս նորա
35 արկին վիճակս։ Եւ կայր ժողովուրդն հայեցեալ. անդրանէին զնա իշխանքն հանդերձ նոքօք եւ ասէին, Զայլս ապրեցոյց, ապրեսցէ եւ զանձն, եթէ զա է Քրիստոս [3]Որդի Աստուծոյ ընտ-
36 րեալն։ Սկսան առնէին զնա եւ զինուորքն, եկեալ առաջի՝ մատուցա-
37 նէին նմա քացախ, եւ ասէին, եթէ դու ես թագաւորն Հրէից, փրկեա
38 զանձն քո։ Եւ էր գիր գրեալ ի վերայ նորա Յունարէն եւ Դամմատերէն եւ Եբրայեցերէն գրով թէ Սա է արքայն Հրէից։
39 Իսկ մի ոմն ի կախելոց չարագործացն հայհոյէր զնա եւ ասէր, [4]Ո՛չ դու ես Քրիստոս, փրկեա զանձն քո
40 եւ զմեզ։ Պատասխանի ետ ընկերն սաստկով նմա եւ ասէ, Զկերկնչի՞ս դու յԱստուծոյ, զի ի նմին պատժի
41 կաս։ Եւ մեք յիրաւի, զի արժանի որոց գործեցաքն՝ առնումք զհատուցումն. եւ սա ապիրատ ինչ ոչ գործեաց։
42 Եւ ասէ ցՅիսուս, Յիշեա զիս, Տէր, յորժամ գայցես արքայութեամբ
43 քով։ Եւ ասէ ցնա Յիսուս, Ամէն ասեմ քեզ, Այսօր ընդ իս իցես ի դրախտին։
44 Եւ էր իրրեւ վեցերորդ ժամ, եւ խաւար եղեւ ի վերայ ամենայն երկրի մինչեւ ցիններորդ ժամն. խաւարեցաւ արեգակն։ Եւ հերձաւ վարագոյր
46 տաճարին ընդ մէջ։ Եւ կարգաց Յիսուս ի ձայն մեծ եւ ասէ, Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ. զայս իրրեւ ասաց, եհան զոգի։
47 Եւ տեսեալ հարիւրապետին զոր ինչ եղեւն՝ փառաւոր արար զԱստուած եւ ասէ, Արդարեւ այրս այս արդար էր։
48 Եւ ամենայն ժողովուրդքն որ եկեալ էին, եւ տեսանէին զտեսիլն զայն եւ զզործ, բախէին զկուրծս եւ դառնա-
49 յին։ Կային եւ ամենայն ծանօթքն նորա ի հեռաստանէ, եւ կանայք որ եկեալ էին զնոտ նորա ի Գալիլեէ՝ տեսանէին զայն։
50 Եւ ահա այր մի անուն Յովսէփ, որ էր նախարար, այր բարեգործ եւ
51 արդար, (Սա չէր միաբանեալ ընդ խորհուրդս եւ ընդ գործս նոցա,) յԱրիմաթեայ քաղաքէ Հրէից, որ եւ ինքն իսկ ակն ունէր արքայութեան Աստու-
52 ծոյ։ Սա մատուցեալ առ Պիղատոս՝
53 խնդրեաց զմարմինն Յիսուսի. Եւ ի-ջուցեալ զնա՝ պատեաց պաստառակապ, եւ եդ ի կոտոշ գերեզմանի ուր
54 չէր բնաւ զոք եդեալ։ Եւ օրն էր ուրբաթ եւ շաբաթ լուսանայր։
55 Եւ երթային զնոտ նորա կանայք որ եկեալ էին ընդ նմա ի Գալիլեէ, տեսին զգերեզմանն, եւ որպէս եդաւ մարմին նորա։
56 Դարձան եւ պատրաստեցին խունկս եւ եւզս եւ ի շաբաթուն հանգարտեցին վասն պատուիրանին։

---

[1] Ի ք-ա-ն-ա պ-ա-ն-ա-ւ
[2] Ի ց-ա-ն-ի պ-ա-ն-ա-ւ
[3] Բ-ա-ց-ա-կ, ընտրեալն Աստուծոյ
[4] Ց-ա-ն-ա, եթէ

Գլ. ԻԴ

1 Բայց ի միաշաբաթուն վաղ քաջ ընդ առաւօտն եկին ի գերեզմանն, բերին զխունկսն զոր պատրաստեցին, եւ այլ
2 կանայք ընդ նոսա. Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ ի գերեզմանէ անտի.
3 Եւ մտեալ ի ներքս ոչ գտին զմարմինն
4 Տեառն Յիսուսի. Եւ եղեւ ընդ հիանալն նոցա վասն այսորիկ, եւ ահա արք երկու հասին առ նոսա ի հան-
5 դերձս լուսաւորս. Եւ իբրեւ զահի հարան եւ խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա, Ձի՞
6 ընդէրէք զկենդանին ընդ մեռեալս. Չէ աստ, այլ յարեաւ. յիշեցէք որպէս խօ-
7 սեցաւ ընդ ձեզ մինչ էրն ի Գալիլեա, Եւ ասէր թէ Պարտ է Որդւոյ մարդոյ մատնել ի ձեռս մարդոյ մեղաւորաց, եւ ի խաչ հանել եւ յերրորդ աւուր
8 յառնել. Եւ յիշեցին զբանսն նորա.
9 Եւ [1]դարձան պատ ի գերեզմանէն եւ այլոցն ամենե-
10 ցուն. Եւ էին Մարիամ Մագդաղենացի եւ Յովհաննա եւ Մարիամ Յա-
կոբայ եւ այլք ընդ նոսա որ պատ-
11 մեցին զայս առաքելոցն. Եւ երեւեցան առաջի նոցա չաղփադիւթիւն բանքն նոցա եւ չհաւատային նոցա.
12 Բայց Պետրոս յարուցեալ ընթացաւ ի գերեզմանն, եւ հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ ի կայն, եւ գնաց ընդ միտս զարմացեալ թէ զինչ եղեւ.
13 Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին աւուր ի գիւղ մի որ հեռի էր յԵրուսաղէմ [2]հարիւր եւ վաթսուն՝ ասպարիսաւ, եւ էր անուն նորա Եմ-
14 մաուս. Եւ նոքա խօսէին ընդ միմեանս վասն ամենայն անցիցն անցե-
15 լոց. Եւ եղեւ ընդ խօսելն նոցա եւ ընդ վիճել, եւ ինքն իսկ Յիսուս մերձե-
16 ցաւ եւ երթայր ընդ նոսա. Եւ նոցա աչք կալեալ էին առ ի չճանաչելոյ դնա.
17 Եւ ասէ ցնոսա, Ձի՞նչ են բանքդ վասն զոյց վիճիքդ ընդ միմեանս մինչդեռ
18 գնայիք, եւ տրտմեալ էք. Պատաս-
խանի ետ մի ոմն ի նոցանէ որում անուն էր Կղէովպաս, եւ ասէ ցնա, Դո՞ւ միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ
19 գիտացեր զինչ գործեցաւ ի նմա յաւուրս յայսոսիկ. Եւ ասէ ցնոսա, Զի՞նչ. Եւ նոքա ասեն, ԶՅիսուսէ Նազովրեցւոյ, որ եղեւ այր մարգարէ հզօր գործովք եւ բանիւք առաջի Աստուծ-
20 ոյ եւ ամենայն ժողովրդեանն. Ո՛րպէս մատնեցին զնա քահանայապետքն եւ իշխանքն մեր ի դատաստան մա-
21 հու եւ հանին զնա ի խաչ. Մեք ակն ունէաք թէ նա իցէ որ փրկելոցն էր զիսրայէլ. այլ եւ հանդերձ այսու ա-
մենայնիւ այս երրորդ օր է յորմէ հե-
22 տէ այն գործեցաւ. Այլ եւ կանայք ոմանք ի մէնջ զարմացուցին զմեզ, որք կանխեալ ընդ առաւօտն չոգան ի գե-
23 րեզմանն, եւ ոչ գտին զմարմին նո-
րա. Եկին եւ ասեն թէ եւ տեսիլ եւս հրեշտակաց տեսին, որք ասէին զնմա-
24 նէ թէ կենդանի է. Եւ գնացին ոմանք ի մէնջ ի գերեզմանն, եւ գտին նայնպէս որպէս եւ կանայքն ասացին. բայց
25 զնա ոչ տեսին. Եւ նա ասէ ցնոսա, Ո՛վ անմիտք եւ հեղգասիրտք ի հաւատալ ամենայնի զոր խօսեցան մար-
26 գարէքն. Ո՞չ զնոյնս պարտ էր չարչարել Քրիստոսի, եւ մտանել ի փառս
27 իւր. Եւ սկսեալ ի Մովսիսէ եւ յամենայն մարգարէիցն՝ մեկնէր նոցա որ
ինչ յամենայն գիրս գրեալ էր զնմանէ.
28 Իրբեւ մերձեցան ի գիւղն յոր երթային, եւ նա պատճառէր հեռագոյն եւս
29 ուրեք երթալ. Եւ բռնադատեցին զնա եւ ասեն, Առ մեզ աղիր, զի ընդ եւ-
րեկս է եւ տարաժամեալ է օրս. եւ ե-
30 մուտ ագանել անդ ընդ նոսա. Եւ եղեւ ի բազմիլն նորա ընդ նոսա, առեալ զհացն՝ օրհնեաց, երեկ եւ ետ նոցա.
31 Եւ նոցա բացան աչք եւ ծանեան զնա,
32 եւ նա եղեւ ի նոցանէ աներեւոյթ. Եւ ասեն ցմիմեանս, Ո՞չ իսկ եւ սիրտք մեր ճմլէին ի մեզ մինչ խօսէրն ընդ մեզ ճանապարհին, եւ ո՛րպէս բանայր
33 մեզ զգիրս. Եւ յարուցեալ նոյնժամայն՝ դարձան յերուսաղէմ, եւ գտին ժողովեալ զմեսասանսն եւ զորս ընդ
34 նոսայն էին. Եւ ասեն թէ Սրդարեւ յարեաւ Տէր եւ երեւեցաւ Սիմովնի.
35 Եւ նոքա պատմեցին զայն որ ճանապարհայնն, եւ թէ զի՛նդ եւս ծանօթ նոցա ի բեկանել հացին.
36 Մինչդեռ զայն խօսէին, ինքն իսկ Յիսուս եկաց ի մէջ նոցա եւ ասէ ցնո-

---

[1] Բ–ը–ՀՀ, դարձան ի գերեզմանէն
[2] Բ–ը–ՀՀ, վաթսուն

սա, Խաղաղութիւն ընդ ձեզ, [1]ես եմ, 37 մի՛ երկնչիք։" Եւ զահի հարեալ եր-
կընչէին, եւ հաւարէին ոգի ինչ տես- 38 անել։ Եւ ասէ ցնոսա, Ձի՞ խռովեալ
էք, եւ ընդէ՞ր խորհուրդք ելանեն ի 39 սիրտս ձեր։ Տեսէք զձեռս իմ եւ զոտս,
զի ես նոյն եմ. չօշափեցէք ինձ եւ տեսէք, զի ոգի մարմին եւ ոսկերս ոչ
ունի, որպէս զիս տեսանէք զի ու- 40 նիմ։ Եւ զայս ասացեալ եցոյց նոցա
41 զձեռսն եւ զոտս։ Եւ մինչդեռ տա-
կաւին չհաւատային ի խնդութենէն եւ զարմացեալ էին, ասէ ցնոսա, Ունի՞ք
42 ինչ կերակուր աստ։ Եւ նոքա եւտն
նմա ձկան խորովելոյ մասն [1]եւ խո- 43 րիսխ մեղու։" Եւ առ եկեր առաջի
44 նոցա, [1]եւ զմնացորդսն եա նոցա։" Եւ
ասէ ցնոսա, Այս բանք են զոր խօ-
սեցայ ընդ ձեզ, մինչ առ ձեզն էի թէ պարտ է կատարել ամենայն գրելոցն յո-
րէնսն Մովսիսի եւ ի մարգարէս եւ ի 45 սաղմոսս վասն իմ։ Յայնժամ եբաց
46 զմիտս նոցա իմանալ զգիրս։ Եւ ասէ
ցնոսա թէ [2]Այսպէս պարտ էր չար-
չարել Քրիստոսի, եւ յառնել ի մեռե- 47 լոց յաւուր երրորդի, Եւ քարոզել
յանունն նորա ապաշխարութիւն եւ թողութիւն մեղաց յամենայն ազգս՝ 48 սկսեալ յերուսաղեմէ։ Եւ դուք էք
49 վկայք այսոցիկ։ Եւ ահա ես առաքեմ
զաւետիս Հօր իմոյ ի ձեզ. Եւ դուք նստարուք ի քաղաքիս յերուսաղէմ, մինչեւ զգենուցուք զօրութիւն ի բարձանց։

50 Եհան զնոսա մինչեւ ի Բեթանիա,
եւ ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց 51 զնոսա։ Եւ եղեւ յօրհնելն նորա զնո-
սա, մեկնեցաւ ի նոցանէ եւ վերա- 52 նայր յերկինս։ Եւ նոցա երկիր պա-
գեալ նմա՝ դարձան յերուսաղէմ ու- 53 րախութեամբ մեծաւ։ Եւ էին հանա-
պազ ի տաճարին, գովէին եւ օրհնէին զԱստուած։

---

[1] Ի բազմս պակաս

[2] Գոյն, Այսպէս գրեալ է, և այսպէս

ԳԼՈՒԽՔ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Հմր.
Վասն՝ զի անսկիզբն է Բանն Աստուած.	Ա.	1
Վասն Յովհաննու վկայելոյն Բանին Աստուծոյ.	Ա.	15
Վասն գալոյն առ նա Գառնին Աստուծոյ.	Ա.	29
Վասն աշակերտացն առ Յիսուս ա-գանելոյն.	Ա.	39
Վասն գտանելոյն զՄեսիա.	Ա.	41
Վասն ի Կանա Հարսանեացն.	Բ.	1
Վասն արտաքս հանելոյն ի տաճարէն.	Բ.	15
Վասն Նիկոդեմոսի.	Գ.	1
Վասն ի յԱյենովն մկրտելոյն	Գ.	23
Վասն խնդիր լինելոյ վասն սրբու-թեան.	Գ.	25
Վասն կնոջն Սամարացւոյ.	Դ.	7
Վասն թագաւորազինն.	Դ.	46
Վասն երեսնևևութամեայ հիւանդին.	Ե.	5
Վասն՝ զի Հայր սիրէ զՈրդի.	Ե.	20
Վասն հինգ հացին և երկու ձկանն.	Զ.	9
Վասն գնալոյն ի վերայ ծովուն.	Զ.	19
Վասն մարտնչելոյն ընդ միմեանս Հրէից.	Զ.	41
Վասն չրջելոյն Յիսուսի ի Գալիլէ, և խրատու եղբարցն.	Է.	1
Վասն խնդրելոյն Հրէից ունել զՅի-սուս.	Է.	30
Վասն ի ծնէ կուրին.	Թ.	1
Վասն դնելոյն Յիսուսի զանձն ի վե-րայ ոչխարացն.	Ժ.	15
Վասն Նաւակատեացն յերուսաղէմ.	Ժ.	22
Վասն Ղազարու յարութեանն.	ԺԱ.	1
Վասն օծանելոյն զՏէրն.	ԺԲ.	3
Վասն՝ որ ասացյ Յուդա զիւղոյն.	ԺԲ.	5
Վասն յովնանակին.	ԺԲ.	14
Վասն մատչելոյ հեթանոսացն առ Տէր.	ԺԲ.	21
Վասն հատին ցորենոյ.	ԺԲ.	24
Վասն Յիսուսի լոյս գալոյն յաշխարհ.	ԺԲ.	46
Վասն ընթրեացն և լուանալոյ զոտս աշակերտացն.	ԺԳ.	1
Վասն չարչարանացն Յիսուսի, և սփոփելոյ զաշակերտսն.	ԺԴ.	15
Վասն գալոյ Հոգւոյն և մխիթարելոյ զաշակերտսն.	ԺԴ.	26
Վասն մատնութեանն Յիսուսի.	ԺԵ.	2
Վասն ուրացութեանն Պետրոսի, և հաւուն խօսելոյ.	ԺԵ.	25
Վասն ածելոյն զՅիսուս ի վանացն կայիափայ.	ԺԵ.	28
Վասն տանելոյն զՅիսուս ի Գողգոթա.	ԺԹ.	17
Վասն աւանդելոյ զՀոգին.	ԺԹ.	30
Վասն խնդրելոյն զՏէրունական մարմինն.	ԺԹ.	38
Վասն բերելոյն Նիկոդեմոսի զմուռս.	ԺԹ.	39
Վասն գալոյ կանանցն ի գերեզմանն.	Ի.	1
Վասն դրօքն փակելովք մնանելոյն Յիսուսի առ աշակերտսն.	Ի.	19
Վասն զԹովմաս հաստատելոյ Տեառն.	Ի.	27
Վասն ուտելոյն ընդ նոսա, և հարց-մանն զՊետրոս.	ԻԱ.	15
Վասն սիրելոյ աշակերտին, և գրելոյ զԱւետարանն.	ԻԱ.	24

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 ԲԿ. Ի սկզբանէ էր Բանն, եւ
Բանն էր առ Աստուած, եւ Աստուած
2 էր Բանն: Նա էր ի սկզբանէ առ Աս-
3 տուած: Ամենայն ինչ նովաւ եղեւ,
եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ որ
4 ինչ եղեւն: Նովաւ կեանք էր, եւ
5 կեանքն էր լոյս մարդկան. Եւ լոյսն ի
խաւարի անդ լուսաւորէ, եւ խաւար
նմա ոչ եղեւ հասու:
6 Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ,
7 անուն նմա Յովհաննէս: Սա եկն ի
վկայութիւն զի վկայեսցէ վասն Լու-
սոյն, զի ամենեքին հաւատասցեն նո-
8 վաւ: Ոչ էր նա Լոյսն, այլ զի վկա-
յեսցէ վասն Լուսոյն:
9 Էր Լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ
առնէ զամենայն մարդ [1]որ գայով է՞
10 յաշխարհ: Յաշխարհի էր, եւ աշխարհ
նովաւ եղեւ, եւ աշխարհ զնա ոչ ծա-
11 նեաւ: Յիւրան եկն, եւ իւրքն զնա ոչ
12 ընկալան: Իսկ որք ընկալանն զնա՝ ետ
նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ
լինել որոց հաւատասցեն յանուն նորա.
13 Այք ոչ յարենէ եւ ոչ ի կամաց մարմնոյ
եւ ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ
14 ծնան: Եւ Բանն մարմին եղեւ եւ
բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս նո-
րա, զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ,
լի չնորհօք եւ ճշմարտութեամբ:
15 Յովհաննէս վկայէ վասն նորա, ա-
ղաղակեաց եւ ասէ, Սա է զորմէ ա-
սէի, Որ զկնի իմ գալոցն էր՝ առաջի
16 իմ եղեւ, զի նախ քան զիս էր: Զի
ի լրութենէ անտի նորա մեք ամենե-
քին առաք չնորհս փոխանակ չնորհաց:
17 Զի օրէնքն ի ձեռն Մովսիսի տուան,
չնորհքն եւ ճշմարտութիւն ի ձեռն
Յիսուսի Քրիստոսի եղեն:
18 ԲԲ. ԶԱստուած ոչ ոք տեաս երբեք,
բայց միածինն Որդի որ է ի ծոց Հօր,

19 նա պատմեաց: Եւ այս է վկայու-
թիւնն Յովհաննու, յորժամ առաքեցին
առ նա Հրեայքն յերուսաղեմէ քահա-
նայս եւ Ղեւտացիս, զի հարցցեն զնա
20 Թէ Դու ո՞ ես: Եւ խոստովան եղեւ
եւ ոչ ուրացաւ. խոստովան եղեւ Եթէ
21 Ես ոչ եմ Քրիստոս: Եւ հարցին զնա,
Իսկ ո՞վ ես դու, Եղիա՞ ես. եւ ասէ,
Ոչ եմ: Իսկ մարգարէ՞ն ես դու. պա-
22 տասխանի եւ Թէ Ոչ: Իսկ ասա մեզ,
Դու ո՞վ ես, զի պատասխանի տարց-
ուք որոց առաքեացինն զմեզ. Զի՞ ասես
23 վասն քո: Ասէ, Ես՝ ձայն բարբառոյ
յանապատի, Ուղղիլ արարէք զճանա-
պարհն Տեառն, որպէս ասաց Եսայի
24 մարգարէ: Եւ որք առաքեցեալքն՝ ի փա-
25 րիսեցւոց անտի էին: Հարցին զնա եւ
ասեն, Իսկ զի՞ մկրտես, եթէ դու չես
Քրիստոս, եւ ոչ Եղիա, եւ ոչ մարգա-
26 րէն: Պատասխանի եւ նոցա Յովհան-
նէս եւ ասէ, Ես մկրտեմ զձեզ ջրով.
ի միջի ձերում կայ, զոր դուքն ոչ գի-
27 տէք. Որ զկնի իմ [2]գալոցն է՞, որում
չեմն արժանի եթէ լուծից զքրացս
28 կօշկացդ նորա: Այս ի Բեթաբարա եղեւ
յայնկոյս Յորդանանու, ուր էին Յով-
հաննէս եւ մկրտէր:
29 ԲԳ. Ի վաղիւ անդր տեսանէ զՅի-
սուս զի գայր առ նա, եւ ասէ, Ահա
առեալ Գառն Աստուծոյ որ բառնայ
30 զմեղս աշխարհի: Սա է վասն որոյ ետն
ասէի, Զկնի իմ գայ այր որ առաջի
իմ եղեւ, զի յառաջ իսկ էր քան զիս:
31 Եւ ես ոչ գիտէի զնա, այլ զի յայտնի
լինիցի Իսրայելի, վասն այնորիկ եկի
32 ես ջրով մկրտել: Վկայեաց Յովհան-
նէս եւ ասէ Թէ Տեսանէի զՀոգին,
զի իջանէր իբրեւ զաղաւնի յերկնից,
33 եւ հանգչէր ի վերայ նորա: Եւ ես ոչ
գիտէի զնա, այլ որ առաքեացն զիս
մկրտել ջրով՝ նա ասաց ցիս, Յոր վե-
րայ տեսանիցես զՀոգին զի իջանիցէ

[1] Ցն, եկեալ

[2] Որ..., գալոցն է, որ առաջի իմ եղեւ

եւ հանդչիցի ի վերայ նորա, նա է որ
34 մկրտէ Հոգւովն Սրբով։ Եւ ես տեսի
եւ վկայեցի եթէ Սա է Որդին Աս-
տուծոյ։
35 ԲԹ. Ի վաղիւ անդր կայր Յովհան-
նէս, եւ յաչակերտաց անտի նորա եր-
36 կու։ Եւ նայեցեալ ընդ Յիսուս զի
ղգնայր, ասէ, Ահաւասիկ [1]Գրիստոս
37 Գառն Աստուծոյ։ Լուան ի նմանէ եր-
կու աշակերտքն զի խօսեր, եւ գնա-
38 ցին զհետ Յիսուսի։ Իրրեւ դարձաւ
Յիսուս եւ եահս զնոսա զի երթային
զհետ նորա, ասէ ցնոսա, Զի՞նչ խընդ-
րէք. Նոքա ասեն ցնա, Ռաբբի, (որ
թարգմանեալ կոչի Վարդապետ,) ո՞ւր
39 են օթեվանք քո։ Ասէ ցնոսա, Եկայք
եւ տեսէք։ Եկին եւ տեսին ուր էին
օթեվանք նորա, եւ առ նմա զօրն
այն օր, զի ժամ էր իրրեւ տասնե-
40 րորդ։ Էր Անդրէաս եղբայր Սիմոնի
Վիմի, մի յերկուց անտի որ լուանն
ի Յովհաննէ եւ գնացին զհետ նորա։
41 Գտանէ սա նախ զեղբայր իւր զՍիմոնն,
եւ ասէ ցնա, Գտաք զՄեսիայն (որ
42 թարգմանի Քրիստոս)։ Ած զնա
առ Յիսուս. հայեցեալ ընդ նա Յիսուս
սմ՝ ասէ, Դու ես Սիմոնն որդի Յովհա-
նու, դու կոչեսցիս Կեփաս (որ թարգ-
մանի Պետրոս)։
43 ԲԵ. Ի վաղիւ անդր կամեցաւ եել-
նել ի Գալիլեա. գտանէ զՓիլիպպոս,
եւ ասէ ցնա Յիսուս, Եկ զհետ իմ։
44 Եւ էր Փիլիպպոս ի Բեթսայիդայ, ի քա-
45 ղաքէ Անդրեայ եւ Պետրոսի։ Գտանէ
Փիլիպպոս զՆաթանայէլ եւ ասէ ցնա,
Զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն՝ եւ
մարգարէքն, գտաք զՅիսուս զորդի
46 Յովսեփայ ի Նազարեթէ։ Ասէ ցնա Նա-
թանայէլ, Իսկ ի Նազարեթէ մարթի
ինչ իցէ բարւոյ լինել. ասէ ցնա
47 Փիլիպպոս, Եկ եւ տես։ Իրրեւ եահս
Յիսուս զՆաթանայէլ զի գայր առ նա,
ասէ վասն նորա, Ահա արդարեւ Իս-
րայելացի յորում նենգութիւն ոչ գոյ։
48 Ասէ ցնա Նաթանայէլ, Ուստի՞ ճանա-
չես զիս. պատասխանի եւ Յիսուս եւ
ասէ ցնա, մինչչեւ էր Փիլիպպոսի կո-
չեցեալ զքեզ՝ զի էիր ի ներքոյ թզենւ-
49 ւոյն, տեսի զքեզ։ Պատասխանի եւ
Նաթանայէլ եւ ասէ, Ռաբբի,
դու ես Որդի Աստուծոյ, դու ես Թա-
50 գաւորն Իսրայելի։ Պատասխանի եւ
Յիսուս եւ ասէ, Փոխանակ զի
ասացի քեզ թէ տեսի ի ներքոյ թզենւ-
ւոյն, հաւատաս՞ս. մեծամեծս եւս քան
51 զայս տեսցես։ Եւ ասէ ցնա, Ամէն
ամէն ասեմ ձեզ, Տեսանիցէք զերկինս
բացեալ, եւ զհրեշտակս Աստուծոյ զի
ելանիցեն եւ իջանիցեն ի վերայ Որդւոյ
մարդոյ։

Գլ. Բ

1 ԲԶ. Եւ յաւուրն երրորդի հարսանիք
էին ի Կանա Գալիլեացւոց, եւ անդ էր
2 մայրն Յիսուսի։ Կոչեցաւ եւ Յիսուս
եւ աշակերտքն նորա ի հարսանիսն։
3 Եւ ի պակասել գինւոյն՝ ասէ մայրն
4 Յիսուսի, Գինի՛ն ոչ ունին։ Եւ ասէ
ցնա Յիսուս, Զի՞ կայ իմ եւ քո, կին
5 դու, չեւ է հասեալ ժամանակ իմ։ Ասէ
մայրն նորա ցսպասաւորսն, Որ զինչ
6 ասիցէ ձեզ՝ արասջի՛ք։ Անդ էին վե-
կսիկք կճեայք վեց ըստ սրբութեանն
Հրէից, տանկին մի մի ի նոցանէ մարս
7 երիսուս կամ երես։ Ասէ ցնոսա Ի-
սուս, Լեցէք զվակսիկսդ ջրով. եւ լցին
8 զնոսա մինչեւ ի վեր։ Եւ ասէ ցնոսա,
Արդ առէք եւ բերէք տաճարապետիդ.
9 եւ նոքա բերին։ Եւ իրրեւ ճաշակեաց
տաճարապետն զգինւն զինի եղեալ, եւ
ոչ գիտէր ուստի իցէ. բայց սպասա-
ւորքն գիտէին որք արկին զգինւն.
10 խօսի ընդ փեսային տաճարապետն, Եւ
ասէ, Ամենայն մարդ զանոյշ գինին
յառաջագոյն պարգեւէ. եւ յորժամ ար-
բենան, յայնժամ զլաւսն. դու պահե-
11 ցեր զանոյշ գինիդ մինչեւ ցայժմ։ Զայս
արար սկիզբն նշանաց Յիսուս ի Կանա
Գալիլեացւոց, եւ յայտնեաց զփառս
իւր, եւ հաւատացին ի նա աշակերտքն
նորա։
12 ԲԷ. Յետ այսորիկ էջ ի Կափառնա-
ւում, ինքն եւ մայր իւր եւ եղբարք
իւր[2]. եւ անդ լինէր ոչ բազում ինչ
աւուրս։
13 Եւ էր մերձ զատիկն Հրէից, եւ էլ
14 Յիսուս յԵրուսաղէմ. Եւ եգիտ ի տա-
ճարին զվաճառեսին զարջառս եւ զոչ-
խարս եւ զաղաւնիս, եւ զլումայս-
15 փոխան որ նստէին։ Եւ արար խարա-

[1] ի բազմս պակասէ

[2] Բազմաց յօրինակս, և աշակերտք իւր

զան չուանեայ, եւ եհան զամենեսին ի տաճարէն՝ զոչխարսն եւ զարջառս, եւ զպղինձս հատուածոցն ցրուեաց,
16 եւ զսեղանսն կործանեաց։ Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա, Առէք զայդ ասդ, եւ մի՛ առնէք զտուն Հօր
17 իմոյ տուն վաճառի։ Ապա յիշեցին աշակերտքն նորա թէ գրեալ է, Նախանձ տան քո կերիցէ զիս։
18 Պատասխանի՛ հատուն Հրեայքն եւ ասեն ցնա, Ի՞նչ նշան ցուցանես մեզ
19 մեզ զի զայդ առնես։ Պատասխանի՛ նա Յիսուս եւ ասէ ցնոսա, Քակեցէք զտաճարդ զայդ, եւ զերիս աւուրս
20 կանգնեցից զդա։ Ասեն ցնա Հրեայքն, Քառասուն եւ վեց ամ չինեցաւ տաճարս այս, եւ դու զերիս աւուրս
21 կանգնե՞ս զսա։ Բայց նա ասէր վասն
22 տաճարի մարմնոյ իւրոյ։ Իսկ յորժամ յարեաւն ի մեռելոց, յիշեցին աշակերտքն նորա, թէ այս է զոր ասացն, եւ հաւատացին գրոյն եւ բանին զոր ասաց Յիսուս։
23 ԳԿ. Եւ իբրեւ էր յԵրուսաղէմ ի զատկին ի տօնի, բազումք հաւատացին յանուն նորա, զի տեսանէին զնշանսն
24 զոր առնէր։ Բայց ինքն Յիսուս ոչ հաւատայր զանձն նոցա, քանզի ինքն
25 գիտէր զամենայն։ Եւ զի ոչ էր պիտոյ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյ, զի ինքն իսկ գիտէր զինչ կրէր ի մարդն։

ԳԼ. Գ

1 Եւ էր այր մի ի փարիսեցւոց անտի Նիկոդեմոս անուն նորա, իշխան Հրէից։
2 Սա եկն առ նա գիշերի եւ ասէ ցնա, Ռաբբի, գիտեմք եթէ յԱստուծոյ եկեալ ես վարդապետ։ զի ոչ ոք կարէ զայդ նշանս առնել զոր դուդ առնես, եթէ
3 ոչ Աստուած իցէ ընդ նմա։ Պատասխանի՛ նա Յիսուս եւ ասէ ցնա, Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ։ Ասէ ցնա Նիկոդեմոս, Զիա՞րդ կարէ մարդ ծնանել որ ծեր իցէ։ միթէ մա՞թ ինչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին
5 մտանել եւ ծնանել։ Պատասխանի՛ նա Յիսուս եւ ասէ, Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայու-
6 թիւն Աստուծոյ։ Զի ծնեալն ի մարմնոյ մարմին է, եւ ծնեալն ի Հոգւոյ հոգի
7 է։ Դու մի՛ զարմանար թէ ասացի քեզ, Պարտ է ձեզ ծնանել վերստին։
8 Զի հողմ ուր կամի չնչէ, եւ զձայն նորա լսես, այլ ոչ գիտես ուստի գայ կամ յո երթայ. այսպէս եւ ամենայն
9 ծնեալն ի Հոգւոյն։ Պատասխանի՛ նա Նիկոդեմոս եւ ասէ ցնա, Զիա՞րդ մարթի այդպէս լինել։ Պատասխանի՛ նա Յիսուս եւ ասէ ցնա, Դու ես վարդապետ Իսրայելի եւ զայդ ո՞չ գիտես։
11 Ամէն ամէն ասեմ քեզ, զի զոր ինչ գիտեմք՝ խօսիմք, եւ զոր տեսաք՝ վկայեմք, եւ զվկայութիւն մեր ոչ ընդունիք։
12 Նիք։ Իսկ արդ՝ եթէ զերկրաւորս ասացի ձեզ եւ ոչ հաւատայք, զիա՞րդ եթէ զերկնաւորսն ասացից, հաւատայցէք։
13 ԳԲ. Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից՝ Որդին մարդոյ, որ էն
14 յերկինս։ Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձ-
15 րանալ պարտ է Որդւոյ մարդոյ։ Զի ամենայն որ հաւատայ [1]ի նա՝ ընկալցի
16 զկեանսն յաւիտենականս։ Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՈրդին իւր միածին եւս. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ
17 ընկալցի զկեանսն յաւիտենականս։ Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհ թէ դատեսցի զաշխարհ, այլ
18 զի փրկեսցի աշխարհ նովաւ։ Որ հաւատայ ի նա՝ ոչ դատապարտեսցի. եւ որ ոչ հաւատայ ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է, զի ոչ հաւատաց յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ։
19 Եւ այս իսկ է դատաստան, զի լոյս եկն յաշխարհ, եւ սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս, զի էին գործք իւրեանց չարութեան։
20 Զի ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս, եւ ոչ գայ առ լոյսն, զի մի՛ յանդիմանեսցին գործք
21 նորա։ Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա թէ Աստուածով գործեցան։
22 Գգ. Յետ այսորիկ եկն Յիսուս եւ աշակերտք նորա յերկիրն Հրէաստանի, եւ անդ չրջէր նոքօք հանդերձ եւ
23 մկրտէր։ Մկրտէր եւ Յովհաննէս ի Յայենովն մերձ առ Սաղիմ, զի ջուրք

---

[1] Ոմանք, ի նա՝ մի՛ կորիցէ, այլ

բազումք էին անդ . եւ գայլն եւ
24 մկրատէին . Զի չեւ եւս էր արկեալ
զՅովհաննէս ի բանտ :
25 Եւ եղեւ խնդիր յաշակերտացն Յով-
հաննու ընդ [1]Հրէի վասն սրբութեան :
26 Եկին առ Յովհաննէս եւ ասեն ցնա ,
Ռաբբի , որ էրն ընդ քեզ յայնկոյս Յոր-
դանանու , որում դուն վկայեցեր , ա-
հաւասիկ նա մկրատէ , եւ ամենեքին
27 գան առ նա : Պատասխանի եւ Յով-
հաննէս եւ ասէ , Ոչ կարէ մարդ առ-
նուլ յանձնէ եւ ոչ ինչ , եթէ ոչ իցէ
28 տուեալ յերկնից [2]ի վերուստ : Դուք
ձեզէն վկայէք ինձ , զի ասացի ձեզ թէ
Զեմ ես Քրիստոսն , այլ թէ առաքեալ
29 եմ առաջի նորա : Որ ունի զհարսն՝ նա
է փեսայ . իսկ բարեկամ փեսային որ
կայ եւ լսէ նմա՝ ուրախութեամբ ու-
րախ լինի վասն ձայնի փեսային . արդ
այս ուրախութիւն որ իմ է՝ լցեալ է :
30 Նմա պարտ է աճել եւ ինձ պզտնալ :
31 Որ ի վերուստն գայ՝ ի վերոյ է քան
զամենայն . որ յերկրէ աստի է՝ յերկրէ
32 է եւ յերկրէ խօսի : Որ յերկնից [3]գայ՝
զոր՝ ինչ եսես եւ զոր լուաւ՝ վկայէ ,
եւ զվկայութիւն նորա ոչ ոք ընդու-
33 նի : Որ ընդունի զվկայութիւն նորա՝
34 կնքեաց թէ Ստուած ճշմարիտ է : Զի
զոր Ստուածն առաքեաց՝ զբանս Ա-
ստուծոյ խօսի . զի ոչ եթէ չափով տայ
35 Աստուած զՀոգին : Հայր սիրէ զՈրդի ,
եւ զամենայն ինչ եւս ի ձեռս նորա :
36 Որ հաւատայ յՈրդի՝ ընդունի զկեանն
յաւիտենականս . եւ որ ոչ հնազանդի
Որդւոյ՝ ոչ տեսցէ զկեանս , այլ բար-
կութիւն Աստուծոյ մնայ ի վերայ
նորա :

Գլ. Դ

1 ԳԴ. Իբրեւ գիտաց [4]Յիսուս եթէ լուան
փարիսեցիքն եթէ Յիսուս բազում ա-
շակերտս առնէ եւ մկրատէ քան զՅով-
2 հաննէս , (5Բայցի ոչ եթէ Յիսուս
ինքնին մկրատէր , այլ աշակերտքն նո-
3 րա ,) եթող զՀրէաստան երկիր , եւ
4 եկն միւսանգամ ի Գալիլեա : Եւ էր
5 նմա անցանել ընդ Սամարիա : Գայ նա
ի քաղաք մի Սամարացւոց որում ա-
նունն էր Սիքար , մերձ ի գեղն զոր ետ
Յակովբ որդւոյ իւրում Յովսեփայ :
6 Եւ անդ էր աղբեւր մի Յակովբայ . եւ
Յիսուս վաստակեալ ի ճանապարհէն՝
նստէր ի վերայ աղբերն , եւ էր ժամ
իրրեւ վեցերորդ :
7 Գայ կին մի ի Սամարիայ հանել ջուր .
ասէ ցնա Յիսուս , Տուր ինձ ըմպել :
8 Զի աշակերտքն նորա երթեալ էին ի
քաղաք անդր զի կերակուր գնեսցեն :
9 Ասէ ցնա կինն Սամարացի , Դու որ
Հրեայդ ես , զիա՞րդ յինէն ըմպել խընդ-
րես ի կնոջէ Սամարացւոյ . զի ոչ եր-
կուք խառնակին Հրեայք ընդ Սամա-
10 րացիս : Պատասխանի եւ նմա Յիսուս
եւ ասէ , Եթէ գիտէիր դու [6]զպարգեւն
Աստուծոյ , եւ ո՛վ է որ ասէդ քեզ թէ
Տուր ինձ ըմպել , դու արդեաք խընդ-
րէիր ի նմանէ , եւ տայր քեզ ջուր
11 կենդանի : Ասէ ցնա կինն , Տէր , դու
քանզի եւ դոյլ իսկ ոչ ունիս , եւ ջուր-
հորս խոր է , իսկ արդ ուստի՞ ունիցիս
12 զջուրն կենդանի : Միթէ դու մեծ ինչ
ոք իցես քան զՅայրն մեր Յակովբ որ
զայս ջրհոր ետ մեզ . եւ ինքն աստի
արբ եւ որդիք նորա եւ խաշինք նո-
13 րա : Պատասխանի եւ նմա Յիսուս եւ
ասէ , Ամենայն որ ըմպէ ի ջրոյ յայդ-
մանէ՝ միւսանգամ ծարաւէ , բայց որ
ըմպէ ի ջրոյն զոր ես տայ նմա՝ մի՛
14 ծարաւեսցի յաւիտեան : Այլ ջուրն զոր
ես տայ նմա՝ եղիցի նմա աղբեւր ջրոյ
15 բղխելոյ ի կեանսն յաւիտենականս : Ասէ
ցնա կինն , Տէր , տուր ինձ զջուրն
զայն , զի մի՛ ծարաւեցից , եւ մի՛ եկից
16 այսր հանել ջուր : Ասէ ցնա Յիսուս ,
17 Երթ կոչեա զայր քո եւ եկ այսր : Պա-
տասխանի եւ նմա կինն եւ ասէ , Զիք
իմ այր . ասէ ցնա Յիսուս , Բարւոք
18 ասացեր թէ Զիք իմ այր . Զի հինգ
այր փոխեալ է քո , եւ զոր այժմ ու-
նիս՝ չէ քո այր . զայդ արդար ասացեր :
19 Ասէ ցնա կինն , Տէր , ի՛ւր ինձ թէ
20 մարգարէ իցես դու : Հարքն մեր ի լե-
րինս յայսմիկ երկիր պագին , եւ դուք
ասէք թէ Ցերուսաղէմ եւեթ է տեղի ,
21 ուր արժան իցէ երկիր պագանել : Ասէ
ցնա Յիսուս , Կին դու , հաւատա ինձ ,
զի եկեսցէ ժամանակ , յորժամ ոչ ի լե-

[1] Ոմն , Հրէից
[2] Ի բաց ի պատ
[3] Բայց , գայ՝ ի վերոյ է քան զամենայն , և զոր
[4] Բայց , Տէր
[5] Ցայն , թէպէտ և
[6] Ցայն , զպարգեւն

բինս յայսմիկ եւ ոչ յերուսաղէմ երթ-
22 կիր պագանիցեն Հօր։ Դուք երկիր պագանէք որում ոչն գիտէք, մեք երկիր պագանեմք որում գիտեմք. զի
23 փրկութիւն ի Հրէից է։ Այլ ակնեսցէ ժամանակ եւ այժմ իսկ է, յորժամ ճշմարիտքն երկրպագուք երկիր պագանիցեն Հօր հոգւով եւ ճշմարտութեամբ, քանզի եւ Հայր այնպիսի երկրպագուս իւր խնդրէ։
24 Գե. Հոգի է Աստուած, եւ երկրպագուացն նորա հոգւով եւ ճշմարտու-
25 թեամբ պարտ է երկիր պագանել։ Ասէ ցնա կինն, Գիտեմ զի Մեսիա գայ (որ ասի Քրիստոս), յորժամ եկեսցէ նա, պատմեսցէ մեզ զամենայն։
26 Ասէ ցնա Յիսուս, Ես եմ որ խօսիմս
27 ընդ քեզ։ Եւ յայն բան եկին աշակերտքն նորա, եւ զարմանային զի ընդ կնոջն խօսէր. բայց ոչ ոք ասաց ի նոցանէ թէ Զի՞նչ խնդրես, կամ
28 Զի՞նչ խօսիս ընդ դմա։ Եթող կինն զսափորն իւր եւ չոգաւ ի քաղաքն,
29 եւ ասէ ցմարդիկն, Եկայք տեսէք զայր մի որ ասաց ինձ զամենայն որ ինչ իմ գործեալ է. միթէ նա՞ իցէ
30 Քրիստոս։ Ելին ի քաղաքէն եւ գային առ նա։
31 Եւ մինչեւ եկեալ էին նոքա, աղաչէին զնա աշակերտքն եւ ասէին, Ռաբբի, նաց կեր։
32 Նա ասէ ցնոսա, Ես կերակուր ունիմ ուտել, զոր դուքն ոչ
33 գիտէք։ Ասէին աշակերտքն ընդ միմեանս, Միթէ երբ՞ ինչ ոք գնա ուտել
34 Ասէ ցնոսա Յիսուս, Իմ կերակուր այն է՝ զի արարից զկամս այնորիկ որ առաքեացն զիս, եւ կատարեցից զգործն
35 նորա։ Ո՞չ դուք ասէք եթէ Այլ եւս չորք ամիսք են, եւ հունձք գան. ահաւասիկ ես ասեմ ձեզ, Ամբարձէք զաչս ձեր եւ տեսէք զարտորայսն, զի սպիտակացեալ են եւ ի հունձս հասեալ։
36 Եւ որ հնձէն՝ վարձս առնու, եւ ժողովէ զպտուղ ի կեանսն յաւիտենական. զի որ սերմանէն եւ որ հնձէ՝
37 հասարակ ցնծասցեն։ Բայց իսկ է բանն ճշմարիտ, զի Այլ է որ սերմանէ
38 եւ այլ է որ հնձէ։ Ես առաքեցի զձեզ հնձել զոր ոչ դուք վաստակեցէք. այլք վաստակեցին եւ դուք ի վաստակս նոցա մտէք։
39 Եւ ի քաղաքէն յայնմանէ Սամարացւոց բազումք հաւատացին ի նա վասն բանի կնոջն վկայելոյ, եթէ Ասաց ինձ զամենայն որ ինչ իմ գործեալ կր։
40 Իսկ իբրեւ եկին առ նա Սամարացիքն, աղաչէին զնա տալ ընդ նոսա. եւ
41 եղեւ անդ աւուրս երկուս։ Եւ եւս բազումք հաւատացին ի նա վասն բա-
42 նին նորա։ Եւ ասէին կինն թէ Ոչ այսուհետեւ վասն քո խօսիմք հաւատամք, զի մեզն իսկ լսեալ եւ գիտեմք, եւ գիտեմք եթէ սա է ճշմարիտ Փրկիչ [1]աշխարհի։
43 Գձ. Եւ յետ երկուց աւուրց ել անտի եւ գնաց ի Գալիլեա։ Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց եթէ Մարգարէ չիւ-
45 րում պատիւ ոչ ունի։ Այլ յորժամ եկն նա ի Գալիլեա, ընկալան զնա Գալիլեացիքն. զի տեսեալ եւս էր զամենայն նշանսն զոր արար յերուսաղէմ ի տօնին. քանզի եւ նոքա եկեալ էին ի տօնն։
46 Եկն [2]գարձեալ ի Կանա Գալիլեացւոց ուր արար զջուրն գինի. եւ անդ էր թագաւորացն մի, որոյ որդի նորա
47 հիւանդ կայր ի Կափառնայում։ Նա լսեալ եթէ Յիսուս եկեալ է ի Հրէաստանէ ի Գալիլեա, եկն առ նա եւ աղաչէր զի իջցէ եւ բժշկեսցէ զորդի նորա, քանզի մեռանել էր ի մահանալ։
48 Ասէ ցնա Յիսուս, եթէ ոչ նշանս ինչ եւ արուեստս տեսանէք, ոչ հաւատայք։
49 Ասէ ցնա թագաւորացն, Տէր, էջ, մինչեւ մեռանիլ իցէ մանուկն իմ։
50 Ասէ ցնա Յիսուս, Երթ, որդին քո կենդանի է. եւ հաւատաց այն բանին
51 զոր ասաց նմա Յիսուս, եւ գնաց։ Եւ մինչդեռ իջանէր, ընդ առաջ եկեն նմա ծառայքն նորա, աւետիս ետուն եւ ասեն թէ մանուկն նորա կենդանի է։
52 Հարցանէր ցնոսա զսմանէ ժամուն յորում ապաքինեցաւ. եւ ասեն ցնա, Երէկ յեօթներորդ ժամու եթող զնա
53 ջերմն։ Գիտաց հայրն նորա եթէ յայնմ ժամու յորում ասացն ցնա Յիսուս թէ Որդին քո կենդանի է. եւ հաւատաց
54 ինքն եւ ամենայն տունն իւր։ Զայս գործեալ երկրորդ նշան արար Յիսուս՝ եկեալ ի Հրէաստանէ ի Գալիլեա։

---

[1] Յոյն. աշխարհի, ամէն. աշխարհի՝ Քրիստոս
[2] Ոմանք. գարձեալ Յիսուս

ԳԼ. Ե

1 ԳԵ. Յետ այսորիկ ոմն էր Հրէից, եւ
2 ել Յիսուս յԵրուսաղէմ։ Եւ [1]էր յԵ-
րուսաղէմ ի Պրոբատիկէ [2]աւազանին,
որ կոչէր Եբրայեցերէն Բեթհեզդա,
3 [3]հինգ սրահս։ Յորս անկեալ գնէր բազ-
մութիւն ցոյժ հիւանդաց՝ կուրաց, կա-
ղաց, գօսացելոց, [4]որ ակն ունէին
4 ջրոցն յուզելոյ։ Եւ հրեշտակ Տեառն
ըստ ժամանակի իջանէր յաւազանն եւ
յուզէր զջուրսն եւ որ նախ ի չար-
ժուելն ջուրցն իջանէր, բժշկէր՝ ո՛ւս-
5 նեալով նչան հիւանդութեանն։ Եւ անդ
էր այր մի, որոյ երեսուն եւ ութ ամ
6 էր ի հիւանդութեան իւրում։ Զնա
իբրեւ եահս Յիսուս ի անկեալ գնէր,
եւ գիտաց թէ բազում ժամանակք ևն
այնուհետեւ, ասէ ցնա, Կամի՞ս ողջ
7 լինել։ Պատասխանի ետ նմա հիւանդն,
Տէր, ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն
յուզիցին, արկցէ զիս յաւազանն. եւ
[5]մինչ ես դանդաղիմ՝, այլ ոք քան զիս
8 յառաջագոյն իջանէ։ Ասէ ցնա Յիսուս,
9 Ա՛ռ զմահիճս քո եւ գնա։ Եւ [6]ող-
ջացաւ այրն, եւ [7]յարեաւ առ զմահիճս
իւր եւ չրջէր. եւ էր շաբաթ յաւուրն
10 յայնմիկ։ Ասեն Հրեայքն ցբժշկեալն,
Շաբաթ է եւ ոչ է արժան առնուլ քեզ
11 զմահիճս քո։ Պատասխանի ետ նոցա
եւ ասէ, Որ բժշկեացն զիս, նա ասաց
12 ցիս, Ա՛ռ զմահիճս քո եւ գնա։ Հարցին
ցնա եւ ասեն, Ո՞վ է այրն որ ասաց
13 ցքեզ, Ա՛ռ զմահիճս քո եւ չրջեաց։ Եւ
բժշկեալն ոչ գիտէր թէ ով իցէ. քանզի
Յիսուս խոյս ետ վասն ամբոխին ի
14 տեղւոջէ անտի։ Ցետ այսորիկ գտանէ
զնա Յիսուս ի տաճարին, եւ ասէ ցնա,
Ահաւադիկ ողջացար, մի՛ եւս մեղանչեր, զի մի՛ չար եւս ինչ լինիցի քեզ։
15 Գնաց այրն եւ պատմեաց Հրէիցն, եթէ
Յիսուս էր որ բժշկեացն զիս։
16 Եւ վասն այսորիկ հալածէին զՅի-
սուս Հրեայքն[8], զի զայն առնէր ի շա-
17 բաթու։ Եւ Յիսուս պատասխանի ետ
նոցա, Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ
18 եւ ես գործեմ։ Վասն այսորիկ առա-
ւել խնդրէին Հրեայքն սպանանել զնա,
զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլ
եւ Հայր իւր կոչէր զԱստուած, եւ
հաւասար առնէր զանձն Աստուծոյ։
19 ԳԿ. Պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ ցնոսա, Ամէն ամէն ասեմ ձեզ,
Ոչ կարէ Որդի զմարդով առնել յանձնէ
եւ ոչ ինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն
զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն
20 եւ Որդին նմին նման գործէ։ Զի Հայր
սիրէ զՈրդի, եւ զամենայն ինչ ցու-
ցանէ նմա զոր ինքն առնէ. եւ մեծա-
մեծս եւս քան զսոյնս ցուցանէ նմա
զգործս, զնդ որ գուք զարմանայք։
21 Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս
եւ կենդանի առնէ, նոյնպէս եւ Որդի
22 զորս կամի՝ կենդանի առնէ։ [9]Եւ ոչ
եթէ Հայր դատի զոք, այլ զամենայն
23 դատաստան ետ Որդւոյ [10]իւրոյ. Զի
ամենեքեան պատուեսցեն զՈրդի, որ-
պէս պատուեն զՀայրն. որ ոչ պատուէ
զՈրդին, ոչ պատուէ զՀայր, զառա-
24 քիչն նորա։ Ամէն ամէն ասեմ ձեզ,
զի Որ զբանն իմ լսէ եւ հաւատայ այնմ
որ առաքեացն զիս՝ ընդունի զկեանսն
յաւիտենականս. եւ ի դատաստան ոչ
մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի
25 կեանս։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի Գայ
ժամանակ եւ արդէն իսկ է, յորժամ
մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն Աս-
26 տուծոյ. եւ որք լսիցեն՝ կեցցեն։ Զի
որպէս Հայր ունի կեանս յանձին իւ-
րում, նոյնպէս եւ եւ Որդւոյ ունել
27 կեանս յանձին իւրում. Եւ իշխանու-
թիւն եւ նմա դատաստան առնել, եւ
28 զի Որդի մարդոյ է։ Ընդ այն [11]զի՞ զար-
մանայք, զի եկեսցէ ժամանակ յորում
ամենեքեան որ ի գերեզմանս կայցեն՝
29 լսիցեն ձայնի նորա, եւ եկեսցեն ար-
տաքս. որոց զբարիս գործեալ իցէ՝ ի
յարութիւն կենաց. եւ որոց զչար ա-
րարեալ՝ ի յարութիւն դատաստանաց։
30 Ոչ կարեմ ես յանձնէ առնել եւ ոչ ինչ։

---

[1] Ց-ԽՆ, է
[2] Ց-ԽՆ, աւազան
[3] Ց-ԽՆ, որ ունի հինգ
[4] ի Բ-ՁԱ՝ է Ց-ՈՒՐԷՆ ՕՐԻՆՈՑ, ՈՐՊԷՍ Է Բ-ՁԱՆ Է ՀՆԵՐԷՆ ՅԵՒԱՓՐԱՑ, ՊԱՅԱՆ ԱՅՆ ՀԱՒԱՏԱՑ
[5] Ց-ԽՆ, մինչեւ ես գամ
[6] Բ-ՁԱՆ, առժամայն ողջացաւ
[7] ի Բ-ՁԱՆ պակաս

[8] ՈՐՈՇ ՅԱՅԼՍԱՆ, և ԽՆԴՐԷԻՆ ՍՊԱՆԱՆԵԼ ՁՆԱ
[9] Ց-ԽՆ, Զի
[10] ի Ց-ՈՒՐԻՆ պակաս
[11] Ց-ԽՆ, մի՛

այլ որպէս լսեմ, դատիմ, եւ դատաստանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ որ առաքեացն զիս:
31 Դ. Եթէ ես վկայեմ վասն իմ, վկա-
32 յութիւն իմ չէ ճշմարիտ: Այլ է որ վկայէ վասն իմ. եւ [1]գիտեմ՝ եթէ ճշմարիտ է վկայութիւնն զոր վկայեաց
33 վասն իմ: Դուք առաքեցէք առ Յով-հաննէս եւ վկայեաց ճշմարտութեանն:
34 Այլ ես ոչ եթէ ի մարդկանէ առնում վկայութիւն, այլ զայս ասեմ զի դուք
35 ապրեսջիք: Նա էր ճրագն որ լուցեալ էր եւ ծագէր, եւ դուք կամեցարուք ցնծալ առ ժամանակ մի ի լոյս նորա:
36 Այլ ես ունիմ վկայութիւն մեծ եւս քան զՅովհաննու. զգործսն զորս ետ ինձ Հայր զի կատարեցից զնոսա, նոքին իսկ գործքն զոր գործեմ՝ վկայեն վասն իմ, եթէ Հայր առաքեալ զիս է:
37 Եւ որ առաքեացն զիս Հայր՝ նա վկայեաց վասն իմ. դուք ոչ ձայն նորա երբեք լսեարուք, եւ ոչ տեսիլ նորա
38 տեսէք. Եւ ոչ զբան նորա ունիք ի ձեզ բնակեալ, զի զոր նա առաքեաց՝ դուք
39 նմա ոչ հաւատայք: Քննեցէք զգիրս, զի դուք համարիք նոքօք ունել զկեանսն յաւիտենականս. եւ նոքին իսկ են որ վկայեն վասն իմ, [2]որովք համարիքն
40 ունել կեանս.” Եւ դուք ոչ կամիք գալ
41 առ իս զի կեանսն ունիցիք: Ես փառս
42 ի մարդկանէ ոչ առնում: Այլ գիտեմ զձեզ թէ զսէրն Աստուծոյ ոչ ունիք
43 յանձինս: Ես եկի յանուն Հօր իմոյ, եւ ոչ ընդունիք զիս. եթէ այլ ոք եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցիք:
44 Զի՞նչ կարէք դուք հաւատալ, զի փառս ի միմեանց առնուք, եւ զփառս զոր ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք:
45 Մի՛ համարիք եթէ ես չարախօս ինչ իցեմ զձեզնջ առ Հօր. գոյ որ չարախօս կայ զձեզնջ, Մովսէս, յոր դուքն յու-
46 սացեալ էք: Զի եթէ հաւատայիք դուք Մովսիսի, հաւատայիք արդեւք եւ
47 ինձ, զի նա վասն իմ իսկ գրեաց: Զի եթէ նորա գրոցն ոչ հաւատայք, զի՞նչ իմոց բանիցս հաւատայցէք:

ԳԼ. Զ

1 ԴԳ. Յետ այսորիկ գնաց Յիսուս յայնկոյս ծովուն Գալիլեացւոց Տիբերեայ.
2 Եւ զնոտ երթայր նորա ժողովուրդ բազում, զի տեսանէին զնշանսն զոր
3 առնէր ի վերայ հիւանդացն: Ել ի լեառն Յիսուս, եւ անդ նստէր աշակերտօքն
4 հանգերձ: Եւ էր մերձ զատիկ տօնն Հրէից:
5 Բարձ ի վեր զաչս իւր Յիսուս եւ տեսս, զի ժողովուրդ բազում գայր առ նա, ասէ ցՓիլիպպոս, Ուստի՞ գնեսցուք հաց զի կերիցեն դոքա: (Զայս ասէր փորձելով զնա, այլ ինքն գիտէր
7 զինչ առնելոցն էր:) Պատասխանի ետ նմա Փիլիպպոս, Երկերիւր դահեկանի հաց չէ զոցա բաւական, թէպէտ եւ իւրաքանչիւր ոք սակաւ ինչ առնուցու
8 ցու: Ասէ ցնա մի յաշակերտացն նորա, Անդրէաս, եղբայր Սիմովնի Վիմի,
9 Ի տաս պատանեակ մի, որ ունի հինգ նկանակ գարեզէն եւ երկուս ձկունս, այլ այն զի՞նչ է առ այդչափ մարդիկդ:
10 Ասէ Յիսուս, Բազմեցուցէք զմարդիկդ. եւ էր խոտ յոյժ ի տեղւոջն. եւ բազմեցան մարդիկն թուով իբրեւ հինգ
11 հազար: Եւ առ զհացն Յիսուս, եւ գոհացաւ եւ բաշխեաց [3]բազմականացն. նոյնպէս եւ ի ձկանցն որչափ եւ կա-
12 մեցան: Եւ իբրեւ յագեցան, ասէ ցաշակերտան, Ժողովեցէք զնշխարեալ կո-
13 տորսդ, զի մի՛ ինչ կորիցէ: Ժողովեցին եւ լցին երկոտասան սակաւ զկոտորսացն ի հինգ գարեզէն նկանակէ անտի,
14 որ յաւելաւ ի կերուողացն: Իսկ մարդիկն իբրեւ տեսին զնշանսն զոր արար՝ ասէին եթէ Սա է ճշմարիտ մարգարէն,
15 որ գալոց էր յաշխարհ: Դ. Յիսուս իբրեւ գիտաց եթէ գալոց են յափշտակել զնա զի արասցեն զնա թագաւոր, զնաց դարձեալ
16 ի լեառն միայն: Եւ իբրեւ երեկոյ եղեւ, իջին աշակերտքն նորա ի ծով-
17 եզրն. Եւ մտեալ ի նաւ՝ գային յայնկոյս ծովուն ի Կափառնայում. եւ իբրեւ նսեմացաւ, եւ չէր եւս եկեալ էր
18 առ նոսա Յիսուս, Եւ ծովն ի սաստիկ

[1]Բազմ. գիտեմ
[2]Ի բազմ. գոլոք

[3]Որ՝ աշակերտացն, և աշակերտքն՝ բազմականացն

19 հոգմոյ չնչելոյ յուզէր ։ Եւ վարեալ
իբրեւ աստարէզս քսան եւ հինգ կամ
երեսուն, տեսանէին զՅիսուս զի գնայր
ի վերայ ծովուն եւ մերձ էր ի նաւն,
20 զարհուրեցան ։ Նա ասէ ցնոսա, Ես եմ,
21 մի՛ երկնչիք ։ Եւ կամէին ընդունել
զնա ի նաւն. եւ վաղվաղակի հնաս
նաւն յերկիրն յոր երթային ։
22 Դե։ Ի վաղիւ անդր ժողովուրդն որ
կայր յայնկոյս ծովուն, տեսանէր թէ
այլ նաւ ոչ դայր անդ բայց միայն ի
միոյն, յոր մտին աշակերտքն Յիսուսի.
եւ զի չէր մտեալ Յիսուս ընդ աշա-
կերտան իւր ի նաւն, բայց միայն ա-
23 շակերտքն նորա գնացին ։ (1Իբրեւ այլ
նաւք գային՝ ի Տիբերեայ մօտ յայն տե-
24 ղին՝ ուր գնացն 2կերան։) Իսկ իբրեւ
տեսեն ժողովուրդն եթէ Յիսուս ոչ է
անդ եւ ոչ աշակերտքն նորա, առին
նոքա գնալ, եւ եկին ի Կափառնաո-
25 յում խնդրել զՅիսուս ։ Եւ իբրեւ գտին
զնա յայնկոյս ծովուն, ասեն ցնա,
26 Ռաբբի, ե՞րբ եկիր այսր ։ Պատասխա-
նի եւ նոցա Յիսուս եւ ասէ, Ամէն
ամէն ասեմ ձեզ, Խնդրէք զիս, իբր
ոչ եթէ զի նշանս տեսէք, այլ զի
կերայք ի հացէ անտի եւ յագեցարուք ։
27 3Երթայք գործեցէք մի՛ զկորստական
կերակուրն, այլ զկերակուրն որ մնայ
ի կեանսն յաւիտենականս, զոր Որդին
մարդոյ տացէ ձեզ. քանզի զնա Հայր
28 կնքեաց, Աստուած ։ Ասեն ցնա, Զի՞նչ
առնիցեմք զի գործեսցուք գործ
29 Աստուծոյ գոր-
ծեսցուք ։ Պատասխանի եւ Յիսուս եւ
ասէ ցնոսա, Այս է գործն Աստուծոյ,
զի հաւատասջիք յայն զոր առաքեացն
30 նա ։ Ասեն ցնա, Զի՞նչ նշան առնիցես
զի տեսցուք եւ հաւատասցուք. զի՞նչ
31 գործիցես ։ Հարքն մեր կերան զմանա-
նայն յանապատի անդ, որպէս եւ գրեալ
32 է, Հաց յերկնից ետ նոցա ուտել ։ Ասէ
ցնոսա Յիսուս, Ամէն ամէն ասեմ ձեզ
թէ Ոչ Մովսէս ետ ձեզ զհացն յերկնից,
այլ Հայրն իմ տայ ձեզ զհացն յերկնից
33 զճշմարիտ ։ Զի հաց Աստուծոյ է, որ
իջանէն յերկնից եւ կեանս տայ աշ-
34 խարհի ։ Ասեն ցնա, Տէր, յամենայն
35 ժամ տուր մեզ զհացն զայն ։ Ասէ ցնո-
սա Յիսուս, Ես եմ հացն կենաց. որ
գայ առ իս՝ ոչ քաղցիցէ, եւ որ հաւա-
36 տայ յիս՝ ոչ երբեք ծարաւեսցի ։ Այլ
ասացի ձեզ եթէ տեսէք զիս եւ ոչ հա-
37 ւատայք ։ Զամենայն զոր տայ ինձ
Հայր՝ առ իս եկեսցէ. եւ որ գայ առ իս՝
38 ոչ հանից արտաքս ։ Զի իջի ես յերկ-
նից, ոչ զի զկամս իմ արարից, այլ
զկամս այնորիկ որ առաքեացն զիս ։
39 Դջ։ Այս են կամք Հօր իմոյ որ ա-
ռաքեացն զիս, զի զամենայն զոր ետ
ցիս Հայր՝ ոչ կորուսից ի նմանէ, այլ
40 յարուցից զնա յաւուրն յետնում ։ Այս
են կամք Հօր իմոյ, զի ամենայն որ
տեսանիցէ զՈրդի եւ հաւատայցէ ինա,
ընկալցի զկեանսն յաւիտենականս, եւ
ես յարուցից զնա յաւուրն յետնում ։
41 Տրտնջէին զնմանէ Հրեայքն, զի ա-
սաց թէ Ես եմ հացն իջեալ յերկնից,
42 եւ ասէին, Ո՞չ սա է Յիսուս որդին
Յովսեփու, զորոյ մեք զիտեմք զհայրն
եւ զմայր. իսկ արդ զիա՞րդ ասէ եթէ
43 Ես յերկնից իջի ։ Պատասխանի ետ Յի-
սուս եւ ասէ ցնոսա, Մի՛ քրթմնջէք
44 ընդ միմեանս ։ Ոչ ոք կարէ գալ առ
իս, եթէ ոչ Հայրն որ զիս առաքեաց՝
ձգեսցէ զնա. եւ ես յարուցից զնա յա-
45 ւուրն յետնում ։ Գրեալ է ի մարգա-
րէս, Եւ եղիցին ամենեքեան ուսեալք
յԱստուծոյ. ամենայն որ լսէ ի Հօրէ
46 եւ ուսանի՝ գայ առ իս ։ Իբրեւ ոչ եթէ
զՀայր ուրուք տեսեալ իցէ, եթէ ոչ
որ էն յԱստուծոյ՝ նա տեսս զՀայր ։
47 Ամէն ամէն ասեմ ձեզ զի Որ 4հաւատայ՝
ընդունի զկեանսն յաւիտենականս ։
48 Ես եմ հացն կենաց ։ (49) Հարքն ձեր
կերան զմանանայն յանապատին եւ
50 մեռան ։ Այս է հացն որ յերկնից իջ-
եալ է, զի որ ուտիցէ ոք ի սմանէ՝ մի՛
51 մեռանիցի ։ Ես եմ հացն կենդանի, որ
յերկնից իջեալ ։ Եթէ ոք ուտիցէ ի
հացէ յայսմանէ, կեցցէ ի յաւիտեան.
եւ հացն զոր ես տացի՝ մարմին իմ է,
զոր ես տացի վասն կենաց աշխարհի ։
53 Մարտնչէին ընդ միմեանս Հրեայքն
եւ ասէին, Զիա՞րդ կարէ սա տալ մեզ
54 զմարմին իւր յուտել ։ Ասէ ցնոսա Յի-
սուս, Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ
կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ եւ
արիջիք զարիւն նորա, ոչ ունիք
55 կեանս յանձինս ։ Որ ուտէ զմարմին իմ

[1] Ոմանք, Բայց այլ նաւք եկին
[2] Բ–ղամ, կերան յորժամ գոհացաւ Տէր
[3] Ի Յոանէ գլխագ

[4] Ոմանք, հաւատայ յիս

եւ ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս, եւ ես յարուցից զնա
56 յաւուրն յետնում: Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է, եւ արիւն իմ
57 ճշմարիտ ըմպելի է: Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, յիս բնակեա-
58 ցէ, եւ ես ի նմա: Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, եւ ես կենդանի եմ վասն Հօր. եւ որ ուտէն զիս՝ եւ նա կեցցէ վասն իմ: Այս է հացն որ յերկնից իջեալ. ոչ որպէս կերան հարքն ձեր զմանանայն եւ մեռան. որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան:
60 Զայս ասաց ի ժողովրդեանն յուսուա-
61 ցանելն ի կափառնայում: Եւ բազումք յաշակերտացն իբրեւ լուան, ասեն, Խիստ է բանդ այդ, ո՞վ կարէ լսել զնա:
62 Իբրեւ գիտաց Յիսուս յանձն իւր եթէ տրտնջեն վասն այնորիկ ասելոյն նորա, ասէ ցնոսա, Այդ գայթակղե-
63 ցուցանէ՞ զձեզ: Իսկ արդ, եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ, զի ելանիցէ
64 ուր էր զառաջինն: Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ. զբանն զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է եւ
65 կեանք: Այլ են ոմանք ի ձէնջ որ ոչ հաւատան. քանզի գիտէր Յիսուս ի սկզբանէ ով են այնորիկ որ ոչն հաւատան, եւ ով այն է որ մատնելոցն
66 է զնա: Եւ ասէր, վասն այնորիկ ասացի ձեզ թէ ոչ ոք կարէ դալ առ ես, եթէ ոչ իցէ տուեալ նմա ի Հօրէ իմմէ:
67 Յայսմանէ բազումք յաշակերտացն նորա չոդան յետս, եւ ոչ եւս չերթային
68 ընդ նմա: Ասէ Յիսուս ցերկոտասան աշակերտսն, Միթէ եւ դո՞ւք կամիք
69 երթալ: Պատասխանի ետ նմա Սիմովն Պետրոս, Տէր, առ ո՞վ երթիցուք, բանս կենացս յաւիտենականաց ունիս:
70 Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք եթէ դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ՝:
71 Պատասխանի ետ նոցա Յիսուս, Ո՞չ ես զձեզ զերկոտասանսդ ընտրեցի,
72 եւ միդ ի ձէնջ սատանայ է: Եւ ասէր զՍիմովնեան [2]Յուդայէ Իսկարիովտացւոյ՝, զի նա իսկ մատնելոց էր զնա, եւ մի էր յերկոտասանիցն:

Գլ. է

1 Դէպ. Եւ յետ այսորիկ չէջէր Յիսուս ի Գալիլեա, քանզի ոչ կամէր ի Հրէաստանի չէջկել, զի խնդրէին զնա Հրեայքն սպանանել:
2 Եւ էր մերձ տօնն Հրէից տաղաւա-
3 րահարաց: Ասեն ցնա եղբարքն նորա, Դնա աստի եւ երթ ի Հրէաստան, զի եւ աշակերտքն քո տեսցեն զգործսդ
4 քո զոր գործես: Զի ոչ ոք է որ ի ծածուկ ինչ գործէ, եւ խնդրէ ինքն համարձակ լինել. եթէ զայդ գործես,
5 յայտնեա զանձն քո աշխարհի: Քանզի եւ եղբարքն իւր չէին հաւատացեալ
6 ի նա: Ասէ ցնոսա Յիսուս, Ժամանակ իմ չեւ է հասեալ, բայց ձեր ժամանակ
7 յամենայն ժամու պատրաստ է: Ոչ կարէ աշխարհ ատել զձեզ, բայց զիս ատէ, զի ես վկայեմ վասն նորա եթէ գործքն իւր չարութիւն են:
8 Դուք երթայք ի տօնն յայն, ես ոչ [3]երթամ ի տօնն յայն, զի իմ ժամանակ
9 չեւ է լցեալ: Զայս իբրեւ ասաց, ինքն
10 մնաց անդէն ի Գալիլեա: Իբրեւ ելին եղբարքն նորա, ապա եւ ինքն ել ի տօնն, ոչ յայտնի այլ իբրեւ ի ծածուկ:
11 Եւ Հրեայքն խնդրէին զնա ի տօնի անդ
12 եւ ասէին, Ո՞ւր իցէ նա: Եւ [4]քրթմընջիւն էր զնմանէ ի ժողովուրդսն. կէսքն ասէին թէ Բարւոք է. այլքն ասէին, Ոչ, այլ մոլորեցուցանէ զժողովուրդն:
13 Եւ ոչ ոք համարձակ խօսէր զնմանէ վասն երկիւղին Հրէից:
14 Եկ. Իբրեւ տօնն ընդմիջեցաւ, ել Յիսուս ի տաճարն եւ ուսուցանէր:
15 Զարմանային Հրեայքն եւ ասէին, Զիա՞րդ զդիրս գիտէ սա, զի ուսեալ
16 բնաւ չիք: Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ, Իմ վարդապետութիւնս չէ իմ, այլ այնորիկ որ առաքեացն զիս:
17 Եթէ ոք կամի կատարս նորա առնել, գիտասցէ վասն վարդապետութեանս, Աստուծոյ իցէ արդեւք եթէ ես ինչ
18 յանձնէ իմմէ խօսիմ: Որ յանձնէ իւրմէ խօսի՝ փառս անձին իւրում խնդրէ, իսկ որ խնդրէ զփառս այնորիկ որ առաքեացն զնա՝ նա ճշմարիտ է, եւ

---

[1] Ոմանք, Սուրբն Աստուծոյ. այլք՝ Սուրբն Աստուծոյ կենդանւոյ
[2] Օրինակ մ, Յուդայէ որ ի կարիովտայ
[3] Ոմանք, երթամ տակաւին
[4] Բազումք, քրթմընջիւն բազում

19 անիրաւութիւն ոչ գոյ ի նմա։ Ո՞չ Մովսէսետ ձեզ զօրէնսն, եւ ոչ ոք
20 ի ձէնջ առնէ զօրէնսն։ Զի՞ խնդրէք զիս սպանանել։ պատասխանի եւ ժո-
զովուրդն եւ ասէ, Դեւ գոյ ի քեզ, ո՞վ
21 ինդրէ զքեզ սպանանել։ Պատասխանի եւ ասէ Յիսուս եւ ասէ, Գործ մի
գործեցի, եւ ամենեքին զարմացայք
22 էք։ Վասն այնորիկ Մովսէս ետ ձեզ թլփատութիւն, (զի ոչ ելէ ի Մովսէ-
սէ էր, այլ ի հարց անտի,) եւ ի շա-
23 բաթու թլփատէք զմարդ։ Իսկ արդ եթէ թլփատութիւն առնու մարդ ի
շաբաթու, զի մի՛ օրէնքն Մովսիսի
լուծցին, ընդ իս ցասուցանէ՞ք զի ողջ
մարդ բժշկեցի ի շաբաթու։
24 ԵԳ. Մի՛ դատիք աչս դատիք, այլ ուղիղ
դատաստան արարէք։
25 Ասէին ոմանք յԵրուսաղեմացւոց անդ-
ամ, Ո՞չ նա է սա զոր ինդրէին սպա-
26 նանել. Եւ աւասիկ յայտնապէս խօսի,
եւ չասեն ինչ ընդդմա. գուցէ ար-
դեւք եւ իշխանքն գիտացին թէ սա
27 իցէ [1]Քրիստոս։ Այլ զսա պիտեմք
ուստի է, իսկ Քրիստոսն յորժամ գայցէ,
28 ոչ ոք գիտէ ուստի է։ Աղաղակեաց
Յիսուս ի տաճարին, ուսուցանէր եւ
ասէր, Ե՛ւ զիս գիտէք, ե՛ւ ուստի եմն
գիտէք. եւ յանձնէ իմմէ ոչ եմ եկեալ,
այլ է ճշմարիտ որ առաքեացն զիս զոր
29 դուքն ոչ գիտէք։ Ես գիտեմ զնա, զի
ի նմանէ իսկ եմ, եւ նա առաքեաց
30 զիս։ Ինդրէին զնա ունել՝ [2]եւ ել ի
ձեռաց նոցա։՝ եւ ոչ ոք արկ ի նա ձեռն.
31 զի չէր էր հասեալ ժամ նորա։ Եւ բա-
զումք ի ժողովրդենէն հաւատացին ի
նա, եւ ասէին, Քրիստոսն յորժամ
գայցէ, միթէ աւելի՞ ինչ նշանս առ-
32 նիցէ քան զոր սոյս առնէ։ Եւ լուան
փարիսեցիքն զտրտունջ ժողովրդեանն
զնմանէ. եւ առաքեցին քահանայա-
պետքն եւ փարիսեցիքն սպասաւորս
33 զի կալցին զնա։ Ասէ Յիսուս, Փոքր
մնամ եւս ժամանակ ընդ ձեզ եմ, եւ
երթամ առ այն որ առաքեացն զիս։
34 Ինդրիցէք զիս եւ ոչ գտանիցէք, եւ
ուր եմն երթամ՝ դուք ոչ կարէք գալ։
35 Ասեն Հրեայքն ընդ միմեանս, Իսկ յո՞
երթայցէ դա, զի մեք ոչ գտանիցեմք
զդա. միթէ ի սփիւռս հեթանոսաց եր-
թայցէ եւ ուսուցանիցէ զհեթանոսս։
36 Զի՞նչ է բանն այն զոր ասաց, Ինդրի-
ցէք զիս եւ ոչ գտանիցէք. եւ ուր եմն
երթամ՝ դուք ոչ կարէք գալ։
37 ԵԳ. Ի վերջնում աւուրն մեծի տաճին
կայր Յիսուս, աղաղակէր եւ ասէր,
եթէ ոք ծարաւի իցէ, նկնասցէ առ ի
38 ես եւ արբցէ։ Որ հաւատայ յիս՝ որպէս
եւ ասեն գիրք, Գետք յորովայնէ նո-
ցա բղխեսցեն ջրոյ կենդանութեան։
39 Զայս ասէր վասն Հոգւոյն զոր ընդու-
նելոց էին որ հաւատային ի նա. զի
[3]չէր էր Հոգի՝, քանզի Յիսուս չէր էր
40 փառաւորեալ։ [4]Ոմանք ի ժողովրդենէն
իրրեւ լսէին զբանս զայս, ասէին, Սա
41 է ճշմարիտ մարգարէն։ Այլքն ասէին,
Սա է Քրիստոս. իսկ կէսքն ասէին,
Միթէ ի Գալիլէ՞ գալոց իցէ Քրիստոս։
42 Ո՞չ գիրք ասեն եթէ ի զաւակէ Դաւ-
թի եւ ի Բեթղեհեմ գեղջէ ուր Դաւթին
43 էր՝ գալոց է Քրիստոս։ Եւ եղեւ հար-
ձուած ի մէջ ժողովրդեանն վասն նո-
44 ցա։ Եւ ոմանք ի նոցանէ կամեցան
ունել զնա, այլ ոչ ոք մխեաց ի նա
ձեռն։
45 Եւ եկին անդրէն սպասաւորքն առ
քահանայապետսն եւ փարիսեցիս, եւ
ասեն սոքա ցնոսա, Ընդէ՞ր ոչ ածէք
46 զնա այսր։ Պատասխանի եւ ասեն սպա-
սաւորքն եւ ասեն, Ոչ երբեք այնպէս
47 խօսեցաւ մարդ որպէս այրն այն։ Պա-
տասխանի եւ ասեն ցնոսա փարիսեցիքն եւ
ասեն, Միթէ եւ դո՞ւք մոլորեցարուք։
48 Միթէ ոք յիշխանացն հաւատաց ի նա
49 կամ ի փարիսեցւոցն. Այլ այն խաժա-
մուժ ամբոխ որ ոչ գիտէ զօրէնս, եւ
50 նզովեալ են։ Ասէ Նիկոդիմոս ցնոսա
(որ եկեալն էր առ նա գիշերի յառա-
51 ջագոյն, եւ մի էր ի նոցանէ), Միթէ
օրէնքն մեր դատի՞ն զմարդ, եթէ ոչ
լսեն ինչ նախ ի նմանէ, [5]կամ գիտեն
52 զինչ գործէ։ Պատասխանի եւ ասեն
եւ ասեն, Միթէ եւ դո՞ւ եւս ի Գա-
լիլէէ իցես. քննեա եւ տես, զի մար-
գարէ ի Գալիլէէ ոչ յառնէ։

---

[1] Ոմանք, ճշմարիտ Քրիստոսն
[2] ի Բազումս պակասէ

[3] Ոմանք, չէր էր տուեալ Հոգի Սուրբ
[4] Ոմանք, Բազումք
[5] Յոյնն, և

ԳԼ. Ը

1 [1]Եւ գնացին իւրաքանչիւր ոք ի տեղի
իւր, իսկ Յիսուս գնաց ի լեառն Ձի-
2 թենեաց։ Եւ ընդ առաւօտն գարձեալ
եկն ի տաճարն, եւ զայր առ նա ամե-
նայն ժողովուրդն, եւ նստեալ ուսու-
3 ցանէր զնոսա։ Ածին առ նա գպիրքն
[2]եւ քահանայապետքն՝ եւ փարիսեցիք
կին մի բռնեալ ի շնութեան. եւ
4 կացուցեալ զնա առաջի, Ասեն ցնա,
Վարդապետ, կինս այս բռնեալ՝ ինքն
5 յայտնապէս շնացեալ է։ Եւ յօրէնսն
Մովսէս մեզ պատուիրեաց զայսպիսիս
քարկոծել. արդ դու զի՞նչ ասես վասն
6 զորա։ Զայս ասէին փորձելով զնա,
զի ունիցին ամբաստանութիւն զնմա-
նէ. իսկ Յիսուս ի խոնարհ նայելով
7 գրէր մատամբն յերկիր։ Իսկ իբրեւ
ամփսեցին հարցանելով զնա, հայեցեալ
ի վեր՝ ասէ ցնոսա, Անմեղն ի ձէնջ
նախ նա բնկեսցէ քար ի վերայ զորա։
8 Եւ գարձեալ ի խոնարհ նայելով գրէր
9 յերկրի։ Եւ [3]լուեալ ելանէին՝ մի ըստ
միոջէ, սկսեալ յառաջնոցն մինչեւ ի
վերջինսն. եւ մնաց միայն Յիսուս, եւ
10 կինն կայր առաջի նորա։ [4]Պատասխա-
նի առ Յիսուս եւ՝ ասէ ցնա, Կին դու,
[5]ո՞ւր են. ոչ ոք՝ զքեզ դատապար-
11 տեաց։ Եւ ասէ, Ոչ, Տէր. եւ ասէ Յի-
սուս, Եւ ոչ ես դատապարտեմ զքեզ,
երթ, յայսմ հետէ մի՛ մեղանչեր։՝

12 ԵԴ. Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա
Յիսուս եւ ասէ, Ես եմ լոյս աշխարհի.
որ զայ զկնի իմ՝ ընդ խաւար մի՛ գնաս-
13 ցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց։ Ասեն
ցնա փարիսեցիքն, Դու վասն անձին
քո վկայես, եւ վկայութիւն քո չէ
14 ճշմարիտ։ Պատասխանի եւ Յիսուս
եւ ասէ ցնոսա, Թէպէտ եւ ես վկայեմ
վասն անձին իմոյ, վկայութիւն իմ
ճշմարիտ է. զի գիտեմ ուստի եկի եւ
յո երթամ. բայց դուք ոչ գիտէք ուստի
15 գամ կամ յո երթամ։ Դուք ըստ մարմ-
նոյ դատիք, ես ոչ դատիմ եւ ոչ ոք.
16 Թէպէտ եւ դատիմ ես զոք, դատաս-
տանն իմ ճշմարիտ է. զի չեմ միայն,
այլ ես եւ որ առաքեացն զիս Հայր։
17 Եւ յօրէնսն իսկ ձեր գրեալ է թէ եր-
կուց մարդոց վկայութիւն ճշմարիտ է։
18 Ես եմ որ վկայեմ վասն իմ, եւ վկայէ
վասն իմ որ առաքեացն զիս Հայր։
19 Ասէին ցնա, Ո՞ւր է Հայր քո. պա-
տասխանի Յիսուս եւ ասէ ցնոսա,
Ոչ զիս գիտէք եւ ոչ զՀայրն իմ. եթէ
զիս գիտէիք, եւ զՀայրն իմ թերեւս
գիտէիք։
20 Զայս բանս խօսեցաւ ի տան գանձին,
յօրժամ ուսուցանէր ի տաճարի անդ.
եւ ոչ ոք կալաւ զնա, զի չեւ եւս
հասեալ էր ժամ նորա։
21 ԵԵ. Ասէ գարձեալ ցնոսա Յիսուս,
Ես երթամ, եւ խնդրիցէք զիս, եւ ի
մեղս ձեր մեռանիցիք. զի ուր ես
22 երթամ, դուք ոչ կարէք գալ։ Ասէին
Հրեայքն, Միթէ զիւրովի՞ն երթայցէ,
զի ասէ թէ Ուր ես երթամ, դուք
23 ոչ կարէք գալ։ Եւ ասէ ցնոսա, Դուք
ի ներքուստ աստի էք, եւ ես ի վե-
րուստ անտի եմ. դուք յաչխարհէ
աստի էք, ես չեմ յայսմ աշխարհէ։
24 Բայց ասացի ձեզ թէ ի մեղս ձեր մե-
ռանիցիք. զի թէ ոչ հաւատայցէք թէ
25 ես եմ, մեռանիցիք ի մեղս ձեր։ Ասեն
ցնա, Դու ո՞վ ես. ասէ ցնոսա Յիսուս,
[6]Նախ զի եւ խօսիմս իսկ ընդ ձեզ՞։
26 Բազում ինչ ունիմ վասն ձեր խօսել
եւ դատել. այլ որ առաքեացն զիս՝
ճշմարիտ է. եւ ես զոր լուայն ի նմանէ՝
27 զայն խօսիմ յաչխարհի։ Եւ ոչ գիտա-
ցին թէ զՀօրէ ասէր ցնոսա։
28 Ասէ ցնոսա Յիսուս, Յորժամ բարձ-
բացուցանիցէք զՈրդի մարդոյ, յայն-
ժամ գիտասջիք թէ ես եմ. եւ յանձնէ
իմմէ ոչ ինչ առնեմ, այլ որպէս ու-
29 սոյց զիս Հայրն իմ, զայն խօսիմ։ Եւ
որ առաքեացն զիս՝ ընդ իս է. ոչ եթող
զիս միայն, զի ես զհաճոյս նորա առ-
նեմ հանապազ։
30 Իբրեւ զայս խօսեցաւ, բազումք հա-
ւատացին ի նա։
31 ԵԶ. Եւ ասէր Յիսուս առ Հրեայսն հաւատացեալս, եթէ դուք կացջիք

---

[1]Այս մեկնաւոր համբոյ պակասէն է ձեռ-
նադրեն օրինակաց, որոնք ևս է բաղմաց է Հայերէն
յիշատէրաց։
[2]Ի բազմաց պակասէ
[3]Ոմանք, լուեալք և յանգիմանեալք ի խղճէ
մնաց, ելանէին
[4]Ոմանք, Հայեցեալ Յիսուս ի վեր և ոչ զոք
տեսեալ բայց ի կնոջէն,
[5]Ոմանք, ո՞ւր են որ չարաչարէին զքեզ. ո՞չ ոք
[6]կամ, Զոր ի սկզբանէ անտի խօսիմ առ ձեզ

ի բանի իմում, ճշմարիտ աշակերտք
32 իմ էք. Եւ ծանիջիք զճշմարտութիւնն,
եւ ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ։
33 Պատասխանի ետուն նմա եւ ասեն,
Զաւակ Աբրահամու եմք, եւ ոչ ումեք
երբեք ծառայեցաք. զիարդ ասես թէ
34 Ազատք լինիջիք։ Պատասխանի ետ նո-
ցա Յիսուս, Ամէն ամէն ասեմ ձեզ թէ
Ամենայն որ առնէ զմեղս՝ ծառայ է
35 մեղաց։ Եւ ծառայն ոչ յաւիտեան կայ
ի տան, իսկ որդին յաւիտեան կայ։
36 Իսկ արդ եթէ Որդին զձեզ ազատու-
ցուսցէ, ճշմարիտ ազատք լինիջիք։
37 Գիտեմ զի զաւակ Աբրահամու էք, այլ
խնդրէք սպանանել զիս, զի բանին
38 իմոյ չէք տեղի ի ձեզ։ Ես զոր տեսի
առ Հօր իմում՝ խօսիմ, եւ դուք զոր
39 լուարուք ի հօրէն ձերմէ՝ առնէք։ Պա-
տասխանի ետուն նմա եւ ասեն, Հայր
մեր Աբրահամ է. ասէ ցնոսա Յիսուս,
Եթէ որդիք Աբրահամու էիք, զգործսն
40 Աբրահամու գործէիք։ Այլ այժմիկ
խնդրէք սպանանել զիս, զայր մի՝ որ
ձեզ զճշմարտութիւն խօսեցայ, զոր
լուայ [1]ի Հօրէ իմմէ՝. զայդ Աբրահամ
41 ոչ արար։ Դուք առնէք զգործս հօրն
ձերոյ. ասեն ցնա, Մեք ի պոռնկու-
թենէ չեմք ծնեալ. մի է Հայր մեր, Աս-
42 տուած։ Ասէ ցնոսա Յիսուս, Եթէ Աս-
տուած էր Հայր ձեր, սիրէիք արդեւք
զիս. զի ես յԱստուծոյ ելի եւ եկի,
եւ ոչ եթէ յանձնէ ինչ եկի, այլ նա
43 առաքեաց զիս։ Ընդէ՞ր զիսօս իմ ոչ
գիտէք դուք. վասն զի ոչ կարէք լսել
44 զբանն իմ։ Դուք ի հօրէ ի Սատանայէ
էք, եւ զցանկութիւնս հօրն ձերոյ կա-
միք առնել. զի նա մարդասպան էր
ի սկզբանէ, եւ ի ճշմարտութեան ոչ
եկաց, զի ոչ գոյ ճշմարտութիւն ի
նմա. յորժամ խօսիցի սուտ, յիւրոյ
անտի խօսի. զի սուտ է եւ հայր նո-
45 բա։ Իսկ ես զի զճշմարտութիւն խօ-
46 սիմ, ոչ հաւատայք ինձ։ Ո՞ ի ձէնջ
յանդիմանէ զիս վասն մեղաց. եթէ
զճշմարիտն ասեմ ձեզ, ընդէ՞ր ոչ հա-
47 ւատայք ինձ։ Որ էն յԱստուծոյ՝ զբանս
Աստուծոյ լսէ. եւ դուք վասն այնորիկ
48 ոչ լսէք, զի չէք յԱստուծոյ։ Պատաս-
խանի ետուն Հրեայքն եւ ասեն ցնա,
Ո՞չ բարւոք ասեմք մեք եթէ Սամա-
49 րացի ես դուն, եւ դեւ դոյ ի քեզ։ Պա-
տասխանի ետ Յիսուս եւ ասէ, Ձիս
դեւ ոչ գոյ, այլ պատուեմ զՀայր իմ,
50 եւ դուք անարգէք զիս։ Ես ոչ խնդրեմ
զիւրս իմ, է որ խնդրէն եւ դատի։
51 Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոք զբանն
իմ պահեսցէ, զմահ մի՝ տեսցէ ի յա-
52 ւիտեան։ Ասեն ցնա Հրեայքն, Արդ
զիտացաք թէ դեւ դոյ ի քեզ. Աբրա-
համ մեռաւ, եւ մարգարէքն, եւ դուն
ասես, եթէ ոք զբանն իմ պահեսցէ,
մի՝ ճաշակեսցէ զմահ ի յաւիտեան։
53 Մի՞թէ դուն մե՞ծ ինչ ոք իցես քան զՀայր
մեր Աբրահամ, որ մեռաւ, եւ մար-
գարէքն մեռան. արդ դուն զո՞ առնես
54 զքեզ։ Պատասխանի ետ Յիսուս, Եթէ
ես փառաւորեմ զանձն իմ, փառքն իմ
ոչինչ են. է Հայր որ փառաւորէ զիս,
զորմէ դուքն ասէք թէ Աստուած [2]մեր
55 է. Եւ ոչ ճանաչէք զնա, բայց ես զի-
տեմ զնա. եւ եթէ ասեմ թէ ոչ գիտեմ
զնա, ձեզ նման սուտ լինիմ. այլ զի-
56 տեմ զնա եւ զբան նորա պահեմ։ Աբ-
րահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել
57 զօր իմ, եւ տես եւ ուրախ եղեւ։ Ասեն
ցնա Հրեայքն, Ձիսուն ամ չեւ եւս է
58 քո, եւ զԱբրահա՞մ տեսեր։ Ասէ ցնոսա
Յիսուս, Ամէն ամէն ասեմ ձեզ, Յա-
ռաջ քան զլինելն Աբրահամու եմ ես։
59 Վէմս առին զի արկցեն ի վերայ նորա,
եւ Յիսուս խոյս ետ եւ ել դնաց ի տա-
ճարէ անտի։

ԳԼ. Թ

1 ԵՒ. Եւ մինչդեռ անցանէր, տես այր
2 մի կոյր ի ծնէ. Եւ հարցին ցնա աշա-
կերտքն նորա եւ ասեն, Ռաբբի, ո՞վր
վնաս է, սորա՞ թէ հօր եւ մօր իւրոյ,
3 զի կոյր ծնցի։ Պատասխանի ետ Յի-
սուս, Ոչ դորա վնաս է, եւ ոչ հօր
եւ մօր իւրոյ. այլ զի յայտնի լիցին
4 գործքն Աստուծոյ ի գմա։ Եւ ինձ
պարտ է զործել զգործս այնորիկ որ
առաքեացն զիս, մինչ աւուր կայ. գայ
գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել։
5 Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշ-
6 խարհի։ Զայս իբրեւ ասաց, եթուք
ի դետին եւ արար կաւ ի թքոյն, եւ
ծեփեաց զկաւն ի վերայ աչաց կուրին.

[1]Բազմ. յԱստուծոյ

[2]Ոմանք, ձեր

7 Եւ ասէ ցնա, Երթ, լուա յաւազանին
Սիլովամայ, (որ թարգմանի Ա.ռաքեալ.)
չոգաւ լուացաւ, եկն եւ տեսանէր։
8 Իսկ դրացիքն եւ որոց առեւտուր էր
ընա յառաջագոյն թէ [1]մուրացիկ էր՝
ասէին, Ո՞չ սա էր որ նստէրն եւ մուր-
9 բանայր։ Կէսքն ասէին, Նա է. Այլքն
ասէին, [2]Ոչ, այլ՝ նման է նմա. եւ
10 ինքն ասէր թէ, Ես եմ։ Ասեն ցնա,
11 Իսկ զիա՞րդ բացան աչք քո։ Նա եւ
պատասխանի, Այր մի որում Յիսուս
ասեն՝ կաւ արար եւ ծեփեաց զաչս իմ,
եւ ասէ ցիս, Երթ ի Սիլոամ եւ լուա.
12 չոգայ, լուացայ եւ տեսանեմ։ Ասեն
ցնա, Ո՞ւր է նա. ասէ ցնոսա, Ոչ գի-
տեմ։
13 Ածին առ փարիսեցիսն զնա որ եր-
14 բեմն կոյր էր։ Եւ էր չաբաթ, յոր-
ժամ զկաւն արար Յիսուս, եւ երաց
15 զաչս կուրին։ Դարձեալ հարցանէին
զնա եւ փարիսեցիքն թէ Զիա՞րդ տե-
սանես. եւ նա ասէ ցնոսա, Կաւ եդ
ի վերայ աչաց իմոց, եւ լուացայ եւ տե-
16 սանեմ։ Ասեն ոմանք ի փարիսեցւոցն,
Ոչ է այրն այն յԱստուծոյ, զի զչաբաթն
ոչ պահէ. կէսքն ասէին, Իսկ զիա՞րդ
կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս
առնել. եւ էին հերձուածք ի մէջ նո-
17 ցա։ Ասեն դարձեալ ցկոյրն, Դու զի՞
ասես վասն նորա զի երաց զաչս քո.
18 եւ նա ասէր թէ, Մարգարէ է։ Եւ ոչ
հաւատային Հրեայքն զնմանէ թէ կոյր
էր եւ բացաւ, մինչեւ կոչեցին զծնողս
19 բացելոյն. Հարցին ցնոսա եւ ասեն,
Սա՞ է որդին ձեր, զորմէ դուքն ասէիք
եթէ կոյր ծնաւ, արդ զիա՞րդ տեսա-
20 նէ։ Պատասխանի եւտուն նոքա ծնողքն
նորա եւ ասեն, Գիտեմք զի սա է որ-
21 դին մեր, եւ զի կոյր ծնաւ. Բայց
զիա՞րդ այժմդ տեսանէ, ոչ գիտեմք.
կամ թէ ո՛վ երաց զաչս դորա, մեք
ոչ գիտեմք. դդա իսկ հարցէք, ինքնին
22 ի չափ հասեալ է, ինքն իսկ խօսեսցի
վասն իւր։ Զայս ասացին ծնողքն նո-
րա, զի երկնչէին ի Հրէից. քանզի
ուխտ եդեալ էր Հրէից, եթէ ոք խոս-
տովանեսցի զնա Քրիստոս, ի բաց կաց-
23 ցէ ի ժողովրդենէն։ Վասն այնորիկ ա-
սացին ծնողքն նորա թէ Ինքնին ի չափ
24 հասեալ է, ցնա իսկ հարցէք։ Դարձեալ
կրկին անգամ կոչեցին զայրն որ կոյրն
էր, եւ ասեն ցնա, Տուր փառս Ա.-
տուծոյ. մեք գիտեմք զի այրն այն
25 մեղաւոր է։ Եւ նա ասէ, Թէ մեղաւոր
իցէ, ես ոչ գիտեմ. բայց զայս գիտեմ,
26 զի կոյր էի եւ արդ տեսանեմ։ Դարձեալ ասեն ցնա, Զի՞նչ արար քեզ,
27 զիա՞րդ երաց զաչս քո։ Պատասխանի
ետ նոցա, Ասացի ձեզ եւ ոչ լուարուք. զի՞ կամիք միւսանգամ
լսել. միթէ եւ դո՞ւք կամիք աշակեր-
28 տել նմա։ Նոքա հայհոյէին զնա եւ ա-
սէին, Դու լիջիր նորա աշակերտ, մեք
29 Մովսիսի աշակերտք եմք։ Մեք գի-
տեմք զի ընդ Մովսիսի խօսեցաւ Ա.-
տուած, զսա ոչ գիտեմք ուստի՛ իցէ։
30 Պատասխանի ետ այրն եւ ասէ ցնոսա,
Այդ իսկ են սքանչելիք, զի դուք ոչ
գիտէք ուստի՛ իցէ, եւ զիմ զաչս ե-
31 բաց։ Գիտեմք զի Աստուած մեղա-
ւորաց ոչ լսէ, բայց եթէ աստուածա-
պաշտ ոք իցէ եւ զկամս նորա առնիցէ,
32 նմա լսէ։ Ի յաւիտենից ոք ոչ լուաւ
եթէ երաց ոք զաչս կուրի ի ծնէ կոյր
33 ծնելոյ։ Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն
34 այն, ոչ կարէր առնել ինչ։ Պատաս-
խանի ետուն եւ ասեն ցնա, Ի մեզս
իսկ ծնեալ ես ամենեւին, եւ դու վար-
դապե՞տ լինիս մեր. եւ հանին զնա
արտաքս։
35 Լուաւ Յիսուս եթէ հանին զնա ար-
տաքս, եւ իբրեւ եգիտ զնա, ասէ ցնա,
36 Դու հաւատա՞ս յՈրդի Աստուծոյ։ Նա
պատասխանի ետ եւ ասէ, Տէր, ո՞վ է
37 զի հաւատացից ի նա։ Ասէ ցնա Յի-
սուս, Եւ տեսեր զնա, եւ որ խօսիդ
38 ընդ քեզ՝ նա է։ Եւ նա ասէ, Հաւա-
տամ, Տէր. եւ երկիր եպազ նմա։
39 ՁԿ. Եւ ասէ Յիսուս, Ի դատաս-
տան եկի յաչխարհս յայս, զի որ ոչն
տեսանեն՝ տեսցեն, եւ որք տեսանեն՝
40 կուրասցին։ Լուան ոմանք ի փարի-
սեցւոցն որք ընդ նմա էին, եւ ասեն
ցնա, Միթէ եւ մեք կոյրք իցեմք։
41 Ասէ ցնոսա Յիսուս, Եթէ կոյրք էիք,
ոչ էր ձեր մեղ. բայց արդ ասէք եթէ
Տեսանեմք, եւ մեղքն ձեր ի ձեզ հաս-
տատեալ են։

ԳԼ. Ժ

1 Ամէն ամէն ասեմ ձեզ, Որ ոչ մտանէ

[1] Որ՝ նախ. կոյր [2] Ոչ՝ նախ. գոյ.

ընդ դուռն ի գաւիթ ոչխարացն, այլ
ընդ այլ եւրանէ՝ նա գող է եւ աւազակ։
2 Իսկ որ մտանէ ընդ դուռն՝ հովիւ է
3 ոչխարաց։ Նմա դռնապանն բանայ, եւ
ոչխարքն ձայնի նորա լսեն, եւ զիւր
ոչխարսն կոչէ յանուանէ եւ հանէ
4 զնոսա։ Եւ յորժամ [1]զիւրսն զամենայն՝
հանիցէ, առաջի նոցա երթայ, եւ ոչ-
խարքն զնա նայեալ երթան, զի ճա-
5 նաչեն զձայն նորա։ Զօտարի զնա ոչ
երթիցեն, այլ փախիցեն ի նմանէ, զի
ոչ ճանաչեն զձայն օտարաց։
6 Զայս առակ ասաց նոցա Յիսուս,
եւ նոքա ոչ գիտէին եթէ զինչ էր որ
7 խօսէրն ընդ նոսա։ Դարձեալ ասէ ցնո-
սա Յիսուս, Ամէն ամէն ասեմ ձեզ զի
8 Ես եմ դուռն ոչխարաց։ Ամենեքեան
որ յառաջ քան զիս եկին՝ գողք էին
եւ աւազակք. այլ ոչ լուան նոցա ոչ-
9 խարքն։ Ես եմ դուռն, ընդ իս եթէ
ոք մտանիցէ, կեցցէ. մտցէ եւ ելցէ
10 եւ ճարակ գտցէ։ Գող ոչ գայ, եթէ
ոչ զի գողասցի եւ սպանցէ եւ կորուս-
ցէ. Ես եկի զի կենդանս ունիցին, եւ
առաւել եւս ունիցին։
11 ԶԳ. Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ
զանձն իւր գնէ ի վերայ ոչխարաց։
12 Իսկ վարձկանն որ ոչ է հովիւ, որոյ
ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ
զգայլն զի գայ, թողու զոչխարսն եւ
փախչի. եւ գայլն յափշտակէ զնոսա
13 եւ ցրուէ. [2]Բանզի վարձկան է, եւ չէ
14 փոյթ նմա վասն ոչխարացն։ Ես եմ
հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմսն եւ
15 ճանաչիմ յիմոցն։ Որպէս գիտէ զիս
Հայր, գիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն
16 իմ գնեմ ի վերայ ոչխարաց։ Նա եւ
այլ եւս ոչխարք են իմ որ ոչ են յայսմ
դաւթէ, եւ զայնոս եւս պարտ է ինձ
ածել այսր, եւ ձայնի իմում լուիցեն,
17 եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ։ Վասն
այնորիկ սիրէ զիս Հայր իմ, զի Ես
դնեմ զանձն իմ, զի միւսանգամ առից
18 զնա։ Ոչ ոք հանէ զնա յինէն, այլ Ես
դնեմ զնա ինձեմէ իսկ. իշխանու-
թիւն ունիմ դնել զնա, եւ իշխանու-
թիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա.
զայս պատուէր առի ի Հօրէ իմմէ։
19 Դարձեալ հերձուած լինէր ի մէջ
20 Հրէից վասն բանիցս այսոցիկ։ Եւ ա-
սէին բազումք ի նոցանէ, Դեւ գոյ ի
նմա եւ մոլեգնի, զի՞ զնաւ լսէք նմա։
21 Կէսքն ասէին, Այսպիսի բանք ոչ զի-
ւահարի են. միթէ դեւ կարէ՞ զաչս
կուրի բանալ։
22 ԶԳ. Եղեն յայնժամ նաւակատիքն
23 Երուսաղէմ, եւ ձմեռն էր։ Եւ չրջէր
Յիսուս ի տաճարին ի սրահին Սողո-
24 մովնի։ Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն
եւ ասեն, Մինչեւ յե՞րբ թափես զոգիս
մեր. եթէ դու ես Քրիստոսն, ասա
25 մեզ համարձակ։ Պատասխանի ետ նո-
ցա Յիսուս եւ ասէ, Ասացի ձեզ եւ
ոչ հաւատայք [3]ինձ. զգործսն զոր Ես
գործեմ յանուն Հօր իմոյ՝ նոքին իսկ
26 վկայեն վասն իմ։ Այլ դուք ոչ հաւա-
տայք, զի չէք յոչխարաց անտի [4]իմոց։
27 Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, եւ Ես
ճանաչեմ զնոսա, եւ զկնի իմ գան.
28 Եւ Ես տամ նոցա զկեանսն յաւիտե-
նականս. եւ մի՛ կորիցեն յաւիտեան,
եւ մի՛ ոք յափշտակեսցէ զնոսա ի ձե-
29 ռաց իմոց։ Հայրն իմ որետ ինձ զնո-
սա՝ մեծ է քան զամենայն, եւ ոչ ոք
կարէ յափշտակել ի ձեռաց Հօր իմոյ։
30 Ես եւ Հայր [5]իմ մի եմք։ (31) Վէմս
առին Հրեայքն զի քարկոծ արասցեն
32 զնա։ Պատասխանի ետ նոցա Յիսուս,
Բազում գործս բարիս ցուցի ձեզ ի Հօրէ
իմմէ. վասն որո՞յ գործոյ ի նոցանէ
33 քարկոծ առնէք զիս։ Պատասխանի
ետուն նմա Հրեայքն, Վասն բարւոյ
գործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ, այլ
վասն հայհոյութեան. եւ զի դու մարդ
ես, եւ զանձն քո Աստուած առնես։
34 Պատասխանի ետ նոցա Յիսուս, Ո՞չ
գոյ գրեալ ձեր գրեալ է, Ես ասացի թէ
35 աստուածք իցէք։ Իսկ եթէ զնոսա
աստուածս ասէ, առ որս բանն Աս-
տուծոյ եղեւ, (եւ չէ մարթի եղծանել
36 գրոյն,) Իսկ զոր Հայր սրբեաց եւ ա-
ռաքեաց յաշխարհ, դուք ասէ՞ք թէ
Հայհոյես, զի ասացի թէ Որդի Աստու-
37 ծոյ եմ։ Եթէ ոչ գործեմ գործս Հօր
38 իմոյ, մի՛ հաւատայք ինձ։ Ապա թէ
գործեմ, թէ եւ ինձ ոչ հաւատայք,
սակայն գործոցն հաւատացէք. զի գի-

[1] Ոմանք, զիւր ոչխարսն
[2] Ոմանք, Իսկ վարձկանն փախչի, քանզի
[3] Ի բազմս պակասէ
[4] Ոմանք, իմմոց, որպէս ասացի ձեզ
[5] Ցոմանս պակասէ

տասներիք եւ [1]ծանիցիք եթէ Հայր յիս, եւ ես ի Հայր։
39 Դարձեալ խնդրէին զնա ունել, եւ
40 ել ի ձեռս նոցա։ Եւ գնաց միւսանգամ յայնկոյս Յորդանանու ի տեղին ուր էր Յովհաննէս զառաջինն եւ մկրտէր, եւ անդ լինէր։ Եկին բազումք առ նա եւ ասեն, Զի Յովհաննէս[2] նշան
42 լինչ ոչ արար։ Բայց զամենայն զոր ասաց Յովհաննէս վասն նորա, ճշմարիտ էր։ եւ բազումք հաւատացին ի նա անդ։

ԳԼ։ ԺԱ

1 ՋՒ. Եւ էր այն հիւանդ Ղազարոս ի Բեթանեայ, ի գեղջէ Մարեամայ եւ Մար-
2 թայի քեռն նորա։ Այս այն Մարիամ էր որ օծ զՏէրն իւղով, եւ ջնջեաց զոտս նորա հերով իւրով. որոյ եղբայրն Ղա-
3 զարոս հիւանդ էր։ Առաքեցին առ նա քորքն նորա եւ ասեն, Տէր, ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է։
4 Իրրեւ լուաւ Յիսուս, ասէ, Այն հիւանդութիւն չէ ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ. զի փառաւորի Որդի Աստուծոյ այնուիկ։ Եւ սիրէր
5 Յիսուս զՄարթա եւ զքոյր նորա
6 [3]զՄարիամ եւ զՂազար։ Իրրեւ լուաւ թէ հիւանդացեալ է, դանդի կալաւ
7 անդէն ուր էրն աւուրս երկուս։ Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա, Եկայք երթիցուք մերթեւս ի Հրէաստան։
8 Ասեն ցնա աշակերտքն, Ռաբբի, այժմ եւս խնդրէին զքեզ Հրեայքն քարկոծ առնել. եւ դարձեա՞լ երթիս անդրէն։
9 Պատասխանի Յիսուս, Ո՞չ երկոտասան ժամ է աւուր. եթէ ոք գնայ ի տուընջեան, ոչ գայթակղի, զի լոյս
10 աչխարհիս այսորիկ տեսանէ. Ապա թէ ոք գնայ գիշերի, գայթակղի, զի լոյս
11 ոչ գոյ ընդ նմա։ Զայս իրրեւ ասաց, յետ այսորիկ ասէ ցնոսա, Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի
12 զարթուցից զնա։ Ասեն ցնա աչակերքն, Տէր, եթէ ննջեաց, ապա
13 ապրի։ Այլ Յիսուս վասն մահուն նորա ասէր. Նոցա այսպէս թուեցաւ թէ
14 վասն ննջելոյ քնոյն ասէր։ Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս յայտնապէս, Ղա-
15 զարոս մեռաւ. Եւ ես ուրախ եմ վասն ձեր, զի դուք հաւատասջիք [3]ինձ, զի ես չէի անդ. բայց արդ եկայք երթիս-
16 ցուք ա՛ռ նա։ Ասէ Թովմաս, անուանեալն Երկուորեակ, ցայակերտակիցսն, Ան, եկայք եւ մեք զի ընդ նմա մեռցուք։
17 Եկն Յիսուս, եգիտ զնա չորեքօրեայ
18 ի գերեզմանի։ Եւ էր Բեթանիա մերձ յԵրուսաղէմ իբրեւ տասնհինգ
19 տասան։ Բազումք ի Հրէից անտի եկեալ էին առ Մարթա եւ Մարիամ, զի մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն։
20 Մարթա իբրեւ լուաւ թէ Յիսուս գայ, ընդ առաջ գնաց նորա, բայց Մարիամ
21 նստեր անդէն ի տան։ Ասէ Մարթա ցՅիսուս, Տէր, եթէ աստ լեալ էիր,
22 եղբայրն իմ չէր մեռեալ. Այլ եւ արդ գիտեմ եթէ զոր ինչ խնդրեսցես յԱ-
23 ստուծոյ՝ տացէ քեզ Աստուած։ Ասէ ցնա Յիսուս, Յարիցէ եղբայրն քո։
24 Ասէ ցնա Մարթա, Գիտեմ զի յարիցէ
25 ի յարութիւնն յաւուրն յետնում։ Ասէ ցնա Յիսուս, Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ
26 եւ մեռանի, կեցցէ. Եւ ամենայն որ կենդանի է եւ հաւատայ յիս՝ մի՛ մեռցի ի յաւիտեան. հաւատա՞ս այսմիկ։
27 Ասէ ցնա, Այո, Տէր, ես հաւատացի եթէ դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ, որ յաչխարհ գալոց էիր։ Եւ զայս իրրեւ ասաց, գնաց եւ կոչեաց զՄարիամ, զքոյր իւր, լռելեայն եւ ասէ, Վարդապետն եկեալ է եւ կոչէ զքեզ։
29 Նա իրրեւ լուաւ, յարեաւ վազվազակի
30 եւ եկն առ նա։ Զեւ եւս էր եկեալ Յիսուս ի գեղն, այլ էր անդէն ի տեղւոյն ուր ընդ առաջ եղեւ նմա Մար-
31 թա։ Իսկ Հրեայքն որ էին ընդ նմա ի տան անդ եւ մխիթարէին զնա, իրրեւ տեսին զՄարիամ թէ յարեաւ վազվազակի եւ գնաց, գնացին եւ նոքա զետ նորա, համարէին թէ ի գերեզ-
32 մանն երթայ զի լացցէ անդ։ Իսկ Մարիամ իրրեւ եկն ուր էրն Յիսուս եւ տեսս զնա, անկաւ առ ոտս նորա եւ ասէ, Տէր, եթէ աստ էիր պիտեալ,
33 ոչ էր մեռեալ եղբայրն իմ։ Յիսուս իրրեւ տեսս զնա զի լայր, եւ որ ընդ նմանն էին Հրեայքն՝ լային, խռովեցաւ
34 յոգի իւր իրրեւ զայրացեալ, եւ ասէ, Ո՞ւր եդիք զնա. ասեն ցնա, Տէր,

---

[1] Ոմանք, Հաւատասջիք
[2] Բազում յօրինակս, արդարև
[3] Ի ցառնէ պրօ

35 եկ եւ տես՝ եւ արտասուեաց Յիսուս՝
36 Ասէին Հրեայքն, Տեսէք, որչափ սիրէր
37 զնա՝ կէսքն ի նոցանէ ասէին, Ո՞չ կարէր սա, որ երաց զաչս կուրին,
38 առնել զի եւ սա մի՛ մեռցի՝ Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ ի դերեզմանն. եւ էր այր մի, եւ
39 վէմ մի եդեալ ի վերայ նորա՝ Եւ ասէ Յիսուս, Ի բաց արարէք զվէմդ՝ Ասէ ցնա Մարթա, քոյր մեռելոյն, Տէր, արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ
40 է՝ Ասէ ցնա Յիսուս, Ո՞չ ասացի քեզ, եթէ հաւատասցես, տեսցես զիշառն
41 Աստուծոյ՝ Եւ իբրեւ ի վեր առին զվէմն, Յիսուս ամբարձ զաչս իւր ի վեր եւ ասէ, Հայր, գոհանամ զքէն
42 զի լուար ինձ՝ Եւ ես գիտէի զի յամենայն ժամ լսես ինձ. այլ վասն ժողովրգեանս որ չուրջ կան՝ [2]առնեմ, զի հաւատասցեն թէ դու առաքեցեր
43 զիս՝ Զայս իբրեւ ասաց, ի ձայն մեծ աղաղակեաց եւ ասէ, Ղազարէ, արի
44 եկ արտաքս՝ Եւ ել մեռեալն ոտիւք կապկպով եւ ձեռօքն երիզապատօք եւ երեսօքն վարշամակապատօք. եւ ասէ ցնոսա Յիսուս, Լուծէք զդա եւ թողէք երթալ՝

45 Բազումք ի Հրէից որ եկեալ էին առ [3]Մարիամ, իբրեւ տեսին զոր [4]արարն՝ հաւատացին ի նա՝ Եւ ոմանք
46 ի նոցանէ գնացին առ փարիսեցիսն, պատմեցին նոցա զոր արարն Յիսուս՝
47 ԺԱ. Ժողովեցին քահանայապետքն եւ փարիսեցիքն ատեան, եւ ասէն, Ձի՞նչ արասցուք, զի այրն այն բա-
48 զում նշանս առնէ՝ եթէ թողուցուք զնա այնպէս, ամենեքին հաւատասցեն ի նա. եւ գայցեն Հռոմք եւ բառնայցեն
49 զաղգս մեր եւ զտեղի՝ Մի ոմն ի նոցանէ, անուն Կայիափա, որ քահանայապետ էր տարւոյն այնորիկ, ասէ
50 ցնոսա, Դուք ոչինչ գիտէք, Եւ ոչ քնաւ խորհիլ իսկ, թէ լաւ է մեզ զի այր մի մեռանիցի ի վերայ ժողովրդեանս, եւ մի՛ ամենայն ազգս կորիս-
51 ցէ՝ Զայս ոչ յանձնէ ինչ ասաց, այլ զի քահանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգարէացաւ եթէ մեռանելոց

52 էր Յիսուս ի վերայ ազգին. Եւ ոչ ի վերայ ազգին միայն, այլ զի եւ զորդիսն Աստուծոյ ցրուեալսն ժողովեսցէ ի մի՝

53 Ապա յայնմ օրէ խորհուրդ արարին
54 զի սպանցեն զնա՝ Եւ Յիսուս այնուհետեւ ոչ եթէ համարձակ չրջէր ի մէջ Հրէիցն, այլ գնաց անտի յերկիր մի որ մերձ էր յանապատ, ի քաղաք մի որում անուն էր Եփրայիմ, եւ անդ լինէր աշակերտաքն հանդերձ՝

55 ԺԵ. Եւ էր մերձ զատիկն Հրէից, եւ բազումք ելին յերուսաղէմ ի գաւառէ անտի յառաջագոյն քան զզատիկն, զի սրբեսցեն զանձինս իւրեանց,
56 խնդրէին զՅիսուս, եւ ասէին ընդ միմեանս մինչ կային ի տաճարին, Ձի՞րդ թուի ձեզ, եթէ ո՞չ գայցէ ի տօն այսր՝ Պատուէր տուեալ էր քահանայապետքն եւ փարիսեցւոց, զի եթէ ոք գիտասցէ թէ ուր է, դաւչակեսցէ զնմա-
նէ զի կալցին զնա՝

ԳԼ. ԺԲ

1 Իսկ Յիսուս վեց աւուրբ յառաջ քան զզատիկն եկն ի Բեթանիա, ուր էր Ղազար մեռեալն, զոր յարոյցն ի մե-
2 ռելոց՝ Եւ արարին անդ նմա ընթրիս, եւ ի սպասու կայր Մարթա, եւ Ղա-
3 զար մի էր ի բազմելոց ընդ նմա՝ Իսկ Մարիամ առեալ լիտր մի իւղոյ նարդեհան ազնուի մնծադնոյ, օծ զոտսն Յիսուսի, եւ հերով իւրով մաքրէր զոտս նորա. եւ տունն լի եղեւ ի հո-
4 աւոյ իւղոյն՝ Ասէ մի ոմն յաչակերտաց անտի, Յուդա Իսկարիովտացի, որ
5 մատնելոցն էր զնա, Ընդէ՞ր ոչ եւզդ այդ վաճառեցաւ երիւք հարիւր դենա-
6 րի եւ տուաւ աղքատաց՝ Զայս ասաց, ոչ զի զաղքատաց ինչ ցոյժ էր նմա, այլ զի գող էր եւ զարկղն ինքն ունէր,
7 եւ որ ինչ անկանէրն՝ նա կրէր՝ Ասէ Յիսուս, Թոյլ տուր զնա, զի յօրն պա-
8 տանաց իմոց [5]պահեսցէ զայդ. Զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք, զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք՝

9 Իբրեւ գիտաց ժողովուրդ բազում ի Հրէիցն թէ անդ է, եկին, ոչ միայն վասն Յիսուսի, այլ զի եւ զՂազար

[1] Որոնք, զվէմն ուր դնէր մեռեալն
[2] Գոյնն, ասացի
[3] Գոյնն, Մարիամ
[4] Որոնք, արարն Յիսուս
[5] Որոնք, պահեաց

10 տեսցեն, զոր յարոյցն ի մեռելոց։ Խոր-
հուրդ արարին քահանայապետքն, զի
11 եւ զՂազար սպանցեն. Քանզի բա-
զումք ի Հրէից [1]երթային եւ հաւա-
տային ի Յիսուս։
12 ԺԱ. Ի վաղիւ անդր ժողովուրդ բա-
զում որ եկեալ էր ի տօնն, իբրեւ լուան
13 եթէ գայ Յիսուս յԵրուսաղէմ, Առին
ոստս արմաւենեաց եւ ելին ընդ առաջ
նորա, աղաղակէին եւ ասէին, Ովսան-
նա, օրհնեալ որ գայդ յանուն Տեառն,
14 թագաւորդ Իսրայելի։ Եւ գտեալ Յի-
սուսի էշ մի, նստաւ ի վերայ նորա,
15 որպէս եւ գրեալ է, Մի՛ երկնչիր,
դուստր Սիովնի, ահաւասիկ թագա-
ւոր քո գայ նստեալ ի վերայ յաւանակի
16 իշոյ։ Եւ զայն ինչ ոչ գիտացին աշա-
կերտքն նորա զառաջինն, այլ յորժամ
փառաւորեցաւ Յիսուս, յայնժամ յի-
շեցին եթէ այն էր որ գրեալն էր վասն
17 նորա, եւ զայն արարին նմա։ Եւ ժո-
ղովուրդն վկայէր որ էր ընդ նմա, եթէ
զՂազար կոչեաց եւ յարոյց ի մեռելոց,
18 եւ յարոյց զնա ի մեռելոց։ Եւ վասն
այնորիկ ընդ առաջ եղեւ նմա ժողո-
վուրդն, զի լուան եթէ զայն նշանս
19 արարեալ էր նորա։ Իսկ փարիսեցիքն
ասէին ընդ միմեանս, Տեսանէ՞ք զի
ոչինչ օգտիք. ահաւասիկ աշխարհ ա-
մենայն զկնի նորա գնաց։
20 Էին անդ ոմանք եւ հեթանոսք յե-
լելոցն անդր, զի երկիր պագանիցեն
21 ի տօնին։ Նոքա մատեան առ Փիլիպ-
պոս որ ի Բեթսայիդայ Գալիլեացւոցն
էր, աղաչէին զնա եւ ասէին, Տէր,
22 կամիմք զՅիսուս տեսանել։ Գայ Փի-
լիպպոս եւ ասէ ցԱնդրէաս, Անդրէաս
23 եւ Փիլիպպոս ասեն ցՅիսուս։ Եւ Յի-
սուս պատասխանի ետ նոցա եւ ասէ,
Եհաս ժամ զի փառաւորեսցի Որդի
մարդոյ։
24 ԺԲ. Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ
հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռա-
նիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մե-
25 ռանիցի, բազում արդիւնս առնէ։ Որ
սիրէ զանձն իւր՝ [2]արձակէ զնա. եւ որ
ատեայ զանձն իւր յաչխարհիս յայսմիկ՝
ի կեանսն յաւիտենականս պահեսցէ
26 զնա։ Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ
եկեսցէ. եւ ուր եմն եմ, անդ եւ պաշ-
տօնեայն իմ եսիցի. եթէ ոք զիս պաշ-
տիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։
27 ԺԳ. Բայց այժմ անձն իմ խռովեալ է.
եւ զի՞նչ ասացից, եթէ, Հայր, ապ-
րեցո զիս ի ժամէ ասմի յայսմանէ. այլ
28 վասն այնորիկ եկի ի ժամս յայս։ Հայր,
փառաւորեա զանուն քո։ Եկն բարբառ
յերկնից, Ե՛ւ փառաւորեցի արարի, ե՛ւ
29 դարձեալ փառաւորեցից։ Եւ ժո-
ղովուրդն որ կայր եւ լսէր, ասէին՝
Որոտումն լինէր. ոմանք ասէին, Հրեշ-
30 տակ խօսեցաւ ընդ նմա։ Պատասխանի
ետ Յիսուս եւ ասէ, Ոչ վասն իմ ինչ
եկն բարբառս այս, այլ վասն ձեր։
31 Այժմիկ դատաստան է աշխարհիս այ-
սորիկ, այժմիկ իշխան աշխարհիս այ-
32 սորիկ ընկեսցի արտաքս։ Եւ ես յոր-
ժամ բարձրացայց յերկրէ, զամենեսեան
33 ձգեցից առ իս։ Զայս ասէր նշանա-
կեալ թէ որով մահու մեռանելոց էր։
34 Պատասխանի ետ նմա ժողովուրդն,
Մեք լուաք յօրինացն եթէ Քրիստոս
յաւիտեան կայ, եւ դու զիա՞րդ ասես
թէ Պարտ է բարձրանալ Որդւոյ մար-
35 դոյ. ո՞վ է այն Որդին մարդոյ։ Ասէ
ցնոսա Յիսուս, Փոքր մեւս եւս ժա-
մանակ լոյս ընդ ձեզ է. գնացէք մինչ-
չեւ զլոյսն ունիք, զի մի՛ խաւար ձեզ
հասցէ. զի որ գնայ ի խաւարի՝ ոչ գիտէ
36 յո երթայ։ Մինչդեռ զլոյսն ընդ ձեզ
ունիք, հաւատացէք ի լոյսն, զի որդիք
լուսոյ եղիջիք։ Զայս խօսեցաւ Յիսուս,
եւ չոգաւ թաքեաւ ի նոցանէ։
37 Եւ այնչափ նշանս արարեալ էր ա-
ռաջի նոցա, եւ նոքա ոչ հաւատային
38 ի նա. Զի լցցի բանն Եսայեայ մար-
գարէի զոր ասացն, Տէր, ո՞ հաւատաց
ի լուր մեր, եւ բազուկ Տեառն ո՞ւմ
39 յայտնեցաւ։ Վասն այնորիկ ոչ կարէին
հաւատալ, զի միւսանգամ ասէ Եսայի,
40 Թէ կուրացոյց զաչս նոցա եւ ապչե-
ցոյց զսիրտս նոցա, զի մի՛ տեսցեն
աչօք եւ իմասցին սրտիւք եւ դարձ-
41 ցին, եւ բժշկեցից զնոսա։ Զայս ասաց
Եսայի, զի տեսաւ զնորա եւ խօ-
42 սեցաւ վասն նորա։ Բայց սակայն եւ
իշխանացն անտի բազումք հաւատացին
ի նա, այլ վասն փարիսեցւոցն ոչ յայտ-
նէին, զի մի՛ ի ժողովրդենէն ելանիցին։
43 Քանզի սիրեցին զփառս մարդկան ա-
ւելի քան զփառսն Աստուծոյ։

---

[1] Յ-ԽՀ, երթային վասն նորա
[2] Յ-ԽՀ, կորուսցէ. տե՛ս Մատթ. ժ. 39։ Ժ.Ղ. 25։

44 ԷԴ. Եւ Յիսուս աղաղակեր եւ ասէր, Որ հաւատայ յիս՝ ոչ հաւատայ յիս,
45 այլ յայն որ առաքեացն զիս։ Եւ որ տեսանէ զիս՝ զայն տեսանէ որ առա-
46 քեացն զիս։ Ես լոյս յաշխարհ եկի, զի ամենայն որ հաւատայ յիս՝ ի խաւարի
47 մի՛ մնասցէ։ Եւ եթէ ոք լսիցէ բանից իմոց եւ ոչ պահեսցէ, ես ոչ դատիմ
զնա. քանզի ոչ եկի թէ դատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցից զաշխարհ։
48 Որ անարդէ զիս եւ ոչ ընդունի զբանս իմ, գոյ որ դատի զնա. բանն զոր ես
խօսեցայ, նա դատի զնա յաւուրն յետ-
49 նում։ Զի ես յանձնէ իմմէ ոչ խօսե-
ցայ, այլ որ առաքեացն զիս Հայր, նա ետ ինձ պատուէր զինչ ասացից եւ
50 զինչ խօսեցայց։ Եւ գիտեմ եթէ պատ-
ուէրն այն կեանք են յաւիտենականք. արդ զոր ես խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն, այնպէս խօսիմ։

ԳԼ. ԺԳ

1 ԷԵ. Յառաջագոյն քան զտօնն զատկի գիտաց Յիսուս թէ հասեալ է ժամ նո-
րա զի փոխեսցի յաշխարհէ առ զհայր, սիրեալ զիւրսն որ յաշխարհի
2 աստ են, ի սպառ սիրեաց զնոսա։ Եւ ի լինել ընթրեացն (Սատանայի իսկ արկեալ էր ի սիրտ, զի մատնեսցէ
3 զնա, Յուդայ Սիմովնի Իսկարիովտա-
ցւոյ) Գիտաց Յիսուս զի զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս նորա, եւ թէ յԱ-
4 ստուծոյ եկ եւ առ Աստուած երթայ, Յառնէ յընթրեաց անտի եւ դնէ զհան-
դերձան, եւ առեալ զընձեակ մի ոիւա-
5 ծաւ։ Եւ ապա առեալ ջուր արկ ի կոնք, եւ սկսաւ լուանալ զոտս աշա-
կերտացն, եւ սրբէր զընձեակաւն զոր
6 ոիւածեալ էր։ Գայ առ Սիմովն Պետրոս. եւ նա ասէ ցնա, Տէր, դո՞ւ զիս զոտս
7 լուանաս։ Պատասխանի ետ նմա Յի-
սուս եւ ասէ, Զոր ինչ ես գործեմ՝ դու այժմ ոչ գիտես. բայց ապա գի-
8 տասցիր։ Ասէ ցնա Պետրոս, Ոչ լու-
ասցես զոտս իմ յաւիտեան. պատաս-
խանի ետ նմա Յիսուս, Եթէ ոչ լուա-
ցից զքեզ, ոչ ունիս բնդ իս մասն։
9 Ասէ ցնա Սիմովն Պետրոս, Տէր, մի՛ միայն զոտս իմ, այլ եւ զձեռս եւ
10 զգլուխս։ Ասէ ցնա Յիսուս, Լուացեալն չէ ինչ պիտոյ, բայց զի զոտսն լուանայցէ, քանզի ամենեւին սուրբ է. եւ դուք սուրբ էք, այլ ոչ ամենեքեան։
11 Զի գիտէր զայն որ մատնելոցն էր զնա. վասն այնորիկ ասաց թէ Ոչ ամենեքեան
12 սուրբ էք։ Եւ յորժամ լուաւ զոտս նոցա, ա՛ռ զհանդերձան իւր եւ դար-
ձեալ բազմեցաւ, եւ ասէ ցնոսա, Գի-
13 տէ՞ք զինչ արարի ձեզ. Դուք կոչէք զիս Վարդապետ եւ Տէր, եւ բարւոք
14 ասէք, քանզի եմ իսկ։ Իսկ արդ եթէ ես լուացի զոտս ձեր, Տէրս եւ Վար-
դապետս, եւ դուք պարտիք զմիմեանց
15 ոտս լուանալ։ Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, եւ
դուք առնիջիք։
16 ԷԶ. Ամէն ամէն ասեմ ձեզ, Ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր, եւ ոչ ա-
ռաքեալ՝ մեծ քան զայն որ առաքեացն
17 զնա։ Եթէ զայս գիտէք, երանելի եւս
18 էք, եթէ առնիցէք զայս։ Ոչ վասն ա-
մենեցուն ձեր ասեմ, զի ես գիտեմ զորս ընտրեցիլ. այլ զի լցցի գիրն թէ
Որ ուտէր ընդ իս հաց՝ արար ինձ խա-
19 րէութիւն։ Յայսմհետէ իսկ ասեմ ձեզ մինչչեւ եղեալ, զի յորժամ լինիցի,
20 հաւատասջիք թէ ես եմ։ Ամէն ամէն ասեմ ձեզ, Որ ընդունի զոր ոք ես ա-
ռաքեցից՝ զիս ընդունի. եւ որ զիս ըն-
դունի՝ ընդունի զայն որ առաքեացն
զիս։
21 Զայս իբրեւ ասաց Յիսուս, խռովե-
ցաւ յոգի իւր, վկայեաց եւ ասէ, Ա-
մէն ամէն ասեմ ձեզ զի մի ոմն ի ձէնջ
22 մատնելոց է զիս։ Հայէին ընդ միմ-
եանս աշակերտքն տարակուսեալք թէ
23 զում՝ ասիցէ։ Եւ էր մի ոմն յաշա-
կերտացն յարմեալ առ Յիսուսիս, զոր
24 սիրէրն Յիսուս։ Անկարկէ նմա Սի-
մովն Պետրոս հարցանել, ո՛վ իցէ վասն
25 որոյ ասէն։ Եւ նա անկեալ զլանջսքն
26 Յիսուսի՝ ասէ ցնա, Տէր, ո՞վ է։ Պա-
տասխանի ետ Յիսուս եւ ասէ, Այն է, որում ես թացից զպատառն եւ տաց.
եւ թացեալ զպատառն տայ [1]Յուդայի
27 Իսկարիովտացւոյ։ Եւ յետ պատառոյն ապա եմուտ ի նա Սատանայ. եւ ասէ
ցնա Յիսուս, Արդ որ զինչ առնելոց
28 ես՝ արա վաղվաղակի։ Եւ զայս ոչ ոք իմացաւ ի բազմականացն անտի, թէ
29 առ ինչ ասաց ցնա։ Զի ոմանք հա-

[1]Բազում, ցՅուդա Սիմովնի

մարէին թէ զի զարկն ունէր Յուդա, ասաց նմա Յիսուս, Գնեա զինչ որ պիտոյ իցէ մեզ ի տօնիս, եւ կամ, զի 30 ազքատաց ինչ տացէ։ Իսկ նորա առեալ զպատառն՝ ել արտաքս վաղվաղակի, եւ էր գիշեր։

31 Եւ։ Եւ իբրեւ ել, ասէ Յիսուս, Այժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ, եւ Աստուած փառաւորեցաւ ի նմա։ 32 Զի եթէ Աստուած փառաւորեցաւ ի նմա, եւ Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր. եւ վազվազակի փառաւո- 33 րեսցէ զնա։ Որդեակք իմ, փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրիցէք զիս. եւ որպէս ասացի ցՀրեշտակս եթէ Ուր եմն երթամ, դուք ոչ կարէք գալ, եւ 34 արդ ձեզ ասեմ։ Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս. որպէս սիրեցի ես զձեզ, զի եւ դուք սիրես- 35 ջիք զմիմեանս։ Ցայսմ գիտասցին ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ 36 սիրիցէք զմիմեանս։ Ասէ ցնա Սիմովն Պետրոս, Տէր, յո՞վ երթայս։ Պատաս- խանի ետ Յիսուս, Ուր եմն երթեմ՝ դու ոչ կարես այժմ զալ զկնի իմ, բայց 37 ապա ևկեսցես զկնի իմ։ Ասէ ցնա Պետ- րոս, Տէր, ընդէ՞ր ոչ կարիցեմ զալ այժմ զկնի քո, արդէն զանձն իմ իսկ 38 եդից ի վերայ քո։ Պատասխանի ետ Յիսուս, Զանձն քո զիցես ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ քեզ, Ձեւ իցէ հաւս խօսեալ, մինչ դու երիցս ու- րասցիս զիս։

Գլ. ԺԴ

1 **Մի՛** խռովեսցին սիրտք ձեր. այլ հա- ւատայք յԱստուած եւ յիս հաւա- 2 տայք։ Ի տան Հօր իմոյ սահմանք բազումք են. ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, [1]Եմ երթամ, եւ պատրաս- 3 տեմ ձեզ տեղի։ Եւ եթէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ եւ առնում զձեզ առ իս. զի ուր եմն 4 իցեմ, եւ դուք անդ իցէք։ Եւ ուր երթամն՝ գիտիցէք, եւ զճանապարհն գիտիցէք։

5 Ասէ ցնա Թովմաս, Տէր, ոչ գի- տեմք յո՛ երթաս, եւ զիա՞րդ զճանա- 6 պարհն կարասցուք գիտել։ Ասէ ցնա Յիսուս, Ես եմ ճանապարհն եւ ճըշ- մարտութիւն եւ կեանք. ոչ ոք գայ 7 առ Հայր եթէ ոչ ինձ։ Եթէ զիս գի- տէիք, ապա եւ զՀայր իմ գիտէիք, եւ այսուհետեւ գիտասջիք զնա եւ տեսէք զնա։

8 Ասէ ցնա Փիլիպպոս, Տէր, ցոյց մեզ 9 զՀայր, եւ չառ է մեզ։ Ասէ ցնա Յի- սուս, Այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, եւ ո՞չ ծանեար զիս, Փիլիպպէ. որ տեսանն զիս՝ տեսանէ զՀայրն. եւ դու զիա՞րդ ասես եթէ ցոյց մեզ զՀայր։ 10 Ո՞չ հաւատայս եթէ ես ի Հայր եւ Հայր յիս է. զբանս զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն որ յիս բնակեալ է՝ նա գործէ զգործսն։ 11 [2]Հաւատացէք ինձ, եթէ ես ի Հայր եւ Հայր յիս է. ապա թէ ոչ՝ գոնէ վասն 12 գործոցն հաւատացէք ինձ։ Ամէն ա- մէն ասեմ ձեզ թէ որ հաւատայ յիս, զգործսն զոր ես գործեմ, եւ նա գոր- ծեսցէ, եւ մեծամեծս եւս քան զնոսա գործեսցէ. զի ես առ Հայր երթամ։ 13 Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ՝ ա- րարից զայն, զի փառաւորեսցի Հայր յՈրդի։[3] ՎԶ

15 Ըստ։ Եթէ սիրէք զիս, զպատուի- 16 րանս իմ պահեսջիք։ Եւ ես աղաչե- ցից զՀայր, եւ այլ Մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ ի յաւի- 17 տեան. ԶՀոգին ճշմարտութեան զոր աշխարհս ոչ կարէ ընդունել, զի ոչ տեսանէ զնա եւ ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնա- 18 կեսցէ եւ ընդ ձեզ եղիցի։ Ոչ թողից 19 զձեզ որբս, գամ առ ձեզ։ Փոքր մնաց եւս՝ եւ աշխարհս ոչ ևս տեսանէ զիս, բայց դուք տեսանիցէք զիս, զի ես կենդանի եմ, եւ դուք կենդանի լինիք- 20 ջիք։ Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի ես ի Հօր իմում, եւ դուք յիս, եւ 21 ես ի ձեզ։ Որ ունի զպատուիրանս իմ եւ պահէ զնոսա՝ նա է որ սիրէ զիս. եւ որ սիրէն զիս՝ սիրեսցի ի Հօրէ իմմէ. եւ ես սիրեցից զնա, եւ երեւեցուցից նմա զիս։

22 Ասէ ցնա Յուդա (ոչ Իսկարիովտա- ցին), Տէր, զի՞ եղեւ զի մեզ յայտնելոց 23 ես զքեզ եւ ոչ աշխարհի։ Պատասխանի

[1] Ի Բազմս՝ Գնացի, յամենայն պարագայ

[2] Յոյն, Հաւատացէք

[3] Բազմ. յայլս, (14) Եթէ խնդրիցէք ինչ յանուն իմ՝ արարից զայն։

եւ Յիսուս եւ ասէ ցնա, Եթէ ոք սիրէ զիս, զբանն իմ պահեսցէ, եւ Հայր իմ սիրեսցէ զնա. եւ առ նա եկեսցուք
24 եւ օթևանս առ նմա արասցուք. Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ոչ պահէ. եւ բանն իմ զոր լսէք՝ ոչ է իմ, այլ
25 Հօրն որ առաքեացն զիս: Զայս խօսեցայ ընդ ձեզ, մինչ առ ձեզս եմ:
26 Իսկ Մխիթարիչն, Հոգին Սուրբ, զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, եւ յիշեցուսցէ
27 զամենայն զոր ինչ ասացի ձեզ: Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ, տամ ես ձեզ. մի՛ խռովեսցին սիրտք ձեր եւ մի՛ զանդիտեսցեն: Լուայք զի ասացի ես ձեզ Թէ
28 Երթամ եւ գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս, ապա ուրախ լեալ էր ձեր եթէ ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ
29 է քան զիս: Եւ այժմ ասացի ձեզ մինչչեւ եղեալ, զի յորժամ լինիցի,
30 հաւատասջիք: Ոչ եւս այլ չատ խօսեցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս
31 այսոքիկ եւ յիս ինչ ոչ գտանէ: Այլ զի ծանիցէ աշխարհ եթէ սիրեմ զՀայր. եւ որպէս պատուիրեաց ինձ Հայր, այնպէս առնեմ. օ՛ն արիք գնասցուք ասէ:

ԳԼ. ԺԵ

1 Ես եմ որթն ճշմարիտ, եւ Հայր իմ
2 հնձակ է: Ամենայն ուռ որ յիս է եւ ոչ բերէ պտուղ՝ կտրէ զնա. եւ ամենայն որ բերէ պտուղ՝ սրբէ զնա, զի առաւել
3 ւել եւս պտղարեր լիցի: Դուք արդէն իսկ սուրբ էք վասն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ:
4 Կացէք յիս եւ ես ի ձեզ. որպէս ուռն ոչ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ չիցէ հաստատեալ յորթն, նոյնպէս եւ դուք եթէ ոչ յիս
5 հաստատեալ իցէք: Ես եմ որթ եւ դուք ուռ. որ հաստատեալ է յիս եւ ես ի նա, նա բերէ պտուղ յոյժ. զի առանց իմ
6 ոչինչ կարէք առնել: Եթէ ոք ոչ է հաստատեալ յիս, ել նա արտաքս իբրեւ զուռն եւ ցամաքեցաւ, եւ ժողովին զնա եւ ի հուր արկանեն, եւ այրի:
7 Եթէ կայցէք յիս եւ բանք իմ ի ձեզ կայցեն, զոր ինչ կամիցիք՝ խնդրեսջիք, եւ լինիցի ձեզ: Ցայսմիկ փառաւորեցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք, եւ եղիջիք իմ աշակերտք:
9 Որպէս սիրեաց զիս Հայր, եւ ես սիրեցի զձեզ. հաստատուն կացէք ի
10 սէր իմ: Եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կայցիք ի սէր իմ. որպէս եւ զպատուիրանս Հօր իմոյ պահեցի, եւ
11 կամ ի սէր նորա: Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութիւնն իմ ի ձեզ իցէ, եւ ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի:
12 Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս եւ ես սիրեցի զձեզ:
13 Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարե-
14 կամաց իւրոց: Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք զոր ես պատուիրեմ ձեզ: Ոչ եւս կոչեմ զձեզ ծառայս,
15 զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն զոր լուայ ի Հօրէ իմմէ՝
16 յանուն իմ՝ տացէ ձեզ: Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս, այլ ես ընտրեցի զձեզ, եւ եդի զձեզ զի դուք երթայցէք եւ պտուղ բերք լինիցիք, եւ պտուղն ձեր կացէ, եւ զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ
17 յանուն իմ՝ տացէ ձեզ: Զայս պատուիրեմ ձեզ զի սիրեսջիք զմիմեանս:
18 Եթէ աշխարհ զձեզ ատէ, գիտաս-
19 ջիք զի նախ զիս ատեաց: Եթէ յաշխարհէ եղէք, աշխարհ զիւրն սիրէր արդեւք. բայց զի չէք յաշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն
20 այնորիկ ատէ զձեզ աշխարհ: Յիշեցէք զբանն զոր ասացի ձեզ, Թէ Ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր. եթէ զիս հալածեցին, ապա եւ զձեզ հալածեցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա
21 եւ զձերն պահեսցին: Այլ զնոսա ասացին ընդ ձեզ վասն անուան իմոյ, զի ոչ գիտեն զայն որ առաքեացն զիս:
22 Իմ եթէ չէր եկեալ եւ խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ ունէր նոցա. բայց արդ չիք ինչ պատճառ վասն մեղաց
23 իւրեանց: Որ զիս ատէ, եւ զՀայրն
24 իմ ատէ: Եթէ զգործսն չէր գործեալ ի նոսա, զոր ոչ այլ ոք գործեաց, մեղ ինչ ոչ ունէր նոցա, բայց արդ տեսին եւ ատեցին եւ՛ զիս եւ՛ զՀայր իմ:
25 Այլ զի լցցի բանն որ յօրէնս նոցա գրեալ է Թէ Ատեցին զիս տարապար-
26 տուց: Բայց յորժամ եկեսցէ Մխիթարիչն զոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ,

զՀոգին Ճշմարտութեան որ ի Հօրէ
27 ելանէ, նա վկայեսցէ վասն իմ. Եւ դուք վկայէք, զի ի սկզբանէ ընդ իս էք։

ԳԼ. ԺԶ

1 Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ պայ-
2 մակզեսջիք։ Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ՝ հա-
3 մարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։ Եւ զայն արասցեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զՀայր եւ ոչ զիս։
4 Այլ եւ զայս խօսեցայ ընդ ձեզ, զի յորժամ եկեսցէ ժամանակ, յիշիցէք զի ես ասացի ձեզ. զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի։
5 Բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ, եւ ոչ ոք ի ձենջ հարցանէ զիս թէ
6 Յո՞ երթայս։ Այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ, արտումբիւն եղեւ զսիրտս ձեր։
7 Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ, բարի է ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ երթայց, Մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առաքեցից
8 զնա առ ձեզ։ Եւ նա եկեալ՝ յանդիմանեսցէ զաշխարհ վասն մեղացն եւ վասն արդարութեան եւ վասն դա-
9 տաստանի։ Վասն մեղաց՝ զի ոչ հա-
10 ւատան յիս. Վասն արդարութեան՝ զի առ Հայր իմ երթամ, եւ ոչ եւս տե-
11 սանէք զիս. Վասն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ դատապար-
12 տեալ է։ Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ ոչ կարէք հանդուրժել այժ-
13 միկ։ Յորժամ եկեսցէ նա, Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ա-մենայն ճշմարտութեամբ. զի ոչ ևիւրմէ՝ յանձնէ ինչ խօսիցի, այլ զոր լսիցէ՝ խօսիցի, եւ զգալոցն պատմեսցէ ձեզ։
14 Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ առնիցէ եւ պատմեսցէ ձեզ։ Զամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ թէ յիմմէ առնիցէ
16 եւ պատմեսցէ ձեզ։ Փոքր մի՛ եւ ոչ եւս տեսանէք զիս, եւ ապա տակաւին մի՛ եւ տեսանիցէք զիս, եւ ես երթամ առ Հայր։
17 Ասէին ոմանք յաշակերտաց անտի ցմիմեանս, Ձի՞նչ է այս զոր ասէ ցմեզ թէ Փոքր մի՛ եւ ոչ տեսանէք զիս, եւ
18 դարձեալ տակաւին մի՛ եւ տեսանիցէք զիս, եւ թէ Ես առ Հայր երթամ։ Եւ
19 ասէին, Ձի՞նչ իցէ այն Փոքր մեւս եւս. չգիտեմք զի՞նչ խօսի։ Գիտաց Յիսուս եթէ կամէին ցնա հարցանել, եւ ասէ ցնոսա, Վասն այդորիկ խնդրէք ընդ միմեանս զի ասացի թէ Փոքր մի՛ եւ ոչ տեսանէք զիս, եւ դարձեալ առ-
20 տակաւին մեւս եւս՝ եւ տեսանիցէք զիս։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լայջիք եւ ողբասջիք դուք, եւ աշխարհ ինդասցէ. դուք սրտմնջիք, այլ սրտմուխ-
21 թիւն ձեր յուրախութիւն եղիցի։ Կին յորժամ ծնանիցի, սրտմուխթիւն ի նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ եւս յիշէ զինդուխթիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ
22 մարդ յաշխարհ։ Եւ դուք այժմ սրտմուխթիւն ունիք, այլ դարձեալ տեսից զձեզ, եւ ուրախ լիցին սիրտք ձեր. եւ զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ
23 ի ձենջ։ Եւ յայնմ աւուր զիս ոչ հարցանիցէք։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յա-
24 նուն իմ՝ տացէ ձեզ։ Մինչեւ ցայժմ ոչինչ խնդրեցէք յանուն իմ. խնդրեցէք եւ առնուցուք, զի ուրախու-
25 թիւնն ձեր լցեալ եղիցի։ Զայս առակօք խօսեցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ յորժամ ոչ եւս առակօք խօսեսցայ ընդ ձեզ, այլ յայտնապէս զՀօրէ
26 պատմեցից ձեզ։ Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ. եւ ոչ ասեմ ձեզ եթէ ես աղաչեցից զՀայր վասն ձեր.
27 Զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ, զի դուք զիս սիրեցէք, եւ հաւատացէք
28 եթէ ես յԱստուծոյ ելի։ Ելի ի Հօրէ եւ եկի յաշխարհ, զարձեալ թողում զաշխարհ եւ երթամ առ Հայր։
29 Ասեն նմա աշակերտքն, Ահա արդ յայտնութեամբ խօսիս, եւ ոտակ եւ
30 ոչ մի ինչ ասես։ Այժմիկ գիտեմք եթէ գիտես զամենայն, եւ ոչինչ պիտոյ է եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ հա-
31 ւատամք եթէ յԱստուծոյ ելեր։ Պատասխանի եւս նոցա Յիսուս եւ ասէ,
32 Այժմ հաւատա՞ք. Ահա եկեսցէ ժամ եւ եկեալ իսկ է, զի ցրուեսջիք իւրաքանչիւր տեղիս, եւ զիս միայն թո-
33 ղուցուք. եւ ևեմ միայն, զի Հայր ընդ իս է։ Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք. յաշխարհի

ասա նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի։

ԳԼ. ԺԷ

1 Զայս իրրեւ խօսեցաւ Յիսուս, ամբարձ զաչս իւր յերկինս եւ ասէ, Հայր, հասեալ է ժամ, փառաւորեա զՈրդի քո, զի եւ Որդի քո փառաւորեսցէ
2 զքեզ։ Որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ, զի ամենայնի զոր ետուր նմա՝ տացէ զկեանսն յաւիտենական։
3 Եւ այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, եւ զոր առաքեցեր՝ զՅիսուս Քրիստոս։
4 Ես զքեզ փառաւորեցի յերկրի. զգործն կատարեցի
5 զոր ետուր ցիս զի արարից։ Եւ այժմ փառաւորեա զիս, Հայր, առ ի քէն փառօքն զոր ունէի յառաջ քան զլինելն
6 աշխարհի առ ի քէն։ Յայտնեցի զանունն քո մարդկան զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, եւ ինձ ետուր
7 զնոսա, եւ զբանն քո պահեցին։ Արդ գիտացին եթէ զամենայն ինչ զոր ե-
8 տուր [1]ինձ՝ ետուր նոցա. եւ՝ նոքա ընկալան եւ ծանեան ճշմարտութեամբ թէ առ ի քէն ելի, եւ հաւատացին
9 եթէ զու առաքեցեր զիս։ Արդ ես վասն նոցա աղաչեմ. եւ ոչ վասն աշխարհի աղաչեմ, այլ վասն նոցա զորս ետուրն
10 ինձ, զի քո են։ Եւ որ ինչ իմ է՝ ամենայն քո է. եւ որ ինչ քո է՝ այն իմ է, եւ փառաւորեալ եմ ի նոսա։
11 Եւ ես ոչ եւս եմ յաշխարհի, եւ նոքա յաշխարհի են, եւ ես առ քեզ գամ. Հայր սուրբ, պահեա զնոսա յանունն քո, [2]որով ետուրն ինձ, զի եղիցին
12 մի, որպէս եւ մեք մի եմք։ Մինչ էի [3]յաշխարհի ընդ նոսա, ես պահէի զնոսա յանունն քո, [2]որով ետուրն ինձ, եւ պահեցի. եւ ոչ ոք ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորստեան, զի գիրն
13 լցի։ Բայց արդ առ քեզ գամ, եւ զայս խօսիմ յաշխարհի, զի ունիցին զուրախութիւնն իմ լիով յանձինս իւրեանց։
14 Ես ետուր նոցա զբանն քո, եւ աշխարհս ատեաց զնոսա. զի չեն յաշխարհէ, որպէս եւ ես չեմ յաշխարհէ։
15 Ոչ զայս աղաչեմ զի բարձցես զնոսա յաշխարհէ, այլ զի պահեսցես զնոսա
16 ի չարէ։ Յաշխարհէ աստի չեն, որպէս
17 եւ ես չեմ յաշխարհէ։ Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո
18 բանդ ճշմարտութիւն է։ Որպէս զիս առաքեցեր յաշխարհ, եւ ես առաքեցի զնոսա յաշխարհ։
19 Եւ ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին եւ նոքա սրբեալք ճշմարտութեամբ։
20 Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ եւ վասն ամենայն հաւատացելոց բա-
21 նիւն նոցա յիս. Զի ամենեքին մի իցեն, որպէս զու, Հայր, յիս, եւ ես ի քեզ, զի եւ նոքա ի մեզ իցեն. զի եւ աշխարհ հաւատասցէ եթէ զու ա-
22 ռաքեցեր զիս։ Եւ ես զփառսն զոր ետուր ինձ՝ ետու նոցա, զի իցեն մի,
23 որպէս եւ մեք մի եմք։ Ես ի նոսա, եւ զու յիս, զի եղիցին կատարեալք ի մի. եւ գիտասցէ աշխարհ եթէ զու առաքեցեր զիս. եւ սիրեցի զնոսա,
24 որպէս զու զիս սիրեցեր։ Հայր, զորս ետուրն ինձ, կամիմ զի ուր ես եմ, եւ նոքա իցեն ընդ իս, զի տեսանիցեն զփառսն զիմ զոր ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աշ-
25 խարհի։ Հայր արդար, եւ աշխարհ զքեզ ոչ ծանեաւ, այլ ես զքեզ ծանեայ. եւ նոքա ծանեան եթէ զու ա-
26 ռաքեցեր զիս։ Եւ ծանուցի նոցա զանունն քո եւ ծանուցից. զի սէրն զոր սիրեցեր զիս՝ ի նոսա իցէ, եւ ես ի նոսա։

ԳԼ. ԺԸ

1 Զայս իրրեւ ասաց Յիսուս, ել աշակերտաւքն հանդերձ յայնկոյս ձորոյն կեդրոնիմի, ուր էր պարտէզ, յոր ե-
2 մուտ ինքն եւ աշակերտքն իւր։ Գիտէր եւ Յուդա որ զնայն մատնիչոյ էր՝ զտեղին, զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յիսուսի աշակեր-
3 տօքն հանդերձ։ Եւ Յուդայի առեալ ընդ իւր զզունդն, եւ ի քահանայապետիցն եւ ի փարիսեցւոց սպասաւորս, գայ անդր ջահիւք եւ լապտեր
4 օք եւ զինուք։ Իսկ Յիսուս իրրեւ գտես զայն ամենայն եկեալ ի վերայ նորա, ել եւ ասէ ցնոսա, Զո՞ խնդրէք։

---

[1] Յոյն, ինձ՝ առ ի քէն են. (8) Զի զբանն զոր տուր ետուր ինձ՝ ետու Նոցա. և
[2] Բառարար, զոր, այլ՝ զորս
[3] Ի բառարան պակաս

5 Պատասխանի եառնն նմա, ՅԻսուս
Նազովրեցի։ Ասէ ցնոսա Իսուս, Ես
եմ։ կայր ընդ նոսա եւ Յուդա որ
6 մատնէրն զնա։ Իբրեւ ասաց թէ Ես
եմ, յետս յետս չոգան եւ զարկան
7 զգետնի։ Դարձեալ հարց զնոսա, Զո՞
խնդրէք։ Եւ նոքա ասեն, ՅԻսուս
8 Նազովրեցի։ Պատասխանի եաւ նոցա
Իսուս, Ասացի ձեզ թէ Ես եմ. արդ
եթէ զիս խնդրէք, թոյլ առէք զոցա
9 երթալ։ Զի լցցի բանն զոր ասաց թէ
Զորս եաւրն ցիս՝ ոչ կորուսի ի նո-
10 ցանէ եւ ոչ զոք։ Իսկ Սիմովն Պետ-
րոս քանզի սուր էր, ձգեաց զնա,
եհար զքահանայապետին ծառայ, եւ
ի բաց առ զունկն նորա զաջոյ. եւ էր
11 անուն ծառային Մալքոս։ Ասէ Իսուս
ցՊետրոս, Արկ զսուրդ անդրէն ի պա-
տեանս իւր. զբաժակն զոր ետ ինձ
Հայր՝ ո՞չ ըմպիցեմ զնա։
12 Իսկ զունդն եւ հազարապետն եւ
սպասաւորք Հրէիցն կալան զՅիսուս
13 եւ կապեցին. Եւ ածին զնա նախ առ
Աննա որ էր աներ Կայիափայի, որ
քահանայապետն էր տարւոյն այնորիկ։
14 Այս այն Կայիափա էր որ խրատն եաւ
Հրէից եթէ լաւ է առն միում մեռա-
15 նել ի վերայ ժողովրդեանն։ Եւ երթա-
յին զետ Իսուսի Սիմովն Պետրոս
եւ մեւս աշակերտն. եւ աշակերտն
այն, քանզի ծանօթ էր քահանայա-
պետին, եմուտ ընդ Իսուսի ի դաւիթ
16 քահանայապետին։ Եւ Պետրոս կայր
առ դրանն արտաքոյ. եկ մեւս աշա-
կերտն որ էր ծանօթ քահանայապե-
տին, եւ ասաց ցդռնապանն եւ եմոյծ
17 ի ներքս զՊետրոս։ Ասէ աղջիկն որ
դռնապանն էր՝ ցՊետրոս, Միթէ եւ
դո՞ւ յաշակերտաց առնն այնորիկ իցես։
18 Եւ նա ասէ, Ոչ եմ։ Կային անդ ծա-
ռայքն եւ սպասաւորք խարոյկ ար-
կեալ, քանզի ցուրտ էր, եւ ջեռնուին.
կայր ընդ նոսա եւ Պետրոս եւ ջեռնոյր։
19 Եւ քահանայապետն եհարց զՅիսուս
վասն աշակերտացն եւ վասն վարդա-
20 պետութեան նորա։ Պատասխանի եաւ
նմա Իսուս, Ես յայտնապէս խօսե-
ցայ աշխարհի. ես յամենայն ժամ ու-
սուցի ի ժողովրդեանն, եւ ի տաճարի
անդ ուր ամենայն Հրեայք ժողովեալ
էին, եւ ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ։
21 Զի՞ հարցանես զիս, հարց զայնոսիկ
որ լուան, թէ ինչ խօսեցայ ցնոս-
սա. ահաւասիկ նոքա գիտեն զինչ խօ-
22 սեցայ։ Իբրեւ նա զայն ասաց, մի ոմն
ի սպասաւորացն որ անդ կայր, ած
ապտակ Իսուսի եւ ասէ, Այդպէս
պատասխանի տաս քահանայապետիդ։
23 Եւ Իսուս ասէ ցնա, Եթէ չար ինչ
խօսեցայ, վկայեա վասն չարին, իսկ
24 եթէ բարւոյ, ընդէ՞ր հարկանես զիս։ Եւ
առաքեաց զնա Աննա կապեալ առ կա-
25 յիափա քահանայապետ։ Եւ Սիմովն
Պետրոս կայր անդ եւ ջեռնոյր. ասեն
ցնա, Միթէ եւ դո՞ւ յաշակերտաց ան-
տի նորա իցես։ Նա ուրացաւ եւ ասէ
26 թէ Չեմ։ Եւ ասէ մի ոմն ի ծառայից
քահանայապետին, ազգական այնորիկ
զորոյ զունկն եհատ Պետրոս, Ո՞չ ես
իսկ տեսի զքեզ ի պարտիզի անդ ընդ
27 նմա։ Դարձեալ ուրացաւ Պետրոս, եւ
վազվազակի հաւ խօսեցաւ։
28 Եւ ածին զՅիսուս ի վանացն Կայիա-
փայ յապարանս դատաւորին, եւ էր
այգուց. եւ նոքա ոչ մտին յապա-
րանսն, զի մի՛ պղծեսցին, այլ զի ու-
29 տիցեն զզատիկն։ Ել առ նոսա Պի-
զատոս արտաքս եւ ասէ, Զի՞նչ չա-
րախօսութիւն մատուցանէք զառնէն
30 զայնմանէ։ Պատասխանի եաւրն եւ
ասեն ցնա, Եթէ չէր չարագործ այրն
այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ։
31 Ասէ ցնոսա Պիզատոս, Առէք զնա դուք,
եւ ըստ ձերոց օրինացն դատեցարուք։
Ասեն ցնա Հրեայքն, Մեզ ոչ է արժան
32 սպանանել զոք։ Զի լցցի բանն Ի-
սուսի զոր ասաց, նշանակեալ թէ ո-
33 րով մահու մեռանելոց իցէ։ Եմուտ
միւսանգամ յապարանսն Պիզատոս,
կոչեաց զՅիսուս եւ ասէ ցնա, Դո՞ւ
34 ես թագաւորն Հրէից։ Պատասխանի
եաւ Իսուս, Ի քէ՞ն ասես զայդ եթէ
35 այլք ասացին քեզ զինէն։ Պատասխա-
նի եաւ Պիզատոս, Միթէ՝ եւ ես Հրեայ
իցեմ. ազգն քո եւ քահանայապետք
մատնեցին զքեզ ինձ. զի՞նչ գործ գոր-
36 ծեալ է քո։ Պատասխանի եաւ Իսուս,
Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ.
եթէ յայսմ աշխարհէ ասէի էր արքայու-
թիւնն իմ, սպասաւորքն իմ մարտն
չէին արդեւք զի մի՛ մատնեցայ Հրէից,
բայց արդ թագաւորութիւնն իմ չէ
37 աստի։ Ասէ ցնա Պիզատոս, Ապա թէ
այդպէս իցէ, թագաւո՞ր ոմն ես դու։

Պատասխանի ետ Յիսուս, Դու ասես
թէ թագաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ
ծնեալ եմ, եւ ի դոյն իսկ եկեալ եմ
յաշխարհ, զի վկայեցից ճշմարտու-
թեանն. ամենայն որ ի ճշմարտութենէ
38 է՝ լսէ բարբառոյ իմոյ: Ասէ ցնա Պի-
զատոս, Զի՞նչ է ճշմարտութիւն: Զայս
իբրեւ ասաց, դարձեալ ել առ Հրեայսն
եւ ասէ ցնոսա, Ես եւ ոչ մի ինչ
39 պատճառս դատանեմ ի նմա: Բայց է ձեր
սովորութիւն, զի զմի ոք արձակեցից
ձեզ ի զատկիս. արդ կամի՞ք զի ար-
40 ձակեցից ձեզ զթագաւորն Հրէից: Ա-
զաղակեցին ամենեքեան եւ ասէին,
Մի՛ զդա, այլ զԲարաբբա. եւ էր Բա-
րաբբայն այն աւազակ:

ԳԼ. ԺԹ

1 Յայնժամ ա՛ռ Պիղատոս զՅիսուս եւ
2 դան հետ: Եւ զինուորքն արարեալ
պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ նորա,
եւ զգեցուցին նմա հանդերձ ծիրանի.
3 [1]Եւ գային առ նա՝ եւ ասէին, Ողջ
կեր, արքայ Հրէից. եւ հանէին նմա
4 ապտակս: Եւ դարձեալ Պիղատոս ար-
տաքս եւ ասէ ցնոսա, Ահա ածեմ զնա
արտաքս առ ձեզ, զի գիտասջիք թէ
5 ես զնաս ինչ ի նմա ոչ գտանեմ: Եւ
Յիսուս արտաքս, եւ ունէր պսակ ի
փշոց եւ հանդերձ ծիրանի. եւ ասէ
6 ցնոսա, Ահա այրդ [2]զձեզ: Իրրեւ տե-
սին զնա քահանայապետքն եւ սպա-
սաւորք, զաղաղակ [1]բարձին եւ ասեն,
Ի խաչ հան, ի խաչ հան [1]զդա. ասէ
ցնոսա Պիղատոս, Առէք զդա ի ձեզ,
եւ ձեղէն հանէք ի խաչ. զի ես ի դմա
7 զնաս ինչ ոչ գտանեմ: Պատասխանի
ետուն նմա Հրեայքն, Մեք օրէնս ու-
նիմք, եւ ըստ օրինացդ մերոյ պարտի
մեռանել, զի զանձն իւր Որդի Աստու-
8 ծոյ արար: Իրրեւ լուաւ զբանս դայս
9 Պիղատոս, առաւել եւս երկեաւ: Ե-
մուտ պարձեալ անդրէն յապարանսն,
եւ ասէ ցՅիսուս, Ուստի՞ ես դու. եւ
10 Յիսուս ոչ ետ նմա պատասխանի: Ասէ
ցնա Պիղատոս, Ընդ իս ո՞չ խօսիս, ո՞չ
գիտես եթէ իշխանութիւն ունիմ հա-
նել զքեզ ի խաչ, եւ իշխանութիւն
11 ունիմ արձակել զքեզ: Պատասխանի
ետ Յիսուս, Ոչ ունէիր դու իշխանու-
թիւն ի վերայ իմ եւ ոչ մի, եթէ ոչ
էր տուեալ քեզ ի վերուստ. վասն այ-
նորիկ որ մատնեացն զիս քեզ, նորա
12 մեծ մեղք են: Եւ յայնմանէ Պիղատոս
խնդրէր արձակել զնա. եւ Հրեայքն
աղաղակէին եւ ասէին, Եթէ զդա ար-
ձակես, չես բարեկամ կայսեր. ամե-
նայն ոք որ թագաւոր կոչէ զանձն
13 իւր, հակառակ է կայսեր: Իսկ Պիղա-
տոս իբրեւ լուաւ զբանս զայսոսիկ,
ած զՅիսուս արտաքս. եւ նստաւ ի
վերայ բեմին ի տեղւոջն որ կոչէր
Քարայատակ, եւ Եբրայեցերէն կապ-
14 պաթա: (Էր ուրբաթն զատկի, եւ
էր ժամ իբրեւ վեցերորդ,) եւ ասէ
ցՀրեայսն, Ահա թագաւորդ ձեր [2]ձեզ:
15 Եւ նոքա աղաղակէին, Բարձ [2]ի մէնջ,
բարձ [2]ի մէնջ, եւ հան զդա ի խաչ:
Ասէ ցնոսա Պիղատոս, Ես զթագա-
ւորդ ձեր ի խա՞չ հանիցեմ: Պատաս-
խանի ետուն քահանայապետքն, Չիք
16 մեր թագաւոր բայ ի կայսերէ: Յայն-
ժամ ետ զնա ի ձեռս նոցա, զի ի խաչ
եւ հանիցէ:

17 Եւ նոքա առեալ տանէին զնա. եւ
բարձեալ էր ինքնին զխաչափայտն, եւ
եւ ելանէր ի տեղին որ անուանեալ էր
Գողգոթան, եւ կոչէր Եբրայեցերէն
18 Գողգոթա. Ուր եւ ի խաչն իսկ հանին
զնա, եւ ընդ նմա երկուս եւս այլս
աստի եւ անտի, եւ ի մէջի զՅիսուս:
19 Գրեաց եւ տախտակ մի Պիղատոս, եւ
եդ ի վերայ խաչին. եւ էր գրեալ, ՅԻ-
ՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ, ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ:
20 Զայն տախտակ ընթերցան բազումք
ի Հրէից, զի մօտ էր ի քաղաք անդր
տեղին ուր խաչեցաւն Յիսուս. եւ էր
գրեալ Եբրայեցերէն, Դաղմատերէն եւ
21 Յունարէն: Ասեն ցՊիղատոս քահա-
նայապետքն Հրէից, Մի՛ գրեր Թա-
գաւոր Հրէից, այլ թէ Նա ասաց, Թա-
22 գաւոր եմ Հրէից: Պատասխանի ետ
Պիղատոս, Զոր ինչ գրեցի՝ գրեցի:

23 Իսկ զինուորքն իրրեւ հանին ի խաչ
զՅիսուս, առին զհանդերձս նորա եւ
արարին չորս մասունս, իւրաքանչիւր
զինուորի մասն. իսկ զպատմուճանն,
քանզի էր առանց կարանի ի վերուստ
24 փոքանկեալ ամենեւին, Ասեն ցմի-
մեանս, Մի՛ պատառեսցուք զայդ, այլ
արկցուք վիճակս ի վերայ դորա ումն

[1]Յոյնն պակաս [2]ի Յոյնն պակաս

եւ ելցէ՝ զի լցցի դիրն որ ասէ, Բաժանեցան զհանդերձս իմ յիւրեանս, եւ
25 ի վերայ պատմուճանիս իմոյ վիճակ արկին։ Զինուորքն զայս ինչ գործեցին։
Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն նորա, եւ քոյր մօր նորա, Մարիամ
26 Կղէովպայ, եւ Մարիամ Մագդաղենացի։ Յիսուս իրրեւ տեսս զմայրն
եւ զաշակերտն զոր սիրէր, զի կայր մօտ, ասէ ցմայրն, Կին զուա, ահա
27 որդի քո։ Ապա ասէ ցաշակերտն, Ահա մայր քո։ Եւ յայնմ ժամանակէ ա՛ռ
աշակերտն զնա առ իւր։
28 Ցետ այսորիկ իրրեւ գիտաց Յիսուս եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է,
(զի կատարեսցի գրին,) ասէ, Ծարաւի
29 եմ։ Եւ անդ կայր աման լի քացախով. եւ նոցա սպունգ լցեալ քացախով [1]ընդ լեզուս՝ չուրջ եդեալ զխաչա-
30 կաւ զոպայի մատուցին ի բերան նորա։ Իրրեւ ա՛ռ Յիսուս զքացախն [1]հանդերձ լեզուովն՝ ասէ, [2]Ամենայն ինչ՝ կատարեալ է. եւ խոնարհեցուցեալ
զգլուխն՝ աւանդեաց զոգին։
31 Իսկ Հրեայքն, քանզի ուրբաթ էր, զի մի՛ անդէն ի խաչին ազանիցին մարմինքն մինչեւ ցշաբաթն, (զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ,) աղաչեցին
32 զՊիղատոս զի խորտակեսցեն զբարձս նոցա եւ բարձցին։ Եկին զինուորքն
եւ զառաջինոյն խորտակեցին զբարձս, նոյնպէս եւ զմիւսոյն որ ընդ նմա ի
33 խաչն եդեալ էր։ Բայց իրրեւ եկին առ Յիսուս, եւ տեսին զի այն ինչ մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս նո-
34 րա. Այլ մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նորա, եւ վաղվաղակի
35 ել արիւն եւ ջուր։ Եւ որ տեսան՝ վկայեաց, եւ ճշմարիտ է վկայութիւն նորա, եւ նա գիտէ թէ ճշմարիտ ասէ,
36 զի եւ դուք հաւատասջիք։ Այս եղեւ զի լցցի գրին եթէ Ոսկր նորա մի՛
37 փչեսցի։ Եւ դարձեալ մեւս գիր ասէ եթէ Հայեսցին ի նա յոր խոցեցին։
38 Ցետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ որ յԱրիմաթեայ էր, աշակերտ Յիսուսի ի ծածուկ վասն ահին Հրէից, զի բարձցէ զմարմինն Յիսու-
սի. եւ հրամայեաց Պիղատոս։ [3]Եկին
39 եւ բարձին զնա։ Եկն եւ Նիկոդեմոս որ եկեալն էր առ Յիսուս ի գիշերի
զառաջինն, եւ երեր զմուռս խառն ընդ հալուէս իրրեւ լտեսս հարեւր։
40 Առին զմարմինն Յիսուսի, եւ պատեցին կտաւովք խնկովքն հանդերձ, որ-
41 պէս օրէն էր Հրէից պատել։ Եւ էր ի տեղւոջն յորում խաչեցաւ պարտէզ.
եւ ի պարտիզի անդ՝ գերեզման նոր
42 յորում ոչ ոք երբեք էր եդեալ։ Անդ վասն ուրբաթուն Հրէից, զի մօտ էր գերեզմանն, եդին զՅիսուս։

Գլ. Ի

1 Եւ ի միաշաբաթուոջն Մարիամ Մագդաղենացի գայ առաւօտուն ընդ արշաւղոյն ի գերեզման անդր, եւ տեսանէ զվէմն բարձեալ [4]ի դրաց գերեզմա-
2 նին։ Ապա ընթանայ եւ գայ առ Սիմոնէ Պետրոս եւ առ մեւս աշակերտն
զոր սիրէր Յիսուս, եւ ասէ ցնոսա, Բարձին զՏէր ի գերեզմանէ անտի, եւ
3 ոչ գիտեմք ուր եդին զնա։ Ել Պետրոս եւ մեւս աշակերտն եւ գային ի
4 գերեզմանն։ Ընթանային երկոքին ի միասին, եւ մեւս աշակերտն յառաջեաց ընթացաւ վաղագոյն քան զՊետ-
5 րոս եւ եկն նախ ի գերեզմանն։ Եւ խոնարհեալ տեսանէ զի կային անդ կտաւքն, բայց ի ներքս ոչ եմուտ։
6 Եկն եւ Սիմոնէ Պետրոս որ գայր զկնի նորա, եւ եմուտ ի գերեզմանն,
եւ տեսանէ զկտաւսն զի կային անդ.
7 Եւ վարշամակն որ էր ի գլուխ նորա, ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն
8 ծալեալ ի մի կողմն։ Այնժամ եմուտ եւ մեւս աշակերտն, որ եկեալն էր յառաջագոյն ի գերեզմանն, տեսս եւ
9 հաւատաց։ Զի չեւ եւս գիտէին զգիրս թէ պարտ է նմա ի մեռելոց յառնել։
10 Գոդան գարձեալ առ միմեանս աշակերտքն։
11 Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին եւ լայր. եւ մինչդեռ լայր,
12 խոնարհեցաւ ի գերեզմանն։ Եւ տեսանէ երկուս հրեշտակս ի սպիտակս, զի նստէին մի ի մնարից եւ մի յանուսից

[1] Ի բաղմս պակաս
[2] Ի յոնէն պակաս

[3] Բազմ., եկն եւ երբած զմարմին նորա, այլ՝ եկն եւ երբած զմարմինն Յիսուսի
[4] Որով, ի գերեզմանէն

13 ուր կայր մարմինն Յիսուսի։ Եւ նոքա
ասեն ցնա, Կին դու, ընդէ՞ր լաս։ Ասէ
ցնոսա, Զի բարձին զՏէրն իմ [1]ի դե-
րեզմանէ աստի՛, եւ ոչ գիտեմ ուր
14 եդին զնա։ Զայս իրրեւ ասաց, դար-
ձաւ ի թիկունս կոյս, եւ տեսանէ զՅի-
սուս ղի կայր. եւ ոչ գիտէր թէ Յի-
15 սուս իցէ։ Ասէ ցնա Յիսուս, Կին դու,
ընդէ՞ր լաս, զո՞ խնդրես։ Նմա այսպէս
Թուեցաւ թէ պարտիզպանն իցէ, ասէ
ցնա, Տէր, եթէ դու բարձեր զնա,
ասա ինձ ուր եդիր զնա, զի ես առից
16 զնա։ Ասէ ցնա Յիսուս, Մարիամ։ Եւ
նա գարձաւ եւ ասէ ցնա [2]Եբրայեցե-
րէն, Բաբբունի, որ Թարգմանի Վար-
17 գապետ։ Ասէ ցնա Յիսուս, Մի՛ մերձ-
ենար յիս, զի չեւ եւս երեալ եմ առ
Հայր իմ. այլ երթ դու առ եղբարս
իմ, եւ ասա ցնոսա, Ելանեմ ես առ
Հայրն իմ եւ առ Հայր ձեր, եւ Աս-
18 տուածն իմ եւ Աստուած ձեր։ Գայ
Մարիամ Մագդաղենացի եւ պատմէ
աշակերտացն եթէ տեսա նա զՏէր, եւ
զայս ինչ ասաց ցնա։
19 Եւ էր երեկոյ ի միաշաբաթուոջ ա-
ւուրն, եւ դրօք փակելովք ուր էին
աշակերտքն ժողովեալ վասն ահին
Հրէից, եկն Յիսուս եւ եկաց ի միջի
նոցա, եւ ասէ ցնոսա, Ողջոյն ընդ
20 ձեզ։ Իրրեւ զայս ասաց, ետոյ նոցա
զձեռս եւ զկողն իւր. եւ խնդացին
21 աշակերտքն իրրեւ տեսին զՏէր։ Ասէ
ցնոսա դարձեալ, Ողջոյն ընդ ձեզ, որ-
պէս առաքեաց զիս Հայր [1]իմ, եւ ես
22 առաքեմ զձեզ։ Եւ զայս իրրեւ ասաց,
փչեաց ի նոսա եւ ասէ, Առէք Հոգի
23 Սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս,
թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք ու-
նիցիք, կալեալ լիցի։
24 Իսկ Թովմաս, մի յերկոտասանիցն,
անուանեալն Երկուորեակ, ոչ էր ընդ
25 նոսա յորժամ եկն Յիսուս։ Ասէին ցնա
այլ աշակերտքն, եթէ Տեսաք զՏէր.
եւ նա ասէ ցնոսա, Եթէ ոչ տեսից ի
ձեռս նորա զնչան բեւեռացն, եւ ար-
կից զմատունս իմ ի տեղիս բեւեռացն,
եւ մխեցից զձեռս իմ ի կողս նորա,
ոչ հաւատամ։
26 Եւ յետ ութ աւուր դարձեալ էին
ի ներքս աշակերտքն, եւ Թովմաս ընդ
նոսա. գայ Յիսուս դրօքն փակելովք
եւ եկաց ի մէջ, եւ ասէ, Ողջոյն ընդ
27 ձեզ։ Ապա ասէ ցԹովմաս, Բեր զմա-
տունս քո եւ արկ այսր եւ տես զձեռս
իմ, եւ բեր զձեռն քո եւ մխեա ի կողս
իմ, եւ մի՛ լինիր անհաւատ, այլ հա-
28 ւատացեալ։ Պատասխանի ետ Թովմաս
եւ ասէ ցնա, Տէր իմ եւ Աստուած իմ։
29 Ասէ ցնա Յիսուս, Այդ զի տեսերդ
զիս եւ հաւատացեր. երանի որոց ոչ
իցէ տեսեալ եւ հաւատասցեն։
30 Բազում եւ այլ նշանս արար Յիսուս
առաջի աշակերտաց իւրոց, որ ոչ է
31 գրեալ ի գիրս յայսմիկ։ Այլ այս այն-
չափ ինչ գրեցաւ, զի հաւատայցէք եթէ
Յիսուս՝ Քրիստոս է, Որդի Աստուծոյ.
եւ զի հաւատայցէք եւ զկեանսն յաւի-
տենականս ընդունիցիք յանուն նորա։

Գլ. ԻԱ

1 Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց
զանձն իւր Յիսուս աշակերտացն իւ-
րոց առ ծովեզերբն Տիբերեայ, եւ
2 յայտնեաց այսպէս. Էին ի միասին Սի-
մովն Պետրոս, եւ Թովմաս անուանե-
եալն Երկուորեակ, եւ Նաթանայէլ որ
ի Կանայ Գալիլեացւոց, եւ որդիքն Զե-
բեդեայ, եւ այլք յաշակերտաց անտի
3 երկուս։ Ասէ ցնոսա Սիմովն Պետրոս,
Երթամ ձուկն որսալ։ Ասեն ցնա,
Գամք եւ մեք ընդ քեզ։ Գնացին եւ
մտին ի նաւ, եւ յայնմ գիշերի կալան
4 եւ ոչինչ։ Իրրեւ այգ եղեւ, կայր Յի-
սուս յեզր ծովուն, բայց ոչ ծանեան
5 աշակերտքն թէ Յիսուս իցէ։ Ասէ
ցնոսա Յիսուս, Մանկունք, միթէ ու-
նի՞ք ինչ ուտելոյ։ Պատասխանի ետուն
6 եւ ասեն ցնա, Ոչ։ Ասէ ցնոսա, Ա-
կէք յաջակողմն նաւին զուռկանդ եւ
գտանիցէք։ Արկին, եւ ոչ կարէին
ձգել ի բազմութենէ անտի ձկանցն։
7 Ասէ աշակերտն այն զոր սիրէրն Յի-
սուս՝ ցՊետրոս, Տէր է այն։ Սիմովն
Պետրոս իրրեւ լուաւ թէ Տէր է, ար-
կաւ զիւրեւն զսիաձանելին, քանզի
8 մերկ էր, եւ ընկէց զինքն ի ծովն։ Եւ
այլ աշակերտքն նաւաւն իսկ գային,
քանզի չէին հեռի ի ցամաքէն, այլ
իրրեւ երկերիւր կանգնաւ, քարչէին
9 զզօրծին հանդերձ ձկամբքն։ Իրրեւ
ելին ի ցամաք, տեսանեն կրակեղ

[1]ի յ--նէն գրո--ե [2]Յ--մա--ն գրո--ե

կայծականց եւ ձուկն մի ի վերայ եւ
10 *հաց։ Ասէ ցնոսա Յիսուս, Բերէք ի*
ձկանց այսր զոր դուքդ կալարուք
11 *այժմիկ։ Ելեալ Սիմովն Պետրոս, եւ*
ձգէը զպարծին ի ցամաք լի մեծամեծ
ձկամբք հարեւր յիսուն եւ երիք, եւ
այնչափ ինչ կայր եւ ոչ պատառեցաւ
12 *պարծին։ Ասէ ցնոսա Յիսուս, Եկայք*
ճաշեցէք։ Եւ ոչ ոք յաշակերտացն իշ-
խէր հարցանել ի Դու ո՞վ ես, զի գի-
13 *տէին իբր Տէրն է։ Գայ Յիսուս եւ առ-*
նու զհացն եւ տայ նոցա, նոյնպէս եւ
14 *զձուկնն։ Զայս երիցս անգամ երեւե-*
ցաւ Յիսուս աշակերտացն յարուցեալ
ի մեռելոց։
15 *Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցՍիմովն*
Պետրոս Յիսուս, Սիմովն Յովհաննու,
սիրե՞ս զիս առաւել քան զդոսա։ Ասէ
ցնա, Այո, Տէր, եւ դու գիտես զի սի-
րեմ զքեզ։ Ասէ ցնա, Արածեա զգա-
16 *ռինս իմ։ Դարձեալ ասէ ցնա, Սիմովն*
Յովհաննու, սիրե՞ս զիս։ Ասէ ցնա,
Այո, Տէր, եւ դու գիտես զի սիրեմ
զքեզ։ Ասէ ցնա, Արածեա զոչխարս
17 *իմ։ Ասէ ցնա երիցս անգամ, Սիմովն*
Յովհաննու, սիրե՞ս զիս։ Տրտմեցաւ
Պետրոս, զի ասացն ցնա երիցս թէ
Սիրե՞ս զիս։ Եւ ասէ ցնա, Տէր, դու
գամենայն գիտես, եւ [1]դու իսկ գամե-
նայն ճանաչես եւ եթէ՝ սիրեմ զքեզ։
Ասէ ցնա Յիսուս, Արածեա զոչխարս
18 *իմ։ Ամէն ամէն ասեմ քեզ, զի մինչ*
մանուկն էիր, անձամբ անձին գօտի
ածէիր եւ երթայիր ուր եւ կամէիր։ Եւ
յորժամ ծերասցիս, ձեռս ի վեր կալ-
ցես, եւ այլք ածցեն քեզ գօտի, եւ
19 *տարցեն ուր ոչն կամիցիս։ Զայս ա-*
սաց նշանակեալ թէ որով մահու փա-
ռաւոր առնիցէ զԱստուած։ Եւ զայս
իբրեւ ասաց, ասէ ցնա, Ետ զկնի իմ։
20 *Դարձաւ Պետրոս եւ անտանէ գաշա-*
կերտն զոր սիրէր Յիսուս, զի երթայր
զկնի, (որ եւ անկաւ զլանջսն նորա
եւ ասէ, Տէր, ո՞վ է որ մատնելոցն է
21 *զքեզ։) Զնա տեսեալ Պետրոսի, ասէ*
22 *ցՅիսուս, Տէր, իսկ սա զի՞։ Ասէ ցնա*
Յիսուս, Եթէ կամիմ, զի կացցէ գա
մինչեւ ես գամ։ Քեզ զի՞ փոյթ է, դու
23 *ետ զկնի իմ։ Եւ էլ բանս այս ելեալ*
եւ համարեցան թէ աշակերտն այն ոչ
մեռանիցի։ Եւ ոչ ասաց նմա Յիսուս
եթէ Ոչ մեռանիցի, այլ [2]Թէ կամիմ
ես թէ կացցէ գա մինչեւ ես գամ[3]։
24 *Այս աշակերտ է որ վկայէ վասն*
այսոցիկ, որ եւ գրեացն իսկ գայսո-
սիկ։ Եւ գիտեմք եթէ ճշմարիտ է
25 *վկայութիւնն նորա։ Բայց է եւ այլ ինչ*
բազում զոր արար Յիսուս, զոր եթէ
գրեալ էր մի ըստ միոջէ, կարծեմ թէ
եւ ոչ աշխարհս բաւական էր տանել
զգիրսն որ թէ գրեալ էին։

---

[1]Յոյն, դու ճանաչես եթէ

[2]Յոյն, եթէ

[3]Բառ.ով յոսելոն, քեզ զի՞ փոյթ է

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

ՂՈՒԿԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Զբանն առաջին [1]զոր արարի վասն ամենայնի, ո՛ Թէոփիլէ, զոր սկսաւ
2 Յիսուս առնել եւ ուսուցանել, Մինչեւ յօրն պատուիրելոյ առաքելոցն ի Հոգւոյն Սրբոյ՝ զորս ընտրեացն, եւ
3 վերացաւ։ Որոց յանդիման կացոյց ինքն կենդանի յետ չարչարանացն իւրոց ի բազում ապուեսաս յաւուրս քառասուն երեւեալ նոցա, եւ ասել վասն
4 արքայութեանն Աստուծոյ։ Եւ ի հաղորդել ընդ նոսա հասից՝ պատուէր ետ նոցա յերուսաղէմ մի՛ մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր զոր լսա-
5 բեր ինէն։ Զի Յովհաննէս մկրտեաց ի ջուր, այլ դուք մկրտիցիք ի Հոգին Սուրբ, ոչ յետ բազում լինչ աւուրցս
6 այսոցիկ։ Եւ նոքա [2]մասուցեալ հարցանէին զնա եւ ասէին, Տէր, եթէ ի ժամանակի՞ ատ յայսմիկ հաստուցանես իցես զարքայութիւն Իսրայէլի։
7 Ասէ ցնոսա, Ոչ է ձեզ պիտել զժամս եւ զժամանակս, զոր Հայր եդ յիւ-
8 րում իշխանութեան։ Այլ առջիք զօրութիւն ի հառանել Հոգւոյն Սրբոյ ի վերայ ձեր. եւ եղիջիք ինձ վկայք յերուսաղէմ եւ յամենայն Հրէաստանի եւ ի Սամարիա եւ մինչեւ ի ծագ
9 երկրի։ Եւ զայս իրրեւ ասաց, մինչդեռ հայէին նոքա, վերացաւ. եւ ամպն
10 կալաւ զնա յաչաց նոցա։ Եւ մինչդեռ պչուցեալ հայէին ընդ երկինս երթալոյ նորա, եւ ահաւադիկ արք երկու երեւեցան նոցա ի հանդերձս սպիտակս,
11 Որք եւ ասացին, Արք Գալիլեացիք, ընդ ի՞նչ կայք հայեցեալ ընդ երկինս. սոյն Յիսուս որ վերացաւ ի ձէնջ յերկինս՝ այնպէս եկեսցէ զոր օրինակ տեսէք
12 զնա երթեալ յերկինս։ Ապա դարձան

[1] Ի ցառէն պռոտ

յերուսաղէմ յանուանեալ լեռնէն Զիթենեաց, որ է մերձ յերուսաղէմ ըստ
13 չաբաթուն ճանապարհի։ Եւ իբրեւ մտին, ելին ի վերնատունն ուր վանքն իակ էին, Պետրոս եւ Յակովբոս, Յովհաննէս եւ Անդրէաս, Փիլիպպոս եւ Թովմաս, Բարթողոմէոս եւ Մատթէոս, Յակովբոս Ալփեան եւ Շմաւոն Նախանձայոյզ եւ Յուդա Յակովբեան։
14 Սոքա ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս հանդերձ կանանիք եւ Մարեմամ մարդն Յիսուսի եւ եղբարբք նորա։
15 Ա։ Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս ի մէջ [3]եղբարցն՝ ասէ, (եւ էր անդ բազմութիւն անուանց
16 իրրեւ հարիւր եւ քսանից,) Արք եղբարք, պարտ էր կատարել զրոյն, զոր յառաջագոյն ասաց Հոգին Սուրբ ի բերանոյ Դաւթի վասն Յուդայի, որ եղեւ առաջնորդ ունելեացն Յիսուսի.
17 Զի ի թիւս մեր էր ընդ մեզ, եւ հասեալ էր նմա վիճակ պաշտամանս այ-
18 սորիկ։ Սա ստացաւ գեղ ի վարձուց անիրաւութեան, եւ [4]ուռուցեալ հեր-
ձաւ ընդ մէջ եւ հեղաւ ամենայն փոր
19 նորա։ Եւ յայտնի եղեւ ամենեցուն որ բնակեալ են յերուսաղէմ մինչեւ կոչել զեղջն այնմիկ բարբառով իւրեանց Ակեղդամա, այսինքն է՝ Գեղ
20 արեան։ Զի գրեալ է ի գիրս Սաղմոսաց, Եղիցի բնակութիւն նորա աւերակ, եւ մի՛ ոք իցէ որ բնակիցէ ի նմա. եւ, Զկարգ նորա առցէ այլ։
21 Արդ պարտ է յարանցս այսցանէ եկեալս ընդ մեզ յամենայն ժամանակի յորում մտաւ եւ ել առ մեզ Տէր Յի-
22 սուս, Սկսեալ ի մկրտութենէն Յովհաննու մինչեւ յօրն յորում վերացաւ

[2] Ի մռնէ, աշակերտացն
[3] Ի մռնէ, ժողովեալ
[4] Ցայն, անկեալ գլխիվայր

ի մէնջ, վկայ յարութեան նորա ընդ
23 մեզ լինել միում ի սոցանէ։ Եւ կա-
ցուցին երկուս, զՅովսէփ որում Բար-
սաբայն կոչէին, որ անուանեցաւն
24 Յուստոս, եւ զՄատաթիա։ Եւ կայ-
եալ յաղօթս ասեն, Դու, Տէր, սրտա-
գէտ ամենայնի, յայտնեա զմի ոք զոր
25 ընտրեցեր ի սոցանէ յերկոցունց, Առ-
նուլ զվիճակ պաշտամանս այսորիկ եւ
առաքելութեան, յորմէ անկաւ Յու-
26 դաս գնալ ի տեղի իւր։ Եւ ետուն վի-
ճակս նոցա, եւ եղանէր վիճակն Մա-
տաթիայ, եւ համարեցաւ ընդ մեծա-
սան առաքեալսն։ ՎՋ

Գլ. Բ

1 Եւ ի կատարել աւուրցն Պենտակոս-
տէից[1] էին ամենեքեան միարան ի մի-
2 տսին։ Եւ եղեւ յանկարծակի հնչիւն
յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ հոգմոյ,
եւ ելից զամենայն տունն յորում նս-
3 տէին։ Եւ երեւեցան նոցա բաժանեալ
լեզուք իբրեւ ի հրոյ, եւ նստաւ ի-
4 րաքանչիւր ի վերայ նոցա։ Եւ լցան
ամենեքեան Հոգւով Սրբով, եւ սկսան
խօսել յայլ լեզուս որպէս եւ Հոգին
5 տայր բարբառել նոցա։ Եւ էին յերու-
սաղէմ բնակեալ Հրեայք, արք երկիւ-
ղածք, յամենայն ազգայ որ ի ներքոյ
6 երկնից։ Եւ իբրեւ եղեւ բարբառս այս,
եկն միարան խառնուածիւնն եւ խռնե-
ցաւ, զի լսէին յիւրաքանչիւր լեզուս
7 խօսել նոցա։ Աքանչանային ամենեք-
քեան եւ զարմանային եւ ասէին ընդ
միմեանս, ի՞նչ աւասիկ ամենեքեան
8 սոքա որք խօսին՝ Գալիլեացիք են։
9 Եւ զիա՞րդ լսեմք մեք իւրաքանչիւր
բարբառս մեր յորում ծնեալ եմք։ Պար-
թեւք եւ Մարք եւ Իլամացիք եւ որ
բնակեալ են ի Մեսոպոտամս, ի Հրէաս-
տանի եւ ի Դամիրս, ի Պոնտոս եւ
10 Յասիա, ի Փռիւգիա եւ ի Պամփիւլիա,
Եգիպտոս եւ ի կողմանս Լիբէացւոց
որ ընդ Կիւրենացիս եւ որ եկք Հռով-
11 մայեցիք, Հրեայք եւ եկք նոցուն,
Կրետացիք եւ Արաբացիք, լսեմք խօ-
սից նոցա ի մեր լեզուս զմեծամեծս
12 Աստուծոյ։ Աքանչանային ամենեքեան
զարմացեալք, եւ ասէին ցմիմեանս,
13 Զի՞նչ կամիցի այս լինել։ Եւ կիսոցն
ընդ խաղ արկեալ ասէին թէ Քաղ-
ցուալից իցեն։
14 Յարուցեալ Պետրոս հանդերձ մե-
տասանիւքն՝ ամբարձ զձայն իւր եւ
խօսեցաւ ընդ նոսա, Արք Հրէասա-
նեայք եւ որ բնակեալ էք յերուսաղէմ,
ամենեքեան, այս ձեզ յայտնի լիցի, եւ
15 ունկն դիք բանից իմոց։ Ոչ որպէս
դուք կարծէք թէ սոքա արբեալ իցեն,
16 զի դեւ երեք ժամ են աւուրս։ Այլ
այս է որ ասացաւ ի ձեռն մարգարէին
17 Յովելի։ Եւ եղիցի յետ այսորիկ յա-
ւուրս յետինս, ասէ Աստուած, հեղից
յՈգւոյ իմմէ ի վերայ ամենայն մարմ-
նոյ, եւ մարգարէասցին ուստերք ձեր
եւ դստերք ձեր, եւ երիտասարդք ձեր
տեսիլս տեսցեն, եւ ծերք ձեր երա-
18 զովք յերազեսցին։ Եւ ի վերայ ծառա-
յից իմոց եւ ի վերայ աղախնանց իմոց
յաւուրսն յայնոսիկ հնչից յՈգւոյ իմմէ,
19 եւ մարգարէասցին։ Եւ տաց նշանս
յերկինս ի վեր, եւ նշանս յերկիր ի
ներքոյ՝ արիւն եւ հուր եւ մրրիկ
20 ծխոյ։ Արեգակն դարձցի ի խաւար,
եւ լուսին՝ յարիւն, մինչեւ եկեալ
21 իցէ օր Տեառն մեծ եւ երեւելի։ Եւ
եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն
Տեառն՝ կեցցէ։
22 Բ. Արք Իսրայելացիք, լուարուք
զբանս զայսոսիկ. զՅիսուս Նազովրե-
ցի, զայր ցուցեալ յԱստուծոյ ի ձեզ
զօրութիւնս եւ նշանօք եւ արուես-
տիւք, զոր արար նոսա Աստուած
23 ի միջի ձերում, որպէս եւ դուք իսկ
զիտէք, Զնա, նկատեալ խորհրդով
եւ կանխագիտութիւնն Աստուծոյ
[2]մատնեալ, ի ձեռս՝ անօրինաց բեւեռ-
24 եալ ի փայտ սպանէք. Զոր Աստուած
յարոյց՝ լուծեալ զերկունս մահու,
քանզի ոչ էր հնար լսկրանել նմա ի
25 նմանէ։ Դաւիթ իսկ ասէ զնմանէ, Յա-
ռաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ
յամենայն ժամ, զի է ընդ աջմէ իմմէ,
26 զի մի՛ սասանեցայց. Վասն այսորիկ
ուրախ եղեւ սիրտ իմ, եւ ցնծացաւ
լեզու իմ, եւս եւ մարմին իմ բնա-
27 կեսցէ յուսով։ Զի ոչ թողցես զանձն
իմ ի դժոխս, եւ ոչ տացես Սրբոյ
քումդ տեսանել զապականութիւնն։

[1] Պենտեկոստէ, աւուրն Պենտեկոստէի

[2] Ձեռամբ, մատնեալ ասէք և ի ձեռն

28 Ծանուցեր ինձ զճանապարհս կենաց. լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց
29 քոյ [1]ի քաղցրութիւնէ : Արք եղբարք, պարտ է համարձակութեամբ ասել վասն նահապետին Դաւթի, զի եւ մեռաւ եւ թաղեցաւ, եւ գերեզման նորա կայ ի մեզ մինչեւ ցայսօր :
30 Զի մարգարէ էր, եւ դիտէր երդմամբ երդուաւ նմա Աստուած ի պտղոյ որովայնի [2]նորա նստուցանել՝ յաթոռ
31 նորա, Ճանաչելոյն ծանուցեալ իւսնցաւ վասն յարութեանն Քրիստոսի, զի ոչ թողաւ ոգի նորա ի դժոխս, եւ ոչ մարմին նորա եհաս զապականուե-
32 թիւն : Զայս Յիսուս յարոյց Աստուած,
33 որում ամենեքեան մեք վկայ եմք : Ա-ջմէն Աստուծոյ բարձրացեալ, զաւետիս Հոգւոյն Սրբոյ ընկալեալ ի Հօրէ՝ սփռեաց զայս, զոր դուք իսկ տեսա-
34 նէք եւ լսէք : Զի ոչ եղեւ Դաւիթ ել յերկինս, ասէ իսկ ինքն, Ասաց Տէր
35 ցՏէր իմ, Նիստ ընդ աջմէ իմմէ՝ Մինչեւ եղից զթշնամիս քո պատուանդան
36 ոտից քոց : Արդ ճշմարիտ գիտասցէ ամենայն տունդ Իսրայէլի, զի եւ Տէր զնա եւ Օծեալ՝ Աստուած արար, զայն Յիսուս զոր դուքն խաչեցէք :
37 Եւ լուեալ զայս՝ զղջացան ի սիրտս իւրեանց, եւ ասեն ցՊետրոս եւ ցայլ առաքեալսն, Զի՞նչ գործեսցուք, արք
38 եղբարք : Ասէ ցնոսա Պետրոս, Ապաշաւեցէք եւ մկրտեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ յանուն [3]Տեառն Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն մեղաց, եւ ընկալջիք զաւետիս Հոգւոյն Սրբոյ :
39 Զի ձեզ են աւետիքս եւ որդւոց ձերոց, եւ ամենայն հեռաւորաց զորս կոչես-
40 ցէ Տէր Աստուած մեր : Եւ այլովք բանիւք բազմօք վկայութիւն տէր, եւ մխիթարէր զնոսա եւ ասէր, Ապրեցարուք յազգէ աստի խոտորկոյ յայս-
41 մանէ : Ոմանք յօժարութեամբ ընկալեալ զբան նորա մկրտեցան, եւ յաւելան յաւուր յայնմիկ ոգիք իբրեւ երեք հազարք :
42 Գ. Եւ էին հանապազորդեալք վարդապետութեան առաքելոցն եւ հաղորդութեան եւ բեկանելոյ հացին եւ ա-
43 ղօթից : Եւ լինէր ամենայն անձին ահ եւ երկեւղ, եւ բազում նշանք եւ արուեստք ի ձեռս առաքելոցն գործէին :
44 Ամենայն հաւատացեալքն էին ի միասին, եւ ունէին զամենայն ինչ հա-
45 սարակաց : Եւ զտայրուածս եւ զինչս վաճառէին, եւ բաշխէին զայն ամենե-
46 ցուն ումմ զիարդ պիտոյ ինչ լինէր : Հանապազօր կանխեալ միաբանութեամբ ի տաճարն, եւ առանին բեկանէին զհացն, եւ առնուին կերակուր ուրախութեամբ եւ միամտութեամբ սրտի-
47 Օրհնէին զԱստուած եւ ունէին չընորհս առ ամենայն ժողովուրդն. եւ Տէր յաւելոյր [4]ի վերկեալսն հանապազօր ի նոյն՝ :

Գլ. Գ

1 Պետրոս եւ Յովհաննէս ելանէին ի տաճար անդր յիններորդ ժամու աղօ-
2 թիցն : Եւ էր այր մի կաղ յորովայնէ մօր իւրոյ զոր բարձեալ զնէին հանապազ առ դրան տաճարին, որ կոչէր Գեղեցիկ, խնդրել ողորմութիւն յայն-
3 ցանէ որ մտանէին ի տաճարն : Որոյ տեսեալ զՊետրոս եւ զՅովհաննէս զի մտանէին ի տաճարն, աղաչէր ողոր-
4 մութիւն առնուլ : Հայեցաւ ի նա Պետրոս Յովհաննու հանդերձ եւ ասէ,
5 Հայեաց ի մեզ : Նա զարձաւ ի նոսա եւ ակն ունէր առնուլ ինչ ի նոցանէ :
6 Եւ ասէ Պետրոս, Արծաթ եւ ոսկի ոչ ունիմ, բայց զոր ունիմս՝ զայս տաց քեզ. յանուն Յիսուսի Քրիստոսի Նա-
7 զովրեցւոյ արի եւ գնա : Եւ կալեալ զաջոյ ձեռանէ նորա՝ յարոյց զնա. եւ անդէն հաստատեցան [5]բարձք նորա
8 եւ սրունք՝ : Ի վեր վազեաց եւ սկսաւ գնալ, եւ եմուտ ընդ նոսա ի տաճարն, գնայր եւ վազվազէր եւ օրհնէր զԱս-
9 տուած : Եւ եհաս ամենայն ժողովուրդն գնա, զի գնայր եւ օրհնէր զԱս-
10 տուած. Եւ դիտէին գնա զի սա էր որ նստէր վասն ողորմութեան առ Գեղեցիկ դրան տաճարին, եւ լցան զարմանալեօք ի վերայ նշանին որ եղեւ :
11 Եւ մինչ նա ունէր զՊետրոս եւ զՅովհաննէս, ընթացաւ ամենայն ժո-

[1] Ի Յ—ն՝ պ—ս—ւ
[2] Ոմ—ս, նորա քան մարմնոյ յարուցանել զՔրիստոս նստել
[3] Յ—ն—ս պ—ս—ւ
[4] Ոմ—ս, գիրկեալսն հանապազօր յեկեղեցին
[5] Յ—ն՝ թաթք ոտից նորա և կոճք

ղովուրդն առնոսա ի սրահն որ կոչէր
12 Սողոմոնի՝ զարմացեալք։ Իրրեւ ետես Պետրոս, պատասխանի առ ժո-
ղովրդեանն, Արք Իսրայելացիք, ընդ
զարմացեալ էք ի վերայ այսորիկ, կամ
ընդ մեզ ընդ է՞ք սլուզեալ, իբրու թէ
անձին ողորմութեամբ ինչ կամ [1]քաջու-
թեամբ արարեալ իցէ ղընադր դմա։
13 Աստուած Աբրահամու եւ Աստուած
Իսահակայ եւ Աստուած Յակովբայ,
Աստուած հարցն մերոց, փառաւորեաց
զՈրդի իւր զՅիսուս, զոր դուքն մատ-
նեցէք եւ ուրացարուք առաջի Պիղա-
14 տոսի ի դատել նորա արձակել։ Եւ
դուք զՍուրբն եւ զԱրդարն ուրացա-
րուք եւ խնդրեցէք այր մի մահապարտ
15 շնորհել ձեզ։ Եւ զԱռաջնորդ կենացն
սպանէք, զոր Աստուած յարոյց ի մե-
16 ռելոց, որում մեք իսկ վկայ եմք։ Եւ
հաւատովք անուան նորա զսա զոր
տեսանէք եւ գիտէք՝ հաստատեաց ա-
նուն նորա. եւ հաւատքն որ նովաւ՝
ետուն դմա զառողջութիւնս զայս յան-
17 դիման ձեր ամենեցուն։ Եւ արդ, եղ-
բարք, գիտեմ զի անգիտութեամբ ա-
18 րարէք, որպէս եւ իշխանքն ձեր։ Այլ
Աստուած որպէս յառաջագոյն պատ-
մեաց ի բերանոյ ամենայն մարգարէից
զչարչարեալն Քրիստոսի իւրոյ, նոյնպէս
19 եւ կատարեաց։ Արդ ապաշաւեցէք եւ
20 դարձարուք ի ջնջել զմեղս ձեր. Որպէս
զի եկեսցեն ժամանակք հանգստեան
յերեսաց Տեառն, եւ առաքեսցէ զյա-
ռաջագոյն նկատեալն ձեզ, զՅիսուս
21 Քրիստոս։ Զոր պարտ է երկնից ըն-
դունել մինչեւ ի ժամանակս ամենե-
ցուն հաստատելոյ. զորոց խօսեցաւ
Աստուած ի բերանոյ սրբոց իւրոց
մարգարէից[2]։
22 Դ. Մովսէս ասաց [3]ցհարսն մեր՝ Թէ
Մարգարէ յարուսցէ ձեզ Տէր Աս-
տուած ձեր յեղբարց ձերոց իրրեւ զիս,
նմա լուիջիք ըստ ամենայնի, որ ինչ
23 եւ խօսեսցի առ ձեզ։ Եւ եղիցի ամե-
նայն անձն որ ոչ լուիցէ մարգարէին
այնմիկ՝ սատակեսցի ի ժողովրդենէն։
24 Եւ ամենայն մարգարէք որ ի Սամուե-
լէ եւ այսր՝ խօսեցան եւ պատմեցին
25 զաւուրս զայսոսիկ։ Դուք էք որդիք
մարգարէիցն եւ ուխտին զոր ուխ-
տեաց Աստուած ընդ հարսն մեր, եւ
ասէ ցԱբրահամ, Ի զաւակի քում օրհ-
26 նեսցին ամենայն ազգք երկրի։ Ձեզ
նախ յարոյց Աստուած զՈրդի իւր եւ
առաքեաց զնա օրհնել զձեզ՝ ի դառնալ
ձեզ իւրաքանչիւր ի չարեաց ձերոց։

Դլ. Դ

4 1 Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողո-
վրդեանն, հասին ի վերայ նոցա [4]քա-
հանայքն եւ իշխանք տաճարին եւ
2 սադուկեցիքն, Զայրացեալք վասն
ուսուցանելոյ նոցա զժողովուրդն եւ
պատմելոյ ցՅիսուս զյարութիւն մե-
3 ռելոց։ Մխեցին ի նոսա զձեռս իւրեանց, եւ եդին զնոսա ի բանտի մին-
4 չեւ ի վաղիւն, զի էր ընդ երեկս։ Իսկ
բազումք ի լսողաց բանին հաւատացին,
եւ եղեւ թիւ մարդկանն իրրեւ հա-
զարաց հնդից։
5 Եւ եղեւ ի վաղիւ անդր ժողովել
նոցա զիշխանսն եւ զերիցունս եւ
6 զդպիրսն յԵրուսաղէմ, Եւ զՀննա քա-
հանայապետ եւ զԿայիափա եւ զՅով-
հաննէս եւ զԱղեքսանդրոս, եւ որք
միանգամ էին յազգէ [5]քահանայապե-
7 տութեան։ Եւ կացուցեալ զնոսա ի մէջ՝
հարցանէին, Որո՞վ զօրութեամբ կամ
որո՞վ անուամբ արարէք դուք զայս։
8 Յայնժամ Պետրոս լցեալ Հոգւով Սրբով՝
ասէ ցնոսա, Իշխանք ժողովրդեան եւ
9 երիցունք Իսրայելի, [6]Եթէ արժա՞ն
ինչ իցէ դատել զմեզ՝ այսօր վասն ե-
րախտեաց առն միոյ ախարի որով սա
10 բժշկեցաւ, Յայտնի լիցի ամենեցուն
ձեզ եւ ամենայն ժողովրդեանդ Իսրա-
յելի, զի յանուն Յիսուսի Քրիստոսի
Նազովրեցւոյ զոր դուքն խաչեցէք,
զոր Աստուած յարոյց ի մեռելոց, նո-
վաւ սա կայ առաջի ձեր ող-
11 ջացեալ։ Նա է վէմն անարգեալ ի ձէնջ
շինողաց, որ եղեւ գլուխ անկեան.
12 Եւ չիք այլով իւիք փրկութիւն, զի
եւ ոչ անուն այլ դոյ ի ներքոյ երկնից
տուեալ ի մարդիկ, որով արժան լցէ
կալ մեզ։
13 Ե. Հայեցեալ ի համարձակութիւնն

[1] Գայն, բարեպաշտութեամբ
[2] Գայն յաւելու, ի յաւիտենից
[3] Գոհան պոլոկ
[4] Ոմանք, քահանայապետքն
[5] Ոմանք, քահանայապետութեանն
[6] Գայն, եթէ գատիցիմք

Պետրոսի եւ Յովհաննու, եւ ի վերայ
հասեալ [Ը] սրբ տղայք եւ առանց
դպրութեան են, զարմանային, ղի ճա-
նաչէին զնոսա [Ը] ընդ Յիսուսի էին.
14 Եւ զայրն եւս տեսանէին զբժշկեալն
ղի կայր ընդ նոսա, եւ ոչինչ կարէին
15 ասել պատասխանի: Եւ հրամայեալ
նոցա արտաքս ման դատեանն երանել,
16 խորհեցան ընդ միմեանս, Եւ ասեն,
Զի՞նչ արասցուք արանցս այսոցիկ,
ղի երեւելի նշան եղեւ ի ձեռն նոցա.
ամենայն իսկ բնակչաց Երուսաղեմի
17 յայտ է եւ ոչ կարեմք ուրանալ: Այլ
ղի մի՛ առաւել ճարակեսցի ի ժողո-
վուրդն, սպառնասցուք նոցա մի՛ եւս
խօսել յանուն յայն մի՛ ումեք ի մարդ-
18 կանէ: Եւ կոչեցեալ զնոսա պատու-
իրեցին ամենեւին մի՛ խօսել եւ մի՛ ու-
19 սուցանել յանուն Յիսուսի: Իսկ Պետ-
րոս եւ Յովհաննէս պատասխանի ե-
տուն եւ ասեն ցնոսա, Եթէ արժան
իցէ առաջի Աստուծոյ ձեզ լսել առա-
20 ւել քան Աստուծոյ, ընտրեցէք: Այլ
մեք ոչ կարեմք զոր տեսաքն եւ լուաք՝
21 չխօսել: Նոքա սպառնացեալ արձակե-
ցին զնոսա, եւ ոչինչ գտեալ [Ը] որ-
պէս պատուհասեսցեն զնոսա վասն
ժողովրդեանն, ղի ամենեքեան փա-
ռաւոր առնէին զԱստուած վասն ի-
22 րացն եղելոց: Զի ամաց էր այրն աւելի
քան զքառասուն, յորոյ վերայ եղեւ
նշանս այս բժշկութեան:
23 Եւ անտի արձակեալ եկին առ իւր-
եանցն, եւ պատմեցին որչափ ինչ
ասացին ցնոսա քահանայապետքն եւ
24 երիցունքն: Եւ նոցա լուեալ [1]ամբար-
ձին զձայնս իւրեանց առ Աստուած
եւ ասեն, Դու, Տէր [2]Աստուած, որ
արարիր զերկինս եւ զերկիր եւ զծով
25 եւ զամենայն որ ի նոսա, Որ ի բերա-
նոյ [2]հօր մերոյ՝՝ Դաւթի ծառայի քո՝
[2]ի ձեռն Հոգւոյն Սրբոյ՝՝ ասացեր, Ձի՞
խռովեցան հեթանոսք, եւ ժողովուրդք
26 խորհեցան ի մնոտիս. Յանդիման եղեն
թագաւորք երկրի եւ իշխանք ժողո-
վեցան ի միասին վասն Տեառն եւ վասն
27 Օծելոյ նորա: Ժողովեցան արդարեւ
ի քաղաքիս յայսմիկ ի վերայ սրբոյ
Որդւոյ քո Յիսուսի զոր օծերն՝ Հե-
րովդէս եւ Պոնտիոս Պիղատոս ազգօք
28 եւ ժողովրդովք Իսրայէլի, Առնել որ-
չափ ձեռն քո եւ կամք յառաջադոյն
29 սահմանեցին լինել: Եւ արդ, Տէր,
հայեաց ի սպառնալիս նոցա, եւ տուր
ծառայից քոց ամենայն համարձակու-
30 թեամբ խօսել զբանն քո. Ի ձգել ձեռն
քո ի բժշկութիւն, եւ նշանս եւ ար-
ուեստս լինել անուամբն սրբոյ Որդւոյ
31 քո Յիսուսի: Եւ մինչ կային նոքա
յաղօթս, շարժեցաւ տեղին յորում էին
ժողովեալ, եւ լցան ամենեքին Հոգւով
Սրբով, եւ խօսէին զբանն Աստուծոյ
համարձակութեամբ:
32 Ջ. Եւ բազմութեան հաւատացելոցն
էր սիրտ եւ անձն մի. եւ ոչ ոք ի նո-
ցանէ ասէր զընչից իւրոց [Ը] իւր լինել,
այլ էր նոցա ամենայն ինչ հասարա-
33 կաց: Եւ զօրութեամբ բազմաւ տա-
յին վկայութիւն առաքեալքն զյարու-
թեանն Տեառն Յիսուսի [2]Քրիստոսի.
եւ շնորհք մեծամեծք էին ի վերայ ա-
34 մենեցուն նոցա: Եւ ոչ ոք կարօտեալ
ի նոսա, զի որ միանգամ տէրք էին
դեղից կամ ապարանից՝ վաճառէին եւ
35 բերէին զդինս վաճառեցոյն, Դնէին
առ ոտս առաքելոցն. եւ բաշխէին ի-
րաքանչիւր որպէս ումեք պիտոյ ինչ
36 լինէր: [3]Յովսէփ որ կոչեցաւն Բառ-
նաբաս յառաքելոց անուն, (որ [Ը] թարգ-
մանի որդի մխիթարութեան,) Ղեւ-
37 ացի, յազգէ կիպրացի, էր նորա դեղ,
վաճառեաց եւ եբեր զդինսն, եդ առ
ոտս առաքելոցն:

Գլ. Ե

1 Իսկ այր անն Անանիա անուն հան-
դերձ կնաւ իւրով Սաֆիրաւ վաճառ-
2 եաց ագարակ. Եւ խորհեաց ի զնոց
անտի՝ գիտելով եւ կնոջն, եւ եբեր
մասն ինչ եդ առ ոտս առաքելոցն:
3 Ասէ Պետրոս, Անանիա, ընդէր լցից
Սատանայ զսիրտ քո սուտ քեզ Հոգ-
ւոյն Սրբոյ, եւ խորել ի գնոց դեղջն.
4 Ո՞չ ապաքէն մինչ կայրն՝ քո էր, եւ
ի վաճառելն՝ ընդ քո իշխանութեամբ
էր. զի՞ է զի եղիր ի սրտի քում գիրս
զայս. ոչ առեցեր մարդկան, այլ Աս-
5 տուծոյ: Եւ լուեալ Անանիա զբանս

[1] Յոյն, ամբարձին միաբան
[2] Յոյն. պակաս
[3] Գործ. Ը.վ.ե

զայսոսիկ՝ անկաւ եւ եհան զոգի . եւ եղեւ ահ մեծ ի վերայ ամենեցունն որ
6 լուանն զայն : Յոտն կացին երիտասարդքն եւ ամփոփեցին զնա , եւ տա-
7 րան թաղեցին : Եւ եղեւ յորում ժամք երեք անցին , եւ կին նորա ոչ գիտէր
8 զինչ եղեալն էր , եմուտ ի ներքս : Պաւղոս ասէ ցնա Պետրոս եւ ասէ , Ասա ինձ թէ այնչափ գնոց ղկէզն վաճառեցէք : Եւ նա ասէ , Այո , այն-
9 չափ : Եւ ասէ ցնա Պետրոս , Ընդէ՞ է դի միաբանեցէք դուք փորձել զՀոգին Տեառն . ահա ոտքն որ թաղեցին զայրն
10 քո ի գրանն՝ հանցեն եւ զքեզ : Եւ անկաւ անդէն առ ոտս նորա եւ եհան զոգի , մտին երիտասարդքն , գտին զնա մեռեալ եւ հանին թաղեցին առ առն
11 իւրում : Եւ եղեւ երկեւզ մեծ ի վերայ ամենայն եկեղեցւոյն , եւ ի վերայ ա-
12 մենեցուն որ լուանն զայն :

Է· Եւ ի ձեռս առաքելոցն լինէին նշանք եւ արուեստք բազումք ի ժո-
13 ղովրդեանն . եւ էին միաբան ամենեքեան ի սրահին Սողոմովնէ : Եւ յայլոց անտի ոչ ոք իշխէր մերձենալ առ նոսա ,
14 այլ յարկէր զնոսա ժողովուրդն : Եւ առաւել եւս յաւելուին հաւատացեալքն ի Տէր , բազմութիւնն արանց եւ կա-
15 նանց . մինչեւ ի հրապարակն հանել զհիւանդս , եւ դնել պատգարակօք եւ մահճօք իւրեանց , զի ընդ անցանելն Պետրոսի՝ գոնէ հովանի նորա հասցէ
16 ումեք ի նոցանէ : Եւ ժողովէր բազմութիւնն չուրջ ի քաղաքաց անտի յերուսաղէմ , բերէին զհիւանդս եւ զնեղեալս յայսոց պղծոց , որք եւ բժըշկէին ամենեքեան :

17 Յարուցեալ քահանայապետն եւ ամենեքին որ ընդ նմա , աղանդ սադու-
18 կեցոց , լցան նախանձու : Եւ արկին զձեռս յառաքեալսն եւ եղին զնոսա
19 [1]հրապարակաւ ի բանտի՝ : Ապա հրեշտակ Տեառն գիշերի երաց զդուռս բան-
20 տին , եւ հանեալ գնոսա՝ ասէ , Գնացէք կայէք ի տաճարին , եւ խօսեցարուք ընդ ժողովրդեանն զամենայն պատ-
21 գամս կենացս այսոցիկ : Եւ իբրեւ լուան , մտին ընդ առաւօտն ի տաճարն եւ ուսուցանէին : Եկն քահանայապետն եւ որ ընդ նմա , կոչեցին մի-

ասան զատեանն եւ զամենայն ծերակոյտ որդւոցն Իսրայելի , եւ առաքին
22 ղին ի բանտն առնել զնոսա : Եւ իբրեւ եկին սպասաւորքն , ոչ գտին զնոսա ի բանտին . դարձեալ անդրէն պատմե-
23 ցին , եւ ասեն թէ Զբանտն գտաք փակեալ ամենայն զգուշութեամբ , եւ զպահապանսն՝ զի կային առ գրանն , բացաք եւ ի ներքս զոք ոչ գտաք :
24 Իբրեւ լուան զայս [2]իշխանք տաճարին եւ քահանայապետքն՝ , հիանային վասն նոցա , թէ զինչ արդեւք
25 լինիցի այն : Եւ եկն ումն պատմեաց նոցա թէ Ահա արքն զորս եդիք ի բանտին՝ կան ի տաճարին , եւ ուսու-
26 ցանեն զժողովուրդն : Յայնժամ երթեալ իշխանն սպասաւորօքն հանդերձ՝ ած զնոսա ոչ բռնութեամբ , քանզի երկնչէին ի ժողովրդենէն զի մի՛ քար-
27 կոծեսցին : Եւ ածեալ զնոսա կացուցին յատենի . եհարց զնոսա քահանա-
28 յապետն եւ ասէ , Ո՞չ պատուիրելով պատուիրեցաք ձեզ մի՛ ուսուցանել յանունն յայն . եւ արդ ահաւասիկ լցեր զերուսաղէմ ուսմամբդ ձերով , եւ կամիք ածել ի վերայ մեր զարիւն զայնմանէ զայնոցիկ :

29 Պատասխանի եւ Պետրոս եւ առաքեալքն եւ ասեն , Հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան :
30 Աստուած հարցն մերոց յարոյց զՅիսուս զոր դուքն սպանէք կախեալ
31 զփայտ : Զնա Աստուած Առաջնորդ եւ Փրկիչ բարձրացոյց աջովն իւրով տալ ապաշխարութիւն Իսրայելի եւ
32 թողութիւն մեղաց : Եւ մեք եմք նորա վկայք բանիցս այսոցիկ , եւ Հոգին Սուրբ զոր ետ Աստուած հնազանդողաց
33 նոցա իւրոց : Եւ նոքա իբրեւ լուան , առաստանային եւ խորհէին սպանանել զնոսա :

34 ԲԱ· Յարուցեալ ումն ի մէջ առնէին , փարիսեցի , որում անուն էր Գամաղիէլ , օրէնսուսոյց , պատուական ամենայն ժողովրդեանն , հրամայեաց առաքեալսն մի [3]զարան սպասուքս առնել ;
35 Եւ ասէ ցնոսա , Այրք Իսրայէլացիք , հայեցարուք ի ձեզ վասն այսոցդ այ-
36 սոցիկ զինչ արժան իցէ գործել : Յառաջ

[1]Ց-ՅՆ , ի հասարակաց բանտի

[2]Ոմանք , քահանայն եւ իշխան տաճարին եւ քահանայապետքն

[3]Ոմանք , զառաքեալսն

քան զաւուրս զայսոսիկ յարեաւ Թեւդաս ասել զանձինք թէ իցէ ոմն, յոր
անկան արք թուով իրրեւ չորեքհարիւր, որ սպանաւ, եւ ամենեքեան
որ միաբանեալ էին ընդ նմա՝ ցիրկաւ-
37 ցան եւ եղեն յոչինչ։ Յետ նորա յարեաւ Յուդաս Գալիլեացի յաւուրս աշ-
խարհագրին, եւ ապստամբեցոյց ժո-
ղովուրդ բազում զկնի իւր. եւ նա
կորեաւ, եւ ամենեքեան որ նմանին
38 հաւանեալ էին՝ ցրուեցան։ Եւ զարդիս
ասեմ ձեզ, ի բաց կացէք յայրանցդ
յայդցանէ եւ թոյլ տուք դոցա, զի թէ
ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ
39 գործդ, քակտեսցի. Ապա թէ յԱստու-
ծոյ է, ոչ կարէք քակտել զդոսա,
զուցէ եւ աստուածամարտք գտանիք
40 ցիք։ Հաւանեցան նմա, եւ կոչեցեալ
զառաքեալսն՝ զան հարին, եւ պատ-
ուիրեցին մի՛ եւս խօսել յանուն Յի-
41 սուսի, եւ արձակեցին զնոսա։ Եւ նո-
քա գնացին խնդալով յերեսաց աւետնին,
զի վասն [1]անուանն արժանի եղեն ա-
42 նարգելոյ։ Եւ զամենայն օր ի տաճա-
րին եւ առանին ոչ դադարէին ու-
սուցանել եւ աւետարանել զՅիսուս
Քրիստոս։

Գլ. Զ

1 Եւ յաւուրսն յայնոսիկ ի բազմանալ
աշակերտացն եղեւ տրտունջ Յունաց
առ Հեբրայեցիսն, զի արհամարհեալ
լինէին ի պաշտամանն հանապազորդի
2 այրիք նոցա։ Կոչեցին երկոտասանքն
զբազմութիւնն աշակերտացն եւ ասեն,
Ոչ է հաճոյ մեզ Թողուլ զբանն Ա-
3 ստուծոյ եւ պաշտել զսեղանս։ Ընտրեցէք, եղբարք, վկայեալս ի ձէնջ արս
[2]եւթն, զորս կացուցցուք ի վերայ գի-
4 տացիցս այսոցիկ. Եւ մեք աղօթից եւ
պաշտամանն բանին հպատակ լիցուք։
5 Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի ա-
մենայն բազմութեանն. եւ ընտրեցին
զՍտեփաննոս, այր լի հաւատով եւ
Հոգւով Սրբով, եւ զՓիլիպպոս եւ
զՊրոքորոն եւ զՆիկիանովրա եւ զՏի-
մովնա եւ զՊարմինա եւ զՆիկողայոս,
6 զեկն Անտիոքացի. Զորս կացուցին
առաջի առաքելոցն, եւ աղօթս արար-
7 եալ՝ եդին ի վերայ նոցա զձեռս։ Եւ
բանն Աստուծոյ աճէր, եւ բազմանայր
թիւ աշակերտացն յոյժ յԵրուսաղէմ.
եւ բազում ժողովք ի քահանայիցն ան-
սային հաւատոցն։

8 ԲԲ. Ստեփանոս, այր լի [3]շնորհօք
եւ զօրութեամբ, առնէր արուեստս
եւ նշանս մեծամեծս ի ժողովրդեանն։
9 Յարեան ոմանք ի ժողովրդենէն, որ
կոչէր [4]Լիբէացւոց եւ Կիւրենացւոց
եւ Ազեքսանդրացւոց եւ որ ի Կիլի-
կեցւոց եւ յԱսիա, վիճել ընդ Ստեփա-
10 նոսի. Եւ ոչ կարէին զդէմ ունել դի-
մաստութեանն եւ ոգւոյն որով խօ-
11 սէր։ Յայնժամ հրապուրեցին արս ո-
մանս ասել թէ Լուաք զդորա խօսել
բանս հայհոյութեան ի Մովսէս եւ յԱս-
12 տուած։ Եւ խռովեցին զժողովուրդն
եւ զերիցունսն եւ զդպիրսն. եւ հաս-
եալ ի վերայ՝ յափշտակեցին զնա եւ
13 ածին յատեանն։ Եւ կացուցին վկայս
սուտս որ ասէին, Այրս այս ոչ զադա-
րէ խօսել բանս հայհոյութեան զանգ-
14 ւոն սրբոյ եւ զօրինացն։ Լուաք ի
դմանէ զի ասէր թէ Յիսուս Նազով-
րեցի, նա քակեսցէ զտեղիս զայս, եւ
փոխեսցէ զօրէնս զոր ետու մեզ Մովսէս։
15 Եւ հայեցեալ ի նա ամենեցունց որ նըս-
տէին յատենին, տեսին զերեսս նորա
իրրեւ զերեսս հրեշտակի։

Գլ. Է

1 Ասէ քահանայապետն՝ եթէ Արդարեւ
2 այդ այդպէս իցէ։ Եւ նա ասէ, Արք
եղբարք եւ հարք, լուարուք ինձ. Ա-
ստուած փառաց երեւեցաւ հօր մերում
Աբրահամու մինչդեռ ի Միջագետս էր,
մինչչեւ [5]բնակեցուցեալ էր զնա՛ ի Խա-
3 ռան. եւ ասէ ցնա, Ել յերկրէ քումմէ
եւ յազգէ քումմէ, եւ եկ յերկիր զոր
4 ցուցից քեզ։ Յայնժամ ելեալ յերկրէն
Քաղդէացւոց բնակեցաւ ի Խառան, եւ
անտի յետ մեռանելոյ հօր նորա՝ փոխ-
եաց պանդխտեցոյց զնա յերկիրս յայս-
միկ, յորում դուք այժմ բնակեալ էք։
5 Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն ի սմա
եւ ոչ քայլ մի ոտին. եւ խոստացաւ

[1] Որում, անուան Տեառն, այլ՝ անուան նորա
[2] Բազումք, եւթն, լի Հոգւով Սրբով եւ իմաստութեամբ
[3] Որում, հաւատով
[4] Գունն, Լիբերտինացւոց
[5] Գունն, բնակեալ էր նորա

տալ նմա զոտս ի բնակութիւն, եւ զա-
ւակի նորա յետ նորա, մինչ ոչ ունէր
6 նորա որդի. խօսեցաւ Աստուած այս-
պէս, թէ եղիցի զաւակ նորա պանդ-
խտեալ յօտար երկրի, եւ ծառայե-
ցուսցեն զնա եւ չարչարեսցեն զամ
7 չորեքհարիւր։ Եւ զազգն որում ծա-
ռայեսցեն՝ դատեցայց ես, ասէ Աս-
տուած, եւ յետ այսորիկ ելցեն եւ
պաշտեսցեն զիս ի տեղւոջս յայսմիկ։
8 Եւ ետ նմա ուխտ թլփատութեան.
եւ ապա ծնաւ զԻսահակ, եւ թլփատ-
եաց զնա յաւուր ութերորդի. եւ Ի-
սահակ՝ զՅակովբ, եւ Յակովբ զեր-
9 կոտասան նահապետան։ Եւ նահա-
պետքն նախանձեալ ընդ Յովսեփայ՝
վաճառեցին յԵգիպտոս. եւ էր Աս-
10 տուած ընդ նմա, եւ փրկեաց զնա
յամենայն նեղութենանց նորա, եւ ետ
նմա չնորհս եւ իմաստութիւն առաջի
Փարաւոնի արքային Եգիպտացւոց.
եւ կացոյց զնա իշխան Եգիպտացւոցն
11 եւ ամենայն տան նորա։ Եւ եկն սով
յամենայն երկիրն Եգիպտոս եւ ի Քա-
նան, եւ էր նեղութիւն մեծ, եւ ոչ
12 գտանէին կերակուր հարքն մեր։ Եւ
լուեալ Յակովբայ թէ գտանի կերա-
կուր յԵգիպտոս, առաքեաց զհարսն
13 մեր յառաջագոյն։ Եւ յերկրորդումն
ետ ծանօթս Յովսէփ եղբարց իւրոց.
եւ յայտնի եղեւ Փարաւոնի ազգն [1]նո-
14 րա։ Առաքեաց Յովսէփ եւ կոչեաց
զՅակովբ զհայր իւր եւ զամենայն ազ-
գատոհմն, ոգիս եւթանասուն եւ հինգ։
15 Եւ էջ Յակովբ յԵգիպտոս, եւ վախ-
16 ճանեցաւ ինքն եւ հարքն մեր։ Եւ
փոխեցան ի Սիւքիմ եւ եղեն յայրին
զոր առացաւ Աբրահամ գնոյ արծա-
թոյ յորդւոցն Եմովրայ ի Սիւքիմ։
17 Իբրեւ մերձեցաւ ժամանակ աւետեացն
զոր խոստացաւ Աստուած Աբրահա-
մու, աճեաց ժողովուրդն եւ բազմա-
18 ցաւ յԵգիպտոս. Մինչեւ յարեաւ այլ
թագաւոր յԵգիպտոս որ ոչ ճանաչէր
19 զՅովսէփ։ Նա հնարեցաւ ազգին մե-
րում, եւ չարչարեաց զհարսն մեր առ-
նել ընկեցիկ զմանկունս նոցա զի մի՛
20 ապրեսցին։ Ծորեաւ ժամանակի ծնաւ
եւ Մովսէս, եւ էր կայտառ առաջի
Աստուծոյ, որ եւ սնաւ ի տան հօր
21 իւրոյ ամիսս երիս։ Եւ յրնկեցիկն առ-
նել զնա՝ երարձ զնա դուստր Փարա-
ւոնի, եւ սնոյց զնա իւր յորդիութիւն։
22 Եւ վարժեցաւ Մովսէս ամենայն իմաս-
տութեամբ Եգիպտացւոցն, եւ էր զո-
րաւոր բանիւք եւ գործովք իւրովք։
23 Իբրեւ լցաւ նորա քառասնամեայ ժա-
մանակ, անկաւ ի սիրտ նորա չբննել
զեղբարսըբ իւրովք, զորդիսն Իսրա-
24 յէլի։ Եւ տեսեալ զոմն զրկեալ՝ զչարե-
ցեալ, եւ խնդրեաց զիրկեցեալն՝
25 սպանանել զԵգիպտացին։ Ջմտաւ ածէր
թէ իմասցին եղբարք նորա, զի Աս-
տուած ի ձեռն նորա տայցէ զփըր-
կութիւն նոցա, եւ նորա ոչ իմացան։
26 Եւ ի վաղիւ անդր երեւեցաւ նոցա
մինչդեռ մարանչէին, եւ վարեաց
զնոսա ի խաղաղութիւն, ասէ, Այր,
եղբարք էք, ընդէ՞ր զրկէք զմիմեանս։
27 Իսկ որ զրկէր զընկերն՝ մերժեաց զնա
եւ ասէ, Ո՞ կացոյց զքեզ իշխան եւ
28 դատաւոր ի վերայ մեր։ Միթէ սպա-
նանե՞լ կամիցիս զիս զոր օրինակ սպա-
29 ներ երէկ զԵգիպտացին։ Եւ փախեաւ
Մովսէս ի բանիցս յայսցանէ, եւ եղեւ
պանդխտեալ յերկրին Մադիամու, ու
ծնաւ երկուս որդիս։
30 ԲԳ. Եւ ի կատարել ամացն քառաս-
նից՝ երեւեցաւ նմա յանապատի լերինն
Սինայ հրեշտակ Տեառն ի բոց հրոյ մա-
31 բենւոյն։ Եւ Մովսէսի տեսեալ՝ զար-
մացաւ ընդ տեսիլն, եւ ի մտանելն
32 նորա նշմարել՝ եղեւ ձայն Տեառն, Ես
եմ Աստուած հարց քոց, Աստուած
Աբրահամու եւ [2]Իսահակայ եւ Յա-
կովբայ։ Եւ զահի հարեալ Մովսէս՝
33 ոչ իշխէր հայել։ Եւ ասէ ցնա Տէր,
Լո՛ւծ զկօշիկս ոտից քոց, զի տեղիք
յորում զուգ կայիր՝ երկիր սուրբ է։
34 Տեսանելով տեսի զչարչարանս ժողո-
վրդեան իմոյ որ յԵգիպտոս, եւ լուայ
հեծութեան նոցա եւ իջի փրկել զնո-
սա. եւ արդ ել առաքեցից զքեզ յԵ-
35 գիպտոս։ Զայն Մովսէս զոր ուրացան
եւ ասէին, Ո՞ կացոյց զքեզ իշխան եւ
դատաւոր ի վերայ մեր, զնա Աստուած
իշխան եւ փրկիչ առաքեաց ի ձեռն
հրեշտակին որ երեւեցաւ նմա ի մա-
36 բենւոջն։ Նա հնար զնոսա՝ արարեալ

[1] Բազմեփայ, Զմմեփայ

[2] Ոմանք, Աստուած Իսահակայ և Աստուած Յակովբայ

նչանս եւ արուեստս յերկրին Եգիպ-
տացւոց եւ ի կարմիր ծովուն եւ յա-
37 նապատին ամս քառասուն։ Այս Մով-
սէս է որ ասաց յորդիսն Իսրայելի,
Մարգարէ յարուսցէ Ձեզ Տէր Աստուած
ձեր յեղբարց ձերոց իբրեւ զիս, նմա
38 լուիջիք։ Սա է որ եղեւ յեկեղեցւոջն
յանապատին ընդ հրեշտակին, որ խօ-
սեցաւ ընդ նմա ի լերինն Սինայ եւ
ընդ հարսն մեր, որ ընկալաւ զպատ-
39 գամս կենդանիս տալ մեզ։ Որում ոչ
կամեցան հնազանդ լինել հարքն մեր,
այլ մերժեցին եւ դարձան սրտիւք իւր-
40 եանց յԵգիպտոս։ Եւ ասեն ցԱհարովն,
Արա մեզ աստուածս, որ երթայցեն
առաջի մեր. զի Մովսէսն այն որ ե-
հան զմեզ յերկրէն Եգիպտացւոց՝ ոչ
41 դիտեմք զի՛ եղեւ նմա։ Եւ արարին յա-
ւուրսն յայնոսիկ որթ, եւ մատուցին
զոհս կուռս, եւ ուրախ լինէին ի գործս
42 ձեռաց իւրեանց։ Դարձոյց Աստուած
եւ մատնեաց զնոսա ի պաշտօն զօրու-
թեան երկնից, որպէս եւ գրեալ է ի
գիրս մարգարէից, Միթէ զոհս եւ պա-
տարա՞գս մատուցէք ինձ զամս քառա-
սուն յանապատին, տունդ Իսրայելի.
43 Եւ առէք զվրանն Մողոքայ եւ զաստղն
[1]աստուածոյն Հռեմփայ, զպատկերսն՝
զոր արարէք երկիր պագանել նոցա.
եւ փոխեցից զձեզ յայն կողմն Բաբե-
44 լացւոց։ Վրանն վկայութեան էր ընդ
հարսն մեր յանապատին. որպէս հրա-
ման ետ որ խօսէրն ընդ Մովսէսի,
առնել զայն ըստ օրինակին զոր ետես։
45 Զոր եւ ընկալեալ բերէին հարքն մեր
հանդերձ Յեսուաւ ի վիճակ աղգացն,
զորս մերժեաց Աստուած յերեսաց
հարցն մերոց մինչեւ յաւուրս Դաւթի,
46 Որ եգիտ չնորհս առաջի Աստուծոյ,
եւ խնդրեաց դտանել զյարկս Աստուա-
47 ծոյ Յակովբայ։ Նա եւ Սողոմոն չին-
48 եաց նմա տուն։ Այլ ոչ եթէ Բարձրեալն
ի ձեռագործ տաճարս բնակէ. այլ որ-
49 պէս մարգարէն ասէ, Երկինք աթոռ
իմ են, եւ երկիր՝ պատուանդան ոտից
իմոց. որպիսի՞ տուն [2]չինեսջիք ինձ,
ասէ Տէր, կամ ո՞րն տեղի հանգըս-
50 տեան իմոյ. Ո՞չ ձեռն իմ արար զայս
51 ամենայն։ Խստասրտանոցք եւ ան-
թլփատս սրտիւք եւ ականջօք, դուք

հանապազ Հոգւոյն Սրբոյ հակառակ
52 կայք, որպէս հարքն ձեր՝ եւ դուք։ Զո՞
ի մարգարէիցն ոչ հալածեցին հարքն
ձեր, եւ սպանին զայնոսիկ որ յառա-
ջագոյն պատմեցին վասն գալստեան
Արդարոյն, որոյ դուք այժմ մատնիչք
53 եւ սպանողք եղերուք։ Որք առէք զօ-
րէնս ի հրամանս հրեշտակաց, եւ ոչ
պահեցէք։
54 Եւ լուեալ զայս գայրանային ի սիրտս
իւրեանց, եւ կրճէին զատամունս ի
55 վերայ նորա։ Եւ նա էր լի Հոգւով
Սրբով, հայեցաւ յերկինս եւ եռես
զփառս Աստուծոյ եւ զՅիսուս զի կայր
ընդ աջմէ Աստուծոյ, եւ ասէ, Ահա
տեսանեմ զերկինս բացեալ, եւ զՈրդի
մարդոյ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ։
56 Աղաղակեալ ի ձայն մեծ՝ խլին զա-
կանջս իւրեանց, եւ դիմեցին առ հա-
57 սարակ ի վերայ նորա։ Եւ հանեալ
արտաքոյ քաղաքին՝ քարկոծէին. եւ
վկայքն դնէին զձորձս իւրեանց առ
ոտս երիտասարդի միոջ որ կոչէր Սա-
58 ւուղ։ Եւ քարկոծ առնէին զՍտեփա-
նոս, որ կարդայր եւ ասէր, Տէր Յի-
59 սուս, ընկալ զոգի իմ։ Եդ ծունր,
աղաղակեաց ի ձայն բարձր, Տէր, մի՛
հաշարիր զոգա զայս մեղս։ Եւ զայս
իրրեւ ասաց, ննջեաց. եւ Սաւղոս էր
կամակից սպանման նորա։

Գ.Լ. Ը

1 Եւ եղեւ յաւուր յայնմիկ հալածումն
մեծ ի վերայ եկեղեցւոյն յԵրուսաղէմ.
եւ ամենեքեան ցրուեցան ի դեղս Հրէ-
աստանի եւ Սամարիայ բայ յառաքե-
2 լոցն։ Եւ բարձին զՍտեփանոս արք
երկիւղածք, եւ արարին կոծ մեծ ի
վերայ նորա։
3 ԲԴ. Բայց Սաւղոս վնասակար էր եւ
կեղեցւոյն, ի տունս տունս մտանէր,
քարչեալ զարս եւ զկանայս՝ մատնէր
ի բանտ։
4 Եւ սփռեալքն չրջէին, աւետարա-
5 նէին զբանն։ Իսկ Փիլիպպոս իջեալ
ի քաղաքն Սամարացւոց՝ քարոզէր նո-
6 ցա զՔրիստոս։ Ունկն դնէին ժողո-
վուրդքն բանիցն Փիլիպպոսի միաբան՝
ի լսել նոցա եւ ի տեսանել զնչանսն
7 զոր առնէր։ Քանզի բազումք որ ու-
նէին զայսս պիղծս՝ աղաղակէին ի ձայն

[1] Ոմն., աստուածոյն Ձերդ
[2] Յ-ՆՆ, չինեցէք

8 մեծ եւ զարհուրելի՝ եւ քաղցում անդա-
9 մալոյծք եւ կաղք բժշկէին. Եւ եղեւ
ուրախութիւն մեծ ի քաղաքին յայն-
միկ։ Այր ումն Սիմովն անուն յառա-
ջագոյն էր ի քաղաքին, մոգէր եւ ապ-
չեցուցանէր զազգն Սամարացւոց, ա-
10 սել զանձնէ թէ իցէ մեծ ումն. Ոյր
հայէին ամենեքեան ի փոքուէ մինչեւ
ի մեծամեծս, եւ ասէին, Սա է զօրու-
11 թիւն Աստուծոյ որ կոչի մեծ։ Հայէին
ի նա վասն բազում ժամանակաց մո-
գութեամբքն ապչեցուցանելոյ զնոսա։
12 Բայց յորժամ հաւատացին Փիլիպպոսի
որ աւետարանէր վասն արքայութեանն
Աստուծոյ եւ անուանն Յիսուսի Քրիս-
տոսի, մկրտէին ամենեքեան արք եւ
13 կանայք։ Սիմովն եւ ինքն հաւատաց, եւ մկրտեալ կանխէր առ Փի-
լիպպոս. տեսեալ զնշանսն եւ զմեծա-
մեծ զօրութիւնսն որք լինէին՝ զար-
14 մանայր։ Իրրեւ լուան որ յԵրուսաղէմ
առաքեալքն էին թէ եւ ի Սամարիա
ընկալան զբանն Աստուծոյ, առաքե-
ցին առ նոսա զՊետրոս եւ զՅովհան-
15 նէս. Որք իջեալ կացին յաղօթս ի վե-
րայ նոցա, որպէս զի առցեն զՀոգին
16 Սուրբ. Զի ցայնժամ չէր եւս էր եւ
ոչ ի վերայ միոյ նոցա հասեալ, բայց
միայն մկրտեալք էին յանուն Տեառն
17 Յիսուսի։ Ցայնժամ եդին զձեռս ի վե-
րայ նոցա, եւ առնուին Հոգի Սուրբ։
18 Տեսեալ Սիմովնի թէ ձեռս ի վերայ
դնելով առաքելոցն՝ տուեալ լինի Հո-
գին Սուրբ, մատոյց նոցա լինչս եւ
19 ասէ, Տուք եւ ինձ զիշխանութիւնս
զայս, զի յոյր վերայ դնիցեմ զձեռս՝
20 առցէ Հոգի Սուրբ։ Եւ Պետրոս ասէ
ցնա, Արծաթ քո ընդ քեզ լիցի ի կո-
րուստ, զի զպարգեւն Աստուծոյ հա-
21 մարեցար ընչիւք ստանալ։ Ոչ դոյ քեզ
մասն եւ վիճակ ի բանիդ յայդմիկ,
քանզի սիրտ քո ոչ է ուղիղ առաջի
22 Աստուծոյ։ Ապաշաւեա դու ի չարեացդ
քոց յայսցանէ, եւ աղաչեա զՏէր,
թերեւս թողութիւն լիցի քեզ ի մեզ-
23 մեղս խորհրդոյ սրտի քո։ Բանզի ի
դառնութիւն մաղձի եւ ի կնճիռն ա-
24 նիրաւութեան տեսանեմ զքեզ։ Պա-
տասխանի Սիմովն եւ ասէ, Աղա-
չեցէք դուք վասն իմ զՏէր, զի մի՛ ինչ
եկեսցէ ի վերայ իմ յորոց դուքդ ա-
25 սացէք։ Եւ նոցա եդեալ վկայութիւն՝
խօսեցան զբանն Աստուծոյ, եւ դար-
ձան յԵրուսաղէմ. եւ ի բազում դիւղս
Սամարացւոցն աւետարանէին։
26 Եւ Հրեշտակ Տեառն խօսեցաւ առ
Փիլիպպոս եւ ասէ, Արի եւ գնա դու
ի կողմն հարաւոյ ընդ ճանապարհն որ
իջանէ յԵրուսաղէմ ի Գազա, զի այս
27 է անապատ։ Եւ յարուցեալ գնաց. եւ
ահաւասիկ այր մի Եթէովպացի, ներ-
քինի հզօր Կանդակայ թագինոջ Եթէով-
պացւոց, որ էր ի վերայ ամենայն գան-
ձուց նորա. որ եկեալ էր երկիր պա-
28 զանել յԵրուսաղէմ. Եւ անդրէն դար-
ձեալ եւ նստեալ ի կառս իւրում՝ ըն-
29 թերցանէր զԵսայի մարգարէն զնապայի։ Ասէ
Հոգին ցՓիլիպպոս, Մատիր եւ յարեաց
30 ի կառսդ յայդոսիկ։ Եւ ընթացեալ Փի-
լիպպոս՝ լսէր զի ընթեռնոյր զնապայի
մարգարէ. եւ ասէ, Դիտեցի՞ս արդեւք
31 զոր ընթեռնուցուզդ։ Եւ նա ասէ,
Զիա՞րդ կարիցեմ, եթէ ոչ ոք առաջ-
նորդեսցէ ինձ. եւ աղաչեաց զՓիլիպ-
32 պոս ելանել նստել ընդ նմա։ Եւ գլուխ
գրոցն զոր ընթեռնոյր՝ էր այս. Իբրեւ
զոչխար ի սպանդ վարեցաւ, եւ իբրեւ
զորոջ առաջի կալչի իւրոյ անմռունչ՝
33 այնպէս ոչ բանայ զբերան իւր։ Ի խո-
նարհութեան նորա դատաստան նորա
բարձաւ, եւ զազգատոհմ նորա ո՞ պատ-
մեսցէ, զի բառնան յերկրէ կեանք նո-
34 րա։ Պատասխանի եւ ներքինին Փի-
լիպպոսի եւ ասէ, Աղաչեմ զքեզ, վասն
ո՞ր ասէ մարգարէն զայս, վասն ի՞ւր
35 եթէ վասն այլոյ ուրուք։ Եւ բաց Փիլիպ-
պոս զբերան իւր, եւ սկսեալ ի գրոցս
յայսցանէ՝ աւետարանեաց նմա զՅի-
36 սուս։ Իրրեւ երթային զճանապարհայն,
եկին ի ջուր ինչ, եւ ասէ ներքինին,
Ահաւասիկ ջուր, զի՞նչ արգելու զիս
37 ի մկրտելոյ։ [1]Եւ ասէ ցնա, Եթէ հա-
ւատաս բոլորով սրտիւ քով, մարթ է։
Պատասխանի եւ ասէ, Հաւատամ
եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աս-
38 տուծոյ։" Եւ հրամայեաց կացուցանել
զկառան. եւ իջին երկոքեան ի ջուրն,
Փիլիպպոս եւ ներքինին, եւ մկրտեաց
39 զնա։ Եւ իբրեւ ելին ի ջրոյ անտի, [2]Հո-
գին Սուրբ եկն ի վերայ ներքինոյն,
եւ հրեշտակ Տեառն յափշտակեաց՝

---

[1] Այս համար պակաս է բազմաց
[2] Բազումք, Հոգի Տեառն յափշտակեաց

զՓիլիպպոս, եւ ոչ եւս ետես զնա ներ-
քինն, եւ գնայր զճանապարհ իւր ու-
40 րախութեամբ։ Բայց Փիլիպպոս գտաւ
յԱզովտոս. եւ չրջեալ աւետարանէր
ամենայն քաղաքացն՝ մինչեւ ի գալ
նորա ի Կեսարիա։

ԳԼ. Թ

1 ԲՁ. Իսկ Սաւղոս տակաւին [1]լցեալ
սպառնալեօք եւ սպանմամբ աչակեր-
տացն Տեառն՝, մատուցեալ առ քահա-
2 նայապետն՝ խնդրեաց ի նմանէ թուղթս
ի Դամասկոս առ ժողովուրդսն. որպէս
թէ զոք գտցէ զայնր ճանապարհաւ,
արս կամ կանայս, կապեալսածցէ յԵ-
3 րուսաղէմ։ Եւ ընդ երթալն նորա՝ եւ
հասանել մերձենալ ի Դամասկոս. յանկար-
ծակի չուրջ զնովաւ փայլատակեաց
4 լոյս յերկնից։ Եւ անկեալ յերկիր՝ լուաւ
բարբառ որ ասէր ցնա, Սաւուղ, Սա-
5 ւուղ, ո՞վ հալածես զիս։ Եւ ասէ, Ո՞վ
ես, Տէր։ Եւ նա ասէ, Ես եմ Յիսուս
6 զոր դուն հալածես.[2] Այլ յոտն կաց
եւ մտիր ի քաղաքդ, եւ պատմեսցի
7 քեզ զինչ պարտ իցէ առնել։ Իսկ արքն
որ ընդ նմայն երթային, կային ան-
չուն[3], զձայնն միայն լսէին, բայց
8 տեսանէին եւ ոչ զինչ։ Յարեաւ Սաւ-
ղոս յերկրէ անտի, եւ աչօք բացօք
ոչ զոք տեսանէր. զձեռանէ առեալ նո-
9 րա՝ մուծին ի Դամասկոս։ Եւ էր անդ
աւուրս երիս եւ ոչ տեսանէր. եւ ոչ
ակեր եւ ոչ արբ։
10 Եւ էր ումն աշակերտ ի Դամասկոս
Անանիա անուն. ասէ ցնա Տէր ի տես-
լեան, Անանիա։ Եւ նա ասէ, Ահաւա-
11 սիկ եմ, Տէր։ Եւ ասէ ցնա Տէր,
Յոտն կաց եւ գնա ընդ փողոցն որ
կոչի Ուղիղ, եւ խնդրեսցես յսպա-
րանն Յուդայ Սաւղոս անուն զՏար-
12 սոնայի. զի կայ դեռ յաղօթս։ Եւ ե-
տես ի տեսլեան այր մի Անանիա ա-
նուն, մտանել եւ եդեալ ի վերայ նորա
13 զձեռն, որպէս զի տեսցէ։ Պատասխա-
նի ետ Անանիա, Տէր, լուայ ի բազ-

մաց վասն առնն այնորիկ, որչափ ա-
րար չարիս սրբոց քոց յԵրուսաղէմ.
14 Եւ աստ ունի իշխանութիւն ի քահա-
նայապետէն, կապել զամենեսեան որ
15 կարդան զանուն քո։ Ասէ ցնա Տէր,
Երթ գու, զի անօթ ընտրութեան է
ինձ նա, կրել զանուն իմ առաջի հե-
թանոսաց եւ թագաւորաց եւ որդւոցն
16 Իսրայելի։ Քանզի ես իսկ ցուցից նմա
որչափ պարտ իցէ նմա չարչարել վասն
17 անուան իմոյ։ Եւ գնաց Անանիա եւ
եմուտ յայսարանն, եւ եդեալ ի վե-
րայ նորա ձեռս՝ ասէ, Սաւուղ եղբայր,
[3]ի վեր հայեաց,՝ Տէր առաքեաց զիս,
Յիսուս որ երեւեցաւն քեզ ի ճանա-
պարհին յորում գայիր, որպէս զի
18 տեսցես եւ լցցիս Հոգւով Սրբով։ Եւ
վաղվաղակի անկան յաչաց նորա իբ-
րեւ կեղեւանք. [4]եւ ետես եւ յարեաւ
19 մկրտեցաւ։ Եւ առեալ կերակուր՝ զո-
րացաւ. եւ եղեւ ի Դամասկոս ընդ
աշակերտան աւուրս մինչ։
20 Եւ վաղվաղակի ի ժողովուրդսն քա-
րոզեաց զՅիսուս, թէ սա է Որդին
21 Աստուծոյ։ Զարմացեալ էին ամենե-
քեան որ լսէին, եւ ասէին, Ո՞չ սա էր
որ աւեր հարկանէր յԵրուսաղէմ զայ-
նոսիկ, որ կարդային [5]զանուն Յի-
սուսի՞. եւ այսր նմին իբր եկեալ է,
զի կապեսցէ զոսոս առցի առ քահա-
22 նայապետսն։ Այլ Սաւղոս առաւել եւս
զօրանայր եւ յաղթահարէր զՀրեայսն
որ բնակեալ էին ի Դամասկոս. եւ
խնդրատեցուցանէր թէ սա է Քրիս-
23 տոս։ Իբրեւ կատարէին աւուրք բա-
զումք, խորհեցան Հրեայքն սպանանել
24 զնա։ Յայտնեցաւ Սաւղոսի նենդու-
թիւն նոցա, քանզի պահէին զդրունսն
ի տուէ եւ ի գիշերի որպէս զի սպան-
25 անեն զնա։ Եւ առեալ զնա աշակեր-
տացն ի գիշերի՝ ընդ պարիսպն կախ-
եալ իջուցին վանդակաւ։
26 Իբրեւ եկն Սաւղոս յԵրուսաղէմ,
ընդվզանէր յարել յաշակերտսն. եւ ա-
մենեքեան երկնչէին ի նմանէ, չհաւա-
27 տային թէ իցէ աշակերտ։ Բայց Բառ-
նաբաս առեալ զնա՝ ած առ առաքեալսն,
եւ պատմեաց նոցա որպէս ի ճանա-
պարհին ետես զՏէր, եւ զի խօսեցաւ

---

[1] Ցլլն, շնչեալ սպառնալիս և սպանումն յա-
շակերտան Տեառն

[2] Ոմանք յաւելուն, խիստ է քեզ ընդդէմ խթանի
ածանել։ (6)Եւ զարհուրեալ և անչունչ լեալ՝
ասաց, Տէր, զի՞նչ կամիս առնել ինձ։ Եւ ասէ
ցնա Տէր,

[3] Ի բազումս պակաս

[4] Ոմանք, ետես առժամայն

[5] Ցլլն, զանունս զայս

ընդ նմա, եւ զի ի Դամասկոս համար-
28 ձակեցաւ յանուն Յիսուսի։ Եւ էր ընդ նոսա ի մտանել եւ ելանել յԵրուսա-
29 ղէմ, համարձակեալ յանուն [1]Տեառն։ խօսէր եւ վիճէր ընդ Յունան. եւ նորա
30 խոկային սպանանել զնա։ Եւ իմացեալ եղբարք՝ իջուցին զնա ի Կեսարիա, եւ առաքեցին զնա ի Տարսոն։
31 Բայց եկեղեցին ընդ ամենայն Հրէաստան եւ ի Սամարիա եւ ի Գալիլեա ունէր խաղաղութիւն, չինեալ եւ երթեալ զհետ երկիւղի Տեառն եւ մխիթարութեամբ Հոգւոյն Սրբոյ բազմանայր։
32 Եւ եղեւ ի շրջիլն Պետրոսի առ ամենեքումբք, իջանել նմա եւ առ սուրբսն որ բնակեալ էին ի Լիւդդա։
33 Եւ եգիտ անդ այր մի, որում անուն էր Ենէա, ութեմեան դնէր ի մահիճս
34 անդամալոյծ։ Եւ ասէ ցնա Պետրոս, Ենէա, բժշկէ զքեզ [2]Տէր Յիսուս Քրիստոս՝, արի եւ քեզէն քօթափեա զանկողինս քո։ Եւ վազվազակի յարեաւ։
35 Եւ տեսին զնա ամենեքեան որ բնակեալ էին ի Լիւդդա եւ ի Սարովնա,
36 որք եւ դարձան իսկ ի Տէր։ Եւ ի Յոպպէ էր կին մի աչակերտեալ անուն Տաբիթա, (որ թարգմանեալ կոչի Սեւնեւիկ.) սա էր լի գործովք բարեօք
37 եւ ողորմութեամբք զոր առնէր։ Եւ եղեւ յաւուրսն յայսոսիկ հիւանդանալ նմա եւ մեռանել. լուացին զնա եւ
38 եդին ի գահիկոնի անդ։ Եւ մերձ էր Լիւդդա ի Յոպպէ. աչակերտացն լուեալ եթէ Պետրոս անդ է, առաքեցին երկուս առ նա աղաչել զի մի՛
39 դանդաղեսցի գալ առ նոսա։ Եւ յարուցեալ Պետրոս եկն ընդ նոսա, զոր իբրեւ եկն՝ հանին ի վերնատունն. եւ կացին չուրջ զնովաւ այրիքն ամենայն, լային եւ ցուցանէին զձորձս եւ զհանդերձս, որչափ առնէր նոցա Այծեմ-
40 նիկն։ Եւ հանեալ արտաքս զամենեսեան Պետրոս՝ եդ ծունր, եկաց յաղօթս, եւ դարձաւ ի մարմինն եւ ասէ, Տաբիթա, արի կաց [3]յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի՝։ Եւ նա երաց զաչս իւր, եւ տեսեալ զՊետրոս նստաւ
41 կանգնուն։ Ձեռն եւս նմա եւ յարոյց զնա. կոչեաց զսուրբսն եւ զայրիսն,
42 առաջի կացոյց զնա կենդանի։ Եւ յայտնի եղեւ ընդ ամենայն Յոպպէ, եւ հաւատացին բազումք ի Տէր։
43 Եւ եղեւ աւուրս բազումս լինել նմա ի Յոպպէ առ ումեմն Սիմոնէի խաղախորդի։

ԳԼ. Ժ

1 Գա. Այր մի էր ի Կեսարիա անուն Կոռնեղիոս, հարիւրապետ ի գնդէ որ
2 կոչէր Իտալացի. Բարեպաշտն եւ երկիւղած յԱստուծոյ ամենայն տաճբ իւրով, առնէր ողորմութիւնս բազումս ի ժողովրդեանն, եւ յաղօթս կայր առ
3 Աստուած յամենայն ժամ։ Տեսս ի տեսլեան յայտնապէս դիւցնորդ ժամու աւուրն զհրեշտակ Աստուծոյ, զի մտանէր առ նա եւ ասէր ցնա, Կոռ-
4 նելիէ։ Եւ նա հայեցեալ ընդ նա՝ զարհուրեցաւ եւ ասէ, Զի՞ է, Տէր։ Եւ ասէ ցնա, Աղօթք քո եւ ողորմութիւնք քո ելին յիշատակաւ առաջի
5 Աստուծոյ։ Եւ արդ յղեա արս ի Յոպպէ եւ կոչեա զՍիմոնէն զոմն որ կոչի
6 Պետրոս. Նա մտեալ է առ Սիմոնէի ումեմն խաղախորդի, որոյ է տունն
7 մերձ ի ծով[1]։ Եւ իբրեւ գնաց հրեշտակն որ խօսէր ընդ նմա, կոչեաց երկուս ի ծառայիցն եւ զինուոր մի բարեպաշտն ի սպասաւորացն իւրոց,
8 Եւ պատմեալ նոցա զամենայն՝ առաքեաց զնոսա ի Յոպպէ։
9 Եւ ի վաղիւ անդր ի ճանապարհ անկանել նոցա եւ մօտ ի քաղաքն լինել, ել Պետրոս ի տանիսն կալ յաղօթս
10 զվեցերորդ ժամուն։ Քաղցեաւ եւ կամէր ճաշակել. եւ ի պատրաստեին նոցա՝ եղեւ ի վերայ նորա զարմացումն։
11 Եւ տեսանէր զերկինս բացեալ, եւ զչորեցունց տանուց կապեալ անօթ մի իբրեւ զկտաւոյ մեծի, իջեալ նստեալ
12 ի վերայ երկրի. Ցորում էին ամենայն [2]չորքոտանիք երկրի եւ սողունք երկրի՝ եւ
13 թռչունք երկնից։ Եւ եղեւ ձայն առ
14 նա, Արի, Պետրոս, զեն եւ կեր։ Եւ Պետրոս ասէ, Քաւ լիցի, Տէր, զի ոչ

[1] Որ֊ն֊ է, Տեառն Յիսուսի
[2] Յայն ժամուս ասէ, Տէր Յիսուս, այլ, Յիսուս Քրիստոս
[3] Ի ձ֊ն֊ն պ֊ս֊

[1] Որ֊ն֊ յ֊ե֊լ֊ն, նա խօսեացի քեզ զինչ պարտ իցէ քեզ առնել
[2] Որ֊ն֊ չորքոտանիք երկրի և գազանք և սողունք,

երբեք կերայ խառնակ ինչ եւ անսուրբ։
15 Զայն եղեւ կրկին անգամ առ նա, Զոր Աստուած սրբեաց՝ դու մի՛ պղծեր։
16 Այս եղեւ երիցս, եւ վերացաւ անօթն
17 յերկինս։ Եւ մինչդեռ զարմացեալ էր ընդ միտս Պետրոս թէ զի՞նչ իցէ տեսիլն զոր ետես, ահա արբքն առաքեալք
18 ի կոռնելեայ հարցին զատարանիցն Սիմոնի, կացին առ դրանն. կոչեցին
եւ հարցանէին, եթէ Սիմոնէ որ կոչի
19 Պետրոս աստ մտեալ իցէ։ Եւ մինչդեռ Պետրոս զմտաւ ածէր վասն տեսլեանն, ասէ Հոգին ցնա, Ահաւասիկ
20 [1]արք ոմանք՝ խնդրեն զքեզ։ Այլ արի էջ եւ երթ ընդ նոսա առանց իրիք
21 տալոյ, զի ես առաքեցի զնոսա։ Եւ իջեալ էջ Պետրոս առ նոսա, ասէ, Ահաւասիկ ես եմ զոր խնդրէքն. զի՞նչ
22 իրք են վասն որոյ եկիքդ։ Եւ նոքա ասեն, Կոռնելիոս հարիւրապետ, այր արդար եւ երկիւղած յԱստուծոյ, վկայեալ յամենայն ազգէն Հրէից, հրաման առ ի հրեշտակէ սրբոյ կոչել զքեզ ի
23 տուն իւր եւ լսել բանս ի քէն։ Կոչեաց զնոսա ի ներքս եւ առ իւր ագոյց։

Եւ ի վաղիւ անդր յարուցեալ Պետրոս գնաց ընդ նոսա, եւ ոմանք յեղբարց անտի որ ի Յոպպէ էին՝ եկին
24 ընդ նմա։ Եւ ի վաղիւ անդր մտին ի Կեսարիա. եւ Կոռնելիոս սպասեր նոցա, կոչեցեալ զազգատոհմն իւր եւ զվարիւսեր բարեկամսն։
25 ԳԲ. Եւ եղեւ ի մտանելն Պետրոսի՝ ընդ առաջ եղեւ նմա Կոռնելիոս, անկեալ առ ոտն երկիր պագանէր։ Եւ
26 Պետրոս կանգնեաց զնա եւ ասէ, Յոտն
27 կաց, եւ ես ինքն մարդ եմ։ Եւ խօսելով ընդ նմա եմուտ ի ներքս. եւ գտանէր անդ ժողովեալ դրազումս։
28 Եւ ասէ ցնոսա, Դուք ինքնին գիտէք ո՛րպէս անմարթ է առն Հրէի հալել կամ մերձենալ առ այլազգի. եւ ինձ Աստուած եցոյց մի՛ զոք խառնակ կամ
29 անսուրբ ասել ի մարդկանէ։ Վասն այսորիկ եւ առանց ընդ բանս ինչ առնելոյ եկի կոչեցեալ. բայց արդ հարցանեմ, Ցի՞նչ պէտս կոչեցէք զիս։
30 Եւ Կոռնելիոս ասէ, Յառաջ քան զչորս աւուրս մինչ ցայս [2]ժամ կայի յաղօթս
յինն ժամին ի տան իմում. եւ ահա այր
31 մի եկն եկաց առաջի իմ ի հանդերձս
սպիտակս, եւ ասէ, Կոռնելիէ, լսելի եղեն աղօթք քո, եւ ողորմութիւնք
32 քո յիշեցան առաջի Աստուծոյ. Եւ արդ յղեա ի Յոպպէ եւ կոչեա զՍիմոնէն որ կոչեցեալն է Պետրոս. սա մտեալ է ի տուն Սիմոնի ուրուն խաղախորդի մերձ ի ծովն. [3]որ եկեսցէ եւ խօսեսցի ընդ քեզ։" Եւ ես իսկ եւ իսկ
33 յղեցի առ քեզ, դու բարւոք արարեր զի եկիր. արդ ամենեքին մեք առաջի Աստուծոյ կայմք լսել զամենայն, որ հրամայեալ է քեզ ի Տեառնէ։

34 Եբաց Պետրոս զբերան իւր եւ ասէ, Ճշմարտութեամբ հասեալ եմ, զի ոչ գոյ ակնառութիւն առ ի յԱստուծոյ.
35 Այլ յամենայն ազգս որ երկնչին ինձանէ եւ գործէ զարդարութիւն, ընդու-
36 նելի է նմա։ [4]Զբանն առաքեաց որդւոցն Իսրայելի աւետարանել զխաղաղութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի.
37 (սա է ամենայնի Տէր.) Դուք ինքնին գիտէք զբանն որ եղեւ ընդ ամենայն Հրէաստան սկսեալ ի Գալիլէէ, յետ մկրտութեանն զոր քարոզեաց Յով-
38 հաննէս. ԶՅիսուս որ ի Նազարեթէ, զոր օծն Աստուած Հոգւով Սրբով եւ զօրութեամբ, որ չրջեցաւ բարի առնել եւ բժշկել զամենայն ընկճեալսն ի Սատանայէ, զի Աստուած էր ընդ
39 նմա։ Եւ մեք վկայ եմք ամենայնի զոր արար յերկրին Հրէաստանի եւ յԵրուսաղէմ. զոր եւ սպանին կախեալ զփայ-
40 տէ։ Զնա Աստուած յարոյց յերրորդ
41 աւուր, եւ ետ նմա յայտնի լինել, Ոչ ամենայն ժողովրդեանն, այլ մեզ վկայից յառաջագոյն ընտրելոցս յԱստուծոյ, որք եւ կերաք եւ արբաք ընդ
42 նմա յետ յարութեան նորա ի մեռելոց։ Եւ պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն եւ վկայութիւն գնել, թէ նա է սահմանեալն յԱստուծոյ դա-
43 տաւոր կենդանեաց եւ մեռելոց։ Նմա ամենայն մարգարէք վկայեն, թողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա ամենայն հաւատացելոց ի նա։
44 Եւ մինչդեռ խօսէր Պետրոս զբանս զայս, հանդեաւ Հոգին Սուրբ ի վերայ

[1]Բազմ. արք երեք
[2]Ոմանք, ժամ պահէի և

[3]Ձեռն. պակ.
[4]Ոմանք, Զբանն զոր

45 ամենեցուն որ լսէին զբանն։ Զարմա-
ցան որք ի թլփատութենէ անտի հա-
ւատացեալք եկեալ էին ընդ Պետրոսի,
զի եւ ի հեթանոսս պարգեւք Հոգւոյն
46 Սրբոյ զեղուին։ Քանզի լսէին ի նո-
ցանէ խօսիլ լեզուս եւ մեծացուցանել
47 զԱստուած։ Յայնժամ պատասխանի
եա Պետրոս, Միթէ զջուրն որ արգե-
լուլ կարէ՞ առ ի չմկրտելոյ զսոսա,
որք եւ զՀոգին Սուրբ ընկալան որպէս
48 եւ մեք։ Եւ հրամայեաց նոցա մկրտել
յանուն [1]Յիսուսի Քրիստոսի՞. յայն-
ժամ աղաչեցին զնա լինել անդ ա-
ւուրս ինչ։

ԳԼ. ԺԱ

1 ԳԳ. Լուան առաքեալքն եւ եղբարք
որ էին ի կողմանս Հրէաստանի, զի
եւ ի հեթանոսս ընկալան զբանն Ա-
2 ստուծոյ։ Բայց յորժամ ել Պետրոս յԵ-
րուսաղէմ, յազէին ի նմանէ որ ի թլ-
փատութենէ անտի [2]հաւատացեալքն
3 էին. Եւ ասէին եթէ [3]Ընդունա առ արս
4 անթլփատս եւ եկեր՞ ընդ նոսա։ Եւ
սկսաւ Պետրոս պատմել նոցա կար-
5 գաւ եւ ասէ, Ես էի ի քաղաքին ի
Յոպպէ յաղօթս, եւ տեսանէի ի զար-
մացման տեսիլ, իջանել անօթ մի ինչ իբ-
րեւ կտաւոյ մեծի զչորեցունց տանոց
կախեալ յերկնից, եւ հնաս մինչեւ առ
6 իս։ Յոր սկսուցեալ հայեի, եւ տեսի
զչորքոտանիս երկրի եւ զգազանս եւ
7 զսողունս եւ զթռչունս երկնից։ Եւ
լուայ բարբառ որ ասէր ցիս, Սրի,
8 Պետրոս, զնա եւ կեր։ Եւ ասեմ, Քաւ
լիցի, Տէր, զի խառնակ ինչ եւ ան-
սուրբ ոչ երբեք հնոտա ի բերան իմ։
9 Պատասխանի եւ ինձ երկիցս անդամ
բարբառն յերկնից, Զոր Աստուած
սրբեաց՝ դու մի՛ խառնակ համարիր։
10 Այս եղեւ երիցս, եւ վերացաւ ամե-
11 նայն դարձեալ յերկինս։ Եւ անդ ան-
դէն երիք արք եկին կացին առ տապա-
նիցն ուր եմն էի, առաքեալք ի կե-
12 սարիայ առ իս։ Եւ ասէ ցիս Հոգին
երթալ ընդ նոսա եւ մի՛ ինչ յազգել։
եկին ընդ իս եւ սոքա վեցհարիւր եղ-
բարբս, եւ մտաք ի տունն առնն այ-

13 նորիկ։ Եւ պատմեաց մեզ ո՛րպէս ե-
տես զհրեշտակն ի տան իւրում զի
կայր եւ ասէր ցնա, Առաքեա ի Յոպպէ,
եւ կոչեա զՍիմովն զկոչեցեալն Պետ-
14 րոս. Որ խօսեցցի բանս ընդ քեզ, ո-
րովք կեցցես դու եւ ամենայն տուն
15 քո։ Եւ իբրեւ սկսայ խօսել, եկն Հո-
գին Սուրբ ի վերայ նոցա, որպէս եւ
16 ի վերայ մեր ի սկզբանն։ Յիշեցի զբանն
Տեառն զոր ասէրն, Յովհաննէս մկըր-
տեաց ի ջուր, բայց դուք մկրտիցիք ի
17 Հոգին Սուրբ։ Իսկ արդ եթէ զհաւա-
րեալս պարգեւն եաս Աստուած եւ նո-
ցա որպէս եւ մեզ՝ ի հաւատալն ի Տէր
Յիսուս Քրիստոս, ես զի՞նչ կարող էի
18 արգելուլ զԱստուած։ Եւ լուեալ զայս
լռեցին, եւ փառաւոր առնէին զԱս-
տուած եւ ասէին, Ուրեմն եւ ի հե-
թանոսս եաս Աստուած զապաշխարու-
թիւն կենաց։

19 Եւ ցրուեալքն ի նեղութենէն որ ե-
ղեւ ի վերայ Ստեփանոսի՝ հասին մին-
չեւ ի Փիւնիկէ եւ ի Կիպրոս եւ Անտի-
ոքիա. ոչ ումեք խօսէին զբանն,
20 բայց միայն Հրէից։ Եւ էին ոմանք
ի նոցանէ արք Կիպրացիք եւ Կիւրե-
նացիք, որք մտեալ Անտիոք խօսէին
ընդ Յոյնսն աւետարանեալ զՏէր Յի-
21 սուս։ Եւ էր ձեռն Տեառն ընդ նոսա,
եւ բազմութիւն հաւատացելոց դար-
22 ձաւ ի Տէր։ Լուաւ եղեւ բանս այս յա-
կանջս եկեղեցւոյն որ էր յԵրուսաղէմ
վասն նոցա, եւ առաքեցին զԲառնա-
23 բաս մինչեւ Անտիոք. Որ իբրեւ եկն
եւետես զնորոնն Աստուծոյ, ուրախ
եղեւ, եւ մխիթարէր զամենեսեան յո-
ժարութեամբ սրտի կալ նոցա ի Տէր։
24 Զի էր այր զուարթամիտ եւ լի Հոգւով
Սրբով եւ հաւատովք. եւ յաւելաւ
25 ժողովուրդ բազում Տեառն։ Եւ ել ի
Տարսոն խնդրել զՍաւղոս, եւ գտեալ
26 զնա ած յԱնտիոք։ Եւ եղեւ նոցա
զամն ողջոյն ժողովել եկեղեցւոյն եւ
ուսուցանել ժողովուրդ բազում, եւ
անուանել նախ Անտիոք [4]զաշակերտ-
եսան Քրիստոնեայս։
27 ԳԴ. Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին
յԵրուսաղեմ մարգարէք Անտիոք։
28 Յարուցեալ մի ոմն ի նոցանէ անուն
Ագաբոս՝ նշանակեաց Հոգւովն սով մեծ

---

[1] Որում, Տեառն
[2] ի Յունէն դրեալ
[3] Բուղմէ, Մտեր առ արս անթլփատս եւ կերար
[4] Յոյն, զաշակերտեսն

լինել ընդ ամենայն աչխարհ, որ եղեւ
29 առ կղաւդեաս։ Բայց յաչակերտացն
անտի, որպէս զիարդ կարող ոք էր իւ-
րաքանչիւր ոք ի նոցանէ որոչեցին ա-
ռաքել ի պէաս եղբարցն որ բնակեալ
30 էին ի Հրէաստանի. Զոր եւ արարին
իսկ առաքեալ առ երիցունսն ի ձեռն
Բառնաբայ եւ Սաւղոսի։

ԳԼ. ԺԲ

1 ԳԵ. Ընդ ժամանակն ընդ այնոսիկ
արկ Հերովդէս արքայ ձեռն չարչարել
2 զոմանս յեկեղեցւոյն։ Եւ սպան զՅա-
կովբոս, զեղբայր Յովհաննու, սրով։
3 Եւտես եթէ հաճոյ է Հրէիցն, յաւել եւս
ունել զՊետրոս. եւ էին աւուրքն բա-
4 զարջակերաց։ Զոր իբրեւ կալաւ, եդ
ի բանտի, եւ մատնեաց չորից չորեքո-
դաց զինուորաց պահել զնա. եւ կա-
մէր յետ պասկին ածել զնա ժողովրդ-
5 եանն։ Եւ Պետրոս ի պահեսի էր ի
բանտին, եւ ապօթք սակս լինէին յե-
կեղեցւոյն վասն նորա առ Աստուած։
6 Իբրեւ կամեցաւ զնա ածել Հերովդէս,
ի գիշերին յայնմիկ էր Պետրոս ի քուն
ի մէջ երկուց զինուորաց՝ կապեալ
կրկին չղթայիւք, եւ պահապանքն ա-
7 ռաջի դրանն պահէին զբանտն։ Եւ
ահա հրեշտակ Տեառն եկն եկաց ի վե-
րայ, եւ լոյս ծագեաց ի տանն, եւ
խթեաց զկողն Պետրոսի, յարոյց զնա
եւ ասէ, Արի վազվազակի. եւ անկան
8 չղթայքն ի ձեռաց նորա։ Եւ ասէ ցնա
հրեշտակն, Կձ զգեաց զբ, եւ արկ
զսնապատմուճան քո. եւ արար այն-
պէս. եւ ասէ ցնա, Արկ զձորձս քո
9 եւ եկ զկնի իմ։ Եւ ելեալ երթայր
զհետ, եւ ոչ գիտէր եթէ ճշմարիտ իցէ
որ լինի եղեւն ի հրեշտակէն. այլ հա-
10 մարէր երազ տեսանել։ Եւ իբրեւ ան-
ցին նոքա զբան մի պահ եւ զբան եր-
կուս, եկին մինչեւ ի դուռնն երկաթի՛
որ հանէր ի քաղաքն. որ ինքեանք բա-
ցան նոցա, եւ մտեալ անցին զբնդ փո-
ղոց մի. եւ վազվազակի ի բաց եկաց
11 ի նմանէ հրեշտակն։ Եւ Պետրոս իբրեւ
ի միտս եղեւ, ասէ, Արդ գիտեմ ճըշ-
մարիտ եթէ առաքեաց Տէր զհրեշտակ
իւր, եւ փրկեաց զիս ի ձեռաց Հե-
րովդի եւ յամենայն ակնկալութենէ
12 ժողովրդեանն Հրէից։ Եւ լեալ ի միտս
եկն ի տունն Մարիամու մօր Յովհաննու,
որ կոչեցաւն Մարկոս. ուր էին բա-
զումք ժողովեալ եւ աղօթս առնէին։
13 Եւ ի բախել զդուրս տանն, մատեաւ
աղախին մի, ունկն դնէր, որում ա-
14 նուն էր Հռոդէ։ Եւ ծանուցեալ
զձայնն Պետրոսի՝ ի խնդալոյն ոչ եցոյց
դրսունն, ի ներքս ընթացեալ պատ-
մեաց թէ Պետրոս առ դրանն կայ։
15 Նոքա ասեն ցնա, Մոլիս. եւ նա ե՛ւս
պնդէր թէ այսպէս է. եւ նոքա ասէին,
16 Հրեշտակ նորա իցէ։ Եւ Պետրոս առէպ
բախէր. իբրեւ բացին, տեսին զնա
17 եւ զարմացան։ Եւ նա ձեռամբ ցու-
ցանէր նոցա լռել, եւ [1]պատմեաց որ-
պէս եւ Տէր հնան զնա ի բանտէն, եւ
ասէ, Պատմեցէք Յակովբայ եւ եղբարց
18 զայս. եւ ելեալ գնաց յայլ տեղի։ Եւ
իբրեւ այդ եղեւ, էր խռովութիւն մնծ
ի մէջ զինուորացն, զի՞ արդեւք Պետ-
19 րոսն եղեւ։ Իսկ Հերովդէս իբրեւ
խնդրեաց զնա եւ ոչ եգիտ, հարցեալ
զպահապանսն՝ հրամայեաց սպանանել.
եւ իջեալ ի Հրէաստանէ ի կեսարիա
եւ անդ լինէր։

20 Եւ էր Հերովդէս ցասմամբ ընդ Տիւ-
րացիս եւ ընդ Սիդովնեացիս. եւ նոքա
առ հասարակ եկին առ նա, եւ ի բանի
արարեալ զԲղաստոս սենեկապետ ար-
քայի, խնդրէին զհաշտութիւն, վասն
կերակրելոյ երկրին նոցա յարքուա-
21 նուստ։ Յաւուր միում յերեւելոյ Հերո-
վդէս զգեցեալ էր զհանդերձ թա-
գաւորութեան եւ նստէր յատենի, եւ
22 խօսէր ընդ նոսա հրապարակաւ։ Եւ
ամբոխն աղաղակէր թէ Աստուծոյ
23 բարբառ է, եւ ոչ մարդոյ։ Եւ անդէն
եհար զնա հրեշտակ Տեառն, փոխա-
նակ զի ոչ եառ փառս Աստուծոյ. եւ
եղեալ որդնալից՝ սատակեցաւ։
24 Եւ բանն Աստուծոյ աճէր եւ բազ-
մանայր։
25 ԳԶ. Բառնաբաս եւ Սաւղոս դար-
ձան յԵրուսաղեմ, իբրեւ կատարեցին
պաշտօնն. առեալ էր ընդ իւրեանս եւ
զՅովհաննէս որ կոչեցաւն էր Մարկոս։

ԳԼ. ԺԳ

1 Էին ոմանք յԱնտիոք ըստ եկեղեցւոյն

[1]Ոմն, պատմեաց նոցա

մարդարէք եւ վարդապետք , Բառնաբաս եւ Շմաւոն կոչեցեալն Նիգեր , եւ Ղուկիոս Կիւրենացի եւ Մանայեն դայեկորդի Հերովդի չորրորդապետի ,
2 եւ Սաւղոս : Մինչդեռ ի պաշտամանն Տեառն կային եւ պահէին , ասէ Հոգին Սուրբ , Որոշեցէք ինձ զԲառնաբաս եւ զՍաւղոս ի գործ յոր կոչեցեալ է իմ
3 զդոսա : Յայնժամ պահեալ եւ աղօթս արարեալ եդին զձեռս ի վերայ նոցա եւ արձակեցին :

4 Եւ նոքա առաքեալք ի Հոգւոյն Սրբոյ՝ իջին ի Սելեւկիա , եւ անտի նաւեցին ի Կիպրոս : Եւ հասեալ ի Սալամինա պատմէին զբանն Աստուծոյ ի ժողովուրդս Հրէից . ունէին եւ
6 զՅովհաննէս պաշտօնեայ : Շրջեալ ընդ ամենայն կղզին մինչեւ ի Պափոս , գտին անդ այր գոմն մոգ սուտ մարգարէ Հրեայ , որում անուն էր Բարեյեսուս .
7 Որ էր ընդ փոխանակի բռնչխին Սերգեայ Պաւղոսի , առն իմաստնոյ . նորա աղաչեալ զԲառնաբաս եւ զՍաւղոս
8 խնդրէր լսել զբանն Աստուծոյ : Ընդդէմ եկաց նոցա Եղիմաս մոգ , քանզի այսպէս թարգմանի անուն նորա . խնդրէր չրջել զփոխանակ բռնչխին ի հաւատոց :
9 Իսկ Սաւղոս որ եւ Պաւղոս՝ լցեալ Հոգւով Սրբով հայեցաւ ի նա ,
10 եւ ասէ , Ով լի ամենայն նենգութեամբ եւ խորամանկութեամբ , որդի Սատանայի , թշնամի ամենայն արդարութեան , ո՞չ լռես ի թիւրելոյ զձանապարհս Տեառն զուղիզս :
11 Եւ արդ՝ անա ձեռն Տեառն ի վերայ քո , եւ եղիցես կոյր՝ չտեսանել զարեւ մինչեւ ի ժամանակ մի . եւ անդէն անկաւ ի վրայ նորա մէգ եւ խաւար , եւ չրջեալ
12 խնդրէր առաջնորդս : Յայնժամ տեսեալ փոխանակի բռնչխին զլուսն որ եղեն՝ հաւատաց , զարմացեալ ընդ վարդապետութիւնն Տեառն :

13 Եւ ամբարձեալ ի Պափեայ Պաւղոս նաւոք՝ եկին ի Պերկէ Պամփիլիայ . Յովհաննէս մեկնեալ ի նոցանէ՝ դարձաւ յԵրուսաղէմ : 14 Եւ նոքա զնացեալ ի Պերկեայ՝ եկին յԱնտիոք Պիսիդեայ . եւ մտեալ ի ժողովուրդն յաւուր շաբաթու՝ նստան : 15 Եւ յետ ընթերցման օրէնսն եւ մարգարէիցն , առաքեցին առ նոսա ժողովրդապետքն եւ ասեն , Արք եղբարք , եթէ իցէն ի ձեզ բանք մխիթարութեան առ ժողովուրդս , խօսեցարուք :

16 Գէ՛ Յոտն եկաց Պաւղոս շարժեաց զձեռն եւ ասէ , Արք Իսրայելացիք եւ որք երկնչիք յԱստուծոյ , լուարուք :
17 Աստուած ժողովրդեանս այսորիկ Իսրայէլի ընտրեաց զհարսն մեր , եւ զժողովուրդն բարձրացոյց ի պանդխտութեան յերկրին Եգիպտացւոց , եւ ի բա-
18 զուկ բարձր եհան զնոսա անտի : Եւ իբրեւ քառասնամեայ ժամանակ կի-
19 րակրեաց զնոսա յանապատի : Եւ քակեալ ազգս եւթն յերկրին Քանանու՝ ժառանգեցոյց նոցա զերկիրս [1]նոցա իբ-
20 րեւ ամս չորեքհարիւր եւ յիսուն : Եւ յետ այսորիկ՝ եաս նոցա դատաւորս
21 մինչեւ ի Սամուէլ մարգարէ : Եւ անտի յառաջ խնդրեցին թագաւոր , եւ ետ նոցա Աստուած զՍաւուղ որդի Կիսեայ՝ այր յազգէ Բենիամինի ամ-
22 բառասուն : Եւ իբրեւ փոխեաց զնա , յարոյց նոցա զԴաւիթ թագաւոր , ո-
րում եւ ասաց վկայութիւնս , Գտի զԴաւիթ որդի Յեսսեայ այր ըստ սրտի իմում , որ արասցէ զամենայն զկամս
23 իմ : Ի սորա զաւակէ Աստուած ըստ աւետեացն յարոյց Իսրայէլի զփրկիչն
24 Յիսուս . Քան յառաջագոյն քարոզեալ Յովհաննու առաջի երեսաց մտի նորա մկրտութիւն ապաշխա-
րութեան ամենայն ժողովրդեանն Իս-
25 րայէլի : Եւ իբրեւ լնոյր Յովհաննէս զընթացսն , ասէր , Զո՞ ոք կարծէք զիս նէն մէ իցեմ . չեմ ես այն , այլ անա գայ զկնի իմ , որում չեմ արժանի զկօ-
26 շիկս ոտիցն լուծանել : Արք եղբարք , որդիք Աբրահամեան տոհմին , եւ որ ի ձեզ երկիւղածք իցեն յԱստուծոյ , ձեզ բանս այս փրկութեան առաքե-
27 ցաւ : Քանզի որ բնակեալ են յերուսաղէմ , եւ իշխանք նոցա անծանօթ եղեն ի նմանէ , եւ [2]բան բարբառոյ մարգարէիցն , որ ամենայն շաբաթու կար-
28 դեւնին , դատեալ կատարեցին . Եւ ոչ մի ինչ պատճառս մահու գտեալ՝ խնդրեցին ի Պիղատոսէ սպանանել զնոսա :
29 Եւ իբրեւ կատարեցին զամենայն որ վասն նորա գրեալ էր՝ իջուցեալ ի փայ-
30 տէն եդին ի գերեզմանի : Այլ Աստուած

[1] Ոմանք , նոցա : (20) Եւ յետ այսորիկ իբրեւ ամս չորեքհարիւր և յիսուն
[2] Ձեռն , ի բարբառոյ

յարոյց զնա ի մեռելոց · որ երեւեցաւ
31 աւուրբք բազմօք այնոցիկ Որ ելեալ էին ընդ նմա ի Գալիլէէ յերուսաղէմ · որք եւ արդ իսկ վկայք են նորա առ
32 ժողովուրդն : Եւ մեք ձեզ աւետարանեմք զխոստումն որ առ հարսն եղեալ
33 էր : Զի զնոյն Աստուած կատարեաց առ մեզ որդիս նոցա՝ յարուցեալ զՅիսուս , որպէս եւ ի Սաղմոսին գրեալ է յերկրորդում , Որդի իմ ես դու , եւ ես
34 այսօր ծնայ զքեզ : Եւ զի յարոյց զնա ի մեռելոց , եւ ոչ եւս դառնալոց է յապականութիւն , այսպէս ասէ Թէ Տացից ձեզ զսրբութիւնսն Դաւթի զհաւա-
35 տարիմս : Քանզի եւ ի միւսում ասէ , Ոչ տացես Սրբոյ քումմ տեսանել զա-
36 պականութիւն : Այլ Դաւիթ յազգի անդ իւրում պաշտաց եւ ի կամս Աստուծոյ ննջեաց , եւ յաւելաւ առ հարս
37 իւր եւ ետես զապականութիւն : Բայց զոր Աստուածն յարոյց՝ ոչ ետես զա-
38 պականութիւն : Ցայսմանէ լիցի ձեզ , արք եղբարք , զի սովաւ ձեզ թողու-
39 թիւն մեղաց աւետարանի . Եւ յամենայնէ յորմէ ոչ կարացէք օրինաւքն Մովսիսի արդարանալ՝ սովաւ ամե-
40 նայն որ հաւատայ արդարանայ : Զգոյշ կացէք , դուցէ եկեսցէ ի վերայ ձեր որ
41 ասացեալն է ի մարգարէս . Տեսէք , արհամարհոտք , եւ զարմացարուք եւ եղծարուք , զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր , գործ՝ որում ոչ հաւատայցէք , եթէ ոք պատմեսցէ ձեզ :
42 Եւ իբրեւ ելին անտի , աղաչէին ի միւսում չաբաթու խօսել նոցա զնոյն
43 բանս : Իբրեւ արձակեցաւ ժողովուրդն , գնետ երիցանին բազումք ի Հրէից անտի եւ ի պաշտօնէիցն եկա-
մտից զՊաւղոսի եւ զԲառնաբայ . որք խօսէին ընդ նոսա , եւ հաւանեցուցանէին զնոսա կալ մնալ ի շնորհն Աստուծոյ :
44 ԴԱ· Եւ ի գալ միւսոյ չաբաթուն , գրեթէ ամենայն քաղաքն ժողովեցաւ
45 լսել զբանն Աստուծոյ : Իբրեւ տեսին Հրեայքն զամբոխն՝ լցան նախանձու , եւ ընդդէմ դարձեալ ասացելոցն ի Պաւ-
46 ղոսէ՝ հայհոյէին : Համարձակեալ Պաւղոսի եւ Բառնաբայ՝ ասէին , Առ ձեզ նախ պարտ էր խօսել զբանն Աստուծոյ . եւ քանզի դուք մերժէք զնա , եւ ոչ արժանիս համարիք զձեզ կենացն յաւիտենականաց , ահաւասիկ դառ-
47 նամք ի հեթանոսս : Զի այսպէս պատուիրեաց մեզ Տէր · Եղի զքեզ ի լոյս հեթանոսաց՝ լինել քեզ ի փրկութիւն
48 մինչեւ ի ծագս երկրի : Զայս լուեալ հեթանոսացն ուրախ լինէին , եւ փառաւորեն զբանն Տեառն . եւ հաւատացին որք էին կարգեալ ի կեանս
49 յաւիտենականս : Եւ չրջէր բանն Աստուծոյ ընդ ամենայն դաւառն :
50 Բայց Հրեայքն դրդուեցին զպաշտօնեայ կանայս զգաստս , եւ զքաղաքական զքաղաքին , եւ յարուցեալ հալածանս ի վերայ Պաւղոսի եւ Բառնաբայ՝ հանին զնոսա
51 ի սահմանացն իւրեանց : Եւ նոցա թօթափեալ զփոշի ոտից ի վերայ նոցա՝
52 եկին յԻկոնիոն : Եւ աշակերտքն լնուին խնդութեամբ եւ Հոգւով Սրբով :

ԳԼ· ԺԴ

1 Եւ եղեւ յԻկոնիոն ի միասին մտանել նոցա ի ժողովուրդ Հրէից եւ խօսել նոյնպէս , մինչեւ հաւատալ Հրէից եւ
2 Յունաց բազմաց յոյժ : Բայց անհաւատն Հրեայքն յարուցին եւ չարացուցին զանձինս հեթանոսացն ի վերայ եղբարց·
3 Բազում ժամանակս չրջէին , համարձակեալք [1]Տեառն վկայութեամբ , բանի չնորհաց իւրոց , եւ տալ՝ նշանս եւ արուեստս լինելոյ ի ձեռս նոցա :
4 Եւ եղեւ հերձուածք բազմութեան քաղաքին , ոմանք էին ի Հրեայսն , եւ
5 ոմանք յառաքեալսն : Իբրեւ եղեւ դիմել հեթանոսացն եւ Հրէից իշխանօքն իւրեանց ի թշնամանել եւ ի քարկոծել
6 զնոսա , Աղդ եղեալ նոցա՝ փախեան ի քաղաքսն Լիկայոնացւոց ի Լիւստրա եւ ի Դերբէ եւ չուրջ զգաւառսն ,
7 եւ անդ աւետարանէին : ԴԲ· Եւ այր մի Լիւստրացի տկար յոտից նստէր՝ կաղ յորովայնէ մօր իւ-
8 րոյ , որոյ երբեք չէր գնացեալ : Սա լուաւ զխօսսն Պաւղոսի , որոյ հայեցեալ ի նա եւ տեսեալ թէ ունի հա-
9 ւատս փրկութեան , Ասէ մեծաձայն , [2]Քեզ ասեմ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ,՚՚ Յոտն կաց ի վերայ ոտից քոց ուղիղ · եւ վազվազէր եւ

[1] Ցյն, ի Տէր որ վկայէր բանի շնորհաց իւրոց, տուեալ
[2] Ի բազմաս պակասէ

10 գնայր։ Եւ ժողովրդոցն տեսեալ զոր
արարն Պաւղոս՝ բարձին զձայնս իւր-
եանց Լիկաոնարէն եւ ասեն, Աս-
տուածք նմանեալք մարդկան իջին առ
11 մեզ։ Եւ կոչէին զԲառնաբաս Դիոս,
եւ զՊաւղոս՝ Հերմէս, քանզի նա էր
12 առաջնորդ բանին։ Իսկ քուրմն Դիայ
որ կայր առաջի քաղաքին, ցուլս եւ
պսակս հասուցեալ ի դուռնն՝ հանդերձ
13 բազմութեամբքն կամէր զոհել։ Եւ
լուեալ առաքելոցն Բառնաբայ եւ Պաւ-
ղոսի, պատառեալ զհանդերձս իւրեանց՝
արտաքս վազեցին [1]յամբոխէն. աղա-
14 ղակէին եւ ասէին, Այր, զի՞նչ գոր-
ծէք զայդ. մեք ձեզ նմանողք կարիօք
մարդիկ եմք, աւետարանել ձեզ յայդ-
պիսի ունայնութեանց դառնալ յԱս-
տուած կենդանի, որ արար զերկինս
եւ զերկիր եւ զծով եւ զամենայն որ
15 ի նոսա։ Որ յանցեալ ազգսն թոյլ ետ
ամենայն հեթանոսաց գնալ ի ճանա-
16 պարհս իւրեանց։ Եւ սակայն ոչ եթէ
առանց վկայութեան զինքն եթող՝ բա-
րերարութեամբն տալ յերկնից ձեզ
անձրեւս եւ ժամանակս պտղաբերս,
լնուլ կերակրովք եւ ուրախութեամբ
17 զսիրտս ձեր։ Եւ զայս ասացեալ՝ հազիւ
լռեցուցանէին զժողովուրդն ի չզոհե-
լոյ նոցա. [2]այլ գնալ յիւրաքանչիւր
տեղիս։"
18 Դ. Եւ ի չրջելն նոցա եւ յուսու-
ցանել, եկին հասին յԱնտիոքէ եւ ի-
կոնիոնէ Հրեայք. [2]եւ ի վիճել նոցա
համարձակութեամբ," պատրեցին զժո-
ղովուրդն [2]ի բաց կալ ի նոցանէ, եւ
ասէին թէ Ոչինչ ճչմարտութիւն ա-
սեն, այլ դամենայն սուտն". եւ քար-
կոծեալ զՊաւղոս՝ քարչեցին արտաքս
քան զքաղաքն, եւ համարէին գնա
19 մեռեալ։ Եւ ի պատել զնովաւ աչա-
կերտացն՝ յարեաւ եմուտ ի քաղաքն,
եւ ի վաղիւ անդր կէ Բառնաբաւ հան-
20 դերձ ի Դերբէ։ Աւետարանեալ ի քա-
ղաքին յայնմիկ եւ աշակերտեալ զրա-
զումս՝ դարձան ի Լիւստրա եւ յԻկո-
21 նիոն եւ յԱնտիոքիա, Հաստատել զան-
ձինս աշակերտելոցն եւ մխիթարել կալ
հաստատուն ի հաւատսն. եւ թէ՝ Բա-
զում նեղութեամբք պարտ է մեզ մտա-
22 նել յարքայութիւնն Աստուծոյ։ Ձեռ-

[1]Ց-ՅՒ, յամբոխն [2]ի բազմաց պատճ.

նադրեցին նոցա ըստ եկեղեցւոյ՝ երի-
ցունս, աղօթս արարեալ հանդերձ
պահովք՝ յանձն արարին զնոսա Տեառն
23 յոր հաւատացեալ էին։ Եւ չրջեալ ընդ
24 Պիսիդիա եկին ի Պամփիւլիա։ Եւ խօ-
սեցեալ ի Պերգէ զբանն Տեառն՝ իջին
25 յԱտտալիա։ Եւ անտի նաւարկեալ
գնացին յԱնտիոք, ուստի էին յանձն
արարեալ չնորհացն Աստուծոյ ի գործն
26 զոր կատարեցին։ Եկեալ եւ ժողովեալ
զեկեղեցին՝ պատմեցին որչափ արար
Աստուած ընդ նոսա. եւ զի եբաց հե-
27 թանոսաց դուռն հաւատոց։ Շրջէին
ժամանակս ոչ սակաւս ընդ աշա-
կերտսն։

Գլ. ԺԵ

1 Դ. Եւ ոմանք իջեալ ի Հրէաստանէ
ուսուցանէին զեղբարս, Եթէ ոչ թլփա-
ւիք ըստ օրինացն Մովսիսի՝ ոչ կարէք
2 ապրել։ Եւ ի լինել ոչ սակաւ հակա-
ռակութեան եւ խնդրոյ Պաւղոսի եւ
Բառնաբայ ընդ նոսա, եդին եկանել
Պաւղոսի եւ Բառնաբայ եւ ոմանց ի
նոցանէ առ առաքեալսն եւ երիցունս
յերուսաղէմ վասն խնդրոյն այնորիկ։
3 Նոքա յուղարկեալք եկեղեցւոյն՝ չրջե-
ցան ընդ Փիւնիկէ եւ ընդ Սամարիա.
պատմէին զդարձն հեթանոսաց, եւ
առնէին ուրախութիւն մեծ ամենայն
4 եղբարց։ Եւ հասեալ յերուսաղէմ, ըն-
կալեալք եկեղեցւոյն եւ յառաքելոցն
եւ յերիցանց՝ պատմեցին որչափ ինչ
5 արար ընդ նոսա Աստուած։ Ելարեան
ոմանք ի հերձուածոյն փարիսեցւոց հա-
ւատացեալք, եւ ասեն թէ Պարտ է
թլփատել զդոսա, եւ պատուիրել պա-
հել զօրէնսն Մովսիսի։
6 Եւ ժողովեցան առաքեալքն եւ ե-
րիցունք տեսանել վասն բանիս այսո-
7 րիկ։ Եւ յետ բազում խնդիր լինելոյ
յոտն եկաց Պետրոս եւ ասէ ցնոսա,
Արք եղբարք, դուք ինքնին գիտէք,
զի յաւուրցն առաջնոց ի միջի ձերում
ընտրեաց Աստուած բերանով իմով լսել
հեթանոսաց բանին աւետարանի եւ
8 հաւատալ։ Եւ սրտագէտն Աստուած
վկայեաց նոցա, տալով նոցա գՀոգին
9 Սուրբ որպէս եւ մեզ։ Եւ ոչինչ ընտ-
րութիւն արար ի մէջ նոցա եւ մեր,
հաւատովք սրբեալ զսիրտս նոցա։

40 Արդ ընդէ՞ր փորձէք զԱստուած, դնել լուծ ի վերայ պարանոցի աշակերտացն, զոր ոչ հարքն մեր եւ ոչ մեք կարա-
41 ցաք բառնալ։ Այլ չնորհօքն Տեառն Յիսուսի Քրիստոսի հաւատամք ապրիլ, զոր օրինակ եւ նոքա։
42 Լուեալ ամենայն ժողովուրդն եւ լսէին բառնաբայ եւ Պաւղոսի պատմելոյն, սրչափ արար Աստուած նչանս եւ արուեստս ի հեթանոսս ի ձեռն նոցա։
43 Դե՛ւ եւ յետ լսելոյն նոցա պատասխանի եաս Յակոբոս եւ ասէ, Արք եղ-
44 բարք, լուարուք ինձ. Շմաւոն պատմեաց որպէս յառաջագոյն Աստուած այց արար առնուլ ժողովուրդ ի հե-
45 թանոսաց անուան իւրոյ։ Եւ ընդ սմին բանք մարգարէիցն որպէս
46 եւ գրեալ է՝ Յետ այսորիկ դարձայց եւ չինեցից զյարկն Դաւթի զանկեալն, եւ զկործանեալսն նորա վերստին չի-
47 նեցից, եւ կանգնեցից զնա. Որպէս զի խնդրեսցեն մնացորդք մարդկան զՏէր, եւ ամենայն հեթանոսք յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ, ասէ Տէր,
48 որ առնէ զայս ամենայն, Յայտնի է
49 ի յաւիտենից՝։ Վասն որոյ եւ ես իրաւունս համարիմ մի՛ նեղել զդառնացիս ոք ի հեթանոսացն դառնան առ
20 Աստուած։ Այլ տալ թուղթս առ նոսա խորշել ի կերակրոց կուռ եւ ի պոռնկութենէ եւ ի մեռելոցաց եւ յարեանէ։
21 Զի Մովսէս յաղագս առաջնոց բազում քաղաքաց զբարոզիչսն իւր ունի՝ ի ժողովս ըստ ամենայն շաբաթու ընթերցեալ։
22 Յայնժամ հաճոյ թուեցաւ առաքեալսն եւ երիցանցն ամենայն եկեղեցւոյն, առ ընտրեալս ի նոցանէ առաքել յԱնտիոք զնդ Պաւղոսի եւ զնդ Բառնաբայ, զՅուդա զկոչեցեալն Բարսաբա եւ զՇիղա՝ [2]արս զլխաւորս։
23 Գրեալ առ եղբարս՝ի ձեռն նոցա զայս ինչ։

Առաքեալքն եւ երիցունքն եւ եղբարքն յԱնտիոք եւ ի Սիւրիա եւ ի Կիլիկիա եղբարդւոյ որ ի հեթանոսացդ էք, ող-
24 ջոյն։ Քանզի լուաք թէ ոմանք իրրեւ

[1]Ոմն., են իյաւիտենից Տեառն ամենայն գործք իւր

[2]Յն., արս գլխաւորս ի մէջ եղբարց։ (23) Գրեալ

ի մէնջ խռովեցուցին զձեզ բանիւք խաւսել զանձինս ձեր, ասեն Թլփատել եւ պահել զօրէնսն, որոց ոչ հրա-
25 մայեցաք, Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոցս, արս ընտրեալս յղել առ ձեզ զնդ սիրելիս մեր, զնդ Բառ-
26 նաբայ եւ զնդ Պաւղոսի, Արք՝ որք մատնեցին զանձինս իւրեանց վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
27 տոսի։ Արդ առաքեցաք զՅուդա եւ զՇիղա, եւ նոցա ի բանից զնոյն պատ-
28 մել։ Զի հաճոյ թուեցաւ Հոգւոյն Սրբոյ եւ մեզ մի՛ ինչ աւելի բեռն դնել ձեզ, բայց միայն ի կարեւորացս յայ-
29 տոցիկ. Ի բաց կալ ի զոհելոյ կոոց եւ յարեանէ եւ ի հեղձուցելոյ եւ ի պոռնկութենէ. յորոց պահեալ զանձինս բարւոք գործէք. ողջ լերուք։
30 Եւ նոքա արձակեալք իջին յԱնտիոք, եւ ժողովեալ զժողովուրդն՝ ե-
31 տուն զԹուղթն։ Եւ ընթերցեալ ուրախ եղեն ի վերայ մխիթարութեանն։
32 Յուդա եւ Շիղա, զի եւ նոքա մարգարէք էին, բանիւք բազմօք մխիթա-
33 րեցին զեղբարսն եւ հաստատեցին։ Եւ եղեալ անդ ժամանակս՝ արձակեցան խաղաղութեամբ յեղբարց [3]առ առա-
34 քեալսն։ [4]Եւ հաճոյ թուեցաւ Շիղայի
35 մնալ անդէն։ Բայց Պաւղոս եւ Բառնաբաս չրջէին յԱնտիոք, ուսուցանել եւ աւետարանել եւ այլովք բազմօք պրանն Տեառն։
36 Դ՚զ. Իսկ յետ աւուրց ինչ ասէ Պաւղոս ցԲառնաբաս, Դարձցուք եւ չրջեցուք զեղբարսդ ըստ ամենայն քաղաքաց յորս քարոզեցաք զբանն Տեառն
37 թէ որպէս ունիցին։ Բառնաբաս կամէր առնուլ եւ զՅովհաննէս զկոչե-
38 ցեալն Մարկոս. Բայց Պաւղոս աղաչէր թէ զմեկնեալսն ի նոցանէ ի Պամփիւլեայ եւ չչեկեալսն ընդ նոսա ի գործն
39 մի՛ առնուլ ընդ ինքեանս։ Եւ եղեւ զժաւթիւն՝ մինչեւ մեկնել նոցա ի միմեանց, Բառնաբայ առնուլ զՄարկոս նաեւ ի կիպրոս։ Եւ Պաւղոսի
40 ընտրեալ զՇիղա եւ յանձն արարեալ չնորհացն Աստուծոյ յեղբարց անտի,
41 Եւ չրջէր ի կողմանս Ասորւոց եւ Կիլիկեցւոց, եւ հաստատէր զեկեղեցիսն։

[3]Ոմն., առ որս առաքեցինն զնոսա

[4]Յոմանս պակաս

ԳԼ· ԺԶ

1 Եկն հնաս ի Դերբէ եւ ի Լիւստրա· եւ ահա աշակերտ մի էր անուն Տիմոթէոս, որդի կնոջ Հրէի հաւատացելոյ եւ հօր հեթանոսի· 2 որում եւ հօր հեթանոսի· Որ վկայեալ էր ի Լիւստրացւոց եւ յիկոնացւոց· 3 սոյ եղբայրդ· Չոհս կամեցաւ Պաւղոս ընդ իւր ածանել, եւ առեալ թլփատեաց զնա վասն Հրէիցն որ էին ի տեղիսն յայնոսիկ, քանզի զիւաէին ամենեքեան 4 զհայր նորա թէ հեթանոս էր· Իրրեւ անցանէին ընդ քաղաքսն, աւանդէին նոցա պահել զհրամանսն պատուիրեալս յառաքելոցն եւ յերիցանցն որք յԵրուսաղէմ· 5 Եւ եկեղեցիքն հաստատէին ի հաւատս, եւ յաւելուին ի թիւն հանապազօր·

6 Եւ· Եւ չրջեցան զԿոիւգիա եւ զԳաղատացւոց, արգելեալք ի Հոգւոյն Սրբոյ խօսել զբանն 7 յԱսիա· Բայց եկեալ առ Միւսիան՝ փութակոխէին երթալ ի Բիւթանիա, եւ ոչ համարձակեաց նոցա Հոգին Յիսուս 8 սի· Եւ անցեալ զսա Միւսիա՝ իջին ի Տրովադա· 9 Եւ տեսիլ երեւեցաւ ի դիշերի Պաւղոսի· այր մի Մակեդոնացի կայր, աղաչէր զնա եւ ասէր, Անցեալ ի Մակեդոնիա օգնեացես մեզ· 10 Եւ իրրեւ զտեսին զտեսիլն եւս, վազվազակի խնդրեցաք ելանել ի Մակեդոնիա, տեւզեկացեալք թէ հրաւիրեաց զմեզ Տէր աւետարանել նոցա·

11 Եւ եկեալ ի Տրովադայ դէպ ուղիղ դնացաք ի Սամոթրակէ, եւ ի վաղիւ 12 անդր ի Նէոպոլիս· Եւ անտի ի Փիլիպպոս, որ է առաջին վիճակ Մակեդոնացւոց՝ քաղաք Կոլոնիա· եւ անդ ի քաղաքին դադարեալ մեր աւուրս մի քանի, 13 Յաւուր շաբաթու եկաք արտաքոյ քաղաքին առ գետափնն ուր համարէին աղօթս մատուցանել, եւ նստեալ խօսեաք ընդ ժողովեալ կանայսն· 14 Եւ կին մի անուն Լիդիա, ծիրանավաճառ ի Թիւատիր քաղաքէ, երկիւղած յԱստուծոյ, լուաւ, զորոյ Տէր բաց զսիրտն անուալ խօսիցն 15 Պաւղոսի· Եւ իրրեւ մկրտեցաւ ինքն եւ տունն իւր, աղաչէր եւ ասէր, Եթէ համարիք զիս հաւատացեալ Տեառն, մտանել ի տուն իմ ապրուք· եւ բռնադատեաց տարաւ զմեզ·

16 Եւ եղեւ մինչ երթայաք մեք յաղօթս, պատահեաց մեզ աղախին մի զօր ունէր ոգի վհուկութեան՝ որ չարս բազումս տայր տիրանց իւրոց մոգելովք· 17 Նա զհետ եկեալ Պաւղոսի եւ մեր՝ աղաղակէր եւ ասէր, Արքա այս ծառայք Աստուծոյ Բարձրելոյ են, որ պատմեն ձեզ զճանապարհս փրկութեան· 18 Եւ զայս առնէր ի բազում աւուրս· զայրացեալ Պաւղոս՝ դարձաւ եւ ասէ ցոգին, Պատուիրեմ քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի ելանել ի դմանէ· 19 Եւ ել ի նմին ժամու· Իրրեւ տեսին տէրք նորա եթէ հասաւ յոյս շահի նոցա, առեալ զՊաւղոս եւ զՇիղա՝ ձգեցին ի հրապարակ առ իշխանսն· 20 Եւ ածեալ զնոսա առ զօրապետսն ասեն, Արքա այս խռովեցուցանեն զքաղաքս մեր· Ինքեանք Հրեայք են, 21 եւ պատմեն սովորութիւնս զոր չէ արժան մեզ ընդունել եւ ոչ առնել, զի Հռովմայեցիք եմք· 22 Եւ կուտեցաւ ամբոխն ի վերայ նոցա· եւ զօրապետքն պատառեցին զհանդերձս [1]իւրեանց, հրամայեցին զան հարկանել· 23 Եւ բազում վէրս եդեալ ի վերայ նոցա՝ արկին ի բանտ, պատուիրեցին բանտապետին 24 զգուշաբարձաբար պահել զնոսա· Որոյ առեալ զայսպիսի պատուէր՝ արկ զնոսա ի ներքին բանտն, եւ զոտս նոցա պնդեաց ի կոճղ·

25 Եւ ի մէջ դիշերոյն Պաւղոս եւ Շիղա կային յաղօթս եւ օրհնէին զԱստուած· ունկն դնէին նոցա կալանաւորքն· 26 Եւ յորդն· Եւ եղեւ յանկարծակի չարաժամն մեծ մինչեւ չարժել հիմանց բանտին, եւ բացան անդէն զրուներն ամենայն, եւ ամենեցուն կապանք լուծանին· 27 Իրրեւ զարթնեաւ բանտապետն եւ եւս բացեալ զդուռս բանտին, ձգեաց զսուսեր եւ կամէր երթալ զիւրովքն, 28 կարծէր փախուցեալ զկապեալսն· Եւ կոչեաց ի ձայն մեծ Պաւղոս եւ ասէ, Մի՛ ինչ դործեր ընդ անձն քո չար, քանզի ամենեքեան աստ եմք· 29 Խնդրեաց լոյս եւ ցիմեաց ի ներքս, եւ զահի հարեալ անկաւ առաջի Պաւղոսի եւ 30 Շիղայի· Եւ ածեալ զնոսա արտաքս ասէ, Տեարք, զի՞նչ պարտ է ինձ առ-

---

[1]Յայն, նոցա

31 նել զի ապրեցայց։ Եւ նոքա ասեն, Հաւատա ի Տէր Յիսուս Քրիստոս, եւ
ապրեսցիս դու եւ [1]ամենայն տունն քո։
32 Եւ խօսեցան նմա զբանն Տեառն՝ եւ
33 ամենեցունն որ էին ի տան նորա։ Եւ առեալ զնոսա ի նմին ժամու գիչերոյն՝ լուաց ի վիրաց անտի, եւ մկրտեցաւ ինքն եւ իւրքն ամենեքեան ան-
34 դէն վաղվաղակի։ Եւածեալ զնոսա ի տուն իւր՝ եդ առաջի նոցա սեղան. եւ ուրախ եղեւ ամենայն տունն հա-
35 ւատացեալ յԱստուած։ Եւ իբրեւ այդ եղեւ, առաքեցին զօրագլուխքն զնուիրակսն եւ ասեն, Արձակեա զարսդ
36 զայդոսիկ։ Եւ պատմեաց բանտապետն զբանսն՝ Պաւղոսի, եթէ Առաքեցին զօրագլուխքն զի արձակիցիք. արդ ե-
37 լէք եւ երթայք խաղաղութեամբ։ Իսկ Պաւղոս ասէ ցնոսա, Գան հարեալ զմեզ հրապարակաւ, արս անմեղս Հռովմայեցիս, արկին ի բանտ, եւ արդ լռելեաւն հանեն զմեզ. ոչ այդպէս, այլ եկեսցեն ինքեանք իսկ հանցեն
38 զմեզ։ Եւ պատմեցին զօրապլսացն նուիրակքն զբանսն. զահի հարան իրբեւ լսան թէ Հռովմայեցիք են, եւ
39 եկեալ աղաչեցին զնոսա։ Եւ իբրեւ հանին, աղաչէին գնալ ի քաղաքէն։
40 Եւ եղեալ ի բանտէն մտին առ Լիդիա, եւ տեսեալ զեղբարս՝ մխիթարեցին զնոսա եւ գնացին։

Գլ. ԻԷ

1 ԵԱ. Եւ չրջեալ ընդ Ամփիպողիս եւ ընդ Ապողոնիա՝ եկին ի Թեսաղոնիկէ,
2 ուր էր ժողովուրդ Հրէից։ Եւ ըստ սովորութեանն Պաւղոս եմուտ առ նոսա, եւ ի չաբաթս երիս խօսեցաւ
3 ընդ նոսա ի գրոց։ Բանայր եւ դնէր առաջի եթէ պարտ էր Քրիստոսի չարչարել եւ յառնել ի մեռելոց, եւ թէ Նա է Քրիստոս՝ Յիսուս զոր ես պատ-
4 մեմ ձեզ։ Եւ ոմանք ի նոցանէ հաւատացեան, եւ վիճակեցան Պաւղոսի եւ Շիղայի, բայց պաշտօնէիցն հեթանոսաց էր բազմութիւն յոյժ, եւ ի կա-
5 նանց զլխաւորաց ոչ սակաւք։ Եւ նախանձեցան [2]Հրեայքն, եւ առեալ արս

ոմանս գռեհիկս անօրէնս, ամբոխ արարեալ խռովեցին զքաղաքն. եւ կուտեալ յապարանսն Յասովնի, խնդրէին
6 զնոսա ածել ի հրապարակ։ Եւ իբրեւ ոչ գտին զնոսա, քարշէին զՅասովնի եւ զոմանս եղբարս առ քաղաքապետսն, բողոք բարձեալ թէ Որք զաշխարհս
7 խռովեցին՝ սոքա եւ այր հասին. Զորս ընկալաւ է Յասովնի. եւ սոքա ամենեքեան հակառակ հրամանացն Կայսեր գործեն, թագաւոր զոմն ասեն զՅի-
8 սուս։ Եւ խռովեցուցին զժողովուրդն եւ զքաղաքապետսն որ լսէին զայս։
9 Եւ առեալ երաշխաւորութիւն առ ի Յասովնեայ եւ յայլոցն՝ արձակեցին զնո-
10 սա։ Բայց եղբարք վաղվաղակի գիչերայն յուզարկեցին զՊաւղոս եւ զՇիղա ի Բերիա. որք իբրեւ հասին անդր,
11 ի ժողովուրդն Հրէից գնացին։ Զի սոքա էին ազնուագոյնք քան որ ի Թեսաղոնիկէ էին. որք ընկալան զբանն ամենայն յօժարութեամբ, հանապազ քննէին զգիրս եթէ իցէ այս այսպէս։
12 Եւ բազումք ի նոցանէ հաւատացին եւ ի Յունաց կանանց ղզաստից եւ յա-
13 նպտ ոչ սակաւք։ Բայց իբրեւ գիտացին որ ի Թեսաղոնիկէ Հրեայքն էին եթէ եւ ի Բերիա պատմեցաւ ի Պաւղոսէ բանն Աստուծոյ, եկին եւ անդր չարժել եւ խռովեցուցանել զժողո-
14 վուրդն։ Յայնժամ զՊաւղոս վաղվաղակի առաքեցին եղբարք գնալ մինչեւ ի ծովեզր. եւ մնացին Շիղա եւ Տիմո-
15 թէոս անդէն։ Եւ որք տանէին զՊաւղոս՝ ածին զնա մինչեւ Աթենս. եւ առեալ պատուէր առ Շիղա եւ Տիմոթէոս զի վաղվաղակի եկեսցեն առ նա, եւ գնացին։
16 ԵԲ. Եւ յԱթենս ի մնալն նոցա Պաւղոսի՝ զայրանայր հոգի նորա ի նմա, զի տեսանէր ի կռապաշտութեան զքա-
17 ղաքն։ Եւ խօսէր ի ժողովրդեանն ընդ Հրեայս եւ ընդ պաշտօնեայսն, եւ ի հրապարակին զամենայն օր որոց եւ
18 պատահէին։ Ոմանք յԵպիկուրեանցն եւ ի Ստոյիկեանց փիլիսոփայից հակառակէին ընդ նմա. եւ ոմանք ասէին, Զի՞նչ կամիցի սերմնաբաղս այս խօսել. իսկ այլք՝ թէ Օտարոտի իմն դիւ թուի պատմիչ լինելոյ. քանզի զՅիսուս եւ զյարութիւնն աւետարանէր։
19 Եւ առեալ զնա ածին յԱրիսպագոս,

---

[1] ի բազմս գոլոյ
[2] Ոմանք, անհաւատ Հրեայքն

եւ ասէին, կարասցո՞ւք իմանալ թէ զի՞նչ է նոր վարդապետութիւնդ որ
20 ի քէն պատմի։ Օտարացուսիչս իմն բերես ի լսելիս մեր, կամիմք զիտել
21 թէ զի՞նչ կամիցի այս լինել։ (Զի Աթենացիք ամենեքին եւ եկեղն օտարք ոչ յայլ ինչ պարապէին, բայց ասել
22 ինչ կամ լսել նորադոյնս։) Եկաց Պաւղոս ի մէջ Արիսպագին եւ ասէ, Արք Աթենացիք, ըստ ամենայնի իբրեւ
23 պաչտօնասէրս տեսանեմ զձեզ։ Քանզի չրջեալ եւ տեսեալ զպաչտամունս ձեր, գտի բաղին մի յորում գրեալ էր Անծանօթի Աստուծոյ. զոր դուքն յանծանօթս պաչտէք՝ ես զնոյն պատմեմ
24 ձեզ։ Աստուած որ արար զաչխարհս եւ զամենայն որ ի նմա, նա երկնից եւ երկրի է Տէր. ոչ ի ձեռագործ տա-
25 ճարս բնակէ, եւ ոչ ի ձեռաց մարդկան պաչտի իբրեւ կարօտ իմիք. նա տայ ամենայնի կեանս եւ չունչ եւ
26 զամենայն ինչ։ Արար ի միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան՝ բնակել ի վերայ ամենայն երեսաց երկրի, հաստատեաց կարգեալ ժամանակս եւ սահմանադրութիւնս բնակութեանն նոցա՝
27 խնդրել զԱստուած. Չի թերեւս զննիցեն զնա եւ գտանիցեն. Նա՝ եւ ոչ հեռի խակ է յիւրաքանչիւր ումեքէ ի
28 մէնջ։ Զի նովաւ կեանք եւ չարժիմք եւ եմք, որպէս եւ ումանք ի ձերոց ճարտարաց ասացին, Թէ նոցա եւ ազգ
29 իսկ եմք։ Եւ այդ՝ որովհետեւ ազգ եմք Աստուծոյ, ոչ պատչխանք համարել ոսկւոյ կամ արծաթոյ կամ քարի որ ի ճարտարութենէ եւ ի մտաց մարդոյ քանդակեալ իցէ, զԱստուածա-
30 կանն լինել նմանող։ Բայց զժամանակս անգիտութեանն անտես արարեալ Աստուածոյ, արդ զայս պատուիրէ [1]մարդկան՝ ամենայն ուստիք՝ ապաչ-
31 խարել։ Քանզի հաստատեաց օր յորում պարտ է դատել զաչխարհս արդարութեամբ ի ձեռն այնմ որով սահմանեաց տալ հաւատս ամենեցուն՝ յարուցեալ զնա ի մեռելոց։
32 Իբրեւ լուան զյարութիւն մեռելոց, ումանք ծաղր առնէին, էլսքն ասէին, Լուիցուք ի քէն վասն այդորիկ մեւս
33 անդամ։ Եւ ապա Պաւղոս ել դնաց
34 ի միջոյ նոցա։ Եւ ումանք արք անկեալք ի նա՝ հաւատացին, ընդ որս էր եւ Դիոնեսիոս Արիսպագացի եւ կին մի անուն Դամարիս եւ այլք ընդ նոսա։

ԳԼ. ԺԸ

1 ԵՓ. Յետ այսորիկ մեկնեալ Պաւղոսի յԱթենացւոց անտի՝ եկն ի Կորնթոս.
2 Եւ եգիտ զմի Հրեայ, անուն Ակիւղաս, յազգէ Պոնտացի, այն ինչ եկեալ յիտալիայ, եւ զՊրիսկիլիղա կին նորա, վասն հրամանին Կլաւդեայ՝ որոշել զամենայն Հրեայս ի Հռովմայ, եւ յա-
3 բնացաւ ի նոսա։ Եւ վասն զի համաբուեստ էր, եղեւ առ նոսա եւ գործէր, քանզի էին խորանակարք արուեստիւ։
4 Եւ խօսէր ի ժողովրդեանն ըստ ամենայն չաբաթուց, եւ հաւանեցուցանէր
5 զՀրեայս եւ զհնոսս։ Իբրեւ իջին ի Մակեդոնիայ Շիղա եւ Տիմոթէոս, սաստկացաւ Պաւղոս դնել վկայութիւն Հրէից թէ Յիսուս է Քրիստոս։
6 Եւ յընդդէմ դառնալ նոցա եւ ի հայհոյել, [2]ծաթափեաց զձորձս եւ ասէ ցնոսա, Արիւն ձեր ի գլուխ ձեր, քաւեալ եմ ես, յայսմ հետէ ի հեթանոսս երթամ։ Եւ դնացեալ անտի՝ եմուտ ի
7 տուն ուրումն, որոյ անուն էր [2]Տիտոս Յուստոս, պաչտօնեայ Աստուծոյ, որոյ ապարանքն էին մերձ ի ժողո-
8 վուրդն։ Կրիսպոս ժողովրդապետ հաւատաց ի Տէր ամենայն տաճիք իւրով. եւ բազումք ի Կորնթացւոցն լուեալ՝
9 հաւատացին եւ մկրտեցան։ Եւ ասէ Տէր ի գիչերի տեսլեամբ ցՊաւղոս, Մի՛ երկնչիր, այլ խօսեաց եւ մի՛ լռեր,
10 քանզի ես ընդ քեզ եմ, եւ ոչ ոք ընդդեմ դարձցի քո՝ ի չարչարել զքեզ. քանզի ժողովուրդ է իմ բազում ի քա-
11 ղաքիս յայսմիկ։ Եւ նստաւ անդ տարի մի եւ ամիսս վեց՝ ուսուցանել նոցա զբանն Աստուծոյ։
12 ԵՓ. Առ Գաղիովնաւ փոխանակաւ բդեչխին Աքայեցւոց յարեան միաբան Հրեայքն ի վերայ Պաւղոսի, եւ ածին
13 զնա յատեան. Եւ ասէին եթէ Արտաքոյ օրինաց պատրէ սա զմարդիկ՝ պաչ-
14 տել զԱստուած։ Եւ իբրեւ մերձ էր Պաւղոս բանալ զբերան իւր, ասէ

[1] Յոյն, ամենայն մարդկան ամենայն ուրեք

[2] Յունաս պոլուխ

Գաղիոնէ ցՀրեայան , եթէ էր ինչ ա-
նիրաւութիւն կամ խարդախութիւն
չարեաց , ով Հրեայք , ի դէպ էր ինձ
15 անսալ ձեզ : Ապա եթէ խնդիրք ինչ
են վասն բանի եւ անուանց եւ օրի-
նաց ձերոց՝ տեսէք ձեզէն , քանզի դա-
տաւոր այդպիսի իրաց չկամիմ լինել :
16 Եւ մերժեաց զնոսա յատենէ անտի :
17 Եւ առեալ ամենեցուն Յունայն զՍոս-
թենէս ժողովրդապետեան՝ հարկանէին
առաջի աթոռոյն , եւ ոչինչ զայնմանէ
Գաղիոնէի փոյթ լինէր :
18 Բայց Պաւղոսի տակաւին մնացեալ
աւուրս բազումս , յեղբարց հրաժար-
եալ՝ նաւէր յԱսորիս , եւ ընդ նմա
Պրիսկիդիա եւ Ակիւղաս , փոքրիկ զղջ-
լութիւն ի կենդրա , քանզի ուխտադիր
19 էր : Եւ հասեալ յԵփեսոս՝ զնոսա եմոզ
անդ , եւ ինքն մտեալ ի ժողովուրդն
20 խօսէր ընդ Հրեայսն : Եւ ապաչեցին
զնա բազում ժամանակս լինել անդ ,
21 եւ ոչ առ յանձն . Այլ հրաժարեալ ի
նոցանէ եւ ասէ , [1]Դարձեալ չըՀնցայց
22 Աստուծոյ կամօքն առ ձեզ . Այսքա-
ձառ յԵփեսոսէ , եւ իջեալ ի Կեսարիա՝
եւ ել եւս ողջոյն ևկեղեցւոյն , էջ յԱն-
23 տիոք : Եւ եղեալ անդ ժամանակ ինչ՝
ել չրջիլ կարգաւ ընդ Գաղատացւոց
աչխարհն եւ ընդ Փռիւգիա , հաստա-
տել զամենայն աչակերտսն :
24 Հրեայ ոմն [2]Ապեղէս անուն Ալեք-
սանդրացի յազգէ , այր ճարտարապան ,
եկն հնոտ յԵփեսոս , զօրաւոր էր
25 գրովք : Սա էր տեղեկացեալ ճանա-
պարհին Տեառն , եւ եռայր հոգւով ,
խօսէր եւ ուսուցանէր ճչմարտու-
թեամբ զան [3]Յիսուսի . դիտէր մի-
26 այն զմկրտութիւնն Յովհաննու : Սա
սկսաւ համարձակել ի ժողովրդեանն .
եւ լուեալ ի նմանէ Ակիւղաս եւ Պրիս-
կիդա՝ առին զնա առ իւրեանս , եւ
ճչմարտագոյնս պատմեցին նմա զճա-
27 նապարհն Աստուծոյ : Իրրեւ կամիցաւ
նա գնալ յԱքայիա , [4]յօժարեալ եղ-
բարք՝ գրեցին առ աչակերտսն ընդու-
նել զնա . որ իրրեւ հնոտ անգր , բա-
զում նպաստ լինէր հաւատացելոցն
28 ի ձեռն չնորհացն : Քանզի պնդագոյն
զՀրեայսն յանդիմանէր հրապարակաւ
ցուցանել գրովք՝ եթէ Քրիստոս է
Յիսուս :

Գլ· ԺԹ

1 ԵՒ Եւ եղեւ մինչգնոս Ապողոն ի
Կորնթոս էր , Պաւղոս չրջեալ զվերին
կողմանսքն եւ իջանել յԵփեսոս , եւ
2 գտանել զոմանս զաչակերտս , Ասէ
ցնոսա , եթէ Հոգի Սուրբ ընկալարո՞ւք
ի հաւատալն . Նոքա ասեն ցնա , Այլ
եւ ոչ թէ Հոգի Սուրբ գոյցէ լուեալ
3 է մեր : Եւ ասէ , Իսկ յի՞նչ մկրտե-
ցարուք . Նոքա ասեն , ի Յովհաննու
4 մկրտութիւնն : Եւ ասէ Պաւղոս , Յով-
հաննէս մկրտեաց մկրտութիւն ապաչ-
խարութեան [5]ամենայն ժողովրդեանն
եւ ասէր՝ զի որ զալոցն է յետ նորա՝
ի նա հաւատասցեն , այսինքն է ի Յի-
5 սուս Քրիստոս : Եւ իրրեւ լուան ,
մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի :
6 Եւ ի դնել ի վերայ նոցա Պաւղոսի
զձեռն՝ եկն Հոգին Սուրբ ի վերայ նո-
ցա , խօսէին լեզուս եւ մարգարէա-
7 նային : Եւ էին ամենեքեան արք իբ-
8 րեւ երիսասան : Եւ մտեալ ի ժողո-
վուրդն՝ համարձակէր ամիսս երիս ,
խօսէր եւ հաւանեցուցանէր վասն ար-
9 քայութեանն Աստուծոյ : Իրրեւ ո-
մանք խստանային եւ ընդդեմ դառ-
նային բամբասել զճանապարհն առաջի
բազմութեանն , մեկնեալ ի նոցանէ՝ ո-
րոչեաց զաչակերտսն , հանապազօր խօս-
էր ի դիւանին Տիւրաննայ ուրումն :
10 Եւ այս եղեւ զերկուս ամ մի , մինչեւ
ամենայն բնակչացն Ասիացւոց լսել
զբանն Տեառն , Հրէից եւ հեթանոսաց :
11 Եւ զօրութիւնս ոչ սակաւս առնէր Աս-
12 տուած ի ձեռն Պաւղոսի . Մինչեւ ի
հիւանդս առնել [6]ի քրտանէ նորա
թաչկինակս կամ վարշամակս , եւ մեր-
ժել ի նոցանէ ախտերն , եւ այսոցիկ չա-
13 րաց ելանել : Յանդգնեցան ոմանք եւ
ի չրջիլ Հրէից , որ երդմնեցուցիչքն
էին , անուանել ի վերայ այնոցիկ որք
ունէին այսս չարս՝ զանուն Տեառն
Յիսուսի , եւ ասէին , Երդմնեցուցանեմ

---

[1] Ոմանք , Պարտ է ինձ ապաքէն զառաջիկայ
ժամն կատարել Յերուսաղէմ , բայց դարձեալ
[2] Բազումք , Ապողոս
[3] Ոմանք , Տեառն
[4] Ցոմն , քաջալերեցին եղբարքն
[5] Ցոմն , և ասէր ժողովրդեանն
[6] Ցոմն , ի մարմնոյ

զձեզ ի Յիսուս զոր Պաւղոս քարոզէ։
14 էին ուրուն Սկեւեայ Հրէի քահա-
նայապետի եւթն որդի, որ զայս առ-
15 նէին։ Պատասխանի եառ այն չար եւ
ասէ ցնոսա, ԶՅիսուս գիտեմ եւ զՊաւ-
16 ղոս ճանաչեմ, բայց դուք ո՛վ էք։ Եւ
վազեաց այրն յորում էր այն չար՝
բմբանեալ [1]չերկոսեան յաղթահարեաց
գնոսա, մինչեւ մերկ եւ վիրաւորս
17 փախչել ի տանէ անտի։ Եւ այս յայտնի
եղեւ ամենայն Հրէից եւ հեթանոսաց
որ բնակեալ էին Եփեսոս. եւ անկաւ
երկիւղ յամենեսեան ի նոսա, եւ մե-
18 ծանայր անուն Տեառն Յիսուսի։ Եւ
բազումք ի հաւատացելոցն գային,
եւ խոստովան լինէին եւ պատմէին զգործս
19 իւրեանց։ Եւ բազումք ի կախարդա-
սարացն բերէին գիրսն, այրէին առա-
ջի ամենեցուն. եւ համարեցան զգինս
նոցա եւ գտանէին արծաթով բեւրս
հինգ։
20 ԵԶ. Եւ այսպէս բանն Աստուծոյ ա-
ճէր եւ զօրանայր։
21 Եւ իբրեւ կատարեցաւ այս, եդ Պաւ-
ղոս ի մտի չրջել ընդ Մակեդոնիա եւ
ընդ Աքայիա եւ գալ յԵրուսաղէմ. ա-
սէր եթէ Յետ երթալոյն իմ անդր՝
22 պարտ է ինձ եւ զՀռոմ տեսանել։ Ա-
ռաքեաց ի Մակեդոնիա երկուս ի պաշ-
տօնէիցն իւրոց, զՏիմոթէոս եւ զԵ-
րաստոս, եւ ինքն մնաց ժամանակս
ինչ յԱսիա։
23 Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ խռո-
վութիւն ոչ սակաւ վասն ճանապար-
24 հին։ Իսկ Դեմետրիոս ոմն անուն ար-
ծաթագործ գործէր մեհենս արծաթիս
Արտեմիս գից, եւ տայր ճարտարացն
25 լինել ոչ սակաւ չահ. Որ ժողովեաց
իսկ եւ զնեռագէաս արուեստին եւ
ասէ, Արք, դուք ձեզն իսկ գիտէք,
26 զի յայսմ գործոյ է չահ մեզ։ Եւ տես-
անէք եւ լսէք եթէ ոչ միայն զԵփե-
սացւոց, այլ գրեթէ զամենայն իսկ Ա-
սիացւոց, Պաւղոս այս հաւանեցու-
ցեալ չրջեաց բազում ժողով՝ ասել թէ
27 Ոչ են աստուածք ձեռագործք։ Եւ ոչ
միայն այս ձգնէ զմեր կողմնս գալ ի
յանդիմանութիւն, այլ եւ զմեծին աս-
տուածոյ Արտեմիայ գմեհենին յոչինչ
համարել. նա եւ քակելոց եւս իցէ
մեծութիւն նորա, զոր ամենայն Ասիա
28 եւ տիեզերք պաշտեն։ Եւ զայս իբրեւ
լուան, լի եղեն բարկութեամբ. աղա-
զակէին եւ ասէին, Մեծ է Արտեմիս
29 Եփեսացւոց։ Եւ լցաւ քաղաքն խռո-
վութեամբ, զհմուցին առ հասարակ ի
թէատրոնն, յափշտակեցին զԳայիոս
եւ զԱրիստարքոս Մակեդոնացի, զընկ-
30 երակիցս Պաւղոսի։ Բայց Պաւղոս իբ-
րեւ կամեցաւ մատնել յամբոխն, ոչ
31 թողին զնա աշակերտքն։ Նմանք եւ
յԱսիարքեցոցն որ էին նորա բարե-
կամք՝ յղէին առ նա եւ աղաչէին, մի՛
32 ասլ զանձն ի թէատրոնն։ Այլք այլ
ինչ աղաղակէին, զի էր ժողովն նոցա
խռովեալ. եւ բազումք ի նոցանէ ոչ
գիտէին թէ վասն որո ժողովեալ իցեն։
33 Եւ յամբոխէն բազմութենէ յառաջ կա-
ցան զԱղեքսանդրոս. եւ իբրեւ ածին
զնա յառաջ Հրէայքն, Ալեքսանդրոս
չարժեաց զձեռն եւ կամէր պատաս-
34 խանի տալոյ ամբոխին։ Իբրեւ գիտա-
ցին թէ այրն Հրեայ է, միաբերան
եղեալ յամենեցունց՝ իբրեւ ժամս եր-
կուս աղաղակել թէ Մեծ է Արտեմիս
35 Եփեսացւոց։ Լռեցոյց գդպրապետն զամ-
բոխն եւ ասէ, Արք Եփեսացիք, իսկ
ո՞վ է ի մարդկանէ որ ոչ գիտէ զԵփե-
սացւոց քաղաքս մեհենազարդ մեծին
36 Արտեմեայ գիցն եւ Դիոպետեայ։ Եւ
զի այդ այդպէս է անչուշտ, ձեզ պարտ
է հանդարտել եւ մի՛ ինչ յանզգնու-
37 թեամբ գործել։ Եհատ զործսդ այսոքիկ այսր, ոչ մեհենակապուսս եւ ոչ
38 հայհոյիչս աստուածոյն մերոյ։ Զի եթէ
Դեմետրիոս եւ որք ընդ նմա հարստարարք
ունիցին ինչ ընդ ումեք բանս, յատե-
անն երթիցեն, եւ պատուարք գան,
39 եւ ամբաստան լիցին զմիմեանց։ Այլ
եթէ վասն այլ իրիք խնդիր իցէ, յօ-
40 րինաւոր ժողովն վճարեսցի։ Քանզի
եւ մեզ վիչտ վտանգի է ընդ կացեալս
այսր աւուր՝ առանց իրիք յանցանաց
լինելոյ, զորմէ ոչ կարացաք պա-
տասխանի տալ վասն ժողովոյս այսո-
րիկ։ Եւ զայս ասացեալ՝ արձակեաց
զժողովն։

ԳԼ. Ի

1 ԵԶ. Եւ յետ դադարելոյ ամբոխին՝

[1]Ոմանք, զնոսա

կոչեաց Պաւղոս զաչակերտսն, [1]եւ
մխիթարեաց.՝՝ ոգլոյն ետ եւ ել գնաց
2 ի Մակեդոնիա։ Եւ չրջեալ ընդ կող-
մանսն ընդ այնոսիկ, եւ մխիթարեալ
զնոսա բանիւք բազմօք՝ եկն յելլադա։
3 Իբրեւ արար անդ ամիսս երիս, եղեւ
նմա դաւ ի հրէից, մինչդեռ կամէր
ելանել յԱսորիա. խորհուրդ կալաւ
4 դառնալ ընդ Մակեդոնիա։ Եւ երթայր
ընդ նմա մինչեւ յԱսիա Սոսիպատրոս
[1]Պիւռեայ Բերիացի, եւ ի Թեսաղոնիկեացւոց Արիստարքոս եւ Սեկունդոս,
եւ Գայիոս Դերբացի եւ Տիմոթէոս,
եւ Ասիացիքն՝ Տիւքիկոս եւ Տրոփիմոս։
5 Սոքա յառաջ երթեալ մնային մեզ ի
6 Տրովադա։ Եւ մեք նաւեցաք յետ ա-
ւուրցն բաղարջակերաց ի Փիլիպպեայ,
եւ եկաք առ նոսա ի Տրովադա՝ մինչեւ յաւուրս հինգ. անդ դադարեցաք
աւուրս եւթն։
7 Եւ [2]յաւուրն չաբաթուց՝՝ մինչդեռ
ժողովեալ էաք բեկանել զհացն, Պաւ-
ղոս խօսէր ընդ նոսա զի գնալոց էր
ի վաղիւ անդր. եւ երկայնեաց զբանն
8 մինչեւ ի մէջ գիշերոյն։ Էին լապտերք
բազումք ի վերնատանն ուր էաք ժո-
9 ղովեալ։ Եւ նստեր ոմն երիտասարդ
անուն Եւտիքոս ի վերայ պատուհա-
նին, նիրհէր ի քուն թանձրութեան.
ի խօսելն Պաւղոսի յառաջս, ընկղմեալ
ի քնոյ անտի՝ անկաւ յերրորդ դասի-
կոնէն ի վայր, եւ բարձաւ մեռեալ։
10 Եւ իջեալ Պաւղոսի անկանէր զնովաւ,
առնոյր զնա ընդ գիրկս եւ ասէր, Մի՛
խռովիք, քանզի հոգի սորա ի սմին է։
11 Եւ ել երեկ զհացն եւ ճաշակեաց. եւ
բազում եւս խօսեցաւ մինչեւ յառա-
12 ւօտն, եւ ապա ել գնաց։ Եւ ածին
զպատանին կենդանի, եւ մխիթարե-
13 ցան ոչ սակաւ։ Եւ մեք մտեալ ի նաւն՝
առքարձաք յԱսոն, անտի անդր ունէ-
աք միւսանգամ առնուլ զՊաւղոս, զի
այնպէս պատուիրեալ էր, մինչ ինքն
14 [3]ղցամաքաւն երթալոց էր։ Եւ իբրեւ
դիպեցաւ մեզ ի յԱսոն, առեալ զնա
15 եկաք ի Միտիլինէ։ Եւ անտի նաւեալ՝
ի վաղիւ անդր հասաք հանդէպ Քիոյ,
եւ ի մեւս օրն հասաք ի Սամոս, եւ
16 [4]ի վաղիւ անդր եկաք ի Միլետոն։ Զի
ի մտի եդեալ էր Պաւղոսի նաւել առ
Եփեսեաւս, որպէս զի մի՛ լիցի նմա ժա-
մանակ ինչ յամել յԱսիա. քանզի փու-
թայր, եթէ հնար ինչ իցէ նմա, զօրն
պենտակոստէից երթալ յԵրուսաղէմ։
17 ԶԱ. Եւ ի Միլետեայ յղեալ յԵփեսոս՝
18 կոչեաց զերիցունս եկեղեցւոյն։ Եւ
իբրեւ եկին առ նա, ասէ ցնոսա, Դուք
ձեզէն գիտէք յօրէ յառաջնմէ յորմէ
եկի յԱսիա, ո՛րպէս ընդ ձեզ զամենայն
19 ժամանակն եղէ. Ծառայել Տեառն
ամենայն խոնարհութեամբ, եւ բա-
զում արտասուօք եւ փորձութեամբք
որ դիպեցան ինձ ի նենգութեանց Հրէ-
20 ից։ Ո՛րպէս ոչինչ զանգիտեցի յօգտա-
կարացն չպատմել ձեզ եւ ուսուցանել
21 զձեզ հրապարակաւ եւ առանձին. Տալ
վկայութիւն Հրէից եւ հեթանոսաց
զապաչխարութեանն որ առ Աստուած,
եւ զհաւատոցն որ ի Տէր մեր Ցիսուս
22 Քրիստոս։ Եւ արդ ահաւասիկ ես կապ-
եալ հոգւով երթամ յԵրուսաղէմ, եւ որ
ինչ անդ ընդ իս անցանելոց իցէ՝ չգի-
23 տեմ։ Բայց զի Հոգին Սուրբ ըստ քա-
ղաքաց քաղաքաց վկայէ ինձ, եւ ասէ
եթէ կապանք եւ նեղութիւնք սնան
24 քեզ։ Այլ [5]եւ ոչ՝՝ իւիք հաւարիմ զանձն
իմ պատուական՝ որպէս զկատարել զընթացս իմ ուրախութեամբ, եւ զպաշ-
տօնն զոր առի ի Տեառնէ Ցիսուսէ՝
վկայ լինել աւետարանի չնորհացն Աս-
25 տուծոյ։ Եւ արդ ահաւասիկ գիտեմ
ես, թէ ոչ եւս տեսանելոց էք զերեսս
իմ դուք ամենեքեան յորս չրջեցայ
քարոզել զարքայութիւնն [1]Աստուծոյ։
26 Վասն որոյ վկայութիւն զնեմ ձեզ յա-
ւուր յայսմիկ զի սուրբ եմ յարենէ ա-
27 մենեցուն։ Քանզի ոչ խորշեցայ ի
չպատմելոյ ձեզ զամենայն կամս Աս-
28 տուծոյ։ Զգոյշ կացէք անձանց եւ ա-
մենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին
Սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ
[6]Տեառն, զոր [7]ապրեցոյց արեամբ իւ-
29 րով։ Քանզի գիտեմ ես եթէ յետ իմոյ
մեկնելոյ գայցեն գայլք յափշտակողք
30 ի ձեզ, որ ոչ խնայեսցեն հօտին։ Եւ
ի ձէնջ յարիցեն արք որք խօսիցին

---

[1] Յոմանս պակասի
[2] Յոյնն, ի միաշաբաթեանսն
[3] կամ, հետի

[4] Ոմանք, Ձնացեալ ի Տրոգիլիոն՝ի վաղիւ
[5] Ոմանք, ոչ ինչ փոյթ ե ինձ, և ոչ
[6] Ոմանք, Աստուծոյ
[7] Յոյնն, ստացաւ

քեւբա՝ ձգել զաշակերտան զկնի իւր-
31 հանց, վասն այսորիկ արթուն կացէք
եւ յիշեցէք զի [1]զերեամ մի ղցայգ եւ
ղցերեկ ոչ դադարեցի արտասուօք
32 խրատել զմի մի իւրաքանչիւր։ Եւ
արդ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ եւ
բանի չնորհաց նորա, որ կարողն է
չինել եւ տալ ձեզ ժառանգութիւն ընդ
33 սուրբսն ամենեսեան։ Արծաթոյ կամ
ոսկւոյ կամ հանդերձից ոչ ուրուք ի
34 ձէնջ ցանկացայ։ Դուք ինքնին գիտէք
զի զպէտսն իմ եւ որոց ընդ իս էին՝
35 պաշտէին ձեռքս այս։ Եւ զամենայն
ինչ ցուցի ձեզ, զի այսպէս պարտ է
վաստակել եւ դարմանել զհիւանդս,
եւ յիշել զբանն Տեառն Յիսուսի, զոր
ինքն իսկ ասաց, Երանելի է մանաւանդ
36 տալն քան առնուլն։ Եւ զայս իբրեւ
ասաց, եդեալ ծունր ամենեքեան՝
37 եկաց յաղօթս։ Բազում լալիւն եղեւ
ամենեցուն, եւ անկեալ զպարանոցսն
38 Պաւղոսի՝ համբուրէին զնա։ Մարմ-
քէին մանաւանդ ի վերայ բանին զոր
ասէր թէ ոչ եւս տեսանելոց են զե-
րեսս նորա։ Եւ յուղարկեցին զնա ի
նաւ անդր։

ԳԼ. ԻԱ

1 ՋՁ. Եւ իբրեւ եղեւ ելանել մեզ եւ
մեկնել ի նոցանէ, հանդէպ գնացեալ
եկաք ի Կով, եւ ի վաղիւ անդր ի Հռո-
2 դոն եւ անտի ի Պատարա։ Եւ գտեալ
նաւ մի զի երթայր ի Փիւնիկէ, եկեալ
3 ի նա գնացաք։ Եւ յայտ եղեալ կիպ-
րեայ՝ թողաք զնա ի ձախակողմն, նա-
ւեցաք յԱսորիս եւ իջաք ի Տիւրոս,
քանզի անդ էր նաւն թափիլոց զբե-
4 ռինն։ Եւ գտեալ զաշակերտան՝ կա-
ցաք անդ աւուրս եւթն. որք ասէին
ցՊաւղոս ի ձեռն Հոգւոյն՝ մի՛ ելանել
5 յԵրուսաղէմ։ Եւ իբրեւ եղեւ մեզ կա-
տարել զաւուրսն՝ եկեալ գնացաք, յու-
ղարկեալ զմեզ ամենեցուն հանդերձ
կանամբք եւ որդւովք մինչեւ արտա-
քոյ քաղաքին. եւ եդեալ ծունր առ
6 ծովեզերին՝ կացաք յաղօթս։ Եւ հրա-
ժարեցաք ի միմեանց եւ ելաք ի նաւն,
եւ նոքա դարձան յիւրեանց տեղիս։

7 Եւ մեր զնաւն առխիեալ ի Տիւրոսէ՝
հասաք ի Պտողեմայիդա, եւ ողջոյն
տուեալ եղբարց՝ եղեալ օր մի առ նո-
8 սա։ Եւ ի վաղիւ անդր եկեալ անտի՝
եկաք ի Կեսարիա, եւ մտեալ յսպա-
րանսն Փիլիպպոսի աւետարանչի որ
էր յեւթանց անտի, ադաք առ նմա։
9 Նորա էին դստերք չորք կոյսք մար-
10 գարէք։ Եւ ի լինելն մեր անդ աւուրս
բազումս, էջ ոմն ի Հրէաստանէ մար-
11 գարէ՝ անուն Ագաբոս. Եւ եկեալ առ
մեզ, առեալ զդօտին Պաւղոսի՝ կապ-
եաց զոտս եւ զձեռս իւր, եւ ասէ,
Այսպէս ասէ Հոգին Սուրբ, Զայրն
որոյ գօտիս այս է՝ այսպէս կապեսցին
յԵրուսաղէմ Հրեայք եւ մատնեսցեն
12 ի ձեռս հեթանոսաց։ Եւ իբրեւ լուաք
զայն, աղաչէաք մեք եւ որ ի տեղւոջն
13 էին՝ չելանել նմա յԵրուսաղէմ. Պաս-
խամ պատասխանի ետ Պաւղոս, Զի՞նչ
գործէք զի լայդ եւ ճմլեցուցանէք
զսիրտ իմ. քանզի ես ոչ միայն կա-
պելոյ, այլ եւ մեռանելոյ յԵրուսաղէմ
պատրաստ եմ վասն անուանն Տեառն
14 Յիսուսի [2]Քրիստոսի։ Եւ ի չանսայն
նորա՝ լռեցաք, ասեմք, Տեառն կամք
լիցին։

15 ՋԶ. Եւ յետ աւուրցն այնոցիկ հան-
16 դերձեալ ելանէաք յԵրուսաղէմ։ Եկին
ընդ մեզ եւ յաշակերտաց անտի կեսա-
րացւոց, եւ տանէին [3]զմնալ առ որում
վասն ունելոց էաք՝ Մնասոնի ումնի
17 կիպրացւոյ առաջին աշակերտի։ Եւ
ի մտանելն մեր յԵրուսաղէմ, խնդու-
18 թեամբ ընկալան զմեզ եղբարք։ Ի վա-
ղիւ անդր եմուտ Պաւղոս ընդ մեզ
առ Յակովբոս, եւ եկին ամենայն ե-
19 րիցունքն։ Եւ ողջոյն տուեալ նոցա՝
պատմէր մի ըստ միոջէ զոր արար Աս-
տուած ի հեթանոսս ի ձեռն պաշտա-
20 ման նորա։ Եւ նոցա լուեալ փառա-
ւոր առնէին զԱստուած, եւ ասեն ցնա,
Տեսանե՞ս, եղբայր, քանի բեւրք են
հաւատացելոցն Հրէից, եւ ամենեքեան
21 նախանձաւուր օրինացն են։ Բայց ի-
րազեկ եղեն վասն քո թէ ապստամ-
բութիւն ուսուցանես ի Մովսիսէ որոց
ի հեթանոսս ամենայն Հրեայք են.
ասես, մի՛ թլփատել նոցա զորդիս,
22 եւ մի՛ ըստ կրօնիցն գնալ։ Արդ զի՞նչ

[1] Ոմանք ի ՁՆ օրինակս, տղեւս Ե է Ֆրոյ՝ զերեամ

[2] Յոմանս պակասի [3] Ի բազումս պակասի

լինելի. [1]ապաքէն լսեն" եթէ ևկեալ
23 եա՝ Սրդ զայս արա զոր ասեմք քեզ.
Են ի մեզ արք չորք ուխտադիրք յան-
24 ձինս իւրեանց. Զնոսա առեալ՝ սրբեա-
ցիս ընդ նոսա. եւ ծախեա ինչ ի նոսա
զի գերծգին զգլուխս. եւ գիտասցեն
ամենեքին թէ զորոց լսեալ եղեն
զքէն՝ ոչինչ է, այլ միաբանիս եւ դու
25 պահել զօրէնսն։ Բայց վասն հաւատա-
ցելոցն հեթանոսաց՝ մեք առաքեցաք
որպէս ընտրեցաք, մի՛ ինչ այնպիսի
պահել նոցա. բայց միայն զգուշանալ
նոցա ի կուռց զոհելոյ եւ յարենէ եւ ի
26 հեզձուցելոյ եւ ի պոռնկութենէ։ Յայն-
ժամ Պաւղոս առեալ զարսն՝ ի վաղիւ
անդր ընդ նոսա սրբեալ եմուտ ի տա-
ճարն. յայտ առնել զկատարումն ա-
ւուրցն սրբութեան, մինչեւ մատեաւ
ի վերայ իւրաքանչիւր ուրուք ի նո-
ցանէ պատարագ։
27 ԶԴ. Եւ իբրեւ մերձ էին եւթն ա-
ւուրքն ի կատարել, տեսեալ զնա ի
տաճարին Ասիացւոց Հրէիցն՝ զեղուին
զնովաւ զամենայն զամբոխն. եւ ար-
28 կեալ ի նա ձեռս՝ աղաղակէին, Արք
Իսրայելացիք, օգնեցէք. այս այր է որ
հակառակ ժողովրդեանն եւ օրինացն
եւ տեղւոյս այսորիկ ամենեցուն ա-
մենայն ուրեք ուսուցանէ, մինչեւ հե-
ղանոսս եւս եմոյծ ի տաճարն եւ պղղ-
29 ծեաց զսուրբ տեղիս։ (Քանզի էր յա-
ռաջագոյն տեսեալ զՏրոփիմոս զԵփե-
սացի ի քաղաքին ընդ նմա. զոր կար-
ծէին եթէ ի տաճար անդր եմոյծ Պաւ-
30 ղոս։) Շարժեցաւ քաղաքն ամենայն,
եւ կուտեցաւ ժողովուրդն, եւ առեալ
զՊաւղոս՝ ձգէին արտաքոյ տաճարին.
եւ վազվազակի փակեցան դրունքն։
31 Եւ խնդրէին զնա սպանանել. եհաս
ղրոյց ի հազարապետ գնդին, եթէ խը-
32 ռովեալ է ամենայն Երուսաղէմ։ Որոյ
անդէն առեալ զօրականս եւ հարիւ-
րապետս՝ դիմեաց ի վերայ նոցա. եւ
նոքա տեսեալ զհազարապետն եւ զզօ-
րականսն, դադարեցին ի հարկանելոյ
33 զՊաւղոս։ Յայնժամ մատուցեալ հա-
զարապետն կալաւ զնա, եւ հրամայ-
եաց կապել կրկին չղթայիւք, եւ հար-
ցանէր թէ ո՞վ իցէ, եւ զի՞նչ իցէ ա-
34 րարեալ։ Այլք այլ լինն աղաղակէին

զնմանէ յամբոխին. իբրեւ ոչ կարաց
գիտել զստոյգն վասն ամբոխին, հրա-
35 մայեացածել զնա ի բանակն։ Եւ իբ-
րեւ եհաս յաստիճանսն, դէպ եղեւ
բառնալ բերել զնա ի զօրականացն
36 վասն բռնութեան ամբոխին։ Քանզի
զնետ երթայր բազմութիւն ժողովր-
37 դեանն եւ ասէին, Բարձ զդա։ Մինչ-
դեւ մտանելոց էր Պաւղոս ի բանակն,
ասէ ցհազարապետն, Եթէ արժա՞ն իցէ
ինձ խօսել ընդ քեզ. եւ նա ասէ,
38 Ծունարէն գիտե՞ս. Մի՛ արդեւք դու
իցես եգիպտացին, որ յառաջ քան
զայս աւուրս ապստամբեցուցեր եւ
հաներ յանապատ չորս հազարս արս
39 սիկարեանս։ Եւ ասէ Պաւղոս, Ես եմ
այր Հրէայ ի Տարսոնէ կիլիկեցւոց, ոչ
աննշան քաղաքի քաղաքացի. ազաչեմ
զքեզ հրամայեա ինձ խօսել առ ժողո-
վուրդդ։
40 Եւ ի հրամայելն նորա՝ Պաւղոս կա-
ցեալ ի վերայ աստիճանացն՝ չարժեաց
զձեռն ժողովրդեանն. իբրեւ բազում
լռութիւն լինէր, սկսաւ բարբառել
Հեբրայեցւոց բարբառովն եւ ասէ,

ԳԼ. ԻԲ

1 Արք եղբարք եւ հարք, լուարուք ինձ
այժմ առ ձեզ պատասխանատուու-
2 թեան։ (Իբրեւ լուան եթէ Հեբրա-
յեցւոց լեզուաւն բարբառեցաւ նոցա՝
առաւել եւս դադարեցին ի լռութիւնն.
3 եւ նա ասէ,) Ես եմ այր Հրէայ ծնեալ
ի Տարսոն կիլիկեցւոց՝ սնեալ ի քաղա-
քիս յայսմիկ առ ոտս Գամաղիելի,
խրատեալ ըստ ճշմարտութեան հայ-
րենի օրինացն, նախանձայոյզ էի Աս-
տուծոյ՝ որպէս ամենեքեան դուք այս-
4 օր։ Որ զսոյն ճանապարհ վարեցի
մինչեւ ի մահ, կապել եւ մատնել ի
5 բանտս արս եւ կանայս. Որպէս եւ
քահանայապետդ վկայէ ինձ եւ ամե-
նայն ծերակոյտ, յորոց եւ թուղթս
առեալ առ եղբարս ի Դամասկոս եր-
թայի, ածել եւ անտի կապեալս յե-
6 րուսաղէմ, զի պատժեցայց։ Եւ եղեւ
ինձ ի գնալն եւ ի մերձենալ ի Դամաս-
կոս, զիջաւուրքն յանկարծակի յերկ-
նից փայլատակել լոյս սաստիկ զինեւ.
7 Եւ անկայ յերկիր, եւ լսեայ բարբառ
որ ասէր ցիս, Սաւուղ, Սաւուղ, զի՞

[1]Որ՝ն, ապաքէն խառնելոց է ամբոխ, զի լսեն

8 հալածես զիս։ Եւ ես ետու պատաս-
խանի քէ Ո՞վ ես, Տէր. եւ ասէ ցիս,
Ես եմ Յիսուս Նազովրեցի զոր դուն
9 հալածես։ Բայց ոտք ընդ իսն կէին՝ գոյն
տեսանէին[1], այլ զձայնն ոչ լսէին որ
10 խօսէր ընդ իս։ Եւ ասեմ, Զի՞նչ արա-
ջիր, Տէր. եւ ասէ ցիս Տէր, Յարու-
ցեալ երթիցես ի Դամասկոս, եւ անդ
պատմեսցի քեզ վասն ամենայնի որ
11 հրամայեալ է քեզ առնել։ Իրրեւ ոչ ես-
տանէի ի փառաց լուսոյն այնորիկ, զձե-
ռանէ ձգեալ ի նոցանէ որ ընդ իս կէին,
12 մտի ի Դամասկոս։ Անանիա մի այր
երկիւղած ըստ օրինացն, վկայեալ
յամենայն բնակչաց որ ի Դամասկոս
13 Հրեայքն կէին, եկն եկաց առ իս եւ
ասէ, Սաւուղ եղբայր, ի վեր հայեաց։
14 Եւ ես նայժմահայն ի վեր հայեցայ ի նա.
եւ նա ասէ ցիս, Աստուած հարցն մե-
րոց յառաջագոյն ընտրեաց զքեզ ճա-
նաչել զկամս նորա, եւ տեսանել զՎե-
դարն եւ լսել բարբառ ի բերանոյ նո-
15 րա. Զի եղիցես վկայ նորա առ ամե-
նայն մարդիկ որոց տեսեր եւ լուար։
16 Եւ արդ ընդէ՞ հեղգաս, արի, մկրտեայ
եւ լուա զմեղս քո ի կարկառել զանուն
17 Նորա։ Եւ եղեւ ինձ ի դառնալն յե-
րուսաղէմ եւ կալ յաղօթս ի տաճարին,
18 լինել ի զարմացման, Եւ տեսանել զնա
զի ասէր ցիս, Փութա եւ յերուսա-
զեմ վաղվաղակի, քանզի չեն ընդու-
19 նելոց զքո վկայութիւնդ վասն իմ։ Եւ
ես ասեմ, Տէր, ինքեանք իսկ գիտեն
զի ես էի որ ի բանտն տայի եւ զան
հարկանէի ըստ ժողովրդոցն դեսաս-
20 տեայս ի քեզ։ Եւ յորժամ հեղոյր
արիւնն Մատիանոսի վկայի քո, ես
ինքն էի որ ի վերայ կայի, եւ կամա-
կից լինէի սպանման նորա, եւ պահէի
21 զհանդերձս սպանողացն նորա։ Եւ ասէ
ցիս, Գնա, զի ես ի հեթանոսս հե-
ռաւորս առաքեցից զքեզ։
22 Եւ ունկն դնէին նմա մինչեւ ցայս
բան, ապա բարձին զձայնս իւրեանց
եւ ասեն, Բարձ յերկրէ զայդպիսիդ,
23 զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ։ Եւ
յաղաղակէն նոցա եւ ընկենուլ զհան-
24 դերձս եւ զխոչն ցանել յօդսն, Հրա-
մայեաց հազարապետն մուծանել զնա
ի բանակն, ասէր, դանիւ հարցանել
զնա, զի գիտացից վասն որոյ յանդ-
25 ման այնպէս աղաղակէին զնմանէ։ Եւ
իրրեւ պրկեցին զնա փոկովք, ասէ
Պաւղոս ցհարիւրապետն որ ի վերայ
կայր, Եթէ զայր Հռոմայեցի եւ ան-
արատ պա՞րտ իցէ ձեզ դան հարկանել։
26 Իրրեւ լուաւ հարիւրապետն, մատու-
ցեալ առ հազարապետն պատմեաց եւ
ասէ, Զի՞նչ կամիս առնել, քանզի այրս
27 այս Հռոմայեցի է։ Եւ մատուցեալ
հազարապետն՝ ասէ ցնա, Ասա դու
ցիս, Հռոմայեցի՞ ես. եւ նա ասէ,
28 Այո։ Պատասխանի նա հազարապետն,
Ես բազում գլխոց ղկենսուրութիւնս
զայս ստացայ. ասէ Պաւղոս, Ես ծնեալ
29 իսկ ի գմին եմ։ Եւ վաղվաղակի ի բաց
կացին ի նմանէ՝ որ [2]հարկանելոցն էին
զնա. եւ հազարապետն իսկ երկեաւ,
իրրեւ գիտաց եթէ Հռոմայեցի է, եւ
զի կապեալ եւս էր զնա։
30 ՁԲ. Եւ ի վաղիւ անդր կամէր գիտել
զճշմարիտն, թէ զի՞նչ չարախօսութիւն
իցէ Հրէից, արձակեաց զնա, եւ հրա-
մայեաց կոչել զքահանայապետսն եւ
զամենայն ատեանն. եւ իջուցեալ զՊա-
ւղոս՝ կացոյց ի մէջ նոցա։

ԳԼ. ԻԳ

1 Եւ հայեցեալ Պաւղոսի յատեանն՝ ասէ,
Արք եղբարք, ես ամենայն ուղիղ մտօք
զնացեալ եմ առաջի Աստուծոյ մինչեւ
2 ցայսօր։ Եւ քահանայապետն Անանիա
հրամայեաց սպասաւորացն հարկանել
3 զբերան նորա։ Յայնժամ Պաւղոս ասէ
ցնա, Հարկանելոց է զքեզ Աստուած,
որմ բոնաւոր, եւ դու նստես դատել զիս
ըստ օրինաց, եւ առանց օրինաց հրա-
4 մայես զիս հարկանել։ Եւ որ չուրջն
կային՝ ասեն, Զքահանայապե՞տ Աս-
5 տուծոյ հայհոյես։ Եւ ասէ Պաւղոս,
Ոչ գիտէի, եղբարք, եթէ իցէ քահա-
նայապետ. գրեալ իսկ է, Զիշխան ժո-
6 ղովրդեան քո ոչ հայհոյեսցես։ Իրրեւ
գիտաց Պաւղոս եթէ մի կողմն սա-
դուկեցւոց է եւ մեւսն փարիսեցւոց,
աղաղակէր ի մէջ ատենին, Արք եղ-
բարք, ես փարիսեցի եմ, որդի փարի-
սեցւոյ. վասն յուսոյ եւ յարուբթեան
7 մեռելոց ես աւասիկ դատիմ։ Եւ զայս

[1] Որով յաւելուած, և զհի հարան

[2] Կամ հարցանելոցն

իբրեւ ասաց, եղեն հերձուածք փարիսեցւոցն եւ սադուկեցւոց, եւ պատա-
8 ռեցաւ բազմութիւնն։ Քանզի սադուկեցիքն ասեն, Չիք յարութիւն եւ ոչ հրեշտակ եւ ոչ հոգի, բայց փարիսեցիքն խոստովանին զերկոսեան։ Եւ
9 եղեւ աղաղակ մեծ. յոտն կացին ոմանք ի դպրաց անտի ի կողմանէ փարիսեցւոց, հակառակէին եւ ասէին, Ոչինչ չարութիւն գտանեմք յանմս
10 յայսմիկ, բայց եթէ հոգի խօսեցաւ ի նմա կամ հրեշտակ[1]։ Եւ ի բազմանալ ամբոխին՝ երկուցեալ հազարապետն թէ գուցէ ճեղքիցի Պաւղոս ի նոցանէ, հրամայեաց զօրականին իջանել յափըշտակել զնա ի միջոյ նոցա, եւածել
11 ի բանակն։ Եւ ի վաղուձան գիշերին եկաց առ նմա Տէր եւ ասէ, Քաջալերեաց, Պաւղէ, զի որպէս վկայեցեր վասն իմ յԵրուսաղէմ, սոյնպէս պարտ է քեզ եւ ի Հռոմ վկայել։
12 Զե։ Եւ իբրեւ այգ եղեւ, [2]արարեալ ժողով Հրէիցն՝ նզովեցին զանձինս, ոչ ուտել եւ ոչ ըմպել մինչեւ սպանցին
13 զՊաւղոս։ Եւ էին աւելի քան զքառասունն որոց զայս ընդ միմեանս երդ-
14 մնեցեալ էր։ Որք մատեան առ քահանայապետսն եւ երիցունս եւ ասեն, Նզովիւք նզովեցաք զանձինս ոչ
15 ինչ ճաշակել մինչեւ սպանցուք զՊաւղոս։ Բայց դուք ղգացուցէք հազարապետին հանդերձ ատենին, զի իջուսցէ զնա առ ձեզ, որպէս թէ կամիցիք ճշմարտագոյնս ինչ գիտել զնմանէ. եւ
16 մեք յառաջ քան զմօտենալ նորա՝ պատրաստ եմք ի սպանանել զնա։ Եւ լուեալ քեռորդւոյն Պաւղոսի զդաւադանութիւնն՝ եկն եմուտ ի բանակ
17 անդր, պատմեաց Պաւղոսի։ Եւ կոչեցեալ Պաւղոսի առ իւր զմի ի հարիւրապետացն անտի՝ ասէ, Զպատանիս զայս տար առ հազարապետն, զի ունի
18 ինչ պատմել նմա։ Եւ նորա առեալ զնա տարաւ առ հազարապետն եւ ասէ, Կապեալն Պաւղոս կոչեաց զիս, եւ աղաչեաց զպատանիս զայս ածել առ քեզ.
19 ունի ինչ խօսել ընդ քեզ։ Առեալ զձեռանէ նորա հազարապետին՝ դնաց մեկուսի, հարցանէր թէ Զի՞նչ ունիս
20 խօսել ընդ իս։ Եւ նա ասէ, Հրեայք միաբանեցին աղաչել զքեզ, զի ի վաղիւ զՊաւղոս իջուսցես յատեան, իբրեւ թէ կամիցին ինչ ճշմարտագոյնս
21 հարցանել վասն նորա. Արդ դու մի՛ անսայցես նոցա, քանզի դարան գործեալ է նմա ի նոցանէ արանց աւելի քան զքառասունն, որ նզովեցին զանձինս ոչ ուտել եւ ոչ ըմպել մինչեւ սպանցեն զնա. արդ պատրաստ են եւ
22 սպասեն քումմ հրամանի։ Ապա հազարապետն արձակեաց զպատանին՝ պատուիրեալ մի՛ ումեք ասել թէ զայս զգացուցեր ինձ։
23 Եւ կոչեաց երկուս ի հարիւրապետացն եւ ասէ, Պատրաստեցէք զօրականս երկերիւր, որպէս զի երթիցեն մինչեւ ի կեսարիա, եւ հեծեալս եւթանասուն եւ տիգաւորս երկերիւր,
24 յերից ժամուց գիշերոյն, եւ գրաստս պատրաստական՝ որպէս զի իջուցեալ զՊաւղոս ապրեցուսցեն առ Փելիքս
25 դատաւոր. Գրեալ թուղթ որ ունէր
26 օրինակ զայս. Կղաւդիոս Լիւսիաս, առ քաջ դատաւորդ Փելիքս, ողջոյն։
27 Զայրս զայս կալեալ ի Հրէից եւ մերձ ի սպանանել ի նոցանէ, հասեալ ի վրայ զօրականաւ ապրեցուցի, իմացեալ թէ Հռոմայեցի է։ Կամեցայ գիտել զվճռան վասն որոյ ամբաստանէին
28 զդմանէ, իջուցի զդա յատեան նոցա։
29 Զոր գտի ամբաստանեալ վասն խնդրոյ իրիք իւրեանց օրինաց. եւ ոչ ինչ արժանի մահու կամ կապանաց ունէր
30 զնաս։ Իբրեւ ազդ եղեւ ինձ նենգութեան յայրդ լինելոյ [3]ի նոցանէ՝ յղեցի՝ առ քեզ. հրաման տուեալ եւ չարախօսացն խօսել զդմանէ առաջի քո. ողջ լեր։
31 Եւ զօրականացն ըստ հրամանի նոցա առեալ զՊաւղոս՝ ածին գիշերային
32 յԱնտիպատրիս։ Եւ ի վաղիւ անդր արձակեալ զհեծեալսն ընդ նմա երթալ՝
33 դարձան ի բանակն։ Նոքա մտին ի կեսարիա, եւ տուեալ ցդատաւորն զթուղթն՝ առաջի կացուցին նորա եւ
34 զՊաւղոս։ Իբրեւ ընթերցաւ, եհարց թէ յորմէ՞ նահանգէ իցէ. եւ ստուգեալ թէ ի կիլիկեայ է, լուայց քեզ, ասէ, յորժամ եւ չարախօսքն քո ե-

[1] Որմն՛ւ յաւելուն, մի՛ մարտիցուք ընդ Աստուծոյ
[2] Որմն՛ւ, միաբանեալ ոմանց ի Հրէից
[3] Որմն՛ւ, ի Հրէից՝ խնդրն յղեցէ

կեսցեն, եւ հրամայեաց յապարանսն Հերովդի պահել զնա։

ԳԼ. ԻԴ

1 ԷԱ. Եւ յետ հինգ աւուր էջ քահա-
նայապետն Անանիա հանդերձ ծերովք
ումանբք, եւ ճարտարախօսաւ Տեր-
տիւղեաւ ումանբ, որք եւ ղդացուցին
2 դատաւորին վասն Պաւղոսի։ Եւ ի կո-
չեալն զնա՝ սկսաւ Տերտիւղոսն ամբաս-
տան լինել եւ ասել, Բազում խաղա-
ղութիւն գտեալ է ի քէն եւ իրաց ուղ-
ղութիւն ազգիս այսորիկ քով խնամով.
3 Ամենայնիւ եւ ամենայն ուրեք չնոր-
հակալ եմք, քաջդ Փելիքս, ամենայն
4 գոհութեամբ։ Բայց զի մի՛ աւելի եւս
աչխատ արարից զքեզ, աղաչեմ լսել
մեզ կարճ ի կարճոյ քոյին հեզու-
5 թեամբդ։ Քանզի գտաք զայրս զայս
ապականիչ եւ խռովիչ ամենայն Հրէից
որք են ընդ տիեզերս, եւ առաջնորդ
6 Նազովրացւոց հերձուածոյն։ Որ եւ
զտաճարն իսկ կամեցաւ պղծել. զոր
եւ կալաք, [1]եւ ըստ մերոց օրինաց
7 դատել կամեցաք։ Եկեալ Լիւսիաս հա-
զարապետ՝ մեծաւ բռնութեամբ ի ձե-
8 ռաց մերոց հնոյն։ Հրամայեաց եւ չա-
րախօսացն նորա գալ առ քեզ։" յորմէ
զու իսկ բաւական լինիցիս վերատին
դատեալ, ամենայնի հասու լինել զորոց
9 մեք ամբաստանեմք զայնմանէ։ Միա-
բանեցին եւ Հրեայքն, ասեն, Այդ-
պէս է։
10 Պատասխանի ետ Պաւղոս, յակնար-
կել նմա դատաւորին խօսել, Ի բա-
զում ամաց լինել քեզ դատաւոր ազ-
գիս այսորիկ գիտեմ, յօժարութեամբ
վասն իմոց իրաց պատասխանի առնեմ։
11 Քանզի կարող ես դիտել, զի ոչինչ
աւելի է իմ քան զաւուրս երկոտասան
յորմէ հետէ ելի երկիր պագանել յԵ-
12 րուսաղէմ։ Եւ ոչ ի տաճարի անդ գտին
զիս ընդ ումեք խօսեցեալ, եւ կամ
ժողովս արարեալ բազմաց, ոչ ի ժո-
13 ղովրդոց, եւ ոչ ի քաղաքի. եւ ոչ
յանդիման առնել կարեն քեզ վասն որոյ
14 այժմ չարախօսեն զինէն։ Բայց զայս
խոստանամ քեզ, եթէ ըստ ճանապար-
հին զոր ասեն հերձուած, այնպէս պաշ-
տեմ զհայրենի Աստուածն։ հաւատա-
ցեալ ամենայնի որ ինչ յօրէնսն եւ ի
15 մարգարէսն գրեալ է։ Ունիմ յոյս առ
Աստուած, որում եւ դուքս իսկ ակն
ունին թէ յարութիւն լինելոց է[2] ար-
16 դարոց եւ մեղաւորաց։ Ցորում եւ
ես իսկ ճգնիմ, անխիղճ միտս ունել
առ Աստուած եւ առ մարդիկ յամե-
17 նայն ժամ։ Ի բազում ամաց ողորմու-
թիւնս ելի առնել յազգիդ իմում, եւ
18 ետուր պատարագիս. Որովք գտին զիս
սրբեալ ի տաճարին, ոչ բազմօք եւ ոչ
19 ամբոխիւ, Ոմանք յԱսիացւոց անտի
Հրեայք, որոց պարտ էր գալ առաջի
քո եւ ամբաստան լինել, եթէ ունիցին
20 ինչ զինէն. Եւ կամ ինքեանք ասքա
ասասցեն, զի՞նչ գտին յիս անիրաւու-
21 թիւն մինչդեռ կայի յատենին։ Բայց
միայն վասն միոյ բարբառոյս այսորիկ
զոր աղաղակեցի մինչ կայի ի մէջ նո-
ցա, եթէ վասն յարութեան մեռելոց
22 դատիմ ես այսօր ի ձէնջ։ Եւ յապաղ-
եաց զնոսա Փելիքս, զի ստուգագոյնս
գիտէր վասն ճանապարհին, ասէ, Ցոր-
ժամ Լիւսիաս հազարապետ իջցէ այսր՝
23 տեղեկացայց վասն ձեր։ Հրամայեաց
հարիւրապետին պահել զնա եւ ունել
զինդարձակի, եւ մի՛ զոք յիւրոց անտի
արգելուլ ի պաշտելոյ [3]զնա։
24 ԷՓ. Եւ յետ աւուրց էնչ եկն Փելիքս
հանդերձ Դրուսիղաւ կնաւ իւրով, որ
էր Հրեայ, կոչեաց զՊաւղոս եւ լուաւ
ի նմանէ վասն որ ի Քրիստոս
25 հաւատոցն։ Եւ ի խօսելն նորա վասն
արդարութեան եւ ժուժկալութեան
եւ հանդերձեալ գատաստանին, զա՛ն
հարեալ Փելիքս՝ ետ պատասխանի,
Դու առ այժմ երթ, եւ յօրժամ ժամ
26 լիցի, կոչեցից զքեզ։ Միանգամայն եւ
ակն ունէր թէ տացի էնչ նմա ի Պաւ-
ղոսէ, վասն որոյ եւ ասէպ կոչեցեալ
27 զնա խօսէր ընդ նմա։ Եւ ի կատարել
երկուց ամաց՝ եկն փոխանակ Փելիք-
սի Փեստոս Պորկիոս. իբրեւ կամեցաւ
չնորհս առնել Հրէիցն Փելիքս, եթող
զՊաւղոս կապեալ։

ԳԼ. ԻԵ

1 Փեստոս իբրեւ եհաս յիչխանութիւնն,

[1] Ի բազմս գոլոր

[2] Որոնք յարութիւն, մեռելոց,

[3] Որոնք, զնա, կամ յերթալոյ առ նա

յեա երից աւուրց ել յերուսաղէմ ի
2 Կեսարեայ : Եւ զգացուցին նմա [1]քա-
հանայապետքն եւ դլխաւորք Հրէիցն
3 զՊաւղոսէ , Եւ աղաչէին խնդրեալ
չնորհս ի նմանէ . զի կոչեսցէ զնա յե-
րուսաղէմ . դարան դործեալ սպանա-
4 նել զնա ի ճանապարհի : Իսկ Փեստոս
արար պատասխանի պահել զնա ի կե-
սարիա , թէ ինքն իսկ ընդ հուսկ անդր
5 երթալոց էր : Եւ որ ի ձէնջ կարդիդ
իցեն , ասէ , ընդ իս իջցեն , եւ եթէ
իցէ ինչ յառնն վնաս , ամբաստան լի-
6 ցին զնմանէ : Եւ լեալ անդ աւուրս ոչ
աւելի քան զուրթ կամ զտասն , եկն էջ
ի Կեսարիա . եւ ի վաղիւ անդր նստեալ
յատեանի՝ հրամայեաց ածել զՊաւղոս :
7 Եւ իբրեւ եկն , կացին չուրջ զնովաւ
որ յերուսաղէմէ իջեալ էին Հրեայքն,
բազում եւ ծանր վնասս պնդէին զորս ոչ
8 կարէին ցուցանել : Քանզի առնէր պա-
տասխանի Պաւղոս եթէ Ոչ յօրէնս Հր-
էից եւ ոչ ի տաճարն եւ ոչ ի կայսր
9 ինչ վնասակար եմ : Բայց Փեստոս կա-
մեցեալ Հրէիցն չնորհս առնել՝ պատաս-
խանի եհաս Պաւղոսի եւ ասէ , Կամի՞ս
յերուսաղէմ ելանել , եւ անդ վասն զո-
10 ցին իրաց դատել առաջի իմ : Եւ ասէ
Պաւղոս , Յատենի կայսեր հասեալ կամ
ուր պարտ է ինձ դատել . Հրէից ինչ
11 չեմ վնասակար , որպէս եւ դու իսկ
քաջ դիտես : Ապա եթէ վնասակար ի-
ցեմ եւ արժանի ինչ մահու գործեցի ,
ոչ զանդիտեմ ի մեռանելոց . իսկ եթէ ոչ
ինչ իցէ զորոց սորա ամբաստան լինին
զինէն , ոչ ոք կարէ զիս զոցա չնորհել .
12 ի կայսր բողոքեմ : Յայնժամ Փեստոսի
խօսեցեալ ընդ խորհրդակցին՝ արար
պատասխանի , ի կայսր բողոքեցեր ,
առ կայսր երթիցիր :
13 ԷԳ. Իբրեւ անցին աւուրք ինչ , Ագ-
րիպպաս արքայ եւ Բերնիկէ եկին
14 ի Կեսարիա յողջոյն Փեստոսի : Եւ իբ-
րեւ աւուրս բազումս հանէին անդ ,
Փեստոս պեկոյց արքային զՊաւղոսէ եւ
ասէ , Այր մի է սոսա մնացեալ կապեալ
15 ի Փելիքսէ : Վասն որոյ իբրեւ չոգայ
յերուսաղէմ , զգացուցին ինձ քահա-
նայապետքն եւ դլխաւորք Հրէիցն ,
խնդրէին զինէն առնել նմա պատաս-
16 խան : Որոց ետու պատասխանի եթէ

Չէ օրէն Հռովմայեցւոց չնորհել ումեք
[2]զոք , մինչչեւ ամբաստանեալն յան-
դիման ունիցի զդատախազան , եւ տեղի
պատասխանւոյ առնուցու վասն ամ-
17 բաստանութեանն : Եւ իբրեւ եկին
այսր , ոչինչ յապաղեցի , այլ ի վաղիւն
նստեալ յատենի՝ հրամայեցի ածել
18 զայրն : Վասն որոյ մասուցեալ ամբաս-
տանքն եւ ոչ մի ինչ վնաս չարուեստեան
ի մէջ բերէին զորոց ևս կարծէի .
19 Բայց խնդիրս ինչ որ վասն իւրեանց
սչաւտաման ունէին ընդ նմա , եւ վասն
Յիսուսի ուրուսն մեռելոյ , զորմէ ա-
20 սէր Պաւղոս թէ կենդանի է : Իբրեւ
յանհնարս մտի վասն այսպիսի իրաց
քննութեան , ասեմ եթէ կամիցի՞ եր-
թալ յերուսաղէմ , եւ անդ դատել վասն
21 նոցին իրաց : Բայց ի Պաւղոսի բողո-
քելն դի պահեսցի ի Քաջի արանցն
յանդիմանութիւն , հրամայեցի պահել
զնա՝ մինչեւ առց տանել առ կայսր :
22 Ագրիպպաս ցՓեստոս ասէ , Կամէի եւ
ես լսել առն . եւ նա ասէ , Ի վաղիւ
լսիցես :
23 Եւ ի վաղիւ անդր իբրեւ եկն Ագ-
րիպպաս եւ Բերնիկէ բազում երե-
ւելի սպասուք , եւ մտին յատեանն
հանդերձ հազարապետօքն եւ արամբք
պատուականօք քաղաքին . եւ հրա-
24 մայեալ Փեստոսի՝ ածին զՊաւղոս : Եւ
ասէ Փեստոս , Արքայ Ագրիպպա , եւ
ամենայն արք որք ընդ մեզ էք , տես-
սանի՞ք զսա . վասն սորա ամենայն ժո-
ղովք Հրէից ամբաստան եղեն ինձ յե-
րուսաղէմ եւ աստ , աղաղակէին թէ
25 Չէ պարտ գմա կեալ : Բայց ես ի վե-
րայ հասի թէ ոչինչ է զորս արժանի
մահու գործեալ , եւ զորս ինքնին
բողոք կալեալ առ Քաջ արանցն , խոր-
26 հեցայ յղել : Վասն որոյ ստուգութեամբ
ինչ պրել տեառն իմում ոչ ունիմ .
վասն այնորիկ ածի զդա առաջի ձեր ,
եւ մանաւանդ առաջի քո , արքայ Ագ-
րիպպա , որպէս զի վերատին քննեալ՝
27 մարթացից ինչ զրել : Քանզի անպատեհ
իմն թուի ինձ տալ տանել կապեալ
մի , եւ ոչինչ վնաս զնմանէ նչանա-
կել :

[1] Որոնք , քահանայապետն

[2] Որոնք , զոք ի սատակումն

ԳԼ. ԻԶ

4 Եւ Ագրիպպաս ասէ ցՊաւղոս, Հրաման լեալ է քեզ վասն քո խօսել։ Յայնժամ Պաւղոս ձգեալ գձեռն առնէր
2 պատասխանի. վասն ամենայն ամբաստանութեան Հրէից զինէն, արքայ Ագրիպպա, համարիմ զանձն երանելի, զի քո առաջի այսօր տալոց եմ պա-
3 տասխանի։ Մանաւանդ զի գիտակ իսկ ես ամենայն կրօնից եւ խնդրոց Հրէից. վասն որոյ աղաչեմ երկայնմտութեամբ
4 լսել ինձ։ Բանզի կենաց իմոց որ ի մանկութենէ, ի սկզբանէ լեալ յազգի անդ իմում յԵրուսաղէմ, տեղեակ են
5 ամենայն Հրեայք։ Յառաջագոյն զիս-տեն ի վաղուց հետէ, եթէ կամիցին վկայել, զի ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ փարիսեցի։
6 Եւ արդ վասն յուսոյն առ Հարսն ե-ղելոյ աւետեացն յԱստուծոյ՝ գտեալ
7 կամ յառեւն. Յոր երկոտասան ազգատոհմին մերոյ անպակաս զշայթ եւ զցերեկ պաշտեալ ակն ունին հասանել. վասն որոյ յուսոյ ամբաստանիմ,
8 արքայ, ի Հրէից։ Ինչ անհաւատ թուի ձեզ եթէ Աստուած զմեռեալս
9 յարուցանէ։ Ես իսկ ինքնին պատշաճ համարէի զբազում ինչ հակառակ անուանն Յիսուսի Նազովրեցւոյ գործել։
10 Զոր եւ արարի իսկ յԵրուսաղէմ. եւ զբազումս ի սրբոցն ես բանտարգել առնէի, ի քահանայապետէից առեալ իշխանութիւն. եւ [1]գալանելոցն նոցա
11 բերէի հասար՝։ Եւ ըստ ամենայն ժողովոցն բազում անգամ պատժեալ զնոսա՝ բռնադատէի հայհոյել. առաւել եւս մոլեալ ի վերայ նոցա՝ հալածէի մինչեւ յարտաքին քաղաքսն։
12 ԺԱ. Որովք գնացեալ ի Դամասկոս՝ իշխանութեամբ եւ հրամանաւք քահա-
13 նայապետին, Զմիջաւուրն ի ճանապարհի տեսի, արքայ, յերկնից առաւել քան զպայծառութիւն արեգական ծագեալ զբեզ լոյս, եւ զնոսաւք որ
14 ընդ իս երթային։ Եւ յամենեցունց մեր անկանելոյ երկիր, լուայ ձայն որ ասէր ցիս Հեբրայեցւոց բարբառովք, Սաւուղ, Սաւուղ, ընդէ՞ հալածես զիս. խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել։
15 Եւ ես ասեմ, Ո՞ ես, Տէր. եւ Տէր ասէ, Ես եմ Յիսուս զոր դուն հալա-
16 ծես։ Այլ արի եւ կաց ի վերայ ոտից քոց, զի վասն այսորիկ երեւեցայ քեզ առնուլ զքեզ ի ձեռն պաշտօնեայ եւ վկայ որոց տեսանիցես [2]զիս, եւ որոց ե-
17 րեւեցայց քեզ. Փրկել զքեզ ի ժողովրդենէդ եւ ի հեթանոսաց, յորս ես
18 առաքեցից զքեզ. Բանալ զաչս նոցա, դարձուցանել ի խաւարէ ի լոյս, եւ յիշխանութենէ Սատանայի՝ յԱստուած. առնուլ նոցա զիմոզութիւն մեղաց, եւ վիճակ ընդ սուրբս հաւատովքն որ
19 յիս։ Ուստի, արքայ Ագրիպպա, ոչ եղէ անհաւատ երկնաւոր տեսլեանն.
20 Այլ նախ որոց ի Դամասկոս եւ յԵրուսաղէմ էին, եւ ընդ ամենայն գաւառսն Հրէաստանեայ եւ ի հեթանոսս, պատմելի զղջանալ եւ դառնալ յԱստուած [2]կենդանի, արժանի ապաշխարութեան
21 գործս գործել։ Վասն այսորիկ Հրէից կալեալ զիս ի տաճարին՝ կամէին սպա-
22 նանել։ Օգնութիւն հասեալ առ յԱստուծոյ՝ մինչեւ ցայսօր կացի վկայեալ փոքրու եւ մեծի, ոչ ինչ արտաքոյ ասել քան զոր մարգարէքն եւ Մովսէս
23 խօսեցան գնանդերձելոցն լինելոյ. Եթէ չարչարելոց է Քրիստոս, եթէ առաջին ի յարուցմանէ մեռելոց՝ լոյս պատմելոց է ժողովրդեանն եւ հեթանոսաց։
24 Եւ նորա զայս պատասխանի առեալ, Փեստոս ի ձայն մեծ ասէ, Մոլիս, Պաւղէ, բազում գպրութիւնք զքեզ
25 ի մոլութիւն դարձուցանեն։ Իսկ Պաւղոս ասէ, Ոչ մոլիմ, քաջդ Փեստոս, այլ զցածութեան եւ զճշմարտութեան
26 բանս բարբառիմ։ Գիտակ իսկ է այսոցիկ արքայ, ընդ որում եւ համարձակեալ խօսիմ. քանզի ծածկել ի քէն խիթք ի սոցանէ չառնուիմ յանձն. զի
27 ոչ եթէ յանկեան ուրեք զործեալ իցէ
28 այս։ Հաւատա՞ս, արքայ Ագրիպպա, մարգարէից. գիտեմ զի հաւատաս։ Եւ
29 ասէ Ագրիպպաս ցՊաւղոս, Փոքու իմն հաւանեցուցանես զիս լինել քրիստոն։ Եւ Պաւղոս ասէ, Խնդրեի՛ յԱստուծոյ և՛ փոքու և՛ մեծաւ ոչ միայն զքեզ, այլ զամենեսեան որ լսեն ինձ

[1] Յոյն, ի պատանել նոցա տալի հաւանութիւն

[2] Յոյնն պակաս

այսօր՝ լինել այսպիսի որպէս եւ ես եմ, բաց ի կապանաց աստի։
30 Ոտն ելաց արքայն եւ դատաւորն
եւ Բերնիկէ, եւ որ ընդ նոսան նըս-
31 տէին։ Եւ իբրեւ գնացին, խօսէին ընդ
միմեանս եւ ասէին թէ Ոչ ինչ արժա-
նի մահու կամ կապանաց գործէ այս
32 այս։ Իսկ Ագրիպպաս ցՓեստոս ասէ,
Արձակել մարթ էր զայս զայս, եթէ
ոչ էր բողոքեալ ի կայսր։

Գլ. ԻԷ

1 ԷԵ. Իբրեւ հրամայեցաւ մեզ նաւել
յիտալիա, տային զՊաւղոս եւ զայլս
ոմանս կապեալս ցհարիւրապետ մի,
որում անուն էր Ծուլիոս, Սեբաստեան
2 գնդին։ Եւ ելեալ ի նաւ մի Ադրամին-
տացի, որ երթալոց էր ի կողմանս Ա-
սիացւոց, գնացաք. էր ընդ մեզ եւ
Արիստարքոս Մակեդոն Թեսաղոնիկ-
3 կեցի։ Եւ ի վաղիւ անդր իջաք ի Սի-
դոն. եւ մարդասիրութիւն ցուցեալ
Ծուլեայ առ Պաւղոս, հրամայեաց առ
բարեկամսն երթալ եւ դարման դտա-
4 նել։ Եւ անտի ելեալ խոնարհադոյն
նաւեցաք ի Կիպրոս վասն հողմոյն ընդ-
5 դէմ լինելոյ։ Ծայնժամ ընդ մէջ ծովուն
Կիլիկեայ եւ Պամփիլեայ նաւեալ՝ իջաք
6 ի Միւռա Լիկիացւոց։ Եւ անդ գտեալ
հարիւրապետին նաւ մի Աղեքսանդ-
րացի որ երթայր յիտալիա՝ եմոյծ զմեզ
7 անդր։ Եւ ի բազում աւուրս ծանրա-
նաւեալք՝ հազիւ հասաք առ Կնիդեաւս.
եւ ի չթողացուցանել մեզ հողմոյն,
նաւեցաք խոնարհադոյն ի Կրետէ առ
8 Սաղմոնեաւս։ Հազիւ անցեալ առ նո-
վաւ՝ եկաք ի տեղի ինչ որ կոչէր Գե-
ղեցիկ նաւահանգիստ, յոր հուպ էր
9 քաղաքն Ղասեա։ Եւ իբրեւ բազում
ժամանակք անցանէին, եւ սխալ եւս
լինէր նաւելոյն. եւ վասն այն ինչ եւս
պահոցն անցանելոյ, տայր խրատ Պաւ-
10 ղոս, Եւ ասէր ցնոսա, Արք, տեսա-
նեմ զի թշնամանօք եւ բազում վնասու
ոչ միայն բեռինդ եւ նաւիդ, այլ եւ
անձանց մերոց լինելոց է նաւարկու-
11 թիւնս։ Իսկ հարիւրապետն նաւապե-
տին եւ նաւավարին առաւել անսայր
12 քան բանիցն Պաւղոսի։ Իբրեւ զժպա-
տեհ ինն թուէր նաւահանգիստն առ
ի ձմերել, բազումք խորհեցան գնալ
անտի. թերեւս կարասցեն հասանել
ի Փիւնիկէ՝ ձմերել ի նաւահանգստին
Կրետացւոց որ հայէր ընդ հարաւա-
13 կողմն եւ ընդ աչխարհն։ Եւ ի չնչել
հարաւոյն, համարեցան ուր զիմեալն
էին՝ հասանել. եւ արկեալ՝ մօտ ան-
14 ցանէին առ Կրետեաւս։ Եւ ոչ յետ քա-
զում ժամուց անկաւ զնովաւ հողմ
15 ուռուցիկ, որ կոչի Եւրակիկլովն։ Ընդ
յափշտակել նաւին եւ ի չհանդուրժել
ընդդէմ հողմոյն, թողլ տուեալ երթա-
16 յաք եւ գայաք։ Ի կղզի ինչ դիմեալ
որ կոչէր Կղաւդա, հազիւ կարացաք
17 ըմբռնել զմակոյկն. [1]Զոր առեալ՝ յօգ-
նականութիւն կապէին ընդ նաւն".
երկուցեալք թէ դուցէ ի յորձանուտն
անկանիցին, իջուցեալ զառագաստն՝
18 այնպէս երթային եւ դային։ Եւ ի
սաստկագոյն վշտանալոյն մերոյ ի վա-
ղիւ անդր զկարասին ընկկուիկ առնէին։
19 Եւ յերիր աւուր ընդ [2]իւրեանց ձեռն
20 զգործին նաւին [3]ընկեցին։ Իբրեւ ոչ
արեւ եւ ոչ աստեղք երեւէին ի բա-
զում աւուրս, եւ ձմեռն ոչ սակաւ
կայր ի վերայ, ապա բառնայր ամենայն
21 յոյս փրկութեան մերոյ։ Եւ զի բա-
զում աւուրս նօթի էին, յայնժամ
Պաւղոս կացեալ ի մէջ նոցա՝ ասէ,
Պարտ էր ձեզ, ով արք, անսալ ինձ եւ
ոչ ելանել ի Կրետեայ եւ չահել զվիշտս
22 զայս եւ զվնաս։ Եւ արդ խրատեմ
զձեզ քաջալերել, զի վնաս անձին եւ
ոչ միում ի ձէնջ լինիցի բաց ի նաւէդ։
23 Քանզի երեւեցաւ ինձ յայսմ գիշերի
հրեշտակ Աստուծոյ որոյ եմն եմ եւ
24 պաշտեմ զնա, եւ ասէ, Մի՛ երկնչիր,
Պաւղէ, կայսեր եւս պարտ է քեզ յան-
դիման լինել. եւ ահա չնորհեալ է քեզ
Աստուծոյ զամենեսեան որ են ընդ քեզ
25 ի նաւիդ։ Վասն այսորիկ քաջալերե-
ցարուք, արք, զի հաւատամ յԱս-
տուած եթէ այսպէս լինի զոր օրինակ
26 խօսեցաւ ընդ իս։ Բայց ի կղզի ինչ
հասանել մեզ անկանել։
27 ԷԶ. Իբրեւ չորեքտասաներորդ գիշեր
լինէր, մինչդեռ ծիւեաք ի Հանդրին
անդունդս, ի մէջ գիշերին կարծէին
նաւավարքն եթէ հասեալ իցեն յաչ-

[1] Յոյնն, Զոր առին, և օգնութիւնս ի կիր առեալ՝ ածին պարան զնաւսն
[2] Ոմանք, մեր
[3] Ոմանք, ընկեցաք

28 խարհ ուրեք, եւ ընկեցեալ զգուշդան՝ գտին գիրկս քսան, եւ սակաւ ինչ դադարեալ՝ դարձեալ ընկեցին եւ գտին
29 գիրկս հնգետասան։ Զահի հարեալ թէ գուցէ ի խիստ ինչ տեղիս անկանիցին, յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս
30 չորս, ըղձանային այգուն լինելոյ։ Բայց նաւավարքն խնդրէին փախչել ի նաւէ անտի, եւ իջուցեալ զկուրն ի ծով անդր՝ պատճառանօք որպէս թէ յառաջոյ կողմանէ խարիսխս ձգելոց իցեն,
31 Ասէ Պաւղոս ցհարիւրապետն եւ ցզօրականսն, եթէ ոչ դոքա մնան ի նաւիս, դուք ապրել ոչ կարէք։
32 Յայնժամ զօրականքն հատին զպարս կրին
33 եւ ի բաց ընկեցին։ Եւ մինչդեռ այգն կայմէր լինել, աղաչէր Պաւղոս զամենեսեան առնուլ կերակուր, ասէ, Այս չորեքտասաներորդ օր է որում ակն ունիք նոքին կատարել, եւ չէ ինչ ճաշակեալ։ Վասն որոյ աղաչեմ զձեզ ճաշակել կերակուր, զի այն իսկ վասն ձերոյ փրկութեան է. զի ոչ ուրուք
35 ի ձէնջ մազ մի ի գլխոյ կորիցէ։ Եւ իբրեւ ասաց զայս, առեալ հաց՝ գոհացաւ զԱստուծոյ առաջի ամենեցուն,
36 երեկ եւ սկսաւ ուտել։ Եւ քաջալիրեցան ամենեքեան, եւ նոքա առին կերակուր։
37 Եւ էաք ամենայն հոգիք ի նաւին երկերիւր եւթանասուն եւ վեց,
38 Իբրեւ յագեցան կերակրոյն, թեթեւացուցին զնաւն՝ թափեալ զցորեանն ի ծովն։
39 Եւ իբրեւ այգ եղեւ, զերկիրն ոչ ճանաչէին, բայց զգոգ մի նկատէին թէ ափն ծովուն իցէ. յոր խորհէին, թէ
40 հնար ինչ իցէ, զերծուցանել զնաւն։ Եւ զխարիսխսն հատեալ՝ ընկեցին ի ծովն, թողացուցին զիսաւնելիս թեւսոյն, եւ [1]ի բաց առին՝՝ զառագաստն, եւ ետուն
41 հողմոյն յափն կոյս ծովուն։ Անկեալ ի տեղի մի երկծով՝ թիւրեցին զնաւն. եւ առաջինն կողմն նաւին խրեալ անշարժ մնայր, եւ յետինն կողմն քակէր
42 [2]ի բռնութենէն։ Եւ զօրականացն խորհուրդ արարեալ զի զկապեալսն սպանցեն, եւ զի մի՛ ոք լուղիցի եւ
43 փախիցէ։ Եւ հարիւրապետն քանզի կամեցաւ ապրեցուցանել զՊաւղոս՝ արգել զնոսա ի խորհրդոյն. հրամայեաց զի որ կարողն իցեն լուղել՝ անկանիցին նախ եւ ի ցամաքն ելանիցեն.
44 Եւ զայլսն՝ զո՛րս ի տախտակս, եւ զո՛րս յայլ ինչ կահ ի նաւէ անտի. եւ այսպէս եղեւ ամենեցուն փրծանել յերկիր։

Գլ. ԻԸ

1 Եւ ապրեալք՝ յայնժամ գիտացաք թէ [3]Մելիտինէ էր անուն կղզւոյն. բայց բարբարոսքն չնորհեցին ոչ սակաւ
2 մարգասիրութիւն մեզ. քանզի լուցին խարոյկ, եւ ընկալան զամենեսեան զմեզ վասն անձրեւին որ ստիպէր եւ
3 վասն ցրտոյն։ Եւ ի ժողովել Պաւղոսի խուրձ ինչ բազում եւ դնել ի վերայ խարուկին, իժ մի ի ջերմութենէն ելեալ՝ կալաւ զձեռանէ նորա։
4 Եւ իբրեւ տեսին բարբարոսքն կախեալ զգազանն զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս, Ուրեմն սպանող է այրս այս, որ թէպէտեւ ապրեցաւ ի ծովէն, իրաւունքն
5 չետուն կեալ։ Եւ նորա թօթափեալ զգազանն ի հուրն, եղեւ նմա չար եւ
6 ոչինչ։ Եւ նոքա ակն ունէին նմա այտնելոյ կամ անկանելոյ եւ յանկարծակի մեռանելոյ. իբրեւ չատ ակն կալեալ եւ տեսանէին թէ ոչինչ վնաս եղեւ նմա, դարձեալ դարձուցին զբանսն եւ
7 ասէին թէ աստուած ումն է։ Եւ չուրջ զտեղեաւն զայնուիկ էին գեղք գլխաւորի կղզւոյն որում անուն էր Պոպղիոս. որ առ զմեզ յերաչխի զերիս
8 աւուրս եւ սիրով ընկալաւ։ Եւ եղեւ հօրն Պոպղեայ ի ջերմն եւ յախտ թանչից հիւանդանալ զնել. առ որ մտեալ Պաւղոս եւ կացեալ յաղօթս՝ եդ զձեռն
9 եւ բժշկեաց զնա։ Եւ իբրեւ այս եղեւ, այլ հիւանդք որ էին ի կղզւոջն՝ գային
10 եւ բժշկէին, Որք եւ բազում պատուովք պատուեցին զմեզ. եւ իբրեւ գնացաք, ետուն որ ինչ պէտք էին։
11 Էր։ Եւ յետ երից ամսոց ելաք ի նաւի Աղեքսանդրացի որ ձմեռեալ էր ի կղզւոջն նշանաւորաւ Դիոսկուրաց։
12 ցւոց։ Եւ իջեալ ի Սիրակուսա՝ եղեաք
13 աւուրս երիս։ Ուստի գնացեալ հասաք ի Հռեգիոն. եւ յետ աւուր միոյ

[1] Ց-ՅՆ, քացին
[2] ՈՐՔ, ի բռնութենէ ալեաց

[3] Ց-ՅՆ, Մելիտէ

ի չնչել հարաւոյն, երկօրեայք եկաք
14 ի Պատիոզոս։ Ուր եւ գտաք եղբարս,
աղաչեցեալք ի նոցանէ լինել աւուրս
15 եւթն. եւ ապա եկաք ի Հռոմ։ Եւ
անտի լուեալ եղբարցն զմեզնջ ելին ընդ
առաջ մեր մինչեւ յԱպիոսայն Ապիայ
եւ Երիցն Կրպակայ. զորս տեսեալ
Պաւղոսի գոհացաւ զԱստուծոյ եւ քա-
ջալերեցաւ։
16 Եւ իբրեւ մտաք ի Հռոմ, [1]հրամա-
յեցաւ Պաւղոսի լինել առանձինն հան-
դերձ զինուորաւն պահպանաւ իւրով։
17 Եւ եղեւ յետ երից աւուրց կոչել նմա
զՀրէիցն զխաւորս. եւ իբրեւ եկին,
ասէ ցնոսա, Ես, արք եղբարք, ոչինչ
հակառակ գործեալ ժողովրդեանն կամ
կրօնիցն հայրենեաց, կապեալ յերու-
սաղէմ մատնեցայ ի ձեռս Հռոմայե-
18 ցւոց։ Որք իբրեւ գատեցան զիս, կա-
մեցան արձակել, վասն եւ ոչ մի ինչ
19 վնաս մահու գտանելոյ յիս։ Ի հակա-
ռակել Հրէիցն՝ հարկ եղեւ բողոքել ի
կայսր, իբր ոչ եմէ զազգէն իմմէ ու-
20 նելի ինչ չարախօսել։ Վասն այսր պատ-
ճառանաց աղաչեցի զձեզ՝ տեսանել եւ
խօսել. քանզի վասն յուսոյն Իսրայելի
21 կամ ի չղթայս յայսոսիկ։ Եւ նոքա
ասեն ցնա, Մեք ո՛չ թուղթս ինչ վասն
քո ընկալաք ի Հրէաստանէ, եւ ո՛չ եկ-
եալ ոք յեղբարց պատմեաց կամ խօսա-
22 ցաւ ինչ վասն քո չարութիւն։ Բայց
աղաչեմք ի քէն լսել զմէ ինչ խորհիս
ցիս. զի վասն հերձուածոյդ այգորիկ
յայտ իսկ է մեզ, զի ամենայն ուրեք
23 հակառակութիւն կրէ։ Ժամ եդեալ
նմա օր մի, եկին ի վանսն առնա բա-
զումք, որոց պատմէր վկայութեամբ
զարքայութիւն Աստուծոյ. եւ հաւա-
նեցուցանէր զնոսա վասն Յիսուսի յօ-
րինացն Մովսիսի եւ ի մարգարէից
24 յայգուէ մինչեւ ցերեկոյ։ Եւ ոմանք
հաւանէին բանիցն, եւ կէսք չհաւա-
25 տային։ Եւ անյարաբանք լինեալ ի մի-
մեանց՝ արձակէին, յասելն Պաւղոսի
բան մի թէ Բարւոք խօսեցաւ Հոգին
Սուրբ ի ձեռն Եսայեայ մարգարէի առ
26 հարսն մեր, եւ ասէ, Երթ առ ժողո-
վուրդն, եւ ասասցես, Լսելով լուիջիք
եւ մի՛ իմասջիք, եւ տեսանելով տես-
27 ջիք եւ մի՛ տեսջիք. Զի թանձրացաւ
սիրտ ժողովրդեանն այնորիկ, եւ ա-
կանջօք իւրեանց ծանր լուան, եւ զաչս
իւրեանց կափուցին, զի մի՛ երբեք
տեսցեն աչօք, եւ ականջօք լուիցեն, եւ
սրտիւք լմասցին եւ դարձցին, եւ բժըշ
28 կեցից զնոսա։ Եւ արդ յայտնի լիցի ձեզ,
զի հեթանոսաց առաքեցաւ փրկու-
թիւնս Աստուծոյ, նոքին եւ լուիցեն
29 ցեն։ [2]Եւ իբրեւ զայս ասաց, արտաքս
գնացին ի նմանէ Հրեայքն, որք ունէ-
ին ի մէջ ինքեանց զբազում խնդիրս։"
30 Եւ եղեւ զերկեամ մի բովանդակ
31 իւրով վարձու։ Եւ ընդունէր զամե-
32 նեսեան որ մտանէին առ նա։ Քարո-
զէր զարքայութիւնն Աստուծոյ, եւ ու-
սուցանէր վասն Տեառն Յիսուսի Քրիս-
տոսի անխափան ամենայն համարձա-
կութեամբ։

---

[1]Ոմանք, յանձն արար Հարիւրապետն զկապ-
եալսն զօրապետին, և հրամայեցաւ

[2]Այս համար պակաս յոմանս

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 Աբ. ՊԱՒՂՈՍ, ծառայ Յիսուսի Քրիս-
տոսի, կոչեցեալ առաքեալ, որոշեալ
2 յաւետարանն Աստուծոյ. Որ յառաջ
խոստացաւ ի ձեռն մարգարէից իւրոց
3 գրովք սրբովք, վասն Որդւոյ իւրոյ
եղելոյ ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ,
4 Սահմանելոյ Որդւոյն Աստուծոյ զօրու-
թեամբ ըստ Հոգւոյն սրբութեան. ի
յարուԹենէ մեռելոց Յիսուսի Քրիս-
5 տոսի Տեառն մերոյ. Որով ընկալաք
չնորհս եւ առաքելութիւն՝ ի հնազան-
դութիւն հաւատոց յամենայն հեթա-
6 նոսս վասն անուան նորա. Յորս եւ
դուք էք կոչեցեալ Յիսուսի Քրիստո-
7 սի. Ամենեցուն որոց էք ի Հռոմ, սի-
րելեաց Աստուծոյ՝ կոչեցելոց սրբոց,
չնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն
յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ
Յիսուսէ Քրիստոսէ։

8 Նախ զոհանամ զԱստուծոյ իմոյ ի
ձեռն Յիսուսի Քրիստոսի վասն ձեր
ամենեցուն. զի հաւատք ձեր պատ-
9 մեալ են ընդ ամենայն աշխարհ։ Վկայ
է ինձ Աստուած, զոր պաշտեմ հոգ-
ւով իմով յաւետարանի Որդւոյ նորա,
թէ ո՛րպէս զլիչատակս ձեր ¹առնեմ.
10 Ցամենայն ժամ յաղօթս իմ աղաչելով
զի թերեւս երբեք յաջողեսցի ինձ կա-
11 մօքն Աստուծոյ գալ առ ձեզ։ Քանզի
անձկացեալ եմ տեսանել զձեզ, զի փո-
խեցից ի ձեզ չնորհս ինչ հոգեւոր առ
12 ի հաստատել զձեզ. Այսինքն է մխի-
թարակից լինել ձեզ վասն ընդ միմեանս
13 իմոյ եւ ձերոյ հաւատոց։ Ոչ կամիմ
եղբա՛ք իցէք, եղբարք, զի բա-
զում անգամ յօժարեցի գալ առ ձեզ,
եւ արգելայ մինչեւ ցայժմ. զի եւ
ի ձեզ գտից պտուղ ինչ որպէս եւ յայլ
14 հեթանոսս։ Քանզի Յունաց եւ բար-
բարոսաց, իմաստնոց եւ անմտից պար-
15 տական եմ. Այնպէս՝ որչափ իմով-
սանն յօժարութեամբ, եւ ձեզ որ ի
Հռոմ էք՝ աւետարանել։

16 Զի ոչ եղէ ամօթ ինչ համարիմ զա-
ւետարանն, քանզի զօրութիւն Աս-
տուծոյ է ի փրկութիւն ամենայն հա-
ւատացելոյ. նախ Հրէի եւ ապա հե-
17 թանոսի։ Զի արդարութիւնն Աստու-
ծոյ նովաւ յայտնի հաւատոյ ի հաւատս,
որպէս եւ գրեալ է թէ Արդարն ի հա-
ւատոյ կեցցէ։

18 Ագ. Քանզի յայտնեցոյ է բարկու-
թիւն Աստուծոյ յերկնից ի վերայ ա-
մենայն ամբարչտութեան եւ անիրա-
ւութեան մարդկան, որք զճշմարտու-
19 թիւնն անիրաւութեամբ ունին. վասն
զի գիտութիւնն Աստուծոյ յայտնի է
ի նոսա. քանզի Աստուած իսկ յայտ-
20 նեաց նոցա։ Զի անտեսութիւնք նորա
ի սկզբանէ աշխարհի արարածովքն ի-
մացեալ տեսանին, այսինքն է ²միշտըն-
ջենաւորութիւն եւ զօրութիւն՝ եւ
աստուածութիւն նորա. զի ոչ գտա-
նելեն ամենեւեին տալ պատասխանի։
21 Զի ծանեան զԱստուած, եւ ոչ իբրեւ
զԱստուած փառաւորեցին կամ գոհա-
ցան. այլ նանրացան ի խորհուրդս
իւրեանց, եւ խաւարեցան անմտու-
22 թեամբ սիրտք նոցա։ Ջանձինս առ
23 իմաստունս ունէին, յիմարեցան։ Եւ
փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ
ի նմանութիւն պատկերի եղծանելի
մարդոյ եւ թռչնոց եւ չորքոտանեաց
24 եւ սողնոց։ Վասն որոյ մատնեաց զնս-

¹Ցոյն, առնեմ անդադար

²Ցոյն, միշտջենաւոր զօրութիւն

սա Աստուած ի ցանկութիւն սրտից նոցա ի պղծութիւն, անարգել զմարմինս իւրեանց յանձինս իւրեանց. Որք փոխանակեցին զճշմարտութիւնն Աստուծոյ ընդ ստութեան. [1]Հնազանդեցան եւ պաշտեցին զարարածս եւ ոչ զԱրարիչն, որ է օրհնեալ յաւիտեանս, Ամէն։ Վասն այնորիկ մատնեաց զնոսա Աստուած ի կարիս անարգութեան, զի էգք նոցա փոխանակեցին զպէտս բնականս ի պէտս անբնականս։ Նոյնպէս եւ արուացն թողեալ զբնական պէտս իգութեանն, բորբոքեցան ցանկութեամբք իւրեանց ի միմեանս, արուք ընդ արուս զխայտառակութիւն գործէին, եւ զդարձ փոխարինին որ պարտ էր մոլորութեանն նոցա՝ յանձինս իւրեանց ընդունէին։ Եւ որպէս զի ոչ ընտրեցին զԱստուած ունել ի գիտութեան, մատնեաց զնոսա Աստուած ի միտս անարգութեան՝ գործել զանարժանս. Լցեալս ամենայն անիրաւութեամբ, պոռնկութեամբ, անզգամութեամբ, ագահութեամբ, չարութեամբ, լի նախանձու, սպանութեամբ, հերիւ, նենգութեամբ, չարաբարութեամբ. չոգմողք, Զարախօսք, աստուածատեացք, թշնամանողք, ամբարտաւանք, ամբարհաւաճք, գտիչք չարեաց, զծնողս անարգուք, Անմիտք, ուխտադրուժք, անագորոյնք, [2]աննուէրք, անողորմք. Որք հասեալ էին յԱստուծոյ իրաւանցն վերայ եթէ ոյք զայսպիսին գործեն արժանի են մահու. եւ ոչ միայն որ զայն առնեն, այլ եւ որ կամակիցն լինին գործելեացն։

ԳԼ. Բ

1 Վասն որոյ առանց պատասխանի տալոյ ես, ով մարդ, որ դատիս. զի որով դատիս զընկերն՝ զանձն քո դատապարտես, զի դու զնոյն գործես՝ որով դատիս։

2 Ադ. Քանզի գիտեմք, եթէ Աստուծոյ դատաստանն ճշմարտութեամբ է ի վերայ այնոցիկ որ զայնպիսին գործեն։

3 Իսկ արդ խորհիցի՞ս զայս, ով մարդ, որ դատիս զայնոսիկ որ զայնպիսին գործեն, եւ դու զնոյն գործես, եթէ դու ապրելոց իցես ի դատաստանացն

4 Աստուծոյ։ Եթէ զմնծութեամբ քաղցրութեան նորա եւ զներելովն եւ զերկայնմտութեամբն արհամարհիցես, չգիտիցե՞ս զի քաղցրութիւնն Աստուծոյ

5 զքեզ յապաշխարութիւն ածէ։ Այլ ըստ խստութեան քում եւ ըստ անզեղջ սրտի՝ գանձես անձին քում բարկութիւն յաւուր բարկութեան եւ յայտնութեան արդար դատաւորութեան

6 Աստուծոյ. Որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց. Որ

7 համբերութեամբ են ի գործս բարութեան՝ զփառս եւ զպատիւ եւ զանեղծութիւն խնդրեն, զկեանսն յաւիտենից։

8 Իսկ որ ի հակառակութենէ անտի են եւ ապստամբք ի ճշմարտութենէն եւ զհետ երթեալ զանիրաւութեան՝ բարկութիւն եւ սրտմտութիւն,

9 Նեղութիւն եւ անձկութիւն ի վերայ ամենայն մարդոյ որ գործէ զչար, նախ

10 Հրէի եւ ապա հեթանոսի։ Փառք, պատիւ եւ խաղաղութիւն ամենայնի որ գործէ զբարի, նախ Հրէի եւ ապա

11 հեթանոսի։ Զի ոչ է ակնառութիւն առաջի Աստուծոյ։

12 Աե. Որք միանգամ արտաքոյ օրինացն մեղան՝ արտաքոյ օրինացն եւ կորնչին. եւ որք ընդ օրինօքն մեղան՝

13 օրինօքն եւ դատեսցին. (Զի ոչ եթէ որ լսելիք օրինացն են՝ արդարացեալ են առաջի Աստուծոյ, այլ առնելիք օ-

14 րինացն արդարասցին։ Այլ յորժամ հեթանոսք որ զօրէնս ոչ ունին՝ բնութեամբ զօրինացն գործիցեն, նոքա որ

15 զօրէնս ոչ ունին՝ անձանց իւրեանց իսկ են օրէնք. Որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ի սիրտս իւրեանց՝ վկայութեամբ մտաց իւրեանց, եւ յանդիմանել զմիմեանս ի խորհրդոց իւրեանց, կամ թէ պատասխանի իսկ տալ.)

16 Ցաւուրն յորում դատիցի Աստուած զգաղտնիս մարդկան ըստ աւետարանիս իմում ի Յեսուսէ Քրիստոսի։

17 Այլ եթէ դու Հրեայ անուանեալ ես, եւ յեցեալ ես յօրէնսն, եւ պարծիս

18 յԱստուած, Եւ գիտես զկամս նորա, եւ ընտրես զլաւն, եւ խրատեալ ես յօ-

19 րինացն. Վստահ ես յանձն քո առաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարեալ-

20 լոց, Ուրատիչ անզգամաց, վարդապետ

[1] Գ.ԺՀ, երկիր պագին [2] Ցոմանս պակաս

տղայոց, ունել զկերպարանս գիտութեան եւ ճշմարտութեան յօրինացն։
21 Իսկ արդ որ ուսուցանես զընկերն՝ զանձն քո ոչ ուսուցանես. որ քարո-
22 զես չպողանալ՝ գողանաս. Որ ասես չշնալ՝ շնաս. որ գարշիս ի մեհենից՝
23 զսեղանս կողոպտես. Որ օրինօքն պարծիս՝ յանցանել ըստ օրէնսն զԱս-
24 տուած անարգես։ Զի անունն Աստուծոյ վասն ձեր հայհոյի ի մէջ հեթանոսաց, որպէս եւ գրեալ է։
25 ԱՋ. Թլփատութիւն օգնէ, եթէ զօրէնսն պահիցես. ապա եթէ յանցաւոր օրինացն իցես, թլփատութիւն քո
26 անթլփատութիւն եղեւ։ Իսկ եթէ անթլփատութիւնն զիրաւունս օրինացն պահիցէ, ոչ ապաքէն անթլփա-
27 տութիւն նորա ի թլփատութիւն համարեսցի. Եւ դատիցի որ ի բնէ անթլփատութիւնն է, զօրէնսն կատարելով, զքեզ որ գրովն եւ թլփատու-
28 թեամբն յանցաւոր օրինացն իցես։ Զի ոչ եթէ որ յայտնի Հրեայն է, եւ ոչ որ յայտնի մարմնով թլփատութիւնն,
29 Այլ որ ի ծածուկ Հրեայն է, եւ թլփատութիւն սրտի, հոգւով եւ ոչ գրով. որոյ գովութիւնն ոչ ի մարդկանէ է, այլ յԱստուծոյ։

ԳԼ. Գ

1 Իսկ արդ զի՞նչ աւելի է Հրէին, կամ զի՞նչ օգուտ ի թլփատութենէ անտի։
2 Բազում ինչ ամենայն իրօք. նախ այն իսկ՝ զի հաւատարիմ եղեն սպատգամքն
3 Աստուծոյ։ Իսկ արդ եթէ չէր հաւատացեալ ոմանց, միթէ անհաւատութիւն նոցա զԱստուծոյ հաւատն խա-
4 փանէ՞ր. քաւ լիցի։ Արդ եղիցի Աստուած ճշմարիտ, եւ ամենայն մարդ՝ սուտ, որպէս եւ գրեալ է, Որպէս արդար եղիցես ի բանս քո, եւ յաղթես
5 ցեսս ի դատել քեզ։ Իսկ արդ եթէ ապիրատութիւն մեր զԱստուծոյ արդարութիւնն յանդիման կացուցանէ, զի՞նչ ասեմք. միթէ անիրա՞ւ ինչ է
6 Աստուած որ ածէ զբարկութիւն. Ըստ մարդկութեան ասեմ. քաւ լիցի. ապա թէ ոչ՝ զիա՞րդ դատի Աստուած զաշ-
7 խարհ։ Զի եթէ ճշմարտութիւնն Աստուծոյ յիմում ստութեանն առաւելաւ ի փառս նորա, զի՞ եւս ես իբրեւ
8 զմեղաւոր դատիմ։ Եւ կամ թէ որպէս հայհոյիմքն, եւ որպէս ասեն ոմանք զմեզ ասել թէ Արասցուք զչար զի եկեսցէ բարի. որոց դատաստանքն յիրաւի են։
9 Եւ արդ ի՞ւրեք առաւել իցեմք. ապաքէն եւ ոչ իւրեք. քանզի յառաջագոյն իսկ մեղադիր եղեաք Հրէից եւ հեթանոսաց, ամենեցուն ընդ մեղս լինելոյ։ Որպէս եւ գրեալ է թէ
11 Ոչ ոք է արդար եւ ոչ մի. Եւ ոչ գոյ որ իմանայ, եւ ոչ ոք է որ խնդրէ զԱս-
12 տուած։ Ամենեքեան խոտորեցան ի միասին եւ անպիտանացան. ոչ ոք է որ առնէ զքաղցրութիւն, ոչ ոք է
13 մինչեւ ի մի։ Գերեզման բաց է կոկորդ նոցա. լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն. Թոյնք իժից ի ներքոյ շրթանց
14 նոցա. Որոց բերանք անիծիւք եւ դառ-
15 նութեամբ լի են։ Երագ են ոտք նոցա
16 հեղուլ զարիւն. Բեկումն եւ թշուա-
17 ռութիւն ի ճանապարհս նոցա. Եւ զճանապարհն խաղաղութեան ոչ ծա-
18 նեան։ Ոչ է երկիւղ Աստուծոյ առաջի աչաց նոցա։
19 ԴԴ. Բայց գիտեմք, որ ինչ միանգամ օրէնքն ասեն՝ այնոցիկ որ ընդ օրինօքն են, ասեն. զի ամենայն բերան խցցի, եւ դատապարտ լիցի ամենայն
20 աշխարհ՝ Աստուծոյ։ Զի ի գործոց օրինացն ոչ արդարասցի ամենայն մարմին առաջի նորա, քանզի օրինօքն է գիտութիւն մեղաց։
21 Բայց արդ առանց օրինացն իսկ արդարութիւնն Աստուծոյ յայտնեալ է՝ վկայեալ յօրինաց անտի եւ ի մարգա-
22 րէից։ Քանզի արդարութիւնն Աստուծոյ ի հաւատոց անտի Յիսուսի Քրիստոսի [1]յամենայն հաւատացեալս՝։ Եւ
23 ոչինչ է խտիր։ Քանզի ամենեքեան մեղան, եւ նուազեալ են ի փառաց անտի
24 Աստուծոյ։ Եւ արդարանան ձրի նորին չնորհօք ի ձեռն փրկութեանն որ ի
25 Քրիստոս Յիսուս. Զոր յառաջն եդ Աստուած ի քաւութիւն ի ձեռն հաւատոցն արեամբն նորա, ի հանդէս արդարութեան նորա՝ վասն թողութեան յառաջագոյն մեղացն գործելոց ի ներջին
26 Աստուծոյ, ի հանդէս արդարութեան

---

[1] Ի՛մն., յամենեսին և ի վերայ ամենեցուն ըզ հաւատացեալսն

նորա ի ժամանակի յայսմիկ. զի եղիցի
նա արդար, եւ արդարացուսցէ զայն
27 որ ի հաւատոցն Յիսուսի: Իսկ արդ
ո՞ւր են պարծանքն. արկեալ. յորո՞յ
օրինաց, ի գործո՞ց անտի. ոչ, այլ ի
28 հաւատոցն օրինաց: Քանզի համարիմք
հաւատովք արդարանալ մարդոյ ա-
29 նանց գործոց օրինաց: Եթէ Հրէից
միայն իցէ Աստուած եւ հեթանոսաց
30 ոչ. այո, եւ հեթանոսաց: Զի եթէ
մի է Աստուած որ արդարացուցանէ
զթլփատութիւնն ի հաւատոց, ապա
եւ զանթլփատութիւնն նովին հաւա-
31 տովք: Արդ զօրէնսն ինչ խափանե՞մք
հաւատովքս. քաւ լիցի. այլ զօրէնսն
հաստատեմք:

Գլ. Դ

1 ԲԶ. Իսկ արդ զի՞նչ ասիցեմք զդուա-
նեն Աբրահամու նահապետին մերոյ
2 ըստ մարմնոյ: Զի եթէ Աբրահամու
գործովք էր արդարացեալ, ունէր ու-
նէր պարծանս, այլ ոչ առ Աստուած:
3 Իսկ զի՞նչ ասիցէ գիր. Հաւատաց Ա-
բրահամ յԱստուած եւ համարեցաւ նմա
4 յարդարութիւն: Բայց այնմ որ գոր-
ծիցէն, ոչ համարին վարձքն ըստ չնոր-
5 հաց՝ այլ ըստ պարտեաց: Իսկ այնմ որ
ոչն գործիցէ, բայց հաւատայցէ յայն
որ արդարացուցանէ զամպարիշտս, հա-
մարին հաւատք նորա յարդարութիւն
6 Որպէս եւ Դաւիթ ասէ զերանութիւն
մարդոյ որում Աստուած համարի ար-
7 դարութիւն առանց գործոց: Երանի
որոց թողան անօրէնութիւնք, եւ ո-
8 րոց ծածկեցան մեղք իւրեանց: Երան-
եալ է այր որում ոչ համարեսցի Տէր
9 զմեղս նորա: Արդ երանութիւնս այս ի
վերայ թլփատութե՞ան է եթէ ի վերայ
անթլփատութեան. քանզի ասեմք ե-
թէ Համարեցաւ Աբրահամու հաւատքն
10 յարդարութիւն: Արդ զիա՞րդ համա-
րեցան. մինչդեռ ի թլփատութեա՞ն էր՝
եթէ յանթլփատութեան. ոչ ի թլփա-
տութեանն, այլ յանթլփատութեան:
11 Եւ նշանակ առ զթլփատութիւնն,
կնիք արդարութեան հաւատոցն որ
յանթլփատութենէ անտի. զի եղիցի
նա հայր ամենայն հաւատացելոց որ
յանթլփատութենէ անտի իցեն, առ ի
համարիլոյ եւ նոցա յարդարութիւն.
12 Եւ հայր թլփատութեան՝ որոց ոչ ի
թլփատութենէ անտի եւեթ, այլ եւ
որոց երթայցեն ընդ հետս անթլփա-
տութեան հաւատոց հօր մերոյ Աբրա-
համու:
13 ԳԴ. Զի ոչ եթէ օրինօքն են աւե-
տիքն Աբրահամու եւ զաւակի նորա
ժառանգ լինել աշխարհի, այլ ի հաւա-
14 տոցն արդարութենէ: Զի եթէ որք յո-
րինացն են՝ ժառանգք իցեն, ապա ընդ-
ունայն են հաւատքն, եւ դատարկ՝
15 աւետիքն: Քանզի օրէնքն զբարկու-
թիւն գործեն. բայց ուր ոչ են օրէնք,
16 եւ ո՛չ յանցանք ինչ: Վասն այնորիկ
ի հաւատոց անտի, զի ըստ չնորհացն
իցէ, առ ի լինելոյ հաստատուն աւետ-
եացն ամենայն զաւակին, ոչ այնմ
միայն որ յօրինաց անտի, այլ եւ այնմ՝
որ ի հաւատոցն Աբրահամու, որ է հայր
17 մեր ամենեցուն. Որպէս եւ գրեալ է
եթէ Հայր ազգաց բազմաց արարի
զքեզ, առաջի Աստուծոյ որում հաւա-
տաց [1]եթէ կենդանի առնէ զմեռեալս,
18 եւ կոչէ զչգոյն իբրեւ զգոյ: Որ յան-
յոյսն յոյսով հաւատայ՝ լինել նմա հայր
ազգաց բազմաց. որպէս եւ ասացաւն
19 թէ Այնպէս եղիցի զաւակ քո: Եւ նա
ոչ երկմտեաց ի հաւատոցն [2]թէպէտ
եւ հայեցաւ՝ ի մարմին իւր այնուհե-
տեւ իբրեւ ի մեռեալ, քանզի զհա-
րիւրամնիւք ուրուն էր, եւ ի մեռե-
20 լութիւն արգանդին Սառայի: Բայց
յաւետեացն Աստուծոյ ոչ երկմտեաց
անհաւատութեամբ, այլ զօրացաւ հա-
21 ւատովք, եւ փառս Աստուծոյ, Եւ
հաստատեցաւ ի միտս իւր եթէ որ
22 խոստացաւն՝ կարող է առնել: Վասն
որոյ համարեցաւ նմա յարդարութիւն
23 Արդ զի գրեցաւն ոչ թէ վասն նորա
24 միայն թէ համարեցաւ նմա. Այլ եւ
վասն [3]մերոյ համարելոց է, որք հա-
ւատամք յայն որ յարոյցն զՅիսուս,
25 զՏէր մեր, ի մեռելոց. Որ մատնեցաւ
վասն յանցանաց մերոց, եւ յարեաւ
վասն զմեզ արդարացուցանելոյ:

Գլ. Ե

1 Այսուհետեւ արդարացեալք ի հաւա-

---

[1] Ցոյն, որ [3] Ցոյն, մեր որոց
[2] Ոմանք՝ ոչ հայեցաւ

տոց անտի, խաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն Տեառն մերոյ
2 Յիսուսի Քրիստոսի. Որով եւ զընծայութիւնն իսկ ընկալաք հաւատովք ի
չնորհս յայսոսիկ յորում կայք եւ պար-
3 ծիմք յուսով փառացն Աստուծոյ։ Եւ
ոչ այսչափ միայն, այլ եւ պարծիմք
եւս ի նեղութիւնս մեր. քանզի դի-
տեմք եթէ նեղութիւնք զհամբերու-
4 թիւն գործեն, Համբերութիւն զհան-
5 դէս, հանդէս զյոյս. Յոյս ոչ երբեք
ամաչեցուցանէ. զի սէրն Աստուծոյ
սփռեալ է ի սիրտս մեր ի ձեռն Հոգ-
6 ւոյն Սրբոյ որ տուաւ մեզ։ Զի մինչդեռ տկարքն էաք, Քրիստոս [1]վասն
մեր՝ ի ժամանակի ի վերայ ամպարշ-
7 տաց մեռաւ։ Զի վասն արդարոյ հազիւ ոք թէ մեռանիցի, այլ վասն բարւոյ թերեւս համարձակիցի ոք մեռա-
8 նել։ [2]Ցայտնեաց Աստուած զսէրն իւր
ի մեզ, զի մինչդեռ մեղաւորքն էաք,
9 Քրիստոս վասն մեր մեռաւ. ո՛րչափ
եւս առաւել յարդարանալս մերում
այժմիկ արեամբն նորա՝ ապրեսցուք
10 նովաւ ի բարկութենէ անտի։ Զի եթէ
մինչ թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ
Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա,
ո՛րչափ եւս առաւել ի հաշտելս մերում
11 ապրեսցուք կենօքն նորա։ Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ պարծիմք եւս յԱստուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի, որով եւ զհաշտութիւնն
իսկ ընկալաք։

12 ԳԶ. Զի որպէս ի միոջէ մարդոյ մեղք
յաշխարհ մտին եւ ի մեղաց անտի՝ մահ,
եւ այնպէս յամենայն մարդիկ տարա-
ծեցաւ մահ [3]որով ամենեքեան մեղան։
13 Քանզի մինչեւ յօրէնսն մեղք էին յաշ-
խարհի, բայց մեղք ոչ համարին, ուր
14 օրէնք ոչ իցեն։ Այլ թագաւորեաց մահ
յԱդամայ մինչեւ ի Մովսէս եւ ի վերայ
չյանցուցելոցն ըստ նմանութեան յան-
ցուածոյն Ադամայ, որ է օրինակ հան-
15 դերձելոցն։ Այլ ոչ որպէս յանցանքն
նոյնպէս եւ չնորհքն. զի եթէ միոյն
յանցանօք բազումք մեռան, ո՛րչափ
եւս առաւել չնորհքն Աստուծոյ եւ
պարգեւք, չնորհօք միոյն մարդոյ Յի-
սուսի Քրիստոսի, ի բազումս առա-
16 քեալն։ Եւ ոչ որպէս ի միոջէ յանցու-
ցելոյն պարգեւքս. զի դատաստանն՝
ի միոջէ [4]յանցուածոյ անտի՝ ի դատա-
պարտութիւն, այլ չնորհքն՝ ի բազմաց
17 յանցուածոցն յարդարութիւն։ Զի եթէ
ի միոյն յանցանաց մահ թագաւորեաց
միովն, ո՛րչափ եւս առաւել, որք զա-
ռատութիւնն չնորհաց եւ զպարգեւս
արդարութեանն առնուցուն, կենօք
թագաւորեսցեն ի ձեռն միոյն Յիսու-
18 սի Քրիստոսի։ Ապա ուրեմն որպէս
միոյն յանցանօք յամենայն մարդիկ
դատապարտութիւն, նոյնպէս եւ միոյն
արդարութեամբն յամենայն մարդիկ
19 արդարութիւն կենաց։ Զի որպէս անհնազանդութեամբ միոյն մարդոյ մեղաւորք բազումք եղեն, նոյնպէս եւ
հնազանդութեամբ միոյն արդարք բա-
20 զումք եղիցին։ Բայց օրէնք ի ներքս
անկան, զի յանցանքն բազմասցին.
զի ուր առաւել եղեն մեղքն, առաւել
21 եւս յաւելան չնորհքն։ Զի որպէս թագաւորեցին մեղքն ի մահու անդ, նոյնպէս եւ չնորհքն թագաւորեսցեն արդարութեամբ ի կեանսն յաւիտենից ի
ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։ ՎՋ

ԳԼ. Զ

1 Իսկ արդ զի՞նչ ասիցեմք. յաճախեսցո՞ւք ի մեղսն զի չնորհքն բազմաս-
2 ցին։ Հաւ լիցի. որք մեռաք մեղացն՝
զիա՞րդ տակաւին ի նմին կեցցեմք։
3 Եթէ ո՞չ գիտէք զի որ միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս՝ ի մահ
4 անդր նորա մկրտեցաք։ Թազեցաք ընդ
նմին մկրտութեամբն ի մահ, զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառօքն Հօր, նոյնպէս եւ մեք ի նորո-
5 գութեան կենաց չրջեսցուք։ Զի եթէ
անկակից եղեմք նմանութեան մահուս
նորա, այլ եւ յարութեան նորա լինիմք։
6 Զայս գիտասջիք զի հին մարդն
մեր խաչակից եղեւ նորա, զի խափանեսցի մարմինն մեղացն, մի՛ եւս ծա-
7 ռայել մեզ մեղացն։ Զի որ մեռանի՝
8 արդարացեալ է ի մեղաց անտի։ Իսկ
եթէ մեռաք ընդ Քրիստոսի, հաւատամք թէ եւ կեցցուք ընդ նմա։

[1] ի բազում պատ.
[2] Յոյն, Բայց յայտնեաց
[3] կամ, զի
[4] ի ցուն պատ.

9 Գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է
ի մեռելոց, այսուհետեւ ոչ մեռանի,
10 եւ մահ նմա ոչ եւս տիրէ։ Զի որ մե-
ռաւն՝ մեղացն մեռաւ մի անգամ, եւ
որ կենդանին է՝ կենդանի է Աստուծոյ։
11 Նոյնպէս եւ դուք համարեսջիք զան-
ձինս մեռեալս մեղացն, եւ կենդանիս
Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր
մեր։
12 Դպ. Մի՛ այսուհետեւ թագաւորես-
ցին մեղք ի մահկանացու մարմինս ձեր՝
13 հնազանդել ցանկութեանց նորա. Եւ
մի՛ պատրաստէք զանդամս ձեր զէն
անիրաւութեան՝ մեղացն, այլ պատ-
րաստեցէք զանձինս ձեր Աստուծոյ,
որպէս ի մեռելոց ի կենդանիս, եւ
զանդամս ձեր՝ զէն արդարութեանն
14 Աստուծոյ։ Զի մեղք ձեզ ոչ տիրես-
ցեն. քանզի ոչ էք ընդ օրինօք, այլ՝
ընդ չնորհօք։
15 Իսկ արդ զի՞րդ. մեղիցո՞ւք զի
չեմք ընդ օրինօք, այլ՝ ընդ չնորհօք.
16 քաւ լիցի։ Ո՞չ գիտէք թէ որում
պատրաստէք զանձինս ձեր ծառայս ի
հնազանդութիւն՝ ծառայ էք որում
հնազանդիքն. եթէ մեղայ՝ մահու, եւ
եթէ ի հնազանդութիւն՝ արդարու-
17 թեան։ Աստ չնո՛րհ Աստուծոյ. զի էիք
ծառայք մեղաց, հնազանդեցարուք ի
սրտէ որում աւանդեցայք յառակ վար-
18 դապետութեան։ Արդ ազատեալք ի
մեղաց՝ ծառայեցէք արդարութեան։
19 Մարդկօրէն ասեմ վասն տկարութեան
մարմնոյ ձերոյ. զի որպէս պատրաս-
տեցէք զանդամս ձեր ծառայս պղծու-
թեան եւ անօրէնութեան յանօրէնու-
թիւն, նոյնպէս եւ այժմ պատրաստե-
ցէք զանդամս ձեր ծառայս արդարու-
20 թեան ի սրբութիւն։ Զի մինչ ծա-
ռայքն էիք մեղաց, ազատացեալք էիք
21 յարդարութենէն։ Իսկ արդ զի՞նչ
պտուղ ունէիք յայնժամ, որով այժմ
դամբի հարեալ էք. զի վախճան նո-
22 ցա մահ է։ Բայց արդ ազատացեալք
ի մեղացն եւ ծառայեալք Աստուծոյ,
ունիք զպտուղ ձեր ի սրբութիւն, եւ
23 վախճան նորա կեանք յաւիտենից։ Զի
թոշակն մեղաց մահ է, այլ չնորհքն
Աստուծոյ կեանք յաւիտենից ի Քրիս-
տոս Յիսուս ի Տէր մեր։

Գլ. է

1 Դպ. Եթէ ո՞չ գիտէք, եղբարք, (զի
ընդ գիտուսն օրինացն խօսիմ,) զի օ-
րէնք տիրեն մարդոյ որչափ ժամանակս
2 կենդանի իցէ։ Քանզի կին առնակին
ի կենդանի այր իւր կապեալ կայ օրի-
նօք. իսկ եթէ մեռանիցի այրն, ար-
3 ձակեալ է յօրինացն առնն։ Ապա ու-
րեմն մինչ կենդանի է այրն, չուն կո-
չի, եթէ լինիցի առն այլում. եւ եթէ
մեռանիցի այրն, աղատ է յօրինացն,
չհամարեալ չուն՝ եթէ լինիցի առն այ-
4 լում։ Այսուհետեւ եւ դուք, եղբարք,
մեռարուք օրինացն մարմնովն Քրիս-
տոսի, լինել այլում որ ի մեռելոցն յա-
րուցեալ է, զի պտղաբերք լիցուք Աս-
5 տուծոյ. Քանզի մինչ էաքն մարմնով,
կարիք մեղաց որ օրինօքն էին՝ զօրա-
նային յանդամս մեր, առ ի պտղաբերս
6 առնելոյ զմեզ մահու։ Բայց այժմ դա-
տարկացաք յօրինաց անտի. քանզի
մեռաք այնմիկ որով ըմբռնեալն էաք՝
առ ի ծառայել մեզ նորոգութեամբ
Հոգւոյն եւ ոչ հնութեամբ գրոյն։
7 Իսկ արդ զի՞նչ ասեմք. օրէնքն
մե՞ղք իցեն. քաւ լիցի. այլ զմեզս ոչ
գիտէի, եթէ ոչ օրինօքն. եւ զցան-
կութիւն ոչ ճանաչէի, եթէ ոչ օրի-
նացն էր ասացեալ, Մի՛ ցանկանայ-
8 ցես։ Պատճառս առեալ մեղքն պատ-
ուիրանաւն, եւ գործեցին յիս զամե-
նայն ցանկութիւն. զի առանց օրի-
9 նաց մեղքն մեռեալ էին։ Եւ ես առանց
օրինացն երբեմն էի կենդանի, այլ
իբրեւ եհաս յիս պատուիրանն, մեղքն
10 կենդանացան, Եւ ես մեռայ. եւ գտաւ
ինձ պատուիրանն որ ի կեանսն էր,
11 նոյն ի մահ։ Զի մեղքն պատճառս առ-
եալ պատուիրանաւն՝ խարեցին զիս,
եւ նովին սպանին։
12 Դջ. Այսուհետեւ օրէնքն սուրբ են,
եւ պատուիրանն սուրբ եւ արդար
եւ բարերար։
13 Իսկ արդ ինձ բարւոյն մահ եղեւ.
քաւ լիցի. այլ մեղքն, զի երեւեսցին
մեղքն բարեաւն գործել ինձ զմահ, զի
եղիցին ըստ առաւելութեան մեղքն
14 մեղաւոր ի ձեռն պատուիրանին։ Գի-
տեմք զի օրէնքն հոգեւոր են, այլ ես
մարմնաւոր եմ՝ ընդ մեղօք վաճառեալ։

15 Զի զոր գործեմն ոչ գիտեմ, ոչ եթէ
զոր կամիմն զայն առնեմ, այլ զոր
16 առեմն՝ զայն գործեմ։ Ապա թէ զոր
ոչն կամիմ՝ զայն առնեմ, վկայեմ օ-
17 րինացն եթէ բարւոք են։ Այլ արդ՝
ոչ եթէ ես գործեմ զայն, այլ բնակեալ
18 յիս մեղքն։ Գիտեմ զի ոչ բնակեալ է
յիս, այսինքն է ի մարմնի իմում, բարի
ինչ. զի կամքն առաջի կան ինձ, եւ
19 առնել զբարին՝ ոչ։ Զի ոչ եթէ զոր
կամիմ զբարին առնեմ, այլ զոր ոչն
20 կամիմ զչարն՝ զայն գործեմ։ Ապա եթէ
զոր ոչն կամիմ՝ զայն առնեմ, ոչ եւս ես
առնեմ զայն՝ այլ բնակեալ յիս մեղքն։
21 [1]Եւ արդ՝ գտանեմ զօրէնս այնորիկ՝
որ կամիցին առնել յիս զբարին. եւ
22 ինձ՝ չարն առաջի կայ։ Հաճեալ եմ
ընդ օրէնսն Աստուծոյ ըստ ներքինն
23 մարդոյն. Բայց տեսանեմ այլ օրէնս
յանդամս իմ, զինեալ հակառակ օրի-
նաց մտաց իմոց, եւ գերեալ զիս օրի-
24 նօքն մեղաց՝ որ են յանդամս իմ։ Այր
մի տառապեալ եմ ես. ո՞վ ապրեցուս-
25 ցէ զիս ի մարմնոյ մահու։ Այլ
չնո՛րհք Աստուծոյ ի ձեռն Յիսուսի
Քրիստոսի Տեառն մերոյ։

ԵԿ. Ապա ուրեմն ես ինքնին մտօք
իմովք ծառայեմ օրինացն Աստուծոյ,
եւ մարմնով օրինացն մեղաց։

ԳԼ. Ը

1 Թէ այդպէս իցէ, ոչինչ դատապար-
տութիւն է այնոցիկ որ ի Քրիստոս
2 [2]Յիսուս։ Զի օրէնք հոգւոյն կենաց
ի Քրիստոս Յիսուս ազատեցին զիս
3 յօրինաց մեղացն եւ մահու։ Զի որ
անհնարինն էր օրինացն [3]որով տկա-
րանային՝ մարմնով, Աստուած զՈրդին
իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ
մեղաց, եւ վասն մեղաց, եւ դատա-
4 պարտեաց զմեղս ի մարմնի անդ. Զի
արդարութիւն օրինացն կատարեսցի
ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ դնայցեմք,
5 այլ՝ ըստ հոգւոյն։ Զի որք ըստ մարմ-
նոյն են՝ զմարմնոյն խորհին, եւ որք
6 ըստ հոգւոյն՝ զհոգւոյն։ Զի խորհուրդ
մարմնոյ մահ է, եւ խորհուրդ հոգւոյն՝
7 կեանք եւ խաղաղութիւն։ Քանզի
խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է
յԱստուած, զի օրինացն Աստուծոյ ոչ
8 հնազանդի. նա եւ կարէ իսկ ոչ։ Զի
որ մարմնովն են՝ Աստուծոյ հաճոյ լինել
9 ոչ կարեն։ Բայց դուք ոչ էք մարմնով,
այլ՝ հոգւով, եթէ իցէ Հոգին Աստու-
ծոյ ի ձեզ բնակեալ. ապա եթէ ոք
զՀոգին Քրիստոսի ոչ ունի, սա չէ
10 նորա։ Իսկ եթէ Քրիստոս ի ձեզ է,
ապա մարմին մեռեալ է վասն մեղաց,
եւ հոգին կենդանի է վասն արդարու-
11 թեան։ Եթէ Հոգի այնորիկ որ յարոյց
զՅիսուս ի մեռելոց՝ բնակեալ է ի ձեզ,
ապա եւ որ յարոյցն զՔրիստոս ի մե-
ռելոց՝ կենդանացուսցէ զմահկանացու
մարմինս ձեր բնակեալ Հոգւովն ի-
րով ի ձեզ։ Վ.Ջ

12 Այսուհետեւ, եղբարք, պարտապան
եմք ոչ մարմնոյ ըստ մարմնոյ կեալ։
13 Զի եթէ ըստ մարմնոյ [4]կեցէք, մեռա-
նիցիք էք. իսկ եթէ Հոգւով զգործս
14 մարմնոյ սպանանիցէք, կեցջիք։ Զի
որ Հոգւովն Աստուծոյ վարին, նոքա
15 են որդիք Աստուծոյ։ Զի ոչ առէք
զհոգին ծառայութեան միւսանգամ
յերկիւղ, այլ առէք զհոգին որդեգրու-
թեան, որով ազաղակեմք՝ Աբբա Հայր։
16 Նոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մե-
17 րում, եթէ եմք որդիք Աստուծոյ։ Եւ
եթէ որդիք, ապա եւ ժառանգք. ժա-
ռանգք Աստուծոյ, եւ ժառանգակիցք
Քրիստոսի. եթէ չարչարանացն կցորդ
լինիմք, եւ փառացն հաղորդ լինիցիմք։

18 Ինձ այսպէս թուի եթէ ոչ են ար-
ժանի չարչարանք ժամանակիս հան-
դերձելոց փառացն որ յայտնելոց են
19 ի մեզ։ Զի ակնկալութիւն արարած
յայտնութեան որդւոցն Աստուծոյ
20 սպասէ։ Զի ընդունայնութեան արա-
րածքն հնազանդեցան, ոչ իւրեանց
կամաւ, այլ վասն այնորիկ որ հնա-
21 զանդեցոյցն յոյսով, Զի եւ ինքեանք
իսկ արարածքն ազատեսցին ի ծառա-
յութենէ ապականութեան յազատու-
թիւն փառաց որդւոցն Աստուծոյ։
22 Քանզի գիտեմք եթէ ամենայն արա-
րածք հեծեծն եւ երկնեն մինչեւ ցայժմ։

---

[1]Ցոյն, Եւ արդ գտանեմ զօրէնս, զի յորժամ կամիմ առնել զբարին, ինձ
[2]Ոմանք, Յիսուս, որ ոչ գնան ըստ մարմնոյ, այլ ըստ հոգւոյ
[3]Կամ, զի տկարանային
[4]Ցոյն, կեայք

23 Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ մեք իսկ որ զպտուղ Հոգւոյն ունիմք՝ անձամբ
յանձինս մեր հնծեմք, որդեգրութեանն
ակն կալեալ՝ փրկութեան մարմնոյ մե-
24 րոյ։ Զի յուսով ապրեցաք. այլ յոյս
տեսանելի չէ յոյս. զի զոր տեսանէ
25 ոք՝ զի՞ եւս յուսայ։ Ապա եթէ զոր
ոչն տեսանեմք՝ յուսամք, համբերու-
26 թեամբ ակն ունիմք։ Նոյնպէս եւ
Հոգին ի թիկունս հասանէ տկարու-
թեանս մերում. զի զոր կամքն յա-
ղօթս՝ որպէս արժան իցէ ոչ գիտեմք.
այլ ինքնին Հոգին բարեխօս լինի ի
27 հեծութիւնս անմռունչս։ Բայց որ
քննէն զսիրտս՝ գիտէ զինչ խորհուրդ
է Հոգւոյն, զի ըստ Աստուծոյ բարե-
խօսէ վասն սրբոց։
28 Բայց գիտեմք եթէ որոց սիրենն զԱս-
տուած՝ [1]յամենայնի գործակից լինի
ի բարիս՝ որք հրաւիրանաւն կոչեցան։
29 Զի զորս յառաջն ճանաչէր՝ յառաջա-
գոյն եւ հրաւիրեաց կերպարանակից
լինել պատկերի Որդւոյն իւրոյ. զի
եղիցի նա անդրանիկ ի մէջ եղբարց
30 բազմաց։ Եւ զորս յառաջագոյնն հրա-
ւիրեաց՝ զնոսին եւ կոչեաց. եւ զորս
կոչեացն՝ զնոսին եւ արդարացոյց. եւ
զորս արդարացոյցն՝ զնոսին եւ փա-
31 ռաւորս արար։ Իսկ արդ զի՞նչ ասեմք
առ այս. եթէ Աստուած ի մեր կոյս
32 է, ո՞վ իցէ մեր հակառակ։ Որ չիւր
Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ա-
մենեցուն մատնեաց զնա, զիա՞րդ ոչ
նովաւ հանդերձ զամենայն չնորհիցէ
33 մեզ։ Ո՞վ իցէ որ մեղադիր լինիցի ընտ-
րելոց Աստուծոյ. Աստուած է որ ար-
34 դարացուցանէ։ Իսկ արդ ո՞վ է որ
դատապարտ առնիցէ. Քրիստոս Յի-
սուս՝ որ մեռաւն, մանաւանդ թէ յա-
րուցեալ իսկ է, եւ է ընդ աջմէ Աս-
տուծոյ, որ եւ բարեխօս իսկ է վասն
35 մեր։ Արդ ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սի-
րոյն Քրիստոսի. նեղութի՞ւն, թէ
անձկութի՞ւն, թէ հալածա՞նք, թէ սո՞վ,
թէ մերկութի՞ւն, թէ վի՞շտք, թէ
36 սո՞ւր. Որպէս եւ գրեալ է, Վասն քո
մեռանիմք զօրհնապազ, համարեցաք
37 իբրեւ զոչխար ի սպանդ։ Այլ յայսմ
ամենայնի առաւել յաղթեմք նովաւ
38 որ սիրեացն զմեզ։ Քանզի հաստատեալ
եմ եթէ ոչ մահ եւ ոչ կեանք եւ ոչ
հրեշտակք եւ ոչ իշխանութիւնք, եւ
ոչ որ կանս եւ ոչ հանդերձեալքն, եւ
39 ոչ զօրութիւնք, եւ ոչ բարձրութիւն
եւ ոչ խորութիւն, եւ ոչ այլ ինչ արա-
րած կարէ մեկնել զմեզ ի սիրոյ անտի
Աստուծոյ, որ ի Քրիստոս Յիսուս ի
Տէր մեր։

Գլ. Թ

1 ԵՍ. Ստուգութեամբ ասեմ ի Քրիս-
տոս եւ ոչ ստեմ, վկայեն ինձ միտք
2 իմ ի Հոգի Սուրբ, Զի տրտմութիւն
է ինձ յոյժ եւ անպակաս ցաւք սրտի
3 իմոյ։ Զի ուխտիւք խնդրէի ես իսկ
ինքնին նզով լինել ի Քրիստոսէ վասն
եղբարց իմոց եւ ազգականաց ըստ
4 մարմնոյ, Որ են Իսրայելացիք. որոց
որդեդրութիւնն եւ փառքն եւ կտա-
կարանքն եւ օրէնադրութիւնն եւ պաշ-
5 տօնն եւ աւետիքն. Որոց հարքն, յո-
րոց եւ Քրիստոս ըստ մարմնոյ, որ է
ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ
6 յաւիտեանս։ Ամէն։ Ոչինչ է մարթ
եթէ անկած լինիցի բանն Աստուծոյ.
զի ոչ ամենեքեան որ յԻսրայելէն են,
7 նոքա Իսրայելեանք իցեն. Եւ ոչ որ
զաւակն Աբրահամու են՝ ամենեքեան
որդիք իցեն. այլ Իսահակաւ կոչեսցի
8 քեզ զաւակ։ Այսինքն թէ ոչ որ որդիք
մարմնոյն են՝ են որդիք Աստուծոյ, այլ
որդիք աւետեացն համարին ի զաւակ։
9 Քանզի աւետեաց իսկ է բանս այս, Թէ
ի ժամանակի յայսմիկ եկից, եւ եղիցի
10 որդի Սառայի։ Եւ ոչ այնչափ միայն՝
այլ ի Հռեբեկայ, ի միոջէ անկողնոյ Ի-
11 սահակայ հօր մերոյ։ Զի մինչչեւ ծնեալ
էին, եւ մինչչեւ բարի ինչ կամ չար
գործեալ էր, (զի ըստ ընտրութեանն
յառաջադրութիւնն Աստուծոյ հաստա-
12 տեսցի, Ոչ ի գործոց, այլ յայնմանէ որ
13 կոչեացն,) ասացաւ նմա Թէ, Երէցն
կրտսերոյն ծառայեսցէ. որպէս եւ
գրեալ է Թէ, ԶՅակովբ սիրեցի, եւ
զԵսաւ ատեցի։
14 Իսկ արդ զի՞նչ ասեմք. միթէ անի-
րաւութի՞ւն իցէ յԱստուծոյ. քաւ լիցի։
15 Զի Մովսիսի ասէ, Ողորմեցայց որում
ողորմեցայցն, եւ գթացայց յոր գթա-
16 ցայցն։ Ապա ոչ ըստ այնմ՝ ինչ է որ
կամիցին, եւ ոչ ըստ այնմ՝ որ քնթա-

[1] Յոյն, ամենայն ինչ

նայէք, այլ՝ ըստ Աստուծոյ որ ողորմի։
17 ԵԶ. Քանզի ասէ գիր ցՓարաւոն թէ, Վասն այնորիկ դրդռեցի զքեզ, զի ի քեզ ցուցից զզօրութիւն իմ, եւ պատմեսցի անուն իմ ընդ ամենայն երկիր։
18 Ապա ուրեմն ումն կամի ողորմի, եւ
19 [1]ումն կամի խստանայ՝։ Իսկ արդ ասիցես թէ, Մեզ եւս դի դնէ, զի կա-
20 մաց նորա [2]ոչ ոք կայ՝հակառակ։ Իսկ արդ դու ո՞վ ես, մարդ, որ [3]պատասխանի տաս Աստուծոյ. միթէ ասիցէ ստեղծուածն ցստեղծիչն թէ Ընդէր
21 այդպէս արարեր զիս։ Եթէ ո՞չ ունի ոք իշխանութիւն բրուտն կաւոյն, ի նմին զանգուածոյ առնել անօթ՝ զոմն
22 ի պատիւ եւ զոմն յանարգանս։ Ապա եթէ կամէր Աստուած ցուցանել զբարկութիւն, եւ յայտնի առնել զզօրութիւն իւր, [4]զոր համբերն՝ բազում երկայնմտութեամբ անօթոցն բարկու-
23 թեան՝ պատրաստելոցն ի կորուստ. Զի յայնմ արասցէ զինծութիւն փառաց իւրոց ի վերայ անօթոցն ողորմութեան, զոր [5]պատրաստեաց ի փառս։
24 Զորս եւ կոչեաց զմեզ, ոչ միայն ի
25 Հրէից, այլ եւ ի հեթանոսաց։ Որպէս եւ յՈվսէէ ասէ, Կոչեցից զոր ոչ ժողովուրդն իմ՝ ժողովուրդ ինձ, եւ
26 զչսիրեցեալն՝ սիրեցեալ։ Եւ եղիցի ի տեղւոջ յորում ասացաւ նոցա թէ, Ոչ ժողովուրդ իմ դուք, անդ կոչեսցին նոքա որդիք Աստուծոյ կենդանւոյ։
27 Եսայի ազաղակէ վասն Իսրայելի, Եթէ իցէ թիւ որդւոցն Իսրայելի իբրեւ զաւազ ծովու՝ [6]սակաւ ինչ մնացորդք
28 մնասցեն։ Զի բան մի հակիրճ եւ հատուցօտ արդարութեամբ, զբանն հակիրճ արասցէ Տէր ի վերայ երկրի։
29 Եւ որպէս ասէ Եսայի, Եթէ ոչ Տեառն զօրութիւնս թողեալ էր մեզ զաւակ, իբրեւ զՍոդոմ լինէաք եւ Գոմորոյ նմանէաք։
30 ԶԱ. Իսկ արդ զի՞նչ ասիցեմք. զի հեթանոսք որ ոչ երթային զհետ արդարութեան՝ հասին արդարութեան, այնմ արդարութեան՝ որ ի հաւատոյ անտի.
31 Իսրայէլ երթայր զհետ օրինացն արդարութեան, եւ յօրէնս արդարու-
32 թեանն ոչ ժամանեաց։ Ընդէր. զի ոչ ի հաւատոց այլ իբրեւ ի գործոց օրինաց. քանզի զմեցին նոքա առ վիմին
33 գայթակղութեան. Որպէս եւ գրեալ է, Ահաւասիկ դնեմ ի Սիովն քար գայթակղութեան եւ վէմ գլորման, եւ ամենայն որ հաւատասցէ ի նա մի՛ ամաչեսցէ։

ԳԼ. Ժ

1 Եղբարք, իմ կամք սրտի եւ աղօթք առ Աստուած վասն [7]նոցա են ի փրկու-
2 թիւն։ Քանզի վկայեմ նոցա՝ թէ զնախանձ Աստուծոյ ունին, այլ՝ ոչ գի-
3 տութեամբ։ Զի տգէտ են Աստուծոյ արդարութեանն, եւ զիւրեանցն խնդրեն կացուցանել, զի արդարութեանն Աստուծոյ ոչ հնազանդեցան։ Քանզի կատարած օրինացն Քրիստոս է յարդարութիւն ամենայն հաւատացելոց։
5 ԶԴ. Մովսէս զրէ զարդարութիւնն որ յօրինաց անտի է, Եթէ արասցէ
6 զայն մարդ, կեցցէ նովին։ Իսկ զնահատնէն արդարութենէ այսպէս ասէ, Մի՛ ասիցես ի սրտի քում, Ո՞վ ելանիցէ յերկինս, այսինքն է զԲրիստոս
7 իջուցանել. կամ, Ո՞վ իջանիցէ յանդունդս, այսինքն է զԲրիստոս հանել
8 ի մեռելոց։ Այլ զի՞նչ ասէ [8]դիր. Մերձ է [9]բանն, ի բերան քո եւ ի սրտի քում է, այսինքն է բանն հաւատոց զոր քա-
9 րոզեմք։ Զի եթէ խոստովանեսցես բերանով քով Տէր զՅիսուս, եւ հաւատասցես ի սրտի քում թէ Աստուած
10 յարոյց զնա ի մեռելոց, կեցցես։ Զի սրտիւ հաւատայք յարդարութիւն, եւ բերանով խոստովանիք ի փրկութիւն
11 Քանզի ասէ գիր, Ամենայն որ հաւա-
12 տասցէ ի նա՝ մի՛ ամաչեսցէ։ Զի ոչ գոյ խարիր Հրէի եւ հեթանոսի. քանզի նոյն Տէր է ամենեցուն, բաւական յա-
13 մենեսին ոչք կարդան առ նա. Զի ա-մենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ։
14 Իսկ զիա՞րդ կարդասցեն յոր ոչն հաւատացին. կամ զիա՞րդ հաւատասցեն

---

[1] Ց՝ՆՆ, զոր կամի խոտացուցանէ
[2] Ց՝ՆՆ, ո՞ եկաց
[3] Ց՝ՆՆ, հակառակ պատասխանի
[4] Ց՝ՆՆ, Համբեր
[5] Ց՝ՆՆ, յառաջագոյն պատրաստեաց
[6] Ց՝ՆՆ, մնացորդն ապրեսցի
[7] Ո՛ՍՆ՝, Իսրայելի
[8] Ց՝ՍՆ՝ պ՝ՈՒ՝Ե՛Ք
[9] Ո՛ՍՆ՝, բանն առ քեզ

որում ոչն լուան. կամ զի՞նչ լուի-
15 ցեն առանց ուրուք քարոզելոյ. կամ
զի՞նչ քարոզեսցեն, եթէ ոչ առաքեա-
ցին. որպէս եւ գրեալ է, Իբրեւ զի՛
գեղեցիկ են ոտք աւետարանչացն խա-
ղաղութեան եւ աւետարանչացն բա-
16 րութեան: Այլ ոչ ամենեքեան հնա-
զանդ եղեն աւետարանին. Եսայի ա-
ղաղակէ, Տէր, ո՞ հաւատաց լրոյ մե-
17 րում: Ապա ուրեմն հաւատք ի լսելոյ
են, եւ լուր ի բանէն ¹Քրիստոսի: Վ.Ջ
18 Այլ ասեմ, Միթէ ո՞չ լուան. մա-
նաւանդ զի Ընդ ամենայն երկիր ել
բարբառ նոցա, եւ ընդ ծագս տիեզե-
19 րաց՝ խօսք նոցա: Այլ ասեմ, Միթէ
Իսրայէլ ո՞չ դիտաց. նախ Մովսէս ասէ,
Ես նախանձեցուցից զձեզ ոչինչ ժո-
ղովրդեամբ, եւ ազգաւ անմտաւ զկծե-
20 ցուցից զձեզ: Բայց Եսայի համարձակի
իսկ եւ ասէ, Գտայ այնոցիկ որ զիս
ոչ խնդրէին, յայտնի եղէ այնոցիկ որ
21 զինէն ոչ հարցանէին: Այլ առ Իսրա-
յէլ ասէ, Զօր առինայն ձգեցի զձեռս
իմ առ ժողովուրդ անհաւան եւ հա-
կառակող:

ԳԼ. ԺԱ

1 ԶԶ. Իսկ արդ ասեմ, Միթէ մերժեաց
Աստուած զժողովուրդ իւր. քաւ լիցի.
քանզի եւ ես Իսրայելացի եմ, ի զա-
ւակէ Աբրահամու, յազգէ Բենիամինի:
2 Ոչ մերժեաց Աստուած զժողովուրդ
իւր զոր յառաջն ծանեաւ. Թէ ո՞չ դի-
տէք յԵղիա զի՛նչ ասէ գիր, ո՛րպէս
ամբաստան լինի Աստուծոյ զԻսրայէլէ,
3 Տէր, զմարգարէս քո կոտորեցին եւ
զսեղանս քո կործանեցին. ես մնացի
4 միայն, եւ խնդրեն զանձն իմ: Այլ
զի՞նչ ասէ նմա պատասխանին. Թողի
լինէ, ասէ, եւթն հազար այր, որ ոչ
5 կրկնեցին ծունր բահաղու: Նոյնպէս
եւ յայսմ ժամանակի մնացորդք ըստ
6 ընտրութեան շնորհացն եղեն: Իսկ
եթէ շնորհօք, ոչ եւս ի գործոց. ապա
թէ ոչ՝ շնորհքն ոչ եւս շնորհք լինին:²
7 Իսկ արդ զոր խնդրէրն Իսրայէլ, այնմ
ոչ եհաս. բայց ընտրութիւնն եհաս,
8 եւ այլքն կուրացան, (Որպէս գրեալ է,
Ետ նոցա Աստուած հոգի յիմարու-
թեան, աչս՝ որովք ոչ տեսանիցեն, եւ
ականջս՝ որովք ոչ լսիցեն,) մինչեւ
9 ցայսօր ժամանակի: Եւ Դաւիթ ասէ,
Եղիցին սեղանք նոցա յորոգայթ եւ
յորս եւ ի գայթակղութիւն եւ ի հա-
10 տուցումն նոցին: Խաւարեսցին աչք
նոցա զի մի՛ տեսցեն, եւ զթիկունս
11 նոցա հանապազ կորացո: Իսկ արդ
ասեմ, Միթէ վասն այնորի՞կ յանցեան
զի կործանեսցին. քաւ լիցի. այլ նոցա
յանցանօքն փրկութիւն հեթանոսաց,
12 զի նախանձ արկցէ նոցա: Իսկ եթէ
յանցանքն նոցա մեծութիւն աշխարհի,
եւ պարտութիւն նոցա մեծութիւն հե-
թանոսաց, ո՛րչափ եւս առաւել լրու-
թիւն նոցա:

13 Ե՛կ. Այլ ձեզ ասեմ հեթանոսաց, ցոր-
քան ժամանակս իցեմ հեթանոսաց ա-
ռաքեալ, զպաշտօնն իմ փառաւոր առ-
14 նեմ, Զի թերեւս ³նախանձ արկից
նոցա մարմնով իմով՝ եւ ապրեցուցից
15 զոմանս ի նոցանէ: Զի եթէ մերժումն
նոցա հաշտութիւն աշխարհի է, իսկ
ընդունելութիւնն զի՞նչ իցէ, եթէ ոչ՝
16 կենդանութիւն ի մեռելոց: Իսկ եթէ
սկիզբն սուրբ է, եւ զանգուածն. եւ
17 եթէ արմատն՝ ապա եւ ոստքն: Եթէ
յոստոց անտի ոմանք փչրեցան, եւ դու
որ ձիթենիդ վայրենի էիր՝ պատուաս-
տեցար ի նոսա, եւ բաժանորդ եղեր
արմատոյն եւ պարարտութեան ձի-
18 թենւոյն, Մի՛ պարծիր առ ոստովքն.
ապա եթէ պարծիցիս, ոչ եթէ դու
զարմատն ի վեր ունիս, այլ՝ արմատն
19 զքեզ: Իսկ արդ ասիցես, Ոստքն փչր-
20 րեցան, զի ես պատուաստեցայց: Բար-
ւոք է, անհաւատութեամբն փչրեցան,
եւ դու հաւատովք հաստատեցար. մի՛
21 հպարտանար, այլ երկիր: Զի եթէ Աս-
տուած ի բուն ոստսն ոչ խնայեաց,
դուցէ երբեք եւ ի քեզ ոչ խնայեսցէ:
22 Արդ տես զքաղցրութիւն եւ զսաստա-
կութիւնն Աստուծոյ. ի վերայ կործա-
նելոցն՝ սաստկութիւն, եւ ի վերայ քո՝
քաղցրութիւն ⁴Աստուծոյ, եթէ կայ-
ցես ի նմին քաղցրութեան. ապա թէ
23 ոչ՝ եւ դու կոճոպեսցիս: Եւ նոքա

¹Որում, Աստուծոյ
²Որում յաւելուն, իսկ եթէ ի գործոց, ոչ եւս
են շնորհք. ապա թէ ոչ՝ գործն ոչ եւս գործ
լինի:

³Գայն, նախանձեցուցից զնմարմին իմ
⁴Որում պակաս

եթէ ոչ ի նմին անհաւատութեանն կայցեն, պատուաստեսցին. զի կարող է Աստուած միւսանգամ պատուաստել
24 զնոսա։ Զի եթէ դու ի բնէն ի վայրենի ձիթենւոյ անաւ հատար, եւ յանբուն քս ի բարի ձիթենւոյն պատուաստեցար, ո՛րչափ եւս առաւել նոքա որ բունքն իսկ են՝ պատուաստեսցին յիւրեանց ձիթենւոջն։
25 Եբ. Ոչ կամիմ, եղբարք, եթէ տղէտք իցէք խորհրդոյս այսմիկ, զի մի՛ յանձինս ձեր իցէք իմաստունք. զի կուրութիւն փոքր ի չատէ եղեւ Իսրայէլի, մինչեւ լրումն հեթանոսաց մտցէ,
26 Եւ ապա ամենայն Իսրայէլ կեցցէ. որպէս եւ գրեալ է, Եկեսցէ ի Սիովնէ Փրկիչ, եւ դարձուսցէ դամպարչտութիւնս ի Յակովբայ։ Եւ այս նոցա
27 որ յինէն ուխտ, յորժամ բարձից զմեղս
28 նոցա։ Ըստ աւետարանին թշնամիք են վասն ձեր, բայց ընտրութեանն սի-
29 րելիք վասն հարցն։ Քանզի անդրդձ են շնորհքն եւ կոչումն Աստուծոյ։
30 Զի որպէս եւ դուք երբեմն ապստամբք էիք յԱստուծոյ, եւ արդ ողորմութիւն գտէք առ նոցա ապստամբութեամբն,
31 Նոյնպէս եւ նոքա այժմ ապստամբք [1]եղեն առ ձերով ողորմութեամբդ, զի
32 եւ՚ նոքա ողորմութիւն գտցեն։ Քանզի արգել Աստուած զամենեսին յանհաւանութիւն, զի ամենեցուն ողորմեսցի։
33 Ո՛վ խորք մեծութեան եւ իմաստութեան եւ գիտութեանն Աստուծոյ, ո՛րպէս առանց քննելոյ են դատաստանք նորա, եւ առանց գննելոյ են
34 ճանապարհք նորա։ Զի ո՞վ գիտաց զմիտս Տեառն, կամ ո՞վ խորհրդակից
35 եղեւ նմա. Կամ ո՞վ եւ նմա փոխ,
36 եւ առնուցուս փոխարէն ի նմանէ։ Զի ի նմանէ եւ նովաւ եւ ի նոյն ամենայն. Նմա փառք յաւիտեանս։ Ամէն։

Գլ. ԺԲ

1 Ա՛ղաչեմ զձեզ, եղբարք, զթութեամբն Աստուծոյ՝ պատարաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զիսօսումն
2 պաշտօնդ ձեր. Եւ մի՛ կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ, այլ նորոգեցարուք ի նորոգութիւն մտաց ձերոց, առ ի քննել ձեզ [2]զկամն, եւ՚ եթէ զինչ են կամքն Աստուծոյ՝ բարին եւ հաճոյն եւ կատարեալն։
3 Զայս ասեմ չնորհօքն Աստուծոյ որ տուեալ են ինձ, ամենայնի որ է ի ձեզ, մի՛ առաւել ինչ խորհիլ քան զարժանն խորհելոյ, այլ խորհիլ ի զգաստանալ իւրաքանչիւր՝ որպէս եւ բաժանեաց
4 Աստուած չափ հաւատոց։ Որպէս ի միում մարմնի անդամս բազումս ունիմք, եւ անդամքն ամենայն ոչ զնոյն
5 գործ ունին. Նոյնպէս եւ բազումքս մի մարմին եմք ի Քրիստոս, այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք։
6 Բայց ունիմք մեք չնորհս ըստ չնորհացն, որ տուեալ են մեզ տգղս տգղս. եթէ մարգարէութիւն՝ ըստ չափոյն
7 հաւատոց, եթէ պաշտօն՝ ըստ պաշտաման, եթէ որ ուսուցանէն՝ ըստ
8 վարդապետութեանն, եթէ որ մխիթարէն՝ ըստ մխիթարութեանն. որ առատ է՝ ղուարթութեամբ, որ վերակացուն է՝ փութով, որ ողորմին՝
9 յրջմտութեամբ։ Սէր առանց կեղծաւորութեան, ատեալ զչար, զհետ ելր-
10 թալ բարեաց. Ցեղբայրսիրութեան առ միմեանս գթածք. ի պատիւ զմի-
11 մեանց ելանել. Ի փոյթ՝ մի՛ վհատրատք. հոգւով եռացեք. Տեառն ծա-
12 ռայեցէք. Ցուսով խնդացէք. նեղութեան համբերեցէք. աղօթից առէպ
13 կացէք. Ի պէտս սրբոց հաղորդեցարուք. զհիւրասիրութեան զհետ ելր-
14 թայք. Օրհնեցէք զհալածիչս ձեր, օրհ-
15 նեցէք եւ մի՛ անիծանէք. Ինդալ ընդ
16 խնդացողս, լալ ընդ լացողս. Զնոյն միմեանց խորհիլք. մի՛ ամբարտաւանէք, այլ ընդ խոնարհս զիջանիլք. մի՛ լինիք իմաստունք յանձինս ձեր.
17 Մի՛ ումեք չարի չար հատուցանէք. խորհեցարուք զբարիս առաջի ամե-
18 նայն մարդկան։ Եթէ հնար ինչ իցէ ձեզ, ընդ ամենայն մարդկան զխաղա-
19 ղութիւն կալջիք։ Մի՛ դանձանց վրէժ խնդրէք, սիրելիք, այլ տուր տեղի բարկութեան. քանզի գրեալ է, Իմ է վրէժխնդրութիւն, եւ ես հատուցից,
20 ասէ Տէր։ Այլ եթէ քաղցեալ իցէ

[1] Ցոյն, եղեն, զի առ ձերով ողորմութեամդ և

[2] Ի բազում պատ.

թչնամին քո, հաց տուր նմա, եւ եթէ ծարաւի՝ ջուր տուր նմա. զայս ա-
21 րարեալ՝ կայծակունս հրոյ կուտեսցես ի գլուխ նորա: Մի՛ յաղթիր ի չարէ,
այլ յաղթեա բարեաւն չարին:

ԳԼ. ԺԲ

1 Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ լիցէ՝ ի հնազանդութեան կացցէ. քանզի ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. եւ որ ինն՝
2 յԱստուծոյ կարգեալ են: Այսուհետեւ որ հակառակ կայ իշխանութեանն Աստուծոյ հրամանին հակառակ կայ, եւ որք հակառակին կան՝ անձանց դատաս-
3 տանս ընդունին: Զի իշխանքն ոչ են յերկիւղ բարեաց գործոց, այլ՝ չարաց. կամի՞ս չերկնչել յիշխանութենէ անտի. զբարիս գործեա, եւ ընկալցիս գովու-
4 թիւն ի նմանէ. Զի Աստուծոյ պաշտօնեայ է քեզ ի բարիս. ապա եթէ չար գործիցես, երկիր. զի ոչ եթէ վայրապար ածեալ է սուսեր ընդ մէջ. Աստուծոյ սպասաւոր է վրէժխնդիր ի բարկութիւն այնմ՝ որ զչարն գործի-
5 ցէ: Վասն որոյ հարկ է հնազանդ լինել՝ ոչ միայն վասն բարկութեանն,
6 այլ եւ վասն խղճի մտացն: Վասն այնորիկ եւ հարկս հարկանէք, զի Աստուծոյ սպասաւորք են՝ ի նոյն կան-
7 խեալք: Արդ հատուցէք ըստ բաւականի. որում զհարկ՝ զհարկն, որում մաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝ զերկիւղն, որում զպատիւ՝ զպատիւն:
8 Եւ մի՛ ումեք պարտական պատանիցիք, բայց զմիմեանս սիրելոյ. զի որ
9 սիրէ զընկերն՝ զօրէնսն կատարէ. Զմի՛ չնայցեան, եւ Մի՛ սպանանիցես, եւ Մի՛ գողանայցես, եւ Մի՛ սուտ վկայիցես, եւ Մի՛ ցանկանայցես, եւ եթէ այլ ինչ պատուիրան է՝ յայն բան բո-
10 վանդակի, եթէ Սիրեսցես զընկեր քո իրրեւ զանձն քո: Սէր ընկերի ըստ ըստ չար ոչ առնէ. լրումն օրինացն սէր է:
11 Եւ զայս գիտացեալք վասն ժամանակիս, զի արդ ժամ իսկ է մեզ ի քնոյ զարթնուլ. զի այժմ մերձ է մեզ փրկութիւն քան յորժամ հաւատացաքն.
12 Գիշերն մերժեցաւ եւ տիւն մերձեցաւ. ի բաց արասցուք այսուհետեւ զգործսն խաւարի, եւ զգեցցուք զզէնսն լուսոյ:
13 Իբրեւ ի տուընջեան զգաստացեալք չրկեսցուք, մի՛ անառակութեամբք եւ արբեցութեամբք, եւ մի՛ խառն անկողնովք եւ պղծութեամբք, եւ մի՛ նա-
14 խանձու եւ հակառակութեամբ. Այլ զգեցարուք զՏէր Յիսուս Քրիստոս, եւ մարմնոյ խնամ մի՛ տանիք ի ցանկութիւնս:

ԳԼ. ԺԴ

1 Այլ զակարացեալն ի հաւատս ընկալարուք՝ մի՛ խզծիւ երկմտութեանց:
2 Ոմն հաւատայ ուտել զամենայն, եւ
3 որ հիւանդն է՝ բանջար կերիցէ: Որ ուտէն, զայն որ ոչն ուտէ՝ մի՛ անպոտնեսցէ, եւ որ ոչն ուտէ, զայն որ ուտէն՝ մի՛ դատեսցի. քանզի Աստուած
4 գնա ընկալաւ: Դու ո՞վ ես որ դատիս զայլոյ ծառայ. իւրում Տեառն կայ կամ անկանի. բայց կացցէ, զի կարող
5 է [1]Տէրն հաստատել զնա: Ոմն [2]պահէ օր ըստ օրէ եւ ոմն [2]պահէ զօրհնաապազ. իւրաքանչիւր ոք զիւր միտս
6 հաճեսցէ: Որ խորհի զօրն՝ Տեառն խորհի, եւ որ ոչն խորհի զօրն՝ Տեառն չխորհի. եւ որ ուտէ՝ Տեառն ուտէ, եւ գոհանայ զԱստուծոյ. եւ որ ոչն ուտէ՝ Տեառն չուտէ, եւ գոհանայ զԱս-
7 տուծոյ: Զի ոչ ոք ի մէնջ անձամբ
8 կեայ, եւ ոչ անձամբ մեռանի: Եթէ կեամք, Տեառն կեամք, եւ եթէ մեռանիմք, Տեառն մեռանիմք. եւ արդ եթէ՛ կեամք եւ եթէ՛ մեռանիմք,
9 Տեառն եմք: Քանզի ի նոյն իսկ եւ Քրիստոս մեռաւ եւ եկեաց, զի մեռելոց եւ կենդանեաց առ հասարակ տի-
10 րասցէ: Դու զի՞ դատիս զեղբայր քո, կամ ընդէ՞ր անգոմանիս զեղբայր քո, քանզի ամենեքեան կայցուք առաջի
11 աւանդին Քրիստոսի: Զի գրեալ է, կենդանի եմ ես, ասէ Տէր, զի ինձ կրկնասցի ամենայն ծունր, եւ ամենայն
12 լեզու խոստովան լիցի Աստուծոյ: Ապա ուրեմն իւրաքանչիւր ոք ի մէնջ ընդ
13 անձին համարս տացէ Աստուծոյ: Այսուհետեւ մի՛ զմիմեանս դատեսցուք, այլ առաւել զայս դիք ի մտի՝ չդնել
14 [3]գայթակղութիւն եղբօրն: Զայս գի-

[1] Ոմն, Աստուած
[2] Ց-չն, դատի
[3] Բ-ղ-մ, խոչ և գայթակղութիւն

տեմ եւ հաստատեալ եմ ի Քրիստոս Յիսուս, զի ոչինչ է պիղծ նոյաւ, բայց այնմ որ համարիցի ոք ինչ պիղծ՝
15 նմա է պիղծ։ Զի եթէ վասն կերակրոյ եղբայրն քո տրտմի, ոչ եւս սիրով դնացեր. մի՛ կերակրովն քով զնա կորուսաներ, վասն որոյ Քրիստոս մե-
16 ռաւ։ Մի՛ հայհոյեսցի բարին ձեր։
17 Զի ոչ է արքայութիւնն Աստուծոյ կեր-
բակուր եւ ըմպելի, այլ արդարու-
թիւն եւ խաղաղութիւն եւ խնդու-
18 թիւն ի Հոգին Սուրբ։ Զի որ յայսմ ծառայէ Քրիստոսի, հաճոյ է Աստու-
19 ծոյ, եւ ընտիր՝ մարդկան։ Ապա այսուհետեւ զհետ երթիցուք զխաղաղութեան եւ զշինութեան որ առ մի-
20 մեանս։ Մի՛ վասն կերակրոյ քակեր զգործ Աստուծոյ. ամենայն ինչ սուրբ է, այլ չար այնմ մարդոյ է որ [1]լղճիւն
21 ուտիցէ։ Լաւ է ոչ ուտել միս եւ ոչ ըմպել զինի, եւ ոչ որով եղբայրն քո դայթակղի կամ գթէ կամ տկարանայ։
22 Դու ասացէն հաւատս ունիս, կայ առանձինն առաջի Աստուծոյ. երանի որ ոչ դատիցի զանձն որով [2]զընկերն
23 փորձիցէ։ Բայց որ խզճէն, թէպէտ եւ ուտիցէ, դատապարտեալ է, զի ոչ ըստ հաւատոյ է, զի ամենայն ինչ որ
24 ոչ ի հաւատոյ՝ մեզք են։ [3]Այլ այնմ որ կարողն է հաստատել զձեզ ըստ աւետարանիս իմում եւ ըստ քարոզութեան Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն ժամանակաւքն յա-
25 ւիտենից լռեցելոյ, եւ յայտնելոյ այժմիկ ի ձեռն գրոց մարգարէականաց ըստ հրամանի միանձնաւորին Աստուծոյ ի հնազանդութիւն հաւատոյ,
26 յամենայն հեթանոսս ծանուցեալոյ, Միայնոյ իմաստնոյն Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս։ Ամէն։"

ԳԼ. ԺԵ

1 ԷԳ. Պարտ է մեզ որ կարողս եմք՝ զտկարութիւնն տկարացն բառնալ, եւ
2 մի՛ անձանց եւեթ հաճոյ լինել, Այլ

[1]Յունն, ի գայթակղութիւն
[2]Ի Յունէն պակաս
[3]Զայս հոգւոյն սուրբ տայ, բազմիցս է խօսեցեալ ԺԹ գլխոյն ԵՒԲ. եւ սակաւ, իբրեւ պիտի, Ե՛ սուբ Ե՛ անդ։

իւրաքանչիւր ոք ի մեզ ընկերին հաճոյ լիցի ի բարիս վասն չինութեան։
3 Քանզի եւ Քրիստոս ոչ եթէ անձին հաճոյ եղեւ, այլ որպէս եւ գրեալ է, Նախատինքք նախատելոց քոց անկան ի
4 վերայ իմ։ Բայց որ ինչ գրեցաւն՝ ի մեր վարդապետութիւն գրեցաւ, զի համբերութեամբ եւ մխիթարութեամբ
5 գրոց զյոյսն ընկալցուք։ Այլ Աստուած համբերութեան եւ [2]աւետեան մխիթարութեան՝ տացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ Յիսուսի Քրիստո-
6 սի. Զի միաբանութեամբ ի մի բերան փառաւոր առնիցէք զԱստուած եւ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
7 տոսի։ Վասն որոյ ընկալարուք զմիմեանս, որպէս եւ Քրիստոս ընկալաւ [4]զձեզ ի փառս Աստուծոյ։
8 Այլ ասեմ թէ [5]Քրիստոսի սպասաւոր թլփատութեանն լինել վասն ճշմարտութեանն Աստուծոյ էր, առ ի հաստատուն առնելոյ զաւետիս հարցն։
9 Այլ հեթանոսք վասն ողորմութեան փառաւոր առնեն զԱստուած. որպէս եւ գրեալ է, Վասն այսորիկ գոհացայց քեզէն ի հեթանոսս, եւ անուանն քում
10 սաղմոս ասացից։ Եւ գարձեալ ասէ թէ՝ Ուրախ լերուք, հեթանոսք, ընդ ժո-
11 ղովրդեան նորա։ Եւ գարձեալ թէ՝ Օրհնեցէք, ամենայն հեթանոսք, զՏէր, եւ գովեցէք զնա, ամենայն ժողովուրդք։
12 Եւ գարձեալ Եսայի ասէ, Եղիցի արմատն Յեսսեայ, եւ որ կանգնելոցն է իշխան հեթանոսաց, ի նա հեթանոսք
13 յուսասցին։ Այլ Աստուած յուսոյ լիցի զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առատելով ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ։
14 ԷԴ. Հաստատեալ եմ եւ ես ինքնին, եղբարք իմ, վասն ձեր, զի եւ դուք ի էք բարութեամբ, լի էք ամենայն գիտութեամբ, կարող էք եւ զմիմեանս
15 խրատել։ Այլ համարձակագոյնս գրեցի առ ձեզ, [6]եղբարք, փոքր ի շատէ, իբրեւ յիշեցուցանելով ձեզ վասն շնորհացն որ տուեալ են ինձ Աստուծոյ.
16 Լինել ինձ սպասաւոր Յիսուսի Քրիստոսի ի հեթանոսս, ըղձակերպս առնել զաւետարանն Աստուծոյ, զի եղիցի

[4]Որն է, զմեզ
[5]Որն է, Յիսուսի Քրիստոսի
[6]Ի բազմս պակաս

պատարագն հեթանոսաց ընդունելի՝
17 սրբեալ Հոգւովն Սրբով։ Ունիմ այ-
սուհետեւ պարծանս ի Քրիստոս Յի-
18 սուս առ Աստուած։ Քանզի ոչ իշխեմ
խօսել ինչ զոր ոչ գործեաց Քրիստոս
ինեւ ի հնազանդութիւն հեթանոսաց
19 բանիւք եւ արդեամբք, Զօրութեամբ
նշանաց եւ արուեստից, զօրութեամբ
Հոգւոյն [1]Սրբոյ, որպէս ինձ չերուսա-
ղեմէ եւ չուրջ մինչեւ ի կողմանս Իլի-
բիկացւոց լնուլ զաւետարանն Քրիս-
20 տոսի։ Այնպէս առատացեալ յաւետա-
րանել, ոչ ուր անուանեցաւ Քրիստոս,
զի մի՛ իբրեւ յայլոյ հիման վերայ չի-
նիցեմ, այլ որպէս եւ գրեալ է թէ,
21 Որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տես-
ցեն, եւ որոց ոչ լուեալ՝ ի միտ
22 առցեն։ Վասն որոյ չատ խափանեցայ
23 գալ առ ձեզ։ Բայց արդ ոչ եւս գոյ
ինձ տեղի ի կողմանս յայսոսիկ, եւ
անձուկ չոյժ ունիմ ի բազում ամաց
24 գալ առ ձեզ, Յորժամ անցանիցեմ ի
Սպանիա, ակն ունիմ յանցանելն առ
նոսա՝ տեսանել զձեզ, եւ ի ձէնջ յու-
զարկել անդր, եթէ նախ իսկ փոքր
25 ի չատէ ձեւք լցայց։ Բայց այժմ եր-
թեմ չերուսաղէմ պաշտել զսուրբսն։
26 Քանզի հաճոյ թուեցաւ Մակեդոնա-
ցւոցն եւ Աքայեցւոցն հաղորդութիւն
ինչ առնել ընդ աղքատս սրբոցն որ
27 են չերուսաղէմ։ Հաճոյ թուեցաւ,
քանզի եւ պարտական իսկ են նոցա.
զի եթէ հոգեւորացն նոցա հաղորդ ե-
ղեն հեթանոսք, պարտին եւ մարմնա-
28 ւորացն կցորդ լինել։ Արդ զայս կա-
տարեալ եւ կնքեալ զպտուղ նոցա,
29 անցից առ ձեւք ի Սպանիա։ Գայց դի-
տեմ, զի ի գալն իմում առ ձեզ՝ լրու-
թեամբ օրհնութեան [2]աւետարանին
Քրիստոսի եկից։
30 ԷԵ· Աղաչեմ զձեզ, եղբարք, ի ձեռն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
եւ սիրով Հոգւոյն, պատերազմակից
լինել ինձ յաղօթս վասն իմ առ Աս-
31 տուած. Զի ապրեցայց յապստամ-
բացն որ ի Հրէաստանի են. եւ պաշ-
տօնն իմ որ չերուսաղէմ՝ ընդունելի
32 լիցի սրբոցն. Զի խնդութեամբ եկեալ
առ ձեզ ի կամս Աստուծոյ, հանգեայց
33 ընդ ձեզ։ Եւ Աստուած խաղաղու-
թեան եղիցի ընդ ձեզ ամենեսեան։
Ամէն։

ԳԼ· ԺԶ

1 Յանձն առնեմ ձեզ ղփիրէ զքոյր
մեր, որ է սպասաւոր եկեղեցւոյն
2 կենքրացւոց. Զի զնա ընկալջիք ի
Տէր արժանի սրբոց, եւ վերակացու
լինիջիք նմա յոր պէս իրաց եւ կո-
չեսցէ զձեզ. քանզի եւ նա վերա-
կացու եղեւ բազմաց, եւ ինձ իսկ ի
գլխովին։
3 Ողջոյն տացիք Պրիսկեայ եւ Ակիւ-
ղայ՝ գործակցաց իմոց ի Քրիստոս Յի-
4 սուս. Որք ընդ անձին իմոյ գլուբանց
պարանոցս մատուցին. զորոց ոչ ես
միայն գոհանամ, այլ եւ ամենայն ե-
5 կեղեցիք հեթանոսաց. Եւ առանին
եկեղեցւոյն նոցա։ Ողջոյն տացիք ե-
պենետայ սիրելւոյ իմոյ՝ որ է պտուղ
6 [3]Ասիացւոց ի Քրիստոս։ Ողջոյն տացիք
Մարիայ՝ որ բազում վաստակ վաս-
7 տակեաց ի ձեզ։ Ողջոյն տացիք Անդ-
րոնիկեայ եւ Յունեայ աղգականաց
իմոց եւ գերեկցաց, որք երեւելիքն
իսկ են յառաքեալս, որք եւ յառաջ
8 իսկ քան զիս եղեն ի Քրիստոս։ Ողջոյն
տացիք Ամպղեայ սիրելւոյ իմոյ ի Տէր։
9 Ողջոյն տացիք Ուրբանեայ գործակցի
իմոյ ի Տէր, եւ Ստաքեայ սիրելւոյ
10 իմոյ։ Ողջոյն տացիք Ապելեայ՝ որ ըն-
11 տիրն է ի Տէր։ Ողջոյն տացիք նոցա
որ յԱրիստաբուղեայ տանէ անտի են։
Ողջոյն տացիք Հերովդիոնեայ ազգա-
կանի իմոյ։ Ողջոյն տացիք այնոցիկ
որք ի Նարկիսեայ տանէն իցեն ի Տէր։
12 Ողջոյն տացիք Տրիփոսեայ եւ Տրիփո-
նեայ վաստակաւորաց ի Տէր։ Ողջոյն
տացիք Պերսիդեայ սիրելւոյ, որ բա-
զում վաստակս վաստակեաց ի Տէր։
13 Ողջոյն տացիք Ռուփայ ընտրելւոյ ի
14 Տէր, եւ մօր նորա եւ իմոյ։ Ողջոյն
տացիք Ասինկրիտեայ, Փլեգոնտեայ,
Երմեայ, Պատրոբայ, Երմեայ, եւ որ
15 ընդ նոսա եղբարք իցեն։ Ողջոյն տա-
ցիք Փիղողոգեայ, եւ Յուլեայ, Ներ-
եայ եւ քեռ նորա, եւ Ողիմպեայ, եւ
որ ընդ նոսա սուրբք ամենեքին իցեն։

---

[1] Որ՝ եւ, Աստուծոյ
[2] Յայլ՝ պատարագ

[3] Որ՝ եւ, Աքայեցւոց

16 Ողջոյն տալիք միմեանց ի համբոյր սրբութեան. ողջոյն տան ձեզ [1]ամենայն եկեղեցիք Քրիստոսի։
17 Եջ. Աղաչեմ զձեզ, եղբարք, դիտել զայնպիսիսն որ հերձուածս եւ գայթակղութիւնս առնիցեն · արտաքոյ վարդապետութեանն զոր դուքն ուսարուք. եւ խորչեցարուք ի նոցանէ։
18 Զի այնպիսիքն Տեառն մերում [2]Քրիստոսի ոչ ծառայեն, այլ իւրեանց որովայնին. եւ քաղցրաբանութեամբ եւ օրհնութեամբ պատրեն զսիրտս անմեղաց։ Զի ձեր հնազանդութիւնդ առ ամենեսեան հասեալ է. եւ արդ ի ձեզ ուրախ եմ. բայց կամիմ զձեզ իմաստուն լինել ի բարիս, եւ անմեղս՝ ի
20 չարիս։ Եւ Աստուած խաղաղութեան խորտակեսցէ զՍատանայ ընդ ոտիւք ձերովք մերձ ընդ մերձ։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ։
21 Ողջոյն տայ ձեզ Տիմոթէոս [3]եղբայր եւ" գործակից իմ եւ Ղուկիոս եւ Յասոն եւ Սոսիպատրոս՝ ազգականք իմ։
22 (Ողջոյն տամ ձեզ եւ ես Տերտիոս, որ
23 զթուղթս զրեցի, ի Տէր։) Ողջոյն տայ ձեզ Գայիոս ասպնջական իմ եւ ամենայն եկեղեցւոյն։ Ողջոյն տայ ձեզ Երաստոս չահապետ քաղաքիս եւ Կուարտոս եղբայր։[4]
24 Այլ այնմ, որ կարողն է հաստատել զձեզ ըստ աւետարանիս իմում, եւ ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն
25 ժամանակաւքն յաւիտենից լռեցելոյ, եւ յայտնելոյ այժմիկ ի ձեռն գրոց մարգարէականաց ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, ի հնազանդութիւն հաւատոց, յամենայն հեթանոսս ծա-
26 նուցելոյ, Միայնոյ իմաստնոյն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, նմա
27 փառք յաւիտեանս։ Ամէն։ [3]Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ամենեսեան։"

Ա՟ Հռովմայեցւոյն ԹՂԹՑԱ Է ԿՈՐՆԹՈՍԻ Է ՅԵՌՆ ՓԻՔԵՍՅ ԱՌԻՍՏՈՓԷ։

---

[1] Յոմանս պակասի
[2] Ոմանք, Յիսուսի Քրիստոսի
[3] Ի Յոմանս պակասի

[4] Ոմանք յաւելուն, Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ընդ ամենեսին։ Ամէն։

Ա. ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 Ա. Պաւղոս, կոչեցեալ առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստու-
2 ծոյ, եւ Սոսթենէս եղբայր. Եկեղեց-
ւոյդ Աստուծոյ որ է ի Կորնթոս, նուի-
րեալոց ի Քրիստոս Յիսուս, կոչեցելոց
սրբոց, ամենեքեան միանգամ որք
կարգան զանուն Տեառն մերոյ Յիսու-
սի Քրիստոսի յամենայն տեղիս՝ նոցա
3 եւ մեր. Շնորհք ընդ ձեզ եւ խաղա-
ղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ
ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
4 Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամե-
նայն ժամ վասն ձեր ի վերայ շնոր-
հացն Աստուծոյ որ տուեալ են ձեզ
5 ի Քրիստոս Յիսուս. Զի յամենայնի
մեծացարուք դուք նովաւ ամենայն
6 բանիւ եւ ամենայն գիտութեամբ. Որ-
պէս վկայութիւնն իսկ Աստուծոյ հաս-
7 տատեցաւ ի ձեզ. Զի դուք մի՛ նուա-
զիցիք եւ մի՛ իւիք չնորհօք, ակնկա-
լեալ յայտնութեանն Տեառն մերոյ Յի-
8 սուսի Քրիստոսի. Որ եւ հաստա-
տեսցէ զձեզ մինչեւ ի կատարած ա-
նարատս յօրն Տեառն մերոյ Յիսուսի
9 Քրիստոսի։ Հաւատարիմ է Աստուած,
որով կոչեցարուք ի հաղորդութիւն
Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի
Տեառն մերոյ։
10 Ա. Աղաչեմ զձեզ, եղբարք, ան-
ուամբն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի. զի զնոյն բան ունիցիք ամե-
նեքեան, եւ մի՛ իցեն ի ձեզ հեր-
ձուածք. [1]քանզի էիք՞ հաստատեալք
11 ի նոյն միտս եւ ի նոյն հանճար։ Աղդ
եղեւ ինձ վասն ձեր, եղբարք, ի
Ղուսացւոց անտի, Թէ հակառակու-
12 թիւնք են ի ձեզ։ Եւ արդ ասեմ իսկ,
եթէ իւրաքանչիւր ոք ի ձէնջ ասէ,
Ես Պաւղոսեան եմ, եւ մեւն՝ եթէ
Ես Ապողոսեան եւ [2]մեւն՝ եթէ Ես
Կեփայեան. եւ [2]մեւն՝ եթէ Ես Քրիս-
13 տոսեան։ Իսկ արդ բաժանեա՞լ ինչ
իցէ Քրիստոս. միթէ Պաւղո՞ս ի խաչ
եղեալ իցէ վասն ձեր, կամ յանուն
14 Պաւղոսի՞ մկրտեցարուք։ [3]Գոհանամ
զԱստուծոյ իմոյ զի՞ ոչ ոք ի ձէնջ
մկրտեցի բայց միայն ղԿրիսպոս եւ
15 ղԳայիոս, զի մի՛ ոք ասիցէ, Թէ յիմ
16 անուն մկրտեցարուք։ Տալ եւս կնիք
եւ տանն Ստեփանեայ. զայլ ոք ոչ գի-
տեմ ամենեւեին Թէ մկրտեցի։
17 Զի ոչ առաքեաց զիս Քրիստոս մկըր-
տել, այլ աւետարանել. ոչ ճարտարու-
թեամբ բանից, զի մի՛ ընդունայն լիցի
18 խաչն Քրիստոսի։ Զի ճառ խաչին կո-
րուսելոցն յիմարութիւն է, այլ փրկե-
19 լոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ։ Զի
գրեալ է, Կորուսից զիմաստութիւն ի-
մաստնոց, եւ զխորհուրդս խորհրդա-
20 կանաց արհամարհեցից։ Ո՞ւր իմաս-
տուն, ո՞ւր դպիր, ո՞ւր քննիչ աշխար-
հիս այսորիկ. ո՞չ ապաքէն յիմարեցոյց
Աստուած զիմաստութիւն աշխարհիս
21 այսորիկ։ Քանզի իմաստութեամբն Աս-
տուծոյ ոչ ծանեաւ աշխարհ իմաս-
տութեամբն զԱստուած, հաճեցաւ
Աստուած յիմարութեամբ քարոզու-
թեանն սպրեցուցանել զհաւատացեալս։
22 Բհ. Իսկ որովհետեւ Հրեայք նշան
հայցեն, եւ հեթանոսք իմաստութիւն
23 խնդրեն, Մեք քարոզեսցուք զխաչեալ-
եալն Քրիստոս, Հրէից գայթակղու-

[1] Ց՝ն՝ն, այլ զի էցէք

[2] ի ց՝ն՝ն պ՝ա՝ս՝

[3] Ո՛ն՝ն՝, Գոհանամ զի. այլ՝ Գոհանամ զԱս-
տուծոյ զի. պ՝ա՝յ՝ն՝ս՝ ո՛ն՝ն՝, էբէր՝ ընդն՝, Գո-
հանամ զԱստուծոյ իմոյ զի

թիւն եւ հեթանոսայ յիմարութիւն.
24 Բայց նոցին իսկ կոչեցելոցն Հրէից եւ հեթանոսաց, զՔրիստոս Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստու-
25 թիւն։ Զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ, եւ տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ։
26 Տեսէք եւ զձեր իսկ կոչումնդ տեսէք, եղբարք, զի ոչ բազում իմաստունք ըստ մարմնոյ, եւ ոչ բազում հզօրք, եւ
27 ոչ բազում ազնուականք. Այլ զյիմարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յա-
28 մօթ արասցէ զիմաստունս. եւ զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յա-
29 մօթ արասցէ զհզօրս. Եւ զանատնմս աշխարհի եւ զարհամարհեալս ընտրեաց Աստուած եւ զոչինչսն, զի զէնս իմն
30 խափանեսցէ. Որպէս զի մի՛ պարծեսցի ամենայն մարմին առաջի Աստուծոյ։
31 Զի ի նմանէ դուք էք ի Քրիստոս Յիսուս, որ եղեւ մեզ իմաստութիւն յԱստուծոյ, արդարութիւն եւ սրբութիւն եւ վրկութիւն. Զի որպէս եւ գրեալ է, Որ պարծին՝ ի Տէր պարծեսցի։

Գլ. Բ

1 Եւ ես [1]թէպէտ եւ եկի առ ձեզ, եղբարք, ոչ՝ ըստ առաւելութեան ինչ բանից [2]իմաստութեան պատմել ձեզ
2 զվկայութիւնն Աստուծոյ։ Զի ոչ եթէ ի մտի եգի գիտել ինչ ի ձեզ, բայց միայն զՅիսուս Քրիստոս, եւ զնոյն
3 ի խաչ ելեալ։ Եւ ես տկարութեամբ եւ երկիւղիւ եւ դողութեամբ բազմաւ
4 եղէ առ ձեզ. Եւ բանն իմ եւ քարոզութիւն ոչ պատիր բանիւք [3]իմաստութեան, այլ՝ արդեամբք Հոգւոյն
5 եւ զօրութեամբ. Զի հաւատք ձեր մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան, այլ՝ զօրութեամբ Աստուծոյ։ Վ.Ջ
6 Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս, զիմաստութիւն, ոչ զաշխարհիս այսորիկ եւ ոչ զիշխանաց աշ-
7 խարհիս այսորիկ զոփանելեացս, Այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խորհրդով, զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեաց Աստուած
8 ի փառս մեր. Զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր ծանուցեալ, ոչ արդեւք զՏէրն փա-
9 ռաց ի խաչ հանէին։ Այլ որպէս եւ գրեալ է, Զոր ակն ոչետես եւ ունկն ոչ լուաւ եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։
10 ԲԴ. Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն իւրով. զի Հոգին զամենայն
11 քննէ եւ զխորս Աստուծոյ։ Զի ո՞ ոք ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն որ ի նմա. նոյնպէս եւ ոչ զԱստուծոյն ոք գիտէ, եթէ
12 ոչ Հոգին Աստուծոյ։ Այլ մեք ոչ եթէ զհոգի աշխարհիս այսորիկ առաք, այլ զՀոգին որ յԱստուծոյ. զի ծանիցուք զայն որ յԱստուծոյն շնորհեցաւ մեզ։
13 Եւ զոր խօսիմք՝ ոչ եթէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեան բանից, այլ վարդապետութեամբ [4]Հոգւոյն, ընդ հոգեւորս զհոգեւորսն համեմատեմք։
14 Բանդի չընչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա. եւ ոչ կարէ զիտել, [5]եթէ հո-
15 գեպէս քննիցի՝։ Իսկ հոգեւորն քննէ զամենայն, եւ ինքն յոումեքէ ոչ քննի։
16 Իսկ արդ ո՞վ գիտաց զմիտս Տեառն, որ եւ խրատուս լինիցի նմա. այլ մեք զմիտս Քրիստոսի ունիմք։

Գլ. Գ

1 Եւ ես, եղբարք, ոչ կարացի խօսել ընդ ձեզ իբրեւ ընդ հոգեւորս, այլ իբ-
2 րեւ ընդ մարմնաւորս։ Իբրեւ տղայոց ի Քրիստոս կաթն ջամբեցի ձեզ եւ ոչ կերակուր, զի ոչ եւս կարէիք. նա
3 եւ արդ իսկ ոչ կարէք, քանզի դեռ մարմնաւոր էք։ Ուր եւ արդ են իսկ ի ձեզ հեռ եւ [6]նախանձ, ո՞չ ապաքէն մարմնաւոր էք եւ ըստ մարդկան գնայք։
4 Զորժամ ասէ ոք [7]ի ձէնջ, Ես Պաւղոսեան եմ, եւ միւսն՝ եթէ Ես Ապողոսեան, ո՞չ [8]մարդիկ էք. իսկ արդ ո՞վ է Պաւղոսն կամ ո՞վ է Ապողոս.
5 Պաշտօնեայք՝ որովք հաւատացէքն, եւ իւրաքանչիւր որպէս եւ Տէր ետ։

---

[1] Յն՝ն, որ եկի առ. ձեզ, եղբարք, եկի ոչ
[2] Յն՝ն, կամ իմաստութեան
[3] Ոմ՝ն, մարդկեղէն իմաստութեան
[4] Ոմ՝ն, Հոգւոյն Սրբոյ
[5] Յն՝ն, զի Հոգեպէս քննի
[6] Ոմ՝ն, նախանձ և հերձուած
[7] Ի յն՝ն պակ՝ն
[8] Ոմ՝ն, մարմնաւոր

6 Ես տնկեցի, Ապողոս ջուր ետ, այլ
7 Աստուած աճեցոյց։ Այսուհետեւ ոչ
այն ինչ ոք է որ տնկեացն, եւ ոչ այն՝
որ ջուրն ետ, այլ որ աճեցոյցն՝ Աս-
8 տուած։ Որ տնկեացն եւ որ ջուրն
ետ՝ մի են. բայց իւրաքանչիւր ոք
զիւր վարձս առնուցու ըստ իւրում
9 վաստակոյ։ Զի Աստուծոյ գործակից
եմք, Աստուծոյ [1]արդիւն էք, Աստու-
10 ծոյ չինած էք։ Ըստ շնորհացն Աստու-
ծոյ որ տուեալ են ինձ, իբրեւ իմաս-
տուն ճարտարապետ հիմն եդի, բայց
այլ է որ չինէն. այլ իւրաքանչիւր ոք
11 զգոյշ լիցի թէ որպէս չինիցէ։ Զի հիմն
այլ՝ ոք ոչ կարէ դնել քան զեդեալն,
որ է Յիսուս Քրիստոս։ ՎՋ
12 Եթէ ոք չինէ ի վերայ հիմանս այ-
սորիկ ոսկի, արծաթ, ականս սպաս-
13 ուականս, փայտ, խոտ, եզէգն, Իւ-
րաքանչիւր գործն յայտնելոց է. զի
օրն ընտրեսցէ. զի հրով յայտնելոց է.
եւ զիւրաքանչիւր գործն զիարդ եւ
14 իցէ, հուրն փորձեսցէ։ Եթէ ուրուք
գործն զոր չինեաց՝ կացցէ, վարձս
15 առցէ. Եւ եթէ ուրուք գործն այրես-
ցի՝ տուժեսցի, բայց ինքն կեցցէ, այլ
16 այնպէս՝ որպէս թէ [2]ի հուր։ Ո՞չ դի-
տէք եթէ տաճար էք Աստուծոյ, եւ
17 Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ։ Եթէ
ոք զտաճար Աստուծոյ ապականէ, ա-
պականեսցէ զնա Աստուած. զի տա-
ճար Աստուծոյ սուրբ է, որ էք դուք։
18 Մի՛ ոք զանձն խաբեսցէ. եթէ ոք
կամիցի ի ձէնջ իմաստուն լինել յաչ-
խարհիս յայսմիկ, յիմար լիցի, զի ե-
19 զիցի իմաստուն։ Զի իմաստութիւն
աշխարհիս այսորիկ յիմարութիւն է
առաջի Աստուծոյ, քանզի գրեալ է
թէ, Որ բռնեսցէ զիմաստունս ի խո-
20 րամուտս նոցա։ Եւ դարձեալ
թէ, Տէր ճանաչէ զխորհուրդս իմաստ-
21 նոց զի են ընդունայն։ Այսուհետեւ
22 մի՛ ոք պարծեսցի [3]ի մարդկանէ. Զի
ամենայն ինչ ձեր է, եթէ Պաւղոս,
եթէ Ապողոս, եթէ կեփաս, եթէ աշ-
խարհ, եթէ կեանք, եթէ մահ, եթէ
որ կանս, եթէ հանդերձեալքն, ամե-
23 նայն ինչ ձեր է. Դուք Քրիստոսի,
Քրիստոս՝ Աստուծոյ։

[1] Կ՚ա՛, արտ
[2] Ց՚այլն, ընդ հուր
[3] Ց՚այլն, ի մարդիկ

Գլ. Դ

1 Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ,
իբրեւ զպաշտօնեայս Քրիստոսի եւ
հազարապետս խորհրդոցն Աստուծոյ։
2 Արդ խնդիր է ի մէջ հազարապետաց
3 եթէ ոք հաւատարիմ գտցի։ Այլ ինձ
եւ այս [4]անարգանք են", եթէ ի ձէնջ
գատեցայց կամ [5]բնաւ իսկ ի մարդկա-
4 նէ". Նաեւ զանձն իմ ոչ քննեմ։ Զի
ոչինչ զիտեմ զանձին իմոյ. այլ ոչ
եթէ այսու արդարանամ, զի որ քննէն
5 զիս՝ Տէր է։ Այսուհետեւ մի՛ յառաջ
քան զժամանակն դատիք, մինչեւ ե-
կեսցէ Տէր, որ լուսաւոր առնիցէ
զգաղտնիս խաւարի, եւ յայտնիցէ
զխորհուրդս սրտից. եւ ապա իւրա-
քանչիւր գովութիւն եղիցի յԱստուծոյ։
6 Զայս, եղբարք, առակեցի յանձն իմ
եւ յԱպողոս վասն ձեր. զի ի մէնջ ու-
սջիք մի՛ ինչ առաւել քան զգրեալսն ի-
մանալ, զի մի՛ այր քան զընկեր հպար-
7 տանայցէք ի վերայ ընկերին։ Իսկ արդ
ո՞վ է [6]որ քննիցէ" զքեզ. զի՞նչ ունիս
զոր ոչ իցէ առեալ. եւ եթէ առեր,
զի՞ պարծիս իբրեւ զչառեալ։
8 Արդէն իսկ յագեալ իցէք եւ արդէն
մեծացարուք, առանց մեր թագաւո-
րեցէք, եւ երանի թէ թագաւորէիք,
զի եւ մեք ընդ ձեզ թագաւորէաք։
9 Ինձ այսպէս թուի թէ զմեզ զառաք-
եալս յետնորդս արար Աստուած իբրեւ
զմահապարտս. զի տեսիլ եղեաք աշ-
խարհի եւ հրեշտակաց եւ մարդկան։
10 Մեք յիմարք վասն Քրիստոսի, եւ դուք
իմաստունք ի Քրիստոս. մեք տկարք՝
եւ դուք հզօրք. դուք փառաւորեալք՝
11 եւ մեք անարգք։ Մինչեւ ցայսօր ժա-
մանակի ե՛ւ քաղցեաք ե՛ւ ծարաւե-
ցաք ե՛ւ մերկ գնացաք ե՛ւ կոփահա-
12 րեցաք ե՛ւ անհանգիստ եղեաք, եւ
աշխատեցաք ձեռօք մերովք. բամբա-
սէին զմեզ, օրհնէաք. հալածէին,
13 յանձն առնուաք. Հայհոյէին, ազա-
չեաք. իբրեւ առակ նչաւակի եղեաք
[7]ամենայն աշխարհի, ամենեցուն վա-
14 րելի մինչեւ ցայժմ։ Ոչ եթէ

[4] Ց՚այլն, դոյզն ինչ է
[5] Ց՚այլն, ի մարդկեղէն օրէ (դատաստանէ)
[6] Ց՚այլն, որ խորէն
[7] Ի Ց՚ոմին պակաս

յաւօթի ինչ առնելով զձեզ գրեմ զայս, այլ իբրեւ զորպիս սիրելիս խրատեմ։
15 Թէպէտ եւ բնաւ զատախտակս ունիջիք ի Քրիստոս, այլ ոչ եմք բազում հարս, զի ի Քրիստոս Յիսուս աւետարանեցի ես ծնայ զձեզ։ Աղ ա-
16 ղաչեմ զձեզ, նմանողք լինիջիք։ [1]Եղիջիք։
17 Վասն այնորիկ առաքեցի առ ձեզ զՏիմոթէոս, որ է իմ որդի սիրելի եւ հաւատարիմ ի Տէր. որ յիշեցուսցէ ձեզ զճանապարհս իմ որ ի Քրիստոս Յիսուս. որպէս եւ ամենայն ուրեք յա-
18 մենայն եկեղեցիս ուսուցանեմ։ Իբրեւ թէ ես չիցեմ գալոց առ ձեզ, ոմանք
19 հպարտացան։ Այլ եկից հուպ ընդ հուպ, եթէ Տէր կամեսցի. եւ ի միտ առից ոչ զբանս հպարտացելոցն, այլ՝
20 զզօրութիւն։ Զի ոչ եթէ բանիւք է արքայութիւնն Աստուծոյ, այլ՝ զօրու-
21 թեամբ։ Զիա՞րդ կամիք, գաւազանո՞վ եկից առ ձեզ, եթէ [2]սիրով հոգւոյն հեզութեան եւ արդարութեան եւ խոնարհութեան՞։

Գլ· Ե

1 Բնաւ եւ անուանի իսկ ի ձեզ [3]ընդէ՞ր պոռնկութիւն, եւ այնպիսի պոռնկու-
թիւն՝ որ ոչ եւ ի հեթանոսս, որպէս
2 թէ զկին հօր իւրոյ ունել։ Եւ դուք հպարտացեալ էք, եւ ոչ առաւել սգացարուք, զի բարձցի ի միջոյ ձերմէ որ
3 զգործն զայն գործեաց։ Զի ես թէպէտ եւ մարմնով մեկնեալ եմ, սակայն հոգւով մերձ եմ. բայց արդէն իսկ իբրեւ ի մօտոյ ընտրեցի, զայն որ այնպէսն
4 գործեաց, Յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ժողովել ձեզ ի միասին եւ իմոյ հոգւոյս՝ զօրութեամբն
5 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Մատնել զայնպիսին Սատանայի ի սատակումն մարմնոյ, զի ոգին
6 ապրեսցի յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ոչ բարւոք են պարծանքդ ձեր. ո՞չ գիտէք եթէ փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ։
7 Սրբեցէք ի բաց զհին խմորն, զի եղիջիք նոր զանգուած, որպէս էքդ անխմորք. քանզի զատիկ մեր զեհնաւ
8 Քրիստոս։ Այսուհետեւ ալաւասցուք ոչ՝ մի՛ ի խմորն հին եւ մի՛ ի խմորն չարութեան եւ անզգամութեան, այլ յանխմոր սուրբութեան եւ ճշմարտութեան։
9 ԲՋ· Գրեցի ձեզ ի թղթի այդր չխառնակել ընդ պոռնիկս։
10 Եւ ոչ եթէ ընդ պոռնիկս աշխարհիս այսորիկ կամ ընդ ագահս կամ ընդ յափշտակողս կամ ընդ կռապաշտիչս. ապա թէ ոչ՝ պար-
11 տիք եւ յայնմանէ իսկ ելանել։ Բայց արդ գրեցի ձեզ չխառնակել, եթէ ոք եղբայր անուանեալ կամ պոռնիկ իցէ կամ կռապաշտիչ կամ ագահ կամ բամբասող կամ արբեցող կամ յափշտակող, ընդ այնպիսւոյն եւ հաց մի՛
12 ուտել։ Զի՞ կայ իմ եւ դատաքինան դատել. ո՞չ ապաքէն դուք զներքինան դատիցիք.
13 եւ դատաքինան Աստուած դատիցի. բարձէք զչարն ի միջոյ ձերմէ։

Գլ· Զ

1 Իշմէ՞ ոք ի ձէնջ, եթէ իրք ինչ իցեն ընդ ընկերի իւրում, դաւել առաջի
2 անիրաւաց, եւ ոչ առաջի սրբոց։ Եթէ ո՞չ գիտէք զի սուրբք զաշխարհ դատին եւ եթէ ձեւք դատի աշխարհ, ա-
3 պա [4]ոչ էք արժանի անարգ առնելոյ՞։
4 Ո՞չ գիտէք եթէ զհրեշտակս դատիմք, թող թէ զերկրաւորս։ Զերկրաւոր առեանս եթէ յանձն առնուցուք, [5]դա-
5 նարդս եկեղեցւոյ զառաւորս նստուցանէք՞։ Առ ամօթոյ ձերոյ ասեմ. այնչափ ո՞չ գոյ ոք իմաստուն ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել ի մէջ
6 եղբօր իւրոյ. Այլ եղբայր ընդ եղբօր դատի, եւ զայն՝ ի մէջ անհաւատից։
7 Եւ արդ ամենեւին իսկ վատթարութիւն է ի ձեզ, զի գատաստանք իսկ գոն ի միջի ձերում. ընդէ՞ր ոչ դուք զրկիք, եւ ոչ դուք առաւել նեղիք։
8 Այլ դուք զրկէք եւ նեղէք. եւ այդ՝
9 զեղբարս եւս։ Եթէ ո՞չ գիտէք զի անիրաւք զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն. մի՛ խաբիք, ոչ պոռնիկք,
10 ոչ կռապաշտիչք, ոչ չունք, ոչ իգացեալք, ոչ արուապէտք, ոչ գողք, ոչ ագահք, ոչ արբեցողք, ոչ բամբասողք

[1] Որդւ, եղիջիք, որպէս և ես Քրիստոսի
[2] Յոյն, սիրով և հոգւով հեզութեան
[3] ի Յունին պոյոք

[4] Յոյն, ո՞չ էք արժանի զանարգս դատելոյ
[5] Յոյն, զանարգս յեկեղեցւոջ, զնոսա՞ նստուցանէք, յո՛, զնոսա նստուցէք

եւ ոչ յափշտակողք զարքայութիւն
11 Աստուծոյ ոչ ժառանգեն։ Եւ զուք այնպիսիք ոմանք էիք. այլ լուացարուք, այլ սրբեցարուք, այլ արդարացարուք յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ի Հոգին Աստուծոյ մերոյ։
12 ԳԿ. Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ ամենայն ինչ օգուտ է. ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ եթէ ես ընդ
13 իշխանութեամբ ուրուք լինիցիմ։ Կերակուր որովայնի, եւ որովայն կերակրոյ. այլ Աստուած զսա եւ զնոսա խափանեսցէ. բայց մարմին ոչ պոռնկութեան, այլ Տեառն, եւ Տէր՝ մարմ-
14 նոյ։ Այլ Աստուած որ եւ զՏէրն յարոյց՝ եւ [1]զձեզ յարուսցէ զօրութեամբ
15 իւրով։ Ո՞չ գիտէք եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի. արդ առեալ զանդամս Քրիստոսի՝ առնիցեմք անդամս պոռնկի՞. քաւ լիցի։ Եթէ ո՞չ
16 գիտէք, զի որ մերձենայ ի պոռնիկ՝ մի մարմին է. Եղիցին, ասէ, երկոքեան ի մարմին մի։ Եւ որ մերձենայ ի Տէր՝
17 ի մարմին մի։ Եւ զուք մերձենայք ի պոռնկութիւնէ. զամենայն մեղս զոր եւ գործէ մարդ, արտաքոյ մարմնոյ իւրոյ է. իսկ որ պոռնկին՝ յիւր մարմինն մեղանչէ։
19 Եթէ ո՞չ գիտէք, զի մարմինք ձեր տաճար են [2]Հոգւոյն որ է ի ձեզ, զոր ունիքն յԱստուծոյ, եւ չէք անձանձ
20 տէր։ Բանզի գնոյ գնեցայք. փառաւորարարէք զԱստուած ի մարմինս ձեր[3]։

ԳԼ. Է

1 Այլ վասն որոյ գրեցէքն առ իս, բարւոք է մարդոյ ի կին մարդ չմերձենալ։
2 Բայց վասն պոռնկութեան իւրաքանչիւր ոք զիւր կին կալցի, եւ իւրաքանչիւր ոք կին զիւր այր կալցի։
3 Կնոջ այր իւր զպարտսն հատուսցէ, 4 նոյնպէս եւ կինն՝ առն իւրում։ Զի կին մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ այրն. նոյնպէս եւ այրն իւրում մարմ-
5 նոյ ոչ իշխէ, այլ կինն։ Մի՛ զրկէք զմիմեանս, բայց եթէ ինչ ի միաբանութենէ առ ժամանակ մի, զի [4]ուխտիցն պարապիցէք, եւ դարձեալ ի նոյն դարձջիք, զի մի՛ փորձեսցէ զձեզ Սատանայ վասն անխոնարհութեան ձերոյ։
6 Զայս ասեմ ներելով եւ ոչ հրամանս
7 տալով։ Քանզի կամիմ եթէ ամենայն մարդ լինէր իբրեւ զիս. այլ իւրաքանչիւր ոք զիւր չնորհս ունի յԱստուծոյ, ոմն այսպէս՝ եւ ոմն այնպէս։
8 Բայց ամուրեացն եւ այրեացն ասեմ, լաւ է նոցա եթէ կայցեն իբրեւ զիս։
9 Ապա թէ ոչ ունիցին ժոյժ, ամուսնասցին, զի լաւ է ամուսնանալ քան
10 զկիզոնուլ։ Ս.յլ կանամբեացն պատուիրեմ ոչ ես, այլ Տէր, կնոջ յառնէ
11 մի՛ մեկնել. Ապա եթէ մեկնեսցի, անայր մնասցէ կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի, եւ առն զկին իւր մի՛ թողուլ։ Վ.Ջ
12 Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ Տէր. Եթէ ոք եղբայր կին ունիցի անհաւատ, եւ նմա հաճոյ իցէ բնակել
13 ընդ նմա, մի՛ թողցէ զնա։ Եւ կին որ ունիցի այր անհաւատ, եւ նմա կամ իցէ բնակել ընդ նմա, մի՛ թողցէ
14 զայրն. Զի սուրբ է այրն անհաւատս՝ կնաւն, եւ սուրբ է կինն անհաւատս՝ արանին. ապա թէ ոչ՝ որդիքն ձեր
15 պիղծ են, բայց այժմ սուրբ են։ Ապա եթէ անհաւատն մեկնիցի, մեկնեսցի. զի ոչինչ հարկ ի վերայ կայ եղբօրն կամ քեռն յայնպիսի իրս, քանզի ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աստուած։
16 Զի՞ գիտես, կին դու, եթէ զայր քո ապրեցուսցես. կամ զի՞ գիտես, այր դու, եթէ զկին քո ապրեցուսցես.
17 Եթէ ոչ՝ իւրաքանչիւր ումեք որպէս եւ բաժանեաց Տէր, զիւրաքանչիւր ոք որպէս եւ կոչեաց Աստուած՝ այնպէս գնասցէ. եւ այսպէս ընդ ամենայն եկեղեցիս պատուէր տամ։
18 Թլփատե՞լ ոք կոչեցաւ, մի՛ ցանկասցի անթլփատութեան. յանթլփատութենէ՞ ոք կոչեցաւ, մի՛ թլփատեսցի։
19 Զի թլփատութիւն ոչինչ է, եւ անթլփատութիւն ոչինչ, այլ պահպանութիւն Աստուծոյ պատուիրա-
20 նացն։ Բայց իւրաքանչիւր ոք յոր կոչեցաւ՝ ի նմին կացցէ։
21 Ծառայ կոչեցար՝ [5]նմին կացցէ։ Ծառայ կոչեցար, մի՛ փոյթ լիցի քեզ. այլ թէ կարիցես եւս ազատ լինել, քեզ այնպէս
22 լաւ իցէ։ Զի որ ի Տէր կոչեցեալ իցէ ծառայն՝ ազատ Տեառն է. նոյնպէս եւ

[1] Բ-ղ-ե-ս, զմեզ
[2] Յ-ն-ն, Հոգւոյն Սրբոյ
[3] Ո-ր-ե-ս յ-ե-ր-ս, և յոգիս ձեր որ են Աստուծոյ
[4] Յ-ն-ն, աղօթից· ա-ն-ս, աղօթից և պահոց

որ ազատ կոչեցեալ է՝ ծառայ Քրիս-
23 տոսի է։ Գնող գնեցեալք, մի՛ լինիք
24 ծառայք մարդկան։ Իւրաքանչիւր յոր
կոչումն կոչեցաւ, եղբարք, ի նմին
կացցէ առաջի Աստուծոյ։
25 ԳԴ. Այլ վասն կուսանաց հրաման
ինչ ի Տեառնէ ոչ ունիմ, բայց խրատ
տամ [1]որպէս ողորմելոյ ուրուք՝ ի
26 Տեառնէ հաւատարիմ լինել։ Համա-
րիմ թէ այնպէս [2]լաւ իցէ, բայց վասն
վտանգին՝ որ ի վերայ կայ, [3]բարւոք է
27 մարդոյ թէ այնպէս իցէ։ Կապեա՞լ ես
ի կին, մի՛ խնդրեր արձակել. արձա-
կեա՞լ ես ի կնոջէ, մի՛ խնդրեր կին։
28 Զի եթէ ամուսնանայցես, ոչ մեղար.
եւ եթէ ամուսնանայցէ կոյսն, ոչ մե-
ղաւ, բայց նեղութիւն մարմնոյ ունի-
ցին այսպիսիքն. այլ ես խնայելի ի
29 ձեզ։ Բայց զայս ասեմ, եղբարք, եթէ
ժամանակս [4]կարճեալ է այսուհետեւ.
զի՞ որ ունիցին կանայս՝ որպէս թէ
30 չունիցին, Եւ որ լայիցին՝ որպէս թէ
ոչ լայցին, եւ որ խնդասցին՝ որպէս թէ
ոչ խնդայցին, եւ որ գնիցին՝ որպէս թէ
31 չունիցին, Եւ որ վարիցին զաշխարհս՝
որպէս թէ չվայելիցին. զի անցեալ է
վայելչութիւն աշխարհիս այսորիկ։
32 Այլ կամիմ զձեզ անհոգս լինել. զի որ
անկինն է՝ հոգայ զՏեառն, թէ ո՛րպէս
33 հաճոյ լիցի Տեառն. Եւ որ կանամբին
է, հոգայ զաշխարհիս, թէ ո՛րպէս հա-
34 ճոյ լիցի կնոջ իւրում։ Եւ ահա մեկ-
նեցան ի միմեանց առնակինն եւ կոյս.
զի կոյս հոգայ զՏեառն, զի իցէ սուրբ
մարմնով եւ հոգւով, եւ առնակինն
հոգայ զաշխարհիս, թէ ո՛րպէս հաճոյ
35 լիցի առն իւրում։ Այլ զայս վասն
ձերոյ օգտի ասեմ. ոչ եթէ խեղդ ինչ
արկանեմ ձեզ, այլ վասն պարկեշտու-
թեան եւ հպատակութեան Տեառն ա-
նդադար ըզպաղատանս։
36 ԳԶ. Այլ թէ ոք ամօթ համարեսցի
վասն կուսին իւրոյ, եթէ իցէ եղեալ
ըստ չափ, եւ այնպէս ինչ պարտ իցէ
լինել. զոր կամի արասցէ, ոչ մեղանա-
37 չէ, [5]ամուսնասցին։ Իսկ որ հաստատ-
եալ է ի սրտի իւրում, եւ վտանգ ինչ
ոչ իցէ նմա, իշխանութիւն ունի ի վե-
րայ կամացն իւրոյ. եւ զայն ընտրեաց
ի սրտի իւրում՝ պահել զկոյսն իւր,
38 բարւոք առնէ։ Եւ որ ամուսնացուս-
ցանէ [6]զկոյսն իւր՝ բարւոք առնէ. եւ
որ ոչն ամուսնացուցանէ՝ լաւ եւս
39 առնէ։ Կին [7]կապեալ է՝, ցորքան ժա-
մանակս կենդանի է այր նորա. ապա
եթէ ննջիցէ այր նորա, ազատ է, ուր
կամիցի ամուսնանալ, բայց միայն Տե-
40 ոնի։ Բայց երանելի եւս է թէ այն-
պէս կացցէ ըստ իմում խրատուդ. Եւ
այսպէս համարիմ թէ եւ յիս իցէ Հոգի
Աստուծոյ։

ԳԼ. Ը

1 Այլ վասն զոհից կուռց, գիտեմք եթէ
ամենեքին գիտութիւն ունիմք. գի-
տութիւն հպարտացուցանէ, այլ սէր
2 չինէ։ Եթէ ոք [8]կամիցի գիտել ինչ,
չեւ եւս գիտաց որպէս արժան է գի-
3 տել։ Բայց որ սիրէ զԱստուած, նա է
4 տեղեկացեալ ի նմանէ։ Այլ վասն կե-
րակրոյն զոհելոց գիտեմք եթէ ոչինչ
իսկ կուռք ինչ յաշխարհի, զի չիք ոք
5 Աստուած բաց ի միոյն։ Զի թէպէտ
եւ իցեն անուանեալ աստուածք եթէ
յերկինս եւ եթէ յերկրի, որպէս եւ են
աստուածք բազումք եւ տէրք բա-
6 զումք։ Այլ մեզ մի է Աստուած, Հայր,
յորմէ ամենայն, եւ մեք ի նա. եւ մի
Տէր Յիսուս Քրիստոս՝ որով ամենայն,
եւ մեք նովաւ։ ՎԶ
7 Այլ ոչ յամենեսեան գիտութիւն է.
ոմանք առ խղճի մտաց մինչեւ ցայժմ
զկոյսն իբրեւ զզոհեալ ուտեն. եւ
խիղճ մտաց նոցա, քանզի տկար է,
8 պղծի։ Այլ կերակուր զմեզ առաջի
Աստուծոյ ոչ կացուցանէ. ոչ եթէ չու-
տեմք, պակասեմք ինչ, եւ ոչ եթէ
9 ուտեմք, առաւելութիւնք ինչ։ Բայց զգոյշ
լերուք, զուցէ իշխանութիւնդ ձեր այդ
գայթակղութիւն լինիցի տկարացն։
10 Եթէ ոք տեսանիցէ զքեզ որ զգիտու-
թիւնդ ունիս՝ բազմեալ ի մեհենի, ո՞չ
ապաքէն խիղճ մտաց նորա որ տկա-
րութեամբն զզածեալ է՝ անզգէն չի-
11 նիցի ուտել զզոհեալսն. Եւ կորնչիցի

[1] Յ-ՅՈՒՆ, որպէս ողորմեալ ոք
[2] Յ-ՅՈՒՆ, լաւ իցէ վասն վտանգին
[3] Յ-ՅՈՒՆ, զի բարւոք
[4] Կ-Ի, կարճեալ է. այսուհետեւ
[5] Յ-ՅՈՒՆ, ամուսնասցին
[6] Յ-ՄԱՆ- գ-Ի-Ե
[7] ՈՂՆ-, կապեալ է օրինօք
[8] Յ-ՅՈՒՆ, Համարիցի

տակար եղբայրն ի քում գիտութեանն,
12 վասն որոյ Քրիստոսն մեռաւ։ Եւ այնպէս յանցուցեալ յեղբարս, եւ զխիղճ մտաց տկարացն զայրացուցեալ՝ ի
13 Քրիստոս մեղանչէ։ Վասն որոյ եթէ կերակուր գայթակղեցուցանէ զեղբայրն իմ, ոչ կերայց միս յաւիտեան, զի մի՛ զեղբայրն իմ գայթակղեցուցից։

Գլ. Թ

1 Ո՞չ ապաքէն ազատ եմ, ո՞չ ապաքէն առաքեալ եմ, ո՞չ ապաքէն զՏէր մեր Յիսուս Քրիստոս [1]աչօք իմովք՝ տեսի, ո՞չ ապաքէն գործ իմ դուք էք ի Տէր։
2 Թէպէտ եւ այլոց չիցեմ առաքեալ, այլ զէպ ձեզ եմ. զի կնիք իսկ առաքելութեան իմոյ դուք էք ի Տէր։ Իմ
3 պատասխանի, ուր զիս հարցանիցեն,
4 այս է. Միթէ ո՞չ ունիցիմք իշխանութիւն ուտել եւ ըմպել։ Միթէ ո՞չ ու-
5 նիցիմք իշխանութիւն [2]զքոյս կանայս՝ չրջեցուցանել [1]ընդ մեզ՝ որպէս եւ այլ առաքեալքն եւ եղբարքն Տեառն
6 եւ Կեփաս։ Եթէ միայն ես եւ Բառնաբա՞ս ոչ ունիցիմք իշխանութիւն
7 չգործել զայս։ Ո՞ր երբեք զինուորիցի իւրովք ծոչակօք. ո՞ր անկիցէ այգի, եւ ի պտղոյ նորա ոչ ուտիցէ. ո՞ր արածիցէ խաչն, եւ ի կաթանէ խա-
8 չինն ոչ ուտիցէ։ Միթէ ըստ մարդկութեա՞ն խօսիցիմ զայս. կամ թէ եւ
9 օրէնքն զսոյն ո՞չ ասիցեն։ Ի Մովսիսի իսկ յօրէնսն գրեալ է, Ոչ կապեսցես գոլոուկ եզին կալոտուոյ. միթէ զե-
10 զա՞նց ինչ փոյթ էր Աստուծոյ։ Ո՞չ ապաքէն վասն մեր ասէ, քանզի վասն մեր գրեցաւ. զի յուսով պարտի որ սերմանէն՝ սերմանել, եւ որ կաւսուն՝
11 յուսով վայելել։ Եթէ մեք ի ձեզ հոգեւորսն սերմանեցաք, մեծ բնչ է եթէ
12 ի ձէնջ զմարմնաւորսդ հնձիցեմք։ Եթէ այլք ձերով իշխանութեամբդ վայելեն, ո՞չ առաւել եւս մեք. այլ ոչ ի գործ ինչ արկաք զիշխանութիւնս զայս. բայց ամենայնի համբերեմք, զի մի՛ խափան ինչ լինիցիմք [3]աւետարանին։
13 Ո՞չ գիտէք, եթէ որ ի տաճարին գործեն՝ ի տաճարէ անտի ուտեն. եւ որ սեղանոյն պաշտօնեայք են՝ ի սեղանոյ
14 անտի վայելեն։ Նոյնպէս եւ Տէր հրամայեաց ետ որոյ զաւետարանն աւետարանեն՝ յաւետարանէ անտի կեալ։
15 Բայց ես եւ ոչ գիմի ինչ յայսցանէ արկի ի գործ, եւ ոչ գրեցի զայդ զի ինձ այսպէս ինչ լինիցի. լաւ է ինձ մանաւանդ մեռանել, եւ ոչ զի զպարծանս իմ ոք ընդունայն համարիցի։
16 Զի եթէ աւետարանեմ, ոչինչ են ինձ պարծանք, քանզի հարկ ի վերայ կայ. բայց վա՛յ է ինձ՝ եթէ ոչ աւետարանեմ։
17 Եթէ կամաւ զայն առնեմ, վարձք են ինձ. եւ եթէ ակամայ՝ տնտեսութիւն
18 յանձն է ինձ։ Եւ արդ զի՞նչ վարձք իցեն ինձ. [4]եթէ յաւետարանելն ձրի տացց [5]զաւետարանն՝ զի մի՛ զեղծիցիմ ինչ իշխանութեամբս իմով յաւետա-
19 րանի անդ։ Քանզի ազատ էի յամենայնէ, եւ ամենեցուն զանձն ի ծառայութեան կացուցի, զի զբազումս
20 չահեցայց։ Եղէ ընդ Հրեայսն իբրեւ
21 զՀրեայ, զի զՀրեայսն չահեցայց։ Եղէ ընդ օրինօք իբրեւ զայնոսիկ որ ընդ օրինօքն էին, [6]իբր ոչ եթէ ընդ օրինօքն էի, այլ՝ զի որ ընդ օրինօքն իցեն՝ եւ զնոսա չահեցայց. ընդ անօրէնս եղէ իբրեւ զանօրէն, իբր ոչ եթէ անօրէն ինչ էի Աստուծոյ, այլ ընդ օրինօքն Քրիստոսի, զի չահեցայց զանօ-
22 րէնսն։ Եղէ ընդ տկարս իբրեւ զտկար, զի զտկարսն չահեցայց. ընդ ամենայնի ամենայն եղէ, զի թերեւս ապրեցուցից
23 զոմանս։ Զայս ամենայն առնեմ վասն աւետարանին, զի կցորդ եղէց նմա։
24 Դէ՛. Ո՞չ գիտէք եթէ որ յասպարիսին ընթանան, ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու զյաղթութեանն. այնպէս ընթացարուք զի
25 հասանիցէք։ Ամենայն որ պատերազմի՝ ամենայնի ժուժկալ լինի. նոքա զի զեղծանելի պսակն առնուցուն, եւ
26 մեք զանեզծութեանն։ Արդ ես իսկ այնպէս ընթանամ, ոչ որպէս յանեբեւոյթս. այնպէս մրցիմ, որպէս ոչ
27 թէ զհոգումս ինչ կոծելով. Այլ ճնշեմ զմարմինս իմ եւ հնազանդեցուցանեմ, զի գուցէ որ այլոցն քարոզեցի՝ ես ինքն անսպիտան գտանիցիմ։

[1] ի ցաւն պակաս
[2] Յոյն, քոյր կին
[3] Ցայն, աւետարանին Քրիստոսի
[4] կամ, այն՝ զի
[5] Յոյն, զաւետարանն Քրիստոսի
[6] Ցոյնս պակաս

Գլ. Ժ

1 Ոչ կամիմ եղբարք զձեզ տգէտս իցէք, եղբարք,
զի հարքն մեր ամենեքին ընդ ամպովն
էին, եւ ամենեքին ընդ ծովն անցին.
2 եւ ամենեքեան ի Մովսէս մկրտեցան
3 յամպն եւ ի ծովն. եւ ամենեքին զնոյն
4 զհոգեւոր զկերակուրն կերան. եւ
ամենեքին զնոյն զհոգեւոր ըմպելին
արբին, զի ըմպէին ի հոգեւոր վիմէն
որ երթայր գնետ նոցա. եւ վէմն էր
5 ինքն Քրիստոս։ Այլ ոչ եթէ ընդ բա-
զումս ի նոցանէ հաճեցաւ Աստուած,
քանզի տապատաւ անկան յանապատի
6 անդ։ Եւ այն օրինակաւ լինէր վասն
մեր, զի մի՛ լիցուք ցանկացողք չար-
7 եաց, որպէս նոքայն ցանկացան։ Եւ
մի՛ կռապաշիչք լինել որպէս ոմանք
ի նոցանէ, որպէս եւ գրեալ է, Նստաւ
ժողովուրդն ուտել եւ ըմպել եւ յար-
8 եան ի խաղալ։ Եւ մի՛ պոռնկեսցուք,
որպէս ոմանք պոռնկեցան ի նոցանէ,
եւ անկան ի միում աւուր քսան եւ
9 [1]չորք հազարք։ Եւ մի՛ փորձեսցուք
[2]զՏէր, որպէս ոմանք ի նոցանէ փոր-
ձեցին, եւ յօձից անտի սատակեցան։
10 Եւ մի՛ տրտնջեսցուք, որպէս ոմանք
ի նոցանէ տրտնջեցին, եւ կորեան ի
11 սատակչէ անտի։ Այլ այն ամենայն
օրինակաւ անցանէր ընդ նոսա. բայց
գրեցաւ վասն մերոյ խրատու, յորս
վախճան յաւիտենացն եհաս։
12 Դդ. Այսուհետեւ որ համարիցի հաս-
տատուն կալ՝ զգոյշ լիցի, դուցէ ան-
13 կանիցի։ Փորձութիւն ի ձեր վերայ
ոչ է եկեալ բայց [3]ի մարդկանէ. այլ
հաւատարիմ է Աստուած որ ոչ արկցէ
զձեզ ի փորձութիւն առաւել քան զկար
ձեր, այլ արասցէ ընդ փորձութեանն
եւ զելս, զի համբերել կարասջիք։
14 Վասն որոյ, սիրելիք իմ, փախեարուք
15 ի կռապաշտութենէ։ Իբրեւ ընդ իմաս-
տունս խօսիմ. ընտրեցէք ձեզէն զոր
16 ասեմս։ Բաժակն օրհնութեան զոր
օրհնեմք՝ ո՞չ ապաքէն հաղորդութիւն
է արեանն Քրիստոսի. հացն զոր բե-
կանեմք՝ ո՞չ ապաքէն հաղորդութիւն
17 է մարմնոյն Քրիստոսի։ Զի մի հաց,
մի մարմին եմք բազումքս, զի ամե-
նեքեան ի միոջէ հացէ անտի վայելեմք։
18 Տեսէք զԻսրայէլն ըստ մարմնոյ. ո՞չ
ապաքէն որ ուտեն ի զոհին՝ հաղորդք
19 են սեղանոյն։ Իսկ զի՞նչ ասեմ,
թէ զոհեալն իդո՞լ ինչ. եւ կամ կուռն
20 իսկ իդո՞լն ինչ։ Այլ զոր զոհեն հե-
թանոսք, դիւոց եւ ոչ Աստուծոյ զո-
հեն. ոչ կամիմ զձեզ հաղորդս դիւոց
լինել. քանզի ոչ կարէք գրաժակն
Տեառն ըմպել եւ գրաժակն դիւոց.
21 եւ ոչ կարէք ի սեղանոյ Տեառն վա-
22 յելել եւ ի սեղանոյ դիւոց։ Եթէ նա-
խա՞նձ ինչ արկանիցեմք Տեառն, միթէ
զօրագո՞յնք իցեմք քան զնա։
23 Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ
ամենայն ինչ օգուտ է. ամենայն ինչ
ինձ մարթ է, այլ ոչ ամենայն ինչ չինէ։
24 Մի՛ ոք զանձին եւեթ խնդրիցէ, այլ եւ
25 զընկերին։ Ամենայն ինչ որ ի սպան-
դանոցի վաճառի՝ կերայք, եւ մի՛ խոր-
26 հուրդ վասն խղճի մասց. Զի Տեառն է
երկիր լրիւ իւրով։ վջ
27 Եթէ ոք կոչեսցէ զձեզ յանհաւատից
եւ կամիցիք երթալ, ամենայն ինչ որ
առաջի դնիցի, կերայք եւ մի՛ խարհք
28 վասն խղճի մասց։ Այլ եթէ ոք ա-
սասցէ ձեզ թէ Այդ զոհեալ է, մի՛ ու-
տիցէք վասն նորա որ զուշակն եհէ,
29 եւ վասն խղճի [4]մասցն։ Այլ զիմիզ
մասցն ասեմ՝ ոչ զիւրն, այլ զընկե-
րին. իսկ ընդէ՞ր բնաւ ազատութիւնս
30 իմ դատիցի յայլոյ խղճէ մասց։ Եթէ
ես [5]չնորհօք վայելեմ, ընդէ՞ր հայհոյի-
31 ցիմ, վասն որոյ ես գոհանամ։ Արդ
եթէ ուտիցէք, եթէ ըմպիցէք, եթէ
զինչ եւ գործիցէք, ամենայն ինչ ի
32 փառս Աստուծոյ արասջիք։ Առանց
գայթակղութեան գնելոյ Հրէից եւ հե-
թանոսաց լինիցիք եւ եկեղեցւոյն Աս-
33 տուծոյ։ Որպէս եւ ես ամենեւին ա-
մենեցուն հաճոյ լինիմ, ոչ խնդրեմ
զանձին օգուտ, այլ զբազմացն՝ զի ապ-
րեսցին։

Գլ. ԺԱ

1 Նմանողք լինիմ եղերուք, որպէս եւ
ես Քրիստոսի։

[1] Բազում, երեք
[2] Ոմանք, զՔրիստոս
[3] Յոյն, մարդկեղէն

[4] Ոմանք, մասցն, զի Տեառն է երկիր լրիւ իւրով
[5] Կամ, չնորհակալութեամբ

2 Դ. Գովեմ [1]զձեզ զի զամենայն ինչ զիս յիշէք, եւ որպէս աւանդեցի ձեզ,
3 զաւանդութիւնսն ունիցիք։ Կամիմ զի գիտիցէք դուք, եթէ առն ամենայնի զլուխ Քրիստոս է, եւ զլուխ կնոջ՝ այր, եւ զլուխ Քրիստոսի՝ Աս-
4 տուած։ Ամենայն այր յորժամ յաղօթս կայցէ կամ մարգարէանայցէ եւ զգլուխն ծածկեալ ունիցի, յամօթ
5 առնէ զգլուխն իւր։ Եւ ամենայն կին յորժամ յաղօթս կայցէ կամ մարգարէանայցէ բացաւ գլխով, յամօթ առնէ զգլուխն իւր, զի այնպէս համարէ [2]է
6 գերծեալ իցէ։ Զի եթէ ոչ ածղեսցի կին, փոքրեսցէ գներս իւր. ապա եթէ անպատեհ է կնոջ փոքրել կամ գեր-
7 ծուլ, ածղեսցի։ Առն մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ իւր, զի պատկեր եւ փառք Աստուծոյ է. իսկ կին փառք
8 առն իւրոյ է։ Զի ոչ եթէ այր ի կնոջէ
9 է, այլ կին՝ յառնէ։ Քանզի ոչ իսկ հաստատեցաւ այր վասն կնոջ, այլ՝ կին
10 վասն առն։ Վասն այնորիկ պարտ կինն [2]չուք գնել գլխոյն վասն հրեշ-
11 տակաց։ Բայց ոչ կին՝ առանց առն, եւ ոչ այր՝ առանց կնոջ ի Տէր։
12 Զի որպէս կին յառնէ, նոյնպէս եւ այր՝ ի կնոջէ, բայց ամենայն յԱստուծոյ։
13 Ա՛յլ դուք ձեզէն տուք գիրաւդ. արժա՞ն է կնոջ մարդոյ հոգանի յաղօթս
14 կալ առաջի Աստուծոյ։ Եւ ո՞չ բնութիւնն իսկ ուսուցանէ զձեզ, զի այր, եթէ գիսաւոր է, անարգանք են նմա.
15 Բայց կին, եթէ գիսաւոր է, փառք են նմա. զի զէնք փոխանակ զգեստու-
16 տուեալ են նմա։ Ասպա թէ ոք կամի հակառակող լինել, մեք չունիմք այնպիսի սովորութիւն, եւ ոչ եկեղեցիքն Աստուծոյ։ ՎԺ
17 Ա՛յլ զայս պատուիրեմ, ոչ որպէս թէ գովիցեմ, զի ոչ ի լաւ անդր՝ այլ
18 ի վատթարն [3]նկրտիք։ Նախ՝ յորժամ ի մի վայր ժողովիցիք եկեղեցին, լսեմ եթէ հերձուածք գոն ի ձեզ, եւ սակաւ
19 ինչ հաւատացի։ Բայց եւ հերձուածք լինելոց են ի ձեզ, զի որ ընտիրքն ի-
20 ցին ի ձեզ՝ երեւեսցին։ Եւ արդ ի ժողովեն ձեզ ի միասին՝ [4]ոչ է տուն
21 Տեառն ձեզ տեղի հաց ուտելոյ։ Զի իւրաքանչիւր ոք զիւր ընթրիս յառաջանայ ուտել. եւ ոմն քաղցեալ՝ եւ
22 ոմն արբեալ։ Միթէ տուն ո՞չ ունիցիք ուտելոյ եւ ըմպելոյ. եթէ զեկեղեցի՞ն Աստուծոյ արհամարհիցէք, եւ յամօթ առնէք զչքաւորսն. զի՞նչ
23 [5]ասացից. գովեցի՞ց [6]զձեզ յայդմ. ոչ։ Գովեմ։ Զի ես ընկալայ ի Տեառնէ, զոր եւ ձեզն աւանդեցի, եթէ Տէր Յիսուս ի գիշերին յորում մատնէր,
24 առ հաց. Գոհացաւ, եբեկ եւ [7]ասէ, Այս է իմ մարմին, որ վասն [8]ձեր. զայս
25 արարէք առ իմոյ յիշատակի։ Նոյնպէս եւ զբաժակն յետ ընթրեացն [9]առ եւ ասէ, Այս բաժակ նոր ուխտ է իմով արեամբ. զայս արարէք քանիցս անդամ եթէ ըմպիցէք, առ իմոյ յիշատակի։
26 Քանիսս անգամ եթէ ուտիցէք զհացս զայս եւ զբաժակս ըմպիցէք, զմահն Տեառն պատմիցէք, մինչեւ եկեսցէ
27 նա։ Այսուհետեւ որ ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի
28 մարմնոյ եւ արեանն Տեառն։ Փորձեսցէ մարդ զանձն իւր, եւ ապա ի հացէ անտի կերիցէ եւ ի բաժակէն արբիցէ։
29 Զի որ ուտէ եւ ըմպէ [10]անարժանութեամբ՝ դատաստան անձին իւրում ուտէ եւ ըմպէ, զի ոչ խարէ զմարմինն [10]Տեառն։ Վասն այնորիկ խակ են
30 ի ձեզ բազումք հիւանդք եւ ախտաժէտք, եւ չատ եւս այն են որ եւ
31 ննջեցեալքն իսկ իցեն։ Զի եթէ զանձինս քննէաք, ապա ոչ դատապար-
32 տէաք։ Եւ եթէ դատիմք, ի Տեառնէ խրատիմք. զի մի՛ ընդ աշխարհի դատապարտեսցուք։ Այսուհետեւ, եղբարք, յորժամ ի մի վայր ժողովիցիք
34 ուտել, միմեանց սպասիցիք։ Ասպա թէ ոք քաղցեալ իցէ, ի տան իւրում կերիցէ, զի մի՛ ի դատապարտութիւն ժողովիցիք։ Բայց զայլ ինչ, յորժամ եկիցեմ, կարգեցից։

---

[1] Ոմանք, զձեզ, եղբարք,
[2] Ցայլսն, իշխանութիւն
[3] Ցայլսն, ժողովիք
[4] Ցայլսն, ոչ է զՏէրունական ընթրիսն ուտել
[5] Ցայլսն, ասացից ձեզ
[6] Ոմանք, զձեզ. յայդմ ոչ
[7] Ոմանք, ասէ, Առէք կերայք, այս
[8] Ոմանք, ձեր բեկանի
[9] Ի ցաւն պակաս
[10] Ցոմանս պակաս

ԳԼ· ԺԲ

1 ԵԿ· Այլ վասն հոգեւորացն, եղբարք,
2 ոչ կամիմ եթէ տգիտաք իցէք։ Գիտէք
իսկ զի մինչ հեթանոսքն էիք, առ
կուռսն անմտունսն որպէս կամէիք,
3 եւ գայիք։ վասն որոյ ցուցանեմ ձեզ,
զի ոչ ոք Հոգւով Աստուծոյ խօսի՝ եւ
ասիցէ թէ նզովեալ Յիսուս. եւ ոչ ոք
կարէ ասել Տէր զՅիսուս, եթէ ոչ
Հոգւովն Սրբով։
4 Բաժիկք եւ բաժինք չնորհացն են,
5 այլ Հոգի նոյն է։ եւ բաժինք պաշ-
6 տաման են, այլ Տէր նոյն է։ եւ
բաժինք յաջողութեանցն են, այլ Աս-
տուած նոյն է որ յաջողէ զամենայն
7 յամենայնի։ Բայց իւրաքանչիւր ումեք
տուեալ է յայտնութիւն Հոգւոյն՝ [1]առ
8 իւրաքանչիւր օգուտ։ Ումեմն ի Հոգ-
ւոյն տուեալ է բան իմաստութեան.
այլումն՝ բան գիտութեան ըստ նմին
9 Հոգւոյ. Միւսումն հաւատք՝ նովին
Հոգւով. այլումն շնորհք բժշկութեանցն՝
10 նովին Հոգւով. Այլումն՝ յաջողու-
թիւնք զօրութեանցն, այլումն՝ մարգա-
բէութիւն, այլումն՝ ընտրութիւն հոգ-
ւոցն, այլումն՝ տեսակ լեզուաց, այլումն՝
11 թարգմանութիւն լեզուաց։ Այլ զայս
ամենայն յաջողէ մի եւ նոյն Հոգի, եւ
բաժանէ իւրաքանչիւր որպէս եւ կամի։
12 ԵԴ· Որպէս մարմին մի է եւ անդամս
բազումս ունի, եւ ամենայն բազում
անդամք մարմնոյն մի մարմին է, նոյն-
13 պէս եւ Քրիստոս։ Քանզի միով Հոգ-
ւով մեք ամենեքեան ի մի մարմին
մկրտեցաք, եթէ Հրեայք, եթէ հեթա-
նոսք, եթէ ծառայք, եթէ ազատք,
14 ամենեքին զմի Հոգի արբաք։ Քանզի
մարմին ոչ մի անդամ է, այլ բազում։
15 Եթէ ասիցէ ոտն, Զի չեմ ձեռն, չեմ
ի մարմնոյ անտի, ոչ այնու չիցէ ի
16 մարմնոյ անտի։ Եւ եթէ ասիցէ ունկն,
վասն զի չեմ աչն, չեմ ի մարմնոյ
անտի, ոչ այնու չիցէ ի մարմնոյ ան-
17 տի։ Եթէ ամենայն մարմինն աչն էր,
ո՞ւր էր ունկն. Եւ եթէ ամենայն լու-
18 ռք էին, ո՞ւր էին հոտոտելիք։ Բայց
արդ Աստուած եդ զանդամս, զմի
մի իւրաքանչիւր ի նոցանէ ի մարմնին,
19 որպէս եւ կամեցաւ։ Ապա թէ էր ա-
մենայն մի անդամ, ո՞ւր էր մարմին։
20 Բայց արդ անդամք բազումք են, եւ
21 մարմին մի։ Ոչ կարէ ակն ասել ձեռն,
թէ Չեւ ինձ պիտոյ, եւ կամ գլուխ
22 գլխոյ թէ Չէք ինձ պիտոյ։ Այլ
առաւել որ թուին անդամք մարմնոյն
թէ տկարագոյնք իցեն, կարեւորք են.
23 Եւ որ թուինն թէ անարգագոյնք իցեն
մարմնոյն, այնց առաւելագոյն պատիւ
առնեմք. եւ ամօթագոյնքն մեր առաւել
24 եւս պարկեշտութիւն ունին։ Եւ պար-
կեշտից մերոց չէ ինչ պիտոյ. քանզի
Աստուած խառնեաց զմարմինն. եւ
25 նուազնն առաւել եւս պատիւ ետ. Զի
մի՛ իցեն հերձուածք ի մարմնի անդ,
այլ զի նոյնք զմիմեանց հոգայցեն ան-
26 դամքն։ Եւ եթէ վշտանայ մի ան-
դամն, վշտանան ամենայն անդամքն
ընդ նմա. եւ եթէ փառաւորի մի ան-
դամն, խնդան ամենայն անդամքն ընդ
27 նմա։ Այլ դուք մարմին Քրիստոսի էք
եւ անդամք [2]յանդամոց նորա՝։ ՎՋ
28 Եւ զորս եդն Աստուած յեկեղեցւոջ՝
այս են. նախ զառաքեալս, երկրորդ
զմարգարէս, երրորդ զվարդապետս,
ապա զօրութիւնս, ապա շնորհս բժշկ-
ութեանց, օգնութիւնս, վարիչս,
տեսակ լեզուաց, [3]թարգմանութիւնս
29 լեզուաց՝։ Միթէ ամենեքին առա-
քեալք իցեն. միթէ ամենեքին մար-
գարէք իցեն. միթէ ամենեքին վար-
դապետք իցեն. միթէ ամենեքին զօ-
30 րութիւնք իցեն. Միթէ ամենեքին
շնորհս բժշկութեան ունիցին. միթէ
ամենեքին ի լեզուս խօսիցին. միթէ
ամենեքին թարգմանիցեն։
31 Բայց նախանձաւորս լերուք շնորհացն
որ լաւն են. այլ եւս առաւել եւս ճա-
նապարհ ցուցանեմ ձեզ։

ԳԼ· ԺԳ

1 ԵԶ· Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ
եւ զհրեշտակաց, եւ սէր ոչ ունիցիմ,
եղէ ես իբրեւ զպղինձ որ հնչէ, կամ
2 իբրեւ զձնծղայս որ զօգանչեն։ Եւ
եթէ ունիցիմ զմարգարէութիւն, եւ
գիտիցեմ զխորհուրդս ամենայն եւ

[1] Յայն, յօգուտ

[2] Բազմ., ուրոյն ուրոյն
[3] Ի ցանն գիտ.

զամենայն պիտութիւն, եւ եթէ ուս-
նիցիմ զամենայն հաւատս մինչեւ զլե-
րինս փոփոխել, եւ սէր ոչ ունիցիմ,
3 ոչինչ եմ։ Եւ եթէ ջամբիցեմ զամե-
նայն ինչս իմ աղքատաց, եւ մատնիս-
ցեմ զմարմինս իմ այրուելն, եւ սէր
4 ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ։ Սէր եր-
կայնամիտ է, քաղցրանայ. սէր ոչ նա-
խանձի, ոչ ամբարհաւաճէ, ոչ հպար-
5 տանայ. Ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւրն,
6 ոչ զրդռի, ոչ խորհի զչար. Ոչ ինդայ
ընդ անիրաւութիւն, այլ ինդայ ընդ
7 ստուգութիւն. Ամենայնի տեւէ, ա-
մենայնի հաւատայ, [1]ամենեւին յու-
8 սայ, ամենայնի համբերէ։ Սէր ոչ եր-
բեք անկանի. եթէ մարգարէութիւնք
են, խափանեսցին, եթէ լեզուք՝ լռես-
ցին, եթէ գիտութիւն՝ խափանեսցի։
9 Զանգի վնդր ի չատէ գիտեմք, եւ
10 վնդր ի չատէ մարգարէանամք։ Այլ
յորժամ եկեսցէ կատարումն, վնդր
ի չատէս խափանեսցի։
11 ԶԿ. Մինչ տղայն էի, իբրեւ տղայ
խօսէի, իբրեւ տղայ խորհէի, իբրեւ
տղայ համարէի. այլ յորժամ եղէ այր,
տղայութեանն ի բաց խափանեցի։
12 Այժմ անսանձիւք իբրեւ ընդ հայելի
օրինակաւ, այլ յայնժամ՝ դէմ յանդիմ-
ման. այժմ խնամուռս եմ վնդր ի չա-
տէ, այլ յայնժամ գիտացից, որպէս եւ
13 նայն ծանեալ գիտ։ Բայց արդ մնան
հաւատք, յոյս, սէր, սոքա երիքեան,
եւ մնծ քան զսոսա սէր է։

ԳԼ. ԺԴ

1 Զհետ երթայք սիրոյ, եւ նախանձա-
ւոր լերուք հոգեւորացն առաւել զի
2 եւ գուք մարգարէանայցէք։ Զի որ
խօսի ի լեզուս՝ ոչ ընդ մարդկան խօսի,
այլ՝ ընդ Աստուծոյ. զի ոչ ոք է որ լսէ,
3 բայց հոգւով խօսի խորհուրդս։ Իսկ
որ մարգարէանայն՝ մարդկան խօսի շի-
նուածին եւ սիրելութեան եւ սիւս-
4 փութեան։ Որ խօսի ի լեզուս՝ զանձն
իւր շինէ. եւ որ մարգարէանայն՝
5 զեկեղեցին շինէ։ Կամիմ զի ամենե-
քեան գուք ի լեզուս խօսիցիք, առաւել՝
զի մարգարէանայցէք, զի լաւ է որ
մարգարէանայն՝ քան զայն որ ի լե-
զուսն խօսիցի. բայց եթէ թարգմա-

[1]Յ-ին, ամենայնի

նեսցէ, զի եկեղեցին շինութիւն առ-
նուցու։ ՎԶ
6 Բայց այժմ, եղբարք, եթէ եկից առ
ձեզ ի լեզուս խօսելով, զինչ օգուտ լի-
նիցիմ ձեզ եթէ ոչ խօսիցիմ կամ յայտ-
նութեամբ կամ գիտութեամբ կամ
մարգարէութեամբ կամ վարդապե-
7 տութեամբ։ Այնպէս որպէս անշունչքն
ձայն տայցեն, եթէ՝ փող եւ եթէ՝ քնար,
զի եթէ ընտրութիւն ինչ բարբառոյն
չառնիցեն, զիա՞րդ ճանաչիցի փողոյն
8 հարկանել կամ քնարին հնչել։ Փանդի
եթէ խառնաձայն արձակիցէ փողն, ո՞վ
9 պատրաստեսցի ի պատերազմ։ Նոյն-
պէս եւ գուք եթէ լեզուօք ոչ նշա-
նակիցէք զբանն, զիա՞րդ ճանաչիցին
խօսքն. զի լինիցիք այնուհետեւ իբրեւ
10 ընդ օդս խօսեցեալք։ Զի այնչափ ազգք
ձայնից են յաշխարհի, եւ ոչինչ է ան-
11 ձայն։ Իսկ արդ՝ եթէ ոչ գիտիցեմ
զզօրութիւն ձայնին, լինիցիմ այնմ որ
խօսիցին ընդ իմ՝ խուժ, եւ նա որ խօ-
12 սիցին ընդ իս՝ զուժ։ Նոյնպէս եւ գուք
քանզի նախանձողք էք հոգեւորացն.
վասն չինածոյ եկեղեցւոյն՝ [2]խնդրէք
13 զի առաւել եւս իցէք։ Վասն որոյ որ
խօսին ի լեզուս՝ աղօթս արասցէ զի եւ
14 թարգմանիցէ։ Եթէ կամ յաղօթս լեզ-
ուաւ, հոգին իմ կայ յաղօթս, այլ միտք
15 իմ անպտուղ են։ Իսկ արդ՝ զինչ իցէ.
կացից յաղօթս հոգւով, կացից յաղօթս
եւ մտօք. սաղմոս ասացից հոգւով,
16 սաղմոս ասացից եւ մտօք։ Ապա թէ
ոչ՝ եթէ օրհնեսցես հոգւով, որ կայցէ
ի տեղւոջ տգիտին, զիա՞րդ ասիցէ ի
քում գովութեանն զԱմէնն. քանզի
17 դոր ասեսն՝ նա ոչ գիտէ։ Զի գուբարե-
բանդ գոհանաս, այլ ընկերն ոչ շինի։
18 ԶԳ. Գոհանամ զԱստուծոյ [3]վասն ա-
մենեցուն ձեր՝ առաւել լեզուաւ խօ-
19 սիմ։ Այլ ի մէջ եկեղեցւոյն կամիմ
բանս հինգ մտօք խօսել զի եւ զայլս
խրատեցից, քան զբազում բանս՝ լեզ-
20 ուաւ։ Եղբարք, մի՛ լինիք տղայք
մտօք, այլ ի չարեաց տղայացարուք,
21 եւ մտօք կատարեալք լինիջիք։ Փանդի
եւ յօրէնսն գրեալ է եթէ Ըստար լեզուս
եւ ի շրթունս օտարոտիս խօսեցայց ընդ
ժողովրդեանդ ընդ այդմիկ, սակայն

[2]Յ-ին, խնդրեցէք
[3]Յ-ին, զի քան զամենեսին զձեզ

22 եւ ոչ այնպէս լուիցեն [1]ինձ՝ Ասպա
ուրեմն լեզուք նշանակի վասն են, ոչ
հաւատացելոց, այլ՝ անհաւատից. իսկ
մարգարէութիւն՝ ոչ անհաւատից, այլ՝
23 հաւատացելոց: Ասպա եթէ գայցէ եկե-
ղեցին ամենայն ի մի վայր, եւ ամենե-
քեան ի լեզուս խօսիցին, եւ մտանիցեն
անդր տղաք կամ անհաւատք, ո՞չ ա-
24 սիցեն եթէ զի մոլիք: Իսկ եթէ ամե-
նեքեան մարգարէանայցեն, եւ մտանիցէ
ոք անդր անհաւատ կամ տգէտ, յան-
դիմանի յամենեցունց, եւ քննի յամե-
25 նեցունց, եւ դաղտնիք սրտի նորա
յայտնի լինին. եւ ասպա անկեալ ի
վերայ երեսաց՝ երկիր պագանիցէ Աս-
տուծոյ, եւ խոստովան լինիցի թէ ար-
դարեւ Աստուած է ի ձեզ:
26 ԶԳ. Եւ արդ զի՞նչ իցէ, եղբարք,
յորժամ ի մի վայր ժողովիցիք, իւրա-
քանչիւր ոք իձէնջ եթէ սաղմոս ու-
նիցի, եթէ վարդապետութիւն ունիցի,
եթէ յայտնութիւն ունիցի, եթէ լե-
զուս ունիցի, եթէ թարգմանութիւն
ունիցի, ամենայն ի չինած լինիցի:
27 Եթէ ի լեզուս ոք խօսիցի՝ երկուք, եւ
եթէ եւս աւելի՝ երիք, եւ ասպա մի
ըստ միոջէ, եւ միոյն թարգմանեսցէ:
28 Ասպա եթէ չիցէ ոք որ թարգմանիցէ,
լուռ լիցի յեկեղեցւոջն, ընդ միտս իւր
29 եւ ընդ Աստուծոյ խօսեսցի: Բայց
մարգարէք երկու կամ երիք խօսես-
30 ցին, եւ այլքն քննեսցեն: Ասպա եթէ
այլ ումիք որ նստիցին՝ յայտնեսցի,
31 առաջինն լռեսցէ: Զանգի կարող էք
ամենեքեան մի ըստ միոջէ մարգարէ-
անալ, զի ամենեքեան ուսանիցին եւ
32 ամենեքեան մխիթարեսցին: Զանգի
եւ ոգիք իսկ մարգարէից՝ մարգարէից
33 հնազանդին: Զի ոչ եթէ խռովութեան
է Աստուած, այլ՝ խաղաղութեան, որ-
պէս յամենայն եկեղեցիս սրբոց:
34 [2]Կանայք [3]յամենայն եկեղեցիս՝ լուռ
լիցին, զի ոչ հրամայի նոցա խօսել,
այլ՝ հնազանդ լինել, որպէս եւ օրէնքն
35 իսկ ասեն: Ասպա եթէ ուսանել ինչ
կամիցին, ի տան զարս իւրեանց հար-
ցանիցեն. քանզի անպատեհ է կնոջ
36 մարդոյ յեկեղեցւոջ խօսել: Եթէ ի
ձէնջ բանն Աստուծոյ ել, եւ կամ թէ
37 առ ձե՞զ միայն եհաս: Իսկ եթէ ոք հա-
մարիցի մարգարէ լինել կամ հոգեւոր,
գիտասցէ զոր գրեմ առ ձեզ թէ
38 Տեառն պատուիրանք են: Ասպա թէ ոք
39 տգիտանայցէ, տգիտասցի: Ա՛յսուհե-
տեւ, եղբարք, նախանձայարուք մար-
գարէանալ, եւ զխօսելն լեզուօք մի՛
40 արգելուք: Եւ ամենայն ինչ [4]ձեր պար-
կեշտութեամբ եւ ըստ կարգի լինիցի:

ԳԼ. ԺԵ

1 Ցուցանեմ ձեզ, եղբարք, զաւետա-
րանն [5]իմ, զոր աւետարանեցի ձեզ,
զոր եւ ընկալարուք, յոր եւ հաստատ-
2 եալդ էք. Որով ապրեցէքն, որով բա-
նիւ աւետարանեցի ձեզ թէ ունիցիք.
բայց եթէ ի զուր ինչ հաւատացէք:
3 Զի ես ձեզ զայն նախ աւանդեցի՝ զոր
եւ ետն ընկալայ, եթէ Քրիստոս մե-
ռաւ վասն մեղաց մերոց ըստ գրոց,
4 եւ զի թաղեցաւ, թէ՝ եւ յարեաւ յա-
5 ւուր երրորդի ըստ գրոց. Եւ թէ՝ ե-
րեւեցաւ Կեփայի, եւ ապա երկոտա-
6 նեցին. Ապա երեւեցաւ աւելի եւս
քան զհինգ հարեւր եղբարց միանգա-
մայն. յորոց բազումք կան մինչեւ
7 ցայժմ, եւ ոմանք ննջեցին. Եւ ապա
երեւեցաւ Յակովբայ, ապա առաքե-
8 լոցն ամենեցունն: Հուսկ յետոյ քան
զամենեսին իբրեւ անարգի միոջ՝ երե-
9 ւեցաւ եւ ինձ: Զի ես իսկ եմ արուպան
առաքելոց, որ չեմ իսկ արժանի թէ
կոչեցայց առաքեալ, զի հալածեցի զե-
10 կեղեցին Աստուծոյ: Այլ շնորհօքն Աս-
տուծոյ եմ զինչ եւ իցեմ. եւ շնորհք
նորա որ յիս՝ ընդունայն ինչ ոչ եղեն.
այլ առաւել քան զնոսա ամենեսեան
վաստակեցի, եւ ոչ եթէ ես՝ այլ
11 շնորհքն Աստուծոյ որ ընդ իս: Արդ
եթէ՛ ես եւ եթէ՛ նոքա այսպէս քարո-
զեցաք, եւ դուք այսպէս հաւատացէք:
12 Ասպա եթէ Քրիստոս քարոզի թէ ի
մեռելոց յարուցեալ է, զիա՞րդ ասեն
ոմանք ի ձէնջ եթէ յարութիւն մե-
13 ռելոց չիք: Եթէ յարութիւն մեռելոց
չիք, ասպա եւ Քրիստոս չէ յարուցեալ:
14 Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ,
ընդունայն է քարոզութիւնն մեր, ըն-
15 դունայն են եւ հաւատքն ձեր. Եւ գտա-
նիցիմք սուտ վկայք Աստուծոյ. զի

[1] Յոյն, ինձ, ասէ Տէր
[2] Որ՚ոշ, կանայք ձեր
[3] Յոյն, եկեղեցիս
[4] Ի ցուցակ գլխոյ
[5] Ի բազմաց գլխոյ

վկայեցաք զԱստուծոյ թէ Յարոյց զՔրիստոս . զոր ոչն արդեւք յարոյց ,
16 եթէ մեռեալք ոչ յառնիցին : Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն , ապա եւ Քրիստոս
17 չէ յարուցեալ : Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ , ընդունայն են հաւատքն
ձեր. եւ տակաւին [1]ի նմին մեղս կայ-
18 ցէք : [2]Իսկ արդ որ ննջեցին ի Քրիստոս ,
19 կորեան արդեւք՞ : Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք ի Քրիստոս , ո-
ղորմելի եմք քան զամենայն մարդիկ :
20 ԻԴ. Այլ արդ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց , առաջին պտուղ ննջեցելոց .
21 Քանզի մարդով եղեւ մահ , եւ մարդով
22 յարութիւն մեռելոց : Որպէս Ադա-
մաւն ամենեքեան մեռանին , նոյնպէս եւ Քրիստոսիւ ամենեքեան կենդանաս-
23 ցին : Իւրաքանչիւր յիւրում կարգի .
նախ Քրիստոս , եւ ապա Քրիստոսականք
24 ի գալստեան նորա : Եւ ապա կատա-
րած , յորժամ տացէ ի ձեռս գԹագա-
ւորութիւնն Աստուծոյ եւ Հօր , յոր-
ժամ խափանեսցէ զամենայն իշխանու-
թիւնս եւ զամենայն պետութիւնս եւ
25 զզօրութիւնս : Զի պարտ է նմա թա-
գաւորել մինչեւ դիցէ զամենայն թըշ-
26 նամիս ի ներքոյ ոտից իւրոց : Յետին
թշնամին խափանի՝ մահ . եւ զամե-
նայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ո-
27 տից նորա : Այլ յորժամ ասիցէ թէ
Հնազանդեալ է նմա ամենայն , յայտ է
թէ բաց յայնմանէ որ հնազանդեցոյց
28 նմա զամենայն : Այլ յորժամ հնազան-
դեսցի նմա ամենայն՝ յայնժամ եւ ինքն
Որդի հնազանդեսցի այնմ , որ հնա-
զանդեցոյց նմա զամենայն . զի եղիցի
29 Աստուած ամենայն յամենայնի : Ապա
թէ ոչ՝ զինչ գործիցեն որ մկրտին-
ցին վասն մեռելոց , եթէ արդարեւ
մեռեալք ոչ յառնիցին . ընդէ՞ր իսկ
30 մկրտին վասն նոցա . Ընդէ՞ր եւ
31 մեք ձգնիմք յամենայն ժամ . [3]Եւ հա-
նապազ մեռանիմք՝ , ի պարծանս ձեր
երդնում , [4]եղբարք , զոր ունիմ ի Քրիս-
32 տոս Յիսուս ի Տէր մեր : Եթէ [5]վասն
մարդոյ ի գազանամարտս ելեալ էի ես-
փեսոս , զինչ օգուտ էր [6]ինձ , եթէ
մեռեալք ոչ յառնեն . կերիցուք՝ արբ-
33 ցուք , քանզի վաղիւ մեռանիմք : Մի՛

խաբիք . ապականեն զբարս քաղցունս
բանք չարք :
34 ԶԵ. Սթափեցարուք արդարութեամբ
եւ մի՛ մեզանչէք , զի զգիտութիւն
Աստուծոյ ոչ ունին ոմանք . առ ա-
մօթոյ ձերոյ ասեմ :
35 Այլ ասիցէ ոք , Զիա՞րդ յառնեն մեռ-
եալք , կամ որո՞վ մարմնով գայցեն :
36 Անմիտ , դու զոր սերմանեսն՝ ոչ կեն-
37 դանայ , եթէ ոչ մեռանիցի : Եւ զոր
սերմանեսն , ոչ զնոյն մարմինն որ ծնա-
նելոցն իցէ սերմանես , այլ հատ մերկ ,
եթէ՛ ցորենոյ իցէ եւ եթէ՛ այլոց սեր-
38 մանեայ : Եւ Աստուած տայ նմա մար-
մին որպէս եւ կամի , եւ իւրաքանչիւր
39 սերմանեացն՝ զիւր մարմին : Ոչ ամե-
նայն մարմին նոյն մարմին է , այլ՝ այլ
մարմին է մարդկան եւ այլ մարմին
անասնոց , այլ մարմին թռչնոց եւ այլ
40 մարմին ձկանց : Եւ՛ մարմինք երկնա-
ւորք , եւ՛ մարմինք երկրաւորք . այլ՝
այլ փառք երկնաւորաց են , եւ այլ
41 փառք՝ երկրաւորաց : Այլ փառք արե-
գական եւ այլ փառք՝ լուսնի , եւ այլ
փառք աստեղաց . եւ աստղ քան զաստղ
42 առաւել է փառօք : Նոյնպէս եւ յա-
րութիւն մեռելոց . սերմանի ապական-
նութեամբ եւ յառնէ առանց ապական-
43 նութեան . Սերմանի անարգութեամբ
եւ յառնէ փառօք . սերմանի տկարու-
44 թեամբ եւ յառնէ զօրութեամբ . Սեր-
մանի մարմին հոգեւոր եւ յառնէ մար-
մին հոգեւոր . եթէ գոյ մարմին հոգե-
45 ւոր , գոյ եւ հոգեւոր . Այսպէս եւ
գրեալ է , եղեւ մարդն առաջին Ադամ
ի չունչ կենդանի , երկրորդ Ադամ՝ ի
46 հոգի կենդանարար : Բայց ոչ նախ հո-
գեւորն . այլ հնչաւորն , եւ ապա հո-
47 գեւորն : Առաջին մարդն՝ յերկրէ հողե-
ղէն , իսկ երկրորդ մարդն՝ Տէր յերկ-
48 նից : Որպէս հողեղէնն , նոյնպէս եւ
հողեղէնքն . եւ որպէս երկնաւորն ,
49 նոյնպէս եւ երկնաւորքն : Եւ որպէս
զկերպաւ զպատկեր հողեղինին , զկեց-
ցուք եւ զպատկեր երկնաւորին :
50 ԶԶ. Բայց զայս ասեմ , եղբարք , եթէ
մարմին եւ արիւն զարքայութիւնն
Աստուծոյ ժառանգել ոչ կարեն . եւ ոչ
ապականութիւն զանապականութիւնն

[1] Ց-ՅՒ, ի մեզս ձեր
[2] Ց-ՅՒ, Նոյնպէս և որ ննջեցինն ի Քրիստոս , կորեան
[3] Բ-ՎԾ-Ի, Ես Հանապազ մեռանիմ
[4] Ց-ՀԱՒ պատ [5] Կա՛մ, քան. եթէ մեռեալք ոչ յառնեն , կերիցուք , եւլն.
[6] Կա՛մ, քան

51 ժառանգէ։ Արդ խորհուրդ մի ասեմ
ձեզ, [1]Ամենեքեան ննջեսցուք, այլ ոչ
52 եթէ ամենեքեան։ Նորոգեսցուք յանա-
կնթածակի՝ յակնթարթի ի վերջ ձա-
գին, քանզի փող հարկանի, եւ մեռե-
ալքն յարիցեն առանց ապականուե-
53 լեան, եւ մեք նորոգեսցուք։ Զի
պարտ է ապականուելեանս այսմիկ
զգենուլ զանապականութիւն, եւ մահ-
կանացուիս այսմիկ՝ զգենուլ զանմա-
54 հութիւն։ Ապ. Այլ յորժամ մահկանացուս
այս զգեցցի զանմահութիւն, եւ ա-
պականելիս զանապականութիւն,
յայնժամ եղիցի բանն որ գրեցաւ եթէ
55 Ընկաւ մահ ի յաղթութիւն։ Ո՞ւր է,
մահ, յաղթութիւնքդ. ո՞ւր է, [2]ժահրք,
56 խայթոց քո։ Խայթոց մահու մեղք են,
57 եւ զօրութիւն մեղաց՝ օրէնք։ Այլ
չնո՛րհք Աստուծոյ, որ ետ մեզ զյաղ-
թութիւն ի ձեռն Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի։
58 Ա.Դ. Ապաքէն, եղբարք իմ սի-
րելիք, հաստատուն եղերուք, անշարժ
կացէք, առատել լերուք ի գործ Տեառն
յամենայն ժամ. գիտասջիք զի վաս-
տակք ձեր ոչ են ընդունայն առաջի
Տեառն։

Գլ. ԺԶ

1 Ա.յլ վասն հաւուրն որ ի սուրբսն է,
որպէս պատուիրեաւ եւս եկեղեցեացն
Գաղատացւոց, նոյնպէս եւ դուք առ-
2 նելիք։ Ըստ իւրաքանչիւր միաշաբա-
թուոյն իւրաքանչիւր ոք ի ձէնջ [3]անձին
իւրում դանձեսցէ՝ որ ինչ՝ եւ յաջո-
3 ղեսցի։ Զի մի՛ յորժամ գայցեմ, յայն-
ժամ հաւքիւք լինելոյն. այլ յորժամ եկիցի,
զոր միանգամ [4]ընտրեցէք թղթովք
զնոսա՝ առաքեցից տանել զշնորհն
4 ձեր յերուսաղէմ։ Ապա թէ արժան
իցէ եւ ինձ երթալ, ընդ իս երթիցեն։
5 Այլ եկից առ ձեզ յորժամ ի Մակեդո-
նիա անցանիցեմ, [5]քանզի իրրեւ չրջե-
6 ցայց ընդ Մակեդոնիա՝, Թէ դէպ լիցի,
առ ձեզ մնայիցս եւ կամ ձմերեցից, դի
զուք յառաքիցէք զիս ուր եւ երթ-
7 թալոյն եմ։ Զի ոչ կամիմ զձեզ այժմ
ի հարեւանցի տեսանել. ակն ունիմ
ժամանակ ինչ առնել առ ձեզ, եթէ
8 Տէր հրամայեսցէ։ Բայց այժմ լինիմ
9 յԵփեսոս մինչեւ ցՊենտակոստէ. Զի
դուռն բացեալ է ինձ մեծ եւ կարեւոր,
եւ հակառակորդք բազումք են։
10 Արդ եթէ եկեսցէ Տիմոթէոս, տես-
ջիք զիարդ աներկեւղ լինիցի առ ձեզ.
զի զգործ Տեառն գործէ, որպէս եւ
11 ես։ Մի՛ ոք զնա անդամանեսցէ, եւ
յուղարկեսջիք զնա խաղաղութեամբ
զի եկեսցէ առ իս. քանզի ակն ունիմ
նմա եղբարբք հանդերձ։
12 Ա.Զ. Այլ վասն Ապողոսի եղբօր՝ յոյժ
աղաչեցի զնա զի եկեսցէ առ ձեզ եղ-
բարբք հանդերձ. եւ արդեւք ոչ էին
կամք զի այժմ եկեսցէ, այլ եկեսցէ
յորժամ եւ պարապեսցէ։
13 Հսկեցէք, հաստատուն կացէք ի հա-
ւատս, ժրացարուք, զօրացարուք։
14 Ամենայն ինչ ձեր սիրով լիցի։
15 Աղաչեմ զձեզ, եղբարք, գիտէք
զտունն [6]Ստեփանեայ եւ Փորտու-
նատեայ որ են՝ պտուղ Աքայեցւոց.
եւ ի պաշտօն սրբոցն կարգեցին զան-
16 ձինս. Զի եւ դուք հնազանդ լինիցիք
այնպիսեացն, եւ ամենայնի որ գոր-
17 ծակից իցէ եւ վաստակակից։ Ուրախ
եղէ ի պալ Ստեփանեայ եւ Փորտու-
նատեայ եւ Աքայիկոսի, զի զձեր պա-
18 կասութիւն նոքա լցին. Գանզի հան-
դուցին զհոգի իմ եւ զձեր. արդ ծա-
նիջիք զայնպիսիսն։
19 Ողջոյն տան ձեզ եկեղեցիքն Ասիա-
ցւոց։ Ողջոյն չատ տան ձեզ ի Տէր Ա-
կիւղաս եւ [7]Պրիսկա հանդերձ առանին
20 եկեղեցեաւն իւրեանց։ Ողջոյն տան
ձեզ եղբարք ամենեքեան։ Ողջոյն տուք
միմեանց ի համբոյր սրբութեան։
21 Ողջոյնդ այդ իմոյ ձեռին Պաւղոսի
22 է։ Եթէ ոք ոչ սիրէ [8]զՏէր Յիսուս՝,
23 եղիցի նզովեալ. Մարան աթա։ Շնորհք
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ
24 ձեզ։ Եւ սէրն իմ ընդ ամենեսեան ձեզ
ի Քրիստոս Յիսուս։ Ամէն։

Ա՟ կորնթացւոց առաջին թուղթ գրեցաւ
չեփեսոսէ ի չեռն Ստեփանեայ և Փորտու-
նատեայ և Աքայիկոսէ։

[1] Բազումք, Ոչ ամենեքեան ննջեսցուք, այլ ա-
մենեքեան նորոգեսցուք։ (52) Յանկարծակի
[2] Բազումք, մահ
[3] Ցոյն, դիցէ առ իւր՝ գանձեալ որ ինչ
[4] Կամ, ընտրեցէք թղթովք զնոսա
[5] Ցոյն, քանզի անցից ընդ Մակեդոնիա
[6] Բազումք, Ստեփանեայ որ է առաջին
[7] Ոմանք, Պրիսկիղա
[8] Ոմանք, զՏէր. այլ՝ զՏէր Յիսուս Քրիստոս

Ա. ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԲԿ. ՊԱՒՂՈՍ, առաքեալ Յիսուսի
Քրիստոսի կամօքն Աստուծոյ, եւ Տի-
մոթէոս եղբայր. եկեղեցւոյդ Աստու-
ծոյ որ է ի Կորնթոս, սրբովքդ ամե-
նեքեան որ են յամենայն կողմանս
2 Աքայեցւոց. Շնորհք ընդ ձեզ եւ խա-
ղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ
եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայր ողթու-
թեանց եւ Աստուած ամենայն մխի-
4 թարութեան. Որ մխիթարէն զմեզ
յամենայն նեղութիւնս մեր, առ ի կա-
րող լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ
որ յամենայն նեղութիւնսն իցեն, մխի-
թարութեամբն որով մեք մխիթարիմք
5 յԱստուծոյ։ Զի որպէս առատանան չար-
չարանքն Քրիստոսի ի մեզ, նոյնպէս
եւ ի ձեռն Քրիստոսի առատանայ լիցի եւ
6 մխիթարութիւնն մեր։ Զի եթէ նե-
ղիմք, վասն ձերոյ մխիթարութեան
եւ փրկութեան. եւ եթէ մխիթարիմք,
վասն ձերոյ [1]մխիթարութեան որ յա-
ջողեալ է հաստերութեամբ նոցին չար-
չարանաց զոր եւ մեքն չարչարիմք.
7 Եւ յոյսն մեր հաստատուն է վասն ձեր,
քանզի գիտեմք եթէ որպէս կցորդ եմք
չարչարանացն, նոյնպէս եւ մխիթա-
8 րութեանն։ Քանզի ոչ կամիմ տղէտ
լինել ձեզ, եղբարք, վասն նեղութեան
մերոյ եղելոյ յԱսիա. զի առաւել քան
զկար մեր ծանրացաք, մինչեւ անյոյս
9 լինելոյ մեզ եւ ի կենաց։ Այլ անձամբ
յանձինս զվճիռ մահու ընկալաք, զի
մի՛ յանձինս ապաստանիցեմք, այլ յԱս-
10 տուած որ յարուցանէ զմեռեալս. Որ

[1] Ոմն., մխիթարութեան և փրկութեան

յայնպիսի մահուանէ փրկեաց զմեզ եւ
11 փրկեսցէ. [2]Քանզի յուսացեալ եմք, եթէ
տակաւին փրկեսցէ օգնականութեամբ
աղօթից ձերոց վասն մեր. զի ի բազ-
մաց էմք չնորհացն որ ի մեզ, բազմօք
յաճախեսցեն գոհութիւնքն վասն մեր։
12 ԲԳ. Քանզի պարծանք մեր այս են,
վկայութիւն մտաց մերոց, զի սրբու-
թեամբ եւ ատուդութեամբ Աստուծոյ,
եւ ոչ մարմնեղէն իմաստութեամբ,
այլ չնորհօքն Աստուծոյ չրջեցաք յաչ-
խարհի, բայց առաւել եւս առ ձեզ։
13 Քանզի ոչ եթէ այլ ազգ ինչ գրեմք
առ ձեզ, այլ զոր ընթեռնուցուքն եւ
դիտակ լինիցիք. քանզի յուսամ եթէ
14 մինչեւ ի վախճան դիտիցէք. Որպէս
եւ խնդասուտ եղէք մեզ վասն չատ,
զի պարծանք ձեր եմք, որպէս եւ դուք
մեր՝ յաւուրն Տեառն [3]մերոյ Յիսուսի
[3]Քրիստոսի։
15 Եւ յայս ապաստան կամէի նախ առ
ձեզ գալ, զի դուք կրկին չնորհս ըն-
16 դունիցիք. Եւ ի ձէնջ երթալ ի Մա-
կեդոնիա. եւ դարձեալ ի Մակեդոնիայ
գալ առ ձեզ, եւ ի ձէնջ յուղարկիլ ի
17 Հրէաստան։ Իսկ եթէ զայս խորհեցայ,
միթէ թեթեւութե՞ամբ ինչ գնացի. եւ
կամ զոր խորհիմ՝ ըստ մարմնո՞յ ինչ
խորհիմիմ, այլ զի եղիցի յինէն կող-
18 մանէ այո՝ այո, եւ ոչն՝ ոչ։ Հաւա-
տարիմ է Աստուած զի բանն մեր որ
19 առ ձեզ [4]եհաս՝ ոչ է այո եւ ոչ։ Քանզի
Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս,
որ ի ձեզ մեք քարոզեցաւ, ինեւ եւ
Սիղուանոսիւ եւ Տիմոթէոսիւ, ոչ եղեւ
այո՝ եւ ոչ, այլ այոն ի նմին եղեւ։
20 Զի որչափ աւետիքն Աստուծոյ՝ են

[2] Յոյն., Յոր
[3] Յոմանս պակաս
[4] Ի Յոանէն պակաս

ի նմա Աչին, վասն որոյ եւ նովին Ա-
21 ստուծոյ մեզ ձեռք հանդերձ ի
Քրիստոս, եւ օծ զմեզ՝ Աստուած է.
22 Որ եւ կնքեացն զմեզ, եւ ետ զաս-
տուածեայ Հոգւոյն ի սիրտս մեր։
23 ԲԶ. Աչ ես վկայ զԱստուած կոչեմ
անձին իմոյ, զի վասն խնայելոյ ի ձեզ
ոչ եւս եկի ի Կորնթոս. զի ոչ եթէ
տիրեմք ձեզ հաւատոյիս՝ այլ գործա-
կից եմք [1]չնորհացդ ձերոց. քանզի հա-
ւատովք հաստատեալ կայք։

ԳԼ. Բ

1 Բայց զայս [2]եւեթ ընտրեցի՝, զի մի՛
միւսանգամ տրտմութեամբ եկից առ
2 ձեզ. Զի եթէ ես տրտմեցուցանեմ
զձեզ, եւ ո՞վ է որ ուրախ առնիցէ զիս,
3 եթէ ոչ՝ որ տրտմիցին յինէն։ Եւ զայս
զի գրեցի՝ զի մի՛ յորժամ գայցեմ,
տրտմութիւն ինչ կրիցեմ, ուստի ար-
ժանդ իցէ ինձ ուրախ լինել. յուսա-
ցեալ եմ ի ձեզ ամենեսին, զի իմ ու-
4 րախութիւնս ձեր ամենեցուն է։ Զի
ի բազում վշտաց եւ ի նեղութենէ սրտի
գրեցի առ ձեզ բազում արտասուօք.
ոչ զի տրտմիցիք, այլ զի զսէրն իմ
գիտասջիք զոր ունիմ առաւելապէս
5 առ ձեզ։ Ապա թէ ոք տրտմեցոյց, ոչ
եթէ զիս տրտմեցոյց, այլ փոքր ի չատէ,
զի մի՛ ծանրացայց ամենեցուն ձեզ։
6 Շատ է այնպիսւոյն պատուհասն այն
7 որ ի բազմաց անտի է։ Այսուհետեւ
նմին հակառակ՝ մանաւանդ չնորհել
ձեզ նմա եւ մխիթարել. զի մի՛ յա-
ռաւել տրտմութենէն ընկղմեսցի այն-
8 պիսին։ Վասն որոյ աղաչեմ զձեզ հաս-
9 տատել ի նա զսէրն։ Վասն այնորիկ
իսկ եւ գրեցի, զի գչափ առից զձեր
10 եթէ յամենայնի հնազանդ իցէք։ Զի
եթէ ումեք չնորհիցէք, եւ ես. քանզի
եւ ես եթէ չնորհիցեմ, զոր ինչ չնոր-
հիցեմն՝ վասն ձեր ի դէմս Քրիստոսի.
11 Զի մի՛ զրկիցիմք ի Սատանայէ. քանզի
չեմք ինչ անտեղեակ խորհրդոցն նորա։
12 ԳԿ. Աչ իբրեւ հասի ես ի Տրովադա
յաւետարանն Քրիստոսի, եւ դուռն
13 բաց էր ինձ ի Տէր, Ոչ ետու հանգիստ
հոգւոյ իմոյ. քանզի ոչ գտի ես անդ
զՏիտոս զեղբայր իմ. այլ հրաժարեալ
ի նոցանէ՝ գնացի ի Մակեդոնիա։
14 Աչ Աստուծոյ չնորհքն որ յամե-
նայնի հռչակ հարկանէ զմեզնջ ի Քրիս-
տոս [3]Յիսուս, եւ զնոտ գիտութեանն
իւրոյ յայտնի առնէ մեզ յամենայն
15 տեղիս. Զի հոտ անոյշ եմք Քրիստոսի
առ Աստուած ի մէջ փրկելոցն եւ ի մէջ
16 կորուսելոցն. Ումանց հոտ՝ մահուանէ
ի մահ, եւ ումանց հոտ՝ կենդանութենէ
ի կեանս. եւ առ այս ո՞ բաւական իցէ։
17 Քանզի ոչ եմք իբրեւ զայլսն որ վա-
ճառական լինին բանին Աստուծոյ. այլ
իբրեւ ի հաստատութենէ, այլ իբրեւ
յԱստուծոյ առաջի Աստուծոյ ի Քրիս-
տոս խօսիմք։

ԳԼ. Գ

1 [4]Սկսանիմք այսուհետեւ վերստին
զանձինս ընծայեցուցանել. [5]թէպէտ
եւ ոչ պիտոյ իցեն մեզ՝, որպէս ումանց՝
թուղթք ընծայութեան առ ձեզ կամ
2 ի ձենջ։ Աչ թուղթք մեր դուք էք՝
գրեալ ի սիրտս մեր, ծանուցեալ եւ ըն-
3 թերցեալ յամենայն մարդկանէ. Յայտ-
նեալք՝ զի էք թուղթք Քրիստոսի,
պաշտեցեալ ի մէնջ. եւ գրեալ՝ ոչ
մրով, այլ Հոգւովն Աստուծոյ կեն-
դանւոյ. ոչ ի տախտակս քարեղէնս,
այլ ի տախտակս սրտի մարմնեղէնս։
4 ԳԳ. Յոյս մի այսպիսի ունիմք ի ձեռն
5 Քրիստոսի առ Աստուած. Իբր ոչ եթէ
անձամբ բաւական եմք խորհել ինչ
իբրեւ ի մէնջ. այլ բաւականութիւնն
6 մեր յԱստուծոյ է. Որ եւ բաւականս
արար զմեզ, պաշտօնեայս նորոց կտա-
կարանացս, ոչ գրով, այլ Հոգւով. զի
գրերն սպանանէ, այլ Հոգին կեցուցանէ։
7 Զի եթէ պաշտօն մահու գրով գրոչմեալ
ի տախտակսն քարեղէնս եղեւ փառօք,
զի մի՛ կարասցեն հայել որդիքն Իս-
րայելի յերեսսն Մովսիսի վասն փառաց
երեսաց նորա որ խափանելոցն էր,
8 Ո՛րչափ եւս առաւել պաշտօն հոգւոյն
9 եղիցի փառօք։ Զի եթէ պաշտօն դա-
տապարտութեանն փառօք էր, ո՛րչափ
եւս առաւել պաշտօն արդարութեանն

[1] կամ, ուրախութեանդ ձերում
[2] Յոյն, ընտրեցի ինձ
[3] ի Քրիստոս պոլոէ
[4] Յոյն, Սկսանի՞մք
[5] Յոյն, կամ թէ իցի՞ն պիտոյ մեզ

10 փառաք : Քանզի ոչ եթէ փառաւորի
փառաւորեաւն յայտ մասին՝ վասն ա-
11 ռաւելութեան փառացն : Զի եթէ որ
խափանելոցն էր՝ այն փառաք էր , ո՛բ-
չափ եւս առաւել որ գալոցն է՝ փառաք
12 իցէ : Եւ արդ՝ զի ունիմք այսպիսի
յոյս , բազում համարձակութեամբ վա-
13 րեացուք . Եւ ոչ որպէս Մովսէս ար-
կանէր քող ի վերայ երեսաց իւրոց՝
վասն չհայելոյ որդւոցն Իսրայէլի ի
14 վախճան խափանելոցն : Այլ կուրացան
միտք նոցա . քանզի մինչեւ յայսօր
ժամանակի նոյն քող ձգեալ կայ ի վե-
րայ ընթերցուածոյ հին կտակարա-
նացն . եւ ոչ վերանայ , զի Քրիստոսիւ
15 խափանելոց է : Այլ մինչեւ ցայսօր՝
յորժամ ընթեռնուն զՄովսէս , նոյն
առագաստ կայ ի վերայ սրտից նոցա :
16 Այլ յորժամ դարձցին առ Տէր , ապա
վերացի առագաստն : ՎՋ
17 Զի Տէր Հոգին է . ուր Հոգի Տեառն
18 է , անդ ազատութիւն է : Բայց մեր
ամենեցուն բացաւ երեսօք զփառան
Տեառն իբրեւ ընդ հայելի տեսեալ՝ ի
նոյն պատկեր նորոգիմք փառաց ի
փառս , որպէս եւ ի Տեառն Հոգւոյ :

ԳԼ· Դ

1 Վասն այսորիկ՝ ունիմք զպաշտօնս
զայս , որպէս եւ գտաք ողորմութիւն.
2 եւ ոչ ձանձրանամք . Այլ հրաժարեա-
ցաք ի գաղտնեաց ամօթոյն , զի [1]մի՛
գնասցուք՝ խորամանկութեամբ , եւ
[2]մի՛ նենգեսցուք՝ զբանն Աստուծոյ .
այլ յայտնութեամբ ճշմարտութեանն
[3]ընծայեցուսցուք զանձինս մեր առ ա-
մենայն միտս մարդկան առաջի Ա-
3 ստուծոյ : Ապա թէ իցէ եւս ծածկեալ
աւետարանն մեր , ի մէջ կորուսելոցն
4 է ծածկեալ . Որոց աստուած աշխար-
հիս այսորիկ կուրացոյց զմիտս ան-
հաւատից , զի մի՛ ծագեսցէ ի նոսա
լուսաւորութիւն աւետարանի փա-
ռացն Քրիստոսի . որ է պատկեր [4]անե-
5 րեւութին Աստուծոյ : Զի ոչ եթէ զան-
ձինս քարոզեմք , այլ զՅիսուս Քրիս-
տոս զՏէր , եւ զմեզ ծառայս ձեզ վասն
6 Քրիստոսի : Զի Աստուած որ ասաց
ի խաւարէ լոյս ծագել , [5]որ եւ՝ ծագե-
ալ իսկ ի սիրտս մեր ի լուսաւորու-
թիւն գիտութեան փառացն Աստուծոյ
7 ի դէմս Յիսուսի Քրիստոսի : Այսու-
հետեւ ունիմք զգանձս զայս յամանս
խեցեղէնս , զի առաւելութիւն զօրու-
թեանն լիցի յԱստուծոյ , եւ ոչ ի մէնջ :
8 Յամենայնի նեղեալք՝ այլ ոչ նուաղե-
ալք . կարօտեալք՝ այլ ոչ սպառեալք .
9 եալք . Հալածեալք՝ այլ ոչ լքեալք .
10 չարչարեալք՝ այլ ոչ սատակեալք . Յա-
մենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս մեր [6]կրեսցուք , զի եւ կեանքն
Յիսուսի ի մարմինս մեր յայտնեսցին :
11 Քանզի միշտ մեք որ կենդանիքս եմք՝
ի մահ մատնիմք վասն Յիսուսի , զի
եւ կեանքն Յիսուսի յայտնի լիցին ի
12 մահկանացու մարմինս մեր : Այսու-
հետեւ մահ ի մեզ ղօրանայ , եւ կեանք՝
13 ի ձեզ : Արդ ունիմք զնոյն հոգի հա-
ւատոյ , որպէս եւ գրեալ է , Հաւա-
տացի , վասն որոյ եւ խօսեցայ . եւ մեք
հաւատամք , վասն որոյ եւ խօսիմք
14 իսկ : Զայս գիտեմք եթէ որ յարոյցն
[7]զՅիսուս՝ եւ զմեզ ընդ Յիսուսի յա-
րուսցէ եւ յանդիման կացուսցէ ձեզ
15 հանդերձ . Քանզի ամենայն ինչ վասն
ձեր է , զի չնորհքն յաճախեալք ի բազ-
մաց զոհութիւնէ առնիմ՝ առաւելեսցին
ի փառս Աստուծոյ :
16 Վասն որոյ եւ ոչ ձանձրանամք . այլ
թէպէտ եւ արտաքին մարդս մեր ա-
պականի , այլ ներքին մարդն մեր նո-
17 րոգի օր ըստ օրէ : Զի առժամայն յա-
ճախութիւն թեթեւ նեղութեանս մե-
ծոյ ի յաւիտենական առաւելութիւն
գիտծութիւն փառացն գործէ ի մեզ :
18 Քանզի ոչ զիտեմք զերեւելիսս , այլ՝
զաներեւոյթսն . զի երեւելիքս առ ժա-
մանակ մի են , եւ աներեւոյթքն՝ յա-
ւիտենականք :

ԳԼ· Ե

1 Քանզի գիտեմք զի եթէ երկրաւոր
տաճար չինուածոյս մերոյ քակեսցի ,
չինած յԱստուծոյ ունիմք՝ տաճար ա-
նաւոց ձեռագործի յաւիտենական , յեր-
2 կինս : Եւ ընդ այս տաղտկամք , քանզի

---

[1] Յոյն , ոչ գնամք
[2] Յոյն , ոչ նենգեմք
[3] Յոյն , ընծայեցուցանեմք
[4] Ի բազմս պակասէ
[5] Յոմանս պակասէ
[6] Յոյն , կրեմք
[7] Ոմանք , զՏէր Յիսուս

պրեպոսքիւնն երկնից փափաքմամբ
3 զկնիսլ։ Միայն թէ յորժամ զկնուսցուսքն՝ ոչ մերկ գտանիցիմք։ Քանզի
4 որ եմք ընդ յարկաւս ընդ այսոսիկ՝ ապականութեամբ ծանրացեալք։ զի ոչ կամիմք մերկանալ, այլ զգեն ի վերայ այլ զկնուլ, զի ընկղմեսցի մահկա-
5 նացուս ի կենաց անտի։ Այլ որ յաջողէն մեզ ի սոյն Աստուած է, որ եւ մեզ զառնաւաստեայ Հոգւոյն։

6 ԳԶ։ Արդ համարձակիմք յամենայն ժամ, եւ գիտեմք եթէ որչափ յամենք ի մարմնի աստ, օտարանամք ի Տեառնէ։
7 (Զի հաւատովք գնամք եւ ոչ կարծեօք։) Այլ համարձակիմք, եւ առաւել եւս հաճեալ եմք ելանել ի մարմնոյ աստի եւ մտանել առ [1]Աստուած։
9 Վասն որոյ եւ առաստանամք, զի եթէ՛ յամիցեմք եւ եթէ՛ ելանիցեմք, հաճոյ
10 եւեթ լինիմք նմա։ Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի աթոռոյն Քրիստոսի, զի ընկալցի [2]իւրաքանչիւր իւրով մարմնով զոր ինչ գործեաց յաստաջ՝ եթէ՛ բարի եւ եթէ՛ չար։
11 Իսկ արդ զահ Տեառն գիտելով չամ՝ զմարդիսն լինչ զմիտս հաճեմք. սակայն առաջի Աստուծոյ [3]յայտնեալ եմք. բայց եւս յուսամ եւ ի ձեր միտս յայտնի
12 նի լինել։ Ոչ զկնիլ զայս, զի եթէ մեզ անդամ զանձինս լինչ ընծայեցուցանեմք ձեզ, այլ պատճառս տամք ձեզ պարծանաց վասն մեր. զի ունիցիք առ այնոսիկ որ առ աչսն պարծիցին եւ ոչ սրտիւք։
13 Զի եթէ առանցաք լինչ՝ այն Աստուծոյ է. եւ եթէ զգաստանամք՝ այն
14 ձեր է. Զի սէրն Քրիստոսի ստիպէ զմեզ. [4]քննել զայս, զի եթէ մին փոխանակ ամենեցուն մեռաւ, ապա ուրեմն ամենեքեան մեռեալ էին. Եւ ի
15 վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանքն իցեն՝ մի՛ անձանց իցեն կենդանիք, այլ այնմ որ ի վերայ նոցայն
16 մեռաւ եւ յարեաւ։ Այսուհետեւ մեք ոչ ումք գիտեմք մարմնով. զի թէպէտ եւ գիտեաք մարմնով զՔրիստոս, այլ
17 արդ ոչ եւս նոյնպէս գիտեմք։ Բայց եթէ [5]ինչ ի Քրիստոս, նոր արարած
18 [6]առնիցին։ Այլ առնիցին ինչ յԱստուծոյ որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր ի ձեռն [7]Քրիստոսի, եւ եւս մեզ պաշտօնն հաշտութեան։ ՎՋ
19 Եւ քանզի Աստուած էր [8]Քրիստոսիս աշխարհս հաշտեցուցանել ընդ իւր, եւ չհամարել՝ նոցա զմեղս իւրեանց,
20 եւ եդ ի մեզ բանն հաշտութեան։ Արդ վասն Քրիստոսի պատգամաւորիմք, որպէս եւ Աստուծոյ բարեխօսութեամբ մեք. աղաչեմք վասն Քրիստոսի հաշ-
21 տեցարուք ընդ Աստուծոյ։ Զի զայն որ ոչն գիտէր զմեզ՝ վասն մեր մեզ արար, զի մեք եղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ։

ԳԼ. Զ

1 Գործակից եմք ձեր եւ աղաչեմք, մի՛ ընդունայն զչնորհսն Աստուծոյ ընդու-
2 նել ձեզ։ Զի ի ժամանակի ընդունելութեան, ասէ, լուայ քեզ, եւ յաւուր փրկութեան օգնեցի քեզ. ահաւասիկ ժամանակ ընդունելի, ահա օր փրկու-
3 թեան։ [9]Մի՛ եւ մի՛ իւիք տայեմք պատճառս", զի մի՛ արատասցի պաշտօնն. Այլ յամենայնի [10]ընծայեցուցեալք զանձինս ձեր" իբրեւ զպաշտօնեայս Աստուծոյ համբերութեամբ բազմաւ
4 ի նեղութիւնս, ի վիշտս, ի չարչարանս, ի դասս, ի բանտս, ի խռովու-
5 թիւնս, յաշխատութիւնս, ի հսկմունս,
6 ի պահս, ի սրբութեան, ի գիտութեան, երկայնամտութեան, ի քաղցրութեան, ի Հոգի Սուրբ, ի սէր ա-
7 նանց կեղծաւորութեան, ի բանս ճշմարտութեան, ի զօրութեան Աստուծոյ. [11]վասն զինուն արդարութեան
8 որ ընդ աջմէն եւ ընդ ահեկէն է. Փառօք եւ անարդութեամբ, զրպարտութեամբ եւ պարսաւանօք. իբրեւ մոլարք եւ
9 ճշմարիտք. Իբրեւ անծանօթք եւ ծանուցեալք. իբրեւ մահկանացուք եւ ահաւասիկ կենդանի եմք. իբրեւ խրա-
10 տեալք եւ ոչ մահապարտեալք. Իբրեւ

---

[1] Բաղադ., Տէր
[2] Յոյն., իւրաքանչիւր ըստ որոց գործեացն իւրով մարմնով
[3] Յոյն., յայտնի
[4] Յոյն., դատիմք
[5] Յոյն., ոք
[6] Յունաս պալատ
[7] Ոմանք, Յիսուսի Քրիստոսի
[8] Յոյն., որ Քրիստոսիս զաշխարհս հաշտեցոյց ընդ իւր, եւ չհամարեցաւ
[9] Յոյն., Ոչինչ իւիք տամք պատճառս
[10] Յոյն., ընծայեցուցանեմք զանձինս մեր
[11] Յոյն., ի ձեռն

տրամեալք եւ հանապազ ուրախ եմք.
իբրեւ տնանկք եւ զրաղումս մեծա-
ցուցանեմք. իբրեւ ոչինչ ունիցիմք,
11 եւ զամենայն ինչ ունիմք: Բերանք
մեր բացեալ են առ ձեզ, Կորնթացիք,
12 եւ սիրտք մեր ընդարձակեալք: Ոչինչ
նեղիք ի մէնջ բայց եթէ ի գութս ձեր
13 նեղիցիք. Այդ զնոյն հատուցումն,
(իբրեւ ընդ որդեակս [1]ունիմ,) ընդար-
ձակեցարուք եւ դուք:
14 Եւ մի՛ լինիք լծակիցք անհաւատից.
քանզի զինչ հաղորդութիւն է արդա-
րութեան ընդ անօրէնութեան. եւ
կամ զինչ հաւասարութիւն է լուսոյ
15 ընդ խաւարի. Եւ կամ զինչ միաբա-
նութիւն է Քրիստոսի ընդ Բելիարայ.
16 կամ զինչ բաժին կայ հաւատացելոյն
ընդ անհաւատին. կամ զինչ նմանու-
թիւն է տաճարի Աստուծոյ՝ մեհենից.
ապաքէն դուք տաճար Աստուծոյ կեն-
դանւոյ էք, որպէս ասաց Աստուած
Թէ բնակեցայց ի նոսա եւ գնացից ի
նոսա, եւ եղէց նոցա Աստուած եւ
17 նոքա եղիցին իմ ժողովուրդք: վասն
որոյ ելէք ի մէջոյ նոցա եւ մեկնեցարուք,
ասէ Տէր, եւ ի պիղծս մի՛ մերձիք
18 ձեհնայք. Եւ ես ընկալայց զձեզ, եւ ես
եղէց ձեզ ի Հայր, եւ դուք եղիջիք
ինձ յաստեղս եւ ի դստերս, ասէ Տէր
Ամենակալ:

Գլ. Է

1 Եւ որովհետեւ զայս աւետիս ու-
նիմք, սիրելիք, սրբեսցուք զանձինս
մեր յամենայն պղծութենէ մարմնոյ եւ
հոգւոյ, կատարեսցուք զսրբութիւն
2 ահիւն Աստուծոյ: Տարայք մեզ, զի
ոչ ումեք մեզաք, եւ ոչ զոք եղծաք,
3 եւ ոչ զոք զրկեցաք: Ոչ եթէ ի դա-
տապարտութիւն ինչ ասեմ, քանզի
յառաջ իսկ ասացի եթէ ի սրտի մե-
րում կայք՝ ի կեալ եւ ի մեռանել
ընդ ձեզ:
4 Դէպ. Բազում համարձակութիւն է
ինձ առ ձեզ. բազում պարծանք են
ինձ վասն ձեր. լի եմ մխիթարու-
թեամբ, առաւելեալ եմ ուրախու-
թեամբ յամենայն նեղութիւնս մեր:
5 Քանզի յորժամ հասաք մեք ի Մակե-
դոնիա, եւ ոչ միով իւիք հանգիստ
գտաւ մարմնոյ մերում, այլ յամենայնի
նեղեալք. քանզի արտաքոյ մարտք եւ
6 ի ներքոյ արհաւիրք: Այլ որ միխիթա-
րէն զխոնարհս՝ միխիթարեաց զմեզ Աս-
7 տուած ի գալստեանն Տիտոսի: Ոչ
միայն ի գալստեան նորա, այլ եւ ի
միխիթարութենէն որ միխիթարեցաւ
նա ի ձեզ, ի պատմել մեզ զանձնուէն
ձեր, զողբումն ձեր, զնախանձն ձեր
վասն իմ, մինչ առաւել ուրախ լինել
8 ինձ: Զի թէ եւ տրտմեցուցի զձեզ
թղթովն, ոչ զղջանամ, թէպէտ եւ
զղջացեալ էի. քանզի տեսանեմ զի
թուղթն այն թէ եւ առ ժամանակ մի
9 տրտմեցոյց զձեզ. Արդ ուրախ եմ, ոչ
զի [2]տրտմիցիք, այլ զի յապաշխարու-
թիւն տրտմեցարուք. քանզի տրտմե-
ցայք դուք ըստ Աստուծոյ, զի մի՛
10 իւիք զրկիցիք ի մէնջ: Զի որ ըստ
Աստուծոյն տրտմութիւն է՝ ապաշխա-
րութիւն ի փրկութիւն առանց զղջա-
նալոյ գործէ, իսկ աշխարհի տրտմու-
11 թիւն մահ գործէ: Արդ նոյն իսկ որ ըստ
Աստուծոյն տրտմեցարուք, ո՛րչափ ինչ
փոյթ գործեաց ի ձեզ, կամ արդար, կամ
սաստ, կամ երկեւղ, կամ անձուկ,
կամ նախանձ, կամ վրէժխնդրու-
թիւն. քանզի յամենայնի ընծայե-
ցուցէք զանձինս ձեր՝ սուրբս լինել
12 յիրիզ յայդմիկ: Ապա ուրեմն թէ եւ
գրեցի ես առ ձեզ, ոչ վասն այնորիկ
որ զրկեացն, եւ ոչ վասն այնորիկ որ
զրկեցաւն, այլ վասն յայտնի լինելոյ
փութոյն [3]ձերոյ որ վասն [4]մեր առ
13 ձեզ առաջի Աստուծոյ: Վասն այնորիկ
միխիթարեալ եմք ի վերայ միխիթարու-
թեանն [5]մերոյ. առաւել եւս խնդացաք
ի վերայ խնդութեանն Տիտոսի. քանզի
հանդուցեալ էր հոգի նորա ի ձէնջ ա-
14 մենեցունց: Զի զինչ եւ պարծեցայ
առ նմա վասն ձեր՝ ոչ ամաչեցի, այլ
որպէս զամենայն ճշմարտութեամբ խօ-
սեցաք ընդ ձեզ, նոյնպէս եւ պար-
ծանքն մեր առ Տիտոս ճշմարիտ եղեւն:
15 Նա եւ գութք նորա առաւել եւս են
ի ձեզ, քանզի [6]յիշեցուցանէր մեզ՝
զամենեցունն զձեր հնազանդութիւն,
թէ ո՛րպէս ահիւ եւ դողութեամբ

[1] Ցան, խօսիմ
[2] Ցան, տրտմեցարուք
[3] Ոմն, մերոյ
[4] Ոմն, ձեր
[5] Ոմն, ձերոյ
[6] Ցան, յիշէր

16 ընկալարուք զնա՝ եւ արդ ուրախ եմ,
զի յամենայնի համարձակ եմ առ ձեզ։

Գլ. Ը

1 Դե. Յուսանեմ ձեզ, եղբարք, զչքնորհն Աստուծոյ որ տուեալ են եկե-
2 զեցեացն Մակեդոնացւոց. Զի մեծաւ հանդիսիւ նեղութեան՝ առատու-
թիւն խնդութեանն նոցա, եւ ծանր աղքատութիւնն նոցա առատ եղեւ ի մե-
3 ծութիւն առատութեան նոցա։ Զի ըստ կարի նոցա, վկայեմ, եւ աւելի
4 քան զկար ինքնակամ, Բազում աղաչանօք [1]աղաչէին զչնորհն եւ զհաղոր-
դութիւն պաշտամանն որ ի սուրբսն՝
5 [2]տալ գոհով՝։ Ոչ որչափ ակն ունէաք, այլ եւ զանձինս եւս եառն, նախ
Տեառն եւ ապա մեզ՝ կամօքն Աս-
6 տուծոյ, [3]Ազաչել զՏիտոս զի որպէս սկսաւն յառաջագոյն, նոյնպէս եւ կա-
տարիցէ ի ձեզ եւ զայգ եւս չնորհս։
7 Այլ որպէս յամենայնի առատ էք հա-
ւատովք եւ բանիւ եւ գիտութեամբ եւ ամենայն փութով, եւ որ [4]ի մէնջ
ի ձեզ՝՝ սէրն է, զի եւ յայդմ եւս չնորհի
8 առատ լինիցիք։ Ոչ որպէս հրաման տալով ասեմ, այլ վասն այլոց փութոյ,
եւ վասն ձերոյ սիրոյ զմաերմութիւնդ
9 փորձեմ։ Քանզի գիտէք զչնորհն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի
վասն ձեր աղքատացաւ որ մեծատունն
էր, զի դուք նորա աղքատութեամբն
10 մեծասջիք։ Եւ խրատ մի յայսմիկ տամ. զի այն իսկ օգտի է ձեզ, որք
ոչ միայն զառնելն՝ այլ եւ զկամիլն
յառաջագոյն սկսայք ի հերուն հետէ։
11 Բայց արդ եւ զառնելն իսկ կատարեցէք. զի որպէս յօժարութիւնն ի կա-
մաց է, նոյնպէս եւ առնելն ըստ գոյնւոյ
12 Զի եթէ յօժարութիւնն առաջի կայ, ըստ գոյնն ընդունելի է՝ եւ ոչ եթէ
13 ըստ չգոյնին։ Զի ոչ եթէ այլոց հանդիստ [5]կաւիլիմ, եւ ձեզ նեղութիւն.
14 Այլ հաւասարութեամբ, յայժմու ժամանակիս ձեր առատութիւնդ ի նոցա
պակասութեանն, զի եւ նոցա առատութիւնն եղիցի ի ձերում պակասութեանդ. զի եղիցի հաւասարու-
15 թիւն, որպէս եւ գրեալ է, Թէ Որ բազումն [5]առ՝ ոչ առաւելաւ, եւ որ սակաւն՝ ոչ նուազեցաւ։
16 Դգ. Բայց չնո՛րհք Աստուծոյ, որ արկ զնոյն փոյթ վասն ձեր ի սիրտ Տի-
17 տոսի. Զի զաղաչանն ընկալաւ, եւ փութայաւ յօժարագոյնս [5]դիմիւց գալ
18 առ ձեզ։ Եւ առաքեցաք ընդ նմա զեղբայրն, որոյ գովութիւնն յաւետարա-
նի անդ է ընդ ամենայն եկեղեցիս։
19 Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ ձեռնադրեալ յեկեղեցւոց անտի՝ նչդնահա-
կից մեր եղեւ ի չնորհս յայսոսիկ, որ պաշտին ի մէնջ ի փառս Տեառն եւ ի
20 [6]մեր յօժարութիւն։ Բայց զայս խղճէաք իսկ թէ գուցէ արասցէ ոք ինչ զնի-
ցէ [7]ի հաստատութեանս յայսմիկ որ
21 պաշտեցաւս ի մէնջ։ Քանզի խորհիմք զբարիս ոչ միայն առաջի Տեառն, այլ
22 եւ առաջի մարդկան։ Եւ առաքեցաք ընդ նոսա զեղբայրն մեր զոր ընտրե-
ցաք ի բազում իրս՝ բազում անգամ պինդ գտեալ, եւ առաւել եւս այժմ
23 պնդագոյն՝ յուսով մեծաւ ի ձեզ։ Բայց եթէ վասն Տիտոսի ինչ բանք են, իմ
հաւասար է եւ ձեր գործակից. եւ եթէ եղբարք մեր, առաքեալքն եկե-
24 ղեցւոց եւ փառք Քրիստոսի։ Եւ արդ զհանդէս սիրոյ ձերոյ եւ զմերոյ պար-
ծանաց վասն ձեր՝ ի դոսա ցուցջիք յանդիման ամենայն եկեղեցեաց։

Գլ. Թ

1 Դգ. Այլ վասն պաշտամանն որ ի սուրբսն է, աւելի է ինձ եւ գրել առ
2 ձեզ։ Զի գիտեմ զյօժարութիւն ձեր, զոր վասն ձեր պարծեցեալ եմ ի մէջ
Մակեդոնացւոցն, թէ Աքայեցիքն ի հերուն հետէ պատրաստ են, եւ ձեր
3 նախանձն զբազումս յորդորեաց։ Եւ առաքեցաք զեղբարսն, զի մի՛ պար-
ծանքն մեր որ վասն ձեր՝ ընդունայն լինիցին ի մասինդ յայդմիկ, այլ որպէս
ասէի իսկ, պատրաստագործք գտա-
4 նիջիք. Գուցէ յօրժամ գայցեն ընդ մեզ Մակեդոնացիքն, եւ գտանիցեն զձեզ անպատրաստս, եւ ամաչեսցուք
մեք, (զի մի՛ ասասցուք թէ գուք,)

---

[1] Ց՝ՆՆ, աղաչէին զմեզ
[2] Ց՝ՐՀՆ պահաւ. յոյլ՝ ընդունել մեզ
[3] Ց՝ՆՆ, Ցաղաչէլն մեր
[4] Ո՛ՐՀՆ, ի ձէնջ ի մեզ
[5] ի Ց՝ՈՒՆ պահաւ
[6] Ո՛ՐՀՆ, ձեր
[7] Ց՝ՆՆ, յառաստութեանս

5 [1]ի մասինդ յայդմիկ [2]պարծանայ ։ Արդ կարեւոր համարեցայ աղաչել զեղբարս,
զի յառաջադոյն եկեսցեն առ ձեզ, եւ յառաջադոյն պատրաստեսցեն զյառաջացեալդոյն խոստացեալ օրհնութիւնն ձեր ի պատրաստի ունել, այնպէս իբրեւ զօրհնութիւն, եւ մի՛ իբրեւ զագա-
6 հութիւն ։ Քանզի [3]պայծ որ սերմանէ ճչդելով՝ ճչդելով եւ հնձեսցէ, եւ որ սերմանէ առատութեամբ՝ առատու-
7 թեամբ եւ հնձեսցէ ։ Իւրաքանչիւր որպէս եւ յօժարեսցի ոք սրտիւ, մի՛ առ հարկի եւ արտմութեան, քանզի զտուրս ուրախացոյց սիրէ Աս-
8 տուած ։ Այլ կարող է Աստուած զամենայն չնորհս առատելոյ ի ձեզ, զի յամենայնի յամենայն ժամ զամենայն բաւականութիւն ընկալեալ՝ առատե-
լուցուք յամենայն գործս բարութեան,
9 Որպէս եւ գրեալ է, Սփռեաց եւ ետ անանկաց, արդարութիւն նորա մնայ յաւիտեան ։
10 Դե· Այլ այն որ պարգեւէ սերմն սերմանահանող, եւ հայ ի կերակուր՝ պարգեւեսցէ եւ բազմացուսցէ զսերմանիս ձեր, եւ աճեցուսցէ զարգիւնս
11 արդարութեան ձերոյ · Յամենայնի մեծացեալք առատութեամբ՝ որ յօրինէն մեզ գոհութիւն Աստուծոյ ։
12 Զի պաշտօն հարկիս այսորիկ ոչ միայն առ ի լնուլ զպակասութիւն սրբոցն է, այլ եւ առատելոյ բազմօք գոհութիւն
13 Աստուծոյ · Զանդիսիւ պաշտամանս այսորիկ փառաւորել զԱստուած ի վերայ հնազանդութեան խոստովանութեան ձերոյ յաւետարանն Քրիստոսի, եւ առատութեամբ հաղորդութեանն
14 ի նոսա եւ յամենեսին ։ Եւ նոցա ազօթք վասն ձեր, քանզի անձկացեալ են առ ձեզ վասն առատ չնորհացն
15 Աստուծոյ որ ի ձեզ ։ Այլ չնո՛րհք Աստուծոյ ի վերայ անպատում պարգեւացն նորա ։

Գլ· Ժ

1 **Ա**յլ ես իսկ Պաւղոս աղաչեմ զձեզ հեզութեամբն եւ հանդարտութեամբ Քրիստոսի, որ յանդիման ձեզ իբրեւ
տառապեալ մի եմ ի միջի ձերում· բայց ի հեռուստ համարձակիմ առ ձեզ ։
2 Աղաչեմ զի մի՛ ի մօտոյ եւեթ համարձակիցիմ վստահութեամբ, [4]կամ համարիցիմ յանդգնել ի վերայ ոմանց որ կարծեն զմեզ եթէ ըստ մարմնոյ գնայ-
3 ցեմք ։ Զի թէպէտ եւ մարմնով գնամք, այլ ոչ եթէ ըստ մարմնոյ պինդորիմք ։
4 (Զի զէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրաւոր յԱստուծոյ
5 առ ի քակելոյ զամուրս ·) Զխորհուրդս քակեմք, զամենայն բարձրութիւն հպարտացեալ ի վերայ գիտութեանն Աստուծոյ, եւ գերեմք զամենայն միտս
6 ի հնազանդութիւն Քրիստոսի · Եւ ի պատրաստի ունիմք խնդրել վրէժ ամենայն անհնազանդութեան, յորժամ ձեր եւս հնազանդութիւնդ կատարեսցի ։
7 ԴԶ· Ըստ [3]իւրաքանչիւր [5]երեսաց դիտեսջիք՝՝· եթէ ոք վստահ յանձն իցէ [6]Քրիստոսի լինել՝՝, զայս խորհեսցի դարձեալ ի միտս իւր, թէ որպէս նայն
8 Քրիստոսի է, նոյնպէս եւ [7]մեք ։ Զի թէ առաւել եւս պարծեցայց վասն իշխանութեանս մերոյ, զոր ետ մեզ Տէր ի չինել եւ ոչ ի քակել զձեզ, ոչինչ ա-
9 մաչեցից ։ Զի մի՛ թո՛ւ եցայց իբրեւ ահ
10 ինչ արկանել ձեզ թղթովքս · [8]Ասացեն, Թուղթքս ծանունք են եւ սաստիկք, բայց տեսիլ մարմնոյ՝ տկար, եւ բանն
11 արհամարհեալ · Զայս խորհեսցի այնպիսին, զի որպիսիք եմք բանիւք թղթովդ ի հեռուստ, նոյնպիսիք եւ ի
12 մօտոյ արդեամբք ։ Քանզի ոչ իշխեմք կշռել եւ հաւասարել զանձինս մեր ոմանց, որ զանձինս իւրեանց [3]ձեզ ընծայիցուցանեն, այլ անձամբ յանձինս՝ զանձինս չափեն, եւ ի կշռել անձամբ
13 զանձինս՝ ոչ առնուն ի միտ ։ Այլ մեք ոչ եթէ յանչափս ինչ պարծեսցուք, այլ բաս չափոյ կանոնին զոր բաժանեաց մեզ Աստուած չափով հասանել
14 մինչեւ առ ձեզ ։ Իբր ոչ եթէ հասու ինչ չիցեմք ի ձեզ, եւ ձկտեցուցանիցեմք զանձինս, քանզի մինչեւ առ ձեզ հասաք աւետարանաւն Քրիստոսի ։
15 Եւ ոչ յանչափս ինչ պարծիմք օտար

---

[1]Յ՚ոն, ի վստահութեանդ.
[2]Յ՚ոմն պոլոք
[3]Ի Յ՚ոն՚ն պոլոք
[4]Յ՚ոն, որով
[5]Ո՚ոնք, երեսաց դիտէք
[6]Ո՚ոնք, Քրիստոսի ծառայ լինել
[7]Ո՚ոնք, մեք Քրիստոսի
[8]Ի Յ՚ոն՚ն, ո՚ոնք՝ Ասեն, այլ Ասէ

վաստակօք, բայց յոյս մի ունիմք զամ-
մանն հաւատոց ձերոց այդրէն ի ձեզ
մեծանալոյ՝ ըստ կանոնիս մերոյ յա-
16 ռաւելութիւն. Ի վեր եւս քան զձեզ
աւետարանել, ոչ օտար կանոնաւ ի
17 պատրաստականս ինչ պարծել։ Զի որ
պարծիցին՝ ի Տէր պարծեսցի։
18 ԲԿ. Զի ոչ եթէ որ զանձն իւր ըն-
ծայեցուցանէ՝ նա է ընտրեալ, այլ՝ զոր
Տէրն ընծայեցուցանէ։

ԳԼ. ԺԱ

1 Լաւ էր եթէ ներէիք փոքր մի եւ ի-
մում անզգամութեանս. այլ եւ ան-
2 սացէք իսկ։ Նախանձեցուցանեմ զձեզ
ի նախանձն Աստուծոյ. զի խօսեցայ
զձեզ առն միում, իբրեւ զկոյս մի
սուրբ յանդիման կացուցանել Քրիստո-
3 սի։ Բայց երկնչիմ, գուցէ որպէս օձն
խաբեաց զնւա խորամանկութեամբ
իւրով, ապականեսցին միտք ձեր ի
4 միամտութենէն որ ի Քրիստոս։ Զի
եթէ [1]որ զալոցն իցէ՝ այլ [2]Քրիստոս
քարոզիցէ զոր մեքն ոչ քարոզեցաք,
կամ ոգի օտար առնուցուք զոր ոչ
առէք, կամ աւետարան օտար զոր ոչ
ընկալարուք, բարւոք անսայիք [3]նոցա։
5 Բայց ես այսպէս համարիմ, թէ ոչինչ
իւիք պակաս իցեմ քան զլաւ առա-
6 քեալն։ Թէպէտ եւ տգէտ եւս իցեմ
բանիւ, այլ ոչ եթէ գիտութեամբ.
սակայն յամենայնի յայտնեցաք դոս-
7 ձինս ամենեսեան առ ձեզ։ Եւ եթէ
վնաս ինչ գործեցի զի զանձն խոնար-
հեցուցի, եւ այն՝ զի դուք բարձրաս-
ջիք, զի ձրի դաւետարանն Աստուծոյ
8 աւետարանեցի ձեզ։ Զայլ եկեղեցիս
կողոպտեցի, առեալ [4]ծոյակ ի ձեր
9 սպասաւորութիւն։ Եւ յորժամ եկի
առ ձեզ, թէպէտ եւ պակասեայ ինչ,
ոչ զոք ի ձէնջ ձանձրացուցի, զի պա-
կասութիւնն իմ լցին եղբարքն եկեալք
ի Մակեդոնացւոց. եւ յամենայնի ա-
ռանց ծանրանալոյ ձեզ զանձն իմ պա-
10 հեցի եւ պահեցից։ Զի գոյ չիս ճշմար-
տութիւնն Քրիստոսի։
ԲԴ. Զի պարծանքս այս՝ ոչ արգելցին
11 չինէն ի կողմանս Աքայեցւոց։ Ընդէր.

[1] Յոյն, որ գայն
[2] Բառարկ, Յիսուս
[3] Ի Յունէն պատուէր
[4] Յոյն, ծառայեցուցանէ զձեզ

իբրու թէ ոչ սիրիցեմ զձեզ. զայն Ա-
12 ստուած գիտէ. Զոր առնեմն, եւ արա-
րից, զի հատից զպատճառս այնոցիկ
որ զպատճառան կամիցին. զի որով
պարծինն, եւ նոքա իբրեւ զմեզ գտա-
13 նիցին։ Զի այնպիսիքն սուտ առա-
քեալք, մշակք նենգաւորք, կերպա-
րանին ի կերպարանս առաքելոց Քրիս-
14 տոսի։ Եւ չեն ինչ զարմանք, քանզի
եւ ինքն Սատանայ կերպարանի ի
15 հրեշտակ լուսոյ։ Նւ ոչինչ է մեծ թէ
եւ պաշտօնեայք նորա կերպարանին
իբրեւ պաշտօնեայք արդարութեան.
որոց կատարածն եղիցի ըստ գործոց
16 իւրեանց։ Դարձեալ ասեմ, մի՛ ոք հա-
մարեսցի զիս անզգամ, ապա թէ ոչ՝
գոնէ իբրեւ զանզգամ ընկալարուք զիս,
զի եւ ես փոքր մի ինչ պարծեսցայց։
17 Եւ զոր խօսիմ՝ ոչ եթէ ըստ Տեառն
ինչ խօսիմ, այլ իբրեւ անզգամու-
թեամբ՝ ըստ կարգի այդց պարծանաց։
18 Եւ քանզի բազումք պարծին ըստ
մարմնոյ, եւ ես պարծեցայց։ Մտա-
դեւր իմն անսայիք անմտացն ձերովք
20 իմաստութեամբ։ Քանզի անսայք [3]եթէ
ոք խարէ զձեզ," եթէ ոք [4]ծառայե-
ցուցանէ, եթէ ոք ուտէ զձեր, եթէ
ոք առնու ինչ, եթէ ոք հպարտանայ,
եթէ ոք զձեզ յանդիման հարկանէ.
21 Ըստ անարգանացդ ասեմ, իբրեւ թէ
մեք տկարացաք արդեւք. յոր ինչ ոք
համարձակիցի, (անզգամութեամբ ա-
22 սեմ,) համարձակիմ եւ ես։ Ե՞բրայե-
ցի՞ք իցեն, եւ ես. Իսրայելացի՞ք իցեն,
եւ ես. զաւակ Աբրահամի՞ւ իցեն,
23 եւ ես. Պաշտօնեայք Քրիստոսի՞ իցեն,
(յանդգնադոյնս ասացից թէ) առաւել
եւս ես. եթէ վաստակօք, առաւել. եթէ
զանիւք, եւս առաւել. եթէ բանտիս,
աւելի քան զնոսա. եթէ մահուամբք՝
24 բազում անգամ. Ի Հրէից հնգիցս քա-
25 ռասուն մինով պակաս արբի. Երիցս
ձագկեցայ. մի անգամ քարկոծ եղէ.
երիցս նաւակոծ եղէ. գիւս եւ գիշեր
26 չեր յանդունդս տառապեցայ. ի ճա-
նապարհս՝ բազում անգամ. վիշտս՝ ի
գետոց, վիշտս՝ յաւազակաց, վիշտս՝
յազգէ, վիշտս՝ ի հեթանոսաց, վիշտս՝
ի քաղաքի, վիշտս՝ յանապատի, վիշտս՝
ի ծովու, վիշտս՝ ի սուտ եղբարց.

[3] Յոյն, ծառայեցուցանէ զձեզ

27 ի ջանս եւ ի վաստակս, ի աքնութիւնս՝ բազում անգամ, ի քաղց եւ ի ծարաւ, ի սով՝ բազում անգամ, ի ցուրտ եւ
28 ի մերկութեան։ [1]Թող զայլ նեղուԹիւնն, եւ զի հանապազ խուժանն ի վերայ իմ կուտէր, եւ հոգ ամե-
29 նայն եկեղեցեացն։ Ո՞ հիւանդանայ, եւ ոչ ես հիւանդանամ. ո՞ գայԹակղի, եւ ոչ ես տապանամ։
30 ԻԲ. Եթէ պարծել ինչ պարտ իցէ,
31 զտկարութեանն պարծեցայց։ Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի գիտէ, որ է օրհնեալ յաւիտեանս, զի
32 ոչ ստեմ։ Ի Դամասկոս աղգապետն Արետայ արքայի պահէր զքաղաքն Դա-
33 մասկացւոց ունել զիս. Եւ ընդ պատուհանն վանդակաւ կախեցայ ընդ պարիսպն, եւ վախեայ ի ձեռաց նորա։

ԳԼ. ԺԲ

1 Արդ պարծել ինչ պարտ իցէ, այլ օգնէ ինչ ոչ. բայց եկից ի տեսիլս եւ
2 ի յայտնութիւնս Տեառն։ Գիտեմ այր մի ի Քրիստոս յառաջ քան զամե-
տասան ամ. (եթէ մարմնով, ոչ գիտեմ, եւ եթէ առանց մարմնոյ, ոչ
3 գիտեմ, Աստուած գիտէ.) յափշտակեալ զայնպիսին մինչեւ յերրորդ երկ-
4 նից։ Եւ գիտեմ զայնպիսի այր. (եթէ մարմնով եւ եթէ առանց մարմնոյ ոչ
5 գիտեմ, Աստուած գիտէ.) Զի յափշտակեցաւ ի դրախտն, եւ լուաւ բանս անճառս, զոր ոչ է պարտ մարդոյ խօ-
6 սել։ Վասն այնպիսւոյն պարծեցայց. այլ վասն անձին ինչ ոչ պարծեցայց.
բայց եթէ ի տկարութիւնս։ Զի եթէ եւ կամիցիմ պարծել, ոչ եղէց անզգամ, քանզի զարդարն ասեմ. այլ անխայեմ, դուցէ ոք համարիցի ինչ յիս աւելի քան զոր տեսանիցէ յիս կամ լսիցէ
7 յինէն։ Եւ զի մի՛ առաւելութեամբ յայտնութեանցն հպարտացայց, տուաւ ինձ խայթ մարմնոյ, հրեշտակ Սատան,
8 կոփել զիս, զի մի՛ հպարտացայց։ Եւ վասն այնորիկ երիցս անդամ աղաչեցի
9 զՏէրն զի ի բաց արասցէ յինէն։ Եւ ասէ ցիս, Շատ են քեզ չնորհք իմ, զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի. եւ արդ լաւ եւս լիցի ինձ
պարծել ի տկարութիւնս, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի։
10 ԳԴ. Վասն որոյ հաճեալ եմ ընդ տկարութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալածանս եւ ընդ նեղուԹիւնս վասն Քրիստոսի. զի յորժամ
11 տկարանամ, յայնժամ զօրանամ։ Եղէ [2]անզգամ, քանզի դուք [3]ստիպեցէք. զի ինձ պարտ էր ի ձէնջ վկայութիւն առնուլ թէ ոչինչ պակաս գտայ քան զլաւ առաքեալսն, [4]զի թէպէտ եւ ես
12 ոչինչ եմ։ Սակայն նշանք առաքելոյ գործեցան ի ձեզ ամենայն համբերուԹեամբ, նշանօք եւ արուեստիւք եւ
13 զօրութեամբք։ Եւ արդ զի՞նչ իցէ որով պակաս գտայք քան զայլ եկեղեցիս, բայց եթէ այնու զի ես զձեզ ոչ ձանձրացուցի. չնորհեցէք ինձ զվնասդ զայդ։
14 Ահաւասիկ այս երիցս անգամ պատրաստեալ եմ գալ առ ձեզ, եւ ձեզ բեռն ինչ ոչ եղէց, զի ոչ խնդրեմ ինչ զձեր, այլ զձեզ. քանզի ոչ պարտին որդիք
15 հարց դանձել, այլ հարք՝ որդւոց։ Բայց ես մատաղիւրութեամբ ծախեցից, եւ ծախեցայց վասն անձանց ձերոց, զի թէպէտ եւ յառաւել սիրոյն զձեզ՝ սակաւ սիրիցիմ։
16 Այլ գրեթէ ես ոչինչ ծանրացայ ձեզ, այլ քանզի խորագէտ էի, խելօք կալայ
17 զձեզ։ Միթէ որովք առաքեցին առ ձեզ՝
18 նոքօք ինչ աղահեցի՞ ի ձէնջ։ Աղաչեցի զՏիտոս եւ առաքեցի ընդ նմա զեղբայրն, միթէ աղահեա՞ց ինչ զձեր Տիտոս. ո՞չ նովին ոգւով գնացաք. ո՞չ նովին չաւղօք [4]չրջեցաք։
19 ԳՁ. Դարձեալ համարիցիք եթէ յողոք անկեալ ինչ ձեզ աղերսիցի՞մք. առաջի Աստուծոյ ի Քրիստոս խօսիմք, զի ամենայն ինչ, սիրելիք, վասն ձերոյ
20 չինութեան է։ Այլ երկնչիմ, դուցէ եկեալ, ոչ որպէս ես կամիմն գտանիցեմ զձեզ. եւ ես գտանիցիմ ձեզ՝ որպէս եւ դուք ոչ կամիցիք. դուցէ [4]դարձեալ՝ հեւս, նախանձ, սրտմտութիւնք, զրպտութիւնք, չարախօսութիւնք, քսութիւնք, [4]հպարտութիւնք, ամբարտաւանութիւնք, խռո-
21 վութիւնք. Դուցէ դարձեալ, յորժամ

[1] Յոյն, Թող զբոս արտաքինքն են, որ նեղէն զիս հանապազ է հոգ ամենայն եկեղեցեացն
[2] Որդւոյ, անզգամ, զի պարծեցայ
[3] Յոյն, ստիպեցէք զիս
[4] Ի Յունն պակաս

դայցեմ, նկուն ինչ առնիցէ ղիս Աստուած իմ առ ձեզ. եւ սուգ առնուցում վասն բազմաց յառաջադոյն մեղուցելոց, եւ ոչ ապաչխարելոց ի վերայ պղծութեան եւ պոռնկութեան եւ դիւղութեան զոր գործեցին։

Գլ. ԺԲ

1 Ա՛յս երիցս անգամ գամ առ ձեզ, ղի ի բերանոյ երկուց եւ երից վկայից 2 հաստատեսցի ամենայն բան։ Ցառաջ ասացի, եւ զարձեալ կանխաւ ասեմ [1]յանդիման երկիցս անգամ, եւ այժմ ի բացուստ [2]զրեմ յառաջադոյն յանցուցելոցն եւ այլոցն ամենեցուն, ղի եթէ եկից դարձեալ, ոչ խնայեցից. 3 եթէ զիարդ ինչ խնդրէք զԲրիստոսի որ լինելս ընդ ձեզ խօսի, որ հզօրագործէն է ի ձեզ, եւ ոչ տկարացեալ։ 4 Զի թէպէտ եւ խաչեցաւ [3]ի մերմէ տկարութենէ՛, այլ կենդանի է զօրութեամբն Աստուծոյ. եւ մեք թէպէտ եւ տկարանայցեմք [4]վասն նորա՛, այլ կենդանի լիցուք ընդ նմա զօրութեամբն [5]Աստուծոյ։

5 Դուք. փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայցէք ի հնոյն հաւատս. քննեցէք զանձինս, եթէ ոչ գիտէք զանձինս, ղի Քրիստոս Յիսուս ի ձեզ է, բայց եթէ 6 անպիտանք իցէք։ Այլ ակն ունիմ թէ գիտիցէք, ղի մեք ոչ եմք անպիտանք։ 7 Այլ խնդրեմք յԱստուծոյ ղի մի՛ ինչ [6]արասցէ ձեզ չար՛. ոչ ղի մեք ընտիրք երեւեսցուք, այլ ղի դուք գործիցէք, եւ մեք անպիտանք դասցինք։ 8 Զի ոչ կարեմք ինչ հակառակ կալ ճշմարտութեանն, այլ վերա- 9 կացու եմք ճշմարտութեանն։ Ուրախ եմք, յորժամ մեք տկարանայցեմք, եւ դուք զօրաւորք իցէք. զդոյն խնդրեմք եւ ազօթս առնեմք՝ զձեր հաստատու- 10 թիւնդ։ Վասն այնորիկ գայս ի հեռուստ գրեմ, ղի մի՛ յորժամ եկից, սաստկութեամբ վարեցայց ըստ իշխանութեանս, զոր ետ ինձ Տէր ի չինել եւ ոչ ի քակել։

11 Ա՛յսուհետեւ, եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք, միաբարեցարուք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք. եւ Աստուած խաղաղութեան եւ 12 սիրոյ եղիցի ընդ ձեզ։ Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան. ողջոյն տան ձեզ սուրբք ամենայն։ 13 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ սէրն Աստուծոյ եւ հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ ընդ ձեզ ամենեսին։ Ամէն։

Ա՛ռ կողնաւոյն երէցոց էջեցաւ ի փիլիպպէ յ չեռն Տիտոսի և Ղուկայ։

---

[1] Ոմն, որպէս թէ յանդիման
[2] Յոմանս պակաս
[3] Յոմն, ի տկարութենէ
[4] Ի ցոմն, ոմն, ի նմա, այլ՝ ընդ նմա
[5] Բազմի, Աստուծոյ ի ձեզ

[6] Յոմն, առնիցէք դուք չար

ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԴՈՒ. ՊԱՒՂՈՍ, առաքեալ ոչ ի մարդկանէ եւ ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եւ Աստուածոյ Հօր որ յարոյց զնա ի մեռելոց,
2 եւ որ ընդ իս են եղբարք ամենեքին,
3 եկեղեցեացդ Գաղատացւոց. Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուածոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ
4 Քրիստոսէ, որ ետ զանձն իւր վասն մեղացս մերոց, զի զմեզ փրկեսցէ յայժմեայ աստի չարէ ըստ կամացն Աստուածոյ եւ Հօր մերոյ. Որում փառք յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
6 Զարմանամ զի այդպէս վաղվաղակի փոփոխիք յայնմանէ որ կոչեացն զձեզ ի շնորհն Քրիստոսի յայլ աւետարան.
7 Որ ոչ զոյ այլ, բայց եթէ լինին ոմանք որ խռովեցուցանիցեն զձեզ, եւ կամիցին չրջել զաւետարանն Քրիստոսի։
8 Այլ թէ մեք կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաք ձեզ, նզովեալ լիցի։
9 Որպէս յառաջադոյնն ասացաք, եւ արդ դարձեալ ասեմ, եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առէքն, նզովեալ լիցի։ Արդ մարդկա՞ն հաճոյ լինիցիմ, թէ Աստուծոյ. կամ խնդրիցեմ մարդկա՞ն հաճոյ լինել. եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի։
11 ԴԶ. Յուզանեմ ձեզ, եղբարք, զաւետարանն որ աւետարանեցաւ յինէն,
12 զի ոչ է ըստ մարդոյ. Քանզի եւ ոչ ես ի մարդոյ առի, եւ ոչ ուսայ յումեքէ, այլ ի յայտնութենէն Յիսուսի
13 Քրիստոսի։ Քանզի լուաք իսկ է ձեր զիմ գնացն որ երբեմն ի Հրէութեան անդ, զի անչափ հալածէի զեկեղեցին Աստուծոյ, եւ աւար հարկանէի զնա։
14 Եւ յառաջադէմ էի ի Հրէութեանն քան զբազումս հասակակիցս իմ որ յազգին իմում էին. առաւել նախանձախնդիր էի իմոյ հայրենի աւանդութեանցն։
15 Այլ յորժամ կամեցաւ Աստուած (որ ընչեաց զիս յորովայնէ մօր իմոյ, եւ
16 կոչեաց ի ձեռն չնորհաց իւրոց,) Յայտնել զՈրդին իւր ի՝ինեւ, զի աւետարանեցից զնա ի հեթանոսս, անդէն վաղվաղակի ոչինչ զգայուցի մարմնոյ
17 եւ արեան, Եւ ոչ եկի յերուսաղէմ առ որ յառաջադոյն քան զիս առաքեալքն էին, այլ չոգայ յԱրաբիա, եւ
18 դարձեալ դարձայ ի Դամասկոս։ Ապա յետ երից ամաց եկի յերուսաղէմ տեսանել զՊետրոս, եւ եղէ առ նմա աւուրս հնգետասան։ Զայլ ոք յառաքելոց անտի ոչ տեսի, բայց միայն զՅա-
20 կովբոս զեղբայրն Տեառն։ Այլ զոր գրեմս առ ձեզ, ահաւասիկ առաջի
21 Աստուծոյ, զի ոչ ստեմ։ Ապա եկի ի
22 կողմանս Ասորւոց եւ Կիլիկեցւոց։ Եւ յանծանօթս էի երեսօք եկեղեցեացն [2]որ ի Քրիստոսէնէ անտի էին՝ ի
23 Քրիստոս։ Բայց զի լսելով լուեալ էր [1]թէ Որ հալածէրն զմեզ յայնժամ, արդ աւետարանէ զհաւատսն զոր երբեմն
24 խախտէր. Եւ փառաւոր առնէին [1]ինեւ զԱստուած։

ԳԼ. Բ

1 ԵՒ. Ապա յետ ամաց չորեքտասանից միւսանգամ եկի յերուսաղէմ ընդ Բառ-
2 նաբա՝ առեալ ընդ իս եւ զՏիտոս։ Եւ եկի ըստ յայտնութեանն. եւ ղգայուցի նոցա զաւետարանն զոր քարոզէի

[1] կամ, յիս [2] Յայն, Հրեաստանի որ

ի հեթանոսս, առանձինն այնոցիկ որ
կարծեալքն էին, զուցէ ընդունայն ինչ
ընթացեալ իցեմ կամ ընթանայցեմ:
3 Այլ եւ ոչ Տիտոս որ ընդ իս ի հեթա-
նոսաց էր՝ բռնադատեցաւ թլփատել:
4 Այլ վասն սպրդողաց սուտ եղբարցն,
որք սպրդեցին մտանել զիտել զազա-
տութիւնն մեր զոր ունիմք ի Քրիս-
տոս Յիսուս. զի զմեզ ծառայեցուս-
5 ցեն: Որոց եւ ոչ առ ժամանակ մի
անսացաք հնազանդութեանն, զի ճըշ-
մարտութիւն աւետարանին հաստա-
6 տեսցի առ ձեզ: Բայց զկարծելոցն եթէ
իցեն ինչ, որպիսիք ոք երբեմն էին,
չէ ինչ ինձ փոյթ. քանզի Աստուած
ակն մարդկան ոչ առնու. զի ինձ կար-
ծեալքն այնպիսի ինչ ոչ զղացուցին.
7 Այլ դնորին հակառակն, իբրեւ տեսին
եթէ հաւատացեալ է ինձ աւետարանն
անթլփատութեան, որպէս Պետրոսի՝
8 թլփատութեան. (Զի որ յաջողեացն
Պետրոսի յառաքելութիւն թլփատու-
թեանն, յաջողեաց եւ ինձ ի հեթա-
9 նոսս.) Իբրեւ գիտացին զնորհն որ
տուեալ էին ինձ, Յակովբոս եւ Կեփաս
եւ Յովհաննէս որ կարծեալ սիւնքն
էին, ձեռն ետուն հաւանութեան ինձ
եւ Բառնաբայ. զի մեք՝ ի հեթանոսս,
10 եւ նոքա՝ ի թլփատութեանն. Բայց
միայն զի զաղքատսն յիշեսցուք, զոր
եւ ես փութացայ զնոյն առնել:
11 ԵԳ. Այլ յորժամ եկն [1]Կեփաս Յան-
տիոք, ընդդէմ դարձայ նորա, քանզի
12 զոգ իբրեւ ստգեալ իմն էր: Քանզի
մինչչեւ եկեալ էին ոմանք առ ի Յա-
կովբայ, ընդ հեթանոսս ուտէր [2]ան-
խտիր. իսկ իբրեւ եկին, դադանէր
եւ որոշէր զանձն՝ երկուցեալ յայն-
ցանէ որ ի թլփատութենէ անտի էին:
13 Եւ կեղծաւորեցան ընդ նմա եւ այլ
Հրեայքն, մինչեւ Բառնաբաս անդամ
խոնարհեցաւ ի նոցա կեղծաւորու-
14 թիւնն: Այլ իբրեւ տեսի թէ ոչ ուղիղ
գնան ի ճշմարտութիւն աւետարանին,
ասեմ [3]Կեփասի առաջի ամենեցուն,
եթէ դու որ Հրեայդ ես՝ հեթանոսա-
բար եւ ոչ հրէաբար կեաս, զիա՞րդ
սահեցս հեթանոսաց յինել հրեարէն:
15 Զի մեք բունն Հրեայք եմք, եւ ոչ
16 ի հեթանոսաց մեղաւորք: Զայս գի-
տեմք եթէ ոչ արդարանայ մարդ ի
գործոց օրինացն, եթէ ոչ ի հաւատոյն
Յիսուսի Քրիստոսի. եւ մեք ի Քրիս-
տոս Յիսուս հաւատացաք, զի արդա-
րասցուք ի հաւատոյն Քրիստոսի, եւ
ոչ ի գործոց օրինացն. զի ի գործոց օ-
րինացն ոչ արդարասցի ամենայն մար-
17 մին: Իսկ եթէ մինչ խնդրելիմք ար-
դարանալ ի Քրիստոս, եւ գտանիցիմք
մեղաւորք, ապա ուրեմն Քրիստոս
մեղաց պաշտօնեայ եղեւ. քաւ լիցի:
18 Զի եթէ զոր քակեցին՝ զնոյն միւսանգ-
ամ չինիցեմ, ապա յանցաւոր զանձն
19 իմ ես ինձէն երեւեցուցանեմ: Զի ես
օրինօք օրինացն մեռայ, զի Աստուծոյ
20 կեցից. [2]Ես ընդ Քրիստոսի ի խաչ [3]ե-
լից. եւ կենդանի եմ այսուհետեւ, ոչ
ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս:

ԵԶ. Այլ որ այժմ կեամ մարմնով,
հաւատովք Որդւոյն Աստուծոյ կեամ,
որ սիրեացն զիս, եւ մատնեաց զանձն
21 վասն իմ: Ես ես ոչ անարդեմ զնորհսն
Աստուծոյ. զի եթէ յօրինաց անտի էր
արդարութիւն, ապա Քրիստոս զուր
մեռաւ:

Գլ. Գ

1 Ո անմիտ Գաղատացիք, ո՞ նախանձ
արար զձեզ[5]. որոց դրեթէ առաջի ա-
չաց Յիսուս Քրիստոս դրեցաւ ի խաչ
2 եղեալ: Զայս միայն կամիմ ուսանել
ի ձէնջ. ի գործո՞ց օրինաց զՀոգին
ընկալարուք, եթէ ի լուոյ հաւատոյ:
3 Այդչափ անմի՞տ էք. սկսեալ հոգւով,
4 եւ արդ մարմնո՞վ վախճանիլք: Եւ այն-
չափ անցք անցին ընդ ձեզ զո՞ւր, եթէ
5 իցէ զուր: Իսկ արդ որ բաշխեաց ի
ձեզ զՀոգին եւ յաջողեաց ի ձեզ զգո-
րութիւնս՝ ի գործո՞ց օրինաց էր, եթէ
6 ի լուոյ հաւատոյ: Որպէս Աբրահամ
հաւատաց յԱստուած, եւ համարեցաւ
7 նմա յարդարութիւն: [6]Գիտիցէ՛ք ար-
դեւք", զի որք ի հաւատոյ անտի են,
8 նոքա են որդիք Աբրահամու: Ցառա-
ջագոյն զիւսէր ղիր, եթէ ի հաւատոյ
անտի արդարացուցանէ Աստուած զհե-
թանոսս, յառաջագոյն խոստացաւ

[1] Որ՛ուէ, Պետրոս
[2] ի յ-ոյնն պ-ոյ-ուբ
[3] Որ՛ուէ, ցՊետրոս
[4] Յ-ոյնն, ելի
[5] Որ՛ուէ յ-ոյ-ելը-ուն, ոչ հնազանդել ճշմարտութեան
[6] Յ-ոյնն, Ապա գիտասջիք

Աբրահամու, թէ ի քեզ օրհնեսցին ա-
9 մենայն ազգք։ Ա՛յսուհետեւ որք ի հա-
ւատոց անտի են՝ օրհնին ընդ հաւա-
10 տացեալսն Աբրահամու։ Զի որ միան-
գամ ի գործոց օրինացն են, ընդ ա-
նիծիւք են. քանզի գրեալ է թէ Անի-
ծեալ ամենայն մարդ որ ոչ կացցէ յա-
մենայն գրեալսն ի գիրս օրինացն՝ առ-
նել զամենայն։ Վ.Ջ
11 Զի օրինօքն ոչ ոք արդարանայ ա-
ռաջի Աստուծոյ, այն յայտ իսկ է. զի
Արդարն, [1]ասէ, ի հաւատոյ կեցցէ։
12 Բայց օրէնքն չեն ի հաւատոյ, այլ որ
13 արասցէ զայն՝ կեցցէ ի նոսին։ Քրիս-
տոս գնեաց զմեզ յանիծից օրինացն,
եղեալ վասն մեր անէծք, (զի գրեալ է
թէ Անիծեալ ամենայն որ կախեալ
14 կայցէ զփայտէ,) Զի ի հեթանոսս օրհ-
նութիւնն Աբրահամու եղիցի ի Քրիս-
տոս Յիսուս. զի մեք ստանիցիմք Հոգ-
ւոյն Սրբոյ ընկալեալք հաւատովք։
15 Ըստ մարդկութեան ասեմ, եղբարք.
Ամաքէն զմարդկան հաստատեալ կտակ
ոչ ոք կարէ անարդել, եւ ոչ այլ հրա-
16 ման ի վերայ այնր տալ, իսկ Աբրա-
համու խոստացան աստիքն եւ զա-
ւակի նորա. եւ ոչ ասէ, Զաւակաց՝
իբրեւ բազմաց, այլ իբրեւ զմիոյ, թէ՝
Եւ զաւակի քումմ, որ է Քրիստոս։
17 Բայց զայս ասեմ, Զկտակն յառաջա-
գոյն հաստատեալ յԱստուծոյ ի Քրիս-
տոս, օրէնքն որ յետ չորեքհարիւր եւ
երեսուն ամի եղան, ոչ կարեն խափա-
18 նել առ ի խափանելոյ զաւետիսն։ Եթէ
յօրինաց անտի է ժառանգութիւնն,
ապա ոչ եւս յաւետեացն. բայց Աբրա-
համու աւետեաւք չնորհեաց Աստուած։
19 Իսկ ընդէ՞նչ իցէն օրէնքն. յանցաւածոց
վասն յաւելան, մինչեւ եկեսցէ զա-
ւակն, որում խոստացեալն էր՝ կար-
գեալ հրեշտակօք ի ձեռն միջնորդի։
20 Իսկ միջնորդ միոյ ոչ է, բայց
21 Աստուած մի է։ Իսկ արդ օրէնքն հա-
կառա՞կ ինչ իցեն աւետեացն Աստու-
ծոյ. քաւ լիցի. զի եթէ տուեալ էին
օրէնքն որ կարող էին կենդանի առնել,
ապա հաստատ յօրինաց անտի էր ար-
22 դարութիւն։ Այլ փակեցին գրքք զա-
մենեսեան ընդ մեղս, զի աւետիքն ի
հաւատոց անտի Յիսուսի Քրիստոսի
23 տացին հաւատացելոց։ Մինչչեւ հա-
ւատքն եկեալ էին՝ ընդ օրինօք փակեալ
պահէաք ի հանդերձեալ հաւատսն, որ
24 յայտնելոց էին ի մեզ։ Ապա օրէնքն
դաստիարակ եղեն մեզ ի Քրիստոս Յի-
սուս, զի ի հաւատոյն արդարասցուք։
25 Այլ իբրեւ եկին հաւատքն, ոչ եւս ընդ
26 դաստիարակաւ եմք։ Քանզի ամենե-
քեան որպիսք Աստուծոյ էք հաւատովք
27 ի Յիսուս Քրիստոս։ Որք միանգամ
ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս
28 զգեցեալ էք. չիք խարիր, Ոչ Հրէի եւ
ոչ հեթանոսի, ոչ ծառայի եւ ոչ ազա-
տի, ոչ արուի եւ ոչ իգի. զի ամե-
նեքեան դուք մի էք ի Քրիստոս Յի-
29 սուս։ Ապա եթէ դուք Քրիստոսի էք,
ուրեմն Աբրահամու զաւակ էք, ըստ
աւետեացն ժառանգք։

Գլ. Դ

1 Զ.Ս. Զայս ասեմ, ցորքան ժամանակս
ժառանգն տղայ է՝ չէ ինչ առաւել քան
զծառայն, թէպէտ եւ Տէր իցէ ամե-
2 նեցուն. Այլ ընդ հազարապետօք է եւ
ընդ գաւառապետօք մինչեւ ի ժամա-
3 նակակէտ հօրն։ Նոյնպէս եւ մեք մինչ
տղայքն էաք, ընդ տարերքք աշխար-
4 հիս ի ծառայութեան կայաք։ Այլ իբ-
րեւ եկն լրումն ժամանակին, առա-
քեաց Աստուած զՈրդին իւր որ եղեւ
5 ի կնոջէ, եւ եմուտ ընդ օրինօք. Զի
զնոսա որ ընդ օրինօքն իցեն՝ գնեսցէ,
զի մեք զորդեդրութիւն ընկալցուք։
6 Եւ զի էք դուք որդիք, առաքեաց Աս-
տուած զՀոգի Որդւոյն իւրոյ ի սիրտս
7 [2]մեր՝ որ աղաղակէ Աբբա, Հայր։ Ա՛յ-
սուհետեւ չես ծառայ, այլ որդի. եթէ
որդի, եւ ժառանգ [3]Աստուծոյ։
8 Այլ յայնժամ մինչ ոչն գիտէիք զԱս-
տուած՝ ծառայէիք այնոցիկ որ ոչն էին
9 ի բնէ Աստուածք։ Այլ այժմիկ ծանե-
րուք զԱստուած, մանաւանդ թէ ծա-
նուցեալք իսկ յԱստուծոյ, զիա՞րդ գաս-
նայք միւսանգամ ի տարերս տկարս եւ
չաղքատս, որոց միւսանգամ զանձինս
10 ծառայեցուցանել կամիք։ Զաւուրս
խարէք եւ զամիսս եւ զժամանակս
11 եւ զտարիս։ Երկնչիմ ի ձէնջ, դուցէ
թէ ի զուր ինչ վաստակեցի ի ձեզ։
12 Եղերուք իբրեւ զիս, քանզի եւ ես

[1] Ի Յաղին պակասէ

[2] Որոնք, ձեր [3] Որոնք, Աստուծոյ ի Քրիստոս

իբրեւ զձեզդ էի. եղբարք, աղաչեմ
զձեզ, չիք ինչ ձեր մեզուցեալ առ իս։
13 Դիտէք զուք զի տկարութեամբ մարմ-
նոյ աւետարանեցի ձեզ զառաջինն.
եւ զփորձանսն որ ի մարմնի իմում
14 էին՝ ոչ անարգեցէք եւ ոչ անգոհանե-
ցէք, այլ իբրեւ զհրեշտակ Աստուծոյ
ընկալարուք զիս, իբրեւ զՔրիստոս
15 Յիսուս։ Իսկ արդ ո՞ւր է երանու-
թիւնն ձեր. վկայեմ ձեզ, եթէ հնար
ինչ էր, զաչս ձեր հանէիք եւ տայիք
16 ինձ։ Արդ զի՞ թշնամի իմն եղէ ձեզ,
17 զի ճշմարիտն խօսեցայ։ Այլ նախանձե-
ցուցանեն զձեզ ոչ ի բարի, եւ ար-
դելուլ կամին զձեզ զի նոցա նախանձ-
18 ասուրք լինիցիք։ Բայց լաւ է նա-
խանձաւոր լինել ի բարիս յամենայն
ժամ, եւ ոչ միայն յորժամ ի ձերուն
միջի իցեմ։
19 ԶԴ. Որդեակք իմ, զորս դարձեալ
վերստին երկնեմ, մինչեւ նկարեսցի
20 Քրիստոս ի ձեզ, կամէի այժմ գալ առ
ձեզ եւ փոխել զբարբառ իմ, զի տա-
րակուսեալ եմ ես վասն ձեր։
21 Ասէք ինչ ինձ՝ որ ընդ օրինօքն կա-
միք լինել, չիցէ՞ [1]ընթերցեալ ձեր զօ-
22 րէնս։ Զի գրեալ է թէ Աբրահամու
երկու որդիք էին, մի՝ յաղախնոյ ան-
23 ւոի, եւ մի՝ յազատէն։ Այլ որ յաղախ-
նոյն էր՝ ըստ մարմնոյ ծնեալ էր, եւ
24 որ յազատէն՝ ըստ աւետեացն. Որ է
առակ օրինակի. զի այս ինքն են եր-
կու կտակարանք, մի՝ ի լեռնէ Սինեայ
ի ծառայութիւն ծնեալ, որ է Հագար։
25 Քանզի Հագարն լեառն Սինա է յԱրա-
բիա, հաւասար է [2]այսմ երուսաղեմի,
զի ծառայէ որդւովք իւրովք հանդերձ։
26 Այլ վերինն երուսաղէմ ազատ է, որ
27 է մայր մեր [3]ամենեցուն։ Զի գրեալ է,
Ուրախ լեր, ամուլ, որ ոչ ծնանիէիր.
գոչեա եւ աղաղակեա որ ոչդ երկնէիր.
զի բազում են որդիք սկնգկիզ առա-
28 ւել քան զարամբուոյն։ Այլ մեք, եղ-
բարք, ըստ Իսահակայ աւետեացն որ-
29 դիք եմք։ Այլ որպէս յայնժամ, որ
ըստ մարմնոյն ծնեալ էր՝ հալածէր զայն
որ ըստ հոգւոյն, նոյնպէս եւ այժմ։
30 Այլ զի՞նչ ասէ գիր, Ի բաց հան զա-
զախինդ եւ զորդի դորա, զի մի՛ ժա-
ռանգեսցէ որդի աղախնոյդ ընդ որդւոյ
31 ազատին։ Վասն որոյ, եղբարք, չեմք
որդիք աղախնոյն, այլ ազատին, [4]ա-
զատութեամբն, որով Քրիստոս զմեզ
ազատեցոյց։

Գլ. Ե

1 Պինդ կացէք այսուհետեւ, եւ մի՛
միւսանգամ ընդ լծով ծառայութեան
մատնէք։
2 ԶԶ. Ահաւասիկ ես Պաւղոս ասեմ
ձեզ, զի եթէ թլիատիք, Քրիստոս ինչ
3 ձեզ ոչ օգնէ։ Վկայեմ ամենայն մարդ-
ոյ որ թլիատիցի, թէ պարտական է
4 զամենայն օրէնսն կատարել։ Ջատա-
նեալ էք ի Քրիստոսէ որ օրինօքն ար-
դարանայք, եւ անկեալ էք ի շնորհաց
5 նմա։ Զի մեք Հոգւովն ի հաւատոց
յուսոյն արդարութեան ակն ունիմք։
6 Զի ի Քրիստոս Յիսուս ոչ թլիատու-
թիւն ինչ կարող է, եւ ոչ անթլիա-
տութիւն, այլ՝ հաւատք սիրով աշխա-
7 տելք։ Բարւոք ընթանայիք. ո՞ կա-
սեցոյց զձեզ ճշմարտութեանն չհաւա-
8 նել։ Զի այն հրապոյրք ոչ յայնմանէ
9 են որ կոչեացն զձեզ։ Փոքր մի խմոր
10 զամենայն զանգուածն խմորէ։ Այլ ես
յուսացեալ եմ ի ձեզ Տեառնմ, թէ ոչ
այլազգ ինչ խորհիցիք, եւ որ խռովե-
ցուցանէ զձեզ՝ կրեսցէ դատաստան,
11 ո ոք եւ իցէ։ Այլ ես, եղբարք, եթէ
թլիատութիւն քարոզէի, ընդէ՞ր տա-
կաւին հալածիմ. ապա ուրեմն խա-
փանեալ իցէ գայթակղութիւն խաչին։
12 Երանի թէ մօտակուտր իսկ լինէին
որ զձեզն խռովեցուցանեն։
13 Զի զուք յազատութիւն կոչեցեալ
էք, եղբարք. միայն զի ազատութիւն
ձեր ոչ լինիցի ի պատճառս մարմնոյ,
14 այլ սիրով ծառայեցէք միմեանց։ Զի
ամենայն օրէնք ի մի բան կատարին,
ի Սիրեսցեան զընկեր քո իբրեւ զանձն
15 քո։ Ապա եթէ զմիմեանս խածանիցէք
եւ ուտիցէք, զգոյշ լերուք, գուցէ ի
միմեանց սատակիցիք։
16 ԷԴ. Բայց զայս ասեմ. Հոգւով գնա-
ցէք, եւ զցանկութիւն մարմնոյ մի՛
17 կատարէք։ Զի մարմին ցանկայ հա-
կառակ հոգւոյ, եւ հոգի՝ հակառակ

---

[1] Յոյն, լուեալ
[2] Յոյն, այժմու
[3] Յոմանս պակաս
[4] Ի բազում ասպէն սկսանի յաջորդ էջին

մարմնոյ . եւ դի սոքա միմեանց հա-
կառակ են , մի՝ զոր կամիցիք՝ զայն
18 առնիցէք : Իսկ եթէ Հոգւով վարիք ,
19 ապա չէք ընդ օրինօք : Զի յայտնի են
գործք մարմնոյ , այսինքն են շնու-
թիւն , պոռնկութիւն , պղծութիւն ,
20 դիւթութիւն , կռապաշտութիւն , կա-
խարդութիւն , թշնամութիւն , հեր ,
նախանձ , բարկութիւն , հակառակու-
թիւնք , երկպառակութիւնք , հեր-
21 ձուածք , Ջարակնութիւն , սպանու-
թիւնք , արբեցութիւնք , անառակու-
թիւնք , եւ որ ինչ սոցին նման են .
զոր յառաջագոյն իսկ առեմ ձեզ , որպէս
եւ կանխաւն ասէի , թէ որ զայսպիսի
ինչ գործեն՝ զարքայութիւն Աստուծոյ
22 ոչ ժառանգեն : Իսկ պտուղ Հոգւոյն
այս է . սէր , խնդութիւն , խաղաղու-
23 թիւն , երկայնմտութիւն , քաղցրու-
թիւն , բարութիւն , հաւատք , հեզու-
թիւն , ժուժկալութիւն . զայսպիսեաց
24 աստի օրէնքն չեն հակառակ : Իսկ որ
Քրիստոսեանքն են՝ զմարմինս իւրեանց
ի խաչ հանին կարեօքն եւ ցանկու-
25 թեամբք հանդերձ : Եթէ կեամք Հոգ-
ւով , ընդ Հոգւոյն եւ միաբանեսցուք :
26 Եւ մի՛ լիցուք անապարծք՝ միմեանց
ձայն տալով եւ ընդ միմեանս նախան-
ձելով :

Գլ. Ջ

1 Եղ. Եղբարք , եթէ յանկարծ ըմբռնես-
ցի ոք [1]ի ձէնջ ինչ եւ իցէ յանցանս ,
դուք որ հոգեւորքդ էք՝ հաստատեցէք
զայնպիսին հոգւով հեզութեան . դիտոյ
լինիցիք անձանց դի մի՛ եւ դուք փոր-
2 ձիցիք : Զմիմեանց բեռն բարձէք , եւ
այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիս-
3 տոսի : Եթէ համարիցի ոք լինել ինչ ,
4 եւ չիցէ , զանձն իւր խաբէ : Զգործ
իւր կշռեսցէ իւրաքանչիւր ոք , եւ ա-
պա անձին իւրում միայն պարծանս
5 տացէ , եւ մի՛ առ ընկերաւն : Զի իւ-

[1]ի բազում գիրս

րաքանչիւր ոք զիւր բեռն բառնալոց է :
6 Հաղորդութիւն արասցէ [2]աշակերտն
վարդապետին յամենայն բարութիւնս :
7 Մի՛ խաբիք , Աստուած ոչ արհամարհի :
8 Զի զոր ինչ սերմանէ մարդ՝ զնոյն եւ
հնձեսցէ . որ սերմանէ ի մարմին իւր՝
ի մարմնոյ անտի հնձեսցէ զապակա-
նութիւն . եւ որ սերմանէ ի Հոգին՝
ի Հոգւոյ անտի հնձեսցէ զկեանսն յա-
9 ւիտենից : Այլ զբարիս գործել մի՛
ձանձրասցուք , զի ի ժամանակի իւ-
րում հնձեսցուք [3]առանց լքանելոյ" :
10 Այսուհետեւ մինչդեռ ժամանակս ի
ձեռս է , գործեսցուք զբարիս առ ա-
մենեսեան , մանաւանդ առ ընտանիսն
հաւատոյ :
11 Տեսէք որպիսի գրով գրեցի առ ձեզ
12 իմով ձեռամբ : Զի որ միանդամ կա-
մին բարեմարդիկ լինել մարմնով , նո-
քա ստիպեն զձեզ թլփատել . միայն
զի մի՛ [4]զխաչին Քրիստոսի զհետ եր-
13 քայեն" : Քանզի եւ որ թլփատեալքն
իսկ են՝ նոքա զօրէնսն ոչ պահեն , այլ
կամին զի դուք թլփատեսջիք , զի ձե-
րով մարմնովդ պարծեսցին : Վ.Ջ
14 Այլ ինձ քաւ լիցի պարծել , բայց
միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի , որով [5]ինձ աշխարհ ի խաչ
15 ելեալ է , եւ ես՝ աշխարհի : [5]Զի ոչ"
թլփատութիւն [6]ինչ է եւ ոչ անթլփա-
16 տութիւն , այլ նոր արարած : Եւ որ
միանդամ այսմ կանոնի միաբան լինին ,
խաղաղութիւն ի վերայ նոցա եւ ողոր-
մութիւն , եւ ի վերայ Իսրայելին Աս-
17 տուծոյ : Այսուհետեւ աչխատ ոք զիս
մի՛ արասցէ , զի ես [6]դէպարչարանսն
Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ :
18 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի ընդ ոգւոյդ ձերում , եղբարք :
Ամէն :

Առ Գալատացիս ԸՂԵՑԱԻ Ի Հռոմէ :

[2]Յ-ին , որ ուսանին զբանն
[3]Յ-ին , եթէ ոչ լքանիցիմք
[4]Յ-ին , վասն խաչին Քրիստոսի հալածեսցին
[5]Որ+ , Զի ի Քրիստոս Յիսուս ոչ
[6]կամ , զերաչխեպան

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԸԿ. ՊԱՒՂՈՍ,՝ առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ, սրբոց որ են [1]յԵփեսոս, եւ հաւատացելոց
2 [2]ի Քրիստոս. Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ
4 յերկնաւորս ի Քրիստոս. Որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զվիներն աշխարհի, լինել մեզ սուրբս եւ անա-
5 րատս առաջի նորա սիրով։ Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի նոյն՝ ըստ հաճութեան կամաց իւրոց,
6 ի գովեստ փառաց չնորհաց իւրոց, որով զուարճացոյց զմեզ Սիրելեաւն.
7 Որով ունիմք զփրկութիւն ի ձեռն արեան նորա, զթողութիւն մեղաց ըստ
8 մեծութեան չնորհաց իւրոց. Որ առաւելաւ ի մեզ ամենայն իմաստութեամբ եւ դիտութեամբ։ Եցոյց մեզ
9 զխորհուրդս կամաց իւրոց ըստ հաճութեան իւրում, զոր յառաջագոյն
10 եզ [3]նովաւ, ի մտեսութիւն լրման ժամանակաց, բովանդակել զամենայն Քրիստոսիս, որ ինչ յերկինս եւ որ
11 ինչ յերկրի ի նոյն, Որով եւ վիճակեցաք յառաջագոյն հրաւիրեալք՝ ըստ յառաջադրութեանն [4]Աստուծոյ, որ զամենայն յաջողէ ըստ խորհրդոյ կա-
12 մաց իւրոց. Լինել մեզ ի գովեստ փառաց նորա՝ յառաջագոյն յուսացելոցս
13 ի Քրիստոս. Որով եւ դուք իբրեւ լուարուք զբանն ճշմարտութեան, զաւետարանն փրկութեան ձերոյ, որով եւ հաւատացեալ կնքեցայք Հոգւովն
14 Սրբով աւետեաց. Որ է առհաւատչեայ ժառանգութեան մերոյ, ի փրկութիւն [5]նուաճութեան, ի գովեստ փառաց նորա։
15 ԸՆ. Վասն այնորիկ եւ ես իբրեւ լսեայ զհաւատսն ձեր որ ի Տէր Յիսուս, եւ զսէրն որ ընդ ամենայն սուրբս,
16 Ոչ դադարեմ ի գոհանալոյ վասն ձեր՝
17 յիշել զձեզ յաղօթս. Զի Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայրն փառաց, տացէ ձեզ զհոգին իմաստութեան եւ յայտնութեան զի-
18 տութեամբն իւրով. Լուսաւոր առնել զաչս [6]սրտից՝ առ ի գիտելոյ [7]մեզ ինչ է յոյս կոչման նորա, եւ ինչ է մեծութիւն փառաց ժառանգութեան նո-
19 րա ի սուրբս, Եւ ինչ է առաւելութիւն մեծութեան զօրութեան նորա ի մեզ հաւատացեալս՝ ըստ յաջողութեան կարողութեան զօրութեանն իւ-
20 րոյ, Զոր յաջողեաց ի Քրիստոս, զի յարոյց զնա ի մեռելոց, եւ նստոյց ընդ
21 աջմէ իւրմէ յերկնաւորս ի վերայ ամենայն իշխանութեան եւ պետութեան եւ զօրութեան եւ տէրութեան եւ ամենայն անուան անուանելոյ, ոչ միայն յաչխարհիս յայսմիկ, այլ եւ՝ ի հան-
22 դերձելումն. Եւ զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից նորա, եւ զնա եզ գլուխ ի վերայ ամենայն էրիք
23 եկեղեցւոյ, Որ է մարմին նորա, լրումն՝ որ զամենայն յամենայնի ընու։

---

[1] Յոյնն. պ-լ-ս-ի
[2] Յոյնն, ի Քրիստոս Յիսուս
[3] Ոմանք, յինքեան
[4] Բազումք, նորա
[5] Յոյնն, սեպհականութեան, կամ՝ ստացուածոյ
[6] Բազումք, սրտից ձերոց
[7] Յոյնն, ձեզ

Գլ· Բ

1 Եւ զուք որ մեռեալն էիք ի մեղս ձեր
2 եւ յանցանս , Յորս երբեմն գնայիք
ըստ [1]յաւիտենի աշխարհիս այսորիկ ,
ըստ իշխանին իշխանութեան օդոյս ,
այսոյ՝ որ այժմս ընդմտեալ է յորդիսն
3 ապստամբութեան . Յորս եւ մեք ա-
մենեքեան չրջէաք երբեմն ի ցանկու-
թիւնս մարմնոյ մերոյ , եւ առնէաք
զկամս մարմնոյ եւ զմտաց , եւ էաք
[2]արդարեւ որդիք բարկութեան իրրեւ
այլքն ։
4 Ըզ· Այլ Աստուած որ մեծն է ողոր-
մութեամբ , վասն բազում սիրոյն իւ-
5 րոյ զոր սիրեացն զմեզ , Մինչդեռ մեռ-
եալն էաք ի մեղս մեր , կենդանիս ա-
րար զմեզ ի Քրիստոս · ([3]քանզի շնորհօք
6 ապրեցաք՝ ·) Ընդ նմին յարոյց , եւ ընդ
նմին նստոյց յերկնաւորս ի Քրիստոս
7 Յիսուս ։ Զի ցուցցէ ի յաւիտեանսն
որ գալոցն են՝ զառաւել մեծութիւն
շնորհացն իւրոց քաղցրութեամբ ի մեզ
8 ի Քրիստոս Յիսուս ։ Զի շնորհօք [4]նո-
րա էք փրկեալք ի ձեռն հաւատոցն .
եւ այս ոչ ի ձէնջ , այլ Աստուծոյ պար-
9 գեւ է · Ոչ ի գործոց , զի մի՛ ոք պար-
10 ծեսցի ։ Զի նորա արարած եմք՝ հաս-
տատեալք Քրիստոսիւ Յիսուսիւ ի
գործս բարութեան , յորս յառաջագոյն
պատրաստեաց Աստուած , զի ի նոսին
գնասցուք ։
11 Վասն որոյ եւ զուք յիշեցէք զի եր-
բեմն հեթանոսք էիք մարմնով , (որ
կոչեցեալն են անթլփատութիւն յան-
ուանեալ թլփատութենէ անաի մարմ-
12 նաւոր ձեռագործին ,) Զի էիք ի ժա-
մանակին յայնմիկ առանց Քրիստոսի ,
եւ օտարացեալք յառաքինութենէն Իս-
րայելի , եւ տարագիրք յուխտից ա-
ւետեացն , եւ յոյս ինչ ոչ ունէիք եւ
13 անաստուածք էիք յաշխարհի ։ Իսկ
այժմիկ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի
զուք որ երբեմն հեռաւորքն էիք՝ մեր-
ձաւորք եղերուք արեամբն Քրիստոսի ։
14 Զի նա է խաղաղութիւն մեր որ արար
զերկոսեան մի , եւ զմիջնորմն ցանկոյն
քակեաց , զմշնամութիւն ի մարմնի
15 իւրում · Եւ զօրէնս պատուիրանացն
հրամանօքն՝ խափանեաց · զի զերկո-
սին հաստատեսցէ ինքեամբ ի մի նոր
16 մարդ , եւ արասցէ խաղաղութիւն · Եւ
հաշտեցուսցէ զերկոսին միով մարմնով
ընդ Աստուծոյ խաչին իւրով · քանզի
սպան զմշնամութիւն յանձին իւ-
17 րում ։ Եւ եկն աւետարանեաց խաղա-
ղութիւն ձեզ հեռաւորաց , եւ խաղա-
18 ղութիւն՝ մերձաւորաց · Զի նովաւ
ունիմք զնուաճութիւն երկոքին միով
19 Հոգւով առ Հայր · Ապա այսուհետեւ
ոչ էք օտարք եւ պանդուխտք , այլ քա-
ղաքակիցք սրբոց եւ ընտանիք Աս-
20 տուծոյ , Շինեալք ի վերայ հիման ա-
ռաքելոց եւ մարգարէից , որոյ է գլուխ
21 անկեանն Քրիստոս Յիսուս · Յորում
ամենայն չինուածն յօդեալ եւ պատ-
չամեալ՝ աճէ ի տաճար սուրբ Տեառն ,
22 Յորում եւ զուք ընդ նմին չինիք ի
բնակութիւն Աստուծոյ Հոգւով ։

Վ.

Գլ· Գ

1 Վասն այսորիկ ես Պաւղոս , կապեալ
Յիսուսի Քրիստոսի վասն ձեր հե-
2 թանոսաց · Թերեւս լուեալ իցէ ձեր
պաշտեսութիւն շնորհացն Աստուծոյ ,
3 որ տուեալ են ինձ ի ձեզ , Զի ըստ
յայտնութեան ցուցաւ ինձ խորհուրդն ,
որպէս յառաջագոյն գրեցի առ ձեզ սա-
4 կաւուք · Առ ի կարող լինելով ընթեռ-
նուլ եւ ի միտ առնուլ զիմաստութիւնն
5 զիս ի խորհրդեանն Քրիստոսի · Զի
այլոց ազգաց ոչ ցուցաւ որպէս մարդ-
կան , որպէս այժմ յայտնեցաւ սրբոց
իւրոց առաքելոց եւ մարգարէից Հոգ-
6 ւովն · Լինել հեթանոսաց ժառանգա-
կիցս եւ մարմնակիցս , եւ հաղորդս
աւետեացն ի Քրիստոս [5]Յիսուս աւե-
7 տարանաւն , Որոյ եղէ ես սպասաւոր
ըստ պարգեւաց շնորհացն Աստուծոյ
որ տուան ինձ ըստ յաջողութեան զո-
8 րութեան նորա , (Ինձ՝ որ արուսս եմ
ամենայն սրբոց , տուան շնորհս այս ,)
ի հեթանոսս աւետարանել զանքնին
9 մեծութիւնն Քրիստոսի , Եւ լուսաւոր
առնել զամենեսին , թէ զինչ է տնտե-
սութիւն խորհրդոյն որ ծածկեալ էր
յամենայն յաւիտեանց առ Աստուծոյ
10 որ զամենայն ինչ արար[6]. Զի յայտ-

[1] Ա.յ.ւ.ի.ն, գնացից
[2] Յ.ն.ն, ի բնէ
[3] Յ.ն.ն, շնորհօք ապրեցարուք
[4] ի բազմս պակաս
[5] Յ.ս.ս.ն պակաս
[6] Ո.ն.ե յ.ա.ե.լ.ս.ն, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի

նեսցի արդ իշխանութեանց եւ պետութեանց որ յերկինս են՝ ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ իմաստութիւնն
11 Աստուծոյ ։ Ըստ յաւուրց յաւիտեանց զոր արար ի ձեռն Տեառն
12 մերոյ Յիսուսի Քրիստոսի · Որով ունիմք զհամարձակութիւն եւ զմուտս ճանապարհութիւն յուսով ի ձեռն հաւատոյ նորա ։
13 Վասն որոյ աղաչեմ, մի՛ ձանձրանալ ի նեղութեանս [1]մերում որ վասն ձեր
14 է, որ է փառք [2]ձեր ։ Վասն այսորիկ գնեմ ծունր առ Հայր Տեառն մերոյ
15 Յիսուսի Քրիստոսի, Ուստի ամենայն նահապետութիւն յերկինս եւ յերկրի
16 անուանի, Զի տացէ ձեզ ըստ մեծութեան փառաց իւրոց, հաստատել զորութեամբ ի ձեռն Հոգւոյն իւրոյ ի
17 ներքին մարդն · Բնակել Քրիստոսի հաւատովք ի սիրտս ձեր, սիրով արմատացեալք եւ հաստատեալք ։ Զի
18 կարող լինիջիք հասանել ընդ ամենայն սուրբս, զինչ է լայնութիւն եւ երկայնութիւն եւ բարձրութիւն եւ խո-
19 րութիւն · Ճանաչել զառաւելութիւն գիտութեան սիրոյն Քրիստոսի, զի լցջիք ամենայն լրութեամբն Աստուծոյ
20 ։ Այլ այնմ որ կարողն է առաւել քան զամենայն ինչ առնել յաճախութեամբ քան զոր խնդրեմքն եւ իմանամք, ըստ զօրութեանն որ յաղոք-
21 եալն է ի մեզ, Նմա փառք յեկեղեցւոյն [3]եւ ի Քրիստոս Յիսուս յամենայն ազգս յաւիտենից յաւիտեանս ։ Ամէն ։

Գլ· Դ

1 Արդ աղաչեմ զձեզ ես որ կապեալս եմ ի Տէր, արժանի գնալ կոչմանն
2 յոր կոչեցարուք, Ամենայն խոնարհութեամբ եւ հեզութեամբ եւ երկայնմտութեամբ անսալ միմեանց սիրով ·
3 Փութալ պահել զմիաբանութիւն Հոգւոյն յօգիս խաղաղութեան ։ Մի մարմին եւ մի հոգի, որպէս եւ կոչեցարուք ի մի յոյս կոչման ձերոյ · Մի է
5 Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն ·
6 Մի Աստուած եւ Հայր ամենեցուն, որ ի վերայ ամենայնի եւ ընդ ամենայնս եւ յամենեսին [4]ի մեզ ։ Այլ իւրաքանչիւր ումեք ի մէնջ տուեալ են չնորհք ըստ չափոյ պարգեւացն Քրիս-
8 տոսի ։ Վասն որոյ եւ ասէ, Ել ի բարձունս, գերեաց զգերութիւն եւ ետ
9 պարգեւս մարդկան ։ Որ ելն միթէ է, եթէ ոչ մի էջ նախ ի ստորին կողմն
10 երկրի ։ Որ էջն նոյն է եւ որ ելն ի վերոյ քան զամենայն երկինս, զի լցցէ
11 զամենայն ։ Եւ նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս եւ վար-
12 դապետս · Ի հաստատութիւն սրբոց, ի գործ պաշտամանն, ի չինուած մարմնոյ
13 նոյն Քրիստոսի · Մինչեւ հասցուք ամենեքեան ի մի միաբանութիւն հաւատոյ եւ գիտութեան Որդւոյն Աստուծոյ, յայր կատարեալ ի չափ հա-
14 սակի կատարմանն Քրիստոսի ։ Զի մի՛ յայսմհետէ իցեմք տղայք խոովեալք եւ տատանեալք յամենայն հողմոյ վարդապետութեան խաբէութեամբ մարդկան, խորամանկութեամբ ի խաբէու-
15 թիւն մոլորութեան · Այլ ճշմարտեալք սիրով աճեցուսցուք ի նա զամենայն,
16 որ է գլուխ, Քրիստոս · Ուստի ամենայն մարմինն յօգեալ եւ պատչաճեալ ամենայն խաղպեհաւ տարաբերութեան, ըստ ազդեցութեան չափով ըստ իւրաքանչիւր մասին զաճումն մարմնոյ գործէ ի չինած անձին իւրոյ սիրով ։
17 Արդ զայս ասեմ եւ ուսանիմ ի Տէր, մի՛ եւս ձեզ զնոյն օրինակ գնալ որպէս եւ այլ հեթանոսք գնան ունայ-
18 նութեամբ մտաց իւրեանց · Որոց խաւարեալ են սիրտք իւրեանց, եւ օտարացեալ են ի կենաց անտի Աստուծոյ վասն տգիտութեանն որ է ի նոսա, վասն կուրութեան սրտից իւրեանց ։
19 Որք [5]զանձանց իւրեանց զյոյսն հատին, եւ՝ մատնեցին զանձինս գիշութեան, ի գործս ամենայն պղծութեան
20 ագահութեամբ ։ Այլ դուք ոչ այսպէս
21 ուսարուք զԲրիստոս, Թէպէտ եւ լուարուք զնմանէ եւ նովաւ ուսայք,
22 որպէս է ճշմարտութիւնն Յիսուսի · Ի բաց մերկանալ ի ձէնջ ըստ առաջին գնացից զմարդն հին, զապականեալն
23 ցանկութեամբք խաբէութեանն · Եւ

[1] Յայլն, իմում
[2] Բազմ, ձեր
[3] Ի բազմս պակաս
[4] Ի բազմս պակաս· յոմանս՝ ի ձեզ
[5] Յայլն, անզգայեալք

24 նորոգել հոգւովն մտաց ձերոց, Եւ
զգենուլ զնոր մարդն որ ըստ Աստու-
ծոյն հաստատեալ է արդարութեամբ եւ
25 սրբութեամբ ճշմարտութեանն: Վասն
որոյ ի բաց ընկեցէք զստութիւն, խո-
սեցարուք զճշմարտութիւն իւրաքան-
չիւր ընդ ընկերի իւրում, զի եմք
26 միմեանց անդամք: Բարկանայք, եւ մի՛
մեգանչէք. արեգակն ի վերայ բար-
27 կութեան ձերոյ մի՛ մտցէ: Եւ մի՛ տայք
28 տեղի Սատանայի: Որ գողանայրն՝ մի՛
եւս գողասցի, այլ մանաւանդ վաս-
տակեսցէ գործել ձեռօք իւրովք զբա-
րիս, զի բաւական իցէ տալ ումմ պի-
29 տոյ իցէ: Ամենայն բան տգեղ ի բե-
րանոյ ձերմէ մի՛ ելցէ, այլ որ ինչ բա-
րին է ի չինած պիտոյից, զի տացէ
30 շնորհս այնոցիկ որ լսեն: Եւ մի՛
տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ Աս-
տուծոյ, որով կնքեցարուք [1]յաւուրն
31 փրկութեան: Ամենայն դառնութիւն
եւ բարկութիւն եւ սրտմտութիւն եւ
աղաղակ եւ հայհոյութիւն բարձցի ի
ձէնջ ամենայն չարութեամբն հանդերձ:
32 Լերուք ընդ միմեանս քաղցունք,
գթածք, շնորհել միմեանց, որպէս եւ
Աստուած Քրիստոսիւ շնորհեաց մեզ:

Գլ. Ե

1 Եղերուք նմանողք Աստուծոյ իբրեւ
2 որդիք սիրելիք. Եւ գնացէք սիրով,
որպէս եւ Քրիստոս սիրեաց զմեզ, եւ
մատնեաց զանձն իւր վասն մեր պա-
տարագ եւ զնուէն Աստուծոյ ի հոտ
3 անուշից: Այլ պոռնկութիւն եւ ամե-
նայն պղծութիւն կամ ագահութիւն
եւ անուանեսցի մի՛ ի միջի ձերում,
4 որպէս եւ վայելէ սրբոց, Եւ զաղրու-
թիւն կամ խօսք յիմարութեան կամ
խեզկատակութիւն որ ոչ վայելէ, այլ
5 մանաւանդ գոհութիւն: Զայս տեղե-
կացեալ դիտասջիք թէ ամենայն պոռ-
նիկ կամ պիղծ կամ ագահ որ է կռա-
պարիչ՝ ոչ ունի ժառանգութիւն յար-
քայութեանն Քրիստոսի եւ Աստու-
6 ծոյ: Մի՛ ոք զձեզ խաբեսցէ բանիւք
սնոտւովք, զի վասն այսորիկ իսկ գայ
բարկութիւն Աստուծոյ ի վերայ որդ-
7 ւոյն անհաւանութեան: Մի՛ այսու-
8 հետեւ լինիք բաժանորդք նոցա: Զի

[1] Ցայն, յօրն

թէպէտ եւ երբեմն էիք խաւար, արդ
լոյս էք ի Տէր. իբրեւ զորդիս լուսոյ
9 գնացէք. Զի պտուղ [2]լուսոյ ամենայն
բարութեամբ է եւ արդարութեամբ եւ
10 ճշմարտութեամբ: Փորձեցէք զինչ է
11 հաճոյ Տեառն. Եւ մի՛ կցորդ լինիք
անպտղութեան գործոցն խաւարի, այլ
12 մանաւանդ յանդիմանեցէք: Զի որ ի
ծածուկ ինչ գործի ի նոսա՝ զայն եւ
13 խօսել ազտեղի է: Այլ ամենայն ինչ
յանդիմանեալ՝ ի լուսոյ յայտնի լինի.
զի ամենայն ինչ որ յայտնի է՝ լոյս է:
14 Վասն որոյ եւ ասէ, Արի որ ննջեցե,
եւ կանդնեաց ի մեռելոց, եւ լուսա-
տու լիցի քեզ Քրիստոս:
15 Թե. Տեսջիք ո՛րպէս ճշմարտիւ գնայ-
16 ցէք. մի՛ իբրեւ անիմաստք, Այլ իբ-
րեւ իմաստունք. գնացէք զժամանակս,
17 զի աւուրքս չարութեան են: Վասն
այնորիկ մի՛ լինիք անմիտք, այլ իմա-
18 ցարուք զինչ են կամք Տեառն: Եւ մի՛
արբենայք գինւով յորում զեղխու-
թիւն է, այլ մանաւանդ լցարուք Հոգ-
19 ւով. խօսել [3]ի սիրտս ձեր՝ սաղմոսիւք
եւ օրհնութեամբք եւ երգովք հոգե-
ւորօք, երգել եւ սաղմոս ասել ի սիրտս
20 ձեր Տեառն: Գոհացարուք յամենայն
ժամ ի վերայ ամենայնի յանուն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի [4]Հօրն եւ
Աստուծոյ՝:
21 Հնազանդ լերուք միմեանց երկիւ-
22 ղիւն [5]Քրիստոսի: Կանայք իւրեանց
արանց հնազանդ լիցին իբրեւ Տեառն.
23 Զի այր է գլուխ կնոջ, որպէս եւ
Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, եւ ինքն
24 է Փրկիչ մարմնոյ: Այլ որպէս եկե-
ղեցին հնազանդ լինի Քրիստոսի, նոյն-
պէս եւ կանայք՝ իւրեանց արանց յա-
25 մենայնի: Արք, սիրեցէք զկանայս ձեր,
որպէս եւ Քրիստոս սիրեաց զեկեղե-
ցի, եւ զանձն իւր մատնեաց վասն
26 նորա. Զի զնա սրբեսցէ սրբութեամբ
27. [6]աւազանին՝ բանիւ. Զի կացուսցէ
ինքն իւր յանդիման փառաւոր զեկե-
ղեցի, զի մի՛ ունիցի ինչ արատ կամ
[7]ազտեղութիւն կամ այլ ինչ յայսպիս-
եաց, այլ զի իցէ սուրբ եւ անարատ:
28 Նոյնպէս պարտին արք սիրել զիւրեանց

[2] Ոմանք, Հոգւոյն
[3] Կամ, ընդ միմեանս
[4] Ցայն, զԱստուծոյ և զՀօրէ
[5] Ոմանք, Աստուծոյ
[6] Ցայն, աւազանին ջրոյ
[7] Կամ, խորշ

կանայս իբրեւ զիւրեանց մարմինս. որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ.
29 Զի ոչ ոք երբեք ատեայ զանձն իւր, այլ սնուցանէ եւ դարմանէ զնա, որ-
30 պէս եւ [1]Քրիստոս զեկեղեցի. Զի անդամք եմք մարմնոյ նորա, ի մարմնոյ
31 նորա եւ յոսկերաց նորա: Վասն այսորիկ թողցէ այր զհայր եւ զմայր իւր, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին
32 երկոքեան ի մարմին մի: Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս եւ
33 յեկեղեցի: Այլ եւ դուք [2]նոյնպէս մի ըստ միոջէ, զի՝ իւրաքանչիւր ոք զիւր կին այնպէս սիրեսցէ իբրեւ զիւր անձն, եւ կին երկնչիցի յառնէ իւրմէ:

Գլ. Զ

1 Թդ. Որդիք, հնազանդ լերուք ծնողաց ձերոց ի Տէր, զի այն է արժանն:
2 Պատուեա զհայր քո եւ զմայր, որ է
3 առաջին պատուիրան յաւետիսն, Զի քեզ բարի եղիցի, եւ երկայնակեաց
4 լինիցիս ի վերայ երկրի: Հարք, մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր, այլ սնուցանիջիք զնոսա խրատու եւ ուսմամբ
5 Տեառն: Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց անիւ եւ դողութեամբ եւ միամտութեամբ սրտից ձերոց՝ որպէս եւ Քրիստոսի:
6 Մի՛ առ ակնաւ ծառայել իբրեւ մարդահաճոյք, այլ իբրեւ ծառայք Քրիս-
7 տոսի առնել զկամս Աստուծոյ. Սրտի մտօք ծառայել իբրեւ Տեառն, եւ մի՛
8 իբրեւ մարդկան: Գիտասջիք թէ իւրաքանչիւր ոք որ զինչ առնէ զբարին, զնոյն ընդունի եւ ի Տեառնէ, եթէ՛
9 ծառայ, եւ եթէ՛ ազատ: Եւ դուք, տեարք, զնոյն առնիջիք առ նոսա, ներելով առնել զպատուհասն, գիտասջիք թէ եւ նոցա եւ ձեր Տէր դոյ յերկինս. եւ ակնառութիւն ոչ դոյ առաջի նորա:
10 [3]Այսուհետեւ զօրացարուք Տերամբ եւ կարողութեամբ զօրութեան նո-
11 րա: Եւ զդեցարուք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք
12 կալ ընդդէմ հնարից Սատանայի: Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս եւ ընդ աչխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այս չարութեան որ ի ներքոյ երկնից:
13 Թզ. Վասն այսորիկ առէք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք ի դիմի հարկանել [4]չարին յաւուրն չարութեան: Եւ իբրեւ զամենայն ինչ կատարիցէք, հաստատուն կացէք, զգեցեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, եւ զգեցեալ
15 զզրահան արդարութեան, Եւ ազուցեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան: Եւ ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոյ, որով կարող լինիջիք զամենայն
17 նետս մոլիս չարին չիջուցանել: Եւ առէք զսպառազարան փրկութեան եւ զսուսեր Հոգւոյն, որ է բանն Աստուծոյ.
18 Ծոյ. Ամենայն ազօթիւք եւ խնդրուածովք ազօթս առնել յամենայն ժամանակի Հոգւով, եւ ի նոյն տքնեսջիք ամենայն ժուժկալութեամբ եւ խընդ-
19 րուածովք վասն ամենայն սրբոց, Եւ վասն իմ, զի ինձ տացի բան ի բանալ բերանոյ իմոյ համարձակութեամբ գուցանել զխորհուրդ աւետարանին. վասն
20 որոյ պատգամաւորիմ կապանօքս, զի նովին համարձակեցայց որպէս եւ պարտ իցէ ինձ խօսել:
21 Բայց զի գիտիցէք եւ դուք զինչն զինչ գործիցեմ, ամենայն ինչ ցուցցէ ձեզ Տիւքիկոս սիրելի եղբայր եւ հա-
22 ւատարիմ պաշտօնեայ ի Տէր. Զոր առաքեցի առ ձեզ զմին իրի, զի գիտասջիք զուք զմեզ, եւ մխիթարեսցէ
23 զսիրտս ձեր: Խաղաղութիւն ընդ եղբարս, եւ սէր հաւատովքն հանդերձ յԱստուծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ Յի-
24 սուսէ Քրիստոսէ: Շնորհք ընդ ամենեսին այք սիրեն զՏէր մեր Յիսուս Քրիստոս անեղծութեամբ:[5]

Առ Եփեսոսիս երեքօրեայ ի Հռովմէ ի չեռն Տէրէնիոսէ:

[1] Ոմն, Տէր
[2] Ի յոյնն գոյոք
[3] Ոմն, Այսուհետեւ, եղբարք իմ,
[4] Ի յոյնն գոյոք
[5] Ոմն է յոյն և է Հայ չեռոփրոյ յաւելան, Ամէն:

ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 Ես՝ ՊԱՒՂՈՍ եւ Տիմոթէոս, ծառայք
Յիսուսի Քրիստոսի, ամենայն սրբոց
ի Քրիստոս Յիսուս, որ են ի կողմանս
Փիլիպեցւոց, եպիսկոպոսակօք եւ
2 սարկաւագօք. Շնորհք ընդ ձեզ եւ
խաղաղութիւն Աստուծոյ Հօրէ մերմէ
եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Գոհանամ զԱստուծոյ իմոյ ի վերայ
4 ամենայն յիշատակաց ձերոց, Ցամե-
նայն ժամ յամենայն ևնդրուածս իմ
վասն ձեր ամենեցուն առնել աղօթս
5 ինդութեամբ, վասն հաղորդութեան
ձերոյ ընդ աւետարանին յօրէ յառաջ-
6 նըմէ մինչեւ ցայժմ. վստահ եմ յայդ
բան զի որ սկսաւն ի ձեզ գործս բար-
եաց՝ կատարեսցէ մինչեւ յօրն Յիսուսի
7 Քրիստոսի. Որպէս իրաւ իսկ թուի
ինձ խորհել զայս վասն ձեր ամենե-
ցուն, վասն ունելոյ [1]ինձ զձեզ" ի սրտի
ի կապանս իմում, եւ ի պատասխա-
նատուութեան իմում եւ ի հաստա-
տութեան աւետարանին, կցորդս ինձ
8 չնորհաց զձեզ ամենեսեան լինել։ [2]վկայ
է ինձ Աստուած, որպէս անձկացեալ
եմ առ ձեզ ամենեսեան զթութիւն Քրիս-
9 տոսի Յիսուսի։ Եւ զայն աղօթս առ-
նեմ, զի սէրն ձեր եւս քան զեւս ա-
ռաւել լիցի ի գիտութեան եւ յամե-
10 նայն իմաստութեան, Ընտրել ձեզ
զլաւն՝ զի լինիք [3]հաստատունք եւ ա-
ռանց գայթակղութեան յօրն Քրիստո-
11 սի. Լցեալ պտղովք արդարութեան
ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի փառս
եւ ի գովեստ Աստուծոյ։
12 Ած. Կամիմ զի գիտիցէք, եղբարք,
զի որ ինչ վասն իմ էր, եւս քան
զեւս ի յառաջադիմութիւն աւետա-
13 րանին եկն. Մինչեւ կապանաց իմոց
յայտնի լինել ի Քրիստոս յամենայն
հրապարակիս եւ առ այլս ամենեսեան.
14 Եւ առ բազում եղբարս ի Տէր, որ
վստահ են կապանօքս իմովք առաւել
եւս համարձակել առանց երկիւղի
15 զբանն Աստուծոյ խօսել։ Ոմանք առ
նախանձու եւ հակառակութեան, եւ
ոմանք մտապիւրութեամբ իսկ զՔրիս-
16 տոս քարոզեն. Եւ ոմանք ի սիրոյ,
քանզի գիտեն եթէ ի պատասխանա-
17 տուութիւն աւետարանին կամ. Եւ
ոմանք առ հեստութեան զՔրիստոս
պատմեն, այլ ոչ սրբութեամբ. քանզի
համարին նեղութիւնս յարուցանել ի
18 վերայ կապանաց իմոց։ Բայց այս զի՞նչ
է. որով օրինակաւ եւ իցէ, եթէ՛ ի
պատճառանօք եւ եթէ՛ ճշմարտու-
թեամբ, Քրիստոս պատմի, եւ ընդ
այս խնդամ, այլ եւ ուրախ եւս եղէց։
19 Զի գիտեմ եթէ այս պահլ ինձ ի փրկու-
թիւն ի ձերոց ևնդրուածոց եւ ի պար-
գեւաց Հոգւոյն Յիսուսի Քրիստոսի,
20 Ըստ ակնկալութեան եւ յուսոյն իմոյ,
զի մի՛ իւիք յամօթ եղէց, այլ ամե-
նայն համարձակութեամբ, որպէս յա-
մենայն ժամ եւ այժմ, մեծասցի Քրիս-
տոս ի մարմնի իմում, եթէ՛ կենօք եւ
21 եթէ՛ մահու։ Զի ինձ կեանք Քրիս-
22 տոս է, եւ մեռանել՝ շահ։ Այլ եթէ
կեանքս մարմնոյ այս ինձ պտուղ գոր-
ծոյ է, եւ զինչ ընտրեցից՝ զայն ոչ
23 գիտեմ։ Նեղեալ եմ յերկոցունց, զցան-
կալն ելանել եւ ընդ Քրիստոսի լինել
24 առաւել լաւ համարիմ. Եւ կալ մնալ
աստէն ի մարմնի՝ կարեւոր եւս վասն
25 ձեր։ Եւ զայս յուսացեալ գիտեմ, եթէ
կացից եւ մնացից ամենեցուն ձեզ,

[1] կամ՝ ձեզ զիս
[2] Յն՝ն, Զի վկայ
[3] Յն՝ն, առանց կեղծաւորութեան

ի ձեր զարգանալ եւ խրախ լինել ի
26 հաւատս. Զի պարծանք ձեր առաւել լիցին ի Քրիստոս Յիսուս ինձ ի միւսանգամ գալստեան իմում առ ձեզ։ Վ.Ջ
27 Միայն թէ արժանի [1]աւետարանին վնայեցէք. զի եթէ՛ գայցեմ եւ տեսանիցեմ զձեզ, եւ եթէ՛ հեռի իցեմ եւ լսիցեմ զձէնջ զի հաստատուն կայցէք ի մի հոգի, եւ միով հնչով նահատա-
28 կիցիք ի հաւատս աւետարանին. Եւ մի՛ զանգիտիցէք եւ մի՛ իւիք ի հակառակորդաց անտի, որ է նոցա հանդէս կորստեան, եւ ձերոյ փրկութեան։
29 Եւ այդ յԱստուծոյ է, որ ձեզ չնորհեցաւ վասն Քրիստոսի, ոչ միայն ի նա հաւատալ, այլ եւ վասն նորա չարչա-
30 րել։ Զնոյն պատերազմ ունել՝ զոր յիս տեսէք եւ այժմ լսէք [2]յինէն։

ԳԼ. Բ

1 Արդ եթէ մխիթարութիւն ինչ իցէ ի Քրիստոս, եթէ սփոփութիւն սիրոյ, եթէ հաղորդութիւն Հոգւոյ, եթէ
2 գթութիւն եւ ողորմութիւն, լիցէք զննդութիւնս իմ, զնոյն խորհիլիք, զնոյն սէր յանձին ունիլիք, համա-
3 չունչք, միաքորհուրդք. Մի՛ ինչ ըստ գրգռութեան, եւ մի՛ ինչ ըստ մնապարծութեան, այլ խոնարհութեամբ զմիմեանս չաւ համարել առաւել քան
4 զանձինս. Մի՛ զանձանց եւեթ միտել, այլ իւրաքանչիւր ոք զընկերին։ Զայն խորհեցէք իւրաքանչիւր ոք ի ձէնջ որ
6 եւ ի Քրիստոս Յիսուս. Որ ի կերպարանս Աստուծոյ էր, ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար
7 Աստուծոյ. Այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ, եւ կերպա-
8 րանօք գտեալ իբրեւ զմարդ, Ինքնահեցոյց զանձն, լինել հնազանդ մահու
9 չափ եւ մահու խաչի։ Վասն որոյ եւ Աստուած զնա առաւել բարձրացոյց, եւ չնորհաց նմա անուն որ ի վեր է
10 քան զամենայն անուն. Զի յանուն Յիսուսի [3]Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց եւ երկրաւո-
11 րաց եւ սանդարամետականաց, Եւ ամենայն լեզու խոստովան լիցի թէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր։
12 Ա.Ջ. Այսուհետեւ, սիրելիք իմ, որպէս յամենայնի հնազանդեցարուք, մի՛ միայն ի գալստեան իմում, այլ առաւել եւս այժմ յորժամ հեռիս եմ ի ձէնջ, անիւ եւ զողութեամբ զանձանց
13 փրկութիւն գործեցէք։ Զի Աստուած է որ յաչողէ ի ձեզ զկամիլն եւ զառնելն վասն հաճութեան։ Զամենայն
14 ինչ գործեցէք առանց տրտնջելոյ եւ
15 քրթմնջելոյ. Զի եղիջիք ամրիծք եւ անարատք, որդիք Աստուծոյ, անմեղք ի մէջ կամակոր եւ խեղաթեւր ազգին, յորոց միջի երեւիցիք իբրեւ լուսա-
16 ւորք յաչխարհի, Զբանն կենաց ունել յանձինս ի պարծանս ինձ յաւուրն Քրիստոսի, զի ոչ ընդունայն ինչ ընթացայ եւ ոչ ընդունայն վաստակեցի։
17 Այլ թէպէտ եւ նուիրիմ ի վերայ պատարագի եւ պաշտաման հաւատոցն ձերոյ, խնդամ եւ ուրախակից եմ ամե-
18 նեցուն ձեր։ Նոյնպէս եւ դուք խնդացէք եւ ուրախակից եղերուք ինձ։
19 Բայց յուսամ ի Տէր Յիսուս զՏիմոթէոս վազվազակի արձակել առ ձեզ, զի եւ ինձ սրտի գեւր լինիցի, յորժամ
20 զիտիցեմ զինչ զձէնջ։ Զի ոչ զոք ունիմ համաչունչ, եթէ ընտանեւրար հոգայցէ
21 վասն ձեր։ Զի ամենեքին զանձանց խնդրեն, եւ ոչ զՅիսուսի Քրիստոսի։
22 Բայց զփորձ նորա գիտէք եւ գուք, զի իբրեւ որդի հօր ծառայեաց ընդ իս
23 յաւետարանին։ Սրդ զաս ակն ունիմ արձակել՝ որպէս նոյնհետայն զանձնէ
24 ատուգեցից։ Այլ յուսացեալ եմ ի Տէր
25 թէ եւ ես իսկ ընդ հուպ եկից։ Բայց լաւ համարեցայ զԵպափրոդիտոս զեղբայր եւ զգործակից եւ զինուորակից իմ, զձեր առաքեալ եւ զպաշտօնեայ
26 իմոց պիտոյից՝ առաքել առ ձեզ։ Քանզի եւ ինքն իսկ յոյժ [4]անձկացեալ է տեսանել զամենեսեան զձեզ՝. եւ հոգայր,
27 զի ձեր լուեալ էր թէ խօթացաւ։ Եւ արդարեւ խօթացաւ մերձ ի մահ, այլ Աստուած ողորմեցաւ նմա. ոչ նմա միայն՝ այլ եւ ինձ, զի մի՛ տրտմութիւն ի վերայ տրտմութեան կրիցեմ։
28 Սրդ փութապէս յղեցի զնա, զի տեսեալ

[1]Բաղադրէ, աւետարանին Քրիստոսի
[2]Ի ցանին՝ յինէն, յիս, յինեն՝ պոլոք
[3]Ի բազմ պոլոք

[4]Բաղադրէ, անձկացեալ է ամենեցուն ձեզ

զնա միաւանգամ ուրախ լինիցիք, եւ
29 ես առանց տրտմութեան եղէց։ Ընկալ-
ջիք զնա ի Տէր ամենայն խնդութեամբ,
եւ զայնպիսիսն առ պատուականս ու-
30 նիջիք. Զի վասն գործոյ Տեառն մին-
չեւ ի մահ մերձեցաւ, գուն գործեալ
ոգւովք չափ, զի լցցէ զձեր պակասու-
թիւն լոյոյ սպասաւորութեան։ ՎՋ

ԳԼ. Գ

1 Ա յսուհետեւ, եղբարք իմ, ուրախ
լերուք ի Տէր. զնոյն գրել առ ձեզ ինձ
ոչ դանդաղելի է, եւ ձեզ կարի զգու-
2 չալի։ Զգոյշ եղերուք ի չանց անտի,
զգոյշ եղերուք ի չար մշակաց անտի,
զգոյշ եղերուք ի կրճատութենէ անտի։
3 Զի Թլփատութիւնն մեք եմք, որ [1]Հոգ-
ւովն Աստուծոյ՝ պաշտեմք, եւ պար-
ծիմք ի Քրիստոս Յիսուս, եւ ոչ ի
4 մարմին պանծացեալ եմք։ Թէպէտ եւ
ես իսկ զնոյն վստահութիւն ունիմ
եւ ի մարմնի. եթէ [2]ոք համարիցի այլ-
ազգ վստահ՝ լինել ի մարմին, առաւել
5 եւս ես. Թլփատութեամբ ութօրեայ,
յազգէ Իսրայելի, ի ցեղէ Բենիամինի,
Եբրայեցի յԵբրայեցւոց, ըստ օրինացն
6 փարիսեցի. Ըստ նախանձայոյզն լինե-
լոյ՝ հալածէի զեկեղեցին. ըստ արդա-
րութեան օրինացն՝ լինել անարատ։
7 Այլ որ ինչ ինձ չահն էր՝ զայն վնաս
8 համարիմ վասն Քրիստոսի։ Այլ եւ
համարիմ իսկ զամենայն վնաս վասն
առաւել գիտութեանն Յիսուսի Քրիս-
տոսի Տեառն մերոյ. վասն որոյ զամե-
նայնի զրկեցայ, եւ համարիմ կղկղանս,
9 զի զՔրիստոս չահեցայց, Եւ գտայց
ի նմա. իբրեւ ոչ եթէ ունիմ ինչ ար-
դարութիւն որ յօրինաց անտի է՝ ու-
նիցիմ, այլ՝ [3]զհաւատոցն Քրիստոսի՝
որ յԱստուծոյ արդարութիւնն է՝ հա-
10 ւատովք. Ճանաչել զնա եւ զզօրու-
թիւն յարուցեանն նորա եւ զհաղոր-
դութիւն չարչարանաց նորա, կերպա-
11 րանակից լինել մահու նորա. Թէ որ-
պէս հասից ի մեռելոցն յարութիւն։
12 Իբր ոչ եթէ արդէն առեալ իցեմ, կամ
արդէն կատարեալ իցեմ. զհետ մտեալ
եմ թէ հասից, [4]մանաւանդ թէ ըմբռ-
նեալ իսկ իցեմ՝ ի Քրիստոսէ Յիսու-
13 սէ։ Եղբարք, ես ոչ համարիմ զանձն
իմ թէ հասեալ իցեմ. բայց մի ինչ է՝
զի զառ ի յետոյն մոռացեալ է, եւ ի
14 յառաջադէմն նկրտեալ եմ. Ուչ եղեալ
ընթանամ ի կէտ [5]կոչմանն Աստուծոյ
15 ի Քրիստոս Յիսուս։ Այսուհետեւ որ
միանգամ կատարեալքդ էք՝ զայս խոր-
հեցարուք, եւ եթէ այլազգ ինչ խոր-
հիցիք, սակայն եւ զայն Աստուած
16 ձեզ յայտնեսցէ։ Բայց յոր ժամանե-
ցաքս, զոյն խորհել եւ սմին կանոնի
17 միաբան լինել։ Նմանողք ինձ եղիջիք,
եղբարք, եւ դիտասջիք զայնպիսիսն
որ այնպէսն գնայցեն, որպէս ունիքդ
18 զմեզ [6]ձեզ օրինակ։ Զի բազումք գնան,
զորոց բազում անգամ ասէի ձեզ, բայց
արդ եւ լալով իսկ ասեմ, զթշնամեաց
19 խաչին Քրիստոսի։ Որոց կատարածն
կորուստ է, որոց աստուած որովայնն
[6]իւրեանց է, եւ փառք՝ ամօթն իւր-
եանց, որք զերկրաւորս եւեթ խորհին։
20 Այլ մեր առաքինութիւն յերկինս է,
ուստի եւ Փրկչին ակն ունիմք, Տեառն
21 Յիսուսի Քրիստոսի. Որ նորոգեսցէ
զմարմին խոնարհութեան մերոյ՝ կեր-
պարանակից լինել մարմնոյ փառաց իւ-
րոյ, ըստ զօրութեանն առ ի կարող
լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրեւ
զամենայն։

ԳԼ. Դ

1 Ա յսուհետեւ, եղբարք իմ սիրելիք եւ
անձկալիք, ուրախութիւն իմ եւ պսակ,
այսպէս հաստատուն կացէք ի Տէր,
սիրելիք։
2 Զեւոդիա աղաչեմ եւ զՍինտիք ա-
3 ղաչեմ, զնոյն խորհել ի Տէր։ Այո, ա-
ղաչեմ եւ զքեզ, մատրիմ իմ եւ լծա-
կից, եւ գու օգնական լինիջիր նոցա
որք յաւետարանին նահատակեցան ընդ
իս կղեմաւ հանդերձ եւ այլովք գոր-
ծակցօք իմովք, որոց անուանքն ի
4 գալրութեան կենաց։ Ուրախ լերուք
ի Տէր յամենայն ժամ. զարձեալ ա-
5 սեմ, Ուրախ լերուք։ Հեզութիւն ձեր
յայտնի լիցի ամենայն մարդկան. Տէր

[1] Ոմանք, Հոգւով զԱստուած
[2] Բազումք, այլ ոք համարիցի վստահ
[3] Կամ, զարդարութիւն հաւատովքն Քրիստոսի որ յԱստուծոյ է
[4] Յունն, որոյ վասն ըմբռնեալ եմ
[5] Յունն, վերին կոչմանն [6] Ի յունէն պակաս

6 մերձ է : Մի՛ ինչ հոգայք , այլ [1]ամեն-
նայն աղօթիւք եւ խնդրուածովք , դո-
հութեամբ խնդրուածք ձեր յայտնի
7 լիցին առ Աստուած : Եւ խաղաղու-
թիւնն Աստուծոյ որ ի վեր է քան զա-
մենայն միտս՝ պահեսցէ զսիրտս ձեր
եւ զմիտս ի Քրիստոս Յիսուս :
8 Ա՛կ· Այսուհետեւ , եղբարք , որ ինչ
ճշմարտութեամբ է , որ ինչ պարկեշ-
տութեամբ , որ ինչ արդարութեամբ ,
որ ինչ սրբութեամբ , որ ինչ սիրով ,
որ ինչ համբաւ բարեաց , որ ինչ քա-
ջութեամբ , որ ինչ գովութեամբ՝ զայն
9 խորհիջիք : Զոր ուսարուքն եւ ըն-
կալարուք եւ լուայք եւ տեսէք յիս՝
զայն արարէք . եւ Աստուած խաղա-
ղութեան եղիցի ընդ ձեզ :
10 Ուրախ եղէ ես ի Տէր յոյժ , զի եւ
դուք զմտաւ ածէք հոգալ ինչ վասն
իմ , որպէս եւ հոգայիքն , բայց [2]բար-
11 բարէիք իմնէ՞ : Իբր ոչ առ կարօտու-
թեան ինչ ասեմ , զի ես ուսայ որովք
12 կարեմ բաւական լինել : Դիտեմ նուա-
ղել , գիտեմ առաւելուլ . յամենայնի
ամենեւին խելամուտ եմ եւ՛ յագել եւ՛
քաղցենալ , եւ՛ առաւելուլ եւ՛ նուա-
13 ղել : Ցամենայնի կարօղ եմ [3]այնու որ
14 զօրացոյցն զիս : Բայց բարւոք արարէք

զի կցորդ եղերուք ինձ ի նեղութեանս
15 Դիտէք եւ դուք , Փիլիպեցիք , զի ի
սկզբան աւետարանին իբրեւ եկի ես
ի Մակեդոնիայ , եւ ոչ մի եկեղեցի հա-
ղորդեաց ինձ յաղագս տալոյ եւ առնլոյ ,
16 բայց միայն դուք . Զի եւ ի Թեսաղո-
նիկ միանգամ եւ երկիցս զկաս իմ
17 ետուք բերել : Իբր ոչ եթէ խնդրեմ
զտուրսն , այլ խնդրեմ զպտուղն որ
18 յաճախէ ի բան ձեր : Այլ իմ առեալ
զամենայն եւ առաւելեալ եմ . լցեալ
եմ , եւ լի եմ ի ձեռն Եպափրոդիտեայ ,
որ է ի ձէնջ հոտ անուշից , պատարագ
19 ընդունելի՝ հաճոյ Աստուծոյ : Եւ Աս-
տուած իմ լի արասցէ զամենայն պէտս
ձեր ըստ իւրում մեծութեանն փառօք
20 ի Քրիստոս Յիսուս : Այլ Աստուծոյ
եւ Հօր մերում փառք յաւիտեանս յա-
ւիտենից : Ամէն :
21 Ողջոյն տայիք ամենայն սրբոց ի
22 Քրիստոս Յիսուս : Ողջոյն տան ձեզ
23 որ ընդ իս են եղբարք : Ողջոյն տան
ձեզ ամենայն սուրբք , մանաւանդ որ
24 ի տանէ կայսեր են : Շնորհք Տեառն
Յիսուսի Քրիստոսի [4]ընդ ոգւոյդ ձե-
րում՝ : Ամէն :

Առ Փիլիպեցիս գրեցաւ ի Հռովմէ ի ձեռն
Եպափրոդիտեայ :

---

[1]Յայն , յամենայնի [2]Այսինքն , չէր մարթի
[3]Որմէ , Քրիստոսիւ

[4]Որմէ , ընդ ձեզ ընդ ամենեսին

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 Ա.Բ. ՊԱՒՂՈՍ, առաքեալ Յիսուսի
Քրիստոսի կամօքն Աստուծոյ, եւ Տի-
2 մոթէոս եղբայր, Ա.ո կողոսացիս սուրբս
եւ հաւատացեալս եղբարս ի Քրիս-
տոս. շնորհք ընդ ձեզ եւ խաղաղու-
թիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ [1]եւ ի
Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ՛՛։
3 Գոհանամք զԱստուծոյ եւ զՀօրէ
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յա-
մենայն ժամ վասն ձեր աղօթս [2]առնել,
4 իբրեւ լուաք՛՛ զհաւատսն ձեր որ ի
Քրիստոս Յիսուս [3]ի Տէր մեր՛՛, եւ
զսէրն զոր ընդ ամենայն սուրբս ունիք.
5 վասն յուսոյն որ պահի ձեզ յերկինս,
զորմէ յառաջագոյն լուարուք բանիւն
6 ճշմարտութեան աւետարանին, Որ ե-
հաս առ ձեզ, որպէս ընդ ամենայն
աշխարհ աճէ եւ պտղաբերէ, որպէս
եւ ի ձերում միջի, յօրէ յորմէ լուա-
րուք եւ ծանեայք զշնորհն Աստուծոյ
7 ճշմարտութեամբ. Որպէս եւ ուսա-
րուք յԵպափրեայ սիրելւոյ ծառայակից
մերմէ, որ է հաւատարիմ վասն ձեր
8 պաշտօնեայ [4]Յիսուսի. Որ եւ պատ-
մեաց մեզ զձեր սէրն Հոգւով։
9 Վասն այնորիկ եւ մեք, յօրէ յորմէ
լուաք, ոչ դադարեմք վասն ձեր ա-
ղօթս առնել եւ խնդրուածս մատու-
ցանել, զի լնուցուք [5]զդիտութիւն կա-
մաց նորա ամենայն իմաստութեամբ
10 եւ հոգեւոր հանճարով. Գնալ ձեզ ար-
ժանի Տեառն յամենայն հաճութեան,
յամենայն գործս բարութեան պտղա-
բերք եւ աճեցուցանք գիտութեամբն Աս-
11 տուծոյ. Ամենայն զօրութեամբ զօրա-
ցեալք ըստ զօրութեան փառաց նո-
րա յամենայն համբերութիւն եւ եր-
կայնմտութիւն ուրախութեամբ։
12 Ա.Գ. Գոհանալ [6]զՀօրէ որ [7]կոչեացն
[8]զմեզ ի մասն վիճակի սրբոցն ի լոյս.
13 Որ փրկեացն զմեզ յիշխանութենէ խա-
ւարի, եւ փոխեաց [3]զմեզ յարքայու-
14 թիւն Որդւոյն իւրոյ սիրելւոյ. Որով
ունիմք զփրկութիւն արեամբն նորա,
[3]եւ զթողութիւն մեղաց՝ [3]մարմնովն
15 նորա.՛՛ Որ է պատկեր աներեւութին
Աստուծոյ, անդրանիկ ամենայն արա-
16 րածոց. Զի նովաւ հաստատեցաւ ա-
մենայն որ ինչ յերկինս եւ որ ինչ
յերկրի, որ երեւին եւ որ ոչն երեւին,
եթէ՛ աթոռք, եթէ՛ տէրութիւնք, եթէ՛
պետութիւնք, եթէ՛ իշխանութիւնք.
ամենայն ինչ նովաւ եւ ի նոյն հաս-
17 տատեցաւ. Եւ նա է յառաջ քան զա-
մենայն, եւ ամենայն ինչ նովաւ եկաց
18 բովանդակ. Եւ նա է գլուխ մարմնոյ
եկեղեցւոյ. որ է սկիզբն, անդրանիկ
ի մեռելոց, զի եղիցի ինքն յամենայնի
19 յառաջացեալ. Զի ի նմա հաճեցաւ ա-
մենայն լրումն [3]Աստուածութեանն
20 բնակել. Եւ նովաւ հաշտեցուցանել
զամենայն ի նոյն, արար խաղաղու-
թիւն արեամբ խաչին իւրոյ, [9]որ ինչ
յերկրի եւ որ ինչ յերկինս։
21 Եւ զձեզ որ երբեմն օտարացեալքն
էիք եւ թշնամիք խորհրդովք ի գործսն
22 չարութեան, Այժմ աւաղիկ հաշտե-
ցոյց անդամովք մարմնոյ իւրոյ ի ձեռն
մահուան [1]իւրոյ, յանդիման կացու-
ցանել զձեզ սուրբս եւ ամբիծս եւ

---

[1] Յ---ն պ---ե
[2] Յ---ն, արարեալ, (4) Լուեալ
[3] Ի Յ---ին պ---ե
[4] Յ---ն, Քրիստոսի
[5] Կամ, գիտութեամբ
[6] Որ---ւ, զԱստուծոյ Հօրէ
[7] Բ---ղ---մ, բաւականս արար
[8] Որ---ւ, զձեզ
[9] Յ---ն, նովաւ, որ

23 անարատս առաջի նորա. Եթէ կայցէք
ի հաւատսն արմատացեալք եւ հաս-
տատեալք, եւ անչարժք ի յուսոյ ա-
ւետարանին զոր լուարուք, քարոզե-
լոյ ընդ ամենայն արարածս ի ներքոյ
երկնից, որոյ եղէ ես Պաւղոս պաշ-
օնեայ։
24 ԱՂ. Եւ արդ ուրախ եմ ի չարչա-
րանս իմ վասն ձեր, եւ լնում զպակա-
սութիւն նեղութեանցն Քրիստոսի ի
մարմնի իմում վասն մարմնոյ նորա,
25 որ է եկեղեցի. Որոյ եղէ ես [1]Պաւղոս
պաշտօնեայ ըստ անտեսութեանն Ա-
ստուծոյ, որ տուեալ է ինձ ի ձեզ կա-
26 տարել զբանն Աստուծոյ, Զխորհուրդն
որ ծածկեալ էր ի յաւիտեանցն եւ յազ-
գաց, որ այժմ յայտնեցաւ սրբոց իւ-
27 րոց. Որոց կամեցաւ Աստուած ցու-
ցանել թէ զինչ է մեծութիւն փառաց
խորհրդոյն նորա ի հեթանոսս, որ է
28 Քրիստոս ի ձեզ, յոյսն փառաց. Զոր
մեք քարոզեմք, եւ խրատեմք զամե-
նայն մարդ, եւ ուսուցանեմք զամե-
նայն մարդ ամենայն [1]հոգեւոր իմաս-
տութեամբ, դի կացուսցուք զամենայն
մարդ կատարեալ ի Քրիստոս Յիսուս.
29 Ծոր եւ աշխատիմ պատերազմեալ ըստ
յաջողութեան նորա որ յաջողեալ է
յիս զօրութեամբ։

ԳԼ. Բ

1 Կամիմ դի դիտիցէք դուք որպիսի՛
ճղնութիւն ունիմ յանձին վասն ձեր եւ
վասն Լաւդիկեցւոցն, եւ որոց չիցէ
2 տեսեալ զերեսս իմ մարմնով. Զի սիրտ-
քարեացն սիրտք նոցա տեղեկացեալք
սիրով, եւ յամենայն մեծութիւն լրու-
թեան իմաստութեան՝ ի գիտութիւն
խորհրդոյն [2]Աստուծոյ ի Քրիստոս Յի-
3 սուս՝. Յորում ամենայն գանձք իմաս-
տութեան եւ գիտութեան ծածկեալ
4 կան։ Այլ զայս ասեմ, դի մի՛ ոք զձեզ
5 զառանցուսցէ պատիր բանիւք. Զի
թէպէտ եւ մարմնով հեռի եմ, այլ հոգ-
եւով ընդ ձեզ եմ. խնդամ, իրրեւ տես-
անեմ զկարգն ձեր եւ զհաստատու-
թիւն հաւատոյն ձերոյ որ ի Քրիստոս
6 [3]Յիսուս։ Արդ որպէս ընկալարուք
զՔրիստոս Յիսուս զՏէր, նովին գնաս-
7 ջիք. Արմատացեալք եւ չինեալք ի նա
եւ հաստատեալք ի հաւատս որպէս
ուսարուքն, առաւելեալք ի նմին գո-
հութեամբ։ Վ.Ջ
8 Զգոյշ լերուք մի՛ ոք իցէ որ զձեզ
կողոպտիցէ ճարտարմտութեամբ եւ
անօգուտ խաբէութեամբ, որք ըստ մարդ-
կան աւանդութեան եւ ըստ տարերց
աշխարհիս, եւ ոչ ըստ [1]Յիսուսի Քրիս-
9 տոսի. Զի ի նմա բնակէ ամենայն
լրումն Աստուածութեանն մարմնա-
10 պէս։ Եւ էք դուք նովաւ լցեալք, որ
է գլուխ ամենայն իշխանութեան եւ
11 պետութեան. Որով թլփատեցարուք
[3]հաւատովք զանձեռագործ թլփատու-
թիւնն՝ ի մերկանալ զանգամս [4]մարմ-
նոյ թլփատութեամբն Քրիստոսի.
12 Թաղեալք ընդ նմին ի մկրտութեանն,
որով եւ ընդ նմին յարեայք հաւա-
տովք Աստուծոյ ազդեցութեանն, որ
13 յարոյց զնա ի մեռելոց։ Եւ զձեզ որ
երբեմն մեռեայք էիք ի մեղս եւ յան-
թլփատութեան մարմնոյ ձերոյ՝ կեն-
դանացոյց յանձին իւրում. չնորհեաց
14 մեզ զամենայն յանցանս մեր, եւ ջընջ-
եաց զձեռագիրք մերոյ հակառակու-
թեանն հրամանօքն [3]իւրովք որ կայր
մեզ հակառակ, եբարձ զայն ի միջոյ
եւ բեւեռեաց ընդ խաչափայտին.
15 Մերկեաց զիշխանութիւնս եւ զպե-
տութիւնս, յայտ յանդիման խայտա-
ռակեաց նչաւակեալ զնոսա յանձին
իւրում [3]ի յարութեան իւրում՝։
16 Մի՛ ոք այսուհետեւ զձեզ դատեսցի
ուտելով կամ ըմպելով կամ մասամբք
տօնից, կամ ամսամտիւք, կամ շա-
17 բաթօք. Որ են ստուերք հանդերձե-
18 լոցն, այլ մարմինն [5]Քրիստոս է։ Մի՛
ոք զձեզ խաբեսցէ, որ կամիցի խո-
նարհութեամբ եւ կրօնիւք հրեչտա-
կաց, զոր չիցէ տեսեալ, զրահետ վա-
րել՝ տարապարտ հպարտացեալ ի մտաց
19 մարմնոյ իւրոյ. Եւ ոչ ունիցի զգլուխն
[1]Քրիստոս, ուստի ամենայն մարմինն
յօղիւք եւ խազալիօք տարաբերեալ
եւ խառնեալ՝ աճէ զաճումն Աստու-
20 ծոյ։ Եթէ մեռարուք ընդ Քրիստոսի
ի տարերց աշխարհիս, դի՞ եւս իբրեւ

---

[1] Ի Բազմոց պակաս
[2] Ոմն, Աստուծոյ Հօր և Քրիստոսի
[3] Ի Յոյնն պակաս
[4] Ոմն, մարմնոյ մեղաց
[5] Յոյն, Քրիստոսի

զկենդանիս աստէն յաչխարհի կրօնա-
21 ւորիք. Մի՛ մերձենար, մի՛ ձայա-
22 կեր, մի՛ հուպ լինիր. Որ է ամենայն
ինչ ի պէտս ապականութեան, ըստ
պատուիրանաց եւ վարդապետութեան
23 մարդկան, Որ յիմաստութիւն իմն հա-
մարէ ինքնակամ կրօնիւք եւ խոնար-
հութեամբ եւ անխնայութեամբ մարմ-
նոյ, եւ ոչ ի պատիւ ինչ լրութեան
մարմնոյ։

Գլ. Գ

1 Եթէ յարերուք ընդ Քրիստոսի, ապա
զվերինն խնդրեցէք, ուր Քրիստոս
2 նստի ընդ աջմէ Աստուծոյ։ Զվերինն
խորհեցարուք, մի՛ զայս որ յերկրի
3 աստ է։ Թանզի մեռարուք, եւ կեանքն
ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱս-
4 տուած։ Իսկ յորժամ Քրիստոս յայտ-
նեսցի, կեանքն ձեր, յայնժամ եւ դուք
ընդ նմա յայտնեսջիք փառօք։
5 Սպանէք այսուհետեւ զանդամս ձեր
զերկրաւորս. [1]ի բաց ընկեցէք՝ զպոռ-
նկութիւն, զպղծութիւն, զբիծ, զցան-
կութիւն չարեաց, եւ զագահութիւն՝
6 որ է կռապաշտութիւն. Վասն [2]որոյ
գայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ
7 որդւոցն անհնազանդութեան. Որովք
եւ դուք երբեմն գնայիք, մինչ կեն-
8 դանքն էիք ի նոսա։ Արդ ի բաց
թօթափեցէք եւ դուք զայն ամենայն.
զբարկութիւն, զսրտմտութիւն, զչա-
րութիւն, զհայհոյութիւն, զխեղկա-
9 տակութիւն ի բերանոց ձերոց։ Մի՛
ստէք միմեանց. մերկացարուք զհին
10 մարդն գործովքն իւրովք. Եւ զգեցա-
րուք զնորն՝ նորոգեալ ի գիտութիւն
11 ըստ պատկերի Արարչին իւրոյ. Ուր
ոչ է Հրեայ եւ ոչ հեթանոս, թլփա-
տութիւն եւ անթլփատութիւն, խուժ
դուժ, Սկիւթացի, ծառայ, ազատ.
այլ ամենայն եւ յամենայնի Քրիստոս։
12 Զգեցարուք այսուհետեւ իբրեւ ընտ-
րեալք Աստուծոյ, սուրբք եւ սի-
րեցեալք, [1]զգութ, զողորմութիւն,
զքաղցրութիւն, զխոնարհութիւն,
13 զհեզութիւն, զերկայնմտութիւն. Նե-
րել միմեանց, չնորհել իրերաց, եթէ
ուրուք զդմիքէ տրտունջ ինչ իցէ.
որպէս [3]Աստուած Քրիստոսիւ՝ չնորհ-
14 եաց ձեզ, նոյնպէս եւ դուք։ Եւ ի
վերայ այսր ամենայնի զսէրն՝ որ է
15 զօդ կատարմանն. Եւ խաղաղութիւնն
[4]Քրիստոսի հաստատեսցի ի սիրտս ձեր,
յոր եւ կոչեցարուքդ միով մարմնով.
եւ դոհացողք լինիջիք։
16 Ա՛ե. [1]Զի բանն Քրիստոսի բնակեսցէ
ի ձեզ առատապէս, ամենայն իմաս-
տութեամբ ուսուցանել եւ խրատել
զմիմեանս, սաղմոսիւք եւ օրհնու-
թեամբք եւ երգովք հոգեւորօք՝ [1]եւ
չնորհօք օրհնել ի սիրտս ձեր զԱս-
17 տուած։ Եւ զամենայն զոր եւ առնիջիք բանիւք եւ արդեամբք, զամենայն
յանուն Տեառն Յիսուսի արասջիք. դո-
հացողք լինիջիք զԱստուծոյ եւ զՀօրէ
նովաւ։
18 Կանայք, հնազանդ լերուք արանց
19 ձերոց, որպէս եւ վայել է ի Տէր։ Արք,
սիրեցէք զկանայս ձեր, եւ [5]մի՛ դառ-
20 նացուցանէք զնոսա՝։ Որդիք, հնա-
զանդ լերուք ծնողաց ձերոց յամե-
նայնի, զի այն է հաճոյ առաջի Տեառն։
21 Հարք, մի՛ զայրացուցանէք զորդիս
22 ձեր, զի մի՛ տրտմեսցին։ Ծառայք,
հնազանդ լերուք տերանց ձերոց յա-
մենայնի, մի՛ առ ակնակ ծառայու-
թեամբ իբրեւ մարդահաճոյք, այլ միա-
մտութեամբ սրտի երկնչել ի Տեառնէ.
23 Զոր ինչ առնիցէք՝ սրտի միտօք գոր-
ծեսջիք, իբրեւ Տեառն եւ ոչ իբրեւ
24 մարդկան։ Գիտասջիք զի ի Տեառնէ
առնուցուք զհատուցումն ժառանգու-
թեան [6]ձերոյ. քանզի Տեառն Քրիս-
25 տոս ծառայէք։ Իսկ ապիրատն ըն-
կալցի ըստ իւրում ապիրատութեանն,
զի չիք ակնառութիւն [6]առաջի Աս-
տուծոյ՝։

Գլ. Դ

1 Տեարք, զիրաւունս եւ զհաւասարու-
թիւն ծառայից ձերոց չնորհեցէք, գի-
տասջիք զի եւ ձեր Տէր դոյ յերկինս։
2 Աղօթից ստէպ կացէք, աքնել ի նմին
3 գոհութեամբ։ Աղօթս արարէք միան-
դամայն եւ վասն մեր, զի Աստուած

[1] Յ-ԽՆ պոխոք
[2] Յ-ՆՆ, որոց
[3] Ի Յ-ՆՆ օրինակս ՎՈՒՏ՝ Տէր, այլ՝ Քրիստոս
[4] ՈՐՈՒՏ, Աստուծոյ
[5] Յ-ՆՆ, մի՛ դառնասջիք առ նոսա
[6] Ի ԲՈԼՈՐ պոխոք

քացցէ մեզ դուռն բանին՝ խօսել զխորհուրդն Քրիստոսի, վասն որոյ եւ կապեալս կամ,
4 եալս կամ, Զի յայտնի արարից զնա, որպէս արժան իցէ ինձ խօսել։
5 Ա՛զ. Իմաստութեամբ գնացէք առ արտաքինսն՝ գնոց առեալ զժամանակս։
6 Եւ բանն ձեր յամենայն ժամ լի չնորհօք [1]Տեառն՝ իբրեւ՝ աղիւ համեմեալ լիցի, դիտել որպէս արժան իցէ ձեզ իւրաքանչիւր ումեք տալ պատասխանի։
7 Այլ որ ինչ զինէն իցէ՝ ցուցցէ ձեզ զամենայն Տիւքիկոս սիրելի եղբայր եւ հաւատարիմ պաշտօնեայ եւ ծա-
8 ռայակից ի Տէր. Զոր առաքեցի առ ձեզ զմին իրի, զի դիտասջիք վասն մերոց, եւ մխիթարեսցէ զսիրտս ձեր,
9 Ընեսիմաւ հանդերձ եղբարբ հաւատարմաւ եւ սիրելեաւ որ է ի ձէնջ. զամենայն ինչ ցուցցեն ձեզ որ ինչ
10 աստ է։ Ողջոյն տայ ձեզ Արիստարքոս գերեկից իմ, եւ Մարկոս եղբօրորդի Բառնաբայ. (վասն որոյ առէք պատուէր եթէ եկեսցէ առ ձեզ, ընկալջիք
11 զնա.) Եւ Յիսուս որ անուանեալն է Յուստոս, որք են ի թլփատութենէ անտի. զի զոքա միայն զործակից եղեն ինձ յարքայութեանն Աստուծոյ, որք եւ եղեն իսկ ինձ մխիթարութիւն։
12 Ողջոյն տայ ձեզ Եպափրաս որ ի ձէնջ ծառայ Քրիստոսի Յիսուսի է. յամենայն ժամ պատերազմեալ վասն ձեր յաղօթս, զի կայցէք կատարեալք եւ լցեալք յամենայն կամս Աստուծոյ։
13 վկայեմ նմա, զի բազում աշխատութիւն ունի վասն ձեր եւ վասն Լաւոդիկեացոցն, եւ վասն այնոցիկ որ յԵ-
14 րապոլիսն են։ Ողջոյն տայ ձեզ Ղուկաս բժիշկ [1]եւ սիրելի, եւ Դեմաս։
15 Ողջոյն տացիք եղբարց որ են ի Լաւոդիկիա, եւ Նիմփայ եւ որ առնէն
16 եկեղեցին է նորա։ Եւ յորժամ ընթեռնուցու առ ձեզ թուղթդ, արասջիք զի եւ ի Լաւոդիկեացոց եկեղեցւոջն ընթերցցի. եւ զառ ի Լաւոդիկեացոցն՝
17 զի եւ դուք ընթեռնուցուք։ Եւ ասասջիք ցԱրքիպպոս, Զդոյչ լեր սպասաւորութիւնդ զոր ընկալար ի Տէր, զի
18 զայդ կատարեսցես։ Ողջոյնդ ձեռին իմոյ Պաւղոսի. յուշ լիցին ձեզ կապանքս իմ։ Շնորհք ընդ ձեզ։[2]

Ա՛ս կողոսացւոց գրեցաւ է Հռովմէ է յերկաքաղաքէ Տիւքիկոսէ և Ընեսիմոյ։

[1] ի ցուն պ[illegible]

[2] Ոմանք է ցայն և է Հայ յերուսաղէմ յատեանս, Ամէն։

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԱՌԱՋԻՆ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԲԿ. **ՊԱՒՂՈՍ** եւ Սիղուանոս եւ Տի-
մոթէոս, եկեղեցւոյդ Թեսաղոնիկե-
ցւոց յԱստուած Հայր մեր եւ ի Տէր
2 Յիսուս Քրիստոս. Շնորհք ընդ ձեզ
եւ խաղաղութիւն[1]։

Դոհանամք զԱստուծոյ յամենայն
ժամ վասն ձեր ամենեցուն յիշատակ
3 առնել յաղօթս մեր, Անդադար յիշել
զձեր գործն հաւատոյ եւ զվաստակ
սիրոյ եւ զհամբերութիւն յուսոյ Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի առաջի Ա-
4 ստուծոյ եւ Հօր մերոյ. Գիտէք, եղ-
բարք սիրեցեալք յԱստուծոյ, զընտ-
5 րութիւնն ձեր. Զի աւետարանն մեր
ոչ եղեւ առ ձեզ միայն բանիւ, այլ եւ
զօրութեամբ եւ Հոգւով Սրբով եւ
լրութեամբ բազմաւ, որպէս եւ գիտէք
իսկ թէ որպիսիք եղեաք ի միջի ձե-
6 րում վասն ձեր։ Եւ դուք նմանեալք
մեզ եւ Տեառն՝ ընկալայք զբանն ի բա-
զում նեղութեան խնդութեամբ Հոգ-
7 ւոյն Սրբոյ. Լինել ձեզ օրինակ ամե-
նայն հաւատացելոց որ են ի Մակեդո-
8 նիա եւ յԱքայիա։ Զի ի ձէնջ հնչեաց
բանն [2]Աստուծոյ, ոչ միայն ի Մակե-
դոնիա եւ յԱքայիա, այլ յամենայն
տեղիս հաւատքն ձեր որ առ Աստուած
են՝ սիտեցան, զի այսուհետեւ ոչինչ
9 է պիտոյ մեզ եւ խօսել ինչ։ Զի նո-
քին իսկ պատմեն վասն մեր, թէ որ-
պէս եղեւ մեզ մուտ առ ձեզ, եւ որ-
պէս դարձայք առ Աստուած ի կոյս
անտի՝ ծառայել Աստուծոյ կենդանւոյ
10 եւ ճշմարտի, Եւ ակն ունել Որդւոյ
նորա յերկնից, զոր յարոյցն ի մեռե-

[1] Ոմն+ յ-ե-լ-ա՛-ն, յԱստուածոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ
[2] Բ-ա-ղ-մ-է, Տեառն

լոց, զՅիսուս, որ [3]փրկելոցն է՛ զմեզ
ի բարկութենէ անտի որ գալոցն է։

ԳԼ. Բ

1 ԲԴ. **Դուք** ինքնին գիտէք, եղբարք,
զմուտն մեր առ ձեզ, զի ոչ ընդուս-
2 նայն լինէ եղեւ. Այլ յառաջադոյն չար-
չարեալք եւ թշնամանեալք որպէս եւ
դուք իսկ գիտէք, ի մէջ Փիլիպեցւոց,
համարձակեցաք Աստուծով մերով՝
պատմել ձեզ զաւետարանն Աստուծոյ
3 մեծաւ պատերազմաւ։ Զի [4]սիւթա-
րութիւնն մեր ոչ ի մոլորութենէ է եւ
ոչ ի պղծութենէ եւ ոչ նենգութեամբ.
4 Այլ որպէս ընտրեցաք յԱստուծոյ հա-
ւատարիմ լինել աւետարանին, նոյն-
պէս եւ խօսիմք, ոչ իբրեւ մարդկան
հաճոյ լինել, այլ Աստուծոյ որ քննէ
5 զսիրտս մեր։ Զի ոչ երբէք բանիւք
ողբանոյց եղեաք առ ձեզ, որպէս եւ
դուք իսկ գիտէք, եւ ոչ ի պատճառս
ագահութեան, որպէս եւ Աստուած
6 վկայէ. Եւ ոչ խնդրէաք փառս ի մարդ-
7 կանէ, ոչ ի ձէնջ եւ ոչ յայլոց։ Կա-
րող էաք որպէս Քրիստոսի առաք-
եալս ծանրանալ, այլ եղեաք հեզք ի
միջի ձերում, որպէս դայեակ մի՝ որ
8 անուցանիցէ [5]մանկունս։ Նոյնպէս եւ
մեք զթայաք ի ձեզ, հաճոյ թուէր մեզ
տալ ձեզ ոչ միայն զաւետարանն Աս-
տուծոյ, այլ եւ զանձինս մեր, քանզի
9 սիրելիք մեր եղերուք։ [6]Յիշէք, եղ-
բարք, զվաստակն մեր եւ զջան, զի
զցայգ եւ զցերեկ գործէաք վասն չծան-
րանալոյ ումեք ի ձէնջ, եւ քարոզէաք
10 ձեզ զաւետարանն Աստուծոյ։ Դուք

[3] Յ-ա-յ-ն, փրկէն
[4] Կ-ա՛-ր, յորդորումն
[5] Յ-ա-յ-ն, զմանկունս իւր
[6] Յ-ա-յ-ն, փանզի յիշէք

ինքնին վկայէք, եւ Աստուած, ո՛րպէս սրբութեամբ եւ արդարութեամբ եւ անբծութեամբ ձեզ հաւատացելոցդ եղաք. Որպէս եւ գիտէք իսկ, զի զիւրաքանչիւր ոք ի ձէնջ, իբրեւ հայր զորդիս, Մխիթարէաք եւ սփոփէաք եւ զնէաք վկայութիւն զնալ ձեզ արժանապէս Աստուծոյ, որ կոչեացն զձեզ յիւր արքայութիւնն եւ ի փառս։ Վասն այնորիկ եւ մեք գոհանամք զԱստուծոյ անպակաս, զի առեալ զլուր բանին Աստուծոյ առ ի մէնջ՝ ընկալարուք, ոչ իբրեւ զբան մարդկան, այլ որպէս ճշմարտիւ զբան Աստուծոյ, որ եւ յայղոգեալ իսկ է ի ձեզ հաւատացեալս։ Զի զուք նմանողք եղերուք, եղբարք, եկեղեցեացն Աստուծոյ որ են ի Հրէաստանի ի Քրիստոս Յիսուս. զի զնոյն չարչարանս չարչարեցայք եւ զուք ի ձերոյ ազգակցաց, որպէս եւ նոքայն ի Հրէից. Որք եւ զՏէրն Յիսուս սպանին եւ [1]զմարգարէսն, եւ զմեզ հալածեցին, եւ Աստուծոյ յաչաց ելին, եւ ամենայն մարդկան հակառակ եղեն. Եւ արգելուին զմեզ խօսել հեթանոսաց զի ապրեսցին, զի կատարեսցեն զմեղս իւրեանց յամենայն ժամ. քանզի հասեալ է ի վերայ նոցա բարկութիւն մինչեւ ի սպառ։

17 ԲԶ. Այլ մեք, եղբարք, թէպէտ եւ որբ մնացաք ի ձէնջ առ ժամանակ մի երեսօք եւ ոչ սրտիւք, առաւել եւս փութացաք տեսանել զերեսս ձեր մեծաւ ցանկութեամբ։ Վասն այսորիկ կամեցայ զալ առ ձեզ ես Պաւղոս մի անգամ եւ երկիցս, եւ խափանեաց զմեզ Սատանայ։ Քանզի ո՞վ է մեր յոյս կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ զուք [2]ի Տէր առաջի Տեառն մերոյ Յիսուսի [3]Քրիստոսի ի նորա գալստեանն։ Զի զուք էք փառք մեր եւ խնդութիւն։

ԳԼ. Գ

1 Վասն որոյ ոչ եւս ունելով ժոյժ, զի բարւոք թուեցաւ մեզ միայն մնալ 2 յԱթենս. Եւ առաքեցաք զՏիմոթէոս զեղբայր [4]մեր եւ զղործակից աւետարանին Աստուծոյ եւ Հօրն Քրիստոսի՝, հաստատել զձեզ եւ մխիթարել վասն հաւատոցն ձերոց։ ՎՋ

3 Զի մի՛ տագնապեցէք ի նեղութիւնս յայսոսիկ. քանզի զուք ինքնին իսկ գիտէք զի ի սոյն կարգ. Քանզի մինչ առ ձեզն իսկ էաք, յառաջագոյն ասէաք ձեզ թէ նեղութիւնք հասանելոց են ի վերայ մեր, որպէս եւ եղեւ իսկ, եւ գիտացէք։ Վասն այնորիկ եւ ես, զի ոչ եւս ունէի ժոյժ, առաքեցի զիտել զհաւատսն ձեր, գուցէ արգելեալ փորձեաց եւ զձեզ փորձիչն, եւ ընդունայն լինիցի ջանն մեր։ Բայց արդ իբրեւ եկն Տիմոթէոս ի ձէնջ առ մեզ, եւ եւս մեզ զաւետիս հաւատոցն ձերոց եւ զսիրոյ, զի ունիք ի մտի զյիշատակս մեր բարեաց յամենայն ժամ, ցանկացեալ էք տեսանել զմեզ, որպէս եւ մեք զձեզ. Վասն այնորիկ մխիթարեցաք ի ձեզ, եղբարք, ի վերայ ամենայն վշտաց եւ նեղութեանց մերոց՝ ի ձեռն հաւատոցն ձերոց. Զի այժմ կենդանի եմք, եթէ զուք հաստատուն կայցէք ի Տէր։ Զի՞նչ կարեմք գոհութիւն մատուցանել Աստուծոյ վասն ձեր ի վերայ ամենայն խնդութեանն զոր խնդամք վասն ձեր առաջի Աստուծոյ մերոյ, Զցայգ եւ զցերեկ աղաչեալ եւս աղաչեմք տեսանել զերեսս ձեր, եւ հաստատել զպակասութիւն հաւատոցն ձերոց։ Այլ ինքն Աստուած եւ Հայր մեր եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս ուղղեսցէ զճանապարհս մեր առ ձեզ։ Եւ զձեզ ինքն Տէր բազմապատիկս եւ առաւելս արասցէ սիրով ընդ միմեանս եւ առ ամենեսին, որպէս եւ մեք ի ձեզ, Հաստատել զսիրտս ձեր անարատս ի սրբութիւն առաջի Աստուծոյ եւ Հօր մերոյ ի գալստեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հանդերձ ամենայն սրբովք իւրովք։

ԳԼ. Դ

1 ԳԿ. Այսուհետեւ, եղբարք, աղաչեմք զձեզ եւ մխիթարեմք [5]ի Քրիստոս Յիսուս՝, զի որպէս ընկալարուք ի մէնջ,

[1] Որ՛ն՛, զմարգարէս իւրեանց
[2] ի ց՛ն՛ն՝ գ՛ա՛ն՛ս
[3] ց՛ո՛ն՛ս գ՛ա՛ն՛ս
[4] ի ց՛ն՛ն՝ ա՛ն՛ս՛, մեր և զգալստեանէ Աստուծոյ և զգործակից մեր յաւետարանին Քրիստոսի. ՚յլ՝ մեր և զգալստեանէ Աստուծոյ յաւետարանին Քրիստոսի
[5] Բ՛ա՛ն՛ս՛, ի Տէր Յիսուս

թէ ո՛րպէս պարտ իցէ ձեզ գնալ եւ հաճոյ լինել Աստուծոյ. որպէս եւ գնայդ իսկ, զի եւս քան զեւս յաւելուցուք
2 ի նոյն։ Եւ գիտէք թէ որպիսի պատուիրանս տուաք ձեզ ի Տէր Յիսուս։
3 Զի այս են կամք Աստուծոյ՝ սրբութիւն ձեր, ի բաց լինել ձեզ ի պոռնկութենէ. Գիտել իւրաքանչիւր ումեք
4 ի ձէնջ զիւր աման սանանալ սրբութեամբ եւ պատուով. Մի՛ ի ցաւս ցանկութեան, որպէս եւ [1]այլ հեթանոսք
6 որ ոչ գիտեն զԱստուած։ Մի՛ զանցանել եւ զրկել յիրիդ յայդմիկ գեղբայր իւր, քանզի վրէժխնդիր է Տէր ի վերայ ամենայնի այդորիկ. որպէս յառաջագոյն ասացաք ձեզ եւ եղաք
7 վկայութիւն։ Քանզի ոչ կոչեաց զմեզ Աստուած ի պղծութիւն, այլ ի սրբութիւն։
8 Այսուհետեւ որ անարգէ, ոչ զմարդ անարգէ, այլ զԱստուած, որ եւ եւս դՀոգին Սուրբ [2]ի ձեզ։
9 Այլ վասն եղբայրսիրութեան չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ, զի դուք ինքնին իսկ աստուածուսոյցք էք առ ի զմիմեանս սիրելոյ։ Քանզի եւ առնէք իսկ
10 զդոյն յամենայն եղբարս որ են յամենայն կողմանս Մակեդոնացւոց. աղաչեմք զձեզ, եղբարք, առաւել եւս ա-
11 ռաւելուլ եւ առատանալ. Հանդարտել եւ գործել զիւրաքանչիւր, եւ գործել ձեռօք ձերովք, որպէս եւ պատուիրեցաք ձեզ, զի դնայցէք պարկեշտութեամբ առ արտաքինսն, եւ մի՛ իւիք կարօտեալք իցէք։
12 Ոչ կամիմ, եղբարք, եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն, զի մի՛ արտմիցիք որպէս եւ այլքն որոց ոչ գոյ յոյս։
13 Եթէ հաւատամք եթէ Յիսուս մեռաւ եւ յարեաւ, նոյնպէս եւ Աստուած զննջեցեալսն ի ձեռն Յիսուսի ածցէ
14 ընդ նմա։ [3]Բայց զայս ասեմք՝՝ Տեառն բանիւ, եթէ մեք որ կենդանիքս եմք մնացեալք ի գալստեանն Տեառն՝ ոչ
15 [4]ժամանեմք զննջեցելոցն՝՝։ Զի ինքնին Տէր հրամանաւ, ի ձայն հրեշտակապետի եւ ի փող Աստուծոյ իջանէ յերկնից, եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն
16 յառաջագոյն։ Ապա եւ մեք որ կեն-

դանեսցն մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդառաջ Տեառն յօդս, եւ այնպէս յամե-
17 նայն ժամ ընդ Տեառն լինիցիմք։ Այսուհետեւ միխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք։

Գլ. Ե

1 Գ. Այլ վասն ժամուց եւ ժամանակաց, եղբարք, չէ ինչ պիտոյ գրել առ
2 ձեզ. Զի դուք ինքնին իսկ ստոյգ գիտէք, թէ օրն Տեառն իբրեւ գգող գի-
3 շերի՝ այնպէս հասանէ։ Յորժամ ասիցեն թէ խաղաղութիւն եւ չինութիւն է, յայնժամ յանկարծակի հասցէ նոցա սատակումն, որպէս երկն յղւոյ, եւ
4 մի՛ ապրեսցեն։ Այլ դուք, եղբարք, ոչ էք ի խաւարի թէ օրն ձեր իբրեւ
5 զգող ի վերայ հասանիցէ. Զի ամենեքին դուք որդիք լուսոյ էք եւ որդիք տուբընջեան. չեմք գիշերոյ, չեմք խա-
6 ւարի։ Ապա մի՛ ղքնոյ անկանիցիմք որպէս եւ այլքն, այլ արթունք եւ
7 գուարթունք եղիցուք։ Զի որ ննջենն՝ գիշերի ննջեն, եւ որ արբենանն՝ գի-
8 շերի արբենան։ Այլ մեք զի տուբընջեան եմք, արթունք եղիցուք, եւ զգեցցուք զդրահն հաւատոյ եւ զսիրոյ, եւ գիւղ զսաղաւարտն յուսոյն փրկու-
9 թեան։ Զի ոչ եդ զմեզ Աստուած ի բարկութիւն, այլ ի փրկութիւն կենդանութեան ի ձեռն Տեառն մերոյ Յի-
10 սուսի Քրիստոսի, Որ մեռաւ վասն մեր. զի եթէ՛ արթունք իցեմք եւ եթէ՛ ննջիցեմք, նովաւ հանդերձ կեց-
11 ցուք։ Վասն որոյ միխիթարեցէք զմիմեանս եւ չինեցէք զիրեարս, որպէս եւ առնէքդ իսկ։
12 Գջ. Աղաչեմք զձեզ, եղբարք, ճանաչել զվաստակաւորս եւ զվերակացուս ձեր ի Տէր, եւ զխրատիչս ձեր.
13 Եւ համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ վասն գործոյ նոցա. խաղաղութիւն արարէք ընդ միմեանս.
14 Աղաչեմք զձեզ, եղբարք, խրատեցէք զատահակս, միխիթարեցէք զկարճամիտս, պատսպարան լերուք տկարաց, երկայնամիտ լերուք առ ամենեսին։
15 Զգոյշ լերուք գուցէ ոք չարի չար հատուցանիցէ. այլ յամենայն ժամ զբաղեալ գնետ երթայք առ միմեանս եւ

[1] Ի Յ-ՆԷՆ պ-ԼՈՒ
[2] Ո՞Ն-Ե, ի մեզ
[3] Յ-ՆՆ, Քանզի զայս ասեմք ձեզ
[4] ԿՊՀ, յառաջեմք քան զննջեցեալսն

16 առ ամենեսին։ Ցամենայն ժամ ուրախ
17 լերուք։ Անդադար աղօթս արարէք։
18 Ցամենայնի գոհացարուք, զի այս են
կամք Աստուծոյ Քրիստոսիւ Յիսու-
19 սիւ ի ձեզ։ ԶՀոգին մի՛ չիջուցանէք։
20 Զմարգարէութիւնս մի՛ արհամարհէք։
21 Զամենայն ինչ փորձեցէք, զբարին ըն-
22 կալարուք։ Ցամենայն իրաց չարաց
23 ի բաց կացէք։ Եւ ինքն Աստուած խա-
ղաղութեան սուրբս արասցէ զձեզ հա-
մօրէնս. եւ բովանդակ ձեր ոգի եւ
չունչ եւ մարմին անարատ ի գալուստ
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պա-
24 հեսցի։ Հաւատարիմ է որ կոչեացն
զձեզ, որ եւ արասցէ զնոյն։
25 Եղբարք, աղօթս արարէք եւ ի մեր
26 վերայ։ Ողջոյն տացիք եղբարց ամենե-
27 ցուն ի համբոյր սրբութեան։ Երդմնե-
ցուցանեմ զձեզ ի Տէր ընթեռնուլ
զթուղթդ առաջի ամենայն եղբարց
28 սրբոց։ Շնորհք Տեառն մերոյ Յիսու-
սի Քրիստոսի ընդ ձեզ։[1]

Առ Թեսաղոնիկեցիս առաջին նոաղն գրեցաւ յԱթենայ։

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 Դպ. ՊԱՒՂՈՍ եւ Սիղուանոս եւ Տի-
մոթէոս, եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց
յԱստուած Հայր մեր եւ ի Տէր Յի-
2 սուս Քրիստոս. Շնորհք ընդ ձեզ եւ
խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ
եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Գոհանալ պարտիմք զԱստուծոյ յա-
մենայն ժամ վասն ձեր, եղբարք, որ-
պէս եւ արժան իսկ է. զի եւս քան
զեւս աճեն հաւատք ձեր, եւ յաճախէ
սէր իւրաքանչիւր ամենեցուն ձեր առ
4 միմեանս. Որպէս եւ մեք ձեւք պար-
ծել յեկեղեցիսն Աստուծոյ վասն համ-
բերութեան ձերոյ եւ հաւատոյ յամե-
նայն հալածանս ձեր եւ ի նեղութիւնս,
5 որում դուքն համբերէք. Ցօրինակ
արդար դատաստանին Աստուծոյ, ար-
ժանի լինել ձեզ արքայութեանն Աս-
տուծոյ, վասն որոյ եւ զկնդութիւնդ
6 կրէք. Եթէ պարտ է առաջի Աստուծոյ
հատուցանել նեղչացն ձերոց նեղու-
7 թիւն. Եւ ձեզ նեղելոցդ հանդիստ
ընդ մեզ ի յայտնութեանն Տեառն մե-
րոյ Յիսուսի յերկնից հրեշտակօք զո-
8 րութեան իւրոյ, Ի բոց հրոյ առնուլ
վրէժս յանցանէ ոյք ոչ ճանաչեն զԱս-
տուած, եւ որ ոչ հնազանդին աւետա-
րանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
9 տոսի. Որք տայցեն վրէժս ի սատա-
կումն յաւիտենից յերեսաց Տեառն եւ
10 ի փառաց զօրութեան նորա, Յորժամ
գայցէ փառաւոր լինել ի մէջ սրբոց
իւրոց, եւ սքանչելի ի մէջ ամենայն
հաւատացելոց, (զի հաւատարիմ եղեւ
վկայութիւնն մեր ի վերայ ձեր,) յաւուր
11 յայնմիկ։ Ցոր եւ աղօթս առնեմք վասն
ձեր յամենայն ժամ, զի զձեզ արժա-
նիս արասցէ կոչմանն [2]Աստուած, [3]զի՞նչ
եւ լցցէ զամենայն հա-
ճութիւն բարութեան, եւ զգործս հա-
12 ւատոյն զօրութեամբ. Զի փառաւոր
լիցի անուն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի ի ձեզ, եւ դուք՝ ի նմա,
ըստ չնորհացն Աստուծոյ մերոյ եւ
Տեառն Յիսուսի Քրիստոսի։

---

[1] Ոմանք յաւելուն, Ամէն։
[2] Յոմանս պակաս
[3] Բազումք, Աստուած մեր, և

Գլ. Բ

1 ԴՈ. Աղաչեմ զձեզ, եղբարք, վասն
գալստեան Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի, եւ մերոյ ժողովելոյն առ
2 նա, Մի՛ վաղվաղակի խռովել ձեզ ի
մտաց եւ մի՛ զարհուրել, մի՛ հոգւով
եւ մի՛ բանիւ եւ մի՛ թղթովք իրրեւ
թէ ի մէնջ, որպէս թէ եկեալ հասեալ
3 իցէ օր Տեառն։ Մի՛ ոք զձեզ խաբեսցէ
եւ մի՛ իւիք իրօք. զի եթէ ոչ նախ
եկեսցէ ապստամբութիւնն, եւ յայտ-
նեսցի մարդն անօրէնութեան, որդին
4 կորստեան, Հակառակորդն հպարտա-
ցեալ ի վերայ ամենայնի որ անուանե-
ալ իցէ Աստուած կամ պաշտօն, մին-
չեւ նստել նմա ի տաճարին [1]Աստու-
ծոյ, եւ ցուցանել զանձն թէ Աստուած
5 իցէ։ Ո՞չ յիշիցէք զի մինչ առ ձեզն
6 իսկ էի, ասէի զայս։ Եւ արդ դուք
ինքնին գիտէք զայն որ ունին, յայտ-
նել նմա յիւրում ժամանակի։ Զի
խորհուրդն անօրէնութեան արդէն իսկ
զօրանայ. բայց ցայնժամ՝ մինչ ի միջոյ
8 բարձցի որ այժմ ունի։ Եւ ապա
յայտնեսցի անօրէնն. զոր Տէր [2]Յի-
սուս սատակեսցէ հոգւով բերանոյ իւ-
րոյ, եւ խափանեսցէ յայտնութեամբ
9 գալստեանն իւրոյ. Որոյ գալուստն
ըստ ազդեցութեան Սատանայի է ամե-
նայն զօրութեամբ եւ նշանօք եւ ար-
10 ուեստիւք սուտիւք, Եւ ամենայն պատ-
րանօք անիրաւութեան ի վերայ կո-
րուսելոցն. փոխանակ զի զսէրն ճշմար-
տութեան ոչ ընկալան, զի ապրեսցին.
եւ վասն այնորիկ առաքեսցէ նոցա
Աստուած ազդեցութիւն մոլորութեան
11 հաւատալ նոցա սուտութեանն. Զի դա-
տապարտեսցին ամենեքեան որ ոչ հա-
ւատային ճշմարտութեանն, այլ հա-
ճեցան ընդ անօրէնութիւնն։
12 Այլ մեք պարտիմք գոհանալ զԱս-
տուծոյ յամենայն ժամ վասն ձեր, եղ-
բարք սիրեցեալք ի Տեառնէ, զի ընտ-
րեաց [3]զձեզ Աստուած ի սկզբանէ ի
փրկութիւն սրբութեամբ Հոգւոյն եւ
13 հաւատովքն ճշմարտութեան. Յոր եւ
կոչեացն զձեզ աւետարանաւն մերով
ի փրկութիւն փառացն Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի։
14 Այսուհետեւ, եղբարք, հաստատուն
կացէք եւ պինդ կալարուք զաւան-
դութիւնն զոր ուսարուք, եթէ՛ բա-
15 նիւ եւ եթէ՛ թղթով մերով։ Այլ ինքն
Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ Աս-
տուած եւ Հայր մեր, որ սիրեացն
զմեզ եւ ետ մեզ մխիթարութիւն յա-
ւիտենից եւ յոյս բարեաց ընդ հոգի,
16 Մխիթարեսցէ զսիրտս ձեր եւ հաս-
տատեսցէ յամենայն բանս եւ ի գործս
բարութեան։

Գլ. Գ

1 ԴԶ. Այսուհետեւ, եղբարք, ազօթս
արարէք ի վերայ մեր, զի բանն Տեառն
ընթանայցէ, եւ փառաւոր լինիցի յա-
մենայն տեղիս, որպէս եւ առ ձեզ.
2 Զի ապրեսցուք յանօրինաց եւ յանզգա-
մաց մարդոց. զի ոչ ամենեցուն են
3 հաւատք։ Այլ հաւատարիմ է Տէր, որ
եւ հաստատեսցէ զձեզ եւ պահեսցէ
4 ի չարէ անտի։ Վստահ եմք ի ձեզ
Տերամբ, թէ զոր պատուիրեցաք ձեզ,
5 եւ առնէք եւ առնիցէք։ Այլ Տէր
ուղղեսցէ զսիրտս ձեր ի սէրն Աստու-
ծոյ եւ ի համբերութիւնն Քրիստոսի։
6 Պատուիրեմ ձեզ, եղբարք, յանուն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
խորշել ձեզ յամենայն եղբօրէ որ ստա-
հակն դնայցէ, եւ ոչ ըստ աւան-
դութեանն զոր ընկալարուք ի մէնջ։
7 Զի դուք ինքնին գիտէք թէ ո՛րպէս
պարտ է ձեզ նմանել մեզ. զի ոչ եր-
8 բեք սատահակեցաք առ ձեզ, եւ ոչ ձրի
զուրուք հաց կերաք, այլ ջանիւ եւ
վաստակով զցայգ եւ զկերեկ գործէաք
9 վասն չծանրանալոյ ումեք ի ձէնջ. Ոչ
եթէ չունէաք իշխանութիւն, այլ զի
զանձինս օրինակ արասցուք ձեզ՝ նմա-
10 նոգս լինել մեզ։ Քանզի մինչ առ ձեզն
իսկ էաք, զայս պատուիրէաք ձեզ,
թէ Որ ոչն կամիցի գործել, եւ կերիցէ
11 մի՛։ Արդ լսեմք զումանց ի ձէնջ թէ
սատահակութեամբ գնան, գործ ինչ ոչ
գործեն, այլ յուլացեալ հետաքրքիր
12 չրջին։ Այսպիսեացն պատուէր տամք,
եւ ազաչեմք ի Տէր Յիսուս Քրիստոս,
զի հանդարտութեամբ գործեսցեն եւ
13 զիւրեանց հաց կերիցեն։ Այլ դուք,

---

[1]Որոշ, Աստուծոյ իբրեւ զԱստուած
[2]Յունարէն պակաս [3]Բազմաց, զձեզ

եղբարք , մի՛ ձանձրանայք զբարիս
14 գործել ։ Ապա եթէ ոչ ոք հնազանդեա-
ցի բանիս մերոմ թղթովդ այդուիկ ,
դուք նչանակեսջիք զնա , եւ մի՛ խառ-
նակեսջիք ընդ նմա , զի պատկառեսցէ ։
15 Բայց մի՛ իբրեւ զթշնամի համարեա-
ջիք , այլ խրատեսջիք իբրեւ զեղբայր ։
16 Եւ ինքն Տէր խաղաղութեան տացէ
ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ
յամենայն իրս . Տէր ընդ ամենեսին
17 ընդ ձեզ ։ Ողջոյնս իմոյ ձեռին Պաւղո-
սի է , որ է նչանակ յամենայն թուղթս .
18 այսպէս գրեմ ։ Շնորհք Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեսին
ձեզ ։

Ա՟ Թեսաղոնիկեցւոց երկրորդ՝ գրեցաւ
յԱթենայ ։

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԱԿ. ՊԱՒՂՈՍ , առաքեալ Յիսուսի
Քրիստոսի ըստ հրամանի Փրկչին մե-
րոյ Աստուծոյ եւ Քրիստոսի Յիսուսի
2 յուսոյն մերոյ . Տիմոթէոսի , որդւոյ սի-
րելւոյ հաւատովք , շնորհք , ողորմու-
թիւն , խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ
եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիս-
տոսէ ։
3 Որպէս աղաչեցի զքեզ կալ յԵփե-
սոս , մինչ երթայի ի Մակեդոնիա , զի
պատուիրեր տացես ոմանց չլինել օտար-
4 ուսմունս , եւ չհայել յառասպելս եւ
ի տոհմաթիւս անչափս . որ մանաւանդ
խնդիրս յուզեն , եւ ոչ [1]զտնտեսու-
5 թիւն Աստուծոյ հաւատովք ։ Բանզի
զլուխ պատուիրանին սէր է , ի սուրբ
սրտէ եւ ի մտաց բարեաց եւ յանկեղ-
6 ծաւոր հաւատոց . Որոց ոմանք վրիպ-
եցան՝ խոտորեալք յունայնաբանութիւն
7 բանից . կամին լինել վարդապետք օ-
րինաց , ինքեանք ոչ իմանան զինչ
խօսին , եւ ոչ վասն որոց պնդեալն են ։
8 Գիտեմք եթէ բարւոք են օրէնք , եթէ
9 ոք զնոսա օրինաւք կրեսցէ ։ Բայց զայս
գիտասցէ , զի ի վերայ արդարոց օրէնք
ոչ կան , այլ ի վերայ անօրինաց եւ
անհնազանդից , ամբարչտաց եւ մեղա-
ւորաց , անսրբոց եւ պղծոց , դհայր եւ
զմայր [2]անարդողաց , մարդասպանաց ,
10 պոռնկաց , արուագիտաց , մարդեղու-
ղաց , ստոց , ստերդմանց , եւ եթէ այլ
ինչ իցէ հակառակ ողջամիտ վարդա-
11 պետութեանս , Որ ըստ աւետարանի
փառաց երանելւոյն Աստուծոյ է , ո-
րում եղէ ես հաւատարիմ ։ Վ.
12 Շնորհս ունիմ այնմիկ որ զօրացոյցն
զիս , [3]ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր՝ ,
զի հաւատարիմ համարեցաւ կարգել
13 ի սպասաւորութիւն . Որ յառաջագոյն
հայհոյիչն էի եւ հալածիչ եւ թշնա-
մանիչ , այլ գտի ողորմութիւն , զի
զայն յանգիտութեան եւ յանհաւա-
14 նութեան գործէի . Եւ առաւել եղեն
չնորհք Տեառն մերոյ հաւատովքն եւ
15 սիրոյ որ ի Քրիստոս Յիսուս ։ Հաւա-
տարիմ է բանս եւ ամենայն ընդու-
նելութեան արժանի է , զի Քրիստոս
Յիսուս եկն յաչխարհ փրկել զմեղա-
16 աւորս որոց զլուխն ես եմ ։ Այլ վասն
այնորիկ գտի ողորմութիւն , զի նախ
յիս ետցոյց Յիսուս Քրիստոս զամենայն

[1]Ոմանք , զչինութիւն

[2]Յ-յն , հարկանողաց
[3]Յ-յն , Քրիստոսի Յիսուսի Տեառն մերում

երկայնմտութիւն յօրինակ այնոցիկ որ հաւատացողն իցեն ի նա ի կեանսն յա-
17 ւիտենից : Այլ Թագաւորին յաւիտենից , անեղծի եւ աներեւութի , [1]միոյն Աստուծոյ՝՝, փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից : Ամէն :
18 Զայս պատուիրան աւանդեմ քեզ , որդեակ իմ Տիմոթէոս , ըստ կանխեղոյ ի քեզ մարգարէութեանցն , զի դու
19 զինուորիցիս նոքօք զդեղեցիկ զինուորութիւնն . Ունիցիս հաւատս սրբովք մտօք , զոր ոմանք մերժեալ յանձանց իւրեանց՝ նաւակոծեցան ի հաւատսն .
20 Որոց սակի են Հիմենէոս եւ Աղեքսանդրոս , զորս մատնեցի Սատանայի , զի խրատեսցին չհայհոյել :

ԳԼ· Բ

1 Եւ արդ աղաչեմ նախ քան զամենայն առնել աղօթս , խնդրուածս , պաղատանս , դոհութիւնս վասն ամենայն
2 մարդկան . [2]Մանաւանդ վասն Թագաւորաց եւ ամենայն իշխանաց , զի խաղաղութեամբ եւ հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր ամենայն աստուածպաշտութեամբ եւ սրբու-
3 թեամբ : Զի այն է բարի եւ ընդունելի
4 առաջի Փրկչին մերոյ Աստուծոյ , Որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն եւ ի դիտութիւն ճշմարտութեան եկեսցեն :
5 Զի մի է Աստուած , եւ մի միջնորդ Աստուծոյ եւ մարդկան , մարդն
6 Յիսուս Քրիստոս , Որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցունն՝ վկայութիւն
7 ժամանակաց իւրոց . Յոր եղայ ես քարոզ եւ առաքեալ , (ճշմարիտ ասեմ [3]ի Քրիստոս եւ ոչ սաեմ ,) [2]եղէ վարդապետ հեթանոսաց հաւատովք եւ ճշմարտութեամբ :
8 Ա՛ր· կամիմ զի արք կայցեն յաղօթս յամենայն տեղիս , բառնայցեն զսուրբ ձեռս ի վեր առանց բարկութեան եւ
9 երկմտութեան : Նոյնպէս եւ կանայք ի զարդ խոնարհութեան ակնածութեամբ եւ զդաստութեամբ զարդարել զանձինս , մի՛ ի հիւսս ոսկեմանս զնդեղուեալս մարգարտով , կամ ի հան-
10 դերձս պաճուճեալս , Այլ , որպէս վա-
յելէ կանանց զաստուածպաշտութիւն յանձն առեալց , գործովք բարութեան :
11 Կին մարդ [4]ցածութեամբ ուսցի , ամե-
12 նայն հնազանդութեամբ : Այլ ուսուցանել կնոջ մարդոյ ոչ հրամայեմ , եւ ոչ ճոխաբան լինել քան զայր մարդ ,
13 այլ ի լռութեան կալ : Զի Ադամ նախ
14 ստեղծաւ եւ ապա Եւա : Եւ Ադամ ոչ պատրեցաւ , այլ կինն պատրեցաւ
15 եւ յանցեաւ . Բայց կեցցէ վասն որդեծնութեանն , եթէ կայցեն ի հաւատս եւ ի սէր եւ ի սրբութիւն պարկեշտութեամբ :

ԳԼ· Գ

1 Հաւատարիմ է բանս , եթէ ոք եպիսկոպոսութեան ցանկայ , բարւոյ դոր-
2 ծոյ ցանկայ : Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել , միոյ կնոջ այր , [5]հեղ , ցած , պարկեշտ , հիւրասէր , ուսուցիչ·
3 Մի՛ թղնամանող , [6]մի՛ հարկանող , այլ՝ հանդարտ · մի՛ կռուող , մի՛ արծաթա-
4 սէր · Զի իւրում տանն իսկ բարւոք վերակացու լինել իցէ , որդեակս ունիցի որ ի հնազանդութեան կայցեն
5 ամենայն պարկեշտութեամբ : (Ծպտ եթէ ոք իւրում տանն վերակացու չդիտիցէ լինել , զիա՞րդ եկեղեցւոյ Աս-
6 տուծոյ խնամակալ լիցի :) Մի՛ մատաղատունկ , զի մի՛ հպարտացեալ ի դա-
7 տաստանս Սատանայի անկանիցի : Այլ պարտ է նմա վկայութիւն բարի եւ յարտաքինոցն ունել · զի մի՛ ի նախատինս անկանիցի եւ յորոգայթս Սատանայի :
8 Նոյնպէս եւ զսարկաւագունս պարկեշտս · մի՛ երկբանս , մի՛ զինեսէրս , մի՛
9 զօշաքաղս · Այլ ունիցին զխորհուրդ
10 հաւատոցն սուրբ մտօք : Ինքեանք նախ փորձեսցին , եւ ապա ի պաշտօնն
11 մատիցեն , զի անարատք իցեն : Նոյնպէս եւ կանայք նոցա պարկեշտք · մի՛ չարաբասս , [5]հեղք , հաւատարիմք յա-
12 մենայնի : Սարկաւագք լինիցին միոյ կնոջ արք , որոց որդւոց իւրեանց բարւոք վերակացու լինել իցեն եւ տանց
13 իւրեանց · Զի որ բարւոքն պաշտիցեն՝ աստիճան բարի անձանց իւրեանց չա-

[1] Որ՚ն , միայնոյ իմաստնոյն Աստուծոյ
[2] Ի ցոյնն պակաս
[3] Ցոյնն պակաս
[4] Ցոյն , լռութեամբ
[5] Ցոյն , արթուն , լաւ , զգաստ
[6] Որ՚ն , մի՛ հարկանող , մի՛ զօշաքաղ , այլ

հին, եւ բազում համարձակութիւն ի
հաւատան որ ի Քրիստոս Յիսուս։ ՎԶ
14 Զայս գրեմ առ քեզ, ղի ակն ունիմ
15 ի սոսոյ գալ. Ապա թէ յամեցից, ղի
դիտասցես թէ ո՛րպէս պարտ իցէ քեզ
ի տան Աստուծոյ շրջել, որ է եկեղե-
ցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն եւ
16 հաստատութիւն ճշմարտութեան։ Եւ
յայտնի խոկ մեծ է խորհուրդն աս-
տուածպաշտութեան, [1]որ երեւեցաւ
մարմնով, արդարացաւ Հոգւով, յայտ-
նեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ ի հե-
թանոսս, հաւատարիմ եղեւ յաշխարհի
եւ վերացաւ փառօք։

ԳԼ. Դ

1 ԱՋ. Այլ Հոգին Սուրբ յայտնապէս
ասէ թէ ի ժամանակս յետինս քակտե-
ցին ոմանք ի հաւատոցն, եւ հայեսցին
յոգիս մոլորութեան եւ ի վարդապե-
2 տութիւնս դիւաց, կեղծաւորութեամբ
ստապանք, խարեալք իւրեանց խղճին
3 մտաց. Որ արգելուցուն յամուսնա-
նալոյ, եւ մեկնիցեն ի կերակրոց զոր
Աստուած հաստատեաց ի վայելել [2]հա-
ւատացելոց, եւ ոյք հասեալ իցեն ի
4 ճշմարտութեանն վերայ։ Զի ամենայն
արարած Աստուծոյ բարի են, եւ չիք
ինչ խոտան. մանաւանդ որ գոհու-
5 թեամբ ընդունիցին. Զի սրբի բանիւն
6 Աստուծոյ եւ ազօթիւք։ Զայս խրատ
տուեալ եղբարց՝ բարւոք պաշտօնեայ
լինիցիս Քրիստոսի Յիսուսի, սնանել-
ցիս բանիւք հաւատոց եւ բարւոք վար-
դապետութեամբն զորոյ դիտեան իսկ
7 եղեր։ Այլ ի պիղծ բանից եւ յառաս-
պելաց պառաւանց հրաժարեսջիր, բայց
կրթեա զանձն քո յաստուածպաշտու-
8 թիւն. Զի մարմնոյ կրթութիւն առ
սակաւ ինչ օգտակար է, իսկ աս-
տուածպաշտութիւն առ ամենայն ինչ
օգտակար է, եւ զաւետիս կենաց ունի
9 զարգիս եւ դհանգերձելոցն։ Հաւա-
տարիմ է բանս եւ ամենայն ընդու-
10 նելութեան արժանի է։ Զի ի սոյն իսկ
վաստակեմք եւ նախատինս յանձն առ-
նումք, զի յուսացեալ եմք յԱստուած
կենդանի, որ է Փրկիչ ամենայն մարդ-
կան, մանաւանդ հաւատացելոց։

11 ԲԿ. Պատուէր տայիր զայդ եւ ու-
12 սուցանիջիր։ Զի մի՛ ոք զքո մանկու-
թիւնդ արհամարհիցէ. այլ օրինակ լի-
նիջիր հաւատացելոց բանիւք, վար-
ուք, սիրով, հաւատով, սրբու-
13 թեամբ։ Մինչեւ գամ ես, միա զիր ըն-
թերցուածոյ, մխիթարութեան, վար-
14 դապետութեան։ Մի՛ անփոյթ առնիր
շնորհացդ որ ի քեզ են, որ տուաւ
քեզ մարգարէութեամբ ի ձեռնադրու-
15 թենէ երիցութեան։ Յայդ խորհեաց
եւ ի դոյն կանխեսջիր, զի քո յառաջա-
դիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի։
16 Զդոյչ լինիջիր անձին եւ վարդապե-
տութեանդ եւ ի դմին յամեսջիր. զայդ
եթէ առնիցես, եւ՛ զանձն ապրեցուս-
ցես, եւ՛ զայնոսիկ որ քեզն լսիցեն։

ԳԼ. Ե

1 Զծերն մի՛ պատուհասիցես, այլ մխի-
թարեսջիր իբրեւ զհայր. զերիտա-
2 սարդս՝ իբրեւ զեղբարս, Զպառաւեսն՝
իբրեւ զմայրս, զմանկամարդս՝ իբրեւ
3 զքոյրս ամենայն սրբութեամբ։ Զայրիս
պատուեա որ առոյգ այրիքն իցեն։
4 Ապա թէ ոք այրի որդիս եւ թոռունս
ունիցի, ուսանիցին նախ իւրեանց
տանց բարի առնել, եւ զփոխարէնն
հատուցանել ծնողացն. զի այն է բարի
5 եւ ընդունելի առաջի Աստուծոյ։ Իսկ
որ ճշմարիտ այրին իցէ եւ մենացեալ,
[3]յուսացեալ յԱստուած, եւ [4]կանխեալ
յաղօթս եւ ի խնդրուածս զգայդ եւ
6 զգերեկ. Իսկ զիրգ այրին կենդանւոյն
7 մեռեալ է։ Զայս պատուիրեա զի ա-
8 նարատք իցեն։ Իսկ եթէ ոք իւրոց
եւ մանաւանդ ընտանեաց խնամ ոչ
տանիցի, ի հաւատոցն ուրացեալ է,
9 եւ չար եւս քան զանհաւատն է։ Այրի
ընդ այրիս անուանեսցի որ չիցէ պա-
կաս ի վաթսնամենից, միոյ առն կին
10 լեեալ, Եւ ի գործս բարիս վկայեալ.
եթէ մանկունս սնուցեալ իցէ, եթէ
զիւրս ընկալեալ իցէ, եթէ զսրբոց
ոտս լուացեալ իցէ, եթէ նեղելոց բա-
ւական լեեալ իցէ, եթէ զամենայն գոր-
11 ծոց բարեաց զհետ երթեալ իցէ։ Այլ ի
մանկամարդաց այրեացն հրաժարեա,
ղի յորժամ խայտան զքրիստոսիս,

[1] Ոմն, Աստուած
[2] Բազմն, գոհութեամբ հաւատացելոց
[3] Ցոյն, յուսայ
[4] Ցոյն, կանխէ

12 ամուսնանալ կամին. Իսկ զղջացա-
ցանս ընդունին, զի զառաջին հա-
13 ւատսն արհամարհեցին: Միանդամայն
եւ դատարկանձունք ուսանին, չրջողք
տանէ ի տուն. եւ ոչ միայն դատարկք,
այլ եւ փսաքուսք եւ հետաքրքիրք.
14 եւ խօսին որ ինչ ոչ է պիտոյ: Կամիմ
զմանկամարդսդ ամուսնանալ, որդիս
ծնանել, տնարարս լինել, եւ մի՛ ինչ
պատճառս տալ հակառակորդին ի հայ-
15 հոյութեան աղագս: Զի արդէն իսկ
ոմանք խոտորեցան զկնի Սատանայի:
16 Եթէ ոք հաւատացեալ՝ այրիս ունիցի,
բաւական լիցի նոցա, եւ մի՛ ծանրաս-
ցի եկեղեցւոյն, զի ճշմարիտ այրեացն
բաւական լինիցի:
17 ԲԳ. Որ բարւոք վերակացու լինին
երիցունք՝ կրկին պատուոյ արժանի ե-
զիցին, մանաւանդ որ աչխատիցին բա-
18 նիւ եւ վարդապետութեամբ: Գրանզի
ասէ գիր, Մի՛ կապեսցես ղցուլ եզին
կալոտուց, եւ՝ Արժանի է մշակն վար-
19 ձու իւրոյ: Զերիցուէ չարախօսու-
թիւն մի՛ ընդունիցիս, բայց եթէ եր-
20 կու եւ երիւք վկայիւք: Իսկ որ մե-
ղանչեն՝ առաջի ամենեցուն յանդի-
21 մանեա, զի եւ այլքն երկիւղն ունիցեն: Վկա-
յումբիւն դնեմ առաջի Աստուծոյ եւ
Յիսուսի Քրիստոսի եւ ընտրելոց հրես-
տակաց, զի զայդ պահեսցես առանց
մտահաճութեան, մի՛ ինչ առնել աչա-
22 ռանօք: Զեռս վաղվաղակի յուրուք
վերայ մի՛ դնիցես, եւ մի՛ կցորդ լինի-
ցիս մեղաց օտարաց. զանձն քո սուրբ
պահեսջիր:
23 Այսուհետեւ մի՛ ջուր եւեթ ըմպի-
ցես, այլ սակաւիկ մի եւ զինի խառ-
նեսջիր վասն ստամոքսի եւ ստէպ
հիւանդութեանց:
24 Են մարդք որոց մեղքն յայտնի են,
եւ յառաջադոյն հասեալ ի դատաստան,
25 եւ են՝ որոց զկնի երթան: Նոյնպէս
եւ բարի գործքն յայտնի են. եւ որ այ-
լազգ եւս ինչ իցեն՝ թաքչել ոչ կարեն:

Գլ. Զ

1 Որ միանդամ ընդ լծով ծառայութեան
իցեն, զիւրաքանչիւր տեառս [1]պատուի
արժանի համարեսցին, զի մի՛ անունն

Աստուծոյ եւ վարդապետութիւնն հայ-
2 հոյեսցի: Իսկ որ հաւատացեալ տեառս
ունիցին, մի՛ արհամարհեսցեն զի եղ-
բարք են, այլ առաւել ծառայեսցեն,
զի հաւատացեալքն են եւ սիրունք,
որք զբարերարութիւնն յանձին ունի-
ցին. զայս ուսուցանիջիր եւ մխիթա-
3 րեսջիր: Իսկ եթէ ոք այլազգ ինչ ու-
սուցանիցէ, եւ ոչ անսայցէ ողջմտու-
թեան բանից Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի, եւ ըստ աստուածպաշ-
4 տութեան վարդապետութեանն, Այն-
պիսին հպարտացեալ է եւ ոչինչ ոչ
գիտէ, այլ տայրի ի խնդիրս եւ ի բանս
հակառակութեան. ուստի լինին նա-
խանձ, հերձ, հայհոյութիւնք, կարծիք
5 չարեաց, խարդախութիւնք սպակա-
նելոց մտաց մարդկան եւ օտարացելոց
ի ճշմարտութենէ անտի, որք չահա-
վաճառ համարին զաստուածպաշտու-
թիւնն. բայց դու մերժեսջիր յայն-
պիսեաց անտի:
6 ԲԶ. Այլ չահավաճառ մեծ աստուած-
պաշտութիւնն է բաւականութեամբ
7 հանդերձ: Զի ոչ բերաք ինչ յաչխարհս,
8 [2]եւ ոչ՝ տանել ինչ կարասցուք: Այլ
ունիմք կերակուր եւ հանդերձս, եւ
9 այնու չատասցուք: Իսկ որք կամինն
մեծանալ՝ անկանին ի փորձութիւն եւ
յորոգայթ եւ ի բազում ցանկութիւնս
անմիտս եւ վնասակարս, որք ընկղմեն
զմարդիկ ի սատակումն եւ ի կորուստ:
10 Զի արմատ ամենայն չարեաց արծաթ-
սիրութիւն է. որում ոմանք ցանկա-
ցեալ՝ վրիպեցան ի հաւատոյն, եւ զան-
ձինս արկին ընդ բազում ցաւովք:
11 Այլ դու, ո՛վ մարդ Աստուծոյ, փա-
խիր յայնցանէ, եւ երթ զկնի արդա-
րութեան, դաստուածպաշտութեան,
զհաւատոյ, զսիրոյ, զհամբերութեան,
12 զհեղութեան. Եւ մարտիր զբարւոք
մարտն հաւատոյ, եւ բուռն հար զկե-
նացն յաւիտենականաց յոր կոչեցարն,
եւ դաւանեցեր զբարւոք դաւանու-
13 թիւն առաջի բազում վկայից: Պատ-
ուիրեմ քեզ առաջի Աստուծոյ որ կեն-
դանի առնէ զամենայն, եւ Յիսուսի
Քրիստոսի որ վկայեաց առաջի Պոն-
տացւոյ Պիղատոսի զբարւոք դաւա-
14 նութիւնն, Պահել քեզ զպատուիրանն

[1] Յոյն, ամենայն պատուոյ

[2] Որհն, և յայտ իսկ է թէ և ոչ

անբիծ , անարատ , մինչեւ ի յայտնու-
թիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
15 տոսի · Զոր յիւր ժամանակս ցուցցէ
երանելին եւ միայն Հզօր , Թագաւոր
16 թագաւորաց եւ Տէր տերանց · Որ
միայն ունի զանմահութիւն՝ բնակեալ
ի լոյս անմատոյց · զոր ոչ ոք եհաս ի
մարդկանէ եւ ոչ տեսանել կարող է ,
որում պատիւ եւ զօրութիւն յաւիտ-
եանս ։ Ամէն ։
17 Մեծատանց որ են յայսմ աշխարհի՝
պատուէր տացիր մի՛ հպարտանալ եւ
մի՛ յուսալ ի մեծութիւն մնոտի , այլ
[1]յԱստուած որ տայ մեզ ամենայն ա-
18 ռատապէս ի վայելել , Զբարիս գործել ,
մեծանալ գործովք բարութեան , ա-
ռատս , [2]սիրուն , հաղորդս լինել ·
19 Դանձել անձանց հիմն բարի ի հան-
դերձեալսն , զի բուռն հարկանիցեն
[3]զճշմարիտ կենացն ։
20 Ով Տիմոթէ , պահեա զաւանդն՝
խոտորեալ [4]ի պղծոց եւ ի նորաձայն
բանից եւ ի հակառակութենէ եւ ի
21 մոլարանուն գիտութենէ՛՛, Զոր ոմանց
յանձն առեալ՝ վրիպեցան ի հաւատոց
անտի ։ Շնորհք ընդ քեզ ։[5]

Ա՛ Տիմոթէոս առաջին նուագի էբեցա-
ւ Լաոդիկէից , որ է մայր գաղատաց Պա-
կատիանոսացոց ։

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 Գկ· ՊԱՒՂՈՍ , առաքեալ Յիսուսի
Քրիստոսի կամօքն Աստուծոյ , ըստ
աւետեաց կենացն որ ի Քրիստոս Յի-
2 սուս , Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ
չնորհք , ողորմութիւն եւ խաղաղու-
թիւն յԱստուծոյ Հօրէ եւ ի Քրիստոսէ
Յիսուսէ Տեառնէ մերմէ ։
3 Շնորհս ունիմ Աստուծոյ զոր պաշ-
տեմն ի նախնեաց մտօք սրբովք , իբրեւ
զի անպակաս ունիմ զքէն յիշատակ
4 յաղօթս իմ գլցայգ եւ գլերկ · Յանա-
կացեալ եմ տեսանել զքեզ՝ յիշատակ-
եալ զարտասուսն քո , զի լցայց ու-
5 րախութեամբ · Զմտաւ ածեալ զանի-
ղիճ հաւատսն որ են ի քեզ , որ յա-
ռաջադոյն բնակեցաւ ի հանդ քումմ
Լաւդիայ , եւ ի մօր քումմ Եւնիկեայ ·
6 հաստատեալ եմ թէ եւ ի քեզ է ։ Վասն
որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել
զնորհսն Աստուծոյ որ են ի քեզ ի
7 ձեռնադրութենէ իմմէ ։ Զի ոչ ետ մեզ
Աստուած հոգի վհատութեան , այլ զո-
րութեան եւ սիրոյ եւ զգաստութեան։
8 Մի՛ այսուհետեւ ամօթ համարիցիս
զվկայութիւն Տեառն մերոյ , եւ մի՛
զիս զկապեալ նորա · այլ կցորդ լեր
չարչարանաց աւետարանին ըստ զո-
9 րութեանն Աստուծոյ · Որ փրկեացն
զմեզ եւ կոչեաց ի կոչումն սուրբ , ոչ
ըստ գործոց մերոց , այլ ըստ իւրում
յառաջադրութեանն եւ չնորհաց , որ
տուաւ մեզ ի Քրիստոս Յիսուս յառաջ
քան զժամանակսն յաւիտենից ։
10 ԳՆ· Բայց յայտնեցաւ այժմիկ յերեւել
Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի · որ
խափանեաց զմահ եւ լուսաւոր արար
զկեանս եւ զանեղծութիւն ի ձեռն

[1]Ոմանք , յԱստուած կենդանի

[2]ի ցաւն պակաս
[3]Ոմանք , զկենացն յաւիտենականաց
[4]ցայն , ի պղծոց բանից մնոտեաց (Բ Տիմ· Բ. 16) և հակառակութեանց մոլարանուն գիտութեան
[5]Ոմանք յաւելուն , Ամէն ։

11 աւետարանին. Որոյ եղայ ես քարոզ
եւ առաքեալ եւ վարդապետ հեթանո-
12 սաց: Վասն որոյ եւ զայս չարչարանս
կրեմ, այլ ոչինչ ամօթ համարիմ,
քանզի գիտեմ յո հաւատացեալն եմ,
եւ հաստատեալ եմ թէ կարող է զա-
13 ւանդն իմ պահել յօրն յայն: Ունիցիս
օրինակ ողջմտութեան բանիցն զորս
յինէն լուար, հաւատովք եւ սիրով
14 որ ի Քրիստոս Յիսուս: Զբարւոք
աւանդն պահեսջիր ի ձեռն Հոգւոյն
Սրբոյ ի մեզ բնակելոյ:
15 Զայս գիտասջիր զի մեկնեցան ի
մէնջ ամենեքին որ էին ՅԱսիա, որոց
սակի են Փիգեղոս եւ Հերմոգենէս:
16 Տացէ Աստուած ողորմութիւն տանն
Ոնեսիփորայ, զի բազում անգամ հան-
դոյց ինձ, եւ զկապանս իմ ոչ ամօթ
17 համարեցաւ. Այլ իբրեւ եկն ի Հռոմ,
սնդագտնս խնդրեաց զիս եւ եգիտ.
18 (Տացէ նմա Տէր ողորմութիւն գտանել
ի Տեառնէ յաւուրն յայնմիկ.) եւ որ-
չափ ինչ միանգամ յԵփեսոս սպաս կա-
լաւ [1]ինձ՝ զայն դու ինքնին քաջ գիտես:

ԳԼ. Բ

1 Ա՛յլ դու, որդեակ իմ, զօրացիր չնոր-
2 հօքն որ ի Քրիստոս Յիսուս: Եւ զոր
լուար յինէն բազում վկայիւք՝ զայն
աւանդեացես հաւատարիմ մարդոց,
որք բաւական իցեն եւ զայլս ուսու-
ցանել:
3 ԳԶ. Վշտակից լեր իբրեւ զբարւոք
4 զինուոր Քրիստոսի Յիսուսի: Ոչ ոք
զինուորեալ աստէն ընդ կեանս աշ-
խարհիս պատագի, եթէ զօրավարին
5 հաճոյ լինիցի: Եւ եթէ մարտիկ ոք
իցէ, ոչ պսակի, եթէ ոչ ըստ օրինին
6 մարտիցէ: Եւ հոգսալորձին աշխատելոյ
7 պարտ է նախ ի պտղոյն վայելել: Իմա՛
զինչ ասեմս. տացէ քեզ Տէր իմաս-
8 տութիւն յամենայնի. Յիշեա զՔրիս-
տոս Յիսուս յարուցեալ ի մեռելոց, ի
զաւակէ Դաւթի, ըստ աւետարանիս
9 իմում. Յորում չարչարիմ կապանօք
չափ իբրեւ զչարագործ, այլ բանն Ա-
10 ստուծոյ ոչ եթէ կապեալ իցէ: Վասն
այնորիկ ամենայնի համբերեմ վասն
ընտրելոցն, զի եւ նոքա փրկութեանն
հասանիցեն որ ի Քրիստոս Յիսուս
11 [2]երկնաւոր փառօքն հանդերձ: Հաւա-
տարիմ է բանս. զի եթէ ընդ նմա մե-
12 ռաք, ընդ նմին եւ կեցցուք. եթէ
համբերեմք, ընդ նմին եւ թագաւո-
րեսցուք. եւ եթէ ուրանամք, եւ նա
13 ուրանայ զմեզ. Եւ եթէ չհաւատամք,
նա հաւատարիմ մնայ, ուրանալ զանձն
իւր ոչ կարէ:
14 ԿԻՐ. Զայս յուշ արասջիր՝ վկայու-
թիւն եդեալ առաջի [3]Աստուծոյ, մի՛
բանակռիւ լինել յոչինչ պէտս ի կոր-
15 ծանումն լսողաց: Փութասջիր զանձն
քո ընծիր կացուցանել առաջի Աս-
տուծոյ, մշակ առանց ամօթոյ, ուղիղ
համառօտել զբանն ճշմարտութեան:
16 Այլ ի պղծոց եւ ի սնոտի խօսից մեր-
ժեսջիր, զի առաւել յառաջ գայցեն
17 յամբարչտութիւնս. Եւ բանք նոցա
իբրեւ դրաւդիկ ճարակ գտանեն. ո-
րոց սակի են Հիմենէոս եւ Փիղեետոս.
18 Որք վրիպեցան ի ճշմարտութենէ, եւ
ասեն եթէ Յարութիւն [4]մեռելոց արդէն
իսկ եղեալ է, եւ կործանեն զհաւատս
19 ումանց: Այլ հաստատուն հիմն Աս-
տուծոյ կայ եւ ունի զկնիքս զայս, թէ
Ծանեաւ Տէր զայնոսիկ որ իւրն են.
եւ՝ Ի բաց լիցի յանիրաւութենէ ամե-
նայն որ անուանէ զանուն [5]Տեառն:
20 Այլ ի տան մեծի ոչ միայն են անօթք
ոսկեղէնք եւ արծաթեղէնք, այլ եւ
փայտեղէնք եւ խեցեղէնք. են որ ի
պատուի են եւ են որ յանարգութեան:
21 Եթէ ոք սրբեսցէ զանձն իւր յայսպիս-
եաց անտի, եղիցի անօթ պատուական՝
սրբեալ եւ պիտանի Տեառն [4]իւրում՝
յամենայն գործս բարութեան պատ-
22 րաստեալ: Այլ յերիտասարդական ցան-
կութեանց փախիր, եւ երթ զհետ ար-
դարութեան, զհաւատոց, զսիրոյ,
զխաղաղութեան, [4]զսրբութեան, ընդ
այնոսիկ որ կարդան զանուն Տեառն
23 սուրբ սրտիւք: Այլ ի յիմար եւ յան-
խրատ խնդրոց հրաժարեա, գիտասջիր
24 թէ անտի ծնանին կռիւք. Բայց ծա-
ռայի Տեառն ոչ է պարտ կռուել, այլ
հեզ լինել առ ամենեսեան, ուսուցիչ,
25 անտխակալ. Հանգարտութեամբ խրա-
տել զհակառակողսն, թերեւս տացէ

[1] Ի բազմս պատ.

[2] Յոյն, յաւիտենական
[3] Որմէ, Տեառն
[4] Ի յոյնն պակաս
[5] Որմէ, Քրիստոսի

նոցա Աստուած ապաչխարութիւն ի
26 դիտութիւն ճշմարտութեան. եւ սթա-
փեսցին յորոգայթից Սատանայի՝ որ-
սացեալք ի նմանէ ի նորա կամն։

Գլ. Գ

1 ԿԻՐ. Զայս դիտասջիր եթէ յաւուրս
յետինս եկեսցեն ժամանակք չարք.
2 Զի եսիցին մարդիկ անձնասէրք, ար-
ծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք,
հայհոյիչք, անհնազանդք ծնողաց, ան-
3 շնորհք, անսուրբք, Աննուէրք, ան-
դութք, բանսարկուք, անժոյժք, վէնք,
4 անբարեսէրք, Մատնիչք, յանդգնք,
ամբարհաւաճք, ցանկասէրք մանա-
5 ւանդ քան աստուածասէրք. Որ ունի-
ցին ղկերպարանս աստուածպաշտու-
թեան, եւ ի զօրութենէ անտի նորա
ուրացեալ իցեն. եւ խորշեսջիր ի նո-
6 ցանէ։ Քանզի ի նոցանէ են որ մտա-
նեն տանէ ի տուն, եւ գերեն զկանայս
չեղջակուտեալս մեղօք՝ վարեալս ի
7 պէսպէս ցանկութիւնս, Որ յամենայն
ժամ ուսանին, եւ երբեք ի դիտու-
թիւն ճշմարտութեան ոչ հասանեն։
8 Այլ որպէս Յանէսն եւ Յամբրէս հա-
կառակ կացին Մովսիսի, նոյնպէս եւ
սոքա հակառակ կան ճշմարտութեանն.
մարդք սպականեալք մտօք՝ անպի-
9 տանք ի հաւատս։ Այլ ոչ երբեք դայ-
ցեն յառաջ ի լաւ անդր. քանզի ան-
մտութիւն նոցա յայտնի լիցի ամենե-
ցուն, որպէս եւ նոցայն իսկ եղեւ։
10 Այլ դու ետիր ուսեալ վարդապետութեան
իմոյ, առաջնորդութեան, յօժարու-
թեան, հաւատոյ, երկայնմտութեան,
11 սիրոյ, համբերութեան, Հալածանաց,
չարչարանաց, որպիսիք եղեն ինձ Անտի-
որք եւ Իկոնիոն եւ ի Լիւստրա, որպիսի՛ հալածանաց համբերի, եւ յա-
12 ռեներսէ փրկեաց զիս Տէր։ Եւ ամե-
նեքին որ կամիցին աստուածպաշտու-
թեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս՝ ի
13 հալածանս կացցեն։ Այլ մարդք չարք
եւ կախարդք յառաջ եկեսցեն ի չար
անդր. մոլորեալք եւ մոլորեցուցա-
14 նիցեն։ Այլ դու հաստատուն կաց յոր
ուսարդ եւ հաւատարիմ եղեր, գիտես
15 ուսօք ուսար. Զի ի մանկութենէ
զգիրս սուրբս գիտես, որ կարող են
իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն
ի ձեռն հաւատոցն որ ի Քրիստոս Յի-
սուս։
16 ԴԵ. Ամենայն Գիրք աստուածա-
չունչք եւ օգտակարք ի վարդապետու-
թիւն են եւ ի յանդիմանութիւն եւ
յուղղութիւն եւ ի խրատս արդարու-
17 թեան. Զի կատարեալ իցէ մարդն Աս-
տուծոյ յամենայն գործս բարութեան
հաստատեալ։

Գլ. Դ

1 Զայս վկայութիւն դնեմ առաջի Աս-
տուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի, որ
դատելոց է զկենդանիս եւ զմեռեալս
ի յայտնութեան իւրում եւ յարքայու-
2 թեան. [1]Եւ դու՝ քարոզեա զբանն,
հաս ի վերայ ժամու եւ տարաժամու,
յանդիմանեա, սաստեա, սիրիթարեա
ամենայն երկայնմտութեամբ եւ վար-
3 դապետութեամբ։ Քանզի եկեսցէ ժա-
մանակ զի ողջմտութեան վարդապե-
տութեանն ոչ անսայցեն, այլ ըստ
իւրաքանչիւր ցանկութեանց կուտեա-
ցեն իւրեանց վարդապետս, ըստ մար-
4 մնջելոյ լսելեաց իւրեանց. Եւ ի ճըշ-
մարտութենէ անտի դարձուցանիցեն
զլսելիս, եւ յառասպելս կործանեսցին.
5 Այլ դու զուարթ կաց յամենայնի,
ճգնեաց, զգործս աւետարանչի գոր-
ծեա, զպաշտօնդ քո կատարեալ կալ։
6 Զի ես այսուհետեւ նուիրեալ եմ, եւ
ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ։
7 Զբարւոք պատերազմ պատերազմեցայ,
զընթացսն կատարեցի, զհաւատսն պա-
8 հեցի։ Այսուհետեւ կայ ինձ պա-
րարութեան պսակն, զոր հատուսցէ
ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն Դա-
տաւոր, ոչ միայն ինձ, այլ եւ ամե-
նեցունն որ սիրեցին զյայտնութիւնն
նորա։
9 ԶԵ. Փութասջիր գալ առ իս վաղվա-
ղակի. դի Դեմաս եթող զիս եւ սիր-
եաց զաշխարհս, եւ գնաց ի Թեսաղո-
10 նիկէ. Կրեսկէս՝ [2]ի Գալիլեա, Տիտոս՝
ի Դաղմատիա. Ղուկաս միայն է ընդ
11 իս։ ԶՄարկոս առեալ՝ ընդ քեզ ածի-
ցես, զի է ինձ պիտանի ի սպասա-
12 ւորութիւն։ ԶՏիւքիկոս առաքեցի

[1] Ի ց-ն. պ-ե
[2] Ի ց-ն. Բ-ղ-մ՝ ի Գաղատիա, մ-ն՝ ի Գաղիա

13 յԵփեսոս ։ Զիւլոնն [1]թողի ի Տրովադա
առ կարպոսի , յորժամ դայցես , բեր-
ջիր , եւ զղիրան , մանաւանդ զմաս-
14 եանսն ։ [2]Աղեքսանդրոս բազում չար-
չարանս եցոյց ինձ . հատուսցէ նմա
15 Տէր ըստ գործս նորա ։ Զորմէ եւ
դու անձնապահ լինիջիր , զի չատ
16 հակառակ եկաց բանից մերոց ։ Յա-
ռաջնում առնէին ոչ ոք ինձ ի թի-
կունս եկաց , այլ ամենեքին թողին
17 զիս . մի՛ համարեսցի նոցա այն ։ Այլ
Տէր օգնեաց ինձ , եւ զօրացոյց զիս ,
զի ինեւ քարոզութիւնն հաստատես-
ցի , եւ լուիցեն ամենայն հեթանոսք .
եւ ապրեցայ ես ի բերանոյ առիւծուն։
18 Փրկեսցէ զիս Տէր յամենայն գործոց
չարաց , եւ զերծուսցէ զիս յարքայու-
թիւն իւր որ յերկինս է , որում փառք
յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։
19 Ողջոյն տալիր Պրիսկեայ եւ Ակիւ-
20 զեայ եւ Ընեսիփորայ տանն ։ Երաս-
տոս մնաց ի Կորնթոս . զՏրոփիմոս
21 Թողի ի Մելիտոս հիւանդագին ։ Փու-
թասջիր յառաջ քան զձմեռն գալ ։
Ողջոյն տան քեզ Եբուղոս եւ Պուդէս
եւ Ղինոս եւ Կղաւդիա եւ եղբարք
22 ամենեքեան ։ Տէր Յիսուս Քրիստոս
ընդ ոգւոյդ քումմ ։ Շնորհք ընդ քեզ ։[3]

Ա֊ Տիմոթէոս եպիսկոպոս Լիւղի , որ էր
եպիսկոպոսի եկեղեցւոյն եպիկոպոս ա֊ռաքե-
լական յետադրեալ , ելեալ է Հռովմ , յորժամ
եպիսկոպոս անգամ եկաց յաթենի պաշտօն
ի Ներոնէ կայսեր Հռովմայ ։

ԱՌ ՏԻՏՈՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 կԻր. ՊԱՒՂՈՍ , ծառայ Աստուծոյ եւ
առաքեալ Յիսուսի Քրիստոսի , ըստ
հաւատոց ընտրելոցն Աստուծոյ , եւ
ի գիտութիւն ճշմարտութեան որ ընդ
2 աստուածպաշտութեան է , Յուսոյ
կենացն յաւիտենից , զոր խոստացաւ
անսուտն Աստուած յառաջ քան զժա-
3 մանակս յաւիտենից , Բայց յայտնեաց
իւրաքանչիւր ժամանակօք զբանն իւր քա-
րոզութեամբ , որոյ եղէ ես հաւատա-
4 րիմ ըստ հրամանի Փրկչին մերոյ Աս-
տուծոյ , Տիտոսի որդւոյ սիրելւոյ ըստ
հասարակաց հաւատոյ , Շնորհք եւ
խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ եւ
[4]ի Քրիստոսէ Յիսուսէ՝ Փրկչէ մերմէ ։
5 Վասն այնորիկ իսկ թողի զքեզ ի
Կրետէ , զի որ ինչ միանգամ պակաս
իցէ՝ ուղղեսցես , եւ կացուսցես ըստ
քաղաքաց երիցունս , որպէս եւ ես
6 քեզ պատուիրեցի . Եթէ ոք անարատ
իցէ , միոյ կնոջ այր , որդեակս ունիցի
հաւատացեալս , եւ ոչ յամբաստանուե-
լութիւն անառակութեան կամ անհնա-
7 զանդս ։ Զի պարտ է եպիսկոպոսին
անարատ լինել , որպէս եւ Աստուծոյ
մնտեսի . մի՛ յանդուգն , մի՛ բարկա-
ցող , մի՛ թշնամանող , մի՛ հարիանող ,
8 մի՛ ղոչաքաղ , Այլ հիւրասէր , բարե-
սէր , ցած , արդար , սուրբ , ժուժկալ ,
9 վերակացու լինել հաւատարիմ բանին
վարդապետութեան , զի կարող իցէ
եւ մխիթարել ողջմտութեամբ վար-
դապետութեանն , եւ զհակառակորդսն
10 կշտամբել ։ Քանզի բազումք են ան-
հնազանդք , դրախօսք եւ մտախաբք ,
մանաւանդ որ ի թլփատութենէ անտի

[1]Յոյն , զոր Թողի
[2]Յոյն , Աղեքսանդրոս դարբին
[3]Որոնք յոյներեն , Ամէն ։
[4]Որոնք , ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ

11 են . Զորս պարտ է ըմբերանել որք
զամենայն տունս կործանեն , եւ ու-
սուցանեն զոր չէ արժան , վասն զօչա-
քազութեան ։
12 Դե. Ասաց ոմն ի նոցանէ , իւրեանց
իսկ մարգարէ , Կրետացիք հանապա-
զասուաք , չարաճճիք , դատարկա-
13 պորտք ։ Եւ ստոյգ է վկայութիւնս
այս . վասն որոյ կշտամբեսցես զնոսա
խստագոյնս , զի առողջասցին ի հա-
14 ւատս . Եւ մի՛ հայեսցին ի Հրէական
առասպելս , եւ ի պատուէրս մարդ-
կան դառնալոցն ի ճշմարտութենէ ։
15 Ամենայն ինչ սուրբ է սրբոց , բայց
պղծոցն եւ անհաւատից ոչինչ է սուրբ ,
այլ պղծեալ են միտք եւ խորհուրդք
16 նոցա ։ Խոստանան դիտել զԱստուած ,
եւ գործովք իւրեանց ուրանան . պիղծք
եւ անհաւանք եւ յամենայն գործս
բարեաց անպիտանք ։

Գլ· Բ

1 Ա՛յլ դու խօսեաց որ ինչ վայելէ ող-
2 ջամիտ վարդապետութեանդ . Ծերոց
դպաստս լինել , պարկեշտս , ցածունս ,
ողջամիտս ի հաւատս , ի սէր , ի համ-
բերութեան , [1]ի ժուժկալութեան ։
3 Պառաւանց նոյնպէս ի դպաստութեան ,
ի սուրբ վայելչութեան , մի՛ բանսար-
կուս , մի՛ գինեմոլս , այլ բարեխրատս .
4 Զի դպաստացուսցեն զմանկամարդսն
5 այրասէրս լինել , որդեսէրս , ցածունս ,
սուրբս , անարարս , բարեգործս , հնա-
զանդս իւրեանց արանց . զի մի՛ բանն
Աստուծոյ [2]եւ վարդապետութիւնն՝
6 հայհոյեսցի ։ Զերիտասարդս նոյնպէս
7 ազաչեսջիր ցածունս լինել . [3]Ամենա-
ցուն զանձն՝ օրինակ կացուցանել գոր-
ծոց բարութեան , վարդապետութեամբ
զանեղծութիւն ունել , [2]դարբութիւն ,
8 զպարկեշտութիւն , Զբանն ողջմտու-
թեան , անպարտաւ լինել , զի որ
հակառակորդն լցի՝ յամօթ լիցի , եւ
մի՛ ինչ ունիցի ասել զմեզ չարու-
9 թիւն ։ Ծառայից՝ իւրեանց տերանց
հնազանդ լինել եւ հաճոյս յամենայնի .
10 մի՛ հակառակողս , Մի՛ հատուս , այլ
զամենայն հաւատս ցուցանել բարու-

[1]ի ցուցին պոլսեցի
[2]ի ընդհանուր պոլսեցի
[3]ցուցին , ցամենայնի զանձն քո

թեամբ . զի զվարդապետութիւն Փրկ-
չին մերոյ Աստուծոյ զարդարեսցեն
յամենայնի ։ Վ.Զ
11 Քանզի երեւեցաւ չնորհն Աստուծոյ
12 փրկիչ ամենայն մարդկան . Որ խրա-
տէն զմեզ զի ուրասցուք զամբարշտ-
սութիւնս եւ զաշխարհական ցանկու-
թիւնս , զդատաստութեամբ եւ արդարու-
թեամբ եւ աստուածպաշտութեամբ
13 կեցցուք յաշխարհիս , Եւ ակնկալցուք
երանելի յուսոյն , եւ յայտնութեան
փառաց մնծին Աստուծոյ եւ Փրկչին
14 մերոյ Յիսուսի Քրիստոսի . Որ ետ
զանձն վասն մեր , զի փրկեսցէ զմեզ
յամենայն անօրէնութենէ , եւ սրբեա-
ցէ իւր ժողովուրդ սեպհական , նա-
15 խանձաւոր գործոց բարութեան ։ Զայդ
խօսեաց եւ սխիթարեա եւ յանդիմա-
նեա ամենայն սաստիւք , զի մի՛ ոք
լցէ որ զքեզ արհամարհիցէ ։

Գլ· Գ

1 Զե. Եւ յուշ արասջիր նոցա , իշխա-
նութեանց եւ պետութեանց հնազանդ
լինել եւ հպատակ կալ , եւ ամենայն
գործոց բարութեան պատրաստ գտա-
2 նել · Մի՛ զոք հայհոյել , անկռիւս լի-
նել , հեզս , զամենայն ցածութիւն առ
3 ամենայն մարդիկ ցուցանել ։ Զի էաք
երբեմն եւ մեք անմիտք , անհաւանք ,
մոլորեալք , ծառայեալք ցանկութեանց
եւ պէսպէս անառակութեանց . չա-
րութեամբ եւ նախանձու չրջէաք , ա-
4 տելեալք՝ եւ զմիմեանս ատեաք ։ Իսկ
յորժամ քաղցրութիւն եւ մարդասի-
րութիւն Փրկչին մերոյ Աստուծոյ
5 յայտնեցաւ , Ոչ ի գործոց արդարու-
թեան զոր արարաք մեք , այլ ըստ ի-
րում ողորմութեան ապրեցոյց զմեզ
ի ձեռն աւազանին միւսանգամ ծնըն-
դեանն , եւ նորոգութեամբ Հոգւոյն
6 Սրբոյ , Զոր եհեղ ի մեզ առատութեամբ
ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Փրկչին
7 մերոյ , Զի արդարացեալք չնարհօքն՝
եղիցուք ժառանգաւորք յուսով կե-
8 նացն յաւիտենականաց ։ Հաւատարիմ
է բանս . եւ ի սոյն կամիմ զքեզ հաս-
տատուն լինել , զի փոյթ արասցեն
գործոց բարեաց վերակացու լինել
հաւատացեալքն յԱստուած , զի սոյն է
9 բարի եւ օգտակար մարդկան ։ Այլ

զյինարութեան խնդիրս եւ զառնութիւս եւ զնեո եւ զօրինական կռիւսն
10 ի բաց մերժեսջիր . զի անօգուտք են
եւ անոտիք : Յանէ հնձուածոցէ ,
յետ մի անգամ եւ երկիցս խրատելոյ ,
11 հրաժարեսջիր . Գիտասջիր զի խիստ
եալ է այնպիսին , եւ մեղանչէ ան-
ձամբ դանձն դատապարտեալ :
12 Ա՛յլ յորժամ յղեցից առ քեզ զԱրտե-
մաս կամ զՏիւքիկոս , փութասջիր գալ
առ իս ի Նիկոպոլիս , զի անդ եղի ի
13 մտի ձմերել : Եւ զԶինոն զօրինական
դպիր եւ զԱպողոս փութով արձակեա-
ջիր , զի մի՛ ինչ պակասիցէ նոցա :
14 Ուսցին եւ մերքն եւս բարեաց գոր-
ծոյ վերակացու լինել ի պէտս կարե-
15 ւորս , զի մի՛ անպտուղք լինիցին : Ող-
ջոյն տան քեզ որ ընդ իս են ամենե-
քեան . ողջոյն տուր սիրելեաց մերոց
հաւատովք . շնորհք ընդ ձեզ ամենե-
սեան :[1]

Ա՛ստէպս, կրկին գրեցաք եկեղեցւոյն առա-
ջին չեռնադրեալ եպիսկոպոս, քրեցաւ ի Նի-
կոպոլէ Մակեդոնացւոյց :

[2]ԱՌ ՓԻԼԻՄՈՎՆ

ԵՒ ԱՌ ԱՐՔԻՊՊՈՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԵՒ ԱՌ ԱՊՓԻԱ ԹՈՒՂԹ՝՝

1 Պաւղոս , կապեալ Յիսուսի Քրիս-
տոսի , եւ Տիմոթէոս եղբայր , Փիլի-
մոնեայ սիրելւոյ եւ գործակցի մերոյ ,
2 Եւ Ապփեայ [3]քոյր , եւ Արքիպպեայ
զինուորակցի մերոյ , եւ առանին ե-
3 կեղեցւոյդ . Շնորհք ընդ ձեզ եւ խա-
ղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ
եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ :
4 Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամե-
նայն ժամ յիշատակեալ յաղօթս իմ
5 վասն քո , Լսելով զքո հաւատսն
եւ զսէր որ ունիս առ Տէր Յիսուս
6 եւ առ ամենայն սուրբս , Զի հաղոր-
դութիւն հաւատոցն քոց արդոյ լինիս
զիտութեամբ ամենայն բարու-
թեան որ ի ձեզ է ի Քրիստոս Յիսուս :
7 Ինդութիւն յոյժ ընկալայ եւ մխիթա-
րութիւն ի վերայ սիրոյն քո , զի
դութք սրբոց քեւ հանդուցեալ են ,
եղբայր :
8 Վասն որոյ բազում համարձակու-
թիւն ունիմ ի Քրիստոս՝ հրաման ման
9 քեզ զարժանն , Վասն սիրոյ մանա-
ւանդ թէ աղաչեմ իսկ , այնպիսի լի-
նել որպէս ես Պաւղոս ծերացեալ , արդ
եւ կապեալ եւս Յիսուսի Քրիստոսի :
10 Աղաչեմ զքեզ վասն որդւոյ իմոյ զոր
11 ծնայ ի կապանս իմ , զՈնեսիմոս . Որ
երբեմն անպիտան էր քեզ , բայց արդ
12 քեզ եւ ինձ պիտանի . Զոր յղեցի առ
քեզ . եւ դու զդա ընկալջիր , այսինքն
13 ի զիս աղիս . Զոր կամէի առ իս առ-
դեւոլ , զի ընդ քո ունիցի ինձ ոսպաս
14 ի կապանս աւետարանին , Բայց ա-
նանց քո կամաց ոչինչ կամեցայ առ-
նել , զի մի՛ բարիքդ քո ի հարկէ լի-
15 նիցին , այլ կամաւ : Եւ թերեւս վասն
այնորիկ մեկնեցաւ առ ժամանակ մի ,
16 զի յաւիտեան ունիցիս զդա , Մի՛ եւս
իբրեւ ծառայ , այլ ի վեր քան ծառա-
յ , իբրեւ ղեղբայր սիրելի . նմէ ինձ
այսպէս , ո՞րչափ եւս առաւել քեզ
17 մարմնով եւ Տէրամբ : Եթէ զիս քեզ
հաղորդ համարիցիս , ընկալ զդա իբ-
18 րեւ զիս : Եւ եթէ յանցուցեալ ինչ իցէ

[1] Ոմանք յաւելուն , Ամէն :
[2] Ոմանք լսեն Առ փիլիմոնէ , այլ թուղթ Պաւղոսի առաքելոյ առ Փիլիմոնէ
[3] Ոմանք , սիրելոյ

կամ պարտիցի, զայն ինձ համարեսայ։
49 Եւ Պաւղոս գրեցի իմով ձեռամբ, ես
հատուցից. զի մի՛ ասիցեմ քեզ թէ եւ
20 դու զանձն քո ինձ պարտիս։ Այո,
եղբայր, [1]ես քո փոխանակ եղէց՝ ի
Տէր. հանգո զաղիպ իմ ի Քրիստոս։
21 Յուսացեալ ի հնազանդութիւնդ քո
գրեցի առ քեզ, քանզի գիտեմ թէ ա-
ռաւել եւս քան զոր ասեմ՝ առնիցես։
22 Միանգամայն եւ պատրաստեայիր
ինձ վանս, քանզի յուսամ եթէ աղօ-
23 թիւք ձերովք շնորհեցայց ձեզ։ Ողջոյն
տայ ձեզ Եպափրաս գերեկից իմ ի
24 Քրիստոս Յիսուս, Եւ Մարկոս եւ Ա-
րիստարքոս եւ Դեմաս եւ Ղուկաս՝
25 գործակիցք իմ։ Շնորհք Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձե-
րում։[2]

Ա՜ս Փիլիմոնէ Լ Ապփէ, պէաբս Ո՛նեսիմայ,
Լ աս Աբխէպպս, աբլաաաք կողոսացոց
եկեղեցոյն, էրեցաս է Հոռմէ է յետ Ո-
նեսիմայ ծառայի։

ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 Եկ. Բազում մասամբք եւ բազում
օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած
2 ընդ հարսն [3]մեր մարգարէիւք. ի վախ-
ճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ
մեզ Որդւովն զոր եդ ժառանգ ամե-
նայնի, որով եւ զյաւիտեանսն արար.
3 Որ է լոյս փառացն եւ նկարագիր էու-
թեան նորա, ար կրէ զամենայն բա-
նիւ զօրութեան իւրոյ, [4]սրբութիւն
մեզաց մերոց արարեալ՝ նստաւ ընդ
4 աջմէ Մեծութեանն ի բարձունս։ Այն-
չափ առաւել եղեալ քան զհրեշտակս,
որչափ լաւ եւս քան զնոսա անուն
5 ժառանգեաց։ Քանզի ո՞ երբեք ասաց
ի հրեշտակաց, Որդի իմ ես դու, ես
այսօր ծնայ զքեզ. եւ դարձեալ թէ
Ես եղէց նմա ի Հայր, եւ նա եղիցի
6 ինձ յՈրդի։ Այլ յորժամ միւսանգամ
մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ,
Երկիր պագցեն նմա ամենայն հրեշ-
7 տակք Աստուծոյ։ Այլ [5]առ հրեշտակսն՝
ասէ, Ո արար զհրեշտակս իւր հողիս,
8 եւ զպաշտօնեայս իւր՝ բոց հրոյ։ Իսկ
ցՈրդին [6]ասէ, Աթոռ քո, Աստուած,
յաւիտեանս յաւիտենից. գաւազան
ուղղութեան՝ գաւազան արքայու-
9 թեան քո։ Սիրեցեր զարդարութիւն եւ
ատեցեր զանօրէնութիւն. վասն այսո-
րիկ օծ զքեզ, Աստուած, Աստուած քո
իւղով ուրախութեան առաւել քան
10 զընկերս քո։ Եւ, Դու, Տէր, ի սկզբա-
նէ զերկիր հաստատեցեր, եւ գործք
11 ձեռաց քոց երկինք են։ Նոքա կորնչին,
եւ դու կաս եւ միաս. ամենեքեան
12 իբրեւ զձորձս մաչեսցին, Եւ իբրեւ
զվերարկու [7]գալարեսցես զնոսա՝ [8]իբ-
րեւ զհանդերձ՝, եւ [9]գալարեսցին. բայց
դու նոյն իսկ ես, եւ ամք քո ոչ պա-
13 կասեսցին։ Ցո՞ երբեք ասաց ի հրեշ-
տակաց, Նիստ ընդ աջմէ իմմէ, մին-
չեւ եղից զթշնամիս քո պատուանդան
14 ոտից քոց։ Ո՞չ ապաքէն ամենեքեան

[1]Յոյն, օգտեցայց, կարուբաս եղէց քեզ
[2]Որոնք յաւելուն, Ամէն։
[3]Ի բազմաց պակաս
[4]Որոնք, անձամբ սրբութիւն
[5]կամ, զհրեշտակաց
[6]Ի յոմանսն պակաս
[7]Որոնք, փոխեսցես
[8]Յոմանս պակաս
[9]Յոյն, փոխեսցին

հոդիք են հարկաւորք որ առաքին ի սպասաւորութիւն վասն այնոցիկ որ ժառանգելոցն են զփրկութիւն։

Գլ. Բ

1 ԵԴ. Վասն այնորիկ պարտ է մեզ առաւել եւս ունկնդիր լինել բանիցն ասացելոց, զի մի՛ երբեք նուազեսցուք։ 2 Զի եթէ որ ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն՝ հաստատուն եղեւ, եւ ամենայն յանցաւորութիւն եւ անհնազանդութիւն ընկալաւ զպատիժ 3 պատուհասի, Մեք զիա՞րդ ապրեսցուք հեղդացեալք յայնպիսի փրկութենէ, որ սկիզբն ա՛ռ խօսելոյ ի Տեառնէ, եւ ի ձեռն այնոցիկ որ լուանն՝ ի մեզ հաստատեցաւ. 4 Վկայեալ յԱստուծոյ նշանօք եւ արուեստիւք եւ պէսպէս զօրութեամբք եւ մասամբք Հոգւոյն Սրբոյ ըստ իւրոց կամաց։

5 Զի ոչ եթէ հրեշտակաց հնազանդեցոյց զնանդերձեալ աշխարհն, վասն 6 որոյ մեք խօսիմք։ Վկայեաց ոք ուրեք եւ ասէ, Զի՞նչ է մարդ եթէ յիշեսցես զնա, կամ որդի մարդոյ թէ այց արասցես նմա։ 7 Փոքր մի խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս. փառօք եւ պատուով պսակեցեր զնա, եւ կացուցեր զնա ի վերայ ձեռակերտոց 8 քոց. Ամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա. արդ ի հնազանդեցուցանելն զամենայն՝ ոչինչ եթող անհնազանդ ի նմանէ. բայց այժմ ոչ եւս տեսանեմք հնազանդեալ նմա 9 զամենայն։ Այլ զփոքր մի խոնարհեալ քան զհրեշտակս տեսանեմք զՅիսուս վասն չարչարանաց մահուն, փառօք եւ պատուով պսակեալ, զի շնորհօքն Աստուծոյ վասն ամենեցուն զմահ ճաշակեսցէ։ 10 Զի վայել էր իսկ նմա (վասն որոյ ամենայն եւ որով ամենայն) բազում որդիս ի փառս ածել՝ զառաջնորդ փրկութեան նոցա չարչարանօք կատարել։ ՎԶ

11 Զի որ սրբէն եւ որ սրբին՝ ի միոջէ [1]էին ամենեքեան, վասն որոյ ոչ ամօթ համարի եղբարս անուանել զնոսա եւ 12 ասել, Պատմեցից զանուն քո եղբարց իմոց, ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ։ 13 Եւ դարձեալ թէ՝ Ես եղէց յուսացեալ ի նա. եւ դարձեալ՝ Ահաւասիկ ես եւ մանկունք [2]իմ, զոր ետ ինձ Աստուած։ 14 Արդ որովհետեւ մանկունք հաղորդեցին արեան եւ մարմնոյ, եւ ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղեւ նոցունց, զի մահուն [2]իւրով խափանեսցէ զայն որ զիշխանութիւն մահուն 15 ունէր, այսինքն է՝ զԱստանայ. Եւ ապրեցուսցէ զայնոսիկ որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք 16 ի ծառայութիւն։ Քանզի ոչ երբեք զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զաւակէն Աբրահամու բուռն հարկանէ։ 17 Ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանիլ, զի ողորմած լինիցի եւ հաւատարիմ քահանայապետ յաստուածակոյս կողմանէ անալ, առ 18 ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն։ Զի որով ինքն չարչարեցաւ զփորձ առեալ՝ կարող է եւ փորձանաւորացն օգնական լինել։

Գլ. Գ

1 Ուստի, եղբարք սուրբք, երկնաւոր կոչմանն բաժանորդք, նայեցարուք ընդ Առաքեալն եւ ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս 2 [3]Քրիստոս. Որ հաւատարիմ է արարչին իւրոյ, որպէս եւ Մովսէս յամենայն տան նորա։ 3 Զի առաւել եւս վասոյ քան զՄովսէս արժանի եղեւ, որչափ առաւել պատիւ ունելոյ քան զտունն՝ տանն առնելի։ 4 Զի ամենայն տուն կազմի յումէ կազմի. իսկ որ զամենայնն արար՝ Աստուած է։ 5 Մովսէս հաւատարիմ է յամենայն տան նորա իբրեւ զծառայ առ ի վկայութիւն 6 նէ բանից ասացելոց. Այլ Քրիստոս իբրեւ որդի ի վերայ տան իւրոյ. որոյ տունն մեք իսկ եմք, միայն թէ զհաստատութիւն եւ զպարծանս յուսոյն մինչեւ ի վախճան հաստատուն ունիցիմք։

7 Վասն որոյ այսպէս ասէ Հոգին Սուրբ, Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք, 8 մի՛ խստացուցանիցէք զսիրտս ձեր իբրեւ ի դառնութեանն՝ յաւուրն փոր- 9 ձութեան յանապատի, Ուր փորձեցին

[1] կամ, են

[2] ի ցաւն պակաս

[3] ցանաս պակաս

զիս հարքն ձեր, քննեցին զիս եւ տես-
10 սին զգործս իմ զքառասուն ամ. վասն
որոյ տաղտկացայ ազգաւն այնուիկ,
եւ ասացի, Միշտ մոլորեալ են սրտիւք,
եւ նոքա ոչ ծանեան զճանապարհս
11 իմ. Որպէս երդուայ ի բարկութեան
իմում թէ Մտցեն ի հանգիստ իմ։
12 ԵՋ. Տեսէք, եղբարք, գուցէ երբեք
լինիցի յումեք ի ձէնջ սիրտ չար ան-
հաւատութեան՝ ապստամբ լինել յԱս-
13 տուծոյ կենդանւոյ։ Այլ մխիթարեցէք
զմիմեանս զօրհնասպաս՝ մինչդեռ [1]այ-
սօրդ առաջի կայ", զի մի՛ ոք խստասրտի
14 ի ձէնջ խաբէութեամբ մեղաց։ Քանզի
բաժանորդք եղեալք Քրիստոսի, միայն
թէ զսկիզբն հաստատութեանն մինչեւ
15 ի վախճան պինդ կալցուք. Ցաւելն,
Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք, մի՛
խստացուցանէք զսիրտս ձեր իբրեւ ի
16 դառնութեանն։ Քանզի [2]ոմանք լուան
եւ գառնացուցին, այլ ոչ ամենեքեան
որ" ելեալ էին յեգիպտոսէ ի ձեռն
17 Մովսիսի։ Յումէ՞ տաղտկացաւ զքա-
ռասուն ամն. ո՞չ ապաքէն ի յանցու-
ցեալսն, որոց ոսկերքն անկան յանա-
18 պատ անդ։ Ո՞ւմ երդուաւ չմտանել
ի հանգիստն իւր, եթէ ոչ՝ անհաւա-
19 տիցն։ Եւ տեսանեմք զի ոչ կարացին
մտանել վասն անհաւատութեանն։

ԳԼ. Դ

1 Երկիցուք այսուհետեւ, [3]դուցէ ի թո-
ղուլ զաւետիսն՝ ի մտանելոյ" ի հան-
գիստ նորա, գտանիցի ոք ի ձէնջ
2 նուազեալ։ Քանզի եմք աւետարան-
եալք որպէս եւ նոքայն. այլ նոցա
ոչինչ օգնեաց լուր բանին, [4]չհամբե-
լոցն ի հնազանդութիւն հաւատոց"։
3 Այլ մեք մտանեմք ի հանգիստն որք
հաւատացաքս. որպէս եւ ասացն թէ
Որպէս երդուայ ի բարկութեան իմում,
թէ Մտցեն ի հանգիստ իմ. թէպէտ
եւ արդիւնքն ի սկզբանէ աշխարհի
4 լեալ էին։ Քանզի ասէ ուրեք վասն
աւուրն եւբներորդի այսպէս. Եւ
հանգեաւ Աստուած յաւուրն եւթներ-
5 որդի յամենայն գործոց իւրոց։ Եւ
աստ դարձեալ ասէ թէ Մտցեն ի հան-
6 գիստ իմ։ Եւ արդ՝ [5]քանզի արդեւլեան
ումանք մտանել" ի նա, եւ որք յառա-
ջագոյն աւետարանեալն էին՝ չմտին
7 վասն անհաւատութեանն։ Դարձեալ
այլ օր սահմանէ, զԱյսօրն ի Դաւիթ
եւ ասէ յետ այնչափ ժամանակաց,
որպէս յառաջագոյնն ասաց, Այսօր
եթէ ձայնի նորա լուիցէք, մի՛ խստաս-
8 ցուսանէք զսիրտս ձեր։ Զի եթէ զնո-
սա Յեսուայ հանգուցեալ էր, ապա
վասն այլոյ աւուր ոչ խօսէր յետ այ-
9 նորիկ։ Արդ ուրեմն [6]նուաղեալ է"
չարաթումն ժողովրդեանն Աստուծոյ։
10 Զի որ եմուտ ի հանգիստն նորա, եւ
նա հանգեաւ յիւրոց գործոց անտի,
որպէս եւ Աստուած յիւրայոցն։ ՎՋ
11 Փութացուք այսուհետեւ մտանել
յայն հանգիստ, զի մի՛ ոք ընդ նոյնն
օրինակաւ անհաւատութեանն անկա-
12 նիցի։ Զի կենդանի է բանն Աստուծոյ
եւ ազդող եւ հատու քան զամենայն
սուր երկսայրի, եւ անցանէ մինչեւ
ցորոչումն շնչոյ եւ ոգւոյ եւ յօդից
եւ ուղղոյ, եւ քննիչ է մտաց եւ խոր-
13 հրդոց սրտից. Եւ չիք արարած անե-
րեւոյթ յերեսաց նորա, այլ ամենայն
ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց
նորա՝ զորմէ մեր բանքս են։
14 Ունելմք այսուհետեւ քահանայապետ
մեծ անցեալ ընդ երկինս, զՅիսուս
զՈրդին Աստուծոյ, պինդ կալցուք
15 զխոստովանութիւնն։ Քանզի ոչ եթէ
ունիմք քահանայապետ որ չիցէ կարող
չարչարակից լինել տկարութեան մե-
րոյ, այլ փորձ է ամենայնիւ ըստ
նմանութեան, առանց մեղաց։
16 ԶԿ. Մատիցուք այսուհետեւ համար-
ձակութեամբ առաջի աթոռոյ շնոր-
հացն [7]նորա, զի ընկալցուք զողոր-
մութիւն եւ գտցուք շնորհս ի դէպ
ժամանակի օգնականութեան։

ԳԼ. Ե

1 Զի ամենայն քահանայապետ ի մարդ-
կանէ առեալ՝ վասն մարդկան կայ

---

[1] Յոյնն, այսօր կոչի
[2] Կամ, ո՞վք լուան և գառնացուցին. ո՞չ ամե-
նեքեան որ
[3] Յոյնն, գուցէ, մինչդեռ կան մնան աւետիքն
մտանելոյ
[4] Կամ, զի ոչ ամաքեցաւ հաւատովք յորս լուանն
[5] Յոյնն, քանզի կայ մնայ ոմանց մտանել
[6] Յոյնն, կայ մնայ
[7] Ի ցուն դ-ից

յաստուածակոյս կողմն անդր, զի մա-
տուսցէ պատարագս եւ զոհս վասն
2 մեղաց. Զափով չարչարակից կարող
է լինել տղիտաց եւ մոլորելոց, քանզի
եւ ինքն իսկ ակարութեամբ զգածեալ
3 է. Վասն այնորիկ հարկ է որպէս
վասն ժողովրդեանն, նոյնպէս եւ ընդ
անձին մատուցանել պատարագս վասն
4 մեղաց։ Եւ ոչ եթէ անձամբ ոք առնու
պատիւ, այլ կոչեցեալն յԱստուծոյ,
5 որպէս եւ Ահարոն։ Նոյնպէս եւ Քրիս-
տոս ոչ եթէ անձին ինչ չուք եդ լինել
քահանայապետ, այլ որ խօսեցաւն
առնա՝ թէ Որդի իմ ես դու, ես այս-
6 օր ծնայ զքեզ. Որպէս եւ ի միւսումն
ասէ, Դու ես քահանայ յաւիտեան
7 ըստ կարգին Մելքիսեդեկի։ Որ յա-
ւուրս մարմնոյ իւրոյ աղօթս եւ պա-
դատանս առ այն որ կարող էր ապ-
րեցուցանել զնա ի մահուանէ՝ ուժգին
դոչմամբ եւ արտասուօք մատուցա-
նէր, եւ լսելի լինէր առ լաւութեանն։
8 Թէպէտ եւ Որդի է, ուսաւ ի չարչա-
9 րանաց անտի զհնազանդութիւն. Եւ
իբրեւ կատարեցաւ, եղեւ ամենայն
հնազանդելոց իւրոց պատճառ փրկու-
10 թեանն յաւիտենից. Եւ անուանեցաւ
յԱստուծոյ քահանայապետ [1]յաւիտե-
նից ըստ կարգին Մելքիսեդեկի։
11 ԶԳ. Վասն որոյ բազումք են մեզ
բանք, եւ դժուարապատում ի մեկնել,
քանզի խօթամտիւք եղերուք լսելոք.
12 Փոխանակ զի պարտ էր ձեզ լինել
վարդապետս վասն ժամանակին, դար-
ձեալ պիտոյ է ձեզ ուսանել թէ զինչ
են նշանապիրք սկզբան բանիցն Աս-
տուծոյ. եւ եղերուք կարօտք կաթին,
13 եւ ոչ հաստատուն կերակրոյ։ Զի ա-
մենայն որ կաթնկեր է՝ տղէտ է բա-
նին արդարութեան, քանզի տղայ է։
14 Այլ կատարելոցն է հաստատուն կե-
րակուր, որոց [2]վասն ի չափսն հասա-
նելոյ՝ ճաշակելիքն կիրթ են ընտրու-
թեան բարւոյ եւ չարի։

ԳԼ. Զ

1 Վասն որոյ թողեալ զբան սկզբանն
Քրիստոսի՝ ի կատարումն եկեսցուք.
մի՛ միւսանգամ արկանել հիմն ապաշ-
խարութեան ի մեռելոտի գործոց ան-
2 տի, եւ հաւատոցն որ յԱստուած, եւ
մկրտութեանցն վարդապետութեան,
եւ ձեռնադրութեան ձեռաց, եւ յա-
րութեան մեռելոց, եւ դատաստանին
3 յաւիտենից։ Եւ արդ արասցուք զայն,
4 եթէ Աստուած հրամայեսցէ։ Քանզի
անհնար է միանգամ [3]մկրտելոցն որ
ճաշակեցին յերկնաւոր պարգեւացն,
5 եւ հաղորդք եղեն Հոգւոյն Սրբոյ, Եւ
զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակսն
ճաշակեցին, եւ զզօրութիւնս հան-
6 դերձելոյ աշխարհին, Եւ կործանեա-
ցին, միւսանգամ նորոգել յապաշխա-
րութիւն, եւ վերստին ի խաչ հանել
անձանց զՈրդին Աստուծոյ, եւ դար-
7 ձեալ խայտառակել։ Քանզի երկիր որ
ըմպիցէ զանձրեւ բազում անգամ եկ-
եալ ի վերայ նորա, եւ ծնանիցի ար-
դիւնս չայեկանս նոցա վասն որոց գոր-
ծիցին, ընդունի զօրհնութիւն յԱս-
8 տուծոյ. Իսկ որ բերէ փուշ եւ տա-
տասկ, անպիտան է եւ մերձ յանէծս,
եւ վախճան նորա յայրումն։
9 ԶԶ. Բայց հաստատեալ եմ վասն ձեր,
սիրելիք, ի լաւ անդր եւ որ լին է
փրկութեամբ, [4]զի թէպէտ եւ այսպէս
10 խօսիմք։ Ոչ եթէ անիրաւ ինչ է Աս-
տուած մոռանալ զգործս ձեր եւ զսէրն
զոր ցուցէք յանուն նորա, զի պաշ-
11 տէիք զսուրբսն եւ պաշտէք։ Եւ մեք
ըղձանամք զի իւրաքանչիւր ոք ի ձէնջ
զնոյն փոյթ ցուցանիցէ ի հաստատուս-
12 թիւն յուսոյն մինչեւ ցվախճան. Զի
մի՛ հիւանդամիտք լինիցիք, նմանողք
եղերուք այնոցիկ որ հաւատովքն եւ
երկայնմտութեամբ ժառանգեցին զա-
13 ւետիսն։ Զի Աբրահամու խոստացեալ
դաւետիսն՝ Աստուծոյ, քանզի յայլ ոք
14 ի մեծ ոչ գոյր երդնուլ, Ցանձն իւր
երդուաւ եւ ասէ, Այո, օրհնելով
օրհնեցից զքեզ, եւ բազմացուցանելով
15 բազմացուցից զքեզ։ Եւ այսպէս եր-
կայնամիտ եղեալ՝ եհաս աւետեացն։
16 Այսաքէն մարդիկ որ ինչ ի վեր է քան
զինքեանս՝ յայն երդնուն, եւ ամե-
նայն հակառակութեան նոցա վճիռ ի
17 հաստատութիւն՝ երդումնն է։ Որով
առաւել եւս կամեցեալ Աստուծոյ

[1] ի բազմս պակաս
[2] Յոյն, առ ընդելութեան
[3] Յոյն, լուսաւորելոցն
[4] ի Յոանէ պակաս

ցուցանել ժառանգաւորաց աւետեացն
դհաստատութիւն խորհրդոյն ՝իւրոյ,
18 մինչնորդեաց երդմամբ. Զի երկու ան-
փոփոխելի իրօքն որովք անհնար իցէ
ստել Աստուածոյ՝ հաստատուն մխիթա-
րութիւն ունիցիմք, որք ապաստան
եղեաք բռնեալ հարկանել զհանդերձեալ
19 յուսոյն. Զոր իբրեւ զխարիսխ հաս-
տատուն եւ անչարժ ունիցիմք անձ-
անց մերոց, որ եւ մտանիցէ ի ներքինն
20 կողմն վարագուրին. Ուր կարապետն
մեր Յիսուս եմուտ վասն մեր, ըստ
կարգին Մելքիսեդեկի եղեւ քահանա-
յապետ յաւիտենից։

Գլ. է

1 Քանզի այս Մելքիսեդեկ թագաւոր էր
Սաղիմայ, քահանայ Աստուծոյ բարձ-
րելոյ, որ ել ընդ առաջ Աբրահամու,
յորժամ դարձեալ գայր ի կոտորածէ
2 թագաւորացն, եւ օրհնեաց զնա. Ո-
րում եւ տասանորդս յամենայնէ ետ
Աբրահամ. նախ թարգմանի թագաւոր
արդարութեան, ապա թագաւոր Սա-
ղիմայ՝ որ է թագաւոր խաղաղութեան.
3 Անհայր, անմայր, չհամարեալ յազգս,
որոյ ոչ սկիզբն աւուրց եւ ոչ կատա-
րած կենաց. նմանեալ Որդւոյն Աս-
տուծոյ՝ կայ մնայ քահանայ մշտնջե-
նաւոր։
4 Արդ տեսէք որպիսի ոք էր սա, ո-
րում եւ Աբրահամ տասանորդս ետ
5 յաւարէ անտի, նահապետն։ Եւ որք
յորդւոցն Ղեւեայ զքահանայութիւնն
առնուն՝ պատուէր ունին տասանորդել
զժողովուրդն ըստ օրինացն, այսինքն
է զեղբարս իւրեանց. թէպէտ եւ ել-
6 եալ իցեն յերանացն Աբրահամու. Իսկ
չհամարեալն յազգս ի նոցանէ՝ տասա-
նորդեաց զԱբրահամ, եւ զնա որոյ
7 զաւետիսն ընկալեալ էր՝ օրհնեաց։ Զի
առանց ամենայն հակառակութեան՝
նուաղն ի լաւէ անտի օրհնեսցի։
8 Եւ աստ մարդք մահկանացուք տա-
սանորդս առնուն. բայց անդ՝ [1]վկայե-
9 ցաւ թէ կենդանի է։ Եւ որպէս բա-
նիւ կարդ է ասել, թէ Աբրահամաւ
եւ Ղեւի իսկ որ զտասանորդսն առ-
10 նոյր՝ տասանորդեցաւ. Զի դեռ եւս

յերանս հօր իւրոյ էր, յորժամ ընդ
առաջ եղեւ նմա Մելքիսեդեկ։
11 Իսկ արդ՝ եթէ կատարումն ի ձեռն
Ղեւեացւոց քահանայութեանն էր,
(քանզի ժողովուրդն յայն օրէնսդրե-
ցաւ,) զինչ պիտոյ էր ըստ կարգին
Մելքիսեդեկի այլում քահանայի յա-
նել, եւ ոչ ասել թէ ըստ կարգին Ա-
12 հարոնի։ Այլ ի վոխոխել քահանայու-
թեանն հարկ էր եւ օրինացն վոխո-
13 խումն լինել։ Զի զորմէ այսպէսն ասի՝
յայլմէ ազգէ կալաւ հաղորդութիւն,
յորմէ ոչ ոք երբեք եղեւ հաղորդ սե-
14 զանոյն։ Արդ յայտ իսկ է թէ յազգէ
Յուդայ ծագեաց Տէր մեր, յորմէ ազգէ
վասն քահանայից Մովսէս ինչ ոչ ճառ-
15 եաց։ Եւ եւս առաւել յայտ է թէ ըստ
նմանութեան Մելքիսեդեկի յառնելոց
16 է այլ քահանայ, Որ ոչ ըստ մարմնա-
ւոր պատուիրանին եղեւ, այլ ըստ
զօրութեան կենացն անվախճանից։
17 Քանզի վկայեցաւ թէ Դու ես քահա-
նայ յաւիտեան ըստ կարգին Մելքի-
18 սեդեկի։ [2]Արհամարհութիւն լինէր ա-
ռաջին պատուիրանին վասն նորին
ակարութեանն եւ անչահութեան.
19 Քանզի ոչինչ կատարումն գործեցին
օրէնքն, [3]եւ մուտ աղնուական յու-
սոյն որով մերձենամք առ Աստուած։
20 Եւ այնչափ զի ոչ առանց երդման.
(զի են ոմանք որ առանց երդման են
21 կացեալ քահանայք. Բայց սա երդ-
մամբ ի ձեռն այնորիկ որ ասացն ի նա,
Երդուաւ Տէր եւ ոչ եւս զղջասցի,
22 Դու ես քահանայ յաւիտեան[4].) Եւ
այնչափ լաւագոյն ուխտի եղեւ երաշ-
խաւոր Յիսուս։
23 Եւ բազում են կացեալ քահանայք
վասն մահու արգել լինելոյ ի մշտնջե-
24 նաւորել։ Իսկ սա վասն յաւիտեան
կալոյ՝ առանց անցանելոյ ունի զքա-
25 հանայութիւնն. Ուստի եւ կենդանի
առնել համօրէն կարող է զմտաւոր-
եալսն նովաւ առ Աստուած. քանզի
միշտ կենդանի է լինել բարեխօս վասն
նոցա։
26 Ա. Զի այսպիսի իսկ եւ վայել էր
մեզ քահանայապետ, սուրբ, անմեղ,

[1] Ցն՝ն, որ վկայեցաւն

[2] Ցն՝ն, Զի արհամարհութիւն
[3] Ցն՝ն, այլ
[4] Բազմոժ յոխելսն, ըստ կարգին Մելքիսեդեկի

անարատ, զատեալ ի մեղաւորաց եւ
27 բարձրացեալ քան զերկինս. Որում ոչ
հանապազ հարկ է, որպէս այլոց քա-
հանայապետից, նախ վասն իւրեանց
մեղացն պատարագս մատուցանել եւ
ապա վասն ժողովրդեանն. իսկ սա
զայն միանգամայն կատարեաց, զի
28 զանձն իւր մատոյց պատարագ: Օ-
րէնքն զմարդիկ կացուցանեն քահա-
նայապետս, զդաճեալս տկարութեամբ,
իսկ բանն երդման յետ օրինացն՝ զՈր-
դի, որ յաւիտեան կատարեալ է:

Գլ. Ը

1 Եւ բանից գլուխ ասելոցս՝ այնպիսի
ունիմք քահանայապետ, որ նստաւ
ընդ աջմէ Մեծութեան աթոռոյն յեր-
2 կինս, Սրբութեանցն պաշտօնեայ, եւ
խորանին ճշմարտութեան զոր Տէրն
3 կանգնեաց եւ ոչ մարդ: Զի ամենայն
քահանայապետ վասն մատուցանելոյ
ղոհս եւ զպատարագս կայ. ուստի
հարկ է եւ նմա ունել ինչ զոր մատու-
4 ցանիցէ: Զի եթէ էր յերկրի, թերեւս
չէր իսկ քահանայ. զի [1]գոյին որ՝ մա-
տուցանէին ըստ օրինացն պատարագ.
5 Որք առակաւ եւ օրինակաւ պաշտէին
երկնաւորացն, որպէս եւ հրամայեցաւ
Մովսիսի, յորժամ գործելոց էր զվրան
ժամուն, Տեսջիր, ասէ, արասցես
զամենայն ըստ օրինակին որ ցուցաւ
6 քեզ ի լերինն: Բայց արդ առատագոյն
եւս պաշտաման եհաս [2]Յիսուս, որչափ
լաւագոյն եւս ուխտի է միջնորդ որ
յառաւել աւետիսն օրինադրեցաւ:
7 Զի եթէ առաջինն անարատ էր, ա-
8 պա երկրորդին տեղի ոչ խնդրէր: Նա
աւանիկ բամբասէ զնոսա. եւ ասէ,
Ահաւասիկ աւուրք եկեսցեն, ասէ
Տէր, եւ կատարեցից ի վերայ տանն
Իսրայելի եւ ի վերայ տանն Յուդայ
9 ուխտ նոր. Ոչ ըստ ուխտին զոր եդի
ընդ հարս նոցա յաւուրն յորում առի
ի ձեռն հանել զնոսա յերկրէն Եգիպ-
տացւոց. եւ զի նոքա ոչ կացին յուխ-
տին իմում, եւ ես անփոյթ արարի
10 զնոցանէ, ասէ Տէր [2]ամենակալ: Այլ
այս է ուխտն զոր եդից տանն Իսրա-

յելի յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր,
տայ զօրէնս իմ ի միտս նոցա, եւ ի
սիրտս նոցա գրեցից զնոսա, եւ եղէց
նոցա Աստուած, եւ նոքա եղիցին ինձ
11 ի ժողովուրդ: Եւ ոչ ևս ուսուցանիլ-
ցեն իւրաքանչիւր զքաղաքակից իւր
եւ իւրաքանչիւր զեղբայր իւր, եւ ա-
սիցեն [3]Ճանիր զՏէր. զի ամենե-
քին ծանիցեն զիս ի փոքրկանց մինչեւ
12 ցմեծամեծս նոցա. Զի քաւիլ եղէց
անիրաւութեանց նոցա, եւ զմեղս նո-
ցա եւ զանօրէնութիւնս այլ ոչ ևս
յիշեցից:
13 Սրբ ասելովն նոր՝ հնացոյց զառա-
ջինն. եւ որ հնանայն եւ ծերանայ՝
մերձ է յապականութիւն: ՎԶ

Գլ. Թ

1 Ունել ունէր եւ առաջինն իրաւունս
պաշտաման [3]յայնժամ զաշխարհական
2 սրբութիւնն: Զի խորանն առաջին
հանդերձեցաւ [2]այսպէս, յորում աշ-
տանակն եւ սեղանն եւ հացն նուի-
3 րաց, որ Սրբութիւնն կոչէր: Եւ յետ
երկրորդ վարագուրին՝ խորանն որ կո-
4 չէր Սրբութիւն սրբութեանց. Յորում
կայր բուրվառն ոսկի, եւ արկղն կտա-
կարանաց պատեալ ներքոյ եւ արտա-
քոյ ոսկւով, յորում սափորն ոսկի որ
մանանայիւ, եւ գաւազանն Ահարոնի
որ ծաղկեցաւ, եւ տախտակք կտակա-
5 րանացն. Եւ ի վերայ նորա քերովբէքն
փառաց որ հովանի ունէին ի վերայ
քաւութեանն, վասն որոյ ոչ է այժմ
ասել մի ըստ միոջէ:
6 Եւ այն ամենայն իբրեւ այնպէս
հանդերձեալ կայր, յառաջին խորանն
յամենայն ժամ մտանէին քահանայքն
7 զպաշտամունսն կատարել. Բայց յերկ-
րորդն մի անգամ ի տարւոջն քահա-
նայապետն. եւ զայն ոչ առանց ար-
եան, զոր մատուցանէր վասն իւր եւ
վասն ժողովրդեանն անգիտութեան.
8 Զայս ցուցեալ Հոգւոյն Սրբոյ մինչ-
չեւ յայտնեալ էր ճանապարհն սրբու-
թեանցն, քանզի դեռ առաջին խորանն
9 ունէր զհաստատութիւն. Որ է առակ
ժամանակին որ առաջի կայր, յորում
պատարագքն եւ զոհք մատչէին, որք

[1]Ոմն, գոյն քահանայք որ
[2]ի ցառնէն պակաս

[3]կամ, և

ոչ կարէին ըստ միտս կատարել ղպաշտօնեայսն, բայց միայն կերակրովք
10 եւ ըմպելեօք, եւ պէսպէս մկրտութեամբք՝ մարմնոյ արդարութիւնքն որ մինչեւ ի ժամանակս ուղղութեանն
11 ի վերայ կային։ Այլ Քրիստոս եկեալ քահանայապետ հանդերձելոցն բարեաց, մեծաւն եւ կատարելով եւ անձեռագործ խորանաւն, այսինքն՝ որ
12 ոչ յայսց արարածոց, եւ ոչ արեամբ նոխազաց եւ զուարակաց, այլ իւրով արեամբն եմուտ մի անգամ ի սրբութիւնսն, [1]յաւիտենականս գտեալ զիբրո-
13 կութիւն՝։ Զի եթէ արիւն ցլուցն եւ նոխազաց եւ մոխիր երինջոյն ցանեալ՝ զպղծեալսն սրբէր առ ի մարմնոյ սրբու-
14 թինէ, Ո՛րչափ եւս առաւել արիւնն Քրիստոսի, որ ի ձեռն Հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անարատ [2]պատարագ Աստուծոյ, սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց ի մեռելոտի գործոց ան-
15 տի՝ պաշտել զԱստուած կենդանի։ Եւ վասն այնորիկ նորոյ ուխտիս է միջնորդ, զի յորժամ մահ լինիցի ի փրկութիւն վասն առաջին ուխտին յանցատնաց, զաւետիս առցին հրաւիրեալքն
16 ի ժառանգութիւնն յաւիտենից։ Քանզի ուր կտակ է, հարկ է զմահ ի մէջ
17 բերել զկտակադրին։ Զի կտակ յետ մահու հաստատուն է. ապա թէ ոչ՝ զի՞րդ իցէ հաստատուն, մինչ կատա-
18 կադիրն կենդանի է։ Ուստի եւ ոչ առաջինն առանց արեան նորոգեր։
19 Քանզի իրրեւ պատմեցան ամենայն պատուիրանք օրինացն ի Մովսիսէ ժողովրդեանն, առեալ զարիւն ցլուցն եւ նոխազացն, ջրով եւ բրդով կարմրով եւ զոպայիւ, զկտակարանօքն իսկ եւ զամենայն ժողովրդեամբն սրսկեաց,
20 Եւ ասէ, Այս է արիւն կտակին զոր
21 պատուիրեաց ձեզ Աստուած։ Եւ զխորանսն եւ զամենայն կահիս սպա-
22 սուն նոյնպէս սրսկեաց զարիւնն։ Եւ զրեթէ ամենայն ինչ արեամբն սրբէր ըստ օրինացն, եւ առանց հեղման արեան չլինէր թողութիւն։
23 Սպա հարկ էր [3]օրինաւորացն այնպիսիօքն սրբել. եւ բուն իսկ երկնաւորացն՝ առաւել եւս պատարագօք
24 քան զնոսոնս։ Զի ոչ եթէ ի ձեռագործ սրբութիւնսն եմուտ Քրիստոս յօրինակս ճշմարտութեանն, այլ ի բուն իսկ յերկինս, [4]յանդիման լինել երե-
25 սացն Աստուածոյ վասն մեր։ Ոչ զի բազում անգամ մատուցանիցէ զանձն [2]պատարագ՝ որպէս քահանայապետն որ մտանէր [5]ի սրբութիւնսն սրբութեանցն՝՝ ամի ամի արեամբ օտարաւ.
26 Սպա թէ ոչ՝ պարտ էր նմա բազում անգամ չարչարել ի սկզբանէ աշխարհի. բայց արդ աւասիկ մի անգամ ի կատարած յաւիտեանց յանարգութիւն մեղաց իւրով պատարագաւն յայտ-
27 նեալ է։ Եւ զոր օրինակ կայ մնայ մարդկան մի անգամ մեռանել եւ յետ
28 այնորիկ գատաստան, Նոյնպէս եւ Քրիստոս մի անգամ մատուցեալ [2]պատարագ առ ի բառնալոյ զմեղս բազմաց. իսկ յերկրորդումն առանց մեղաց յայանեսցի այնոցիկ, որ ակն ունիցին նմա [6]հաւատովք ի փրկութիւն։

Գլ. Ժ

1 Բ. Քանզի զսուտեր հանդերձելոյ բարեացն ունէին օրէնքն եւ ոչ զնոյն կերպարանս իրացն, ամի ամի զնոյն պատարագս մատուցանեն ցանգ, որք ոչ են կարող զմատուցեալսն կատա-
2 րել. Սպա թէ ոչ՝ զադարէին ի մատուցանելոյ, վասն եւ ոչ մի ինչ այնուհետեւ խիղճ մտաց ունելոյ պաշ-
3 տօնէիցն մի անգամ սրբեցելոյ. Այլ անդէն ի նմին ի յիշատակս մեղացն
4 կային ամի ամի. Քանզի ոչ կարէր արիւն նոխազացն եւ ցլուց բառնալ
5 զմեղս։ Վասն որոյ ի մտանել իւրում յաշխարհ՝ ասէ, Զզոհս եւ զպատարագս ոչ կամեցար, բայց մարմին հաս-
6 տատեցեր ինձ. Ընդ ողջակէզս եւ ընդ
7 վասն մեղացն ոչ հաճեցար։ Յայնժամ ասացի թէ Ահաւասիկ եկի (ի ճառս գրոց գրեալ է վասն իմ) առնել զկամս
8 քո, Աստուած։ Վերագոյնն ասէ թէ Ընդ զոհս եւ ընդ պատարագս եւ ընդ ողջակէզս եւ ընդ վասն մեղացն ոչ հաճեցար, եւ ոչ կամեցար (որք ըստ
9 օրինացն մատչէին), Սպա ասէ,

[1] Յ-ին, յաւիտենական փրկութիւն գտեալ
[2] Ի Յ-ԻՆ պակաս
[3] Յ-ին, օրինակացն երկնաւորաց
[4] Յ-ին, այժմ յանդիման
[5] Բ-ԸՆԴ, ի սրբութիւնն
[6] Ի Բ-ԸՆԴ պակաս

Ահաւասիկ գամ առնել զկամս քո, Աստուած. մերժէ զառաջինն զի զերկրորդն հաստատեսցէ. 10 Որով կամօք եւ մեք սրբեցաք ի ձեռն պատարագի մարմնոյն Յիսուսի Քրիստոսի մի անգամ։ 11 Եւ ամենայն քահանայապետ կայ հանապազորդ ի պաշտամանն, եւ զնոյն պատարագս մատուցանէ բազում անգամ, որք ոչ երբեք կարող են բառնալ զմեղս. 12 Նա զմիոյ. Իսկ սա զմին վասն մեղաց մատոյց պատարագ, եւ անդրէն նստաւ ընդ աջմէ Աստուծոյ. 13 Եւ այսուհետեւ ակն ունի, մինչեւ դիցին թշնամիք իւր ի ներքոյ ոտից իւրոց։ 14 Քանզի միով պատարագաւ կատարեաց զսրբեալսն ի մշտնջենաւորս։ 15 Այլ վկայէ մեզ եւ Հոգին Սուրբ 16 [1]յետ ասելոյ յառաջագոյն, Եթէ՝ Այս է ուխտն զոր եդից [2]ընդ հարս նոցա՝ յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր, տայ զօրէնս իմ ի սիրտս նոցա, եւ ի 17 խորհուրդս նոցա գրեցից զնոսա, Այսպէս [3]ասէ Ք՝ Զմեղս նոցա եւ զանօրէնութիւնս նոցա այլ ոչ եւս յիշեցից։ 18 Իսկ ուր թողութիւն է, ոչ եւս պիտոյ է վասն մեղաց պատարագ։ ՎԺ 19 Ունիմք այսուհետեւ, եղբարք, համարձակութիւն ի մուտս սրբութեանցն 20 արեամբն Յիսուսի, Զոր նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ եւ կենդանի ի ձեռն վարագուրին, այսինքն է՝ մարմնոյն իւրոյ, 21 Եւ քահանայ մեծ ի վերայ 22 տանն Աստուծոյ, Մատիցուք ճշմարիտ սրտիւք, լրութեամբ հաւատոց, լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց եւ մկրտեալ զմարմինն ի ջուրն սրբութեան. 23 Պինդ կայցուք զխոստովանութիւնն անշարժ յուսոյն, զի հաւատարիմ է 24 որ խոստացաւն։ Եւ դգուշասցուք միմեանց յորդորմամբ սիրոյ եւ գործոց 25 ծոց բարեաց. Եւ մի՛ թողցուք զժողովն միմեանց, որպէս եւ սովոր են ոմանք. այլ միխիթարեսցուք, եւ այնչափ եւս առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերձեալ։

26 Զի կամակար մեռօք եթէ յանցանիցեմք յետ ընդունելութեան գիտութեան ճշմարտութեանն, այնուհետեւ ոչ եւս պիտոյ է վասն մեղաց պատա- 27 րագ, Այլ ահեղ ակնկալութիւն դատաստանին, եւ նախանձ հրոյն որ ուտիցէ զհակառակորդսն։ 28 Սբհամարհեալ ուրուք զօրէնսն Մովսիսի, առանց ողորմութեանց առ երկուք կամ երիւք 29 վկայիւք մեռանէր. Իսկ որչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար. եւ զարիւն [3]նորոյ ուխտին խառնակ համարեցաւ որով եւ սրբեցաւն, եւ զՀոգին չնորհաց թշնամա- 30 նեաց։ Այլ գիտեմք զայն որ ասացն, Իմ են վրէժխնդրութիւնք, եւ ես հատուցից, ասէ Տէր. եւ զարձեալ թէ՝ 31 Դատի Տէր զժողովուրդ իւր։ Սոհ մեծ է անկանիլ ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ։ 32 Այլ յիշեցէք զաւուրսն զառաջինս, յորս լուսաւորեալք բազում ճգանց 33 եւ չարչարանաց համբերէք. Մերթ ի նախատինս եւ ի նեղութիւնս խայտառակեալք, մերթ կցորդ այնպիսեաց վաստակաւորացն լինել։ Քանզի եւ [4]ընդ կապեալսն՝ չարչարեցարուք, եւ զյափշտակութիւն ընչից ձերոց խնդութեամբ ընկալարուք, քանզի գիտէիք թէ լաւագոյն եւս ստացուածս ունիք անձանց յերկինս, ուր կանն եւ մնան։ 35 Այլ մի՛ մերժէք ի ձէնջ զհամարձակութիւնն ձեր, յորում կայ մեծագոյ 36 վարձուց հատուցումն։ Պիտոյ է ձեզ համբերութիւն, զի զկամս Աստուծոյ արարեալ՝ հասջիք աւետեացն։ 37 Զի փոքր մնաց եւս քան որչափ որ զայսր 38 գոյն իցէ՝ եկեսցէ, եւ ոչ յամեսցէ։ Զի արդարն [5]իմ ի հաւատոց կեցցէ. եւ եթէ յերկմիտս ոք իցէ, ոչ հաճեսցի 39 ընդ նա անձն իմ։ Բայց մեք ոչ եթէ երկմտութեամբ եմք ի կորուստ, այլ հաւատովք ի փրկութիւն հոգւոց։

ԳԼ· ԺԱ

1 Զ[ի]նչ են հաւատք, եթէ ոչ յուսացեալ իրաց հաստատութիւն, եւ յանդիմանութիւն որոց ոչն երեւին։ 2 Զի նովաւ վկայեցան առաջինքն։ 3 Հաւատովք իմանամք հաստատեալ զյաւիտեանսն բանիւ Աստուծոյ, յաներեւութից զերեւելիս եղեալ։ 4 Հաւատովք լաւ պատարագս Հաբէլ

[1] Յոյն, զի յետ
[2] Յոյն, ընդ նոսա
[3] ի Յոյնին պակասէ
[4] Ոմանք, ի կապանս իմ
[5] Յոմանս պակասէ

քան զկայէն մատուցանէր Աստուծոյ, որով վկայեցաւ իսկ արդար լինել. զի ի վերայ պատարագացն եղեւ վկայութիւն նմա յԱստուծոյ. զի թէպէտ եւ մեռաւ ի նմին, սակայն տակաւին խօսի։

5 Հաւատովք Ենովք փոխեցաւ, զի մի՛ զմահ ճաշակեսցէ. եւ ոչ ուրեք գտանէր, քանզի փոխեաց զնա Աստուած. եւ յառաջ քան զփոխելն նորա վկայեցաւ հաճոյ լինել Աստուծոյ։

6 Բայց առանց հաւատոց անհնար է հաճոյ լինել. այլ հաւատալ արժան է այնմ որ մերձենայ առ Աստուած՝ թէ է [1]Աստուած. եւ որ խնդրենն զնա՝ լինի պարգեւատու։

7 Հաւատովք առեալ Հրաման Նոյի վասն չեւ եւս երեւելեացն, զգոն հարեալ կազմէր զտապանն ի փրկութիւն տան իւրոյ, որով դատեցաւ զաշխարհ, եւ հաւատոյն արդարութեան եղեւ ժառանգաւոր։

8 Հաւատովք [2]որ Աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր եղեւ ելանել ի տեղին զոր առնոյց էր ի ժառանգութիւն. եւ գնաց, եւ ոչ գիտէր յո՛վ երթիցէ։

9 Հաւատովք պանդխտեցաւ յերկրին աւետեաց իբրեւ յօտարութեան, խոնարհօք բնակեաց Իսահակաւ եւ Յակովբաւ հանդերձ, ժառանգակցօք նո-
10 ցին աւետեաց։ Քանզի ակն ունէր հիմամբք հաստատեալ քաղաքին, որոյ ճարտարապետ եւ արարիչ Աստուած է։

11 Հաւատովք եւ ինքն Սառա [3]որ ամուլն էր՝՝, զօրութիւն առնոյց զսերմն [3]որդեծնութեան՝ ընդունէր, եւ ի ատեամ հասակի [3]ծնանէր. քանզի հա-
12 ւատարիմ համարեցաւ զայն որ խոստացաւն։ Վասն որոյ եւ ի միոջէն ծնանէին, եւ այն՝ [4]յանգեալ ժամանակի՝՝, իբրեւ զաստեղս երկնից բազմութեամբ, եւ իբրեւ զաւազ առ ափն ծովու առանց թուոյ։

13 Ըստ հաւատոց մեռան ամենեքին սոքա, եւ չեւ եւս ընկալեալ զաւետիսն. այլ ի հեռուստ տեսին զնոսա [5]եւ ցնծացան, եւ խոստովան եղեն եւ թէ օտարք եւ պանդուխտք են յերկրի։

14 Զի որք զայնպիսիսն խօսին՝ յայտ առ-
15 նեն եթէ գաւառ իմն խնդրեն։ Զի եթէ զայն յիշէին ուստի ելիննն՝ գոյր
16 ժամանակ դառնալոյ անդրէն։ Նա աւանիկ ազնուականի իմն ցանկացեալ են, այսինքն է երկնաւորին. վասն որոյ ոչ ամօթ համարի Աստուած կոչել նոցա Աստուած, քանզի պատրաստեաց նոցա քաղաք։

17 Հաւատովք մատոյց Աբրահամ ի փորձութեան իւրում զԻսահակ [1]պատարագ. եւ զմիածնօրն մատուցանէր,
18 որոյ զաւետիսն ընկալեալ էր։ Որում առացաւն, թէ Իսահակաւ կոչեսցի
19 քեզ զաւակ. նա ի մտի իւրում թէ եւ ի մեռելոց կարող է յարուցանել Աստուած. ուստի եւ յառակս իսկ ընկալաւ զնա։

20 Հաւատովք վասն հանդերձելոց իրաց օրհնեաց Իսահակ զՅակովբ եւ զԵսաւ։

21 Հաւատովք Յակովբ ի մեռանիլն իւրում զիւրաքանչիւր ոք յորդւոցն Յովսեփու օրհնեաց, եւ երկիր եպագ ի ծագ գաւազանի իւրոյ։

22 Հաւատովք Յովսէփ ի վախճանիլ իւրում յիշեաց զելս որդւոցն Իսրայէլի, եւ վասն ոսկերաց իւրոց պատուիրեաց։

23 Հաւատովք [6]զՄովսէս իբրեւ ծնան՝՝, թաքուցաւ ամիսս երիս ի հարց իւրոց, քանզի տեսին կայտառ զմանուկն, եւ ոչ զանգիտեցին ի հրամանէ թագաւորին։ Հաւատովք Մովսէս, իբրեւ աճեաց, ուրացաւ կոչել որդի դստերն
25 Փարաւոնի. Լաւ համարեցաւ չարչարիլ ընդ ժողովրդեանն Աստուծոյ, քան առ ժամանակ մի վայելել ի մեզս.
26 [7]Կարեւոր համարեցաւ զնախատինսն Քրիստոսի քան [8]զմնծութիւն գանձուցն՝՝ Եգիպտացւոց, զի հայեցեալ ակն ունէր վարձուցն հատուցման։
27 Հաւատովք թողոյր զերկիրն Եգիպտացւոց, եւ ոչ երկնչէր ի ցասմանէ թագաւորին, զի [9]զաներեւոյթն իբրեւ տեսեալ համերբութեամբ համարեցաւ։
28 Հաւատովք արար զզատիկն եւ զհեզումն արեանն, զի մի՛ սատակիչն անդրանկաց մերձենայցէ ի նոսա։

---

[1] ի ՅՈՒՆ. գլխով
[2] կո՛ր, կոչեցեալ Աբրահամ՝՝
[3] ի ԲՈՒՀ. գլխով
[4] ՅՈՒՆ, ի ժեռելոյ
[5] ՕՐԻՆ, և հաւատացին և
[6] ՅՈՒՆ, Մովսէս իբրեւ ծնաւ
[7] ՅՈՒՆ, Առաւել մեծութիւն
[8] ՅՈՒՆ, զգանձս
[9] ՅՈՒՆ, զԱներեւոյթն

29 Հաւատովք անցին ընդ ծովն կար-
միր իբրեւ ընդ ցամաք երկիր. զորոյ
զիորձ առեալ Եգիպտացւոցն՝ ընկղմե-
ցան։
30 Հաւատովք պարիսպքն Երիքովի ան-
կան, չուրջ եկեալ զնոքօք զեւթն օր։
31 Հաւատովք Րահաբ պոռնիկ ոչ կոր-
եաւ ընդ անհաւատսն, որոյ ընկալեալ
էր ղրտեսն խաղաղութեամբ։
32 Եւ արդ զի՞նչ եւս ասացից. զի չէ
բաւական ժամանակս պատմելոյ վասն
Գեդէոնի, Բարակայ, Սամփսոնի,
Յեփթայեայ, Դաւթի եւ Սամուէլի եւ
33 [1]այլոց մարգարէիցն. Որք հաւատովք
պարտեցին զթագաւորութիւնս, զոր-
ծեցին զարդարութիւն, հասին աւե-
34 տեաց, լցին զբերանս առիւծուց, Շի-
ջուցին զզօրութիւն հրոյ, ապրեցան
ի բերանոյ սրոյ, զօրացան ի տկարու-
թիւնէ, եղեն զօրաւորք ի պատերազմի,
35 առին զբանակս օտարաց. Ընկալան
կանայք ի յարութիւնէ զմեռեալս իւր-
եանց. կէսք կոչնոճեցան, եւ չեւ եւս
ընկալեալ զիրիւթիւն, զի լաւագոյն
36 յարութեանն հասանիցեն. Եւ կէսք
զտանջանաց եւ զգանից զիորձ առին,
37 զկապանաց եւ զբանտից. Քարկոծե-
ցան, սղոցեցան, փորձեցան, սպան-
մամբ սրոյ մեռան, չրջկեցան լայկա-
մաչիօք եւ մորթովք այծենեօք. կա-
բօտեալք, նեղեալք, չարչարեալք.
38 (Զորս ոչ արժէ աշխարհս.) յանապատի
մոլորեալք եւ ի լերինս եւ յայրս եւ
ի փապարս երկրի։
39 Եւ սոքա ամենեքին վկայեալք ի
հաւատոցն, չեւ եւս ընկալան զաւե-
40 տիսն. Աստուծոյ վասն մեր [2]լաւագոյն
համարեալ՝, զի մի՛ առանց մեր կա-
տարեսցին։

Գլ. ԺԲ

1 Ա՛յսուհետեւ եւ մեք որ այսչափ չուրջ
զմեզ մածեալ ունիմք զրազմութիւն
վկայից, [3]զհպարտութիւն զամենայն
ի բաց ընկեցուք եւ զմեզս [4]կարե-
ւորս, համբերութեամբ ընթացուք
ի պատերազմ որ առաջի կայ մեզ.
2 Հայեցուք ի զօրագլուխն հաւատոց
եւ ի կատարիչն Ցիսուս, որ փոխա-
նակ ուրախութեանն որ նմա առաջի
կայր՝ յանձն առ զխաչն, արհամարհեաց
զամօթն, նստաւ ընդ աջմէ աթոռոյն
Աստուծոյ։
3 Ածէք զմտաւ, որ զայսպիսի
համբերութիւն ի մեզաւորաց հակա-
ռակութենէ անտի կրեաց, զի մի՛ աչ-
խատք լինիցիք անձամբք ձերովք եւ
4 լքանիցիք։ Զի չեւ եւս արեամբ չափ
պատերազմեալք հակառակ կացէք մե-
5 զացն. Եւ մոռացարուք զմխիթարու-
թիւնն որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդ-
եակս խօսի.

Գ. Որդեակ իմ, մի՛ լքանիր ի խրա-
տու Տեառն, եւ մի՛ վհատիցիս յան-
6 դիմանալ ի նմանէ. Զի զոր սիրէ
Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի
7 զոր ընդունի. Ի խրատու համբերու-
թեան կայք, իբրեւ յորդիս մատու-
ցեալ է ի ձեզ Աստուած. ո՞ր որդի է
8 զոր ոչ խրատիցէ հայր. Զի եթէ ա-
նանց խրատու լինիցիք, որով ամե-
նեքին բաժանորդք եղեն, ապա խորթք
9 իցէք եւ ոչ որդիք. Զի եթէ ի մարմ-
նաւոր հարցն մերոց զոր ունիմք խրա-
տիչս՝ պատկառեմք, ո՛րչափ եւս ա-
նանց հնազանդեսցուք Հօրն հոգւոց,
10 եւ կեցցուք. Զի սոքա առ սակաւ ժա-
մանակս ըստ կամաց իւրեանց խրա-
տեն. իսկ նա վասն օգտի, առ ի չըն-
11 դունելոյ զսրբութիւն նորա. Ամենայն
խրատ առ ժամանակն ոչ ուրախու-
թեան թուի, այլ՝ տրտմութեան, բայց
յետոյ պտուղ խաղաղութեան նոսին
կրթեցելոցն հատուցանէ յարդարու-
թիւն։
12 Վասն որոյ զձեռս լքեալս եւ զծունկս
13 կթոտս հաստատեցէք. Եւ ղչաւիղս
ուղիղս արարէք ոտից ձերոց, զի մի՛
որ կաղն իցէ՝ ղլորիցի, այլ մանաւանդ
14 բժչկեսցի. Զխաղաղութեան հետ եր-
թայք ընդ ամենեսին եւ զսրբութեան,
առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր.
15 Զգոյշ լերուք, զուցէ ոք յետնեալ
գտանիցի ի շնորհացն Աստուծոյ. մի՛
ոք արմատ դառնութեան ի վեր երեւ-
եալ նեղիցէ, եւ նոսիւք բազումք պղծի-
16 ցին. Մի՛ ոք պոռնիկ եւ սրիգծ իբրեւ
զԵսաւ, որ ընդ միով կերակրոյ զան-
17 դրանկութիւնն վաճառեաց. Գիտէք

---

[1] Ի բազմս պակաս
[2] Յոյն, լաւագոյն տեսեալ կանխաւ
[3] Կամ, զծանրութիւն
[4] Յոյն, որ դիւրաւն պաշարէն

զի թէպէտեւ յետոյ կամեցաւ ժառանգել զօրհնութիւնն, խոտան գտաւ. զի եւ ապաշխարութեան տեղի ոչ եդիա, թէպէտեւ արտասուօք խնդրեաց զնա։

18 Դ. Զի ոչ էք մատուցեալ առ լեառն չօշափելի, որ հրովն վառեալ էր, [1]եւ միգով եւ մառախղով եւ խաւարաւ
19 եւ մրով, Ուր փողն հնչէր եւ բարբառ պատգամացն՝. ուստի որք լուանն՝ [2]հրաժարեցին, զի մի՛ կրկնեսցի առ
20 նոսա բանն. Քանզի ոչ հանդարտէին հրամանին. [3]Թէպէտեւ դազան մերձենայր ի լեառնն, քարկոծ լինէր՝։
21 Եւ այնպէս ահագին էր տեսիլն, զի եւ Մովսէս ասէր եթէ Զահի հարեալ
22 եմ եւ դողամ։ Այլ մատուցեալ էք ի Սիովն լեառն, եւ ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ, Երուսաղէմ յերկինս, եւ
23 ի բիւրաւոր բանակս հրեշտակաց, Եւ յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս, եւ առ դատաւորն ամենեցուն Աստուած, եւ յոգիս արդարոց կա-
24 տարելոց, Եւ ի նորոց կտակարանացն միջնորդն Յիսուս, եւ ի հեղումն արեան նորա որ առաւել խօսի քան զՀաբելին։
25 Զդուշ լերուք, դուցէ հրաժարիցէք յայնմանէ որ խօսեցաւն. զի եթէ նոքա ոչ կարացին վերծանել, հրաժարեալք յայնմանէ որ յերկրին հրամանատայր, մ՚րչափ եւս առաւել մեք, եթէ յերկինսաւրէն թիկունս դարձուցանիցեմք. Որոյ ձայնն զերկիր չարժեաց
27 յայնժամ, եւ այժմ խոստացեալ է եւ ասէ, Մի՛ եւսանդամ չարժեցից ոչ միայն զերկիր, այլ եւ զերկինս։ Այլ միեւնդամն յայտ առնէ զչարժելոցն իբրեւ զեղելոց փոփոխումն, զի հաստատունն
28 կայցեն անչարժքն։ Վասն որոյ թագաւորութիւն անչարժ ընկալեալ՝ սիրեղ կայցուք զչնորհն, որով պաշտեմք զԱստուած հաճութեամբ՝ ահիւ եւ դո-
29 ղութեամբ. Քանզի Աստուած մեր հուր ծախիչ է։

Գլ. ԺԳ

1 Եղբայրսիրութիւն հաստատեսցի [4]առ
2 ձեզ՝։ Զօտարսիրութիւն մի՛ մոռանայք, զի այնու ոմանք յանկեաս ընկալան զհրեշտակս։ Յուշ լիցին ձեզ կապեալքն, որպէս թէ դուք ընդ նոսա կապեալք իցէք. եւ չարչարեալքն, որպէս թէ եւ դուք իսկ [5]մարմնաւորք
4 էք՝։ Պատուական է ամուսնութիւն ամենեւին, եւ սուրբ՝ անկողինք. բայց զչունս եւ զպոռնիկս դատի Աստուած։
5 Բարք անարծաթասէրք լինիցին, բաւական համարել որչափ ինչ ի ձեռս իցէ. քանզի ինքն իսկ ասաց, Ոչ թողից զքեզ եւ ոչ ընդ վայր հարից.
6 Որպէս զի համարձակ լիցուք ասել, Տէր է իմ օգնական եւ ես ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ։ Յիշեցէք զաւագնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն։
8 Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, 9 նոյն եւ յաւիտեանս։ Յուսմունս պէսպէս եւ յօտարաճաչիս մի՛ դանդաչէք. զի լաւ է չնորհօք հաստատել զսիրտս եւ ոչ կերակրովք. որովք ոչինչ օգուեցան որ այնպէսն գնացին։
10 Ե. Ունիմք մեք սեղան, ուստի ոչ ունին իշխանութիւն ճաշակել որք
11 պաշտեն զպաշտօն խորանին. Զի որոց անասնոց մատչէր արիւնն ի սրբութիւնն վասն մեղաց ի ձեռն քահանայապետին, նոցունն մարմինք այրէին
12 արտաքոյ բանակին։ Վասն որոյ եւ Յիսուս, զի սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդն, արտաքոյ դրանն չարչարեցաւ։ Այրդ եկայք ելցուք առ նա արտաքոյ բանակին՝ առեալ յանձն զնա-
14 խատինս նորա։ Քանզի ոչ եթէ ունիմք քաղաք որ աստէն մնալոց իցէ, այլ զհանդերձեալսն խնդրեմք։ Այրդ ի ձեռն նորա մատուսցուք պատարագ օրհնութեան յամենայն ժամ Աստուծոյ. այսինքն է՝ զպտուղ չրթանց խոս-
16 տովանելոյ յանուն նորա։ Զբարերարութիւն եւ զհաղորդութիւն մի՛ մոռանայք, զի ընդ այնպիսի պատարագս
17 հաճի Աստուած։ Ունկնդիր լերուք

---

[1] Յոյն, և ոչ ի մէգ և ի խաւար և ի մրրիկ,
(19) Եւ ի հնչումն փողոյ և ի բարբառ պատգամաց
[2] կամ, աղաչեցին
[3] Յոյն, Մինչեւ իսկ գազան մերձենայցէ ի լեառնն, քարկոծեսցի, ամէն յոռելըն, կամ նետիւք խոցոտեսցի

[4] ի յոյն պակաս
[5] Յոյն, էք ի մարմնի

առաջնորդաց ձերոց, եւ հպատակ կացէք [1]նոցա, զի նոքա տքնին վասն ոգւոյ ձերոյ, որպէս թէ համարս տալոց իցեն [2]ընդ ձեր՝. զի խնդութեամբ արասցին զայն եւ մի՛ յոգւոց հանեալով, զի այն ոչ յօգուտ ձեր է։

18 ԿԻՐ. Աղօթս արարէք վասն մեր, զի հաստատեալ գիտեմք բարւոք միտս ունիմք, յամենայնի կամիմք
19 բարւոք դնացս ցուցանել։ Եւ առաւել աղաչեմ զի զայն առնիցէք, զի վա-
20 ղագոյն պատսպարեցայց ձեզ։ Եւ Աստուած խաղաղութեան որ եհան ի մեռելոց զՀովիւն հօտից, զմեծն արեամբ յաւիտենական ուխտին, զՏէր
21 մեր Յիսուս, Հաստատեսցէ զձեզ ի գործս բարութեան առնել զկամս նորա, եւ արասցէ [3]ի մեզ զհաճոյսն առաջի իւր ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս։ Ամէն։

22 Աղաչեմ զձեզ, եղբարք, անսալ բանիս մխիթարութեան, քանզի սակաւուք գրեցի ձեզ։ Եւ ճանաչէք զեղբայրն [4]մեր զՏիմոթէոս զարձակեալն
24 [5]առ ձեզ՝. ընդ որում, եթէ վաղագոյն գայցէ, տեսից զձեզ։ Ողջոյն տաջիք ամենայն առաջնորդաց ձերոց եւ ամենայն սրբոց. ողջոյն տան ձեզ որ
25 ի կողմանս Իտալիացւոց են։ Շնորհք ընդ ամենեսին ձեզ։[5]

Ա՟ ԵԲՐԱՅԵՑԻՆ ԷՐԵՑԱ՟ ՅԻՊՍԼԷԱՅ Է ՅԵՌՆ ՏԻՄՈԹԷԱՅ։

[6]ԹՈՒՂԹ
ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՅԱԿՈՎԲԱՑ
ԿԱԹՈՂԻԿԷ՟

ԳԼՈՒԽ Ա

1 Ա.Դ. Յակովբոս, Աստուծոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի ծառայ, երկոտասան աղգացդ որ ի սփիւռս էք՝ ողջոյն։
2 Ամենայն ուրախութեան արժանի համարիջիք, եղբարք, յորժամ ի պէսպէս փորձութեանց ի մէջ անկանիցիք.
3 Գիտասջիք զի հանդէս ձերոց հաւատոցն յօրինեալ գործէ զհամբերութիւն։
4 Իսկ համբերութիւնն գործ կատարեալ ունիցի, զի իցէք ողջանդամք եւ կատարեալք, եւ ոչ ինչ իւիք նուազեալք։
5 Ապա թէ ոք ի ձէնջ իցէ նուազեալ յիմաստութենէ, խնդրեսցէ յԱստուծոյ որ տայ ամենայնի առատապէս
6 եւ ոչ նախատէ, եւ տացի նմա։ Բայց

[1]ի բազմս պակաս
[2]ի ցոնէն պակաս
[3]Որոնք, ի ձեզ
[4]ցոմանս պակաս
[5]Բազմարդ յօրելեան, Ամէն։

խնդրեսցէ հաւատովք եւ մի՛ երկմտեսցէ. զի որ երկմտին է՝ նման է հողմակոծեալ եւ տատանեալ ալեաց ծո-
7 վու. Մի՛ ակնկալեցի մարդն այն առ-
8 նուլ ինչ [7]յԱստուծոյ. Զի այր երկմիտ առանց հաստատութեան է յամենայն ճանապարհս իւր։
9 Պարծեսցի եղբայր խոնարհ ի բարձ-
10 րութիւնն իւր, Եւ որ մեծատունն իցէ՝ ի խոնարհութիւնն իւր. քանզի իբրեւ
11 զծաղիկ խոտոյ անցցէ. Զի ծագեաց արեւ հանդերձ խորշակաւ եւ ցամաքեցոյց զխոտն, եւ թօթափեցաւ ծաղիկն նորա, եւ կորեաւ վայելչութիւն երեսաց նորա. նոյնպէս եւ մեծատունն [8]հանդերձ չահիւքն իւրովք՟ թարշամեսցի։

[6]Որոնք, Թուղթ Յակովբայ կաթողիկէ. այլ, սրպէս և սոնք է Հայերէն յետադրոյ, Թուղթ Յակովբայ
[7]Ցոյն, ի Տեառնէ
[8]Ցոյն, ի գնացս իւր

12 երանեալ է այր որ համբերիցէ փորձանաց. զի եթէ ընտիր եւս գտանիցի, առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւ սիրելեաց իւրոց [1]Տէր։
13 ԱԵ. Մի՛ ոք որ ի փորձութեան իցէ ասիցէ թէ յԱստուծոյ փորձիմ. զի Աստուած անփորձ է չարեաց, փորձէ նա
14 եւ ոչ զոք։ Իւրաքանչիւր ոք փորձի առ ի յիւրոյն ցանկութեանց ձգեալ
15 եւ պատրեալ։ Ապա այնուհետեւ ցանկութիւնն յղացեալ՝ ծնանի զմեղս, եւ
16 մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին։ Մի՛
17 խաբիք, եղբարք իմ սիրելիք. Զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի Հօրէն լուսոյ, յորում չիք փոփոխումն եւ կամ չրջելոյ ստուեր։
18 կամեցեալ ծնաւ զմեզ բանիւն ճշմարտութեան, լինել մեզ [2]պտուղ ինչ ստացուածոց նորա։
19 [3]Գիտասջիք, եղբարք իմ սիրելիք, եղիցի ամենայն մարդ արագ առ ի լսել, եւ ծանր առ ի խօսել, եւ ծանր առ
20 ի բարկանալ։ Զի բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործ
21 ձէ։ Որով ի բաց թօթափեալ զամենայն աղտեղութիւն եւ զյաւելուածս չարեաց, հեզութեամբ ընդունիջիք զբանն ընդաւոյս, որ կարօղն է կեց
22 ուցանել զոգիս ձեր։ Լինիջիք առնեւ միք բանին, եւ մի՛ լսելիք միայն [4]հա-
23 մարեսջիք զանձինս։ Զի եթէ ոք լսելի միայն իցէ բանին եւ ոչ առնելի, նման է նա մարդոյ որ պչուցեալ հայիցի ընդ [5]երեսս իւր որ ծնանիցին՝ ի հա-
24 յելոյ. Զի հայեցեալ եւս զինքն եւ զանց արար, եւ անդէն մոռացաւ թէ
25 որպիսի ոք էր։ Իսկ որ յառեալ ի կատարեալ օրէնս ազատութեանն հայիցի եւ ի նմին կացցէ, ոչ եղեւ նա լսող մոռացութեան, այլ՝ առնելի գործոյն. նա յառնելն իւրում լիցի երանելի։
26 Եթէ [6]ոք կամիցի կրօնաւոր լինել եւ ոչ սանձահարիցէ զլեզու իւր, այլ [7]զբաղիցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն վայրապար է կրօնաւորու-
27 թիւնն։ Կրօնաւորութիւն սուրբ եւ անարատ առ ի յԱստուծոյ եւ ի Հօրէ այս է, Այցելու լինել որբոց եւ այրեաց ի նեղութեան իւրեանց, անարատ պահել զանձն յաշխարհէ։

Գլ. Բ

1 ԱԶ. Եղբարք իմ, մի՛ աչառանօք ունիջիք զհաւատսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, [8]որ Տէրն է՝ փա-
2 ռաց։ Եթէ մտցէ ի ժողովուրդ ձեր այր որ ունիցի մատանի ոսկի եւ հանդերձս պայծառս, մտանիցէ անդր եւ աղքատ ոք ի հանդերձս աղտեղիս,
3 Հայիցիք ընդ այն որ ունիցի զհանդերձս պայծառս, եւ ասիցէք եթէ Դու նիստ աստ պատուով, եւ ցաղքատն ասիցէք եթէ Ցատն կաց դու այսր, կամ թէ՝ եկ նիստ առ պատ-
4 ուանդանիս իմոյմ, Ո՞չ խղճիցէք յանձինս եւ լինիցէք դատաւորք չարացն
5 խորհրդոց։ Լուարուք [9]ինձ, եղբարք իմ սիրելիք. Ո՞չ ապաքէն Աստուած ընտրեաց զաղքատս աչխարհիս, որ են մեծատունք հաւատովք, եւ ժառանգաւորք արքայութեանն զոր խոստա-
6 ցաւ սիրելեաց իւրոց։ Եւ դուք անարգէք զաղքատս. Ո՞չ մեծատունք յաղթահարեն զձեզ, եւ նոքա քարչեն
7 զձեզ ի դատաստան։ Ո՞չ նոքա հայհոյեն զքաւրուք անունն որ կոչեցեալ է
8 ի վերայ ձեր։ Ապա թէ զօրէնսն կատարիցէք զարքունականս ըստ Գրոց, եթէ՝ Սիրեսցես զընկեր քո իբրեւ
9 զանձն քո, բարւոք առնէք. Իսկ եթէ աչառիցէք, մեղս գործէք՝ յանդիմանեալք յօրինացն իբրեւ օրինազանցք։
10 Որ ոք զամենայն օրէնսն պահիցէ, եւ միով իւիք լինի գթիցէ, եղեւ ամենայն
11 օրինացն պարտապան։ Զի որ ասացն թէ [9]Մի՛ պսպանանիցես, ասաց թէ՝ Եւ մի՛ չնայցես. զի եթէ սպանանիցես ոչ, բայց չնայցես՝՝, եղեր յանցաւոր
12 օրինացն։ Այնպէս խօսեցարուք եւ այնպէս արարէք, որպէս զի ազատու-
13 թեան օրինօքն իցէք դատելոց։ Զի անողորմ դատաստան լինելոց է այնմ որ ոչ առնիցէ զողորմութիւն, [10]քանզի

---

[1] Ցհ՚ննս ի Ցն՚ և ի Հայ յեռ՚ետ պ՚ոլ՚ոկ
[2] Ցն՚ն՚, երախայրի
[3] Ո՚ռն՚ս, Ուսցի
[4] Կ՚ոմ՚, խաբելով
[5] Ցն՚ն՚, երեսս ծննդեան իւրոյ
[6] Ո՚ռն՚ս, ոք ի ձեզ
[7] Ցն՚ն՚, խաբիցէ
[8] Ի Ցն՚ն՚ պ՚ոլ՚ոկ
[9] Բ՚ազ՚մ՚ս, Մի՛ չնայցես, ասաց թէ՝ եւ մի՛ սպանանիցես. զի եթէ չնայցես ոչ, բայց սպանանիցես
[10] Ի Ցն՚ յեռ՚ետ յ՚ոռն՚ս, և, յայլ՝ պ՚ոլ՚ոկ

բարձր ի գլուխ պարծի ողորմութիւն առ դատաստանաւն։
14 Աե. Զի՞նչ օգուտ իցէ, եղբարք իմ, եթէ ասիցէ ոք հաւատս ունել եւ գործս ոչ ունիցի. միթէ կարիցե՞ն հաւատքն
15 ապրեցուցանել զնա։ Եթէ եղբայր ոք կամ քոյր իցեն մերկք կամ կարօտեալ
16 աւուրն կերակրոյ, Ասիցէ ոք ի ձէնջ ցնոսա, Երթայք խաղաղութեամբ, ջեռարուք եւ յագեցարուք. եւ տայցէք ոչ նոցա զպէտս մարմնոյն, զի՞նչ օ-
17 գուտ իցէ։ Սոյնպէս եւ հաւատք եթէ գործս ոչ ունիցին, մեռեալ են առան-
18 ձինն։ Այլ թերեւս ասիցէ ոք, եթէ՝ Դու հաւատս ունիս, եւ ես գործս ունիմ. ցոյց ինձ զհաւատան քո առանց գործոց, եւ ես ցուցից քեզ ի գործոց
19 իմոց զհաւատան։ Դու հաւատաս զի մի է Աստուած, բարւոք առնես. եւ
20 դեւք հաւատան եւ սարսին։ Կամի՞ս գիտել, ով մարդ մնոտի, զի հաւատք
21 առանց գործոց [1]դատարկ են։ Աբրահամ հայր մեր ո՞չ ապաքէն ի գործոց արդարացաւ՝ հանեալ ի սեղան զորդին
22 իւր զԻսահակ [2]պատարագ։ Տեսանե՞ս զի հաւատքն եղեն գործակից գործոց նորա, եւ ի գործոց անտի հաւատքն
23 կատարեցան։ Եւ կատարեցաւ Գիրն որ ասէ, Հաւատաց Աբրահամ յԱստուած, եւ համարեցաւ նմա յարդարութիւն. եւ կոչեցաւ բարեկամ Աս-
24 տուծոյ։ Տեսանէ՛ք զի ի գործոց արդարանայ մարդ, եւ ոչ ի հաւատոց
25 միայն։ Սոյնպէս եւ Բաղաբ պոռնիկ ո՞չ ապաքէն ի գործոց արդարացաւ, ընկալեալ զլրտեսան, եւ ընդ այլ ճա-
26 նապարհ արձակեաց։ Զոր օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է, սոյնպէս եւ հաւատք առանց գործոց մեռեալ են։

Գլ. Գ

1 Բա. Մի՛ բազումք վարդապետս լինել, եղբարք իմ, գիտասջիք զի մեծ դա-
2 տաստան ընդունելոց եմք. Քանզի բազումք ինչ յանցանեմք ամենեքեան. եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ, նա է մարդ կատարեալ, որ կարօղն է սանձ-
3 ահարել զամենայն մարմին իւր։ Տես զի ձիոց սանձս ի բերան դնեմք առ անսալոյ նոցա մեզ, եւ զամենայն մար-
4 մինս նոցա նուաճեմք։ Ահաւասիկ եւ նաւք որպիսի՛ ինչ են, եւ ի սաստիկ հողմոց վարին. եւ փոքր թեւովն չրջին յոր կոյս եւ միտք ուղղչին կամիցին։
5 Սոյնպէս եւ լեզու փոքր ինչ անդամ է եւ մեծամեծս բարբառի. ահա եւ սակաւ ինչ հուր զորպիսի՛ անտառս հրդե-
6 հէ։ Եւ լեզու հուր՝ [3]զարդ անիրաւութեան. լեզու հաստատեալ է յանդամս մեր, որ զամենայն մարմինն ապականէ, եւ վառէ հրով զանիւ ծննդեան, եւ բորբոքեալ տոչորի [4]ի
7 գեհենի։ Ամենայն բնութիւն գազանաց եւ թռչնոց եւ սողնոց եւ որ ի ծովու են, հնազանդեալ է եւ հնազան-
8 դի մարդկեղէն բնութեան. Բայց զլեզու մարդկան ոչ ոք կարէ հնազանդել, չէարն եւ զանկարգ եւ զի թու-
9 նաք մահաբերին։ Նովաւ օրհնեմք [5]զՏէրն եւ զՀայր. եւ նովաւ անիծանեմք զմարդիկ որ ըստ նմանութեան
10 Աստուծոյ արարան։ Ի նմին բերանոյ ելանեն օրհնութիւնք եւ անէծք. ոչ է պարտ, եղբարք իմ, այսմ այսպէս լի-
11 նել։ Միթէ աղբեւր անդամին ի միոյ
12 ականէ բղխիցէ՞ քաղցր եւ դառն։ Միթէ մա՞րթ ինչ իցէ, եղբարք իմ, թզենւոյ ձէթ բերել, կամ որթոյ թուզ, [6]եւ ոչ աղտաղտին տեղւոյ ջուր քաղցր առնել՞։
13 Բբ. Ո՞վ իցէ իմաստուն եւ հանճարեղ ի ձեզ, ցուցցէ ի բարւոք գնացից զգործս իւր հեզութեամբ իմաստու-
14 թեան։ Ապա եթէ նախանձ եւ դառնութիւն եւ հակառակութիւն ունիցիք ի սիրտս ձեր, մի՛ պարծիք սուտ
15 առնել զճշմարտութիւնն։ Ոչ է իմաստութիւնս այս իջեալ ի վերուստ, այլ՝
16 երկրաւոր, չնչաւոր եւ դիւական։ Զի ուր հեւ եւ նախանձ, անդ է անկարգ-
17 դութիւն եւ ամենայն իրք չարք։ Իսկ վերին իմաստութիւնն նախ զի սուրբ է, եւ ապա խաղաղարար, հեղ, գիւրահաւան, լի ողորմութեամբ եւ պտղովք բարեաց, անխիղճ, առանց

[1] Բաղմ.՝ մեռեալ
[2] ի Յոան. պատ.
[3] կամ՝ աշխարհ
[4] Յոյն., ի գեհենի
[5] Ոմն., զԱստուած
[6] Ոմն., նոյնպէս և ոչ իմիք աղբեր ջուր քաղցր և աղտաղտին առնել

18 կեղծաւորութեան։ Պատուղ արդարու-
թեան խաղաղութեամբ սերմանի այ-
նոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն։

Գլ· Դ

1 Ո՞ւստի՞ պատերազմունք, եւ ուստի՞
կռիւք ի ձեզ. ո՞չ յայդպիսի ցանկու-
թեանց ձերոց որ զօրացեալ են յան-
2 դամս ձեր։ Ցանկայք, եւ ոչ ունիք.
սպանանէք եւ նախանձիք, եւ ոչ կա-
րէք հասանել. պատերազմիք, կռուիք,
եւ ոչ ունիք, վասն զի ոչ խնդրէք.
3 Խնդրէք եւ ոչ առնուք, վասն զի չա-
րաչար խնդրէք. զի անդէն ի ցանկու-
4 թիւնս ձեր մաչեսջիք։ Շնացողք, ո՞չ
գիտէք զի սէր աշխարհիս թշնամու-
թիւն է առ Աստուած. զի որ ոք կա-
միցի սիրել զաշխարհ, թշնամի առնէ
5 զանձն Աստուծոյ։ Կամ թէ վայրապա՞ր
համարիցիք զոր ասէ Գիրն, [1]Առ նա-
խանձ ինչ որում փափաքէ հոգին՞ որ
6 բնակեաց ի մեզ. [2]Տալ զառաւել չը-
նորհն՞։ վասն որոյ ասէ, Տէր ամ-
բարտաւանից հակառակ կայ, տայ
չնորհս խոնարհաց։
7 ԲԳ· Հնազանդեցարուք այսուհետեւ
Աստուծոյ. եւ կացէք հակառակ չա-
րախօսին, եւ լիցի փախստական առ
8 ի ձէնջ։ Մերձեցարուք առ Աստուած,
եւ մերձեսցի առ ձեզ. սրբեցէք զձեռս,
մեղաւորք, եւ ուղիղ արարէք զսիրտս,
9 երկմիտք. Տառապեցարուք, սգացա-
րուք եւ լացէք. Ծաղր ձեր ի սուգ
դարձցի, եւ ուրախութիւն ձեր՝ ի
10 տրտմութիւն։ Խոնարհեցարուք առա-
ջի Տեառն եւ բարձրացուսցէ զձեզ։
11 Մի՛ բամբասէք զմիմեանս, եղբարք.
որ բամբասէ զեղբայր իւր կամ դատի
զեղբայր իւր՝ զօրէնսն բամբասէ եւ
զօրէնսն դատի. իսկ եթէ զօրէնսն
դատիցիս, ոչ առնելի օրինացն ես, այլ՝
12 դատաւոր։ Մի է Օրէնսդիր [3]եւ Դա-
տաւոր՞, որ կարօղ է փրկել եւ կորու-
սանել. դու ո՞ ես որ դատիս զընկերն։
13 Ահաւասիկ են որ ասեն, Այսօր եւ
վաղիւ երթիցուք յայս անուն քաղաք,
եղիցուք անդ տարի մի, վաճառեսցուք
14 եւ չահեսցուք. Որք ոչ գիտէք զվա-
15 ղիւն. Որպիսի՞ ինչ իցեն կեանք ձեր,
զի իբրեւ զմրրիկ էք, որ առ սակաւ
մի երեւեալ՝ եւ ապա ապականեալ.
փոխանակ զի ասէիք, Եթէ Տէր կա-
մեսցի, եւ կեցցուք, արասցուք զայս
16 ինչ կամ զայն։ Եւ արդ պարծիք յամ-
բարտաւանութեան ձերում. ամենայն
17 ինչ այսպիսի պարծանք չարութեան
են։ Որ ոք գիտիցէ զբարին եւ ոչ
առնիցէ, մեղք են նմա։

Գլ· Ե

1 ԲԴ· Արդ այսուհետեւ, մեծատունք,
լացէք եւ ողբացէք ի վերայ թշուա-
ռութեանցն, որ գալոց են ի վերայ ձեր։
2 Զի մեծութիւնդ ձեր յոչինչ է, եւ
3 հանդերձք ձեր՝ կերակուր ցեցոյ։ Եւ
արծաթ ձեր եւ ոսկի ժանգահար, եւ
ժանգ նոցա լիցի ձեզ ի վկայութիւն,
եւ կերիցէ զմարմինս ձեր իբրեւ զհուր.
4 զանձեցէք աւուրսն յետնոց։ Ահաւա-
սիկ վարձք մշակաց որ զործեն զանդս
ձեր, [4]առ ձեզ են,՞ զրկեալն ի ձէնջ,
աղաղակէ, եւ բողոք հնձողացն եհաս
5 յականջս Տեառն զօրութեանց։ Փափ-
կացայք ի վերայ երկրի եւ զբօսայք,
սնուցէք զսիրտս ձեր իբրեւ աւուր
6 սպանման։ Զրկեցէք, սպանէք զար-
դարն, որ ոչ կայր ձեզ հակառակ։
7 Երկայնամիտ լերուք, եղբարք իմ,
մինչեւ ի գալուստն Տեառն. ահա մշակ
երկայնամտեալ սպասէ պատուական
պտղոյն երկրի, մինչեւ առցէ [5]զկա-
8 նուխ եւ զանագան՞։ Երկայնամտեցէք
եւ դուք, հաստատեցէք զսիրտս ձեր.
9 զի գալուստն Տեառն մերձեալ է։ Մի՛
[6]տրտմեցուցանէք զմիմեանս՞, եղբարք,
զի մի՛ դատիցիք. ահաւասիկ Դատա-
10 ւարն առ դրան կայ։ Օրինակ առէք,
եղբարք, չարչարանաց եւ երկայն-
մտութեան զմարգարէսն որ խօսեցան
11 յանուն Տեառն։ Ահաւասիկ երա-
նեմք համբերողաց. զհամբերութիւնն
Յովբայ լուարուք, եւ զկատարումն
Տեառն տեսէք, զի բազմագութ է Տէր
եւ ողորմած։

---

[1] Յ-ոյն, Առ նախանձ ինչ փափաքէ հոգին. կամ, Առ նախա՞նձ ինչ փափաքիցէ հոգին
[2] Յ-ոյն, Այլ տայ առաւել չնորհս
[3] Յ-ոյն պակաս

[4] ի Յ-ակէն պակաս
[5] Ոմն, զպտուղն զկանուխ և զանագան. այլ, զանձրեւն զկանուխ և զանագան
[6] Յ-ոյն, լինիք տրտունջ զմիմեանց

12 ԲԵ. Ցառաջ քան զամենայն ինչ, եղբարք իմ, մի՛ երդնուցուք, մի՛ յերկինս, մի՛ յերկիր, մի՛ յայլ ինչ երդումն, այլ եղիցի ձեր այն՝ այո, եւ ոչն՝ ոչ, զի մի՛ [1]ի կեղծաւորութիւն
13 ինչ՞ անկանիցիք: Վշտանայցէ՞ ոք ի ձէնջ, յաղօթս կացցէ. բերկրիցի՞ ոք,
14 սաղմոս ասասցէ: Հիւանդանայցէ՞ ոք ի ձէնջ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն, եւ արասցեն ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն.
15 Եւ աղօթքն հաւատովք փրկեսցեն զաչխատեալն, եւ յարուսցէ զնա Տէր. եւ եթէ մեղս ինչ իցէ գործեալ, թողցի
16 նմա: Խոստովան եղերուք միմեանց զմեղս, եւ աղօթս արարէք ի վերայ միմեանց որպէս զի բժշկեսջիք. քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոյ
17 յօդնականութիւն: Եղիա մարդ էր նմանակից մեզ չարչարելի. եւ յաղօթս [2]եկաց, եւ ոչ տեղաց յերկիր զերիս
18 ամս եւ զվեց ամիս: Եւ դարձեալ եկաց յաղօթս, եւ եռուն երկինք տուաբեր, եւ բուսոյց երկիր զպտուղ իւր:
19 Եղբարք իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորեսցի [3]ի ճանապարհէ ճշմարտութեան",
20 եւ դարձուսցէ ոք զնա, Գիտասցէ զի որ դարձուսցէ զմեղաւորն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի [4]իւր ի մահուանէ եւ ծածկեսցէ զբազմութիւն մեղաց:

[5]ԹՈՒՂԹ
ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՋԻՆ"

ԳԼՈՒԽ Ա

1 ԲՋ. ՊԵՏՐՈՍ, առաքեալ Յիսուսի Քրիստոսի, ընտրելոցդ՝ ուժգնից որ ի սիւրեա Պոնտացւոց, Գաղատացւոց եւ Կապադովկեցւոց եւ Ասիացւոց եւ
2 Բիւթանացւոց, Ըստ կանխագիտութեան Աստուծոյ Հօր, սրբութեամբ Հոգւոյն, ի հնազանդութիւն եւ ի հեղումն արեանն Յիսուսի Քրիստոսի. Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն բազմասցի:
3 Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի ի
4 մեռելոց, Ցանեղծ եւ յանարատ եւ յանթառամ ժառանգութիւնն որ պահեալ է յերկինս ձեզ,
5 Որ զօրութեամբն Աստուծոյ պահեալ [6]էք հաւատովք ի պատրաստեալ փրկութիւնն, յայտնել
6 ի յետին ժամանակս. Որով ուրախ լինիջիք որք այժմ սակաւիկ ինչ ըստ պատշաճի լրացեալ տրտմեալ էք ի պէս-
7 պէս փորձութիւնս. Զի հանդէս ձերոց հաւատոցն [7]առաւել քան զոսկի կորստական պատուականն է, որ հրով փորձեալ գտաւ" ի գովութիւն եւ ի փառս եւ ի պատիւ ի յայտնութեանն
8 Յիսուսի Քրիստոսի, Զոր ոչն տեսէք եւ [8]սիրեցէք, ընդ որ այժմ ոչ հայեցեալք բայց [9]հաւատացէք, եւ ուրախ էք անճառ եւ փառաւորեալ խնդութ-
9 թեամբն. Ընկալեալ զկատարումն

[1] Յ՚ոյնն, ընդ գատաստանաւ
[2] Յ՚ոյնն, եկաց զի մի՛ տեղասցէ
[3] Որ՚ոնէ, ի ճշմարտութենէ
[4] ի Յ՚ոյնն պակասէ՝ Յ՚ոհնու՚ նորա
[5] Որ՚ոնէ, Թուղթ Պետրոսի Կաթողիկեայ Աստուածային. այլք՝ Թուղթ Պետրոսի Առաքելոյ Կաթողիկեայ Առաջին

[6] կա՚, էք
[7] Յ՚ոյնն, որ առաւել քան զոսկի կորստական, թէպէտեւ հրով փորձեալ, պատուական է, գտանիցի
[8] Յ՚ոյնն, սիրէք
[9] Յ՚ոյնն, հաւատայք

հաւատոցն ձերոց՝ զոգւոցն փրկու-
10 թիւն : Վասն որոյ փրկութեան խնդ-
րեցին եւ քննեցին մարգարէքն , որք
վասն որոյ ի ձեզ լինելոց էին շնորհքն՝
11 մարգարէանային . Քննէին յորում եւ
յորպիսի ժամանակի զուչակէր ի նո-
սա Հոգին Քրիստոսի , որ նախ զչար-
չարանացն Քրիստոսի վկայէր , եւ յետ
12 այնորիկ զփառացն : Որոց եւ յայտնե-
ցաւ իսկ զի ոչ ելիէ անձանց , այլ մեզ
մատակարարք լինէին նոցին , որք
այժմ պատմեցան այնոքիւք որ աւե-
տարանեցինն ձեզ Հոգւովն Սրբով , որ
առաքէրն յերկնից . զոր ցանկային տես-
անել [1]գոնեայ ընդ աղօտ՝ հրեշտակք :
13 Եէ. Որով պնդեալ զմէջս մտաց ձե-
րոց , զուարթայեալք , լրովանդակ սպաս-
ացէք հասելոց ձեզ չնորհացն ի յայտ-
14 նութեանն Յիսուսի Քրիստոսի , Իբրեւ
զորդիս հնազանդութեան , մի՛ կեր-
պարանեալք առաջին ձերովք անգի-
15 տութեանն ցանկութեամբք . Այլ ըստ
Սրբոյն որ կոչեաց զձեզ՝ եւ դուք
սուրբք յամենայն դնացս [1]ձեր լինիջիք :
16 Վասն որոյ գրեալ է եթէ Եղերուք
17 սուրբ , զի ես սուրբ եմ : Եւ եթէ Հայր
կոչիցէք զայն որ առանց ակնառու-
թեան դատի ըստ իւրաքանչիւր գոր-
ծոց , ապա երկիւղիւ զձերոյ պանդխ-
18 տութեան ժամանակդ դնասջիք : Գի-
տասջիք զի ոչ ապականացու արծա-
թեղինօք եւ ոսկեղինօքն փրկեցարուք
ի ձերոց ունայնութեան հայրենատուր
19 դնացիցն , Այլ պատուական արեամբն
Քրիստոսի , իբրեւ անբիծ եւ անարատ
20 գառին . Որ յառաջծանօթն էր նախ
քան զիսկզբանէ աչխարհի , եւ երե-
ւեցաւ ի վախճան ժամանակաց վասն
21 ձեր , Որք նովաւ հաւատացէք յԱս-
տուած որ յարոյց զնա ի մեռելոց , եւ
ետ նմա փառս . զի հաւատքն ձեր եւ
22 յոյս իցեն յԱստուած : Զանձինս ձեր
սրբել հնազանդութեամբ [2]ճշմարտու-
թեան , յեղբայրսիրութեան առանց
կեղծաւորութեան , ի սուրբ սրտէ սի-
23 րել սերտիւ զմիմեանս : Ծնեալք վե-
րըստին ոչ յապականութենէ սերմա-
նէն , այլ յանապականացուէն՝ կենդա-
նի եւ մշտնջենական բանիւն Աստու-
24 ծոյ : Քանզի ամենայն մարմին իբրեւ
զխոտ է , եւ ամենայն փառք մարդոյ
իբրեւ զծաղիկ խոտոյ . խոտն ցամա-
25 քեցաւ եւ ծաղիկն թօթափեցաւ . Եւ
բան Տեառն մնայ յաւիտեան , այսինքն
է բանն որ ի ձեզ աւետարանեցաւ :

Գլ. Բ

1 Գա. Ի բաց թօթափել այսուհետեւ
զամենայն չարութիւն եւ զամենայն
նենգութիւն եւ զկեղծաւորութիւնս
եւ զնախանձ եւ զամենայն չարախօ-
2 սութիւն , Իբրեւ զարդի ծնեալ ման-
կունս խօսուն եւ անխարդախ կա-
թինն փափաքիցէք , զի նովաւ աճիցէք
3 [3]ի փրկութիւն , Եթէ ճաչակիցէք զի
4 քաղցր է Տէր . Առ որ մատուցեալ ,
ի վէմն կենդանի , որ թէպէտ ի մարդ-
կանէ անարգեալ , այլ առ ի յԱստուա-
5 ծոյ ընտրեալ եւ պատուական է . Եւ
դուք իբրեւ զվէմս կենդանիս չինիք
տաճար հոգեւոր , յանարատ քահա-
նայութիւն , մատուցանել զհոգեւորն
պատարագս հաճոյ Աստուծոյ ի ձեռն
6 Յիսուսի Քրիստոսի : Քանզի կայ իսկ
ի գրի եթէ Ահաւասիկ դնեմ ի Սիովն
վէմ ընտիր , գլուխ անկեան պատուա-
կան , եւ որ ի նա հաւատասցէ՝ մի՛ ա-
7 մաչեսցէ : Ձեզ այսուհետեւ հաւատա-
ցելոցդ՝ [1]վէմ պատուական , իսկ անհա-
ւատիցն՝ վէմն զոր անարգեցին չի-
8 նողքն , նա եղեւ գլուխ անկեան . Եւ
վէմ գլորման եւ վէմ գայթակղու-
թեան , որ գայթակղին ապստամբեալք
9 ի բանէն յոր եւ եդան : Այլ դուք ազգ
է ընտիր , [4]թագաւորութիւն , քա-
հանայութիւն՝ , ազգ սուրբ , ժողո-
վուրդ սեպհական , որպէս զի [5]զձեր
առաքինութիւնսն նուիրիցէք այնմ ,
որ՝ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր
10 սքանչելի լոյսն : Որք երբեմն չժողո-
վուրդ , բայց արդ ժողովուրդ Աստու-
ծոյ . որք չողորմեալք , այժմ ողոր-
մութիւն դաէք :
11 Սիրելիք , աղաչեմ իբրեւ զպան-
դուխտս եւ զնժդեհս ի բաց մերժել ի
մարմնաւոր ցանկութեանցն որ դին-
12 ուորին ընդդէմ ոգւոց , Զվարս ձեր

[1] Ի ց՝՝ն պ՝՝ս
[2] Ոմն՝ , ճշմարտութեան ի ձեռն Հոգւոյն
[3] Ց՝՝ն պ՝՝ս
[4] Ց՝՝ն , թագաւորական քահանայութիւն
[5] Ց՝՝ն , յուցանիցէք զառաքինութիւնս այնո-
րիկ որ

ի մէջ հեթանոսաց պարկեշտս ցուցա-
նել, զի որով բամբասիցեն զձեզ իբրեւ
զչարագործս; ի բարւոք գործոցն ձե-
րոց դիտեալ՝ փառաւոր առնիցեն զԱս-
տուած յաւուրն այցելութեան։
13 ԳԲ. Հնազանդ լերուք ամենայն
մարդկեղէն սահմանադրութեան Տեառն,
եթէ թագաւորի՝ իբրեւ առաւել ու-
14 մէք, եթէ դատաւորաց՝ իբրեւ ի
նմանէ առաքելոց ի վրէժխնդրութիւն
չարագործացն եւ ի գովութիւն բարե-
15 գործացն։ Զի այսպէս են կամք Աս-
տուծոյ, բարեգործացն պապանձեցու-
ցանել զանգիտամարդոց զանգիտու-
16 թիւն. Իբրեւ զազատս լինել, եւ մի՛
իբրեւ պատրուակ չարութեան ունել
զազատութիւնն, այլ իբրեւ Աստուծոյ
17 ծառայք։ Զամենեսեան պատուեցէք.
զեղբայրսիրութիւն սիրեցէք. յԱս-
տուծոյ երկնրուք. [1]զթագաւորս
պատուեցէք։
18 Ծառայք հնազանդ լինել յամենայնի
երկիւղիւ տեառանց, ոչ միայն բարե-
բարոյն եւ հեզոցն, այլ եւ կամակո-
19 րոյն։ Զի այս՝ չնորհք [2]յԱստուծոյ են,
եթէ բարւոք ինչ մտօք տանիցի ոք
20 վշտաց՝ յանիրաւի։ Քանզի զի՞նչ [3]ե-
րախտիք իցեն, եթէ յորժամ մեղան-
չիցէք՝ տանջիցիք եւ համբերիցէք. այլ
եթէ բարիս գործիցէք, չարչարիցիք
եւ համբերիցէք, այն չնորհք [4]յԱս-
21 տուծոյ են։ Քանզի ի դոյն իսկ կո-
չեցարուք, զի եւ Քրիստոս վասն ձեր
[5]մեռաւ, եւ ձեզ եթող օրինակ՝ զի
22 զնմա երթայցէք հետոյ նորա. Որ ոչն
արար մեղս եւ ոչ գտաւ նենգութիւն
23 ի բերան նորա. Որ բամբասեալ, եւ
ոչ փոխարէն բամբասէր. չարչարեալ,
եւ ոչ պահէր սպառնալիս, բայց [6]ի-
24 րաւամբք մատնէր դատաւորին։ Որ
զմեր մեղս իւրով մարմնովն վերացոյց
ի խաչափայտն, զի լիցուք զերծեալք
ի մեղացն անտի, եւ իցեմք արդարու-
թեանն կենդանիք. որոյ վիրօքն բժշկե-
25 ցայք։ Քանզի էիք իբրեւ զոչխարս
մոլորեալս, այլ այժմ դարձարուք առ
Հովիւն եւ Տեսուչ ոգւոց ձերոց։

ԳԼ. Գ

1 ԳԳ. Նոյնպէս եւ կանայք հնազանդ
լինել արանց իւրեանց, զի եթէ իցեն
ոմանք ապստամբք ի բանէ անտի, յա-
ղագս կանանց զնացից եւ առանց բանի
2 իսկ չահեսցին, Դիտեալ [7]երկիւղիւ զձեր
3 պարկեշտ գնացս, Որոց լինիցի ոչ ար-
տաքուստ հիւսիւք եւ ոսկեհուռ ծա-
մակալօք կամ պաճուճեալ զգեստուք
4 զարդ. Այլ ծածուկ սրտին մարդն՝
անեղծութեամբ հեզութեան եւ հան-
դարտութեան հոգւոյն, որ է առաջի
5 Աստուծոյ բազմապատիկ։ Քանզի այս-
պէս երբեմն եւ [8]կանայք որ յուսա-
ցեալ էին յԱստուած՝ զարդարէին զան-
ձինս [9]հնազանդել իւրեանց արանց։
6 Որպէս եւ Սառա զի հնազանդ էր Աբ-
րահամու, եւ տէր իւր կոչէր զնա,
որոյ եղերուքն գուք որդիք, [10]բարե-
գործք էին եւ ոչ կասկածէին՝ եւ ոչ
ի մտօղէ ինչ երկիւղէ։
7 Նոյնպէս եւ արք իմաստութեամբ
բնակեսցին ընդ նոսա, իբրեւ տկար
անօթոյ առնիցին պատիւ կանանց,
իբրեւ ժառանգակցաց չնորհացն կե-
նաց, զի մի՛ խափան լիցին աղօթիցն
8 ձերոց։ Եւ զկնի ամենայնի՝ զի հա-
մամիտք լիցէք, համակարիք, եղբայ-
րասէրք, գթասիրտք, խոնարհք։
9 Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել,
կամ բամբասանս ընդ բամբասանաց.
այլ զնորին հակառակն օրհնել, զի
յայս իսկ կոչեցարուք, զի զօրհնու-
թիւնն ժառանգիցէք։
10 ԳԴ. Զի որ կամիցի զկեանս սիրել
եւ տեսանել աւուրս բարութեան,
լեցուսցէ զլեզու իւր ի չարութենէ,
եւ զչրթունս իւր ի չխօսելոյ զնեն-
11 դութիւն. Խոտորեսցի ի չարէ եւ ա-
րասցէ զբարի, խնդրեսցէ զխաղաղու-
12 թիւն եւ երթիցէ զետ նորա։ Զի աչք
Տեառն ի վերայ արդարոց, եւ ականջք
նորա՝ յաղօթս նոցա. երեսք Տեառն

---

[1] Յ՛ոյնն, զթագաւորն
[2] Յ՛ոյնն, են, եթէ խղճիւ առ Աստուած տանիցի ոք վշտաց զոր կրիցէ
[3] Յ՛ոյնն, պարծանք
[4] Յ՛ոյնն, են առ Աստուծոյ
[5] Ո՛րք՝, չարչարեցաւ
[6] Յ՛ոյնն, յանձն առնէր զանձն որում դատէն իրաւամբք
[7] Յ՛ոյնն, զձեր երկիւղիւ
[8] Յ՛ոյնն, սուրբ կանայք
[9] Այ՛ոլիս՝ հնազանդեալ
[10] Յ՛ոյնն, եթէ բարեգործք լինիցիք, և ոչ կասկածիցիք

13 ի վերայ չարագործաց։ Եւ ո՞ իցէ որ
չարչարիցէ զձեզ, եթէ դուք բարւոյն
14 նախանձաւորք լինիցիք։ Այլ թէ եւ
չարչարիցիք եւս յազգս արդարու-
թեան, երանելի էք. բայց յերկիւղէ
նոցա մի՛ երկնչիցիք եւ մի՛ խռովեաս-
15 ջիք։ Այլ գՏէր, [1]զնոյն զՔրիստոս՝
սուրբ առնիջիք ի սիրտս ձեր. պատ-
րաստ իցէք տալ պատասխանի ամե-
նայնի որ խնդրիցէ զքանն՝ որ է վասն
յուսոյն ձերոյ, [2]այլ հեզութեամբ եւ
16 երկիւղիւ. Ունիցիք բարս քաղցունս,
զի որով չարախօսիցեն զձէնջ[3] յամօթ
լիցին որք բամբասանս զձեր բարւոյ
17 գնացս ի Քրիստոս։ Զի [4]լաւ է բարե-
գործել, եթէ կամիցին ըստ Աստու-
ծոյ կամացն չարչարել, քան չարա-
18 գործացն՝։ Զի եւ Քրիստոս մի անգամ
վասն մեղաց ի վերայ մեր [5]մեռաւ,
արդարն ի վերայ անարդարոց, զի զմեզ
մերձեցուսցէ առ Աստուած. զի թէ-
պէտեւ մեռաւ մարմնով, այլ կենդա-
19 նի է հոգւով. Որով եւ ոգւոյն որ
էին ի բանտին՝ երթեալ քարոզեաց.
20 Երբեմն ապստամբելոցն, յորժամ նե-
րէր նոցա Աստուծոյ երկայնմտու-
թիւնն յաւուրս Նոյի յորս տապանն
կազմէր, [6]յորս նուազունք, այսինքն
ոգիք իրրեւ ութ, ապրեցան ի ջրոյն.
21 Որ եւ [7]զձեզ ըստ նմին օրինակի կե-
ցուսցէ մկրտութիւնն, (ոչ զմարմնոյ
աղտն ի բաց ընկենուլ, այլ զբարւոք
մտաց հանդէս առ Աստուած,) ի ձեռն
22 յարութեան Յիսուսի Քրիստոսի. Որ է
ընդ աջմէ Աստուծոյ, երթեալ յերկինս,
ի հնազանդել նմա հրեշտակաց եւ իշ-
խանութեանց եւ զօրութեանց։

Գլ. Դ

1 Գե. [8]Քրիստոսի չարչարեալն՝ մարմնով
վասն մեր, եւ դուք ի նոյն միտս վա-
ռեցարուք. զի որ չարչարի մարմնով,
2 դադարէ ի մեղաց. Զի մի՛ եւս ըստ
մարդկան ցանկութեանց, այլ ըստ
կամացն Աստուծոյ [9]կեցցէ զայլ եւս
3 ժամանակն։ Բաւական [10]է անցեալ ժամանակն՝ լինելոյ կամացն
հեթանոսաց, [11]որք գնային՝ գիշե-
ցութեամբք, ցանկութեամբք, գինեհա-
րութեամբք, անառակութեամբք, սր-
բեցութեամբք, անօրէն կռապաշտու-
4 թեամբք։ [12]Որով օտարացեալք՝ ոչ
ընդ ձեզ վարին՝ ի նոյն անկարգու-
թեան զեղխութիւն, եւ հայհոյեն։ Որ
տացեն պատասխանի այնմ որ ի պատ-
րաստին ունի դատել զկենդանիս եւ
6 զմեռեալս։ Զի ի սոյն իսկ եւ մեռելոց
խոստացեալ է, զի դատեսցին ըստ
մարդկան մարմնով եւ կենդանի լիցին
ըստ Աստուծոյ հոգւով։
7 Ամենեցունն վախճան մերձեալ է.
զգաստացարուք այսուհետեւ եւ լե-
8 րուք զուարթունք յաղօթս։ Նախ քան
զամենայն սէր սերտ ունել ընդ միմ-
եանս. զի սէր ծածկէ զբազմութիւն
9 մեղաց։ Օտարասէրք լինել ընդ միմ-
10 եանս առանց տրտնջելոյ։ Իւրաքան-
չիւր ոք որպէս եւ ընկալաւ չնորհս
ինչ, ի միմեանս զնոյն մատակարարել
իբրեւ զբարւոք հազարապետս սկսպէս
11 չնորհացն Աստուծոյ։ Եթէ ոք խօսիցի,
իբրեւ զԱստուծոյ պատգամս. եթէ ոք
մատակարարիցէ, իբրեւ ի զօրութենէ
զոր չնորհէ Աստուած. զի յամենայնի
փառաւորեսցի Աստուած ի ձեռն Յի-
սուսի Քրիստոսի. որում փառք եւ
զօրութիւն յաւիտեանս յաւիտենից։
Ամէն։
12 ԳԶ. Սիրելիք, մի՛ օտարոտի համա-
րիլ զեռանդն լինչ որ ի փորձութիւն
ձեզ լինիցի, որպէս թէ օտար լինչ իրք
13 ձեզ դիպիցին. Այլ իբրեւ հաղորդեալք
Քրիստոսի չարչարանացն ուրախ լի-
նիջիք, զի եւ ի յայտնութեան փառացն
14 նորա ցնծացեալք բերկրեսջիք։ Իսկ
եթէ նախատիիք եւս վասն անուանն
Քրիստոսի, երանելի էք. զի փառացն
[2]եւ զօրութեան՝ [13]անուն եւ Աստուծոյ

---

[1]Որ՝ն՝, զԱստուած։
[2]Յ՝ոհ՝ն պ՝ետ՝ոս
[3]Որ՝ն՝ յ՝ոե՛լ՝ն՝, իբրեւ զչարագործս
[4]Յ՝ոյն՝, լաւ է բարիս գործեալ, եթէ կամք իցեն
Աստուծոյ, չարչարել, քան չար գործեալ
[5]Բ՝ռ՝ս՝տ՝, չարչարեցաւ
[6]Յ՝ոյն՝, յորում
[7]Որ՝ն՝, զմեզ այժմ
[8]կ՝ա՛, եւ զի Քրիստոս չարչարեցաւ

[9]Յ՝ոյն՝, կեցցէ ի մարմնի
[10]Որ՝ն՝, բաւական է մեզ անցեալ ժամանակն
կենաց
[11]կ՝ա՛, որ գնայաք
[12]Յ՝ոյն՝, Զոյն իմն օտարոտի համարին զի ոչ
վարիք ընդ նոսա
[13]ի Յ՝ո՛ւն պ՝ետ՝ոս

15 Հոգին ի վերայ ձեր հանգուցեալ է[1]։ Մի՛
ոք ի ձէնջ չարչարեսցի իբրեւ դպա-
նող, կամ իբրեւ զգող, կամ իբրեւ
գչարադործ, կամ իբրեւ զօտարատե-
16 սուչ։ Այլ եթէ իբրեւ քրիստոնեայ՝
մի՛ ամաչեսցէ, այլ փառաւոր առնիցէ
17 զԱստուած [2]անուամբս այսուիկ։ Զի
ժամանակ է սկիզբն լինելոյ դատաս-
տանին ի տանէն Աստուծոյ. զի եթէ
նախ ի մէնջ, իսկ զի՞նչ կատարած իցէ
այնոցիկ որ ոչ հաւանեցան Աստուծոյ
18 աւետարանին։ Եւ եթէ արդարն հա-
զիւ կեցցէ, իսկ ամբարիշտն եւ մե-
19 ղաւորն ո՞ւր գտանիցի։ Որպէս զի որ
չարչարիցին ըստ Աստուծոյ կամացն՝
հաւատարիմ Հաստչին աւանդեսցեն
զիւրեանց ոգիս բարերարութեամբք։

Գլ. Ե

1 Գէ. [3]Զերիցունս այսուհետեւ աղա-
չեմ, իբրեւ զերիցակից եւ վկայ չար-
չարանացն Քրիստոսի, որ եւ հանդեր-
2 ձեալ փառացն յայտնելոյ հաղորդ. Ա-
րածեցէք՝որ ի ձեզ հօտ է Աստուծոյ,
վերակացու լինել մի՛ իբրեւ ակամայ,
այլ կամաւ [4]ըստ Աստուծոյ՝. մի՛ զօ-
չաքաղութեամբ, այլ յօժարութեամբ.
3 Մի՛ իբրեւ տիրելով վիճակացն, այլ
4 լինել օրինակ հօտին. Զի յերեւել Հով-
ուապետին ընդունիջիք զանթառամ
փառաց պսակն։
5 Սոյնպէս եւ, երիտասարդք, հնա-
զանդ լերուք ծերոց. ամենեքին ընդ
միմեանս զխոնարհութիւն ունիջիք.
զի Աստուած ամբարտաւանից հակա-
ռակ կայ, տայ չնորհս խոնարհաց։
6 Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն
Աստուծոյ, զի զձեզ բարձրացուսցէ
7 ի ժամանակի։ Զամենայն հոգս ձեր
ընկեցէք ի նա, զի նա է որ հոգայ
վասն ձեր։
8 Դա. Արթուն լերուք, հսկեցէք, զի
ոսոխն ձեր Սատանայ իբրեւ զառիւծ
գոչէ, չրջի եւ խնդրէ թէ զո՛ կլանիցէ։
9 Որում ի դիմի հարկանիցիք հաստա-
տեալք հաւատովք. գիտասջիք զնոյն
անցս չարչարանաց եղբայրութեան ձե-
րոյ յաչխարհի յանձինս կատարեալ։
10 Եւ Աստուած ամենայն չնորհաց որ
կոչեաց [5]զձեզ յիւր ի յաւիտենական
ի փառն Քրիստոսիս Յիսուսիս, ո-
րում փոքր մի եղերուք չարչարակիցք,
նա կազդուրեցուսցէ, կարողացուսցէ,
11 հաստատիսին [6]արասցէ։ Նմա իշխանու-
թիւն եւ փառք յաւիտեանս։ Ամէն։
12 Ի ձեռն Սիղուանոսի հաւատարիմ
եղբօր, որպէս կարծեմ, փոքր ի չատէ
դրեցի ձեզ՝ մխիթարել եւ ի վերայ սո-
րին վկայել, զի եւ այս ճշմարիտ
չնորհք յԱստուծոյ են յոր հաստատեալ
13 կայցէք։ Ողջոյն տայ ձեզ որ ի Բաբե-
լոն ընտրեալիցն [7]եկեղեցի է, եւ
14 Մարկոս որդի իմ։ Ողջոյն տայջիք մի-
մեանց ի համբոյր [8]սիրոյ։ Խա-
ղաղութիւն ընդ ձեզ ամենեսեան, որ
էք ի Քրիստոս Յիսուս։ Ամէն։

---

[1] Ոմն. յաւելուն, Թէպէտ և ի նոցանէ հայհոյի, այլ ի ձէնջ փառաւորի
[2] Ոմն. յայսմ մասին
[3] Ցայն, Զերիցունս որ ի ձեզ
[4] Ցոմանս պակաս
[5] Ոմն. զմեզ
[6] Ոմն. արասցէ զձեզ
[7] Ի Բաբելոն պակաս
[8] Ցայն, սիրոյ

ԹՈՒՂԹ

ՊԵՏՐՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա

ԴԲ· **Շմաւիոն** Պետրոս, ծառայ եւ առաքեալ Յիսուսի Քրիստոսի, որոց հանդիսացաք մեզ հասեալ հաւատոց յարգարութիւն Աստուծոյ մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի.
2 Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն բազմասցի գիտութեամբն Աստուծոյ եւ Յիսուսի [1]Քրիստոսի Տեառն մերոյ·
3 Որպէս ամենայն ինչ մեզ իւրոյ աստուածեղէն զօրութեանն առ ի կեանս եւ յաստուածպաշտութիւն չնորհեալ ի ձեռն գիտութեան այնորիկ, որ կոչեացն զմեզ [2]յիւր ի փառսն եւ ի վայելչութիւնն·
4 Որով՛ք մեծամեծքն եւ պատուականն աւետիք պարգեւեալ են մեզ, զի նոքիմբք աստուածեղէն բնութեանն լինիցիք հաղորդակիցք, փախուցեալք [3]ի ցանկութեանց աշխարհիս
5 եւ յապականութեանց՝: Եւ սմին այսմիկ զամենայն փոյթ ի մէջ առեալ՝ ձերովքն հաւատովք մատակարարեսջիք զառաքինութիւն, եւ առաքինութեանն զգիտութիւն,
6 Եւ զիտութեանն զժուժկալութիւն, եւ ժուժկալութեանն զհամբերութիւն, եւ համբերութեանն զաստուածպաշտութիւն,
7 Եւ աստուածպաշտութեանն զեղբայրսիրութիւն, եւ եղբայրսիրութեանն զսէր:
8 Զայսոսիկ ձեր յանձին կալեալ եւ ի սոյն յաճախեալ՝ ոչ դատարկս եւ անպտուղս հաստատիցեն զձեզ ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտութիւնն:
9 Իսկ որ ոչն իցեն սոքա մերձ՝ կոյր է եւ զաչացուց. ի մոռացօնս զարձուցեալ զսրբութիւն
10 առաջնոց իւրոցն յանցանաց: Վասն որոյ, եղբարք, առաւել փութասջիք զի [1]բարեացն գործովք՝ հաստատուն զձեր կոչումն եւ զընտրութիւն պահիցէք. զայս արարեալ՝ ոչ երբեք յանցանիցէք.
11 Զի այսպէս առատասցէս չնորհեսցի ձեզ մուտ ի յաւիտենական արքայութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:
12 Դգ· Որով պատրաստ իցեմ միշտ ձեզ յիշեցուցանել վասն սոցին, առաւել եւս՝ զիտակացն եւ հաստատելոցն ճշմարտութեանն:
13 Եալ հասեալ ճշմարտութեանն: Քանզի իրաւունս համարիմ, մինչզեռ եմ ի մարմնի սմա, զարթուցանել զձեզ յիշատակօք:
14 Գիտեմ թէ վաղվաղակի է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս, որպէս եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս
15 եցոյց ինձ: Եւ փութամ ճեպիմ միշտ [4]զձեզ յորդորել՝, զի եւ յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս առնիցէք զյիշատակս այսոցիկ:
16 Քանզի ոչ երբէք պաճուճեալ ինչ առասպելաց զհետ երթեալ ցուցաք ձեզ զՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զզօրութիւն եւ զգալուստան, այլ [4]մեզէն եղեալ ականատեսք նորա
17 մեծութեանն: Քանզի առեալ Աստուծոյ Հօրէ զփառս եւ զպատիւ, ձեկեալ յայնպիսի բարբառոյ ի մեծվայելչութեան փառաց անտի, եթէ Դա է Որդի
18 իմ սիրելի ընդ որ ես հաճեցայ: Եւ զայս բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկնից որ ընդ նմա իսկ էաք ի սուրբ
19 լերինն: Եւ ունիմք հաստատագոյն զպատգամն մարգարէական, որում եթէ անսայցէք, բարւոք առնէք, իբրեւ ճրագի որ տայցէ լոյս ի խաւարչային

---

[1] Ի բազում պատմ.
[2] Ոմանք, փառաւք և զօրութեամբ
[3] Ոմանք, յապականութենէ որ յաշխարհի ցանկութեամբ

[4] Ի ցոնին պատմ.

տեղւոջ, մինչեւ արեւն լուսաւորեսցէ եւ արուսեակն ծագեսցէ ի սիրտս ձեր։
20 ԴՊ. Բայց նախ այսմ գիտակ լինիջիք, զի ամենայն մարգարէութիւն
21 իւրոց դրոց լուծումն ոչ ունի։ Քանզի ոչ երբէք բոնամտ մարդկան տուաւ մարգարէութիւն երբեք, այլ ի Հոգւոյն Սրբոյ կրեալք՝ խօսեցան [1]մարդիկ Աստուծոյ։

ԳԼ. Բ

1 Եղեն եւ սուտ մարգարէք ի ժողովրդեանն, որպէս եւ այժմ ի ձեզ լինիցին սուտ վարդապետք, որք սպրդեալ մուծանեն հերձուածս կորստեան, եւ
2 զտէր զնեցեալ զնոսա՝ ուրացեալ, ածեն ի վերայ անձանց զարագահան կորուստ։ Եւ բազումք անկեալ երթիցեն զհետ նոցա անառակութեանցն, վասն որոյ ճշմարտութեանն ճանապարհ
3 հայհոյիցի։ Եւ ագահութեամբ մուրացածին բանիւք առնիցեն զձեզ վաճառանդիս. որոց դատաստանն ի բնէ ոչ դատարկանայ, եւ կորուստն նոցա ոչ նիրհէ։
4 Զի եթէ ի հրեշտակսն յանցուցեալսն Աստուած ոչ խնայեաց, այլ խաւարին կապանօք արկեալ ի տարտարոսն՝ ետ
5 պահել ի դատաստան. Նա՝ եւ ոչ ի սկզբանն աշխարհի խնայեաց. բայց զութերորդն զՆոյ, զարդարութեանն քարոզ, պահեաց ի ջրհեղեղ աշխարհի
6 ամբարչտելոցն ածեալ. Եւ զքաղաքս Սոդոմացւոցն եւ Գոմորացւոց դարձուցեալ յաճիւն՝ դատեցաւ, օրինակ առ յապայ ամբարչտելոցն կացուցա-
7 նէր։ Եւ զարդարն զՂովտ ձանձրացեալ յանկարգ գիջութեան դնացից՝
8 փրկեաց. Քանզի ականատես եւ ականջալուր արդարն բնակեալ ի մէջ նոցա, օր ըստ օրէ զհոգի սուրբ ոգիսն նոցա անօրէն գնացիւքն տանջէր։
9 ԴԵ. Գիտէ Տէր զաստուածապաշտս փրկել ի փորձութենէ, եւ զանիրաւս պահել ի տանջանս աւուրն դատաս-
10 տանի։ Մանաւանդ որ զհետ մարմնոյ պղծալից ցանկութեանց իցեն երթեալ, արհամարհողք տէրութեանն, ժպիրկք, յանդգնութեամբ, չզանգիտին զփառսն հայ-
11 հոյել. Ուր հրեշտակք զօրութեամբ եւ կարողութեամբ քան զնոսա մեծամեծք չածեն զնոքօք ի Տեառնէ
12 զհայհոյութեանն դատաստան։ Այլ սոքա իբրեւ զանխօս անասունս ըստ բնածին բարուցն յեղծումն եւ յապականութիւն, որոց չենն գիտակ՝ հայհոյեն, յապականութեան իւրեանց [3]եւ
13 ապականեսցին, Տանջեալք ի վարձուցն՝ անիրաւութեան. որ ցանկութիւն զաւուրն փափկութիւն համարին. բծկանք, արատաւորք, փափկացեալք ի պատիրս իւրեանց՝ լինել
14 ձեզ խրախճանակիցք. Աչս ունին հանդոյս պոռնկաց, անդադարս ի մեղաց, պատրեն զանձինս յողողդայ. որ ուսին սիրտ հարեալ դադահութեան,
15 մանկունք անիծից։ Թողեալ զուղղորդ ճանապարհն՝ մոլորեցան, զհետ երթեալ ճանապարհին Բաղաամայ Բէովրեան՝ [4]զվարձս անիրաւութեան սիրեցին՝.
16 Որ կշտամբանս իւրոյ անօրէնութեանն [5]առաջաւ զէշն անխօսուն. մարդկեղէն՝ բարբառովն բարբառեալ՝ արգել
17 զմարգարէին [6]զանօրէնութիւնն։ Աչսպիսիքն են աղբեւրք անջրդիք եւ մէգք վարեալք ի մրրկէ, որոց աղջամուղջք խաւարին յաւիտեան պահեալ կան։
18 Քանզի մեծաբանս մնոտեայ բարբառեալ պատրեն զիջութեամբք, ցանկութեամբք մարմնոյ զայնոսիկ՝ որ ստոյգն փախչիցին յայնցանէ՝ որ ի մոլորութեանն չրջիցին. Նոցա աղատութիւն խոստանան, եւ ինքեանք ապականութեանն ծառայք են. զի որով իւիք եւ
20 յաղթիցի ոք, նորին եւ ծառայ է։ Զի եթէ փախուցեալք ի պղծութեանց աշխարհի՝ գիտութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, եւ դարձեալ ընդ նոյնս չաղեալք պատիցին, եղեւ նոցա վախճանն չար քան զա-
21 ռաջինն։ Զի լաւ էր նոցա եթէ ընաւ իսկ չէր ծանուցեալ զարդարութեանն ճանապարհ, քան, զի ծանեան եւ յետս կացին ի սուրբ պատուիրանէն որ նո-
22 ցա աւանդեցաւ։ Նկեալ ի դէպ նոցա ճշմարիտ առակին զգօնութեան, եթէ Շուն դառնայ անդրէն ի փսխած իւր, եւ խոզ լուացեալ՝ ընդ տիղմ թաւալեալ։

[1]Ոմն, մարդիկ սուրբք Աստուծոյ [2]Յոյն, որ

[3]գնեացն գնոսա զՏէրն [3]Բազմ, ապականեացին, (13) Ընկալեալք վարձս [4]Բազմ, որ զվարձս անիրաւութեան սիրեաց [5]Յոյն, առաջաւ. էշն անխօսուն մարդկեղէն [6]Յոյն, զանմտութիւնն

Գլ· Գ

1 Դշ· Զայս [1]ձեզ, սիրելիք, երկրորդ
թուղթ գրեմ, ուրով զարթուցից ի յի-
2 շատակ զհաստատուն միտս ձեր, Ցի-
չել զյառաջադոյն ասացեալ պատգամս
ի սրբոց մարգարէից եւ յառաքելոցն
ձերոց, զպատուէրս Տեառն եւ Փրկչին
3 Բայց զայս նախ գիտասջիք, զի յա-
ւուրս յետինս եկեսցեն արհամարհոզք,
այպանոզք, որ ըստ իւրեանց ցան-
4 կութեանցն գնայցեն· Եւ ասիցեն,
Ո՞ւր են աւետիք գալստեան նորա·
զի յորմէ հետէ հարքն ննջեցին, ամե-
նայն ինչ նոյնպէս կայ սկիզբանէ
5 արարածոց: Եւ զայն մոռացեալ իցէ
նոցա, որք զայսն կամին, եթէ եր-
կինք եղեն ի սկզբանէ, եւ երկիր ի
ջրոց եւ [2]ջուրք հաստատեալ կան բա-
6 նիւն Աստուծոյ· վասն որոյ երբեմն
աշխարհ ջրհեղեղաւ ապականեալ կոր-
7 եաւ: Եւ այժմ երկինքն եւ երկիր նո-
ւին բանիւ գանձեալ են, հրոյ պահ-
եալք յօրն դատաստանի եւ կորստեան
8 ամբարիշտ մարդկան: Եւ այս եւս մի'
լիցի ի ձէնջ ծածկեալ, սիրելիք, զի
մի օր Տեառն իբրեւ զհազար ամ է,
9 եւ հազար ամ՝ իբրեւ զմի օր: Ոչ յա-
մեցուսցէ Տէր զաւետիսն, որպէս ո-
մանք յամր համարին, այլ երկայնա-
միտ լինի առ [3]ձեզ· քանզի ոչ կամի
եթէ ոք կորիցէ, այլ զամենեցուն հա-
սանել յապաշխարութիւն:
10 Դէ· Սակայ եկեսցէ օր Տեառն իբրեւ
[4]զգող, յորում երկինք տագնապաւ
անցցեն, եւ բնութիւնք հրով կիզեալ
լուծցին, եւ երկիր եւ որ միանգամ
11 ի նմա գործք [5]գտանիցին: Եւ ի լու-
ծանել այսպէս այսր ամենայնի, որ-
պիսի՞ ինչ պարտ իցէ ձեզ գտանել,
այլ սուրբ եւ աստուածապաշտ կար-
12 գաւ ակն ունել եւ փութալ հասանել
գալստեան աւուրն Տեառն· յորում
երկինք հրայրեացք լուծանիցին, եւ
13 բնութիւնք հրգնեալ հալիցին: Նորոյ
երկնից եւ նորոյ երկրի ըստ աւետ-
եացն հայեցեալ սպասմամբ, յորս ար-
գարութիւնն բնակէ:
14 Վասն որոյ, սիրելիք, այսոցիկ
սպասեալ, փոյթ յանձին ունիջիք ան-
րիծք եւ անարատք գտանել նմա՝ ի
15 խաղաղութիւն· Եւ զՏեառն երկայն-
մտութիւնն փրկութիւն համարեսջիք·
զոր օրինակ եւ սիրելի եղբայրն մեր
Պաւղոս ըստ չնորհելոյ իմաստութեանն
16 նմա [6]յԱստուծոյ գրեաց ձեզ· Որպէս
եւ յամենայն իսկ թուղթսն խօսի վասն
այսոցիկ· յորս գտանի ինչ ինչ դժուա-
րիմաց, զոր անուսմունքն եւ յող-
ոգոզքն կամակորեն, որպէս եւ զա-
մենայն իսկ գիրս առ իւրեանց ան-
17 ճանցն կորուստ: Դուք այսուհետեւ,
սիրելիք, իբրեւ զկանխագէտս զգու-
շասջիք, զի մի' անառակ մոլորու-
թեամբն զդածեալք՝ անկանիջիք [7]յան-
18 տեաց հաստատութեանն": Աճեցէք
չնորհօք եւ գիտութեամբն Տեառն մե-
րոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի·
նմա փառք եւ այժմ եւ յօրն յաւիտե-
նից: Ամէն:

---

[1] Յ-ինն, ձեզ այժմ
[2] Յ-ինն, ջուրքք
[3] Ո՛ոմնէ, մեզ
[4] Ո՛ոմնէ, զգող ի գիշերի
[5] Ո՛ոմնէ, այրեսցին
[6] ի Յ-ոյնն պ-ղ-ս
[7] Յ-ինն, յանձանց հաստատութենէ

Ա ԹՈՒՂԹ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 ԵԱ. Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում ականատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն, եւ ձեռք մեր չօշափեցին
2 ի վերայ Բանին կենաց. (Եւ կեանքն յայտնեցան, եւ տեսաք եւ վկայեմք եւ պատմեմք ձեզ զյաւիտենական կեանացն, որ էրն առ Հօր եւ երեւեցաւ
3 մեզ.) Զոր տեսաքն եւ լուաք, պատմեմք եւ ձեզ, զի եւ դուք հաղորդութիւն ունիցիք ընդ մեզ, եւ մեր հաղորդութիւնն իցէ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ իւրում Յիսուսի Քրիստոսի։
4 Եւ զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրախութիւնն կատարեալ իցէ։
5 Եւ այս են աւետիք զոր լուաք առ ի նմանէ եւ պատմեմք ձեզ, զի Աստուած լոյս է, եւ խաւար ի նմա չիք
6 եւ ոչ մի։ Եթէ ասիցեմք եթէ հաղորդութիւն ունիմք ընդ նմա եւ ի խաւարի չրջիցիմք, ստեմք եւ ոչ առնեմք
7 զճշմարտութիւնն։ Իսկ եթէ ընդ լոյս գնայցեմք, որպէս նա ի լոյս է, հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս, եւ արիւնն [2]Յիսուսի Որդւոյ նորա սրբէ
8 զմեզ յամենայն մեղաց։ Եթէ ասիցեմք եթէ Մեզս չունչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք, եւ ճշմարտութիւնն ի մեզ
9 ոչ գոյ։ Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա եւ արդար առ ի թողուլ մեզ զմեղս մեր, եւ սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ։
10 ԵԲ. Եթէ ասիցեմք, եթէ Ոչինչ մեղաք, սուտ առնեմք զնա, եւ բանն նորա ոչ է ի մեզ։

ԳԼ. Բ

1 Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ զի մի՛ մեղիցէք. եւ եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս Քրիս-
2 տոս, զարդարն [3]եւ զանարատն։ Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց, եւ ոչ եթէ մերոցն միայն, այլ եւ ամենայն աչխարհի։
3 Եւ յայսմիկ գիտեմք եթէ ծանեաք զնա, եթէ զպատուիրանս նորա պա-
4 հիցեմք։ Որ ասիցէ եթէ Ծանեայ զնա, եւ զպատուիրանս նորա ոչ պահիցէ, սուտ է եւ ճշմարտութիւն ի նմա ոչ
5 գոյ։ Իսկ որ պահէ զբան նորա, արդարեւ ի նմա կատարեալ է սէրն Աստուծոյ. այսուիկ ճանաչեմք եթէ ի
6 նմա եմք։ Որ ասիցէ ի նմա բնակել՝ այնպէս պարտի գնալ, որպէս եւ նայն գնաց։
7 ԵԳ. [4]Սիրելիք, ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ ձեզ, այլ զհին պատ-
ուիրանն զոր ի սկզբանէ ունէիք. եւ հին պատուիրան բանն է զոր [5]լուա-
8 րուք։ Դարձեալ նոր պատուիրան գրեմ ձեզ որ է ճշմարիտ ի նմա եւ ի ձեզ. զի խաւարն անցանէ, եւ լոյսն
9 ճշմարիտ արդէն իսկ երեւի։ Որ ասէ եթէ ի լոյս իցէ եւ զեղբայր իւր ա-
տիցէ, [6]սուտ է եւ՝ ի խաւարի է տա-
10 կաւին։ Որ սիրէ զեղբայր իւր՝ ի լոյս բնակէ, եւ գայթակղութիւն ի նմա
11 չիք. Իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ ի խաւարի է, եւ ընդ խաւար չրջի, եւ ոչ գիտէ յո երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա։

---

[1] Ոմանք, Թուղթ Յովհաննու կաթողիկեայ Առաջին. այլ, Թուղթ Յովհաննու Առաքելոյ կաթողիկեայ Առաջին
[2] Ոմանք, Յիսուսի Քրիստոսի
[3] ի յառնէն պակաս
[4] Ոմանք, Եղբարք
[5] Ոմանք, լուարուք ի սկզբանէ
[6] ի բազումս պակաս

12 Գրեմ ձեզ, որդեակք, զի թողեալ
են ձեզ մեղքն ձեր վասն անուան Նո-
13 բա։ Գրեմ ձեզ, հարք, զի ծանեայք
զսա զայն որ ի սկզբանէն է։ Գրեմ
ձեզ, երիտասարդք, զի յաղթեցիք
14 զչարին։ Գրեցի ձեզ մանկունք,
զի ծանեայք զհայրն։ Գրեցի
ձեզ, հարք, զի ծանեայք զսա զայն
որ ի սկզբանէն է։ Գրեցի ձեզ, երի-
տասարդք, զի էք զօրաւորեալք,
եւ բանն Աստուծոյ ի ձեզ բնակէ, եւ
15 յաղթեցէք զչարին։ Մի՛ սիրէք
զաշխարհս, եւ մի՛ որ ինչ յաշխարհի
16 է։ Եթէ ոք սիրէ զաշխարհ, ոչ է ի
նմա սէր Հօր, զի ամենայն որ ինչ
յաշխարհի է՝ ցանկութիւն [1]է մարմնոյ
եւ ցանկութիւն [1]է աչաց եւ ամբար-
տաւանութիւն աստի կենացս, [1]որ չէ
առ ի Հօրէ, այլ յաշխարհէ աստի է։
17 Եւ աշխարհս անցանէ եւ [2]ցանկու-
թիւնն, իսկ որ առնէ զկամս Աստու-
ծոյ՝ մնայ յաւիտեան։
18 ԵԳ. Որդեակք, յետին ժամանակ է,
եւ որպէս լուարուք եթէ Նեռն գալոց
է, եւ արդէն իսկ նեռինք բազումք
եկեալ են, որով մարթեմք իմանալ
19 եթէ յետին ժամանակ է։ Ած ի մէնջ
ելին, այլ ոչ էին ի մէնջ. զի եթէ ի
մէնջ էին, ապա առ մեզ մնային. այլ
զի յայտնի լինիցին եթէ ոչ էին ամե-
20 նեքեան նոքա ի մէնջ։ Եւ դուք օ-
ծութիւն ունիք առ ի Սրբոյն, եւ դի-
21 տէք [3]ամենեքին։ Ոչ գրեցի ձեզ եթէ
ոչ գիտէք զճշմարտութիւնն, այլ թէ
գիտէք զսա եւ թէ՝ զի ամենայն սուտ
թիւն ոչ է ի ճշմարտութենէ անտի։
22 Իսկ ո՞ իցէ սուտ, եթէ ոչ՝ որ ուրա-
նայ եթէ Յիսուս չէ Քրիստոս. նա
իսկ է Նեռն, որ ուրանայ զՀայր եւ
23 զՈրդի։ Ամենայն որ ուրանայ զՈրդի՝
եւ ոչ զՀայր ընդունի. [4]իսկ որ խոս-
տովանի զՈրդի՝ նա եւ զՀայր ընդու-
24 նի։ Նի՛ր Դուք զոր լուարուքն ի սկզբանէ՝
ի ձեզ բնակեսցէ. զի եթէ ի ձեզ բնա-
կեսցէ զոր ի սկզբանէն լուարուք, եւ
դուք յՈրդի եւ ի Հայր բնակեսջիք։
25 Եւ այս են աւետիքն զոր աւետարան-
եաց նա մեզ, զկեանսն յաւիտենա-
կան։

26 ԵԵ. Զայս գրեցի ձեզ, զի մի՛ ոք
27 զձեզ մոլորեցուցանիցէ։ Եւ դուք օ-
ծութիւնն զոր ընկալարուք ի նմանէ՝
բնակեսցէ ի ձեզ. եւ չէ ինչ պիտոյ
եթէ ոք զձեզ ուսուսցէ, այլ որպէս
[5]զի նորա օծութիւնն ուսուցանիցէ՝
զձեզ վասն ամենայնի, եւ ճշմարիտ է
եւ չէ սուտ. եւ որպէս ուսոյցն զձեզ,
[6]կայք ի նմա։
28 Եւ այժմ, որդեակք, կայէք ի նմին,
զի եթէ յայտնեսցի, ունիցիմք համար-
ձակութիւն, եւ մի՛ ամաչեսցուք ի
29 նմանէ ի գալստեան նորա։ Զի եթէ
գիտիցէք եթէ արդար է նա, իմասջիք
եթէ ամենայն որ առնէ զարդարու-
թիւն՝ առ ի նմանէ է ծնեալ։

ԳԼ. Գ

1 Տեսէք, որպիսի՛ սէր չնորհեաց մեզ
Հայր, զի որդիք Աստուծոյ կոչեսցուք
մեք. վասն այսորիկ աշխարհ ոչ ճա-
նաչէ զմեզ, քանզի ոչ ծանեաւ զնա։
2 ԵԶ. Սիրելիք, այժմ որդիք Աստու-
ծոյ եմք, եւ չէ եւս է յայտ եթէ զինչ
լինելոց իցեմք. գիտեմք, զի յորժամ
նա յայտնեսցի, նման նմա լինելոց
եմք, զի տեսանելոց եմք զնա որպէս
3 եւ էն։ Եւ ամենայն որ ունի զայս
յոյս [7]յանձին՝ սրբէ զանձն իւր, որպէս
4 եւ նայն սուրբ է։ Ամենայն որ զմեղս
գործէ, նա եւ զանօրէնութիւն առնէ,
եւ ինքն իսկ մեղքն անօրէնութիւն է։
5 Եւ [8]գիտեմք զի նա յայն սակս յայտ-
նեցաւ, զի [9]զմեղս բարձցէ, եւ ի նմա
6 մեղք ոչ են։ Ամենայն որ ի նա է հաս-
տատեալ՝ ոչ մեղանչէ. եւ ամենայն
որ մեղանչէ՝ ոչ տեսեալ զնա եւ ոչ
7 ծանեալ զնա։ Մանկունք, մի՛ ոք
զձեզ խաբեսցէ. որ առնէ զարդարու-
թիւն, արդար է՝ որպէս եւ նայն ար-
8 դար է։ Եւ որ առնէ զմեղս՝ ի Սատա-
նայէ է, զի ի սկզբանէ Սատանայ մե-
զանչէ. վասն այսորիկ յայտնեցաւ Որ-
դին Աստուծոյ, զի լուծցէ զգործս
9 Սատանայի։ Ամենայն որ յԱստուծոյ է
ծնեալ՝ մեղս ոչ առնէ, զի սերմն նորա
ի նմա մնայ. եւ ոչ կարէ մեղանչել,

---

[1] Ի ՅՈՎՀ պ-ԽՈՒԹ
[2] ՅՈՎՀ, ցանկութիւն նորա
[3] ՈՎՀ, զամենայն
[4] ՅՈՎՀ պ-ԽՈՒԹ
[5] ՈՎՀ, օծութիւնն այն ուսուցանէ. այլ՝ Հոգի նորա ուսուցանէ
[6] ՈՎՀ, կացէք
[7] ՅՈՎՀ, ի նմա
[8] ԲՂՍՎՀ, գիտէք
[9] ԲՂՍՎՀ, զմեղս մեր

10 զի Աստուծոյ է ծնեալ։ Այսուիկ յայտնի են [1]ի միմեանց որդիք Աստուծոյ
եւ որդիք Սատանայի։
Եբ. Ամենայն որ ոչ առնէ զարդարութիւն՝ չէ նա յԱստուծոյ, եւ որ ոչ
11 սիրէ զեղբայր իւր. Զի այս է պատուիրանն զոր լուարուք ի սկզբանէ,
12 զի սիրեսցուք զմիմեանս։ Ոչ որպէս Կայէնն ի չարէ անտի էր եւ սպան
զեղբայրն իւր. եւ յո՞ր սակս սպան զնա. զի իւր գործքն չար էին, եւ
13 եղբօրն՝ բարի։ Եւ մի՛ ինչ զարմանայք, եղբարք, եթէ աշխարհ զձեզ ատեայ։
14 Մեք գիտեմք զի փոխեցաք ի մահուանէ ի կեանս, քանզի սիրեմք զեղբարս. իսկ որ ոչն [2]սիրէ, անդէն ի
15 մահու մնայ։ Ամենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մարդասպան է, եւ գիտէք, զի ամենայն մարդասպան ոչ ունի
զկեանս յաւիտենականս յանձին հաս-
16 տատեալ։ Այսուիկ գիտացաք զսէրն, զի նա զանձն իւր եդ վասն մեր, եւ
մեք վասն եղբարց [1]մերոց պարտիմք
17 դնել զանձինս։ Որ ունիցի զկեանս ինչ զաշխարհիս, եւ տեսանիցէ զեղբայր իւր կարօտեալ իւիք, եւ փակիցէ զդուռն իւր առ ի նմանէ, դիա՞րդ
սէրն Աստուծոյ ի նմա իցէ բնակեալ։
18 ԶԱ. Որդեակք, մի՛ բանիւք եւ լեզուօք սիրեսցուք, այլ արդեամբ եւ
ճշմարտութեամբ։
19 Եւ այսուիկ լիցուք ծանուցեալք եթէ ի ճշմարտութենէ անտի իցեմք,
եւ առաջի նորա արասցուք հանդէս
20 սրտից մերոց։ Եթէ սատտանիցեն զմեզ սիրտք մեր, այլ Աստուած մեծ է քան
21 զսիրտս մեր եւ գիտէ զամենայն։ Սիրելիք, եթէ սիրտք մեր զմեզ ոչ
սատտանիցեն, համարձակութիւն ու-
22 նիմք առ Աստուած. Եւ զոր ինչ հայցեմք՝ առնումք ի նմանէ, զի զպատուիրանս նորա պահեմք, եւ զհաճոյս
23 առաջի նորա առնեմք։ Եւ այս է պատուիրան նորա, զի հաւատասցուք յանուն Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, եւ սիրեսցուք զմիմեանս, որ-
24 պէս եւետ մեզ պատուէր։ Եւ որ պահէ զպատուիրանս նորա՝ ի նմա է
հաստատեալ եւ նա ի սմա. եւ յայս-

մանէ գիտեմք եթէ բնակէ ի մեզ, ի Հոգւոյ անտի զոր ետ մեզ։

Գլ. Դ

1 ԶԲ. Սիրելիք, մի՛ ամենայն հոգւոյ հաւատայք, այլ ընտրեցէք զհոգիսն՝
եթէ յԱստուծոյ իցեն. զի բազումք
սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ։
2 Եւ [3]մեք այսուիկ ճանաչեմք՝ զՀոգին Աստուծոյ. ամենայն հոգի որ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով
3 եկեալ՝ յԱստուծոյ է նա։ Եւ ամենայն հոգի որ ոչ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով եկեալ՝ չէ նա յԱստուծոյ, եւ այս Նեռինն է, զորմէ
լուարուք եթէ գալոց է, եւ արդէն
4 իսկ յաշխարհի է։ Դուք յԱստուծոյ էք, որդեակք, եւ յաղթեցէք նոցա.
զի մեծ է որ ի ձեզ է քան զայն որ
5 յաշխարհին է։ Նոքա յաշխարհէ են, վասն այնորիկ յաշխարհէ խօսին, եւ
6 աշխարհ լսէ նոցա։ Մեք յԱստուծոյ եմք. որ զԱստուած ճանաչէ՝ լսէ մեզ,
եւ որ չէ յԱստուծոյ՝ ոչ լսէ մեզ.
այսուիկ ճանաչեմք զՀոգին ճշմարտութեան եւ զհոգին խաբէութեան։
7 ԶԳ. Սիրելիք, սիրեսցուք զմիմեանս, զի սէր յԱստուծոյ է. եւ ամենայն որ
սիրէ՝ յԱստուծոյ է ծնեալ եւ ճանաչէ
8 զԱստուած։ Եւ որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է։
9 Եւ զի յայսմ երեւեցաւ սէրն Աստուծոյ ի մեզ, զի զմորդին իւր միածին
առաքեաց Աստուած յաշխարհ, զի եւ
10 դիցուք նմա կենդանիք։ Յայսմ է սէրն, ոչ զի մեք սիրեցաք զԱստուած,
այլ զի նա սիրեաց զմեզ, եւ առաքեաց զմորդին իւր ի քաւութիւն մեղաց
11 մերոց։ Սիրելիք, եթէ Աստուած այսպէս սիրեաց զմեզ, ապա եւ մեք պարտիմք զմիմեանս սիրել։
12 ԶԴ. ԶԱստուած ուրուք երբեք չիք տեսեալ. եթէ սիրեսցուք զմիմեանս,
Աստուած ի մեզ բնակէ, եւ սէր նորա
13 ի մեզ կատարեալ է։ Այսուիկ գիտեմք, եթէ մեք ինմա եմք բնակեալ, եւ նա՝
ի մեզ, զի ի Հոգւոյն իւրմէ ետ մեզ։
14 Եւ մեք տեսաք եւ վկայեմք, զի Հայր առաքեաց զմորդին իւր Փրկիչ աշխարհի։

[1] Ի ցառնէն պակաս
[2] Որ՝ն՝, սիրէ զեղբայրն

[3] Բազում՝, ճանաչէք

15 Որ ոք խոստովանեսցի եթէ Յիսուս է
Որդի Աստուծոյ, Աստուած ի նմա
16 բնակէ, եւ նա՝ յԱստուած։ Եւ մեք
հաւատացաք եւ ծանեաք զսէրն Աս-
տուծոյ զոր ունի առ մեզ. Աստուած
սէր է. եւ որ կայ ի սէրն՝ բնակեալ է
յԱստուած, եւ Աստուած ի նմա բնա-
17 կէ։ Ցայսմիկ կատարեալ է սէրն ընդ
մեզ. զի համարձակութիւն [1]ունիմք
յաւուրն պատաստանի. զի որպէս եւ
նայն է՝ նոյնպէս եւ մեք եմք յաչխար-
18 հիս յայսմիկ։ Երկեւղ ոչ գոյ ի սէր,
այլ սէրն կատարեալ ի բաց մերժէ զեր-
կեւղն. զի երկեւղ ընդ տանջանաւք է.
իսկ որ երկնչին՝ չէ կատարեալ ի սէրն։
19 Մեք [2]սիրեսցուք զԱստուած՝, վասն
20 զի նա նախ սիրեաց զմեզ։ Եթէ ոք
ասիցէ եթէ Սիրեմ զԱստուած, եւ
զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ
սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զԱս-
տուած զոր ոչն ետես՝ զիա՞րդ կարիցէ
21 սիրել։ Եւ զայս պատուէր ունիմք
առ ի նմանէ, զի որ սիրէ զԱստուած՝
սիրէ նա եւ զեղբայր իւր։

Գլ. Ե

1 Զե. Ա՛մենայն որ հաւատայ եթէ Յի-
սուս է Քրիստոս՝ յԱստուծոյ ծնեալ
է, եւ ամենայն որ սիրէ զծնողն՝ սիրէ
2 եւ զծնեալն ի նմանէ։ Այսուիկ ճա-
նաչեմք եթէ սիրեմք [3]զՈրդին Աստու-
ծոյ, յորժամ զԱստուած սիրեսցուք
եւ զպատուիրանս նորա արասցուք։
3 Քանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ
զպատուիրանս նորա պահեսցուք. եւ
պատուիրանք նորա չեն ինչ ծանրունք։
4 Զի ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է՝
յաղթէ աշխարհի. եւ այս է յաղթու-
թիւնն որ յաղթէ աշխարհի, հաւատքն
5 մեր։ Եւ ո՞ իցէ որ յաղթիցէ աշխարհի,
եթէ ոչ՝ որ հաւատայցէ եթէ Յիսուս
է Որդի Աստուծոյ։
6 Սա է որ եկն Ջրով [4]եւ Հոգւով՝ եւ
արեամբ, Յիսուս Քրիստոս. ոչ Ջրով
7 միայն, այլ եւ արեամբ եւ Ջրով. Եւ
Հոգին է որ վկայէ, զի Հոգին ի՛սկ է
8 ճշմարտութիւն։ [5]Սոքա երիքին՝ են
որ վկայեն, Հոգին, Ջուրն եւ արիւնն.
9 եւ երիքին մի են։ Եթէ զմարդկան
ինչ վկայութիւն ունիցիմք, ապաքէն
Աստուծոյ վկայութիւնն մեծ իցէ. այս
է վկայութիւնն Աստուծոյ, որ վկայ-
եաց ի վերայ Որդւոյն իւրոյ։ ՎՋ
10 ԶԶ. Որ հաւատայ յՈրդին Աստուծոյ՝
ունի յանձին զվկայութիւնս զայս. որ
չհաւատայ [4]Որդւոյ Աստուծոյ՝ սուտ
առնէ զնա. քանզի չհաւատայ վկա-
յութեանն զոր վկայեաց Աստուած ի
11 վերայ Որդւոյն իւրոյ։ Եւ այս իսկ է
վկայութիւնն, զի կեանս յաւիտենա-
կանս ետ մեզ Աստուած, եւ այս են
12 կեանքն որ յՈրդին նորա են։ Որ ըն-
դունի զՈրդին, ընդունի եւ զկեանսն.
եւ որ ոչ ընդունի զՈրդին Աստուծոյ,
եւ ոչ զկեանսն ընդունի։
13 ԶԵ. Զայս գրեցի ձեզ զի դիտասջիք
եթէ կեանս յաւիտենականս ունիք,
եւ զի հաւատայցէք յանուն Որդւոյն
14 Աստուծոյ։ Եւ այս է համարձակու-
թիւնն զոր ունիմք մեք առ նա, զի
զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նո-
15 րա՝ լսէ մեզ։ Զի եթէ գիտիցեմք եթէ
լսէ հայցուածոցն մերոց, ապա գիտեմք
եթէ առնումք զհայցուածսն զոր հայ-
ցեմք առ ի նմանէ։
16 Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղու-
ցեալ մեղս որ ոչ առ ի մահ, խնդրեսցէ
եւ տացէ նմա կեանս մեղուցելոյն ոչ
առ ի մահ. են մեղք որ մահուէափ են,
ոչ վասն այնորիկ ասեմ եթէ [6]խնդրես-
17 ցես։ Ամենայն անիրաւութիւն մեղք
են. եւ են մեղք որ մահուէափ [7]են։
18 Գիտեմք եթէ ամենայն որ յԱստու-
ծոյ է ծնեալ՝ ոչ մեղանչէ. այլ որ
յԱստուծոյն է ծնեալ՝ պահէ զանձն,
19 եւ չարն առ նա ոչ մերձենայ։ Գիտեմք
եթէ յԱստուծոյ եմք, եւ աշխարհ ա-
20 մենայն ի չարի կայ։ Եւ գիտեմք եթէ
Որդին Աստուծոյ եկն, եւ ետ մեզ
միտս զի ծանիցաւք զճշմարիտն. եւ
եմք ի ճշմարտին Որդւոյ նորա Յի-
սուսի Քրիստոսի. [8]զի նա է ճշմարիտ
Աստուած եւ կեանք յաւիտենական։
21 Որդեակք, պահեցէք զանձինս ի կռա-
պաշտութենէ։

---

[1] Բ—ղ—ի, ունիցիմք
[2] Ո՛—ն, սիրեմք զնա. այլ՝ սիրեմք զԱստուած
[3] Յ—ն, զորդիս
[4] ի Բ—ղ—ի պ—ւ—ե
[5] Յ—ն, Զի երեք
[6] Բ—ղ—ի, խնդրեսցէ
[7] Բ—ղ—ի, չեն
[8] ի Յ—ն—ի պ—ւ—ե

[1]ԹՈՒՂԹ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ"

1 ԷԱ. Յերիցոուէ առ ընտրեալդ Կիւրիա
եւ առ որդեակս իւր, զոր եսդ սիրեմ
ճշմարտութեամբ, եւ ոչ եթէ ես միայն,
այլ եւ ամենեքեան որք գիտակ են
2 ճշմարտութեանն. վասն [2]որոյ ճշմար-
տութեանն որ ի մեզ հաստատեալ է,
[3]ըստ եւ ընդ մեզ իցէ". [2]եւ դուք յա-
3 ւիտենից ընդ մեզ իցէք" Շնորհք, ո-
ղորմութիւն, խաղաղութիւն յԱստու-
ծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ Յիսուսէ
Քրիստոսէ Որդւոյն Հօր, ճշմարտու-
թեամբ եւ սիրով եղիցին ընդ մեզ։
4 Ուրախ եղէ յոյժ, զի գտի յորդե-
կայդ քոց որ գնան ճշմարտութեամբ
ըստ պատուիրանին զոր առաք ի Հօրէ։
5 Եւ այժմ աղաչեմ զքեզ, Կիւրիա, իբ-
րեւ ոչ եթէ նոր ինչ պատուիրան
գրեմ քեզ, այլ զոր ի սկզբանէն ու-
6 նէաք, զի սիրեսցուք զմիմեանս։ Եւ
այս է սէրն, զի գնասցուք ըստ պատ-
ուիրանաց նորա. եւ այս է պատուի-
րանն, զի որպէս լուարուքն ի սկզբա-
7 նէ՝ ըստ նմին գնասջիք։ Զի բազում
մոլորեցուցիչք ելին յաչխարհ. [4]որ ոք
ոչ խոստովանի՝" զՅիսուս Քրիստոս
եկեալ մարմնով, նա մոլորեցուցիչ է
եւ Նեռն։
8 ԷԲ. Զգոյչ լինիջիք անձանց զի մի՝
[5]կորուսանիցէք՝ զոր վաստակեցէքն,
այլ զի առնուցուք՝" բովանդակ զվարձան։
9 Ամենայն որ յանցանիցէ եւ ոչ կայցէ ի
վարդապետութեանն Քրիստոսի՝ զԱս-
տուած ոչ ճանաչէ. որ կայ ի վարդա-
պետութեանն՝ նա եւ զՈրդին եւ
10 զՀայր ընդունի։ Եթէ ոք գայցէ առ
ձեզ եւ զվարդապետութիւնս զայս ոչ
ունիցի, մի՛ ընդունիցիք զնա ի տուն,
11 եւ մի՛ ողջոյն տայցէք նմա։ Որ ա-
սացէ նմա Ողջոյն՝ կցորդ լիցի չարաց
գործոց նորա։
12 Բազում ինչ ունէի գրել առ ձեզ,
այլ ոչ կամեցայ քարտիսիւ եւ դեղով.
զի ակն ունիմ ինձէն իսկ գալ առ
ձեզ, եւ բերան ի բերան խօսել. զի
ուրախութիւնն մեր իցէ կատարեալ։
13 Ողջոյն տան քեզ որդիք քեռ քո ընտ-
րելոյ։ [6]Շնորհք ընդ ձեզ։"

---

[1]Ոմանք, Թուղթ Յովհաննու Աւետելոյ Երկրորդ
[2]ի Յունին պակաս
[3]Բազումք, Եւ ընդ մեզ իցէ յաւիտեան
[4]Յունն, որ ոչ խոստովանի
[5]Ոմանք, կորուսանիցեմք զոր վաստակեցաքն, այլ զի առնուցումք
[6]ի Բազմա պակաս

[1]ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐՐՈՐԴ"

1 ԷԳ. Յերիցուն ընծայ առ Գայիոս սիրելի,
2 զոր եաղ սիրեմ ճշմարտութեամբ։ Սի-
րելի, վասն ամենայն իրաց քոց յա-
ջողութեան եւ առողջութեան աղօթս
առնեմ. որպէս է իսկ յաջողութիւն
3 անձինդ քո։ Յոյժ ուրախ եղէ ի գալ
եղբարց եւ լինել վկայ քոյոյ ճշմար-
տութեանդ, որպէս դնասդ դու ճշմար-
4 տութեամբ։ Մեծ եւս ինչ ուրախու-
թիւն քան զայս ոչ ունիմ, զի լսեմ
եթէ իմ որդեակքն ճշմարտութեամբ
5 դնան։ Սիրելի, հաւատարիմ գործես
զայդ, զոր եթէ առնիցես առ եղբարս՝
6 զդոյն եւ առ օտարս. Որք վկայեցին
քոյոյ սիրոյդ առաջի եկեղեցւոյ. որոյ
բարիս արարեալ յուղարկես արժանիս
7 Աստուծոյ։ Զի վասն [2]անուանն ելին,
եւ [3]ոչինչ յումեքէ առնուն զհեթանո-
8 սականացն"։ Մեք այսուհետեւ պար-
տիմք ընդունել զայնպիսիսն, զի գոր-
ծակիցք լիցուք ճշմարտութեանն։
9 ԷԳ. Գրեցի ինչ եկեղեցւոյն. այլ որ
յառաջադէմն ի նոցանէ է Դիոտրեփէս,
10 ոչ ընդունի զմեզ։ Վասն այսորիկ եթէ
եկից, յիշեցուցից զգործս նորա զոր
առնէ, բանիւք չարօք չատխօսութեան
առնէ զմեզ աչխատ. եւ ոչ այսքիւք
չատացեալ, ոչ ինքն ընդունի զեղբարս,
եւ զայնոսիկ որ ընդունինն՝ արգելու,
11 նա՝ եւ յեկեղեցւոյ եւս հանէ։ Սիրելի,
մի՛ լիցիս նմանող չարի, այլ բարւոյ.
զի որ զբարին առնէ՝ յԱստուծոյ է.
եւ որ զչարիս գործէ՝ նա ոչ ետես եր-
12 բեք զԱստուած։ Զդեմետրեայ վկայ-
եալ է յամենեցունց [4]եւ յեկեղեցւոյն"
եւ ի ճշմարտութենէն, եւ մեք վկա-
յեմք. եւ դու գիտես զի ճշմարիտ է
մեր վկայութիւնն։
13 Բազում ինչ ունէի գրել քեզ, այլ
ոչ կամիմ [5]գրարտիսիւ եւ գրիչով գրել"։
14 Զի ակն ունիմ ի մօտոյ իսկ տեսանել
զքեզ, եւ բերան ի բերան խօսել։
15 Խաղաղութիւն ընդ քեզ. ողջոյն տան
քեզ [6]սիրելիք. ողջոյն տաջիր սիրել-
եաց [7]մերոց իւրաքանչիւր յանուանէ։

---

[1]Ոմն., Թուղթ Յովհաննու Առաքելոյ երրորդ
[2]Ոմն., անուան Նորա
[3]Ոմն., ոչինչ առնուն ի հեթանոսաց
[4]Ի բազս. պակաս
[5]Յայն, գրչով և եղեգամբ գրել քեզ
[6]Ոմն., եղբարք
[7]Ի յայլն պակաս

ԹՈՒՂԹ

ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ

1 Է. Յուդա, Յիսուսի Քրիստոսի ծա-
ռայ, եւ եղբայր Յակովբայ, [1]հեթա-
նոսաց որ՝ յԱստուծոյ Հօրէ էք սիրե-
ցեալք, եւ Յիսուսի Քրիստոսի պահ-
2 եալք եւ [2]ընտրեալք, Ողորմութիւն
ձեզ եւ խաղաղութիւն եւ սէր բազ-
մասցի։
3 Սիրելիք, զամենայն փոյթ յանձին
կալեալ գրել ձեզ վասն մերոյ հասա-
րակաց փրկութեանն, հարկ յանձին
կալայ գրել ձեզ, եւ աղաչել զի ճգնի-
ջիք ի վերայ հաւատոցն, որ միանգամ
4 աւանդեցաւն սրբոց։ Քանզի սպրդե-
ցին մարդ ոմանք, որ յառաջագոյն իսկ
[3]կատարեալ էին ի սոյն դատաստան,
ամբարիշտք, որ զԱստուծոյ մերոյ
չնորհսն դարձուցին յանկարգութիւն.
եւ զմի միայն [4]ղէչխանն եւ զՏէր մեր
Յիսուս Քրիստոս ուրացեալք։
5 Յիշեցուցանել ձեզ այսուհետեւ կամ
է ինձ որ դիտէքդ [5]զամենայն, զի
Աստուած միանգամ՝ զժողովուրդն
փրկեաց յԵգիպտոսէ, երկրորդ անգամ
6 զանհաւատսն կորոյս։ Եւ զհրեշտակս
որ ոչ պահեցին զիւրեանց իշխանու-
թիւնն, այլ թողին զիւրեանց բնակու-
թիւնն, ի դատաստանս մեծի աւուրն
մշտնջենաւոր կապանօք պահեաց ի
7 խաւարի։ Որպէս Սոդոմն եւ Գոմոր
եւ որ չուրջ զնոքօք քաղաքքն, որ
ըստ նմին օրինակի պոռնկեցան զհետ
ընկերացն մարմնոց, կան առաջի օ-
րինակ՝ կրակի յաւիտենական հրոյն ընկալ-
8 եալ զպատաստան։ Ըստ նմին օրինակի
եւ սոքա իբրեւ քնով դանդաչեալք՝
զմարմին պղծեն, զտէրութիւնս քա-
9 մահեն, զփառսն հայհոյեն։ Ուր Մի-
քայէլ հրեշտակապետն յորժամ բան-
սարկուն Սատանայի վիճեալ տայր պա-
տասխանի վասն Մովսիսեանն մարմ-
նոյ, ոչ ժպրնեցաւ հայհոյութեանն
դատաստանի հանդուրժել. այլ ասէ,
10 Սատեսցէ ի քեզ Տէր։ Իսկ սոքա
զոր ինչ ոչն իմանան՝ հայհոյեն. եւ
զայն եւս զոր բնութեամբ իբրեւ զան-
խօս անասունն դիտեն, ի նոսին ապա-
11 կանեսցին։ Վայ է նոցա, զի ըստ ճա-
նապարհին Կայենի գնացին, եւ ըստ
մոլորութեանն Բաղաամայ դեղխեցան
զհետ վարձուց, եւ ըստ հակառակու-
12 թեանն Կորխայ կորեան։ [6]Սոքա են
առեղեալք չոգմողք՝ երթեալ զհետ
ցանկութեանց իւրեանց, ի սէրս իւր-
եանց խարդախութեամբ, լինին ընդ
ձեզ ուրախակիցք, աներկեաղ՝ զան-
ձինս ճարակեն. ամպք անջրդիք հող-
մակոծեալք, ծառք պտղակորոյսք,
անպտուղք, կրկնամեռք, խլեալք ար-
13 մատաքի. Անասատ ալիք ծովու, որ
միշտ փրփրեն զիւրեանց անձանցն զա-
մօթ. աստեղք մոլարք, որոց [7]վիհ
խաւարին յաւիտենից պահեալ է։
14 Է. Մարգարէացաւ վասն նոցա եւ
եւթներորդն յԱդամայ Ենովք, եւ ասէ,
Ահաւասիկ եկն Տէր բիւրովք սրբովք
15 [8]հրեշտակօք, Առնել դատաստան [9]ըստ
ամենայնի՝, եւ յանդիմանել զամենայն
ամբարիշտս վասն դործոց իւրեանց
զոր ամբարշտեցին. եւ վասն ամենայն

---

[1] Յ՝ոյն, որոց
[2] Յ՝ոյն, կոչեցեալք
[3] Յ՝ոյն, գրեալ
[4] Ո՛նախ, գիչխանն զԱստուած
[5] Ո՛նախ, միանգամ զայս զի Տէր
[6] Բ՝ազմ՛ախ, Սոքա են ի սէրս ձեր սրատաք, խրախ-
ճանակիցք լեալ ձեզ աներկեաղ
[7] Յ՝ոյն, աղջամուղջ
[8] Բ՝ազմ՛ախ, իւրովք
[9] Կա՛մ, ի վերայ ամենեցուն

խիստ բանից զոր խօսեցան զնմանէ
16 մեզաւորք [1]եւ ամբարիշտք ։ Սոքա են տրտնջողք եւ չոգմոգք, երթեալ ըստ իւրեանց անձանց ցանկութեանց, եւ բերանք նոցա զամբարտաւանս բարբառին, առնուն ակն երեսաց վասն օգտի ։
17 Եղե՛ր հայց դուք, սիրելիք, յիշեցէք զկանխասաց բանս զառաքելոցն Տեառն
18 մերոյ Յիսուսի Քրիստոսի. Զի ասէին ձեզ եթէ ի յետին ժամանակս եղիցին մարդք արհամարհողք, երթեալ ըստ իւրեանց ամբարչտութեանցն ցանկութեանց ։
19 Սոքա են [2]նչաւակեալք, չնչաւորք,
20 որ զՀոգին ոչ ունիցին ։ Այլ [3]մեք, սիրելիք, եղիցուք՝ չինել զանձինս սրբութեամբն [4]հաւատոց, ի Հոգին
21 Սուրբ [5]կացցուք յաղօթս՝, պահել զանձինս սիրովն Աստուծոյ ակն ունել ողորմութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի կեանսն յաւիտենականս ։
22 Եւ [6]ոմանց դատապարտելոյ վինիջիք
23 կչտամբիչք՝. Եւ զոմանս ապրեցուցանիջիք յափշտակեալ ի հրոյ. եւ ոմանց ողորմեսջիք երկիւղիւ, [7]դատել եւ զպատմուճանն որ ի մարմնոյն իցէ աղտեղեալ ։
24 Եւ այնմ, որ կարօղն իցէ պահել զձեզ անարատս եւ [8]ամրիծս, հաստատեալ առաջի իւրոց փառաց աներ-
25 կեւանն ցնծութեամբ, Միոյն Աստուծոյ [1]եւ Փրկչին մերոյ [9]Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ փառք, մեծութիւն, զօրութիւն եւ իշխանութիւն [10]յառաջ քան զամենայն յաւիտեանս՝, եւ այժմ եւ յամենայն յաւիտեանս ։ Ամէն ։

---

[1]Ի Յ-ԱՆՆ պ-ԱՒ-Ա
[2]Յ-ԱՆՆ, զատուցեալք
[3]Բ-Ա-Ա-Ի, դուք, սիրելիք, եղիջիք
[4]Ի Յ-ԱՆՆ, ՈՄԱՒ՝ հաւատոց ձերոց. այլ՝ հաւատոց մերոց
[5]Յ-ԱՆՆ, կալ յաղօթս
[6]Յ-ԱՆՆ, ոմանց երկմտելոց ողորմեսջիք
[7]Յ-ԱՆՆ, ատել
[8]Ի Բ-Ա-Ա-Ն պ-ԱՒ-Ա
[9]ՈՄԱՒ, ի ձեռն Յիսուսի
[10]Յ-ՈՒԱՆ պ-ԱՒ-Ա

[1]ՅԱՅՏՆՈՒԹԻԻՆ

ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՒ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Յայտնութիւն Յիսուսի Քրիստոսի, [2]ի ձեռն որոյ ետ Աստուած՝ ցուցանել ծառայից իւրոց որ ինչ լինելոց է վաղվաղակի, եւ նշանակեաց առաքելով ի ձեռն հրեշտակի իւրոց առ ծառայ
2 իւր Յովհաննէս, Որ վկայեաց զբանէն Աստուծոյ, եւ զվկայութիւն Յիսուսի Քրիստոսի՝ զոր ետես, [3]որ էր՝ եւ որ
3 լինելոցն էր յետ այնորիկ։" Երանի՛ [4]որ ընթեռնուն զբանս մարգարէութեանս այսորիկ, եւ որ լսէ եւ պահէ՛" զոր ինչ ի նմա գրեալ է. զի ժամանակն մերձեալ է։
4 Ի Յովհաննէ առ եւթն եկեղեցիս որ են յԱսիա, շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն [5]յէնէն եւ որ էն" եւ որ գալոցն է, եւ յեւթն [6]զօրութեանց Հոգւոյն՝ որ է" առաջի աթոռոյն իւրոյ.
5 Եւ ի Յիսուսէ Քրիստոսէ հաւատարիմ վկայէն, որ է անդրանիկ ի մեռելոց, եւ իշխան թագաւորութեանց երկրի. որ սիրեաց զմեզ, եւ [7]ելոյծ զմեզ ի պատնէն մեղաց մերոց" արեամբն իւրով.
6 Եւ արար զմեզ [8]թագաւորս եւ քահանայս" Աստուծոյ եւ Հօր իւրոյ. նմա փառք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
7 Ահաւասիկ [9]գալոց է" ընդ ամպս. եւ տեսցեն զնա ամենայն աչք, եւ որք խոցեցին զնա. եւ կոծեսցին ի վերայ նորա ամենայն ազգք երկրի։
8 Այո, Ամէն։ Ես եմ Այբ եւ Ես եմ Քէ[10], ասէ Տէր Աստուած, որ էն եւ [11]որ է" եւ որ գալոցն է, Ամենակալ։
9 Ես Յովհաննէս եղբայր ձեր եւ հաւասարակից նեղութեան եւ արքայութեան եւ համբերութեան որ ի [12]Քրիստոս Յիսուս. եղէ ես ի կղզւոջն որ անուանեալ կոչի Պատմոս՝ վասն բանին Աստուծոյ եւ վասն վկայութեան
10 Յիսուսի [12]Քրիստոսի։ Եւ [13]եղեւ յիս Հոգի՛" յաւուր կիւրակէի, եւ լսայ զկնի իմ ձայն մեծ իբրեւ զփողոյ, որ ասէր ցիս, [12]Ես եմ Ալփա եւ Ով, Ա-
11 ռաջին եւ Վերջին։" Զոր տեսանես գրեա ի գիրս, եւ տուր տանել յեւթն եկեղեցիս, որ յԵփեսոս եւ ի Զմիւռնիա եւ ի Պերգամոն եւ ի Թիւատիր եւ ի Սարդիկէ եւ ի Փիլադելփիա
12 եւ ի Լաւոդիկիա։ Եւ դարձայ տեսանել զձայնն որ խօսէր ընդ իս. եւ ի դառնալն իմում տեսի եւթն ճրագարան
13 ոսկի։ Եւ ի մէջ եւթն ճրագարանացն նման Որդւոյ մարդոյ, զգեցեալ պատմուճանի պճղնաւոր. եւ զօտեւորեալ
14 առ ստեամբքն զօտի ոսկեղէն. Եւ գլուխ նորա եւ հերքն իբրեւ զսպիտակ եւ որպէս զձիւն. եւ աչք
15 նորա որպէս բոց հրոյ. Եւ ոտք նորա նմանեալ պղնձոյ ծխելոյ ի մէջ հնոցի հրաչէկ. եւ ձայն նորա իբրեւ զձայն
16 ջուրց բազմաց։ Եւ ունէր յաջոյ ձեռինն իւրում աստեղս եւթն, եւ ի բերանոյ նորա սուր երկսայրի սրեալ

---

[1]Ոմանք, Յայտնութիւն Յովհաննու. այլ՝ Յայտնութիւն Սրբոյ Յովհաննու Աստուածաբանի
[2]Յայնն, զոր ետ նմա Աստուած
[3]Ի Յայնին պակաս
[4]Յայնն, որ ընթեռնու, և որ լսեն զբանս մարգարէութեանն և պահեն
[5]Յայնն, Ամենայնէ որ էն և որ էրն
[6]Յայնն, Հոգւոց որ են
[7]Ի Յայնին, ոմանք՝ ելոյծ զմեզ ի մեղաց մերոց, այլ՝ լուաց զմեզ ի մեղաց մերոց
[8]Ոմանք, թագաւորութիւն, քահանայս
[9]Յայնն, գայ
[10]Ոմանք յունական, Սկիզբն և վախճան
[11]Յայնն, որ էրն
[12]Յոմանս պակաս
[13]Յայնն, եղէ Հոգւով

եւանէր, եւ երեսք նորա իբրեւ [1]ա-
17 րեգական ճառագայթեալ երեւէին"։ Եւ
իբրեւ տեսի զնա, անկայ առ ոտս նո-
րա իբրեւ մեռեալ. եւ եդ ի վերայ
իմ զաջ իւր եւ ասէ ցիս, Մի՛ երկնչիր,
ես եմ Սկիզբն, եւ ես եմ վախճան։
18 Եւ ես եմ [2]կեանք եւ ես եմ որ մե-
ռայն. եւ աւասիկ կենդանի եմ յա-
ւիտեանս յաւիտենից։ [3]Ամէն։ Եւ ու-
նիմ զիսակնս մահու եւ դժոխոց։
19 Գրեա զոր տեսանես, որ էն, եւ որ
հանդերձեալ է լինել յետ այնորիկ.
20 Զխորհուրդ եւթն աստեղացդ զոր տե-
սեր յաջ իմ, եւ զեւթն ճրագարանս
ոսկիս. եւթն աստեղքն հրեշտակք
եւթն եկեղեցեացն են, եւ եւթն ճրա-
գարանքն եւթն եկեղեցիքն են։

Գլ. Բ

1 Առ հրեշտակ Եփեսացւոց եկեղեցւոյն
դրեա. Այսպէս ասէ որ ունի զեւթն
աստեղս յաջ իւր, եւ չորքի ի մէջ եւթն
2 աշտանակաց ոսկեաց. Գիտեմ զգործս
քո եւ զվաստակս քո եւ զհամբերու-
թիւն քո. եւ զի ոչ կարես [4]բառնալ
զչարսն", եւ փորձեցեր որ ասեն զինք-
եանս առաքեալս եւ ոչ են, եւ գտեր
3 զնոսա սուտս։ Եւ համբերեցեր եւ
վշտացար վասն անուան իմոյ՝ եւ [5]աշ-
4 խատեցար։ Այլ [6]ասեմ առ քեզ, զի
5 զսէրն քո զառաջին [7]թողեր։ Յիշեա
այժմ ուստի անկար, եւ ապաշաւեա,
եւ զառաջին գործսն [7]քո արա. ապա
թէ ոչ՝ [8]գամ ես" [9]վազվազակի, եւ
շարժեցից զաշտանակս քո ի տեղւոջէ
6 իւրմէ, եթէ ոչ ապաշխարեցես։ Սրդ
զայս [10]արա՝ զի ատեցեր" զգործսն
7 Նիկողայոսի, զոր ես ատեմ։ Որ ու-
նի ականջս լսելոյ՝ լսիցէ զինչ ասէ
Հոգին առ եկեղեցիս. Որ յաղթիցէն,
տացս նմա ուտել ի փայտէն կենացս որ է
ի մէջ դրախտին Աստուծոյ։
8 Եւ առ հրեշտակ Զմիւռնայեցւոց ե-

[1]Յ-ին, զարեգական որ ծագէ ի զօրութեան իւրում
[2]Յ-ին, որ կեամ
[3]Ի Բ-ում պակաս
[4]կամ, տանել զարաց
[5]Յ-ին, ոչ թուլացար
[6]Յ-ին, ունիմ
[7]Ի Յ-ինէն պակաս
[8]Յ-ին, գամ առ քեզ
[9]Յ-ոմանս պակաս
[10]Յ-ին, ունիս զի ատես

11 կեղեցւոյն գրեա. Այսպէս ասէ [11]Ան-
սկիզբնն եւ Անվախճանն", որ եղեւ
9 մեռեալ եւ կենդանացաւ. [12]Տեսի
զգործս քո եւ զնեղութիւն եւ զաղ-
քատութիւն, ([13]այլ աղքատութիւն
քո մեծութիւն եղիցի",) եւ զհայհոյու-
թիւնն, որ ասէին ինքեանս Հրեայս
զոլ՝ եւ չէին ինչ, այլ՝ ժողով Սատա-
10 նայի։ Մի՛ երկնչիր, [14]վասն որոյ կա-
միս չարչարել". ահա հանդերձեալ է
բանսարկուն արկանել ի ձէնջ ի բանտ,
զի փորձիցիք, եւ ունիցիք նեղու-
թիւն աւուրս տասն. լեր հաւատարիմ
մինչեւ ի մահ, եւ տացս քեզ զպսակն
11 կենացս։ Որ ունի ականջս լսելոյ՝ լսի-
ցէ զինչ Հոգին [15]Սուրբ ասէ առ ե-
կեղեցիս. Որ յաղթէ, [15]ոչ անիրաւի"
յերկրորդ մահուանէ։
12 Եւ առ հրեշտակն որ ի Պերգամոյ
եկեղեցին՝ գրեա. Այսպէս ասէ որ
13 ունի զսուր երկսայրի սրեալ. [12]Տեսի
[3]զգործս քո, եւ" զի բնակեալ ես ուր
աթոռն է Սատանայի, եւ ունիս զա-
նուն իմ, եւ ոչ ուրացար զհաւատս
իմ յաւուր յորում Անթիպաս վկայն
իմ հաւատարիմ [16]եղեւ. զի վկայ է
իմ հաւատարիմ ամենայն հաւատա-
ցեալ՝ որ սպանաւ ի ձէնջ, որ կայք"
14 ուր Սատանայ է բնակեալ։ Այլ ունիմ
առ քեզ սակաւ, զի [17]կայ առ քեզ
վարդապետութիւնն" Բաղաամու, որ
ուսոյց զԲաղակ դնել պայթակղութիւն
առաջի որդւոցն Իսրայելի, ուտել նո-
15 ցա զոհեալ եւ պոռնկել։ Այսպէս եւ
դու ունիս զվարդապետութիւնն Նի-
16 կոլայեցեաց զոր ես ատեմ։ Սրդ ա-
պաշխարեա, ապա թէ ոչ՝ [18]գամ վազ-
վազակի, եւ պատերազմեցայց ընդ
17 նոսա սրով բերանոյ իմով։ Որ ունի ա-
կանջս լսելոյ՝ լսիցէ զինչ Հոգին
ասէ առ եկեղեցիս. Որ յաղթէ՝ տացս
նմա ուտել ի մանանայէն թաքուցելոյ,
եւ տացս նմա [19]զղիւրն սրբութեան",

[11]Յ-ին, Առաջինն և վերջինն
[12]Յ-ին, Գիտեմ
[13]Յ-ին, այլ մեծատուն ես
[14]Յ-ին, յորոց կրկնցն իցես
[15]կամ, ոչ վնասեսցի
[16]Յ-ին, որ սպանաւ ի միջի ձերում
[17]Յ-ին, ունիս անդ զորս ունին զվարդապետութիւնն
[18]Յ-ին, գամ առ քեզ
[19]Յ-ին, խիճ սպիտակ

եւ գրեալ անուն նոր [1]ի գիրն, զոր
ոչ ոք գիտէ՝ բայց միայն որ առնուն։
18 Եւ առ հրեշտակն որ ի Թիւատիրա
եկեղեցին՝ գրեա. Այսպէս ասէ Որդին
Աստուծոյ, որոյ աչք իւր ևն իբրեւ
զրոց հրոյ, եւ ոտք նորա նման պղնձի
19 ծխելոյ. [2]Տեսի զգործս քո եւ զսէր
եւ զհաւատ եւ զպաշտօն քո [3]համբե-
րութեամբ, զի բազում է վաստակ քո
20 վերջինն քան զառաջինն։ Այլ [4]ասեմ
առ քեզ [5]բազում. զի թողեր զկինն
Զեղաբէլ, որ ասէր զինքն մարգարէ,
եւ ուսուցանէր [6]մոլորեցուցանել զծա-
ռայս իմ՝ պոռնկել եւ ուտել զպոհեալ։
21 Եւ ետու [7]նմա ժամանակ ապաշխա-
րել [8]զպոռնկութիւնն իւրեանց եւ ոչ
22 ապաշխարեցին։ Ահաւասիկ ես ար-
կանեմ զնա [9]ի հնոց, եւ զգործակիցս
իւր ընդ որս չնացաւ՝ ի նեղութիւնս
մեծամեծս, եթէ ոչ ապաշխարեսցեն
23 ի գործոց իւրեանց։ Եւ զորդիս [10]նո-
ցա սպանից մահուամբ, եւ ծանիցեն
ամենայն եկեղեցիք թէ ես եմ որ յան-
դիմանիմ զերիկամունս եւ զսիրտս,
եւ տամ ձեզ իւրաքանչիւր ըստ գոր-
24 ծոց իւրեանց։ Այլ ձեզ ասեմ, որք
ի Թիւատիրա էք եւ ոչ ունիք զվարդա-
պետութիւնս զայս, որ ոչ ծանեայք
զխորս Սատանայի զոր խօսին, Ոչ
25 արկից ձեզ այլ ծանրութիւն. Այլ
զոր ունիք, պահեցէք մինչեւ ես գամ։
26 Եւ որ յաղթէ եւ պահէ զգործս իմ
մինչեւ ցվախճան, տաց նմա իշխա-
27 նութիւն ի վերայ ազգաց։ Եւ հով-
ուեսցէ զնոսա գաւազանաւ երկա-
թեայ, եւ իբրեւ զանօթ բրտի փչրես-
28 ցէ զնոսա։ Որպէս եւ ես ընկալայ ի
Հօրէ իմմէ, եւ տաց նոցա զաստղն
29 առաւօտուն։ Որ ունի ականջս՝ լուիցէ
զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս։

Գլ. Գ

1 Եւ առ հրեշտակ Սարդիացւոց եկե-

[1]Յն.՝ ի վերայ խճին
[2]Յն.՝ Գիտեմ
[3]Յն.՝ և զհամբերութիւն
[4]Յն.՝ ունիմ
[5]Ոմն.՝ սակաւ. յայլ՝ պակաս
[6]Յն.՝ և մոլորեցուցաներ
[7]Յն.՝ նմա
[8]Յն.՝ ի պոռնկութենէ իւրմէ, և ոչ ապաշ-
խարեաց
[9]Յն.՝ ի մահիճս [10]Յն.՝ նորա

ղեցւոյն գրեա. Այսպէս ասէ որ ունի
զեւթն [11]Հոգին Աստուծոյ եւ զեւթն
աստեղս. [2]Տեսի զգործս քո զի անուն
2 կենդանւոյ ունիս եւ մեռեալ ես։ Լեր
արթուն եւ հաստատեա [12]այսուհետեւ,
զի հանդերձեալ ես՝՝ մեռանել. քանզի
ոչ գտի զգործս քո կատարեալ առաջի
3 Աստուծոյ։ Արդ յիշեա թէ որպէս
լուար, եւ պահեա եւ ապաշխարեա.
ապա թէ ոչ զուարթանաս, գամ որ-
պէս գող. եւ ոչ [13]ոք իմանայ՝՝ զգա-
4 լուստ իմ առ քեզ։ [14]Ունիս սակաւ
մի զանուն Սարդիացւոցն՝՝ որք ոչ
աղտեղացուցին զհանդերձս իւրեանց,
եւ [15]չրջին ի սպիտակս որում արժանի
5 եղեն՝՝։ Որ յաղթէ [16]այսպէս զգեցցի
սպիտակս, եւ ոչ [17]ջնջեսցի անուն՝՝
նորա ի գրքոյն կենաց. եւ խոս-
տովանեցայց զանուն նորա առաջի
Հօր իմոյ եւ առաջի [18]հրեշտակաց։
6 Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ ասէ
Հոգին առ եկեղեցիս։
7 Եւ առ հրեշտակն Փիլադելփեայ եւ-
կեղեցւոյն գրեա. Այսպէս ասէ Սուրբն,
Ճշմարիտն՝ որ ունի զվականն Դաւթի.
բանայ՝ եւ ոչ ոք է որ փակէ, եւ փակէ՝
8 եւ ոչ ոք է որ բանայ. [2]Տեսի զգործս
քո. ահա ետու առաջի քո դուռն բաց-
եալ, զոր ոչ ոք կարէ փակել. զի սա-
կաւիկ ունիս զօրութիւն, եւ պահեցեր
զբանս իմ, եւ ոչ ուրացար զանուն
9 իմ։ Ահաւասիկ ես տամ քեզ [19]զժո-
ղովն Սատանայի, որք ասեն զինքեանս
Հրեայս գոլ՝ եւ ոչ են, այլ սուտն. ա-
բարիս զնոսա, զի եկեսցեն եւ երկիր-
պագցեն առաջի ոտից քոց, եւ ծանի-
10 ցեն զի ես սիրեցի զքեզ։ Զի պահեցեր
զբան համբերութեան իմոյ, եւ ես
պահեցից զքեզ ի ժամ փորձութեան
քո. որ հանդերձեալ է գալ յամենայն
տիեզերս՝ փորձել զամենայն բնակեալս
11 յերեսս երկրի։ Ահա գամ վազվազակի.
կալ զոր ունիսդ, զի մի՛ ոք առցէ
12 զպսակ քո։ Որ յաղթէ՝ արարից զնա

[11]Յն.՝ Հոգիսն
[12]Յն.՝ զմնացեալսն որ հանդերձեալ են
[13]Ոմն.՝ իմասցիս
[14]Յն.՝ Այլ ունիս սակաւ անուանս ի Սարդիկէ
[15]Յն.՝ չրջեսցին ընդ իս ի սպիտակս, քանզի
արժանի են
[16]Ոմն.՝ նա [19]Յն.՝ ի ժողովն
[17]Յն.՝ ջնջեցից զանուն
[18]Յն.՝ հրեշտակաց նորա

սիւն տաճարի Աստուծոյ իմոյ, եւ արտաքս այլ մի՛ ևս ելցէ. եւ գրեցից ի վերայ նորա զանուն Աստուծոյ իմոյ, եւ զանուն քաղաքի Աստուծոյ իմոյ, զնորին Երուսաղէմի, որ իջանելոյ է յերկնից Աստուծոյ իմոյ, եւ [1]անուն
13 նորա՝ նոր։ Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս։
14 Եւ առ հրեշտակն Լաւոդիկեայ եկեղեցւոյն գրեա. Այսպէս ասէ Ամէնն, վկայն հաւատարիմ եւ ճշմարիտ, Սկիզբն [2]ստեղծուածոց Աստուծոյ. Գիտեմ զգործս քո, զի ոչ ցուրտ ես եւ ոչ ջերմ. պարտ էր քեզ ցուրտ
16 լինել եւ կամ ջերմ։ Այլ զու զգուշ ես, եւ ոչ ջերմ եւ ոչ ցուրտ, հանդեր-
17 ձեալ ես փսխել ի բերանոյ իմմէ։ Զի ասես, Մեծատուն էի եւ մեծացայ, եւ ոչ իւիք կարօտ եմ. եւ ոչ գիտես եթէ դու ես ողորմելի եւ հէք եւ աղ-
18 քատ, մերկ եւ կոյր։ Արդ ես խորհրդակից եղէց քեզ. Ա՛ռ, գնեա յինէն ոսկի փորձեալ ի հրոյ զի մեծասցիս, եւ հանդերձս սպիտակ՝ զի զգեցցիս, զի մի՛ երեւեսցի անվայելչութիւն մերկութեան քո. եւ զիր զեղ յաչս քո
19 զի տեսցես։ Ես զոր սիրեմ յանդիմանեմ եւ խրատեմ. նախանձեա այժմ
20 եւ ապաշխարեա։ Ահաւասիկ կամ ես առ դուռս եւ բախեմ. եթէ ոք լուիցէ ձայնի իմում եւ բանայցէ զդրունսն, մտից առ նա եւ ընդ[3]երեկիցիս առնել ընդ իս եւ նա ընդ իս։ Որ յաղթէ՝ տացի նմա նստել ընդ իս յաթոռ իմ, որպէս եւ ես յաղթեցի եւ նստայ յաթոռ Հօր
22 իմոյ։ Որ ունիցի ականջս՝ լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս։

Գլ. Դ

1 Եւ յետ այսորիկ տեսի, եւ ահա [3]դրունք երկնից բացեալ էին՝, եւ [4]ձայն փողոյն առաջնոյ զոր լուայ՝ խօսէր ընդ իս եւ ասէր, Ել այսր, եւ ցուցից
2 քեզ զինչ լինելոց է առ յապայն։ Եւ վաղվաղակի եղէ ես Հոգւով, եւ ահա
3 աթոռ անդ [5]երկրին։ Եւ ի վերայ աթոռոյն նստէր՝ նման տեսլեան ականց
4 յասպսոյ եւ սարդիոնի։ Եւ [6]քահանայք չուրջ զաթոռովն նմանք՝ տեսլեան զմբլոտի, եւ չուրջ զաթոռովն աթոռք քսան եւ չորք, եւ ի վերայ աթոռոցն նստէին քսան եւ չորք երիցունք՝ զգեցեալ հանդերձս սպիտակս,
5 եւ ի գլուխս իւրեանց պսակս ոսկիս։ Եւ յաթոռոյ անտի ելանէին փայլատակմունք եւ ձայնք եւ որոտմունք. եւ եւթն ջամբարք հրոյ բորբոքելոյ առաջի աթոռոյն, որ են եւթն
6 Հոգիքն Աստուծոյ։ Եւ էր առաջի աթոռոյն ծով ապակեզէն իւնամանութիւն սպիտակութեան սառոյն, եւ ի մէջ աթոռոյն եւ չուրջ զաթոռովն չորք կենդանիք, լի աչօք առաջոյ եւ յետոյ։
7 Եւ էր կենդանին առաջին նման առիւծու, եւ երկրորդ կենդանին՝ նման զուարակի, եւ երրորդ կենդանին ունէր երեսս մարդոյ, եւ չորրորդ կեն-
8 դանին՝ նման արծուոյ թռուցիկոյ։ Եւ չորից կենդանեացն էին միոյ միոյ ի նոցանէ վեց թեւք չուրջանակի, եւ ի ներքոյ լի էին աչօք, եւ ոչ հանգչէին ոչ զտիւ եւ ոչ զգիշեր յասելոյ, [7]Սուրբ, Սուրբ, Սուրբ, Սուրբ, Սուրբ, Սուրբ, Սուրբ, Սուրբ, Սուրբ՝, Տէր Աստուած Ամենակալ,
9 [8]որ էն եւ ես եւ որ գալոց ես՝։ Եւ յորժամ տային կենդանիքն փառս եւ պատիւ եւ գոհութիւն նստելոյն ի վերայ աթոռոյն՝ կենդանւոյն յաւիտեանս
10 յաւիտենից, Անկանէին քսան եւ չորք երիցունքն առաջի նստելոյն յաթոռն, եւ երկիր պագանէին կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից. եւ դնէին զպսակս իւրեանց առաջի աթոռոյն եւ
11 ասէին, Արժանի ես, [9]Տէր Աստուած մեր առնուլ փառս եւ պատիւ եւ զօրութիւն, զի դու ստեղծեր զամենայն, եւ ի կամէն քո ստեղծան եւ կան հաստատուն։

---

[1] Յ՝այնմ, զանուն իմ
[2] ի Յ՝ննէն պ՝ոխ
[3] Յ՝այնմ, դուռն բացեալ էր յերկինս
[4] Յ՝այնմ, ձայնն առաջինն զոր լուայ՝ էր իբրեւ զփողոյ, որ

[5] Յ՝այնմ, յերկինս. և ոմն որ նստէր ի վերայ աթոռոյն։ (3) Եւ որ նստէրն՝ էր
[6] Բ՝ոչ՝ոխ, ծիածան չուրջ զաթոռովն նման
[7] Բ՝ոչ՝ոխ, Սուրբ, Սուրբ, Սուրբ
[8] Յ՝այնմ, որ էրն և որ էն և որ գալոցն է
[9] Բ՝ոչ՝ոխ, Տէր և Աստուած մեր

Գլ· Ե

1 Եւ տեսի յաջոյ ձեռինն որ նստէր ի վերայ աթոռոյն գիրս գրեալ ներքոյ եւ արտաքոյ, եւ կնքեալ եւթն կնքովք։
2 Եւ տեսի հրեշտակ մի զօրաւոր զի քարոզէր ի ձայն մեծ, Ո՞ է արժանի բանալ զգիրս եւ լուծանել զկնիքս նո-
3 քա։ Եւ ոչ ոք կարէր ոչ յերկինս եւ ոչ յերկրի եւ ոչ ի ներքոյ երկրի բա-
4 նալ զգիրսն, [1]զի ոչ տեսին զնա։ Եւ ես լայի ուժգին զի ոչ ոք գտաւ ար-
ժանի բանալ զգիրսն եւ հայել ի նա։
5 Եւ մի յերիցանցն ասէ ցիս, Մի՛ լար. ահաւասիկ յաղթեաց Առիւծն յազգէն Յուդայ յարմատոյն Դաւթի՝ բանալ զգիրսն եւ լուծանել զեւթն կնիքսն
6 նորա։ Եւ տեսի ի մէջ աթոռոյն եւ ի մէջ չորից կենդանեացն եւ ի մէջ ե-
րիցանցն Գառն կայր [2]զենեալ, որ ու-
նէր եւթն եղջեւրս եւ աչս եւթն, որ են եւթն Հոգիք Աստուծոյ, առաքեալ
7 ընդ ամենայն երկիր։ Եւ [3]եկն ընկա-
լաւ՝ յաջոյ ձեռանէ նորա որ նստէր
8 ի վերայ աթոռոյն։ Եւ յորժամ առ զգիրսն, չորք կենդանիքն եւ քսան եւ չորք երիցունքն անկանէին առաջի Գառինն. եւ ունէին իւրաքանչիւր քնար եւ բուրվառ ոսկի լի խնկով,
9 որ է աղօթք սրբոցն։ Եւ օրհնէին երգս նորս եւ ասէին, Արժանի ես առնուլ զգիրդ եւ բանալ զկնիքս դորա, զի զենար եւ գնեցեր զմեզ Աստուծոյ ար-
եամբդ քով յամենայն ազգաց եւ ի լեզուաց եւ [4]ի ժողովոց հեթանոսաց՝։
10 Եւ արարեր [5]զմեզ Աստուծոյ մերոյ [6]թագաւորս եւ քահանայս՝ թագաւո-
11 րել ի վերայ երկրի։ Եւ տեսի, եւ լուայ ձայն հրեշտակաց բազմաց որք կային չուրջ զաթոռովն եւ զչորիւքն կենդանեօքն եւ [7]զքահանայիւքն, եւ էր թիւն նոցա բեւրք բիւրուց եւ հա-
12 զարք հազարաց։ Ասէին ձայնիւ մե-
ծաւ, Արժանի է Գառնդ զենեալ առնուլ զմեծութիւն եւ զիմաստութիւն եւ
զզօրութիւն եւ զպատիւ եւ զփառս
13 եւ զօրհնութիւն։ Եւ ամենայն արա-
րածք որ են յերկինս եւ [8]յերկրի եւ ի ծովու եւ որ ի նոսա՝ լուայ զի ա-
սէին, [9]Որ նստիս յաթոռն եւ Գառնն՝ օրհնեալ, բարձրացեալ եւ փառաւոր-
14 եալ՝ յաւիտեանս յաւիտենից։ Եւ չորք կենդանիքն ասէին, Ամէն. եւ [10]երի-
ցունքն անկանէին առաջի նորա եւ
[11]երկիր պագանէին՝։

Գլ· Զ

1 Եւ տեսի զի եբաց Գառնն [12]զմին յեւթն կնքոցն՝, եւ լուայ ի միոյ ի չորից կենդանեացն իբրեւ ձայն ո-
2 րոտման զի ասէր [13]Թէ Գամ՝։ Եւ տե-
սի եւ ահա ձի սպիտակ, եւ որ հեծ-
նալն էր ի նմա՝ ունէր աղեղն. եւ տուաւ նմա պսակ, եւ [14]ելն յաղթողն
զի յաղթեսցէ՝։
3 Եւ յորժամ եբաց զկնիքն երկրորդ, լուայ յերկրորդ կենդանւոյն զի ասէր,
4 [13]Գամ։ Եւ ել այլ ձի կարմիր, եւ որ հեծեալն էր ի վերայ նորա՝ տուաւ նմա առնուլ զխաղաղութիւն յերկրէ, զի զմիմեանս զենցեն, եւ տուաւ նմա
սուր մի մեծ։
5 Եւ յորժամ եբաց զկնիքն երրորդ, լուայ յերրորդ կենդանւոյն զի ասէր [13]Թէ Գամ՝. եւ տեսի եւ ահա ձի
սեաւ, եւ որ նստեալն էր ի վերայ նորա՝ ունէր կշիռ ի ձեռին իւրում։
6 Եւ լուայ ձայն ի միջոյ չորից [15]կեն-
դանեացն, կապիճ մի ցորեան՝ զենարի միոջ, եւ երեք կապիճ գարի՝ զենարի միոջ. եւ ձէթ եւ զինի մի՛ վնասեսցես։
7 Եւ յորժամ եբաց զկնիքն չորրորդ, լուայ ձայն ի չորրորդ կենդանւոյն զի
8 ասէր [13]Թէ Գամ՝։ Եւ տեսի, եւ ահա ձի
չալոտ, եւ որ նստէրն ի վերայ նորա՝ [16]ունէր զմահ՝, եւ Դժոխք երթային

---

[1] Յ-ին, և ոչ հայել ի նա
[2] Յ-ին, իբրեւ զենեալ
[3] Ո-ին, եկն և առ զգիրն
[4] Յ-ին, ի ժողովրդոց և ի հեթանոսաց
[5] Ո-ին, զմեզ
[6] Ո-ին, թագաւորութիւն և քահանայութիւն
[7] Յ-ին, ղերիցամբքն
[8] Բ-ին, յերկրի և ի ներքոյ երկրի
[9] Յ-ին, Ա.ՅՆՄ որ նստի յաթոռն և Գառինն օրհնութիւն և պատիւ և փառք և զօրութիւն
[10] Ո-ին, քսան և չորք երիցունք
[11] Ո-ին, երկիր պագանէին կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից
[12] Ո-ին, ի կնքոցն
[13] Ի Ց-ին, ա-ին՝ եկ, այլ՝ եկ և տես
[14] Ի Ց-ին, ա-ին՝ եղ յաղթող և զի յաղթեսցէ. այլ՝ եղ յաղթող և յաղթեաց
[15] Յ-ին, կենդանեացն որ ասէր
[16] Յ-ին, անուն նմա Մահ

զհետ նորա. եւ տուաւ [1]նմա իշխանութիւն չորրորդ մասին աշխարհի սատակել սրով եւ սովով եւ մահուամբ եւ գազանօք երկրի։
9 Եւ յորժամ եբաց զկնիքն հինգերորդ՝ տեսի ի ներքոյ սեղանոյն զհոգիս [2]սպանեալացն [3]վասն բանին Աստուծոյ եւ վասն վկայութեանն
10 նորա զոր ունէին։ Որք ասէին ի ձայն մեծ, Մինչեւ յե՞րբ, Տէր սուրբ եւ ճշմարիտ, ոչ դատիս եւ խնդրես զվրէժ արեան մերոյ ի բնակչաց երկրի։
11 Եւ տուաւ [4]նոցա արկանելիս սպիտակ՝, եւ ասացաւ նոցա զի հանգիցին վասն ի ժամանակ, մինչեւ լցցին ծառայակիցք նոցա եւ եղբարք նոցա որք հանդերձեալ են կատարել իբրեւ զնոսա։
12 Եւ տեսի յորժամ եբաց զկնիքն վեցերորդ, եղեւ շարժումն մեծ, եւ արեգակն եղեւ սեաւ իբրեւ զվաստերտ այծեայ, եւ լուսինն [5]բոլորովին եղեւ
13 իբրեւ արիւն։ Եւ աստեղք երկնից թափեցան յերկիր, որպէս [6]տերեւ թզենւոյ զի ուժգին շարժիցի ի հող-
14 մոյ՝։ Եւ երկինք իբրեւ զմագաղաթեայ դիրս գալարին. եւ ամենայն լերինք եւ կղզիք ի տեղւոյ իւրեանց
15 շարժեցան։ Եւ թագաւորք երկրի եւ իշխանք, հազարապետք եւ մեծամեծք եւ զօրաւորք եւ ամենայն ծառայք եւ ամենայն ազատք թաքուցին զինքեանս
16 յայրս եւ ի ծերպս վիմաց։ Եւ ասէին [7]լերանց թէ՝ Անկերուք ի վերայ մեր,
17 եւ ցբլուրս՝ թէ Ծածկեցէք զմեզ՝։ Զի եկն օր մեծ բարկութեան [8]նորա, եւ ո՞վ կարէ կալ [9]առաջի նորա՝։

Գլ. Է

1 Եւ յետ այնորիկ տեսի չորս հրեշտակս զի կային ի չորս անկիւնս երկրի, եւ ունէին զչորս հողմս երկրի, զի մի՛ չնչեցէ հողմ ի վերայ երկրի եւ
2 մի՛ ի ծովս եւ մի՛ ի ծառս։ Եւ տեսի այլ հրեշտակ զի ելլ յարեւելից, եւ ունէր զկնիք Աստուծոյ կենդանւոյ, եւ աղաղակեաց ձայնիւ մեծաւ առ չորս հրեշտակսն՝ որոց [9]առեալ էր իշխանութիւն՝ ապականել զերկիր եւ զծով.
3 եւ ասէր, Մի՛ վնասէք երկրի, մի՛ ծովու, մի՛ ծառոց. դաղարեցէք մինչեւ [10]կնքեցից զծառայս Աստուծոյ [11]իմոյ։
4 Եւ լուայ զթիւ կնքելոցն զի էին հարեւր քառասուն եւ չորք հազարք՝ կնքեալք յազգէ որդւոցն Իսրայելի.
5 Յազգէն Յուդայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն Ռուբենի՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն Գադայ՝
6 երկոտասան հազար կնքեալ, Յազգէն Ասերայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն Նեփթաղիմայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն Մանասէի՝
7 երկոտասան հազար կնքեալ, Յազգէն Շմաւունի՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն Ղեւեայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն Իսաքարայ՝ երկոտա-
8 սան հազար կնքեալ, Յազգէն Զաբուղոնի՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն Յովսեփու՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն Բենիամինի՝ երկոտասան հազար կնքեալ։
9 Եւ յետ այսորիկ տեսի եւ ահա ժողովուրդ բազում որոց ոչ դոյր թիւ, յամենայն հնեթանոսաց եւ յամենայն ազգաց եւ յամենայն լեզուաց եւ յամենայն ժողովրդոց, որք կային առաջի աթոռոյն եւ առաջի Գառնին՝ արկեալ զխուրեամբք հանդերձս սպիտակս, եւ
10 արմաւենիս ի ձեռս իւրեանց։ Ազաղակէին ի ձայն մեծ եւ ասէին, Փրկութիւն Աստուծոյ մերոյ, որ նստի ի վերայ աթոռոյն, եւ Գառնին։ Եւ ա-
11 մենայն հրեշտակք կային չուրջ զաթոռովն եւ զերիցսն եւ զչորիսն կենդանեօքն, եւ անկանէին յերեսս առաջի աթոռոյն եւ երկիր պագանէին
12 Աստուծոյ, Ասելով, Ամէն. օրհնութիւն եւ փառք եւ իմաստութիւն եւ գոհութիւն եւ պատիւ եւ զօրութիւն

---

[1] Բ-ղ-ա, նոցա
[2] ի Յ-ն-ն պ-ի-ա-կ
[3] Ո-ն-ա, զնեալց
[4] Յ-ն-ն, նոցա խ-ր-ա-ք-ն-չ-ի-ր արկանելի սպիտակ
[5] Յ-ո-ն-ա պ-ի-ա-կ
[6] Յ-ն-ն, որպէս թզենի ընկենու զպտուղս իւր քանզի, յուժգին հողմոյ շարժեալ
[7] Յ-ն-ն, լերանց և վիմաց թէ՝ Անկերուք ի վերայ մեր և ծածկեցէք զմեզ յերեսաց այնորիկ որ նստի ի վերայ սեթոռոյն՝ և ի բարկութենէ Գառնին
[8] Ո-ն-ա, նոցա
[9] Յ-ն-ն, տուեալ էր
[10] Յ-ն-ն, կնքեացուք
[11] Յ-ն-ն, մերոյ ի ճակատս նոցա

եւ [1]չնորհք Տեառն Աստուծոյ մերոյ
13 յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։ Եւ
ասէ ցիս մի յերիցանց անտի, Սոքա
որ զգեցեալ են զհանդերձս սպիտակս՝
14 ո՞յք են, եւ [2]կամ ուստի՞ գան։ Ես
ասացի ցնա, Տէր, դու գիտես. եւ
ասէ ցիս, Սոքա են որ գան ի վշտաց
մեծաց, եւ լուացին զարկանելիս իւր-
եանց եւ սպիտակացուցին արեամբ
15 Գառինն։ Վասն այնորիկ են առաջի
աթոռոյն Աստուծոյ, եւ պաշտեն զնա
գիւր եւ զգիշեր ի տաճարի նորա, եւ
որ նստի ի վերայ աթոռոյն՝ [3]բնակեալ
16 է ի նոսա։ [4]Ոչ քաղցիցեն եւ [4]ոչ ծա-
րաւիցեն, եւ ոչ մեղիցէ նոցա ոչ ա-
17 րեգակն եւ ոչ տօթ։ [5]Եւ Գառնն ի
միջոյ աթոռոյն [2]իւրոյ հովուեսցէ զնո-
սա, եւ առաջնորդեսցէ նոցա [6]ի կենաց
աղբեւր ջրոյ կենդանւոյ. քանզի ե-
հաս՝ Աստուած զամենայն արտօսր
յաչաց նոցա։

Գլ. Ը

1 Եւ յորժամ եբաց զկնիքն եւթներորդ,
եղեւ լռութիւն յերկինս որպէս կէս
2 ժամու։ Եւ տեսի [7]հրեշտակս եւթն՝
որ առաջի Աստուծոյ կային. եւ տուաւ
3 նոցա եւթն փող։ Եւ այլ հրեշտակ
եկն եւ եկաց առ սեղանն, եւ ունէր
խնկահանոյ ոսկի, եւ տուաւ նմա խունկ
բազում, զի մատուսցէ [8]ղաղօթս ա-
մենայն սրբոց ի վերայ ոսկեղէն սե-
4 ղանոյ առաջի աթոռոյն։ Եւ ել ծուխ
խնկոյն՝ [8]աղօթք սրբոցն [9]ի ձեռաց
5 հրեշտակացն՝ առաջի Աստուծոյ։ [10]Եւ
ելից հրեշտակն զխնկանոցն՝ ի հրոյ
սեղանոյն, եւ արկ զնա յերկիր. եւ
եղեւ որոտումն եւ ձայնք եւ փայլա-
6 տակումն եւ շարժումն մեծ։ Եւ եւթն
հրեշտակքն որ ունէին եւթն փող՝
պատրաստեցին զինքեանս առ ի հար-
կանել։

7 Եւ առաջին հրեշտակն եհար զփողն,
եւ եղեւ կարկուտ եւ հուր եւ արիւն
խառնեալ, եւ անկաւ յերկիր, եւ զեր-
բորդ մասն երկրի այրեաց, եւ զերրորդ
մասն ծառոց այրեաց, եւ զամենայն
դալար խոտոյ այրեաց։
8 Եւ երկրորդ հրեշտակն փողեաց, եւ
իբրեւ զլեառն մի մեծ հրդեհեալ ան-
կաւ ի ծով, եւ եղեւ երրորդ մասն
9 ծովու արիւն. Եւ սատակեցաւ եր-
բորդ մասն [11]լուղակաց, եւ որ ունէր
չունչ կենդանի ապականեցաւ։
10 Եւ երրորդ հրեշտակն փողեաց, եւ
անկաւ յերկնից աստղ մի մեծ՝ բոր-
բոքեալ իբրեւ ղաղմբար, եւ անկաւ
յերրորդ մասն գետոց եւ աղբերաց.
11 Եւ էր անուն աստեղն [12]Դառնութիւն.
եւ բազումք մեռան ի դառնութենէ
ջուրցն։
12 Եւ չորրորդ հրեշտակն փողեաց, եւ
վիրաւորեր երրորդ մասն արեգական
եւ երրորդ մասն լուսնի եւ երրորդ
մասն աստեղաց. [13]եւ խաւարեր՝ եր-
բորդ մասն նոցա, [14]եւ երրորդ մասն
ղիւերոյ՝ նոյնպէս։
13 Եւ տեսի եւ լուայ ձայն [15]հրեշտակի
թռուցելոյ ի մէջ երկնից ղի ասէր ի
ձայն մեծ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, [16]որ
բնակեալ են յերկրի, յորժամ լինիցի
ձայն երիցն եւս փողոց ղոր կամիցին
հրեշտակքն՝ հարկանել։

Գլ. Թ

1 Եւ հինգերորդ հրեշտակն փողեր, եւ
տեսի զի աստղ մի անկաւ յերկնից,
եւ տուաւ նմա բանալի ղբոյն անդնդո-
2 ղոց. [17]Եւ ելանէր՝ ծուխ ի ղբոյն որ-
պէս զծուխ հնոցի մեծի. եւ խաւարե-
3 ցաւ արեգակն եւ [18]օդք։ Եւ ի ղբոյն՝

[1] Յ՝ՈՒՆ, կարողութիւն
[2] ի Յ՝ՈՒՆ գ-ՀՈՒ
[3] Յ՝ՈՒՆ, եղիցի վրան ի վերայ նոցա
[4] Յ՝ՈՒՆ, Ոչ եւս
[5] Յ՝ՈՒՆ, Զի
[6] Յ՝ՈՒՆ, յաղբեւրս կենաց ջրոց. և ընկեցէ
[7] Յ՝ՈՒՆ, զեւթն հրեշտակսն
[8] Յ՝ՈՒՆ, յաղօթս ՝ՀՈ, ընդ աղօթս
[9] Յ՝ՈՒՆ, ի ձեռանէ հրեշտակին
[10] Յ՝ՈՒՆ, եւ առ հրեշտակն զինկանոցն և ելից զնա

[11] Յ՝ՈՒՆ, արարածոց որ ի ծովու, որոց էր չունչ. և երրորդ մասն նաւուց բնկղմեցաւ
[12] Յ՝ՈՒՆ, Աւշինդր, և երրորդ մասն ջուրց եղեւ յաւշինդր, և բազումք ի մարդկանէ մեռան ի ջուրցն, զի դառնացան
[13] Յ՝ՈՒՆ, զի խաւարեսցի
[14] Յ՝ՈՒՆ, և տիւն մի՛ ծագեսցէ զերրորդ մասն իւր, և գիշեր
[15] ՈՐՀՈՒ, արծուոյ
[16] Յ՝ՈՒՆ, որոց բնակեալ են յերկրի ի մնացելոց ձայնից փողոյն երից հրեշտակաց որ հանդերձեալ են
[17] Բ-ՂՈ-ՀՒ, Եւ երաց զգուբն անդնդոց, և ելանէր
[18] Յ՝ՈՒՆ, օդք ի ծխոյ գբոյն։ (3) Եւ ի ծխոյն

ելանէր մարախ յերկիր . եւ տուաւ նոցա իշխանութիւն իբրեւ զխայթոցս
4 կարճի . Եւ ասացաւ նոցա զի մի՛ մեզցին խոտոյ երկրի [1]եւ մի՛ ամենայն ծառոյ , բայց միայն [2]մարդոյ երկրայնոյ՝ , որ ոչ ունիցին [3]զինքն ի վերայ
5 հակառակս իւրեանց : Եւ տուաւ նոցա հրաման զի մի՛ սպանանիցեն զնոսա , այլ չարչարեսցեն զնոսա ամիս հինգ . եւ չարչարանք նոցա իբրեւ զխայթոցս
6 կարճի որ հարկանիցէ զմարդ : Եւ յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ , եւ մի՛ գտցեն . եւ ցանկասցեն մեռանիլ , եւ փախիցէ ի նոցանէ մահ :
7 Եւ նմանութիւն մարախոյն՝ նմանութիւն ձիոց պատրաստելոց ի պատերազմ . եւ ի վերայ գլխոց նոցա իբրեւ զպսակ՝ նմանեալ ոսկւոյ , եւ երեսք
8 նոցա իբրեւ զերեսս մարդոյ . Եւ հերք նոցա իբրեւ զհերս կնոջ , եւ ատամունք նոցա իբրեւ զառիւծու :
9 Եւ ունէին զրահս իբրեւ զզրահս երկաթի . եւ ձայն թեւոց նոցա իբրեւ զձայն կառաւարաց ձիոց բազմաց որ արշաւեն
10 ի պատերազմ : Եւ ունէին պոչս ըստ նմանութեան կարճի , եւ խայթոց յաղիս նոցա . եւ ունէին իշխանութիւն
11 չարչարել զմարդիկ ամիս հինգ : Եւ ունէին թագաւոր ի վերայ իւրեանց զհրեշտակն գժոխոց . եւ անուն նորա Եբրայեցերէն [4]Աղբադոն , որ կոչի [5]ի
12 Հայ բարբառ կորուստ՝ : Ահաւասիկ վայ մի էանց , եւ վայք երկու գալոց են :
13 Եւ վեցերորդ հրեշտակն հարկանէր զվիրն , եւ լուայ [6]ձայն ի չորից կողմանացն՝ որ էին առաջի սեղանոյն՝
14 Ասասուածոյ , Զի ասէր ցհրեշտակն վեցերորդ որ ունէր զվիրն , Լոյծ զչորս հրեշտակսն զկապեալս ի վերայ գետոյն
15 մեծի Եփրատայ : Եւ լուծան չորք հրեշտակքն պատրաստեալք ի ժամ եւ յօր եւ յամիս եւ ի տարի , զի սպանցին զերրորդ մասն մարդկան :
16 Եւ համարք հեծելոց զօրաց նոցա [7]բեւրք բիւրուց եւ հազարք հազարաց լուայ՝
17 զթիւ նոցա : Եւ [8]տեսի ձիս ի տեսլեանն , եւ հեծեալս ի նոսա՝ որք ունէին զրահս հրեղէնս եւ [9]յակինթս հրակեհեալս ծծմբով՝ . եւ գլուխք ձիոցն իբրեւ զգլուխս առիւծուց . եւ ի բերանոց նոցա հուր ելանէր եւ ծուխ
18 եւ ծծումբ : Եւ [10]ի հարուածոցս յայսցանէ՝ մեռաւ երրորդ մասն մարդկան՝ ի հրոյն եւ ի ծխոյն եւ ի ծծմբոյն որ
19 ելանէր ի բերանոց նոցա : Զի [11]իշխանութիւն ի բերանս է նոցա եւ յապիս նոցա , եւ ապիք նոցա նմանութիւն օձի . եւ ունէին գլուխս որով [12]սա-
20 տակէին զանիրաւս՝ , Եւ այլք ի մարդկանէ որ ոչ մեռան ի հարուածոցս յայսցանէ՝ ոչ ապաչխարեցին եւ ոչ զարձան ի գործոց ձեռաց իւրեանց , յերկրպագութենէ դիւաց եւ կռոց յոսկեղինաց եւ յարծաթեղինաց եւ ի պղնձոյ եւ ի քարէ եւ ի փայտէ , որք ոչ տեսանել կարեն եւ ոչ լսել եւ ոչ
21 գնալ . Եւ ոչ ապաչխարեցին ի մարդասպանութենէ եւ ի դեղատուութենէ եւ ի պոռնկութենէ եւ ի գողութենէ իւրեանց :

Գլ. Ժ

1 Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր զի իջանէր յերկնից , եւ զգեցեալ էր ամպ, եւ ծիածան ի գլուխ նորա . եւ երեսք նորա իբրեւ զարեգակն , եւ ոտք նո-
2 րա որպէս սիւն հրոյ : Եւ ունէր ի ձեռին իւրում գրկոյք մի բացեալ . եւ եդ զաջն իւր զաջ ի վերայ ծովու , եւ
3 զձախն ի վերայ երկրի : Եւ աղաղակեաց ի ձայն մեծ , գոչեաց իբրեւ զառիւծ . եւ յորժամ աղաղակեաց , խօսեցան եւթն որոտմունք յիւրեանց
4 ձայնս : Եւ յորժամ խօսեցան եւթն որոտմունքն , կամէի գրել . եւ լուայ ձայն յերկնից զի ասէր , Կնքեա զոր խօսեցան եւթն որոտմունքն , եւ մի՛
5 գրեր : Եւ հրեշտակն զոր տեսի , որ եդ զաջն իւր ի վերայ ծովու եւ զմեւսն ի ցամաքի , համբարձ զձեռն իւր զաջ

---

[1]Բ–ղ–ս , եւ մի՛ ամենայն դալարոյ , եւ
[2]Յ–յնն , մարդկան
[3]Բ–ղ–ս , զկնիք Աստուծոյ
[4]Բ–ո բ–ե–ֆ–ր , Աբադդոն
[5]Յ–յնն , ի Յոյն բարբառ Ապողիոն
[6]ի Յ–ն–ր , սահ՝ ձայն մի ի չորից եղջերաց սեղանոյն ոսկւոյ որ առաջի . ալ՝ ձայն մի յեղջերաց սեղանոյն , ևն . այլ՝ մի ի սեղանոյն , ևն .
[7]Յ–յնն , երկու բեւրք բիւրուց , և լուայ

[8]Յ–յնն , այսպէս տեսի
[9]Յ–յնն , յակինթեղէնս և ծծմբեղէնս
[10]Ոմն , յերից հարուածոց աստի
[11]Ոմն , իշխանութիւն ձիոցն
[12]Յ–յնն , ինասէին

6 յերկինս. Եւ երդուաւ ի կենդանին յաւիտենից որ [1]հաստատեաց զերկիր
եւ որ ի նմա, զի ոչ եւս կայ՝ այլ ժա-
7 մանակ. Այլ յաւուրս ձայնի եւթներորդ հրեշտակին, յորժամ հարցէ
զիւղն, կատարեսցի խորհուրդն Աս-
տուծոյ որ աւետարանեցաւ [2]ի ձեռն
ծառայից իւրոց մարգարէիցն։
8 Եւ ձայնն զոր լուայ յերկնից՝ դար-
ձեալ խօսեցաւ ընդ իս եւ ասէ, Երթ,
առ զգրկոյնն զոր ունի հրեշտակն բաց-
եալ ի ձեռին իւրում, եւ կայ ի վերայ
9 ծովուս եւ ցամաքի։ Եւ ես երթեալ
[3]առ հրեշտակն՝ խնդրեցի ի նմանէ՝.
եւ ասէ ցիս, Առ զսա եւ կեր զդոյն,
եւ դառնասցի յորովայն քո, այլ ի բե-
10 րան քո է քաղցր իբրեւ զմեղր։ Եւ
առի զգրկոյնն [4]բացեալ ի հրեշտակէն՝
եւ կլայ զնա. եւ էր ի բերան իմ որ-
պէս մեղր. եւ յորժամ կերայ, դառ-
11 նացաւ որովայն իմ։ Եւ ասէ ցիս,
Հասանէ քեզ դարձեալ մարգարէանալ
ի ժողովուրդս եւ ի հեթանոսս եւ ի
լեզուս եւ ի թագաւորս [5]երկրի։

ԳԼ. ԺԱ

1 Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւա-
զանի. եւ կայր հրեշտակն եւ ասէր
ցիս, Արի եւ չափեա զտաճարն Աս-
տուծոյ եւ զսեղանն եւ զերկրպագուսն
2 որ ի նմա։ Եւ զպատիլճն որ արտաքոյ
տաճարին՝ թող զնա եւ մի՛ չափեր,
զի տուեալ է զնա հեթանոսաց. եւ
զքաղաքն սուրբ կոխեսցեն ամիսս քա-
3 ռասուն եւ երկուս։ Եւ տայց երկուց
վկայից իմոց եւ մարգարէասցին ա-
ւուրս հազար երկերիւր եւ վաթսուն՝
4 զգեցեալ քուրձ։ Սոքա են երկու ձի-
թենիքն եւ երկու ճրագք, որ կան
5 առաջի [6]Աստուծոյ [7]երկրի։ Եւ որք
կամիցին վնասել նոցա, հուր ելցէ ի
բերանոյ նոցա եւ կերիցէ զթշնամիս
նոցա. եւ որք կամիցին մեղանչել նո-
6 ցա՝ այսպէս սատակեսցին։ Սոքա ու-
նին իշխանութիւն փակել զերկինս զի
մի՛ տեղասցէ զաւուրս մարգարէու-
թեան նոցա. եւ ունին իշխանութիւն
ի վերայ ջուրց դարձուցանել զնոսա
յարիւն, եւ հարկանել զերկիր յամե-
նայն հարուածս՝ քանիցս անգամ եւ
7 կամիցին։ Եւ յորժամ կատարեսցեն
[8]զամենայն աւուրս վկայութեան՝ իբ-
եանց, յայնժամ գազանն որ ելանէ
յանդնդոց՝ առցէ ընդ նոսա պատե-
րազմ, եւ յաղթեսցէ նոցա եւ սպանցէ
8 զնոսա։ Եւ դի նոցա [9]անկեալ կայցէ
ի մէջ հրապարակաց քաղաքին նոցա
մեծի՝, որ անուանեալ կոչի ըստ հոգ-
ւոյն Սոդոմ եւ Եգիպտոս, ուր եւ
9 Տէրն [10]նոցա խաչեցաւ։ Եւ տեսցեն
զնոսա ամենայն ցեղք եւ ժողովուրդք
եւ ամենայն լեզուք եւ հեթանոսք,
զի դի նոցա անկեալ կայցէ զերիս
[11]աւուրս. եւ ոչ տացեն թաղել ի
10 գերեզմանս զոսկերս նոցա։ Եւ որ
բնակեալ են յերկրի՝ ուրախ լինին
եւ խնդան ի վերայ նոցա, մինչեւ ընծայս
եւ պատարագս տանել միմեանց. վասն
զի սոքա երկոքին մարգարէքս [12]չար-
չարեսցեն զբնակիչս երկրի։
11 Եւ յետ երից աւուրց եւ կիսոյ հոգի
կենդանի յԱստուծոյ [13]մտցէ ի նոսա.
եւ [14]յարիցեն կացցեն՝ ի վերայ ոտից
իւրեանց, եւ ահ եւ երկեւղ մեծ ան-
կաւ ի վերայ ամենեցուն որ տեսինն
12 զնոսա։ Եւ [15]լուայ ձայն մեծ որ
ասէր ցնոսա, [16]վերացէք՝ ելէք աստ՝.
եւ ելին յերկինս ամպովք, եւ տեսին
13 զնոսա թշնամիք իւրեանց։ Եւ ի ժա-
մուն յայնմիկ չարժումն մեծ եղեւ, եւ
տասներորդ մասն քաղաքին ընկղմե-
ցաւ, եւ մեռան ի չարժմանէն արք
եւթն հազար. [17]եւ յետ այնորիկ ահ
մեծ եղեւ յամենեսեան՝ եւ փառս տա-
14 յին Աստուծոյ երկնաւորի։ Անհաւասիկ

---

[1]Յ՝ՆՆ, Հաստատեաց զերկինս եւ որ ի նմա, եւ զերկիր եւ որ ի նմա, եւ զծով եւ որ ի նմա, զի ոչ եւս իցէ
[2]ի Յ՝ՆՆ պակաս
[3]Յ՝ՆՆ, առ հրեշտակն, ասացի ցնա, Տուր ինձ զգրկոյնն
[4]Յ՝ՆՆ, ի ձեռանէ հրեշտակին
[5]Յ՝ՆՆ, բազումս
[6]Բ՝ՊՓ՝Ի, Տեառն
[7]Յ՝ՆՆ, երկրի
[8]Յ՝ՆՆ, զվկայութիւն
[9]Յ՝ՆՆ, ի հրապարակի քաղաքին մեծի
[10]Ր՝ՆՒ՝Ի, մեր
[11]Յ՝ՆՆ, աւուրս եւ կէս
[12]Յ՝ՆՆ, չարչարեցին
[13]Յ՝ՆՆ, եմուտ
[14]Յ՝ՆՆ, կացին
[15]Բ՝ՊՓ՝Ի, լուան
[16]Յ՝ՆՆ, Ելէք այսր
[17]Յ՝ՆՆ, Եւ որք մնացինն՝ զահի էարան

վայն երկրորդ էանց, եւ վայն երրորդ
գալոց է վազվազակի։
15 Եւ յորժամ եւթներորդ հրեշտակն
հարկանէր զփողն, [1]եղեւ ձայն յերկինս
եւ ասէ՝, Եղեւ թագաւորութիւն [2]ա-
մենայն աշխարհաց Տեառն մերոյ եւ
Քրիստոսի իւրոյ. եւ թագաւորեսցէ
[2]ի վերայ ամենայնի՝ յաւիտեանս յա-
16 ւիտենից։ Եւ քսան եւ չորք երի-
ցունքն որ նստէին յաթոռս իւրեանց
առաջի Աստուծոյ՝ անկանէին ի վերայ
երեսաց իւրեանց եւ երկիր պագանէին
17 [2]Տեառն Աստուծոյ, եւ ասէին, Գո-
հանամք զքէն, Տէր Աստուած Ամե-
նակալ, որ էն եւ [3]ես եւ[4] առեր զզօ-
րութիւն քո մեծ եւ թագաւորեցեր։
18 Եւ հեթանոսք բարկացան, եւ եկն
բարկութիւն քո, եւ ժամանակ մեռե-
լոց ի դատեցին. եւ տաս վարձս
ծառայից քոց մարգարէից եւ սրբոց,
երկիւղածաց անուան քո, փոքունց
եւ մեծամեծաց, եւ ապականես զա-
պականիչս երկրի։
19 Եւ բացաւ տաճարն Աստուծոյ որ
յերկինս, եւ երեւեցաւ [5]տապանակն
[6]Աստուծոյ ի տաճարն իւր, եւ եղեն
փայլատակումունք եւ ձայնք եւ որոտ-
մունք եւ շարժումն եւ կարկուտ մե-
ծամեծ։

Գլ. ԺԲ

1 Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին
մի արեգակն զիւրեւ զարեզակն, եւ
լուսին ի ներքոյ ոտից նորա. եւ ի վե-
րայ գլխոյ նորա պսակ աստղեայ յեր-
2 կոտասանից։ Եւ էր յղի, եւ ճչէր
յերկնելն, եւ բազում վշտօք մերձ էր
ի ծնանել։
3 Եւ երեւեցաւ այլ նշան յերկինս, եւ
ահաւասիկ վիշապ մի մեծ հրեղէն,
որոյ էին գլուխք եւթն եւ եղջերք
տասն. եւ ի վերայ գլխոց նորա եւթն
4 խոյրք։ Եւ տուան նորա քարշէր զեր-
բորդ մասն աստեղաց երկնից, եւ արկ
զնոսա յերկիր. եւ վիշապն կայր ա-
ռաջի կնոջն որ հանդերձեալ էր ծնա-
նել, զի յորժամ ծնցի կինն զորդի իւր,
5 կլցէ զնա [2]վիշապն։ Եւ ծնաւ [2]կինն
արու որ հանդերձեալ է հովուել զա-
մենայն հեթանոսս գաւազանաւ եր-
կաթեայ. եւ յափշտակեցաւ որդի նո-
րա առ Աստուած եւ առ աթոռս նորա։
6 Եւ կինն փախեաւ յանապատ ուր էր
տեղի նմա պատրաստեալ Աստուծոյ,
զի կերակրեսցի անդ աւուրս հազար
երկերիւր եւ վաթսուն։
7 Եւ եղեւ պատերազմ յերկինս. Մի-
քայէլ եւ հրեշտակք իւր կռուէին ընդ
վիշապին. եւ վիշապն պատերազմէր
8 [7]զօրօք իւրովք։ Եւ ոչ կարացին կալ
ընդդէմ, եւ տեղի ոչ գտաւ նոցա եր-
9 կինս։ Եւ անկաւ վիշապն մեծ, օձն
առաջին, որ անուանեալ կոչի [8]Բէելզե-
ղերուղ եւ Սատանայ որ մոլորեցոյց
զամենայն աշխարհս [2]երկրի. եւ հրեշ-
10 տակք նորա ընդ նմա անկան։ Եւ
լուայ ձայն մեծ յերկինից որ ասէր,
Արդ եղեւ զօրութիւն եւ փրկութիւն
եւ արքայութիւն Աստուծոյ մերոյ,
եւ իշխանութիւն Օծելոյ նորա. զի
անկաւ չարախօսն եղբարց մերոց, որ
չարախօսէր զնոցանէ առաջի Աստու-
11 ծոյ զտիւ եւ զղիշեր։ Եւ նոքա յաղ-
թեցին նմա արեամբ Գառինն, եւ բա-
նիւ վկայութեան [9]նորա. եւ ոչ հա-
ճեցան ընդ վիշապն՝ մինչեւ ի մահ։
12 Վասն այսորիկ [10]ուրախ լերուք երկինք՝
եւ ամենայն որ բնակեալ [11]են ի նմա.
[12]վա՛յ երկրի եւ ծովու զի անկաւ Բան-
սարկուն առ ձեզ, որ ունի զցասումն
բազում, [13]եւ կացցէ առ սակաւ մի
ժամանակս՝։
13 Եւ յորժամ ետես վիշապն թէ ան-
կաւ յերկիր, զհետ եղեւ կնոջն որ
14 ծնաւ զմանուկն արու։ Եւ տուան
կնոջն երկու թեւք արծուոյ մեծի զի
թռիցէ յանապատ ի տեղի իւր. ուր
կերակրէր անդ ժամանակ եւ ժամա-
նակս եւ կէս ժամանակի յերեսաց օձին։

---

[1] Յ---ն՝, եղեն ձայնք մեծամեծք յերկինս որ ա-
սէին
[2] ի Յ---ն՝ պակաս
[3] Յ---ն՝, որ էրն
[4] Ո՛---ւ յաւելուն, որ գալոցն է,
[5] Յ---ն՝, տապանակն ուխտին
[6] ի Յ---ն՝, սո՛---ւ՝ իւրոյ, այլ՝ Տեառն
[7] Յ---ն՝, և հրեշտակք նորա
[8] Յ---ն՝, Բանսարկու
[9] Յ---ն՝, իւրեանց. և ոչ սիրեցին զոգի իւրեանց
[10] Յ---ն՝, ուրախ լերուք, երկինք,
[11] Յ---ն՝, էք
[12] Ո՛---ւ՝, վա՛յ բնակչաց
[13] Յ---ն՝, գիտացեալ եթէ ունի սակաւ ժամանակ

15 Եւ եհեղ օձն ի բերանոյ իւրմէ զհետ
16 կնոջն ջուր զի ընկղմեսցէ զնա։ Եւ
օգնեաց երկիր կնոջն, եւ երաց երկիր
զբերան իւր եւ եկուլ զջուրն զոր
17 եհեղ վիշապն ի բերանոյ իւրմէ։ Եւ
յասեաւ վիշապն ընդ կնոջն, եւ գնաց
պատերազմել ընդ այլ զաւակս նորա
որք պահէին զպատուիրանս Աստու-
ծոյ, եւ ունէին զվկայութիւնն Յիսու-
18 սի։ Եւ [1]կայ ի վերայ աւազոյ ծովու։

Գլ. ԺԳ

1 Եւ տեսի զի ելանէր ի ծովէն գազան,
եւ ունէր գլուխս եւթն եւ եղջերս
տասն, եւ ի վերայ եղջերաց նորա
տասն խոյր, եւ ի վերայ գլխոց նորա
2 անուն հայհոյութեան։ Եւ գազանն
զոր տեսի՝ նման ընձուղ, եւ ոտք նո-
րա իբրեւ զարջառ, եւ բերան նորա
որպէս զառիւծու. եւ ետ նմա վիշապն
զզօրութիւն իւր եւ զաթոռ իւր եւ
3 զիշխանութիւն մեծ։ Եւ մի ի գլխոց
նորա [2]վիրաւորեալ էր՝ ի մահ. եւ վէր
մահուան նորա ողջացաւ. եւ զար-
մացաւ ամենայն երկիր ընդ գազանն,
[3]զի ետ նմա վիշապն զիշխագաւորու-
4 թիւն իւր՝։ Եւ երկիր պագին վիշապին
որ ետ զիշխանութիւնն գազանին, [4]եւ
ասէին՝՝, Ո՞վ իցէ նման գազանիս.
կամ ո՞վ կարիցէ պատերազմել ընդ
5 դմա։ Եւ տուաւ նմա բերան խօսել
զմեծամեծս եւ զհայհոյութիւն. եւ
տուաւ նմա իշխանութիւն զամիսս
6 քառասուն եւ երկու։ Եւ երաց զբե-
րան իւր հայհոյութեամբ առ Աստուած,
եւ հայհոյեաց զանուն նորա եւ զխո-
րանն նորա, եւ [5]զերկնայինս խորանն։
7 Եւ՝՝ տուաւ նմա իշխանութիւն ի վե-
րայ ամենայն ազգայ եւ լեզուայ եւ
8 ժողովրդոյ։ Զի երկիր պագցեն նմա
ամենայն որ բնակեալ են ընդ երեսս
երկրի. որոց ոչ են գրեալ անուանք
նոցա ի գլուխ կենաց Գառնին
9 զեղելոյ ի սկզբանէ աշխարհի։ Ոյք ու-

10 Նման ականջս լսելոյ՝ լուիցեն։ [6]Զի են
ոմանք՝ որք ի գերութիւն վարեսցին,
եւ են ոմանք՝ որ սրով սպանցին, եւ են
ոմանք՝ որ անճամբ զանձինս սպանա-
նիցեն՝՝. աստ է համբերութիւն եւ հա-
ւատ սրբոց։

11 Եւ տեսի այլ գազան զի ելանէր
յերկրէ, եւ ունէր եղջերս երկու
նման գառինն, եւ խօսէր իբրեւ զվի-
12 շապն։ Եւ զիշխանութիւն զամենայն
զառաջնոյ գազանին գործէր առաջի
նորա. եւ առնէր զերկիր եւ զամե-
նայն բնակիչս նորա զի երկիր պագա-
նիցեն գազանին առաջնոյ, [7]մինչեւ
13 ողջացցի վէր մահու նորա՝։ Եւ առնէր
նշանս բազումս, եւ տայր հրոյ իջանել
14 յերկնից յերկիր առաջի մարդկան։ Եւ
մոլորեցուցանէր զորս բնակեալ են
յերկրի՝ նշանօքն որ տուեալ են ի ձեռս
նորա, առնել առաջի գազանին. [8]ասէն
ցնա բնակիչք երկրի, Արա զպատկեր
գազանին, որ ի վիրաց սրոյն եկեաց՝։
15 Եւ տուաւ նմա [9]իշխանութիւն զի
տացէ հոգի պատկերի գազանին, եւ
զի խօսեսցի պատկերն. եւ երկիր պագ-
ցեն նմա ամենայն բնակիչք երկրի,
եւ որ ոչ պագցէ երկիր պատկերի գա-
16 զանին՝ սպանցէ զնա։ Եւ [9]արասցէ
զամենայն՝՝, զփոքունս եւ զմեծամեծս
եւ զմեծատունս եւ զաղքատս, եւ
զազատս եւ զծառայս, զի տացէ նոցա
դրոշմ յաջու ձեռին [10]եւ ի վերայ ճա-
17 կատու նոցա։ Եւ ոչ ոք կարասցէ
գնել եւ վաճառել, եթէ ոչ ունիցի
զդրոշմ [10]զրոյն՝ եւ՝՝ զանուն գազանին
18 [10]եւ զթիւ անուան նորա։ Աստ է ի-
մաստութիւն. որ ունի միտս՝ համա-
րեսցի զթիւ գազանին. [11]թիւ նորա
մարդոյ, եւ թիւ անուան նորա է
այս,՝՝ վեց հարեւր վաթսուն եւ վեց։

---

[1] Ոմանք, կացի
[2] Յոյն, էր որպէս վիրաւորեալ
[3] Ի Յոյն պակաս
[4] Յոյն, և երկիր պագին գազանին և ասէին
[5] Յոյն, զորս բնակեն յերկինս։ (7) Եւ տուաւ նմա առնել պատերազմ ընդ սուրբս և յաղ-
թել նոցա, և
[6] Յոյն, եթէ ոք ի գերութիւն վարէ, ի գերու-
թիւն վարեսցի. եթէ ոք սրով սպանանէ,
սրով սպանցի
[7] Յոյն, որոյ ողջացեալ էին վէրք մահուան նորա
[8] Յոյն, և ասէր ցորս բնակեալ են ի վերայ
երկրի առնել պատկեր գազանին որ ունի զվէրս
սրոյն, և եկեաց
[9] Յոյն, առնէ զամենեսեան
[10] Յոյն, կամ
[11] Յոյն, զի թիւ մարդոյ է, և թիւ նորա

ԳԼ. ԺԴ

4 Եւ տեսի, եւ ահա Գառն կայր ի վե-
րայ լերինն Սիովնի. եւ ընդ նմա
հարեւր քառասուն եւ չորք հազարք,
որ ունէին զանուն [1]Հօր նորա եւ անուն"
Հօր նորա գրեալ ի վերայ ճակատուց
2 նոցա։ Եւ լուայ ձայն յերկնից որպէս
զձայն ջուրց բազմաց եւ ձայն որոտ-
ման մեծի. եւ լուայ իբրեւ զձայն քնա-
րահարաց, զի հարկանիցեն զքնարս
3 իւրեանց։ Եւ երգէին գերգս նորս ա-
ռաջի աթոռոյն եւ առաջի չորից կեն-
դանեացն եւ առաջի երիցանցն. Եւ
ոչ ոք կարէ գիտել զերգս նոցա, բայց
միայն հարեւր քառասուն եւ չորս
հազարքն, որք ազատեալ են յերկրէ։
4 Սոքա են որք ընդ կանայս ոչ խառ-
նակեցան, եւ են կուսանք. սոքա զկնի
երթան Գառինն ուր եւ երթիցէ. սո-
քա [2]ընտրեցան ի մարդկանէ առաջի"
5 Աստուծոյ եւ Գառինն։ Եւ ի բերան
նոցա ոչ գտաւ սուտ, զի անբիծք են[3]։
6 Եւ տեսի այլ հրեշտակ թռուցեալ
ի մէջ երկնից. եւ ունէր աւետիս յա-
ւիտենական աւետարանել [4]ամենայն
աղգաց եւ լեզուաց որ բնակեալ են
7 յերկրի"։ Եւ ասէր ի ձայն մեծ, Եր-
կերուք յԱստուծոյ եւ տուք փառս
նմա, զի եկն ժամ դատաստանի նորա.
եւ երկիր պագէք Արարչին երկնի եւ
երկրի եւ ծովու եւ աղբերաց ջուրց։
8 Եւ այլ հրեշտակ երկրորդ գայր զետ
նորա եւ ասէր, Անկաւ, անկաւ Բա-
բելոն մեծն, [5]ի գինւոյ արբեցուբենէ՝
ի ցասմանէ՝ ի պոռնկութենէ իւրմէ՝
որ արբեցոյց զամենայն հեթանոսս"։
9 Եւ այլ հրեշտակ երրորդ գայր զետ
նոցա, եւ ի ձայն մեծ ասէր, Ով ոք
երկրպագեաց գազանին եւ պատկերի
նորա, եւ կամ ընդունի նշանի նորա առ
ի ճակատ իւր եւ կամ ի վերայ ձեռին
10 ձեռին իւրոյ, Այնպիսին արբցէ ի բա-
ժակէ ցասմանն Աստուծոյ, արկելոյ
յանապակէ բարկութեան բաժակին,
եւ տանջեսցի հրով եւ ծծմբով առաջի
11 [6]Աստուծոյ եւ Գառինն։ Եւ ծուխ
[7]նոցա ելցէ" յաւիտեանս յաւիտենից.
եւ ոչ ունին [8]հանգիստ որք երկիր
պագին գազանին ի տուէ եւ ի գիշերի,
եւ որք երկիր պագին պատկերին, եւ
12 առին զդրոշմ եւ զանուն նորա"։ Եւ
համբերութիւն սրբոցն աստ է. [9]այս՝
որք պահեն զպատուիրանս Աստուծոյ
13 եւ զհաւատս Յիսուսի։ Եւ լուայ ձայն
յերկնից որ ասէր ցիս, Գրեա, Երանի
մեռելոցն որք ի Տէր ննջեցին՝ [10]այժմիկ
վաղվաղակի". զայս ասէ Հոգին, քան-
զի հանգիստ յաշխատութենէ իւրեանց.
[11]բայց միայն" գործք իւրեանց չոգան
զետ նոցա։
14 Եւ տեսի, եւ ահա ամպ սպիտակ,
եւ ի վերայ ամպոյն նստէր նման Որդ-
ւոյ մարդոյ, եւ ի գլուխ իւր պսակ
ոսկի, եւ ի ձեռին իւրում ունէր գե-
րանգի սրեալ։
15 Եւ այլ հրեշտակ ելանէր յերկնից,
աղաղակէր ի ձայն մեծ եւ ասէր, Ո-
նստիպ ի վերայ ամպոյդ՝ առաքեա
զգերանգիդ քո եւ հնձեա, զի եկն ժա-
մանակ հնձոց, եւ հասեալ են հունձք
16 երկրի։ Եւ արկ որ նստէր ի վերայ
ամպոյն՝ զգերանգին իւր յերկիր, եւ
հնձէր զամենայն բնակիչս երկրի։
17 Եւ այլ հրեշտակ ելանէր ի տաճարէն
որ յերկինս, եւ ունէր եւ սա գերանգի
18 սրեալ։ Եւ այլ հրեշտակ ելանէր ի սե-
զանոյն որ ունէր իշխանութիւն ի վե-
րայ հրոյ, եւ աղաղակեաց ի ձայն մեծ
առ հրեշտակն որ ունէր զգերանգին
սրեալ, եւ ասէր, [12]Կիթեա զողկոյզս
յայգւոյ երկրի, զի հասեալ է խաղողդ
19 ի գմա։ Եւ արկ հրեշտակն զգերանգի
իւր յերկիր, եւ կիթէր զխաղող նորա,
եւ արկանէր [13]ի հնձանն Աստուծոյ
20 ի մեծ։ Եւ կոխեցաւ հնձանն արտա-
քոյ քաղաքին, եւ ելանէր ի հնձանէն

---

[1] Յ-ին՝ պոլոէ
[2] Յ-ին, գնեցան ի մարդկանէ յերախայրիս
[3] Ոմն+ յոյնք, առաջի աթոռոյն Աստուծոյ
[4] Յ-ին, որոց բնակեալ են ի վերայ երկրի, ա-
մենայն ազգաց և ազանց և լեզուաց և ժողո-
վրդոց
[5] Յ-ին, զի ի գինւոյ ցասման պոռնկութեան
իւրոյ արբոյց ամենայն հեթանոսաց
[6] Յ-ին, հրեշտակաց սրբոց
[7] Յ-ին, տանջանաց նոցա ելանէ
[8] Յ-ին, հանգիստ ի տուէ և ի գիշերի որք երկիր
պագանեն գազանին և պատկերի նորա, և որ
միանգամ առնու զդրոշմ անուան նորա
[9] Ի Յ-ին, յոմն պոլոե, յոյլ՝ աստ
[10] Յ-ին, այսուհետեւ
[11] Յ-ին, զի
[12] Յ-ին, Զգեա զգերանգիդ սրեալ և կիթեա
[13] Յ-ին, ի հնձան ցասմանն

արիւն մինչեւ ի սանձս [1]ձիոյն՝ եւ երկայնութիւն նորա՝ հազար եւ վեց հարիւր ասպարէզ։

Գլ. ԺԸ

1 Եւ տեսի այլ հրեշտակ յերկինս մեծ եւ սքանչելի. հրեշտակս եւթն որք ունէին եւթն վէրս ղկին. զի նոքօք կա-
2 տարեր բարկութիւնն Աստուծոյ։ Եւ տեսի որպէս ծով ապակեղէն խառնեալ հրով. եւ որք յաղթեցին զազանին եւ պատկերի նորա եւ թուոյ անուան նորա [2]եւ դրոշմի նորա՝ նոքա կային ի վերայ ծովուն ապակեղինի, եւ ու-
3 նէին զքնարս Աստուծոյ. Եւ երգէին զերգս Մովսիսի [3]առաջի Աստուծոյ, եւ զերգս Գառինն՝ ասելով Թէ Մեծա-մեծ եւ սքանչելի են գործք քո, Տէր Աստուած Ամենակալ, արդար եւ ճշմարիտ են ճանապարհք քո, Թագաւոր
4 [4]ամենայն՝ [5]հեթանոսաց։ Եւ ո՞վ ոք ոչ [6]երկիւղիցէ եւ փառաւորեսցէ [7]զանուրդ անուն՝ քո. զի դու միայն ես սուրբ, [4]եւ արժանի երկրպագելոյ," զի ամենայն հեթանոսք եկեսցեն եւ երկիր պագցեն առաջի քո, [8]Տէր, յորժամ արդարութիւնք քո յայտնեսցին"։
5 Եւ յետ այսորիկ տեսի եւ բացաւ տաճարն խորանին վկայութեան որ
6 էր յերկինս։ Եւ ելանէին ի տաճարէն եւթն հրեշտակք որք ունէին եւթն հարուածս, եւ զգեցեալ էին կտաւս մաքուրս եւ պայծառս, եւ գօտեւորեալ էին առ ստեամբք ի[9]ւրեանց գո-
7 տիս ոսկեղէնս։ Եւ [9]ի չորից կենդանեացն [10]տուաւ եւթն հրեշտակացն եւթն [11]սկաւառակս լի ցասմամբն Աստուծոյ կենդանւոյն յաւիտեանս յա-
8 ւիտենից։ Եւ լցաւ տաճարն ծխով փառացն Աստուծոյ եւ զօրութեան նո-
րա. եւ ոչ ոք կարէր մտանել ի տա-
ճարն՝ մինչեւ կատարեսցին եւթն հարուածքն եւթն հրեշտակացն։

Գլ. ԺԹ

1 Եւ լուայ ձայն մեծ ի տաճարէն զի ասէր ցեւթն հրեշտակսն, Երթայք, հեղէք զեւթն սկաւառակսդ ցասմանն Աստուծոյ յերկիր։
2 Եւ գնաց [12]առաջինն հրեշտակն" եւ հեղ զսկաւառակ իւր յերկիր. եւ եղեն հարուածք չարաչարք ի վերայ մարդկան որ ունէին զդրոշմ գազանին, եւ երկիր պագին պատկերի նորա։
3 Եւ [13]երկրորդ հրեշտակն" հեղ զսկաւառակ իւր ի ծով, եւ [14]դարձան ջուրքն յարիւն մեռեալ". եւ ամենայն չունչ կենդանի որ էր ի ծովու՝ սա-
տակեցաւ։
4 Եւ [15]երրորդ հրեշտակն" հեղ զսկաւառակ իւր ի գետս եւ յաղբեւրս ջուրց,
5 եւ եղեւ արիւն։ Եւ լուայ [16]ի հրեշտակէն զի ասէր, [17]Արդար է՝ որ էնն եւ էիր, եւ սուրբ ի գործս իւր՝ զի այս-
6 պէս դատեցար։". Վասն զի զարիւն սրբոց եւ զարիւն մարգարէիցն հեղին [18]ամպարիշտք. վասն այնորիկ արիւն
7 ետ ըմպել նոցա ըստ արժանւոյն"։ Եւ լուայ ի սեղանոյ անտի զի ասէր, Այո, Տէր Աստուած Ամենակալ, արդար եւ ճշմարիտ են դատաստանք քո։
8 Եւ [19]չորրորդ հրեշտակն" հեղ [20]ի սկաւառակէ իւրմէ" ի վերայ արեգա-
9 կան։ Եւ տուաւ նմա խորշակահար առնել զմարդիկ հրով. եւ տապացան մարդիկ ի տապ մեծ, եւ հայհոյեցին [21]զԱստուած որ ունի իշխանութիւն ի վերայ հարուածոցս այսոցիկ. եւ ոչ ապաշխարեցին [22]ի փառս Աստուծոյ։
10 Եւ [23]հինգերորդ հրեշտակն" հեղ

---

[1] Յ-ին՝ , ձիոց ընդ
[2] Յ-մն՝ պ-ով
[3] Յ-ին՝ , Ծառայի
[4] [4] Ի Յ-ին՝ պ-ով
[5] Կ-՛, ազգաց · այլ՝ յաւիտենից. և այլ՝ սրբոց
[6] Յ-ին՝ , երկիցէ ի քէն, Տէր,
[7] Յ-ին՝ , զանուն
[8] Յ-ին՝ , զի արդարութիւնք քո յայտնեցաւ
[9] Յ-ին՝ , մին ի չորից
[10] Յ-ին՝ , ետ
[11] Յ-ին՝ , սկաւառակս ոսկեղէնս

[12] Յ-ին՝ , առաջինն
[13] Բ-պ-մ՛ , երկրորդն
[14] Յ-ին՝ , եղեւ արիւն իբրեւ զմեռելոյ
[15] Բ-պ-մ՛ , երրորդն
[16] Յ-ին՝ , ի հրեշտակէն ջուրց
[17] Յ-ին՝ , Արդար ես որ էն և որ էրն, սուրբդ, զի այսպէս դատեցար
[18] Յ-ին՝ , և արիւն ետուր նոցա ըմպել զի արժանի են
[19] Բ-պ-մ՛ , չորրորդն
[20] Յ-ին՝ , զսկաւառակ իւր
[21] Յ-ին՝ , զանուն Աստուծոյ
[22] Յ-ին՝ , տալ փառս
[23] Բ-պ-մ՛ , հինգերորդն

[1]ի սկաւառակէ իւրմէ՛ ի վերայ ա-
թոռոյ գաղանին, եւ եղեւ թագաւո-
րութիւն նորա խաւարեալ. եւ ծամէին
11 զլեզուս իւրեանց յախտէ ցաւոցն, եւ
հայհոյեցին զԱստուած երկնից ի ցաւոց
իւրեանց եւ յախտէ դառնութեանն, եւ
ոչ ապաչխարեցին ի գործոց իւրեանց։
12 Եւ [2]վեցերորդ հրեշտակն՛ եհեղ [1]ի
սկաւառակէ իւրմէ՛ ի վերայ գետոյն
մեծի Եփրատայ, եւ ցամաքեցան ջուրք
նորա զի պատրաստեսցի ճանապարհ
13 [3]թագաւորի ելից՛ արեւու։ Եւ տեսի
[4]զի ելանէին՛ ի բերանոյ վիշապին եւ
ի բերանոյ գազանին եւ ի բերանոյ
սուտ մարգարէին ոգիք երեք ան-
14 սուրբք իբրեւ զդորոս։ Քանզի նոքա
էին ոգիք դիւականք, որք առնէին
զնշանս եւ երթային առ թագաւորս
ամենայն երկրի ժողովել զնոսա ի պա-
տերազմ յօրն մեծ Տեառն Ամենակալի։
15 ([4]քանզի այսպէս ասաց Տէր.՝ Ահա
գամ իբրեւ զգող, երանի որ իցեն ար-
թուն, եւ պահեսցին զհանդերձս իւր-
եանց. զի մի՛ մերկ չրջեսցին, եւ ե-
16 րեւեսցին ամօթանք իւրեանց։) Եւ
ժողովեցին զնոսա ի տեղի մի, որ կոչի
Եբրայեցերէն Արմագեդոն։
17 Եւ [5]եւթներորդ հրեշտակն՛ եհեղ
[1]ի սկաւառակէ իւրմէ՛ ի վերայ օդոյ.
եւ ել ձայն մեծ [6]յերկնից եւ՝ յաթոռոյն
18 ասելով, եղեւ։ Եւ եղեն փայլատակ-
մունք եւ ձայնք եւ որոտմունք. եւ
եղեւ շարժումն մեծ, որպիսի չիք եղ-
եալ ի սկզբանէ յորմէ հետէ եղեւ մարդ
ի վերայ երկրի այնպիսի շարժումն մեծ։
19 Եւ եղեւ քաղաքն մեծ յերիս մասունս,
եւ քաղաքք ազգացն անկան. եւ Բա-
բելոն մեծ յիշեցաւ առաջի Աստուծոյ
տալ նմա զբաժակն գինւոյ ցասման
20 բարկութեան նորա։ Եւ ամենայն
կղզիք փախեան, եւ լերինք ի միջոյ
21 բաձան։ Եւ կարկուտ մեծ իբրեւ կշիռ
տաղանդոյ մեծոյ իջանէր յերկնից ի վե-
րայ մարդկան. եւ հայհոյեցին մարդիկ
զԱստուած [4]յերկինս վասն հարուածոյ
կարկտին զի մեծ էր [7]հարուածն եւ
սաստիկ՛։

Գլ. ԺԶ

1 Եւ եկն մի ոմն յեւթն հրեշտակացն
որք ունէին զեւթն սկաւառակսն,
խօսեցաւ ընդ իս եւ ասէ, եկ այսր,
եւ ցուցից քեզ զդատաստանն մեծ
2 պոռնկին որ նստի ի վերայ ջուրց բազ-
մաց. Ընդ որում պոռնկացան թագա-
ւորք երկրի, եւ արբեցան բնակիչք
երկրի ի գինւոյ արբեցութեան պոռ-
3 նկութեան նորա։ Եւ առ տարաւ զիս
յանապատ հոգւովն. եւ տեսի կին մի
զի նստէր ի վերայ կարմիր գազանի,
եւ լի էր անուամբ հայհոյութեան, եւ
գազանն զոր տեսի ունէր գլուխս եւթն
4 եւ եղջիւրս տասն։ Եւ կինն զգեցեալ
էր ծիրանիս եւ կարմիրս, եւ զար-
դարեալ ոսկւով եւ մարգարտով եւ
ակամբք պատուականօք, ունելով բա-
ժակ ոսկի ի ձեռին իւրում, եւ լի
էր գարշելի եւ անմաքուր պոռնկու-
5 թեամբ։ Եւ ի ճակատն նորա գրեալ
անուն՝ [8]խորհրդով մեծն Բաբելոն,
մայր պոռնկաց եւ գարշելեաց երկրի։
6 Եւ տեսի զկինն արբեցեալ յարիւնէ
սրբոց եւ յարիւնէ [9]ամենայն վկայիցն՛.
եւ զարմացայ տեսեալ զնա՝ զարմա-
7 ցումն մեծ։ Եւ ասէ ցիս հրեշտակն,
Ընդէ՞ր զարմացար. ես ասացից քեզ
զխորհուրդս կնոջն, եւ գգազանին որ
բարձեալ ունի զնա. որ ունի զեւթն
8 գլուխս եւ տասն եղջիւրս։ Եւ գա-
զանդ զոր տեսեր, որ էր եւ չէ, եւ
հանդերձեալ է ելանել ի գժոխոց եւ ի
կորուստ երթալ. եւ [10]զարմացան ա-
մենեքեան՛ որ բնակեալ են ի վերայ
երկրի որոց ոչ էին գրեալ անուանքն
նոցա ի գիրս կենաց ի սկզբանէ աշ-
խարհի, [11]զոր տեսանէիր՛ զազանն
9 զի էր եւ չէ, եւ մերձ է։ Աստ է [12]ի-
մաստութիւն՝ որ ունի միտս՛. եւեթն
գլուխն եւեթն լերինք են, ուր կինն
նստեալ էր ի վերայ նոցա. եւ նոքին

[1]Յ՝ՆՆ, զսկաւառակ իւր
[2]Բ՝ԸՂ՝Ժ, վեցերորդն
[3]Յ՝ՆՆ, թագաւորաց որ յելից
[4]ի Յ՝ՆՆ պ՝Ե՝Ռ
[5]Բ՝ԸՂ՝Ժ, եւթներորդն
[6]ի Յ՝ՆՆ, սկսեալ ի տաճարէն, այլ՝ ի տաճա-
րէն երկնից,
[7]Յ՝ՆՆ, հարուած նորա յոյժ
[8]Յ՝ՆՆ, խորհուրդ,
[9]Յ՝ՆՆ, վկայիցն Յիսուսի
[10]Յ՝ՆՆ, զարմացին
[11]Յ՝ՆՆ, տեսեալ
[12]Յ՝ՆՆ, միտք որոյ է իմաստութիւն

թագաւորք են երթին, [1]եւ թագաւորք
10 երթին գոլով," Հինգն անկան, եւ մին
[2]եկաց, եւ մինն ոչ է եկեալ. եւ յոր-
ժամ գայ՝ սակաւիկ մի ժամանակ ունիւ։
11 Եւ գազանն որ էր եւ չէ, եւ նա ութե-
րորդ է. եւ է յեւթանց անտի, եւ ի
12 կորուստ երթալոց է։ Եւ տասն եղ-
ջեւրն զոր տեսեր՝ տասն թագաւորք են,
որոց չեւ եւս է առեալ զթագաւորու-
թիւն, այլ [3]առնուն եւ կան իշխանք
13 ի մի ժամ. եւ առնուն նոքա զիշխա-
նութիւն" ընդ գազանին։ Սոքա մի
կամս ունին, եւ զզօրութիւն եւ զիշ-
14 խանութիւն գազանին տան։ Եւ ընդ
Գառինն պատերազմին, եւ Գառնն
յաղթէ նոցա. զի Տէր է [4]նոցա եւ
Թագաւոր թագաւորաց, եւ որք ընդ
նմա՝ կոչեցեալք են, ընտրեալք եւ
15 հաւատացեալք։ Եւ ասաց ցիս, Եւ
ջուրքն զոր տեսեր, ուր նստէր պոռ-
նիկն, ժողովուրդք են եւ բազմու-
16 թիւնք եւ ազգք եւ լեզուք։ Եւ տասն
եղջեւրքն զոր տեսեր [5]գազանին, նո-
քա տեսցին զպոռնիկն եւ ատեսցեն
զնա", եւ զմարմին նորա կերիցեն եւ
17 այրեսցեն զնա հրով։ Քանզի Աստուած
եդ ի սիրտս նոցա առ ի լինել նոցա
մի կամս, եւ տալ զթագաւորութիւն
գազանին մինչեւ կատարեսցի բանն
18 Աստուծոյ։ Եւ կինն զոր տեսեր՝ է
քաղաքն մեծ, որ ունի զթագաւո-
րութիւն ի վերայ թագաւորութեանց
երկրի։

ԳԼ. ԺԸ

1 Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ
իջեալ յերկնից որ ունէր իշխանու-
թիւն մեծ, եւ երկիր լուսաւորեցաւ
2 ի փառաց նորա։ Եւ աղաղակեաց ի
ձայն մեծ՝ ասելով, [6]Անկաւ Բաբելոն
մեծն, որ եղեալ էր" բնակութիւն դի-
ւաց եւ արդիլ ամենայն այսոց պղծոց,
եւ բանտ պահպանութեան ամենայն
3 [7]ոգւոց անսրբից եւ ատելոց։ Վասն
զի ի բարկութենէ գինւոյ պոռնկու-
թեան նորա արբին ամենայն ազգք,
եւ թագաւորք երկրի [1]որ ընդ նմա
պոռնկեցան. եւ վաճառականք երկրի
ի նորա զօրութեանն յօրանալոյ մե-
4 ծացան։ Եւ լուայ [8]ձայն յերկնից զի
ասէր, Ելէք ի միջոյ դորա, ժողովուրդ
իմ, զի մի՛ հաղորդ լիցիք մեղաց դորա,
եւ մի՛ [9]զհարուածս դորա ընդունի-
5 ցիք. Զի հասին կցեցան մեղք դորա
մինչեւ յերկինս. եւ յիշեաց Աստուած
6 զամպարչտութիւնս դորա։ [10]Եւ հա-
տուցանէ" դմա որպէս եւ հատոյցն
[11]մեզ. եւ [12]առցէ դա" երկպատիկ
ըստ գործոց իւրոց. եւ զբաժակն որով
խառնեացն՝ խառնեցէք դմա կրկին։
7 Որչափ փառաւորեաց զինքն եւ խայ-
տաց, այնչափ հատուցէք դմա [13]սուգ.
զի ի սրտի իւրում ասէր թէ Ցամե-
նայն ժամ նստայց ես թագուհի, եւ
8 այրի ոչ եւս եղէց[14]. վասն այնորիկ
ի միում աւուր եկեսցեն ի վերայ դորա
հարուածք՝ մահ եւ սուգ եւ սով, եւ
ի հուր այրեսցի. զի հզօր է Տէր Աս-
9 տուած որ դատեցաւն զդա։ Եւ լայցեն
եւ կոծեսցին ի վերայ դորա թագաւորք
երկրի, որք ընդ դմա պոռնկեցան եւ
խաղային. եւ հեծեսցեն, յորժամ տես-
ցեն զծուխ կիզման տանջանաց դորա։
10 Ի հեռաստանէ կայցեն վասն երկիւղի
տանջանաց դորա եւ ասասցեն, [15]Վա՛յ
քաղաքիդ մեծի Բաբելոնի, քաղաք
հզօր, զի ի միում ժամու եկին հասին
11 դատաստանք քո։ Եւ վաճառականք
երկրի ողբասցեն եւ սգասցեն ի վերայ
[16]քո, զի զբեռն նոցա ոչ ոք գնէ։
12 [17]Եւ չահք որ ի քէն՝ ոչ եւս իցէ,"
ոսկւոյ եւ արծաթոյ եւ ականց պատ-
ուականաց եւ մարգարտոյ եւ բեհեզոյ
եւ ծիրանւոյ եւ [18]ոսկեթելի եւ որդան,

---

[1] Ի Յ—ն՝ պ—ւ
[2] Յ—ն՝ կայ
[3] Յ—ն՝ առնուն իշխանութիւն իբրեւ թագա-
գաւորք զմի ժամ
[4] Յ—ն՝ տերանց
[5] Յ—ն՝ ի վերայ գազանին, նոքա ատեսցեն
զպոռնիկն և առնեն զնա և մերկ
[6] Բ—ղ—տ՝ Անկաւ, անկաւ Բաբելոն մեծն, և
եղեւ
[7] Յ—ն՝ թռչնոց
[8] Յ—ն՝ այլ ձայն
[9] Յ—ն՝ ի հարուածոց
[10] Յ—ն՝ Հատուցէք
[11] Ի Յ—ն՝ է բազմա պ—ւ. տանի ա—ն՝ ձեզ
[12] Յ—ն՝ կրկնեցէք
[13] Յ—ն՝ տանջանս և սուգ
[14] Բ—ղ—տ յ—ե—ս՝ և սուգ ոչ տեսից
[15] Յ—ն՝ վա՛յ, վա՛յ
[16] Յ—ն՝ նորա
[17] Յ—ն՝ Բեռն, չա՛, վաճառ
[18] Յ—ն՝ մետաքսի

եւ ամենայն փայտ խնկոյ եւ ամենայն անօթ փղոսկրեայ եւ ամենայն անօթ ի փայտէ պատուականէ եւ ի պղնձոյ,
13 եւ յերկաթոյ եւ ի կճոյ, եւ կինամոմն եւ ամենայն խունկ եւ եւզ եւ կնդրուկ եւ գինի եւ ձէթ եւ նաչխի եւ ցորեան, եւ [1]ստացուածք ամենայն," արջառ եւ ոչխար· եւ երիվարաց եւ կառաց [2]որ վայել է մարմնոց"
14 եւ ոգւոց մարդկան։ Եւ ամենայն [3]ցանկութիւն անձին քո դնաց ի քէն, եւ ամենայն [1]լուսափայլ վայելչութիւնն, [1]պարարան եւ գէրն" եւ սպիտակն դնաց ի քէն, եւ ոչ եւս գտցես
15 զայդ։ Եւ ամենայն չահավաճառք [4]այսոքիւք մեծացեալք՝ ի քէն" ի բաց կացցեն վասն երկիւղի տանջանաց [5]քոց՝
16 լալով եւ սուգ առնելով, Ասացեն, վա՛յ, վա՛յ, քաղաք մեծ, որ զգեցեալ էիր բեհեզս եւ ծիրանիս եւ որդան, ոսկեզօծս եւ քարինս պատուականս
17 եւ մարգարիտս· Զի ի միում ժամու պակասեցաւ այնչափ մեծութիւն քո· եւ ամենայն նաւավար եւ ամենայն որ ի տեղիս տեղիս նաւեն, եւ նաւազք եւ որք միանգամ [6]ուղականաւ գործեն՝ ի հեռաստանէ [7]կայցեն լալով",
18 Եւ [8]աղաղակեացեն տեսանելով զծուխս կիզման նորա, ասելով, Ո՞ նման է
19 քաղաքիս այսմիկ մեծի։ Եւ [9]արկցեն հող ի վերայ գլխոց իւրեանց, եւ գոչ ժալով ձայնիւ մեծաւ, լալով եւ սգալով [10]ասասցեն, վա՛յ, վա՛յ, քաղաք մեծ, [11]որով ամենեքեան մեծանային՝ որք ունէաք զնաւս ի ծովս վասն պատուականութեան քո, զի՛ ի միում ժամու ապականեալ կործանեցար"։
20 Ուրախ լերուք ի վերայ նորա, երկինք եւ սուրբ առաքեալք եւ մարգարէք, զի դատեցաւ Աստուած զդատաստան ձեր ի դմանէ։
21 Եւ ա՛ռ հրեշտակ հզօր քար մի իբրեւ զերկան մեծ, եւ ընկէց ի ծով ասելով, Այսպէս [12]յարձակմամբ անկցի Բաբելոն քաղաք մեծ, եւ այլ ոչ եւս գտցի։
22 Եւ ձայն քնարերգաց եւ երաժշտականաց, [13]արուեստականաց եւ փողահարաց եւ թմբկի" այլ ոչ եւս լսելի
23 [14]ի քեզ· Եւ լոյս ճրագի եւ ձայն երկանի" այլ ոչ եւս երեւեսցի ի քեզ, եւ ձայն փեսայի եւ ձայն հարսին այլ ոչ եւս լսելի ի քեզ· [15]եւ ոչ" վաճառականք քո [16]փառաւորք եւ" մեծամեծք երկրի, [1]որ զուարճացեալ էին ի քեզ," վասն զի կախարդութեամբ դեղատուութեան քո մոլորեցան ամենայն ազգք։ Եւ [17]ի քեզ ամենայն" արիւն մարգարէից եւ սրբոց գտաւ, եւ ամենայն [18]զրեալոց յերկրին կենդանեաց"։

Գլ· ԺԹ

1 Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազմութեան յերկինս ասելով, Ալէլուիա, փրկութիւն եւ փառք եւ պատիւ եւ
2 զօրութիւն [19]Աստուծոյ մերում· Զի ճշմարիտ եւ արդար են դատաստանք նորա· զի դատեաց զպոռնիկին մեծ [20]ի պոռնկութեան իւրում, եւ խնդրեաց զվրէժ արեան ծառայից իւրոց ի ձեռաց նոցա նորա։ Եւ կրկին անգամ [1]օրհնեցին եւ" ասացին, Ալէլուիա· եւ ծուխ նորա ելանէր յաւիտեանս յաւիտենից·
4 Եւ անկան քսան եւ չորք երիցունքն եւ չորք կենդանիքն, եւ երկիր պագին Աստուծոյ որ նստէր յաթոռ [1]փառաց, ասելով, Ամէն, Ալէլուիա։ Եւ
5 ձայն յաթոռոյն ելանէր՝ ասելով, Օրհնեցէք զԱստուած մեր, ամենայն ծառայք նորա, եւ որք երկնչիք ի նմանէ,
6 փոքունք եւ մեծամեծք։ Եւ լուայ

---

[1] ի Յ-ինն պ-ի-ա-ե
[2] Յ-ինն, և մարմնոց
[3] Յ-ինն, պատուղ ցանկութեան
[4] Յ-ինն, սոցա մեծացեալք ի նմանէ
[5] Յ-ինն, նորա
[6] Յ-ինն, ի ծովս
[7] Յ-ինն, կացին
[8] Յ-ինն, աղաղակիցեն
[9] Յ-ինն, արկին
[10] Յ-ինն, ասէին
[11] Յ-ինն, յորում մեծացան ամենեքին որ ունէին նաւս ի ծովս վասն պատուականութեան նորա· զի ի միում ժամու աւերեցաւ
[12] Յ-ինն, ուժգնութեամբ
[13] Յ-ինն, արհեստաւորաց և փողահարաց
[14] Յ-ինն, ի քեզ. և ամենայն արուեստաւոր ամենայն արուեստի մի՛ եւս գտցի ի քեզ. և ձայն երկանի մի՛ եւս լսելի ի քեզ· (23) Եւ լոյս ճրագի
[15] Յ-ինն, քանզի
[16] Յ-ինն, էին
[17] Յ-ինն, ի նմա
[18] Յ-ինն, սպանելոց ի վերայ երկրի
[19] Որ-ից, Տեառն Աստուծոյ
[20] Յ-ինն, որ ապականեաց զերկիր ի պոռնկութեան

[1]Ձայն բազմութեան մեծի, եւ իբրեւ ձայն ջուրց բազմաց, եւ իբրեւ ձայն հզօր որոտման, ասելով [2]զարձեալ, Ա-
լէլուիա, վասն զի թագաւորեաց [3]Ա-
7 տուածն [4]մեր Ամենակալ։ Ինդայիք եւ ցնծայիք եւ տաիք փառս նմա, զի եկն հարսանիք Գառինն, եւ կինն՝ [2]հարսն
8 նորա պատրաստեաց զինքն։ Եւ տուաւ նմա զգենուլ բեհեզս սպիտակս սուրբս [2]եւ լուսաւեայլս", որ է բեհեզն՝ ար-
9 դարութիւն սրբոցն։ Եւ [2]ասէ ցիս, Գրեա [2]զայդ, Երանելիք են ամենեքեան որ կոչեցեալ են յընթրիս հարսանեացն Գառինն[5]։
10 Եւ ես [6]անկեալ առաջի ոտից նորա, [7]երկիր պագի" նմա. եւ ասէ ցիս, [8]Անդա, մի՛ անկաներ առաջի իմ, քանզի եւ ես" ծառայակից քո եմ եւ եղ-
բարց քոց որք ունին զվկայութիւնն Յիսուսի [2]Քրիստոսի. Տնտառն" Ա-
տուածոյ [2]միայն երկրպագեա. [2]քանզի հաստատութեամբ Յիսուսի է տեսիլդ եւ հոգի մարգարէութեանդ," զի վկա-
յութիւն Յիսուսի է [9]Հոգւովն Սրբով որ ի մարգարէսն էր"։
11 Եւ տեսի զերկինսն բացեալ եւ ահա ձի սպիտակ, եւ որ հեծեալն էր ի նմա՝ [10]Հաւատարիմ եւ Ճշմարիտ, եւ ար-
դարութեամբ դատի եւ պատերազմի.
12 Եւ աչք նորա բոց հրոյ, եւ ի վերայ զլխոյ նորա պսակք բազումս. եւ ու-
նէր անուն գրեալ, զոր ոչ ոք գիտէ
13 բայց միայն ինքն։ Եւ արկեալ զիւր-
եաւ հանդերձ ներկեալ արեամբ. եւ կոչէր անուն նորա Բան Աստուծոյ։
14 Եւ [2]զօրավարք երկնից եւ" զօրք երկ-
նից զհետ երթային նորա [11]ձիովք, զգեցեալք բեհեզս սուրբս եւ սպի-
15 տակս։ Եւ ի բերանոյ նորա ելանէր սուր սրեալ, զի նովաւ հարցէ զազգս. եւ նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ
երկաթեաւ, եւ նա կոխեսցէ զհնձան գինւոյ սաստման բարկութեան Աստուա-
16 ծոյ Ամենակալի։ Եւ ունէր ի վերայ պատմուճանի իւրոյ եւ ի վերայ [12]ան-
գամոյ իւրոյ" զիր զրեալ, ԹԱԳԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՒ ՏԷՐ ՏԵՐԱՆՑ։
17 Եւ տեսի այլ հրեշտակ որ կայր ի վերայ արեգական, զի աղաղակեաց ի ձայն մեծ ամենայն հաւուց թռու-
ցելոց ընդ միջ երկնից՝ ասելով, Եկայք ժողովեցարուք [13]յընթրիս մեծին Ա-
18 տուծոյ. Եւ" կերիջիք զմարմինս թա-
գաւորաց, [14]եւ զմարմինս հզօրաց, եւ զմարմինս երիվարաց եւ [2]ամենայն հեծելոց ի նոսա, եւ [15]զմարմինս ա-
զատաց եւ ծառայից, մեծի եւ փոքու։
19 Եւ տեսի զգազանն եւ զթագաւորս երկրի եւ զզօրս նոցա ժողովեալս՝ առ-
նել պատերազմ ընդ այնմ որ հեծեալն էր ի ձին սպիտակ եւ ընդ զօրս նորա։
20 Եւ ըմբռնեցաւ գազանն եւ որ ընդ նմա առաւ մարգարէն որ առնէր զնշանսն առաջի նորա, [16]եւ զորս մոլորեցոյց եւ նա առնուլ" զդրոշմ գազանին, եւ զերկրպագուս պատկերի նորա. եւ կենդանեաւքն [17]արկին զնոսա" ի լիճ
21 հրոյ այրեցելոյ ծծմբով։ Եւ այլքն սր-
ռան ի սրոյ հեծելոյն ի վերայ ձիոյն, յորոյ բերանոյ ելանէր սուրն. եւ ա-
մենայն թռչունք յագեցան ի մարմնոց նոցա։

Գլ. Ի

1 Եւ տեսի այլ հրեշտակ զի իջանէր յերկնից, եւ ունէր զիշխանս զժոխոց
2 եւ չղթայս մեծ ի ձեռին իւրում. Եւ ըմբռնեաց զվիշապն, զօձն առաջին, որ է Բանսարկուն եւ Սատանայ, եւ
3 կապեաց զնա հազար ամ։ Եւ արկ զնա յանդունդս [2]դժոխոց, եւ փակեաց եւ կնքեաց [18]զնա, զի այլ մի՛ եւս մոլորեցուսցէ զազգս, մինչեւ կատա-
րեսցի հազար ամն. եւ յետ այնորիկ

---

[1]Ցն., իբրեւ զձայն
[2]Ի Ցն.ին պակաս
[3]Բ.ղ.մ., Տէր Աստուած
[4]Ի Բ.ղ.մ. պակաս
[5]Ցն. յաւելու, եւ ասէ ցիս, Այս են բանք ճշմարիտք Աստուծոյ
[6]Ցն., անկայ
[7]Ցն., երկիր պագանել
[8]Ցն., Զգոյշ լեր, մի՛.
[9]Ցն., Հոգին մարգարէութեան
[10]Բ.ղ.մ., կոչի Հաւատարիմ
[11]Ցն., ձիովք սպիտակօք
[12]Ցն., ազգիւ իւրոյ
[13]Բ.ղ.մ., ի մեծ ընթրիս Աստուծոյ, (18) Զի
[14]Ցն., եւ զմարմինս Հազարապետաց, եւ
[15]Ցն., զմարմինս ամենեցուն,
[16]Ցն., որովք մոլորեցոյց զորս առին
[17]Ցն., արկան երկոքին
[18]Ցն., ի վերոյ նորա

պարտ է լուծանել նմա սակաւ մի ժամանակ։
4 Եւ տեսի աթոռս, եւ նստան ի վերայ նոցա. եւ դատաւորութիւն տուաւ նոցա՝ [1]ընտրել զհոգիս [2]չարչարելոցն վասն վկայութեանն Յիսուսի եւ վասն բանին Աստուծոյ, եւ զորս ոչն երկիր պագին [3]գազանին, եւ ոչ առին զդրոշմ նորա ի ճակատս իւրեանց եւ ոչ ի վերայ [4]ձեռին իւրեանց. եւ կացին եւ թագաւորեցին ընդ Քրիստոսի հազար ամ։ 5 Եւ [5]յետ այսորիկ ի մեռելոց ոչ ոք եկեաց", մինչեւ ի կատարել հազար ամին. այս է յարութիւն առաջին։ 6 [6]Երանի սրբոցն, որք ունին" բաժին ի յարութեանն առաջնում. ի վերայ սոցա երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն, այլ եղիցին քահանայք Աստուծոյ եւ [4]Տեառն Յիսուսի" Քրիստոսի. եւ թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ։
7 Եւ յետ հազար ամին [7]լուծցէ զՍատանայ եւ հանցէ ի բանտէ անտի. 8 եւ ելցէ" եւ մոլորեցուսցէ զազգս ամենայն ընդ չորս կողմանս երկրի, [8]զԳոգ եւ զՄագոգ առնել ի ձեռս ժողովել նոքօք զամենայն զօրս" ի պատերազմ. որոց թիւ նոցա իբրեւ զաւազ ծովու։ Եւ [9]ելին ի լայնութիւն երկրի եւ [10]պատեսցին չուրջ զբանակս սրբոցն եւ [11]զքաղաքին 9 սիրելւոյ։ Եւ իջցէ" հուր յերկնից առ ի յԱստուծոյ եւ [12]կերիցէ զնոսա, եւ [13]զդօրագլուխն նոցա զՍատանայ որ մոլորեցոյց զնոսա. եւ արկցէ զնոսա ի ծովն՝ հրոյ եւ 10 ծծմբոյ, ուր էր գազանն եւ սուտ մարգարէն. եւ չարչարեսցին զտիւ եւ զգիչեր[14]։

11 Եւ տեսի աթոռ սպիտակ մեծ, եւ ի վերայ նորա նստեալ՝ յորոյ երեսանցն երկնչէին եւ փախչէին երկինք եւ եր- 12 կիր, եւ տեղի ոչ գտաւ նոցա։ Եւ տեսի զմեռեալս մեծամեծս եւ զփոքունս, որ կային առաջի [15]աթոռոյն. եւ գրեանք բանային, եւ այլ գիրք բացան կենաց. եւ դատեցան մեռեալք [16]ի գրելոցն ըստ գործոց իւրեանց։ 13 Եւ ետ ծով զմեռեալս իւր, եւ մահ եւ դժոխք զիւրեանց մեռեալս. եւ դատեցան իւրաքանչիւր ըստ գործոց 14 իւրեանց։ Մահ եւ դժոխք մատնեցան ի լիճ հրոյն[17]։ Եւ որ ոք ոչ գտաւ 15 ի գրի կենաց գրեալ՝ արկաւ ի լիճ հրոյն։

ԳԼ. ԻԱ

1 Եւ տեսի երկինն նոր եւ երկիր նոր. քանզի առաջինն երկինք եւ երկիր 2 էանց. եւ ծով ոչ գոյր։ [18]Եւ զքաղաքն սուրբ զնորն Երուսաղէմ տեսի ղի իջանէր [19]յԱստուծոյ եւ յերկնից", զարդարեալ եւ պատրաստեալ որպէս 3 հարսն առն իւրոյ։ Եւ լուայ ձայն յերկնից որ ասէր, Ահաւասիկ խորանն Աստուծոյ ի մէջ մարդկան, եւ բնակեսցէ ընդ նոսա. եւ նոքա ժողովուրդ նմա. եւ [20]սա Աստուած 4 նոցա։ Եւ ջնջեսցէ զամենայն արտօսր յաչաց նոցա. եւ մահ ոչ եւս [21]գոյ, ոչ սուգ եւ ոչ աղաղակ եւ ոչ ցաւք [22]եւս ոչ աշխատանք. ոչ 5 եւս գոյ", զի առաջինն էանց։ Եւ ասաց ցիս որ նստէրն ի վերայ աթոռոյն, Ահաւասիկ առնեմ զամենայն նոր. եւ ասէ ցիս, Գրեա, այս բանք ճշմարիտ եւ հաւատարիմք։ 6 Եւ ասէ ցիս, [23]Եղէ ես" Ալփա եւ Ով,

---

[1] Յ-ին, և
[2] Յ-ին, գլխատելոցն
[3] Յ-ին, գազանին և պատկերի նորա
[4] Ի Յ-ՈՒՆ ՊԱՀԱԾ
[5] Յ-ին, մնացորդք ի մեռելոց ոչ կեցին
[6] Յ-ին, Երանելի և սուրբ է որ ունի
[7] Յ-ին, լուծցի Աստանայ ի բանտէ իւրմէ, և ելցէ
[8] Յ-ին, զԳոգ և զՄագոգ, ժողովել զնոսա
[9] Յ-ին, ելին
[10] Յ-ին, պատեցին
[11] Յ-ին, զքաղաքն սիրելի։ (9) Եւ կՂ
[12] Յ-ին, կերաւ
[13] Յ-ին, բանսարկուն որ մոլորեցոյց զնոսա՝ արկաւ ի լիճն

[14] Յ-ին յաՒԵԼԵ, յաԵԼԻտեանս յաԵԼԻտենից
[15] ՈՐՈՓ, Աստուծոյ
[16] Յ-ին, ի գրելոցն ի գիրսն
[17] Ի Յ-ՈՒՆ, ԲՈՒՐՄԻ յաԵԼԵՑԱՒ, այս է մահն երկրորդ. ՈՐՈՓ՝ այս է մահն երկրորդ, լիճ հրոյն
[18] ՈՐՈՓ, Եւ ես Յովհաննէս
[19] Յ-ին, յերկնից, յԱստուծոյ
[20] Յ-ին, ինքն Աստուած եղիցի ընդ նոսա,
[21] Յ-ին, էցէ
[22] Յ-ին, ոչ եւս իցեն
[23] ՈՐՈՓ, Եղէ. ես եմ

Սկիզբն եւ կատարած . ես ծարաւեցոյն տամ յաղբերէ ջրոյ կենաց ձրի ։
7 Որ յաղթէ՝ ժառանգեսցէ զայս ամենայն . եւ ես եղէց [1]նոցա Աստուած,
8 եւ նոքա եղիցին ինձ որդիք"։ Եւ [2]ծուլացն եւ անհաւատից, [3]ապականողաց եւ պոռնկաց եւ կախարդաց եւ կռապաշտից [4]եւ դեղատուաց", եւ ամենայն ստոց՝ [4]ամպարշտաց, որոց" բաժինն իւրեանց ի լճին այրեցելոյ հրով եւ ծծմբով, որ է մահն երկրորդ ։
9 Եւ եկն առ իս մի յեւթն հրեշտակացն, որք ունէին զեւթն սկաւառակսն լցեալս եւթն [5]վախճանաւ կատարածովք", եւ խօսեցաւ ընդ իս եւ ասէ, Եկ՝ ցուցից քեզ զհարսնն, [4]եւ
10 զկին Գառինն ։ Եւ առ տարաւ զիս ի լեառն մի բարձր եւ մեծ, հոգւովն, եւ եցոյց ինձ զքաղաքն [6]մեծ եւ" սուրբ՝ Երուսաղէմ . զի իջեալ էր
11 յերկնից առ ի յԱստուծոյ . Եւ ունէր զփառս Աստուծոյ . եւ էր ի նմա լուսաւորութիւն նմանեալ ականց պատուականաց [7]քար յասպիս սառ-
12 նատեսակ եւ կենդանի"։ Եւ էին պարիսպք նորա մեծ եւ բարձր , եւ ունէր դրունս երկոտասան . եւ [8]յերկոտասան դրունսն" երկոտասան հրեշտակս , եւ [9]անուանք իւրաքանչիւրոցն ի վերայ դրանցն գրեալ էին ըստ երկոտասան ցեղիցն Իսրայելի"։
13 Ցարեւելից կողմանէ դրունք երեք , եւ ի հիւսիսոյ կողմանէ դրունք երեք , եւ ի հարաւոյ կողմանէ դրունք երեք , եւ յարեւմտից կողմանէ դրունք
14 երեք ։ Եւ պարիսպ քաղաքին ունէր հիմունս երկոտասան , եւ ի նոսա երկոտասան անուանք երկոտասան ա-
15 ռաքելոց Գառինն ։ Եւ որ խօսէրն ընդ իս , ունէր եղէգն ոսկի ի ձեռին իւրում՝ զի չափեսցէ զքաղաքն եւ զդրունս
16 նորա եւ զպարիսպս նորա ։ Եւ էր քաղաքն քառակուսի , եւ որչափ երկայնութիւն նորա՝ նոյնչափ եւ լայնութիւն , [10]եւ բարձրութիւն հաւասար , եւ էր չափ երկայնութեան նորա երկոտասան հազար ասպարէզս . եւ լայնութիւն նորա եւ [11]բարձրութիւն
17 միաչափ կիվոս"։ Եւ չափեաց զպարիսպսն նորա հարեւր եւ քառասուն եւ չորս [12]ասպարէզս . չափ մարդոյ որ
18 է հրեշտակի ։ Եւ էր շինուած [13]պարսպացն քաղաքին" յասպիս . եւ քաղաքն էր ոսկի մաքուր՝ նման սուրբ [4]եւ
19 սպիտակ" ապակւոյ ։ Եւ հիմունք [13]քաղաքին յամենայն ականց [14]պատուականաց . հիմն առաջին [4]պարսպին՝ յասպիս , երկրորդն՝ չափիղայ , երրորդն՝ պղնձագոյն , չորրորդն՝ զմրդ
20 րուխտ , Հինգերորդն՝ եղնգնաքար , վեցերորդն՝ սարդիոն , եւթներորդն՝ ոսկեքար , ութերորդն՝ բիւրեղ , իններորդն՝ տպազիոն , տասներորդն՝ քրիւսոպրասոս , մետասանն՝ յակինթ ,
21 երկոտասանն՝ ամեթիստ ։ Եւ էին երկոտասան դրունք յերկոտասան մարգարտից՝ [4]միաձեւ . եւ իւրաքանչիւրոցն դրունքն էին մի մի դուռն՝ ի միոյ միոյ մարգարտէ . եւ [15]ընդարձակութիւն քաղաքին ոսկի մաքուր
22 որպէս ապակի պայծառ ։ Եւ տաճար ոչ տեսի ի նմա , քանզի Տէր Աստուած Ամենակալ տաճար [16]էր ի նմա եւ
23 Գառնն ։ Եւ քաղաքին [17]չէին պէտք արեգական եւ լուսնի , զի լուսաւորեսցեն զնա . քանզի փառքն Աստուծոյ լուսաւորէին զնա յամենայն
24 ժամ , եւ ճրագ ի նմա՝ Գառնն ։ Եւ [18]գնայիցեն հեթանոսք ի լոյս նորա . եւ թագաւորք երկրի [19]լուսաղղեսցեն
25 լինելին ի փառաց նորա"։ Եւ դրունք

---

[1] Բազմ. նմա Աստուած և նա եղիցի ինձ որդի
[2] Ց՝ն՝ն , երկչոտաց
[3] Ց՝ն՝ն , և պղծոց և սպանողաց
[4] Ի Ց՝ն՝ն պակաս
[5] Ց՝ն՝ն , հարուածովք վերջնովք
[6] Ի բազմ. պակաս
[7] Ց՝ն՝ն , իբրեւ զքար յասպիս սառնատեսակ
[8] Ց՝ն՝ն , ի վերայ դրանցն
[9] Ց՝ն՝ն , անուանս գրեալս ի վերայ , որ են երկոտասան ցեղից որդւոցն Իսրայելի
[10] Ց՝ն՝ն , և չափեաց զքաղաքն եղեգամբ ասպարէզս երկոտասան հազար . երկայնութիւն և լայնութիւն և բարձրութիւն նորա հաւասար էին
[11] Ց՝ն՝ն , կանգուն
[12] Ց՝ն՝ն , պարսպի նորա
[13] Ց՝ն՝ն , պարսպի քաղաքին
[14] Ց՝ն՝ն , պատուականաց զարդարեալ
[15] Ց՝ն՝ն , հրապարակ
[16] Ց՝ն՝ն , է
[17] Ց՝ն՝ն , չեն
[18] Ց՝ն՝ն , գնասցեն
[19] Ց՝ն՝ն , զփառս իւրեանց բերցեն առ նա

նորա ոչ [1]փակէին ի տուէ եւ ի գիշերի, այլ բաց կային հանապազորդ.
26 եւ գիշեր ոչ եւս լինէր ի նմա. Այլ
27 փառք եւ պատիւ ազգաց՝: Եւ ոչ մտցէ անդ ամենայն [2]չարակամ եւ սիրդ՝ եւ ստութիւն, բայց միայն որ գրեալ են ի գպրութիւն կենաց Գառինն:

ԳԼ· ԻԲ

1 Եւ եցոյց ինձ [3]մաքուր [4]գետ կենդանի ջրոյ սառնատեսակ՝, որ ելանէր յաթռոյն Աստուծոյ եւ Գառինն: Եւ
2 [5]գնայր ի մէջ հրապարակաց քաղաքին. եւ զեզերբ գետոյն՝ աստի եւ անտի ծառ կենաց որ բերէր պտուղս երկոտասան, ըստ միոյ միոյ ամսոյ տային զպտուղս իւրեանց. եւ տերեւ ծառոյն էր բժշկութիւն հեթանոսաց:
3 Եւ նզովք անդ ոչ եւս էին. եւ աթոռն Աստուծոյ եւ Գառին նորա էր ի նմա,
4 եւ ծառայք նորա [6]պաշտէին զնա. Եւ
7 տեսանէին զերեսս նորա. եւ անուն
5 նորա գրեալ էր ի ճակատս նոցա: Եւ գիշեր [9]ոչ անդ, եւ չէր լինչ անդ պէտք [10]ճրագի եւ լուսոյ արեգական, վասն զի Տէր Աստուած [11]լուսաւորէր զնոսա. եւ թագաւորեսցեն յաւիտեանս յաւիտենից:
6 Եւ ասէ ցիս, Այս բանք հաւատարիմ են եւ ճշմարիտ, եւ Տէր Աստուած [12]մարգարէից սրբոց՝ առաքեաց զհրեշտակ իւր [13]ծառայիդ իւրում՝ ցուցանել զոր լինելոց է վաղվաղակի: Ահա
7 դամ վաղվաղակի. երանի որ պահէ [14]զբան մարգարէութեանս գրոյս՝:
8 Եւ ես Յովհաննէս լուայ եւ տեսի զայս ամենայն. եւ յորժամ լուայ եւ տեսի, անկայ [15]եւ երկիր պագի՝ հրեշտակին որ ցուցանէր ինձ զայս ամե-
9 նայն: Եւ ասէ ցիս, [16]Մի՛ անկանիր առաջի իմ եւ երկիր պագանե՛ր. քանզի եւ ես ծառայակից քո եմ եւ եղբարց քոց որ պահեսցեն զբան մարգարէութեան գրոյս այսորիկ. Աստուծոյ երկիր պագ:
10 Եւ ասէ ցիս [8]դարձեալ, Մի՛ կնքեր զբանս մարգարէական գրոցս այսմիկ, քանզի ժամանակս մերձ է:
11 Որ [17]ամպարշտեսցի՝ ամպարշտեսցի, եւ որ [18]աղտեղանալոցն է՝ աղտեղասցի, եւ որ [19]արդարանալոցն է՝ արդարասցի, եւ որ [20]սրբելոցն է՝
12 սրբեսցի: Ահա դամ վաղվաղակի, եւ վարձք իմ ընդ իս՝ հատուցանել իւ-
13 րաքանչիւր ըստ գործս իւրեանց: Ես եմ Ալփա եւ Ովմ, Սկիզբն եւ կատա-
14 րած, Առաջին եւ Վերջին: Երանելիք են որ պահեն զպատուիրանս նորա. Նոքա ունին իշխանութիւն [21]ուտել ի փայտէն՝ կենաց եւ մտանել ընդ
15 դրունս քաղաքին: Այլ ելցեն արտաքս շունք եւ դեղատուք [22]եւ պոռնողք եւ կռապաշտք, եւ ամենեքեան որ [23]սիրեն զստութիւն:
16 Ես Յիսուս առաքեցի զհրեշտակ իմ վկայել ձեզ եկեղեցեացդ. ես [24]արմատ եւ սեռ ի Դաւթայ՝, եւ աստղ
17 պայծառ առաւօտին: [25]Եւ Հոգի, եւ Փեսայն՝ որ գալոցն եմ. եւ որ լսէ՝ ասելով թէ եկ, եւ որ ծարաւի իցէ՝ եկեսցէ, եւ որ ոք կամի առնուլ զջուրն կենաց ձրի:
18 Վկայեմ եւ ես ամենայնի որ լսէ զբանս մարգարէութեան գրոցս այսմիկ, թէ ոք յաւելցէ ի սա, յաւելցէ

---

[1] Ց՝ՆՆ, փակեսցին ի տուէ, զի գիշեր ոչ եղիցի անդ· (26) Եւ բերցեն զփառս և զպատիւ ազգաց առ նա
[2] Ց՝ՆՆ, խառնակ, և որ առնէ պղծութիւն
[3] Ի Բ՝ՁՐ՝Ն պ՝Ն՝Ի՛
[4] Ց՝ՆՆ, գետ ջրոյ կենաց պայծառ իբրեւ զակն վանի
[5] Ց՝ՆՆ, ի մէջ հրապարակի նորա և գետոյն
[6] Ց՝ՆՆ, պաշտեսցեն
[7] Ց՝ՆՆ, տեսցեն
[8] Ի Ց՝ՈՒՆ՝ Պ՝Ն՝Ի՛
[9] Ց՝ՆՆ, ոչ եղիցի
[10] Ո՛ՀՆ՛Ի, լուսոյ ճրագի
[11] Ց՝ՆՆ, լուսաւորեսցէ
[12] Ո՛ՀՆ՛Ի, ոգւոց մարգարէից
[13] Ց՝ՆՆ, ծառայից իւրոց
[14] Ց՝ՆՆ, զբանս մարգարէութեանս այսորիկ
[15] Ց՝ՆՆ, երկիր պագանել
[16] Ց՝ՆՆ, Զգույշ լեր, մի՛
[17] Ց՝ՆՆ, ամպարշտին
[18] Ց՝ՆՆ, աղտեղին
[19] Ց՝ՆՆ, արդարն է
[20] Ց՝ՆՆ, սուրբն է
[21] Ց՝ՆՆ, ի վերայ փայտին
[22] Ց՝ՆՆ, և պոռնիկք և
[23] Ց՝ՆՆ, սիրեն և առնեն
[24] Ց՝ՆՆ, եմ արմատ և ազգ Դաւթի
[25] Ց՝ՆՆ, Եւ Հոգի և հարսն ասեն, Եկ. և որ լսէն՝ ասասցէ, Եկ. և որ ծարաւի իցէ՝ եկեսցէ, և որ կամիցին՝ առցէ

Աստուած ի վերայ նորա [1]զեւթեն հար-
19 ուածսն՝ զրեալս ի դիրս յայս ։ Եւ եթէ
ոք պակասեցուսցէ ի բանից մարգա-
բէութեան գրոյս այսմիկ , պակասե-
ցուսցէ եւ հատցէ Աստուած զբաժին
նորա [2]ի ծառոյն կենաց եւ ի քաղա-
քէն սրբոյ , [3]որ գրեալ է ի դիրս յայս՝։
20 Ասաց որ վկայեացն զայս , Գամ ես
վաղվաղակի ։ Ամէն , եկ , Տէր Յիսուս
21 [4]Քրիստոս ։ Շնորհք Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի [5]ի վերայ ամենայն
սրբոց՝։ Ամէն ։

[1]Յն. զվարուածսն
[2]Ոմանք, ի գպրութենէն
[3]Ոմանք, և ի գրելոց ի մատենիս յայսմիկ
[4]Ի Յունին պակաս
[5]Ի Յունին, ոմանք՝ ընդ ամենայն սուրբս , այլք՝ ընդ սուրբս , և այլք՝ ընդ ձեզ ամենեսին

ՎԱԽՃԱՆ ՆՈՐՈՑ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ՅԱՆԿ ԶԱՓՈՒՑ, ԿՇՌՈՑ ԵՒ ԴԱՀԵԿԱՆԱՑ ՅԻՇԵԼՈՑ Ի ՍՈՒՐԲ ԳԻՐՍ

1. ԶԱՓՔ ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ

	Էնտովէ = 100-րդ	Մէթր = 100-րդ
Ուղտուկ = մատնաչափք 4	0.12	0.07
Թիզ = ուղտուկք 3	0.36	0.23
Կանգուն = թիզք 2	0.71	0.46
Գիրկ = կանգունք 4	2.85	1.85
Ձող (եղեկիէլեան) կամ եղէգն = կանգունք 6	4.27	2.77
Ասպարէզ = գիրկք 100	284.62	184.94
Շաբաթուց ճանապարհ = ասպարէզք 6	1,707.69	1,109.60
Մղոն = ասպարէզք 8	2,276.95	1,479.50

2. ԶԱՓՔ ՀԵՂԱՆԻՒԹՈՑ

	Ըստ Յովսէպոսի			Ըստ Ռաբբուննաց		
	Օքթ	Տրամ	Լիտր = 100-րդ	Օքթ	Տրամ	Լիտր = 100-րդ
Ճաշակ	0	172	0.55	0	88	0.28
Հիմէն = ճաշակք 12	5	64	6.56	2	253	3.35
Մաբ = հիմէնք 6	30	384	39.37	15	320	20.12
Քոռ կամ խոմէր = մաբք 10	309	240	393.75	158		201.22

3. ԶԱՓՔ ԱՐՄՏԵԱՑ

	Ըստ Յովսէպոսի			Ըստ Ռաբբուննաց		
	Օքթ	Տրամ	Լիտր = 100-րդ	Օքթ	Տրամ	Լիտր = 100-րդ
Կապիճ	1	288	2.18	0	351	1.11
Օմէր կամ Զափ=տասնորդ արդուբ	3	38	3.94	1	232	2.01
Գրիւ = կապիճք 6	10	128	13.12	5	106	6.71
Արդուբ = գրիւք 3	30	384	39.37	15	320	20.13
Քոռ կամ խոմէր = արդուբք 10	309	240	393.75	158		201.27

4. ԿՇԻՌ

	Օքթ	Տրամ = 100-րդ	Կրամ = 100-րդ
Դանգ կամ Կերատ		0.22	0.71
Սիկղ = դանգք 20		4.49	14.25
Մնաս = սկեղք 100	1	49	1,425.51
Տաղանդ կամ Քանքար = սկեղք 3,000	33	270	42,765.50

5. ԳԻՆ ԱՐԾԱԹԻ ԵՒ ՈՍԿԻ ԴՐԱՄՈՑ ԵՒ ԿՇՌՈՑ ԵՐԱՑԵՑԻՈՑ

ԱՐԾԱԹԻ	Դահեկան	Փարա	Ֆրանք = 100-րդ
Սիկղ	12	24	2.86
Մնաս	1,260	16	286.46
Տաղանդ կամ Քանքար	37,812	20	8,593.75
ՈՍԿԻ			
Սիկղ	201	27	45.83
Մնաս	20,166	27	4,583.33
Տաղանդ կամ Քանքար	605,000		137,500

6. ԳԻՆ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԴՐԱՄՈՑ

	Դահեկան	Փարա = 100-րդ	Ֆրանք = 100-րդ
Լեպտոն		1.57	0.01
Նաքարակիտ = լեպտոն 2		3.15	0.02
Դանգ = նաքարակիտք 4		12.60	0.07
Դահեկան = դանգք 10	3	06	0.72
Երկդրաժեան (Տիդրաքմա) = դահեկանք 2	6	12	1.43
Սատեր = դահեկանք 4	12	24	2.86
Մնաս = դահեկանք 100	315	00	71.59

ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջ	Սիւն	Տող			
9	1	37	Հեփթաղիմացիա	ընթերցիր	Նեփթաղիմացիա
38	1	42	գդա	»	զդա
50	1	34	զերիկրա	»	զերկիրա
53	1	25	ղե-բարք	»	եղ-բարք
74	1	41	անորիկ	»	այնորիկ
81	2	37	49	»	40
88	1	16	ի [3]ի սրբութիւն	»	[3]ի սրբութիւն
90	2	34	ա-առաջի	»	առաջի
117	1	41	25	»	26
159	2	28	կաս	»	կամ
189	2	24	պատուրեաց	»	պատուիրեաց
200	1	17	ի ի միջոյ	»	ի միջոյ
204	2	51	զնպաստակ	»	զնապաստակ
209	1	47	ծարակոյտ	»	ծերակոյտ
391	2	29	զքառասուն	»	զքառասուն
419	1	18	տանն	»	տանն՝՝
463	2	34	*Տէր	»	Տէր
475	2	46	[1]սեղանոյն	»	[11]սեղանոյն
500	1	50	զօրութեան	»	զօրութեանց
539	2	40	[4]եէր·	»	[5]եէր·
555	2	3	ցՅոբ	»	զՅոբ
557	2	49	յանձ	»	յանձն
559	1	50	հողոց	»	հողս
559	2	10	յանձնէ	»	յանձնէ
562	1	23	[2]զաւինայն	»	զաւինայն
568	2	50	[10]կ-ո	»	[9]կ-ո
575	1	44	իբր	»	իբրեւ
581	1	42	բարձեալ	»	բարձրեալ
603	1	14	գայթաղկեսցի	»	գայթակղեսցի
605	2	42	մոց	»	իմոց
653	2	51	[7]եէր· Տ-	»	[7]Տ-
653	2	52	Ր- 7	»	Ր- 8
660	1	46	սուրհանմակ	»	սուրհանդակ
660	1	50	երդ	»	երթ
661	1	50	իրիք	»	իմիք
662	2	47	յաչեահի	»	յաչեաբհի
666	2	4	ի պատուիրանեն	»	ի պատուիրանէն
671	2	12	իմանոց	»	իմաանոց
675	1	50	հաստատեցին	»	հաստատեցին
677	2	19	պատրաստաեա	»	պատրաստեա
683	2	37	ւ-	»	ւ-ո
698	1	41	ինչն	»	ինչ
718	2	13	բարեյն	»	բարձյն
867	1	46	զօրացե՞ն	»	զօրացի՞ն
876	1	50	հերձնուիր	»	հերձուիր
886	1	8	ոսկերք	»	ոսկերքդ

Էջ	Սիւն	Տող			
901	1	48	բինչեւ	ընթերցիր	մինչեւ
907	1	51	Նոքոք	»	Նոքօք
918	2	21	բեւր	»	բեւրք
923	2	26	եւ մտցէ	»	եւ՝ մտցէ
943	2	48	իջայ	»	իջա
979	1	23	իրրեւ	»	իբրեւ
982	1	36	փախեաք	»	փախեայք
984	1	20	ձորոց	»	ձերոց
986	2	6	եկեալ	»	եկեալ